

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԾԱՐ ԳԱՆՈՒՄՑ ԿԻՒՂԸՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԻՒԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ

ԳԻՐԵՐՈՒ ԳԻՒՏԻ 1600-ԱՄԵԱԿԻ ՄԱՏԵՆԱԾԱՐ

ՄԱՏԵՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՅ

Ա. ՀԱՏՈՐ

Ե. ԴԱՐ



ԱՆԹՈՒՆԱՍ - ԼԻՍԲՈԱՆ

2003

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍԸ	I
ԱՌԱՋԱԲԱՆ	III
ԿԱԶՄՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ	V
ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ	1
Առաջաբան	3
ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐԻՉԻ ԱՍԱՑԵԱԼ ՃԱՌՍ ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄՍ ԵՒ ԼՈՒՍԱՒՈՐ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՍ ՅԱՂԱԳՍ ԱԲԳՏԻ ԼՍՈՂԱՑ	7
ԿԱՆՈՆԸ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՌԱՔԵԼՈՅ ՀԱՅՈՑ	139
ԿԱՆՈՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՊԱՐԹԵՒԻ, ԴԱՐՁԵԱԼ ՀԱՐՑՈՒՄՆ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻԸ ՆՈՐԱ	147
ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ	155
Առաջաբան	157
ԿԱՆՈՆԸ ՍՐԲՈՅՆ ՍԱՀԱԿԱՅ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ	159
ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՅՆ ՊՐՈԿՂԻ ԵՐԱՆԵԼՈՅ, Ի ՍԱՀԱԿԱՅ ԵՒ Ի ՄԱՇԴՈՅԷ, ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏԱՅՆ ՀԱՅՈՑ	219
ՊԱՏԱՍԽԱՆԻ ՏԵԱՌՆ ՍԱՀԱԿԱՅ, ԹՂԹՈՅՆ ԱԿԱԿԱՅ	223
ԿՈՐԻՒՆ	225
Առաջաբան	227
ՊԱՏՍՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՑ ԵՒ ՄԱՀՈՒԲԱՆ ԱՌՆ ԵՐԱՆԵԼԻՈՅ ՍՐԲՈՅՆ ՍԵՍՐՈՊԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԵՐՈՅ ԹԱՐԳՄԱՆՉԻ	229
ՓԱԲՍՈՍ ԲՈՒԶԱՆԴ	273
Առաջաբան	275
ԲՈՒԶԱՆԴԱՐԱՆ ՊԱՏՍՈՒԹԻՒՆԸ	277
ԵԶՆԻԿ ԿՈՂԱՑԻ	429
Առաջաբան	431
ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ	433
Ի ԹՂԹՈՅՆ ԵԶՆԿԱՅ ԿՈՂԱՑԻՈՅ ԹԱՐԳՄԱՆՉԻ, ՉՈՐ ԳՐԵԱՑ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ԱՌ ԵՐԱՆԵԼԻՆ ՄԱՇՏՈՑ ՎԱՐԴԱՊԵՏ	513
ԵՂԻՇԷ	515
Առաջաբան	517
ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ	521
ԱՐԱՐԱԾՈՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ	765
ԽՐԱՏԸ	931
ԵՂԻՇԷԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿԱՆՈՆԱՅ ԱՍԱՑԵԱԼ Է	1069

ԳԻՏ ԱՐԱՅԵԶԱՑԻ	1073
Առաջաբան	1075
ԹՈՒՂԹ ԳԻՏԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՌ ՍՈՒՐԲՆ ՎԱՉԷ.....	1079
ՄԱՍԲՐԷ ՎԵՐԾԱՆՈՂ	1091
Առաջաբան	1093
ՄԱՍԲՐԷԻ ՎԵՐԾԱՆՈՂԻ ՃԱՌՔ	1095
[ԴԱՏՈՒՄՆ ՔԵՐԴԱԾԱՅ...]	1137
ԱՆԱՆԻԱ ԹԱՐԳՄԱՆԻՉ	1139
Առաջաբան	1141
ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ Ի ԽՈՐՀՈՒՐԴ ԿԱՏԱՐՄԱՆՆ ԱՌԱՔԵԼՈՅՆ ՊԵՏՐՈՍԻ.....	1145
ՄԱՆԴԱԿՈՒՆԻ.....	1153
Առաջաբան	1155
ԾԱՌՔ.....	1159
ԿԱՆՈՆՔ ՅՈՎՅԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՅ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ	1279

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻՉ

ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ

ԿԱՆՈՆՔ

ՀԱՐՑՄՈՒՆՔ

ԳՐԻԳՈՐ ԼՈՍԱԼՈՐԻՉ

Հայ եկեղեցական մատենագրութեան մէջ Գրիգոր Լուսաւորչի (238-325/26) անունով յայտնի են հետեւեալ երկերը՝ ա) Կանոնք սրբոյն Գրիգորի. բ) Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի. գ) Յանախապատում ցառք. դ) Հարցմունք:

Ա բնագիրը, որ բաղկացած է 30 յօդուածից, շարադրուել է ի լրումն Նիկիական կանոններին՝ «ի նոյն լուսաւոր կանոնսն յաւելեալ, առաւել եւս զիւր վիճակն, զՀայաստան երկիր լուսաւորէր» (Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1909, էջ 465-466): Նիկիական կանոնները համալրելու վերաբերեալ ակնարկուած է նաեւ Խորենացու Պատմութեան մէջ. «Սուղ ինչ գլուխս յինքեն է ի կանոնս ժողովոյն յաւելուլ» (Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1913, էջ 241): Գրիգոր Լուսաւորչի կանոնախօսական ժառանգութեան մէջ յիշատակուած է եւս մի երկ, որ ներառնուել է Սահակ Պարթեւի կանոններում՝ «Սահմանադրութիւն կարգաց ընկալեալ ի նահատակէն տեառնէ Գրիգորէ թարգմանեցաւ ի ձեռն Եզնակայ, հրամանաւ երանելոյն Սահակայ եպիսկոպոսապետին Հայոց եւ նորին աթոռակցաց, թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի եւ որոշումն վանաց» (յօդուած ԼԶ-ԽԳ):

Բ բնագիրը գետեղուած է Ագաթանգեղոսի Պատմութեան մէջ:

Գ Յանախապատում ճառերի մասին յստակօրէն ակնարկուած է Ագաթանգեղոսի պատմութեան մէջ, ուր ասուած է, թէ Գրիգորը աւանդել է «ճառս յաճախագոյնս դժուարապատումս, առակս խորիմացս դիւրալուրս»: Յանախապատումը Գրիգոր Լուսաւորչի անունով է յիշատակուած նաեւ է դարում՝ կազմուած Կնիք հաւատոյ ժողովածոյում (Ս. էջմիածին, 1914, էջ 18) եւ հետագայի մի շարք երկերում:

Դ Հարցմունքը, որ մասնագիտական գրականութեան մէջ վերագրուած է Մեսրոպ Մաշտոցին, Գրիգոր Լուսաւորչի ժառանգութեան մէջ գետեղուած է վաղնջական մի աւանդոյթից եկող խորագրային տեղեկութեան հիման վրայ:

Գրիգոր Լուսաւորչի Յանախապատում ցառերը վերահրատարակուած են՝ ըստ վենետիկեան հրատարակութեան (տե՛ս Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի յանախապատում ցառք եւ աղօթք, Վենետիկ-Ս. Ղազար, 1954): Հարցմունքը վերահրատարակուած է՝ համաձայն Լեւոն Խաչիկեանի հրատարակութեան (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1964, թիւ 7, էջ 301-330. վերջին վերահրատարակութիւնը՝ Լեւոն Խաչիկեան, Գրիգոր Պարթեւին վերագրուած «Հարցումը» որպէս հայ մատենագրութեան երախայրիք. տե՛ս Լեւոն Խաչիկեան, Աշխատութիւններ, հտ. Ա, Երեւան, «Գանձասար», 1995, էջ 72-84): Կանոնքը վերահրատարակուած է Վ. Յակոբեանի կազմած գիտա-քննական բնագրից (տե՛ս Կանոնագիրք Հայոց, Ա, աշխատասիրութեամբ Վազգէն Յակոբեանի, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1964, էջ 243-249):

Յակոբ Քեօւէեան

ՏԱՌԱՆԻՇԵՐ ԲԱՂՂԱՏՈՒԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ (ԿԱՆՈՆՔ)

Ա. Խմբի ձեռագրեր

- A - Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարանի ձեռ. թիւ 131, Կանոնագիրք. ժամանակ՝ 1098 թ.
- B - ՄՄ ձեռ. թիւ 8926, Կանոնագիրք. ժամանակ՝ ԺԳ դ.
- C - ՄՄ ձեռ. թիւ 6409, Կանոնագիրք. Դատաստանագիրք եւ կանոնական այլ նիւթեր. ժամանակ՝ ԺԵ-ԺԶ դդ.
- D - ՄՄ ձեռ. թիւ 795, Կանոնագիրք. Դատաստանագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ 1618 թ.
- E - ՄՄ ձեռ. թիւ 2635, Կանոնագիրք. Դատաստանագիրք եւ կանոնական այլ նիւթեր. ժամանակ՝ 1635 թ.
- F - ՄՄ ձեռ. թիւ 6496, Կանոնագիրք. Դատաստանագիրք եւ կանոնական այլ նիւթեր. ժամանակ՝ 1637 թ.
- G - ՄՄ ձեռ. թիւ 2655, Կանոնագիրք. Դատաստանագիրք եւ կանոնական այլ նիւթեր. ժամանակ՝ ԺԷ դ.
- H - ՄՄ ձեռ. թիւ 2596, Կանոնագիրք. ժամանակ՝ ԺԷ դ., ընդօրինակուած է G-ից
- I - ՄՄ ձեռ. թիւ 8158, Կանոնագիրք. ժամանակ՝ 1635 թ.
- J - ՄՄ ձեռ. թիւ 3706, Կանոնագիրք. ժամանակ՝ 1636 թ., սրանից ընդօրինակուել են IJ ձեռագրերը
- K - ՄՄ ձեռ. թիւ 4403, Կանոնագիրք. ժամանակ՝ 1647 թ.
- L - ՄՄ ձեռ. թիւ 4631, Կանոնագիրք. ժամանակ՝ 1649 թ.
- M - ՄՄ ձեռ. թիւ 5782, Կանոնագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ ԺԷ դ.
- N - ՄՄ ձեռ. թիւ 7580, Դատաստանագիրք եւ Կանոնագիրք. ժամանակ՝ 1651 թ.
- O - ՄՄ ձեռ. թիւ 3291, Դատաստանագիրք եւ Կանոնագիրք. ժամանակ՝ 1654 թ.
- P - ՄՄ ձեռ. թիւ 9298, Դատաստանագիրք եւ կանոնական այլ նիւթեր. ժամանակ՝ անյայտ
- Q - ՄՄ ձեռ. թիւ 5894, Կանոնագիրք. ժամանակ՝ 1664 թ.
- R - ՄՄ ձեռ. թիւ 2883, Կանոնագիրք. ժամանակ՝ 1665 թ.
- S - ՄՄ ձեռ. թիւ 3097, Կանոնագիրք. ժամանակ՝ մինչեւ 1681 թ., ընթերցումներով աւելի մօտ է KLMQT ձեռագրերին
- T - ՄՄ ձեռ. թիւ 9488, Կանոնագիրք. ժամանակ՝ 1621 թ., T ձեռագրից հաւանաբար ընդօրինակուել են IJ KLMSQ ձեռագրերը եւ կատարուած ուղղումներն անցել են այլ ձեռագրերի՝ IJKLMNOP:
- U - ՄՄ ձեռ. թիւ 3148, Կանոնագիրք. ժամանակ՝ ԺԷ դ.?, ընդօրինակուած է A ձեռագրից
- V - ՄՄ ձեռ. թիւ 3099, Կանոնագիրք. ժամանակ՝ մինչեւ 1667 թ., V ձեռագրի գրչու-թիւնը շատ նման է S-ի գրչութեանը, գուցէ ընդօրինակել է միեւնոյն գրիչը:
- X - ՄՄ ձեռ. թիւ 449, Կանոնագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ 1757 թ.
- Y - ՄՄ ձեռ. թիւ 3297, Կանոնագիրք եւ Դաւիթ-բեկի պատմութիւն. ժամանակ՝ 1780 թ., ամենայն հաւանականութեամբ ընդօրինակուած է նախորդ X ձեռագրից
- Z - ՄՄ ձեռ. թիւ 7317, Կանոնագիրք. ժամանակ՝ 1652 թ.

- W - ՄՄ ձեռ. թիւ 3059, Դատաստանագիրք, «Գիրք Նոմոսի» եւ Կանոնագիրք. ժամանակ՝ 1843 թ.
 ô - ՄՄ ձեռ. թիւ 3065, Կանոնագիրք. ժամանակ՝ ժԸ դ.?
 ê - ՄՄ ձեռ. թիւ 1779, Զանազան նիւթեր եւ Կանոնագիրք. ժամանակ՝ ժԷ դ.
 û - ՄՄ ձեռ. թիւ 3141, Կանոնագիրք, ժամանակ՝ ժԹ դ.

Բ խմբի ձեռագրեր

- a - ՄՄ ձեռ. թիւ 7615, Կանոնագիրք եւ կանոնական այլ նիւթեր. ժամանակ՝ ժԴ-ժԵ դդ.?
 b - ՄՄ ձեռ. թիւ 8380, Կանոնագիրք. ժամանակ՝ 1632 թ.
 c - ՄՄ ձեռ. թիւ 8964, Կանոնագիրք. Դատաստանագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ ժԴ-ժԵ դդ.?
 d - ՄՄ ձեռ. թիւ 2676, Կանոնագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ ժԷ դ.
 e - ՄՄ ձեռ. թիւ 783, Կանոնագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ 1605 թ.
 f - ՄՄ ձեռ. թիւ 8006, Կանոնագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ 1611 թ.
 g - ՄՄ ձեռ. թիւ 5148, Կանոնագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ 1618 թ.
 h - ՄՄ ձեռ. թիւ 3368, Կանոնագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ 1639 թ.
 i - ՄՄ ձեռ. թիւ 656, Կանոնագիրք. ժամանակ՝ 1661 թ.
 k - ՄՄ ձեռ. թիւ 654, Կանոնագիրք. ժամանակ՝ 1671 թ.
 l - ՄՄ ձեռ. թիւ 8938, Կանոնագիրք, Դատաստանագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ մինչեւ 1685 թ.
 m - ՄՄ ձեռ. թիւ 2677, Կանոնագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ 1697 թ.
 n - ՄՄ ձեռ. թիւ 778, Կանոնագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ 1635 թ.
 o - ՄՄ ձեռ. թիւ 660, Կանոնագիրք. ժամանակ՝ ժԷ դ., մօտ է իմ ձեռագրերին
 p - ՄՄ ձեռ. թիւ 3544, Կանոնագիրք. ժամանակ՝ ժԷ դ.
 q - ՄՄ ձեռ. թիւ 8236, Կանոնագիրք. ժամանակ՝ ժԷ դ.
 r - ՄՄ ձեռ. թիւ 9513, Կանոնագիրք. Դատաստանագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ ժԷ դ., ընդհանուր առմամբ մօտ է իմ ձեռագրերին
 s - ՄՄ ձեռ. թիւ 3098, Կանոնագիրք. ժամանակ՝ ժԷ դ.
 t - ՄՄ ձեռ. թիւ 646, Կանոնագիրք. ժամանակ՝ 1731 թ., ընթերցումներով մօտ է hilor ձեռագրերին

**ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՅԱՅՈՑ ԼՈՒՍԱԽՈՐԶԻ ԱՍԱՑԵԱԼ ՃԱՌՍ
ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄՍ ԵՒ ԼՈՒՍԱԽՈՐ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՍ
ՅԱՂԱԳՍ ԱԲԳՏԻ ԼՍՈՂԱՑ**

Ա.

**ՅԱՂԱԳՍ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ
ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ**

1 Մի է բնութիւն եւ գոյութիւն Ամենասուրբ Երրորդութեանն, եւ իւր է ինքնութիւնն եւ ոչ յայլմէ գոյութենէն: 2 Ձանսկզբանցն ունի զպատճառան Հայր զՈրդւոյ եւ զՀոգւոյ: 3 Իսկութիւն անծին եւ էութիւն անսկիզբն, մշտնջենաւորութիւն անսահման եւ ճշմարտութիւն անփոփոխելի, կեանք եւ կեցուցիչ ամենայն կենդանեաց: 4 Հայր է Որդւոյ, եւ բղխումն Հոգւոյ. Աստուած է եւ արարիչ արարածոց երեւելեաց եւ աներեւութից: 5 Պատճառ ասի ծննդեամբ Որդւոյ, եւ բղխումն Հոգւոյն Սրբոյ: 6 Իսկ ինքն անծին զէն անսկիզբն ծնեալ. Մշտնջենաւորին անսահմանի զճշմարտութիւնն անփոփոխ ծնեալ. Կենացն կենարարաց զԿեանսն կենսատու ծնեալ. Լուսոյն կենդանեաց զկենդանի Լոյսն ծնեալ. Բարւոյն զԲարեւարն ծնեալ. Արարիչն զԱրարիչն ծնեալ ամենայն արարածոց երեւելեաց եւ աներեւութից: 7 Երկնից հաստիչ եւ երկնային զաւրութեանցն, երկրի եւ որ ի սմա են արարածք: 8 Լի է եւ կատարեալ, եւ զամենայն յամենայն լնու^ա, ինքն ոչ թերանայ. Որ ո՛չ նորոգի եւ ո՛չ հնանայ, ո՛չ լնու եւ ո՛չ պակասէ. որ նոյն կայ միշտ ի լիութեան իւրում եւ յանբաւութեան: 9 Եւ չիք ուստեք եկամուտ կամ յաւելուած յանբաւ եւ յանհաս եւ յանսահման եւ յամենակատար բնութիւնն: 10 Որում ոչ հասու լինին միտք. նա եւ ոչ հրեշտակաց իմանի, թէպէտ եւ երազունք են որպէս զմիտս

մարդկան. այլ ուր ակնարկեն կամք Արարչին, յայնոսիկ սպասաւորութիւնս անեն յերկնաւորս եւ յերկրաւորս: 11 Ձի որպէս երկինք եւ ամենայն զարդք նոցա հաստատեալ կան Բանիւ Աստուծոյ, եւ Հոգւով՝ ամենայն զաւրութիւնք, նոյնպէս եւ երկիր՝ լերամբք եւ դաշտովք, ծովովք եւ գետովք եւ աղբերքք եւ անտառախիտ ծառովք:

12 Եւ չիք այլ Արարիչ, բայց միայն Սուրբ Երրորդութիւնն, ամենազաւր Տէրութիւնն, յստակ եւ պարզ ամենակալ Ձաւրութիւնն. որ ասաց եւ եղեն, հրամայեաց եւ հաստատեցան: 13 Որ նստի յերկինս երկնից եւ խնամէ զարարածս ամենայն. որ կանուխ գիտութեամբն եւ անբաւ իմաստութեամբն մատակարարէ գերկնաւորս եւ զերկրաւորս. եւ ամենեցուն կեանք է եւ կեցուցիչ, եւ յամենայնի անբաւ է եւ անհաս եւ անճառ: 14 Սէր է՝ կենդանի երանութեամբք լցեալ. լոյս ամատոյց, ահեղ եւ զարմանալի: 15 Գիտութիւն եւ իմաստութիւն ի նմանէ են ստուգեալ. կենդանի եւ կենդանարար, ողորմած եւ բարերար շնորհաւք, երկայնամիտ է եւ դարմանիչ: 16 Ինքն սրբութիւն սրբոց մերձեցելոց ի նա սրբութեամբ եւ արդարութեամբ, լուսաւորիչ բանական բնութեանս միշտ. եւ ամենայնիւ ճշմարտութիւն է՝ յանդիմանելովն զմեզ եւ խրատելովն զմեղուցեալսն, զի ապրեսցին ի բարկութենէն, որ գալոցն է ի վերայ ամբարշտաց: 17 Այլ եւ խոստամբք բարեաց յորդորէ, զի արժանաւորք լիցուք պսակաց եւ փառացն յաւիտենից ամենաշահութեանցն: 18 Ձի նաւահանգիստ է հանգստարար ճգնաւորաց ի խնամս սուրբ սիրոյ

^ա Եփէ. Ը 23

իւրոյ, որ յանճառ երանութիւնսն վայելեցուցանէ զառաքինացեալսն հոգւով: 19 Զի մեծութիւնք անքննինք են, անսկիզբն էութիւնն, ի վեր քան զիմանալիս յանսահմանութեանն եւ յանբաւութեանն. եւ խնամովք տեսչութեամբ լնու զամենայն արարածս: 20 Որ զիտէ զխորհուրդս սրտից, եւ քննէ զերիկամունս, եւ առջնորդէ աւրինաւք Հոգւոյն կենդանարար անմահից յանմոռաց ուրախութիւնս, յանդադար խնդութիւնսն, յանճառ եւ յանպատում բարութիւնսն՝ ժառանգելով զարքայութիւնն Աստուծոյ:

21 Արդ, այս ամենայն արհեստք ինքնաբոյսք անսահմանելի Մշտնջենաւորին՝ դարմանիչք են յարարածս ըստ բարերարութեան արարչութեան իւրոյ, զի կեցուցիչ է ի խնամս իւր, որ անբաւ եւ անքննին է: 22 Որում ոչ բաւէ իմաստութիւն հոգեւորացն հասու լինել Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այլ ի գործոց իւրոց եւ յերախտեաց իմանի եւ ճանաչի անմարմնոց եւ մարմնաւորաց մի Աստուածութիւնն ամենազաւր Տէրութիւնն: 23 Զի որպէս արեւ եւ լոյս եւ ջեր՝ միոյ արեգական ասի եւ ոչ այլոց, եւ որպէս աղբեր եւ ջուր եւ գետ ի միոյ ի բնութենէ լսին, սոյնպէս եւ միտք եւ բան եւ հոգի իմանի ի մարդում, նոյնպէս եւ աստ միոյ բնութեանն եւ Աստուածութեանն է իմանալ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: 24 Զի ոչ է արեգակն առանց լուսոյ եւ ջերմութեան, եւ ոչ աղբեր առանց ջրոյ եւ բլիսման, եւ ոչ միտք առանց բանի եւ հոգւոյ: 24 Այսպէս եւ ոչ էր Հայր առանց Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

Բ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ
ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՀԱՌԵԱԼ ՀԱՌՍ ՅԱ-
ՀԱԽԱՊԱՏՈՒՄՍ Ի ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴԻՈՒ-
ԹԵԱՆՆ ԱՌԱՆՁՆԱԻՈՐՈՒԹԻՒՆՍՆ

1 Կատարեալ է Հայր անձամբ եւ զաւրութեամբ, զիտութեամբ եւ իմաստութեամբ, արարչութեամբ եւ բարերարութեամբ, եւ զամենայն իւր անձին իսկութիւնն ունի: 2 Կատարեալ է Որդի անձամբ եւ զաւրութեամբ, զիտութեամբ եւ իմաստութեամբ, արարչութեամբ եւ բարերարութեամբ, որ եւ զամենայն անսկիզբն էութիւնն ունի: 3 Կատարեալ է եւ Սուրբ Հոգին անձամբ եւ զաւրութեամբ, զիտութեամբ եւ իմաստութեամբ, արարչութեամբ եւ բարերարութեամբ, եւ զամենայն անսկիզբն էութիւնն ունի: 4 Մի է բնութիւն Աստուածութեանն եւ անփոփոխ իսկութեանն, մի արարչութիւն եւ մի բարերարութիւն, մի տէրութիւն եւ մի զաւրութիւն. եւ չիք ուստեք եկամուտ եւ յաւելուած փառաց յանսկիզբն Երրորդութիւնն: 5 Զի նա է աղբեր ամենայն բարեաց, եւ ի նմանէ բաշխին ամենայն պարգեւք արարչութեան յարարածս ամենայն: 6 Որ յաւրինէ եւ դարմանէ եւ սնուցանէ բարերարութեամբն իւրով զերեւելիս եւ զաներեւոյթսն Հոգւով եւ ճշմարիտ վարդապետութեամբ, եւ առջնորդէ յիւր արքայութիւնն եւ ի փառսն, որք հաւատան ի նա եւ կատարեսցեն զսրբութիւնս ահիւն Աստուծոյ ի սուրբ սրտէ եւ յանկեղծաւոր հաւատոց, որպէս եւ գրեալ է:

7 Այսպէս ընկալաք զհաւատոցն բան. եւ դուք այսպէ՛ս հաւատացէք յամենասուրբ Երրորդութիւնն, յարարիչն Աստուած եւ ի հաստիչն Տէր եւ ի կենսատու շնորհն: 8 Որ կենդանարար լուսովն եւ սուրբ սիրովն ժառանգորդս առնէ իւր անճառ արքայութեանն, եւ լինի յորդորիչ յիշումն խոստացեալ անպատումն պարգեւացն, որ կայ եւ պահի յուսացելոցն ի նա

Հաւատով եւ սիրով: 9 Վասն զի սէր արարչութեանն ստիպեաց Արարչին առնել զարարածս ամենայն, որ երեւին եւ որ ոչն երեւին. ոչ ի պէտս իւրոյ Աստուածութեանն արարեալ, այլ զի երեւեսցին նորա փառքն, որ արարածովս իմացեալ տեսանիր^ա անմարմնոց եւ մարմնաւորաց: 10 Որպէս ոչ առնու ինչ ի կենդանեաց, այլ տայ նոցա զկենդանութիւնս, որպէս ոչ լոյս յաչաց՝ այլ ի լուսոյ լուսաւորի եւ տեսանէ զինքն, այսպէս եւ Տէր կեցուցանէ եւ լուսաւորէ զարարածս իւր՝ զմտաւորս եւ զբանաւորս. եւ բաժանէ ի նոսա շնորհս որպէս եւ կամի: 11 Թէպէտ եւ բաժինք շնորհաց են, այլ Աստուած մոյն է՝ որ յաջողէ զամենայն յամենայնի^բ: 12 Եւ տուեալ պատիւ հրեշտակաց եւ մարդկան՝ իշխանական կամս, զի փառաւորեսցեն զբարեգործն Աստուած, որ յոչընչէ ի լինելութիւն էած, եւ զհանգամանս բարեպաշտութեանն ուսոյց Գրովք Սրբովք, զի կարացն խոյս տալ ի չարէն եւ առնել զբարին, եւ դարձեալ նորոգել փառաց ի փառս:

13 Յայտոսիկ երեւի Աստուծոյ սէրն ի մեզ, զի վասն մեր արար զերկինս եւ զերկիր եւ որ ի նոսա արարածք են. եւ այսու խնամով ցուցեալ զբարերարութիւն սիրոյ իւրոյ: 14 Սոյնպէս եւ արարածք ճշմարտեալ սիրով մերձեսցին առ Աստուած Հաւատով եւ յուսով եւ պատուիրանապահութեամբ. եւ լինի պարգեւատու: 15 Զի յամենայնի գոհանալով զբարերարութեան խնամոց, եւ խոստովանողք եւ դաւանողք առ ճշմարտութիւնն լիցուք, եւ կացցուք ի հնազանդութեան հանդիսիցին՝ որ առ հաճոյս Տէրութեանն իցէ. ի նեղութեան եւ յանդորրու անքակ մնալ ի սէրն, որ առ Աստուած է՝ ամենայն սրբութեամբ, հոգւով եւ մարմնով ասեմ միշտ: 16 Եւ ոչ զանուն Արարչին՝ արարածոց կոչել, եւ ոչ

զճշմարտութիւնն մոլորեցուցանել ի սուտս: 17 Այլ առողջ, անբիծ անարատ երախտեալք սիրոյն կալ ի մտերմութեան միշտ: 18 Եւ այս ամենայն յաւրինուածք իրաւանց եւ արդարութեան կայ եւ մնայ Արարչին առ արարածս միշտ:

19 Վասն այսորիկ լուեսցուք ի դատարկ եւ ի վայրապար քննութենէ, եւ զհետ երթիցուք խրատուց Գրոց Սրբոց Հնոց եւ Նորոցս: 20 Եւ չիք այլ ոք, որ պատմէ զիրաւունս, զի նովաւ կեամք եւ շարժիմք եւ եմք^գ: 21 Նմա լուիցուք եւ ի նա յուսացուք, որ փրկեաց զմեզ յամենայն վտանգից, եւ փոխէ յերկնից արքայութիւնն: 22 Արդ, եկայ՛ք, որդեա՛կք իմ, եւ լուարո՛ւք ինձ, եւ գերկիւղ Տեսոն ուսուցից ձեզ^դ, ասէ ի սաղմոսերգութիւնն, որ կոչէ զամենայն ի հնազանդութիւն հոգեւոր աւրինացն: 23 Եւ զի Որ պահէ զպատուիրանս իմ, ասէ Տէրն, մա է որ սիրէմ զիս. եւ որ սիրէմ զիս, սիրեսցի ի Հաւրէ իմմէ, եւ առ մա եկեսցուք եւ աւթեմանս առ մա արասցուք^ե: 24 Որպիսի՛ անճառ սիրով պատուեալք եղաք:

25 Արդ, մի՛ խոտան գտցուք յԱստուծոյ, զի մի՛ անկցուք յերանելի կենացն, զոր խոստացաւ սրբոցն: 26 Զի արդարք ժառանգեսցեն զբարիսն, եւ մեղաւորք կրեն զպատիժսն: 27 Որք Հոգւովն Աստուծոյ, ասէ, վարին, մոքա են որդիք Աստուծոյ. իսկ որ ըստ մարմնոյ կեան, համոյ Աստուծոյ ոչ կարեն լինել^զ: 28 Զի հոգեւոր վարուք այսու կենալք վայելեսցուք յամենայն բարութիւնսն յերկնաւորս: 29 Որքան է մեծութիւն աննման եւ անհամեմատ եւ անկշիռ այնր անվախճան կենացն, զի անպատում է՝ ի Հոգւոյն Սրբոյ ի սիրոյ Արարչին պատրաստեալ, որ ո՛չ լսի եւ ո՛չ

^ա Հուս. Լ 20
^բ Լ Կոր. ԺԲ 4-7

^գ Գործ. ԺԷ 28
^դ Սուրբ. Լ Գ. (Լ Գ) 12
^ե Յով. Ժ Գ 23
^զ Հուս. Բ 13-15

իմանի, զոր տայ սիրողացն զՆա. զի նորա կենարար սիրովն վայելեսցեն ի բարութիւնսն, որ ի վեր է քան զամենայն միտս եւ զխորհուրդս եւ քան զզաւրաց երկնաւորաց, զի հանգուցանէ յանմահ կարգս: 30 Որոյ եւ ընտրութիւնք լինին յաւթեւանսն ըստ արժանաւորութեանն անքննին վայելչութիւն:

31 Զի որպէս հոգիք մտաւորք կենդանի են եւ անմահք, եւ չունին զպայման հասակին եւ զսահմանս գնացից, զի թէպէտ եւ քան զերկինս ի վեր բարձրանան եւ քան զծով անդր ելանեն յիշատակաւք գիտութեան իմաստութեան, որ յառաջնորդութենէ Գրոց Սրբոց, այլ որպէս յական թաւթափել անդրէն ամփոփին ի կայանս մարմնոյն կենաց, այսպէս եւ մարմինք ի յարութիւնն անդր՝ փոփոխին յանճառ եւ յանպատում կեանսն, ի բիւրակերպեան ճառագայթսն եւ ի կենդանի լոյսն եւ ի փառսն. լուցանին հրով Հոգւոյն յանշիջանելի լոյսն: 32 Եւ որպէս անարգ եւ տխուր է տեսիլ մարմնոյս քան զհոգւոց կենդանեացն զանմահից, այսպէս ամենայն նշոյլք եւ ճառագայթք ամենայն երեւելի արարածոցս է լուսաւորացս, որ շիջանելոց է, զի ո՛չ համեմատի եւ ո՛չ մնայ այլ կենդանի եւ անանց ճառագայթս Արեգականն արդարութեան փառաց, զոր զգենլոց են սուրբք յանմահական կեանսն հասարակ հոգւոց եւ մարմնոց. որպէս զգեցեալ ոք զարեգականն զլոյսն բաւականայ տեսանել յարեւելից յարեւմուտս, որ շիջանելի լոյս է ըստ բանին Տեառն. Արեգակն եւ լուսին խաւարեցին, ասէ, եւ աստեղի ծածկեցին, եւ արդարֆ փայլեսցեն իրրեւ գարեգակն յարֆայութեան Աստուծոյ: 33 Զի յորժամ Քրիստոս յայտնեսցի՝ կեանքն ան, ասէ առաքեալ, յայնժամ եւ դուք ընդ նմա յայտնեսցիք փառաւ: 34 Լուցեալք աստուա-

ծային հրովն ի լոյսն անշիջանելի եւ սուրբ: 34 Եւ յորժամ իւրով լուսովն անշիջանելեալն զգենուցու զլոյսն արեգականն արդարութեանն եւ վայելէ ի պայծառութիւն սրբոցն, կայ մնայ միշտ կենդանի եւ լուսաւորեալ: 35 Ի սուրբ սիրոյն երանաւետեալք եւ փառաւք փառաւորեալ ի չափս եւ յանչափս կատարմանն Քրիստոսի, զի ոչ կարէ ասել ոք զայս. զի եղիցի Աստուած ամենայն յամենայնի: 36 Լի է բարեաւք անմահիւք ըստ բանին Տեառն, որ խնդրէ ի Հաւրէ. Զի որպէս դու եւ ես մի եմք, այսպէս հաւատացեալք եւ սուրբք ի մեզ իցեն: 37 Զի այսպէս սիրեաց Աստուած զմարդիկ, որ եւ զԱստուածութեանն զպատիւ եւ զփառս շնորհեաց մեզ: 38 Արար Աստուած զաշխարհս զայս վասն մարդկան ի ծնունդ եւ ի սնունդ եւ ի կեանս իրաւանց եւ արդարութեան. եւ առաքինութեան հանդիսիւք, պատուիրանապահութեամբ զայն զանմահ եւ զանուշակ զաստուածեղէն փառսն շնորհէ՝ փոփոխելով յանանց բարիսն եւ յանսպառ ուրախութիւնսն:

39 Եւ զայս, զոր ասացաք, սուղ ինչ ի բիւրաւորացն բարեացն: 40 Որպէս տղայք յորովայնի մարցն ոչ գիտեն յորպիսի հասակս փոփոխելոց են եւ տեսանել զարարածս Աստուծոյ եւ վայելել, սոյնպէս եւ ոչ մեզ է իմանալ: 41 Այլ ըստ բանի առաքելոյն, որ ասէ. Փոքր ի շատէ գիտեմք եւ փոքր ի շատէ մարգարէաւմամք. այլ յորժամ եկեսցէ կատարումն, փոքրիշատէս խափանեսցի: 42 Զի առաւելեալ է յամենայնի եւ անճառ, եւ ոչ անմարմնոց է իմանալի, թող թէ մարմնաւորացս զմտաւածել եւ ասել ոք կարացէ: 43 Զի որպէս խաւար ի լուսոյ փախչի, այսպէս եւ երկրաւորքս յերկնաւորացն եւ յանմահից կե-

30 Մատթ. ԻԳ. 29, ԺԳ. 43

31 Կոր. Գ. 4

34 Լ. Կոր. ԺԵ. 28

35 Յովհ. ԺԷ. 21

36 Լ. Կոր. ԺԳ. 9

նացն: 44 Վասն այս բարութեանց զամենայն բարութեանն ջանս ի մեզ ունելով եւ կալ մնալ ի մշակութեան հաճոյիցն Աստուծոյ, որ աւետեալք բարեաց լիացեալ է: 45 Եւ փախիցուք յաղտեղի եւ ի գարշ ցանկութեանց եւ ի չարեաց, որ վշտագին սպառնալեալք է պատուհասն, եւ գհետ երթիցուք հանդիսի վերնոցն մաքուր վարուք: 46 Լինել երախտաւոր եղբարց սիրով յամենայն ի պէտս կենաց. մշակել զբարի զաւանդս ի փրկանս հոգւոց եւ մարմնոց, զի հրաւիրեալք եւ կոչեցեալք իցեմք յորդէգրութեանն շնորհս: 47 Զի բարիս տնկեալ ի մեզ Աստուծոյ, այլ եւ զիշխանական կամս, եթէ կամեսցուք միշտ զբարին առնել: 48 Զի հոգեւոր ակրէնքն հաստատեսցի ի սիրտս մեր, յոյս, սէր, հաւատ, այլովքն հանդերձ յանձնիշխանական կամս հրեշտակաց եւ մարդկան: 49 Որպէս զի ժառանգորդք լիցուք փառաւորեալ կենացն, եւ պատուեալ յԱրարչէն երանութեամբքն, որ անճառելին է:

50 Եւ ետ անձնիշխան արարածոցս երկուս դաստիարակս որպէս որդւոյ, զսպառնալիս եւ զաւետիս. երկնչել ի սպառնալեացն եւ փախչել ի վնասակարացն, եւ ցանկալ աւետաւոր բարեացն եւ երթալ գհետ արդարութեան: 51 Ի ձեռն ճշմարիտ Սուրբ Գրոց խրատուց իրաւանց եւ իշխանութեանն հնազանդել յաղագս բարեձեւութեանն: 52 Զի վասն այսորիկ ետ զմարգարէս եւ զառաքեալսն, զհայրապետսն, վարդապետս եւ ուսուցիչս, զի տեղեակ եւ հմուտ եւ հասու առնիցեն բարի կամացն Աստուծոյ զմեզ, որ զամենայն մարդ կամի՝ զի կեցցեն եւ ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն, եւ երախտաւոր լեալ գործովք արդարութեան Հաւրն երկնաւորի եւ Որդւոյն միածնի եւ Հոգւոյն Սրբոյ, որ տայ զկենդանութիւն արարածոց իւրոց գործակից լինել նոցա բարերար կամացն Աստուծոյ: 53 Այսու իրաւամբք եւ արդարութեամբք էած եմոյժ ի ժառանգու-

թիւն Աստուածութեանն իւրոյ ըստ առաքելոյ բանին. Ժառանգք Աստուծոյ եւ ժառանգակիցք Քրիստոսի՞, ասէ: 54 Եթէ նմանակիցս Քրիստոսի լիցուք, եւ փառացն կցորդ: 55 Ապա մի՛ հեղգասցուք ի կեանս մեր, այլ ուշ եղեալ ի կէտ կոչմանն անվեհեր փութով ուսուցանել եւ առնել զկամս նորա, զի մեծ կոչեսցի յարքայութեանն Աստուծոյ:

56 Եւ այսու վարդապետեալս, որ արար եւ ուսոյց ընտրելոց իւրոց ի տնաւրէնութեան իւրում, զի հայեցեալք յիս գնացից Փրկչին մերոյ՝ նմանողք լիցուք: 57 Եւ մարգարէութեամբ եւ առաքելական քարոզութեամբ եւ հայրապետութեամբքն ծանիցուք զՀայրն ամենակալ եւ զՈրդին համազաւր եւ զՀոգին համագործ: 58 Եւ ծանիցեն եւ գիտասցեն եւ ընդանեսցին հաճոյից Արարողին ուղղափառ հաւատով. անքակ մնալ ի սիրոյ Արարչին ի նեղութեան եւ յանդորրու. եւ արդարացեալք երախտաւորք կամաւք Բարերարին: 59 Զվաստակս ճգանցն վկայս առնել առ Աստուած, եւ մտերմութեամբ ակրհնել զՏէր գտուողն ամենայն բարեաց, եւ գոհանալով փառաւորել զՆա: 60 Այլ եւ Տէրինքնին զիւր երախտիքն վկայ ունի իւր սիրոյն եւ բարերարութեանցն զընտրեալսն եւ զկատարեալսն, որ ի նոսա գեղուն շնորհքն Աստուծոյ: 61 Այլ եւ առ երախտացեալսն հոգւով զգարձելոցն յապաշխարութիւն խոստովանութեամբք՝ ներէ եւ խնամէ եւ բժշկէ ողորմութեամբ, եւ թողու զմեղս ըստ բազում գթութեան իւրոյ: 62 Իսկ զամբարիչտս եւ զանիրաւս ամբարտաւանեալս չարութեամբ, որոց խաւարեալ են միտք եւ աւտարացեալք ի կենաց սրբոց եւ արդարոց, եւ առ նոսա երկայնամտէ, զի դարձցին ի զղձումն: 63 Ապա թէ ոչ այսպէս, բարկութիւն եւ սրտմտութիւն կայ եւ մնայ ի վերայ նոցա

յամենեցունց Արարչէն՝ ըստ բանի առաքելոյն:

64 Այսպէս են արուեստք կենաց կենարարին եւ Ստացողին, եւ դարմանաւք սիրոյն իւրոյ խնամէ զարարածս երեւելեալք եւ աներեւութիւքն հանապազ: 65 Եւ յաւրինէ բարերարութեամբն իւրով ի սնուցանել եւ ի դարմանել պէսպէս շնորհաւք իւրովք գիտութեամբ եւ իմաստութեամբ, զի խելամուտս եւ հնարարուեստս արասցէ պահպանութեան պատուիրանի իւրոյ: 66 Եւ զաւրութեամբ իւրով կարող եւ հաստատուն պահէ, զի զաւրացեալք ընդդէմ կացցեն հնարից սատանայի, եւ անշարժ եւ հաստատուն կացցեն առ ճշմարտութիւնն սիրով. յորդորել յառաքինութիւնսն լաւութեան եւ ի գործս պիտանութեան, որ ի փառս պսակէ: 67 Եւ այսպէս վայելեալքս ի բարիսն: 68 Զի վասն կենդանի աւետեաց երանութեանն առնուն զառ հաւատչեայն ճշմարիտ հաւատով եւ յուսով՝ զհանդերձեալսն ճաշակաւք սիրոյն կենդանութեան, որ անբաւն է եւ անքննին, զի նովաւ ի նորա երանութիւնսն վայելեսցեն, եւ լնուն նորա խնդութեամբն ի նորա ուրախութիւնսն յանձառս: 69 Զի գթութեամբն իւրով խնամէ ի պէտս հոգւոյ եւ մարմնոյ ըստ մեծի ողորմութեանն իւրոյ: 70 Զի զաւրացեալք ի շնորհացն եւ յաստուածատուր պարգեւացն յառողջութեան եւ ի խաղաղութեան վայելեսցեն:

71 Եւ այսպէս յերկայնամտութեան առ նորոգումն բարւոյն Աստուծոյ վերաբերեալ, յառաջագէմսն նկրտի յերեւելիս եւ յաներեւոյթս. եւ սրբեալ յաղտոյ ի Սրբոյն Աստուծոյ, ազատանայ եւ լուսաւորի ի փառս տիրական ազատութեամբն, եւ անհպելի լինի թշնամւոյն. Եւ զերծեալ ի մահուանէ մեղաց յուսով յարութեանն լուսաւորեալ կայ մնայ անբիծ եւ սուրբ:

72 Եւ բարձրանայ խոնարհութեանն փառաւք, որովք ամբարտաւանութիւն կործանի՝ Տեառն յարգանաւք: 73 Զի խոնարհք եւ հնազանդք եւ հեղք բարձրանան, եւ ամբարտաւանք եւ խիստք եւ անհաւատք կործանեսցին առաջի ահի Տեառն: 74 Եւ ճշմարտեալքն ամենայն ուղղութեամբ պսակեսցին եւ փառաւորեսցին յԱրարչէն յարքայութեանն արդարոց: 75 Զի ամենայն բարբառք աւետեաց զհաւատացեալս եւ զլաւս եւ զառաքինիս ի դրունս ճշմարտութեանն հրաւիրեն ի նորա յարգանսն եւ ի նորա պսակս փառաց վայելեն: 76 Զի ողորմութեամբ եւ գթութեամբ են խնամք, որք եւ կատարեալ ապաշխարութեամբ գթողութիւն ի միազաւր տէրութենէն առնուն:

77 Եւ¹ բարբառք ահաւոր սպառնալեացն զամբարիչտս եւ զանառակս եւ զցանկասէրս եւ զանհնազանդս զանարգելսն ի մեղս՝ հրաւիրեն ի տանջանսն յաւիտենից եւ յանմահ սատակումն եւ ի դժոխս: 78 Զի արհամարհեսցին զգութս եւ զխնամս Արարչին, եւ հեռացեալ աւտարացան ի ստոյգ ապաշխարութենէն, որ սրբէր զնոսս եւ արդարացուցանէր եւ մերձաւորս առնէր կենացն անմահից: 79 Եւ վասն այսորիկ ընկալցին զամաւթն եւ զանշէջ հուրն, զոր պատրաստեալ է սատանայի եւ դիւաց նորա:

80 Եւ այս ամենայն ի բարերար կամացն Աստուծոյ են կարգեալ ի պէտս եւ ի խնամս: 81 Սուրբ եւ բարի կողմանն՝ խոստմունք աւետեացն, որ ի Տեառնէ: 82 Իսկ չար եւ անհնազանդ կողմանն՝ զսպառնալիս բարկութեանն եւ սրտմտութեան ի ձեռն հրեշտակի չարի զվրէժս ընկալցին: 83 Զի թէ կամեցեալք էին, կարող էին զնիւթեալ բարկութիւնն շիջուցանել, եւ ի բաց ջնջել ուղիղ ապաշխարութեամբ ըստ մեծի ողորմութեան Արարչին: 84 Եւ

¹ Հմմտ. Հւոմ. Ը 18, Թ 5:

1 Սկիզբն ընտիր օրինակին

այսպէս խոստմամբք բարւոյն եւ սպառնալեալք մատակարարէ առ ի յուզողութիւն, զի զամենեսեան կամի, զի կեցցեն եւ արքայութեանն հասցեն: 85 Այլ զի որ ընտիրքն իցեն ի մեզ՝ երեւեսցին, ըստ արդարութեան աւրինացն կենցաղավարեալք: 86 Զի այն որ բարին է բնութեամբ եւ իսկութեամբ յառաջ քան զյաւիտեանս, յորում չիք եկամուտ առ կատարեալ բարերարութիւնն, այլ կայ մնայ միշտ բարի:

87 Այլ որ ասի զԱստուծոյ ցասումն կամ բարկութիւն կամ սպառնալիք, զաւրինացն զիրաւունսն ասէ, զի զանիրաւն եւ զանզգամսն ածէ յուզողութիւն սպառնալեալքն, որ լին է բարկութեամբ: 88 Զի չիք արատ կամ բիծ առ կատարեալ բարերարութիւնն եւ քաղցրութիւնն. ո՛չ ի նմանէ բուսանի, եւ ո՛չ եկամուտ ուստեք լինի ի նմա չար, զի որ նորայն է, իսկութեամբ բարի է, եւ չիք ի նմա նշխարք չարութեան: 89 Զի մեղքն մեր ցասուցանեն զԱստուած, եւ նա խրատէ զմեզ պատժովք, եւ ի բարկութեան զողորմութիւն յիշելով. զի խրատեալք՝ գտցուք զայցելութիւն յԱրարչէն: 90 Զի արժան է մեզ ատել զմեղս, եւ սիրել զարդարութիւն եւ զսրբութիւն եւ զճշմարտութիւն, որ ուրախ առնէ զԱրարիչն հանդերձ երկնային զաւրաւքն:

91 Եւ այս իսկ է սիրոյ նորա ցոյցք, որ խնդայ ընդ մարդկան ուղղութիւնս եւ իրաւունս, որք դառնան ի չար վարուցն: 92 Զի ինքն կեանք է եւ կեցուցիչ եւ սէր ամենալից պարգեւաւք իւրովք, զի ոչ ոք կարէ ասել զարժանն զնորա զամենագաւր մեծութենէն. ո՛չ ոք ի բերաւոր զաւրացն երկնաւոր բանակացն, եւ ո՛չ ի մարդկանէ, յորոց հաճեցաւ աւրհնութիւն առնուլ եւ երկրպագութիւն: 93 Զի ամենայն հայհոյութիւնք դիւաց եւ հեթանոսաց եւ ամբարշտաց եւ մեղաւորաց ոչ հպին յանհպելի լոյս Աստուածութեանն: 94 Եւ ամենայն բանակք բերաւորք հրեշտակաց,

որ կան յանդադար փառաբանութեան, եւ ընտրեալ ի Տեառնէ յորդոց մարդկանէ՝ ոչ կարեն զարժանաւորն աւրհնել զԱստուած: 95 Զի Աստուածութիւնն ո՛չ յարգի յումեք է եւ ո՛չ անպատուի, զի ոչ փոխի յիւրմէ անտի փառացն, զի կեանք է եւ լոյս անփոփոխելի, որ ոչ անցանէ:

96 Բայց զարմանալի այս է, զի վասն առաւել սիրոյն իւրոյ Անանունն յանուն գայ, զի ոչ ոք էր ընդ անսկզբանն, որ կոչէր զանուն. այլ ինքն վասն բարերարութեանն իւրոյ եւ բարերար կամաց իւրոց Արարիչ արարածոց անուանի: 97 Զի Արարիչ եւ Բարերար եւ Լոյս եւ Կեանք ի խնամս արարածոց զանուանս ունի, այլ զիւր անուն ինքն միայն գիտէ: 98 Զի ի լուսոյ լոյս է անշիջանելի, եւ ի կենդանեաց կեանք, եւ հուր աննիւթ, եւ նիւթական հրոյ արարող: 99 Այլ որպէս էրն եւ է եւ կայ յաւիտեան, ինքն միայն գիտէ. այլ սիրովն իւրով յայտնեցաւ արարածոց, եւ խնամովք իւրովք ծանուցեալ եղեւ:

100 Այլ եւ զարարածս կոչեաց յիւր բարերարութեանն յաշակերտութիւն զազգ մարդկան. Նախ գառաբեալս, ասէ Պաւղոս, ապա գմարգարէս, ապա զվարդապետս՝ եւ որ զկնի այսորիկ: 101 Յորս բաժանէ Հոգին Սուրբ զշնորհս ի գործ կոչմանն, որ հրաւիրեացն յարքայութիւնն: 102 Յայտնեաց զխնամս տեսչութեան իւրոյ սիրոյն, զի լիցուք արդարացեալք ի հաւատոց անտի, որով մտանիցեմք ի փառաւորեալ ժառանգութիւնն Քրիստոսի Աստուծոյ: 103 Զի այգի իւր անուանեաց զհաւատացեալսս. մշակ՝ զչայրն երկնաւոր, այլ եւ գառաբեալսն մշակս, որով սրբին եւ ժողովին ի հնձանսն յաւիտենիցէ: 104 Որ յառաջին ժամէն մինչեւ ցվերջին ժամն գործեցին, եւ ըստ յաւժար կամացն զառաջնոցն առին զվարձս ի Գիտողէն: 105 Զի

Վ Կ. Գ. Ժ. Բ. 28

Տ Ե՝ Մ. Մ. Գ. Բ. 1-16:

որ ոչ նմանեցին Աստուծոյ սիրոյն, որ ծագէ զարեգակնն չարեաց եւ բարեաց, այլ խանտացան¹, ոչ որպէս զորդիս Աստուծոյ առին զվարձս: 106 Այլ սուրբք ամենայն գործեցին զարդարութիւն եւ զհոգեւոր մշակութիւնն, եւ հասին աւետեացն՝ որ ի Քրիստոս Յիսուս՝ ճշմարիտ քարոզութեամբն, որ ի փառս Ամենասուրբ Երրորդութեան: 107 Եւ լցին զտիեզերս կենաց բանիւն, եւ ջրովն եւ Հոգւովն վերստին նորոգեցին զհաւատացեալս: 108 Այլ եւ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ զփրկութիւն քարոզեցին ի ձեռն շնորհաց Որդւոյն Աստուծոյ:

109 Զի Հայր է բնութեամբ միածնի Որդւոյ իւրոյ, եւ ի Կենաց Կեանք եւ ի Լուսոյ Լոյս եւ ի Բարւոյ Բարի: 110 Այլ եւ մեզ ըստ շնորհի Հայր անուանեալ, եւ Լոյս, որ լուսաւորէ զմեզ հաւատովն, եւ Կեանք, որ կենագործ է զմեզ: 111 Որպէս առ մարդիկ այս յաւրինակ ճշմարտութեանն երեւի. ոմանց բնութեամբ, եւ կիսոց խնամածութեամբ որբոց հայր: 112 Այսպէս զմեզ մերձաւորս առնէ, այլ եւ նմանողս արարչական խնամածութեանն, զմոլորեալս դարձուցանել յաստուածգիտութիւն շնորհաւք բարերարի Հաւրն: 113 Այլ եւ բարերարութեանցն նման նմա գթասիրութեամբն լինել: 114 Առ մեղուցեալսն ուսուցանէ զի մի իսպառ կորիցեն. այլ խորագիտութեամբ ածել յուղղութիւն աստուածային աւրինաւքն, առ ուսանել գիտել ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, եւ ուղղել զթիւրեալսն նշանաւք եւ արուեստիւք: 115 Զաշակերտեալսն հաստատել ի հաւատս, եւ անշարժ մնալ ի ճշմարտութեանն համբերութեամբ բազմաւ յամենայն փորձութիւնս: 116 Եւ ըստ աւրինակի Տեառն սիրոյն յորդորել ի նորա կոչման սէր, զթութեամբ խնամ ածել եւ դարմանել.

բառնալ զբեռինս եւ զկարիս բազմաց, եւ կոչել առ շնորհս աւագանին եւ ապաշխարութեան: 117 Եւ երկայնամտութեամբ եւ հանճարով զամենեսեան որսալ հոգեւոր ուրկանաւ առ բարեպաշտութիւնն: 118 Եւ լուսաւորել զխաւարեալն մեղաւք եւ անիրաւութեամբ, սրբել մաքրել եւ ազատել ի ծառայութենէ սատանայի, եւ նորոգել զնորն, որ ըստ Աստուծոյն է՝ լուսաւորութիւն, արդարութիւն եւ ճշմարտութիւն, եւ մերկանալ զհին մարդն գործովքն իւրովք չարեաւք, որպէս զի արժանի լինիցին պսակացն եւ փառացն:

119 Զայս արուեստ ի Հաւրէ եւ յՈրդւոյ եւ ի Հոգւոյն Սրբոյ ուսեալք, որ միշտ գործակից առնէ իւր բարերար կամացն ըստ ճշմարտութեան աւանդից, որ զժողովուրդս հաւատով անվրէպ մերձ կացուցանէ յաւթեվանս սրբոց: 120 Եւ այսպէս աշակերտեալք յընտրութենէ աւրինացն ի հաւատս եւ ի յոյս եւ ի սէր արդարութեան՝ ըստ հանդիսից առաքինեացն եւ ճշմարիտ առաքելոցն եւ մարգարէից եւ ուղղափառ վարդապետացն, եւ որք ի նոցանէ ուսան, վկայք՝ զհամբերութիւն ի տանջանս, խոստովանողք՝ զժուժկալութիւն, ճգնաւոր կուսանք՝ զսրբութիւն եւ զառաքինութիւն, ապաշխարողք՝ զթողութիւն: 121 Եւ այսու ամենայնիւ ընտրեաց ի մարդկանէ իւր ժողովուրդ Աստուած նախանձաւոր լինել ի գործս բարութեան, եւ առնուլ զպսակս անեղձութեան յիւրմէ բարերարութենէն: 122 Զի սիրեցին զԱրարիչն եւ սիրեցան ի նմանէ, եւ շնորհաւք իւրովք փառաւորս եւ անուանիս արար յերկրի եւ յերկինս, որ կայ մնայ միշտ:

123 Զի թէ ոչ էր լեալ ընտրութիւնք ի Տեառնէ ըստ արդարութեան աւրինացն, ոչ երեւելի լինէր առաքինութեանցն մտերմութիւնք եւ քաջութիւնք, եւ խափանեալ լինէր հանդէսք նահատակացն, որ յերանելի կեանսն տանի, եւ զրկեալք ի կենդանի երանութեանցն ժառանգութենէն:

1 Միւս օրինակն՝ եռամացան

սուրբք, նաեւ զաւրբ հոգեղինացն, որք կային ի սէրն Աստուծոյ: 124 Զի որք յԱրարչին խնամոցն վրիպեցան, ընդունին զպատիժս յահեղ Դատաւորէն, որ ըստ արժանեացն հատուցանէ, զի երթիցեն արդարքն ի կեանսն յաւիտեանից, եւ մեղաւորքն ի տանջանսն յաւիտեանից: 125 Երկաքանչիւրոցն աստուածային բանն յայտ առնէ. եկա՛յք, ասէ, արհնեա՛լք Հաւր իմոյ, ժառանգեցէ՛ք զարքայութիւնն Աստուծոյ: Եւ երթա՛յք յինէն, անիծեա՛լք, ի հուրն յաւիտեանից, զոր պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորաք: 126 Զի նախ յարդարէ եւ կոչէ ի բարի գործս. եկա՛յք, ասէ, առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք, եւ ես հանգուցից զձեզ. առէ՛ք զլուծ իմ ի ձեզ, եւ ուսարուք յինէն զհեգութիւն եւ զխոնարհութիւն, եւ գտջիք հանգիստ անձանց ձերոցք: 127 Եւ առաքեալ ասէ. Նմանեցէ՛ք Աստուծոյ որպէս որդիք սիրելիք, եւ գնացէ՛ք սիրով, որպէս եւ Քրիստոս սիրեաց զմեզ, եւ զանձն իւր մատնեաց վասն ձեր պատարագ Աստուծոյ: 128 Զի Որդին Աստուծոյ զորդիս մարդկան իւր ժառանգորդս արար, եւ սփռեաց ի մեզ զշնորհս Հոգւոյն Սրբոյ առատաբար: 129 Զի բարերար բարբառովն կոչեաց յապաշխարութիւն զմեղաւորս խոստովանութեամբ, եւ ի հնազանդութիւն Աւետարանին կենաց, զի նորոգեսցէ զհաւատացեալսն լուսաւոր Աւագանաւն յորդեգրութիւն իւրում Հաւրն: 130 Որ բնութեամբ է Որդի, զի շնորհաւք արար զմեզ եղբարս իւր: 131 Եւ զարատ եւ զբիծ մեղացն լուծանէ զնորածնելոցս Աւագանաւն ի Հոգւոյն, եւ ազատէ ի ծառայութենէ չարին: 132 Զի որք ի Քրիստոս Յիսուս

մկրտեցան, զՔրիստոս զգեցան, արու եւ էգ. եթէ հրեայ իցէ եւ եթէ հեթանոս, եթէ ծառայ իցէ եւ եթէ ազատ, ամենեքին մի են շնորհաւք որդիք Աստուծոյ եւ ժառանգակիցք Քրիստոսի: 133 Որք իջին յարգանդ հոգեւոր Աւագանին պարգեւաւք Ամենասուրբ Երրորդութեանն, արհնութեամբք եւ քահանայական խորհրդածութեամբք, արժամարք եւ Հոգւով ի Քրիստոս լուսաւորեալ՝ ըստ բանին Տեառն՝ առէ՛ք զՀոգին Սուրբ՝ յորդեգրութիւն Հաւրն Քրիստոսի: 134 Զի նովաւ ունին իշխանութիւն քահանայք կապելոյ եւ արձակելոյ, զի զմկրտեալսն հրաժարեցուցանեն ի սատանայէ եւ մեռանել զմեղացն մահ, զի մի՛ եւս այլ մեղաւք կեցցեն յերկրի: 135 Զի որպէս մեռեալն լուծ յամենայն արուեստից, նոյնպէս եւ մկրտեալն եղիցի մեռեալ մեղաց եւ կենդանի արդարութեան, զի զկերպարանս Քրիստոսի ի շնորհաց Սուրբ Երրորդութեանն առնու. յայնմ հետէ զվերինն խորհել ըստ նշմարտութեան Աւետարանին՝ քարոզութեան եւ հաճոյից անմահ Թագաւորին, արդար եւ ճշմարիտ եւ սուրբ վարիւք հասանել յաւթեվանս կենացն անմահից որ ի Քրիստոս Յիսուս: 136 Զի այսպէս է վերստին ծնունդ հոգեւոր Աւագանին, որ զախտաւոր ծնունդն վերստին ստանայ առանց ախտի շնորհաւք եւ մարդասիրութեամբ Ամենասուրբ Երրորդութեանն: 137 Ոյք ոչ յարեմէ եւ ոչ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան առ հաւատչեայ ի ժառանգութիւնն Քրիստոսի: 138 Զի այսպէս ծնանին որդիք Աստուծոյ ի կերպարանս Որդւոյն Աստուծոյ, եւ լինին քարոզք ճշմարտութեանն ի նեղութեան եւ յանդորրու, եւ անսասանելի կան ի սէրն Աստուծոյ ուղիղ սրտիւ եւ ուղղափառ

Պ՝ Մ. Գ. Բ. 46
 Բ՝ Մ. Գ. Բ. 34
 Գ՝ Մ. Գ. Բ. 41
 Դ՝ Մ. Գ. Բ. 29
 Ե՝ Ե. Գ. Բ. 1-2

Ղ՝ Գ. Գ. 27
 Ծ՝ Յ. Գ. Բ. 22
 Կ՝ Տ. Գ. Գ. 1-3:
 Զ՝ Յ. Գ. Բ. 13

խոստովանութեամբ. եւ որդիք կենարար Հաւրն ընծային երկնաւորին անճառ շնորհաւք: 139 Եւ յայնմ հետէ զգործ Աստուծոյ գործեն եւ զկամս նորա արասցեն ըստ երախտեաց Բարերարին, եւ կցորդակից լինին զաւրաց երկնաւորաց առ սպասաւորութեան մարդկան շնորհաւք Արարչին, այնոցիկ՝ որ ժառանգելոց են զփրկութիւն յաւիտենից, որ ի Քրիստոս:

140 Եւ որպէս Որդին Աստուծոյ եղեւ որդի մարդոյ եւ զգեցաւ զմեր բնութիւնս եւ կատարեաց զարդարութիւնս ամենայն հոգևով եւ մարմնով, այսպէս եւ մեք զգեցցուք զուղղութիւն եւ կատարեսցուք զամենայն արդարութիւնս ի Քրիստոս, զի որդիք Աստուծոյ լիցուք եւ Աստուածք սիրով: 141 Զի մարմնացաւ Որդին Աստուծոյ կամաւք եւ յանձն էառ զամենայն կարիս մարդկային բնութեանս մերոյ բայց ի մեղաց: 142 Սոյնպէս եւ մեզ լիցի աստուածեղէն զաւրութեամբն ընդ ամենայն կիրս անցանել առանց յանցման, զի կարող լիցուք հասանել ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի. եւ այնպէս ճշմարտեալ ի կերպարանս Աստուծոյ, ժառանգեսցուք զարքայութիւնն Քրիստոսի: 143 Եւ պիտոյ է միշտ դաստիարակութիւն Աւետարանին, որ հրահանգէ զմեզ ի լաւութեան կարգս, զի յանձանձեալ ի շնորհաց Հոգւոյն Սրբոյ ճշմարտութեամբ անցուցուք զվաստակս արդարութեան սուրբ սրտիւ եւ ուղղափառ հաւատով յԱստուած: 144 Եւ ի տեսչութենէ նախախնամական սիրոյն Աստուծոյ արթունք եւ զուարթունք եղիցուք ի պատրանաց բանսարկուին միշտ. եւ հաստատուն յուսով եւ առաքինութեամբ, սուրբ վարուք, մաքուր հոգևով եւ մարմնով հասանել ի նաւահանգիստն խաղաղութեան յաւիտենական կեանսն, յանպատում կայեանսն, որ պատրաստեցաւ սրբոցն յանճառ սիրոյն Աստուծոյ: 145 Եւ որպէս արեգակնս այս, որ լուսաւորէ զերկիր եւ որ ի սմա են արարածք, որ երե-

ւելիք են ծովու եւ ցամաքի, այսպէս հաւատոյ ճշմարտութեանն բան եւ սրբութիւն լուսաւորէ զմիտս ցանկացողաց Աստուծոյ: 146 Եւ անձնիշխան կամաւք երկնաւորք եւ երկրաւորք, մարդիկ եւ հրեշտակք ճշմարտութեանն վարդապետք եղեն ի շնորհաց Սուրբ Հոգւոյն՝ ստոյգ գիտութեամբ եւ անմոլար իմաստութեամբ ըստ արդարութեան աւրինացն: 147 Եւ այնպէս առաջնորդեալ լուսով Երրորդութեանն ստոյգ պատմութեամբք արարչական էութեամբք՝ լցին զերկինս եւ զերկիր ճառագայթիւք որպէս զարեգականս լոյս ի կեանս եւ ի փառս երկնաւորաց եւ երկրաւորաց: 148 Իսկ սատանայ, որ աստուածանալն կամեցաւ, տեսեալ զինքն ի պայծառութեանն եւ ամպարհաւաճեալ՝ որպէս կարծէր՝ վրիպեցաւ ի փառացն, եւ ի վայր կործանեցաւ ի պատուոյն, եւ զմարդիկ որսաց ի կորուստ, եւ սնոտի յուսովն ստերիւրեալ հոգևով մոլութեամբ ընկէց ի սիրոյն Աստուծոյ ի պէսպէս ցանկութիւնս¹ ամպարչտութեան:

149 Այլ թէ ասիցէ ոք, որպէ՞ս ներեաց Աստուած սատանայի այնքան տարածել զմոլորութեանն զանաւրէնութիւնս՝ իմացիր. զի իշխանական կամս է հրեշտակաց եւ մարդկան որ յԱստուծոյ պատուեալ². զի որ ընտիրքն իցեն՝ երեւեսցին ի նոսա, եւ ըստ արժանեացն ընկալցին զհատուցումնն ի դէպ ժամանակի զփառս եւ զտանջանս յԱրարչէն ամենայն արարածոց: 150 Զի որպէս մահ թագաւորեաց ի ձեռն յանցուածոցն Ադամայ, այսպէս եւ սատանայ ի վերայ մեղաւորաց տիրեալ: 151 Զի սիրեցին, ասէ, մարդիկ զմոլորութիւն. վասն այսորիկ առաքեաց ևնցա Աստուած ազդեցութիւն մոլորութեան, զի դատապարտեսցին, զի հանեցան ընդ չարն³:

1 Միւսն՝ յանառակութիւնս

2 Միւսն՝ պատրաստեալ

3 Լճ. Գ. 19:

152 Սակայն ոչ իսպառ եթող զարարածս ի նախախնամական սիրոյ իւրոյ, այլ գալստեամբ Որդւոյն իւրոյ, որ եկն յաշխարհ փրկել զմեղաւորս ի ծառայութենէ սատանայի, հաւատովք յագատութիւն փառաց Որդւոյն Աստուծոյ. զի լուծաւ բռնութիւն նորա յորդոց ի մարդկանէ, որ տիրէր մեղաւք, յերեւել Փրկչին: 153 Եւ շնորհաւք թագաւորեսցեն հաւատովք՝ որ ի Սուրբ Երրորդութիւնն. եւ գտեալք զթողութիւն լուսաւոր Աւագանան եւ Մարմնով եւ Արեամբն Քրիստոսի, ընդունելութեամբ Հոգւոյն Սրբոյ, որ աղբիւրաբար բաշխեաց զշնորհս յարարածս: 154 Զի արդարացեալք ի հաւատոց անտի. զխաղաղութիւն կալցուք առ Աստուած, ի ձեռն Քրիստոսի Յիսուսի առ հաւատչեայ ժառանգութեանն, զի նորոգեսցի փառս անեղծութեան կամաւոր խաչելութեամբ իւրով: Եւ մահուամբ ելոյժ զմահ եւ յարութեամբն իւրով զմեզ ի մեռելութենէ մեղացն յարոյց, զի մեք ի նորոգումն կենաց կացցուք եւ մնասցուք յուսով յարութեանն ի փառս Ամենասուրբ Երրորդութեանն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Գ

ՄԻՏՔ ՀԱԻԱՏՈՅ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՅ ԼՈՒՍԱԻՈՐՁԻ

1 Ըշմարտութիւն հաւատոյ լոյս է աչաց մտացն, շարժմանցն խորհրդոց յիշատակացն, զգացեալ զլոյսն գիտութեան եւ գիմաստութեան շնորհաց Հոգւոյն Սրբոյ: 2 Որ գառաջնորդական միտսն լուսաւորէ, եւ Գրովք Սրբովք յանդիման կացուցանէ զաներեւոյթսն, որպէս տեսիլս աչաց զարեգական լոյս եւ զայլ եւս լոյսս. այսպէս երեւութանայ աստուածային Տէրութեանցն մեծութիւնք անքնինք: 3 Զի աննման եւ անհամեմատ է, անպատում եւ անսահման, անհաս եւ անբաւ, այլ հաւատով տեսանի եւ իմանի եւ աւրհնի յարարածոց աներկբայ հաւատով ի նեղութեան

եւ յանդորրու. եւ զաւրացեալ հաւատով՝ որ ի Սուրբ Երրորդութիւնն, կայ եւ մնայ անսասանելի առ մարտակից հաւատոցն: 4 Զի լուսաւորեալք ուղիղ հաւատովք յանսկիզբն էութիւնն, ի մշտնջենաւոր Լոյսն, ի կենդանարար Կենդանութիւնն, յանփոփոխ ձշմարտութիւնն, մի՛ եւս խտորեսցուք յունայնաբանութիւնս՝ որ ի Հայր եւ յՈրդի եւ ի Սուրբ Հոգին հայհոյութիւնք:

5 Այլ զգրաւական աւետեացն շնորհաց մի՛ իւրք թողցուք, զի հասցուք խոստացեալ երանութեանցն եւ անմահութեանց եւ անեղծութեանց: 6 Եւ զդարմանս սիրոյ բարերարութեանն միշտ ընկալցուք զՏէրութեանն. եւ զարքայութեան յոյսն ի սիրտս մեր հանապազ ունել, եւ զկենդանարար շնորհացն զպարգեւսն ոչ մոռանալ որ ի Տեառնէ. եւ զխնամակալութիւնն՝ մերոյ անգիտութեանս եւ տկարութեանս աւգնական ունել ընդդէմ հնարից սատանայի, որ յամենայն ժամ է թշնամի: 7 Եւ զաւրացեալ ի կենաց Առաջնորդէն ի խրատուց, ըստ աճման հաւատոց ի կատարումն առաքինութեան եկեսցուք: 8 Եւ յամենայն վարս զխրատ սրբոցն ի միտս ունել յերեւելիս եւ յաներեւոյթս. եւ այնպէս ծանիցես զճշմարտութիւնն: 9 Վասն զի ոչ ի քէն բաւես հասու լինել աստուածային մեծութեան փառացն, նա եւ ոչ հոգեղինացն գունդք հրեշտակաց՝ սերովբէիցն եւ քերովբէիցն, եւ ամենայն երկնաւոր զուարթունքն անհաս են աստուածային փառացն:

10 Մովսէս մտերիմ ծառայն Աստուծոյ զէութիւնն քարոզեաց մեզ, ոչ յինքենէ, այլ ի նոյն իսկ յԱստուծոյ: 11 Ես եմ, ասէ, Աստուած՝ որ էմ[»]: 12 Եւ այսպէս սիռեաց յարարածս զլոյս աստուածային էութեանն, զի անմոլար գիտութեամբն խոստովանեսցին զանբաւ մեծութիւն փա-

[»] Եւ. Գ. 14

ուացն, զանծին Իսկուծիւնն եւ զանսկիզբն էութեանն ճշմարտութիւն, զանփոփոխ Մշտնջենաւորութիւնն եւ զանհաս եւ զանվրէպ զԻմաստութիւնն, զորս քարոզեցին աւրէնսդիրք եւ աւրինապահք ըստ իւրաքանչիւր շնորհի: 13 Ձի զգծնդակ եւ զաղտեղի եւ զվնասակար ապերախտիսն խլեսցէ, եւ զլուսաւոր եւ զշահաւոր եւ զաւգտակար զերախտիսն յորդորեսցէ մինչեւ ի վախճան ժամանակաց: 14 Եւ այնու փառաւորեցան եւ պատուեցան արքանեակք Բարերարին: 15 Ձի յորժամ առաքէր Աստուած զՄովսէս առ ապերախտ ժողովուրդն, եցոյց զխնամոց իւրոց զքաղցրութիւն, զի ասէ. Գթած եմ ես եւ ողորմած, երկայնամիտ եւ բազումողորմ, եւ զղջանամ ի վերայ արարածոց^{***}: 16 Ձի այսպէս ուղղեսցէ զվրիպեալսն ի շնորհէն, եւ նորոգեսցէ վերստին ամենակալ զաւրութեամբն եւ ամենառատ պարգեւատու սիրովն, որ կոչեցան՝ յորդեգրութեան շնորհ: 17 Եւ այսպիսեալք ազատ առաքինութեամբ յանարատ սրբութիւնն փափագանալք միացուցանէ լուսաւորս յաշխարհիս Ամենասուրբ Երրորդութիւնն եւ յորդեգրութիւն կարգէ անփոփոխ ճշմարտութեամբն: 18 Ձի Տէրն է այսոցիկ արուեստից արուեստաւոր. աշակերտս ստանալ եւ նահատակս առաքինիս եւ ճշմարտութեան գործակիցս յիւրոց արարածոց, զի այս տեսուչք հոգւոց եւ մարմնոց լինիցին ի սէրն Աստուծոյ հեռաւորաց եւ մերձաւորաց:

19 Արդ, հաւատովք ճշմարտութեան եւ առաքինութեան հանդիսիւքն, արդարութեամբ եւ սրբութեամբ լիցուք հաստատեալք յաներեւոյթ մեծութեանն ի փառսն, որ անքնին է եւ անպատում ըստ աւետեացն անսպառ եւ անճառ փառաւորութեանն: 20 Եւ անզեղ սրտիւ եւ ճշմարիտ խոստովանութեամբս աւրհնել զանքնին

Արարիչն, եւ անշարժ մնալ ի յոյսն կենդանի եւ հանգստարար հանգիստն որպէս երեւմամբք լինել. Զոր ակն ոչ ետես, եւ ունկն ոչ լուաւ, եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց[‡]: 21 Ձի անճառ է բարութիւնքն, զոր վայելեն սուրբքն բորբոքմամբ խնամոց եւ կենդանարար սիրոյն Աստուծոյ:

22 Ի վերայ այսր ամենայնի գոհանալ պարտիմք միշտ զարարչական խնամոցն, որ արժանիս առնէ այնքան բարեաց երեւելեալք եւ աներեւութիւք: 23 Եւ աւրհնելով աւրհնեսցուք զանմահ Տէրութիւնն ի տուէ եւ ի գիշերի անմեղկելի սիրով, մտերիմ կամալք եւ անարատ սրբութեամբ. անմոռաց յիշատակալք զխնամս սրբութեանն ի մտի ունել ի գովեստ փառացն Աստուծոյ՝ վկայութեամբ հաճոյից նորա: 24 Ձի որպէս ճառագայթք արեգական յառաջ ընթանան եւ զկնի ծաւալին, այսպէս յառաջ ճշմարտութիւն էութեանն, անփոփոխ իսկութիւնն, որ անհաս է քան զմիտս եւ զխորհուրդս, որ պատմի նախ քան զարարածս եւ յետոյ քան զյաւիտեանս յաւիտենից, որ ի վերոյ քան զերկինս երկնից եւ ի խոնարհ քան զանդունդս ծովու. որ յանբաւութեան կայ եւ մնայ: 25 Ձմիոյ անսկիզբն էութեան բարերար կամացն ունին զայցելութիւն յԱրարչէն արարածք. զի այնպէս անսահման է եւ անկշիռ, անբաւ եւ յստակ աղբիւր, եւ ամենագաւր եւ ամենակալ: 26 Կեանք է եւ կեցուցիչ, լոյս մշտնջենաւոր, ահեղ, հզաւոր, ամէնիմաստ եւ յառաջագէտ, բարերար եւ տուող բարեաց, գթած եւ ողորմած, ներող եւ երկայնամիտ, սուրբ սրբոց եւ մաքրութիւն ամենայն արարածոց: 27 Ձի եթէ բիւրաւոր զաւրք անմարմնոցն եւ լուսաւորք երկնից եւ որ երեւինս եւ որ ոչն երեւինս եւ որդիք մարդկանս եւ որ ի

^{***} ԻՕԳ·Ե 10·Եւ·Լ·Կ·6

1 Միւսն՝ կոչեացն

[‡] Լ·Կ·Գ·Լ 19

յերկրի են եւ ի ծովու անբաւ կենդանիք եւ որ այլ եւս ի նոսա անշունչք արարածք ի լեզուս գայցեն, բան գովութեան ոչ բաւեն ըստ նորա մեծութեանն փառացն գովութիւն մատուցանել զարժանն իւր:

28 Արդ, որ այնքան անհունն է մեծութեամբ փառաւք, եւ բարձրագոյն քան զամենայն իմանալիս եւ տեսանելիս, այլ խոնարհի յարարածս եւ իմանի եւ տեսանի ըստ մերում զաւրութեան եւ խնամոց իւրոց: 29 Եւ հրեշտակք, որ քան զմիտս մարդկան սրագոյնք են, ոչ բաւեն հասու լինել մասին, զի ա՞րդ կարացուք մեք երկրաւորքս հասու լինել փառացն: 30 Զի ոչ ո՞ք գիտէ, ասէ, զՀայր, բայց Որդի. եւ ոչ զՈրդի եւ զՀոգի, եթէ ոչ Հայր^ա:

31 Իսկ խնամք բարերար կամաց սիրոյն Աստուծոյ բազմարուեստ դարմանաւք, որ յանսկիղքն էութենէն եւ յանփոփոխ մշտնջենաւորութենէն, տնաւրինէ յարարածս ի հովուել եւ ի խնամել, Ամենասուրբ Երրորդութիւնն, որ լին է ամենարուեստ բարուք: 32 Զի բազմառատ շնորհաւք իւրովք եւ կենարար առաքիւնի ընտրեալ առաքիւնութեամբն յերանելի հանգիստն ժողովէ եւ փառաւք պսակէ ի մշտնջենաւոր եւ յանուշակ պարգեւսն: 33 Զի վասն այսորիկ ստեղծ Արարիչն զզաւրս հրեշտակաց եւ զմարդիկ յանձնիչխան կամս, զի ընտրութեամբ հոգեւոր աւրինացն փոփոխումն առցեն. ի փոքրկութենէ զմեծութիւն, յանարգութենէ զպատիւ, յապականութենէ զանապականութիւն, ի մահկանացուացն¹ զանմահութիւն Աստուածութեանն՝ որ ի Քրիստոս Յիսուս: 34 Ուր չիք փոփոխումն ժամանակաց եւ հանումն բարեաց տուելոց յարքայութեանն Աստուծոյ: 35 Միշտ ի մշտնջենաւոր երանութիւնսն վայելել ի փառս Ամենասուրբ Երրորդութեանն Հաւր եւ Որդւոյ

եւ Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս յաւիտենիցամէն:

Դ

ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ ՄՈՒԱՐ ՄՏԱՅ ԵՒ ԸՆԾԱՅՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱԻՈՐՉԻ

1 Զի անհամեմատ ամենակալ² Ամենասուրբ Երրորդութիւնն է. եւ յանսկիղքն էութենէն եւ ի մշտնջենաւորութենէն հաստատեցան ամենայն արարածք երեւելիք եւ աներեւոյթք: 2 Երկինք եւ երկիր եւ ամենայն որ ի նոսա, ի միոյ արարչէն արարան ամենակարող զաւրութեամբն, ամենալոյս լուսովն եւ կենդանարար տերամբն. զի լի են արարածք ամենայն փառաւք նորա: 3 Որ ամենիմաստ եւ ամենագէտ եւ ամենատես բարերար կամաւքն իւրովք խնամէ զարարածս իւր, զոր յոչընչէ եւ ի չգոյէ գոյացոյց. զհոգեւորս եւ զմարմնաւորս, զշնչաւորս եւ զանշունչս: 4 Եւ զտարերս ամենայն չորիւք յեղանակաւք յարդարեաց, բարձրութեամբ եւ խորութեամբ, լայնութեամբ եւ երկայնութեամբ: 5 Եւ զորս արար կենդանիս եւ անմահս, մտաւորս եւ բանաւորս. որ են գունդք հրեշտակաց եւ երկնաւոր զաւրք, որ կարգեալ են ի պատիւ եւ ի պաշտաւն եւ յանդադար փառաբանութեան ամենազաւր տէրութեանն: 6 Կացոյց եւ լուսաւորս յերկինս յառաջնորդութիւն եւ ի փոփոխումն աւուրց եւ ժամանակաց, ի սնունդ մարդկան եւ ամենայն կենդանեաց եւ բուսոց եւ տնկոց: 7 Նա եւ զհուր եւ զջուր, զամպս եւ զհողմս յարդարեաց ի պէտս ազգի ազգի բուսոց եւ տնկոց, որ ի պէտս մարդկան արարան իւրաքանչիւր: 8 Եւ որ ի ջուրս են զողակք³ եւ ձկունք. ազգք զազանաց պէսպէս բնութեամբք եւ

^ա Մատթ. ԺԼ՝ 27
1 Յերկոսիւն օրինակսն՝ ի մահկանացուածս

2 Մերն՝ հաւատոյ
3 Միւսն՝ լողակաւնք

զանազան կերպարանաւք ի ծովու եւ ի ցամաքի, մեծամեծք եւ փոքունք, քաղցունք եւ դառինք, շայեկանք եւ անշահք: 9 Նմանապէս ի տունկս եւ ի բոյսս որ ի պէտս արարան մարդկան, եւ ոչ Արարչին: 10 Արար եւ ոսկի եւ արծաթ եւ պղինձ եւ երկաթ, եւ պատուական քարինք եւ անարգք ի պէտս մարդկան ի վկայութիւն մեծին Աստուծոյ արարան: 11 Եւ ի չորից նիւթոց զերեւելիսս եցոյց. խոնաւ եւ ցամաք, ցուրտ եւ ջերմ յԱստուծոյ կազմեցան:

12 Եւ ի նոյն նիւթոյ արարեալ զմարդն, եւ շնչեաց ի նա հոգի կենդանի եւ անմահ, մտաւոր եւ բանաւոր: 13 Եւ խառնեաց զհոգեւորն ընդ մարմնաւորն, զի զհանդէս իւրոյ մտերմութեանն ցուցցէ առ Արարիչն, ժողովալեալ հոգեւոր սիրով պահիցէ զպատուիրանն ահիւ Տեառն, զի հաճոյացեալ Աստուծոյ՝ ժառանգորդ լիցի անվախճան երանութեանցն. զի Արար, աւսէ, զմարդն ի պատկեր իւր, եւ Տէր ամենայնի կացոյց զնա, եւ ըստ պատկերի իւրոյ արար զնա՞, որ ըստ Քրիստոսի մարմնանալոյն է իմանալ: 14 Եւ անձնիշխան կամաւք մեծարեաց զմարդիկ որպէս զհրեշտակս, եւ ելից իմաստութեամբ եւ գիտութեամբ, եւ տեղեակ ամենայն հանգամանց եւ խրատու հոգեւորաց առ ի հաճոյս տէրութեանն իւրոյ. զի լիցի տեսուչ Արարչին արարածոց ըստ պատուիրանի նորա: 15 Եւ զամենայն տարերս ի գործ արկցէ արուեստիւ հանճարոյն մարդոյ առ ի շինութիւն աշխարհի ըստ գաւառաց եւ քաղաքաց: 16 Այլ եւ կահս եւ կազմուածս եւ անաւթս ըստ արուեստիցն կազմեցցէ առ ի պէտս վարուց աշխարհիս, որով պէտք տնաւրինին:

17 Եւ շնչաւորաց անասնոց եւ գազանաց եւ թռչնոց ետ բարս եւ ուշ առ ի պէտս: 18 Որոց ուշն զբարսն շարժէ առ ի

ներգործութիւն. եւ բարուց նոցա վարդապետ զմիտս մարդկան առ ի պէտս իւրաքանչիւրոցն եւ ի մերոյ սպասաւորութեանս: 19 Եւ ի նոսին են մանունք եւ մեծամեծք, անարգք եւ շայեկանք, պիտանիք եւ անպիտանք, զագիրք եւ գեղեցիկք, զի երեւեսցի լաւն ի վատթարէն եւ անարգն ի պատուականէն: 20 Որպէս ի խաւարի լոյս երեւի, եւ ի գազանաց զգաւնն, եւ ի թիւնաւորաց անմեղանչականն, եւ յանշայեկանէն շայեկանն, սոյնպէս է եւ ի տունկս եւ ի բոյսս, այլագոյք¹ եւ հոտովք եւ համովք, քաղցր եւ դառն, անոյշ եւ անհամ, զի երեւեսցի լաւն ի վատթարէն, որ առ դարմանս եւ առ բժշկութիւնս կարգեցան ըստ ներգործութեանն Աստուծոյ: 21 Եւ են որ անծանաւթք են, եւ են որ ծանուցեալք ըստ տեղեաց տեղեաց: 22 Է ինչ եւ ի սողունս՝ իրաց ինչ ի պէտս. որպէս յաւճիցն ասէ զթերակէն:

23 Զի այսպէս յաւրինեալ Արարչին զնախախնամութիւն յարարածս իւր, որ երեւին եւ որ ոչն երեւին, այսր ամենայնի տէր եւ իշխան եւ ժառանգաւոր արար զմարդն երեւելեացս արուեստաւոր մտաւք: 24 Զի յոչընչէ արար զամենայնս եւ թագաւոր կացոյց զմարդն եւ մեծարեաց. զի նովաւ ծանիցի արարողն եւ փառաւոր լիցի միշտ. եւ մարդն ծանիցէ զինքեան զպատիւն որ յանպատուութենէ ի պատիւ վերաբերեաց յամենայն արարածոց: 25 Որ արուեստաւոր խելամտութեամբ որ յարարչէն՝ կարասցէ ի գործ արկանել զշնչաւորս եւ զանշունչս. զի երեւեսցի գործ իմաստութեան ըստ ամենայնի որք ընդ հնազանդութեամբ են անկեալք ի Տեառնէ ի գործ պիտոյից, եւ կամ առ շինութիւն եւ ի զարդ, կամ առ այլ ինչ փարթամութիւնս: 26 Յայսոսիկ վայելելով իշխանական ճոխութեամբն՝ փառաւորեսցէ միշտ զբարեգործողն: 27 Զի այսքան

¹ ԿՊ. Ը 27

¹ Այդպէս յերկոսին օրինակսն

պատիւ տուաւ մարմնաւորացս որպէս եւ հոգեղինացն եւ անմարմնոցն եւ անմահիցն. եւ արար ընտրողս եւ գովողս արարչութեանն, որ միշտ աւրհնեսցեն զնա ի ձեռն աւրինաց եղելոց. զի իւրեանց իշխանական կամաւքն հաստատեսցին ի հաւատս ճշմարտութեանն, եւ ընտրեսցեն զԱրարիչն եւ զարարածս ի միմեանց, զգարմանիչն եւ զգարմանաւորսն, զկեցողիչն ամենայն կենդանեաց, որով լնու զպէտս պիտոյից ամենայն արարածոց:

28 Եւ զի արժան է յամենայն ժամ կարգալ առ նա եւ խնդրել զայցելութիւն հոգեւորաց եւ մարմնաւորաց եւ գործակից լինել բարերար կամաց նորա եւ անվնաս մնալ առ երախտաւորն Աստուած: 29 Եւ այսու աւրինակաւ փոխել ի վատթարէն ի լաւն, յանարգանացն ի պատիւ, ի ծառայութենէ յազատութիւն Որդւոյն Աստուծոյ, եւ յընդանութիւն ճշմարիտ հաւատոցն՝ որ ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգին Սուրբ. ժառանգաւոր լինել երկնից արքայութեանն եւ անվախճան երանութեանցն: 30 Զի նա է արարիչ ամենայնի, որ արար զպաշտաւնեայս իւր հոգիս եւ ի բոց հրոյ, զվերին զաւրսն: 31 Եւ զմարդիկ յերկրէ ստեղծեալ, անտստին եւ զկեալն ունի դարմանաւք: 32 Որք եւ ի հրեշտակաց դաստիարակին ի հոգեղինացն վարս ըստ նախախնամութեանն Աստուծոյ, որ զաւրէնսն յաւգնականութիւն ետ, որ ի հրեշտակաց քարոզեցաւ:

33 Այլ եւ ի մարդկանէ հաճեցաւ Աստուած քարոզ լինել ճշմարիտ աւանդիցն. որք հաւատարիմ գտան առ պատուիրանս նորա եւ հաճոյացան Աստուծոյ, եւ զբազումս ի մարդկանէ դարձուցին յաստուածգիտութիւն եւ յուղղութիւն ըստ կամաց արարողին կենաց: 34 Եւ որք արհամարհոտք գտանին Աստուծոյ եւ նանրացեալ ի խորհուրդս իւրեանց եւ խաւա-

րեալ անմտութեամբ սիրտք նոցա՞, որպէս ասաց առաքեալ, զրկեցան յամենառատ բարերարութեանցն: 35 Զի ոչ միայն զխնամս Արարչին արգելին իւրեանց անհնազանդ բարուքն եւ յետսընդդէմ գնացիւքն, այլ եւ զբարկութիւնն Աստուծոյ յինքեանս շարժեցին յարդար եւ ի մարդասէր դատաւորէն: 36 Որ անկան ի փառաց եւ ի պատուոյ, ի նախախնամութենէ բարերար կամացն, եւ ի հրեշտակաց դաստիարակութենէ՝ որ զաւրավիզն էին:

37 Այլ որք մտերմութեամբ կացին մնացին համբերութեամբ յամենայն նեղութիւնս, ի նորին խնամսն վայելեն աստ եւ ի հանդերձելումն: 38 Եւ որք մոլորեցան ի ճշմարտութենէ անտի, բարկութիւնն Աստուծոյ կայ մնայ ի վերայ նոցա: 39 Զի զտարերս ամենայն աստուածս արարին, զչնչաւորս եւ զանշունչս, զջուր եւ զհոլր: 40 Զի ջուրն ի պէտս կենդանեաց արարան յԱստուծոյ, որ արբուցանեն զերկիր. եւ դարձեալ ապականին նեխելով եւ նուազելով: 41 Եւ հոլր առ ի պէտս մեր արարաւ, որ դարմանաւք վառի եւ սպասաւորէ մեզ. եւ ի պակասել կերոյն¹, շիջանի եւ ապականի: 42 Նոյնպէս եւ հողմք եւ ամպք ի պէտս եւս այլ արարածոց արարան, եւ ոչ ինքեանք եղեն. եւ ապականացուք են յորդորելով եւ պակասելով աւգտել եւ վնասել, զիւրեանց տկարութիւնն ցուցանելով: 43 Եւ երկինք եւ երկիր ոչ ինքնին եղեալք, եւ որ ի նոսա զեռունք իցեն եւ անշունչք, այլ յԱստուծոյ արարան, եւ ապականացուք են: 44 Երկինք լուսաւորաւք եւ երկիր կենդանեաւք եւ բուսովք եւ տնկովք, եւ ամենայն ձեռագէտ արուեստից, որ ստեղծանեն պատկերս յարարածոց Աստուծոյ աստուածս, սուտ են եւ ապականին. որպէս իմաստնոց է քաջայայտ: 45 Նա եւ ոսկի եւ

¹ Հմբ. Եփե. Գ՝ 18:

1 Միւս օրինակն՝ կերակրոյն

արծաթ եւ ականք պատուականք եւ պղինձ եւ երկաթ ի մարդկանէ ճարտարաց ի պէտս ինչ իրաց կազմեցին, եւ կամ ի զարդ ինչ նիւթոյ հասարակաց Արարչին առնելոյ իմաստութեանն Աստուծոյ նախախնամեալ: 46 Զի երկինք եւ երկիր եւ ամենայն զարդ նոցա յԱստուծոյ արարան յոչընչէ. եւ չեն աստուածք տարերքս ամենայն, այլ արարածք հասարակաց արարողին:

1 Յորժամ բազմացաւ իմաստութիւն յաճումն չափոց հասակի արարածոց, եւ եհաս տղայութիւնն յայր կատարեալ, զի բաւականասցի լսել բանիցն ճշմարտութեան, որ պիտոյ եղեւ քարոզութեան մարգարէիցն զանմոլար գիտութիւնն սփռել ի լսելիս մարդկան. զի հաւատով ընկալցին զանմոլար իմաստութեանն զխրատան, եւ գիտութեան Արարչին եւ հաճոյիցն տեղեակ լիցին, ի ձեռն ճշմարիտ հոգեւոր աւրինացն եւ պահպանութեամբ պատուիրանացն անվնաս կալ առ դժնդակ վարս, եւ հանդիսանալ ի բարի վարս եւ պատճառաւգտից լինել հեռաւորաց եւ մերձաւորաց ի փրկութիւն:

2 Եւ այս ամենայն յանհաս իմաստութենէ Արարչին մատակարարի յարարածս ամենայն. որ լուսաւոր ճառագայթիւքն

1 Միւսն՝ գերկիցս

2 Միւսն՝ նշմարիտ

զիմանալիսն լուսաւորէ. զի նորոգեացէ զզգայարանս հոգեւոր խրատուն. զի անկորուստ պահպանեսցի աստուածային կամացն հաճոյութիւն: 3 Եւ արդարակչիւ իրաւամբք յառաջանալ ի հանդէսն բարեաց. վկայ լինել արդարութեան եւ ճշմարտութեան աւանդիցն: 4 Եւ այս ամենայն ի շինութիւն հոգեւոր մասինն ժառանգաւորաց արքայութեանն երկնից, եւ կարգաց աշխարհիս երեւելեաց եւ աներեւութից. եւ տեղեակ լիեալ ամենայն լաւութեան կարգաց, եւ բնութեան արարածոց հասու լինել:

5 Զի կարգեաց Աստուած զաշխարհս որպէս դպրոց. զի ուսցին արարածք զինամս Արարչին յառնելն եւ ի կազմելն, եւ միշտ նախախնամութեամբ նորա դարմանեալք որ երեւին եւ որ ոչն երեւին: 6 Զի յոչընչէ անտի սկիզբն արար միովն՝ եւ ած մինչ ի հազարս եւ ի բիւրս զիւրաքանչիւրսն. զի լաւութեան հանդիսիւք առաքինացն: 7 Եւ ի գլուխ ելեալ ամենայն վարքն առաքինութեան, ի վախճանի աշխարհիս պարգեւէ զանմահութեան զպարգեւսն յանփոփոխելի եւ յանհամատ յաստուածեղէն մշտնջենաւոր արքայութեանն երկնից ի Քրիստոս: 8 Զի նախ ի սկզբան զմտացն խնդրէ զուղղութիւնն աւրինադիր բանն. եւ ապա ի մշակութիւն կացուցանէ առնել զաւգտակարսն, եւ ի բաց կալ ի վնասուց:

9 Նա եւ զքննութիւն արարածոց յաւրինեաց որպէս զգիր դպրութեան եւ եզ անուանս, զի անուանքն զընտրութիւնն տայցեն զգրոյն ի միմեանց զորոշումն. եւ գիրն զբարս անուանն կարգացէ: 10 Զի երկուս երկուս յաւրինեաց, զի մին միւսոյն քարոզիչ իցէ. եւ բնութեանցն երկուց՝ երկու անուանք պիտոյանան, որ որոշեն զնոսս ի միմեանց. եւ անուանցն՝ բնութիւնքն պիտոյ են, որ կային ունէին

զանուանսն. զի էր, աւէ, աներեւոյթ եւ անպատրաստ երկիր ամենայնիւ: 11 Եւ սկիզբն արարեալ¹ բանիւ յաւրինել զարարածս, կոչեաց, *ասէ*, զլոյսն տիւ, որ յայտնիչ է արարածոց կազմածոց. զի զոր բանն յաւրինեացէ, լոյսն զյաւրինուածսն ցուցանիցէ. զի աներեւոյթն, եւ անկազմն ծածկեալ ունէր որպէս խաւար գերկիր: 12 Որպէս կոչեաց զլոյսն տիւ, սկիզբն արար կարգելոյ պատմութեանն, զի ի թիւ անկցին: 13 Եւ եթէ ոչ էր խաւար, լոյս ի՞նչ անուանէր տիւ, եւ կամ խաւարն գիշեր: 14 Դարձեալ քաղցր եւ դառն ասի՝ որ համահամ² քմացն ճանաչի. եւ յանուանէ որոշի քաղցրն եւ դառնն. եւ այս ի տեսչութենէ արարողին է հաստեալ: 15 Եւ լոյսն զմարդիկ յորդորէ յամենայն պէտս աւգտի. զի ամենայն գիւտք աշխարհիս՝ գործոց կամ արուեստից³ իւր աշխատութեանն գինք իցեն աշխատութեամբ. եթէ դարբնութիւն, եթէ մշակութիւն, եթէ ճանապարհորդութիւն եւ եթէ այլ ինչ պէսպէս արուեստք շահից, զոր ետ Աստուած ի պատիւ անձնիշխան կամացն որպէս որդւոց ի խնամակալութիւն. եւ զգիշերն ետ ի հանգիստ քնոյ՝ դարման աշխատութեան, զի տկարութիւնն զաւրասցի, եւ նորոգեալ հանգստեամբն անդրէն ի տիւն դարձցի ի գործսն՝ որ աւգուտ եւ շահ ստանայ: 16 Որպէս քաղցրն եւ անուշն եւ դառն եւ կծուն ի պէտս բժշկաց տնաւրինին, եւ որ այլն եւս: 17 Որպէս զհամեմոցն է գիտել առ զանազան խորտիկսն անուշել. զի սոքա յարգեսցին նոքաւք, եւ նոքա սոքաւք:

18 Այլ եւ անուանս ունին. զի որպէս հանգիստ եւ աշխատութիւն կարաւտ են միմեանց, զի աշխատութեամբ շահիցն ի

¹ Ծն. Լ 2

1 Միւսն՝ կարգեալ

2 Միւսն՝ ի համահամ

3 Միւսն՝ արուեստից աշխատութեամբ է, իւր աշխատութեանն գինք իցին, ի լուսանցսն՝ գիւտք իցեն

Հանգստեանն վայելեսցէ, այսպէս է իմանալ զամենայն խառնուածս արարածոց ի միասին: 19 Որպէս ցուրտ եւ տաւթ, որ մինն զովացուցանէ եւ միւսն ջեռուցանէ¹. երկաքանչիւրոցն պիտոյացեալ գեղեցիկ խառնուածովք ըստ բարեաց արարողին՝ եւ ոչ ի պատիժս ինչ շարժեալ ի սահմանէն. զի Սաիման եղ, ասէ, որ ոչ անցանցն²: 20 Զի մարդ հնարագէտ է ի խնամակալութենէ Արարչին առ ի պէտս իւրոյ փրկութեանն եւ վայելելոյ ի բարութիւնսն անձնիշխան կամաւք: 21 Զի որպէս որդի ի հաւր խնամս վայելիցէ. եւ ոչ որպէս ծառայ ընդ հարկաւք, որպէս եւ այլ արարածք իցեն:

22 Դարձեալ աւդք՝ են որ ցամաքեցուցանեն, եւ են որ խոնաւեցուցանեն գերկիր եւ զբոյսս. են որ յաւգուտ մատակարարին, եւ են որ ի վնաս, ըստ նախախնամութեանն Աստուծոյ ի միմեանս խառնեալ. այլ եւ անուանս ունին: 23 Սոյնպէս եւ առողջութիւն եւ ցաւք. զի առողջութիւն ի գործ մշակութեան առաքինութեանն յորդորէ եւ յարուեստս շահիցն. եւ ցաւք՝ բժշկաց կարաւտին Աստուծոյ եւ մարդկան: 24 Այլ եւ համբերութեամբ զթողութիւն սխալանացն գտցէ, եւ վարձս եւս, որպէս եւ Յովբ. եւ անուանս եւս ունին: 25 Սոյնպէս տրտմութիւն եւ խնդութիւն յորժամ ըստ իրաց աշխարհիս իցէ, մահ եւ ապականութիւն գործէ. իսկ ըստ Աստուծոյ լիեալ, մխիթարութիւն ընձեռէ, եւ յուսով զխնդութիւն ըստ խոստացեալ բարեացն. եւ անուանս ունին: 26 Սոյնպէս լիութիւն եւ կարաւտութիւն միմեամբք յարգին². զի լիութիւն կարաւտութեամբն վայելէ, եւ կարաւտութիւնն զհանդէս ժողովարութեանն ցուցանէ, եւ

ժրութիւն մշակութեամբն ամենարուեստ. եւ միաբանեալք աւգուտս ունին եւ անուանս ըստ երեւմանցն: 27 Սոյնպէս երկիւղ եւ անհոգութիւն. զի երկիւղ անհոգութեան ցանկայ, եւ անհոգութիւն երկեղի. որ զգուշացուցանէ ի կամս Տեառն, եւ ոչ թողու յապիրատութիւն: 28 Եւ ի միմեանս խառնեալ ըստ պատուիրանին՝ զաւգտակարսն ի մեզ ամբարեն ըստ անուանն կոչման: 29 Սոյնպէս փառաւորութիւն եւ անարգութիւն միմեանց տեղի տալով՝ ի սահմանին կան մնան. ապա թէ ելանեն ըստ չափան, վնաս առնեն ի հոգեւորս եւ ի մարմնաւորս. որպէս եւ ամենեցուն քաջայայտ է այս. եւ յանուանցն ծանիցուք զիրսն: 30 Սոյնպէս եւ բարիք եւ պատիժք ոչ են մի, եւ երկուքին պիտոյանան. մին յորդորէ ի բարի գործս, եւ միւսն զհամարձակեալն ի մեղս արգելու. եւ խոշտանգանաւք լուծցեն զվարսն եւ դարձցին ի լաւն: 31 Եւ բարեգործք մի՛ մոռասցին զԲարեբարն եւ զերանելի ժառանգութիւնսն եւ զաւետիսն խոստացեալ, որ առաւելու ի բարիսն. եւ այնպէս զանուանսն առնուն:

32 Եւ ազատութիւնքն ազատ են ի մէջ մեղաց եւ փառաւորեալ յամենայնի. եւ նկուն մեղքն ի մէջ արդարոց. զի ցանկացեալ արդարութեան, եւ յիշեսցեն զսպառնալիս մեղաւորացն, եւ փութասցեն յապաշխարութիւն խոստովանութեան, եւ ապրեսցին ի բարկութենէն որ գալոցն է ի վերայ անաւրինաց եւ անհնազանդից, անսրբոց եւ պղծոց. եւ լիեալ յարդարութեան՝ կեցցեն: 33 Իսկ արդարքն որ ունին զառհաւատչեայ ազատութիւնն որդէգրութեանն ի ճշմարտութենէ անտի՝ յաւելցեն յարդարութիւնն, զի լիցին կատարեալ որպէս եւ Հայրն երկնաւոր. եւ միմեամբք զանուն առին: 34 Եւ տնանկութիւն կարաւտ է մեծութեան, որ զեղու ի նոսա զլիութիւն. եւ մեծութիւն՝ կամաւոր տնանկութեան, որ ամբոնութեամբ եւ անա-

1 Միւսն՝ ջեռացուցանէ

² Սաղմ. ճԳ. 9

2 Մերն՝ յորդորին. եղաւ ըստ լուսանցիցն համեմատ միւսոյ օրինակին

րատութեամբ հասցէ անանց մեծութեանն: 35 Այլ եւ արդարակորով մեծութեամբն ոչ գրկի ի մշտնջենաւոր մեծութենէն. որ միմեամբք զանուանան առին մեծութեան եւ տնանկութեան:

36 Եւ տկարութիւն եւ զաւրութիւն ձեռնտու լիեալ միմեանց՝ գովելոյ արժանի են: 37 Զի տկարութիւն զխոնարհութիւն եւ զքաղցրաբարութիւն¹ ուսուցանէ, եւ յուսով կալ առ իրաւունս արդար դատաւորին Քրիստոսի: 38 Իսկ զաւրաւորքն ճշմարտեալք՝ բերդ ամուր լիեալ տկարացն, եւ աւգնական եւ տուիչ բարեաց. որք ընդունելոց են զանեղծութիւն եւ զանանց փառսն. որք միմեամբք զանուանան առնուն եւ զհաստուցումն յարարչէն:

39 Եւ յիմարութիւն եւ իմաստութիւն պիտոյ են յերկրաւոր վարս: 40 Յիմարն զհաւանութիւն եւ զհնազանդութիւն առ իմաստունն ունի, գիտել առ ի նմանէ զլաւսն. զի իմաստութիւն զառաջնորդական միտս ստացեալ ունի, որ խրատէ եւ ուղղէ յարդարութիւն, որ հաւանութեամբ մտցէ յարքայութիւնն. զի յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զիմաստունս աշխարհիս: 41 Իսկ Աստուծոյ իմաստութիւնն նախ զի սուրբ է, եւ ապա խաղաղարար. լի բարեաւք եւ արդար պտղովք. որ ի վերինսն տանի ի փառսն, եւ ոչ ըստ աւձին խորամանկեալ եւ պատժեալ. այլ ըստ անուանցն ծանուցեալք յանմեղութիւն իմաստիւք:

42 Յաջողութիւն եւ տխմարութիւն առ միմեանս աւգուտս գործեն. միոյն շահս աջողութեան², եւ միւսոյն կատարումն պիտոյից յոր ինչ ցանկութիւնն է: 43 Եւ երկոցունցն հարկաւոր է հաւատարմութիւն ըստ գործոց արուեստին եւ վարձուցն՝ որ ի կամս նախախնամողին լիցի, եւ որ զանուանան առցէ:

44 Եւ կեանքն կենդանի են յարդարութեան կեցեալ. եւ մեռեալքն մեղաւք եւ տարակուսանաւք ի մահ, որոց տանջանքն մթերեալ կան: 45 Եւ կենդանիքն որ ի սէրն Աստուծոյ եւ ի սրբութեան եւ ի հաւատս ճշմարտութեան եւ ի յոյսն հաստատեալ կան յառհաւատչեայ կեանսն՝ զնոցայն ոչ մահ, այլ կեանք ի գրոց իմանալի է. եւ քուն, զոր Քրիստոս յարուցանէ բանիւ ի ձեռն հրեշտակապետացն փողոց: 46 Որոց զբարիսն գործեալ են՝ փառք եւ անմահ կեանք, եւ որոց զչար արարեալ՝ տանջանք եւ անմահ մահն որ յաւիտենից: 47 Եւ այսր ամենայնի աշակերտ արար զմարդն, զի անձնիշխան կամաւք խնդրէ զաւգտակարսն եւ որոչէ ի վնասակարացն, եւ ի հարկի կալ առաքինութեանցն՝ յուսով որ ի Տէր: 48 Զի առցեն զանուն եղբայրութեանն որ ի Քրիստոս, եւ վայելեսցեն ի նորա բարիսն, եւ զերկուսին կողմանս յաւգուտս կազմեալ: 49 Զի արդարակորովքն՝ երանութեամբքն պսակին ըստ առաքինութեանն. որ պարծանաւք ըստ համբերութեան գովին ի Տեառնէ, եւ անվիշտ ունին յազատութեանն զհամարձակութիւնն յիրաւանց արդարութեան. եւ վայելեն ի բարութիւնսն ըստ արժանաւորութեանն, եւ երանութեամբք պսակին:

50 Արար Աստուած զերեւելի արարածս զգալականս դարմանիչ մարդկան կենաց: 51 Որպէս երկինք ամբովք եւ ցաղովք եւ լուսաւորաւք խնամէ եւ հասուցանէ զպտուղս բոլսոց եւ տնկոց: 52 Որ եւ հողմոց պիտոյանան ըստ ժամանակի հովուց եւ ջերմութեանց. որ սնուցանէ եւ անվնաս պահէ. եւ ջրով ոռոգանէ զերկիրս եւ արբուցանէ զմարդիկ եւ զանասունս, զգազանս եւ զթռչունս եւ զամենայն գեռունս եւ զսողունս եւ որ ունին շունչ կենդանի:

53 Եւ եթէ դառնան մարդիկ ի ստահակութիւն կամակար մտաւք, նովին դարմանաւքն որով խնամէր՝ տանջէ եւ խրա-

1 Միւսն՝ ֆաղցրաբանութիւն
2 Միւսն՝ առողջութեան

տէ անբերութեամբ եւ բարկութեամբ զանդարձան: 54 Զի նոյն արարածք որ դարմանիչք առնին ըստ իրաւանց վայելել ի բարութիւնս, յորժամ յղփանայ եւ ելանէ արտաքս քան գսահմանն, աւրինադիրն յայնժամ զնոյն դայեակ զայրացուցանէ եւ նոքաւք խրատէ. զի սովով եւ նուազութեամբ ամենայնիւ յողջախոհութիւն ածէ: 55 Այլ եւ ցրտով եւ ջերմաւ գտունկս եւ զբոյսս ապականէ, եւ զանճրեւս ի կարկուտ եւ ի ճիւղն դարձուցանէ, եւ զցաւղ եղեմամբ վնասակար, եւ զառողջութիւն ի ցաւս զանազանս, եւ զխնդութիւն ի տրտմութիւն, եւ զփառս յանփառութիւն: 56 Եւ ամենայն յաջողուած բարեաց ի թշուառութիւն, եւ զաւգտակարսն ի վայելել բարեաց՝ ի դժնդակս եւ ի վշտագին՝ նեղութիւնս: 57 Եւ զխաղաղութիւնն եւ զշինութիւնն որ պարսպեալ ունին խնդամտութեամբ, ի խռովութիւն եւ ի տարակուսանս դարձուցանէ եւ յանհարին չարիս. խռովութիւնս ընտանեաց եւ աւտարաց, ծառայից եւ տերանց եւ ի պէսպէս չար համբաւս. զի այսոքիւք դարձցին ի զղումն:

58 Ապա եթէ ի նոյն յամառեալ կայցեն ի չարիսն, եւ ոչ դառնան խոստովանութեամբ յապաշխարութիւն, խրատէ մեծամեծ պատժաւք արդար դատաւորն: 59 Որք պղծեն զսրբութիւնս անսուրբ վարուք, եւ արհամարհեն զաւրէնս եւ զիրաւունս տնանկաց եւ զողորմութիւնս կարաւտելոց, եւ զճշմարտութիւնն անիրաւութեամբ ունին, եւ անտես առնեն զարտասուս նեղելոց, եւ ճայնի զրկելոց ոչ լսեն, եւ որ այլ եւս իցեն չարիք: 60 Եւ յաղագս այսորիկ մատնէ արդար դատաւորն ի սով եւ ի սուր եւ ի գերութիւն եւ ի կորուստ: 61 Եւ որպէս ասաց Տէր ի ձեռն աւրինաց եւ մարգարէից դառնալ յամբարշտութենէ եւ ոչ լուան, եւ աղաղակե-

ցին առ Տէր եւ ոչ լուաւ ի նեղութեան իւրեանց. որպէս ասացաւ ի Գրոց Սրբոց: 62 Զի կամք անձնիչխանականք որ ոչ գոն յիրաւունս արդարութեան եւ ի դարմանս աղքատաց եւ տնանկաց՝ պատժին:

63 Բայց բարերարն Աստուած ըստ բազում սիրոյն իւրոյ որ սիրեաց զմարդիկ, խրատելով խրատէ եւ ի մահ ոչ մատնէ, եւ ոչ սատակէ եւ ոչ բառնայ զյիշատակս ստահակաց եւ անզգամաց: 64 Այլ զի ոչ զիտացին գոհանալ զպարգեւացն² Աստուծոյ եւ հնազանդել աւրինաց նորա, մատնէ զփառս նոցա եւ զյղփութիւն ի ձեռս թշուառութեան՝ ողբոց եւ արտասուաց արժանաւորս: 65 Զի խրատեսցին եւ ճշմարտեալք սրբեսցին եւ մտցեն ընդ խնամաւք Բարերարին, գործել միշտ զբարիս առաջի նորա. եւ ի բաց կացցեն ի դժնդակ եւ յանառակ վարուց, եւ մի՛ գերախտաւոր կարգս յապախտաւորս փոփոխեսցեն, եւ զժամանակն խաղաղութեան եւ անդորրութեանն ի դառնութիւնն եւ ի հարուածս չարաչար ախտից: 66 Եթէ փոխեն զդժնդակ վարսն ի լաւութիւն, դառնայ եւ ժամանակն ի խաղաղութիւն. զի գործակից եմք տէրութեանն խնամոց եւ համառաւտ դատաւորութեանն: 67 Փառք եւ պատիւ եւ խաղաղութիւն գործողացն զբարիս, ասէ առաքեալն երանելի. եւ բարկութիւն եւ սրտմտութիւն եւ նեղութիւն, ասէ, ի վերայ ամենայնի՝ որ գործ է զչար³: 68 Արդ, բարեգործքն բարեկեցիկք են ի բարութեան նորա, եւ ժառանգիչք դարմանոց նորա եւ խնամոց եւ աւետեացն որ ի Քրիստոս: 69 Զի յերկրի ի խնամս նորա վայելեն, եւ յուսով ըստ անսուտ խոստմանցն ժառանգեն զանսպառ բարիսն ըստ արդարութեան: 70 Իսկ անհնազանդքն եւ անառակքն գործակից են սպառնալեացն Տեառն. որ փոխեն զքաղցր ժամանակ

1 Միւսն՝ ի վշտագին

2 Միւսն՝ զպարգեւողէն

3 Լուսն. Բ 9

խնամոց նորա ի դառն հատուցումն տու-
ծից եւ տուգանաց եւ պէսպէս հարուածոց:

71 Տես՝ որչափ իշխան է մարդն. զի եւ
զԱստուած ի կամս իւր ածէ յառնելն զբա-
րին: 72 Ձի Ոչ կամիմ, ասէ Տէր մարգա-
րէիւն, զմահ մեղաւորին. որպէս զդառնալ
նորա ի չար ցանապարհէն եւ կեալ^ա:

73 Ձի արդար դատաւոր է եւ ըստ արժա-
նեացն դատի, որ ինչ գործէ մարդ յաւուրս
իւր՝ եթէ բարի եւ եթէ չար: 74 Եւ իշխա-
նութիւն է մեզ փոխել զժամանակն՝ բարի
գործով ի բարիս: 75 Եւ դարձեալ ի չար,
եթէ մեղսասէրք լիցուք: 76 Ձի մեզ է
զխոշտանգանսն ի գգուանս դարձուցանել.
եւ դարձեալ զնոյն սէր ի բարկութիւն:

77 Ձի ոչ ի բաց թողու ի ստահակելն. այլ
ներէ, զի դարձեալ զղջացին եւ հնազան-
դեսցին ընդ ամենագութ խնամոց բարե-
րարին Աստուծոյ: 78 Ձի ասէ. Ոչ եկի կոչել
զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարու-
թիւն. եւ ոչ է պիտոյ բժիշկ ողոց, այլ հի-
ւանդացի: 79 Եւ դարձեալ մարգարէիւն աս-
սէ. Արդարութիւն արդարոյն ի վերայ նո-
րին եղիցի ի կեանս. եւ անարէնութիւն ան-
արիւնիւն ի վերայ նորին եղիցի ի մահ, ե-
թէ մնասցէ ի միմն^ա: 80 Եւ եթէ դարձցի
արդարն ի մեղս, մահու մեռցի. եւ մեղա-
ւորն յարդարութիւն, կելով կեցցէ:

81 Լսե՞ս զարդար դատաստան արդա-
րոց եւ մեղաւորաց ի Տեառնէ: 82 Որպէս
զիարդ եւ կամիմք, կարեմք փոխել զաւե-
տիսն ի սպառնալիս եւ ի պատուհաս:

83 Կարող եմք եւ զկեանսն մեր փոխել ի
մահ, եւ զմահն ի կեանս. եւ զարկեալ սահ-
մանն Աստուծոյ որպէս կամիմք՝ շրջեմք ի
բարի եւ ի չար. որ Աստուծոյ միայն է կա-
րողութիւն: 84 Ըստ մարգարէին որ ասէ.
Եթէ ախորժեսցիք եւ լուիջիք ինձ, զբարու-
թիւնս երկրի կերիջիք. եւ եթէ ոչ կամիցիք

^ա Եւէէ. Լ. Գ. 11
^բ Գ. Գ. Ե. 32
^գ Եւէէ. Ժ. Բ. 20

լսել ինձ, սուր կերիցէ զձեզ. զի բերան
Տեառն ամենակալի խաւսեցաւ զայս^ա:
85 Եւ առաքեալ ասէ. Ամենայն ինչ վասն
ձեր է. եթէ մահ, եթէ կեանք, եթէ աշխարհ,
եթէ անաշխարհ, եթէ բարձրութիւն, եթէ
խորութիւնք. դուք Քրիստոսի, ասէ, Քրիս-
տոս Աստուծոյէ:

86 Այլ զի ասաց՝ ամենայն ինչ ձեր է,
որ ի կեանս իւրեանց նորա կենդանի սի-
րովն եւ կամաւք յաշխարհի վարին: 87 Ձի
որպէս բուրուառն որ անուշահոտ խնկովք
ուրախ առնէ զմերձաւորս զմեծամեծս եւ
զփոքունս, այսպէս դաւանութեան մերոյ
հոտ եւ մաքրութեան բուրեսցի առաջի
Քրիստոսի հանապազ: 88 Եւ զի ասէ՝ եթէ
մահ, զի մահն մեր որ վասն Քրիստոսի՝
վկայ լիցի սիրոյն նորա. այնպիսի մա-
հուամբ փոխեսցուք յանմահական կեանսն
անեղծութեանն, որ ի Քրիստոս Յիսուս:

89 Ձի ոչ միայն այնոցիկ է պատուական
մահ, որ զվկայութեանն աստիճան առին ի
ժամանակի հալածանաց սրով եւ հրով եւ
ջրով եւ կամ այլ՝ ազգ ինչ չարիւ, այլ ա-
մենիքեան որ ի Քրիստոս մկրտեցան եւ
զՔրիստոս զգեցան, զիմ մարդն մերկա-
ցան գործով հանդերձ, եւ զգեցան զնորն
նորոգեալ որ ըստ պատկերի Աստուծոյ է
յարդարութեան եւ ի սրբութեան եւ ի
նշմարտութեան^ա որք մեռանն մեղաց, եւ
կենդանի են միշտ արդարութեանն: 90 Ձի
որպէս յարեալ Քրիստոս ի մեռելոց փա-
ռաւ Հար, նոյնպէս եւ մեք ի նորոգումն
կեանց շրջեսցուի՞ ասաց: 91 Ձի մեռանելն
մարմնով եւ մտաց մարմնաւորաց եւ կեալ
սրբութեամբ եւ անարատ ըստ արդարու-
թեան աւրինաց Աւետարանին Քրիստոսի,
կարասցէ ասել. կեանքանի եմ այսուհետեւ՝

^ա Ե. Գ. Լ. 19
^բ Լ. Կ. Գ. Գ. 22
¹ Միւսն՝ այլ ազգի ազգի չարիւ
² Տէ՛. Ե. Գ. Գ. 22. 25:
³ Լ. Գ. Գ. 4

ոչ ես, այլ կենդանի է յիս Քրիստոս^ա:
92 *Զի եթէ այս աշխարհ՝ որով զհանդէս
առաքինութեանս ցուցանեմք, եւ եթէ
հանդերձեալքն, ամենայն նովաւ եւ ի նո-
րա խնամս եւ ի փառս կատարի, որ զամե-
նայն յամենայնի լնու՞ ի խորութեան եւ ի
բարձրութեան:*

93 *Դարձեալ խորութիւն՝ զտկարու-
թիւն մարմնոյն է իմանալ յերկրի, եւ
Քրիստոսիւ վերանալ ի բարիսն:* 94 *Իսկ
բարձրութիւն՝ զգաւրութիւն հոգևոյ ըստ
երկնայնոցն եւ անմահիցն որ ի Քրիստոս:*
95 *Ամենայն ինչ, ասէ, Քրիստոսի ձեռք է. եւ
դուք մորա ի փառս Հաւր եւ Հոգւոյն^բ:*
96 *Յորժամ զբանն նորա պահեսցուք եւ
մնասցուք ի սէրն նորա եւ յանարատ
վարս, այնուհետեւ ոչ եւս է զմեզ մարմ-
նով իմանալ, այլ հոգւով. զի որ Հոգւովն
Աստուծոյ վարին, նոքա են որդիք Աստու-
ծոյ եւ ժառանգակիցք Քրիստոսի:* 97 *Զի
եթէ չարչարանացն կցորդիմք յերկրի, եւ
փառացն հաղորդ լինելոց եմք յերկինս^գ, որ
կան եւ մնան:* 98 *Զի թէպէտ եւ գիտեմք
յաղագս փրկութեան եւ կենաց, այլ արդ
ոչ եւս նոյնպէս գիտեմք:* 99 *Այլ Աստուած
ամենայն յամենայնի անճառելի, որ սի-
րովն խնամէ զարարածս ամենայն, եւ
խոստացեալ է տալ զարքայութիւնն եւ
զանսպառ բարիսն՝ որ ի Հայր եւ յՈրդի եւ
ի Հոգին Սուրբ: Որում փառք յաւիտեանս:*

Ը
ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ
ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱԻՈՐՉԻ ՅԱՆԴԻՄԱ-
ՆՈՒԹԻԻՆ ԴԺՆԴԱԿ ՎԱՐՈՒՑ ԵՒ
ԸՆԾԱՅՈՒԹԻԻՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ
ՀԱՆԴԻՍԻՑ

1 *Դարմանք մարգարէից եւ առա-
քելոց քարոզութիւնք յառաւելութիւն բա-
րեաց զմեզ ընթացուցանեն ըստ լաւ մա-
սինն որ ի Քրիստոս:* 2 *Եւ գլխաւորելով
յառաւելան յորդորեն, որ դրունք են ամե-
նայն բարութեանց եւ երանութեանց. եւ
ընդ նոսա մտանեն աւետիք խոստացեալ
պարգեւացն Աստուծոյ ի հոգեւոր դար-
մանսն:* 3 *Այլ եւ ի մարմնաւորան լիու-
թիւն եւ առատութիւն եւ խաղաղութիւն
այլովքն հանդերձ հարկաւորաւք:* 4 *Եւ
բարութիւնք յուսոյն կենացն յաւիտենից
եւ շնորհք աներեւոյթ սիրոյն՝ որ են
զանձք գիտութեան եւ իմաստութեան, ո-
րով գիտէ ընտրել զլաւն ի վատթարէն,
հաստատեսցի ի մեզ որ հոգւով վարես-
ցուք:* 5 *Եւ այս վասն ընտրութիւնս առ-
նելոյ ի միմեանց առաքինեացն հաւատա-
ցաւ. եւ անհաւատիցն լքումն տայ առ ի
յընտրել զբարի հաւատ աստուածգիտու-
թեան:* 6 *Եւ արդարքն մի՛ վրիպեսցեն ի
փրկութեան յուսոյն:* 7 *Այլ եւ զգժնդակ
վարսն զամենաչարն եւ զամենավնասն
սանձել, որ դրունք են բարկութեան եւ
սրտմտութեան, սովոյ, սրոյ եւ գերութեան
եւ պէսպէս չարի:* 8 *Զի որ աղբիւրն է ա-
մենայն բարեաց եւ արարիչ ամենայն ա-
րարածոց, երկնաւորաց եւ երկրաւորաց,
հոգեւորաց եւ մարմնաւորաց, ամենա-
զաւրն ամենակալն երախտաւորն ամե-
նայն կենաց, ասէ. ես եմ Տէր Աստուած
ձեռք. զպատուիրանս իմ պահեցէք եւ կեց-
ջիվ՞ զի զամենեսեան կամի զի կեցցեմ եւ ի
գիտութիւն նշմարտութեան եկեսցեմ^դ:*

^ա Գաղ. Բ 20
^բ Եփե. Լ 23
^գ Լ Կ Գ. Գ 22
^դ Հմմտ. Հառմ. Բ 17:

^ե Գլխ. ԺԹ 37
^զ Լ ՏԺԲ Բ 4

9 Եւ այսպէս զամենեսեան կոչէ ի կեանս իւր. որ կենաց տուիչ եւ դարմանիչ է ամենահնար բարերարութեամբն:

10 Պարտ է զնա սիրել յամենայն անձնէ եւ ի զաւրութենէ եւ ի մտաց, այլ եւ զընկերս իբրեւ զանձն ամենայն սրբութեամբ. զի ապրեցողք յաշխարհէ աստի չարէ ըստ շնորհացն Աստուծոյ որ ի մեզ: 11 Եւ սանձահարել զգոհակ բարսն, եւ զանհաստատութիւն մտաց ի հաստատութիւն յուսոյ ի նեղութեան եւ յանդորրու: 12 Եւ ատել զանառակութիւնս՝ որ զբնութիւնն շարժէ եւ պղտորէ, եւ ի պոռնկութիւն եւ ի շնութիւն հակամիտէ: 13 Զի պոռնկութիւն ստերիւրէ ի պէսպէս անարժան հրապոյրս վնասուց. եւ վրիպեցուցանէ ի հաւատոց եւ ի սուրբ վարուց ի պատրանս մեղաց, յանառակութիւնս աղտեղիս:

14 Արդ, փախիցուք ի պոռնկութենէ ի մաւրէն չարեաց, որ յորդորիչ է ամենայն չարեաց. զի զբազումս կորոյս ջրով եւ հրով եւ այլ եւ այլ ազգ պատուհասիւք պէսպէս, որպէս ասեն գիրք: 15 Զի որ շնայ կամ պոռնկի, կորուստ անձինն ստանայ. եւ ի Տեառնէ ի բաց եկաց անսուրբ անձն: 16 Զի տաճար են սուրբք ամենայն Ամենասուրբ Երրորդութեանն. եւ տաճար դիւաց են պոռնիկք եւ շունք: 17 Զի զկոյսս ապականէ եւ մերժէ ի Տեառնէ, եւ զամուսնութիւնս քակէ եւ ընդ բազում չարեաւք առնէ: 18 Զի վասն պոռնկութեան զկախարդս յաւգնութիւն պղծութեան ըստ հրապուրանաց սատանայի առնուն կաշառաւք: 19 Վասն պոռնկութեան նախանձու զչարն եւ զգազիր խորհուրդ աղտեղութեան միշտ ունին: 20 Վասն պոռնկութեան ոխութիւնք եւ այլանդակութիւնք ի կորուստ արանց եւ կանանց լինի: 21 Վասն պոռնկութեան դժպնութիւնք եւ երգմնահարութիւնք եւ ստութիւնք եւ զողութիւնք: 22 Վասն պոռնկութեան հեղգութիւն աղաւթից եւ պահոց եւ պղերգութիւն առ ի գործ: 23 Վասն

պոռնկութեան բազմավնաս նենգութիւնք նիւթին եւ քէնք առ աւտարս եւ ընտանիս:

24 Վասն պոռնկութեան խորամանկութիւնք եւ պէսպէս մահք յայտնիք եւ գաղտնիք: 25 Կէսք յորովայնի ճմլեն եւ տարածամ անցուցանեն զմանկունս, եւ կամ դեղովք ապականեն յորովայնի. եւ է որ զծնեալսն սպանանեն: 26 Եւ է զի սնոյ տէրն եւ սեղեխն ի միմեանց մեռանին, կամ յայտնի մարտիւ կամ գաղտ իւրիւ չարիւ: 27 Եւ է զի հոմանիքն ի միմեանց խողխողին ի վերայ բողբոցն: 28 Եւ է որ բողբոցն խաղբս ինչ ուսանին ի կախարդաց, զի սպանցեն զարսն վասն հոմանեաց ցանկասիրաց:

29 Եւ բազում չարիս ունի ախտիցն ցանկութիւն յարս եւ ի կանայս, զոր ասելն կամ լսելն զագիր է մաքրեցելոցն՝ մտաց եւ սրբեցելոց: 30 Այլ զասացեալն եւ զոր ասելոցս եմ, լուիցեն որք յայտասիկ ի սատանայէ ըմբռնեալ են: 31 Զի արբեալ է ախտիւ պոռնիկն. վասն որոյ մարգարէն ասէր. Վայ որ արբեալդ էք ի ցանկութեանէ եւ ոչ ի զինուոյ՞: 32 Զի ամենայն չարեաց պատճառ պոռնկութիւնն է եւ մայր մեղաց եւ դուռն ամենայն չարեաց նստելոց ի մեղս: 33 Զի վասն այսորիկ գայ բարկութիւն Աստուծոյ ի վերայ երկրի, սովոյ եւ սրոյ եւ գերութեանց եւ պէսպէս ախտից. խռովութեանց ընտանեաց եւ աւտարաց, ծնողաց եւ ծննդոց, ծառայից եւ տերանց. յորս կագք եւ կռիւք եւ մահք:

34 Նա եւս չարագոյն քան զասացեալս է ախտիցն գարշութիւնք. որ եւ քան զանասունս եւ զգազանս եւ զսողունս անարգել են յախտս, որ յանասունս եւ յարուս պղծին. բողբալք գպէտս իգութեան արուացն եւ իգացն, բորբոքեցան ցանկութեամբք իւրեանց՝ յանասելի աղ-

1 Միւսն՝ մաքուր եւ սուրբ մտացն: Այլ
՞ Զմբ. Ե. Ի Բ 1, Ի Թ 9, Ի Ը 21:
՞ Տէ՛ս Զմբ. Ը 27:

տեղութիւնս. զոր եւ ոչ է տեսանել յայլ ի շնչաւորս զգարչութիւն արտիցն: 35 Ո՛վ չարեացն եւ անարգել արտին. որ արտաքս ելանէ քան զսահմանն, եւ զլուխ է ամենայն դժնդակ չարեաց: 36 Առաջին արեւնքն քարկոծ առնէին եւ կամ հրով այրէին. եւ նորս՝ արտաքս ունի յեկեղեցւոյ եւ ի ժողովրդոց. մինչեւ բազում լալով ի տուէ եւ ի գիշերի ի խորգ եւ ի մոխիր պահաւք ապաշխարեսցէ, անհատ աղաւթիւք եւ աշխատութեամբ բեկեալ սրտիւ: 37 Զի թէ Տէրն զհայելն ի կին պարտաւոր առնէ շնութեան, վասն այլ գարչութեան արտիցն զի՞նչ պարտ է ասել զպատիժսն: 38 Եւ դարձեալ որքան¹ երանէ զմաքուրսն. քանզի ասէ. երանի որ սուրբ եմ արտիւք, զի նոքա զԱստուած տեսցեմ հոգւով՝:

39 Ո՛վ բաւական է ասել զսրբոցն զհատուցումն, զԱստուած տեսանել եւ յանպատուման վայելել: 40 Զի եթէ զարեզակն տեսանեմք յետ գիշերային ցրտութեան ի ջեռուցանել ի լուսաւորել՝ խնդամք, որ փոփոխելի եւ անցաւոր է. իսկ զանճառելի լոյսն զնորա արարչին եւ զմեր զի՞նչ պարտ է ասել զանհամեմատ բարին Աստուած: 41 Որ լցուցանէ զսրբոցն անձինսն շնորհաւք եւ վայելեցուցանէ յանբաւ բարիսն եւ յանվախճան երանութիւնսն եւ յանսպառ ուրախութիւնսն: 42 Զի ոչ զնմանութիւն ինչ կայանիցն եւ զանճառիցն հնար է ասել. բայց որ սուրբքն են սրտիւք եւ անարատք անդամաւք մարմնոց, նոցա երեւի Քրիստոս անճառապէս: 43 Բայց եթէ անսուրբք իցեն հոգւով եւ մարմնով, ապաքէն ի սրտէն առնու զհանգամանս գործոց մարմինն. զի ի սրտէն, ասէ Տէրն, ելանեմ չար խորհրդոցն չարիքն, եւ մարմնով պղծի՞:

44 Եւ զի ասէ, եթէ ակն քն կամ ձեռն կամ այլ ինչ անդամ գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա եւ ընկեա ի քեզ: 45 Եւ այս հրաման ոչ զանդամոցն հատանելն ասէ, այլ զցանկութիւն շարժման արտիցն որ ի նոսա գործի ի կորուստ անձինն. զի լուցկիք է պոռնկութիւն անշէջ հրոյն ամենայն չարեաւքն հանդերձ:

46 Եւ յորժամ Փրկիչն զառաքեալսն յաշխարհ առաքէր սերմանել զբանն ճշմարտութեան յանդս մտաց հաւատացելոց, եւ նովաւ ածել ի կարգ ուղղութեան, նախ զփուշն խլել զցանկութիւն բուսոցն հրամայէ, զկամս մարմնոյ եւ զմտաց, եւ հնազանդել Աւետարանին. եւ ապա սերմանել զաւետիս հրաւիրանացն. կոչել խոստովանութեամբ յապաշխարութիւն եւ ի հաշտութիւն ամենեցուն Արարչին: 47 Եւ հնազանդեալք ըստ Աւետարանին քարոզութեան, արժանաւորիլ սուրբ երախտեացն կենդանի յուսովն, զի ժամանեսցուք յաւթեալսն կենացն յաւիտենից ի Քրիստոս Յիսուս: 48 Եւ ի ժողովս առաքելոցն վասն խնդրոյն այնորիկ Հրէից եւ հեթանոսաց նախ գայս աւանդեցին, եւ ընտրեցին ի բաց կալ ի պոռնկութեան եւ ի հեղձուցելոյ² եւ յարեցնէ՞: 49 Որոց արարեալ գայս բարի գործս, ստանան անձանց զարդիս եւ զապառնին:

50 Սկիզբն նախ զպոռնկութեանն հատումն առնէ, զի զբազում ոստս որ ի նմանէն վնասք՝ խափանեսցին. եւ զմեռելոտի գործս եւ զուտել արգելցեն եւ զարիւն նորին. այլ եւ որ ի սպանութիւն մտաբերեն, այսպէս խափանեսցին: 51 Զի հնազանդութեամբ նուաճեալք առ սրբութիւն եւ պարկեշտութիւն եւ խոհականութիւն, եւ ընտանացեալք հաւատով մտցեն յաւետիս խոստացեալ բարեացն: 52 Եւ զդժնդակու-

1 Մերն՝ ո՛ր բան... ի ջեռացուցանել
 2 Մարք. Լ. 8
 3 Հմմտ. Մարք. Ժ. 19:

4 Մարք. Լ. 29
 5 Մերն՝ հեղձուցանելոյ
 6 Տէ՛ս Գ. Գ. Ժ. 6:

թիւնսն ամենայն ատել եւ ի բաց ընկենուլ սպառնալեալք անվախճան տանջանացն, որ պատրաստեալ է ի Տեառնէ անսրբոց եւ պղծոց ի պոռնկութիւն: 53 Զի եթէ մեռելոտի ուտել եւ զարիւն անասնոց ըմպել եղկութիւն եւ թշուառութիւն առաջի կայ, ո՛րքան պատիժք որ զագգակիցս վտանգեն նեղութեամբք, զոգիսն եւ զմարմինս ճնշեն պէսպէս վտանգիւք եւ դառն տանջանաւք եւ մահուամբ յարդար դատաւորէն պատրաստեալ: 54 Եւ առաքեալ ասէ. Մի՛ խաբիք, ոչ պոռնիկիք, ոչ շուճիք, ոչ իգացեալիք, ոչ արուագէտիք, ոչ գողիք, ոչ սպանողիք, եւ որք զհետ այսոցիկ, զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեմ՞, այլ զանշէջ հուրն. ըստ մարգարէին՝ թէ Հուրն նոցա ոչ շիջանի, եւ որդն նոցա ոչ մեռանի՞: 55 Զի պատուական ասէ զամուսնութիւն եւ զանարատ անկողինս, եւ նախապատիւ զկուսութիւն. այլ եւ զպոռնիկս եւ զշուճս դատի Աստուած: 56 Եւ դարձեալ ասէ. Դուք տանար էք Աստուծոյ, եւ Հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ: 57 Այսինքն անարատ յաղտեղութենէ: 58 Զի սուրբ է տանար քո սխալելի արդարութեամբք, ասէ Դաւիթ: 59 Եւ եթէ ոք գտանար Աստուծոյ ապականէ, ապականեսցէ զնա Աստուած. զի տանար Աստուծոյ սուրբ է, որ էք դուք ի մէջ կամակոր եւ աղտեղի ազգացէ:

60 Զի որպէս ջրհեղեղաւն ապականեցաւ երկիր, որ գէջ պղծութեամբն էին ապականեալք, մեք զիա՞րդ ոչ երկիցուք, որ այսպիսի մեղաց բարկութեան վկայ ունիմք զհամաշխարհական կորուստն ջրհեղեղին: 61 Այլ եւ զՍողոմ եւ զԳոմոր հրով եւ ծծըմբով տոչորեալ ըստ ջերմութեան եւ զագիր ախտից, որովք ըմբռնեալ էին՝ սա-

տակեցան հինգ թագաւորացն պղծեալ տունքն հանդերձ լրիւ իւրով երկիրն: 62 Եւ զայս երկուս հարուածս յաղագս զիջութեան եւ պղծութեան երկուս վկայս կացոյց ահաւոր դատաստանին, որ լինելոց է պատիժս այնպիսի պղծոց յաւուրն այցելութեան ամենայն ազգաց: 63 Զի որպէս էին, ասէ Տէրն, յաւուրսն Նոյի, կանայս առնէին եւ արանց լինէին եւ յուրախութեան վայելէին՝ մինչեւ եկն ջրհեղեղն եւ կորոյս զամենեսեան առ հասարակ՝ նոյնպէս եւ յաւուրս Դովտայ ի փափկութեան եւ յամենայն ուրախութեան վայելէին, այլ եւ յանառակ ցանկութիւնս, մինչեւ Տէր եհան զԴովտ անտի, եւ զնոսա այրեաց առ հասարակ հրով. բայց դուք լոյս էք ի Տէր ի սրբութեան: 64 Խաւար ասէ զգործսն խաւարի, որ ոչ գոյ ի լոյս: 65 Իսկ ի խաւարէ մեղաց զերծեալ սուրբ լուսոյն երեւի: 66 Դարձեալ ասէ, թէ որ մերձեցայ ի պոռնիկն՝ մի մարմին է՛. զի որպէս միով մարմնով մեղքն կատարին. զի հասարակաց է չարն ի գործելն ի խաւսելն ի տեսանելն ի լսելն, եւ այլ ամենայն խժբիժք չարեաց նոցին: 67 Եւ որ մերձեանայ ի Տէր՝ մի հոգի է, ընկղմեալ ի կենդանի սրբութեան: 68 Զի սրբեալ անդամքն մարմնով եւ հոգւով միաւորի ընդ Քրիստոսի ի կեանսն հաւատով եւ ճշմարտութեամբ, եւ լինի սուրբ անդամ Քրիստոսի հանդերձ ամենայն առաքինութեամբն: 69 Զի կարասցէ ասել առ մարտ թշնամւոյն. արդ առեալ զանդամս Քրիստոսի՝ առնիցեմք անդամ պոռնկի՞. քաւ լիցի զսրբութիւնս մատնել յանմաքրութիւն:

70 Զպոռնիկն բազում անգամ վտանգէր Պաւղոս վասն պղծութեան եւ խրատէր, եւ մատնէր ի ձեռս սատանայի ի սատակումն մարմնոյ, զի ոգին ապրեսցի

Պ Լ ԿՊ. 9
 Բ ԼՊ. 4-9 24
 Գ Լ ԿՊ. 9-16
 Դ ՍՊՄ. ԿԳ (ԿԵ) 6
 Ե Լ ԿՊ. 9-17

Զ ՏԷ՝ ՄՊՊՔ. ԻԳ 38:
 Կ Լ ԿՊ. 9 16
 Զ Լ ԿՊ. 9 15-16

հանդերձ ստոյգ զղջմամբ^ա. *ճնշելով զմարմինն պահովք պնդութեան եւ աղաւթիւք հրահանգել ի սրբութիւն, լնուլ զասացեալս ի նոսա՝ որ յաղագս այնորիկ են հանդէսք:* 71 *Ձի ի ձեռն պոռնկութեան պէսպէս անաւրէնութիւնք յաճախին ի յերկրի. զի բազմաչար է պոռնկութիւն եւ անյագ առ ցանկութիւնս արտից:* 72 *Վասն այսորիկ առաքեալ զմեզ ուսուցանէ եւ խրատէ սպառնալեալք, փախչել յայնպիսի արտից եւ ի պղծութենէ, որոց վախճանն է կորուստ:* 73 *Ձի ասէ. Մի՛ պոռնկեսցուի, որպէս ոմանի ի Հրէիցն, եւ կորեան ի սատակչէ անտի յաղագս պոռնկութեանն ի միում աւուր քսան եւ չորս հազարք:* 74 *Ձի ոչ եթէ անիրաւ ինչ էր Աստուած՝ որ էած զբարկութիւնն ի վերայ նոցա, որ գիտէ զամենայն:*

75 *Վասն այսորիկ զհարուածսն ընդ իշխանութիւնսն եմոյծ ի ժողովուրդն. որպէս զի նոքա էին որդիք կորստեան պատճառս ի մեղսն, թէպէտ եւ ի միասին մեղան որ մեղանն:* 76 *Ձի եւ մարգարէն ասէ. Անձն որ մեղիցէ, նոյնն եւ մեղցի՞. թէպէտ ասէ, Հարբ ազոխ կերան, եւ որդոց ատամունք առնի՞:* 77 *Ձի են ոմանք որ ի մեղս իւրեանց վախճանին առանց ապաշխարութեան, եցոյց եթէ ոչ լինի մոռացումն յիրաւանցն Աստուծոյ. այլ կայ պահի արդարութիւն աւետեաց սրբոց, եւ առ անաւրէնութիւն՝ սպառնալեացն արհաւիրք:* 78 *Ձի որդիք մեղաւորացն երկիցեն եւ մի՛ արասցեն զմեղս, որպէս եւ հարք իւրեանց. այլ արդարութեամբն իւրեանց ապրեսցին ի բարկութենէն՝ որ սպառնացաւ նոցա:* 79 *Ձի որդի որ ատէ զամբարշտութիւնս հաւր, եւ արասցէ իրաւունս,*

կելով կեցցէ^է, *ասէ Տէր:* 80 *Եւ մի՛ փորձեսցուի զՏէր եւ կամ տրտնջեսցուի, որպէս ոմանի ի նոցանէ, եւ յաւճից անտի սատակեցան:* 81 *Ձի ուսումն վարդապետութեան խրատէ յուղղութիւն, որոշէ զլաւն ի վատթարէն, եւ պահել զսրբութիւնն ըստ աւրինացն արդարութեան եւ ըստ աւետարանական լուսաւորութեանն խորհրդով եւ բանիւ եւ գործով:* 82 *Ձի ապրեսցուք ի բարկութենէն որ գալոցն է ի վերայ անաւրինաց եւ պղծոց, եւ կալ առաջի Քրիստոսի սուրբք, եւ ժառանգել զանպատում բարիսն:*

83 *Այլ եւ վերակացուք մի՛ հեղգասցին ի պատմել զսպառնալիս Տեառն Աստուծոյ. զի ասէ մարգարէիւն. դէտ կացուցի զբեզ, զի ասացես՝ մահու մեղցիս եթէ մեղիցես:* 84 *Եթէ լուիցէ քեզ, կեցցէ. ապա եթէ ոչ լուիցէ քեզ՝ մեռցի. եւ դու ապրեսցուցես զանձն քո:* 85 *Ապա եթէ ոչ ասացես զսպառնալիսն որք զայնպիսիսն գործեն՝ եթէ սուր գայ եւ բարկութիւն, զարիւն նոցա ի ձեռաց քոց խնդրեցից:* 86 *Ձի կամ ողորջանալք աւետեաց երանութեանցն յուսով ուղղեսցին, եւ կամ սպառնալեալք հարուածոց եւ վշտաց եւ նեղութեանց՝ որ յերկրի աստ, եւ կամ ահեղ աւուրբն մեղաւորաց եւ անհնազանդից:* 87 *Ձի իբրեւ հրեշտակք են Աստուծոյ հրամանք, որ առաքին յիշխանութենէ ընդ ամենայն արարածս. ընդ երկնաւորսն առ զաւուր հրեշտակաց, եւ ընդ երկրաւորս առ ազգս մարդկան. առնել զհասակորն ի մեզ ի սիրոյ տէրութենէն ի նեղութեան եւ յանդորրու ի պէտս մեր:* 88 *Ձի անքակ կացցուք ի ճշմարտութեան աւանդսն մաքուր վարուք մարմնով եւ հոգևով առ տէրութիւնն, եւ երախտաւոր լինել ամենաշահ զարմանալք առ կեանս եւ փրկութիւն*

^ա Հմմտ. Ե Կոր. Ե 5:
^է Ե Կոր. Ժ 8
^զ Ե Գլ. Ժ Բ 20
^ը Ե Գլ. Ժ Բ 2

^է Տէ՛. Ե Գլ. Ժ 19:
^ը Հմմտ. Ե Կոր. Ժ 9
^է Հմմտ. Ե Գլ. Լ Գ 7-8

ընկերաց: 89 Այլ եւ արուեստիւք ճշմարտից կալ ի մշակութեան, եւ արբանեակ լինել առ հաճոյս բարերար կամացն Աստուծոյ, եւ շնորհաւք Հոգւոյն վայելել ի կեանս աշխարհիս. զի ազատեալք ի մեղաց, եւ արդարութեանն միշտ պտղաբերք հանդերձ ամենայն սրբութեամբ համբերութեամբ բազմաւ. զի այսպէս ժառանգաւոր լինել կարասցուք աւետեացն Սուրբ Երրորդութեանն:

90 Այլ եւ վկայութիւնք լաւութեանն որ մտերիմ է անձնիշխան կամաւք ի վարդապետութիւն Հոգւոյն Սրբոյ. որ ի ձեռն մարգարէից եւ առաքելոց եւ վարդապետաց գրով աւանդեցին մեզ. զի ծանիցուք զԱստուած՝ զերախտաւորն, զարդարն, զբարերարն, զսուրբն, զճշմարիտն. եւ մերժել եւ հեռանալ ի դժնդակ վարուց, յապախտաւոր եւ յանհաւան յանխրատ եւ անխտիր անաւրէնութենէ, եւ սրբել ի մտաց եւ մարմնոց զվնասակար զամբարշտութիւնսն միշտ:

91 Նա եւ պարսիկք եւ այլ խոժաղուժ ազգք, որ ոչ գիտեն զաւրէնս, բնութեամբ զաւրինացն գործեն՝ ըստ առաքելոյ բանին, եւ ի ձեռն դատաւորաց պատժեն զպիղծս եւ զանիրաւս: 92 Եւ միշտ սպառնալիք իշխանաց եւ դատաւորաց առ անխտիրսն ի չարիս, առ սուտս եւ երգմնասուտս, նենգաւորս, գողս, սպանողս, շունս, կախարդս, դիւթս, եւ որ այլ եւս են հոյլք մեղաց: 93 Զորս բանդիւք եւ երկաթի կապանաւք եւ պէսպէս տանջանաւք խոշտանգեն եւ մահ ի վերայ ածեն, զի այլքն երկիւղ ունիցին եւ արգելցին յանխնայ անաւրէնութենէն: 94 Իսկ որ խրատին եւ գան ի լաւութիւն կարգաց եւ իրաւանց թագաւորի, ի միամտութեանն եւ ի հպատակութեան կացուցանեն զանձինս, այնպիսեացն փառք եւ պատիւ եւ պարգեւք ազատութեան շնորհեն:

95 Դոյն աւրինակ եւ Յոյնք գրով կարգեալ ունին զիրաւունս. երախտաւորացն եւ մտերմիցն պարգեւաւք եւ մեծարանաւք պատուեն. իսկ զանաւրէնս եւ զանհնազանդս եւ զամբարհաւաճս եւ զանառակս եւ պիղծս պատուհասիւք եւ պատժովք եւ դառն նեղութեամբք նեղեն, զի խրատեսցին ի բաց կալ ի մեղաց եւ գործել զբարիս հանապազաւր. զի մի՛ վրիպեսցի աշխարհս յանիրաւաց, այլ զխաղաղութիւն եւ զշինութիւն կալցի: 96 Նոյնպէս եւ ամենայն ազգք եթէ ոչ կայցեն յիրաւունս արդար դատաստանին Աստուծոյ. զի ունին կարգիչս եւ իրաւունս դատաստանաւք եւ խրատու ուղղել, եւ մի՛ ամբոխ եւ մարտ յուղիցի: 97 Եւ իրաւանցն արդարութեան երկու բարբառք են, որ յարգեն եւ պատուեն զիրաւախորհսն աւետեաւք պարգեւացն, եւ սպառնալեաւք եւ պէսպէս նեղութեամբք պատժեն զապախտաւորսն եւ զանիրաւսն. զի չիք ազգք որ ոչ իցեն իրաւունք ի դատաւորաց: 98 Եւ այս ամենայն կարգք ի շինութիւն աշխարհի կարգեալ են ի Տեառնէ ըստ նախախնամութեանն որ առ ազգս մարդկան. թէպէտ եւ ոչ ծանեան զԱստուած եւ փառաւորեցին կամ գոհացան, զի ոչ ընդրեցին զԱստուած ունել ի գիտութեան. այլ նանրացան ի խորհուրդս իրեանց եւ խաւարեցան անմտութեամբք: 99 Այլ ոչ անտես առնէ Արարիչն զարարածս. զի Հայր է շնորհիւ եւ Տէր, որ հրաւիրեաց եւ կոչեաց զամենեսեան յարքայութիւնն:

100 Արդ, այս ամենայն կարգք իրաւանց եւ արդարութեան վկայք են Աստուծոյ հոգեւոր աւրինացն, որ քարոզեցաւ մարգարէիւք գրովք սրբովք: 101 Որք յանիրաւութենէ յիրաւունս ածեն, յանարգութենէ ի փառս, յանցաւորէս ի մշտնջենաւորսն. յերկրաւորէս յերկնաւորսն առաքինութեան հանդիսիւք. եւ ամենայն կար-

Պ Լուս. Բ 14

Պ Լուս. Բ 21

զաց իրաւանց եւ սրբութեան պատկառ կալ, ճշմարիտ հաւատովք եւ կենդանի սիրով անմեկնելի լինել ի կամացն Աստուծոյ ի նեղութեան եւ յանդորրու: 102 Կոխել զպատրանս աշխարհիս եւ հաստել ի յոյս կենացն յաւիտենից խաղաղարար սրբութեամբ. զի հասցէ ի բնակարանս սրբոց յերանելի եւ ի սքանչելի փառսն. վայելել ի բարութիւնսն անպատում, յանհամեմատ վայելչութիւնսն, յանուշակ արքայութիւնն Հաւրն ամենակալի եւ Որդւոյն բարերարի տուողի մեզ զկեանս, եւ Հոգւոյն Սրբոյ նորոգողի զհաւատացեալս. միասնական Սուրբ Երրորդութեանն. որում փառք յաւիտեանս. ամէն:

Թ.

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԱԼ Ի ՏԷՐ ԱՄԵՆԱՐՈՒԵՍՏ ՊԱՀՈՑ ԵՐԱՆԵ-ԼԻՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱԻՈՐՁԻ

1 Եւ քանզի ամենայն կարգաց չափ եղեալ յամենակալ Տեառնէն եւ յԱրարչէն, որպէս զի հանդիսացեալք կատարեսցուք զառաքինութիւն ահիւն Աստուծոյ, որ փառաւք պսակի հաւատովք եւ շնորհաւքն Քրիստոսի: 2 Զի ամենարուեստ քաջութեամբն նահատակեալ ի մշակութիւն աւրինացն՝ սուրբ սիրովն զաւրացեալք, որպէս եւ զգաւրս հոգեղինացն: 3 Որով եւ աւրէնսդիրն փառաւորեցաւ, եւ աւրինապահք պսակեցան, եւ առաջնորդեն յաւթեանս երկնից արքայութեանն աւրինակաւ ամենագիւտ սիրոյն ի բարերար խնամսն: 4 Զի նմանեալք նոցա խորհել յաւրէնս Տեառն ի տուէ եւ ի գիշերի՝ ընկալցուք զարդարութեան եւ զժուժկալութեան զշնորհն. զի ըստ իւրաքանչիւրոցն լաւութեան վարուցն՝ թագ ի գլուխ մտցեն յարքայութիւնն ի մշտնջենաւոր եւ յանվախճան կեանսն. երկնայնոցն եւ անմահիցն կցորդ լինել ըստ ընդրութեան շնորհացն զործելով յանդիման առաջի Աստու-

ծոյ եւ զաւրաց անմարմնոց. զոր յերկրի աստ մատակարարեալ եւ յերկնաւորսն երեւի: 5 Այսու յուսով յորդորէ զորդիս մարդկան ըստ աՄԿԵտեացն, եւ ժառանգաւորս առնէ Քրիստոսի Հայրն բարերար եւ Հոգին Սուրբ ամենախնամ. որ ոչ թողու զարարածս իւր նախախնամական սիրովն. զի զամենեցուն կամի զկեանս եւ ի գիտութիւն ճշմարտութեանն հասանել: 6 Զի որ արասցէ եւ ուսուցէ, ասէ, նա մեծ կոչեսցի յարքայութեանն երկնից՝:

7 Եւ որպէս հրեշտակացն կարգաւորութիւն է յարքայից արքայէն, եւ ի նոյնս կան մնան ըստ բարերար կամաց Կենարարին եւ ոչ եւս անցանեն, սոյնպէս յորդորէ եւ զմարդիկ ի հրեշտակային կարգաւորութիւնս: 8 Սոյնպէս եւ սերորէք եւ քերորէք ընծայեալ են յիւրեանց սպասաւորութեանն ամենակալ տէրութեանն. որով արարածք դարմանին ի խնամս բարերարութեանն միշտ: 9 Այլ եւ ամենայն զուարթունք եւ զաւրք հոգեղինացն եւ անմարմնոցն յիւրաքանչիւր կարգի հաստատեալ կան պաշտաւնեայք ակնարկման կամաց Բարերարին: 10 Այսոքիկ բանակք բերաւոր զաւրացն հաւանեալք եւ հնազանդեալք ի հաճոյս տէրութեանն՝ ցուցին զսպասաւորութիւն իւրեանց անհանգիստ աւրհնութեամբ ի Տէր. զործակից լինել բարերարին Աստուծոյ երախտեաց, եւ փառաբանիչք նորա մեծութեանն եւ Աստուածութեանն. որով ուրախացեալք ի պայծառութիւն Արարչին միշտ: 11 Իսկ ստամբակեալն ի նոցանէ իւր բանակաւքն եւ դժնդակ բարս ստացեալ՝ սատանայ անուանեցաւ, եւ դեւք՝ որ նորա են արբանեակք չարի սպասաւորք. որք ցուցանեն զգործս անաւրէնութեան եւ հակառակ են արդարութեան վարուցն: 12 Զի ինքեանք անկան ի պատուոյ, եւ զմարդիկ որսան ի կորուստ. որոց Աստուած խոստացաւ տալ

* Մատթ. Ե 19

զնոցա պատիւն մարդկան: 13 Ձի աստուածամարտ է եւ մեղսասէր, եւ հանապազորդ թշնամի մարդկան, եւ հակառակ արդարութեան եւ սրբութեան. եւ ոչ դադարէ յիւրմէ խորամանկութենէն ի խաբել ի կորուսանել զմարդիկ պէսպէս եւ զանգան չարեաւ: 14 Վասն այսորիկ գրաւեալ է ընդ սպառնալեաւք ահաւոր տանջանացն եւ անմահ սատակմանն: 15 Ոչ միայն նմա եւ նորին զաւրացն, այլ եւ որք սիրեցին առնել զկամս նորա խորհրդով եւ բանիւ եւ գործով. Երթիցեն, ասէ Տէրն, մեղաւորքն ի տանջանսն յաւիտեանից գոր պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա[՞]: 16 Այսորիկ ի կամաց լինին եւ ոչ ի հարկէ:

17 Իսկ մեզ պատուիրան տուաւ ի Տեառնէ, զի ծանիցուք զնորա զպատուիրանսն եւ զերծցուք ի նորա խաղբիցն միշտ, եւ աւետեաւք բարի խոստմանցն զործեսցուք միշտ զբարիս առաջի Տեառն յամենայն ժամ, եւ մտերիմ հաճոյիւքն Աստուծոյ կալ յանվնաս մշակութեան, եւ յորդորել զբազումս ի լաւն եւ որ լին է փրկութեամբ եւ ամենազարդ սրբութեամբ: 18 Վասն որոյ փառք եւ պատիւ ի բարերար Տեառնէն յազագս արդար եւ սուրբ զործոցն պատրաստեալ կան: 19 Ձի յուսով զաւրացեալ կան յամենայն փորձանս. ոչ վրիպին ի ստոյգ եւ յուղիղ վարուց, աստուածասիրութեանն առաջնորդեալ յամենայն առաքիւնութիւնս, եւ կալ մնալ անսասանելի: 20 Ձի զմարդն յիւրում կարգին հաստատեալ ներքոյ իւրոյ չափոյն, զի լիցի արբանեակ ճշմարիտ քարոզութեանն հրաւիրանաց վերին կոչմանն, եւ ըստ մարգարէութեան շնորհի խորհրդակից լինել կամաց Արարչին: 21 Եւ ի զիտութիւն աւետեաց նորոց կտակարանաց եւ ի նորոգումն կենացն անմահից ուղիւ հաւատով ընծայիլ քահանայական

շնորհիւ աւծամբ եւ հոգևով՝ խնամովք տեսչութեան սիրոյն Քրիստոսի: 22 Մեկանալ զհիմ մարդն եւ զգեմուլ զնորն՝ որ ըստ պատկերի Աստուծոյ է սուրբ եւ արդար[՞]: 23 Մերկանալ յամենայն չարէ աւազանին շնորհաւք, եւ մարմնով եւ արեամբն Քրիստոսի մտանել ի ժառանգութիւն որդէգրութեան Հաւրն երկնաւորի եւ ի թիւ իմաստուն կուսանացն եւ ամենայն սրբոց, որք գմարմինս իւրեանց ի խաչ հանցին[՞], որպէս ասաց առաքեալ, ամենայն ցանկութեամբք հանդերձ: 24 Ձի հոգևով գնասցուք եւ զցանկութիւնս մարմնոյ մի՛ կատարեսցուք: 25 Եւ այսպէս յամալթ առնէ զայն՝ որ իշխանութիւնն ունի զստանայ: 26 Ձի ապրեսցին որսացեալքն ի նմանէն շնորհաւք Արարչին, եւ առաքինեալք յարդարութիւն եւ ի սրբութիւն եւ ի ճշմարտութիւն հաւատարիմ պատերազմաւ՝ անարատ մաքուր եւ անբիծ կատարեալ սիրովն որ ի Քրիստոս, եւ համբերութիւն ի վտանկս, սոքա հասցեն խոստացելոց բարեացն Քրիստոսի:

27 Իսկ որք ոչ ընկալան զաւրէնս արդարութեան կարգաց եւ կրանից, եւ խաւարեցան անմտութեամբ սիրտք նոցա, մատնեալք եղեն ի բանսարկուէն յանառակ ցանկութիւնս եւ յամբարշտութիւնս եւ ի հպարտութիւնս եւ յամենայն անաւրէնութիւնս, մատնեաց զնոսա Աստուած տանջանաց անմահ մահու: 28 Սակայն խնամք Արարչին ոչ թողին անդարման զարարածս իւր. այլ վասն բազում մարդասիրութեան իւրոյ քարոզեաց զդարձ եւ զապաշխարութիւն ի քաւութիւն ամենայն մեղաց: 29 Ձի դարձեալ վերստին առցուք արտասուաւք զաւազանին լուացումնն ի ձեռն հաւատարիմ եւ անսուտ խոստովանութեանն եւ ապաշխարութեանն, որ արտասուաւքն խառնեալ է: 30 Ձի զթացեալ

[՞] Տե՛ս Եփե՛. Գ. 22-24:

[՞] Գաղ. Ե 24

[՞] Մատթ. Ի Ե 46

ողորմի եւ տացէ զորդէգրութեան զչնորհս: 31 Այնուհետեւ հնազանդեալ ընդ բարի կամացն՝ կատարեսցէ զարդարութիւնս ամենայն¹, եւ խլեսցէ զչար սովորութիւնսն ամենայն աղտեղի չար ցանկութեամբն հանդերձ. եւ ազատեալք ի դառն պարտեաց գեհնին՝ եւ ժառանգաւոր լինել կենդանի խնամոց բարերար սիրոյն Սուրբ Երրորդութեանն. զի յորդորեալք յառաքինութիւն եւ ի սուրբ վարս՝ ժառանգեսցեն զարքայութիւնն:

32 Ձի յորժամ յաւելուած սուտ կարծեացն մտին ի նախաստեղծն մարդն յայրն եւ ի կինն ի մախանաց բանսարկուին, եւ ի հրապուրանաց հեշտութեանն քարշեալ՝ եւ սուտ կարծեաւք աստուածք լինալ՝ խաբեցան եւ ոչ պահեցին զպատուէր Արարչին իւրեանց, եւ ելին ի փափկութեան դրախտէն եւ զմահ ստացեալ ժառանգեցին:

33 Ձի յառաջագոյն պատուիրեցաւ նոցա զործել եւ պահել զգրախտն ժուժկալութեամբ պահոց. յորս ուտել նոցա ի պտղոց, եւ յորս ոչ: 34 Նոյնպէս եւ այժմ քարոզեցաւ ի մեզ պահք, յոր աւուրս պահելի, եւ յորս լուծանելի. որպէս ակրինադրեցաւ ի մարգարէիցն եւ յառաքելոցն եւ ի սուրբ հարց մերձաւորացն Աստուծոյ:

35 Ձի որ պահէ զսրբութիւն եւ զամենայն արդարութիւնսն իմանալի դրախտին, կայ մնայ ի նմին անմեղ ի դրախտի արդարութեան եւ առաքինութեան տնկոցն ի վայելս շնորհաւք Արարողին կենաց աստ, եւ անդ փոխել յանճառելիսն: 36 Ձայս ասելով ոչ իմանալի ասեմ զգրախտն, այլ տեսանելի առաջին մարդոյն. թէպէտ եւ ի մէնջ ծածկեաց հրեղէն սուրն ըստ խորին իմաստութեանն Աստուծոյ: 37 Ձի երկդիմի է իմանալ. մինն շաւղափելի եւ տեսանելի, եւ միւսն իմանալի՝ որ յառաքինութիւնսն վերաբերի:

38 Ձի պահք դաստիարակ են մարդկան: 39 Ձի որպէս զտղայս դաստիարակն հրահանգէ ի բաց կալ ի վնասակարաց եւ յաւգտակարսն կալ մնալ եւ յանաւգուտսն ոչ զբաղնուլ անժուժկալութեամբ: 40 Վասն այսորիկ եղան մեզ պահք խափանիչ անժուժկալութեան ամենայն վնասուց, որ ի մեղսն է հակամիտութիւն հոգւոյ եւ մարմնոյ. զի կատարեսցուք զսրբութիւն ահիւն Աստուծոյ. անցցուք յանդորութիւնսն յանքնինսն որ կայ եւ մնայ պահողացն: 41 Եւ մի՛ որպէս որովայնամոլքն՝ որ նստան ուտել եւ ըմպել եւ յարեան ի խաղալ, եւ սատակեցան ի բարկութենէն Տեառն իսկոյն յոլովք: 42 Ձի զպատուիրանս նորա ոչ պահեցին. այլ նանրացան ի խորհուրդս իւրեանց. եւ զհրամանս պահոցն անարգեցին որկորստութեամբ, եւ ոչ կացին յուխտին, եւ խոստացեալ պարգեւացն ոչ հաւատացին եւ բարկացուցին զԱստուած. եւ էած ի վերայ նոցա հարուածս եւ սատակեաց: 43 Իսկ որ ամփոփեցան ի պնդութիւնս պահոց, եւ ցուցին զփոյթ համբերութեան եւ ժուժկալութեան, եւ պահեցին զհրամանն Տեառն, եւ կացին մնացին ժուժկալք յաւրինադրեալ պահսն սրբութեան ամենայն բարեճեւ կարգաւք, նոքա ընկալցին զհանգիստն որ ի Քրիստոս:

44 Ձի են մեզ պահք բժիշկք. զի զոր անժուժկալութեամբ մթերեալ ի հոգի եւ ի մարմին զվնաս զպէսպէս ճաշակաց մեղաց, եւ ի միմեանց վերայ շեղակուտեալ եւ նեխեալս յայլանդակ խորհուրդս եւ յանմաքուր վարս, ի ժուժկալութիւն եւ ի պահս մտեալ՝ նորոգեալ սրբի ի մթերից մեղացն, եւ լինի բնակարան սրբութեան:

45 Ձի պահք մերձ եկեալ՝ զգեղ առողջութեան շնորհել ի ժուժկալս, եւ ջերմութեամբ հոգւոյ սիրով հալէ զմթերս աղտեղութեան եւ յառաքինութիւնսն վերաբերէ:

46 Եւ անուշահոտ վարուք ցամաքէ զժահահոտութիւնս եւ ի միջոյ բառնայ, եւ

1 Միւսն՝ ուրացեալ զամարեկոսիւն ամենայն աղտեղի

զառողջութիւն տայ հիւանդաց որք մեղաւքն ապականեալք իցեն: 47 Եւ զսրբութիւն եւ զանարատ վարս յանձին ցուցանէ զկնի առողջութեանն՝ նահատակեալ ի սրբութիւն: 48 Եւ զայն որ վիրաւորեացն զնա աղտեղի ցանկութեամբ եւ անխտիր անառակութեամբ, հարցէ զնոսա սրբութեամբ եւ անարատ ամբծութեամբ. եւ դատեսցէ զորովայնամոլութիւնն միշտ պահովք¹, եւ խլեսցէ զչար սովորութիւնն յանձնէ: 49 Զի դատապարտեսցին ի ձեռն շնորհացն Քրիստոսի մեղքն եւ իշխան մեղացն, եւ առցեն զկատարեալ առողջութիւն փրկական խորհրդովն ստոյգ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ, պահաւք եւ աղաւթիւք ամրացեալ ի վնասուցն: 50 Եւ այսպէս առցեն զպսակ յաղթութեան՝ որ գովութեամբ եւ պարծանաւք յաւրինեալ է պահողացն: 51 Զի բազում արուեստք են կարգք պահոց, եւ բազում շահս ստանայ անձանց՝ որ սիրենն զնա եւ պահեն միշտ:

52 Պահք կատարեալ հաւատոց ճշմարտութեան ազդեցութիւն. յԱստուծոյ ակնկալութիւն եւ յոյսն առողջութեան տանի անարատ եւ ամբիծ եւ սուրբ երախտեաւք սիրոյն որ առ Աստուած: 53 Եւ այնքիւք դադարէ այլանդակութիւն մտացն եւ շուստութիւն զգայութեանցն. աչաց ի տեսանել եւ ականջաց ի լսել, լեզուոյ առ ի խաւսել, եւ ձեռաց առ ի գործել, եւ սրտիւ ուղիղ², եւ ճաշակելեաւք առ ի պարկեշտութիւն. ամենեքումք պնդեալ ի պահս սուրբս, եւ զամենայն կամս ցանկութեան զգայութեանցն արմատաքի խլել, եւ զմոռացումն բարեացն զարթուցանել նշողիւք աստուածասիրութեանն: 54 Եւ հրաժարել ի չար լուծմանէ մեղացն, ի պոռնկութենէ, յորովայնամոլութենէ, յամբարտաւանութենէ, ի նախանձուէ, ի

բարկութենէ, յագահութենէ, ի գողանալոյ, ի ստութենէ, յերդմանէ, ի չարախաւսութենէ, ի զրկելոյ, ի նենգութենէ, ի ցասմանէ, ի թշնամանաց, յոխակալութենէ, ի ծուլութենէ, ի ծիծաղելոյ, ի խեղկատականաց, յարբեցութենէ, ի բանբասանաց: 55 Զայսոսիկ զմահաբեր լուծուածս ի բաց փսխել ուղիղ խոստովանութեամբ, եւ առնուլ զդեղն կենաց, եւ առողջացեալք սիրով Հոգւոյն՝ յառաքինութեան ասպարէզն նահատակեսցուք ընդդէմ վնասակարացն զուղղութեան վարսն: 56 Եւ միամտութեամբ հնազանդեալք բարերար կամացն փակել զամենայն յորդումն³ չարին: 57 Եւ զչար եւ զդառն շարժումնս մտաց եւ զգայութեանց արգելուլ միշտ, որ է լրումն եւ կատարումն պահոց. որ հասուցանէ ի դրունս կենաց: 58 Ամրացեալք ներքոյ պահոցն ժուժկալութեամբ համբերութեամբ, եւ զգուշութեամբ ի զգաստութեան մնալով, եւ յորդորեալք ի գութ եւ յողորմութիւն առ կարաւտեալս հեռաւորս եւ մերձաւորս ի փառս եւ ի պարծանս համաւրէն ատենին եւ յարութեանն մեռելոց:

59 Պահք զծածկեալ հիւանդութիւնս, որ ի մարմնի, արտաքս հանէ: 60 Որպէս դեղ մաղձոյ՝ որ ընդ ճաշակելն իւրում զմաղձն արտաքս փսխէ եւ զառողջութիւն տայ, սոյնպէս եւ զմեղսն պահք. զի ի նուազեալ կերակրոց՝ եւ մարմինն հանդարտանայ եւ սրբի: 61 Զի զմարմնոյ զհետ երթեալ՝ կորուստ անձին ստանայ. իսկ զհոգւոյ՝ զկեանսն յաւիտենականս ի Տէր: 62 Պահք զաւրացուցիչ են հոգեւոր վարուց եւ խափանիչ մարմնական շարժմանց. զի ի գաւրանալ միոյն՝ միւսն տկարանայ: 63 Զի որպէս գիշակեր թռչունք տկարանան ի թռչել յանխնայ ուտելոյն, եւ դիւրաւ ըմբռնին յորսողաց ի մահ, իսկ սակաւակերքն երազաթոխչք են եւ անըմբռնելիք յորոգայթադիր որսողաց, սոյն-

1 Միւսն՝ պահելովք... շահս տան անձանց

2 Միւսն՝ ուղիղ

3 Միւսն՝ յորդորումն

պէս է իմանալ գորկորամուսն եւ զպարկեշտան ի պահս սուրբս:

64 Եւ Եղիա մարգարէն յորդորէ զմեզ ի պահս պնդութեան, որ պահեաց զփառասուն տիւ եւ զփառասուն գիշեր, եւ երարձ գամեմայն կարիս յինքնեւ զմարդկային շարժմանցս, եւ երեւման Աստուծոյ արժանաւոր լիեալ՝ վերացաւ հրեղէն կառաւ յերկինս^ա: 65 Սոյնպէս եւ Մովսէս պահեաց զփառասուն տիւ եւ զփառասուն գիշեր. ոչ մի անգամ, այլ երրորդ անգամ. զի զինքեան զկարիսն լուծցէ, եւ զբարկութիւնն Աստուծոյ որ ի վերայ ժողովրդեանն՝ որ ուտելով եւ ըմպելով ի խաղս լիեալ պաշտեցին զգլուխ որթուն եւ սատակեցան, արգելցէ պահաւն, եւ լիցի աւրեմսդիր յԱստուծոյ՝ Իսրայելի սուրբն^բ:

66 Սոյնպէս Յովհաննու ամենայն կենացն զպահսն բացայայտէ. որ ոչ ուտէր եւ ոչ ըմպէր ի բերից երկրաւորաց կազմեալ կերակուր. այլ մարախով եւ վայրենի մեղերք զպէտս վճարէր յանապատին: 67 Եւ սրբեալ ի պահոց՝ եղեւ կարապետ եւ տեսող անճառիցն ըստ Աւետարանին:

68 Այսպէս եւ Տէրն յետ մկրտութեանն պահովք պնդեալ աստուածախառն մարմնովն ընդդէմ թշնամւոյն զպատերազմն առնէր. զի այնպէս ուսուցցէ զմարդիկ սպառազինեալ պահովք ընդդէմ թշնամւոյն մարտից, եւ նահատակեալ պահովք եւ բովանդակ առաքինութեամբք առեալ շնորհս յաղթութեան եւ յաղթեալ փորձողին: 69 Որպէս եւ Տէրն մեր որ վերացաւ ի թեւս Հոգւոյն ընդ աջմէ մեծութեանն ի բարձունս, եւ զնոյն իսկ զմարտն պահովք եցոյց մեզ: 70 Զի գորկորստութիւն եւ զամենայն զբաւսանս որ են բեռինք մեղաց՝ ի բաց ընկեսցուք, զի արժանի լիցուք թեւաւ Հոգւոյն վերանալ եւ զՏէրն փառաց տեսանել, եւ լսել եթէ եկայք աւրհնեալք

^ա Տէ՛.՝ Գ. Թ.՝ Գ. Թ.՝ Գ. Թ.՝ Բ. 11:
^բ Տէ՛.՝ Եւ. Ի.՝:

Հաւր իմոյ, ժառանգեցէք զարքայութիւնս իմ:

71 Զի ամենայն սրբոցն՝ պահք եղեն առիթ սրբութեան եւ յերկրէս ամբառնալոյ եւ մերձենալ ի Հոգեղէնսն: 72 Զի որպէս Հրով զսրբութիւնսն ընկալան ի ձեռն պահոց, եւ ապա ընտանեցաւ նոցա հուրն կիզող որպէս երից մանկանցն ի հնոցին՝ որ պահովքն էին սրբեալք: 73 Զի հուր զայրելիսն այրէ, եւ զսրբեալսն պահովք առաւել լուսաւորէ եւ պայծառս կազմէ լուսով: 74 Իսկ որ ոչն էին արժանի եւ մերձ եղեն ի հուրն, իբրեւ զխոլս այրեցան. զի չէին ընկալեալք ի պահոց զսրբութիւն: 75 Իսկ եթէ արդարոց կատարուան են պահք՝ ի Հոգեղէնս եւ ի մարմնեղէնսն լինել, քանի աւգուտս բերէ մեղաւորաց՝ որ ի պէսպէս ցանկութիւնս իցեն: 76 Զի սրբեալն պահովք՝ ազատէ ի մեղաց զներքին եւ զարտաքին մարդն ի բժից անտի, որպէս զոսկի եւ զարծաթ հրով սրբեալ եւ պարզեալ յաղտոյ անտի. եւ այսպէս լինի անաւթ պատուական պիտանի Տեառն իւրոյ. եւ կամ որպէս զերկաթ ընդրեալ ի փորձողաց կարծր եւ մաքրական հրով կազմեալ ի պէտս մարդկան: 77 Զի եւ սուրբ առաքեալքն եւ մարգարէնք նախ ինքեանք սրբեցան պահովք եւ ամենայն սուրբ կարգաւք, եւ ապա քարոզեցին զհաւատս եւ զուղեղ վարս հանդերձ ամենայն սրբութեամբ: 78 Որք հաւատացին ի ձեռն շնորհացն ի Քրիստոս, սրբեցան եւ եղեն աւթեւան Աստուածութեանն: 79 Զի եղեն սուրբքն աղբիւրք հրեղէնք, եւ զամենեան արբուցին հրով Հոգւոյն սրբութեամբ պահոց. որք ընթանան ի կէտ կոչմանն որ ի Քրիստոս:

80 Պահք աղ են, որ անուշացուցանեն զնեխութիւնս Հոգւոց եւ մարմնոց աղտեղութեան մեղաց, եւ անուշացուցանեն ընդ անոյշ կամս Հոգւոյն Սրբոյ անարատութեամբ. զի եւ աղ յերկրէ ելանէ եւ անուշէ զայլսն: 81 Պահք յորդորեն զմարդիկ յա-

պաշխարուծիւն եւ յուղղութիւն ածեն. եւ ըստ խոստովանութեան կարգին հաստատեալ ի պահս՝ լուծանին մեղքն: 82 Զի որպէս զանասուն համարեալ են՝ որք ոչ զգան ի ձեռն պահոցն սրբութեամբ մերձեանալ առ Տէր: 83 Եւ իմաստունք են՝ որ զառ հաւատչեայ յուսոյն կենաց ընկալեալ են յանձինս. եւ յիմարք են՝ որ ի պատիրս յուսահատութեան իւրեանց կապեալ են: 84 Եւ երկուցունց պիտոյ են պահք. զի որ կատարեալ է ի գիտութեանն, անուշացուցանեն պահք զճաշակս սրբութեան ըստ հաճոյիցն Տեառն, եւ զտխմարսն ածեն ի գիտութիւն ճշմարտութեան հաւատոցն: 85 Եւ որք կենդանիքն են առ սրբութիւնն, ամրացեալ պահէ անարատս պահք: 86 Եւ որ մեղաւքն են մեռեալ, կենդանացուցանէ պահք, խառնեալ ընդ նմա զամենայն արդարութիւնս: 87 Զի որպէս կերակուրք աղիւ համեմին եւ ի պէտս մարդկան հրով անուշանայ, այսպէս կամք մտաց եւ մարմնոյն կատարեալ պահովք համեմին ի շնորհաց Հոգւոյն, եւ ի մեծութիւն տէրութեանն նուիրին եւ տան զխաղաղութիւն: 88 Զի Հոգին Սուրբ թշնամանի յանժոյժ որկորստութենէ եւ ի ստահակ յանդգնութենէ եւ ի զբաւսանաց արբշռաց, որք զանձինս իւրեանց ետուն ի կամս շուայութեան: 89 Զի որպէս անժուժկալութիւնն Եւայի եւ Ադամայ անէծս ի վերայ էած եւ մահ, նոյնպէս ծնելոցս ի նոցանէ որ զնոյն անժուժութիւնն ունին՝ արտաքոյ բարւոյն որովայնամոլութեամբն անկանիցին: 90 Իսկ պահք եւ ժուժկալութիւն փրկչին եբարձ զթշնամութիւն ի միջոյ եւ հաշտեցոյց զԱստուած ընդ մարդկան ի ձեռն խաչի եւ կամաւոր չարչարանաց. որք հաւատացին կենսաբեր քարոզութեանն, որ կոչեաց զմարդիկ ի կեանս վերստին նորոգմանն:

91 Պահք պարիսպ հզաւր եւ դուռն ամուր, որ պահէ ի մտից վնասակարաց ի խորամանկ թշնամւոյն մերոյ: 92 Զի մի՛

լիցուք որպէս գորդիսն Հեղեայ անժոյժ, որ զբարկութիւնն Աստուծոյ շարժեցին ի վերայ ինքեանց եւ հաւրն եւ ժողովրդեանն Աստուծոյ՝: 93 Այլ ժուժկալք որպէս Սամուէլն, որ պահաւք սնեալ ի մանկութենէ՝ եղեւ գլուխ մարգարէից: 94 Պահք շիջուցանեն զբորբոքեալ հուրն ցանկութեան. զի որպէս հուր ի նիւթոյ պակասեալ շիջանի, նոյնպէս եւ որովայնամոլութիւն եւ արբեցութիւն պակասեալ՝ ցանկութեանն բոց շիջանի, եւ սրբութեանն եւ արդարութեանն բորբոքի պահովք պնդեալ: 95 Պահք ցամաքեցուցանեն զգիջութիւն պղծութեան. եւ որպէս յերաշտութենէ խոնաւ երկիր չորանայ, այսպէս զարշացեալ անձն ի գիջական զագիր արեալ անուշահոտանայ: 96 Պահք արգելու գեռանդն ցանկութեան մանկանց. որ հրով արտին տոչորի ի թշնամւոյն շարժմանց: 97 Պահք դադարեցուցանեն զլիտութիւնս որ ի կերողութենէ եւ յարբեցութենէ յառաջագային. զի մերձեալ պահք ի մարմինս՝ վերաստեղծու ի սրբութիւնս: 98 Պահք խափանեն զյոյզս մտաց եւ մարմնոյ՝ պղտորեալս ի յուղիւից ցանկութեանց հոսմանց, եւ յստակեալս արբուցանէ զիմանալի եւ զհոգէկիր երկիրն:

99 Պահք նաւահանգիստ են խաղաղ ծովածուփ պլեաց արտից եւ ամենայն վնասու, եւ առաջնորդէ ի կենաց նաւահանգիստն, զի մի՛ վնասեսցի յորկորստութենէ եւ յարբեցութենէ ի մահ՝ ի ծովու մեղաց ալէկոծելով: 100 Պահք եկեալ՝ խաղաղութիւն առնեն ամբոխից, եւ հանգուցանեն զսպասաւորս, եւ ամենեցուն առաջնորդ լինի ի զգաստութիւն՝ զվերինսն խորհելով որ ի Քրիստոս: 101 Պահք սանձք է ստահակաց, որ անարգել են յանիրաւութիւնս: 102 Զի որպէս ձիոյ սանձս ի բերանս դնի, եւ ամենայն մարմինն նուաճի եւ անսայ ի կամս երասանակալին

՝ Տէ՛ւ Ը Թա՛գ. Գ :

առ հոգեւոր պատերազմն: 103 Իսկ որոց միտքն վառեալ իցեն արդար եւ սուրբ խորհրդովք, զգայարանսն կազմեալ պատուիրանապահութեամբն. եւ եթէ ոչ ունի զպահոցն պնդութիւն, յարձակել մարտին դիւրաւ ըմբռնի:

104 Առաւել եւս զգուշացուցանէ ի մտոյ եւ ի գինւոյ բանս խրատու. զի գինի առաւել յիմարեցուցանէ զգայութիւնսն եւ զմիտսն եւ եռացուցանէ զցանկութիւնսն եւ յանառակութիւն շարժէ, մանաւանդ զմանկանց. եւ հոսումն գիշութեան ի մարմնոցն լինի: 105 Գինի թմբբութիւն սրտի, պապանձումն բերանոյ, խաւար աչաց, խլութիւն ականջաց, լուծութիւն ձեռաց, գայթակղութիւն ոտից, ցնորք խորհրդոց, ծանրութիւն քնոյ, թշնամի արդարութեան: 106 Գինի գերկիւղ մերժէ, զպատկառանս ի բաց մղէ, եւ գլխատակս պատուիրանացն քամահէ, եւ զխնամս սուրբ սիրոյն զանցուցանէ, եւ յուղիւղ հաւատոցն զարտուղի հանէ, եւ զհանգ դատաստանն անյիշելի թողու, եւ ոչ տայ թոյլ զմտաւ ածել զմահ եւ զանվախճան տանջանսն:

107 Զայս ասելով ոչ ի հիւանդաց եւ ի տկարաց արգելում զսակաւապիտութիւն գինւոյ ըստ առաքելոյ խրատուն վասն ստամոքսի եւ ստէպ հիւանդութեան առ տկարս եւ առ ծերս: 108 Իսկ որ կարողք եւ մանկազոյնք են հասակաւ, զգոյշ կայցեն ի մտոյ եւ ի գինւոյ, զի մի՛ դիւրաւ ըմբռնեսցի ի հանապազորդ թշնամւոյն, որսացեալք ի նմանէ ի նորա կամս: 109 Զի գինի եւ արբեցութիւն ապականեն զկատարեալ արս իմաստունս. իսկ զանկատարս մարմնով եւ մտաւք զի՞նչ պարտ է ասել: 110 Զի որպէս հրով տոչորէ եւ վառէ զցանկութեանն բոց. զի հուր զմարմինն միայն այրէ, իսկ միս եւ գինի զհոգիսն շարժամաբ ցանկութեան: 111 Եթէ հուր առանց նիւթոյ շիջանի, ապա եւ ցանկութիւն առ ի պահոց: 112 Ապա եթէ

անարգել յուտել եւ յըմպել եւ ի զբաւսանս իցէ մանկութիւնն, մի՛ ալն ունիցի ողջախոհանալ ի սրբութիւնս. այլ եռացեալ ցանկութիւն որովայնամոլութեամբն՝ հեղու զհոսանս եւ այրէ զորս գտանէ պիտին սիրովն, եւ կազմէ դատաստանս ինքեան սրտմտութեան եւ հաղորդակցաց իւրոց. Զի որդն նոցա, ասէ մարգարէն, ոչ վախճանի եւ հուրն նոցա ոչ շիջանի. եւ եղիցիմ ի տեսիլ ամենայն մսեղեաց: 113 Այսքան պատիժք ունին որովայնամոլք եւ արբեցողք. որք կան եւ մնան ի նմին եւ ապականեն զանձինս պէսպէս գարշութեամբ ախտիւք:

114 Պահք ճշմարիտ զամենայն ցանկութիւնս ի բաց մերժէ զհոգւոց եւ զմարմնոց, եւ հետեւել յամենայն արդարութիւնս, եւ ժուժկալ լինել՝ որք զինուորինն ընդդէմ հոգւոց եւ մարմնոց առ ի լուծումն մեղաց: 115 Այլ կալ մնալ ի բարեպաշտութեան ջանս ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որում փառք յաւիտեանս. ամէն:

Ժ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ
ԼՈՒՍԱԻՈՐՁԻ ԵՐԱԽՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ
ԱՆՁԵՂՁ ԲԱՐԵՐԱՐ ԿԱՄԱՑՆ ԵՒ ՅՈՐ-
ԴՈՐՈՒՄՆ Ի ԼԱԻՆ ԵՒ ՅԱՌԱԻԵԼՆ
ԸՍՏ ՃՇՄԱՐԻՏ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՆ Ի
ՓԱՌՍ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒ-
ԹԵԱՆՆ ՃԱՌԵԱԼ

1 Շնորհս ունիմ երախտեաց բարերարութեանն անսկիզբն եւ անփոփոխ մշտնջենաւոր տէրութեանն Սուրբ Երրորդութեանն, որ աղբիւրն է ամենայն արարածոց երկնաւորաց եւ երկրաւորաց, եւ որ ի նոսա արարածք են: 2 Եւ արբուցանէ զամենեսեան առհասարակ բարերար կամաւք, ամենագիւտ սիրոյն խնամովք. զի ժառանգորդս արասցէ զբանաւորս մշտնջե-

*** Ե. Կ. Գ. 29

նաև որ երանութեանցն: 3 Ձի առողջ, սուրբ եւ անաղտ լիցուք ի պատուիրանացն պահպանութիւնս, եւ անբիծ երախտեալք՝ մտերիմ սիրով եւ ուղեղ հաւատով լինել աւթեւան սուրբ՝ Ամենասուրբ Երրորդութեանն, եւ կալ ի մշակութեան հանապազ վասն առաւել սիրոյ Արարչին, եւ կենաց եւ փրկութեան ընկերաց. աշակերտել բարերար կամացն եւ հնազանդել, եւ ցուցանել զհանդէս լաւութեան ըստ հոգեւոր աւրինացն յորդորմամբ յուսոյն: 4 Առեալ զկենդանի խրատուն գսերմնն, եւ հատուցանել զարմտիս հարիւրաւորս. զի որպէս եղեալք ի նմանէ, նոյնպէս խնամեալք ի նորա շնորհացն: 5 Որպէս երկիր բարի գսերմն բարի ընկալեալ՝ բազմապատիկ առնէ զարդիւնս արմտեացն, նոյնպէս գսերմանեալն ի մեզ խրատս բազմապատիկս արասցուք արդիւնս իշխանական կամաւք. զի եւ ընդրութիւնք են ի տեսողէն լաւաց եւ վատթարաց արմտեաց:

6 Ձի որ զընկերն սիրէ ըստ Աստուծոյ սուրբ սիրոյն, արմտիք լինին սուրբ. է որ ի ձեռն շահաւոր աւգտից, եւ է որ ի ձեռն բարի խրատու՝ յորդորել ի հոգեւոր շահս. եւ ատել զվնասակարսն սիրով Հոգւոյն: 7 Ձի Սէր, ասէ, ոչ կերպարանի, ոչ ամբարտաւանի, ոչ ամբարհաւանէ, ոչ մախանձի, ոչ խորիի զչար ընկերի, այլ զբարի. ամենայնի տեւէ, ամենայնի համբերէ, եւ ոչ երբէք սէր ի չար փոխի ի բարոյն: 8 Եւ ամենայն առաքելոց եւ մարգարէից զլուխ սէր է՝ որ ի միասին եւ յԱստուած կապէ: 9 Սիրեսցես զՏէր Աստուած քո, ասէ, յամենայն սրտէ. եւ զընկերն քո իբրեւ զանձն քո: 10 Ձի որ կայ ի սէրն, կայ յԱստուած: 11 Ձի սիրել զընկերն՝ զԱստուած է սիրել: 12 Եւ բազում շահս անձինն ստանալ յԱստուծոյ եւ ընկերաց սիրողաց Աստուծոյ: 13 Իսկ որք անձնա-

սէրքն են աւելի քան զարժանն՝ զընկերին շահս յինքեանս ձգեն. եւ անդ լինի զրկումն եւ զլացումն եւ ապիրատութիւն, ստութիւն, երդմնահարութիւնք, զգուել հարկանել սպանանել: 14 Եւ վասն այսորիկ աւրինադրեաց մարգարէիւք, եւ քարոզեաց առաքելովք, եւ խրատէ քահանայապետիւք եւ ժառանգաւորաւք եկեղեցւոյ, զի ողջախոհացին յարդարութիւն եւ ի սրբութիւն եւ յիրաւունս. յուսով արքայութեանն առնուլ աստ զառհաւատչեայ ազատութիւն եւ անհոգութիւն մեծարանաւք ի գոհութիւն Աստուծոյ. զանձն եւ զտուն ազգաւք ազատել ի պատժոց եւ աւրհնիլ ի Տեառնէ. եւ ի հանդերձեալսն փառս եւ պսակս անեղծս պարծանաւք ի Քրիստոսէ:

15 Այլ եւ զթագաւորս եւ զիշխանս եւ զգատաւորս ի խաղաղութիւն եւ ի շինութիւն աշխարհաց կարգեաց Աստուած. զի զամբարիշտս, զշունս, զգողս, զկախարդս եւ զամենայն անիրաւս պէսպէս տանջանաւք եւ մահուամբ զարհուրեցուցեն. զի ամենայն չարագործք ըմբռնեալ ի յահէ արգելցին ի չարեաց: 16 Բայց է եւ ի նոսա անիրաւութիւնք նման նոցա եւ առաւել եւս, որք կաշառաւք եւ կամ այլ եւս չարեաւք բազմացուցանեն զանաւրէնութիւնս համարձակեալ ի վնասս: 17 Եւ վասն այսորիկ բանան դրուելք բարկութեան սովոյ եւ սրոյ եւ գերութեան եւ պէսպէս վտանգից մահուց. եւ յետ աստեացս ի հրախառն խաւարն արտաքին, ուր լալ աչաց է եւ կրճել ատամանց:

18 Իսկ իրաւախորհքն եւ արդարագատքն փրկութեան եւ կենաց պատճառք լինին բազմաց, առողջութեան եւ խաղաղութեան եւ շինութեան աստ, եւ անդ փառաւք պսակեալ ի զլուխ բազմականացն արդարոց: 19 Ձի աղբիւրք են յիրաւանց Աստուծոյ՝ ուստի կեանք բաշխին բարեգործացն, եւ հարուածք եւ մահք անիրաւացն: 20 Եւ լոյս գիտութեան աստուածա-

*** Ը Կ** ԺԳ 4

է Մ** Բ ԻԲ 37

յին գրոց յայտ առնեն զբարեգործացն բարի հատուցումն, եւ անիրաւացն զհարուածս բարկութեան: 21 Եւ յերկուցունց կողմանց յայտնի լինին Արարչին իրաւունք. զարդարսն փառաւորէ, որ հոգեւոր աւրինաւքն հաճոյացան տէրութեանն, եւ կացին ի ճշմարտութեան ի սրբութեան յամենայն արդարութիւնս. որք եւ անանց լուսովն փառաւորեալ պսակին ի տիեզերական ատենին յաւուրն յետնում առաջի երկնաւորաց եւ երկրաւորաց: 22 Ուր եւ զանիրաւան անարգանաւք դատապարտէ ի պատիժս, որք արհամարհեցին զպատուիրանս նորա եւ ոչ պահեցին զսրբութիւն եւ զիրաւունս եւ չթողին յոյս անձանց, եւ վասն այսորիկ եղեն ժառանգորդք յաւիտենական տանջանացն:

23 Զի յանձնիշխան կամացն այլ եւ այլ բարք ծնանին, եւ ի բարուցն գործք եւ ի գործոցն անուանք չար կամ բարի, եւ ըստ անուանն հատուցումն: 24 Եւ բարևոյ կամացն ծնունդ բարի եւ հնազանդութիւն, եւ ի հնազանդութենէ հպատակութիւն, եւ ի հպատակութենէ սէր, եւ ի սիրոյ բազմաշահ երախտիք բարեաց: 25 Նոյնպէս յարհամարհանաց եւ ի ծուլութենէ եւ յանհնազանդութենէ ամենայն դժնդակութիւնք ծնանին, եւ ապախտաւորութիւն առ երախտիս Արարչին մեր: 26 Եւ պատճառ այսոցիկ ծննդոց անձնիշխան կամակարողութիւն մտաց. եւ զաներեւոյթսն յերեւելիս բերեն ի լաւն կամ ի վատթարն հակամիտեալ: 27 Այլ որք ընդրեն զբարին եւ առնեն, երանելիք են. իսկ ապիրատքն պատժին խրատիւք. զի զղջասցին եւ ապաշխարեսցեն զկամակար վարսն անիրաւութեանց, եւ գտցեն զողորմութեան շնորհ ի բարերար Տեառնէն՝ որ զթայ առ արարածս իւր եւ ոչ թողու ի խնամակալ սիրոյն իւրոյ: 28 Զի զանբաւ եւ զանպատում բարիսն տայ որք խնդրենն ի նմանէ, եւ լինի պարգեւատու որք աղաղակեն առ նա ի տուէ եւ ի գիշե-

րի, եւ ըստ աւետարանական երանութեանցն կոչէ յիւր արքայութիւնն եւ ի փառս. զի ճշմարտեալ ըստ կարգացն Քրիստոսի՝ ժառանգեսցուք զերանութիւնսն:

29 Երանի, ասէ Տէրն, աղբատաց հոգւով, զի նոցա է արքայութիւնն երկնից՝. որք վասն աւետեացն՝ հոգւով կամաւ աղքատացան, ի բաց ընկեցեալ զմարմնաւոր դժնդակ մեծութիւնս՝ եւ հոգեւոր յուսովն զգեցան զմշտնջենաւոր մեծութիւնսն: 30 Սուրբ մտաւք եւ մարմնովք անկեղծաւոր հաւատով կատարեցին զկամսն Տեառն սիրով. որպէս իմաստուն նաւապետք ուղղելով զնաւ մարմնոյս ի ծովածուփ աշխարհական ալեացս, թափեալ զծանր բեռինսն յաշխարհիս ծովու, եւ հոգւով թռուցեալ հասցեն ի նաւահանգիստն խաղաղութեան: 31 Այսպէս հոգւով աղքատացեալքն երանին, որ ընդ ամենայն վտանգս աշխարհիս անցանելով հոգւով եւ ճշմարտութեամբ անվնաս պահեցին զանձինս ի չար ցանկութեանց, ի փառասիրութենէ, յընչասիրութենէ: 32 Առ ձեռն պատրաստ ունելով զամենայն ցանկութիւնս, եւ զամենեքումք զանց արարին վասն անձառ երանութեանն՝ որ կայ պահի յուսացելոցն ի Քրիստոս, որ վասն մեր աղքատացաւ ստուգապէս, որ Տէրն է փառաց: 33 Զի հայեցեալք յելս գնացից կամաւոր աղքատութեանն երախտաւորին՝ հասցեն յաւթեւանս կենաց ի դուռն փրկութեան յանփոփոխ երանութիւնսն որ լին է կենդանի անուշակ երանութեամբ:

34 Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիրէ: 35 Զաւետիս եկեղեցւոյ ասէ երկիր. որ ամենաշահ կենաւք հանդարտութեամբ են վարք, ազատեալք յամբոխից եւ ի խռովութենէ փորձանաց: 36 Յամենայն դժնդակացն որք զինուորին՝ ան-

* Մատթ. Ե 3

† Մատթ. Ե 5

չարժ մնալ միշտ: 37 Հեզուլթեամբն ցածուցանել զամենայն բարկութիւն եւ զվնասակար շարժմունս՝ զինքեան եւ զամենեցուն, որ ամբաստանաւք լի է, ի կշտամբանս, ի տոյժս, ի տուգանս, յանարգանս, յամաւթ եւ ի պէսպէս տանջանս: 38 Իրաւամբք հեզուլթեանն առաջնորդել յամենայն արդարութիւնս. յամբռութիւն, ի սրբութիւն, ի սէր անշարժ, յուղիւղ հաւատս: 39 Շնորհաւք հեզուլթեամբն բնակել յերկրի, եւ զուարթածաղիկ առ ամենայն առաքինութիւնս անուշահոտ հեզուլթեամբն զարդարեալ, եւ յուսով ակն ունել մշտնջենաւոր անփոփոխ անվախճան կենսատու երանութեանցն:

40 Երանի, ասէ, սգաւորաց, զի նոքա միսիթարեացիմ^ա: 41 Որոց ընկալեալ են շնորհս ի Հոգւոյն որ առ Աստուած. սէր բաղձալի, խնդիրս արտասուաւք. անմեկնելի ի նմանէ լինել յԱստուծոյ սգաւորն, որ անձկայ շնորհաւք տեսանել զանճառելիսն՝ որ սրբոցն տուաւ: 42 Այլ եւ զզղջացեալսն է իմանալ սգաւորս, որք դառնան ի չարաչար վարուց ստոյգ խոստովանութեամբ, եւ հանապազ արտասուաւք խնդրեն զթողութիւն մեղաց յամենեցունց Տեառնէն. զի կարասցեն հասանել յաւթեւանս կենացն՝ որ լին է անմահութեամբք, եւ զուարթածաղիկ զուրախութիւնսն ընդ ճշմարիտ սգաւորսն ժառանգէ զերանութիւնսն՝ որ յաւիտենից մխիթարութիւնն է:

43 Երանի որ քաղցեալ եւ ծարաւի իցեմ արդարութեան, զի նոքա յագեացիմ^բ: 44 Որք հրաւիրանաւն կոչեցան ի հոգեւոր հարսանիսն, զի վայելեացեն զբարիսն. որ մեծաւ բաղձանաւք ցանկան լնուլ արդարութեան ճաշակաւքն: 45 Որպէս քաղցեալքն եւ ծարաւիքն ըստ համահամքմացն խորտկաց եւ ըմպելեաց լցուցանեն

զպէտս ցանկութեան ի կերակուրս եւ յրմպելիս, այսպէս եւ փափաքողք աստուածայնոյն վայելից՝ արժանաւոր կարգաւք փութան հասանել ի բաղձալին եւ ի յոյժ ախորժելի ճաշակումն՝ որ կայ մնայ միշտ, որ երանութեամբն է զարդարեալ յարքայութեանն արդարոց: 46 Որ միշտ վայելեն զաննուազ եւ զանսպառ բարիսն, որք աստէն ժողովեցին ի շտեմարանս անմահ կենացն:

47 Երանի որք լան այժմ, զի նոքա ծիծաղեացիմ^գ: 48 Որք զերծանել ցանկան յերկրաւոր ի զբաւսանաց, ի յագահութենէ, ի չար ցանկութեանց. եւ ջանան մտանել առ Աստուած, ջերմեռանդ արտասուաւք խոշտանգեալ զանձնն եւ նեղեալ բազում նեղութեամբք. զի սուրբ եւ անբիծ եւ անարատ երախտեաւք Բարերարին հասցէ յուրախութիւնսն Տեառն ի վայելսն անուշակս հանգստեան սիրոյն սրբութեան՝ լնուլ զբաղձանս անձկոյն որ առ Աստուած, զոր արտասուաւքն խնդրէր միշտ զերանութիւնսն զորդեգրութեանն շնորհս, որ լին է անճառ խնդութեամբ ի փառս Աստուածութեանն:

49 Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեմ^դ: 50 Որ գործակցութեամբ ողորմութեանցն Աստուծոյ նմանեալ, ոյժ աւգտութեան առեալ յաստուածեղէն զաւրութենէ անտի. զի ամենեցուն ողորմեացին առաջնորդել, ուսուցանել, աւգնել նեղելոց, լցուցանել զկարաւտեալս ի պէտս հոգեւորս եւ մարմնաւորս: 51 Զի ընկալցի զբարիսն յերկրի աստ զողորմութեան շնորհս ի Տեառնէ, եւ ի հանդերձեալսն զառատապարգեւ բարիսն՝ որ լին է ամենայն երանութեամբք, զոր պատրաստեաց Աստուած ողորմածացն:

^ա Մատթ. Ե 4
^բ Մատթ. Ե 6

^գ Գալ. Գ 21
^դ Մատթ. Ե 7

52 Երանի այնոցիկ որ սուրբ եմ սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն^ա։ 53 Որ շնորհաւքն Աստուծոյ Հաւատով եւ ճշմարտութեամբ, սրբութեամբ եւ արդարութեամբ զամենայն բիծս մարմնոյ եւ զմտաց սրբել զչար ցանկութեանց։ 54 Եւ մաքուր խորհրդով եւ անարատ մարմնով Հայել ի փառս Տեառն. իբրեւ ընդ Հայելի տեսանէ իմանալեաւքն զիմանալի Աստուածութեանն լոյս։ 55 Ապա եթէ ժանգով մեղացն աղտեղեալ իցէ, չար ցանկութեամբքն եւ չար խորհրդովքն եւ չար գործովքն եւ ոչ սրբէ զխորհուրդս եւ զզգայարանսն եւ նայի ի վեր ի ճառագայթս Աստուածութեանն որ ի Քրիստոսն է արդարութեան արեգակն, ոչ տեսանէ զլոյսն մեծ Ամենասուրբ Երրորդութեանն, որ յիմանալիսն ծագէ եւ լուսաւորէ զսուրբսն սրտիւ եւ զանարատսն անդամաւք։ 56 Զի ժառանգեսցեն զերանութիւնս կենացն անմահից, որ տայ զառհաւատչեայ տեսութիւնն ի Քրիստոս Յիսուս։ 57 Երանի խաղաղարարաց. զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցիմ^բ։ 58 Որ գործակից են Որդւոյն Աստուծոյ, որ արար խաղաղութիւն եւ Հաշտեցոյց զՀայր ընդ արարածս։ 59 Զի որ հրաժարեալ է ի չար ամբոխից եւ ի խռովութենէ եւ ի ցասմանէ եւ ի չար ցանկութենէ, եւ խաղաղացեալ սիրով, այնպիսին ունի զհիմն խաղաղութեան մտաւոր հոգւոյ ի Քրիստոս։ 60 Զի որպէս Որդին Աստուծոյ որ եբարձ զխռովութիւն որ յաղագս մեղացն պարտեացն էր առ մարդիկ, եւ աւետարանեաց զխաղաղութիւն, նոյնպէս, ասէ, լինել խաղաղարար, զի եղբարք նորա լիցուք՝ նմանեալ խաղաղարարին։ 61 Զի թէ մեծաց իրաց խաղաղարար լինի եւ կամ փոքունց յաղագս Աստուծոյ եւ մարդկան փրկութեան, եւ բառնայ ի միջոյ զվնասակար

թշնամութիւն հոգւոյ եւ մարմնոյ, Հաշտ եւ խաղաղականին Հանդիպի, եւ զանուն եւ զփառս Որդւոյն Աստուծոյ ժառանգէ Հանդիսիւք լաւութեան, սուրբ եւ անբիծ եւ անարատ խաղաղարար ի Քրիստոս. որ աստ մեծարի եւ պատուի, եւ անդր բարձրանայ եւ փառաւորի խաղաղարար երանութեամբք ի Քրիստոս։

62 Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւնն երկնից^գ։ 63 Զվկայիցն զհանդէս ցուցանէ բանս եւ զամենայն առաքելութեանց. զի որ յամենայնէ աւտար է, եւ մասն չունի ինչ ընդ երկրաւորս եւ պատճառս ինչ եկամուտ զբազմանց, անյար ի վնասակար ցանկութիւնս, այնոքիկ են որ ի չարէն Հալածեալք եւ առ Աստուած զիմագրաւեալք Հաւատով վասն ճշմարտութեան Աւետարանին քարոզութեան։ 64 Որպէս եւ առաքեալ ասէ՝ եթէ Որ կամիմ աստուածպաշտութեամբ կեալ ի Քրիստոս Յիսուս, ի հալածանս կացցեն. զի մարդք չարք եւ կախարդք յառաջ եկեսցեն ի չար անդր ի մոլորեցուցանել^դ։ 65 Իսկ սուրբք Հալածին ի չարէ ի բարին որ առ Աստուած եւ յԱստուծոյ առեալ. զի մի՛ նմանեսցեն անառակ որդւոյն, խաբեալ ի դիւաց ելցեն ի Հայրենի խնամոցն, վատնել զսրբութեան վարսն անառակութեամբ։ 66 Այլ դարձցին՝ նմանեալ ի Հայրենի խնամսն՝ ի չարասիրաց Հալածչաց ի դիւաց ի մարդկանէ, զի Հասցեն Հալածանաւքն ի խոտացեալ աւետիսն արքայութեանն անճառ երանութեամբքն պսակեալք ի փառս ամենազաւր Տեառն Աստուծոյ։

67 Երանի, ասէ, ձեզ, յորժամ նախատիցեն զձեզ մարդիկ եւ հայիոյսցեն եւ ասացեն զամենայն բանս չարս զձեզ սուտ վասն իմ. ցնծացէք եւ ուրախ լերուք, զի

^ա Մատթ. Ե 8

^բ Մատթ. Ե 9

^գ Մատթ. Ե 10

^դ ԲՏԿ. Գ 12-14

վարձմ անբ բազում եմ յերկինս^ա: 68 *Ձի ի ձեռն լաւութեան փառք եւ պատիւ ընծային յԱստուծոյ հանդիսիւք նահատակեալ ի Քրիստոս, որ զինուորին ընդդէմ հակառակ ճշմարտութեան:* 69 *Այլ աւգտակար է առ ամենայն մարտոցեալսն համբերութիւն ի կամս Աստուծոյ, զի զաւետիս բարեացն ունիցին զարգիս եւ զհանդերձելոցն:*

70 *Ձի այսպէս, ասէ, առնէին սրբոցն, որք յառաջ քան զձեզն էին^բ. որք զանուն եւ զողիս ժառանգեցին համբերութեամբ բազմաւ:* 71 *Ոմանք որպէս զերկաթ անվտանգ, եւ կէսք իբրեւ զպարիսպ պղնձի ամուր. այլք որպէս զարծաթ գտեալ եւ սրբեալ որպէս ի հրոյ փորձութեամբն:* 72 *Իսկ այլք որպէս զոսկի պատուական ի սպաս, կամ որպէս զմարգարիտ գեղեցիկ, կամ որպէս ակունս մեծագնիս՝ որ ի փառս թագաւորաց:* 73 *Սոյնպէս եւ սրբոց եւ համբերողաց որ զանազան փորձանաւք ի դժնդակացն կազմեցան, եւ եղեն վկայք Արարչին ի փառաւորութեան անմահ թագաւորին:*

74 *Ձի որպէս զանագանք են հանդէսք իւրաքանչիւրոցն վկայից, խոստովանողաց եւ կուսանաց եւ պարկեշտ ամուսնացելոց, նոյնպէս եւ պարգեւք ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան բաժանին եւ որոշին յամենեցունց Տեառնէն, որ ի միտ առնու զամենեցունց զխորհուրդս զբանս եւ զգործս:* 75 *Ձի որք ճշմարտութեամբ եւ անարատ սրբութեամբ եւ անբիծ հաւատով նահատակին ընդդէմ չար ցանկութեանցն եւ ամենայն վնասակարաց յաղթող լինեալ՝ զմարտիրոսացն առնուն զպսակսն. զի լնուն զբանն Տեառն. Աոցէ, ասէ, զիսաչ իւր հանապազ, եւ եկեցէ զհետ իմ^գ:* 76 *Ձի խաչ մարմնական ախտից եւ դժնդակ վարուց մահ գործէ. որպէս եւ սուրբքն զմար-*

մինս իւրեանց ի խաչ հանին կարեաւքն եւ ցանկութեամբքն հանդերձ, յառաքելոյ վկայեալ զայս: 77 *Ձի որպէս նոցա պէսպէս տանջանքն, սոյնպէս եւ սոցա զանազան փորձանք. զի յամենայն մարտոցելոցն չարաչար տաժանմանցն ոչ յաղթահարի ի հոգեւոր պատերազմին որպէս քաջամարտիկ. այլ զյաղթութեան զչնորհս երեւելի ցուցեալ ի փառս Աստուծոյ:*

78 *Բայց է եւ ի նոսա առաւելութիւն կամ պակասութիւն առաքինութեանն, ըստ նմին եւ վարձն, եպիսկոպոսաց եւ քահանայից եւ սարկաւագաց եւ դպրաց, որք կուսութեամբ նահատակին:* 79 *Այլ եւ միանձունք եւ սուրբ ամուսնացեալք զանագանեալք ի վարս. որք ստուգապէս ցուցանեն յաւուրն յետնում յարութեան որ ի մեռելոց՝ զիւրաքանչիւրոցն զվարուցն պտուղս:* 80 *Այլ եւ որք զճշմարտութիւնն անիրաւութեամբ ունին. կերպարանեալ պատճառանաւք զարդարութիւն:* 81 *Այլ եւ անսուրբք եւ կաշառառութեւ զաւշաքողք եւ մարդահաճոյք եւ որ այլ եւս են արատք եւ բիծք զորս ծածկել ջանան:* 82 *Ձի ոչ ինչ է ծածուկ, որ ոչ յայտնեսցի, ասէ Տէրն, եւ գաղտնի, որ ոչ ծանիցի^դ:* 83 *Ձի ստոյգ երեւին սուրբք եւ արդարք. որք ճշմարիտ հանդիսիւքն վշտացան եւ նախատանաւք եւ թշնամանաւք եւ բազում նեղութեամբք տանջեալ, եւ ի ճշմարտութենէն ոչ վրիպեալ:* 84 *Որք եւ աստ ունին զառհաւատչեայ յուսոյն զերանութիւնսն. զի վիշտքն անցանեն, բայց աւետիք երանութեանցն կան մնան միշտ:* 85 *Ձի աստ առին զազատութիւն, եւ անդ ժառանգեսցեն զարքայութիւնն:* 86 *Ձի ամենայն հանդիսիւք լաւութեան զերանութեանցն զգրաւականն ընկալան բարի վարութեան, որ պատճառ է փրկութեան յերեւելիս եւ յաներեւոյթս, ի պատմելիս եւ*

^ա Մատթ. Ե 11-12
^բ Հմմտ. Մատթ. Ե 12:
^գ Մատթ. Ժ. 9, 24

^դ Մատթ. Ժ. 26

յանպատմելիս: 87 Բանն Որդւոյ՝ առ Հայր ասէ. Որպէս դու եւ ես մի եմք, այսպէս հաւատացեալք ի մեզ իցեմք: 88 Ձի գիւրն տայ զորդեգրութեան շնորհ ի Հաւրէ, եւ ժառանգորդս իւր առնէ զսուրբս իւր:

89 Ձի ետ մեզ լոյս աչաց եւ խրատ մտաց, զի արթունք եւ զուարթունք եղիցուք. կենաց լուսովն առաջնորդեալ եւ հոգեւորական խրատութիւն յամենայն գործս արդարութեան, եւ իմանալի լուսովն սուրբ եւ արդար կալ մնալ: 90 Ձի հոգեւոր Սուրբ Գրոց խրատք գիտութիւն ճշմարիտ վարուցն տան, եւ ի հոգեւոր կարգս յորդորեն: 91 Ձի զոր ինչ խորհի ոք զաստիսս ի հիւթանիւթ իրսս, զնոյն եւ շարժմունս մարմնաւորս յիշատակաւք ունի զաղտեղութիւնն, որ պղտորէ զմիտս եւ զզգայարանս մարմնոյ: 92 Իսկ եթէ զհոգեւորսն խորհի ի սրբութիւն ի Սրբոյ Հոգւոյն ազդեցութենէ, եւ զհոգեւոր վարուցն խորհի եւ ջանայ ի կատարումն առաքինութեան, եւ² վայելէ ի շնորհս Հոգւոյն զոր անասելի է եւ անլսելի. վասն զի հոգեւոր է եւ մտաւոր, եւ նա միայն գիտէ՝ որում ազդին:

93 Եւ որ գիտաց մերձենալ ի շնորհս յիշատակաւ սրբութեան եւ անմեկնելի լինել յանուշութեան վայելիցն, եւ ի նորա գեղն ցանկ պշնուլ, լուսաւորեալ խորհրդովք մերժել զչարին յարձակումն մթազին խորհրդոցն: 94 Կանխել յաղաւթս ի խնդրուածս ջերմեռանդ արտասուաւք եւ պինդ պահովք ամրացեալ, ունել զզրուենս ողորմութեան: 95 Եւ Հանցէ եւ բարձրացուցէ ի վերոյ քան զամենայն երկրաւորացս շարժմունս եւ ազդմունս, եւ առնուլ զհաստատութիւն հոգեւոր աւգտութեանցն որ ըստ Հաճոյից Աստուծոյ: 96 Յորդորի ըստ առաքելոյ բանի ի վեր նայել, զվե-

րինսն խորհել՝ ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Հաւր. Ձի մեռարուք, ասէ, զմեղացն մահ, եւ կեանքն ձեր ծածկեալ եմ ընդ Քրիստոսիւ յԱստուած Հայրէ: 97 Ձի զամենայն զհոգս երկրաւորս ի բաց ընկեցեալ որ խափան է հոգեւոր եւ երկնային կոչմանն. որպէս մշակք առ գործն եւ զինաւորք առ պատերազմ զինեալք, այսպէս եւ մեզ ի պատերազմ առաքինութեան Հանդիսանալ միշտ եւ արիանալ. զի կարասցուք հարկանել զգունդս չարեացն, զցանկութիւնն եւ զամբարտաւանութիւնն եւ զագահութիւն, եւ որ ընդ նոքաւք են արկածք վնասուց յազդմանէ չարին: 98 Ձի նմանեալք հաւատարիմ ծառային՝ մտցուք յուրախութիւն Տեառն ընդունել զերանութիւնսն ի Քրիստոս, որ կեանքն է հաւատացելոց:

99 Ձի ոչ լուսով նորա գնայ յայրատն եւ ստահակն, զի ոչ գնայ ընդ ճանապարհն արդարոց որ տանի ի կեանսն. զի ոչ առնու ի սիրտ զխրատս իմաստնոց եւ զաստուածային գրոց. այլ որպէս թակարդ զհողմս անցուցանէ զխրատն: 100 Եւ յաղագս այսորիկ ասէ Տէրն ոչ տալ զսրբութիւն շանց, եւ արկանել զմարգարիտն առաջի խոզիցէ: 101 Ձի մարդ բարի, ասէ, ի բարի գանձուց սրտէ հանէ զբարին. եւ մարդ չար զչարն ի վեր բերէ: 102 Ձի անձնիշխանական կամքն շարժէ յոր եւ կամի, եթէ ի լաւն եւ եթէ ի վատթարն: 103 Եւ վասն այսորիկ ասէ առաքեալ. Յառնէ ամբարշտէ յետ երից խրատուց հրաժարեալ: 104 Եւ Դաւիթ ոչ տայ թոյլ մեղաւորին պատմել զաւրէնսն. որ ատեաց զխրատս եւ յետս ընկեաց զիրաւունսն որ յԱստուծոյ եղան: 105 Յանդիմանէ խստագոյնս՝ որ զաւրէնսն ասեն եւ ոչ առնեն, եւ

1 Միւսն՝ Որդի
2 Հմմտ. Յովն. ԺԷ. 21:
3 Միւսն՝ նա... ցանկ պշնու

4 Կող. Գ. 3
5 Մատթ. Է. 6
6 Մատթ. ԺԲ. 35
7 Տէր. Գ. 10

լսեմ եւ քամահեմ^ա: 106 Զի ամենայն գիրք ի խրատ են եւ յանդիմանութիւն, որ քարոզեն զփրկութիւն որք հաւատով ամբարեն յանձինս: 107 Զի որպէս ի մարտոցելոցն ի պատերազմունս դժուարինս յաղթեալք խնդան ոչ սակաւուք, եւ եւս առաւել մարտի յաղթութիւնք հոգեւորացն է խնդումն:

108 Զի եւ մեծատունք եւ աղքատք յանձնիչխան կամսն ունին առ բարիսն շարժումն եւ առ չարն: 109 Զի աղքատն լի է փառաւք մեծացեալ, որ անմեղութեամբ եւ ամենայն առաքինութեամբ է յարդարեալ: 110 Նոյնպէս եւ մեծատունքն եւ ամբիժքն եւ անարատքն որք զտառապեալս լցուցանեն. զի զանմեղս աղքատութիւնն որպէս բով զոսկի սրբէ ի յաղտոյ, եւ ի պատիւ փառացն Աստուծոյ բարձրացուցանէ երկնից մեծութեամբն: 111 Այսպէս համբերութիւնք եւ ժուժկալութիւնք որ անտրտունջ ունին զաղքատութիւնն՝ մեծանան: 112 Սոյնպէս մեծատունք որ զթով խնամեն եւ դարմանեն զկարաւտեալսն, նոքա զանմահութիւն եւ զփառս եւ զպատիւ ժառանգեն, որ անանցանելին է: 113 Ապա եթէ զաղքատութիւնն ոք անիրաւութեամբ ունի, եւ անխտիր յանառակութիւն, ի շնութիւն, ի գողութիւն, ի չարութիւն, ի ստութիւն, յամենայն գործս չարս, նոքա ընկալցին զպատիժս յերկրի, եւ անդ զանգերծ պատուհասն: 114 Եւ մեծատունք որ արգելուն զկարաւտելոց զպէտս, եւ ի շոայութեան եւ յարբեցութեան կեան, եկեացէ, ասէ Տէրն, մահ՝ յորում ոչ գիտեն, եւ ընդ մէջն կտրիցէ ի կեանց, եւ զմասն նորա ընդ անհաւատս դիցէ յանշէջ հուր գեհեմին. զի էր յանառակութեան, եւ գտուեալն յԱստուծոյ մեծութիւն՝ ոչ իրաւապէս բաշխեաց յաղփատս^բ: 115 Զի երկաքանչիւրոցն են իրա-

ւունք, ըստ բարեացն գործոց միանգամայն եւ անիրաւաց՝ ի դատաւորէն:

116 Սոյնպէս եւ առողջութիւնն ունի զշահս եւ զվնասս. զի առողջն մարմնով՝ որ կայցէ ի հոգեւոր առողջութեանն, ժրացեալ ի բարեպաշտութեան ջանս, ընդունի զաշխատութեանն զհատուցումն զհանգիստն անանց. ապա եթէ ծուլութեամբ ի վնասս¹, զանհանգիստն ընդունի զպատիժս անդ: 117 Սոյնպէս եւ հիւանդն մարմնով եւ առողջ հոգեւով կայցէ ի համբերութեան ի դոհութեան Աստուծոյ, եւ մաքրեալ յամենայն սխալանաց. եւ յուսացեալ յԱստուած եւ նմա հաւատայ զշահ անձին՝ զմահ եւ զկեանս, ընդունի զաւրհնութիւն յԱստուծոյ եւ զկատարեալ առողջութիւն. ուստի մերժեալ են ցաւք եւ տրտմութիւնք եւ հեծութիւնք. ապա եթէ ոչ, եւ սա ընդունի ըստ արժանեացն զհատուցումն:

118 Սոյնպէս եւ իշխանքն որ ունին զվերակացութիւն աշխարհի, երկուցունց հոգասցի. զԱստուած ունել ի մտի եւ ոչ թողուլ ի մտաց զկամս նորա, եւ անձինն սրբութիւն եւ ամբժութիւն եւ զամենայն արդարութիւն եւ զուղղութիւնս՝ եւ զիրաւունս առ ամենեսեան ցուցանել: 119 Եւ որք ընդ իշխանութեամբ են, ի մտերմութեան կեալ. Զի ոչ ուստեմ է, ասէ, իշխանութիւն բաց յԱստուծոյ. եւ որք են՝ յԱստուծոյ են²: 120 Եւ իւրաքանչիւր ոք զիւր վարձս առցէ յարդար դատաւորէն, իշխանք եւ որք ընդ իշխանութեամբ են. զի ամենեցունց մի է Տէր արդար՝ որ ըստ արժանեացն պատժէ եւ փառաւորէ յորժամ գայ փառաւք Հաւր ի դատել զերկիր: 121 Զի որ արդարք են եւ լլկին, անդ բազմապատիկ ընդունին զհատուցումն բարեաց յարդար դատաւորէն: 122 Իսկ որ մեղաւորք են եւ լլկին, զպարտիս մեղաց

^ա Տէ՛.՝ Մ. Գրք. ԻԳ. 3:
^բ Տէ՛.՝ Գ. Գրք. ԻԳ. 45. Մ. Գրք. ԻԳ. 51:

¹ Միւսն՝ ի վնասս գեհեմին, ընդունի
² Հ. Գրք. ԻԳ. 1

իւրեանց հատուցանեն. որ արհամարհեցին զբանն Աստուծոյ եւ ոչ ապաշխարեցին. զի ամենայնի լինիցի հատուցումն խորհրդոց եւ բանից եւ գործոց երկրաւորացս: 123 Ձի զաւրաւորաց եւ տկարաց եւ ամենեցուն իսկ կայ յանդիման լինել առաջի բեմին Քրիստոսի. որոց բարիս գործեալ իցէ, խնդրեն¹ զկեանսն յաւիտենից. իսկ որ ապստամբք են ի ճշմարտութենէ եւ գործեցին զչար, անվախճան տանջանքն կան մնան:

124 Սոյնպէս վերակացութիւնք եւ որք ընդ վերակացութեամբն են՝ ունին զչափս եւ զվնասս: 125 Ձի որ զվերակացութիւնն ունի, եւ զինքն Աստուծոյ հրամանացն տուեալ է ի հնազանդութիւն յերեւելիս եւ յաներեւոյթս, սուրբ եւ անարատս, եւ առաջնորդ զԱստուած ունել ի խորհուրդս միամիտս, եւ զինքն արբանեակ Տեառն կազմեաց, այնպիսիքն առաջնորդեալ յամենայն արդարութիւնս, զանվախճան վերակացութիւնն առնուն ընդ սերովբէս եւ ընդ քերովբէս եւ ընդ երկնային զինուորութիւնսն սպասաւորս Աստուծոյ: 126 Ձի առաքեալք եւ մարգարէք եւ քահանայք սուրբք առին իշխանութիւն ի Տեառնէ, եւ եղեն ճշմարտութեանն վերակացուք: 127 Եւ զոր կապեցին յերկրի, եղիցին կապեալ յերկինս. եւ զոր արձակեցին յերկրի, եղիցին արձակեալ յերկինս: 128 Սոյնպէս եւ ամենայն սրբոց տուան շնորհիս այս ի Փրկչէն՝:

129 Իսկ եթէ առեալ զվերակացութիւն՝ յգփասցի եւ ծուլասցի հպարտացեալ իշխանական ճոխութեամբն, եւ ըստ կամաց իւրոց վարէ զառաջնորդութիւնն եւ ոչ ի կամս Աստուծոյ, եւ երկբայեսցի յուսոյն որ ի Քրիստոս, անկցի ի փորձանս, եւ առանց բժշկութեան է նորա բեկումն: 130 Այսպէս եղեւ զժնդակ բարուք սատանայ, եւ խոտորեալ ի Տեառնէ անկաւ ի

բարձրութենէն եւ ի լուսաւոր կարգացն, եւ առանց բժշկութեան է բեկումն նորա: 131 Տեսանէի, ասէ Տէրն, զսատանայ անկեալ յերկնից՝ զառաջնորդն զիւաց հանդերձ իւր հաւանելովքն, եւ եղեւ կոխան սրբոց եւ առաքինեաց: 132 Որք առին հրաման ի Տեառնէ լուծանել զնորա թոյնսն որպէս աւճից եւ քարբից, եւ ոչ կարեն մեղանչել: 133 Իսկ հաւանեալքն նորա կամացն եւ ապստամբեալք ի ճշմարտութենէն զնոյն պատիժս կրեսցեն: 134 Ձի ի ձեռն իշխանաց արդարոց եւ առաջնորդաց սրբոց է շինութիւն աշխարհի եւ եկեղեցւոյ Աստուծոյ հաստատութիւն ի բարի կամս. զի նոքաւք զաւրանայ իրաւունք յերկրի եւ մեծարի սրբութիւն: 135 Որք եւ ընդունին զհատուցումն բարի ըստ բարեաց գործոց. համանգամայն եւ չարեացն որք ոչ կամեցան զնալ յաւրէնս Տեառն: 136 Եւ իմաստութիւն ի դիմացն երեւի, որք ըստ Աստուծոյ վարին եւ որք ոչ ըստ Աստուծոյ: 137 Ձի որ իմաստութեամբն տիրէ, եւ խորհի յաւրէնս Տեառն ի տուէ եւ ի գիշերի, եւ ամենեցուն լինի առիթ փրկութեան, այն է վերին իմաստութիւնն սուրբ եւ խաղաղարար, լի բարեաւք եւ պտղովք արդարութեանէ:

138 Իսկ խորամանկն նմանեալ է բանասարկուին՝ լի անիրաւութեամբ եւ դժնդակութեամբ եւ նախանձու շոգմոզք, չարախաւք, աստուածատեսցք, գտիչ են եւ նորոզիչ չարեացք. որք տայցեն վրէժս ի հուր գեհենին՝ որ պատրաստեալ է սատանայի եւ որսացելոցն ի նմանէ ի նորա կամսն: 139 Ձի զիւրազոյն է որք ընդ իշխանութեամբն են՝ կատարել զառաքինութիւն, քան կամակար իշխանութեամբն. Ձի որում շատն տուաւ, ասէ, շատ խնդրեսցիէ:

1 Մերն՝ անդր
՝ Տէ՛.՝ Յ.՝ Լ.՝ Ի՝ 23:

է՛ Ղ.՝ Կ.՝ Ժ՝ 18
Գ՛ շմբ. Յ.՝ Կ.՝ 17:
Ծ՛ շմբ. շմբ. Լ՝ 29:
Է՛ Ղ.՝ Կ.՝ Ժ՝ 48

140 Ձի որք կարգաւորք են ի վարս իւրեանց ի հնազանդութեան արբանեկութեանն վկայութեամբ Սուրբ Գրոց, սոքա երանեսցին: 141 Ձի անդադաղ վաստակք ի պէտս կարաւտելոցն բաւական լիցին միշտ. եւ ի մտերմութեան կացեալ եւ յանարատ սրբութեան՝ ոչ իւրք դրդեալ ի հակառակացն որք ընդդէմ են բարեացն գործոց. եւ ազատեալք ի ծառայութենէ մեղաց, եւ արբանեակք սրբութեան եւ արդարութեան վարուցն միշտ լիեալ, աստ գլխատակ գովութեան թողցեն, եւ անդ զփառս եւ զպարծանսն¹ յաւիտենականս առցեն, որ ոչ անցանեն: 142 Ձի կամք է Բարերարին ամենեցուն լինել բարերար եւ ժառանգորդ անսպառ բարեացն, որ յուսացելոցն է:

143 Աղբիւր է Աստուած ամենայն բարեաց, որ արբուցանէ զհաւատացեալս ըստ իւրաքանչիւր բարւոյ ցանկութեան սուրբ շնորհաւք: 144 Եւ կեանք է կենդանարար եւ մշտնջենաւոր, որ զկենդանութիւն տայ ամենայն արարածոց իւրոց: 145 Եւ բարերար է առ ամենեւեան, որ պարզեալք իւրովք շնորհէ զքաւութիւն որք դառնան ի չարէն: 146 Եւ այս է, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ որ կամի ի խաւարային մեղացն զերծանել ի սուրբ լոյսն: 147 Եւ ճշմարտութեանն մաւտ է, որք նախաշաւիղ ճանապարհորդեն սրբութեամբ ի ճշմարիտ բարիսն: 148 Եւ ի նմանէ ումեք ի բացէ լինել չիք, ոչ վերնոց եւ ոչ ներքնոց. զի զամենայն արարածս ընդ ինքեամբ ունի ամենակարող զաւրութեամբն իւրով՝ զերկնայինսն եւ զերկրայինս: 149 Եւ գիտէ զխորհուրդս մարդկան եւ ի միտ առնու զամենայն գործս նոցա եւ ըստ արժանեացն հատուցանէ: 150 Ձի ես եմ, ասէ, Աստուած. եւ չիք այլ ոք. որ սպանանեմ զմեղաւորս, եւ կեցուցանեմ զար-

դարս^ա. եւ ոչ ոք է, որ հանէ ի նմանէ զարարածս իւր:

151 Եւ է զոր խրատէ վտանգաւոր պատուհասիւք, որ ապիրատ վարուք ընթանան. եւ է զոր շնորհաւք յորդորէ ի լաւն եւ յառաւել փառաց ժառանգութիւնն, որք հաւատով եւ երկիւղիւ եւ սուրբ սիրով մերձենան առ Աստուածութիւնն. եւ սրբեալ ի մեղաց շնորհաւք երախտեացն նորա ծանիցուք զպարզեալտուն բարեաց: 152 Կոչեաց զհաւատացեալս իւր ժողովուրդ. զի խնդրեսցուք զողորմութիւն ի նմանէ եւ արասցուք զկամս նորա: 153 Կոչեաց զմեզ ծառայս. զի մտերիմ եւ սուրբ սիրով եւ սուրբ վարուք կատարեսցուք զկամս նորա: 154 Կոչեաց զմեզ եւ որդիս. զի եւ ի հայրենական խնաման վայելիցեմք եւ յորդէգրութենէն մի՛ արտաքս ելցուք անսուրբ վարուք: 155 Ձի սուրբ է Տէր եւ ի սուրբս բնակեալ է. զի եղբարս իւր անուանէ զսուրբս. ասէ. Պատմեցից զանուն քո եղբարց իմոց, ի մէջ եկեղեցեաց արհմեցից զմեզ, Հայր^բ: 156 Եւ դարձեալ ասէ. Յորժամ բարձրացայց, զամենեւեան ձգեցից առ իս^գ: 157 Ձի եկն Որդին Աստուծոյ փրկել զազգս մարդկան, եւ ուրախ արար զհաւատացեալս իւր, զի նովաւ եղեաք եւ նովաւ փրկեցաք, եւ առ նա երթիցուք՝ որ հրաւիրեացն զմեզ եւ կոչեաց յիւր արքայութիւնն եւ ի փառսն, յանեղծ եւ յանվախճան եւ յանպատում կեանսն. զոմանս ինքեամբ եւ զոմանս ի ձեռս առաքելոց եւ մարգարէից եւ հոգեւոր վարդապետաւք. զի զամենեցուն կամի զկեալն եւ ժառանգորդս լինել կենացն անվախճանից ի փառս Ամենասուրբ Երրորդութեանն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

^ա Հմմտ. ԲՕբ. ԼԲ 39:

^բ Սաղմ. ԻԵ 23

^գ Յով. ԺԲ 32

¹ Միւսն՝ զպայծառութիւն յաւիտենական

ԺԱ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ
ԼՈՒՍԱԻՈՐՁԻ ՎԱՍՆ ՎԱՐՈՒՑ
ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ, ՈՐ ՀԱՆԴԻՍԻՏԻՓ
ԼԱԻՈՒԹԵԱՆ ՊՍԱԿԵԱԼ ԵՐԱՆԻՆ

1 Ամենայն արուեստից լաւութեան եւ քաջութեան եւ առաքինութեան Սուրբ Երրորդութիւնն է, որ շնորհաւք յորդորէ վասն զի նա է տուիչ եւ յաջողիչ երկնաւորաց եւ երկրաւորաց. եւ որ զմտերիմ հաւատացեալս եւ զսուրբս եւ զսիրելիս իւր աշակերտեաց: 2 Եւ որք ընկալան զարուեստ լուսաւոր կարգացն, եւ վառեցան որպէս զճառագայթս լուսոյ ի մէջ աշխարհաց. զի ասէ Տէրն. Դուք լոյս աշխարհի էք, եւ լուսաւորէ լոյս ձեր զմարդիկ. որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, եւ փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինսն է^ա: 3 Եւ առաքեալ իբրեւ լուսաւորս ասէ շրջել յաշխարհի, զբանն կենաց ունել ի զգուշութիւն անձանց եւ ի շահ աւագտի բազմաց: 4 Որ նորաւք սփռեաց զճառագայթս բանին կենաց ճշմարտութեան ընդ ամենայն տիեզերս, եւ կոչեաց զհաւատացեալս ի հաղորդութիւն բարերար կամացն իւրոց ի կենդանի փառսն անեղծութեան. զի ժառանգաւոր լինիցին արարածք արքայութեան Արարչին եւ աւետեաց ուրախութեան անճառ բարեացն:

5 Այսպիսի յուսով հաճոյացան սուրբքն, եւ կամաւք Արարչին զամենայն դժնդակութիւնս յազգմանէ չարին եւ զչարժմունս մտաց եւ մարմնոց խափանեցին շնորհաւքն Քրիստոսի. անարատ սրբութեամբ, անդադար աղաւթիւք եւ ջերմեռանդն արտասուաւք, կատարեալ ժուժկալութեան պահովք. սանձել զազահոլութիւն եւ զորկորստութիւն, զլկտութիւն եւ զանառակութիւն եւ զստահակութիւն ի չար անդր: 6 Ունել զգործնս ողորմու-

թեան յիշատակաւ սիրոյն Քրիստոսի. յորդորեալք ի հանդէս բարեաց, եւ արժանի եղեալ ազատութեան շնորհաց եւ պարգեւաց Հոգւոյն Սրբոյ վկայութեամբ հանդիսիցն լաւութեան, սուրբ սիրով, մտերիմ հաւատով ի նեղութեանն եւ յանդորրու: 7 Անզբաւս եւ անբիծ ունել զմիտս եւ զզգայութիւնս ամենայն ճշմարտութեամբ: 8 Մի՛ իւրք ունել խարդախութիւն եւ կեղծաւոր խորհուրդս, անհաւատութեան եւ անսրբութեան վարս, որ են պատճառք կորստեան: 9 Այլ զլուսաւոր զսրբութիւնն միշտ յանձինս ունել ամբիծ երախտեաւք սիրոյն սրբութեան. ծաղկեալք առաքինասէր վարուք եւ պսակեալք յաւիտենական յուսովն ի գովեստ փառացն Աստուծոյ: 10 Զի հրով Հոգւոյն Սրբոյ յանարատ սրբութիւնն վերաբերեալ՝ աւթեաւք Ամենասուրբ Երրորդութեանն լինին յերկրի: 11 Զի ամենայն հանդիսիցն եւ առաքինութեանցն զարդ սրբութիւնն է յերեւելիս եւ յաներեւոյթս հոգւով եւ մարմնով: 12 Եւ արդարութեան ամենայն եւ քաջութեան թագ եւ պսակ պարծանաց սրբութիւնն է միշտ: 13 Եւ ամենայն կարգաց երկնաւորաց եւ երկրաւորաց փառք եւ պատիւ եւ մեծարանք սրբութիւնն է, որ ընտանեցուցանէ Քրիստոսի Աստուծոյ եւ ամենայն երկնային զաւրութեանցն: 14 Պատմուճան լուսոյ եւ արմատ բարեաց սրբութիւնն է. եւ որ ճշմարտեալ եւ միաբանեալ են ի գովեստ փառացն Աստուծոյ՝ անմարմնոցն դասք, եւ լուսաւոր վարուք հաստատեալ կան ի սրբութեան. վասն այնորիկ են Ամենասուրբ տէրութեանն սպասաւորք:

15 Սոյնպէս հրաման առին առաքեալքն զսուրբսն կարգել ի սպասաւորութիւն եկեղեցւոյ Աստուծոյ. զի հաղորդ լիցի հրեշտակաց՝ սպասաւոր Քրիստոսի պատարագին: 16 Զի որպէս հոգի ի մարմինն յարմարի եւ աճէ զաճումն հասակի, սոյնպէս մտաւոր հոգին զամենայնն քննէ

^ա Մատթ. Ե 14-16

եւ որոշէ զլաւն ի վատթարէն: 17 Սոյնպէս են եւ հաւատք ճշմարիտ աստուածգիտութեան. որ ածէ զաճուսն առաքինութեանցն որ ի Քրիստոս, եւ լինի կատարումն հասակի արդարութեանն հաւանութեամբ հաւասարել անդամոցն ի միաբանութիւն հաճոյիցն Աստուծոյ: 18 Ձի ամենայն լուսաւոր վարք հաւատովք բովանդակին յերեւելիս եւ յաներեւոյթս. զի լուսաւորեալք ի գիտութիւն ճշմարտութեան՝ զաւրասցի ի հանդէս բարեպաշտութեանցն որ ի Քրիստոս. զի ամենայնի Քրիստոսիւ եղել կատարումն՝ եթէ յերկինս եւ եթէ յերկրի՞, ասէ առաքեալ. զի զաներեւոյթսն յերեւելիս ցուցանեն հաւատք, եւ զերեւելիս յաներեւոյթսն ի կամս Տեառն:

19 Գանձ անկապուտ են հաւատք, որք զբարիսն ի մեզ ամբարեն. եւ ի ձեռն շնորհացն յայտնեաց հաւատովք զպարգեւս փրկութեան եւ կենացն անմահից, զի զամենայն երանութիւնսն յուսով վայելեցուք. զի իբրեւ առաջի աչաց ունի զուարթածաղիկ զերանութիւնսն յուսով. զի մի՛ հեղգասցուք ի հանդիսիցն որ առաջնորդեն մեզ յանանց բարիսն՝ որ պատրաստեալ է սրբոցն: 20 Ձի նախ սէրն նովաւ լցեալ եւ զարդարեալ ճառագայթիւք յիշատակաւ սրբութեանն եւ ամենայն անդամոցն եւ մտացն առաջնորդէ յարդարութիւն հաւատովք յԱմենասուրբ յերրորդութիւնն, եւ ի կամս նորա սիրով հաստատի: 21 Ձի սիրտ սուրբ տաճար է Հոգւոյն Սրբոյ. եւ սէր սուրբ ունել՝ բնակարան Քրիստոսի, եւ ի նմա հանգուցեալ են աստուածեղէն կամք. Ձի որ կայ ի սէրն իմ եւ պահեսցէ զբանս իմ, ասէ Տէրն, եւ եւ Հայր իմ եկեցոյ՛ք եւ աւրեւանս առ նմա արասցուի՞ք: 22 Ձի սիրով բարերարութեամբն յանճառ բարիսն վայելեցուցանէ: 23 Եւ ո՞րք են որ զբան նորա պահեն: 24 Որք

սուրբ սրտիւ եւ անարատ յամենայն վնասուց մնան անբիծք: 25 Ձի որ սիրեն զնա, սիրեսցին ի նմանէ. եւ որք խնդրեն զնա, լինի պարգեւատու: 26 Իսկ որք ոչ պահեսցեն զնորա զբանն, ասէ, ինքն ինքն զոր խաւսեցայ ընդ ձեզ, նա դատի զձեզ յաւուրն յետնում՞:

27 Իսկ որ զբանն նորա պահէ, խլէ ի սրտէ զգժնդակ խորհուրդս մտաց. զանհաւատութիւն, զերկմտութիւն, զչարութիւն, զնախանձ, զաղտեղի ցանկութիւնս հանդերձ ամենայն վնասակարաւքն, եւ ի ներքս բերեալ զբարեխորհուրդութիւնն սուրբ՝ որ լին է բարեալք ի Քրիստոս: 28 Ձի ազատեալք ի բժից զգայարանքն՝ կատարեսցեն զարդարութիւնս, եւ արթուն կայցէ միտքն զգայութեամբքն ի վերայ շահիցն եւ կենարար գիւտիցն: 29 Եւ մի՛ ի սաստկանալ պատերազմին լքանել եւ լուծանել զմարտն, այլ ճշմարիտ համբերութեամբ զդէմ ունել. եւ երկայնամտեալ յուսով եւ զաւրացեալ ի Քրիստոսի շնորհացն՝ յաղթեսցէ մարտին, եւ հասցէ ի նաւահանգիստն Քրիստոսի: 30 Շիջուցանել զազգմունս չարին եւ զչարմունս բարուց ցանկութեան: 31 Եւ զյաղթութեան զշնորհս ընկալեալ եւ զգովութիւն ի վերնոց եւ ի ներքնոց, պսակեսցի փառաւք եւ պարծանաւք աւետեաց փրկութեան կենացն: 32 Ձի որ կայցէ յայն սէրն որ ի Քրիստոսն, որ փրկեացն զարարածս եւ եբարձ զթշնամութիւն ի միջոյ, Տեառնն է բնակիչ: 33 Եղիցուք նմանողք նորա մեծութեանն, եւ շահեսցուք զբարիս եւ զեղբարս, եւ փոխանակեսցուք զբարին մեր առ նոցա կարիսն, եւ զկեանս մեր ընդ մահու նոցա. եւ լինիցիմք ժառանգաւոր նորա տէրութեանն, եւ բնակարան կենդանի կամաց նորա, եւ հաղորդս սքանչելի եւ սուրբ սիրոյ նորա, եւ կցորդ փառաւորեալ փառաց նորա:

՝ Հմմտ. Կող. Ը 16:

՞ Յով. ԺԳ. 23

՘ Հմմտ. Յով. ԺԻ 48:

34 Մէր սուրբ մայր է առողջութեան, անարատութեան, անբծութեան. որ խնամէ եւ յորդորէ յառաքինութիւն եւ յարդարէ յամենայն բարեգործութիւնս: 35 Մէր աղբիւր է ամենայն բարեաց, որ արբուցանէ զսուրբ անձինս. եւ գրաւական ամենայն երանութեանցն, եւ մեծութեան պարգեւացն Աստուծոյ բաշխող: 36 Մէր բղիւսման երախտեաց Քրիստոսի, եւ վայելեցուցիչ յանպատում շնորհս նորա. լուծիչ խռովութեան եւ տուիչ խաղաղութեան. լուսաւորիչ մտաց եւ անդամոց: 37 Մէր սուրբ հոգւոյ եւ մարմնոյ անեղծ ստացուած է, որք ունին զնա միշտ. եւ կենդանի շնորհք ի Քրիստոս ամենաշահ երանութեամբն յարդարեալ ի գովեստ փառացն Աստուծոյ: 38 Մէր աւետեաւք կենդանի յուսոյն սփոփիչ է նեղութեան եւ վշտաց, եւ լուծիչ ամենայն դժնդակութեանց ի վերայ եկելոց՝ որ զինուորին ընդդէմ առաքինութեան հանդիսից: 39 Մէր սուրբ երախտեաւքն հրեշտակ է խաղաղարար, որ զցասումն մերժէ եւ զխռովութիւն լուծանէ եւ զնախանձ արտաքս մղէ եւ ցածուցանէ զչար: 40 Մէր սուրբ այգի վայելուչ, որ խաղողով եւ զինեաւ զուարթացուցանէ զսիրտն եւ զզգայարանսն ի տրտմականացն եկամտից, եւ ուրախ առնէ ի կամս Տեառն: 41 Մէր սուրբ ձիթեանի պտղալից է ի սրտի բարեխորհին, մզելով զձէթ ի լուսաւորութիւն իմանալեաց եւ յաւժումն, եւ երեւելի անդամոցն զուարթութիւն: 42 Մէր սուրբ հոգեւոր կարգաց յարդարիչ է եւ մարմնաւոր վարուց յանձանձիչ. որ ի միասին կապէ, եւ ոչ տայ բաժանել եւ քայքայել զհասարակաց բարին: 43 Մէր սուրբ բանալի է դրանն կենաց, որ զկեանսն բաշխէ. եւ աներեւոյթ շնորհացն Աստուծոյ գանձուցն բաշխող ի սուրբ անձինս, եւ դժնդակ վարուց խափանիչ եւ ընդդիմամարտ մեղաց:

44 Ձի ամենայն արուեստք առաքինութեան սիրով յարդարին, սրբութիւն,

արդարութիւն. եւ նովաւ ցուցանեն զհանդէս լաւութեան իւրեանց, որ է վարիչ չարի եւ յորդորիչ բարւոյ, զաւրավիգն աստուածասիրաց եւ կործանիչ խորամանկաց եւ մեղսասիրաց: 45 Եւ խառնեալ սուրբ սէրն ընդ հաւատոց եւ ընդ յուսոյ՝ հանդիսանայ ի բարեպաշտութեան վարս, եւ միմեանց խաղաղութեամբն յայտնի առնեն զլուսաւոր կարգս: 46 Ձի պատճառաւք առաքինութեամբքն լուսատու թագաւքն պսակեսցին յանուշակ յերկնաւոր Հաւրն խնամսն, եւ վայելեսցեն յանվախճան եւ յանպատում բարութիւնս նորա: 47 Ձի որ ունի զխնամս սիրոյն սրբութեան առ ամենեսեան հեռաւորս եւ մերձաւորս, առ հոգիս եւ մարմինս ամենայն ճշարտութեամբ, երանութեամբք սուրբ սիրոյն, յԱմենասուրբ Երրորդութենէն աւրհնեալք պսակին եւ մեծարին, եւ մշտնջենաւոր խնդութեամբքն վայելեն յանվախճան եւ յանհամեմատ բարութիւնսն:

48 Ձի եւ հաստատութիւն ուղեղ հաւատոց բովանդակիչ է սուրբ սիրոյն եւ յուսոյն անսասանելի կալ: 49 Ձի շնորհաւք Սուրբ Հոգւոյն՝ այնոքիւք միաւորելոցն՝ պարիսպ ամուր պապստանի ամենայն առաքինութեամբք շրջապատեալ է: 50 Որ ոչ ոք վստահացի առնուլ զամուրսն, զի պահեսցի ի զգուշութեան հաւատովն արթնութեամբ, սուրբ եւ յիշատակաւք յուսոյն անդրդուելի միշտ. գոհանալով եւ աւրհնելով զՏէր անյագ բաղձանաւք, հաւանական կամաւք, յորդ եւ քաղցր անձկաւ փափաքել առ աղբիւրն շնորհացն եւ ըմպել անյագ ի նորա բղիւսմանէն, եւ արբուցանել զտունկս արդարութեան եւ զսերմանս բարեպաշտութեան շնորհաց արտասուացն վտակաւք, զի զառհաւատչեայն բերցեն զպտուղ: 51 Ձի զարուն հոգեւոր է աճմանն հաւատոց եւ սրբութեան սիրոյն, որ զամենայն առաքինութիւնս բողբոջեն. որպէս տունկք

եւ բոյսք զսաղարթս եւ զծաղիկս ի ձմերնային կապանացն լուծեալք: 52 Այսպէս ջերմութիւնք սուրբ սիրոյն հաւատով շնորհալից արտասուեալք՝ զառաքինութիւնսն փայլէ Ամենասուրբ Երրորդութեանն կամաւք եւ շնորհաւք:

53 Եւ հաւանութիւն հաւատոց եւ սուրբ սիրոյն հաւասարութիւն յոր կողմ յորդորի, զամենայն հաւանեալսն ի Քրիստոս ժողովէ: 54 Եւ նա է նաւահանգիստն մեր եւ բաշխող պարգեւաց. կենդանի աղբիւր եւ ճաշակք անմահութեան, որ զամենայն սուրբս վայելչութեամբ պսակէ յաւէժ կենդանութեամբքն: 55 Եւ զիւրաքանչիւրոցն քաջութիւն ի վեր բերեալ՝ յաւրինին եւ կազմին աւգտակար շահիցն փառք, եւ լուսաւոր առաքինութեանցն հանդէսք ցուցանին ըստ արուեստիցն բարութեանցն. զի զգուշութիւն զգաստութեան ամենայն զգայութեանցն հաւատով եւ սուրբ սիրով սիրեալ զանարատ ամբո՞ւթիւնս յինքն հպեաց. որ ի բաց մերժէ զախտ եւ զբիծ ի մարմնոյ եւ ի մտաց, յստակ եւ սուրբ սիրովն որ առ Աստուած: 56 Որ կարողն է ընդբել զաւգտակարն եւ անարգել զվնասակարսն, եւ յորդորիչ լինել մտաց եւ զգայութեանց ի բարիսն, եւ զխարդախութեան վնասն պահել զմոլտս ահիւ եւ զգաստութեամբ միշտ: 57 Զի յերկիւղն Աստուծոյ ամփոփին միտք ի զգուշութիւն Աստուծոյ բանին. եւ զգաստութեանն առաջնորդեալ՝ անարգեսցէ զչարն եւ ընդրեսցէ զբարին. եւ կացցէ մնասցէ սուրբ եւ արդար յերեւելիս եւ յաներեւոյթս արթուն եւ զուարթուն: 58 Զի մի՛ խորամանկեալ չարին ի ներքս մտցէ ընդ միտսն եւ ընդ զգայութիւնսն եւ յափշտակեսցէ զառաքինութեան գանձն. եւ պարտաւորեալ գտանի ի հեղգացելոցն դատաստանն, որ ոչ հսկեալ պահեաց գտուն գանձուցն առաքինութեան, այլ թոյլ ետ ական հատանել եւ գողանալ զբարի մեծութիւնն, յորս վայելելոց էր ի

հանդերձեալսն. եւ վասն այնորիկ պատժի ի գեհենին յաղագս հեղգութեանն:

59 Արդ, եղիցի զգուշութիւն ի պահել զամուրսն եւ զգաստութեան գանձսն ի Քրիստոս, որ ի մարմնին է զարդարեալ շնորհաւք. զի Նովաւ ապրեսցուք ի խորամանկութենէ բանսարկուին եւ ի պատրանաց: 60 Եւ հաճոյացեալք ի նորա կամսն՝ մտցուք ի խոստացեալ բարութիւնսն առանց ամաւթոյ վնասուց. զամենայն ճշմարտութիւնս եւ զպարծանս սուրբ վարուց ընդ մեզ ունելով, հանգիցուք ի գող հանգստեանն եւ ի գիրկս մխիթարութեանն եւ ի լոյս անշիջանելի փառացն: 61 Եւ ըստ բազմաբեր պտղոցն մեր՝ առաւելեսցեն պատիւ եւ փառք մեր. եւ ազատեալք ի Քրիստոս առցուք զպսակն պարծանաց յամենակալ Հաւրէն:

62 Ասացից եւ վասն սուրբ հեղութեանն՝ որ առողջութիւն է խլրտման ցասման մտաց եւ մարմնոյ: 63 Զի լուսաւորեալ անարատ հեղութեամբ եւ ամբիծ սիրով, որ հաւատովքն յարդարեալ է ի հաճոյս Սուրբ Հոգւոյն եւ ի կամս Որդւոյն եւ ի փառս Հաւրն երկնաւորի, առողջացեալ եւ ճշմարտեալ ի սուրբ սէրն նորա՝ պահեսցի, եւ ի հարուածոց ցանկութեանց ազատեսցի, եւ հանդարտութիւն առցէ ի վնասակար մարտից, եւ ի շնչել այսոյն չարութեանն ցածուցէ ի միտս եւ ի մարմինս:

64 Հեղութիւն սանձք է բարկութեան եւ շարժմանց ցասման եւ վնասակարաց լկտութեան եւ ստահակութեան եւ ի թշնամանս յանդգնեալ ըստ ամենայնի: 65 Հեղութիւն քաղցր եւ անոյշ ճաշակք են քմաց եւ ցածուցիչ խռովութեան ամբոխից, որ յամբարտաւանութենէ գերին: 66 Հեղութիւն հանդարտեցուցիչ է մրրկաց ալեաց մտաց եւ մարմնոց ալէկոծելոց ի փորձանս ինչ: 67 Հեղութիւն արմատք խոնարհութեան եւ համբերութեան եւ ժուժկալութեան են՝ որ մերձաւորի

Քրիստոսի: 68 Հեզուլթիւն զաւրուլթիւն է ամենայն առաքինութեան եւ հիմն ամենայն բարեաց յերեւելիս ի մեզ: 69 Հեզուլթիւն շինուած է խաղաղութեան, եւ քակտումն եւ հերքիչ խռովութեան, յիսութեան եւ նախանձու՝ երեւելի եւ գաղտնի: 70 Հեզուլթիւն աղբիւր յստակ է եւ ամպ քաղցր ցաղով, որ արբուցանէ գերաշտութիւն չորացելոց:

71 Հեզուլթիւն դաստիարակ է մանկութեան եւ հաւանութեան խրատուց եւ կարգաց ուսուցիչ: 72 Հեզուլթիւն փառք ծերոց, որ նովաւ են հրահանգեալ յողջախոհութիւն եւ յամենայն առաքինութիւնս: 73 Հեզուլթիւն պատիւ երիտասարդաց, որ նովաւ յաղթեցին ամենայն հակառակաց, ստահակաց եւ անիրաւաց խոնարհութեամբ եւ քաղցրութեամբ:

74 Հեզուլթիւն պսակ է պարծանաց կուսանաց, որ ամենարուեստ երախտեալք եւ բազմահանդէս առաքինութեամբքն ի կոչումն ընծայեալք սիրոյն սրբութեան: 75 Զարթուցեալք, անվեհեր քաջութեամբ հնազանդեալք, եւ զհեղգութիւն եւ զյամառութիւն յորդորել ի հաւատ ճշմարտութեան: 76 Փոյթ յառաքինութեան գործասիրութիւն. անքակ աղաւթիւք, յորդորեալ յիշատակաւք, մտերիմ կամաւք, խոնարհ շարժմամբք, քաղցր հնարիւք, սիրով սրբութեամբ, կատարեալ պահովք սանձել զդժնդակ եւ զաղտեղի խորհրդոցն շարժմունս յագդմանէ չարին. շիջուցանել զհոլր ցանկութեանն ջերմեռանդ արտասուաւք: 77 Բաց ունել զդուռն ողորմութեան ի պէտս կարաւտելոց, եւ ակն ունել յուսով խոստացեալ աւետեացն իմաստուն կուսանացն: 78 Եկա՛յք, ասէ, աւրինեա՛լք Հաւր իմոյ, ժառանգեցէ՛ք գարեայութիւնն սուրբ՞:

79 Հեզուլթիւն՝ մանկանց Եկեղեցւոյ անունդ է, եւ յորդորիչ ըստ աճմանն զգաստութեան եւ ճշմարտութեան. որոց սկիզբն առեալ ի տղայութենէ ի սրբութիւն եւ ի պիտանութիւն՝ զլուսաւոր վարդապետութիւնն եւ զհանգամանս բանից եւ ձայնից որպէս ճառագայթս արեգական փայլեցուցանել փառաւորութեամբ ի փառս Աստուծոյ վերնոց եւ ներքնոց, հանդերձ ամենայն սուրբ վարուք եւ խոնարհ սրտիւ. զի այնպէս լինիցին վերնոցն փառակից:

80 Հեզուլթիւն՝ զգաստութիւն է առաքինեաց եւ քարոզիչ նոցա հանդիսիցն. որ իմացան զերկրաւորս անցաւոր, եւ բուռն հարին զանանց կենացն միամիտ սրտիւ եւ անհեղգ մարմնով, ազատեալ յամենայն վնասակարաց մտաւք եւ մարմնով: 81 Զի կատարեալ զամենայն հրամայեալսն ի Տեառնէ՝ եւ զայլս յորդորեսցեն ո՛րպէս պարտ է պահել արդարոց զսրբութիւն եւ զամենայն առաքինութիւն. կամ ո՛րպէս մեղաւորաց դառնալ ի խոստովանութիւն ապաշխարութեան, զի ապրեսցին:

82 Հեզուլթիւն՝ գովելի մեծութիւն է տնանկաց. զի երկրաւոր մեծութիւնս մաշի եւ կորնչի հպարտութեամբն. այլ տնանկացն հեզութեամբն մեծացեալ կան եւ մնան անանցք. զոր ոչ ցեց ուտէ եւ ոչ ուտիչ ապականէ, կամ գողք ական հատանեն եւ գողանան: 83 Եւ յաղագս այսորիկ երանէ Տէրն զհեզս. քանզի ասէ. Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն գերկիրն կենդանեաց՞, ուր ոչ լսի համբաւ մահու. որպէս եւ Դաւիթ ասէ. Հանոյ լինել առաջի Տեառն յերկրին կենդանեաց՞: 84 Այլ եւ աստէն ունի զհանգարտութիւն մտաց եւ անդամոց եւ առ ամենեսեան՝ ոյք ճակատամարտին: 85 Զի զաղքատս ի համբերութիւն կրթէ, զգաւրաւորս զգաւն առնէ,

՞ Մատթ. Է 5

՞ Մատթ. ՃԺԿ 9

՞ Մատթ. Ի Ե 34

եւ առանց խռովութեան ունել զիշխանութիւնս երկրաւորս եւ առանց աղմկի հանապազորդ. յամենայնի ամենեքումբք է համեստութիւն, մեծաց եւ փոքունց դաստիարակ:

86 Հեզուլթիւն լուսաւորութիւն է քահանայական շնորհի. զառաջնորդական միտան ի հնազանդութեան ունի, եւ ոչ տայ թոյլ ցասման շարժել ի բարկութիւն եւ ի թշնամանս, անգիտացեալ որ ինչ խորհրդոցն է ամբարտաւանեալ ի ցասմանէն: 87 Այլ հեզուլթեամբն մտայոյզ եղեալ ըստ Քրիստոսի աւետարանութեանն ուղղէ զհրաման իրացն առ սովին գիտութեամբն. եւ լուսաւորէ այնպէս հեզուլթիւն, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, ասէ Տէրն, եւ փառաւորեսցեն զՀայրն ձեր որ յերկինս է: 88 Հեզուլթիւն որպէս աղ է անուշիչ խորտկաց, որ զհամեղութիւն ճաշկացն համահամ քմացն տայ: 89 Զի բանք ձեր, ասէ, որպէս աղիւ համեմեալ լի շնորհաւք եւ ճշմարտութեամբ, յարդարեալ հեզ վարդապետութեամբ. զի տացէ շնորհս լսողացն վասն հանդերձեալ դատաստանին արդարոց եւ մեղաւորաց. զի որք լուիցենն՝ իմաստնասցին ի Քրիստոս: 90 Հեզուլթիւն անարգամեծար Տէր է. զձկնորսս քարոզս արար եւ աղբիւր կենդանարար շնորհաց Սուրբ Հոգւոյն, արբուցանելով զհաւատացեալս յաստուածգիտութիւն:

91 Հեզուլթիւն պատկառէ յանդուզն եւ յահուր բարուց, որպէս Մովսէս եւ Դաւիթ վկայեն. ոմն առ ապարասան ժողովուրդն, եւ ոմն առ Սաւուղ բազում անգամ երեւի: 92 Հեզուլթիւն իմաստնոց՝ իմացուցանէ լսողաց զբանն հանճարոյ, ի միտ առնուլ զարդարութիւն ճշմարիտ եւ ուղղել զիրաւունս եւ զամենայն առաքինութիւնս: 93 Հեզուլթիւն զարդ է երեւելի առաքինեաց անձանց, հաւատոյ, յուսոյ, սիրոյ, սրբութեան, աղաւթից, պահոց, խոնարհութեան, ժուժկալութեան, եւ ամենայն բարեաց: 94 Հեզուլթիւն՝ սրբութեան

զգեստ է, որ մերկացան եւ ի բաց ընկեցին զաշխարհական զցանկութիւնս, եւ զգաստութեամբ կատարեցին զկեանս ի Քրիստոս: 95 Հեզուլթիւն մեծասքանչ շուք եւ պատկառ է՝ ի մէջ բազմամբոխ հրապարակաց. որ զհոգեւոր աւրէնսն հանդարտութեամբ ճառէ, եւ հրեշտակ խաղաղարար լինի առ ամենայն լսողս, եւ անուն Տեառն փառաւորի. ի հեզոյն եւ ի մարդասիրէն Աստուծոյ փառաւորեալ՝ վերափոխի ի կեանս, եւ լսէ ի Տեառնէ՝ եկ հաւատարիմ ծառայ եւ հեզ, որով ի սակաւուղ հաւատարիմ եղեր, ի վերայ բազմաց կացուցից զքեզ:

96 Հեզուլթիւն կերպարանք փառաց է Տէրութեանն, եւ գիւտք հանգստարար յաւիտենից. որ իւրովք դարմանաւք ի ձեռն հեզութեանն իւրոյ վանք երկնաւորացն լինի եւ մտերմաց հաւատացելոց սրբոց ի Նա. որ խոնարհեցաւ ի յերկնից ի յերկիր ի մեծութենէ փառաց եւ էառ զծառայի կերպարանս, զի ծառայքս զնորա կերպարանս առցուք արդարութեամբ սրբութեամբ ճշմարտութեամբ վասն բարերար եւ ամենագիւտ սուրբ սիրոյն, եւ զբաւականաւն զոր էառ ի մէնջ եւ ինքեամբ նստոյց ընդ աջմէ Հաւր ի բարձունս, եւ ետ յոյս վերստին հաւատացելոց ամենեցուն խոստացեալ աւետեաւքն՝ Ուր եսն եմ, անդ եւ պաշտաւնեայն իմ եղիցի՞: 97 Վասն որոյ հրաւիրեաց ամենեսեան եւ կոչեաց յիւր արքայութիւնն եւ ի փառսն. եկայք առ իս, ասէ, ամենայն աշխատեալք ճգնաւորական հանդիսիւք եւ բեռնաւորք մեղաւք յապաշխարութիւն խոստովանութեամբ, եւ ուսարուք յինէն զհեզութիւն զխոնարհութիւն, եւ գաղիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ աշխատելոց յուսով հեզոցն քաղցր է, եւ բեռինք մեղաց խոնարհութեամբն փոքրոգի լինի: 98 Եւ յերկուցունց հաս-

1 Միւսն՝ պատկառանք է.
* Յով. Ժ. Բ՝ 26

տատութենէ՛¹ կայ ընդ աջմէ Աստուծոյ սուրբ եւ անարատ, ոչ ինչ ունելով զձախակողմանն զդժնդակութիւն, այլ զաջակողմանն արդարութիւն. զի որ զայս ունին, Քրիստոսի նմանին հեզոյն եւ խոնարհին առ արածելն. եւ երանութեամբք պսակին ի խնամոց սուրբ սիրոյն հեզքն եւ խոնարհքն սրտիւք յԱմենասուրբ Երրորդութենէն. ազատեալք ի վշտաց եւ ի յաւիտենական տանջանացն, եւ յանանց խնդութիւնս եւ յանհամեմատ բարութիւնսն վայելեցուցանէ: 99 Զի բազմաբոյս առաքինութեամբքն ի բազմագով կեանսն ուրախանան, եւ փառաւորեալ եւ պսակեալ՝ զանճառ զլոյսն զգեհոնն ի Քրիստոսէ յանպատում եւ յանանց ի կեանսն, որ պատրաստեալ է ամենայն սրբոց ի խորանսն յաւիտենից:

100 Զի բազում եւ առաւել եւս է ճաշակ քաղցրութեան եւ խոնարհութեան եւ հնազանդութեան, ողջախոհութեամբ եւ անարատ վարուց եւ անբիծ սիրոյ երախտեալք: 101 Որովք խորտակեցան դրունք պղնձիք անհաւատութեանն, եւ նիգք երկաթիք անհնազանդութեանն փշրեցան, եւ յաւար եղեն գանձք աներեւոյթ թշնամւոյն ճշմարիտ իմաստութեամբն Քրիստոսի հաւատովք Աւետարանին քարոզութեան. լուսաւորացն նմանեալ որ ճառագայթիւք լնուն գտիեգերս, եւ ուղիւղ զգնացս մարդկան ունին ըստ արդարութեան ճանապարհին: 102 Զի քաղցրութիւն խոնարհութեան եւ հնազանդութեան աղբիւր բարութեան վայելեցուցիչ են, եւ բժիշկ դառն ցաւոց՝ որ զառողջութիւն տան. եւ բարեաց առաջնորդք՝ որ ուղիւղ ճանապարհաւք յերանութիւնսն տանին, ազատեալ յամենայն վշտագին վտանգից:

103 Քաղցրութիւն խոնարհութեամբ հնազանդութեամբ եւ հեզութեամբ միաւորեալ՝ որսորդ բարեաց է եւ ժողովող ամե-

նայն առաքինութեան եւ վանք Սրբոյ Երրորդութեանն: 104 Քաղցրութիւն եւ խոնարհութիւն եւ հնազանդութիւն միաւորեալ՝ զժողովս ճգնաւորաց ի միասին ունի, եւ ոչ թողու քայքայել ի միմեանց: 105 Քաղցրութիւն եւ խոնարհութիւն եւ հնազանդութիւն ընտանեցուցիչ է ատարաց եւ զգաստութիւն մերձաւորաց, նուաստութիւն ամբարտաւանից եւ զաւրութիւն հեղգացելոց, ցածուցիչ ամենայն ստահակաց, զարթուցիչ է կենաց յուսոյն, եւ համարձակութիւն վարանելոց որ ի մեղացն ազատեցան ի ծառայութենէ: 106 Պատճառք է ամենայն հոգեւոր շահից, եւ խափանիչ կորստեան վնասակար խորհրդոց եւ գործոց: 107 Բացիչ է ճշմարիտ խոստովանութեան, եւ արձակիչ կապելոց զղջմամբ ի թողութիւն մեղաց: 108 Հրաժեշտ վնասակարաց, եւ մուտ յորդէգրութիւն: 109 Աւտարացուցիչ է ամենայն դժնդակաց, եւ մերձաւորիչ յուսոյն կենացն յաւիտենից: 110 Տաւն է ճշմարիտ քարոզութեանն խնամոց, եւ աղբիւր աննդեան Հոգւոյն Սրբոյ բղխման: 111 Հեռացուցիչ է անգիտութեան, եւ տուն գանձի է իմաստութեան եւ հանճարոյ: 112 Ընտանեցուցիչ է ճշմարիտ բարեկամաց, եւ յանդիմանիչ սպրդողաց սուտ եղբարց ամբարշտաց: 113 Ցրուելոց ճշմարտասիրաց է ժողովիչ, եւ անիրաւաց ցրուիչ: 114 Հեշտացուցիչ սարտուցելոց. պարգեւատու շնորհաւք՝ որ դառնան յիրաւունս արդարութեան, եւ կարգաւորիչ ի լաւն առհասարակ: 115 Մխիթարիչ է սգաւորաց, եւ սփոփանք ամենայն վտանգելոց:

116 Քաղցրութիւն եւ խոնարհութիւն եւ հնազանդութիւն անդորրութիւն է ի դարմանս մարդասէր խնամոց: 117 Առողջութիւն ցաւազնելոց, եւ յոյս հաստատունն ի հանդերձեալսն: 118 Ծփելոց նաւահանգիստ, եւ աւգնական առաքինութեան. սրբութեան ամենագիւտ հնարք, եւ պղեր-

1 Միւսն՝ հաւաստութեան:

զաց ձեռնտու ի գործս այգւոյն՝ որ առնու վարձս զառաջնոցն: 119 Դուռն բաց է ի կենսաբեր մուտսն, որ ունի զբաղձանս արքայութեանն՝ ընդ ինքեան ունելով զբարիսն: 120 Եւ փակի ապախտաւորաց եւ անհնազանդից, ամբարշտաց եւ մեղաւորաց եւ որք ոչ լուան նորա բանին: 121 Իսկ որք խոնարհեալ հնազանդիւն ընդ քաղցր լծով ապաշխարութեանն, եւ սոքա ոչ զրկին ի խոստացեալ աւետեացն ստոյգ խոստովանողացն եւ ապաշխարողացն. զի ոչ եկն կոչել զարդարս, այլ զմեղաւորս: 122 Զի որ զայս վարս առաքինութեան ունին, կենդանի երախտեալք երանութեամբքն պսակեսցի յԱմենասուրբ Երրորդութենէն: 123 Ազատեալ ի դառն վշտաց գեհեհին, եւ մշտենջենաւոր անմահ խնդութեամբն յանհամեմատ բարիսն վայելեսցէ ի Քրիստոս սքանչելի ամենայն երանութեամբ: 124 Ուղիղ միաբանութիւն հաւատոյ եւ սուրբ վարուց առողջ ամբիծ անարատ ունի զերախտի սիրոյն առ ամենեսեան անդամոցն յարմարութիւն ի Քրիստոս: 125 Զի նովաւ հաստատին ի մի կամս Քրիստոսի եւ ի մի հաւատ. ի նմա բնակի Աստուծոյ յորդորումն եւ առաքինութեան ածումն:

126 Միաբանութիւն հաւատոց եւ սուրբ վարուց՝ աղբիւր գիտութեան. ի նոցանէ բաշխի անծախաբար այն՝ որ տայ իւրաքանչիւր զէնս նահատակութեան, զկամս բարիս, ընտրողական միտս. ատել զչարն, եւ կանխել ի սէրն Աստուծոյ եւ ի շինութիւն կամացն՝ կատարեալ ապաշխարութեամբ եւ մտերիմ խոստովանութեամբ: 127 Միաբանութիւն հաւատոց եւ սուրբ վարուց՝ խառնէ ընդ Արարիչն զչնորհս, եւ ի սուրբ յիշատակաց նորա անքակ ունի զամենայն անդամս, եւ առ դրունս ողորմութեան սիրոյ նորա կայ միշտ վասն ամենայն բարեացն որ յարարածս է: 128 Եւ ընդ սոյն դուռն մտանեն պարգեւք միաբանութեան, որ ազատէ եւ մեծացուցանէ.

եւ նովին միաբանութեամբ ընդունին անդամքն ի միմեանց զաւզնութիւն առ շինութիւն իւրաքանչիւր կարգի: 129 Եւ ամենայն որ քակի ի միաբանութենէ հաւատոցն եւ ի սուրբ վարուցն, ոչ միայն հրածեշտ լինի յերանութենէ անտի, այլ եւ ի պատիժ մատնի. որպէս անդամ ի մարմնոյ հատեալ անպիտան լինի, եւ կամ ոստ ի ծառոյ կտրեալ ի հուր:

130 Միաբանութիւն հաւատոց յԱմենասուրբ Երրորդութիւնն ի սուրբ վարս՝ քաղաք ամուր է երկնային զաւրութեամբն պարսպեալ. բնակութիւն է սիրոյն Աստուծոյ եւ վերին զաւրացն, ժողովիլ ի նոսա ամենայն սրբովք յանճառ ակհնութիւնսն միաբանեալ, ընկղմեալ յուրախութիւնս խնամոց սուրբ սիրոյն՝ վառեալք յուսով փառացն Աստուծոյ. որոց սիրել զմիաբանութիւն անարատ սրբութեանն ամբիծ երախտեալքն Յիսուսի Քրիստոսի: 131 Զի որ այսպէս անքակ զմիաբանութիւն ունի սիրով Հոգւոյն, հաւատով եւ սուրբ վարուք, կենդանի երանութեամբն պսակի ի խնամոց Սուրբ Երրորդութեանն. ազատեալ ի դառն տանջանաց գեհեհին, եւ մշտենջենաւոր անհամեմատ բարեալքն բերկրի յանանց կեանսն:

132 Աստանաւր վասն գթութեանց ունիմ ասել, որ կապ է միաբանութեան եւ մայր է սիրոյ եւ գոգ հանգստեան առողջութեան, անարատ սուրբ ամբիծ երախտաւոր սիրոյ աւետեացն Քրիստոսի: 133 Զի առատապարգեւ է առ մերձաւորս եւ հեռաւորս. դաստիարակ է մեծամեծաց եւ աւզնական տկարաց. սնուցիչ է ընտանեաց եւ դարմանիչ աւտարաց. սիրելի առ երախտաւորս, եւ ոչ ատեաց զապախտաւորս. սիրէ զբարեկամս ի բարութիւն եւ կամի զդարձ ատելեաց, զի հասցեն սուրբ սիրոյն:

134 Գթութիւն խնամք է սուրբ սիրոյն, բորբոքումն անձկոյ առ սիրողն. յիշատակ ծնողաց եւ յորդորումն ծննդոց.

խնդիր հեռացելոց եւ սնունդ մերձաւորացն միշտ: 135 Գթութիւն արմատ բարեաց, եւ ոստք նորա խնդութիւն, եւ տերեւ նորա զուարթութիւն, եւ ծաղիկ նորա ուրախութիւն, եւ պտուղ նորա անհամեմատ անուշութիւն: 136 Զի գթովն բառնայ զտրտմութիւն յանցանաց եւ զտաղտուկ ձանձրութիւնս՝ որ վհատեն զանձն, եւ զսուգ՝ որ ւատարացուցանեն եւ յիմարեցուցանեն: 137 Խափանիչ է վատութեան եւ յորդորիչ առատութեան, խլիչ ազահուութեան եւ ընդունիչ սակաւապիտութեան, յանդիմանիչ լիտութեան եւ ծաղկեցուցիչ սրբութեան, շիջումն թերահաւատութեան եւ նշոյլք լուսոյ հաւատոց, ելք երկմտութեան եւ մուտք կենդանի յուսոյն. ւատարացուցիչ ատելութեան եւ անդորրիչ վտանգելոց, եւ ամենայն նեղելոց սփոփիչ:

138 Գթութիւն կուփիչ է հպարտութեան եւ լուծիչ նենգութեանց. խայտառակիչ խորամանկութեան եւ մերժումն ոխակալութեան եւ նախանձու. խոշտանգանք է անհնազանդից եւ քաջալերիչ համբերողաց. զաւրացուցիչ ժուժկալաց եւ սրբիչ գիշութեան. խրախոյս է երկայնամտաց եւ ձեռնտու խոնարհաց. պսակ զգաստութեան եւ ամբժութեան եւ յորդորիչ առաքինութեան. զարթուցիչ է քնէածից եւ պղերգաց, եւ հասուցիչ ի գործս հանգստեան, որ լին է ամենայն բարութեամբ, որ ունի գիւնամս գթութեան առողջ սուրբ անարատ ամբիժ երախտեալք խնամով սիրոյն: 139 Զի որ զայս հոգեւոր գութ յանձին ստացեալ ունի ի վերայ սուրբ վարուց, կենդանի երանութեամբքն պսակի ի խնամոց սիրոյն Ամենասուրբ Երրորդութեանն. որ ազատ է դառն վշտաց գեհենին, եւ մշտնջենաւոր անհամեմատ բարեաւքն վայելեցուցանէ ի բարիսն:

140 Այլ եւ զգաստութիւն իմանալեացն որ հաստատեալ ի հաւատսն որ ի Տէր, իշխանական կամաւքն խլէ ի զգայութեանցն զվնասակարսն, եւ ի ներքս բերէ

զառաքինութիւնսն, զսրբութիւն, զխոնարհութիւն, զճշմարտութիւն ըստ ամենայնի: 141 Խղել զգժնդակացն զեկամուտսն, եւ վտուել զէնս հակառակ չարին, եւ ի վայր կործանել զհակառակս արդարութեանն: 142 Եւ հրով Հոգւոյն հալել զձմեռնային խստութիւն սառամանեաց ջերմեռանդ արտասուաւք: 143 Եւ արձակել արմատս՝ զքաղցր սրբութիւն եւ զանոյշ խոնարհութիւն եւ զբարի հնազանդութիւն ամենայն ճշմարտութեամբ ի Քրիստոս: 144 Եւ բարձրացուցանէ զոստս հաւանութեան հաւատով յամենայն առաքինութեան աճմունս որպէս զծառս՝ որ տնկեալ են ի գնացս ջուրց՝: 145 Որ մեծաւ ցանկութեամբ ի շնորհացն Աստուծոյ շարժին վտակք արտասուացն, որով մաքրին երեւելիք եւ աներեւոյթք. եւ խաղաղ եւ հեղցաւորով արբուցանէ զտունկս եւ զբոյսս զկանուխ եւ զանագան. եւ յորդորէ զամենայն անդամսն յաճումն արդարութեան ի լաւն եւ յառաւելն. զի եկեցել ի կատարումն առաքինութեան պտղովք, իսեալ գաւտարոտի բոյսսն՝ զորումն եւ որ այլ եւս չար սերմանք ի թշնամոյն սերմանեալ ի միտս եւ ի զգայութիւնս՝, եւ զխոռովութիւն ըստ ամենայն սրտմտութեան շարժմանց. զյայրատութիւն, զյանդգնութիւն, զանզգամութիւն, զանհնազանդութիւն, զբարկութիւն, զամբարտաւանութիւն, զփառասիրութիւն, զհպարտութիւն, զազահուութիւն, զանխտրութիւն, զպղերգութիւն: 146 Այս են պատճառք կորստեան. վրիպել ի մեծ բարեացն շահից, ի գովութենէ առաքինութեանն փառաց:

147 Այլ իմանալեաւքն որոշել զբարին ի միամիտ խորհուրդս, եւ հաւանական կամաւք գործել զբարիս անոյշ եւ քաղցր եւ լուսաւոր յորդորմամբ ամենագիւտ շնորհաւքն Քրիստոսի: 148 Յիշատակաւք

“ Հմգ. Ս. Ե. 3:

է՝ Տէ՛ս Մ. Գ. Ժ. 25:

երախտեաց սիրոյն սրբութեան ըստ հաճոյից կամաց Տեառն բարերարի արբանեակ լինել շնորհացն ի փառս եւ ի պատիւ կենաց տուողին: 149 Եւ գործակից լինել նորա բարերար կամացն հանապազ, եւ ճշմարտեալ ի հաւատս՝ առողջ սուրբ անարատ անբիծ երախտեաւքն հաստատեալ կացցէ:

150 Եւ զի գլուխ է ամենայն զգայութեանցն իմանալիքն՝ որ ի Քրիստոս շնորհաւք ամենայն անդամաւք յաւդեալ եւ պատշաճեալ է, եւ անէ զանուսն Աստուծոյ՝, որպէս առաքեալ ասէ: 151 Եւ ի նմանէ բաշխին շնորհք իմաստութեանն յամենայն անդամսն, յերեւելի պէտս եւ յաներեւելի: 152 Եւ ի նմանէ ըմպեն զհանճար բարեաց ի մուտս աւգտից եւ մերժելոյ ի վնասակարացն: 153 Եւ անտի ծագէ լոյսն յայտնիչ ամենայն քննութեանց, եւ իմաստնանան ամենայն զգայարանքն ի ճաշակս հոգեւորական վայելիցն եւ ընդրողք զլաւսն անձանց, եւ առաջնորդին ի զգուշութիւն իմաստից, եւ զդրունս բանան զմտից շնորհացն. եւ զգաստացեալ եւ լուսաւորեալ անվեհեր փութով հանդիսանայ յընթացս վերին կոչմանն, պատրաստ ունելով զաւգտակար շահսն հոգւոց եւ մարմնոց, զի ժառանգեսցէ զառհաւատչեայ երանութիւնն:

154 Եւ բերանն բղխէ յիշխանական հոգւոյն զճշմարիտ վարդապետութիւնն առողջութեան անարատ սրբութեան անբիծ սիրով: 155 Եւ ընդ նա գնան ամենայն վտակք իմաստութեան ի սրտէն յառաջագայեալ, արբուցանել եւ պարարել զշայեկան երկիրն բանիւն կենաց առ ի յաճումն բարութեան բուսոցն եւ առ ծաղիկս անուշահոտս վայելչացեալ քաղցր պտղով: 156 Եւ զի բերանն է ճշմարիտ բանին որպէս ճրագարան լուսոյ, որ հալածէ զխաւար եւ յայտնէ զամաւթ, եւ ցու-

ցանէ զաղտեղութիւն եւ երեւեցուցանէ զգայթակղութիւն՝ ուստի բեկումն: 157 Ուստի Որդին Աստուծոյ հնարիւք իւրովք զսպառազինութիւն նորա յափշտակեաց. զխորամանկութիւնն, զյանդգնութիւն, զյափշտակութիւն, եւ զողոքանս խաբէիցն եւ զարհաւիրս, հարթուցանելով ի ճշմարտութենէ անտի. եւ որ այլ եւս են մեքենայք չարին, որ յայտնեն նշոյլք վարդապետութեանն Քրիստոսի: 158 Զի տացէ հնարս նահատակաց առաքինանալ, եւ յորդորել ընդդէմ չարեացն զուղղութիւնն, եւ բառնալ ի մտաց զիմաստութիւն մոլորական, եւ ամփոփել զինքն ի ճշմարիտ վարս, եւ զգուշանալ յամենայն վնասուց. առաջնորդել եւ այլոց ի բարիս: 159 Եւ զյիշատակ սրբութեան սիրոյն որպէս խորիս մեղու ունել ի քիմս բերանոյ իւրոյ. զի նա է որ քաղցրացուցանէ զգառնութիւն չարին:

160 Իսկ որ բանայ զաչս իւր ի լոյս արեգական ի միջաւրէի, ոչ մերձենայ խաւար ի բիբս նորա: 161 Սոյնպէս որոյ նայելիքն յստակ են յիշատակաւ սրբութեան, եւ լոյս ուրախարար է նորա կենդանի սիրոյն խնամք՝ որ պահէ զնա առանց վնասուց տուժից անբիծ եւ անարատ: 162 Եւ նովին լուսաւոր շնորհիւ տեսանէ զկորուսելոցն զգիւտս, եւ մերձաւորս առնէ ողորմութեան փրկչին եւ ներքոյ խնամոց նորա կարգէ: 163 Զի ճաճանչ լուսոյ քարոզութեան բանին ցուցանէ զդեղ կենդանի յուսոյն, եւ զդարմանս արքայութեանն զանձառսն եւ զանպատումսն: 164 Ի ձեռն ճշմարիտ հաւատոց ընթացուցանէ ընդ ճանապարհ վերին կոչմանն առ Հայրն ամենակալ եւ Որդին բարերար եւ Հոգին կենդանարար. որ անձառելի է մեծութիւն փառացն:

165 Արդ, եւ գունդք վերին զաւրացն եղեն փեսաւէրք Որդւոյն Աստուծոյ եւ առիթ փրկութեան մերոյ. եւ քաջալերեն զսիրելիս Աստուծոյ, որ փրկեաց զմարդիկ

*** ԿՊՂ. Բ 18

ի մահուանէ մեղաց: 166 Զի ուրախութիւն եղիցի յերկինս, որք դառնան առ Աստուած եւ ապաշխարեն^ա: 167 Եւ որք հաւատացին յԱստուած եւ հաճոյացան նմա, արար զնոսա ժառանգակիցս իւր արքայութեանն: 168 Սոյնպէս եւ որ այժմ ճշմարիտ հաւատով կատարեցին զբան նորա, եւ ուսուցին առողջութեամբ, անարատ սրբութեամբ, ամբիժ երախտեալք սուրբ սիրոյն Աստուծոյ: 169 Զի որ զայն վարս ստացեալ ունի յանձին ըստ ամենայնի ճշմարտեալ, կենդանի երանութեամբք պսակեսցի ի Սուրբ Երրորդութենէն. ազատեալ ի դառն տանջանացն, եւ մշտնջենաւոր յանհամեմատ բարութիւնսն վայելէ:

170 Եւ աչքն հաւատով սրբեալ, տեսչութիւն խնամոցն նշոյլք է լուսոյ անպակաս ուրախութեանցն: 171 Որով վառեալ լուցանի լոյսն արեգականն արդարութեան, որ լուսաւորէ զամենայն սուրբս, եւ մերձաւորս առնէ ի սէր շնորհաց իւրոց, եւ բառնայ զխաւարային մոլորութիւն, եւ անսխալ գնացիւքն ընթանայ ի կէտ կոչմանն վերին յալթեւանս հանգստեան ըստ քաղցրութեան լուսոյն Աստուծոյ: 172 Զի նովաւ հպի ի գիրկս սուրբ սիրոյն Որդւոյն Աստուծոյ, եւ ի գգուանս Հաւրն երկնաւորի, եւ ի պարգեւս Հոգւոյն Սրբոյ յանձառելիսն: 173 Որ տայ զվիճակ ժառանգութեան իւրոյ այնոցիկ՝ որ ի կամս նորա վարեցան յաշխարհի, եւ զինուորեցան հոգեւոր զինուր ընդդէմ չարեացն զբարիսն ըստ Աւետարանին Քրիստոսի: 174 Եւ կցորդ եղեն նորա չարչարանացն, եւ խաչակից եղեն կամաւոր մահուն ամենայն համբերութեամբ ճշմարտեալ անքակ սուրբ սիրով ի նեղութեան եւ յանդորրու: 175 Շիջուցին զպարտիս ողորանաց եւ զխիստ բռնութիւնս կատարեալ ժուժկալութեամբ. հանապազ ակն կալեալ խնամակալ աջոյն, որ զաւրացուցանէ զյուսա-

ցեալս իւր. զի իմանալեաց աչաց եւ երեւելեաց լոյս նա է: 176 Զի հանապազ կանխել ի պաղատանս խոնարհ սրտիւ, եւ ջերմեռանդ արտասուաւք զաղաւթսն հատուցանել Աստուծոյ ի բոլոր սրտէ, եւ յաչաց հեղուլ զարտասուաց հոսանս, որ ի ձեռն գլխոյ անձկոյ յառաջագայի ի նշողից շնորհաց աւետեացն՝ որ բառնայ զվիշտս եւ զհարուածս եւ զամենայն վտանգ ի բռնաւորաց, եւ լնու բարութեամբ յորդառատ զղջմամբ, եւ ընդունարան լինի Հոգւոյն Սրբոյ. որ յայտնէ զծածկեալս եւ զանքնինս սիրելեաց Աստուծոյ. զի եւ զփափաքումն կարաւտութեան անձկոյն լցուցանէ կենդանի եւ անճառ ճաշակաւք ի բարերարութենէն: 177 Եւ լոյսն ահեղ անմատոյց ոչ մերժի սքանչելապէս յանձանց անտի. եւ տեսիլ աչացն հաւատով լուսաւորի. եւ ի նշողից շնորհացն լնու միշտ եւ ծաղկեցուցանէ զզգայութիւնսն, եւ զուարթացուցանէ անմահական խնամովք զայնոսիկ՝ որ մերժեալ են յինքեանց զաշխարհական զցանկութիւնս եւ զգեցեալ զսրբութեան վերարկու, ամբիժ հաւատով ի Սուրբ Երրորդութիւնն ճշմարտեալ, եւ ի թեւս Սուրբ Հոգւոյն վարեալ յաշխարհի ի շինութիւն եւ ի խաղաղութիւն ըստ ամենայնի հոգեւորաւք եւ մարմնաւորաւք մինչեւ հասցէ յանքոյթ նաւահանգիստն իմանալի տեսութեամբն, առողջ անբիժ անարատ խնամաւք սուրբ սիրոյ երախտեալքն Քրիստոսի: 178 Զի որ զայս շնորհս ստացեալ ունի յԱստուծոյ, ի վերայ ամենայն սուրբ վարուց կենդանի խնամաւք սուրբ սիրոյն յԱմենասուրբ Երրորդութենէն պսակեսցի. ազատեալ ի դառն տանջանաց գեհենին, եւ մշտնջենաւոր անհամեմատ խնդութեամբն վայելէ ի բարիսն:

179 Եւ լսելիք անխարդախ հաւատով հնազանդեալ յառողջութիւն եւ յանարատ սրբութիւն՝ ամբիժ խնամովք երախտաւոր սիրոյն, ընդ որս մտանեն աստուածային

^ա Տէ՛.Պ.Գ.Կ.Ժ.Ե 10:

պատգամաց աւետիքն, եւ կերպարանէ ի ներքին մարդ գկերպարանս փրկչին մերոյ Քրիստոսի իւրով փառաւքն: 180 Որ ունի յաջմէ զնիչ խաղաղութեան, եւ յաճեկէ իւրմէ զհաստատութիւն որդէգրութեան, եւ ի գլուխն իւր ունի զպսակն պարծանաց, եւ ընդ մէջ ածեալ զկամարն սրբութեան, եւ ճշմարիտ զգաստութեամբ պատեալ զկողս իւր ի զաւրութեան Քրիստոսի:

181 Լսելիք դրունք են հաւատոց ի մուտս զգուշութեան անարատ վարուց, երկիւղիւ եւ խնդութեամբ խառնեալ. եւ ելք նորա արդարութիւն եւ իրաւունք. ըստ հոգեւոր աւրինացն կատարեալ սրբութեամբ ծաղկեալ, եւ ի ներքս բուրէ զանուշահոտութիւն զսաղմոսից եւ զաւրհնութեանց. եւ անդ հնչեն փառք թագաւորին անմահի, եւ բուրեն որպէս յանոյշ խնկոց ի բերանոյ սրբոց իւրոց պաշտանէից, որք սրբութեամբ գովեն զԱմենասուրբ զԵրրորդութիւնն: 182 Անդ գունդք հրեշտակաց բանակեալք, եւ պատրաստութիւնք¹ զուարթնոց, որ վառեալ բորբոքին յերգս հոգեւորս, հաւասարեալք ամենեքեան ի միասին հատուցանել զփառս:

183 Լսելիք հաւատով ճշմարտեալ՝ ընդունելութիւն է ծառոյն կենաց եւ հատոյն² քառութեան եւ որթոյն փրկութեան: 184 Եւ ի նմանէ արձակեն զարմատս ի սիրտս կատարեալս Աստուծոյ, որ շնորհաւք դարմանին հանապազ, եւ պարարէ զնա ի ցաւոյ Հոգւոյն Սրբոյ: 185 Եւ ամենայն արարածք որ գրաւեալ են սրբութեամբ ի սէր նորա, ուրախ են ընդ նմա. գոհանան եւ փառաւորեն զբարեբարն Աստուած որ արար զամենայնս, եւ յարգարեալ պահէ ի փառաւորութիւն սուրբ անուանն իւրոյ: 186 Լսելիք ճշմարտեալ հաւատով՝ վտակք են, ոռոգել ի կենաց

աղբիւրէն զանդս մտաց եւ զգայութեանց յաճումն առաքինութեանց: 187 Եւ զգոնդակաց զբերումն արտաքս հանելով լաւագոյն ժրութեամբն, որ ի նիւթ հրոյն ունի զհանգամանս: 188 Լսելիք ճշմարտեալ՝ զամենայնսն յինքն ամփոփէ. որ վերաստեղծու զգաստ գիտել, ճանաչել զբարի եւ զչար: 189 Որպէս այլալեզուք զիւրեանց լսեն առ ի պէտս խաւսս՝ եւ ոչ զմերն, այսպէս եւ որ զայս լսելիս սրբութեամբ ունի, զամենայնսն լսէ եւ ոչ զչարին: 190 Եւ ունկն սրբոցն բանի որ ի բերանոյ Աստուծոյ՝ լսէ, որ մուտ է եւ անց բանի. որ սրբէ զմիտս եւ զգգայարանս, եւ ի հնազանդութիւն յորդորէ հոգեւոր աւրինացն առողջութեան անարատ եւ սուրբ երախտաւոր սիրոյն. որ կենդանի խնամաւք սիրոյն յԱմենասուրբ Երրորդութեանն լուսաւոր երանութեամբք պսակեացի. ազատեալ ի դառն տանջանացն՝ յանհամատ բարութիւնսն վայելեացէ իսպառ:

191 Եւ հոտոտելիք հաւատով հոտոցն են զգայութիւնք գիտութեան եւ իմաստութեան, առողջ անարատ ամբիծ երախտեաւք սուրբ սիրովն. եւ ճշմարտեալ անուշուրթեամբ ի հոգեւոր հոտ գիտութեան՝ արբուցանէ ի Հոգւոյն Սրբոյ զանձն ի հոգեւոր աւրինացն: 192 Զի ի նոցանէ յառաջագայի հոտ գիտութեան Հաւր, եւ ճանաչէ զՈրդի, եւ իմանայ զՀոգին Սուրբ: 193 Գիտութիւն Հաւր տաճար է նորա փառացն. եւ որք մտանեն ի նա խոստովանութեամբ, գտանեն զնա: 194 Իմաստութիւն Որդւոյ խորան է նորա ծնելութեանն. զի որք հպին ի նա դաւանութեամբ, մերձեցուցանէ առ ինքն: 195 Եւ ճանաչէ զՀոգին Սուրբ գտուիչ բարեաց ի ձեռն ճշմարիտ հաւատոցն, որ ցուցանէ զլոյս Աստուածութեանն, որ շնորհաւք գտեսողան լուսաւորէ, եւ հոտ գիտութեան վերաբերէ ընդ վերին զաւրան վառեալ յաւրհնութիւն Հաւր ի բարձունս եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ ճշմարիտ հաւատով:

1 Միւսն՝ սպասաւորութիւնք

2 Միւսն՝ հաւատոյն

196 Հոտոտելիք իմաստութեան հաւատոց տայ ճանաչել զՀայր ամենակալ, եւ գիտել զՈրդի մարգասէր գոյ, եւ զՀոգին Սուրբ պարգեւատու: 197 Հոտոտելիք հաւատոց ընթացուցանեն յարքայութիւնն երկնից, եւ բանան զդրունս կենաց, որք առ Սուրբ Երրորդութիւնն անձկացեալ են, ընդ ինքեանս ունելով զառաքինութիւնս. եւ փառակից լինել վերին զաւրացն՝ աւրհանեն զՀայրն ընդ սերովբէսն, եւ գովեն զՈրդի ընդ քերովբէսն, երկրպագեն Հոգւոյն Սրբոյ ընդ հրեշտակս միոյ Աստուածութեանն: 198 Հոտոտելիք ճշմարտեալ հաւատով որոշեն զհոտ կենաց եւ մահու, զարքայութեան եւ զդժոխոցն, զսրբութեան եւ զաղտեղութեան, զարդարութեան եւ զանիրաւութեան: 199 Ոմանց գովութեամբ եւ շնորհաւք բուրէ, եւ ոմանց պարսաւանաւք եւ զաղիրս: 200 Զոմանս վայելչացեալս յերկրէս ամբառնայ առ Աստուած, եւ զոմանս ի վայր բերեալ եւ խոտորեալ ի վիհս կորստեան ընկենու:

201 Հոտոտելիք ճշմարտեալ հաւատով ճանաչէ զորդիս լուսոյ եւ զորդիս խաւարի. իմանայ զկամս իւրաքանչիւր զուղղութեան եւ զմոլորութեան, որ այլանդակ եւ այլուսմունք են, որ որոշեն զնոսա ի բաց հոտովն սուրբ ըստ հրամանի Տեառն՝ արտաքս հանելով ի խնամոց Աստուծոյ ի խաւարն արտաքին, ուր լալ աչաց է եւ կրճել ատամանց: 202 Եւ զսուրբսն անուշահոտ վարուքն սնուցանէ առաքինութեամբ, մինչեւ հասցեն ի չափ կատարմանն Քրիստոսի ժառանգորդ լինել անուշակ արքայութեանն. որ ճշմարտեալ են ի հաւատս լուսաւոր եւ սուրբ վարուք, անարատ եւ ամբիժ երախտեալք սիրոյն: 203 Զի որ գայս շնորհալից հոտ առաքինութեան ունի ի վերայ այլոց սուրբ վարուց, կենդանի երանութեամբք պսակեսցի ի խնամոց սիրոյն յԱմենասուրբ Երրորդութեանէն. ազատեալ ի դառն վշտաց գեհենին, եւ մշտնջենաւոր անհամեմատ ե-

րանութեամբն վայելեսցէ ի բարութիւնսն անսպառ եւ անվախճան:

204 Եւ ձեռք ճշմարտեալ ի բարի գործս հաւատով առողջ անարատ անբիժ երախտեալք սուրբ սիրոյն, են մշակք պատրաստեալ հանդերձեալ աշխարհին արքայութեանն երկնից: 205 Եւ երախտաւոր լինի բարի գործով. լնու բարի սերմամբ զանդս յուսով պտղոցն բարեաց. ձեռնտու գլորելոց. զբեկեալսն պատէ, զանկեալսն կանգնէ, զտկարացեալսն զաւրացուցանէ, զկարաւտեալս յագեցուցանէ. գործեսցէ ձեռաւք, զի բաւական լիցի տալ իւրաքանչիւր ըստ շնորհելոյն նմա յԱստուծոյ առողջութեան առ շինութիւն հաւատոց: 206 Յիշել զառաքելոյ ասելն եւ առնել. Զիս, ասէ, եւ որ ընդ իսն էին, պաշտեցին ձեռքս այս՝:

207 Զեռք սուրբ հաւատով բուրվառք են անուշահոտ խնկով ի հրոյ Հոգւոյն Սրբոյ, բուրեալ ի բարի գործս հեռաւորաց եւ մերձաւորաց ի վայելս. եւ ի վեր ամբառնալ ամենասուրբս եւ գոհութիւն ընձայել Աստուծոյ: 208 Զեռք ճշմարտեալ հաւատով գործարան են մտաց եւ մարմնոց, որ զիւրաքանչիւրոցն զպէտսն վճարէ յերեւելիսս եւ յաներեւոյթսն անարատ յաւրինեալ գովութեամբ ի փառս Աստուծոյ ըստ Աւետարանին՝: 209 Ուստի ծագէ լոյսն աւետեաց՝ ձեռացն տարածմամբ, եւ գործողի զյաղթութեան զվարձս առնուլ: 210 Զեռք ճշմարտեալ հաւատով անաւթ է խորհրդոյ խաչին, որ խլէ զփուշ յանդէ՝ զանիծիցն զտատասկ մեղացն, եւ տնկէ զձառն կենաց՝ որ պտղաբերէ ի մեզ զՔրիստոսի մարմինն եւ զարիւնն ի թողութիւն մեղաց ի ձեռն սրբութեան եւ խոնարհութեան եւ հնազանդութեան. զի այսպէս մտցուք ի յարկս լուսոյն կենաց: 211 Զեռք ճշմարտեալ հաւատով մշակք

* Գ. Գ. Ի 34

‡ Տէ՛՞Մ Գ. Ի 16:

Հոգւոյն ճշմարտութեան են. որ ի ձեռն վաստակոց իւրեանց առաքինութեանն առնուն պարծանաւք զվարձան: 212 Եւ որպէս ի ծովու յաշխարհիս ձեռաւք վարեն զնաւս, զի հասցեն ի նաւահանգիստն խաղաղութեան եւ հանգիցեն ի Քրիստոս Յիսուս: 213 Զեռք ճշմարիտ հաւատով որսորդք են ոչ ձկանց, այլ մարդկան. որ քահանայական ձեռնադրութեամբ շնորհս ընձեռէ ի Հոգւոյն Սրբոյ ազդմանէ, որսալով Աւետարանին ուռկանաւն, առողջ եւ անարատ անբիծ երախտեաւք խնամակալ¹ սուրբ սիրոյն: 214 Զի որ զձեռագործս ստուգութեամբ կատարեսցէ հանդերձ սուրբ վարուք, կենդանի երանութեամբքն երախտաւոր սիրովն պսակեսցի յԱմենասուրբ Երրորդութենէն. ազատեալ ի պատժոց գեհէնին, յանհամեմատ բարութիւնսն վայելէ յանանց եւ յանսպառ:

215 Եւ ոտք ուղղեալ հաւատով ի զնացս սրբութեան, անարատ եւ ամբիծ երախտեաւք սուրբ սիրոյն՝ նախաշաւիղ ճանապարհորդէ ըստ Աւետարանին ի հանդերձեայսն յաւթեւանս արդարոց որ ի Քրիստոս: 216 Ոտք ուղղեալ հաւատով հասուցանեն ամենասուրբ վարուք եւ կարգաւք ի քաղաքն կենդանեաց ի սրբոցն ժողովս: 217 Ոտք ուղղեալ հաւատով երիվարք են սուրբ կամաց, որք ընթացուցանեն ի գործ նահատակութեան վերին կոչմանն: 218 Ոտք ուղղեալ հաւատով զհրաւիրեալս եւ զկոչեցեալս յորդորէ ի հոգեւոր ուրախութիւնսն պայծառ եւ սուրբ զնացիւք, հանդերձ յարմարական առաքինութեամբ, ոչ ինչ խածեալ զգարչապարս: 219 Ոտք ուղղեալ հաւատով ընթացուցանեն զհետ մոլորելոց ի դարձուցանել զհոգեղէնս ի հոգեղէնս, զապիրատս յիրաւունս, զանհնազանդս ի հնազանդութիւն արդարութեան զնացիւք: 220 Ոտք ուղղեալ հաւատով առաջնորդեն վերնայ-

նոցն զհետ երթալ, ուր սրբոցն բնակութիւնք. եւ կոխել զզաւրութիւն թշնամւոյն, ամրացեալ պահպանական կաւչկաւք առաքինութեան. որ ոչ կարասցէ խածանել աւճն ի ճանապարհի, եւ լուծանել ըստ Աստուծոյ զգնացս: 221 Ոտք ուղղեալ հաւատով կոխեն զհոլը ըստ աւրինակի երից մանկանցն գնալով ի հնոցիմ^ա: 122 Կամ որպէս Պետրոս ի վերայ ծովուն գնալով որպէս յատակի. եթէ ոչ էր ի թերահաւատութեմն ընկղմեալ, ոչ աւգնակաւութեան Յիսուսի կարատանայր, որ վերստին զգնացս հաստատեաց ի վերայ ալեաց ծովուն^բ: 223 Զի որ այսպէս հանդիսացեալք ըստ աւետարանական զնացից արդարութեանն, աւետեաւք յուսոյն պսակեսցին յԱմենասուրբ Երրորդութենէն, եւ զանսպառ բարիսն ժառանգեսցեն:

224 Այսոքիւք խրատեալք եւ պսակեալք առ հաւատչեայ յուսոյն, ծառայել առաջի Տեառն երկիւղիւ եւ ցնծալ առաջի նորա դողութեամբ, ընդ² Դաւթայ ասել. Ընկալարու՛մ զխրատ նորա՝ զի մի բարկացի Տէր, եւ կորնչիչի՛մ ի մանապարհացն արդարութեան ի ժամանակի յորում զարթչիցի բարկութիւն նորա^գ ի դատել զերկիրս եւ հատուցանել ըստ արդար դատաստանին: 225 Դժնդակացն եւ յանցաւորացն, որք մեղան եւ ոչ ապաշխարեցին, որդն անմահ եւ խաւարն արտաքին, ուր լալ աչաց է եւ կրճել ատամանց, եւ անչէջ հոլը գեհէնին պատրաստեալ կայ անմահ տանջանաց: 226 Իսկ որ սրբեցին զանձինս իւրեանց յամենայն աղտեղի ցանկութեանց եւ կատարեցին զարդարութիւնս ամենայն, անհամեմատ երանութեամբք մեծարեալ եւ փառաւորեալ պարծանաւք պսակեսցին յԱմենասուրբ Երրորդութե-

^ա Տէ՛ս Դան. Գ :
^բ Տէ՛ս Մարթ. ԺԳ. 28-33 :
² Միւսն՝ ըստ Դաւթի ասելոյն
^գ Սաղմ. Բ 12

1 Միւսն՝ ամենակալ

նէն: 227 Որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԺԲ

ԵՐԱՆԵԼԻՒՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԲԱՐԵՐԱՐ ԱՐԱՐ-ՉԻՆ ԽՆԱՄՈՑ ԵՒ ԿՇՏԱՄԲՈՒԹԻՒՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ԵՒ ՍՏԱՀԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԲԱՐՈՒԹԵԱՆ ԲԱՐԵԱՑՆ ԼԱԻՈՒԹԵԱՆ

1 Բազմազիմի են երախտիք շնորհաց միոյ Հաւրն բարերարի, եւ միոյ Տեառն կենարարի խնամք արարչութեանն լուսաւոր փոփոխմանցն, եւ միոյ Հոգւոյն Սրբոյ խնամոցն պարգեւք եւ ամենազիւտ սիրոյն առ երկնաւորս եւ երկրաւորս եւ որ ի նոսա են արարածք ամենայն: 2 Զուր եւ աւզ ըստ փոփոխման Արարչին յաւրինուածոց ցուցանեն վերնոց եւ ներքնոց, առ փոքր փոքր զաճումն առեալ, եւ ի կատարումն ընթացուցանեն հաճոյից Աստուծոյ, եւ զհանդէս մտերմութեանն բացայայտեն երկրաւորացս եւ երկնաւորացն լուսաւորացն մտերմութեան գործակցութեամբ հոգեւոր աւրինացն բարձրացուցանել ի փառս եւ ի պատիւ լրմամբ խոստացեալ բարեացն. որ փառաւք եւ պարծանաւք մեծարեալ են բարերար եւ առատ եւ աննախանձ կենդանարար շնորհաւքն: 3 Եւ զփոփոխմունս յարգանացն տեսեալ՝ յառաւել մտերմութեան հանդէսն յորդորին, եւ զաներեւոյթսն երեւելեաւքս ցուցանեն առողջ անարատ լուսաւոր սրբութեան յորդորմամբ՝ անբիծ երախտեաւք սիրոյն: 4 Եւ ընծայաբեր լինել Տեառն ըստ միոյ միոյ պարգեւին գործակցութեամբ ամենաշահ նորա խրատուցն զմերս մեծարելով հաւան եւ բարերար կամաց Շնորհողին. կարգելով մշակս ճշմարտութեանն առ երախտիս բարեացն ամենայնի յաներեւոյթսն եւ յերեւելիս, յանմարմին զաւրութիւնսն ասեմ, յերեւելիս որդիս

մարդկան: 5 Զի նովաւ կեան եւ շարժին երկնաւորքն եւ երկրաւորքն^ա:

6 Ի բարերար կամացն Աստուծոյ արբանեակք լինին եւ սիրելեաց նորա վերին զաւրքն, առաքելոց եւ մարգարէից եւ ուղիղ վարդապետաց, վկայից սրբոց, քահանայից, կուսանաց, արդարոց եւ ամենայն ճշմարտասիրաց՝ որք առաքինութեամբ նահատակին ի փրկութիւն անձանց եւ մերձաւորաց գործակցութեամբ հոգեւոր¹ աւրինացն Տեառն: 7 Եւ առ փոքր փոքր յաւելուածովն զալ ի կատարումն սննդեամբն: 8 Որպէս եւ ինքն իսկ եցոյց զիւրոց գործոցն զյաւրինուածս ի ծնունդս. որ յոչընչէ ի սաղմնէն յարգանդէն ի հաւանութենէ արուին եւ իգին ըստ աւրինաւոր ամուսնութեան կարգացն Աստուծոյ՝ զաւակ ստանան ի սփոփանս անձանց եւ մերձաւորաց եւ ի գոհութիւն պարգեւատուին, եւ բազում ուրախութիւն ցուցանեն ի ծննդեանն, եւ բարեկամաւք եւ մերձաւորաւք տան կատարի ծննդեանն եւ անուանակոչութեանն: 9 Որ ի մթին եւ յաղձամղձին յորովայնէ յառաջ եկեալ մարդ կերպարանեալ ցուցանի յերկրի: 10 Եւ յորժամ սննդեամբ մարմինն աճէ ի կատարեալ հասակ պատրաստութեամբ արուեստիւք ոմամբք, եւ ոգիքն բանաւորք եւ մտաւորք ըստ մարմնոյ աճմանն զգիտութիւն եւ գիմաստութիւն ընդ նմին բացայայտեն ի ձեռն ուսուցչացն խրատուց որ եւ պետութեանց եւ իշխանութեանց հանդիպին յերկրի:

11 Եւ նախ քան զամենայն ճանաչելն զԱստուած, եւ արարածովքս իմացեալ զարարիչն երկնի եւ երկրի որ ի նոսա արարածք իցեն. եւ լինել աշակերտ եւ արբանեակ նորա կամացն՝ նմանեալ նորա բարերարութեանն: 12 Ատել զչարն եւ ընդրել զբարին. պատճառ լինել շահից եւ

^ա Հմմտ. Գործ. ԺԷ 28:
1 Միւսն՝ հոգւոյն բարեացն Տեառն

խլիչ վնասուց կորստեան. երախտաւոր լինել հեռաւորաց եւ մերձաւորաց առ դրացիս եւ ընտանիս. բարի կամաւք եւ բարի գնացիւք եւ բարի գործովք առ ամենեսեան լինել արժանաւոր իրաւամբք, եւ արդար եւ ուղիղ եւ սուրբ եւ ճշմարիտ վարս ստանալ: 13 Եւ այնպէս երանելի երեւել յաշխարհի՝ ամենայն առաքինութեամբ զարդարել ըստ պատկերի Աստուծոյ, փոխի յանուշակն՝ կենդանի յանմահ փառսն ի յոյսն յարութեան, եւ ընդունի զերանութիւն սիրոյն: 14 Զի խնամով սիրոյն լի են երկիրնք եւ երկիր եւ որ ի նոսա արարածք իցեն, եւ նորա նախախնամութեամբն վարին:

15 Եւ ոգիք կատարելոց սիրելեաց Աստուծոյ ուր եւ են, ի նորա սուրբ սիրոյն ի գիր կան, եւ ի նորա կենդանի խնաման վայելեն: 16 Նոյնպէս եւ մարմինք ի նորա գիրսն՝ կեալ ի խնամոցն պահին, եթէ ի ցամաքի եւ եթէ ի ջուրս՝ ուր եւ իցեն: 17 Զի Աստուած մեր յերկիրնս եւ յերկրի, ի ծովս եւ յամենայն խորս, ասէ մարգարէն: 18 Եւ դարձեալ ասէ. Թէ ելանեմ յերկիրնս, դու անդ ես. եւ եթէ իջանեմ ի դժոխս, եւ անդր մաւտ ես. եթէ առից գրեսս իմ ընդ առաւառս եւ բնակեցայց յեգերս ծովու, սակայն եւ անդ ձեռն քո առաջնորդեսցէ ինձ եւ աջ քո ընկալցէ զիս սիրով: 19 Դժոխս ասէ զգերեզման ապականիչ՝ որ Աստուծոյ խնամովքն պահի ի յոյս յարութեանն. ուստի վերստին նորոգին ի կեանսն յաւիտենից՝ ընդունելով զհոգիս իւրեանց: 20 Եւ որ սուրբք իցեն, ի Քրիստոս մերձ լինին. զի Ուր եսն եմ, անդ եւ պաշտանեայքն իմ եղիցին: 21 Այլ եւ զմեղաւորացն զմարմինս եւ զհոգիս պահէ, ուր եւ իցեն, ի յանդիմանութիւն կշտամբանաց մեծի աւուրն դա-

տաստանի եւ յարութեանն ի մեռելոց: 22 Զի դիմադարձ եղեն աւրինացն արդարութեան, սիրեցին զչար եւ ատեցին զբարի, եւ զպատուիրանս նորա ոչ պահեցին: 23 Իսկ որք ճշմարտեալ սիրով խնդրեցին զՆա, եղեւ նոցա պարգեւատու. զի արդար է Տէր եւ ուղիղ են դատաստանք նորա, թէպէտ եւ մեզ է այս անհասանելի: 24 Որ ծագէ զարեգակն ի վերայ չարաց եւ բարեաց, եւ որ այլ եւս են խնամք հասարակաց ի Տեառնէ: 25 Բայց որ առնէ զկամս նորա, մնայ յաւիտեան. զի եղբրուք սուրբք եւ արդարք, զի եւ ես սուրբ եմ եւ արդար, ասէ Տէր: 26 Իսկ որ զայս աւետիս ունին յանձինս, սրբեն զինքեանս յամենայն ցանկութեանց, եւ լինին արբանեակք ճշմարիտ եւ սուրբ վարուց, եւ այնպէս լինին ընդունարան աստուածային շնորհացն եւ աւթեւանք Աստուծոյ: 27 Արդ, որ այսպիսիք են ի խնամս սիրոյն հաստատեալ կան: 28 Որպէս եւ ասաց՝ եթէ Բնակեցայց ի նոսա եւ զնացից ի նոսա եւ եղէց նոցա յԱստուած, եւ նոքա եղիցին ինձ ժողովուրդս. եւ դարձեալ. եւ եղէց նոցա ի Հայր, եւ նոքա եղիցին ինձ յուստերս եւ ի դստերս, ասէ Տէր ամենակալ: 29 Արդ, ամենայն արարածք ի ներքոյ զաւրութեան նորա կախեալ կան. բայց զսիրելիս իւր եւ զկամարարս ի ներքոյ վարագուրի խնամոց սիրոյն պահէ յամենայն վտանգից: 30 Եւ այլ կայեանք են, որ արհամարհեցին զաւրէնս նորա, եւ ծառայեցին դժնդակ ցանկութեանց անխտիր պէսպէս չարեաց, որք ժառանգեն զարտաքին խաւարն: 31 Խաւար է աստ արտաքին չար, որոց խաւարեալ են միտք եւ զգայութիւնք, եւ աւտարացեալ են ի կենաց անտի, որպէս ասէ առաքեալ: 32 Իսկ անդ ո՞ւր. ի հուր գեհեհնին, ուր լալ աչաց է եւ

1 Միւսն՝ գիրկսն

2 Սաղմ. ԸԼԼ, 8

3 ԶճԼ. ԺԲ 26

4 Հմբ. ԳԵ. ԺԵ 45, ԺԹ 2, Ի 26

5 Բ Կոր. Գ 16

6 Բ Կոր. Գ 18

ոչ զոք տեսանէ, եւ որ ի նոյն են տանջանք, որ պատրաստեալ է դիւաց եւ պղծոց:

33 Զի իբրեւ երկրաւոր կեանքս ի ձեռն մահուան ի գլուխ ելանեն, հոգիքն յուղարկին առ Աստուած՝ որ ետ զնա, եւ մարմինն դառնայ ի հող՝ յորմէ ստեղծաւ յԱրարչէն: 34 Եւ սուրբ եւ արդար հոգեացն ընդ առաջ Գան հրեշտակք եւ սրբոցն հոգիքն, եւ տանին առաջի Աստուծոյ սաղմոսիւք եւ ակրհնութեամբ եւ երգաւք հոգեւորաւք, գովելով զամենազաւր փառս տէրութեանն Ամենասուրբ Երրորդութեանն. եւ զոհանան զերախտաւոր բարերարութենէն, որ փոխէ յերկրաւորացս յերկնաւորն, յանարգութենէ ի պատիւ զհրաւիրեալսն եւ զկոչեցեալսն յիւր արքայութիւնն եւ ի փառսն. որ նա միայն է փառաց եւ պատուոյ եւ ակրհնութեանց արժանի: 35 Քաղցր խոնարհութեամբ, հնազանդութեամբ ակրինացն, ընծայիւք պատարագաց ի նուէրս լրութեան գործոց բարեաց, զՔրիստոս պատարագեալ զսարսափելի խոնարհութիւնն վասն նորա փրկութեան եւ յուսոյն քահանայական խորհրդածութեամբ: 36 Զկապեալս արձակել, զպարտս թողուլ, զկարաւտեալս լցուցանել, եւ որ այլ եւս են բարեգործութիւնք բազմաձեռնութեամբ աղաւթիւք եւ խնդրուածովք, ջերմեռանդ արտասուաւք վասն հանդերձելոցն փրկանաց: 37 Այսոքիւք յուղարկել զհրաժարեալսն ի յոյս կենացն յաւիտենից ի Քրիստոս, որ այսոքիւք հաշտեցի Հայրն գթած եւ Որդին բարերար եւ Հոգին Սուրբ բարեխնամող. եւ ուրախութիւն լինի ի վերայ այսոցիկ վերին զաւրացն, որպէս ի վերայ մեղաւորաց որ դառնան ստուգապէս խոստովանութեամբ յապաշխարութիւն. եւ ընդունին զհոգիսն յաւթեալսն ըստ իւրաքանչիւր արժանաւորութեանն, բաժանել զհանգիստ եւ զտեղի ըստ տեսչութեանն Աստուծոյ:

38 Ի վերայ այսոցիկ հաւատացելոց եւ արժանաւորաց յուսոյ, որ անյուսութեամբն լան եւ կոծին եւ ցտին զհրաժարեալսն յերկրէս որպէս զհեթանոսս՝ որ ոչ գոյ յոյս, բարկացուցանեն զԱստուած: 39 Եւ ի գործոց երախտեաց բարեացն որ ընծայեցաւն Աստուծոյ վասն հրաժարելոյն, զրկեն այնուրիկ զնա ի հանգստենէն, եւ տրտմեցուցանեն զզաւրս երկնաւորս եւ զհոգիս արդարոց, եւ զնոցին զհոգիսն իսկ՝ վասն որոյ զսուգն յերկարեն: 40 Եւ ինքեանք անկանին ի պատիժս վասն անյուսութեանն, եւ առնուն զվճիռս պատուհասիցն: 41 Զի որ խռովեցուցանէ զԱստուած եւ տրտմեցուցանէ զերկնային զաւրսն եւ զարդարոցն հոգիս եւ զրկէ զհոգի հանգուցելոյն ի հանգստենէն, կրեսցէ դատաստան ո ոք եւ իցէ՝ ըստ առաքելոյ բանին: 42 Արդ, որ զմարդիկ խռովեցուցանեն՝ պատուհաս կրեսցեն, որքան որ զԱստուած եւ զընտանիսն նորա զհրեշտակս եւ զսուրբս: 43 Զի Աստուծոյ դատաստաննն մշմարտութեամբ են, ասէ, ի վերայ այնոցիկ՝ որ գայնպիսիսն գործեն՝:

44 Եւ զի երրորդ մարդկային կեանք բացայայտին, առաջին է յորովայնի մաւրն սաղմն առեալ եւ աճեալ, ի մթին եւ յաղջամղին արգանդին զկեանս տնաւրինեալ մինչեւ ի ժամանակս ծննդեանն: 45 Եւ երկրորդ՝ կեանք երկրագործ. որ յաշխարհիս քաղաքավարի ըստ աշխարհիս բերմանց, նախախնամութեամբ Արարչին դարմանեալ յերկրէ եւ ի ծովէ: 46 Իսկ երրորդ՝ կենդանեաց աշխարհն. ուր ոչ լսի համբաւ մահու. որ ոչ փոփոխի կենդանի երանութիւնքն, անհրաժեշտ պայծառութիւնն, անմոռաց ուրախութիւնն: 47 Զոր ոչ կարէ ասել բան, զի անճառելիք են. եւ ոչ ունկն կարէ լսել, զի անհամեմատ է ի լսել. եւ ոչ միտք բովանդակեն, զի անիմա-

* Գաղ. Ե 10

‡ Հուդ. Բ 2

նալի է քննողաց: 48 Ձի եւ ոչ գյորովայնի զկեանսն կարէ ոք ասել զյաւրինուածսն. այլ եւ ոչ զերեւելիսս ոք բովանդակի ասել, որ ի յերկնէ եւ ի յերկրէ եւ ի ծովէ կեանք մարդկան ի խնամոց Աստուծոյ մատակարարին, թող թէ զառհաւատչեայ յուսոյն զանանց կեանսն: 49 Բայց հրաւիրեն գիրք միայն խոստամամբք զարքայութիւնն հաւատացելոց, եւ յորդորեն յուսով զողջախոհսն՝ թէ որ զերկինս եւ զերկիր ետ լրիւ իւրով ի սնունդ ամենայն բարեաւք վասն ոչ մի իրիք լաւութեան, ապա ի սոցանէ յայտ է անսուտ խոստմունքն ի բարերար Տեառնէն սիրողաց իւրոց:

50 Եւ զի ոչ կարեն ճառել սիրողք Աստուծոյ զհանդերձեալսն, այլ ի բանէն Տեառն. Ծագեսցնն, ասէ, արդարքն որպէս զարեգակն յարեւոյսեանն Աստուծոյ: 51 Եւ որպէս ոչ է նման խաւար արեգական լուսոյ, սոյնպէս եւ ոչ արեգական լոյս կենդանի լուսոյ փառացն համեմատ է, զոր զգենլոց են սուրբքն զանստուեր լոյսն զմշտնջենաւորն զանփոփոխն՝ որ լին է կենդանարար բարութեամբք: 52 Ձի որպէս ի զգալիսս արեգակս, յիմանալիսն Աստուած է, որ լուսաւորէ զամենայն:

53 Ձի որք աստ ըստ խրատու պատուիրանաց Տեառն հրահանգեն զինքեանս ի վարս առաքինութեան, առհաւատչեայ յուսովն իբրեւ ի տուրնջեան բարեձեւ կարգաւք վարեն զաշխարհ, եւ ոչ մեկնին ի նորա կամացն, ոչ ի տխրականաց եւ ոչ ի հրեշտականաց, եւ ոչ խռովեցուցանէ զԱստուած եւ զգաւրս անմարմնոցն տրտմեցուցանէ եւ զհոգիս արդարոցն ի զգալութենէ շնորհացն, որ յամենայն դժնդակաց շարժմունս, որ ի սուգ եւ ի վիշտս՝ ի նեղութեան եւ յանդորրու՝ արտաքոյ կամացն Աստուծոյ գործէ: 54 Իսկ որ առաքինաբար անցանեն ընդ վիշտս եւ ընդ նեղութիւնս՝ ոչ ինչ վնասեալ ի պա-

տահեալսն, ուրախ առնեն զԱստուած, եւ ի հրճուանս զգաւրս հրեշտակաց եւ զոգիս արդարոց, ըստ այնմ աւրինակի զոր վերագոյնն ասացաք: 55 Եւ լուսաւորեալք լուսով աւետեացն՝ փոխին յանմահութեան կեանսն:

56 Իսկ որք մեղաւորքն են վախճանեալ ամբարշտութեամբ եւ անիրաւութեամբ եւ յուսահատութեամբ, նոքա են ողբոց արժանի եւ արտասուաց: 57 Որք վրիպեցան ի խոստացեալ բարեացն եւ յանսպառ ուրախութեանցն, եւ հրաւիրեցան յանչէջ հուր գեհենին եւ յանմահ սատակումն, ուր լալ աչաց եւ կրճել ատամանց է միշտ:

58 Ձի որ զճշմարտեալսն հաւատով եւ զբարեգործսն վարուք սգան անյոյս, նոքա ընդունին զպատուհասս փոխանակ անյուսութեանն ի Տեառնէ, եւ զհրաժարելոցն հոգիսն վնասեն: 59 Արտասուք աւգտակար այս են ի Տէր, որ զմեռելոցն զյիշատակս մեղացն եւ զանձանց առաջի Աստուծոյ ընծայել եւ ոչ առաջի հրապարակաց. որ լինի սրբարան մեղաց եւ ոչ ի պատիժս: 60 Եւ ջերմեռանդ արտասուաւք միշտ յաղալթսն կանխել ի տուէ եւ ի գիշերի հսկել: 61 Եւ ցաւագին հեծութեամբ եւ պահաւք պնդութեամբ, բազում զղջմամբ եւ ապաշաւանաւք զսխալանսն սգալ հանապաղ, որ վրիպեցան յերկնային լուսոյն եւ ի յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ: 62 Ձի որ իւր մեղաւքն ի խոստացեալ Աստուծոյ բարեացն զրկեցաւ, զնա սգասցուք այնպիսի ապաշաւանաւք, եւ եղուկ վարկանել զվրիպեալսն յանանց բարեացն: 63 Եւ արտասուալից աղաւթիւք եւ առատատուր ողորմութեամբ եւ ամենայն բարեգործութեամբք հանդերձ Քրիստոսի պատարագաւն զԱստուած ի հաշտութիւն ածել, եւ ի հրաժարելոյն¹ մխիթար լինել ի հանդերձեալսն:

^{***} Մատթ. ԺԳ. 43

¹ Միւսն՝ հրաժարելոյն

64 Այսօրիկ են որ զանձն աւգտեցուցանեն, եւ զհրաժարեալսն՝ իւրեանց մերձաւորաւքն եւ զմտերիմ սէրն ցուցանեն վասն հրաժարելոյն յերկրէ: 65 Վասն հաւատացելոցն յուսով զննջեցեալսն եւ առաքեալ մխիթարէ եւ ասէ. Մի տրամիֆ որպէս եւ հեթանոսք, որոց ոչ գոյ յոյս. զի որպէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց, նոյնպէս եւ զվախնամեալսն մեր եւ զմեզ յարուցանէ եւ յանդիման կացուցանէ իւր հանդերձ ամենայն սրբովք ի գալստեանն իւրում Քրիստոս^ա: 66 Ի գաւրս մակաբայեցուց երեւի յոյս. որ զնիշ հեթանոսաց յանձին ունելով անկան ի պատերազմի, եւ զնոցա աւարն ետուն ցքահանայսն, զի աղքատաց բաշխեսցեն ի քաւութիւն նոցա մեղացն՝ որ վրիպեցան ի ճշմարտիցն: 67 Եւ զի գիրք են մեր վարդապետք, եւ ի ձեռն նոցա զյաւիտենից զյոյսն ընկալցուք, եւ նոքաւք վարեսցուք յաշխարհի. զի ճշմարտեալք սուրբ սիրով փոխեսցուք ի կենդանի յոյսն երանութեան՝ որ կայ եւ մնայ:

68 Պատուական՝ ասէ մարգարէն զմահ սրբոց առաջի Տեառն ամենակալի^բ: 69 Եւ ի՞նչ է պատուական մահ սրբոց. որ ճշմարիտ որոշմամբ զլաւսն ի հանդէս առաքինութեանն ցուցեալ ի յոյս կենացն յաւիտենականաց: 70 Ի՞նչ է պատուական մահ սրբոց Աստուծոյ. զի յանցաւոր կենացս յայսցանէ ի մշտնջենաւոր կեանսն փոխին: 71 Ի՞նչ է պատուական մահ սրբոց Աստուծոյ. զի ի վշտագին նեղութեանցս այսոցիկ ի հանգիստ բարեացն փոխին: 72 Ի՞նչ է պատուական մահ սրբոց Աստուծոյ. զի ի թշուառութենէ եւ յեղկելի կենացս յերանելի կեանսն փոխին: 73 Ի՞նչ է պատուական մահ սրբոց Աստուծոյ. զի յակամայ փորձանաց հոգւոյ եւ մարմնոյ ազատի եւ յանդորր փոխի: 74 Ի՞նչ է պա-

տուական մահ սրբոց Աստուծոյ. զի զձեռութիւն եւ զտկարութիւն թողուն, եւ ի նորոգութիւնս վերստին փոխին: 75 Ի՞նչ է պատուական մահ սրբոց Աստուծոյ. զի սիրովն որով յաղթեցին ամենայն կարեաց մարմնոյն, ի նա փոխին: 76 Ի՞նչ է պատուական մահ սրբոց Աստուծոյ. զի զմեղացն մահ մեռան յերկրի, եւ կենդանի յուսոյն փափաքեցին. զի յորժամ Քրիստոս յայտնեսցի կեանքն մեր, յայնժամ եւ սուրբք ընդ նմա փառաւորին: 77 Զի սուրբք կենդանի երանութեամբք կացին յաշխարհի, եւ այժմ կենդանի են առ Աստուծոյ խնամսն: 78 Զի հոգիք արդարոց ի ձեռն Աստուծոյ են^գ ուրախարար յուսովն ըստ անսուտ խոստմանցն Աստուծոյ. զի ի յարութեանն ընդունելոց են զփառս յաղագս սրբութեան եւ արդարութեան եւ ճշմարտութեանն յարքայութեանն երկնից յԱմենասուրբ Երրորդութենէն:

79 Իսկ որ կենդանի մարմնով մեղացն յաշխարհի վարին զազիր ախտիւք եւ դժնդակ վարուք, կենդանի մեռեալս կոչեն աստուածային գիրք: 80 Որպէս զայն որ ասաց Տէրն՝ մեռելոցն մեղաւք թաղել զհայրն մեռեալ, եւ նմա քարոզել զարքայութիւնն Աստուծոյ^դ: 81 Զի որ յուսահատ են ի կենաց անտի եւ աւտարացեալք յԱստուծոյ եւ յուղիղ վարուց, նոքա են ստուգապէս մեռեալ: 82 Եւ որք արարին զկամս մարմնոյ եւ զմտաց, որպէս ի գերեզմանի թաղեալ կան նեխեալ մեղաւք ի մարմինս անսրբոց եւ պղծոց եւ անխտիր յամենայն յանցանս. որք եւ ժահահոտութիւնս բուրեն զանաւրէնութեանցն: 83 Որպէս Տէրն ցուցանէ զփարիսեցուցն ժողովսն. որ ի վեր երեւին ինչ, եւ ի ներքոյ լի են ամբարշտութեամբ չարեաւք եւ հայիոյութեամբ^է: 84 Զի որպէս գերեզմանք բաց են կոկորդք

^ա Հմմտ. Լ. Թեո. Գ. 12:
^բ Հմմտ. Սաղմ. ՃԺԵ 6(15):

^գ Իմաստ. Գ. 1
^դ Տե՛ս Գ. 1. Թ. 60:
^է Տե՛ս Մատթ. ԻԳ. 27:

նոցա, ասէ մարգարէն. դատեա զնոսա, Տէր Աստուած, զի անկցիմ ի խորհրդոց իւրեանց՝ չարաց: 85 Զայնպիսիսն ողբասցուք, որ կենդանի մեռեալք էին եւ մեռան զՀասարակացն մահ անմխիթար:

86 Զմահ մեղաւորաց չար ասէ մարգարէն յաղագս դժնդակ անսուրբ վարուցք. բայց որ ատէին զարդարս յաղագս ողջախոհ խրատուց՝ զղջասցին, զի հրաւիրեցան յանշէջ հուր գեհնէն: 87 Ի՞նչ է չար մահ մեղաւորին. զի յուսահատութեամբ է վախճան նոցա. զի մեղան եւ ոչ զղջացան եւ ոչ ապաշխարեցին եւ հաշտեցուցին զԱստուած: 88 Ի՞նչ է չար մահ մեղաւորին. զի ելին ի ժառանգութենէ հրեշտակաց, եւ եղեն ժառանգորդք դիւաց եւ յաւիտենից տանջանացն՝ որ նոցա էր պատրաստեալ յամենեցունց Տեառնէն: 89 Ի՞նչ է չար մահ մեղաւորին. զի ել յայս աշխարհէս որ անզգայաբար կեայր եւ ոչ առնոյր ի միտ զաւր ելիցն. զոր ոչ կարէ գործել զկնի աստի վճարելոյն զբարի եւ մտանել առ Աստուած: 90 Ի՞նչ է չար մահ մեղաւորին. զի լսեն յամենեցունց Տեառնէն՝ երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենից. որ սատանայի կամարարք եղեն եւ ոչ Աստուծոյ՝ որ արար զամենայն ի բարի կամս: 91 Ի՞նչ է չար մահ մեղաւորաց. զի դրունք կենաց ապաշխարութեանն փակեցան, եւ ոչ եւս է լսել ի Տեառնէն՝ դարձարուք առիս, եւ ես դառնամ առ ձեզք. այլ թէ՛ հանգիս ի խաւարն արտափնիք, զի ոչ լուան ինձ: 92 Ի՞նչ է չար մահ մեղաւորաց. զի բանան դրունք մահաբեր դժոխոցն յաղագս զանազան դժնդակ չարեացն զոր գործեցին, եւ ոչ յիշեցին զտանջանսն յաւիտենից մեղաւորաց:

Պ՝ Ս՝Պ՝. Ե 11
Ք՝ ՏԵ՛՛՛ Ս՝Պ՝. Լ, Գ :
Գ՝ Ս՝Պ՝. Գ 7
Դ՝ Ս՝Պ՝. ԻԲ 13

93 Զի անդ զղջումն անաւգուտ է. զի արգելեալ է գութ մարդասիրութեանն, որք յառագաստէն արտաքս անկան: 94 Եւ կամ կաթի ջրոյն կարաւտին Ղազարու, եւ կամ շիջեալ ջահիցն իւղ, եւ որ այլ եւս են անշրջելիք. եւ ոչ ուստեք գտանել այցելութիւն: 95 Այլ երթիցեն մեղաւորքն ի տանջանսն յաւիտենից, ասաց բանն Աստուծոյ մեզ. իսկ արդարքն ի կեանսն յաւիտենից: 96 Որոց պատուական ցուցան մահ սրբոցն առաջի Տեառն յաղագս սուրբ եւ ուղիղ վարուց ճշմարիտ հաւատով, լուսաւորեալք ի լոյս կենացն յաւիտենից: 97 Զի ի վերայ արդարոց եւ մեղաւորաց յանսուտ բանէն յաւիտենիցն է Հաստատեալ, եւ ոչ ունի փոփոխումն. երթիցեն մեղաւորքն յաւիտենից տանջանսն, եւ արդարքն յաւիտենից կեանսն: 98 Եւ գովիչք եւ փառաւորիչք լինին միոյ Աստուածութեանն, եւ փառաւք եւ պատուով եւ պարծանաւք երանին եւ պսակին, եւ մտանեն ի ժառանգութիւն որդէգրութեանն, եւ վայելեն յանսպառ բարիսն ի փառս Ամենասուրբ Երրորդութեանն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԺԳ

ՀԱՆԴԷՍ ՎԱՍՆ ԼԱԻՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՍԱԿԱՅ Ի ՊԷՏՍ ԱԻԳՏԻՑ ԶԱՆԵՐԵՒԵՆՈՅԹՄՆ ՅԵՐԵՒԵԼԻՍ ՑՈՒՑԱՆԵԼՈՎ Ի ԳՈՐԾ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՓՈԽԻԼ Ի ՅՈՅՄՆ ԿԵՆԴԱՆԻ Ի ԲԱՆԱԿՍ ԶՈՒԱՐԹՅՈՅՆ ՈՐ ԱՍՏ ԿԱՏԱՐԵՑԻՆ ԶՀԱՅՈՅՄՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

1 Ով խորք մեծութեան եւ զիտութեան եւ իմաստութեանն Աստուծոյ՝ որ բազում հնարիւք ունկնդրաց եւ հնազանդելոց առաջնորդէ ի հաճոյս տէրութեանն իւրոյ, եւ զգուշութեամբ եւ զգաստութեամբ սուրբ սիրովն յորդորէ ի պահպանութիւն

Պ՝ Ս՝Պ՝. ԻԵ 46
Ղ՝ Հ՝Պ՝. ԺԼ 33

պատուիրանին. զի հասցուք ի դուռն փրկութեան կենաց ի հանգիստ նախախնամական սիրովն, եւ իրաւամբք արդարութեանն ժառանգեսցուք զպատիւ փառացն, եւ հաւատովք հասանել ի յոյսն ճշմարիտ: 2 Զարթնուլ ի կոչումն բանին կենաց ըստ պէսպէս շնորհացն. լնուլ զարժանն եւ զիրաւն. առնուլ յուսով զառհաւատչեայ աւետիսն, եւ թռչել թեւաւք հոգւոյն յերկնից արքայութիւնն, եւ գեղեցիկ վարուք լինել ճանապարհ բազմաց ի կեանսն: 3 Եւ յիշատակաւք յուսոյն յառաջիկայսն ընթանալ, եւ զկնի ծաւալել ճշմարիտ հաւատով զստուգութեան՝ վարան ի նախանձ բազմաց: 4 Զի առաջինքն աւրինակ են վերջնոցս ի բարի յորդորումն, եւ վերջինքս հանապազ նորոգին յիշատակաւք առաջնոցն առաքինութեամբք: 5 Գովելով զնոսա եւ գոհանալով փառաւորեն զԱստուած գտուիչն այնպիսի շնորհաց մարդկան: 6 Եւ այնպէս յորդորիլ ի սէրն Աստուծոյ, եւ բերանով խոստովանիլ զճշմարտութիւնն ամենակալ զաւրութեանն Աստուծոյ, եւ ընծայաբեր լինել բարի պարգեւաւք արդարութեան ամենեցունց Տեառնն՝ առաջնոցն գործակցութեամբ ճշմարիտ նոցա հանդիսիւքն: 7 Անքակ համարել զանձինս ի նոցա անտի յուսոյն եւ ի մտերիմ սիրոյն եւ առհաւատչեայ միշտ բարեխաւս առ Տէր. որպէս զի ճշմարտեալ հետեւող լիցին ի կատարումն լրման առաջնոցն՝ որ յուսովն իւրեանց կենդանի են Աստուծոյ:

8 Եւ հասարակաց յուսոյն մի շահ է. զի առաջինքն ուրախ լինին ի վերջնոցն բարեգործութիւնս, եւ վերջինքս հաստատին յառաջնոցն կատարելութիւնն յուսոյն: 9 Եւ առաքինութիւնք առաջնոցն ժառանգութիւնն առնի վերջնոցս. զի մնացուածք բարի գործոց առաջնոցն առնու լրումն ի վերջնոցս աստի: 10 Եւ եթէ յանցաւոր եւս

իցէ լիեալ եւ ստոյգ խոստովանեալ եւ ապաշխարեալ ջերմեռանդ արտասուաւք եւ գթով տնանկաց եւ ամենայն լաւութեան հանդիսիւք որ ընդդէմ մեղացն, եթող զկարգ բարի վերջնոցս իբրեւ ժառանգութիւն խոստովանողաց եւ ապաշխարողաց եւ ջատագով մեղուցելոց: 11 Զի գթութիւնն Աստուծոյ կոչէ զվերջինքս ըստ առաջնոցն կարգաց, զի բարձցի ի միջոյ պարտիքն վնասուց, եւ ազատեալ ի մեղաց ստոյգ ապաշխարութեամբ մտցեն ի ժառանգութիւնն հեռացեալքն յամենայն վնասակարաց, որ անհաւատութեամբ եւ անսուրբ վարուք ապականեալ էր ի հոսանս չարեացն, եւ բժշկեալ լինէին ի սրբութիւնն եւ յառողջութիւնն ամենայն անդամովքն:

12 Եւ սովորութիւնն իսկ է գրոց՝ զառաջնոց լաւացն զբարի յիշատակս՝ որպէս եւ նուէրս պատարագաց վասն հասարակաց յուսոյն կատարել վերջնոցս, եւ հաւատով եւ ուղիղ վարուք կալ ի մշակութեան հաճոյիցն Աստուծոյ՝ որ յոյսն է կենդանեաց եւ մեռելոց: 13 Եւ բազումք են վերջինք՝ որ վասն առաջնոցն աղաւթս եւ պաղատանս եւ նուէրս մատուցին Աստուծոյ եւ եղեւ ընդունելի. որ ուղիղ խոստովանութեամբ դարձան առ Աստուած յապաշխարութիւնն: 14 Որպէս առաքեալ ցուցանէ զընդրութիւնն հաւատոց եւ զարդար վաստակոց. եւ նոցա յիշատակաւք բարեխաւսութեամբ զհաշտութեան պատարագս մատուցանել վասն նոցա եւ մեր Աստուծոյ: 15 Որպէս եւ զԱբելիմ գարդար եւ գուղեղ պատարագն յիշէ՞. որ ամենայն պատարագաց է գլուխ, միջնորդ եւ բարեխաւս վերջնոցս իւր մտերիմ եւ սուրբ հաճոյակատար կամաւք: 16 Եւ որ զկնի նորա առաքինեցան անարատ մտաւք, որպէս Ենովս եւ Ենովք եւ Նոյ հաճոյ եղեն Աստուծոյ, եւ հաշտարարք կան առաջի տէրութեան նորա վասն հաւատացելոց ի Տէր

1 Միւսն՝ զգաստութեան

՝ Տէ՛* Եբբ. ԺԸ 4:

Աստուած: 17 Որպէս Աբրահամ եւ Իսահակ եւ Իսրայէլ՝ որ հանդիսիւք լաւութեան առին զընտրութիւն: 18 Վասն որոյ ոչ ամալթ համարի Աստուած առնել զնոսա խորհրդակիցս, եւ յայտնել զծածկեալս որպէս մտերիմ սիրելեաց:

19 Եւ ի նոցա ծննդոց զաւրէնադիրն եւ զմարգարէս եւ զքահանայս եւ զթագաւորս յարոյց եւ զայլս բազումս: 20 Զի եւ Մովսէս լաւ համարեցաւ չարչարել ընդ ժողովրդեանն Աստուծոյ, քան առ ժամանակ մի վայելել ի հեշտութիւն: 21 Որոյ ելեալ ի խաւարային վարուց եգիպտացոց յանապատ պանդխտանայր. եւ անդ առնոյր հրամանս յԱստուծոյ դառնալ անդրէն եւ հանել զժողովուրդն յերկիրն աւետեաց նշանաւք եւ արուեստիւք, եւ նովաւ կատարել զուխտն որ առ հարսն էր յուսացելոց: 22 Զի ես եմ, ասէ, Աստուած Աբրահամու եւ Աստուած Սահակայ եւ Աստուած Յակովբայ: 23 Եւ չասի Աստուած մեռելոց մեղաւորաց, այլ կենդանեաց արդարոց. զի արդարք՝ Աստուծոյ կենդանի են, զի սիրովն Աստուծոյ եւ յուսովն միշտ առաջի Աստուծոյ են: 24 Եւ մեք հաստատեալ ի հաւատս եւ ի սուրբ սէրն Աստուծոյ, որպէս զի ճշմարտեալ սիրովն առցուք զյոյսն՝ որ առ ամենազաւր տէրութիւնն. եւ ամենայն արդարոց յիշատակաւք միշտ նորոգել ի մեզ Աստուծոյ սիրոյն՝ որ ի նոսա մատակարարէր: 25 Եւ ըստ այսմ աւրինակի ամենայն յոյս սրբոցն կենդանի է առաջի Աստուծոյ եւ անշէջ. եւ առանց մոռանալոյ է յիշատակ սուրբ սիրոյն յուսացելոց ի Տէր: 26 Որպէս յանցանքն Ռուբենի առ հայրն հանին զնա յարհնութեմէ հարնէ, եւ անարատ սրբութիւնն ի մէջ աստէ գնովսէփ յարհնութիւն հարնն, եւ ի ժառանգութիւնն եղբարց իւրոց ի յելս զեփ-

րեմ եւ զՄանասէ. եւ եղիւ պատմաւք կեանաց ամենայն ազգին սուրբն եւ անարատն:

27 Հասանէ ահ ի վերայ երուսաղէմի վասն անիրաւ ժողովրդեանն յաւուրս եգեկիայի ի Սեմեֆերիմայ: 28 Այլ ազաւթք թագաւորին եւ Եսայեայ դարձոյց զբարկութիւնն ի թշնամիսն Աստուծոյ. եւ սատակեցան այնքան բիւրք, եւ կորեաւ յիշատակ նոցա ի միջոյ: 29 Յայնսսիկ եւ զԴաւիթ յիշէ՝ թէ վասն նորա: 30 Զի ամենայն արդարք յիշին առ այցելութիւն աշխարհի ի Սուրբ Գիրս յիսկզբանց անտի մինչեւ ցգալուստն Քրիստոսի, որ զառաքինութիւնն երկաքանչիւրոցն բացայայտէ. զի ըստ հաւատոց մեռան՝ ամենայն սուրբք:

31 Իսկ յորժամ ծագեաց Տէր մեր Յիսուս Քրիստոս արեգակն արդարութեան եւ փրկիչ աշխարհի, կատարեաց եւ ելից զառաջին աւրինակն պակասութեան. զի եբաց զնոր շնորհաց զկենացն զդրունս ի ձեռն աւագանին լուսաւորութեան ուղիղ հաւատով յԱմենասուրբ Երրորդութիւնն. եւ մեռանել զմեղացն մահ ի ջուրսն սրբութեան, եւ ընդ Քրիստոսի յարուցեալ՝ ի նորոգումն կեանաց կայ եւ մնայ: 32 Եւ թէպէտ մեռանին, կենդանի են հոգևով ի յոյս կենացն յաւիտենից: 33 Եւ մերկացեալ են զհին մարդն, որ վրէժխնդրութեան աւրինացն պարտական էր. զի զՔրիստոս զգեցան եւ զկերպարանս որդէգրութեան առին եւ ժառանգաւորք եղեն Քրիստոսի: 34 Մանաւանդ որ զճշմարիտ հաւատս եւ զուղիղ վարս մինչեւ ցվախճանն պինդ ունիցին յուսովն Քրիստոսի. զի յոյս նոցա ընդ Քրիստոսի է յարուցեալ, եւ ընդ Քրիստոսի նստի ընդ աջ-

« Եւ. Գ. 6
‡ Հմմտ. Մատթ. Ի. 32:
‡ Տէ'ս'Ն'ն. Խ. Թ. 3-4:

‡ Տէ'ս'Ն'ն. Խ. Խ. Ե. Ե.
‡ Տէ'ս'Պ. Թ. Գ. Ժ. Բ. Ժ. Թ.:
‡ Ե. Գ. Ժ. Ե. Ե.
‡ Տէ'ս' Հ. Գ. Գ. 4:

մէ մեծութեան ի բարձունս՝ եւ բարեխաւսեն Քրիստոսիւ առ Հայր վասն սրբոց: 35 Որք ի Քրիստոս մկրտեցան ճշմարիտ հաւատով եւ սուրբ սիրով հաղորդութեամբ մարմնոյ եւ արեան Փրկչին. որ գրաւական է յուսոյ փառաց յարութեան ըստ բանի Տեառն. Փանիցս անգամ ուտիցէք ի մարմնոյ իմմէ եւ ըմպիցէք յարեան իմմէ, գլխատակ մահուան իմոյ պատմեալի մինչեւ ի դարձ գալստեան իմոյ յերկիրէ:

36 Զի նա է ազատիչ եւ արդարացուցիչ, որով լուծանին մեղք հին մարդոյն եւ սկիզբն առնուն նորքս, որ ըստ Աստուծոյ հաւատով սուրբ եւ ճշմարիտ ի Քրիստոս Յիսուս. մեկնեալ յամենայն չարեաց, եւ յարդարեալ ամենայն բարի գործովք աւետեաց յուսոյն կենաց: 37 Զի մահուամբն իւրով ելոյժ Քրիստոս զգալրութիւն սատանայի, որ զիշխանութիւն մահու ի ձեռն մեղաց ունէր՝. եւ կեանք թագաւորեցին արդարութեամբ. եւ յոյս յարութեանն հաստատեալ կայ ի Քրիստոս: 38 Զի յարոյց զմեզ, ասէ, ընդ իւր, եւ նստոյց յերկնաւորսն ի Քրիստոս Յիսուս՝ յոյս հաւատացելոց եւ սրբոց: 39 Զի զմարմինս իւրեանց ի խաչ հանին, ասէ, ընդ Քրիստոսի կարեալ եւ ցանկութեամբն հանդերձ. որ եւ ընդ Նմին փառաւորին եւ յուսովն զուարճանան:

40 Զի Քրիստոսի սուրբ սիրովն խրատուեալք սրբոցն յուսով ի ձեռն հաշտարար պատարագին՝ որով փրկեցան արարածք: 41 Որ զաներեւոյթսն երեւելեալքս եցոյց կամաւոր խաչելութեամբն ի հաշտեցուցանել զԱրարիչն ընդ արարածս: 42 Եւ լուսաւոր վարդապետութեամբն ստուգեաց

զճշմարիտ հաւատս յԱմենասուրբ Երրորդութիւնն: 43 Եւ բառնայ զվիշտս վտանգից ի մարդկանէ ի պէսպէս ցաւս եւ ի տանջանս ըմբռնեալս. զքաղցեալս կերակրելով զբազումս յանապատի, զմեռեալս յարուցանելով, զդեւս հալածելով: 44 Եւ ազատեալ զմարդիկ ի կշտամբանաց նոցա՝ բառնայ իւրով չարչարանաւքն զամենայն վիշտս ի մարդկանէ, եւ պէսպէս երախտեալք արժանի առնէ հայրական խնամոց եւ շնորհաց Հոգւոյն Սրբոյ եւ խոստմամբ բարեաց Աստուծոյ:

45 Եւ ի մատուցանել զահաւոր եւ զսարսափելի զփրկական զխորհուրդն, եւ անդ յիշէ զմարդասիրութեանն երախտիս. եւ խնդրէ ջերմեռանդ արտասուաւք զքաւութիւն մեռելոց եւ կենդանեաց, առցէ զխնդրելին: 46 Մանաւանդ եթէ սուրբ իցէ եւ անարատ եւ ազատ ի մեղաց մատուցող պատարագին, եւ ճշմարտեալ հաւատով ստանայ անձին զփառացն պսակս: 47 Եւ վասն որոց պատարագն է, քաւութիւն յուսով շնորհի ի բարերար Տեառնէն: 48 Զի եթէ որ ունի իւր ինչ զընկերէն՝ թողուլ տայ զպատարագն մինչեւ հաշտեցի՝, ապա վասն այլ չարեաց եւ դժնդակ վարուց զի՞նչ պարտ է ասել զարհաւիրս սպառնալեաց պատուհասից, որք ոչ սրբութեամբ զպատարագն ընծայեն Աստուծոյ, եւ որք անարժանութեամբ հաղորդին: 49 Այլ որում շատն տուաւ շնորհ, շատ խնդրի. եւ որում սակաւն՝ սակաւէ, ասէ Տէրն յԱւետարանսն մեզ: 50 Զի կատարեալ առաքիւնութիւն խնդրէ նշմարտութիւնն ի սպասաւորաց խորհրդոյն. զի կեանք է փրկութեան մերոյ, եւ մի՛ լիցի կամակար մտալ ի դատապարտութիւն ի Տեառնէն. զի ամենայն ինչ նովաւ է եւ ի նա կատարի՝ կենդանեաց եւ մեռելոց:

՝ Եբր. Լ 3
՞ Լ Կ՝. ԺԼ 26
՘ Տէ՛. Եբր. Բ 14:
ԙ Հմմտ. Եփէս. Բ 6:
ԛ Հմմտ. Գաղ. Ե 24:

չ Հմմտ. Մարթ. Ե 23:
է Հմմտ. Գաղ. ԺԲ 48:
ը Տէ՛. Եբր. Ժ 26:

51 Այլ եւ սրբոց առաքելոց եւ մարգարէից եւ մարտիրոսաց յիշատակք՝ Քրիստոսի պատարագաւն կատարի, խորհրդածեալ փառաբանութեամբ զսրբոցն նաճատակութիւնս վերածայնելով յորդորումն աստուածասիրաց եւ ի գովեստ Ամենասուրբ Երրորդութեանն՝ որ ետ գյաղթութեան շնորհս ամենայն սրբոց իւրոց:

52 Ձի ուրախութիւն է զաւրաց երկնաւորաց յիշատակք սրբոց, որք յաղթեցին բռնաւորաց եւ հրեշտակացան:

53 Արդ, հոգիք արդարոց ի ձեռքն Աստուծոյ եմ՝ ընդ անմարմնոցն դասուց, սքանչելի իմն ի փառս Աստուծոյ ուրախարար յուսովն: 54 Եւ ի հասարակաց յարութեանն զկենակից մարմինն առնու յերկրէ, որով հաճոյացաւն Աստուծոյ. եւ լինին որպէս հրեշտակս յերկինս ըստ բանին Տեառն. ասէ. Ի յարութեան ոչ կանայս առնեն եւ ոչ արանց լինին. այլ են որպէս հրեշտակս յերկինս^բ, զի յարութեան որդիք են եւ ոչ ունին մեղանչել կամ մեռանել:

55 Տեսե՞ր, զի յոյս կենդանեաց բնակութիւն է հրեշտակաց եւ արդարոց, եւ ի միասին ուրախ լինին:

56 Այլ եւ որք մեղանն եւ ստոյգ խոստովանեալ ապաշխարեցին ջերմեռանդ արտասուաւք եւ ամենայն բարի գործով, եւ նոքա ոչ զրկեսցին ի հանդերձեալ յուսոյն. ամենայն ճշմարտեալք ի հաւատս Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, լուսաւորեալ մկրտութեամբն եւ մարմնով եւ արեամբն Քրիստոսի, որդիք լուսոյ եւ ժառանգք արքայութեանն են, քաղաքակիցք սրբոց եւ ընտանիք Աստուծոյ: 57 Ձի մի է Աստուած եւ մի հաւատ եւ մի մկրտութիւն^գ եւ յոյս կենարար: 58 Եւ ուրախ լիցին յուսով՝ որք կատարեն գլխատակս սրբոց հաւատովք. զի եւ նոքա զուարճա-

նան նոցա սիրովն, որ յաղագս Աստուծոյ զայս յուսով կատարեն ամենայն բարեգործութեամբք ի Քրիստոս: 59 Եւ մնացեալքն ի բարեացն առաջնոցն՝ առնու զլրումն վերջնովքս. զի եւ զմնացուածս մարգարէիցն լցին առաքեալքն, եւ զնոցայն հաստատեցին վարդապետք զհաւատս եւ զվարս եւ զվարձս ըստ իւրաքանչիւր վաստակոց:

60 Տուեալ իսկ են յամենեցունց Տեառնէն եւ պսակքն. զի Այլ փառք արեգականն է, ասէ առաքեալ, եւ այլ փառք լուսնի, այլ փառք աստեղաց, եւ աստղ քան զաստղ առաւել է փառաւ. սոյնպէս եւ յարութիւն մեռելոց^դ: 61 Ձի իւրաքանչիւր զիւր փառս զգենու ի Տեառնէ ըստ արժանաւորութեանն ի միոյ Աստուածութենէն փառաց՝ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: 62 Ձի մի յոյս է վերին կոչմանն Աստուծոյ եւ մի բնութիւն Աստուածութեան, մի իսկութիւն, անփոփոխ մշտնջենաւորութիւն, մի ամենակալ զաւրութիւն, անվրէպ գիտութիւն, անզեղ իմաստութիւն, անսկիզբն էութիւն. որ յիւր ի ճշմարիտ ի կենդանի փառսն եւ յանմատոյց լոյսն բնակեալ է: 63 Եւ սուրբ սիրոյն իւրոյ խնամք առ արարածս լուցեալ բորբոքի անճառ եւ անպատում բարութիւնքն: 64 Եւ զարարածս ամենայն զբանաւորս եւ զմտաւորս յանճառ երանութիւնսն հրաւիրէ, եւ կոչէ յիւր արքայութիւնն եւ ի փառս անճառս եւ յանվախճան երանութեանցն ուրախութիւնսն:

65 Այլ գլխատակս առնել արդարոցն կատարելոց, նոցա նաճատակութեանն եւ սիրոյն որ առ Աստուած վկայք, եւ բազում շահս անճանց ստանամք սրբոցն բարեխաւսութեամբ առ Տէր: 66 Իսկ զհաւատացելոց մեղուցելոց եւ խոստովանողաց եւ ապաշխարողաց եւ հազորդեալ փրկական

^ա Իմաստ. Գ. 1
^բ Մատթ. ԻԲ. 30
^գ Եփէս. Գ. 5

1 Մերն՝ յառաջնոցն
^դ Լ. Կ. Թ. Ժ. Ե. 41

խորհրդոյն, եւ հրաժարեալք յաշխարհէս, եւ նոցա կատարեսցին յիշատակք՝ Քրիստոսի պատարագան, եւ աղաւթիւք եւ զթով տնանկաց եւ այլ բարի գործովք. զի վերջնովքս բարեգործութեամբք Հանգուցեալքն նորոգեսցին նորոգութեամբ կենացն անվախճանից:

67 Եւ եթէ ասիցէ ոք, եթէ զիա՛րդ մաւտ ի վախճանն զղջացեալ խոստովանի եւ ողբայ զգործեցեալ զյանցանսն, եւ խոստանայ ապաշխարել, եւ խնդրել զմարմին եւ զարիւն Քրիստոսի հաւատովք ի քաւութիւն, զի՞նչ առ յոյս փրկութեան իցէ:

68 ՊԱՏԱՍԽԱՆԻ

Ձի եթէ մաւտ ի վախճան իցեն, եւ ի հրապոյրս սատանայի ըմբռնեալ ի դժնդակ վարս, եւ աւտարացեալ ի նախախնամական սիրոյն յառաջագոյն, եւ դառնայ ի վախճանի ի զղջումն եւ ի խոստովանութիւն ջերմեռանդ արտասուլաք, եւ ի բոլոր սրտէ հաւատով հայցէ զփրկական խորհուրդն, յուսով ապաւինեալ ի մարդասիրութիւնն Քրիստոսի, մի՛ անյոյս լիցի ի վստահացեալ բարութիւնն, զղջմամբ եւ կենդանարար մարմնով եւ արեամբն Քրիստոսի փրկչին մերոյ, որ տայ զկենդանութիւն ստեղծուածոց իւրոց. զի ամենայն որ կարդասցէ զամուսն Տեառն՝ կեցցէ՞:

69 Այլ որ ոչ դարձան յառաջագոյն յապաշխարութիւն եւ ոչ ի վախճանի զղջացան, եւ յուսահատ եւ առանց խոստովանութեան եւ անմերձ ի փրկական խորհուրդն՝ զի՞նչ պարտ է ասել վասն նոցա յիշատակաց. որ բազում ողբոց եւ արտասուաց արժանի են, եւ ծանր վիշտս ունին ի Քրիստոսէ: 70 Բայց յառաջագոյն մեղուցելոցն եւ ստոյգ խոստովանողացն եւ ապաշխարողաց միշտ կատարեսցին յի-

շատակք. եւ որ ի ժամ ելանելոյն զղջանան: 71 Այլ եւ բազում բարիս ցուցանել մնացելոցն յաղագս հրաժարելոցն յաշխարհէ. զկապեալս արձակել, զպարտս թողուլ, զկարաւտեալս լցուցանել բարութեամբ: 72 Ձի է գոր ինքն արար բարի, եւ է որ պատուիրեցաւ առնել. եւ երթայ զհետ բարի գործոյն ի հաւատարիմ սիրելեաց հրաժարելոցն յերկրէ:

73 Ձի որ մերձեցան ի սրբութիւնսն ստոյգ զղջացեալքն, իբրեւ հուր սրբիչ եւ ազատիչ եւ լուսաւորիչ է իւրով ընծայիւքն, մտերիմ հաւատով վկայութեամբ ահիւն Աստուծոյ. որ զգուշութեամբ եւ արդարութեամբ լի է: 74 Որ սկիզբն է ամենայն շահաւոր աւգտից երկեղ Տեառն ըստ իմաստնոյն բանին՞. եւ ամենայն անհնարինք հնարաւորք են երկեղածաց Աստուծոյ: 75 Եւ որ հեռի է յերկեղէ Տեառն, ի ծուլութիւն եւ յարհամարհութիւն Աստուծոյ պատուիրանին կրթի, եւ յամենայն բարեաց խորհրդոց եւ գործոց հեռանայ, եւ յանիրաւութիւն սովորի:

76 Այլ որ փոյթն է ի հնազանդութիւն հոգեւոր աւրինացն երկեղիւն Աստուծոյ, միշտ ընծայաբեր լինի Աստուծոյ ի ձեռն սուրբ հրեշտակաց ըստ բանին Տեառն որ ասէ. Զգոյշ լերուք, մի՛ արհամարհե՛ք զմի ոք ի փոքրկանցս յայսցանէ. զի հրեշտակք ցա հանապազ տեսանեն զերեսս Հաւր իմոյ որ յերկինս է՞: 77 Ձի զհաւատսն գործովն զաւրացուցանէ՞, եւ զաղաւթսն սիրով զղջմամբ եւ անձկալի եւ անմեղկելի խնդրուածովք. անշարժ ունել առ Տէր զկամսն ի նեղութեան եւ յանդորրու. եւ առնուլ զյաղթութեան շնորհս առ մարտս մտաց եւ անդամոց ի բարերար խնամոցն Աստուծոյ: 78 Եւ սուրբ սրտիւ եւ անկեղծաւոր հաւատով առաքինանան եւ ուրախ

՝ Գործ. Բ 21

՞ ՏԷ՛՞Ն Եւակ. Ե 7:
՘ Մարտ. ԺԲ 10
՛ Հմբ. Յակ. Բ 20:

առնեն զհրեշտակս կենդանի սիրով եւ զուարճանան միշտ ի նոցա բարի գործսն: 79 Զոր ոչ է իմանալ կամ տեսանել որ յԱստուծոյ է նոքաւք մեզ զպահպանութիւն, որ պատրաստեցաւ յԱստուծոյ խնամոցն սիրողաց իւրոց:

80 Զի ամենայն խորհուրդք կամ գործք մտերմութեան երկնաւորաց եւ երկրաւորաց եւ սանդարամետականաց առաջի Աստուծոյ ամենակալ տէրութեանն հանապազաւր վերանայ ի կշիռս: 81 Եւ ի կողմն ճշմարիտ հաւատացելոց եւ սիրողաց Աստուծոյ մահն Քրիստոսի յառաջանայ ամենաչափ չարչարանաւքն՝ վկայութեամբ սուրբ սիրոյն իւրոյ՝ սրբոց իւրոց: 82 Եւ առ նա ժողովի ճշմարտութիւն արդարոց, քաջութիւնք նահատակաց եւ արդարութիւնք սրբոց, ժուժկալութիւնք կուսանաց, համբերութիւնք մարտիրոսաց: 83 Այլ եւ ստոյգ խոստովանողաց վարք չարժեն զգուժ եւ զողորմութիւն խնամոց սուրբ սիրոյն: 84 Եւ գործք անաւրինաց եւ անհնազանդից ամբարշտաց եւ մեղաւորաց եւ ամենայն չար ցանկութեանց հանդերձ չար խորհրդակցաւքն դիւաւք կշտամբեալ յանդիմանին, եւ զարժան զհատուցումն պատուհասիցն ընդունին յարդար դատաւորէն եւ ի տեսողէն, որ զիտէ զվերինս եւ զներքինս:

85 Իսկ որ ի սուրբ սէրն Քրիստոսի հաստատեալ են, որ զանձն իւր ետ ի մահ վասն նոցա, զի ազատեսցին ի դառն վշտաց յերեւելեաց եւ յաներեւութից, ապրեալք լինին, գործակից եւ բարեխաւս ունելով զսուրբս եւ զամենայն արդարս: 86 Եւ բացցին դրունք կենաց բարերարութեան շնորհաւք Հոգւոյն Սրբոյ վերին կայանից, ուր ժողովք սրբոցն են հանգուցեալ: 87 Զի զամենեցուն կամի զկեալ եւ ի գիտութիւն ճշմարիտ կենացն լինել ժառանգաւոր. զի ոչ կամի զմահ մեղաւորին, այլ զդառնալն ի Քրիստոս:

88 Այսքան շահք աւգտից են զյիշատակս հանգուցելոցն առնել ուղիղ մտաւք, արդար եւ ճշմարիտ եւ սուրբ հաւատով, ահիւ եւ սուրբ սիրով, ողջամիտ յուսով ի գովեստ Աստուծոյ: 89 Զի լինիցի ընդունելի մեր պատարագն ի ներքոյ վարագուրին կենդանարար ի կեանս վերաբերելով, եւ վայելել յերանելի բարութիւնս ի խնամս կենարար սիրովն աւետեացն խոստացելոցն: 90 Զի ուր եսն եմ, աւէ Տէրն, անդ եւ պաշտաւնեայն իմ եղիցի: 91 Զոր եւ բարերար երկնաւոր Հայրն ուրախ առնէ զկոչեցեալսն յուրախութիւն, մարդասէրն միածին Որդւովն իւրով եւ կենդանարար Սուրբ Հոգւովն ի բորբոքումն կենդանի սուրբ սիրովն, յանհրաժեշտ եւ յանվախճան եւ յանհամեմատ յաստուածեղէն բարութիւնսն զիւրսն վայելեցուցանելով: 92 Նմա գոհութիւն եւ պատիւ եւ փառք յայժմուս եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԺԳ

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱԽՈՐԶԻ ՅԱՂԱԳՍ ՄԱՐԿՈՒԹԵԱՆ, ՈՐ ՅԱՍՏՈՒԾՈՅ ԽՆԱՄՔ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ

1 Մեծ է խորհուրդ աստուածպաշտութեանն ճշմարիտ հաւատով որ ի Հայր եւ յՈրդի եւ ի Սուրբ Հոգին. եւ առաքինի գործովք արդար եւ սուրբ երեւել առաւել քան զարեգակն լուսաւորէ զաչս մտաց հաւատացելոց, եւ հալածէ զխաւար մեղաց, եւ առաջնորդէ յարդարութիւն եւ ի սրբութիւն: 2 Ի բաց կալ ի դժնդակ վարուց եւ ի չար մտաց, եւ զնալ ի ճանապարհս արդարոց՝ որ տանի ի կեանսն յաւիտենից: 3 Բարի կամաւք զհետ երթալ բարերար կամաց Արարչին՝ որ ի չգոյէ ի գոյ էած, եւ յանարգութենէ ի պատիւ, երկու մասամբք՝ տկար եւ զաւրաւոր, զմար-

* ՅՎԸԺԻ 26

մին եւ զհոգին: 4 Զի տկարն ճգնեսցի վաստակովք, եւ ի զաւրութիւն Արարչին ապաւինեսցի, զի մի՛ վրիպեսցի ի բարերար աւգնականութեանցն՝ որ առաքինացուցանէ արդար եւ սուրբ վաստակովք: 5 Եւ զանուն քաջութեան առնու, եւ գովութեամբ պարծանաւք պսակի, եւ ի խնամս բազմադարմանս վայելէ յուսով երանելի կենացն: 6 Իսկ զաւրաւոր մասն հոգւոյն ճշմարիտ հաւատով եւ անսխալ եւ ստոյգ գիտութեամբ Սուրբ Երրորդութեանն՝ որոշէ գտուտ պատիր մոլորութիւն, եւ ազատանայ ի ծառայութենէ մեղաց՝ վասն որոյ մահն ի ներքս եմուտ. եւ զերծեալ ի մեղաց՝ ժառանգաւոր կենացն եղիցի ի Քրիստոս տկար մարմնով, եւ երեւեսցի մտերմութիւնն ի ճգնութիւն համբերութեան յուսոյն: 7 Եւ զաւրաւոր մասամբն երեւեսցի շնորհն Տեառն ըստ առաքելոյ բանին, որ խնդրեաց ի Տեառնէ հրաժեշտ տկարութեանն. որ ճգնէր եւ աշխատէր եւ վշտանայր ազգի ազգի վշտաւք եւ նեղութեամբ: 8 Եւ լսէ ի Տեառնէ. Մատ եմ քեզ, ասէ, շնորհի՛ իմ. զի գաւրութիւն իմ ի տկարութեան կատարի՞: 9 Վասն որոյ յաւժարութեամբ ընդունի զամենայն վիշտս չարչարանացն. զի տկարութիւն զաւրութեամբ կատարի: 10 Զի եւ մշակք բազմադիմի աշխատութեամբ վաստակով յարգին. եւ տէրն բազմաշահ պարգեւովն փառաւորէ:

11 Վասն այսորիկ ի չորից նիւթոց արար զարարածս, եւ յաւրինեաց կարգաւ զերեւելիսս եւ զաներեւոյթսն, եւ անտի զմարմինս կազմեաց ի ցամաքէ, ի խոնաւոյ, ի ջերմոյ եւ ի ցրտոյ: 12 Եւ յայս չորից նիւթոց արարան ի ծնունդս եւ ի դարմանս, զի երեւեսցի խնամք արարչութեանն. երկինք ցաւովն յամպոց զիջմանէ, եւ ջերմութեամբ լուսաւորաւք եւ խառնուածովք աւզոյ՝ որ սնուցանեն գտունկս եւ զբոյսս եւ զամենայն շունչ

կենդանի, եւ թռչունք երկնից: 13 Երկիր ջրով եւ լողակաւք եւ որ այլ գեռունք ամենայն ի խնամոց Աստուծոյ դարմանին: 14 Զի նախ զհոգին եղ զբանական ի մարմին եւ խառնեաց, եւ ապա զպէտս դարմանոցն պատրաստեաց. զի ցուցցէ զսիրոյն իւրոյ զտեսչութիւն՝ որ յառատ բարերարութենէ անտի: 15 Բանաւոր եւ մտաւոր ոգւոյն զաւրաւոր դարմանս եցոյց ի շնորհաց Հոգւոյն Սրբոյ՝ զխրատս ուսմանց ի վարդապետութենէ հոգեւոր աւրինացն:

16 Յայսորիկ հոգեւոր դարմանս վայելել, եւ ընտանենալ ամենազաւր տէրութեանն եւ խնամոց Արարչին, որ յերկնէ եւ յերկրէ եւ ի ջրոյ եւ յաւզոյ զկեանս ամենեցուն յաւրինեաց: 17 Եւ այսօրիւք ուսուցանէ եւ ընդելացուցէ մեծի յուսոյ աւետեացն խոստացելոց որդէգրութեանն անմահ ժառանգութեանն. որ ետ աստէն զառհաւատչեայ ազատութիւնն շնորհաւք աւագանին եւ մարմնով եւ արեամբն Քրիստոսի: 18 Զի տկար մարմնով ճգնաւորեալ ազգի ազգի առաքինութեամբք, զհամբերութեան զհանդէս ցուցցեն ըստ հաճոյիցն Աստուծոյ, ահիւ եւ սուրբ սիրով առնել զկամս Տեառն: 19 Զի եթէ Տէր է, ասէ, ուր է երկիւղ նորա. եւ եթէ Հայր, եղիցին կամք նորա որպէս յերկինս եւ յերկրի: 20 Եւ այս ուղղի ի ձեռն աւրինաց եղելոց եւ պատուիրանաց կարգելոց, եւ մարտընտիր լինել ի լաւագոյն կարգս առաքինութեան եւ զաւրութեան. եւ յաղթաւդ երեւեալ՝ պսակեսցի յԱրարչէն Քրիստոսէ:

21 Այսու իրաւամբք յայտնի արար զիւրոյ բարերարութեանն զամենառատ զշնորհս: 22 Զի մտերիմ ծառայից գործակից է բարի վարուց. եւ ըստ խնամոց սիրոյն իւրոյ զնեղութիւն հանգիսից անցաւոր արար, եւ զհանգիստն անվախճան: 23 Այլ եւ ինքն իսկ Տէրն փառաց որ ամենայն զաւրութեանց եւ զաւրաց արարիչ է եւ պարգեւիչ, յորժամ կամեցաւ ցուցանել

*** ԲՆՊ. ԺԻՑ 9

զանքերեւոյթ սէր իւր առ ազգս մարդկան, որ չարչարելին էր եւ վշտառին, որ աշխատելին էր. եւ նովին հոգևով միաւորեալ առ Աստուած Բանն՝ մտաւորն եւ բանաւորն, խառնեալ ի մարմին ըստ աւետարանական բանին. զի Բանն, ասէ, մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ. եւ տեսաք մեք զփառս նորա զփառս իբրեւ զմիաձմի Որդւոյ առ ի Հաւրէ լի շնորհաւք եւ նշմարտութեամբ³¹:

24 Ձի ի ձեռն ճշմարիտ շնորհաց իւրոց եւ կամաւոր խոնարհութեանն՝ որ կրեաց զամենայն կիրս մարմնոյ եւ հոգւոյ բաց ի մեղաց, զի ցուցցէ զփրկութեան ճանապարհն արդարոց, եւ զխնամս մեծի սիրոյն իւրոյ զգարմանս տեսչութեանն, որպէս շնորհաւք դարմանէ զորդիս մարդկան յերեւելիս եւ յաներեւոյթս. զհիւանդս բժշկէր, զմեղս քաւէր, զդեւս հալածէր, զմեռեալս յարուցանէր: 25 Եւ եբաց զգրուես կենաց, եւ ազատեաց զհոգիս չարչարանաւք մահուամբ իւրով: 26 Եւ կատարեաց զարդարութիւնսն ամենայն ի փառս եւ ի պարծանս մարդկութեանս մերում, եւ եղեւ վարդապետ ամենայն արարածոց. զի նորա առաքինութեանն հետեւողք եղեալ, եւ նորին փառացն հաղորդակիցք եղիցուք. որ կայ պահի յուսացելոց ի Քրիստոս:

27 Եւ վասն այսորիկ տկար է մարմինս, զի յերկրէ ունի զսնունդ՝ ի բուսոյ եւ ի տնկոյ եւ ի շնչաւորաց. որպէս եւ ամենայն անբան կենդանիք: 28 Ձի նոյի հրամայեցաւ ուտել զմիս շնչոյ կենդանւոյ եւ ըմպել զինի յաղագս տրտմութեանն ի միսիթարութիւն. գոր ունէր վասն համատարած աշխարհի սատակմանն սուգ³²: 29 Ձի որ ի դրախտին կեանք էր եւ սնունդ, յայնմանէ վրիպեցաք յաղագս յանցանացն եւ ընդ բազում տկարութեամբ անկեալք: 30 Եւ վասն այսորիկ ի

պատճառէ իմեքէ ձգէ ի մահ ցուրտ եւ տաւթ եւ հիւանդութիւնք մարմնոյ: 31 Այլ եւ ի կերակրոյ եւ յըմպելոյ առաւելութենէ լինի լլկանք եւ մահ. նմանապէս եւ ի պակասութենէ, ի սովոյ եւ ի ծարաւոյ: 32 Այլ եւ թունաւոր ճճիք եւ դաժանութիւնք արմատոց եւ բուսոց կարեն լլկել եւ սպանանել եւ անզգայացուցանել եւ այլամտել:

33 Եւ վասն այսորիկ տկար է մարմինս, զի մի՛ յորժամ լսիցեմք Աստուծոյ պատկեր, ամբարտաւանեալ ամբառնայցեմք եւ անկանիցիմք ի վայր ամբառնալովն ի վիհս կորստեան որպէս զնոյն ինքն զաստուածամարտն՝ որ ի վեր քան զամպս ասէր դնել զաթոռ իւր եւ լինել նման բարձրելոյն. իսկ այժմ ի դժոխս էջ հանդերձ ամենայն ապստամբ զաւրութեամբքն, որպէս ասաց մարգարէն յերեսաց Տեառն³³:

34 Եւ Քրիստոս զխոնարհութեան մարմինս զայս առնլով՝ խոնարհութեամբ զնա կործանեաց, եւ զխոնարհս բարձրացոյց, եւ խայտառակեաց զնորա ամբարհաւածութիւնն: 35 Ձի այսքան միայն է նորա չարութեանն թոյնք. որպէս ճճեաց թոյնք եւ որպէս բուսոց եւ արմատոց դաժանութեան վնասք: 36 Ասեն բժիշկք՝ թէ գոն արմատք, որ հալածեն զդեւս ի մարդկանէ. եւ իմանալի է այսպէս. զի Աստուծոյ ներդրածութիւնն ի տկար նիւթոյ ցուցանէ զնորա տկարութիւնն եւ զկարծեալ զաւրութիւն հակառակամարտին, զի անզաւր է առ սուրբս. որ եւ կոխել զնա հրաման ունին ի Տեառնէ. որպէս ամենայն հաւատացելոց է քաջայայտ: 37 Եւ դարձցին յետս եւ ամաչեցցեն³⁴ նորա կամարարք, եւ որք յուսան ի նորա յոյսն:

38 Իսկ որ ամենակալ զաւրութեան Ամենասուրբ Երրորդութեանն են աւրհներգուք, երկրպագուք եւ փառաւորիչք, այ-

³¹ Յ՝ՎԸ՝Ա 14
³² ՏԷ՝ՆԾ՝Թ՝

³³ ՏԷ՝ՆԵ՝ԺԳ՝12:
³⁴ Ս՝Պ՝Ձ 6

սու տկար մարմնովս զհանդէս առաքինութեանն սրբապէս կատարեսցեն, եւ անցանեն ըստ կարգս աշխարհիս ամենայն ճշմարտութեամբ¹. եւ անցանեն ժամք եւ աւուրք եւ ամք, եւ յառաջադէմն նկրտի. եւ առաքինութեան ծնունդք զհետ երթան սուրբ եւ արդար վարուց. աշակերտեալք սրբութեան եւ ճշմարտեալ ամենայն առաքինութեամբ՝ փոխին յայսմ աշխարհէս ի կենդանեաց աշխարհն՝ որ ոչ լսի համբաւ մահու՝ յանուշակն ի մշտնջենաւոր ուրախութիւնսն: 39 Որ վերստին նորոգին աստուածային զաւրութեամբն յանսպառ եւ յանվախճան ուրախութիւնսն: 40 Որ լուցանին որպէս զարեգակունս յանմատոյց լուսոյն, եւ կենդանի սուրբ սիրովն վառին եւ բորբոքին հրով Ամենասուրբ Երրորդութեանն յանվախճան երանութիւնսն, եւ վայելեն յանսպառ եւ յանպատում բարութիւնսն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. ընդ որում Հաւր ամենակալի եւ Հոգւոյն Սրբոյ պարգեւողի փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԺԵ

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ
 ԼՈՒՍԱԻՈՐՁԻ ՎԱՍՆ ՀՈԳԻՈՑ
 ՄԱՐԿՈՒԹԵԱՆ ԲԱՅԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ

1 Աստուած ըստ մեծի մարդասիրութեանն իւրոյ բազմադէմ տեսչութեամբ իւրով խնամէ զարարածս, որպէս վայել է իւրոյ բարերարութեանն: 2 Զանմահ զաւրս հրեշտակացն մտաւորս եւ բանաւորս եւ պաշտաւնեայս իւր արար. զի փառաւորեսցեն զամենագաւր տէրութիւնն, եւ արբանակեսցեն կամաւքն որ առ ազգս մարդկան. զի հոգիք են հարկաւորք, որք առաքին ի սպասաւորութիւն բանին Աստուծոյ: 3 Զի ամենայն արարածք նովաւ են կազմեալ եւ բովանդակեալ. եւ պաշ-

տաւնեայք եւ սպասաւորք են մեծի փառաց աստուածութեանն, որ նոքաւք հրաւիրէ եւ կոչէ զմարդիկ յիւր արքայութիւնն եւ ի փառսն:

4 Իսկ ծնունդ մարդկան ի սաղմնաւորութենէ² անտի նորոգի, եւ զլինելութիւն առնու եւ աճէ, եւ ըստ սահմանի աւուրց յառաջագայի ծննդեամբ, եւ աճէ աննդեամբ եւ զարգացմամբ, եւ ի խրատ եւ յուսումն աստուածգիտութեան. եւ ի միտ առնուլ զարդարութիւն ճշմարիտ, եւ ուղղել զիրաւունս հոգեւոր աւրինաւք: 5 Եւ ծանիցեն զԱրարիչն եւ զսուրբ սիրոյն իւրոյ զերախտիս առ արարածս: 6 Եւ գիտութեամբ խրատու նորա ստանայ զհնազանդութիւն աւրինացն, եւ ընտրէ զբարին ի վատթարացն. ի բաց կալ ի դժնդակացն եւ բուռն հարկանել զարդարութեան վաստակոցն տերամբ: 7 Եւ այսպէս կատարեսցէ զառաքինութեան զհանդէսն ընդրութեան ըստ հոգեւոր աւրինացն, ըստ բազմախնամ ողորմութեանցն Աստուծոյ. համբերութեամբ բազմաւ եւ ճշմարտեալ սիրով, կենդանի յուսով ընթանայ ի կէտ կոչման վերին շնորհացն ամենառատ բարերար Ամենասուրբ Երրորդութեանն. եւ կատարեսցեն զվարս երկրաւորացս ըստ կանխագիտութեանն Աստուծոյ սահմանի յերկրի. ոմն ի տղայութեան, ոմն ի մանկութեան, ոմն յերիտասարդութեան, ոմն ի ծերութեան: 8 Սոյնպէս եւ այս ի խնամոց Աստուծոյ մատակարարի, զի մի՛ գիտացեն զաւր վախճանի իւրեանց, եւ հեղգացեալ վրիպեսցին յարդարութենէ. այլ արթունք եւ պատրաստք ի գործ սրբութեան զամենայն աւուրս կենաց իւրեանց:

9 Եւ այն որ ի տղայութեանն եւ ի մանկութեանն առնու զվախճանն, գերծեալ լինի ի փորձութեանց հոգոց աշխարհականաց. եւ զգուշութիւն լինի այնոցիկ՝ որ վարեն զաշխարհս առ հանդէս արդա-

1 Միւսն՝ նզուրթեամբ

2 Այդպէս յերկոսին օրինակսն

րութեան եւ ամենայն առաքիլութեան. եւ կատարեալ ի հաւատս եւ ի սէր եւ ի յոյս անարատ եւ ամբիժ՝ յանմահ կեանսն փոխին յանապական ժառանգութիւնն արդարոց: 10 Զի հոգիքն որ ելանեն ի մարմնոյ աստի, երթան ի կեանսն ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան. եւ անդ հրճուին առաքիլեացն ոգիքն ըստ խոստացեալ աւետեաց երանութեանցն, որ կայ պահի յուսացելոց սրբոցն անճառք՝ որ ի կամս Աստուծոյ վարեցան յաշխարհի ըստ Աւետարանին քարոզութեան:

11 Երանին ի Տեառնէ աղքատք հոգւով, որ վասն աւետեաց մեծութեանն հոգւով աղքատացան վասն արքայութեանն երկնից՝ որ ի Տէր Յիսուս Քրիստոս: 12 Երանին եւ խոնարհք սրտիւք, զի գտանեն հանգիստ յերկրէ յերկինս, որ անբաւ բարձրութիւն է. զոր խոնարհք ընդունին ի Քրիստոս Յիսուս: 13 Երանին եւ հեզք, որ ժառանգորդք են երկրին կենդանեաց. յորմէ փախուցեալ են ցաւք եւ տրտմութիւնք եւ հեծութիւնք անճառ յուսով ի Քրիստոս Յիսուս: 14 Երանին եւ սգաւորք, որ յազա սիրոյն Աստուծոյ, որ ի խոնարհութենէ սրտին հեղու գարտասուաց աղբիւրս զչնորհալիցն իմաստութեամբ, որ մխիթարութիւն ունին ի Քրիստոս Յիսուս: 15 Երանին եւ սուրբք սրտիւք, որք ազատեալ եւ սրբեալ են յաղտեղի ցանկութեանց. զի նոքա զԱստուած տեսցեն: 16 Երանին եւ խաղաղարարք, զի նոքա նմանողք են Որդւոյն Աստուծոյ՝ որ արար խաղաղութիւն յերկինս եւ յերկրի, հեռաւորաց եւ մերձաւորաց. նմանապէս եւ սոքա եղեն:

17 Նա եւ ամենայն երանութեամբք զուարճանան եւ զուարթանան հոգիք արդարոցն ի հանգստեանն ի Քրիստոս մինչեւ ի հասարակաց յարութիւնն, յորժամ գայցէ Տէրն մեր փառաւք Հաւր, եւ մեռեալք ի Քրիստոս՝ յարիցեն առանց ապականութեան. եւ առաքիլեաց անձանց արդարութիւնք առաջի ընթանան Ամենա-

սուրբ Երրորդութեանն: 18 Զի հաւատք հասուցանեն ի ծանաւթութիւն փառացն Աստուծոյ. զի՞ եւս պիտոյ է ասել վասն այնորիկ զոր ետեսն, եւ վասն յուսոյն որ մուծանէ ի ժառանգութիւն բարեացն՝ որում ցանկացեալն է, եւ ինքն տեղի տայ: 19 Զի յայնմ հետէ զի՞ եւս յուսայ կամ ակն ունի զոր ժառանգեաց՝: 20 Սոյնպէս համբերութիւն եւ ժուժկալութիւն, երկայնամտութիւն եւ հեղութիւն, հնազանդութիւն եւ ուղղութիւն, սրբութիւն եւ ճշմարտութիւն, հանդերձ ամենայն երանութեամբք փառաւորեալ եւ պսակեալ եւ մուծանեն զժառանգաւորն ի ժառանգութիւն արքայութեանն: 21 Զի ուր կատարումն է, զի եւս պիտոյ է առաքիլութիւն հանդիսից. զի եմուտ ի վայելսն անսպառ բարութեանցն, եւ ուրխանայ սուրբ սիրովն յանվախճան երանութիւնսն Ամենասուրբ Երրորդութեանն, որ անճառն է եւ անբաւ եւ անպատում:

22 Սոյնպէս մարդք չարք եւ անսուրբք եւ ապստամբք ի ճշմարտութենէ անտի, եւ զհետ երթեալ զանիրաւութեան եւ ի նոյնս վախճանի, ընդ նմա յառաջանայ գործք իւր ամբարշտութեան դառն յիշատակաւք յաղազս ամենաչար ցանկութեանցն, ահաւոր սպառնալեալք ի վերայ անաւրինաց եւ անհնազանդից, անսրբոց եւ պղծոց եւ որ այլ եւս յանցանք իցեն: 23 Վայ ի վերայ վայի հաստատեալ կայ նոցա յաստուածեղէն Գրոց Սրբոց, եւ յանաչառ դատաւորէն պատիժք: 24 Զի յիմարեցան սիրտք իւրեանց յիմանալոյ, եւ ոչ լուան ձայնի Տեառն եւ պատուիրանաց նորա ոչ անսացին: 25 Եւ վասն այնորիկ պատրաստեալ կայ բարկութիւն Աստուծոյ ի վերայ ամբարշտաց եւ մեղաւորաց, որք զճշմարտութիւն Աստուծոյ անարգեցին յանձինս իւրեանց, որոց յառաջագոյն սպառնացաւ:

* Տե՛ս Հատմ. Բ 24-26:

26 Եւ այս ամենայն սպառնալիք յան-
ցաւորաց յոյժ ի տրտմութեան ունին զո-
գիս մեղաւորացն, ի կայանս որ ըստ իւրա-
քանչիւր մեղացն բաժանեալ եւ որոշեալ ի
տխրական տեղիք:

ճառ փառաբանութեան հրեշտակային ւերհներգութեամբ: 43 Ձի աստուածային գիրք՝ կենդանի եւ անմահ ասեն զհոգիս մարդկան: 44 Որով իմանալի է ոչ անգ- գայս, այլ ունին եւ փառս տան Արարչին: 45 Ապա եթէ ըստ մարմնոյ ւերինակի ի- մասցիս, որպէս յորովայնի, եւ յետ այնո- րիկ գայ ի գիտելութիւն մտաց եւ մարմնոյ եւ փոփոխի:

46 Այլ հոգի անմահ բանաւոր եւ մտաւոր՝ յորժամ ելանէ ի մարմնոյս, յա- ռաւել գիտութեան իմաստից է իմանալ եւ ճանաչել զՏէրն փառաց: 47 Որով յառա- ջագոյն մարմինն որպէս ամպ ինչ ծած- կեալ ունէր գիմանալի տեսութիւնն, թէ- պէտ եւ յուսով նահատակէր ի գործս բա- րիս ի ձեռն հոգեւոր ւերինացն. որով զընտրութիւնն առնէր բարւոյ եւ չարին, անարգելովն զչարն եւ ընտրելովն զբարին խրատու եւ իմաստութեամբ Տեառն երախ- տաւոր սիրով: 48 Ձի ոչ է պարտ զհոգիս մարդկան մահկանացու ասել կամ անգ- գայս. այլ որպէս եգեկիէլի մարգարէի ի միում վայրի յարութիւն մեռելոց նախ ոս- կերաց եւ ջղաց եւ մարմնոյ միաւորեալ ա- մենայն յարիմուածով, եւ ապա կոչել զհոգիսն յիրաքանչիւր կայնից Հոգւով Սրբով որպէս հոգւով՝: 49 Ձի Առաքես զո- գի քո եւ ստանաս զնոսա եւ նորոգես՞. եւ որ յԱւետարանսն պատմին մեռելոց յա- րութիւնքն ի Տեառնէ. զի հոգւոյն դարձ ի մարմինն վկայութիւնք այս են: 50 Բերան խաւսի, աչք տեսանեն, ականջք լսեն, ունչք հոտոտին, ձեռք շաւափեն, ոտք գնան, սիրտ շարժի իմանալեաւք, եւ փա- ռաւոր առնեն զԱստուած կենդանարար Հոգւովն՝ որ զամենայն զգայութիւնս շարժէ տերամբ: 51 Եւ յորժամ հոգին ար- ձակի ի մարմնոյն, մեռեալ կոչեցաւ. եւ քակտին ամենայն յաւրեալ յաւրինուածք

անդամոցն իւր: 52 Նոյնպէս վկայութիւնք են իւրոյ հոգւոյն շարժելն, իմանալն, ճա- նաչելն, յիշելն. զի մարմնոյս այս տուիչ եւ վարդապետ եւ կենդանարար հոգիքն են ըստ Աստուծոյ կամացն: 53 Ապա եթէ ի զգայութիւնսն է պատճառ կենդանու- թեան, ապա ո՞ւր է կենդանութիւն հոգ- ւոյն՝ որ զկեանսն ունի Աստուծով:

54 Եւ այսպէս իմանալի է. զի ամե- նայն շարժմունք՝ հոգւոյն են, եւ ոգիքն տան մարմնոյն զկեանս ըստ նախախնա- մութեանն Աստուծոյ: 55 Եւ որպէս մար- մինքն վկայութիւն ունին զգործ բնու- թեան բարուցն, այսպէս ոգիքն զիւրեանց բնութեան բարուցն ունին զվկայութիւն: 56 Եւ ոգի անուանի կենդանի ի մարմինս ազդելիս եւ չարչարելիս եւ մահկանացուս, յորմէ որոշի ըստ վերին կոչման Արարչին ի պատրաստեալ արթեւանս անմարմնոցն: 57 Ձի մարմին յերկիր դառնայ եւ հանգչի անհոգ՞. եւ հոգին սուրբ եւ բարի աւե- տեաւք յուսովն զուարճանայ ընդ հրեշ- տակս ի փառս ամենակալին իբրեւ արդէն առեալ զառհաւատչեայ երանութիւնս երկնից արքայութեանն: 58 Ձի եւ հոգին, ասէ, վկայէ հոգւոյս մերում եթէ եմք որդիք Աստուծոյ եւ ժառանգակիցք Քրիստոսի՞. զերծեալք ի ծառայութենէ մեղացն յազա- տութիւն փառաց Որդւոյն Աստուծոյ:

59 Ձի ամենայն հաւատացելոց ծա- նուցեալ եղեւ երախտիք սիրոյն առ արա- րածս իւր լուսաւոր աւազանաւն եւ փրկա- կան խորհրդովն մարմնով եւ արեամբն իւրով, որ պատարագեցաւն ի վերայ խա- չին եւ եբարձ գմեղս աշխարհի, որք հա- ւատով մերձեցան առ Փրկիչն մեր: 60 Եւ յորժամ դարձեալ գայցէ փառաւք ի նորո- գել զորդիս մարդկան, եւ յարուցանէ գմե- ռեալս, նորափետուր զարդարէ լուսով զարդարս կենդանիս եւ զյաւիտենից ննջե-

՝՝՝ Տէ՛* Եգեկ. Լ. Է: Է՛՝ Սաղմ. ճՊ. (ճՊ) 30

Պ՝՝ Տէ՛* Ժ՞՞. Ժ. Բ՛ 7: Գ՞՞՞՞ Նմբ. Նմբ. Բ՛ 16:

ցեալս սուրբս ի Տէր, եւ մուծանէ ի ժառանգութիւն իւր յանմահական կենացն ուրախութիւնսն՝ որ կայ պահի հաւատացելոց սրբոց եւ յուսացելոց ի Տէր: 61 Եւ ինքն եղիցի, *ասէ առաքեալ, Աստուած ամենայն յամենայնի՝ իւրով կենդանի սուրբ սիրովն եւ կենդանարար խնամովքն:* 62 *Ձորս վայելեցուցանէ ի փառս Աստուածութեանն զճշմարտեալս ուղիղ հաւատով, եւ սուրբ եւ անարատ վարս վճարեալ զերկրաւոր կեանսս, եւ զանանց կեանսն շահել ի Քրիստոս զմշտնջենաւորն զերեւելին յանուշակ փառս Միածնին:* 63 *Որ ամենայն երանութեամբք պսակէ եւ փառաւորէ ի կամս Հաւր եւ Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

ԺԶ

**ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ
ԼՈՒՍԱԻՈՐՁԻ ՎԱՄՆ ՄԱՐՏԻՐՈՍԱՅՆ
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՈՒՍՄԱՆՑ**

1 *Սկսանիմք այսուհետեւ եւ վասն մարտիրոսաց ճառել բանիւ. զի պատուեսցուք զյիշատակս նոցա, եւ երանեսցուք նոցա վասն ճշմարիտ վկայութեանն եւ սիրոյ, եւ բազում վարձս առնումք նոցա բարեխաւսութեամբն վասն մեր:* 2 *Այլ զպաշտաւնն Աստուծոյ մատուցուք սաղմոսիւք եւ աւրհնութեամբ եւ երգովք հոգեւորաւք. սուրբ սրտիւ գովելով զանսկիզբն էութիւնն եւ զամենագաւր տէրութիւնն, զի արժանիս արասցէ զմեզ մասին ժառանգութեան սրբոց աւետեացն ի լոյս ի փառս տէրութեանն:* 3 *Եւ ամենայն ժողովուրդք որ ժողովին ի յիշատակս սրբոցն, ի միտ առցեն հաւատով եւ սուրբ սիրով զհանդէս նահատակութեան նոցա:* 4 *Եւ նոցա բարեխաւսութեամբ աղաչել զԱստուած Չերմեռանդ արտասուաւք, հսկելով զտիւ եւ զգիշեր ի պաղատանս սուրբ սրտիւ. զի*

զերծուցէ յաշխարհէ աստի չարէ առաքինասէր վարուք: 5 Որպէս զսուրբան զայնոսիկ՝ որոց յիշատակն կատարին ի փառս Աստուծոյ, եւ զհանդէս մտերմութեան իւրեանց ցուցանել առ ամենեցունց Տէրն եւ արարիչն Աստուած՝ որ ետ նոցա զայնպիսի յաղթութիւն առ բռնաւորսն եւ հակառակորդսն ճշմարտութեանն: 6 *Ձի եւ մեզ տացի շնորհս յաղթել ամենայն կարեաց որ յառնեն ի վերայ մեր ճակատամարտք երեւելիք եւ աներեւոյթք. եւ զպաշտաւնն փառաբանութեամբ Աստուծոյ ընծայել երկրպագութեամբ:*

7 *Ձի այս իսկ են սրբոցն կամք, զի եւ ժողովուրդք նոցա բարեխաւսութեամբն յԱստուծոյ պաշտաւնն յորդորեսցին. եւ այնպէս առնուն զաշխատութեան փոխարէնս յԱմենասուրբ Երրորդութենէն:* 8 *Ձի Պաւղոս եւ Բառնաբաս արարեալ նշանս յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի, գառ ի մաւրէ զկաղն բժշկելով եւ զարմացուցեալ զամենեսեան. մինչ զի փութմն աստուածս զնոսա համարեցան յերկնից իջեալ եւ զմարդոյ կերպարանս ունելով: 9 Վասն որոյ գոհիւ կամէին պատուել զնոսա որպէս զաստուածս: 10 Եւ յաղագս այնորիկ պատառեցին զհանդերձս, եւ նիչ բարձեալ ասէին. մեք ձեզ նմանեալք մարդիկ եմք ծառայք Աստուծոյ բարձրելոյն՝ որ արար գերկինս եւ գերկիր եւ որ ի նոսա արարածք իցեն. եւ յանուն նորա բժշկեցաւ սա: 11 Եւ զայս ասացեալ հազիւ լոնցուցին զամբոխն. զի լաւ համարեցան մեռանել, քան եթէ զպատիւն Աստուծոյ ձգել յինքեանս եւ փառաւորիլ ի մարդկանէք:*

12 *Այսպիսի ինչ արար սատանայ, զի զԱստուծոյ պատիւն յինքն ձգեաց, եւ որոշեցաւ ի խնամոց Արարչին իւրոյ, եւ անկաւ ի փառաւորեալ կարգաց հրեշտակական դասուցն, եւ եղև խաւար փոխանակ լուսոյ եւ ժառանգորդ գեհնին պատ-*

« Ը կ*բ. ԺԵ 28

է Տէ' * Գ*բ. ԺԳ :

ժոց: 13 Ձի սրբոց առաքելոցն եւ մարգարէիցն եւ ճշմարիտ վարդապետացն ծառայա Աստուծոյ՝ անարգս երեւեցուցանելով. զի գիտէին զսատանայի ի ձեռն հպարտութեան ամբարտաւանեալ եւ ամբարհաւաճեալ զի վայր անկումնն, եւ զխոնարհաց եւ զհեզոց զի վեր ելումնն ի տեղիս անկելոցն: 14 Մանաւանդ Քրիստոս. քանզի յայտնագոյնս եցոյց ըստ տնաւրէնութեանն զանճառ զխոնարհութիւնն իւր. յորս եւ ասէ իսկ. Ուսարուֆ յիմէն, զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ. եւ գտջիֆ հանգիստ անձանց ձերոց^ա:

15 Եւ ամենայն սուրբք իւրեանց առաջնորդութեամբ ճշմարտեալ խոնարհութեամբ առ Տէրն ի բարձունս ընթացուցանեն զամենայն հաւատացեալս յԱստուած. զի արժանի լիցին յամենեցունց Տեառնէն փրկութեան եւ քաւութեան սխալանացն բարեխաւսութեամբ սրբոցն, եւ այլ մի՛ եւս դառնալ ի դժնդակ վարս սատանայի: 16 Այլ լսել զիւրաքանչիւրոցն նահատակութիւնս եւ զկատարեալ սուրբ սէրն, որ առ Աստուած էր յոյսն նոցա համբերութեանն, նախանձ ունել Քրիստոսիւ: 17 Որ հրով եւ ցրտով, ջրով եւ սառամանեալք, քերանովք եւ հարուածովք, բանդիւք եւ կապանալք, սովով եւ ծարաւով, սրով եւ մահու, սպառնալեալք եւ ողորջանալք, զի երկչոտն զարհուրեսցի եւ արին կակղացի: 18 Այլ ոչ ինչ կարաց այսպիսեացս չարաչար տանջանացն վիշտք եւ նեղութիւնք եւ վտանգք մարմնոյ քակտել եւ խզել զսուրբ սէրն որ յԱմենասուրբ Երրորդութիւնն: 19 Եւ յաղագս առաւելութեան Աստուծոյ սիրոյն առին համարձակութիւն բարեխաւսութեան առ Տէր: 20 Ձի զայս ամենայն դժնդակ տանջանս ի հակառակաց անտի ընկալան համբերութեամբ բազմաւ վասն երախտաւոր սուրբ

սիրոյ նորա՝ որ սիրեաց զազգս մարդկան, որ հրաւիրեաց եւ կոչեաց:

21 Արդ, զհետ երթիցուք կոչողին զհետ սրբոցն սուրբ սիրով. խնդրեսցուք ջերմեռանդ շնորհալից արտասուաւք զանտի զհանգիստն աստեալք աշխատութեամբ. զհուր ցանկութեանցն շիջուցուք հրով Հոգւոյն Սրբոյ. եւ սրբեսցուֆ զանձիմս գերեւելի զգայարանս եւ զաներեւոյթ հոգւոյն շարժումնս ի խղիւճ չարեաց^է: 22 Ձի ճշմարտեալ սիրովն որ առ Աստուած՝ կարացուք մասին սրբոցն աւետեացն արժանի լինել յետ զկեանս աշխարհիս լուծանելոյ: 23 Ձի այսպէս ի ժողովս սրբոց հաղորդեսցուք եւ տաւնեսցուք ի փառս ամենակալին Աստուծոյ, որ ետ նոցա զյաղթութիւն առ չար բռնաւորս. եւ փառաւորեցան յերկինս եւ յերկրի որ կան եւ մնան:

24 Այսպէս յուսալ եւ հաւատալ ի սրբոցն ժողովս եւ ի բարեխաւսութիւնսն որպէս զքահանայս որ կան առաջի այնորիկ՝ որ նստին ընդ աջմէ Հաւր, եւ զիւրաքանչիւրոցն պատարագք ընծայեն աղաւթիւք առ ի հաշտութիւն ակամայ եւ կամաւոր սխալանաց հաւատացեալ ժողովրդոց վախճանելոց եւ կենդանեաց: 25 Եւ իւրեանց ճշմարտեալ հաւատովն եւ հանդիսաւոր ճգնութեամբ առաքինասէր վարուք՝ արդար եւ սուրբ եւ ուղիղ բաղձանալք, շնորհալից սիրով, արտասուագոչ պաղատանալք հաւատան առնուլ զխնդրելին յամենեցունց Փրկչէն ըստ յուսոյ հաւատացեալ ժողովրդոց. մանաւանդ ի ձեռն փրկական խորհրդոյն սրբապէս կատարմանն ի Քրիստոս Յիսուս:

26 Այսպէս է իմանալ զսրբոցն զբարեխաւսութիւն առ հաւատացեալ ժողովուրդն: 27 Ձի իւրեանց մտերիմ վաստակովքն որք զմարմինս իւրեանց պատարա-

^ա Մատթ. ԺԼ՝ 29

^է Հմմտ. Եբր. Ժ՝ 22:

գեցին յերկրի վասն անուանն Աստուծոյ ի հոտ անուշից, եւ սուրբ հոգիք նոցա հոգեւոր բարեխաւսութեամբն զԱստուած յողորմութիւնն աշխարհի ածեն: 28 Եւ նշխարք ոսկերաց նոցա փրկութեան շնորհք ընծայեն ի ժողովս հաւատացելոց, որպէս ամենեցուն է քաջայայտ. զի երեւեսցի սէրն Աստուծոյ ի նոցա նշխարսն բնակեալ, եւ նշանաւքն ծանուցեալ յերկրի:

29 Իսկ արդ իմանալեաւքն զյուսացելոց իրաց զհաստատութիւնն եւ զյանդիմանութիւնն Աստուծոյ մերձաւորութեանն ունին, զհամարձակութիւնն բարեխաւսութեան, որ ոչն երեւի մարմնաւորացս. այլ երեւելեալս շնորհատուր զաւրութեանն Աստուծոյ ի նոցա նշխարս եւ ի սուրբ ժողովս զաներեւոյթսն իմասցուք առաւելագոյն այցելութիւնն ի Տեառնէ: 30 Զի հոգիք, ասէ, առաւել են քան զմարմին առ Արարիչն եւ առ արարածս: 31 Զի այսպիսի շնորհք տուան յԱստուծոյ առաքելոց եւ մարգարէից եւ մարտիրոսաց եւ ամենայն ընդրելոց սրբոց յերկրի աստ եւ յերկինս: 32 Զի նոցա առաջնորդական հանդիսիւքն եւ առաքինասէր վարուք հաճոյացուք Աստուծոյ. եւ նոքա պատճառք լինին մեզ փրկութեան եւ կենաց միշտ բարեխաւսութեամբն իւրեանց:

33 Եւ մեք զփառաւորեալսն յԱստուծոյ երանեսցուք. որ վասն սիրոյն Աստուծոյ զանձինս իւրեանց մատնեցին չարչարանաց եւ մահու, եւ առին զպատիւնն եւ պարգեւսն անապական յանմահ թագաւորէն: 34 Այլ զպաշտաւնն եւ զփառաբանութիւնն երկրպագութեամբ Ամենասուրբ Երրորդութեանն մատուցուք ի յիշատակս կատարման ամենայն սրբոց Աստուծոյ: 35 Զի այս են կամք ամենեցունց Տեառն եւ ամենայն սրբոց նորա. զի նա է փառաց եւ պատուոյ արժանի յամենայն սրբոց եւ յարարածոց այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԺԷ

ԵՐԱՆԵԼԻՒՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ ԶԳԱՍՏՈՒԹԵԱՆ ՇԱՀԱԻՈՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԸՆԴՄՍՏԵՐԻՄՍՆ ԵՒ ԸՆԴԴԻՍԿԱՆ ՊԱՏԻԻ ԵՒ ՊԱՏԻԺՍ

1 Գրել ձեզ եւ ուսուցանել կամիմ, եղբարք իմ եւ որդիք, զորս ի Քրիստոս Աւետարանում ծնայ: 2 Զի որք յարգեն զանձինս իւրեանց ի գործս բարութեան եւ յուսումն ճշմարտութեան, ինքեանք իսկ պատրաստին ի վնասակարացն, եւ պէսպէս հնարիւք յառնել զբարիսն խորհին: 3 Որպէս զի աւրինակ ճշմարտութեան եղիցին յառնել եւ յուսուցանել միշտ, եւ անխիղճ եւ անպատճառ իցեն առ հեռաւորս եւ մերձաւորս ըստ բանին Տեառն. Լուսաւոր եղիցի, ասէ, լոյս ձեր արդարութեան առաջի մարդկան. որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, եւ փառաւորեսցեն զչայրն ձեր երկմաւոր: 4 Եւ դարձեալ երանէ զծառայան, յորոց անունն աւրհնի եւ փառաւորի. եւ վայ եւ եղուկ զայնոսիկ վարկանի, յորոց անունն Տեառն հայհոյեսցի:

5 Զի որք լինին քարոզք ճշմարտութեանն, ճշմարտութիւնն ինքնին յարգէ զնոսա անմոլար գիտութեամբն: 6 Եւ Աստուած փառաւորէ զնոսա, յորժամ տեսանի նոցա բարեպաշտութեան ջանքն. զի զոր նոքայն տնկեն եւ սնուցանեն, Աստուած աճեցուցանէ եւ հաստատէ աւետեալք կենացն ի փառս եւ ի պարծանս նոցա ի տիեզերական ատենին յարութեանն որ ի մեռելոց: 7 Եւ կարացեն ասել. ահա մեք եւ մանկունք մեր նշմարտեալ զոր ետուր մեզ, Աստուած: 8 Եւ պսակեալ առաքինութեամբքն առնուն զգրաւական խոստացեալ աւետեացն Քրիստոսի: 9 Զի որ արացեմ, ասէ, եւ ուսուցեմ, նա մեծ կոչես-

« Հմբ. Ե Կ. Գ. 15:
‡ Մ. Կ. Ե. 16
‡ Հմբ. Ե. Կ. 18:

ցի յարՖայութեանն երկնից^ա: 10 *Ձի Սկսաւ, ասէ, Յիսուս առնել եւ ուսուցանել մինչեւ յարն՝ յորում վերացաւ յերկինս^բ:*

11 *Իսկ որում հաւատացաւ վերակացութիւն ժողովրդոց, եւ հեղգասցի ի նոցա խնամս ի հոգեւոր ուսումն եւ ի խրատ, եւ ստունգանիցէ եւ կամ ոչ տայցէ զմարմնաւոր զպէտս կարաւտելոց, այլ ուտէ եւ ըմպէ անզգայաբար, յանկարծակի զայ ի վերայ նորա մահ՝ յորում աւուր ոչ ունի ակն. եւ հատանող բանն Աստուծոյ սուր՝ ընդ մէջ կտրեսցէ զնա, յինքն առեալ զչնորհան՝ որ յԱստուծոյ է, եւ զվատթարն ընդ անհաւատսն դիցէ ի խաւարն արտաքին եւ ի հուր, ուր լալ աչաց է եւ կրճել ատամանց:* 12 *Ձի հաւատք ի լսելոյ եմ, ասէ առաքեալ, եւ լուր ի բանէն Գրիստոսի. զի զիս^գրդ հաւատան զոր ոչն ուսան, եւ կամ զիս^գրդ աղաչեսցեն, զոր ոչ զիտեն^դ:*

13 *Եւ դարձեալ առ մարգարէն եղեկիէլ ասէ աւրինակաւ առ ամենայն վերակացու. ասէ. Դէտ կացուցի զբեգ. զգուշասցի՛ր անձինդ եւ ժողովրդեանդ, եւ ասասցես ցանաւրէնն՝ եթէ մահու մեռցիս: 14 Եթէ ոչ զղջասցի եւ դարձցի խոստովանութեամբ յապաշխարութիւն, մեռցի զմեղացն զմահ. եւ դու ապրեսցիս, զի զգուշացուցեր յառաջագոյն: 15 Ապա եթէ զղջասցի եւ դարձցի խոստովանութեամբ յապաշխարութիւն, կելով կեցցէ զարդար կեանսն եւ մի՛ մեռցի զմեղացն զմահ: 16 Ապա եթէ ոչ զգուշացուցեր նմա, ի մեղս իւր մեռցի ի պատուհաս, եւ զարիւն նորա ի ձեռաց րոց խնդրեսցից^ե, ասէ զայս ամենեցունց Տէրն:*

17 *Եւ Դանիէլ բանիւք եւ արդեամբք եցոյց զիրաւացի դատաստանն առ ծերսն, որք էին վերակացուք Իսրայէլի՝ զպատիժս*

պատուհասիցն^է: 18 Որ եւ ի գրին յառիւծուցն ապրեսցաւ՝ մատնելով ոսոխացն ի մահ, որ անդէն իսկ ի նոսին դառնայր մահն յառիւծուցն^զ: 19 Եւ այնպէս երեւելի եղեւ ճշմարտութիւն արդարոյն եւ ամբարտաւանութիւն զրպարտող չարեացն: 20 Եւ այսպէս փառաւորէ Աստուած զփառաւորիչս իւր եւ զճշմարիտ վերակացուս: 21 Որ եւ զերիս մանկունսն արկին ի հնոցն առ ի յայրել վասն առ ի յԱստուած զհաւատսն ամբողջ պահողաց. զի հրաման, ասէ, թագաւորին սաստկանայր, եւ հնոցն բորբոքեր առաւել, եւ հուրն ոչ կարէր մերձեցալ առ սուրբսն որք արիւնէին զՏէր Աստուած^է: 22 Այլ զչարսն զորս գտանէր, այրէր հուրն. զի այնու ծանուցեալ եղեւ արարիչն արարածոց. եւ թագաւորն խոստովան լինէր Աստուծոյ զմեղան:

23 *Եւ գերեմիաս արկին ի գուրն ի մահ յաղագս յանդիմանելոյ զանիրաւսն եւ ի դարձ անելոյ, զի ապրեսցին ի բարկութենէն որ գալոցն էր ի վերայ ժողովրդեանն^է: 24 Որ եւ զգրեալ զիրատսն եւ զմարգարէութիւնն այրեսցին, եւ ըստ արժանեացն ընկալան զհատուցումն մեղաց իւրեանց, եւ մատնեցան ի սով եւ ի սուր եւ ի գերութիւն: 25 Եւ մարգարէն փառաւորեալ պատուեցաւ ի թագաւորէն եւ ի մեծամեծացն, եւ վերստին նորոգեաց գրով զմարգարէութիւնն եւ զուղիղ իրատսն^է: 26 Եւ զի ասաց. Անիծեալ ամենայն, որ գործէ զգործ Տեառն ծուլութեամբ^է:*

27 *Եւ Տէրն որ յԱւետարանսն առ Պետրոս ասաց. դու ես վէմ, եւ ի վերայ այդր վիմի շինեսցից զեկեղեցի իմ. այսինքն զհաւատացեալ ժողովուրդն Աստուծոյ. եւ*

^ա Մատթ. Ե 19
^բ Գործք. Ե 1
^գ Հմմտ. Հուրմ. Ժ 14:
^դ Եղեկ. Գ 17

^է Տէ՛ս Գ. ան. Ժ Գ:
^զ Տէ՛ս Գ. ան. Ժ Գ:
^է Տէ՛ս Գ. ան. Գ 22:
^զ Տէ՛ս Երեմ. Լ Ը:
^է Տէ՛ս Երեմ. Լ Գ:
^զ Երեմ. Խ Ը 10

դրումն դժոխոց գնոսա մի յաղթահարեսցեն, գարձակեալսն յերկրէ սուրբս եւ արդարս նշմարիտ հաւատով յերկինս. եւ զոր կապիցես յերկրի գանսուրբս եւ գանիրաւս եւ գայլահաւատս, եղիցին կապեալ ի յերկինս ի պատիժս սպառնալեացն³⁰։ 28 Առ Պետրոս բանս ի Տեառնէ առ ամենայն վերակացուս սուրբս ասացաւ, որք զճշմարտութիւնն իրաւ ունին։

29 Այսպիսի ընտրութիւնք են ի մէջ լաւաց եւ անիրաւաց, որք իւրեանց սրբութեամբն եւ առաքինասէր վարուք եղեն արբանեակք եւ քարոզք բանին ճշմարտութեանն ի զգուշութիւն անձանց եւ ժողովրդոց, արհամարհողաց եւ անհնազանդից, անսրբոց եւ պղծոց եւ որ այլ եւս դժնդակութեան վարք իցեն, յամենայն խելամտեալք ճանաչելով զերկաքանչիւրոցն զչարժմունս, եւ ընդ սխալեալսն մարտիցէ զինուք ճշմարտութեանն ողորջանաւք կամ սաստիւք. որով կարասցէ շահել զմեղապարտսն։ 30 Եւ զհեծանոցն ի ձեռն ունել. զի հողմոյ Հոգւոյն Սրբոյ շնչելով որոշեսցէ զցորեանն յտեմարանս սրբոց, եւ զյարդն պատրաստիցէ ի նիւթ հրոյ գեհնին, որպէս ասացաւ. զի ընտրութիւն է ի մէջ բարւոյ եւ չարի։

31 Իսկ որ ի ճշմարիտ վերակացութեանն աւտար են, բարկութիւնն Աստուծոյ ի վերայ նոցա պատրաստեալ կայ ի Տեառնէ ըստ բանի առաքելոյն. Որք գնշմարտութիւնն անիրաւութեամբ ունին, եւ ոչ ըստ Աւետարանին Քրիստոսի³¹։ 32 Զի արժան է առաջնորդաց վերագոյն ըստ արդարութեան աւրինացն եղեալ յամենայն ի հաճոյս Աստուծոյ, եւ զժողովուրդն զգուշացուցանել ճշմարիտ վարդապետութեամբ վասն իւրաքանչիւրոց փրկութեանց. զի մի՛ սպառնացեալ պատուհասն ի վերայ հասանիցէ ի ձեռն հրեշտակի չարի։

33 Որպէս մարգարէին ցուցաւ սատակել զանիրաւսն եւ ոչ ումեք ողորմել, ծերոյն եւ տղայոյն, կուսին եւ երիտասարդին, եւ քահանայից եւ ժողովրդոց։

34 Բայց ասէ, որք հեծեն եւ յոգոց հանեն եւ սգան գայլոց անիրաւութիւնս, իմայել հրաման առնու նշանաւ որ ի ցակատն առեալ ի Տեառնէ, զի ապրեսցին ի սատակմանէ անտի³²։ 35 Եւ սկիզբն սատակմանն ի քահանայից անտի առնու, յորոց վերակացութիւն ժողովրդեանն է յԱստուծոյ. որ զշահս մարմնոցն առնուին, եւ հոգեւոր շահիցն անփոյթ առնէին. զի Աստուծոյ դատաստանքն ճշմարիտ են. զի Ամենայն դպիր աշակերտեալ արքայութեանն Աստուծոյ, ասէ Տէրն, նման է առն տանուտեառն, որ հանցէ ի գանձէ իւրմէ գնոր եւ զհիմ³³։

36 Տանուտէր անուանեաց զառաջնորդս եկեղեցւոյ՝ զաշակերտեալս ճշմարտութեան աւանդիցն, եւ գանձք զիմաստս սրտին, որ ի հնոյ եւ ի նորոյ ունի զստոյգ զիտութիւնն, եւ վայելեցուցանէ զմերձաւորս եւ զհեռաւորս բարի խորհրդովք եւ բարի գործովք եւ անարատ սրբութեամբ։ 37 Եւ զչար գործոցն զմթերս արտաքս պեղել, մինչ ոչ մնայցեն նշխարք չար գանձուցն ի բարի ուսմանցն, ընտրելով զլաւն ի վատթարացն։

38 Ինքեանք, ասէ, աւրինակ լիցին կացիւք գնացիւք, ամենայն առաքինութեան հանդիսիւք. զի աշակերտեալքն յորդորեսցին ի ճշմարիտ վարս, որ փառս է վարդապետաց, գնալ ի ճանապարհս արդարոց, եւ խորհել ի պատուիրանս Տեառն, եւ առաջնորդել լուսաւոր վարդապետութեամբ ի սրբութեան վարս եւ յարդարութիւնսն ամենայն։ 39 Զի զամենայնսն ժառանգորդս արասցեն արքայութեանն Աստուծոյ, գործակից լինել կենարար աւետա-

³⁰ Մատթ. Ժ. 9. 18-20

³¹ Հուդ. 1. 18

³² Տե՛ս Եւգէլ. Թ. 4։

³³ Մատթ. Ժ. 9. 52

բանական խրատուն, եւ մի՛ իւրք զանց առնել ի ճշմարիտ աւանդիցն: 40 Զի եթէ միով իւրի ինչ, ասէ, գթիցես, եղեր ամեցայն աւրինացն պարտական: 41 Զի ճշմարտեալք հաւատով եւ սրբեալք ի խղճէ չարեաց, միշտ մերձաւորք լիցին մարմնոյ եւ արեանն Տեառն, ի ներքին մարդն բնակել Քրիստոսի, որ լուսաւորէ զսուրբս անարատ եւ ամբիժ երախտեալք սուրբ սիրոյն, հոգեւոր եւ մտաւոր դարմանաւք յԱմենասուրբ Երրորդութենէն միշտ:

42 Իսկ յորժամ Քրիստոս յայտնեսցի կեանքն մեր, ասէ առաքեալ, յայնժամ եւ դուք ընդ նա յայտնեսցիք փառաբ: 43 Որպէս զի եղիցի մեզ ամենեցուն որ զգեցաք զՔրիստոս, ճշմարտեալ հաւատով եւ առաքինասէր վարուք հաճոյացեալք մերձենալ ի լոյսն անմատոյց, եւ պայծառանալ ի փառացն Քրիստոսի յուսոյն մերում ի տիեզերական ատենին յարութեանն, որ ի մեռելոց: 44 Եւ փառաւորեսցուք, զամենազաւր Տէրութիւնն միշտ ընդ հրեշտակս յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԺԸ

ՆՈՐԻՆ ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԳՈՎՈՒԹԻՒՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՐԱԽՏԵԱՅՆ ՀԱՆԳԻՍԻՒՒՒՔ ՄԱՐՏԻՐՈՍԱՅ ՔԱՋԱՅ ԱՌԱՔԻՆԵԱՅ

1 Անբաւ են խնամք Բարերարին եւ անզեղ զարգեւք Կենարարին, որ հաստատեաց զզաւրս երկնից ի փառս անուան իւրոյ սրբոյ, եւ զմարդիկ յանարգութենէ նմանապէս ի գովեստ փառաց շնորհաց իւրոց. ետ իշխանութիւն ի վերայ ամենայն երեւելի արարածոց, եւ խոստացեալ զանպատում երանութիւնսն: 2 Զի անձնիշխան կամս ստացան ի Տեառնէ երկնաւոր զաւրքն եւ երկրաւոր որդիք մարդկան. զի

հաղորդ լիցին բարերար կամաց Արարչին, խորհել միշտ զբարին եւ առնել ի կամարար մտաց ըստ կամացն Աստուծոյ, զի շահեսցին զաւգտակարն անձանց:

3 Եւ ետ դաստիարակս երկուս, զաւետիսն եւ զսպառնալիսն: 4 Եւ վարդապետս յաւրինեաց զհոգեւոր աւրէնսն խրատուն կենաց, որ յիւրմէ կանուխ գիտութենէն ծածկեալ անձնիշխան կամացն բոյսք: 5 Այլ զի որ ի լաւագոյնսն հնազանդեցաւ մտերիմ հաւանութեամբ Տեառն, փառաւք պսակեսցի: 6 Իսկ արհամարհողն եւ անհնազանդն եւ ապստամբեալն ի ճշմարտութենէ աւանդիցն՝ պարտաւորեալ պատուհասեսցի: 7 Եւ Արարչին բարերար կամք ոչ եթէ հակառակ ինչ էր իւր կանուխ գիտութեանն, այլ հաւան ըստ նախախնամական սիրոյն իւրոյ առ ի հաստատուն կալ ի բարին: 8 Եւ զպատիւ խոստացեալ աւետեացն արդարոցն յուշ առնէ միշտ. այլ եւ զպատիւս արհամարհողացն եւ անհնազանդիցն ի հոգեւոր աւրինացն: 9 Զի զամենեսեան զգուշացուցէ ի հնազանդութիւն պատուիրանին, զի մի՛ զրկեսցին ի վարձուցն հատուցման: 10 Այլ յորդորէ յաւգտակարսն, սակայն ոչ բառնայ զանձնիշխան կամս, թէպէտ եւ յառաջագէտ է: 11 Որպէս առ մանկուսն Իսահակայ, մինչդեռ յորովայնի մաւրն էին, ընտրութիւնս առնէ. զՅակոբ սիրէ, որ բարի բացայայտի, եւ զԵսաւ ատեայ, որ չար երեսիրէ:

12 Եթէ այդպէս է, զիա՞րդ չարն, ասեն, յառաջագայի, եւ ոչ բարին միշտ յառաջագայի: 13 Եթէ այդպէս էր, բառնայր պատիւ անձնիշխան կամացն, եւ կորնչէր ընդրութիւնք արդարոցն, եւ զրկեալ լինէին քաջքն յաղագս հանդիսի պսակացն եւ փառաւքն:

Պ՝ Յ՝Կ՝Ի՝ 10
Է՝ Կ՝Զ՝Գ՝ 4

Գ՝ Տ՝Կ՝Ծ՝Ի՝Ե՝:

14 Զի արքայութիւնն երկնից, *ասէ Տէրն*, աւար է, եւ բոռնմօ յափշտակեմ զնա^ա: 15 Զի առաքինասէրք վարուք եւ մեռեալք մեղացն փոխին որպէս ի մեռելոց ի կենդանիս՝ ի սրբութիւն եւ յարգարութիւն ըստ ճշմարտութեան Աւետարանին: 16 Զի մեղք՝ նոցա ոչ տիրեմ. զի ոչ եմ ընդ արիւնաւ, այլ ընդ շնորհաւ^բ: 17 Զի այլ պարգեւք ի Տեառնէ է որ ընդ շնորհաւք են, եւ այլ պատիւ եւ փառք որ առաքինութեամբն եւ քաջութեամբն են շահեալք. եւ այլ է որ ի գիւտից վայելէ՝ ի խոնարհութենէ պատկառանաց զգաստացեալ, եւ այլ է որ ի հանդէս առաքինութեան մրցին ըստ հարկեաց սխալանաց անձանց: 18 Զի զամենայն բարութիւնս գերկնաւորսն եւ գերկրաւորս որ փառաւքն եւ պարծանաւքն է՝ վայելեսցեն ի բարի տուողէն:

19 Սոյնպէս է իմանալ վասն հրեշտակաց եւ դիւաց, արդարոց եւ մեղաւորաց. զի նախ ընտրութիւն լինի ի մէջ քաջացն եւ վատացն, եւ ապա ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան զհատուցումն առնէ ըստ արդար դատաւորութեանն: 20 Զի քաջացն որպէս պարտս տայ զպատիւն, եւ վատացն որպէս ողորմութեամբ՝ որպէս շնորհս եւ պարգեւս ինչ: 21 Զի զաւրեմսն իբրեւ զբոլս եղ ի փորձէ, եւ նովաւ առնէ զընտրութիւն ի վեր եւ ի խոնարհ, եւ ըստ արժանեաց տայ զպատիժս եւ զպատիւ արդարոց եւ մեղաւորաց: 22 Զի հոգեւոր արէնքն կենդանարար են. զարդարասէրսն առաւելուն ի բարի գործս, եւ զպղերզսն զարթուցանեն յառաքինութիւն սպառնալեալք պատուհասիցն, եւ փառացն ցանկացող առնէ: 23 Ուստի հանդէսք լաւութեան կենացն նորոգին, եւ պսակեալ քաջութեամբ ըստ յաջողելոյն Աստուծոյ յաւետիս արդարոցն մտանիցեն:

24 Արդարքն են որ զարժանն եւ զիրաւն առնեն, եւ ժառանգաւոր լինին վերին կոչմանն՝ որ ի կեանսն տանի. զի ըստ միոյ միոյ առաքինութեան՝ եւ պսակքն փառաց եւ գովութեան յաւրինին ի Տեառնէ: 25 Զի բազմապատիկ են տանջանք ճգնաւորացն, որ զբազմաշահ աւգուտսն ժողովեն ի խրատուէ կենարար աւրինացն Քրիստոսի. զի ամենայն ճշմարտութեամբ եղիցին որդիք լուսոյ Հաւրն երկնաւորի, եւ ժառանգակից Քրիստոսի: 26 Որ իւր մտերիմ վաստակաւքն էառ զմեծութիւն անբաւ բարութեանցն, եւ պատուոյն եւ փառացն եւ արքայութեանն երկնից ժառանգաւոր: 27 Զի եկամուտ եղեւ անհնազանդութիւն, ի կամաց եւ ոչ ի հարկէ, հանդերձ ամենայն դժնդակութեամբք. եւ փշալից արար զամենայն անդս մտաց եւ անդամոցն՝ զմտաւորս եւ զբանաւորս բուսովք չարութեանն եւ սնտոի խաբէութեամբ բանսարկուին: 28 Վասն այնորիկ ի մշակութեան կացոյց զորդիսն ստուգութեան. զի բազում ճգնաւորական հանդիսիւք քաղիցեն զորոմն չարութեանն ի մտաց եւ ի մարմնոյ զբոյսս վնասակարս, զխաբէութիւն, զստութիւն, զհպարտութիւն, զազահոութիւն եւ զամենայն չար ցանկութիւնս հանդերձ ամենայն վնասակարաւք երեւելեալք եւ աներեւութիւք առ չարն հակամիտութիւն:

29 Այլ մարտ պատերազմի քաջացն ոչ միադիմի, այլ բազմադիմի է: 30 Նախ զի մի՛ հաղորդեսցի բանից խաբէիցն՝ ողորանաց եւ պատրանաց, որ զմիտսն եւ զանդամսն չարժէ ի վնասակար եւ յաղտեղի ցանկութիւնս: 31 Երկրորդ՝ զի մի՛ անկցի ի բուռն ամբարտաւանութեան, հպարտութեան եւ սնափառութեան. որ փակէ զմարմին եւ զհոգին ներքոյ կորստեան անհնարին չարեաւք: 32 Երրորդ՝ զխաբէութեանն եւ զստութեանն եւ զայլանդակութեան չարժմունս շիջուցանիցէ. ընդ նմին եւ զբարկութիւն եւ զանզգամութիւն եւ

^ա Հմմտ. Մատթ. ԺԼ 12:
^բ Հմմտ. Հուան. 9 14:
^գ Հմմտ. Իմաստ. Գ 6:

զատահակութիւն սանձեսցէ խոնարհ սրտիւ: 33 Չորրորդ՝ որ գտեսիլ շուայութեան եւ որկորստութեան գհետ շրջի շեղ- ջակուտեալս ցանկութեան գիջութեան, աստուածային ցանկութեամբն եւ պարկեշտութեամբ ազատանայ. ընդ նմին եւ գամենայն ցոփութիւնս եւ զգոռոզութիւնս յանձանց թալթափել, եւ գամենայն անաւգուտս որ ալէկոծեն գմիտս եւ զգգայութիւնս՝ յանձանց ի բաց ընկենուլ բարի յուսովն: 34 Հինգերորդ՝ որ ոչ վրիպէ եւ ոչ մոլորի եւ ոչ գայթակղի յերախտաւոր բարերար տեսչութենէն. որ հեռացուցանէ յերանութենէն, եւ ի մթազին արիւնքիւն ընկենու, ստերիւրեալ ի ճանապարհացն արդարութեան՝ որ տանի յաւթեւանս հանգստեան: 35 Վեցերորդ՝ երդմնահարութեան եւ յափշտակութեան եւ գրկանաց. որ արկանէ յամաւթ եւ ի տոյժս եւ ի տուգանս սպառնալեաւք. եւ առանց պատասխանուոյ է դատն եթէ ոչ զգաստասցի ի սոցանէ: 36 Եւթներորդ՝ որ զսրտմտութիւն բարկութեամբ շարժէ եւ խռովեալ պղտորէ գմերձաւորս, որ ի փորձանս խորհրդոց եւ բանից եւ գործոց. եթէ ոչ յաղթահարեսցի հեղութեամբն, արկանէ ի պատիժս յաւիտենից պատժոցն: 37 Ութերորդ՝ որ խոսութիւն եւ նախանձ եւ ատելութիւն. որ թէ ոչ ազատեսցի յայտոցիկ չարեաց, մահ անձին եւ այլոց ստանայ. զի քինայ եւ զչարի ի խորհուրդս զեղաւորս, եւ զթոյնս դառնութեան հեղու գորս¹ ատեն: 38 Իններորդ՝ որ զանհաւանութեան եւ գծուկութեան արմատս խլէ, որ մթերք են ամենայն չարեաց եւ պատճառք անգեղջ կորստեան եւ դրունք մահու հոգւոյ եւ մարմնոյ: 39 Տասներորդ՝ որ անխտրի է յամբարշտութիւնս եւ ի գարշելի արտս եւ յամենայն անաւրէնութիւնս. որ եթէ ոչ զգաստասնի յահ եւ յերկիւղ Տեառն

զղջմամբ, կորիցէ զյաւիտենական զկորուստն:

40 Այս են բոյսք չարութեան, զոր ժիր մշակքն քաղահան առնեն, եւ զբարի բոյսսն սնուցանեն ոռոգմամբ շնորհալից արտասուաւք եւ առաքինասէր վարուք:

41 Եւ յայտոսիկ է մարտն եւ յաղթութիւն քաջացն եւ առաքինեացն, որ վկայք են ճշմարտութեանն, եւ կենդանի մարտիրոսք սիրեցեալք ի Տեառնէ: 42 Զի սպանին զթշնամիս արդարութեան, եւ զնորոգումն կենացն, որ ի Քրիստոս եղեն՝ կեցին, եւ յոյս նոցա հաստատեալ կայ ընդ Քրիստոսի: 43 Ծջմարտեալ հաւատովք եւ հանդիսիւք առաքինութեամբն ի լաւագոյնսն միշտ կալ զաւրութեամբ Հաւրն ամենակալի եւ աւգնութեամբ Որդւոյն բարերարի եւ շնորհաւք Ամենասուրբ Հոգւոյն, միոյ Աստուածութեանն որ ապաւէն է յուսացելոց իւրոց:

44 Առաջին եւ նախ քան գամենեսին ճշմարիտ հաւատոցն հաստատութիւն որ ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգին Սուրբ՝ սիրով եւ յուսով: 45 Զի այսու վկայեցան առաջին սուրբքն. իմացան եւ ծանեան զառ ի նմանէ յաւրինուածս ամենայն արարածոց, եւ զնախանամութիւն սուրբ սիրոյն եւ զվստահութիւն յուսոյն որ առ Աստուած, որ ոչ երեւի:

46 Երկրորդ՝ լինել ճշմարիտ բանին քարոզութիւն առ գիւտս կորուսելոցն եւ առ պահպանութիւն գտելոցն: 47 Որով կարգին ընդ սուրբ հրեշտակս՝ որ առաքին ի սպասաւորութիւն որ ժառանգելոց են զփրկութիւնս եւ գերանութիւնս ի յոյս կենացն յաւիտենից:

48 Երրորդ՝ որ յստակ խորհրդովք աղբիւրանան ի բարեգործութիւնս՝ յորդորումն առ երախտիս ամենայն հեռաւորաց եւ մերձաւորաց. ոռոգել զանդս մտաց եւ մարմնոց հոգեւոր շահիւք եւ մարմնաւոր պիտոյիւք. եւ այնպէս բազմացուցանել

1 Միւսն՝ գոր սստեմ

զպտուղս արդարութեան արմտեացն ի վա-
յելումն անմահ կենացն:

49 Չորրորդ՝ որ զհաւանութեան եւ
զհնազանդութեան եւ զմիաբանութեան
զհանգամանս ունի յաւդիւ Հոգւոյն
Սրբոյ, ի միասին ժողովելով ի խաղաղու-
թիւն եւ ի փառաբանութիւն Աստուծոյ, եւ
զմիմեանս աւգտեցուցանել աննախանձ
աւգնականութեամբ, եւ յերանելի կեանսն
յուղարկել:

50 Հինգերորդ՝ որ անարատ եւ ամբիծ
յորդեռանդ Հոգեւոր սիրովն խնամէ զամե-
նեսեան ըստ իւրաքանչիւր պիտոյից:

51 Ձեռնտու լինել զրկելոց եւ վշտացելոց,
եւ եթէ այլ ինչ աղէտք իցեն որ պէտս ու-
նին աւգնականութեան Հոգւոյ եւ կամ
մարմնոյ. եւ այսպիսի երախտեալք մտեալ
ի ժառանգութիւն կենացն Քրիստոսի:

52 Վեցերորդ՝ որ լինին մատակա-
րարք ճշմարտութեան աւանդիցն՝ որ հա-
ւատացաւ նոցա յԱստուծոյ՝ Հոգեկանաց
եւ մարմնականաց. տալ ի ժամու զհոգեւո-
րական զաւգուտս եւ զմարմնական զպէտս,
եւ առնուլ զառհաւատչեայ երանութեանցն
զպարգեւս յարքայութեանն արդարոց:

53 Եւթներորդ՝ սրբութիւն եւ զգու-
շութիւն եւ պահպանութիւն ամենայն ա-
ռաքինութեանցն. արթուն եւ զուարթուն
կալ յամենայն զաղտածիք նետս չարին, ո-
րով սպան զանմեղս ի մեղս: 54 Ձի յամե-
նայնի ամրացեալք եւ յաղթեալք նորա
խորամանկութեանն՝ առցուք զպսակն ա-
նեղծութեան:

55 Ութերորդ՝ լինել խոնարհ սրտիւ եւ
հեզ բարուք եւ խաղաղարար առ ամենե-
սին՝ առ հեռաւորս եւ մերձաւորս, նմանել
Քրիստոսի հեզոյն եւ խոնարհին եւ խա-
ղաղարարին. զի հայեցեալք յառաջնորդն
հաւատոց՝՝ զհետ երթիցուք, եւ գտցուք

զանտի զհանգիստն ի խոնարհ եւ ի հեզ եւ
ի խաղաղարար սիրոյն:

56 Իններորդ՝ որ պարկեշտութեամբ
եւ համեստութեամբ բարեմտեալ ըստ ամե-
նայնի առաջնորդական խրատուն փրկու-
թեան եւ կենդանարար, հասանել ի դուռն
կենաց եւ մտանել ի յարկան յաւիտենից ի
հանգիստն, որ պատրաստեալ է ի փրկչէն
մերմէ ըստ իւրաքանչիւր վարուց:

57 Տասներորդ՝ Քրիստոսի փրկական
պատարագին լինել խորհրդածու եւ
խորհրդակից ըստ արժանաւորութեան
մաքրման հաղորդելով. աղաւթանուէր
պաղատանաւք եւ շնորհալից արտա-
սուաւք եւ ջերմեռանդ հոգւով եռացմամբ
սուրբ սիրոյն առլցեալ ի Քրիստոս, ընդ
երկնայինսն մերձենալ առ Աստուած եւ
անտի լուսաւորել զհոգի եւ զմարմին, եւ
բուռն հարկանել զկենացն յաւիտենից:

58 Եւ զերկնայինսն միշտ խոկասցի, եւ
զերկրաւորս արհամարհեսցէ, խորհրդակից
եւ գործակից ունելով միշտ զամենազաւր
տէրութիւնն. եւ մտերիմ կամաւք զանձն
անշարժ ունել ի ճշմարիտ վարս եւ յուղիղ
հաւատս. երախտաւոր սուրբ սիրովն յա-
ռաջանալ ի բարիսն, եւ զայս յորդորել ի
խոստացեալ բարիսն եւ ի կեանսն:

59 Այս են քաջացն եւ առաքինեացն
հանդէսք, որ ի վերին կայանսն տանի. եւ
լսեն յամենեցունց Տեառնէն, ով ծառայք
բարեգործք եւ հաւատարիմք, որով ի սա-
կաւուղ հաւատարիմ եղեայք յերկրի աստ,
ի վերայ բազմաց կացուցից զձեզ ի
մշտնջենաւոր կեանսն. եկայք մտէք յուրա-
խութիւն Տեառնն ձերոյ յանվախեան երա-
նութիւնսն՝ որ պատրաստեցաւ ձեզք:

60 Այսպիսի խրատու լինել աշակերտ
եւ խորհրդակից, եւ մերկանալ զգրաւսանս
աշխարհիս եւ զհոգս սնոտիս, եւ զգեհուլ
զհոգեւոր ազատութեանն լուսաւոր

՝ Լճմբ. Եթր. ԺԻ՝ 2:

՞ Լճմբ. Մարթ. ԻԵ՝ 34:

զգեստն՝ որ յառաքինութենէ կազմի անհամեմատ լուսովն: 61 Եւ հանապազաւր քննող լինել խորհրդոց եւ բանից եւ գործոց. եթէ ստունգանեալ իցէ, ուղղեսցի լաւագոյն խրատու աստուածային գրոց ի ձեռն զղջման. Զի գոր ինչ աստի ի սիրտս ձեր, յանկողինս ձեր զղջացարուք. եւ մատուցէք պատարագս արդարութեան եւ յուսացարուք ի Տէր՝ որ արդարացուցանէ: 62 Զի փառաւորք են ի վարդապետաց որք առնեն զայս եւ ուսուցանեն ի նոյն ինքն ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգին Սուրբ, Որում փառք այժմ եւ յաւիտեանս. ամէն:

ԺԹ՝

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՁԻ ՅՈՐԴՈՐՈՒՄՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԽՈՍՏՈՎԱՆԵԱԼ

1 Մեծ են յարգանք հրամանաց Տեսուն եւ անբաւ շնորհք բարերարին Աստուծոյ. զի գորս յառաջն ցամաչէր, զնոսին եւ կոչեաց ի յոյս կենացն անվախնանից, եւ արդարացոյց եւ փառաւորս արարէ: 2 Որ հաւատով եւ երկիրւղիւ պահեցին զպատուիրանս նորա, եւ հնազանդեցան ընդ ամենախնամ սուրբ սիրոյ նորա, եւ ընկալան զբանն կենաց յանձինս իւրեանց, եւ եղեն պտղաբերք եւ աճեցունք առաքինութեան վաստակովքն, որոց վարձքն կան եւ մնան ի հանդերձեալ կեանսն: 3 Իսկ ծուլիցն եւ անհնազանդիցն որք արհամարհեցին զբանն ճշմարտութեան, եւ խափանեցին զպտուղս արդարութեան, եւ ընկալեալ զչարաչար սերմանս ի թշնամւոյն՝ եւ եղեն մեղաւորք ճշմարտութեանն աւանդից եւ խնամակալ սիրոյն՝ մոլորեալք յուղիղ ճանապարհացն, որոց կատարածն ի կորստեան վիհս ընկենու:

4 Սակայն բարերարին Աստուծոյ բարերար խնամքն ոչ անտես առնէ որք դառ-

նան առ Նա. բանայ զդրունս ողորմութեան շնորհացն, եւ ընդունի զթուլթեամբ երախտաւոր սուրբ սիրովն, եւ յանձանձէ զապաւինեալսն ի նորա զթուլթիւնսն: 5 Եւ ի ձեռն ճշմարիտ խոստովանութեան, եւ խոնարհեալ եւ բեկեալ սրտին ի զղջումն սգաւորի՝ զթայ ի նա եւ ողորմի եւ այցելու լինի Փրկիչն: 6 Զի զծածկեալ մաղձն դառնութեան ի բաց փսիւեաց. եւ եցոյց՝ եթէ զմեղս ատեցի եւ անարգեցի, եւ զաւրեմս քն սիրեցի՞՝ զառողջութեան եւ զսրբութեան եւ զարդարութեան: 7 Եւ ըստ ունակութեան ցաւոցն ի մարդասէր բժշկէն զառողջութեան դեղս ընկալցի՝ զարդարութեանն վարս, որ ընդդէմ մեղացն եւ դժնդակ ցաւոցն զոր ունէր. զի այլ մի՛ եւս անկանիցի ի նոյն, եւ այլ ոչ եւս գտցէ զմարդասէր բժիշկն:

8 Զի կոչէ բանն Տեսուն զծանրաբեռնեալսն խոստովանութեամբ յապաշխարութիւն. զխաւարեալսն մեղաւք ի լոյս արդարութեան. զմոլորեալսն ի գիտութիւն ճշմարտութեան, եւ զվրիպեալսն ի ճանապարհացն արդարութեան ածել յուղղութիւն. եւ զմահաբեր վարս ի կեանս վերստին նորոգել խոստովանութեամբ, լուծանել զամենայն խարդախութիւնս սատանայի: 9 Զի զամենայն մարդ կամի զի կեցցեն, ասէ առաքեալ, եւ ի գիտութիւնն նշմարտութեան հասանել ամենագիւտ սիրոյն տեսչութեամբք:

10 Զի խոստովանութիւն, ասէ մարգարէն, մեծվայելչութիւն է առաջի Աստուծոյ եւ քահանայից նորա. զի Ասացից, եթէ պատմեցից յինէն զմեղս իմ, եւ դու թողցես զամենայն ամբարշտութիւնս մեղաց իմոցէ: 11 Զի զվէրսն բանայ եւ զցաւսն յայտնէ, եւ զդեղ բժշկութեանն ի վերայ ածէ զղջմամբ զապաշխարութիւնն

Պատմ. Գ. 5-7

Է Վեպ. Վեպ. Բ. 29:

Գ Վեպ. Ստգ. ՆժԲ 113

Դ Վեպ. Բ Պեպ. Գ. 9. Ե ՏԵՎ. Բ 4

Ե Ստգ. Լ Ե 5

եռանդամամբ հոգևոյն ի հանապազորդ արտասուլից աղաւթսն անդադար ի տուէ եւ ի գիշերի. եւ ողորմ կերպարանս ստանալ ճնշելով զմարմինն պահովք, զի զԱստուած խոնարհեցուցէ ի գութ բազմախնամ շնորհաւք առ ի թողութիւն մեղաց: 12 Զի ապաշխարութիւն ոչ միով իւրիք կարգի, այլ բազում իրաւք շինի. եւ ի մի հասակ արդարութեան կանգնի անկեալն եւ աւարեալն:

13 Զի նախ առաջին՝ զղջանալ եւ խոստովան լինել զյանցանս, եւ արտասուաց ընդունարան առնել զանձն յապաշխարութեան ժամանակս անդադար աղաւթիւք եւ տքնութեամբ եւ միշտ պահովք, եւ մեծաւ ապաշաւանաւք սգալ զյանցանս գործեցեալս հանապազ: 14 Երկրորդ՝ զի ատեսցէ զմեղս եւ զգործակիցսն մեղաց ըստ ամենայն վնասուցն. եւ կշտամբել զմիտս եւ զգալութիւնս որք ի չարն հակամիտեցին, եւ ոչ պահեցին զհոգեւոր աւրէնսն՝ որ նոցա աւանդեցաւ յարարէն: 15 Երրորդ՝ սիրել զարդարս եւ զառաքինիս, եւ գործակիցս իւր արասցէ զնոսա աղաւթիւք առ Աստուած, եւ յամենայն գործս բարութեան յորդորիչս ի ճշմարտութեան աւանդս կարգաց: 16 Չորրորդ՝ զի ի յանցաւորաց անտի խորշեսցէ մտաւք եւ բանիւ եւ ամաւթով եւ տեսութեամբ պատկառ. լաւ համարել զնեղութիւն կրել ընդ արդարս, քան զհանգիստն ընդ անիրաւս: 17 Հինգերորդ՝ յահ եւ յերկիւղ Տեառն կրթել, եւ չթողուլ ի մտաց զաւր վախճանին, այլ եւ զպատիժս մեղաւորաց. եւ մեռուցանել զանդամսն կարեաւքն եւ ցանկութեամբքն: 18 Վեցերորդ՝ ի տուէ եւ ի գիշերի հսկել վասն փրկութեան անձին եթէ ո՛րպէս կարասցէ լուծանել զմեղս, եւ ապրել ի բարկութենէն որ գալոցն է ի վերայ անապաշխարիցն: 19 Եաւթներորդ՝ զի մի՛ մոռասցի զբեկումն անձին իւրոյ եւ պղերգասցի ի բարեպաշտութեան ճգանցն եւ դարձցի ի նոյն վնաս, եւ վերստին ոչ

կարասցէ բժշկել: 20 Ութերորդ՝ զի առողջացեալ զգաստացեալ սրբեալ, իմասցի զներքին մարդն եւ զարտաքին եւ զյիշատակս խոստացեալ աւետեացն ստոյգ ապաշխարողացն: 21 Իններորդ՝ զամենայն հրամայեալսն արարեալ ըստ հոգեւոր աւրինացն եւ Աւետարանին Քրիստոսի, եւ ակն ունել վերստին նորոգման ի ձեռն քաւութեան պատարագին: 22 Տասներորդ՝ առաւելեալ յամենայն բարեգործութիւնս երեւելեաւք եւ աներեւութիւք, եւ զսպիս մեղացն ջնջել զհոգևոյ եւ զմարմնոյ, եւ յաղթող երեւել ի հանդիսի ապաշխարութեանն՝ կարասցէ համարձակել ի մեղսաքաւիչ խորհուրդն կենդանարար, եւ լինել հաղորդակիցս եւ մարմնակիցս եւ կցորդս անճառելեացն: 23 Եւ յայսմհետէ զվերինն խորհել, ուր Քրիստոս նստի եւ սուրբք ընդ նմա առհաւատչեայ երանութեանն:

24 Եւ ստոյգ խոստովանողք եւ ապաշխարողք ազատեալք փրկաւէտ մարմնով եւ արեամբն Քրիստոսի. զի նա է յոյս մեր եւ առիթ քաւութեան, եւ Նովալ լինի ազատութիւն եւ մոլտ յուրախութիւն եւ ի ժառանգութիւն արդարոցն երախտեաւք Քրիստոսի սուրբ սիրոյն, որ արդարացուցանէ զմեղաւորս՝ որ ապաշխարեսցեն: 25 Զի որպէս սուր որ հատանէ զմարմինն եւ վտանգէ զանձն, եւ կարաւտանայ բժշկի, որ զիջուցանէ զվտանգսն դեղովք ոմամբք յառողջութիւն, այսպէս դեղովք ապաշխարութեան զհարուածս ցանկութեան եւ զաղտեղի յիշատակս ջերմեռանդ արտասուաւք լուանալ զվէրսն եւ բժշկել անարատ սրբութեամբ: 26 Զի արտասուաց դրունք են վիշտք նեղութեանց եւ ախտից ինչ ցաւք, վնասուց կսկիծք, հոգևոց տագնապք, վրէպք աւգտից, պատահարք թշուառութեանց, վտանգք ի բռնաւորաց, տնանկութիւն յանկարծահաս, կորուստ սիրելեաց, ցաւք պէսպէս դժնդակաց անբմբերելի, եւ որ այլ ինչ սոցին նմանեալ: 27 Իսկ հոգևոյն շարժմունք յայսոյն չա-

րութենէ՛ յափշտակեալ յանխտիր ցանկութիւնս՝ վշտացուցանէ՛ զմիտս ի դժնդակ խորհուրդս ապախտաւորս, որ ոչ ունի զկայանս արդարութեան:

28 Վասն այսորիկ պիտոյ է պաղատանս արտասուելից առ Փրկիչն, զի զերծուցէ՛ յայնքան վնասուց: 29 Եւ իմանալեաւք ընդ վրէժխնդրութիւն նոցա նայել, եւ ի վայր կործանել զինուք առաքինութեան զնոսա, եւ զաւրավիգ ունել զապաւէն կենացն մերոց զՔրիստոս Յիսուս. եւ աստէն զայցելութիւնն առնուլ բարեացն ցանկութեամբք, գութ առ ընտանիս հաւատոց, անձուկ հեռաւորաց սիրողաց Աստուծոյ, ծարաւ մտերմութեան գիւտից հոգեւորաց, փափաքումն առ սուրբս, քարոզ խաղաղութեան, խոկումն խոնարհութեան, քաղցրալից բարբառք խրատուց՝ որ զկարծրացեալ միտս շարժէ ի յորդորումն առաքինութեան: 30 Զամենեսեան աւգտեցուցանել առ խնամս սիրոյ փրկութեան, եւ առ աւգուտս ի լրումն¹ հոգեւորացն, եւ ի շահս բարեաց վայելից, եւ ի համբերութիւն ի նեղութեան՝ վայելել ի պարգեւս շնորհաց, որ տայ ի յստակ աղբերէն կենաց: 31 Վասն որոյ աղաւթք եւ խնդրուածք մտերմութեամբ ի բոլոր սրտէ՛ տանի ի նաւահանգիստն շնորհաւք:

32 Եւ ճնշեալ զմիտսն ի զղջումն արտասուաց յիշատակս աւետեաց խնամալից պաղատանաւք եռանդնասէր խանդաղատանաւք հեղուլ զարտասուս շնորհալիցս առ ի մաքրութիւն մտաց եւ մարմնոց, որ զանմաքրութիւն ստացեալ ունէին զչար եւ զաղտեղի ցանկութիւնս: 33 Զի արտասուք զմեղացն հարուածոց դառնութիւն սրբեն եւ ողջացուցանեն, եւ զխոտանն ի բաց ընկենուն ի մտաց եւ ի զգայութեանց. եւ լինի ընդ հովանեաւ նախախնամական սիրոյ Փրկչին, եւ առնու յուսով զմխիթարութիւն: 34 Արտասուք շարժեն զմիտսն

առ Աստուած, եւ զարթուցանեն յափշտութենէ՛ մեղացն որպէս ի քնոյ, եւ վառեն ի զգուշութիւն զգաստութեան շահաւորն աւգտից սիրով: 35 Արտասուք արբուցանեն զհոգեւոր ըմպելին ի խնամս սուրբ սիրոյն ի գութ յիշատակաց բարերարին տեսչութեան քաղցր կամացն ի շնորհալից աղբերէն բղխեալ յազատութիւն եւ ի ժառանգութիւն կենդանարար յուսոյն յաւիտենից:

36 Այսչափ շահք աւգտից ի զղջմանէ արտասուաց. որ շարժեն զբարս հոսանուտս ի գիւտս փրկութեան եւ ի պահպանութիւն Աստուծոյ կամացն, եւ զմիտս ամփոփեն ի հաճոյս Աստուծոյ: 37 Եւ որքան ի յայսցանէ շահք բարեաց, այնքան առաւել վնասք ի ծուլութենէ՛ եւ յարհամարհանաց զարտաւսր՝ որ ի խորութենէ սրտի յառաջագայի, եւ ի պղերգութենէ արգելեալ՝ դժնդակացն լինի մուտք ի չարին ազղմանէ. եւ շարժեն զմիտս եւ զանդամս ի յանխտիր չարիս. եւ ելք զղջման եւ արտասուաց ի ծուլութենէ՛ եւ ի խստացեալ ամբարտաւան սրտէ, որ քամահէ զգեղջ շնորհացն եւ ոչ հոգայ վասն այնր որ զրկեցաւն: 38 Եւ ընդունի փոխանակ բարեացն զչար զարհամարհութիւն, զամբարտաւանութիւն, զապիրատութիւն, զյամառութիւն, զամբարշտութիւն, զսնափառութիւն, զագահութիւն, զորկորստութիւն, զցանկութիւն, եւ որ այլ եւս են մուտք չարին: 39 Եւ որ յայսոսիկ ըմբռնեալ է, դժուարաւ բժշկելի է:

40 Բայց ոչ անյոյս առնէ մարդասիրութեան բանն որ զղջանան եւ զան ի հնազանդութիւն ահիւն Աստուծոյ, եւ ընդդէմ չափեն մեղացն զուղղութիւնն, անիրաւութեանն զիրաւունս, անսրբութեանն զսրբութիւն, ամբարտաւանութեանն զխոնարհութիւնն, բարկութեանն զհեղութիւն, որովայնամոլութեանն զպարկեշտութիւն,

1 Միւսն՝ ի շարժումն

2 Միւսն՝ յափշտակութենէ

հեղգութեանն զպնդութիւն, ստութեանն զճշմարտութիւն միշտ. անհնազանդութեանն զհնազանդութիւն, ազահութեանն զչափաւորութիւն, կեղծաւորութեանն զպարզամտութիւն, երդմնահարութեանն զչերդնուլն, մախանացն զբարերարութիւն, որսութեանն զանորսակալութիւն, խստութեանն զքաղցրութիւն, ատելութեանն զսուրբ սէրն միշտ. անզղջութեանն զզղջումն արտասուաց, անխոստովանութեանն անխղճի զխոստովանութիւն խղճի մեղացն, անյուսութեանն զյոյսն ուղիղ, թերահաւատութեանն զուղեղ հաւատս յանձին հաստատել եւ այլոց քարոզել զճշմարտութիւնն:

41 Այս է ստոյգ ականդիցն դէմք ապաշխարութեան. ամենայն որ ինչ հակառակ է մեղացն՝ առնել զարդարութիւնսն ամենայն որ երեւին եւ որ ոչն երեւին ի խորհուրդս մտերիմս եւ ի յիշատակս ակետեացն ստոյգ ապաշխարողացն, եւ դարձեալ ի սպառնալեաց անապաշխարողացն յամենեցունց Տեառնէն: 42 Յայտասիկ զգուշանալ եւ ի պատրաստի ունել զհաճոյսն Աստուծոյ ահիւն Տեառն, յիշատակաւք անվրէպ գիտութեանն Աստուծոյ համարս առնելոյ արդար դատաւորին յաւուրն դատաստանի, յորում ոչ ինչ ծածկի ի խորհրդոց եւ ի բանից եւ ի գործոց:

43 Ձի ընտրութիւնք են առաքինեաց եւ պղերգացն, հաւատացելոց եւ անհաւատից եւ ըստ արժանեացն հատուցմունք: 44 Պատիւք եւ մեծարանք եւ երանութիւնք յաղթողացն են՝ որք մարտեան ընդդէմ մեղացն եւ հակառակորդին, եւ յաղթեցին եւ պսակեալ փառաւորին. եւ դարձեալ որք ստոյգ ապաշխարեցին զվնասս իւրեանց: 45 Իսկ ահաւոր սպառնալիք տանջանացն պաշարէ զանիրաւսն եւ զամբարիչսն ի տոչորումն պատժոց, որ ոչ անկան յապաշխարութիւն: 46 Եւ զխոնարհեալսն եւ զնուաճեալսն ընդ կարգաց ապաշխարութեանն ընդունի յաւթե-

ւանս կենացն ըստ արժանաւորութեան մաքրմանն ըստ բազում ողորմութեանն իւրոյ: 47 Ձի նեղեալն եւ վտանգեալն արտասուաւք եւ բարի շարժամբք յողորմութիւն դարձուցանեն յաղագս սխալանաց ինչ այսպէս զմարդասէր Տէրն:

48 Եւ որպէս տղայքն որ ոչ գիտեն բառիւք զպէտս ի մարցն խնամոցն առնուլ, այլ արտասուաւք զպիտոյսն խնդրեն եւ առնուն ի խնամոց սիրոյն, զի ոչ դադարեն ի լալոյ մինչեւ ամենայն խնամք ի մարցն կատարի՝ ապա դադարէ եւ զուարճանայ եւ հանգչի, այսպէս պարտ է մեզ լինել առ բարեգութ Տէրն, որ խնամէ զմեզ յաներեւոյթս արարչական սիրովն. որ նստի յանարուեստ աթոռս, եւ բարերարութեամբն իւրով խնամէ զարարածս. որ ի ձեռն նախահարցն ծանոյց զաստուածգիտութիւն, եւ ի ձեռն մարգարէից եցոյց զապաշխարութեան հանգամանս՝ որք դառնան: 49 Իսկ ի գալստեանն իւրում եբաց զդուռն ողորմութեան եւ ասէ. ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն խոստովանութեամբ արարչական խնամակալ սիրովն: 50 Ձի փութացեալք ի կոչումն ակետեացն՝ առցուք զպարգեւս ի շնորհողէն ապաշխարութեամբն զքաւութիւն. որ յաներեւոյթսն զհոգիսն բժշկէ, եւ յերեւելիս զգալարանս:

51 Ձի նախ յաւազանէն է թողութիւն հաւատացելոց յԱմենասուրբ Երրորդութիւնն ճշմարիտ խոստովանութեամբ: 52 Ձի ասէ ցաշակերտսն. երթեալ մկրտեցեմ, ասէ, զհաւատացեալս յանուն Հաւր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. եւ ուսուցեմ պահել զամենայն պատուիրեալսն ի Քրիստոսէ՝: 53 Ձի որք ի Քրիստոս մկրտեցան, զՔրիստոս զգեցան, եւ եղեն որդիք լուսոյ եւ ժառանգք արքայութեանն վերստին ծննդեամբէ: 54 Ձի շնորհաւք լինին որդիք

“ Հմբ. Մարտ. ԻԸ 19-20:
 † Տէ՛ս Գ. աշ. Գ. 27:

տուրնջեան, ի գիշերային ծննդենէն ազատեալք յիշխանութենէ խաւարի, եւ լուսաւոր վարուք կեալ յերկրիս աւգնականութեամբ Բարերարին: 55 Եւ ըստ արուեստից նորին շնորհաց զհեռաւորս մերձաւորս առնելով եւ զաւտարացեալսն ընտանեցուցանել ճշմարտեալ հաւատով եւ անբիծ սիրով: 56 Եւ զըմբռնեալսն ի սատանայէ ի մեղս եւ վասն մեղացն ի մահ՝ արդարացուցանէ եւ կենազործէ եւ հրաւիրէ յիւր արքայութիւնն եւ ի փառսն զոր պատրաստեաց սիրողաց:

57 Դարձեալ եւ յաղագս մեղուցելոց եւ զպարգեւս ապաշխարութեանն եցոյց եւ յայտնի արար առաջնովքն: 58 Որպէս զԴաւթայ լսեմք մեղուցեալ, եւ խոստովանեալ դարձեալ եւ ապաշխարեալ. որ լայր զամենայն գիշերն եւ զըմպելին արտասուաւք խառնէր վասն բարկութեանն Տեառն. յորոյ աչացն վտակք արտասուաց հոսէին առ ի չպահելն զպատուիրանն Տեառն. որ զցանկացող աչսն մաշէր յարտասուս եւ սրբէր ի մեղաց: 59 Եւ զՊետրոս ի նորոյս է իմանալ, որ ուրացաւ եւ ոչ յիշեաց զյառաջագոյն ասելն Տեառն. մինչեւ հայելովն յուշ գայ ի հաւուցն ձայնն. եւ ելեալ, ասէ, արտաքս՝ ելաց դառնապէս^{***}: 60 Եւ յաղագս ջերմ արտասուացն եգիտ զթողութիւն. եւ առաքելական շնորհքն անդէն մնացին, որպէս Դաւթի մարգարէականն: 61 Թողում ասել եւ գայլ եւս զհնոյն եւ զնորոցս մեղուցեալս եւ ապաշխարեալս որպէս ասեն աստուածային գիրք, որք ցուցանեն զաւրինակս զստոյգ ապաշխարութեան:

62 Եւ այսպէս ոչ փակի դուռն կենաց ապաշխարութեան մինչեւ ի վախճան աշխարհի: 63 Զի զհանապազորդ սխալանսն հանապազորդ արտասուաւք աւագանին լուանալ եւ սրբել. եւ զի հանապազաւր մեղանչեմք՝ որ խորհրդով, որ բանիւ, որ

լսելով, որ տեսանելով, որ շարժամբ իւրիք այսոքիկ, հանապազորդ աղաւթք եւ լուացք արտասուաց մի՛ պակասեսցէ:

64 Զի որ կտակաւն են մեղք, այսինքն ընդ կանոնաւք, այնոցիկ ժամանակք որոշեն եւ զատուցանեն յեկեղեցւոյ եւ ի ժողովրդենէ եւ ի սեղանոյ. զի ըստ մեծի վնասուցն եւ մեծ ջանք եւ աշխատութիւնք պիտոյանան: 65 Եւ որոց նուազ ունին սխալանսն, եւ բժշկութիւնս արտասուաւք սրբել: 66 Իսկ որ ի խորութեան սրտին է աղտ ապականեալ անդամաւք, անդ վտակք արտասուաց եւ հուր եւ եռացումն հոգւոյ պիտոյանան. որ սրբէ եւ հալէ եւ ի բաց մերժէ: 67 Եւ որ փոքր ինչ սխալանս ունի ակամայ վրիպեալ, զղջանալ եւ յոգւոց հանել եւ արտասուաւք անդէն իսկ սրբել:

68 Այլ որ սաստիկ ունի զվէրս մեղաց եւ կամաւ ըմբռնեալ, որ կանոնաւ ունի զանուն եւ զկարգ, որ ի Տեառնէ, ունի զհանգամանս սպառնալեաց. բազում ջանք եւ ջերմեռանդ¹ արտասուք եւ բեկումն սրտի եւ որոշումն ժամանակաց ըստ յանցանացն ի ներքս բերիցէ առ ի լուծանել զդժնդակ ձմեռն խստութեան մեղացն: 69 Զի գարունն հոգեւոր երեւեսցի ի շնչել հարաւոյ ջերմութեան հոգւոյն. եւ ի վերուստ սաստիկ անձրեւով զհոսանս արտասուաց. նոր երկիր զբոյսս եւ զծաղիկս բացայայտէ, եւ տունկք զսաղարթս եւ զպտուղս առ ի վայելս թագաւորաց եւ ռամկաց, որովք զուարճանան: 70 Սոյնպէս եւ որ ջերմութեամբ հոգւոյն զհոսանս արտասուացն հեղու եւ լուծանէ զկապանս ձմեռնային մեղացն, արձակին բոյսք առաքինութեանն եւ պտուղք արդարութեան տնկոյն. որով ուրախանան երկնաւորք եւ երկրաւորք ի փառս Աստուծոյ:

71 Զի այսպիսի միտս եւ բարս պարտ է ստանալ ապաշխարողաց. զի ազատես-

^{***} Տէ՛ս Մատթ. Ի, 9: 75:

¹ Միւսն՝ ջերմութեան արտասուաց

ցին ի պարտեաց հարուածոց գեհնին ան-
չէջ հրոյն եւ անմահ որդանն: 72 Եւ
ճշմարտեալ ստոյգ ապաշխարութեամբ
արտասուաց աւագանաւն ժառանգաւորք
արքայութեանն եղիցին, զգեցեալ զպատ-
մուծան սրբութեան լուսոյն ճառագայ-
թեալ առաքինութեանն հանդիսիւք, պսա-
կեալ եւ վայելեալ յանվախճան երանու-
թիւնսն ընդ սուրբս:

73 Զի ապաշխարութիւն է սոգտա-
նելն զինքն եւ հրաժարել ի վնասակարացն
եւ ի չար ցանկութեանցն: 74 Եւ փոխա-
նակ միոյ միոյ չարեացն զարդարութիւնն
ընդդէմ դնել, զի խափանեցէ զմեղսն, եւ
զարդարութիւնսն աճեցուցէ սուրբ սիրով
եւ արտասուելից աղաւթիւք, եւ պահովք
ցամաքեցուցէ զպղտորեալ զանժոյժ
բղխումն գիշութեան՝ որ ապականութիւն
է յանդամսն: 75 Զի ջուրք աղբերաց եւ
սրսկմունք անձրեաց զերեւելի հուր շի-
ջուցանեն. իսկ առ Աստուած սէրն եւ
ջերմեռանդ արտասուք զհուր ցանկու-
թեանն շիջուցանեն, եւ խափանեն զկամս
մարմնոյ, զինքնագործութեան շաւշա-
փելեաւք զաղտեղի շարժմանցն զհոս-
մունս. եւ այլ մի եւս մերձենալ ի նոյն
զարշութիւնս խափից, այլ մաքուր մտաւք
զմաքրութիւն ստանալ: 76 Զի մի՛ սպառ-
նացեալ պատուհասն անսրբութեան ի վե-
րայ հասանիցէ յաւուր, յորում ոչ գիտիցէ,
եւ ի ժամու յորում կարծիցէ, եւ տայցէ
վրէժս ըստ վնասուցն:

77 Այլ սիրել զսրբութիւն ի Տէր որ ի
սուրբս բնակէ: 78 Եւ զանսրբոցն ասէ.
Որդն նոցա ոչ մեռանի, եւ հուրն ոչ շիջա-
նի. եւ եղիցին տեսիլ ամենայն մտեղեաց՝:
79 Եւ զամենայն արկուածս մեղաց ի
մտաց եւ ի մարմնոյ ի բաց թաւթափել.
մինչ զի կարասցէ ասել, գայ իշխան աշ-
խարհիս այսորիկ մեղասաւեր, եւ յիս ինչ ոչ

գտանէ զմեղացն նշխար՞. այլ Քրիստոս
ըստ Աւետարանին կենաց՝ որ վերստին
նորոգեաց ստոյգ խոստովանութեամբ եւ
արտասուաւք ապաշխարութեամբ եւ գթով
տնանկաց հանդերձ ամենայն առաքինա-
սէր վարուք յարդարեալ ի հաճոյսն Աս-
տուծոյ: 80 Եւ մշակք լինել այգւոյն
ճշմարտութեան ի սկզբան հաւատոց եւ
ուղիղ վարուց, որով կայ ի վերայ երկրի եւ
առաքինանայ: 81 Եւ ելանելով յաշխար-
հէս՝ ընդ իւր տանի զարդարութիւնսն ա-
մենայն, զտղայութեան անմեղութիւնն,
զմանկութեան անարատութիւնն, զերիտա-
սարդութեան անբծութիւնն, զձերութեան
զմաքրութիւնն, զլիսաւորելով ըստ իւրա-
քանչիւր հասակացն զամենայն առաքի-
նութիւն, եւ զվարձս առցեն ըստ իւրա-
քանչիւր վաստակոց յամենեցունց Տեառ-
նէն գործողաց այգւոյն հաւատացելոյ ըստ
ժամանակացն փոփոխմանց: 82 Աւժան-
դակ լիեալ առ վերին կոչումն, ուր Քրիս-
տոս նստի ընդ աջմէ Աստուծոյ՞ յերուսա-
ղէմն վերին՝ որ է մայր մեր ամենեցուն.
ուր եւ յառաջագոյն գանձք առաքինու-
թեանն բարեաց ամբարեցան. ուր յոյսն
մեր է հաստատեալ՝ անմահ երանու-
թիւնքն, անսպառ վայելչութիւնքն, ան-
վախճան ուրախութիւնն, անգեղջ բարու-
թիւնքն ի վայելումն Քրիստոսի: 83 Միահաւան
խնդութիւն երկնաւորաց եւ երկրաւորաց
երանութիւն ի փառս Քրիստոսի գործակցու-
թեամբ բարերար ե-
րախտեաւք սուրբ սիրոյն: 84 Որ մատոյց
է յորդէգրութիւն Հաւր եւ ի խնամս Սուրբ
Հոգւոյն եւ ի ժառանգութիւն արքայու-
թեան իւրոյ: 85 Որ աստ արդարացոյց, եւ
անդ թագ ի գլուխ պսակեալ փառաւորէ
յաստուածեղէն խրախճանութիւնսն, հա-
նապազորդ ի հրճուանս յանսպառ բարիսն
Ամենասուրբ Երրորդութեանն: 86 Զի նմա

՞ Հմտ. Յով. ԺՊ. 30:

՞ Կղ. Գ. 1

վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ի

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ
ԱՌԱՋՆՈՐԳՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՐՈՒԵՍ
ԽՐԱՏՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔ ԳԻՏՈՒԹԵԱՆ
ԵՒ ԻՄԱՍՏԻՑ

1 Որպիսի գոհուցիւն եւ աւրհանուցիւն
եւ փառս տալ արժան է Ամենակալ Տէրու-
թեանն ամենառատ բարերարութեանն. որ
ոչ թողու ի խնամակալ սիրոյն իւրոյ, այլ
յանձանձէ եւ աղբիւրաբար բաշխէ
զչնորհս յարարածս իւր: 2 Նախ զի իշխան
կացոյց եւ տէր ի վերայ երկրի, որ ընդ իշ-
խանութեամբ են վերնոցն. զի ծանիցուք
զնորա խնամս արարչական սիրոյն, եւ ա-
շակերտեալ նորա պատուիրանին՝ կատա-
րեսցուք զարդարութիւնսն ամենայն, եւ
առցուք զհատուցումն բարի ի ժամանակի
այցելութեան. եւ ըստ ժամանակի՝ անա-
պականութեան վարուցն հետեւող լինել:

3 Որպէս ի սկզբանէ նախաստեղծին
կեանքն յարդարեցան ի Տեառնէ անմեղու-
թեամբ, զայն սուրբ սէրն հաստատել ի
մեզ: 4 Որպէս եւ Քրիստոս սիրեաց զմեզ,
եւ զանձն իւր մատոյց պատարագ ի հոտ
անուշից՝: 5 Որ բարկացուցաք զԱրարիչն,
զի ոչ պահեցաք զպատուիրանս նորա:
6 Զխնամս սիրոյն իւրոյ ոչ որպէս առ ե-
րախտաւորս եցոյց, այլ յապախտաւորս
որպէս Աստուծոյ վայել է: 7 Զի զբարիսն
զոր եցոյց մեզ Աստուած, ոչ ըստ մերում
արժանաւորութեան, այլ յաղթեալ յարար-
չական սուրբ եւ անբիծ սիրոյն՝ դարձաւ
յողորմութիւն: 8 Որ եւ ոչ իսկ փոխարէնս
խնդրէ ի մէնջ փոխանակ երախտեացն. այլ
կամի՝ զի կեցցուք արդարասէր, եւ ժա-
ռանգորդք լիցուք երկնից արքայու-
թեանն:

9 Զի նա է յոյս եւ կեանք մեր եւ աղ-
բիւր բարեաց: 10 Զի ոչ խնդրէ աղբիւր
ջուր, եւ ոչ արեգակն լոյս. այսպէս եւ Աս-
տուած տուող է բարեաց եւ ոչ առող ինչ
յաղագս մեծի բարերարութեանն իւրոյ եւ
անկարաւտ լիութեանն: 11 Այլ որ առ մի-
մեանս լինին երախտիք, զայն իւր համա-
րի, եւ ինքն առնէ զփոխարէնս յերկրի եւ
յերկինս որ կան եւ մնան: 12 Զի միմեանց
բարի առնել, փոխարէնս ի նմանէ առաքին
երեւելիք եւ աներեւոյթք: 13 Զի որպէս
արիւնն Արեւի առ Աստուած բողոքեաց, որ
սպանաւ ի Կայեմէ եւ պատժի¹ ի Տեառնէ՞
սոյնպէս բարի բողոք զԱստուած ի բարի
խնամս շարժէ բարեգործաց: 14 Զի որք ոչ
խնդրեմ զվրէժս ի զրկողաց, իմն առնու
վրէժս ըստ արդար դատաստանիմ². զի
ըստ արժանեացն է հատուցումն առ բարե-
գործսն եւ առ չարսն:

15 Եւ Աստուծոյ նմանել այս է, որ ա-
պերախտին երախտաւոր լինի, զկորու-
սեալսն խնդրելով, զգտեալսն պահել իւ-
րով աշխատութեամբ եւ ջանիւ: 16 Նմա-
նել Որդւոյն Աստուծոյ, որ ետ զանձն իւր
ի մահ վասն մեր, եւ կամաւոր չարչարա-
նաւքն ազատեաց ի ծառայութենէ մեղաց,
եւ բարեաց կենաց եւ աւետեաց զմեզ հրա-
ւիրեաց, եւ Հոգւոյն Սրբոյ ընդունելու-
թեան արժանի արար: 17 Եւ զամենակալ
Հաւրն զանհամեմատ զերանութիւնսն
խոստացաւ, զի միասնական Երրորդու-
թեանն միշտ հանցուք աւրհանութիւնս, որ
հանապազ ի բաց ունի զզրունս փրկու-
թեան կենաց հաւատացելոց, եւ ապաւէն
ամենեցուն որ կարդան առ Նա: 18 Եւ ա-
շակերտեալ առաջնորդական բանին՝ գոր-
ծակից լինել բարերար կամացն, եւ խորհել
զբարին եւ առնել, եւ ընուլ զհաճոյս Ա-
րարչին ի խնամս մերձաւորաց եւ հեռաւո-

¹ Հմմտ. Լեւիտ. Լ 2:

1 Մերմ՝ պատիժ

2 Տէ՛*ՆՆ*Գ:

3 Տէ՛*Ը Թէ*Ն*Գ 6:

րաց: 19 Ձի գփոխարէնան առցեն զբարեացն ըստ անմեղութեան սուրբ սիրովն. եւ ի նոյնս յառաջանալ ի լաւսն, եւ պատերազմել ընդդէմ մեղացն առաքինութեան հանդիսիւք. եւ ի բոլոր սրտէ ապաւինեալք ի խնամս մարդասիրութեանն, եւ խլել զամենայն բոյսս անաւրէնութեան ի մտաց եւ ի զգայութեանց հանդերձ ամենայն աղտեղի եւ չար ախտիւք: 20 Եւ ի բաց բառնալ զհպարտութիւն ի միջոյ, զգահսութիւն, զխորամանկութիւն, զբարկութիւն, զոխակալութիւն, զնենգութիւն, զստութիւն, զերդմնահարութիւն, զնախանձ, զորովայնամոլութիւն արբշուաց:

21 Ձայտոսիկ վնասակարութիւնս եւ որ սոցին նման են դժնդակութիւնք մեղաց սպառնալեալք յաւիտենական տանջանացն արտաքս հանել, եւ տնկել զբարեացն տունկսն ի միտս եւ ի վարս հանդերձ յարմարական առաքինութեամբքն եւ անարատ սրբութեամբ եւ ճշմարիտ հաւատով, խրախուսեալ յԱստուած յուսով աւետեացն խոստմամբք. զազատութեան արհաւատչեայ աստ առեալ, եւ հրաւիրեալ ի պատրաստեալ արքայութիւնն երկնից ի յոյսն կենդանեաց, ի բարութիւնսն անվախճան երանութեանցն, որ ոչ մտաւք իմանալի է եւ ոչ բանիւ ճառելի, որ անդէն երանութիւնքն:

22 Ձի որպէս մանկունք որ յորովայնի մարցն լինին յապաժոյժ, եւ ի խաւարի թաղեալ. եւ ոչ գիտեն գերկրիս վայելչութիւն, զարեգական պայծառութիւն, եւ զլուսնի եւ զաստեղաց եւ զժամանակաց եւ զամսոց շրջագայութիւն, եւ զբոլոսոց եւ զտնկոց պտղաբերութիւն, եւ ի վայելս կենդանեաց եւ որ այլ եւս անասնոց նախիրք եւ գազանաց եւ թռչնոց որ ի կերակուր եւ որք ի հնազանդութիւն են անկեալ, որք ի ցամաքի եւ որք ի ջուրս են ղուղակք՝ որ պատրաստեալ որոգայթիւք ըմբռնին յորսողաց, եւ որ այլ եւս իցեն վայելչութիւնք եւ պայծառութիւնք հան-

դերձից, եւ ոսկւոյ եւ արծաթոյ եւ ականց պատուականաց՝ որ ի զարդ մարդկան գործեցաւ եւ ի փառս թագաւորաց՝ յորս ուրախանան աշխարհասէրք, արդ որպէս ոչ գիտել մանկանցն զայս կեանս եւ ոչ նման է յորովայնի կենացն, սոյնպէս եւ ոչ մեզ իմանալ զհանդերձեալ կեանսն. եւ ոչ համեմատի այս լոյս եւ կեանք առ այնր կեանք եւ լուսաւորութիւն փառաց ամենազաւր տէրութեանն, զոր ակն ոչ ետես եւ ունկն ոչ լուաւ եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց զանվախճան երանութիւնսն ի Քրիստոս Յիսուս:

23 Նա եւ ոչ որ յաշխարհիս են նեղութիւնք եւ վիշտք եւ չարչարանք եւ տանջանք հրով եւ ջրով որպէս Սողոմայն եւ ջրհեղեղին, ոչ համեմատեն անշէջ հրոյն եւ յաւիտենական տանջանացն, որ պատրաստեալ է ամբարշտաց եւ մեղաւորաց:

24 Ձի Աստուած զմիտս եւ զզգայարանս գործի կենաց ստեղծեալ ամէնիմաստ կամաւք ի սրբութիւն, ի ճշմարտութիւն, յամենայն բարեգործութիւնս. եւ շահիւք բարեացն լցուցէ զանձն իւր եւ զայս, եւ ուրախ արասցէ զՏէրն. զի ի բերանոյն քարոզեսցի ճշմարտութիւն հաւատոց եւ անբիծ վարուց:

25 Ձի արթուն եւ զուարթուն պահեսցէ զինքն եւ զամենեսին զհաւանեալսն յողջախոհութիւն. եւ ասիւ եւ սուրբ սիրով կալ ի հնազանդութիւն հոգեւոր աւրինացն, որ ատել տայ զչարն եւ սիրել զբարին, որ քաղցր եւ անոյշ բարեալք լի է. եւ գովիչք գոհութիւնքն ի վեր ելանեն առ Աստուած, եւ պատրաստեն գերանութիւնսն արքայութեան երկնից:

26 Ձի հաճոյացան Աստուծոյ ի նեղութեան եւ յանդորրու. եւ անքակ մնացին ի սիրոյ նորա ճշմարտեալ հաւատով, խաղաղասէր եւ բարեսէր առ ամենեսեան. մեկնեալ յամենայն իրաց չարեաց, յերեւելեաց եւ յաներեւութից սխալանաց:

27 Ձի ես եմ, ասէ, Աստուած որ ատեմ գա-

նիրաւութիւն եւ սիրեմ գարդարութիւն^ա։
 28 Եւ ի յայսմ երեւին սիրելիք Աստուծոյ
 եւ ընտանիք հաւատոց, զի զնոյն սէր ու-
 նիցիմք առ սրբութիւն եւ արդարութիւնսն
 ամենայն միշտ։ 29 Եւ դարձեալ գատելու-
 թիւն առ զազիր ցանկութիւնս եւ առ ամե-
 նայն մեղս։ 30 Զի գրեալ է՝ *ասէ*։ Զմեղս
 ատեցի եւ անարգեցի եւ գաւրէնս քո սիրե-
 ցի^բ։

31 Զի այնպիսիքն են բերան Աստու-
 ծոյ, որ դարմանաւք կենդանարար խրա-
 տուն լի է, եւ որպէս յաղբերէ բղխէ զկե-
 նացն խրատս։ 32 Զի ամենայն որ կար-
 դասցէ զանուն Տեառն՝ կեցցէ, որ գոյոյսն
 յարդարէ ի Քրիստոս Յիսուս։ 33 Իսկ որ
 ապիրատս խաւսին առ ի կորուստ բազմաց
 խորամանկութեան, այլանդակութեան,
 պատրանաց եւ պէսպէս վնասակարու-
 թեանց, որ վրիպեցուցանեն զտգէտս ի
 ճշմարտութեան աւանդիցն, որ տայցեն
 վրէժս վասն կորստեան անիրաւելոցն ըստ
 արդար դատաւորութեանն Աստուծոյ. որ
 ժառանգորդ լինին անշէջ հրոյն եւ յաւի-
 տենից տանջանացն։

34 Եւ աչքն, որ ճշմարտութեամբ
 գտեսութիւն ունին, առաջնորդութեամբ ի-
 մանալեաւքն անվրէպ զգուշանալ ի վնա-
 սակարացն. ամենայն անդամոցն անարատ
 եւ սուրբ եւ անբիծ գտեսութիւնն հրահան-
 գել յԱստուած։ 35 Զի նրագ մարմնոյ ակն
 է՞՝ *ասէ Տէրն*։ 36 Զի որոյ աչքն լուսաւոր
 են, ամենայն մարմինն լուսաւոր եղիցի. որ
 չունի մասն խաւարի զմեղացն իրս, այլ
 լուսաւորեալ կացցէ ի լոյսն Աստուծոյ։
 37 Ապա եթէ խաւարեալ է ի նշողիցն լու-
 սոյն ի ցանկական աղտեղութիւնս եւ յա-
 մենայն աշխարհասէր պատրանս երե-
 ւելեացս ամենաչար, որ շլացուցանէ ի
 ճշմարիտ տեսութենէ, եւ ի մեղացն որպէս

բիժ զակամբ եկեալ՝ ոչ թողացուցանել
 տայ զպատշաճն՝ այլ զխաւար չարին, նո-
 քա են որ ժառանգորդ լինին խաւարին
 արտաքին, ուր լալ աչաց եւ կուրութիւն
 յանշէջ հուր գեհենին։ 38 Զի երկաքան-
 չիւրոցն է հատուցումն, ճշմարտասէր տե-
 սողացն եւ ցանկասէր վատթարատեսացն։

39 Եւ լսելիք, որ բանայ զգրուես
 ունկնդրութեան ճշմարիտ քարոզութեան,
 եւ ընդունակ առնէ կենդանարար բանին
 զմիտս եւ զգայարանս ամենայն հաւատոց
 եւ ամենայն ճշմարտութեան Աստուծոյ
 պատուիրանին յերեւելիս եւ յաներեւոյթս,
 ընդ նոյն լսելիս մտանեն բարբառք աւե-
 տեացն. եկայք մտէք, ասէ, յուրախութիւն
 Տեառն, եւ վայելեցէք գրարիսն զաննաոս եւ
 անվախման, որ ի սակաւուդ հաւատարիմ
 երեսեցայք յերկրի^ա։ 40 Իսկ որ ինու գա-
 կանցսն առ նշմարտութիւն Աւետարանին,
 եւ մուտ առնեն կորստեան բարբառոյ եւ
 ամենապատիւր վնասակարաց, եւ առնեն
 զմիտսն բոյնս իժից եւ քարից՝ զի մի՛ առ-
 ցեն զկենաց դեղ զգայութեանցն ի դեղա-
 տուէ աստուածային բանիցն^բ, լսելոց են
 զբաւթ եւ զգոյժ ահաւոր սպառնալեաւք ի
 Տեառնէ. երթայք յինէն անիծեալք ի հուրն
 յաւիտեանից, որ պատրաստեալ է սատանա-
 յի եւ հրեշտակաց նորա յաւուրն այցելու-
 թեան^գ։

41 Եւ հոտոտելիք հոտոցն են զգայու-
 թիւնք, որք որոշեն զանոյշ սրբոցն հոգ-
 ւոցն զհոտ բուրման շնորհացն. որ սրբեալ
 են յամենայն զարշութեանց ախտից
 մարմնականաց, ըստ առաքելոյ. Հոտ անոյշ
 եմք Քրիստոսի ի մէջ փրկելոցն եւ ի մէջ
 կորուսելոցն. ոմանց հոտ ի մահուանէ ի
 մահ, եւ ոմանց ի կենդանութենէ ի կեանս.
 եւ առ այս ո՞վ իցէ բաւականէ։ 42 Որք ո-

^ա Հմմտ. Եւ. ԿԼ 8:
^բ Սաղմ. ՃԺԸ 113
^գ Մատթ. Գ 22

^ա Հմմտ. Մատթ. ԻԵ 23:
^բ Տէ՛ս Սաղմ. ԾԷ 5:
^գ Մատթ. ԻԵ 41
^դ Ի Կոր. Բ 15

րոշեն զլաւն ի վատթարէն՝ զհաւատոցն եւ զվարուցն ամբծութիւն, որք վայելեն յանոյշ բարիսն: 43 Իսկ որ զհոտս անսրբութեան եւ զամբարշտութեան ոչ որոշեն եւ զաշխարհական ցանկութեանց՝ որ լին է ժահահոտութեամբ եւ անառակ եւ անխտիր շարժամբք, հրաժարեալ ի շնորհալից հոտոցն, առնլոց են այնպիսիքն զհոտ ժախից հարուածոցն անքուն որդանցն եւ կիզման հրոյն. եւ գրաւին ի ներքս յապաժոյժ տանջանսն ի հաշումն եւ ի մաշումն հոգւոց եւ մարմնոց:

44 Եւ ձեռք ի խնամս տեսչութեան գործաւորութեան առ ի պողաբերութիւն յարդարեացին միշտ, եւ գլորելոյն եւ կարաւտելոյն աւգնական եւ ձեռնտու լինել ըստ ամենայն պիտոյից, եւ ի գործ Աստուծոյ ոչ դանդաղանաւք. զի զանձին պէտս ինչ իրաց եւ զմերձաւորաց եւ զհեռաւորաց ստուգապէս ներգործեացէ ըստ շնորհելոյ նմա ի Տեառնէ աջողութիւն: 45 Այս ձեռք առնլոց են ի Տեառնէ զվճիռ ազատութեան, զմուրհակն որդեգրութեան, զպսակն անապական՝ որ փառաւք եւ պարծանաւք յաւրինեալ է ի ձեռաց Աստուծոյ: 46 Իսկ ձեռք որ ըստ աղտեղի ցանկութեանց ի յամաւթոյսն շարամբձեալ ինքեան եւ կամ գործակցաց ախտասիրաց, եւ դարձեալ որ գողանայ, որ տանջեն եւ նեղեն եւ սպանանեն, այն ձեռք կապին հրեղէն կապանաւք եւ մատնին անվախձան տանջանացն անշէջ հրոյն, եւ ջնջին ի կենդանի գրոյն տախտակացն Քրիստոսի:

47 Եւ ոտք, որ եղեն երիվար շինութեան եւ խաղաղութեան սուրբ վարուց եւ ճշմարիտ քարոզութեան առ ամենայն աւգուտս հոգեւորս ի հեռաւորս եւ ի մերձաւորս ի հաճութիւն կամաց տէրութեանն, եւ արհամարհեցին զաշխատութիւնս ոտից առ հանդէս վերին կոչմանն, այն ոտք ելանեն ի դրունս կենաց եւ մտանեն յաւթեւանս ուրախութեան հարսանեաց զար-

դուն վայելչութեան ընդ աջմէ մեծութեան յանանց ուրախութիւնսն: 48 Իսկ որ զարտուղեցան ոտք յարդարութեան ճանապարհէն, եւ զրահետ եղեալ մոլորեցան ի չար անդր ի վնասակարսն ընթանալով, յանսրբութիւն, յաւազակութիւն, յապիրատութիւն, ի ստահակութիւն, անիրաւ յամենայն ճանապարհս գնալ որ տանի ի կորուստն յաւիտենից, այնպիսի ոտք մեկնեալ ի կենաց անտի առաքին ի վիհս դժոխոց, որ ոչ իցէ վախձան եւ կամ հանուամն ի կապանաց տանջանացն լուծանել:

49 Եւ իմաստք խելացն, որ բնակեալ է յղիղն որ ի գլուխն է, որ է ի վերայ ամենայն անդամոցն պսակ՝ եւ զգայութեանցն գործարան, շարժանցն առաջնորդ, եւ տեսուչ եւ վարդապետ եւ հրամանատար ամենայն անդամոցն: 50 Որ զթիւրեալ անդամսն ուղղէ, զվրիպեալսն հաստատէ, զանգէտսն իմաստնացուցանէ, զկարաւտեալսն լցուցանէ, ամենայն հնարիւք զգիտս փրկութեան անձինն ստանալ եւ այլոց, եւ լինի տուն գանձուց հոգեւոր իմաստից մերձաւորաց եւ հեռաւորաց ըստ շնորհելոյն նմա ի Հոգւոյն Սրբոյ՝ որ աղբիւրն է ամենայն բարեաց եւ իմաստից, ուստի ծագէ լոյս գիտութեան եւ զամենայն մարմինս լուսաւորէ ըստ Քրիստոսի աւետարանութեանն սուրբ եւ բարի հանգամանացն, եւ լնու զամենայն անդամս երանութեամբք ըստ ճշմարտութեան բարերար կամացն, եւ առնու զթագ արքայութեանն որ ի Քրիստոս: 51 Իսկ խելք՝ որ մոլորեցան ի ճշմարտութեան իմաստիցն, եւ անկան ի ցանկութիւնս ախտից եւ յամենայն վնասս անիրաւութեան անխնայ մեղացն, եւ փոխանակ կենաց մահու պատճառք եղեն անձանց եւ բազմաց, եւ նոքա կրեն սաստիկ պատուհաս. Կորիցեմ, ասէ, մեղաւորք յերկրէ ի դժոխսն, եւ ամբարիշտ ոչ եւս գտցեմ զհանգիստ ի չա-

րաչար տանջանսն^ա: 52 *Ձի այս է որք ի վտանգս անկանին, չար կորուստ է նոցա եւ մութ եւ խաւար ի չարաչար եւ դառն տանջանացն, եւ զլոյս ոչ տեսանեն, եւ ոչ զայլ ոք ի մխիթարութիւն առ տանջանսն:*

53 *Իմանալի է եւ զսիրտն, որ ընդունարան է հոգւոյն շարժմանց. Զսիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած, եւ զհոգի ուղիղ յանձնիմ նորոգելով^բ:* 54 *Որ խնդութեամբ յուսոյն վերաստեղծու ի զգայութիւն առաքինասէր վարուց, եւ շարժէ զամենայն անդամսն ի վատթարացն ի լաւագոյնսն բարի խորհելով. առհաւատչեայ յուսովն առնուլ զազատութեանն զկտակ, եւ մտանել ի ժառանգութիւն արքայութեանն երկնից:* 55 *Իսկ որ ի սրտէն բղիւն զգուռնդս չարութեան, որպէս ասաց Տէրն, զամենայն դժնդակացեալս ի սրտէն, զչնութիւն, զամբարտաւանութիւն, զբարկութիւն եւ զայլ ամենայն չարիսն, նոքա ելանեն ի խնամոց Բարերարին ի խաւարն արտաքին եւ ի կորուստն յաւիտենից. զոր ոչ բաւեմ ասել զայնքան աղէտս տանջանացն:*

56 *է իմանալ եւ ի փորոտին սրբութիւն ըստ ամենայնի. որով ներքին մարդն նորոգի ար ըստ արեւ^գ, որպէս ասաց առաքեալ:* 57 *Ձի առժամայն թեթեւ նեղութեամբք զյաճախութիւն բարեացն գործէ յանձինս ի ցաւս եւ ի հարուածս փորոտեացն մի ըստ միողէ՝ որք զանուանսն ունին, լեարդ եւ թոք եւ փայծաղն եւ աղիք եւ երիկամունք. այնպէս տնաւրինեալ, որպէս ի սկզբանն էին առանց սխալանաց:* 58 *Եւ ամենայնիւ մեղուցեալ երեւելի մարմնով եւ աներեւոյթ հոգւով եւ ամենայն փորոտեաւքն, դարձեալ լինել բարի խորհրդոց ընդունարան:* 59 *Ձի ամաւթոյ անդամքն առաւել եւս*

պարկեշտութիւն ունին^դ, ասէ առաքեալ. այսինքն զանարատ սրբութիւն եւ զամբիծ մաքրութիւն, մեռուցանելով զնա ճգնաւորական պարկեշտութեամբ, եւ զհոգւոյն ցանկութեանն հրով հոգւոյն եւ շնորհալից արտասուաւք շիջուցանել:

60 *Ձի ամենայն անդամաւք եւ փորոտեաւք եւ հոգւով ի կամակար մտաց պարտաւորեալ՝ եւ արդարացաք ի ձեռն լուսաւոր աւազանին եւ վերստին ծննդեամբն շնորհաւքն Քրիստոսի:* 61 *Որ ազատեաց զմեզ ի ծառայութենէ մեղաց յազատութիւն նորոգման իւրոյ. զգեցաւ զնոյն մարմին եւ զհոգի, եւ խառնեաց ընդ աստուածութիւնն իւր յազագս անբաւ սիրոյն իւրոյ, եւ զամենայն կիրս մարդկայինս կրեաց բաց ի մեղաց. եւ զմեզ յորդորէ հայել յելս գնացից իւր, եւ նմանող լինել ճշմարտութեան սուրբ վարուցն մարմնաւորաց. զի եթէ կցորդեսցուք չարչարանացն՝ եւ փառացն հաղորդեսցուք ի սիրոյ նորա^ե:*

62 *Եւ պատուիրան առաք սիրել զնա, որպէս եւ նայն սիրեաց զմեզ՝ եւ ետ զանձն իւր փրկանս ընդ ամենեցուն:*

63 *Ձի յայս երկու պատուիրանս աւրէնք եւ մարգարէք կախեալ կան ասէ Տէրն. սիրելն զԱստուած եւ սիրել զընկերն^զ:* 64 *Ձի որ սիրէ զԱստուած, հեռի է յամենայն անիրաւութենէ յերեւելեաց եւ յաներեւութից, եւ մերձ յամենայն արդարութիւն եւ ի սրբութիւն. զի իշխանութիւն առեալ աստուածային սիրոյն՝ խափանէ զանիրաւ սէրս որ գերեն զմիտս եւ զգայարանս:*

65 *Նմանապէս եւ որ զընկերն սիրէ նմանութեամբ Քրիստոսի սուրբ սիրոյն, որ եհեղ ի մարդիկ առատապէս:* 66 *Զնոյն սէր,*

^ա Հմմտ. Եւ. Ծ. Է 20:
^բ Սաղմ. Ծ. 12
^գ Բ. Կ. Գ. Դ. 16

^դ Տէ'ա Ե. Կ. Գ. Դ. Բ. 23:
^ե Հմմտ. Հառմ. Բ. 17:
^զ Տէ'ա Թ. Գ. Դ. Բ. 12:
^է Տէ'ա Մ. Կ. Գ. Դ. Բ. 37-40:

ասէ առաքեալ, յանձին ունել^ա։ Համաշունչք եւ միախորհուրդք առ հաճոյս Աստուծոյ։ 67 Փախչել յանձնասիրութենէ պարտեաց, եւ խոնարհութեամբ առաւել համարել զընկերս քան զանձինս։ 68 Զի հոգեւոր եւ սուրբ առ Աստուած եւ առ ընկերս ճշմարտեալք, երկնայնոցն լիցուք ժառանգորդք։ 69 Որ զսերմն բարի սերմանեաց Քրիստոս, եւ թշնամին արդարութեան սատանայ՝ զորոմն անիրաւութեան. զոր Քրիստոս հրամայէ խլել ի ժամանակի եւ նիւթ հրոյ արկանել. եւ զբարի սերմանսն անեցուցանել, որ բերէ պտուղ զհարիւրաւորսն եւ որ ըստ իւրաքանչիւրոցն է սերմն առաւել կամ պակաս սերմանեալք^բ։

70 Եւ սատանայ ի սկզբանն ոչ թշնամի արարաւ, այլ յանձնիչխան կամացն եղեւ հակառակ բարւոյ. զի ըստ երբայեցւոց բառիցն հակառակ թարգմանի։ 71 Որպէս եւ զՊետրոսէ լսեմք ի Տեառնէ. ասէ. Երթ յետս իմ, սատանայ. զի ոչ խորհիս զԱստուծոյսն, այլ զմարդկանս^գ։ 72 Որ անգէտ էր փրկական չարչարանացն, եւ հակառակէր արգելու։ 73 Եւ ամենայն որ բարւոյ հակառակ կայ, սատանայ անուանի։

74 Զի ամենայն արարածք ի Բարերարէն բարի ստեղծան. եւ ի կամակարմտացն եղեն չար դեւք։ 75 Զի զսատանայ անձնհաճ հպարտութիւնն իւր ընկեաց ի փառաց. նմանապէս եւ զմարդիկ որ զնոյնն ախտացան ի սատանայի խաբմանց՝ զաստուածութեանն զպատիւ խոստանայր, զի աստուածամարտ լիցին իբրեւ զինքն։ 76 Եւ Գաբրիէլ հրեշտակապետ էր, այլ աւետաւոր լինի առ կոյսն, զուրախ լեր բերկրեալն աւետարանելով եւ ազգի մարդկան փրկութիւն։ 77 Որ ի ձեռն մարմնանալոյ Որդւոյն Աստուծոյ որով ա-

զատեցան տիեզերք ի յանցուածոցն որ ի սատանայէ՝ պարտեցան եւ զմահ ստացան։ 78 Զոր Քրիստոս կենդանացոյց եւ արար հաշտութիւն, Արարիչն ընդ արարածս. եւ հրաւիրեաց զհաւատացեալս յԱմենասուրբ Երրորդութիւնն առաքինասէր վարուք յերկնից արքայութիւնն։ 79 Զոր եւ դեւքն խոստովանէին Որդի Աստուծոյ՝ եւ զիւրեանց զպատիժս. Գիտեմք զԲեզ ով ես՝ Որդի Աստուծոյ. որ եկիր յաշխարհ, եւ յառաջ քան զժամանակն տանջես^դ։

80 Զի եթէ չար բնութեամբ էր եւ սուտ, զիա՞րդ կարէր արդար ասել զեղեալսն եւ զլինելոցն դեւքն. զի չիք ոք եղեալ բնութեամբ չար, այլ ի կամաց եւ ի գործոց իւրոց առնու զանուն ճշմարտիւ, եւ ըստ չար կամաց ունի զհատուցումն։

81 Վասն այսորիկ որք ուսուցանեն զչարն եւ որք ուսանին, առնուն զհատուցումն յանչէջ հուրն։ 82 Որ հրապուրէ եւ ուսուցանէ զչար՝ սատանայ է. եւ որ ոչ հրապուրին եւ ուսանին զչար՝ մարդիկ։ 83 Զի գողն եւ գողակիցն ի միում պատժի են. եւ որ այլ եւս չարագործաց հաղորդակիցք իցեն, ընդ նոսին տայցեն վրէժսէ։ 84 Զի երթիցն, ասէ Տէրն, մեղաւորքն ի հուրն յաւիտեանից, զոր պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա՝ որ հրապուրիչք են։

85 Իսկ զԱւետարանին գործակիցսն զքահանայսն սուրբս եւ զպատուականս եկեղեցւոյ, որ սրբութեանցն են սպասաւոր հրեշտակային կարգաւորութեամբ, ոչ վարկպարագի համարեցուք. այլ որպէս յԱստուծոյ կարգեալ ի փրկութիւն հաւատացեալ ժողովրդոց Աստուծոյ։ 86 Զի զառաջնորդս եկեղեցւոյ ի տեղի առաքելոցն կարգեաց քարոզս եւ ասաց՝ եթէ Որ զձեզ ընդունի, զիս ընդունի. եւ որ զձեզ անար-

^ա Տէ՛ս Փլւ. Բ 2:
^բ Տէ՛ս Մարթ. ԺԳ 8:
^գ Մարթ. ԺԳ 23

^դ Հմմտ. Մարթ. Ը 29:
^ե Հմմտ. Հուսմ. Ը 32:
^զ Մարթ. ԻԵ 41

գէ, զիս անարգէ՞. եւ դարձեալ ասէ. Զոր կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս. եւ զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս^բ: 87 Զի իշխանութիւն որ յԱստուծոյ է, զաւրութիւն ունի մեղաց թողութեան. եւ ախտաժետաց առողջութեան, եւ դիւաց հանումն ի մարդկանէ: 88 Զի զոր Աստուած կարգէ, զգործս Աստուծոյ գործէ շնորհաւքն Քրիստոսի: 89 Եւ երախտիք որ ի նոցանէ յառաջագայի՝ պարգեւք են. որ զյուսահատսն ի յոյս կենդանի ածէ, եւ զփրկութիւն Աւետարանէ, զմահապարտս եւ զամենայն յանցաւորս խոստովանութեամբ յապաշխարութիւն ածէ ստոյգ եւ ճշմարիտ վարդապետութեամբ ըստ հոգեւոր ւարինացն եւ ըստ Աւետարանին փրկանաց ի փառս եւ ի գովութիւն Ամենասուրբ Երրորդութեանն: 90 Զի հրեշտակ Տեառն ամենակալի է, ասէ մարգարէն, եւ ի բերանոյ նորա արեւն հայցեն^գ: 91 Զի որ սուրբք են առաջնորդք բանին եւ ուսմամբ աշակերտեն ի ճշմարիտն, նոքա առցեն զերանութեանն զփառս եւ զպսակ ընդ սուրբ հրեշտակապետս եւ ընդ ամենայն սուրբս յամենակալ տէրութենէն:

92 Եւ ընդրութիւնք են հրեշտակաց եւ մարդկան յերկինս եւ յերկրի: 93 Արդ, հրեշտակապետք եւ հրեշտակք՝ առաջնորդք սուրբք եւ ամենայն ընդրեալք եւ սիրելիք Աստուծոյ: 94 Արդ, ի վերին զաւրացն որոշեալ ի հրեշտակապետացն հակառակ բարւոյ՝ սատանայ անուանեցաւ. եւ զաւրքն իւր՝ դեւք, հաւանեալք կամաց նորա եւ ապստամբեալք ի բարի կարգաց: 95 Սոյնպէս եւ աստ մարդիկ թիւրեալ ի հերձուածս կորստեան եւ ի վարս անաւրէնութեան բազում ժողովուրդք. որք եւ առաջնորդք կոչեցան, եւ հպարտացեալ

զարտուղի¹ անկան. եւ բազմաց եղեն պատճառք կորստեան, որսացեալք ի սատանայէ ի նորա կամսն՝ ըստ ամենայն վնասուց: 96 Զի ճշմարտութեան վերակացուք առաքեալք եւ մարգարէք եւ քահանայք սուրբք միաբանեալ են ընդ սուրբ զաւրս երկնաւորաց ի լուսաւորութիւն վերնոց եւ ներքնոց: 97 Եւ ապստամբեալք ի մերոց եւ ամբարշտեալք ի բանէն որ աշակերտեցաք զճշմարտութիւնն, աւտարացան եւ յետս կացին. որպէս քուրմք եւ կախարդք եւ այլ եւս չարք:

98 Զի բարի են գործք եւ արարածք Աստուծոյ. եւ անիրաւքն նմանապէս յանձնիշխան կամաց եղեն չարք, դեւք եւ մարդիկ: 99 Որպէս տաճար բարութեամբք է թագաւորի, սոյնպէս բանդք բանդակալաց: 100 Բարի մասն ուրախութեանն եւ ամենագեղ զարդուքն մտերմացն եւ բարեխոհ բարեգործացն է: 101 Իսկ գանն եւ խրատն եւ զանազան տանջանքն՝ անիրաւաց եւ պղծոց է՝ որ անխտիր են յամբարշտութեան: 102 Զի բանդ ասի դժոխքն, որ զպոռնիկս եւ զկախարդս եւ զսպանողս եւ զամենայն անիրաւս ի տանջանսն ըմբռնէ, որք արհամարհեցին զբանն Տեառն եւ ոչ պահեցին զարդարութիւն:

103 Ապա եթէ իշխանութիւն դժոխոցն սատանայի է, յայտ է, եթէ վրէժխնդիր Աստուծոյ է ըստ արդար ւարինացն սատանայ: 104 Այլ մի՛ լիցի յայսպէս իմանալ. զի եւ դժոխք ի Տեառնէ վասն նորա պատրաստեցաւ եւ նորա արբանեկացն եւ ոչ վասն մարդկան: 105 Այլ որք ախորժեն զնոյն խորհել եւ գործել զչար, ընդ նոսա պարտաւորեալ տանջին զանմահ մահն: 106 Զարեւնսն Աստուծոյ եւ զիրաւունսն երեւելի արարածովքս իմացեալ տեսանի՞՝ զի անճրեւք պիտանիք եւ շայկեան ցաւդք

^ա Մատթ. Ժ. 40
^բ Մատթ. ԺԹ. 18
^գ Մատթ. Բ. 7

¹ Յերկոսիմ օրինակսն՝ զարտաւղի
^բ ԲՏԳ. Բ. 26
^գ Հմմտ. Հատմ. Ը. 20:

զինամոցն Աստուծոյ բացայայտեն առ պէտս արարածոց: 107 Իսկ որոտմունք եւ կարկուտք եւ հրացանութիւնք գուշակեն մեզ զահեղ բարկութիւնն՝ զսպառնալիս ամբարշտաց եւ մեղաւորաց, զոր յայտնելոց է ի վախճանի:

108 Զի եւ ջրհեղեղն համաշխարհական վասն անսրբոցն եւ պղծոցն ի Տեառնէ անաւրինաց լինի ի ջնջումն, ի յերկնէ եւ ի յերկրէ պատուհասից. եւ զարդարսն պահէ ընդ ամենախնամ ողորմութեանն իւրոյ ի ձեռն տապանին եւ գայլ եւս շնչաւորս, թողլով աշխարհի սերմանս:

109 Եւ զսողոմայեցիսն սատակեաց հրով եւ ծծմբով, զի հրով ցանկութեամբն եւ զագիր զիջութեամբն ապականեալք էին. եւ զարդարն զՂովտ ապրեցոյց ի դառն հարուածոց սատակման: 110 Որ հող եւ ջուր եւ քար եւ տունկք եւ բոյսք բնակչաւքն հանդերձ տոչորեալ հրեհհեցան: 111 Եւ այսոքիւք ցուցեալ եղեւ ամբարշտացն եւ մեղաւորացն սաստկագոյն սատակումն յարդար դատաւորէն Աստուծոյ, եւ փրկութիւն արդարոց ի խնամակալ սիրոյն: 112 Եւ այժմ տեսանի ի Սողոմ եւ ի Գոմոր բարկութեան Աստուծոյ պատիժք ի հող եւ ի ջուր եւ ի քար եւ ի տունկս:

113 Զի տեսեալ զայնոսիկ արհաւիրսն այժմ, եւ երկիցեն ի բարկութենէն որ գալոցն է. որք զվեղս իւրեանց որպէս սողոմայեցւոցն պատմեցին եւ յայտ արարին^ա, ասէ մարգարէն: 114 Նա եւ այլ եւս գայցեն այժմ յաղագս մեղաց սով եւ սուր եւ գերութիւն եւ տարածամ մահք եւ պէսպէս ցաւք եւ հիւանդութիւնք եւ վտանգք առ ի խրատ եւ յանդիմանութիւն. զի զղջացին եւ ապրեսցին ի բարկութենէն որ գալոցն է յերկնից:

115 Արդ, յամաւթ լիցին, որ զսատանայ ասեն խրատու պատուհասիցն տէր, եւ ոչ զամենակալն Աստուած: 116 Զի յուժմէ աւրինադրութիւնն է, նորա եւ հրաման պատուհասից եւ ողորմութեան ըստ իւր խորին իմաստութեանն եւ մատակարարութեանն: 117 Զի բովք է ամենայն մտաց. որ զմտերմացն հանդէսս յայտնէ իւրեանց սիրովն եւ երկիւղիւն, վկայութեամբ բարերար երախտեացն ի բարերար կամացն յարդարեալ: 118 Զի Աստուած միշտ ցուցանէ զսուրբ սիրոյն իւրոյ զերախտիսն, զտեսչութիւն շնորհաց իւրոց առ հնազանդեալս եւ ողջախոհս. զի որպէս որդւոց մտերմաց ժառանգութիւն եւ կեանս պատրաստեաց ամենայն բարեաւք:

119 Իսկ որ ցուցանեն զարհամարհութիւնն առ աւրէնսն եւ զանհնազանդութիւնն առ կամս նորա, եւ զնան խոտորնակս եւ անխտիր յաղտեղի իրս եւ յամենայն դժնդակութիւնս մեղաց, վասն այսորիկ, ասէ, գայ բարկութիւնն Աստուծոյ ի վերայ որդւոցն անհաւանութեան, ասէ առաքեալ^է: 120 Զի ցուցցէ զիւրոյ արդար իրաւունսն արդարոց եւ մեղաւորաց. զի արդար դատաստանն յերկրի, եւ ի հանդերձեալսն որ կան եւ մնան երանութիւնք եւ տանջանք:

121 Զի հարուածք որ գան յաշխարհ, վասն մեղաց է իմանալ. զի զղջացեալ զգաստացին եւ դարձցին յապաշխարհութիւն փրկութեան: 122 Եւ առ այնոսիկ ասէ Տէր մարգարէիւն. Միտիքարեցէ՛ք, ասէ, քահանայք՝ զժողովուրդ իմ, զի լի եղեւ տառապանաւք. թողեալ լիցին դմա մեղի իւր, զի ընկալաւ ի ձեռանէ Տեառն կրկին զհատուցումն մեղաց իւրոց^ժ: 123 Զի հարուածք՝ դարձելոցն ի թողութիւն մեղաց լինի պատուհասիւքն ի վերայ եկելոցն ի Տեառնէ: 124 Զի ես եմ, ասէ Տէր, որ սպանանեմ եւ կեցուցանեմ. հարկանեմ եւ բժշկեմ. եւ ոչ ոք իցէ որ հանիցէ զձեզ ի ձե-

^ա Ե․ Գ․ 9

^է Ե․ Գ․ Ե 6
^ժ Ե․ Գ․ 2

նաց իմոց^ա: 125 *Ձի զամենայն ակնկալութիւն արարածոց դարձուցանէ ի ճշմարիտ կենդանի յոյսն, զի մի՛ մոլորեացին զկնի սուտ կարծեաց եւ պատիր խաբեբայ բանից այլանդակաց եւ աղանդաւորաց. այլ յաստուածայնոցն իմացեալք ի ճշմարտութեան աւանդիցն Սուրբ Գրոց եւ յուղիղ հանգամանաց. որոշեալ յամենայն սնտաի կարծեաց, ի մշտնջենաւոր երանութիւնսն վերացուցուք զմիտս հանապազ:*

126 *Վասն այսորիկ միտք եւ զգայութիւնք յիշխանական կամաց լի են ամենայն շահիւք իմաստութեանն՝ առաջնորդեալ յառաքինասէր վարս յերեւելիս եւ յաներեւոյթս: 127 Ձի նովաւ կեալք եւ շարժիմք^բ, եւ նովաւ յառաջիկայսս ի բարիսն ընթանամք միշտ յաղագս աւետեացն եւ անսուտ խոստմանցն: 128 Ձի նա է արարիչ մեր, եւ մեք արարածք նորա. զի մեք կարգացուք զնա Հայր մեր՝ առնելով զկամս նորա, եւ նա ասացէ՝ որդիք իմ էք, եւ ես ընկալայց զանգ սիրով, այլ եւ եղեց ձեզ Աստուած, եւ դուք եղիջիք ինձ ժողովուրդդ^գ, ասէ Տէր ամենակալ: 129 Եւ զի ասէ մարգարէն. Եկայք որդիք իմ եւ լուարով ինձ, եւ զերկիւղ Տեառն ուսուցից ձեզ^դ: 130 Եւ ետ մեզ Որդին Աստուծոյ Հայր կոչել զբնութեան Հայրն իւր եւ զԱստուած մեր. եւ ոչ համարեցաւ զմեզ անարգս՝ հազորդս առնել եղբայրութեանն եւ ժառանգորդս իւր արքայութեանն: 131 Եւ Հայր ի վերուստ ասէ զսիրելութիւն Որդւոյ եւ առնել զկամս նորա, եւ զամենայն որ ինչ ի Հաւրէ ասացաւ: 132 Եւ վասն Հոգւոյն ասէ. նա եկեալ ուսուցէ ձեզ զամենայն կամս Հաւր եւ Որդւոյ ի փրկութիւնէ: 133 Ձի ի Հաւրէ եւ յՈրդւոյ եւ ի Հոգւոյն*

Սրբոյ ազատեալք առցեն շնորհս, եւ կատարեսցեն զառաքինութիւնս:

134 *Բայց զարմանալ արժան է, զի անուանք Արարչին յարարածս խոնարհեցան, Հաւր առ Հարս, եւ Որդւոյ առ որդիս, եւ Հոգւոյն Սրբոյ առ Հոգիս մարդկան. զի այսու իմասցուք զառաւելեալսն ի մեզ սուրբ սիրոյն իւրոյ զնախախնամութիւնն:*

135 *Ապա եթէ զայսքան երախտեաց եւ առաւելեալս ի մեզ սուրբ սիրոյն զանց արացուք, միթէ անիրա՞ւ ինչ է Աստուած, որ ածէ զբարկութիւն իւր ի վերայ այնոցիկ՝ որ զբարերարութեանն զսէր արհամարհանաւք արհամարհեն, եւ թողուն ի մտաց զյիշումն առատ զպարգեւացն եւ սուրբ սիրոյն գոր եհեղ ի մեզ առատաբար^ե: 136 Եւ որպէս ի ձեռն Մովսէսի առնն Աստուծոյ այս է՞ դատաստանն. որ ապակամէ բոնաւոր այր զկիմ տկար յոչ կամաց, անգաւր եղեալ ի նորա զաւրութեանն, այրն մեղցի, եւ կիմն կեցցէ ըստ արդար դատաստանիմէ. նոյնպէս է իմանալի մեզ զսատանայի զակամայ ի մեզ զսխալանս իրաց ինչ խորհրդոց եւ կամ շարժմանց անդամոց: 137 Ձի ասէ մարգարէիւն Տէրն. անձն հաւր իմ է, եւ անձն որդւոյ իմ է. եւ անձն որ մեղիցէ, նոյն եւ մեղցի^զ: 138 Ձի կամաց է մեղանչել անձինն: 139 Եւ դարձեալ ասէ ցարդարն. կելով կեցցէ, որ զարդարութեան զհետ երթիցէ. եւ մեռանելով մեռանիցի, որ զհետ անարէնութեան: 140 Ձի արդար է Տէր, եւ ուղիղ են դատաստանք նորա արդարոց եւ մեղաւորաց:*

141 *Եւ անձնիշխան կամաւք կարող եմք զԱստուած ի բարի կամս դարձուցանել ի ձեռն բարի գործոց. եւ դարձեալ ի պատուհաս ըստ Հար գործոց: 142 Ձի ի*

^ա ԲՕԳ.ԼԲ 39
^բ Գործ.ԺԷ 28
^գ Հմմտ. ԲԿոր. Զ 18:
^դ Սաղմ. ԼԳ 12
^ե Հմմտ. Յովն. ԺԶ 13:

^զ Տէր. Գ 6
¹ Միւսն ի լուսնցսն՝ ասէ
^է Տէ՛. ԲՕԳ. ԻԲ 25-26:
^ը Տէ՛. Եղե՛. ԺԸ 4:

մեր կամս է վայելել ի բարիսն եւ կամ արտաքսել: 143 Զի ոչ կամի զմահ մեղաւորին, որպէս զդառնալ նորա ի չար նանապարհէն եւ կեալ ապաշխարութեամբ^ա. Զի ողորմած եմ ես, ասէ Տէր, եւ ոչ պահեմ ռիս դարձուցելոցն յուղղութիւնէ^բ: 144 Զի որում արժան է զթալ կամ ողորմել կամ ներել, ոչ անտես առնէ. այլ որպէս մարդասէր բժիշկ բժշկէ գներքին եւ զարտաքին անդամսն, եւ զանբժշկելին ի բաց կտրէ՝ որ յայլսն զվնասն առնեն: 145 Զի որք ոչ դառնան յապականեալ վարուց, յուշ լիցի նոցա ջրհեղեղին կորուստ եւ սոդոմայեցոց հրով տոչորումն եւ սատակումն, որ աստ դատեցան եւ անդ դատելոց են ըստ բանին Տեառն որ յԱւետարանսն^գ:

146 Իսկ որ զղջանան եւ դառնան յապաշխարութիւն, նմանեն նինուէացոցն. զսպառնալեաց բարկութիւնն եւ զեկեալ պատիժս ի Տեառնէ ըստ մարգարէութեան Յովհանու յողորմութիւն դարձուցանեն. եւ այցելութիւն Տեառն կանխէ առ նոսա, եւ ընդունին զխնամս սուրբ սիրոյն: 147 Իսկ որ խստացուցանեն զսիրտս իւրեանց նմանութեամբ Փարաւոնի^դ, զսոյն հարուածս կրեսցեն. որ ոչ լուան Մովսէսի եւ Ահարոնի զառ ի յԱստուծոյ պատուիրեալս նոցա. որ եւ անդէն սատակեցաւ իւրովն, եւ ժողովուրդն Աստուծոյ ապրեցանէ:

148 Զի մի է Աստուած արարիչ երկնաւորաց եւ երկրաւորաց, եւ յանձնիչխան կամս արարեալ զհրեշտակս եւ զմարդիկ. եւ ի նոցանէ ի կամակար մտաց չարք որոչեցան ի հրեշտակաց եւ ի մարդկանէ: 149 Եւ անմարմնոց եւ մարմնաւորաց սրբոց փառք եւ պսակք պատրաստեալ

կան ի Տեառնէ: 150 Եւ պատիժս եւ տանջանք եւ դժոխք դիւաց անմարմնոց չարաց, եւ մարմնաւորաց ամբարշտաց եւ պղծոց ըստ արժանեաց իւրաքանչիւրոցն յարդար դատաւորէն: 151 Զի ի գործոց չարեաց ունին զանուանս դեւք հանդէպ իւրեանց. եւ մարդիկ չարք կախարդք եւ պիղծք յառաջ եկեսցեն ի չար անդր եւ միաբանեալ ընդ չար դեւսն:

152 Այլ որ կամիցի ի հակառակացն փախչել եւ հրեշտակ լինել, աստուածասէր լիցի, եւ զհաճոյս նորա կատարեսցէ յամենայն սրտէ եւ յանձնէ եւ ի զաւրութենէ, եւ զընկերս սուրբ սիրով երեւելեալք եւ աներեւութիւք. ամենայն բարեաց երախտաւոր լինել հեռաւորաց եւ մերձաւորաց. սուրբ, անբիծ, անարատ, առողջ, միամիտ, հաւան, հլու, հնազանդ, խաղաղարար, ճշմարիտ, մեկնեալ յամենայն իրաց չարաց. սիրել զբարի եւ ատել զչար, եւ ի գործոց բարեաց զբարի անուն առնուլ եւ ի փառս լինել: 153 Եւ որ ի բարւոյն մեկուսանայ, եւ նմանող լինի սատանայի հակառակ բարւոյ, անհնազանդ, մեղսասէր, ցանկասէր, հպարտ, ամբարտաւան, խորամանկ, նենգաւոր, սուտ, բանսարկու, խռովարար, չարասէր եւ ոչ բարեսէր. մեկնեալ ի ճշմարտիցն, եւ զչար գործոց զանուն առնուլ չար, զհատուցումն բարկութեան անմահ տանջանացն. զի ըստ արժանեացն է պարգեւք եւ պատուհասք:

154 Արդ, մտաւորաց եւ բանաւորաց տուեալ զանձնիչխան կամս ի պատիւ եւ ի փառս, զի փառաւորեսցէ զբարեգործն Աստուած, եւ առաքինասէր վարուք յանձնիչխան կամաց յաւրինեսցեն անձանց պսակս հրեշտակային կարգաւորութեամբ. եւ շնորհս ընդունել ի Տեառնէ յաղագս հանդիսաւոր եւ սուրբ վարուց առաքելութեան, մարգարէութեան, քահանայութեան: 155 Զի ճշմարտեալք ըստ ամենայնի առցուք զարքայութիւնն պատրաստեալ: 156 Զի որպէս Աստուծոյ սեփական

^ա Տէ՛* Եղե՛. ԺԲ. 23:
^բ Հմմտ. Երեմ. Գ. 12:
^գ Տէ՛* Գ. 1. ԺԷ. 26:
^դ Տէ՛* Եւ. Ե. 2:
^ե Տէ՛* Եւ. ԺԳ.:

է արքայութիւնն, եւ մեզ կազմեցաւ սեփական առնել զարքայութիւնն ի ձեռն ուղիղ հաւատոց եւ ճշմարիտ վարուց վասն բազում սիրոյն որ սիրեաց զմեզ եւ եցոյց զերախտիսն: 157 Եւ որոց վարք անսուրբք եւ պղերգ են յառաքինութիւնս, եւ մտախաբք եւ մեղսասէրք, նոքա նուագեալ են ի փառացն Աստուծոյ՝ աղարտին, անարգին, անկանին ի շնորհացն յամալթ եւ ի նախատինս ամենեցուն:

158 Եւ վասն այսորիկ Աստուած եւ Տէրն զարքայութիւնն արդարոցն կազմեաց, եւ մեղաւորացն զպատիժս պատուհասից. զի ծանիցեն ամենեքեան զուղիղ դատաստանն, արդարք եւ ամբարիշտք: 159 Եւ մի՛ ոք զարմասցի որ աստ ներէ. Զի քաղցրութիւնն Աստուծոյ, ասէ, զնոսա յապաշխարութիւն ամէ՛: 160 Ապա եթէ ոչ զղջասցին, առանց ողորմութեան դատեսցին յաւուրն բարկութեան երեւման: 161 Եւ տեսցեն մեղաւորք զփառս արդարոց, եւ կորացեալ հալեսցին ի տխրականս եւ յամալթն յաւիտենական. որ յերկրի մեծ գոլ զինքեանս քան զարդարսն համարեալ՝ զհպարտութիւնն ոչ թողացուցանէին տեսանել զինչ արդարքն իցեն եւ զինչ մեղաւորքն: 162 Բայց զկնի վճարելոյն երեւի արդարոցն փառք եւ մեղաւորացն ամալթն յաւիտենից:

163 Եւ այս յայտնի է, զի ոչ տոհմից փառաւորութիւն փառաւոր է առ Աստուծոյ, այլ առաքինութեան բարետոհմութիւն: 164 Զի ի Հայս ոչ ինչ մեծագոյն եւ ի Պարս՝ քան զարչակունեաց տոհմ. որ եւ յԱբրահամէ սերեցան աստ, նա եւ յամենայն ազգս թագաւորք երկրի ըստ անսուտ բանին Տեառն ամենեցուն: 165 Այլ եթէ ոչ զգաստանայցեն ի բարի, աւելի պատուհաս ընկալցին ի Տեառնէ: 166 Եւ

ծառայք նոցա որ հաճոյ եղեն Աստուծոյ, թագաւորեալք փառաւորեսցին ի Տեառնէ. եւ նոքա պարտաւորեալք յաղագս մեղաց պատժեսցին յարդար իրաւանցն: 167 Եւ թագաւորք եւ իշխանք եւ դատաւորք եթէ արդարախորհք արդարակիչութիւնք ի յիրաւունս Աստուծոյ, եւ արդարադատք ըստ հոգեւոր մասինն եւ ըստ մարմնաւոր, որբոյն եւ այրւոյն տեսուչք եւ ամենայն զրկելոց խնամակալք, եւ ձեռնտու ամենայն վտանկելոց, նոքա են հիմունք բարեաց, որ հաստատեալ ունին զաշխարհ հնարագիտութեամբ իւրեանց ի հնարս սիրոյ ամենեցուն Արարչին: 168 Որով աշխարհի բարին յառաջանայ ի գովեստ փառաց շնորհացն Աստուծոյ, եւ ի գովութիւն ամենագաւր տէրութեանն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. որում պատիւ իշխանութիւն եւ փառք վայելեն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

ԻԱ.

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐ ՎԱՍՆ ՏՐՈՑ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ, ՈՐ Ի ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ ՊԱՐԳԵՒԵՅԱԿ ՍՈՒՂ ԻՆՁ ԲԱՆՍ

1 Անբաւ են խնամք տեսչութեան Արարչին, եւ լուսաւորութիւն ի յաւրինուածս արարածոց իւրոց: 2 Զի որում շատն տուաւ, բազումս խնդրէ զարմտիս բարեացն Աստուած. եւ որում սակաւն, յաւելուածս շահիցն ըստ առաւելն առցէ զշահսն: 3 Որպէս յառակս տաղանդացն է իմանալ յաւելուածովն ի սակաւուցն, եւ ընտրողական մտաւք, զոր ետ Աստուած հրեշտակաց եւ մարդկան. զի լիցին արբանեակք Բարերարին կամացն եւ քարոզք շնորհաց նորա, սերմանել զերախտիս նորա ընդ ամենայն արարածս հաւանական կամաւք եւ ընտրողական շնորհիւ: 4 Եւ զի գոն առաւելութիւնք իմաստութեան եւ զաւրութեան եւ մեծութեան յերկինս եւ յերկրի:

« Հմմտ. Հռոմ. Գ. 23:
 † Հմմտ. Հռոմ. Բ. 4:
 ‡ Տէ՛ս Եւն. ԺԷ. 6:

5 Զայս լաւութիւն կանխագիտութեանն Աստուծոյ կարգեալ է ի մեզ. զի որ բազումն առ՝ առաւել սիրեսցէ, եւ զառաւել բարիսն ընծայէ Աստուծոյ. իսկ որ սակաւն, եւ այն յԱստուծոյ խորին գիտութենէն ըստ կարին եւ զմտերիմ շահիցն զիրաւն խնդրէ: 6 Եւ դարձեալ որ դժնդակ վարս ունին, եւ առ նոսա է զանազանութիւն չարի առաւել եւ կամ նուազ: 7 Եւ որք դառնան, ոչ անտես առնէ ի խնամոց սիրոյն, թէպէտ եւ արբանեակք եղեն չարին ի կամակար մտաց. զի այսու ցուցցի բարերարութեան խնամք: 8 Զի մի՛ ոք կարծեսցէ ակնառութեամբ բաշխել զչնորհս յարարածս, այլ ըստ արժանեացն:

9 Առնէ այցելութիւն եւ անարժանիցն, թէպէտ եւ ոչ զգան. զի խաւարեալ է առաջնորդական միտքն, եւ ոչ տեսանեն զլոյսն իւրեանց: 10 Զի մտահոսանան խորհուրդք երկրասիրաց՝ ոչ թողացուցանէ տեսանել զպատճառսն¹ այլ ի հոգս վնասակարս ծփին, յորոց բարի ինչ ոչ, այլ չար: 11 Եւ վասն այսորիկ արգելեալ է ի նոցանէ շնորհն, զի արգելեալ է ի նոցանէ սուրբ սիրոյն կամք եւ առաքինութեանցն յաւժարութիւնք, բազմադարման երախտիքն կատարեալ հանդիսիւքն բազում համբերութեամբ եւ ճշմարիտ հաւատով. որպէս զի արժանի լինէին արբանեակք ճշմարտութեանն ի կեանս, եւ փառս անձին եւ այլոց: 12 Եւ եթէ արդարոցն միայն էր բազմացուցեալ զմիտս իմաստութեանն, երեւէր թէ յազազս այնորիկ յառաջանան արդարք յառաքինութիւնն. այլ ամենեցուն իմացեալ, զի զարդարսն՝ Աստուծոյ երկիրն յորդորէ, եւ զմեղաւորս աներկեղութիւնն լքուցանէ: 13 Եւ վասն այսորիկ մեղան եւ խաւարեցան ի խորհուրդս իւրեանց եւ կուրացան մեղաւք անմտութեամբ: 14 Որք զանձինս իմաս-

տունս համարեցան՝. եւ յաչս իւրեանց խորհրդականք, եւ զնապարհս իմաստութեան ոչ ծանեանք. զի ոչ է երկիրը Աստուծոյ առաջի աչաց նոցա: 15 Եւ վասն այնորիկ ապականեցան եւ պղծեցան, եւ ընդ ուղիղն ոչ գնացին:

16 Բայց աստուածասիրաց իմաստութեանն առաջնորդեալ յարդարութիւնսն ամենայն ի լաւն եւ յառաւելն, զի միշտ անքակ մնասցէ ի վերին իմաստութենէն ի սուրբ եւ ի խաղաղարար եւ լի պտղովք բարեաւք: 17 Զի ստուգութեամբ կարգաւքն լուսաւորեալ՝ ի միտ առնու զարդարութիւնն նշմարիտ, եւ ուղղէ զիրաւունս՝ արդարութեան միշտ: 18 Զիմաստութիւն իսուսիմ առ կատարեալս, որ գիտեն որոշել զմշտնջեմաւորսն յանցաւորացս. զիմաստութիւնն ոչ զաշխարհիս այսորիկ զխափանելոց, այլ որ յԱստուծոյ արդարութիւնն ենէ, ճշմարիտ հաւատք եւ սուրբ սէր, սրբութիւն եւ խոնարհութիւն, հեղութիւն եւ ճշմարտութիւն ամենայն առաքինութեամբ յարդարեալ ասիւն Աստուծոյ. եւ զգուշանալ ամենապատիր պատրանաց, եւ որոշել ընդորդական իմաստիւք զբարին խորհրդոց եւ բանից եւ գործոց: 19 Զի դուռն կենաց իմաստութեանն բաց է. եւ հակառակորդք բազում են գործակցաւ բանսարկուին որ որսայն զորդիս մարդկան ի կորուստ: 20 Այլ Աստուած ոչ թողու զյուսացեալս իւր, որ կարդան առ նա ի տուէ եւ ի գիշերի, եւ խնդրեն զողորմութիւն եւ զյաղթութիւն առ ամենայն վնասակարութիւնս դիւաց. զի փառաւորեսցի Աստուած այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

¹ Հմմտ. Հռոմ. Ը 2:

² Հմմտ. Հռոմ. Գ 17:

³ Տէ՛ս Թակ. Գ 17:

⁴ Տէ՛ս Ըակ. Ը 3:

⁵ Հմմտ. Ը Կոր. Բ 6:

1 Միւսն՝ զպատշաճսն

ԻԲ

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՍՆ ԱՆՓՈՓՈՒՄ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ

1 Որ տկարութիւն դնէ Աստուածութեանն զաւրութեանն, արտաքոյ ճշմարտութեան հաւատոց է: 2 Զի ասեն, երբեմն կարող եւ երբեմն ոչ: 3 Անմիտք. եթէ Աստուած տկարանայ, ո՞վ է որ զաւրացուցէ: 4 Ի բաց լիցի չար վարդապետին եւ չար ուսմունքն. զի Աստուած կարող է եւ կատարեալ. ոչ երբէք նուազ է ի կատարելութենէն եւ ի զաւրութենէն. այլ զամենեսեան լնու եւ զաւրացուցանէ, եւ ինքն ոչ յումեքէ լնու եւ զաւրանայ:

5 Վասն այսորիկ արարչութեանն անուն հաստատեալ կայ Աստուծոյ միշտ. եւ ի հրեշտակաց եւ ի մարդկանէ զառաքեալս եւ զմարգարէս եւ զսուրբս ընտրեաց, զի եղիցին վկայք ճշմարտութեան աստուածգիտութեանն եւ արդարասէր եւ սուրբ վարուց. այլ եւ զաւրութեամբ, նշանաւք եւ արուեստիւք, զի նոքաւք Աստուած փառաւորեսցի: 6 Եւ ոչ աւգնութիւն առնու Արարիչն յարարածոց յերկնաւորաց եւ յերկրաւորաց. այլ նա նոցա է աւգնական եւ զաւրացուցիչ: 7 Զի որպէս մարգարէին ասէր Աստուած, թէ Միւսիլե ստեղծեալ էի յորովայնի՝ գիտեմ՝ զՖեգ. եւ միւսիլե ելեալ էիր յարգանդէ՝ սրբեցի զՖեգ շնորհաւ՝ մարգարէ: 8 Այնպէս ըստ կանուի գիտութեանն իւրոյ հրաւիրէ եւ կոչէ եւ արդարացուցանէ եւ փառաւորս առնէ սիրով: 9 Զի ամենայն արարածք յԱրարչէն միշտ կարաւտանան աւգնականութեան, եւ ոչ Արարիչն յարարածոցս: 10 Զի անփոփոխելի է Աստուած, եւ փոփոխումն ունին արարածք. որպէս տղայն յերիտասարդութիւն, եւ երիտասարդն ի ծերութիւն, եւ

ծերն յապականութիւն. եւ որպէս գարունն յամառն, եւ ամառն յաշուն, եւ աշուն ի ձմեռն՝ որ խափուցանէ զամենայն կենդանեաց յորդորումն եւ զտնկոց եւ զբուսոց: 11 Եւ արեգակն փոփոխումն ունի ըստ ժամանակաց ժամանակաց ըստ սահմանելոյն Աստուծոյ զերկայնութիւն աւուրց եւ զպակասութիւն: 12 Ի ծագաց երկնից եմ ելի մորա, ասէ, հանգիստ մորա ի մոյն. եւ ոչ ոմ իցէ, որ թափիցէ ի լուսոյ տապոյ մորա: Եւ այսպէս կայ ի սպասաւորութիւն ըստ հրամանի Արարչին յարարածս: 13 մանապէս եւ լուսին զիւրն ունի սպասաւորութիւն զժամանակացն զփոփոխումն ի մաշելն եւ ի լնուլն. զի նովաւ ծանիցուք զմաշումն երկրաւորացս եւ զնորոգումն յարութեան: 14 Այլ եւ աստեղք սպասաւորեն ի գիշերի նաւագնացաց, եւ ըստ այլ եւս շարժմանց առ ի պէտս մարմնաւորաց. այլ ոչ ըստ հեթանոսական բարբանջմանցն, որ բախտս եւ ծնունդս ասեն:

15 Զի Աստուած է, որ արար զամենայն եւ յաւրինեաց, եւ սահման եղ եւ ոչ անցանեն ըստ կարգն: 16 Եւ ամենայն արարածք ի նմանէ են, եւ կան ունին ի խնամակալ զաւրութենէն յաւգնածովք իմաստութեան: 17 Եւ գիտութիւնք հնարից եւ արուեստք պիտոյից եւ կարգք յաւրինուածոց եւ չափք կշռոց ի նորա տեսչութենէ եւ ի խնամոց յաւրինեալ է: 18 Եւ չիք ոք գեր ի վերոյ քան զնա եւ կարող, որ ի նմանէ առնու զհնարագիտութիւն կամ զզաւրութիւն: 19 Զի ինքն իսկ է ամենայն յամենայնի աղբիւր բարեաց, որ լնու զերկինս եւ զերկիր եւ որ ի նոսա արարածք են: 20 Որ յոչընչէ արար զամենայն, եւ դարձեալ եղծանէ որպէս եւ կամի: 21 նորա առաջի է գիտութիւն եւ հանճար եւ իմաստութիւն եւ զաւրութիւն: 22 Որպէս եւ յարարածս է տեսանել. որ

Պ Երեմ. Է 5
Է Տե՛ս Հեռ. Բ 30:

Գ Սաղմ. ԺԲ 7

զաւրութեամբ բարձեալ ունի զՂուրն երկիրն՝ որ ի վերոյ քան զՆա, եւ երկիր զծով եւ զգետս եւ զլերինս եւ որ այլ եւս արարածք իցեն: 23 Եւ ոչ կարաւտանայ սեանց եւ աւգնականի եւ հիմանց երկիրն եւ երկիր. այլ զաւրութեամբ նորա պահեալ կան, եւ ոչ ապականին առանց նորա^ա:

24 Արդ, որպիսի պատիժս պատրաստեալ է, որ խաւսին զԱստուծոյ զհայհոյութիւն: 25 Նովաւ տկարք զաւրութիւն առնուն. Նովաւ արդարք խրախուսեն եւ յաղթեն հակառակորդաց բռնաւորաց, եւ հանդիսանան ի պահել զպատուիրանս նորա, եւ իմաստնանան ի բարիս: 26 Ո՞վ է վերակացու եւ աւգնական վտանգելոց ի նեղութեան, որ առնէ զփորձութեան գելս, եթէ ոչ նոյն Աստուած^բ:

27 Այլ եւ զայնս յետս հարցուք զչար լեզուան, որ ի վերին զաւրացն պէտս ունին աւգնականութեան. կամ յերկրէս արդարոց ասեն զամենակալն Աստուած: 28 Զի ոչ ինքն ի նոցանէ առնու աւգնութիւն, այլ սպասաւորութիւն վասն այնոցիկ՝ որ ժառանգելոցն են զփրկութիւնն^գ նոքաք ըստ կամաց Արարչին: 29 Զի նորա իսկ են արարածք վերին զաւրք յանգոյից արարեալ. եւ ի նորա շնորհացն ընտրեցան սուրբք ի մարդկանէ: 30 Եւ զմտաւորս եւ զբանաւորս զորս հաստատեաց յանձնիշխան կամս, եւ զարձեալ փառաւորէ զողջախոհսն ի միասին զերկնաւորս եւ զերկրաւորս, որք պահեցին զհրամանս նորա եւ ժառանգորդք արքայութեան նորա եղեն: 31 Եւ երեւեսցի Աստուած ամենայն յամենայնի հրեշտակաց եւ մարդկան անդանաւր: 32 Զի Բանիւ Տեառն երկիրն եւ երկիր հաստատեցաւ, եւ Հոգւով բերանոյ նորա ամենայն զաւրութիւնն նոցա^դ:

33 Եւ յաղագս այնորիկ սուրբ մանկունքն ի հնոցին զամենայն արարածս ի փառաբանութիւն ամենակալ եւ ամենազաւր եւ ամենապարգեւ տէրութեանն յորդորեն հանապազ: 34 Քանզի ասէին. աւրինեցէ՛ք ամենայն գործք Տեառն զՏէր աւրինեցէ՛ք զարարիչն երկրի եւ երկրի եւ որ ի նոսա արարածք իցեմ, որ երեսին եւ որ ոչն երեսին^ե: 35 Զամենեսեան յանուանէ կոչեն ի գովեստ աւրհնութեան եւ փառաբանութեան ամենասուրբ անուանն, զմտաւորս եւ բանաւորս, զտիւ եւ զգիշեր, զլոյս եւ զխաւար, զծով եւ զցամաք զողակաւք եւ զեռնաւք, զգագանս եւ զանասունս, զսողունս եւ զթռչունս, զամպս եւ զանձրեւս, զեղեամն եւ զձիւն, զցուրտ եւ զտաւթ, զաւղս եւ զերկիր, զտունկս եւ զբոյսս, զլերինս եւ զբլուրս, զգաշտս եւ զանդունդս խորոց, զվիշապս եւ զկէտս, զհուր եւ զՂուր աղբերաց եւ զետոց: 36 Ի վերայ ամենայնի զիսրայէլ կոչէ յաւրհնութիւնս. յորոց ընտրեալ հարքն եւ մարգարէքն եւ առաքեալքն եւ մնացորդք ընտրութեան շնորհացն երեւեցան ծառայք Աստուծոյ բարձրելոյ եւ քահանայք Տեառն, եւ անձինք եւ հոգիք արդարոց եւ սուրբք եւ խոնարհք սրտիւք. եւ ի վերայ ինքեանց աւարտեն զաւրհնութիւնն առ Աստուած, զի մի՛ այլ ազգ ինչ թուիցին. այլ զի ծանիցեն ամենեքեան թէ եւ նոքա արարածք իցեն ամենեցունց Արարչին, զորս ի փառաբանութիւն կոչեցին հոգեւոր երգովք անուամբք:

37 Որ եւ մեզ աւանդեցաւ այս հոգեւոր երգ. զի այսպիսի հոգեւոր երգովք յաւրինուածովք խորհրդածութեամբ ըստ տաւնից, ըստ Քրիստոսի մարդանալոյն, եւ մերոյ փրկութեան, եւ նահատակութեան սրբոց յիշատակաց, եւ զՂման ապաշխարողաց, եւ հանգուցելոց յայսոսիկ շարալծեալ, աւրհնեսցուք գովեսցուք եւ բարձր

^ա Տէ՛.Յ.Յ.ԼԸ:
^բ Տէ՛.Ե.Կ.Պ.Ժ.13:
^գ Ե՛.Ք.Ե.14
^դ Ս.Պ.Լ.Ը.6

^ե Հմբ.Գ.ան.Գ.57:

արասցուք զԱմենասուրբ Երրորդութիւնն, որ արար զամենայն արարածս, եւ ետ մեզ մխիթարութիւն եւ գոյս բարի ի փառս իւր: 38 Զի որ անսկիզբն է եւ ամէնիմաց եւ մշտնջենաւոր եւ աղբիւր ամենայն բարութեանց վերնոց եւ ներքնոց, նորա խնամովք ի բարի գործս արարան, եւ կան ի կամս նորա միշտ: 39 Զի ամենայն եղեալք՝ որպէս գոյութիւն բնութեանցն եկամուտ է, այսպէս եւ ամենայն ինչ որ ըստ սոցայն է ըստ իւրեանց կարգին եկամուտ է. խրատ գիտութեան եւ իմաստութեան, եւ ամենայն քաջաց եւ առաքինեաց է գաւրավիզ: 40 Որ ի չգոյէ ի գոյ էած, եւ երեւելիս եւ փառաւորս արար գտուրբս եւ զարդարս՝. եւ հրաւիրանաւ կոչեաց՝ յիւր արքայութիւնն եւ ի փառսն, յանփոփոխ երանութիւնսն, յանսպառ յուրախութիւնսն, եւ յանեղծ եւ յանապական կեանսն: 41 Ուստի Հեռի են ամենայն տրտմականք եւ տխրականք, եւ մերձ յանմատոյց լոյսն. ի փառս եւ ի գովութիւն եւ յաւրհանութիւն Ամենասուրբ Երրորդութեանն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ յաւիտենից յաւիտեանս. ամէն:

ԻԳ

ԵՐԱՆԵԼՈՅՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ
ԽՐԱՏՔ ԶԳՆԱԻՈՐԱՅ ԵՒ ՅՈՅՅՔ
ՀԱՆԴԻՍԻՑ, ՈՐ ՅԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ
ՅՈՐԳՈՐԵՆ

1 Ամենայն որք հրաժարեցան յաշխարհէս եւ ընծայեցին Աստուծոյ զանձինս ի հնազանդութիւն ճշմարտութեան սուրբ հարցն աւանդից՝ կուսութեամբ ճգնաւորել յաղագս խոստացեալ աւետեացն, զգոյշ կացցեն խորհրդոց եւ բանից եւ գործոց. զի մի՛ խայթեցէ դարանակալ աւճն՝, եւ խափանեսցէ ըստ Աստուծոյ զգնացս

սրբութեան եւ արդարութեան առաքինասէր վարուց:

2 Ամենայն հոգեւոր խրատուց անխարդախ կալ. բարկութեանն զհեղութիւնն միշտ. անզգամութեանն զհանդարտութիւնն. թշնամանաց զբարեբանութիւնն. անհնազանդութեանն զհնազանդութիւնն. ստահակութեանն զհաւանութիւնն. անհամբերութեան զհամբերութիւնն. ռիսակալութեանն զանոխակալութիւնն. մախանացն զաննախանձութիւն. դառնութեանն զքաղցրութիւնն. չարութեան զբարերարութիւն. անգործութեանն զգործասիրութիւնն. մեղմեխութեանն զուշնութիւնն. յարատութեանն զհամեստութիւն. կատականաց եւ ծաղեր զարտասուս. ատելութեանն զսէրն սուրբ ունել. անյուսութեանն զյոյսն առնուլ. տրտմութեանն զզուարթութիւնն. փորձանաց գերկայնմտութիւն. ազահութեանն զչափաւորութիւնն. ընչասիրութեանն զարհամարհանս. պատուասիրութեանն զնուաստութիւնն. թերահաւատութեանն զհաւատս ճշմարիտս, եւ որ այլ եւս են չարին մեքենայք՝ որ ընդդէմ ճշմարտութեանն զպատերազմ առնեն ընդ աչս եւ ընդ լսելիս եւ ընդ ունչս եւ ընդ ճաշակելիս եւ ընդ լեզուս եւ ընդ ձեռս եւ ընդ ոտս եւ ընդ սիրտս՝ որ խորհրդոցն է շտեմարան ի լաւն կամ ի վատթարսն հակամիտել: 3 Զորս պարտ է վերագոյնս առնել ամենայն վնասակարաց առաքինասէր վարուք ըստ յառաջ ասացելոց հանգամանաց խրատուց, որ ընդ չարեաց զպատերազմն առնէ զյարուցեալսն ի վերայ ճգնաւորացն ճակատամարտ միշտ: 4 Յայտոսիկ է մարտ մեծ. եւ դարձեալ յաղթութիւն մեծագոյն, որովք հակառակամարտն կործանեսցի՝ որ յայտոսիկ է պանծացեալ, եւ հրապուրանաւք յուսայ յաղթել նորամտիցն:

5 Բայց դու, ո՛վ անձն, որ ընծայեցար Աստուծոյ, մի՛ զնա քեզ խորհրդակից առնուր. այլ մարտիր զբարիքն մարտն, եւ

« Հմմտ. Հռոմ. Գ. 17:
 † Հմմտ. Հռոմ. Բ. 28:
 ‡ Տէ՛ս Թիմ. ԻԵ՛ 6:

բուռն հար զայսոցիկ խրատուց, անմոռաց ունելով զախոյեանն սուրբ ճգնաւորաց, որ շաղեն եւ պատեն զոգիս եւ զմարմինս: 6 Ուշ ունելով մտերիմ խորհրդով եւ արժանաւորապէս ըստ Աւետարանին Քրիստոսի կրաւնաւորի: 7 Մերկանալ զաշխարհական ցանկութիւնս ամենայն, եւ զգեհնուլ զնոր մարդն ամենայն բարի գործովք զարդարեալ ներքոյ եւ արտաքոյ սուրբ եւ անարատ կատարեալ արդարութեամբ եւ սրբեալ յամենայն ցանկութեանց երկրաւորացս:

8 Նախ զաստուածսիրութեան զհանգամանս յանձին հաստատել սուրբ սրտիւ եւ անկեղծաւոր հաւատով. պատրաստ լինել ըստ արժանի իւրոյ ընծայութեանն յոր կոչեցաւն. յամենայն բժից անարատ եւ մաքուր եւ հաճոյ Աստուծոյ լինել: 9 Մտաւք եւ ամենայն անդամովք հաստատուն եւ անշարժ եւ անդրդուելի կալ ի կարգի ճգնաւորական հանդիսիցն: 10 Մարտնչել ի հոգեւորական մարտին ընդդէմ հանապազորդեան թշնամւոյն. որ ընդ զգայութիւնսն եւ ընդ խորհուրդսն ի ներքս պատերազմ է, եւ յաղթութիւն ի վերին աւգնականութենէն. իմաստութեան հոգւոյն առաջնորդել յամենայն արդարութիւնս, եւ ի վայր կործանել զհակառակամարտն բարեձեւութեան կարգաց եւ կրաւնից: 11 Զի զէն զիմուրուքեանն զգնաւորաց չէ մարմնաւոր, այլ հոգեւոր յԱստուծոյ առ վանումն չարին: 12 Անսրբութեանն զսրբութիւնն ի ներքս ամբարել յամենայն անդամսն. եւ յանմաքուր խորհուրդսն զողջախոհութիւն սրբեալ յամենայնի: 13 Որկորստութեանն զպարկեշտութիւնն. արբշուութեանն զժուժկալութիւնն. շուայտութեանն զհամեստութիւնն. ծուլութեանն զհանդէսս առ ամենայն ջանս: 14 Թուլութեանն զպնդութիւնն. ճանճրութեանն զփոյթն. ամբար-

տաւանութեանն զխոնարհութիւնն. հպարտութեանն զնուաստութիւնն. սնափառութեանն զանփառութիւնն. ստութեանն զստուգաբանութիւնն. երդմնահարութեանն զճշմարտութիւնն. խորամանկութեանն զկատարեալ սէրն:

15 Եւ զգուշացեալ ամրացեալ կացցես աղաւթիւք եւ պահովք ջերմեռանդ արտասուաւք, սուրբ սիրով, շնորհալից յուսով եւ բաղձալից գթով առ Աստուծոյ կամսն: 16 Ահիւ եւ երկիւղիւ ի բարեպաշտութեան ջանս յառաջանալ միշտ, եւ առաւելուլ ի բարի գործս, եւ ոչ պակասեցուցանել յառաքինութեան վաստակոց յերեւելեաց կամ յաներեւութից. եւ զհանգամանս չարին խափուցանել հանդիսաւոր յառաջադիմութեամբ: 17 Զփառասիրութիւն զամենայն ի բաց ընկենուլ եւ զցանկութիւն չարեաց եւ զմեղս դիւրաշարժս իրաւամբք արդարութեան, առողջութեան անարատութեան: 18 Անբիծ երախտեաւք սուրբ սիրոյն անհանգիստ կալ ի ճգնաւորական մշակութեանն ըստ բարերար սիրոյ երախտեացն Աստուծոյ առ ի հնազանդութիւն Աստուծոյ եւ առ որս հազորդութիւնն եղեւ սիրով:

19 Զի ճշմարտեալ պահեսցէ զմիաբանութիւնն յաւրիւ խաղաղութեան անբարեփորձ մտածութեամբք առ ի կատարեալ հաւանութիւնն եւ ի հնազանդութիւն եղբայրութեանն եւ հաւատացեալ առաջնորդին. որով եւ զխոստովանութիւնն նովաւ ընծայեաց Աստուծոյ ստուգապէս. որով եւ զպտուղ ապաշխարութեանն առնէ ըստ սխալանաց խորհրդոց եւ բանից եւ գործոց: 20 Զի զթողութիւն մեղացն առցեն ի Փրկչէն վկայութեամբք առաջնորդին եւ եղբայրութեանն. եւ յայնոսիկ անշարժ հաստատուն արմատացեալ կացցեն ի նոյն վանս: 21 Եւ մի՛ երկմտեսցեն. զի որ երկմիտն է, նման է հոգմակոծեալ եւ տատա-

*** Հմմտ. Ի Կ** Ժ 4:

նեալ ալեաց ծովու. մի՛ ակն կալցի մարդն այն առնուլ ինչ յԱստուծոյ բարիս^ա: 22 Այլ ճշմարտեալ հաւատով եւ անբիծ վարուք կատարեսցէ զառաքինութիւնսն ահիւն Աստուծոյ, ի շնորհաց Սուրբ Հոգւոյն զաւրացեալ համբերութեամբ բազմաւ ըստ առաքելոյ խրատուն, ի նեղութիւնս, ի վիշտս, ի չարչարանս, ի գանս, ի բանդս, ի խոռվութիւնս, յաշխատութիւնս, ի հսկմունս, ի պահս, ի սրբութեան, ի քաղցրութեան, ի բարութեան Հոգւոյն Սրբոյ յարդարեալ^բ:

23 Զի որ սիրէն զիս, *ասէ Տէրն*, զպատուիրանս իմ պահեսցէ, զոր Սուրբ Հոգին ազդեաց. ապա ես եւ Հայր իմ եկեսցուի եւ արեւանս առ նմա արասցուի^գ: 24 *Որքան է մեծութիւն եւ փառք եւ շնորհք, որք տաճար լինին Ամենասուրբ Երրորդութեանն. զի* Բնակեցայց ի նոսա, ասէ, եւ սրբեցից եւ եղէց նոցա Աստուած, եւ նոքա եղիցին ինձ ի ժողովուրդ^դ, *ասէ Տէր ամենակալ*:

25 *Արդ, քանզի որ զայս աւետիս ունին ճգնաւորք, կատարեսցուք զսրբութիւն ահիւն Աստուծոյ. անբիծ անարատ սուրբ սիրով հնազանդել ընդ ամենահէտ լծովն՝ որ թեթեւ է առաքինեաց անձանց եւ ծանր աշխարհասիրաց, զորս եւ կոչէ քաղցր ձայնիւ, ասէ*. Եկայի առ իս ամենայն աշխատեալի եւ բեռնաւորի, եւ ես հանգուցից գնեց. առէի զլուծ իմ ի ձեզ, եւ ուսարուի յինէն զհեղութիւն, զխոնարհութիւն եւ զհնազանդութիւն եւ զամենայն արդարութիւնս, եւ գտչիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ իմ քաղցր է յաղագս յուսոյն, եւ բեռն իմ փոքրոցի յաղագս առաւել վարձուցն հատուցմանց^ե:

26 *Զամենայն դժնդակ ապարասանութիւնս զբարուց շարժանց սանձել խաղաղարար ազատութեամբն եւ անարատ սրբութեամբն, եւ մտել ի նաւահանգիստն հանդարտութեան հոգւոյ եւ մարմնոյ, եւ յամենայն վշտագին հարուածոց չար ցանկութեանց ազատել*: 27 Ունկնդիր լինել առաջնորդաց խրատուց եւ հպատակ կալ նոցա հրամանացն^ա, *եւ նոքա մի՛ անհոգ լիցին ժողովրդեան ուխտին, զի համարս տալոց են վասն նոցա յաւուրն այցելութեան*:

28 *Եղիցի յամենեսեան ճշմարտասիրութիւն. մի՛ բանսարկուս, մի՛ խորամանկս, մի՛ հակառակողս առ հրամանս վերակացուին, մի՛ տրտնջողք ի գործ կամ յայլ ինչ իրս, մի՛ խռովարարք եւ թշնամանողք*: 29 Զի որ գնեց խոռվեցուցանէ, կրեսցէ դատաստան ո՞ ոք եւ իցէ^բ *ասէ առաքեալ*: 30 *Այլ զհետ երթալ խաղաղութեան եւ զսուրբ սիրոյ. եւ լինել որդիք Աստուծոյ եւ ժառանգակիցք Քրիստոսի, որ արար խաղաղութիւն յերկինս եւ յերկրի*: 31 *Եւ հնազանդել եւ հաւանել միմեանց երկիւղիւն Տեառն*: 32 *Անխզելի պահել զմիաբանութիւն եղբայրութեանն հաւանական սուրբ սիրովն, որ ի միմեանս կապէ եւ ոչ թողու քայքայել եւ անջատել ի միմեանց պատճառանաւք, որ զանձին վրէժ խնդրեն եւ ոչ զմիաբանութիւն սիրոյ*:

33 *Եւ որ վերակացուն է, զգաստ լիցի առ մերձաւորս եւ նախատես առ հեռաւորսն. խրատել զեղբարս խորագիտութեամբ ըստ ժամանակին, ըստ ընդունելութեանն, ըստ բարուց սրտին*: 34 *Զկրսերն խրատել յահ եւ յերկիւղ Տեառն եւ ի հնազանդութիւն եղբարցն*: 35 *Եւ հաւանեալ ամենեցուն ի կամս առաջնորդին եղբայրութեանն՝ ոչ ինչ ի գործելեացն առանց*

^ա Հմմտ. Յակ. Ը 7:
^բ Հմմտ. Բ Կոր. Գ 5:
^գ Հմմտ. Յով. ԺԳ. 23:
^դ Բ Կոր. Գ 16
^ե Հմմտ. Մատթ. ԺԸ 28-30:

^ա Տե՛ս Եբր. ԺԳ. 17:
^բ Գաղ. Ե 10

կամաց նորա եղիցի: 36 Եւ որ արտաքոյ նորա կամացն խորհի ինչ կամ ասէ կամ գործէ, պարտաւոր է ապաշխարութեան. զի զառաջնորդն արհամարհեալ՝ զԱստուած արհամարհէ. քանզի ասաց Տէրն. Որ զձեզ անարգէ, զիս անարգէ. եւ որ զձեզ ընդունի, զիս ընդունի. եւ որ զբանն ձեր պահեսցէ, զիմն պահեսցէ:՝

37 Այլ խոնարհութեամբ եւ կամաւոր հնազանդութեամբ նուաճեալք առ Հասարակաց աւգուտն, եւ հաւանութիւն Աստուծոյ պատուիրանին եւ հաւատացեալ յԱստուծոյ առաջնորդին: 38 Զի որք են, ասէ, յԱստուծոյ կարգեալ են. եւ որք ընդդիմակացն են, կրեսցեն դատաստան որք եւ իցենէ: 39 Եւ հաւանեալ ի մի վանս եւ ի մի միաբանութիւն փառաց Ամենասուրբ Երրորդութեանն միաշունչք եւ միախորհուրդք, ոչ ըստ գրգռութեան իրիք եւ ոչ ըստ սնապարծութեան, որպէս աւրինադրէ առաքեալ. այլ խոնարհութեամբ զմիմեանս առաւել լաւ համարել քան զանձինս: 40 Նոքա են, որ գտուրք սիրոյն զիւրմ միշտ յիմեանս ունին, եւ պայծառ լապտերաւմ մտանեն յառազաստն: 41 Զորս ամենակալ Հայրն ուրախ առնէ յաւետիս երկնաւոր փեսային յանսպառ ուրախութիւնսն:

42 Բայց որ որոշին եւ մեկնին ի միաբանութենէ եղբայրութեանն, նոքա նմանեալք են յիմար կուսանացն, եւ զիւր սիրոյն ոչ ունին. որոց փակի առագաստն յազագս շիջանելոյ հարսանեկան՝ ջահիցն: 43 Որք լսեն ի ձայնէ փեսային, զի որով ոչ ցուցէք յեղբարս զսէրն, եւ զմիաբանութեան կապն խզեցէք, երթալք ի խաւարն արտաքին: 44 Եւ որք զմիաբանութիւն սիրոյն հոգեւոր առ եղբայրութիւնն ա-

ռողջ պահեցին եւ զմիամտութիւն առ վերակացուն, երանելիք են. եւ ամենայն բարեաց հանգամանս եւ առաքինութեան ցոյցք ի նոսա է տպաւորեալ:

45 Եղբայր զեղբայր յորդորելով ի բարի գործս ի հանդէս բարի նախանձու ի սէր Աստուածութեանն ամենայն հաւատարմութեամբ զիւրաքանչիւր գործն յառաջացուցանել փութասցէ, եւ անդանդազ զփառաբանութիւնն կատարել ի Տէր. եւ աւր ըստ աւրէ յաւելուած լիցի լաւութեան եւ պիտանութեան: 46 Զգաստութիւն եւ զգուշութիւն եղիցի գործաւորացն որ ի նա հաւատացաւն իւրոցն՝ զամենայն ստուգութեամբ աւարտեսցեն հաճոյ Աստուծոյ եւ առաջնորդին եւ եղբայրութեանն:

47 Եւ հասարակաց պաշտաւնն մի՛ պատճառանաւք ինչ խափանեսցի, բայց եթէ ի պէտս ինչ եկեղեցւոյն զբաղեալ հրամանաւ վերակացուին. սակայն եւ անդ կատարեսցի աղաւթքն: 48 Եւ ամենայն ուրեք պաշտաւն աղաւթիցն հոգեւորապէս կատարեսցի անխափան. ի նստել ի տան, ի գնալ ի ճանապարհի, ի գործել եւ ի ննջել եւ ի յառնել: 49 Եւ չթողուլ ի մտաց զյիշատակսն Աստուծոյ. այլ եւ զկամսն նորա առնել ըստ ամենայն արուեստից սրբութեամբ եւ արդարութեամբ. եւ մտաւքն հանապազ դեգերեալ կացցէ ի դրունս ողորմութեանն Աստուծոյ անդադար խնդրուածովք եռանդնասէր հոգեով եւ արտասուաւք ջերմեռանդ միշտ, զի ընդունելութեան արժանի լինիցին աղաւթքն. եւ պարգեւատու լինի ամենակալն Աստուած, որ զամենեցուն կամի զփրկութիւն, եւ արքայութեանն արժանաւոր լինել ի Քրիստոս Յիսուս:

50 Եւ դիւրաւ հաւանութիւն ճշմարիտ սիրով առ վերակացուն եղիցի ամենեցուն. եւ մի՛ ըստ իւր կամացն խնդրեսցէ զգործն ի նմանէ, այլ զոր նայն հաւատայ ի հասարակաց աւգուտն, ի մարմնաւոր պէտս եւ ի հոգեւոր շահս: 51 Զի կարացեն ա-

՝ Հմմտ. Ղ.՝ 16:
Ք Հմմտ. Հռոմ. 13: 2:
Գ Հմմտ. Փլա. 1: 2, 3:
Դ Տէ՛՞ Մաթ. 16:
1 Ի լուսանցս օրինակին մերոյ՝ հարսանեացն

սել ամենեքեան՝ թէ՛ յորմէ հետէ ընծայեցաք Աստուծոյ, զամենայն կամս մարմնոյ եւ զմտաց խափանեցաք, եւ տուաք զանձինս ի ծառայութիւն նախ Տեառն եւ ապա առաջնորդաց ի հնազանդութիւն ըստ պատուիրանին Աստուծոյ, որ ի սուրբ հարցն մեզ աւանդեցաւ:

52 Զի որպէս անդամք մարմնոյն մի մարմին են յաւրեակ եւ պատշաճեակ, սակայն իւրաքանչիւր գիւր ներգործութիւնն առանձին ունի, աչք տեսանեն, ականջք լսեն, ունչք հոտոտին, լեզու խաւսի եւ բերան ճաշակէ, ձեռք գործեն, ոտք գնան եւ միտք իմանան, եւ նովաւ շարժին զգայութիւնքն ի գործ հոգեւորաց եւ մարմնաւորաց, այսպէս ժողովուրդ Աստուծոյ սիրով յաւրեակ եւ միաւորեակ ի կամս Աստուծոյ եւ առաջնորդական միտքն ի վերակացուն՝ որ գտեսչութիւն եղբայրութեանն ունի միշտ. եւ այլք զհաւանութիւն ըստ իւրաքանչիւր ներգործութեան: 53 Զի որ թուին յանդամսն եթէ տկարագոյնք են, կարելորք են այլոցն առ սպասաւորութեանն հանգամանս: 54 Եւ որպէս չէ հնար յառողջ անդամոցն հատանել, բայց ապականեալն յանբժշկելեացն ի բաց հատումն՝ որ առանց բժշկութեան ունի զվէրս. եւ զի ոչ է հնար յայլոց անդամոց յայլս յարել, նոյնպէս առանց բժշկութեան է որ ի միաւորեակ եղբայրութենէն հատանի եւ ի վանացն որոշի, եւ գուխտն եւ զսէր եւ զզաշխնան, որ առաջի Աստուծոյ՝ անարգէ, եւ լինի պարտաւոր յաւիտենից տանջանացն:

55 Բայց եթէ ի կամաց վերակացուին եւ ի հասարակաց եղբայրութեանն բռնադատեսցի յեպիսկոպոսութիւն կամ յառաջնորդութիւն այլոց եւ ի քահանայութիւն՝ որ զնոյն կարգ ունիցին ի Տէր, եւ զայս ոչ յաւժար կամաւք ընդունել: 56 Բայց եթէ յառաջնորդէն եւ յեղբարցն հարկաւորեալ բռնադատեսցի, բազում արտասուաւք եւ ապաշաւանաւք յաղազս փրկութեան

այլոց հաւանեսցի, եթէ իցէ այնպիսի ոք, որ ոչ հայհոյեսցի անուն Տեառն Աստուծոյ մերոյ: 57 Բայց ճշմարիտ սուրբ սիրոյն ի յեղբայրութենէն եւ հաւանութիւն յառաջնորդէն մի՛ հանցի. այլ որպէս զմիմեանս հոգայցեն ի հոգեւոր լրումն:

58 Նա եւ ամենայն ուղղափառ ժողովք եպիսկոպոսաց՝ որ զուղղափառ հաւատսն հաստատեսցին եւ կանոն սահմանեցին եկեղեցւոյ, եւ զայս սահմանեցին նզովիւք. Եղբայր ոք, ասէ, մի՛ իշխեսցէ ի վանացն ելանել կալ ուր եւ կամեսցի առանց կամաց վերակացուին եւ եղբայրութեանն. եւ որ ոք յանդգնեալ զայս առնէ, ընդ նզովիւք կապեսցի ի հարցն: 59 Զի ամենայն ոք յոր ինչ կոչեցաւն՝ ի նոյն կայցէ՝ ասէ առաքեալն Աստուծոյ: 60 Զի ամենեքեան ի մի յոյս կոչեցան ի Քրիստոս. զի մի մարմին պատուական ի սուրբ մարմնոյ նորա եւ յարենէ պատսպարեցան ի փառատրութիւն:

61 Ապա եթէ ունի ինչ պատճառս մեկուսանալոյ, մի՛ ծածկեսցէ յառաջնորդէն եւ յեղբայրութեանն. եւ բազմացն վկայութիւնքն հաւատարիմ է առաջի Աստուծոյ եւ ամենայն ուխտին: 62 Զի արհամարհեալ ուրուք զաւրէնսն Մովսէսի՝ առանց ողորմութեան առ երկու կամ երիւք վկայիւք մեռանէր. իսկ ո՞րչափ սաստիկ պատժոց արժանի համարեսցուք զայնոսիկ՝ որ մարմնով եւ արեամբ դաշնաւորեալք ի միաբանութիւն ըստ ուխտի եւ հրաժարման յաշխարհէս սկզբման կարգին ի պահել զաւանդն միաբանութեամբ մինչեւ ցվախճան: 63 Եւ գիտեմք զայն որ ասացն Տէր. Իմ են վրէժխնդրութիւնք, եւ ես հատուցից, ասէ Տէր, զհնոյն եւ զնորոյն պատիժս:

64 Այլ այս ջան ի մտի կայցէ վերակացուին՝ զաղտնի եւ յայտնի խրատ առ

“ Հմմտ. Ե. կ. ր. Է. 20:
 է՝ Հմմտ. Հմմտ. Ժ. Բ. 19:

ամենեսեան, զի կարասցէ ուղղել զթիւրեալսն ի ճանապարհացն արդարութենէ ի ճշմարտութեան աւանդսն: 65 Եւ յամենայնի ոչ անհոգ լինել ի խոստովանութիւնս եւ յուղղութիւնս հոգևով եւ մարմնով. զի զամենայն որք նմա հաւատացան՝ կատարեալս կացուցէ առաջի բեմին Քրիստոսի^ա: 66 Զի որ արասցէ եւ ուսուցցէ, մեծ է առաջի Աստուծոյ:

67 Այլ որ տնտեսն է՝ համարեսցի զինքն Աստուծոյ մատակարար. ահիւ եւ երկիրդիւ տնտեսեսցէ զհաւատացեալսն յԱստուծոյ աւանդսն, եւ զգուշացի անաւթոցն. մի՛ ի ծուլութենէ կորուսցէ, եւ կամ յարհամարհանաց արտաքս ընկեսցէ. եւ անփոյթ արարեալ աւանդիցն յաճախ ի ծախս առից ոչ ի հաճոյս Աստուծոյ, եւ կրեսցէ դատաստան ի Տեառնէ՝ որ ի միտ առնու զամենայն զխորհուրդս եւ զգործս. զի ամենայն ինչ յԱստուծոյ է նուիրեալ յաղագս պիտոյից եղբայրութեանն:

68 Մի՛ հեղգասցի ի գործ կամ ի բաշխելն անհաւասար. այլ յամենայնի զԱստուած առաջի աչաց կալցէ, եւ ահիւն Աստուծոյ ստուգապէս մատակարարեսցէ հրամանաւ վերակացուին: 69 Արթուն եւ զգաստ լինել առ ամենայն կամս սպասաւորութեան. ըստ իւրաքանչիւրոցն արժանի ըստ պիտոյիցն զգարմանսն առնել: 70 Ծերոցն, հիւանդաց, տկարաց, ճանապարհորդաց, վաստակաւորացն եւ որ ի վնասուցն կարգի իցեն, ըստ արժանեացն եղիցի մատակարարելն հոգեւորապէս ըստ Աստուծոյ:

71 Մի՛ աչառանաւք եւ կամ խեռիւ, զի մի՛ զրկեսցին ի վարձուցն հատուցմանց. այլ որպէս մայրենի գթովք առ ամենեսեան լիցի, զի առցէ զվարձն յամենակալ Հաւրէն՝ եկայի աւրհմեալի Հաւր իմոյ, ժառանգեցէ՛ք զարքայութիւնն^բ. զի որովհետեւ արարէք տնտեսութիւն եղբարց, ինձ արա-

րէք: 72 Թողում ասել եւ որք այսպէս ոչ արարին՝ զպատիժ պատուհասիցն, զհուրն անշէջ:

73 Եւ որք շաբաթաւորքն են, կահուցն զգուշացին, եւ զգործսն մտերմութեամբ կատարեսցեն:

74 Եւ տեսուչք հիւրոցն մի՛ անտես առնել զկարաւտեալսն, եւ զհիւրին դարմանսն ըստ իւրաքանչիւրոցն զպէտսն լնլով զուարթամտութեամբ. եւ մի՛ աղմկել առ խնդիրսն, այլ սիրով եւ անխռով զամենեսեան յուղարկել բանիւք եւ իրաւք:

75 Եւ ինքեանք մի՛ լուծցեն պատճառանաւք հիւրոյն զպահս եւ զաղաւթս, զի մի՛ զրկեսցին ի վարձուցն Աստուծոյ. այլ զգաստացին ամենայն գործաւորք ի ժամ աղաւթիցն, զի մի՛ ի հեղգացելոցն ի դատաստանս անկանիցին: 76 Եւ յամենայն իրս ի կամաց վերակացուին եղիցի հրաման. զի ասացեալն ի նմանէ ընդունելի եղիցի ամենայն յամենայնի ի կամս Տեառն: 77 Եւ որ ինչ նոքաւք մատակարարին, նմա պարտ է գիտել զամենայն որպէս արժանն է:

78 Այլ եւ որ տեսուչք են եզանց հողագործաց կամ խաշանց արաւտականաց եւ հաւտից կթոց եւ գրաստուց բեռնակրաց, ամենեքին ուշ կալցին խնամելոյ, եւ հաւատարմութեամբ ցուցանել զարդիւնս շայեկանս ամենայն ճշմարտութեամբ, որպէս Աստուծոյ գործավարք եւ իմաստուն մշակք արդիւնակատարք՝ ժողովել յտեմարանս, զի իցէ աննուազ տալ ում պիտոյ իցէ: 79 Տալ զնոցա աշխատութեանցն պտղաբերութիւն ի տուն Տեառն Աստուծոյ. եւ զհատուցումնն առցեն յԱրարչէն ըստ իւրաքանչիւր վաստակոց. որ տեսանէ ի ծածուկ եւ հատուցանէ յայտնապէս յաւուրն այցելութեան զանսպառ բարիսն. որ

^ա Հմմտ. Կող. Ը՝ 28:
^բ Հմմտ. Մատթ. ԻԵ՝ 34:

ի սակաւունց հաւատարիմ եղեալ՝ ի բազում բարիսց վայելեմ^ա:

80 Սոյնպէս եւ որոց աւգն հաւատացաւ, զիւրաքանչիւրոցն զպէտան կաւչկաց կատարեսցեն առանց հակառակութեան եւ ակնառութեան, եւ որ այլ ինչ պէտք են աւգոյն: 81 Ամենեցուն հեզութիւն եղիցի նպաստաւոր խնդրողացն եւ կատարողաց զառ ի պէտան արժանաւոր սիրով եւ խոնարհ սրտիւ, զի ժառանգեսցէ զաւրհնութիւնս:

82 Նոյնպէս եւ ամենայն ոք որոց գործ հաւատացաւ եւ հոգք առ ի պէտս եղբայրութեանն, ահիւ եւ զգաստութեամբ եւ առանց խարդախութեան ըստ ամենայնի լիցի: 83 Միշտ զԱստուած ունել առաջի աչաց, եւ ոչ իւրիք ի ճշմարտութենէն վերջանալ. այլ ստուգապէս որպէս Աստուծոյ մշակ անխարդախ յամենայնի: 84 Ամենեցուն գործավարաց եւ գործակալաց սկիզբն վերստին յերկիւղ Տեառն լիցի. եւ երկիւղիւ յարմարել զգործն ի շահ աւգտից հոգէխառն յառաջադիմութեամբ հաւատարիմ ի գործ մշակութեան անվեհեր փութով: 85 Ոչ որպէս մարդկան հաճոյ, այլ որպէս Աստուծոյ՝ որ քննէ զսիրտս եւ գերիկամունս. ի միտ առնուլ զիւրաքանչիւրոցն զյաւժարութիւն. զբան եւ. զգործ: 86 Որ հաւատարիմն են յամենայնի հոգեւոր շահիւքն եւ մարմնաւոր ըստ Աստուծոյ պատուիրանին, եւ շինութիւն եղբայրութեանն ի հաւանութիւն ուխտին, ժառանգեն զկեանսն յաւիտենից:

87 Իսկ որ զհակառակութեան եւ զանսրտացաւութեան եւ զպղերգութեան զմիտս ունիցին, մեկնեալ ի ճշմարտութենէն, ի հեռ եւ ի նախանձ, ի ստահակութիւն եւ ի տրտունջ, ի բամբասանս եւ ի շոգմոգութեան բանս արկեալ, բարկութիւնն Աստուծոյ կայ եւ մնայ ի վերայ նո-

ցա. հուրն ահեղ եւ ամենափորձ՝ որ այրէ զխոտանսն, եւ զսուրբան լուսաւորէ անշիջանելի լուսովն:

88 Եւ եղիցի վերակացուն հայր բարեմիտ, բարեխորհ եւ բարեգործ. աւրինակ լինել ամենայն բարեձեւութեան կարգաց եւ կրաւնից, աղաւթից եւ պահոց, խոնարհութեան եւ հեզութեան, ուղղութեան եւ ճշմարտութեան, տքնութեան եւ արտասուաց, խաղաղութեան եւ հանդարտութեան, սիրոյ եւ երկայնմտութեան, իրաւանց եւ արդարութեան, աշխատութեան եւ ժուժկալութեան, պարկեշտութեան եւ զգաստութեան, անարատութեան եւ անբժութեան. անբամբաս յամենայն ի վերագոյնսն՝ ըստ աւրինաց արդարութեան եղեալ յամենայնի. եւ հաւատացեալ նմա յԱստուծոյ ժողովուրդ իմաստութեամբ եւ գիտութեամբ խրատել. ի սրբութիւն եւ յամենայն առաքինասէր վարս զաստուածային սէրն զաւրացուցանել յանձինս, եւ արհամարհել զաշխարհիս սէր: 89 Եւ երկաքանչիւրոցն հաւաստիք երեւել առ ամենեսեան՝ Աստուածայնոյ սուրբ սէրն: 90 Զի որ սիրէմ զիս, ասէ Տէրն, զպատուիրանս իմ պահեսցէ. եւ որ ոչն սիրէ զիս, զպատուիրանս իմ ոչ պահէ^բ:

91 Եւ զի վերակացուն հայր հոգեւոր կոչեցաւ, եւ ծնեալքն առ ի նմանէ հոգեւոր որդիք ըստ կարգի ճգնաւորաց. որ առաւել ունի զհանգամանս քան զմարմնաւոր ծննդոց. որպէս զմկրտութեանն ունի զնմանութիւն ըստ ամենայնի: 92 Եւ այսպէս լինել որդիք լուսոյ եւ որդիք արդարութեան՝ հրաժարեալք յաշխարհական ի զբաղմանց, որ մթացուցանեն զմիտս եւ խաւարեցուցանեն զգգայութիւնս, եւ առնեն որդիք խաւարի եւ ժառանգք դժոխոց:

93 Եւ զի պարտ է հոգեւոր ծննդոց հոգեւոր վարս ստանալ կատարեալ հնա-

^ա Տէ՛. Մ. Գր. Ի. Ե. 21:

^բ Յ. Գր. Ժ. Գ. 23-24

զանդութեամբ առ հոգեւոր հաւրութիւնն, նովաւ զխոստովանութիւնն Աստուծոյ ընծայել ստուգութեամբ, եւ մի՛ սուտք ի խոստովանութեանն լինել: 94 Ըստ ամենայն սխալանաց վնասուց զդեղ բժշկութեանն զիւրաւ ընկալցին. եւ առ ամենայն հրամանսն հաւան եւ հպատակք, որպէս յերկնաւոր Հաւրէն առեալ հրաման առ գործ պատուիրանին, որ զհասարակաց եղբայրութեանն զհանգամանսն հոգևով եւ ճշմարտութեամբ. Զայն խորհել եւ առնել որ եւ ի Քրիստոս Յիսուս, որ հնազանդ եղել էաւր մահուչափ եւ մահու խաչի^ա: 95 Եւ նա ոչ ամալթ համարի զկոչեցեալսն եւ զհրաւիրեալսն ի կարգ աստուածային կրանից եղբարս անուանել զնոսա ինքեան եւ ասել. Պատմեցից զանուն քո եղբարց իմոց. ի մէջ եկեղեցեաց աւրինեցից զքեզ^բ:

96 Եւ այսպիսի հաւանական մտաւք եւ սուրբ սիրով վերաբերիլ յամենայն վնասակարացն՝ որ ընդ երկիր քարչէ. վերնոցն զհետ երթալ երկնայնոցն եւ անմահից, որ կուսութեամբ է նոցա սեպհակաւորութիւնն եւ անարատ վարք եւ հանապազորդ փառաբանութիւն Ամենասուրբ Երրորդութեանն: 97 Զի մաքուր եւ ամբիծ եւ անարատ կուսութիւն ընտանութիւն ունի առ վերին զաւրս երկնաւորացն ժողովսն. եւ զփառաբանութիւնն նմանապէս ունին առ Աստուած: 98 Զի վարք ճգնաւորաց՝ երկնայնոցն նմանեցան, եւ ի նոցանէ ունին զհանգամանս կարգաց արուեստից ըստ ամենայն հանդիսից: 99 Զի երկրաւոր բանակք ճգնաւորաց ճշմարտեալք սուրբ սիրով եւ անբիծ զգայութեամբ՝ յարդարեալք հրեշտակական կարգաւորութեամբ՝ զերկնաւոր բանակացն ունին զհամեստութիւն: 100 Արդ, պետք եւ իշխանք զաւրացն անմարմնոց որ սպասաւորութիւն

ըստ իւրաքանչիւր կարգի ունին առ Աստուած կամաւ եւ առ միմեանս եւ առ ազգս մարդկան, որպէս եւ կամք ամենեցունց Տեառնն սահմանեցին զիւրաքանչիւրոցն զիշխանութիւն եւ զպատիւ եւ զսպասաւորութիւն ըստ նախախնամութեանն: 101 Իսկ ստամբակեալն ի վերին իշխանացն բանակաւն իւրով ի բարւոյն ի վայր անկեալ՝ մեզ պատերազմողք եղեն, եւ սատանայ անուանեցան եւ դեւք. ըստ անուանցն զհակառակ բարւոյ զգործս ունին առ ամենայն մեղսասիրութիւն, ինքն եւ ամենայն չար զաւրք իւր:

102 Եւ իմանալի է զբանակս ճգնաւորաց, որք զհրեշտակային կարգս զգեցեալ ունին ի յերկրի, ի նոյն կարգս հրեշտակաց վերամբառնան ի տեղի անկելոց հրեշտակացն: 103 Եւ Տացի, ասէ ցոցա մարգարէն, տեղի անուանի առաւել քան զուստերաց եւ զգստերաց իմոց. եւ անուն յաւիտեանական տաց ցոցա, եւ մի՛ պակասեցէ փառքն^գ: 104 Զայս աւետիս ունին բանակք սուրբ ժողովոց, միաբանեալք սուրբ սիրով եւ առաքինասէր վարուք ընդ Աստուածութեանն իսկ կապեալք եւ ոչ ի վայր բերեալք յերկնայնոցն յուսոյն պատրանաւք բանսարկուին՝ որ մախացող է ճգնաւորաց կրանից, հանապազ թշնամի արդարութեան: 105 Եւ նա է որ հրապուրէ եւ աւցտէ ի ճշմարիտ աւանդիցն. զոմանս բաժանէ անափառութեամբ յեղբարցն պատճառանաւք բարեգործութեան եւ սնոտի խաբէութեամբ ի մեղս, եւ է որ ընդ խորհուրդսն եւ ընդ զգայութիւնսն ի ներքս մուծանէ զամբարշտութեան վնասսն:

106 Յոյս այսպիսի ունել կրանաւորաց՝ բազում զգուշութեամբ կայցեն ի մշակութեան բարեձեւութեամբ վարուց եւ սրբութեամբ երեւելեալք եւ աներեւութիւք. զի մի՛ զրկեսցին յայնքան առաքինութեան պատուոյն ի հրեշտակական դա-

^ա Փլա. Բ՝ 8
^բ Սաղմ. ԻԼ՝ 23-24

^գ Ե.՝ Ե.՝ 9, 5

սուցն եւ ի փառացն, որ նոցայն աւանդեցաւ յԱրարչէն: 107 Լնուլ զպակասութիւն վերնոցն՝ ներքնովքս առաքինութեամբք. վերաբերեալք ի գետնաքարչիցս, եւ հաղորդակից լինել բարևոյ քաղաքավարութեանն, եւ ընդ նոսա միաձայնեալ՝ Ամենասուրբ Երրորդութեանն մատուցանեն զփառս անճառելի աւրհնութեամբ:

108 Եթէ այսպէս արդարացեալք ճշմարիտ հաւատով եւ անարատ վարուք կրաւնաւորեալք եւ սուրբ սիրով, եղիցի նոցա երկիր նոր ի նորոգումն կենաց հանոյիցն Աստուծոյ, եւ երկիրն նոր պայծառագոյնութեամբ՝. զոր ակն ոչ ետես, եւ ունկն ոչ լուաւ, եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սրբոց կուսանաց եւ ճշմարտասէր կրաւնաւորաց:

109 Այլ յիշատակաւք վերնոցն յուսով՝ հարք բարեսէրք եւ բարեգութք եւ բարեխորհրք լիցին նմանեալք Հաւրն երկնաւորի, որ նախախնամական սիրովն իւրոյ խնամէ զարարածս ամենայն հոգեւորապէս եւ մարմնաւորապէս երեւելի եւ աներեւոյթ դարմանաւք, հոգեխառն սիրով եւ բարեպաշտագոյն երեւմամբ ի Քրիստոս Յիսուս: 110 Եւ որդիք բարեհաւանք եւ սրբասէրք եւ ճշմարտասէրք, որոշեալք յամենայն դժնդակացն որ երեւին եւ որ ոչն երեւին: 111 Եւ բուռն հարեալ զհրեշտակական վարուց, սուրբ սրտիւ եւ անարատ մարմնով, ողջախոհ խորհրդով եւ անկեղծաւոր հաւատով, իրաւախոհք եւ հնազանդք առ Հայրն հոգեաց եւ տեսուչ մարմնոցն: 112 Առ որ միանգամ հանգուցեալ եղիցին հոգևով պաշտմամբ հաճութեանն, վստահութեամբ ընտանութեանն հոգեւոր հարազատութեանն, անկարծիս միաւորութեամբ իբրեւ անդամք մարմնոյ առ ի միմեանս: 113 Քանզի մի մարմին եմք ի Քրիստոս, պինդ կալցուք զխոստովանութիւն անշարժ յուսոյն, եւ սովին

հաւատովք կատարեալք լիցուք, կապեալք միով հոգևով յարմարմամբք յաւդիւք, պնդեալք սովին հաւատովք անխզելի կապակցութեամբ. եւ ոչ մի իւրիք բարեճեւութեամբ խաբէութեան զամրութիւն միաբանութեան եղբայրութեանն քակել: 114 Վասն զի այս միայն աւանդ ի Տեառնէ առաքելովքն անվրէպ մեզ հաւատացաւ, որ ասէրն, թէ՛ Այսու ծանիջի՛ք յամենեցունց, թէ՛ աշակերտք իմ է՛ք, եթէ սէր ընդ միմեանս անփակ ունիջի՛ք, որ է գլուխ մերոյ կատարման: 115 Եւ առանց այսր՝ եթէ ոք առանձին մտաբերիցէ յառաքինութեան համարի, զոր եւ գործիցէ իսկ ի բարձրագունիցն առանց կամաց առաջնորդին եւ եղբայրութեանն, անընդունելի է Աստուծոյ, եւ ի մեղս համարեսցի: 116 Իսկ որ զճշմարիտ աւանդութիւնս հաստատուն պահեն, տաց նոցա ի տան իմում տեղի ի միասին բնակելով հոգեւորաւք եւ մարմնաւորաւք. եւ ոչ անջատեալ ի միմեանց, այլ սուրբ սիրով առ միմեանս կեալ միաբանութեամբ. վասն զի սա է մայր ամենայն բարեաց: 117 Վասն այսորիկ յաճախագոյն ասեմ զբանս սիրոյն. վասն զի այս է բարի եւ ընդունելի Աստուծոյ, եւ նոյն ինքն հրամանք նորին:

118 Այլ մի՛ ոք խորհրդով յածիլ եւ մարմնով գայթակղիլ. այլ մնալ ի լաւագոյն սովորութեանն ի կամս միամիտս եւ յիշատակս վերին որդէգրութեան Հաւրն երկնաւորի եւ մարդասիրի: 119 Առնուլ զգրաւականն հոգեւոր եւ ուսանել զհանգամանս. եւ որոշեալ զէսն եւ գերեւեալսս՝ երկնայնոցն փափագելով գերկրայինս արհամարհել: 120 Եւ մեկնել ի զբաղմանց աշխարհիս, մերձ ի հրեշտակայինսն լինել վարս. ոչ հայելով յերկրաւորս, այլ լինել ընդունակ լուսոյն աստէն, որ ի ձեռն մարմնոյ եւ արեանն Տեառն վերաստեղծու ի զգաստութիւն, հանապազ արժանաւոր

՝՝ Տէ՛. Ե՛. Կ. 9. 22:

՛՛ Յ՛. Լ. Ժ. 9. 35

ըստ հաղորդելով ըստ ճշմարիտ մաքրմանն եւ կենդանարար Քրիստոսի ազատութեանն, որ շնորհեցաւ սիրողաց Աստուծոյ եւ կոչեցելոց սրբոց ի կարգ աստուածային: 121 Եւ ի միւսանգամ Գալստեանն իւրոյ շնորհէ զանսպառ բարիսն ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգին Սուրբ, Որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

**Ա.ՂԱԻԹՔ ՅՈՐԺԱՄ ՅՈՐՈԳԱՅԹ
ԱՆԿԱՆԻՑԻ ՈՔ, ԶՈՐ ԱՍԱՑԵԱԼ Է
ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՍԱԻՈՐՁԻՆ**

1 Աւրհնեալ է անբաւ մարդասիրութիւն քո, Տէր իմ Յիսուս Քրիստոս. ընդէ՞ր լքանես զիս. եթէ վասն մեղաց, դու միայն ես առանց մեղաց, եւ անուն քո զանոխակալութիւն եւ զմարդասիրութիւն ցուցանէ: 2 Գթա յիս, վասն զի դու միայն ես մարդասէր: 3 Ապրեցո զիս զանկեալս ի մեղս. վասն զի դու միայն ես առանց մեղաց: 4 Հա՛ն զիս ի տղմոյ անաւրէնութեան իմոյ, զի մի՛ ընկղմեցայց յաւիտեան: 5 Փրկեա՛ զիս ի թշնամւոյ իմոյ, քանզի ահա իբրեւ զառիւծ մունչէ կամելով կլանել զիս: 6 Արդ, Տէ՛ր իմ, փայլատակեալ զփայլատակունս քո եւ կործանեա՛ զգաւրութիւն նորա. երկիցէ եւ խաւարեսցի յերեսաց քոց, քանզի տկար է եւ ոչ ունի զաւրութիւն կալ առաջի քո եւ ոչ առաջի սիրողացն զքեզ: 7 Տեսանէ զգաւրութիւն նշանի Խաչի քո եւ զարհուրի, եւ ամաչելով ի բաց հալածի յայնցանէ՝ որ կարդան առ քեզ: 8 Այժմ, Տէ՛ր, կեցո՛ զիս եւ ապրեցո՛, վասն զի ի քեզ ապաւինեցայ.

հա՛ն ի նեղութենէ զանձն իմ, զի մի՛ իսպառ կորուսցէ զիս նենգաւորն, որ մարտնչի ընդ իս ծածուկ հնարիւք: 9 Որ խորհրդոց ես Տէր եւ քննես զսիրտս եւ զերիկամունս, սրբեա՛ զսիրտ իմ եւ զխորհուրդս ի զազիր եւ ի պիղծ խորհրդոց, զի մի՛ իսպառ կորեայց զյաւիտենական կորուստն: 10 Որ կարողդ ես յամենայնի, ողորմեա՛ ինձ Աստուած իմ. տո՛ւր զշնորհս արտասուեաց մեղուցեալ ողւոյս, որպէս զի լուացից զբազմութիւն մեղաց, զի ապրեցայց ի ձեռաց անողորմ հրեշտակաց, որք արկանեն զամբարիշտն ի հուր գեհենին: 11 Երանի թէ լայի հանապազ՝ աղաչելով զքեզ, Աստուա՛ծ, զի մի՛ անարժան գտայց ի ժամուն, որ գալոց ես: 12 Մի՛ լուայց զահաւոր զձայնն, եթէ՛ ե՛րթ ի բաց, մշակդ անաւրէնութեան, ոչ գիտեմ ուստի ես: 13 Աստուած բարձրեալ՝ միայն առանց մեղաց, շնորհեա՛ ինձ մեղաւորիս յաւուր յայնմիկ զբազում գթութիւն քո. զի մի՛ յայտնեսցին ծածուկ ամբարշտութիւնք իմ առաջի տեսողաց հրեշտակաց եւ հրեշտակապետաց, մարգարէից, առաքելոց եւ արդարոց սրբոց: 14 Ապրեցո՛ զիս զամբարիշտս շնորհաւք ողորմութեան քո. ընկա՛լ զիս ի դրախտն փափկութեան ընդ կատարեալ արդարսն. ընկա՛լ զաղաւթս մեղուցեալ ծառայիս քո բարեխաւսութեամբ սրբոցն, որք հաճոյ եղեն քեզ, Յիսո՛ւս Քրիստոս, Տէ՛ր մեր, որ ես ակրհնեալ ընդ Հաւր եւ Սուրբ Հոգւոյդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԿԱՆՈՆԷ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԳԼՈՒԽԷ Լ.

- 1 Ա. Վասն քահանայից որ² մեղանչեն³:
- 2 Բ. Վասն⁴ քահանայի⁵ որ կին առնու⁶:
- 3 Գ. Վասն քահանայի⁷ որ վաչխ առնու⁸:
- 4 Դ. Վասն⁹ որք¹⁰ ուտեն ի տունս¹¹ հեթա-
նոսաց¹²:
- 5 Ե. Վասն կուսանի¹³ եւ երկեակի¹⁴:
- 6 Ջ. Որ¹⁵ զերկրորդ կինն¹⁶ թողու եւ յա-
ռաջինն¹⁷ դառնայ¹⁸:
- 7 Է. Որք¹⁹ ի տեղոյ²⁰ ուտիցեն²¹:

- 8 Ը. 22Երիցու²³ որ գաղտ պսակ դնիցէ²⁴:
- 9 Թ. Վասն առեւանկաց²⁵:
- 10 Ժ. Որք²⁶ ի ձիսն հային յագելապէս²⁷:
- 11 ԺԱ. Վասն²⁸ իգացելոց²⁹:
- 12 ԺԲ. Վասն³⁰ թովչաց:
- 13 ԺԳ. Որ³¹ զկուսութիւն³² իւր³³ Աստու-
ծոյ նուիրեաց³⁴:
- 14 ԺԴ. Մանուկ որ³⁵ առանց կնքոյ³⁶ մե-
ռանի³⁷:
- 15 ԺԵ. Որ³⁸ զգերեզման³⁹ բանայ առ ան-
ձուկ⁴⁰:

1 *ú* կանոնախմբի թիւը մուծուած է վերնագրում՝ կանոն ժա սրբոյ գրիգորի լուսաւորչի *փխ*. կանոնի ... գլուխի վ *bcdfhloqrt* չունեն վերնագիրը եւ ամբողջ ցանկը *W* չունի վերնագիր *a* վերնագիր եւ ցանկն ընկած է *UNOPV* գլուխ *Y* | գլուխի *ABCDEFGHIU* սրբոյն գրիգորի կանոնիս գլուխի վ *eg* կանոնի եւ սահմանի սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին գլուխ վ (*g* չի *f* գլուխ վ) *kmps* կանոնի սրբոյն գրիգորի առաջելոյ հայոց, չի *f* գլուխի վ | *i* կանոնի սրբոյն գրիգորի առաջելոյն հայոց երեսուն գլուխ *n* կանոն սրբոյն գրիգորի հայոց լուսաւորչի ունի գլուխս երեսուն *úeg* չունեն ամբողջ ցանկը

2 *Y* որք

3 *kmps* գառածեալ են ի մեղս *փխ*. մեղանչեն

4 *kmps* չի *f* վասն

5 *LMQRSTXYZ* ֆահանայից *kmps* ֆահանայ

6 Բացի *ikmp-ից*, մնացած *ձեռագրերը*՝ առնէ

7 *MQRXY* ֆահանայից

8 *kmps* ֆահանայ որ գարծաթ իւր ի վարձու տա *փխ*. վասն ... առնու

9 *AJKLMQRSTUXZi* չի *f* վասն

10 *L* ոյք

11 *U* տօնս *փխ*. տունս

12 *kmps* վասն որք (*k* որ) ի տունս հեթանոսաց ուտեն եւ ըմպեն

13 *U* կուսին

14 *BCDEFGHPWin* երկակի *N* երկեայկի *kmps* վասն որ մինն կուսան եւ մինն (*s* մին) երկեակ

15 *ENOV Wn* վասն որ

16 Բացի *BCDEFGHPRUVUin-ից*, մնացած *ձեռագրերը*՝ կին

17 *I* առաջին *X* առաջինն *YWi* յառաջին

18 *kmps* վասն կնացողաց

19 *Zn* վասն որք

20 *IXYW* տեղոյ

21 *U* ուտիցին *kmps* վասն որ ուտեն զայլոյ ինչսն

16 ԺԶ. Վասն որ զգրիս⁴¹ կողոպտեն:

17 ԺԷ. Վասն որք⁴² կոծ դնեն:

18 ԺԸ. Վասն նշխարաց⁴³ վկայից⁴⁴:

22 *n* վասն երիցու

23 *O* իրիցու

24 *YU* դնէ *kmps* վասն որ գաղտ պսակ դնեն

25 *kmps* վասն առեւանկի

26 *En* վասն որք

27 *RXY* յագելապէս հային *kmps* վասն որ ի ձիս յերասանան

28 *p* չի *f* վասն

29 *K* իգացելոցն

30 *Y* չի *f* վասն

31 *Wn* վասն որ

32 Բացի *AERi-ից*, մնացած *ձեռագրերը*՝ զկուսութիւն

33 *W* չի *f* իւր

34 *KLZU* նըւիրեաց *kmps* վասն որ զկուսութիւն խոստանան

35 *n* վասն մանկան որ

36 *Uin* կնքու

37 *i* մեռնի *kmps* վասն որ առանց կնքոյ մեռանին

38 *n* վասն որ

39 *NO* զգերեզմանն *VY* զգերեզման *i* զգերեզմանս

40 *W* չի *f* առ անձուկ *R* անձակ *kmps* վասն որ զգերեզմանս բանան առ անձուկ

41 *Q* չի *f* որ, զգիրս *փխ*. զդիս

42 *Wkmps* որ

43 *G* նշխարիաց

44 *kmps* վասն որ ի վերայ նշխարաց մարտիրոսաց պատարագ մատուցանեն

- 19 ԺԹ. Վասն որք¹ զխառնակս² անասնոց³
նկատեն⁴։
- 20 Ի. Վասն անապատականաց⁵։
- 21 ԻԱ. Վասն զհրաման⁶ մեռելոց ունել⁷։
- 22 ԻԲ. Վասն ծածուկ խոստովանութեան⁸։
- 23 ԻԳ. Վասն որ⁹ զկին իւր արձակեսցէ¹⁰։
- 24 ԻԴ. Վասն որ զկին¹¹ իւր թողու¹²։
- 25 ԻԵ. Վասն որ արբենայ¹³։
- 26 ԻԶ. Վասն որ¹⁴ կաշառ¹⁵ առնու¹⁶։
- 27 ԻԷ. Վասն ճեռնածուաց¹⁷։
- 28 ԻԸ. Վասն կիւրակէի¹⁸։
- 29 ԻԹ. Վասն վայրապար նզովելոյ¹⁹։
- 30 Լ. Վասն մոնոզոնի²⁰։

1 *Wkmps* որ

2 *Uin* զխառնակ *kmps* զխառնուածս

3 *R* անասնոցն

4 *Q* նկատին

5 *kmps* վասն անապատականաց որ մկրտութիւն առնեն

6 *M* զհրամանս *U* հրաման

7 *kmps* վասն որ զհրամանս մեռելոյ լուծանեն Բացի *CDGH-ից*, մնացած *ձեռագրերը*՝ զհրամանս *Vn* մեռելոցն *i* մեռելոյ

8 *JKLT* խոստովանութեանն *U* խոստովանութեամբ *kmps* վասն փահանայից որ զխոստովանութիւն յայտնեն

9 *Q չի՞* որ

10 *kmps* վասն արձակելոյ զկին

11 *i* կին

12 *kmps* վասն կնաթողաց

13 *N* արբենայք *kmps* վասն արբեցողաց

14 *Q չի՞* որ

15 *J* կաշար

16 *kmps* վասն կաշառառուաց որ փահանայ է

17 *n* ձեռնածուածոց

18 Բացի *AUYWn-ից*, մնացած *ձեռագրերը*՝ կիրակէի *kmps* վասն պատուելոյ զաւր կիրակէի

19 *kmps* վասն փահանայ (*k* փահանայի *s* վահանայ) որ վայրապար նզովէ

20 *BCDEFGH* մոնոզովմի *kmps* վասն կուսից եւ մոնոզոնաց որ ուխտեցին Աստուծոյ

ՎԱՆՈՆՔ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՌԱՔԵԼՈՅ ՀԱՅՈՑ

1 ՅԻԱ (ՅԺԷ) Ա. Քաճանայ որ² ի մեղս զառածեալ է՝ Ժ³ ամ ապաշխարեսցէ ջերմեռանդն սրտիւ⁴, արտասուաւք⁵, տրաւք⁶ տնանկաց, ապա⁷ մտեալ հաղորդեսցի⁸:

2 ՅԻԲ (ՅԺԸ) Բ. Քաճանայ որ⁹ կին¹⁰ առնու¹¹ Ե¹² ամ արտաքոյ, Բ¹³ ի¹⁴ ներքս¹⁵ ապաշխարեսցէ¹⁶, եւ Բ ամս անհաղորդ կացցէ եւ ապա հաղորդեսցի¹⁷:

3 ՅԻԳ (ՅԺԹ) Գ. Քաճանայ որ զարծաթ¹⁸ իւր ի¹⁹ վարձու տայ²⁰ մերժեսցի յեկեղեցւոյ²¹:

4 ՅԻԴ (ՅԻ) Դ. Որք²² երթան ի տունս²³ հեթանոսաց, եւ ուտեն²⁴ եւ ըմպեն²⁵ անխտիր՝ Գ ամ²⁶ արտաքոյ ապաշխարեսցեն²⁷, ապա արժանի լիցին²⁸ հաղորդել²⁹:

5 ՅԻԵ (ՅԻԱ) Ե. Որ մին³⁰ կուսան³¹ եւ մին³² երկեակ³³ Բ ամ³⁴ արտաքոյ եւ մի՛ ընդ³⁵ աւրինաւք³⁶:

6 ՅԻԶ (ՅԻԲ) Զ. Եթէ ոք³⁷ թողցէ³⁸ զերկրորդն եւ յառաջինն³⁹ դարձցի ի թո-

1 *üeg* չունենն երկրորդ վերնագիրը *H* կանոն *X* սրբուն *rt* առաջելոյն *Ui* չիք առաջելոյ *IJKLM-NOPQRSTUVWXYZ* չիք առաջելոյ հայոց բացի *EIJKLMNOPQSVXYZW*-ից, մնացած ձեռագրերը ունենն հայոց գլուխք լ (*Rehort* գլուխ *d* գլուխս ըստ լ *afklps* լ գլուխ *m* երեսուն գլուխք *o* չիք լ) *bc* կանոնն սրբոյն գրիգորի հայոց լուսաւորչի ասացեալ *q* գլուխ յաղագս հաւատացեալ ազգիս մերոյ *փխ*. կանոնն ... հայոց *n* սահմանն սրբոյն գրիգորի լուսաւորչի գլուխք լ *փխ*. կանոնն ... հայոց

2 *LNOW* եւ որ ի

3 *Wi* տասն

4 *Y* ջերմեռանդ սրտի ապաշխարեսցէ *HKLR-VXWUbddegklnmngt* ջերմեռանդ *H* սրտ[?] *U* չիք սրտի

5 *G* արտասուք *ü* եւ արտասուք *t* եւ արտասուք *b* արտասուք

6 *KLMQRXZbeghlot* եւ տրոք (*նաեւ*՝ եւ տրաւք)

7 *t* եւ ապա

8 *U* յաղորդեսցի

9 *d* որ քահանայ

10 *t* որ այրի կին

11 *Բացի Wmt*-ից, մնացած ձեռագրերը՝ առնէ

12 *Habchiklmoprst* է *փխ*. ե

13 *Wulo* եւ *p* *h* եւ *q* *փխ*. *p*

14 *H* չիք ի

15 *m* ի ներքոյ

16 *RX* եւ ամ ապաշխարեսցէ արտաքոյ *p* ի ներքոյ *Y* եւ ամ ապաշխարեսցէ արտաքոյ *p* ամս ի ներքոյ ապաշխարեսցէ *d* եւ ամ արտասուք արտաքոյ կացցէ եւ *p* ամ ի ներքոյ

17 *abdefgkmpqs* չիք եւ (*p* ամս) *Yüdhillort* ամ *b* *p* ամսան *q* ամսան հաղորդ կացցէ եւ ապա հաղորդեսցի ապաշխարութեամբ *փխ*. *p* ամս ... հաղորդեսցի *q* ամհաղորդս *d* ապա հաղորդեսցի *սի*ւ

18 *eg* զարծաթն

19 *H* չիք ի

20 *IJ* տայցէ *i* իւր *փխ*. տայ *b* տայ տոկոսիւ նա մերժեսցի ի յեկեղեցոյ եւ ոչ պատարագէ գրիստոս Աստուած

21 *H* եկեղեցւոյ *ILRYUch* յեկեղեցոյ *efgq* ի յեկեղեցոյ

22 *i* որ

23 *U* տուն *փխ*. տուն

24 *LYUbefghioqrs* չիք եւ (ուտեն)

25 *t* խմեն

26 *abefgkmpqs* ամս *r* *q* ամ կամ արտաքոյ

27 *BCDEGHJ* ապաշխարեսցին *cd* ապաշխարեսցէ

28 *üt* եւ ապա *d* արժան է *übefgq* չիք արժանի լիցին *MRXY* լինիցին *c* եղիցի *d* չիք լիցին

29 *ücefq* հաղորդեսցին *d* հաղորդութեան *hlo* հաղորդին *rt* հաղորդիլ

30 *Ucdgt* մինն *hl* մի

31 *d* կուս է *gr* կուսան է

32 *gh* մինն բացի *KRXYZüabdfiklmoprst*-ից, մնացած ձեռագրերը՝ մի (երկեակ)

33 *DHU* երկակ *hl* երկեակ

34 *i* երկեակ է *p* ամ *q* երբեակ *փխ*. երկեակ *H* չիք ամ

35 *c* արտաքոյ ապաշխարեսցէ եւ *ա* ընդ *begq* մինն (ընդ) *i* մէկ (ընդ) *dhlmoprst* ա *փխ*. մի (ընդ) *hlo* չիք ընդ

36 *KLQZT* յարինամ *b* արինամն

37 *K* չիք ոք

38 *üq* բողցի

39 *I* գերկրորդ կինն եւ յառաջինն *GUs* առաջինն *Yoig* յառաջին *hl* զառաջինն

դեալն¹ է ամ² արտաքոյ³ եւ⁴ Ա⁵ ընդ աւ-
րինաւք⁶:

7 ՅԻԷ (ՅԻԳ) Է. Թէ⁷ ոք կերիցէ⁸ ի⁹
տեղւոյ¹⁰ արգելցէ գուտելն¹¹ եւ¹² տացէ¹³
աղքատաց նոյնչափ:

8 ՅԻԸ (ՅԻԴ) Ը. Թէ¹⁴ ոք գաղտ պսակ
դիցէ¹⁵ պսակադիրն¹⁶ լուծցի¹⁷:

9 18ՅԻԹ (ՅԻԵ) Թ. Թէ¹⁹ ոք առեւանկ²⁰
արասցէ՝ պսակն անվաւեր²¹ լիցի եւ պսա-
կեալն ում կամիցի²² լիցի²³:

10 ՅԼ (ՅԻԶ) Ժ. Որ²⁴ ի ձիւն²⁵ յերա-
սանան²⁶ յագելապէս²⁷ Գ ամս²⁸ արտա-
քոյ²⁹ եւ³⁰ Ա³¹ ի³² ներքս:

11 ՅԼԱ (ՅԻԷ) ԺԱ. Իգացելոցն³³ Գ
ամս արտաքոյ եւ Ա ի ներքս³⁴:

12 ՅԼԲ (ՅԻԸ) ԺԲ. Թովչացն³⁵ Ե³⁶
ամ³⁷ արտաքոյ եւ Ա³⁸ ի ներքս, մեծ ողոր-
մութեամբ³⁹:

13 ՅԼԳ (ՅԻԹ) ԺԳ. Որ զկուսութիւն⁴⁰
իւր Աստուծոյ⁴¹ նուիրեաց եւ ապա⁴² ապա-
կանեցաւ⁴³ է⁴⁴ ամ⁴⁵ ապաշխարեսցէ⁴⁶:

14 ՅԼԴ (ՅԼ) ԺԴ. Մանուկ, որ⁴⁷ ա-
ռանց կնքոյ⁴⁸ մեռանի⁴⁹, եթէ⁵⁰ ի ծնաւ-
ղացն ծուլութենէ⁵¹ լինի⁵² Ե ամ⁵³ արտա-
քոյ, Ա⁵⁴ ընդ աւրինաւք⁵⁵: 15 Նոյն¹ եւ

1 b դարձեալ cq դարձի Yúbdn չիբ ի Y թողեալ I
թողեմ
2 CDFHU ե ամ W եօքն H չիբ ամ
3 b արտաքս եկեղեցոյն
4 abcdfiloqt չիբ եւ
5 NOW մին VY մի ú ամ փխ. Ա.
6 b արիւնաւքն
7 Iúabcdefgghklmpqst եթէ
8 U կիրիցէ
9 G չիբ ի
10 Yúiaefghkmpqrst տեղոյ cd տեղոյ
11 Iú ի գուտելն Y ի ուտելոյ X եւ գուտելն DGH
զ[ուտ]ելն
12 begq չիբ եւ
13 ú տացցէ
14 úbcdeghloqps եթէ
15 befq դնէ g դնիցէ
16 di պսակադիր hl պսակադիրսն
17 c պսակադիրքն լուծցիւն
18 bq մի նոր յողուած, որը կարծես Ը յողուածի
կրկնութիւնն է՝ եթէ ոք գաղտ պսակ դնեն որ (q
որէ) չիստուտ լինի (q չիբ լինի) նզովեալ եղիցի
19 BCEFGWúbcdeghloqst եթէ
20 S առեւանք eg առեւանք r առեւանքն AT առե-
ւանք
21 Z վաւեր A սկզբում գրուած է եղել պսակ ե-
ղեալն, սակայն գրիչը, եղ-ն հանել է, վերջինիս
վրայ դնելով հանման նշան, ուստի պահեցինք
պսակեալն ձեւը BCDEFGHIUadkmps պսակ ե-
ղեալն փխ. պսակեալն Y պսակաւորն i պսա-
կելն
22 A կամիցի բառի կամ մասը աջ լուսանցում
acdefgkmpqst կամի b եւ կամի i կամ փխ. կամի-
ցի
23 t լինիցի
24 Yt որք
25 Yacdeghilort ձիւ

26 MRXYhlnort երասանան q երասանին efg յերա-
կանան (b երական) փխ. յերասանան
27 c անյագելապէս hl արգելապէս o ագելապէս
28 UV Wúbdghilnoqst q ամ
29 ú արտաքս
30 ilrt չիբ եւ
31 MRXYdo մին befgq մի
32 t ա տարի ի
33 Uho իգացելոյն p սգացելոյն փխ. իգացելոյն
34 t չիբ ժա յողուածը CGbdefghiklmopqrs ամ Y
սկզբնապէս՝ ներքս յետոյ ուղղել են արտաքոյ i
չիբ եւ IQ մինն Wbfg մի ABEFKLMPQRSTU-
XYZú մին kmps ամ փխ. ա e ի ներքոյ
35 I թովչաց
36 Yabcdq է
37 ú ամս R չիբ ե ամ
38 KMQRXY մին H եւ ամ LSTZWbefgq մի
39 bq ողորմութեամբով e ողորմածութեամբ f ո-
ղորմութեամբ d չիբ մեծ ողորմութեամբ
40 Uq գկուսութիւնն
41 G իւր Աստուծոյ վնասուած է hlo չիբ իւր Աս-
տուծոյ b Աստուծոյ արհամարհեաց որ խոս-
տացեալ էր եւ ապականեցաւ փխ. Աստուծոյ ...
ապականեցաւ eg յԱստուծոյ
42 pqs չիբ ապա d յետոյ փխ. ապա
43 ST ապականեցաւ c ապականեաց
44 DGHU ե փխ. է
45 hlo եւ ապականեցաւ յետոյ է ամ
46 W եօքն ef ապաշխարեսցէ ջանիւ
47 d մանուկ մի որ DGHU չիբ որ
48 e կնքելու g կնքելու
49 Y մեռանիցի
50 U եւ եթէ
51 acms ի ծուլութեան
52 Lbq լիցի ú իցէ փխ. լինի
53 Yho է փխ. ե ամ
54 A աջ լուսանցում Gdkps եւ ա m եւ ա ի ներքս
ընդ hlo ա ամ W մի c չիբ ա
55 U արիւնիաւք

Հոգաբարձուացն² եւ քահանայիցն, որ ծուլացան³:

16 ՅԼԵ (ՅԼԱ) ԺԵ. Որ զգերեզման բանայ⁴ առ անձուկ՝ Դ ամ⁵ արտաքոյ եւ⁶ Ա ի⁷ ներքս⁸:

17 ՅԼԶ (ՅԼԲ) ԳԺԶ. Որ զգլխ¹⁰ կողոպտեն¹¹ ԺԵ ամ¹² արտաքոյ եւ¹³ Ա¹⁴ ի¹⁵ ներքս¹⁶:

18 ՅԼԷ (ՅԼԳ) ԺԷ. Որք¹⁷ կոծ դնեն եւ զհերս խզեն¹⁸ եւ կամ¹⁹ զճակատ հարկանեն՝ նզովեալ լիցին²⁰ ի կեանս եւ ի մահ²¹:

19 ՅԼԸ (ՅԼԴ) ԺԸ. Չէ²² պարտ ուր²³ նշխարք մարտիրոսաց²⁴ դնին²⁵, ի վերայ²⁶ պատարագ մատուցանել²⁷:

20 ՅԼԹ (ՅԼԵ) ԺԹ. Չէ²⁸ մարթ²⁹ քրիստոնէից³⁰ նկատել³¹ զխառնս³² անասնոց, առաւել³³ կանանց, պատուիրեն³⁴ արէնք³⁵. եւ որ³⁶ գտցի³⁷ ոք³⁸ նզովեալ³⁹ լիցի⁴⁰:

21 ՅԽ (ՅԼԶ) Ի. Ոչ⁴¹ հրամայեն⁴² կանոնք⁴³ անապատականաց⁴⁴ մկրտութիւն⁴⁵ առնել եւ⁴⁶ արէնս⁴⁷ տալ ժողովրդեան⁴⁸ կամ պսակ⁴⁹ դնել, զի այս գործ⁵⁰ առաջնորդաց է⁵¹:

22 ՅԽԱ (ՅԼԷ) ԻԱ. Եթէ⁵² ոք ելոյծ⁵³ զհրաման⁵⁴ մեռելոյ⁵⁵ եւ արհամարհեաց⁵⁶ նզովեալ⁵⁷ լիցի⁵⁸:

1 *ú* նոյնպէս (*c* նոյնդ է) *փխ*. նոյն
2 *W* հոգաբարձացն *b* մանկաբարձիցն *փխ*. հոգաբարձուացն
3 *ABCDEFGHIJKLMNQRSTUWXYZWúiacikmnp-rst* եւ որ ծուլացան (*A* ծուլացան *IWúc* ծուլացաւ) *f*ահանայն (*H* *f*ահանայայն) *d* եւ *f*ահանայ որ ծուլացան *hlo* եւ *f*ահանային որ ծուլացաւ
4 *I* բառնա *փխ*. բանայ
5 *ef* գ ամս *bghl* գ *փխ*. դ *X* չիբ ամ
6 *i* չիբ եւ
7 *i* ընդ *փխ*. ի
8 *hlor* ընդ օրինոք *փխ*. ի ներքս
9 *a* չունի ժգ յօղուածը
10 *U* գղիհս
11 *cdkms* կողոպտէ
12 *ú* չիբ ամ
13 *i* չիբ եւ
14 *Wbq* մի
15 *r* ընդ *փխ*. ի *d* չիբ ի
16 *bq* այս յօղուածը դրուած է ԺԷ-ի տեղը, ԺԷ-ն՝ ժգ-ի
17 *NOWcdeghlop* որ
18 *hlo* դնեն մեռելոյ կամ զհերս *t* դնեն ի վերա մեռելի եւ զհերս *d* խուզեն
19 *acdefmpst* չիբ եւ (կամ) *bq* չիբ եւ կամ *g* չիբ կամ
20 *ún* լիցի *egt* եղիցին *K* չիբ լիցին
21 *b* մահ այսպիսիւսն
22 *bdhlo* ոչ է *JPück* թէ *փխ*. չէ
23 *Ic* որ *փխ*. ուր *begq* չիբ ուր
24 *abcdefghiklmopqrst* մարտիրոսաց նշխարք (*bq* նշխար)
25 *NOSWbq* դնեն *eg* դնել *RXY* չիբ դնին
26 *eg* եւ ի վերայ
27 *dhlo* մատուցանեն

28 *ú* ոչ է *Pbdk* թէ (*hlo* եթէ) *փխ*. չէ
29 *dhlor* մարդ (*J* մարտ *begt* պարտ) *փխ*. մարթ
30 *V* քրիստոնէին *բացի* *AJQRdklm-ից*, մնացած *ձեռագրերը*՝ քրիստոնից
31 *b* կատարել *փխ*. նկատել
32 *q* զխառնակս *t* զխառնակումս *n* զխառն
33 *i* եւս առաւել
34 *ú* պատուիրէ *hlo* պատուիրանքն *p* չիբ պատուիրեն
35 *hlo* չիբ արւեմք
36 *Ur* որք *d* եթէ (*hlo* ուր *t* թէ) *փխ*. որ
37 *egq* գտցին *r* գրտի
38 *egkq* չիբ ոք
39 *q* լուծեալ *փխ*. նզովեալ
40 *Y* եւ որ գտցի ոք օրէնքն նզովեն զնոսս *b* այսպիսի եւ ոչ գտցին լուծցին *փխ*. եւ որ ... լիցի
41 *QST* ոչ է
42 *q* ոչ չիրամայեն
43 *RXY* կանոնք հրամայեն *b* ոչ հրամայեն արւեմքն եւ կանոնք
44 *HU* անպարտականաց *I* անպատկ նոցա *փխ*. անպատկանաց
45 *U* մկրտութիւնն *befhloq* մկրտութիւնս
46 *i* կամ *փխ*. եւ
47 *W* եւ օրեն *U* ի յարւեմ
48 *ILMRXZbehloq* ժողովրդեանն
49 *Y* չիբ պսակ
50 *chlo* գործս *eg* գործք
51 *begq* առաջնորդի է *i* առաջնորդեացն *n* առաջնորդացն է
52 *DGU* թէ
53 *b* լուծ *q* ելուծ *t* լուծանէ
54 *BCDEGHUabcdfhiklmopqrst* զիրամանս *eg* զիրամայեալս
55 *bcdegq* մեռելոց *nrt* մեռելոյն
56 *t* արհամարէ
57 *Z* նզովեաց
58 *eghlmorst* եղիցի *CG* չիբ լիցի

23 ՅԽԲ (ՅԼԸ) ԻԲ. Եթէ¹ ոք ի քահանայից զծածոկ խոստովանութիւն² ուրուք³ յայտնեաց⁴, անկցի յաշտիճանէն⁵ եւ ի կարգէ⁶ պաշտանէից⁷ մերժեսցի եւ մեղք⁸ չխոստովանողացն⁹ անկցի¹⁰ ի վերայ նորա¹¹:

24 ՅԽԳ (ՅԼԹ) ԻԳ. Որ¹² վասն¹³ պոռնկութեան¹⁴ արձակեսցէ¹⁵ զկին իւր՝ արձակեսցէ¹⁶, բայց Ա ամ¹⁷ սրբեսցի¹⁸:

25 ՅԽԴ (ՅՆ) ԻԴ. Այր¹⁹ որ զկին իւր թողու²⁰ ի պատճառս աստուածաշարութեան²¹ նզովեալ եղիցի²² ի կեանս²³ եւ ի մահ²⁴:

26 ՅԽԵ (ՅԽԱ) ԻԵ. Եթէ ոք²⁵ արբեցաւ ի քահանայից²⁶ կամ²⁷ ի սարկաւազաց

կամ²⁸ ի դպրաց²⁹ մի՛ իշխեսցէ ի³⁰ պատարագ կամ ի պաշտաւն³¹ մերձենալ³² մինչեւ³³ բազում³⁴ արտասուաւք եւ գթով³⁵ տնանկաց ապաշխարեսցէ³⁶, զի արբեցողք³⁷ ընդ սպանողս³⁸ են:

27 ՅԽԶ (ՅԽԲ) ԻԶ. Եթէ ոք ի քահանայից կամ յաշխարհականաց առցէ կաշառս³⁹ եկեսցէ⁴⁰ անէձքն⁴¹ Սիմոնի⁴² կախարհի⁴³ ի վերայ նոցա⁴⁴ եւ⁴⁵ կցորդ եղիցին⁴⁶ կաշառոյն⁴⁷ Յուդայի մատնչի⁴⁸ եւ Գէեզի⁴⁹ բորոտութեամբն⁵⁰ այրեսցին⁵¹ ոգիք⁵² կաշառառուացն⁵³:

- 1 BCDEFGHúg բէ
- 2 e խոստովանութիւն
- 3 c ուրուք խոստովանութիւն
- 4 U յայտնեայց
- 5 b ապա մա անկցի t անկցի ֆահանայութենէն եւ յաստիճանէն JNO աշտիճանէն DGHKLMQRS-TZUúegqr աստիճանէն XWdhiklmnops յաստիճանէն Y ի յաստիճանէն
- 6 IV ի կարգի
- 7 hlo պաշտանէիցն
- 8 Z չիք եւ մեղք
- 9 BCDEFGHYU չխոստովանողաց ո՛ն չխոստովանողաց b չի խոստովանողացն d չի խոստովանողացն
- 10 hlo կայցի (Q անցի) փ/ս. անկցի
- 11 abkmq ևոցա փ/ս. ևորա
- 12 eg որք
- 13 L չիք վասն
- 14 U պոռնկութեանն
- 15 abcdefghiklmopqrst արձակէ (զկին)
- 16 C արձակեակեսցէ (բայց) LMQRSTXYZ արձակեսցի U չիք արձակեսցէ
- 17 I ամ մի V Wacdkmpqs մի X մին befg զմի Ju չիք ա ho չիք ամ
- 18 NOW սրբեսցէ q սրբեսցի ի մեղաց r սրբեսցի ապաշխարութեամբ t ապաշխարութեամբ սրբեսցի
- 19 Ga այլ փ/ս. այր
- 20 cd այր որ թողու զկին իւր p արձակէ փ/ս. թողու U չիք թողու
- 21 n իւր ի պատճառս աստուածաշարութեան թողու YU աստուածաշարութեանն
- 22 GHúacdñkms լիցի Ubq չիք եղիցի
- 23 bq ի կեանս H չիք ի կեանս
- 24 hilort չիք ի կեանս եւ ի մահ
- 25 L ուրուք փ/ս. ոք p չիք ոք

- 26 V ֆահանայիցն Y չիք ի (ֆահանայից)
- 27 úq չիք կամ (ի սարկաւազաց) b չիք կամ ի (սարկաւազաց)
- 28 Y եւ փ/ս. կամ (ի դպրաց)
- 29 CDNOgU ի դպրոց փ/ս. ի դպրաց
- 30 rt չիք ի (պատարագ)
- 31 R պատարագ մատուցանել կամ c պաշտաւն
- 32 eg մի մերձենալ U մերձենեալ A մերձանալ
- 33 ú մինչչեւ q մինչ
- 34 U ի բազում
- 35 Y գթովք
- 36 d ապաշխարէ
- 37 a արբեցաւ b արբեցողսն d արբեցողն եւ մարդասպանն մի են փ/ս. արբեցողք ընդ սպանողս են
- 38 irt չիք ընդ սպանողս GYU սպանողսն LW սպանողսն c սպանողս n սպանողսն h շնացեալս (lo շնացողս) փ/ս. սպանողս բացի A-ից, մնացած ձեռագրերը՝ սպանալու
- 39 r եթէ ոք արբեցաւ ի ֆահանայից Y կամ ի աշխարհականաց CDGHJKLMNOQRSTUVWXYZWúegr աշխարհականաց b կաշառ ապա
- 40 b եկեսցեն U եկէ acdefghiklmopqrst եկեսցեն
- 41 acdhiklmor անեձք Impst անէձք
- 42 AIJKLMNORSTXYZWúakmnpqrst սիմովնի V սիմովն
- 43 KLMQRSTXYZb կախարհի
- 44 Fbcegqt ևորա փ/ս. ևոցա
- 45 DGH չիք եւ (կցորդ)
- 46 U եղեսցին abcdefgimpqrst եղիցի k լիցի
- 47 X կաշառառուն ú կաշառացն cd կաշառառոյն
- 48 H մատչի NXYWr մատնչին OReg մատնիչին bq մատնիչի
- 49 ú դէէզի Irt գեհեզի
- 50 úa բորոտութեամբ g բորոտութեանն
- 51 Un այրեսցի hl այրեսցեն s այրեցցին
- 52 KLMQRSTXZ յոզիք Unq ոզիքն Ydrt հոզիք b հոզիքն
- 53 Y կաշառառուցն d կաշառառուաց lo կաշառուացն

28 Յեւ (ՅեԳ) ԻԷ. Ձեռնածուացն՝ Ա ամ² արտաքոյ եւ Ա ի ներքս³, հանդերձ արտասուաւք եւ ողորմութեամբ⁴ քաւեսցէ⁵:

29 Յեւ (ՅեԴ) ԻԸ. Պարտ է քրիստոնէից⁶ պատուել զաւր կիւրակէի⁷, աղաւթել եւ հանգչել⁸ ի նմա, ապա եթէ⁹ ոք պահեսցէ հրէաբար՝ նզովեսցի¹⁰ ի Քրիստոսէ¹¹:

30 Յեթ (ՅեԵ) 12ԻԹ. Քահանայ որ վայրապար նզովէ՝ նզովեալ լիցի ի Քրիստոսէ¹³:

31 ՅՄ (ՅեԶ) Լ. Կոյս¹⁴ որ նուիրէ զանձն իւր Աստուծոյ, նոյնպէս եւ մոնազն¹⁵, մի՛ իշխեսցէ¹⁶ ամուսնանալ¹⁷. ապա¹⁸ եթէ¹⁹ գտցի²⁰ ի հաղորդութենէն²¹ անկեալ²² հեռացի²³, եւ եպիսկոպոսն²⁴ տեսցէ²⁵ զվարսն²⁶ եւ որպէս կամի՝ մարդասիրեսցէ²⁷:

1 eg ձեռնածուածքն
2 Wbefgq մի ամ
3 JW եւ ա (w մի) ամ ի ներքս befgq մի (ի ներքս) *ü* ամ *փ/ս*. ա *բ չի/ի*, *ձ* իրքս *փ/ս*. ներքս
4 I ողորմ
5 Jüc քաւեսցիւն LVYabdefgkmpqs քաւեսցի (*նաւս*՝ քոսցի)
6 A քրիստոնէից *d* քրիստոնէիցն
7 c կիւրակէին *it* կիւրակէին. *քացի YWüf-ից*, *մնացած ձեռագրերը*՝ կիւրակէի
8 *ür* հանգչիլ
9 *hiklmoprst* թէ
10 N նզովեսցէ Yübdeghiloqrt նզովեալ եղիցի (*üdir* լիցի) *փ/ս*. նզովեսցի
11 *t* ի Քրիստոսէ Աստուծոյ *eg չի/ի* Քրիստոսէ
12 M իք յողուածը ներքեւի լուսանցում
13 eg նզովէ զմարդ նզովեալ եղիցի ինքն *փ/ս*. նզովեալ լիցի ի քրիստոսէ *t* լիցի ինքն ի քրիստոսէ *բ չի/ի* նզովեալ լիցի ի քրիստոսէ Yünq եղիցի Yg չի/ի Քրիստոսէ

14 *bq* կոյսն *irt չի/ի* կոյս
15 *hlo* որ նուիրէ զանձն իւր Աստուծոյ կոյս նոյնպէս եւ մոնոզն KLZU նուիրէ *t* զանձն իւր նուիրէ *d* զինքն *փ/ս*. զանձն իւր *bq չի/ի* իւր *er* յԱստուծոյ HV befgnprst մոնոզն Y մոնոզն *ü* մոնոզն *r* մոնոզան
16 *c* իշխեսցեն
17 *d* ամուսնալ
18 *irt չի/ի* ապա
19 Wabcdkmpqs թէ
20 *d nf* գտցի *t* գտցի *nf*
21 *üno* ի հաղորդութենէ
22 Y անկցի *փ/ս*. անկեալ U չի/ի անկեալ
23 Y եւ հեռացի *bq* եղիցի *փ/ս*. հեռացի *k* հեռացին
24 *übq* եպիսկոպոս
25 *r* տեսցեն
26 *ü* զվարս I զվարսն
27 *b* կամեսցի մարդասիրեսցի *eg* կամիմ մարդասիրեսցէ յօրտեանս ամէն U մարդարացէ *փ/ս*. մարդասիրեսցէ

ՎԱՆՈՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՊԱՐԹԵԻ, ԴԱՐՁԵԱԼ ՀԱՐՑՈՒՄ

ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ՆՈՐԱ

1 Հարցումն. Ո՞վ է հայր մահուն:

2 Պատասխանի. Նախանձ:

¹ B ձեռագրում խորագիրն այսպես է. «Կանոն երկրորդ երանելոյն սրբոյն Գրիգորի Պարթեի Հայաստանեայց Լուսաւորչի. Հարցումն գեղեցիկ պատասխանեաք հանդերձ խրթնածածուկ բանից»:

Վահրամայ վարդապետի Հարցմունք եւ պատասխանիք (տպ. Եղիշէի անուով, Վիեննա, 1924)

...Հց. Թէ դեք ի մարմին իսկապէս ոչ փոխիւն եւ ոչ ուտեն եւ ըմպեն ստոյգ եւ առնեն, գոր սսեն մարդիկ, ապա եւ կախարոք զհա՞րոյ անքաք բազում իրս առնեն:

Պխ. Եւ զի՞նչ առնեն կախարոքն:

Հց. Կարեն զբնութիւն արարածոց փոխել:

Պխ. Սուտ է այդ. եթէ հաստատել կարեն, ապա եւ փոխել կարեն:

Հց. Ահա զբազումս լուսք, թէ զմարդիկ փոխեն ի կերպարանս անասնոց եւ թռչնոց, եւ ինքեանք ի կարաս հեծեալ երթան ի ճանապարհ հետի եւ ի վերայ ջրոց քայլեալ՝ վաղվադակի լաւտար աշխարհ ելանեն, քաշաց սեղան դնեն եւ ի օնցանէ բանս լսեն եւ առնեն:

Պխ. Դարձեալ զստութեան բանս յիշեն: Ի միտ առ. ոչ ամենայն ինչ, որ առ աշարք է՝ ճշմարտութիւն ասի. զնմանութիւն եւ զկերպարանս ցուցանեն զիրար ինչ կախարոքն, զի այլ ոչինչ կարեն ճշմարտութեամբ ցուցանել, զի թէ սատանայ կերպարանի ի հրեշտակ լուսոյ, որ չէ իսկ, ճոյնապէս եւ պաշտամեալք օրոս ցուցանեն ինչ, բայց ոչ ճշմարիտ. եւ ոչ կարեն փոխել զարարածս Արարչին, զի որ արարն, Նա միայն կարէ փոխել:

Հց. Նա անմիկ եւ գիրք ցուցանեն. թէ լեզուստոս առնէին կախարոքն, գոր ինչ առնէր Մովսէս:

Պխ. Մի՞ ընդ բարբառ բանին հպեցես, այլ ընդ ճշմարտութիւն իրացն, զի թէ արդարեւ կարող էին կախարոքն առնել ինչ, որպէս Մովսէսն առնէր ճշմարտութեամբ, ընդէ՞ր ապա եւ զՄովսէսի արարեալսն առնէին եւ ոչ օր ինչ. ուստի յայտ է՝ տեսաւքն զարհուրեալք ի ճշմարիտ Աշանացն Մովսէսի առ աշարք թուրք, թէ եւ կախարոքն այնպէս առնէին, վասն որոյ ի նոյն տեղոջ ճշմարիտ Աշանն ի Մովսէսէ եղեալ՝ յամրիմանէր զստութիւն կախարոցն... Դարձեալ յորժամ կեղն եւ խաղաւարտն հալածեցին զնոսս, զի եղն կեղն եւ ի կախարոքն, յայտնի եղն ստութիւն անցա, որք ի հարկէ խոստովանեցան, թէ՛ Մատն Աստուծոյ է այս: Քանզի թէ կարող լեալ էին, զհարուածս ի Մովսէս եւ յԱհարոն դարձուցեալ էին:

Հց. Մովսէսի ոչ կարէին առնել ինչ, զի Աստուած ընդ նմս էր, բայց մեղաւորաց կարեն առնել զչար եւ զբարի:

Պխ. Եւ ոչ երբեք. ոչ արդարոյ եւ ոչ մեղաւորի չունին կարողութիւն առնել ինչ չար կամ բարի առանց հրամանին Աստուծոյ, զի Տէր է, որ սպանանէ եւ կեցուցանէ, եւ ի Տեառնէ եւ ելք մահու, քանզի եւ ճնճողիկ յեր-

կիր ոչ անկանի առանց Աստուծոյ, Որով ամենայն ինչ եղն եւ Նովա փոխի եւ Նովա անցանէ (Վահրամ, էջ 21-22):

Հց. Ապա եւ ամրո՞ցն ոչ կարիցեն կախարոքն որդիս տալ եւ զմէջս փակեալս բերրի (ձեռ. 9 631՝ բերբի) առնել:

Պխ. Ամլութեան պատճառք յոլովք են. այն՝ գոր Աստուած արգելեալ է, չկարէ ոք նմա ձեռնհաս լինել՝ ոչ կախարոք եւ ոչ բժիշկք, զի յԱստուծոյ է, որպէս ասէր Յակոբ առ Հնաքել, յորժամ ասէր՝ Տո՛ր ինձ որդիս. եւ Յակոբ պատասխանեց՝ Մի՞թէ Աստուած իցեմ ես, որ արգելի զպտուղ որովայնի քոյ: Բայց եթէ ի պատճառ ցառոց իմեքէ, զայն կարեն բժիշկքն ուղղել արգանակաւորութեամբն Աստուծոյ՝ ազդեցութեամբ դեղոց. այլ գոր ձեռն վերնոյն փակեալ է՝ չէ ոք որ լուծանէ, բայց Ինքն միայն: Միթէ կարէին ամենայն բժիշկքն կամ կախարոք Սառայի տալ որդի կամ Եղիսաբէթի (էջ 23):

Հմտ. Վահրամ, ԻԱ եւ ԻԲ հարցումների հետ.:

Հց. Եւ ընդ որո՞ց տեղաց պատահէ այս ցաւ մարդոյն ի Տեառնէ:

Պխ. Ընդ ամենայն մեղանաց, առաւել վասն հպարտութեան եւ թերահաւատութեան մարդոյ:

Հց. Մարդկան ի չափ հասելոց գրեցուք վասն մեղաց կրել զայս. անմեղ տղաքն ընդ որո՞ց մխալամաց տանջին ի դիւաց:

Պխ. Անհաս են խորքն Աստուծոյ, եւ Ինքն միայն գիտէ զազգուտ մարդոյն... (էջ 24-25):

Հց. Ապա զհա՞րոյ է, զի բազումք ասեն, թէ քաջք զպատեղազմունս մղեն, եւ գորս երեւոց որսան, եւ զարմտիս ի կալոցն կրեն, եւ զգիմիս ի հնձանաց առնուն, վիշապք գտոհմականս անդէոց ծծեն, եւ յոլով մարդիկ տեսեալ են, զի վիշապ վերանալոյ յերկրէ յերկինս:

Պխ. Այսպիսի յիմարտութեամբ լցեալ է երկիր. միթէ արժա՞ն է զայսպիսեաց ասացողան քրիստոնէայ կոչել եւ կամ բնաւիւն առ մտաւորս ունել: Ոչ քաջ լեալ է եւ ոչ վիշապ. վիշապ անուն բառ է, զի որ ինչ յերկրի մեծ լինի՝ վիշապ ասեն ըստ գրոց, թէ Դու փշրեցիր զգլովս վիշապին ի վերայ ջուրց եւ ետուր զնա կերակուր զարացն Հնդկաց. որ Աշանակէ զփարստոն փշրեալ ի Կարմիր ծովն եւ զէն եւ զարդ անցա յալեացն լեզր ծովուն գտեալ, եւ ի ձեռն լաղորդացն ի խորան անկաւ յաշխարհն Հնդկաց. նա էր վիշապ, որպէս մարդ մեծանձնեալ եւ յաղթանդամ ասի: Եւ թէ ուղիղ է, գոր ասեն ցորեան եւ զինի առեալ դիւացն, սակայն ոչ ուտեն եւ ոչ ըմբեն եւ ոչ ի տեղոյն շարժեն զիրս, այլ երեւոյթս իմն տան: Միթէ հրեշտակքն, գոր մատուցանէին անցա կերակուր, որպէս Մանուէ եւ Գեղէտն, կերա՞ն. անմարմնոյ բնութիւն զհա՞րոյ կերակրի զմարմնական կերակուր. դեք լոկ երեւոյթս տան:

Հց. Իսկ ընդէ՞ր ապա ասեն ոմանց տեսեալ քաջաց եւ վիշապաց տանարս ի յերինս բարձունս եւ բնակութիւնս, ուր զԱղէքսանդր կապեալ ունին ի Հոնոմ եւ

- 3 Հարցումն. Ուստի՞ յայտ է:
- 4 Պատասխանի. Յայսմանէ՝ նախան-
ձու բարսարկուին մահ եմուտ յաշխարհս:
- 5 Հարցումն. Եւ ո՞վ է մայր մեղաց:
- 6 Պատասխանի. Ագահութիւն, որպէս
ասեն. Արմատ ամենայն չարեաց արծա-
թասիրութիւն է:
- 7 Հարցումն. Ո՞վ է, որ տանի ի
կեանսն յաւիտենից:
- 8 Պատասխանի. Հեզութիւն. վասն ո-
րոյ ասէ Հոգին Սուրբ, թէ՛ Յո՞վ բնակե-
ցայց, եթէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս եւ որք
դողան ի բանից իմոց:
- 9 Հարցումն. Եւ ո՞վ առիթ դժոխոցն.:
- 10 Պատասխանի. Լրբութիւն, վասն
որոյ ասեն (var. ասէ). Ոչ այսպէս ատեաց
զանաւրէնն, որչափ զանամաւթն:
- 11 Հարցումն. Եթէ կարիցե՞ն կա-
խարդք զբնութիւն արարածոց փոխել:
- 12 Պատասխանի. Եթէ հաստատել
կարեն, ապա եւ փոխել կարեն:
- 13 Հարցումն. Ահա բազում լուաք, ե-
թէ զմարդիկ փոխեն ի կերպարանս անաս-
նոց:
- 14 Պատասխանի. Ոչ ամենայն ինչ,
որ առ աշաւք է, ճշմարտութիւն ասի, որ-
պէս եւ ոչ ստուեր մարդոյ մարդ ասի:

15 Զնմանութիւն եւ զկերպարանս կարեն
ցուցանել, բայց ճշմարտութեամբ ոչ կա-
րեն ցուցանել եւ ոչ փոխել զարարածս Ա-
րարչին, զի որ արարն, Նա միայն կարէ
փոխել:

16 Հարցումն. Նա աւանիկ գիրք ցու-
ցանեն, թէ առնէին կախարդքն, զոր ինչ
Մովսէս առնէր:

17 Պատասխանի. Ընդ բարբառ բա-
նի՞ցն նայիցիս, թէ՞ ընդ ճշմարտութիւն ի-
րացն. թէ արդարեւ որպէս Մովսէսն առ-
նէր ճշմարտութեամբ, ոչ էր պարտ զՄով-
սիսի արարեալս առնել: 18 Նա աւանիկ
ճշմարտութիւնն զոչ ճշմարտութիւնն
յայտ առնեն, զի կանգնէր մի վիշապն եւ
զբազում վիշապս կլանէր, եւ ստուեր եւ
նմանութիւն եւ տեղի անգամ ոչ երեւէր:

19 Ապա մինչ ի կախարդքն դարձան հա-
րուածքն՝ կեղք ու խաղաւարտք՝ յայտնի
եղեւ ստութիւն նոցա, եւ ի հարկէ խոստո-
վան եղեն, թէ ձեռն Աստուծոյ է: 20 Բայց
թէ կարող լեալ էին, զյարուածսն ի Մով-
սէս եւ յԱհարովն դարձուցանէին:

21 Հարցումն. Մովսիսի ոչ կարէին
առնել ինչ, զի Աստուած ընդ նմա էր,
բայց մեղաւորաց կարեն առնել չար եւ
բարի:

22 Պատասխանի. Ոչ միայն մեղաւո-
րաց չեն ձեռնհաս կախարդք բարւոյ եւ
չարի, այլ եւ ոչ անասնոց անմտից, բայց
զոր Աստուած մատնէ. այլ առանց Աստու-
ծոյ ոչ կարեն սպանանել, զի ի Տեառնէ են
ելք մահու: 23 Սպասէ մեղաւորն արդա-
րոյն, այլ Տէր ծիծաղեսցի զնոքաւք եւ ոչ
մատնէ զնա ի ձեռս նորա: 24 Նա եւ ոչ
ճնճղուկ անկանի յորոգայթ առանց հրա-
մանի Հաւր ձերոյ, որ յերկինս է, զի ամե-
նայն ինչ Նովաւ եղեւ եւ Նովաւ (var. Աս-
տուծով) անցանէ:

25 Հարցումն. Կայէն առանց Աստու-
ծոյ սպան զԱբէլ, եւ սպանողն Կայինի ա-
ռանց Աստուծոյ սպան զԿայէն, եւ Հերով-

զԱրտասագ չայոց թագաւոր ի Մասիս եւ գերուանդ
ի գետս եւ ի մուսլս:
Պիս. Ոչ Աղեքսանդր կալ կենդանի ի կապանս եւ ոչ
Արտասագն եւ ոչ այլ ոք յառաջնոց ամսի. զի յորոցոց
մարդկան Ենովք եւ Եղիպ միայն կենդանիք են, այլ ա-
մենեցուն զմահ ճաշակեալ է: Բայց մոլորութիւն դիւս
խաբեաց զկոսպաշտոն Հայոց ի ձեռն քրմացն, որք ա-
ւելին, թէ զԱրտասագն ոմն Հայոց թագաւոր վիշապք
արգելեալ են կենդանի ի Մասիս լեառն. եւ ան ելանե-
լոց է եւ զաշխարհ ունելոց. եւ ոմն ի յանմտաց, որ ու-
նէր զիշխանութիւն Հայոց՝ զարհուրեալ հարցանէր
զըղձապատուն դիւսցն եւ զկախարդսն, թէ ե՞րբ լինի
Արտասագայ ելանել ի կապանաց, եւ անքա ասա-
ցեալ, թէ ոչ կամիս գելանելն անոս ի կապանացն՝
հրաման տոր ընդ ամենայն աշխարհս Հայոց դարբ-
նաց, որ ի անասարդի ար ամենայն դարբին կոսմա
դոփէ ի վերայ սպի իւրոյ. եւ երկաթք Արտասագայ
անդրէն հաստատին: Զնոյն հրաման կատարեն այժմ
ամենայն դարբինք ի անասարդոջ կոսմա զսալ
հարկանեն:

դէս՝ զՅովհաննէս, եւ ամենայն արդարքն առանց Աստուծոյ մեռան յանաւրինաց:

26 Պատասխանի. Զի թէ լինի մարդ առանց Աստուծոյ, եւ մեռանի: 27 Ոչ պոռնկորդին Աստուծոյ հրամանաւն լինի, եւ ոչ մեղաւորն Աստուծոյ հրամանաւն մեռուցանէ զարդարն, այլ սատանայ է պատճառ չարեացն: 28 Աստուած հրեշտակաց անքննելի է եւ անհասանելի ամենից, զի որ քննէ զձով՝ մեռանի: 29 Լինելու թեան պատճառ Աստուած է, զի ւերհնեաց ի սկզբանէ զարդարն ածել եւ բազմանալ. ի մերձեանալ արուին յէզն Աստուծոյ հրաման կատարի, լինի աճումն ըստ նախակարգ հրամանի Աստուծոյ: 30 Աստուած է պատճառ լինելու թեան եւ ոչ սատանայ, որպէս ասէ. Առանց Աստուծոյ եղեւ եւ ոչինչ: 31 Սատանայ հրապուրանաց է պատճառ: 32 Նոյնպէս եւ մահու հրաման յԱստուծոյ է. Յորում աւուր ուտիցեն՝ մեռցիս. եկեր եւ մեռաւ:

33 Եկն Քրիստոս եւ եսպան զմահ եւ կենազործեաց զմարդիկ: 34 Ինքն Քրիստոս Իւրով կամաւքն մեռաւ յանաւրինացն եւ արդարոցն թոյլ ետ մեռանիլ յամբարշտացն, զի ուրախացին յարքայութեանն, որպէս եւ գրեալ է. Ընդ Քրիստոսի մեռանին, ընդ Նմին եւ թագաւորեսցեն:

35 Արդ, այնք որք զԱստուծոյ փառս եւ զպատիւ արարչութեանն սատանայի տան, ի հուր գեհենի է ժառանգութիւն նոցա:

36 Հարցումն. Եթէ կարիցե՞ն կախարդք որդիս տալ ամլոց եւ զմէջ (var. ի մէջ) ստնտուկս (իմա՛ զմէջ սկնդուկս) բարի առնել.:

37 Պատասխանի. Ամլութեան բազում պատճառք են. այն զոր Աստուած արդեւեալ է, չէ ոք որ նմա ձեռնհաս կարէ լինել՝ ոչ կախարդ եւ ոչ բժիշկ: 38 Բայց եթէ պատճառք ցաւոց ինչ իցէ (var. են

ինչ), զայն կարող են եւ բժիշկք ուղղել Աստուծոյ ազդեցութեամբն դեղովք:

39 Այլ առանց Աստուծոյ թէ եւ ամենայն բժիշկք եւ կախարդք ժողովէին՝ ոչ կարէին Սառայի որդիս տալ: 40 Զոր ձեռն վերնոյն փակեալ է, չէ ոք որ լուծանէ:

41 Հարցումն. Դիւահարութեան պատճառ ի՞նչ է մարդկան:

42 Պատասխանի. Վասն հպարտութեան մարդկան լինի, զի որդի որ մտավարժ է եւ իմաստուն, զան ոչ ըմպէ. իսկ որ անմիտ է, հանապազ գանալից է:

43 Հարցումն. Մեղաւորք վասն մեղաց տանջին, իսկ տղայոց անմեղաց զի՞ տիրիցեն դեւք:

44 Պատասխանի. Զամենայն մարդ յորդեգրութիւն կոչէ Աստուած, որպէս զԻսրայէլն. Նա է որդի իմ անդրանիկ Իսրայէլ, եւ Որդիս ծնայ եւ բարձրացուցի: 45 Արդ, եթէ փակեալքն ընդ ւերինաւք որդիք կոչին, որչափ եւս առաւել ազատեալքս, զոր(ոց) ասէ իսկ. Ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել:

46 Արդ, զի իբրեւ յորդիս մատուցեալ է ի մեզ Աստուած առ երբեմն խրատել (հարկանէ) զանասունս մեր, երբեմն զանդաստան եւ զայգիս մեր, զի հայելով ընդ այն ի միտ առցուք մտանել ընդ լծով երկեղի ծառայել Տեառն: 47 Ապա մինչ այսու եւս ոչ խրատիմք, ի մեզ առաքէ տանջանս պէս պէս ցաւոց եւ խեղութեամբ, մատնէ եւ դիւաց զտղայս մեր, զի ի միտ առցուք, թէ Արդարն հազիւ կեցցէ, իսկ ամբարիշտն ո՞ւր ապրի:

28 Զի եթէ որ երկրաւոր թագաւորաց սպասաւորք իցեն, դուզնաքեայ ինչ բանք, մանաւանդ որ վասն ծիրանեաց լինին, ո՞չ յանձն առնուն դատարկացուցանել, թէ ոչ մեծապէս պատժիւ եւ պատուհասիւ մեծապէս վրէժ խնդրեսցեն, ո՛րչափ եւս առաւել պարտ եւ պատշաճ է որ զանեղծ եւ զանարատ հաւատն յապականութիւն դարձուցանել ջանան, եւ որ անհասն է՝ հասանել ի նա ժպրհին, եւ յաւիտենական լուսոյն գեր ի վերոյ լինել յաւժարեն, եւ սրբոյ զանճառ զանքնին Երրորդութեանն քննութիւնն ջանան ընդ խնդիր արկանել, առաւել եւս նոցա ընդունել պատիժս պատուհասի ըստ իւրեանց խորհրդոց, զի սրբութիւն Երրորդութեանն անմատոյց հրեշտակաց եւ աներեւելի քերովբէից եւ սրովբէից, լոկով միայն փառաւորութեամբ եւ ակրհնութեամբ պաշտի:

29 Արդ տէր մեր եւ ճշմարիտ աստուածասէր հայր մեր, եւ ամենայն եկեղեցւոյ Աստուծոյ ընդունելի, եւ ի սուրբ աղաւթս քո յիշել զմեզ հանապազ անգարչ լինիլիք, եւ զմեր տկարութիւնս գաւրացուցանել մի դանդաղիցիս, եւ եթէ ինչ ըստ չափ թղթոյդ առ տգիտութեան վրիպեալ իցէ, ուղղել անգարչ լինիլիք: 30 Եւ որ Թէոդորեայ Մամուկեստացւոյ աշակերտեալք իցեն՝ առ ժամանակս ի շնորհացն Աստուծոյ այնպիսի ինչ աստ չեւ է յայտնեալ, ապա թէ իցէ ծածկեալ ի ժանգոյ աղ-

տեղութեան, ի հարկէ ջան լիցի մեզ խլել զխոչն, եւ զգայթագղութիւնն զայն ի միջոյ ի բաց կորուսանել, զի միաբանութիւն որպէս ի ձերում միջի փառաւորի, եւ զմեզ ի նմին հաւասարութեան փառաւորութիւն առ Աստուած հասուցանել արժանի արասցէ:

31 Ամենայն ուխտի, որ ընդ ձերով սրբութեամբդ են, մեք եւ եղբարք, որ ընդ մեզ են, ողջունի թղթովդ աղաչեմք, զի աղաւթիցէք ի վերայ եղբայրութեանս հասարակաց:

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՏԵԱՌՆ ՍԱՅԱԿԱՅ, ԹՂԹՈՅՆ ԱԿԱԿԱՅ

1 Առ նշմարիտ եւ աստուածասէր տէր մեր եւ հայր՝ սուրբ եպիսկոպոս Ակակ, ի Սահակայ ի Տէր ողջոյն:

2 Ճառագայթք մշտնջենաւոր յաւիտենական լուսոյդ, որ առ մեր տկարութիւնս երեւեցաւ ի ձեր լուսաբեր սրբութենէդ, յոյժ ի ծագելն իւրեանց զաւրացողցին զմեր տկարութիւնս, եւ զնուազ խորհուրդս մեր աճեցողցին, զոր աւրինակ տապ ինչ ջերմագին յանխառն աւզոց հասեալ ի բոյսս արտոց, եւ զկնի նորա ցաւղ քաղցրութեան հասեալ՝ փութով յառողջութիւն դարձուցանէ, այնպէս գեղեցիկ իմն ցանկալի եւ ուխտիւք խնդրելի էր մեզ լսել զերանելի պատգամս ի ձէնջ առ մեզ հասեալ: 3 Մեր աղաւթք հանապազորդ էին արժանի լինել յամենայնի ընդունել եւ վայելել յաւրհանութիւնսդ հոգեւորս ձերոյ մեծաքանչ սրբութեանդ զի քաղցրացեալ էր մեզ կալ մնալ աստէն ի սմին ընդանացեալ տգիտութեան, իբրեւ ի բերդ ինչ ամուր փախստեայ անկեալ յանգիտութեանս: 4 Արդ պահպանութիւն զմեւք առեալ զաւգնականութիւն աղաւթից ձերոց, պահել զհաւատսն ճշմարտութեան, որ ի ձեր ի սուրբ վարդապետութենէդ ունէաք եւ անպղտոր լեալ տգիտութիւն եւ պարզմտութիւնս մեր, մանաւանդ ի նորաբան հրէութեանն զոր այլանդակքն տակաւին զբոյսս դառնութեան եւ աղտեղութեան սերմանեացն ցուցին եւ ցանեցին ի վերայ սուրբ սերման գորոմնախառն ուսմունսն, որ ի հանճարավնաս սատանայէ խառնման ուսեալ սովորեալ են: 5 Արդ որովհետեւ մոլարն առաջին գլխաւորաւքն չափ զիւր ժանդ աղտեղութիւնն¹ սերմանել ժպրհեցաւ, զայդ մերոց մեղացն գործ համարեցաք, եւ յոյժ ձերում թղթոյդ

տրտմակից եղեալ ողբացաք, եւ ընդ բնաւ տեղիս մերոյ նահանգիս մեծաւ պատուհասակից պատուիրանաւ արձակեցաք՝ մի՛ լսել² ամենեւին այնպիսի բարբարոսացն, մի՛ ընդունել զչար հերեսիութեանն բարբաջանս:

6 Բայց ես զարմացեալ եմ ընդ այնոսիկ որ աւելի քան զաւրինացն չափն ջանան եւ նկրտին ըմբռնել զանըմբռնելին. այլ կարծեմք զայնպիսեացն չգիտել ամենեւին զգիրս եւ զգաւրութիւն նորին, բայց եթէ հրէարէն միայն զմուրն նկատիցեն: 7 Եւ իբրեւ գողացեալ իմն համարիմք զմիտս նոցա ի թշնամոյն եւ ախտացեալ ի չար հիւանդութիւն, արբեալ ի թանձր արբեցութենէ, եւ զգայութիւնս ճաշակացն թարչամեցուցեալ չկարէ առնուլ զհամ գինոյն, ի սաստիկ կիզմանէ ընկղմին միտքն ի թմբիրն խելագարութենէ. թէ զոր տարապարտ գիտութիւն բազում ուսմանն ի սատանայութիւն զառածէ, որ հասանել անհաս չափոցն ժպրհին: 8 Քանզի ոչ գոյ այլ գիտութիւն խաւարահեղց, քան երկուս որդիս կամ երկուս տեարս անուանել ի Քրիստոս. աներկիւղաբար անամաւթաբար զլրբութիւնն իւրեանց յայտնապէս պատմեն: 9 Այլ զի խցցին անամաւթ բերանքն, եւ անաւրէնութեամբ սրեալ լեզուքն, ճշմարիտ մարմնացաւ բանն առ ի նորոգել միւսանգամ մարմնով, շնչով եւ ոգւով, զմարդն հնացեալ զապականեալն ի մեղաց, եւ զի ի փայտէ գայթակղութիւն եղեւ եւ մահ, փայտ կենաց առ փայտն կանգնեաց, եւ ծառ առ ծառն բարձրացոյց, պտուղ կենդանարար փոխանակ այնր մահածին պտղոյն պարգեւէր, ինքն զինքն եղ, եւ ինքն զինքն անդրէն յանձն իւր ընկալաւ, զսուրբ մարմինն եւ զպատուական

¹ Տպ. աղետութիւնն

² Տպ. լիւնել

արիւնն պաշար կենաց մեզ հաւատացելոցս յաշտիճանաւոր ճանապարհն պատրաստեաց:

10 Եւ արդ որ միանգամ յայն¹ ի ճանապարհէ եւ յուղիղ հաւատոյն վրիպեցան, հուր գեհենին պատրաստեալ պահի նոցա. եւ մեք աստ եթէ յանկարծ յայնպիսեացն գտցուք, ոչ միայն չընդունիմք կամ հալածականս առնեմք, այլ եւ ընդ մեծ պատժովք արկանել ո՛չ դանդաղիմք:

11 Որչափ եւս պարտն է ձեզ որ ի մեծամեծ իշխանութեանդ վայելէք նախանձել զնախանձն Աստուծոյ, եւ մարմնով եւ հոգով ջանալ բառնալ ի միջոյ զխոչոչ² եկեղեցոյ Քրիստոսի, մանաւանդ զի թագաւորս ունիք, որ զհոգ Աստուծոյ յանձինս իւրեանց բարձեալ բերիցեն, կարող են զխոչոչ ի միջոյ խլել, եւ զբոյս սուրբ սերմանց հաւատոցն պարարտացեալ արմտեացն քաղցրութեամբ զանկեալ հասկն սերմանաւղաց, նմա մատուցէ ատոքացեալ, բազմապատիկ զբերրի պտուղսն հատուցէ, եւ ուրախ արասցէ զտէրն արդիւնարարաց, եւ զմշակն առատապէս պարգեւաց արժանի արասցէ: 12 Զի թէ որ երկրաւոր թագաւորաց սպասաւորք իցեն, եւ դուզնաքեայ ինչ բանք մանաւանդ որ

վասն ծիրանեաց լինին, ոչ յանձն առնուն դատարկ անցուցանել՝ եթէ ո՛չ մեծապէս պատուհասիւ զվրէժն խնդրիցեն. որչափ եւս պարտ է որ զանեղծ եւ զանարատ հաւատսն յապականութիւն դարձուցանեն, եւ յանհասն հասանել ժպրհին եւ մշտնջենաւոր լուսոյն գեր ի վերոյ լինել յաւժարեն, զանքնին Երրորդութեանն քննութիւն ջանան ընդ խնդիր արկանեն: 13 Պարտ եւ պատշաճ է առաւել եւս նոցա ընդունել պատիժս պատուհասի: 14 Քանզի սրբութիւն Երրորդութեանն անմատոյց հրեշտակաց եւ աներեւոյթ քրովբէից եւ սրովբէից, լոկով միայն փառաւորութեամբ եւ աւրհնութեամբ միայն պաշտի: 15 Արդ տէր մեր եւ հայր, յընդունելի եւ ի սուրբ աղաթս քո յիշել անգարչ լինիջիր, եւ եթէ ինչ ըստ չափոյ թղթոյդ առ տգիտութեանս վրիպեալ իցէ ուղղել կամեսջիր, եւ գտկարութիւնս զաւրացուցանել մի՛ դանդաղեցիս: 16 Այլ յաղանդոյն որ գրեցեր գարչել, առ ժամանակս ի շնորհս Աստուծոյ այսպիսի ինչ չեւ է հասեալ. ապա եթէ իցէ ինչ ծածկեալ ի ժանդոյ անտի, ի հարկէ ջան լիցի խլել զխոչն ի միջոյ զի միաբանութեամբ փառաւորեցուք զՔրիստոս:

¹ Տպ. յայն

² Տպ. չխոչոչ

ԿՈՐԻԲՆ

ՎԱՐՔ ՄԵՍՐՈՊԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԿՈՐԻՒՆ ԵՒ ՄԱՇՏՈՅԻ ՎԱՐՔԸ

Հեղինակել է Մաշտոցի Վարքը: Եղել է վանական, պատկանել է Մաշտոցի մտերիմ աշակերտների թուխն (մասնաւոր աշակերտութեան վիճակ առեալ): Մասնակցել է իր վարդապետի առաքելական ճամփորդութիւններին, եղել Ամիրդոմ եւ Եդեսիայում: Մաշտոցի միւս աշակերտ Ղեւոնդի հետ գնացել է Կոստանդնուպոլիս: Եփեսոսի Տիեզերական ժողովից յետոյ (431 թ.) Եզնիկ Կողբացու հետ վերադարձել է Հայաստան՝ բերելով Սուրբ Գրքի սրբագրեալ օրինակը եւ ժողովի որոշումները:

Ոսկեդարեան գրականութեան շարքում Մաշտոցի Վարքը միակն է, որ վստահօրէն պատկանում է Կորիւնի գրչին. նրան վերագրուածների մէջ է Եւթաղի նախագրութիւնների թարգմանութիւնը: Վարքը գրուել է 443-449 թթ., հաւանաբար աւելի մօտ առաջին ժամկէտին: Վարքի կրճատուած ու փոփոխուած տարբերակները մտել են Ճառնտիրների ու Յայմաւուրքների մէջ:

Որոշ առանձնայատկութիւններ աշխատութիւնը առնչում են ներքողի ժանրին, սակայն գերակշռում են բուն վարքային ձեւերը: Վարքագրութեան կանոնների համաձայն՝ Կորիւնը հաղորդում է իր հերոսի ծննդավայրի, ընտանիքի, դաստիարակութեան, գործունէութեան, վախճանի մասին: Առանցքային դեր են կատարում մասնաւորապէս այն փաստերը, որոնք վերաբերում են երեք այբուբենների ստեղծմանը եւ Մաշտոցի քարոզչական գործունէութեանը: Ձեռագիր աւանդոյթի յաջողուած ուղղման շնորհիւ (Արտաշէս Մաթեոսեան) պարզում է, որ Մաշտոցը անմիջապէս կռահել է Դանիէլեան գրերի անբաւարարութիւնը եւ անցել բուն հայկական գրութեան ստեղծմանը:

Վարքի լեզուն խրթին է՝ ծանրաբեռնուած հոստորական դարձուածքներով, կան յատկորոշման կուտակումներ, այնուհանդերձ փաստական շերտը առանց մեծ դժուարութեան ենթարկւում է բացորոշ մեկնաբանութեան:

Վարքի առանձին հատուածներ մտել են Ագաթանգեղոսի եւ Փաւստոս Բուզանդի երկերի մէջ, վերիմաստաւորուել եւ ձուլուել նրանց հետ:

Երկի վերջին հատուածը կազմում է ժամանակագրական մի աղիւսակ, որը կարելու է վստահելի տեղեկութիւններ է պարունակում Մաշտոցի գործունէութեան վերաբերեալ: Ոճական առումով այն թերեւս դուրս է մնում Վարքի շարագրանքից, բայց անվերապահօրէն հիմնուած է նրա բովանդակութեան վրայ:

Կորիւնի երկը վերահրատարակւում է՝ ըստ Մանուկ Աբեղեանի կազմած բնագրի (Կորիւն, Վարք Մաշտոցի բնագիրը ձեռագրական այլ ընթերցուածներով, թարգմանութեամբ, առաջաբանով եւ ծանօթագրութիւններով ի ձեռն պրոֆ. Մանուկ Աբեղեանի, Հայպետհրատ, Երեւան, 1941). Հաշուի է առնուած Արտաշէս Մաթեոսեանի ձեռագրագրական շտկումներն ու դիտողութիւնները¹:

¹ Այս մասին մանրամասն տե՛ս Ա. Ս. Մաթեոսեան, Կորիւնի Մեսրոպ Մաշտոցի պատմութեան ձեռագրի մի թղթի տեղափոխութիւն, Վեճեսիկ-Ս. Ղազար, 1990 (Հայագիտական մատենաշար, «Բազմավէպ», թիւ 32):

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. **Կորիւն**, Վարք Մեսրոպ Մաշտոցի, *աշխատութեամբ Ա. Մաթեոսեանի, Երեւան, 1994 (Կորիւնի երկի ձեռագրերի ու տպագրերի ցանկը տե՛ս էջ 9-19):*
2. **R. W. Thomson.** A bibliography of Classical Armenian Literature to 1500 AD. *Brepolis-Turnhout, 1995, pp. 142-145.*
3. **Կորիւն**, Վարք Մաշտոցի. *Յառաջաբան, բնագրի վերակազմութիւն եւ ծանօթագրութիւններ, աշխատասիրեց Հ. Պօղոս Անանեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1998 (Հայկական մատենադարան, 4), (մատենագիտութիւնը տե՛ս էջ Ը-ԺԴ)*

ԲԱՂԴԱՏՈՒՄԸ ՁԵՆԱԳՐԵՐԻ ՏԱՌԱՆԻՇԵՐ

Բնագիր Ա.

- b - ՄՄ ձեռ. թիւ 2639, ժամանակ՝ 1675-ից յետոյ
- c - ՄՄ ձեռ. թիւ 1891, ժամանակ՝ 1774
- d - ՄՄ ձեռ. թիւ 131, ժամանակ՝ 1781
- e - ՄՄ ձեռ. թիւ 3143, ժամանակ՝ 1828
- ձա - ՄՄ ձեռ. թիւ 3787, Տօնական, ժամանակ՝ 1347-1350
- ձբ - ՄՄ ձեռ. թիւ 3797, Տօնական, ժամանակ՝ շուրջ 1347
- a - **Կորիւն**, Պատմութիւն Վարուց եւ մահուան սրբոյն Մեսրոպայ, *Վենետիկ, 1894. Բ տպագրութիւն*
- վ - **Կորիւն**, Պատմութիւն Վարուց եւ մահուան սրբոյն Մեսրոպայ, *Վենետիկ, 1894 Հրատարակութեան մէջ բերուած ընթերցուածքները Ս. Ղազարի ձեռագրատան «միւս օրինակից»։ Այդ երկու օրինակներն էլ «անթուական եւ նոտրագիր» են՝*
- Ս - **Սուտ-Կորիւն։ Ըստ հետեւեալ հրատարակութիւնների՝ Կորիւն**, Պատմութիւն Վարուց եւ մահուան սրբոյն Մեսրոպայ, *Վենետիկ, 1894 եւ՝ Կորիւն*, Պատմութիւն Վարուց եւ մահուան սրբոյն Մեսրոպայ, *Թիֆլիս, 1913:*

Բնագիր Բ

ՄՄ ձեռ. թիւք 3787 եւ 3797. Տօնականներ, որոնք օգտագործուել են նաեւ Մ. Աբեղեանի կողմից Կորիւնի Համեմատական բնագիրը կազմելիս:

Բնագիր Գ

Փարիզի Ազգային Մատենադարան, Հայերէն ձեռ. թիւ 178². Տօնական ժողովածու. ժամանակ՝ ԺԲ դար:

Կարէն Իւզբաշեան, Պարոյր Մուրադեան

¹ Ս. Ղազարի մատենադարանում պահուող Կորիւնի երկի հինգ ձեռագրերի նկարագրութիւնն ու համեմատական հրատարակութիւնը՝ հանդիպադիր իտալերէն բարգմանութեամբ տե՛ս **Կորիւն**, Վարք Մաշտոցի. Յառաջաբան, բնագրի վերակազմութիւն եւ ծանօթագրութիւններ, աշխ. Հ. Պօղոս Անանեան, *Վենետիկ-Ս. Ղազար, 1998, էջ Ը-ԺԴ (Հայկական մատենադարան, 4):*

² **Ջեռագրի մանրամասն նկարագրութիւնը տե՛ս R. H. Kévorkian, A. Ter-Stepanian. Avec la concours de B. Outtier et de G. Ter-Vardanian. Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France. Catalogue. Paris: Bibliothèque nationale de France/Fondation Galouste Gulbenkian, 1998, pp. 589-604.**

1ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՅ ԵՒ ՄԱՅՈՒԱՆ ԱՌՆ ԵՐԱՆԵԼԻՈՅ ՍՐԲՈՅՆ
ՄԵՍՐՈՊԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԵՐՈՅ ԹԱՐԳՄԱՆՉԻ
Ի ԿՈՐԻՒՆՑ՝ ՎԱՐԴԱՊԵՏԵ ՅԱՇԱԿԵՐՏԵ ՆՈՐԻՆ

[Ա.]

1 Զազքանազեան ազգին եւ զՀայաստան³ աշխարհին զաստուածապարզեւ գրոյն, եթէ ե՛րբ եւ յորում ժամանակի մատակարարեցաւ եւ որպիսի՛ արամբ այնպիսի նորոգատուր աստուածեղէն շնորհս երեւեցաւ եւ վասն նորին լուսաւոր վարդապետութեան⁴ եւ հրեշտակաբար կրանիցն առաքինութեան զմտաւ ածելով յիշատակարանս առանձին մատենանշան⁵ ծաղկեցուցանել եւ մինչ դեռ անդէն ի խորհրդանոցի⁶ մտացս⁷ վասն յուշ արկանելոյ միայնագործ հոգայի⁸, եկեալ Հասանէր առ իս հրաման առն միոյ պատուականի Յովսեփ կոչեցելոյ, աշակերտի առն այնորիկ, եւ ընդ նմին այլոց եւս քաջալերութիւն⁹ աշակերտակցաց մերոյն վարդապետութեան¹⁰: 2 Ուստի եւ իմ մասնաւոր աշակերտութեան¹¹ վիճակ առեալ, թէպէտ եւ էի կրտսերագոյն, եւ առաւել քան զկար

մեր, գրաւեալ անաչառ հրամանին հասելոյ, փութանակի եւ առանց յապաղելոյ զառաջի¹² եղեալն մատենագրել: 3 Զորս եւ մեր համաւրէն աղաչեալ¹³ երկախառնել¹⁴ ընդ մեզ աղաւթիւք՝ յանձնարարութեամբ աստուածեղէն¹⁵ շնորհացն, զի կամակարագոյնս¹⁶ եւ ուղղագոյնս¹⁷ նաւիցեմք զհամատարած ալեաւքն վարդապետական ծովուն:

[Բ.]

1 Եւ արդ առեալ նախաբանեսցուք, եթէ իցէ՞ համարձակութիւն գրով նշանակել զվարս արանցն կատարելոց¹⁸, ոչ ի մէնջ արուեստախաւսեալ մերոյն կարծեալք վիճաբանելով, այլ յաւրինակացն տուելոց¹⁹ զընդդիմակացն բարձրացուցանել: 2 Քանզի²⁰ Աստուծոյ բարերարին այսպէս բարեխորհեալ զիւրոց սիրելեաց, ոչ միայն ըստ առաքինութեան վարուց՝ զչքնաղ եւ զբարձրագոյն հատուցումն բաւական համարել յանսպառ յաւիտեանսն, այլ եւ աստէն իսկ կանխագոյն. զի անցաւոր²¹ ժամանակաւքս մատենապատում երկնաբերձ պայծառացուցեալ, զհոգեղինացն եւ զմարմնականացն առ հասարակ փայլիցեն:

1 Յ Յիշատակ սրբոյն Մեսրոպայ արարեալ երանելոյն (աջ կողմի լուս. նոր շղագրով՝ «Կորին Վրդպտ») / ճ Պատմութիւն վարուց եւ մահուան առն երանելոյ սրբոյն վարդապետին Մեսրոպայ եւ յաղագս գիտոյ հայկական դպրութեան արարեալ ի Կորին վարդապետ յաշակերտէ նորին ի խնդրոյ եւ հրամանաւ սրբոյ կաթողիկոսին Յովսեփայ որ ցահատակեցաւ ընդ դեռնողեանցն
2 յ արարեալ ի Կորին
3 Յ զՀայաստան, միւսն. Հայաստան
4 յ վարդապետութեանն
5 ճվ մատենանշան / միւսն. մատնանշան
6 յ լուս. խորիէի
7 ճճճվ մտացն
8 Յ հոկացա / յ հոգայի / միւսն. հոգացայ
9 ճյ քաջալերութիւնն / ճ քաջալերութեանն
10 ճյ վարդապետութեանն
11 յ աշակերտութեան / միւսն. աշակերտութեամբ

12 ճ առաջի
13 ճյ աղաչեցեալ
14 ճ զեկախառնել / յ ուղղ. զոգեխառնել
15 ճճվ աստվածային
16 ճ զկամարագոյնս / յ ուղղ. զկարեւորագոյնս
17 ճյ գուղագոյնս
18 ճյ կատարելոցն
19 ճյ տուելոցն
20 ճյ քան զի/ս. քանզի
21 ճյ զանցաւոր

3 Եւ ի մովսիսական պատմութեան յայտնի է երանելեաց արանցն ազնուակա- նութիւն, ճշմարտութեան հաւատոցն հաս- տատութիւն¹, աստուածամերձ աստուածա- մուխ կենացն վայելչութիւն, սքանչելա- կան² կենացն պայծառութիւն: 4 Ձի ոմն ընդունելի պատարագաւ արդար կոչեցեալ, եւ այլ ոմն հաճոյական արուեստի³ ի վե- րայ ամենակուլ մահուանն կենաւք երե- ւեալ, եւ միւս ոմն⁴ բովանդակ արդարու- թեամբ ի վերայ համատարած լեռնացելոյ⁵ աստուածապատիժ⁶ ծովուն հանդերձ ամե- նայն շնչականաւք տարեւոր ժամանա- կաւք նաւակաց պահեալ⁷, եւ միւսոյն յան- կարծագիւտ հաւատովք արդարացեալ, աստուածամերձ աստուածախաւս դաշնա- ւոր կատարեալ, եւ զաւետիս⁸ հանդերձե- լոց⁹ բարեացն¹⁰ ժառանգեալ: 5 Բազմաւք ե՛լ այլ նոյնպիսիք աստուածածանաւթ¹¹ գտեալք, որոց¹² ազնուականութիւնքն յա- մենայն աստուածածանաւթ գրոց պատմի:

6 Հանդոյն ասացելոցս¹³ երանելոյն¹⁴ Պաւղոսի առ Եբրայեցիսն կարգեալ զա- նուանս¹⁵ գովէ զնոցին ճշմարտութիւն հաւատոցն¹⁶. որով զվարձահատոյց¹⁷ մխի- թարութիւն ընկալան յամենապարգեւո- ղէն¹⁸ Աստուծոյ, ըստ իւրաքանչիւր յառա-

ջաղիմութեանցն. նա եւ զժանդագործին¹⁹ Բահաբու²⁰ զհիւրընկալութիւն լրտեսացն՝ համեմատէ: 7 Իսկ իբրեւ հայեցեալ ի բազ- մախուռն գումարութիւն արդարոցն²¹ գսակաւուցն զանուանս յայտ առնէ, եւ զայլովք²² եւս զանց առնէ, անբաւական զժամանակն առ ի կարգի պատմելոյ: 8 Ի կիր արկանէ յանուհետեւ նշանակել միան- գամայն²³ զփորձութիւնս ի վերայ յարձա- կեալս եւ զնոցա²⁴ զանընդդիմակաց զնա- հատակութիւնսն, զորս եւ պատուականս քան զաշխարհական վաճառս²⁵ համարի²⁶:

9 Սոյն աւերինակ եւ ամենայն գիրք հոգեպատումք նշանակեալ²⁷ ունին զքա- ջութիւնս ամենայն զաւրաց. զոմանց՝ ըստ աստուածեղէն կրանիցն զբարեյաղթու- թիւն, եւ զոմանց՝ ըստ աշխարհակիր²⁸ կարգաց զմարտից եւ զպատերազմաց ա- րութիւնսն, որպէս զնեբրոտայն²⁹ եւ զՍամսոնին եւ զԴավթայն: 10 Եւ զո- մանց զբնական զիմաստութիւն³⁰ գովեալ³¹ աստուածեղէն իմաստութեամբն հանդերձ, որպէս զՅովսէփայն³² յԵգիպտոս, եւ զԴա- նիէլին ի Բաբելոն³³: 11 Յորոց³⁴ եւ հզաւր թագաւորացն³⁵ խրատիչք էին³⁶, զաշխար- հական³⁷ կենցաղոյս¹ զհանգամանսն² ցու-

1 bc հաստատութեան
 2 bc զսքանչելական
 3 de արուեստիմ
 4 bc միւսումն փ/ս. միւս ոմն
 5 bc լեռնացելոց
 6 bc զաստուածապատիժ
 7 b պահել
 8 bc ավետիս
 9 bc զհանդերձելոց / de հանդերձելոցն
 10 e բարեաց
 11 de աստուածածանոթ
 12 b յորոց
 13 bcde/ ասացելոցս. / միւսն. ասացելոյս
 14 վ երանելոյն / միւսն. երանելոյն
 15 d զանուանս
 16 d հավատոցն նշմարտութիւն
 17 b զվարձահատոց
 18 bc յամենապարգեւէն

19 cde ժանդագործին
 20 c Բահաբաւ
 21 b արդարոցն / c արդարոց / միւսն. արդարեւ
 22 bc գայլովք
 23 bc զմիանգամայն
 24 b զնոցա / միւսն. նոցա
 25 c զաշխարհական վաճառս / միւսն. զաշխարհս առ վաճառ
 26 bc համարին
 27 b նշանեալ
 28 b աշակերտակիր / վ աշխարհակիր / միւսն. աշխարհագիր
 29 b զեբրոտայն / c զեփթայեայն ուղղ. զեբրոտայն
 30 b իմաստութիւն
 31 b գովել
 32 b Յովսէփայն
 33 b Բաբելոն
 34 bc որոց
 35 d թագաւորութեանցն
 36 c եղեն փ/ս. էին
 37 c զաշխարհական / միւսն. զաշխարհակալ

ցուցանէին, Հանդերձ ամէնիշխանին Աստուծոյ ծանալթա առնելով³: 12 Զորոց եւ մարգարէին իսկ գովեալ զիմաստութիւնն, ասէր ցոմն այսպէս. Մի՛թէ իմաստնագո՞յն իցես քան գԻանիէլ. կամ իմաստո՞ւնք իրատուութիւնս իրատեցիմ գեզ հանճարով իրեանց⁴: 13 Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ հոգեկան ազգին հրեշտակութեամբ⁵ գովեալ զսրբոցն⁶ զաւրութիւնն, որ գԻանիէլ⁷ ցանկալի⁸ քարոզելովն կոչէին. եւ զսուրբ Տիրամայրն⁹ ի Փալիլեայ՝ արհմեալ ի կանայս¹⁰:

14 Բայց զի՞նչ ասիցեմք զգուգականացն¹⁰ զառ ի միմեանց¹¹ պատուեալ զգովութիւնս, զորոց եւ Տէրն իսկ ամենայնի՛ բերանալիր գոչէր¹² զազնուականութիւնսն, ոչ միայն զյանդիմանական գործոյն, այլ եւ զծածուկ սրտիցն լուսաւորութիւնս¹³ առաջի հրեշտակաց եւ մարդկան բերէ: 15 Որպէս զհիւրամեծարին¹⁴ Աբրահամու հրեշտակաւքն Հասելովք զծառայական Հաւասարութիւնն յայտ արարեալ. պատմելով նմա յետ աւետեացն ընկալելոց¹⁵, զինչ ի Սողոմոն էր գործելոց¹⁶: 16 Նոյնպէս եւ զքաջի¹⁷ նահատակին Յոբայ յառաջ քան զպատերազմել առաջի պատերազմականին՝ յաւրինէ զգովու-

թիւն¹⁸ ասելով. Այր մշմարիտ, արդար եւ աստուածապաշտ, եւ որոշեալ յամենայն գործոց չարաց¹⁹: 17 Իսկ մեծին Մովսէսի զառաւելագոյն զաստուածամուխ մերձաւորութիւնն՝ ամենայն եկեղեցական գրով Հնչեցուցեալ, զորոյ եւ զտղայութեան¹⁹ զկայտառութիւնն²⁰ յայտ արարեալ աստուածեղէն աւրինացն. նա եւ զայլազգոյն զՅոթորի²¹ եւս²² զխրատն չանցուցեալ²³ անգիր:

18 Եւ այնպէս միահամուռ ամենայն աստուածակրան արուեստականացն բարեգործութիւնք՝ փայլեն²⁴ յաստուածագիր աւրինացն, զորոց չէ ոք բաւական յիշատակել զերանելի անուանց գումարութիւն: 19 Եւ ոչ միայն զյառաջագունիցն, այլ եւ զկնի եղելոցն զՄիածնի Որդւոյն Աստուծոյ փրկչին ամենեցուն՝ ի լուսաբեր Աւետարանին իւրում ծաղկեցուցանէր զազնուականութիւնս, մանաւանդ երանութեամբ իսկ պսակէր²⁵ ոչ միայն սեպականացն զերկոտասանիցն²⁶, եւ կամ զյառաջամուտ զԿարապետին²⁷, այլեւ զայլոց մատուցելոցն գովէ զՀաւատոցն²⁸ ճշմարտութիւն: 20 Քանզի զՆաթանայէլ առանց նենգութեան նշանակէ եւ զթագաւորագին զմեծութիւն Հաւատոցն՝ անգիւտ յԻսրայէլի²⁹ ասէ: 21 Բայց ոչ միայն զմեծամեծսն, այլ առաւել եւս զթեթեւագոյնսն³⁰ բարձրագոյնս³¹ [առնէ¹] անարգամեծարն Քրիս-

1 Ե կենցաղս
2 Ե հանգամանս
3 Ե առնելոյ
4 Ե չի՛ք իրատուութիւնսն
5 Ե չի՛ք իրատուութիւնսն
6 Ե յիշատակութեամբ
7 Ե գԻանիէլի
8 Ե ցգանկալի
9 Ե գտեառնամայրն
10 Ե կանայս
11 Ե միմեանց
12 Ե գոչէր
13 Ե լուսաւորութիւնս
14 Ե հիւրամեծարին
15 Ե ընկալելոցն
16 Ե գործելոցն
17 Ե քաջի

18 Ե զգովութիւնն
19 Ե չարաց
20 Ե զկայտառութիւնն
21 Ե զՅոթորի / Ե զՅոթորայ
22 Ե եւս
23 Ե անցուցեալ
24 Ե փայլեն
25 Ե պսակէ
26 Ե զերկոտասանից
27 Ե Կարապետին
28 Ե զՀաւատոցն
29 Ե իսրայէլի
30 Ե թեթեւագոյնս
31 Ե բարձրագոյն

Քրիստոս, որ սակաւիկ ինչ զծախ իւղոյն յարգէ, եւ զծախեւեացն յիշատակարան պատմեն ամենայն ուրեք՝ առ ի ներքոյ երկնից: 22 Եւ զկնոջէն քանանացոյ մեծ զհաւատոցն ասէ. նաեւ զգանկաց² երկուց³ ընծայելոցն գովէ զարկանեւեացն զյաւժարութիւն⁴ առաւել քան զմեծացն:

23 Իսկ Պաւղոսի⁵ ի մտի եզեալ էր շրջեցուցանել զքրիստոսագիր կարգացն պայծառութիւնն, անաւթ ընտրութեան անուանեալ, անուանակիր⁶ յաշխարհի իւրոյ սքանչելի անուանն առնէ: 24 Վասն որոյ երանելոյն հայեցեալ ի շնորհացն բարձրութիւն⁷ առ իւրոյ մեծ աւրինացն⁸ եւ առ ամենայն սրբոցն⁹, բարձրագոյն բարբառով ի փառատրութիւն¹⁰ դառնայ, եթէ՝ Շնորհի¹¹ Աստուծոյ, որ յամենայնի հոչակ հարկանէ զմէնջ ի Քրիստոս եւ զհոտ զիտուքեան իւրոյ յայտնի առնէ մեւ¹² յամենայն տեղիս¹³: 25 Ի վերայ այնորիկ ապա եւ զհամարձակագոյնն¹³ բերէ, թէ՛ ո՞ր կարէրի՞ զմեզ ընտրելոց Աստուծոյ՞, եւ զայս աւճան ընկալեալ ի Տեառնէ երանելի առաքելոցն՝ զամենայն գործակցաց իւրեանց գրով նշանակել զքաջութիւնս: 26 Տեսանել զոմանց ի սուրբ Աւետարանին եւ զոմանց ի Գործս Առաքելոցն երանելոյն Ղուկասու մատենագրեալ. եւ իցեն

որ ի Կաթողիկէս¹⁴ առաքելոցն առաւելագոյնս ճանաչին:

27 Այլ Սրբոյն Պաւղոսի¹⁵ չորեքտասանեքումբք թղթովք պատմէ զիւր առաքելակիցս եւ նիզակակիցս, եւ ուրախակիցս¹⁶ իւր առնէ, եւ¹⁷ ի վախճանի թղթոցն¹⁸ ըստ իւրաքանչիւր ումեք յողջոյն¹⁹ կատարեալ՝ յանուանէ հարցանէ. եւ զուրումն²⁰ յԱւետարանէ անտի նշանակէ զգովութիւնսն²¹: 28 Բայց ո՞չ միայն զերանելոյն²² զաւգնականութիւնսն²³ յարգէ, այլ եւ զքրիստոսամեծար ասպնջականիցն իւրոց՝ բազում գովութիւնս փոխանակ մեծարանացն կարգէ, վասն որոյ եւ յաղաչանս առ Աստուծո՞ մատուցեալ²⁴ զփոխարէն բարեացն հատուցանել հայցէ: 29 Եւ ամենայն եկեղեցեալք²⁵ հնչեցուցանէ զընտրելոցն զազնուականութիւն, ոչ միայն զարանցն, այլեւ զկանանցն աշակերտելոց²⁶, որ զճշմարտութիւնն Աւետարանէն:

30 Եւ զայս ամենայն աւետարանեալ ոչ ի պարծանս գովութեան, այլ զի²⁷ աւրինակ եւ կանոն զկնի եկելոցն պաշտիցի. որպէս ի նոյն իսկ զի բարեաց գործոց նախանձաւոր²⁸ լինել ամենեցուն ստիպէ ասելովն, թէ՛ Զհե՛տ երթայք սիրոյ. եւ նախանձաւոր լինել ամենեցուն հոգեւո-

1 c յուս. առնէ / միւսն. չի՛ր առնէ
 2 b գղանկացն
 3 c երկուցն
 4 b յօժարութիւն
 5 bc Պաւղոսի / միւսն. Պաւղոս
 6 b անուանեալ, անուանեալ անուանակիր
 7 be բարձրութիւնս / c բարձրութիւնս
 8 c որ առ իւր փ/ս. առ իւրոյ մեծ օրինացն
 9 c սուրբսն
 10 b ի փառատրութիւնս / deվ ի փառատրութիւն
 11 bc շնորհիմ
 12 bcde միո՛ք
 13 Բ՝ Կ՞ր. Բ՝ 14
 14 bc համարձակագոյն
 15 bc համարձակագոյն
 16 bc համարձակագոյն
 17 b չի՛ր եւ
 18 b թղթոյն
 19 c ողջոյն
 20 bc գորումն
 21 bc գովութիւնսն
 22 e գերանելոյն
 23 bcd զօգնականութիւնս
 24 c մատուցանել
 25 b եկեղեցո՛ք
 26 bc աշակերտելոցն / deվ պարկեշտելոց փ/ս. աշակերտելոց
 27 bc զիս փ/ս. զի / deվ չի՛ր զի
 28 bcde նախանձաւոր / միւսն. նախանձաւոր

14 bc կաթողիկէ
 15 c Պաւղոս
 16 bcվ նիզակակիցս գործակիցս / լվ գործակիցս / եւ ուրախակիցս
 17 b չի՛ր եւ
 18 b թղթոյն
 19 c ողջոյն
 20 bc գորումն
 21 bc գովութիւնսն
 22 e գերանելոյն
 23 bcd զօգնականութիւնս
 24 c մատուցանել
 25 b եկեղեցո՛ք
 26 bc աշակերտելոցն / deվ պարկեշտելոց փ/ս. աշակերտելոց
 27 bc զիս փ/ս. զի / deվ չի՛ր զի
 28 bcde նախանձաւոր / միւսն. նախանձաւոր

րացնի՞: 31 Որոց զյաւժարութիւն Աքա-
յեցւոց՝ վասն պաշտաման սրբոցն ի Մա-
կեդոնիա պատմեալ՝ նախանձեցուցեալ՝
յորդորեաց: 32 Այլ եւ համարձակութիւն
իսկ տայ անխափան ի բարեացն առաքի-
նութիւն՝, թէ՛ Լաւ է յամենայն ժամ նա-
խանձել ի բարիս: 33 Այլ եւ նմանազ
իւր եւ Տեառն ստիպէ լինել:

34 Դարձեալ փութայ ամենեքումք
հանդերձ ըստ Քրիստոսի հետոցն՝ վարել.
Հայեցարո՛ւք, ասէ, ի զարագութիւն հաւա-
տոց՝, եւ ի կատարիչն Քրիստոսի: 35 Եւ
դարձեալ, թէ՛ Յիշեցէ՛ք գառաջնորդս ձեր,
որք խաւսեցան զբանն Աստուծոյ. հայեցեալ
յեսս գնացից նոցա, նմանազ ի եղբրոք հա-
ւատոցն: 36 Եւ միանգամայն, եթէ՛ Զայս
խորհեսցի իւրաքանչիւր ոք ի ձեռն որ եւ ի
Քրիստոս Յիսուս: 37 Հանգոյն սմին եւ
Ղուկաս յսկիզբն՝ Առաքելագործ մատե-
նին զնէ: 38 Իսկ ցանկալի Տեառնեղբայրն
Յակոբոս, զհամարէն իսկ զգոլունզն սրբոց
հանդերձ սրբասէր տերամբն յաւրինակ ա-
ռեալ՝ ի թղթին իւրում ասէ, եթէ՛ Աւրինակ
առէ՛ք չարչարանաց՝ եւ յերկայնմտութեան¹⁰
զմարգարէսն, որ խաւսեցան յանուն Տեառն.
զհամբերութիւն Յոբայ լուարոք, եւ զկա-
տարումն Տեառն տեսէ՛ք:

1 eվ հոգեւորականացն
՞ Ը Կ՞Ր. Ժ՛Գ 1
2 b Ա.ֆայեցւոյն / c Ա.ֆայեցւոցն
3 bc նախանձեցուցեալս
4 d առաքինութեան
Է Գ՞Ղ. Գ՛ 18
5 bc հետոյն
6 e հաւատոցն
7 b Յիսուս փ/Յ. Քրիստոս
Ը Ե՞Ր. Ժ՛Բ 2
Թ Ե՞Ր. Ժ՛Գ 7
Է Փ՞Լ. Բ՛ 5
8 bc սկիզբն
9 c զչարչարանաց
10 bc երկայնմտութեան
Ղ Զ՞Կ. Ե՛ 10-11

39 Յայտնի է այսուհետեւ ասացե-
լովքս¹¹, եթէ՛ զովութիւն ամենայն¹² աս-
տուածասէր ընտրելոցն ի Տեառնէ է՛¹³, որ՝ ի
հրեշտակաց, որ՝ առ¹⁴ ի միմեանց, ոչ ի
պարծանս անձանց, այլ առ ի նախանձուկս
միմեանց արկանելոյ, զի միմեամբք¹⁵ քա-
ջալերեալք՝ հասանիցեմք ի բարեացն¹⁶ կա-
տարումն՝ ի նշանակեալ նպատակն երա-
նելոյն¹⁷ Պաւղոսի, եթէ՛ Միաբան հասանել
ի չափ հասակին Քրիստոսի: 40 Որոյ ա-
զատութիւնն յերկինս է, ակն ունել
փրկչին մեծին Աստուծոյ:

41 Ունիմք եւ զկանոնական¹⁸ յաջոր-
դեալ¹⁹ յառաքելոցն²⁰ անտի զչնորհապա-
տում գրեալսն, եթէ՛ ո՛րպէս մեծարեալք ի
միմեանց, գովեալք²¹ ըստ ճշմարիտ հաւա-
տոյն²² եւ ըստ²³ աւետարանագործ կրաւ-
նից²⁴, մինչեւ ցայսաւր ժամանակի նովին
սովորութեամբ վարին²⁵:

42 Եւ արդ առեալ յերկոցունց²⁶ հա-
մարձակութիւն²⁷ ի գիր²⁸ արկանել եւ
զվարս առն արդարոյ²⁹:

43 Արդ այսուհետեւ եւ խոստացեալն
առաջի դիցի, եւ³⁰ հայրենակատար մեծա-
րեալ պայմանաւ որ առ ի մէնջ՝ հաճեսցի,

11 b ասացելովք
12 b յամենայն
13 b չիք է
14 c եւ որ առ
15 c զի միմեամբք / միւսն. զմիմեամբք
16 e ի բարեաց
17 d երանելոյն / միւսն. երանելոյն
է Ե՞Ք. Գ՛ 13
18 c զկանոնականսն ըստ / bc զկանոնականսն
19 bc յաջորդելոյ
20 c առաքելոցն
21 bc գովեալ
22 b հաւատոցն
23 c չիք եւ ըստ
24 bc կրօնիւք
25 d վարեն
26 b յերկոցունցն / c զերկոցունց
27 b համարձակութիւնն
28 b ի գիր / միւսն. ի կիր
29 c արանց արդարոց փ/Յ. առն արդարոյ
30 bc չիք եւ

եւ նոցա քաղցրատուր հրաման հատուցեալ զարդարեսցի¹:

[Գ]²

1 Առն, զոր ի նախակարգ բանիս նշանակեմք³, վասն որոյ⁴ եւ փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր Մաշթոց⁵ անուն, ի Տարաւնական գաւառէն⁶, ի Հացեկաց գեղջէ⁷, որդի առն երանելոյ⁸ Վարդան կոչեցելոյ: 2 Ի մանկութեան⁹ տիսն¹⁰ վարժեալ հելլենական¹¹ դպրութեամբն, եկեալ հասեալ ի դուռն¹² Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարքունական դիւանին¹³, լինել սպասաւոր արքայատուր հրամանանացն¹⁴ առ հազարապետութեամբն աշխարհիս Հայոց¹⁵ Առաւանայ ուրումն¹⁶: 3 Տեղեկացեալ եւ¹⁷ հմուտ եղեալ աշխարհական¹⁸ կարգաց¹⁹, ցանկալի եղեալ գինուորական արուեստին իւրոց²⁰ զաւրականացն²¹: 4 Եւ անդէն ուշ²² եղեալ փութով ընթերցողածոց աստուածեղէն

1 d գարդարեսցի
2 Ճա ձր սկսում եմ այստեղից. վերնագիրն է՝ Մեհեկի երեւտասան ի յիշատակի սրբոյն Մեսրոպայ վարդապետի, գոր արարեալ է Կորեմայ սրբոյ յաղագս վարուց նորա
3 b նշանակելի
4 Ճա ձր Արդ սկիզբն արասցում պատմելոյ գառնն գոր նախակարգ բանից նշանակեցաք վասն որոյ
5 Ճա ձր Մաշտոց
6 Ճա ձր ի Տարոն գաւառէ
7 Ճա ձր չիբ հացեկաց գեղջէ / de գեղջէն
8 bc երանելոյ / Ճա ձր երեւելոյ
9 Ճա ձր ի մանկութեան
10 Ճա ձր չիբ տիսն
11 Ճա հելլենական
12 ՍՃա ձր ի դուռն / միւսն. ի գաւառն
13 Ճա ձր դիւանի
14 Ճա ձր հրամանացն / միւսն. հրամանին
15 Ճա ձր Հայոց աշխարհին
16 b որումն / Ճա ուրեմն
17 Ճա ձր չիբ եւ
18 abcվ աշխարհակաց / b աշխարհակալաց / Ճա ձր աշխարհացն
19 Ճա ձր կարգաւ
20 Ճա ձր արուեստի իւրով / bc իւրոյ
21 Ճա ձր չիբ գաւրականացն / d գորականաց
22 Ճա ձր եւ անդէն իմփն ուշ

գրոց, որով առ ժամայն լուսաւորեալ եւ թեւամուխ միջամուխ²³ եղեալ²⁴ յաստուածատուր²⁵ հրամանացն հանգամանս, եւ ամենայն պատրաստութեամբ զանձն զարդարեալ²⁶, հարկանէր²⁷ զիշխանացն սպասաւորութիւնսն²⁸:

[Դ]

1 Եւ յետ այնորիկ²⁹ ըստ³⁰ աւետարանական չափուցն³¹ ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրին դարձեալ, մերկանայր այնուհետեւ զիշխանակիր ցանկութիւնսն³², եւ առեալ զխաչն պարծանաց՝ ելանէր զկնի ամենակեցոյց խաչելոյն: 2 Եւ հաճեալ հրամանացն³³ ի խաչակիր³⁴ գունդն Քրիստոսի խառնէր³⁵, եւ անդէն վաղվաղակի ի միայնակեցական կարգ³⁶ մտանէր: 3 Բազում եւ ազգի ազգի վշտակեցութիւն³⁷ ըստ Աւետարանին կրէր ամենայն իրաց. ամենայն կրթութեամբ³⁸ հոգեւորացն³⁹ զանձն տուեալ՝ միայնաւորութեան⁴⁰, լեռնակեցութեան⁴¹, քաղցի եւ ծարաւոյ եւ բանջարաճաշակութեանց⁴², ար-

23 Ճա ձր թեւակոխ / c միջամուխ
24 abcdeվ չիբ եղեալ
25 c աստուածատուր
26 Ճա յարդարեալ
27 c առ ոտն հարկանէր
28 e գապասաւորութիւնսն / Ճա ձր սպասաւորութիւն
29 Ճա ձր այսորիկ
30 b չիբ ըստ
31 c չափու կանոնին / Ճա ձր չափոյն
32 Ճա ձր յայսմեհտէ գամեմայն աշխարհակիր ցանկութիւնս
33 Ճա ձր հրամանացն պայմանի
34 Ճա ձր չիբ ի խաչակիր /
35 Ճա ձր Քրիստոսի աշակերտացն խառնէր
36 Ճա ձր կրանս փ/ս. կարգ
37 bc Ճա ձր վշտակեցութիւն
38 bc իրացն / Ճա ձր եւ ամենայն կրթութեամբ եւ ամենայն իրաց
39 Ճա ձր հոգեւորաց
40 Ճա ձր միայնաւորութեան / միւսն. միաւորութեամբ
41 Ճա ձր լեռնակեցութեան
42 Ճա ձր եւ բանջարաճաշակ լինելոյ

գելանաց անլուսից, խարազնագգեստ¹ եւ գետնատարած անկողնոց²: 4 Եւ բազում անգամ զհեշտական հանգիստ³ գիշերոյն⁴ եւ զհարկ քնոյ՝ յոտնաւոր տքնութեան⁵ ի թաւթափել ական վճարէր⁶: 5 Եւ զայս ամենայն առնէր ոչ սակաւ ժամանակս: 6 Եւ գտեալ եւս զոմանս՝ յինքն յարեցուցանէր՝ աշակերտեալ⁷ նմին սովորական⁸ աւետարանութեան⁹:

7 Եւ այնպէս¹⁰ ամենայն փորձութեանց ի վերայ հասելոց կամայական¹¹ քաջութեամբ տարեալ եւ պայծառացեալ¹² ծանաւթական եւ հաճոյ լինէր Աստուծոյ¹³ եւ մարդկան:

[Ե]

1 Առեալ այնուհետեւ երանելոյն¹⁴ զհաւատացեալս¹⁵ իւր, դիմեալ իջանէր յանկարգ եւ յանդարման տեղիս¹⁶ Գողթան: 2 Այլ եւ ընդ առաջ ելանէր¹⁷ նմա իշխանն Գողթան, այր երկիւղած եւ աստուածասէր, որում անուն էր Շաբիթ, եւ ասպնջական հիւրամեծար գտեալ՝ բարեպաշտութեամբ սպասաւորէր¹⁸ ըստ աշա-

կերտաց¹⁹ հաւատոցն Քրիստոսի²⁰: 3 Իսկ երանելոյն²¹ վաղվաղակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկանէր զգաւառովն հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին. գերեալ²² զամենեան ի հայրենեաց աւանդելոց, եւ ի սատանայական դիւապաշտ սպասաւորութեանէն՝ ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր:

4 Եւ յորժամ ի նոսա զբանն կենաց սերմանեալ²³, յայտնի²⁴ իսկ բնակչաց դաւառին նշանք մեծամեծք երեւէին, կերպակերպ նմանութեամբ²⁵ դիւացն փախստական²⁶ լինելով՝ անկանէին ի կողմանս Մարաց: 5 Նոյնպէս²⁷ առաւել հոգ ի մտի²⁸ արկանէր զհամաշխարհականս սփոփելոյ²⁹. եւ առաւել³⁰ աղաւթս³¹ մշտնջենամուռնչս եւ բազկատարած պաղատանս առ Աստուած եւ արտասուս անդադարս, զմտաւածելով զառաքելականն³², եւ ասէր հոգալով. Տրտմութիւն է ինձ³³ եւ անպակաս ցաւ սրտի իմոյ, վասն եղբարց իմոց³⁴ եւ ազգականաց³⁵:

1 Ճա խարազնագգեստ / Ճբ խարազնագգեստ
2 Ճա Ճբ անկողնոյ
3 bc հանգիստն
4 Ճա Ճբ գիշերացն
5 c ոտնաւոր տքնութեամբ / e տքնութեանն
6 Ճա Ճբ վնարելով
7 Ճա Ճբ յինքն յարուցանէր աշակերտել
8 Ճա Ճբ չիբ սովորական
9 c ավետարանութեանն
10 Ճա Ճբ աւետարանական սպասաւորութեանն, եւ այնպէս
11 b կամական / Ճա Ճբ կամացական
12 Ճա Ճբ նովին լուսաւորեալ փիս. պայծառացեալ
13 Ճա Ճբ հանդակական լինէր առաջի Աստուծոյ
14 d երանելոյն / միւսն. երանելոյն
15 Ճա Ճբ գիւսանեալս փիս. գիւսատացեալս
16 Ճա Ճբ տես փիս. տեղիս
17 b չիբ եւ ընդ / c չիբ այլեւ / b Ճա Ճբ արդ փիս. այլ լընդ առաջ լինէր
18 abcdef չիբ որում անուն էր Շաբիթ. եւ ասպնջական հիւրամեծար գտեալ բարեպաշտութեամբ սպասաւորէր

19 b Ճա Ճբ աշակերտական
20 b Ճա Ճբ ի Քրիստոս
21 bc Ճա Ճբ երանելոյն
22 Ճա Ճբ եւ գերեալ
23 c սերմանեաց
24 Ճա Ճբ սերմանեաց եւ զամենեան յաստուածպաշտութիւն կրթեալ յայտնի
25 Ճա Ճբ երեւեալ կերպակերպ նմանութեան նմանութեամբ
26 Ճա Ճբ փախստեա
27 Ճա Ճբ ապա փիս. նոյնպէս
28 Ճա Ճբ եւս առաւել հոգ ի միտ
29 Ճա Ճբ զոփալով / միւսն. սփոփելով. ուղղ. սփոփելոյ
30 b Ճա Ճբ առեալ c յառնել փիս. առաւել
31 abcdef յաղաւթս
32 b գառափեական
33 Ճա Ճբ ինձ յոյժ
34 d չիբ իմոց
35 Ճա Ճբ ազգականաց իմոց ըստ մարմնոյ
* Հուս. Թ. 2-3

6 Եւ այնպէս տրտմական հոգովք պաշարեալ եւ թակարդապատեալ¹ եւ անկեալ ի ծուփա խորհրդոց, եթէ որպիսի² արդեաւք³ ելս իրացն գտանիցէ:

[Զ]

1 Եւ իբրեւ աւուրս բազումս անդէն ի նմին դեգերէր⁴, յարուցեալ այնուհետեւ հասանէր⁵ առ սուրբ կաթողիկոսն Հայոց Մեծաց, որոյ անունն ճանաչէր⁶ Սահակ, զոր պատրաստական գտանէր նմին փութոյ հաւանեալ⁷: 2 Եւ միանգամայն յաւժարութեամբ գումարեալ հանդերձ աղաւթիւք մեծաւք⁸ առ Աստուած⁹ կանխէին, վասն ամենայն ոգւոց¹⁰ քրիստոսաբեր փրկութեանն¹¹ հասանելոյն: 3 Եւ զայն առնէին աւուրս բազումս:

4 Ապա ելանէր նոցա պարգեւական¹² յամենաբարին¹³ Աստուծոյ ժողովել¹⁴ զաշխարհահոգ խորհուրդն¹⁵ երանելի միաբանելոցն, եւ ի գիւտ¹⁶ նշանագրաց¹⁷ Հայաստան ազգին հասանել:

5 Բազում¹⁸ հարցափորձի¹⁹ եւ քննութեան²⁰ զանձինս պարապեցուցեալ եւ բա-

զում աշխատութեանց համբերեալ, ազդ առնէին ապա եւ զկանխագոյն խնդրելին իւրեանց թագաւորին Հայոց²¹, որոյ անուն²² կոչէր Վռամշապուհ²³:

6 Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն²⁴ ասորւոյ²⁵ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն գտեալ²⁶ նշանագիրս աղփաբետաց²⁷ հայերէն լեզուի²⁸:

7 Եւ իբրեւ պատմեցաւ նոցա յարքայէ վասն գտելոյն²⁹ ի Դանիէլէ³⁰, յաւժարեցին զարքայ՝ փոյթ առնել վասն պիտոյիցն այնոցիկ: 8 Եւ նա առաքէր զոմն Վահրիճ³¹ անուն հրովարտականք³² առ այր³³ մի երէց³⁴, որոյ անուն Հաբէլ կոչէին³⁵, որ էր մերձաւոր Դանիէլի ասորւոյ³⁶ եպիսկոպոսի:

9 Իսկ Հաբէլին³⁷ զայն լուեալ, փութանակի հասանէր առ Դանիէլն, եւ նախինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանագրացն³⁸, եւ ապա առեալ ի նմանէ առաքէր³⁹ առ արքայն յերկիրն⁴⁰ Հայոց: 10 Ի հինգերորդի⁴¹ ամի թագաւորութեան նո-

1 b օթայ կարդապատեալ / c յօտակարգապատեալ / ճա շք չիբ քակարդապատեալ
2 ճա շք որպէս
3 ճա շք չիբ արդեոբ
4 ճա շք իբրեւ բազում անգամ ի նմին դադարէր
5 d չիբ հասանէր
6 ճա շք նանաչիր
7 b հաւանեալ սոյն. մանաւանդ հաւանեալ / ճա շք հաւանեալ: Որ մանաւանդ միաբանեալ եւ միասնական
8 ճա շք մեծաւք / միւսն. մեծովք
9 ճա շք մեծաւք եւ ուժգին խնդրուածովք առ Աստուած
10 b որդոց / cd հոգւոց
11 ճա շք փրկութեան
12 c պարգեւ / ճա շք պարգեւական պատնաոբ
13 c յամենաբարւոյն
14 ճա շք ժողովեալ
15 ճա շք խորհուրդսն
16 abcdeվ գիրս փխ. ի գիւտ
17 abcdeվ նշանագրոյ / c նշանագրաց տալ / ճա շք նշանագրացն
18 ճա շք սահմանեալ բազում
19 ճա շք հարցափորձի / միւսն. հարց փորձի

20 b եւ քննութիւնն
21 ճա շք իւրեանց թագաւորին իւրեանց հայոց
22 e անունն
23 ճա շք կոչիր Վրամշապուհ
24 b որում / ճա որումն փխ. ուրումն
25 ճա e ասորոյ
26 c լուս. էր գրեալ / միւսն. չիբ գրեալ. ուղղում եմ գտեալ
27 ճա շք ուրեմն գրեալ նշանագիրս ալփափետաց
28 c ճա շք լեզուին
29 բոլորք գրելոյն ուղղ. գտելոյն
30 ճա շք Դանիէլի փխ. ի Դանիէլէ
31 d Վահիւն
32 ճա շք հանդերձ հրովարտակոբ
33 d ճա շք չիբ այր
34 c էրէց
35 ճա շք որում Հաբէլ կոչէին
36 cd ասորոյ / ճա շք Դանիէլի չիբ ասորոյ/ եպիսկոպոսի
37 ճա շք Արեղայն փխ. Հաբէլին
38 abcdeվ նշանագրոյն
39 ճա շք չիբ առաքէր
40 ճա շք առ արքայ յերկիրն
41 ճա շք ի հինգերորդ

ըա¹ ի նա² հասուցանէր: 11 Իսկ արքային³ հանդերձ միաբան սրբովքն⁴ Սահակաւ եւ Մաշթոցիւ⁵ ընկալեալ զնշանագիրսն⁶ ի Հաբէլէն⁷, ուրախ լինէին:

12 Իսկ իբրեւ ի վերայ հասեալ, թէ՞⁸ չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղորայս⁹ զկապս հայերէն լեզույն¹⁰, մանաւանդ զի եւ նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց քաղեալք¹¹ եւ յարուցեալք դիպեցան, յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, եւ նմին ելս¹² խնդրէին ժամանակս ինչ:

[Է]

1 Վասն որոյ առեալ երանելոյն Մաշթոցի¹³ դաս մի մանկտոյ հրամանաւ արքայի¹⁴ եւ միաբանութեամբ սրբոյն Սահակայ, եւ հրաժարեալք ի միմեանց համբուրիւ սրբութեանն¹⁵ խաղայր զնայր ի հինգերորդ ամի Վռամշապհոյ¹⁶ արքային Հայոց, եւ երթեալ հասանէր ի կողմանս Արամի¹⁷ ի քաղաքս¹⁸ երկուս¹⁹ Ասորոց. որոց²⁰ առաջինն Եղեսիա կոչի, եւ երկրորդին²¹ Ամիգ անուն²²: 2 Ընդդէմ²³ լինէր սուրբ²⁴

եպիսկոպոսացն, որոց²⁵ առաջնոյն²⁶ Բաբելաս անուն²⁷ եւ երկրորդին Ակակիրոս. հանդերձ կղերականաւքն եւ իշխանաւքն²⁸ քաղաքաց²⁹ պատահեալ, եւ բազում մեծարանս ցուցեալ հասելոցն՝ ընդունէին հոգաբարձութեամբ ըստ Քրիստոսի անուանելոցն³⁰ կարգի:

3 Իսկ աշակերտասէր³¹ վարդապետին զտարեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ, զոմանս յասորի³² դպրութիւնն³³ կարգէր [ի քաղաքին Եղեսացւոց]³⁴, եւ զոմանս ի յունական³⁵ դպրութիւնն՝ անտի³⁶ ի Սամուսատական³⁷ քաղաքն գումարէր:

[Ը]

1 Եւ նորա³⁸ իւրովք հաւասարաւք զսովորականն առաջի եղեալ զաղաւթս եւ զտքնութիւնս եւ զպաղատանս արտասուալից³⁹, զխստամբերութիւնս⁴⁰, զհոգս զաշխարհահեծս⁴¹, յիշելով զասացեալսն մարգարէին⁴², եթէ՛ Յորժամ հեծեծեսցես, յայնժամ⁴³ կեցցես”:

1 Ճա շք նորին փ/ս. նորա
2 Ճա շք չի/ փ նա
3 Ե արբայի
4 abcdeվ սրբովն
5 c Սահակայ եւ Մաշտոցի
6 d նշանագիրսն
7 Ճա շք յԱրեւլայ փ/ս. ի Հաբելէն
8 Ճա շք իբրեւ հասին ի վերայ թէ
9 Ճա շք այն նշանագիրք ողջ ածել զսիւղորէ
10 Ճա շք լեզուի
11 Ճա շք ի յայլոց դպրութեանց քաղեալք
12 Ճա շք եւս փ/ս. ելս
13 Ճա շք Մեսրոպայ փ/ս. Մաշթոցի
14 Ճա շք արքունի փ/ս. արբայի
15 Ճա շք համբուրեալ սրբութեամբ
16 Ճա շք Վրամշապուհ
17 Ճա շք Արամա
18 Ե չի/ փ քաղաքս
19 բոլորք երկուց ուղղ. երկուս
20 Ե յորոց / Ճա շք որոյ
21 Ե Ճա շք երկրորդին / միւսն. երկրորդն
22 de չի/ անուն
23 Ճա շք անդդէմ փ/ս. ընդդէմ

24 Ճա շք երանելի փ/ս. սուրբ
25 Ե յորոցն / Ճա շք որոյ
26 Ե յառաջագոյն
27 Ճա շք առաջնուն Բաբիլոս անուանէր
28 Ճա շք կղերականաւք եւ իշխանաւք
29 Ճա շք քաղաքաց / abcdeվ քաղաքին
30 Ե անուանելոյն / Ճա շք անուանելոյ
31 abeվ աշակերտասէրն
32 Ե ասորի / Ճա շք յասորոց
33 Ե դպրութեանն
34 բոլորք՝ չի/ ի քաղաքին Եղեսացւոց
35 բոլորք՝ չի/ ի յունական
36 c եւ անդ
37 Ճա շք յունական չի/ դպրութիւնն / անդ ի Սամուսատական
38 Ե ջնջ. եւ նորա / e Ճա շք եւ նա
39 Ճա շք եղեալ զպախս եւ զաղօթս եւ զտխմութիւն զպաղատանս արտասուալիցս / Ե արտասուալիցս
40 c զխստամբերութիւնն եւ
41 d Ճա շք աշխարհահեծս
42 Ճա շք Մարգարէէն թէ
43 Ճա շք ապա փ/ս. յայնժամ
“ Ե․․ Լ, 15

2 Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ¹ աւճան գտանելոյ: 3 Որում² պարգեւէր իսկ վիճակ յամենաշնորհոյն³ Աստուծոյ. հայրական չափուն ծնեալ ծնունդս⁴ նորոգ եւ սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանազիրս⁵ հայերէն լեզուին: 4 Եւ անդ⁶ վաղվաղակի նշանակեալ, անուանեալ եւ կարգեալ⁷, յաւրինէր սիրոբայիւբ կապաւթ⁸:

5 Եւ ապա հրաժարեալ⁹ յեպիսկոպոսէն սրբոյ, հանդերձ աւգնականաւթ¹⁰ իւրովք իջանէր ի քաղաքն Սամոսատացոց, յորում¹¹ մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն եւ յեկեղեցոյն մեծարեալ լինէր:

6 Եւ անդէն ի նմին¹² քաղաքի գրիչ ոմն¹³ հելլենական¹⁴ դպրութեան¹⁵ Հոսոփանոս անուն գտեալ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրացն¹⁶ գնրբագոյնն եւ զլայնագոյնն, զկարճն եւ զերկայնն, զառանձինն եւ զկրկնաւորն, միանգամայն յաւրինեալ¹⁷ եւ յանկուցեալ¹⁸, ի թարգմա-

նութիւն դառնային հանդերձ արամբք երկուք¹⁹, աշակերտաւքն իւրովք²⁰. որոց²¹ առաջնոյն Յովհան²² անուն կոչէին, յեկեղեաց գաւառէն²³, եւ երկրորդին Յովսէփ²⁴ անուն²⁵ ի Պաղանական²⁶ տանէն: 7 Եւ եղեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս²⁷ նախ²⁸ յԱռակացն²⁹ Սողոմոնի³⁰, որ ի սկզբանն իսկ ծանալթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ եթէ³¹ ձանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ³² զբանս հաննարոյ՞: 8 Որ եւ գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի³³, հանդերձ ուսուցանելով զմանկունս³⁴ գրիչս նմին դպրութեան:

[Թ]

1 Ապա յետ այնորիկ առնոյր թուղթս³⁵ յեպիսկոպոսէ քաղաքին եւ հրաժարեալ ի նոցանէ հանդերձ ամենայն իւրովքն³⁶, բերէր³⁷ առ եպիսկոպոսն Ասորոց: 2 Որ³⁸ յորոց նախընկալն եղեւ, առաջի արկեալ³⁹ նոցա զնշանազիրս աստուածատուրս⁴⁰. վասն որոյ բազում⁴¹ իսկ գովու-

1 Ճա ձր չիֆ ինչ
 2 Ճա ձր որում եւ
 3 Ճա ձր յամենաշնորհին
 4 Ճա ձր չափոյ ծնանիլ ծնունդ
 5 d նշանագիր
 6 Ճա ձր եւ անդէն
 7 Ճա ձր նշանագրեալ անուանագրեալ եւ կարգեալ
 8 Ճա ձր Սիրոբայիւֆ յորինէր. եւ կապաւթ եւ ձայնատուր նշանագրաւթ / d կապիւթ / բորորը եւ կապոֆ/յապաւ. եւ
 9 e եւ հրաժարեալ ապա / Ճա ձր հրաժարեալթ
 10 bed օգնականօֆն / Ճա ձր ազգականօֆ
 11 Ճա ձր յորում եւ
 12 Ճա ձր անդ ի նմին
 13 b Ճա ձր գումն
 14 Ճա հելլենական / ձր հելլ'ենական
 15 ձր դպրութիւնն / eվ դպրութեամբ
 16 Ճա ձր նշանագրացն / միւսն. նշանագրոյն
 17 b գերկարն / Ճա ձր գերկայն զլանագոյն առանձինն եւ զկրկնայար միանգամայն յորինէր «Արարատ» ամսագիր 1912 թ., էջ 510 «Ձեռագրերի ուսումնասիրութեամբ վերականգնած բնագիր» Գալուստ Տէր-Մկրտչեանի. գնրբագոյնն եւ զլայնագոյնն, զկարճն եւ գերկայնն, զառանձինն եւ զկրկնաւորն (կամ զկրկնայարն) յորինեալ
 18 Ճա ձր չիֆ եւ յանկուցեալ

19 Ճա ձր երկու
 20 Ճա ձր չիֆ իւրովք
 21 Ճա ձր յորոց
 22 de Յօհան
 23 Ճա ձր յեկեղեցական գաւառէն
 24 e Յովսէֆ
 25 Ճա ձր չիֆ անուն
 26 Ճա ձր ի Պաղանական
 27 abcdeվ չիֆ Թարգմանելոյ զգիրս
 28 Ճա ձր չիֆ նախ
 29 Ճա ձր եւ անդ եղեալ սկիզբն Թարգմանելոյ զգիրս առակացն
 30 b Սողոմոնի
 31 Ճա ձր ասելովն թէ
 32 Ճա ձր եւ իմանալ
 33 Ընդ. Ը 2
 34 Ճա ձր գրեցաւ իսկ ձեռամբ գրչին այնորիկ
 35 Ճա ձր զմանկունս / միւսն. մանկունս
 36 Ճա ձր առեալ թուղթ
 37 b իւրայովքն
 38 Ճա ձր իւրայովքն ամենայն, երբ
 39 Ճա ձր չիֆ որ
 40 Ճա ձր առաջի արարեալ
 41 Ճա ձր վ վասն որոյ եւ զբազում

Թիւնք¹ յեպիսկոպոսաց սրբոց² եւ յամենայն եկեղեցեաց բարձրանային ի փառս Աստուծոյ, եւ ի միխթարութիւն աշակերտելոցն ոչ սակաւք³: 3 Յորոց հրաժարեալք այնուհետեւ եւ առեալ⁴ թուղթս աւետազիրս, հանդերձ շնորհատուր պարգեւաւքն եւ ամենայն իւրայիւքն⁵, ի⁶ շնորհացն Աստուծոյ ⁷ճանապարհորդ լինէր⁸. զաւթեւանաւք⁹ անցեալ աջողութեամբ եւ հոգելից¹⁰ ուրախութեամբ եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն, ի կողմանս Այրարատեան գաւառին, առ սահմանաւք Նոր Քաղաքին, ի վեցերորդ¹¹ ամի Վռամշապհոյ արքային¹² Հայոց Մեծաց:

4 Եւ ոչ այնպէս մեծն Մովսէս զուարճանայր յէջս¹³ Սինէական լերինն. Հասեմք թէ առաւելաւքն¹⁴ պակասագոյն¹⁵: 5 Քանզի¹⁶ յԱստուծոյ առեալ եւ աստուածազիր հրաման¹⁷ ի բազուկս՝ այրն աստուածատես ի լեռնէն իջանէր. այլ վասն¹⁸ վրէժագործ ժողովրդեանն, որոց¹⁹ թիկունք ի տէրունիսն եւ կործան յերկիր, տիրադրութք յիւրեանց կուռս ձուլածուին երկիր պագանէին, եւ զնորին հրամանաբերն սրտառուչ

սրտաբեկ լացուցին²⁰. քանզի ի տախտակացն խորտակելոց յայտնի եղեալ տեսանէք բերելոյն²¹ թախծութիւնն²²: 6 Իսկ այսր երանելոյ²³ վասն որոյ ճառեալքս յարդարին, ոչ²⁴ ըստ այնմ աւրինակի, որ անդն²⁵ գործեցան, այլ ինքն իւրով²⁶ լցեալ հոգեւոր միխթարութեամբ²⁷ կարծեալ զընդունելեացն յաւժարութիւնն²⁸ եւ ընդունելեացն²⁹ յուսով ուրախութեան՝ դասաւորութիւն³⁰ ճանապարհացն աւետաբեր:

7 Բայց մի՛ ոք յանդգնագոյն վասն ասացելոցն զմեզ համարեսցի, թէ զիարդ զայր մի խոնարհագոյն ընդ մեծին Մովսէսի, ընդ աստուածախաւսին, սքանչելագործին³¹ նմանեցուցեալ հաւասարեաց. որով թերեւս ստգտանիցեմք³²: 8 Եւ կարեմք³³ այլ աւելի հաւատովք. քանզի եւ չկայ ինչ ի վերայ յայտնեալք եւ ծածկականաւք³⁴ զաստուածականն խոտել, քանզի միոյն³⁵ Աստուծոյ ամենազաւրի շնորհք առ ամենայն ազգս երկրածնաց մատակարարին:

9 Եւ արդ եկեալ յիշելին մերձ ի թագաւորական քաղաքն³⁶, ազգ լինէր թագաւորին եւ սրբոյ եպիսկոպոսին: 10 Որոց առեալ զամենայն նախարարագունդ աւա-

1 Ճա շք գովութիւնս իսկ
 2 Ճա շք չիբ սրբոց
 3 Ճա շք եւ միխթարութիւնմ աշխատելոցն ոչ սակաւ
 4 abcdeվ չիբ հրաժարեալմ այնուհետեւ եւ առեալ c որայիւբ
 5 bc չիբ ի
 6 Ճա շք ամենայն իրաւ յանձն եղեալ Քրիստոսի շնորհացն
 7 Ճա շք լինեք եւ այնպէս զբազում
 8 b լինէր, եւ այնպէս բազում օթեւանօք
 9 Ճա շք ողջութեամբ եւ յաջողութեամբ եւ հոգաւից
 10 Ճա շք ի վեցերորդի
 11 Ճա շք արքայի
 12 Ճա շք Մովսէս մեծն զուարթագոյնս ցնծայր յէջս
 13 Ճա առեւելմ
 14 bc պակասագոյնմ
 15 Ճա շք քան չի/ս. քանզի
 16 Ճա շք հրամանմ
 17 Ճա շք չիբ այլ վասն վրէժագործ-ից միջնեւ թախծութիւնն բառը
 18 d որոյ

20 deվ կացուցին
 21 bc բերելոցն / de բերելոյն
 22 d թախծութեանն
 23 bc երանելոյ / Ճա շք իսկ այսմ երանելոյ
 24 Ճա շք չիբ ոչ
 25 de անդն
 26 Ճա շք անդր գործեցաւ, այլեւ իմն իւրայօքն / ce իւրով
 27 Ճա շք ուրախութեամբ չի/ս. միխթարութեամբ
 28 bc գլխաւորութիւնն
 29 Ճա շք կարծել գլխաւորութիւն ընդունելեացն / abcdeվ ընդունելոց: Այստեղից ընդհատուում են Ճա շք:
 30 b դատաւորութիւնն
 31 b սքանչելագործի
 32 bc զգտանիցեմք
 33 b կերեմք / c կրեմք
 34 abcde ծածկանօք
 35 bc միայն
 36 e ի քաղաքն թագաւորական

զանւոյն ամբոխ, ի քաղաքէն¹ ելեալ՝ պատահէին երանելւոյն² զափամբ Ռահ գետոյն: 11 Եւ զցանկալի ողջոյնն միմեանց տուեալ, ուստի եւ բարբառաւք ցնծութեան եւ երգաւք հոգեւորաւք եւ բարձրագոյն³ աւրհնութեամբք ի քաղաքն դառնային, եւ զաւուրս տաւնական ուրախութեամբ անցուցանէին:

[Ժ]

1 Ապա առեալ երանելի հոգաբարձուացն⁴ գյանկարծագիւտ⁵ խնդրելին⁶, հայցէին եւս⁷ յարքայէ մանկուսս մատաղս, որով զնշանագիրսն արծարծել⁸ մարթասցեն⁹: 2 Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային, ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել. որով եւ յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ՝ երանելին¹⁰ հասանէր, եւ իբրեւ ամս երկու¹¹ կարգեալ զվարդապետութիւն իւր, եւ¹² նովին նշանագրովք տանէր: 3 Եւ այնպէս միջամուխ¹³ եղեալ հանգամանաւք¹⁴ աւրինապատգամացն, մինչեւ բնաւ¹⁵ արտաքոյ իւրեանց բնականութեանն գերծանել¹⁶:

1 bc ամբոխին քաղաքին
2 c երանելոյն
3 de բարձրաձայն
4 bc հոգիբարձուացն / ճա շք հոգեբարձացն
5 b գյանկարծագիւտ / միւսն. գյանկարծագիւտն
6 c խնդրելին / միւսն. խնդրելին
7 ճա շք չիք եւս
8 abcdeվ չիք արծարծել
9 ճա շք արծարծել մարթասցեն / abcdeվ մարթասցեն
10 bc ճա շք գեղեցիկ վարուք երանելին / ճա շք չիք երանելին
11 թերեւս ուղղելի՝ ամիսս երկու / bcde ճա շք երկուս
12 bc ճա շք չիք եւս
13 c միջատմբ
14 b հանգատանոք / c հանգանոք փիս. հանգատանոք
15 d չիք բնաւ
16 abվ բնականք եթէ գերծանել / c բնականացն գերծանել

[ԺԱ.]

1 Եւ ի ձեռն առեալ այնուհետեւ աստուածագործ մշակութեամբ¹⁷ զաւետարանական արուեստն¹⁸ ի թարգմանել, ի գրել եւ¹⁹ յուսուցանել. մանաւանդ հայեցեալ ի տեառնաբարբառ հրամանացն բարձրութիւնն, որ առ երանելին Մովսէս եկեալ, վասն ամենայն իրացն եղելոց, յաստուածեղէն²⁰ պատգամացն բարձրութիւն²¹ աւանդելոցն²² մատենագրել առ ի պահեստ յաւիտեանցն որ գալոցն էին. նոյնպիսիք²³ եւ այլոց մարգարէիցն հրամայեալք²⁴: 2 Առ, ասէ, քարտէզ նոր մեծ, եւ գրեա՛ ի նմա գրչաւ դպրի՛: 3 Եւ այլուր, թէ՛ Գրեա՛ գտեսիլդ ի տախտակի, եւ ի զիրս հաստատեա՛: 4 Իսկ Դաւիթ յայտնապէս եւս վասն ամենայն ազգաց՝ զվիճակ աստուածատուր աւրինացն նշանակէ ասելովն, թէ՛ Գրեսցի յազգ այլ²⁵: 5 Եւ թէ՛ Տէր պատմեսցէ գրով ժողովրդոց՛: 6 Զոր եկեալ կատարեսց ամենափրկիչն Քրիստոս շնորհատուր հրամանան, եթէ՛ ելիք ընդ ամենայն ազգս՛. եւ եթէ՛ Քարոզեսցի Աւետարանս ընդ ամենայն տիեզերս՛: 7 Ուստի եւ երանելի հարցն մերոց համարձակութիւն առեալ՝ յուսալից փութով եւ երեւելի եւ արդիւնակատար ըստ Աւետարանին՝ զիրեանց մշակութիւնն ցուցանեն:

17 bc մշակութեան
18 bc արուեստին
19 bc չիք եւս
20 b եւ աստուածեղէն / c աստուածեղէն
21 c բարձրութիւնն
22 b աւանդելոց
23 bc նոյնպիսիքն
24 d համարեալք
՞ Ե․․ Ը 1
ՙ Ե․․ Ը 8․ Ը․ՙ․ Բ 2
25 bc յազգ այլ / միւսն. յայլ
ՙ Ս․ՙ․ Ճ Ը 19
ՙ Ս․ՙ․ Զ Զ 6
ՙ ՙ․ՙ․ Ս․ՙ․ Բ Ը 19:
ՙ Ս․ՙ․ Բ Զ 13

8 Յայնմ ժամանակի երանելի եւ ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր. յորում յանկարծ ուրեմն¹ աւրէնսուսոյց² Մովսէս՝ մարգարէական դասուն, եւ յառաջադէմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական գնդովն, հանդերձ աշխարհակեցոյց Աւետարանաւն³ Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ⁴ ի ձեռն⁵ երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառք հայերէնախաւսք գտան:

9 Անդ էր այնուհետեւ սրտալիր ուրախութիւն եւ ակնավայել տեսիլ հայելւոյն⁶: 10 Քանզի երկիր⁷, որ⁸ համբաւուցն⁹ անգամ¹⁰ աւտար էր կողմանցն այնոցիկ, յորում ամենայն աստուածագործ սքանչելագործութիւնքն գործեցան, առժամայն վաղվաղակի ամենայն իրացն եղելոց խելամուտ լինէր. ոչ միայն ժամանակաւ պաշտեցելոցն¹¹, այլ եւ յառաջագոյն յաւիտենիցն, եւ ապա եկելոցն, սկզբանն¹² եւ կատարածի, եւ ամենայն¹³ աստուածատուր աւանդութեանցն:

[ԺԲ]

1 Իսկ իբրեւ գչափ¹⁴ առեալ զիրացն հաստատութեան¹⁵, եւ համարձակագոյն եւ առաւելագոյն զաշակերտութիւնն նորագիւտ վարդապետութեանն խմբէին¹⁶ ուսուցանել եւ թեքել, եւ պատրաստական

քարոզութեանն անգէտ մարդկան յաւրիւնել: 2 Որոց եւ ինքեանք իսկ¹⁷ ի կողմանց եւ ի գաւառաց Հայաստան աշխարհին յորդեալք եւ դրդեալք¹⁸ հասանէին ի բացեալ աղբիւրն գիտութեանն Աստուծոյ: 3 Քանզի յԱյրարատեան գաւառին՝ ի կայս¹⁹ թագաւորացն եւ²⁰ քահանայապետացն²¹, բղխեցին Հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ: 4 Անդ էր յիշելի եւ մարգարէականն, եթէ՛ նիցի անդ աղբիւր բղխեալ ի տան Դաւթի՞՞:

5 Որ եւ սկսան իսկ սիւնք եկեղեցւոյ միջամուխ ձեռամբ²² զգործ աւետարանչացն²³ Քրիստոսի գործել, գումարել ի կողմանս. ի գաւառս, ի տեղիս տեղիս Հայաստան ազգին, դասս դասս²⁴ զաշակերտեալսն ճշմարտութեանն, զհասուցելոցս²⁵ ի կատարումն գիտութեան²⁶, բաւականս²⁷ եւ առ ի գայլսն զեկուցանելոյ: 6 Որոց²⁸ կանոն եւ աւրինակ զիւրեանց անձանց արգասիս եղեալ, եւ պատուիրեալ կալ ի նմին կանոնի:

7 Եւ իւրեանց անդէն²⁹ զ՛աւուրնթերակաց արքունիսն³⁰, հանդերձ ամենայն ազատագունդ բանակիւն³¹, աստուածեղէն իմաստութեամբն վարդապետեալ: 8 Առաւել երանելւոյն³² Սահակայ զՄամիկոնեան³³ որեարն ի վարժս վարդապետու-

1 բոլորը՝ անկարծ ուղղ. յանկարծ
2 bc որում յօրէնս ուսոյց / c օրէնուսոյցն / d օրէնս ուսույց
3 b Աւետարանաւ
4 bc հասեալք
5 b եւ երեսեալք ի ձեռն
6 b հայցելոյն / c հայելոյ
7 c երկիրն
8 b չիք որ
9 ce համբաւուց
10 b ակամ փխ. անգամ
11 c պաշտեցելոյն
12 b ապա եկ սկզբանն / c չիք ապա եկելոցն
13 bc եւ ամէն
14 c չափ
15 bc հաստատութեանն
16 b հմբէին

17 de չիք իսկ
18 b գրեալք / c գրկեալք փխ. դրդեալք
19 b ի կայս
20 e չիք եւ
21 d քահանայապետիցն
՞ Հ՞՞՞. Չ. Չ. Չ. 1:
22 bc ի միամուխ ձեռամբ
23 b աւետարանչաց
24 bcվ դասս դասս / միւսն. դաս դաս
25 c գիտուցելոցն
26 b գիտութեանցն
27 bc բաւականս
28 d որոյ
29 bcd անդէն
30 bc արգունսն փխ. արժունիսն
31 bc բանակիւն
32 d երանելւոյն / միւսն. երանելոյն
33 b Մամիկոնեան

թեանն¹ պարապեցուցեալ, որոց առաջնոյն Վարդան անուն էր², որ եւ Վարդկան³ կոչէր: 9 Նոյնպէս եւ զամենայն ոգի ջանայր⁴ յերկրել, հասուցանել ի գիտութիւն⁵ ճշմարտութեան:

[ԺԳ]

1 Յետ այնորիկ առնոյր հաւանութիւն երանելին Մաշթոց, որպէս զի⁶ տէր⁷ Եպիսկոպոսն ի կայենականսն, եւ նա ի սփիւռս հեթանոսաց զբանն կենաց սերմանիցեն⁸: 2 Եւ հրաժարեալ⁹ ի նոցանէն հանդերձ աւգնականաւքն¹⁰, որոց առաջնումն Տիրայր անուն ի Խորձենական¹¹ գաւառէն, եւ երկրորդին Մուշէ¹² անուն ի նահանգէ Տարաւնոյ, որք էին սուրբք եւ զուարթագոյնք, հանդերձ այլովք¹³ եւս սպասաւորաւք Աւետարանին, զոր չեմք բաւական ըստ անուանցն նշանակել: 3 Որովք¹⁴ յանձն եղեալ երանելին շնորհացն Աստուծոյ, երթեալ իջանէր յիփոտաստակն¹⁵ Գողթան, յառաջին դաստակերտն իւր: 4 Եւ անդ ընդելական սովորութեամբն ի կիր արկեալ զվարդապետութիւնն՝ հաւասարութեամբն բարեպաշտին Շաբաթայ¹⁶, լի առնէր զգաւառն ողջունիւ Աւետարանին Քրիստոսի. եւ կարգէր յամենայն

գիւղս գաւառին դասս սրբոց վանականաց: 5 Որում եւ հասեալ ժամանեալ հայրաբարուին Գտայ, որդւոյ Շաբաթայ առն քրիստոսասիրի, բազում սպասաւորութիւն իբրեւ հաւասարի¹⁷ որդւոյ վարդապետին տանէր:

[ԺԴ]

1 Յայնժամ վաղվազակի հրաման առեալ ի թագաւորէն՝ սկիզբն առնելոյ զխուժագուժ կողմանսն¹⁸ Մարաց, որք ոչ միայն¹⁹ վասն դիւական սատանայակիր²⁰ բարուցն ճիւղութեան²¹, այլ եւ վասն խնցրեկագոյն եւ խոշորագոյն լեզուին՝ դժուարամտոյցք²² էին: 2 Առ ի յարգարել եւ զնոցա հարուստ²³ ամացն²⁴ ծնունդս առեալ՝ պարզախաւսս, հռետորաբանս, կրթեալս, աստուածատուր իմաստութեանն ծանաւթս²⁵ կացուցանէին:

[ԺԵ]

1 Ապա յետ այնորիկ ի սահմանակիցս ի Սիւնական աշխարհն ելանէր: 2 Եւ անդ աստուածասէր հնազանդութեամբ ընկալեալ զնա իշխանին Սիւնեաց, որ էր Վաղենակ անուն: 3 Բազում աւգնականութիւն²⁶ գտեալ ի նմանէ վասն իրացն առաջի արկելոցն, մինչեւ հասանել նմա բովանդակ ի վերայ սահմանաց Սիւնեաց: 4 Եւ ժողովեալ²⁷ մանկունս առ ի նիւթ վարդապետութեանն, առաւել զգազանամիտ զվայրենագոյն զճիւղաբարոյ կող-

1 d վարդապետութեան
2 bc որոյ առաջնոյն Վարդ կոչիւր փխ. որոց առաջնոյն Վարդան անուն էր
3 b Վարդական / cd Վարդան փխ. Վարդկան
4 bc ջանալ
5 b ի գիտութիւնն
6 d որպէս փխ. որպէսզի
7 bc տէրն
8 b սերմանեցին / c ուղղ. սերմանիցէ
9 d հրաժարեալք
10 abcdeվ հանդերձ այլովք [b այլով] եւս [d եւ] օգնականօքն. յայպաւ. այլովք եւս
11 c Հորձենական
12 cv Մուշեղ
13 bc այլովք
14 բոլորք՝ որով ուղղ. որովք
15 bc առտոս տակն / միւսն. առտոս տանն. ուղղում եմ՝ յիփոտաստակն
16 b Շաբաթա / c Շաբաթու

17 c հաւասարի ուղղ. հաւատարիմ
18 bc կողմանն
19 b որք ունէին միայն
20 c սատանայական
21 c նիւաղութիւն
22 dվ դժուարիմամտոյցք
23 վ հարանց փխ. հարուստ
24 b հարանց ամոյն / c հարաց ամոյն փխ. հարուստ ամացն
25 adeվ ծնունդս փխ. ծանօթս
26 de օգնականութիւնս
27 b ժողովել

մանցն. եւ այնչափ փոյթ ի վերայ ունելով՝ եւ դայեկաբար սնուցանել եւ խրատել, մինչեւ ի նոցունց իսկ ի վայրենեացն եւ պիսկոպոս տեսուչ եկեղեցւոյն Սիւնեաց կարգել, որոյ անունն կոչէր Անանիաս, այր սուրբ¹ եւ երեւելի, հայրաբարոյ² ժառանգաւորաց եկեղեցւոյ: 5 Ապա եւ զերկիրն Սիւնեաց³ դասուք վանականաց⁴ լնոյր:

6 Յորում ժամանակի պարգեւեալ յԱստուծոյ, հասանէր ի գլուխ իշխանութեանն Սիւնեաց քաջն⁵ Սիսականն Վասակ, այր խորհրդական եւ հանճարեղ եւ յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ: 7 Բազում ինչ նպաստութիւն ցուցանէր աւետարանագործ վարդապետութեանն, իբրեւ որդւոյ առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ, եւ ծառայեալ ըստ Աւետարանին վայելչութեան⁶, մինչ ի վախճան զհրամայեալսն ի գործ բերէր:

[ԺԶ]

1 Դարձեալ յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ՝ հոգ ի մտի արկանէր սիրելին Քրիստոսի եւ վասն բարբարոսական կողմանն: 2 Եւ առնոյր կարգեալ⁷ նշանագիրս վրացերէն լեզուին, ըստ շնորհեցելոյն⁸ նմա ի Տեառնէ: 3 Գրէր, կարգէր եւ աւրինաւք յարդարէր. եւ առնոյր ընդ իւր զոմանս լաւագոյնս յաշակերտաց իւրոց, յարուցեալ գնայր իջանել⁹ ի կողմանս Վրաց: 4 Եւ երթեալ յանդիման լինէր թագաւորին, որում¹⁰ անուն էր Բակուր, եւ եպիս-

կոպոսի աշխարհին՝ Մովսէս: 5 Եւ առաւելագոյն հնազանդեալ նմա ըստ աւրինացն Աստուծոյ՝ թագաւորին եւ զաւրացն, հանդերձ ամենայն գաւառաւքն:

6 Եւ նորա զիւր արուեստն առաջի արկեալ՝ խրատէր յորդորելով. յորում եւ յանձն առեալ ամենեցուն զխնդրելին կատարել: 7 Եւ գտեալ զայր մի թարգման վրացերէն լեզուին, որ անուանեալ կոչէր Ջաղայ, այր գրագէտ եւ ճամբարտահաւատ. հրաման տայր այնուհետեւ արքայն Վրաց՝ ի կողմանց կողմանց եւ ի խառնադանջ¹¹ գաւառաց իշխանութեան իւրոյ ժողովել մանկունս եւ տալ¹² ի ձեռն վարդապետին: 8 Ջոր առեալ՝ արկանէր ի բովս վարդապետութեանն եւ հոգեւոր սիրոյն եռանդամբ¹³ զաղտ եւ զժանգ¹⁴ շարաւահոտ դիւացն եւ զանտիրագործ պաշտամանն ի բաց քերէր¹⁵, այնչափ անջատեալ ի հայրենեաց իւրեանց եւ անյիշատակ ցուցանել, մինչեւ¹⁶ ասել, թէ՛ Մոռացայ զժողովուրդ իմ¹⁷ եւ զտուն հար իմոյ՞:

9 Եւ արդ զնոսա, որ յայնչափ¹⁸ ի մասնաւոր եւ ի բաժանեալ լեզուացն ժողովեցան, միով աստուածաբարբառ պատգամաւքն մի ազգ կապեալ՝ փառաբանիչք¹⁹ միոյ Աստուծոյ յաւրինէր: 10 Յորոց եւ գտան արժանիք՝ ելեալ²⁰ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ, որոց առաջինն Սամուէլ անուն²¹, այր սուրբ եւ բարեպաշտաւն, եպիսկոպոս կացեալ տանն արքունականի:

1 d չի՛ սուրբ
2 b հայրաբարոյ
3 bc գերկիրն ամենայն Սիւնեաց
4 bd վանականացն
5 ce քաջ
6 c զվայելչութեանն
7 c զկարգեալ
8 b ըստ շնորհեցելոյ / acվ շնորհեցելոյ
9 c իջանել
10 c նախ զոր, ապա ուղղ. զորում

11 d խառնիմանդանջ
12 c եւ տալ / միւսն. չի՛ եւ
13 c եւ եռանդամբ
14 b ժանգ
15 abeվ չի՛ քերէր
16 bc միմչ
17 e չի՛ իմ
՞ Ըմմք. Ս՞դմ. Խ՞Գ. 11:
18 b այնչափ
19 c ուղղ. փառաբանիչս
20 եղեալ ուղղ. ելեալ
21 de չի՛ անուն

11 Իսկ իբրեւ ընդ ամենայն տեղիս Վրաց կարգեալ զգործ աստուածապաշտութեանն, այնուհետեւ հրաժարեալ ի նոցանէ՝ դառնայր յերկիրն Հայոց եւ պատահեալ Սահակայ կաթողիկոսին¹ Հայոց, պատմէր նմա զողջութենէ եղելոցն, միանգամայն եւ² փառաւոր առնելով³ զԱստուած, զմեծանունն⁴ Քրիստոս:

[ԺԷ]

լուսաճաճանչ գնդիւն, եւ այնու խաչա-
նշան լուսովն առաջխաղացեալ յԱւշա-
կանն ելանէին, եւ անդի մարտիւրոսական
բնականութիւնսն մատուցեալ եւ զաւրի-
նաւոր յիշատակ երանելոյն կատարեալ, ա-

պա նշանն աներեւոյթ լինէր, եւ նոքա յի-
րաքանչիւրն դառնային տեղիս:

10 Իսկ յետ երից ամաց անցելոց, յա-
ջողելոյ Վահանայ Ամատունւոյ, քրիստո-
սասէր փութով խորան կանգնեալ, տաշա-
ծոյ վիմաւք քանդակելով, եւ ի ներքսա-
գոյն խորանին զսրբոյն հանգիստն յաւրի-
նեալ, որոյ սպաս եւս վայելուչս գունա-
գոյնս պայծառատեսիլս ոսկւով եւ արծա-
թով եւ ակամբք պատուականաւք՝ յիշա-
տակարան սեղանոյն կենդանարար մարմ-
նոյն եւ արեանն Քրիստոսի պատրաս-
տեալ, զխաչակրան վկայն Քրիստոսի,
հանդերձ երանելեալն Մեսրոպաւ, ի հան-
գիստ խորանին փոխէր: 11 Եւ զնորին ա-
շակերտ զԹադիկ անունն՝ զայր զգաստ եւ
բարեպաշտան, հանդերձ եղբարք երա-
նութեանն հասելով սպասաւորել սրբոյն ի
փառս Աստուծոյ, զի նմա իսկ վայել է
փառք, իշխանութիւն եւ պատիւ, ամէն:

Ի ՅԻՇԱՏԱԿ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԱՐՈՒՅ ԵՐԱՆԵԼԻՈՅ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ
ՄԵՍՐՈՎԲԱՅ ԶՈՐ ԱՍԱՅԵԱԼ Է ՆՈՐԻՆ ԱՇԱԿԵՐՏԻ ԿՈՐԵԱՆ

1 Ջասքանագեան ազգին եւ զՀայաստան աշխարհիս զաստուածատուր շնորհս զգրոյն գիւտ, եւ զվարդապետութեանն պարգեւ ի Տեառնէ տուեալ, թէ յորում ժամանակի եւ որպիսի արամբ լուսաւոր վարդապետութեամբ, պատմեսցուք ձեզ, եւ զնորին հրեշտակակրան վարս առաքինութեան:

2 Էր այրս այս Մեսրոպ, ի Տարան գաւառէ, ի Հացեկաց գեղջէ, որդի Վարդանայ. ի մանկութեան աստիսս վարժեալ Հեղղենացուց դպրութեամբն, եւ եկեալ ի դուռն Արշակունեաց թագաւորացն Հայոց, կացեալ յարքունական դիւանին, լինէր սպասաւոր արքայատուր հրամանին: 3 Եւ հմուտ եղեալ աշխարհակեաց վարուց՝ ի զինուարական կարգս եւ յառաջադէմ, եւ սիրելի էր ամենեցուն՝ մեծամեծաց եւ փոքունց, իմաստութեանն առաջնորդեալ յիրաւունս ամենայն:

4 Յետ այսորիկ ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրի դարձեալ, մերկանայր յինքենէ զամենայն զբաղմունս, եւ առեալ զխաչն պարծանաց՝ ըստ աւետարանական հրամանին՝ ելանէր զկնի ամենակեցոյց խաչելոյն Քրիստոսի: 5 Եւ հաճեալ զհրամանաց պայման, ի խաչակիր գունդն Քրիստոսի աշակերտացն խառնի. եւ զկրանս միանձանց յանձն առեալ յաւէտ կրանաւորէր: 6 Եւ բազում եւ ազգի ազգի վշտակցութիւն ըստ Աւետարանին կրէր. եւ ամենայն կրթութեան հոգեւորացն գանձն տուեալ՝ կրանաւորէր ի քաղց եւ ի ծարաւ, ի ցուրտ եւ ի մերկութիւն. խոտաբուտ եղեալ, խարազնագգեստ եւ գետնատարած անկողնուք, եւ զհանգիստ քնոյ զիչերոյ յոտնաւոր տքնու-

թեամբ ի թաւթափել ական վճարէր բազում անգամ: 7 Եւ զայս առնէր ոչ սակաւ ժամանակս: 8 Եւ գտեալ զոմանս զգաստասէրս յինքն յարեցուցանէր, աշակերտել նմին աւետարանական կրանաւորութեանն:

9 Եւ ամենայն փորձութեանց ի վերայ հասելոց կամական քաջութեամբ տարեալ. եւ Նովիմբ լուսաւորեալ եւ պայծառացեալ ի հանդէս ճգնաւորական հաճոյ Աստուծոյ եւ մարդկան երեւեալ:

10 Առեալ այնուհետեւ երանելոյն զաշակերտեալսն իւր՝ երթայր ի Գողթն. որում ընդ առաջ լինէր իշխանն Շամբիթ, եւ սիրով ընդունէր որպէս զծառայ Աստուծոյ բարձրելոյ. եւ բարեպաշտութեամբ սպասաւորէր ըստ աշակերտական հաւատոցն ի Քրիստոս: 11 Իսկ երանելոյն անդէն վաղվաղակի զվարդապետական շնորհսն ի մէջ առեալ, ուսուցանէր զբնակիչս քաղաքին եւ գաւառին, կամաւ իշխանին մատակարարութեամբ: 12 Զի էր ինչ ի նոսա ի հեթանոսական սովորութեանցն, զորս դարձուցանէր ի գիտութիւն ճշմարտութեան, եւ զամենեսեան լուսաւորէր շնորհաց բանիւն: 13 Յորոյ ի ձեռն մեծամեծ սքանչելիք երեւեալ, դիւաց կերպ ի կերպ լինելով՝ զաղաղակ բարձեալ յամենեցուն լսելիս հնչեցուցանէին զհալածանս իւրեանց, անկանելով ի կողմանս Մարաց: 14 Վասն որոյ առաւել ունկնդիր լինէին աշակերտեալքն հոգեկրան վարդապետին, վասն հաւատոց եւ վարուց որ նոցա աւանդեցաւ, ի սուրբ հարց մերձաւորաց Քրիստոսի՝ գրովք սրբովք:

15 Բայց զի ոչ էր գիր հայերէն լեզուիս՝ բազում պակասութիւն լինէր

ճշմարտութեան աւանդիցն՝ առ աշակերտեալսն. իսկ երանելի վարդապետն տարակուսեալ ի խորհուրդս իւր՝ առ Աստուած ապաւինէր, որ կարողն է յամենայնի, ցուցանել զգիր Հայ լեզուիս, որով նուազութիւնն յառակելութիւն գայցէ գրով: 16 Եւ յարուցեալ այնուհետեւ Հասանէր առ Սուրբն Սահակ Հայրապետն Հայոց, յազազս գրոյ նշանագրաց. եգիտ զնա առաւել եւս փափագող այնմ: 17 Եւ յետ բազում ջանից եւ աշխատութեանց եւ ոչ ինչ աւգտելոյ, դարձեալ յաղաւթս ապաւինելով՝ յԱստուծոյ խնդրէին որում ցանկային: 18 Եւ մեկնեալ ի միմեանց, եւ յանձն առեալ զխստամբերութիւն՝ ճգնէին առաւել քան զառաւելս:

19 Եւ յետ այսորիկ ծանուցեալ լինէր ի թագաւորէն Վռամշապուոյ, որ եւ նա այսմ նախանձայոյց եղեալ, առաքեն զՄեսրոպէ աշակերտաւքն Հանդերձ ի Միջագետս Ասորւոց: 20 Եւ երթեալ նորա խուզէր ուր ուրեք իմաստասիրաց Համբաւէր գիտութիւն: 21 Եւ Հանդիպեալ Դանիէլի ումեմն եպիսկոպոսի Ասորւոց առաքիւնոյ, որ ասաց նմա ցուցանել զնշանագիրս՝ որում ցանկայրն: 22 Եւ յետ բազում աշխատութեանց եւ քննութեանց եւ ուսմանց՝ անշահ մնացեալ. զի ոչ բերէր զբառս աղի[աբ]ետացն ըստ Հայերէն լեզուիս:

23 Յայնժամ Հաւատով առ Աստուած ապաւինի, եւ աղաւթս արտասուելիցս առ Աստուած մատուցանէր, եւ Հայցէր յամենեցունց Տեառնէն գտիւ եւ զգիշեր՝ ցուցանել զփափագելին նշանագրաց: 24 Եւ տեսանէ ոչ ի քուն երագ եւ ոչ յարթութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի՝ երեւութացեալ հոգւոյն աչաց՝ թաթ ձեռին աջոյ, գրելով ի վերայ վիմի. զի որպէս ի ձեռն վերջք գծին ունէր քարտն, եւ ոչ միայն երեւութացաւ, այլ եւ Հանգամանք ամենայնիցն՝ որպէս յամենայն ինչ ի միտս նորա Հաւաքեցաւ: 25 Եւ յարուցեալ յաղաւ-

թիցն՝ եստեղծ զնշանագիրս մեր՝ Հանդերձ Ռուփինոսիւ աշակերտիւ Եպիփանու, որ ի Սամսոն էր միայնակեաց. կերպածեալ զգիրն ըստ հրամանի Մեսրոպէայ վարդապետին եւ երանելոյ, փոխադրելով Հայերէն աթուղթայն ըստ անսայթաքութեան սիղոբայից հեղղենացոցն

26 Եւ իս[կ]ոյն ի թարգմանութիւնս ձեռնարկեալ խորհրդաբար սկսանելով յԱռակաց իմաստնոյն Սողոմոնի, բովանդակելով զքսան եւ զերկուս յայտնիսն, զհին կտակարանսն յեղուլ ի Հայ բան: 27 Եւ աշակերտք նորա Յովհանն եւ Յուսէփ ի նոյնս նպաստ լինէին: 28 Եւ զարուեստ գրչութեանն ուսուցանէր մանկագոյն աշակերտացն:

29 Ընդ այն ժամանակս թագաւորեաց Թէոդոս փոքր: 30 Եւ եկեալ երանելոյն Մեսրոպէայ Հայոց վարդապետի, եւ բերեալ զնշանագիրս մերոյ լեզուիս առ սուրբն Սահակ Հայոց, առ թագաւորն Հայոց Վռամշապուհ, յոյժ ուրախ լինէին որպէս ընդ տախտակս աստուածագիծս. եւ գոհութիւն եւ փառս ամենեցունց արարչին մատուցանէին զնորոգատուր պարգեւացն որ տուաւ նոցա ի վերուստ: 31 Եւ ժողովեալ մանկունս ուշեղս եւ քաջուսմունս, փափկաձայնս եւ յերկարողիս, եւ դպրոցս կարգեալ յամենայն գաւառս եւ ի գեաւղս հրամանաւ սուրբ Հայրապետին եւ թագաւորին, ուսոյց զբնաւ ամենայն աշխարհս Հայոց:

32 Երթեալ եւ յաշխարհն Վրաց երանելի այրն Աստուծոյ առնէ եւ՝ նոցա նշանագիրս ըստ տուեցելոյ ի նմա ի վերուստ շնորհացն Աստուծոյ եւ վարդապետս թողեալ անդ[ի] քաղաքաց քաղաքաց ուսուցանել զմանկունս նոցա: 33 Եւ ինքն յԱղուանս երթեալ: 34 Եւ անդ նորոգէր ըստ նմին աւրինակի զնշանագիրս եւ զուսումնասիրութեանն աւանդս: 35 Եւ վարդապետս թողեալ անդ դառնայր ի Հայս: 36 Եւ գտանէ զսուրբն Սահակ Հայրապետ,

եւ թարգմանութեան պարապեալ շնորհուքն Քրիստոսի յԱսորւոյն, ոչ լինելով Յունի, զի ի Մերութանայ այրեալ էին յոյն գրեանն հանուր աշխարհիս, զի ի բաժանել գաշխարհս Հայոց՝ չտային Պարսկաց վերայկացուքն Յոյն ումեք ուսանել զդպրութեան իւրեան մասին, այլ միայն Ասորի: 37 Վասն որոյ յոյժ տարակուսեալ լինէին սուրբ հայրապետքն Սահակ եւ երանելին Մեսրոպը, եւ գնացին զկողմամբք արեւմտից վիճակին իւրեանց ի մասն Յունաց:

38 Եւ առաքէ սուրբ Սահակ զՄեսրոպը առ կայսր Թէոդոս եւ առ հայրապետն Ատտիկոս հանդերձ թղթովք, եւ թոռամբն իւրով Վարդանաւ, զգացուցանել նոցա զգալուստն իւրեանց, եւ զի ընդունեցին բնակիչք աշխարհիս զնոր ուսումըն վարդապետութեանս Հայոց: 39 Որոց հանդիպեալ գաւրավարին Անատոլիեայ, որ փոքր-ինչ արար ընդունելութիւն նոցա. զի յառաջագոյն լուեալ էր զլուր առաքինութեան երանելեացն Սահակայ եւ Մեսրոպբայ. եւ ի ձեռն թղթոց յառաջագոյն զգացուցանէր կայսեր, եւ առնու հրաման արժանապէս առաքել եւ բարեփառութեամբ յուղարկել ի Բիւզանդիոն: 40 Եւ յանդիման եղեալ թագաւորին եւ հայրապետին, եւ ձեռնադրեցին զՄեսրոպը Եկեղեցիկտիկոս. եւ գրեցին զնա ընդ առաջին երանելի վարդապետն:

41 Եւ դարձան հանդերձ թղթովք, եւ եկեալ հանդիպէին սրբոյն Սահակայ, եւ գաւրավարին Անատոլիեայ: 42 Որոց ընկալեալ զթուղթս եւ զհրամանս, յոյժ ուրախ եղեն եւ փառաւորութիւն ամենեցուն տեսաւն եւ Աստուծոյ հատուցին: 43 Եւ փութայր վաղվաղակի զհրամանսն կատարել եւ առաքէ ի գաւառս եւ ի քաղաքս հայոց որ ընդ իշխանութեամբն կայսեր, ժողովեալ բազմութիւն մանկտոյ ի տեղիս տեղիս, եւ դարմանս եւ ռոճիկս կարգէր յարքունուստ, որպէս զի անզբազապէս ուսցին. զորս եւ երանելին Մեսրոպը զլու-

սաւոր վարդապետութեանն ի գործ արկեալ զժողովեալ մանկանսն ուսուցանէր զնշանագիրն. եւ վարդապետս կացուցանէր յիւրոյ աշակերտացն, զի առ փոքր փոքր զնոսա ի կատարումն ուսմանն ածիցեն:

44 Յետ այնորիկ ձեռն արկանէր զժպիրհ եւ զկամաւոր աղանդն Բորբորիանոսացն քննել եւ որք ոչն գային յուղղութիւն հաւանական բանին՝ սաստկագոյն խոշտանկանաւք պատուհասէին ի բանդ եւ ի կապանս, եւ յայդ ինչ տանջանարանս. իսկ յորժամ այնու եւս պակասեալք ի փրկութենէն խայտառականաւք հալածէին յաշխարհէ:

45 Իսկ երանելին զիւր վարդապետութեանն պայման արարեալ, սկսեալ եւ վճարեալ, եւ բազում շնորհագիր մատեանս զհարց եկեղեցւոյ ստացեալ՝ ծովացուցանէր զվարդապետութեանն խորութիւնն եւ լցեալ զեղոյր զամենեքումք ի բնակիչս աշխարհին հոգեւոր վայելչութեամբ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն: 46 Եւ յանձն արարեալ զամենեսեան ամենապահ շնորհացն Աստուծոյ՝ ինքն դառնայր ի կողմանս Հայոց, եւ շրջէր զամենեքումք, հաստատէր զաշակերտեալսն ի ճշմարտութեանն հաւատսն: 47 Եւ եկեալ հանդիպէր սրբոյն Սահակայ, եւ պատմեալ զեղեալսն առ ի նմանէ, ի միաբան ակհանցին զԱստուած ի վերայ նորոգատուր պարգեւացն տուելոց նոցա ի վերուստ:

48 Յետ այսորիկ ուշ եղեալ երկուցունց երանելեացն զիւրեանց ազգի զդպրութիւնն առատացուցանել եւ առաւելուլ՝ ի թարգմանել եւ ի գրել ըստ յաջողելոյն Աստուծոյ: 49 Վասն որոյ առաքեն երկուս յաշակերտացն ի քաղաքն Եղեսեայ զՆզնիկ եւ զՅովսէփ, զի յԱսորի բարբառոյն գտուրք գիրս նոր թարգմանեսցեն ի Հայ լեզու, եւ գըրով աւանդեսցեն իւրեանց աշխարհիս: 50 Իսկ նոքա եկեալ կատարեցին զհրամայեալսն, եւ ի ձեռն

հաւատարիմ եղբարց առ պատուական հարս իւրեանց առաքեցին զգրեանն. եւ ինքեանք անցեալ գնացին ի կողմանըս Յունաց ի քաղաքն Բիւզանտիոն յուսումն իմաստասիրութեան. որ եւ ուսեալ եւ տեղակացեալք՝ թարգմանիչք եղեալք ըստ հեղղենականի լեզուին:

51 Ապա յետ ժամանակի ընչ ընդ մէջ անցանելոյ, դէպ լինէր եղբարց ոմանց ի Հայաստան աշխարհէս, երթալ ի կողմանս Յունաց՝ ի քաղաքն Կոստանդինուպուղիս, որոց անուանքն էին միումն Ղեւոնդ եւ միւսումն Կորիւն. երթեալք յարեին յեղինիկն, իբր առ ընտանի եւ սննդակից իւրեանց. եւ առաջի դընէին սուրբ հարանցն զբերեալ կտակարանսն եկեղեցւոյ սրբոյ:

52 Իսկ երանելեացն սրբոյն Սահակայ եւ Մեսրոպայ զեկեղեցական զգրոց զգումարութիւն կանխաւ ի յունարէն բարբառայ ի հայերէն թարգմանեալ, եւ զբազումս եւ զհայրապետական սրբոց ճշմարտապատում իմաստութիւնս յաւրինեալ ի հայ լեզու: 53 Դարձեալ յետ այսորիկ առեալ հանդերձ Եզնկաւ զյառաջագոյն զյանկարծագիւտ զփութանակի թարգմանեալսն՝ հաստատէր ճշմարիտ աւրինակաւքն բերելովք. եւ շատ եւս այդ մեկնութիւնս գրոց սրբոց՝ թարգմանէր ըստ հայերէն նշանագրացն: 54 Եւ այնպէս զամենայն ժամանակս իւրեանց՝ ընթերցուածոց գրոց սրբոց պարապէին երանելի սուրբ հարքն գտիւ եւ զգիշեր. եւ նովին ծաղկեալք եւ շահաւետեալք՝ աւրինակ բարեաց ուսումնասիրաց առընթերակացացն լինէին. մանաւանդ զի ունէին եւ զպատուիրական զգուշացուց(իչ) յաստուածակարգ պատգամաւորացն. յորոց առաջինն պատուիրէ՝ Յաւրեմս Տեառն խորհել ի տուէ եւ ի գիշերի՞. եւ երկրորդն ասէ. Միտ դիր ընթերցուածոց գրոց մխիթարութեան, վարդապետութեան. մի անփոյթ առնէր

զչնորհացդ որ ի քեզ են. յայդ խորհեայ եւ ի դոյն կանխեսջիր, զի քո յառաջագիւտութիւնդ ամենեցուն յայտնի լիցի. զգոյշ լինիջիր անձինդ եւ վարդապետութեանդ, եւ ի դմին յամես ջիր. զայդ եթէ առնիցես, եւ զանձն ապրեցուցես եւ զայնոսիկ որ քեզն լսիցեն:

55 Ապա դարձեալ յետ այնպիսի առաւել եւ ուսաւոր վարդապետութեանն, սկսեալ երանելոյն Մեսրոպայ ճառս յաճախագոյնս, դիւրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս ի զաւրութենէ եւ ի հիւթոյ գրոց մարգարէ[ակա]նաց եւ առաքելականաց կարգեալ եւ յաւրինեալ լի ամենայն ճաշակաւք աւետարանական անհաւատոցն ճշմարտութեան. յորս բազում նմանութիւնս եւ աւրինակս ի յանցաւորացս աստի ճշմարտութիւնն բերելով, առաւելագոյն վասն յարութեանն յուսոյն առ հանդերձեալսն յերիւրելոյ նկարեաց, զի հեշտընկալք եւ դիւրահասոյց տխմարագունացն: 56 Եւ մարմնական իրաւք զբաղելոցն՝ ուսցին սթափել, եւ ի զուարթացուցանել եւ հաստահիմն առ ի խոստացեալ աւետիսն քաջալերել:

57 Եւ այսպէս ընդ ամենայն կողմանս Հայոց եւ Վրաց եւ Աղուանից՝ զամենայն ժամանակս կենաց իւրոց՝ զամառն եւ զձմեռն, գտիւ եւ զգիշեր՝ անվեհեր եւ առանց յապաղելոյ զնորոգագիւտ վարդապետութիւնն ուսուցանէր: 58 Եւ իւրովի իսկ ճանապարհորդեալ աւետարանական եւ ողջապատումն բանիւ յաղազս հաւատոյ եւ վարուց առաջի թագաւորաց եւ իշխանաց եւ ռամկաց, անընդդիմական ի հակառակորդաց ըստ տուեցելոյ նորա ի վերուստ շնորհի՞ ուսուցանէր ի փառս եւ ի գովութիւն Աստուծոյ, եւ զամենայն ոգի քրիստոսասէրս եւ ոգէղէնս վառէր. եւ բազում բանդականաց եւ կալանականաց եւ տազնապելոց ի պէսպէս վտանգից՝ փրկութիւն ընձեռեաց, կորզելով զտարակուսեալսն ահաւորութեամբ զաւրութեամբ

՞ Ըմմդ. Սաղմ. Լ 2:

փառացն Քրիստոսի՝ ի գովեստ փրկութեան Աւետարանին. եւ բազում մուրհակս անիրաւագիրս պատառեաց. եւ զբազում սգաւորս եւ կարճամիտ մխիթարեաց վարդապետութեամբն եւ նուաճեաց ակնկալութեամբ՝ յուսոյն ի համբերութիւնն ըստ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի. եւ զամենայն հաւատացեալս միանգամայն զարս եւ զկանայս յաստուածպաշտութեան պայման անդր փոխադրեաց:

59 Եւ [եւ] դարձեալ անհամար եւ գունդս գունդս ի շէնս եւ յանշէնս ի ճշմարտութեան ականդս սուրբ հարցն հաստատէր ի փառս եւ ի գովեստ ամենասուրբ Երրորդութեան: 60 Նա եւ (ի) դաշտականս եւ լեռնականս, անձաւամուտս եւ լեռնականս եւ արգելականս, բնակեցուցեալ կրանաւորիլ առ ի բարեպաշտութեանն ջանս, զոր ոչ միայն բանիւք եւ վարդապետութեամբ, այդ եւ արդեամբք զանձն ակրինակ կացուցանէր միանձանց, հանապազորդ պահաւք եւ աղաւթիւք, տքնութեամբ եւ արտասուլաւք, խոնարհութեամբ, եւ հեզութեամբ եւ կուսութեամբ նահատակեալ. եւ ընդդէմ հանապազորդեան թշնամուոյն քաջապէս արիացեալ. նա եւ ի պատուոյ եւ ի փառաց խուսափեալ, երթեալ սորամուտ ծակախիթ լինէր, եւ զառաւրեայ զկեանսն խոտաբուտ ճաշակաւք վճարէր: 61 Եւ այնպէս վշտակցեալ տկարութեան զանձն իւր տուեալ անհեղձաբար, հայեցեալ ի մխիթարութիւն առաքելական խրատուն, թէ՛ Յորժամ վասն Քրիստոսի տկարանամ՝ յայնժամ գաւրացեալ լինիմ՝ եւ եթէ՛ Լաւ լիցի ինձ մնալ ի տկարութեան, զի բնակեսցէ յիս զաւրութիւնն Քրիստոսի:

62 Անդ էր զուարճանալ հոգևով ուր ուրեք դադարեալ լինէր. եւ ոչ պայծառանայր գինով, այդ երգաւք հոգեւորաւք ի

փառս եւ ի գովութիւն Աստուծոյ. ի կրթութիւնս միշտ քաղցրուսոյց ընթերցուածոց հոգեպատում գրոց, ի քաջալերութիւնս յորդորականս լուսաւոր կարգաց եւ տաւնից զանձինս ճգնաւորացն ամենաշնորհ վարդապետութեամբն զինէր առ ի յառաջագէմ ընտրութիւն պսակահամբար քրիստոսագիր կրտին:

63 Եւ եռայր հոգևով յաստուածպաշտութեանն մրցարան վերին կոչմանն, աղերսալի աղաւթիւք եւ փարելի պաղատանաւք եւ հաշտելի խնդրուածաւք յամենեցունց Տեառնէն, վասն ամենեցուն կենացն յաւիտենականաց արժանի լինել մասին սրբոցն ի լոյս: 64 Եւ նովին հոգեկրաւն վարուք կայր յանապատ տեղիս. մինչեւ ազդ լինէր իրաց ինչ աւգտակարաց եկեղեցականաց ի կողմանս յաշակերտեալսն:

65 Յայնժամ իջանէր յաւգնականութիւն եւ վճարէր զպէտս պիտայից, ուր հոգեւոր կարգաց էր նուազութիւն, շնորհաւքն Քրիստոսի. Եւ յորդորագոյնս եւ պարարտագոյնս անփակ բերանով եւ հանձարով իմաստութեամբ զվտակա վարդապետութեանն ի սիրտս սերմանելեացն ծաւալեցուցանէր եւ զայս առնէր զամենայն ժամանակա իւր երանելի վարդապետն Հայոց Մեսրովք: 66 Քանզի սովոր իսկ են ճշմարիտ վարդապետք զանձանց առաքինութիւն կանովն աշակերտացն առնել. որպէս զՔրիստոսի եւ Աստուծոյ մերոյ է ուսուցանել ըստ տնաւրէնութեանն. քանզի Սկսաւ, ասէ Յիսուս առնել եւ ուսուցանել, եւ եթէ, հայեցարուք յառաջնորդն հաւատոց եւ ի կատարիչն Յիսուս, որ փոխանակ ուրախութեանն որ առաջի կայր՝ յանձն էառ զխաչն, արհամարհեաց զամաւթ, եւ զինչ այր վշտաց հատուցումն ցուցանի հաւատացեալ ի Քրիստոս Յիսուս: 67 Նստաւ, ասէ, ընդ աջմէ մեծութեանն ի բարձունս. աղէ ածէք զմտաւ որ այսպիսի համբերութիւն վասն մեր կրեաց, զի մի աշխատ լինիցիմք եւ լքանիցիմք ի վարս

« Հմմտ. Ի Կոր. ԺԲ 10:

առաքինութեան: 68 Զի ոչ վասն անձին ամենատէրն զայս առնէր, այլ վասն համաշխարհական փրկութեանն, յուսումն աստուածասիրաց որ ընդ վասն նոյն ճանապարհորդեն ի հանդերձեալսն, որ են աւրինակ ամենայն հաւատացելոց ի Քրիստոս, որպէս ճառք Աւետարանին քարոզեն:

69 Իսկ արդ եթէ ի թեթեւագոյն արուեստաւոր եւ հանճարեղ իմաստից տգիտանամք, որ ընդ աստուածախաւսան կատարէ զչնորհացն ներգործութիւնն, որում երանելին Պաւղոս ամենեցուն տգիտանալ ասէ, այդ եւ յուշ առնէ զառաջնորդս կենաց բանին. Հայեցեալք, ասէ, յելս զնացից նոցա նմանողք եղերուք, եւ յուսմունս պէսպէս եւ յաւատարմայնս մի դանդաչէք, այդ առաքելոց եւ մարգարէից եւ երանեալ սրբոց հարցն հետեւեալ ճշմարտութեանն աւանդից զոր նոքայն հորդեցին զանսայթաք ճանապարհն յերկնից արքայութիւնն. եւ աւրինակ աշակերտելոցն զհաւատս եւ զվարս բայցայայտեցին զրովք սրբովք. երբեմն առանձինն խրատատելով ըստ իւրաքանչիւրոցն աւգտի, երբեմն ի ժողովս բազմամբոխս զփառս Քրիստոսի շնորհաւք եւ մարգասիրութեամբ Տեառն բարձրացուցանէին, եւ յամենայն աշխարհակիր զբաւսանաց ի բաց կալ, եւ միայն աստուածապաշտութեան պարապել. զոր եւ մարգարէքն եւ առաքեալքն յառաջագոյն զուշակեցին ըստ Պաւղոսի վկայութեանն:

70 Շրջեցան, ասէ, լաշկամաշկաւք եւ մորթովք այծենաւք, կարաւտեալք, նեղեալք, չարչարեալք, յանապատի մոլորեալք եւ յայրս եւ փապարս երկրի. եւ սոքա ամենեքեան վկայեալք ի հաւատոցն՝ ստուգեցին զարդարութեան ճանապարհն աշակերտելոցն, որ տանի ի կեանսն յաւիտենից:

71 Ուստի երանելիս այս Մեսրովք բարձեալ բերէր զաւանդելոցն պատիւ ի փառս ամենեցունց Տեառնն, եւ զամենայն աշակերտեալսն իւր ի նոյն հանդէս յորդորէր. եւ այնպէս յառաջագէմ ամենայն աս-

տուածահաճոյ վարուք եւ հաւատոյ վայելչութեամբք լցեալք պատրաստեալք եւ ամեթացեալք ի բազում ժամանակս աշակերտեալք առ ի նմանէ, նովին ի նոյն կանխեալք եւ ի նմին հանապազորդեալք ի փառս ամենասուրբ Երրորդութեանն:

72 Յայնժամ արք ոմանք հալածեալք ի ժողովոյն Եփեսոսի, որում անուն էր Թէոփորոս, ըստ Պաւղոսի Սամոստացոյ եւ ըստ Նեստորի հերձուածոյն գիրս ստացեալ համաձայնս պարզամտացն եւ դիւրահաւանիցն, եւ եկեալ յաշխարհս մեր՝ կամէին ուսուցանել զչար աղանդն:

73 Վասն որոյ ի սուրբ ժողովոյն առաքեալ թուղթս ազդ առէին ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ եւ Մեսրովբայ: 74 Եւ նոցա ճշմարտապէս փութով զկամակոր հերձուածողսն ի բաց հալածեալ յիւրեանց աշխարհէն, զի մի ինչ ի լուսաւոր վարդապետութիւնն՝ ծուխ ինչ սատանայական մերձեսցի:

75 Յետ այնորիկ դէպ լինէր փոխել յաշխարհէս երանելւոյն սրբոյն Սահակայ հայրապետին հայոց՝ ճշմարիտ վարուք եւ ուղղափառ հաւատով, լցեալ աւուրք եւ երկայնակեաց ժամանակաւք վայելեցուցեալ զամենայն աշխարհս հայոց ի լուսաւոր վարդապետութիւնն, այնպէս հանգեալ ի Քրիստոս, յառաջնում ամի երկրորդ Յազկերտի որդւոյ Վառմայ թագաւորին Պարսից, ի Բագրեւանդ զաւառի ի գեւղն Բլուր, ի կատարել ամսոյն Նաւասարդի, յերրորդ ժամու աւուրն պաշտամա[ն], որ եւ զաւր ծննդեան ի նոյն աւուր: 76 Եւ այնպէս զամբիծ հոգին սաղմոսերգութեամբ եւ աղաւթիւք ծերունւոյն աւանդեալ զհոգին ի Քրիստոս, ասէ, Ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ, ըստ նախավկային բանի:

77 Ըստ նմին աւրինակի եւ նորա ապապարեալ զանձն եւ զմնացեալսն զիւր զհաւտն ամենապահ շնորհացն Աստուծոյ յանձն արարեալ՝ այնպէս փոխեցաւ յաշ-

խարհէս: 78 Զոր առեալ վաղվաղակի պարսպէին հանդերձանաւք ըստ խորհրդածութեան քահանայապետութեան թաղմանն՝ իւր իսկ ձեռասուն աշակերտքն. որոյ առաջնոյն Երեմիա անուն, այր սուրբ եւ երկեւղած յԱստուծոյ. եւ այդք ընդ նմա, հանդերձ կնաւն Վարդանայ Մամիկոնեի. եւ բարձեալ զմարմին երանելոյն բազում ամբոխիւ, եպիսկոպոսաւք եւ քահանայիւք, սարկաւազաւք եւ դպրաւք, սաղմոսիւք եւ աւրհնութեամբ եւ երգաւք հոգեւորաւք՝ ածին ի Տարաւն գաւառ ի գեւղն Յաշտիշատ. եւ անդ ի մարտիրոսական խորանին յարկեղս սրբոցն հանգուցանէին զսրբոյ առն Աստուծոյ զնշխարսն հանդերձ ամենայն պատուով. եւ կնքեալ քրիստոսանշան կնքովն, եւ զյիշատակ սրբոյն կատարեալ ի փառս եւ ի գովութիւն Աստուծոյ, այնուհետեւ յիւրաքանչիւրսն դառնային. զորոյ եւ զտաւն յիշատակի սրբոյն տաւնախմբեն յերեսուն նաւասարդի ամսեանն բազում ժողովովք. եւ բարեխաւսութեամբ սուրբ հայրապետին զիւրաքանչիւր աւգուտ յամենեցունց Տեառնէն ընդունին:

79 Իսկ երանելոյն գուգականին զայս լուեալ, զսուրբ վարդապետէն ասեմ զՄեսրոպբայ, տրտմեալ եւ տխրեալ լինէր, եւ յարտասուս եղեալ վարանէր զի ի նմանէ բաժանումն եւ զվախճան առնն Աստուծոյ, եւ զսպառուսն զարմից սրբոյն Գրիգորի. եւ հոգաւք տարակուսեալ պաշարէր առ այնպիսի աղէտս, մանաւանդ զի ոչ տեսանէր զայնպիսի զոք առ ի բարեպաշտութեան ջանս եւ առ լուսաւոր վարդապետութիւնն եւ առ վերակացութեան շնորհն, որ եր ի վերոյ էր քան զառաջինսն զիւր սուրբ հարսն: 80 Յայտոսիկ մտախոհ եղեալ ողբերգական բարբառով վարանէր. զի ոչ ոք ունէր համաշունչ՝ թէ ընտանբար հոգասցէ վասն Հայաստանեաց եւ եյս այտոցիկ զԱստուած յիշէր եւ մխիթարէր ըստ Սաղմոսերգողին, որ արար զամենայն

եւ փոփոխէ անհաս իմաստութեամբ եւ մատակարարութեամբ: 81 Եւ զինքն առաւել եւս յորդորէր ի կրաւնաւորութեան կարգս, համանգամայնիցն յաղթող լիեալ էր կրաւնաւորացս ըստ երկնային կոչմանն հանդիսանալ ի բարձրագոյնսն շնորհաւքն Աստուծոյ՝ առանց հեղգութեան: 82 Եւ յորդորէր զամենայն աշակերտեալսն առ բարեացն քաջութիւնսն, եւ յուշ առնէր ամենայն անձին զգուշանալ ամենայն անձին, ի վարս ի գնացս խոհեմագոյն եւ հանճարեղ խրատուք. մինչ բազմաց խիստ եւ ծանր եւ դժուար համարեալ զվարուցն կրթութիւնսն: 83 Այդ նա վերջինսն մոռանայր եւ յառաջագէմսն նկատէր ծերունի հասակաւն, զմտաւ ածելով զմաւտաւոր վախճանն՝ ոչ տայր քուն աչաց եւ ոչ նինջ արտեւանաց մինչեւ ցաւր կոչման ելանելոյ նորա յաշխարհէս:

84 Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն առ իւր զհոգեւոր եռանդն բորբոքէր յաստուածսիրութիւն, եւ բազում թողլթս խրատուց ընդ ամենայն գաւառսն առաքէր, անդէն ի նմին ամի յետ վախճանի երանելոյն սրբոյն Սահակայ ի վեցերորդ ամսեանն ի տասն եւ յերիսն մեհեկանի՝ հասանէր վախճան սրբոյ վարդապետին հայոց, յԱյրարատ գաւառի ի Նոր քաղաքին, ի նոյն հոգեկիր կրաւնս, որպէս եւ յառաջագոյն ասացաք, հասանէր սրբոյն քրիստոսակոչ կատարումնն՝ յետ սակաւինչ աւուրց հիւանդութեան: 85 Եւ յորժամ կամեցաւ Աստուած որոշել զսուրբն ի մեջոյ ձեռնասուն աշակերտացն, եւ խառնել ի զունդս սրբոցն, թեթեւացեալ եւ սթափացեալ ի ցաւոցն, եւ կանգնեալ նստաւ ի ժողովոյն միջի, եւ համբարձեալ զձեռսն հանապագատարածս յերկինս, զամենասուրբ զԵրրորդութիւնն աւրհնէր, եւ յանձն առնէր զաշակերտեալսն ամենապահ շնորհացն Աստուծոյ, զի կայսեն հաստատուն ի հաւատս եւ ի վարս ուղղութեան, եւ առանց գայթաղութեան կատա-

րեսցեն զարդարութիւն սուրբ հարց մերձաւորաց Քրիստոսի:

86 Եւ անուանք գլխաւոր աշակերտացն ժողովելոցն առ նա, են այս. առաջնումն Յովսէփ, եւ երկրորդումն Թողիկ, արք զգաստք եւ զգուշագոյնք. իսկ ի զինուորացն՝ առաջնումն Հմայեակ՝ ի Մամիկոնեան տոհմէն, եւ երկրորդին Վահան՝ զազգէն Ամատունեաց, որ էր հազարապետ Հայոց Մեծաց. աստուածասէրք եւ երկիւղածք յԱստուծոյ: 87 Եւ մինչդեռ ձեռք սրբոյ վարդապետին ընդ երկինս կարկառեալ կայր, տեսիլ սքանչելի եւ խաշանշան լուսաւոր շողածեւ երեւէր ի վերայ ապարանիցն՝ յորում երանելին վախճանէր. զոր եւ ամենայն ուստեք ինքնատես լեալ եւ ոչ յընկերէն պատմեալ: 88 Իսկ սրբոյն զսիրոյ եւ զմիաբանութեան պատուիրանն աւանդեալ, եւ զհեռաւորս եւ զմերձաւոր աւրհնութեամբ պսակեալ եւ զհաճոյական աղաւթս հատուցեալ ի Տէր, անդէն վաղվաղակի աւանդեաց զհոգին ի փառս ամենասուրբ Երրորդութեանն:

89 Զոր առեալ Հմայեկի եւ Վահանայ կազմութեամբ վախճանելոց, հանդերձ աշխարհաժողով ամբոխիւ, սաղմոսիւք աւրհնութեամբ եւ երգաւք հոգեւորաւք, մոմեղինաւք վառելաւք եւ ջահիւք բորբոքելովք եւ անուշահոտ խնկաւք, եւ այնու խաշանշան յառաջախաղաց լուսաւոր նշանաւն՝ յԱւշականն ելանէին, եւ անդ ի մարտիրոսական յարկան հանգուցանելին զսուրբ այրն Աստուծոյ եւ զաւրինաւոր տաւն յիշատակի երանելոյն կատարէին: 90 Ապա նշանն աներեւոյթ լինէր, եւ նոքա յիւրաքանչիւր տեղիս դառնային, փառաւորելով եւ աւրհնելով զԱստուած ի վերայ սքանչելեացն զոր Տէր եցոյց ի վերայ վարդապետին:

91 Իսկ յետ ամսոց երից անցելոց ըստ յաջողելոյն Աստուծոյ Վահանայ Ամատունւոյ քրիստոսասիրի՝ կամեցաւ տաճար փառաց անուանն Աստուծոյ շինել յանուն

սրբոյ վարդապետին, ի տաշածոյ վիմաց սքանչելապէս յաւրինեալ խորանս եւ գեղեցկապէս կազմեալս. եւ անդ ի ներքսագոյն խորանին զսրբոյն հանգիստն առնել. եւ վայելուչ սպասուք ոսկւով եւ արծաթով եւ ակամբք պատուականաւք զտունն Աստուծոյ եւ զսեղան կենարար մարմնոյ եւ արեանն Քրիստոսի զարդարէր: 92 Եւ զնորին աշակերտն զգաստ եւ բարեպաշտաւն զԹողիկ՝ սպասաւոր նորին կացուցանէին եւ այդ եւս եղբարք՝ կատարեալ զհանապագորդ պաշտաւնն: 93 Եւ որ վերակացուս ժողովրդեանն ըստ յայտնութեան սուրբ հարցն՝ զՅովսէփ եւ զՅովհան կացուցանելին արս ճամարտասէրս եւ ողջախոհս, որոց դէպ լինէր յետ վախճանի սրբոցն ազգի ազգի փորձութեանց ի վերայ եկելոց ի բռնաւորաց, մենակուիւ մենամարտիկ ի Պարսս ի Տիսպովն քաղաքի վասն Քրիստոսի, յաղթութեամբ բազմաւ. որոց եւ զխոստովանողական անուն ժառանգեալք, ի նոյն վերակացութիւնս վարդապետութեան դառնային յերկիրս Հայոց:

94 Իսկ բարեցապաշտն Վահան յանկարծահաս կենաց, ասպնջական ցանկալի ամենայն սրբոց լինէր, որ աշխարհածնունդ հայրենեացն սեպհական որդի գտեալ՝ շնորհաւքն Քրիստոսի մերձաւոր կենացն յաւիտենից լինէր:

95 Եւ արդ ըստ աւրինակի գրելոցս առ ի մէնջ գերանելեաց սուրբ հարցն զվարս եւ զվախճան փոքր ինչ պատմելով՝ ի կատարումն զբանս ածից. ոչ եթէ ի հին համբաւուց զրուցաց տեղեկացեալ եւ մատենագրեալ զայս կարգեցաք, այդ որոց մեզէն իսկ ականատես կերպարանացն եւ առընթերակաց հոգեւորական գործոց սրբոցն. եւ լսողք շնորհապատում վարդապետութեանն. եւ նոցին սրբոց վարդապետաց արբանեակ ըստ նոցին աւետարանական հրամանացն. ոչ առ սուտակայատում յարմարեալ զբանս ի մեր գովութիւն զհայրենիսն յարգելով, այդ զյաճախա-

գոյնսն թողեալ զառաքինեացն հանդէս, որ այժմ ծածկեալ է ի Քրիստոս եւ յայնժամ ընդ նմա յայտնեսցի փառաւք, յորժամ գայցէ փառաւոր լինել ի մէջ սրբոց իւրոց: ⁹⁶ Այլ սուղ ինչ նշանաւոր գիտակացն պատմելով՝ զհամառաւտս կարգեսցուք, որք ոչ մեզ է շահս, այդ եւ որք զմատեանս ընթեռնուն, յայտնեսցի արանցն քաջութիւնն: ⁹⁷ Քանզի եւ ոչ իսկ հանդուրժէաք բաւել կարել զամենայն արարեալս սրբոցն գրով նշանակել զիւրաքանչիւրսն, այդ ի դիւրագոյնսն եւ ի հեշտագոյնսն զանճինս պարապեսցուք, եւ

զանցեալ զբազմախուռն արգասեաւք սրբոցն առ ի մանրակրկիտսն առնելոյ թողաք, եւ զկարեւորագոյնսն սուղ ինչ մատենագրեցաք ըստ մերում կարի, ոչ ի պատիւ ընտրելոցն մերձաւորացն Քրիստոսի, որք ամենապայծառ հաւատով եւ վարուք ծանուցեալք եղեն, այդ յաւրինակ քաջալերիչ հոգեւոր ծննդոց իւրեանց, եւ որոց նոքաւք աշակերտելոց իցեն զճշմարտութիւն յազգս իւրեանց՝ աւանդեցաւ այս, ի փառս ամենասուրբ Երրորդութեանն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՓԱԲՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԲԱՅՈՑ

ՓԱՒՍՏՈՍ ԲՈՒՉԱՆԴԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ»-Ը

Հեղինակային խորագիրը յայտնի է, սակայն Ղազար Փարպեցին Փաւստոսի երկը դիտում է իբրեւ Հայոց Երկրորդ պատմութիւն: «Բուզանդ» ձեւը առաջացել է «Բիւզանդացի», այսինքն՝ «Կոստանդնուպոլսեցի» մականունից: Ուստի բանասէրների վարկածը, թէ «Բուզանդ» նշանակել է «երգիչ, աշուղ»՝ որտեղից էլ Բուզանդարան պատմութիւն խորագրի վերականգնումը, չի արդարանում:

Փաւստոս Բուզանդի աշխատութիւնը մեզ է հասել՝ որպէս պատմական ինչ-որ ժողովածոյի առանձին մաս, ընդ որում ներկայիս Երրորդ, չորրորդ, հինգերորդ եւ վեցերորդ դարու թիւնները համապատասխանում են նախնական (իմա՝ ժողովածոյից դուրս եղած երկի) առաջին, երկրորդ, երրորդ եւ չորրորդ մասերին: Այսպիսով, Փաւստոս Բիւզանդ[ացու] Հայոց պատմութիւնը պահպանուել է ամբողջական կազմով:

Այն ընդգրկում է Հայոց պատմութիւնը՝ խորով Կոտակ թագաւորի (330-339 թթ.) գահակալութեան տարիներից մինչեւ Հայոց երկրի 387 թ. բաժանումը Բիւզանդական կայսրութեան եւ Պարսկաստանի միջեւ: Հեղինակը եղելութիւնները շարադրում է ժամանակագրական՝ իր կողմից ընդունուած կարգով, որը, սակայն, մեծ մասամբ հեռու է իրականից: Այնուհանդերձ, Փաւստոսի հեղինակած Հայոց պատմութիւնը անգնահատելի սկզբնաղբիւր է նախարարական Հայաստանի հասարակական կարգերը եւ բարքերը ուսումնասիրելու համար: Հեղինակը գրի է առել Պարսկական վէպի (այն վերաբերում է բազմադարեան Հայ-պարսկական հակամարտութեանը) խոշոր հատուածներ, վարպետօրէն մշակել զրանք՝ ապահովելով աշխատութեանը նաեւ նշանակալի գեղարուեստական արժէք: Ինչ վերաբերում է քաղաքական անցքերի նկարագրութեանը, ապա միւս՝ հայկական եւ օտար աղբիւրների հետ մէկտեղ Փաւստոսի տեղեկութիւնները շօշափելի չափով հարստացնում են մեր գիտելիքները նաեւ այդ բնագաւառում:

Փաստոսի Պատմութիւն Հայոց-ը վերահրատարակում է ըստ վենետիկեան չորրորդ տպագրութեան (Փաւստոսի Բուզանդացույ Պատմութիւն Հայոց, ի չորս դարու թիւնս, Վենետիկ-Ս. Ղազար, 1933):

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. **R. W. Thomson.** *A bibliography of Classical Armenian Literature to 1500 AD.* Brepolis-Turnhout, 1995, pp. 185-187.
2. **P'awstos Buzand.** *Storia degli Armeni, introduzione a cura Gabriella Uluhogian, traduzione di Marco Bais e Loris Dina Nocetti. Note di Marco Bais,* Mimesis, 1997 (Armeniaca Italica 2)
3. **Գ. Տէր-Վարդանեան,** Փաւստոս Բուզանդի հրատարակութիւններն ու ձեռագրերը, Հայկագեան հայագիտական հանդէս, Պէյրութ, 1999, էջ 9-63
4. **Karen Yuzbashian.** *Sur les droits d'auteur de Pawstos Buzand.* Հանդէս ամսօրեայ, Վիեննա, 2000, էջ 99-118

Կարէն Իւզբաշեան, Պարոյր Մուրադեան

ԲՈՒՉԱՆԴԱՐԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ
ԽՈՍՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՆԱԽԱԳԻՏԵԼԻ

¹ Այս ինչ է ի դպրութիւնս երրորդ՝ պատմութեանցս. ժամանակագիր կանոնք մատենից, եւ առ նմին դպրութիւնք երեք, այս ինքն են սոքա չորք մատեանք. եւ չորեքին միոյ իրաց յիշատակարանք են, յիշեցուցիչք պատմութեանց ազգացն Հայաստան աշխարհին որդւոց Թորգոմայ: ² Այս ինքն կարգ անցելոց իրաց, գործք եւ վարք մինչեւ ցիւրաքանչիւր ելս յաշխարհէս քահանայապետաց սրբոց արանց Աստուծոյ, եւ թագաւորաց տէրանց աշխարհաց Արչակունեաց, եւ զաւրավարաց՝ արանց անուանեաց քաջ նախարարաց, եւ խաղաղութեան եւ պատերազմին եւ շինութեան եւ աւերածոյ եւ արդարութեան եւ անաւրէնութեան եւ աստուածաշտութեան եւ ամբարշտութեան. ժամանակա-

գիր արարեալ ի թագաւորութենէն Խոսրովու որդւոյ Տրդատայ մինչեւ ի միւս վերջին ժամանակն վատթարելոյ թագաւորացն Հայոց. եւ ի քահանայապետութենէն Վրթանայ որդւոյ Գրիգորի առաջնոյ քահանայապետի մինչեւ ցայնոսիկ ի վերջինսն՝ որք կային գլխաւորք եպիսկոպոսք Հայոց, մի ըստ միոջ կարգաւք թուաւք եւ համարաւք կանոնեալ դրոշմեալ նկարեցի իւրաքանչիւր գլխովք: ³ Եւ չորս խոստմունս չորից չորեցունց դպրութեանցս յիւրաքանչիւր իւր գլուխս պատուաստեցի մինչեւ ի կատարած սորին, առ ի գագուտն ժառանգել՝ որք միանգամ կամին սրտի մտաւք հասու լինել սմին զոր ասելոցս եմ:

ԲՈՒՉԱՆԴԱՐԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ԵՐՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

Ի ՍԿԻՉԲՆ

ԳԼՈՒԽ Ա.

1 Յաղագս որ ինչ յետ քարոզութեանն Թաղէոսի Առաքելոյ յերկրին Հայաստան աշխարհին. կանոնք ժամանակագիր մատենից:

2 Ի քարոզութենէն Թաղէոսի Առաքելոյ եւ նորուն յելից եւ ի մարտիրոսութենէն մինչեւ ի կատարումն վարդապետութեանն Գրիգորի եւ իւրոյ Հանգստեանն, եւ յառաքելասպան Սանատրիոյ արքայէն¹ մինչեւ յակամայ Հնազանդելն Հաւատոցն արքային Տրդատայ եւ ի նորուն Հանգիստն², զանցեալ իրացն զառաջնոցն զվարսն լաւացն, եւ որ զնոցուն Հակառակ ընդդիմակաց, այն ամենայն ի ձեռն այլոցն գրեցան: 3 Բայց եւ մեք ի մերում աստ եղաք փոքր ի շատէ ի կարգի պատմութեանս, ոչ զանց արարեալ թողաք վասն պատշաճ իրաց կարգին: 4 Վասն զի է ինչ մեր պատմութիւն՝ որ առաջին է, եւ է ինչ՝ որ վերջին է. իսկ որ միջին ինչ եղեւ, այն ի ձեռն այլոց գրել գրեցաւ: 5 Բայց զի մի՛ ի միջի մերոյ պատմութեանս ընդհատ երեւեսցի Հուն մի, նշանակեցաք. զաւր աւրինակ աղիւս մի կարգած ի մէջ որմոյն շինուածոյ, ի կատարումն բովանդակութեան: 6 Այս ինչ որ ինչ յետ այսորիկ կարգի, աստ պատմի աստէն առ սմին:

ԳԼՈՒԽ Բ.

1 Յաղագս որ ինչ վասն մեծի քահանայապետին Գրիգորի եւ նոցունց շիրմանցն:

2 Արդ ի թագաւորութեանն Տրդատայ՝ որդւոյն Խոսրովու, լուսաւորութեամբ Հաճոյական սիրով եւ աստուածպաշտութեանն Հաւատոյ³, ծանալթութեամբ ի ձեռն Գրիգորի՝ որդւոյն Անակայ, մեծի քահանայի. եւ որոյ ընդ նմին կրսեր որդին Արիստակէս Հաւրն էր գործակից եպիսկոպոսակից յամենայն ընթացս վարդապետութեան՝ զամենայն աւուրս կենաց իւրոց, մինչեւ յաւրն քրիստոսակոչ Հանգստեան իւրոյ⁴: 3 Իսկ սոցա պատրաստեցան տեղիք բնակութեան, եւ արժանի եղեալ շիրիմք Հանգստեան. մեծին Գրիգորի ի Դարանաղեաց գաւառին, ի գիւղն՝ որ անուանեալ կոչի Թորղան. եւ սրբոյն Արիստակէայ որդւոյ նորա՝ յետ խոստովանութեան մահուն իւրոյ, եւ տարան զնա ի Ծոփաց գաւառէ, եւ եղին զնա յեկեղեաց գաւառի ի Թիւն աւանի, ի կալուածս Գրիգորի Հաւրն իւրոյ:

ԳԼՈՒԽ Գ.

1 Որ ինչ վասն թագաւորութեանն Խոսրովու՝ որդւոյ Տրդատայ, եւ Վրթանայ մեծի քահանայապետի⁵ որդւոյ Գրիգորի:

2 Ապա յետ այսորիկ թագաւորեաց Խոսրով Կոտակ, թոռն Խոսրովու, որդի

1 Յօր. արքային

2 Յօր. եւ ի նորուն հանգստեան արքային Տրդատայ

3 Յօր. միում՝ լուսաւոր պաշտպանութեամբն հաւատոյ

4 Օրինակ մի՛ հօրն էր գործակից զամենայն աւուրս կենաց իւրոց: Իսկ սոցա, եւ այլն

5 Քահանայապետի՝ յամենայն օրինակս

քաջի եւ առաքինւոյն Տրդատայ արքայի: 3 Յաւուրս սորա եկաց եւ եղեւ քահանայապետ յաթոռն հաւրն, փոխանակ հաւրն իւրոյ եւ եղբաւրն իւրոյ, երէց որդին Գրիգորի Վրթանէս: 4 Խաղաղութիւն եւ շինութիւն¹, մարդաշատութիւն եւ առողջութիւն, պտղաբերութիւն եւ ստացուածաշատութիւն եւ շահեկանութիւն, եւ մեծն աստուածասէր պաշտաւն ի հաճոյակատարն բարութիւն՝ յամս յաւուրս սոցա աճել բազմացաւ: 5 Լուսաւորէր եւ առաջնորդէր նոցա² սուրբն Վրթանէս իբրեւ զհայր իբրեւ զեղբայրն իւր. իրաւունք եւ արդարութիւն ծաղկեալ էին ի դարուն յայնմ:

6 Զայնու ժամանակաւ երթեալ հասանէր եպիսկոպոսապետն Վրթանէս ի մեծն յառաջին ի մայրն եկեղեցեացն Հայոց, որ էր յերկրին Տարաւնու, ուր նշանաւքն եղելաւք կործանեցան բազինք մեհենիցն յայնժամ վաղ եւս առ մեծաւ քահանայապետաւն Գրիգորիւ: 7 Սա երթեալ կատարէր անդ, ըստ հանապազ սովորութեանն, զՏեառնն զխաչական զփրկութեանն զպատարազն գոհութեան, զհաղորդութիւն չարչարանաց յիշատակի, զկենդանարարն եւ զազատիչն զմարմին եւ զարիւն աստուածորդոյն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: 8 Քանզի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետքն Հայոց, հանդերձ թագաւորաւք եւ մեծամեծաւքն, նախարարաւքն եւ աշխարհախումբ բազմութեամբ պատուել զնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կոոցն, եւ ապա յանուն աստուածութեանն սրբեցան, եւ եղեն տուն աղաւթից եւ տեղի ուխտից ամենայն ումեք: 9 Մանաւանդ յայն ի գլխաւոր տեղին յեկեղեցին ժողովել ի յիշատակ սրբոցն՝ որ էին անդ, կատարել անդ ամի ամի եւթն անգամ. որք զնոյն ունէին սո-

վորութիւն առաւել եւս ի մեծի մարգարէարան մատրանն Յովհաննու: 10 Սոյնպէս եւ յառաքելարանս տեառնաշակերտացն, սոյնպէս եւ ի վկայարանս մարտիրոսացն ամի ամի ժողովեալք, զաւր տաւնին յիշատակի նոցա վարուց գործոց կենաց քաջութեան խմբեալ՝ ցնծային: 11 Իսկ դէպ իմն լինէր ի ժամանակին՝ յորում մեծ քահանայապետն Վրթանէս երթեալ շրջէր առանձինն սակաւուք, կատարել զպատարազն աւրհնութեան: 12 Արդ որք միանգամ զհնութիւն կուսպաշտութեան հեթանոսութեան զնոյն սովորութիւն³ մինչեւ ցայնժամ եւս ունէին զաղտնի, ի մի միաբանութիւն ժողովեալք՝ հասանէին իբրեւ հաղարք երկու, խորհուրդ եղեալ ընդ միմեանս՝ սպանանել զքահանայապետն Աստուծոյ զՎրթանէս: 13 Բայց ունէին եւ սակաւ մի խորհուրդ համարձակութեան ի կնոջէ թագաւորէն՝ զայն գործել. վասն զի յանդիմանէր զնա սուրբն վասն գաղտնի շնութեան գիջութեան⁴ բարոյից պոռնկութեան: 14 Եւ հասեալ պատէին զմեծ քաղաքորմն եկեղեցւոյն Աշտիշատու: 15 Մինչ դեռ նա ի ներքս մտեալ՝ զպատարազն կատարէր, արտաքուստ բազմազաւրուն փակեալ պաշարել կամեցան: 16 Որոց առ հասարակ որք ի գնդին էին բազուկք իւրաքանչիւր՝ յետս դարձեալ ի վերայ իւրաքանչիւր թիկանց, առանց իրիք կապելոյ՝ սքանչելապէս կապեալ լինէին: 17 Այսպէս պաշարեալք ընկապճեալք գելեալք վանեալք կծկեալք, ամենեքեան առ հասարակ յերկիր անգեալք անբարբառ կային, անխաղացք ի տեղւոջէն, որք էին տոհմք եւ ազգք աշխարհակերք աշխարաւերք ժանդագործք քրմացն: 18 Արդ այնպէս պաշարեալք, դիգեալ կային ամբոխն ի գաւթի եկեղեցւոյն. զորս ելեալ իւր իսկ ինքնին

1 Օրինակ մի՝ խաղաղութեամբ եւ շինութեամբ
2 Յօրինակի միում՝ լուսատու էր եւ առաջնորդ նոցա

3 Օրին. մի՝ սովորութեամբ
4 Յօր. կծկութեան

Վրթանէս՝ մատուցեալ հարցանէր զնոսա, եթէ դուք ո՞րք էք, կամ ուստի՞ գայք, կամ զո՞ր խնդրէք, կամ ուստի՞ եկիք: 19 Իսկ նոցա զարդարն սկսեալ խաւսել, խոստովան լինէին՝ եթէ եկաք զի աւերեսցուք գտեղիս, եւ զքեզ սպանցուք, հրամանաւ համարձակեալ ակնարկելով մեծին Հայոց տիկնոջն. այլ Տէր Աստուած զգաւրութիւնն իւր յայտնեաց, եւ եցոյց մեզ՝ թէ ինքն միայն է Աստուած. եւ այժմ ծանեաք եւ հաւատացաք՝ եթէ նա միայն է Աստուած: 20 Արդ այսպէս կամք աւասիկ կծկեալք, զի եւ շարժել անգամ ոչ կարեմք ի տեղւոջէս: 21 Իսկ երանելին Վրթանէս զբանն վարդապետութեանն ի մէջ առնոյր, հաստատէր զնոսա ի հաւատսն ի մի Տէր Յիսուս Քրիստոս, շատ ինչ խաւսէր ընդ նոսա: 22 Ապա աղաւթս մատուցանէր, եւ խնդրէր յԱստուծոյ, բժշկէր եւ արձակէր զնոսա յաներեւոյթ կապանացն եւ յանհարին կծկութենէ տանջանացն: 23 Եւ նոքա իբրեւ փրկեցան յայնմանէ, ապա առ հասարակ անկանէին առաջի նորա, եւ խնդրէին ապաշխարութեան զգեղն. եւ նա տայր ժամանակ սահմանեալ ապաշխարութեան: 24 Եւ ուսեալք զհաւատսն միասնական Սուրբ Երրորդութեանն, եւ ապա մկրտէր իբրեւ հազարս երկուս, թո՛ղ զկանայս իւրեանց եւ զմանկտի. եւ այսպէս ի հաւատ խառնէր, եւ արձակէր սրբեալս եւ հաւատացեալս:

ԳԼՈՒԽ Գ.

1 Յաղագս երկուց տոհմանցն՝ որք անգաւակեցան, Մանաւազեանքն եւ Որդունիք, ի մէջ Հայաստան աշխարհին:

2 Եւ զայն ժամանակաւ յարեաւ խոսվութիւն մեծ յաշխարհին Հայոց, զի մեծ նախարարք եւ իշխանք երկու, գաւառակալք աշխարհատեարք անգանէին ընդ միմեանս¹, մեծաւ ոխութեամբ յարուցին

կռիւ, եւ տային ընդ միմեանս մարտ պատերազմի առանց իրաւանց: 3 Եւ պղտորէին զմեծ աշխարհն Հայոց իշխանն Մանաւազեան տոհմին, եւ միւս եւս նահապետն Որդունուց տոհմին: 4 Կռուեցան ընդ միմեանս մեծաւ պատերազմաւ, եւ բազում մարդկան լինէր ծախումն կոտորածոյ: 5 Ապա առաքեցին թագաւորն Խոսրով եւ մեծ եպիսկոպոսապետն Վրթանէս զպատուական զմեծ եպիսկոպոսն Աղբիանոս ի մէջ նոցա, խաւսել ի հաշտութիւն խաղաղութեան: 6 Երթեալ հասանէր ի մէջ նոցա երանելին Աղբիանոս, զնոսա ուղղել նուաճել՝ ընդ միմեանս հաշտեցուցանել: 7 Անարգեցին զնա, եւ ոչ լուան բարեխաւսութեանն եկելոյն. անգոսնեցին զյղելիսն, եւ մեծաւ թշնամանաւք արձակեցին զեպիսկոպոսն, եւ առնուին աւերէին զտունն արքունի: 8 Եւ զայրացեալք խստութեամբ, հապճեպ տային ընդ միմեանս մարտ պատերազմի: 9 Ապա մեծ ցասմամբք եւ բազում սրտմտութեամբ արձակեաց թագաւորն ի վերայ նոցա զՎաչէ որդի Արտաւազդայ, զնահապետ Մամիկոնեան տոհմին՝ յազգէ սպարապետութեան Հայոց, զմեծ զաւրավար զաւրաց իւրոց, սատակել կորուսանել զազգսն երկոսեան: 10 Ապա երթեալ հասանէր ի վերայ նոցա զաւրավարն Վաչէ. հարկանէր վանէր զազգսն երկոսեան, եւ ոչ թողոյր զերկոցունց տոհմացն զորձ կորիւն եւ ոչ զմի. եւ ինքն դառնայր առ արքայն Խոսրով թագաւորն Հայոց, եւ առ եպիսկոպոսապետն Վրթանէս: 11 Եւ ետ զաւանն եւ զբուն գահոյից գեղն նահապետին Մանաւազեանից եպիսկոպոսին Աղբիանոսի յեկեղեցի. զՄանաւազակերտ ամենայն սահմանաւքն եւ գաւառակաւն հանդերձ՝ որ շուրջ զնոքաւք էր, որ կայ ի կողմանս գետոյն Եփրատայ: 12 Եւ ետուն զբուն գեղն Որդունուց, որոյ անուն էր Որդորու. ուստի եպիսկոպոս Բասանու ամենայն

1 Յօրինակի միում՝ ընդ միմեանս

սահմանաւքն հանդերձ, որ ինքն իսկ է յերկրին Բասանու:

ԳԼՈՒԽ Ե.

1 Յաղագս որդւոց քահանայապետին Վրթանայ, որոց անուանք էին երիցուն Գրիգորիս, եւ երկրորդին Յուսիկ:

2 Այս Վրթանէս եւ Արիստակէս որդիք էին մեծի քահանայապետին Գրիգորի, եւ էր Արիստակէս կուսան՝ սուրբ ի մանկուծենէ. զի թէպէտ եւ կրսեր որդի էր, կանխաւ եհաս յաթոռ հայրենի եպիսկոպոսութեան: 3 Իսկ Վրթանէս էր ամուսնացեալ եւ անորդի. եւ բազում ժամանակս խնդրէր նա յԱստուծոյ. զի մի՛ զրկեսցի նա յաւրհանութենէն զաւակի, այլ ի պտղոյ նորա կացցէ առաջի նորա ի պաշտան Տեառն: 4 Եւ ի ծերութեան նորա լուաւ Տէր աղաւթից նորա. յղացաւ ամուսին նորա, եւ ծնաւ երկուս որդիս երկուորեակս, եւ կոչեաց զանուն երիցուն յանուն հաւր իւրոյ Գրիգորիս, եւ երկրորդին Յուսիկ, որք սնան զառաջեալ թագաւորին Հայոց, եւ ուսման գրոց փոյթ ի վերայ կալան ուսուցանել զնոսա: 5 Ապա երէց որդին Գրիգորիս եհաս յեպիսկոպոսութիւն կողմանց Աղուանից եւ Վրաց, վասն հոգեկիր առաքինի արգասեացն, բարեհասակ, եւ զգիտութիւն Աստուծոյ յանձին կրելով: 6 Ոչ ամուսնացաւ նա, այլ ի հնգետասանամենից եհաս յաստիճան եպիսկոպոսութեան աշխարհին Վրաց եւ Աղուանից, այս ինքն սահմանացն Մագքթաց: 7 Երթեալ նորոգեաց անդ զեկեղեցիսն լուսաւոր կարգաւք, առաջնոյն Գրիգորի՝ հաւրն գործոցն նմանեալ:

8 Իսկ զՅուսիկ սնուցանէր Տիրան որդի թագաւորին Խոսրովու. եւ ետ արքայորդին Տիրան զգուստր իւր կնութիւն Յուսկանն որդւոյ Վրթանիսի: 9 Եւ մինչ զեռ մանուկն էր, յետ միանգամ յառաջնում գիշերին մտանելոյ՝ յղացաւ կինն: 10 Եւ իսկ եւ իսկ ետես ի տեսեանն՝ զի

երկու էին մանկունքն, եւ ոչ հաճոյ ի պաշտան Տեառն Աստուծոյ. եւ զղջացաւ զամուսնանալն: 11 Լայր եւ աղաչէր զԱստուած, եւ ապաշխարէր՝ մեծաւ տառապանաւք: 12 Եւ յամուսնանալն բռնադատեցաւ ի թագաւորէն իբրեւ զմանուկ. սակայն եւ այն ըստ Աստուծոյ շնորհացն գործէր, զի որք առ յապայն յառնելոց էին ի նմանէ հովիւքն զլիւսաւորք, որք յաւգուտ աշխարհին եւ ի շահ մշակութեան եկեղեցեաց յաւետարանական՝ հրամանացն սպասաւորել: 13 Այլ սակայն նա ըստ այն մի գիշերն այլ ոչ եմուտ առ կինն իւր. եւ ծնաւ կինն երկաւորիս³, որպէս եւ ետես ի տեսեանն յառաջագոյն. եւ կոչեցին զանուն առաջնոյն Պապ, եւ զերկրորդին Աթանագինէս:

14 Եւ յետ միոյ գիշերոյ ի կինն մերձենալոյ այլ ոչ եւս մերձեցաւ ի նա, վասն առաքինութեան մանկութեան. իբրեւ ոչ եթէ զամուսնութիւնն ինչ աղտեղի համարէր, այլ կասկածէր նա ի տեսեանէն՝ զոր ետես, եթէ ընդէ՛ր բնաւ ի նմանէ այնպիսի զաւակ անպիտան ծնանիցի: 15 Քանզի ոչ երկրաւոր զաւակի ցանկացեալ էր, այլ այնպիսումն՝ որ ի սպասաւորութիւն սպասու⁴ պաշտաման ծառայութեան Տեառն Աստուծոյ կացցեն: 16 Եւ զամենայն իսկ զերկրաւորս առ ոչինչ համարեալ, ոչ լաւ համարեցաւ զանցաւորս՝ այլ զվերինն. երկնակեաց կենացն ցանկացեալ հայէր: 17 Լաւ համարէր զծառայելն միայն Քրիստոսի՝ անձին փառս համարէր. ոչ ինչ ածէր ընդ միտ զսէր թագաւորին կամ ի նմանէ կուսէ զպատուեալն, կամ զմեծութիւն, կամ զնդանութիւն փեսայութեան թագաւորին, այլ յայնմ ամենայնէ ուրացեալ հրաժարէր, եւ աւտարոտիս եւ գար-

1 Միւս օրինակն՝ եւ ապաշաւէր

2 Միւս օրինակն՝ աւետարանական

3 Միւս օրինակն՝ երկու որդիս

4 Միւս օրինակն չունի՝ սպասու

չելիս եւ պատրանս համարէր: 18 Եւ յետ առաջնոյն այլ ոչ եւս խաբեցաւ երբէք ուրեք իբրեւ զմանուկ. այլ հայրական միտս զծերական հանճարոյն ստացեալ, զխրատոն իմաստութեան անմահութեան: 19 Լաւ համարեցաւ զնախատինսն Քրիստոսի, քան զմեծութիւն թագաւորացն. զճգունս վարուց ընդբեալ անձին իւրոյ, յերկոտասանամենից եւ ի վեր առաքինանայր: 20 Որ իւրոյ հարցն նմանեալ, եւ զեղբաւրն իւրոյ Գրիգորի՛ զաւրինակ բերէր անձին իւրոյ. զքրիստոսեան լուծն առանց ամենայն յապաղութեան ձգէր մինչեւ ի վաղջան:

21 Բայց վասն զի թշնամանացեալ էր տուն թագաւորին ընդ նմա, եւ մինչ զեռ վասն այնորիկ զգուէին զնա աներք նորա, մեռաւ կին նորա. ազատեալ լինէր Յուսիկ ի յաներոյն²: 22 Եւ մինչ նա հոգացեալ վասն իւր ծննդոց մնացելոց զաւակին, եւ վասն այսորիկ հոգալով կայր յաղաւթս առ Տէր, եւ երեւեցաւ նմա հրեշտակ Տեառն ի տեսեանն, եւ ասէ ցնա. Յուսիկ, որդի Գրիգորի, մի՛ երկնչիր. զի լուաւ Տէր աղաւթից քոց, եւ ահա ծնցի ի քո զաւակացդ այլ զաւակք: 23 Զի լիցին նոքա ի լուսաւորութիւն գիտութեան, եւ աղբերք հոգեւոր իմաստութեան Հայաստան աշխարհիս: 24 Եւ ի նոցանէ բղխեսցեն շնորհք պատուիրանացն Աստուծոյ. եւ խաղաղութիւն բազում եւ շինութիւն եւ հաստատութիւն բազում եկեղեցեաց ի Տեառնէ նոցա տացի, բազում յաղթութեամբ եւ մեծաւ զաւրութեամբ. եւ բազում մոլորեալք³ դարձցին ի ճանապարհս ճշմարտութեան. որով եւ Քրիստոս բազում լեզուաւք փառաւորեսցի նոքաւք: 25 Որք սիւնք եկեղեցեաց լինիցին, եւ մատակարարք բանին կենաց, եւ հիմունք

հաւատոց. պաշտաւնեայք Քրիստոսի եւ արբանեակք Հոգւոյն Սրբոյ. զի ուստի հիմն իցէ շինուածոյն, եւ կատարն անտի լինիցի: 26 Եւ բազում տունկք պտղաբերք եւ շայեկանք եւ աւգտակարք ի հոգեւոր դրախտին ի նոցա մշակութեանն աջոյն տնկեսցին եւ ընկալցին զաւրհնութիւն յԱստուծոյ: 27 Իսկ որք ոչն կամիցին տնկել նոքաւք, եւ ի նոյն հոգեւոր ցաւոյն գիտութենէ ըմպել, խոտան գտանիցին՝ մերձեալք յանէծս, եւ վաղջան նոցա լիցի յայրումն հրոյն: 28 Բազում անգամ վասն Տեառն լինիցին նոքա ի հեռ եւ ի նախանձ յանարժանացն. այլ կացցեն ի հաւատս անշարժ իբրեւ զվէմ, եւ յաղթեսցեն նոցա համբերութեամբ բազմաւ: 29 Եւ յետ նոցա թագաւորեսցէ ստութիւն, յապարասան յանճնասէր յարձաթասէր ի մտախաբ յանպատասպարան յանպիտան ի սուտակ եւ ի բանսարկու մարդկանէ. եւ ապա եթէ ոք գտցի՝ որ եւ արասցէ ունել գուխտ հաստատութեան հաւատոյ հազիւ հազիւ: 30 Եւ զայս ամենայն լուեալ մանուկն Յուսիկ ի հրեշտակէն, մխիթարութեամբ մեծաւ գոհանայր զՏեառնէ Աստուծոյ, որ արժանի արար զնա այսպիսի յայտնութեան պատասխանւոյն. եւ զամենայն աւուրս կենաց իւրոց գոհանայր եւեթ յամենայն ժամ անդադար:

ԳԼՈՒԽ Զ.

1 Յաղագս Գրիգորիսի՝ որդւոյ Վրթանայ, եւ նորուն վախճանին, եւ տեղին՝ ուր եղաւն:

2 Այլ վասն Գրիգորիսի եպիսկոպոսի, որդւոյ Վրթանայ, եղբաւրն Յուսիկան, որ կաթողիկոսն էր կողմանցն Վրաց եւ Աղուանից, իբրեւ եկաց սա յիւրում պաշտամանն, մինչ զեռ մանուկն եւս էր, շինեաց նորոգեաց զամենայն եկեղեցիս կողմանցն այնոցիկ, եւ ձգեցաւ ի գաւառակողմանցն Ատրպատականի, քարոզ ճշմարտութեան հաւատոցն Քրիստոսի լինէր նա, եւ առա-

1 Միւս օրինակն՝ Գրիգորիսի

2 Յօրինակի միում ի բաներոյն

3 Յօր. մոլխալք

Ղի իսկ ամենեցուն էր սքանչելի եւ զարմանալի. խստագոյն եւ դժուարագոյն անհամարք ծանրաբեռն վարուցն կրթութիւնք խստամբերութեանն, պահաւք եւ սրբութեամբ, տքնական հսկմամբ անձանձրոյթ ազաւթիցն ջերմութեան առ Տէր Աստուած կանխելոյ վասն ամենայն մարդոյ: 3 Զաւետարանական ընթացսն եւ զվերակացութիւն եկեղեցւոյ սրբոյ շնորհաւքն Աստուծոյ առանց պակասութեան տանէր. առաւել եւս փութայր, գուն եղեալ յորդորելով զամենեսեան առ ի բարեացն քաջալերութիւն, զցայգ եւ զցերեկ պահաւք եւ ազաւթիւք եւ ուժգին խնդրուածովք եւ բարձրակալ կատարման հաւատովքն՝ մերձաւորաց եւ հեռաւորաց զհոգեւոր եռանդն ածէր. իբրեւ զպատերազմասէր նահատակ միշտ զանձն ի կրթութիւն եւ ի պատրաստութեան ունէր ամենայն փորձութեանց եւ վշտաց, առ ի տալ պատասխանի ամենայն համարձակութեամբ, վասն ճշմարտութեան հաւատոցն մարտնչել որ վասն Քրիստոսի:

4 Եւ իբրեւ ուղղեաց նորոգեաց զամենայն եկեղեցիս կողմանցն այնոցիկ, եհասնա մինչեւ ի ճամբար բանակին Արշակունւոյ արքային Մագքթաց, որոյ անուն իւր Սանէսան կոչէր: 5 Քանզի եւ նոցա եւ Հայոց թագաւորացն մի ազգաւորութիւն էր տոհմին բնութեան: 6 Եւ երթեալ յանդիման լինէր թագաւորին Մագքթաց, իշխանին բազմութեան զաւրացն Հոնաց. եւ եկաց առաջի նոցա, սկսաւ քարոզել եւ աւետարանել նոցա զՔրիստոս: 7 Ասէ ցնոսա՝ թէ ծաներո՛ւք զԱստուած: 8 Լուան եւ ընկալան զառաջինն եւ հնազանդեցան: 9 Ապա սկսան քննել զաւրէնսն Քրիստոսի, եւ ուսան ի նմանէ՝ թէ ատելի է Աստուծոյ աւարառութիւն եւ յափշտակութիւն, սպանութիւն, ազահոսութիւն, այլազրկութիւն, զայլոցկերութիւն, ցանկութիւն այլոց ստացուածոց: 10 Ապա այսպիսի իմն իրաւք իբրեւ լուան, զայրացան

ընդ բանս նորա եւ ասեն. Զի ոչ յափշտակեացուք, զի ոչ աւարեացուք, զի ոչ առցուք զայլոյ, ի՞նչ կեցցուք այսչափ անչափ զաւրաց բազմութիւնք: 11 Եւ թէպէտ բերաւոր բանիւք բարեաւք կամէր հաճել զսիրտս նոցա, ոչ ինչ կամէին ունկնդիր լինել, այլ ասէին ցմբմեանս. Եկեալ այսպիսի բանիւք՝ կամի ի քաջութենէ որսոյն կենաց մերոց խափանել զմեզ. իսկ եթէ սմա լուիցուք, եւ դարձցուք յաւրէնս քրիստոնէութեան, ի՞նչ կեցցուք, զի ոչ յերիվար հեծցուք ըստ բնութեան աւրինաց սովորութեանց մերոց: 12 Այլ, ասէին, այս խորհուրդ Հայոց թագաւորին է. զսա յղել առ մեզ, զի այսու ուսմամբ խափանեսցէ զմեր արշաւանս ասպատակութեան հինի յաշխարհէն իւրմէ. այլ եկայք զսա պակասեցուցուք ի միջոյ, եւ մեք ի Հայս արշաւեացուք, աւարաւ զմեր աշխարհս լցցուք:

13 Ապա շրջեցաւ թագաւորն, եւ լուաւ բանից զաւրացն իւրոց. եւ կալան ձի մի ամեհի, կապեցին կախեցին զմանունկն Գրիգորիս զազուոյ ձիոյն, եւ արձակեցին ընդ ծովեզեր դաշտին հիւսիսական ծովուն մեծի, արտաքոյ իւրեանց բանակին ի դաշտին Վատնեայ: 14 Եւ այսպէս սպանին զառաքինի քարոզն Քրիստոսի զմանունկն Գրիգորիս: 15 Եւ ապա բարձին զնա որք ընդ նմա երթեալ էին ի գաւառէն Հաբանդայ, եւ բերին ի գաւառն իւրեանց ի կողմանս Աղուանից ի սահմանս Հայոց ի Հաբանդ, ի գեաւդն՝ որ անուանեալ կոչի Ամարագ: 16 Եւ եղին զնա առ եկեղեցեան, զոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի, հաւուն Գրիգորիսի՝ քահանայպետին մեծի աշխարհին Հայաստան երկրին: 17 Եւ ամ յամէ աշխարհաժողովուրդք ի մի վայր ժողովեալ կողմանցն այնոցիկ եւ աշխարհաց գաւառացն այնոցիկ, զսորա զաւր տաւնին զյիշատակ քաջութեանն ցնծան:

ԳԼՈՒԽ Է.

1 Յաղագս մարտի պատերազմին հինգից եկեղոց յարշաւանաց թագաւորին Մագքթաց յաշխարհն իշխանութեան Հայոց թագաւորին, եւ կամ ո՛րպէս սատակեցաւ նա զաւրաւին իւրով հանդերձ:

2 Յայնմ ժամանակի թագաւորն Մագքթաց Սանէսան անհնարին նիւթեաց զսրտմտութիւն ոխութեան ընդ իւրում ազգակցին խորովու արքային Հայոց, եւ գումարեաց ժողովեաց զամենայն զաւրս Հոնաց եւ Փոխաց, Թաւասպարաց, Հեծմատակաց, Իժմախաց, Գաթաց եւ Գղուարաց, Գուգարաց, Շչբաց եւ Ճղբաց եւ Բաղասճաց եւ Եգերսուանացն¹, եւ այլոց խառնազանճ բազմութեամբք, անթիւ բանակն² վաչկատուն զաւրութեանց, որում միանգամ ինքն իշխէր զաւրացն բազմաց:

3 Եկն անց ըստ իւր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր, եւ եկն տարածեցաւ ելից գերկիրն Հայոց աշխարհին: 4 Եւ չգոյր թիւ բազմութեան հեծելազար գնդացն, եւ ոչ համար շերտաւոր հետեակ զաւրուն. զի եւ ինքեանք զինքեանս զիւրեանց զաւրսն թուել ոչ կարէին: 5 Բայց ուր լինէր հանդէս, ի նշանաւոր տեղիս գնդի գնդի, դրաւշու դրաւշու, վաշտուց վաշտուց, յերեւելի յերեւելի տեղեաց՝ մէն մի բռնաքար առ այր հրամայէին, զի բերցեն ընկեսցեն՝ շեղջ կուտել. զի որչափ լիցի, այնու երեւեսցի նշանակ բազմութեանն, առ իմանալ առ վաղիւ անցելոց իրացն ահաւորութեան նշանակ: 6 Եւ ընդ որ միանգամ անցանէին, այսպէս թողուին յամենայն ճանապարհակիցս, ի վերայ անցից պողոտայից: 7 Եւ ելին լցին ծածկեցին զամենայն երկիրն Հայոց. քանդեցին, գերեցին, առ հասարակ աւերեցին. սփռեցան տարածեցան զսահմանաւքն, լի եւ լի ծա-

ւալեցան մինչեւ ի փոքր քաղաքիկն Սատաղու, եւ մինչեւ ի Գանձակ սահմանս տարպատական. խաղացուցին ի մի վայր ժողովեցին, ի ժամադիր կողմանս յԱյրարատեան գաւառին բանակ մեծ լինէր:

8 Եւ խոյս ետ թագաւորն Հայոց խորով յիւրմէ եղբարցն, նոյն ի Սանէսանայ յարքայէն Մագքթաց. եւ անկան յամուր բերդն Գարեւնից յերկիրն Կովգայ, եւ ընդ նմա ծերունին Վրթանէս եպիսկոպոսապետն Հայոց: 9 Ապա առնուին պահս պահել, եւ խնդրել յԱստուծոյ՝ զի փրկեսցէ զնոսս յայնմ ի դառն դահճէն, եւ սկսան խնդրել ի Տեառնէ Աստուծոյ: 10 Եւ նա ծածկեալ բռնացեալ ունէր գերկիրն առ հասարակ իբրեւ տարի մի: 11 Ապա եկն եհաս Վաչէ որդի Արտաւազդայ ի Մամիկոնեանն տոհմէն, զաւրավար ամենայն Հայոց մեծաց: 12 Զի երթեալ էր նա ի ժամանակին յայնմիկ գերկայն ճանապարհս ի կողմանս Յունաց: 13 Ապա ժողովեաց նա զամենայն քաջս քաջս նախարարացն, եւ գունդ կազմէր բազում յոյժ. եւ հասանէր անկանէր ի վերայ բանակին, յառաւատուն ժամուն այգանալոյն պաշտամանն. զի բանակեալ էին նոքա ի լերինն՝ որ կոչի Յլու գլուխ. եւ առ հասարակ ընդ սուր հանին զամենեսեան, եւ ոչ մի ոք ոչ ապրեցուցանէր, եւ դարձուցանէր զբազմութիւն գերեացն: 14 Եւ յետ այսորիկ առնոյր զաւարսն, խաղայր գնայր երթայր ի ջանէր ի դաշտն Այրարատեան գաւառին. երթայր գտանէր զՍանէսան թագաւորն Մագքթաց բուն գնդաւն, անթիւ անհամար զաւրաւքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքի: 15 Առեալ զգունդն Վաչէ, եւ յանկարծակի յարձակեցաւ ի վերայ քաղաքին, եւ մատնեաց զնոսս Տէր ի ձեռս նորա:

16 Եւ իբրեւ տեսին զնա յարձակեալ ի վերայ իւրեանց, փախեան ելին ի քաղաքէ անտի յառապարն ի կողմն յԱւշական բերդին. եւ զանապատն, եւ զքարուտ տեղիսն

1 Թուի ուղղելի՝ Եգերսուց (եւ Սուանեանց)

2 Յօր. միում՝ անթիւ անքնակն

ապաւէն իւրեանց համարեցան. եւ լինէր սաստիկ պատերազմ յոյժ յոյժ: 17 Եւ նիզակակիցք զաւրավարին Հայոց, որ էին Բագրատ Բագրատունի, Մեհոնդակ եւ Գարեգին ընդտունիք, եւ Վահան նահապետն Ամատունեաց տոհմին, եւ Վարազ Կամինական, հասանէին հարկանէին սատակէին զաւրսն Ալանացն, եւ Մազքթացն, եւ Հոնացն եւ զայլոց ազգացն, եւ ընունին զդաշտն առապարացն առհասարակ դիակամք մեռելոց. մինչ զի իբրեւ զգետ յարուցեալ երթայր արիւնն անհնարին, եւ ոչ լինէր թիւ զաւրացն մեռելոց: 18 Եւ զմնացեալսն սակաւս առաջի իւրեանց հալածականս տանէին մինչեւ յաշխարհն Բաղասճաց, եւ զգլուխն Սանէսանայ մեծի թագաւորին եկին բերին առաջի արքային Հայոց: 19 Սակայն իբրեւ ետես, լալ սկսաւ. ասէ, Եղբայր իմ էր ազգաւ Արշակունի: 20 Ապա եկեալ էր արքային ի տեղի ճակատուն, եւ ընդ նմա մեծ եպիսկոպոսապետն Հայոց. եւ տեսին զկոտորածն զաւրացն հարելոց, զի նեխէր երկիրն ի հոտոյ մեռելոցն: 21 Ապա ետուն հրաման՝ գուգազ հանել յաշխարհէ, եւ անդէն ծածկել քարակարկառ վիմաւք, զի մի՛ ի շարաւոյ հոտոյն մեռելոտի ոսկերացն երկիրն պղծեսցի: 22 Եւ դադարեաց երկիրն ի խաղաղութեան ամս հարուստ մի. եւ այսպէս վրէժ սրբոյն Գրիգորիսի խնդրեցաւ ի թագաւորէն Սանէսանայ, եւ ի բանակէ նորա. զի ոչ մնաց ի նոցանէ եւ ոչ մի:

ԳԼՈՒԽ Ը.

1 Յաղագս մայրեացն տնկելոց, եւ պատերազմացն ընդ Պարսս, եւ ազգահատութեան տան նախարարացն տոհմին Բզնունեաց:

2 Եւ իբրեւ առ ժամանակ մի խաղաղացաւ երկիրս Հայոց, ապա ետ հրաման թագաւորն Հայոց խորով, տալ պարգեւս արանցն քաջացն՝ որ վաստակեցին նմա, եւ փոխանակեցին զանձինս իւրեանց փո-

խանակ աշխարհին Հայոց մեծաց յամենայն ի մարտ ճակատուցն պատերազմաց: 3 Եւ ետ Վաչէի զաւրավարի զականս Ջանջանակին, եւ զՋրաբաշխիս, եւ զՅլու գլուխ, ամենայն գաւառակաւքն հանդերձ. նոյնպէս եւ այլոց նախարարացն մեծամեծ պարգեւս: 4 Եւ ետ հրաման թագաւորն զաւրավարին իւրոյ՝ հանել խաշար յաշխարհէն բազում, եւ բերել զվայրենի կաղին մայրեաց, եւ տնկել զայն յԱյրարատեան գաւառին. եւ առեալ յամուր բերդէն արքունի, որում կոչեն Գառնի, մինչեւ ի դաշտն Մեծամաւրի ի բլուրն՝ որ անուանեալ կոչի Դուին, որ կայ ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի Արտաշատու, զգետն խոնարհ մինչեւ յապարանսն Տիկնունի՝ տնկեցին զկաղինն: 5 Եւ կոչեաց զանուն նորա Տաճար մայրի: 6 Եւ միւս ի մայրեացն յեղէզնաբերանին² ի նմանէ ի հարաւակոյս լցին զդաշտն կաղնատուն տնկով եւ կոչեցին զանուն նորա Խոսրովակերտ: 7 Եւ անդ շինեցին զապարանսն արքունականս, եւ զերկոսեան տեղիսն պարսպեալ փակեցին. եւ ոչ կցեցին ի միմեանս վասն պողոտայի ճանապարհին: 8 Եւ աճեաց բարձրացաւ. եւ ապա զամենայն էրէս եւ զգագանս հրամայեաց ժողովել թագաւորն եւ ընուլ զքաղաքորման, զի լիցին նոցա տեղիք որոց զբաւսանաց ուրախութեան թագաւորութեան նորա: 9 Եւ զաւրավարն Վաչէ կատարէր վաղվաղակի գասացեալսն արքայի:

10 Եւ մինչդեռ նա յայնմ գործ զմայրեաւքն տնկելովք էր, յանկարծակի գուժկան³ հասանէր առ Խոսրով ի Հէր եւ ի Զարաւանդ գաւառ, թէ պատրաստեալ են զաւրքն Պարսից գալ հասանել ի գործ պատերազմի ի վերայ քո: 11 Ապա հրաման ետ արքայ Խոսրով Դատաբայ նահապետի

1 Յօր. միում՝ գկաղնիմ
 2 Յօր. միում՝ Էղեզնաբերանին
 3 Յօր. գուշակ

Բզնունեաց՝ գուգազ հանել յաշխարհէ աւելի քան զչափն. եւ զհամար զաւրսն մատենիկ¹ գնդաւն ընդ առաջ նոցա խաղալ հասանել ի դիմի հարկանել, արգելուլ զթշնամիսն: 12 Ապա Դատաբէն երթայր ընդ առաջ զաւրացն Պարսից բազմութեամբ զաւրաւքն Հայոց: 13 Իբրեւ հասանէր Դատաբէն, խորհուրդ միաբանութեան դնէր ընդ իշխանսն զաւրացն Պարսից. կամեցաւ մատնել ի ձեռս նոցա զարքայն Հայոց գտէրն իւր. դարան հրամայեաց գործել թշնամեացն ի վերայ իւրոց զաւրացն, եւ անդրէն սուր ետ դնել ի վերայ իւրոց զաւրացն: 14 Յանկարծ յեղակարծումն տարակարծի՝ քառասուն հազար զգաւրսն Հայոց միանգամայն կոտորէին, եւ այլ զաւրքն փախստական լինէին. եւ Դատաբէն չարագործ առնոյր զգաւրսն Պարսից, եւ կամէր անկանել ի վերայ թագաւորին Հայոց: 15 Ապա փախստականք զաւրացն վաղ հասանէին ի բանակ արքային Հայոց, գոյժ առնել զանհնարին կործանումն իրացն եղելոց, զչարագործութիւն մատնութեան անաւրէն Դատաբենայ:

16 Ապա անգանէր թաւալէր խնդրէր յԱստուծոյ բազում պաղատանաւք եւ ուժգին արտասուաւք թագաւորն Հայոց Խոսրով, հանդերձ Վրթանաւ քահանայապետիւն: 17 Եւ յետ այսորիկ աճապարէր կուտէր զգաւրսն առ ինքն իբրեւ երեսուն հազար, հանդերձ զաւրավարաւն Վաչէիւ. զայր հասանէր ընդ առաջ նոցա՝ ամենայն աւագախումբ մեծամեծ նախարարաւք իւրովք: 18 Եւ դիպեցան միմեանց առ ափն ծովուն Բզնունեաց, յԱռեստն աւանի, ի ձկնատեսանսն արքունի ի վերայ գետակին: 19 Եւ տեսին զգաւրսն Պարսից, զի ոչ գոյր թիւ բազմութեանն. զի էին իբրեւ զաստեղս երկնից, եւ իբրեւ զաւազ առ ափն ծովու. զի եկեալ էին անթիւ փղաւք

եւ անչափ զաւրաւք: 20 Եւ սոքա հասին անկան ի վերայ բանակին, յուսացեալք առ Աստուած. հարին, սատակեցին, կոտորեցին, եւ ոչ թողին ի նոցանէ եւ ոչ մի: 21 Եւ թափէին աւար բազում, եւ զփրղսն եւ զամենայն ոյժ զաւրութեան նոցա: 22 Ձերբակալ արարեալ զԴատաբէնն Վաչէ սպարապետն եւ քաջ Վահան Ամատունի, ածէին զնա առաջի մեծի թագաւորին Խոսրովու, եւ քարկոծ առնէին զնա քրամբ իբրեւ զայր, որ աշխարհի եւ գնդի եւ զաւրաց տեսուն իւրոյ դաւաճան լեալ իցէ: 23 Եւ զազգ նորա եւ զկին եւ զորդիս գտանէր յամրոցի անդ իշխանին Ըռչտունեաց յանուանեալն յԱղթամար կղզուջ. ի նաւ ելեալ Վաչէ սպարապետն, անցեալ ի կղզին՝ առ հասարակ ոչ զէգ թողոյր եւ ոչ զարու: 24 Եւ այսպէս բարձաւ ազգատոհմ նախարարութեանն այնորիկ, եւ գտուն նոցա յարքունիս կալան:

25 Բայց յետ այսորիկ ոչ դադարէին Պարսք ի տալ պատերազմ ընդ Խոսրովու արքային. եւ նա դնէր աւրէնս՝ զի մեծամեծ աւագանին, նախարարքն աշխարհակալքն աշխարհատեարքն՝ որ էին բիւրաւորքն եւ հազարաւորքն, կայցեն առ արքային, եւ ընդ նմա շրջեսցին, եւ մի՛ ոք երթիցէ ի նոցանէ ընդ զաւրս արքունի: 26 Զի երկնչէր նա յերկմտութենէ նոցա, զի գուցէ զնոյն գործ Դատաբենայն գործիցեն, եւ ապստամբ լինիցին ի նմանէ: 27 Բայց վստահ լինէր ի ծերունին Վաչէ, ի բուն սպարապետն ի զաւրավարն Հայոց մեծաց, եւ ի քաջ Վահան յԱմատունի: 28 Գումարէր զգաւրսն ամենայն տանցն աւագանւոյն ընդ զաւրսն արքունի, եւ տայր զգումարտակն ամենայն ի ձեռս նոցա. եւ հանապազ կային ի քաջութեան ի մարտ պատերազմի ի սահմանս Պարսից. եւ ոչ տային անխտիր արշաւել աւերել զերկիրն Հայոց, եւ ոչ նայել: Եւ կայր արքայ ի հանգստի, եւ աշխարհ ի շինութեան

1 Յօրինակս ինչ՝ մատենի

եւ ի խաղաղութեան զամենայն աւուրս կենաց նոցա:

ԳԼՈՒԽ Թ.

1 Յաղագս Բակուրայ բղեշխի, որ ապստամբեաց յարքայէն Հայոց. եւ թէ զիա՛րդ սատակեցաւ ի զաւրացն Հայոց, եւ փոխանակ նորա լինէր բղեշխ Վաղինակ Սիւնի:

2 Զայնու ժամանակաւ ապստամբեաց յարքայէն Հայոց մի ի ծառայից նորա մեծ իշխանն Աղծնեաց, որ անուանեալ կոչէր բղեաշխն. որ էր մի ի չորից, գահերէց բարձերէց տաճարին արքունի: 3 Ետ ձեռս յարքայն Պարսից, եւ մատնեաց զարքունի տունն, որ յեց յինքն էր: 4 Եւ էաժ զաւրս արքային Պարսից ի թիկունս իւր, եւ հատաւ յերկրէն յիշխանութենէն Հայոց, եւ տայր պատերազմ ընդ արքային Հայոց՝ ուժով Պարսից թագաւորութեանն. եւ սաստկանայր մարտ պատերազմին: 5 Ապա առաքէր թագաւորն Հայոց զբարեկիր զձառայս իւր, զիշխանն Կորզուաց զՋոնն, եւ զիշխանն մեծի Ծոփաց զՄար, եւ զիշխանն Ծոփաց Շահէի Ներսէճ, եւ զիշխանն Սիւնեաց զՎաղինակ, եւ զիշխանն Հաշտենից զԴատ, եւ զիշխանն Բասենոյ զՄանակ, հանդերձ բազում զաւրաւք: 6 Ապա չոգան յաղթեցին զաւրացն Պարսից, եւ առ հասարակ ընդ սուր հանին զամենայն. եւ սպանին զբղեաշխն, եղբարբք եւ որդւովք իւրովք հանդերձ: 7 Բայց զաղջիկ մի զզուստր նորածին¹, եւ զգլուխն Բակուր բղեշխին բերին առ արքայ: 8 Եւ իբրեւ այլ ոք ոչ էր մնացեալ յազգէն, ետ արքայ զաղջիկն ի կնութիւն սիրելւոյն արքայի Վաղինեկայ սիւնւոյ, եւ գտունն Աղծնեաց. եւ արար զնա բղեաշխ եւ պայազատ տան նորուն: 9 Ժառանգն բազմացաւ, եւ հանդերձ աշխարհաւն եւ ամենայն ուժովն կայր բղեաշխն Վաղինակ ի ծառայութեան

արքային հանապազ: 10 Բայց յորդուոցն Բակուր բղեշխի պատանեակ մի փախեաւ անկաւ առ զաւրավարն Հայոց Վաչէ, եւ անդ ապրեցաւ թագուցեալ ի տան նորա: 11 Որ առ յապա ժառանգ տան նորա լինէր: 12 Որ յայլում ժամանակի դարձաւ կալաւ գտունն իւր, որոյ անունն Խեշա² կոչէր:

ԳԼՈՒԽ Փ.

1 Յաղագս Յակոբայ եպիսկոպոսին Մծրնայ:

2 Զայնու ժամանակաւ խաղաց զնաց մեծ եպիսկոպոսն մծրնացուոց, այր սքանչելի ձերունի, վաստակասէր ի գործս ճշմարտութեան, որում անունն Յակոբ, փոխանակ ազգաւն պարսիկ³ կոչէր, այր ընտրեալ յԱստուծոյ, յիւրմէ քաղաքէ անտի գալ հասանել ի լերինս Հայոց, ի լեառնն Սարարաղայ ի սահմանս Այրայրատեան տէրութեան ի գաւառն Կորզուաց. այր լի շնորհաւքն Քրիստոսի, որպէս զաւրութիւնք նշանաց եւ արուեստից լինէին ի ձեռաց նորա: 3 Սա եկեալ ցանկացեալ փափաքեալ մեծաւ տենչանաւք աղաչէր զԱստուած՝ տեսանել զփրկական տապանն նոյեան շինուածոյն, զի յայս լերին հանգեաւ նա ի ջրհեղեղէն. քանզի զամենայն ինչ զոր հայցէր, առնոյր ի Տեառնէ: 4 Ապա մինչդեռ ելանէր ընդ դժուարին ընդ անջրդի ընդ ափափայսն անապատին սարարատեան լերինն. աշխատեցան եւ ծարաւեցան նա եւ որք ընդ նմայն էին: 5 Ապա դնէր ծունր մեծն Յակոբ ի վերայ երկրին, եւ կայր յաղաւթս առ Տէր. եւ ի տեղւոջն՝ ուր եղեալ էր զգլուխ իւր՝ բղխեաց աղբիւր, եւ արբին նա եւ որ ընդ նմայն էին. որ մինչեւ ցայսաւր ասեն այնմիկ աղբեւր Յակոբայ: 6 Եւ ինքն ի նմին աշխատեալ դեգերէր՝ զխնդրելին

1 Յօրին. միում՝ նորա ածին

2 Յօրին. միում՝ Խեշա
3 Յօրինակի միում չի՞ր՝ փոխանակ ազգաւն պարսիկ

տեսանել առանց յապաղութեան, առնէր աղաւթս առ Տէր:

7 Արդ իբրեւ էր նա խոնճեալ ի վեր ի դժուարին տեղւոջն մաւտ ի կատարն, եւ կարի վաստակեալ էր, ննջեաց նա. եւ եկն հրեշտակ Աստուծոյ, եւ ասէ ցնա. Յակոբ, Յակոբ: 8 Եւ նա ասէ. Աւասիկ, Տէր: 9 Եւ ասէ հրեշտակն. Ահա ընկալաւ Տէր զազաւանս քո, եւ կատարեաց զխնդրուածս քո. այդ, որ կայ ընդ սնարս քո, է ի փայտից տապանակին. ահա բերի քեզ, անտի է այդ. զի այլ մի՛ եւս յաւելցես տեսանել զայն, զի Տէր այդպէս կամեցաւ: 10 Եւ մեծաւ խնդութեամբ յոտն կացեալ, բազում գոհութեամբ երկիր պագանէր Տեառն, եւ տեսանէր զտախտակն՝ իբրեւ զի կացնեալ հատեալ հանեալ ճեղքեալ ի մեծ ինչ փայտից: 11 Եւ առեալ դառնայր անտի, հանդերձ շնորհատուր պարգեւելովն եւ որք ընդ նմայն երթեալք իւրովքն ճանապարհորդ լինէր: 12 Եւ ոչ այնպէս մեծն Մովսէս գուարթագոյն ցնծայր յէջսն սինէական լեռնէն, չասէաք եթէ առաւելովքն պակասագոյն: 13 Քանզի յԱստուծոյ առեալ եւ աստուածագիր հրամանաւք ի բազուկս, այր աստուածատեսիլ ի լեռնէն իջանէր: 14 Այլ վասն վրիժագործ ժողովրդեանն, որոց զթիկունսն ի տէրունիսն՝ եւ կործան յերեսս՝ տիրադրութք իւրեանցակուռ ձուլելոյն երկիր պագանէին, եւ նովին զհրամանաբերն սրտառուչ սրտաբեկ կացուցանէին: 15 Քանզի ի տախտակացն խորտակելոցն յայտնի երեւէր բերելեացն թաղծութիւն: 16 Իսկ այս երանելոյս, վասն որոյ եւ ճառեալքս յարդարին, ոչ ըստ այնմ աւրինակի՝ որ անդ գործեցաւ. այլ ինքն իւրովքն լցեալ հոգեւոր մխիթարութեամբ, կարծեալ զընդունելեացն զյաւժարութիւն յուսով դիտաւորութիւն զճանապարհաց աւետաբերաց: 17 Քանզի յայտնեալք եւ ծածկելովք, քանզի միոյն

միայն յամենազաւրէն առ ամենայն ազգս երկրածնաց շնորհքն մատակարարէին:

18 Ապա իբրեւ գայր բերէր այրն Աստուծոյ զաստուածագործ մեծութեանցն պատուհասին զխրատու՝ որ առ ամենայն ազգս բանաւորաց եւ շնչաւորաց՝ յաւիտենից զնշանակն զփայտն ապրեցուցիչ, զնշանակն հայրենի գործոցն զնոյեան տապանին, ամենայն քաղաքն եւ գաւառքն՝ որ շուրջ էին զնովալ՝ անպայման եւ անչափ խնդութեամբք եւ ցնծութեամբք ընդ առաջ ելանէին: 19 Իբրեւ զառաքեալ Քրիստոսի իբրեւ զհրեշտակ երկնաւոր տեսեալ զսուրբն, զնովալ պատէին. զքաջ հովիւն իւրեանց իբրեւ զաստուածախաւս տեսանէին. եւ զնովիմբ փարեալք, եւ զվաստակասէր զաւգտաբեր զգարչապարացն զշաւիղսն համբուրէին: 20 Եւ զբերեալ պարգեւացն զշնորհս իւրեանց յաւժարութեամբք ընդունէին. որ մինչեւ ցայսսաւր նշանակ սքանչելութեանն կայ պահեալ առ նոսա երեւոյթ փայտն հայրապետական նոյեան տապանին:

21 Ապա յետ այսորիկ լուր լուաւ յերկրէն Հայաստանէ սքանչելի եպիսկոպոսն Յակոբ. խաղաց գնաց առ մեծ իշխանն աշխարհատէրն մեծ ծառայն արքային Հայոց առ Մանածիրհ Ռըշտունի, եւ եկն թափեցաւ յաշխարհ նորա: 22 Վասն զի լուեալ էր զնմանէ՝ թէ այր չար եւ անզգամ է, եւ զուր տարապարտ² ի ցասմանէ դառնութեան սրտին իւրոյ կոտորէ անթիւ մարդիկ: 23 Եկն ուսուցանել եւ խրատել զնա, զի յահէ Տեառն երկուցեալ՝ դարձցի յընդանութեան բարս, եւ մեկուսի ի վայր դիցէ զանասնաբար զազանամտութիւն մոլեգնութեանն իւրոյ: 24 Իսկ իբրեւ ետես զնա, արհամարհեաց, ծաղր եւ այպն առնէր անաւրէնն Մանածիրհ զայրն Աստուծոյ զՅակոբ եպիսկոպոսն: 25 Եւ առ վայրենի բարուցն իւրոց՝ զոր ունէր յան-

1 Յամենայն օրինակս՝ զթիկունսն տէրունիսն

2 Յօրինակի միում՝ դատապարտ

ձին իւրում, իբրեւ նմա հեճուկս առնելոյ, ութ հարիւր այր՝ որ կային ի կապանս առանց յանցման՝ ետ ածել առաջի նորա, եւ հրամայեաց ի դահճէ միջէ ի ծով անդր հոսել. եւ գայնչափ հոգի առանց յանցման կորուսանել, եւ կատակութեամբ ծաղու հրամայէր հալածել զնա յաշխարհէն իւրմէ: 26 Եւ ասէ. Առ քում բարեսացութիւնդ տեսե՞ր զիւրդ մեծարեցի զքեզ. դիւր արարի նոցա ի կապանացն, եւ ի ծովուն դեռ զուղին: 27 Իսկ նա գնացեալ անտի մեծաւ տրտմութեամբ՝ ըստ հրամանի պատուիրանին Տեառն իւրոյ թաւթափէր զփոշի ոտից իւրոց ի վերայ նոցա: 28 Գայր հասանէր ի լեառն երկաթահատացն եւ կապարահատացն, եւ որ ընդ նմայն էին, ընդ Ըռչտունիս: 29 Եւ բաժանէր լեառն բարձր, ուստի երեւէին գաւառքն բովանդակ, որուս անուն Ընձաքիսար¹ կոչէին: 30 Իբրեւ հուպ եղեւ յայն լեառն ի ստորոտ լերինն, քանզի բազում աւուրք էին զի չէր ինչ բնաւ ամենեւին ճաշակեալ, եւ ծարաւեաց խիստ ծարաւով: 31 Եկաց յաղաթա առ Տէր, զնէր ծունր, եւ եզ զգլուխ իւր ի վերայ երկրի, եւ բխեաց աղբիւր, ուստի արբ ինքն եւ որք ընդ նմայն էին: 32 Եւ եղեւ այս ըստ առաջին աւրինակին. որպէս արար ի Սարարաղ լերինն, սոյնպէս եւ առ ոտին Ընձաքիսար լերինն ի ծովեզերն Ըռչտունեաց ծովուն, որ ըստ առաջնոյն աւրինակի կոչի եւ այս աղբիւր Յակոբայ մինչեւ ցայսաւր ժամանակի:

33 Եւ ելանէր քահանայապետն Աստուծոյ Յակոբ ի գլուխ լերինն Ընձաքիսար, եւ նզովէր զաշխարհն, զի մի՛ պակասեցէ անտի խռովութիւն մինչեւ ի սպառ, փոխանակ տէրունի խաղաղութեան՝ որ ոչ լուան: 34 Եւ սուրբ աւետարանիչ եպիսկոպոսն գնաց ի տեղի իւր: 35 Իսկ յայնմ գաւառի, յետ գնալոյ նորա անտի, յետ եր-

կուց աւուրց սատակեցաւ կինն Մանածերհայ եւթն որդևով իւրով. յետոյ եւ ինքն չարամահ ծակոտեալ ելանէր մեծաւ տանջանաւք յաշխարհէ: 36 Եւ ըստ բանին՝ որ ասացաւ, ոչ եղեւ խաղաղութիւն յաշխարհին յայնմիկ յաւրէն յայնմանէ եւ յապա:

37 Բայց այս Յակոբ գործէր սքանչելիս մեծամեծս. եւ սա դիպեցաւ ի մեծ սիւնհոգոսին ի Նիկիա, որ եղեւ յամս Կոստանդիանոսի կայսեր Հոռոմոց, ուր ժողովեցան երեք հարեւր եւ ութեւտասն եպիսկոպոսք, վասն անիծեալ աղանդոյն Արիանոսի Աղէքսանդրացւոյ, որ էր ի նահանգէ անտի Եգիպտոսի: 38 Արդ ամենայն եպիսկոպոսքն նստէին առաջի Կոստանդիանոսի. եւ ի Հայոց էր անդ Արիստակէս, որդի Գրիգորի սքանչելոյ՝ առաջի կաթողիկոսին Հայոց Մեծաց: 39 Սկսաւ երեւել սքանչելեաւք նշանաց Հոգւոյն Սրբոյ այնմ Յակոբայ ծածկեալ գործք զարմանալի թագաւորին: 40 Ետես զի արքայն Կոստանդիանոս քուրճ զգեցեալ էր ի ներքոյ իւրոյ ծիրանեացն եւ պատմուճանին, եւ հրեշտակն կայր պահապան սպասաւորել նմա: 41 Զարմացեալ եպիսկոպոսն Յակոբ, ասաց այլոց բազմութեան ժողովոյն եպիսկոպոսացն զիրս հրեշտակին, որ ոչ հաւատային իրացն: 42 Իսկ նա պնդեալ վիճէր եւ ասէր. Որովհետեւ զուք գիտէք զիրս ծածկեալս, նախ զայդ յայտ արարէք, զի՞նչ է այն որ զգեցեալն է թագաւորն ի ներքոյ պատմուճանին: 43 Որ ինքն ի մէջ կացեալ, ի ձեռն Հոգւոյն Սրբոյ յայտնէր զխոնարհութիւն կրաւնազգեաց աստուածասիրութեան նշանակ թագաւորին Կոստանդիանոսի. եւ գննեալ առաջի ամենեցուն ցուցանէր, զի ի ներքոյ ընդ ծիրանեաւքն քուրճ զգեցեալ էր առ սէր ջերմեռանդ հաւատոցն՝ որ առ Քրիստոս ունէր: 44 Ապա ետես թագաւորն Կոստանդիանոս զհրեշտակն սպասաւոր երեսացն Յակոբայ, եւ անգաւ առաջի ոտից նորա, եւ մեծապատիւ մեծապարգեւ մեծարեաց զնա:

1 Յօր. Ընձաքիսար. ուղղ. ըստ Յովհ. Կաթ. եւ Վարդանայ Ընձաքիսար

45 Եւ արկ զաթոռ նորա ի վերոյ քան զբազումս ի նոցանէ, որք ի սիւնհոգոսին յայն էին: 46 Բայց ոսկերք նորա շնորհեցան քաղաքին ամբացւոց, ընդ այլ մծբնացիսն ի փոխել նորա անտի անդր ի մարտս պատերազմացն Յունաց թագաւորացն ընդ թագաւորին Պարսից:

ԳԼՈՒԽ ԺԱ.

1 Յաղագս մեծի պատերազմին Պարսից եւ Հայոց ընդ միմեանս, եւ անկանելոյ ի պատերազմին մեծի զաւրավարին Վաչէի, եւ մահուան թագաւորին Խոսրովու, եւ փոխելոյ յաշխարհէ հայրապետին Վրթանայ:

2 Եւ յետ այսորիկ յաւել եւս լինել մարտ խստութեամբ պատերազմի ի մէջ Պարսից եւ Հայոց ընդ միմեանս. զի ժողովեցան հասին կռտեցան առնուլ զաշխարհն Հայաստան երկրին: 3 Ապա ժողովէր սպարապետն զաւրավարն Հայոց մեծաց Վաչէ զազատախումբ բանակ նախարարակոյտ զաւրացն: 4 Եւ ելանէր տայր ընդ զաւրսն Պարսից պատերազմ, եւ լինէր անհնարին կոտորուած յերկոցունց կողմանցն, եւ բազում ծախ մեծամեծ աւագանւոյն կոտորելոցն: 5 Անկանէր ի պատերազմին յայնմիկ մեծ սպարապետն Հայոց Վաչէ. եւ լինէր ամենայն աշխարհին սուգ անհնարին, զի բազում անգամ էր Տեառն փրկութիւն տուեալ Հայոց ի ձեռն նորա: 6 Ապա ժողովէր եպիսկոպոսապետն Վրթանէս, միսթարէր զամենեսեան, եւ զինքնին թագաւորն զԽոսրով, եւ զաւրսն ամենայն, որք բազում անձկայրեաց տրտմութեամբք եւ արտասուակաթ ողբովք եւ ծանրաթախիծ հոգով, մեծաւ կոծովք եւ անհնարին աշխարանաւք պաշարեալք, զզնացելոցն կարիս մնացելոցն համարեալ՝ սգային: 7 Զորս մատուցեալ սփոփէր զնոսա մեծն Վրթանէս, եւ ասէր.

8 Միսթարեցարո՛ւք ի Քրիստոս. վասն զի մանաւանդ որք մեռանն, նոքա

յաղագս աշխարհի եւ եկեղեցեաց եւ աստուածագործ աւրինացն տուչութեան, զի մի՛ գերեալ քանդեսցի աշխարհս, եւ սուրբ եկեղեցիքն աւերեսցին¹, եւ կամ մարտիրոսք անարգեսցին, եւ կամ սուրբ սպասքն ի ձեռս պղծոցն եւ անաւրինացն անկցին, եւ սուրբ ուխտն այլայլեսցի, եւ որդիք մկրտութեան գերութեամբ անկցին ի պէսպէս պղծութիւնս անաւրէնութեան կարգաց պաշտամանց: 9 Եւ եթէ զաշխարհս ունիցին արդեւք թշնամիքն, եւ զիւրեանց զանաւրէն զանկրաւն զանաստուած կրանիցն զաւրէնս աստ արդեւք հաստատէին. որ, զոր խնդրեմքս, քա՛ւ եւ մի՛ լիցի: 10 Իսկ մեր բարեպաշտութեան նահատակք ի վերայ այսորիկ ճգնեալ պատերազմաւ, զչար պահեալ հեռացուցեալ հալածեալ յաշխարհէ՝ մեռան, զի մի՛ յայսպիսի աստուածապաշտ եւ աստուածասէր աշխարհ անաւրէնութիւն մտեալ, չարի կամացն ի ծառայութիւն արկցէ, եւ զբազում ոգիս ջերմեռանդն սիրով բնութեանն ի միմեանց քակտեալ քայքայեսցէ: 11 Իսկ սոքա մինչդեռ կենդանի էին, արդար վաստակաւք ի վերայ այսորիկ վաստակեցան. եւ ի մահուն իւրեանց զմիամտութեանն հաստատութեանն զանձինս փոխանակ տալով ընդ ճշմարտութեանն Տեառն, մատուցին ի վերայ եկեղեցեաց, եւ ի վերայ մարտիրոսաց, եւ ի վերայ ուխտին սրբութեան աւրինացն, եւ ի վերայ կարգաց հաւատոցն, եւ ի վերայ ուխտին քահանայութեան, եւ ի վերայ անթիւ ի նոր ի Քրիստոս մկրտելոցն, ի վերայ բնակի² Տեառն աշխարհիս: 12 Որք այնմ ամենայնի փոխանակ զանձինս իւրեանց ոչ խնայեցին, ընդ վկայս Քրիստոսի է նոցա համար պատուոյ: 13 Արդ մի՛ լացցուք զնոսա, այլ պատուեսցուք ընդ ճշմարտութեանն, առ

1 Յօր. անօրինեցիցն

2 Յօր. Բանակի = «Բնակ տերանց Արշակունեաց» Բուգ.

նահատակսն դիցուք ընդ աշխարհ աւրէնս յաւիտեանս յաւիտենից, զի ամենայն ոք զսոցա յիշատակ քաջութեան իբրեւ Քրիստոսի նահատակաց անխափան կատարեսցէ: 14 Եւ մեք տաւնս արասցուք, եւ ուրախ լիցուք. զի Աստուած այսոքիւք հաճեսցի ընդ մեզ, յայսմ հետէ խաղաղութիւն շնորհեսցէ:

15 Եւ եդ աւրէնս ընդ աշխարհն մեծ քահանայապետն Վրթանէս՝ զնոցա առնել զյիշատակն ամ յամէ. եւ որք փոխանակ աշխարհին փրկութեան մեռանիցին ի նմանութիւն նոցա, եդ կանոն՝ յիշել զսոսա առ սուրբ սեղանն Աստուծոյ ի ժամ պատարագին, յորժամ զանուանս սրբոցն կարգիցեն, եւ ապա զկնի նոցա զնոցայն. եւ մնացելոցն անկելոցն¹ գութ եւ խնամ կալցին: 16 Զի սոքա, ասէ, ի նմանութիւն Յուդայ եւ Մատթեայ Մակարէի անկան ի ճակատ պատերազմի, եւ նմանութիւն եղբարց նոցա: 17 Սակայն զՎաչէի զաւրավարի փոքրիկ մանգիկ մի զնորուն զորդի ի հայրենի բարձ գահուն մատուցանէին, որում անուն էր յանուն հաւուն² իւրոյ Արտաւազդ: 18 Առաջի թագաւորին զհաւըն պատիւն ի գլուխն դնէին, եւ զսպարապետութեան նորուն տեղի. զի կարի որդի վաստակաւորի էր, եւ ի վաստակաւոր ազգէ. զի այլ յազգին ոչ գտաւ հաւժկու, զի ի մեծ պատերազմին մեռան: 19 Եւ զզաւրավարութեան զգործ յանձն առնէին Արշաւրայ Կամսարականի՝ իշխանին Շիրակայ եւ Արշարունեաց զաւառին, եւ Անդովկայ իշխանին Սիւնեաց. զի նոքա փեսայք էին տանն Մամիկոնեան տոհմին: 20 Եւ հրաման ետուն մեծ եպիսկոպոսապետն Վրթանէս՝ հանդերձ թագաւորաւն՝ Արշաւրայ եւ Անդովկայ սնուցանել զպատանեակն զԱրտաւազդ, զի կացցէ ի տեղի նախնեացն իւրոց եւ հաւր իւրոյ, գործ

քաջութեան գործեսցէ ամենատեառն Քրիստոսի, եւ առաջի իւրոյ մարմնաւոր բնակ տերանց³ Արշակունեաց քաջ արանց, եւ տան եւ կենաց. եւ խնամակալ լիցի այրեաց եւ որբոց, եւ զնորուն գործ քաջութեան սպարապետութեան անուանի զաւրավարութեան յաջորդեսցէն զամենայն աւուրս կենաց իւրոց:

21 Ապա յետ այսորիկ փոխեալ լինէր քաջ արանցն աշխարհաշէնն Խոսրով, թագաւորն Հայոց մեծաց: 22 Ժողովեալ, աշխար եղեալ, լացին ամենայն սահմանք աշխարհաց զաւառաց Հայոց մեծաց. եւ տարան առ իւր նախնիսն յԱնին յԵկեղեաց⁴ զաւառն Դարանաղեաց: 23 Եւ յետ սորա փոխեցաւ եւս յաշխարհէ մեծ քահանայապետն Վրթանէս. եւ ժողովեցան ամենայն աշխարհն Հայոց, եւ մեծաւ պաշտմամբ, սաղմոսիւք եւ երգովք հոգեւորաւք, կանթեղաւք եւ մոմեղինաւք եւ խնկածու հոտովք, արքունական կառաւք զսուրբն Վրթանէս, անհնարին բեկմամբ՝ վասն իւրեանց յայնմ բնակ Տեառնէն կամ ի հոգեւոր վարդապետութենէն որբ մնալոյ, մեծաւ լալեաց տրտմութեամբ մինչեւ ի գեւղն Թորդան ի Դարանաղեաց զաւառն յուղարկէին: 24 Եւ անդ առ մեծի հայրապետին Գրիգորի զսորա սուրբ զոսկերսն հանգուցանէին. եւ զմշտակատար զսորա կենդանի յիշատակն ի վերայ կատարեալ, դառնային:

1 Յօր. միու՛ չիբ՝ յանցելոցն: Այլ օր. յանցելոցն

2 Յօր. հօր

3 Յօրինակս ինչ՝ բնատերանց

4 Յօրինակս՝ յեկեղեցազաւառն

ԳԼՈՒԽ ԺԲ.

1 Յաղագս թագաւորելոյ Տիրանայ յետ հաւր իւրոյ ի վերայ Հայոց աշխարհին, եւ թէ ո՞րպէս Յուսիկ յետ իւրոյ հաւրն Վրթանայ կալաւ գաթոռ հայրապետաց. եւ կամ ո՞րպէս սպանաւ ի Տիրանայ արքայէ վասն յանդիմանելոյ գթագաւորն:

2 Եւ յանցանելն յաշխարհէ թագաւորին խորովու, Տիրան որդի խորովու ա՛ն զթագաւորութիւնն զիշխանութիւն աշխարհացն Հայոց մեծաց: 3 Եւ ընդ նմին սուրբն երանելի մանուկն Յուսիկ յաջորդեաց զտեղի Հայրապետացն Հայոց: 4 Բայց գումարեաց ընդ նմա թագաւորն Տիրան զմեծամեծ նախարարսն ըստ սովորութեան աւրինակին, զմեծ Հագարապետն ի Հագարապետութեանն իսկ, ի տոհմէ ամենայն Հայոց մեծաց, զՎաղարշ, որ էր իշխան Անձտայ. եւ ընդ նմա զԶարեհ իշխանն, նահապետն մեծի Ծոփաց, եւ զՎարազ Շահունի իշխանն Ծոփաց աշխարհին, եւ զԳնիթ իշխանն Հաշտենից գաւառին ի Կամինական տոհմէն. զՎորոթ իշխանն Վանանդայ գաւառին, եւ զՇահէն իշխանն Անձեւացեաց տոհմին, եւ զԱտոմ՝ իշխանն Գողթան, եւ զՄանաւազ իշխանն Կողբացոց. զԳորոթ՝ իշխանն Զորոց աշխարհին, եւ զՄանասպ զխորխոռունեաց զիշխանն Մաղխազունեան տանն: 5 Եւ զմերոյ տոհմի ազգի իշխանն Սահառունեաց, եւ զԱբա իշխանն Գնունեաց:

6 Զնոսա զամենեսեան Հրամայեաց երթալ ընդ մեծի Հագարապետին Վաղարշու, զի նստուցեն զերանելին Յուսիկ յարքունական կառսն, եւ խաղասցեն զնասցեն ի սահմանակիցս իւրեանց ի մայր քաղաքացն Գամրաց ի Կեսարիա, հասուցանել զմանուկն Յուսիկ յառաքելական աթոռն Հայրապետացն: 7 Գնացին

եկին հասին ի քաղաքն կեսարացոց. ետունն ի կաթողիկոսութիւն զՅուսիկն ձեռնադրել, զորդին Վրթանայ: 8 Եւ նստուցին զնա յաթոռն առաքելոյն Թաղէոսի, եւ յաթոռ իւրոյ հաւունն մեծին Գրիգորի. եւ դարձան անդրէն մեծաւ խնդութեամբ, եկեալք առողջութեամբ, յաջողեալք³ հասանէին յԱյրաբատեան աշխարհն: 9 Եւ զիշխանսն երկոսին, եւ նոցուն Ծոփացն, յառաջ արձակէին աւետաւորս առ արքայն:

10 Ապա իբրեւ լուաւ ինքն արքայն, ընդ առաջ ելանէր նմա ի դաշտն յայն կոյս գետոյն Տափերն կամրջի, ամենայն բանակաւքն բազմութեամբք: 11 Ապա ողջոյն տուեալք զցանկալի ողջոյնն միմեանց, անցեալ ընդ կամուրջն Տափերայ, մտեալ ի քաղաքն մեծ յԱրտաշատ, յեկեղեցին դառնային եւ նստուցանէին զցանկալի մանուկն Յուսիկ յաթոռ Հայրապետական: 12 Սա զհետ հաւերն իւրոյ Վրթանայ զառաքելական յաջորդէր, Հայրական չափոցն նմանեալ ծնունդ, ամենեւին զամենայն յամենայնի Հրեշտակակրաւն զանձն ցուցանէր, զամենայն ըստ պարզեացն Աստուծոյ զչնորհացն⁴ կատարէր: 13 Քրիստոսական բանաւոր խաչանցն հովուելով, աւետարանական պատգամաւորաւքն խրատելով ընձեռեցաւ: 14 Զի աւուրբք մանուկ, տիաւք առոյգ, եւ բարձր հասակաւ. գեղով երեսաց սքանչելի եւ չքնաղ, զի այլ ոչ գտանէր ուրեք նման նմա ի վերայ երկրի: 15 Սուրբ եւ պայծառ հոգևով, ամենեւին ոչ ինչ զբաղեալ ընդ աստիս. իբրեւ զքաջ սպառազէն Քրիստոսի, իբրեւ զախոյեան նահատակ ի տղայութենէ տիոց նշկահէր, աներեւոյթ թշնամոյն յաղթութեամբ սպառնացեալ: 16 Ակն առնուլ կամ աշառել մարդկան բնաւ ամենեւին ոչ գիտէր. այլ զբան Հոգւոյն Սրբոյ սուսեր ածեալ ընդ մէջ իւր կրէր: 17 Իսկ

1 Յօր. Ատամ

2 Յօրին. միում՝ գԳուր

3 Յօր. միում՝ աշողութեամբ յաջողեալ

4 Յօր. միում՝ զչնորհսն

չնորհատուր Հոգւոյն լցեալ զնա, գիտութեանն էր աղբիւրացեալ զամենայն լսելեացն ցուղս¹ ականջացն եւ սրտիցն երկրին:

18 Իսկ թագաւորն Տիրան, եւ այլ մեծամեծ աւագանին նախարարացն, կամ աշխարհն ամենայն, ոչ ինչ ըստ Աստուծոյ կամացն վարս յանձն առեալ՝ իմաստուն ինչ գնացեալ լինէին: 19 Քան զամենայն մանաւանդ թագաւորն կամ իշխանքն սպանութիւնս՝ անխտիր ի հեղուլ զարիւն արդար ի տարապարտոց՝ գործէին եւ այլ մեղս բազումս. եւ ոչ հայէին ի հրամանս վերնոյն, ի հանապազորդ լսելոյն ոչ խրատեալք՝ ի յուշն նոցա առնելոյ զԱստուծոյ յոյան: 20 Վասն որոյ հանապազ ընդդիմացեալ լինէր երանելի հայրապետն Յուսիկն, վարժ բանիւքն համեստութեանն քրիստոսական խրատուն՝ հանապազ յերեսսն յանդիմանութեամբ հարկանելով խրատելով կշտամբելով, արկանէր զսպառնումն² տանջանաց յաւիտենական բարկութեանն անշէջ հրոյն դատաստանին պատմելով, բողոքէր: 21 Զի թէպէտ աւուրբք մանուկ էր, այլ զաւագութիւն ծերութեան խրատուն յինքեան ցուցանէր, զհայրենի գործ խրատուականն զառաւելութիւն³ քաջութեան կատարէր: 22 Հարցն նմանեալ ի մանկութեան⁴ իմաստութեան, զծերութեան պատիւն պատուակալ պատուականութեանն զհանճարոյն զուարթութեանն ուշուութեանն, իբրեւ զծաղիկ ի դիտաւորութեանն հասեալ, վասն ճշմարտութեանն մինչ ի մահ մարտնչէր. նախ զանձն ապրեցուցանելոյ, եւ վասն այլոց հոգւոց զնոյն առնել կամէր: 23 Այնչափ էր երկիւղած ի Տեառնէ, զի ոչ զսէր եւ ոչ զահ թագաւորին առ ո-

չինչ համարէր: 24 Իսկ գիտութեամբն Աստուծոյ, դպրութեան գրոց սրբոց արուեստաւն լի էր. եւ առնոյր ի պատուհասել եւ յանդիմանել. արգելոյր զթագաւորն եւ զմեծամեծան՝ չտալ⁵ թոյլ մտանել յեկեղեցին:

25 Արդ ելեալ կապէր մեծապէս պատուհասիւք, քահանայական իշխանական բանիւ յանդիմանութեանն, վասն անաւրէնութեան պոռնկութեանն եւ արուագիտութեան եւ արենհեղութեանն, զրկութեան, յափշտակութեան, աղքատատեցութեան եւ այլոց բազում մեղաց՝ որ այսմիկ նման իցէ: 26 Եւ ինքն վասն ահի սաստից աւրինացն Տեառն՝ թշնամի համարեալ թուէր որոց հանապազ անցանէին զկարգաւքն Քրիստոսի, եւ հանապազ ի սմանէ սուրբ բանիւն Աստուծոյ խոցոտեալ լինէին: 27 Եւ այս մարտ պատերազմի էր սորա առ հասարակ ընդ ամենեսեան յանդիմանութեան զամենայն աւուրս կենաց իւրոց: 28 Որ իբրեւ աւր մի յաւուրց տարեկանաց, դիմեաց գալ թագաւորն Տիրան հանդերձ այլովք աւագանւովն մտանել յեկեղեցին, իսկ ընդդէմ բարբառեալ ասէր. Չես արժանի, հի՞մ գաս, մի գար ի ներքս: 29 Վասն որոյ անդէն ի ներքս քարչէին զնա յեկեղեցուջն. բրածեծ եղեալ ջաղջախեալ քահանայապետն Աստուծոյ սուրբ, երանելի մանուկն Յուսիկ, կիսամահ կոչկոճեալ ընկեցեալ լինէր: 30 Զոր բարձեալ պաշտանէիցն դրան եկեղեցւոյն ի Բնաբեղ բերդէն⁶ արքունի՝ մեծ Ծոփաց գաւառին, եկին բերին ի գաւառն Դարանաղեաց ի գեւղն Թորդան. եւ անդ ոչ ինչ յետ բազում աւուրց հանգեաւ, եւ եղաւ մաւտ առ Գրիգորի եւ ընդ հարս իւր:

1 Յօր. միում ցաւղս
2 Յօր. զսպանումն
3 Յօր. միում զառաւելութեան
4 Յօր. միում ի մանկութեան

5 Յօր. միում չտայր
6 Յօր. միում ի բնաբերդէն

ԳԼՈՒԽ ԺԳ.

1 Յաղագս թէ զիա՛րդ յետ մահուն Յուսկան անառաջնորդ լինէր երկիրս Հայոց. եւ ոչ որդիքն Յուսկան լինէին արժանի հաւրն աթոռոյն:

2 Եւ յետ այսր անցեալ ժամանակաց, զկնի թոպամահն լինելոյ երանելոյն Յուսկան, անառաջնորդք եղեալ՝ իբրեւ զկոյրս մոլորեցան երկիրն լեզուին թորգոմական աշխարհին: 3 Քանզի տուաւ նոցա ոգի մոլորութեան, աչս՝ զի մի՛ տեսցեն, եւ աւանջս՝ զի մի՛ լուիցեն, եւ սիրտ՝ զի մի՛ մասցին դառնալ յապաշխարութիւն: 4 Եւ զխաւարային խորխորատ կորստեան գտեալ, հարեալ իւրեանց անձանց ճանապարհ, կործանեցան անկեալք. զի ոչ մի՛ ոք գոյր՝ որ նոցա մոլեգնութեանն պատկառուկս արկանէր զմեղս² գործելոյ, այլ անհովիւք էին: 5 Զկորստեան ճանապարհն՝ համարձակէին ի չարիս՝ կամաւք գնացեալք, եւ կամաւք լեալք որդիք բարկութեան. եւ առանց Աստուծոյ շրջէին յաշխարհի կամակոր ազգ տանն Հայոց երկիրն: 6 Նմանեալք լինէին այնմ հաւտի խաշանց, որ զպահպանութիւն շանցն՝ պահողաց պահապանացն, ի բաց մերժեցին, եւ կամաւք իւրեանց կերակուր գէշ թշնամութեան գայլոցն մատնեցան, ըստ նմանութեան մեծին աթենացւոց քաղաքին:

7 Յայնմ ժամանակի զթագաւորն իւրեանց աւրինակ չարի առնէին, եւ նովին³ աւրինակաւ ձեւել սկսան, եւ նոյնպէս գործել: 8 Զի ի վաղնջուց, յորմէ հետէ առին նոքա գանուս քրիստոնէութեանն, լոկ միայն իբրեւ զկրաւնս իմն մարդկութեան յանձինս իւրեանց՝ եւ ոչ ջերմեռանդն ինչ հաւատովք ընկալան, այլ իբրեւ զմոլորութիւն իմն մարդկութեան ի հարկէ: 9 Ոչ ե-

թէ որպէս պարտն էր՝ գիտութեամբ յուսով կամ հաւատով, բայց միայն սակաւ ինչ որք զհանգամանս գիտէին հելլէն կամ ասորի դպրութեանց, որք էին հասու ինչ այնմ փոքր ի շատէ: 10 Իսկ որք արտաքոյ քան զգիտութիւն արուեստին էին այլ խառնաղանձ բազմութիւն մարդկան ժողովրդոց նախարարացն եւ կամ շինակաւնութեանն, եթէ զցայգ եւ զցերեկ նստեալ վարդապետացն եւ ըստ նմանութեան ամպոցն իբրեւ զյորդահեղեղ ինչ անձրեւաց սաստկութիւն զվարդապետութիւնն ի վերայ հոսէին, ոչ ոք ի նոցանէն եւ ոչ մի ոչ, եւ ոչ մի բան, եւ ոչ կէս բանի, եւ ոչ դոյզն յիշատակ ինչ, եւ ոչ նշմարանս ինչ զոր լսէինն, եւ ոչ կարէին ինչ ունել ի մտի: 11 Վասն զի միտք իւրեանց ընդ անպիտանս ընդ անաւգուտս եւեթ զբաւսեալ էին. զոր աւրինակ մանկունք տղայք ընդ մանգութեանն եւ ընդ տղայութեանն խաղալիկ խանկարեալք, եւ զպիտոյիցն եւ զկարեւորացն ոչ ինչ փոյթ արարեալ, սոյնպէս եւ դեգերեալ մաշէին յանուղայ կրթութիւն ընդ չքոտի մտացն ի հնութիւն հեթանոսութեանց սովորութեանց, բարբարոս խոժժաղուժ միտս ունելով: 12 Եւ զիւրեանց երգս առասպելաց զվիպասանութեանն սիրեցեալք ի փոյթ կրթութեանցն, եւ նմին հաւատացեալք, եւ ի նոյն հանապազորդեալք, ի հեռ եւ ի նախանձ ընդ միմեանս չառակնութեամբ, թշնամութիւն յիտութեանց, զմիմեանս խածատել, եւ նենգել այր զընկեր եւ զեղբայր: 13 Սիրելիք սիրելեաց, եւ մերձաւորք մերձաւորաց, եւ ընտանիք ընտանեաց, ազգականք ազգականաց, խնամիք խնամեաց դնէին գայթակղութիւն:

14 Անդ էր տեսանել այր ընկերի արեամբք ծարաւեալք ըմպելով, ոգովք չափ գային վնասուցն՝ անխրատ վարս եւ անհանճար միտս ունելով: 15 Եւ զգիցն հնութեան պաշտամունս ի նմանութիւն պոռնկութեան գործոյն ընդ խաւար կա-

1 Ըստ Գ. օրինակին՝ միայն

2 Յօր. ըստ մեղս

3 Յօր. միում՝ նորին

տարէին. եւ ոմանք զնոյն իսկ ցանգութիւն գիջութեան պոռնկութեան կատարէին յանձինս իւրեանց: 16 Վասն այսորիկ ոչ զխրատ իմաստութեան լսէին, եւ ոչ առաջնորդացն ասելոյ զԱստուծոյ պատգամսն անսացեալք հնազանդէին. այլ վասն ի նոցանէն յանդիմանութեանն՝ ատէին եւ հալածէին զնոսա եւ սպանանէին: 17 Եւ ըստ մարգարէական բանին առ նոսա ասելոյ, թէ Ատէիմ ի դրունս գյանդիմանիչս^ա, եւ զբանս սուրբս արհամարհէին: 18 Քանզի ոչ գիտէին¹ թէ որպէս այլոց ազգացն² եւ հաւատացելոցն կամ իմաստնոցն ետ նոցա զգիտութիւն ճշմարտութեան հաւատոցն աստուածաբանիւ քարոզութեանն, որպէս որք ընկալանն՝ առին գոհութեամբ եւ հաւատացին եւ վայելեցին ի շնորհս մարգասիրութեանն արդեւք, այլ ըստ հրէական մտացն կուրացելոց եւ խաւարելոց եւ կաղացելոցն ի ճշմարտութեանէն: 19 Թերեւս եւ առ այս ազգ միտէր բանն մարգարէական յառաջգիտական, եթէ Որդիք անմիտք, եւ ոչ որդիք իմաստունք. իմաստունք են գշար գործել, եւ գրարի գործել նոքա երբեք ինչ ոչ գիտացիմք: 20 Եւ դարձեալ ասէ. Որդիք եղջերիկք, խստասիրտք, խստաշունք, ոյք դառնացուցիմ գիս նոքա եւ հարք իւրեանց: 21 Այսպէս լքեալք եւ սոքա, զի ոչ իմացան եւ ոչ հաւատացին յաներեւոյթսն Աստուծոյ երեւելեալքս. յարարածոց աստի չիմացան՝ զարարիչն եւ զկարգիչ եւ զխնամիչն առնուլ ի միտ: 22 Յաճախեաց զերեւոյթ նշանս իւր եւ զսքանչելիս, մինչեւ զմարդկային բնութիւնս շարժեաց ի կերպարանս անասնոյ, ուստի փրկութեանն նոցա լինէին պատճառք:

23 Եւ մինչեւ յայս յանպիտան եւ յանմիտ թագաւորութիւնն իսկ, առ այն թագաւորաւ Տիրանաւ, ընդ նոյն իսկ ընդ այս նայեցեալք, անցուցին չարութեամբք քան յամենայն դարս: 24 Մանաւանդ քան զամենայն, զի զգլխաւորն առաջնորդն թոպամահ սպանին, եւ այնուհետեւ ըստ կամաց գնային: 25 Քանզի ոչ ոք այն ոք գոյր, յորմէ խիթայինն յանդիմանութեանն՝ որ նոցա արգել անկանէր գնալ յանաւրէն ճանապարհն ելանել: 26 Ապա բարձեալ թողեալ եղեն նոքա ի ձեռանէ տեառն, երթեալք զհետ³ կամաց սրտից իւրեանց. ապա չկայր ոք առաջնորդ եւ ոչ գլուխ քահանայութեանն: 27 Սակայն փոյթք եղեն նոքա ոչ վասն ճշմարտութեան ինչ խնդրել իւրեանց հովիւ կամ առաջնորդ՝ որ կայցէ գլուխ ժողովրդեանն հաւտապետութեանն, այլ բանից ընկեր⁴ իւրեանց խնդրէին զայն ոք՝ որ ըստ նոցա կամացն վարիցէ:

28 Յայնժամ խորհուրդ արարեալ թագաւորին եւ իշխանացն, եւ համաւրէն իսկ աշխարհին թէ զո՞ արժանի այնմ իմիք գտանիցեն. քանզի երկու մնացեալք⁵ երկուորիք երկու մանգունք, միումն Պապ անուն, եւ միւսումն Աթանագիւնէս, ճանաչէին ստահակք եւ անխրատք, որք ոչ ինչ ըստ իմաստութեան աստուածեղէն գրոց, եւ ոչ վարժ հրահանգաւք առաքինութեանցն, եւ ոչ հաւրն իւրեանց չափոց ինչ նմանեցին միտ եղեալ, եւ ոչ ընդ իւրեանց ծնիչսն հայրն Յուսիկ նայեցան, եւ ոչ մեծին Գրիգորի յառաքինութիւնսն ուչ եղին, եւ ոչ զիւրեանց հոգեւորն պատուականութիւն՝ յաւիտենական կենացն զպատիւ ինչ եղին ի մտի: 29 Այլ իւրեանց ժամանակի դարուն նմանեալք, եւ պանծացեալք յիւրեանց յանցաւոր սնտոի ի

^ա Ընդ. Բ 14
¹ Յօր. ոչ էին
² Յօր. ազգականացն
³ Հմմտ. Լուք. Գ 22:
⁴ Հմմտ. Լուք. Բ 3-4:

³ Յօր. ըստ հետ
⁴ Յօր. միում՝ բանընկեր
⁵ Ի հինգ օրինակս՝ գնացեալք

մարմնաւոր տոհմականութիւնն ազգակա-
նութեան, զինուորական զվարսն ընտրե-
ցին: 30 Վասն այնորիկ անընտիրք ե-
ղեալք, ի հպարտութեանն՝ խոտեցան ըստ
յառագաջագոյն տեսլեանն հաւրն իւ-
րեանց. ոչ մտին ի լուծ աստուածպաշտու-
թեանն: 31 Եւ ոչ այլ ոք ի նմին տանէ
զաւակին Գրիգորի գոյր ոք. զի այնչափ
իսկ կային մարմնաւոր զաւակին, եւ սոքա
ինչ ոչ թէ արժանի հարցն գնացեալ նմա-
նեցին վարուց: 32 Եւ այլ ոչ ոք էր, որ
զառաջնորդութիւն գլխաւորութեան քա-
հանայապետութեանն վերակացութեանն
ոք տէրունական տանն հրամանատարու-
թեանն կատարեալ, պաշտաման յաջորդէր:

ԳԼՈՒԽ ԺԳ.

1 Յաղագս վարուց եւ գործոց մեծիմ
Դանիէլի՝ առն Աստուծոյ, եւ թէ որպէս
յանդիմանեաց զթագաւորն Տիրան, եւ
կամ ո՛րպէս պատուհասեալ մեռաւ ի
մմանէ:

2 Բայց յայնժամ դեռ եւս կենդանի էր
ծերունի սուրբն մեծն քորեպիսկոպոսն
Դանիէլ, այր սքանչելի: 3 Աչակերտ ե-
ղեալ էր սա մեծին Գրիգորի, վերակացու
եւ գլխաւոր եկեղեցաց նահանգին Տարաւ-
նոյ, Գրիգորի ձեռական՝ իշխանութեանն
կողման մասին գործակալութեանն մեծի
դատաւորութեանն, ունէր զիշխանութիւնն
զայն առանձինն. այլ վերակացու եւ հրա-
մանատար² տեսուչ եւ հոգաբարձու ամե-
նայն եկեղեցեացն Հայոց մեծաց ընդ ամե-
նայն տեղիս. այլ եւ ի կողմանս Պարսից
յաւտար տեղիս քարոզեաց սա, եւ անթիւս
ի մոլորութենէ դարձոյց:

4 Եւ էր սա ազգաւ ասորի. եւ ունէր
սա զաստիճան ակթոռոյն գլխաւորութեան
Տարաւնոյ, ի մեծն եւ նախ զառաջին եկե-
ղեցին ի մայր եկեղեցեացն ամենայն հա-

յաստանեայց: 5 Այս ինքն նախ եւ զառա-
ջին եւ գլխաւոր տեղին պատուական. զի
յառաջ նախ անդ շինեալ էր սուրբ եկեղե-
ցին, եւ ուղղեալ սեղան յանուն Տեառն:
6 Նոյնպէս եւ ի ներքոյ քան զնա մարգա-
րէանոցն Յովհաննու, նոյնպէս մաւտ ի
տուն Տեառն Հանգիստ առաքելոցն:
7 Արդ այս տեղիք վասն յառաջակարգու-
թեան՝ կանոնաւ ի հայրապետացն եւ ի
թագաւորացն պատուեալք լինէին. որպէս
ի Դարանաղեաց զաւառին յեկեղեցին
Թորգանու պատուին վասն գերեզմանացն
հայրապետին Գրիգորի եւ Արիստակէսի:
8 Սոյնպէս եւ զյիշատակս թագաւորին
Տրդատայ թէ կամաւք թէ ակամայ, որ ար-
ժանին լեալ էր նախածանալթ ի Քրիստոսն
հաւատոց: 9 Վասն այսորիկ կամ եղեւ աչ-
խարհին զնախնեաց ժամանակին հարանց
եպիսկոպոսաց զայս տեղիս պատուել, ուր
սոքա եղեալն էին. զի սիրելի էր աշխար-
հին՝ պատուիլ զյառաջընծայն Քրիստոսի
զթագաւորն իւրեանց Տրդատ: 10 Նոյնպէս
եւ զյառաջեպիսկոպոսն³ զնախավաստակն
Գրիգորիս. սոյնպէս եւ ի զաւառն այրա-
րատեան զնախավկայսն Քրիստոսի, ուր
Գայիանէն եւ Հռիփսիմէն կային, իւրեանց
հանդերձ գործակցաւքն. սոյնպէս առաւել
եւ զնախեկեղեցին:

11 Այս տեղիքս սմա էին յանձն հան-
դերձ զաւառաւքն յորս էին. հաւատարիմ
էր սա այնմ գլխաւոր սեղանոյն, իշխանու-
թեան ակթոռոյն հայրապետացն, հաստա-
տութեան ուխտին կաթողիկէ եկեղեցւոյն:
12 Եւ էր սորա ընկալեալ զքորեպիսկոպո-
սութեան ձեռնադրութիւն աստիճանին ի
ձեռաց մեծին Գրիգորի, յաւուրս յորում
կործանեաց զբագինս մեհենիցն Հերակ-
լեայ, այս ինքն Վահագնի, որում տեղոյ
Աշտիշատն կարգացեալ. ուր նախ եղ զհի-
մունս եկեղեցւոյ սրբոյ:

1 Յօրին. միում՝ անընտիրք եղեալք ի հայրապե-
տութիւնն խոտեցան
2 Յօրին. միում՝ հրամատար

3 Յօրին. միում՝ զառաջին եպիսկոպոսապետն...
Գրիգորիս

13 Եւ էր սա այր զարմանալի, առնէր նշանս եւ զաւրութիւնս մեծամեծս յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: 14 Սա եւ կաւչկաւք քայլելոյն գնայր ի վերայ ջուրց գետոց, եւ ոչ թանային. եւ ոչ հանէր սա: 15 Եւ յաւուրս ձմերանոյն՝ յորժամ կուտեալ դիզեալ զմեծութիւն բազմութիւն թանձրութեան ձեանցն կուտակեալ հիւս¹ ձեանցն ի վերայ ձմերային լեւրանցն՝ յայնպիսի լեւրանց ի վերայ ընդ այնպիսի ժամանակի կամէր ուրեք երթալ ի պէտս ճանապարհի, յանկածաւրէն ձիւնն ցամաք արջն լինէր առաջի նորա: 16 Եւ զի կամէր ի հեռաստան ուրեք երթալ, իբրեւ զփայլակն սլացեալ լինէր անաշխատ. իբրեւ թուցեալ յոր կամէրն երթալ ի տեղին, յանկարծաւրէն անդ գտանէր: 17 Յարուցանէր զմեռեալս, առնէր եւ բժշկութիւնս հիւանդաց, եւ այլ եւս մեծ նշանս եւ զաւրութիւնս քան զնոյնս գործէր, զորս ոչ բաւեսցէ ընդ զրով նշմարանաց փակել: 18 Եւ բնակութիւն իւրոց կայեանիցն յանմարդի լերինս, այլ զտեսչութիւն մարդկան պիտոյից ոչ երբէք անփոյթ առնէր: 19 Միահանգեւրձ մաշկանափորտն սանդաղաւոր, եւ կերակուր իւր արմատք բանջարոց, եւ գաւազան անգամ ընդ ինքեան ոչ ունէր: 20 Եւ առ բանն Աստուծոյ այնչափ էր հզաւր, զի զինչ հայցէրն յԱստուծոյ՝ առնոյր, եւ զոր ինչ ասէր՝ այն լինէր: 21 Եւ կայեանք տեսչութեան իւրոյ, յորժամ յանապատաց ի շէնս իջանէր վասն գործոյ Աստուծոյ, ի գլխաւոր տեղիսն յեկեղեցեացն լինէր: 22 Եւ յաճախ յակն աղբերն ի ներքոյ սարաբարձր մեհենատեղւոյն Հերակլեայ, որ կայ դէմ յանդիման լերինն մեծի՝ որում Յուլն անուանեալ կարդան, ի բագնին տեղւոջէ ի բացագոյն իբրեւ քարընդէց մի ի ներքոյ կուսէ, ի դոյզն ծործորակին ի սակաւ անտառակին ի հացուտ պուրակին՝ որում անուն տե-

1 Յօր. հիւսեալ

ղոյն իսկ Հացեացն դրախտ կոչեն: 23 Այս այն աղբերն է, յորում առնէր յայնժամ եւս վաղ մեծն Գրիգոր զմկրտութիւնսն զաւրացն բազմաց: 24 Յայնմ տեղոջ էր սորա կայեանք խցկան սրբոյն Դանիէլի. էր դարափոր արարեալ բնակութիւն. եւ յայնմ տեղոջ զգիտաւորութիւն այցելութեանն² կատարէր:

25 Արդ միաժողով³ եղեալ մեծամեծք նախարարացն, եւ ի մի վայր եկեալք, խորհուրդք խորհեցան. հաւանեցուցին զթագաւորն, ածել զծերունին զԴանիէլ յիւրեանց բանակն, զի ածցեն կացուցեն զնա իւրեանց գլուխ առաջնորդ, զի նստցի նա յաթոռն հայրապետական: 26 Եւ յղեցին առ նա զՈմն⁴ իշխանն⁵ Սահառուկեաց տոհմին, եւ զԱրտաւան զիշխանն Վանանդայ, եւ զԿարէն իշխանն Ամատուկեաց տոհմին, եւ զՎարազ իշխանն Դիմաքսենից տոհմին: 27 Եւ եկին նախարարքն հասին գտին զնա յեկեղեցաց գաւառին, ի գեղն եկեղեցւոյն ի Թիլն. զի դեռ իմն զգործ մշակութեան Աստուծոյ գործէր: 28 Եւ առին զնա եւ ածին առ թագաւորն Տիրան, ի գաւառն Աղձնեաց ի Բառաէջ⁶ յաւան: 29 Եւ իբրեւ մտանէր առաջի թագաւորին Տիրանայ քորեպիսկոպոսն մեծն Դանիէլ, անդէն ի ձեռն առնոյր զկշտամբութիւն յանդիմանութեանն:

30 Սկսեալ խաւսել, յառաջ մատուցեալ, ասէր՝ եթէ ընդէ՞ր մոռացարուք դուք զԱստուած զարարիչն ձեր, եւ զգութն նշանացն եւ խրատուց, եւ զսքանչելեաց՝ զոր արար առ հարսն ձեր եւ առ ձեզ. եւ դուք դարձայք ի մոլորութիւն կուպաշտութեան նախնեացն ձերոց, եւ յատելութիւնս եւ յագահութիւնս եւ ի զրկութիւնս եւ յաղքատակերութիւնս, ի պոռնկու-

2 Օրինակ մի յաւելու՝ վերակացութեանն

3 Յայլ օր. ի մի ժողովեալ

4 Յօրին. միում՝ ոմն

5 Այլ օր. գիշխանն

6 Յօրին. միում՝ ի Գաւէն

թիւնս, ի նենգութիւնս եւ ի միմեանս գրկութիւնս եւ ի սպանութիւնս: 31 Կործանեցայք լքեայք կասեցէք կաղացայք յարդարութեան ճանապարհաց, եւ թողէք դուք զբարերարն ձեր զԱստուած՝ որ զձեզ յոչընչէ արար եւ հաստատեաց, եւ ի մոլորութիւնս ձեր անծանալթք եղերուք դուք ի նմանէ: 32 Մինչ դուք զձեր անձինսդ անգիւտս արարեալ էիք ի կորստեանն, նա եկն ի խնդրել զձեզ. զի թէպէտ եւ ինքն իսկ միածին որդին Աստուծոյ եկն էջ ուսուցանել զՀայր իւրոց արարածոց. զի թէպէտ եւ ոչ լուան նմա, եւ չարչարեցին եւս մինչեւ ի մահ, եւ համբեր, սակայն եւ ոչ նա զիւր զաւրութիւնն ոչ թագոյց յուժեքէ, զի պատճառք կենաց լիցի ամենեցուն: 33 Եւ զորս եգիտ արժանիս եւ պատրաստականս իւրում՝ յարութեանն, ընտրեաց, ուսոյց, եւ արձակեաց քարոզս եւ կոչնականս եւ հրաւիրակս՝ ի փրկութեան լոյսն հրաւիրել զձեզ:

34 Սակայն եւ դուք յայնմ՝ փոխանակ երախտեացն ապախտիս հատուցէք. զորմէ դուք իսկ նախ զձեր զքարոզն եւ զհրաւիրակն զառաքեալ առ ձեզ եկեալն սպանէք. զայն՝ որ եկեալ զձեզ կոչէր ի փրկական շնորհս արքայութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: 35 Զի թէպէտ եւ դուք առ ձերում անմտութեան՝ տիրասպան ազգին խորհրդոյն հաղորդեցայք² Հրէիցն. զի նոքա զՏէրն կարծեցին սպանանել, հարքն ձեր զնորին առաքեալսն սպանին. եւ զհետ նորա նորին նմանին չարչարեցին վասն նոյն նորին իրաց: 36 Իսկ զկնի սորին իրացս այսոցիկ եկին բազմութիւնք սրբոց վկայիցն Աստուծոյ, նոցին Առաքելոցն ճգնակիցք. որք մինչ ի վտանգ չարչարանացն ճգնեալք, մինչ յիւրեանց մահն, պնդեալք ցուցանեն ձեզ զճշմարտութիւնն, զի թերեւս նոքաւք դառնայցէք յի-

մաստութիւն գիտութեան որդւոյն Աստուծոյ: 37 Սակայն եւ առ նոսա լցէք կատարեցէք բովանդակեցէք զսովորութիւն սպանութեանց ամբարշտութեանցն կամացն ձերոց: 38 Սակայն նորին արեամբն՝ զոր ասացի՝ բազում եւ պէսպէս նշանաւք խրատեաց զձեզ, եւ ի մահ ոչ մատնեաց վասն բազում ողորմութեանն. եւ իւր մերձաւորս արար զձեզ, եւ խառնեաց զձեզ ի բնութիւն³ կենդանութեան ընտանութեան վարդապետութեանն իւրոյ, ուղղութեան աւրինացն, յառաւելութիւն որդւոյն սիրելոյ իւրոյ:

39 Եւ յետ այսորիկ եթող ձեզ զամենայն վնասս ձեր, եւ ետ ձեզ վարդապետս զսիրելիս իւր: 40 Բայց դուք եւ ոչ զմի զայն ոչ յիշեցէք, ոչ եղիք ի մտի, ոչ կալայք ի սրտի, այլ յետս դարձայք՝ հրէական ազգին նմանեալք. առէք զնոյն յանձինս ձեր զնոցուն աւրինակն գործոց: 41 Զի պարտ էր ձեզ յիշել զերախտիսն Տեառն ձերոյ Քրիստոսի, որ ոչ յիշեաց զմեզս հարցն ձերոց, եւ ոչ զանաւրէնութիւնս ձեր: 42 Եւ ձեզ չէր պարտ⁴ մոռանալ զճգնութիւն հարցն սրբոցն խրատչացն եւ վարդապետացն ձերոց, որք ուսուցիչքն էին ձեր, որք հանապազ տքնէին վասն փրկութեան ոգւոց ձերոց. եւ արժան էր ձեզ ունել գուժ ընդ նոսա՝ որք հոգեպէս բանիւ վարդապետութեանն երկնեցին եւ ծնան զձեզ վերստին, եւ ըստ ձերում զեղծման անդրէն դառնալոյ՝ դարձեալ միւսանգամ վերստին կրկնելոյ⁵ չարեացն ապաշխարելոյ ինքեանք իւրեանց խնդրուածովքն երկնեցին զձեզ դարձեալ, մինչեւ կերպարանեսցեն զՔրիստոս ի ձեզ, զի արժանի լինիլիք մտանել յերկնից յարքայութիւնն անդր: 43 Պատշաճ էր եւ ձեզ խնամել զնոցին որդիսն եւ զաշակերտսն,

1 Յօրին. միում՝ յիւրում

2 Յօրին. միում՝ հնազանդեցայք

3 Կրկին յօրին. ի բնակութիւն

4 Գ. օր. անպարտ էր

5 Յօր. ընգերոյ

որ ըստ հոգեւոր բանին ըստ աստուածա-
յին ծննդեանն էին որդիք, առաջնորդք եւ
վերակացուք ձեր ի տէր. թող թէ որ մարմ-
նապէս իսկ էին նոցա ճետք, եւ հոգեւոր
նոցին գործոց ոչ ինչ պակաս քան զհարսն
իւրեանց:

44 Արդ ձեր թողեալ զԱստուած, եւ
յիշեցուցէք զհարսն ձեր զառաջինս, եւ
լցէք զչափ մեղացն հարցն ձերոց: 45 Որ
զի նոքա սպանին զհարսն սուրբս չարչա-
րանաւք՝ վասն բարւոյն չկամելոյ լսել
զաւգտակարն խրատ ի նոցանէն, եւ դուք
զորդիս եւ զժառանգս եւ զգործակիցս եւ
զնմանողս նոցին սպանէք, որք ոչ հաւա-
նեալ գործոց մեղացն ձերոց, սուրբ մա-
նուկն Յուսիկն զհայրապետն զաթոռա-
կալն զվիճակակալն զվիճակին Թադէոսի
առաքելոյն եւ զնորին նմանոյն Գրիգորի:
46 Եւ դուք զհրէական բարուցն բերէք
զաւրինակն յանձինս ձեր, սպանութեանցն
սովորութեանց զրկութիւնս. որպէս եւ նո-
քա անխրատք զիւրեանց զառաքեալսն
կամ զմարգարէսն կոտորեցին, սոյնպէս եւ
դուք ըստ նոցին աւրինակի կատարեցէք:

47 Արդ վասն այսչափ ստութեանց
ձերոց եւ պղծութեանց, բարձցէ Տէր զթա-
գաւորութիւնդ ձեր ի ձէնջ. բարձցէ եւ
զքահանայութիւնդ ի ձէնջ: 48 Յրուեսչիք
եւ բաժանեսչիք, եւ ցրուեսցին սահմանք
ձեր որպէս եւ Իսրայէլ, եւ անտէրունչք եւ
անխնայ եւ անխնամք լիջիք. եւ լիջիք
դուք իբրեւ զխաչինք, զի ոչ գուցէ նոցա
հովիւք: 49 Մատնեսչիք իբրեւ զհաւտ ի
ձեռս գազանաց, եւ անկջիք ի փառաց ձե-
րոց. եւ ի ձեռս աւտար թշնամեաց մատ-
նեսչիք դուք ի գերութիւն եւ ի լուծ ծա-
ռայութեան, եւ ոչ բարձցի երբէք կամ
պակասեցէ լուծ ծառայութեան ի ձէնջ. եւ
ոչ երբէք պակասեցէ լուծ չար ստրկու-
թեան ծառայութեանն ի պարանոցաց ձե-
րոց. հաշեսչիք եւ մաշեսչիք ի ցանկու-
թիւնս ձեր: 50 Որպէս պատառեցաւ Իսրա-
յէլ, եւ ոչ կարկատեցաւ, սոյնպէս եւ դուք

ցրուեսչիք եւ կործանեսչիք. եւ այլք վա-
յեկեսցեն ի վաստակս ձեր, եւ այլք կերի-
ցեն¹ զաւրութիւնս ձեր. եւ ոչ ոք գտանի-
ցի, որ փրկեսցէ զձեզ. եւ ոչ հաճեսցի ընդ
ձեզ Տէր, եւ ոչ նայեսցի եւ ոչ փրկեսցէ այլ
զձեզ:

51 Այլ զի կոչեցէք զիս ելանել գալ
առ ձեզ, զա՞յս ամենայն կամէիք լսել
դուք յինէն: 52 Եթէ իմ չէր զայս ամե-
նայն պատմել² ձեզ, սակայն այս ամենայն
լինելոց էր ձեզ վասն սպանման արդարոյն
մեծին մանկանն Յուսկան առաքինւոյն ա-
ռաջնորդին ձերոյ, որ էր ի տանէն զաւա-
կին Գրիգորոյ. զի այս ամենայն լինելոց է
ձեզ, զի այսպէս եցոյց ինձ Տէր: 53 Այլ զի
յղեցէքդ առ իս, եթէ ե՛կ կաց մեզ գլուխ եւ
առաջնորդ, զիա՞րդ լինիցիմ առաջնորդ
այնոցիկ՝ որք ոչ դառնայցեն զկնի Տեառն.
կամ զիա՞րդ կայցեմ գլուխ ազգի, զորս ե-
թող տէրն ի ձեռանէ: 54 Կամ զիա՞րդ ամ-
բառնայցեմ³ զձեռս իմ աղաւթիւք առ Աս-
տուած վասն այնոցիկ, որոց ձեռք իւ-
րեանց չաղախեալ են արեամբ սրբոց
Տեառն. կամ զիա՞րդ մատուցանեմք ա-
ղաւթս պաղատանս այնոցիկ՝ որք դար-
ձուցին զթիկունս առ Տէր, եւ ոչ գերեսս
իւրեանց: 55 Կամ զիա՞րդ եղէց բարեխաւս
վասն այնորիկ, որք նուաճեցինն⁴. կամ
զիա՞րդ խաւսիցիմ ի հաշտութիւն վասն
այնոցիկ, ոյք փախուցեալն են եւ ոչ կա-
մին դառնալ. որոց ինքնին Տէր նիւթեաց
պատրաստեաց զամենայն չարիս ի վերայ
նոցա վասն այսորիկ, զի ասացիք թէ ոչ
տեսանէ Տէր զայս ամենայն, եւ որ ինչ
նման է սոցին բանիցս:

56 Զայս բանս խաւսեցաւ սուրբ ծե-
րունին Դանիէլ քորեպիսկոպոսն առաջի
թագաւորին Տիրանայ, եւ առաջի իշխա-

1 Յօրին. միում՝ զվաստակս ձեր եւ գորութիւն

2 Յօրին. միում՝ պատմեալ

3 Մի օր. բառնայցեմ

4 Թերեսս նահանջեցինն

նացն, պետացն եւ ամենայն զաւրացն: 57 Եւ մինչ դեռ խաւսէր նա զայս ամենայն, հիացեալ զարմացեալ թագաւորն միտ դնելով լուռ եւեթ կայր: 58 Եւ եղեւ իբրեւ զայս ամենայն լուաւ, բորբոքեալ ի բարկութիւն¹ դառնութեան ամբարշտութեան ցասման իւրոյ. զոր տայր հրաման անդէն խեղդամահ առնել զնա: 59 Ձոր իբրեւ լուեալ անդէն սպասաւորացն, կատարեցին զգործ հրամանին վաղվաղակի. բայց մեծամեծք նախարարացն աւագանին շատ եղին ի մտի արքային, զի մի՛ կատարեցէ զչարութիւն կամացն իւրոց. առ դառնութեան սրտին ցասման, առ զայրուցս բարկութեանն՝ ոչ ինչ անսաց նոցա. այլ ճոպան ի փողս եղեալ, խեղդամահ արարին զնա: 60 Այսպէս կատարեցաւ սուրբն Դանիէլ:

61 Եւ բարձին զմարմին նորա բազմութիւն մարդկան, որք տեղեակ էին նմա, եւ գիտէին զնա. եւ կամեցան մեծարել զնա ընդ ոսկերս սուրբ վկայիցն Քրիստոսի: 62 Ապա ինքն յայտնեալ երեւեցաւ առն սրբոյ աշակերտին իւրում, որոյ անուն կոչէր Եպիփան, զի մի՛ ի պատիւ առցեն զոսկերս նորա իբրեւ զայլոցն. այլ տարցին ի տեղին՝ ուր ինքն² հրամայեաց, եւ ծածկեցեն ընդ հողով: 63 Զի այսպէս յայտնեալ բարբառեցաւ նոցա. զի եթէ տէրունական մարմինն, ասէ, ի գերեզմանի ծածկեցաւ աւուրս երկուս մինչեւ ցաւրն երրորդ՝ յորում յարեաւ առ հայր իւր, ո՞րչափ եւս առաւել պարտ է մերում հողեղէն մարմինս³ ընդ հողով ծածկել: 64 Ապա բարձին զմարմին նորա սուրբ սիրելիք իւր աշակերտք, որոյ գլխաւորին անուն էր Շաղիտա, որ ի նմանէ իսկ աշխարհին Կորդուաց վարդապետ տուեալ էր. եւ երկրորդին անուն Եպիփան, որ գաւա-

ռին Աղճնեաց եւ մեծաց Մոփաց ի նմանէ իսկ վարդապետեալ⁴ էր, եւ ընդ նոսա պաշտաւնեայք բանակին: 65 Եւ գնացին տարան եղին զմարմինն ի տեղւոջն՝ ուր յառաջագոյն էր կայեանք խցկանն իւրոյ յերկրին Տարաւնոյ, որ էր մայր եկեղեցեացն Հայոց, մաւտ յակն աղբերն՝ ուր առնէր Գրիգոր զմկրտութիւնսն աշխարհագաւր բազմութեանն, ի տեղւոջն՝ որ անուանեալ կոչի Հացեաց դրախտ: 66 Յայնմ տեղւոջ ծածկեցին զմարմին սրբոյն Դանիէլի ընդ հողով, ըստ յառաջագոյն տեսլեանն ըստ հրամանի նորա տուեալ:

ԳԼՈՒԽ ԺԵ.

1 Յաղագս որդւոցն Յուսկան, եթէ ո՛րպէս ընթադրեալ առ ոտն հարին զմեծ ֆահանայութեան զԱստուծոյ զպատիւն:

2 Ապա խորհուրդ արարին մատուցանել զորդի սրբոյն Յուսկան ի քահանայութիւն հարցն վարդապետութեանն: 3 Ապա առանց իւրեանց կամացն ըմբռնեցան, եւ բռնաբարեցան ի միաբանութեան եպիսկոպոսացն. զի կալեալք, ակամայ առեալք զճեռնադրութիւն սարկաւագութեան՝ հարկեցան Պապն եւ Աթանագենէս: 4 Ուրոց ընդ ոտն⁵ հարեալք գաւանդն հոգեւորն պատուի, անձամբ զանձինս իւրեանց, խտորատուր⁶ յարուեստն զինուորութեանն զինեցան, եւ յերկիր կործանեցան: 5 Եւ ընտրեցին զերկրաւոր կեանս, եւ առին եւս իւրեանց կանայս զքորս թագաւորին, եւ մերժեցին զանձինս իւրեանց ի ժառանգութենէ Աստուծոյ: 6 Բայց անուանք կանանց նոցա, անուն կնոջն Պապայ՝ Վարագուխտ, նոքա անորդիք անգաւակ ելին յաշխարհէ. անուն կնոջն Աթանագենի՝ Բամբիչն. ի սոցանէ ծնաւ այր սքանչելի

1 Օրին. մի՛ բարկութեան. այլ՝ բռնատրուսիւն

2 Յօր. միում՝ ինքն կամեցաւ եւ հրամայեաց

3 Յօր. միում՝ մարմնոյս

4 Թերեւս վարդապետ կարգեալ

5 Յօր. չիք ընդ ոտն

6 Յերիս օրինակս՝ խտորատուր

եւ զարմանալի Ներսէս, որ առ յապայն եկաց քահանայապետ:

7 Բայց յայնմ ժամանակի ոչ ոք գոյր, որ առաջնորդէր նոցա զքահանայապետութիւնն: 8 Ապա խորհուրդ արարին՝ թէ զո՛գտցեն իւրեանց առաջնորդ. ապա կամ եղեւ ամենեցուն առ հասարակ, զի ի նմին տանէ իշխանութեանն Գրիգորի գտցեն, որ կալցի նա զաթոռ հարցն:

ԳԼՈՒԽ ԺԶ.

1 Յաղագս Փառինայ, որ կալաւ գաթոռ հայրապետացն:

2 Յայնմ ժամանակի համարեցան արժանի զՓառէն ոմն երէց, ի գաւառէն Տարաւնոյ, ի մեծէ մարգարէանոցէն Յովհաննու, որ էր նախ շինեալ տուն աղաւթից եւ խնդրուածոց ի հանգիստ սրբոցն, զի տեղին այն նմա էր հաւատացեալ: 3 Ապա կոչեցին զնա առ արքայն. եւ առաքեաց զնա պատարագաւք թագաւորն, եւ հրովարտակաւք եւ ճոխ իշխանաւքն որ ընդ նմա առաքեցանն, մեծ զաւրավարն Հայոց՝ որում անուն էր Վասակ, ի Մամիկոնեան տոհմէն. եւ Մեհենդակ Ըռըշտունի, եւ Անդովկ Սիւնի, եւ Արշաւիր Կամսարական, մեծք եւ գլխաւորք նահապետք. եւ տասն այր այլ, արք պատուականք, առին զնացին զՓառէն սուրբ ի մայրաքաղաքն Գամրաց ի Կեսարիա, եւ անդ ձեռնադրեցին զնա ի կաթողիկոսութիւն Հայոց մեծաց: 4 Եւ զան դարձեալ յիւրեանց աշխարհն խաղաղութեամբ:

5 Եւ նստաւ Փառէն յաթոռ հայրապետական սակաւ ժամանակս. եւ այլ ինչ չհամարձակէր նա կամ խրատել ինչ, կամ յանդիմանել զմոլորութիւն ինչ զուրուք կամ զամբարշտութիւնս: 6 Բայց միայն զիւր անձն սուրբ պահէր, եւ ի հարկէ ընդեբէր անաւրէն թագաւորին, եւ ըստ նորին կամացն երթեալ հնազանդեալ: 7 Եւ յետ այսորիկ հանգեաւ, եւ յաւելաւ առ հարս իւր. եւ առեալ պաշտաւնէիցն եկե-

ղեցոյ բանակին զմարմինն, զնացեալք ի գաւառն Տարաւնոյ՝ տարան ի յագարակն մեծի մարգարէանոցին Յովհաննու, որ էր ինքն ի կենդանութեանն իւրում յառաջագոյն բնակեալ. եւ անդ գեղեցիկ շիրիմ գործեալ, եւ զսորս ոսկերս ծածկեցին:

ԳԼՈՒԽ ԺԷ.

1 Յաղագս Մահակայ՝ որ էր ի գաւակէ Աղբիանոս եպիսկոպոսի, որ յաջորդեաց գտեղի հայրապետացն աթոռոյն. եւ թէ՛ որպէս յայնմ ժամանակի երկիրն Հայոց թողեալք զՏէր եւ զպատուիրանս նորա:

2 Ապա յայնմ ժամանակի միաբան խորհեցան աշխարհաւրէն խորհուրդ, եթէ ո՛ւմ պարտ իցէ զհայրապետութեանն զկաթողիկոսութիւն ունել: 3 Ապա իբրեւ ոչ ոք գոյր ի տանէն Գրիգորի այնմ արժանի, ապա նմանեցուցին զՇահակ ոմն անուն ի տոհմէ գաւակին Աղբիանոս եպիսկոպոսին:

4 Եւ տան զնա ի ձեռս իշխանին մարդպետութեանն, որում անուն իւր Հայր կոչէր. եւ յաւագաց զումարեն ընդ նմա զիշխանն Գարդմանաց ձորոյն. եւ առնեն ընդ նոսա այլ տասն նախարարս. եւ յուղարկեցին զնա մեծաշուք պատուով յերկիրն Գամրաց ի մեծ քաղաքն Կեսարիա: 5 Անդ ձեռնադրեն զՇահակն ի կաթողիկոսութիւն Հայոց մեծաց, եւ պատուով դառնան առ թագաւորն:

6 Եւ յաջորդեաց գտեղի հայրապետացն Շահակն. եւ սա նմանեաց վարուցն Փառենայ: 7 Առաջնորդէր սա աշխարհի ըստ նմին աւրինակի: 8 Բայց որոց հովուէրն՝ չեղեալք ունկն ինչ խրատու ճշմարտութեանն, այլ յանդիմանեալք՝ հուլանեալ գործէին զմեղս համարձակութեամբ, առանց խիթի յամենայն չարիս դարձեալք, թողեալք զՏէր եւ զպատուիրանս նորա առ հասարակ թագաւորն եւ նախարարքն եւ իշխանքն: 9 Եւս չարքան զնոսա առ մարդիկ մարդկանն ամ-

բարչտեալք, ի հնուլթիւն առաջին գործոցն հարցն իւրեանց դարձեալք, ի փոքրկանց մինչեւ ցմեծամեծս ի յայս էին հարեալք ի սոյն կանխեալք: 10 Վասն այսորիկ ամենայնի բարկացեալ Տէր Աստուած ի վերայ նոցա՝ եթող ի ձեռանէ, արար զնոսս կոխան ի յարուցելոցն ի վերայ նոցա թշնամեաց նոցա: 11 Քանզի ի ժամանակաց ի թագաւորութենէն Տրդատայ, յորմէ հետէ զՏէրն ճանաչելոյ՝ արար խաղաղութիւն, եւ լռեցոյց շուրջ զթշնամիս նոցա, զի ցածոյց Տէր զմարտ պատերազմացն ի սահմանաց նոցա, եւ մինչեւ յայն ժամանակ ոչ ընդ ումեք բանք գոյին ամբոխի կամ խռովութեան, եւ ի մեծի խաղաղութեան էին բնակեալք: 12 Ապա ի ժամանակին յայնմիկ յարոյց զաւրացոյց զգրգուրութիւնս սահմանակցաւք շուրջ յամենայն կողմանս զթշնամիս նոցա. եւ ոչ մի ոք ի թագաւորացն Հայոց ոչ ոք գտանէր նոցա բարեկամ, այլ ամենեքեան թշնամիք:

ԳԼՈՒԽ ԺԸ.

1 Յաղագս Հայր մարդպետին, որ տայր կոտորել զագգս նախարարացն Հայոց:

2 Բայց յայնմ յանմիտ թագաւորութեանն ժամանակի ոչ միայն թշնամիք թշնամեաց, այլ¹ եւ բարեկամք բարեկամաց եւ ընկերք ընկերաց դաւաճանութիւնս մատնութիւնս սկսան յարուցանել ի մէջ հայաստան երկրին, եւ բեր ազգի ազգի թշնամութիւնս գործէին: 3 Վասն զի անկաւ ի նոսս խռովութիւն ի տեառնէ, այս պղծութեան եւ ոգի մոլորութեան. զի նախ միմեամբք քանդեալք աւերեցան վասն անաւրէնութեան իւրեանց: 4 Բայց քան զամենեսին աւելի այր մի անաւրէն եւ այսամուտ, որ աւելի ընդ ազգս նախարարացն գրգուէր զթագաւորն Տիրան: 5 Այս ինքն որ ունէր զպատիւն մեծի մարդպետութեանն, այր ներքինի՝ չարա-

սիրտ չարախորհուրդ չարագործ, որում Հայր կոչէին: 6 Զբազումս ի նախարարացն ետ քսութեամբ առանց վնասու կոտորել, եւ խանգարեաց զմեծ տէրութիւն թագաւորութեանն: 7 Մանաւանդ աւելի զերկու տոհման զաւագս տայր իւրով չարախաւսութեամբ հանել ընդ սուր, եւ անունդ առնել միահաղոյն գտոհման Ռըտունեաց եւ գտոհման Արծրունեաց. բառնային ի միջոյ առանց ամենայն վնասու եւ յանցման, մինչ անգամ եւ զէգան կոտորեցին ազգացն: 8 Յայնմ ժամանակի ի գայթակղի գտանէին ի դայեակս մանկունս փախստեայս, զՏաճատ որդի Մեհրդակայ Ընդտունուոյ. եւ միւս եւս Շաւասպ որդի Վաչէի Արծրունուոյ. տղայք ստնդիայք, զոր անին առաջի թագաւորին: 9 Իբրեւ տեսանէր, տայր հրաման հանել փողոտել զմանկունսն. զի նոքա եւեթ ձեռք մնացեալ էին յազգացն: 10 Եւ անդ զիպեալ Արտաւագդ եւ Վասակ, արք ի Մամիկոնեան տոհմէն, որք էին զաւրավարք ամենայն զաւրացն Հայոց, որք յարուցեալք անկան ի վերայ մանկանցն տղայոց, մէն մի յանթի հարեալք՝ ի դուրս գնացին. զէնն ի վեր առեալք, կոռոյ պատրաստէին՝ ի վերայ այնց մանկանց մեռանել: 11 Զի թէպէտ եւ սնուցանէին նոքա զորդին զարքային զԱրշակ, սակայն զչարեալք ընդ գործ ժամանակին՝ թողին զսանն իւրեանց զԱրշակ, եւ գնացին ի բաց ի բանակէն արքունի: 12 Եւ չոգան յաշխարհն իւրեանց յամուրս Տայոց. եւ անդ նստան ամս բազումս ընտանեալք իւրեանց, եւ թողին զայլ գտուն իւրեանց: 13 Եւ սնուցանէին զայն մանկունսն, զՇաւասպն եւ զՏաճատ. եւ ետուն նոցա զդստերս իւրեանց ի կնութեան, ուստի դարձեալ միւսանգամ ազգն այն սերեցան. եւ ոչ խառնէին նոքա ի խորհուրդս Հայոց մինչեւ ի բազում ամս:

1 Յօր. չի՞ք այլ

ԳԼՈՒԽ ԺԹ.

1 Յաղագս որդւոցն Յուսկանն՝ Պապայն եւ Աթանագիւնէին, եթէ ո՛րպէս կամ գիարդ սատակեցան յանաւրէնութեան իւրեանց:

2 Այլ որդիքն Յուսկանն, Պապն եւ Աթանագենէս, յաստուածատեցութեանն զկեանս իւրեանց վարեցին. յանաւրէնութեան եւ յամբարշտութեան շրջէին: 3 Եւ զամենայն աւուրս կենաց իւրեանց ի մեծի յանդգնութեան էին, եւ ոչ երկեւղ Աստուծոյ առաջի աչաց նոցա. եւ ի բազում անառակութեան եւ ի գիշուութեան գնային, եւ զկարգն Աստուծոյ արհամարհեալ այպանէին: 4 Եւ էին նոքա յերկրին Տարաւնոյ յեկեղեցւոյ յաւանին յԱշտիշատ, ուր զառաջինն էր շինեալ զեկեղեցին ի հաւոյն նոցա Գրիգորէ: 5 Յայն գեւղ երկոքեան եղբարքն երթեալք հասանէին՝ Պապն եւ Աթանագենէս: 6 Եւ բազում հատեալ յարբշուութիւն, զԱստուծոյ գտածարան այպն առնէին. եւ երթեալք երկոքին եղբարքն մտանէին յեպիսկոպոսանոցն՝ որ էրն անդ, եւ ըմպէին անդ գինի բողաւք եւ վարձակաւք եւ գուսանաւք եւ կատակաւք, զսուրբ եւ զնուիրեալ տեղաւքն քամահեալ՝ կոխան առնէին:

7 Եւ մինչ էին յուրախութեան մեծի, բազմեալք էին ի ներքս եպիսկոպոսանոցին ուտէին եւ ըմպէին, յանկարծակի հրեշտակ Տեառն երեւեցեւ ի նմանութիւն փայլատական, եւ հարեալ սատակէր զերկոսեան զեղբարսն միանգամայն ի բազմականին անդ: 8 Եւ այլ մարդիկն՝ որք էին անդ, որք տաճարակիցք էին ուրախակիցք եւ բազմականակիցք էին, որք միանգամ անդ դիպեցան, առ հասարակ թողին եւ փախեան, եւ ելին արտաքս ի տաճարէ անտի: 9 Եւ յահէն մեծէ այլ ոչ եւս ոք ի նոցանէ դարձաւ անդրէն. եւ ոչ ոք իշխեաց բնաւ այլ մարդ ի մարդկանէ մտաբերել մտանել ի ներքս, եւ ոչ ի դուրսն հուպ երթալ եւ դնել, քանզի ի բաց մնաց

ի փախչելն նոցա. եւ ոչ յայլ աւուրս ոք առ դրաւքն իշխէր անցանել:

10 Եւ Պապն եւ Աթանագենէս երկոքեան եղբարքն այսպէս սատակեցան. անկեալ դնէին ի ներքոյ եպիսկոպոսանոցին ի տեղուոյն բազմականացն: 11 Եւ դրուեք տաճարին ի բաց կային, եւ ոք հուպ չիշխէր երթալ. մինչեւ նեխեցան մարմինք նոցա եւ կողոպտեցան, եւ յաղկեցան. քակեցան լուծան ի միմեանց, ցրուեցան ոսկերք նոցա: 12 Եւ բազում ամիսք անցանէին ի վերայ իրացն. ապա իշխեցին մտանել ժողովել բառնալ հանել անտի գոսկերս նոցա, եւ գտանէին զնոսա լոկ ցամաքեալ զկճղացեալ զոսկորս նոցա. եւ հանէին յայգւոյն եկեղեցոյն, որում Ագարակն կոչեն: 13 Բայց մնաց Աթանագենի որդի ի Բամբշնէ ի քեռէ թագաւորին, եւ անուն նորա Ներսէս, որ եկաց յաթոռ հայրապետացն առ յապայ ամենայն երկիր Հայոց: 14 Բայց Պապայ ի բուն ի կնոջէն ոչ մնաց¹, այլ էր նորա հարճ մի ի գաւառէն Տարաւնոյ, ի Հացեաց գեղջէ կարճագատացն. եւ մնաց որ ի հարճէ անտի ի Հացեկացւոյն որում անուն իւր², որդւոյ հարճին Վրիկ կոչէր:

ԳԼՈՒԽ Ի.

1 Յաղագս Տիրանայ Թագաւորին, եթէ ո՛րպէս մատնեցաւ յիւրմէ սեմեկապետէն ի Փիսակայ Սիւնոյ, եթէ՛ կորեաւ, եւ գերեցաւ ի Վարագէ իշխանէն պարսկէ. եւ կամ ո՛րպէս ամենայն երկիրն Հայոց ընդ նմին գերեցաւ:

2 Բայց դեռ բարեկամութիւն էր ի մէջ թագաւորացն երկոցունց, ի մէջ թագաւորին Հայոց եւ Պարսից: 3 Նստէր յաշխարհին Ատրպատական որում անուն կոչէր բարձգահին³ իւրում՝ Շապուհ Վարագ: 4 Արդ մինչ դեռ եւս յոյժ խաղաղութիւն

1 Յօր. չիք որդի
2 Յամենայն օրինակս՝ որում անուն էր որդւոյ
3 Յօրին. միում՝ բարձր գահին

էր ի մէջ թագաւորացն երկոցունց, անկաւ ի տեառնէ խռովութիւնն ոչինչ բանիւք՝ արամբ միով անարգաւ, որ ոչ ինչ պակաս քան զգեւ էր մոլութեամբ, որոյ անուն Փրսակ կոչիւր. որ սենեկապետն էր արքային Տիրանայ, ազգաւ սիւնի: 5 Սա դեսպանազնացեալ¹ էր առ Վարազ Շապուհ, զոր թողեալն էր սահմանապահ արքային Պարսից յԱտրպատական աշխարհին:

6 Զայնու ժամանակաւ ճի մի էր երիվար արքային Տիրանայ, զորմէ կարի զարմանային: 7 Եւ էր ձին գունով ճարտուկ ճանճկէն. սա լի էր քաջութեամբ, անուանի եւ հոյակապ, մեծ եւ բարձր՝ երկայն քան զամենայն ձիս, եւ տեսանելով քան զայլս գեղեցիկ, զանազան՝ որ համեմատ նմա այլ ոչ գտանէր: 8 Զորմէ յերթալն իւրոյ դեսպանութեանն՝ սենեկապետն արքային Փրսակ մատնեաց զձին Վարազայ, վասն զի բարեկամացեալ էր ընդ նմա. եւ ի նմանէն ինքն թողղթ առեալ, բերեալ մատուցանէր² արքային Հայոց: 9 Զորմէ չհաւանեալ տալ³, ոչ առնոյր յանձն: 10 Այլ վասն զի կասկածէր յառնէն՝ զի գոյժ խռովութիւնն ինչ ի մէջ թագաւորացն երկոցունցն արասցէ, ի խնդիր անկանէր զնոյն գոյն ձի, զնոյն նշան, զնոյն պատկեր, բաց ի մեծութենէ՝ զի այնչափ ուրեք ոչ գտանէր, զնոյն նման զնոյն կերպարանս ճարտուկ ճանճկէն գտեալ, եւ հանդերձ հրովարտակաւք եւ պատարագաւք ի ձեռն մոլեկան Փրսակայն առ իշխանն յԱտրպատական առ Վարազն արձակէր: 11 Եւ միտս դնելով խորհուրդ առնէր. զի ասասցես, ասէ, եթէ այս ինքն է զոր խնդրեցերն, զի առ սէր ոչ խնայեաց ի քէն: 12 Իսկ նա յորժամ հասեալ առ Վարազն, յայտ առնէր զիրս խնայութեանն, ի գրգռութիւն ջանացեալ՝ ոչ կամէր բժշկել զնենգախաւսու-

թիւնն իւր. այլ եւս քան զեւս սրեալ զչարախաւսութիւնն իւր, ասելով եթէ այնչափ ի հեռ եւ ի նախանձ, ի չարակնութեան եւ ի թշնամութեան, ի յատելութեան եւ ի չկամութեան, յերկմտութեան եւ յաներկիւղութեան առ թագաւորն Պարսից եւ առ ամենայն զաւրսն Պարսից արքայն Հայոց Տիրան, մինչ անգամ վասն կաշոյ միոջ խնայ արարեալ՝ թագոյց, եւ զքեզ ծաղր արարեալ, եւ այլ ընդ այլոյ զմիտս գողանալ քո. զոր յիմ ձեռն ետ ածել, առ քեզ առաքեաց: 13 Եւ ոչ այդ միայն է, ասէ. այլ ի կայսր եւ ի զաւրս նորա յուսացեալ, խորհի հանել զթագաւորութիւն Պարսից յազգէն Սասանայ. զի ասէ, թէ մեր լեալ է եւ հարցն մերոց այն տէրութիւնն: 14 Արդ ասէ, թէ չեմ ծուղալոց՝ մինչեւ դարձցի պատիւ հարցն նախնեաց. զնախնի զթագաւորութիւնն այսրէն առ որդի եւ առ զաւակ նոցա յազգս իմ եւ ի տունս իմ եւ յանձն իմ դարձուցանեմ: 15 Եւ այնչափ եւ այսպիսի բանիւք զրգուէր զնա Փրսակն անաւրէն ի վերայ տեառն իւրոյ բնակի, եւ նիւթէր զմահ ի վերայ իւրոյ թագաւորին:

16 Ապա իբրեւ զայս ամենայն լուաւ Վարազ Շապուհ Ատրպատական մարգպան ի կատաղախաւս ի շնաբերանն Փրսակայ, վաղվաղակի նամակ ամբաստանութեան գրեալ Վարազայ յարքայէն Հայոց՝ մատուցանէր Ներսէհի արքային Պարսից: 17 Եւ այնչափ զայրացոյց զրգուեաց յուզեաց դրդեաց սրտմտեցոյց բարկացոյց զթագաւորն Պարսից ի վերայ արքային Հայոց, որ ապա ա՛ռ հրաման ի նմանէ, զինչ⁴ եւ է հնար գտանել մարթել ճանապարհս, մեքենայիւք գայթակղութիւնս դնել՝ որսալ ըմբռնել զարքայն Հայոց: 18 Եւ մինչ դեռ խաղաղութիւն էր ի մէջ թագաւորացն երկոցունց, բարկութիւն Տեառն գրգռեաց յուզեաց զվրէժս, զի խնդրեցին սուրբ արիւնք մահուցն եր-

1 Յօրին. միում՝ դեսպանագնաց էր

2 Յօրին. միում՝ բերել մատուցանել

3 Յօրինակին պակասէ՝ տալ. եղաւ ըստ այլ օր.

4 Յօր. զի չեւ է

կուց մեծացն քահանայիցն առաջնորդացն
յանաւրէնն Տիրանայ:

19 Ապա յայնմ ժամանակի Վարազն
արձակէր դեսպան առ արքայն Հայոց, ի
հաշտութիւն խաղաղութեան դաւով խաւ-
սել ընդ նմա. զանձուկ սիրոյ պատճա-
ռեալ, համարձակութիւն խնդրէր՝ գալ
նմա առ նա: 20 Իսկ իբրեւ լուաւ զայն Տի-
րան արքայն Հայոց, փութապէս վաղվա-
ղակի մեծաւ ուրախութեամբ առ ինքն կո-
չել հրամայէր: 21 Եւ մինչ չեւ նա եկեալ
էր, խորհէր արքայն ընդ իւր ծառայսն
ներքինիսն սպասաւորսն իւրում սենեկի-
ասէ. Արժան է մեզ, այր որ գայ առ մեզ՝
զբաւսուցանել եւ ուրախ առնել որսովք եւ
բազմականաւք, եւ ամենայն պէսպէս վա-
յելչութեամբք: 22 Այլ ոչ եթէ այնչափ
ինչ արժան է զմեծ ինչ որսոյ տեղիս ի մե-
րում երկրի աստ նմա տեսանել՝ վասն չա-
րակնութեան յաչաղանաց չարաբարու-
թեան նենգութեանն ազգին Պարսկաց. այլ
նմանեցուցէք տեղիս դոյզնագիւտ որսոց
ինչ՝ որով լոկ զբաւսուցուք զնա, եւ մի՛
որսասցուք գառատ ինչ որսոց գտեղիս, եւ
զի մի՛ մեծ ինչ նախճիրս որսոց կոտորեալ
առ ի ցոյցս առնելոյ: 23 Այլ վարկպարա-
զի արասցուք, ասէ, վասն դառնացող չար
ազգին չարութեանն դառնացող ազգին:
24 Այլ յերկրին Ապահունեաց, յոտինն մե-
ծի լերինն Մասեաց, տեղին զայն որսաս-
ցուք. տեղոյն՝ որում անուն կոչի քաղաք
Ադիորսք:

25 Ապա եկն եհաս Շապուհ Վարազն
երիւք հազարաւքն, եւ յանդիման եղեւ
թագաւորին յերկին Ապահունեաց. եւ մե-
ծապէս մեծարեցաւ ի նմանէ: 26 Եւ այն
բանքն, որ վասն որսոյն ի թագաւորէն ա-
սացաւ, վաղվաղակի յունկն գաւրավարին
Պարսից հասանէին ի բերանոյ շորիկն շոգ-
մոզն տիրանենկն եւ տիրադրութն տիրաս-
պանուն տիրամատնիչն Փիսակայ, յայն
յաչխարհակորոյս յառնէ անտի. եւ աւուրս
սակաւս ուրախ լինէին ի միասին: 27 Այլ

իշխանն Պարսից զթշնամութիւնն՝ զոր ու-
նէր ի ներքոյ, խորամանգեալ ծածկեալ մե-
քենայեալ առագաստեալ բերէր, եւ առնէր
սպաս զդաւն կատարել:

28 Եւ ի ժամանակին յայնմիկ այնպէս
դիպեցաւ, յայնմ ժամանակի գաւրավարքն
չէին անդ, սարտուցեալ էին. եւ այլ մեծա-
մեծք նախարարացն, եւ աւագ տանուտէրք
ազատանին, սոյնպէս եւ գաւրքն արքունի
յիւրաքանչիւր տունս յիւրաքանչիւր կա-
յեանս յիւրաքանչիւր դադարս դադարեալ
էին: 29 Եւ ոչ ոք էր՝ որ մնացեալ էր առ
թագաւորին, եւ ոչ գունդ եւ այրեւճի-
բայց միայն սակաւ սպասաւորաւք հան-
դերձ, եւ որսոցն պառականաւք, եւ ռահ-
վիրայ մարդկաւն, եւ խառնաղանջ խորա-
նապահ գաւրուն, եւ ռամիկսպաս գաւ-
րաւքն, եւ տիկնաւն հանդերձ եւ արքա-
յորդին մանուկն Արշակ: 30 Այսպէս սա-
կաւուք դիպեալ ի ժամանակին յայնմիկ,
զի թէպէտ եւ տեսեալ հարուստ գնդաւ ե-
կեալ գաւրավարն Պարսից, զի էին ընդ
նմա սպառազէնք վառեալք արք իբրեւ ե-
րեք հազարք, ոչ ինչ խիթացեալ զգուշաւ
անկասկած լինէր: 31 Քանզի տեսանէր
զնա իբրեւ ի պատճառս խաղաղութեան ե-
կեալ, մեծաւ պատարագաւք եւ պատուա-
կան ընծայիւք եւ մեծաշուք մեծարանաւք:

32 Եւ իբրեւ ոչ ինչ բազում աւուրք
ընդ մէջ եղեն, յընթրիս կոչեն ի հաց հրա-
ւիրեալ զարքայն. ի պատիւ մեծարանաց
կոչէր: 33 Ապա իբրեւ ընդ գինիս մտին,
քաջ արբեալ լինէին թագաւորն եւ որ ընդ
նմայն էին, գաւրն դարանակալ յանպատ-
րաստից յանկարծաւրէն յայլակարծուց
զնոսս յանկարծուստ յիւրաքանչիւր բազ-
մականի ի վերայ հասեալք ըմբռնէին, եւ
վահանափակ շերտաւորացն պատէին
զթագաւորն Տիրան: 34 Եւ կալեալ կա-
պեալ զոտս եւ զճեռս նորա ի կապս երկա-
թիս, եւ զբանակն՝ զոր գտանէր՝ աւար
հարկանէր. եւ զգանձս եւ զստացուածս,
զկին եւ զորդիս թագաւորին, զոր գտին ի

բանակին, խաղացուցին յերկրէն Ապահու- նեաց:

35 Իբրեւ եկին համին ի գեւղ մի, ո- րում անունն Դալարիս կոչէին, յորժամ եկն եմուտ գաւրավարն Պարսից ի ներքս ի գեւղն Դալարիս, ածէր կապեալ զարքայն Տիրան ընդ իւր: 36 Եւ ասէ Վարազ, Ադէ՛ տեսէ՛ք ածուղ, որով երկաթ շողացու- ցուք, զի գաչս խարեսցուք զարքայիս Հա- յոց: 37 Եւ անդէն բերին ածուղ, որով խա- րէին գաչսն Տիրանայ: 38 Ապա ինքն խաւսել սկսաւ Տիրան, եւ ասէ. Փոխանակ զի իմ երկու աչքս լուսաւորքս խաւարե- ցան յայս տեղւոջս, արդ փոխանակ Դալա- րեացս անուան, Ածուղ անուն լիցի սմա մինչեւ ցյաւիտեանս ժամանակաց. եւ այս երեւոյթ նշանակս մնասցէ յիմ յիշատակի: 39 Այլ ինձ յուշ եղեւ եւ գիտեմ՝ թէ այն զի խնդրեցաւ յինէն վրէժ չարեաց մեղացն իմոց, փոխանակ զի խաւարեցուցի ես զաշ- խարհս՝ որում թագաւորեալ էի՝ յերկուց լուսաւոր վարդապետացն, եւ կարծեցի շի- ջուցանել զլոյսն ճշմարտութեանն քարո- զութեանն երկուց հաւատարմացն, վասն այսորիկ խաւարեցաւ լոյս տեսանելեաց ա- չացս իմոց:

40 Եւ յայնմ ժամանակի վաղվաղակի փութանակի չու առնէր յԱծուղ գեղջէն, խաղայր գնայր ճեպով իշխանն արքային Պարսից հանդերձ Տիրանաւ արքայիւ եւ ամենայն գերութեամբն յերկիրն Պարսից. եւ երթայր յԱսորեստան առ տէրն իւր յարքայն Պարսից: 41 Լու եղեւ այս ամե- նայն կործանումն գուժի չարեացն յան- կարծաւրէն թշուառութեանն հասելոյ: 42 Ապա ժողով լինէր նախարարացն եւ իշխանացն, գործակալք եւ զաւրագլուխք, պետք եւ ամենայն աշխարհաժողովք բազ- մութեանն եկելոց կուտելոցն: 43 Թէպէտ եւ ժողովեցան կազմեցան գունդ եղեն, պատրաստութեամբ զհետ կրթէին Վարա- զայ, ոչ ինչ կարացին հասանել: 44 Սա- կայն հասանէին առնուին զկողմ ի Պարսից

աշխարհէն. առ հասարակ մարդակոտոր առնէին, եւ զաշխարհն յայրեաց եւ յաւար դարձուցանէին: 45 Եւ ինքեանք դառնա- յին, եւ ի մի վայր ժողովէին, կոծ եղեալ աշխարանաւք լային զիւրեանց բնակ¹ տէրն զարքայն Հայոց. սոյնպէս եւ զկո- րուստ աշխարհին, եւ զանձանց անտէր- չութիւն կործանմանն վարանացն աղիո- ղորմ գործէին²:

ԳԼՈՒԽ ԻԱ.

1 Յաղագս թէ ո՛րպէս ժողովեցան միաբանութեամբ նախարարքն Հայոց, եւ չոգան ածին զթագաւորն Յունաց՝ իւրեանց ի թիկունս աւգնականութեան ի յերկիրն³ Հայոց. եւ թէ ո՛րպէս եկն թագաւորն Պարսից բազում զաւրաւք, եւ ներսեւ արքայն Պարսից միաձի նո- ղոպրեալ փախստական անկանէր յեր- կիրն Պարսից:

2 Ապա առաւել ժողովեցան ի մի ժո- ղով միաբանութեանն մարդիկ աշխարհին Հայաստան երկրին. նախարարք մեծա- մեծք. աւագք, կուսակալք, աշխարհակալք, ազատք, զաւրագլուխք, դատաւորք, պետք, իշխանք. բայց ի զաւրավարացն, այլ եւ ի շինականաց անգամ ուամիկ մարդկանն: 3 Ապա խաւսել սկսան այր ընդ ընգերի, եւ ասեն. Ջինչ է այս, որ ի սուգ մտեալ եմք. թշնամիք այսու գամագիւտ լինին. այլ քան սակաւ ժամանակք են, այսրէն արշաւեսցեն թշնամիքն: 4 Այլ եկա՛յք, ա- սեն, զանձինս անձամբք մխիթարեսցուք. անձանց եւ աշխարհի պահ կալցուք, եւ զՏեառն բնակի վրէժ խնդրեսցուք: 5 Ապա առ հասարակ ամենայն մարդիկ աշխար- հին ի մի միաբանութիւն եւ ի մի խոր- հուրդս ժողովեցան վասն աւգնականու- թեան եւ ի թիկունս իւրեանց գտանելոյ:

1 Յօր. բնական
2 Թերես կոծէին
3 Ա. ե. օր. երկրին

6 Յայնմ ժամանակի առաքեցին ի մեծ նախարարաց անտի աւագանին Հայոց հանդերձ պատարագաւք առ թագաւորն Յունաց, զի ի նա ձեռս տուեալ՝ ծառայեսցեն նմա հնազանդութեամբ, եւ լինիցի նա նոցա թիկունք աւագնականութեան՝ խնդրել վրէժս ի թշնամեաց նոցա: 7 Ապա առաքեցին զԱնդովկ նահապետն Սիւնեաց, եւ զԱրշաւիրն Կամսարական, նահապետն Արշարունեաց, որք երթեալ հասեալ էին յաշխարհն Յունաց ի կայսերական պաղատն թագաւորացն. եւ տային զհրովարտակն, եւ ունէին զպատարագան բերեալ առաջի, եւ մատուցանէին զաշխարհապաղատ պատգամսն առաջի թագաւորին: 8 Ձոր իբրեւ լուաւ կայսրն զիրսն զայնոսիկ, մեծաւ փութով եւ բազում պատրաստութեամբ ի խնդիր ելանէր իրին հասելոյ. եւ աւագնական եւ թիկունք լինէր աշխարին Հայոց: 9 Մանաւանդ զի զուխտն յիշեալ զղաշանցն կռելոց զերդմանցն հաստատութեան, միջնորդութեամբ ի մէջ կայսերն Կոստանդիանոսի եւ ի մէջ թագաւորին Տրդատայ եղեալ էր:

10 Արդ մինչ դեռ դեսպանքն երթեալք յերկրէն Հայոց ի կայսերական պաղատն՝ չեւ էին անդրէն յիւրեանց աշխարհն դարձեալ, ի կողմանց արեւելից խաղաց գնաց ինքն Ներսէհ արքայն Պարսից, գալ առնուլ այրել եւ աւերել, կորուսանել եւ միահաղոյն իսկ յիւր վտարել զսահմանս Հայաստան երկրին: 11 Եւ առեալ զամենայն զաւրս իւր բնիւ աղխիւ եւ ամենայն մեծաւ կարաւանաւ, փղակոյտն բազմութեամբ հանդերձ, անթիւ վաճառաւք եւ բնիւն մաշկապածենաւքն, եւ ամենայն կանանաւքն, եւ հանդերձ տիկնանց տիկնաւն, եկն եհասս ի սահմանս Հայոց. խճողեաց ելից զերկիրն առ հասարակ: 12 Յայնմ ժամանակի ազատագաւրքն նախարարացն Հայոց առեալք զիւրաքանչիւր ընդանիս, լինէին փախստականք, ի կողմանս Յունաց անգանէին,

գոյժ տային կայսերն բազմագունդ բանակին նախարարացն: 13 Ապա իբրեւ զայս ամենայն լսէր թագաւորն Յունաց, նոյնաւրինակ եւ նա զիւր զաւրսն գումարէր. եւ չու արարեալ զայր հասանէր յերկիրն Հայոց ընդդէմ թագաւորին Պարսից: 14 Եւ եթող զիւր զբանակն զՍատաղ քաղաքաւն. եւ ինքն ընտրեաց իւր արս երկուս գլխաւորս, արս իմաստունս հայաստան բանակէն, այս ինքն զԱրշաւիրն եւ զԱնդովկն. զի այս արք էին, որ չոգան առ նա դեսպանութեամբ յառաջնում նուագին: 15 Եւ այսպէս հանդերձ նոքաւք ինքն իսկ կայսրն ի շինականութեան կերպարանս ի կաղամբավաճառի աւրինի, մտանէր ի բանակն Պարսից:

16 Իբրեւ էր նա բանակեալ ի գաւառին Բասենոյ, ի գիւղն՝ որ անուանեալ կոչի Ոսխայ¹, եկին մտին ի բանակն արքային Պարսից, դիտեցին քննեցին զչափ առին զնոցա զաւրութիւն զաւրացն: 17 Եւ անտի դարձան յիւրեանց բանակն, կազմեցան պատրաստեցան. զային հասանէին գտանէին զբանակն արքային Պարսից ի նմին տեղոջ բանակեալ ի պղերգութեան յանհոգութեան յանկասկած խաղաղութեան: 18 Ապա հասեալ ի տուրնջէն² ժամուն, անկանէին ի վերայ թագաւորին Պարսից, ընդ սուր զամենայն բանակն հանէին, եւ ոչ զմի ոչ ապրեցուցանէին: 19 Եւ առին զկապուտ զաւար բանակին, եւ զկանայս թագաւորին եւ զբամբիչն, եւ զբանական ընդ նոսին, եւ զինչս եւ զստացուածս նոցին ընդ նմին ի գերութիւն վարէին, զկանայս նոցա եւ զգանձս եւ զկեանս³ եւ զկազմած նոցա: 20 Բայց միայն թագաւորն պրծեալ մագապուր, պէշասպիկ⁴ մի սուրհանդակ առաջի, պրծեալ

1 Օրինակ մի՝ Տոխայ

2 Օրինակ մի՝ տուրնջեան

3 Թերեսս զկախս

4 Օրինակի միում՝ պէշասպիկ

ելանէր փախստական. հազիւ ուրեմն կարէր անկանել հասանել յաշխարհ իւր: 21 Իսկ կայսրն մեծաւ շքեղութեամբ անուանի պերճացեալ ի մէջ բանակին երեւեալ. զայր ի չափ հասեալ առ հասարակ կոտորէին, եւ զայլ ամենայն ի գերութիւն վարէին յերկիրն Յունաց: 22 Եւ ի վերայ երկիրն թողոյր զիշխանսն վերակացուս զԱնդովկ եւ զԱրշաւիր, մեծապարգեւ մեծապատիւ մեծարէր. եւ յանձն արարեալ զնոսա ամենայն իշխանացն եւ զաշխարհն նոցա, եւ ինքն կայսրն չու արարեալ զնաց յերկիր իւր յերկիրն Յունաց:

23 Եւ արքայն Պարսից զնացեալ փախստական յերկիր իւր. եւ իբրեւ եհաս անդր՝ ժողովէր առ ինքն զամենայն մնացեալս իշխանութեան իւրոյ, եւ ի խոյզ եւ ի խնդիր անկանէր: 24 Խորհուրդ ի մէջ առնոյր՝ հարցեւքնին առնել. հրամայէր վերստին, զի տեսցեն եւ յայտ արացեն՝ թէ ուստի՝ եղև սկիզբն պատերազմացն եւ մարտին: 25 Ապա ի վեր եկին եւ յայտնեցան իրքն առաջի նորա. զի յոչինչ իրաց ի վատթար բանից համարեցան զիրսն եղեալս, վասն ձիոյ միոյ կարծիս առնել զայն ամբոխ խռովութեան ի մոլեկան առնէն Շապուհ Վարազայն: 26 Ապա հրաման ետ հանել զպատիւն ի բաց, եւ մերկանալ ի նմանէ զպատուական պատմուճանն, եւ մեծաց հարուածոց արժանի առնէր զՎարագն. ըստ պարսկի աւրինակին հրամայէր զմորթն ի բաց հանել, եւ խոտով լնուլ, եւ ի հրապարակի իւրում ի տեսիլ ծանականաց կանկնել հրամայէր: 27 Եւ ինքն ի զղջումն եկեալ վասն իրացն եղելոց, ապա արձակէր զիշխանսն պատուականս ի հնազանդութիւն խաղաղութեան վասն գերեզարձ առնել ի կայսերէն միւսանգամ, եւ այնուհետեւ աղաւթակերս արձակել ի հաշտութիւն խաղաղութեան խաւսել ընդ կայսերն, զի գոնեայ զկանայս իւր արձակեսցէ ի գերութենէն, եւ բարձցէ

ի նմանէ զծանակութեանցն զգարովութեանցն նախատինս:

28 Ապա գրէր¹ հրովարտակ թագաւորն Յունաց Վաղէս² առ արքայն Պարսից. Նախ դու, ասէ, դարձուցես զգերութիւն առեալ յերկրէն Հայոց, եւ զթագաւորն Տիրան ինքնին գլխովին, եւ զամենայն ինչ զոր առեալ իցէ անտի. ապա յորժամ զայդ արացես, եւ ես զիմս դարձուցից զոր առեալ եմ. զի եթէ ոչ նախ դու զնոցա զաւարն դարձուցես, եւ ես ապա զքոյդ դարձուցից: 29 Եւ իբրեւ լուաւ զայն հրաման արքայն Պարսից, վաղվաղակի զիրսն կատարէր. հանէր զկապեալն Տիրան ի տանէն բանդի կապանաց, խաւսէր ընդ նմա ողորքով, զի թագաւորեցուցէ զնա անդրէն յիւր աշխարհն արձակելով, զի երթիցէ նա պատուով: 30 Ապա տուեալ պատասխանի Տիրանայ, եթէ անազուտ է ինձ եւ անպատշաճ է՝ կուրութեամբ, անմարթ իսկ է կարի, ունել զթագաւորութիւն. բայց փոխանակ իմ թագաւորեցո զԱրշակ զորդի իմ:

31 Յայնմ ժամանակի թագաւորեցուցանէր զԱրշակ որդի նորա ի վերայ աշխարհին Հայոց. եւ զկանայս թագաւորին եւ զայլ գերին ամենայն, գանձիւք ընծայիւք եւ ստացուածովք հանդերձ, եւ միանգամայն դարձ առնէր ամենայն գերութեան: 32 Եւ զինքնին Տիրան թագաւորն Պարսից հանդերձեաց կազմեաց մեծաւ կազմութեամբ, եւ արձակեաց յիւր աշխարհէն յերկիրն Հայոց. եւ կատարեալ հաւատարմացոյց զասացեալսն հրամանաց թագաւորին Յունաց: 33 Եւ իբրեւ զնոսա ի Հայս յուղարկէր, ապա եւ զի թագաւորէն Յունաց զառ ինքն եկեալսն դեսպանսն արձակէր յիւրմէ, զի երթիցեն պատմեսցեն թագաւորին Յունաց՝ թէ ո՛րպէս եւ կամ զիա՛րդ նա զհրամանսն

1 Յօր. գտանէր

2 Պարտի լինել կոստանդ Բ.

կատարեաց զթագաւորին Յունաց, զի եւ թագաւորն Յունաց դարձուցէ զգերութիւնն՝ զոր առեալ զթագաւորին Պարսից:

³⁴ Եւ եղեւ իբրեւ լուաւ զայս ամենայն թագաւորն Յունաց՝ եթէ կատարեաց ի գլուխ եհան զայս ամենայն ի նմանէ գտուեալ հրամանն թագաւորն Պարսից, եւ դարձ արար գերութեանն Հայոց եւ Տիրանայ արքային, հաճեցաւ: ³⁵ Յայնմ ժամանակի եւ թագաւորն Յունաց առնէր գերէդարձ գերութեան¹ արքային Պարսից:

³⁶ Եւ հանդերձեաց կազմեաց թագաւորն Յունաց զկանայս թագաւորին Պարսից մեծաւ պատուով, եւ զամենայն գերութիւնս նոցա ընդ նոսին յերկրէն Յունաց յերկիրն Պարսից դարձուցանէր, եւ բարեաւ առ թագաւորն յուղարկէր:

³⁷ Կատարեցաւ երրորդ դարք, քսան եւ մի պատմութեանց զպրութիւնք, ժամանակագիր կանոնք Փաւստեայ² Բիւզանդեայ ժամանակագիր մեծի պատմագրի, որ էր ժամանակագիր Յունաց:

¹ Օրինակ մի՝ դարձ գերութեան

² Յօրինակին փախստեայք

ԲՈՒՉԱՆԴԱՐԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ՉՈՐՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆՔ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐՔ ՄԱՏԵՆԻՑ

ՏԱՆ ՈՐԴԻՈՑ ԹՈՐԳՈՄԱՅ ԱՇԽԱՐՀԻՆ ՀԱՅՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

1 Յաղագս թէ ո՛րպէս յետ բազում շփոթի պատերազմացն Ներսէսի՝ արքայն Պարսից թէ ո՛րպէս թագաւորեցոյց զԱրշակ գորդի Տիրանայ, եւ արձակեաց յաշխարհն Հայոց հանդերձ Տիրանաւ հարբ իւրով եւ ամենայն գերութեամբն հանդերձ:

2 Այլ իբրեւ եղեւ Հաճութիւն եւ բազում խաղաղութիւն ի մէջ թագաւորին Յունաց եւ Ներսէսի արքային Պարսից, հաւանեցան մեծաւ սիրով առնել զկամս միմեանց. եւ դարձուցանէր կայսրն Յունաց զգերութիւն արքային Պարսից: 3 Ապա եւ թագաւորն Պարսից Ներսէս թագաւորեցոյց զԱրշակ որդի Տիրանայ, եւ հարբ նորին եւ հանդերձ կանամբք իւրեանց եւ ամենայն գերութեամբ հանդերձ եւ գանձիւք իւրեանց եւ ստացուածովք արձակեաց մեծաւ փառաւք: 4 Խաղաց զնաց Արշակ արքայ Հայոց մեծաց, թագաւորեաց յերկրին Ասորեստանեայց հանդերձ հարբն իւրով եւ ամենայն ընտանեաւքն իւրովք, եկն եհաս յերկիրն Հայոց, եւ ժողովեաց զցրուեալս երկրին, եւ թագաւորեաց ի վերայ նոցա:

5 Եւ եղեւ խաղաղութիւն մեծ ի ժամանակին յայնմիկ: 6 Ժողովեցան ամենայն թագուցեալքն փախուցեալք կորուսեալք երկրին Հայոց. եւ էին անկասկածք բնակեալ ի խաղաղութեան մեծի ընդ հովանեաւ արքային Արշակայ: 7 Ապա կարգեցան կազմեցան յաւրինեցան խաղաղացան աշխարհն Հայոց ի մէջ երկուց թագա-

ւորացն. եւ յայնմ հետէ բնակեալք խաղաղութեամբ վայելեալք յիւրաքանչիւր յարարս իւրեանց:

ԳԼՈՒԽ Բ.

1 Յաղագս շինութեան կարգաց յարինելոց աշխարհին, նուաճութեան յիրաւանչիւր տեղիս վարուց կարգաց, նորոգելոյ աշխարհին թագաւորութեան Հայոց:

2 Յայնմ ժամանակի խնդիր ելանէր արքայն Արշակ տոհմին զաւրավարաց ազգին քաջացն Մամիկոնենից. մանաւանդ զի իւր դայեակս եւ սնուցիչք էին: 3 Ապա երթեալ գտանէր զնոսա յամուրս աշխարհին Տայոց յիւրեանց աշխարհին, եւ դարձուցանէր զնոսա յընդանութիւնն. զի պառակտեալք եւ քակտեալք էին յընդանութեանն եւ յամենայն գործոց Հայոց ի ժամանակս խալութեանն² Տիրանայ: 4 Եւ կացոյց արքայն զՎարդան զերէց եղբայրն ի նահապետութեանն ազգին իւրեանց, եւ զՎասակ զմիջին եղբայրն զիւր դայեակն ի սպարապետութիւնն զաւրավարութեան յիրս պատերազմացն. սոյնպէս եւ զկրտսերն ի պէտս զաւրացն կացուցանէր: 5 Սոյնպէս եւ զամենայն ազգսն զաւրացն մեծամեծացն նահապետացն, որպէս առաջին թագաւորքն նուաճեալք յիւրաքանչիւր չափու: 6 Եւ հնազանդէր զմեծամեծսն, զիւրաքանչիւր զաւրս բաժանեալ յամենայն կողմանց, սահմանացն Հայոց սահմանապահս կացուցանէր:

1 Պարտի լինել Շապուհ

2 Յօր. խուլութեան

7 Եւ նորոգեցաւ զուարթացաւ տէրութիւնն թագաւորութեանն Հայաստան երկրին որպէս եւ զառաջինսն. մեծամեծքն յիւրաքանչիւր գահու, եւ գործակալքն յիւրաքանչիւր չափու: 8 Եւ սկիզբն գործակալութեանն հազարապետութեանն աշխարհատեսն խնամակալութեանն, աշխարհաշէն աշխարհատած զեհկանութեան, շինականաշէն ազգն Գնունեաց՝ հազարապետն ամենայն երկրին: 9 Նոյնպէս ստրատելատութեան սպարապետութեանն զաւրավարութեանն մարտի կռուելոյ, գործոյ ըռազմիկ ճակատամուղ նիզակին, իրափառն՝ աղանազգիք աղանազրաւչք արծուէնչանք, վարժնականիչք աներկիւղք քաջասիրտք նահատակք քաջանունք, բարենշանս բարեհամբաւք բարեգործք յաջողակք ի գործ պատերազմաց ի բուն ի նախնեացն կարգաց ի Մամիկոնեան ազգին, ի վերայ իշխանութեանն բովանդակ՝ ի վերայ ամենայն զաւրաց զաւրավարութեանն բազմութեանն Հայոց մեծաց, հանապազ յամենայն ժամ յաղթող ազգին պարգեւեալ յերկնից բարիանուն իրաքաջ ի մեծի նահապետութեան պատերազմի: 10 Եւ այլ յայսմ ազգաց եւ ի խոնարհ՝ որ գործակալս անուն բարձիւք առաջի արքային պատիւ ի գլուխ բազմէին. թող զնահապետս մեծամեծս եւ զտանուտեարս՝ որք գործակալք միայն էին, ինն հարեւր բարձ՝ որ մտանէր ի ժամ տաճարին ուրախութեանն բազմակալացն կարգելոց. թող զտանկայս գործակալութեանն սպասու:

ԳԼՈՒԽ Գ.

1 Յաղագս սրբոյն Ներսիսի, թէ ո՛րպէս կամ ուստի՛ էր, կամ որպիսի՛ կամ գիա՛րդ ընդրեցաւ եպիսկոպոս լինել Հայոց աշխարհին:

2 Ապա ի մի ժողով կուտեցան առ արքայն Արշակ մեծամեծք նահապետք ազ-

գաց ազգաց, տոհմաց տոհմաց, գնդից եւ դրաւշուց տեարք. ամենայն սատրապք նախարարք եւ ազատք, պետք եւ իշխանք, զաւրավարք եւ սահմանապահք, ի մի հաւանութիւն միաբանական խորհուրդք, զի եկեցեցն տեսցեն եւ խորհեցին վասն իւրեանց առաջնորդի, թէ ո՛ւմ արժան իցէ նստել յաթոռ հայրապետութեանն եւ հովուել բանաւոր խաշանց Քրիստոսի: 3 Ապա յաղթեաց կալաւ այս բան խորհրդի ամենեցուն առ հասարակ որ անդ էին, զի ի մնացորդաց տանն Գրիգորի, յայնմ զաւակէ գտցեն զառաջնորդութիւն: 4 Զի ամենեքեան ասէին ցարքայն. վասն զի նորոգեաց Աստուած զթագաւորութիւն ձեր, սոյնպէս պարտ է ի յայնմ զաւակէ նորոգել զհոգեւոր նահապետութիւնն: 5 Զի ընդ նորոգել այնր աթոռոյ, ասեն, նորոգեցին պայծառ վարք աշխարհիս Հայոց:

6 Ապա յականէ յանուանէ իսկ խնդրեցին աշխարհաժողով զաւրքն բազմութեան զայն, որ անուանեալ կոչէր Ներսէս, զորդի Աթանագենի, զթոռն քահանայպետին Յուսկան, որդւոյ Վրթանայ, որդւոյն Գրիգորի մեծին առաջնոյ քահանայպետին. եւ մաւր սորա Բամբիչն անուն, քոյր արքային Տիրանայ: 7 Սա լեալ էր ամուսնաւոր յաշխարհակեաց կեանս նախ յաստիս մանկութեան. ի տղայութենէ սնեալ եւ ուսեալ ի կեսարացոց քաղաքին Գամրաց ընդ հաւատարիմ վարդապետաւք. եւ ցանկալի եղեալ իւրոյն համարուեստն զուգակցացն: 8 Այլ ի ժամանակին յայնմիկ էր ի վարս զինուորութեան, ի գործակալութեան սիրելի սենեկապետ արքային Արշակայ, հաւատարիմ ի վերայ ամենայն կարգաց կենաց թագաւորութեանն ի ներքոյ եւ արտաքոյ:

9 Այր էր սա մեծ եւ բարձր ցանկալի հասակաւ, եւ վայելուչ գեղով. զի ոչ գտանէր ուրեք նման նմա գեղեցկութեանն ի վերայ երեսաց երկրի, տենչալի ցանկալի եւ զարմանալի եւ ահագին ամենայն նա-

1 Ի չորս օրինակս՝ իրաւափառն

յեցող տեսողաց, եւ նախանձելի յարութեանն ի զինուորական կրթութեանն: 10 Երկիւղած ի Տեառնէ Աստուծոյ, յոյժ աւանդապահ պատուիրանաց նորա. մարդասէր, սուրբ զգաստ, սաստիկ իմաստուն եւ առանց ակնառութեան. իրաւանց իրաւարար, ցածուն քաղցր խոնարհ աղքատասէր, ի սրբութիւնս ամուսնութեանցն աւրինաւոր, եւ կատարեալ սիրովն Աստուծոյ: 11 Եւ առ իւր ընկերս ըստ պատուիրանին սիրել զամենայն ընկեր իբրեւ զանձն. զի ի զինուորութեանն այսպէս կատարեալ էր վարուք լաւութեամբ, որ մինչդեռ մանուկ իսկ էր՝ զնայր նա ամենայն պատուիրանաւքն Տեառն եւ արդարութեամբ, անարատութեամբ եւ ամենայն պաշտամամբք առ ընկերս իւր: 12 Անձանձրոյթ էր, եւ ունէր զնախանձն Աստուծոյ, եւ եռայր Սուրբ Հոգևովն. այսպէս իսկ էր ամենայնիւ կատարեալ յամենայնի: 13 Եւ զաղքատս եւ զտառապեալս այսպէս սիրէր եւ ակն ածէր ի վերայ նոցա, զի զիւր ինչ զհանդերձս եւ զկերակուր հասարակէր ընդ նոսա: 14 Եւ նեղելոց եւ տարակուսելոց աւգնական եւ վերակացու, եւ ջատագով ամենայն զրկելոց լինէր նա:

15 Մինչ դեռ եւս զզինուորական ձեւն յինքեան բերէր, եւ զարդարեալ էր զեղեցիկ պատմութեանաւ եւ զարդ վայելուչ, եւ ցանկալի զեղով իւրով, երկայն հասակաւ, եւ չքնաղատես հերաւք վարսից իւրոց, կայր ի սպասու թագաւորին մաւտ ի անարս արքային, զարքունական սուսերն զպողովատիկն զոսկէպատեանն հանդերձ ականակապ մարգարտազարդ կամարաւն ի սպասու նորա բարձեալ ունէր, առ հասարակ ատեանն զբողոք բարձեալ աղաղակէին՝ եթէ ներսէս լիցի մեր հովիւ: 16 Զոր իբրեւ լուեալ, զբողոք բառնալով՝ զանձն անարժան համարեալ, չկամէր չառնոյր յանձն: 17 Իսկ յորժամ տեսանոյր՝

զամենեսեան ի նոյն յառաջին բանին վերայ պնդեալ, զի զնոյն աղաղակէին առաջի թագաւորին. ասէին, Ոչ ոք լիցի մեր հովիւ՝ բայց ի դմանէ, եւ ոչ ոք նստի այլ յայնմ աթոռ՝ բայց դա: 18 Իսկ նա իբրեւ զանձնն չկամէր արժանի իրին առ յոյժ խոնարհութեան իւրում, ապա ի մէջ եկաց, սկսաւ ստել սակաւ մի, խաւսել զանձնէ իւրմէ զանաւրէնութիւնս եւ զբամբասանս մեղաց՝ որ իւր չէր գործեալ:

19 Զոր իբրեւ լուան բազմութիւնքն, գիտացեալ զստելն նորա վասն անձինն, ամենեքեան առ հասարակ հանդերձ թագաւորաւն թալացեալ էին ի ծաղուէ: 20 Իսկ զաւրքն աղաղակէին առ հասարակ. ի մեզ եւ ի գլուխ մեր դարձցին այն մեղք՝ զոր գործեցերն. ի վերայ անձանց մերոց եւ ի վերայ որդւոց մերոց լիցին գործքն. բայց դու զգործս հաւրն քո Գրիգորի, զնոյն առաջնորդութիւնն նորոգեա մեզ: 21 Իսկ նա իբրեւ այլ ինչ ոչ եգիտ տալ նոցա բանիցն պատասխանի, զի թշնամանս լինէր զաւրացն, եւ ասէր. Անաւրէնք էք եւ պիղծք, ես ոչ կարեմ ձեզ հովիւ կալ, եւ ոչ զձեր մեղսղ ընդ անձամբ առնուլ. ապա ոչ կարեմ աչառել, եւ ոչ ձերում չարութեանդ համբերել: 22 Եւ այսաւր տարապարտուց սիրէք դուք զիս տարապարտ, եւ վաղիւ ատելի եւ թշնամի եւ թակն զգլխոյ ձերմէ կոշկոճիչ կապէք զիս. այլ թո՛յլ տուք ինձ, անհոգութեամբ ըստ իմում չափուս անարժանութեամբ զկեանս իմ տառապանաւք եւ մեղաւք, հանդերձեալ դատաստանին յաւիտենից ակն ունելով, անցուցանել թերեւս կարացից: 23 Ապա զբողոք բառնային բազմութիւնք զաւրացն, եւ ասէին՝ եթէ այդ մեղաւորդ լիցիս մեզ հովիւ. զի այնչափ պնդեալ մարդկանն, յԱստուծոյ տեսչութեանէն լինէր այնպէս: 24 Առ սրտին զազանութեանն եւ յոյժ ցասմանն թագաւորն Արշակ ինքն ձգտեալ զսուսերն արքունական կամարաւն, զոր նմա ներսէսն բար-

1 Օրինակ մի՝ տեսանէր

ձեռք ունէր ի սպասու թագաւորին ըստ աւրինաց սենեկապետութեանն, ի բաց հանէր ի նմանէ: 25 Եւ հրամայէր զնա կապել զիւրով առաջեւ. զհերսն՝ գանգրագեղս զվայելուչ թագազանգուր վարսիցն, զի ուրեք երբեք նման նմա ոչ գտանէր, զայն ի բաց խզեալ հրամայէր. եւ ընդ նմին զվայելուչ պատմուծանն, զայն ի բաց պատուեալ հրամայէր: 26 Հրաման տայր, եւ բերին զհանդերձս կղերիկոսաց զգեցուցանէին նմա. ետ հրաման, եւ կոչեցին զծերունի եպիսկոպոսն՝ որում անուն էր Փաւստոս, եւ տայր զնա ձեռնադրել ի սարկաւազութիւն: 27 Բայց յորժամ զհերսն դեռ վիրային ի նմանէ, առ յոյժ գեղեցկութեանն բազումք յարտասուս հարան՝ որք լուանն կամ տեսին, ի գեղն աւեղկեալ՝ զկերպարանսն փոխելովն: 28 Այլ յորժամ տեսին զնա քրիստոսեան գեղովն զարդարեալ՝ բազմաց լինէր ուրախութիւն, յորժամ շնորհք բարերարք կոչեցին զնա լինել հոգեբարձու տանն Քրիստոսի:

29 Յայնժամ եղ Տէր ի միտս ամենեցուն խնդրել իւրեանց հովիւ զայն, որ նոցա կարող լինել զառաջնորդութիւնն կենացն ճանապարհին ցուցանել: 30 Եւ մինչ դեռ իսկ զձեւս զինուորութեան յինքեան բերէր յերեւելիսս, ներքին մարդովն զՔրիստոս էր զգեցեալ յանձն իւր, եւ ազնուական վարս էր յինքեան կերպարանեալ: 31 Եւ յուսովն՝ զոր ունէր՝ խաչեալ էր ընդ Քրիստոսի, եւ թագակից եղեալ էր ընդ նմին. եւ սիրով հաւատոյ մեռեալ էր մեղացն, եւ յարութեան յուսոյն արդարութեամբ սպասէր: 32 Վասն այսորիկ յիրաւի արժանի եղեւ սա աթոռոյն հայրապետաց եւ տեղւոյ հարցն իւրոց առաջնոց, զաթոռն Թագէտսի առաքելոյ, եւ ժառանգութիւն հաւրն մարմնապէս ի նոյն հոգեւորին Գրիգորի. այլ իբրեւ ի Տեառնէ եղեւ

կոչումն նմա գալ յիրս այսպիսի, եւ էարկ ի միտս ամենեցուն խնդրել զսա արժանի այնմ իրին: 33 Իսկ նա յոյժ առ երկիւղածութեանն եւ բազում խոնարհութեանն գանձն իւր անարժան համարեալ իրացն, մեծ կարգաց աստիճանին Աստուծոյ, յոր ձգեալ էին զնա: 34 Այլ բռնաբարութիւն եւ միաբանութիւն եւ հրաման Աստուծոյ, մանաւանդ առ նախնեաւքն, վասն նորա իսկ ասացեալ էր ի տեսեանն Աստուծոյ առ Յուսիկն՝ եթէ այր լինելոց է ի սորա գաւակէ, լիցի լոյս աշխարհի:

ԳԼՈՒԽ Գ.

1 Յաղագս թէ ո՛րպէս առին գնացիմ եւ տարան զներսէս ի Կեսարիա. եւ եթէ զի՛նչ շատ սքանչելիք եղեմ յԱստուծոյ, եւ կամ թէ ո՛րպէս հովուեաց իւրոց հաւտիցն առաքելաւրէն:

2 Ապա գումարեցին զիշխանսն մեծամեծս, զի առցեն զցանկալին Ներսէս, եւ գնասցեն ուր սովոր էին զհայրապետսն աւծանել: 3 Նա եւ բազմութիւն եպիսկոպոսացն Հայոց ժողովեցան առ թագաւորն վասն նորին խնդրոյն խորհել² ամենեցուն միով միաբանութեամբ զնա ընտրել, հաճոյ թուեցաւ ամենեցուն զի նստցի նա յաթոռ գլխաւորութեանն: 4 Ամենեցուն միաբանութեամբ եպիսկոպոսացն եւ թագաւորին եւ աշխարհախորհ ձուլիւք հաւանութեամբ ի միասին արձակեցան եւ գնացին: 5 ԶՀայր մեծ իշխան մարդապետութեանն, եւ զԲագարատ մեծ իշխանսն ասպարապետութեանն, եւ զԴանիէլ մեծ իշխանն Ծոփաց, եւ զՄեհանդակ Ռըշտունի, եւ զԱնդովկ իշխանն Սիւնեաց, եւ զԱրշաւիր իշխանն Շիրակայ եւ Արշարունեաց, եւ զՆոյն իշխանն միւսոյ Ծոփաց, եւ զՊարգեւ իշխանն տանն Ամատունեաց. զնոսա զամենեսին կազմեցին եւ արձակեցին բազում ընծայիւք եւ մեծամեծ պատարա-

1 Օրինակ մի՝ առաջ, եւ զհերսն

2 Յօր. խոնարհել

զաւք եւ հաւատարիմ հրովարտակաւք առ կաթողիկոսաց կաթողիկոսն Եւսեբիոս յերկիրն Գամրաց, եւ ի մայր քաղաքացն¹ նոցա ի Կեսարիա, զի ձեռնադրեսցեն անդ գսուրբն Ներսէս ի կաթողիկոսութիւն Հայոց մեծաց:

6 Եւ եկին ածին նոքա ցնծութեամբ ուրախութեամբ, եւ տեսին անդ գկաթողիկոսն կաթողիկոսացն գսուրբն գմեծանունն զերանելին զհոյակապն զսքանչելին Եւսեբիոս: 7 Եւ տային զհրովարտակն արքային Արշակայ նմա, եւ ունէին առաջի նորա գպատարագս բերեալս: 8 Եւ նորա սիրով ընկալեալ զնոսա եւ բազում մեծարանաւք, եւ ըստ կանոնաց աւրինակի ժողովէր առ ինքն մեծ եպիսկոպոսապետն Եւսեբիոս զբազմութիւն եպիսկոպոսացն սրբոցն ըստ առաքելական աւրինացն, զի ձեռնադրեսցեն գսուրբն Ներսէս լինել եպիսկոպոսապետ Հայոց մեծաց: 9 Եւ եղեն մեծ սքանչելիք. զի մինչ դեռ այն ինչ մտեալ էին յեկեղեցին, էջ աղաւնի սպիտակ ի վերայ սեղանոյն յանդիման քահանայութեանն եւ յանդիման ամենայն ժողովրդեանն: 10 Եւ իբրեւ եմուտ Եւսեբիոս արքեպիսկոպոսապետն եւ երիցունքն ընդ նմա, եւ երիցապետ մի սուրբ՝ որում անունն Բարսիղիոս կոչէր, թռեալ աղաւնին ի սեղանոյն եւ հանգեալ ի վերայ նորա, եւ յամեաց բազում ժամս: 11 Իսկ իբրեւ եհաս ժամ՝ յորժամ կամեցան զՆերսէս ձեռնադրել, վերացաւ աղաւնին ի սրբոյն Բարսեղէ, եւ նստաւ ի վերայ գլխոյն Ներսէսի:

12 Իբրեւ այս սքանչելիք եւ նշանք յԱստուծոյ լինէին ի վերայ առնս այսորիկ, կային առ հասարակ² ամենայն ժողովուրդն զամացեալք եւ մեծ արքեպիսկոպոսն Եւսեբի: 13 Առ հասարակ աղաղակէին ի վերայ նորա, թէ Հաճոյ եղեր դու

Աստուծոյ, եւ հոգի Աստուծոյ հանգեալ ի վերայ քո. զի նմանութիւն եղեւ ամենասուրբ Հոգոյն, որ ի վերայ Տեառնն երեւեցաւ: 14 Ապա ձեռնադրեցին զնա, եւ հանին նստուցին յաթոռ եպիսկոպոսութեանն, եւ պատուէին զնա. եւ բազումք ասէին նմա էնկոմիա. (որ ասի՝ թէ Հոգի Սուրբ հանկեալ ի սա)³: 15 Բայց նա եւս քան զեւս զանձն իւր անարժան համարէր իրացն եղելոց: 16 Եւ մեծասքանչելաշուք յուղարկեցին զնա. նոյնպէս եւ գմեծամեծ նախարարսն սատրապսն Հայոց:

17 Եւ եկին հասին նոքա մեծապարծ երեւելի հոգեւորագեաց փառաւք ի Հայաստան երկիրն. եւ արքայն Արշակ ընդ առաջ երթայր նոցա մինչեւ ի լեառն, որ անուանեալ կոչի Առեւծ: 18 Եւ անդ պատահեալ միմեանց մեծաւ լրջմտութեամբ, լցեալք աւրհնութեամբ ողջունին, անդուստ յաշխարհն դարձան: 19 Եւ նստաւ սուրբն Ներսէս յաթոռ հայրապետութեան. ի հովուութեանն նորա բազում խաղաղութիւն լինէր աշխարհին: 20 Զի ի վարս կարգաց զնացից իւրոց՝ նմանեաց իւրոյ հաւրն մեծին Գրիգորի, արդարեւ հայրաբարոյ գտանէր ամենաբարի. զնոյն հարցն նորոգեաց զառաքելաշնորհս, նոյն գործ երեւեալ անվնաս պահելոյ յաներեւոյթ թշնամեացն եւ յայտնեացն:

21 Սա եւ առաւել եւս առաջին ծառոցն նմանեալ, որ զնոյնագեաց զնոյնահաս պտուղս վարդապետութեան բերեալ սկսեալ վերակացութեանն հովուութեանն, անկարաւտ մատակարարէր զաւգտակարսն, զհոգեւոր արաւտսն ջամբելով: 22 Զի շնորհքն այնպէս հանգեան ի նմա, զի մեծամեծ նշանս եւ բժշկութիւնս առնէր հիւանդաց, ուր դէպ լինէր. գմուրորութիւնս դարձուցանէր: 23 Առնէր եւ զայսպիսի սքանչելիսս. զորս կարի յամառեալ տեսանէր, ահ արկանելով հաւանեցուցանէր. իսկ

1 Յամենայն օրինակս՝ ի մայրաքաղաքացն

2 Օրինակ մի՝ հասարակ

3 Եղաք ի փակագծի

հլուացն, որոց ականջք սրտիցն բացեալ էին, զնոսա բանիւք քարոզութեանն ածէր ի հաւանութիւն:

24 Շինէր եւ զաւերեալ եկեղեցիսս, եւ կանկնէր զսեղանս կործանեալս. եւ հաստատէր ի կատարումն ապաշխարութեան զթերահաւատս, զի հաւատացեալք յԱստուած՝ ապրել կարասցեն: 25 Մխիթարէր զհաւատացեալս յաւիտենական յուսով բարութեամբն մշտնջենաւոր պարգեւացն¹. զթաղէական աթոռն միւսանգամ ելից, եւ իւրոց հարցն նմանեալ որդի եղեւ: 26 Եւ չարխաւսացն ընդդիմացեալ ըմբերանէր. խափանէր եւ զանաւրէնութիւնս եւ զխաւսս եւ զգործս զայսպիսեացն միանգամայն: 27 Եւ վասն ճշմարտութեանն մինչեւ ի մահ մարտնչէր. եւ զաջողակ արդարութեանն քաջալերեալ խնդացուցանէր. եւ իւրով վարդապետութեանն անձրեւաւն պարարէր սնուցանել զչայեկան արդարութիւնսն աւրհնութիւնսընգալու²: 28 Եւ ընդ ամենայն տեղիս սահմանացն Հայոց մեծաց, ընդ որ էր յառաջագոյն նորուն հարցն սերմանեալ զքարոզութիւն բանին կենաց, զնոյն եւ սա ոռոգեաց անձրեւովն. զբոյսս անեցոյց մշակն հնձող, եղեալ գործակից սերմանողաց. եւ բազմացոյց զյորդաբուխ արդիւնսն ի շտեմարանս արքայութեանն, կարգացն առաջին հարցն մշակացն փոխանորդ եղեալ՝ գործակից լինելով:

29 Նա եւ բազում զաւրութիւնս անպատումս յանձին իւրում բարձեալ բերէր. նա եւ կարի իսկ զողորմածութեան կարգացն փոյթ արարեալ ցուցանելոյ, նախ ինքն առնելով առ իւր անձն բարի, եւ ապա այլոց աւրինակ բարեաց դնելով, առ հասարակ վարդապետական բանիւն զամենեցուն զփակեալ դրունս մտաց ի բարին

յորդորելով բանայր: 30 Զամենաբարի ուսուցանէր զսէր զյոյս զհաւատս զսրբութիւն զքաղցրութիւն զհեղութիւն զանոխակալութիւն, զխնամ ունելով դարմանոյ աղքատացն տանելոյ, եւ յոյս հատուցման ի խոստացեալ աւետիսն Քրիստոսի. եւ ի դատաստանացն ամենեւին³ անչէջ հրոյն՝ յիշատակաւք յաւիտենականն չարչարանաւք սպառնալով՝ անաչառական գալստեամբն Որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի: 31 Եւ այնու երկեցուցեալ, մինչեւ ամենեցուն՝ որք ի սահմանս Հայոց էին բնակեալ՝ ամենեքեան հաւատացեալք ընդ աղքատս իւրեանց զիւրեանց ինչս մատակարարեալ հաւանութեամբ հաւասարութեամբ, եւ ինքեանք լրջմտութեամբ զուարթութեամբ գործէին:

32 Եւ ինքն երթեալ հասանէր ի կողմանս Տարաւն գաւառին, եւ ժողովէր առ ինքն զամենայն եպիսկոպոստնս Հայոց աշխարհին: 33 Ժողովեցան ի գեւղն Աշտիշատ, ուր զառաջինն զեկեղեցին էր շինեալ. զի նա էր մայր եկեղեցեացն, եւ տեղի⁴ լեալ նախնեացն ժողովոց սիւնհողոսին: 34 Ի ժողով հաւանութիւնս եկեալ ամենեցուն, եւ խորհուրդ բարեաց ի մէջ արկանէին, կատարել անդ զաշխարհական կարգս եկեղեցւոյն եւ ժողովն հաւատոցն հաւասարութեան: 35 Յայնմ ժամանակի կարգեցին կազմեցին կանոնեցին յաւրինեցին, եւ արարին զամենայն ժողովուրդս երկրին Հայոց իբրեւ կարգ միաբանութեան վանականաց համաշխարհի, բայց միայն յամուսնութեան աւրինացն: 36 Բայց միայն զառաքելակարգ կանոնսն ի վերայ ամենեցուն կացուցանէր սուրբ եպիսկոպոսապետն Ներսէս. ամենեցուն խրատտու եւ առաջնորդ յորդորիչ եւ նախանձաւոր լինէր գործոց բարեաց:

1 Օրինակ մի՝ յուսով բարութեանն, մշտնջենաւոր բարութեանցն եւ պարգեւացն
2 Օրինակ մի՝ գորհուրդիւնս ընկալաւ

3 Զառաջնոյ տպագրին մերոյ զվրիպակ ընթերցուած՝ ուղղեցաւ բնութայն գրչագրի: Ոմանց հանոյ թուեցաւ ընթերցուել ատենին:
4 Օրինակ մի՝ ի տեղի լեալ

37 Նախ ինքն առնէր, եւ ամենեցուն զնոյն ուսուցանէր. առ հասարակ զնոյն աւրինակ առնել հրամայէր յամենայն աշխարհս եւ ի գաւառս եւ ի կողմանս կողմանս, ի կոյս կոյս, ի խորշս խորշս սահմանացն Հայոց. յայտ արարեալ զպատեհ պատեհ տեղիսն զատուցանել, շինել աղքատանոցս, եւ ի ժողովել զախտաժէտս եւ զաւրկուհիս¹ եւ զմարմնահարս² եւ զամենայն ցաւոտս. եւ նոցուն կարգեցին աւրկանոցս եւ դարմանոց եւ բժիշկս եւ պատանս³ աղքատաց: 38 Զի այսպէս ետ հրաման մեծ եպիսկոպոսապետն Ներսէս, եւ սոյն կամ եղեւ ամենայն սուրբ ժողովոյն, զի այնպիսիքն միայն նստեալ լիցին յիւրաքանչիւր կայեանս, եւ մի՛ ելանել ի մուրոյն տառապանս, եւ մի՛ բնաւ ելանել ըստ իւրաքանչիւր դուրս, այլ զի ամենայն ոք պարտապան է նոցա: 39 Հարկ իսկ է զի մի՛ կարգ աշխարհի, ասէ, եղծցի. այլ արժան է զի ամենեքեան առ հասարակ ողորմածութեամբ եւ երկիւղիւ տարեալ նոցա զդարմանսն, եւ զպիտոյս նոցա վճարեսցեն:

40 Շինեաց սոյնպէս, կարգեաց կազմեաց եւ հաստատեաց, բազում եւ այլ ողորմութիւնս⁴ ուսուցանէր աշխարհի. բազում կարգս կանոնաց հայրենիս կարգէր: 41 Եւ առ յոյսն յարութեան ցուցանէր ունել ակնկալութիւն. եւ զի մի՛ զմահ մարդկանն առանց դարձի միւսանգամ կենդանանալոյ համարիցին, եւ անյուսութեամբ ի վերայ գնացելոցն աւճիրս գործիցեն լաւեացն կոծոյն, զանառակութիւնս աշխարհն⁵ զնելոյ. այլ յուսով Տեառն գալստեանն ակն ունել եւ յարութեանն նորոգութեան, եւ իւրաքանչիւր գործոցն զյաւիտենական զհատուցումն առնուլ իւրաքանչիւր յոյս

ունելով՝ աւուր գալստեանն Տեառն սպասել: 42 Եւ զի լինիցին յամուսնութեան աւրինաւորք⁶, մի՛ ստել եւ մի՛ դաւ բերել իւրեանց ամուսնութիւնն ընդալ կողմանց. եւ փախչել աւելի ի մերձաւոր եւ յազգին տոհմակից խառնակութեան ամուսնութեանէն, եւ մանաւանդ ի մերձաւորական ի նուոց⁷, եւ որ գամ մի այսմ նման լեալ էր ինչ: 43 Եւ կանոն՝ հրաժարել ամենեւին ի մեռելոտւոյ եւ յարենէ ուտելոյ, եւ ի դաշտանիկն մերձենալոյ. զայդ ամենայն պիղծ համարէր առաջի Տեառն:

44 Եւ զնենգութիւնսն եւ զքսութիւնսն եւ զագահութիւնս եւ զչարակնութիւնս, զցանկութիւնս եւ զզրկութիւնս, զարուագիտութիւնս եւ զիգութիւնս եւ զբամբասութիւնս⁸, եւ զանառակ արբեցութիւնս եւ զորկորստութիւնս եւ զյափշտակութիւնս եւ զպոռնկութիւնս եւ զվրէժս ի թշնամեաց եւ զստութիւնս եւ զթշնամութիւնս եւ զանողորմածութիւնս եւ զսուտերգմնութիւնս, եւ զարիւնհեղութեան սպանութիւնս եւ զանասնագիտութեան պղծութիւնս, որ ոչ ակն ունէին յարութեան եւ որ անյուսութեամբն⁹ լան զմեռեալս, ընդ մի աւրինակ զամենեսեան ի միում խորխորատ կորստեանն համարէր: 45 Եւ ամենայն աշխարհին պատուիրէր, եւ զլիսովին թագաւորին, առ հասարակ ամենայն մեծամեծացն, եւ ամենեցուն՝ որ ոք ի վերայ ընկերին ունիցին իշխանութիւն, գութ ունելով ընդ իւրեանց ծառայս եւ ընդ կրսերս եւ ընդ աշակերտս, եւ սիրել իբրեւ զընտանիս, եւ մի՛ անարժանս եւ աւելի տարապայմանս հարկաւք նեղել քան զչափն. յուշ առնելով, զի եւ նոցատէր գոյ յերկինս: 46 Սոյնպէս եւ ծառայից պատուիրէր՝ կալ յարդարն հնազանգու-

1 Օրինակ մի՛ գուրկուհի... ուրկանոցս
 2 Յօր. գմարմնավարս:
 3 Թերեւս կայեանս կամ դարմանս
 4 Օրինակ մի՛ ողորմածութիւնս
 5 Օրին. մի՛ աշխարհիցն. այլ՝ աշխարհ

6 Օրինակ մի՛ ամուսնութիւնս օրինաւորք
 7 Օրինակ մի՛ ի նուոց
 8 Օրինակ մի՛ բամբասութիւնս
 9 Օրինակ մի՛ անյուսարարն

թեան իւրեանց տերանց, զի ի Տեառնէ լի-
նիցի նոցա վարձք:

47 Եւ եղեւ խաղաղութիւն եւ նորո-
գութիւն յաւուրս նորա ամենայն եկեղե-
ցեաց, եւ յաճախէր շուք պատուի ամե-
նայն եպիսկոպոսացն ընդ ամենայն տեղիս
Հայոց մեծաց: 48 Եւ լուսաւորութիւն
կարգի եկեղեցւոյ ամենապայծառ ծաղ-
կեաց ամենամեծ լիութեամբ. կարգեցան
կարգք կաթողիկէ եկեղեցեաց ամենայն
վայելչութեամբ, եւ բազմացան կարգք
սրբութեան պաշտամանցն, եւ պաշտաւ-
նէիցն յաճախութիւն: 49 Եւ բազմացոյց
զկարգս եկեղեցեաց ի շէնս եւ յանշէնս.
սոյն աւրինակ բազմութիւնք կրանաւո-
րաց:

50 Կարգէր եւ ի տեղիս տեղիս դպրոցս
յունարէն եւ ասորերէն յամենայն գաւառս
Հայոց. եւ բազում նեղելոց եւ եւ տառա-
պելոց գերեաց փրկութիւն եւ գերէդարձ
առնէր, զորս ասիւ քարոզութեան փա-
ռացն Քրիստոսի զկէս, եւ զայս գնովք
փրկանաւք ազատէր, եւ յիւրաքանչիւր
տեղիս դարձուցանէր: 51 Այրեաց եւ որ-
բոց եւ չքաւորաց հանգիստ եւ դարման
առնէր, եւ աղքատք զաւրհանապազ ընդ
նմա ուրախ լինէին. եւ տաճար իւր եւ սե-
ղան զաւրհանապազ աղքատաց եւ աւտա-
րաց էր եւ հիւրոց: 52 Եւ այսպէս առ յոյժ
աղքատսրութեանն, զի թէպէտ եւ շինեաց
զամենայն աղքատանոցս ընդ ամենայն
գաւառս, եւ կարգեաց նոցա անդէն դար-
մանս, այսպէս զի ըստ իւրեանց անկողինս
մահճացն մի՛ ուրեք աշխատ լիցին ելանել,
սակայն եւ զիւր տաճարն առանց նոցա ոչ
առնէր, այլ կաղք եւ կոյրք եւ մարմնա-
հարք, խուլք եւ հաշմեալք եւ ցանկա-
նեալք¹ եւ կարաւտեալք ընդ նմա եւ ի նո-
րա ակըմբի դարմանէին բազմեալք: 53 Եւ
ինքն իւրովք ձեռաւքն լուանայր զամենե-
սեան, աւծանէր պատէր, եւ ինքնին իսկ

ջամբէր նոցա զիւրաքանչիւր կերակուրս,
եւ զամենայն ինչ ի պէտս նոցա ծախէր. եւ
ամենայն աւտարք ընդ նմա, հովանեալ²
նորա հանգուցեալք, դադարէին:

54 Եւ ամենեցուն զոր ինքն առնէր՝
զայն ուսուցանէր. եւ ինքն սուրբ եւ
զգաստ եւ արթուն, եւ զամենայն մարդ
պատրաստական առ բանն Աստուծոյ առ-
նէր: 55 Եւ ինքն ամենեցուն ըստ մարգա-
րէիցն եւ կամ ըստ առաքելոցն նմանու-
թեան զողորմածութիւնս ուսուցանէր. եւ
եթէ զմեղս ձեր ողորմութեամբ պարտ է
քաւել ձեզ, եւ զանաւրէնութիւնս ձեր
զթութեամբ եւ տրաւք աղքատաց: 56 Եւ
սոյնպէս տարաւելոյց³ զառաքեալսն յուշ
առնելով, որ ի պաշտաւն աղքատաց զմեծն
եւ զնախավկայն զյառաջսարկաւազն
Ստեփաննոս եւ զընգերս նորա՝ զորս ընտ-
րեցին, որ գերկինս եբաց, եւ զՈրդին ընդ
աջմէ Հաւր Աստուծոյ այս գործով արժանի
եղեւ տեսանել:

57 Սոյնպէս եւ զԱյծեմնիկն իւր ողոր-
մածութիւնքն եւ խանդակաթ այրեացն
ողբումն, ի ձեռն մեծին Պետրոսի, եւ
զհրաժարեալն զգնացեալն զմեռեալն միւ-
սանգամ այսրէն դարձուցանէր ի կենդա-
նութիւն: 58 Սոյնպէս եւ մեծն Պաւղոս, ա-
սէր, պատմէ՝ թէ իբրեւ տեսին զշնորհան,
որ տուեալ էին ինձ Յակոբոս եւ Կեփաս եւ
Յովհաննէս՝ որ բուն սիւնքն էին, իբրեւ
տեսին՝ թէ հաւատարիմ եմ ես յաւետա-
րանն անթլիատութեան, որպէս նոքա ի
թլիատութեանն, եւս քաջ համարձակեցին,
ձեռն ետուն հաւանութեան ինձ եւ Բառ-
նաբայ, զի մեք ի հեթանոսս եւ նոքա ի
թլիատութիւնն: 59 Բայց միայն պատուի-
րեցին ինձ, ասէ, զի աղքատաց խնամ կալ-
ցուք. զոր ես ինքնին իսկ, ասէ, փութայի
ջանալ կատարել:

1 Օրինակ մի՛ ցաւագնեալք

2 Օրինակ մի՛ ընդ հովանեաւ նորա հանգուցեալք
դարմանէին

3 Թերեւս տարացոյց

60 Սոյնպէս եւս առաւելագոյն զտէրունականն զնէր առաջի, որ մեծատունն էր՝ որ զամենայն պատուիրանսն կատարեալ էր, ապա լուաւ ի Տեառնէ՝ եթէ վաճառեա զինչս քո եւ տուր աղքատաց, եւ գտցես քեզ գանձս յերկինս. եւ որ զկնի սորին՝ եթէ դիւրին է մալխոյ մտանել ընդ ծակ ասղան, քան մեծատան ագահի յարքայութիւն Աստուծոյ: 61 Եւ դարձեալ՝ եթէ արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անտի անիրաւութեան, որ ընկալցին զձեզ ի յարկս իւրեանց յաւիտենից: 62 Կամ որպէս նոյն իսկ Պաւղոս բարեաց գործոց նախանձաւոր լինէր, ստիպէ ամենեցուն ասելովն՝ եթէ զհետ երթայք սիրոյ, եւ նախանձաւոր լերուք հոգեւորացն: 63 Որոյ գյաւթարութիւն արքայեցւոցն վասն պաշտման սրբոցն ի Մակեդոնիա պատմեալ՝ նախանձեցուցեալս յորդորեաց. այլ եւ համարձակութիւն իսկ տայ անխափան ի բարեացն առաքինութիւնս, թէ լաւ է յամենայն ժամ նախանձել ի բարիս: 64 Դարձեալ փութայ ամենեքումք հանդերձ ըստ Քրիստոսի հետոցն վարել: 65 Հայեցարուք, ասէ, ի զաւրագլուխն հաւատոց եւ ի կատարիչն Յիսուս. դարձեալ՝ թէ յիշեցէք զառաջնորդս ձեր եւ զվերակացուս ձեր ի Տէր, որք խաւսեցան ձեզ զբանն կենաց. հայեցարուք յելս զնացից նոցա, եւ նմանողք լերուք հաւատոց նոցա: 66 Եւ միանգամայն՝ թէ զայս խորհեսցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ, որ ի Քրիստոս Յիսուս. եւ դարձեալ՝ թէ սկսաւ Յիսուս առնել եւ ուսուցանել: 67 Իսկ ցանկալի եղբայր Տեառն Յակոբոս զհամաւրէն իսկ զգունդս սրբոցն հանդերձ սրբասէր տերամբն յաւրինակ առեալ ի թղթին իւրում, ասելովն՝ եթէ աւրինակ առէք, եղբարք, զչարչարանաց երկայնմտութեանն զմարգարէսն՝ որք խաւսեցան յանունն Տեառն. զհամբերութիւնն Յոբայ լուարուք, եւ զկատարումն Տեառն տեսէք:

68 Զայս եւ այսպիսի ինչ, եւ որ ինչ եւ այսմիկ նման էին բանք, խաւսէր հանապազ. զտիւ եւ զգիշեր ոչ զաղարէր ի խրատելոյ եւ ի բողոքելոյ: 69 Եւ իմաստութեամբ Հոգւոյն Սրբոյ, որ բնակեալ էր ի նմա, ըստ ամենայն աւուրց իւրոց ժամանակացն ամաց կենաց իւրոց՝ երանելի եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս այսպէս առ ամենեսեան զխրատ վարդապետութեանն առ հասարակ իբրեւ զհայր բազմագութ իբրեւ զմայր զթած ցուցանէր. զհոգեւոր սիրոյն եռանդն ածէր առ ամենեսին, առ մեծամեծս եւ առ մանկունս, առ պատուականս եւ առ անարգս, առ հարուստս եւ առ աղքատս, առ ազատս եւ առ շինականս: 70 Եւ զվերակացութիւնս աշխարհի ամենայն հոգաբարձութեամբ, առանց ամենայն ծուլութեան եւ ամենայն յապաղութեան, տանէր մինչեւ ի վախճան իւր, եւ ոչ երբէք ուրեք եղեւ նման նմա այլ ոք ի Հայաստան երկրին:

ԳԼՈՒԽ Ե.

1 Յաղագս Ներսիսի Հայոց կաթողիկոսին, թէ զհարդ յԱրշակայ արքայէ առաջեցաւ առ Վաղէս կայսրն հանդերձ նախարարաւմն. թէ վասն որոյն կայսերն զի՛նչ խաւսեցաւ շատ բանս հաւատոյ, եւ կամ զի՛րոյ կապեցաւ եւ արտրեցաւ, եւ գայլ նախարարսն արձակեաց հանդերձ պատարագաւ:

2 Ապա վասն խաղաղութեան ուխտին միաբանութեան դաշինն, որ էր աշխարհին Հայոց ընդ կայսերն Յունաց, դէպ եղեւ առաքել անդր կազմութեամբ մեծաւ արքային Հայոց. զի ինքնին մեծ կաթողիկոսն Հայոց Ներսէս, եւ ի մեծամեծացն Հայոց սատրապս տասն ընդ նմա առնել, զի երթիցէ, ի մէջ կայսերն եւ ի մէջ իւրեանց զուխտն հաւանութեան եւ խաղաղութեան նորոգեսցեն: 3 Ապա չոգան զնացին հասին ի կայսերական պաղատն թագաւորացն Յունաց:

4 Զայնու ժամանակաւ թագաւորն մեծ Յունաց Վաղէս ի խոտորութեան հերետիկոսութեան աղանդութեանն արիանոսաց էր ի հաւատս: 5 Արդ իբրեւ ետես զնոսա թագաւորն, զառաջինն մեծապայծառ փառաւք մեծաւ շքով մեծարեաց զնոսա: 6 Ապա դէպ եղեւ՝ զի որդի միամաւր կայսերն, այն իսկ գտանէր նորա զաւակ, անգեալ դնէր յախտս սաստիկ հիւանդութեան. ապա թագաւորն վասն աղաւթս առնելոյ ի վերայ մանկանն ստիպէր զսուրբ կաթողիկոսն Հայոց զՆերսէս: 7 Իսկ նա ի մէջ մատուցեալ, խաւսել սկսաւ եւ ասէ. եթէ հաւատասցես՝ եթէ Տէր Յիսուս Քրիստոս որդի եւ ծնունդ Աստուծոյ միածին, ինքն յինքնութենէ եւ իսկ յիսկութենէ, յորովայնէ՞ Հաւր ծնունդ եւ ոչ արարած, ծագումն Հաւր, լոյս փառաց էականին, եւ նկարագիր էութեան նորա. զի այն ծնունդ է եւ որդի ի բնութենէ նորա. զի որպէս Հայրն՝ նոյնպէս եւ Որդի ի բնութենէ յառաջ քան զամենայն յաւիտեանս ի Հաւրէ ծնեալ, յառաջ քան զլինելն արարածոց՝ ծնունդ, գործակից արարչակից յամենայնի առ Հաւր ի սկզբանէ. զի ամենայն ի Հաւրէ նովաւ եղեւ յերկինս եւ յերկրի. զի միշտ ընդ Հաւր ի սկզբանէ յառնելն զամենայն արարածս, եւ ի բնէ եւ ի սկզբանէ ընդ նմա ունէր զհամեմատ կերպարանս զիւրոյ ծնողական տպոցն նմանութեանն՝ հանգոյն զուգակցութեանն. որ ի սկզբանէ աշխարհի կրէ՞ զամենայն բանիւ զաւրութեան, եւ իւրով բնական իշխանութեամբն վարէ ուղղէ եւ առաջնորդէ ամենայն արարածոց. որ ի սկզբանէն արար եւ հաստատեաց զհիմունս երկրի, եւ ձգեաց զերկինս որպէս զխորան. որոյ ձեռքն արարին եւ հաստատեցին զամենայն երեսս երկնից. որ արար զմարդն իսկ ի հողոյ, եւ կարգեաց զբանա-

ւորս զխաւսունս իմաստունս անձնակամս: 8 Եւ իբրեւ անձնիշխան կամաւք ապականեցան մարդիկ, ոչ ծանեան զԱրարիչն եւ ոչ զպատուիրանս նորա, Որդի ի բնէ ի սկզբանէ նստէր ընդ աջմէ Հաւր, եւ աթոռակից ծնողին իւրոյ էր. իսկ իբրեւ ետես եթէ արհամարհեալ կայր հայր ի մարդկանէ, խաղաց եկն էջ յաջմէ աթոռոյ անտի. ամփոփեցաւ փոքրկացաւ, եւ ի Կոստն մարմնացաւ մարդացաւ, եւ զանձն ունայնացոյց. եւ մարդ եղեալ, կամաւք կրեալ զվիշտսն, մեռաւ եւ յարեաւ եւ կեցոյց զամենեանն առ հասարակ. եւ վերացաւ եւ նստաւ յաթոռ իւրոյ բնութեանն, ընդ աջմէ Հաւր՝ իւրոյ ծնողին:

9 Արդ եթէ զայս այսպէս հաւատացես՝ եթէ Քրիստոս որդի եւ ծնունդ է Աստուծոյ, գրովք՞ եւ բազմաւք եւ անթիւ վկայութեամբ կարեմք հաճել զքեզ, եւ լուանալ զքեզ ի սուտ եւ ի պիղծ մկրտութենէ հերետիկոսութեանն հաւատոց: 10 Եւ ընկալ դու զմկրտութիւն սրբութեանն հաւատոցն ի շնորհս յանուն Հաւրն արարչին, եւ ի խոստովանութիւն ծննդեան Որդւոյն ի Հաւրէ, որ է յառաջ քան զյաւիտեանս եւ զժամանակս, որ է ըստ բնութեանն գոյացութեան իւրոյ. եւ ի մարմնանան էջ՞ ի Կոյսն սուրբ, որ եղեւ ի վաղջան ժամանակաց, որ եղեւ վասն մերոյ փրկութեան եւ կենդանութեան. ի մահն եւ թաղումն նորուն Որդւոյն Յիսուսի Քրիստոսի, եւ ի խաղաղութիւն եւ ի միաբանութիւն եւ ի պարգեւս նորուն Հոգւոյն Սրբոյ: 11 Մկրտեաց դու ի սոյն յայս խորհուրդս սքանչելի կենաց թողութեան եւ նորոգութեան. եւ զմանուկն քո այսմ սրբութեանն երանութեան լուսոյ թողութեան մկրտութեանն արժանի արասցուք. եւ խնդրեսցուք ի Քրիստոսէ Տեառնէ մերմէ, զի թողցէ զմեզս անհաւատութեան

1 Թերեւս ի բնութեմէ
2 Յօր. կրեւ

3 Յօր. որովք
4 Զի՞ յօր.

հերձուածողութեանն եւ ողորմի. վասն որոյ ցաւք եւ տանջանք եղեն ի սկզբանէ եւ լինին: 12 Այդմ ես լինիմ երաշխաւոր վասն Տեառն ողորմածի՝ զի զմանուկն ողջ անարատ առաջի քո կայայց, եթէ դու յուղղափառ հաւատս՝ եկեսցես, եւ իբրեւ զայլ որթողոքս խոստովանեսցիս ընդ մեզ:

13 Ապա թէ ոչ խոստովանեսցիս ի Քրիստոս միածին Որդին Աստուծոյ, զոր նախ յառաջ քան զամենայն՝ Հայր ի բնութենէ իւրմէ բաւական իւրոյ բնութեան հայրութեանն ծնաւ ծնունդ կատարեալ միածին, նոյն նման զուգակից, եւ աթոռակից եւ արարչակից. որ վասն սիրոյն նորա սիրեաց զմեզ, առ սէր մեր առաքեցաւ ի Հաւրճ Կոյսն սուրբ Մարիամ, եւ երեւեցաւ մարդ ի կնոջէ այն՝ որ նման էր բնութեան իւրոյ ծնողին, եւ ի բնութենէ ունէր զբնութիւն Հաւրճ կերպարանաց հաւրճ իւրոյ, մարմնովն վասն մեր եղեւ իւրովք կամաւք ի կերպարանս ծառայի: 14 Եւ քանզի անկան մարդիկ ինքնակամ կամաւք ի ծառայութիւն, արդ ինքն Տէր եղեւ ի կերպարանս ծառայութեանն, զի ի ծառայութենէ ազատեսցէ զմեզ: 15 Զի ի սկզբանէն յորժամ առնէր Աստուած զարարածս, յետուստ արար զմարդն՝ յերեւոյթ եւ յաներեւոյթ իւրոյ զաւրութեանցն ի մի եւ նոյն ժողովեալ. եւ այսպէս եւ զամենայն ի նոյն պնդեալ ձուլեաց զարարածս, զոր եւ ըստ նմանութեան պատկերի կերպարանաց իւրոց արար. եւ եդ զնա իշխան անձնիշխան իւրոց կամաց: 16 Վասն որոյ նախանձու սատանայի ապականեալք հնացան ի բանսարկութիւն խարդախութեան պատրանացն: 17 Իսկ Տէր եկն յայց ելեալ կորստականին, ծնաւ ի Կուսէն ի մարդկան կերպարանս, զի արասցէ խաղաղութիւն յերկիրս եւ յերկրի, եւ ածցէ զիւր Հայրն ծնաւդ ի հաշտութիւն ընդ արարածս իւր՝ մարդակերպ պատկերաւն, զի

յանդիման լիցին ամենայն մերժեալ արարածքն աներեւոյթն Աստուծոյ:

18 Ապա յիրաւի ուրեմն ի նորոգման արարածոց, զամենայն վերստին նորոգէ. զի եթէ իցէ ոք ի Քրիստոս նոր՝ արարած:

19 Զի այն որ հինն էր՝ էանց, արդ աւասիկ եղեւ նոր ամենայն. զի եկն էառ զմարդկան կերպարանս, եւ ինքեամբ դարձեալ զամենայն նորոգեալ հաստատեաց:

20 Ինքն եղեւ աւրինակ մերոյ կենդանութեանս, անդրանիկ ամենայնի մեռելոցն՝ մեռանելովն. եւ նախ ի մեռելոցն յարութեամբն, զի յայտնի արասցէ ինքեամբ զամենայն. զի զմեզ առանց փոխման արասցէ հոգւով, եւ անմահ մարմնով. զի մի՛ միայն մարդիկ յանփոփոխումն հոգւոյն հայեցուք, այլ յանմահութիւն մարմնոյն. զի եւ աներեւոյթքն դարձեալ եւ բանաւոր զաւրութիւնքն ամենայն անփոփոխմանս այսմիկ ընդ մեզ ակն կալցին: 21 Քանզի ամենայն արարածք ազատեսցին ի ծառայութեան անտի ապականութեան՝ յազատութիւն փառաց Որդւոյն Աստուծոյ՝:

22 Զի առ այն, ասեն, որ ի մէնջ ի Կուսէ անտի մարդ ծնաւ Աստուածն, որ մեք աստի առժամայն ի հաստատութենէն թաւթափեալք, եւ հանդերձեալ ժամանակին ի լաւագոյնսն հասեալք ամենեքին, հայեցեալք սպասեալք ակն ունիմք ի սկզբանէն յարարիչն եւ յառաջնորդն նորոց արարածոց:

23 Քանզի ծնունդ եւ կերպարանք է նա աներեւոյթին Աստուծոյ, միածին ծնունդ Հաւրճ, արարիչ ամենայն արարածոց. ուստի եւ զհանգամանսն թարգմանեալ, ածէ թափէ Առաքեալն միանգամայն եւ ասէ՝ թէ նովաւ հաստատեցան ամենայն որ ինչ յերկիրս եւ որ ինչ յերկրի, եթէ երեսելիք եւ եթէ աներեւոյթք, եթէ աթոռք, եթէ տերութիւնք, եթէ իշխանութիւնք, եթէ պետութիւնք, եթէ զաւրութիւնք: 24 Եւ խոնար-

1 Մեթյաւելաբ՝ հաւատս

*** Հմմտ. Հուս. Բ 21:

է Հմմտ. Կող. Ը 16:

Հագոյն յայտնագոյն առնէր զասացեալսն. Զի ինքն է անդրանիկ ի մեռելոց, զի եղիցի յամենայնի ինքն յառաջացեալ. զի նմա համեցաւ ամենայն լրութիւն աստուածութեանն՝ բնակել, եւ կամ նովաւ կատարել զամենայն, զի արասցէ խաղաղութիւն արեամբ խաչիւն իւրով, նովաւ այն որ ինչ յերկիւնս, եւ որ ինչ յերկրի՞: 25 Զի չարչարանաւք Տեառն Քրիստոսի միածին Որդւոյն Աստուծոյ՝ ամենայն ի նոյն ժողովեցաւ որ յերկիւնս եւ որ յերկրի:

26 Քանզի մեծութիւն Աստուծոյ արար զամենայն, եւ կացոյց զմարդն տէր ամենայնի. Հրամայեաց եւ բազմացան: 27 Ապա կացոյց իշխանս եւ կարգեաց առաջնորդս: 28 Իսկ յորժամ զպատուիրանազանցութիւնն՝ գործեցին առ զամ մի, անկան յիշխանութենէ՝ զոր առեալ յառաջն ունէին: 29 Իսկ յերկրորդին՝ լոկ միայն վասն կարաւտութեանն պիտոյից ետ իմիք իշխել, եւ իմիք չիշխել. զի գոնեայ ապա յետոյ յետուստ իշխելովն ծանիցուք զչնորհն, եւ չիշխելովն զամենատեառնն տէրութիւնն զիտասցուք: 30 Իսկ ո՞վ իցէ, որ ոչ ցանգանայ մեծութեանն եւ կամ մարմնոյ առողջութեանն եւ կամ կամարարութեանն կարաւտիցի, որ միայն միում միածնի Որդւոյն Աստուծոյ վայել է: 31 Իսկ մարդկանն, ոչ առ ամենեսին մեծութիւնն, եւ ոչ առ բնաւ աղքատութիւնն. եւ ոչ միշտ մեծք, եւ ոչ ի սպառ աղքատք, կամաւ մեծացեալք եւ կամաւ աղքատացեալք: 32 Ոմանց ծնեալ, եւ ոչ սնուցեալ. ի չափ Հասուցեալ, եւ անարգեալ թշնամանաւք: 33 Ո՞վ իցէ՝ որ սիրեաց զհիւանդութիւնն եւ ատեաց զառողջութիւնս. յամենայնի պակասեալք եւ ոչ կարաւտեալք: 34 Կէսք ի կռապաշտու-

թեան եւ ի սպանութիւնս, ի պոռնկութեան եւ ի բազմագգի չարիս կաշկանդեալք զմածեալ կան. կէսք մոլորեալք եւ դանդաչունս մտաւք, ընդ պատահարաւք կայեն զամենայն, եթէ զբարի եւ եթէ զչար:

35 Իսկ յորս արեգակն արդարութեան զլուսաւորութիւնն հաւատոցն ծագէ, եւ զմէգ տգիտութեանն խաւարին սեռութեամբն հալածէ, նոքա հանապազ յանդիմանեն զստութիւնս եւ զմոլորութիւնս: 36 Եւ նախ իբրեւ գործովք եւ աւրինակ բարեաց յանձինս ցուցանելով, եւ ապա զայլս ուսուցանելով զնոյն. նախ ոչ երկմտելով ի հաւատոցն յերրորդութենէն զաւրութեան արարչութեանն, եւ ապա զանձինս սրբութեամբ եւ զգաստութեամբ եւ պարկեշտութեամբ պահել յաշխարհէ: 37 Եւ կեալ ամենայն հանդարտութեամբ ըստ կամացն Քրիստոսի, մերոյ Արարչին, Որդւոյն Աստուծոյ. եւ արհամարհել կոխել զամենայն անցաւորս, եւ վերամբարձ ի թեւս Սուրբ Հոգւոյն թոչել անցանել ի վերայ ազբախումբ զաւրութեանցս՝ որ աստէն առ մեք պատաղիչքն. եւ այնչափ խորշել եւ մերժել եւ յանպիտոյիցս, մինչեւ զկերակուրս աւուրն ռոճկին արհամարհել, թող թէ զմիս կամ զգինի ճաշակել, որ զնախճամէջ պարսն յուղացուցեալ մեղկացուցանէ եւ զճարպն զերիկամամքն պատեալ. ուստի բիւր՝ եւ ազգի ազգի ելանեն անթիւ անաւրէնութիւնքն: 38 Որ տայ այնպիսեացն, որ զայն սիրեն, ապագնալն ըստ կամս անձանց իւրեանց:

39 Այլ մեզ ընդ այսր լիցի վայելել⁴ ի շնորհս մարդասիրութեանն բարերարութեանն, յոր ամենայն ազգ եւ ազինք խոստովանին զՏէր Յիսուս Քրիստոս ծնեալ ի Հաւրէ, ծնեալ եւ ոչ արարեալ, իսկակից Հաւր եւ բնակից ծնաւդին իւրում. ծագումն, լոյս փառաց Հաւր, կերպարանակից

1 Յօր. չի՞ր աստուածութեան

՝ Հմմտ. Կող. Լ՝ 18-20:

2 Յօր. մի պատուիրանաւանդութիւնն. տէ՛ս Դպր. Ե, Գլխ. ԻԸ:

3 Յօր. բոյր

4 Յօր. վայել

իւրոյ ծնաւղին: 40 Եւ որոց իցեն աչք մտաց, եւ չեն կուրացեալ ի հաւատոցն ճշմարտութենէն, նոցա նայելիս ցուցանէ, որոց ամենայն կողմանքն հայելիք են: 41 Լի լուսով նորա է ամենայն երկինք եւ երկիր եւ ամենայն աշխարհք, եւ ամենեցուն լսելիս որոշի՝ որ ամենայնիւն լսելիք են. եւ ամենայն ծածկեալք սրտից եւ խորհրդոց մտանեն ի լսելիս նորա, եւ զննէ զամենայն շունչս մարմնոյ: 42 Եւ իւրովք կամաւք երեւեցաւ մարմնով հասակաւ անձամբ կերպարանաւք եւ պատկերաւ. գլխութիւնքն իւր արարին. եւ ոյք սիրեն զնա, սէրն իւրեանց կերպարանէ զնա ի սիրտս իւրեանց, եւ երկիր պագանեն նմա հոգւովն ճշմարտութեամբ. սրբեալ զսիրտս իւրեանց եւ զմարմինս իւրեանց, առնեն տաճար Սուրբ Հոգւոյն. եւ հաղորդք եւ հաւասարորդք եւ բաժանորդք առնին մեր երանութեանս, զոր ետն Տէր եւ ասէ՝ եթէ երանի՞ որ հաւատայցեմ ճշմարտութեանն. եթէ Որ ետեսն զիս, ետես զՀայրն իմ՞. եւ եթէ երանի՞ որ ոչն տեսն զիս, եւ հաւատացեմ յիս. զի նոքա զՀայր տեսցեմք: 43 Եւ միտք՝ որ յաստուածտեսութենէն հաւատոցն անմասն եղեալ են, ի կերպարանացն թափուր եւ ունայն իբրեւ ակերակք¹:

44 Իսկ որք լուսաւորեալք են տեսանելեաց աներեւոյթ սրտին աչաւք, որպէս ասէ մարգարէն. Ի քեզ ասաց սիրտ իմ, եւ խնդրեցիմ երեսօք իմ գերեսս քո՞. դարձեալ ասէ. Եղի զՏէր առաջի իմ յամենայն ժամ, զի էր ընդ աջմէ իմմէ, զի մի՛ սասանեցայցք. եւ դարձեալ ասէ. Ուրախ եղէց յուրախութիւն երեսաց քոց: 45 Ոյք այժմ ի

ծածուկ լուսաւորութենէն խորհրդովքն տեսանէին զնա ըստ նորա կամացն, ապա ի վաղճանի դէմ յանդիման երեւեցի. որպէս երանելի առաքեալն Պաւղոս ասէ՝ եթէ այժմ ընդ հայելի աւրինակաւ տեսանեմք, իսկ յապա առ յապա յորժամ գայցէ՝ բերիցէ ինքն տալ մեզ զիւրոց փառացն զանմահութիւնն եւ զանեղծութիւն. եւ յորժամ առանց նմանութեանցն եւ առակացն գայցէ երեւեալ Որդի Հաւր եւ Սուրբ Հոգւովն, յորժամ հրամայեցէն ամենեցուն՝ եկեալ անմահութեամբքն՝ որք զԱստուածն տեսանիցեն առաւել առ բազմացն արժանեացն ակնկալութեամբ, կամի երեւեցուցանել զփառաւոր զգալուստն իւր, որպէս վասն երկայնմտութեանն համբերողացն եւ յուսալից սպասելոցն գայցէ երեւեալ Քրիստոս ծնունդ Աստուծոյ Հաւր: 46 Որ ամենայն արդարոցն գայ պարգեւատուն վասն վկայելոյն ի հաւատոց անտի: 47 Որոց չեւ ընկալեալ զաւետիսն, Աստուծոյ վասն մեր լաւագոյն խորհեալ՝ զի մի՛ առանց մեր կատարեսցիմք: 48 Զի եթէ քննեցէ ոք զգիրս սուրբս, յամենայն աստուածաշունչ մատեանսն զսոյն եւ զաստուածեղէն յաճախութիւն հոգեւոր պատգամացն գտանէ ոք. վասն զի կան պահին արդարոցն եւ հաւատացելոցն լուսաւորք եւ թագքն արքայութեանն յաւիտենից ժամանակին, եւ թերահաւատիցն ժխտողացն եւ անհնազանդիցն ժպրհութեան պատիժք, ճարակ լինել նոցա անչէջ հրոյն յաւիտենից դատաստանին յանուն Տեառն, յանսպառ յանսահման առանց թուոյ եւ առանց չափոյ ժամանակն տանջանաց գեհենին, խաւարին դատաստանին՝ որ գալոցն է:

49 Այլ վասն որդւոյն քո, եթէ դու ի ճշմարիտ հաւատս ուղղութեան եկեսցես, խնդրեսցուրք ի Տեառնէ եւ զիցուրք զձեռս մեր ի վերայ նորա, եւ ասացուրք՝ թէ ըստ հաւատոցն ձերոց բժշկէ զսա Քրիստոս

¹ Յով. Ժ. Գ. 9
² Հմմտ. Յով. Ի. 29:
³ Յորինակի միտում աւերակ
⁴ Ս. Գ. Ի. 9 Ի. 8
⁵ Հմմտ. Ս. Գ. Ժ. Ե. (Ժ. 9) 8:
⁶ Հմմտ. Ս. Գ. Ի. 7:

⁷ Հմմտ. Եբ. Ժ. Ը. 40:

ծնունդ Աստուծոյ, եւ բարեմիտ ողջանդամ
 յարիցէ նա առաջի քո. հանդերձ արքայու-
 թեանն նորոգութեանն՝ անմահութեանն
 յաւերժ բարեաց եւս արժանի արասցէ
 զձեզ: 50 Ապա եթէ ոչ հաւատասցես,
 զիա՞րդ արդեւք լինիցի թողութիւն եւ
 բժշկութիւն. եւ կամ մեք զիա՞րդ արդեւք
 իշխիցեմք յանդիմանել կամ համարձակել
 եւ խնդրել, եւ կամ առնել աղաւթս վասն
 այնոցիկ՝ որք բնաւ իսկ ոչ ճանաչէին
 զՏէր. զի բարկութիւնք Տեառն վախճանէ
 զայնոսիկ՝ որք ոչ ուղղութեամբ զՏէր
 խոստովանին. եւ կամ որպէս՝ մարթիցէք
 խնդրել զնա, որք ոչ հաւատայք զիտու-
 թեան պատուիրանացն նորա, եւ ոչ ի միտ
 առնուլ զաւրէնս նորա: 51 Զի արեւմ
 Տեառն ամբիժ եմ, դարձուցանեմ զոգիս.
 վկայութիւն Տեառն հաւատարիմ է, իմաս-
 տուն առնէ զտղայս: 52 Արդարութիւն
 Տեառն ուրախ առնէ զսիրտս. պատուի-
 րանք Տեառն լոյս եմ, եւ լոյս տան աչաց.
 երկիր Տեառն սուրբ է, եւ մնայ յաւի-
 տեանս: 53 Դատաստանք Տեառն նշմարիտ
 եմ, եւ արդար է ի նոյն. ցանկալի է նա քան
 զոսկի, եւ քան զականս պատուականս բա-
 զումս. եւ քան զնա քան զմեղու խո-
 րիսիս: 54 Իսկ որոց զանձինս իւրեանց
 յապականութիւն տուեալ, եւ նիւթ հրոյ
 պահէ զնոսա: 55 Ոչ եմ բանք եւ ոչ եմ
 խաւսք, որոց ոչ լսին ձայնք մոցա. այլ մոցա
 ընդ ամենայն երկրի եւ բարբառն, եւ միմ-
 չեւ ի ծագս տիեզերաց եմ խաւսք մոցա: 56
 Իսկ որք ոչն լսենն՝ եւ որք լսենն, պա-
 հէ նոցա Տէր զհատուցումն նորա:

57 Զայս ամենայն բանս, եւ որ ինչ
 այսմ եւ սմին ինչ նման էին բանք, խաւ-
 սեցաւ սուրբն Ներսէս ընդ կայսերն, եւ
 զայն յաւել՝ եթէ յաւրէ յայսմանէ մինչ

յաւուրս հնգետասան վասն ողորմածու-
 թեան բարերարութեանն վասն ներելոյն
 անսացեալ քեզ, կէտ ժամանակաց այնչափ
 աւուրց անսացեալ քեզ, եթէ ոչ ուղիղ ե-
 կեսցես ի հաւատսն, նշան քեզ այս լիցի.
 որ մինչեւ յայն աւր ի հաւատսն ոչ հաս-
 տատեսցիս, յետ ընլոյ եղեալ կիտին՝ մեռցի
 մանուկն. զի զիտասցես եթէ հաւատարիմ
 է այս ամենայն, զոր խաւսեցայ առաջի քո:

58 Եւ իբրեւ լուաւ թագաւորն զայս
 ամենայն, զի մինչ դեռ խաւսէրն առաջի
 նորա՝ նա լուռ եւեթ կայր, ոտն զոտամբ
 արկեալ, արմուռնին ի ծունգ եւ ձեռն ի
 ծնաւտի՝ նստաւ այնպէս, մինչեւ կատա-
 րեաց խաւսեցաւ զամենայն զբանս իւր:
 59 Եւ զրէին զայս սեմիարք նոտարացի
 արքային, որք կայինն առաջի թագաւո-
 րին: 60 Ապա մեծապէս ի ցասումն բրդեալ
 լինէր թագաւորն, եւ տայր հրաման՝ եր-
 կաթի կապանաւք մեծապէս կապել զսուրբ
 եպիսկոպոսապետն Հայոց զՆերսէս, եւ
 արկանել ի փիւղակէ. զի մինչեւ տեսեալ
 ուչ ունիցի մանգանն, եթէ կեցցէ՞ եթէ ոչ.
 ապա յետ այնորիկ տեսցէ զինչ արժան իցէ
 առնել: 61 Ապա յետ ընուլ աւուրցն հնգե-
 տասանիցն անցելոցն, սատակեցաւ մա-
 նուկն որդի կայսերն, եւ ընդ ամենայն՝
 այն ժառանգ գտանէր նորա: 62 Իբրեւ ե-
 լաց եւ կոծեցաւ որչափ կոծեալն էր, ապա
 ետ հրաման եւ ածին առաջի իւր զսուրբն
 Ներսէս: 63 Մաւտ առ ինքն կոչեալ հար-
 ցանէր, եթէ ի ձէ՞նջ քրիստոնէից եղեւ
 մանկանն մեռանել: 64 Իսկ նա ետ պա-
 տասխանի եւ ասէ. Հնգետասան աւր յետ
 բանիցն եղելոյ երկարեաց Քրիստոս, թե-
 րեւս դարձջիք. իսկ իբրեւ ոչ դարձայք,
 սատակեցայք: 65 Իսկ դու այժմ եթէ հա-
 վատասցես, կարող է Որդին Աստուծոյ Յի-
 սուս Քրիստոս յարուցանել զնա, եւ հան-
 դերձ որդուովն քո եւ ամենայն ընդա-
 նեաւքն:

66 Ապա զայրացեալ ընդ բանսն թա-
 գաւորն, կամեցաւ զնա չարամահ առնել.

1 Յօր. ո՞ր ոչն
 * Հմմտ. Սաղմ. ԺԲ(ԺԹ) 8-12:
 † Հմմտ. Սաղմ. ԺԲ(ԺԹ) 5-6:
 2 Պակասի ընկալցին զպատիժս

ապա մատուցեալք առ թագաւորն աւագք իւրոյ դրանն եւ խորհրդականք, եւ ասեն ցկայսրն՝ եթէ յաւտար եւ ի հեռաստան երկրէ վասն որոյ յղեալ զդոսա հզաւր թագաւորի, եւ մեծի Տեառն հրեշտակք են, մի՛ ինչ լիցի դոցա վնաս ի մէնջ. եթէ ոչ, մեծ պատերազմ յառնելոց է ընդ մեզ եւ ընդ մեծ թագաւորն Հայոց, եւ մեծ թշնամութիւն ի մէջ անգանելոց է. զի ոչ եթէ նորա բանիւ մանուկն կեայր կամ մեռանէր: 67 Եւ թէպէտ այսպիսի բազում ինչ ասէին, ոչ կարէին զսրտմտութիւն բարկութեանն շիջուցանել զթագաւորին:

68 Ապա իբրեւ յանհնարին մտանէին իրքն, եւ պնդեալ յամառէին ամենայն բազմութիւնքն՝ զի մի՛ գայրն սպանցէ, ապա ուրեմն հազիւ հազիւ կարացին իւր զաւրքն ի հաւան ածել զթագաւորն՝ այնչափ առնել, գոնեայ մի՛ սպանցէ: 69 Բայց սակայն արձակել տալ ոչ կարացին. այլ արկին յայն չափս, զի աքսորեսցի միայն: 70 Զի այսպէս մեծապէս ճգնեալ խորհեցան իմաստունքն, զի առ դամ միայն աքսորելովն ապրեսցի գոնեայ, ապա առ յապա դարձ լիցի առնն, զի մի՛ ի խռովութիւն եւ ի պատերազմ ի մէջ թագաւորութեանցն երկոցունց լինիցի: 71 Զի ասէին. Ոչ երբէք ուրեք եղեալ է, ոչ ի մէջ թշնամեաց ուրեք, եւ ոչ ի մէջ պատերազմի թարմատար հրեշտակաց ինչ կալեւկապ եւ ոչ բանք, թող թէ մահ. զի ոչ երբէք ուրեք ի հնոց ժամանակաց հետէ, թող թէ այր մեծ եւ աւագ եւ աշխարհի միոյ գլուխ: 72 Զի թագաւորն դոցա աշխարհին եւ դա, որպէս ասեն, ընդ մի համար են. եւ ասեն՝ թէ աշխարհն այն, ուստի դոցա եկեալ են, սիրեն գայրդ գայդ. եւ երեւելի է դա անդ: 73 Եւ որպէս ետուն զրոյց որք ընդ նմա եկեալ էին, թէ ազգակից համարին զսա եւ մերձաւոր թագաւորին. եւ իւրեանց աշխարհն սիրեն գայրդ գայդ:

74 Իսկ թագաւորն տայր նոցա պատասխանի. Բարիոք ասացէք՝ եթէ այդ

այդպէս իցէ, ով արք իմաստունք. զի եթէ տէր նորա տուեալ էր ինձ ի ձեռն նորա զանարգութեան թշնամանս, ոչ գոյր նորա մեղ դնել բանբերին, եւ ոչ պատիժ եւ ոչ բանք: 75 Իսկ նա իւրովք կամաւք թշնամանեաց զիս, եւ իւրովք կամաւք եղեւ երաշխաւոր մահու որդւոյն իմոյ. եւ ասաց՝ բայ ես իսկ սպանի զնա: 76 Իսկ եթէ նորա թագաւորն զնա առ սէր յղեաց, նա եկն կոտորել զմեզ, վասն այսորիկ առ իւր թագաւորն իսկ է վնասակար: 77 Բայց փոխանակ զի ինքն անձամբ զանձն իւր կալաւ, պարտ ինչ է այնմ իմիք. ես ինձէն զիտեմ թէ չեղեւ ի նմանէ, մահապարտ է:

78 Ապա ոչ ինչ անսաց նոցա թագաւորն, այլ հրաման ետ աքսորել զերանելին Ներսէս, եւ տանել ընկենուլ զնա ի կղզի մի ի ծովուն մեծի, յայնպիսի յանապատ տեղի՝ ուր ոչ մարդ կայցէ, եւ ոչ ջուր ըմպելոյ, եւ ոչ կերակուր. բայց սոսկ միայն անապատ իցէ, զի սովամահ սատակեսցէ զնա: 79 Եւ ժողովեալ զամենայն իւրոյ իշխանութեանն քաղաքաց զամենայն որթորքս զեպիսկոպոսս զերիցունս զսարկաւագունս, որ միանգամ յուղղութեանն էին եւ ի հաւատս. եւ մեծ ժողով առ հասարակ իշխանութեանն ժողովեցան: 80 Եւ խաւսէր ընդ նոսա, զի ամենեքեան յանձն առցեն դառնալ ի խոտորութեան հաւատն աղանդութեանն արիանոսաց, եւ դարձցին անդրէն երթալով յիւրաքանչիւր վիճակս, եւ շրջեսցեն զիւրաքանչիւր ժողովուրդս յարիանոսաց հաւատն: 81 Իսկ իբրեւ ոչ ոք ի նոցանէն այսմիկ յանձն առնուլ հաւանեցան, ապա աքսորեաց զնոսա, եւ ընդէց յաշխարհս աւտարս, զի մի՛ ոք ի նոցանէն դարձցի յիւր տեղիս: 82 Եւ փոխանակ նոցա՝ զանաւրէնութեան հովիւսն կացուցանէր, յամենայն քաղաքս արիանոսս չեպիսկոպոսս յղէր. եւ եղեւ մեծ շարժումն եւ խռովութիւն եւ հերձուածք յամենայն եկեղեցիս տիեզերաց:

83 Եւ մեծ եղեւ ընդ ամենայն տիեզերք փորձութիւնք նեղութեանց վտանգի քան զառաջին թագաւորացն. եւս չար որ ի հեթանոսացն պատերազմն եւ խռովութիւնքն յառաջագոյն յառնէր առ այլովք զիցապաշտ մեհենասէր թագաւորաւք: 84 Ամենայն ճշմարիտ ուղղափառհաւատք վարդապետք մերժեցան յիւրաքանչիւր ժողովրդոց, եւ զնոցա տեղիսն կալան մշակք սատանայի. եւ ամենայն հաւատացելոց ի Քրիստոս հասանէին բազում նեղութիւնք, եւ առ հասարակ ամենայն ժողովրդոցն լինէր սուգ եւ տրտմութիւնք: 85 Զի կալան զեկեղեցիսն ամենայն պաշտաւնեայքն սատանայի, եւ հեռացան հովիւքն յիւրաքանչիւր հաւտից, եւ եղեն խաշինք ցրուեալք. զի ոչ գոյր նոցա առաջնորդ, եւ ոչ մնաց տեղի աղաւթից հաւատացելոց ժողովրդոց: 86 Այլ զի մի՛ հրեշտակացն սատանայի հաւանեցին, նոքա ի բացատ յանյարկ տեղիս՝ արտաքս եւ քաղաքաց եւ շինաց ասէին կալ յաղաւթս. եւ ի կատարել զաղաւթսն իւրեանց՝ խնդրէին ուխտիւք յԱստուծոյ, զի փոխեսցէ զանցուցէ զչար ժամանակն, եւ դարձուցէ զճշմարիտ իւրաքանչիւր վերակացուս յիւրաքանչիւր ժողովուրդսն. եւ յիւրեանց վաստակս ի շինեալ եկեղեցիսն՝ ուստի մերժեցանն, թերեւս դարձ լիցի նոցա այսրէն:

87 Իսկ յայն յիշխանաց՝ որ ընդ սրբոյն Ներսէսի երթեալ էին յերկրէն Հայոց, զնոսա բազում գանձիւք լցեալ արձակէր, կաշառակուրծս կաշառաւեկս առնէր առ հասարակ՝ որ միայն անդ էին. եւ բազում գանձս ոսկւոյ եւ արծաթոյ, եւ ականց պատուականաց ի ձեռն նոցա՝ արքային առաքէր, իբրեւ այնու կամէր հաճել զմիտս թագաւորին: 88 Զի ոչ գոյր չափ եւ ոչ թիւ, զի անհամար գանձս առաքէր արքային Հայոց. գրէր առ նա զիր ամբաստանութեան զսրբոյն Ներսիսէ, իբրեւ թէ սպան զորդի նորա: 89 Եւ արձակեաց եւս զպանդանդսն զԱրշակունիսն

թագաւորին Հայոց, որ կային եւս ի կայսերական պաղատանն. զի են նոքա եղբարորդիք արքային Արշակայ, զի միուամն անունն ճանաչէր Գնել, եւ միւսուամն անունն Տիրիթ, ետ ի ձեռս սատրապացն Հայոց, եւ զնոսա զայս աւերինակ անդուստ յուղարկէր:

ԳԼՈՒԽ Զ.

1 Յաղագս եթէ զիա՛րդ, իբրեւ ւստրեցաւ սուրբն Ներսէս եւ ընգեցաւ ի կղզին յանապատն, թէ ո՛րպէս կամ զիա՛րդ կերակրեցաւ եւ կամ ո՛րպէս յԱստուծոյ եղեն սփանչելիք զամս ինն:

2 Ապա իբրեւ սրտմտեալ թագաւորն Վաղէս՝ յարոյց հալածանս ի վերայ եկեղեցեաց սրբոց ընդ ամենայն կողմանս իւրոյ իշխանութեանն, եւ զամենայն եպիսկոպոսս մեկնեաց եհան յիւրաքանչիւր ժողովրդոց եւ ընգէց զնոսա յաւտարութիւն, առաւելիւր նիւթեալ մեծաւ բարկութեամբ ի վերայ սրբոյն Ներսէսի. վասն զի պատճառք մահուան միամաւր որդւոյն սիրելոյ իւրոյ եղեւ նա, ապա չարապէս չարութեամբ դառնութեամբ մահուան կամէր վճարել զնա: 3 Որում մեծամեծքն եւ ամենայն խորհրդականք թագաւորին չհաւանեալք չառնուին յանձն, այլ հագիւ հագիւ կարացին թափել ի մահուանէ: 4 Ապա ետ հրաման ընգենուլ զնա ի կղզին մի մեծ ովկիանոս ահագին ծովու, յանապատ յանջուր տեղի մի՝ ուր ոչ բոյս ինչ դալար, եւ ոչ արմատ ինչ, եւ ոչ այլ ինչ ամենեւին՝ որ ինչ ի պէտս մարդկան լինիցի. բայց միայն քար եւ աւազ ապառաժ, եւ ոչ ճանապարհ ուրեք ընդ այն, եւ ոչ գնացք ինչ նաւաց:

5 Ապա անցուցին զնա ի տեղին հրամայեալ, եւ ընդ նմա արս եւթանասուն. այլ արքն որք կէսքն եպիսկոպոս էին յայլոց քաղաքաց, կէսք կղերիկոսք յայլոց եկեղեցեաց: 6 Իսկ նա խնդայր եւ ուրախ էր ընդ այն, զի եհաս նմա կրել չարչա-

րանս վասն անուան Տեառն Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ: 7 Եւ էին նորա այն որք ընդ նմայն աքսորեցան յիւրոցն՝ երկու. անուն միոյն Ռաստոմ սարկաւագ, եւ երկրորդին՝ Տիրանամ. եւ այլք եւթանասունքն որ ընդ նոսա, զորս ուստեք ուստեք ընդ նոսա ամացեալ ի նաւն՝ ի կղզին խաղացուցին: 8 Եւ գնաց մեկնեցաւ նաւն՝ որ գնոսայն տանէր, եւ ըստ Հողմոյն յաջողութեան ի Հնգետասան աւր Հասանէր ի Հրամայեալ տեղին. եւ թափեաց գնոսա նաւն ի կղզին, եւ ինքն այսրէն դարձաւ:

9 Եւ յայնմ կղզւոջ ոչ գտանէր ոչ ջուր ըմպելոյ եւ ոչ դոյզն ինչ արմատ, զի անարմատ աւագ միայն էր. զի վասն այնորիկ իսկ տարեալ էր գնոսա անդր, զի սովամահ արասցեն գնոսա ըստ խստութեան թագաւորին Հրամանին: 10 Եւ եղև իբրեւ եհաս նոցա յամել ամսաւրեայ մի ժամանակս, որ տկարագոյնքն էին ի նոսա՝ սկսան նքողել ծարաւել նուաղել եւ ներգեւել զորսովել ի քաղցոյ կամ ի ծարաւոյ: 11 Ապա մխիթարել եւ քաջալերել սկսաւ զամենեանն ներսէս, եւ ասէ. Պինդ կացէք, Հաստատուն լերուք, եւ մի՛ երկնչիք. զի այն Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ որ Հրամայեաց ծառոյն սաբեկայ բերել զխոյն պտուղ, եւ ընկալաւ զԻսահակ կենդանի գոհ, եւ աւրհնեաց զՅակոբ ի պանդխտութեան, եւ ապրեցոյց զՅովսէփ ի ծառայութենէն եւ տիրացոյց, Հրամայեաց եւ մորենւոյն Հրով տերեւել ծաղկել, եւ աւրոցն Հրամայեաց քաղցրութեանն Հացին կերակրոյ ի վերուստ ցաւղել, եւ զլորամարգին ի թռչնոց տալ ապստամբող եւ դառնացող ժողովրդեանն, եւ ինքն Քրիստոս վէմ եղեալ՝ ընդ նոսա շրջէր յանապատին յանջրդին, եւ զքաղցրութիւն ջուրցն ի ծարաւ նոցա մատուցանէր, եւ խորհուրդ Հանդերձելոցն՝ որ առ յապա լինելոցն էր՝ գուշակէր գաւազանաւն ի ձեռն Մովսէսի, վէմն խոցեալ՝ Հոսէր նոցա ջուր, գնոսա

անդ զառաջինսն աւրինակաւքն կեցուցանէր. եւ ինքն կերակրեաց ի սակաւ Հացէ զժողովուրդն յանապատի անդ, եւ ըստ ծառոյն՝ որ զխոյն եբեր՝ ինքն զխաչէն պրկեալ կախեալ խաչեցաւ, եւ աւրինակաւն ըստ նմանութեան ի կողսն խոցեցաւ, եւ եհան մեզ անտի ջուր փրկութեան ի լուացումն սրբութեան ապաշխարութեան. յաղագս կենաց մերոց եւ ինքն վասն մեր Հաց եղև, եւ զարիւնն իւր ըմպել ետ մեզ, զի զմարմինն ի մարմինն խառնեցէ եւ զարիւնն յարիւնն, զի զաստուածութիւնն յոգիս մեր միացուցեալ, զմեզ ընդ Սուրբ Հողմոյն, եւ ի վախճանի զմեզ բնակիցս աստուածութեանն արասցէ. արդ որ այսչափ երախտիս առնէր մեզ, մինչեւ մեք անգամ բանս գոհացողութեան փոխարէն շնորհս ոչ Հատուցանէաք նմա, իսկ արդ զիս՞րդ վասն անուան նորա արժանի եղեալք սակաւիկ մի թշնամանաց՝ սովամահ ինչ կարծիցէք լինել: 12 Ոչ այդպէս. այլ Հաւատով խնդրեցուք, եւ տացի մեզ կերակուր: 13 Իսկ արդ նշան խնդրեմք, ոչ. այլ նշան թերահաւատից պիտոյ է, եւ առ զչարսն դարձուցանելոյ յուղղութիւն. այլ մեզ, զիտէ Տէր զպիտոյսն մեր եւ զաւգտակարսն, եւ ըստ այնմ պատրաստէ զինչ եւ պիտոյ է մեզ: 14 Իսկ մեք ոչ այնպէս, որ քա՛ւ եւ մի լիցի, որպէս ասացաւն. ասէ, Ազգ չար, Առա՛ն խնդրէ՛: 15 Իսկ մեզ կարեւորքն առանց ուրոյն ի մարդկան աղանդէն չիք Հնար լինել: 16 Իսկ Տէրն կարող է եւ առանց կերակրոյ պահել զմեզ կենդանիս, եւ կարող է տալ կերակուր. եւ արդարացուցանել կարող է, եւ արժանիս առնել՝ վասն իւրոյ անուանն պատրաստել մեզ մեռանել. տալ մեզ զսովորական ընդունելութիւն բնութեան մահուն, որ չերթայ ուրեք ի մարդկանէ, այլ պատճառս միայն առնէ զանուն իւր ի վերայ աներե-

*** Մատթ. Ժ. 9. 4

ւոյթ մարմնոյն պահէ՛, եւ իւրոյ արքայութեանն զմեզ բազորդս բաժանորդս առնէ: 17 Կարող է եւ ի խաղաղութեան վաղճանել, եւ առնել արժանիս արքայութեան կարգացն:

18 Զայս եւ այսպիսի եւ որ երթայր զհետ սորին՝ իբրեւ խաւսեցաւ, արդ՝ ասէ՝ դի՛ք ծուներ ամենեքեան, զի արժանի միայն լիցուք մարդասիրութեանն Քրիստոսի: 19 Եւ ի դնել նոցա երիցս անգամ ծուներ եւ կալ յաղաւթս, եւ յարեաւ ի ծովու անդ հողմ սաստիկ, եւ սկսաւ ընկենուլ ի կղզի անդր ձուկն սաստիկ յոյժ, մինչեւ շեղջս շեղջս կուտէր ի ցամաքի կղզւոյն. եւ ընդ նմին փայտ սաստիկ յոյժ: 20 Իբրեւ հանին կուտեցին զփայտն, խորհէին թէ հուր պիտոյ է, որով զփայտն լուցցուք: 21 Յանկարծակի ինքնին լուցեալ փայտն հրով վառէր. եւ նոքա յարուցեալք գոհացեալ, զաղաւթսն կատարելոյ՝ մատեան արկին ի խորովս, եւ բազմեցան եւ մատեան յուտել: 22 Եւ իբրեւ կերան յագեցան, եւ պէտք եղեալ ըմպելոյ ջուր՝ յոտն եկաց սուրբն Ներսէս, եւ մատուցեալ փորեաց զաւազն ի կղզւոջ, եւ բխեաց աղբեր՝ ջուր քաղցր անոյշ, եւ անտի ըմպէին որք հանապազորդք էին ի կղզւոջն:

23 Յայնմ կղզւոջ զայս աւրինակ կերակրեալ լինէին ի ծովէ անտի. եւ հանապազ մխիթարէր զնոսս սուրբն Ներսէս, եւ ասէր. Այսպէս յիշեցէք եւ ի մտի կալարուք զբանն Տեառն զոր ասաց, թէ Խնդրեցէ՛ք զարքայութիւն Աստուծոյ եւ զարդարութիւն նորա, եւ այն ամենայն տացի եւ յաւելցի՞: 24 Տեսէք, եղբարք, զի ահաւասիկ իբրեւ հայր յորդիս մատուցեալ է առ մեզ Աստուած՝ խրատել զմեզ, զի զմեզ պիտանիս արասցէ, եւ զանունն քաջութեան ժառանգեցուցէ մեզ, եւ զմեզ մեծաց վարձուց արժանիս արասցէ: 25 Զի զպատ-

ճառս սակաւիկ առաքինութեան ի մէնջ խնդրէ. այնչափ միայն, զի սիրեսցուք զնա. եւ ապա զանթիւ զանչափ զանկշիռ զանհամեմատ բարեացն առնէ զբարերարութիւնս սքանչելեաց իւրոց. եւ ցուցանէ զբարիատուր զերախտապարզեւ հատուցմունս վասն իւրոյ մարդասիրութեանն: 26 Քանզի եւ զանձն իւր ոչ խնայեաց դնել ի վերայ մեր, այլ կերակուր եւ ըմպելի եւս եղեւ մեզ:

27 Եւ այսպէս հանապազ հանդերձ եղբարք գոհանալ եւ աւրհնել զՏէր Յիսուս Քրիստոս, զցայգ եւ զցերեկ կային ի պաշտաման Տեառն անդադար: 28 Արեգական մտանելոյ կային եղբարքն, եւ ապա տէրունատուր կերակրովն ուրախ լինէին, յընդենուլ ալեացն ի պատրաստել զկերակուր: 29 Իսկ սուրբն Ներսէս յեւթն աւուրն ի կիրակէին հասեալ միայն, ապա ճաշակէր: 30 Այլ զայս աւրինակ համակ տայր նոցա զքաջալերութիւն սուրբն Ներսէս ամիսս ինն, որ եղեն յայն կղզւոջ:

ԳԼՈՒԽ Է.

1 Յաղագս Աստուծոյ սքանչելեացն՝ որ եղեն ի Ներսէս եւ կամ ի Բարսիլիոս. եւ վասն նախանձուց եւսեքի եպիսկոպոսի առ Բարսիլիոս:

2 Իսկ եպիսկոպոսն Կեսարու Եւսեբիոս յորժամ ետես զգարմանալիսն զնախ իջանել զաղաւնոյն՝ որ եկն ի յերկնից, եւ հանգչել նախ յերիցապետն Կեսարու սուրբն Բարսիլիոս, ի դժկամակ միտս լինէր ընդ նմա. եւ տեսանէր զնա իբրեւ զիւր² հակառակորդ եւ զթշնամի: 3 Քանզի հռչակ հարեալ էր ընդ երկիր ամենայն. ասէին եւ պատմէին՝ թէ յորժամ ձեռնադրէին զսուրբ կաթողիկոսն Ներսէս, էջ հանգեաւ ի նմանութիւն աղաւնոյ ի վերայ՝ նախ յերիցապետն ի սուրբ Բարսիլիոս. եւ ապա յարուցեալ նստաւ ի քահա-

1 Յօր. մտի

՝ Հմմտ. Մատթ. 9: 33:

2 Յօր. զօր

նայապետն ներսէս: 4 Եւ այս հռչակ հարկանէր զնոցանէ. մանաւանդ յաշխարհն Գամրաց: 5 Մեծապէս թուէին մարդկանն սքանչելիքն ամենայն. եւ ամենայն մարդ պատուէին զսուրբն Բարսիլիոս: 6 Մանաւանդ վասն սրբութեան վարուցն նորա, եւ կարգացն ճշմարտութեան, եւ բազում խոնարհութեան նորա, եւ վասն աստուածախաւս ջերմեռանդն աղաւթիցն նորա, եւ վասն վարուց կարգաց պարկեշտութեանն. եւ կամ վասն աղքատսիրութեանն եւ վասն տառապելասէր¹ վարուցն, եւ պատուիրանակատար մշտակիր հանապազորդութեան նորա, կամ վասն բազում գիտութեանն, զի աղբեր էր անպակաս իմաստութեամբն. եւ վասն ուսուցիչ վարդապետութեան նորա, զի փիլիսոփայական արուեստիւն խնոյր² առականէր հանապազ զամենայն զուր բացեալ զբերանս հերետիկոսացն, եւ զհաւատս ճշմարիտ ամենասուրբ Երրորդութեանն ամենեցուն հաստատէր: 7 Վասն այսր ամենայնի նայէին ընդ նա իբրեւ ընդ առաքեալ Քրիստոսի, իբրեւ զհրեշտակ երկնաւոր. եւ ամենայն ոք վկայէր՝ թէ արժանի իսկ էր Հոգւոյն Աստուծոյ:

8 Իսկ նա զանձն կարի ի խոնարհութեան ունէր, եւ անարժան համարէր, թէ պէտ էւ ամենայն ոք վասն գիտութեան արուեստին կարաւտէր առ նա զալ. մանաւանդ արտաքինքն իսկ ճարտարապետք³ փիլիսոփայիցն առ նա ընթանային վասն իւրեանց արուեստին: 9 Այլ նա զբազումս դարձուցանէր ի պէսպէս յիւրաքանչիւր կարծեացն խոտորութենէ ի ճշմարտութեանն հաւատս, երկրպագուս Քրիստոսի անթիւս մարդկան կացուցանէր: 10 Եւ ամենայն երկիր սկսան ի նա նայել, որպէս թէ անդուստ յերկնից ի վերուստ իջեալ ի-

ցէ. այնչափ՝ որպէս զի թէ կամիցի ոք պատմել, ոչ կարասցէ: 11 Այլ յորժամ խոտորեղէմ երեսաւք տեսանէր զիւր եպիսկոպոսն ընդ ինքեան, սուրբն Բարսիլիոս տեղի տայր նմա, թողոյր զքաղաքն, եւ գնայր նա անտի, ելեալ բնակէր մի ի շինացն՝ ուր եւ նմա պատշաճ իցէ կալ անդ:

ԳԼՈՒԽ Ը.

1 Յաղագս թէ ո՛րպէս կայսրն Վաղէս հալածեալ զամենայն ուղղափառ հաւատացեալս, եւ կամ ո՛րպէս կամեցաւ յանդիմանութիւն առնել կայսրն ի մէջ նշմարտութեանն հաւատացելոց, եւ ի մէջ ձախող աղանդոյն արիանոսաց. եւ կամ ո՛րպէս սմանչելեացն տեսլեամբն սուրբն Բարսիլիոս կոչեցեալ ի պայքարն, եւ յաղթէր՝ Աստուծոյ զարութեամբն՝ ախոյեմիցն առ եպիսկոպոսաւն Եւսեբիւ. եւ թէ ո՛րպէս Եւսեբիոս վնարէր ի բանդին. եւ կամ ո՛րպէս Բարսեղ արձակեալ լինէր:

2 Ընդ այն ժամանակս անաւրէն կայսրն Վաղէս մեծաւ բարկութեամբ դատէր ընդդէմ ճշմարտութեանն մշակացն. այս ինքն որ միանգամ զհաւատն Քրիստոսի արժանապէս հաւատասցեն՝ թէ ճշմարիտ արդարեւ Որդի Աստուծոյ իցէ, եւ ծնունդ ի բնութենէն Հաւրն Աստուծոյ: 3 Վասն այսորիկ կամէր հալածանս տանջանս չարչարանս միահաղոյն⁴ յարուցանել, եւ սաստիւ իշխանութեամբ առ ամենեսեան գրեալ եւ տալ հրաման:

4 Ապա ի մի վայր եղեալ՝ խորհեցան մոլեկան արիանոսացն աղանդոյն վարդապետք. զի ասէին, թող ընդ նոսա պայքար յանդիմանութեան հակառակութեան լիցի, արքայ. եւ որ կողմն յաղթեացէ, յայտ լիցի. զի մի՛ զնա բռնադատ, զբազատ ինչ երեւեսցի յաղթութիւնն: 5 Եւ թագաւորն Վաղէս զայս լուեալ խնդալից լինէր. ընտրեաց իւր արս ճարտարս եւ պատրաստա-

1 Յօրինակի միում՝ տառապասէր

2 Յօր. արկանէր

3 Թերեւս ճարտարագէտք

4 Յերիս օրինակս՝ միահաղոյնս

բանս, զորս կարծէր դպիրս բանիբունս, որ անուանեալք էին չեպիսկոպոսունս աղանդոյն արիանոսաց: 6 Եւ յղեաց առ եպիսկոպոսն Կեսարու Եւսեբիոս. եւ ժամ խնդրէր ի նոցանէ բանիցն քննութեան, զի ի հանդէս ածիցէ առ նա զնովաւ, եւ որ ճշմարիտն իցէ՝ յայտնի երեւեսցի: 7 Ապա իբրեւ սահմանեցաւ ժամադրութիւն, առեալ եպիսկոպոսն Եւսեբիոս զկղերն զամենայն, եւ ի մեծ հոգս մտանէր. ուստի՞ կարծիցէ¹ բանիցն պատասխանիս պատրաստել. զի եւ բանիւ ոչ ինչ կարի էր առաւել: 8 Ապա հաստատեցաւ այս բան ի խորհրդեանն, զի յղեսցեն հաւանեցուցեն զերանելին Բարսիլիոս, զի եկեսցէ նա: 9 Զի նա, ասէ, կարող է բանիւ զաւրութեանն. նա մեծ է, ասեն՝ ի նմա շնորհքն խափանել զնենգութիւն դաւաճանութեանն սատանայի. զի խորհի նա ի վերայ սրբոյ եկեղեցւոյ նորա, զոր ինքն արեամբն ստացաւ:

10 Գրեաց թուղթ աղաչանաց եպիսկոպոսն Եւսեբիոս առ երիցապետն Բարսեղ, եւ մեծաւ պաղատանաւք որ ինչ վասն պատուին պաշտամանն. զի մի՛ դիցէ ինչ ի մտի զառաջին եղեալ բանիցն գծտութիւն. այլ վասն զի առ Աստուած հաւատոց են² բանքն եւ քննութիւնքն, վաղվաղակի փութացի գալ առանց դանդաղանաց: 11 Արկին եւ կղերքն ամենայն ձեռնադիր աղաչանաց, զի մի՛ ինչ դանդաղեսցի գալ, այլ յարուցեալ փութանակի երթիցէ: 12 Եւ արս հաւատարիմս պատուականս յղեցին վասն վաղվաղ գալոյ:

13 Եւ այն ինչ արքն յուղի անգան, որ երթայինն ածել զնա անդր. արդ մինչ դեռ յուղի անգեալ երթային արքն՝ էին ի ճանապարհի, սուրբն Բարսիլիոս ուր էին՝ մինչ դեռ ի պաշտաման Տեառն կայր, անկաւ նմա քուն ծանր թանձրամած, եւ տե-

սանէր ի տեսեան, զի այգի մի էր մեծ եւ վայելուչ, քաջաբեր լի պտղով. եւ խոզք երեք անգեալ էին յայգին, եւ մտեալք ի ներքս ի յայգին՝ ապականէին զայգին եւ բրէին: 14 Պատառէին բազում ունջս որթոյ, արմատաքի խլէին եւ զտաշտն գլխովին եւ զբազուկ ընջովին, եւ մեծամեծ ապականութիւնս ի ներքս գործէին: 15 Եւ մատուցեալ էին այգէգործքն, ջանային եւ ոչ կարէին հանել զվնասակար խոզսն յայգւոյ անտի: 16 Ապա զաղաղակ հարեալ գոչէին առ Բարսիլիոս, եւ ասէին. Եթէ ոչ դու, Բարսիլիոս, եկեսցես, ոչ ոք կարէ հանել զխոզս յայգւոյ աստի, եւ ոչ մեծ ապականութիւնս դադարեսցէ. աճապարեա եկ հասիր, զի տակաւին աւասիկ վնասս մեծամեծս առնեն: 17 Ապա մատուցեալ Բարսիլիոս՝ հանէր զվնասակարս զխոզսն յայգւոյ անտի, եւ կազմէր զխախտածն:

18 Եւ զարթեաւ սքանչելին Բարսեղ, եւ զարմացեալ ընդ այն տեսիլն, էր մտախորհ. եւ խորհէր ընդ միտս իւր վասն տեսեանն՝ թէ զինչ իցէ. եւ անդէն հասեալք մատուցանէին նմա զթուղթն առաքեալքն ի Կեսարիայ քաղաքէ Եւսեբի եպիսկոպոսի: 19 Այլ իբրեւ ընթերցաւ, խնդայր եւ ուրախ լինէր. զի գիտաց թէ յԱստուծոյ պատրաստեցաւ կոչել զնա ջատագով ճշմարտութեանն առ ի տալ պատասխանի: 20 Յարուցեալ փութանակի զնաց զհետ կոչելեացն թղթին, եւ չոգաւ առ եպիսկոպոսն Եւսեբիոս: 21 Եւ իբրեւ խորհեցան ընդ միմեանս զարժանն, ասաց Բարսիլիոս ցեպիսկոպոսն Եւսեբիոս, զի խնդրեսցէ ի կայսերէ իշխանութիւն՝ զոք յերիցանց տանել ընդ իւր: 22 Եւ մտանէր Եւսեբիոս առ կայսրն, խնդրէր ի նմանէ եւ ասէր. Երկուս ածեր ինձ ախոյեանս, թո՛ղ եկեսցէ մի ոք ընդ իս յերիցանց իմոց: 23 Եւ հարցանէր կայսրն ցարխանոս եպիսկոպոսն, եւ յանձին կալան նոքա Եւսեբի

1 Տպ. կարծիցես
2 Յամենայն օրինակս՝ հաւատացեմ բանին

քանի՜ ածցէ ընկերս ընդ ինքեան, յորժամ գայցէ յատեանն:

24 Իսկ իբրեւ ժամ ատենին հասանէր, առեալ կայսերն զեպիսկոպոսն Եւսեբիոս, եւ ընդ նմա երանելին Բարսիլիոս երիցապետն, եւ երկու ախոյեանքն հակառակութեանն՝ որք ի կողմանէն կուսէ սատանայի էին, այս ինքն արիանոսք չեպիսկոպոսքն, եւ մտին ի բանից ի քննութիւն հակառակութեան վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ, եթէ իցէ ծնունդ եւ որդի ի բնութենէ Հաւր Աստուծոյ, եթէ ոչ: 25 Ապա Հոգւով Սրբով լցեալ լինէր երանելին Բարսիլիոս, որ կայր զկնիազոյն եպիսկոպոսին Եւսեբի. եւ սա գրէր վկայութիւնս ի գրոց յԱրարածոց ի սկզբանէ յաւրինաց եւ ի մարգարէից եւ յառաքելոց եւ յամենայն աստուածաշունչ գրոց. յայտ առնէր եւ ցուցանէր, եւ զերկուսեան ախոյեանսն սատանայի կարկեալս ըմբռնեալս ամալթապարտեալս հանդերձ թագաւորաւն կացուցանէր:

26 Ապա նայեցաւ թագաւորն Վաղէս ընդ եպիսկոպոսն, եւ ետես զի քրտնեալ էր, սկսանէր խաւսել եւ ասէր. Այդ զի՞ է, զի զայդչափ² հոսին ի քէն քրտունքդ. զի ի բանս ճշմարտութեան քննութեան վարձկանագրչաւդ յաղթեցեր: 27 Ետ պատասխանի Բարսիլիոս թագաւորին եւ ասէր. Երկուս խոզս եւ մի էջ վարեալ այնչափ ընդ երկար ճանապարհ, եւ դու ասես. Զի՞ ես քրտնեալ այդչափ: 28 Ապա զղջացաւ թագաւորն՝ թէ ընդէ՞ր զԲարսիլիոսն հրամայեցին աւժանդակ բնաւ Եւսեբի թողուլ ի ներքս: 29 Ապա յոտն կացեալ ամալթով արիանոսքն ասացին ցթագաւորն, թէ ընդէ՞ր այս աշխատութիւն քննութեանց են. այլ տիրաբար տուր հրաման, զի որք քո կամացդ ոչ լուիցեն, անկցին ի տագնապ

նեղութեան: 30 Եւ լուծեալ զատեանն վճարեցաւ:

31 Եւ ետ հրաման՝ զի զԵւսեբիոս արկանել ի բանդ, եւ ընդ նմա զբազումս, եւ նեղութիւն ի վերայ ուղղահաւատ որթողոքսաց քրիստոնէից հասուցանէր. եւ ետ հարկս ի վերայ եկեղեցեացն տուծիւք մեծաւ ծանրութեան տուգանաւք: 32 Յայնժամ ի դառն կապանացն պատուհասէն մեռանէր եպիսկոպոսն Եւսեբիոս ի ներքս ի բանդին: 33 Իսկ վասն սրբոյն Բարսեղի ասէին ժողովուրդքն Կեսարու. Եթէ ոչ արձակէք զդա ի բանդէդ, այրեմք զքաղաքս զամենայն: 34 Յորժամ ամենեքեան միաձայն զայս աղաղակէին, թողացոյց թագաւորն, եւ արձակել հրամայէր զերանելին Բարսիլիոս:

ԳԼՈՒԽ Թ.

1 Յաղագս թէ ո՛րպէս արարին զսուրբն Բարսիլիոս եպիսկոպոս, կամ ո՛րպէս եղեմ յԱստուծոյ սքանչելիքն. կամ զիա՛րդ հրամայեաց զամենայն զանձսն որ ի Քրիստոս հաւատացեալ էին ժողովուրդն՝ ժողովել, եւ նոքա խնդութեամբ բերէին եւ տային ի դուրս վասն կենարարին մեծին Աստուծոյ. եւ կամ զիա՛րդ խնդրէին ուխտիւք եւ խնդրուածով ի վերայ իւրաքանչիւր եպիսկոպոսաց:

2 Ապա ժողովեցան ամենայն եպիսկոպոսք իշխանութեանն Կեսարու, եւ ընտրեցին զսուրբն Բարսիլիոս առնել արքեպիսկոպոս Կեսարու: 3 Եւ իբրեւ ժողովեալք էին ի միահամուռ հասարակ միաբան ամենայն եպիսկոպոսք ի ձեռնադրել զսուրբն Բարսեղ, էջ աղաւնին յերկնից եւ հանգեալ ի վերայ նորա, որպէս յառաջնումն յառնելն զեպիսկոպոսապետն Ներսէս: 4 Եւ եղեն զարմանալիք մեծապէս յաչս ամենեցուն. սկսան գոհանալ զմարդասիրէն Քրիստոսէ, զի որ յանձն իւր յայտնեաց զնշանս աստուածութեանն, զայն եւ ոչ ի

1 Յերիս օրինակս՝ զի քանի
2 Օրինակ մի՛ այդչափ

ծառայիցն եւ ի սրբոցն արգելոյր: 5 Եւ եկաց Բարսեղ յաթոռ կաթողիկոսութեանն Կեսարու:

6 Այլ թագաւորն Վաղէս նեղէր զքրիստոնէից ժողովուրդն. 2ի, ասէ, որ քրիստոնեայ անուն յիշխանութեան իմում կայցէ, մի՛ գտցի նորա արծաթ եւ ոսկի, զի տայցէ յարքունիս: 7 Եւ սկսան ժողովել ի զաւրաց եւ ի զաւրավարաց եւ ի քաղաքաց քաղաքաց երզմամբ, զի որ զայն անունն ունիցին, մի՛ գտցի ոսկոյ կամ արծաթոյ զանակ առ ումեք. ապա եթէ առ ումեք գտցի, մեռցի: 8 Ապա ամենայն ոք խնդութեամբ բերէին տային ի դուրս վասն անուանն Քրիստոսի, կամեցեալք խնդութեամբ կրել զպատուհաս: 9 Ապա ստիպել սկսան եւ գործակալքն թագաւորին ժողովել արծաթ եւ ոսկի ի ժողովրդոցն կեսարացոց քաղաքին. ապա քաջալերել սկսաւ զնոսա երանելին Բարսիլիոս, զի խնդամիտ սրտիւ բերցեն: 10 Սկսաւ ասել ցնոսա այսպէս՝ թէ Բերէք ի ձեռն իմ, ես լինիմ այդմ երաշխաւոր. զի նոյն ինքն Տէր Քրիստոս միածին Որդին Աստուծոյ, վասն որոյ նա խրոխտացեալ է ի մարտս, սատակեսցի ի նմանէն: 11 Այլ դուք վասն Տեսառն ձերոյ զյափշտակութիւն ընչից ձերոց խնդութեամբ ընկալարուք. զի ձեզ յերկինս պահի գանձն՝ որ ոչ անցանէ, այլ զի զայս գանձս ես տաց ձեզ դարձուցեալ ձեռն ի ձեռն ի հուպ ժամանակի: 12 Ապա ամենայն ժողովուրդք քաղաքին Կեսարու եկին բերին ի մի վայր ժողովեցին որ մի անգամ ոսկի կամ արծաթ ուրուք գտաւ. լցին զեկեղեցի, եւ ածին զիշխանսն թագաւորին զհաւատարիմս. կնքեցին զդուրս եկեղեցւոյն:

13 Յետ այսորիկ ետ հրաման թագաւորն Վաղէս կապել կրկին զեպիսկոպոսապետն Բարսեղ, արկանել ի բանտ ի նեղութիւն. սոյնպէս զամենայն եպիսկոպոսունս ընդ ամենայն քաղաքս: 14 Այլ ամենայն ժողովուրդն յուխտս եւ ի խնդրուածս լի-

նէին վասն բարկութեանն հասելոյ, զի դադարեսցէ, եւ դարձ լիցի ճշմարտիտ հովուացն յիւրաքանչիւր տեղի եւ յիւրաքանչիւր ժողովուրդս:

ԳԼՈՒԽ Ժ.

1 Թէ գիա՛րդ կոչեսաց կայսրն Վաղէս գտփէստէսն ի յանդիմանութիւն¹ ընդդէմ նշմարտութեանն, եւ թէ գիա՛րդ ետես սոփեստէսն զսփանչելիսն, տեսանելով զքաղաքիւն վկայիցն ի ներքս ի վկայարանին. կամ գիա՛րդ կայսրն Վաղէս սատակեցաւ նշանաւն եղելով յԱստուծոյ. եւ կամ գիա՛րդ խաղաղութիւն լինէր եկեղեցեացն Աստուծոյ:

2 Ապա խնդիր հրամայէր առնել թագաւորն Վաղէս, զի տեսցեն զտցեն այր մի ճարտար, որ կարող իցէ դնել գրով բանս դիմադարձութեան ընդդէմ հաւատոց քրիստոնէութեան: 3 Եւ պատմեցին նմա, զի էր այր մի սոփեստէս ճարտար ի քաղաքի միոջ: 4 Ապա առաքեաց կայսրն առ նա մագիստրիանոսս, զի երթիցեն փութով եւ անզբաղապէս զայրն առ նա ածցեն. եւ առեալ ածին փութապէս:

5 Իբրեւ զնացեալ գայր աւթեւանս երկուս, դէպ եղեւ նոցա դիպել այլ քաղաքի միոջ. եւ արտաքոյ քաղաքին վկայանոց մի սուրբ տիկնոջն Թեկղի: 6 Իբրեւ պատահեաց այնմ, էջ սոփեստէս, եւ իւր վանս ունէր ի ներքս ի վկայանոցի անդիսկ մագիստրիանոսքն ունէին վանս իւրեանց ի քաղաքին: 7 Եւ իբրեւ կերաւ հաց սոփեստէսն, էարկ անկողին, եւ փակեաց զդուրս վկայանոցին. եւ ինքն ի նիստ եղեալ ի վերայ անկողնին, կամէր լինել ի կողմն. մինչ դեռ արթուն էր, աչաւք բացաւք տեսանէր, զի յանկարծ բացան դրունք վկայանոցին, եւ եղեւ ժողով մեծ բազմութեան վկայիցն, որ երեւեցան մեծապէս փառաւք: 8 Եւ ելանէր ընդ առաջ

1 Օրինակ մի՛ ի յանդիման

նոցա սուրբ տիկինն թեկղէս զարդարեալ մեծապայծառ, զի նշոյլք որպէս ի լուսոյ հատանէին ի նմանէն. եւ առնէին միմեանց ողջոյն, եւ ասէր ցնոսա տիկինն թեկղ՝ թէ Բարի՛ եկիք, սիրելիք բարեկամք, եւ վաստակաւորք Քրիստոսի: 9 Տուեալք միմեանց ողջոյն, արկեալք զիւրաքանչիւր զաթոռսն, նստէին կարգաւ: 10 Ապա սկսանէին սուրբքն խաւսել, եւ ասէին. Սուրբքն Տեառն, որ չեւ են հրաժարեալ յերկրէս, դեռ եւս աստէն ի նեղութեան են, են որք ի կապանս են. են որք ի փիւղակէս են, են որք յաքսորս, եւ են որք յայլ բռնութեան են, ի զրպարտութեան, ի հարկս եւ ի խոշտանգանս չարչարանաց: 11 Եւ մեք փութապէս ժողովեցաք, զի մի՛ անտեսութեամբ անփոյթ արասցուք նախանձախնդիր լինել Տեառն հաւատացելոց: 12 Վասն զի մանաւանդ բազում մշակք Տեառն խափանեալ կան, բազում անդք ի դերեւ ելին, եւ բազում այգիք խոպանացան. պարտ է մեզ զխափանիչս մշակացն զՎաղէս խափանել, զի ամենայն մշակ ի գործ իւր կանխեսցէ: 13 Եւ քաջ մշակն Բասիլիոս յիւրմէ գործոյն կայր¹ խափանեալ: 14 Արդ եկայք առաքեսցուք ի մէնջ երկուս, որք երթիցեն վճարիցեն ի կենաց զչարագործն Վաղէս: 15 Ապա միում անուն էր ի Սարգիս ի նոցանէ, եւ միւսումն թէոգորոս. արձակէին զնոսա, զնէին ժամ եւ ասէին. Ի սոյն ժամ եկեսջիք դուք եւ մեք: 16 Եւ յարուցեալ գնացին եւ մեկնեցան:

17 Եւ զայս ամենայն լուեալ սոփեստէսն, որ էր վկայանոցին, եւ տեսեալ զայս տեսիլ աչաւք բացաւք, եւ կայր զարմացեալ, եւ անքուն լինէր մինչեւ յառաւաւտն զցայգն²: 18 Եւ ընդ այգս այգոյն եկին հասին մագիստրիանոսքն, եւ ասեն ցտփեստէսն. Արի գնասցուք զճանա-

պարհս: 19 Եւ խաւթապատճառս լինէր, եւ ոչ կարէր ի տեղւոյն խաղալ: 20 Իբրեւ սկսան նոքա ստիպել զնա, իսկ նա թալանայր, հանէր զոգին, ոգի զոգւով ածէր, եւ ոչ կարէր բանիցն տալ պատասխանի մինչեւ յերեկոյ: 21 Ապա իբրեւ երեկոյ եղեւ, թողին զնա մագիստրիանոսքն ի վկայանոցին, եւ գնացին ի քաղաքն ի վասն իւրեանց: 22 Եւ սոփեստէսն փակէր զդուրս վկայանոցին, եւ ի կողմն եղեալ յիւրում տեղւոջն, յանկարծակի դարձեալ երեւեցաւ նմա, զի բացան դրունք վկայանոցին, եկին կուտեցան, եւ լի եղեւ վկայանոցն նոքիւն³ վկայիւք: 23 Եւ ելանէին միմեանց ընդ առաջ մեծաւ ուրախութեամբ, եւ տային միմեանց ողջոյն. ապա արկանէին զաթոռս իւրաքանչիւր կարգաւ յաւրինեալ բոլորէին կարգէին ի նստել: 24 Ապա գային սուրբքն Սարգիս եւ թէոգորոս երկոքեան ի գործոյն՝ յոր առաքեալ էին, եւ մտանէին ի ժողովս սրբոցն: 25 Ապա հայեցան բազմութիւն ժողովոյ վկայիցն, եթէ Ո՛րպէս յոր գործ երթեալ էիք՝ վճարեցէք: 26 Պատասխանի տուեալ ասէին, թէ էր իսկ յորժամ ի ձէնջ գնացաք, սպանաք զթշնամին ճշմարտութեանն զՎաղէս. եւ ի սոյն ժամ առ ձեզ դարձեալ՝ եկեալ եմք աւասիկ առ ձեզ: 27 Եւ յարուցեալ գոհանային ամենայն բազմութիւն ժողովոյն զՏեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ. եւ ինքեանք մեկնեցան յիւրաքանչիւր տեղիս: 28 Եւ յահի մեծի լինէր սոփեստէսն մինչեւ յայգ յառաւաւտն⁴:

29 Ապա իբրեւ այգ եղեւ, եկին մագիստրիանոսքն, ասեն ցտփեստն. Արի՛ գնասցուք առ կայսրն: 30 Նորա պատասխանի տուեալ, ասէ. Կայսրն մեռաւ, արդ մեք առ ո՞ երթիցուք: 31 Եւ բազում վիճումն ի մէջ եղեալ նոցա վասն այսր բանիս եւ գրաւական եղեալ ի մէջ վասն այսր

1 Օրինակ մի՛ կարի

2 Օրինակ մի՛ ցառաւտն ցայգն

3 Օրինակ մի՛ նոքիւք

4 Օրինակ մի՛ ցայգ առաւտն

բանիս մինչեւ յերիս աւուրս: 32 Եթէ ոչ, ասէ, հարցին աւար վաճառք, եւ քաղաքք յափշտակեցին, ես՝ եթէ կայցէ նոյն կայսրն՝ զլխատեցայց, զի իշխեցի զայս ճառել: 33 Ապա թոյլ տային նմա մագիստրիանոսքն մինչեւ յերիս աւուրս. եւ յետ երից աւուրցն ստուգեցաւ զրոյցն, զի մեռեալ էր կայսրն:

34 Ապա յետ այսորիկ արձակեցան ամենայն որ միանգամ ոք կայր ի պատիժս կամ յաքսորս. եւ դարձան ուրուք ուրուք որ միանգամ ինչք էին յափշտակեալք:

35 Սոյնպէս եւ զկեսարացւոցն հրաման ետուն տալ զիւրաքանչիւր իրաց. եւ կոչեցեալ սրբոյն Բարսղի, զի զիւրաքանչիւր առցեն, եւ ոչ կամէին հուպ լինել:

36 Զի թէպէտ եւ ասէր ցնոսա Բարսեղ՝ եթէ ահաւասիկ երաշխաւոր իմ թափեցաւ ձեզ, զի ասացի՝ թէ եւ տաց ձեզ ձեռն ի ձեռն ի ձեռս ձեր: 37 Եւ ոչ ինչ կամէին ունկնդիր լինել, այլ ասէին. Այդ ի գանձ Տեառն երթիցէ, որ դատեցաւ զգատաստանս մեր, եւ խնդրեաց վրէժ սուրբ եկեղեցւոյ ուխտի իւրոյ:

38 Եւ ոչ ոք ի կեսարացւոց անտի հպեցաւ յարձաթ իւր, եւ ոչ մի ոք. բայց թողին զայն ի գանձ եկեղեցւոյն:

39 Ապա էառ զայն արքեպիսկոպոսն, արար աւագանս մկրտութեան կնքոյ տալոյ. եւ կան հաստատեալ աւագանքն արձաթիք ի տուն լուսարանին մինչեւ ցայսաւր ժամանակի:

ԳԼՈՒԽ ԺԱ.

1 Յաղագս դարձի իշխանացն անդրէն յերկիրն Հայոց, որք երթեալք էին առ կայսրն Վաղէս, զի եկին դարձան առ տէրն իւրեանց Արշակ. եւ կամ ո՛րպէս տրտմեալ թագաւորին Արշակայ ընդ կայսրն, ո՛րչափ ինչ վնասեաց ասպատակաւ կողմանց իշխանութեան թագաւորութեան Յունաց:

2 Այսոքիկ են իշխանքն, որք չոգան ի թագաւորէն մեծէ Արշակայ ի Հայոց աշխարհէն առ կայսրն Յունաց առ Վաղէս:

3 Ինքնին մեծ եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս. եւ մեծ նահապետն Մամիկոնեան տոհմին, որում անուն Վարդան կոչիւր. եղբայր սա մեծի ստրատելատին Հայոց որում Վասակն կոչէր, որ դայեակք եւ սնուցիչք էին թագաւորին Արշակայ:

4 Եւ ընդ նմա Մեհեն նահապետն Ռշտունեաց, եւ Մեհառ նահապետն Անձեւացեաց, եւ Գարջոյ Մաղխազ նահապետն Խոռխոռունեաց, եւ Մուշկ նահապետն Սահառունեաց, եւ Դեմետ նահապետն Գնթունեաց, եւ Կիչկէն նահապետն Բագէնից, եւ Սուրիկ նահապետն Հրսիճորոյ, եւ Վրկէն նահապետն Հաբուժենից. սոքա չոգան դեսպանութեամբ ի սէր միաբանութեան առ կայսրն Վաղէս:

5 Իսկ թագաւորն Վաղէս արգել աքսորեաց զմեծ քահանայապետն Ներսէս, եւ փոխանակ սորա արձակեաց զեղբաւորորդիս զթագաւորին Արշակայ զԳնէլ եւ զՏիրիթ. եւ գանձս բազումս եւ անթիւս վասն զմիտս հաճել թագաւորին Արշակայ, ի ձեռս Վարդանայ եւ որք ընդ նմա էին, առաքէր:

6 Եկին հասին դեսպանքն երթեալք ի կայսերէն առ թագաւորն Հայոց մեծաց Արշակ, եւ մատուցանէին նմա զհրովարտակն կայսերն. եւ ընդ նմին զիր տրտնջելոյ եւ ամբաստանութեան:

7 Զի գրեալ էր կայսրն զսրբոյն Ներսիսէ առ թագաւորն Հայոց Արշակ, թէ նա սպան զորդին իւր զմիամաւր, վասն այսորիկ արգելաւ աստէն. զի մի՛ մեղադիր ինչ լինիցիս, ընկալ եւ զպատանեակսդ առաջի զարձակեալսդ զերկոսեան զեղբաւորորդիսդ Արշակայ, զԳնէլն եւ զՏիրիթն:

8 Ունէին եւ գանթիւ կարասի գանձուցն առաջի թագաւորին:

9 Իսկ թագաւորն Արշակ իբրեւ լուաւ եւ ետես զայս ամենայն, անշնորհ առնէր զտալիսն եւ զբերելիսն կարասոյն: 10 Ի ցատումն մեծապէս բարկութեամբ ընդ կայսերն նիւթեաց, եթէ զիս՛րդ իշխեաց, արգելուլ զայնպիսի այր զմեծ եւ զպատուական, զգլուխ եւ զվարդապետ զա-

ուաջնորդ աշխարհի եւ զթագաւորութեան միող: 11 Քարինք բազումք, ասէ, ի վերայ կայսերն, եւ ձեր ի բերելդ. քարինք եւ մեր շատ կան ի թափել զատամունս նորա ի տալն. եւ ձեր ի բերելդ. զմեր վատթարութիւնս յո՛ տարայց. արդ այդմ՝ երախտեացդ ես դարձուցանեմ: 12 Տայր հրաման Վասակայ իւրում զաւրավարին զաւր ժողովել, զգունդս բովանդակել¹, ելանել հարկանել եւ աւար առնուլ զկողմանս Գամրաց: 13 Իսկ զաւրավարն սպարապետն Վասակ, վաղվաղակի գտուեալ հրամանս նորա կատարէր. զզաւրս բազումս իբրեւ զերկերոյր եւ զվաթսուն հազարաց ի մի վայր կուտէր. հարկանէր աւար առնոյր զկողմանս Գամրաց մինչեւ ի քաղաքն յանկուրացւոց. զվեց ամ զմիմեանց զհետ աւերէր զաշխարհ սահմանացն Յունաց: 14 Լցան աւարաւ բազմաւ եւ պէսպէս մեծութեամբ, բռնութեամբ սաստիւ մեծաւ թշնամութեամբ ընդ կողմանս ընդ այնոսիկ:

ԳԼՈՒԽ ԺԲ.

1 Յաղագս Խաղայ եպիսկոպոսի Բագրաւանդացւոց, գոր էր ձեռնադրեալ եւ թողեալ էր Ներսեսի ետեղապահ յիւր տեղի. եւ թէ որպիսի՛ այր էր, եւ կամ որչափ նշանք կամ զաւրութիւնք որ ի նմանէն լինէին, կամ թէ ո՛րպէս կայր ի նշմարտութեանն, եւ ոչ առնոյր ակն թագաւորին մեծի Արշակայ, եւ ընդդիմանայր եւս ընդդէմ նորա վասն անարեւնութեան գործոց ինչ. կամ ո՛րպէս խնամ տանէր աղփատաց իբրեւ զեպիսկոպոսապետն Ներսէս:

2 Այրս այս Խաղ բուն էր սա ի Կարին զաւառէ, ի գեղջէ Մարագայ. ձեռնասուն էր սա եպիսկոպոսապետին Ներսէսի, զաւառեաւ իւրով զսա էր սնուցեալ: 3 Այլ իբրեւ ի միտս աջողակս եբեր, եւ յառաջադէմ եղեւ ի հաւատս, եւ հաւատարիմ յա-

մենայն գործս գտաւ, իսկ իբրեւ յայնմ եւս առաւել ի պաշտանն՝ զոր ունէր զսէրն ընդ եկեղեցին Աստուծոյ, ապա աղքատաց եւս տեսչութիւն ի սրբոյն Ներսէսէ սմա հաւատացաւ. իսկ յայնմ եւս առաւել զբարեխնամութիւն ցուցանէր:

4 Ապա եպիսկոպոսապետն Ներսէս յորժամ երթայր յուղեգնացութիւնն յերկիրն Յունաց, ձեռնադրեաց զայս Խաղ եպիսկոպոսութիւն Բագրաւանդայ եւ Արշարունեաց, եթող զսա իւր փոխանակ տեղապահ, եւ գնաց: 5 Իսկ աշխարհ ամենայն Հայոց լեզուին, ի գաւառաց գաւառաց, կողմանց կողմանց, տեղեաց տեղեաց մեծամեծք աշխարհակալք զաւառատեարք նահապետք մեծագեացք եւ ամենայն ուխտ քահանայութեան, ժողովք միաբանական ժողովրդոցն, ի սուգ տխրութեան ընկղմեալ էին վասն իւրեանց հաւտապետ գլխաւորին, զի հեռացաւ ի նոցանէ: 6 Իսկ սուրբն Խաղ եպիսկոպոսն առ հասարակ աշխարհի տայր հրաման ի պահս եւ յաղաւթս մտանել եւ ի խնդրուածս, զի դարձ լիցի սրբոյն Ներսէսի: 7 Եւ զամենայն ժամանակս, որչափ եւ արգելաւ նա անդ, համակ խնդրէին պահաւք ժողովուրդքն. եւ ամենայնի իսկ Խաղն առաջնորդէր նոցա, ոչ ինչ պակաս քան զիւրեանց բուն զհովուապետն Ներսէս, մինչեւ ի գալուստն նորա. մինչեւ կատարեաց Տէր զաշխարհի խնդրուածս, եւ դարձաւ սուրբն Ներսէս ի տեղի իւր:

8 Զայնու ժամանակաւ Արշակ արքայ Հայոց ոչ ինչ կարի ի ճանապարհ Աստուծոյ գնացեալ լինէր. զի որչափ ի մատաղութեանն հասակին ըստ աստուածային իմաստութեանն գնացեալ լինէր, նոյնչափ յաւագութեանն ի լինութեան² ի շաղաշատութեան հատաւ³. զոր սուրբ հովիւն Խաղ բազում անգամ յանդիմանեալ կշտամբէր,

1 Յօր. վանդակել

2 Յօր. լկութեան

3 Յամենայն օրինակս՝ հաւատ

որում ոչ ինչ անսացեալ լինէր: 9 Զայնու ժամանակաւ շինեաց իւր արքայն դաստակերտ մի ի հովիտն անուանեալ ի Կոգ գաւառի: 10 Եւ ետ հրաման ընդ ամենայն գաւառս իշխանութեան իւրոյ, եւ հրամայեաց կարգել քարոզ ընդ ամենայն տեղիս աշխարհացն հրապարակին իւրոյ. եւ ամենայն կողմանս գաւառաց իւրոց լի առնէր հրամանաւն արքունի, զի եթէ ոք ումեք ինչ պարտիցի, եթէ ոք ուրուք ուստեք ինչ վնասեալ իցէ, կամ ոք ումեք ինչ դատ պարտիցի, ամենքեան եկեացեն ի դաստակերտն շինեսցեն: 11 Եթէ արիւնահան ոք իցէ, կամ վնաս ուրուք արարեալ իցէ, կամ զկին ուրուք տարեալ իցէ, կամ պարտապան իցէ, կամ ոք զուրուք կարասի ունիցի, կամ ոք յումեքէ երկիւղած ինչ իցէ, եւ եկեացէ յայն տեղի, դատ եւ իրաւունք մի՛ լիցին: 12 Իսկ եթէ ոք ումեք ինչ պարտիցի, եւ որում պարտիցին՝ եկեալ յայն տեղին, առանց դատի եւ իրաւանց կալցին եւ ի դուրս տարցեն:

13 Իբրեւ ել հրաման յարքայէն, ժողովեցան այնուհետեւ յայն տեղի ամենայն գողք եւ աւագակք, արիւնահանք, սպանողք, սուտք եւ մարդելոյգք վնասակարք, գանձահատք, զրկողք, ստադատք, զրախաւք, գերփողք, յափշտակողք, ժլատք: 14 Բազում վնասս վնասս առնէին, եւ անդր անկանէին. բազում կանայք զարս թողուին, եւ անդր անկանէին. բազում արք զիւրեանց կանայս թողուին, եւ զայլոյ կանայս առեալ՝ անդր անկանէին. բազում ծառայք զիւրեանց տերանց զգանձս ըմբռնեալ, փախուցեալք անդր անկանէին. բազում աւանդառուք գաւանդս լի զպահեստս բարձեալ, անդ անկանէին. գերփէին աւերէին զերկիրն ամենայն: 15 Զի թէպէտ եւ կարի յոյժ բազմացաւ աղաղակն, դատ չկայր, եւ իրաւունք ումեք յարքունուստ ոչ ելանէին: 16 Վասն այսորիկ ամենայն մարդ հառաչելով վայէին, եւ ասէին ի հաւանել բանիցն իւրեանց. այս բանք ըստ

այսմ աւրինակի պաշտէին, առ հասարակ ամենեցուն ասելով՝ թէ իրաւունք մեռան, եւ վասն այսորիկ ոչ գտանէին. այլ թէ էր, եւ կորուսեալ էին, ուր եւ էր ջանայաք խնդրէաք գտանէաք:

17 Իսկ տեղին աւանանայր, քաղաքանայր. մեծացաւ բազմացաւ եւ ելից զհովիտն ամենայն: 18 Ապա տայր հրաման արքայն Արշակ դնել անուն դաստակերտին յիւրակից անունն Արշակաւան. եւ շինեցին եւս անդ ապարանս արքունի: 19 Եւ յայնմ հետէ ոչ ինչ երկնչէին ի Տեառնէ ամենեւին. եւ ամենայն մարդ զրկեալ էր իրաւքն այնոքիւք, եւ բազմաց կառաչ աղաղակի տրտնջելոյն յաճախեալ բազմանայր: 20 Վասն որոյ բազում անգամ ընդդիմանայր նմա եւ յանդիմանէր սուրբն Խաղ եպիսկոպոսն. մանաւանդ յորժամ ստիպէին զնա, թէ ե՛կ ուղղեա սեղան յեկեղեցւոջն յաւանն յԱրշակաւանն: 21 Իսկ նա բազում անգամ կշտամբէր եւ յանդիմանէր զթագաւորն Արշակ եւ զամենայն մեծամեծս եւ զիշխանս: 22 Բայց ես, ասէ, ետեղապահ եմ. եւ ոչ ինչ առանց այնորիկ, որ թողն զիս հայրն, ունիմ իշխանութիւն գործել ինչ: 23 Ապա կամեցեալ Արշակ թագաւորն պատուաւ եւ ազահութեամբ կարասոյն մեքենայիւ խաբել զսուրբ եպիսկոպոսն Խաղ, բազում ոսկի եւ բազում գանձս արծաթոյ, եւ բազում նժոյգս զարքունական ճիոյ՝ արքունի աւճառովք, ոսկիվարաւանդ ապրդմովն, տայր նմա. պատրել հաճել զմիտս նորա, յինքն յանգուցանել: 24 Իսկ նա զկարասին, զոր առնոյր յարքայէն, յանդիման նորա աղքատաց բաշխէր. եւ զյանդիմանութիւնն ոչ ինչ թուլացուցանէր, մինչեւ հրամանն տայր հալածել զեպիսկոպոսն Խաղ ի բանակէ անտի:

25 Իսկ նա ա՛ռ շրջել ընդ աշխարհն, կարգել եւ խրատել, ուսուցանել եւ դարմանել զաղքատսն, որպէս էր նմա յանձն արարեալ սրբոյն Ներսիսի, եւ իւր գնա-

ցեալ: 26 Բազում նշանք եւ արուեստք եւ զաւրութիւնք բժշկութիւնք հիւանդաց լինէին ի ձեռս նորա. բազում յոյժ առնէր սքանչելիս մեծամեծս: 27 Բայց իբրեւ պաշտէր զաղքատսն, եւ սպառէր թափէր զամենայն յուրանս եւ զնորամանս եւ զմառանս գինւոյն, եւ զկարասս ամենայն մառանացն տայր բաշխել աղքատացն, երթայր յայլում աւուր տեսանէր լցեալ ինքնին իբրեւ ի հրամանէ Աստուծոյ. եւ դարձեալ աւր ըստ աւրէ մատակարարէր աղքատացն, եւ այնմ ստէպ ստէպ լցեալ լինէր:

28 Այսպիսի սքանչելիք մեծամեծք լինէին ի ձեռն առնս այսորիկ. էր սա զարմանալի անուանի եւ հոյակապ ի մէջ ամենայն Հայոց. շրջէր խրատէր եւ ուսուցանէր զեկեղեցիս Հայոց ընդ ամենայն տեղիս իբրեւ զիւր վարդապետն զՆերսէս: 29 Բայց ի ժամանակեան միոջ եկին գողք, եւ գողացան զեզինս եկեղեցւոյն սրբոյ զԽաղայ եպիսկոպոսին, առին եւ գնացին: 30 Իսկ ի միում աւուր աչք կուրացեալ եղեն գողոցն, եւ ինքեանք յանիմաստս առ խարխափս եկին ածին ի դուրս սրբոյն Խաղայ զամենայն եզինսն: 31 Իսկ ինքն սուրբն Խաղ ելեալ տեսանէր զնոսա, եւ գոհանայր զՏեառնէ՝ որ այնչափ վերակացու եւ այցելու եղեւ հաւատացելոց իւրոց: 32 Կայր յաղաւթս եպիսկոպոսն Խաղ, եւ բժշկէր զաչս գողոցն. եւ հրաման տայր լուանալ զանձն նոցա, եւ դնէր ճաշ առաջի նոցա, եւ քաջ ուրախ առնէր զնոսա մեծապէս: 33 Ապա աւրհնէր զնոսա, եւ տայր նոցա զեզինսն՝ զոր իւրեանցն էր գողացեալ, եւ արձակէր զնոսա զիւրեանց ճանապարհն, եւ գնացին: 34 Այսպէս բազում համբերութիւնս յամենայն գործս իւր ցուցանէր, եւ բազում առնէր նշանս եւ զսքանչելիս: 35 Եւ էին նորա երկու դասերք. եւ ետ գմինն Ասրկոյ ումեմն կին. զկնի աներոյն իւր՝ նա կալաւ զաթոռն Խաղայ:

ԳԼՈՒԽ ԺԳ.

1 Յաղագս որ ինչ իբրեւ դարձաւ սուրբ կաթուղիկոսն Ներսէս յերկրէն Յունաց, թէ ո՛րպէս կշտամբէր զարֆայն. կամ ո՛րպէս լինէին ճանմ ահագին ի վերայ աւանին Արշակաւանի, եւ սատակեցան առ հասարակ յանկարծարէն ամենայն բազմութիւն մարդկան՝ որք յայնմ տեղուոջ էին:

2 Այլ իբրեւ սատակեցաւ կայսրն, դարձան ամենայն հովիւքն եպիսկոպոսքն՝ որք աքսորեալք էին, եւ կեցեալք էին յիւրաքանչիւր քաղաքս: 3 Յայնժամ դարձաւ եւ սուրբ կաթուղիկոսն Ներսէս յանապատ ի կղզւոյ անդի, ուր էր զնոսա արգելեալ. եւ համաշխարհի էին խնդրուածք. միւսանգամ աշխարհի շնորհեցաւ: 4 Իբրեւ եկն յաշխարհն Հայոց, ընդ առաջ երթային նմա ի գաւառաց գաւառաց եպիսկոպոսք հանդերձ իւրաքանչիւր ժողովրդովք, եւ նախարարք ամենայն եւ ամենայն գաւառակալք: 5 Եւ բերէին առաջի նորա զիւրաքանչիւր հիւանդս, եւ բժշկէր զնոսա. ուր եւ բազում իսկ եւ կարի յաճախէր գոհութիւն ի փառս Աստուծոյ. եւ ամենայն մարդիկն առ բազում գուլթ հովուապետին՝ համարէին զանձինս իւրեանց թէ ինքեանք իբրեւ զնոսա ի գերութենէ դարձեալ իցեն:

6 Եւ առնէին ուրախութիւն բազում հոգեւորս մեծաւ ցնծութեամբ: 7 Համաշխարհ ամենայն ոք իւրաքանչիւր Տեառն Աստուծոյ զեղեալ ուխտս կատարէին, որ ի վերայ հոգեւոր գանձին հայրապետին՝ որ առաւ նոցա. եւ կատարեաց նոցա զխնդրուածս նոցա, եւ զորբութիւն սրտաուութեան անձանցն սրտկեղ ցաւոցն սրտաբեկութեանն, միւսանգամ սիրով գլթով վարդապետութեամբ հոգեւոր հարբն մխիթարեաց զամենեսեան: 8 Ամենեքեան ի դժնէ տրտմութենէն զուարթացեալք, յուրախութիւն դառնային: 9 Ինքն իսկ թագաւորն Արշակ երթայր ընդ առաջ նորա, մինչեւ ի կողմանս Բաքասերոյն, եւ

անդի մեծաւ զուարթութեամբ դարձան: 10 Եւ սկսան նորոգել եւ պայծառանալ վարք աշխարհի եւ կարգացն եւ աւրինացն եկեղեցեացն:

11 Այլ իբրեւ եկն Հայրապետն Ներսէս ի Հայս, ի վերայ հասանէր իւրում ետեղապահին սրբոյն Խաղայ, զի էր կացեալ ի ճշմարտութեան եւ յուղղութեան, եւ գնացեալ էր զճանապարհս Տեառն Աստուծոյ, եւ ոչ էր թիւրեալ յաջ կամ յահեակ, բազում գոհութիւնս մատուցանէր Աստուծոյ, զի զԽաղ զհոգեւոր որդեակն իւր եգիտ ըստ կամացն՝ որպէս ինքն կամէր. զնա անձկով տեսանէր: 12 Այլ յորժամ լսէր ի Խաղայ զամենայն զանաւրէնութիւնսն չարութեանն ծուռ գնացիցն թագաւորին, տրտմէր լայր ողբայր եւ կոծէր մեծամեծ հեծեծանաւք. մանաւանդ վասն քաղաքին Արշակաւանին, զի անաւրէնութեամբ եւ չարութեամբ եւ յափշտակութեամբ շինեցաւ բազում մեղաւք:

13 Ապա սուրբ Հայրապետն Ներսէս մտանէր առ թագաւորն, խաւսէր ընդ նմա եւ ասէր՝ եթէ Ընդէ՞ր մոռացար զՏէր, եւ թողեր զպատուիրանս նորա. զԱրարիչն՝ որ զամենայն յոչնչէ արար, որ Հայրն է որբոց եւ դատաւոր այրեաց, որ վասն մեր էջ յաղքատութիւնս, որ ոչ թողու զաղքատս ի ձեռանէ, այլ իւրով մարդասիրութեամբն բուծանէ զնոսա. այլ Աստուած դատաւոր արդար եւ հզաւր եւ երկայնամիտ՝ որ ամենայն տառապելոց ունկնդիր է, եւ զարհամարհանս ուրուք ի յանձն ոչ առնու: 14 Եւ զիա՞րդ կամ ի՞նչ դու ըմբռնեցար արհամարհել զնորա զպատուիրանսն. ո՞չ Հայրն քո վասն այսր ամբարշտութեան ի կորուստ մատնեցաւ: 15 Արդ դու տակաւին չյիշեցեր զնա, որ ոչն յիշեաց զմեղս հաւրն քո, եւ ետ քեզ զտեղի ունել, այս ինքն զաթոռ եւ զթագ հաւրն քո. եւ սկսար անաւրինել առաջի Տեառնն Աստուծոյ քո, եւ զամբարշտութիւնս եւ զանաւրէնութիւնս եւ զանիրաւութիւնս

կարի ի նմանութիւն սողոմացւոցն՝ պարծանաւք յայտնապէս պատմել: 16 Եւ երկիր առ հասարակ լան եւ վայն զրկութեանցն զյափշտակութեանցն, որովք դու կամեցար մեծանալ. եւ ոչ յազեցոյց զքեզ մեծ եւ բազում թագաւորութեանցն յղփութիւնքն, զոր ետն քեզ Տէր ամենայնի Քրիստոս:

17 Արդ լուր ինձ զոր ասեմս քեզ, եւ արա զնա՝ զի մարթասցես շահել զանձն քո, եւ ապրեցուցանել զքեզ ի բարկութենէ անտի Աստուծոյ. եւ մի՛ թշուառական աշխարհս Հայոց յաղագս քո կորիցէ: 18 Այլ ես տեսի տեսիլ, զի կորուստ եւ քանդումն յուզեալ խաղացեալ գայ ի վերայ կորստական աշխարհիս Հայոց այսորիկ: 19 Արդ հրաման տուր՝ ի բաց քակել զտեղին զայն, եւ ցրուեա զմարդիկն՝ զոր ժողովեցեր, զի երթիցեն ցրուեսցին սփռեսցին յիւրաքանչիւր տեղիս, եւ երթիցեն տացեն իրաւունս ում զինչ եւ պարտիցին. զի մի՛ դու ի խորս չարեաց բարկութեանն անգանիցիս կորիցես: 20 Եւ վասն մեղացն՝ զոր գործեցեր, հրաման տացուք ամենայն աշխարհի՝ ընդ քո ի պահս եւ ի խնդրուածս լինել, եւ մեք հանդերձ քեւ յապաշխարութիւն մտցուք. ո՛ր գիտէ, թողու տէր զքո զայդ զանհնարին զմեղսդ գործեալ: 21 Եթէ տեղւոյն ինչ կարի այդչափ ցանկացեալ ես, ես ինքն ինձէն զնա արդարութեամբ շինեցից, եւ շէն կալայց առաջի քո:

22 Իսկ թագաւորն ծաղր առնէր զբանսն կաթողիկոսին, եւ մկթայր զնորա զասացելովքն: 23 Իսկ նա միւսանգամ բարկացեալ, կրկնեալ ասէ. Գիտես, ո՛ր թագաւոր. վասն այսր ամենայնի ասացեալ է կանխասացութեանն ամենայն բերանովք մարգարէիցն, եթէ Վսյ որ շինէ գտուն իւր՝ եւ ոչ արդարութեամբ, եւ զվերնայարկս իւր՝ եւ ոչ իրաւամբ՞. եթէ

1 Թերեսս պատուել
 * Երէմ. ԻԲ 13

«Յառակ առցին ողբքն, եւ ասասցեն՝ եթէ վա՛յ որ ազահեսցէ զազահոլթիւն անձին իւրում, որ ոչ է իւր. զի եթէ տունք գեղեցիկք իցեն եւ մեծամեծք իցեն, սակայն յաւեր դարձցին. զի մի՛ ոք բնակիցէ ի նոսա մարդ, այլ ճարակ հաւտից լիցի, եւ դադարք գազանաց եւ որջք գազանաց եւ որջք բորենից եւ ճագարաց եւ աղուեսուց, բոյն խորոց եւ ագուաւուց, եւ անդք սահմանակցաց. վասն այդորիկ աւերեսցին գործք ձեռաց քոց եւ մի՛ շինեսցին, եւ միանգամայն սատակեսցին ամենայն անաւրէնքն բնակեալքն ի նմա. եւ եղիցին դադարք եզանց եւ ճարակք ցոռց, եւ աղուէսք մուտ եւ ելս խաղասցեն յարկս նոցին. եւ մի՛ շինեսցին, եւ մի՛ եւս բնակեսցեն, մինչեւ ցյաւիտեան»:

24 Եւ զայս ամենայն խաւսեցաւ հայրապետն Ներսէս, եւ գնացեալ ի թագաւորէն՝ ելեալ շրջէր ընդ գաւառս գաւառս աշակերտութեան՝ ուղղել կարգել եւ հաստատել զեկեղեցիսն յամենայն գաւառս Հայոց¹: 25 Եւ յետ երից աւուրց անցանելոյ բանիցն ասացելոց ի վերայ, որ խաւսեցեալ եղեն ի բերանոյն երանելոյն Ներսէսի, մատնեաց Տէր զգեւղաքաղաքն զԱրշակաւանն ի ձեռս հարուածոցն: 26 Եւ սկսաւ հարկանել² զոր չարակեղն իմն կոչեն, իսկ կէսքն ժանդ անուանեն. ելանէր ի վերայ մարդկանն եւ անասնոցն: 27 Ոչ աւելի եղեւ հարուածոցն ի վերայ նոցա քան զերիս աւուրս յերկարեցաւ³, զի անմարդեցաւ⁴. քան զքսան հազարք սատակեցան երդք մարդկան, ոչ մնաց ի նոցանէ եւ ոչ մի. զի առ հասարակ սատակեցան կոտորեցան յանկարծաւրէն քանդեցան. զի միահաղոյն եկն սատակումն ի վերայ նոցա:

28 Եւ յետ այսորիկ ինքնին թագաւորն ելանէր ի խնդիր հայրապետին Ներսէսի. եւ գտեալ՝ խնդրէր ի նմանէ, զի մատուցէ աղաւթս վասն նորա, զի մի՛ գուցէ եւ նա սատակեսցի, քանզի կարի գարհուրեալ էր: 29 Ապա խաւսել սկսանէր եպիսկոպոսապետն Ներսէս ընդ թագաւորին, եւ ասէր. Զի այժմ յաշխարհիս յայսմիկ, վասն զի արդարք եւ մեղաւորք զոյգ հասարակ խառն են, վասն արդարոցն խնային մեղաւորք առ ժամանակ մի եւ ապրին, եւ յերկարին յաշխարհիս վասն նոցա կենացն եւ նոքա ի պատճառս նոցա: 30 Զի որոմն սերմանեալ թշնամւոյն ի վերայ սուրբ բուսոյն սերմանն ցորենոյն, ընդ նմին զոյգ հասարակ բուսեալ են. խնային վասն ցորենոյն սրբութեան եւ բոյս աղտեղութեանն որոմնն. զի մի՛ գուցէ մինչ զորումնն քաղահան արարեալ խլիցեն, խլիցի ընդ նմա եւ ցորեանն: 31 Վասն այնորիկ առ ժամանակս վայելեն ի դարմանոյ ցորենոյն եւ որոմն ընդ նմին ի ցաւոս եւ յանձրեւս եւ յոռոգմունս, եւ ի ջերմութիւնս խարակեալ եւ ի հեշտ արեւս արեգականն: 32 Այսպէս այս լինի մինչեւ ի ժամանակս հնձոց, մինչեւ եկեսցէ ժամանակն յորժամ հնձեսցի ցորեան արմտեացն. զայն ի շտեմարանս արքայութեանն ժողովեսցեն, եւ զորոմն յայրումն յաւիտենական հրոյն. որ է ինքն հուսնձք կատարած ժամանակաց, յորժամ Որդին Աստուծոյ եկեալ հասանիցէ, եւ տացէ հրաման երկնաւոր մշակացն ընդ նմա իջելոց ի վերուստ՝ ի գերեզմանացն հնձել զամենայն ննջեցեալսն յարուցեալս:

33 Արդ այնուհետեւ ընդրութիւն առնիցէ. զարդարան նման ցորենոյ ընդ ինքեան յարքայութիւնն իւր ընդունիցի, եւ զմեղաւորսն որոման նմանեալս՝ յանշէջ ի յաւիտենական ի հուրն հրամայիցէ արկանել: 34 Արդ այժմ ժամանակն հնձոց չեւ եւս էր, դու կանուխ քաղահան որոմանն ի ցորենոյն արարեր, եւ կանուխ զորոմնն ի

1 Օրինակ մի՝ հաստատել զամենայն եկեղեցիսն Հայոց

2 Յօր. հատանել

3 Օրինակ մի չուցի՝ յերկարեցաւ

4 Օրինակ մի՝ անմարդացաւ

մի վայր առանց ցորենոյն ժողովեցեր. վասն այդորիկ յայնժամ կանխեաց հուրն, անխնայ յարձակեցաւ այրել, զամենայն ուրոմնն ի մի վայր ժողովեալս ի միում վայրի գտեալս միահաղոյն վաղճանեաց: 35 Այլ այր դու, տես զանձն քո, զի մի՛ եւ դու կորիցես, եւ աշխարհս վասն քո: 36 Իսկ թագաւորն ի գուճս հարեալ, մեծաւ աղաչանաւք եւ բազում աղաւթկերաւք աղաչէր թագաւորն՝ հաշտել ընդ նմա. եւ եղ ուխտ, զի այլ ոչ եւս երբէք անցցէ զբանիւք նորա:

ԳԼՈՒԽ ԺԳ.

1 Յաղագս Հայր մարդպետին, յորժամ եկն էջ ի գաւառն Տարաւնոյ՝ եթէ գիա՛րդ եկն ել ի տեղի աղաւթիցն Աշտիշատ՛, կամ գիա՛րդ դատապարտեալ գնաց անտի յիւրոյ բերանոյն ի խաւսիցն. կամ գիա՛րդ անկեալ, մահուն պարտ եղեալ, սատակեցաւ ի Շաւասպայ Արծրունւոյ:

2 Եւ էր մարդպետն Հայր այր չար եւ ժանտ բարոյիւք, անաւրէն եւ անիրաւ քան զառաջին Հայր անուն մարդպետսն²:

3 Սա կոտորեաց զամենայն ազգս նախարարացն ի ժամանակս թագաւորութեանն Տիրանայ արքայի. եւ սոյնպէս առ թագաւորութեամբն Արշակայ՝ եւս չար քան զառաջինն գործել չար առ ամենայն մարդ:

4 Արդ ելանէր սա շրջէր ընդ մարդպետութիւնն իւր. ապա եկն էջ Հայր մարդպետ ի գաւառն Տարաւնոյ ընդ իւր գեղան տեսանել:

5 Զայնու ժամանակաւ սուրբն Ներսէս շրջէր ընդ իւր ձեռական իշխանութիւնսն. զի հնգետասան գաւառ զայն ձեռական իշխանութեան ունէին իբրեւ սեպհական ի բնմէ³, առանձին առոշոգի նոցա էր կարգեալ: 6 Եւ յայն գաւառ գլխաւոր

գաւառք այս էին. Այրարատ, Դարանաղէ, Եկեղեաց, Տարաւն, Բզնունիք, Մոփք, եւ որ ընդ մէջ⁴ նոցա եւ որ շուրջ զնոքաւք: 7 Եկն էջ եւ Հայրն մարդպետ զիւրով իշխանութեամբն շրջել. ապա եկն եւ սուրբ կաթողիկոսն Ներսէս յառաջին տեղին, ուր նախ էր գեկեղեցին⁵ շինեալ ի Գրիգորէ, եւ զվկայարանսն սրբոցն զվկայիցն. եւ անդ զյիշատակս սրբոցն կատարէր: 8 Ապա դէպ եղեւ անցանել Հայր մարդպետին առ տեղաւքն⁶, ցանկացաւ ելանել ի սուրբ տեղիսն Աշտիշատու կալ յաղաւթս, եւ առնուլ ողջոյն ի սրբոյ եպիսկոպոսապետէն Ներսէսէ: 9 Ապա իբրեւ կային յաղաւթս, ետուն ողջոյն. հրաման տայր սուրբ Հայրապետն Ներսէս, եկելոցն ճաշ պատրաստել: 10 Եւ մինչ դեռ նոքա պատրաստէին ինչ ըստ նմա արժանի աւագաւրէն սպաս, նա ելանէր յեպիսկոպոսական կայենէն յապարանիցն մինչեւ ի վկայարանս սրբոցն. ի մեծ եւ ի գեղեցիկ հրապարակին գերթեւեկս առեալ շրջէր՝ զճեմս առեալ: 11 Ապա տեսանէր զգեղեցկութիւն վայրացն, զնիստ շքեղութեան ի բարձրաւանդակ տեղեացն եւ զնայեացն ի խոնարհ, զի կարի վայելուչ էր տեղին. եւ չարակնեաց:

12 Ապա եմուտ բազմեցաւ յուտել եւ ըմպել: 13 Իսկ յորժամ արբեցաւ սխաղակեցաւ, սկսաւ ներքինին խաւսել բանս հպարտս եւ ամբարտաւանս յարբելեաց. դնէր թշնամանս Տրդատայ արքայի, ի մեռեալս եւ կենդանեացն ի կեանս, ազգի եւ տակի եւ տոհմի Արշակունեաց թագաւորացն Հայոց: 14 Զիա՞րդ, ասէ, զայսպիսի տեղիս կանանցահանդերձ մարդկան տուեալ է, եւ ոչ արանց: 15 Եւ զսուրբ տեղեաւքն քամահեալ արհամարհէր, եւ ասէր՝ եթէ զայս տեղիս ի բաց քակեմք, զի աստ պարտ է շինել զապարանս արքունի:

1 Օրինակ մի՛ Աշտիշատայ
2 Օրինակ մի՛ մարդպետն
3 Օրինակ մի՛ ի բնէ

4 Օրինակ մի՛ զմէջ նոցա
5 Օրինակ մի՛ ուր նախ է գեկեղեցիսն
6 Օրինակ մի՛ առ տեղեօքն

16 Եւ թէ ես Հայր մարդպետ կենդանի իցեմ եւ առ թագաւորաւն հասից, ասէ, որ ինչ աստ իցէ, զայն ի բաց փոխեցից. եւ որ աստ իցեն, զնոսա հանից, եւ զտեղիս՝ արքունի սենեակ կազմեցից:

17 Իսկ սուրբ եպիսկոպոսապետն յորժամ լսէր, եւ ասէ՝ եթէ Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ ընտրեաց նախ զայս տեղի՝ զնել զանուն իւր աստ, որոյ անունն առ հասարակ ընդ ամենայն տեղիս փառաւորեալ է Հարբն եւ Սուրբ Հոգւովն հանդերձ, որ պատուիրեաց մի՛ ամենեւին յայլոյ ինչ ակն զնել կամ ցանգալ. իսկ որք ժլատեալք ի նորա նուէրսն բերեն աչս, եւ այնմ ցանկան, վասն այսորիկ նա մի՛ հասցէ առ այն՝ որով սպառնացաւն, այլ խափան լիցի իւր յառաջեւ¹ նմա բազում մակարդ մեղացն իւրոց գործելոց: 18 Ապա զնայր մարդպետն Հայր ի սուրբ տեղեացն, եւ էջ յափն գետոյն հոսանացն Եփրատու, ի հովիտսն թանձրախոռոն անտառին, ի գետախառնունսն երկուց գետոցն, ի թաւութ խարձիցն մամխեացն, որ ի տեղոջն ի հնոցն իմն շինած քաղաք՝ զոր շինեալ Սանատրուկ արքայի, որում անուն տեղւոյն Մծուրք կոչի:

19 Արդ իբրեւ եկն եհաս յայն տեղի, ապա յուզեցաւ դատաստան բարկութեան ի Տեառնէ ի վերայ անաւրէնն Հայրի, եւ իւրոց գործոցն եւ բանիցն խաւսելոյ: 20 Ապա մատնեցաւ նա ի ձեռս առն միոյ, որոյ անուն Շաւասպ կոչէր, մնացորդ ազգին Արծրունեաց: 21 Մինչդեռ նստէր նա ի կառս, եւ երթայր զճանապարհն, եկն Շաւասպն, սկսեալ պատմել մարդպետին² սուտ ի քմաց իւրոց, եւ ասէ. Արջ մի տեսի սպիտակ իբրեւ զձիւն: 22 Եւ հրապուրեաց զմարդպետն իջանել ի կառաց անտի, եւ հեծանել ի նոռգի. եւ մտեալ պառակէին

մայրեացն: 23 Իսկ իբրեւ ընդ թաւութան անկանէին, զկնի եղեալ սակաւ մի Շաւասպն յետագոյն մնացեալ, յետոյ յառաջ նետիւ հարկանէր զմէջ ներքինւոյն Հայրի. անդէն թափ հանեալ զնետն, եւ անդ յերկիր անգեալ սատակեցաւ: 24 Եւ առն Աստուծոյ ասացեալքն հուպ ընդ հուպ վաղվաղակի կատարեցաւ զի ամենեւին բան ի գետին ոչ անկանէր առն Աստուծոյ:

ԳԼՈՒԽ ԺԵ.

1 Յաղագս անարեւնութեան թագաւորին Արշակայ, թէ ո՛րպէս եսպան գորդի եղբար իւրոյ, որում անուն Գնէլ, ի քուրթնէ չարութեանէն Տիրիթայ. կամ ո՛րպէս յանդիմանեալ եղեւ յառնէն Աստուծոյ ի Ներսիսէ, կամ ո՛րպէս գմեւս եւս եղբարորդին Տիրիթ. կամ ո՛րպէս զկիմն Գնելայ արար իւր կիմ. կամ ո՛րպէս էած իւր կիմ ի Յունաց գողիմպիմ. կամ որպէս երեցն Մրջիւնիկն մահուան դեղովն զնա ընդ արեւնսն³ սպանանէր՝ խորհրդով Փառանձեմայ:

2 Զայնու ժամանակաւ էր դուստր մի գեղեցիկ Անդովկայ ուրումն, մի ի նախարարացն նահապետին Սիւնեաց, որում անուն Փառանձեմ կոչէր. զորմէ կարի անուանեալ էր գեղեցկութեամբ եւ պարկեշտութեամբ: 3 Ապա Գնէլ պատանեակն եղբարորդին արքային էառ զնա ի կնութիւն իւր: 4 Եւ համբաւ գեղեցկութեան աղճկանն ընդ վայրսն տարածեցաւ, եւ համբաւ գեղոյ նորա յաճախեալ բազմանայր եւ հնչէր: 5 Ապա առ համբաւ ցանկութեան անուանն տրփեալ լինէր մին եւս հաւրեղբարորդին Գնելոյ, որում անուն Տիրիթ կոչէր: 6 Վասն որոյ անգանէր ի գաղտագողաւնս, մինչ զի զնուն իւր տեսանել կարասցէ: 7 Եւ յորժամ կարացն տեսեանն՝ որում ցանգայր, այնուհետեւ հնարս խնդրէր առն կնոջն կորստեան, ո՛

1 Օրինակ մի՛ յառաջ. եւ նմա

2 Օրինակ մի՛ եկն Շաւասպն, սկսաւ պատմել սուտ ի բնաց իւրոց

3 Օրինակ մի՛ ընդ անորեւնսն

գիտէ՝ զկնի¹ նորա նմա հնար լիցի յափշտակել:

8 Ապա Տիրիթն ի հնարս նենգութեան մտանէր, եւ բազում վարձէր իւր աւզնականս եւ սատարս, որով զիւր չարախաւսութիւնն² յառաջ վարել կարասցէ: 9 Եւ քսիս ստութեան զԳնելոյն նենգութեամբ առ թագաւորն Արշակ մատուցանէր՝ թէ Գնէլ թագաւորել կամի, եւ զքեզ սպանանել. եւ ամենայն մեծամեծք եւ նախարարք եւ ազատք սիրեն զԳնէլ, եւ ամենայն աշխարհիս նախարարք կամին զտէրութիւն նորա ի վերայ իւրեանց առաւել քան զքո: 10 Արդ, ասեն, գիտեա եւ տես, արքայ, զի՛նչ գործեսցես. որպէս եւ կամիս, զիարդ մարթասցիս ապրել: 11 Եւ այսպիսի բանիւք գրգռէին զթագաւորն Արշակ, մինչեւ հաստատէին ի միտս թագաւորին զիւրեանց ասացեալսն:

12 Ապա յիսացեալ թագաւորն ընդ պատանեկին Գնելոյ, եւ բազում անգամ հալածական առնէր զնա, եւ նիւթեալ լինէր նենգութիւն³ բազում ժամանակս: 13 Ապա զնաւասարդաց ժամանակաւքն առնէր խորհուրդ թագաւորն Արշակ՝ կոչել առ ինքն զպատանեակն Գնէլ եւ սպանանել: 14 Ապա առաքէր զՎարդան զեղբայր սպարապետին զնահապետ ազգին Մամիկոնեան տոհմին, զի մեծաւ երդմամբ եւ նենգութեամբ կոչել կարասցէ, զի մի՛ խորհուրդն յայտնեսցի. գուցէ փախիցէ եւ ապրիցի. այլ զի պատրանաւք եւ հրապուրանաւք ածիցէ⁴ մինչեւ ի տեղին մահուն: 15 Եւ էր բանակ թագաւորին ի Շահապիվանի ի բուն բանակի տեղան Արշակունեացն ի ներքոյ Սիւնեացն⁵ եւ ի վերայ ասպարիսացն: 16 Եւ առաքեալ զՎար-

դանն, զմեծ նահապետն յարքայէն Արշակայ, եկն եգիտ զպատանեակն Գնէլ ի մաւտաւոր տեղւոջն, այս ինքն ի գեւղն Առաւիւտոց անուանեալ: 17 Մեծաւ ուխտիւ եւ բազում պատրանաւք զպատանեակն Գնէլ հանդերձ իւրով կնաւն եւ դրամբն հաւանեցունէր երթալ հասանել ի բանակն արքունի. իբրեւ այն թէ ի մեծարանս ինչ զնա կոչիցէ թագաւորն, բազում խնդանաւք տարեալ հասուցանէր՝ եթէ թագաւորն Արշակ ոչ կամեցեալ զտաւնս նաւասարդաց առանց քո անցուցանել, զի հաճեալ եւ քաղցրացեալ է ընդ քեզ, վասն զի ըստ բանից չարախաւսացն ոչ ինչ գտաւ ի քեզ չարութիւն. եւ եհաս ինքն ի վերայ, զի զուր այժմ ատէր զքեզ՝ որ ի նմանէն մեծ սիրոյ արժանի ես:

18 Ապա չուեաց ամենայն կազմութեամբն իւրով Գնէլ, երթեալ հասանէր ի բանակն արքունի զգիշերն ամենայն բազում փութով տազնապաւ: 19 Վասն զի վաղիւն հասելոյ առաւաւտուն աւրն լուսանայր կիւրակէն: 20 Եւ յայնմ աւուր տաւն դիպեցաւ յիշատակի մեծին Յովաննու որ ի Գրիգորէ եւ ի Տրդատայ յաւանին Բագաւանին կարգեալ էր: 21 Ապա յայնմ յիշատակ աշխարհաբնակք մարդկան՝ որ ժողովեալն էին, եւ բազում եպիսկոպոսք՝ որ յայլոց գաւառաց. եւ ապա մեծ եպիսկոպոսապետն Ներսէս փոխանակ իւր յղեաց զիւր աթոռակիցն զԽաղ, եւ զիւր արքիդիակոնն եպիսկոպոսին՝ որում անուն Մուրիկ կոչէր, զի երթիցեն նոքա, պէտք զի՛նչ եւ իցեն ժողովոյն՝ ընդ նորա վճարեսցեն: 22 Եւ ինքն անդէն մնաց յարքունական բանակին, զի գնոյն հաղորդութեանն եւ անդ կատարեսցեն: 23 Եւ յայնմ գիշերի ցայգապաշտաւն մեծ եղեւ ի բանակին առ կաթողիկոսին:

24 Իսկ իբրեւ առաւաւտն ծագեաց, հասանէր վաշտն Գնելոյ ի բանակն արքունի. եւ մինչ Գնէլն արքունական բանակին լինէր միջամուխ, ազդ լինէր թա-

1 Ի տպ. Պատկ. գկիմ
2 Օրինակ մի՝ զիւր չարութիւն եւ զչարախաւսութիւնս
3 Օրինակ մի՝ նենգութեամբ
4 Օրինակ մի՝ պատրիցէ ածիցէ
5 Ի տպ. Պատկ. Սիւսեացն

զաւորին եկն նորա: 25 Ապա ելանէր հրաման յարքունուստ՝ արտաքս¹ ունել եւ տանել սպանանել: 26 Եւ մինչ դեռ գայր նա ընդ բանակամէջն, եւ էր հեծեալ յերիւփարին իւրում, իբրեւ մերձ եղեւ ի հրապարակն արքունի, եւ անդ ի յարքունուստ հասանէին բազում սպասաւորք վառեալք սուսերաւորք նիզակաւորք վաղրաւորք սակրաւորք սուռնաւորք եւ սպարակիրք հետեւակք, որք մատուցեալք բուռն հարեալք ընկենուին յերիւփարէ անտի զպատանեակն Գնէլ, եւ ձեռն յետս կապէին զնա, եւ առեալ գնային ի տեղի կառափելոյն: 27 Եւ քանզի կին նորա եկեալ էր ընդ նմա ժանուաւ, ի նմին ի նորին վաշտու էր ընդ առն իւրում: 28 Իսկ իբրեւ տեսանէր թէ կայան գայր իւր եւ կապեցին, վաղվաղակի ընթացաւ յեկեղեցախորանն ժողովուրդն, ուր պաշտաւն մարդկան բանակին առ Աստուած կատարէր, մինչ դեռ առաւաւտին աղաւթքն մատչէին. եւ անդ Ներսէս մեծ եպիսկոպոսապետն: 29 Իսկ կինն հասեալ առ արքեպիսկոպոսապետն, գոյժ արկանէր նմա զիւրոյ առնն տարապարտ կորուստն, ճշեալ մեծաձայն. Վաղ հասիր, ասէ, դեռ զամուսինն իմ գուր առանց վնասու եւ յանցանաց խողխողեն: 30 Իսկ նորա խափանեալ զպաշտաւնն, ընթանայր ի խորանն արքունի. հասեալ ի դրացն ի ներքս առ թագաւորն անգանէր: 31 Իսկ թագաւորն իբրեւ տեսանէր զմեծ քահանայապետն, գիտացեալ զբարեխաւսութիւն համոզելոյն վասն առնն մահուանն զի մի՛ մեռցի, յայնժամ թագաւորն զիւր սամոյրան զգլխովն ածեալ, ի փոյթ կնջանն մտեալ, զիւր դէմս երեսացն ծածկէր. քնոյ պատճառ եղեալ՝ զի զնորա բանսն մի՛ լուիցէ:

32 Իսկ սուրբ Ներսէս մատուցեալ բուռն հարկանէր զթագաւորէն. խաւսէր ընդ նմա, եւ ասէր. Թագաւոր, յուշ լիցի

քեզ քո Տէրն՝ որ վասն մերոյ սիրոյ խոնարհեցաւ յիւրմէ ի բնական բարձրութենէն, եւ եղեւ եղբայր ծառայութեան մերոյ անարժանութեանս. ոչ վասն այլ իրիք, այլ զի լիցի վարդապետ սիրոյ. զի մեք խնայելով ի միմեանս, նայեցեալ յաստուածեղէն վարդապետն, զմիմեանս սիրեսցուք երկեղիւ. զի մի՛ միմեանց վնասել իշխեսցուք: 33 Իսկ եթէ դու ի քո եղբայր եւ ի ծառայակիցն եւ յընկերակիցն եւ ի հարազատն ոչ խնայեսցես, որ կամաւքն եղբայրացեալ է մեզ Տէրն՝ ի քեզ ոչ խնայեսցէ: 34 Զինա մեզ այսպէս ասաց. Որ ձեզ լսէ, ինձ լսէ. եւ որ զձեզ ընդունի, զիս ընդունի. եւ որ զձեզ անարգէ, զիս անարգէ: 35 Եւ որ այժմ դեռ մեւք² ընդ քեզ խաւսի, լո՛ւր Քրիստոսի, զի մի՛ կորիցես դու. գուցէ անկեալ ի թագաւորութենէդ քումմէ, կենդանւոյն միայն շրջիցիս, եւ ոչ ոք քեզ աւգնիցէ: 36 Այլ այժմ լո՛ւր Քրիստոսի, եւ խնայեա յանձն քո, մի՛ հեղուլ զարիւն եղբաւր քո հարազատի՝ սպանանել զարդարն ի տարապարտուց յանխնայ:

37 Իսկ թագաւորն սալացեալ³, ոչ ինչ լսէր. գերեսսն վտաւատաւքն ծածկեալ՝ ոչ բանայր, եւ ոչ կամէր առնել բանիցն պատասխանի. այլ ընկողմնեալ պատեալ ծածկեալ կայր ի գահոյսն, զի եւ չարժել անգամ ոչ տղէր: 38 Իսկ մինչ դեռ նա գայս եւ այսպիսի բանս ողորքոյ⁴ ընդ թագաւորին խաւսէր, գայր արտաքուստ դահճապետն Երազմակ, մտանէր ի խորանն արքունի, սկսանէր պատմել՝ զի ի գլուխ հանի կատարեցի, ասէ, զամենայն զհրամանս արքունի. առի գնացի զԳնէլ, տարայ մինչեւ յորմ Սիւսին⁵ սպանի, եւ անդէն թաղեցի:

“ Հմմտ. Ղուկ. Ժ 16:
 2 Օրինակ մի՛ որ յարածամ մեւք
 3 Օրինակ մի՛ յաւելու՝ քարացեալ
 4 Օրինակ մի՛ ողորքոյ
 5 Օրինակ մի՛ Նիւսիւն

1 Օրինակ մի՛ չունի՝ արտաքս

39 Ապա խաւսել սկսանէր սուրբն Ներսէս, եւ ասէր. Արդարեւ իսկ իբրեւ աւճի քարբի, զի խնու զականջս իւր՝ զի մի՛ լուիցէ նա զձայն թովչի ճարտարի, եւ մի՛ առցէ զդեղ ի դեղատուէ իմաստնոյ, սոյն աւրինակ եւ դու խցեր զականջս, եւ կափուցեր զլսելիս, զի մի՛ լուիցես զաւգտակարս բարբառոց զաստուածեղէն բանիցն խրատուն. այլ զգազանաց առեալ զբարուցս, սկսար լինել մարդախանձ:

40 Վասն այնորիկ որ ի վերայ նոցա ասացաւ, լիցի այն ի վերայ քո, որպէս ասէն. Աստուած փշրեսցէ զատամուսնս նոցա ի բերանս նոցա, եւ զժանիս առիծուց խորտակեսց Տէր՞:

41 Վասն զի ընդդէմ դարձար հրամանին Քրիստոսի Տեառն քո, վասն այնորիկ անարգ լիջիր դու իբրեւ զջուր հեղեալ. եւ ի լարել աղեղան սորա՝ տկարասջիր: 42 Եւ կործանումն՝ որ բերանով մարգարէին ածի ի վերայ ձեր, ըմպել ազգիդ Արշակունեաց գլետին բաժակն, արբջիք արբեսջիք եւ կործանեսջիք, եւ այլ մի՛ եւս կանգնեսջիք: 43 Եւ անսպառ ժամանակին հրոյն սպառնալիք հասանիցեն ձեզ ի Տեառնն գալստեանն. եւ անկջիք ի խաւարն, եւ մի՛ եւս տեսջիք զարեւ փառաց Որդւոյն Աստուծոյ: 44 Այլ դու, Արշակ, փոխանակ զի զգործս Կայէնի գործեցեր, զանէժսն Կայէնի զգեցջիր. անկջիր կենդանւոյն ի թագաւորութենէդ քումմէ, եւ չարչարեսցիս առաւել քան զՏիրան զհայրն քո, եւ դառն մահուամբ զկեանս քո յերկրէս մեծ նեղութեամբ վճարեսջիր:

45 Եւ զայս ամենայն խաւսեցեալ ընդ թագաւորին քահանայապետին մեծին Ներսէսի, զնաց ի թագաւորէն, եւ այլ ոչ դարձաւ անդրէն յայն բանակ: 46 Իսկ զպատանեակն Գնել առնուին զնային մաւտ ի Սիւսն՝ արքունի, եւ անդէն կառափէին ի սարակ լերինն, որում տեղւոյն

Լսին անուանեալ է, մաւտ յորմածս արգելոցացն որսոյն էրիոցն, ընդդէմ մուրտատանին աղբերացն բազմոցացն արքունի, յանդիման բանակետեղ բնին:

47 Ապա հրաման եղեւ յարքայէն. Ամենայն մարդիկն որ իցեն ի բանակին, մեծ եւ փոքր առ հասարակ, մի՛ ոք իշխեսցէ չերթալ. այլ ամենայն ոք առ հասարակ երթիցեն դիցեն աշխար կոծոց, եւ լացցեն զԳնել մեծ սեպուհն Արշակունի զսպանեալն: 48 Իսկ ինքն թագաւորն զնացեալ ի լալիսն, նստեալ լայր զեղբաւորդին իւր, զոր ինքն եսպան: 49 Երթեալ նստէր մաւտ առ դին, լայր ինքն, եւ տայր հրաման՝ կոծ մեծ եւ աշխար դնել շուրջ զսպանելով դիակամբն: 50 Իսկ կինն սպանելոյն Փառանձեմն զհանդերձսն պատառեալ, զգէսս արձակեալ, մերկատիտ² ի մէջ աշխարանին կոծէր. ձայն արկանելով ճչէր, յողբս արտասուաց յաղիողորմ գուժի առ հասարակ զամենեսեան լացուցանէր: 51 Իսկ թագաւորն Արշակ ի լալիսն տեսանէր զկինն սպանելոյն, տուփէր եւ ակն դնէր՝ առնուլ զնա իւր կնութեան:

52 Իսկ այն որ զնենգութիւն քսութեանց նիւթեաց, եւ դաւով ի վերայ իւրոյ հարազատին սպանութիւնս կատարեաց, վասն նորին կնոջն արար զայն, զի մեծապէս սիրով հարեալ էր ի նմա, զՏիրիթն ասեմ, որ յառաջագոյն հարեալ ի կնոջն յայնմիկ, վասն որոյ զնենգութիւնս սպանութեանցն թագաւորաւն գործեաց: 53 Իսկ մինչ դեռ ի նմին կոծն սաստկացեալ էր, Տիրիթն սկսանէր ժոյժ չունելոյ տրփանացն: 54 Պատգամ յղէր առ կին մեռելոյն, ասէ՝ զի Մի՛ կարի զանձն քո աշխատ առներ այդչափ, զի այր բարի ես եմ քան զնա. ես սիրեցի զքեզ, վասն այսորիկ մատնեցի զնա ի մահ, զի զքեզ առից ինձ կնութեան: 55 Արդ մինչ դեռ կոծ մոլութեան զդիակամբն ջայլէին, զայսպիսի

^{**} Սաղ. ԾԷ 7
1 Օրինակ մի՛ ի սիւսնս

2 Օրինակ մի՛ մերկատիկ

պատգամս առաքէր Տիրիթն: 56 Բողոք բառնայր՝ թէ լուարուք ամենեքեան, զի մահ առն իմոյ վասն իմ եղեւ. զի որ ինձ ակն եղ վասն իմ, զայրն իմ ետ սպանանել: 57 Ձհերսն փետէր, ճչէր ընդ կոծելն:

58 Ապա իբրեւ մեծ իրքն համարձակ յայտնեցան ի լսելիս ամենեցուն, եւ ի ձայնարկունքն ամենայն եղեւ նա մայր ողբոցն, եւ ձայնարկունքն ամենայն ի ձայն ողբոցն սկսան նուագել¹ զիրան տրփանացն Տիրիթայ, զակն դնելն, զքսու- թիւնն, զհնարս մահու նիւթել, զսպա- նումն, ձայնիւքն մրմնջոցն ի վերայ սպա- նելոյն ի մէջ կոծոյն բարբառէին գեղգե- դեալ խանդաղատութեամբ: 59 Ի նուագել² իւրեանց ձայնիցն՝ իրքն յայտնեալ հոչակ հարկանէր: 60 Ձոր իբրեւ լուաւ թագա- ւորն Արշակ, եւ եհաս ի վերայ իրացն, զարմացեալ լինէր արմանայր ընդարմա- նայր, ստրջացեալ ի միտ առնոյր զիրսն: 61 Ապա խաւսել սկսանէր թագաւորն, ծափս զծափի հարեալ մեծաւ զղջմամբ ընդ իրսն՝ զոր գործեաց, ասէ. Վասն զի կնոջն Գնելոյ զանարժան սիրով հարաւ Տիրիթն, առ այնմ զչարիսն նիւթեաց, զքսութիւն, զմահուն գոռութիւն զուր եւ տարապարտ. եւ զմեզ եւս արդար արեանն շաղախեաց վասն իւրոյ պղծութեանն. զեղբայրն իւր ետ կորուսանել, եւ զանհնարին չարիսն եւ զանէծս՝ որ ոչ անցանեն՝ ետ մեզ ժառան- գել:

62 Ապա իբրեւ հասանէր թագաւորն յիրացն հաստատութեան ի վերայ, եւ ճչգրտէր զիրսն, խլխլեալ անսայր բանին առ ժամանակ մի: 63 Իսկ իբրեւ զմեռեալն ծածկեցին անդէն ի տեղւոջն՝ յորում սպա- նան, եւ աւուրք հարուստ անցին ի վերայ իրացն գործելոց, պատգամ յղէր Տիրիթն առ թագաւորն: 64 Կամ լիցի, ասէ, քեզ արքայի, զի հրաման տացես՝ զՓառանձեմ

կին Գնելոյ թող առից ինձ կնութեան: 65 Ձոր իբրեւ լուեալ արքային, ասէ. Արդ հաստատ գիտեմ զոր լուայն թէ ստոյգ է. վասն կնոջն իւրոյ եղեւ մահն Գնելոյ: 66 Եւ անդէն արքայն մահ խորհէր, սպա- նանել զՏիրիթ եւս փոխանակ ընդ մահուն Գնելոյ: 67 Ձոր իբրեւ լուաւ Տիրիթ, զահի հարեալ յարքայէն՝ գիշերի փախստական լինէր: 68 Ապա ազդ լինէր թագաւորին Արշակայ փախուստն Տիրիթայ, տայր հրաման թագաւորն Արշակ ազատագունդ բանակին զհետ լինել Տիրիթայն. զի իբրեւ հասցեն նմա, անդէն ի տեղւոջն սպանցեն: 69 Բազումք եւ քաջք զհետ լինէին փա- խուցելոյն Տիրիթայ. ապա երթեալ հասա- նէին ի գաւառին Բասենոյ ի մէջ մայ- րեացն. ի տեղւոջն՝ յորում հասանէին, ան- դէն զՏիրիթ սպանանէին:

70 Եւ յետ այսորիկ էառ իւր Արշակ զկինն սպանելոյն զՓառանձեմն: 71 Եւ որչափ սիրէր արքայն Արշակ զկինն, նոյն- չափ ատեաց կինն զարքայն Արշակ, ասե- լով՝ թէ թաւ է մարմնով, եւ թուխ է գու- նով: 72 Ապա իբրեւ կինն ի նա ոչ յան- գոյց զմիտս իւր, առաքեաց արքայն Ար- շակ յերկիրն Յունաց, եւ խնդրեաց էած անտի կին ի կայսերական տոհմէն ազգաւ, զի անուն էր նորա Ողոմպի: 73 Եւ ուժգին սիրով սիրեաց զնա, եւ նախանձուկս ար- կանէր նովաւ առաջին կնոջն. եւ կինն Փառանձեմ ոխացաւ ընդ Ողոմպին, եւ խնդրէր սպանանել զնա: 74 Բայց ծնաւ ապա Փառանձեմ թագաւորին ուստր մի, եւ կոչեցին զանուն նորա Պապ, եւ սնու- ցին զնա եւ ի չափ հասուցին: 75 Եւ իբրեւ ջրթափեաց եւ եղեւ հուժկու, ետուն զնա պաղանդ ի դուռն կայսերն յերկիրն Յու- նաց:

76 Իսկ Փառանձեմն ի մեծ նախանձու եւ ոխութեամբ զնայր ընդ Ողոմպինոյն, եւ խնդրէր սպանանել զնա դեղովք: 77 Իբրեւ ոչ ինչ հնարս մեքենայից չկա- րէր գտանել, վասն զի անձինն իւրում կա-

1 Օրինակ մի յաւելու՝ իբրեւ զխաղ

2 Յոր. Աուաքել

րի զգուշ կայր, մանաւանդ ի կերակրոց եւ յըմպելեաց, բայց զիւրոց նաժտացն կերակուրս արարեալ եւ կամ զնոցին պարզեալ զգինի ճաշակէր. եւ եթէ ոչ ինչ գտանէին Հնարք դեղել զնա մահուան դեղաւքն, ապա դրան երէց ոմն արքունի՝ որ էր ի ժամանակին յայն, որում անուն Մրջիւնիկ, յԱրշամունեաց տեղեացն ի նահանգէն Տարաւն գաւառէն, զնա ի բանս՝ արկանէր Փառանձեմն անաւրէնն: 78 Ձանարժանս զանկատար զանջնջլի զչարեացն մեղացն չմոռացական տանջանացն կատարեաց զգործսն զանարժանս զանտես զանլուր, այս ինքն ընդ կենաց դեղն զդեղ մահուն խառնելով. որ ուրեք երբէք այսպիսի գործք յուճեք է Վերայ երկրի ոչ գործեցան: 79 Ընդ տէրունական ընդ սուրբ ընդ աստուածական մարմինն ընդ հացն աւրինաց խառնէին զդեղն սատակման, երէցն Մրջիւնիկ անուն, տալով յկեղեցուջն Ողոմպիայ տիկնոջն ընձեռել զմահուն գործ, եւ սպանանէր: 80 Ըստ չարեացն կատարելոց զՓառանձեմայն ամենայն չարեաւք լցեալ զկամս կատարէր. եւ յանաւրէնն Փառանձեմայն պարգեւ առեալ չերիցուն զգեղըն՝ ուստի իսկ ինքն էր ի նահանգէն Տարաւն գաւառէն, որում անուն Գոմկունք կոչին:

81 Այլ սուրբ կաթողիկոսն Ներսէս այլ ոչ եւս յաւել տեսանել զերեսս թագաւորին Արշակայ մինչեւ յաւրն նորին կորստեան. այլ փոխանակ Ներսիսի զՉունակ ոմն անուն, եւ կացուցին փոխանակ նորա գլուխ քրիստոնէութեանն. եւ էր ստրուկ ի ստրկաց արքունի: 82 Ապա հրաման տայր թագաւորն՝ կոչել զամենայն եպիսկոպոս Հայոց աշխարհին, զի եկեսցեն ձեռնադրեսցեն զՉունակն ի կաթողիկոսութեան Հայոց: 83 Եւ ոչ մի ոք ոչ հաւանեաց գալ. բայց միայն Աղձնեաց եւ Կորդուաց եպիսկոպոսք եկին, եւ զՉոնակն ձեռնադրեցին

ի կաթողիկոսութիւն ըստ հրամանի թագաւորին: 84 Եւ էր Չոնակն այր զգաւն, եւ ոչ ինչ ունէր լեզու յանդիմանութեան կամ խրատու, այլ հաւանեալ էր թագաւորին զինչ եւ նա գործիցէ:

ԳԼՈՒԽ ԺԶ.

1 Յաղագս թէ ո՛րպէս կամ զիա՛րդ կոչեցեալ եղեւ Արշակ արքայ Հայոց ի Շապիոյ արքայէ Պարսից, կամ զիա՛րդ մեծարեցաւ ի նմանէն մեծապէս. կամ զիա՛րդ Վասակ Մամիկոնեան սպարապետն Հայոց սպանաւեր գտրակալ ասպաստանին արքային Պարսից. կամ թէ զի՛արդ Արշակ արքայ Աւետարանաւն երդուեալ արքային Պարսից, ուխտէր նմա, կամ թէ զիարդ ստեաց յետոյ եւ փախեաւ. կամ թէ զիա՛րդ արք եւթանասուն զԱստուծոյ պաշտանեայսն կոտորէր արքայն Պարսից վասն նորա:

2 Յայնմ ժամանակի կոչէր առ ինքն Շապուհ արքայն Պարսից զթագաւորն Հայոց զԱրշակ, եւ մեծարեցաւ ի նմանէ բազում պատուով եւ մեծաւ փառաւք, բազում գանձու ոսկով եւ արծաթով, ամենայն մեծութեամբ թագաւորութեանն:

3 Եւ իբրեւ զեղբայր որպէս զորդի գրգեալ եղեւ ի նմանէ, եւ երկրորդական զմեծ տունն տայր նմա յատրպատական աշխարհին. եւ ի միասին ի միում տախտի գահուն ի ժամ ուրախութեանն բազմէին, զմիագոյն զմիանշան զհամահանդերձ զարդու:

4 Եւ զմիաւրինակ զթագն աւր ըստ աւրէ ինքեան եւ նմա թագաւորն Պարսից զարդ պատրաստէր. զոյգ երկոքին ի միասին որպէս զեղբարս հարազատս անբաժինս յզփացեալք էին ի միում ուրախութեան, եւ յանպատում ուրախութեան ուրախ լինէին:

5 Ապա եղեւ դէպ աւր մի յաւուրց, եկն եմուտ թագաւորն Հայոց Արշակ շրջել զասպաստանաւ միով զարքային Պարսից. իսկ ախոռապետն արքային Պարսից նստէր

1 Յօր. ի բանս

ի ներքս ի տան ասպաստանին: 6 Իբրեւ տեսանէր զթագաւորն, ոչ ինչ առ լաւս¹ կալեալ մեծարեաց զնա, եւ ոչ ինչ շուքս զնէր նմա. այլ եւ անարգանս եւս զնէր թշնամանաց, ասելով ի պարսկերէն լեզու՝ թէ այծից Հայոց արքայ, եկ նիստ ի խրճան խոտոյ ի վերայ: 7 Զոր բանս իբրեւ լսէր սպարապետն զաւրավարն Հայոց մեծաց, որում Վասակն կոչէր, ի Մամիկոնեան տոհմէն, մեծաւ բարկութեամբ եւ բազում սրտմտութեամբ բարկանայր. ի վեր առեալ զսուսերն՝ զոր ընդ մէջն ունէր, հարեալ անդէն ի տեղուջն զախոռապետն արքային Պարսից գլխատէր ի ներքս յասպաստանի անդ: 8 Զի ոչ կարաց լսել եւ ժոյժ ունել զիւրոյ թագաւորին զանարգանս. զիւր մահն առաջի եղեալ լաւ հաշուէր բազում անգամ, քան զՏեառն իւրոյ լսել զվատթարութեան թշնամանս: 9 Իբրեւ ի Պարսից աշխարհի էին, յայլոց ի տեղի եւ ի նոցուն հրապարակի աներկիւղ եւ անկասկած յանկարծաւրէն զայսպիսի զգործ կարաց գործել: 10 Իսկ թագաւորն Պարսից յորժամ զայս լսէր, բազում շնորհ ունէր զաւրավարին Վասակայ, ընդ քաջասրտութեանն զարմացեալ եւ ընդ բազում աներկիւղութիւնն: 11 Եւ բազում պարգեւաց եւ պատուոյ արժանի առնէր, զքաջութիւն եւ զտիրասիրութիւնն գովեալ: 12 Վասն այնր իրաց մեծաւ սիրով սիրէր զնա, եւ ըստ արժանի իւրում պատուէր զնա. մեծարէր զամենայն աւուրս հաշտութեան եւ խաղաղութեանն՝ որ ի մէջ նոցա էր:

13 Ապա մինչ դեռ անդէն եւս էր արքայն Հայոց առ արքային Պարսից, եւ մեծ սէր էր ի մէջ նոցա եւ մեծ խաղաղութիւն, երկնչելով երկեաւ թագաւորն Պարսից Շապուհ, եթէ գուցէ ստեցէ սիրոյն նորա Արշակ արքայ Հայոց, եւ լիցի միաբան ընդ կայսերն Յունաց, եւ կամ կողաքակ ինչ

լիցի ի նմանէ: 14 Եւ ոչ հաւատայր նմա՝ թէ պահեսցէ առ նա զմտերմութիւն սիրոյն, եւ կացցէ յուխտին միաբանութեան² ընդ նմա: 15 Վասն այսորիկ երգումն պահանջէր ի նմանէն, մինչեւ կարի ստիպեալ բռնադատեաց զնա. Հաւանեաց, ասէ, եւ երգուիր ինձ յաւրէնս քո, զի մի՛ ստեցես ինձ: 16 Իսկ իբրեւ կարի բռնադատեցաւ եւ ի նեղ անգաւ եւ շտապեալ տագնապեցաւ, ետուն հրաման ածել զերիցունս եկեղեցոյն Տիսպոնի քաղաքի, որում անուն գլխաւորին Մարի. եւ բերին զԱւետարանն սուրբ, եւ տայր երգումն արքայն Պարսից Շապուհ արքային Հայոց Արշակայ՝ երգնուլ յաստուածեան Աւետարանն, զի այլ մի՛ եւս ստեցէ նմա. այլ կացցէ յուխտի նորա, եւ պահեսցէ զդաշինս նորա: 17 Եւ վասն զի պատգամաւոր իրացս այսոցիկ էր տանուտէրն նահապետն Մամիկոնեան տոհմին երէց եղբայր Վասակայ սպարապետին, որում անուն Վարդան կոչէր, մեծապէս արքայ Շապուհ յակն առեալ սիրէր զնա: 18 Իսկ իւր եղբայրն Վասակ զաւրավարն Հայոց նախանձ բերէր ընդ երիցու եղբաւրն իւրում ընդ Վարդանայ: 19 Կամեցաւ խանգար առնել ի մէջ Արշակայ թագաւորին Հայոց, եւ փախչել. այլ ասէր Շապուհ. Թէ ձեր սրտի մտաւք էր տուեալ զերգումն, զիա՞րդ կարէր ըստ հաւանութեան ելանել երգմանցն եւ կամ փախչել: 20 Այլ, ասէ, գիտեմ զի կախարդութեամբ խաբեցէք զիս. եւ որ ունի զաւրէնսն ձեր, զնա սիրեցէք, եւ նենգութեամբ նմա խորհրդակից եղեալ՝ յինէն փախուցէք եւ կամիք դուք զտէրութիւն Արշակունեաց ի վերայ ձեր, եւ զնոյն խնդրէք:

21 Եւ երգնու Շապուհ արքայ յարեգակն եւ ի ջուր եւ ի կրակ, եթէ ոչ միում մարդոյ՝ որ յայդմ աւրէնս քրիստոնէութեան է՝ ոչ տամ ապրել. եւ հրաման տայր զամենեսեան տանել սպանանել: 22 Եւ

1 Յօր. լուս

2 Օրինակ մի՛ կացցէ միաբանութեամբ

տանէին զգլխաւորն նոցա զՄարի երէց, եւ զայլ երիցունսն եւ զսարկաւազունսն, աւելի քան զեւթանասուն այր, ի մի գուր զամենեսեան զնոսա փողոտէին: 23 Եւ զԱւետարանն սուրբ՝ յոր երդուաւ թագաւորն Արշակ՝ կապէր¹ պատէր երկաթի սարեաւք, եւ իւրով մատանեաւ կնքեալ, ի գանձտան² հրամայէր, եւ տայր հրաման պահել զգուշութեամբ:

ԳԼՈՒԽ ԺԷ.

1 Յաղագս թէ զհա՛րդ յուզեաց Շապուհ արքայ Պարսից ի վերայ քրիստոնցն Եւրօթեան:

2 Այլ ի ժամուն յայնմիկ, յորում սպանաւ երէցն Մարին հանդերձ եւթանասնաւքն, յարոյց հալածանս մեծ Շապուհ արքայն քրիստոնէութեանն հաւատոց. հարկաւք եւ պէսպէս վշտաւք նեղէր զնոսա եւ հարուածովք բազում: 3 Եւ յետ այսորիկ հրաման տայր ընդ ամենայն տեղիս իշխանութեան իւրոյ, թէ որ միանգամ գանուն քրիստոնէութեան ունիցի յիշխանութեան իմում, զամենայն մարդ միանգամայն հանցեն ընդ սուր սատակեսցեն. զի մի՛ գտցի յիշխանութեան իմում, որ քրիստոնեայ անուն անուանեսցէ գանձն իւր: 4 Ապա բերս բիւրուց կոտորէին, եւ հազարս հազարաց. զի այնպէս տուաւ հրաման ի թագաւորէն, զի ամենեւին քրիստոնեայ անուն ի սահմանս նորա մի՛ գտցի:

ԳԼՈՒԽ ԺԸ.

1 Յաղագս Վարդանայ մահուն ի թագաւորէն Արշակայ, նենգութեամբ իւրոյ եղբարն Վասակայ սպարապետին:

2 Իսկ Վարդանն, Մամիկոնեան տոհմին տանուտէրն, գայր հասանէր հրեշտակութեամբ յարքայէն Պարսից առ արքայն Հայոց Արշակ, եւ մատուցանէր զհրովար-

տակն առաջի նորա: 3 Եւ պատմէր նմա ի նմանէ բանս խաղաղութեան եւ զհաշտութեան, եւ զերդմանցն հաստատութիւն: 4 Եւ տայր պատգամ, թէ որ ինչ եղեւն՝ այն ահա թողեալ լիցի վնասն. բայց դու յայսմ հետէ կաց յուխտին բանի, եւ մի՛ անցաներ ըստ բան երդմանցն քում ակրինաց՝ յոր երդուար: 5 Ապա թէ ոչ՝ դու գիտես, եւ քո ակրինքն որում ստեսն: 6 Իսկ Արշակ թագաւորն սիրով ունէր եւ սիրով լսէր պատգամին, եւ հաւանէր զասացելոցն: 7 Եւ խաղաղութեամբ արձակէր զմեծ նահապետն ի տուն իւր, զի երթիցէ հանգիցէ յաշխատութենէն յերկայն ճանապարհէն. եւ գնաց:

8 Եւ յորժամ եկն նահապետն Վարդան առ Արշակ, ոչ դիպեցաւ անդ կրսեր եղբայր նորին Վասակ առ արքայի: 9 Ապա յետ այսորիկ եկն Վասակն, եւ գրգռէր զթագաւորն ընդ իւրում եղբաւրն երիցու, ասելով՝ թէ Վարդան է որ մատնէ զքեզ թագաւորին Պարսից, եւ կամի կորուսանել զքեզ. եթէ ոչ աճապարեսցես վաղագոյն սպանցես զնա, դու կորնչիս եւ աշխարհս Հայոց: 10 Ապա եւ կին թագաւորին եւս գրգռէր զթագաւորն սովին բանիւք, եւ գբանս զաւրավարին Վասակայ հաւատարիմ առնէր նմա: 11 Վասն զի ունէր նա գոխոն գայն ընդ Վարդանայ, զի նենգութեամբ եւ դաւով եւ մեծաւ երդմամբ սա այս Վարդան կոչեաց զԳնէլն զայր նորա, յորժամ սպանանէր զնա թագաւորն Արշակ: 12 Իսկ կինն զնոյն ոխութիւնս պահէր նմա, վասն այնորիկ ակելի եւս գրգռէր կինն թագաւորին ի վերայ նորա. մինչ զի եւ զաւր գումարեցին ի վերայ Վարդանայ, զի երթեալք սպանցեն զնա. նա եւ ինքն իսկ իւր եղբայր Վասակ երթայր ի վերայ նորա:

13 Ապա երթեալ գտանէին զնա յիւրում գաւառին ի Տայս, յիւր ամուր բեր-

1 Օրինակ մի՛ կապեալ
2 Օրինակ մի՛ ի գանձատունն

զին՝ որում անուն էրախանի՜ կոչի: 14 Իբրեւ տեսին զգունդն թէ Վասակ է, ոչ ինչ երկեան եւ ոչ զգուշացան կամ կասկածեցին. համարեցան զգաւրն եղբաւրն՝ թէ խաղաղութիւն է եկն նորա, մինչ իջին առ խորանին դուրս, զի էր հարեալ զխորանն ի ձոր յունջ բերդին: 15 Եւ մարդիկ զաւրացն Վասակայ էին ամենեքեան ի ծածուկ վառեալք եւ ի վերայ ագուցեալք հանդերձ: 16 Եւ մինչ դեռ նա լուանայր զգլուխ իւր մերկանդամ, հասանէին սուսերաւք բազում մարդիկ, եւ խոցոտէին զնա մինչ դեռ նա կայր խոնարհեալ՝ զի արկցեն ջուր ի վերայ նորա: 17 Եւ ոչ ոք տայր ժամանել յառնել, զի անդէն ի կողի սպանանէին զնա:

18 Եւ կինն նորա յղի էր, եւ հասեալ էին աւուրք ծննդեան իւրոյ: 19 Մինչ դեռ ի վեր ի բերդին նստէր ի գահոյս իւրում, եղեւ գոյժ սաստիկ. իսկ նա իբրեւ զձայն գուժոյն լսէր, վազէր ի գահոյից անտի, եւ ընդ վազելն ծնանէր զմանուկն: 20 Եւ կոչէին զանուն մանկանն յանուն հաւր իւրոյ Վարդան:

ԳԼՈՒԽ ԺԹ.

1 Յաղագս թէ զիա՛րդ անմտութեամբ գնայր ի սպանութիւնս նախարարացն յանխնայ Արշակ արքայ Հայոց:

2 Այլ ահա ի ժամանակին՝ յորժամ մերժեցաւ յարքունական բանակէն սուրբ եպիսկոպոսապետն Ներսէս, եւ ոչ ոք գոյր ընդդիմացեալ թագաւորին՝ որ տայր նմա զյանդիմանութեան զխրատն, այնուհետեւ ըստ կամաց չարութեանն իւրոյ զնացեալ լինէր նա. եւ զբազումս ի նախարարացն կոտորեաց, զբազումս ազգատ արարեալ անճիտեաց, եւ զբազմաց տունս հատանէր յարքունիս: 3 Բայց զտոհմս Կամսարականացն՝ որ էին գաւառաց տեարք, Շիրակայ

եւ Արշարունեաց, ազգատ² առնէր, եւ զգաւառսն ունէր յոստան:

4 Բայց յազգէն յայնմանէ մանկիկ մի փոքրիկ, անուն Սպանդարատ, թագուցեալ ապրեցուցանէր սպարապետն զաւրավարն Հայոց Վասակ, որ յետոյ լինէր ժառանգ աշխարհին: 5 Թագաւորն Արշակ հրաման տայր՝ յԱրշարունեաց գաւառին շինել իւր բերդ մի ամուր, Արտագերս անուն: 6 Եւ զգաւառն յուտեստ ի պատրաստութիւն համբարաց թողոյր բերդին, վասն զի կարի ամուր էր բերդն այն:

ԳԼՈՒԽ Ի.

1 Յաղագս թէ զիա՛րդ պատերազմ սաստկացեալ էր ի մէջ Յունացն եւ Պարսից, եւ թէ զիա՛րդ Արշակ արքայ Հայոց զաւրավիզն լինէր թագաւորին Պարսից, եւ հանէր ընդ սուր զգաւրսն Յունաց. կամ զիա՛րդ դաւաճանութեամբ սիւնույն Անդուկայ փախստական լինէր արքայն Հայոց:

2 Այլ զառաջինն իբրեւ փախեալ թագաւորն Արշակ յարքայէն Շապուհոյ, եւ անարգեաց զնա յերդմանցն իւրոց, զառաջինն Շապուհ արքայն Պարսից ոչ ինչ խստութեամբ ջանացաւ ընդ նմա. վասն զի մարտ դեռ բազում սաստկացեալ էր ի մէջ իւր եւ ի մէջ թագաւորին Յունաց: 3 Եւ իբրեւ հաղ քան զհաղ յաւել լինել պատերազմ, իսկ թագաւորն Հայոց Արշակ գառաջինն ընդ միտս իւր մեծամտեալ էր, եւ նայէր տեսանել՝ թէ ո՛վ ի նոցանէն կոչեսցէ զնա ի թիկունս աւգնականութեան յաղագս գործոյ պատերազմին: 4 Ակն ունէր, երթեալ կամելով յաւժարութեամբ ի թիկունս կայսերն Յունաց. իսկ նոքա ոչ կոչեցին զնա, եւ ոչ շուք ինչ եղին նմա եւ ոչ մեծարանս:

5 Իսկ թագաւորն Պարսից Շապուհ յղէր առ նա հրեշտակս խաղաղութեան.

1 Ի միում օրինակի՝ Ախանի

2 Յամենայն օրինակս՝ ազատ անէր

յուշ առնէր նմա զառաջին երզումն, ասելով՝ եթէ կամ լիցի եղբաւորդ զի եկեսցես աւգնեսցես ի գործ պատերազմիս, զի ի թիկունս հասցես քո գնդաւդ: 6 Ասէ. թէ դու ի մեր կոյս լինիս, գիտեմք զի մեր լինելոց է յաղթութիւնն: 7 Ապա յորժամ զայս լսէր Արշակ արքայ Հայոց, մեծաւ ուրախութեամբ կամեցաւ երթալ ի թիկունս աւգնականութեան, զաւրավիզն լինել Շապուհոյ թագաւորին Պարսից: 8 Ապա տայր հրաման թագաւորն Արշակ Վասակայ իւրում սպարապետին՝ գունդ գումարել, զաւրս պատրաստել: 9 Եւ նա վաղվաղակի կատարէր զհրամանս թագաւորին. չորեքհարիւր հազար զաւր կուռ վառեալք, որ ընտիրք եւ պատերազմողք էին, լի արութեամբ արուեստաց նահատակութեանն: 10 Նիզակաւորք, սուսերաւորք, աղեղնաւորք անվրէպք կորովիք, վաղրաւորք, սակրաւորք, որք ոչ գիտէին զերկեւզ զանգիտելոյ յարանց յախոյանց¹. համակ հեծելազաւրք զրահաւոր պատենագէնք, սաղաւարտաւորք, դրաւաւորք, կազմ նշանաւորք բազմաձայն փողաւորքն²:

11 Խաղաց գնաց թագաւորն Արշակ բազմակոյտ նախարարաւքն, չուեաց ընդ Աղձնիս ընդ իւր իշխանութիւնն. չոգաւ թափեցաւ յերկիրն արուացաստանի՝ դէմ յանդիման մըծբնացւոց քաղաքին, որ էրն տեղի ճակատուն պատերազմին: 12 Ապա երթեալ տեսանէին զժամադիր արարեալ միմեանց վասն իրաց պատերազմին կողմանցն երկոցունց: 13 Իսկ զաւրքն Յունաց հասեալք, մածեալք բանակեալք էին իբրեւ զաւազ առ ափն ծովու բազմութեամբք: 14 Իսկ զաւրքն Պարսից չեւ էին³ հասեալ ի ժամադիր տեղի պատերազմին: 15 Իսկ զաւրքն արքային Հայոց կանուխ

քան զՊարսսն ի տեղի ճակատուն հասանէին, եւ զտեղի առեալ կային: 16 Ապա տապել սկսան զաւրքն Հայոց ընդ իւրեանց նիստ խափանածոյն, եւ ոչ առնուին յանձն մնալ կամ անսալ զաւրացն Պարսից, այլ կամեցան յարձակել դիմել հասանել ի վերայ թագաւորին Յունաց ինքեանք՝ առանց Պարսից զաւրացն, անձամբք վճարել զգործ պատերազմին: 17 Եւ այր ամենայն զաւրացն Հայոց ինքնակամք իւրաքանչիւր արձակ արձակ խաղային. եւս առաւել զաւրավարն նոցին Վասակ քան զամենայն զաւրսն ելեւել առնէր, կապակոտոր լինէր, չմնայր հաւանութեան մինչեւ զաւրքն Պարսից եկեսցեն, այլ զի միայն ինքեամբք վճարեսցեն զգործ պատերազմին:

18 Ապա միահամուռ զաւրքն Հայոց անկանէին առաջի եւ խնդրէին յիւրեանց թագաւորէն Արշակայ, զի մի՛ պահեսցէ զնոսա մինչեւ եկեսցէ արքայն Պարսից Շապուհ. այլ վասն որոյ իրիք եկեալ իցեն, վաղագոյն նոցա զպատերազմն առ յանդիման արարեալ՝ համարձակեսցէ յարձակել քան զանսալն յաւտար աշխարհին. առաւել մղձկէին, զի լաւ հաշուէին զմեռանելն առաւել քան զյամելն յաւտար աշխարհին:

19 Ապա թոյլ տայր նոցա թագաւորն Արշակ, եւ յանդիմանէր նոցա զգործ պատերազմին: 20 Ապա կարգէր կազմէր պատրաստէր զամենայն զզաւրսն Հայոց Վասակ զաւրավարն սպարապետն Հայոց մեծաց: 21 Վառէր⁴ զինէր ժամակալ լինէր Վասակ. հանդերձ ամենայն պատերազմող զաւրաւքն այրայրատեան գնդաւն ելանէր անկանէր ի վերայ բանակին: 22 Առ հասարակ ընդ սուր հանեալ կոտորէին, այնպէս զի ոչ ապրեցուցանէին ի նոցանէ եւ ոչ զմի: 23 Եւ առնուին զկապուտ զաւար յունական զաւրուցն, զի ոչ գոյր չափ կամ

1 Յօրինակի միում՝ ախոյեանց
 2 Յօրինակի միում՝ փողաւորք
 3 Յօր. չուէին

4 Յօր. վարէր

թիւ որչափ լցան գանձաւք, եւ անհամար կարասեալ մեծաւ աւարացն¹ յղփացան:

24 Եւ յետ այսորիկ գտեղի ունէր արքայն Հայոց հանդերձ իւրովք զաւրաւքն, մինչեւ գայր հասանէր Շապուհ արքայն Պարսից ամենայն անթիւ եւ անչափ զաւրաւքն Պարսից: 25 Իբրեւ եկն ետես զքաջութիւն գործոյն հայաստան զաւրացն, զի զճակատ մղեալ, զպատերազմ յարդարեալ, զյաղթութիւն կազմեալ եւ զգործ վճարեալ, կայր զարմացեալ մեծապէս. եւ պատուէր զԱրշակ արքայ Հայոց մեծապէս, եւ զամենայն մեծամեծս Հայոց. սոյնպէս եւ զսպարապետն Հայոց զՎասակ:

26 Ապա խաւսել սկսանէր թագաւորն Պարսից Շապուհ ընդ զաւրս իւր՝ թէ զի՛նչ պարգեւս բարեաց, կամ զի՛նչ հատուցումն կարեմք մեք հատուցանել արքայիս Հայոց Արշակայ, զի զայսպիսի գործ գործեաց, կամ զայսպիսի քաջութիւն արարեալ, կամ զայսպիսի թշնամիս եհար եւ զայսպիսի պատերազմ մղեաց, կամ այսպիսի ճակատու յաղթեաց եւ զայսպիսի անուն ստացաւ մեզ: 27 Զի եթէ մեք լեալ էաք, ամենայն Արեաց զաւրք հանդերձ այսպիսի աջողութեամբ գայր ի ձեռն, քաջ թէ զոյգ հասարակ այսպիսի գործ ի միասին կարէաք գործել. արդ Հայոց արքայ իւրով զաւրութեամբն ընդ մեր նահատակեալ, զայսչափ քաջութիւնս արար, զոր ոչ ոք կարէ առնել ամենեւին: 28 Արդ զորպիսի՞ հատուցումն բարեաց կարասցուք մեք առնել նմա: 29 Եւ այսպիսի անգեալ էր ի խորհուրդս, թէ զի՛նչ այն ինչ իցէ զոր տայցեմ ես նմա: 30 Ապա տային պատասխանի նախարարքն իւր Շապուհ արքային Պարսից, եւ ասեն ցնա՝ թէ զինչ եւ կամիս, իւ կամիս՝ կարող ես հաճել զնա. ոսկի քո շատ եւ արծաթ, կերպաս եւ մարգարիտ. զինչ եւ միանգամ դու կամիս շնորհել նմա, տուր նմա: 31 Ապա տայր պատաս-

խանի Շապուհ թագաւորն Պարսից իւրոց իշխանացն, եւ ասէ. Արդ ոչ եթէ սէր ինչ է, զոր դուքդ ասացէք. այլ եկայք, անքակ սէր արասցուք մեք ընդ Արշակայ արքային Հայոց, զի մինչեւ յաւիտեան անբաժին լիցի նա ի մէնջ: 32 Տացեմ զդուստր իմ կնուութիւն Արշակայ արքային Հայոց, եւ տաց նմա տուն մեծ. զի յորժամ զնասցէ ի Հայոց զալ առ մեզ, այնպէս տացուք նմա տուն, զի ի Հայոց մինչեւ ի Տիգրէն մինչեւ առ մեզ համակ յիւրում տան ազցի, մինչեւ առ մեզ եկեսցէ: 33 Թագաւորին զայս արասցուք. իսկ զաւրավարին Վասակայ կամ այլոց մեծամեծացն եւ զաւրավարացն տացուք ոսկի եւ արծաթ, կերպաս եւ մարգարիտ: 34 Եւ հաճեցան մեծամեծքն եւ խորհրդակիցք թագաւորին Պարսից ընդ այս խորհուրդ, եւ հաստատէին զասացեալսն՝ թէ արժան է զայդ առնել:

35 Իսկ թագաւորն Պարսից Շապուհ մեծաւ ստիպով ստիպէր զթագաւորն Հայոց զԱրշակ, զի առցէ զնասցէ զնա ընդ ինքեան յԱսորեստան, զի անդ մեծափառ պատուով եւ փեսայութեամբ մեծարեսցէ զնա: 36 Իսկ Արշակ եւ ամենայն զաւրք իւր տաղտապէին² երթալ զհեռի ճանապարհն. զի ամենայն ոք յանձնիւր տուն յիւրաքանչիւր տեղի զաւրէն բարուց հայաստան մարդկան անձկացեալ էին: 37 Եւ եղեւ իբրեւ ի վերայ հասանէր իրացն Անդովկ նահապետն Սիւնեաց զաւառին, եթէ Շապուհ թագաւորն Պարսից կամի տալ զդուստր իւր կնութեան Արշակայ թագաւորին Հայոց, մեծապէս երկեալ, եւ բախեցաւ նորա կասկած մտացն իւրոց: 38 Զի եդ ի մտի իւրում՝ թէ յորժամ առցէ Արշակ կին իւր զդուստր թագաւորին Պարսից, յայտ է այնուհետեւ՝ թէ անարգի դուստր նորա: 39 Վասն զի Փառանձեմ դուստր Անդովկայ, որ էր կին լեալ Գնելոյ, ի ժամանակի անդ էր կին Արշակայ թագաւոր-

1 Յօրինակի միում՝ աւարան

2 Յերկուս օրինակս՝ տաղտկապէին

ըին Հայոց. կասկածէր նա՝ թէ գուցէ յորժամ այլ առցէ, զնորայն անարգեսցէ:

40 Անկանէր այնուհետեւ Անդովկ ի հնարս հնարել, եւ ի ծուփս խորհրդոց, գտանել պատճառս՝ զի ո՛ր գիտէ կարասցէ ցրուել զսէրն մեծ, որ էր անկեալ ի մէջ թագաւորացն երկոցունց: 41 Նախ բազում ոսկի զաւրավարին Հայոց Վասակայ Անդովկն մատուցանէր, սոյնպէս եւ զամենայն մեծամեծսն կաշառէր, զի հնարեսցի քակել զմեծ սէրն՝ որ իցեն ի մէջ թագաւորացն երկոցունց: 42 Եւ ամենայն մեծամեծքն ձեռն յանձին հարկանէին. առեալ ոսկւոյն կաշառաւք խաւարեցան: 43 Ապա զմի ոմն յաւագաց թագաւորին Պարսից ի ներքին ի բուն խորհրդականացն ի բանի իւրում առնէր Անդովկն զհնարաւորութեամբն, զնենգաւորութեանն դաւաճանութեամբ մեքենայութեամբն, զի բանս արկցէ ընդ թագաւորին Պարսից ընդ Շապուհ եւ ընդ Արշակ: 44 Եւ տայր նմա Անդոյկ ոսկի բազում եւ անհամար, եւ զնէր բանս ի բերան. զի իբրեւ կերպարանս գուշակի արասցէ ասել ցարքայ Արշակ, թէ ապրեցո զանձն քո, զի ճշգրիտ խորհուրդ խորհեալ է թագաւորին Պարսից ունել զքեզ եւ սպանանել: 45 Եւ յորժամ դու զայս ասասցես, ասէ, եւ զմեզ հրամայես՝ չիր կոչել ի խորհուրդն. եւ զքո բանս աւագանին հաստատեն:

46 Ապա գայր մտանէր խորհրդակից արքային Պարսից առ արքայն Հայոց. խաւսել սկսանէր ընդ նմա զբանս ի բերան եղեալ Անդուկայն չարագործի, եւ ասէր՝ թէ արքայդ Հայոց Արշակ, ապրեցո զանձն քո. զի խորհուրդ խորհեալ է թագաւորին Պարսից Շապուհ ունել զքեզ եւ սպանանել: 47 Կայր հիացեալ եւ զարմացեալ արքայն Արշակ ընդ բանսն ընդ այնոսիկ, եւ ասէ. ի մեծի վաստակոցն իմոց ի վերայ ա՞յս հատուցումն ի նոցանէն: 48 Ապա հրաման տայր կոչել զառաջեալ իւրով արքայ Արշակ զամենայն զմեծամեծս իւր, եւ

զամենայն խորհրդակիցս իւր, զՎասակ սպարապետն, եւ զԱնդովկն զաներ իւր, եւ որ միանգամ էին նախարարքն. եւ պատմէր նոցա զոր միանգամ լուաւ ինքն ի պարսկէ անտի: 49 Ապա եւ նոքա ընդ մի բերան ասէին ընդ նմա, թէ մեք զայդ վաղ լուաք, ցքեզ չիշխեցաք ասել. այլ իրքդ այդ հաստատ են: 50 Բայց արդ, արքայ, գիտեա տես զիա՞րդ ապրեցուցես զանձն քո եւ զմեզ: 51 Ապա արքայ Արշակ բազում պարգեւս զանձուց ոսկւոյ եւ արծաթոյ տայր պարսկին այնմիկ, որ ասաց նմա զբանս զայսոսիկ: 52 Եւ ինքեանք կազմեցան պատրաստեցան. խորհուրդ խորհեցաւ Արշակ թագաւորն Հայոց. եւ յառնէին ի գիշերի որ միանգամ մարդ էր ի բանակին Հայոց, հեծան ի ձիս եւ փախեան: 53 Եւ առ ետեղ թողին զխորանս եւ զվրանս, զկահ եւ զկարասի եւ զկազմած իւրեանց, եւ զբանակն իւրեանց, եւ զնացին գաղտուկ. եւ ոչ ոք ի բանակէն Պարսից գիտացին զայն մինչ ցայդ ցառաւաւտն:

54 Եւ իբրեւ եղև ժամ այգորելի առ թագաւորն Պարսից, եւ ամենայն թագաւորք եւ իշխանք մեծամեծք իւր այգորեալ գային արքային Պարսից, բայց միայն ոչ ուրեք ի մէջ երեւէր թագաւորն Հայոց Արշակ հանդերձ իւրովք մեծամեծաւքն: 55 Ապա տայր հրաման Շապուհ թագաւորն Պարսից իւրոցն, երթեալ տեսանել՝ թէ զինչ իրք իցեն ի բանակին Հայոց թագաւորին Արշակայ. զի այնչափ ժամս յամեաց գալ յայգորել թագաւորին Պարսից Շապուհ: 56 Ապա երթեալ տեսանէին, զի թափուր կայր բանակն առանց մարդոյ. զի թողեալ էր իւրեանց զխորանս եւ զվրանս եւ զհովանոցս եւ զսրահակս եւ զգահոյս եւ զանկողինս եւ զկահ եւ զկազմածս եւ զկարասի իւրեանց, եւ զգանձս իւրեանց անգամ. բայց միայն զզէնս իւրեանց որ բարձեալ էին ընդ ինքեանս, եւ զնացեալք: 57 Եւ որք չոգան ի բանակն, գային զամենայնն պատմէին Շապուհ արքային

Պարսից: 58 Եւ իբրեւ լուաւ Շապուհ արքայն Պարսից, քանզի այր իմաստուն էր, գիտացեալ ի կարծիս իմաստութեան իւրոյ զիրսն՝ որ ինչ եղեւն, անդէն ասաց՝ թէ այն փախուստ թագաւորին Հայոց յիմոց աստի եղեալ է. զի ի մէնջ ի մերմէ ի դրանէ աստի էին, ասէ, որք փախուցին զայրն զայն զԱրշակ: 59 Ապա իւրոց աւագացն ի մեծամեծացն դեսպան ձիով զբազումս յղէր զհետ թագաւորին Հայոց, հանդերձ երդամբ ի սէր միաբանութեան եւ յանդիմանութեան՝ զի դարձցին, եւ զչարախաւսութեան զբանս ի մէջ ածեալ կշտամբիցեն: 60 Եւ ոչ կամեցաւ արքայն Հայոց ունկնդիր լինել բանիցն պատգամաւորացն թագաւորին Պարսից Շապուհոյ, եւ ոչ դարձաւ այլ անդրէն յերկիրն Պարսից: 61 Ապա յայն աւրէ հետէ եւ անդր յուզեցաւ պատերազմ զբոլորութիւն մարտից ճակատուց ի մէջ թագաւորին Հայոց Արշակայ եւ ի մէջ թագաւորին Պարսից Շապուհոյ ամս աւելի քան զերեսուն:

ԳԼՈՒԽ ԻԱ.

1 Յաղագս թէ զիս'րդ եղեւ պատերազմ ընդ Շապուհի թագաւորն Պարսից եւ ընդ Արշակ թագաւորն Հայոց գառաջինն, կամ զիս'րդ յաղթէր Արշակ արքայ Հայոց:

2 Ապա ամս ութ, յետ գնալոյն փախչելոյն արքային Հայոց Արշակայ ի թագաւորէն Պարսից Շապուհոյ, լուռ լինէր թագաւորն Պարսից ի թշնամութենէ. եւ խաւսէր համակ ողորով, եւ աղաչէր զԱրշակ արքայ Հայոց՝ սիրով հաշտ եւ միաբան կալ ընդ նմա յուխտի խաղաղութեան: 3 Վասն զի ի մեծ վտանգ շտապի էր թագաւորն Պարսից՝ ստէպ ստէպ յանդադար պատերազմացն ի թագաւորաց անտի Յունաց: 4 Իսկ Արշակ արքայ Հայոց ոչ ինչ կամէր անսալ նմա, եւ ոչ հուպ ինչ լինել ի նա. եւ յղեալ դեսպանս, եւ ոչ ինչ տալ պատարագս ընձայից, եւ ոչ հուպ ինչ կամ մաւտ

լինել ի նա բնաւին. եւ զանունն անգամ նոցա ոչ կամէր լսել: 5 Իսկ թագաւորն Պարսից ստէպ ստէպ յղէր պատարագս առ նա, առաքէր դեսպանս: 6 Եւ ինքն հապճեպ կռուէր ընդ թագաւորսն Յունաց:

7 Այլ իբրեւ եղեւ խաղաղութիւն ի մէջ թագաւորացն Յունաց եւ ի մէջ թագաւորին Պարսից Շապուհոյ, ուխտից նամակ գրեալ եւ կնքեալ տայր թագաւորն Յունաց թագաւորին Պարսից: 8 Եւ գրեալ էր յուխտից նամակին այսպէս. Ետու քեզ, ասէ, զՆձբին քաղաք՝ որ է յԱրուեստանի, եւ զՄիջագետս Ասորոց. եւ մէջախարհէն Հայոց՝ ձեռնթափ եմ, ասէ. թէ կարասցես յաղթել նոցա եւ արկանել ի ծառայութիւն, ես ի թիկունս ոչ եկից նոցա: 9 Արդ ի նեղ ուրեմն անգեալ թագաւորն Յունաց, եւ ի նեղին վշտի՝ զայս ձեւ աւրինակի բանիցն կնքէր մուրհակ, եւ տայր թագաւորին Պարսից, եւ ապա ճողոպրէր ի նմանէ:

10 Այլ իբրեւ եղեւ խաղաղութիւն ի մէջ թագաւորին Յունաց եւ ի մէջ թագաւորին Պարսից, այնուհետեւ կազմէր զգաւրս իւր թագաւորն Պարսից Շապուհ, եւ խաղաց ի վերայ Արշակայ արքային Հայոց մարտի պատերազմաւ: 11 Իսկ սահմանապահքն թագաւորին Հայոց, որ նստէին ի Գանձակ Ատրպատականի, վաղ ազդ առնէին նմա զիրսն մինչչեւ հասեալ էր նա ի սահմանս Ատրպատականի: 12 Ապա իբրեւ զայն զգայր թագաւորն Հայոց Արշակ, հրաման տայր Վասակայ իւրում սպարապետին՝ կազմել զամենայն զգաւրս իւր, եւ հասանել ի դիմի հարկանել թագաւորին Պարսից Շապուհոյ: 13 Ապա արագ ժողովել ի մի վայր, հանդէս առնէր Վասակ սպարապետն ամենայն զաւրաց Հայոց. եւ գտան հեծելազաւր սպառազէնք կռու վառեալք նիզակաւորք վաթսուն բեր, միասիրտք միաբան միամիտք: 14 Եւ հանդերձ նոքաւք յառաջ խաղայր սպարապետն Հայոց Վասակ հասանէր, բախեալ ի դիմի հարկանէր թագաւորին

Պարսից: 15 Առ հասարակ զաւրսն զամե-
նայն հարկանէին ի սուր սուսերի իւ-
րեանց. եւ միաձի ճողոպրեալ արքայն
Պարսից Շապուհ փախչէր: 16 Սոքա հա-
սանէին, գերէին այրացաւեր առնէին առ
հասարակ զերկիրն Պարսից. եւ ինքեանք
կային ունէին զճակատուն տեղի, այս
ինքն զսահմանս Պարսից պահէին:

ԳԼՈՒԽ ԻԲ.

1 Յաղագս յետ այսորիկ որ ընդ երիս
տեղի եղև նակատն յերկրիմ Հայոց
ընդ զաւրսն Պարսից, թէ զիա՛րդ նշան
յաղթութեան յայսմ եւս Հայոց կանգնէր:

2 Յայնմ ժամանակի թագաւորն Պար-
սից Շապուհ ժողովեաց զզաւրս իւր անթիւ
եւ անհամար իբրեւ զաւագ առ ափն ծո-
վու, եւ փիղս բազումս, զի ոչ գոյր նոցա
թիւ: 3 Ընդ երիս բաժանեալ զզաւրսն, եր-
կուց գնդացն զԱնդրիկան եւ զՀազարա-
ւուխտ զաւրագլուխս կացուցանէր, եւ
միում գնդին ինքնին թագաւորն լինէր
զաւրագլուխ: 4 Եւ հրաման տայր թագա-
ւորն զաւրացն՝ ընդ երիս տեղիս խաղալ
մտանել արշաւել յաշխարհն Հայոց: 5 Ա-
պա այս բանք վաղապէս ազդ լինէին առ
թագաւորն Հայոց Արշակ, եւ առ զաւրա-
վարն նոցին Վասակ. ապա եւ սոքա բա-
զում զաւր յաշխարհէ ժողովեցին, զի ոչ
գոյր համար բազմութեանն: 6 Եւ թէ բեր
աճապարեցին, սակայն զաւրքն Պարսից
արշաւէին յերկիրն Հայոց, եւ ընդ երիս
ասպատակէին:

7 Ապա թագաւորն Արշակ եւ զիւր
զաւրսն բաժանէր ընդ երիս. եւ տայր զմի
գունդն¹ Վասակայ սպարապետին, եւ
զերկրորդ գունդն ի ձեռն Բագասի եղբաւր
նորին, որ ի գործ արութեան քաջ էր անհ-
նարին, բայց ի գործ իմաստութեան բա-
խած էր. եւ զմիւս գունդն իսկ թագաւորն
Արշակ առնոյր: 8 Եւ տայր հրաման՝ յա-

ռաջ խաղալ պատրաստել, առ դիպան²
պատահել զաւրացն Պարսից: 9 Ապա գայր
սպարապետն Վասակ, գտանէր զառաջին
առաջն զաւրացն Պարսից զՀազարա-
ւուխտն, զի հասեալ էին ի գաւառն Վա-
նանդայ, ի տեղւոջն՝ որ անուանեալ կոչէր
յերեւեալ³. եւ բախէր ընդդէմ զաւրացն
Պարսից մարտիւ պատերազմաւ: 10 Ի
պարտութիւն մատնեցան զաւրքն Պարսից,
դարձան ի փախուստ, ցրուեցան սիրեցան:
11 Հասանէր զաւրավարն Վասակ, արկա-
նէր զզաւրսն ամենայն փախստէիցն Պար-
սից. ոչ ապրեցուցանէին եւ ոչ զմի, եւ
թափեցին աւար բազում եւ զփիղսն:

12 Ի նմին ամսեան ի նմին շաբաթու ի
նմին աւուր հասանէր Բագոս, հանդերձ
զաւրաւք՝ որ ընդ իւրեւ էին. գտանէր զա-
ռաջ երկրորդ զաւրացն Պարսից եւ զԱնդրի-
կան զաւրագլուխ նոցա, զի հասեալ մա-
ծեալ բանակէին ի վերայ ձկնատենիցն Ա-
ռեստեայ: 13 Ապա վաղ զգացին զաւրքն
Պարսից զհասանել Բագոսին, եւ պատրաս-
տեցան ի մարտ պատերազմի ընդդէմ զաւ-
րացն Հայոց: 14 Ապա հասանէր Բագոսն
ամենայն գնդաւն. ընդդէմ յարձակէին
ճակատուն Պարսից, անդէն հարկանէին
սատակէին զամենայն առ հասարակ
զզաւրսն Պարսից, եւ գլխովին զԱնդրիկան
սպանանէին: 15 Ապա դիպէր Բագոսն
գնդին փղացն, եւ տեսանէր զմի ի փղաց
անդի մեծապէս զարդարեալ, եւ զարքու-
նական նշանս ի վերայ արձակեալ: 16 Հա-
մարեցաւ զթագաւորն ի փղին յայնմիկ. ի-
ջանէր յերիվարէն, հանեալ զսուսերն իւր
յարձակէր ի վերայ փղին. գէն վերացոյց,
եմուտ ի ներքոյ փղին, հարկանէր գնորտս
փղին, եւ անդէն ընկենոյր զփիղն ի վերայ
անձին իւրոյ, եւ սատակէին երկոքեան. զի
ոչ ժամանէր ելանել ներքուստ ի փղէն:
17 Յայնմ ճակատու, բայց միայն զի մե-

1 Օրինակ մի յաւելու՝ ի ձեռն

2 Օրինակ մի՛ առ ի դիպան

3 Օրինակ մի՛ երեւեալ

ուաւ զաւրագլուխ զաւրացն Բագոսն, այլ ի Պարսից զաւրացն ոչ ապրեցուցանէին յայնցանէ եւ ոչ մի:

18 Իսկ ի նոյն ամի ի նմին շաբաթի ի նմին իսկ աւուր, քանզի մի աւր¹ եղեն ճակատքն երեքեան, արդ հասանէր թագաւորն Արշակ, հանդերձ զաւրաւքն՝ որ ընդ իւրն էին. գտանէր զինքնին թագաւորն Շապուհ, զի հասեալ մածեալ բանակէին ի գաւառն Բասենոյ ի տեղիսն՝ որ անուանեալ կոչի Ուխա²: 19 Ապա անկանէր զիւրի արքայն Արշակ ի վերայ բանակին Պարսից, եւ անդէն ընդ սուր հանէր զամենեսեան. բայց միայն միաձի մագապուր ճողոպրէր թագաւորն Շապուհ, փախուցեալ անկանէր յաշխարհն Պարսից: 20 Ապա յայնմ ժամանակի յերիցունց գնդացն միմեանց դիպէին աւետաւորքն յաղթութեանցն. բայց ի Բագոսէ, զի մեռաւ միայն ի միում ճակատուն, այլ եւ ոչ մի ի նոցանէն ոչ ծախէին. յԱստուծոյ եղեւ մեծ աջողութիւնն յաղթութեանն: 21 Եւ սոքա ի կողմանս Պարսից ասպատակէին, եւ հարկանէին մինչեւ ի կողմանս՝ որ կոչին Խարտիզան: 22 Եւ լցան գանձիւք բազմաւք եւ զինու եւ զարդու եւ բազում աւարաւ եւ անչափ մեծութեամբ, եւ հարստացան անցին ըստ չափ:

ԳԼՈՒԽ ԻԳ.

1 Յաղագս Մերուժանայ Արծրունոյ, որ ապստամբեաց յարքայէն Հայոց Արշակայ, եւ անկաւ առ թագաւորն Պարսից Շապուհ, եւ առաւել գրգռէր զպատերազմունսն. եւ թէ զիա՛րդ ուրացաւ յԱստուծոյ, եւ կամ զիա՛րդ եղի խոչընդակն եւ խոչոտն երկրին Հայոց մինչեւ յայայ:

2 Յայնմ ժամանակի ասպտամբեաց յարքայէն Հայոց մի ոմն ի նախարարաց

մեծամեծացն, Մերուժան անուն Արծրունի. եւ չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից Շապուհ, եւ դնէր ընդ նմա ուխտ երդմամբ, զի յաւիտեան ծառայ լիցի նմա: 3 Նախ ուրացաւ ի կենացն իւրոց՝ զոր յԱստուածն ունէր. զի եթող զաւրէնս քրիստոնէութեան, եւ խոստովան եղեւ վասն անձին իւրոյ՝ թէ չեմ քրիստոնեայ. եւ կալաւ զաւրէնս մագդեղանցն, այսինքն զմոգուցն. եպագ երկիր արեգական եւ կրակի, եւ խոստովան եղեւ՝ թէ աստուածք այն են՝ զոր թագաւորն Պարսից պաշտէ: 4 Եղ ուխտ ընդ Շապուհի արքային Պարսից յայնմ հետէ. Թէ իցէ եւ կարասցէ յաղթել Շապուհ Հայոց, եւ ունել զաշխարհն, եւ ինձ դարձ լիցի յիմ աշխարհն եւ յիմ տունն, նախ ես՝ ասէ՝ շինեցից ատրուշան յիմում տանն սեպհականին, այս ինքն տուն կրակին պաշտելոյ: 5 Եւ կեանս եւ մահ դնէր ընդ նոսա, խոստացեալ բանիւք եւ արդեամբք: 6 Եւ զգաւրսն Պարսից պատրաստէին առաւել եւս քան զառաջինն, եւ առաջնորդ ունէին զչարագործն Մերուժանն, ասպատակել յաշխարհն Հայոց: 7 Յանկարծաւրէն այրացաւեր զերկիրն Հայոց առնէին առաջնորդ Մերուժանաւ. զարս³ տային ի կոխումն փղաց, եւ զկանայս ընդ ցից սայլից հանէին. առնուին կոտորէին զամենայն բնակիչսն վերնագաւառացն Հայոց:

8 Մինչ դեռ թագաւորն Արշակ ի կողմանսն ստորին գաւառացն յԱնգեղ տանն էր յուտեստ, զմիջնաշխարհն քանդեալ բրեալ զաւրքն Պարսից ապականէին: 9 Ապա զաւրաժողով լինէր Վասակ զաւրավարն Հայոց, եւ որ հասին ի ժամանակի անդ ի ձեռն նորա տասն հազար հեծեալ ընդիր ընդիր եւ քաջ այրեւձի, կազմ զինու եւ բազում պատրաստութեամբ, եւ հանդերձ նոքաւք խաղայր, ի կիրթ ձգեալ հասանէր զաւրացն Պարսից: 10 Իսկ իբրեւ

1 Յամենայն օրինակս՝ քան զմի օր

2 Յերկուս օրինակս՝ Ուխա

3 Յօր. գորս

զգացին զաւրավարքն զաւրաց թագաւորին Պարսից՝ եթէ զաւրաժողով է ի վերայ նոցա զաւրավարն Հայոց Վասակ, զմնացորդս աշխարհին գերփեցին գերեցին առին եւ փախեան յաշխարհն իւրեանց ճեպով տագնապաւ: 11 Ապա զհետ կրթէր Վասակ Մամիկոնեան, եւ երթայր հասանէր նոցա. չուէին ի սահմանս Ատրպատականին: 12 Իսկ զաւրքն թագաւորին Պարսից թողին զգերին, եւ փախստական լինէին հանդերձ Մերուժանաւն: 13 Եւ թափէր անչափ եւ անթիւ գամենայն գառեալ գերութիւնն, եւ դառնային խաղաղութամբ առ թագաւորն Արշակ:

ԳԼՈՒԽ ԻԳ.

1 Յաղագս Մերուժանայ, թէ զիա՛րդ ապստամբէր եւ զրզուէր զթագաւորն Պարսից Շապուհ, եւ առնէր պատերազմ. եւ թէ զիա՛րդ լինէր առաջնորդ թագաւորին Պարսից Շապիոյ, եւ ածէր հէն յաշխարհն Հայաստանի. եւ կամ զիա՛րդ գերէր գոսկերս Արշակունեաց. կամ զիարդ գաւրավարն Վասակ թափեաց զգերեալսն եւ յաղթեաց թշնամույն:

2 Ապա յետ այսորիկ Մերուժան վատանչան գրգռէր զթագաւորն Պարսից զՇապուհն ի վերայ թագաւորին Արշակայ մեծաւ բարկութեամբ: 3 Ապա զաւրաժողով լինէր թագաւորն Պարսից Շապուհ, եւ լրտեսս արձակէր՝ դիտել զարքայն Հայոց զԱրշակ: 4 Եւ մինչ նա դեռ զգուշացեալ Արշակ արքայն Հայոց հանդերձ իւրովք զաւրաւքն զատրպատական սահմանաւքն, զի անդ սպասէր զաւրացն Պարսից, նոցա առաջնորդ կալեալ զՄերուժանն՝ ընդ այլ կարթել սասպտակ յաշխարհն Հայոց առնէին: 5 Զի ընդ Աղճնիս եւ ընդ Ծոփս մեծ, ընդ Անգեղ տունն եւ ընդ գաւառն Անձտայ ընդ Ծոփս Շահունոց, ընդ Մզուր գաւառն եւ ընդ Դարանաղէ, ընդ Եկեղեաց, զկողմանս այնց գաւառացն Շա-

պուհ թագաւորն Պարսից հանդերձ անթիւ զաւրաւքն սասպտակել հեղեալ ծաւալէր բազմութեամբ իբրեւ զՉուրս բազումս:

6 Այրացաւեր առնէին, եւ զանթիւ մարդիկ արկանէին ի սուր սուսերի իւրեանց. զկանայս եւ զմանկտի հանէին ընդ ցից սայլից, զկէսս զոր ի ներքոյ կամացն արկեալ կասուին: 7 Եւ զարանց բազմութիւնս տային ի կոխումն փղաց. եւ զառանց թուոյ զմատաղ մանկտոյն զայն ի գերութիւն վարէին. եւ զբազում ամուրս քանդէին, եւ զբերդս աւերէին զամուրս: 8 Եւ առին աւերեցին զմեծ քաղաքն Տիգրանակերտ, որ էր ի գաւառին Աղճնեաց յիշխանութեան բղեշխին. քառասուն հազար երդ, զայն նոյնհետայն ի գերութիւն խաղացուցին. եւ ինքեանք ի Ծոփս մեծ արշաւեցին: 9 Եւ անդ էին բերդք՝ զոր առին. եւ էր՝ զոր ոչ կարացին առնուլ: 10 Եւ գային պահ արկանէին շուրջ զԱնգեղ զամուր բերդաւն, որ է յԱնկեղ տանն գաւառին. զի անդ էին բազում Հայոց թագաւորացն գերեզմանք շիրմացն արանցն Արշակունեաց. բազում դանձք մթերեալ մնացեալ կային ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ: 11 Չուան պահ արկին զբերդաւն. ապա իբրեւ ոչ կարէին առնուլ վասն ամրութեան տեղւոյն, թողուին եւ գնային: 12 Եւ զբազում բերդաւք զանց առնէին, զի ոչ կարէին մարտնչել ընդ ամուրսն. բայց միայն մատնեցաւ ի ձեռս նոցա ամուր բերդն Անի ի Դարանաղեաց գաւառին անդ, զի չարագործն Մերուժանն հնարաւորութեամբ մեքենայէր ամուր բերդին այնմիկ: 13 Ելանէին ի վեր, եւ կործանէին զպարիսպ նորա, եւ իջուցանէին անթիւ գանձս ի բերդէն: 14 Եւ բանային զգերեզմանս զառաջին թագաւորացն Հայոց զարանց քաջաց զԱրշակունոյ, եւ խաղացուցանէին ի գերութիւն գոսկերս թագաւորացն. բայց միայն զգերեզման շիրմին Սանատրկոյ արքային ոչ կարացին բանալ վասն անհեղեղ սկայա-

գործ հաստաշինած ճարտարագործ արարածոցն: 15 Ապա գնացեալք անտի ի բաց մերժէին, ընդ այլ դիմեալ՝ ասպատակս կապէին, ընդ կողմանսն Բասենոյ յառաջ խաղային եւ ինքեանք, կամէին ի թիկանցն կուսէ անկանել հասանել ի վերայ գաւրացն թագաւորին Հայոց:

16 Ապա մինչ դեռ այս ամենայն լինէր, գուժկան հասանէր առ թագաւորն Արշակ, եւ ասէն նմա. Դու աւաղիկ առաջոյ սպասես թշնամեացն, նստիս յԱտրպատականի. իսկ թշնամիքն զթիկամբք անկեալ կոտորեցին զաշխարհս. եւ արդ դիմեալ գան ի վերայ քո: 17 Ապա իբրեւ զայս լսէին թագաւորն Հայոց Արշակ եւ զաւրավարն նորին Վասակ, հանդէս առնէին զաւրացն իւրեանց: 18 Եւ գտան ի ժամանակին անդ ընդ ձեռամբն զաւրավարին Վասակայ արք գործոց իբրեւ վաթսուն հազար, ընտիրք եւ պատերազմողք, որ միամիտք եւ միասիրտք էին միաբանութեան գործոցն պատերազմին, հասանել մարտնչել ի վերայ որդւոց եւ կանանց իւրեանց, եւ ի վերայ աշխարհին դնել գանձինս իւրեանց մինչեւ ի մահ եւ ի վերայ աշխարհին գաւառացն բնակութեան, հասանել մարտնչել ի վերայ եկեղեցեացն իւրեանց, ի վերայ ուխտին պաշտամանն սրբոյ եկեղեցեաց իւրեանց, ի վերայ հաւատոց ուխտին անուան Աստուծոյ իւրեանց, փոխանակ բնակ տերանց իւրեանց Արշակունւոց: 19 Զի անգամ ոսկերք թագաւորացն մեռելոց եւ բազում ժողովուրդք խլեալք յիւրաքանչիւր տեղեաց, փոփոխեցան յաւտարութիւն:

20 Ապա Վասակ սպարապետն հանդերձ վաթսուն հազարաւք յառաջ խաղայր, դարձեալ ընդ կրուկ թողոյր զթագաւորն Արշակ յամուր տեղւոյ ուրեմն յերկրին Մարաց, հանդերձ սպասաւորաւքն: 21 Եւ ինքն գայր հասանէր ի միջնաշխարհն Հայոց ի գաւառն Այրայրատու. եւ հասանէր գտանէր զգաւրսն Պար-

սից, զի հասեալ մածեալ էին բազմութեամբ իբրեւ զաւազ առ ափն ծովու, բանակեալ զգաւառան Այրայրատեան: 22 Ապա հասեալ Վասակ հանդերձ գնդաւն՝ որ ընդ իւրն էին, անկանէր ի վերայ բանակին թագաւորին Պարսից ի գիշերի յեղակարծումն ժամանակի: 23 Եւ անդէն առ հասարակ ընդ սուր հանէին զգաւրսն ամենայն Պարսից. բայց միայն թագաւորն միաձի ճողոպրեալ մագապուր փախչէր: 24 Զհետ հալածէին զմնացեալսն փախուցեալսն արտաքոյ իւրեանց սահմանացն, եւ թափէին ի նոցանէ աւար բազում եւ անթիւ, զի ոչ գոյր նոցա չափ համարոյ: 25 Եւ առ հասարակ արկանէին զնոսա ի սուր սուսերի իւրեանց, եւ թափէին ի նոցանէն զոսկերս թագաւորացն իւրեանց, զոր Պարսիկք խաղացուցեալ տանէին ի գերութիւն յաշխարհն Պարսից: 26 Զի ասէին ըստ իւրեանց հեթանոսութեանն ըստ աւրինացն, թէ վասն այսորիկ բարձեալ տանիմք զոսկերս թագաւորացն Հայոց յաշխարհն մեր, զի փառք թագաւորացն եւ բախտքն եւ քաջութիւնն աշխարհիս աստի գնացեալ ընդ ոսկերս թագաւորացն՝ յաշխարհն մեր եկեսցեն: 27 Ապա թափէր Վասակ զգերութիւնն ամենայն զՀայաստան աշխարհին. եւ զոսկերս թագաւորացն Հայոց, զորս թափեաց Վասակ, հանեալ թաղեցին յամուր ի գեւղն՝ որ Աղձքն անուանին, յԱյրարատ գաւառին՝ որ կայն ի խինձս ի գոգս ի ծոցս յանձուկս ի դժուարս լերինն մեծի, զոր Արագածն կոչեն: 28 Եւ ինքեանք փոյթ արարեալ զաշխարհ նուաճել, յարդարել կարգել յաւրինել շինել զամենայն զգերութիւն յաւերածոյն եւ այրեցածոյն: 29 Բայց յայնմ նուազի եւս ապրէր Մերուժանն չարագործն, փախուցեալ ընդ արքային Պարսից: 30 Եւ յայնմ հետէ պահ ունէին իւրեանց աշխարհին. արքայն Արշակ հանդերձ գաւրավարաւն Վասակաւ յերկոսին դուրս

սահմանացն զգուշանային մինչեւ զամենայն աւուրս կենդանութեան իւրեանց:

ԳԼՈՒԽ ԻԵ.

1 Յաղագս թէ գիարդ արշաւեաց արֆայն Արշակ յերկիրն Պարսից, եւ քանդէր եւ հարկանէր զքանակն Շապիոյ արֆային ի Թաւրէշ:

2 Ապա զաւրածողով լինէր Արշակ արքայ Հայոց, եւ կուտէր առ ինքն զաւրս բազումս իբրեւ զաւագ բազմութեամբ, եւ խաղայր ի վերայ աշխարհին Պարսից:

3 Ապա առնոյր Վասակ զգունդն Հայոց, եւ զՀոնսն հանդերձ Ալանաւքն կոչել յաւգնականութիւն, եւ հասանէր դիմէր յաւգնականութիւն թագաւորութեանն Հայոց ի վերայ Պարսից: 4 Այլ թագաւորն Պարսից հանդերձ ամենայն իւրովք զաւրաւքն ի ժամանակի անդ յայնմիկ քանզի եւ նա խաղացեալ գայր ի վերայ Հայաստան երկրին ընդդէմ սոցա, ապա սոքա փութացեալք հասանէին յԱտրպատական, եւ գտանէին զբանակն արքային Պարսից ի Թաւրէշ բանակեալ:

5 Հասանէր Վասակ սպարապետն հանդերձ քսան բիւրուքն, անկանէր ի վերայ բանակին Պարսից: 6 Միաձի ճողոպրեալ թագաւորն փախչէր, եւ առնուին յաւարի զամենայն կարաւանն Պարսից. եւ զամենայն զաւրս Պարսից բազմութեանն կոտորեցին, եւ առին աւար բազում ի բանակէն՝ զի ոչ գոյր նոցա թիւ: 7 Ասպատակ տուեալ առնուին զամենայն Ատրպատական երկիրն. քանդեալ բրէին գերկիրն, մինչեւ ի հիմանց կործանէին. եւ խաղացուցանէին զգերութիւն երկրին քան զաստեղս բազմութեամբ: 8 Եւ զամենայն գայր երկրին հանէին ընդ սուր. եւ ինքեանք զգուշացեալք սահմանաւք երկրին իւրեանց, պահ արկեալ պահէին մեծաւ զգուշութեամբ:

ԳԼՈՒԽ ԻԶ.

1 Յաղագս Վնայ պարսկի եւ չորեքհարիւր հազարացն՝ որ եկեալ էին ի վերայ Հայոց, եւ նկուց լինէին ի գաւրացն Հայոց:

2 Ապա զուճարեաց թագաւորն Պարսից Շապուհ զՎինն ի վերայ արքային Հայոց Արշակայ չորեքհարիւր հազարաւ:

3 Ապա գայր ելանէր Վինն, ասպատակ սփռէր ընդ ամենայն երկիրն սահմանացն Հայոց: 4 Եւ ապա իբրեւ զիտացեալ թագաւորն Հայոց Արշակ, հասանէին ի վերայ զաւրացն Պարսից. կոտորեալ առ հասարակ ընդ սուր հանէր զամենայն զաւրսն Պարսից, եւ զմնացեալսն փախստական առնէր մինչեւ ի կողմանս սահմանացն Պարսից: 5 Սատակէին զնոսա, եւ ինքեանք դարձեալ ունէին զճակատուն տեղի:

ԳԼՈՒԽ ԻԷ.

1 Յաղագս գաւրավարին Պարսից Անդիկանայ, որ քառասուն բիւրուն հասանէր՝ աւար առնուլ գերկիրն Հայոց. թէ գիարդ Վասակ սպարապետն Հայոց ելանէր ընդ առաջ նորա երկոտասան բիւրու, հարկանէր զնա եւ զգաւրս նորա:

2 Ապա յետ այսորիկ առաքէր արքայն Պարսից ի վերայ արքային Հայոց գունդ կազմեալ պատրաստեալ արս ընդիրս պատերազմողս իւր եւ զքառասուն բիւր, գալ առնուլ այրել աւերել գերկիրն Հայաստան, եւ Անդկան զաւրագլուխ նոցա գայր հասանէր ասպատակ առնէր յերկիրն Հայոց: 3 Ապա գայր հասանէր ընդ առաջ նորա Վասակ Մամիկոնեան սպարապետն Հայոց երկոտասան բիւրուք. հարկանէր սատակէր զնա եւ զզաւրս նորա, թափէր զզարդ նոցա, եւ ոչ ապրեցուցանէր մի ի նոցանէ եւ ոչ մի. եւ ինքն կայր քաջութեամբ ունելով զճակատուն տեղի:

ԳԼՈՒԽ ԻԸ.

1 Յաղագս Հագարաուխտոյն՝ որ էր մի ի նախարարացն Պարսից, գոր ա-
նախեաց Շապուհ արքայ ութսուն քի-
րաւ հարկանել գերկիրն Հայոց. եթէ
գիա՛րդ Վասակ ել ընդ առաջ նորա մե-
տասան հագարաւ, հարկանէր սատա-
կէր գնա եւ զգաւրս նորա ի սահմանս
Ադանեաց:

2 Եկն եհաս Հագարաուխտ ի զաւ-
րացն Պարսից, գալ այրեացաւեր առնել, ի
հիմանց տապալել գերկիրն Հայոց: 3 Եւ
զիմեալ ընդ երկիրն Աղձնեաց, կամեցաւ
ծաւալել ընդ երկիրն Հայոց եւ ընդ ամե-
նայն սահմանս նոցա: 4 Ապա ելանէր Վա-
սակ ընդ առաջ նորա հանդերձ մետասան
հագարաւ. հարկանէր սատակէր, եւ
զգաւրսն զմնացեալսն եւ զփախստականսն
արկանէր յերկիրն Պարսից. եւ զՀագարա-
ուխտն անդէն սպանանէր:

ԳԼՈՒԽ ԻԹ.

1 Յաղագս Դմաւունդ Վսեմականայ, որ
իմնսուն քիրուն տապրիկ գաւրաւն՝
գոր առախեաց ի վերայ Արշակայ ար-
քային Հայոց Շապուհ արքայն Պարսից:

2 Ապա ելանէր Վասակ գաւրավարն
Հայոց, հարկանէր գնա եւ զգաւրս նո-
րա:

3 Ապա գայր հասանէր ի Կաւոսակա-
նի տոհմէն Դմաւունդ Վսեմական, հան-
դերձ իննսուն բիւրուն՝ որ առաքեալ էին
ի Շապուհոյ արքայէն Պարսից յերկիրն Հա-
յոց, տալ ընդ նոսա մարտ պատերազմի:

4 Ապա կազմեցան պատրաստեցան
զաւրքն երկրին Հայոց, եւ Վասակ զաւրա-
վար նոցա. ելին պատերազմել ի դիմի
հարկանել նոցա: 5 Ապա ի պարտութիւն
մատնեցան զաւրքն Պարսից յերեսաց նո-
ցա, դարձան ի փախուստ: 6 Հասանէր
Վասակ, կոտորէր սպանանէր հարկանէր ի
նոցանէն, զի եւ մի ոչ ապրեցուցանէր. եւ

զՎսեմականն ի մէջ զաւրացն սպանանէր¹:
7 Եւ սինլքորքն² արտաքոյ իւրեանց սահ-
մանացն հալածեալ տանէին:

ԳԼՈՒԽ Լ.

1 Յաղագս Վահրիճայ, որ չորեքհարիւր
քիրուն գայր հասանէր, տայր պատե-
րազմ ընդ Արշակայ արքային. եւ
գիա՛րդ մատնեցաւ ի ձեռս Վասակայ
գաւրավարին Հայոց ամենայն գաւ-
րաւն հանդերձ:

2 Ապա գայր հասանէր Վահրիճ ի
Վահրիճայ, եւ զաւրքն Պարսից չորեքհա-
րիւր բիւրուն առաքեալ ի Շապուհոյ արքա-
յէն ի վերայ Հայաստան աշխարհին, աւար
առնուլ եւ կորուսանել գերկիրն զաւրացն
թագաւորութեանցն Հայոց. եւ գային հա-
սանէին ի տեղին, որ կոչին Մախագեան:

3 Ապա քառասուն հագարաւ ելանէր Վա-
սակ զաւրավարն ընդդէմ նոցա. հարկանէր
սատակէր զգաւրս նոցա, սպանանէր
զՎահրիճն, եւ կոտորէր զգաւրսն Պարսից,
եւ ոչ թողոյր ի նոցանէ եւ ոչ մի. եւ զգու-
շանայր զսահմանաւք երկրին իւրոյ:

ԳԼՈՒԽ ԼԱ.

1 Յաղագս Գումանդ Շապուհոյ, որ մե-
ծաւ պարծանաւ պարծեալ առաջի ար-
քային Պարսից Շապուհ, եւ առեալ ամէր
ի վերայ աշխարհին Հայոց իմնհարել
հագար գաւրս. եւ կամ գիա՛րդ նկուն
լինէին, չարաչար մերժեալ լինէին յաշ-
խարհէն Հայոց:

2 Եւ եղեւ յետ այսորիկ գայր հասա-
նէր Գումանդ Շապուհ, առաքեալ ի Շա-
պուհոյ արքայէ Պարսից իննհարիւր հա-
գարաւ, պարծեցեալ առաջի թագաւորին:

3 Եւ գնացեալ, գայր հասանէր յաշխարհն
Հայոց. եւ առաջնորդ ունէր ի ձեռին³

1 Օրինակ մի չունի՝ եւ զՎսեմականն... սպանա-
նէր
2 Ի չորս օրինակս՝ սինեֆորֆն: Ի Պատկանեան օր.
գինուրֆն
3 Ի միում օրինակի՝ առաջնորդէր Մերուժան

զՄերուժանն վատանշան, որ էր յԱրծրու-
 նեաց տոհմէն յերկրէն Հայոց: 4 Ապա
 գայր հասանէր, եւ զեղծ գտանէր զսահմա-
 նապահսն՝ որք պահէին զսահմանս Հայոց:
 5 Ապա լցան սփռեցան ծաւալեցան ընդ
 ամենայն երկիրն Հայոց, աւար առնուլ
 քանդել աւերել զերկիրն ամենայն Հայոց
 աշխարհին: 6 Ապա կազմէր պատրաստէր
 Վասակ զաւրավարն Հայոց, հասանէր ան-
 կանէր ի վերայ արքայազնդին. եւ նախ
 զԳուժանդ Շապուհն սպանանէր: 7 Եւ ա-
 պա ընդ ցիրն ասպատակ սփռեալ հայա-
 ցիքն, զամենայն զաւրսն Պարսից կոտո-
 րեալ, անմի արարեալ սպառեցին: 8 Բայց
 միայն չարագործն Մերուժանն միաձի ճո-
 ղուպրեալ, փախչէր անկանէր յերկիրն Պար-
 սից:

ԳԼՈՒԽ ԼԲ.

1 Յաղագս Դեհկանն Գահապետի, որ ա-
 նաբեցաւ ի Շապիոյ արքայէ Պարսից ի
 վերայ Արշակայ Հայոց արքային՝ գաւ-
 րաւ բազմաւ. ապա հասանէր սատա-
 կէր զնոսա գաւրավարն Հայոց Վասակ:

2 Յետ այսր ամենայնի Շապուհն ար-
 քային Պարսից զաւրաժողով լինէր, եւ
 կուտէր զաւրս անչափս եւ անթիւ եւ ան-
 համար իբրեւ զաւազ¹ ծովու, եւ կուռ վա-
 ռեալ՝ որք նիզակ ի ձեռն առնուին, չորեք-
 հարիւր բեր զաւրս բազումս: 3 Եւ զԴեհ-
 կանն նահապետ, որ տոհմիկ իսկ էր ազգաւ
 տոհմին զաւրավարացն Հայոց, այս ինքն
 Մամիկոնենից, առաքէր զնա թագաւորն
 Պարսից Շապուհն յերկիրն Հայոց ի վերայ
 Արշակայ արքային Հայոց:

4 Գայր հասանէր ի սահմանս երկրին
 Հայոց. ապա եւ զհայացիսն ոչ ինչ ծուլա-
 ցեալ ի քուն գտանէր, այլ կազմ պատ-
 րաստք կային նմին գործոյ ճակատուն
 պատերազմի: 5 Եւ զաւրավարն Վասակ ե-
 լանէր ընդ առաջ նոցա եւթանասուն հա-

զարաւ. հարկանէր սատակէր զզաւրսն ա-
 մենայն Պարսից, սպանանէր զիւր զազգա-
 յին զԴեհկանն նահապետն, եւ զմնացեալսն
 առաջի իւր տանէր փախստական ձիահա-
 լածք արարեալք: 6 Բայց Մերուժանն
 Արծրունի փախուցեալ ապրէր, որ առաջ-
 նորդէր նոցա:

ԳԼՈՒԽ ԼԳ.

1 Յաղագս Սուրենայ Պահլաւի, որ եկն
 եւ Գա գաւրաւ բազմաւ. եւ սա եւս
 Գկունն լինէր իբրեւ գառաջիմսն:

2 Ապա կրկնէր լինէր² զաւրաժողով
 Շապուհն արքայ Պարսից, կազմէր պատ-
 րաստէր գունդս բազումս զաւրացն եւ
 փիղս անթիւս, զաւրս ընդիրս եւ պատե-
 րազմողս. եւ Սուրէն Պահլաւ, որ ազգակից
 իսկ էր Արշակայ թագաւորին Հայոց, եւ
 Մերուժանն առաջնորդ նոցա. եւ արձա-
 կեաց ի վերայ նոցա: 3 Ապա քանդի եւ
 Վասակ զաւրավարն Հայոց խաղաց զնաց
 ընդ առաջ նոցա երեսուն հազարաւ, հար-
 կանէր ի զիմի զՍուրէն եւ սպանանէր, եւ
 զզաւրսն կոտորեաց. բայց³ Մերուժան
 փախչէր:

ԳԼՈՒԽ ԼԴ.

1 Յաղագս Ապական Վսեմականի, զի
 եկն եւ Գա յայս պատերազմս, եւ Գմա
 ձախողեցաւ որպէս առաջնոցն:

2 Իսկ յետ Սուրենայ եկն Վսեմական.
 գայր հասանէր անչափ բազմութեամբ եւ
 անթիւ զաւրաւք, եւ Մերուժան առաջնորդ
 առաքեալ ի Շապուհոյ արքայէն Պարսից ի
 գործ պատերազմի ի վերայ երկրին Հայոց:
 3 Ապա առաքեցաւ ընդ առաջ նորա Վա-
 սակ սպարապետ զաւրավարն Հայոց. հար-
 կանէր սատակէր զԱպականն Վսեմական
 հանդերձ զաւրաւքն, եւ զմին ի նոցանէն
 ոչ ապրեցուցանէր: 4 Բայց միայն փախ-
 չէր չարագործն Մերուժան:

1 Յօրինակ մի յաւելու՝ առ եզեր

2 Ի տպ. Պատկանեան՝ կրկին լինէր

3 Օրինակ մի յաւելու՝ պիղծն

ԳԼՈՒԽ ԼԵ.

1 Յաղագս Զրկայ ցուրակապետի, որ առաքեցաւ ի Շապոյ արքայէն ի վերայ Հայոց բազում գաւրաւք ի պատերազմ, եւ սատակեցաւ իբրեւ գառաջինսն:

2 Յետ այսորիկ Զիկ նուիրակապետն զիւր արձակեաց Շապուհ արքայ Պարսից, մղել զպատերազմ Հայոց. եւ զՄերուժանն առաջնորդ ընդ նոսա առնէր: 3 Եւ գումարէր գումարտակ բազում իբրեւ զաւագ ծովու բազմութեամբ, եւ գալին Հասանէին յերկիրն Հայոց: 4 Ապա ելանէր ի դիմի հարկանէր նոցա Վասակ զաւրավարն Հայոց. Զիկն¹ սպանանէր, եւ զզաւրսն զկէսն կոտորէր, եւ զկէսն առաջի իւրեանց փախստական առնէին: 5 Այն անգամ եւս ոչ կարէին ի բուռն արկանել զՄերուժանն²:

ԳԼՈՒԽ ԼԶ.

1 Յաղագս Սուրենայ պարսկի, որ յետ Զրկայն եւս եկն ի պատերազմն. եւ նա ի բունն անկեալ Վասակայ, հանդերձ իւրով գաւրաւքն սատակեցաւ:

2 Եւ եղև յետ մահուն Զրկայ, Սուրէն պարսիկ խաղաց ի թագաւորէն Պարսից Շապուհոյ. վաթսուս բիւրու եկն եհաս, տալ պատերազմ ընդ թագաւորին Հայոց Արշակայ, եւ առաջնորդ ունէր զՄերուժանն: 3 Ապա ժողովեաց զամենայն զաւրս նախարարացն Վասակ սպարապետն Հայոց. ելանէր ի գիշերի անկանէր ի ներքս ի դակիչն ի հետիոտս, սուսեր ի ձեռն տասն հազարաւ ընտիր ընտիր արամբք: 4 Առ հասարակ կոտորէին հարկանէին եւ սատակէին զզաւրսն Պարսից. եւ ձերբակալ առնէին զՍուրէն պարսիկ, եւ ածէին զնա առ արքայն Արշակ: 5 Ապա հրաման տայր քարակոշկոճ առնել զնա: 6 Բայց Մերուժանն ապրէր փախստեայ:

ԳԼՈՒԽ ԼԷ.

1 Յաղագս Հրեւշդումայ, որ առաքեցաւ յարքայէն Պարսից ի վերայ Հայոց իննսուն բիւրու. եւ այն անգամ եւս նշան յաղթութեան Հայոց կանկնէր:

2 Եւ Հրեւշդուման արձակէր ի պատերազմ ի վերայ աշխարհին Հայոց: 3 Զի եւ սա իսկ ի նմին յազգէ թագաւորին Հայոց ազգական էր, այլ բանիւ Շապուհոյ արքայի գայր հասանէր հանդերձ զաւրաւք իննսուն բիւրուն, տալ պատերազմ ընդ հաստանեայն: 4 Ապա կարգէր կազմէր պատրաստէր Վասակ զաւրավարն Հայոց զամենայն զգունդս զաւրացն, եւ դիմեաց ի վերայ նոցա մարտիւ պատերազմաւ: 5 Փախստականս տանէին զնոսա, արկեալ առաջի իւրեանց, եւ Հրեւշդուման եւ Մերուժանն փախչէին:

ԳԼՈՒԽ ԼԸ.

1 Յաղագս Աղանայոզայն, որ չորեքհարեր բիւրաւ գայր հասանէր ի թագաւորէն Պարսից՝ տալ պատերազմ ընդ արքային Հայոց, եթէ զիա՛րդ նեղեալ պարտեցաւ ի ձեռն Վասակայ:

2 Իսկ Աղանայոզանն, որ Պահլաւն էր ի տոհմէն Արշակունեաց, որ նա խորխտացեալ առաջի Շապուհոյ թագաւորին Պարսից, եւ զնայր գայր հասանէր ի սահմանս Հայոց: 3 Ապա այս վաղագոյն ազդ լինէր թագաւորին Հայոց Արշակայ. սոյնպէս եւ սա զիւր զաւրքն կազմէր ի ձեռն Վասակայ իւրոյ սպարապետին: 4 Եւ զամենայն նախարարսն Հայոց ընդ նմա գումարեալ, գայր հասանէր ընդ առաջ զաւրացն Պարսից. հարկանէր կոտորէր զամենեսեան առ հասարակ, եւ զմնացեալսն փախստեայս առնէին յերկիրն Պարսից. եւ ինքեանք զգուշանային սահմանացն իւրեանց:

1 Յօրինակի միում՝ գնուիրակապետն

2 Օրինակ մի յաւելու՛ չար

ԳԼՈՒԽ ԼԹ.

1 Յաղագս Բոյեկան մեծ նախարարին Պարսից, որ եկն եւ սա քառասուն բիւրաւ. գոր հարկանէր ջնջէր սպարապետն Հայոց Վասակ:

2 Յետ այսորիկ Բոյեկան մեծ նախարար Պարսից, եւ քառասուն բիւր ընդ նմա, գային Հասանէին յԱտրպատական. կամէին ասպատակ առնել յերկիրն Հայոց:

3 Ապա զառաջեալք անգանէր Վասակ իւրով Հայաստան գնդաւն, Հարկանէր զզաւրսն ամենայն Պարսից, եւ զԲոյեկանն սպանանէր ի Թաւրէժն: 4 Եւ այրէր անդ զապարանս Թագաւորին Պարսից. եւ գտեալ անդ զպատկեր Թագաւորին Պարսից, նետածիք եղեալ՝ նետալից առնէր: 5 Բայց միայն փախչէր Մերուժանն ընդ նոսա եկեալ:

ԳԼՈՒԽ Խ.

1 Յաղագս Վաչականայ, որ եկն ի Հայս ութեւտասն բիւրուն, եւ կամէր առնուլ զՀայս. ապա եւ զնա վանեաց սպարապետն Հայոց եւ զգաւրս նորա:

2 Վաչական ոմն ի նախարարացն Պարսից արշաւէր յերկիրն Հայաստան, Հանդերձ ութեւտասն բիւրաւք: 3 Ապա ժողովէր զաւրաւարն Հայոց Վասակ գամենայն զզաւրսն Հայոց. եւ թողոյր զԹագաւորն Արշակ յամուր բերդին Դարիւնաց, եւ ինքն զաւրաւարն Հայոց Վասակ խաղայր անկանէր Հանդերձ զաւրաւքն Հայոց զբանակաւն Վաչականայ: 4 Սպանանէր զՎաչականն, եւ կոտորէր զբանական Պարսից. բայց միայն ապրէր սակաւուք փախուցեալ Մերուժանն, եկեալ՝ առաջնորդ նոցա:

ԳԼՈՒԽ ԽԱ.

1 Յաղագս Մշկանայ եւ երեսուն եւ հինգ բիւրուն, որ արշաւէր յերկիրն Հայոց, եթէ զիա՛րդ կոտորեալ եղեւ ի Վասակայ եւ ի գաւրաց Հայոց:

2 Եւ Մշկան ոմն անուն, մի ի նախարարացն Պարսից, եւ նա եկեալ ուղղէր ճակատս ընդ Թագաւորին Արշակայ: 3 Ապա զաւրաւարն Հայոց Վասակ ճակատէր զզաւրսն Հայոց ընդդէմ նոցա. եւ դէմ յանդիման մեծաւ բնութեամբ² միմեանց յարձակէին: 4 Եւ յաղթահարէր զզաւրսն Պարսից գունդն Հայաստան. սատակէին, եւ ոչ մի ի նոցանէն ոչ ապրեցուցանէր. եւ յանկանէ յանուանէ զՄշկանն սպանանէին, եւ Մերուժանն փախչէր:

ԳԼՈՒԽ ԽԲ.

1 Յաղագս Մարունանայ եւ վաթսուն բիւրուն, թէ զիա՛րդ եկեալք ի վերայ թագաւորին Արշակայ, կամ զիա՛րդ հարկանէր սատակէր զնոսա Վասակ սպարապետն:

2 Մարիճան ոմն³ մեծ նախարար գայր մարտնչէր ընդ երկիրն Հայոց: 3 Ապա Հանդերձ զաւրաւքն վաթսուն բիւրուն գայր Հասանէր միջամբոյս⁴ լինէր յերկիրն Հայոց. եւ առաջնորդ ի ձեռին ունէր զՄերուժանն Արծրունի: 4 Ապա եւս պատահէր պատերազմաւ Վասակ ամենայն զաւրաւքն Հայոց. Հարկանէր սատակէր զզաւրսն Պարսից կորուսանէր, եւ զՄարուճանն սպանանէր: 5 Բայց միայն փախչէր Մերուժանն:

1 Օրինակ մի չունի՝ եկեալ

2 Օրինակ մի մեծաբանութեամբ: Թերեւս բոնութեամբ
3 Յոր. Մարին անուն
4 Յերկուս օրինակս՝ միջամուխ լինէր

ԳԼՈՒԽ ԽԳ.

1 Յաղագս Զինդակապետին, որ իննսուն բիրով եկն ի վերայ Հայոց թագաւորին. ապա հասանէր սատակէր ի մեծ հարուածս զգաւրսն Պարսից Վասակ գաւրավարն:

2 Զինդակապետ ոմն, զաւրագլուխ զաւրացն թագաւորին Պարսից, հանդերձ իննսուն բիրուն գայր հասանէր ի սահմանս Ատրպատականի: 3 Ապա կանխէր եւ ելանէր ընդ առաջ նոցա Վասակ զաւրավարն Հայոց. անկանէր ի գիշերի ի վերայ զակշին Պարսկաց, եւ հանէր ընդ սուր առ հասարակ զամենեսեան, եւ սպանանէր զԶինդակապետն ի մէջ բանակին: 4 Բայց միայն ճողոպրեալ ապրէր Մերուժանն վատանշան:

ԳԼՈՒԽ ԽԴ.

1 Յաղագս արքայորդոյն Պապայ, թէ գիա՛րդ յայտնի էին դեմն ի նմա, եւ հանդերձ նոքա գործէր զպղծութիւնն:

2 Պապ որդին Արշակայ ծնաւ ի մաւրէն Փառանձեմայ Սիւնուոյ, որ էր լեալ կին Գնելոյն. զոր եսպան արքայն Արշակ, եւ առ զկին նորա Փառանձեմ իւր կին, եւ ծնաւ ի նմանէ որդի՝ որ կոչեցաւն Պապ: 3 Եւ եղեւ իբրեւ ծնաւ զնա մայրն իւր, քանզի անաւրէն մարդ էր եւ ամենեւին յԱստուծոյ ոչ երկնչէր, նուիրեաց զնա գիւլաց. եւ բնակեցին դեւք բազումք ի մանուկն, եւ վարէին զնա ըստ կամաց իւրեանց: 4 Մնաւ եւ աճեաց, եւ գործէր զմեղս, զպոռնկութիւն, զպղծութիւն արուագիտութեան եւ զանասնագիտութիւն, եւ զագրարի գարշութիւն. բայց կարի գարուագիտութիւն: 5 Դարձեալ ինքն իբանայր այլոց, եւ այսպէս մըմկեալ թաւալեալ էր:

6 Եւ երբեմն իբրեւ զգաց մայր նորա զարուագիտութիւնն, եւ ոչ կարացեալ համբերել պարսաւանացն վատանուանութեանն, ասէ ցսենեկապան որդւոյն իւրոյ,

Թէ յորժամ նա խնդրեսցէ ի պղծութիւն զարսն՝ ընդ որ սովորն է անկանել, դուք զիս ի ներքս կոչես՛ջիք: 7 Յորժամ պատանեակն Պապ ինքն ընդ անկողին մտեալ՝ խնդրէր զարսն ի պղծութիւն, եմուտ մայր նորա եւ նստաւ զառաջեաւ նորա՝ իւր որդւոյն: 8 Ապա սկսաւ ճչել վայել պատանեակն, եւ ասէ ցմայր իւր. Յարիցես զնասցես ի բաց, զի մեռանիմ խորովիմ կսկծիմ պայթիմ՛, թէ ոչ յարիցես զնասցես ի տանէս: 9 Իսկ մայրն ասէ՝ թէ ոչ զնացեալ ելից ի տանէ աստի: 10 Իսկ նա հաղքան զհաղ ճչէր, բազմացուցանէր զվայելն: 11 Իսկ մայրն նայեցեալ տեսանէր աչաւք իւրովք աւձք սպիտակք, զի պատեալք էին զգահոյիցն ոտամբք, եւ ճապատէին ի վերայ պատանեկին Պապայ, մինչ դեռ ընդողմանեալ էր նա. կայր ի մահիճսն, վայէր եւ խնդրէր զպատանեակսն ընդ որ սովորն էր գիտանալ: 12 Իսկ մայրն գիտացեալ յիշեաց զայն, որոց ի ծննդեանն նուիրեաց զորդին իւր. գիտաց թէ նոքա են, որ ի կերպարանս աւձիցն ճապատէին զորդւովն իւրով. յարտասուս հարեալ՝ ասաց. Վա՛յ ինձ, որդեակ իմ. զի քեզ տագնապ էր, եւ ես ոչ գիտէի: 13 Յարուցեալ զնաց եթող զտեղին, կատարել զպէտս ցանկութեանն: 14 Եւ այսպէս դիւաւք վարեալ, յայսպիսի գործս զամենայն աւուրս կենաց իւրոց ըմբռնեալ Պապն որդին Արշակայ, մինչ եհաս ի թագաւորութիւնն, մինչեւ ի մահ իւր:

ԳԼՈՒԽ ԽԵ.

1 Յաղագս Սակստան անդերձապետի, որ առաջեցաւ ի Շապիոյ թագաւորէն Պարսից չորեքհարիւր հազարաւ, եւ փոխոյց եւս զնա Վասակ գաւրավարն Հայոց:

2 Ապա յետ այսորիկ ժողովեաց թագաւորն Պարսից Շապուհ զգաւրս իւր, եւ

1 Օրինակ մի յաւելու՝ նայթիմ

հազարս չորեքհարեւր. եւ Սակստան անդերձապետ զաւրագլուխ նոցա: 3 Ապա խաղացին գնացին ի կողմանս Հայոց. եկին ծաւալեցան ճակատեցան ընդ թագաւորութեանն Հայոց Արշակայ: 4 Ապա ի մի վայր եկեալք ամենայն մեծամեծք նախարարացն Հայոց, խորհուրդ խորհէին. քանզի ոչ առնուին յանձն երբէք, թէ թագաւորն Արշակ մտցէ ընդ նոսա ի պատերազմ: 5 Ապա զաւրավարն Վասակ, հանդերձ ամենայն մեծամեծաւքն եւ նախարարաւքն ամենայն Հայոց մեծաց, հարկանէր սատակէր զամենայն զաւրսն Պարսից: 6 Եւ սպանանէր Սակստան անդերձապետն. բայց միայն ապրէր Մերուժանն Արծրունի փախուցեալ:

ԳԼՈՒԽ ԽԶ.

1 Յաղագս Շապստան տակառապետին, որ եկն հինգ հարեւր բիւրուն ի վերայ աշխարհին Հայոց. ապա եւ գնոսա հարկանէին սատակէին զաւրքն Հայոց:

2 Շապստան տակառապետն գայր հասանէր հինգ հարեւր բիւրուն ի վերայ աշխարհին Հայոց, եւ կամէր մտանել յաշխարհն Հայոց: 3 Ապա կազմեալ պատրաստեալ գունդն զաւրաց թագաւորին Հայոց, եւ Վասակ զաւրավարն Հայոց, ելանէր ի դիմի հարկանէր զաւրացն Պարսից: 4 Հարկանէին կոտորէին զզաւրսն Պարսից, եւ սպանանէին զՇապստան տակառապետն Պարսկաց: 5 Բայց միայն փախէր Մերուժանն, ապրեալ լինէր:

ԳԼՈՒԽ ԽԷ.

1 Յաղագս Մոզաց հանդերձապետին՝ որ գայր հասանէր ութուտասն բիւրուն, տալ ցախատ ընդ թագաւորին Հայոց. եւ սա կործանէր իբրեւ գառաջիմսն:

2 Ապա եւ Մոզաց անդերձապետն գայր հասանէր ութուտասն բիւրու, տալ ճակատս ընդ թագաւորին Հայոց Արշա-

կայ: 3 Ապա գնային հասանէին ի մի վայր ամենայն զաւրքն Հայաստան երկրին եւ Վասակ զաւրավարն սպարապետն, որ էր դայեակ թագաւորին Հայոց Արշակայ: 4 Եթէ կարի շատ աճապարեալ հասանէին, այնչափ ժամանեցին՝ մինչեւ ի Մաղխազան կարացին հասանել: 5 Եւ անդ ընդ միմեանս գունդն երկոքեան բախէին. ի պարտութիւն մատնեցան զաւրքն Պարսից, փախստական լինէին յերեսաց Վասակայ զաւրավարին եւ ամենայն զաւրացն Հայոց: 6 Եւ սպանանէին անդ զՄոզաց անդերձապետն, եւ զզաւրսն անմի արարեալ. բայց միայն Մերուժանն ի տաճիկ ձի նստեալ՝ փախչէր:

ԳԼՈՒԽ ԽԸ.

1 Յաղագս Համբարակապետին, որ իննսուն բիւրուն եկեալ մարտնչէր ընդ զաւրս թագաւորին Հայոց. եւ սատակեցաւ ի Սաղամաս ի զաւրացն Հայոց, եւ ի զաւրավարէն Վասակայ:

2 Ապա Համբարակապետն² թագաւորին Պարսից, եւ սա գայր հասանէր ի գաւառն Կորճէից ի Սաղամաս հանդերձ իննսուն բիւրաւք: 3 Եւ զակիչ ածեալ յամուր տեղուջ միոջ, կամէր կռուել ընդ թագաւորին Հայոց ընդ Արշակայ: 4 Ապա գայր զաւրավարն Հայոց, հանդերձ տասն հազարաւ զինու ընտիր զաւրու. եւ դարանամուտ լինէր ընդ կողմանս բանակին, եւ ի գիշերին անկանէր ի զակիչն: 5 Եւ զամենեսեան ընդ սուր հանէին առ հասարակ, եւ ոչ մի ոչ ապրեցուցանէին. բայց միայն Մերուժանն արտաքոյ գնդին ղիպեալ, փախչէր:

1 Օրինակ մի չունի՝ ի տանիկ ձի նստեալ
2 Օրինակ մի՝ համբարակապետն

ԳԼՈՒԽ ԽԹ.

1 Յաղագս Մոիկանայ՝ որ քառասուն բիրաւի եկն կոուել ընդ թագաւորին Հայոց, եւ ի Վասակէ եւ ի գաւրացն Հայոց սատակեցաւ:

2 Ապա Մոիկան ոմն մեծ զաւրագլուխն Պարսից քառասուն բիրաւք գայր հասանէր ի մարտ պատերազմի ընդ Արշակայ արքային Հայոց: 3 Ապա եւ զաւրքն Հայոց խրոխտացեալ հանդերձ իւրեանց զաւրավարաւն Վասակաւ, զազանաբար առիւծաբար դէմ ընդդէմ յարձակէին. եւ անդէն սատակէին զզաւրսն Պարսից, եւ սպանանէին զՄոիկանն: 4 Բայց Մերուժանն եւ այն անգամ փախչէր:

ԳԼՈՒԽ Ծ.

1 Յաղագս քակելոյ եւ քայքայելոյ թագաւորութեանն Հայոց, թէ ո՛րպէս ապստամբեցին բագուսի ի նախարարացն Հայոց, եւ ձեռն ետուն ի Շապուի արքայն Պարսից. եւ թէ զիա՛րդ հուպ ցրուեցան այսր անդր, եւ նուաղեաց թագաւորութիւնն Հայոց:

2 Զերեսուն եւ զչորս ամս ետուն պատերազմ երկիրս Հայոց ընդ թագաւորին Պարսից, եւ յետ այնորիկ ձանձրացան պարտեցան լքան աշխատեցան երկոքին կողմանքն: 3 Եւ սկսան սորսորել գնալ ի բանակէն Հայոց թագաւորին. թողին զիւրեանց արքայն Արշակ: 4 Բայց նախ այսմ գնալոյ սկիզբն առնէին մեծամեծ աւագանին: 5 Նախ բղեաշխն Աղձնեաց, եւ Նոշիրական¹ բղեաշխն, եւ Մահկերտանն, եւ Նիհորականն, եւ Դասսընտրէին, եւ ամենայն նախարարութիւն Աղձնեաց. եւ զաւրն եւ տունն տոհմին Աղձնեաց կողմանն ապստամբեցին յարքայէն Հայոց Արշակայ, եւ չոգան կացին առաջի արքային Պարսկաց Շապուհոյ. եւ պարիսպ ածէին ի Հայոց կուսէ՝ որ Զորայն կոչեն, դրունս

գնէին. եւ զատուցին զիւրեանց աշխարհն ի Հայոց:

6 Եւ յետ սորա Գուգարաց² բղեաշխն, եւ յետ սորա Զորայ գաւառին տէրն, եւ Կողբայ գաւառին տէրն, եւ ընդ նոսա Գարդմանաձորոյ տէրն: 7 Եւ որք մաւտէին ի նոսա կողմն այնր ձեռին, որ չուրջէին գնոքաւք, միահաղոյն ապստամբեցին ի թագաւորէն Հայոց Արշակայ, եւ չոգան գնացին առաջի կացին թագաւորին Պարսից Շապուհոյ: 8 Ապստամբեցին յԱրշակայ արքայէն Հայոց ամուր գաւառն Արձախայ, եւ ամուր գաւառն Տմաւրեաց, եւ ամուր աշխարհն Կորդեաց. ապա եւ տէր գաւառին Կորդուաց չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից:

9 Յետ այսորիկ ապստամբեաց ի թագաւորէն Հայոց եւ ձեռին իշխանութեանն տանն Հայոց թագաւորին, որ էր զԱտրպայական աշխարհաւն, յետս եկաց ի թագաւորէն Հայոց ամուր աշխարհն Մարաց. յետս եկաց յարքայէն Հայոց եւ աշխարհն Կազբից. եթող զարքայն Հայոց եւ գնաց Սաղամուտ տէրն Անձտեայ, եւ ընդ նմա իշխանն մեծի Մոփաց. եւ գնացին առ թագաւորն Յունաց: 10 Միջնաշխարհն մնացեալքն յերկուացան յարքայէն, եւ ոչ կամէին լսել թագաւորին իւրեանց, ոչ մի ինչ իրս՝ զոր նա կամէր: 11 Եւ գձձեցաւ թագաւորութիւնն մեծապէս:

12 Եւ Վահան եղբայր Վասակայ սպարապետին, ի Մամիկոնեան ի տոհմէն, անկաւ ի բանս հրապուրանաց նա ի Մերուժանայ Արծրունոյ քեռորդոյ իւրոյ: 13 Եւ սա ապստամբեաց յԱրշակայ արքայէն Հայոց, եւ չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից Շապուհոյ: 14 Եւ հաճեաց զմիտս նորա, եւ նախ ուրացաւ նա ի կենաց իւրոց՝ զոր ի Քրիստոսն ունէր, եւ յանձն առ պաշտել զաւրէնս մոզուլթեանն.

1 Յերկուս օրինակս՝ Նորշիրական

2 Յօրինակի միում՝ Գողորեաց եւ յայլում՝ Գուղորեաց

այս ինքն երկիր պագանել կրակի եւ ջրոյ եւ արեգական, եւ ուրանալ զաւրէնս քրիստոնէութեանն՝ յորում ծնեալն էր: 15 Եւ եղեւ նա ըստ մտի թագաւորին Պարսից, եւ մատուցանէր եւս ամբաստան գրգռութիւն զարքայէն Հայոց Արշակայ, եւ զիւրմէ տանուտեառնէն Վասակայ, եւ յիշեցուցանէր եւս նմա զմահն Վարդանայ, թէ յազագս քո մեռաւ: 16 Եւ եղեւ նա այնուհետեւ սիրելի Շապուհոյ արքային, եւ ետ նա կին Վահանայ զՈրմիզդուխտ քոյր իւր. եւ շնորհեաց նմա բարձ եւ զպատիւ՝ որ նոցուն լեալ էր նախնեաց, եւ մտերիմ փեսայ արար զնա իւր թագաւորն. եւ ի մէջ զաւրաց իւրոց շքեղացոյց զնա, եւ խոստացաւ նմա կեանս մեծամեծս առնել: 17 Իսկ թիւն Հայոց պակասեաց յայսմ հետէ եւ յապա:

ԳԼՈՒԽ ԾԱ.

1 Յաղագս թէ զիա՛րդ միաբան համաւրէն աշխարհաւրէն՝ որ միանգամ մնացեալ յաշխարհին՝ ժողովիցն առ Ներսէս կաթողիկոսն Հայոց, եւ զբողոք հարկանէին առաջի նորա, եւ ձեռնքափ լինէին, եւ թողին ի ձեռաց զիւրեանց թագաւորն Արշակ:

2 Ապա ժողովեցան մարդիկ ամենայն աշխարհին իշխանութեանն թագաւորութեանն Հայոց, եւ եկին առ մեծ եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս, մեծամեծք նախարարք կուսակալք կողմակալք գաւառատեարք գործակալք եւ դասապետք շինականաց: 3 Ի մի վայր եկեալ ժողովեցան, խաւսել սկսան ընդ Ներսիսի եւ ասեն. Դու, տէր, քեզն գիտես, զի այս երեսուն ամ է թագաւորին մերոյ Արշակայ, զի ոչ մի ամ մեզ հանգիստ ոչ եղեւ ի պատերազմէ. եւ համակ սրով եւ սուսերաւք եւ ի սլաքս եւ ի տէգս նիզակաց զքրտունս երեսաց մերոց ջնջեցաք: 4 Եւ արդ ոչ կա-

րեմք այսմ զժոյժ՝ ունել. եւ ոչ այլ կարեմք տալ ճակատս. զի լաւ է մեզ՝ թէ ծառայեսցուք մեք թագաւորին Պարսից որպէս ընկերքն մեր արարին, զի թողին զնա եւ զնացին առ թագաւորն Պարսից. եւ մեք սոյնպէս առնելոց եմք, զի ոչ այլ եւս կարեմք կուուել: 5 Թէպէտ իցէ թագաւորին Արշակայ կուուել ընդ Շապուհոյ, Վասակաւ եւ Անդուկաւ աներաւ իւրով տացէ պատերազմ. այլ յայսմիկ Հայոց աշխարհէս եւ ոչ մի այր ոչ ոք է երթալոց ի թիկունս աւգնականութեան նորա: 6 Նմա եթէ պէտ իցէ, տացէ պատերազմ, թէ պէտ մի՛. մեր թողեալ զնա՝ մեզ չէ փոյթ:

7 Իսկ սուրբն Ներսէս խաւսէր ընդ նոսա որպէս աւրէն էր, եթէ տեսէք եւ քաջ զմտաւ ածէք եւ յիշեցէք զբանն Տեառն պատուիրանին միաբանութեամբ, որպէս պատուիրեացն ծառայից՝ հնազանդ կալ տէրանց իւրեանց: 8 Զի ամենեքեան դուք աւազիկ կայք եւ վկայէք, մանաւանդ զի ամենեքեան դուք կեցեալ էք յազգէդ Արշակունոյ. ոմանք ի ձէնջ գաւառատեարք լեալք ի նոցանէն, եւ ոմանք մեծամեծք աշխարհաց, ոմանք աւագ աւագ աւանաց գեղից եւ գանձուց տեարք լեալ էք, եւ պէսպէս դաստակերտացն: 9 Զի թէպէտ եւ առ արարիչն Աստուած յանցաւոր իցեն պեղծ ազգն Արշակունեաց, սակայն զձեզ կեցուցեալ զամենեսեան եւ յաղբոյ թաւթափեալ է, զոմն գործով, զոմն պատուով, զոմն իշխանութեամբ, զոմն գործակալութեամբ: 10 Զի թէպէտ եւ առ Աստուած մեղաւոր է Արշակ արքայ, եւ պարտական է տոկոսեաց Արարչին իւրոյ՝ առ ի տանել² նմա վրէժս, սակայն Աստուած վասն բազում եւ անչափ մարդասիրութեան իւրոյ՝ խնայեաց ի նա, եւ վասն նորա ի ձեզ:

1 Յօրինակի միում՝ գոյժ ունել, եւ ի միւս այլ՝ յոյժ ունել
2 Թերեւս՝ տալ

11 Եւ դուք աւագիկ կամիք անկանել հեթանոսաց ի ծառայութիւն, եւ կորուսանել զկեանս ձեր յԱստուծոյ, եւ մերժել զբնակ տեարսն՝ ձեր՝ զորս տուեալ է ձեզ յԱստուծոյ, եւ աւտար տերանց ծառայեալ, եւ նոցին անաստուած կրանիցն ցանկալ:

12 Բայց լաւ լիցի ձեզ զնոյն սիրել եւ յանձն առնուլ, եւ նմին հաւանել, եւ ոչ՝ մերժել յանձանց ձերոց զարարչապաշտ թագաւորն: 13 Զի թէ բեւր չար իցէ Արչակ, սակայն աստուածապաշտ է. եւ եթէ մեղաւոր եւս իցէ, սակայն թագաւոր ձեր է. որպէս եւ դուքդ ասացէք առաջի իմ, թէ այսչափ ամբ են՝ զի մարտեայք եւս ի վերայ անձանց ձերոց եւ հոգւոց, ի վերայ աշխարհի, ի վերայ կանանց եւ որդւոց ձերոց: 14 Եւ որ մեծն է քան զամենայն, ի վերայ եկեղեցեաց ձերոց, ի վերայ ուխտի հաւատոց ձերոց, զոր ունիմք ի Տէր մեր Յիսուս Քրիստոս. եւ համակ Տէր ետ ձեզ յազմութիւն անուան իւրոյ: 15 Եւ արդ կամիք փոխանակ Քրիստոսի արարչին ձերոյ՝ ծառայել ձեզ անաստուածն մոգութեան անաւրինացն եւ նոցուն պաշտանէիցն, ի թողուլ նախ զԱրարիչն մեր եւ զնորուն պատուիրանս՝ զոր պատուիրեաց ձեզ, միամիտ կալ առ տեարսն մարմնաւորս՝ զորս նորայն արարեալ է. գուցէ բարկացեալ Տէր Աստուած ձեր, եւ խլիցէ զձեզ արմատաքի, եւ մատնեսցէ զձեզ հեթանոսացն ի չար ծառայութիւն՝ ստրկութեանն մինչեւ յաւիտեան, եւ ոչ երբէք բարձցի լուծն ծառայութեան ի ձէնջ:

16 Եւ բողոքէք դուք առ Տէր, եւ նա ոչ լսիցէ ձեզ. վասն զի անձամբ անկանիք դուք ի ծառայութիւն հեթանոս տերանց եւ անաստուած անգէտ մարդկան, ի ձեռս հեթանոս արանց տերանց խստասրտաց⁴.

եւ բազում չարի դիպեալ ելանիցէ առաջի ձեր, եւ ոչ կարիցէք ճողոպրել յայնմանէ:

17 Իսկ նոքա, որ միանգամ էին ի մի վայր ժողովեալ, զաղաղակ հարկանէին. քարոզ կարդացեալ՝ միմեանց ձայն առնէին, շփոթէին ամբոխէին, եւ ասէին. Հա՛պա գնասցուք, ասեն, սփռեցարուք յիւրաքանչիւր տեղիս, զի այդմ բանից մեք ինչ ոչ կամիմք լսել: Սփռեցան յիւրաքանչիւր տունս իւրեանց:

ԳԼՈՒԽ ԾԲ.

1 Յաղագս Շապիոյ արքայի, թէ զիա՛րդ յայնմ ժամանակի լոեցոյց զպատերազմ տալ ընդ Արշակայ Հայոց թագաւորին, եւ մեղմեխանաւ առ ինքն կոչէր ի հաշտութիւն:

2 Ապա Շապուհ արքայ Պարսից մեծաւ աղաչանաւք եւ պատարագաւք եւ հրովարտակաւք եւ սիրով զԱրշակ առ ինքն կոչէր, զի յայնմ հետէ արասցեն ի մէջ իւրեանց սէր եւ խաղաղութիւն եւ բարեկամութիւն մեծ: 3 Իսկ Արշակ արքայ թէպէտ պատերազմ կամէր տալ, այլ ոչ կամէին յանձն առնուլ այսմիկ ամենայն գաւրքն աշխարհին Հայոց: 4 Ապա թէ կամաւ կամաւ՝ թէ ոչ կամաւ, սակայն եղ սիրտ խոնարհութեամբ հրովարտակս՝ առ Շապուհ արքայ Պարսից, որպէս վայելէ ծառայի առ տէր իւր, տալ: 5 Եւ առաքէր յիւրմէ նմա պատարագս հաշտութեան:

ԳԼՈՒԽ ԾԳ.

1 Յաղագս կոչելոյ կրկին անգամ Շապուհ արքայի զԱրշակ արքայ Հայոց. եւ նորա երթալոյն, եւ միահաղոյն կորնչելոյն նորա:

2 Ապա յետ այսորիկ դարձեալ առաքեաց առ Արշակ արքայ Հայոց Շապուհ արքայ Պարսից, եւ ասէ. Իսկ եթէ հաճեմք՝ ես եւ դու ընդ միմեանց, եկ տեսցուք

1 Օրինակ մի՝ զբնակատէրն
 2 Յօր. պակասի ոչ
 3 Օրինակ մի՝ չարաչար
 4 Օրինակ մի՝ ի ծառայութիւն հեթանոսաց եւ խստասիրտ տերանց. եւ բազում չարի

5 Օրինակ մի յաւելու՝ առաքել
 6 Օրինակ մի՝ հանիմք

զմիմեանս. եւ յայսմ հետէ իբրեւ զհայր եւ զորդի լիցուք ընդ միմեանս: 3 Ապա թէ ոչ տեսանես դու զիս, խնդրես զպատերազմ ի մէջ իմ եւ ի մէջ քո: 4 Իսկ Արշակ խնդրէր հաւատարիմ երդումն ուխտիւ ի նմանէն, զի յայսմ հետէ անկասկած երթիցէ առ նա: 5 Եւ նա ետ բերել՝ ըստ աւրինացն հաւատարիմ երդմանց թագաւորութեանն Պարսից՝ աղ, կնքել վարագ նկարագիր մատանեաւ, եւ յղեաց: 6 Զի թէ իցէ եւ զայն երդման եւս զհետ ոչ եկեսցէ՜, ապա կազմ լիցի տալ ճակատս պատերազմի ի մէջ իւրեանց:

7 Իսկ զայն եւս յորժամ տեսին եւ լուան ամենայն մարդիկն երկրին Հայոց, ստիպեցին բռնաբաւսեցին² զիւրեանց թագաւորն զԱրշակ եւ շտապեցին, զի յարիցէ գնասցէ երթիցէ յանդիման լիցի թագաւորին Պարսից Շապուհ: 8 Յայնմ հետէ, թէ կամաւ կամաւ՝ եւ թէ ոչ կամաւ³, յարեալ թագաւորն Հայոց Արշակ, ա՛ռ ընդ իւր զզաւրավարն սպարապետն Հայոց զդայեակն իւր, խաղաց գնաց յերկրէն Հայոց յերկիրն Պարսից առ Շապուհ արքայ Պարսից. չոգաւ յանդիման եղեւ թագաւորին Պարսից Շապուհ: 9 Իբրեւ տեսին զնոսա, արկին ի շղթայս⁴ զերկոսեանն զարքայն Արշակ եւ զսպարապետն Վասակ՝ եւ պահէին զնոսա արձակ ի մէջ ազատագունդ փուշտիպան զաւրացն: 10 Եւ կոչեաց արքայ Շապուհ զարքայ Արշակ, եւ իբրեւ զճառայ իւր պատուհասեաց զնա. եւ նա յանցաւոր եւ մահապարտ զանձն իւր առ նա համարեցաւ: 11 Դարձեալ անդրէն ի նոյն գունդ փուշտիպանաց ետուն զԱրշակ արքայ ի պահեստ:

ԳԼՈՒԽ ԾԴ.

1 Յաղագս թէ ո՛րպէս զգիւթսն եւ զփաւդեայսն հարցեալ Շապուհոյ՝ փորձէր զմիտս Արշակայ, եւ տայր զնա յԱնուշ բերդն, եւ կամ զՎասակ սպարապետն Հայոց չարամահ հրամայէր առնել:

2 Ապա կոչեաց թագաւորն Պարսից Շապուհ զզիւթսն եւ զաստեղագէտսն եւ զքաւդեայսն. խաւսէր ընդ նոսա եւ ասէր՝ եթէ ես բազում անգամ կամեցայ սիրել զԱրշակ արքայ Հայոց, եւ նա համակ անարգեաց զիս: 3 Եւ եղի ընդ նմա ուխտ խաղաղութեան, եւ երդուաւ ինձ յիւրեանց աւրէնս քրիստոնէութեանն ի գլխաւորութիւն այնմ՝ զոր Աւետարանն կոչեն. նախ այն երդմանն ստեաց: 4 Ես նմա բիւր բարիս խորհեցայ որպէս հայր որդւոյ կատարել նմա, եւ նա ինձ չար ընդ բարւոյ հատոյց: 5 Իսկ ես կոչեցի զերիցունս եկեղեցոյն Տիսփոնի քաղաքի, եւ կարծեցի թէ նոքա նենգութեամբ ինչ ետուն նմա զերդումն եւ ետուն ինձ ստել: 6 Եւ պատուհասեալ զնոսա որպէս զմահապարտս, իսկ ասաց ցիս Մարի երէց գլխաւորն նոցա, ասէին՝ թէ մեք արդարութեամբ տուաք նմա զերդումն. բայց եթէ նա ստեաց, նոյն Աւետարանն ածէ զնա առ ոտս ձեր: 7 Եւ ես նոցա ոչ լուայ. եւ ետու հրաման եւթանասուն զնոսա ի մի գուր փողոտել, եւ զուսումնակիցս նոցա հանել ընդ սուր: 8 ԶԱւետարանն՝ յոր երդուաւ Արշակ արքայ, որ է գլխաւորութիւն ուսմանց նոցա քրիստոնէութեանն, կապեցի շղթայիւք, եւ կայ ի գանձի իմում: 9 Բայց բանքն Մարեայ երիցոյ ուշ եղեն ինձ. եւ յիշեցի զի ասէր՝ թէ մի՛ սպանաներ զմեզ, այլ ես գիտեմ՝ զի նոյն Աւետարանն ածէ զԱրշակ արքայ ի ծունկս քո: 10 Ահաւասիկ բանք արդարութեամբ կատարեցան, զոր ասէրն⁵: 11 Բայց Արշակ արքայ Հայոց այս երե-

1 Օրինակ մի՝ երթիցէ
 2 Յերիս օրինակս՝ բռնագրոսեցին
 3 Օրինակ մի՝ թէ կամաւ թէ ակամաւ
 4 Զի՛ յօրինակին

5 Յօրինակի միում պակասէ հատուածոյ՝ Ահաւասիկ բանք... զոր ասէրն

սուսն ամ է Արեայց՝ զի ետուն ընդ նմա ճակատս, եւ յաղթել եւ ոչ մի ամ ոչ կարացաք. եւ ելեալ է եկեալ ոտիւք իւրովք: 12 Բայց թէ գիտէի՝ թէ յայսմ հետէ կայցէ յուխտին իմում եւ ի հնազանդութեան բարեաւ ուխտիւ, մեծապէս մեծարանաւք արձակէի զնա խաղաղութեամբ յիւր աշխարհն:

13 Իսկ քաղեայքն ետուն նմա պատասխանի եւ ասեն. Թող մեզ այսաւր, եւ վաղիւն պատասխանի արասցուք քեզ: 14 Իսկ ի վաղիւ անդր ժողովեցան եկին ամենայն քաղեայքն եւ աստեղագէտքն, եւ ասեն ցարքայն. Այժմ զի եկեալ է առ քեզ թագաւորն Հայոց Արշակ, զիա՞րդ խաւսի ընդ քեզ, կամ զի՞նչ ձայն ածէ, կամ զիա՞րդ ունի զանձն: 15 Ասէ արքայն. Իբրեւ զմի ի ծառայիցն իմոց համարի զինքն, հող ոտից իմոց ջանայ լինել: 16 Ասեն նոքա. Առ¹ արա զոր ասեմքս քեզ. պահեա դու զնոսս աստէն, եւ առաքեա դու դեսպանս յերկիրն Հայոց, եւ տուր բերել անտի հող ի սահմանացն Հայոց իբրեւ բեռինս երկուս, եւ կահոյր մի ջուր: 17 Եւ հրաման տացես հարկանել զկէս խորանի յատակ ի բերեալ հողոյն Հայոց. եւ առցես քեզէն զձեռանէ արքային Հայոց Արշակայ, եւ տարցես նախ յայն տեղ՝ որ բնակ իսկ իցէ հողն. եւ հարցցես ցնա բանս: 18 Եւ դարձեալ առցես դու զձեռանէ նորա, եւ տարցես ի հայատակսն ի հարեալ հողոյն. եւ լուիցես դու բանս ի նմանէ, եւ ապա գիտասցես դու՝ եթէ կա՞յ յուխտի քո եւ պահէ՞՞ զդաշինս քո թէ ոչ՝ յետ արձակելոյ քո զնա ի Հայս: 19 Ապա թէ ի վերայ հայ հողոյն խիստ ինչ բարբառեսցի, գիտասջիր՝ զի որ աւր հասանէ յերկիրն Հայոց, զնոյն ձայն ածէ ընդ քեզ, եւ զնոյն պատերազմ նորոգէ ընդ քեզ, զնոյն ճակատս եւ զնոյն թշնամութիւն յուզէ:

20 Ապա թագաւորն Պարսից, քանզի զայս լուեալ ի քաղեայքն, տաճիկ ուղտուք արձակէ ի Հայս արս զհողոյ եւ զջրոյ, զի եկեսցեն բերցեն² նմա զհմայսն³: 21 Եւ ընդ սակաւ աւուրս եկին բերին զայն ինչ, զորմէ յղեացն: 22 Ապա հրաման տայր թագաւորն Շապուհ՝ զկէս յատակին իւրոյ խորանին հարկանել ի բերեալ հողոյն Հայոց, եւ զջուրն ցանել ի վերայ նորա, եւ զկէսն ի նոյն հողն զիւրոյ բնակութեան երկրին թողուլ: 23 Եւ ետ ածել զԱրշակ արքայ Հայոց զառաջեւ իւրով, եւ զայլ մարդիկն ի բաց հրամայեաց կացուցանել. եւ զձեռանէ առեալ՝ շրջէր ձեմելով:

24 Եւ երթեւեկս առեալ ընդ խորանն, ասէ ցնա, յորժամ ի պարսիկ ի հողոյն ի վերայ ձեմէին թէ՛ Ընդէ՞ր եղեր իմ թշնամի, Արշակ արքայ Հայոց. զի ես որպէս զորդի սիրեցի զքեզ, եւ կամեցայ տայ քեզ զդուստր իմ ի կնուծիւն, եւ որդի ինձ առնել զքեզ, իսկ դու խստացար ընդ իս, եւ քովք կամաւք՝ առանց իմոց կամաց՝ եղեր ընդ իս թշնամի. եւ այս լի երեսուն ամ է՝ զի պատերազմեցար ընդ իս:

25 Ասէ Արշակ արքայ, թէ Մեղայ քեզ եւ յանցեայ. զի ես եկի եւ կոտորեցի, եւ յաղթեցի թշնամեաց քոց. եւ ակն ունէի ի քէն պարգեւ կենաց, եւ թշնամիք իմ հրապուրեցին զիս, եւ արկին երկիւղուկս ի քէն, եւ փախուցին ի քէն: 26 Եւ երդումն իմ, զոր երդուայ քեզ, յառաջ ածին զիս. եւ եկի աւասիկ առաջի քո: 27 Եւ աւասիկ ծառայ քո ի ձեռս քո կամ. զինչ եւ պէտք է քեզ, արա զիս, զինչ եւ կամ իցէ. սպան զիս, զի ես ծառայ քո առ քեզ կարի յանցաւոր եմ, մահապարտ եմ:

28 Իսկ Շապուհ արքայ առեալ զձեռանէ նորա, շրջէր ձեմելով, ի չքմեղս առեալ զնա ածէր ի հայակողմն ի հողն հարեալ յատակն: 29 Իսկ իբրեւ յայն տեղի

1 Օրինակ մի՝ ասեն նոքա արեայիւն. Արա

2 Յօր. բարձցեն

3 Օրինակ մի՝ զհամայն

Հասանէր, եւ զՀայ զհողն կոխէր, մեծամեծս ըմբոստացեալ հպարտացեալ՝ այլ ձայն չըջէր¹. սկսանէր խաւսել եւ ասել. Ի բաց կաց յինէն, ծառայ չարագործ տիրացեալ տերանցն քոց. այլ ոչ թողից զքեզ եւ որդւոց քոց զվրէժ նախնեաց իմոց, եւ զմահն Արտեւանայ արքային: 30 Զի այժմիկ ձեր ծառայից զմեր տերանց ձերոց զբարձ կալեալ է. բայց ոչ թողից, եթէ ոչ տեղիդ մեր առ մեզ եկեսցէ²:

31 Իսկ դարձեալ առնոյր զձեռանէ, դարձեալ տանէր յայն հող Պարսից. ապա աշխարէր զասացեալսն, խոնարհէր բուռն հարկանէր զոտից նորա, մեծապէս ապաշխարելով³ զՂմամբ զասացեալ բանսն: 32 Իսկ յորժամ առեալ զձեռանէ զնա տանել ի Հայ հողն, եւս խստագոյն քան զառաջինսն բարբառէր. իսկ դարձեալ միւսանգամ հանէր յայնմ հողոյն, բանիւք յապաշխարութիւն դառնայր: 33 Յայգուէ մինչեւ⁴ երեկոյն այնպէս շատ փորձ փորձեաց զնա. զի իբրեւ ի վերայ հարեալ հողոյն տանէր, խոստացեալ ամբարտաւանէր. իսկ ի վերայ բուռն գետնոյն յատակին՝ եւ կայր, ի զղուամն դառնայր⁵:

34 Իսկ իբրեւ երեկոյ եղեւ ժամ ընթրեաց թագաւորին Պարսից, քանզի սովորութիւն էր Հայոց թագաւորին բազմական անդէն ընդ նմին առ նմա ի նորին տախտին արկանել բազմական, աւրէնք էին՝ զի թագաւորն Պարսից եւ թագաւորն Հայոց ի միում տախտի բազմէին ի միում գահոյս: 35 Իսկ այն աւր նախ զտող բազմականացն թագաւորացն, որ անդն էին, զամենեցունց կարգեցին. հոսակ յետոյ զկնի ամենեցունց ի ներքոյ բոլորին զԱրշակայ

բազմականն առնէին, ուր զՀայ հողն յատակն հարեալ էր: 36 Նախ ամենեքեան իբրեւ բազմեցան յիւրաքանչիւր չափու, յետոյ ածէին բազմեցուցանէին զարքայն Արշակ: 37 Արդ եկաց բազմեալ ուռուցեալ վայր մի. իսկ յոտն եկաց, ասէ ցլթագաւորն Շապուհ. Իմ այդ տեղի, ուր դուդ ես բազմեալ. յոտն կաց այդի, թող ես այդր բազմեցայց, զի տեղի ազգի մերոյ այդ լեալ է. ապա եթէ յաշխարհն իմ հասից, մեծամեծ վրէժս խնդրեցից ի քէն:

38 Ապա տայր հրաման Շապուհ արքայ Պարսից՝ բերել շղթայս եւ արկանել ի պարանոցն Արշակայ եւ յոտս եւ ի ձեռս նորա երկաթս, եւ խաղացուցանել⁶ զնա ի յԱնդամըն զոր Անուշ բերդն կոչեն, եւ պնդեալ զնա մինչեւ անդէն մեռցի: 39 Եւ եղեւ ի վաղիւ անդր ետ հրաման Շապուհ արքայ՝ ածել զառաջեալ իւր զՎասակ Մամիկոնեան զգաւրավարն սպարապետն Հայոց մեծաց, սկսաւ պատուհասել զնա. քանզի էր Վասակ անձամբ փոքրիկ, ասէ ցնա արքայն Պարսից Շապուհ. Աղուէս, դու էիր խանգարիչ՝ որ այսչափ աշխատ արարեր զմեզ⁷. դու ես այն՝ որ կոտորեցեր զԱրիս այսչափ ամս, եւ զի⁸ գործես⁸. զմահ աղուեսու սպանից զքեզ: 40 Իսկ Վասակ⁹ տուեալ պատասխանի ասէ. Այժմ քո տեսեալ զիս անձամբս փոքրիկ¹⁰, ոչ առեր զչափ մեծութեան իմոյ. զի ցայժմ ես քեզ առեւծ էի, եւ արդ աղուէս. Բայց մինչ ես Վասակն էի, ես¹¹ սկայ էի մի ոտնս ի մերոյ լերին կայր, եւ միւս ոտնս իմ ի միոյ լերին կայր¹². յորժամ յաջ ոտնս յենուի,

1 Օրինակ մի՝ փողէր
2 Յերկուս օրինակս՝ եկիցէ
3 Օրինակ մի՝ ապաշխարելով
4 Յօր. չի՞ միւնչեւ
5 Օրինակ մի այսպէս ունի զվերջին հատուածը. իսկ յորժամ կրկին եւ երեկին անգամ գայս առնէր, եւս խստագոյնս քան զառաջինսն բարբառէր

6 Օրինակ մի՝ տանել
7 Օրինակ մի յաւելու՝ եւ զբազս
8 Օրինակ մի՝ ամս. եւ այժմ զիա՛րդ կարես ապրիլ ի ձեռաց իմոց
9 Օրինակ մի յաւելու՝ բազմաշխատ վահանն Հայոց
10 Օրինակ մի յաւելու՝ եւ սուրն իմ ոչ է ընդ իս
11 Օրինակ մի՝ ձեզ
12 Օրինակ մի՝ մի ոտս ի մի լերին կայր, եւ միւսն այլ լերին

զաջ լեառն ընդ գետին տանէի. յորժամ ի ձախ ոտնն յենուի, զձախ լեառն ընդ գետին տանէի: 41 Ապա հարցանէր թագաւորն Պարսից Շապուհ եւ ասէ. Ադէ՛ տուր ինձ գիտել, ո՞վ են լերինքն այնոքիկ՝ զորս դուն ընդ ունջ տանէիր: 42 Եւ ասէ Վասակ. Լերինքն երկուք, մի դու էիր, եւ մի թագաւորն Յունաց: 43 Այն մինչ տուեալ էր ինձ Աստուծոյ, զքեզ ընդ գետին տանէի եւ զթագաւորն Յունաց, մինչեւ աւրհնութիւն հաւրն մերոյ Ներսէսի հանգուցեալ էր ի վերայ մեր, եւ Աստուծոյ զմեզ ի ձեռանէ չէր թողեալ. մինչեւ զնորա բանն արարաք, եւ խրատ նորա եկաց առ մեզ, զիտացաք տալ քեզ խրատ, մինչեւ մեզէն աշաւք բացաւք անկաք ի խորխորատ¹: 44 Արդ զինչ եւ կամիս՝ արա: 45 Ապա ետ հրաման թագաւորն Պարսից մորթել զգաւրավարն Հայոց Վասակ, եւ զմորթն հանել եւ լնուլ խոտով, եւ տանել ընդ նոյն բերդ յԱնդամըն՝ որ Անյուշն կոչեն, ուր արգելին իսկ զթագաւորն Արշակ:

ԳԼՈՒԽ ԾԵ.

1 Յաղագս գերութեանն եւ հարուածոյն աշխարհին Հայոց եւ աւերածոյն, եւ գերութեան տանելոյն ի Պարս, եւ չարամահ լինելոյ տիկնոջն Փառանձեմայ, եւ քաղաքացն Հայոց աւերելոյ, եւ հիմանց աշխարհին տապալելոյ:

2 Ապա արձակեաց արքայն Պարսից Շապուհ ի վերայ աշխարհին Հայոց երկուս ոմանս յիշխանաց անտի իւրոց, միուամն Զիկ անուն եւ միուամն Կարէն, հինգ հարիւր բիւրով, զի եկեացն բրեսցեն քանդեացն զաշխարհն Հայոց: 3 Եւ եկին հասին ի վերայ երկրին Հայոց: 4 Ապա իբրեւ ետես տիկին աշխարհին Հայոց կինն Ար-

շակայ թագաւորին Հայոց Փառանձեմ զգաւրս թագաւորին Պարսից, եթէ եկին լցին զաշխարհս Հայոց, առեալ ընդ իւր մարդիկ իբրեւ մետասան հազար ազատս ընտիրս սպառազէնս պատերազմողս, եւ հանդերձ նոքաւք դիմեաց եմուտ ի բերդն Արտագերից՝ որ ի յերկրին Արշարունեաց²՝ յերեսաց գաւրացն Պարսից: 5 Ապա եկին հասին ամենայն գաւրքն Պարսից, շուրջ զբերդաւն նստէին, պահ արկանէին. պատեցին պաշարեցին: 6 Իսկ նոքա ի ներքս ամրացեալք, յուսային ի տեղւոյն ամրութիւնն. եւ նոքա լակիչ ածեալ, նստէին արտաքուստ շուրջ զձորաւքն: 7 Եւ նստան շուրջ զբերդաւն ամիսք երեքտասան, եւ առնուլ զբերդն ոչ կարացին, զի կարի ամուր էր տեղին: 8 Աւերեցին քանդեցին գերկիրն ամենայն. ելանէին առնուին աւար գերկիրն ամենայն, շուրջ ի գաւառացն եւ յաշխարհացն ածէին զգերի մարդկանն եւ զանասնոյ ի լակիչն իւրեանց. այլուստ բերէին համբարս եւ ուտէին, եւ զբերդն պաշարեալ պահէին:

9 Իսկ Պապ որդին Արշակայ ոչ դիպեցաւ անդ ի Հայոց աշխարհին, զի առ թագաւորն Յունաց դիպեցաւ³: 10 Զի թէպէտ եւ զայս ամենայն լուան ազատագունդ բանակն Հայոց, չոգան իւրեանց խնդրել թիկունս աւգնականութեան. եւ էր նոցա գաւրագլուխ Մուշեղ որդին Վասակայ սպարապետին: 11 Եւ չոգան նոքա առ իւրեանց արքայորդին. մինչ դեռ նոքա ընդ թագաւորին Յունաց խաւսէին, հաւանեցուցանէին զնոսա թիկունք լինել իւրեանց: 12 Իսկ յերկիրն Հայոց ստէպ առաքէին դեսպանս առ տիկին աշխարհին առ Փառանձեմ, զի ժուժկալ լինիցի բերդին, եւ մի՛ ձեռս տացէ ի Պարսիկս: 13 Եւ դեսպանս ստէպ ստէպ յորդուոյ նորա ի Պապայ զմիմեանց զկնի ի շաբաթու շաբա-

1 Յօրինակի միում՝ չէր թողեալ. եւ մեզ բարի խրատ ետ սիրել զմիմեանս, եւ հնագանդ լինել տերանց եւ թագաւորացն մերոց. անլուր եղեալ յայտնապէս մեզէն աչօք բացօք եւ խստասրտութեան մերոյ անկախ ի խորխորատ

2 Յօր. Արշակունեաց տե՛ս գլ. ԺԹ

3 Օրինակ մի՛ կայր

թուլ եկեալ հասանէին. եւ գաղտ ընդ գաղտնի դուռն ուրեմն մեքենաւորութեամբ ի բերդն մտանէին, տային քաջալերս տիկնոջն. եւ յերկարեաց ի բերդին ամիսս երեքտասան պաշարումն: 14 Այլ որք գային եւ երթային, ստէպ ստէպ գային՝ թէ պինդ կաց, զի հասեալ է Պապ որդի քո եւ գունդ կայսերական ի թիկունս աւգնականութեան: 15 Եւ յերկարեաց խրախոյսն որ հասանէր, զի ասէին. Վայրիկ մի եւս, սակաւիկ մի եւս կալցիս ժոյժ, եւ ահա հասեալ է աւգնականութիւն:

16 Եւ եղեւ յետ չորեքտասաներորդ ամսեանն հարուածոց՝ որ յԱստուծոյ հասին ի վերայ գաղթականին բերդնորդեացն, զի մահ անկաւ ի վերայ նոցա՝ որք ի բերդին էին, զի ի Տեառնէ հասին պատուհասք: 17 Առաջի տիկնոջն Փառանձեմայ ուտէին եւ ըմպէին եւ ուրախ լինէին որք էին ի տաճարին². յանկարծակի ի միում ժամու հարիւր այր, եւ ի միւսում երկերիւր, եւ էր՝ զի հինգ հարիւր այր մեռան ի բազմականին՝ յորժամ բազմեալ կային. եւ աւր ըստ աւրէ սատակէին: 18 Յորժամ սկսան, զամիս մի ոչ յերկարեաց՝ զի սատակեցան առ հասարակ. զի էին արք իբրեւ մետասան հազար, եւ կանայք իբրեւ վեց հազար. զի ամիս մի ոչ կացին. զի ամենեքեան՝ որ էին ի բերդին՝ առ հասարակ սատակեցան:

19 Բայց մնաց ի բերդին Փառանձեմ տիկին՝ երկու նաժշտաւք: 20 Ապա եկն եմուտ գաղտ ի ներս ի բերդն Հայր մարդպետ ներքինին, եւ թշնամանեաց գտիկինն մեծապէս իբրեւ զբող մի: 21 Սկսաւ դնել թշնամանս ազգին Արշակունեաց, զի վատախորհուրդք են վատանշանք, կորուսին գաշխարհս եւս. իրաւի անց ընդ ձեզ այդ, եւ այլ զի անցցէ: 22 Եւ գաղտուկ եւ փախեաւ: 23 Իսկ տիկինն Փառանձեմ իբրեւ

ետես՝ եթէ միայն մնացի, եբաց զդուռն բերդին, եւ թողացոյց զաւրսն Պարսից մտանել ի բերդն: 24 Եւ եկին կալան գտիկինն, եւ իջուցին ի բերդէն: 25 Եւ անէին ի բերդն ի վեր զաւրավարն Պարսից, գերէին զգանձս թագաւորին Հայոց, որ կային ի բերդին. եւ սկսան կրել իջուցանել զամենայն գանձսն, որ կայր ի բերդին: 26 Զինն տիւ եւ զինն գիշեր համակ իջուցին զոր գտին յԱրտարագէրսն բերդին, հանդերձ տիկնաւն խաղացուցին:

27 Եւ յետ այսորիկ եկին ի քաղաքն մեծ յԱրտաշատ, եւ առին զնա, եւ կործանեցին զպարիսպ նորա. առին անտի զգանձս մթերեալս՝ որ կային, եւ գերեցին զամենայն քաղաքն: 28 Եւ խաղացուցին ի յԱրտաշատ ի քաղաքէ ինն հազար տուն երդ Հրեայս, զոր ածեալն էր գերի Տիգրանայ արքայի Արշակունւոյ յերկրէն Պաղեստինացոց. եւ քառասուն հազար երդ Հայ, զոր յԱրտաշատ քաղաքէ խաղացուցին: 29 Եւ զամենայն շինուած քաղաքին հրձիգ արարին զփայտակերտն, եւ զքարակերտն քանդեցին. զպարիսպն ըստ նմին աւրինակի եւ զամենայն շինուած քաղաքին մինչեւ ի հիմունսն ապականեցին, եւ ոչ թողին մի, եւ ոչ թողին³ բնաւ քար ի քարի վերայ. անմարդի եւ թափուր յամենայն բնակչաց իւրոց կացուցանէին:

30 Եւ եղեւ յորժամ ածին ժողովեցին զամենայն զգերին զքաղաքին ի մի վայր, եւ անցուցին ըստ Տափերն կամուրջ, եւ առնէին համար գերւոյն, ի մէջ շերտափակ զաւրացն պատէին, ասեն զաւրագլուխքն Պարսից ցԶուրիթ երէց քաղաքին Արտաշատու. Եկեալ ի միջոյ գերւոյդ, երթ գնա դուրս պէտք է քեզ: 31 Եւ ոչ առնոյր զայս յանձն երէցն Զուրիթն, այլ ասէր. Յո գխաշնդ տանիք, եւ զհովիւս տարայք. զի ոչ է մարթ հովուի թողուլ զխաշն իւր, այլ պարտ է հովուի դնել զանձն ի վերայ ոչ-

1 Օրինակ մի՝ ասէից
2 Օրինակ մի՝ ի պալատին

3 Օրինակ մի չունի՝ թողին

խարին իւրոյ: 32 Եւ զայս ասացեալ եմուտ ի գերութիւնն, եւ խաղաց ի գերութիւն ընդ իւրում ժողովրդեանն յերկիրն Պարսից:

33 Առնուին եւ զՎաղարշապատ քաղաք. քանդէին բրէին զքաղաքն ի հիմանց տապալէին, եւ խաղացուցանէին յայնմ եւս քաղաքէ իննեւտասն երդս հազար:

34 Ընդ ամենայն քաղաքս ոչ թողին ամենեւին շինած. զի զամենայն տապալէին, քակեալ քանդէին. եւ ընդ ամենայն երկիրն ասպատակ սիռեալ՝ զամենայն այր ի չափ հասեալ կոտորէին, զկանայս եւ զորդիս ի գերութիւն վարէին. եւ զբերդս ամենայն թագաւորին Հայոց կալան, եւ լցեալ բազում ամբարաւք՝ բերդակալս թողուին:

35 Առնուին եւ զմեծ քաղաքն զԵրուանդաշատ, եւ խաղացուցանէին անտի երդս քսան հազար Հայ, եւ երդս երեսուն հազար Հրեայ. եւ զքաղաքն ի հիմանց տապալեալ բրեալ յատակէին: 36 Ապա առնուին եւ զքաղաքն Բագրեւանդայ Զարեհաւան, եւ խաղացուցանէին անտի հինգ հազար երդ Հայ, եւ ութ հազար երդ Հրեայ. եւ զքաղաքն ի հիմանց տապալէին յատակէին: 37 Առնուին եւ զքաղաքն մեծ Զարիշատ՝ որ էր ի գաւառին յԱղոյՏովտի, չորեքտասան հազար երդ Հրեայ, եւ տասն հազար երդ Հայս. եւ զնա ի հիմանց քանդեալ ապականէին: 38 Առին եւ զամուր քաղաքն Վան, որ է ի գաւառին Տոգբայ. եւ հրձիգ արարեալ, քակէին զհիմունս նորա. եւ խաղացուցանէին անտի երդս հինգ հազար Հայ, եւ ութ եւ տասն հազար երդս Հրեայս:

39 Զայս ամենայն բազմութիւն Հրէից, զոր գերեցին տարան յերկրէն Հայոց, ածեալ էր յերկրէն պաղեստինացուց մեծի թագաւորին Հայոց Տիգրանայ ի ժամանակին՝ յորժամ գերեաց նա եւ ած ի Հայս զքահանայապետն Հրէից զՀիւրկանդոս զառաջին ժամանակաւ: 40 Եւ էսած մեծ արքայն Տիգրան զամենայն զհրէու-

թիւնն զայն՝ բնակեցոյց ի քաղաքսն Հայոց յիւրում դարուն ի ժամանակին:

41 Իսկ յայսմ ժամանակի աւերեցին զքաղաքսն, եւ գերեցին զբնակեալսն անդ. եւ զամենայն երկիրն Հայոց եւ զամենայն գաւառն ընդ նմին գերեալ, խաղացուցեալ՝ եւ զայլ գերութիւնս գաւառաց գաւառաց, կողմանց կողմանց, փորի փորի, զաշխարհի աշխարհի, ածին ժողովեցին ի քաղաքն Նախճաւան. զի անդ էր զաւրածողով իւրեանց զաւրացն: 42 Ապա առին եւ զնա քանդեցին. անտի երդս Հայս երկուս հազարս, եւ Հրեայ երդս վեշտասան հազարս անտի խաղացուցին գնացուցին ամենայն գերութեամբն հանդերձ: 43 Եւ անդէն յերկիրն Հայոց ոստիկանս թողին եւ վերակացուս, ի ծառայութիւն մատնել² զմնացորդս երկիրն. եւ ինքեանք զտիկինն Փառանձեմ առեալ, հանդերձ գանձիւքն եւ բազմութեամբ գերեաւքն յերկիրն Պարսից խաղացուցանէին. եւ զնացեալք երթային տանէին հասուցանէին յերկիրն Պարսից առ Շապուհ արքայն Պարսից:

44 Եւ եղեւ իբրեւ չոգան տարան զտիկինն Փառանձեմ յերկիրն Պարսից, եւ զայլ ամենայն գերութիւնն Հայոց եւ զգանձսն կալան առաջի թագաւորին եւ զտիկինն Փառանձեմ³, շնորհ մեծ ունէր թագաւորն Պարսից իւրոց զաւրավարացն:

45 Եւ իբրեւ կամեցաւ թագաւորն Պարսից Շապուհ թշնամանս առնել ազգին աշխարհին Հայոց եւ թագաւորութեանն, ետ հրաման ժողովել զամենայն զգաւրս իւր եւ զմեծամեծս իւր եւ զփոքունս եւ զամենայն մարդիկ աշխարհին իւրոյ՝ որ ինքն իշխէր, եւ ի մէջ ամբոխին ածել զտիկինն Հայոց զՓառանձեմն: 46 Եւ հրամայեաց ի հրապարակին իմն առնել հրապոյրս մեքենայից, որով հրամայեաց զկինն արկանել,

1 Յերիս օրինակս՝ խաղացեալ
2 Չորս օրինակս՝ մտանել
3 Օրինակ մի չունի՝ զտիկինն Փառանձեմ

եւ արձակել տիկնոջն Փառանձեմայ ի խառնակութիւն պոռնկութեանն անասնական պղծութեանն: 47 Այսպէս սատակեցին զտիկինն զՓառանձեմ: Իսկ զայլ գերին զամենայն տարան բնակեցուցին, որ յԱսորեստան, որ յերկրին Խուժաստանի:

ԳԼՈՒԽ ԾԶ.

1 Յաղագս վկայութեանն Զուխթայ երիցու յերկրին Պարսից:

2 Ապա իբրեւ չոգան տարան յերկիրն Պարսից զամենայն գերութիւն Հայոց, եւ զԶուխթ երէց Արտաշատ քաղաքի ունէին կապանաւք առաջի թագաւորին Պարսից Շապուհոյ: 3 Եւ նայէր թագաւորն Պարսից Շապուհ, եւ տեսանէր զերէցն Զուխթ այր բարձր եւ անձնեայ, եւ ի տիոց մանուկ. եւ հեր գլխոյն ալեւորեալ էին, այլ մուրուքն դեռ տակաւին սեւաւ եւս կային: 4 Ապա յորժամ զառաջինն խաւսել սկսաւ, ասէ. Եթէ տեսանէ՞ք զառնդ զայդր զչարութիւն. քանզի յայտ է, ի հերաց այտի երեւի՝ թէ կախարդ է. զի հերքն սպիտակ են, եւ մուրուքն սեւաւ: 5 Իսկ երիցուն տուեալ պատասխանի՝ ասէ. Թէ քեզ պէտ իցէ, այլ զինչ կամիս խաւսել եւ առնել՝ խաւսեաց. այլ վասն այդորիկ գիտեա, զի յիրաւունս սպիտակեցեալ են նախ հերքս. զի բազում աւուրբք երէց են, գոնեա՛ հնգետասան ամաւք քան զմուրուս նախաբոյս են: 6 Իսկ թագաւորն հրաման տայր մինչեւ ի վաղիւն պահել զնա. իսկ ի վաղիւն հրաման տայր ածել ի հրապարակն շղթայիւք: 7 Եւ ելին ոստիկանք արքունի հարցանել, եթէ իցէ՝ յանձն առցէ պաշտել զաւրէնս մոգութեանն, ոչ մեռցի: 8 Իսկ նա ոչ առնոյր յանձն. այլ կամեցեալ մեռանել խնդութեամբ վասն Աստուծոյ, երթեալ ի տեղի մահուան, եւ աղաչեաց զվերակացուս իւրոյ մահուանն, զի թողացուցեն նմա սակաւ մի կալ յաղաւթս: 9 Եւ մատուցեալ յառաջագոյն, եղ ծունր եւ ասէ:

ԳԼՈՒԽ ԾԷ.

1 Աղաւթի ի ժամ մահուն Զուխթայ:

2 Արարիչ մեր, որ արարեր զերկինս եւ զերկիր եւ զծով յոչընչէ, եւ ստեղծեր զմեզ ի հողոյ, եւ զհողեղէնս այսպէս իմաստունս բանաւորս եւ կենդանիս արարեր: 3 Եւ շնորհեցեր մեզ զգիտութիւն քո, զոր ցուցեր ազգաց որդւոց մարդկան ի ձեռն սրբոց քոց մարգարէիցն կարապետացն քոց. եւ դու քեզէն եկիր իջեր մարդացար երեւեցար յերկրի, եւ ընդ մարդկան շրջեցար. եւ զկատարեալ իմաստութիւնդ քո շնորհեցեր արարածոց քոց, զոր Առաքելովքն քարոզեցեր քոց ստացուածոց յաշխարհի: 4 Եւ վարդապետաւքն սրբովք, զորս եղիր ի քում յեկեղեցւոջ լուսաւորս, զամենեսեան իմաստնացուցեր: 5 Եւ զիս զայր զանարժան արժանի արարեր քում ծառայութեանդ. եւ պատրաստեցեր զիս տառապեալս սնանել եւ ուսանել ընդ ձեռաւք քո սրբոյ եւ մեծի եւ քո քահանայապետին Ներսիսի՝ քո պաշտանէին, եւ ի ձեռաց նորա առնուլ զձեռնադրութիւն երիցութեան, եւ ի ձեռաց նորա զիս նուիրեալ քեզ ի քահանայութեան: 6 Եւ յայնմ աշտիճանէ պատրաստեցեր ըմպել զվկայութեան բաժակն փրկութեան, զոր ըմբելով՝ զանուն Տեառն կարդացից. զաղաւթս իմ ես Տեառն տաց առաջի ամենայն ժողովրդոց նորա: 7 Ընդ որում քեզ փառք եւ զաւրութիւն եւ իշխանութիւն միաձնի Որդւոյ քո սիրելոյ Յիսուսի Քրիստոսի, եւ կենդանարար Հոգւոյդ քում սրբոյ, յառաջ քան զամենայն յաւիտեանս այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

8 Եւ իբրեւ զայս ամենայն ասաց, բազում մարդիկ ամբոխի ժողովեալ էին, ասացին զամէնն: 9 Ապա զայրացեալք վերակացուք սպանողութեանն, թէ ընդէ՛ր այնչափ երկար թողացուցին նմա խաւսել, ապա տագնապաւ ի տեղի մահուն հասուցանէին: 10 Իսկ նա մեծաւ խնդութեամբ

կարկառեալ զպարանոցն, վճարէր ի սուսերէն:

ԳԼՈՒԽ ԾԸ.

1 Յաղագս գալոյն Շապիոյ թագաւորին Պարսից յերկիրն Հայոց, եւ միանգամայն սատակել զմնացեալս երկրին, եւ թիւր չարեացն գոր կրեցին:

2 Ապա յետ այսորիկ խաղաց գնաց թագաւորն Պարսից Շապուհ ամենայն իշխանութեամբ զաւրաց իւրոց, եւ չոգաւ ել յերկիրն Հայոց. եւ առաջնորդ ունէր ընդ իւր զՎահան ի Մամիկոնեան տոհմէն, եւ զՄերուժանն յԱրծրունեաց տոհմէն: 3 Ապա հասեալ ասպատակէին յերկիրն Հայոց, եւ առնուին զամենայն գերին ի մի վայր ժողովեցին: 4 Եւ բազումք ի նախարարացն Հայոց թողուին զկանայս իւրեանց եւ զորդիս եւ զընտանիս, եւ փախեան ընդ այս ընդ այն գնացին: 5 Իսկ զամենայն կանայս նախարարացն Հայոց, զոր թողին եւ փախեանն, ասպատակն ժողովէր. եւ ածին զնոսա առ Շապուհ արքայ Պարսից:

6 Իբրեւ էր բանակն Շապուհ թագաւորին Պարսից ի գաւառն Բագրեւանդայ յաւերս քաղաքին Զարեհաւանի, զոր յառաջնումն եկեալք զաւրքն Պարսից աւերեցին, եւ ածին ժողովեցին առաջի թագաւորին Պարսից զամենայն գերին մնացորդաց աշխարհին Հայոց, ապա հրաման տայր թագաւորն Պարսից Շապուհ, զամենայն այր ի չափ հասեալ կոխան արարեալ փղաց, եւ զամենայն զկին եւ զմանուկ հանել ընդ ցից սայլից: 7 Հազարք հազարաց եւ բիւրք բիւրոց սպանին, զի ոչ գոյր թիւ կամ համար սպանելոցն. եւ զկանայս ազատացն եւ նախարարացն զփախուցելոցն հրաման տայր ածել յասպարէզն՝ որ էր ի Զարեհվան քաղաքի: 8 Եւ հրաման տայր հոլանել զամենայն ազատ կանանին, եւ նստուցանել աստի անտի ասպարիսին. եւ ինքն Շապուհ արքայ հեծեալ ի ձի, արշա-

ւակի՛ անցանէր առ կանանովն. եւ որ յակն գային, մի մի ի նոցանէ պղծեալ ի խառնակութիւն տանէր առ ինքն: 9 Քանզի մաւտ յասպարէսն հարեալ էր խորանն, յոր առեալ մտանէր գործել զանաւրէնութիւն. եւ այնպէս զբազում աւուրս առնէր զայն ընդ կանայսն: 10 Եւ զագգն Սիւնեաց տոհմին զամենայն զայր ի չափ հասեալ կոտորեցին, եւ զկանայս սպանին. եւ զամենայն մանր մանկտիսն ներքինիս հրամայէր առնել, եւ խաղացուցանել յերկիրն Պարսից: 11 Եւ առնէր զայս ամենայն վասն վրիժուցն Անդուկայ, որ եղեւ պատերազմ ընդ Ներսէս արքայ Պարսից:

12 Եւ տայր հրաման Շապուհ արքայն Պարսից զամուր ամուր տեղիսն Հայոց բերդս շինել, հրամայեաց եւ բերդակալս կացուցանել: 13 Եւ զազատ կանանին անդէն ի բերդեանն բաշխէր եւ թողոյր. զի եթէ ոչ արք նոցա եկեսցեն նմա ի ծառայութիւն, սպանցեն զկանայս նոցա բերդակալքն՝ առ որս եթող զնոսա: 14 Եւ եթող յաշխարհին զԶիկն եւ զԿարէնն, զնոցա իշխանս զաւրաւք բազմաւք. եւ զիշխանութիւն մնացորդացն ետ ի ձեռս Վահանայ եւ Մերուժանայ, եւ ինքն գնաց յԱտրպայական:

ԳԼՈՒԽ ԾԹ.

1 Յաղագս թէ իբրեւ մնացին Վահան եւ Մերուժան, թէ զի՛նչ շատ չարիս գործեցին ընդ երկիրս Հայոց. եւ կամ զիա՛րդ սատակեցան Վահան եւ կինն իւր յիւրեանց որդւոյն:

2 Այնուհետեւ Վահանն Մամիկոնեան եւ Մերուժանն Արծրունի, սոքա երկրքեան արք պիղծք² անաւրէնք էին, ապստամբեալք էին յուխտէ աստուածպաշտութեանն³, եւ զանաստուածն Մազդեզանց աղանդն յանձն առեալ պաշտէին. սկսան

1 Յօր. շաւակի

2 Օրինակ մի յաւելու՝ անագորոյնք

3 Օրինակ մի յաւելու՝ եւ ուրացողք

այնուհետեւ յերկրին Հայոց աւերել զեկեղեցիս՝ զտեղիս աղաւթից քրիստոնէից յամենայն կողմանս Հայոց՝ գաւառաց գաւառաց եւ կողմանց կողմանց: 3 Եւ նեղէին զբազում մարդիկ՝ զոր ի բուռն արկանէին, թողուլ զաստուածպաշտութիւն եւ ի պաշտան դառնալ Մազդեզանցն: 4 Եւ յետ այսորիկ տային հրաման Վահանն եւ Մերուտանն, զամենայն կանայս փախուցելոցն զնախարարացն՝ որ թողինն եւ զնացինն, տային հրաման ի բերդեանն զի նեղեսցեն զնոսա՝ դարձուցանել յաւրէնս Մազդեզանց. եթէ ոչ առնուցուն յանձն, սատակեսցեն զամենեսեան չարաչար: 5 Եւ բերդակալեանն յորժամ զայն հրաման ընկալան, ամենայն ոք ո՛րք առ ումեք էին՝ նեղեցին զնոսա ըստ հրամանին տուելոյ: 6 Ապա իբրեւ ոչ մի ոք յանձն առնուին ուրանալ ի քրիստոնէութենէն, չարամահ սպանանէին զամենեսեան յամենայն ի բերդսն՝ յորս տուեալ էր զնոսա անդ:

7 Իսկ Վահանայ էր քոյրաթիւ ի Մամիկոնեան տոհմէն, քոյր Վարդանայ՝ Համագասպուհի¹. Եւ էր նա կին Գարեգնի տեառնն Ռչտունեաց գաւառին: 8 Զսա եթող եւ փախեալ Գարեգին այր իւր ի ժամանակին, յորում եկն Շապուհ արքայ Պարսից յերկիրն Հայոց. իսկ գտիկինն Ռչտունեաց ի միջնաբերդն Վան բերդի, որ էր քաղաքն ի Տոսք գաւառին: 9 Իսկ անաւրէնն Վահան եւ Մերուտանն հրաման տային բերդակալին, զի նեղեսցէ զկինն. եթէ ոչ առցէ յանձն զաւրէնս Մազդեզանցն, տայր հրաման կախել զբարձր աշտարակէն եւ սպանանել: 10 Իբրեւ ոչ առնոյր յանձն Համագասպուհի պահել զաւրէնս Մազդեզանցն, հանէին ի բարձր աշտարակն՝ որ կայր ի վերայ բարձր գահուն քարին, որ հային ի կողմն ծովակին ի գետոյ կուսէ. եւ մերկացուցին զնա իբրեւ ի

մաւրէ. եւ արկեալ կապ զոտիցն, գլխիվայր կախեցին զնա զբարձուէն կուսէ. եւ այնպէս մեռաւ ի կախաղանին: 11 Եւ էր նա սպիտակ մարմնով, եւ պայծառ տեսանելովն. կայր կախեալ յերեւոյթ տեսիլ նշանակի, եւ փաղփաղէր մարմինն ի բարձուէն զոր աւրինակ ձիւն սպիտակութեամբն. եւ բազում մարդիկ ժողովէին տեսանել աւր ըստ աւրէ, զի իբրեւ սքանչելի ինչ երեւէր յաշխարհին: 12 Յայս տեսիլ տիկնոջն Համագասպուհեայ՝ էառ կին մի դայեակն նորին, ագաւ նա պարէգաւտ մի՝ զոր անակիւղս² կոչեն, եւ էած գաւտի ընդ մէջ իւր. եւ կայր առ բարձր գահուն քարին ի ներքոյ աշտարակին՝ զորմէ կախեալ էր զսանն իւր, մինչեւ կողոպտեցաւ ամենայն մարմինք դիոցն: 13 Եւ որչափ ի վայր վայրէին³ ոսկերքն, նա յիւր ծոցն ժողովէր բովանդակ զամենայն զոսկերս սանին. եւ առեալ զնաց յիւրսն:

14 Եւ այնչափ չար էին արքն երկօրին, զի անգամ իւրեանց ումեք ոչ ողորմէին. այլ անխնայութեամբ դատէին զաւտարս եւ զիւրեանց ընդանիս: 15 Ատրուշանս շինէին ի բազում տեղիս, եւ զմարդիկ հնազանդէին աւրինացն Մազդեզանց. եւ բազում յիւրեանց սեփհականսն շինէին ատրուշանս, եւ զորդիս եւ զազգայինս իւրեանց տային յուսումն Մազդեզանցն: 16 Ապա որդի մի Վահանայ, անուն Սամուէլ, եհար սատակեաց զՎահան զհայր իւր, եւ զՈրմիզդուխտ զմայր իւր՝ զքոյր Շապուհոյ Պարսից թագաւորին. եւ ինքն փախստական լինէր յերկիրն Խաղտեաց:

1 Յամենայն օրինակս՝ եւ Համագասպուհի

2 Յերիս օրինակս՝ անկիւղս

3 Ի միում օրինակի՝ ի վայր վարէին

ԲՈՒՉԱՆԴԱՐԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆՔ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐՔ ՄԱՏԵՆԻՑ

ՏԱՆ ՈՐԴԻՈՑՆ ԹՈՐԳՈՍԱՅ ԻՇԵԱՆԻՆ ՀԱՅՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

1 Յաղագս թագաւորելոյ Պապայ յերկրին Յունաց, եւ գալոյ ի Հայս, եւ յինքն ունելոյ գաշխարհ իւր. եւ կամ որ ինչ միանգամ գործեաց, եւ յաջողեցաւ նմա:

2 Ապա յետ այսր ամենայնի Մուշեղ որդի Վասակայ ժողովեաց զամենայն ազատագունդ մարդկանն մնացելոյն՝ որ միանգամ մնացեալ էին, եւ չոգաւ հանդերձ նոքաւք առ թագաւորն Յունաց: 3 Եւ եցոյց զպաղատանս աշխարհին Հայոց, եւ զամենայն անցս տառապանաց՝ որ անցեալ էր ընդ նոսա, եւ խնդրեաց ի կայսերէն զՊապ զորդի Արշակայ թագաւոր ի վերայ Հայոց աշխարհին: 4 Մեծ թագաւորն Յունաց թագաւորեցոյց զՊապ զորդին Արշակայ ի վերայ աշխարհին Հայոց, որպէս եւ խնդրեաց նա ի նմանէ. եւ մեծապէս թիկունք լինէր արքայն Յունաց, եւ զՏէրենտ անուն ստրատելատն եւ զԱդէոմն կոմս արձակէին ընդ արքային Պապայ յերկիրն Հայոց վեց հարիւր բիւրու:

5 Եւ եկին հասին ի սահմանս Հայոց. եւ Մուշեղ լինէր զաւրավար սպարապետ Հայոց փոխանակ Վասակայ հաւր իւրոյ: 6 Եւ գային ի մի վայր ժողովէին ամենայն ցրուեալք փախուցեալք թագուցեալք, որ էին յերկիրն Հայոց, գային եւ ի մի վայր բովանդակէին, եւ լինէին ի խնդիր սրբոյն մեծի հայրապետին Ներսէսի թագաւորն եւ ամենայն մարդիկ աշխարհին Հայոց, մեծամեծք զաւառակալք եւ զաւառատեարք: 7 Որք եկեալք ժողովեալք, զկաթողիկոսն զմեծն Ներսէս խնդրէին. զի գիտէին թէ նա կարող է աղաւթս առնել, եւ խնդրել յԱստուծոյ վասն շինութեան ամենայն աշ-

խարհին Հայոց, եւ փրկել ի թշնամեացն. եւ դարձեալ զի՛նչ եւ խնդրէր յԱստուծոյ, տայր Աստուած նմա. եւ միւս եւս, զի իմաստութեամբ իմն կարէր սոցա զաւգտակար խրատն մատուցանել: 8 Վասն այսորիկ ոչ եթէ փոքր ինչ էր խնդիրն այնպիսւոյն առն լինել, որ կարէր նոցա զաւգուտ խրատու իմաստութեան շնորհել, եւ ըստ ժամանակին դիպացն պատահելոյ՝ միտս աւգտակարս դնել, որովք զճանապարհս՝ որ կայրն առաջի՝ գնալ մարթասցեն:

9 Ապա ինքն թագաւորն Պապ երթայր հասանէր գտանէր զեպիսկոպոսապետն Ներսէս հանդերձ աւագայնովն Հայոց. աղաչէր զնա, զի հայր Հայոց ամենայն աւգտի խրատու առաջնորդ՝ եւ խնդրեսցէ եւս վասն նոցա: 10 Ապա մեծաւ ջանիւ հազիւ հաւանեցուցին զնա երթալ նմա ընդ նոսա ի բանակն արքունի. զի յաւուրց ժամանակին ի մահուանէն Գնելոյ մինչեւ յայն ժամանակն թագաւորութեանն Պապայ ոչ էր երթեալ նա ի բանակն արքունի: 11 Ապա յայնմ ժամանակի մեծաւ աղաչանաւք տարան զնա ի բանակն արքունի ընդ ինքեանս. եւ նա էր նոցա վերակացու եւ խրատատու, կարգիչ եւ առաջնորդ. եւ հանապազ խնդրէր վասն նոցա յԱստուծոյ: 12 Եւ էր իմաստութեան իրաց առաջնորդ, եւ հանապազ կցորդ հոգոց եւ բարձիչ վշտաց աղաւթիւք իւրովք. եւ յամենայնի ամենայնիւ երբէք հայր երեւեալ:

13 Ապա կարգէր կազմէր յաւրինէր Մուշեղ սպարապետ զամենայն զգուռնդս Հայոց զաւրացն, եւ առնէր հանդէս ամենայն զաւրացն գնդին՝ որ հասին ի ձեռս

նորա տասն հազար: 14 Եւ ածէր զամենայն հանդէսն կարգեալս եւ պատրաստեալս վառեալս ի պատերազմ, զգրաւչս փողփողեալս եւ նշանս արձակեալս. եւ ցուցանէր զհանդէս զաւրացն Հայոց սպարապետն Հայոց Մուշեղ առաջի իւրեանց թագաւորին Պապայ, եւ մեծի քահանայապետին Ներսէսի, եւ առաջի Տէրենտի եւ Ադէի զաւրագլխացն Յունաց: 15 Եւ մեծ շնորհակալութիւն առնէր նմա թագաւորն Պապ Հայոց, եւ մեծամեծ պարգեւս շնորհէր զաւրավարին Մուշեղի. եւ սոյնպէս զաւրագլուխքն Հոռոմոց շնորհակալ լինէին նմա: 16 Սոյնպէս եւ եպիսկոպոսապետն Ներսէս աւրհնէր զզաւրավարն Մուշեղ, եւ ասէր. Տէր Քրիստոս աւրհնեսցէ զքեզ, եւ յաջողեսցէ քեզ, եւ տացէ քեզ զյաղթութեանն շնորհս զամենայն աւուրս կենաց քոց. ի ձեռն քո եւ ի ձեռն ազգի քո փրկեսցէ զերկիրս Հայոց մինչեւ յաւիտեան:

17 Ապա զաւրավարն Հայոց Մուշեղ գոռնդ կազմեաց պատրաստեաց, եւ յառաջեաց հանդերձ Հայոց գնդաւն. առաջապահ անցանէր առաջի թագաւորին Պապայ եւ զաւրացն Յունաց կայսերական գնդիւն: 18 Ապա ի Դարանաղեաց գաւառին լինեալ յարձակեցաւ Մուշեղն, իբրեւ դայր¹ առառապահն հասանէր ի միջնաշխարհն Հայոց, սպանանէր Մուշեղ զզաւրագլուխն Պարսից զԿարէնն եւ զԶիկն, եւ զամենայն զզաւրսն արկանէր ի սուր սուսերի իւրոյ, եւ ոչ մի գոք² ապրեցուցանէր: 19 Եւ մինչեւ ի բուռն ի սահմանսն ի Գանձակ Ատրպատականի գերկիրն յիւր վտարեալ, բռնացեալ ունէր:

20 Եւ եկն եմուտ թագաւորն Պապ յերկիրն Հայոց, եւ թագաւորեաց ի վերայ նորա. եւ թափեաց յինքն զամուր ամուր բերդիցն, զոր կալեալ էր Պարսկացն. եւ

բերդն Դարանից, որ է յերկիրն Կոգայ, ուր կային գանձք Արշակունեացն սաստիկ յոյժ: 21 Քանզի դիպեցան մտերիմք բերդակալքն. զի թէպէտ ի ժամանակէն՝ իբրեւ տարան զթագաւորն Հայոց զԱրշակ ի Պարսս՝ յայնմ հետէ ժամանակէ մարտեան ընդ բերդին ընդ այնմիկ Պարսիկք, եւ ոչ կարացին առնուլ, մինչեւ եկն Պապ թագաւորն յերկիրն Հայոց. զի պահեցաւ գանձն եւ եհաս ամբողջ ի Պապ թագաւորն մինչեւ եկն: 22 Եւ զաւրսն Յունաց յեռանդ եւ ի Բախիշն ընդ ամենայն երկիրն Հայոց բաշխէին ընդ ամենայն գաւառսն. բայց միայն Մերուժանն չարագործ փախչէր միաձի:

23 Իսկ Մուշեղ զաւրավարն Հայաստանեաց շրջէր ընդ երկիրն, եւ աւերէր զատրուշանսն Մազդեզանցն: 24 Իսկ զՄազդեզունսն, որ միանգամ ի բուռն արկին, զամենեսեան տայր հրաման սպարապետն Մուշեղ ունել եւ հրով խորովել: 25 Եւ բազում բերդակալս բերդացն չարամահս առնէին, եւ զբազում պատուաւոր տեարս՝ որ պատուականք էին առաջի թագաւորին Պարսից՝ ունէր ձերբակալս³ Մուշեղ, եւ տայր մորթել եւ լնուլ խոտով եւ կանգնել ի վերայ պարսպացն: 26 Ընդ բազում տեղիս զայս առնէր ի վրէժս հաւրն իւրոյ Վասակայ:

27 Եւ շինէին զամենայն աւերեալսն ի թշնամեացն, եւ զեկեղեցիսն նորոգեցին. եւ թագաւորութիւնն հաղ քան զհաղ նորոգէր, եւ իրք ժամանակին հաղ քան զհաղ յառաջադէմ աջողէին: 28 Եւ սուրբն Ներսէս իմաստուն հայրապետն առաջնորդէր եւ լուսաւորէր, խրատէր եւ կարգէր եւ շինէր աղքատաց հանգիստ, որպէս եւ ինքն ի բնէ իսկ սովոր էր. եւ զվարս թագաւորութեանն իսկ յաւրինէր ամենաբարի կրանիւք, որպէս եւ տեսեալ էր իւր առհնաւնք թագաւորաւքն: 29 Եւ առաւել

1 Ի չորս օրինակս՝ Մուշեղն իբրեւ գայլ

2 Օրինակ մի յաւելու՝ ոչ

3 Օրինակ մի՝ ձերբակալեալս

զկարգս եկեղեցւոյ պաշտամանն եպիսկոպոսաց, երիցանց եւ սարկաւազաց, եւ շինուածս եկեղեցւոյ վկայանոցաց, զամենայն նորոգեաց, ուսոյց եւ յարգարեաց:

30 Զաւրավարն Հայոց Մուշեղ զգուռնդ իւր կազմէր, եւ երթայր ի սահմանսն՝ կալ անդ, զգուշացեալ զսահմանաւքն երկրին իւրոյ՝ պահել զիւր աշխարհն հրամանաւ իւրոյ թագաւորին Պապայ:

ԳԼՈՒԽ Բ.

1 Յաղագս զաւրավարին Մուշեղայ Հայոց, թէ որպէս անկաւ ի վերայ բանակին Շապիոյ թագաւորին Պարսից, եւ ետար զնա ի հարուածս անհնարինս, մինչ զի միաձի Շապուի ցողոպրէր:

2 Ապա Մուշեղ որդի Վասակայ, ստրատելատն Հայոց մեծաց, ընդրեաց իւր արս ընտիրս միամիտս ազատս ազգայինս քառասուն հազար, միաբանս միակամս, եւ կազմեաց զնոսա ձիով եւ թռչակաւ եւ զինու. եւ առեալ զնոսա ընդ իւր, երթալ նստել ի սահմանս Ատրպատճացն, եւ պահել զաշխարհն Հայոց: 3 Ապա յայնմ ժամանակի կազմեաց պատրաստեցաւ Շապուհ արքայ Պարսից ամենայն կազմութեամբ զաւրովք իւրովք, եկն եհաս յերկիրն Ատրպայականի, եւ Մերուժանն առաջնորդ զնդին բանակի նորա, եւ բուն բանակն ուրեմն թագաւորին ի Թաւրէշն բնակեալ էին:

4 Եւ հասանէր սպարապետն զաւրավարն Հայոց Մուշեղ, անկանէր ի վերայ բանակին քառասուն հազարաւ, եւ անդէն ձեռն ի գործ արարեալ կոտորէր¹: 5 Ապա միաձի մագապուր թագաւորն Պարսից Շապուհ ճողոպրեալ փախչէր. եւ զամենայն կարեւան բանակին առ հասարակ ընդ սուր հանէր Մուշեղ հանդերձ զաւրաւքն Հայոց: 6 Զի զբազումս կոտորէին, եւ

զբազումս յաւազանոյն² Պարսից ձերբակալս առնէին, եւ առնուին զգանձս թագաւորին Պարսից յաւարի. եւ ըմբռնէին զտիկնանց տիկինն հանդերձ այլովք կանամբքն: 7 Եւ զամենայն մաշկաւարզան ի բուն արկանէր Մուշեղ սպարապետն, եւ զամենայն աւագանին՝ արս իբրեւ վեց հարիւր՝ հրամայէր մորթել զաւրավարն Հայոց Մուշեղ, եւ ընդ խոտով. եւ տայր բերել առ Պապ արքայն Հայոց: 8 Առնէր զայս ի վրէժս հաւրն իւրոյ Վասակայ:

9 Բայց զկանայսն Շապուհոյ թագաւորին Պարսից ոչ ումեք ինչ թոյլ տայր Մուշեղ զաւրավարն Հայոց անարգել ինչ զնոսա ումեք. այլ ժանաւարս տայր նոցա կազմել ամենեցուն, եւ հանեալ արձակէր զամենեսեան զհետ առն նոցա Շապուհոյ արքայի: 10 Եւ ի Պարսկացն ընդ նոսա արձակէր, զի երթիցեն առ Շապուհ թագաւորն Պարսից ողջս եւ անարատս: 11 Իսկ թագաւորն Պարսից զարմացեալ ընդ բարերարութիւնն Մուշեղի եւ ընդ քաջութիւնն եւ ընդ ազատութիւնն, զի ոչ արար ինչ նմա յաղագս կանանցն թշնամանս: 12 Եւ էր ի ժամանակին յայնմիկ երիվարն Մուշեղի, ճերմակ ձի մի. իսկ թագաւորն Պարսից Շապուհ յորժամ առնոյր զինի ի մատունսն ըմպել, յորժամ ուրախութեանն իւրոյ խրախութիւնս առնէր զաւրացն իւրոց, ասէր. ձերմակաձին զինի արբցէ: 13 Եւ ետ նկարել զտաշտ ի պատկեր զՄուշեղ ճերմակաւն. եւ ի ժամ ուրախութեանն իւրոյ զնէր զտաշտն առաջի իւր, եւ յիչէր հանապազ զնոյն բանս ասելով՝ թէ ձերմակաձին զինի արբցէ:

14 Այլ Մուշեղ եւ ամենայն զաւրքն Հայոց անչափ առին զաւար ի բանակէն Պարսից, եւ անչափ լցան զանձաւք եւ ստացուածովք. եւ բազում աւարամասն Պապայ պահէին թագաւորին իւրեանց. եւ զաւրացն Հայոց՝ որ անդէն առ թագաւոր

1 Օրինակ մի յաւելու՝ առհասարակ

2 Յօրինակի միում՝ աւագագոյնս

ըին Պապայ էին մնացեալ՝ հանին աւարամասն, եւ զաւրավարացն Յունաց՝ որ էին առ թագաւորին Հայոց. սոյնպէս եւ ամենայն զաւրացն տային բաշխիչ ի մեծամեծ աւարացն ածելոցն: 15 Այլ իբրեւ դարձան զաւրքն Հայոց յաշխարհն իւրեանց, բազումք ի զաւրացն Հայոց ամբաստանէին առ թագաւորին Պապայ զՄուշեղէ զսպարապետէն, թէ ընդէ՛ր արձակեաց զկանայս թագաւորին Պարսից զԹշնամուռն մերոյ: 16 Եւ թագաւորին Հայոց Պապայ վասն այսր իրաց ոչ ինչ սակաւ լինէր թշնամութեամբ ընդ Մուշեղի մինչեւ ի բազում ժամանակս:

ԳԼՈՒԽ Գ.

1 Յաղագս Հայր մարդպետին, եթէ ո՛րպէս սպանանել հրամայեաց թագաւորն Պապ:

2 Ապա պատմեցաւ թագաւորին Պապայ յաղագս արեւրացն՝՝ զոր եղ Հայր մարդպետն տիկնոջն Փառանձեմայ, մարթագաւորին Պապայ, թշնամանս ճաղանաց ի բերդարգել պաշարմանն. զի իբրեւ զբող մի, այնպէս թշնամանեաց զնա ի ժամանակի՝ իբրեւ եմուտ անդր գաղտուկ, եւ եղ անարգանս տիկնոջն, եւ եկն ել անտի եւ փախեաւ. ետուն զայս ամենայն զրոյց թագաւորին: 3 Ապա մինչդեռ մարդպետն Հայր զիւրով իշխանութեամբ շրջէր յերկրին Տարաւնոյ, եւ Մուշեղ սպարապետն Հայոց էր ի նմին գաւառին յիւրում բերդին՝ որում² Ողական կոչեն, որ կայ ի վերայ գետոյն Եփրատայ, եկն եհաս մի դեսպան յարքայէն Պապայ առ զաւրավարն Հայոց Մուշեղ. եւ ունէր առ նա հրովարտակ. եւ գրեալ էր ի հրովարտակին անդր հրաման առ նա, զի հարամահ սատակեսցէ զՀայր մարդպետն: 4 Եւ նա իբրեւ զայս հրամանս ընկալեալ ի ձեռն առնոյր, յղէր

առ մարդպետն Հայր դաւով, եւ մեծարանաց պատճառանաւ առ ինքն կոչէր յՈղականն. եւ էին աւուրք ձմերայնոյ, եւ սաստկացեալ կցեալ³ էր գետն Եփրատ: 5 Ապա կոչեալ եղեւ առ նա Հայր մարդպետն իբրեւ ի պատիւ մեծարանաց. եկն եմուտ մարդպետն ի բերդն յՈղական: 6 Ետ հրաման զաւրավարն Մուշեղ զաւրականացն ունել զնա, եւ մերկանալ իբրեւ ի մաւրէ, եւ կապել զձեռս նորա ի ներքոյ ծնկաց նորա, եւ իջուցանել զնա ի գետն, եւ դնել ի վերայ սառինն կցելոյ գետոյն. եւ սատակեցաւ անդէն: 7 Եւ եղեւ ի վաղիւ անդր չոգան տեսին, զի ուղիղ գլխոյն ի ցրտոյն վայրեալ ի բաց իջեալ թափեալ էր ընդ քիթս նորա: 8 Եւ փոխանակ ի նորա տեղի հայրութեան մարդպետութեանն կարգէ⁴ զԴգդակ ոմն անուն, որ յաւուրս Արշակայ թագաւորին կամ Տիրանայ հաւր նորա զամու միոջ լեալ ի նոյն⁵ գործ մարդպետութեանն:

ԳԼՈՒԽ Դ.

1 Յաղագս դարձեալ պատերազմին, որ եղեւ ի Բագաւան յաւանին Բագրաւանդ գաւառին ընդ Պապ թագաւորն Հայոց եւ ընդ գաւրսն Պարսից:

2 Ապա յետ այսորիկ թագաւորն Պարսիցն կրկնէր լինէր զաւրաժողով ամենայն ուժով եւ ամենայն զաւրութեամբն իւրով. խաղայր զնայր ամենայն զաւրաւքն իւրովք հասանէր յաշխարհն Ատրպայականի: 3 Եւ ինքն անդր դադարէր սակաւուք, եւ զամենայն զաւրացն զբազմութիւն առաքէր ի վերայ թագաւորին Պապայ ի պատերազմ: 4 Եւ եկեալ զաւրքն Պարսից՝ սասպատակ առնէին եւ ի միջնաշխարհն Հայոց. ապա եւ թագաւորն Հայոց Պապ զաւրաժողով առնել հրամայէր ի Բագաւանն: 5 Եւ զաւրքն Յունաց, որ էին յԵ-

1 Յերկուս օր. օրինացն

2 Օրինակ մի յաւելու՝ անուն

3 Օրինակ մի չունի՝ կցեալ

4 Յօր. պակասի՝ կարգէ

5 Յօր. նոյն

ուանդին ի Բախշանն¹, ի մի վայր ժողովեցան առ թագաւորն Պապ, եւ ածին փոս զբանակաւն իւրեանց մաւտ ի լեառն ի Նպատ՝ մերձ ի գետն Եւփրատ, եւ կազմեալ պատրաստեալ կային գործոյ ճակատուն:

6 Ապա զաւրաւարն սպարապետն Հայոց Մուշեղ ժողովէր զամենայն զաւրան Հայոց աւելի եւս քան զընտուն հագար, եւ կազմէին պատրաստութեամբ: 7 Իսկ իբրեւ զաւրահատոյցն առնէր Շապուհ Պարսից թագաւորն զզաւրս իւր ի վերայ աշխարհին Հայոց եւ ի վերայ զաւրացն Յունաց, Ուռնայր արքայ Աղուանից անդ էր առ թագաւորին Պարսից: 8 Ապա յառաջ կայր եւ խնդրէր պարգեւս Ուռնայր ի Շապուհ արքայէն Պարսից, եւ ասէր՝ թէ Կամ լիցի քեզ, արանց քաջ², զի եւ ինձ պարգեւ հրաման տացես, զի Հայոց գնդին Պապայ արքային ես ինձէն ելից իմով գնդովս նահատակ. զի Արեաց գնդին պատեհ է դիպան ելանել զաւրացն Յունաց, իսկ ես իմով գնդաւս Հայոց իշխանացն ելից: 9 Եւ Շապուհ թագաւորն հաճեցաւ, եւ շնորհ կալաւ եւ հրամայեաց: 10 Բայց Մերուժանայ Արծրունւոյ պատասխանի տուեալ Ուռնայրի, ասաց. Աստ արկեր զգագիւ գիրկս. բայց թէ ժողովել կարիցես, մեծ զարմանք իցեն: 11 Եւ զաղտուկ խորհրդով զայս գուշակութիւն Մերուժանն ի ձեռն հրեշտակի առ Մուշեղ զաւրաւարն Հայոց հասուցանէր՝ թէ գիտեա եւ պատրաստեաց, Մուշեղ. զի մեծաւ պարծանաւք պարգեւ խնդրեալ է զձեզ Ուռնայրի արքային Աղուանից. արդ գիտես զինչ գործիցես:

12 Բայց մինչ դեռ խաղացեալ³ գային զաւրքն Պարսից ի վերայ Հայոց, եւ Ուռնայր արքայ Աղուանից իւրով գնդաւն

ընդ նոսա, խաւսէր թագաւորն Աղուանից ընդ այնոսիկ՝ որ ընդ իւրն էին, ասէր. Յանձն լիցի ձեզ, յիշելով ի ժամանակի՝ իբրեւ ձերբակալ արասցուք զզաւրսն Յունաց, զբազումս ի նոցանէն ապրեցուսջիք, զի կալեալս կապեալս տարցուք յԱղուանս⁴ ի գործ կաւազործութեան գաղատոս որմաչէնս պիտոյից մերոց քաղաքաց, ապարանից եւ այլոց պիտոյից: 13 Այլ իբրեւ եկին հասին մերձեցան ի միմեանս գունդքն երկոքեան Յունացն եւ Պարսիցն, եւ հանդերձեալք խառնել ընդ միմեանս, ինքնին թագաւորն Հայոց Պապ վառեցաւ կազմեցաւ պատրաստեցաւ, եւ կամեցաւ ի ճակատ ելանել: 14 Ապա չառնոյր զայն նմա յանձն Տերէնտոն զաւրաւարն Յունաց, թէ ի ճակատ մտցէ⁵. այլ ասէ. Թագաւորն Յունաց զմեզ վասն քո յղեաց, եթէ երթայք զնա պահեցէք. արդ իցէ՞ թէ քեզ դէպ ինչ տայցէ, մեք զմեր թագաւորն որո՞վ երեսաւք տեսանեմք, կամ զի՞նչ տայցեմք նմա պատասխանի. եթէ իցէ՞ եւ մեք աստի առանց քո ապրեսցուք եւ առ մեր թագաւորն հասանեմք, եւ լինիցիմք այնուհետեւ գլխապարտք առաջի մերոյ թագաւորին: 15 Այլ արա դու, արքայ, զոր մեք ասեմք քեզ, ա՛ն դու գեպիսկոպոսապետդ Հայոց զՆերսէս, եւ ել նիստ ի վերայ Նպատ լերինն յամուր եւ յանկասկած տեղուջ, եւ սուրբ արքեպիսկոպոսապետն Ներսէս արասցէ աղաւթս եւ խնդրեսցէ ի Տեառնէ, զի Տէր տացէ մեզ զյաղթութիւն: 16 Եւ ի բարձուէն նայեսցիս, եւ տեսչիր զջան վաստակոց պատերազմին մերոյ զքաջութիւն եւ զվատութիւն, զոր առաջի քո գործեսցեն:

17 Ապա թագաւորն Պապ հաւանեցաւ բանիցս այսոցիկ. առ ընդ իւր զմեծ քահանայապետն Ներսէս, եւ ելանէր նստէր ի վերայ նպատական լերինն. եւ ամենայն

1 Յամենայն օրինակս՝ ի Բաշանն
2 Յամենայն օրինակս՝ արանց քաջաց
3 Յօր. խօսեցեալ

4 Յօրինակի միում՝ յԱղուանս: Այլ՝ յաղթանս
5 Օրինակ մի յաւելու՝ արքայն Պապ

զաւրքն Յունաց եւ Հայոց իջանէին ի տեղի պատերազմին: 18 Ապա եկն եւ զաւրավարն սպարապետն Հայոց Մուշեղ, եւ եբեր զնշանն իւր եւ զգէնն առ Ներսէս եպիսկոպոսապետն, զի աւրհնեսցէ զնա, եւ իջցէ ի պատերազմ: 19 Եւ ի ժամանակին յայնմիկ յիշեաց թագաւորն Պապ զհին զրոյցսն, եւ ասէ. Յիշեցի ես զայն, զի բարեկամ է Մուշեղն թագաւորին Պարսից Շապուհոյ: 20 Ո՞չ այդ այն Մուշեղն է, որ արձակեաց զկանայս թագաւորին Պարսից Շապուհոյ հանդերձ ժանուարաւք եւ վաշտկանաւքն. եւ լուեալ եւս է իմ թէ՛ ի Պարսիկս խաւսի. արդ մի՛ մտցէ դա ի ճակատ:

21 Ապա զաւրավարն Հայոց Մուշեղ բարեխաւս առնէր առ թագաւորն Պապ զմեծ քահանայապետն Ներսէս: 22 Իսկ թագաւորն Պապ ասէ ցեպիսկոպոսապետն Ներսէս, թէ մի՛ լինիր դու բարեխաւս. զի իբրեւ իջանէ, ի զաւրսն Պարսից անկանի: 23 Իսկ նա եւս քան զեւս յաճախէր մատուցանել զբարեխաւսութիւնն: 24 Իսկ թագաւորն, քանզի բանիւ ինչ ոչ անցանէր զնորա ի ժամանակին յայնմիկ, ասէ ցՆերսէս. Կամք քո կատարեսցին: 25 Բայց նախ երդուամն տուր յաջ քո, զի մեզ մի՛ ստեսցէ, եւ ապա արձակեսջիր ի պատերազմ: 26 Ապա կոչեն զՄուշեղ զառաջեալ արքային, եւ եկն եպագ երկիր արքային. եւ մատուցեալ բուռն հարկանէր զաջոյ եպիսկոպոսապետին Ներսէսի, եւ երդնոյր: 27 Սոյնպէս եւ ի թագաւորին Պապայ ձեռն արկանէր, երդնոյր եւ ասէր՝ թէ կեցից եւ մեռայց ի վերայ քո որպէս նախնիքն իմ ի վերայ նախնեացն քոց, որպէս եւ հայրն իմ ի վերայ հաւրն քո Արշակայ, սոյնպէս եւ ես ի վերայ քո. բայց միայն չարխաւսացն ունկն մի՛ դնիցես:

28 Ապա աւրհնէր զնա քահանայապետն Հայոց Ներսէս բազում աւրհնութեամբ: 29 Ապա թագաւորն Հայոց Պապ զերիվարն զիւր եւ զիւր նիզակն հրամայեաց մատուցանել առն քաջի զաւրավարին

Մուշեղի. այլ նա ոչ առ. Իմովն, ասէ գործեցից. ապա դու, արքայ, զինչ եւ տացես՝ ի ձեռս քո եմ: 30 Եւ զիւր նշանն եւ զգէն մատուցանէր առ Ներսէս, զի աւրհնեսցէ: 31 Եւ հեծանէր իւրով զնդաւն հանդերձ, եւ զամենայն ճակատն Հայոց յարդարեալ յաջմէ զաւրացն Յունաց, յաջում թեւի նա խաղայր յառաջ:

32 Իսկ թագաւորն Պապ եւ եպիսկոպոսապետն Ներսէս կային ի վերայ Նպատ լերինն. եւ սուրբն Ներսէս զբազուկսն հանապազատարածս համբարձեալ յերկինս, խնդրէր ի Տեառնէ՛ զի անխայեսցէ Տէր ի յուխտ իւր եւ ի սուրբ եկեղեցիս իւր, զոր պատուական արեամբն իւրով ստացաւ. եւ մի տալ զժողովուրդսն ի ձեռս անաստուած հեթանոսաց, զի մի՛ երբէք ասիցեն ի հեթանոսս՝ թէ ո՛ւր է Աստուած նոցա: 33 Եւ մինչ դեռ նա զաղաւթսն մատուցանէր առ Աստուած, խաղացեալ ճակատեալ իբրեւ զհուր ամենայն զաւրքն Հայոց ընդդէմ զաւրացն Պարսից, իսկ գունդն Մուշեղեան յառաջեալ քան զայլ գունդսն՝ յառաջամուխ տագնապեալ երթային. մինչ զի նայէր թագաւորն եւ տեսանէր զի ըստ ական անգանէին, մինչ զի ոչ երեւէին թագաւորին նշանքն Մուշեղի: 34 Իսկ իբրեւ չերեւել սկսան նշանքն, աղաղակել սկսաւ թագաւորն Պապ առ Ներսէս եւ ասէ. Դու խաբեցեր այրեցեր զիս¹. զի ասացի ես բանս, մի՛ յղեր զայրն զայն ի գործ պատերազմիս. ահա ի զաւրսն Պարսից անկաւ, եւ արդ մեծամեծ վնաս գործեսցէ: 35 Եւ ասէ եպիսկոպոսապետն Ներսէս. Մի՛, արքայ, մի՛ կարծեր. զի ոչ ստէ մեզ այրն այն. այլ տեսցես քեզէն զքաջութիւն նորա, զոր գործեսցէ ծառայ քո առաջի քո:

36 Իսկ թագաւորն Պապ կարի ստիպէր առ եպիսկոպոսապետն Ներսէս ասել՝ թէ ստէպ կաց յաղաւթս եւ աղաչեա զՏէր մինչ դեռ խառնուրդքս են: 37 Իսկ իբրեւ

1 Յօր. իլեցեր

կարի ձանձրացոյց, ասէ եպիսկոպոսապետն Ներսէս ցթագաւորն Պապ. Եթէ իցէ՝ ուղղեսցես զսիրտ քո առ Տէր, գթասցէ ի վերայ քո եւ ի վերայ աշխարհիս. եւ իցէ՝ թէ սրբեսցես զքեզ ի պղծութենէ գործոց քոց, ընկալցի եւ ոչ թողցէ ի ձեռաց զքեզ, եւ ոչ մատնեսցէ զքեզ ի ձեռն թշնամեացն քոց: 38 Իսկ ես ո՞վ եմ, զի աղաչես դու զիս, իբրեւ եթէ ես այր մի տառապեալ կարիցեմ հակառակ ընդդէմ կամացն՝ զոր ինչ կամիցի առնել Աստուած՝ առնել առնա աղաւթս, զի այնու շրջիցեմ գկամս նորա: 39 Այլ այն՝ որ արար զամենայն յոչնչէ, եւ ունի գտիեզերս ի ձեռին իւրում եւ զամենայն բնակիչս նորա իբրեւ զմարախ, որ չափեաց զերկինս թզաւ եւ զերկիրս ամենայն քլաւ իւրով, որ եղ զլերինս ի կշիռս եւ եբարձ զդաշտս կշռորդաւք, որ գիտաց զիմաստութիւն Հաւր իւրոյ եւ եղեւ նմա խորհրդակից, որ ընդ Հաւրն առնէ զամենայն վճիռ դատաստանաց, դեռ այժմ իսկ զարեւելս եւ զմուտս, զհիւսիսի եւ զհարաւ եղեալ ի կշիռս, եւ դեռ զկշիռսն ի վեր ունի. եւ ըստ մի մի ծանրութեան, յոր կողմ հակեսցէ կշիռն մեղացն, ըստ այնմ եւ դատի զարարածս իւր: 40 Զի նա գիտէ զչափ արարածոց իւրոց գործոց, եւ ըստ արժանի գործոց իւրեանց հատուցանէ նոցա. զի դեռ այժմիկ ժամանակ է կշտամբութեան եւ ժամանակ յանդիմանութեան եւ ժամանակ դատելոյ. զի դեռ աւաղիկ յայսմ ժամու ոչ մարդ ընդ մարդկան ճակատեալ պատերազմին, այլ դատաւորն դատաւորաց յարեաւ դատել զերկիր: 41 Արդ դեռ յայսմ ժամու ժամանակս դատաստանաց է, ո՞վ է որ կարէ իշխել բանալ զբերան իւր առաջի նորա յայսմ ժամանակիս, եւ կամ ո՞վ է որ գիտէ զմիտս Տեառն, զի եւ խրատտու եւս լինիցի նմա. զի ամենայն ինչ ի նմանէն եւ ի նոյն եւ նովաւ ամենայն. նմա փառք յաւրտեանս: 42 Զի թէ ըստ գործոց մեղաց մերոց հատուցանէ մեզ Տէր, մեզ ընդդէմ կա-

մաց նորա մի՛ լիցի երթալ, եւ խնդրել ինչ ի նմանէ. այլ ասել՝ եթէ Յիրաւուսն անցուցեր դու զայս ամենայն ընդ մեզ. արդար ես դու Տէր, եւ ամենայն գործք քո ճշմարիտ են: 43 Ընանապարհք քո ուղիղ են, եւ ամենայն դատաստանք քո ուղիղ են: 44 Զի զդատաստան արդարութեան ածեր ի վերայ մեր, ըստ ամենայնի գոր ինչ ածեր ի վերայ մեր. զի արդարութեամբ եւ յիրաւի ածեր ի վերայ մեր վասն մեղաց մերոց: 45 Զի անաւրինեցաք եւ յանցեաք եւ ապտամբեցաք մեք ի քէն. մեղաք յամենայնի եւ պատուիրանաց քոց ոչ անսացաք: 46 Ոչ պահեցաք եւ ոչ արարաք որպէս պատուիրեցեր մեզ, զի բարի գտցուք մեք ի քէն. արդ զամենայն գոր արարեր եւ գոր ինչ ածեր ի վերայ մեր՝ արդար դատաստանաւ արարեր. զի դատաստանք քո քաղցր են: 47 Արդ մի՛ մատներ զմեզ ի սպառ վասն անուան քո, փրկեա զմեզ վասն սքանչելեաց քոց, եւ փառաւոր արա զանուն քո, Տէր. զի մի՛ երբէք ամաչեսցեն ոյք յուսացեալ լինին ի քեզ: 48 Ամաչեցեալ լիցին բռնութիւնք նոցա, եւ ամենայն զաւրութիւնք նոցա խորտակեսցին. ծանիցեն զի դու ես Տէր Աստուած միայն, որ փառաւորեալդ ես ի վերայ ամենայն տիեզերաց: 49 Եւ յամենայնի ամենեւին քո միայնոյ կատարեսցին կամք քո ամենազաւր, որ հզաւրդ ես եւ կարող եւ արդար յամենայնի, եւ սիրես ողորմել նեղելոց եւ տագնապելոց: 50 Զաւգուտն մեր դու գիտես, Տէր, եւ պատրաստել մեզ որպէս եւ քեզ հաճոյ իցէ. զի եթէ իցէ մեզ աւգուտ նեղութիւնք յաճախեա մեզ. եւ եթէ հաճոյ է առաջի քո ողորմութիւն, շնորհեա մեզ: 51 Զի որպէս իցեն կամք Տեառն յերկինս, սոյնպէս եւ կատարեսցէ. եւ որով գաւազանաւ կամիցի խրատել, ի ձեռդ քո եմք յամենայն ժամ: 52 Քաւեա, Տէր, զանաւրէնութիւնս զմեզս եւ զյանցանս ծառայից քոց. զի ո՞վ իցէ այն մարդն, որ ոչ յանցանիցէ կամ մեղանչիցէ առաջի քո. զի

ոչ ոք իցէ արդար ի վերայ երկրի, եւ ոչ ոք է մինչեւ ի մի: 53 Զի դու միայն ես, որ առանց մեղացդ ես. եւ քո միայն արդարութիւն, որ արարեր զմեզ յոչընչէ, եւ ածեր զմեզ յայս կենդանութիւն, եւ ցուցեր մեզ ճանապարհս կենաց եւ փրկութեան, եւ զհոգս այսպէս իմաստունս եւ խաւսունս արարեր. եւ եղեր ընդ մեր փրկանք, զի անմահութեան վիճակին հասուցես զմեզ: 54 Յիշեա զեկեղեցի քո՝ զոր քո սուրբ արեամբդ ստացար, զի մի՛ զնուիրեալսն քեզ ի ձեռս շանց մատներ¹. այլ յամենայնի է ողորմութիւն քո, դարձցի սրտմտութիւն բարկութեան քո յուխտէ քումմէ, եւ փրկեա զեկեղեցի քո, Տէր Աստուած մեր:

55 Արդ մինչ դեռ կայր ի վերայ լերինն, զայս եւ այսպիսի եւ որ ինչ նման է այս բանից՝ աւելի եւ բազում քան զսոյն խաւսեցաւ, մինչ դեռ կայր առ նմա թագաւորն Պապ ի վերայ լերինն. բազում եւ ազգի ազգի եւ պէսպէս աղաւթս մատուցանէր մինչեւ ցերեկոյն եւ ի մտանել արեգականն, մինչեւ վաղճանեցաւ ճակատն:

56 Այլ ի պատերազմին աւգնական Աստուծոյ հասանէր ի վերայ Յունացն, եւ հայաստան գնդին լինէր յաղթութիւն, եւ ի պարտութիւն մատնեցաւ գունդն Պարսից. դարձան ի փախուստ, ցրուեցան սփռեցան զաշտաց՝ լերանց բարձանց՝ խորոց ձորոց: 57 Ապա զհետ նոցա լինէին զաւրքն Յունաց եւ Հայոց. հասանէին, զմեծ եւ զփոքր առ հասարակ սատակէին. բայց սակաւք ի բազմաց քաջաձիք փախստեայք լինէին: 58 Ապա զհետ լինէին փախստէիցն զաւրքն Հայոց, եւ մինչեւ ի Գանձակ յԱտրպայական ի սահմանս Հայոց հալածէին զզաւրսն Պարսից. ընդ փախուցեալսն զբազումս սատակէին զճանապարհայն: 59 Եւ Մուշեղ սպարապետն Հայոց հարկանէր զզաւրսն Պարսից ի հարուածս անհնարինս. սպաս արարեալ եւ

դիպէր գնդին Աղուանից, եւ առ հասարակ զամենայն զզաւրսն սատակէր: 60 Եւ հասանէր Ուռնայրի արքային Աղուանից ի փախստեանն, եւ նիզակաբնաւն ի կառափն մատուցեալ ծեծէր բազում, ասելով՝ թէ այդմ շնորհս կալ², զի այր թագաւորն ես, եւ թագ ունիս. ես ոչ սպանից զայր թագաւոր, թէ կարի նեղ հասցէ ինձ: 61 Եւ ութ հեծելով թոյլ ետ նմա փախչել գնալ յաշխարհն Աղուանից:

62 Այլ յորժամ դարձան ամենայն զաւրքն Հայոց, ոչ գոյր չափ գլխանոյն ախոյենիցն՝ զոր բերեալ էր առաջի թագաւորին Հայոց Պապայ զաւրավարն Հայոց³ Մուշեղ: 63 Սոյնպէս ըստ իւրաքանչիւր չափու ամենայն նախարարքն եւ մեծամեծքն եւ բովանդակ ամենայն զաւրքն եւ եղեւ մեծ յաղթութիւն յերկրին Հայոց, եւ ի մէջ զաւրացն Յունաց: 64 Նոյնպէս լցան բազում աւարաւ գանձուցն զինու եւ զարդու, ոսկով եւ արծաթով եւ բազում կարասեաւ, ձիովք եւ ջորեաւք եւ ուղտաւք, զոր ինչ թափեցին. զի ոչ գոյր թիւ կամ չափ, այլ կարի բազում էր յոյժ:

65 Բայց ապա ամբաստան լինէին քսութեամբ առ մեծ թագաւորին Պապայ զզաւրավարէն Մուշեղի, եւ ասէին՝ թէ Գիտեա, արքայ, զի մեծաւ նենգութեամբ է ընդ քեզ, եւ քեզ մահու սպասէ. զի զքո թշնամիսն համակ արձակէ. զի զբազումս բազում անգամ ի բուռն արկեալ՝ սովոր է արձակել զթշնամիսն. զի զՈւռնայր արքայ արձակեալ, թոյլ ետ ապրել, ի բուռն արկեալ զհակառակորդս քո: 66 Եւ վասն այսր իրաց բազում անգամ լինէր գժտութիւն թագաւորին Պապայ ընդ զաւրավարին Մուշեղի. եւ բազում անգամ յանդիմանէր գնա վասն այսր իրաց: 67 Իսկ զաւրավարն Մուշեղ տայր պատասխանի թագաւորին Պապայ, եւ ասէր՝ եթէ Զիմ

1 Յօրինակի միում՝ մատնեցես

2 Յամենայն օրինակս՝ շնորհակալ

3 Օրինակ մի յաւելու՝ քաջն

զընգերսն զամենեսեան ես կոտորեցի. իսկ որ թագս ունէին, նոքա իմ ընգերք չէին, այլ քո. եկեսցես՝ որպէս ես զիմսն սպանի, դու զքոյսն. այլ իմ յայր թագաւոր ոչ ձգեալ ձեռն երբէք որ թագ ունի, եւ ոչ ձգեմ, եւ մի՛ այլ ձգել լիցի: 68 Եթէ կամիս սպանանել զիս, սպան. այլ ես, եթէ գայ ինձ ի ձեռն երբէք այր թագաւոր՝ որպէս եկն բազում անգամ, ես ոչ սպանանեմ զայր թագաւոր՝ որ գամ՝ մի թագ ունի, եթէ ոք իսկ զիս սպանցէ:

69 Թագաւորն Պապ իբրեւ լսէր զբանս զայս, յարտասուս հարեալ, եւ յարուցեալ ի գահոյիցն՝ բուռն հարկանէր զՄուշեղէ, արկանէր զնովաւ գիրկս, եւ լայր ի վերայ պարանոցին Մուշեղի, եւ ասէ. Մահապարտ են այնոքիկ՝ որ իշխեն խաւսել չարութիւն զՄուշեղէ զառնէ քաջէ եւ զպատուականէ: 70 Զի այր՝ որ ազգաւ պատուական է իբրեւ զմեզ, եւ նախնիքն դորա իբրեւ զնախնիսն մեր, եւ թողեալ նախնեացն դորա զթագաւորութիւնն ձենաց աշխարհին, եկեալք առ մեզ նախնիքն՝ ի նախնեացն մերոց ի վերայ կեցեալք եւ մեռեալք են, եւ հայր սորա ի վերայ հաւրն իմոյ մեռաւ. եւ սա միամտութեամբ մինչեւ ի մահ վաստակեալ է, եւ բազում անգամ Աստուած ետ մեզ յաղթութիւն յաղաւթս եւ ի խնդրուած հաւր մերոյ սքանչելոյն Ներսիսի, ի ձեռն դորա շնորհեցաւ բազում խաղաղութիւն. զիա՞րդ ասեն ցիս զայս բանս՝ եթէ Մուշեղ քեզ մահու սպասէ. սա աւասիկ այր իրաւախորհ է, զի յաւտար տեսարան վասն բարեկամութեան խնայեաց, զիա՞րդ դա ի բնակ տեսար ձեռն ձգէր: 71 Յայնմ ժամանակի բազում պարգեւս եւ պատիւս եւ բազում գեղեան զաւրավարին Մուշեղի Պապն² շնորհէր:

ԳԼՈՒԽ Ե.

1 Յաղագս միւսոյ պատերազմին Հայոց ընդ Պարս ի Գանձակ Ատրպայականի. եւ վասն գուշակութեան Ուոնայրի, զի յայնմ եւս յաղթութիւն լինէր Հայոց զնդին:

2 Ապա լինէր գուշակ Մուշեղի Ուոնայր արքայ Աղուանից, յղէր առ նա հրեշտակ եւ տայր նմա տեղեկութիւն. ասէր. Մեծ շնորհակալութիւն ունիմ փոխանակ զի ոչ սպաներ դու զիս. եւ Աստուած էած զիս ի ձեռս քո, եւ դու անխայեցեր. զայս սէր քո ոչ մոռացայց մինչեւ իցեմ ես: 3 Բայց գուշակեալ իմ քեզ, զի Շապուհ թագաւորն Պարսից ամենայն զաւրաւք իւրովք կազմի գալ անկանել յանպատրաստից իմն³ ի վերայ քո: 4 Ապա ստրատն⁴ Յունաց կազմեաց զաւրս իւր՝ որ ընդ իւրով ձեռամբ էին, եւ խաղացոյց տանել զնալ ի սահմանս Հայոց ի Գանձակէ կուսէ յԱտրպայական տանէ: 5 Սոյնպէս եւ Մուշեղ սպարապետն գումարեաց ի մի վայր զզաւրսն ամենայն Հայոց. եւ էին կուռ վառեալք ինսուռն հազարք ընդէրք նիզակ ի ձեռն, թող զսպարակիրս: 6 Եւ սոքա վաղագոյն ըստ գուշակութեանն աճապարեցին հասին յիւրեանց սահմանն, բայց միայն թագաւորն մնաց անդէն ի Հայոց աշխարհին: 7 Եւ եպիսկոպոսապետն Ներսէս անդէն մնայր յաշխարհին, եւ խնդրուածս առնէր ընդ ամենայն աշխարհին հրամայէր⁵ վասն զաւրացն որ էին ի պատերազմին:

8 Իսկ թագաւորն Պարսից Շապուհ գայր հասանէր ամենայն զաւրաւքն իւրովք ի տեղի պատերազմին, եւ գտանէր զզաւրսն Յունացն եւ զգուռն Հայոց, զի կազմեալ պատրաստեալ էին ի գործ պատերազմին: 9 Եւ լինէին խառնուրդք ճա-

1 Օրինակ մի՛ անգամ
2 Օրինակ մի յաւելու՛ պարգեւեր եւ

3 Յօր. եկն
4 Յերկուս օրինակս՝ ստրատելատն
5 Օրինակ մի յաւելու՛ աղօթել

կատուն. ի պարտութիւն մատնեցան զաւրքն Պարսից: 10 Մանաւանդ գունդք նիզակաւորացն յարձակեալք մոլեգնեալք, քաջութեամբ զախոյեանս ի վերուստ յերկ-վարացն յերկիր կործանէին յանդիման թագաւորին Պարսից Շապուհ. եւ ընդ ընկենուլն խրախոյս բառնային՝ աղաղակելով ամենայն զաւրքն պատերազմիկք Հայոց, համակ զայս բանս ասելով՝ եթէ Ա՛ռ Արշակ քաջ: 11 Ձի զամենայն ախոյեանսն, զոր ի ճակատուն յայն սպանանէին, նմա նուիրէին իւրեանց քաջի՛ թագաւորին Արշակայ. զի զամենայն զոր սպանանէին, ասէին. Արշակայ թագաւորին մերոյ զոհ լիջիր: 12 Եւ յորժամ Հայոց ազատանոյն ախոյեանացն նիզակաւորացն ռազմ արարեալ յարձակեալ, զզաւրսն Պարսից նիզակաւորքն առեալ ընգենուին, ասէին ի խրախուսելն՝ Ա՛ռ Արշակ քաջ: 13 Իսկ յորժամ զենեալ գլխատէին զախոյեանսն, ասէին. Արշակայ զոհ լիջիր:

14 Եւ լեգէոն զաւրուն բազմութիւնն՝ այս ինքն Յունաց զաւրացն սպարակիրն, սոյնպէս եւ Հայոց սպարակիրն զթիկունս ունէր զաւրացն Հայոց, վահանաւք փակեալք զինքեամբք՝ իբրեւ զամուր քաղաք ինչ ի թիկանց լինիցի: 15 Յորժամ տարածանէին ինչ զաւրքն Պարսից զզաւրսն Յունաց եւ կամ զգունդ նիզակաւորացն Հայոց, ի լեգէոն վահանաւորացն Յունաց կամ ի սպարակիրն Հայոց իբրեւ ի բերդ մտեալ հանգչէին: 16 Իսկ յորժամ ոգի առեալ սակաւ մի, եւ անդուստ ելեալ յարձակէին, անթիւս ի զաւրացն Պարսից ընկեցեալ առաջի իւրեանց սատակեալս գլխատէին, խրախուսելով ի նոյն բանս յԱրշակ թագաւորն իւրեանց, անչափս եւ անթիւս ի զաւրացն Պարսից կոտորեցին: 17 Եւ յորժամ դարձեալ սակաւիկ մի ինչ յաղթահարէին զնոսա զաւրքն Պարսից, եւ նոքա իբրեւ ի բերդ ամուր դիմէին ի լե-

գէոն ի զաւրսն վահանաւորս, եւ նոցա բացեալ զվահանսն՝ զնոսա ի մէջ առեալ փակէին: 18 Եւ յայնմ աւուր հարկանէին սատակէին զզաւրսն Պարսից զաւրքն Յունաց, եւ Տերէնտն ստրատելատ նոցա, եւ գունդքն Հայոց եւ Մուշեղ սպարապետ նոցա: 19 Եւ սակաւուք փախչէր Շապուհ թագաւորն Պարսից ի պատերազմէ անտի. եւ նոցա սահմանապահս կացուցանէին եւ ինքեանք առ իւրեանց թագաւորն Պապ դառնային մեծաւ անուամբ եւ բարի աւարաւ եւ հոյակապ շքեղութեամբ:

20 Այլ Շապուհ թագաւորն յորժամ յաշխարհն իշխանութեանն իւրոյ հասանէր, զարմացեալ ընդ քաջութիւն գնդին կռուոյն որ դիպեցաւ նմա, եւ ասէր՝ եթէ զարմացեալ եմ ես զոր ինչ տեսի. զի իմ ի մանկութենէ իմմէ համակ ի ճակատու եւ ի կռիւ մտեալ եմ, եւ բազում ամք են՝ զի հասի ի թագաւորութիւն, եւ առանց կռուոյ ամ չեմ լեալ. բայց իմ ջերմ կռիւ զայս էր տեսեալ, որ այս անգամս դիպեցաւ ինձ: 21 Ձի յորժամ Հայոց նիզակաւորքն առաջի կարգէին, այսպէս յարձակէին, որպէս գլեառն մի բարձր եւ կամ որպէս զաշտարակ մի հաստաբեաստ հզաւր եւ անշարժ. եւ յորժամ մեք զնոսա սակաւ մի շարժեաք, նոքա ի լեգէոն Հռոմոց ապաստան լինէին. եւ նոցա զվահանափակսն բացեալ, զնոսա իբրեւ ի քաղաքորմ պարսպաւոր ամրացեալ ընդունէին: 22 Եւ անտի սակաւիկ մի ոգի առեալ, դարձեալ ելեալք մարտնչէին, մինչեւ անմի զզաւրսն Արեանց² առնէին: 23 Եւ միւս եւս՝ որ ընդ այս եմ զարմացեալ ես, ընդ մտերմութիւն միամտութեանն հայաստան գնդին ընդ տիրասիրութեանն: 24 Ձի այնչափ ամք են՝ զի տէրն նոցա Արշակ կորուսեալ է ի նոցանէն, եւ նոքա ի պատերազմին ի նա խրախուսէին: 25 Եւ յորժամ զախոյեանսն ընկենուին, համակ ասէին՝ թէ Ա՛ռ Արշակ,

1 Տպ. առաջի

2 Յօր. Արանց

եւ նա չէր ի մէջ նոցա, եւ նոքա առ գութ տիրաւորութեանն՝ զոր առ բնակ տէրն իւրեանց ունէին, զամենայն ախոյեանսն՝ զոր սպանանէին՝ նմա նուիրէին: 26 Եւ կամ մոլեկան գուռն Մուշեղեան, զի ինձ այսպէս թուէր՝ եթէ հուր բոց ի գնդէն ելանիցէր եւ ի նշանացն, իբրեւ ի հուր հրդեհի այնպէս անցանէր ընդ գուռնն որպէս բոց ընդ եղէգն: 27 Եւ այսչափ ժամանակք են՝ զի Արշակ տէրն նոցա ի նոցանէն կորուսեալ է, զի յԱնդմշն բերդի կայ յերկրին խուժաստանի, եւ նոքա առ գութն համարէին՝ թէ ի գլուխ նոցա նա իբրեւ թագաւոր կայցէ, եւ կամ ընդ նոսա արդեւք ի մէջ գնդին կայցէ ի գլուխ ճակատուն պատերազմին, եւ նոքա առ նմա առնիցեն պաշտաւն յանդիման նորա: 28 Այլ, ասէր, երանի՛ որ Հայոց գնդին տէր իցէ, այնպիսի տիրասէր եւ միաբան միամիտ զաւրացն:

ԳԼՈՒԽ Զ.

1 Յաղագս Դղակայ մարդպետի՝ գորկացուցիմ սահմանակալ, եւ նա խորհրդակից եղեալ Պարսից թագաւորին, թէ ո՛րպէս խոստանայր մատնել զարքայն Հայոց. եւ վասն մահուն Դղակայ ի Պապայ արքայէ:

2 Ապա Տերէնտ զաւրավարն զաւրացն Յունաց եւ Մուշեղ զաւրավար զաւրացն Հայոց զԴղակ մարդպետ, որ անուանեալ կոչէր ըստ գործոյն՝ հայր թագաւորին, թողին զնա սահմանապահ ի Գանձակ՝ որ էր սահման ընդ Պարս եւ ընդ Հայս: 3 Եւ մնաց առ նմա երեսուն հազար ընտիր ընտիրք, նիզակաւորք կուռ վառեալք պատեգէնք¹ եւ զրահաւորք կազմ ամենայնիւ: 4 Եւ Տերէնտն եւ Մուշեղ ամենայն զաւրաւք, որ էին ընդ նոսա, գնացին յաշխարհն առ թագաւորն Պապ: 5 Իսկ մարդպետն Դղակ յգէր հրեշտակս խորհրդով առ Շապուհ արքայն Պարսից, եւ խոստանայր

մատնել ի ձեռս նորա զթագաւորն Հայոց Պապ, եւ զզաւրավարն Յունաց զՏերէնտն, եւ զզաւրավարն Հայոց զՄուշեղ, եւ առնոյր ի նմանէ գանձս պարգեւաց սաստիկ յոյժ: 6 Բայց այլ մեծամեծ նախարարք, որ էին առ նմա, գաղտ ազդ առնէին թագաւորին Պապայ, Գնէլն՝ տէր գաւառին Անձեւացեաց, եւ այլք որ էին անդ մնացեալ:

7 Ապա թագաւորն Պապ յղեաց դեսպանս առ մարդպետն Դղակ, թէ զաւրքդ՝ որ են ընդ ձեռամբ քով՝ գումարեա զայդ, Գնելոյ Անձեւացոյ յանձն արասցես, եւ վաղ եկեսցես. զի պիտոյ է ինձ յղել զքեզ առ թագաւորն Պարսից Շապուհ, զի ես մտից նմա ի ծառայութիւն: 8 Ապա յորժամ լսէր մարդպետն Դղակ, մեծապէս խնդացեալ՝ ասէր ընդ միտս իւր, թէ արդ զիւրին ինձ զկամս իմ կատարել, զոր խոստացայն թագաւորին Պարսից Շապուհ, յորժամ դուրս գտի իրացս յապահով յանհոգս առնել բանիւք զՊապ, եւ յանկարծաւրէն յանպատրաստից արկանել զթագաւորն Պարսից զգլխով նորա: 9 Եւ ինքն գուարձացեալ, լինէր խաւանակից ի մէջ թագաւորացն երկոցունց. դեսպան ճիով վաղ հասուցանէր ի գաւառն Այրայրատու ի մեծ ի գեղն ընջին արքունի, որում Արդեանսն կոչեն, առ թագաւորն Հայոց Պապ. եւ զայր յանդիման լինէր թագաւորին: 10 Մեծապէս մեծարեցաւ ի նմանէն. եւ ի ժամ ընթրեացն հրաման ետ արքայն Պապ, տանել պատմուճան ազուցանել մարդպետին Դղակայ. եւ ազուցին նմա դրատս եւ վարտիս: 11 Եւ էր հանդերձն անհեղեղ մեծութեամբն, զի խորշ զխորշիւ իջանէր, մինչ զի ոչ կարէր հանդերձել գանձն իւր, զի պատեաց զնա մեծութիւն հանդերձոյն: 12 Եւ ազուցեալ զպատմուճանն մեծ, էաժ զգաւտին ընդ մէջ իւր՝ զորմէ թուրն կախէր. եւ սուսեր ընդ մէջ ածեալ, եւ խորշ ի գաւառոյ դրատիցն իջեալ, զթուրն եւ գսուսերն ծածկէր: 13 Իսկ զվարտիսն զգեցեալ, եւ մոյկս ա-

1 Յօրինակի միում՝ պատեմագէնք

գուցեալ, եւ զնրանն յազդեր կապեալ, եւ ի վերայ նրանին խորշն ի վարտեացն իջեալ անկեալ ի վերայ նրանին՝ ծածկեալ մինչեւ ի սրունսն. եւ ոչ ինչ իմացաւ Դղակ՝ թէ այն մեծութիւնն Հանդերձոյնն չարոյ նորա իցէ այն: 14 Իսկ յինն ժամ աւուրն կոչեցին զԴղակն, եւ ասեն. Կոչեն զքեզ յընթրիս ի ներքս յարքունիս: 15 Իսկ յորժամ մոռնին ի փող տանցն՝ յորում արքայն էր, եւ էր փողն ընդ երկար, բազում երգս լոյսիջոյցս էր թողեալ, եւ տանէին զնա ընդ այն, կայր շուրջ սպարակիրն փակեալ սակրաւորքն, եւ զերգս ամենայն լուսոյն ծածկէին: 16 Ապա մտեալ շուրջ զնովաւ ի տեղուջն՝ ձգձգէին զնա սպարակիրքն: 17 Իսկ նա թէպէտ տանէր ձեռն ի գէն ի խորշխորշսն Հանդերձիցն պատատելոցն՝ զոր էր զգեցեալ, ոչ զմի գէն ոչ կարաց գտանել:

18 Ապա զի էր ինքն Դղակն այր մեծ եւ անձնեայ, քաջ հարուստ ոսկերաւք, սակայն ասպարակիր մարդկանն պատեցին զնովաւ, եւ բարձին զնա վերըմբարձ, եւ տանէին զնա մինչեւ ի դուրս տաճարին արքունի: 19 Իսկ իբրեւ ետես թագաւորն՝ թէ անդր տանին, ասէ. Մի՛ այսր, մի՛ այսր, այլ մոռնէք զդա ի տուն պատմուճակացն: 20 Քանզի ի փողին զաւրք սպարակրացն մոռնին զնա ի ներքս ի տունն պատմուճակացն. կապեալ ձեռս յետս, այս ինքն ուր թագ արքունի դնէին. եւ անդէն խաւսել սկսաւ Դղակն եւ ասէ. Ասացէք ցարքայ, զոգէք, ես այս մահու արժանի էի, բայց քեզ արժան էր զիս ի հրապարակի սպանանել, եւ ոչ ի տան թագաց՝ սպանանել, եւ զքո թագդ արեամբ շաղախել: 21 Եւ զայս միայն ժամանեաց ասել. եւ անդէն ի վանսն պատմուճակացն փողոտեցին զնա, եւ հատին զգլուխ նորա, եւ հանին հարին ի նիզակի, եւ կանկնեցին ի հրապարակին արքունի:

ԳԼՈՒԽ Է.

1 Յաղագս մահուան Արշակայ թագաւորին Հայոց, թէ զիա՛րդ մեռաւ յերկրին Խուժաստանի յԱնդմըշն բերդին ինք ինքեամբ ձեռաւք, եւ Դրաստամատն էր պատնաւք մահուան:

2 Այլ յայնմ ժամանակի դեռ տակաւին եւս կայր կենդանի Արշակ արքայ Հայոց յերկրին իշխանութեանն թագաւորութեանն Պարսից ի կողմանս Խուժաստանի յԱնդմըշն բերդին. այս ինքն որ անունն Անյուշն բերդն կոչեն: 3 Եւ զայնու ժամանակաւ խաղաղացաւ պատերազմ տալ Պարսից ընդ Հայս. զի Արշակունին թագաւորն Քուշանաց, որ նստէր ի Բաղխ քաղաքի, նա յարոյց տալ պատերազմ ընդ Սասանականին Շապուհ թագաւորին Պարսից: 4 Եւ Շապուհ թագաւորն զամենայն զգաւրսն Պարսից գումարեալ խաղացոյց տալ պատերազմ ընդ նմա, եւ զորս միանգամ ածեալ էր գերութիւն յերկրէն Հայոց զամենայն այրեւծի գումարեալ՝ խաղացոյց ընդ ինքեան. եւ զներքինին անգամ թագաւորին Հայոց Արշակայ տանէր ընդ ինքեան ի գործ պատերազմին²:

5 Եւ էր ներքինի մի Հայոց թագաւորին Արշակայ, ոստիկան հաւատարիմ լեալ, ներքինի սիրելի մեծի իշխանութեան եւ մեծի պատուի, եւ անունն Դրաստամատն: 6 Իսկ իբրեւ եղեւ պատերազմ ընդ թագաւորին Քուշանաց եւ ընդ թագաւորին Պարսից, չարաչար տարածէին զգաւրսն Պարսից զաւրքն Քուշանաց, եւ զբազումս կոտորեցին ի զաւրացն Պարսից զաւրքն Քուշանաց, եւ զբազումս ձերբակալ արարին, եւ զկէս փախստականս հալածական առնէին: 7 Իսկ Դրաստամատն ներքինին, որ յամս Տիրանայ թագաւորին Հայոց եւ Արշակայ որդւոյ նորա թագաւորին Հայոց լեալ էր իշխան տան գաւառին եւ հաւա-

1 Օրինակ մի՛ թագաւորաց

2 Օրինակ մի այսպէս ունի. եւ զոր միանգամ ածեալ էր ի գերութիւն յերկրէն Հայոց Արշակայ՝ տանէր ընդ ինքեան ի գործ պատերազմին

տարիմ գանձուց Անգեղ բերդին, եւ ամենայն բերդացն արքունի՝ որ ի կողմանս յայնս. սոյնպէս եւ յերկրին Մոփաց ի Բնաբեղ բերդին գանձքն լեալ էին ընդ նովաւ, եւ բարձ նորա ի վեր քան գամենայն նախարարացն: 8 Եւ քանզի այս գործակալութիւն եւ մարդպետութիւն, որում հայրն կոչէին ներքինեաց, գործ¹ լեալ էր ի բնէ ժամանակաց ի թագաւորութեանն Արշակունոյ, եւ զայս Դրաստամատն ներքինի զիշխանն զԱնգեղ տանն գերեալ տարեալ էր յերկիրն Պարսից ի ժամանակին՝ յորժամ կալան զԱրշակ արքայն Հայոց:

9 Եւ այս Դրաստամատ էր յայնմ ճակատու, յորում վատթարեցին Քուշանքն զՇապուհ արքայն Պարսից: 10 Եւ Դրաստամատ գործեաց անհնարին քաջութիւն այնչափ կռուաւ եւս ի վերայ Շապուհ արքայի, եւ ապրեցոյց զնա ի մահուանէ. եւ բազումս ի Քուշանաց անտի կոտորեաց, եւ զբազում զախոյանից զգլուխս բերէր զառաջեալ: 11 Եւ զՇապուհ թագաւորն Պարսից փրկէր ի նեղութենէն պատերազմին թշնամեաց անտի, ուր արգելին զնա ի խուռն պատերազմին ի զաւրաց անտի: 12 Իսկ իբրեւ եղեւ յորժամ դարձաւ Շապուհ թագաւորն Պարսից յերկիրն Ասորեստանի, եւ մեծ շնորհակալութիւն առնէր ներքինոյն Դրաստամատայն վաստակոցն, եւ ասէր ցնա Շապուհ թագաւորն Պարսից. Խնդրեա դու ինչ յինէն. զինչ եւ խնդրեսցես՝ տաց քեզ եւ ոչ արգելից: 13 Եւ ասէ Դրաստամատ ցթագաւորն. Ինձ ի քէն այլ ինչ ոչ պիտի, բայց տուր ինձ հրաման, զի երթայց տեսից զբնակ տէրն իմ զԱրշակ արքայ Հայոց. եւ առ մի աւր. իբրեւ ես երթայց առ նա, հրաման տուր արձակել զնա ի կապանացն, եւ ես իշխեցից լուանալ զգլուխ նորա եւ աւժանել, եւ ազուցանել նմա պատմուճան, եւ արկանել նմա բազմականս՝ եւ դնել առաջի նորա

խորտիկս, եւ տալ նմա զինի, եւ ուրախ առնել զնա արուեստականաւքն մի աւր ճիշդ: 14 Եւ ասէ թագաւորն Շապուհ. Խիստ են խնդրուածքդ զոր խնդրեցերդ. զի յաւուրց ժամանակաց՝ յորմէ թագաւորութիւնս Պարսից կանկնեալ է, եւ բերդն այն Անյուշ բերդ կոչեցեալ է, չիք ոք մարդ եղեալ ի մարդկանէ՝ որ իշխեցեալ է յիշեցուցանել թագաւորաց զոր յայնմ բերդի եղեալ զոք է թագաւորաց, յիշելով զայն մարդ՝ որ յայնմ բերդի զոք եղեալ է, թող թէ զնա զայր թագաւոր եւ զիմ ընկեր կապեալ եղեալ յայնմ բերդի զհակառակորդն. քան մինչ աշխատ արարեր զմեզ, եւ դու աւաղիկ զանձն ի մահ եղիր եւ յիշեցուցեր զԱնյուշն, որ ոչ էին լեալ երբէք աւրէնք թագաւորութեանս Արեաց ի սկզբանէ: 15 Բայց վասն քո՝ զի մեծ վաստակք են առ իս, զոր ինչ խնդրեցերն՝ ե՛րթ, տուեալ լիցի քեզ. բայց քեզ արժան էր զաւգուտ քո անձինդ խնդրել կամ աշխարհս կամ գաւառս կամ գանձս: 16 Բայց յորժամ դու զայդ խնդրեցեր, անցեալ լիցիս զաւրինաւք Արեաց թագաւորութեանս. երթ, տուեալ լիցի քեզ որ ինչ յինէնս խնդրեցեր փոխանակաց քոց²:

17 Եւ ետ նմա փուշտիպան մի հաւատարիմ, եւ հրովարտակ՝ արքունի մատանեան, զի գնացեալ երթիցէ նա ի բերդն յԱնդմըշն, եւ զիարդ եւ կամք իցէ նորա, զոր աւրինակ եւ խնդրեացն՝ արասցէ կապելոյն Արշակայ, որ յառաջ թագաւորեալն էր ի Հայս: 18 Եւ չոգաւ Դրաստամատն հանդերձ փշտիպանաւն եւ հրովարտակաւն արքունի յԱնուշ բերդն, եւ ետես զտէրն բնակ. եւ արձակեաց զԱրշակ ի կապանացն երկաթեաց ի ձեռակապացն եւ յոտիցն երկաթոց եւ յանրոց պարանոցէն շղթայիցն սարեացն. եւ լուաց զգլուխ նորա, եւ լոգացոյց զանձն նորա: 19 Եւ ապոյց նմա պատմուճան ազնիւ. եւ էարկ

1 Օրինակ մի՝ գործակալ

2 Թերեւս փոխանակ վաստակոց քոց

նմա բազմականս, եւ բազմեցոյց զնա. եւ եդ առաջի նորա ընթրիս ըստ աւրինաց թագաւորաց, եւ եդ առաջի նորա գինի որպէս աւրէն էր թագաւորացն. սթափեաց զնա եւ մխիթարեաց, եւ ուրախ առնէր զնա գուսանաւք:

20 Եւ ի ժամ աղանդեր մատուցանելոյ՝ եդին առաջի նորա միրգ, խնձոր եւ վարունգ եւ ամիճ, զի կերիցէ. եւ եդին դանակ նմա, որպէս զի հատցէ եւ կերիցէ զիրդդ եւ կամեսցի: 21 Եւ Դրաստամատ մեծապէս ուրախ առնէր զնա. կայր յոտն եւ մխիթարէր զնա: 22 Իսկ յորժամ արբեցաւ, եւ գինին եկն զակամբ նորա, արբեցաւ¹ հպարտացաւ եւ ասէ. Վա՛յ ինձ Արշակայ. ա՞յս ես եւ այս, եւ յայսմ չափու եւ այս անցք անցին ընդ իս: 23 Եւ զայս ասացեալ, զդանակն՝ զոր ունէր ի ձեռինն, որով զմիրգն կամ զամիճն կամէր ուտել, եհար ի սրտի իւրում. եւ անդէն սատակեցաւ, եւ մեռաւ անդէն ի նմին ժամուն մինչ ղեռ կայր ի բազմականին: 24 Իսկ յորժամ զայն ետես Դրաստամատն, յարձակեցաւ եհան ի նմանէ զնոյն դանակ, եւ եհար յիւրում կշտին. եւ անդէն մեռաւ եւ նա ի նմին ժամուն յայնմ:

ԳԼՈՒԽ Ը.

1 Յաղագս թէ զհա՛րդ լոեաց պատերազմն ի կողմանցն Պարսից. ապա սկսաւ սպարապետն Մուշեղ ոգորել ընդ այնոսիկ՝ որք միանգամ ապստամբեցին ի թագաւորէն Հայոց. զբազում կոյս կոյս հարկանէր մեծաւ պատերազմաւ, նախ վասն տան թագաւորին Հայոց՝ որ յԱտրպայականն էր:

2 Ապա իբրեւ դադարեաց պատերազմն ի կողմանցն Պարսից, եւ յապահովեցան իրք ճակատուն յայնմ կողմանէ, եւ այնուհետեւ սկսանէր սպարապետն Հայոց Մուշեղ հարկանէր զայնոսիկ՝ որք ապս-

տամբ եղեն ի թագաւորութենէն Արշակունեաց: 3 Նախ հարկանէր զտունն թագաւորին Հայոց, որ յԱտրպայականին էր. զամենայն երկիրն գաւառացն Ատրպատճացն աւերէր, եւ առնոյր գերէր բազում գերութիւն ի նոցանէ. եւ զմնացորդսն նուաճէր եւ ի հարկի կացուցանէր, եւ առնոյր զբազումս պանդանդս ի նոցանէ:

ԳԼՈՒԽ Թ.

1 Յաղագս Նոշիրականի:
2 Հարկանէր Մուշեղ զապստամբս Նոշիրական աշխարհին, որ ապստամբեցին յարքայէն Հայոց. առնոյր աւերէր գերէր, եւ ի մնացորդացն առնոյր պանդանդս. եւ զբնակիչս երկիրն ի հարկի ծառայութեան կացուցանէր:

ԳԼՈՒԽ Ժ.

1 Յաղագս Կորդուաց, Կորդեաց եւ Տմորեաց:
2 Հարկանէր Մուշեղ սպարապետն եւ զայս գաւառս ապստամբեալս յարքայէն Հայոց, զԿորդուս եւ զԿորդիս եւ զՏմորիս. առնոյր գերէր եւ աւերէր, զնէր հարկ մնացորդացն, եւ առնոյր պանդանդս:

ԳԼՈՒԽ ԺԱ.

1 Յաղագս Մարաց:
2 Եւ զկողմանսն Մարաց, քանզի եւ նոքա ապստամբեցին յարքայէն Հայոց, հարկանէր զնոսա մեծապէս. եւ գերէր զբազումս ի նոցանէն, եւ մնացորդացն զնէր հարկս, եւ առնոյր պանդանդս:

ԳԼՈՒԽ ԺԲ.

1 Յաղագս Արձիսայ:
2 Հարկանէր զերկիրն Արձիսայ մեծաւ պատերազմաւ, գերէր զբազումս ի նոցանէն. եւ զմնացորդացն առնոյր պանդանդս, եւ զմնացեալսն ի հարկի կացուցանէր:

1 Օրինակ մի չունի՝ արբեցաւ

ԳԼՈՒԽ ԺԳ.

1 Յաղագս Աղուանից:

2 Առնէր պատերազմ ընդ երկիրն Աղուանից. հարկանէր զնոսա ի հարուածս անհնարինս: 3 Եւ թափէր ի նոցանէ բազում գաւառս, զոր հատեալ էր նոցա ի նոցանէն. զՈւտի, զՇակաշէն եւ զՃորն Գարդմանայ, զԿողթ եւ այլ որ շուրջն էին զնովաւ սահմանք գաւառք¹: 4 Եւ զԿուր գետ՝ որպէս եւ յառաջն լեալ էր, ընդ երկիրն Աղուանից եւ ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին. եւ ի գլխաւորացն բազումս սպանանէին. եւ զմնացորդսն ի հարկի կացուցանէին, եւ պանդանդս ի նոցանէ առնուին:

ԳԼՈՒԽ ԺԴ.

1 Յաղագս Կասրից:

2 Ապա խնդրէր զվրէժն մեծապէս սպարապետն Մուշեղ յերկրէն Պարսից եւ ի Փայտակարան քաղաքէ, փոխանակ զի եւ նոքա նշկահեցին ստեցին արքային Հայոց: 3 Հասեալ, զբազումս ի նոցանէ գլխով պատուհաս առնէր սպարապետն զաւրավարն Մուշեղ. զբազումս ի նոցանէ գերէր, եւ զմնացորդսն ի հարկի կացուցանէր եւ առնոյր պանդանդս ի նոցանէն, եւ անդ ոստիկանս վերակացուս թողոյր:

ԳԼՈՒԽ ԺԵ.

1 Յաղագս Վրաց:

2 Ապա խաղայր սպարապետն Մուշեղ ի վերայ Վրաց արքային, եւ նեղէր զնա մեծապէս. եւ հարկանէր զերկիրն, եւ վանէր զամենայն աշխարհն Վրաց. եւ հանէր ընդ սուր զամենայն ազատս եւ զազգս նախարարացն՝ զոր եգիտ: 3 Զփառաւագեանսն հրաման տայր սպարապետն Մուշեղ հանել ի խաչ ի մէջ աշխարհին Վրաց. եւ զբռեալսն Գուգարաց, որ յառաջն ծառայէր թագաւորին Հայոց եւ ապստամ-

բեաց, կալեալ գլխատէր. եւ զազգն որձակոտոր առնէր, եւ զկանայսն եւ զզստերսն ի գերութիւն վարէին: 4 Սոյն աւրինակ եւ որ միանգամ ի կողմանն յայն էին նախարարքն, եւ ի թագաւորէն Հայոց եղեն ապստամբ, զամենեսեան գլխատէր. եւ թափէր զամենայն գաւառն, եւ առնոյր պանդանդս, եւ զմնացեալսն ի հարկի կացուցանէր: 5 Եւ զհին սահմանսն, որ յառաջուն էր լեալ յերկիրն Հայոց եւ ընդ երկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր, այնուհետեւ յինքն վտարեալ՝ դառնայր անտի:

ԳԼՈՒԽ ԺԶ.

1 Յաղագս Թագաւորիմ Աղձնեաց:

2 Դառնայր ապա զաւրավարն Մուշեղ յերկիրն Աղձնեաց, եւ հարկանէր զերկիրն ի մեծ ի հարուածս. զի եւ նոքա ապստամբեալ էին յարքայէն Հայոց: 3 Զերբակալ արարեալ զբռեալսն Աղձնեաց, առ նմին կոտորեցին զկանայս, եւ զորդիս նոցա ի գերութիւն վարեցին. եւ զմնացեալսն ի հարկի կացուցանէր, եւ վերակացուս եւ ոստիկանս յերկիրն Աղձնեաց թողուին:

ԳԼՈՒԽ ԺԷ.

1 Յաղագս մեծի Ծոփաց:

2 Ապա անտի ի Ծոփս մեծ արշաւեցին². եւ նոքա էին ապստամբեալ: 3 Հարկանէր զերկիրն գաւառին Մուշեղ մեծի Ծոփաց, եւ զազգսն հանէր ընդ սուր. եւ առնոյր պանդանդս, եւ զազգն ի հարկի կացուցանէր:

ԳԼՈՒԽ ԺԸ.

1 Յաղագս Անգեղ տանն:

2 Հարկանէր եւ յԱնգեղ տունն զբազումս, եւ հանէր ընդ սուր: 3 Բայց աշխարհն, զի ոստան արքունի լեալ էր վաղ

1 Օրինակ մի յաւելու՝ բազումք

2 Օրինակ մի՝ արշաւեաց

վաղ, բնակիչք գալառին եւ ինքեանք կային ի հարկի ծառայութեան:

ԳԼՈՒԽ ԺԹ.

1 Յաղագս գալառին Անձտայ:

2 Ապա ի գալառն Անձտայ արշաւէր, եւ հարկանէր Մուշեղ զկողմանս գալառացն այնոցիկ՝ որ շուրջ էին գնովաւ. քանզի եւ նոքա ապստամբեցին ի թագաւորութենէն Արշակունեաց: 3 Հանէր ընդ սուր զտեարս գալառին. առնոյր պանտանդս, եւ նուաճէր. ի հարկի ծառայութեան թագաւորին Հայոց Պապայ զամենեսեան առ հասարակ կացուցանէր:

ԳԼՈՒԽ Ի.

1 Յաղագս Մուշեղի սպարապետին Հայոց:

2 Այլ քաջն գալառաւորն սպարապետն Հայոց լի էր քինիւ մեծաւ¹ եւ բազում նախանձու զամենայն աւուրս կենաց իւրոց, եւ միամտութեամբ եւ արդար վաստակով ջանայր հանապազ եւ վաստակէր ի վերայ թագաւորութեանն Հայոց աշխարհին: 3 Զտիւ եւ զգիշեր կայր յաշխատութեանն. ջանայր եւ ճգնէր կալ ի ճակատու պատերազմին, եւ ոչ թողոյր բնաւ ամենեւին եւ ոչ քան զկորի մի գետին ի սահմանաց երկրին Հայոց ուրեք վտարել. ի վերայ աշխարհին կեալ, եւ ի մեռանել ի վերայ անուանն քաջութեան, ի վերայ բնակ տերանց, եւ ի վերայ բնակչաց աշխարհին, ի վերայ քրիստոնէութեանն հաւատոյ, ի վերայ հաւատացեալ յԱստուած եւ ի Քրիստոս մկրտեալ ժողովրդոց, ի վերայ եկեղեցեաց, եւ ի վերայ նուիրեալ սպասուց, ի վերայ վկայարանացն Քրիստոսի, ի վերայ ուխտի Աստուծոյ, ի վերայ քերց եւ եղբարց, ի վերայ մերձաւորաց տոհմին, ի վերայ բարեկաց բարեկիր բարեկամաց հանապազ կայր գալառաւորն Մուշեղ ի նա-

հատակութեան պատերազմին, զանձն փոխանակ առնել աշխարհին. եւ յանձն իւր անխայէր ի մեռանել, զամենայն աւուրս կենաց իւրոց առաջի իւրոց բնակ տերանցն Արշակունեոց վաստակէր:

ԳԼՈՒԽ ԻԱ.

1 Յաղագս եպիսկոպոսապետին Ներսէսի, թէ որպիսի՛ այր էր, կամ զի՛նչ գործէր:

2 Այլ եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս շինէր զամենայն աւերեալսն երկրին Հայոց. յանձն առնէր եւ մխիթարէր, դարմանէր եւ տեսուչ լինէր ամենայն աղքատաց. եւ զաւրկունս եւ զաղքատս հանգուցանէր: 3 Եւ շինէր զեկեղեցիս ընդ ամենայն տեղիս, եւ զամենայն կործանեալսն կանկնէր. եւ զամենայն կարգսն տապալեալ ուղղէր եւ նորոգէր: 4 Շինէր եւ հաստատէր, խրատէր եւ յանդիմանէր. բազում առնէր նշանս եւ զաւրութիւնս մեծամեծս եւ բազում բժշկութիւնս սքանչելեաց: 5 Եւ յաւրէնսն² սաստէր մեծապէս. եւ զոր աւրհնէր՝ աւրհնէր³, եւ զոր անիծանէր՝ անիծեալ լինէին: 6 Եւ բազմացոյց զկարգս պաշտանէից յամենայն տեղիս իշխանութեանն ի սահմանացն Հայոց, եւ յամենայն գալառս կացոյց տեսուչս եպիսկոպոսս. եւ հանապազ զգուշանայր տեսութեանն իւրոյ եւ իշխանութեան, որչափ եկաց նա ժամանակս:

ԳԼՈՒԽ ԻԲ.

1 Յաղագս թագաւորին Պապայ, թէ զի՛ա՛րդ էր լի դիւաւք կամ ո՛րպէս վարէրն:

2 Այլ թագաւորն Պապ, զի մինչ դեռ տղայիկ՝ այն ինչ ծնեալ էր ի մաւրէ իւրմէ՝ յայնժամ ձաւնեաց զնա դիւաց անաւրէն մայրն Փառանձեմ, եւ վասն այնորիկ

1 Օրինակ մի յաւելու՝ վրէժխնդիր օրինաց

2 Օրինակ մի՛ յանօրէնսն

3 Յամենայն օրինակս՝ եւ զոր օրհներ եւ զոր անիծանէր

լի էր դիւաւք ի տղայութենէ իւրմէ: 3 Վասն զի հանապազ զկամս դիւաց առնէր, վասն այսորիկ եւ զբժշկութիւն իսկ ոչ կամէր¹ գտանել. զի հանապազ վարէր² զանձն իւր դիւաւք, եւ կախարդանաւք երեւէին դեւքն ի նմա. եւ ամենայն մարդ զդեւսն ի նմա աչաւք բացաւք տեսանէին: 4 Զի յորժամ մարդիկ հանապազաւր յայգորել ելեալ մտանէին, տեսանէին՝ զի յաւձից կերպարանս ելանէին ի ծոցոյն Պապայ թագաւորին, եւ պատէին զուսաւք նորա. եւ ամենեքեան ոյք տեսանէին զնա, երկնչէին ի նմանէ եւ հուպ երթալ: 5 Իսկ նա պատասխանի տայր մարդկանն ասելով՝ թէ մի՛ երկնչիք, զի սոքա իմ են. եւ ամենայն մարդ յամենայն ժամ տեսանէին զայսպիսի ինչ կերպարանս ի նմա:

6 Զի բազում համբարք դիւաց համբարեալ էին ի նմա. եւ յամենայն ժամ ամենայն մարդոյ երեւէր այս, որք զամ մի զթագաւորն տեսանէին. բայց յորժամ հայրապետն Ներսէս մտանէր առաջի նորա կամ սուրբ եպիսկոպոսն Խաղ, դեւքն չերեւեալ աներեւոյթ լինէին: 7 Եւ էր թագաւորն Պապ ի պղծութեան թաւալեալ. երբեմն այլոց էգ եղեալ, տայր զինքն ի խառնակութիւն. եւ երբեմն զայլս էգ արարեալ, զարուսն խառնակեալ պղծէր. եւ երբեմն ընդ անասունս խառնակէր: 8 Եւ այսպէս դիւաւք վարեալ, որք ի նմայն էին բնակեալ զամենայն աւուրս կենաց իւրոց³:

ԳԼՈՒԽ ԻԳ.

1 Յաղագս յանդիմանութեանն սրբոյն Ներսէսի, զի հանապազ թշնամի էր⁴ թագաւորին Պապայ վասն մեղաց նորա:

2 Այլ սուրբն Ներսէս եպիսկոպոսապետն Հայոց հանապազաւր ընդդիմացեալ

թագաւորին Պապայ, կշտամբէր եւ յանդիմանէր մեծաւ վկայութեամբ յանդիմանութեամբ. եւ վասն չարեաց նորա բազմաց ոչ համարձակէր նմա զսեամս եկեղեցւոյն կոխել, եւ ոչ մտանել նմա ի ներքս: 3 Հանապազ կշտամբեալ յանդիմանէր եւ խրատէր, զի գտցէ զանձն իւր ի կորստենէ գործոց իւրոց. եւ հանապազ խաւսէր ընդ նմա, զի փոյթ արասցէ ապաշխարութեան: 4 Դնէր առաջի նորա վկայութիւնս ի գրոց, ահարկանելով յաւիտենական դատաստանացն պատժովք զալ ի զգաստութիւն եւ ի լաւանալ, եւ յառաջդիմութեան արդարութեան կարգացն եւ գործոցն սրբութեան փոյթ առնել:

5 Իսկ թագաւորն Պապ լսելոյ նմա ոչ լսէր՝ այլ եւ ընդդիմացեալ եւս մեծաւ թշնամանաւք, եւ մահու սպասէր նմա, եւ կամէր սպանանել զնա յայտնի. բայց ի թագաւորէն Յունաց յայտնի եւ անարգել անգամ բանիւք չիչխէր, եւ ոչ սակաւ մի համարձակել ի նա թող, թէ մահու աղագաւ: 6 Նա եւ իւր իսկ աշխարհի մարդիկն եւ զաւրքն ամենայն չառնուին յանձն զայսպիսի ինչ առնել. այր՝ զորմէ ամենայն մարդիկ աշխարհին Հայոց կախեալ կային զնմանէ վասն արդար գործոցն, սրբութեան գնացիցն յաշխարհի, խաղաղութեամբ մեծի առաջնորդութեանն. նա եւ վասն յայտնի նշանագործութեանն սքանչելեացն՝ զոր առնէր, իբրեւ յերկնաւոր հրեշտակ՝ այնպէս նայէին ամենայն մարդ: 7 Եւ թագաւորն ռիսացեալ էր ընդ նմա, եւ խնդրէր սպանանել զնա. այլ յայտնի զայս եւ բանիւք ճառել ոչ իշխէր⁵, թէ ոչ՝ իւր զաւրքն սպանանէին զնա: 8 Զի այնպէս ամենայն մարդ ապաստանեալ էին յաղաւթս նորա, եւ սիրէին զնա առ հասարակ մեծամեծք եւ փոքունք, պատուականք եւ անարգք, ազատք եւ շինականք միանգամայն:

1 Օրինակ մի՛ կարէր

2 Յօր. վարժէր

3 Օրինակ մի յաւելու՝ վասն անգեղջ գնացիցն՝ մնայր դեւն

4 Օրինակ մի՛ թշնամակէր

5 Օրինակ մի յաւելու՝ ոչ կարէր

ԳԼՈՒԽ ԻԳ.

1 Յաղագս մահու սրբոյն մեծի քահա-
նայապետին Ներսէսի ի թագաւորէն
Պապայ, թէ ո՛րպէս կամ՝ զիա՛րդ սպա-
նաւ ի նմանէ:

2 Այլ թագաւորն Պապ յամենայն ժամ
էր թշնամի մեծի քահանայապետին վասն
յանդիմանութեան մեղաց իւրոց չարեաց՝
զոր գործէրն, եւ յանդիմանեալ լինէր յառ-
նէն Աստուծոյ ի Ներսիսէ հանապազ: 3 Ոչ
զգաստանալ կամէր եւ ոչ զալ յուղղու-
թիւն, եւ ոչ համբերել կարէր հանապա-
զորդ նախատանացն յանդիմանչին. էարկ
ի միտս սպանանել զմեծ քահանայապետն
Աստուծոյ զՆերսէս: 4 Իբրեւ յայտնի զայս
ոչ մարթ էր նմա առնել, կեղծաւորել կեր-
պարանէր իբրեւ այն եթէ յուղղութիւն ինչ
եկեալ է. աղաչէր զքահանայապետն Աս-
տուծոյ տալ նմա ապաշխարութիւն: 5 Եւ
կոչեցաւ յապարանս իւր ի Խախ աւանի
յեկեղեաց գաւառի. արար նմա ընթրիս, ա-
ղաչեաց զայրն Աստուծոյ բազմել նմա
յարքունական գահոյսն, եւ իբրեւ այնու
թէ սրբեսցի նա ի չարեաց անտի իւրոց, եւ
ինքն այնուհետեւ յայնմ հետէ յապաշխա-
րութիւն մտցէ:

6 Իսկ իբրեւ զառաջինն բազմեցոյց,
ինքնին թագաւորն յոտն կացեալ հուա-
նեալ, ի մէջգետին անցեալ, անապակ մա-
տուցանէր առնն Աստուծոյ Ներսիսի յընթ-
րիս անդ, եւ դեղ մահու ընդ կոտինդն
խառնեալ մատուցանէր նմա: 7 Եւ յորժամ
ըմբէր զբաժակն զայն, իմացեալ անդէն՝
խաւսել սկսաւ եւ ասէ. Աւրհնեալ է Տէր
Աստուած մեր, որ արժանի արար զիս ըմ-
պել զբաժակս զայս, եւ հասանել մահուս՝
որ վասն Տեառն է, որում եւ ցանկացեալ
էի ի մանկութենէ իմմէ: 8 Արդ զբաժակս
փրկութեան ընկալայց, եւ զանուն Տեառն
կարդացից, զի եւ ես հաւասարեցից հասա-
նել ի մասն ժառանգութեան սրբոցն ի
լոյս: 9 Այլ քեզ, ո՛վ թագաւոր, արժան էր
իբրեւ զայր թագաւոր յայտնի հրաման

տալ եւ սպանանել. զի ո՛վ էր՝ որ արգե-
լոյր զքեզ, կամ ո՛վ էր՝ որ պահէր զձեռն
քո ի գործոց, զոր ինչ կամէիր գործել:
10 Բայց, Տէր, թող սոցա զայս գործս՝ զոր
ինչ գործեցին յիս. եւ ընկալ զհոգի ծառա-
յիս քո, որ հանկուցիչդ ես ամենայն աշ-
խատելոց, եւ կատարիչ ամենայն բարու-
թեանց:

11 Զայս եւ այսպիսի եւ որ ինչ նման
են այսպիսի բանք՝ խաւսեցաւ. եւ յարու-
ցեալ գնաց ի վարս իւր: 12 Եւ զհետ գնա-
ցին նորա ի տաճարէն արքունի ամենայն
մեծամեծքն նախարարքն Հայոց, եւ Մու-
շեղ սպարապետն Հայոց եւ Հայր մարդ-
պետ. եւ ամենայն որ միանգամ էին անդ,
մտին ընդ նմա ի վանս նորա: 13 Եւ իբրեւ
եմուտ ի վանս իւր, վերացուցեալ զպարե-
գաւտս իւր՝ ի վերայ սրտին ցուցանէր կա-
պուտակեալ քան զչափ նկանակի միոյ:
14 Իսկ մեծամեծք նախարարացն մատու-
ցանէին նմա թիւրակէս եւ անդեղեայս
վասն ապրելոյ. իսկ նա ոչ կամեցեալ
զայն՝ ի բաց մերժէր, այլ ասէ. Մեծապէս
եղեւ ինձ բարի, զի եհաս ինձ մեռանել
վասն զգուշութեան պատուիրանացն
Քրիստոսի: 15 Եւ քանզի դուք ձեզն զի-
տէք, զի հրապարակախաւսէի ընդ ձեզ՝
զոր ինչ խաւսէի, արժան էր ինձ հրապա-
րակաւ մեռանել ի ձէնջ, զի այնմ¹ իսկ
ցանկացեալ էի. բայց բարուք ել ինձ վի-
ճակն ընդ ընտիրս, եւ ժառանգութիւն իմ
հաճոյ եղեւ ինձ: 16 Աւրհնեցից զՏէր, որ
այս մասին վիճակի ժառանգութեան ապ-
րեցոյց զիս. եւ մեծապէս խնդութիւն է
ինձ, զի վաղվաղակի լուծայց ես յանաւրէն
եւ յամբարիշտ աշխարհէ աստի յայսմանէ:
17 Եւ բազում ինչ խաւսեցաւ ընդ նոսա
եւ զգուշացոյց զնոսա. եւ աղաչեաց զամե-
նեսին զգուշանալ անձանց, եւ պահել
զպատուիրանս Տեառն:

1 Ի չորս օրինակս՝ այժմ. ի միւս այլ՝ այժմ

18 Եւ յետ այսորիկ սկսաւ զարիւնն գունդ գունդ ի ներքուստ ընդ բերանն արտաքս հոսել իբրեւ զերկուս ժամս: 19 Եւ յետ այսորիկ յարուցեալ եկաց յաղաթս. եղեալ ծունր, խնդրէր զթողութիւն ի վերայ սպանողին իւրոյ: 20 Ապա յետ այսորիկ յիշէր յաղաթս իւր զամենայն մարդս, զմերձաւորս եւ զհեռաւորս, զանարգս եւ զպատուականս. եւ զայնոսիկ անգամ, զորս երբէք ոչ ճանաչէր զնոսա, յիշէր յաղաթս իւր: 21 Եւ յետ աղաթիցն կատարելոյ համբարձեալ զձեռս իւր եւ զաչս իւր ընդ երկինս, ասաց. Տէր Յիսուս Քրիստոս, ընկալ զհոգի իմ: 22 Եւ զայս ասացեալ, արձակեաց¹ զոգի: 23 Եւ առեալ զմարմին սրբոյն Ներսէսի զառնն Աստուծոյ պաշտաւնեայք եկեղեցւոյն, եւ Փաւստոս եպիսկոպոս, եւ պաշտաւնէիցն գլխաւոր՝ Տրդաժ, եւ Մուշեղ սպարապետն եւ Հայր մարդպետ, եւ ամենայն ազատագունդ բանակն արքունի, բարձին յաւանէն ի Խախ գեղջէ՝ ուր գործն կատարեցաւ, տարան ի Թիւն յաւանն յիւր գեւղն: 24 Հանդերձ սաղմոսիւք եւ ակրհոսութեամբ, կանթեղիւք վառելովք եւ մեծապաշտմամբք եւ բազում յիշատակաւք զսուրբն յուղարկեցին: 25 Բայց մինչ չեւ էր ծածկեալ զմարմին սրբոյն, ինքն թագաւորն Պապ երթեալ պատեաց եւ թաղեաց ի մարտիրոսական ի բնակութիւնն. բայց թագաւորն Պապ ի չքմեղս լինելով՝ չլուելոյն առնէր, իբրեւ թէ իւր չիցէ գործեալ զայն:

ԳԼՈՒԽ ԻԵ.

1 Յաղագս տեսլեանն՝ որ երեսեցաւ արանցն սրբոց անապատաւորաց, Շաղիտայ եւ Եպիփանու, մինչ դեռ նստէին ի լերինն:

2 Արք երկու կրաւնաւորք անապատաւորք մինչ դեռ նստէին ի լերինն, ա-

նուն միում Շաղիտա, եւ էր սա ազգաւ ասորի, եւ նստէր յԱռեւծ լերինն. եւ միումն անուն Եպիփան, եւ էր սա ազգաւ յոյն, եւ նստէր սա ի մեծի լերինն ի տեղի դիցն՝ զոր կոչեն Թոռ Անահատայ². եւ էին սոքա երկոքին լեալ աշակերտք սրբոյն Դանիէլի՝ զոր վերագոյնն յիշեցաք. եւ մինչ դեռ յիւրաքանչիւր լերին նստէին սոքա, ի ժամու՝ յորում մեռաւ սուրբն Ներսէս, տեսանէին սոքա յիւրաքանչիւր լեռնէ աշաւք բացաւք ի տուրնջեան ժամու զայրն Աստուծոյ զՆերսէս իբրեւ յամպս յափշտակեալս, զի հրեշտակք Աստուծոյ տանէին զնա ի վեր, եւ գունդք գունդք գային նմա առաջի: 3 Իբրեւ տեսին զայս տեսիլ անապատաւորքն, զարմացեալք ընդ գործն ընդ այնս. բայց Շաղիտայն՝ որ էրն յԱռեւծ լերինն՝ քանզի էր հմուտ այր, գիտաց եթէ հանգուցեալ է սուրբն Ներսէս, եւ այն ոգիք նորա երեւին նմա. բայց Եպիփան եղ ի մտի իւրում, թէ մարմնով իցէ յափշտակեալ զնա: 4 Ապա յարեան յիւրաքանչիւր լեռնէ՝ ընթացեալք փութով մինչեւ յեկեղեաց գաւառ, եկին քննեցին տեսին զի կատարեալ էր սուրբ հայրապետն Ներսէս. եւ եկին մինչեւ ի Թիւոյ գեւղն, եւ տեսին զտեղին՝ յորում եղեալ էր զնա. եւ դիպեալք միմեանց արքն հաւատարիմք, պատմէին միմեանց զոր ինչ տեսինն՝ առաջի ժողովրդոցն: 5 Բայց էին արքն այն հրեշտակակրաւնք, յանապատին սնեալք եւ կեցեալք. զի եւ կարաւղք էին նշանս առնել մեծամեծս, եւ ամենեցուն գիտելի եւ ծանաւթք էին գործք նոցա:

ԳԼՈՒԽ ԻԶ.

1 Յաղագս սրբոյն Շաղիտայի:

2 Շաղիտայս, այր սուրբ, էր լեալ աշակերտ մեծին Դանիէլի. եւ ի տղայութենէ իւրմէ սնեալ էր համակ յանապատս, եւ

1 Օրինակ մի յաւելու՝ զսրբասնեալ

2 Յամենայն օրինակս՝ Նահատայ

ընդ անապատաւորս խոտաճարակ լեալ էր: 3 Եւ յետ հանգստեան սրբոյն Ներսիսի գնաց չոգաւ ի գաւառն Կորդուաց, եւ առնէր նշանս եւ սքանչելիս, եւ բնակէր ի մէջ առիւծոց. աւելի քան գքսան առեւծ հանապազ շրջէին ընդ նմա հանապազորդեալք¹: 4 Էր զի լինէր՝ զի յորժամ ցաւ ինչ ցաւէր գազանացն, գային շուրջ պատէին զնովաւ, եւ ձգձգէին զՇաղիտայն, եւ նշանաւ առնէին խնդրել զբժշկութիւն: 5 Եւ էր երբեմն՝ զի առեւծ մի մեծ, եւ էր ելեալ եղէգն ընդ թաթուլ բազկին առիւծոյն, եւ եկն առեւծն առ սուրբն Շաղիտայն ի լեառնն՝ յորում նստէր. եւ զաւրէն մարդոյ ի վեր առեալ զթաթուլն՝ ցուցանէր նմա զվէրն, նշանացէր նմա բժշկել զինքն: 6 Իսկ սուրբն Շաղիտա հանէր գեղէգն՝ որ ընդ վէրն մտեալ էր, եւ թքանէր ի վէրն, եւ թաշկինակաւն՝ զոր ընդ զլուխն իւր էր ածեալ՝ հանեալ պատէր զթաթ առիւծուն եւ բժշկէր:

7 Եւ այսպէս բիւրապատիկ եւ պէսպէս առնէր զսքանչելիս: 8 Եւ գազանք էին կենաց կցորդ նորա, մինչ շրջէր նա յանապատս գամենայն աւուրս կենաց իւրոց: 9 Եւ ի գետ իբրեւ հասանէր, կաւշկաւքն անցանէր ի վերայ Ղուրցն գետոցն, եւ ոչ թանային կաւշիկք նորա: 10 Եւ յորժամ ի շէն ուրեք իջանէր, զբազում մոլորեալս դարձուցանէր նշանաւք եւ արուեստիւք: 11 Միայն շրջէր. եւ իբրեւ իջանէր ի շէնս, առնէր բժշկութիւնս բազում հիւանդաց. եւ էր սա աւուրբք ծերագոյն:

12 Բայց ամենայն մարդ սպասէր եւ ակն ունէր մահու նորա, վասն ըմբռնելոյ զմարմին նորա: 13 Իսկ սուրբն Շաղիտա իմացեալ զայս՝ թէ սպասեն առնուլ զմարմին նորա բազում մարդիկ, ապա խնդրեաց Շաղիտա յԱստուծոյ, զի մի՛ ոք ըմբռնեսցէ զմարմին նորա: 14 Եւ եղեւ աւր մի յաւուրց, որպէս սովորութիւն էր իւր, գնալ ի

վերայ Ղուրցն գետոյն: 15 Եւ մինչ դեռ անցանէր նա ընդ գետն Կորդուաց, ըստ խնդրուածոցն իւրոց՝ որպէս եւ խնդրեաց նա, յանկարծակի՝ իբրեւ կայր ի մէջ գետոյն՝ յանկարծաւրէն ընդ ջրովն մտեալ սուրբն Շաղիտայն ծածկեցաւ: 16 Եւ մեծ գոյժ եղեւ գաւառին. եւ ժողովեցան անչափ բազմութիւնք մարդկանն ի մի վայր եկեալք կուտեցան, մինչեւ հատին դարձուցին ընդ այլ շրջեցին զգետն: 17 Եւ խնդրէին զմարմինն սրբոյն Շաղիտայի, եւ ոչ կարացին ուրեք գտանել. զի իւր խնդրուածքն առ Աստուած այսպէս էին լեալ յառաջագոյն, սոյնպէս եւ կատարեցաւ:

ԳԼՈՒԽ ԻԷ.

1 Յաղագս սրբոյն Եպիփանու:

2 Այլ երանելին սուրբն Եպիփան էր ընդ² սրբոյն Շաղիտայի աշակերտ եղեալ մեծին Դանիէլի. եւ սա ի մանկութենէ սնեալ էր յանապատի: 3 Եւ յետ մահուանն մեծի քահանայապետին Ներսիսի եկն բնակեցաւ նա ի մեծ Ծոփս յանապատին, որ կոչի անուն տեղւոյն Մամբրէ, ի վերայ գետոյն՝ որ անուանեալ կոչի Մամուշեղ: 4 Եւ էր բնակեալ ի քարանձաւս, եւ հանապազորդեալ էր ընդ գազանս անապատի, եւ ժողովէին առ նա արջք եւ ինձք: 5 Եւ էր սա հանապազորդեալ յանապատին, եւ առնէր սա մեծամեծ նշանս եւ սքանչելիս. եւ դարձուցանէր զբազում մոլորեալս ի հեթանոսութենէ ի քրիստոնէութիւն, եւ լնոյր գերկիրն Ծոփաց վանիւք. եւ զնէր վարժեար ընդ ամենայն երկիրն Ծոփաց, եւ լինէր սուրբն Եպիփան լոյս երկրին Ծոփաց, եւ լուսաւորէր զնոսա մեծապէս:

6 Անցանէր եւ յերկիրն Աղճնեաց, լուսաւորէր եւ զնոսա, եւ լնոյր գերկիրն Աղճնեաց վաներով. եւ շինէր վկայանոց

1 Ի միում օրինակի չի՞՞ հանապազորդեալք

2 Յերիս օրինակս չի՞՞ ընդ. եւ ի միում օրինակի՛ սուրբն Եպիփան ընգեր սրբոյն Շաղիտայի

մի յաւանին ի քաղաքին Տիգրանակերտի, եւ յաւր յիշատակի սրբոցն ի փրկութիւն եւ ի բարեխաւսութիւն աշխարհի. եւ առնէր ինքն նշանս, եւ դառնայր ինքն յիւր վանան: 7 Եւ էր մաւտ ի գետն Մամուշեղ աղբեր մի, եւ ձուկն բազում ելանէր ընդ ակն աղբերն. եւ բազում մարդիկ հանեալ զձուկն, աւգտէին ի նմանէ: 8 Ապա երկու եղբարք ի վերայ ձկանն հակառակեալք, էսպան մինն զմինն. եւ իբրեւ գիտաց սուրբն Եպիփան, ասէ. Յայսմ հետէ այտի ոք ձուկն մի՛ կերիցէ: 9 Եւ անդէն դառնացաւ ձուկն տեղոյն, եւ եղեւ իբրեւ զլեղի դառն մինչեւ ցայսաւր ժամանակի. եւ ոչ ոք որսաց զնա մինչեւ ցայսաւր ժամանակի: 10 Բազում եւ այլ զաւրութիւնս առնէր եւ նշանս անչափս:

11 Իբրեւ բազում կարգս ուղղութեան թողոյր ի գաւառսն յայնոսիկ սուրբն Եպիփան, իսկ նա էառ ընդ իւր զաշակերտսն իւր արս միանձուկն լեառնականս անապատականս, արս հինգ հարիւր, երթալ զնալ յերկիրն Յունաց: 12 Եւ մինչ զեռ երթային, ի ճանապարհին դիպեցաւ նոցա կին մի. իբրեւ անցին ընդ կինն, սկսաւ փորձել զնոսս Եպիփան, ասէ. Իբրեւ՞ զի՛ գեղեցիկ էր կինն եւ վայելուչ: 13 Ասէ մանուկ մի յաշակերտաց անտի. Կինն, զոր դու գովեցեր, միականի էր: 14 Եւ ասէ սուրբն Եպիփան. Դու բնաւ ընդէ՞ր նայեցար տեսանել գերեսս նորա. տեսանե՞ս զի խորհուրդք չարք կան ի քեզ: 15 Եւ անդէն մեկնեաց զմանուկն յիւրմէ, եւ հալածեաց զնա: 16 Եւ ինքն չոգաւ եմուտ ի ծով մեծ, եւ նաւաւք անցին յանապատ ի կղզիս. եւ ունէր զկղզին զայն աւճից բազմութիւնք, եւ էին յայնմ կղզուջ բնակեալ աւճք իժք եւ քարք, բազում գազանք դաժանք թունաւորք: 17 Եւ եղեւ իբրեւ չոգան, եհաս սուրբն Եպիփան ի կղզին յայն, մերժեցան անտի գազանքն, եւ թո-

ղին զկղզին եւ գնացին²: 18 Եւ այնուհետեւ ոչ ինչ վնաս եղեւ նոցա ի կղզուջն յայնմիկ, այլ բնակեցան անդ խաղաղութեամբ: 19 Անդ եկեաց սուրբն Եպիփան, անդէն ի նմին կղզուջ հանգեաւ:

ԳԼՈՒԽ ԻԸ.

1 Յաղագս մեծամեծ նշանացն եւ սքանչելեացն, որ երեւեցաւ յԱստուծոյ ի Մամբրէ յետ գնալոյն Եպիփանու:

2 Ապա իբրեւ գնայր սուրբն Եպիփան ի գաւառէն Ծոփաց յիւրմէ միանձնանոցէն՝ որ անուանեալ կոչի Մամբրէ³, եթող անդ բազում եղբարս միաբանս միահաւանս հաւատացեալս կրաւնաւորս քրիստոնէիցն, լեառնականս ճգնաւորս միանձուկն. եւ ի վերայ նոցա երէց մի զլիւաւոր: 3 Բայց էին ի նոցանէ ոմանք, որ բնաւ ամենեւին այլ ինչ կերակուր չէր ճաշակեալ նոցա ի մանկութենէ իւրեանց, բայց լոկ բանջար եւ ջուր. եւ զհամ գինուոյ գիտէին ոչ զիարդ լինի⁴:

4 Եւ էր անդ եղբայր մի խստակրաւն, որ մթին վարս վարէր. եւ ոչ ճաշակէր ամենեւին ի բաժակէն կենարար փրկութեանն յուսոյն յարութեանն, այս ինքն յարենէն Տեառն մերոյ Յիսուս Քրիստոսի: 5 Զի ոչ կարէր հաւատալ՝ թէ ճշմարտիւ արիւն իցէ Որդուոյն Աստուծոյ, յորժամ ելանիցէ ի սեղանն Աստուծոյ⁵. այլ նմա գինի լոկ թուէր թէ իցէ, վասն այսորիկ վիճէր հանապազ ընդ բազումս: 6 Իսկ եղեւ աւր մի յաւուրց, իբրեւ կատարէին անդ զխորհուրդս գոհութեան պատարագին ի վկայանոցի անդ յայնմիկ՝ զոր էր շինեալ

1 Օրինակ մի՛ վաշ զի գեղեցիկ

2 Յօրինակի միում՝ եւ աղօթիւք հալածեաց զամեցայն, եւ ոչ մի երեւէր. այլ բնակեցան անդ խաղաղութեամբ. եւ եկաց ի նմին կղզուջ եւ հանգեաւ ի Քրիստոս

3 Օրինակ մի՛ յիւրմէ իցէ, եթող անդ բազում եղբարս

4 Օրինակ մի չուցի՛ եւ գիտմ գինուոյ գիտէին ոչ զիարդ լինի

5 Ի միում օրինակի՛ ի սեղանն սուրբ եւ բաշխեալ ձեռամբ քահանային. այլ նմա

սրբոյն Եպիփանու, յորժամ հանին զհացն սրբութեան եւ զգինին՝ արիւնանալ պատարագին ի վերայ սեղանոյն, եւ կայր եղբայրն, անհաւատ ի վկայանոցին: 7 Եւ էրէցն ելեալ կայր ի վերայ առաջի սրբոյ սեղանոյն. յորժամ յառաջ քան զմատուցանել զպատարագն համբառնայր զձեռս էրէցն ի վերայ սեղանոյն, եւ ասէր.

8 Տէր Աստուած զաւրութեանց, որ արարեր զամենայն¹ յոչընչէ, եւ ստեղծեր զմարդ ի հողոյ կենդանի եւ անապականացու, եւ անցին զքոյով պատուիրանաւքդ, ի անկան եւ մահ՝ իւրեանց պատուիրանագանցութեամբն: 9 Եւ արդար դատաստանաւք քովք մերժեցեր զնոսա ի դրախտէն փափկութեան յայս աշխարհ՝ ուստի ստեղծեր, եւ զրաւեցան լինել ընդ մահապարտութեամբ. սակայն ոչ թողեր ի ձեռանէ, բարերարդ Աստուած, այլ տեսչութեամբ եւ շնորհաւք միաձնիդ քո վերստին ծննդեամբ նորոգեցեր զստեղծուածս քո, եւ բազում կերպարանաւք այցելու եղեր արարածոց քոց: 10 Առաքեցեր զմարգարէս, արարեր զաւրութիւնս ազգի ազգի նշանս ի ձեռն սրբոց քոց՝ որք յազգս ազգս իւրեանց հաճոյ եղեն առաջի քո. ետուր զաւրէնս յաւգնականութիւն, առաքեցեր հրեշտակս վերակացու: 11 Իսկ իբրեւ եկն կատարած ժամանակաց, խաւսեցար ընդ մեզ միաձին Որդւովդ քո՝ որով զաշխարհս արարել, որ է պատկեր փառաց քոց եւ կերպարանք էութեան քո, եւ կրէ զամենայն բանիւ զաւրութեամբ. որ ոչ ինչ յափշտակեաց զէական Հաւրն զբնութեանն հաւասար պատիւ անձինն, այլ Աստուածն յաւիտենական ի յերկրի երեւեցաւ, ընդ մարդկան շրջեցաւ, ի սրբոյ Կուսէն մարմնացաւ, զկերպարանս ծառայի էառ, եւ եղեւ ի նմանութիւն տկարութեանս մերոյ, զի արասցէ զմեզ նմանակիցս փառաց իւրոց: 12 Զի յամենայն

գայթակղութեանց եւ յամենայն մոլորութենէ փրկեցեր զմեզ. եւ բարձեր յամենայն երկրէ զանյուսուծիւն թերահաւատութեան, եւ ետուր զյուսոյ զհաւատս յարութեան ամենայն քոց արարածոց, որոց եւ զնմանութիւն պատկերի կերպարանաց քոց շնորհեցեր: 13 Եւ հաւատովքն, զոր ետուր զաւրանալ ի մարդիկ, զամենեսեան առ հասարակ միանգամայն կեցուցեր շնորհելով. զի ոչ եթէ վասն արդարութեանց ինչ մերոց, զի ոչ ինչ արարաք զբարիս ի վերայ երկրի, այլ վասն ողորմութեան եւ զթութեան քո՝ զոր սփռեցեր ի մեզ՝ համարձակիմք խնդրել ի սրտագէտէդ, որ քննես զսիրտս եւ զերկիւմուսս որդոց մարդկան: 14 Դու, Տէր, սրտագէտ յամենայնի, դու գիտես զճշմարտութեան զվաստակոց զառնս զայսորիկ, զի խստամբերութեամբ վարի ի վարս վաստակոց իւրոց, եւ չիք հաւատք ի սմա. արդ յաւել ի սա հաւատս քան զհատ մանանխոյ, զի մի՛ կորիցէ անձն սորա: 15 Հովիւ քաջ, որ ելերդ ի խնդիր ոչխարին կորուսելոյ, եւ եղիր զանձն քո ի վերայ խաշանց քոց, արդ եւ զսա փրկեա ի թերահաւատութենէս՝ յոր ըմբռնեալս է, զի մի՛ յափշտակեացէ թշնամին զանձն սորա, եւ քո ստեղծուածս եւ նմանութիւն կերպարանացս յապականութիւն յաւիտենական կորստեան մատնեսցի:

16 Եւ զայս աղաւթս մատուցանէր էրէցն յառաջ քան զմատուցանելն պատարագին, եւ յետ այսորիկ մատոյց կատարեաց զպատարագամատոյցն զամենայն: 17 Իբրեւ ասաց՝ Հայր մեր որ յերկինս, եղ ծունր եւ կայր յաղաւթս յերկար: 18 Եւ մինչ դեռ եղեալ էր նորա ծունր եւ կայր յաղաւթս, եւ կայր եղբայրն թերահաւատ ի յոտն, ի խոնարհ ի բեմէն նայէր ի սեղանն, սկսաւ տեսանել մեծամեծ սքանչելիս աչաւք բացաւք իւրովք: 19 Քանզի տեսանէր զՔրիստոս, զի իջեալ կայր ի վերայ սեղանոյն. եւ բացեալ էր իւր զվէրսն ի

1 Օրինակ մի յաւելու՝ արարածս

կողմանէ, զոր ի կողան գեղարդեամբն խոցեցին. եւ ի վիրէ կողիցն արիւնն ցնցողկացեալ հոսէր ի բաժակ անդր պատարագին, որ եղեալ էր ի վերայ սեղանոյն: 20 Իսկ իբրեւ ետես զայս եղբայրն թերահաւատ կրաւնաւորն, զարհուրեալ դողացեալ խռովեալ տազնապեալ յերկիր կործանեալ կայր, ի բերանս հարեալ, պարտեալ թալացեալ ոգին սպառեալ յինքենէ:

21 Ապա երէցն յարուցեալ կատարեաց զգործ սրբութեան պատարագին. իջուցեալ զսրբութիւն աւրինացն ի բեմբէն, ետես գեղբայրն, զի յերկիր կործանեալ թալացեալ կայր: 22 Իբր ետ ում տալ էր զաւրէնսն, եւ եհան զմնացորդսն ի սեղանն, ապա ինքն մատուցեալ բուռն հարկանէր գեղբաւրէն. եւ տեսանէր, զի նա թալացեալ պակուցեալ կայր ի գետնին: 23 Ապա ջուր արկանէր ընդ բերանաւն¹. Իսկ նա ուրեմն եբեր զողի. եւ զգաստացեալ, մատեաւ եկաց պատմեաց զմեծամեծ սքանչելիսն՝ զոր ինչ ետեսն: 24 Ապա կամեցաւ տալ նմա երէցն ի սրբութենէն անտի աւրինացն. իսկ եղբայրն չհաւանեալ չառնոյր յանձն, վասն զի անարժան համարէր զանձն իւր: 25 Այլ հոր հատեալ անձինն, ի ներքս իջեալ, գեւթն ամ ապաշխարեալ զթերահաւատութիւն մեղաց իւրոց, եւ յետ եւթն ամին ապա զանձն արժանի ապաշխարութեան համարէր, ելանել առնուլ ընդ աւրէնսն հաւասարել: 26 Սակայն ի նոյն հոր իջուցեալ զանձն իւր զամենայն աւուրս կենաց իւրոց, մինչեւ ի նմին հոր վաղձանեցաւ եղբայրն: 27 Ապա եւ նոյն երէցն հանգեաւ, եւ ի միասին երկոքին եղան ի ներքս ի վկայանոցին, ուր սքանչելիք երեւեցան յեղբայրանոցին Եպիփանու:

ԳԼՈՒԽ ԻԹ.

1 Յաղագս Յուսկան՝ որ էր ի գաւակէ Աղբիանոս եպիսկոպոսի, գոր կացոյց փոխանակ Ներսիսի թագաւորն Պապ յիւրոց կամաց՝ առանց մեծ եպիսկոպոսապետին Կեսարու. եւ վասն այսորիկ բարձաւ իշխանութիւն հայրապետացն Հայոց գեպիսկոպոսն ձեռնադրել:

2 Եղեւ յետ մահուանն հայրապետին Ներսէսի կացոյց թագաւորն Պապ զՅուսիկ եպիսկոպոս, որ էր ի զաւակէ Աղբիանոս եպիսկոպոսին Մանազկերտոյ: 3 Ետ հրաման ունել նմա գտեղի հայրապետին², իշխել փոխանակ նորա՝ զոր սպան. եւ էր նա փոխանակ նորա: 4 Բայց լուաւ եպիսկոպոսապետն Կեսարու՝ թէ սպանին զմեծ հայրապետն Ներսէս, եւ փոխանակ նորա տեղի նորուն զոր կացուցին զՅուսիկ՝ առանց նորա հրամանի եղեալ, զի ոչ որպէս սովոր էին առ հայրապետն տանել ի Կեսարիա ի ձեռնադրութիւնն:

5 Եւ իրքս այս մեծ զարմանալով³ ցասման եղեալ հայրապետին Կեսարու վասն բանիս այսորիկ, եւ եղեւ ժողով եպիսկոպոսացն սիւնհոգոսին նահանգին Կեսարու առանց հայրապետին. եւ գրեցին թուղթ ցասմամբ մեծապէս: 6 Եւ նոյնպէս եւ գրեցին թուղթ առ թագաւորն Պապ, եւ լուծին զիշխանութիւնն կաթողիկոսութեանն. զի որ լիցին հայրապետ Հայոց, նա դրանն արքունի իշխեսցէ⁴ զհացն աւրհանել. եւ մի՛ իշխեսցէ ձեռնադրել գեպիսկոպոսն Հայոց, որպէս սովորութիւն էր ի բնէ: 7 Եւ յայնմ հետէ բարձաւ իշխանութիւնն Հայոց գեպիսկոպոսն ձեռնադրել. այլ որ լինէին եպիսկոպոսք ամենայն գաւառաց գաւառաց Հայոց եւ կողմանց կողմանց, այնուհետեւ յայնմ հետէ որ միանգամ լինէին եպիսկոպոսք սահմանացն Հա-

1 Յօրինակի միում՝ ընդ բերան առն

2 Օրինակ մի՝ հայրապետացն

3 Օրինակ մի՝ գայրանալով

4 Օրինակ մի՝ լիցի

յոց, երթային ի քաղաքն կեսարացոց, եւ անդ լինէին եպիսկոպոսք: 8 Վասն զի յայնմ հետէ բարձաւ իշխանութիւնն յերկրէն Հայոց, այնուհետեւ ոչ իշխէին եպիսկոպոսք ձեռնադրել. բայց որ լինէր աւագ եպիսկոպոսացն, ի վերոյ միայն նստէր, եւ հաց աւրհնէր թագաւորացն: 9 Եւ սա քրիստոնեայ, բայց համարձակութեամբ յանդիմանութեամբ ինչ ընդ ումեք չիշխէր բարբառել. կամ զի երկնչոտ էր եւ հաւան, եւ ըստ կամաց թագաւորին միայն ունէր զպատիւն, եւ կայր ի լռութեան եւ ի հանդարտութեան զամենայն աւուրս կենաց իւրոց:

ԳԼՈՒԽ Լ.

1 Յաղագս սգոյն, որպէս սգային գհայրապետն Ներսէս, եւ լինէին զմմանէ կաթողի:

2 Ապա յետ սպանանելոյն Պապայ զսուրբ Հայրապետն Ներսէս, տիրեցաւ ամենայն մարդ խոր տրտմութեամբ. եւ ամենայն մարդ երկրին Հայոց հաւանէին խաւսէին եւ ասէին. Բարձեալ են արդ փառք Հայոց, զի բարձաւ արդարն Աստուծոյ յայսմ երկրէ: 3 Խաւսէին իշխանքն եւ նախարարքն, եւ ասէին. Գիտեմք արդ թէ կորեաւ երկիրս մեր. զիս'րդ հեղաւ արիւն արդար ի տարապարտուց, մանաւանդ զի վասն Աստուծոյ սպանաւ: 4 Եւ խաւսէր Մուշեղ սպարապետն Հայոց եւ ասէր. Սրբոյն Աստուծոյ հեղաւ արիւն ի տարապարտուց. այսուհետեւ ես ոչ կարեմ երթալ ի վերայ թշնամեաց, եւ ոչ նիզակ ումեք ուղղել: 5 Զի գիտեմ եթէ եթող Աստուած ի ձեռանէ զմեզ. եւ լքեալ եմք, եւ ոչ կարեմք համբառնալ զգլուխս մեր. զի գիտեմ ես՝ եթէ չիք յաղթութիւն ի վերայ թշնամեաց երկրիս Հայոց. յաղաւթից նորա էր յաղթութիւն որ մեռան, եւ ազգի նոցա: 6 Եւ սգային ամենայն ազատք եւ շինականք ծագէ ի ծագ ամենայն սահմանաց երկրին Հայոց, ազատք եւ շինականք ամե-

նայն բնակիչք տանն Թորգոմայ, հայ լեզուն առ հասարակ:

ԳԼՈՒԽ ԼԱ.

1 Յաղագս թէ ո'րպէս զկնի մեռանելոյն հայրապետին Ներսիսի, եւ կամ ո'րպէս ի նախանձ մտեալ տապալեաց թագաւորն Պապ զամենայն եղեալ կրաւնս կանոնիցն՝ որ ինչ եղան ի Ներսիսէ առ կենդանութեամբ նորա ի մմանէն:

2 Իսկ թագաւորն Հայոց Պապ, զի թէպէտ եւ սպան զհայրապետն աշխարհին Հայոց զՆերսէս, սակայն ոչ յագեցաւ մահուամբ նորա, այլ ջանայր յայսպէս՝ թէ զինչ միանգամ կարգք իցեն ուղղութեան ի Ներսիսէ եղեալ յեկեղեցոջն, եղծեսցէ եւ խանգարեսցէ: 3 Եւ սկսաւ նախանձ վարել ընդդէմ յառաջագոյն կանոնելոցն ի նմանէ. եւ սկսաւ հրաման տալ յայտնապէս յաշխարհին աւերել զայրենոցսն եւ զորբանոցսն՝ զոր շինեալ էր Ներսէս ի գաւառս գաւառս, եւ աւերել զկուսաստանսն ի գաւառս գաւառս եւ յաւանս յաւանս պարսպեալս եւ ամրացեալս, որ նորին Ներսիսի էր շինեալ վասն ամրապահս առանգոցն՝ զգուշութեան: 4 Քանզի յիւրում կենդանութեան երանելոյն Ներսիսի էր շինեալ. շինեաց զայս կուսաստանս յամենայն գաւառս, զի որ միանգամ կուսանք եւ հաւատացեալք իցեն՝ անդր ժողովեացին ի պահս եւ յաղաւթս, եւ կերակրել յաշխարհէ եւ յիւրաքանչիւր ընտանեաց: 5 Զայն աւերել հրամայէր Պապ թագաւորն, եւ զկուսանսն հաւատացեալս տայր հրաման ի խառնակութիւն պղծութեան:

6 Եւ յամենայն աւանս էր շինեալ նորին Ներսիսի եւ հիւանդանոցս, յամենայն կողմանց եւ ոռճիկս եւ դարմանս կարգեալս, եւ արս հաւատարիմս թողեալ տե-

1 Ի վեց օրինակս՝ աւանդոցն

սուչս հիւանդացն¹ եւ աղքատացն. նոյն-
պէս եւ այնոցիկ յանձն արարեալ որք եր-
կիւղածքն էին յԱստուծոյ, որք դատաս-
տանացն յաւիտենականացն եւ գալս-
տեանն Քրիստոսի սպասէին: 7 Զվերակա-
ցուսն հալածէր թագաւորն յիւրաքանչիւր
տեսչութենէ, եւ գտեղիսն ի բաց աւերէր:
8 Զոր վերակացուսն կարգեալ էր յաղագս
չքաւորացն եւ աղքատաց տեսուչ, զնոսս
ի բաց հալածէր. եւ հրաման տայր ամե-
նայն աշխարհի իշխանութեանն իւրոյ.
Աղքատքն² բայց եթէ ի մոյր ելցեն. այլ
անդր ոք ինչ մի՛ իշխեսցէ տանել, եթէ ոչ
նոքա եկեսցեն ժտեսցեն աղաչեսցեն, ապա
թէ գտանել հազիւ ինչ կարասցեն: 9 Եւ
զկարգս պտղոյն եւ գտասանորդացն՝ որ ի
նախնեացն կարգեալ սովորութիւն էր տալ
յեկեղեցին, վասն այնորիկ հանէր հրաման
ընդ աշխարհ՝ զի մի՛ ոք տացէ³:

10 Եւ յաւուրսն Ներսիսի հայրապետի
ոչ ոք իշխէր ի նմանէ հանել կամ թողուլ
զկին իւր զամուսին յամենայն երկիրն Հա-
յոց. զոր միանգամ քաւղով կամ պսակաւ
հարսանեացն աւրհնութեամբ առեալ էր.
եւ ոչ այլ առնել միւսանգամ իշխէր ոք
համարձակել: 11 Եթէ յանկարծ մեռանէր
ոք, ոչ ոք իշխէր անյուսութեամբ արտա-
քոյ կարգի կանոնի եկեղեցւոյ լալ գմե-
ռեալն. եւ ոչ կոծ ոք դնէր կամ աշխարանս
մեռելոյն, եւ ոչ ձայնս ոք արկանէր ի վե-
րայ մեռելոյն յաւուրսն Ներսիսի. այլ լոկ
արտասուաւք եւ ըստ արժանի սաղմոսիւք
եւ աւրհնութեամբ, կանթեղաւք եւ մոմե-
ղինաւք լուցելովք գմեռեալսն յուղար-
կէին: 12 Իսկ յետ մահուան նորա այնու-
հետեւ ամենայն մարդ առին հրաման հա-
մարձակութեամբ ի թագաւորէն, թողուլ
զկանայս զամուսինս իւրեանց. էր զի մի
այր տասն կին փոխէր. եւ առ հասարակ

յանաւրէնութիւն դարձան միանգամայն:
13 Ապա յետ մահուան Ներսիսի յորժամ
գմեռեալսն լային, փողովք եւ փանդուաւք
եւ վնաւք զկոծսն պարուցն կաքաւելով,
գտիգսն հատեալս, զերեսս պատառեալս,
արք եւ կանայք պղծութեամբ ճիւղու-
թեամբ պարուք դէմ ընդդէմ հարկանելով⁴,
եւ կամ ափս⁵ հարկանելով, գմեռեալսն յու-
ղարկէին:

14 Իսկ յամսն Ներսիսի զաղքատս
բնաւ ամենեւին ի մոյր ոչ տեսանէր ընդ
ամենայն սահմանսն Հայոց. այլ անդէն ի
հանգստեան նոցին, այս ինքն յաւրկա-
նոցսն, ամենայն մարդիկ տանէին զամե-
նայն պիտոյս նոցա. անդէն իսկ անկա-
րաւտ յամենայն ումեքէ լցեալ էին:
15 Իսկ յետ մահուն քահանայապետին թէ
առնէր ոք հանգիստ աղքատացն, մեծ պա-
տիժս կրէր ի թագաւորէն:

16 Իսկ յաւուրսն Ներսիսի ընդ ամե-
նայն երկիրն Հայոց կարգք պաշտաման ե-
կեղեցւոյն մեծապէս պայծառացեալ էր. եւ
բազմութիւն սրբոց պաշտաւնէիցն կանո-
նելոցն: 17 Եւ յիշատակ սրբոց վկայից յա-
ւուրս նորա յամենայն տեղիս Հայոց մե-
ծախումբ ժողովովք⁶ հանապազ պայծա-
ռանային, եւ պատիւ հարցն եպիսկոպոսաց
յամենայն գաւառս Հայոց յաճախէր ըստ
արժանի իւրեանց. եւ կարգք վանականաց
եւ ի շէնս եւ յանշէնս առ հասարակ ծաղ-
կեալ: 18 Այլ ամենայն եղծեալ ապականե-
ցաւ խանգարեցաւ յետ մահուան նորա:

19 Իսկ յաւուրս քահանայապետու-
թեան⁷ Ներսիսի ամենայն գաւառք Հայոց
յամենայն ի շէնս եւ ի գիւղս յամենայն
կողմանս Հայոց առ հասարակ ի հրամանէ
քահանայապետին էին շինեալ աւտարա-
տունք⁸ հիւանդանոցք աւտարանոցք. եւ

1 Օրինակ մի՛ հիւանդանոցացն

2 Ի միում օրինակի՛ իւրոյ աղքատացն

3 Ի միում օրինակի՛ հրամայէր աշխարհի այլ ոչ
տացեն գայն

4 Թերեւս՝ կախելով

5 Ի չորս օրինակս՝ կամ ասիս

6 Յամենայն օրինակս՝ ժողովք

7 Օրինակ մի՛ հայրապետին

8 Ի միում օրինակի չի՞՞՞ օտարատունք

ամենայն մարդիկք երկրին Հայոց էին պտղաբերք եւ ողորմածք առ ի յիշել զպղաքատս եւ զնեղեալս, զտառապեալս եւ զաւտարս, զհարստահարս, զնշդեհս, զպանդուխտս, զհիւրս, զանցաւորս. եւ էր նոցա կարգեալ վերակացուս սրբոյն Ներսիսի, եւ դարմանս ի տեղեաց տեղեաց: 20 Իսկ յետ մահու նորա աւերեաց զայն ամենայն թագաւորն Պապ, եւ անարգեաց զպատիւ եկեղեցւոյ. եւ բազում ինչ կարգ եւ կանոնաց ուղղութեան յաւրինուածոց՝ զոր եղ հայրապետն Ներսէս, եւ անցեալ դարձեալ ի մոռացաւնս զամենայն կարգեալն տապալէր: 21 Յետ նորա ելիցն յաշխարհէս բազում գաւառք Հայոց եւ բազում մարդիկ ի հնութիւն դիւապաշտութեան դարձան եւ ընդ բազում տեղիս Հայոց կուռս կանգնեցին ի համարձակութենէ թագաւորին Պապայ. զի ոչ գոյր յանդիմանիչ, եւ ոչ ոք էր այն՝ յորմէ խիթային. զինչ եւ կամէին գործել, համարձակութեամբ գործէին. բազումք պատկերս կանկնեալ՝ երկիր պագանէին:

22 Եւ հատ եւս յարքունիս Պապ թագաւոր զհոգ եկեղեցւոյն, զոր տուեալ էր թագաւորին Տրդատայ առ մեծաւն Գրիգորիւ քահանայապետիւ ի սպաս պաշտաման եկեղեցւոյն ընդ ամենայն երկիրն Հայոց: 23 Զի յեւթն հոգոյն զհինգն հատանէր յարքունիս, եւ զերկուսն միայն թողոյր, երկուս հոգս: 24 Եւ ըստ հոգոյն թողոյր երկուս երկուս առ գեւղ մի երէց եւ սարկաւազ, եւ զայն՝ սպասու կացուցանէր յիւր ի ծառայութեան զեղբարս եւ զորդիս երիցանցն եւ սարկաւազացն: 25 Զի նմա այսպէս թուեցաւ՝ եթէ զայն չար ինչ կամացն հեծուկս Ներսիսի առնիցէ ի կենդանեաց առ մեռեալս, վասն թշնամութեանն՝ զոր ունէր ընդ նմա: 26 Եւ զայն ոչ ածէր զմտաւ՝ թէ զանձն կորուսանէ: Եւ ի ժամանակին նուաղէին ամենայն կարգք եկեղեցւոյ պաշտամանն սպասուցն յամենայն երկիրն Հայոց:

ԳԼՈՒԽ ԼԲ.

1 Յաղագս թագաւորին Պապայ թէ ո՛րպէս խոտորեցաւն ի թագաւորէն Յունաց, կամ ո՛րպէս սպանաւ ի զաւրացն Յունաց:

2 Եւ շրջեաց զմիտս իւր թագաւորն Պապ եւ խոտորեաց զսիրտ իւր ի թագաւորէն Յունաց, եւ կամեցաւ խառնել զսէր իւր եւ առնել միաբանութիւն ընդ թագաւորին Պարսից: 3 Եւ սկսաւ թիկունս իւր առնել զարքայն Պարսից, եւ արձակել անդրէն հրեշտակս յաղագս միաբանութեան: 4 Եւ առաքէր հրեշտակս առ թագաւորն Յունաց, եթէ Կեսարիաւ հետ՝ եւ տասն քաղաք մեր լեալ է, արդ ի բաց տուր. եւ զՈւռհա քաղաք շինեալ է նախնեացն մերոց. արդ եթէ ոչ կամիս խանգար ինչ առնել, տուր ի բաց. ապա թէ ոչ, կուռիմք մեծաւ պատերազմաւ: 5 Այլ Մուշեղ եւ ամենայն իշխանքն Հայոց շատ եղին ի մտի արքային, զի մի՛ քակեսցէ զուխտ յերկրէն թագաւորութեանն Յունաց. եւ ոչ անսաց նոցա, եւ յայտնեաց զթշնամութիւն իւր՝ զոր ունէր ընդ թագաւորին Յունաց:

6 Այլ իշխանքն Յունաց եւ զաւրքն նոցին տակաւին էին յերկրին Հայոց. եւ անուն իշխանացն՝ միուամն Տէրէնտ, միւսուամն Ադէ: 7 Եւ յղեաց դեսպան մի գաղտուկ թագաւորն Յունաց առ իշխանսն զաւրացն իւրոց՝ որ էին յերկրին Հայոց, եւ հրաման տայր սպանանել զթագաւորն Հայոց զՊապ: 8 Եւ եղեւ իբրեւ ընկալան զայս հրաման ի թագաւորէն Յունաց իշխանքն իւր՝ որ էին ի Հայոց երկրին, սպասէին մահու ի դէպ՝ սպանանել զթագաւորն Հայոց զՊապ: 9 Եւ եղեւ ի դիպան ժամանակի իբրեւ գիտացին Տէրէնդն եւ Ադէն զաւրաւարքն զաւրացն Յունաց՝ թէ միայն է թագաւորն Հայոց Պապ, եւ ամենայն մեծամեծքն եւ զաւրքն Հայոց չէին անդ, եւ էր թագաւորն Հայոց Պապ բանակեալ ի դաշտին ի Բազրաւանդ գաւառի ի

Խուս անուսն տեղույն, եւ բանակ զաւրացն Յունաց բանակեալ էր անդէն մաւտ առ բանակին Հայոց արքային. ապա զաւրավարն Յունաց հաց մեծապէս գործեալ յընթրիս հրաւիրեալ կոչեցին զմեծ թագաւորն Հայոց զՊապ մեծապէս ըստ արժանաւորութեան նորա, որպէս աւրէն էր զայր թագաւոր ի հաց մեծ կոչել. եւ առնէին կազմութիւն պատրաստութեան:

10 Եւ եկեալ թագաւորն Պապ յընթրիս, մտեալ բազմեցաւ յուտել եւ յըմբել: 11 Եւ իբրեւ մտանէր արքայն ի խորանն Տէրէնդի զաւրավարին Յունաց, եւ լեզէոն սպարակիր հետեւակն վահան ի ձեռն, սակուր զգաւտույ, շուրջ ի ներքոյ գործովք խորանին պատեալ պսակէին. սոյնպէս եւ արտաքոյ կազմէին ի ներքոյ կուռ վառեալք, եւ ի վերոյ հանդերձք զգեցեալք պատրաստէին: 12 Իսկ թագաւորն Պապ համարէր ի միտս իւր՝ թէ ի պատիւ ինչ նորա զայն առնիցեն: 13 Եւ մինչ զեռ յընթրիսն¹ ուտէր, սակրաւոր զաւրքն ի թիկանց կուսէ նորա կարգեալք պսակեալք կային շուրջ զնովաւ յամենայն կուսէ: 14 Իբրեւ ընդ գինիս մտին, որպէս զառաջին ուրախութեանցն նուագն մատուցին արքային Պապայ, եւ առ հասարակ թմբկահարք եւ սրընգահարք, քնարահարք եւ փողահարք իւրաքանչիւր արուեստաւք պէսպէս ձայնիւք բարբառեցան: 15 Եւ վահանաւոր լեզէոնին հրաման ետուն. եւ մինչ զեռ թագաւորն Պապ զուրախութեան գինին ունէր ի մատունս իւր, եւ նայէր ընդ պէսպէս ամբոյս գուսանացն, ահեակ ձեռամբն յարմուկն՝ յոր² յեցեալ բազմեալ էր՝ ունէր տաշտ ոսկի ի մատունս իւր. իսկ աջ ձեռնն եղեալ էր ի դաստապան նրանին՝ զոր կապեալն էր յաջու ազդերն իւրում. եւ մինչ զեռ բերանն ի բաժակին էր յըմպելն, եւ աջաւքն յառաջ

կոյս պշուցեալ հայէր ընդ պէսպէս ամբոյս գուսանացն հրաման լինէր ակնարկելով զաւրացն Յունաց: 16 Եւ լեզէոն սակրաւորքն երկու ի թիկանց կուսէ կային ի սպասու ոսկիկմբէ վահանաւքն, յանկարծաւրէն կից ի վեր առեալ զսակուրան, զարկանէին թագաւորին Պապայ. մին կշիռ գուլն հարկանէր սակրաւն, եւ միւսն եւս սակրաւորն զաջ թաթ ձեռինն՝ որ կայր ի վերոյ դաստապանի նրանին՝ հարկանէր, կտրէր եւ ի բաց ընդենոյր: 17 Անդէն ի բերանս տապալէր թագաւորն Պապ. եւ գինին տաշտիւն եւ արիւնն պարանոցին նովաւ հանդերձ ի վերայ բաժակալ սկտեղն անկանէր առ հասարակ, եւ անդէն սատակէր թագաւորն Պապ: 18 Ընդ շփոթելոյ տաճարին խոռվութեան՝ Գնէլ տէր գաւառին Անձեւացեաց յոտն կացեալ յիւրմէ բազմականէն, հանեալ զիւր սուսերն՝ հարկանէր զմի ի լեզէոնաց անտի սպանանէր, յայնցանէ՝ որ հարին զթագաւորն: 19 Ապա Տէրէնդ զաւրավարին Յունաց զիւր սուսերն հանեալ ածէր, տարակաց ի գլխոյն Գնելոյ զսկաւառակն գլխոյն ի վերայ աչացն ի բաց ընդենոյր: 20 Եւ այլ ինչ ոք ոչ կարաց յանդգնել ասել ինչ ընդ նոսա եւ ոչ ինչ:

ԳԼՈՒԽ ԼԳ.

1 Յաղագս որ ինչ խորհեցան ի յետոյ իշխանին Հայոց, ապա անցին կացին լուռ:

2 Եւ ժողովեցան եկին ամենայն իշխանքն Հայոց մեծամեծք ի մի վայր ի միասին, եւ Մուշեղ սպարապետն եւ Հայր մարդպետ, եւ ամենայն իշխանքն ասէին. Զի՞նչ արասցուք կամ զի՞նչ գործեսցուք, խնդրեսցո՞ւք զվրէժ թագաւորին մերոյ՝ թէ ոչ: 3 Եւ ապա հաստատեցաւ այս բան ի խորհրդեանն, եւ ասեն. Ոչ կարեմք հեթանոսաց ի Պարսկաց ի ծառայութիւն մտանել, եւ թշնամի առնել զթագաւորն Յունաց, եւ ոչ զերկոսեան թշնամի առնել.

1 Յերկուս օրինակս՝ ընթրիսն ուտէր

2 Օրինակ մի՝ յորմն

եւ ոչ առանց միոյ թիկանց կարեմք կեալ:
 4 Ապա եկաց այս բան ի խորհրդին, թէ զինչ եղեւ՝ ահա եղեւ. թող ծառայեսցուք թագաւորին Յունաց, կացցուք ի հնազանդութեան իշխանութեան թագաւորութեանն Յունաց. զիարդ եւ կամք իցեն թագաւորութեան Յունաց՝ արասցեն մեզ:
 5 Եւ ոչ ինչ արկին ի միտ, կամ վրէժ խնդրել, կամ այլ ազգ ինչ իրս առնել. այլ անցին կացին լուռ:

ԳԼՈՒԽ ԼԴ.

1 Յաղագս թագաւորելոյն Վարազդատայ երկրին Հայոց յետ Պապայ:

2 Եւ եղեւ յետ մահուն Պապայ թագաւորին Հայոց, թագաւորեցոյց թագաւորն Յունաց զՎարազդատ ոմն ի նմին տոհմէն Արշակունի ի վերայ աշխարհին Հայոց:

3 Եկն բազում շքով եմուտ յերկիրն Հայոց, եւ թագաւորեաց յերկիրն Հայոց: 4 Եւ էր նա մանուկ յաւուրց, լի արութեամբ, կորովի ձեռաւք, քաջ սրտիւ, եւ ի մտաց թեթեւ, մանգաբարոյ տղայահասնճար մանկամիտ: 5 Բայց սակայն իբրեւ տեսին զնա, ժողովեցան առ նա ամենայն ազգք Հայոց մեծամեծք նախարարք, եւ կամեցեալ խնդացին զթագաւորելն նորա ի վերայ իւրեանց:

6 Եւ սպարապետն Հայոց Մուշեղ առաջնորդէր Հայոց. եւ զգուշանայր զսահմանաւքն Հայոց, որպէս սովոր էր կարգել զաշխարհ մեծապէս. եւ խրատ բարեաց թագաւորին մանկանն Վարազդատայ մատուցանէր: 7 Եւ հոգայր հանապազ վասն թագաւորութեան աշխարհին Հայոց, եւ զիարդ կամ որպէս շէն լինել մարթասցէ. եւ հանապազ երկս արկանէր բարեխորհուրդն, զի հաստատուն կալ կարասցէ թագաւորութիւնն: 8 Խորհէր եւս ընդ իշխանսն Յունաց, եւ նոքաւք ընդ կայսերն, թէ պարտ է նոցա քաղաք մի շինել յերկրին Հայոց. ի մի մի գաւառսն, որ մին մի քաղաքս, որ երկուս երկուս ամուր պարս-

պաւորս զաւրանիստս հաստատել ընդ ամենայն երկիրն Հայոց, մինչեւ ի Գանձակ սահման երկիրն, որ Պարսից կուսէ էր, Հայոց սահման էր. եւ զամենայն ազատսն Հայոց կայսերական թոշակաւքն զինուորել. սոյնպէս եւ զաւրաց երկրին Հայոց, զի այսպէս ամենայն զգուշութիւն լիցի առ ի թշնամեաց իւրեանց ի զաւրացն Պարսից:
 9 Եւ թագաւորն Յունաց յանձին ունէր մեծաւ խնդութեամբ առնել զայս. զի այսու ամենայնիւ աշխարհն հաստատուն լիցի եւ անշարժ ի նմանէն, զի մի՛ կարասցէ թագաւորն Պարսից յիւր վտարել զաշխարհն Հայոց:

ԳԼՈՒԽ ԼԵ.

1 Յաղագս թէ ո՛րպէս ի բանս չարախորհուրդս եւ անմիտ մարդկան ելեալ թագաւորն Հայոց Վարազդատ, զգաւրավարն Հայոց Մուշեղ սպանանէր:

2 Այլ իբրեւ տեսանէին զթագաւորն Հայոց Վարազդատ մեծ նախարարքն Հայոց՝ թէ մանուկ բանսերթուկ է, զչար ի բարոյ որոշել չգիտէ, սկսան այնուհետեւ ըստ կամաց իւրեանց վարել զթագաւորն. որպէս եւ կամէին, բանիւք իւրեանց տանէին եւ բերէին զնա: 3 Նա առաւել ունկն դնէր մանկտոյն՝ որ ի տիոց հասակակիցք էին նորա, առաւել քան զծերոցն իմաստնոց՝ որք կարող էին զաւգտակար խրատն մատուցանել նմա:

4 Այլ Բատ, որ նահապետն էր ազգին Սահուունեաց տոհմին, դայեակ սնուցիչ թագաւորին Վարազդատայ, կամեցաւ նա զգործ զաւրավարութեան սպարապետութեանն Մուշեղայ յինքն յափշտակել ի նմանէ: 5 Վասն այսորիկ սկսաւ քսիս մատուցանել զնմանէն առ թագաւորին Վարազդատայ առ իւրում սանուն, եւ ասել՝ թէ ի սկզբան ի նախնեացն հետէ զծեր Արշակունեաց տոհմին Մամիկոնէից է կորուսեալ, զի հակառակորդք ձեր դոքա լեալ են ի բնէ անտի. եւ համակ գերկիրս Հայոց

դոցա է կերեալ, մանաւանդ Մուշեղի. մանաւանդ զի այր չար է եւ նենգաւոր: 6 Զի սիրելի է ի թշնամեաց ձերոց, եւ ատելի սիրելեաց ձերոց. եւ համակ ընդ ձեզ նենգաւ է գնացեալ, երկմտութեամբ եւ դժխեմութեամբ: 7 Զի ո՞չ այն Մուշեղ է, որ ի թագաւորութեան ժամանակ Պապայ ի պատերազմունսն Պարսից քանիցս անգամ ձեռնահաս եղեւ սպանանել զՇապուհ արքայն Պարսից, եւ ոչ եսպան, այլ արձակեաց զթշնամին. եւ երբեմն զկանայս Շապուհոյ թագաւորին ի բուռն էարկ, եւ խնամոտ զթով ժանուարաւք արձակեաց զնոսա զհետ Շապուհոյ: 8 Ո՞չ այդ այն Մուշեղն է, որ զՈւռնայր արքայ Աղուանից ի բուռն էարկ, եւ սպանանել ոչ կամեցաւ, այլ արձակեաց զթշնամին: 9 Ո՞չ այդ այն Մուշեղն է, զի զարքայն Պապ հրամանաւ դորա եւ դորին խորհրդովդ զաւերավարքն Յունաց սպանին. զի դա ռխացոյց եւ զրգոեաց զարքայն Յունաց ի վերայ թագաւորին Պապայ, մինչեւ ետ սպանանել: 10 Այլ արժան է մեռանել ի ձեռաց քոց, եւ չէ պարտ կեալ դմա. այլ թէ ոչ աճապարեացես, արքայ, այժմ զհայ երկիրս խորհի լնուլ քաղաքաւք, եւ զաւրանիստ առնէ բնակութեան զաւերացն Յունաց: 11 Եւ այնուհետեւ կամ թագաւորն Յունաց հանէ ի քէն զթագաւորութիւնս Հայոց, կամ այս Մուշեղ սպանանէ, եւ ինքն թագաւորէ: 12 Եւ այսպիսի բանիւք զաղտնի հանապազ զթագաւորն զրգոէին, մինչեւ հաւանեցաւ ըստ կամաց նոցա զսպարապետն զգաւրավարն Հայոց սպանանել:

13 Ապա խորհուրդ արարին, թէ ո՞րպէս ըմբռնել կարասցեն գնա. քանզի մեծապէս երկնչէին ի նմանէն: 14 Թէ զգայ, ասեն, մեծ պատերազմ առնէ. եւ ոչ ոք կարէ զդէմ քաջութեան նորա ունել, բայց հնարիւք մեքենաւորութեամբ ինչ լինիցի հնար: 15 Այսպէս սպասէին նմա: 16 Եւ եղեւ յաւուր միող հրաման ետ Վարազդատ արքայ Հայոց ընթրիս մեծ գոր-

ծել եւ մեծ պատրաստութիւն առնել. եւ կոչել հրամայեաց յընթրիսն զամենայն աւագս պատուականս եւ զմեծամեծս, եւ զգաւրավարն Մուշեղ: 17 Պատրաստեաց Վարազդատ արս ընտիրս հզաւրս, գաւրեղք, զի կագմ կայցեն գործոյն, հարկանել յանկարծաւրէն յանպատրաստից յեղակարծումն ժամու ի վերայ Մուշեղի: 18 Զնոսա քաջ ուրախ առնէր մեծապէս, եւ շատ գինի տայր ըմպել, եւ բազում առնէր զբաւսումն ուրախութեան: 19 Արքայն Վարազդատ տայր նշանս յառաջագոյն այնոցիկ, զոր էր սպանաւղն պատրաստեալ, եթէ յորժամ գիտիցես՝ թէ քաջ արբեալ իցէ, եւ զմտաւք զառանցեալ յարեցութենէ սպարապետն Մուշեղ, ես յարուցեալ իբրեւ ի ճեմիչն երթալոյ պատճառաւ, եւ դուք պատեսջիք զնովաւ: 20 Եւ եղեւ իբրեւ անցին զառանցին ի գինւոյն՝ ըստ չափ անցանելով, եւ թագաւորն Վարազդատ պահէր զանձն ի գինւոյն: 21 Իբրեւ գիտաց Վարազդատ՝ թէ արդ յարեցութենէ մտաց ինչ չգգան՝, ինքն յարուցեալ իբրեւ յապարահէ զանց առնելոյ պատճառաւ, եւ աւագանին ամենայն բազմականացն յոտն կացին առ հասարակ, իբրեւ նմա պատիւ ինչ առնել: 22 Եւ յանկարծ արքն, որոց էր տուեալ հրաման, երկոտասան այր կից զոյգ զկնի կողմանէ զնմանէ բուռն հարկանէին, վեց այր ի մի բազուկն Մուշեղի, եւ վեց այր ի միւս բազուկն: 23 Եւ ընդ ոտն կալ թագաւորին, նայեցեալ ընդ նա՝ եթէ՝ Այս ընդէ՞ր է. եւ թագաւորին պատասխանի տուեալ, ասէ. երթ առ Պապ արքայ, հարց եւ տես՝ թէ ընդէ՞ր է այդ: 24 Եւ թագաւորն ի դուրս կոյս գնացեալ ելանէր, եւ ասէ Մուշեղ. Ի վերայ բազում իմոց վաստակոցն արեան եւ քրտան, եւ սլաքաւքն զքրիտն ջնջելոյ, ա՞յս հատուցումն եղեւ ինձ: 25 Բայց իբրեւ եհաս ինձ մահս, թէ ի վերայ ձիոյ դի-

1 Յամենայն օրինակս՝ մտաց ինչ զգան

պեալ էր...: 26 Զայս միայն բանս ժամանեաց ասել, եւ այլ ոչ ինչ ոչ: 27 Եւ անդէն Բատ Սահառունի, դայեակն արքային Վարագդատայ, զնրանն՝ զոր յիւրում ազդերն ունէր՝ Հանեալ, անցոյց ընդ փողս զաւրավարին Մուշեղի. եւ անդէն ի բաց եհատ զգլուխ նորա: 28 Եւ բարձին զնա, եւ տարան զմարմին նորա ի գեւղն իւր:

ԳԼՈՒԽ ԼԶ.

1 Յաղագս անմտութեան կարծեաց ընդանեացն Մուշեղի, եւ այլ մարդկանն:

2 Եւ եղեւ իբրեւ տարան զմարմինն սպարապետին Մուշեղի ի տուն իւր առ ընտանիս իւր, ոչ հաւատային ընդանիք նորա մահուն նորա, թէպէտ եւ տեսանէին զգլուխ նորուն զատ ի մարմնոյն անտի: 3 Զի ասէին. Դորա յանթիւ ճակատ մտեալ էր, եւ վէր երբէք չէր առեալ. ոչ նեա մի դիպեցաւ երբէք, եւ ոչ այլոց զինու խոցեալ է զդա: 4 Իսկ կէսք յառնելոյ ակն ունէին նմա. մինչեւ զգլուխն անդէն ի կոճեղն կարեալ կցեցին, եւ հանին եղին ի տանիսն աշտարակի միոյ. ասէին՝ թէ վասն զի այր քաջ էր, առլեզք իջանեն եւ յարուցանեն զդա: 5 Պահապան կային, եւ ակն ունէին յառնելոյ, մինչեւ ներեցաւ մարմինն: 6 Ապա իջուցին յաշտարակէ անտի, եւ լացին թաղեցին զնա որպէս արէն էր:

ԳԼՈՒԽ ԼԷ.

1 Յաղագս գալոյն Մանուէլի ի գերութեմէ Պարսից, եւ ինդրելոյ զվրէժն Մուշեղի, եւ հալածելոյ զթագաւորն Վարագդատ յերկրէն Հայոց, եւ յինմն ունելոյ զերկիրն Հայոց:

2 Ապա կացոյց թագաւորն Վարագդատ ի գործ զաւրավարութեան սպարապետութեանն զԲատ նահապետն Սահառունեաց տոհմին, որ էր իւր դայեակ, բանսարկու քսուն սպանողն Մուշեղի: 3 Եւ էր նա սպարապետ փոխանակ նորա, զաւրա-

վար ամենայն Հայոց: 4 Եւ ազգին Մամիկոնեան տոհմին տանուտէր նահապետ կացոյց թագաւորն՝ Վաչէ անուն ի նմին տոհմէ:

5 Յայնմ ժամանակի դարձան ի գերութենէն եկին ի Պարսից, զոր տարեալ էր Շապհոյ արքային, արք¹ երկու եղբարք ի Մամիկոնեան տոհմէն. անուն միումն Մանուէլ, եւ անուն երկրորդին Կոմս²: 6 Քանզի զայն ժամանակաւ թագաւորին Պարսից Սասանականին տուեալ էր պատերազմ ընդ մեծ թագաւորին Քուշանաց ընդ Արշակունւոյն, որ նստէր ի Բաղճ քաղաքին: 7 Եւ իբրեւ երթային զաւրքն Պարսից ի Քուշանացն պատերազմն, ապա եւ զմարդիկ գերութեանն որ ի Հայոց էին թագաւորին Պարսից՝ յղէր ի պատերազմ ընդ իւր զաւրսն. եւ Մանուէլս այս երթայր ընդ նոսա հանդերձ եղբարքն իւրով Կոմսիւ: 8 Եւ իբրեւ եղեն խառնուրդք երկոցունց զնդացն ընդ միմեանս, ապա ի պարտութիւն մատնեցան զաւրքն Պարսից յերեսաց զաւրացն Քուշանաց. դարձան ի փախուստ անհնարին հարուածովք, հասին ի վերայ զաւրացն Պարսից. զի ոչ մի ի նոցանէն ոչ ապրեցուցանէին ի զաւրացն Պարսից. բանբեր անգամ ոչ ապրէր. բայց Մանուէլ որդի Արտաշինայ ի Մամիկոնեան ի տոհմէն, հանդերձ եղբարքն իւրով Կոմսիւ, բազում քաջութիւնս կատարեալ ի նմին ճակատուն, սակայն հետիոտս ապրէին: 9 Եւ գային յամենայն զաւրացն Պարսիցն սոքա միայն հասանէին առ թագաւորն Պարսից ողջ ապրեալք, եւ բազում քաջութիւնս կատարեալ:

10 Սակայն թագաւորին Պարսից բազում տրտմութիւն լինէր յազագս իւրոյ զաւրացն եւ կոտորածոյն. սակայն եւ գայնու զայրացեալ զակատէր, զի զնոսա

1 Յօր. որք

2 Յամենայն օրինակս՝ Կոմ. ուղղեցա՛մ ըստ յաջորդացն

միայն տեսանէր ողջ եկեալ յամենայն զաւրացն իւրոց: 11 Ցասուցեալ ընդ նոսա, այսն արարեալ, հալածեաց յիւրոց սահմանացն. արձակեաց զնոսա յերկիրն իւրեանց: 12 Եւ գնացեալք գային դէմ յանդիման յիւրեանց երկիրն արարեալ: 13 Եւ էին հետիոտք երկոքին եղբարքն. եւ էին երկոքեան մեծք անհեղեղք, երկոքեան անձնեայք որպէս սկայագունք: 14 Մինչ դեռ գային ի ճանապարհի, ոչ կարէր Մանուէլն գնալ, զի ոտիւքն ցաւած էր, ապա Կոմս եղբայր իւր ըստանձնեալ առեալ բառնայր, եւ տասն տասն խրասախ բերէր ըստ անձին գայնչափ այրն գանհեղեղ գանարի. եկն եբեր յերկիրս Հայոց: 15 Եւ եղև իբրեւ եկն եհաս յերկիրն Հայոց Մանուէլ եղբարքն իւրով Կոմսիւ հանդերձ, իբրեւ ետես զնա Վաչէն՝ որ յառաջն էր լեալ նահապետն, մինչ չեւ եկեալ էր նա՝ ետ ցնա զպատիւ իշխանութեանն, զոր առեալ էր ի թագաւորէն Վարազդատայ, քանզի նա էր երէց յազգին. եւ Մանուէլն ունէր գնահապետութեան ազգին տանուտէրութեան պատուին, եւ Վաչէն լինէր երկրորդ:

16 Իսկ յորժամ եհաս եկաց Մանուէլն ի փառս տէրութեան իւրոյ, նախ առանց հրամանի թագաւորին Վարազդատայ յինքն յափշտակեաց զզաւրավարութեանն զսպարապետութիւնն, զի այն ինչ որ իւրոց նախնեացն ի բնէն կալեալ էր ի սկզբանէ, զոր արքայն Վարազդատ շնորհ առնէր իւրում դայեկին Բատայ, գայն Մանուէլ յինքն հանեալ ունէր զիշխանութիւնն: 17 Եղև յետ այսորիկ, պատգամ յղէր սպարապետն Հայոց Մանուէլ առ թագաւորն Վարազդատ, եւ ասէր՝ թէ Փոխանակ ամենայն ազգին մերոյ վաստակոցն, զոր ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ միամտութեամբ առ ձեզ Արշակունիս վաստակեալ եմք, եւ եղեալ գանձինս մեր ի վերայ ձեր, կեցեալ եւ մեռեալ եմք ի վերայ ձեր, ամենայն նախնիքն մեր

առաջինքն անկան ի պատերազմունս ի վերայ ձեր, Վասակ հայր Մուշեղի կորեալ ի վերայ Արշակայ արքայի, եւ մեք հանապազ վաստակեալ եւ աշխատեալ եմք ի վերայ թագաւորութեան ազգիդ ձերոյ, եւ փոխանակ կեանս առնելոյ ընդ վաստակոցն, արդ որք ի թշնամեացն մեռան, որք մնացին՝ գայն դուք Արշակունիքդ կոտորեցիք: 18 Արդ Մուշեղ այր քաջ եղբայր իմ, որ ի վերայ ձեր մաշեաց գանձն իւր ի մանկութենէ իւրմէ, վանեաց կոտորեաց զթշնամիս ձեր, եւ ոչ կարացին թշնամիքն սպանանել, դու կալալ ի բազմականի խեղդեցեր զնա: 19 Նա դու չես իսկ Արշակունի, այլ ի պոռնկութենէ եղեալ ես որդի. վասն այդորիկ ոչ ծանեար զվաստակաւորսն Արշակունեաց: 20 Նա մեք չեմք իսկ լեալ ձեր ծառայք, այլ ընկերք ձեր եւ ի վերոյ քան զձեզ. զի մեր նախնիքն լեալ էին թագաւորք աշխարհին ձենաց, եւ վասն եղբարց իւրեանց զրգոռութեանն, զի արիւն մեծ անկեալ է ի վերայ, վասն այնր եմք գնացեալք. եւ վասն բարւոյ հանգստի գտանելոյ՝ եկեալ դադարեալ եմք: 21 Առաջին թագաւորքն Արշակունիք, որք գիտէինն զմեզ ո՛վ էաք կամ ուստի՛ էաք. այլ զի դու քանզի չես Արշակունի, գնա յաշխարհէս, եւ մի՛ մեռանիր ի ձեռաց իմոց:

22 Իսկ Վարազդատ թագաւորն պատգամ յղէր պատասխանոյն առ զաւրավարն Մանուէլ, եւ ասէր. Եւ քանզի չեմ Արշակունի, զի՞ եդի զթագ նախնեաց իմոց Արշակունեացն, եւ կալայ զաշխարհ առաջնոց իմոց, եւ խնդրեցի զվրէժ հաւրեղբաւրն իմոյ Պապայ ի չարագործ յեղբաւրէն քումմէ ի Մուշեղայ, բայց զի դու չես յաշխարհէս յայսմանէ, զի քեզէն իսկ ասացեր՝ բաս յերկրէն յաշխարհէն ձենաց եմք լեալք թագաւորք ի բնութենէ՞, եւ այսր պանդուխտք եմք եկեալք, արդ ըստ աւրինակի եղբաւրն քո մի՛ մեռանիր:

1 Թերեսս ի բնէ

23 Ձի իմ, առ բարերարութեան իմոյ, արձակեցի՜ զքեզ. երթ գնա յերկիրն ձենաց, անդ կեաց, եւ անդէն թագաւորեսջիր յերկիրն քում: 24 Ապա թէ ոչ կամիցիս գնալ, մեռանիս ի ձեռաց իմոց որպէս եւ Մուշեղն մեռաւ:

25 Իսկ յորժամ բազում անգամ երթեալք եկեալք պատգամաւորք՝ բազում խստագոյն քան զխստագոյն բանս կսկծանաց առ միմեանս յղէին, եւ յետ այսորիկ ժամադիր միմեանց լինէին՝ պատերազմաւ զմիմեանս տեսանել: 26 Իսկ ի հասեալ ի ժամադիր ժամուն, եկեալ տային ընդ միմեանս պատերազմ: 27 Եւ թագաւորն Վարազդատ առնոյր զգաւրն իւրոյ բանակին, եւ գնայր հասանէր ի տեղի ճակատուն, վառեալ կազմեալ պատրաստեալ ի պատերազմ. սոյնպէս եւ սա պատրաստագոյն քան գնոսա: 28 Եւ Մանուէլ սպարապետն հասանէր իւրով գնդաւն ի նոյն տեղի. եւ ի դաշտին Կարնոյ լինէին խառնուրդք երկոցունց գնդացն ընդ միմեանս բախելոցն:

29 Թագաւորն Վարազդատ եւ սպարապետն Մանուէլ զնիգակս առեալ, միմեանց յարձակեալ ախոյեանք ելանէին: 30 Իբրեւ գազս ի վեր ամբառնայր արքայն Վարազդատ, եւ նայէր ընդ գալն իւր եւ տեսանէր զսպարապետն Մանուէլն, ի մեծութենէն հասակին եւ ի շքեղութենէ անձինն եւ յամբարկու յերկաթապատ յոտիցն մինչեւ ցզլուխն առ հասարակ յանվթար գինէն, ի հաստամետս յանձնէն, եւ ի հաստատուն երկվարէն եւ յասպագէն² վառելոյն յանշարժ սպառագինէն, համարեցաւ կշռեաց գնա ի միտս իւր իբրեւ զլեռն մի բարձր գանձատոյց: 31 Սակայն ածեալ զմահ ընդ միտս՝ յարձակեցաւ. զի այնուհետեւ չունէր ակն անձինն ապրելոյ: 32 Սակայն զի մանուկ մարդ էր արքայն Վարազդատ, իբրեւ ետես գնա այնպէս՝ զի

չէր ինչ կռուոյ տեղեակ, էած զմտաւ թէ՛ ի զրահսն ոչ ինչ կարիցէ նիգակ գործել, առ ձեռաց կորովութիւնն զնիգակն ընդ բերան արկանէր զաւրավարին Մանուէլի: 33 Իսկ Մանուէլ բուռն հարկանէր զնիգակէն. հանեալ ի նմանէ զնիգակատէգն՝ ընդ իւր թուրծն հանէր, եւ բազում զիւր թափէր զատամունսն, զնիգակն յինքն հանէր յարքայէն:

34 Եւ արքայն Վարազդատ ի փախուստ դառնայր յերեսաց զաւրավարին Մանուէլի. եւ անդէն Մանուէլ զտէգ նիգակին ի ձեռինն կալեալ, եւ նիգակաւն ի կառափն մատուցեալ ձեծէր զարքայն Վարազդատ. այնպէս տանէր իբրեւ ասպարէզս չորս: 35 Եւ անդէն որդիքն Մանուէլի յարձակեցան մէն մի նիգակ ի ձեռն, Հմայեակն եւ Արտաշէսն, սպանանել զարքայն: 36 Ինքն իսկ Մանուէլ աղաղակէր զկնի որդւոց իւրոց, եւ ասէր. Այ մի՛ լինիք տիրասպանուք: 37 Եւ նոցա լուեալ զձայն հաւրն, վաղվաղակի արագ արագ դառնային ի նմանէ. եւ ի պարտութիւն մատուցաւ այն ար գունդն արքունական առաջի մանուէլեան գնդին:

38 Ոչ ինչ այնուհետեւ սակաւ սպանեալք անկանէին ընդ երեսս դաշտին, բազում խոցք եւ խեղք վիրաւորք. եւ բազում նախարարք սատակեցան. բազում փախստեայք հալածականք լինէին: 39 Մինչ դեռ գունդն մանուէլեան էին զկնի փախստէիցն, եւ գայր հասանէր Համագասպեան սեպուհ մի Մամիկոնեան տոհմէն, անցանէր առ անկելովք դիակամքն եւ առ խոց վիրաւորաւքն պատերազմին. եւ ընդ նոսին ընկեցեալ էր եւ զԳարեգին, տէր գաւառին Ռըշտունեաց. բայց ողջ կայր, զի ոչ խոց էր եւ ոչ վնասեալ ինչ: 40 Այս Գարեգին փեսայ լեալ էր յառաջ նորին Համագասպէի, զքոյր նորին Համագասպուհի անուն ունէր կին: 41 Եւ իբրեւ եկն թագաւորն Շապուհ յերկիրն Հայոց, սա եթող զկինն իւր եւ փախեաւ: 42 Ապա տարան

1 Յօր. արձակեալ լիցի

2 Յամենայն օրինակս՝ յապաղէն

զՀամագասպուհի յերկիրն Տոսպաց, ի քաղաքն ի Վան, հանեալ կախեցին զնա Պարսիկքն զբարձր աշտարակացն՝ որ կայր ի վերայ քարանձաւին, ի կախաղանի սպանին զնա:

43 Իսկ յայնմ աւուր իբրեւ անկեալ կայր այն Գարեգին ի մէջ անկելոցն, եկն Համագասպ աներ նորուն անցանել առ նոքաւք: 44 Աղաղակեաց Գարեգինն եւ ասէ. Տէր Համագասպեան, եւ զիս տես. հրաման տուր նժոյգ մատուցանել, թող հեծայց: 45 Եւ ասէ ցնա Համագասպեան. Ո՛վ ես դու: 46 Եւ ասէ. 47 Ես եմ Գարեգին Ռըշտունի: 48 Եւ ետ հրաման Համագասպեան վահանաւորացն, որ ընդ նմա էին, ասէ. Ի՞նչք եւ դէք զվահանսդ ի վերայ նորա, եւ պահեցէք: 49 Եւ ինքն էանց. ապա իջին վահանաւորքն եղեալք զվահանսն ի վերայ, եւ կային պահէին ըստ հրամանի տուելոյն:

50 Ապա յետ այսորիկ գայր Դանուն ոմն գումապետ սպարակրացն¹ գնդին մանուէլեան զաւրացն. ետես զի իջեալ էին վահանաւորք ի վերայ, եւ զԳարեգինն պահէին. եհարց ցնոսա՝ թէ Ո՛վ է այդ, եւ դուք հի՞մ իջեալ կայք յայդմ տեղուդ: 51 Ասեն նոքա՝ թէ սա Գարեգին Ըռշտունեաց տէր է. եւ մեզ հրաման ետ Համագասպեան իջանել պահել զսա: 52 Եւ մեծաւ ցասմամբ զայրանալով՝ ի բարկութիւն մեծ բորբոքէր Դանունն, եւ ասէր. Արդ ուրեմն վերստին կամի Համագասպեան զսա իւր փեսայ առնել, եւ զՀամագասպուհի զքոյր իւր տալ սմա կնութեան. վասն այսորիկ անխայեաց ի դա, պահել հրամայէր: 53 Եւ անդէն ոտն ածեալ էջ ի ձիոյն, եհան զթուրն, մատուցեալ ի նա՝ պատառ պատառ կոտորեալ, անդէն ցրեալ սատակեաց զնա:

54 Իսկ այլ զաւրքն ամենայն դեռ գային ի կոտորածոյն, զբազումս ձերբակալ արարեալ եւ կալեալ ածէին: 55 Եւ զԲատն, արքային Վարազդատայ զքսուն, զսպանաւղն Մուշեղի, կալեալ իւր որդւովն առաջի սպարապետին Մանուէլի, եւ զայս՝ որք միանգամայն գործոց սատարն լեալ էին՝ ըմբռնէին զամենեսեան, առ նա ածէին: 56 Եւ մեծաւ դատաստանաւք դատեցաւ զանաւրէնն Բատ սպարապետն Մանուէլ: 57 Բայց նախ յանդիման նմա հրամայէր փողոտել զորդին նորա, ապա յետոյ զնա գլխատել. եւ զայսն կոտորեաց ըստ նմին աւրինակի: 58 Եւ զթագաւորն Վարազդատ հալածեցին ի յերկրէն ի սահմանացն Հայոց. չոգաւ զնաց ի յերկիրն Յունաց. անդ եկաց որչափ եւ եկեաց, եւ անդէն մեռաւ:

59 Եւ սպարապետն զաւրավարն Հայոց Մանուէլ նուաճեաց զաշխարհս, եւ զամենայն մեծամեծս եւ զնախարարսն Հայոց առ ինքն ժողովէր, եւ էր նա առաջնորդ եւ գլուխ նոցա. եւ վարէր զիւր իշխանութիւնն, եւ տայր հրաման աշխարհի փոխանակ թագաւորի. եւ ունէր զաշխարհ ի շինութեան: 60 Եւ զկինն Պապայ արքայի զՋարմանդուխտ տիկին, հանդերձ որդւովք Արշակունովք, առեալ զնոսա՝ ի տեղի թագաւորի կալեալ ի պատիւ շրջեցուցանէր: 61 Մեծաւ իմաստութեամբ եւ բազում յաջողութեամբ աշխարհին Հայոց մեծապէս առաջնորդէր, որչափ եկաց ժամանակս: 62 Բայց անուանք պատանեկացն Արշակունեացն, անուն երիցուն՝ Արշակ, եւ կրտսերուն՝ Վաղարշակ, զնոսա առեալ Մանուէլն սպարապետն՝ իբրեւ զսան սնուցանէր, եւ զմայրն նոցա զՋարմանդուխտ ի մեծի շքի տիկնութեան պատուէր: 63 Բայց յորժամ տեսանէր Մանուէլն՝ զոր ինչ գործեացն ընդդէմ էր հրամանաց թագաւորին Յունաց, ածեալ զմտաւ իւրով՝ թէ արժան է նմա գէթ զմի ոք թիկունս առնել նմա, ապա խորհեցան

1 Ի հինգ օրինակս՝ գամապետս պրակուացն. յերկուս այլ՝ գամապետս պրակացուացն. մեզ ուղղելի դատեցաւ գումապետ

խորհուրդ ընդ տիկնոջն, եւ կամեցաւ թիկունս առնել զարքայն Պարսից¹:

ԳԼՈՒԽ ԼԸ.

1 Յաղագս եթէ զիա՛րդ սպարապետն Հայոց Մանուէլ, հանդերձ ամենայն աշխարհաւն Հայոց, ճեմն ետ ի թագաւորն Պարսից. եւ մարգպան եւ աշխարհակալ աշխարհիկն Հայոց զառաջինն ան ի թագաւորէն Պարսից զՍուրէն, եւ մեծաւ պարգեւաւ մեծարեցաւ ի նմանէ. եւ թէ ո՛րպէս յետոյ խորամանկութեամբ Մերուժանայ Արծրունւոյ եղեւ ապստամբութիւն, եւ պատերազմունք յուզեցան:

2 Ապա յետ այսորիկ առաքեցին Ջարմանդուխտ տիկինն Հայոց եւ սպարապետն Մանուէլ զԳարջոյլ Մաղխագ, եւ ընդ նմա զբազումս ի նախարարացն Հայոց, հրովարտակաւ ընձայիւք եւ պատարագաւք առ թագաւորն Պարսից, զի ի նա ձեռս տայցեն եւ զնա պաշտիցեն, եւ նմա միամտութեամբ ծառայեսցեն, եւ տայցեն նմա զաշխարհս Հայոց: 3 Եւ չոգան հասին Գարջոյլն, եւ որք ընդ նմայն էին, ի դուռն թագաւորին Պարսից. մատուցին նմա զհրովարտական զտիկնոջն եւ զսպարապետին Հայոց, եւ ետուն նմա զյղեալ պատգամսն հնազանդութեան: 4 Եւ յորժամ ետես զնոսա թագաւորն Պարսից, մեծաւ խնդութեամբ ընկալեալ զնոսա, եւ մեծապէս մեծարանաւք պատուեաց զնոսա, եւ մեծաւ պարգեւաւ առնէր զԳարջոյլն:

5 Եւ ընդ նմա առաքէր յերկիրն Հայոց զՍուրէն պարսիկ մի ճոխ եւ նախարարացն իւրոց. եւ ընդ նմա յղեաց տասն հարար հեծեալս վառեալս սպառազէնս, զի երթիցէ Սուրէն յաշխարհն Հայոց ի թիկունս աւզնականութեան զաւրավարին Մանուէլի, եւ պահել ի թշնամեաց զտի-

կինն զՋարմանդուխտ: 6 Եւ ետ թագաւորն Պարսից տանել ի ձեռն Սուրենայ թագ եւ պատմուճան, եւ զվառ թագաւորացն տիկնոջն Ջարմանդուխտոյ, եւ թագս մանկանցն որդւոցն երկոցունց Արշակայ եւ Վաղարշակայն: 7 Ջսոյն եւ սպարապետին Մանուէլի սոյնպէս ետ տանել զթագաւորական պատմուճանն, սամոյր մ՛ եւ զգլխոյ պատիւ գարգմանակ ոսկի արծաթ, ու ի պատիւ զլխոյ ի վերայ գագաթանն ի թիկանց արծուոյն՝ հանգոյցք թագի կապեալ աշխարհաւն հանգոյց, եւ լանջաց պատիւ՝ ապիզակ, որպէս աւրէնք են ունել թագաւորաց. եւ շիկակարմիր խորան, եւ ի վերայ խորանին արծուի նշան, եւ սրահակս մեծամեծ եւ կապուտակ երկնագոյն հովանոցս: 8 Եւ ոսկի սպաս տաճարին առաքէր սպարապետին Մանուէլի. եւ տայր նմա յիւրմէ ձեռանէ իշխանութիւն մեծ ի վերայ աշխարհին Հայոց:

9 Եւ եկն եհաս Գարջոյլն խորխոռունի յերկիրն Հայոց, եւ էած զՍուրէն պարսիկ՝ տասն հազարաւն: 10 Եկին բերին զպարգեւան տիկնոջն եւ մանկանց նորա. սոյնպէս սպարապետին Մանուէլի. ունէին պարգեւս իւրաքանչիւր աւագացն, եւ տանուտէրացն իւրաքանչիւր մեծամեծացն Հայոց: 11 Եւ յորժամ տեսանէին զմեծարանսն² եւ զսէր թագաւորին Պարսից, տիկինն Ջարմանդուխտ եւ սպարապետն զաւրավարն Հայոց Մանուէլ մեծաւ խնդութեամբ մեծարէին զՍուրէնն: 12 Տային զաշխարհն Հայոց ի ձեռն Սուրենայ, եւ հնազանդէին հրամանաց թագաւորին Պարսից. եւ կարգէին թագաւորին Պարսից յաշխարհէն Հայոց հարկս՝ տալ ընձայս եւ պատարագս: 13 Սոյնպէս եւ մարգպանին Սուրենայ հասս եւ կաւշիկս եւ զպիտոյս³ զուճկացն. սոյնպէս եւ տասն հազարացն

1 Յօր. Յունաց

2 Ի չորս օրինակս՝ զմեծարանսն. ի միումն՝ զմեծամեծսն. մեզ այսպէս ուղղելի թուեցաւ

3 Յամենայն օրինակս՝ զպիտոյսս ոռնկացն

զարման եւ կերակուր ըստ պիտոյիցն: 14 Եւ սրտի մտաւք արարին իւրեանց թիկունս. եւ տէր գտեալ իւրեանց զարքայն Պարսից, եւ կային ի ծառայութեան նորա. եւ ստէպ ստէպ դեսպանք թագաւորին Պարսից երթային եւ գային յերկիրն Հայոց. եւ մեծապէս զմտերմութիւն միամտութեանն, որ էրն, ցուցանէին թագաւորին. եւ ստէպ առաքէր պարգեւս տիկնոջն Ջարմանդխտոյն. սոյնպէս եւ զաւրավարին Հայոց Մանուէլի: 15 Յոյժ մտերիմ եւ սիրելի լինէր Մանուէլ թագաւորին Պարսից եւ մեծապէս փառաւորեալ աւագանայր ի նմանէն: 16 Եւ Մերուծանն Արծրունի իբրեւ տեսանէր զայն ամենայն փառս աւագութեան, որովք շքեղացոյց զՄանուէլ արքայն Պարսից, զի որպէս զեղբայր կամ զորդի այնպէս պատուեաց զնա, յոյժ նախանձէր նա ընդ փառսն Մանուէլի. եւ խնդրէր նա Հնարս Հնարել, Հանել զնա յաչաց թագաւորին Պարսից, զի փոխանակ նորա ինքն լիցի սիրելի: 17 Եւ իբրեւ այլ Հնարս ինչ ոչ կարէր գտանել դուրս նենգութեանցն առ Պարսիկս, ընդ որ մտցէ, ապա խորհեցաւ նա ընդ միտս իւր զնենգութիւն չար, եւ կեղծաւորութեամբ իւրով զգործ իւր յառաջացոյց: 18 Ջի իբրեւ նա յեցաւ ի միամտութիւն զաւրավարին Մանուէլի, սկսաւ նախ Հպատակութեամբ զմիտսն գողանալ, նախ մտերմութեամբ Հաճել զմիտս նորա. ապա զանձն իւր Հոգաձու եւ խնամակալ երեւեցուցանէր նմա. ապա եկեալ գուշակութիւն առնէր նմա սուտ ի քմաց իւրոց՝ թէ Գիտասջիր դու, ո՛ր Մանուէլ, զի դեսպան լեալ է յարքայէն Պարսից. յաղագս քո բերեալ ունին Հրաման առ Սուրէնն, զի զքեզ կալցին կապեսցեն. կամ աստէն սպանցեն, կամ ոտիւք եւ ձեռաւք եւ պարանոցաւ կապելով մեծաւ զգուշութեամբ տանել առ թագաւորն Պարսից. արդ դուն գիտա՛, տե՛ս խորհեաց ընդ միտս քո թէ զի՛նչ գործեսցես: 19 Եւ եղեւ յորժամ լուաւ

զայս Մանուէլ, կայր զարմացեալ Հիացեալ ընդ միտս իւր. եւ ասէր թէ չիք իմ յանցուցեալ առ Պարսիկս, է՞ր աղագաւ զայն առնիցէ ընդ մեզ: 20 Եւ ասէ Մերուծանն ցՄանուէլ. Ես ճշգրտեցի եւ Հաստատեցի, զի իրքդ այդ ստոյգ են. մեծաւ սիրով եւ Հոգաբարձութեամբ գուշակ եղէ քեզ: 21 Իսկ իբրեւ Հաւատաց բանին Մերուծանայ Մանուէլն, եւ կարծեաց ի միտս իւր՝ թէ ստոյգ են բանքն այն զոր լուաւ, ապա գունդ կազմեաց, եւ զաւր բազում առ ինքն կուտեաց զաւրավարն Հայոց Մանուէլ: 22 Եւ մինչ դեռ խաղաղութեամբ Սուրէնն իւրով բանակաւն բանակեալ էր յանհոգս յանկարծ՝ եւ աննենգ խաղաղութեամբ, իբրեւ ոչ ինչ գոյր ի մէջ նոցա նենգութիւն դաւաճանութեան ըստ Համբաւահան չարագործն Մերուծանայ, յանկարծաւրէն յեղակարծումն զաւրավարն Հայոց Մանուէլ Հասանէր անկանէր ի վերայ բանակին Սուրենայ, եւ զտասն Հագարսն զՊարսիկսն միանգամայն կոտորէր: 23 Բայց զմարգպան Սուրէնն միաճի արձակէր, շնորհել զարեւն իւր՝ պարգեւ արարեալ: 24 Եւ զարմացեալ Սուրէնն ընդ իրան ընդ այնոսիկ թէ ընդէ՞ր, է՞ր աղագաւ նա զայս արդեւք գործեաց. եւ ասէ Մանուէլ ցՍուրէն. Ջքեզ վասն բարեկամութեան սիրոյն արձակեալ, ողջանդամ երթիջիր զճանապարհս քո. այլ ես ի Պարսկացի ի խափս այլ ոչ անկայց: 25 Եւ ինքն Մանուէլ Հայոց զգուշուն կազմէր, եւ զարսն պատրաստէր. եւ գիտաց այնուհետեւ թէ մեծ թշնամութիւն յարոյց եւ մեծ գրգռութիւն ընդ թագաւորին Պարսից: 26 Եւ յայնմ հետէ զաւրավարն Հայոց Մանուէլ Հանդերձ ամենայն գնդաւն զտիկին Ջարմանդուխտ գլին թագաւորին Պարսկայ ի գլուխ առեալ, ի տեղի թագաւորացն շրջեցուցանէին. եւ ինքեանք կային ի մարտի պատերազմին յաղագս շինու-

1 Օրինակ մի՛ յանկասկած

Թեան աշխարհին Հայոց յամենայն կողմանց ընդ թշնամիս եւ ընդ սահմանակիցս՝ որ շուրջ զիւրեամբք էին, եւ աւելի ընդ զաւրսն Պարսից՝ զամենայն աւուրս կենաց իւրոց. բայց Մերուժանն գնայր անդր առ թագաւորն Պարսից ամբաստան զՄանուէլէ:

ԳԼՈՒԽ ԼԹ.

1 Յաղագս Գումանդ Շապիոյ՝ որ առաւելացաւ ի թագաւորէն Պարսից տալ պատերազմ ընդ Հայս, եւ սատակեցաւ ի Մանուէլէ զաւրաւ իւրով հանդերձ:

2 Ապա թագաւորն Պարսից արձակեաց ի վերայ Հայոց զԳումանդ Շապուհ քառասուն եւ ութ հազարաւ, զալ առնուլ աւերել զերկիրն. եւ եկին հասին նոքա մինչեւ ի սահմանն Հայոց՝ որ յԱտրպայական կուսէն էր: 3 Ապա իբրեւ զայն լսէր զաւրաւարն Հայոց Մանուէլ, եւ գումարէր զզաւրսն իւր ըստ բռնոպ ժամանակին որչափ եւ եկն ի ձեռն իւր՝ քսան հազար, եւ ձեպեաց Մանուէլ եւ եհաս ընդդէմ գնդին, եւ արկանէր ի սուր զզաւրսն Պարսից. եւ զԳումանդ Շապուհն սպանանէր, եւ դարձեալ ելանէր մեծաւ յաղթութեամբ:

ԳԼՈՒԽ Խ.

1 Յաղագս Վարազայ թէ ո՛րպէս կամ գիտա՛րդ առաւելացաւ ի թագաւորէն Պարսից, եւ սատակեցաւ ի Մանուէլէ իբրեւ զառաջինն:

2 Ապա յետ այսորիկ Վարազ ոմն զաւրաւար թագաւորին Պարսից գայր հասանէր ութուտասն բիւրու յերկիրն Հայոց, տալ պատերազմ ընդ Մանուէլի ընդ սպարապետին, եւ ընդ ամենայն գնդին Հայոց: 3 Ապա կազմէր պատրաստէր սպարապետն զաւրաւարն Հայոց Մանուէլ հեծեալս սպառազէնս տասն հազար, եւ ե-

կեալ տայր պատերազմ ընդ Վարազայ: 4 Հարկանէր եւ սատակէր, ջնջէր զնոսա ի միջոյ, եւ գլխովին զՎարազն սպանանէր. թափէր զկապուտ սաստիկ, զզարդ եւ զգէն զաւրացն, եւ դառնայր մեծաւ խաղաղութեամբ:

ԳԼՈՒԽ ԽԱ.

1 Յաղագս Մոկանայ՝ զոր առաւելաց դարձեալ թագաւորն Պարսից ի վերայ երկրին Հայոց եւ ի վերայ Մանուէլի զաւրաւ բազմաւ, եւ սատակէր ի Մանուէլէ իբրեւ զառաջինն:

2 Եւ եղեւ յետ այսր ամենայնի առաքեաց թագաւորն Պարսից զՄուկանն քառասուն բիւրու ի վերայ երկրին Հայոց: 3 Եկն եհաս հանդերձ ամենայն բազմութեամբ զաւրաց իւրոց յերկիրն Հայոց, եւ հառ զկողմն մի զերկիրն Հայոց. եւ բանակեալ էր յԱրտանդան դաշտին: 4 Անկանէր ի վերայ բանակին Մանուէլն ի գիշերի, եւ անդէն առ հասարակ ընդ սուր հանէր զամենեսեան ի դակիչն, եւ զՄուկանն սպանանէր, եւ թափէր աւար բազում. եւ ոչ զմի ոչ ապրեցուցանէր ի նոցանէն:

ԳԼՈՒԽ ԽԲ.

1 Յաղագս խաղաղութեան ամս եւթն:

2 Եւ յետ այսորիկ ամս եւթն, եւ այլ ոչ եւս յաւելին զաւրքն Պարսից ժտել ինչ մտանել ի սահմանս Հայոց. եւ եղեւ խաղաղութիւն երկրին: 3 Եւ ժողովեցան առ զաւրաւարն Մանուէլ ամենայն ցրուեալք երկրին. եկին անգան² այր յայր, եւ էին բանակեալ յանհոգս. եւ զաւրաւարն Հայոց Մանուէլ առաջնորդէր նոցա: 4 Եկին ապա եւ մնացորդք ի տանէն Սիւնեաց պատանեակք երեք մնացեալք ի կոտորածէն Պարսից՝ առ զաւրաւարն Հայոց Մանուէլ. եւ անուանք նոցա միւսու՛մն Բաբիկ³, եւ միւսու՛մն Սամ, միւսու՛մն Վաղի-

1 Յօր. գորքն Պարսից

2 Օրինակ մի՝ եկին յԱյրարատ

3 Օրինակ մի՝ միոյն

նակ: 5 Եւ ընկալաւ զնոսա զաւրավարն Հայոց Մանուէլ. եւ եղեւ նոցա աւգնական, եւ դարձ արար նոցա յերկիրն իւրեանց. եւ կացոյց տէր զԲաբելի ի վերայ երկրին, եւ զերկուսն եւս ըստ իւրաքանչիւր չափու. եւ էր Բաբելի նիգակակից գամենայն աւուրս կենաց նորա: 6 Նոյնպէս յամենայն գաւառս կացուցանէր սպարապետն Հայոց Մանուէլ նահապետս եւ տեսարս գաւառաց գաւառաց. եւ առաջնորդէր ամենեցուն խաղաղութեամբ: 7 Եւ ամենայն երկիրն Հայոց ի խաղաղութեան ընդ հովանեաւն Մանուէլի գամենայն աւուրս կենաց նորա, ամենայն մարդիկ երկրին Հայոց վայելէին յաւուրս իւրեանց. ուտէին եւ ըմպէին եւ ուրախ լինէին գայն ամս եւթն տէրութեանն Մանուէլի, մինչեւ ի բաժանումն երկրին Հայոց եւ ի քակտումն թագաւորութեանն:

ԳԼՈՒԽ ԽԳ.

1 Յաղագս Մերուժանայ Արծրունոյ, որ հանդերձ գաւրաւ բկն ի վերայ Մանուէլի, եւ սատակեցաւ ի նմանէ:

2 Ապա Մերուժանն Արծրունի վաղուց եւս յաւուրսն Արշակայ արքայի լեալ էր ապստամբ ի թագաւորէն Հայոց, ինքնական ձեռս տուեալ յարքայն Պարսից, եւ զաւրէնս Մագդեղանցն յանձն առեալ էր, եւ ուրացեալ զհաւատսն քրիստոնէութեան հաւատոց, եւ բազում անգամ լեալ էր առաջնորդ զաւրացն Պարսից, եւ մեծամեծ չարիս անցուցեալ էր ընդ երկիրն Հայոց. եւ տակաւին էր նա առ թագաւորին Պարսից: 3 Ապա զբազուց Մերուժանս այս զթագաւորն Պարսից, եւ առեալ զաւրս բազումս ի նմանէ, եւ եկն եհաս յերկիրս Հայոց: 4 Եւ էր սորա մեծաւ պարծանաւք պարծեցեալ առ թագաւորին Պարսից, զի կամ կալեալ կապեալ տարցի զՄանուէլն առ թագաւորն Պարսից, եւ կամ զգլուխն հատեալ՝ գառաջեալ բերէ թագաւորին Պարսից:

5 Գայր հասանէր ամենայն բազմութեամբն զաւրացն Պարսից յերկիրն Հայոց, եւ թողոյր զբանակ զաւրացն Պարսից ի գաւառին Կորճէից, եւ ինքն իւրով սեփհականաւն գնդաւն հրոսիւն ժողովելով մեկնէր գատանէր յԱրեաց գնդէն: 6 Կամէր յանպատրաստից գալ անկանել ի վերայ Մանուէլի, միայն անձամբ անուս առնուլ, եւ ինքեան միայն կատարել ջանայր, զի ի պարծանսն իւրոյ անձամբ վճարել զգործ պատերազմին: 7 Վասն այսորիկ այսպիսի բանս խաւսէր ընդ զաւրավարսն Արեաց գնդին, եւ ասէր՝ եթէ ես նախ երթայց լրտեսեցից, եւ զձեզ տարեալ արարից ի վերայ, զի այսպէս դիւրաւ լիցի ի բուռն արկանել ըմբռնել: 8 Եւ ինքն զիւր գունդն առեալ, խաղայր գայր հասանէր յերկիրն Կոգ գաւառի. եւ ինքն գտեղի առեալ, առնէր լրտես¹ ի բանակն Մանուէլի:

9 Եւ գային հասանէին լրտեսքն, եւ դիտէին զՄանուէլ, զի էր բանակ նոցա ի Բագրաւանդ գաւառի ի Բագուան աւանի, որ է մաւտ յաւերակսն Զարեհաւանդ քաղաքի: 10 Եկին դիտեցին դէտքն զբանակն Մանուէլի, եւ զերամակ ձիոց բանակին յորում վայրի կային, եւ չոգան տարան գրոյց նմա: 11 Եւ խորհեցաւ նա առնուլ զերամակ բանակին. այնմ ուշ առնէր, եւ խնդալից եղեալ՝ ասէր պարծելով առաջի իւրոց զաւրացն, թէ վաղիւ յայս ժամ իմ կալեալ կապեալ ընկեցեալ զՄանուէլն, եւ յանդիման նմին զկին նորա Վարդանոյ խայտառակեալ իցէ: 12 Եւ չու արարեալ կատարել զգործն՝ յոր փութացեալ կամէր հասանել, եւ էին ի վայրսն՝ ընդ որ գալ էր գնդին ընդ ճանապարհն՝ լերինք ինչ, որում ի բնակչացն Եղջերք կոչեն: 13 Եւ մինչ դեռ գայր Մերուժանն ի ճանապարհի գնդաւն իւրով, դիպեցան նմա ուղեւորք. յորս հարցանէր Մերուժանն եւ ասէր, եթէ ճանապարհս ի Բագրաւանդ ընդ ո՞ր եր-

1 Յոր. տես

թայ: 14 Եւ ուղեւորացն տուեալ պատասխանի, ասացին. Ճանապարհ ընդ Եղջերս է: 15 Եւ մեծապէս խտրեաց Մերուժանն ընդ միտս իւր. տրտմեցաւ ընդ բանսն, սակայն տայր հրաման չարաչար քարչել գուղեւորսն եւ ծեծել: 16 Եւ ինքն անցեալ ըստ ուղին՝ իջանէր ի հմայս քաղղէութեան, զքուէս հարցանէր. եւ ոչ գոյր նմա յաջողակ յուռութ կախարդանացն՝ յոր յուսայրն:

17 Ապա սրտմտութեամբ մեծաւ զիւր դէտսն առաջի արկեալ՝ յերամակակայն արչաւէր, զի հնար լիցի նմա նախ ըմբռնել: 18 Եւ հասեալ ի տեղին, զերամակ ձիոց ոչ գտանէր. վասն զի յԱստուծոյ այնպէս իմն եղեւ իրաւունք պատրաստութեան Հայոց գնդին, զի սպարապետին Մանուէլի ամենայն Հայոց գնդին տուեալ էր ժամ յորս երթալոյ. վասն այսորիկ դիպեցաւ, զի զամենայն երամակն ի շէն էր ածեալ. եւ նոքա զեռ որսոյ պատրաստեալ էին ի հեծանել: 19 Եւ անտի գուժաւոր հասանէր առ զաւրավարն Հայոց Մանուէլ, թէ Գիտա տես, զի Մերուժանն Արծրունի հասեալ է բազում գնդաւ ի վերայ քո:

20 Ապա կազմեցան ըստ նմին պատրաստեցան ամենայն զաւրքն Հայոց գնդին, եւ Մանուէլ սպարապետն. եւ մտին առաջի սուրբ ոսկերացն Յովհաննու, որ կայր յայնմ գեղ, ուխտաւոր լինէին եւ ինդրէին յԱստուծոյ, զարդար դատաւորն յաւգնականութիւն կոչէին, լինել նոցա այցելու աւգնական: 21 Եւ անտի ի դուրս ելեալք, գտիկինն Արչակունի հանդերձ մանկամքն Արչակաւ եւ Վաղարչակաւ զնոսա եւ զիւրեանց կանանին ընդ նոսա արձակեալ, յամուր յուղարկէին ի լեռնն մեծ՝ որ անուանեալ կոչի Վարագ: 22 Եւ զմանուկն Արտաւագդ, որդի Վաչէի, ընդ կանանին տայր հրաման երթալ Մանուէլ. իսկ նա ոչ հաւանէր, չառնոյր յանձն:

23 Եւ էր նա ի տիոց տղայ. եւ ըստ մանկութեանն աւրինի, ըստ կրաւնից Հայոց՝ որպէս աւրէն էր՝ զգլուխ մանկտոյն, սոյնպէս ի ժամանակին զերծեալ էր զգլուխ մանկանն Արտաւագդայ, եւ ցցուս էր թողեալ եւ գէս արձակեալ: 24 Ապա իբրեւ ոչ հաւանեցաւ նա ընդ կանանին երթալ, մտրակ ի վեր առեալ Մանուէլի՝ տանջէր զմերկ գլուխ Արտաւագդայ. սաստէր նմա չերթալ ի պատերազմ վասն մանկութեան ժամանակին տիոց: 25 Իսկ նա առ նորա ականէ գնաց ընդ նոսա. բայց ապա յետոյ վառեալ կազմեալ պատրաստեալ զկնի պատերազմին:

26 Այլ յորժամ գտիկինն ամենայն աղախնիւն իւրեանց յուղարկեցին յամուրն, եւ ինքեանք վառեալք կարգեալք կազմեալք ի պատերազմն, ի մի վայր գումարեալք, նշանս արձակեալք դրաւչս փողփողեալս, ըստ Գեւղն աւան ի դուրս ելանէր ընդ կողմն արեւմտից. եւ անդէն ընդ առաջ ելեալ նոցա Մերուժանայ իւրով գնդաւն՝ որ եկեալ էր ի վերայ նոցա: 27 Եւ չարագործն մեղաւոր Մերուժանն զիւր զգէնն եւ զարդ եւ զնշանն սաղաւարտին բազմաց եղեալ էր զնոյն աւրինակ, եւ զբազումս յիւր կերպարանեալ էր ի մէջ իւրոյ գնդին, եւ ինքն զիւր նշան ոչ ունէր: 28 Սակայն Մանուէլ իբրեւ տեսանէր զնոցա գունդն, հանդերձ իւրով գնդաւն, առիւծաբար վարագաւրէն յարձակեալ՝ ի նոցա գունդն խառնեցաւ. ուչ եղեալ այնոցիկ՝ որ զՄերուժանայ նշանսն ունէին, համարէր եթէ զՄերուժանն սպանանիցէ: 29 Եւ զբազում ախոյենից հատանէին զգլուխս, որք զնոյն զնորին Մերուժանայ ունէին զնշանս, եւ տեսանէին զի չէր նա:

30 Ապա խաւսել սկսանէր սպարապետն Մանուէլ ընդ իւրում նիզակակցին Բաբկան, եւ ասէր: 31 Տեսանե՞ս, քանի՛ խաբեաց զմեզ կախարդն Մերուժանն. այլ իմ եւ նորա յառաջու շատ լեալ ի միող

1 Օրինակ մի յաւելու՝ բարեխօսութեամբ սրբոյն

վայրի ի հաշտութեան ժամանակի, նշան մի գիտեմ ես զնորա. զի յորժամ ի ձի հեծեալ¹ էր, երան բարձի նորա ոչ յանձին եւ ի ծունկն ոչ հասանէր, այլ ի բացեայ կայ ի ձիոյ անտի: 32 Արդ եկ զոյգ հասարակ այսմ նշանի ուչ զիցուք, թերեւս ճանաչել կարասցուք զգիւթ քուէիցն զկախարդն: 33 Ապա զոյգ միտ եղեալ երկոցունցն, եւ տեսեալ զՄերուժանն, այնու նշանաւ ծանեան, տեսին զի յայլակերպս լեալ էր, զի զիւր նշանն ոչ ունէր: 34 Ապա ձայն տուեալ յառաջ կոչեաց զՄերուժանն Մանուէլ, եւ ասէ ցնա՝ թէ Այ կախարդ, ցե՞րբ խաբես զմեզ, եւ վասն քո եւ զայլս եւս տաս ջարդել. այլ մեք ծանեաք զքեզ զի աւաղիկ կաս, եւ ապրել քեզ չիք հնար այսաւր ի ձեռաց մերոց. զի այսաւր էա՞ծ կատարեաց զչարիս քո Տէր Աստուած ի գլուխ քո, եւ մատնեաց Տէր ի ձեռս մեր: 35 Իսկ յորժամ զայն լսէր Մերուժանն, անդէն վաղվաղակի նիզակ առեալ, յառաջ խաղացեալ, արխեան ելանէր Մանուէլի: 36 Սակայն յորժամ հարկանէին նիզակաւքն, քանզի երկոքեան արքն յաղթէին, երկոքեան ի ձիոյն յերկիր անկանէին, եւ անդէն նիզակակիցն Մանուէլի Բաբել տէր գաւառին Սիւնեաց հասանէր, նիզակաւ ի վերուստ ի վայր ի կողին կարէր ընդ գետինն, եւ ոչ կարէր յառնել: 37 Իսկ զսպարապետն Մանուէլ իւր վարաւանդասպաւքն յերիվարն հանէին, եւ զՄերուժանայ զգլուխն ի բաց հատանէին. եւ ամենայն զաւրացն լինէր փախուստ, իբրեւ տեսին թէ Մերուժանն մեռաւ:

38 Եւ աստի գունդն մանուէլեան խրախոյս առեալ յարձակեցան զհետ մերուժանեան գնդին. հարկանէին սատակէին զնոսա, եւ զմի ի նոցանէն ոչ ապրեցուցանէին: 39 Այլ մանուէլն Արտաւազդ ի Մանուէլէ գաղտ եկեալ էր ի ճակատն. սակայն վառեցաւ կազմեցաւ եւ եմուտ, զան-

խուլ ի մանուէլեան գնդէն, առ ափն Եփրատ գետովն. եհար սատակեաց ի մերուժանեան գնդէ անտի անթիւ բազում սպառազէնս կոտորեաց: 40 Եւ նշանակիր մի ի Մերուժանայ իբրեւ ետես զԱրտաւազդն, յընչացք եբաց². զի տեսանէր զնա պատանեակ մի կայտառ անմուրուս, երեսաւք գեղեցիկ. ապա զնշանն զնիզակաւն պատեալ, յարձակեցաւ ի վերայ նորա: 41 Իսկ նա ընդ գիրկս մտեալ, հարկանէր զայրն նետիւ. եւ կարանէ ի կարան թափ հանեալ զնետն դի³ ցամաք ընկենոյր զնա: 42 Եւ առեալ զնիզակն, զհետ մտեալ փախստէիցն, ընդ սուր հանեալ զգաւրսն Մերուժանայ, աւելի քան զամենեսեան Արտաւազդ որդի Վաչէին մանուէլն կոտորէր. եւ ինքն մեծաւ անուամբ, եւ բազում աւարաւ՝ զոր կապուտն թափէին ի գաւրաց թշնամեացն:

43 Բայց յաւուր յայնմիկ լինէր մեծ վնաս անհնարին. զի Վաչէ երկրորդն Մանուէլի, ձին զուլամբ երթեալ, սպանանէր: 44 Սոյնպէս եւ զԳարջոյլ Մաղխազ ձին տարեալ սատակեաց. վասն զի տրմուղ ի թերավարժ ձիոյ հեծեալ էին երկոքին:

45 Իսկ⁴ դառնայր Մանուէլ երթայր ի բանակն տիկնոջն հասանէր. տանէին ընդ ինքեանս զգլուխն Մերուժանայ. եւ Մամուէլ որդի Վահանայ ոչ զիպեցաւ ընդ Մանուէլի, զի դարձաւ նա ի բանակն: 46 Սակայն յորժամ տեսին զգլուխն Մերուժանայ կանայք բանակին Մանուէլի, մեծաւ աղաղակաւ ճիչ բառնային⁵. զի նոքա այսպէս համարեցան թէ այն գլուխ Մամուէլի որդւոյ Վահանայ իցէ, վասն զի նման միմեանց էին երկոքեան, Մերուժանն եւ Մամուէլ: 47 Ապա տեսին զգլուխն Մերուժանայ, զի զցիցն երկայն

2 Օրինակ մի՝ յընչացքէ. բայց զի

3 Ձի՞ ի բնագրին

4 Օրինակ մի յաւելու՝ Քրիստոսի գորացեալն

5 Օրինակ մի՝ ճիչ բարձեալ լային

1 Օրինակ մի յաւելու՝ ելեալ

կախեալ էր, յայնմ ծանեան եթէ չէ Սամուէլայ, այլ Մերուժանայ Արծրունոյ. այլ ասացին. Սակայն դա մեր եղբայր է: 48 Ապա եկին բերին զմարմին Վաչէի ի բանակ անդր, հաւրն Արտաւազդայ, եւ զմարմինն Գարջուլայ Մախազու Խոռխոռունոյ, եղին աշխար մեծապէս, եւ լացին զնոսա: 49 Եկին բերին զայրն նշանակիրն Մերուժանայ, զոր եհարն Արտաւազդ նետին. եւ ամենայն ոք զարմանայր ընդ այն, զի նետն թափ կարանէ ի կարան անցեալ էր, իբրեւ տեսին զնա՝ ապրեցաւ ի մահուանէ: 50 Այլ իբրեւ լուան զաւրքն Պարսից՝ զոր թողեալ էր Մերուժանայ ի գաւառն Կորճէից՝ թէ սատակեցաւ Մերուժանն, եւ կորեաւ գունդն որ ընդ նմա, եւ ինքեանք ի Պարսից երկիրն փախստական գնացին, եւ Հայոց երկիրն լինէր խաղաղութիւն բազում:

ԳԼՈՒԽ ԽԳ.

1 Յաղագս թէ զիս'րդ թագաւորեցոյց Մանուէլ սպարապետն զմանուկն Արշակ, եւ ապա ինքն Մանուէլն մահու մեռանէր:

2 Ապա յետ այսր ամենայնի զաւր արեալ զաւրաւարն սպարապետն¹ Մանուէլ, հանդերձ Արշակունի տիկնաւն, եւ մանկամբքն երկոքումբք՝ Արշակաւն եւ Վաղարշակաւն, հանդերձ ամենայն բանակաւն Հայոց մեծամեծ աւագայնովն նախարարաւքն եկեալ² հասանէր ի գաւառն Կարնոյ. եւ ամենայն տանուտեարք ընդ նմա: 3 Եւ տայր սպարապետն Մանուէլ զգոլստր իւր Վարդանդուխտ կին Արշակայ մանկանն Արշակունոյ, եւ փեսայ իւր առնէր զնա: 4 Առնէր հարսանիս եւ եղբաւր նորին Վաղարշակայ, եւ տայր նմա զգոլստր ասպետին Բագրատունոյ ի Սպեր գաւառէ, որ թագաւորքն թագակապքն

լեալ էին ի բնմէ ազգին թագաւորութեանն Արշակունոյ. եւ մեծապէս արարեալ զհարսանիսն ամենայն երկիրն Հայոց, ցնծացեալք խնդացեալք էին ընդ այն մեծ խնդութիւն ուրախութեանն: 5 Ապա յետ այսորիկ դարձեալ ի մի վայր ժողովեալ զաշխարհ ամենայն զմարդիկ երկիրն Հայոց, եւ թագաւորեցոյց զմանուկն զԱրշակ երկիրն Հայոց, եւ զՎաղարշակ երկրորդն մին: 6 Եւ ընդ այն եւս ցնծացեալ՝ առնէին մեծապէս ուրախութիւն եւ ցնծութիւն ամենայն երկիրն Հայոց:

7 Ապա յետ այսորիկ հիւանդացաւ սպարապետն զաւրաւարն Հայոց Մանուէլ զախտ հիւանդութեան մահու. եւ կոչեաց զորդի իւր զԱրտաշիր, եւ ետ նմա զտէրութիւն իւր եւ զսպարապետութիւն զաւրաւարութեանն իւրոյ: 8 Եւ պատուիրէր նմա հնազանդ հպատակ կալ արքային Արշակայ, եւ լինել միամիտ. ջանալ եւ վաստակել, եւ տալ պատերազմ փոխանակ աշխարհին Հայոց գանձն քո, որպէս քաջ նախնիքն ի վերայ աշխարհին մտադիւր մեռանել: 9 Զի, ասէ, առ Աստուած այն արդարութիւն մեծ է եւ ընդունելի. եւ ոչ Աստուած թողու ի ձեռաց, յորժամ այնպէս լինիք: 10 Անուն քաջութեան յերկրի թողցուք, եւ զարդարութիւն յերկինս ընծայեցուցանէք. եւ ամենեկին ի մահուանէ մի՛ երկնչիք, այլ յուսասջիք յայն որ զամենայն արար եւ հաստատեաց: 11 Եւ զնենգութիւն եւ զպղծութիւն եւ զչարութիւն յանձանց ձերոց³ ի բաց արարէք. եւ զՏէր Աստուած սրբութեամբ եւ միամտութեամբ պաշտեցէք. եւ ի վերայ աստուածապաշտ աշխարհի համարձակութեամբ մեռարուք, զի այն ինքն մահ վասն Աստուծոյ է, փոխանակ եկեղեցեաց նորա եւ ուխտի նորա, եւ ի վերայ բնակ տէրանց աշխարհիս Արշակունոյ:

1 Օրինակ մի՝ սպարապետին

2 Տպ. երեսեալ

3 Օրինակ մի յաւելու՝ թօթափեցէք եւ

12 Եւ յետ այսորիկ գրեաց հրովարտակ առ թագաւորն Յունաց, եւ նմա յանձն արար զաշխարհ Հայոց եւ զԱրշակ արքայ: 13 Եւ յետ այսորիկ իբրեւ միահամուռ ժողովեալ կային շուրջ զնովաւ, եւ իբրեւ կայր հիւանդ ի մահիճս իւր, անդ թագաւորն Արշակ եւ անդ Վարդանդուխտ կին թագաւորին, եւ անդ ամենայն աւագք եւ մեծամեծք եւ նախարարք Հայոց այր եւ կին առ հասարակ ամենայն երեւելի մարդիկ, ապա երաց Մանուէլ զամենայն զանդամս իւր առ հասարակ առաջի ամենեցուն, մերկացաւ եւ եցոյց զի քան զդրամ խայծ ոչ գտանէր ողջ ի մարմնի նորա՝ զոր խոցեալ էր ի պատերազմի. զի աւելի քան զյիսուն՝ սպի կայր վիրաց եւ յառնի յանդամսն, զայն անգամ բացեալ առաջի ամենեցուն ցուցանէր: 14 Սկսաւ լալ, եւ ասել՝ թէ ես ի մանկութենէ համակ սնայ ի պատերազմունս, եւ մեծաւ քաջութեամբ զամենայն վէրս յանձն իմ առի. եւ ընդէ՞ր ոչ եհաս ինձ մեռանել ի պատերազմի, քան զաւրէն անասնոյ մեռելոյ եղէ: 15 Զի լաւ էր ինձ եթէ ի պատերազմի մեռեալ էի ի վերայ աշխարհի, զի մի՛ գեկեղեցիս եւ մի՛ զուխտ Աստուծոյ առ ոտն կոխիցեն: 16 Սակայն եւ ի վերայ Արշակունեաց բնիկ տէրանց աշխարհիս, եւ ի վերայ կանանց եւ ի վերայ որդւոց մերոց, եւ ի վերայ աստուածապաշտ մարդկանս եւ ի վերայ եղբայրութեան ընկերութեան եւ մտերիմ բարեկամութեանն զի՞ էր թէ հասեալ էր ինձ մեռանել. թէպէտ շատ զանձնս յանդուգն վարեցի, զվատթար մահս մահճացս եհաս ինձ մեռանել:

17 Զայս եւ բազում եւ աւելի քան զսոյնս խաւսեցաւ առաջի Արշակայ արքայի եւ առաջի ամենեցուն. եւ աղաչեաց եւս զթագաւորն Արշակ, եւ ասէ. Իմ Աստուծով կեցեալ է՞ ջերմ քրիստոնէս-

թեամբ, մի յանկարգ իբրեւ հեթանոսս կոծ կամ աշխարանս ոք անյուսութեամբ դնիցէ ինձ: 18 Զի որ միանգամ յուսոյ յարութեան ալն ունին, միւսանգամ կենդանութեան եւ գալստեանն Քրիստոսի, չէ պարտ լալ զնոսա: 19 Այլ իմ ցայժմ յուսով երկիւղիւ կեցեալ, բայց դուք մի՛ թիւրիցիք ի պատուիրանացն Աստուծոյ. աւելի զարդարութենէ փոյթ արասջիք, եւս առաւել զողորմութենէ: 20 Զի մեզ մեծ հայրապետն Ներսէս զայս համակ պատուիրէր. եւ ինքն յամենայն ժամ ի կենդանութեանն զսոյն գործէր, եւ այլոց ուսուցանէր առնել. զի ողորմէր աղքատաց, տնանգաց, գերեաց, ամայեաց, աւտարաց, պանդխտաց. զի այսպէս ասէր նա. Քան զողորմութիւն առնել, կամ քան զտուրս տալ, այլ ինչ մեծ եւ պատուական առաջի Աստուծոյ չիք: 21 Եւ զաշխար կամ զկոծ դնել մեռելոց՝ դառն մեղս համարէր, եւ յամս իւր եհատ զայս յերկէս Հայոց. զի յաւուրս նորա ոչ ոք իշխէր դնել կոծ կամ աշխարանս. այլ յետ մահու նորա անմիտ մարդիկ համարձակեցան զայս գործել: 22 Այլ վասն իմ ոք կոծ մի՛ դիցէ. եթէ դնէ ոք, նա լիցի դատապարտ. այլ ոչ եթէ յետ մահուն իմոյ իմ իշխանութիւն ինչ է սաստել, զի զոր ոչն կամիմ՝ մի՛ արասցեն. այլ ինձ յիշատակ արասցէ որ զիս սիրէ: 23 Ի պատերազմի ի մահուանէ մի՛ երկնչիք, ուր ես ոչ մեռայ. զի առանց Աստուծոյ ինչ ոչ լինի:

24 Զայս եւ զայսպիսի, եւ որ ինչ այս բանից նման են բանք, խաւսեցաւ: 25 Բազում եւ անչափ զանձս աղքատաց եւ կարաւտելոց բաշխէր, իւրովք ձեռաւք մատակարարէր. եւ բազում մասունս յընչից իւրոց տայր յեկեղեցիս եւ ի վկայանոցս, եւ բազում զանձս տայր ցքահանայապետսն³. եւ ապա ինքն մեռանէր: 26 Այլ իբրեւ մեռաւ մեծ սպարապետն Մանուէլ,

1 Օրինակ մի՛ քան զտասն

2 Տպ. եւ

3 Օրինակ մի յաւելու՛ քահանայս եւ պաշտօնեայս

հրամանն զոր տայր յաղագս կոծոյն չգնելոյ՝ այնմ ինչ ոք ոչ անսաց. այլ ամենայն մարդ երկրին Հայոց կոծ եղեալ, մեծաւ աշխարանաւք լային զնա առ հասարակ ազատք եւ շինականք: 27 Զի ամենայն մարդ իբրեւ զհաւրէ ի կարիս առնէին¹ զնմանէ վասն քաղցրութեան մարդասիրութեան հեզութեան հանդարտութեան խնամոտ բարեբարութեան՝ բարէնչան

զաշխարհաչէն անձն Մանուէլի: 28 Ամենեքեան բերանաբաց հառաչէին զկնի նորա, կղկղաթ կաթոգի լինէին զիւրեանց քաջ զաւրավարէն, զփրկչէն իւրեանց, զյաղթական զանուանին զարգասուէն², յայնպիսոյն հեռացեալ գնացեալ ի յանջատելն ի մեկնելոյն:

1 Յօր. ի կարի առնէին, ուղղեցա՛մ ըստ Բ. Մակար. Գ. 35. Թուի ուղղելի. կախեալ կային

2 Օրինակ մի յաւելու՝ զարգասութեան

ԲՈՒՉԱՆԴԱՐԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ
ՎԵՏԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ
ՎԵՐՋ, ԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎՃԱՐՈՒՄՆ
ՄԱՑՈՒԿԸ ԲԱՆԻՑ Ի ԾԱՅՐԷ

ԳԼՈՒԽ Ա.

1 Յաղագս ընդ երկուս բաժանելոյն աշխարհին Հայոց, եւ թագաւորելոյն Արշակայ հրամանաւ թագաւորին Յունաց, եւ կէս ազգին թագաւորեալ Խոսրով հրամանաւ թագաւորին Պարսից, թէ ո՛րպէս գաշխարհն ընդ երկուս բաժանեալ՝ սահման ի մէջ իւրեանց արկանէին, եւ ո՛րպէս աշխարհն հատան յիւրաբանչիւր յերկոցունց կուսաց:

2 Ապա յետ մահուն Մանուէլի զաւրավարին Հայոց ոչ իմն կարաց հաստատել ի վերայ աշխարհի թագաւորութեանն՝ Արշակայ. այլ բազումք ի Հայոց նախարարացն անտի ելին զատեան գնացին առ թագաւորն Պարսից, եւ մատնեցին նմա զաշխարհն Հայոց. եւ խնդրեցին ի նմանէ թագաւոր Արշակունի: 3 Եւ նորա յանձին կալեալ մեծաւ խնդութեամբ ընդ իւր ձեռն տալ իւրով բանիւ ի նմին տոհմէ ի թագաւորութենէն Հայոց Արշակունի, եւ նովաւ յինքն գրաւել զաշխարհն Հայոց: 4 Ապա գտանէր ի նմին տոհմէ մանուկ մի անուն Խոսրով, եւ կապեաց թագ ի գլուխ նորա. եւ ետ նմա կին զքոյր իւր զԶրուանդուխտ, եւ արար ընդ նմա զամենայն զգաւրս զաւրութեան իւրոյ. եւ Զիկ նուիրակ զաստիարակ ետ արքային Խոսրովայ. եւ եկին հասին յաշխարհն Հայոց: 5 Իբրեւ ետես Արշակ արքայ զնոսա, մերժեցաւ տեղի ետ չոգաւ գնաց ի սահմանս Յունաց, եւ էրն թիկունք Արշակայ թագաւորին Հայոց. եւ Խոսրովու՝ թագաւորն Պարսից:

6 Ապա եկին զաւրքն Յունաց թագաւորին ի թիկունս, եւ թագաւորն Արշակ զեկեղեաց գաւառաւ, եւ զաւրքն Պարսից եւ արքայն Խոսրով յԱյրայրատ գաւառին:

7 Ապա դեսպանք եւ հրեշտակք երկուց թագաւորացն, Յունացն եւ Պարսից, միմեանք² առ միմեանս երթեկէին: 8 Եւ այնուհետեւ առնէ խորհուրդ միաբանութեան հաւանութեան ընդ միմեանս թագաւորն Յունաց եւ թագաւորն Պարսից. եւ լաւ համարեցան զաշխարհն Հայոց նախ ընդ երկուս ի մէջ իւրեանց բաժանել. զի ասէին՝ թէ ի միջի մերում բնակեալ է այս հզաւր եւ հարուստ թագաւորութիւն, լաւ է զի այսու եղծանել եւ խանկարել կարասցուք զայս թագաւորութիւնս. նախ ընդ երկու բաժանել երկու թագաւորաւքս Արշակունաւք՝ զորս կացուցաք, ապա եւ ընդ նոսա կրծել ջանասցուք, աղքատացուցանել, ի մէջ արկանել ի ծառայութիւն զի մի՛ կարասցեն ի մէջ մեր ամբառնալ զգլուխս:

9 Եւ հաստատեցին զայս խորհուրդ. ընդ երկու զաշխարհն բաժանեցին: 10 Բաժին կողմանն Պարսից էր թագաւորին Խոսրովու, եւ բաժին մասինն Յունաց էր թագաւորին Արշակայ: 11 Բայց եւ ի նոցանէ բազում գաւառք կրծեալք հատեալք այսր անդր, եւ մնաց սակաւ մասն յաշխարհաց երկոցունց առ երկոսեան թագաւորսն: 12 Բայց սակայն երկոքեան թագաւորքն Հայոց՝ Արշակ եւ Խոսրով, որ սիւնքն³ գաւառքն մնացին թագաւորութեանն Հայոց երկոցունց կողմանց ի մէջ իւրեանց, եւ եր-

1 Յօրինակի միում՝ թագաւորութիւնն

2 Յօրինակի միում՝ միմեաց

3 Թերեւս. սակաւ

կոքեան թագաւորքն Արշակունիքն ի մէջ երկու բաժնացն սահմանս արկեալ հաստատէին խաղաղութեամբ, եւ երկիրն Հայոց երկոքեան բաժինքն, երկուց թագաւորացն հնազանդէին իւրաքանչիւր բաժնի իւրաքանչիւր թագաւորի. բայց սակայն մեծ էր Խոսրովու բաժինն նորա քան զԱրշակայ: 13 Եւ բազում գաւառք յերկոցունցն հատան. նուազեաց բաժանեցաւ ցրուեցաւ թագաւորութիւնն Հայոց, պակասեաց յիւրմէ մեծութենէն յայն ժամանակն եւ յապայ:

ԳԼՈՒԽ Բ.

1 Յաղագս եպիսկոպոսացն, որ երեւելիք էին յայնմ ժամանակի ի մասինն յաշխարհին Խոսրովու յերկրին Հայոց՝ որ ընդ Պարսից ձեռամբ էին. նախ վասն վարուց Զաւինայ:

2 Եւ էր Զաւէնս այս անուանի գաւառ Աղբիանոս եպիսկոպոսի ի գեղջէ Մանաւազկերտոյ. էր սա բարոյիւք այր չարարար, խիստ եւ նախանձոտ: 3 Բայց սակայն կրաւնս մի, զոր եղ յիւրում ժամանակի. զի ամենայն քահանայից ուսոյց առնել հանդերձ զինուորաց: 4 Զի թողին զկրաւն առաքելական եկեղեցեացն, սկսան գնալ ըստ իւրեանց մտաց. զի ոչ ըստ կրաւնիցն ագանէին քահանայքն զպճղնաւորն, որպէս աւրէն էր ի բնէ, այլ սկսան զխոտորկտուրսն ի վերայ ծնագացն ունել: 5 Եւ զարդարէին զհանդերձս իւրեանց պէսպէս նարաւտաւք, եւ սիգային որպէս ոչ վայել էր. եւ զմորթ մեռելոտիս զազանացն քահանայքն անխտիր ագանէին, որ ոչ վայել էր: 6 Եւ ինքն Զաւէնն աթինեալս եւ զտապակեալս զժապաւինեալս նարաւտաւք ագանէր, զսամուրեներս եւ զկնգմենիս եւ զգայլենիս ագանէր. եւ աղուեսներս զանձամբ արկեալ, անխտիր ի բեմ ելեալ նստէին: 7 Որկորստութեամբ ագահութեամբ անառակութեամբ կայր Զաւէն գամենայն աւուրս կենաց իւրոց. եւ սա կալաւ զտեղի գամենայն աւուրս կենաց իւր ամս երիս:

ԳԼՈՒԽ Գ.

1 Յաղագս Շահակայ Կորնէի, որ եկաց ի տեղի Զաւենայ գլուխ եպիսկոպոսաց:

2 Ապա Շահակ Կորնեայ եկաց գլուխ եպիսկոպոսաց փոխանակ Զաւինայ յետ մահու նորա ամս երկուս: 3 Եւ էր սա այր քրիստոնեայ, բայց ոչ ինչ զչարեցաւ ընդ կարգս Զաւինայ՝ զոր եղեալն էր նորա՝ փոխել. սակայն առաջնորդեաց սա ամս երկուս, եւ փոխեցաւ յաշխարհէ:

ԳԼՈՒԽ Դ.

1 Յաղագս Ասպուրակայ Մանազկերտացոյ, որ եկաց գլուխ եպիսկոպոսաց յետ Շահակայ:

2 Ապա յետ մահուն Շահակայ եպիսկոպոսի եկաց գլուխ եպիսկոպոսաց Ասպուրակ ոմն ի գաւառէ Աղբիանոսի եպիսկոպոսի, այր քրիստոնէամիտ աստուածապաշտ արդար. եւ առաջնորդեաց դրանն Խոսրովու: 3 Բայց միայն վասն կրաւնիցն հանդերձոյն զեղեալ կարգն ըստ կրաւնիցն Զաւինայ գնային սոքա:

ԳԼՈՒԽ Ե.

1 Յաղագս Փաւստեայ եւ Զորթայ եպիսկոպոսաց:

2 Էր առ այնմ ժամանակաւ Փաւստոս եպիսկոպոս. սա ի ժամանակս Ներսէսի եպիսկոպոսապետին՝ էր ի տան նորին իբրեւ թելակալ: 3 Սոյնպէս Զորթ այր ներքինի ընդ նոսին. քանզի էին ի ներքնի հայրապետին ի տան իւրում ընդ նորա ձեռամբ երկոտասան եպիսկոպոսք, աթոռակիցք իւր, գործակիցք եւ խորհրդակիցք: 4 Թող զայլոց գաւառաց ամենայն եպիսկոպոսեանն՝ որ ընդ նովաւ. այլ երկոքեան սոքա յայնց երկոտասանիցն: 5 Եւ էին սոքա ի տեսչութիւն աղքատանոցացն հաւատացեալք, եւ յամենայնի էին հաւատարիմք նորա ի ժամանակս նորա, եւ յամս Խոսրովու եւ Արշակայ երկուց թագաւորացն բա-

ժանաւորացն, մինչ դեռ եւս կային նոքա կենդանիք:

ԳԼՈՒԽ Զ.

1 Յաղագս Առոստոմայ եղբար Փաւստեայ եպիսկոպոսին:

2 Եւ էր եղբայր մի Փաւստեայ եպիսկոպոսի, կրաւնագգեաց մէնակեաց անապատակեաց լեռոնական սքանչելի: 3 Եւ էին լեալ սոքա ազգաւ Հոռոմ. այլ այրս այս մեծաւ վարեաւք շրջէր զամենայն աւուրս կենաց իւրոց: 4 Եւ էր սա բնակեալ յարայրատեան գաւառին, եւ վարէր նա Հոգևով Սրբով. շրջէր սա յանապատս մաշկահանդերձ ճարակաւոր ի լերինն մինչեւ յաւր հանգստեան իւրոյ: 5 Ապա հանկեաւ սա. եւ բերին յանապատէն զմարմին սորա, թաղեցին ի բուն ի գեւղն հայրապետին Ներսէսի, որում անուն Ամաւքն կոչի. եւ ամի ամի գլխատակ նորա կատարէին:

ԳԼՈՒԽ Է.

1 Յաղագս Արտթայ եպիսկոպոսին Բասնոյ:

2 Յայնմ ժամանակի երեւելի էր յեպիսկոպոսան, որ էին, Արտիթ եպիսկոպոս Բասնոյ, այր ծերունի պատուական եւ պիտանի: 3 Սրբութեամբ եւ ճշմարտութեամբ էր վարեալ. իբրեւ արժանի եղեալ սա Հոգևոյն Սրբոյ՝ մեծաւ գաւրութեամբ շրջէր, առնէր նշանս մեծամեծս ամս բազումս: 4 Սա աշակերտեալ մեծին Դանիէլի՝ որ էրն յամս Տիրանայ արքայի, եւ կենդանի կայր յամսն Խոսրովու արքայի եւ Արշակայ, երկուց թագաւորացն Հայոց:

ԳԼՈՒԽ Ը.

1 Յաղագս Յոհաննու եպիսկոպոսի, եւ վարուց նորա, եւ անմտութեանն եւ շաղաշուտ խաւսիցն եւ գործոցն, եւ նշանացն՝ որ յԱստուծոյ ի վերայ նորա եղեմ:

2 Այլ Յոհան եպիսկոպոս, որդի Փառինայ հայրապետի հինաւուրց. թէ արժան ի-

ցէ զնա կոչել եպիսկոպոս: 3 Եւ էր սա այր կեղծաւոր, եւ երեւեցուցանէր ինքն զանձն իւր մարդկան պահող եւ խորգահանդերձս. մինչ զի մոյգս անգամ ոչ ագանէր, այլ զամառն հեակով պատէր, եւ զձմեռն կեմով: 4 Եւ յագահութեան առանց չափոյ էր հեղեալ¹, եւ ոչ կարէր տալ զագահութիւն իւր ընդ երկիւղին Աստուծոյ. այնչափ ինչ, զի զիրս անարժանս եւ չհաւատալիս գործէր:

5 Զի էր երբեմն դիպեալ ի ճանապարհի ուրեմն, զի նստէր նա ի գրաստու վերայ եւ գայր. եկ դիպեցաւ սմա աւտար պատանի մի աշխարհական հեծեալ ի ձի, սուսեր ընդ մէջ, թուր զգաւտուոյ, աղեղնակապարճ զմիջովն. լուացեալ զհերս իւր, աւծեալ մերձեալ, վարսակալ եղեալ ի գլուխ իւր, եւ աւղիկ² արկեալ զուսովք իւր. եւ գայր զճանապարհս իւր, թերեւս յաւազակութենէ: 6 Իսկ ձին՝ յորում հեծեալ՝ մեծ հասակաւ, եւ էր գունաւոր, գնացող, մինչ զի ի բացէ տեսանէր եպիսկոպոսն Յոհան զձին, մեծապէս զարմացեալ՝ ակնկառոյց լինէր: 7 Ապա իբրեւ եկն մերձեցաւ հեծեալն մաւտ ի նա անդր, ապա սպասեալ Յոհաննու՝ բուռն հարկանէր զերասանակաց ձիոյն, եւ ասէր. էջ դու վաղվաղակի ի ձիոյ այտի, զի բանք են ինձ ընդ քեզ: 8 Ասէ այրն. Զի ոչ դու զիս գիտես, եւ ոչ ես զքեզ, զի՞նչ այն բանք իցեն, զոր դու ընդ իս իցես խաւսելոյ: 9 Մանաւանդ զի այրն արբեալ եւս դիպեցաւ, եւ շատ յամառեաց այրն իջանել ի ձիոյն: 10 Ապա բռնադատեաց զնա Յոհան, իջոյց ի ձիոյ անտի. եւ առ տարաւ զնա մեկուսի ի ճանապարհէն: 11 Եւ առնն խոնարհիլ հրամայէր եւ ասէր. Զերիցութեան ձեռն դնեմ ի վերայ քո: 12 Իսկ նա տայր պատասխանի զանձնէն, եթէ այր աւազակ սպանող չարագործ եւ խառնազնաց լեալ ի մանկութենէ իմմէ, ես ոչ ինչ եմ արժանի այդպիսի իրաց, եւ այժմ

1 Յօրինակի միում՝ եղեալ
2 Յօրինակի միում՝ յօղիկ

դեռ ի նմին գործ կամ: 13 Եւ շատ ի վէգ եկեալ յամառէր այրն, եւ նա եւս չար քան զնա: 14 Ապա բռնաբար զգետնեալ զայրն, զնէր Յոհան զձեռն իւր՝ առնել զնա երէց. եւ յարուցեալ հրամայէր լուծանել զհանգոյցս մեկնոցին, եւ արկանել նմա աղաբողոն: 15 Եւ ասէր. Երթ ի գեւղ քո, եւ լիջիր դու անդ երէց գեղջն՝ ուստի ես: 16 Եւ անգամ ոչ գիտէր զայրն թէ յորմէ՛ գեղջէ իցէ: 17 Ինքն Յոհան մատուցեալ բուռն հարկանէր զձիոյն, եւ ասէր. Այս ինձ կաւչիկք լիցին, փոխանակ զի երէց արարի զքեզ: 18 Իսկ այրն յամառեալ ի վերայ ձիոյն չառնոյր յանձն տալ. ապա բռնաբար յինքն հանեալ զձին, եւ զայրն արձակեաց: 19 Եւ այս ամենայն իրքս վասն ձիոյն եղեն:

20 Ապա այրն թէ ոչ կամաւք՝ աղէբողոն արկեալ, գնայր ի տուն իւր, եւ երթեալ մտանէր ի մէջ ընդանեաց իւրոց: 21 Ասէ ցկին իւր եւ ցընդանիս. Արիք յաղաւթս կամք: 22 Եւ նոքա ասեն. Մոլիս դու, դե՞ռ ուրեմն հարաւ ի քեզ: 23 Իսկ նա ասէ. Արիք կամք յաղաւթս, վասն զի երէց եմ: 24 Իսկ նոքա զարմացեալ, մերթ շիկնէին, մերթ ծիծաղէին, մինչեւ բազում անգամ յամառեալք, ապա ուրեմն հաւանեցան կալ յաղաւթս ընդ նմա: 25 Ապա ասէ կինն ցայրն իւր. Ո՞չ դու երախայ էիր, եւ չէիր մկրտեալ: 26 Ասէ այրն ցկինն իւր. Ապշեցոյց, չետ յիշել, եւ ոչ ես յիշեցի զայդ ասել ցնա. զիս երէց արար, եւ զձին սանձաւ թամբաւ առ եւ անց: 27 Եւ ասեն ցայրն ընդանիքն իւր. Յարիցես անդրէն գնասցես առ եպիսկոպոսն, եւ ասասցես. Մկրտեալ չէի, զի՞ արարեր զիս երէց: 28 Իսկ նորա յարուցեալ գնացեալ առ եպիսկոպոսն, ասէ ցնա. Ես մկրտեալ չէի, զի՞ արարեր զիս երէց: 30 Եւ ասէ Յոհան. Սափորով միով ջուր բերէք: 31 Եւ առեալ զջուրն էարկ զգլխով նորա, եւ ասէ. Երթ, մկրտեցի զքեզ: Եւ արձակէր զայրն վաղվաղակի յիւրմէ:

ԳԼՈՒԽ Թ.

1 Յաղագս նորին Յովհաննու:

2 Երբեմն սոյն Յոհան անցանէր առ այգեաւք ուրումն. եւ էր ժամանակն զայգիսն յատելոյ: 3 Աղաղակէր առ նա այր մի յայգւոյն, եւ ասէ. Աւրհնեա, տէր եպիսկոպոս, զմեզ եւ զայգիսս: 4 Ասէ Յոհան. Փուշ եւ տատասկ բուսցի: 5 Ասէ այրն. Ի մարմինդ քո բուսցի փուշ եւ տատասկ, փոխանակ զի տարապարտուց անիծանես զմեզ: 6 Եւ եղեն նշանք յԱստուծոյ. զի իբրեւ չոգաւ եպիսկոպոսն ի վանս իւր, հասին հարուածք ի վերայ նորա, սկսաւ ընդ ամենայն անդամս մարմնոյ նորա որպէս զփուշ հարկանել: 7 Եւ մեծապէս շտապեալ անկեալ ի տանջանս չարաչարս հարուածոց, եւ ի մեծ տագնապի կայր աւուրս բազում: 8 Ապա յղեաց կոչեաց առ ինքն զայգորդն, աղաչեաց զնա առնել ի վերայ նորա աղաւթս, զի փրկեսցի նա ի ցաւոցն: 9 Այգորդն ասէր. Իսկ ես ո՞վ եմ, զի կարեմ զոք աւրհնել կամ անիծանել. թող թէ զայր եպիսկոպոս: 10 Իսկ նա բռնադատէր զնա յայնժամ. մինչեւ յառնէր այգորդն կայր յաղաւթս եւ ասէր. Տէր Աստուած. դու գիտես՝ զի ես այր մեղաւոր եմ եւ անարժան, ոչ գիտեմ զաղմուկս՝ յորում ըմբռնեցայս. դու փրկեա զիս յայս ի չարէս, զի ասեն՝ թէ զայր եպիսկոպոս դու անիծեր, եւ ասեն՝ քո բանիւ եղեւ: 11 Զի լաւ էր ինձ մահ. քան զի չգիտեմ զայս՝ զոր ինչ զինէն ասեն: 12 Եւ զայս ասացեալ՝ անդէն բժշկեցաւ եպիսկոպոսն, եւ սկսաւ յամենայն մարմնոցն փուշն ի բաց թափել. եւ էր իբրեւ զփուշ խոտոց. վաղվաղակի յարուցեալ ողջացաւ յախտէն:

ԳԼՈՒԽ Ժ.

1 Յաղագս նորին Յոհաննու:

2 Սոյն Յոհան եպիսկոպոս որդի Փառինայ, յորժամ երթայր առ թագաւորն Հայոց, խաղակատակ լիներ նոցա. որպէս խաղալովն զանձն իւր կրթէր յագահուլթեան,

որում ծարաւեալ պասքեալ փափաքէր, սակայն միհանէսք¹ այն էին նորա: 3 Ի չորք անկեալ յոտս եւ ի ձեռս՝ սողէր առաջի թագաւորացն, եւ զուղտու զձայն ածէր կառաչելով, զաւրէն ուղտու այնպէս փարելով: 4 Ընդ կառաչելն ապա մի մի բան խառնելով առնէր ի ձայն կառաչելոյն, ասելով՝ թէ ուղտ եմ, ուղտ եմ, եւ զարքայի զմեղս բառնամ. դիք ի վերայ իմ զմեղս արքայի, թող բառնամ: 5 Իսկ թագաւորքն զմուրհակս գիւղաց կամ զագարակաց գրեալ եւ կնքեալ՝ դնէին ի վերայ ողիւնն Յոհաննու փոխանակ ընդ մեղաց իւրեանց. եւ ի թագաւորացն Հայոց ստացաւ իւր գեւղս եւ ագարակս եւ գանձս յուղտն լինելոյ եւ զմեղսն բառնալոյ ըստ բանիցն: 6 Այսպիսի էր այրս Յոհանս կապեալ յըռժ-գուլթեան եւ յագահուլթեան զամենայն աւուրս կենաց իւրոց. զայսպիսի գործս գործէր վասն ագահուլթեան, որ չէր արժան:

ԳԼՈՒԽ ԺԱ.

1 Յաղագս Կիւրակոսի եպիսկոպոսի:

2 Եւ էր եպիսկոպոսն Տայոց Կիրակոս, որ Շահապ անուն կոչէր, այր ճշմարիտ աստուածապաշտ ըստ կամացն Աստուծոյ, եւ ուղիղ ճշմարտութեամբ առաջնորդէր ժողովրդեան իւրում. եւ վարէր զեպիսկոպոսութիւն իւր ըստ կամացն Աստուծոյ զամենայն աւուրս կենաց իւրոց:

ԳԼՈՒԽ ԺԲ.

1 Յաղագս Զորթուազու եպիսկոպոսի Վանանդայ:

2 Եւ Զորթուազ եպիսկոպոս Վանանդայ գաւառին, այր սուրբ, պարկեշտ, արժանի Աստուծոյ, արբեալ Ոգևով Սրբով. քրիստոնէութեամբ զնայր գործէր, առաջնորդէր իւրում ժողովրդեանն ըստ կամացն Աստուծոյ:

ԳԼՈՒԽ ԺԳ.

1 Յաղագս Տիրկան եւ Մովսէսի եպիսկոպոսաց:

2 Եւ էին երկու եպիսկոպոսք Բասենայ գաւառին, Մովսէս եւ Տիրիկ. արք լաւք հրեշտակակրաւնք, սուրբ, հաւատացեալք, հրաւիրմանն արժանիք: 3 Առաջնորդէին իւրաքանչիւր ժողովրդոց ի ճանապարհն Աստուծոյ զամենայն աւուրս կենաց իւրեանց:

ԳԼՈՒԽ ԺԴ.

1 Յաղագս Ահարոնի եպիսկոպոսի:

2 Էր զայնու ժամանակաւ Ահարոն եպիսկոպոս ի մէջ Հայոց աշխարհի. այր երեւելի եւ անուանի, քաջ առաքինի. առաջնորդ իւրոց ժողովրդոց լուսաւորապէս զամենայն աւուրս կենաց իւրոց:

ԳԼՈՒԽ ԺԵ.

1 Յաղագս գլխաւորին եպիսկոպոսին Ասպուրակայ:

2 Եւ էր գլխաւոր եպիսկոպոսաց Հայոց Ասպուրակ. այր սուրբ եւ բարեպաշտաւն, երկիւղած յԱստուծոյ եւ ի մարդկանէ:

3 Բայց ոչ ինչ կարէր յանդիմանութեամբ խաւսել ընդ ումեք. այլ ինքն ի լուութեան էր եւ ի համեստութեան ի զգաստութեան ի պարկեշտութեան. ի պահս եւ յաղաւթս յամենայն ժամ աղաչէր զԱստուած: 4 Բայց ի հանդերձն զգեցնելոյ՝ ըստ կրաւնիցն Զաւինայ գնայր նա. ագանէր զամղայեալս եւ ժապաւինեալս: 5 Բայց էր սա այր քաղցր եւ խոնարհ, բարերար եւ մարդասէր զամենայն աւուրս կենաց իւրոց:

ԳԼՈՒԽ ԺԶ.

1 Յաղագս Գնդայ սրբոյ եւ առաքինոյ. որ էր գլխաւոր յայնմ ժամանակի ամեցնայն արեղայիցն Հայոց անապատաւորացն մեծակեցացն եւ վաներայիցն:

2 Եւ էր Գինդս այս ի Տարաւն գաւառէ, եւ լեալ սա աշակերտ մեծի Դանիէլի. եւ

1 Ի Պատկանեան օրինակի՝ միահանգէք

յետ նորա էր գլուխ արեղայից, եւ վարդապետ միանձանց, եւ առաջնորդ մենակեցաց, եւ վերակացու վաներայից, եւ ուսուցիչ ամենայն անապատաւորաց. եւ տեսուչ ամենեցուն՝ որք միանգամ վասն սիրոյն Աստուծոյ յաշխարհէ էին մեկնեալ, ի յանապատս բնակեալ, ի քարանձաւս ամրացեալք յայրս եւ ի քարածերպս երկրի, եւ միահանդերձք բոկազնացք զգաստացեալք խոտածարակք ընդաբուտք արմատակերք, զաւրէն գագանաց ի լերինս շրջէին՝ լեշկամաշկաւք եւ մորթաւք այծենեալք, նեղեալք տառապեալք եւ տարակուսեալք, յանապատի մոլորեալք, ի ցուրտ եւ ի տաւթ, ի քաղց եւ ի ծարաւ վասն սիրոյն Աստուծոյ:

3 Զայսպիսի ինչ համբերութիւն առեալ կրէին յանձինս իւրեանց զամենայն աւուրս կենաց իւրեանց. զի ոչ արժէ աշխարհս բնաւ զնոսա, որպէս եւ գրեալ է. զաւրէնս երամոյ թռչնոց բնակեալ էին սոքա ի ծագս¹ վիմաց, ի սորս քարանձաւաց, անինչք անստացուածք անխնամք, առանց դարմանոց ամենեւին չտանել մարմնոց: 4 Եւ էր նոցա բուն գլխաւոր սուրբն Գինդ, զի առ հասարակ ամենայն մարդիկ երկրին Հայոց անուանեալ կոչէին սմա՝ վարդապետ: 5 Բայց էին եւ ի նոցունց այլք աշակերտք, որք նմանէին իւրեանց վարդապետին եւ նորա ձեռինն, որոց անուանք այս են. Վաչակ, Արտոյտ, Մարախ, եւ Տրդատ լեալ էր սոցա ընգեր իսկ, որ առ մեծիւն քահանայապետին ներսէսիւ էր լեալ սարկաւագապետ, եւ յետ մահուն ներսէսի ի նոյն յառաջին վարդապետսն յանապատաւորաց դասս թեւակոխեաց: 6 Առնոյր սուրբն Գինդ եւ զՄուշէ մանուկ ձեռասուն, հաղորդէր վարուցն մեծին Գնդայ. եւ այլք բազումք էին նորա աշակերտք հրեշտակակրանք, զորոց զվարս ոք պատմել ոչ բաւեսցէ:

1 Յերկուս օրինակս՝ ի ծակս

7 Եւ էր սուրբն Գինդ լի Հոգւովն Աստուծոյ. եւ ոչք ընդ նմա, ըստ նմին աւրինակի առնէին սոքա նշանս մեծամեծս եւ զաւրութիւնս բազումս եւ բժշկութիւնս հիւանդաց յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի: 8 Եւ ընդ բազում հեթանոս տեղիս շրջէին յաշխարհս հեռաւորս, եւ ի սփիւռս հեթանոսաց դարձուցանէին զմոլորութիւն բազմաց, եւ զբազում մարդիկ ածէին ի գիտութիւն կենաց եւ ի ճանապարհն ճշմարտութեան: 9 Եւ սուրբն Գինդ ընոյր զամենայն անապատս մենակեցաւք, եւ զամենայն շէնս վաներաւ, եւ բազում յաշխարհի ուղղեալ կացուցանէր կարգս մարդկան զաստուածեղէն կրանիցն: 10 Բայց սակայն ինքն առեալ վիճակ բնակութեան ունէր զանապատն, ուստի բխեալ հոսն ալուք Եփրատ գետոյն: 11 Անդէն բնակեալ ընդ ծագս² վիմացն, ուր յառաջու կայեանքն էին մեծին Գրիգորի առաջնոյ, որում տեղեացն Ոսկիք կոչեն. ի նոյն ծագս էր բնակեալ մեծն անապատաւորաց Գինդ: 12 Իսկ սուրբն Մուշէ առ նմա հանապազորդեալ էր. բայց այլքն զայլ գաւառս շրջէին հրամանաւ իւրեանց գլխաւորին Գնդայ: 13 Եւ սրբոյն Տրդատայ կայեանք բնակութեան էր ի գաւառն Տարաւնոյ, շինեալ զիւր եղբարց³:

(ԴՊՐՈՒԹ. Գ, ԳԼՈՒԽ Ե.)

- 1 ⁴Վասն որդւոցն Վրթանայ, որոց անուանք այս են⁵. առաջնոյն Գրիգորիս, եւ երկրորդին⁶ Յուսիկ:
- 2 Այս Վրթանէս⁷ եւ Առիստակէս⁸ որդիք էին մեծի քահանայապետին սրբոյն¹

2 Յօրինակի միում՝ ընդ ծակս
 3 Ի Պատկանեան տպ. եղբայրանոցս
 4 Բ, Դ յաւելում՝ Պատմութիւն. Գ, Պատմութիւն սրբոց հայրապետացն Հայոց՝ Առիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն եւ Գրիգորիսի
 5 Բ անուանքն են այս. Դ չունի այս են
 6 Բ չունի՝ եւ. գրէ՝ երկրորդն
 7 Բ, Գ Առիստակէս եւ Վրթանէս
 8 Դ Առիստակէս

Գրիգորի: 3 Եւ էր Առիստակէս կուսան եւ² սուրբ ի մանկութենէ. զի թէպէտ եւ կրօներ³ որդի էր, կանխաւ եհաս յաթոռ հայրենի եպիսկոպոսութեան⁴: 4 Իսկ Վրթանէս էր ամուսնացեալ եւ անորդի, եւ⁵ բազում ժամանակս խնդրէր նա յԱստուծոյ՝ զի մի՛ զրկեսցի նա⁶ յաւրհանութենէ գաւակի, այլ ի պտղոյ նորա կացցէ առաջի նորա ի պաշտաւն Տեառն: 5 Եւ ի ծերութեան նորա լուաւ Տէր աղաւթից նորա, յղացաւ ամուսին նորա, եւ ծնաւ երկուս⁷ որդիս երկուորեակս⁸, եւ կոչեաց զանուն երիցուն յանուն հաւր իւրոյ Գրիգորիս, եւ երկրորդին՝ Յովսիկ, որք սնան զառաջեալ թագաւորին Հայոց, եւ ուսման գրոց փոյթ ի վերայ կալան ուսուցանել զնոսա: 6 Ապա երէց որդին Գրիգորիս եհաս յեպիսկոպոսութիւն կողմանցն Աղուանից եւ Վրաց⁹, վասն հոգեկիր առաքինի արգասեացն, բարեհասակ¹⁰, եւ զգիտութիւն Աստուծոյ յանձին կրելով: 7 Ոչ ամուսնացաւ նա¹¹, այլ ի հնգետասանամենից եհաս յաշտիճան¹² եպիսկոպոսութեան աշխարհին¹³ Վրաց եւ Աղուանից, այս ինքն սահմանացն Մագքթաց: 8 Երթեալ նորոգեաց անդ¹⁴ զեկեղեցիսն լուսաւոր կարգաւքն առաջնոյն Գրիգորի, հաւրն գործոց¹⁵ նմանեալ:

9 Իսկ զՅովսիկն սնուցանէր Տիրան որդի թագաւորին¹⁶ Խոսրովու. եւ ետ արքա-

յորդին¹⁷ Տիրան զդուստր իւր կնութեան¹⁸ Յուսկանն¹⁹ որդւոյ Վրթանայ: 10 Եւ մինչդեռ մանուկ էր, յետ միոյ անգամու յառաջին զիչերին մտանելոյ՝ յղացաւ կինն²⁰: 11 Եւ իսկ եւ իսկ ետես ի տեսլեան՝ զի երկու էին մանկունքն, եւ ոչ հաճոյ ի պաշտաւն Տեառն Աստուծոյ. եւ զղջացաւ զամուսնանալն: 12 Լայր եւ աղաչէր զԱստուած, եւ ապաշխարէր մեծաւ տառապանաւք: 13 Եւ յամուսնանալն²¹ բռնադատեցաւ ի թագաւորէն իբրեւ զմանուկ. սակայն եւ այն ըստ Աստուծոյ շնորհացն գործէր, զի որք առ յապայն²² ելանելոց էին ի նմանէ հովիւքն գլխաւորք, որք յաւգուտ աշխարհի եւ ի շահ մշակութեան եկեղեցւոյ՝ յաւետարանական²³ հրամանացն սպասաւորեալ: 14 Այլ սակայն ըստ այն²⁴ մի անգամ ա՛յլ ոչ եմուտ առ կին իւր. եւ ծնաւ կինն երկուս²⁵ որդիս, որպէս ետես նա ի տեսլեանն յառաջագոյն²⁶. եւ կոչեցին զանունն առաջնոյն Պապ, եւ զերկրորդին Աթանազինէս:

15 Եւ յետոյ²⁷ այլ ոչ եւս մերձեցաւ ի կինն²⁸՝ վասն առաքինութեան մանկութեանն: 16 Իբրեւ ոչ եթէ զամուսնութիւնն աղտեղի համարէր, այլ կասկածէր նա ի տեսլեանն՝ զոր ետես, եթէ²⁹ ընդէ՞ր բնաւ ի

1 Բ, Գ, Դ չունին՝ սրբոյն
 2 Բ, Գ, Դ չունին՝ եւ
 3 Դ կրտսէր
 4 Ա չունի՝ եպիսկոպոսութեան
 5 Գ չունի՝ եւ
 6 Դ չունի՝ նա
 7 Բ, Գ երկու
 8 Դ երկուորդեակս
 9 Դ չունի՝ եւ Վրաց
 10 Դ չունի՝ բարեհասակ
 11 Բ, Գ չունին՝ նա
 12 Բ, Գ յաստիճան
 13 Դ չունի՝ աշխարհին
 14 Բ, Գ անդ նորոգեաց. Դ երթեալ անդ լուսաւորեաց
 15 Դ փոխ. հորն գործոց՝ գրէ պապուն իւրոյ
 16 Ա չունի՝ բագաւորին

17 Ա արբայորդի
 18 Բ, Գ ի կնութեան
 19 Բ, Գ չունին Յուսկանն
 20 Բ, Գ յետ մի անգամ մերձեցաւ (Գ մերձեցաւ) ի կինն՝ յղացաւ. Դ ... յառաջնում գիչերին...
 21 Բ, Գ, Դ չունին՝ յայր եւ աղաչէր... յամուսնանալն. Դ յաւելու՝ Զի թէպէտ եւ
 22 Դ որ առ յապա
 23 Դ աստարանական
 24 Ա, Բ, Գ ըստ այնմ. Դ Սակայն նա ըստ այն մի գիչերին ոչ եմուտ առ կինն. եւ ծնաւ
 25 Դ յերկուս
 26 Դ յառաջագոյն ի տեսլեանն. Բ, Գ չունին՝ Այլ սակայն ըստ... յառաջագոյն
 27 Բ, Գ եւ այնուհետեւ
 28 Դ եւ յետ միոյ գիչերոյ ի կինն մերձեցաւ այլ ոչ եւս մերձեցաւ ի նա
 29 Բ թե

նմանէ՝ այնպիսի զաւակ անպիտան¹ ծնանիցի: 17 Քանզի ոչ² երկրաւոր զաւակի ցանգացեալ³ էր, այլ այնպիսումն՝ որ ի սպասաւորութիւն սպասու պաշտաման ծառայութեան Տեառն Աստուծոյ կայցեն: 18 Եւ զամենայն իսկ զերկրաւորս առ ոչինչ համարեալ, ոչ լաւ համարեցաւ զանցաւորս⁴, այլ վերին⁵ երկնակեաց կենացն ցանգացեալ հայէր: 19 Ոչ ինչ ածէր զմտաւ⁶ զսէր թագաւորին կամ ի նմանէ կուսէ զպատուելն, կամ զմեծութիւն⁷, կամ զընտանութիւն փեսայութեան թագաւորին⁸. այլ յայնմ ամենայնէ ուրացեալ հրաժարէր, եւ⁹ ատարոտիս եւ գարշելիս¹⁰ եւ պատեանս¹¹ համարէր: 20 Եւ յետ առաջնոյն այլ ոչ եւս խաբեցաւ երբեք ուրեք¹² իբրեւ զմանուկ. այլ հայրական¹³ միտս զծերական հանճարոյն ստացեալ, զխրատն¹⁴ իմաստութեան անմահութեան¹⁵, լաւ համարեցաւ զնախատինսն Քրիստոսի՝ քան զմեծութիւն թագաւորացն. զճգունս վարուցն¹⁶ ընտրեաց անձին իւրոյ, յերեքտասանամենից եւ¹⁷ ի վեր առաքինանայր: 21 Սա իւրոց հարցն նմանեալ, եւ զեղբարն իւրոյ Գրիգորիսի¹⁸ զաւրինակ բերէր անձին իւրոյ. զբրիստո-

սեան¹⁹ լուծն առանց ամենայն յապաղութեան ձգէր²⁰ մինչեւ ի վաղճան:

22 Բայց վասն զի թշնամեցեալ²¹ էր տուն թագաւորին ընդ նմա, եւ մինչ դեռ վասն այնորիկ²² զզուէին զնա աներք նորա, մեռաւ կին նորա, եւ ազատեալ լինէր Յուսիկն ի բաներոյն²³: 23 Եւ մինչ դեռ նա հոգացեալ²⁴ վասն իւր ծննդոց²⁵ մնացելոց զաւակացն, եւ վասն այսորիկ հոգալով²⁶ կայր յաղաւթս առ Տէր, երեւցաւ նմա հրեշտակ Տեառն ի տեսեան, եւ ասէ ցնա. Յուսիկ, որդի Գրիգորի, մի՛ երկնչիր, զի լուաւ Տէր աղաւթից քոց. եւ ահա ծնցին²⁷ ի քոց զաւակացդ այլ զաւակք²⁸, զի լիցին²⁹ նոքա ի լուսաւորութիւն³⁰ զիտութեան, եւ աղբիւրք³¹ հոգեւոր³² իմաստութեան Հայաստան աշխարհիս³³: 24 Եւ ի նոցանէ բղիսեցեն շնորհք պատուիրանացն Աստուծոյ, եւ խաղաղութիւն բազում եւ շինութիւն հաստատութեան բազում եկեղեցեաց ի նոցանէ տացի³⁴, բազում յաղթութեամբ եւ մեծաւ զաւրութեամբ. եւ բազում³⁵ մոլորեալք եւ անգէտք դարձցին ի ճանապարհս ճշմարտութեան. որովք եւ Քրիստոս բազում լեզուաւք փառաւորեսցի նոքաւք: 25 Որք սիւնք եկեղեցւոյ լինիցին, եւ մատակարարք բանին կենաց, եւ հիմունք հաւատոյ, պաշտանեայք Քրիստոսի եւ ար-

1 Ա չունի՝ անպիտան
 2 Դ յաւելու՝ եթէ
 3 Ուր Ա վարի գ տառիւ, այլ՛ն ունին գտնվորականն կ
 4 Բ, Գ գերկրաւորս
 5 Բ, Գ, Դ զվերինն
 6 Բ, Գ ընդ միտ ածէր. Դ ածէր ընդ միտ եւ գ(ղատարկ) ամենայն օտարանցեալ հրաժարէր, եւ ոչ զի ի նմանէ կուսէ
 7 Բ, Գ զմեծութիւնն
 8 Բ, Գ չունի՛ն՝ կամ զընտ. փես. թագաւորին
 9 Դ չունի՛ յայնմ ամ. ուր. հրաժարէր եւ
 10 Դ գարշելի
 11 Թերեւս՝ անպիտանս
 12 Բ չունի՛ ուրեք. Գ, Դ չունի՛ն երբեք ուրեք
 13 Դ հայրեանական
 14 Ա զխրատ
 15 Դ անմահութեան իմաստութեան
 16 Դ վարուց իւրոց
 17 Ա չունի՛ եւ
 18 Բ, Գ գրիգորի. Դ Գրիգորի

19 Ա գրիստոսի
 20 Դ յաւելու՝ յանձին
 21 Բ, Գ թշնամեցեալ
 22 Գ չունի՛ վասն այնորիկ
 23 Ա, Դ չունի՛ն՝ ի բաներոյն
 24 Բ հոգացեալ նա. Գ, Դ հոգայր նա
 25 Դ իւրոյ ծննդոցն
 26 Գ չունի՛ հոգալով. Դ գրէ՛ հոգացեալ
 27 Դ փոխ. ահա ծնցին, ունի՛ տացէ քեզ Տէր
 28 Դ գաւակ
 29 Բ լինիցին
 30 Ա, Բ, Գ լուսաւորութիւն
 31 Գ, Դ աղբիւրք
 32 Դ չունի՛ հոգեւոր
 33 Դ աշխարհիկ
 34 Բ ի Տեառնէ նոցա տացի. Գ, Դ տացի նոցա ի Տեառնէ
 35 Դ բազումք

բանեակք Հոգւոյն Արքոյ. զի ուստի հիմն իցէ շինուածոյն, եւ կատարումն¹ անտի լինիցի: 26 Եւ բազում տունկք² պողաբերք եւ շայեկանք եւ աւգտակարք հոգեւոր դրախտին ի նոցա մշակութեան աջոյն տնգեսցին եւ ընկալցին աւրհնութիւն յԱստուծոյ:

27 Իսկ որք³ ոչն կամիցին տնկել նոքաւք, եւ ի նոյն⁴ հոգեւոր ցաւոյն գիտութեան ըմպել, խոտան լիցին՝ մերձեակք⁵ յանէծս. եւ վաղձան նոցա լիցի այրումն⁶ հրոյն: 28 Բայց բազում անգամ վասն Տեառն լինիցին նոքա ի հեռ եւ ի նախանձ յանարժանիցն⁷. այլ կացցեն ի հաւատս⁸ անշարժ իբրեւ զվէմ, եւ յաղթեսցէ նոցա համբերութիւն բազում: 29 Եւ յետ նոցա թագաւորեսցէ ստութիւն, յապարասան յանձնասէր եւ յարծաթասէր ի մտախաբ յանպատասպարան յանպիտան⁹ ի սուտակասպաս¹⁰ եւ ի բանսարկու մարդկանէ. եւ ապա եթէ¹¹ ոք գտցի՝ որ կարասցէ ունել զուխտ¹² հաստատութեան հազիւ հազիւ:

30 Եւ զայս ամենայն լուեալ մանուկն Յուսիկ ի հրեշտակէն, մխիթարութեամբ մեծաւ գոհանայր զՏեառնէ Աստուծոյ, որ արժանի արար զնա այսպիսի¹³ յայտնութեան պատասխանելոյ. եւ զամենայն աւուրս կենաց իւրոց գոհանայր եւեթ¹⁴ յամենայն ժամ անդադար¹⁵:

(ԳԼՈՒԽ Զ.)

1 Յաղագս վարուց սրբոյն Գրիգորիսի¹⁶:

2 Այլ վասն Գրիգորիսի եպիսկոպոսի որդւոյ Վրթանայ, եղբաւր¹⁷ Յուսկանն, որ կաթողիկոս¹⁸ էր կողմանցն Վրաց եւ Աղուանից, իբրեւ եկաց սա¹⁹ յիւրում պաշտամանն, մինչ դեռ մանուկ իսկ էր, շինեաց նորոգեաց զամենայն եկեղեցիսն²⁰ կողմանցն այնոցիկ, եւ ձգեցաւ ի կողմանց Ատրպատականի: 3 Քարոզ ճամարտութեան հաւատոցն Քրիստոսի լինէր նա, եւ առաջի իսկ²¹ ամենեցուն էր սքանչելի եւ զարմանալի²². խստագոյն եւ դժուարագոյն անհամարք²³ ծանրաբեռն վարուցն կրթութիւնք խստամբերութեանն²⁴, պահաւք եւ սրբութեամբ, տքնական հսկութեամբն, անձանձրոյթ աղաւթիցն ջերմութիւն²⁵ առ Աստուած կանխելոյ²⁶ վասն ամենայն մարդոյ²⁷: 4 Զաւետարանական ընթացսն եւ զվերակացութիւն եկեղեցւոյ սրբոյ շնորհաւք Աստուծոյ առանց պակասութեան տանէր: 5 Առաւել եւս փութայր, գուն եղեալ յորդորելով զամենեսեան²⁸ առ ի բարեացն քաջալերութիւն, զցայգ եւ զցերեկ պահաւք²⁹ եւ աղաւթիւք եւ ուժգին խնդրուածովք եւ բարձրակալ կատարման հաւատովք՝ մերձաւորաց եւ հեռաւորաց³⁰ զհոգեւոր զեռանդն³¹ ածէր: 6 Իբրեւ զպատերազմասէր նահատակ՝ միշտ զանձն ի

1 Ա կատարն
 2 Դ տանի
 3 Դ որ
 4 Դ չունի՝ նոյն
 5 Ա մերձեակ
 6 Բ, Դ յայրումն
 7 Բ, Գ յանարժանացն
 8 Բ, Գ ի հաւատսն
 9 Ա յաւելու՝ եւ
 10 Դ սուտակ
 11 Բ, Գ թե
 12 Բ, Գ, Դ գիտրիւրդ
 13 Բ, Գ այնպիսի
 14 Ա չունի՝ եւեթ
 15 Գ յաւելու՝ զՏեառնէ Աստուծոյ. Դ ունի ի հաւաքէն նաորնորին՝ անդադար փառաւորելով զԱստուած յաւիտեանս յաւիտեանից. ամէն

16 Բ, Գ Յաղագս սրբոյն Գրիգորիսի վախճանին. Դ նոյնպէս, եւ չունի՝ սրբոյն
 17 Բ, Գ եղբորն
 18 Բ կաթողիկոս
 19 Բ, Գ, Դ նա
 20 Ա չունի՝ զամենայն, եւ գրէ՝ զեկեղեցիսն
 21 Դ չունի՝ իսկ
 22 Բ զարմանալի եւ սքանչելի
 23 Դ անհամար
 24 Դ խստամբերութեամբ
 25 Դ ջերմութեամբ
 26 Ա, Գ կանխելոց
 27 Ա մարդոց
 28 Ա, Դ զամենայն
 29 Դ պահով
 30 Դ հեռաւորաց եւ մերձաւորաց
 31 Բ եռանդն

կրթութեան եւ ի պատրաստութեան ունէր ամենայն փորձութեանց եւ վշտաց, առ ի տալ պատասխանի համարձակութեամբ, մարտնչել¹ վասն ճշմարտութեան հաւատոցն որ վասն Քրիստոսի²:

7 Եւ իբրեւ ուղղեաց եւ նորոգեաց զամենայն եկեղեցիս կողմանցն այնոցիկ, անցնա զԿուր գետով յիշխանութիւն³ խուժադուժ աշխարհին թագաւորին մեծի, եւ եհասնա⁴ մինչեւ ի ճամբար բանակին Արշակունոց⁵ արքային Մագքթաց⁶, որոյ⁷ անուն իւր⁸ Սանէսան կոչէր⁹: 8 Քանզի նոցա եւ Հայոց թագաւորաց մի ազգաւորութիւն էր տոհմին բնութեան: 9 Եւ երթեալ յանդիման լինէր թագաւորին Մագքթաց, իշխանին բազմութեան զաւրացն Հոնաց: 10 Եւ¹⁰ եկաց առաջի նոցա, սկսաւ քարոզել եւ աւետարանել նոցա զՔրիստոս, ասել նոցա¹¹ զի ծանիցեն զԱստուած¹²: 11 Լուան եւ ընկալան¹³ զառաջիկան եւ հնազանդեցան: 12 Ապա¹⁴ սկսան քննել զաւրէնս Քրիստոսի, եւ ուսան ի նմանէ¹⁵ զի ատելի է Աստուծոյ աւարառութիւն եւ¹⁶ յափշտակութիւն, սպանութիւն¹⁷, ազահութիւն¹⁸, զայլազրկութիւն¹⁹, ցանգութիւն այլոց²⁰

ստացուածոց²¹: 13 Ապա այսպիսի իմն իրք ընդ ոտս²² անգանէին խափանել զնոսա ի հաւատոց անտի²³. քանզի աւտար զից ինչ կամ այլ պաշտաւն արարածոց ոչ գտանէր առ նոսա, կամ այլ իրք²⁴ ինչ պոռնկութեան կամ յոռութեան: 14 Իսկ իբրեւ լուան, զայրացան ընդ բանս նորա եւ ասեն. Զի ոչ յափշտակեսցուք, զի ոչ աւարեսցուք²⁵, զի ոչ առցուք զայլոց²⁶, եւ ի²⁷ կեցցուք այսչափ անչափ²⁸ զաւրաց բազմութիւնք²⁹: 15 Եւ թէպէտ բերաւոր բանիւք բարեաւք³⁰ կամէր հաճել զմիտս նոցա, ոչ ինչ կամէին³¹ ունգնդիր լինել այլ ասէին³² ցմիմեանս. Եկեալ այսպիսի բանիւք կամի ի քաջութենէ³³ որսոյն³⁴ կենաց մերոց խափանել զմեզ. իսկ եթէ սմա լուիցուք, եւ դարձցուք յաւրէնս քրիստոնէութեան, ի³⁵ կեցցուք, զի ոչ յաւար³⁶ հեծցուք ըստ բնութեան³⁷ աւրինաց սովորութեան մերոյ³⁸: 16 Այլ, ասեն, այս խորհուրդ թագաւորին³⁹ Հայոց է. զսա յղեալ⁴⁰ առ մեզ, զի այսու ուսմամբ⁴¹ խափանեսցէ զմեր⁴² արշաւանս ասպատակութեան հինի¹

1 Ա մատչել
2 Բ որ ի Քրիստոս. Դ հաւատոցն Քրիստոսի
3 Ա յիշխանութեան
4 Դ նոցա
5 Դ Արշակունոյ
6 Գ Մագքթաց, եւս եւ զկնի
7 Ա սկսեալ՝ որոյ անուն իւր, մինչեւ թագաւորին Մագքթաց՝ չունի, շփոթեալ ի կրկնելոյ անուանոյ Մագքթաց
8 Դ չունի՝ իւր
9 Գ կոչիւր
10 Գ եւ իբրեւ
11 Ա նմա
12 Բ, Գ չունի՞ն՝ ասել նոցա զի ծանիցեն զԱստուած
13 Դ չունի՞ն՝ եւ ընկալան
14 Բ, Գ եւ ապա
15 Գ փոխ. ի նմանէ՝ ունի ի սրբոյ հայրապետէն
16 Դ չունի՞ն՝ եւ
17 Ա յաւելու՞ն՝ եւ
18 Դ չունի՞ն՝ ազահութիւն
19 Դ այլազրկութիւն
20 Ա այլոյ

21 Դ գտացուծոց
22 Գ ընդոտս
23 Դ Քրիստոսի
24 Բ, Գ, Դ իրիմ
25 Ա չունի՞ն՝ զի ոչ աւարեսցուք. Բ, Գ գրեն՝ աւարեսցուք
26 Ա, Դ զայլոյ
27 Դ չունի՞ն՝ եւ. Ա չունի՞ն՝ ի²⁷
28 Բ, Գ այնչափ. Դ չունի
29 Դ բազմութիւն
30 Ա բարիմբ
31 Բ, Գ, Դ կամեցան
32 Դ ասեն
33 Բ, Գ ի քաջութեան. Դ քաջալերութեան
34 Ա, որսոցն
35 Ա, Դ եւ
36 Բ, Գ յերիւար
37 Դ բնութեանց
38 Բ, Գ, Դ սովորութեան մերոց
39 Ա թագաւորացն
40 Բ յղել
41 Դ անուամբ
42 Ա զմեզ

նի¹ յաշխարհէն իւրմէ. այլ եկայք զսա պա-
կասեսցուք² ի միջոյ, եւ մեք ի Հայս արչա-
ւեսցուք, եւ³ աւարաւ զմեր աշխարհս
լցցուք⁴:

17 Ապա շրջեցաւ թագաւորն, եւ լուաւ
բանից զաւրաց իւրոց. եւ կալան ձի մի ա-
մենհի, կապեցին կախեցին զմանուկն Գրի-
գորիս զագոյ ձիոյն, եւ արձակեցին ընդ
ծովեզրն դաշտին⁵ հիւսիսական⁶ ծովուն
մեծի, արտաքոյ իւրեանց բանակին ի դաշ-
տին Վատնայ. եւ այսպէս սպանին զառա-
քինի քարոզն Քրիստոսի զմանուկն Գրի-
գորիս: 18 Եւ ապա բարձին զնա⁷ որք ընդ

նմայն⁸ երթեալ էին ի գաւառէն Հաբան-
գայ, եւ բերին ի գաւառն⁹ իւրեանց ի կող-
մանց Աղուանից ի սահմանս Հայոց ի Հա-
բանդ, ի գեղն՝ որ անուանեալ կոչի Ամա-
րաս: 19 Եւ եղին զնա առ եկեղեցւոյն, զոր
չինեալ էր առաջնոյ մեծին Գրիգորի¹⁰, հա-
ւուն¹¹ Գրիգորիսի¹²՝ քահանայապետին մե-
ծի աշխարհին Հայաստան երկրին¹³: 20 Եւ
ամ յամէ աշխարհաժողով ժողովուրդք ի մի
վայր ժողովեալք¹⁴ կողմանցն¹⁵ այնոցիկ,
զսորա զոր տաւնեն¹⁶ գլխատակ¹⁷ քաջու-
թեանն՝ եւ ցնծան¹⁸:

1 Դ գրէ հիմէ
2 Դ սպառնացուք
3 Ա չունի՝ եւ
4 Բ, Գ լցուցուք
5 Բ, Գ, Դ ի դաշտին
6 Ա հիւսիսական. Դ ի հիւսիսական
7 Դ յաւելու՝ արբն

8 Ա նմա. Բ որք նմայն
9 Ա ի գաւառ
10 Ա յառաջնոյն Գրիգորի
11 Բ, Գ հաւոյն, Դ յաւելու՝ իւրոյ
12 Բ Գրիգորիս. Դ չունի
13 Դ մեծի հայոց աշխարհիս
14 Բ, Գ, Դ ժողովեալ
15 Դ կողմանս
16 Բ, Գ յաւելու՝ եւ
17 Դ գլխատակ
18 Բ, Գ, Դ յաւելու ի հաւաքէն՝ ի Քրիստոս Յի-
սուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՅԻ

ԵՂՇ ԱՂԱՆԴՈՑ

ԹՈՒՐԹ ԱՌ ԵՐԱՆԵԼԻՆ ՄԱՇՏՈՑ ՎԱՐԴԱՊԵՏ

ԵԶՆԻԿ ԿՈՂՔԱՅԻ

Ե դարի հայ աստուածաբանական մտքի լավագույն ձեռքբերումներն ու նուաճումներն արտացոլուած են Եզնիկից մեզ հասած միակ երկի՝ Եղծ աղանդոցի մէջ (443-448): Այն ծնունդ է առել՝ մի կողմից Պարսից արքունիքի՝ հպատակ քրիստոնեայ ժողովուրդների, այդ թւում նաեւ հայոց նկատմամբ գործադրուող կրօնաքաղաքական ճնշմանը, եւ միւս կողմից՝ մշակութային շփումների հետեւանքով Հայաստան ներթափանցած յունական փիլիսոփայութեան տարրնթաց մի շարք հոսանքներին դիմակայելու հրամայական անհրաժեշտութեամբ: Այս հանգամանքն էլ պայմանաւորում է աշխատութեան գաղափարական-տեսական բովանդակութիւնն ու կառուցուածքը: Այն յատկորոշում է յստակ արտայայտուած ջատագովական ուղղուածութեամբ: Քրիստոնէական աստուածաբանութեան դիրքերից Եզնիկն իր քննադատութեան սլաքն ուղղում է գնոստիկականութեան, մանիքիականութեան, Պարսից մագդեզական կրօնի, Մարկեոնի աղանդաւորական գաղափարների դէմ: Նա համառօտ ներկայացնում է աղանդաւորական գաղափարների համար նպաստաւոր հող նախապատրաստող պիւթագորեան, պլատոնական, պերիպատետիկեան, ստոիկեան եւ էպիկուրեան վարդապետութիւնները եւ քննադատում դրանք:

Եզնիկ Կողբացու աշխատութիւնն աչքի է ընկնում հանրագիտարանային հարստութեամբ: Այն կարեւոր սկզբնաղբիւր է ոչ միայն աստուածաբանական մտքի պատմութեան, այլեւ գիտութեան մի շարք մարզերի՝ տիեզերագիտութեան, բժշկութեան, բուսաբանութեան, տրամաբանութեան, ազգագրութեան ուսումնասիրման համար:

* * *

Եզնիկի երկն վերահրատարակում է Մարտիրոս Մինասեանի գիտականօրէն ամենայն բարեխղճութեամբ կազմած բնագրից, որի հիմքում ընկած է Եզնիկի երկի մեզ հասած միակ ձեռագիրը (1280 թ.)՝ ՄՄ, ձեռ. թիւ 1097 (տե՛ս Եզնիկ Կողբացի, [ձառնք ընդդէմ աղանդոց], հտ. առաջին, ներածութիւն եւ քննական բնագիր, աշխատասիրութեամբ Մարտիրոս Մինասեանի, Ժնեւ, 1992, էջ 154-217):

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. Եզնիկի երկի եւ նրա վերաբերեալ ուսումնասիրութիւնների լիակատար մատենագիտութիւնը տե՛ս Եզնիկ Կողբացի, [ձառնք ընդդէմ աղանդոց], հտ. առաջին, ներածութիւն եւ քննական բնագիր, աշխատասիրութեամբ Մարտիրոս Մինասեանի, Ժնեւ, 1992, էջ 17-42

Յակոբ Քեօւէեան

ԵՂՇ ԱՂԱՆԴՈՑ [ԵՃՆԻԿ ԿՈՂՔԱՅԻ]

[I]

[Ա.]

1 Յորժամ զԱներեւոյթէն եւ զնորին զմշտնջենաւոր զաւրութենէն ճառիցէ ոք, քանզի մարմնաւոր լեալ է, պարտի զմիտս յ[]ստակել եւ զխորհուրդս սրբել, զյոյզս շարժմանց պարզել, զի յայն, զոր առաջի եղ, հասանել կարասցէ:

2 Նա, եւ որ ընդ ճառագայթս արեգականն հա[յ]ել կամիցի, պարտի զպղտորութիւն աչացն՝ զաղտն եւ զբիժն, ի բաց պարզել, զի մի մթարքն, որ զբբաւքն շողայցեն, արգել հայելոյ ի յստակութիւն լուսոյն լիցին:

3 Եւ արդ, քանզի մի էութիւնն անք[ն]ին է եւ անհաս՝ բնութեամբ, առ նորա անքննութիւնն ընծայութիւն անգիտութեան մատուցանելի է, եւ առ էութիւնն նորին՝ դաւանութիւն գիտութեան եւ ոչ՝ քննութեան, զի որ էն, պարտի, զի մշտնջենաւոր իցէ եւ անսկիզբն, որոյ ոչ սկիզբն յուժեքէ առեալ լինելոյ՝ եւ ոչ ունի զոք ի վեր քան զինքն, զոր պարտ իցէ նմա պատճառ կարծել, կամ՝ իմանալ, եթե ի նմանէ իցէ առեալ սկիզբն էանալոյ, զի ոչ ոք է առաջին քան զնա, եւ ոչ ոք է յետոյ նման նմա, եւ ոչ՝ ընկեր՝ հաւասար նորին, եւ ոչ՝ էութիւն հակառակ նմա, եւ ոչ՝ գոյութիւն ընդդիմակաց, եւ ոչ՝ բնութիւն հիւթաբեր ի պէտս նորա, եւ ոչ՝ նիւթ ինչ, յորմէ առնիցէ, զոր առնելոց իցէ. այլ ինքն է պատճառ ամենայնի, որ ի լինելն եւ ի գոյանալ եկին ի չգոյէ եւ ի գոյէ, որպէս երկինք վերինք եւ որ ինչ՝ յերկինս, եւ երկինք երեւելիք, որ՝ ի ջուրց, եւ երկիր՝ եւ ի նմանէ եւ ի նմա. յորմէ՝ ամենայն, եւ ինքն՝ ոչ յուժեքէ. որոյ, ըստ

իւրաքանչիւր կարգաց, տ[ո]ւեալ է սկիզբն լինելոյ՝ աներեւութիցն անմարմնոց, եւ երեւելեաց մարմնաւորաց. որ բաւականն է որպէս ի տալն զկենդանութիւնն, նոյնպէս եւ՝ ի գիտութիւն իւրոյ անարար էութեանն եւ յիւրոց արարածոցն ի հաստուժն ըստ իւրաքանչիւր բնութեանց ածել. որ ոչ այնու միայն զարմանալի է, զի ածն ի չգոյէ ի գոյ զչգոյսն եւ եցոյց յոչ ընչէ յինչ զչէսն, այլ զի եւ անարատ եւ անխախտ պահէ զլեալսն, որոց եւ յառաջնումն իսկ աննախանձ ետ զկենդանութիւնն՝ առ ի յայտնելոյ զիւրոյ զբարերարութեանն հանդէս, քանզի ոչ եթե կարաւ ինչ ոք իւրիք էր, եթե վասն այնորիկ խնայիցէ՝ իւր միայնոյ զկենդանութիւնն, եւ՝ անզաւր եւ տկար, եթե անձին եւեթ խորիցէ զզաւրութիւնն, եւ ոչ՝ նիւզ ի գիտութեանէ, եթե ինքեան եւեթ պահիցէ զգիտութիւնն, եւ ոչ՝ կարաւ յիմաստութեանէ, եթե յորժամ այլոց բաշխիցէ զիմաստութիւնն իւր, կարծիք ինչ կարատութեան ի ներքս մտանիցեն, այլ կենդանի է եւ աղբիւր կենդանութեան: 4 Տայ ամենայնի կենդանութիւն եւ ինքն կայ լի եւ յանսպառ կենդանութեան: 5 Եւ զաւրացուցանէ զանզաւրս մեծազաւր զաւրութեամբ եւ ինքն ոչ թերանայ ի զաւրացուցիչ զաւրութենէն: 6 Եւ պարզեւէ գիտութիւն ամենայն անգիտաց եւ ինքն բաւանդակ ունի յինքեան զամենագէտ գիտութիւնն: 7 Եւ բղխէ յամենեսին զանպակաս իմաստութիւնն եւ ինքն մնալ անխախտ յամենահնար իմաստութեանն:

8 Եթե աղբերք մշտաբուղիք, որ ի նորա հրամանէ կարգեցան, հանապազ բղխեն եւ ոչ պակասեն, որոց բղխմունքն զայլոց կարատութիւնս լնուն, եւ ին-

քեանք ի նմին յորդութեան կան մշտնջենաւորք, որչափ եւս առաւել՝ այն, որ նոցա գյորդութիւն բղխմանցն յաւրինեաց, որ ազբիւրն է բարութեան, որ զամենայն, զոր արար, գեղեցիկս արար՝ զբանաւորս եւ զանբանաւորս, զմտաւորս եւ զանմտաւորս, զխաւսուոնս եւ զանխաւսուոնս, զասուոնս եւ զանասուոնս, եւ բանաւորաց եւ մտաւորաց յիւրաքանչիւր առաքինութեանց կարգեաց ստանալ զբարութիւն եւ ոչ զգեղեցկութիւն, զի գեղեցկութեանն տուիչ ինքն է եւ բարութեանն՝ զանձնիշխանութիւնն արար պատճառ:

[Բ.]

1 Ապա եթե ինչ յարարածոց, որ գեղեցիկ է, այն ի բար[ւ]ոյ արարչէ կարծիցի ոմանց, որպէս՝ Յունացն հեթանոսաց եւ արանցն մոգուց եւ հերձ[ո]ւածողաց, որ չար իմն էութիւն հակառակ Բարւոյ դնեն, զոր «Հիւզն» կոչեն, որ թարգմանի «նիւթ», մեր առաջին եւ նախաբարբառ պատասխանի այն է, եթե ի բարերար արարչէն չար ինչ չիք լեալ, եւ չիք ինչ չար, որ բնութեամբ չար իցէ, եւ ոչ է արարիչ չարաց իրաց, այլ՝ բարեաց:

2 Եւ արդ, զո՞ր ինչ յարարածոցն բարի կարծիցեն կամ զո՞ր չար, զի, բազում անգամ, զոր բարին կարծիցեն, միայն, առանձինն, առանց ըն[կ]երին խառնութեան վնասակար լինի: 3 Յամենեցունց առ հասարակ վկայեալ արեգակն թե բարի է եւ առանց աւդո[յ] խառն[ո]ւածոյ այրիչ եւ ցամաքեցուցիչ է: 4 Նոյնպէս եւ լուսին՝ խոնաւական բնութիւն, առանց խառն[ո]ւածո[յ] ջերմութեան արեգական վնասակար եւ ապականիչ է: 5 Եւ աւդ առանց ցաւո[յ] խոնաւութեան եւ ջերմութեան վնասակար եւ ապականիչ է: 6 Եւ ջուրք զհող երկրի ողողանեն եւ ապականեն, եւ երկիր առանց ջուրց պատառի եւ խորխորի: 7 Եւ այսպէս չորեքին բնութիւնքն, ուստի աշխարհս կազմեալ՝ եւ կա[յ], ա-

ռանձինն ապականիչք են միմեանց եւ խառնեալ ընդ ընկերին՝ աւգտակարք եւ շահաւորք. եւ զի այս այսպէս է, ամենեցուն յայտնի է, որ կամին ուսանել:

8 Ապա ուրեմն է՝ ինչ Զաւրութիւն ծածուկ, որ զապականիչսն միմեանց՝ խառն[ո]ւածովք արար աւգտակարս իրերաց. եւ որ առողջ միտս ունին, ոչ զչարժուսն, այլ զչարժիչն պարտին փառաւորել, եւ ոչ ընդ արբանեակն, այլ ընդ վարիչն պարտին զարմանալ, եւ ոչ՝ ընդ գնա[յ]ուսն, այլ՝ ընդ գնացուցիչն, քանզի եւ նոքին իսկ իւրաքանչիւր փոփոխամբք յայտ առնեն, եթե է՝ ոմն, որ փոփոխէ գնոսս. արեգակն՝ ծագելովն եւ վերանալով եւ ի մուտս դառնալով, եւ լուսին՝ ածմամբ, լնլով եւ նուազելով, եւ այլք եւս յարարածոցն՝ ըստ իւրաքանչիւր բնութեանց շարժելովն եւ դադարելով: 9 Եւ արդ, չէ առողջ մտաց՝ զչարժիչն եւ զփոփոխիչն թողուլ, եւ շարժոցն եւ փոփոխելեաց պաշտաւն տանել եւ երկրպագութիւն մատուցանել, զի որ շարժին եւ փոփոխի, չէ էական, այլ՝ կա՛մ լեալ յուժեքէ եւ յիմեքէ եւ կա՛մ հաստեալ ի չգոյէ, եւ որ էն եւ շարժէ զամենայն, ինքն ոչ շարժի եւ ոչ փոփոխի, քանզի էական է եւ անշարժական է:

[Գ.]

1 Եւ զի մի էութիւն մշտնջենաւորական է եւ պատճառ ամենեցուն լինելո[յ], այնմ, եւ որ զբազմաստուածեան պաշտամուտսն մուծին, վկա[յ]են. եւ պատճառեն այսպէս. «Մեք,- ասեն,- քանզի չեմք բաւական մերձեանալ յամենեցունց պատճառն, յէն, ի Գոյն, ի Մշտնջենաւորն, յԱնմատոյցն, վասն այնորիկ այլովքն խոնարհագուն[ի]ւք նմա պաշտաւն մատուցանեմք եւ որովք նմա զպաշտաւնն մատուցանեմք, հարկ է եւ զնոսս ողոքել զոհիւք եւ նուիրաւք»:

2 Եթե, որպէս վկա[յ]ենն, մի է պատճառ ամենեցուն եւ նոյն՝ էական եւ

մշտնջենաւոր, յայտ է, թե այլքն ո՛չ էականք են եւ ո՛չ մշտնջենաւորք: 3 Եւ զիւրո՞ղ էականքն եւ չմշտնջենաւորք ընդ էականին եւ ընդ Մշտնջենաւորին երկրպագութիւն առնուցուն, եւ մանաւանդ՝ մարմնաւորք եւ երեւելիք, որպէս արեգակնդ եւ լուսինդ եւ աստեղք եւ հուր եւ ջուր եւ երկիր, որ ի մոգուց եւ ի հեթանոսաց պաշտին:

4 Ապա եթե ասիցէ ոք յայնպիսեացն՝ «Բար[ւ]ոք է, զի Մի էութիւն՝ պատճառ ամենայնի՝ ասէք. արդ, եթե մի էութիւն է, որ զամենայն յամենայնի ազդեցուցանէ, եւ չիք ինչ նմա հակառակ, մեզ, զերախտաւորսն եւ զբարերարսն, որ ի նմանէ կարգեալ են, զիւրո՞ղ հրամա[յ]էք անարգել», ասացուք, եթե զերախտաւորսն եւ զբարերարս, որ ի նմանէ կարգեցան, մեք ոչ հրամա[յ]եմք անարգել, բայց, դարձեալ, եւ ոչ՝ զպաշտաւն արարչին արարածոցն մատուցանել, զի չիք ոք բարերար եւ երախտաւոր, բայց միայն՝ որ արար եւ ոչ խնա[յ]եաց եւ պահէ կենդանի զբանաւորսն աներեւոյթս եւ ոչ նախանձի. զհրեշտակաց ասեմ եւ զհոգ[ւ]ոց մարդկան եւ զկայականացն անշնչոց յիւրաքանչիւր կայանի:

5 Արդ, բարւոք է արեգակն եւ գեղեցիկ՝ բնութեամբ եւ մեզ եւ ամենայն արարածոց, որ ի ներքո[յ] երկնից, յաւգուտ եւ ի դարման, իբրեւ ճրագ մի ի մեծի տան ի մէջ ձեղուկան եւ յատակի լուցեալ՝ առ ի զխաւարն եւ զստուերն զերկուց մեծացն անաւթոց ի բաց ի միջո[յ] փարատելո[յ], բայց ինքն եթե իցէ՛ եւ եթե չիցէ՛, զայն ոչ գիտէ, զի չէ ի բանաւորաց եւ ի մտաւորաց. նոյնպէս եւ՝ այլքն յանշնչոցն արարածոց. եւ թե՛ ջուր, թե՛ հուր, թե՛ երկիր, թե՛ աւգ թե իցեն՝ եւ թե չիցեն, զայն ոչ գիտեն եւ զսպասաւորութիւնն, յոր կարգեցան, անդադար մատուցանեն վարելով այնր, որ կազմեացն զնոսա: 6 Եւ մեք ոչ

անարգեմք զնոսա եւ ոչ պաշտաւն մատուցանեմք նոցա, այլ հա[յ]եցեալ ընդ նոսա՝ փառաւորեմք զկարգիչն նոցա եւ զյաւրինիչ, զի մեզ ի պէտս են եւ կարգչին իւրեանց՝ ի փառս:

7 Զիւրո՞ղ պաշտիցեմք զարեգակն, զի մերթ կոչի իբրեւ զծառա[յ]՝ առ ի սպասն, յոր կարգեցաւ, հասանելո[յ] եւ մերթ երթա[յ] դաւղէ իբրեւ զարհուրեալ եւ տայ տեղի խաւարին ընուլ զմիջոց ի մեծի տանս, եւ ընդ ժամանակս ժամանակս ի խաւար դառնայ առ ի յանդիմանութիւն եւ յամաւթ իւրոցն պաշտաւնէիցն յայտ արարեալ, եթե «Չեմ ե՛ս արժանի պաշտաման, այլ՝ ա՛յն, որ զիս ե՛ւ զամենայն տիւ լուսաւոր պահէ, ե՛ւ զցայգ դաւղեցուցանէ, ե՛ւ երբեք երբեք խաւարեցուցանէ»: 8 Եւ իբրեւ խաւսուն բերանով անշնչուն ըողոքէ, եթե «Չեմ արժանի պաշտաւն առնելո[յ], այլ՝ պաշտաւն հարկանելո[յ]». կամ՝ զլուսին, որ ամսոյ ամսո[յ] հիւծանի, զրեթե եւ մեռանի եւ ապա սկիզբն առնու կենդանանալո[յ], զի քեզ զյարութեան աւրինակ նկարիցէ. կամ զաւղ, որ մերթ գոչիցէ, վարազացեալ, հրամանաւ եւ մերթ սարսէ ի գոչելոյն սաստիւ. եւ կամ՝ զհուր, որում եւ զքեզ իսկ երկրորդ արարիչ կազմեաց Յաւրինիչն, զի յորժամ կամիցիս, վառիցես եւ յորժամ կամիցիս, խափուցանիցես. կամ՝ զերկիր, որ [զ]որ հանապազ բրեմք եւ ցանկ կոխեմք եւ զաղբ զմեր եւ զանասնոց մերոց ի նա հեղումք. կամ՝ զջուրս, զոր հանապազն ըմպեմք, եւ զանուշութիւնն նոցա ի ժանդահոտութիւն ի փորի մերում դարձուցանեմք եւ զներքին եւ զարտաքին աղտեղութիւնս մեր նոքաւք սրբեմք: 9 Եւ այսու ամենայնիւ յայտ է, թե զոր առ աստուածսն ունին, անարգեն շատք եւ անպատ[ո]ւեն:

10 Նա՛, ե՛ւ դողումն, ե՛ւ սոսկումն ունի զարարածսն, յորժամ զպատիւ արարչին ոք նոցա մատուցանիցէ. եւ յայտ առնէ

երկիր շարժելովն, եւ լուսաւորքն՝ խաւարելովն, եւ աւդքն՝ գժղմելովն եւ քստմնելով, եւ ծով սաստկութեամբ՝ պեացն սպառնալեալք, զի, թե ոչ սաստ արարչին նահանջէր զնոսա, մի մի ի նոցանէն բաւական էր զամենեսեան սատակել՝ առ ի խնդրելոյ] զվրէժ անարգանացն հասարակաց արարչին. կա՛մ ծով՝ ծածկելով, որ տկար աւագովն պաշարեալ՝ չիշխէ անցանել ըստ հրաման. կա՛մ երկիր՝ կլանելով, որ ի վերայ ոչ ընչի կա[յ] հաստատեալ եւ յոչ ինչ դառնալ եւ դարձուցանել չէ պատշաճ զիւր գրեանկիչսն. կա՛մ հողմ՝ պարտասեցուցանելով, որ կենդանութիւնն է ամենայն շնչաւորաց եւ չիշխէ արգելուլ զկենդանութիւն առանց հրամանի կենդանապահին. կա՛մ աւդք՝ երբեմն զսառամանիսն շնչելով եւ երբեմն զխորշակն բերելով:

11 Եւ լինէր ամենայն ինչ ոչ ինչ:

12 Այլ, նա, աւասիկ իբրեւ զկառս իմն լծեալ ի չորից երիւարաց գաշխարհս տեսանեմք, ի ջերմութենէ, ի ցրտութենէ, ի ցամաքութենէ, ի խոնաւութենէ, եւ Զաւրութիւն իմն՝ ծածուկ կառավար, որ զչորս կազեցողսն ընդ միմեանս՝ ի հաշտութեան եւ ի հաւանութեան պահեալ՝ նուաճէր:

13 Ամենայն կառք ի համազգեաց երիւարաց լծին, բայց միայն [յ]այսց կառաց, որ ի համազգեաց լծեալ են: 14 Եւ որ ի համազգեացն լծեալ են, երբեմն սայթաքեն, երբեմն աւճտեն եւ ի տագնապի զկառավարն եւ զանձինս կացուցանեն, եւ երբեմն խորտակումն իսկ կառացն գործեն: 15 Եւ յորժամ ողջ կառքն իցեն, եւ ողջ՝ կառավարն, եւ վարժ՝ երիվարքն, ուշ եղեալ՝ ի հանդէպ երեսացն եւեթ արշաւին: 16 Եւ այս կառք զարմանալիք, ի հակառակ եւ յաննման երիվարաց լծեալ եւ ծածուկ ձեռամբ ուղղեալք, ոչ ի մի միայն կողմն՝ ի հանդէպ երեսացն եւեթ արշաւին, այլ յամենայն կողմանս վարգին եւ ընդ հանուր արշաւին եւ ընդ բնաւ[] սլանան եւ ամենայնի բաւական են: 17 Յորժամ ընդ արե-

ւելս ընթանան, չէ ինչ արգել, թե ընդ արեւմուտս ոչ արշաւիցին, եւ յորժամ ընդ հիւս[ի]սի վարգին, չէ ինչ արգել, թե ընդ հարաւ ոչ սուրայցեն, զի ձեռն կառավարին բաւական է յամենայն կողմանս դիմեցուցանել եւ ընդ չորս ան[կ]իւնս տիեզերաց արշաւեցուցանել:

[Դ.]

1 Դարձեալ. առ այսպիսի ճշմարիտ սացածս անպատշաճ հարցուածս մատուցանեն. «Ուստի՞ իսկ բնաւ են,- ասեն,- այդպիսի անհարթութիւնք, զի, թե Աստուած բարեաց արարիչ է եւ ոչ՝ չարաց իրաց, ուստի՞ է խաւար, ուստի՞ են չարիք, ուստի՞ են աշխատութիւնք, ուստի՞ են լլկանք մերթ ի ցրտո[յ], մերթ ի խորշակէ: 2 Կամ ուստի՞ են անզգամութիւնք, զի տեսանեմք երկուս արս միազգիս ընդ միմեանս զրգուեալ՝ միմեանց մահու եւ արեամբ ծարաւի են: 3 Եւ այլք զգերեզմանս կրկտեն եւ զթաղեալ մարմինս ընդ հողով մերկացեալ, խայտառակեալ՝ արեւուցուցանեն, եւ զմեծարեալ դին առ փութի չծածկելոյ թերեւս եւ շանց եւս կուր արկանեն:

4 Եւ է՛ երբեք, զի մին փախուցեալ՝ երթայցէ անձնապուր ուրեք՝ զկեանս անձինն շահել, եւ միւսն ցասմամբ բորբոքեալ, սրով զկնի ընթացեալ՝ ոչ դադարէ, մինչեւ յազեցուցանէ զցասումն. ուստի՞ է այն անյագ ցասումն:

5 Եւ ոմն մերկանա[յ] զհանդերձս ըն[կ]երին, եւ թե ընդդէմ դառնայցէ, յարեւէ եւս արկանէ:

6 Եւ ո[ւ]րումն ի մտի եղեալ գողանալ զայլո[յ] ամուսնութիւն եւ ելեալ անաւրէնութեամբ յաւտար մահիճս՝ չտա[յ] լինել հայր որդ[ւ]ոց այնմ, որ Աւրինաւքն ամուսնացեալ իցէ:

7 Եւ երբեք երբեք պատերազմունք շարժին, ուր մեղաւոր եւ արդար առ հասարակ կոտորին:

8 Ե՛լ մա՛հօք տարածամք, ե՛լ ա՛խտք չարաչարք:

9 Եւ զի՞ պիտո[յ] է զբնաւ մի ըստ միողէ թ[ո]ւել, այլ՝ համառաւտ իսկ ասել, թե ուստի՞ է այս ամենայն, եւ ո՞վ է սկիզբն եւ գործիչ այնպիսի անպատեհից, բայց եթե իցէ ինչ չար Զաւրութիւն, որ զայն ամենայն անհարթութիւնս տայցէ գործել եւ ինքն իսկ արարիչ իցէ նոցա, զի զԱստուած արարիչ ասել այնպիսի իրաց անպատշաճ է, եւ ոչ՝ ի նմանէ ունել զգոյութիւն չարեաց: 10 Զիա՞րդ մարթ է զայնպիսին յԱստուածոյ կարծել, զի Աստուած բարերար է եւ լաւութեանց արարիչ, եւ ի չարութեանց ինչ ի նա ոչ մերձենա[յ], եւ ոչ խնդալ ընդ այն ախորժէ, այլ եւ խոտէ եւս զգործսն եւ զգործելիս, զի անըն[տ]անի են չարիք ի բնութենէ նորա: 11 Վասն որո[յ] կարծի, թե էր ինչ ընդ նմա, որում շիւղն՝ անուն էր, որ է նիւթ, ուստի զամենայն արարածս արար եւ գատոյց ամենար[ո]ւեստն իմաստութեամբ եւ զարդարեաց վա[յ]ելչութեամբ: 12 Եւ յայնմ նիւթո[յ] պարտ է կարծել զչարիս, որ անիրան եւ անկերպարան էր եւ խառն ի խուռն աւցտելով երթեւեկէր եւ կարաւտ էր Աստուածոյ ար[ո]ւեստգիտութեանն: 13 Եւ Աստուած ոչ եթող զնա հանապազ խառն ի խուռն վարել, այլ եկն յառնել զարարածս եւ ի յոռութեանցն նորա յազնուազոյնսն զատուցանել կամեցաւ: 14 Եւ այնչափ ինչ արար ի նմանէ, որչափ Աստուածոյ վա[յ]ել էր առնել արարածս, եւ որ ինչ մրրախառնն էր ի նմանէ եւ չէր պատշաճ արարչութեան, զայն եթող, եւ յայնմ մրրոյ են չարիք մարդկան»:

[Ե.]

1 Արդարեւ իսկ, չարիքն, որ լինին, ի տարակուսի կացուցան[են] զբազումս, եւ բազում արք աւագք վասն նորին խնդիրս մեծամեծս արարին: 2 Կէսք անսկզբնակից ինչ ընդ Աստուածոյ կամեցան դնել, եւ

կէսք՝ ըստ նմանէ նիւթ ինչ, զոր շիւղն՝ ան[ո]ւանեն, թե ի նմանէ արար զարարածս: 3 Եւ կէսք հրաժարեցին բնաւ ի խնդրելո[յ], որպէս թե ամենեւին այնմ խնդրո[յ] չիք սպառ[ո]ւած: 4 Բայց մեզ հարկ եղեւ ի սիրո[յ] բարեկամաց եւ յոչ ուղիղ հայելո[յ] ընդդիմակացացն, ըստ մերում տկարութեան ապաւինեալ յԱստուածոյ շնորհսն՝ միւսի ի խնդիր ճառիցս, մանաւանդ զի յուսացեալ եւս՝ վստահ իցեմք յուղոց ունկնդրաց ի կամացն մտադիւրութիւն, ուստի ե՛լ լինիցի նոցա զճշմարիտն ուսանել, ե՛լ մեզ՝ ոչ ի գուր ինչ զբանս ծախել, քանզի ոչ եթե անիրաւութեամբ ինչ յաղթել ջանամք, այլ՝ իրաւամ[բ]ք, զճշմարիտն ուսանել:

5 Որով յայտ է, թե երկուց անարարաց ի միասին չէ մարթ լինել, զի ուր երկու ոք ի միասին իցեն, հարկ է, թե իցէ ինչ, որ զատանիցէ ի միջի, արդ՝ զիա՞րդ համարիցին զԱստուած. իբրեւ ի տեղ[ւ]ո՞ջ ինչ՝ յամենա՞յն ի Հիւղն լինել, եթե՞ ի միում ինչ ի մասին նորա:

6 Եթե զամենայն զԱստուած յամենայն[] ի Հիւղն լինել ասիցեն, ո՞րչափ մեծ եւս ասիցեն զԱստուած, գտանի Հիւղն մեծ քան զնա, քանզի յորում իցէ ոք, այն, յորում էն, քան զայն, որ ի նմա էն, մեծ գտանի, զի բաւական եղեւ տանել զբոլոր զնա. եւ եթե՞ ի մաս[ի]ն ինչ միայն ի նմանէ, եւ այնպէս բիւրապատիկ իսկ մեծ քան զնա Հիւղն գտանի, զի սակաւ ինչ մասն նորա բաւական եղեւ ընդունել զամենայն զնա. եւ եթե՞ ո՛չ ի նմա եւ ո՛չ ի մասին ինչ նորա, յայտ է, թե այլ ինչ էր՝ անջրպետ, ընդ մէջ երկ[ո]ցուն, մեծ քան զերկոսին, եւ ոչ միայն երկու անսկզբնակիցք գտանին, այլ՝ երեք՝ Աստուած եւ Հիւղն եւ Անջրպետն, եւ մանաւանդ մեծ եւս Անջրպետն՝ քան զերկոսեան:

7 Իսկ եթե էր երբեք Հիւղն անզարդ եւ անարդ եւ անկերպարան, եւ զարդա-

րեաց զնա Աստուած, քանզի ի յոռութեանցն նորա ի լաւն դարձուցանել կամեցաւ, ապա է՛ր երբեմն, զի յանդարդս եւ յանար[դ]ս եւ յանկերպարանս էր Աստուած, եւ հարկ էր, թե իբրեւ զՀիւզն իսկ եւ նա խառն ի խուռն վարէր:

8 Եւ եթե յամենայն ի Հիւզն, որպէս ասենն, էր Աստուած, յորժամ զնա ի զարդ եւ ի յարդ եւ ի կերպարանս ածէր, ինքն յո՞ մարթեր ամփոփել, զի չէր ուրեք մարթ ամփոփելո[յ]. մի՞ թե եւ զինքն ընդ Հիւզին ի զարդս եւ ի յարդս եւ ի կերպարանս ածէր, քանզի չգոյր ուրեք տեղի ամփոփելո[յ]. որ յետնո[յ] ամբարշտութեանն է:

9 Ապա թե ասիցեն, թե Հիւզն յԱստուած էր, ըստ նմին աւրինակի պարտ էր ինդրել՝ որպէս զա՞տ ի[ն]չ ի նմանէ, որպէս զանասունս ի մէջ աւդոյ, որ ի նմա են եւ զատուցեալք ի նմանէ, թե՞ իբրեւ ի տեղ[ւ]ոջ, որպէս եւ ջուրք՝ յերկրի:

10 Եւ զՀիւզեայն ասեն, թե անճաճ եւ անզարդ եւ անարդ եւ չար էր: 11 Եթե ըստ նոցա մտացն իցէ, ապա չարեաց տեղի էր Աստուած. զի անհեղեղքն եւ անզարդքն ի նմա էին. որ անհնարին անաւրէնութիւն է՝ կարծել զԱստուածոյ, թե երբեմն ասպնջական չարեաց էր եւ ապա՝ արարիչ չարեաց, նա, եւ բաժանելի եւս՝ թե ի նմա իբրեւ ի տեղ[ւ]ոջ էր:

[Զ.]

1 Արդ, հարկ է ի պատճառս չարեացն դալ եւ ցուցանել, թե ուստի՞ լինին չարիքն, եւ չէ պատճառ չարեաց Աստուած այնու, զի առընթեր նմա զՀիւզն դնեն:

2 Եւ արդ, զո՞ր Հիւզ առ ձեռն դնիցեն Աստուածոյ. ո՞չ ապաքէն՝ գայն, ուստի զաշխարհս արար, որ անկերպարանն եւ անզարդ եւ անարդ էր. «Զի տեսանեմք զաշխարհս ի պէս պէս կերպարանս եւ ի զարդս եւ ի յարդս, ապա ուրեմն կերպարանաց եւ զարդուց եւ արդուց արարիչ է Աստուած եւ ո՛չ՝ բնութեանց»:

3 Իսկ եթե արարչի այն գործ է՝ զբնութիւնս առնել եւ ոչ՝ արդս եւ զարդս եւ կերպարանս, յայտ է, եթե աւելորդ է կարծել, թե ի նիւթո[յ] ինչ իմեքէ յընթերակացէ արար Աստուած զաշխարհս, այլ՝ յոչնչէ եւ ի չգոյէ:

4 Նա՛, եւ զմարդիկ տեսանեմք, զի ի չգոյէ առնեն ինչ, որպէս շինաւղքդ ոչ ի քաղաքաց քաղաքս առնեն եւ ոչ՝ ի տաճարաց տաճարս: 5 Նոքա քանզի ամենեւին յոչ ընչէ չկարեն ինչ առնել, քարինքն, զոր ի շինածսն յաւրինեն, ոչ եւ[ս] «քարինք» կոչ[ի]ն, այլ՝ կա՛մ «քաղաքք», կա՛մ «տաճարք», զի ոչ եթե բնութեան գործ է քաղաքս կամ տաճարս, այլ՝ ար[ո]ւեստն, որ ի բնութեանն է: 6 Եւ ար[ո]ւեստն ոչ եթե յընթերակացէ ինչ իմեքէ, որ ի բնութիւնսն իցէ, առնու զար[ո]ւեստգիտութիւնն, այլ՝ ի դիպացն, որ դիպին ի բնութեանցն, քանզի ոչ եթե անձնաւոր[] ինչ յանձնաւորաց զար[ո]ւեստն կար է ցուցանել, այլ՝ ի դիպացն, որ դիպինն, որպէս ի դարբնութենէ՝ դարբինն, եւ ի հիւսնութենէ՝ հիւսնն, զի մարդ եւ յառաջագոյն քան զար[ո]ւեստն է, բայց ար[ո]ւեստն չէ, եթե ոչ նախ մարդն իցէ: 7 Ուստի զար[ո]ւեստն յոչնչէ ի մարդիկ պատշաճեալ հարկ է ասել: 8 Եւ եթե առ մարդկան՝ այսպէս, ո՞րչափ եւս առաւել պատշաճ իցէ զԱստուածոյ իմանալ, թե ոչ միայն արդուց եւ զարդուց եւ կերպարանաց արարիչ է, այլ յոչ ընչէ առնել բաւական է բնութիւնս, եւ ոչ արգասիս [...] նիւթ, յորմէ Աստուած ըն[տ]րեաց զբարին ի մի թեր եւ զչարն մրրախառն ի միւսն կողմն, ուստի ջանա[յ] մրրախառնն զյստակն պղտորել:

[Է.]

- 1 «Չարիքս, որ լինին, ուստի՞ իցեն»:
- 2 Հարցցուք եւ մեք. չարիքն, որ լինին, անձի՞նք ինչ իցեն, թե՞ արգասիք անձանց. ասեն. «Ի դէպ է կարծել, եթե՛

արգասիք անձանց»։ 3 Եւ Հիւզն, զոր ասեն անարգասաւոր եւ անկերպարան, զի^օրդ, անարգասաւորն եւ անկերպարան, յայլս կարէր արդիւնս ծնուցանել. եթե ոչ՝ ի դիպացն լինիցին չարիքն եւ ոչ՝ ի նմանէ, զի սպանութիւն չէ անձն ինչ, եւ ոչ շնութիւն անձն ինչ է, եւ ոչ, դարձեալ, այլքն՝ մի ըստ միոջէ ի չարեացն. այլ որպէս ի դպրութենէն դպիր կոչի, եւ ի ճարտարութենէ՝ ճարտար, եւ ի բշկուութենէ՝ բժիշկ, եւ այն ոչ եթե անձինք ինչ են, այլ յիրաց ան[տ]ի առնուն զան[ո]ւանս, նոյնպէս եւ չարիքն ի դիպացն առնուն զանուանումն։

4 Ապա եթե եւ զայլ ոք իմանայցեն զրդիչ եւ գրգռիչ, որ արկանիցէ ի միտս մարդկան զչարիան, ե՛ւ նա ի գործոյն, զոր գործէ, առնու զանուն չարութեան։ 5 Բայց զայն պարտ է գիտել, թե զոր գործէ ինչ ոք, ոչ ինքն նոյն է. որպէս բրուտն յորժամ անաւթս գործիցէ, ոչ ինքն անաւթ լինի, այլ գործիչ է անաւթոցն, ուստի եւ զան[ո]ւանումն ար[ո]ւեստին առնու, նոյնպէս եւ չարագործն ի չարն գործելո[յ] առնու զանուն չարութեանն, եթե՛ չուն իցէ եւ եթե՛ սպանող։ 6 Ապա ուրեմն յիրաւի ասին մարդիկ արարիչք չարեաց, զի ինքեանք են պատճառք առնելոյ եւ չառնելո[յ], եւ զչարիան ոչ պարտիմք անձինս ան[ո]ւանել, այլ՝ արգասիս անձանց։

7 Իսկ եթե ի նմին յամառութեան կացցեն, թե «Արդարեւ անարդ եւ անարգասաւոր է Հիւզն, եւ Աստուած ած զնա ի զարդ եւ ի կերպարանս եւ յարգասիս», ապա զԱստուած դնեն պատճառս չարեացն. լաւ էր լեալ, թե նոյնպիսի կացեալ էր՝ անհեղեղ եւ անարգասաւոր, քան զալ յարգասիսն եւ ի կերպարանս եւ լինել պատճառ չարեաց այլոց, քանզի զի^օնչ մարթ[է] ոք լինել, որ, իցէ, թե անկերպարան իցէ։ 8 Նա՛, եւ ասելն «անկերպարան» զկերպարանացն յայտ առնէ։ 9 Իսկ եթե էր ինչ

անձնաւոր եւ կերպարանաւոր, աւելորդ է ասել արարիչ զԱստուած։ 10 Այլ «Այնու,- ասեն,- զի յանարդութենէն եւ յանհեղեղութենէն դարձոյց ի զարդ եւ ի կերպարանս, յիրաւի կոչի արարիչ»։ 11 Այդ այնմ նման է, յորժամ ի քարանց ոք շինուածս առնիցէ, պատշաճելոյն եւ յաւրինելոյն միայն արարիչ է, եւ ոչ՝ բնութեանն։

12 Եւ արդ, յի^օնչ ինչ արդեաւք արար Աստուած զանկերպարանն. ի լա՛ւ ինչ, թե՛ ի յոռի. եթե ասիցեն, եթե՛ ի լաւ, զչարիան, որ լինին, պարտին խնդրել, թե ուստի՛ լինին. արգասիքն ոչ նոյնպիսի մնացին, որպէս եւ էինն, այլ ի լաւն դարձեալ՝ լաւք եւեթ երեւեսցին. ապա եթե ի յոռի ինչ դարձան, իշխեսցեն ասել, թե չարեացն պատճառ Աստուած է, զի նա զարգասիսն ի լաւ անդր դարձոյց։

13 Այլ ասեն, թե «Զյստակն ի մի կողմն ընտրեաց, ուստի զարարածսն արար, եւ զմրրախառնն եթող»։ 14 Ասասցուք. որպէս զի թե կարող էր ե՛ւ զայն յստակել եւ զչարիան ի միջո[յ] բառնալ եւ ոչ կամեցաւ զայն ի միջո[յ] բառնալ, ապա պատճառս չարեացն պարտ է զնա ասել, զի ի կիսոյն նորա արար բարի արարա[]ծս եւ զկէսն նորա եթող նոյնպիսիս՝ յապականութիւն լինելո[յ] բարւոք արարածոցն։ 15 Եւ եթե ճշմարտիւ ոք քննիցէ զիրան, գտանէ յանհնարին վտանգս եկեալ զՀիւզն քան զառաջին անկազմութիւնն, զի նախ քան զընտրե[]լն եւ զգալն զվտանգսն չարեացն յապահոյի եւ յանհոգութեան կայր. եւ արդ, յառնելո[յ] զազդմունս չարեացն ի տազնապի եւ ի տարակուսի կայ։ 16 Եւ թե կամիս, ի մարդո[յ] իսկ ա՛ռ աւրինակ, զի նախ քան զպատկերանալն եւ լինել կենդանի անմասն էր ի չարեաց եւ յորժամ գա[յ] ի չափ հասակի մարդո[յ], յայնժամ միտի ի չարիս յիւրմէ անձնիշխանութենէ. նոյնպէս եւ ի բարե-

բարութեանէն, զոր ասեն յԱստուածոյ եղեալ Հիւղեայն, գտանի, զի ի յոռութիւնս եկին:

17 Ապա եթե ի չկարելո[յ] Աստուածոյ բառնալ զչարիսն եթող նոյնպիսիս, այնու տկարութիւն ամեն զԱստուածով. կա՛մ թե բնութեամբ տկար իցէ, կա՛մ թե առ երկիրդ յաղթեցաւ յայլմէ զաւրագունէ քան զնա: 18 Եթե յաղթեալ կասկածանաւք ի մեծագունէ քան զնա ասիցեն, հարկ է, թե զչարիսն բռնադատիչս կամաց նորա դնեն. եւ ընդէ՞ր, ըստ նոցա բանիցն, չարիքն ոչ լինէին աստուածք, որ Աստուածոյն յաղթել կարէին:

[Ը.]

1 Դարձեալ. հարցցուք զՀիւղ[ե]այն. պա՞րզ ինչ բնութիւն իցէ, եթե՞ յաւրուածով, զի ազգի ազգի գործ[ո]ւածք իրացն յայսպիսի քննութիւնս ա[]ծեն զմեզ, զի եթե պարզ բնութիւն էր Հիւղն եւ մենակերպ, եւ աշխարհս ի յաւր[ո]ւածոց եւ ի պէս պէս բնութեանց եւ ի խառն[ո]ւածոց հաստ[ա]տեալ է, անհնարին է ասել, եթե [ի] Հիւղեայն լեալ իցէ, վասն զի չէ մարթ[] յաւրուածո[յ]իցն ի միողէ պարզ բնութեանէ ունել զհաստատութիւնն, քանզի յաւր[ո]ւածոյքն ի պարզական բնութեանցն յաւրելին: 2 Եւ եթե ի պարզական բնութեանցն յաւրեցաւ, ապա էր ժամանակ, յորժամ Հիւղն իսկ չէր ի միջի, զի ի պարզականացն յաւրելո[յ] եղեւ Հիւղն: 3 Ուստի լեալ իսկ երեւի Հիւղն եւ ոչ՝ անարար, զի եթե յաւր[ո]ւածով էր Հիւղն, եւ յաւր[ո]ւածոյքն ի պարզականացն ունին զանձնաւորութիւն, ապա է՛ր երբեք, զի չէր իսկ Հիւղն, մինչ [չ]եւ պարզականացն ի միմեանս յարեալ էր: 4 Եւ եթե էր ժամանակ, յորժամ զի Հիւղն չէր, ապա չգոյր ժամանակ, յորում չէր անարար, զի եթե Աստուած անարար էր, եւ պարզականքն եւ[ս՝] անարարք[], ուստի Հիւղն

յաւրեցաւ, յայտ է, թե չէին երկուքն միայն անարարք, այլ՝ հինգ:

5 Եւ արդ, տեսցուք՝ հաւա՛նք ինչ ընդ միմեանս էին բնութիւնքն, ուստի Հիւղն յաւրեցաւ, թե՛ հակառակք իրերաց: 6 Սա՛, աւասիկ տեսանեմք զբնութիւնսն՝ միմեանց հակառակս, քանզի ընդդիմակաց է հրո[յ] ջուր, եւ լուսո[յ]՝ խաւար, եւ ցրտո[յ]՝ ջերմ, եւ ցամաքի՝ խոնաւ, եւ [ի]նքեան ինչ հակառակ եւ վնասակար չէ, բայց ըն[կ]երին. եւ ան[տ]ի յայտ է, թե չեն ի միողէ նիւթո[յ], եւ ոչ մի նիւթն՝ ի չորից հակառակորդաց: 7 Արդ, եթե մին չէր նիւթն, ոչ եթե [ի]նքեան հակառակ էր, այլ՝ ընկերին, որպէս սպիտակ՝ թխոյ, եւ քաղցր՝ դառին:

[Թ.]

1 Եւ արդ, զՀիւղեայն խնդիր թողեալ, զոր «նիւթն ամենայնի» կոչեն, ի չարեացն խնդիր եկեսցուք, զոր ի նմանէն իմանան, զի յորժամ չարիքն, յայտ լինիցին, թե չեն անձնաւորք, ան[տ]ի եւ Հիւղն յանդիմանի, թե ոչ էր երբեք եւ ո՛չ՝ բնութիւն անձնաւոր:

2 Արդ, զմարդկան իսկ չարեաց հարցցուք. արգասի՞ք անձանց իցեն եւ եթե անձի՞նք ինչ չարիքն, զի որ ինչ ի մարմինս եւ յողիս շարժմունք խաղան, ոչ մարթի ասել, թե այն մարդ իցէ, այլ՝ կամական շարժմունք, զի մարդն անձնաւոր է, եւ բարքն՝ չանձնաւորք որպէս սպանութիւն կամ շնութիւն, որ ի բարուցն գործիցին: 3 Արդ, եթե այնք արարածք ինչ անձնաւորք իցեն, հարկ է եւ զպատճառն, զոր դնեն, արարած անձնաւոր կարծել, զի որո[յ] մասն ինչ արարած է, յայտ է, եթե նա ամենեւին իսկ արարած է, եւ որո[յ] մասնն չէ արարած, նա բնաւ իսկ չէ արարած: 4 Ապա ուրեմն էր երբեք, զի բնաւ չէր ամենեւին ինչ արարիչ բաւանդակ, մինչ չեւ Աստուածոյ զմարդն արարեալ էր, ուստի չարիքն լինին: 5 Քանզի մա-

սանց չարեաց գտանի մարդն արարիչ, անտի յայտ է, թե եւ բաւանդակ իսկ չարեացն արարիչ Աստուած է. գոր ամենեւին մի երբեք լիցի ասել, թե Աստուած չարեաց պատճառ իցէ, այլ՝ այն, որ իւրով կամաւք զգործ չարեացն գործիցէ, եւ յուժէ չարն գործի, յիրաւի նմին եւ անուն չարութեան դնի, որպէս եւ յառաջագոյն իսկ ասացաք:

[Ժ.]

1 Եւ արդ, եկեսցուք յիրացն իսկ ի քնին, զի յորժամ ճշդիւ մրցութիւնք լինիցին, դիւրաւ զյայտնութիւն ճառիցն յանդիման կացուցանիցեն:

2 Արդ, զԱստուած բարի եւ բարերար ասիցեն. Հարկ է թե բարի եւ բարերար ասեն, եւ չարութիւն ինչ ի նա ոչ մերձեանայ: 3 Եւ եթե այն այնպէս իցէ, նախ զչնութենէ եւ զպոռնկութենէ Հարցցուք եւ ապա՝ զայլոց նոյնպիսեաց: 4 Եթե Աստուածոյ կամաւք գործէին այնպիսի չարիք, ընդէ՞ր ի գործելեաց չարեացն վրէժս պահանջիցէ: 5 Այլ այնու, զի ընդ չարեաց գործոցն վրէժս պահանջէ, յայտ է, եթե ոչ արտրժէ զչարիսն, այլ ատեալ[յ] եւ պատիժս պատուհասից ի վերայ[յ] գործելեացն անէ, որոց, ըստ իւրեանց անմտութեան, խրատք նորա չարութիւնք կարծին, որպէս եւ այժմ սպանողք յորժամ ի պատիժս մտանեն, ոչ «բարերարս» զպատժածուն կոչեն, այլ «չարարարս», քանզի այնպիսի բարք են չարագործաց՝ զիրաւունսն անիրաւութիւն ասել: 6 Բայց մեզ մի լիցի այնպիսի ինչ ասել, այլ՝ զչարիսն ո՛չ անձնաւորս կարծել, այլ կամածինս:

7 Ապաքէն, պոռնկութիւն եւ շնութիւն ի մերձենալո[յ] ի միմեանս առն եւ կնոջ լինին:

8 Եթե յիւր կին ոք՝ Աւրինաւք ամուսնացեալ, մերձենայցէ վասն որդեծնութեան եւ զաւակի ս[ե]րեւո[յ], բար[ւ]ոք է մերձաւորութիւնն: 9 Ապա եթե ուրուք թողեալ զիւր կին՝ զայլո[յ] ամուսնութիւն

թշնամանիցէ, գործ չարութեան գործէ: 10 Եւ մերձաւորութիւնն նոյն է, եւ աւրինակ մերձաւորութեանն՝ ոչ նոյնպիսի, քանզի մին բուն հայր լինի որդ[ւ]ոց, եւ միւսն՝ գողունի:

11 Սոյն բանք են եւ վասն պոռնկութեան. եթե վասն որդեծնութեան ոք մերձենայցէ յիւր կին, յիրաւի է, ապա եթե առ ցանկութեան՝ աւտար մարմնոց ցանկանայցէ, կարի իսկ՝ անիրաւութիւն: 12 Եւ յայտ է, թե իրքն չարք յայնժամ լինին, յորժամ պէտքն Աւրինաւք ոչ վճարեսցին:

13 Նա՛, եւ զսպանութենէ նոյն բանք են. յորժամ զըմբռնեալն ի շնութեան ոք սպանանիցէ, պատուհաս ի վերայ[յ] անեալ վասն յանդգնութեանն՝ չառնէ չար ինչ:

14 Ապա եթե զանմեղն, ոք, որոյ ոչ ինչ ի վճռականացն գործեալ իցէ, սպանանիցէ՝ կա՛մ վասն ինչս գերծանելո[յ], կա՛մ վասն ստաց[ո]ւածս հատանելո[յ], չարութիւն գործէ: 15 Եւ գործն նոյն է երկ[ո]ցունց, բայց աւրինակն՝ ոչ նոյնպիսի:

16 Նա՛, եւ յինչս առնուլ նոյն բանք են. որ պարգեւ ի տեառնէ կամ ձիւր ի բարեկամէ առնուցու, ոչ ինչ չարութիւն գործէ, իսկ որ բռնաբար յանաւագէն հանիցէ, չարութիւն գործէ: 17 Եւ առնուլն երկ[ո]ցունցն նոյն է, բայց աւրինակ առնւոյն՝ ոչ նոյնպիսի:

18 Նոյնպէս եւ յաստուածպաշտութեան յաւրինակէ ան[տ]ի ցուցանի չարութիւնն. եթե զճշմարիտն Աստուած ոք պաշտիցէ, գործ ազնուական գործէ, ապա եթե թողեալ զճշմարիտն՝ քարանց եւ փայտից որպէս թե Աստուածոյ՝ պաշտաւն մատուցանիցէ, անհնարին վնաս գործէ, զի զաւրինակ պիտոյիցն յանպատեհ իրս դարձոյց: 19 Եթե պատկեր ոք գործիցէ եւ ոչ՝ վասն սիրո[յ] սիրել[ւ]ոյն, որ մահուամբ յաչացն վրիպեցաւ, կամ վասն զճարտարութիւն ցուցանելո[յ], այլ ի

պաշտաւն առեալ՝ երկիր պագանիցէ իբր Աստուածոյ, գործ չարութեան գործէ:

20 Եւ այսպէս կազմածո[յ] իրաց ինչ եւ միտք գործողին գործեն զչարն, որպէս եւ երկաթ մերթ ի բարիս պաշտի եւ մերթ ի չար. եթե խոփ եւ գերանդի եւ մանգաղ ոք գործիցէ, ի բարևոք իրս պաշտեցաւ, ապա եթե՞ սուսեր եւ գեղարդն եւ սլաք եւ այլ ինչ զէն, որ վնասակար մարդկան է, գործ չարութեան գործէ, եւ պատճառ չարութեանն՝ գործելին, եւ ոչ՝ երկաթն:

[ԺԱ.]

1 «Իսկ մարդիկ,- ասեն,- յանձա՞նց ինչ ունիցին զայնպիսի շարժմունս, թե՞ յԱստուածոյ լեալ իցեն, կամ թե ա՞յլ ոք իցէ, որ զայն ի մարդիկ արկանիցէ»:

2 ՅԱստուածոյ մարդկան այսպիսի ինչ լինել չթուի պատշաճ ասել, այլ՝ ունել անձնիշխանութիւն եւ ազատութիւն առաջնո[յ] մարդոյն եղելո[յ] յԱստուածոյ, եւ ի նմանէն զնոյն իւրոց պա[յ]ազատացն ժառանգել: 3 Եւ արդ, առեալ զանձնիշխանութիւնն՝ ո՛ւմ կամի, ծառա[յ]անա[յ], որ՝ մեծ շնորհն, պարգեւեալ է նմա յԱստուածոյ, քանզի այլն ամենայն ի հարկէ ծառա[յ]է աստուածական հրամանին: 4 Եթե գերկնից ասիցես, կա[յ] հաստատեալ եւ ոչ շարժի ի սահմանելո[յ] նմա տեղ[ւ]ոյն: 5 Եւ եթե գարեգականէ կամիցիս ասել, սակայն եւ նա կատարէ զգատուցեալ նմա զշարժումնն եւ չիշխէ խուսափել յընթացիցն, այլ ի հարկէ ծառա[յ]է տերունական հրամանին: 6 Նոյնպէս եւ գերկիր սեղմացեալ տեսանեմք, եւ բարձեալ բերէ զհրաման հրամանատուին, եւ զայլսն ամենայն՝ համակերտս, ծառա[յ]ացեալս հրամանաց արարչին, եւ չիշխեն այլ ինչ, քան զայն, յոր կարգեցանն գործել. վասն որո[յ] [ոչ] գովեմք զնոսս յազգս զսահմանս հրամանացն պահելո[յ]:

7 Բայց մարդո[յ] առեալ անձնիշխանութիւնն՝ ո՛ւմ կամի, ծառա[յ]անա[յ], ոչ ի

հարկէ բնութեան բռնադատեալ, ոչ ի զաւրութենէն, որ նմա վասն լաւութեանց շնորհեցաւ, կասեալ, այլ ի հնազանդութենէ միայն շահի զաւգուտն եւ յանհնազանդութենէ՝ գվնաս: 8 Եւ զայն ոչ եթե առե[ղեռ]անէ ինչ լեալ ասեմք մարդոյն, այլ՝ վասն լաւութեանց, զի եթե իբրեւ զմի ինչ յայլոցն բնութեանց լեալ էր, []որ ի հարկէն ծառա[յ]են Աստուածոյ, ապա եւ վարձս ընդ կամակարութեանն առնլո[յ] չէր արժանի, այլ իբրեւ գործի մի էր արարչին, զոր թե պէտ՝ ի չար վարէր եւ թե պէտ՝ ի բարի, ոչ պարսաւանք ինչ էին նմա, եւ ոչ՝ գովութիւնք, այլ պատճառ այն էր, որ զնա այնպէսն վարէր: 9 Նա՛, եւ ոչ զլաւ ինչ գիտէր այնուհետեւ մարդն, քանզի չէր հմուտ այլ իմիք, բայց՝ այնմ եւեթ, յոր պատշաճեալն էր: 10 Այլ Աստուած այնպէս պատ[ո]ւել զմարդն կամեցաւ, զի առ լաւութեանցն խելամուտ լինելո[յ] զանձնիշխանութիւնն պարգեւեաց նմա, որով կարող իցէ առնել, զի՛նչ եւ կամեսցի: 11 Եւ զանձնիշխանութիւնն նորա ի լաւն խրատէ դարձուցանել. որպէս հայր ոք յորժամ գորդի իւր խրատիցէ, որ կարող իցէ ուսումն ինչ ուսանել, չծուլալ յուսմանէն, այլ՝ յառաջադէմ լինել, ի լաւն ստիպէ. վասն զի գիտէ, եթե կարող է յառաջադէմ լինել, պահանջէ զուսումնն, յոր աւանդեցաւ, նոյնպէս եւ զԱստուածոյ պարտ է իմանալ, եթե յաւժարեցուցանէ զմարդն յանսալ հրամանացն նորա, բայց զկամակար իշխանութիւնն ոչ հանէ ի նմանէ, որով կարող է անսալ եւ չանսալ հրամանացն, այլ խրատէ եւ յաւժարեցուցանէ զմարդն, զի լաւութեանցն ցանկացող լիցի, որովք արժանաւոր մեծաց պարգեւաց լինիցի, եթե անսայցէ Աստուածոյ, այլ զի եւ չանսալոյն իշխանութիւնն ունիցի, քանզի ոչ եթե վայրապար ինչ կամէր Աստուած զայնպիսի պարգեւս տալ, որ յաւիտենական անեղծութիւնն է, զի վայրապար իսկ էր այնպիս[ւ]ոյն տալ, որ ոչ

ունէր իշխանութիւն երկ[ո]ցունց՝ անսալո[յ] այնմ, զոր Աստուածն կամէր, եւ չա[նս]ալո[յ] այնմ, զոր Նայն չախորժէր: 12 Բայց իրաւամբք այն է, յորժամ արժանի ըստ որոց գործեացն ոք, ինչ առնուցու: 13 Եւ արդ զիա՞րդ երեւէր ընտրութիւն գործոցն, եթե ոչ ունէր մարդն իշխանութիւն երկ[ո]ցունց՝ ե՛ւ անսալոյն, ե՛ւ չանսալոյն:

14 Եւ արդ, յայտ է, թե անձնիշխան եղեւ մարդն՝ առնել զբարի եւ ժտել ի չար. իբր ոչ եթե չար ինչ առաջի կայր, յոր ժողիցի, այլ այն եւեթ առաջի կայր՝ կա՛մ անսալ Աստուածոյ, կա՛մ չանսալ, եւ զնոյն եւեթ պատճառ չարին իմանալ, անգի լեալ մարդն առաջին՝ առնոյր պատուէր յԱստուածոյ, եւ չհնազանդեալ աստուածական հրամանին՝ մտաբերէր ի չարիս, եւ ան[տ]ի լինէր սկիզբն չարեաց:

15 Ուստի ոչ ոք կարէ անարար ի[ն]չ եւ անձնաւոր զչարն ցուցանել եւ, դարձեալ, ոչ՝ յարարչէն, այլ՝ յանսաստութենէ []դիպեալ ստուենգանողին, եւ յուրուք վարդապետութենէ դրդեալ, զի ոչ եթե այնպիսի ինչ հաստատեալ բնութեամբ զմարդն ցուցանել: 16 Եթե այնպիսի ինչ բնութիւն մարդոյն առեալ էր, ապա ոչ ի բնութենէ արարածո[յ] եւ յաստուածեղէն Գրոց նմա վարդապետութիւն ընծա[յ]անայր, որպէս ասէ ուրեք աստուածական բարբառն, եթե Ի մանկ[յ]ութեմէ մարդիկ ի խնամա չարի միտեալ են՞, զի ցուցցէ, թե որ միտին, կամաւք միտի եւ ոչ՝ ուրուք բռնութեամբ:

17 Արդ, անսաստութիւնն եւեթ, որ արտաքո[յ] Աստուածոյ կամացն գործիցի, պատճառ չարեաց իմանալի է, եւ նմին՝ զայլ ոք վարդապետ ծածուկ հաչ[ո]ւել, դրդիչ եւ ոչ բռնադատիչ, որ զմարդն ի լաւութեանցն մերկանալ կամեցաւ: 18 Ա-

պա եթե զպատճառն եւս կամիցիս խնդրել, զնախանձն, որ առ մարդն եղեւ, իմասցին զպատճառն: 19 Եւ եթե զնախանձուէն եւս ճշդիւ քննիցեն, թե ուստի՞ եղեւ, ասասցուք, եթե յառաւելութենէ զմարդն պատ[ո]ւելո[յ], քանզի միայն մարդ ըստ պատկերի եւ ըստ նմանութեան՞ Աստուածոյ եղեւ: 20 Իսկ եթե այնու զԱստուած պատճառ չարեաց կամիցին ասել, անկանին յիմաստնարար խորհրդո[յ]: 21 Եթե զնորա ինչ հանեալ էր եւ մարդոյն շնորհեալ, թերեւս յիրաւի պատճառ չարեաց կարծէր տուիչն: 22 Ապա եթե զնա նոյնպէս, որպէս եղեւն, պահեաց եւ զմարդն այսպէս կամեցաւ առնել, պատճառ չարեաց նախանձորդն է, քանզի ոչ եթե, յորժամ իցեն ուրուք երկու ծառայք, եւ զմինն ի ծառա[յ]ութեան ունիցի եւ զմիւսն յորդեգիրս գրիցէ, եւ միոյն յարուցեալ ի վերա[յ]՝ զմիւսն սպանանիցէ, պատճառ չարեաց զտէրն պարտ իցէ իմանալ, որ ոչ եհան ինչ ի ծառա[յ]էն եւ շնորհեաց միւսումն:

[ԺԲ.]

1 Արդ, եւ զայն եւս հարցանեն. «Եթե չար ինչ չկայր առաջի, ուստի՞ Աւձն, զոր Մատանայ կոչէք, իմացաւ զհանգամանս չարին»:

2 Ասեմք, եթե Սատանա[յ]՝ չար գստունգանել մարդոյն Աստուածոյ իմացաւ, վասն որո[յ] զմարդն յայն յաւժարեցոյց. որպէս յորժամ իցէ ոք ուրուք թշնամի եւ թաքուցեալ զթշնամութիւնն՝ գաղտ կամիցի վնասել եւ չգիտիցէ զհանգամանս վնասակարութեանն եւ շուրջ եկեալ՝ յածիցի հնարս խնդրել, ապա գտեալ ժամանակ, յորժամ ոք ի բժշկաց՝ թշնամ[ւ]ոյն նորա պատ[ո]ւէր տայցէ՝ յայս ինչ չհպել եւ յայս նիշ կերակրոց չճաշակել, որով առողջութեանն կարիցէ հասանել, եւ նորա

՞ ԿճԳ. ԾՆ. Բ՝ 21:

Է՞ ԾՆ. Ը՝ 26

լուեալ՝ վաղվաղակի ի կեղծիս բարեկամութեան կեղծաւորեալ, զբժիշկն պարսաւիցէ եւ զաւգտակարսն նմա վնասակարս թելադրեալ՝ կարծեցուցանիցէ եւ հակառակ պատ[ո]ւէրս հրամանաց բժշկին տայցէ եւ այնու առնիցէ նմա վնաս, որ ոչ եթե յառաջագոյն գիտէր զհանգամանս վնասակարութեանն, այլ ի պատ[ո]ւիրելո[յ] բժշկին գտեալ հնարս՝ եղեւ վնասակար, նոյնպէս կարծի եւ զՍատանա[յ]է. նախանձն նմա ըն[դ] նախաստեղծ մարդոյն եւ չգիտ[ե]լ զհանգամանս վնասակարութեանն, քանզի ոչ եթե չար ինչ առաջի կայր, ուստի զհանգամանսն մարթէր առնուլ. ուսեալ յԱստուածոյ պատուիրանէն, որ մարդո[յ]ն տուաւ՝ արգելուլ զնա ի ճաշակելո[յ] ի տնկո[յ] իմեքէ ի մահաբերէ, որ ոչ եթե անպիտան ինչ ի կերակուրս մարդո[յ] էր եւ ոչ՝ բնութեամբ տունկն մահաբեր, եւ վասն այնորիկ ինչ արգելաւ մարդն ի ճաշակելո[յ] ի նմանէ, այլ անսաստուծիւնն եղեւ պատճառ մահուան մարդոյն իբրեւ յանցաւորի, որ անցանիցէ զհրամանաւ հրամանատուի, որ նմա կարգեալ իցէ:

3 Արդ, ժտեցոյց թշնամին զմարդն անցանել զհրամանաւն Աստուածոյ, որպէս զի ոչ եթե ստուգեալ՝ գիտէր, եթե այնու նմա վնաս ինչ գործել կարիցէ, այլ՝ կարծեալք՝ ի թեթուս մատուցեալ, եթե լիցի՝ եւ թե չլինիցի: 4 Եւ յետո[յ], յԱստուածոյ պատուհասէն, որ առ մարդն եղեւ վասն պատ[ո]ւիրանագանցութեանն, իմացաւ, եթե պատ[ո]ւիրանք նորա մահ գործեցին: 5 Եւ յիրաւի պատժեցան ե՛ւ նա, ե՛ւ մարդն, զոր յաւժարեցոյց յանսաստութիւնն՝ ճաշակել ի փայտէն, որ ոչ բնութեամբ մահաբեր էր, այլ յԱստուածոյ սպառնալեացն եղեւ այնպիսի իրաց պատճառ: 6 Եւ որպէս բժշկի ոչ կարեմք մեղադիր լինել վասն յառաջագոյնն զգուշացուցանելո[յ]՝ որո՛վ աւրինակաւ կարիցէ մարդն առողջանալ, եւ նորա թողեալ

զպատ[ո]ւէրս բժշկին՝ անսայցէ թշնամ[ւ]ոյն, որ զվնասարար խրատսն տայցէ նմա, որով ոչ, զպատճառս վնասուն ի բժշկէն, որ յառաջագոյնն գուշակեաց նմա, իմանալի է, այլ՝ ի թշնամ[ւ]ոյն, որ ի պատ[ո]ւիրանէ բժշկին նմա զվնասն հնարեցաւ, նոյնպէս եւ զՍատանա[յ]է ասեմք. լեալ թշնամի մարդկան, որ չեւ եւս գիտէր զհանգամանս չարեաց, այլ ի պատ[ո]ւիրանէն Աստուածոյ ուսեալ՝ կամեցաւ վնասել մարդոյն, զի, եթե առանց Աստուածոյ կամաց ի ծառոյն ճաշակիցէ, առնուցու պատիժ զմահ, քանզի թե յառաջագոյն չէր գուշակեալ Աստուածոյ մարդոյն չուտել ի կերակրո[յ] ծառոյն, եւ նորա յանգէտս կերեալ, չլինէր նմա պատիժ մահ. կա՛մ որպէս թե առ ի չգիտանս եկեր, կա՛մ որպէս թե առ չժուժալո[յ]՝ ի կերակրոյ ծառոյն. չէր ինչ պատժի պարտական, քանզի եւ մանուկ կաթնակեր, որ յայլ ինչ կերակուր մտաբերիցէ, ոչ պատժելի է, այլ՝ արգահատելի, որպէս թե առ ի չգո[յ]է կաթին յայն յաւժարեաց: 7 Նա՛, եւ Աւճն, որ է Սատանա[յ], յիրաւի պատժեցաւ վասն ընդ անագորոն թշնամութեան ընդ մարդոյն ունեւո[յ]:

8 Եւ արդ, սկիզբն չարեաց զնախանձն ասեմք եւ զնախանձն՝ յառաւել զմարդն պատուելոյ եւ զչարիսն՝ յանհնազանդութենէն, զի Աստուած այնպէս առաւել զմարդն պատ[ո]ւեաց, եւ նորա անսաստեալ՝ զըն[կ]էց զպատ[ո]ւիրանն: 9 Ուստի զամենայն ինչ, որ լինի չար, որ բնութեամբ չար գիտեմք, այլ զի առանց կամացն Աստուածոյ գործին իրք ինչ, լինին չար:

10 Նա՛, եւ ընդ լինելն իսկ Սատանա[յ]ի յԱստուածոյ գիտաց, եթե անսաստել ումեք Աստուածոյ չար է եւ ոչ՝ բարի, քանզի ոչ եթե անմիտ ինչ ոք եղեւ նա յԱստուածոյ, եթե չգիտէր, եթե որ ինչ ըստ Աստուածոյ կամացն լինի՝ բարի, եւ

որ ինչ արտաքո[յ] քան զնորա կամսն՝
 այն չար է: 11 Եւ վասն այնորիկ յիրաւի
 տանջէ զնա Աստուած, զի գիտէ զբարին
 եւ ոչ առնէ եւ հմուտ է չարին եւ ոչ խոր-
 չի: 12 Եւ ոչ չար եւ չարչարիչ հաստա-
 տեաց զնա Աստուած եւ ոչ՝ փորձիչ, եթե
 նովաւ փորձեալ՝ զարդարս զտեսցէ, եւ ոչ
 ինքն յանձնէ չար գտեալ եւ ոչ՝ անարար
 եւ հակառակ Աստուածոյ, այլ՝ մտաւոր ե-
 դեալ յԱստուածոյ եւ հմուտ գիտութեան,
 թե չար է հակառակ կալ Աստուածոյ հրա-
 մանին. եւ յայն, զոր գիտէրն, թե չար է,
 յանդգնեցաւ. զանաստութենէն ասեմք:
 13 Եւ անաստութիւնն ոչ եթե անձնաւոր
 ինչ յառաջագիւտ եհաս ի գիտութիւնն
 Սատանայի, այլ՝ իբրեւ զմի ինչ եղեալ ի
 դիպաց կամեցելոյն:

14 Նա՛, եւ զմարդո[յ] յիրաւի ասեմք
 կրել պատուհաս ընդ որոց գործիցէ, քան-
 զի կամաւ երթա[յ] յուսումն այնպիսի ի-
 րաց, յորոց, յորժամ եւ կամիցի, եւ մեկնել
 կարող է, քանզի ե՛ւ կամելոյն, ե՛ւ չկամե-
 լոյն ունի իշխանութիւն, զորո[յ] զհետ եր-
 թա[յ], եւ կարելն, զոր ինչ կամիցի առնել:

[ԺԳ.]

1 «Որովհետեւ,- ասեն,- չարեաց արա-
 րիչ զԱստուած չկամիք ասել, այլ՝ ի մարդ-
 կանէ եղեալ, թելադրութեամբ Սատանա-
 [յ]ի, ի հնազանդելոցն նորա եւ ի խաբեցե-
 լոց, եւ յիրաւի կրեն պատիժս, զի կարէին
 հատանել ըն[կ]ենուլ ի բաց զչարիսն, եւ
 ոչ կամեցան, եւ արդ վասն նորին իսկ Սա-
 տանա[յ]ի հարցցուք. այնպիսի՞ արդեւք
 արար զնա Աստուած, եթե՞ ինքնին այն-
 պիսի չէր եւ յաւժարեաց ի չարաբարել»:

2 Եթե այնպիսի արարեալ էր զնա Աս-
 տուածոյ, պատիժս ի նմանէ չէր պարտ
 պահանջել, զի պահեաց զպայման բնու-
 թեանն, յոր արարն զնա Աստուած, եւ որ
 ոք ոչ կամաւք ինչ գործէ, ընդ այնր պա-
 տիժ չպարտի կրել, բայց որ կամաւք կա-
 րող է գործել եւ գործ ինչ յուսութեան գոր-

ծիցէ, յիրաւի պատժի, զի ոչ եկաց յայնմ,
 զոր Աստուածն կամի: 3 Ապա եթե յԱս-
 տուածոյ բարւոք եղեւ եւ անձամբ յանձնէ
 դարձոյց զկամսն ի չար, հեռացուցեալ
 զինքն ի լաւէն, յիրաւի պահանջի, ընդ ո-
 րոց յանդգնեցաւն, պատիժս, զի զՍատա-
 նա[յ] մեք ոչ յԱստուածոյ Սատանա[յ] ե-
 դեալ գիտեմք, այլ զ«Սատան» անուն
 վասն խոտորելոյն [յ]առ իւր անուն, քան-
 զի «Սատանա[յ]» յԵբրա[յ]եց[լ]ոց եւ
 յԱսոր[լ]ոց լեզուէ «խոտորեալ» թարգմա-
 նի, այլ՝ զաւրութիւն իմն զգա[յ]ուն լա-
 ւութեանց հաստատեցաւ յԱստուածոյ եւ ի
 թշնամութենէ ընդ մարդոյն ունելո[յ] իւ-
 րոյն կամաւք եղեւ բանասրկու. թողեալ
 զԱստուածոյ հպատակութիւն՝ սկսաւ ան-
 սաստել եւ հակառակ կալ Աստուածոյ
 հրամանացն ուսուցանել մարդկան եւ իբ-
 րեւ զապստամբ յետս կացեալ՝ թիւրեցաւ
 յԱստուածոյ. եւ վկա[յ]է բանիս աստուա-
 ծական բարբառն, որ ապստամբ վիշապն՝
 կոչէ զնա, եթե «Հրամանաւ սպան զապս-
 տամբ վիշապն»: 4 Եւ արդարեւ իսկ Բանն
 Աստուած սպան զՍատանայ այնու, զի կո-
 խելոյն զնա ետ իշխանութիւն: 5 Արդ,
 «ապստամբ» կոչէ զնա Գիր. եթե նոյնպի-
 սի, որպէս եղեւն յԱստուածոյ, կացեալ էր,
 ապա ոչ «ապստամբ» կոչէր զնա, զի որ
 ապստամբի ոք, թողու զիւր պայմանն, ո-
 րով ոչ անարար իսկ ցուցանի, զի եթե ա-
 նարար էր, ապա ոչ յիւրմէ բնութենէն փո-
 խէր, քանզի չմարթի բնութեան իմիք՝ ա-
 ուանց կամաց մերթ բարի լինել, մերթ չար:

[ԺԳ.]

1 «Իսկ արդ, եթե ոչ անարար էր,- ա-
 սեն,- Սատանայ եւ ոչ այնպիսի եղեալ
 յԱստուածոյ եւ անձամբ զանձն դարձոյց
 ի լաւէ ան[տ]ի ի յուրն, որ է՝ ի հնազան-
 դութենէ յանհնազանդութիւն, արդ զայն
 ասացէ՛ք. գիտէ՞ր Աստուած, եթե այնպէս

Յ՞բ. Ի.Ձ.13

լինելոց էր, թե՞ չգիտէր: 2 Թե գիտէր եւ արար, ինքն է պատճառ՝ նորա ի լաւութեանցն դառնալոյ: 3 Ապա թե ոչ գիտէր, զի ա՞րդ առնէր զայն, զոր ոչն գիտէր, թե որպիսի՛ ինչ ոք լինելոց իցէ»:

4 Անգիտութիւն կարծել զԱստուածոյ անհնարին յիմարութիւն է, քանզի միայն ինքն կանխագէտ է հանդերձելոց. այլ քանզի բարերար էութիւն է Աստուած, ոչ կամեցաւ զազնուականութիւնն իւր ծածկել: 5 Վասն որոյ յառաջագոյն գիտէր զՍատանա[յ]է, եթե թիւրելոց է եւ զմարդիկ յանցուցանելոց՝ առ ի չունկնդիր լինելոյ հրամանաց նորա. որով միանգամայն վասն անձնիշխանութեան մարդոյն երեւելոյ արար զնա Աստուած, զի առաւելութիւն բարերարութեան նորա յայտնի լիցի մարդկան՝ «վասն թողութեան» տալո[յ] մարդկան յառաջագոյն գործելոցն մեղաց՝, զի, յորժամ զՍատանայ ամբարշտացեալ տեսանիցեն եւ չբարձեալ ի միջոյ, եւ վասն իւրեանց մեղացն իմանայցեն, թե զոյ հնար թողութեան ապաշխարութեամբ, զի Աստուածոյ բարերարութիւնն ցուցանիցի, եւ մարդիկ զչնորհն նորա գիտասցեն, զի եթե այն այնպէս չէր լեալ, եւ ոչ բարերարութեանն նորա ոք խելամուտ լինէր:

6 Նա՛, «Բնաւ իսկ,- ասեն,- յետ թիւրելոյն Սատանա[յ]ի եւ խաբելո[յ] զմարդն ընդէ՞ր իսկ ոչ եբարձ ի միջո[յ], զի մի զբազումս սպանանիցէ»:

7 Ոչ եթե չէր կարող Աստուած բառնալ զՍատանա[յ] ի միջոյ, քանզի չիք ամենեւին տկարութիւն զԱստուածով, այլ զի չէր ինչ մեծ գործ Աստուածոյ զՍատանա[յ] ինքնին, անձամբ սպանանել, զարարած մի զիւր փոքր յոչ ինչ դարձուցանել, զի մի կարծիցի, թե վասն չժոժալո[յ] չարութեանն նորա սպան զնա. երկրորդ ան-

գամ՝ զի [] անծանալթ եւս լինէր առ յապա մարդկան Աստուածոյ բարերարութիւնն, թե յառաջագոյն սպանեալ էր զՍատանա[յ], զի ոչ ոք ունէր նշանակ ինչ յայտնի՝ «բարերար» կոչելո[յ] զԱստուած, այլ թերեւս եւ կարծիք ինչ ի մէջ մտանէին, թե հաւասար ինչ ոք էր նա Աստուածոյ, եւ աճապարեաց, ի միջո[յ] եբարձ. վասն որո[յ] պահեաց զնա եւ ոչ կ[ո]րոյս ի միջո[յ], զի մարդիկ, յորժամ լաւութեանցն հմուտ լինիցին, յաղթեցեն նմա փոխանակ այնոցիկ, որ յառաջնումն յաղթեցան ի նմանէ:

8 Այն իսկ մեծ եւ զարմանալի է, զի մարդն Աստուածոյ, վառեալ Աստուածոյ աւգնականութեամբ, պատերազմեալ՝ յաղթիցէ Սատանայի: 9 Որպէս մարտուսոյց ոք ամենայն հնարիւք հնարեալ՝ զիւր աշակերտսն թեքել առ ի ցուցանելո[յ] զհանգամանս մարտիցն, որով մարթիցեն յաղթել ախոյանից, եւ առաքիցէ զնոսա ի հրահանգս՝ մրցել ընդ ախոյանսն եւ յաղթութեանցն ուշ առնել խրատիցէ, մինչեւ զկեանս անգամ արհամարհել, զի լաւ համարի, թե վասն անուան բարուք մեռանիցին, քան թե կենդանի կայցեն եւ վատանուն լինիցին. եւ նոցա զթելադրութիւնս վարդապետին ի մտի եղեալ եւ՝ զպարգեւս ընդ յաղթութեանն՝ գեր ի վերո[յ] լինիցին ախոյանին եւ պսակեալ՝ առ վարդապետ[]ն հասանից[են] եւ նշանակ ճգնութեան ընդ ախոյանին առ նա զպսակն բերիցեն: 10 Ապա եթե զմարտուսոյցն զմտաւ ոչ ածիցէ եւ յաղթութեան եւ պսակի ոչ ցանկանայցէ, կործանի վատանուն յախո[յ]անէ ան[տ]ի, յիրաւի այնուհետեւ թշնամանի եւ տանջի եւ մահու պատիժ փոխանակ ընդ վատութեանն կրէ. նոյնպէս եւ զԱստուածոյ իմանալի է, թե իւրովք պատուիրանաւք վառէ գեղեցիկ զմարդիկ առ ի պսակելո[յ] զյաղթողն եւ յամալթ առնելո[յ] զվատացեալն: 11 Իսկ եթե ոք յոչ ինչ զԱստուածոյ զպատ[ո]ւրի-

՝ Լուսն. Գ. 25

րանսն համարիցի, յորժամ մրցել ընդ բանսարկ[ո]ւին մա[]տչիցի, վաղվաղակի կործանի, քանզի չունի զնշանակս յաղթութեանն եւ յիրաւի կրէ պատիժս պատուհասից այնպիսին, զի ոչ նմանեաց ըն[կ]երին, որ կռուեցաւ եւ յաղթեաց: 12 Արդ, վասն այնորիկ թողեալ է Աստուածոյ զՍատանա[յ], իբրեւ ի հրահանգս կռուանոցաց, յաշխարհի, զի յորժամ իւր նահատակեալքն կռուիցին եւ յաղթիցեն նմա, պարծանք առաջնո[յ] յաղթութեանն նորա քակեսցին յայժմունս այնպիսեացն մարդկանէ, որ լաւութեանցն ցանկութեամբ պարտիցեն զնա եւ նշան յաղթութեան զնահատակութեանն կան[գ]նիցեն, քանզի կոխան արկեալ ընդ ոտիւք մերովք՝ անկեալ դնի մեռեալ եւ կործանի առ ի լաւութեանցն ցանկութեան մերոյ ի պարտութիւն մատնեալ:

[ԺԵ.]

1 Արդ, յետ այսր ամենայնի հաւանութեանց յամառեալ՝ զնոյն ի մէջ բերեն. «Բնութեամբ են,- ասեն,- չարիք եւ ոչ՝ կամածինք»: 2 Եթե բնութեամբ իցեն, ընդէ՞ր աւրէնք ի թագաւորաց դնիցին, եւ սաստք՝ յիշխանաց, եւ պատիժք՝ ի դատաւորաց. ո՞չ ապաքէն՝ վասն կարճելո[յ] չարեացն: 3 Եթե բնութեամբ իցեն չարիքն, ոչ պարտի աւրէնսդիրն աւրէնս դնել, եւ ոչ իշխանն՝ պատիժս ի վերա[յ] չարագործին ածել. ընդէ՞ր պատժիցեն զայն, որ ոչ կամաւքն չար իցէ, որում արգահատելն պարտ էր եւ ոչ՝ պատիժս ի վերա[յ] հասուցանել:

4 Եւ արդ, այնպիսոյն եթե կին շնայցէ, չպարտի մեղադիր լինել, քանզի ոչ կամաւ, որպէս ասենն, յաւժարեցաւ ի Չարն, այլ բնութեամբ բռնադատեցաւ: 5 Եւ եթե որդ[ւ]ոյ իւրոյ սուր առեալ՝ ի վերայ խաղայցէ, մի լիցի նմա մեղադիր, զի ոչ իւրով կամաւ երթա[յ], այլ Չարն տանի զնա յայն: 6 Եւ եթե ի դրաց[ւ]ո[յ]

եւ ի բարեկամէ թշնամանեցի, մի փոխարէն թշնամանեցէ, այլ, առաւել, արգահատեցէ եւս, զի ոչ եթե նա ինչ թշնամանէ, այլ՝ Չարն, որ բռնաբար վարէ զնա: 7 Նոյնպէս յորժամ դուստր զմայր անարգիցէ, եւ նու՝ զկեսուր իւր, եւ կին՝ զայր, եւ ծառայ՝ զտէր, եւ եղբայր՝ զեղբայր, մի ինչ տարցին ընդ միտ, որք անարգեցանն, այլ արգահատեցեն նոցա որպէս ի Չարէն բռնադատելոց:

8 Իսկ եթե տեսանեմք, եթե թագաւորն զիւրոց աւրինաց վրէժս պահանջէ եւ պահանջմամբ վրիժուցն զվնասն կարճէ, եւ դատաւորն զգողն եւ զաւագակն պրկէ եւ քերէ վասն զվնասակարութիւնն ի միջո[յ] բառնալո[յ], եւ հայր գորդի դժնեա[յ] մահապարտեալ դատաւորաց մատնէ, եւ այլքն՝ ամենեքեան, իւրաքանչիւր զանցնիւր զանարգանաց վրէժս պահանջեն կա՛մ անձամբ, կա՛մ իշխանաւք, յայտ է, թե չարիքն, որ գործին, կամածինք են եւ ոչ՝ բնականք: 9 Բայց, աղէ՛, դու զկարին իսկ զոք շուայլեալ ցանկութեամբ պրկեա՛ եւ մտրակեա՛. տեսանես, թե բնաւ, ամենեւին գտանիցի՛ ի նմա յիշատակ ցանկութեանն. եւ արդարեւ ոչ ինչ ընդ վայր ասացեալ է բան Իմաստնոյն, թե «Ծառա[յ], որ ընդ ունկն ոչ լսէ, ընդ մկանունս տան լսել նմա»:

10 Նա՛, եւ այլուստ եւս մարթեմք իմանալ, զի մարդոյ բնութիւն բարեաց ցանկացող է, եւ ոչ՝ չարեաց, զի շունն, որ շնա[յ], մինչ դեռ իսկ ի գործ շնութեանն իցէ, եթե «չուն» ոք կոչէ զնա, ըմբոստանա[յ], եւ պոռնիկն, որ յայտնի պոռնկի, զանուն պոռնկութեանն չախորժէ լսել, նոյնպէս եւ գողն եւ աւագակն եւ այլ եւս չարագործքն, թեպէտ եւ զգործ չարագործութեան գործեն, զանուն չարագործութեանն յանձն ոչ կամին առնուլ: 11 Նա՛, եւ կեղծաւորն, կեղծաւորեալ, որ մեղմեխանաւք ըն[կ]երին կամիցի վնաս առնել,

Թա[ք]ուցանէ զկեղծաւորութիւնն եւ, որպէս թե բար[ւ]ո[յ] ինչ խրատ տայցէ, հրապուրեալ՝ արկանէ ընդ վնասիւք զանմեղն. եւ եթե ոչ զբար[ւ]ո[յ] զդէմս զգեցեալ մեղմեղիցէ, չկարէ ըստերիւրել յիրաւանց զիրաւագէտն: 12 Նա՛, եւ յորժամ զխիստ ոք իշխան կամիցի ի քաղցրութիւն ածել, չկարէ յայտ երթալ ասել, թե «Դու խիստ ես». այլ քաղցրախառն բանիւք մատուցեալ՝ ողորէ, թե «Դու, տէ՛ր, քաղցր ես եւ բարերար ամենեցուն, ամենեքին գոհ են զքէն, բոլորք առ իրաւագէտս ունին». եւ այնպէս կարէ մեղմով քաղցրացուցանել զխստութիւն իշխանին եւ խոնարհեցուցանել, ածել յիրաւն եւ յարժան: 13 Նոյնպէս եւ առ ցասուցեալն եւ տրտմեալն եւ առ նախանձոտն քաղցրութեամբ ոք մատչի եւ ցածուցանէ: 14 Եւ ան[տ]ի յայտ է, թե բարեաց ցանկացող է բնութիւն մարդկան եւ ոչ՝ չարեաց:

15 Եւ եթե գազանացն գազանութիւն Չար ինչ բնութեամբ կարծեցուցանիցէ նոցա, գիտասցեն, զի կէսքն յանասնոցն ի պէտս արարան, որպէս եւ արջառ եւ ոչխար եւ ամենայն ինչ, որ ուտելի է եւ կրելի է, եւ կէսքն՝ վասն երկիւղ ի միտս մարդկան ծնուցանելո[յ], զի թե գազանք ահագինք են, ե՛ւ վիշապք, ե՛ւ աւճք, ե՛ւ այլ ճճիք վնասակարք, եւ մարդն այնչափ հպարտացեալ է, մինչ ըստ Աստուածոյ երկիւղին սահմանս արտաքո[յ] ելեալ՝ անսաստէ, եթե այնպիսի զարհուրեցուցիչք չէին, որչափ եւս առաւել չկայր երբեք յակաստանի:

16 Նա՛, եւ նոքին իսկ, որ չարքն կարծին անմտաց, երբեք երբեք աւգտակարք լինին եւ գերծուցիչք ի մահուանէ: 17 Զի՞նչ չար քան զաւճ կայցէ, եւ ի նմանէ՝ թերիակէ եւ ի սպանող դեղոց, որ ի նենգութենէ մարդկան կազմեցան, չեւ հասուցեալ՝ եւ անդէն բուժէ: 18 Եթե բնութեամբ չար ինչ էր աւճ, կամ Չարի իրիք

արարած, ապա չգտանէր ինչ ամենեւին ի նմա աւգտակար, եւ ոչ զգաւնանայր երբեք ի գազանութենէ ան[տ]ի իւրմէ. նա, աւանիկ տեսանեմք ի հնարագիտութենէ թովչաց զգաւնացեալ՝ իբրեւ զչուան խաղալիկ է նոցա եւ բազում անգամ բնակեալ ի տան՝ չմեղանչեն բնակչացն: 19 Եւ արդ, եթե հեթանոս իցէ, որ չար ինչ բնութեամբ կարծիցէ, յանդիմանեսցի յիւրոց արուեստակցացն յաւճապաշտացն, որ այնչափ զգաւնացուցանել զաւճս գիտեն, մինչեւ կոչել յուրութիւք ի տունս եւ կերակուրս մատուցանել, որպէս Բաբելացիքն՝ վիշապին, զոր պաշտէինն, եւ սպան զնա Աստուածոյ սիրելին նովին ընդելական կերակրովն:

20 Եւ եթե մոգ իցէ եւ Չարի արարած զգազանսն վասն գազանութեանն ասիցէ, ի հասարակաց մտաց փաշաման կրեալ՝ ըմբերանեսցի, զի եթե գազանքն Չարի արարածք իցեն, եւ երկիր՝ Բարոյ, զիս՞րդ Բար[ւ]ոյն արարած Չարին արարածոց դայեակ մտեալ՝ սնուցիչ լինիցի, որք ի նմանէ կերակրին եւ ի ծոց նորա հանգչին, զի երկու հակառակք իրերաց միմեանց ծախիչք են, որպէս խաւարի՝ լոյս, եւ ջեր՝ սառամանեաց: 21 Արդ, եթե գազանք Չարի արարածք էին, եւ երկիր՝ Բարո[յ], ծախել պարտ էր զնոսա երկրի եւ ոչ՝ սնուցանել, սպառել եւ ոչ՝ սերել: 22 Ապա եթե երկիր ե՛ւ զգազանսն սնուցանէ, ե՛ւ ոչ ապականէ, յայտ է, եթե յորմէ՛ արարչէ երկիր լեալ է, ի նմանէ եւ գազանքն արարեալ են, եւ չիք ինչ Չար բնութեամբ, քանզի չիք ինչ արարիչ [չար]՝ բնութեամբ, եւ մանաւանդ թե եւ գազանք իսկ, զոր ասեն, թե ի չարէ արարչէ եղեալ են, ցուցանեն, թե չեն ուստեք, այլ՝ յերկրէ այնու, զի յերկրէ կերակրին եւ ի նմա բնակեն եւ անդրէն ի նոյն շրջեալ՝ հողանան: 23 Նա՛, թե եւ ի Չարէ ինչ էին չարք արարեալ, ոչ ինչ ի նոցանէ աւգտակար գտանէր, այլ՝ ամենեւին իսկ վնասակար:

24 Իսկ արդ, եթե տեսանեմք, զի կիսոցն մորթքն պատասպարան մերկութեան մերոյ լինին, եւ կիսոցն ճրագուն՝ դեղ նեղի, եւ այլ ինչ՝ յանդամոցն, որպէս առեւծուն եւ արջոյ եւ այլոցն, ըստ իւրաքանչիւր մի ըստ միողէ, յայտ է, եթե ի բարուց արարչէ լեալ են՝ վասն միոյ իրիք աւգտակարին գտանելոյ ի նոսա, զի որ չար ինչ է, նորա ամենայն ինչ վնասակար է, ե՛ւ մորթ, ե՛ւ միս: 25 Այլ զնոցա որպէս զմորթն զգեհումք, եւ ոչ վնասէ, եւ զմիսն եթե սիրտ ուրուք առնոյր, եւ ուտէր, ոչ վնասէր. որպէս վարագի, որ գազանագոյնն է քան զամենայն գազանս, ուտի միսն եւ ոչ վնասէ, նոյնպէս եւ զնոցայն եթե ուտէր ոք, վնասէր:

26 Եւ յարջառ, զոր ասեն, եթե ի բարւոյ արարչէ արարեալ է, գտանի ինչ վնասակարութիւն. զյլու միս ուտել դարման է մարմնոյ, բայց եթե զարիւնն ոք ըմպիցէ, սատակի:

27 Նոյնպէս եւ ի բանջարս է՛ ինչ, որ առանձինն սատակիչ է եւ խառնեալ ընդ այլ բանջարս՝ բժշկիչ պէս պէս ցաւոց լինի: 28 Զմանրագոյնն եթե լոյկ ոք ուտիցէ, սատակիչ է եւ խառնեալ ընդ այլ արմատս՝ քնածու լինի քնահատաց: 29 Եւ զհազար եթե ի տաւթ ժամանակի ուտիցէ ոք, քանզի զովացուցիչ է, գտապս ի փորոյն փարատէ, եւ եթե ի հով ժամանակի ուտիցէ ոք, վնասէ, եւ եթե զջուրն քամեալ՝ անապակ ըմպիցէ ոք, սատակի, եւ եթե գսերմնն աղացեալ՝ ջրով ըմպիցէ, ի ցանկութենէ արկանէ: 30 Եւ կանեփուկն թուփ ինչ է, որոյ սերմն նորա դեղ է, եւ նոյն դարձեալ՝ կասեցուցիչ ցանկութեան: 31 Եւ մոլխիւնտդ, որ առանձինն ի յայտնի ինչ ժամանակի սպանող է, նովիմբ զմաղձս հնացեալս հնարին բժիշկք հատանել: 32 Եւ կաղանջանան ազգ ինչ առանձինն սպանող է եւ խառնեալ ընդ այլ դեղս՝ մաղձադեղ է, բուժիչ ի մահուանէ:

33 Արդ, յայսպիսի իրս անհարթս առ ոչ ուղիղ հայելոյ կարծեցին, եթե Չար ինչ բնութեամբ իցէ: 34 Բայց Աստուած այսպէս իմաստուն զմարդն կազմեաց, զի եւ ի դարմանիչսն մարթիցէ վա[յ]ելել, եւ որ վնասակարքն կարծիցին, եւ ան[տ]ի եւս հնարիւք աւգտակարութիւնս կարիցէ գտանել՝ առ ի յանդիմանելոյ զբարս անմտացն, թե չիք ինչ, որ բնութեամբ չար է:

[ԺԶ.]

1 Բայց թեպէտ եւ նոքա աստուածական Աւրինաց ոչ հաւատան, մեք յուղորդ պատասխանուոյ զմեր ըն[տ]անիս մի զրկեսցուք:

2 Այնչափ ինչ չար ի գազանացն բնութեամբ ոչ գոյր, մինչեւ անեալ զնորարարսն առ նորաստեղծն՝ նմա նոցա ան[ո]ւանս հրամա[յ]էր դնել: 3 Եւ եթե մաւտ ոչ գա[յ]ին, զիա՞րդ միոյ միոյ, ըստ իւրաքանչիւր ազգաց, ան[ո]ւանս յաւրինէր: 4 Ապա եթե մաւտ գա[յ]ին եւ ընդելութիւն ընդ մարդոյն ունէին, յայտ է, թե ո՛չ չարք էին եւ ո՛չ մարդոյն վնասակարք: 5 Այլ, յետ անցանելոյ մարդոյն զԱստուածոյ պատուիրանաւն տուան նմա զարհուրեցուցիչք՝ առ ի չհպարտանալոյ հողեղինին, որ ի հողոյ եղեւ եւ ի հող դառնալոց էր:

6 Եւ առաջնոյ չվնասակարութեան գազանացն մարդոյ այժմու համբոյրս եւ ընտելութիւնս վկայ[յ]են, զի ոմն զգայլոյ կորիւն[ս] սնուցանէ, եւ իբրեւ զչան կորիւնս առ ընդելութեան ընդ անձն անկանին: 7 Եւ միւսոյն գառիւծու կորիւն սնուցեալ՝ անէ ի համբոյր եւ ի քծինս, մինչեւ պատել զսնուցանելեաւն, եւ եթե այլ ոք ի նա հուպ գայցէ, չմոռացեալ զբարս գազանութեանն՝ ի վերա[յ] յարձակի, եւ նորա սաստեալ գազանին իբրեւ շան՝ ցածուցանէ յանաստ գազանութեանէն: 8 Եւ այլոյ զարջոյ թոժիւն սնուցեալ՝ կաքաւիչս ուսուցանէ եւ նմանեցու-

ցեալ բարուց մարդկան՝ զգազանաբարոյն ցածուցանէ: 9 Եւ այլոց զկապիկս անապատականս ըմբռնեալ[]՝ հտպիտս եւ ընչապտուկս եւ ամենաչար ուսուցանեն: 10 Եւ այլոց զքարբս իգակերպս կայեալ՝ թովչութեամբք յընդելուծիւն մարդկան ածեն, ջրեցուցեալ զթոյնսն սպանողս: 11 Արդ, եթե չար ինչ էին գազանքն բնութեամբ, չէր հնար վնասակարացն ընդ իւրեանց վնասակարին ընդելուծիւն ունել: 12 Եւ թե զխորշակս եւ զսառամանիս ի վնասակարութեանն ի չարէ արարչէ կարծիցեն, գիտասցեն. եթե ոչ ձիւն եւ սառամանիք պնդէին զլերինս, արմատք խոտոց ոչ պարարէին, եւ եթե ոչ տաւթ ջեռուցանէր զանդաստանս, պտուղք ոչ հասանէին:

[ԺԵ.]

1 Եւ եթե զախտս եւ զհիւանդութիւնս եւ զմահս տարածամս եւ զբնաւ զմահ իսկ ի չարէ ինչ արարչէ իմանայցեն, եթե աստուածական Աւրինաց հաւատա[]ին, անդստին յԱւրինացն առնեաք պատասխանի: 2 Բայց որովհետեւ ի չարէ արարչէ ղենն զայսպիսի անհարթութիւնս, հարցցուք եւ մեք ցնոսա. բարեացն արարիչ եւ չարեաց՝ ո՞ք քան [] զո՞ հարուստ իցէն:

3 Եթե ասիցեն, եթե բարեացն արարիչ հարուստ է, ստեն, զի եթե հարուստ ոք էր նա քան զչարեացն արարիչ, ոչ տայր նմա զվնասակարութիւնսն յիւր՝ ի բարի, արարածսն արկանել: 4 Նա՛, եւ տեղի եւս չէր պարտ տալ նմա յիւրումն վայրսն, զի եթե կարող ոք ինչ էր, նախ իւր տեղիս զատ ի նմանէ առնէր եւ ապա՝ արարածս, զի՛նչ եւ կարող էր առնել:

5 Արդ, զայն ասասցեն. կարո՞ղ էր զնա մերժել Բարին յիւրոց՝ ի բար[ւ]ոք, արարածոցն, եթե՞ չէր կարող: 6 Եթե ասիցեն, եթե կարող էր, լուիցեն. եթե կարող էր մերժել զՉարն եւ ոչ մերժեաց, ինքն է պատճառ վնասուն: 7 Եւ եթե ոչ էր կարող մերժելո[] զՉարն, գտանի, զի հարստա-

գոյն քան զնա էր Չարն, որ բռնաբար նեղէ եւ ապականէ զբար[ւ]ոք արարածս նորա: 8 Դարձեալ եւ այն եւս սուտ է, զոր ասենն, թե ի վախճանի յաղթե նմա Բարին, զի որ յառաջնումն չկարաց յաղթել, յայտ է, թե եւ ի վախճանի չկարէ յաղթել:

9 Այլ մեք զցաւոց եւ զմահ[ո]ւան բազում ինչ պատճառս ունիմք ճշմարիտ բանիւ ի մէջ բերել: 10 Նախ՝ այն իսկ, զի յորժամ մարդն զԱստուածոյ պատ[ո]ւիրանաւն անց, ապա եղեւ ընդ ցաւովք եւ ընդ մահուամբ, քանզի ցկինն ասաց, թե ցաւովք եւ Տրսմութեամբ որդիս ծնչիր՞, եւ ցայրն՝ թե աշխատութեամբ եւ Քրտամբք երեսաց քոց կերիցես զիս քո, միմչեւ լիցի քեզ դարձ անդրէն յերկիր՝ ուստի առար, զի հող էիր, եւ ի հող դարձչիր՞, որով յայտ է, զի թեպէտ եւ բնութիւն մարդոյ[]], քանզի մարմնապատ է, ընդ ցաւովք եւ ընդ մահուամբ կարծէր, այլ թե կացեալ էր ի պատ[ո]ւիրանին, պահէր զնա կենդանարարն կենդանի. որ յոչնչէն կարող եղեւ զշունչ մարդոյն առնել, եւ պահէ միշտ կենդանի եւ անմահ, նոյն եւ զմարմինն, զոր յերկրէ ստեղծ, կարող էր պահել կենդանի:

[ԺԸ.]

1 Այլ իբրեւ զայս լսեն թշնամիք ճշմարտութեանն, ազգի ազգի զինուք վառին ընդդէմ ստուգութեանն, զի կէսքն ասեն, թե «Չէր մարթ մարմնաւորի անմահ կալ», եւ այլքն ասեն. «Վասն զի ոչ տեւէր մարմինն ընդ շնչոյն յերկար ժամանակս կեալ, հարկ է անտեւականին մեռանել»: 2 Այլ զառաջինսն յանդիմանեն Եղիա եւ Ենո[վ]ք, որ ցայժմ կենդանի են, եւ զայլսն՝ հասակաց համաւրէնն յարութիւն, զի «Եթե այժմ, վասն զի անտեւական են մարմինք, յայն սակս մեռանին, ապա եւ ի

՞ Եւ. Գ. 16
 է Եւ. Գ. 19

յարուլթեան,- ըստ նոցա բանին,- չտոկան ընդ շնչոյն. եւ այսու յայտ առնեն, թե զյարուլթիւնն իսկ մարմնո[յ] խափանել կամին, ուր աստուածական Գիրք եւ արա-րածոց բնութիւնք անդադար վկա[յ]են զյարուլթենէ մեռելոց:

3 Այլ ասեն. «Թե ոչ մահկանացու իսկ էր մարմին, զի ա՞րդ էր, զի վասն դոյզն յանցմանն անկանէր ընդ մահուամբ, եւ ոչ արգահատէր նմա արարիչն եւ ներէր յանցմանն»:

4 Զի ներող եւ արգահատող է արա-րիչն, այն ամենեցուն իսկ յայտնի է եւ ա-ռաւել՝ յայնմանէ, զի յետ յանցանելո[յ] մարդոյն իջեալ անմարմինն՝ իբրեւ զմարմ-նաւոր ոք ոտնաձայն առնէր ի Դրախտին եւ մեղմով եւ աղերսալից բարբառով ասէր ցյանցուցեալն՝ Ո՞ւր ես՞, Ադամ, զի, մի՞ տագնապեցուցեալ՝ չտայցէ ուշաբերել նմա ապաշխարութեան: 5 Եւ զի չեկն ի զղջումն յանցուցեալն, յիրաւի կրեաց պա-տիժ զմահ. դարձեալ եւ այլ ազգ եւս՝ զի իւրո[յ] արարչին յառաջագոյն պատ[ո]ւի-րեալ էր նմա, թե Յորո՛ւմ աւուր ուտես ի պտղոյ] ծառոյն, ի նմին մեռանիս՞, եւ թշնամին յետո[յ] եկեալ՝ ասէր. Ոչ մեռա-նիս, այլ իբրեւ զաստուածս լինիս: 6 Եւ արդ, ո՞յր բանից պարտ էր հաստատուն լինել. ա՞յնր, որ յառաջագոյն զգուշացոյց, եւ կամէր ունկնդրութեամբ պատուիրանին զնա անմահ պահել, եթե միւսո՞յն, որ պատրանաւք ջանայր զնա մահկանացու առնել: 7 Եւ եթե չէր արարչին յետ []ան-ցանելո[յ] զպատ[ո]ւիրանաւն զմարդն մահկանացու արարեալ, հանապազ մարդն Սատանա[յ]ի հաւատայր եւ ոչ՝ Աստուա-ծոյ, զի սա ասաց՝ «Թե ուտես ի պտղոյն, մեռանիս», եւ նա ասէր՝ «Թե ուտես, չմե-ռանիս, այլ իբրեւ զաստուածս լինիս»:

« Եւ. Գ. 9
է Եւ. Բ. 17
զ Եւ. Գ. 4

8 Արդ, եղ մահ ի վերայ բնութեան մարդ-կան արարիչ բնութեանն, զի իւր բանն հաստատեցի, եւ չար խրատտուն պար-տաւորեալ գտանիցի. զի թեպէտ առ ժա-մանակ մի վասն այսց երկուց պատճառա-նաց ընդ մահուամբ անկանիցի, այլ ըստ իւրում կարողութեան յարուցէ միւս ան-գամ եւ յանսպառ յաւիտեանս կենդանի եւ անմահ պահեցէ: 9 Եւ որ զհրեշտակս եւ զհոգիս մարդկան յոչ ընչէ արարեալ՝ կեն-դանիս եւ անմահս պահէ, նոյն եւ զմար-մինս կարող էր կենդանի պահել, թե չէր առաջնո[յ] մարդոյն զԱստուածոյ հրա-մանն զըն[կ]եցեալ:

[ԺԹ.]

1 Այլ զի Աստուած մահուան չէ պատ-ճառ, վկայեցէ ամենարուեստ իմաս-տունն, որ ասէ, եթե Աստուած զմահ ոչ ա-րար եւ ոչ խնդալ ընդ կորուստ մարդ-կանք, այլ Հաստատեաց Աստուած զմարդն յանեղծութիւն պատկերի իւրոյ] մշտնջե-նաւորութեանն, եւ Նախանձու բանսար-կուին եմուտ մահ յաշխարհ: 2 Եւ դար-ձեալ. ինքն իսկ ասէ. Ես ասացի, թե աս-տուածք իցէք եւ որդիք Բարձրելոյ] ամենե-փնէ, այս ինքն է, եթե ես զձեզ անմահս ա-րարի, եթե կացեալ էիք յիմում հրամանին, բայց որովհետեւ ոչ կացէք յիմում պատ[ո]ւիրանին, Դուք իբրեւ զմարդիկ մե-ռանիք, իբրեւ զմի յիշխանաց անկանիք. ես ո՛չ ընդ ձեր մահ կամէի, եւ ո՛չ ընդ իշխա-նին՝ վատ խրատտուին, անկանել:

3 Այլ «Բնաւ իսկ,- ասեն,- ընդէ՞ր ե-մոյժ զնոսս ի կուրս ընդ միմեանս»: 4 Այ-սու զանձնիշխանութիւնն Սատանա[յ]ի եւ զմարդոյն կամին խափանել, զի Աստուած,

Դ Իմաստ. Ը 13
Ե Իմաստ. Բ 23
Զ Իմաստ. Բ 24
է Սաղմ. 2Ը 6, Յով. Ժ. 34
Ը Սաղմ. 2Ը 7

որ աննախանձն, արար զնոսա անձնիշխանս, ոչ կամէր, թե որպէս զանասունս ի հարկէ վարիցին, եւ ապա անձնիշխանութիւնն այնուհետեւ չլինէր անձնիշխանութիւն: 5 Բայց Աստուած թեպէտ եւ ունէր իշխանութիւն զիւրո[յ] արարածոյն զհանդէսն տեսանել, այլ ոչ ինքն զբոցն զնոսա անկանել ընդ միմեանս: 6 Իբրեւ տես զՍատանայ նախանձու բորբոքեալ, թոյլ ետ անձնիշխանին ընդ անձնիշխանին ոգորել, քանզի գիտէր, եթե ոչ ինչ տկարագոյն է սորա անձնիշխանութիւնս քան զնորայն, եւ ոչ նա՝ կանխագէտ, եւ սա՝ ոչ կանխագէտ, եւ ոչ նա՝ բռնաւոր, եւ սա՝ տկար ոք: 7 Եւ զի չէր բռնաւոր ոք, յայնմանէ յայտ է, զի ցկինն պատրանաւք, մատուցեալ, հարցանէր, եւ ոչ բռնութեամբ զարհուրեցուցանէր: 8 Եւ զի չէր կանխագէտ, ասէ. Զի՞նչ է այդ, զոր ասաց Աստուած՞, զի ի նմանէն ուսցի զհանգամանն:

9 Դարձեալ. եւ ի Յո[վ]բայ փորձանացն է ուսանել, թե չէ Սատանայ բռնաւոր եւ կանխագէտ, զի եթե բռնաւոր ոք ինչ էր նա, ոչ, յԱստուածոյ խնդրեալ՝ առնոյր աւճան եւ ապա միւշեր ի փորձութիւնսն. եւ եթե կանխագէտ էր, ոչ մատչէր փորձել, քանզի գիտէր, թե յորժամ ոչ կարէ յաղթել, յամալթ լինելոց է: 10 Նա՛, եւ ի տէրունական իսկ ի փորձանացն իմանալի է, թե չէ կանխագէտ այնու, զի ասէր ինքն իսկ՝ Թե Որդի եւ Աստուածոյ՞, եւ յայտ առնէր. թեպէտ եւ լուեալ էր ի մարգարէիցն, թե գալոց է Որդին Աստուածոյ, այլ զժամանակ գալ[]ստեանն ոչ գիտէր: 11 Եթե գիտացեալ էր, եթե արդարեւ Որդին Աստուածոյ էր այն, որ նմա իբրեւ զմարդ երեւէր, ոչ փորձէր զնա եւ ոչ յամալթ լինէր, որ թեպէտ եւ յաստուածեղէն զաւրութեանցն իմացաւ զգալուստ Որդ-

[ւ]ոյն Աստուածոյ եւ տագնապեալ՝ աղաղակէր, թե Գիտեմ՞ զբեզ, ո՛վ ես. Սուրբ[դ] Աստուածոյ՞:

12 Դարձեալ. թե կանխագէտ ինչ ոք էր նա, ոչ գրգռէր զՀրեայսն՝ զնա ի խաչ հանել, թե գիտացեալ էր, թե մահն Քրիստոսի ըն[կ]ենոյր զնա յիշխանութենէ ըստ այնմ, զոր ասաց Տէրն, թե Իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի արտաքս, եւ դարձեալ՝ թե Տեսաւէի զՍատանայ[] իբրեւ զփայլակն անկեալ յերկնից՞, եւ դարձեալ՝ թե Իշխան աշխարհիս այսորիկ արդէն իսկ դատապարտեալ է՞ զի ցուցցէ, թե ե՛ւ յիշխանութենէ ան[կ]աւ, որ աստուածանալն կամեցաւէ, ե՛ւ յաւիտենական դատաստանացն պարտական եղեւ:

[Ի.]

1 Արդ, որովհետեւ վասն մահու եւ ցաւոց ի վերա[յ] մարդոյն զնելո[յ] ցուցաւ յաստուածատուր Գրոց, թե վասն անցանելո[յ] զպատ[ո]ւրանաւն Աստուածոյ մտին յաշխարհ, ասացուք եւ զայլ եւս զպատճառսն, վասն որո[յ] տարածամ մահք լինին:

2 Բազում անգամ թերեւս չարիք ինչ մեծամեծք առաջի մարդոյն կայցեն, կա՛մ՝ նեղութիւնք, որոց ոչ կարէ ժուժալ, կա՛մ՝ փորձութիւնք, որոց ոչ լիցի բաւական տանել. Աստուած՝ կանխագէտ եւ մարդասէր, զթացեալ յիւր արարածն՝ տարածամ մահուամբ զերծուցանէ զմարդն յայնպիսի չարեացն ըստ այնմ, զոր Գիրն ասէ, թե «Յառաջ քան զչարն ժողովեսցի արդարն»¹: 3 Դարձեալ եւ այլ ազգ եւս. առնին մահք տարածամք, զի յամենայն տիս եւ ի բոլոր ժամանակս պատրաստական

^ա Ին. Գ. 1
^է Մատթ. Գ. 3

^Գ Մատթ. Ե 24. Գ. 4. Գ. 34
^Կ Յովն. Ժ. Բ. 31
^է Գ. 4. Ժ. 18
^ը Յովն. Ժ. 9. 11
^է Թ. 1. Գ. Կ. Կ. 16
¹ Վկայք արեւելից 143

մարդոյն գտեալ՝ չզեղծիցի յաստուածպաշտութենէ:

4 Բայց թեպէտ եւ յանիծից մտին ցաւք յաշխարհ, սակայն ե՛ն եւ այլ ինչ պատճառք: 5 Երբեմն՝ վասն մեղաց, ըստ այնմ, զոր ցանդամալոյծն ասաց Տէր, թե Ողջացար, այսուհետեւ մի՛ մեղանչեր^ա, եւ հա[յ]եցեալ ընդ հաւատս մատուցանելեացն՝ ասէ ցմիւս անդամալոյծն, թե Թողեալ լիցիմ քեզ մեղք քո^բ, զի յայտ արասցէ, թե ե՛ն ինչ ցաւք, որ վասն մեղաց լինին, եւ ե՛ն ինչ ցաւք, որ՝ ոչ վասն մեղաց, որպէս յորժամ աշակերտքն հարցին զՏէր վասն կուրին, թե Ո՞յր մեղ է վասն կուրութեանդ՝ դորա^գ, թե ծնաւդաց իւրոց^դ, եւ նա ասէ, թե Ո՛չ դորա՛ եւ ո՛չ՝ ծնաւդաց իւրոց, այլ՝ վասն փառացն Աստուածոյ, զի փառաւորեսցի ի դմա Աստուած^ե:

6 Եւ ե՛ն ցաւք, որ ո՛չ վասն մեղաց են եւ ո՛չ՝ յԱստուածոյ ինչ ի փառս, այլ՝ ի չկռեւելո[յ] խառնուածոցն, քանզի մարդո[յ] մարմին ի չորից տարերց խառնեալ է՝ ի խոնաւութենէ, ի ցամաքութենէ, ի ցրտութենէ եւ ի ջերմութենէ, եւ թե մի ինչ պակասիցէ կամ յորովիցէ, ցաւս գործէ ի մարմնին. եւ այն կա՛մ ի շատ ուտելո[յ] եւ յըմպելո[յ] լինի, կա՛մ ի սաստիկ պահոց, կա՛մ յանխտիր կերակրոց, կա՛մ յոյժ ի տալթի [յ]աշխատելո[յ], կա՛մ կարի ի ցրտո[յ] լլկելո[յ], կա՛մ յայլոց ինչ այնպիսեաց հակառակորդաց, որովք անհարթութիւնք ի մարմինս գործիցին:

7 Եւ պատերազմաց սկի[զ]բն յազահութենէ մարդկան եղեւ, ուստի յա[փ]շտակութիւնք սահմանաց են եւ գեւղից եւ ատար քաղաքաց, ընչից եւ ստացուածոց: 8 Նոյնպէս եւ պոռնկութիւնք՝ առ ի չկալո[յ] ի սահմանս ամուսնութեանն, զոր

Աստուած ի բնէ կարգեաց՝ թե Թողե այր զհայր եւ զմայր իւր եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյն^ե. «զհետ կնոջ իւրո[յ]» ասէ եւ ոչ՝ զհետ կանաց. զի եւ զառաջին սահման բնութեանն հաստատեսցէ, ասաց Տէր ի սուրբ Աւետարանս, թե Զոր Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեսցէ^ա:

9 Եւ դիւահարութիւնք վասն հպարտութեան մարդկան լինին, քանզի եթե որդի ուրուք մտավարժ իցէ, գան ոչ ըմպիցէ, եւ որ չէն մտավարժ, բազում անգամ զծառա[յ] այր առաջի նորա գան հարկանեն, զի ի նա հա[յ]եցեալ՝ ընդ այն լինիցի մտավարժ. ապա եթե եւ այնու եւս ոչ խրատիցի, ի նա իսկ մատուցանեն զտանջանսն:

[ԻԱ.]

1 Այս ասացաւ վասն հարցանելո[յ] ոմանց. «Թե մեղաւորք վասն մեղաց տանջիցին ի դիւացն, տղա[յ]ոցն անմեղացն ընդէ՞ր տիրիցեն դեւքն»:

2 Զամենայն մարդիկ յորդեգրութիւն կոչէ Աստուած, որպէս՝ զԻսրայել. ասէր՝ Որդի անդրանիկ իմ՝ Իսրայելէ, եւ դարձեալ՝ թե Որդիս ծնալ[ի] եւ սնուցի^ե: 3 Թե առաքինեալքն ընդ Աւրինաւք «որդիք» կոչէին, որչափ եւս առաւել՝ զորոց ասէ, թե ետ անցա իշխանութիւն որդիս Աստուածոյ լինել^ե: 4 Արդ, քանզի իբրեւ յորդիս մատուցեալ է ի մեզ Աստուած խրատել^ա, երբեմն հարկանէ առաջի մեր իբրեւ զծառա[յ] զանասուն մեր եւ երբեմն՝ զանդս եւ զայգիս, զի ընդ այն հա[յ]եցեալ՝ մտցուք ընդ լծով Աստուածոյ երկիւղին: 5 Ապա եթե այնու եւս ոչ խրատի-

^ա Յ՝ՎՃ. Ե 14
^բ Մ՝ԳԸ. Ե 20. Թ 3
^գ Յ՝ՎՃ. Թ 2
^դ Յ՝ՎՃ. Թ 3. Յ՝ՎՃ. ԺԼ 4

^ե Ծ՝Ն. Բ 24. Մ՝ԳԸ. ԺԹ 5
^ա Մ՝ԳԸ. ԺԹ 6. Մ՝ԳԿ. Ժ 9
^բ Եւ. Գ 22
^գ Ե՝. Լ 2
^դ Յ՝ՎՃ. Լ 12
^ե Ե՞Գ. ԺԲ 7

ցիմք, ի մեզ իսկ մատուցանէ գտանջանսն կա՛մ ցաւովք, կա՛մ խեղուլթեամբք, կա՛մ դիւաւք:

6 Տանջին եւ անմեղք, զի ի մտի կալցին այլքն զբան Իմաստնոյն, որ ասէ. Թե արդարն հազիւ կեցցէ, ամբարիշտն եւ մեղաւորն ո՞ր զգտանիցին: 7 Եւ այն յայն սակա լինի, զի մի արդարն յարդարութենէն ծուլացի, եւ մի մեղաւորն միշտ ի մեղսն կայցէ: 8 Եւ չէ այնմ պարտական Աստուած, այլ չարիք մարդկան ածեն զԱստուած այնպիսի տանջանաւք խրատել զմարդիկ, զի որպէս այլոց հաւատովք հաստատեաց զանդամալոյծն, եւ շնորհեաց նմա թողութիւն մեղաց, նոյնպէս եւ այլոց սակաւուց տանջանաւք ածէ յերկիւզ եւ ի խրատ զբազումս, յորժամ դիպիցէ՝ անմեղաւք, եւ յորժամ դիպիցէ՝ մեղաւորաւք, որպէս ինքն միայն ճարտար գիտէ:

9 Եւ ոչ եթե ի դատապարտութիւն ինչ ոգւոց լինի[ն] մարդոյն տանջանքն դիւաց, այլ՝ առաւել եւս յարգահատութիւն, մանաւանդ թե անմեղ ոք իցէ եւ վասն այլոց երկիւզ ի միտս արկանելո[յ] յայնպիսի տանջանս մատնիցի, զոր իբրեւ զմտրակ կախեալ ի մեծի տանս ցուցանէ Աստուածոյ տեսչութիւնն, զի հա[յ]եցեալ ընդ այն բազմաց՝ ամփոփեսցին եւ մտցեն երկիւզիւ ընդ Աստուածոյ հնազանդութեամբ:

10 Եւ է՛ երբեք, զի վասն մեղաց իսկ լինին այսպիսի տանջանք, եւ է՛ երբեք, զի պատահարք պատահեն, եւ ապաւինեալք ի սրբոց մարտիրոսացն նշխարս՝ փրկին մարդիկ յայնպիսի տանջանաց, որով զաւրութիւնն Աստուածոյ, որ ի սուրբսն է, երեւի, եւ ինքեանք յոգիս ինչ ոչ վնասին:

11 Այլ զի դեւ զգեւ ոչ հանէ, զայն Տէրն իսկ յայտ արար, Թե Սատանա[յ], աւետ,- զՍատանա[յ] հանէ, ապա ուրեմն քա-

ժանեալ է յանձնէ իւրմէ՞, այլ ես,- ասէ,- Հոգ[ւ]ով Աստուածոյ հանեմ գրեւս: 12 Եւ ընդէ՞ր ինքն, որ Աստուածն էր, ասէր՝ Հոգ[ւ]ով Աստուածոյ հանեմ գրեւս, այլ՝ զի մարդկան ուսուցէ. եթե ոչ արժանաւորք շնորհաց Հոգ[ւ]ոյն սրբո[յ] լինիցին, ոչ կարեն հանել զգեւս, որպէս առաքեալքն եթե ոչ նախ առին իշխանութիւն ի Տեառնէ, ոչ կարէին հանել զգեւս: 13 Նա՛, եւ նմին իսկ, որ ի տանջանսն իցէ, ետ իշխանութիւն հանելո[յ] զգեւն: 14 Ասէ՛ Այդ ազգ ոչ ելանէ իւրի, եթե ոչ՝ պահ[ու]մ եւ աղաւթիւն ոչ եթե մի ինչ ազգ իցէ դիւաց, որ պահ[ու]մք եւ աղաւթիւք ելանիցէ, եւ այլքն՝ ոչ, այլ ամենայն իսկ զուեղքն դիւաց ի պահոց եւ յաղաւթից փախտական գնան:

[ԻԲ.]

1 Այլ «Կախարդք,- ասեն,- յղեն դեւս եւ հանեն զգեւս»:

2 Զի կախարդք զգեւս ոչ կարեն հանել, բաւական է մեզ հաւանեցուցանելո[յ] բանն Տեառն, զոր ասաց, թե Սատանա[յ] զՍատանա[յ] ոչ հանէ, զի կախարդն եթե հանէր, ապաքէն դիւաւք հանէր, եւ զգիւէ ասաց Քրիստոս, թե դեւ զգեւ ոչ հանէ:

3 Ապա յայտ է, թե այլ ազգ իմն իրք լինին, որպէս ի նոցանէն իսկ ելեալ է բանն եւ ոչ՝ ի մէնջ. ասեն՝ «Հանել չկարեն, բայց անդէն կապել մարթեն, զի հանապաղ խեղդ ընդ անձն Հոգ[ւ]ոց մարդոյն դեւն լինիցի»: 4 Եւ այն յԱստուածոյ արժանիցն յիրաւի լինի, զի եթող ոմն[] զԱստուած, զսուրբս, զպահս, զաղաւթս, եւ ի կախարդն, որ եւ անձին չկարէ աւգնել, ապաւինեցաւ, զի ո՞ ոք ի կախարդաց ան-

ճ Մատթ. ԺԲ 26

Դ Մատթ. ԺԲ 28

Ե Մատթ. ԺԲ 28

Զ Մատթ. ԺԷ 20, Մատթ. Թ 28

Է Մատթ. ԺԲ 26

ցաւ[] եւ անդեւ եւ անմահ իցէ: 5 Նա՛, եւ տեսանեմք իսկ զկախարդան միշտ ծնկեալս ի դիւացն, եւ մանաւանդ՝ մոլիքն, զի նախ ինքեանք դիւահարին եւ ապա այլոց իմն իմն խոստանան տալ, որ չիցէ ի ձեռս ո՛չ նոցա եւ ո՛չ դիւացն, որոց բանիւ խաւսին տալ ինչ ումեք, բայց միայն՝ Աստուածոյ, որ արարիչն եւ տուիչն է:

6 Եւ արդ, քան անդէն կապել կախարդացն զդեւն, որպէս ասենն, եւ ինեղդ ընդ անձն միշտ ոգ[ւ]ոց մարդոյն՝ առնել, լաւ էր, թե յայտնէր, եւ սրբովք աղաչեցեալ զԱստուած՝ աւգնականութիւն գտանէր բուժելո[յ] ի չարէն: 7 Այլ մեք ասեմք, թե մտանելո[յ] ի մարդ չունի իշխանութիւն առանց Աստուածոյ թուլացուցանելո[յ]. եւ այնր պէս պէս պատճառք են, որպէս ինքն միայն գիտէ. եւ յայտ ան[տ]ի է, զի յորժամ ի խոզից երամակն մտաբերեցին մտանել, ոչ կարացին մտանել, եթե ոչ նախ ի Քրիստոսէ առին հրաման: 8 Եւ յորժամ զՅովբն կամեցաւ փորձել Սատանա[յ], ոչ իշխեաց ժտել, եթե ոչ նախ յԱստուածոյ առ հրաման փորձելոյ: 9 Եւ զՅուդա[յ]է ասէ, թե Ընդ պատառոյն եմուտ Սատանա[յ]՞, զի թե չէր Քրիստոսի թուլա[ցու]ցեալ ե՛ւ Սատանա[յ]ի, որ գրգռէրն, ե՛ւ Յուդա[յ]ի, որ վասն կծծութեան եկն յայն, ոչ իշխէր մտանել ի նա, այլ վասն յանդիմանելո[յ] զանձնիշխանութիւն երկ[ո]ցուն թուլացոյց ըստ կամաց երկ[ո]ցունց:

10 Նա՛, եւ մինչ դեռ տանջին իսկ ոմանք ի դիւէ, եթե ոչ յԱստուածոյ տեսչութիւն լինէր նմա, չարաչար մահուամբ սատակէր: 11 Նա՛, եւ զպաշտաւնեայսն իսկ իւրեանց, եթե ոչ Աստուածոյ սաստ պահէր, ազգի ազգի խեղութեամբք խեղէին, եւ անհնարին մահուամբք սպանանէին: 12 Բայց վասն զի ոչ են ձեռնհաս,

ոչ իշխեն յայնպիսի իրս մտաբերել: 13 Եւ այս յայտ անտի է, զի թեպէտ եւ կանխաւ գիտէ Աստուած, թե ոմն կռապարիշտ լինելոց է, ոմն՝ կախարդ, եւ ոմն՝ սպանող, ոչ արգելու զնկար[ե]լ սաղմ[]իցն նոցա եւ զփչումն հոգ[ւ]ոցն նոցա, զի նորա բարերարութիւնն երեւեսցի, եւ նոքա յիւրաքանչիւր անձնիշխանութեանն պարտաւորեսցին: 14 Եւ յայտ է, թե որպէս առնելոյն ինքն տէր է, նոյնպէս եւ ի դարմանսն վայեղեցուցանելո[յ] եւ ի լլկանաց Չարին ապրեցուցանելո[յ], զի ոյր իւր ինչ ոք է, յիւրն զընդա[յ] եւ խնա[յ]է, եւ որոյ չէ իւր, նա զաւտարին աւցտէ եւ ցրէ, որպէս ասէ յԱւետարանին, թե Գայլ ոչ վասն այլ իրի՞ գալի, այլ՝ զի յափշտակեսցէ եւ ցրուեսցէ:՞:

15 Այլ ճշմարտից հաւատացելոց ո՛չ Սատանա[յ] փորձութեամբքն կարէ ստաննել, եւ ո՛չ կախարդք՝ դիւաւք, որպէս ինքն՝ Տէրն, ասաց ցիւր աշակերտսն, եթե Ահա ետու ձեզ իշխանութիւն կոխել զաւս եւ զկարիսն եւ զամենայն զարութիւն թշնամուլոյն՞, եւ դարձեալ՝ թե Նշանք հաւատացելոց այս են. գղեւս հանիցեն եւ աւս ի ձեռն առնուլոց[ու]ն եւ գղեղ մահու ըմպ[ի]ցեն, եւ ոչ մեղանչիցէ:՞:

16 Եւ միանգամայն իսկ ասացեալ թե անմեղի ումեք ո՛չ դեւք մեղանչել կարեն, եւ ո՛չ գազանք սպանանել յաւժարեն, որպէս ո՛չ Դանիէլի գազանքն վնասեցին, եւ ո՛չ երից մանկանցն՝ հուր հնոցին, որպէս առաջնո[յ] մարդոյն, մինչ չեւ յանցուցեալ էր, հնազանդ էին եւ ոչ՝ մեղանչականք, եւ որպէս առ առաքելովքն վատթարեալ էր Սատանա[յ], մինչեւ կախարդացն յահէ նշանացն, զոր առնէին, բերել զգիրս կախարդանացն զծանրագինս եւ այրել առաջի առաքելոցն, եւ դիւացն աղաղակել, թե

՞ Յ՝ՎԸ. Ժ. 9. 27

՞ Յ՝ՎԸ. Ժ. 12
 ՞ Ղ՝Վ. Ժ. 19
 ՞ Մ՝Ե. Ժ. 9. 17

Դո՛ւք եմ ծառայք Աստուածոյ բարձրելոյ՞, որոց նշանաց նշխարք եւ այժմ ի սուրբ եպիսկոպոսս եւ ի ճշմարիտ վանականս երեւին. եւ զայնր զփորձ ոչ միայն քրիստոնեայք, այլ եւ հեթանոսք եւ մոգք զիտեն:

[Ի Գ.]

1 Բայց եւ զայն եւս պարտիմք զիտել, թե ե՛լ հրեշտակք, ե՛լ դեւք, ե՛լ ոգիք մարդկան անմարմինք են, զի զհրեշտակաց ասէ. Արար զիւրեշտակս իւր հոգիս եւ զպաշտաւնեայս իւր՝ բոց հրոյն¹:

2 «Հոգիս» կոչէ զնոսա վասն արագութեանն, որպէս զի ասիցէ, թե քան զհողմս թեթեւք են, քանզի ոգ[ւ]ոյ եւ հողմոյ անուն երբեացերէն եւ յունարէն եւ ասորերէն նոյն է: 3 Նա՛, թե եւ հայերէն, ոք մանր միտ զնիցէ, նոյնպէս գտանի. յորժամ տագնապեալ ոք յումեքէ իցէ, ասէ՝ «Չետ ոգի կլանել», «Չետ ոգի առնուլ», եւ այնու զաւգոյս, զոր միշտ ծծեմք, յայտ առնէ:

4 Եւ «բոցեղէնս» կոչէ զնոսա վասն սաստկութեանն, որպէս այլուր ասէ՝ Հգաւրբ եմ գաւրութեամբ՝ առնել զկամս նորա²: 5 Այլ ոչ եթե ի բնութենէ հողմո[յ] եւ հրո[յ] են, զի եթե ի բնութենէ հողմո[յ] եւ հրո[յ] էին, ապա եւ նոքա յիրաւի «մարմնաւորք» կոչէին եւ ոչ՝ «անմարմինք», քանզի որ մարմնաւոր է, ի չորից հիւթից յաւդեալ է, որպէս մարմինք մարդկան եւ բնաւ անասնոց, եւ որ ինչ անմարմին է, նա պարզ բնութիւն է, որպէս հրեշտակաց եւ դիւաց եւ ոգ[ւ]ոց մարդկան:

6 Եւ արդ, ո՞ւր իշխիցեն շշնջել, որք ասեն, եթե հրեշտակք ընդ կանայս ամուսնացան, զի նոքա «հրեղէնք» կոչին, եւ մարդիկ՝ «խոտեղէնք», որպէս մարգարէն

ասէ, թե Ամենայն մարմին խոտ է՞. ուստի յայտ իսկ է, թե ի հրո[յ] խոտո[յ] ոչ ամուսնութիւն լինի, այլ՝ ծախուամն:

7 Եւ երեքեան ջոկքս այսոքիկ, քանզի համաբնեայք են, նմանագոյնս եւ նովին իսկ ան[ո]ւամբ անուանին:

8 Ասի հրեշտակ «ոգի», այլ՝ «ոգի հարկաւոր», որ է՝ հնազանդ եւ կամակատար:

9 Ասի եւ դեւ «ոգի», այլ՝ «ոգի չար» վասն անհնազանդութեանն եւ ապստամբութեանն, զոր թեպէտ եւ ի մեր լեզու «այս չար» ասեմք, որպէս ի խտրանաց հարցն մերոց առաջնոց ըստ սովորութեան ի մեզ կարգելո[յ], այլ զիտեմք, եթե «այս» «հողմ» է, եւ «հողմ»ն՝ «ոգի», ըստ յառաջագոյնն ասացելո[յ], քանզի յորժամ մեք ասեմք, թե «Սիք շնչէ», ստորնեայք ասեն՝ «Այս շնչէ»: 10 Եւ վասն տարածութեանն միայն եւ արագութեան կոչին հրեշտակք եւ դեւք եւ ոգիք մարդկան «ոգեղէնք», որ է «հողմեղէնք»: 11 Որպէս վասն սաստկութեանն «բոցեղէն» կոչին հրեշտակք, նոյնպէս եւ վասն արագութեանն եւ տարածութեան՝ «հոգեղէնք», որ է «հողմեղէնք», բայց բնութիւն նոցա ի վեր է քան զհողմ եւ քան զհուր եւ սուրբ եւ արագ՝ քան զմիտս: 12 Եւ չեն ինչ զարմանք, թե նոքա մերոց դրացեաց արարածոց ան[ո]ւամբքս ան[ո]ւանին, ուր եւ նոցա արարիչն ոչ գարշի այնպիսի ան[ո]ւանս զինքեամբ առնուլ վասն իրիք իրիք տեսչութեանց:

13 Կոչի Աստուած «հոգի», այլ կայ ըն[տ]րութիւն ի միջի. ասէ՝ Աստուած հոգի կենդանի է՞, որ է՝ կենարար: 14 Կոչի եւ «հուր» ըստ այնմ, թե Աստուած քա հուր ծախիչ է՞: 15 Եւ արդ, տեսցուք, թե

¹ Գործ. Ժ. Գ. 17
² Սաղմ. Ճ. Գ. 4. Եբբ. Է. 7
³ Սաղմ. Ճ. Բ. 20

⁴ Ե. Խ. Խ. 6
⁵ Յաղ. Գ. 24
⁶ Բ. Օր. Գ. 24

«Տո՛ւր» միայն «ծախիչ» իցէ Աստուած: 16 Նա՛, աւանիկ նորին Հոգ[ւ]ո[յ] միւսով մարգարէիւ յայտ արարեալ՝ թե «լոյս» է, ըստ այնմ, թե Տէր՝ լոյս իմ եւ կեանք իմ, եւ յու՛մ^Գ երկեայց^Գ: 17 Եթե «հուր ծախիչ» եւեթ էր, զիա՞րդ կոչէր «լոյս կենարար»․ ո՞չ ապաքէն յայտ է, թե ուր սաստկութիւնն պիտո[յ] է, անդ «հուր» կոչի, եւ ուր քաղցրութիւն՝ անդ՝ «լոյս կենարար», այս ինքն՝ ի վեր է քան զհուր եւ քան զլոյս: 18 Եւ այլ ինչ բազում ան[ո]ւանս առնու զինքեամբ վասն պէս պէս դարմանից:

19 Եւ յորժամ երեւել սրբոց իւրոց կամէր, ոչ այլով իւրիք կերպարանաւք, այլ միայն մարդո[յ] կերպարանաւք, զոր ըստ իւրում պատկերին արար, յայտնէր: 20 Եւ այն ոչ վայրապար ինչ լինէր, այլ զի գառաւել սէրն իւր, զոր ընդ մարդկան ունէր, ցուցանիցէ եւ դարձեալ, զի յառաջագոյն կրթեսցէ զմարդիկ՝ ածել ի գիտութիւն, զի, յորժամ զՈրդին իւր իբրեւ զմարդ յաշխարհ առաքեսցէ, մի աւտարոտի ինչ զիրսն համարեսցին, մանաւանդ զի գիտիցեն, թե ինքն իսկ այն[ու] կերպարանաւք յայտնէր, որպէս իջեալ ի Դրախտն առ Ադամ՝ ոտնաձայն իբրեւ զմարդ առնէր: 21 Եւ եկեալ Որդ[ւ]ոյ առ Աբրահամ երկուք հրեշտակաւք՝ արժանի առնէր ճաշ ի վրանի նորա ուտելո[յ]: 22 Եւ ի խաւսս մատուցեալ ի լերինն ընդ Աբրահամո՛ւ՝ գերկուս պատանիս իւր՝ զհրեշտակս մարդկակերպեալս՝ ի Սողոմ առ գեղեցիկ ասպնջականն՝ առ Ղ[ոյ]տ, արձակէր: 23 Եւ հրացուցեալ եւ չայլայլեալ զհրեշտակն ի մորեն[ւ]ոջն, ի մարդկեղէն բարբառ ածեալ՝ տայր ընդ նախընծա[յ]ացելո[յ] առնն Աստուածոյ՝ ընդ Մովսեսի, խաւսել: 24 Եւ այրակերպեալ զգաւրավարն իւր՝ զՄիքայ[յ]էլ, զաւրազլիսին իւրում՝ Յեսու[ւ]ա[յ], ի դաշտին ցուցանէր: 25 Եւ առա-

քեալ հրեշտակ ի տուն Ման[ոյ]էի խաւսել ընդ նմա, մարդկաւրէն ընծա[յ]եցուցանէր: 26 Եւ երբեք երբեք զրեթե մարդացեալ իսկ՝ բերան ի բերան, ձեռն ի ձեռն ընդ բարեկամին իւրում՝ ընդ Մովսեսի, խաւսէր: 27 Եւ առնն թագաւորի ըստ սրտի իւրում գտելո[յ], թախծելո[յ] ի հար[ո]ւածոցն, հրեշտակ ի կերպարանս մարդո[յ], սուսեր ի ձեռն, ցուցանէր: 28 Եւ Եզեկիէլի հրատեսիլ եւ բոցալեզու ի կառս, ազգի ազգի կերպարանաւք յաւրեալ, ե՛ւ կառավար մարդկակերպարան երեւեցուցանէր, ե՛ւ քերորէս ազգի ազգի գազանաւք յաւրեալ ե՛ւ ձեռն ձգեալ, իբրեւ զմարդո[յ], քրորէի, ի միջո[յ] քրորէից ցուցանէր: 29 Եւ իւր իսկ երբեմն իբրեւ զհինաւրեա[յ], երբեմն իբրեւ զմատաղաւրեա[յ], վասն այլ եւ այլ տեսչութեանց կերպարանեալ՝ ցանկալ[ւ]ո[յ] առնն երեւէր: 30 Եւ այնպէս իւր եւ իւրոց ծառա[յ]իցն նոյնգունակ երեւելով զառաւել սիրոյն, զոր ընդ մարդոյն ունէր, յայտ առնէր: 31 Այս ամենայն ասացաւ, զի ցուցի, թե որ ինչ երեւի, մարմնաւոր [է], եւ որ ինչ ոչ երեւի՝ անմարմին:

32 Եւ ի մարմնաւորացն ե՛ն, որ թանձրամարմինք են, եւ ե՛ն, որ՝ անաւսրամարմինք, որպէս Առաքեալ ասէ, թե այլ մարմինք երկնաւոր[]աց են, եւ այլ մարմինք՝ երկրաւորաց^Գ։ Երկրաւորաց՝ մարդկան եւ անասնոց, թռչնոց եւ սողնոց, եւ երկնաւորաց՝ արեգական եւ լուսնո[յ] եւ աստեղաց. եւ զի զնոցանէ ասէ եւ ոչ՝ զհրեշտակ[]աց, անդէն զնովիմբ ածեալ՝ ասէ, թե Այլ փառք արեգակացն են, եւ այլ փառք՝ լուսնի^Գ։

33 Եւ միանգամայն իսկ ասացեալ՝ թե որ ինչ ի զգայնոցս շաւշափի կամ զննի կամ ազգի, այն մարմնաւոր է, եւ որ զգայնոց ոչ ա[յ]դի՝ անմարմին: 34 Նուրբ

Գ Սաղմ. Ի. 9, 1

Գ Ե Կ. Գ. Ժ. Ե 39-40
Գ Ե Կ. Գ. Ժ. Ե 41

է տարր լուսո[յ], այլ զի ակամբ զննի, մարմնաւոր է: 35 Նուրբ է տարր աւգո[յ], այլ ցրտութեամբն ազդի մարմնո[յ], մարմնաւոր է: 36 Նուրբ է տարր հրոյ, այլ զի ջերմութեամբն ազդի մարմնոյ, մարմնաւոր է. նոյնպէս եւ՝ ջրոյ, որ քան զկէսն նրբագոյն է եւ քան զթեթեւն՝ թանձրագոյն:

[ԻԴ.]

1 Եւ արդ, քանզի անմարմինք են հրեշտակք եւ դեւք, յայն սակս եւ ծնունդք ոչ գոն նոցա:

2 Այլ ասեն՝ «Համբար[ո]ւաց ծնունդք են եւ մեռանին»:

3 Նախ զայն տեսցուք, թե բնաւ գուցե՛ն այլ ինչ արարածք բանաւորք քան զհրեշտակս եւ զդեւս եւ զմարդիկ, եւ ապա եկեսցուք յայնր ի քնին, թե իցե՛ն ի դիւաց կէսք մարմնաւորք, եւ կէսք՝ անմարմինք:

4 Զի չիք ինչ արարած բանաւոր արտաքս քան զայս երիս ջոկս՝ զհրեշտակաց, զդիւաց եւ զմարդկան, յամենայն աստուածատուր Գրոց եւ ի բնութեանէ արարածոց յայտնի է:

5 Բայց թեպէտ եւ ասին ինչ ան[ո]ւանք ի Գրոց յուշկապարկաց կամ Համբարուաց կամ պարկաց, ըստ կարծեաց մտաց մարդկան ասին եւ ոչ՝ ըստ բնութեան, քանզի դիւաց է կերպարանս կերպարանս ցուցանել, եւ մարդիկ ըստ կերպարանացն անուանս դնեն. որպէս յորժամ քաղաքք եւ գեւղք աւերեսցին, եւ անդ դեւք բնակիցեն եւ կեղծս ի կեղծս յայտնիցին, եւ մարդկան ըստ կեղծեաց նոցա անուանս եղեալ՝ գոմն «յուշկապարիկ», գոմն «պարիկ», գոմն «Համբարու» կոչիցեն, նոյնպէս եւ Գրոց ըստ մարդկան կարծեացն եկեալ՝ առ ի նշանակելո[յ] զսաստկութիւն աւերածի աշխարհին զյուշկապարկաց ասեն բնակել յաւերակսն, զոր յոյն լեզու «իշացուլս» ասէ: 6 Արդ, ցուց-

ցեն, թե գտանիցին իշացուլք ի Բաբելոնի: 7 Ապա ուրեմն յայտ է, եթե ան[ո]ւանք առանց անձանց են յուշկապարկաց եւ իշացուց, եւ Գիրք ըստ սովորութեան մարդկան կարծեաց եկեալ՝ նոյնպէս անուանեցին առ ի զաւերն Բաբելոնի նշանակելո[յ], իբրեւ զծովացուլն, զոր ի կովէ ելեալ ասեն, եւ զպայն իմն՝ ի մարդկանէ եւ զառլէզն՝ ի շանէ: 8 Եւ այն ոչ եթե անձինք ինչ են, այլ անուանք զբան գտանաց եւ բաջաղանք մոլորելոց մտաց ի դիւաց, զի ի մարմնաւորէ աներեւոյթ ինչ ոչ ելանէ, որպէս ոչ՝ յաներեւութէ իմեք[է]՝ մարմնաւոր: 9 Ոչ երբեք ի մարդկանէ ելեալ պայն՝ եթե երես արարած իցէ [°], եւ ոչ՝ ի կովուց ծովացուլն ելեալ, եթե ի ծովակս բնակիցէ, զի մարմնաւորի չէ հնար, թե ի ջուրս կեցէ, որպէս ոչ՝ ջրականին, թե ի ցամաքի կեցէ. եւ ոչ՝ ի շանէ ինչ ելեալ, եթե ընդ աներեւոյթ զաւրուութիւնս ինչ կեցէ, եւ յորժամ վիրաւոր ոք, անկեալ ի պատերազմի, դնիցի, թե լիզիցէ եւ ողջացուցանիցէ. այլ, ամենայն առասպելք են եւ պառաւաց դրոջիւնք եւ մանաւանդ թե՛ ի դիւաց իսկ մոլորութեանէ:

[ԻԵ.]

1 Այլ եւ վիճեալ եւս՝ պն[դ]ին ի բանիցն վերայ:

2 Մին ասէ, թե ի մերում գեաւղ ծովացուլ զկով գործեաց, եւ զգոչիւնն հանապազ մեք լսեմք ամենեքեան»:

3 Եւ միւսն ասէ. «Զպայն իսկ իմ աչաւք տեսեալ է»:

4 Մի՛թե եւ զարալիզէն եւս ոք կարիցէ ասել, թե եւ զայն ուրուք տեսեալ իցէ: 5 Եւ եթե յառաջին ժամանակսն արալէզք լիզէին զվիրաւորս եւ ողջացուցանէին, արդ ընդէ՞ր ոչ լիզիցեն եւ ողջացուցանիցեն. ոչ՞ նոյն պատերազմունք են, եւ նոյնպէս վիրաւորք անկանին: 6 Այլ «Յայնժամ,- ասեն,- դիւցազունք էին»:

7 Եւ մեք զդիցն իսկ պահանջեսցուք ի նոցանէ. մարմնաւորք էին արդեաւք դիքն, թե՛ անմարմինք: 8 Եթե մարմնաւորք էին, յայտ է, եթե մարդիկ էին, եւ զմարդկան ուրուականս ի պաշտան առեալ՝ «դիս» ան[ո]ւանեն: 9 Ապա եթե անմարմինք էին, չէր մարթ անմարմնոցն ընդ կանայս մարմնաւորս ամուսնանալ, զի եթե այնմ հնար ինչ էր, ոչ երբեք դարչէր Սատանա[յ] ի կանաց սատանա[յ]ածինս ծնուցանել, զի որ անմարմին ոք է, նա եւ անսերմն է, վասն զի սերմն մարմնաւորաց է եւ ոչ՝ անմարմնոց, եւ առանց սերման ի կնոջէ ծնան[ե]լ միումն եւեթ մարթ եղեւ, որ արարիչն է բնութեան մարմն[յ] եւ որպէս կամեցաւ, կարող եղեւ ի կուսէ ծնանել առանց ամուսնութեան: 10 Ուստի ամենայն իմաստնոց արտաքնոց յիւրաքանչիւր դիցն տկարութիւն հա[յ]եցեալ՝ չիշխեցին ասել, թե ի կնոջէ ոք առանց ամուսնութեան ծնաւ:

11 Եւ որպէս ոչ գոն ծնունդք դիւաց, նոյնպէս եւ ոչ՝ մահ:

12 Թէպէտ եւ անմահ բնութեամբ աստուածութիւնն եւեթ է, որ մշտնջենաւորն է եւ ոչ յուժեքէ առեալ սկիզբն լինելո[յ], այլ եւ սկ[զ]բնաւորացն եւ բանաւորաց պարգեւեաց աննախանձ գանմահութիւն. զհրեշտակաց եւ զդիւաց ասեմ եւ զոգ[ւ]ոց մարդկան, յորոց մարդիկ, քանզի յերկուց բնութեանց են՝ ի մարմնաւորաց եւ յանմարմնոց, յիրաւի սերին ծննդեամբ եւ գան յաճումն ամուսնութեամբ եւ մեռանին մարմնովք եւ ոչ՝ ոգ[ւ]ովք վասն պատուիրանագանցութեանն: 13 Այլ հրեշտակք եւ դեւք ո՛չ յաւելուած ծննդեամբ առնուն եւ ո՛չ՝ պակասութիւն մահուամբ, այլ որպէս հաստատեցանն, նոյնպէս եւ նովին թ[ո]ւով կան առանց յաւելուածո[յ] եւ նուազութեան:

14 Եւ ոչ այլ ինչ արարած գոյ, որ կարիցէ ի կերպարանս կերպարանս լինել, որ-

պէս զվիշապացն եւ զնհանգացն համբաւեն, այլ՝ միայն հրեշտակք եւ դեւք, որ կարող են զաւղս գնդել եւ պարզել եւ ազգի ազգի կերպարանս երեւեսցուցանել:

15 Այլ եւ «Վիշապք,- ասեն,- եւ նհանգք կեղծս ի կեղծս լինին», յորոց մին անձնաւոր է, եւ միւսն՝ ոչ անձնաւոր:

16 Վիշապն, որ մարմնաւոր է, զիւր կերպարանսն ոչ կարէ փոխել, զի եթե հնար ինչ էր մարմնաւորաց զկերպարանս փոփոխել, նախ մարդ, որ առաւել քան զնոսա է, փոխէր զկերպարանսն, յի՛նչ եւ կամէր: 17 Այլ որպէս մարդո[յ] չէ հնար փոխել ի կերպարանս ինչ, յո՛ր եւ կամիցի, նոյնպէս եւ ոչ՝ վիշապին:

18 Նա՛, եւ ոչ ն[]հանգ ինչ անձնաւոր գո[յ], բայց եթե դեւ ի տեղիս բնակեալ իցէ եւ մերթ կերպարանիցի եւ մերթ վնաս գործիցէ:

19 Եւ ոչ վիշապք գտոհմականս արդեանց կրեն, եւ ոչ զբաստ գոյ նոցա, եթե զարդիւնս ի կալոց ուրեք կրիցեն, եւ ի գուր է «Կա՛լ, կա՛լ»ն ասել ուժեք ի կալս եւ ոչ՝ «Ա՛ռ, ա՛ռ», զի վիշապն, որ՝ ինքն, զբաստ է այնու, զի անասուն եւ անխաւսունն է, զիա՞րդ, որ՝ ինքն, զբաստ է, զայլ զբաստ վարիցէ:

20 Զի վիշապի այլ ազգ ինչ բնութիւնն չէ, եթե ոչ՝ աւձի, այն յայտ իսկ է, եւ զաւձ յաղթանդամ կամ զգագան ինչ ծովածին կոչեն Գիրք «վիշապ». որպէս զմարդ յաղթանդամ «հսկայ» անուանեն, նոյնպէս եւ զաւձ ցամաքային անճոռնի եւ զգագանն ծովական լեռնաձեւ, զկիտացն ասեմ եւ զդելփինաց, «վիշապս» անուանեն ըստ այնմ, թե Դու ջախջախեցեր զգուլս վիշապացն ի վերայ ջուրց եւ ետուր կերակուր ժողովրդոց Եթեո՛ւ լպացոց^{***}:

21 Տեսանես, զի զձկունս մեծամեծս ծովածինս «վիշապս» կոչեն Գիրք, եւ յայտ ան-

*** Սաղմ. ՀԳ. 13

աի է, թե զձկանց ասէ, այն[ո]ւ եթե «Ետուր կերակուր ազգաց Եթեոպաց[ւ]ոց», թեպէտ եւ աստ այլք ի Սատանայ առակեցին զվիշապն, որպէս եւ՝ զայն, զոր Յո[վ]բն գրեալ է: 22 Եւ այլ ինչ ոչ են վիշապք, բայց՝ կա՛մ աւձք մեծամեծք ցամաքա[յ]ինք, կա՛մ ձկունք անարիք ծովականք, զորոց ասեն, թե «լեռնաբերձք, մեծամեծք են», եւ որս եւ կերակուր նոցա մանր ձկունք են, որպէս աւձից մեծամեծաց՝ մանր մանր ինչ ճճիք կամ անասունք:

23 Եւ ոչ որս երբեք որպէս մարդկան արարեալ վիշապաց կամ առնիցեն: 24 Եւ ոչ տաճարք իբրեւ մարդկան են նոցա ի բնակութիւն: 25 Եւ ոչ զոք ի թագաւորազգեաց եւ ի դիւցազանց ունին կապեալ առ իւրեանս կենդանի, զի կենդանիք ի մարմնաւորաց երկուն եւեթ կան՝ Ենո[վ]ք եւ Եղիա: 26 Այլ որպէս զԱդեքսանդրէ խաբէին դեւք, կենդանի կայցէ, որոց ըստ եգիպտական հնարողութեանն կապեալ արկեալ կախարդանաւք զդեւ ի շիշ՝ կարծեցուցանէին, թե Ադեքսանդրոս կենդանի իցէ եւ մահ խնդրիցէ, եւ գալուստն Քրիստոսի խայտառակեաց զխաբէութիւնն եւ եբարձ ի միջո[յ] զգայթակղութիւնն, նոյնպէս եւ մոլորութիւնն դիւաց խաբեաց զդիւցապաշտս Հայոց, եթե զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կա[յ] եւ նա ելանելոց է եւ ունելոց զաշխարհս, եւ ի սնտի յոյս կապեալ կան անհաւատք, որպէս եւ՝ Հրեայք, որ ի գուր ակնկալութիւն կապեալ կան, եթե Դաւիթ գալոց է շինել զՅրուսաղէմ եւ ժողովել զՀրեայս եւ անդ թագաւորել նմա նոցա: 27 Եւ այնպէս Չանա[յ] Սատանայ, զի գամենայն ոք ի բարւոք ակնկալութենէ վրիպեցուցէ եւ ի սնտի յոյս կապիցէ. մեծացուցանէ յաչս մարդկան զվիշապս, զի յորժամ ահագինք երեւեսցին ոմանց, առնուցուն զնոսա ի պաշտաւն. կարծեցուցանէ, թե եւ նհանգք ինչ

իցեն գետոց, եւ՝ շահապետք վայրաց. եւ յետ կարծեցուցանելո[յ] ինքն կերպարանի կա՛մ ի վիշապի կերպարանս, կա՛մ՝ ի ն[]հանգի իմն եւ ի շահապետի, զի այնու զմարդն յիւրմէ արարչէն թիւրեսցէ:

28 [...^օ] զի եթե էր ինչ նհանգն անձնաւոր, ոչ երբեմն ի կնոջ կերպարանս երեւէր եւ երբեմն փոկ լինէր եւ զաւղորդաց ընդ ոտս անկեալ՝ հեղձուցանէր, այլ կամ կինն կին կայր, կամ փոկն՝ փոկ: 29 Նոյնպէս եւ, զոր «շահապետ վայրաց» կոչեն, ոչ մերթ մարդ երեւէր եւ մերթ աւձ, որով եւ զաւձապաշտութիւնն հնարեցաւ յաշխարհ մոլծանել: 30 Նոյնպէս եւ վիշապն ոչ մի անգամ աւձաձեւ երեւէր եւ միւս անգամ՝ մարդկակերպ, որպէս յառաջագոյնն իսկ ասացաւ, թե որ մարմնաւոր ինչ է, յայլ կերպարանս չկարէ փոխել: 31 Այլ թե ի կալս ջորիք եւ ուղտք երեւիցին, դիւաց կերպարանք են այն եւ ոչ՝ վիշապաց: 32 Եւ եթե ի դաշտս երազագանք ձգիցին, եւ հեծեալք իբրեւ զմարդիկ զհետ երէն[յ] արշաւիցեն, կեղծիք դիւաց են, եւ ոչ՝ ճշմարտութիւն ինչ իրաց: 33 Եւ եթե ի գետս ի կանաց ինչ ի կերպարանս երեւիցին, Սատանա[յ]ի կերպարանք են, քանզի նհանգ ինչ անձնաւոր չիք:

34 Եւ ոչ ի մարդ իբրեւ զդեւ մտանէ վիշապ, որպէս ոմանք ի շչելո[յ] դիւահարին կարծեցին, քանզի մարմնաւորի ի մարմնաւոր չէ հնար մտանել: 35 Եւս. եթե բառնայցի, ոչ եթե՝ եզամբք ինչ ան[ո]ւանելովք, այլ՝ ծածուկ զաւրութեամբ իւիք, յԱստուածոյ հրամանէ, զի մի շոգին մարդոյ կամ անասնո[յ] մեղանչիցէ, որպէս, որ «բասիլիսկոս»ն կոչի, ազգ ինչ աւձից հա[յ]ելով միայն սատակէ զմարդ կամ զանասուն. ուստի յորժամ ի ջրհորս գտանիցի, ճրագ առեալ՝ իջանեն ի ներքս ըմբռնել, զի հա[յ]եցեալ ընդ ճրագն՝ ոչ մեղանչիցէ մարդոյն աւձն:

[ԻԶ.]

1 Այլ մեք ըստ Գրոց սրբոց՝ զհրեշտակս արբանեակս գիտեմք յաւզնականութիւն մարդկան, ազգաց եւ թագաւորութեանց ըստ այնմ, զոր ասեն, թե Կացոյց սահմանս ազգաց ըստ թուոյ հրեշտակացն Աստուածոյ՞: 2 Եւ դարձեալ այնու, զոր ասէ յԱւետարանի, թե Մի՛ արհամարհեմ գմբի ի փոքրկանց, զի հրեշտակի նոցա հանապազ տեսանեն գերեսս Հաւր իմոյ, որ՝ յերկինս՞, այսպէս իմն երեւի, թե իւրաքանչիւր մարդոց] հրեշտակ առանձինն պահապան կայցէ, թեպէտ եւ այլք զաղաւթից կարծեցին ասացեալ ի Տեառնէն, որպէս թե աղաւթք նոցա, որ Հանապազ մտանեն առաջի Աստուածոյ, կոչին «հրեշտակք»: 3 Այլ եւ Առաքեալ ասէ. Ո՞չ ամենեքեան հոգիք հարկաւորք եմ, առաքելացոյք ի սպասաւորութիւն վասն այնոցիկ, որ ժառանգ]ելոցն եմ գիրկութիւն՞, որ ի հարկի նմա կան եւ փրկութեան սատարք մեզ լինին:

[ԻԷ.]

1 Այլ «թե Սատանա]յ է,- ասեն,- գրգռիչ չարեաց, յայլս արարածոցն ընդէ՞ր մաղթէ գերկրպագութիւն հեթանոսութեան եւ ոչ յինքն միայն կորզիցէ»: 2 Զի բամբասեալ ի չարութիւն է Սատանա]յ, այն ամենեցուն յայտնի է: 3 Արդ, եթե իւր միայն խնդրէր զպաշտանն, վաղվաղակի խրտուցանէր զպաշտանեայսն իւր այնու, զի չար եւ չարչարիչ կարծիցի նոցա: 4 Այլ յաւժարեցոյց զկէսսն լուսաւորաց երկիր պագանել եւ զայլս՝ աւղոց] եւ հրոյ, երկրի եւ ջրոյ եւ հասակաց եւ փայտից եւ քարանց, մինչեւ աւձից եւ գագանաց եւ ճճեաց անգամ, զի միայն զնախանձն, զոր ի մտի եղեալ էր

գոռալոյ ընդ մարդոյն, կատարեսցէ: 5 Եւ արդ, մի ինչ վերտեսցին, որ արարածոցն երկիր պագանեն, թե զՍատանայի զկամս ոչ առնիցեն, զի արարածոց պաշտան մատուցանելոյ վարդապետ այլ ոք չէր, բայց միայն՝ Սատանա]յ):

6 Եւ արդ, զիա՞րդ կարիցեն նզովել զՍատանա]յ, որք զկամս նորա կատարեն, զի եթե որք զճշմարիտն Աստուած պաշտեն եւ վարուք ինչ զեղծիցին, բամբասին յաստուածական բարբառոյն, թե Խոստանան գիտել զԱստուած եւ գործով իւրեանց ուրացեալ եմ ի նմանէ՞, ս՛րչափ եւս առաւել նոքա առանց պատասխանատու]ութեան են, որոց առեալ զպաշտան ճշմարտին՝ անչնչոց եւ անմոնչոց արարածոցն մատուցանիցեն:

[ԻԸ.]

1 Բայց թեպէտ եւ պէս պէս զինուք վառեցաւ թշնամին արդարութեան՝ Յոնաց իմաստնոցն կարծեցուցանել, թե նիւթ ինչ միշտ առընթերակաց կայր Աստուածոյ, ուստի զարարածսն արար, եւ քանզի նիւթոյ անուն ի նոցա լեզու ի «մրուր» մերձ է, վասն այնորիկ զչարեացն սկիզբն ան[տ]ի կարծեցին, եւ Պարսից քէշին գտիչք առ ի տարակուսելոց], թե ուստի՛ չարիքն լինիցին, ընդ նոյն արահետս վրիպեալք ի ճշմարտութենէն՝ զնոյն բաջաղանս այլովք պատմութեամբք կարկատեցին, որպէս թե ի միոջէ՛ ի հաւրէ, երկու որդիք ծնան, մին՝ բարի եւ բարեաց արարիչ, եւ մին՝ չար եւ չարեաց գործաւն, ի նոյն խարափ անկեալ եւ աղանդոցն, զոր թշնամին իբրեւ գործմն ի մէջ ցորենոց] սերմանեաց, զի կէսքն երիս արմատս դնէին՝ Բարւոյ եւ արդարոց] եւ Չարի, եւ այլքն՝ երկուս՝ Բարւոց] եւ Չարի, եւ ոմանք՝ եւթն, եւ արդ, Եկեղեց[ւ]ոց] Աստուածոյ գործ այն է՝ զարտաքինսն իրաւք

Պ ՌԵՒԼԻՑ 8
 Բ ՄԿԻՐԻՍ 10
 Գ ԵՔԵՒԷ 14

Դ ՏԵՊՒԷ 16

ճշմարտութեան, առանց Գրոց յանդիմանել եւ զկարծեալսն ներքինս եւ ոչ ճշմարտեալս Գրովք սրբովք յանդիմանել:

2 Ձհիւղեայն կարծիս, որովք Յոյնքն մոլորեցան, բաւական Համարեսցուք առաջնոց բանիցն յանդիմանութեամբ վճարել եւ ընդ Պարսից քէշին գտաւղս, ապաւինեալ ի շնորհսն Աստուածոյ՝ մատիցուք ի պայքար:

[III]

[Ա.]

1 Մինչ չեւ բնաւ էր ինչ,- ասեն,- ո՛չ երկիրք եւ ո՛չ երկիր եւ ո՛չ այլ ինչ արարածք, որ յերկիրնս կամ յերկրի, Ջրուան ոմն անուն էր, որ թարգմանի «բախտ» կամ «փառք»: 2 Ձհազար ամ յաշտ արար, զի թերեւս որդի մի լինիցի նմա, որում անուն՝ Որմըզդ, որ զերկիրնս եւ զերկիր եւ զամենայն որ՝ ի նոսա, առնիցէ: 3 Ետ հազար ամի յաշտ առնելոյ սկսաւ ածել զմտաւ: 4 Ասէ. «Աւզուտ ինչ իցէ՞ յաշտս, զոր առնեմ, եւ լինիցի՞ ինձ որդի Որմիզդ, եթե՞ ի գուր ինչ ջանայցեմ»: 5 Եւ մինչ դեռ նա զայս խորհէր, Որմիզդ եւ Արհմն յղեցան յարգանդի մաւր իւրեանց, Որմըզդն՝ ի յաշտն առնելոյ, եւ Արհմն՝ ի յերկուանայոյ անտի:

6 Ապա իմացեալ Ջրուանայ՝ ասէ. «Երկու որդիք են յորովայնի անդ. ո՛ր ոք ի նոցանէ վաղ առ իս հասցէ, զնա թագաւոր արարից»:

7 Եւ ծանուցեալ Որմզդի զխորհուրդս հաւրն՝ յայտնեաց Արհմենին: 8 Ասէ. «Ջրուան՝ հայր մեր, խորհեցաւ, թե [ո՛] ոք ի մէնջ վաղ առ նա երթիցէ, զնա թագաւորեցուցէ»: 9 Եւ զայն լուեալ Արհմենին՝ ծակեաց զորովայնն եւ ել, եկաց առաջի հաւրն: 10 Եւ տեսեալ զնա Ջրուանայ՝ ոչ զիտաց, եթե ո՛ ոք իցէ: 11 Եւ հարցանէր, եթե «Ո՞վ ես դու»: 12 Եւ նա ասէ. «Ես եմ՝ որդին քո»: 13 Ասէ ցնա Ջրուան. «Իմ որ-

դին անուշահոտ եւ լուսաւոր է, եւ դու խաւարին եւ ժանդահոտ ես»: 14 Եւ մինչ դեռ նոքա զայս ընդ միմեանս խաւսէին, ծնեալ Որմզդի ի ժամու իւրում լուսաւոր եւ անուշահատ՝ եկն, եկաց առաջի Ջրուանայ: 15 Եւ տեսեալ զնա Ջրուանա՝ զիտաց, եթե Որմըզդ որդի նորա է, վասն որոյ զյաշտն առնէր: 16 Եւ առեալ զբարսմունսն, զոր ի ձեռին իւրում ունէր, որովք զյաշտն առնէր, ետ ցՈրմիզդ: 17 Ասէ. «Յայժմ ես վասն քո յաշտ առնեի, յայսմ հետէ դու վասն իմ առնիցես»:

18 Եւ ի տալ Ջրուանայ զբարսմունսն ցՈրմըզդ եւ արհմնել զնա՝ մատուցեալ Արհմենի առաջի Ջրուանայ՝ ասէ ցնա. «Ո՞չ այսպէս ուխտեցեր, թե Ո՛ ոք յերկուց որդուցն իմոց յառաջ առ իս հասցէ, զնա թագաւոր արարից»:

19 Եւ Ջրուանն առ ի չջրելոյ զուխտն ասէ ցԱրհմնն. «Ա՛յ, սո՛ւտ եւ չարագործ, տուեալ լիցի քեզ թագաւորութիւն ինն հազար ամի եւ զՈրմզդ ի վերայ քո արքայ կացուցեալ: 20 Եւ յետ ինն հազար ամի Որմըզդ թագաւորեցէ եւ զինչ կամիցի առնել, արասցէ»:

21 Յայնժամ սկսան Որմըզդ եւ Արհմնն առնել արարածս: 22 Եւ ամենայն ինչ, զոր Որմըզդն առնէր, բարի էր եւ ուղիղ, եւ զոր ինչ Արհմնն գործէր, չար էր եւ թիւր»:

[Բ.]

1 Այսպիսի անհաւատ եւ դանդաջանաց բանից, տխմարաց մտաց կարկատելոց, չէր պարտ ամենեւին, բնաւ եւ առնել պատասխանի, զի բաւական էր իւրեանց իսկ անմտութիւնն յանդիմանել զնոսա անդատին ի նոցին բանից, որ ընդ միմեանս կռուին եւ միմեանց հակառակ են: 2 Բայց քանզի այսու իմն մեծարոյ երեւին առաջնորդք քէշին իւրեանց հնազանդեցելոցն եւ խեղդ ընդ անձն արկեալ՝ ձգեն զնոսա ի խորխորատ, հարկ է տալ պա-

տասխանի եւ ցուցանել, թե ոչ ինչ աւելի, քան զոր Մանի, զոր [ի]նքեանքն մորթեցին, ասեն, զի նա երկու արմատս Բարույ եւ Չարի, ասէ եւ զայն՝ ոչ յղութեամբ եւ ծննդեամբ, այլ ինքնակացս, միմեանց հակառակ, եւ նոքա զնոյն ասեն տենչանաւք Զրուանայն, յղութեամբ եւ ծննդեամբ: 3 Եւ եթե նոյն քէշ է երկոցունց, ընդէ՞ր ատիցեն մոգք զզանդիկս, եթե ոչ՝ զի վարուքն գատ են ի միմեանց, թեպէտ եւ կերպարանաւք եւ ոչ՝ ճշմարտութեամբ, այլ ի քէշին մի են երկոքեան. նոքա՝ երկարմատեանք, եւ սոքա՝ նոյնպիսիք, նոքա՝ արեւապաշտք, եւ սոքա՝ ծառայք արեգական, նոքա ամենայն անշնչոց շունչ կարծեն, եւ սոքա նոյն աւրինակ զնոյն իմանան: 4 Բայց զի Մանի կամեցաւ վերագոյն քան զնոցայն կեղծեաւք վարս ցուցանել, թե ամենեւին իսկ ազատ ի կարեաց ցանկութեանց իցէ, եւ ոչ՝ քան զնոցայն միայն, այլ եւ՝ քան զամենայն քէշից, ուստի յանդիմանեալ յաղջկանց խտղտելոյ՝ մորթագերծ մահուամբ պակասեցաւ ի կենաց: 5 Որով յայտ է, թե վարուք եւեթ մեկնեալ են ի միմեանց, զի նոքա կերպարանողք են, եւ սոքա՝ զեղիւք եւ յայտ յանդիման անձնադիւրք, այլ կրաւնիւք՝ նոյնք եւ նոյնպիսիք:

[Գ.]

1 Արդ, մեր թողեալ զնոսա՝ Հարցցուք զսոսա. Զրուանն, զոր յառաջ քան զամենայն ինչ ասեն, կատարեալ՞ ոք էր, թե անկատար: 2 Եթե ասիցեն, եթե կատարեալ էր, լուիցեն, եթե կատարեալն յումէ՞ կարաւտանայր խնդրել որդի, որ գայցէ եւ զերկինս եւ զերկիր առնիցէ, զի եթե կատարեալ էր, ինքն իսկ կարող էր առնել զերկինս եւ զերկիր: 3 Ապա եթե անկատար էր, յայտ է, թե էր ոմն ի վեր քան զնա, որ զնորա թերակատարութիւնն լնուկ կարէր: 4 Եւ եթե էր ոք ի վեր քան զնա, նմա պարտ էր առնել զերկինս եւ զերկիր

եւ զամենայն, որ ի նոսա, առ ի ցուցանելոյ զիւր զբարեբարութիւնն եւ զաւրութիւն, եւ ոչ Զրուանայ որդի շնորհել, որ զերկինս եւ զերկիր եւ զամենայն, որ՝ ի նոսա, առնիցէ:

5 Այլ ասեն. «Փառաց առնէր զյաշտն:

6 Հարցցուք. փառքն յումեքէ՞ աջողեալ էին նմա, թե վասն զի մշտնջենաւորն էր, փառաւոր էր: 7 Եթե յումեքէ պարգեւեալ էին նմա փառքն, հարկ է կարծել, եթե էր ոմն ի վեր քան զնա, զաւրագոյն եւ փառաւորագոյն, ուստի ի նա փառքն հասին: 8 Ապա եթե չէր ոք ի վեր քան զնա, ի զուր էր զյաշտն հազարամեան առնել, զի փառքն ոչ եթե անձնաւոր ինչ են, այլ ի յաջողութենէ ուրուք անուանին փառք, որպէս ի չաջողութենէ ուրուք անուանի թշուառութիւն, եւ երկոքին ի դիպաց արգասիք են եւ ոչ՝ անձանց հաստատութիւնք:

9 Եւ այլ եւս՝ զի, եթե արեգակն եւ լուսին չեւ եւս էին լեալ, որով ժամքն եւ աւուրք եւ ամիսք եւ տարիք կարգին, հազար ամն ուստի՞ երեւէր, զի չէին ի միջի լուսաւորքն, որ զթիւ աւուրց եւ ամսոց եւ տարեաց կարգէին. այլ յայտ է, թե անմտութեամբ լի են բաջաղանքն:

10 Դարձեալ. թե երկինք եւ երկիր եւ որ՝ ի նոսայն, չէին, ո՞ւր առնէր զյաշտն կամ իւ՞: 11 Յորժամ երկիր չէր, եւ ոչ՝ տունկք ինչ, որ՝ ի նմանէ, զբարսմունսն ուստի՞ գտանէր՝ ունել ի ձեռին կամ բնաւ զի՞նչ իսկ յագէր, զի անասունք չեւ եւս էին արարեալ:

12 Եւ որ քան զամենայն անմտագոյն է, զհազար ամ, ասեն, յաշտ արար եւ յետ հազար ամին յերկուացաւ: 13 Ասէ, թե «Լինիցի՞ ինձ որդի Որմըգե՞ եւ եթե չլինիցի՞, եւ ի զո՞ւր ինչ վաստակիցիմ»: 14 Եւ այնու ցուցանեն, եթե տկար էր Զրուանն եւ կարաւտ եւ առանց գիտութեան: 15 Եւ պատճառք չարեացն նոյն է, եւ ոչ՝

Արհման, զի եթե նորա չէր յերկուացեալ, որպէս ասենն, Արհմանն ոչ լինէր, զոր չարեացն արարիչ համբաւեն, այլ ինքն երկմտեաց, որ անհաւատն է եւ լի անկարգութեամբ, զի ոչ երբեք ի միոջէ աղբերէ երկու բղիմունք ելանեն, մին՝ քաղցր, եւ միւսն՝ դառն, եւ ոչ՝ ի միոջէ ծառոյ՝ երկու պտուղք, մին՝ անոյշ, եւ մին՝ դաժան: 16 Արդ, եթե քաղցր գիտեն զՋրուանն, ոչ պարտին զդառն պտուղն՝ զԱրհմանն, ի նմանէ համարել, եւ եթե դառն հաշուին, չէ պատշաճ զքաղցր պտուղն՝ զՈրմըզդ, ի նմանէ դնել: 17 Եւ ի դէպ ելանէ նոցա աստուածական բարբառն, որ ասէ. Կա՛մ արարե՛ք զձառն քաղցր եւ զպտուղ մորա՛ քաղցր, եւ կա՛մ արարե՛ք զձառն դառն եւ զպտուղ մորա՛ դառն, զի ի ծառոյ անտի պտուղն իւր ցանաչի՞:

18 Եւ եթե արարածք յիւրաքանչիւր յաւրինուածս կան եւ երբեք զսահմանաւքն եղել[ով]ք նոցա ոչ անցանեն, սրչափ եւս առաւել Ջրուանն, եթե մշտնջենաւոր ոք էր եւ արարածս առնելոյ Հնարս խնդրէր եթե՛ անձամբ եւ թե՛ այլով եւ թե՛ որդուովն, որպէս ասենն, պարտէր կարգ ինչ ցուցանել եւ ոչ՝ անկարգութիւն, զի ոչ երբեք տեսաք, թե կովք էչս ծնան, եւ էչք՝ եզինս, եւ ոչ՝ գայլք՝ մաքիս, եւ ո՛չ մաքիք՝ աղուէսս, եւ ո՛չ առեւծք՝ ձիս, եւ ո՛չ ձիք՝ աւձս: 19 Բայց միայն մի ինչ ծնունդ է, զոր մարդիկ Հնարեցան արտաքոյ կարգաց բնութեան. ծնուցանել ի ձիոց եւ յիշոց ջորիս, եւ նոյնք անսերմն եւ անծնունդ են, զի ոչ յԱստուածոյ կարգեցան, այլ՝ ի մարդկանէ Հնարողութենէ: 20 Արդ, Ջրուանն եթե արջառ էր, զկարիճն՝ զԱրհմանն, զիա՞րդ ծնանէր, եւ եթե գայլ էր, զգառնն՝ զՈրմըզդ, Հի՞մ ծնանէր. ո՛չ ապաքէն մարդկան մտաց բաջաղանք են:

21 Զի եւ Ջրուանն իսկ մարդ լեալ է, այր մի քաջ առ Տիտանաւքն, եւ որպէս սովոր են Յոյնք եւ Արիք եւ ամենայն ազգք հեթանոսաց զքաջս առ զիւցագունս ունել, հայեցեալ ընդ այն քէչակարկատին Պարսից՝ թե «Որովհետեւ մարդիկ աշխարհիս զնա առ աստուածս ունին, ես զերկնից իսկ եւ զերկրի եւ զամենայն արարածոց արարչութիւն ի նմանէ կարծեցուցից»:

22 Եւ զի ճշմարիտ է բանս, յայտ անտի է, զի մարդկաւրէն բարուք զքէչն կարկատէ եւ յղութեամբ եւ ծննդեամբ զկրաւնսն կցկցէ, զի նախ երկուց արարչաց՝ զԲարուոյ եւ զՉարի, ի միոջէ հաւրէ զծնունդսն համբաւէ եւ ապա մայրենի եւ քուրական առականաւք զարարած լուսաւորացն մուծանէ եւ զայն ոչ վասն այլ իրիք, այլ՝ վասն մարմնասիրութեան եւ ախորժական ցանկութեան, քանզի հայեցեալ յազգն արիական, թե իգասէր էր, ըստ նմին՝ նորին մեղկ բարուցն, նմա աւրէնս կցկցեաց, զի յորժամ զաստուածոցն իւրեանց լսիցեն, թե յանարժան խառնակութիւնս մտաբերեցին, եւ նոքա նոցին նմանեալք՝ զնոյն անառակութիւնս անխտիր գործեսցեն, յորմէ աստուածականն հեռի, որ ի վեր է, զի Աստուածոյ որդի ունել ոչ ամուսնութեամբ վայել է, այլ՝ մշտնջենաւորութեամբ, որպէս մտաց՝ զբան, եւ աղբեր՝ զգետ, եւ հրոյ՝ զջերմութիւն, եւ արեգական՝ զլուսաւորութիւն, եւ ոչ՝ որպէս նոքայն ժտին, թե «Կարաւտեալ էր, զի որդի մի լինիցի նմա, որում անուն իցէ Որմըզդ»:

23 Ով, մորոտութիւն. չեւ ուրեք որիդ ի միջի, եւ նա չյղացելոյն եւ չծնելոյն անուն դնէր: 24 Ամենայն ծննդոց յետ ծննդեանն դնին անուանք, եւ նա զի՞արդ յառաջ քան զծնանելն դնէր նմա անուն Որմըզդ, բայց թե հաւատայր, թե եւ արդարեւ լինէր նմա որդի: 25 Եւ եթե հաւատայր, ընդէ՞ր երկմտեաց եւ եղեւ երկմ-

« Մատթ. ԺԻ՝ 33

տուլթեամբն պատճառ ծննդեանն Արհմե-
նի, ուստի չարիքն յաշխարհ մտին:

26 Եւ այն են զարմանք, զի մինն ի
հազարամեայ յաշտն առնելոյ հազիւ լի-
նէր, եւ միւսն՝ յառժամայն յերկմտութենէ
անտի:

27 Դարձեալ. որ զայն գիտաց, եթե
երկու որդիք են յորովայնի անդ, զայն ըն-
դէ՞ր ոչ ծանեաւ, թե մին՝ բարի, եւ միւսն՝
չար: 28 Եթե գիտաց եւ ոչ եղծ զչարն,
ինքն է պատճառ չարին: 29 Ապա եթե
զայն չգիտաց, զի՞արդ իցէ հաւատալի, ե-
թե զմիւսն ծանեաւ. եւ եթե յայնժամ ոչ ի-
մացաւ, յորժամ խաւարինն եւ ժանդահոտ
ետես զնա, եւ յա՞յնժամ արդեաւք ոչ գի-
տաց: 30 Այլ ե՛ւ գիտաց, ե՛ւ ետես, ե՛ւ ա-
րար զխաւարինն թագաւոր եւ ինքն է
պատճառ չարեացն այնու, զի ոչ եղծ
զչարն, այլ եւ թագաւորութիւն եւս ետ
նմա ինն հազար ամի: 31 Եւ ո՞ւմ թագա-
ւորեցոյց զնա, եթե ոչ՝ բարոք արարա-
ծոցն եղելոցն յՈրմըզդայ՝ առ ի չարչարե-
լոյ զնոսա, խառնելով ի նոսա զիւր չար ա-
րարածս:

32 Այլ եւ «ՉՈրմըզդ,- ասեն,- թագա-
ւորեցոյց ի վերայ նորա»: 33 Եթե թագա-
ւոր նորա իցէ Որմըզդն, զի՞արդ զբարոք
արարածսն իւր տայցէ չարչարել: 34 Եթե
հայրն յորդուոյն արարածս ոչ խնայեաց
այնու, զի ի ձեռս չարին մատնեաց, որդին
զիւրսն զի՞արդ ոչ զընդայցէ. առ տկարու-
թեա՞ն ինչ, թե՞ առ չարակամութեան:
35 Եթե առ տկարութեան չգեմեղիցէ, ա-
պա ո՛չ այժմ թագաւորել է նմա, եւ ո՛չ ի
վախճանի, որպէս ասենն, յաղթել կարէ:
36 Իսկ եթե առ չարակամութեան իցէ,
գտանի, զի ոչ միայն հայրն, որ թագաւո-
րեցոյց զչարն, է պարտ չարեաց, այլ՝ ե՛ւ
որդին, որ կամակից եղեւ հաւրն եւ հա-
մարձակիչ չարին:

37 Դարձեալ. զի զթագաւորութիւնն
որդուոցն ետ, միու՞մ՝ զինն հազարամեանն

եւ միւսումն՝ զանսպառականն, ինքն յո-
րո՞ւմ կարգի կայցէ, զի մինչ չէրն ինչ, չէր
իմիք թագաւոր, քանզի եւ ոչ արարիչ ի-
րիք էր, եւ յորժամ որդիքն եղեն, նոքա ե-
ղեն արարիչք, ոմն՝ բարեաց, եւ ոմն՝ չա-
րեաց, եւ նոքին՝ թագաւորք, ոմն՝ ժամա-
նակեան, եւ ոմն՝ յաւիտենական, եւ մնաց
Զրուանն դատարկ յարարչութենէ եւ ի
թագաւորութենէ, զի արարիչ չէ, քանզի
չէ իւր արարեալ, եւ թագաւոր չեղեւ,
քանզի ո՞յր արարածոց լինէր թագաւոր:
38 Եւ յայտ է, թե ոչ էր երբեք Զրուանն
եւ ոչ է, զի որ է ոք, կա՛մ արարիչ է, կա՛մ
արարած. արդ սա՛, քանզի ո՛չ արարիչ է,
ո՛չ արարած, ոչ էր երբեք նա աստուած, եւ
ոչ է եւ ոչ լինի:

[Դ.]

1 Այլ «Իբրեւ Զրուանն,- ասեն,- զայն
ի մտի խորհեցաւ, թե Ո՛րք յորդուոցն իմոց
վաղ առ իս հասցէ, զնա թագաւոր արա-
րից, գիտաց Որմըզդ եւ զխորհուրդն
յայտնեաց Արհմենին»: 2 Եթե զհաւրն
զխորհուրդ ծանեաւ Որմըզդ, զեղբաւրն
չարածճույ զխորհուրդ ընդէ՞ր ոչ գիտաց,
թե ծակէ զորովայնն եւ ելանէ եւ յառաջէ,
երթայ, առնու զթագաւորութիւնն, որ լի-
նելոց էր առ եղեռանէ նմա եւ արարածոցն
իւրոց, զի նախ՝ յառաջնումն իսկ յետս հա-
րեալ՝ վատթարիցէ զնա, եւ ապա՝ զինն հա-
զար ամն զեղջ եւ ապաշաւ լինիցի առ ի
գար հայելոյ իւր յուղիղ յարարածսն, զոր
աղաւաղեալ՝ կամակորիցէ:

3 Եւ կամ Զրուանն, որ գերկուց որդ-
ուոց զյղութիւն գիտաց յորովայնի, յորժամ
եկեալ՝ առաջի կայր Արհմենն՝ ընդէ՞ր ոչ
ծանեաւ զնա: 4 Դարձեալ. որ զիւր որդին
Որմըզդ անուշահոտ եւ լուսաւոր անդէն
յորովայնին գիտէր, զմիւս որդին, թե ժան-
դահոտ եւ խաւարին իցէ, իբր ոչ գիտաց:
5 Ո՞չ ապաքէն յայտ է, եթե ոչ իրք հա-
ւաստիք պատմին ի նոցանէ, այլ առաս-
պելք կարկատունք:

6 Եւ միւսն եւս՝ որ քան զամենայն անհաւատագոյնն է, զի մին ի հազարամեայ յաշտն առնելոյ հազիւ լինէր, եւ միւսն՝ յառժամայն յերկուանալոյ անտի:

7 Եւ եթե ի յերկուանալոյ անտի եղեւ Արհմնն որդի, ոչ պարտէր զնա իւր որդի կոչել, զի եթե իւր որդի էր, նմին նման գոյր եւ նոյնպիսի. կա՛մ թե բարի էր՝ բարի, եւ կա՛մ թե չար էր՝ չար: 8 Մի՛թե եւ նոյնպէս հայրն՝ Զրուան, ե՛ւ բարի էր արդեաւք, ե՛ւ չար, եւ ի բարւոք երակէն նորա բարւոք որդին եղեւ, եւ ի չար մայուէն նորա՝ չարն: 9 Եւ եթե այնպէս ինչ ոչ էր, ապա եւ ոչ նա զչարն իւր որդի կոչէր եւ ոչ թագաւորութիւն տայր նմա. այլ թե ինքն բարի էր, զչարն եղծանէր եւ բարւոյն տայր զթագաւորութիւնն, որով ինքն քաջանուն լինէր եւ զբարի որդին իւր՝ զՈրմըզդ, չառնէր միշտ սրտառուչ: 10 Այլ յայսմ ամենայնէ յայտ է, եթե ոչ երբեք լեալ է Զրուանայ հայր աստուածոց եւ ո՛չ՝ տուիչ թագաւորութեանց:

[Ե.]

1 Դարձեալ ասեն. «Զբարսմունսն, զոր ի ձեռին ունէր, ցորդին իւր ցՈրմըզդ ետ եւ ասէ. Յայժմ ես վասն քո յաշտ առնէի, յայսմ հետէ դու վասն իմ առնիցես»:

2 Արդ, եթե նա [] վասն նորա յաշտ առնէր, զի որդի լինիցի նա նմա, իսկ Որմըզդ վասն նորա յո՞ր սակա առնէր. մի՛ թե կասկած ինչ ուստեք էր նմա, եւ այնր ազգաւ պատուիրէր նմա վասն իւր յաշտ առնել. մի՛ թե՛ յորմէ զորդին խնդրեաց, թե գուցէ ընդ որդւոյն տալոյ զնա բաժ առնուցու: 3 Եթե այն ինչ ի մտի էր նորա, բարսմունքն ինչ ոչ կարէին աւգնել: 4 Եւ ի տալ զբարսմունսն չասաց, սա՛ թե «Դու ինձ յաշտ առնիցես», զի ցուցցէ, թե էր ոմն, որում նա վասն որդւոյն յաշտ առնէր եւ որդւոյն պատուիրեաց վասն իւր նմին յաշտ առնել: 5 Եւ եթե էր ոք ի վեր քան զնա եւ քան զորդին, որում զյաշտն առ-

նէին, զնա պարտ էր իմանալ պատճառ իւրեանց եւ արարիչ ամենեցուն եւ ոչ զԶրուան՝ պատճառ Որմըզդի եւ Արհմենի եւ զնոսա՝ արարիչ չարեաց եւ բարեաց:

6 Քան Զրուանայ որդի արարիչ տայր, որ ի վեր քան Զրուանն էր, ինքն իսկ իւրովի չկարէ՞ր գերկինս եւ գերկիր, եւ որ ինչ ի նոսա՝ առնել, որպէս յառաջագոյնն ասացաւ, եւ զիւր զաւրութիւնն եւ զբարերարութիւնն ցուցանել: 7 Կամ թե յորդւոյն իւրմէ յԱրհմնայ կասկած ինչ էր նմա, եւ վասն այնորիկ զբարսմունսն յՈրմըզդ տայր, զի նոքաւք յաշտ արարեալ վերագունին՝ անկասկած լինիցի, ապաքէն պարտ էր ումեք ի միջի լինել, որում զյաշտն առնէր: 8 Եւ եթե էր ոք ի միջի, որում աւրէն էր զյաշտն առնել, ապա Զրուանն չէր մշտնջենաւոր, այլ՝ յումեքէ եղեալ: 9 Եւ պարտ է խնդրել՝ յումէ՛ նայն եղեւ, եւ ո՛վ էր, ում ինքն զյաշտն առնէր, եւ ո՛վ՝ այն, որում որդւոյն հրամայեաց՝ վասն իւր յաշտ առնել, զի ոչ է մարթ ումեք սկիզբն առնուլ լինելոյ, եթե ոչ յայլմէ առնուցու զլինելն, եւ Աստուած միայն կարող իցէ առնել յոչնչէ ինչ, որպէս եւ կամի: 10 Եւ արդ, ո՞վ իցէ, որ զԶրուանն արար, եթե ոչ՝ Աստուած, որում եւ զյաշտն առնէր, որ եւ որդի այնպիսի ետ նմա, զի գերկինս եւ գերկիր, եւ որ ի նոսա՝ առնիցէ: 11 Եւ այն են զարմանք, զի ինքն ոչ արար եւ որդւոյն Զրուանայ կարող [եղ]եւ տալ զառնելն: 12 Այլ «Չէր ոք ի միջի, ասեն,- որում Զրուան զյաշտն առնէր»:

13 Եթե այնպէս իցէ, եւ ոչ Զրուանն իսկ էր, եւ մեծի ծաղու արժանի է, զի չէրն չէին վասն չէին յաշտ առնէր:

[Զ.]

1 Այլ թե եւ բախտ եւս էր, որպէս ասենն, Զրուանն, ապաքէն ուրուք բախտ էր. եւ ո՞վ էր արդեւք՝ ոյր բախտն էր, զի բախտ անձնաւոր ինչ չէ, այլ՝ դէպք աջողութեան. որպէս յարդարութենէն արդարն

կոչի, եւ ի քաջութենէն՝ քաջ, նոյնպէս եւ ի փառաւորութենէ անտի՝ բախտաւոր: 2 Արդ, եթե բախտ էր Զրուանն, չէր ինչ անձնաւոր. ուստի յայտ է, թե բնաւ եւ էր իսկ ոչ Զրուանն:

3 Եւ եթե, որպէս ասեն, ի յերկուանալոյ անտի յղացաւ Արհմնն, յառաջնումն իսկ պարտ էր նմա յերկուանալ, զի, թո՛ղ անդէն, ետ ընդ ետ լինէր նմա որդի, եւ ոչ՝ զհազար ամ տառապել եւ յաշտ առնել, զի որդի սակայն եղեւ նմա, թե՛ չար եւ եթե՛ բարի: 4 Եւ զչարութիւնն յիւրոց բարուց առ եւ ոչ՝ ի ծննդենէ անտի, քանզի չէր մարթ միում արգանդի զչարեացն գործաւնեայ եւ զբարեացն արարիչ ընդունել, զի եթե չար էր, չարին եւեթ պարտէր ասպնջական լինել, եւ եթե բարի էր՝ բարւոյն, քանզի բարին եւ չար ի միում անկանել ոչ մարթէին, որպէս զի ոչ գայլք եւ գառինք ի միոջէ արգանդէ ծնանին, զորոց զբարւոյն կողմն յՈրմըզդէ դնեն՝ զարջառաց եւ զոչխար[ի] եւ զայլոց պիտանացուաց, եւ զչարին կողմն՝ յԱրհմնայն՝ զգայլոց եւ զգազանաց եւ զճճեաց վնասակարաց: 5 Եւ զայն ոչ գիտեն, թե որպէս զ[ի] վնասակարացն ընդ անվնասակարսն չմարթի բնակել, նոյնպէս եւ ոչ բարւոյն ընդ չարին մարթ էր ի միում արգանդի յղենալ, զի զոր աւրինակ չէ մարթ զհուր եւ զՊուր ի մի վայր առնել, թե գուցէ յուղեալ կողմնն ապականիչ ընկերին իւրում լինիցի, նոյնպէս եւ ոչ բարւոյն եւ չարի ի մի վայր մտանել հնար էր. ապա թե ոչ՝ կա՛մ նա զսա ապականէր, կա՛մ սա՛ զնա:

6 Արդ, եթե ի սերմանէ իցեն որդիքն, չմարթէր միումն երկուս սերմանս հակառակ միմեանց արկանել, նա՛[], եւ ոչ միում արգանդի՝ երկուս սերմանս այլ ոչ եւ այլս ընդունել, զի թեպէտ եւ բազում արք ի մի կին մերձենայցեն, այլ ոչ եթե ամենեցուն սերմանքն կուտիցին, քանզի առաջին անկեալ սերմնն գայլսն իբրեւ

զաւելորդս ի բաց թքանէ: 7 Եւ զիա՞րդ էր, զի այն արգանդ երկուս սերմանս միմեանց թշնամիս ընդունէր:

8 Եւ դարձեալ. ընդէ՞ր ոչ յաղթեաց յաշտածին ծնունդն, եւ եղեւ արգել յերկուական ծննդեանն, այլ իջեալ միմեանց թշնամիքն՝ հաշտութեամբ, խաղաղիկ ի միում արգանդի գառէին:

9 Նա՛, եւ հայրն եթե երկուս որդիս գիտէր յորովայնին, զմին՝ բարի եւ զմինն՝ չար, ոչ խառն ի խուռն պարտէր խոստանալ զթագաւորութիւնն, այլ՝ այնմ միայն, վասն որոյ գյաշտն առնէր:

10 Բայց ապաքէն եւ Որմըզդն մինչ չեւ ծնեալ էր, թերակատար էր. եւ զիա՞րդ թերակատարն զխորհուրդն հայրենի իմացաւ, զի որ զխորհուրդս ուրուք ճանաչել կարէ, նա ի վեր է քան զնա, որ Աստուածոյ միայն է եւ ոչ՝ մարդոյ: 11 Ուստի Որմըզդ վերագոյն է քան զհայրն, ե՛ւ հզաւր, ե՛ւ իմաստուն, զի մինչ դեռ յորովայնի էր, զխորհուրդ հաւրն գիտաց եւ ելեալ յորովայնէ անտի՝ կարող եղեւ զերկինս եւ զերկիր առնել, զոր հայրն ոչ կարաց առնել:

12 Եւ արդ, որ այնչափ հզաւր եւ իմաստունն էր քան զհայրն, գտանի վատթարագոյն, զի ի վատթարէն խաբեցաւ այնու, զի զխորհուրդ հաւրն յայտնեաց նմա, ընդ որում անհաշտ թշնամութիւն պարտ էր ունել եւ ոչ՝ բարեկամութիւն:

13 Դարձեալ. թե ծակել եւս պարտ ինչ էր զորովայնն եւ ելանել, նմա պարտ էր, որ զխորհուրդ հաւրն իմացաւ, զի թող ինքն նախ երթայր առնոյր զթագաւորութիւնն, եւ ոչ՝ Արհմենայ, որ ո՛չ զխորհուրդ հաւրն գիտէր եւ ո՛չ թագաւորութեանն ինչ ան[կ] էր: 14 Բայց թե ծակեաց զորովայնն, թերեւս եւ սպան իսկ զմայրն, զոր պարտ է ինդրել, թե արդարեւ արդեւք մայր գո՛յր նոցա: 15 Այլ ուստի՞ յայտ իցէ, թե մայր գոյր, մանաւանդ զի ասեն իսկ, թե «Մինչ չեւ էր ինչ բնաւ, ո՛չ եր-

կինք եւ ո՛չ երկիր, Ջրուան միայն էր», որ մեծի ծաղու արժանի է, եթե ինքն հայր ի-ցէ եւ ինքն՝ մայր, եւ նոյն սերմանարկու եւ նոյն՝ սերմնընկալ:

16 Եւ որ եւս վատթարագոյնն է. «Իբրեւ ծակեաց,- ասեն,- Արհմնն զորովայնն եւ եկն, եկաց առաջի հաւրն, ոչ ծանեաւ զնա հայրն»: 17 Արդ, զի՞արդ ոչ ճանաչէր, զի ոք ուրեք չէր, մինչ ինքնն միայն էր. ո՞չ ապաքէն յայտ էր, թե որ առ նայն եկն, մի ոք յորդուոցն նորա էր: 18 Եւ գտանի վատթարագոյնն եւս քան զվատթարն, զի նա զսա ծանեաւ, եւ սա զնա ոչ ծանեաւ եւ յուրաստ էր յորդուոց անտի, թե իմ որդին անուշահոտ եւ լուսաւոր է, եւ դու խաւարին եւ ժանդահոտ ես»: 19 Եւ զի՞արդ ոչ էր նորա որդի, որ ընդ բարեոք որդուոցն նորա ի նմին արգանդի յղացեալ էր. եւ զնմանէ յուրաստ էր, թե «Ձես դու իմ որդի», եւ զմիւսմէն՝ խոստուկ, թե «Որդի իմ է»: 20 Եւ եթե իբրեւ ի չարէ յուրաստ էր, ապա եւ յղութեանն զնա չէր պարտ արժանի առնել, այլ՝ անդէն իբրեւ ի չարէ խորչել եւ սատակել, եւ՝ ոչ միայն զնա, այլ եւ՝ զՈրմըզդ, որ զխորհուրդսն ի վեր եհան:

[Ե.]

1 Այլ եւ միւսն եւս անպիտանագոյնն է, զոր ասենն, թե եւ զբարսմունսն ետ ցնա՝ առնել վասն իւր յաշտ, իբր ոչ եթե յՈրմըզդի կամ ի յազելն էր գաւրութիւնն, այլ՝ ի գաւազանսն, զի եթե ինքն հաւատարիմ էր լսելի լինելոյ, ապա աւելորդ իմն էր զգաւազանսն ի ձեռին ունել, եւ եթե ինքն չէր արժանի, եւ ոչ գաւազանքն բաւական էին արժանի առնել յազելոյ գանարժանն, զի բարսմունս ունել եւ յաշտ առնել մարդկան գործ է եւ ոչ՝ Աստուածոյ: 2 Իսկ եթե նա աստուած էր եւ կարող էր զերկինս եւ զերկիր առնել, զի՞նչ պիտոյ էր նմա բարսմունս ունել եւ յաշտ առնել, զի զհայրն ի կասկածանացն ապրե-

ցուցէ. որ զերկինս եւ զերկիր կարող էր առնել առանց բարսմանցն, զհայրն զի՞արդ ոչ կարէր անհոգ առնել առանց գաւազանացն: 3 Եւ արդ, յայտ եղեւ, թե ե՛ւ հայրն անմիտ եւ տկար եւ յայլ ապաստան էր, ե՛ւ որդին՝ նոյնպէս եւ տկար եւ անմիտ, զի ո՛չ նա որդի առանց յաշտ առնելոյ կարաց ծնանել, եւ ո՛չ որդին առանց զգաւազանսն ի ձեռն առնելոյ կարաց զնա ազատ առնել ի կասկածանաց:

[Ը.]

1 Նա՛, եւ լկանաց եւս Չարին երկորին պատճառք եղեն՝ չարչարելոյ զբարեոք արարածս Բարւոյն, զի «Որմըզդ,- ասեն,- որ ինչ բարի էր, զայն առնէր եւ արս արդարս եւ բարեգործս, եւ Արհմնն՝ զչար արարածս եւ զդեւս»:

2 Արդ, եթե դեւքն Չարի արարածք եւ չարք էին բնութեամբ, եւ ոչ մի ոք ի նոցանէ բարի ինչ երբեք իմանալ կարէր, նա՛, եւ ոչ՝ Արհմնն իսկ զլխովին:

3 Բայց արդ, տեսանեմք, զի միումն, որ կարի վայելուչն իսկ է ի մէջ արարածոց, որպէս ասեն, Արհմնն եղեւ Հնարագիւտ լինելոյ. «Իբրեւ ետես,- ասեն,- թե արարածս գեղեցիկս արար Որմըզդ եւ լոյս չգիտաց առնել, խորհեցաւ ընդ դեւս:

4 Ասէ. Ձի՞նչ աւգուտ է Որմըզդի, զի այնպիսի գեղեցիկ արարածս արար, եւ ի խաւարի կան, զի լոյս ոչ գիտաց առնել:

5 Արդ, եթե իմաստունն էր, ընդ մաւրն մտանէր, եւ արեգակն որդի լինէր, եւ ընդ քեռն անկանէր, եւ լուսին ծնանէր: 6 Եւ պատուէր տայր, զի մի՛ ոք զխորհուրդն ի վեր հանցէ:

7 Չայն լուեալ Մահմեայ դիւլի՝ վաղվաղակի առ Որմըզդ հասանէր եւ զխորհուրդն նմա ի վեր հանէր»:

8 Ո՛վ, անմտութիւնն եւ անհամ մորոսութիւնն. որ զերկինց եւ զերկրի եւ զամենայնի, որ՝ ի նոսա, զհանգամանսն առնելոյ կարաց գտանել, գսակաւիկ ինչ՝ զհայթայթանացն Հնարս, չմարթեր իմանալ: 9 Եւ այնու ոչ

միայն զՈրմըզդ անմիտ առնեն, այլ եւ զԱրհմնն՝ բարի, բարի արարածոցն հնարագիւտ:

10 Որպէս եւ զմիւս եւս ասեն, թե «Արհմնն ասաց. Ոչ եթե չկարեմ առնել բարի ինչ, այլ չկամիմ: 11 Եւ առ ի հաստատուն զբանն առնելոյ՝ արար սիրամարդ»: 12 Տեսանես, զի կամաւք է չար եւ ոչ՝ ի ծնէ: 13 Արդ, զի՞նչ պայծառագոյն քան զլոյս կայցէ, որում Արհմնն հնարագիւտ եղեւ, կամ զի՞նչ գեղեցկագոյն՝ քան զսիրամարդ, զոր առ ի ցուցանելոյ զգեղեցկագործութիւնն արար: 14 Եւ այսու յայտ է, զի թե չար ոք էր բնութեամբ Արհմնն, ոչ հնարագիւտ լուսոյ լինէր, եւ ոչ՝ արարիչ գեղեցկութեան:

15 Նա՛, եւ թե դեւք բնութեամբ չարք էին, չէր հնար Մահմեայն հանգամանաց լուսոյն առնելոյ գուշակ լինել, որում ցայտմ պաշտաւնեայք այնր քէշի երիցս յամի զոհս մատուցանեն: 16 Ուստի յանդիմանեալ՝ կշտամբին, թե ե՛ւ նոքա դիւապաշտք են, ե՛ւ դեւքն՝ ոչ չարք ի բնէ, այլ՝ կամաւք: 17 Եւ եթե ինքեանք դիւի զոհ մատուցանեն, որո՞վք երեսաւք զդիւապաշտսն հալածիցեն: Տեսանես, զի ամենայն ինչ, որ ի նոցանէ ասի, առասպելք են եւ սնոտի պատմութիւնք:

[Թ.]

1 Դարձեալ. նոքին, որ զլուսաւորացն արարած յայսպիսի պատճառանաց դնեն, շրջե[ա]լ զայս բանս՝ այլ իմն պատճառ լինելոյ արեգական մոլծանեն: 2 «Արհմնն, ասեն, զՈրմըզդ ի ճաշ կոչեաց: 3 Եւ եկեալ Որմըզդի՝ չկամեցաւ զճաշն ուտել, եթե ոչ նախ որդիքն նոցա կռուիցին: 4 Եւ ի խեթկել որդւոյն Արհմենի զորդին Որմըզդի ի խնդիր եղեն դատաւորի եւ ոչ գտին. ապա առեալ արարին զարեգակն, զի լիցի նոցա դատաւոր»: 5 Անդ հնարագիւտ լինելոյ արեգական ասեն զԱրհմնն եւ աստ՝ յայտնի իսկ արարչակից լուսոյ: 6 Եւ եթե

այլ ոք չգոյր դատաւոր, եւ առ հայրն չկարէի՞ն երթալ կամ՝ առ այն, որում հայրն եւ որդին յաշտ առնէին ըստ առասպելին:

7 Եւ արդ, զի՞ արդ իցեն թշնամիք միմեանց Որմըզդն եւ Արհմնն, որք ի միում արգանդի գայուացին եւ ի միմեանց ճաշ երթային եւ իրերաց գործակցութեամբ զարեգակն ստեղծեալ՝ դատաւոր կացուցանէին:

8 Արդ, զմին Զրադաշտ ոմն գեղխագործութեան դնէ, եթե «Ի մայրենի եւ ի քեռական առականաց արեգակն եւ լուսին արարան», զի ընդ այն հայեցեալ ազգին՝ ի նոյն պղծութիւնս անխտիր լինիցին, եւ զմիւսն վասն զամաւթն ծածկելոյ համբաւէ, թե «Վասն դատաւորութեանն արարին»: 9 Եւ քանզի ընդ զրովք չեն կրանքն, երբեմն գայն ասեն եւ այնու խաբեն եւ երբեմն՝ գայս եւ սովին պատրեն գտիմարս: 10 Բայց թե Աստուած էր Որմըզդն, յոչնչէ կարող էր առնել զլոսաւորսն որպէս զերկինս եւ զերկիր, եւ ոչ՝ ի ժանդագործութենէ կամ առ ի չգոյէ դատաւորի:

[Ժ.]

1 Դարձեալ միւս եւս իմն ասեն, որ ամենեւին չէ հաւատալի, թե «Իբրեւ մեռանէր [որդին] Որմըզդի, զսերմն իւր յաղբիւր մի արկ, եւ մաւտ ի վախճան յայն[ճ] սերմանէ կոյս մի ծնանելոց է, եւ ի նմանէ որդի եղեալ՝ հարկանէ զբազումս ի զաւրացն Արհմենի. եւ երկու եւս նոյնպիսիք նոյնգունակ եղեալք՝ հարկանեն զնորա զաւրսն եւ սպառեն»:

2 Նախ այնու յանդիմանին, զի ջուր սերման ոչ պահիչ է, այլ՝ կորուսիչ, եւ ապա միւսովն կշտամբին. քան աղբերն զսերմնն կենդանի տայր պահել, զինքն ընդէ՞ր ոչ զաւրեաց պահել կենդանի, այլ այնպիսոյ բարուց աստուածոյ որդի ի չարէն որդւոյն սատակեցաւ: 3 Եւ յայտ է,

թե որք յանկաձուլթեանն յաղթեցին Բար-
ւոյն եւ որդւոյ նորա, ե՛լ ի վախճանի նո-
քին բռնանալոց են, որոց այնչափ անչափ
զաւրս համար[ի]ն:

4 Դարձեալ. եթե աստուածք նոցա
մահկանացուք իցեն, [ի]նքեանք յարու-
թեան ակն զի՞արդ ունիցին եւ մանաւանդ՝
երեքմատեանն յարութեան, զոր չէ պարտ
յարութիւն համարել, այլ՝ չյարութիւն:

5 Բայց թե արդարեւ, որպէս ասենն,
թե որդին մեռաւ, ե՛լ յՈրմզդէ, ե՛լ ի միւս-
մէ որդւոյն նորա՝ ի Նորաշէտէ, չէր աւրէն
թերահաւատ լինել, թե չմեռանիցին, որով-
հետեւ միանգամ ամուսնաւորաց եւ մահ-
կանացուաց ազգ է տոհմ աստուածոցն նո-
ցա: 6 Եւ զայնպիսի աստուածս ոչ առ աս-
տուածս պարտ է ունել, այլ առ չաս-
տուածս, զի որ ճշմարիտ Աստուածն է,
զամենայն ինչ զիւր մշտնջենաւորու-
թեամբ ունի, որպէս զէութիւնն, նոյնպէս
եւ՝ զյաւէժ կենդանութիւնն, եւ զՈրդին
միշտ ընդ իւր ունել առանց իրիք պատճա-
ռանաց եւ միջնորդութեան եւ զարարչու-
թիւնն՝ ոչ ի հայթայթանաց, այլ՝ ի կամա-
կար կարողութենէ. եւ ոչ զոք ունի իւր
հակառակ, թե ինքն բարեաց արարիչ իցէ,
եւ միւսն՝ չարեաց, որպէս նոքա Որմզդի
զբարի արարածսն դնեն եւ Արհմենի՝
զչարսն, զոր ոչ կարեն ցուցանել, թե հա-
ւաստեաւ հայիցին, չար ինչ արարած, որ ի
բնէ չար իցէ, ո՛չ զԱրհմենն եւ ո՛չ զդեւս,
զոր նմա արարածս դնեն, որպէս բազում
անգամ յոգնագոյն աւրինակաւք ոչ մոռա-
ցաք յառաջին ճառսն յայտ առնել:

7 Այլ թե Արհմենն չար կարծիցի նոցա
վասն զ«Խարաման»ի անունն յանձին կրե-
լոյ՝ առ ի յարեւէ զարեգակնատենչիկան
արկանելոյ, ուստի եւ զանունն իսկ զ«Խա-
րաման»[ոյ] առ, նոյնպէս եւ «Սատա-
նայ»ն անունն ոչ՝ բնութեան ինչ անուն,
այլ բարուց, որպէս ի բարութենէ ոք բարի
կոչի եւ ի չարութենէ՝ չար, եւ այն ոչ եթե

բնածին բարք են, այլ՝ եկամուտս. եւ յայտ
անտի է, զի բազում անգամ զբազում անգ-
գամս տեսանեմք զգաւնացեալս եւ
զզգաւնս՝ անզգամեալս, զլիտիս՝ զգաստա-
ցեալս եւ զզգաստս՝ լիտեցեալս. այն՝ որ ի
բանաւորաց ի կողմանէ անտի է:

[ԺԱ.]

1 Նա՛, եւ անբանաւորացն՝ անասնոցն,
վասն այլ եւ այլ բարուցն ոչ երկուս արա-
րիչս պարտ է իմանալ, որպէս նոքայն առ
տխմարութեան կարծեցին, թե Որմզդն
զանասունս զչորքոտանիս եւ զթուչունս եւ
զձկունս եւ զամենայն ինչ, որ բարի եւ
գեղեցիկ է, արար, եւ Արհմենն՝ զգազանս
չարս եւ զթուչունս պիղծս եւ զսողունս եւ
զաւճս եւ զկարիճս եւ զամենայն վնասա-
կար ճճիս:

2 Եթե երկինք եւ երկիր եւ աւդք եւ
ջուրք Որմզդի արարածք իցեն, զի՞արդ
վնասակարքն՝ արարեալք յԱրհմենայ, ի
նորա երկրի բնակիցեն եւ զնոյն աւդս
ծծիցեն եւ նովին կերակր[ով]ք, որ յերկրէն
են, բուսանիցին, եւ ի նոյն ջուրս պիղծ
ճճիքն ընդ սուրբ ձկունսն սնանիցին, եւ ի
նոյն աւդս գիշակեր թուչունքն ընդ ազ-
նուագոյն թուչունսն շողայցեն, զորս
պարտ էր Որմզդի բարուք արարածոցն
սատակել եւ ոչ՝ սնուցանել, քանզի նորա է
երկիր, ե՛լ ջուրք, ե՛լ աւդք:

3 Եւ եթե գազանք վասն վնասակա-
րութեանն ի չարէ ումեքէ արարչէ կարծի-
ցին, զմարդիկ առաւել արժան է ի չարէ ա-
րարչէ իմանալ եւ ոչ՝ զնոսա, զի սոքա
[ա]ւելի վնասակար են գազանացն, քան
գազանքն՝ սոցա, զի սոքա ելեալ ի քաղա-
քաց եւ ի գիւղից՝ հետամուտ լինին կոտո-
րելոյ զգազանսն, եւ նոքա սրացեալ՝ ի լե-
րինս եւ յափափայս ճեպէին անկանել
փախստականք, յորոց կիսոցն եւ մորիքն
արտաքոյ ընդելութեան մարդկան են:
4 Նոյնպէս եւ սողնոցն զխաւշիւն միայն
զմարդոյն առեալ՝ է որ ի ծակս, է՛, որ ի

սորս, է՛, որ ընդ փապարս երկրի մտեալ՝ դաւղեն. եւ եթե ի կարի նեղելոյ զնոսս մարդկան՝ մեղանչիցեն, եւ այն մարդկան վնաս է եւ ոչ՝ նոցա: 5 Եւ այնու ոչ ի չարէ ումեքէ պարտ է զգազանսն եւ զճճիս իմանալ, այլ՝ ի միողէ ի բարւոյ արարչէ. զկէսսն՝ ի պէտս եւ զկէսսն՝ ի զարդ եւ զկէսսն՝ զարհուրեցուցիչս վասն գտարապարտ հպարտութիւն մարդոյն ցածուցանելոյ. դարձեալ՝ ի նոցա վնասակարութիւնն հայեցեալ՝ միմեանց չմեղանչել, զի թե զնոցայն վնասակարութիւնն, որ ոչ խորհրդով լինի, ատեալ պարտ իցէ, որչափ եւս առաւել՝ զմարդկան մեղանչականութիւն, որ խորհրդով եւ նենգութեամբ լինիցի:

6 Նա՛, եւ չքոտեաւքն զկծեցուցանէ զմեզ, որպէս լուռովն եւ ճանճիւ եւ մծխով եւ գոռոխով, մնով եւ մկամբ եւ այլովք նոյնպիսեաւք, որ չնչիկքն են եւ զմեզ աշխատ կարեն առնել, զի ի նոցանէ [է՛], որ զմեզ աշխատ առնէ, եւ է՛ ինչ, որ մերումն վնասակար լինի, որպէս եւ մուկնն եւ ցեց եւ որդն եւ որ ինչ նոցա նմանող իցէ: 7 Եւ նոքաւք ցածուցեալ՝ զնստուցանէ զմիտս մեր, զի յորժամ գիտիցեմք, թե եւ փոքունքն կարող են մեզ վնասակար լինել, իջցուք ի տարապարտ հպարտութենէ՝ չուենել զանձինս առ մեծարգիս, դարձեալ եւ զխնամն եւս Աստուածոյ զմտաւ ածել, թե ուր փոքունքն կարեն մեղանչել մեզ, զի՞արդ կարէաք ապրել, թե ընդ սողունս եւ ընդ գազանս բնակակիցս արարեալ էր զմեզ:

8 Այլ եւ յայն եւս հայել պարտիմք, թե որչափ անասունս վասն մերոց պիտոյից ընդ մեւք հնազանդեաց. զձիս եւ զուղտս եւ զփիղս եւ զարջառ եւ զոչխար եւ ի լերանց եւ ի դաշտաց՝ զայծեմունս եւ զեղջերուս եւ զառինս եւ զվարազս, յորոց կէսքն կրելիք են, եւ կէսքն՝ ուտելիք:

9 Եւ զայն եւս ետ գիտել մեզ, թե որոց, նա կամի, յաղթականք կարեմք լինել, եւ որոց, ոչ կամի, չկարեմք յաղթել, ոչ միայն՝ արգաւորացն, այլ եւ՝ չնչենոցն: 10 Զի՞նչ վատթարագոյն քան զլուն եւ զմուկն կայցէ, եւ զայն ո՛չ սպառել կարեմք եւ ո՛չ յաշխարհէ մերժել: 11 Եւ այլն եւս՝ ինչ մի ի ջուրս է եւ զմեր պէտս ոչ հարկանիցէ, բայց միայն զի զկծեցուցանիցէ: 12 Յորժամ տեսանիցեմք, թե չեմք բաւական զնոսս սպառել, ծանիցուք զանձանց տկարութիւն եւ զիջցուք ի զուր հպարտութենէ եւ նմա միայն տացուք զյաղթութիւն, որ չնչենովքն զմեզ աշխատ առնէ եւ զմեծամեծսն հնազանդէ մեզ իբրեւ զփիղս եւ զուղտս եւ զառեւծս եւ զինձս եւ զյովազս, զորոց զկէսսն ի կրելիս եւ զկէսսն ի զբաւսանս ընդելուցեալ՝ համբուրեցուցանէ:

[ԺԲ.]

1 Իսկ այլք այլ ազգ կարծեցին զՍատանայէ, թե Աստուած զնա չար արար: 2 Արդ, եթե Աստուածոյ զնա չար արարեալ էր, ընդէ՞ր հալածէ Եկեղեցի զդեւս: 3 Եթե վրէժխնդիրք չարեաց հաստատեցան դեւք, ապա վնաս առնէ Եկեղեցի այնոցիկ, որ նոքաւքն խրատիցին, եւ հակառակ կամացն Աստուածոյ կայ, զի նա ի խրատ արար զնոսս, եւ սա հալածէ: 4 Բայց զի զհալածելն ոչ յանձնէ ինչ ունի, այլ՝ յԱստուածոյ, յայտ անտի է, եթե ոչ նախ փչեաց Տէրն յերկոտասանսն Հոգի եւ ետ իշխանութիւն Եւթանասնիցն, ոչ կարէին հանել զդեւս: 5 Նա՛, եւ ինքն իսկ եթե խրատիչ գիտէր զնոսս, ոչ սաստէր ի նոսս եւ ոչ աշակերտացն իւրոց հալածել հրամայէր, որոց իւրն հրաման տուեալ էր մտանել ի մարդիկ: 6 Եւ զի՞արդ իցէ, զի հրեշտակք իբրեւ լսեն զանուն Աստուածոյ, ուրախ լինին, եւ դեւք՝ ոչ երբեք, այլ՝ առաւել իբրեւ լսեն, քստմնին:

7 Եթե կարճիչք յանցանաց էին դեւք, ոչ երբեք զմարդիկ ի կռապաշտութիւն յաւժարեցուցանէին եւ ոչ՝ ի պէս պէս ազանդս փիլիսոփայից եւ հերձուածողաց, ո՛չ ի բաշխս բախտից եւ ո՛չ՝ ի ճակատագրաց եւ ո՛չ՝ կապելոց հրամանաց, ո՛չ՝ ընդ աստեղս պշուցանել, թե նոքա ինչ իցեն պատճառք բախտաւորութեան եւ չուռութեան:

8 Եւ զի դիւաց գիւտ է կռապաշտութիւն, վկայէ Դաւիթ, թե Ամենայն աստուածք հեթանոսաց դեւք են՞, եւ երանելին Պաւղոս՝ թե Զի՞նչ հաղորդութիւն կայ Քրիստոսի ընդ Բելիարայք: 9 Եւ ահաւանիկ, որպէս ասենն, հաղորդութիւն կայ նոցա ընդ միմեանս, զի եթե, վասն զի չարն արար զնա Աստուած, չարչարիցէ, չէ աւրէն զնա «չար» կոչել, այլ՝ «վրէժխնդիր», զի չար յայնժամ էր, թե զհրամանն ոչ կատարէր: 10 Բայց ընդէ՞ր ոչ նա, այլ հրեշտակ Աստուածոյ եհար զանդրանիկսն Եգիպտացոց եւ բազում անգամ՝ զՀրեայսն յանապատի անդ, զի եթե նա յայն եղեալ էր, ընդէ՞ր ոչ նայն հարկանէր, այլ հրեշտակ: 11 Եւ յաւուրս Դաւիթ եւ թանասուն հազար յերկոտասան ցեղիցն Իսրայելի եւ ի բանակէ Ասորեստանոյն՝ հարիւր եւ ութսուն եւ հինգ հազար եհար հրեշտակ Աստուածոյ, եւ ոչ՝ դեւք:

12 Ընդէ՞ր եւ յաւուրս Յեսուայ որդւոյ Յովսեփեկայ հրեշտակ ասէր ցբանսարկուն, որ կայր նմա հակառակ, թե Սաստեսցէ ի քեզ Տէր, Սատանայ՞ք: 13 Ընդէ՞ր եւ «որդիք Սատանայի» կոչին Հրեայք վասն զԱւրինաւքն անցանելոյ, եթե նա կայցէ ի հրամանին» զոր առ, եւ նոքա անցին զպատուիրանաւն: 14 Եւ բնաւ իսկ «սուտ» ընդէ՞ր կոչիցի, որ արդարն կայցէ ի կարգին, զի ոչ ի նմանէ է չարութիւնն,

այլ յայնմանէ, որ զնա այնպիսի արար: 15 Եւ զմէ՞ առաքիցի ի խաւարն արտաքին:

16 Այլ ասեն՝ «Հանգիստ է նմա խաւարն»: 17 Նա՛, աւանիկ ոչ զայն ազաղակէր լէգեւոնն դիւաց, այլ՝ թե տանջանք պատրաստեալ են նմա. Զի՞ կայ մեր եւ քո, ասէ,- Որդի՛ Աստուածոյ, զի եկիրդ այսր՝ յառաջ քան զժամանակն տանջել զմեզ: 18 Եւ զի զվատթարութիւնն նորա յայտ առնիցէ, ասէ. Ոչ ոք կարէ առնուլ զգործիս հզարիմ, եթե ոչ նախ զհզարն կապիցէ: 19 Արդ, ընդէ՞ր կապէր զնա, եթե ոչ՝ զի գիտէր, եթե կամաւք չարանայ եւ յորժամ կամի, կարող է զգաւնանալ: 20 Եթե ի բնէ ի չարչարել եղեալ էր զնա, ընդէ՞ր բամբասէր չարի անուամբ, որ զբնութիւնն՝ նոյնգունակ, որպիսի եղեւն, պահէր:

21 Նա՛, եւ ոչ պատժոց արժանի էր վասն ստուգելոյ զբնութիւնն, ք անգի եւ ոչ զհոլր ոք պատժէ, թե «Ընդէ՞ր այրես», եւ ոչ՝ զջուրս, թե «Ընդէ՞ր հեղձուցանէք»:

22 Եւ միանգամայն եւ հրամանացն եւս հարցուածք սովին մտաւք լուծանին.

[ԺԳ.]

1 «Հրամանա՞ւ,- ասեն,- մեռանիցին մարդիկ, թե՞ առանց հրամանաց»:

2 Նախ պարտիմք գիտել, թե զի՛նչ «հրամանք»ն իցեն, եւ ուստի՛ բան «հրամանաց»ն ընդ աշխարհ տարածեալ իցէ:

3 Հրաման կապեալ վասն մահուան յաստուածատուր Գիրս ոչ ուրեք գտանեմք, քանզի Տէրն մահու եւ կենաց ե՛լ կարճել իշխէ զհրամանն իւր, ե՛լ երկայնել, որպէս առ Ջրհեղեղաւն ասէ՝ Եղիցիմ աւուրք կենաց մարդկանս այսորիկ հարիւր եւ քսան ամ՞, եւ վասն բազմութեան անաւրէնութեանն պակասեցոյց ի նոցանէն

Պատմ. Գ. Ե 5
 Բ Կ Գ. Գ 15
 Գ Գ. Գ 2. Գ Գ 9

Մ Գ Գ. Բ 29
 Մ Գ Գ. Ժ Բ 29. Մ Գ Գ. Գ 27
 Ե Գ. Գ 3

զքսանն, եւ որպէս առ Ադամամքն ասէ՝ Յաւուր, յորում ուտես ի պտղոյ ծառոյն, ի մմին մեռամիսէ, եւ առ իւրում բարերարութեանն, վասն որդեծնութեան եւ մարդկան յաշխարհի սերելոյ ներեաց նմա ինն հարիւր եւ երեսուն ամ, զի մի գեղեցիկ ստեղծուածն իւր համաւրէն ջնջեսցի: 4 Եւ վասն արտասուացն Եգեկիայի արքայի յաւելաւ նմա հնգետասան ամ: 5 Եւ վասն ապաշխարութեանն Նինուէացւոցն ոչ կորոյս զքաղաքն յաւուրն երրորդի ըստ քարոզութեան մարգարէին իւրոյ: 6 Եւ ոչ՝ որպէս քաղեայքն աստեղանշմարք, որ ե՛լ զծննդոց պատճառս, ե՛լ զմահուանց յաստեղաց իբրեւ ի կենդանեաց դնեն. որպէս թե յորժամ ծնանիցինն, անդէն եւ մահուանքն իւրաքանչիւր ուրուք անվրէպ սահմանիցին, եւ՝ ըստ այն ո՛չ յառաջել ումեք մեռանել հնար իցէ եւ ո՛չ՝ յամենալ: 7 Այլ յանդիմանեն զնոսա եւ պատերազմացն դէպք, զի ի միում աւուր բիւրք բիւրուց մարդկան կոտորին այլ եւ այլ տիովք, կէսք մատաղաւրեայք, եւ կէսք՝ երիտասարդք, եւ այլք՝ ի կատարեալ հասակի ծերութեան, որոց ծնունդքն ի միում ժամու չէին, եւ մահքն ի միասին եղեն:

8 Եւ դարձեալ. թե յաստեղաց էին պատճառք ծննդոց, ընդէ՞ր ի Հնդիկս ոչ ոք երբեք սպիտակ ծնաւ, եւ ոչ յայլ յաշխարհս՝ այնպիսի ինչ երեւակ. մի՛ թե անդր միայն ոչ եհաս աստղն սպիտակարար, եւ ոչ յայլ աշխարհս՝ աստղն սեւագործ: 9 Եւ ատամունքն Հնդկին ուստի՞ իցեն այնչափ սպիտակ:

[ԺԴ.]

1 Դարձեալ. բախտաւորութեանց եւ չուառութեանց զաստեղան դնեն պատճառս. որպէս թե աստեղատունք ինչ իցեն, եւ ըստ դիպելոյ պատճառաւորաց աստեղացն յաստեղատունսն՝ նոյնպիսիք եւ

ծնունդքն լինիցին: 2 «Մինչ դեռ Առեւծն,- ասեն,- յաստեղատանն իցէ, եւ ծնանիցի ոք, թագաւոր լինելոց է, եւ մինչ դեռ Եզնն է, եւ ծնանիցի ոք, հզաւր եւ բարենշան գալոց է, եւ մինչ դեռ Խոյն է, եւ ծնանիցի ոք, մեծատուն լինելոց է, որպէս նայն թաւ եւ ասուեղ է, եւ յորժամ Կարիճն է, եւ ծնանիցի ոք, չար եւ մեղանշական լինելոց է: 3 Եւ այլքն եւս այլոց ազգի ազգի իրաց պատճառք լինին», որպէս թե «Յորժամ Կրոնոսն յաստեղատունն մտանիցէ, թագաւոր մեռանի, որ եղեն իսկ երկիցս,- որպէս ասենն,- առ Թէոդոսիւ կայսերք». եւ քաղեայքն պնդեալ էին, եթե «Մեռանի թագաւորն», եւ նա ոչ մեռաւ, զի յամաւթ լիցի սափասուտ արուեստգիտութիւնն:

4 Արդ, նախ զայն ասասցեն. ո՞ եհան զայնպիսի երկրական անուանս՝ զգիշակեր եւ զխոտակերս, յերկինս, զի պատճառ ծննդեան մարդկան լինիցին, զի որ ոք ուրուք պատճառ ծննդեան կարիցէ լինել, նա ի վեր քան զնա, որոյ պատճառն է, պարտի լինել իմաստութեամբ: 5 Արդ, հասարակաց մտաւք հայեցեալ՝ տեսցուք, ո՛ ի վեր իցէ. մա՞րդն, որ անասնոյն տիրէ, թե՞ անասունն, որ մարդոյն ի հարկի կայ. եւ ոչ միայն ի հարկի կայ, այլ եւ կերակուր նորա է: 6 Եւ գազանացն զկէսսն փախստականս եղեալս տեսանեմք եւ զկէսսն՝ յանտառախիտ մայրիս ամրացեալս, յորժամ զբարբառ միայն մարդոյն լսիցեն, քանզի զահ եւ գերկիւղ մարդոյն արկեալ է արարչին ի վերայ գազանացն եւ սողնոցն եւ անասնոցն եւ թռչնոց վասն առաւել զնա պատուելոյն, զորոյ եւ զարարածն նորանշան իմն ընծայեցուցանէ, թե «ստեղծ» որպէս ձեռաւք եւ փչեաց շունչ կեցնամի՞ որպէս թե բերանով. եւ այնու, զի առաւել պատուական ցուցանիցէ զնա, յայտ առնէ, այլ զի Աստուած ի յաւելապատ մարմնոց ի

Է Ծ. Բ. 17

Մ. Հմբ. Ծ. Ե. 27:

վեր է, այն յայտնի է ճշմարտից: 7 Եւ եթե վասն նորա եղեն զազանքն եւ անասունքն, որպէս փորձ իրացն իսկ ցուցանէ, զի՞արդ էր, զի յերկինս ելանէին եւ մարդկան ծննդեան պատճառք լինէին, որք այնչափ հեռի են ի կենդանութենէ, որչափ՝ ճրագ մի, որ ի մարդկանէ կազմեալ իցէ լուսատու լինել տան ի գիշերի:

8 Եւ չկենդանիքն զի՞արդ կարիցեն կենդանեացն պատճառ ծննդեան լինել: 9 Այլ «Թե չէին կենդանիք,- ասեն,- եւ ոչ գնայունք էին. բայց զի գնան, յայտ է, թե կենդանի են»:

10 Արդ, լուիցեն, թե ամենայն ինչ, որ գնայուն է, կենդանի իցէ, ապա ե՛ւ ջուրք, որ գնան, կենդանի համարեսցին, ե՛ւ կրակ վասն շարժելոյն կենդանի կարծեսցի, ե՛ւ աւդք ե՛ւ հողմք վասն շնչելոյն կենդանի հաշուեսցին, ե՛ւ՝ տունկք ե՛ւ՝ խոտոց բոյսք, որ թեպէտ յամրագնացք են, սակայն աճելովն երեւին, թե գնայունք են:

11 Եւ արդ, որպէս ոչ ամենայն գնայուն կենդանութիւն մտաւոր եւ բանաւոր ունի, նոյնպէս եւ ո՛չ՝ արեգակն եւ ո՛չ՝ լուսին եւ աստեղք. եւ ո՛չ երկինք իսկ, ընդ որով նոքա շրջին, կենդանութիւն ինչ մտաւոր եւ բանաւոր ունին, այլ երկինք եւ երկիր անաւթք ետեղակալք են, հաստատեալք յարարչէն՝ ունել ամփոփ ընդ ինքեամբ զամենայն, որ ի միջի նոցա է, եւ լուսաւորքն իբրեւ ճրագունք լուցեալք՝ վասն զխաւարն ի միջոյ մեծի տանս փարատելոյ եւ են հարկաւորք բնակաւորք հրամանաւ արարչին իւրեանց՝ ի վայելս ամենայն կենդանեաց եւ իւրեանց [ի]նքեանք չեն, քանզի ոչ գիտեն, թե իցե՛ն եւ թե չիցե՛ն, որպէս ե՛ւ երկինք, ե՛ւ երկիր, ե՛ւ ջուրք, ե՛ւ փայտք, ե՛ւ քարինք են, վասն որոց եղենն եւ իւրեանց [ի]նքեանք չեն, քանզի ոչ գիտեն, եթե իցե՛ն եւ թե չիցե՛ն այնու, զի չեն մտաւորք եւ բանաւորք:

12 Դարձեալ. որպէս ասենն, թե «Յորժամ Առեւծն իցէ յաստեղատանն, թագաւոր ծնանելոց է»։ Եթե այնպէս էր, բազում անգամ բազում թագաւորաց պարտ էր ծնանել, զի ոչ մի միայն ծնանի, յորժամ Առեւծն յաստեղատանն իցէ, այլ՝ բազումք:

13 Եւ եթե արդարեւ Առեւծն էր պատճառ ծննդեան թագաւորաց, ապա ոչ թագաւորի որդի թագաւոր լինէր, այլ՝ ոյր ուրուք եւ դիպէր ծնունդն մտանելոյ Առիւծուն յաստեղատունն: 14 Իսկ եթե տեսանեմք, եթե թագաւորի որդի թագաւոր լինի, որպէս Դաւթայ որդին Սողոմոնն, ի հաւրն աթոռ նստաւ, եւ նորա որդին՝ ի նորա աթոռ, եւ մի ըստ միոջէ կարգ թագաւորացն Յուդայ ձգեցաւ մինչեւ ցՄակաբէացիսն, նոյնպէս զԱսորեստանեացն եւ զԲաբելացւոցն որդի ի հաւրէ առնուին կարգաւ զթագաւորութիւնն, որպէս եւ ի Սասանայն ումեմնէ Սասանականքն որդի ի հաւրէ կարգաւ առին մինչեւ ցայսաւր զթագաւորութիւնն Սասանականացն, եւ չգտաւ Առեւծ յերկինս մտեալ յաստեղատունն, զի զթագաւորութիւնն յայլ ազգուրեք կարասցէ փոխել յերկրին Արեւելից:

[ԺԵ.]

1 Եւ յայտ է, թե որպէս թագաւորութեանն չէ աստղն պատճառ, նոյնպէս եւ ոչ՝ զաւրութեանն եւ ոչ՝ մեծատուն առնելոյ, մանաւանդ իսկ զի տեսանեմք զմեծատունս աղքատացեալս եւ զաղքատս՝ մեծացեալս: 2 Մի՛թե եւ զայն եւս կարիցեն ասել, թե մի եւ նոյն աստղ մեծութեան եւ աղքատութեան կարէ պատճառք լինել, ե՛ւ զաւրութեան, ե՛ւ տկարութեան, քանզի եւ զհզաւրս երբեք երբեք տկարացեալս տեսանեմք եւ զտկարսն՝ զաւրացեալս եւ զչարսն՝ զգաւնացեալս եւ զզգաւնս՝ չարացեալս:

3 Եւ ո՞ւր իցէ այն, զոր ասենն, եթե «Ձոր ինչ ի ճակատագրին գրեալ է հրա-

մանացն, այնմ չէ հնար վրիպել, այլ որ փառաւորն գրեցաւ, փառաւոր է, եւ որ չուառն՝ չուառ, եւ ուր հրամանքն իցեն եւ յուժէ՝ հրամանքն, ըստ այնմ եւ մեռանին, եւ վրիպել չէ հնար ի սահմանելոյ հրամանէն»։ 4 Մ, հրաման տկար եւ անգաւր սահման, զոր եւ գողքն եւ աւագակքն կարեն խախտել, յորժամ ի վերայ հասեալ՝ զոմն յընչից եւ յարեւէ արկանիցեն։ 5 Եւ եթե ի սահմանելոյ ինչ հրամանէ իրքն գործիցին, չէ պարտ ո՛չ թագաւորաց մահու հրաման տալ եւ ո՛չ դատաւորաց՝ քերել եւ սպանանել զմարդասպանն, որք զպատուհասն ի վերայ ածելով յայտ առնեն, թե ոչ ըստ սահմանելոյ ինչ հրամանացն մոռանան մեղքն մեղանչականացն, այլ՝ ի բռնաւորութենէ չարագործութեանն։

6 Եւ կամ յորժամ հէն յաշխարհ արշաւիցէ տեւագերծ առնել եւ կոտորել զմարդիկ, մի գաւրս ժողովեսցեն եւ մի գունդս առ գունդս կազմեսցեն հանելոյ զհէնն յաշխարհէ, այլ իրաւունս տացեն, թե «Հրամանք են աշխարհին ի հինէ կոտորել. մեք ընդէ՞ր դառնայցեմք ընդդէմ հրամանացն»։ 7 Այլ գումարելով զգաւրսն եւ հանելով զթշնամին յաշխարհէ ցուցանեն, եթե ոչ ըստ սահմանելոյ ինչ հրամանի կոտորածքն գործիցին, այլ՝ ի բռնաւորութենէ հինին, որ եկեալ՝ ժլատութեամբ կոտորէ զաշխարհ եւ մերկանայ յընչից եւ ի ստացուածոց։

[ԺԶ.]

1 Բայց զայն եւս գիտել պարտ է, եթե զամենայն ինչ զվնաս, որ ի վնասակարաց գործիցի, յառաջագոյն գիտէ Աստուած։ 2 Եւ «Եթե գիտէ,- ասեն,- զվնասս, որ գաւրոց են ի վերայ մարդկան, ընդէ՞ր ոչ արգելուցու»։ 3 Եթե սրչափ վնասս արգելու Աստուած ի մարդկանէ, այն ոչ ամենեցուն յայտնի է, այլ՝ նմա միայն, որ զամենեցունց զխնամս ըստ իւրաքանչիւր պիտո-

յից բաշխէ։ 4 Կարճէ երբեք եւ զվնասս վնասակարացն, զի մի այնպէս երեւեսցի, թե չկարիցէ արգելուլ զվնասսն։ 5 Դարձեալ. թուլացուցանէ եւ վնասակարին յագեցուցանել զկամս իւր յընկերին, զի մի թուիցի ընդ հարկաւ վարել զբանաւորսն, այլ զի յիւրաքանչիւր գործոց անցնիւր հանդէսք երեւիցին։ 6 Եւ կանխաւ գիտէ զամենայն, եւ կանխագիտութիւնն չէ պատճառ չարեաց, քանզի եւ ոչ, յորժամ տեսանիցէ ոք զընկեր իւր ընդ լպիրծ տեղիս զնացեալ եւ ասիցէ, թե «Գլորելոց է», նա ինչ եղեւ պատճառք զլորման ընկերին, եւ ոչ յորժամ ընդ աւագակուտ տեղիս դիմեալ զընկերն ոք տեսանիցէ եւ ասիցէ, թե «Եղեռն գտանէ», նա ինչ իցէ պատճառք վնասուն, եւ ոչ, յորժամ զագնուականի ուրուք զորդի յաղակատանս հասեալ տեսանիցէ եւ ասիցէ, եթե «Կորուսանելոց է զարարածս հայրենիս», նա ինչ իցէ պատճառք վատնելոյ ընչիցն. նոյնպէս եւ ոչ Աստուածոյ յառաջգիտութիւնն է պատճառք բարեաց կամ չարեաց։

7 Գիտէ Աստուած կանխաւ զամենայն, այլ է՛ ինչ, զոր կամի, եւ է՛ ինչ, զոր ոչ կամի։ 8 Կամեցաւ ածել ջրհեղեղ, եւ ոչ իւր այն կամք էին, թե ջրհեղեղաւ մարդիկ եւ անասուն առ հասարակ սատակիցին, այլ անարժան խառնիցն ազգին յանդգնութիւն ած զնա յայն՝ առնել զոր ոչն կամէր, որպէս ինքն իսկ ուխտէ մարգարէիւն, թե Ոչ կամիմ զմահ մեղաւորին, այլ՝ զդառնալն նորա եւ զկեալ³։ 9 Կամէր, թե չէր յանցուցեալ Ադամայ. եւ քանզի կանխաւ գիտէր զյանցանելն, յառաջագոյն պատուիրեաց նմա, չուտել ի պտղոյ ծառոյն, եւ զի ոչ անսաց հրամանին, յիրաւի պատժեցաւ։ 10 Կանխաւ գիտաց զՅակովբայ, թե առաքինի լինելոց է, եւ՝ զՆսաւայ, թե յանպիտանութիւնս կործանելոց է, եւ վասն այնորիկ Միւնչ չեւ ծնեալ էին եւ միւնչ

³ Եւբդ. ԺԲ 32. ԼԳ 11

չեւ մի ինչ բարի կամ չար գործեալ էր՞, *ա-սէ՛*՝ ԶՅակովբ սիրեցի եւ գեսաւ ատեցի՞: 11 *Եւ յառաջագոյն Հայեցեալ ի նախան-ձաւորութիւնն Յովսեայ արքայի Յուդայ՝ ազդ արար կանխագոյն մարգարէիւ, թե յառնելոց է ի նոցանէ թագաւոր, որ զկուս-պաշտութիւն որդւոցն Իսրայելի եղծանի-ցէ: 12 Եւ յառաջագոյն ծանուցեալ զագ-նուականութիւնն Կիւրոսի պարսկի՝ կան-խաւ գուշակեաց, եթե արձակելոց է զգե-րիս ժողովրդեանն:*

[ԺԷ.]

1 *Եւ յայտ է, եթե կանխաւն գիտել ա-ռաւելութիւն է սքանչելի էութեանն, զբա-րին կամել եւ ոչ զչար՝ բարերարութիւն մարդասէր բնութեանն էր: 2 Յառաջագոյն Հայեցեալ ի Հեստութիւն փարաւոնի՝ ասէ. ես խստացուցից զսիրտն փարաւոնի՞: 3 Եւ Թե ցա խստացոյց,- ասեն,- ընդէ՞ր ե-հար հարուածով գնա եւ գերկիրն եգիպ-տացւոց: 4 Այլ Առաքեալ մտանէ ջատագով Տեառնն իւրոյ, եթե ոչ ցա խստացոյց զփա-րաւոն, այլ՝ ինքն անձամբ գանձն. եւ ասելն Աստուածոյ, թե ես խստացուցի՞ *այնպիսի ինչ է, որպէս ոք յորժամ զընկեր իւր կամ զծառայ մեծարիցէ, եւ նա Հպարտացեալ՝ արհամարհիցէ զմեծարիչն, եւ նա ասիցէ, թե «Զի՞ զնեմ նմա մեղ. ես անձամբ արա-րի ինձ թշնամանս, զի ածի ի պատիւ զա-նարժանն».* նոյնպէս եւ զԱստուածոյն ի-մանալի է, թե «Ես ներելովն իմով եղէ պատճառք խստանալոյն նորա, զի ոչ յա-ռաջնումն սատակեցի զանդրանիկն նո-րա»: 5 Այլ Կամեցաւ,- ասէ,- Աստուած ցուցանել զբարկութիւնն իւր եւ յայտնի առնել զգարութիւն իւր, զոր ած բազում երկայնմտութեամբ ի վերայ ամանոցն*

կազմելոց ի կորուստ՝: 6 *Ուստի յայտ է, թե երկայնմտութիւնն Աստուածոյ եղեւ պատճառ խստութեան սրտին փարաւոնի այնու, զի զվերջին Հարուածան յառաջ-նումն ոչ ած ի վերայ նորա: 7 Այլ զի չէր քարացուցեալ Աստուածոյ զսիրտն փարա-ւոնի, այնու իմանալի է, զի մերթ Հաւանէր արձակել զժողովուրդն եւ մերթ ՀՀաւա-նէր: 8 Եւ «անաւթն կազմեալս ի կո-րուստ» ինքեանք զանձինս արարին, եւ ոչ՝ Աստուած, զորմէ ասէն Առաքեալ, եթե Կամի, զի ամենայն մարդիկ կեցցեն եւ ի գիտութիւն նշմարութեան եկեցցենէ. եւ ո՞չ ապաքէն եւ նոքա «յամենայն մարդ-կանէ» էին:*

9 *Եւ ոչ՝ որպէս ընդդիմակաց կողմն ասէ, եթե Ո՛չ ըստ կամել է եւ ո՛չ՝ ըստ ըն-թանալ, այլ՝ ըստ Աստուածոյ ողորմելոյն, զի Որում, կամի, ողորմի եւ որում, կամի, խստանայ՞: 10 Եւ ըմբերանեալ զզիմակաց կողմնն Երանելոյն՝ ասէ. Դու ո՞վ ես, ո՞վ մա՛րդ, որ պահանջես պատասխանի յԱս-տուածոյ՞: 11 Եթե եւ այնպէս ինչ էր, դու ո՞վ էիր, որ Համարս պահանջէիր յԱս-տուածոյ. Մի՛ թե ասիցէ կաւն ցրուտն, թե Ընդէ՞ր այդպէս ստեղծեր զիս՞: 12 Բայց զի ոչ այնպէս է, նորին իսկ ի նմին թղթի գրեալ՝ ասէ, եթե Որում, կամիք, ընծայեցու-ցանէք գանձինս ձեր ի հնազանդութիւն՝ ե-թե՛ արդարութեան եւ եթե՛ հնազանդու-թեան մեղաց՞: 13 Եւ առ Տիմոթէոս գրեալ՝ ասէ. եթե ոք սրբէ գանձն իւր, եղեւ ցա ա-նաւք կազմեալ՝ պիտանացու ի գործ Տեառն իւրոյ՞: 14 Եւ մարգարէն ասէ. եթե ախորժեսչիք եւ լուիչիք ինձ, զբարութիւն*

չ *Հուս. Թ 22*

է *Ը Տիմ. Բ 4*

ը *Հիմք. Հուս. Թ 16, Հուս. Թ 18:*

թ *Հուս. Թ 20*

ժ *Հուս. Թ 20-21, Ես. Խ 9*

ճ *Հուս. Գ 16*

է *Բ Տիմ. Բ 4*

է *Հուս. Թ 11*

զ *Մատ. Ը 2-3*

է *Եւ. Գ 21, Է 3*

ե *Եւ. Ժ 1*

երկրի կերիջի՞ք: 15 Եւ այսու ամենայնիւ եւ այլովք բազմաւք յայտ է, եթե ոչ նա «անաւթս բարկութեան» կազմէ ի կորուստ, եւ ոչ՝ «անաւթս ողորմութեան» ի փառս, այլ ինքեանք զանձինս՝ կա՛մ ի կորուստ, կա՛մ ի փառս: 16 Եւ զի Ձիք ակնառութիւն առ ի յԱստուածոյ՞, ասէ. Մի՛ թե չրեից միայն իցէ Աստուած եւ հեթանոսաց՝ ոչ. այո՛ւ, եւ հեթանոսաց, զի նոյն Աստուած է, որ արդարացուցանէ զթլփատութիւնն հաւատովք եւ զանթլփատութիւնն նովին հաւատովքէ. եւ դարձեալ՝ թե Զորս կոչեաց ոչ միայն ի չրեից, այլ եւ՝ ի հեթանոսաց՝. եւ այլուր՝ թե Մի է Տէր, եւ մի՛ հաւատ, եւ մի՛ մկրտութիւն եւ մի Աստուած ի վերայ ամենեցուն եւ ընդ ամենեսեան եւ ամենայնիւ՛:

17 Դարձեալ. յառաջագոյն սպառնացեալ զերութիւն ժողովրդեանն՝ ուխտէր, թե ես խաւսեցայ. արդ, արարից եւ ոչ դարձուցիցք. եւ ոչ թե իւր այն կամք էին, այլ նոցա ամբարշտութիւնն ած զնա յայն, [զ]որ ոչն կամէր: 18 Եւ եթե ի նմին հետուութեան, յետ սպառնալեացն, նոցա չէր աղուացեալ, ոչ մատնէր զնոսա ի ձեռն թշնամեացն. լաւ համարէր զիւր բանսն շրջել քան զնոսա ի ձեռս այլազգեաց մատնել, որպէս ի Նինուէացւոցն ասպաշխարութիւնն հայեցեալ՝ ոչ կործանեաց զքաղաքն:

19 Դարձեալ. եւ զԵրեմիա յառաջագոյն նկատեալ՝ ասէ. Մինչ չեւ նկարեալ էիր յորովայնի, ծանեայ զքեզ: 20 Ծանեայ զքեզ՝ ասէ. զի ցուցցէ, թե յառաջագոյն

զիտէր, թե որպիսի՛ ոք լինելոց է, եւ դրոշմեաց զնա ընդ սուրբս այնու, զոր ասէ, թե Մինչ չեւ ելեալ էիր յարգանդէ, սրբեցի զքեզ եւ մարգարէ ազգաց ետու զքեզ՞. նոյնպէս՝ ե՛ւ զՍամուէլ, ե՛ւ զԶոբաբել, ե՛ւ զՊաւղոս, որպէս եւ ասէ իսկ, թե Ընտրեաց զիս յորովայնէ մաւր իմոյ աւետարանել զՈրդին իւր ինեւ՞ք, ե՛ւ՝ զամենայն իսկ սուրբս, որպէս ասէ Առաքեալ, թե Զորս յառաջագոյնն նանաչէր, յառաջագոյն սահմանեաց կերպարանակից լինել պատկերի Որդոյն իւրոյ՞ք, եւ դարձեալ՝ թե Ընտրեաց զմեզ յառաջ քան զլինելն աշխարհի՞ք:

21 Եւ զի բարեաց կամեցող է Աստուած, ուսուցանէ Տէր մեր յասելն, թե Այս եմ կամք չաւր իմոյ, որ յերկինս է, զի ամենայն, որ տեսցէ զՈրդի եւ հաւատացէ ի նա, ընկալցի զկեանսն յաւիտեանիցքէ. եւ դարձեալ՝ թե Իմ կերակուր այն է, զի արարից զկամս չաւր իմոյ՞, եւ՝ Այս եմ կամք չաւր իմոյ, զի գամենայն, զոր ետ ցիս, ոչ կորուսից ի նմանէ, այլ յարուցից զնա յաւուրն յետնումքէ: 22 Արդ, կամի, զի ամենեքեան, որ հաւատան յՈրդի, մի կորիցեն, այլ զի յարիցեն յաւուրն յարութեան: 23 Եւ զործն յարութեան յետ ազգաց բազմաց լինելոց է:

24 Բայց Աստուած զբարւոք կամսն ե՛ւ ունէր ի բնէ, ե՛ւ ունի, եւ ոչ են եկամուտ ի նա կամքն, այլ՝ բնակաւորք ըստ անճառ բարերարութեանն, եւ որպէս յառաջագոյն ասացաք, իւր կամքն՝ միշտ բարեախորժք, եւ կամի, զի եւ իւր բանաւոր արարածքն ցանկացողք բարեաց եւ զործանեայ արդարութեան լինիցին: 25 Բայց

ճ Ես. Ը 19
 Կ Գործ. Ժ 34, Հռոմ. Բ 11, Կող. Գ 25
 Ե Հռոմ. Գ 29-30
 Ղ Հռոմ. Թ 24
 Է Եփես. Գ 5-6
 Ը Եփես. Ժ 25
 Թ Եբեմ. Ը 5
 Ճ Եբեմ. Ը 5

ճա Եբեմ. Ը 5
 ճբ Գող. Ը 15-16
 ճգ Հռոմ. Ը 29
 ճդ Եփես. Ը 4
 ճե Յովս. Գ 40
 ճզ Յովս. Գ 34
 ճէ Յովս. Գ 39

քանզի գիտէ, թե կէսք գան ըստ կամաց նորա, եւ կէսք ոչ գան, վասն այնորիկ զկիսոցն առաքինութիւն վասն զայլս ի բարւոք նախանձ յորդորելոյ անդատին յորովայնէ քարոզէ, նոյնպէս եւ՝ զայլոցն զանպիտանութիւն, իբր ոչ եթե ինքն զոմն յորովայնէ անպիտան ստեղծանիցէ եւ զոմն՝ պիտանի: 26 Եւ թե այնպէս ինչ էր, զի՞ պիտոյ էր զպիտանին գովել եւ զանպիտանն պարսաւել, թե ինքն արարիչ է պիտանութեանն եւ անպիտանութեան: 27 Նա՛, եւ ոչ մեղադիր պարտէր լինել անպիտանութեանն, թե իւր զնա այնպէս ստեղծեալ էր յորովայնէ:

28 Եւ արդ, յայտ է, եթե ասելն Աստուածոյ, թե ԶՅակոբ սիրեցի եւ գեսաւ ատեցի՞, կանխաւ գիտել է, թե սա սիրելի լին[ե]լոց է յիւրոց բարուց, եւ նա՛ ատելի: 29 Եւ զի յիւրոց բարուց եղեւ ատելի Եսաւ, ասէ Առաքեալ. Մի՛ ո՞ք պոռնիկ եւ պիղծ իբրեւ գեսաւ՞ եւ Մի՛, արմատ դառնութեամ ի վեր երեսեալ՝ զայլս նեղիցէ՞. եւ յայտ արար, թե յիւրոց կամաց եղեւ այնպիսի Եսաւ եւ ոչ՝ յԱստուածոյ ստեղծուածոյ, որպէս եւ այլուր ասէ, թե Արար Աստուած զվարդն ուղիղ, եւ նո՞քա խորհեցան խորհուրդ չարութեամբ՞, եւ մարգարէիւն ասէ. Ես տնկեցի զբեզ որթ վայելուչ, եւ զի՞արդ դարձար ի դառնութիւն, ո՛րթղ խոպանացեալէ:

[ԺԸ.]

1 Ուստի յայտ է, թե Աստուած զգործուածն ամենեցուն գեղեցիկ գործէ եւ ի բարութիւն եւ ի չարութիւն դառնալոյ զանձնիչխանութիւնն արար կամակար, զի յո՛ր կողմն եւ կամիցի, կարող իցէ դառնալ

եւ ըստ գործոցն եւ զհատուցումնն նոյնպիսի առնուցու եւ մի իբրեւ զանասուն վարիցի, որոյ ո՛չ գործք ինչ բարիք կան, եւ ո՛չ՝ հատուցման ակնկալութիւն այնու, զի անասունն է եւ չգիտէ ընտրել զչար ի բարույ խորհրդիւ, բայց՝ ի բնական բարուցն, որովք, յիշատակաւք միայն վարի յազատակարն, եւ խորշի ի վնասակարէն:

2 Յորս են եւ ազգմունք ինչ բնականք, որովք հանդերձելոց իրիք իրաց ազգ լինիցի նոցա, որպէս ճիոյն՝ ի սմբակէն վարելոյ եւ եզինն՝ ձմերանի ընդ ալուց կողմն նստելոյ եւ մաւտ ի գարունն ընդ դրաց կողմնն դառնալոյ եւ ծիծառան՝ յառաջ քան զաշունն ի ջերին տեղիս ի ձմերոց երթալոյ. եւ խորդոյն՝ իմանալոյ առաջագոյն զձմերունս կարեւորս եւ վաղ ի մարմանդ տեղիս փութալոյ եւ ճայից՝ վաղագոյն տարմատարմ շրջելոյ եւ աղաւնեաց՝ համագունդ, երամ երամ խաղալոյ եւ ազուաուց՝ ի ծմակաց վաղագոյն ի ջերին տեղիս գնալոյ. եւ անգեղց՝ ի հեռաստանէ զգիշոյ անկանելոյ դիտաւորութեան եւ այլոցն՝ ե՛ւ ամենայն անասնոց, ե՛ւ թռչնոց, որպէս եւ մըջեան՝ յամարանոյն պատրաստելոյ զկերակուր, եւ ընդ երկու զհատն կտրելոյ, զի մի բուսանիցի, եւ ի ջեր ժամանակս հանելոյ զկտիկն յորջէ անտի եւ ցամաքեցուցանելոյ եւ մեղուաց՝ զգուրս մեղուանոցացն յառաջ քան զցուրտն ականամոմով խնլոյ եւ արջոյ՝ յառաջագոյն քան զձմեռն ի բայոց մտանելոյ եւ երէոյ՝ կանուխ ի լերանց ի դաշտ դիմելոյ. եւ եղջերուաց՝ գտակաւ զժամանակ խառնիցն իմանալոյ եւ իշավայրաց քինացելոց՝ զարու յաւանակս ի մատաղութեան կտրելոյ: 3 Եւ այս ամենայն ազգեցութիւնք բնականք են յանասունսն եւ ոչ՝ խորհրդականք, որ յարարչէն նոցա տնկեալ են ի նոսա առ ի յաւժարելոյ յազատակարն եւ խորշելոյ ի վնասակարացն:

ՊՊՊ. Ը 2-3
 ԼԵՔՐ. ԺԻ 16
 ԼԵՔՐ. ԺԻ 15
 ԺՊՊ. Լ 30
 ԼԵՔՐ. Լ 21

[ԺԹ.]

1 Եւ ոչ միայն յանասունսն են բնական ազդեցութիւնք, այլ եւ՝ ի մարդկան, որ խաւսունք եւ իմաստունք են: 2 Որպէս յորժամ ակն խաղայցէ բնական ազդեցութեամբ, վասն զնորոգ ոք տեսանելոյ լինի, ասեն, նշանակ, որք այնմ ստէպ միտ դնեն. եւ յորժամ յերանս կամ յայլ անդամս [] միս խաղայցէ, նշանակ հեծանելոյ ուրուք է, ասեն, կ'ամ հանդերձս ազնիւս ազանելոյ, կ'ամ սիրելւոյն պատահելոյ, կ'ամ գան ըմպելոյ. նոյնպէս եւ յորժամ ոտն կծիցէ կամ ձեռն, մին, ասեն, ճանապարհի գնալոյ նշանակ է կամ՝ անձրեւի, եւ միւսն՝ առնլոյ ինչ յումեքէ կամ՝ տալոյ:

3 Նոյնպէս ե՛լ փնջելն, ե՛լ լեզուին կծել, ե՛լ ունկանն հարկանել, ե՛լ ըմբանին կծել ոչ եթե յայտոյ իմեքէ լինի, այլ՝ ի բնական ազդեցութենէ անտի, զոր տնկեալ է արարչին յանդամսն, զի, յորժամ ի խորհրդական զգուշութենէն գեղծիցի, բնական ազդեցութեամբն պատասպարեսցի:

4 Ե՛լ յաւրանջելն, ե՛լ ձգտել, որպէս կարծեցին ոմանք, ոչ ի դիւէ լինի, այլ՝ ի մեղկութենէ եւ ի թուլութենէ մարմնոյն:

5 Ուստի գատէպ յաւրանջելն եւ ձգտելն հմուտ բժիշկք ի մթերելոյ մաղասոց ասեն, զոր եւ փորձն իսկ յայտ առնէ, զի յորժամ ստէպ ոք յաւրանջիցէ, սարսափիւն գայ զոսկերաւքն, եւ քստմունքն գնան ընդ անդամսն:

6 Եւ ո՛չ՝ փնջելն ի հրեշտակէ, այլ՝ կա՛մ ի ցրտոյ, կա՛մ վասն այլ իրիք բնական ազդեցութեան:

7 Նա՛, եւ յոգւոցն հանել երբեմն յիշատակաւ լինի եւ երբեմն՝ առանց յիշելոյ գոք:

8 Եւ զի բնական ազդեցութիւնք են եւ ոչ՝ ի դիւաց, յայտ անտի է՝ զի եւ յանասնոց բնութիւնս գտանին նոյնք:

9 Եւ յոգւոցն հանել յորժամ ոչ զոք կամ զինչ ինչ բարի կամ զկարիս յիշելոյ

լինիցի, բնական ազդեցութիւն է առ ամփոփելոյ զոմն ընդ երկիւղիւ արարչին եւ ճանաչելոյ զիւրոյ բնութեանն տկարութիւն: 10 Եւ յորժամ յիշատակաւ լինիցի, կա՛մ առ սիրոյ սիրելւոյ լինի, կա՛մ՝ առ անարժանս ինչ եւ զվնասս աշխարելոյ, որպէս յորժամ ի լրջեաց ծուլայցէ, գիշերական երազովքն ամփոփի ընդ երկիւղիւ:

[Ի.]

1 Եւ երազոցն այլ եւ այլ պատճառք են:

2 Է՛ ինչ, զոր ցերեկ ընդ բերան ածիցէ մարդն. ի նոյն ե՛լ՝ ի դադարել մարմնոյն եւ՝ ի քունն զբաղնուն միտքն: 3 Եւ է՛ ինչ, զոր բնաւ չիցէ ածեալ զմտաւ եւ տեսանէ յերազի: 4 Եւ այնր երկու պատճառք են. կա՛մ հաստատուն ինչ տեսանել իբր ընդ հայելի՝ աւրինակաւ, յԱստուածոյ շնորհացն ազդեցութենէ վասն ի լաւութիւնս զմարդն յորդորելոյ, եւ ոչ՝ յայտ յանդիման, ճշմարտութեամբ, որպէս Յովսեփայ եւ Դանիելի մեծամեծ իրաց տեսիլք յայտնեցան, եւ մի իմն՝ ի հակառակորդէն. քանզի նա անմարմին է, որպէս շունչ մարդոյն՝ անմարմին, եւ ածեալ՝ կերպարանս կերպարանս առաջի նկարէ, մերթ՝ զկանաց վասն ի ցանկութիւն զբզուելոյ, եւ մերթ՝ զահագին գազանաց եւ զսողնոց վասն զարհուրեցուցանելոյ, որպէս եւ Յովքն ասէ, թե Եւ երազովք գարհուրեցուցանես զիս՝: 5 Եւ բազում անգամ ի կանաց կերպս եղեալ՝ զարս խաբէ յերազի, եւ է՛ երբեք՝ յարանց կերպս դարձեալ՝ զկանայս յանցուցանէ, իբր ոչ եթե արուական եւ իգական անդամք կայցեն նորա, այլ խտղտեալ զաման ցանկութեանն՝ տայ հեղուլ ի բաց զարութիւնսն: 6 Եւ ոչ, յորժամ ի մարդ մտեալ իցէ եւ յարուական կամ յիգական բարբառս պատճառիցի, պարտ է հաւատալ, թե արութիւն կամ ի-

Յ*բ. Է. 14

գութիւն գուցէ նորա: 7 Եւ ոչ, յորժամ ցուցանէ, թե ի գանէ կամ ի սրոյ երկնչիցի, հաւատալի է, զի նմա գան՝ Աստուածոյ սաստն է, ե՛ւ՛ սրբոց շնորհք, զոր ի Հոգւոյն սրբոյ ունիցին: 8 Կա՛մ ի կենդանութեան, կա՛մ ի քաղցրաքուն հանգստեանն ցուցանէ, թե ի գանէ եւ ի սրոյ երկնչիցի, զի զմարդիկ յայն ապաստան արարեալ՝ ծուլացուցանիցէ խնդրելոյ յԱստուածոյ զաւգնականութիւնս, զոր եւ Տէրն իսկ յայտ արար ասելովն, եթե Այս ազգ ոչ ելանէ, եթե ոչ՝ պահովք եւ աղաւթիւք՝:

9 Եւ ոչ ամենայն թալանալ եւ ցնորել մարդկան ի դիւէ է, այլ է՛ որ ի մաղձոյ է, եւ է՛, որ ի մաղասէ, եւ է՛, որ՝ յուղղոյն սնանալոյ, եւ է՛ որ՝ ի ստամոքսէ խանգարելոյ, եւ է՛, որ՝ յորովայնէ խստանալոյ, մինչեւ ցփրփրել անգամ եւ զաչս յեղյեղուլ:

[ԻԱ.]

1 Այլ յուղղոյն սնանալոյ եւ ի մտաց իսկ անկանի մարդ եւ խաւսի ընդ որմս եւ կազի ընդ հողմս: 2 Ուստի բժիշկք յամառին, թե «Բնաւ չիք դեւ, որ ի մարդ մտանիցէ, այլ ցաւք են այն, եւ մեք դարմանովք կարեմք բժշկել»: 3 Այլ մեք գայն ոչ ասեմք, քանզի ճշմարիտ է մեզ բանն Աւետարանի, եթե բազում դեւք իբրեւ տեսանէին զՅիսուս, աղաղակէին եւ ելանէին ի մարդկանէ՞, եւ նա սաստէր ի նոսա եւ ոչ տայր խաւսել նոցա. հանդերձ այլովք նոյնպիսեաւք:

4 Եւ լուսնոտքն, որ ասին, ոչ եթե լուսնոյ վնասեալ՝ այնպիսիք կոչին, այլ դաս ինչ է դիւաց, որ ըստ լուսնոյ յայտնին:

5 Եւ փորձել այնչափ իշխէ Սատանայ, որչափ հրաման առնու, եւ յայտ ի Յովբայ փորձանացն է, զի, եթե ոչ նախ առ հրա-

ման յԱստուածոյ, ոչ ժտեցաւ փորձել զնա, եւ՛ ի խոզից երամակէն, յոր ոչ իշխեցին մտանել դեւքն, թե ոչ առին հրաման ի Տեառնէ:

[ԻԲ.]

1 Այլ են ոմանք, որ վիճին, եթե բնաւ իսկ Սատանայ ոչ փորձէ զմարդ. այլ յանդիմանին յԱռաքելոյ, որ ասէ, թե Բազում անգամ կամեցայ գալ առ ձեզ, եւ խափանեաց զիս Սատանայ: 2 Եւ դարձեալ ասէ, թե Ոչ է մեզ մարտ ընդ մարմնոյ եւ ընդ արեան, այլ՝ ընդ իշխանութիւնս եւ ընդ պետութիւնս եւ ընդ աշխարհակալս աշխարհի խաւարիս այսորիկէ: 3 Եւ յԱւետարանի ասէ, թե Սատանայ իսկ արկեալ էր ի սրտի Յուդայ Իսկարովտացւոյ մատնել զնա՞, եւ դարձեալ՝ թե Ընդ պատառոյն եմուտ Սատանայ, դարձեալ՝ թե Խնդրեաց Սատանայ խարբալել զձեզ իբրեւ զցորեանք: 4 Եւ փորձելոցն այնչափ տայ նմա իշխանութիւն, որչափ մարդն հանդուրժել կարէ, որպէս երանելի Առաքեալ ասէ, թե Հաւատարիմ է Աստուած, որ ոչ արկցէ զձեզ ի փորձութիւն առաւել քան զկար ձեր, այլ արացէ ընդ փորձութեանն եւ զելս, զի համբերել կարասջիք: 5 Եւ Տէր մեր ուսուցանէ յաղաւթսն ասել մեզ, թե Մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի Չարէք, զի ցուցցէ, թե ե՛ւ աղաւթիւք կարեմք ապրել ի փորձանաց Չարին:

[ԻԳ.]

1 Թե այդպէս իցէ,- ասեն,- փորձելոյ վասն հաստատեալ է զնա Աստուածոյ: 2 Այլ մեք ի վերագոյնսն իսկ բազում

Ք Մարտ. ԺԷ 20, Մարտ. Թ 28
 Գ Մարտ. Գ 11, Գ 42

Դ Եթե. Բ 18
 Ե Եթե. Գ 12
 Ղ Յով. ԺԳ 2
 Կ Յով. ԺԳ 27
 Շ Գ 4. ԻԲ 31
 Խ Ե Կ. Ժ 13
 Ծ Մարտ. Գ 13

վկայութեամբ Գրոց սրբոց ցուցաք, թե ոչ ի չարչարել եւ ի փորձել արարեալ է զնա Աստուածոյ, այլ ե՛ւ նովաւ, որ ի չարութիւնն կործանեցաւ, գործ բարւոք գործէ Աստուած, թեպէտ եւ Չարն ոչ այնպիսի մտաւք մատչի փորձել, այլ համարի յաղթել եւ գտանի պարտաւորեալ: 3 Թուլացուցանէ ըստ չարեաց կամաց նորա՝ փորձել զառաքինիս, եւ մտեալ ի փորձութիւնսն նորա իբրեւ ի բովս՝ զտին եւ ընտրին իբրեւ զոսկի սուրբ ելեալ ի հալոցաց:

4 Արդ, եթե չարեաց արբանեակ արարեալ էր զնա Աստուածոյ, ոչ յաւուրսն Աքաաբայ հոգի սուտ լինէր ի բերան մարգարէիցն ստոց, այլ նմա պարտ էր հարկանել զայն սպասաւորութիւն: 5 Եւ ընդէ՞ր հոգի, որ ոչ դաւանէր զՏէր Յիսուս, իցէ յԱստուածոյ, որ զԱստուածոյ սպասն ոչ խափանէ: 6 Եւ ընդէ՞ր «մարդասպան» կոչիցի, որ կեցուցիչն է փորձութեամբք: 7 Եւ ընդէ՞ր որք ոչն հաւատան ի տէր Յիսուս, «որդիք Չարին» կոչէին, եթե նա Աստուածոյ բանիւ իցէ փորձիչ: 8 Եւ եթե Չարին՝ կամարարի Աստուածոյ, որդիք իցեն Հրեայք, ընդէ՞ր եւ ոչ Աբրաամ այնպէս անուանիցի: 9 Եւ ընդէ՞ր «սուտ եւ մարդասպան» անուանիցի Չարն, եթե ի ճշմարտութեան կայցէ եւ ոչ՝ ի ստութեան:

10 Եւ գրեսցուք, թե Հրեայն յանձնէ խաւսիցի սուտ. նա ընդէ՞ր կոչիցի «հայր Հրեին», որ ոչ սուտ առնէ զբնութիւնն, այլ որպէս եղեւն, այնպէս խաւսի: 11 Եւ ընդէ՞ր ասիցէ Առաքեալ, թե հնազանդելոց է փրկչին մերում հանդերձ մահուամբ եւ Սատանայ եւ անկանելոց է յիշխանութենէ եւ ի պետութենէ իւրմէ, որ աստուածանալն անձամբ կամեցաւ: 12 Եւ ընդէ՞ր կապիցի եւ ի տանջանս մատնիցի. ո՞չ ապաքէն՝ զի իւրովք կամաւք զԱստուածոյ սպասն խնդրէր առնուլ ի մարդկանէ եւ ի կռապաշտութիւնս ձգէ եւ դիւթութեամբք եւ հմայիւք եւ քաւղէութեամբ վրիպեցու-

ցանէ զմարդիկ յԱստուածոյ ճշմարտութենէն: 13 Եւ «թշնամի» կոչի վասն զորոմնն ի մէջ ցորենոյն սերմանելոյ. ուստի յայտ է, եթե ոչ բնութեամբ է թշնամի, այլ՝ կամաւք: 14 Եւ եթե բնութեամբ էր նմա չճանաչելն զԱստուած Հայր, զՈրդին զի՞արդ կարէր ճանաչել եւ աղաղակել, թե Դու ես Որդիմ Աստուածոյ՞, եւ, դարձեալ, զառաքելոցն նորա ասել, թե Արքմ այնոքիկ ծառայք եմ Աստուածոյ բարձրելոյ՞:

15 Եւ յայսմ ամենայնէ յայտ է, եթե ոչ է բնութեամբ չար, այլ՝ կամաւք, եւ ոչ չար է չարչարիչ արարեալ է զնա Աստուածոյ, այլ չարակամ բարուքն նորա առաքինեցուցանէ զարդարս, եւ նորա ոչ ինչ գոյ յայնմ շնորհ:

[Ի.Դ.]

1 Եւ ոչ, լուսաւորքն, որպէս յառաջագոյն ասացաք, կենդանիք ինչ են եւ պատճառք բարեաց կամ չարեաց, այլ միայն յոր կարգեցանն, զայն սպասաւորութիւն հարկանեն, որպէս ասաց Մովսէս, թե Արար Աստուած զլուսաւորսն մեծամեծս եւ եղ զմոսս ի հաստատութեան երկնից՝ լուսատու լինել յերկիրէ: 2 Ուստի յայտ է, թե վասն «լուսատու լինել»ոյ միայն արարան եւ՝ ի նշանս եւ ի ժամանակս եւ յաւուրս», յամիսս «եւ ի տարիս ոչ իբրեւ զկենդանիս, այլ իբրեւ զլուսաւորս «լուսատու լինել» ի ներքոյ երկնից եւ զնշանս աստուածգիտութեան ցուցանել եւ՝ զանձրեւաց եւ զաւղոց փոփոխմանց, որպէս եւ Տէր մեր ասէ. Յորժամ տեսանիցէք ընդ առաւուտս զերկիմս կարմրացեալ, ասէք, թե Անձրեւ լինելոց է՞ եւ լինի. եւ յորժամ հա-

Գ Մարտ. Գ. 12
 Դ Գործ. Ժ. 9. 17
 Ե Ծն. Ը. 16-17
 Վ Ծն. Ը. 14

րաւ շնչիցէ, աւեք, թե Խորշակ մեծ լինելոց է, եւ լինի՞:

3 Քանզի ընդ ծագել արեգական աւ- դոյն զխոնաւութիւն ջուրց առեալ՝ գճա- ռագայթիւք արեւու արկանէ եւ քանզի չեւ եւս է թանձրացեալ եւ ամպացեալ աւդն, սակաւիկ մի արգելլով զնշոյլսն կարմրացուցանէ միայն զարեւն եւ ոչ մթացուցանէ, ուստի երեւի, թե անձրեւի նշանակ է: 4 Նոյնպէս եւ լուսնի ի խոնա- ւութենէ աւդոց նեղեալ՝ ջանայ յիւրմէ զխոնաւութիւնն ի բաց պարզել. ուստի մերձեալ խոնաւութեանն եւ ի նա չհա- սեալ, բակ առեալ՝ ծրանայ շուրջ զնովաւ, որով յայտ առնի անձրեաց նշանակ. եւ այն ոչ միայն ի լուսնի, այլ եւ ի ճրագի, որ նուագագոյն լոյս է, եւս երեւի:

[ԻԵ.]

1 Եւ ոչ երկինք շրջին, զորմէ ասեն արտաքին իմաստունքն, թե «Մերթ ի շրջելն ծածկեն զլուսաւորսն եւ մերթ յայտնեն»: 2 Եւ եթե զամենայն աւր շրջի- ցին, զի՞արդ է՞ զարեգակն աւուր աւուր ի նոյն արեւելս ածիցեն եւ զլուսին՝ յամ- սեան հազիւ ի նոյն տեղիս: 3 Եւ այլ եւս. աստեղք են, որ ի տարւոջ հազիւ մի ան- գամ հասանեն ի նոյն տեղի, եւ են, որպէս ասենն, յերկոտասան ամի ի նոյն տեղի, եւ է՛, որ՝ ի տարւոջ եւ ի կիսում, եւ է՛, որ՝ յե- րեսուն ամի: 4 Այլ [] փորձ իրացն այլ ազգ յայտ առնէ, զի աստեղքն, որ զցայգ յերկինս են, եւ զցերեկ անդէն գտանին. թե երկինք շրջէին, ոչ ի նոյն շաւիղս, յորս ցայգն տեսանէաք, ի նոյնս եւ զցերեկն գտանէին. այլ քանզի ընդ նոյն շաւիղս գնան, որպէս եւ տեսանեմք իսկ ե՛ւ զլու- սին, ե՛ւ զաստեղս ի նոյն շաւիղս, յայտ է, թե նոքա գնան, եւ երկինք կան անշարժ, ետեղակալք, որպէս եւ աստուածատուր իսկ Գիրք «Հաստատութիւն» կոչեն զեր-

կինս, եւ որ ինչ հաստատութիւն է, չէ շարժուն:

5 Իսկ այլոց ի Գրոց պատճառս ա- ռեալ՝ ասեն. «Ի նոյն իսկ Գիրս գրեալ է, թե Եղ զնոսա ի հաստատութեան երկնից՞. ուստի յայտ է, թե բեւեռեալք են եւ ոչ՝ գնայունք»: 6 Թե այնպէս իցէ, եւ յորժամ զԱդամայ ասէ, թե Եղ զնա ի Դրախտին փափկութեան՞, բեւեռեալ համարեսցին եւ մի՞ գնայուն: 7 Իսկ եթե զԱդամայ զշրջելն «եղ» կոչեն աստուածատուր Գիրք, յայտ է, թե եւ զլուսաւորացն գնացս «եղ» անուանեն Գիրք. մանաւանդ զի եւ ի բազում իսկ տեղիս գտանեմք զգնացս լուսաւորացն, որպէս յորժամ ասի- ցէ Յեսու որդի Նաւեայ, եթե Կայցէ արե- գակն հանդէպ ձորոյն Գարաւոնի, եւ լու- սին՝ դէպ դաշտին Եղոնայ՞. եւ չասաց, թե երկինք դադարեսցեն ի գնացից իւրեանց, այլ՝ լուսաւորք. ուստի յայտ է, եթե եր- կինք ետեղակալ են, եւ լուսաւորքն՝ գնա- յունք: 8 Եւ առ Եգեկիաւ ասէ. Դարձցի շողն անդրէն յետս գտասն աշտինանաւի՞ Աքազեան ապարանիցն. որով երեւի, թե արեգակն դարձաւ յետս, եւ ոչ՝ երկինք: 9 Եւ յէկ[] լեսիաստէսն գրեալ է, թե Ծագէ արեգակն եւ մտանէ արեգակն եւ ի տեղի իւր ձգի. ինքն ծագեալ անդ՝ գնայ առ հա- րաւով եւ պատի առ հիւսիսեաւ՞, զի ցուց- ցէ, թե ցերեկ առ հարաւակողմամբ գնայ ընդ արեւմուտս եւ զցայգ առ հիւսիսեաւ դառնայ յարեւե[]լս ընդ լերանց ստորո- տովք, որպէս ասեն իմաստունք, եւ ոչ՝ ընդ ծով, որպէս ասենն, եւ ոչ՝ ի ներքոյ երկրի, զի ի ներքոյ երկրի ոչ ինչ է, որպէս ասէ Յովք, թե Ձգեաց գերկիրս ի վերայ ոչ

՞ Ծն. Ը 17

՛ Ծն. Բ 15

՛ Թե. Ժ 12

՛ Գ. Թագ. Ի 10

՛ Ժ. Ը Ը 5-6

՞ Գ. Կ. Ժ. Բ 54-55

ընչի՞, եւ յասորի Եսայի՞ թե Կացոյց գերկիր ի վերայ ոչ ընչի՞, եւ ընչի իմիք յոչ ընչի չէ հնար գնալ, եւ ոչ՝ ցամաքական բնութեան ընդ խոնաւութիւն ջուրց:

10 Այլ, ասեն. «Մեք իսկ աչաւք տեսանեմք, զի ի ծովէ ելանէ»:

11 Եւ զայն ոչ գիտեն, թե վասն զի ցամաք ուրեք ի ծովէ անտի ոչ երեւի, յայն սակս թուի, թե ի ծովէ անտի ելանիցէ: 12 Որպէս յորժամ թե յարեւմուտս ոք մաւտ իցէ, եւ լեառն ինչ յարեւելից կողմանէ կայցէ, թուի նմա, թե ի լեռնէ անտի ելանիցէ արեգակն, եւ յամենայն տեղիս, որ ընդ []ամբաւ ինչ ոք ուրեք կայցէ, թուի նմա, թե անտի ուստեք, ի մաւտեայ ելանիցէ արեգակն, նոյնպէս եւ նոցա, որ մաւտ առ ծովուն կայցեն, քանզի ոչ կարէ ակն բաց ի ցամաք գործել, թուի, թե ի ծովէ ելանիցէ, որ ոչ ի ծովէ անտի ելանէ, այլ՝ ի ծագաց երկնից, որպէս եւ Դաւթի ի Հոգւոյն սրբոյ ուսեալ՝ ասէ, թե Ի ծագաց երկնից եմ ելի՞ նորա, եւ հանգիստի նորա՞ մինչեւ ի ծագս նորուն՞: 13 Այլ եւ «Ցաւղ սաստիկ,- ասեն,- արկանէ յաշխարհին. ուստի յայտ է, թե ի ծովէն ելանէ»: 14 Եւ զայն ոչ գիտեն, թե զաւգոյն, որ ցայգ ուռնու ի խոնաւութենէ ջուրց, հասեալ ջերմութեան ճառագայթից արեգականն՝ շքթեցուցանէ ի բաց զտամկութիւնն. ուստի ոչ միայն անդ, այլ յամենայն երկրի ընդ արեւածայրս ցաւղ անկանի:

15 Եւ եթե երկինք շրջիցին, զի՞ արդ զԿրոնայն եւ զայլոց աստեղաց պատճառաւորաց ասիցեն «յաստեղատունսն մտանել», որոց մտանելն ապաքէն գնալով լինիցի եւ ոչ՝ առանց գնացից:

[ԻԶ.]

1 Այլ, եւ «Երկիր,- ասեն,- ի միջոցի կայ: 2 Եւ տան աւրինակ ինչ յայսպիսի, թե «Զփամփուշտ յորժամ փչել կամիցիս, ընկեա՛ ի ներքս հատ մի կորեկան. եւ փուքն, որ ի փամփշտին արգելու, առնու զկորեկահատն եւ ի միջոցի ունի. ո՛չ ի վեր տայ գալ եւ ո՛չ՝ ի խոնարհ ձգել: 3 Նոյնպէս,- ասեն,- եւ աւգոս, որ է ի մէջ գնդին երկնից, փակեալ կայ եւ ունի զաշխարհս ի հասարակածի. ո՛չ ի վեր տայ վերանալ եւ ո՛չ՝ ի խոնարհ հակել»:

4 Նախ յիւրեանց իսկ բանիցն յանդիմանին, զի ասեն, թե «Որ ինչ թեթեւ է, ի վեր կողմն գնայ, եւ որ ինչ ծանր է՝ ի խոնարհ», որպէս եւ փորձ իսկ իրացն յայտ առնէ, զի ծուխ եւ շոգի երկրի եւ բոց հրոյ, քանզի թեթեւք են, ի վեր կողմն գնան, եւ զքար եւ զերկաթ եւ զփայտ եւ զայլ եւս ինչ նոյնպիսիս որչափ եւ ի վեր ոք ձգիցէ, ի խոնարհ միտեալ՝ իջանեն: 5 Եւ եթե զսակաւ ինչ զծանրութիւնս ոչ կարէ աւգն ի վեր առնուլ ունել, ո՛րչափ եւս առաւել զայնչափ ծանրութիւն երկրի չէ հնար աւգոյ ի վեր ունել, այլ՝ Աստուածոյ բանին, որ կացոյց զնա ի վերայ ոչնչի:

6 Եւ որ երկմտիցէ ոք, թե զի՛արդ կարիցէ յայս[ափ] ծանրութիւն ի վերայ ոչնչի կալ, հայեցեալ յերկնիցն հաստատութիւն, որ ոչ ի վերայ իրիք կայ, եւ հաւանեսցի, թե որ զերկինս բանիւ հաստատեաց ի վերայ ոչնչի, նոյն եւ զերկիր կացոյց ի վերայ ոչնչի, եւ նորինն հրամանն ունի զերկոսին անշարժս եւ ետեղակալս ըստ այնմ, թե Ինքն ասաց, եւ եղեմ. հրամայեաց, եւ հաստատեցան՞, եւ Կացոյց զնոսս յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից. հրաման եղ, եւ ոչ անցցէ՞:

Ք ԹՔ. Ի.Զ 7
Գ Հմմտ. Ի. Ի. Ի. 22:
Դ Սաղմ. ԺԲ 7

Ս Սաղմ. ՃԻԲ 5, ԼԲ 9
Զ Սաղմ. ՃԻԲ 6

7 Այլ ասեն. «Եթե ի վերայ ոչնչի կայ երկիր, զի՞ արդ ասէ Դաւիթ, թե Նաստատեաց գերկիր ի վերայ շուրց^ք, եւ դարձեալ՝ թե Բնֆն ի վերայ ծովու արկ զհիմունս նորա եւ ի վերայ գետոց պատրաստեաց զնա^ք»: 8 Որ զայդն ի Դաւթայ լուաւ, զմիւսն ի Յովբայ եւ յեսայեայ լուիցէ, զի նոքա ի վերայ ոչնչի^ւ ասեն, եւ սա՛ «ի վերայ շուրց»: 9 Արդ, ոչ եթե հակառակ ինչ միմեանց են Գիրք, այլ զոր միոյն թողեալ է, միւսն եւս լնու նովին Հոգւով, որպէս տեսանեմք իսկ, զի զոր ինչ Մովսեսի չէ ասացեալ, այլ մարգարէք լցին նովին Հոգւով: 10 Մովսէս ասէ. Եստեղծ Աստուած զմարդն հող յերկրէ եւ փշեաց ի նա շունչ կենդանի»: 11 Եւ «փշեկ»ն դեռ եւս ի միջի կայ կարծելոյ, թե իցէ՛ արարած շունչն, թե չիցէ՛: 12 Արդ, զայ Զաքարիա մարգարէ, նովին Հոգւով վարեալ՝ ցուցանէ զարարած շնչոյն. ասէ՛ Որ հաստատէ զհոգի մարդոյն ի նմա^ւ. եւ Եսայիաս ասէ, թե Զամենայն շունչ ես արարի^ւ:

13 Նոյնպէս եւ ո՛չ զհրոյ եւ ո՛չ զջրոյ եւ ո՛չ զաւղոյ եւ ո՛չ զփայլատականց եւ ո՛չ զորոտմանէ եւ ո՛չ զխաւարէ ճառէ ինչ Մովսէս, զորս յերկուց ի մեծ անաւթոցն՝ յերկնից եւ յերկրէ, պարտ է իմանալ, թե ամենայն ինչ, որ ի միջի նոցա գտանի, հարկ է զի ընդ նոսին արարեալ իցէ ըստ այնմ, թե Արար Աստուած գերկիմս եւ գերկիր եւ զամենայն, որ՝ ի նոսա^ւ:

[Ի է.]

1 Այլ, զի մի պատուաւք ինքնակացութեան տգիտաց կարծիցին, որոց արա-

րածն ի Մովսեսն ոչ ճառեցաւ, առ ի հատանելոյ զպատճառն պատճառախնդրացն՝ այլովք մարգարէիւք նոյն Հոգի ընծայեցուցանէ զարարածն նոցա. նախ՝ Դաւիթ իսկ, որով զամենայն իմանալի զաւրու-թիւնսն եւ զերեւելի արարածս ի փառաւորութիւն արարչին կոչէ, յորժամ ասիցէ՛ Աւրիմեցէ՛ք զնա, երկի՛նք եւ երկի՛ր եւ հրեշտա՛կք եւ զարութի՛նք եւ հո՛ւր եւ հո՛ղմք եւ մրրի՛կք^ժ: 2 Որ առնեն զբան նորա եւ որ ի պաշտաւն մտանեն եւ զարբանեկութիւնն հարկանեն, յայտ է, թե արարածք են:

3 Եւ ճիւն եւ սառն եւ կարկուտ եւ մրրիկք՝ թե յայմէ արարչէ էին, ոչ կոչէր զնոսա հոգին ի փառաւորութիւն, այլ իբրեւ զաւտարոտիս մեկուսի դնէր:

4 Բայց նա, տեսանեմք աւանիկ՝ զի ոչ զնոսա միայն, այլ եւ զվիշապս եւ զգազանս եւ զխաւար եւ զփայլատակունս, զոր ի չարէ դնեն, ի նոյն փառատրութիւն նորին հոգւոյ կոչեցեալ, եւ Դաւթաւ եւ երեք մանկամբքն ի հնոցի անդ ընծայեցուցանէ, զի ցուցցէ՛ եթե յումէ արարեալ են, [196] ի նորին եւ ի փառատրութիւն յիրաւի կոչին, եւ ոչ՝ որպէս Մարկիոնն դանդաչէ, թե Արդարոյն արարածոց պարտ է Աւտարին բարւոյ պաշտաւն մատուցանել վասն բարեբարութեան. զորոյ անհամութիւնն ի դէպ ժամանակի յանդիմանեցուք:

[Ի Ը.]

1 Եւ արդ, թեպէտ յայնմանէ իսկ յայտ է, թե որ ինչ ի փառատրութիւն արարչին կոչի, նորա արարած է, այլ եւ զմիոյ միոյ իսկ ի նոցանէ զարարած մարթի ի Գրոց ցուցանել. նախ՝ զհրեշտակացն, որպէս ասէ Դաւիթ, թե Արար զհրեշտակս իւր հոգիս եւ զպաշտաւնեայս իւր՝ բոց հրոյ^ք, ապա՛

ք Սաղմ. ճԼԵ 6

ք Սաղմ. ԻԳ 2

է Յոբ. ԻԳ 7

ւ Կռ. Բ 7

է Չաղմ. ԺԲ 1

ը Ես. ԿԷ 16

թ Սաղմ. ճԼԵ 6. Գործ. Գ 24

ժ Սաղմ. ճԼԸ 2-8

ք Սաղմ. ճԳ 4

ե՛լ զհրոյ, ե՛լ զայլոցն եւս մի ըստ միողէ. Զփայլատակուցն իւր յանձրես արարէ՛. եւ փայլատակունք ոչ եթե այլ ուստեք են, եթե ոչ՝ ի բնութենէ հրոյ: 2 Եւ զխաւարէ ասէ. Եղիբ զխաւար, եւ եղեւ գիշեր՞: 3 Եւ զորոտմանէ եւ զհողմոյ միանգամայն ասէ Ամովս, թե Որ հաստատէ զորոտումն եւ հաստատէ զհողմ, Տէր ամենակալ՝ անուցն է նորա՞: 4 Եւ այսպէս զոր միոյ մարգարէի թողեալ իցէ, միւսովն ընու Հոգին սուրբ:

5 Արդ, եթե Դաւիթ ասէ, եթե Ի վերայ ջուրց է երկիրէ, եւ Յովբաւ, Եսայեաւ՝ Ի վերայ ոչնչի կայ՞ ոչ ինչ է ընդ այն զարմանալ եւ ոչ՝ զմարգարէութիւնն հակառակ միմեանց համարել, քանզի ե՛լ այն ճշմարիտ է, ե՛լ այս՝ հաստատուն: 6 Եւ ա՛ն աւերինակ ի մարմնոյ, որոյ ի վերայ մորթ եւ միս է, եւ ի միջի՝ երակք եւ խողովակք արեան, եւ ի ներքոյ՝ դարձեալ նոյնպէս մորթ եւ միս, եւ է մարմինն եւ ի վերոյ քան զերակս արեանն, ե՛լ ի ներքոյ քան զերակսն: 7 Ըստ նմին []աւերինակի եւ երկիր ե՛լ ի վերայ ջրոց է, քանզի ի միջի իւրում ունի զջուրս, ե՛լ ի ներքոյ քան զջուրս եւ ի վերայ ոչ ընչի հաստատեալ կայ ետեղակալ եւ ունի յինքեան զածփոփ, զլոյծ բնութիւն ջրոցն: 8 Եւ երկոցունց մարգարէութեանցն մի եւ նոյն դիտաւորութիւն է, եւ չիք ինչ այլաբանութիւն ի միջի, քանզի ոչ այլ եւ այլ հոգի ետուն զմարգարէութիւնն, այլ՝ նոյն եւ մի Հոգի, որ արժանի արար զմին պատմիչ առնել այլոց իրաց եւ զայլսն՝ մնացելոցն ի նմանէ:

9 Արդ, զի երկինք ոչ շրջին, եւ զի ամենայն ինչ, որ երեւի, արարած է եւ ոչ՝ ինքնակաց, առաջին բնութեանցն աւրի-

նակք եւ Գրոց վկայութիւնք բաւական էին հաւանեցուցանել զմտավարժս: 10 Բայց քանզի ի նմին յամառութեան կան՝ զամենայն ինչ կենդանի եւ շնչաւոր համարել, ոչ հեղգասցուք ըստ մերում կարի եւ այնմ եւս առնել պատասխանի:

[III.]

[Ա.]

1 «Լուսին,- ասեն,- քան զարեգակն յերեսուն աւր անցեալ ընդ ամենայն աստեղատունսն, այս ինքն՝ ընդ ամենայն երկինս, հասանէ ի նոյն տեղի, եւ արեգակն ի տարւոջ: 2 Եւ երկինք զմի տիւ եւ գիշեր առածեալ զինքեամբք՝ շրջին ի նոյն տեղի: 3 Եւ եւթն աստղ միայն է գնացուն, եւ այլն ամենայն բեւեռեալ են յերկինս: 4 Եւ որ գնացուն աստեղքն են, արեգակն եւ լուսին եւ այլ եւս հինգ աստեղք ոչ եթե յարեւելից յարեւմուտս գնան, այլ՝ յարեւմտից յարեւելս»: 5 Եւ տան աւերինակ ինչ, որ ոչ նման է. եթե՝ «Յորժամ անիւ շրջանակիցի, եւ մրջիւն մի ի խեցին գնայցէ յարեւմտից կողմանէ յարեւելս, վասն անուին արագագոյն ընդ արեւմտից կողմն շրջելոյ թուի, թե մրջիւնն յարեւելից յարեւմուտս կոյս ընթանայցէ, որ ոչ յարեւելից յարեւմուտս կողմն գնայցէ, այլ յարեւմտից՝ յարեւելս, եւ անիւն ստէպ շրջելովն այնպէս երեւեցուցանէ»:

6 Եւ «Երկինք,- ասեն,- որչափ ի վեր են, դոյնչափ ի խոնարհ են եւ դոյնչափ՝ յամենայն կողմանց շուրջ զերկրաւ, եւ զերկիրս շուրջ ջուր պատէ, եւ զջուրն եւ զերկիր՝ աւդ, եւ զաւգն եւ զջուր եւ զերկիր՝ հուր: 7 Եւ լուսնի չիք իւր լոյս առանձինն, այլ յարեգականէ գայ ի նա լոյսն. եւ յայտ անտի է,- ասեն,- զի յորմէ՛ կուսէ արեգակնն իցէ, յայնմ թերէ սկսանի ի նմա լոյս ծնանել. եւ ըստ հեռաւորութեան արեգականն՝ սակաւ գայ ի նա լոյսն, եւ ըստ տակաւ տակաւ մերձենա-

Ք Սաղմ. ՃԼԳ-7
 Գ Սաղմ. ՃԳ-20
 Կ Ըմ. Գ-13
 Է Սաղմ. ԻԳ-2
 Ը ՅԲ. Ի, Զ-7

լոյն՝ յաճախէ ի նա լոյսն. եւ յորժամ մաւտ հասանէ ի նա, լնու եւ յորժամ անցանէ զարեգակամբ, սկսանի տակաւ նուազել եւ որչափ ի բացն հեռանայ, այնչափ պակասէ ի նմանէ լոյսն, մինչեւ ամենեւին նուազէ. եւ յորժամ միւսանգամ հանդիպի, ծագէ ի նմա սակաւիկ ինչ ի լուսոյն վասն հեռաւորութեան, եւ որչափ մերձենայ, այնչափ առ սակաւ սակաւ աճէ ի նա լոյսն: 8 Եւ լուսին,- ասեն,- ի ներքոյ է քան զարեգակն եւ քան զամենայն աստեղս. եւ քանզի ի ներքոյ է, յորժամ կշիռ դէպ արեգական պատահիցէ, յայնժամ խաւարի արեգակն»:

9 Եւ պատճառս փոփոխմանց չորից բնութեանցն զաստեղս իբրեւ զկենդանիս ինչ դնեն: 10 Ձայս ամենայն ասեն հայթայթանաւք, զի գերկինս եւ զլուսաւորսն կենդանիս եւ աստուածս կարծեցուցեն:

[Բ.]

1 Արդարեւ, որպէս երանելին Առաքեալ ասէ, թե Իմաստութեամբն Աստուածոյ ոչ ծանեաւ աշխարհ զԱստուած^ա: 2 Եւ զի՞նչ զարմանք են ընդ նոցա, թե զերկինս վասն անչափ մեծութեանն եւ զլուսաւորս վասն առաւել պայծառութեանն աստուածս կարծէին, յորժամ ի փայտս եւ ի քարինս եւ ի գազանս եւ ի ճճիս անգամ աստուածս խնդրէին, զորս իւրեանց իսկ բնութեան բարքն կշտամբեն այնու, զի արարչախնդիր եւ աստուածախոյզ են եւ անկեալք ի միոջէ ճշմարտէն՝ ի բազումս ոտնառեցին, եւ ոչ ուրեք եղեւ կայ, եւ՝ հաստատութիւն, զի խնդրելն զԱստուած գովութեան արժանի էր, եւ ոչ զմին՝ եւեթ, այլ բազումս մոռնանել անհնարին ամբարշտութիւն է:

[Գ.]

1 Եւ առաւել Յունաց իմաստունքն դարովին, զի հասեալ ի վերայ իմաստութեանն՝ չծանեան իմաստութեամբն զարարիչն քանզի դնեն եւ նոքա մի ինչ ինքնակաց պատճառ ամենայնի, որոյ ոչ յուժեքէ եղեալ, այլ՝ ինքն անձամբ ինքնակաց, առաջին գտեալ, եւ երկրորդ աստուած եւ արարիչ դնեն զՄիտս եւ երրորդ՝ զՇունչ, զոր «Ոգի ամենայնի» կոչեն: 2 Ջերկուսն ի միոջէ պատճառէ անտի դնելով ցուցին, թե մերձեցան ի դրունս ճշմարտի գիտութեանն: 3 Եւ ի նոցանէ այլ անթիւ իմանալիս, երեւելիս աստուածս ծննդեամբ ստեղծանելով անձամբ անձին փակեցին զդրունս հաւատոյ գիտութեանն, զի իբրեւ զարեգակն եւ զճառագայթս դնեն զԱստուած եւ զաստուածսն իմանալիս, երեւելիս եւ զբնաւ իսկ զաշխարհ՝ մշտնջենաւորակից նմա եւ յամենայնի՝ զնորա ոգին իբրեւ շունչ ամենայնի՝ ե՛ւ յերկինս, ե՛ւ ի լուսաւորսն, ե՛ւ ի հուր, ե՛ւ յաւազսն, ե՛ւ ի ջուրս, ե՛ւ յերկրի, մինչեւ ցքարինս եւ ցփայտս եւ ցծառս եւ ցարմատս խոտոյ անգամ: 4 «Եւ այնու կենդանութեամբ,- ասեն,- ամենայն արարածք զնորա բնութենէն կախեալ կան, որպէս ճառագայթք արեգական զանուէն կախեալ կան: 5 Եւ ինքն մի է եւ բազում, ե՛ւ բազում է ե՛ւ մի, որպէս արեգակն մի է եւ բազում, զի մի անիւ է, եւ՝ բազում ճառագայթք»: 6 Եւ զայս ոչ ամենեքին այսպէս ասեն, այլ՝ են բազում կրաւնք փիլիսոփայից:

[Դ.]

1 Պիլթագորեանքն եւ պերիպատիկեանքն Միութիւն եւ Խնամակալութիւն ասեն: 2 Եւ չզոհել աստուածոց եդ կրաւնս Պիլթագորաս, զչնչաւորաց միս չճաշակել եւ ի գինուոյ ժուժկալել եւ ի լուսնոյ եւ ի վեր զամենայն ինչ, որ է, անմահ համարել, եւ որ ինչ նորա ի ներքոյ՝ մահկանացուս, եւ՝ փոփոխումն շնչոց ի մարմնոց ի

^ա Ը Կ * Ը 21

մարմինս, մինչեւ՝ ցանասունս եւ ցճճիս անգամ: 3 Եւ լուութեան կրաւնս սահմանեաց եւ յետոյ զիւր անձնն աստուած անուանեաց:

4 Իսկ պղատոնեանքն՝ Աստուած եւ Հիւղ եւ Իդոս, որ առաջին՝ «նիւթ» է, եւ երկրորդն՝ «առանձինն ինչ ուրուք», եւ զաշխարհս՝ արարած եւ եղծանելի, եւ զշունչ՝ անարար եւ անմահ եւ աստուածական, որոյ երեք մասունք են՝ բանական, ցասնական, ցանկական, ե՛ւ զկանայս հասարակաց, ամենեցուն համարել, եւ մի՛ ումեք մի կին առանձինն ունել, այլ զոր արքն կամիցին, եւ կանայքն ախորժիցեն, այնց ընդ այնս լինել, եւ փոփոխմունս շնչոց յայլ եւ այլ մարմինս, մինչեւ՝ ցճճիս եւ ցսողունս անգամ, միանգամայն եւ աստուածս բազում ի միողէ ելեալ սահմանէ:

5 Իսկ ստոյիկեանքն մարմին զամենայն ինչ եղին եւ զերեւելի աշխարհս աստուած համարին, իսկ ոմանք ի հրոյ էութենէ համարին ունել սմա զբնութիւն:

6 Եւ Աստուած զմիտս սահմանեցին, եւ իբրեւ թե շունչ ամենայնի իցէ, տարերն երկնից եւ երկրի. մարմին նմա զամենայն ինչ, որ է, եղին, եւ աչս՝ զլուսաւորսն. եւ զմարմինս ամենեցուն՝ կորստականս եւ զշունչս՝ փոփոխելիս ի մարմնոց ի մարմինս:

7 Իսկ եպիկուրեանքն ասեն. «Անհատ եւ անբաժին մարմինք էին զառաջինն, եւ անտի եկաց ամենայն ինչ»: 8 Եւ վախճան լաւութեան զցանկութիւն սահմանեցին, եւ թե ո՛չ Աստուած գոյ, եւ ո՛չ՝ ինամակալութիւն, որ վարիցէ զամենայն:

9 Այս են կրաւնք փիլիսոփայից:

[Ե.]

1 Բայց հեթանոսութեան սկիզբն ի Սէրուքայ ժամանակաց անտի եղեւ, զի ո՛ր լաւ ոք եկեալ յաշխարհ՝ մեռանէր, վասն յիշատակի քաջութեանն զպատկերն երանգաւք ի նկարու հանէին, եւ անտի ուսեալ

տխմարաց՝ տակաւ ի պաշտաւն առնուին, եւ կռոց եւ դրաւչելոց հանգամանք՝ առ Թարայիւ հարբ Աբրաամու. եւ անտի իւրաքանչիւր ոք իւրով արուեստիւ զնոյն դրաւչէր. դարբինն՝ դարբնութեամբ, հիւսնն՝ հիւսնութեամբ, արծաթագործն եւ պղնձագործ եւ քարակոփ եւ բրուտ՝ իւրաքանչիւր արուեստիւ: 2 Եւ անտի կարգեալ՝ հասանէր յԵգիպտացիս եւ ի Բաբելոնացիս եւ ի Փոիւզացիս եւ ի Փիւնիկեցիս գործ դրաւչագործութեան, ե՛ւ՝ խորհուրդք նորին, եւ ապա՝ ի Հելլէնս, որ են Յոյնք, առ Կրոպեաւ եւ եւս յետոյ՝ առաւել աստիք առ Կրոնաւն եւ Րէաւ եւ Դիաւ եւ Ապողոնիւ եւ առ այլովք բազմաւք, զորս մի ըստ միողէ «աստուածս» անուանէին:

3 Եւ «Հելլէնք» կոչին Յոյնք յառնէ միողէ, որում Հեղինոս անուն էր յԵլլագացոց աշխարհին, բայց այլք ասեն, եթե՛ ի ձիթենոյն, որ յԱթենս բուսաւ իւրովի, վասն զի «ձիթենի» յունարէն «եղե՛ա» կոչի: 4 Բայց Յոյնք՝ ի Յաւանայ, որ էր մի յառաջնորդաց աշտարակագործութեանն, վասն որոյ «մերովպք» ամենեքին կոչին յաղագս բարբառոյն բաժանելոյ, քանզի «բաժանումն» յունարէն «մերիսոս» կոչի:

5 Եւ առաջին կրաւնք «խուժականք» եւ «սկիւթականք» եւ «հեթանոսականք» կոչէին, մինչեւ եկն Աբրաամու աստուածպաշտութիւնն եւ աղաւաղեաց զայն:

6 Եւ յուղայութիւն՝ ի Յուդայէ, որ է հրէութիւն, ի չորրորդէ որդւոյն Յակովբայ, յորմէ թագաւորութիւնն էր. եւ կալաւ անունն զամենայն ազգն յուղայական: 7 Եւ ի վախճանի հրէութեան՝ քրիստոնէութեան անուն ի Քրիստոսէ, որ նախ յԱնտիոք անուանեցաւ աշակերտելոցն:

[Զ.]

1 Արդի խնդրելն փիլիսոփայից զԱստուած ի բնական աւրինաց, որ ի միտսն տնկեալ է, որպէս յառաջագոյնն ասացաք, գովութեան արժանի է, բայց ի բազում

աստուածան անկանել. ե՛լ զաշխարհս նմա մշտնջենաւորակից դնել անհնարին ամբարշտութիւն է: 2 Եւ ի դէպ ելանէ նոցա առաքելական բանն, եթե Մանեսան զԱստուած եւ ոչ իրրեւ զԱստուած փառաւորեցիմ[»], զի Աստուածոյ փառաւորութիւն այն էր, թե յարարածոցն մեկնեալ էր զպատիւ արարչին, որով եւ արարածքն իսկ իւրաքանչիւր շարժամբք եւ փոփոխմամբք զարարչէն քարոզեն:

3 Արդ, եթե աստեղքն, ըստ նոցա բանդագուշանացն, աստուածք իցեն, ե՛լ՝ երկինք, ե՛լ՝ արեգակն, ե՛լ՝ լուսին, որ անխաւսքն եւ անմոռնչ են, զի՞նչ աւելի իցէ պատճառն քան զպատճառաւորսն, եւ մանաւանդ յորժամ գնորին իսկ զմիտսն եւ զշունչ, թե մարթիցի Աստուածոյ շունչ ասել, ամենայն արարածոց շնչաւորաց եւ անշնչից բնութեամբ ի նորա էութենէն դնեն, որ ահնարին ամբարշտութեանն է՝ զԱստուածոյ զիւրոյ էութեանն կենդանութիւն հոգեւորաց եւ շնչաւորաց եւ անշնչից առ հասարակ համարել եւ ոչ առաւել՝ արարած կենդանութիւն ի հրեշտակս եւ ի դեւս եւ ի մարդկան, որ բանաւորքն եւ մտաւորքն են, եւ յայլ շնչաւորսն՝ բնական կենդանութիւն ի չորից հիւթոց խառնեալ եւ յաւդեալ, որք յորժամ քակտիցին, եւ կենդանութիւնն ի նոյն չորեսին հիւթսն լուծանի:

4 Ե՛ն ոգիք հրեշտակաց եւ դիւաց, եւ՝ շունչք մարդկան: 5 Արդ, ե՛լ յիւրեանց բանիցն իսկ ոչ ամաչիցեն, որք զշունչն անարար եւ անմահ եւ աստուածեղէն՝ յԱստուածոյ բնութենէ անտի ասեն եւ, դարձեալ, տանջանս եւ պատիժս շնչոցն յանցուցելոց դնեն. որ յետնոյ հայհոյութեանն է, եթե էութիւնն Աստուածոյ ի մասունս բաժանիցի եւ ի բազում շունչս կոտորիցի եւ դարձեալ, զիւրոյ զկէս բնու-

թիւնն միւս կէսն տանջիցէ, եւ կէսն՝ ի փառս, եւ կէսն՝ յանարգանս, եւ մի թերին՝ յանոյշս եւ միւս թերին՝ ի դժոխս:

6 Եւ դարձեալ ասեն. «Թե ոչ կենդանութիւն ինչ է յամենայնի, զի՞արդ իցէ, զի ամենայն ինչ շարժի, եւ սերմանք եւ տունկք արկեալք յերկիր բուսանին, եւ յէգս մարդկան եւ յանասնոց անկեալ սերմանք գան ի ծնունդս եւ յաճումն», յորմէ եւ ոչ մեք յուրաստ ինչ եմք, վասն փորձոյ իրացն զարդեանցն յայտ առնելոյ: 7 Այլ խնդիր այն է, թե այն կենդանութիւն ոչ Աստուածոյ էութեանն կենդանութիւն է, այլ՝ արարած կենդանութիւն, այլ ազգ՝ ի բանաւորսն եւ ի մտաւորսն եւ այլ ազգ՝ յանասունսն եւ յամենայն շնչաւորսն եւ այլ ազգ՝ ի բնականսն, որպէս ի սերմանս, որ յէգս մարդկան եւ յանասնոց անկանին, յորոց մարդկանն առաւել եւ պատուականագոյն է, յորում ե՛լ բնական կենդանութիւն է ըստ մարմնոյն, ե՛լ՝ բանաւորսն սքանչելի ըստ շնչոյն, զի մարմինն եւ նոցա ի չորից հիւթոցն կայ, եւ ոգին՝ ոչ ի չորից նիւթոց յաւդելոց, այլ՝ ի պարզական եւ ի սուղական բնութենէ, եւ այլոց՝ անասնոց, ոչ նոյնպիսի, այլ՝ ի բնական եւ յազդեցական բնութենէ, եւ սերմանց՝ ոչ նոյնպիսի, այլ՝ ի բնական եւ յանշնչական խաղացից:

[Է.]

1 Նոյնպէս եւ ոչ ի լուսաւորսն շնչաւորութիւն ինչ բանաւոր է, այլ՝ բնական եւ խաղացական շարժմունք, ուստի ոմանք եւ հրեշտակս վարիչս եղին նոցա:

2 Այլ մեք զԳրոց սրբոց զհետ երթիցութեք, որ զանձրեւացն ասէ, թե Ձեւ եւս էր Աստուածոյ տեղացեալ յերկիր[»], եւ ոչ՝ որպէս ոմանք դանդաչեցին, թե Սատանայ ունէր իշխանութիւն շարժելոյ եւ փոփոխելոյ զաւղս ըստ այնմ, զոր Առաքեալն ասէ, թե ըստ իշխանի իշխանութեան աւղոյս այ-

[»] Հոգ. Լ. 21

[»] Եւ. Բ. 5

սորիկ^բ: 3 Իշխան աւդոյս այսորիկ^գ կոչէ
 զնա վասն յերկնիցն անկանելոյ եւ յաւզս
 թափառելոյ. եւ յայտ անտի է, զոր ասէ,
 թե «աւդոյ», իսաւարիս այսորիկ^դ, զի
 ցուցցէ, թե ի լուսոյ ի խաւար կործանեալ
 է եւ չէ աւդոյն փոփոխիչ մերթ յանձրեալ,
 մերթ ի ձիւն, մերթ ի կարկուտ: 4 Այլ զի
 Աստուածոյ գործ է այն եւ ոչ՝ Սատանայի,
 ասասցէ Դաւիթ Հոգւովն սրբով ի մաւտոյ,
 թե Հանէ գամբս ի ծագաց երկրէ եւ զփայ-
 լատակունս յանձրեսս արար եւ հանէ
 զհողմս յշտեմարանաց իւրոց^ե. եւ դար-
 ձեալ՝ թե Դնէ գծիւն իբրեւ գասր եւ գե-
 դեամն իբրեւ զփոշի ցանեաց եւ արկանէ
 զսառն իբրեւ զպատառս^զ, Հանդերձ այ-
 լովքն: 5 Եւ մի մարգարէն ասէ, թե Կոչէ
 զջուրս ծովու եւ հեղու գնոսա ի վերայ ե-
 րեսաց երկրի^է: 6 Եւ Յովբ ասէ, թե Ո՞
 ծնաւ զշիթս անձրեւի, եւ յորովայնէ ո՞յր ե-
 լանեմ սառնամանիք, եւ զեղեամն յերկինս
 ո՞ ծնաւ, որ իջանէ իբրեւ զջուր ծորեալ^զ,
 զի ասիցէ, թե «Իմ գործ է եւ ոչ՝ այլ ու-
 ռուք»: 7 Նոյնպէս եւ զլուսաւորսն շարժել
 նորա բանին գործ է եւ ոչ՝ այլոյ ուրուք:

8 Եւ ոչ միայն եւթն աստեղքն զնա-
 յունք են, եւ այլքն՝ առանց զնացից, այլ
 ամենեքեան՝ զնայունք, կէսքն՝ յամրա-
 զնացք, եւ կէսքն՝ արագագնացք, եւ ոչ
 յերկինս բեւեռեալ են, որպէս յառաջա-
 գոյնն ասացաւ, թե իբրեւ զչոնչանն շրջի-
 ցին եւ զնոսա մերթ յայտնեացեն եւ մերթ
 ծածկեացեն: 9 Եւ որ առաւել ծաղուն ար-
 ժանի է, թե արեգակն յարեւմտից յարեւելս
 զնայցէ. եւ ընդէ՞ր ոչ զարեւմուտսն «արե-
 ւելս» կոչիցեն եւ զարեւելս՝ «արեւմուտս»:

բ Եփե՛. Բ 1-2
 գ Եփե՛. Բ 2
 դ Եփե՛. Գ 12
 է Սաղմ. ՃԼԳ. 7, Եբե՛. Ժ 13, Եբե՛. ԾԵ 16
 զ Սաղմ. ՃԽԼ 16
 ի Ըմ. Ե 8
 լ ՅԳ. ԼԸ 28-30

10 Այլ «Բնաւ իսկ,- ասեն,- ոչ ուրեք
 մտանէ արեգակն. եւ զի ոչ մտանէ, անտի
 յայտ է, զի ցայգ ի նորա լուսոյն ի լուսնի
 ամանն լոյս ծագէ, քանզի ինքն երթեալ,
 հեռացեալ՝ յայլ կողմանս երկնիցն գտա-
 նի»: 11 Եւ թե ասիցես. «Թե նա յերկինս
 իցէ ցայգ, խաւարս, որ լինի, ուստի՞ իցէ»,
 ասեն՝ «Յերկրիս ստուերէ լինիցի»: 12 Անդ,
 որ ի վեր յերկինս խաւարն լինի,
 ուստի՞ իցէ. ո՞չ պապքէն յայտ է, թե ու-
 րեք ծածկի ցայգ, որպէս եւ ի մտիցն է տե-
 սանել, զի իբրեւ ի վերուստ ի խոնարհ ի-
 ջանէ եւ դարձեալ յելանելն իբրեւ ի ներ-
 քուստ ի վեր ելեալ՝ համբառնայ:

13 Եւ ի զուր է ճամարտակելն նոցա,
 զի այնչափ մեծութիւն երկնից տան քան՝
 երկրի, զի աստուածատուր Գիրք «զերկինս
 թզաւ» ասեն եւ «զերկիր քլաւ». եւ ոչ ա-
 ւելի զթիզն քան զքիլն գտանեմք:

[Ը.]

1 Դարձեալ. եւ լուսնի թե ոչ իւր ա-
 ռանձինն իցէ լոյս. նախ նոցա բանն ստի,
 զոր ասեն, եթե «Ի յաճախելն՝ յամենայն ի-
 միք աճէ հիւթն, որ ի նմայն է, եւ ի լնուլն
 լնու եւ ի պակասելն պակասէ, որպէս փորձ
 իրացն իսկ յուղիղս ամենայն մսեղեաց
 ցուցանէ, եւ ի ծառս եւ ի տունկս՝ խոնա-
 ւութիւնն: 2 Եւ յԵւրոպն տեղիք ինչ են
 ծովուց, որոց ջուրն ըստ աճել լուսնին աճէ
 եւ ըստ լնուլն լնու եւ ըստ պակասելն պա-
 կասէ»: 3 Եւ նոքա ա՛յսչափ ժմերտեալք՝
 մինչեւ զամենայն մարդկան աչս կամին
 ունել, որք ցայգ ի մտանել արեգականն
 առաւել պայծառացեալ զլոյս լուսնի տե-
 սանեն:

4 Եւ զի՞արդ արագագոյն քան զարե-
 գակն զչանձնաւոր լուսինն ասիցեն. «Զի
 նա,- ասեն,- յերեսուն աւուր կատարէ
 զլնթացսն, եւ արեգակն՝ ի տարւոջ», զորս
 փորձ իրացն յանդիմանէ, ե՛ւ՛ աստուածա-
 տուր Գիրն, որ ասէ, թե Արար երկուս լու-
 սաւոր մեծամեծս եւ եղ գնոսա ի հաստա-

տուրքեան երկնից^ա: 5 Եւ զի զառաւել պայծառութիւն արեգականն ցուցանիցէ, ասէ. Արար զլուսաւորն մեծ յիշխանութիւն տուրնջեան եւ՝ զլուսաւորն փոքր յիշխանութիւն գիշերոյ եւ՝ զաստեղս^բ. ուստի յայտ է, թե յիւրաքանչիւր իշխանութիւնս կարգեալ են եւ ոչ մի ի միոջէ առնուն զլոյսն»:

6 Եւ զաճելն եւ զնուազել լուսնի իբրեւ ընդ պատենիւք իմն մտանել եւ ելանել ասեն իմաստունք եւ նշանս անտի տան, զի է՝ երբեք, յորժամ յաճմունսն իցէ եւ ընլոյն, շուրջ զանաւթովն ծրանայ, որպէս թե ընդ սակաւ ինչ փեռեկումն ծերպից նշոյլք երեւեսցին:

7 Եւ դարձեալ. խաւարելոյ արեգականն եթե լուսնին պատահել պատճառ իցէ, յորժամ լուսնին մթանայցէ, նմա զի՞նչ պատահիցէ: 8 Եթե զաստղ պատճառ պատահելոյն զնիցեն, ահա ոչ տեսանեմք այնչափ մեծ աստղ յերկինս, որ պատահելս լուսնին ծածկել կարիցէ զլուսնին: 9 Նա՛, թե եւ զարեգական լոյսն արգելուլ կարէր լուսին, ապաքէն զիւր լոյսն ծագէր յերկիր, զի գոնեա իբրեւ զլուսնակայ երեւէր տիւն եւ ոչ՝ ամենեւին խաւարչուտ:

[Թ.]

1 Այլ ճշմարիտ է բան Գրոյն, որ ասէ, թե Դարձուցից գարեգակն ի խաւար եւ զլուսին՝ յարիւն^գ, զի ցուցցէ, թե Տէր է լուսաւորացն ե՛ւ լուսաւորելոյ, եւ խաւարեցուցանելոյ՝ առ ի կշտամբութիւն արեւապաշտացն եւ լուսնապաշտացն:

2 Եւ չէ հնար լուսնի յերկիր իջանել, որպէս կախարդաց տեսեալ ի ժամանակի հրամանաւ Աստուածոյ զլուսնոյն արիւնագոյն լինելոյ զկերպարանսն՝ դիւի նմանել լուսնի բարբաջեն, թե զլուսին իջուցա-

նիցեն, որում չէն մարթ լինել, թե որ քան զբազում աշխարհսն մեծ է, թե ի կալ մի փոքրիկ ամփոփիցի եւ կթիցի անստինն: 3 Եւ քանի՛ անթիւ բիւրք բիւրուց կախարդաց են յերկրի. եթե իւրաքանչիւր ոք ի նոցանէ իջուցանել կարէր զնա, ոչ երբեք տային նմա ելանել յերկինս: 4 Այլ զի ոչ երբեք իջանէ, յայտ անտի է, զի ո՛չ զիջանելն ոք տեսանէ զնորա եւ ո՛չ՝ զամբառնալն: 5 Եւ եթե կացեալ՝ միտ զնիցես անդէն, անդէն մթացեալ անաւթն լուսաւորի առ սակաւ սակաւ, մինչեւ ամենեւին յարդարի, զի թե իջանելոյ ինչ հնար գոյր, թեպէտ եւ զիջանելն ոք ոչ տեսանէր, սակայն զհամբառնալն ամենեքեան տեսանէին:

6 Այլ, լուսաւորացն այնչափ ինչ է, որպէս աստուածատուր Գիրք ասեն, թե Եղիցիմ ի նշանս եւ ի ժամանակս եւ յաւուրս եւ ի տարիս^դ: 7 Արդ, եթե լինին ինչ ի նշանս կա՛մ ջերմոց, կա՛մ ցրտոց աստեղք, ոչ եթե իբրեւ զկենդանիս ինչ լինիցին, այլ՝ իբրեւ յԱստուածոյ կարգեալ յայն, զի մի դատարկք ինչ յարարածոցն Աստուածոյ իցեն: 8 Եւ Յունաց իմաստունքն այնու դարովելի են, զի թողեալ զպատճառն՝ պատճառաւորացն պաշտաւն մատուցանիցեն, որպէս երանելի Առաքեալն ասէ, թե Սպասաւորեցան եւ պաշտեցին զարարածս եւ ոչ՝ զարարիչն^ա:

[Ժ.]

1 Եւ դարձեալ. ոչ, որպէս ասենն, է, եթե զերկիրս ջուր պատիցէ, այլ ընդ երկիր եւ ի վերայ երկրի են ջուրք, եւ ըստ երկիր, անդր, ոչ ինչ է, եւ ոչ եթե՛ ջուրք. եւ վկայեսցեն նոցա Հերակլի արձանքն, յորս գրեալ [] է, ասեն, թե «Յայսմ վայրէ ոք անդր մի ժտեսցի երթալ»:

2 Եւ աւղ [ընդ] ջուրս եւ ընդ երկիր խառն է: 3 Եւ զի ընդ ջուրս աւղ խառն է,

^ա Ծն. Ը 16

^բ Ծն. Ը 16

^գ ՅՎ. Բ 31

^դ Ծն. Ը 14

^ա Հն. Ը 25

ի գեռնոցն յայտ է, որ ի ջուրսն զաւղոյն կենդանութիւնն ծծեն: 4 Եւ զի ընդ երկիր նոյն աւգ խառն է, յորժամ անձրեւ լեալ իցէ, եւ արեւ տայցէ, ի գոլորշոյն, որ ի սրտէ երկրին ի վեր ցոլանայ, յայտ յանդիման երեւի:

5 Եւ զի ընդ աւգս հուր խառն է, ի փայլատականցն, որ ի շփելոյ ընդ միմեանս հողմոյն եւ ամբոց արձակին, յայտ յանդիման ցուցանի[]: 6 Եւ դարձեալ. թե յապակի սպիտակ ջուր արկեալ՝ յարեւու ունիցիս, լուսաւորութեան արեւուն մտեալ ընդ սպիտակութիւն ապակոյն եւ ընդ յստակութիւն ջրոյն աւղով թափանցանց անցեալ՝ հուր ծնուցանէ:

7 Եւ զի ընդ ջուրս հուր խառն է, ի քարանցն հանելոց[] ի ջրոյ, զոր ընդ միմեանս շփիցեն եւ հանիցեն հուր, յայտ յանդիման ցուցանի: 8 Եւ գիշերի յորժամ առ ծովեզեր կայցես եւ զջուրն ժքթիցես, նշոյլք լուսոյն հատանին:

9 Եւ գեռունքն, որ ի ջուրսն ի ներքս են, ի չորից հիւթոցն յաւղեալ են՝ յերկրէ եւ ի ջրոյ, յաւղոյ եւ ի հրոյ, որպէս եւ՝ ամենայն մարմնաւորք, որ ի ցամաքին են, զի այնպէս կազմեաց Աստուած զաշխարհ. նախ զչորս հիւթսն մեկնեալս արարեալ՝ ապա նոքաւք յաւղեաց զամենայն, եւ միոյ արարչի գործ է ամենայն ինչ, եւ նոյն վարէ եւ տածէ զբնաւ:

[ԺԱ.]

1 Եւ ոչ՝ որպէս գլուխ փիլիսոփայիցն նոցա Պիլթագորաս եւ պերիպատիկեանքն ասեն մի Միութիւն պատճառ ամենայնի եւ՝ ինամակալութիւն, զոր ոչ ի նմանէ ասեն, այլ թե զաւրութիւն ինչ ինչ իցէ առանձինն ինամակալութիւնն: 2 Թե, որպէս պատճառ ամենայնի ի միոջէ Միութենէ տայ, ե՛ւ զինամակալութիւնն ի նմանէ զնէր, գեղեցիկ եւ գովութեան արժանի կարգէր, բայց զի յայլմէ զպատճառան կարգէ եւ յայլմէ՝ զինամակալութիւնն,

պարսաւանաց արժանի է եւ ոչ՝ յարգանաց:

3 Եւ դարձեալ. զի աստուածոցն ոչ հրամայեաց զոհել, այնու գովելի է, բայց զի ոչ յայտնի քարոզեաց, թե մի Աստուած է, եւ ոչ՝ բազումք, այնու՝ կարի դարձելի:

4 Գովելի եւ առաւել գովելի՝ զի վասն կարեաց եւ ցանկութեանց յաղթելոյ ի կերակրոցն կրաւնաւորեցաւ, բայց զի փոփոխմունսն ոգւոց [ը] մարմնոց ի մարմինս ետ, այնու յոյժ եպերելի է. որպէս թե արդարոցն մեռելոց ոգիք յայլ՝ ի սուրբ մարմինս փոխիցին, կա՛մ՝ ի մարդկան, կա՛մ՝ յանասնոց սրբոց, եւ այն նոցա իբրեւ ընդ հատուցման բարեաց գործոց լինիցի, եւ մեղաւորացն ոգիք յաղտեղի մարմինս փոխիցին, կա՛մ՝ ի մարդկան, կա՛մ՝ ի գազանաց եւ ի ճճեաց եւ ի սողնոց, եւ այն նոցա ընդ հատուցման չարեաց գործոց լինիցի:

5 Եւ զմիսն չուտել եթե վասն զկարիս մարմնոցն խափանելոյ հրամայէր, բարւոք եւ յիրաւի առնէր, ապա եթե իբր ի պղծոյ իմեքէ արարածոց հրամայէր հրաժարել, [...]: 6 Այլ յայտ են պատճառքն, ուստի զմիսն շնչաւորացն չհրամայէր ուտել. որպէս թե հոգի աստուածեղէն իցէ ի մսեղիսն, եւ վասն այնորիկ չիցէ պարտ ուտել զմիս կենդանեացն. վասն որոյ եւ մոգք նախ յազեն եւ ապա սպանանեն զանասունսն, զի յանգգայ ելանիցեն շուռնչքն ի մարմնոց անտի, եւ զայն ոչ գիտեն, եթե երկուս մահ[ս] սպանանեն, մի՛ յազելովն եւ միւս եւս՝ փողոտելովն:

7 Նոյնպէս եւ Պիլթագորաս չհրամայէ անասունս զոհել դից, որպէս թե չիցէ պարտ զոհել աստուածս աստու[ա]ծոց, քանզի հոգի աստուածեղէն ասէ յանասունսն. եւ յայտ անտի է, զի երկիր պագանել հրամայէ եւ զոհել՝ ոչ:

8 Կարի անարժան գործ էր եւ ի լուսնոյ ի վեր գամենայն ինչ անմահ համարել.

յայտ առնէ, թե՛ զայն ամենայն աստուածա կարծէր, եւ անտի եւ ի խոնարհ մահկանացուս դնելով ցուցանէր, թե՛ հուրդ եւ աւդ եւ երկիր կենդանիք ինչ իցեն եւ մեռանիցին, որոց ոչ զկենդանութիւնն զգացեալ՝ եւ ոչ զմահու ազդումն առնուն, որ շնչաւորացն է եւ ոչ՝ անշնչոց:

9 Եւ հինգամեայ լուութիւնն, զոր նորա յաշակերտութիւն եկելոցն սահմանեաց, թեպէտ եւ մեծի ժուժկալութեան աւրինակ էր, քանզի եւ ոչ հարցանել ինչ իշխէին, բայց միայն՝ լսել, այլ ոչ ինչ կարի աւգուտ էր, զի թե՛ յառաջ քան զհինգամեայ զժամանակն վճարէր ոք ի նոցանէ, թեպէտ եւ կարի քաջ ի լսելոյն իմաստանայր, ո՛չ ինքն վայելէր յիմաստութեանն, քանզի ոչ իշխէր խաւսել, եւ ո՛չ՝ այլ ոք, վասն զի ոչ լսէր զիմաստութիւնն:

10 Եւ որ անհնարին յիմարութեանն է, «Յետոյ,- ասեն,- զիւր անձնն աստուած անուանեաց», որ յառաւել հպարտութենէն զիպեցաւ նմա, զի ոչ եկն ըստ բանի Իմաստոյն, թե՛ Որչափ ի մեծութիւն հասանիցես, ի խոնարհութեան կալիքի՝ զանձնն՝:

[ԺԲ.]

1 Իսկ Պղատոն, որ Աստուածն եւ Հիւղ եւ Իդոս դնէ հութեամբ, ցուցանէ, թե՛ կերպարանաց արարիչ է Աստուած, եւ ոչ՝ բնութեանց: 2 Ուստի եւ աղանդացն առեալ՝ նովին դանդաջեն՝ թե՛ «Որպէս Աստուածն հութեամբ էր, նոյնպէս՝ ե՛ւ Հիւղն, ե՛ւ Իդոսն, որ է «առանձինն ինչ ուրուք»». որպէս Աստուածոյ արուեստգիտութիւնն առանձինն էր, եւ Հիւղեայն՝ նիւթն, եւ ի կերպարանս եւեթ կարաց ածել զՀիւղն, որ խառն ի խոռոն վարէր, եւ ոչ ի չգոյէ ի գոյ ած զամենայն որպէս եւ կարող ամենայնի», որ տկարութիւնն արկանէ զԱստուածով, թե՛ կարաւտ եղեւ յայլմէ նիւթ մուրանալ, որով ոչ ինչ առաւել քան զարուեստագէտան գտանի, թե՛ իբրեւ զնոսա կարաւտ նիւթով իցէ:

3 Եւ զաշխարհ արարած եւ եղծանելի ասէ եւ երբեմն նա եւ այլքն՝ մշտնջենաւորակից Աստուածոյ: 4 Եթե՛ արարած եւ եղծանելի է, զի՞արդ մշտնջենակից Աստուածոյ իցէ: 5 Եւ եթե՛ մշտնջենակից է, որպէս ասենն, թե՛ է՛. որպէս ստուեր իրիք ոչ երբեք հեռանայ յիմեքէն, նոյնպէս եւ ոչ աշխարհս՝ երբեք զատ յԱստուածոյ: 6 Թե՛ այնպէս իցէ, զուր է ասելն, թե՛ արարած եղծանելի է աշխարհս: 7 Բայց թե՛ զայն եւս իշխիցեն ամբարշտել, թե՛ եւ որ պատճառ ստուերին է, ի միջոյ բառնալոյ իցէ: 8 Ապա թե՛ այն ոչ լինիցի, քանզի եւ չլինի իսկ, եւ ոչ ստուեր ի միջոյ բառնալոց է, եւ տարապարտ են դանդաջանքն:

9 Եւ շունչքն թե՛ վասն զի յԱստուածոյ էութենէն իցեն, անարարք եւ անմահք իցեն, երբեք մասունքն ի նոսա ուստի՞ իցեն՝ բանականն եւ ցասնական եւ ցանկական, զի թեպէտ եւ մինն է յԱստուած, զի նա է աղբիւր ամենայն բանաւորութեան, այլ ի ցասմանէ եւ ի ցանկանալոյ ի վեր եւ ազատ է Աստուած, քանզի առանց կարեաց եւ առանց մասանց է Աստուածականն:

10 Եւ եթե՛ ինքն, որպէս ասենն, լուութեանց վասն կոյս վճարեցաւ յաշխարհէ, այլոց զի՞արդ հրամայէր զկանայս հասարակաց համարել եւ ոչ՝ իւրում կնոջ եւեթ սկել:

11 Եւ զաստուածեղէն շունչսն ընդէ՞ր եւ նա իբրեւ զառաջինսն փոփոխելիս ի մարմնոց ի մարմինս համարէր, մինչեւ ի սողունս անգամ եւ ի ճճիս, որոյ հայհոյութիւնն ի բունն իսկ գնայ. ըստ նորա ամբարշտութեանն՝ որպէս թե՛ զկէսն իւր յինքեան ունիցի եւ զկէսն իւր ի սողունսն եւ ի ճճիս տանջիցէ, որ ոչ նորա է, որ անբաժինն եւ անքա[կ] եւ անհատ եւ առանց մասանց է:

*** Եւսկ. ԺԳ. 3

12 Եւ եթե, որպէս դանդաչենն, բազում աստուածք ի միոջէ Աստուածոյն ելեալ իցեն, ընդէ՞ր ոչ բազում աշխարհք իցեն, եւ ոչ՝ բազում երկիրք, եւ ոչ՝ բազում արեգակունք, եւ ոչ՝ բազում երկիրք:

13 Այլ թերեւս դատարկս աստուածս եհան յիւրմէ, եւ դատարկք աստուածքն ո՞ւմ պիտոյ իցեն:

[ԺԳ.]

1 Իսկ ստոյիկեանքն մարմնապիշք հայեցեալ յերեւելի աշխարհս՝ զամենայն ինչ մարմին կարծեցին եւ գերեւելի աշխարհս աստուած համարեցան. որք աղանդամիտ գիտեն ի փիլիսոփայից, ո՛չ ինքեանք զիմանալի ինչ զմտաւ կարացին ածել եւ ո՛չ յայլոց ուսանել կամեցան, եթե է՛ ինչ Զաւրութիւն, որ գերեւելիսս շարժէ, եւ զշարժիչն պարտ է Աստուած իմանալ եւ ո՛չ՝ զշարժուսն:

2 Իսկ ոմանք ի նոցանէ ի հրոյ էութեանէ ասեն զբնութիւն աշխարհիս վասն գարեգակն առաւել զարմանալի համարելոյ եւ՝ զբնութիւն հրոյ սաստկագոյն իմանալոյ:

3 Եւ հայեցեալ ի միտս, թե զամենայնէ մտաւքն նկատել մարթեն, վասն այնորիկ զմիտս Աստուած համարեցան իբրեւ զշունչ երկնից եւ երկրի եւ ամենայնի, որ՝ ի նոսա, եւ աչս՝ զլուսաւորսն. որք ըստ անարժան անմտութեանն եւ ոչ պատասխանի առնելոյ արժանի են: 4 Եւ զմարմին, իբրեւ զայլսն, կորստական համարին եւ զշունչսն՝ փոփոխելի ի մարմնոց ի մարմինս, զոր ո՛չ նոքա յայտ կարեն առնել, եւ ո՛չ՝ այլքն աւագագոյնք քան զնոսա, զի ամենեքեան առասպելս արկանեն, եւ թեպէտ եւ կէսքն հասին ճշմարտութեանն, չկացին ի ճշմարտութեանն:

[ԺԴ.]

1 Իսկ եպիկորայքն բնաւ ինքնակաց իսկ համարին զաշխարհս. որպէս թե նախ

հողամաղք ընթանային, որպէս յորժամ շողն ընդ երդ մտանիցէ, եւ հողամաղք իմն երեւին ի շողն, այնպիսի, ասեն, մարմինք անհատք եւ անբաժինք էին զառաջինն, եւ անտի թանձրացեալ՝ յաւդեցաւ ինքն՝ աշխարհս, եւ թե ո՛չ՝ Աստուած, եւ ո՛չ՝ Խնամակալութիւն ինչ, որ վարիցէ զաշխարհս. զորս եւ փիլիսոփայքն ինչ յընչաց քերեն եւ ամենեւին չհամարին զնոսա աղանդս, զորոց եւ Առաքեալ ասէ, թե առանց Աստուածոյ չըլէին յաշխարհի՞՞, որոց այնքան աւրի[...] եղեւ, յայնչափ՝ ի բազում, ի նախրաց փիլիսոփայիցն աստուածոց եւ ոչ մի աստուած ըմբռնել:

2 Տեսանես, զի գործ ստահակութեան այնչափ բռնացեալ ըմբռնելեացն՝ մինչեւ անաստուած հանել յաշխարհէ:

[ԺԵ.]

1 «Առ Սերուքաւ եղեւ,- ասեն,- սկիզբն հեթանոսութեան». ուստի յայտ է, թե ցայն վայր աստուածապաշտք էին, եւ Եկեղեցի Աստուածոյ ի սկզբանէ աշխարհի էր, զորմէ եւ Դաւիթ ի Հոգւոյն սրբոյ ուսեալ՝ մատուցանէր աղաւթս, թե Յիշեա՛ զեկեղեցի Բո, զոր ստացար ի սկզբանէ՞: 2 Բայց թեպէտ եւ հեթանոսութիւնն եմուտ յաշխարհ, այլ աստուածապաշտութիւնն ոչ ամենեւին պակասեաց: 3 Եւ յայտ անտի է, զի գնացեալ Աբրաամ ի հեթանոսացն՝ եկն, աստուածապաշտաց պատահեաց՝ Մելքիսեդեկայ քահանայի Աստուածոյ բարձրելոյ, եւ քահանայ ոչ երբեք անուանի, եթե ոչ ժողովուրդ զուցէ նորա, եւ՝ Աբիմելեքայ, որ Աստուածովն եւեթ խաւսէր ընդ Աբրաամու եւ ոչ՝ դիւաւր: 4 Եւ բարեկամքն Յովբայ եւ Եղիուս Աստուածով միայն ամենակալաւ խաւսէին ընդ նմա: 5 Եւ այնպէս ոչ եթող երբեք Աստուած զաշխարհս առանց վկա-

՞ Եփե. Բ 12
 ՞ Սաղմ. 49 2

յուրթեան, որպէս մարգարէն առ հրէո-
թեամբն ասէր իբրեւ յերեսաց Աստուածոյ,
թե Յամենայն տեղիս արկանեն խունկս եւ
մատուցանեն պատարագս անուան ի-
մում՞, զի ցուցցէ, թե յամենայն դարս աս-
տուածապաշտք գտանէին, որ յանդիմա-
նէին զհեշմակապա[շ]տսն:

[ԺԶ.]

1 «Այլ,- ասեն,- ընդէ՞ր յամեաց գա-
լուստն Քրիստոսի, եւ կորեան այնչափ
ազգք առանց աստուածապաշտութեան»:
2 Եթե չէր աստուածաքարոզս աստուածա-
պաշտութեանն յամենայն դարս առաքեալ,
թերեւս գոյր մուտ այնպիսի բանից, բայց
զի ոչ երբեք դադարեաց ի վկայութիւն
տալոյ, անձանց մեզ դիցեն չհաւանողքն
եւ մի՞ Աստուածոյ:

3 Չեկն Քրիստոս ի տղայութեան աշ-
խարհի, զի տղայոցն կաթն պիտոյ էր, եւ
ոչ՝ հաստատուն կերակուր, եւ ոչ՝ յեռան-
դան երիտասարդութեանն, յորժամ եղեալ՝
զեղոյր մոլորութիւն դիւապաշտութեանն:

4 Այլ նախ կրթեաց քարոզաւքն եւ մար-
գարէիւք իբրեւ կաթամբ եւ ապա եկն տալ
զկատարեալ վարդապետութիւնն իբրեւ
հաստատուն կերակուր: 5 Քանզի եւ ոչ
տղայոյ ոք հաստատուն կերակուր տայ եւ
ոչ մեծամեծ խորհուրդս յայտնէ եւ ոչ ա-
ւագ բանս խաւսի, մինչեւ ի կատարեալ
չափ հասակին հասանիցէ, որպէս Առաքե-
լոյ առեալ զինքեամբ գերեսս ամենայն
մարդկութեան՝ ասէ. Մինչ տղայն էի, իբրեւ
գտղայ խորիէի, այլ իբրեւ եղէ այր, գտղա-
յութեանն խափանեցի՞, զի ցուցանիցէ, թե
ի հասուն հասակի եկն յաշխարհ[ի] ի կա-
տարեալ գիտութիւնն, որպէս յայսմ աշ-
խարհի մարթի հասանել գիտութեան. այլ
ի վայելումն կատարելոյ գիտութեանն ե՛լ
զանձն, ե՛լ զայլս անդր հրաւիրեաց ասե-

լովն, թե Այժմ փոքր ի շատէ գիտեմք, այլ
յորժամ եկեացէ կատարումն, դէմ յանդի-
ման տեսանեմք՞: 6 Ուստի յայտ է, թե առ
ամենայն կարող է Աստուած եւ յամենայ-
նի բաւական: 7 Կարող էր եւս վաղ՝ յառա-
ջին յաւիտեանսն, առնել զաշխարհ. այլ
այնպէս կամեցաւ, զի ո՛չ կարի վաղ առնի-
ցէ եւ ո՛չ՝ յոյժ անագան, այլ յորժամ դէպ
եւ պատշաճ ից՝, զի մի վաղն առնելով
լեալքն վնասիցին կարծեալ, թե մշտնջենա-
կիցք նորա իցեն, եւ մի, դարձեալ, անա-
գանն առնելով կարծիք տկարութեան լի-
նիցին ե՛լ առաջին, ե՛լ միջին, ե՛լ վերջին
խորհրդոցն:

8 Նա՛, եւ զմարդն, զոր ժառանգ ամե-
նայնի կամեցաւ առնել, ոչ նախ քան զժա-
ռանգութիւնն արար, այլ նախ՝ զերկինս եւ
զերկիր, զջուրս եւ զհողս եւ զաւդ եւ
զբոյսս եւ զտունկս, զգազանս եւ զանա-
սունս, զթռչունս, նախ՝ զտունն եւ ապա՝
զտնակալն, նախ՝ զստացուածսն եւ ապա՝
զստացաւդն, նախ՝ զժառանգսն եւ ապա՝
զտէրն, զի մի, յորժամ յետոյ լինիցին, ո-
րոց իշխանն եղեւ, կարծիս վնասու առնու-
ցու, թե իւր արարածք իցեն. այլ յորժամ
նախ զնոսս արարեալս տեսանիցէ, ծանու-
ցեալ՝ առնուցու ի միտ, թե է՛ իմն Զաւրու-
թիւն, որ արար եւ ետ զնոսս ընդ ձեռամբ
նորա, եւ զպատիւ փառաւորութեանն մի
անձին առնե[]լ խոր[հ]իցի, այլ՝ իւրում
տիրարարին, որ ձրի նմա զայն շնորհեաց:

9 Նոյնպէս եւ զգալուստ Որդւոյն իւ-
րոյ յայնմ ժամանակի պատշաճեաց, յո-
րում, գիտէր, թե յաւգուտ լինելոց է:

10 Եւ եթե բժիշկ ըստ պէս պէս հիւանդու-
թեանց ազգի ազգի դեղս արտացելոցն
մատուցանել, ո՛ր սկզբան ցաւոյն դէպ իցէ,
զայն ի սկզբանն մատուցանեն, եւ ո՛ր՝
յընդմիջելն, զայն ի միջոցի, եւ ո՛ր՝ ի պա-
ռաւել ցաւոյն, զայն՝ հոսկ յետոյ, ո՛րչափ

Ք Մ. Ե. 11
Գ Ե. Գ. Ժ. Գ. 11

Դ Ե. Գ. Ժ. Գ. 9-12

եւս առաւել ամենահնարն, յորմէ ամենայն հանգամանք հնարողութեան բաշխեալ են, ի դէպ ժամանակի առնէ, զոր առնէ. ոչ՝ առաջին եւ երկրորդ եւ վերջին խորհրդով, այլ միանգամայն ըստ կամելոյն զգործ արդեանցն կատարէ: 11 Եւ ոչ յետոյ ծնանի ի նմա կամելն, այլ իբրեւ կանխագէտ գիտէ զամենայն, մինչ չեւ ինչ լեալ իցէ, թե ո՛րպէս պարտ իցէ առնել եւ՝ յո՛ր ժամանակի եւ յո՛ր պէտս: 12 Եւ ոչ խառն ի խուռն առնէ, թե առ յապա զղջանայցէ եւ եղծանիցէ գստեղծուածն իւր: 13 Եւ ոչ իմիք կարաւտանայ, թե առնուց ինչ յուժեքէ կամ յուժեքէ ակն ունիցի, այլ բաւանդակ յինքեան ունի զամենայն կարողութիւն առնելոյ եւ հաստատելոյ զամենայն եւ անխարխար պահելոյ: 14 Եւ չունի գոք ընդ իւր զովողակից իբրեւ գեղբայր կամ իբրեւ զընկեր կամ իբրեւ զաւտար ոք գործակից, այլ՝ միայն զիւր զաւրուութիւնն եւ զիմաստութիւն, որ իւրոյ էութեանն ծնունդ է եւ մշտնջենաւորակից, եւ՝ զիւրոյ զբնութեանն Հոգին, որ ի նմանէ է եւ միշտ առ նմա, անքակ եւ առանց բաժանելոյ:

[ԺԷ.]

1 Եւ յայսմ ամենայնէ յայտ է, եթե ոչ Հիւղ ինչ, որ է «նիւթ», էր ընթերակաց Աստուածոյ, ուստի, ասեն Յուճաց իմաստունքն, զարարածս արարեալ, եւ ի նմանէ չարեաց յաշխարհ մտեալ, որպէս ասեն աղանդքն, որ ի նոցանէ առին պատճառս զՀիւղեայն՝ աստուածացուցանել, դնել աստուած հակառակ Աստուածոյ: 2 Եւ ոչ այլ ոք արարիչ էր չարեաց, որպէս մոգքն խաբին, թե խարամանն արար զչարիս, այլ մի միայն Աստուած է արարիչ եւ նոյն՝ բարեաց եւ ոչ՝ չարեաց եւ մշտնջենաւոր արարիչ, զի եւ մինչ չեւ արարեալ էր զարարածս, ի մտի իւրում ունէր յառաջգիտութեամբ զպայման կազմածոյ արարածոց. եւ չէր երբեք, յորժամ չէր արարիչ այնու,

զի ունէր յինքեան զկարողութիւնն ամենեցուն բաւական լինելոյ:

3 Եւ բազում պատճառք էին Աստուածոյ, որովք եկն զարարածսն առնել. նախ՝ զճարտարութեանն խելամտութիւն չէր պարտ դատարկ թողուլ, զի մի իբրեւ գտկար ոք պարտեալ ինչ գտանիցի առ ի չկարելոյ առնել զայնս, զորոց խելամտութիւնն յինքեան ունէր կանխակալ գիտութեամբ:

4 Երկրորդ անգամ՝ քանզի բարերար է բնութեամբ, չէին իրաւունք զբարերարութիւնն անաւգտակար պահել: 5 Եւ այլ ինչ բազում նման սոցին էր զԱստուածով, վասն որոց կազմածոյ աշխարհի արար սկիզբն: 6 Որպէս ոք եթե ճարտարութիւն իրաց ինչ գիտիցէ, եթե՛ զնուագածութեան եւ եթե՛ զբժշկութեան, եթե՛ զհիւսնութեան եւ արդեամբք զճարտարութիւնն չցուցանիցէ, ի զուր ունի զհանգամանս ճարտարութեանն, ուստի ո՛չ ինքն վայելիցէ, եւ ո՛չ այլոց զգիտութիւն արուեստին ցուցանիցէ, նոյնպէս եւ որ բարերար ոք իցէ, եթե բարերարութեանն վայելելիք չիցեն, ո՞ւմ շահ իցէ բարերարութիւնն, զի բարերարութեանն առաքինութիւն այն է, յորժամ այլքն ի նմանէ վայելիցեն. եթե չիցեն, որք վայելիցեն ի բարերարութեանն, զի՞նչ շահ իցէ ի բարերարութեանէ անտի: 7 Նոյնպէս եւ Աստուածոյ, որ զամենայն ճարտարութիւն արուեստգիտութեան ունէր յինքեան, եթե չէր արարածս արարեալ, ի զուր կարծէր ունել զճարտարութիւնն, յորժամ չէին, որք ի ճարտարութեանէ անտի երեւէին: 8 Նա՛, եւ ոչ բարերարութիւնն բարերարութիւն ցուցանէր, եթե արարածս չէր արարեալ, որք ի բարերարութեանն վայելէին: 9 Այլ նա այնպէս բարերար է, զի ոչ միայն զառնելն շնորհեաց նոցա, այլ եւ՝ յուրախութիւնս լաւութեանցն վայելե[]լ:

10 Դարձեալ. թե չէր Աստուածոյ արարածս արարեալ, եւ գիտէր իսկ ոք ոչ, թե բնաւ իցէ Աստուած, յորժամ չէին ի միջի, որք զկարողութիւն զիտութեանն ստանային: 11 Ուստի քանզի յիւր գիտութիւնն ամեկ կամեցաւ եւ թե է՛ ինքն՝ ցուցանել, յաւժարեաց արարածս առ իւրոյ գիտութեանն ընծայեցուցանելոյ, զի վայելիցեն ի բարերարութեանն նորա: 12 Եւ զպէտս աշխարհիս վասն մարդոյ արար՝ ի սպասաւորութիւն ամենայն իրաց կարեւորաց, եւ զմարդն՝ յիւր փառս, զի փառաւորեսցէ զՏէրն եւ ծանիցէ զբարերարութիւնն:

13 Եւ այսպէս ոչ երբեք էր Աստուած դատարկ յարարչութենէ, քանզի միշտ ի մտի նկարեալ ունէր, զորս առնելոցն էր: 14 Եւ զի չէր ի դէպ կամաւք եւեթ եւ խորհրդովք ունել զկարողութիւնն, վասն այնորիկ առ յայտնելոյ զկամսն եւ զխորհուրդս ամ յայտ գարարածս, զի իւր կարողութիւնն երեւեսցի, եւ արարածքն ի նորա բարերարութեանն վայելիցեն:

15 Արդ, մի՛ ոք ինքնակաց զաշխարհս իշխեսցէ համարել եւ մի՛ ընթերակաց ինչ Աստուածոյ, զի մի զմեծութիւն զաւրութեան նորա խախտիցէ, այլ ամենեցուն նա շնորհեաց զլինելն, որք ոչն էին յառաջագոյն: 16 Ընդէ՞ր զզաւրութիւնն նորա ի միջոյ բառնալ կամիցին եւ արուեստագէտ միայն նիւթոյ իմիք համարիցին եւ ոչ՝ ի չգոյէ ի գոյ ամեկ զհասակս ամենայնի: 17 Չգոյր ինչ ժամանակակից Աստուածոյ եւ ոչ նիւթ ինչ, ուստի առեալ՝ զարարածս կազմիցէ, այլ ինքն է ամենայն բնութեանց արարիչ եւ ոչ՝ միայն կերպարանաց կազմիչ եւ ոչ՝ էութեան էականաց իրիք խառնիչ, այլ՝ գոյանալոյ գոյացելոցն գոյարար: 18 Չայսպիսիս պարտին ասել մարդիկ զԱստուածոյ, եւ այսպիսի պատմութեանց լինել պատմիչք, որով Աստուած փառաւորի, եւ մարդիկ ոչ վնասին:

19 Այլ, ըստ Աստուածոյ արժանեաց ո՞ ոք արժանաւոր իցէ պատմիչ լինել, բայց եթե՛ Աստուածոյ բարեկամք, որք վասն նորա սիրոյն եւ զկեանս աշխարհիս արհամարհեցին եւ մահու չափ, վասն կենդանի յուսոյն, որ՝ առ Աստուած, գուն գործեալ՝ մատնեցին զանձինս ի կորուստ մարմնոց, ուստի փրկութիւն ոգւոցն գտանի: 20 Եւ արդ, ի զուր իսկ ջանան իմաստունքն Յունաց զԱստուածոյ ճառել, այնու, զի զարարիչն եւ զարարածս ի միմեանց ոչ կարացին ընտրել, որք մթով դիւացն խաւարեալք՝ ծնունդս բազումս եւ անթիւ աստուածոց մոլծանել դանդաչեցին, որպէս Եսիրդոս՝ ոմն իմաստուն ի նոցանէն՝ բազում ծնունդս աստուածոց համարին, եւ Հոմերոս զրաբանեալ, զնորին հետ երթեալ՝ պաճուճեալ բանիւք զնոյնս ճամարտակէ: 21 Եւ այլք բազումք ի փիլիսոփայից առասպելական բանիւք բանդագուշեալք՝ խոստանան զԱստուածոյ պատմութիւնս կատարել, որք զԱստուածն ոչ ճանաչեն, եւ ո՛չ զարարիչն յարարածոց մեկնել զիտեն, զի՞արդ զԱստուածոյ ճառել մտաբերիցեն, եւ մանաւանդ՝ որ քան զամենեւինն իմաստնագոյն համարին, զՊղատոն, որ վասն Աստուածոյ եւ վասն ոգւոց եւ վասն արարածոց խաւսել յաւժարեցաւ: 22 Եւ արդ, ընդ նմա իսկ մարտիցուք գոռութեան բանիւք, որ քան զամենայն փիլիսոփայսն աստուածապաշտագոյն երեւի Յունաց, զի նորա առաւել գտանի չծանուցեալ զԱստուած եւ ո՛չ՝ զարարչութիւնն արարածոց, զի յորժամ զնորա մեծարոյ կարիսն գձձեսցուք եւ հանցուք զնա յաչաց իւրոցն խաբեցելոց, ապա ցուցցուք, թե ո՛վ Աստուած է, եւ զի՛նչ՝ նորա արարածք: 23 Եւ մի ինչ, զոր առաւել անճառ համարի Պղատոն, այս է, թե միշտ էր Աստուած եւ արարածս ինչ ոչ ունէր. զորոյ զկամսն սիրեմ վասն զԱստուածն խնդրելոյ եւ զամբարտաւանութիւնն ոչ գովեմ:

[IV]

[Ա.]

1 Մարկիոն մոլորեալ՝ մոլծանէ Աւտարութիւն ընդդէմ Աստուածոյն Աւրինաց, եղեալ ընդ նմա եւ զՀիւզն էութեամբ եւ երիս երկինս: 2 Ի միոջն, ասեն, բնակեալ է Աւտարն, եւ յերկրորդումն՝ Աւրինացն Աստուած, եւ յերրորդումն՝ զաւրք նորա, եւ յերկրի՝ Հիւզն, եւ կոչեն զնա «Չաւրութիւն երկրի»:

3 Եւ այնպէս կարգէ զաշխարհէ եւ զարարածոց, որպէս Աւրէնքն ասեն: 4 Այլ եւ յաւելու, թե հաղորդութեամբ ընդ Հիւզեայն արար զամենայն, զոր արար, եւ որպէս թե էդ ոք ինչ եւ կին ամուսնութեան էր Հիւզն: 5 Եւ յետ առնելոյ զաշխարհս եւ ինքն զաւրաւքն հանդերձ յերկինս, եւ Հիւզն եւ որդիք նորա մնացին յերկրի: 6 Եւ կալան զիւրաքանչիւր Խշխանութիւն, Հիւզն՝ յերկրի, եւ Աւրինացն Աստուած՝ յերկինս:

7 Եւ տեսեալ Աւրինացն Աստուածոյ, թե գեղեցիկ է աշխարհս, խորհեցաւ առնել ի սմա մարդ: 8 Եւ իջեալ առ Հիւզն յերկիր՝ ասէ. «Տո՛ւր ինձ ի կաւոյդ քումէ, եւ յինէն տամ ոգի, եւ արասցուք մարդ ըստ նմանութեան մերում»: 9 Տուեալ նմա Հիւզեայն յերկրէ իւրմէ՝ ստեղծ զնա եւ փշեաց ի նա ոգի, եւ եղեւ Ադամ ի շունչ կենդանի եւ վասն այնորիկ անուանեցաւ «Ադամ», զի ի կաւոյն արարաւ: 10 Եւ ստեղծեալ զնա եւ զամուսինն նորա եւ եղեալ ի Դրախտին, որպէս եւ Աւրէնքն ասեն, գային հանապազ, պատուիրէին նմա եւ ուրախ լինէին ի նմա իբրեւ յորդոջ հասարակաց:

11 Եւ տեսեալ, ասէ, Աստուածոյն Աւրինաց, որ տէրն էր աշխարհի, թե ազնուական է Ադամ եւ արժանի սպասաւորութեան, հնարեցաւ, եթե զի՛արդ կարասցէ գողանալ զնա ի Հիւզեայն եւ յիւր կողմն միաբանել: 12 Առեալ զնա ի մի կողմն՝ ա-

սէ. «Ադա՛մ, ես եմ Աստուած, եւ չիք այլ ոք, եւ բայց յինէն այլ Աստուած քեզ մի լիցի: 13 Ապա թե ունիցիս զոք առ Աստուածս բայց յինէն, գիտասջի՛ր, զի մահու մեռանիցիս»: 14 Եւ իբրեւ ասաց զայս ցնա եւ յիշատակեաց նմա զանուն մահու, զահի հարեալ Ադամայ՝ սկսաւ տակաւ զանձն մեկնե[]լ ի Հիւզեայն:

15 Եւ եկեալ Հիւզեայն պատուիրել նմա ըստ սովորութեանն՝ տեսանէր, զի ոչ անսայր նմա Ադամ, այլ խորհեալ՝ ի բաց մերժէր եւ չմերձենայր առ նա: 16 Յայնժամ հիացեալ ի միտս իւր Հիւզեայն՝ իմացաւ, թե տէրն արարածոց նենդեաց նմա: 17 Ասէ. «Յականէ աղբերն պղտորեալ է ջուր նորա: 18 Զի՞նչ է այս. չեւ եւս բազմացեալ Ադամայ ծննդովք, եւ գողացաւ զնա անուամբ աստուածութեանն իւրոյ յինէն: 19 Որովհետեւ ատեաց զիս եւ ոչ պահեաց ընդ իս զդաշնն, ես արարից աստուածս բազումս եւ լցից նոքաւք զաշխարհ գոյիւ իւրով, զի խնդրիցէ, թե ո՛վ իցէ Աստուած, եւ ոչ գտանիցի»: 20 Եւ արար, ասեն, կուռս բազումս եւ անուանեաց զնոսա «աստուածս» եւ լից նոքաւք զաշխարհ: 21 Եւ ընկղմեցաւ անուն Աստուածոյ, որ՝ տեսունն արարածոց, ի մէջ անուանց բազում աստուածոց, եւ ոչ ուրեք գտանէր: 22 Եւ մոլորեցաւ ծնունդ նորա նոքաւք եւ ոչ պաշտէր զնա, զի ձգեաց զամենեսին առ ինքն Հիւզն եւ ոչ ետ թոյլ եւ ոչ միում ի նոցանէ պաշտել զնա:

23 Յայնժամ, ասեն, բարկացաւ տէրն արարածոց, զի թողին զնա եւ անսացին Հիւզեայն: 24 Եւ մի ըստ միոջէ, որ ելանէին ի մարմնոց իւրեանց, արկանէր զնոսա առ ցասման ի գեհեն: 25 Եւ զԱդամ արկ ի գեհեն վասն ծառոյն: 26 Եւ այնպէս արկանէր գայր ի գեհեն զամենեսին, մինչեւ ցքսան եւ ինն դար:

27 Եւ տեսեալ, ասեն, Աստուածոյն բարոյ եւ աւտարի, որ նստէր յերրորդ եր-

կինս, թե այնչափ ազգք կորեան եւ տանջեցան ի մէջ երկուց նենգաւորաց՝ տեառնն արարածոց եւ Հիւզեայ, ցաւեաց նմա վասն անկելոցն ի հուր եւ տանջելոց: 28 Առաքեաց զորդի իւր երթալ, փրկել զնոսա եւ առնուլ զնմանութիւն ծառայի, եւ լինել ի կերպարանս մարդոյ ի մէջ որդւոց Աստուածոյ Աւրինացն. «Բժշկես՛ ի՛ր, - ասէ,- զբորոտս նոցա եւ կեցուս՛ ի՛ր զմեռեալս նոցա եւ բաց՛ ի՛ր զկոյրս նոցա եւ արաս՛ ի՛ր ի նոսա բժշկութիւնս մեծամեծս ձրի, մինչ զի տեսանիցէ զքեզ տէրն արարածոց եւ նախանձիցի եւ հանիցէ զքեզ ի խաչ: 29 Եւ ապա ի մեռանելն քում իջես ի դժոխս եւ հանցես զնոսա անախ. զի չեն սովոր դժոխք ընդունել ի միջի իւրեանց զկեանս, եւ վասն այնորիկ ելանես ի խաչ, զի նմանեսցիս մեռելոց: 30 Եւ բացցէ դժոխականն զբերանն իւր ընդունել զքեզ, եւ մտցես ի մէջ նորա եւ թափուր արասցես զնա»:

31 Եւ իբրեւ եհան զնա ի խաչ, ասեն, էջ ի դժոխսն, եւ թափուր արար զնա:

32 Եւ հանեալ զոգիսն ի միջոյ նորա՝ տարաւ յերրորդ երկինսն առ հայրն իւր:

33 Եւ տէրն արարածոց զայրացեալ՝ առ ցասմանն եցել զպատմութեանն իւր եւ զվարագոյր տաճարին իւրոյ եւ խաւարեցոյց զարեգակն իւր եւ զգեցոյց թուխս աշխարհին իւրում եւ նստաւ ի սուգ առ տրտմութեանն:

34 Ապա երկրորդ անգամ իջեալ Յեսու կերպարանաւք աստուածութեան իւրոյ առ տէրն արարածոց՝ զնէր դատ ընդ նմա վասն մահուն իւրոյ: 35 Եւ տեսեալ տեառնն աշխարհի զաստուածութիւնն Յեսուայ՝ զիտաց, թե գոյ այլ Աստուած արտաքոյ քան զնա:

36 Եւ ասէ ցնա Յեսու. «Դատաստան կայ իմ ընդ քեզ, եւ մի՛ ոք լիցի դատաւոր ի միջի մերում, այլ՝ քո իսկ Աւրէնքն, զոր գրեցեր»:

37 Եւ իբրեւ եղին զԱւրէնսն ի միջի, ասէ ցնա[] Յեսու. «Ո՛չ դու գրեցեր յԱւրէնսդ քում, թե Որ սպանանիցէ, մեռցի՞, եւ Որ հեղու գարիւն արդարոյ, հեղցեն գարիւն նորա՞»:

38 Եւ ասէ՝ «Այո, ես գրեցի»:

39 Եւ ասէ ցնա Յեսու. «Արդ, տո՛ւր զքեզ ի ձեռս իմ, զի սպանից եւ հեղից զարիւն քո, որպէս սպաներն դու զիս եւ հեղեր զարիւն իմ, զի արդար եմ իրաւամբք քան զքեզ եւ երախտիս մեծամեծս արարի յարարածսն քո»: 40 Եւ սկսաւ համարել զերախտիսն, զոր արար յարարածս նորա:

41 Եւ իբրեւ ետես տէրն արարածոց, թե յաղթեաց նմա, եւ եւ ոչ զիտէր՝ զի՛նչ խաւսիցի, քանզի յիւրոց Աւրինացն պարտաւորեցաւ եւ չգտանէր տալ պատասխանի, զի եղեւ մահապարտ փոխանակ մահունն նորա: 42 Ապա յողոքս անկեալ՝ աղաչէր զնա, թե «Փոխանակ զի մեղայ եւ սպանի զքեզ յանգէտս, քանզի ոչ զիտացի, թե Աստուած իցես, այլ մարդ համարէի զքեզ, տուեալ քեզ ընդ այնր վրիժուց զամենեսեան, որ կամիցին հաւատալ ի քեզ, տանել յո՛ւ եւ կամիցիս»: 43 Ապա թողեալ զնա Յեսուայն՝ յափշտակեաց առ զՊաւղոս եւ յայտնեաց նմա զգիսսն եւ առաքեաց զնա քարոզել, թե «Գնոց զնեալ եմք մեք, եւ ամենայն, որ հաւատայ ի Յեսու, վաճառեցաւ յԱրդարոյ անախ Բարւոյն»:

44 Այս սկիզբն է աղանդոյն Մարկիոնայ, թո՛ղ զայլ բազում թարմատարսն:

45 Եւ զայս ոչ ամենեքին գիտեն, այլ՝ սակաւք ի նոցանէ եւ աւանդեն զուսումնն միմեանց ի բերանոյ: 46 Ասեն. «Աւտարին գնովք գնեալ է զմեզ ի տեառնէն արարածոց». եւ թե ո՛րպէս կամ ի՛ւր գնեալ իցէ, զայն ոչ ամենեքին գիտեն:

“ Հմտ. Եւ. ԻԷ 14, ԹԻ. ԼԵ 16:

է Եւ. Թ. 6

[Բ.]

1 Արդարեւ, որպէս երանելին Առաքեալ ասէ, Իմաստութիւն աշխարհիս այսորիկ յիմարութիւն է առաջի Աստուածոյ՞:
 2 Ձի՞նչ առեալ կամ զի՞նչ կցկցեալ կամ ո՞յր բանիւ խաւսին: 3 Թե՛ ճշմարիտ է նմա Աւրինացն Աստուած, յորմէ՛ զարարածսն ամենայն դնէ, ապա Աւտարին զոր նմա պոզաւղ մուծանէ, չէր պարտ նորա արարածոցն ցանկանալ, թեպէտ եւ ի տանջանս էին կամ՝ ի հանգստեան, զի թե՛ Աստուած էր, եւ իւր իսկ արժան էր արարածս առնել եւ ոչ՝ այլոյ արարածոց ցանկանալ:
 4 Այլ զի ոչինչ արար, յայտ է, թե բնաւ եւ էր իսկ ոչ, զի թե՛ էր, իբրեւ զԱստուած պարտ էր նմա զամենայն կարողութիւն յանձին ունել: 5 Եւ եթե՛ ինքն յանձնէ իմաստութիւն ինչ այնպիսի ոչ ունէր, գեթ յարարիչն աշխարհի նայեցեալ իցիւ՝ ուսանել ի նմանէ՛ զարուեստն: 6 Բայց եթե՛ նմա նմանող չկարէր լինել, գոնեա՛ չիւղեայն լիցի նմանող, որ ընդ գետինն քարչէր եւ եղեւ հաղորդ արարչութեան արարչին:
 7 Այլ յայտ է, թե ի մտաց բարբաջանք են աղանդն եւ ոչ՝ ճշմարտութիւն:

8 Արդ, նախ՝ զԱստուածն Աւրինաց եւ զՉիւղն նմա հաւասար դնել ի փրկիսոփայից գողացեալ՝ դնէ, որք տկարութիւնն արկանեն զԱստուածով, թե՛ «Չկարաց յոչնչէ՛ ինչ առնել, այլ՝ ի նիւթոյ ընթերակացէ»: 9 Եւ թեպէտ բիւրապատիկ յանուն Աւտարին եւ որդւոյն նորա Յեսուայ, զոր «Բարերար»ն կոչեն, ապաւինիցին, չեն ինչ ընդհատ ի հեթանոսաց, այլ որպէս նոքա աստուածս բազումս ասեն, եւ սոքա աստուածս քարոզեն: 10 Եւ բազմապատիկ մահապարտք են, զի արարեալք յԱւրինացն Աստուածոյ՝ յԱւտարին անուն խրախուսեն իբրեւ գտիրադրուծս, որ եւ ի մարդկան միջի ոչ պաշտի, զի ոչ իշխէ արքայից արքայի ծառայ՝ ի կայսր խրախու-

սել, եւ ոչ կայսեր ոք ծառայ՝ ի Սասանականն խիզախել. ապա թե՛ ոչ՝ զլիսապարտ գտանի: 11 Դարձեալ. ե՛ւ նոքա ծնունդս աստուածոց բազմաց ասեն, ե՛ւ սոքա յամուսնութենէ՛ Աւրինացն Աստուածոյ եւ չիւղեայ ասեն արարեալ զամենայն արարածս: 12 Եւ զի՞նչ աւելի իցեն քան զմոզս, որք յամուսնութենէ՛ դնեն զաստուածսն իւրեանց: 13 Արդ ցուցցեն. ո՞ր Հոգի ետ նոցա զայն Աւրէնս, զի ի Հոգւոյն սրբոյ, որ ի մարգարէս եւ յառաքեալս խաւսեցաւ, ուրացեալ են:

[Գ.]

1 Այլ «Պաւղոս,- ասեն,- յափշտակեցաւ յերրորդ երկինս եւ լուաւ զայս բանս անճառս, զոր մեք քարոզեմք»: 2 Իսկ նա՛, աւանիկ Պաւղոս ասէ. Զոր ոչ է պարտ մարդկան խաւսել: 3 Արդ, Մարկիոնն թե՛ մարդ ոք իցէ, ապա եւ նմա անճառ էին բանքն. որ եւ մարդ իսկ է եւ վատթարագոյն քան զամենայն մարդիկ, որոյ թողեալ զճշմարտութիւն Հոգւոյն՝ եւ նստի առասպելս կարկատէ, եւ այնչափ յանդգնեալ սատանայութեան ոգւովն՝ մինչեւ ի պատգամաց Հոգւոյն սրբոյ քաղ հանել, զկէս Աւետարանի ընտրել, առնուլ եւ զկէսն իբրեւ զխոտան ի բաց թողուլ, նոյնպէս եւ՝ զառաքելական թղթոցն եւ զՉին կտակարանս ամենեւին ուրանալ, որպէս թե՛ յանզգամէ՛ տուեալ իցեն եւ ոչ՝ ի Բարւոյ:

4 Եւ Առաքեալ ասէ, թե՛ անպատում են բանքն, զոր լուաւ, եւ Մարկիոնն ասէ՛ թե՛ Ես լուայ՞. արդ Առաքելո՞յ, որ անճառ զբանսն համարի, պարտ է անսալ, թե՛ Մարկիոնի, որ ի քարչ արկեալ՝ ընդ վայրս զբանսն ածէ:

*** Ը Կ՞՞. Գ. 19

է՛ Բ Կ՞՞. ԺԲ 4
 *** Բ Կ՞՞. ԺԲ 4

[Դ.]

1 Դարձեալ. թե մշտնջենաւոր էր Աւրինացն Աստուած, ապաքէն պարտէր կանխագէտ եւ ամենագէտ էանալ. եւ թե չէր կանխագէտ եւ ամենագէտ, ապա եւ կատարեալ իսկ չէր: 2 Ա՛յ, նա՛, աւանիկ կատարեալ երեւի այնու, զի գերկինս եւ գերկիր արար եւ ոչ միայն՝ մի երկինս, այլ՝ երկուս եւ՝ զաւրս բազումս: 3 Եւ որ այնմ ամենայնի բաւական եղեւ, զայն զի՞ ոչ կարէր գիտել, թե է՛ ոք ի վեր քան զնա, յորմէ կասկած կայր նմա: 4 Եւ եթե գիտէր, ընդէ՞ր ոչ ամրացոյց զիւր տեղին, զի մի լինէր անդր մուտ հակառակորդին, որ գայր եւ ապստամբեցուցանէր զարարածս նորա ի նմանէ:

5 Եւ դարձեալ. «Բարին, զոր կոչեն, եթե որպէս ասենն, բնութեամբ բարի էր, եւ չարութիւն ի նմա ոչ գոյր, զի այլոցն բարի խորհէր, նմա չար ընդէ՞ր խորհեցաւ, առնել զնա սրտառուչ յիւրոցն արարածոց, զի սա հանապազ առնէ մարդիկ, եւ նորա միշտ հանեալ ի սմանէ՝ առնէ զսա թախծալից, որ ոչ բարույ գործ է, այլ՝ չարի:

[Ե.]

1 Դարձեալ. եւ զոր «Արդարն» ասեն, թե արդարեւ արդար էր, յետ բաժանելոյ զիշխանութիւնսն՝ իւր գերկինսն երկուսին առնլոյ եւ Հիւղեայ եւ որդւոցն նորա գերկիր միայն թողլոյ, զի՞ արդ էր, զի միւսանգամ նորա աշխարհին ցանկացեալ՝ ասէր, թե «Տո՛ւր ինձ ի կառոյղ քումէ, եւ յինէն տաց ոգի, եւ արասցուք մարդ ըստ նմանութեան մերում», որ ոչ արդարոյ գործ է՝ այլոյ աշխարհի ցանկանալ, այլ՝ անիրաւի:

2 Կամ Հիւղեայն զի՞ արդ ընդ միտս հարեալ էր, ընդ մի անգամ բաժանելոյն ի նմանէ՝ դարձեալ հաղորդութիւնս առնել եւ անձամբ անձին նենգել եւ մասնմուտ առնել աւտարի յիւր աշխարհն, զի առնիցէ անդ զԱդամն եւ զամուսինն նորա, որ մերթ ի սա տայր ձեռս եւ մերթ ի նա:

3 Բայց եւ «տէր արարածոց» զԱրդարն միայն զի՞ արդ կոչիցեն, զի ե՛ւ յառաջնումն, որպէս ասեն, ոչ միայն ինչ արար, այլ հասարակ արարին, զի՛նչ եւ արարին, եւ յերկրորդումն ի հասարակաց նիւթոյ արարին զմարդն ե՛ւ երկոքին զոյգ ուրախ լինէին ի նմա [...], զի, թե, որպէս ասենն, արդար միայն էր Աւրինացն Աստուած, յայտ է, եթե զարդարութեան եւ պատուիրանս տայր նմա, եւ եթե չար միայն էր Հիւղն, հարկ էր, եթե չարեաց եւեթ խրատ տայր նմա: 4 Եւ ո՞ւր էր, զի երկոքին ուրախ լինէին ի նմա, որ հակառակ միմեանց տային զպատուէրս, մին՝ զբարեաց իբրեւ զբարի, եւ մին՝ զչարեաց իբրեւ զչար, զի ոչ արդարոյ, որ բնութեամբ արդար իցէ, մարթի զչար ինչ պատուէր տալ, եւ ոչ չարի՝ որ բնութեամբ չար իցէ, զբարւոյ խրատ տալ:

5 Այլ եւ ուրախ լինել չարին ուստի՞ էր, որ միշտ խաւարինն եւ գժմագոյն էր, կամ Արդարոյ՝ նենգել, որ ի բնէ արդարակորով եւ խրաւախորհ էր, որում չէր մարթ իւր միայն խորհել զմարդն՝ հասարակաց ստեղծուածն, այլ իբրեւ արդարոյ պարտ էր խորհել, թե «Որպէս ի միասինն արարաք զնա, առ հասարակ արժան է մեզ եւ վայելել ի նմա»: 6 Բայց ոչ իբրեւ զարդարակորով, այլ իբրեւ զնենգաւոր եւ զկասկածոտ առեալ մեկուսի զմարդն՝ զեղծուցանէր, թե «Ես եմ Աստուած, եւ չիք այլ ոք բայց յինէն»: 7 Եւ ի դէպ էր Ադամայ ասել, թե «Մինչ առնելն կամեցար զիս, գոյր այլ Աստուած, յորժամ զհողն խնդրեցեր. եւ արդ, զի խորելդ զիս քեզ կամիս միայնոյ, դու միայն իցես Աստուած, եւ այլ ոք՝ ոչ»: 8 Այլ թերեւս ի համբաւէ մահուանն զարհուրեցաւ, զոր, թե կամէր, թե չկամէր, սակայն կրեաց:

9 Եւ զայն ոչ գիտէր, թե առ նենգելն նենգէ նմա Հիւղն եւ ընկղմէ զմի անունն նորա ի մէջ բազում աստուածոց, զոր առ-

նէր գայթազողութիւն մարդոյն: 10 Եւ այնպիսի վնասու ոչ յետնամեղն եղեւ պատճառ, այլ՝ որ նախն նենգեաց, զի, թե նորա գայնպիսի արուեստ չէր ցուցեալ, Հիւղն ոչ իմանայր, այլ ինքն եղեւ վարդապետ ե՛լ իւրոյ նենգութեանն, ե՛լ Հիւղեայ խորամանկութեանն:

[Զ.]

1 Եւ իբրեւ տեսանէն, թե ոչ ոք պաշտէ զնա, բարկացեալ՝ արար զնոսա մահկանացուս, եւ որոց ոգիքն ի մարմնոցն ելանէին, արկանէր զնոսա մի ըստ միողէ ի գեհնն: 2 Արդ, քան զնոսա արկանէր ի գեհնն, զնա, որ պատրեացն զնոսա, ընդէ՞ր ոչ արկ ի գեհնն. մի՛ թե վասն զի ոչ կարէր յաղթել նմա: 3 Ապա եթե բռնագոյն քան զնա էր Հիւղն, զի՞ ետ ի ձեռս զիւր պատրեալսն նմա չարչարել:

4 Բայց եւ Արդարն, թե արդարեւ արդար էր, չպարտէր այնուհետեւ մարդիկ առնել, զի գիտէր, եթե խաբելոց է զնոսա Հիւղն: 5 Այլ իբրեւ արդարոյ արժան էր խորհել, թե «Զի՞նչ աւգուտ է, զի ես առնեմ, եւ այլ հանէ զնոսա յինէն»: 6 Նա՛, եւ տանջել իսկ չէր աւրէն զնոսա, զի գիտէր, թե այլոց բանիւ մեղանչեն:

[Ե.]

1 Այլ, միւսն եւս, զոր ասեն, ամբարշտագոյն է քան զամենայն. թե իբրեւ ետես Բարին, որ յերրորդ երկինս նստէր, գայնչափ՝ զքսան եւ զինն ազգաց զոգիս տանջեալս ի գեհննի, գթացեալ ի նոսա՝ առաքեաց զՅեսու՝ զորդի իւր, երթալ, առնուլ զնմանութիւն ծառայի եւ ի կերպարանս մարդկան լինել: 2 Եթե այնչափ գթած էր, ետ ընդ ետ իսկ ընդէ՞ր ոչ յղեաց զորդին իւր երթալ, փրկել զնոսա, այլ՝ յետ քսան եւ ինն ազգաց այնչափ ոգւոց ի գեհննի տանջելոց:

3 Այլ, նախ՝ «երրորդ երկինս» ասել ուստի՞ իցէ նմա, զի Մովսէս «երկուս երկինս» ասէ:

4 Այլ որպէս յամենայնի մոլորեցան հերձուածողք, նոյնպէս եւ՝ յայսմ, զի ոմն «տասն երկինս» ասէ, եւ ոմն՝ «եւթն», եւ Մարկիոն՝ «երիս», եւ ի Գրոց սրբոց կամին հաստատել զմոլորութիւնն իւրեանց, թե «երկինս» եւ «երկնից երկինս» բազմաբար ասեն Գիրք: 5 Յորժամ ոչ յումեքէ սանձահարին հարցուածովք, արտաքոյ Գրոց սրբոց բարբաջեն եւ իբրեւ վտանգին, ապա ի Գիրս ապաւինին:

6 Բայց «երկինս» եւ «երկնից երկինս» յայն սակա գտանեմք ի Գիրս, զի յԵբր[ա-յե]ցւոց լեզու «երկին» չմարթի ասել, որպէս եւ ոչ յասորի լեզու՝ «Ջուր» կամ «երկին», այլ մին բազմաբար ասի: 7 Եւ յայտ անտի է, զի Եւթանասնիցն թարգմանել ի յոյն լեզու ասեն՝ Ի սկզբանէ արար Աստուած գերկիմ եւ գերկիր՝, իբրեւ զմիոյ երկնէ յայտ արարեալ: 8 Եւ յասորի լեզու քանզի չմարթի «երկին» ասել, ասէ. «Ի սկզբանէ արար Աստուած զյաթն երկինս եւ զյաթն երկիր»: 9 Թեպէտ եւ միաբար չմարթի ասել նոցա զմիողէ երկնէն, սակայն «յաթն» ասելով, որ է «տարր», իբրեւ զմիողէ տարերէ միոյ երկնի յայտ առնէ թարգմանութիւնն: 10 Նա՛, եւ զերեւելի հաստատութիւնս, որ ի ջուրց մեկնեցաւ, «երկին» թարգմանեցին Եւթանասուքն. ուստի յայտ է, թե վերին երկինն եւ ներքին երկու երկինք են, ոչ՝ երեք կամ բազումք:

11 Այլ, ասեն. Պաւղոս ասաց, թե Յափշտակեցաւ այնպիսիմ միմչել յերրորդ երկինս՝: 12 Եւ զայն ոչ գիտեն, թե չեւ եւս յայտ է, թե «մինչեւ ցերրորդ երկինս» ասիցէ կամ թե «մինչեւ ցերրորդ ինչ մասն ի բազում մասանց միոյ երկնիս» ասիցէ. եւ բանն ի յոյն լեզու յերկուսին հարկանէ, եւ մանաւանդ զի առանց արթերն ասէ, որ է ն, զի ոչ ասէ, թե «մինչեւ ցեր-

՝ Ե՛ւ Է 1
՝ Բ Կ Գ Դ Ե Զ

րորդ երկինն», այլ թե «ցերրորդ երկին», առանձինն ասելոյ: 13 Ուստի տայ ակնարկութիւն, եթե ի մասն ինչ՝ երրորդ, ի բազում մասանց երկնի յափշտակեցաւ Պաւղոս. վասն որոյ ածէ զնորին զկնի, թե Յափշտակեցաւ այնպիսին ի դրախտն: 14 Եւ դրախտն ոչ եթե յերրորդ երկինս իցէ եւ կամ բնաւ՝ յերկինս ուրեք, այլ՝ յերկրի, զոր եւ ինքեանք իսկ վկայեն, թե իբրեւ արարին զմարդն, ի դրախտի անդ եղին, որ է՝ յերկրի, եւ ոչ՝ յերկինս:

15 Բայց թե եւ կոչի բարձրութիւն ինչ «երկինք», որպէս յորժամ ասիցէ Գիր «թռչունք երկնից» եւ՝ «ցաւղ երկնից» եւ՝ «ամբք եւ հողմք երկնից», ոչ եթե յերկինս իցեն, այլ զի ի բարձրութեանն են, «երկնից» կոչին: 16 Նա՛, եւ զծառոց անգամ, որ ի սակաւ ինչ բարձրութեան են, ասեմք, թե «երկնաբերձ են», եւ զծխոյ՝ թե «յերկին կցի»: 17 Ըստ նմին աւրինակի եւ Պաւղոսի զ«երրորդ երկինս»ն ասել իմանալի է. խկսի՛ր յառաջնմէն եւ է՛ջ յերրորդն եւ հա՛ս յերրորդ աւղղ, որ ի Գրոց «երկին» կոչի, եւ զտանես, զոր ինչ երանելին Պաւղոս ասէ.

Եւ լուաւ բանս աննաոս, զոր ոչ է պարտ ումեմ խաւսել^Գ. Թեպէտ եւ Առաքեալ՝ ե՛ւ «անաւթ ընտրութեան» էր ընկեր Պետրոսի, լծակից Որդւոցն Որոտման, քարոզակից Բառնաբայ. զի՞արդ էր, զի նմա պարտ էր լսել եւ խաւսել զբանսն անճառս, եւ իւրոց ընկերացն՝ ոչ. ո՞չ ապաքէն մի շնորհք էին յամենեսին, եւ մի եւ նոյն Ոգի՛՝ ե՛ւ ի նոսա: 18 Այլ, անճառ բանքն ոչ եթե նմա ճառելիք էին եւ այլոց՝ ընկերացն, անճառք: 19 Այլ, ըստ այնմ, զոր յԱռաջնումն թղթին Կորնթացւոց ասէ՝ Զոր ակն ոչ ետես, եւ ունկն ոչ լուաւ, եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ այն, զոր պատ-

րաստեաց Աստուած սիրելեաց իւրոց^Դ, է՛ եւ զայս իմանալ, թե ոչ զի ես միայն արժանի եղէ խորհրդոյն, որ «տրուպս եմ առաքելոց», այլ թե եւ Պետրոս, որ գլուխն է առաքելոց, տեսանիցէ, չկարէ ճառել եւ թե լսիցէ, չկարէ պատմել, քանզի անպատում է եւ ի վեր քան զմիտս եւ զլեզու մարդկան. եւ վասն այնորիկ ասէ Առաքեալ՝ թեպէտ եւ տեսի, չկարեմ պատմել, թեպէտ եւ լուայ, չեմ բաւական ճառել^Ե:

20 Դարձեալ. ո՞յր Աստուած ո՞յր Աստուածոյ արարածոց խնամակալ լինէր, եթե՛ ի տանջանս էին եւ թե՛ յանդորրու: 21 Կամ զանցանելն զՅեսուայ ի նորա աշխարհն զի՞արդ ո՛չ ինքն զգայր, եւ ո՛չ՝ ոք ի զաւրացն նորա, եւ ո՛չ՝ այլոց զելանելն նորա անդրէն: 22 Եւ եթե զնորայն իբրեւ զԱստուածոյ չկարէին իմանալ, եւ զայնչափ ոգւոց, զորս եհան առ նոքաւք յիւր երկինսն, զսաւաւինն զի՞արդ ոչ առնուին, եւ կամ պահապանքն ոգւոցն արգելականաց ընդէ՞ր ոչ առնէին ազգ տեսուն իւրեանց: 23 Այլ յայտ է, եթե սնտի բանք են եւ անհաւատ պատմութիւնք:

[Ը.]

1 Եւ եթե նմանութեամբ միայն եղեւ մարդ, եւ կերպարանաւք եւեթ էր խաչն, ե՛ւ՝ չարչարանք, ե՛ւ՝ մահն, ապա եւ փրկութիւն ինչ ոչ գործեցաւ: 2 Այլ եւ փրկէր իսկ, ընդէ՞ր՝ զայլոյ, արարածս, զոր իւր չէր արարեալ, որ ոչ բարւոյ գործ է, այլ ապիրատի՛ սպրդել զազտ մտանել յայլոյ տուն եւ նենգել նմա:

3 Բայց զայն եւս հարցցուք. մարմնաւո՞ր ոք էր Յեսուն, եթե՛ անմարմին: 4 Եթե ասիցեն, թե անմարմին էր, լուիցեն, զի եթե անմարմինն եկն եւ աստ մարմին, որպէս ասենն, ոչ զգեցաւ, յայտ է, եթե ոչ ետ ինչ եւ ոչ առ, ոչ մեռաւ, եւ ոչ

Գ Բ Կ՞՞ր. ԺԲ 4
Դ Ը Կ՞՞ր. ԺԲ 4

Դ Ը Կ՞՞ր. Բ 9
Ե Բ Կ՞՞ր. ԺԲ 4

փրկեաց: 5 Եւ ի զուր է ասելն Մարկիոնի, եթե «Արեանն Յեսուայ եմք զինք», զի ոչ հեղաւ արիւնն նորա, եւ ոչ նոքա գնեցան, այնու, զի կերպարանաւքն ասեն զխաչն եւ զմահ եւ ոչ՝ ճշմարտութեամբ: 6 Եւ յանդիմանեն զնոսա Հրեայք, որ ցայսաւր պնդեալ են, թե «Հարքն մեր հանին զՅիսուս ի խաչ»: ուստի յայտ յանդիման ցուցանի, եթե ոչ կեղծեալք ել Քրիստոս ի խաչ, այլ՝ ճշմարտութեամբ, քանզի եւ ճշմարտի յարութեանն մերոյ կացոյց զիւրոյ անձինն զյարութիւն ակրինակ:

[Թ.]

1 Եւ եթե, որպէս ասենն, զԱւրէնս Արդարոյն դատաւոր եւ միջնորդ խնդրեաց Յեսուսն, անդատին իսկ յԱւրինացն բազմապատիկ մահապարտ գտանի, զի նախ քան զխաչելութիւնն իւր զբազումս յափշտակեաց եւ ոչ՝ միայն ինքն, այլ եւ այլս բազումս ընտրեաց ի նոցանէն եւ առաքեաց, զի աշակերտիցեն եւ ձգիցեն առ նա: 2 Եւ ոչ միայն՝ այնչափ, այլ եւ զաւրութիւն զգեցոյց նոցա կոխել զգաւրս տեսունն իւրեանց, եւ արկ սուր եւ բաժինս ի տան նորա եւ վառեաց հուր յարարածս նորա, մինչեւ կարծել եւ խափանել զԱւրէնս նորա յաւուրցն Յովհաննու Մկրտչի եւ աւետարանել զիւր արքայութիւնն, արձակեալ քարոզս բազումս քարոզել եւ հնձաւդս բազումս հնձել, զոր ոչ ինքն սերմանեաց, եւ այն՝ մինչ չեւ մեղուցեալ ինչ ուրուք էր նմա, ո՛չ ի խաչ հանեալ եւ ո՛չ զարիւն նորա հեղեալ: 3 Առ աւար գտունն նորա եւ խախտեաց զթագաւորութիւնն նորա, եւ նա լռեալ կայր եւ ոչ ինչ մեղանչէր նմա: 4 Եւ զի՞ արդ ասիցեն, թե խաչելութեամբն գնեաց զՄարկիոնն, զի ահաւանիկ զայն ամենայն ժողովս բազմաց, մինչ չեւ ելեալ էր ի խաչ, կորցեաց յինքն: 5 Այլ ասեն. «Ձնոսա բժշկութեանց զինս տարաւ. զհիւանդս բժշկեաց եւ զբորոտս սրբեաց եւ զմեռեալս յարոյց եւ զանդամալոյծս հաս-

տատեաց եւ զդեւս հալածականս արար»: 6 Եւ իցէ ոք բժիշկ. յորժամ զորդի ուրուք բժշկիցէ, վարձս ոչ առնու, այլ զբժշկեալն ի գլխովին զինս բժշկութեանն խնդրիցէ: 7 Եւ գրեացուք, եթե բժշկեալքն էին ինչ նմա անկ վասն երախտեացն, իսկ զորս ոչ բժշկեաց, ընդէ՞ր հրապուրեաց, եհան ի տեսառնէն իւրեանց, որ ոչ բարւոյ գործ էր, այլ՝ նենգաւորի:

8 Եւ զԱւրէնսն զի՞ արդ իշխէր դատաւոր խնդրել, որոյ այնչափ վնաս յառաջագոյն քան զմահն իւր արարեալ էր ի տան նորա, մանաւանդ զի եւ գիտէր իսկ, թե պարտաւորեն զնա Աւրէնքն եւ ոչ արդարացուցանեն: 9 Արդ, եթե յիսրայէլացուց կերպարանս եկն ի տունն նորա, սակայն պարտաւորելոց էր, զի գրեալ է յԱւրէնսն, թե ամենայն Հրեայ, որ լուծցէ զԱւրէնսն, սպանցի^ա, եւ որ ոչ թլփատեսցի եւ ոչ շարաթս պահեսցէ, մեռցի. եւ նա ելոյծ զԱւրէնսն եւ խախտեաց զկրաւսն^է: 10 Մահապարտ էր յԱւրինացն, ե՛ւ թե յայլոց ազգացն ի կերպարանս եկն առ նոսա. նախ՝ զաւտարագգիսն իսկ կոտորել հրամայեալ էր նոցա եւ ոչ խնայել, եւ ապա՝ ի վերայ եկացն եւ պանդխտաց հրաման կայր. եթե ոչ պահիցեն զկրաւսն Աւրինացն, մահուամբ մեռցին: 11 Համայն եւ այնպէս յԱւրինացն մահապարտ էր:

12 Իցէ ոք, որ մտանիցէ գաղտ ի տունն ընկերի իւրոյ զեղծել ինչ. եւ ի բուռն անկեալ՝ չլինիցի^օ մահապարտ: 13 Եւ կամ իցէ ոք, որ մատուցեալ՝ զայլոյ զորդիս կամ զծառայս յապիմակս եւ ստահակս յաւժարեցուցանիցէ հանել. եւ հասեալ ի վերայ՝ ո՞չ հանիցեն զայն ընդ կառափն: 14 Եւ կամ իցէ ոք, իբրեւ զգէտ մտեալ՝ զայլոյ թագաւորութիւն գաղտ լրտեսիցէ. եւ ծանուցեալ զլրտեսն՝ ո՞չ սատակիցեն վաղվաղակի: 15 Նոյնպէս եւ Յեսուսն յառաջ

^ա Եւ. Լ. Ե. 2
^է Հմբ. Ծ. Ժ. 14:

քան զխաչելութիւնն բազում ինչ այսպիսի վնաս գործեաց ի տան Արդարոյն եւ ըստ Աւրինացն, զոր դատաւորն խնդրեաց, բազում մահուց պարտական գտանի, զի աւտարոտի մի, եկեալ յայլոյ տուն՝ այնչափ մեծամեծ աղէտս գործեաց ի նմա, զԱւրէնսն եւ զմարգարէսն նորա արգել եւ զիւր թագաւորութիւնն աւետարանեաց:

16 «Արդ, ո՞վ էր նա, որ այնչափ մեծամեծ կարաց գործել, թե ոչ՝ Տէրն ամենայնի, որ ասաց, թե Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հարէ իմմէ^ա: 17 Ուստի յայտ է, թե ոչ իբրեւ զաւտար ոք առ յափշտակութեամբ, այլ ի Հաւրէ տուաւ ի ձեռս նորա, եւ իբրեւ զՏէր Աւրինացն դադարեցոյց զԱւրէնսն եւ յառաջ քան ի խաչ ելանել եցոյց զթագաւորութիւնն իւր»:

18 Ո՛, անմիտք, զի՞ ոչ իմացայք, եթե Հայր Յեսուսի է Տէրն ամենայնի այնու զի զամենայն ետ ի ձեռս նորա եւ նա է Տէր աշխարհի, եւ ոչ՝ զորմէ դուքն կարծեցէք, որ չէր իսկ, զի ամենայն, որ արտաքոյ քան զնա «Աստուած» անուանի, չէ ի բնէ աստուած:

19 Եւ բազում ինչ եւ այլ է, որով ցուցանի, թե Տէր մեր յիւրսն եկն^բ եւ ոչ՝ յաւտարոտիս, եւ ինքն եւ Հայրն իւր են Տէր աշխարհի: 20 Եւ առաւել ի վիրաւորէն, որ մինչ դեռ յՆրոսաղեմէ յԵրիքով իջանէր, վիրաւորեցաւ յաւազակաց, ցուցանի, թե ոչ աւտարոտի ոք էր վիրաւորին Քրիստոս, այլ՝ մերձաւոր եւ դարմանիչ նորա, որպէս եւ ինքն իսկ ասաց ցփարիսացին, թե Ուղիղ դատեցար^գ: 21 Եւ յոչխարէն եւ ի դրամէն, որ կորուսեալ էին եւ գտան, յայտ է, եթե «յիւրսն եկն» եւ ոչ՝ յաւտարոտիս:

[Ժ.]

1 Դարձեալ. զմիւս բանն Առաքելոյ, զոր ուղիղ ասացեալ է, խախտեն. թե Յորժամ խափանեցէ զամենայն տէրութիւնս եւ զիշխանութիւնս, զի պարտ է նմա թագաւորել, մինչեւ դիցիմ ամենայն թշնամիք նորա ի ներքոյ ոտից նորա^դ. եւ ասեն, թե «Տէրն աշխարհի խափանէ զինքն եւ զաշխարհ իւր յաւիտեան»:

2 Ո՛, անմիտք, եթե յիւր ձեռս է շինելն, ե՛ւ՛ քակել, եւ զայս աշխարհ, վասն զի ծերանայ եւ Հնանայ, քակիցէ, ընդէ՞ր ոչ այլ՝ նոր եւ գեղեցիկ քան զայս, առնիցէ: 3 Թե, մինչ չէրն աշխարհ, զիտաց խորհել եւ առնել բանիւ, այժմ զի լուաւ եւ տեղեկացաւ, թե գոյ այլ աշխարհ՝ Աւտարին, գեղեցիկ եւ ազնուականագոյն քան զնորայն, զմէ՞ ոչ առնիցէ լաւագոյն քան զնորայն, այնպէս զի եւ ընտանիք Աւտարին նորայոցն ցանկանայցեն վասն գեղեցկութեանն եւ պայծառութեան, զի որպէս զառաջինն կարող եղեւ բանիւ առնել, այնպէս, թե կամի, եւ այլ՝ ազնուագոյն քան զայն կարող է առնել: 4 Եւ որ այնպէսն կարող է, ընդէ՞ր խափանիցէ զանձն՝ լինել պատուանդան ընդ ոտիւք այլոյ եւ ոչ առնիցէ իւր աշխարհ՝ նոր եւ գեղեցիկ քան զառաջինն եւ թագաւորիցէ ի նմա յաւիտեան: 5 Բայց թե արգելուցու զնա Աւտարն եւ թե այնչափ զաւրագոյն քան զնա է, մինչ զի եւ արգելու կարիցէ, ապա ոչ է Տէր ամենայնի, որպէս ասէ ինքն, այլ՝ ծառայ այլոյ տէրութեան:

6 Կամ զայն ուստի՞ ցուցանիցէք, թե Աստուած Աւրինացն քակելոց է զաշխարհս. եթե՞ վասն զի գրեալ են՝ ի մարգարէսն նորա, թե Երկինք գալարեցիմ իբրեւ զմագաղաթ^ե եւ Երկիր իբրեւ զմոմ հալեսցի^է, այլ եւ զայն գրեալ է ի մարգարէս, թե

^ա Ղ.՝ Կ. Ժ. 22, Մ.՝ Գ. Ժ. Ը 27

^բ Յ.՝ Կ. Ը 11

^գ Ղ.՝ Կ. Ժ. 28, Է 43

^դ Ը Կ.՝ Ժ. Ե 23-25

^ե Ե.՝ Լ.՝ Գ 4

^է Ե.՝ Կ.՝ Գ 1, Ս.՝ Գ.՝ Գ.՝ 5

Արարից երկինս նոր եւ երկիր նոր՞. ուստի յայտ է ըստ մարգարէութեանն. թե զայս քակէր, այլ՝ նոր առնէր, որպէս եւ դուք իսկ ձեզէն վկայեցէք:

7 Բայց եւ միւսուսն եւս արարէ՛ք պատասխանի, թե ո՞ր իցէ որ Զիշխանութիւնսն եւ զպետութիւնսն խափանիցէ՞, եւ եթե դուք ո՞չ գիտիցէք յԱռաքելոյ, զի Քրիստոս խափանէ գիշխանութիւնսն եւ զնէ զամենայն թշնամիս ի ներքոյ ոտից իւրոցէ՛, եւ ոչ՝ այն, զորմէ՛ դուքն ասէք, որ չէն իսկ եւ ոչ արարեալ ինչ նորա եւ ոչ առնէ, այլ Տէր մեր եւ Հայրն իւր, որ կարող են առնել զամենայն եւ Հնազանդեն զամենայն թշնամութիւնս ընդ ոտիւք:

[ԺԱ.]

1 Եւ դարձեալ. թե ձեռնհաս ինչ ոք էր Աւտարն, որպէս Մարկիոնն ասէ, ազատել զոգիսն ի տանջանաց անտի, ընդէ՞ր ոչ բռնութեամբ իսկ ձեռն արկ եւ կորզեաց զոգիս տանջանաւորացն յինքն, այլ նախ թոյլ տայր, զի տանջիցին, եւ ապա հանէր, եւ զայն՝ ոչ Համարձակութեամբ, այլ կասկածանաւք եւ արեան գնոց գնելով: 2 Այլ, ասեն. «Վասն ողորմութեան արար. տեսեալ զոգիս տանջանաւորացն նեղեալս ի դժոխս՝ առաքեաց զորդին իւր՝ փրկել զնոսա»: 3 Եթե փրկեաց զնոսա, վերջինքն զի՞ գործիցեն, որ ի նոյն դժոխս անկանելոց են: 4 Եթե «վասն ողորմութեան արար», զոր արարն, պահեալ իցիւ զգալուստ որդւոյն իւրոյ մինչ ի վախճան աշխարհի եւ ապա առաքեալ, զի ի վերայ ամենեցուն առնէր ողորմութիւն եւ հանէր ի կեանս, քան փութացաւն եւ առաքեաց ի կէս դարին. եւ չիք հնար վերջնոցն, որ անկան անդր, թե ելանիցեն, քանզի այնուհետեւ զգուշացաւ նոցա տանջիչն: 5 Այլ յոյժ

Ճ Ես. ԿԵ 17
Դ Ե Կ՞ ԺԵ 24
Ե Ե Կ՞ ԺԵ 25

մոլորեալ են եւ մոռացան զայն, թե Զի՞ ծառ չար, որ առնիցէ զպտուղ բարի, եւ ոչ քաղեն խաղող ի փշոց եւ ոչ թուզ՝ ի տատասկէ՞, եւ իւրն զիւրն ընդունի:

6 Եւ մի՛ւսն եւս՝ զոր ասեն, թե «Ոչ ընդունին դժոխք զկեանս, վասն այնորիկ ել ի խաչ, զի իջեալ իբրեւ զմեռեալ ընկալցին զնա դժոխքն»:

7 Իսկ արդ, ոչ ոք առաքիցի անդր կենդանի, կա՛մ՝ մարդիկ յանցաւորք, կա՛մ՝ Սատանայ եւ դեւք կենդանւոյն. թե այնպէս իցէ, եւ զնոսա ոչ ընդունին:

8 Կամ Յեսուն իբրեւ զմեռեալ յո՞ չոգաւ. մի՛ թե՛ ի գերեզման երկրի, զոր Գիրք «դժոխս» կոչեն. եւ ահա անդ չեն ոգիք, եւ ոչ՝ հուր, որ տանջիցէ զնոսա: 9 Եւ եթե ասիցեն՝ «Ի գեհենն չոգաւ իբրեւ զմեռեալ», չիք մուտ բանիցն, զի ոչ տայ թոյլ Առաքեալ, թե երկուս մահս մեռաւ, այլ՝ մի, զոր մարմնովն կրեաց, զխաչին, եւ Հնազանդ եղել մահու խաչինէ: 10 Եւ ոչ զնէ, թե այլ ոք դատեաց զնա եւ արկ ի գեհեն, այլ՝ թե Հայր ետ զնա ի մահ՞, եւ դարձեալ՝ թե Ինքն ետ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց՝ մահուամբ մարմնոյ եւ ոչ՝ տանջանաւք ոգւոյ:

[ԺԲ.]

1 Այլ «Անչափ,- ասեն,- հակառակ են Աւրէմ Արդարոյն շնորհացն Յեսուայ, զի անդ երանութիւն մեծատանց տայ եւ եղկութիւն՝ աղփատաց եւ աստ՝ երանութիւն աղփատաց եւ վա՛յ՝ մեծատանց՞. անդ ասէ՛ Մի՛ սպանաներ՞, եւ աստ ասէ, թե Որ բարկանայ ընկերի իւրում ի տարապարտոց,

2 Գ՞. Կ. Գ 43-44. Մ՞. Կ. Ե 16. 18
3 Փլ. Կ. Բ 8
4 Հ՞. Կ. Բ 32
5 Ե Տ՞. Կ. Բ 6
6 Գ՞. Կ. Գ 20. 24
7 Ե. Ե Ի 13. Բ 0 Կ. Ե 17. Մ՞. Կ. ԺԻ 18. Մ՞. Կ. Ժ 19

պարտաւոր է գեհեմիէ՞. *անդ ասէ՝ Մի շնարք, եւ աստ ասէ, թե Որ հայի ի կիմ մարդ առ ի ցանկանալոյ, անդէն շնացաւ ի սրտի իւրումբ. անդ ասէ՝ Մի երդնուցուս սուտ, այլ հատուցի՛ր Տեառն գերդմունս փռ, եւ աստ ասէ, թե Ամենեւին մի երդնուցումք՞:*

2 *Եւ արդ, զի՞արդ իցեն Աւրէնքն եւ շնորհք միմեանց հակառակ, զի Աբրահամ վասն զաւտարս եւ զաղքատս ընդունելոյ Բարեկամ Աստուածոյ կոչեցաւ՞, եւ Քրիստոս ասէ, թե* աղփատն ի գոգն Աբրահամու չոգաւ, եւ մեծատունն՝ ի տանջանս հրոյ՞: 3 *Քրիստոս աղքատաց երանութիւն տայ եւ ողորմածաց՝ թե Ողորմութիւն գտանելոց են՞:* 4 *Եւ Աւրինացն Աստուած այնչափ ցուցանէ ողորմութիւն, մինչեւ* զգրաստու թշնամոյ անկանելոյ բեռամբ չհրամայէ զանց առնել, թե՛ եւ ի ժողովրդենե՛ ոք իցէ եւ եթե՛՝ յաւտար ազգաց՞, եւ զուլ ի մաւր կաթն չհրամայէ եփել՞՞ եւ ոչ՝ զհաւ ի ձուոց կամ ի ձագուց վերայ նստեալ ի միասին միանգամայն առնուլ՞: 5 *Անդ ասէ՝ Սիրեսցես զընկեր փո իբրեւ զանձն փո՞, եւ աստ ասէ.* Սիրեսցես զՏէր Աստուած փո յամենայն սրտէ փումբ եւ սիրեսցես զընկեր փո իբրեւ զանձն փո, զի զայսց երկուց պատուիրանաց կախեալ կան Աւրեմբ եւ մարգարէք՞: 6 *Եւ ասէ.* Ոչ եկի լուծանել զԱւ-

16 A բան
17 H չի՞ր վասն
18 A չի՞ր գիր G գործով փխ. գիր
19 A չի՞ր գրից

Ե (Բ)

Ա. 3բ

1 Բայց մի կարծեսցուք նոր արարչու-
թիւն զլոյսն արտաքոյ չորից տարերցս¹
այլ խզած ի հրեղեն երկնիցն՝ գյտակու-
թիւն լուսոյն յայրեցողութենէն ի վայր
կորզելով: 2 Քանզի լոյսն ծնունդ է հրոյ.
եւ այլ է ծնունդն եւ այլ է ծնաւդն: 3 Զի²
զհուրն մերձաւորքն ճանաչեն, եւ զլոյսն
հեռաւորքն տեսանեն: 4 Գոյացութիւնն
մի է³, յորոշողութիւնն⁴ յերկուս հատանի:
5 Եւ ոչ միայն այս հրոյն է ընտրութիւն⁵,
այլ եւ՝ երից տարերցն. այլ է խստութիւն
հոյժոյ եւ այլ⁶ սնընդական աւդոյ⁷, այլ է
գիճութիւն ջրոյ, ուստի ծնունդ լինի. եւ
այլ է անուշութիւն նորա, որ փոփոխի ի
գոյնս, ի համս եւ ի հոտս. այլ է⁸ խոշորու-
թիւն հողոյն⁹ քարուտն եւ այլ՝ քրքիրն,
եւ արգաւանդն ի բերս բուսոց. եւ այսու
խառնին սիրով եւ տեւեն յաւիտեան:

A 8բ, H 5ա

Զ (Բ I)

Ա. 5ա

1 Եւ թե ոք միտ դնէ՝ տիւն միշտ
տեւէ, ուր եւ երթա արեգական եւ¹⁰ գիշերն՝
գիշեր, ուստի հեռանա:

2 Եւ եղեւ երեկոյ եւ եղեւ վաղորդայն.
ար ւրի. լոյսն անմարմին եւ աննիւթ պաշ-
տեալ¹¹ զչափաւորն. եւ ըստ ոմանց կից էր
յարփին¹² եւ ըստ այլոց¹³՝ յայնկոյս լե-

1 A տարերցն
2 A չիբՁի
3 H չիբէ
4 A որոշողութիւնն
5 A հրոյն է այս ընտրութիւն (H ընդորութիւն) փխ.
այս հրոյն է ընտրութիւն
6 A այլ է
7 A աւդ
8 A չիբէ
9 A չիբ հողոյն
10 B չիբեւ
11 B պաշտէր
12 B ոմանց ասել կցէր յարփին

րանցն հիւսիսոյ¹⁴, ուր եւ զարեգակն ասեն
ընթանալ զգիշերոյն¹⁵:

A 9ա, H 6ա

Է (Բ II)

Ա. 5բ

1 Դարձեալ զատեաց մեկնեաց զմեծ
աւրն միաշաբաթուին¹⁶ յայլոց աւուրցն. եւ
զեկոյց զաւրն վերջին զաներեկոյ եւ զան-
փոխանորդ: 2 Եւ նա է աւր առաջին, զու-
գակից լուսոյն որ եղեւ ի նմա աւրն սուրբ
եւ փառաւոր պատուիչ յարութեանն
Քրիստոսի յամենայն դարս մինչեւ լուսա-
նայ մինն՝ մէկնակն:

A 9ա, H 6բ

Ը (Բ III)

Ա. 6-8

1 Եւ ասաց Աստուած՝ եղիցի հաս-
տատութիւն ի մէջ ջրոցդ. եւ եղիցի մեկ-
նել ի մէջ ջուրցդ եւ ջուրց, եւ եղեւ այն-
պես: 2 Եւ արար Աստուած զհաստա-
տութիւնն, եւ անջրպետեաց ի մէջ ջրոյն,
որ ի ներոյ հաստատութեանն եւ ի մէջ
ջրոյն, որ ի վերոյ հաստատութեանն:
3 Եւ կոչեաց զհաստատութիւնն երկին:
4 Եւ ետես Աստուած զի բարի է. եւ եղեւ
երեկոյ եւ եղեւ վաղորդայն. ար երկ-
րորդ:

5 Իմանալ զԱստուած գործ հաւատոյ
է, սակայն ճառելն զնմանէ ժպրհութիւն է,
քան զի անորակ եւ անորպիսութիւն է Աս-
տուած, եւ յաղագս մեր մարդասիրեալ՝
ձայնի եւ ձեռին եւ բանի եւ թուական
կարգի կարաւտի, զի թե ոք ումէք ակնար-
կէ՝ ազդումն լինի շարժման ի քթիթան,
իսկ Աստուած առանց այնր նուազ մասին՝
կամաւք միայն կարաւդ է բիւրաւոր քան
զայս արարածս յանդիման կացուցանել:

13 B այլոցն
14 B հիւսիսի
15 B զգիշերն
16 A միաշաբաթու

6 Այլ կարծիս տալն զգայութեանց, զի մեք բանիւ եւ մտաւք վայելեսցուք ի բանական եւ ի գործական պատմութեան Արարչին. եւ այնպէս համարեսցուք զանձինս եթե ընդ Արարչին էաք, յորժամ առնէր զարարածս, քանզի զաւրութիւն Տեառն ազգող եւ ձգող է, յորժամ սուրբ մտաւք հպի ոք՝ ոչ ասող եւ եթ, այլ՝ տեսող համարեսցի:

7 Եւ ասէ Աստուած եղիցի հաստատութիւն ի մէջ ջրոցդ (Լ 6^բ) եւ արդիւնացաւ հրամանն, թանձրացաւ հողմն, խտացաւ բնաւին՝ անպախելի եւ անպայթելի, եւ էանց ի¹ մէջ ջրոյն: 8 Եւ յորժամ ասաց՝ եղիցի մեկնել ի մէջ ջուրցդ² եւ ջուրց՝ վերացաւ հասարակն ջրոյն, եւ զկնի նորա հաստատութիւնն ի սահմանեալ տեղին իւր:

9 Եւ զի ասաց՝ Արար Աստուած զհաստատութիւնն, եւ անջրպետեաց Աստուած ի հաստատութիւն (Լ 7) հաւատոց վասն բանին զաւրութեան, զի ասացն՝ արար է, եւ անջրպետելն յայտ առնէ, թե չէ արկեալ զջուրն ի վերայ հաստատութեանն որպէս ի³ կոնք, եւ սեղմեալ, այլ զայն ցուցանէ, թե հաստատութիւնն միջոց է ջրոյս, որ ի վերայ երկրի է⁴, եւ ջրոյն, որ ի վեր է քան զնա, որքան այս ի վայր քան զնա: 10 Որպէս եւ⁵ Դաւիթ ասէ՝ Ջուրն, որ ի վեր է⁶ քան զերկրինս, արիւն⁷:

11 Եւ պատ առին երկոքեան⁸ զամենայն աշխարհաւս, ընդ վերինն երկին զնդաձեւ՝ ոչ կարի հեռի եւ ոչ բնաւին մերձ: 12 Հասարակակշիռ աւդոյ շնչմամբ՝

ի ջրոյն⁹ կենդանութեան՝ առ երկու իրս աւգտակարս՝ զծանրութիւն երկրի թեթեւացուցեալ եւ զկիզողական հուրն արգելեալ ի վեր եւ կամարածեւ ջուրն ի հաստատութիւնն. եւ հրեղէն երկինն ի վեր եւ ի խոնարհ: 13 Եւ յամենայն կողմանց հեռացեալ յերկրէ եւ հողմով խառնեալ ընթանան անդադար եւ ջրեղէն կամարն¹⁰: 14 Ո՛չ շփոթմամբ տեղի ինչ ծանծաղագոյն է եւ տեղի ինչ թանձրագոյն, այլ հարթ եւ զուգակշիռ¹¹ ընթացիւք ի վեր եւ ի խոնարհ, անկտրելի եւ անհատական: 15 Եւ չէ զարմանք, յորժամ տեսանեմք ջուրս յամպս կապեալ եւ ոչ արձակէ¹² առանց հրամանի, եւ զի շարժին ջուրքն յալիս եւ ի ձայնս, վկայէ¹³ մարգարէն Ո՛ր¹⁴ արար զբազմութիւն արեւոյ ջուրցն ծփանաց յերկինս՝ Տէր ամենակալ անուն է նորա¹⁵:

16 Եւ կոչեաց Աստուած զհաստատութիւնն երկին: 17 Եւ ետես Աստուած զի բարի է, եւ եղեւ երեկոյ եւ եղեւ վաղորդայն ար երկրորդ (Լ 8):

18 Հաստատութիւն կոչեցաւ ի փարատել զերկիւղն խախտելոյ եւ փլանելոյ. որպէս եւ Եսայի ասէ՝¹⁵ կամարանման¹⁶ եւ խորանաձեւ կոչէ¹⁷ զերկին՝ անվախ գործելով զմեզ յանկմանէ, որպէս եւ Դաւիթ ասէ՝ Ձգեցեր զերկինս որպէս խորան¹⁸, գոր եւ յաղագս աննեցուկ երկրի զգուշանայ ասելով՝ հաստատեաց զերկիր ի վերայ հաստատութեան իւրոյ, զի մի՛ սասանեսցի յաւիտեան: 19 Եւ կրկին կոչեցաւ սակս

1 A ընդ
2 A ջրոցդ
3 H չի՛ր ի
4 A չի՛ր է
5 A չի՛ր եւ
6 H չի՛ր է
7 A չի՛ր արիւն
8 Ս աղ. ճ. Թ. Գ 4
9 A երկրորդ

9 A ջրոցն
10 A ջրեղէնն կամար
11 H զուգակշիռ
12 A արձակեմ
13 H վկայէ
14 A որ
15 Ս աղ. Թ. Գ 6
16 H չի՛ր ասէ
17 A կամարայարկ
18 H չի՛ր կոչէ
19 Հ աղ. Թ. Գ. Խ 22
20 Ս աղ. ճ. Գ. 2

Հաստատութեան¹ եւ բարձրութեանն անբաւութեան եւ նմանութեան² առաջնոյ երկնին, որ անուականն ունի գշրջումն, իսկ սա՝ ժամէ ի ժամ:

A 9բ-10ա, H 7ա-8ա

Թ (Բ IV)

Ա. 10

1 Հարթայատակ կոկեալ ողորկեալ եւ ջուրն, որ ի վերայ հողմով մրրկեալ արագավազսս եւ փախուցեալս միշտ, այնքան, զի³ ոչ կարէ աւզն առնուլ ի նմանէ ջուր, զի³ խէ⁴, եւ հանէ եւ թափէ⁵ երազընթաց արշաւանքն վասն որոյ յուրվք ոչ ծովս այլ գետս կոչեն, ոչ վասն սակաւութեանն⁶, այլ վասն եռանդանշարժ գնացիցն: 2 Իսկ որ յայս⁷ կոյս Քեռոնեսոս⁸ կղզոյն կոչեցելոյ ծովն է՝ անդղանդական⁹ կոչի. քան զի ասի¹⁰ բոլորածիր կղզի է¹¹ ընդ մէջ երկուց ծովուցն շուրջ գերկրաւ բոլորեալ, ուր եւ¹² գազանք են ահագինք եւ վիշապք վիթխարիք: 3 Եւ ի խառնակութենէ նոցա ելանեն ցաւք եւ հիւանդութիւնք ի մարդ եւ յանասուն, զոր հողմք առեալ բերեն եւ արկանեն զկենդանեաւք: 4 Իսկ որ նմա¹³ յայս կոյս¹⁴ բնակութիւն ջուրց գետին է՝ լեառնամեղք են եւ խորածորք, եւ յաղագս այնորիկ գետեղեալք եւ ջուրքն¹⁵ եւ անվնաս ծնանին կենդանիս եւ սնուցանեն, եւ նավորդք գնան ի վերայ

նորա վստահութեամբ եւ շուրջ գեղերաւք նորա բնակեն մարդիկ բարեխառնեալք եւ յաջողեալք: 5 Վասն որոյ կոչի անդղանդական¹⁶, զի անդղականք¹⁷ որ կոչին ջրականք¹⁸, որ է եղերականք, բնակեն անդ խնդրական զբաւսմամբ:

6 Դարձեալ կոչեցաւ¹⁹ ծով, զի ծալմամբ եւ ծաւալմամբ այլայլի միշտ եւ գսահմանն²⁰ իւր գեղեալն Արարչէն²¹ ո՛չ թողու. պատկառելով ի դրացւոյն ի չնչին աւագէն, որում ասացաւ: 7 Յայդ վայր եկեացէս եւ մի՛ գանցանիցս²²:

8 Արիստոտէլ Ովկիանոս գայս կոչէ, որ շուրջ է գցամաքաւս եւ անդղընդական, որ յայն կոյս է Քեռինոսին: 9 Զայն այս մտաւքս տես՝ Ովկիանոս, թե՛ ով կա ի նոսա, զարմանք է՝ Արարիչն գիտէ միայն: 10 Իսկ անդղնդական՝ թե անբաւական է ումեք լինել անդ կենդանի:

11 Եւ ետես Աստուած, զի բարի է:

12 Յառաջեաց տեսիլ Արարչին եւ վկայեաց բարի գոլ, զի մի հայհոյիլ լեզու հերձուածս ինչ ասիցէ, որպէս ոմն բանդագուշեալ իշխեաց ասել, թե ջուրն վերին կենդանի են եւ բնակեն ի նմա հրեշտակք: 13 Եւ աւրհնէ զԱստուած ջուրն վերին, եւ ջուրք, որ առ մեզ են դեղեխեալք են եւ դիւարնակք:

A 11բ, H 11աբ

Ժ (Գ)

Ա. 14-16

1 Երկուս գունդս կարակնածեւս՝ բոլորս,²³ աւգեղէնս խտացոյց, մածոյց, որովայնացոյց, բերանացոյց եւ զհամատարած

1 A չի՞ հաստատութեան
2 H անբաւութիւն եւ նմանութիւն
3 A չի՞ գի
4 A խէ, քափէ
5 A չի՞ եւ քափէ
6 H սակաւութեան
7 H յայն
8 A Քեռոնոս
9 A աղղընդական
10 A նա փիս. ասի
11 H չի՞ է
12 A չի՞ եւ
13 A չի՞ նմա
14 A չի՞ կոյս
15 H ջուրք

16 A անդղընդական
17 A անդղականք
18 A չի՞ որ կոչին ջրականք
19 B կոչեցեալ
20 B գսահմանս
21 B յԱրարչէն եղեալ
22 B եւ այլ մի անցանիցես
23 A կարակնաբոլորս փիս. կարակնածեւս բոլորս

լոյսն էարկ¹ ի նոսա: 2 Զսեռն. եւ գյստակն² եւ զհրաշատն էարկ ի³ յաման արեգականն, եւ զնուազն եւ զիգագոյնն յանաւթս⁴ լուսնին⁵: 3 Եւ զսե⁶ աղաւտագոյնս⁷ եւ զթանճրատեսական՝ ըստ աւելեաց եւ պակասման էարկ ի յաստեղսն⁸ եւ եզ զնոսա ի ներքոյ հաստատութեանն:⁹

4 Զլուսաւորն մեծ յիշխանութիւն տուրնջեան. եւ զլուսաւորն փոքր յիշխանութիւն գիշերոյ, եւ զաստեղս:

5 Նախ, գերկուսն մեծ ասելով փոքր կացոյց զայլսն, եւ զարեգակն մեծ ասելով¹⁰ առաւելեցոյց զնա՝ որ զէութիւն¹¹ գոյին ունի զիշխանութիւն, քան զայն որ զստուէրին¹², մանաւանդ զտիւն արեգակն առնէ, եւ զգիշերն զնալովն եւ զալովն¹³: 6 Իսկ զգիշերն լուսնին¹⁴ ոչ առնէ, այլ մխիթարէ զտխրութիւն ստուերին ցանկալի գործելով եւ զաստեղս¹⁵ առաւել պայծառացուցանէ զաղաւտ լոյսս¹⁶ նոցա յորդորելով:

A 14ա, H 17աբ

ԺԱ. (Գ)^a

Ա. 16

1 Իշխել, ասէ, տուրնջեան եւ գիշերի, լուսատու լինել յերկիր: 2 Զի ասաց, յայտ է յերեսաց կուսէ. եւ ի վայր կոյս ունին զլուսոյն¹⁷ յորդութիւնն: 3 Իսկ իշխելն¹⁸

տուրնջեան եւ գիշերոյ, զի արեգակն եւ լուսին արարիչք են ժամանակացս այս ապականացու¹⁹:

4 Լուսինն²⁰ լի ստեղծաւ ԴԺ (14) աւրեայ. Բ (12) աւր այլ պիտի, որ Ազամ ստեղծանի: 5 Այս է, որ աւագ լրումն ԺԶ (16) գայ՝ եւ աւելի եւ պակաս, որ է մեծ գարմանք:

6 Արու ասեն զարեգակն եւ էգ՝ զլուսինն: 7 Զի²¹ զոր արեգակն ի տուրնջեան պնդէ, լուսինն ի գիշերի քրքրէ, իգացուցանէ²² եւ սնուցանէ զապականացու մարմնոյս որպիսութիւն: 8 Նոյն լինի եւ պատճառ նուաղման, քանզի ի լնուլն լնուն ծովք եւ կենդանիք ուղղելով եւ ծառք կեղեւով, եւ ի պակասիլն²³ թերանան: 9 Եւ²⁴ յիրաւի ասացաւ եւ նա մեծ ընդ արեգականն²⁵, յորժամ այսքան փոփոխմունք լինին եւ²⁶ հետեւին նմա, զի թէ միշտ աճէր վայրավատեալ ցրուէր ամենայն եւ եթէ միշտ նուազէր՝ ի բաց կորնչէր. եւ այս նշանակ առողջութեան եւ հիւանդութեան, թէ զայս ոք զնէ նշանս, քանզի զթուլացեալսն ի լուսնէ՝ պնդէ արեգակն, ուստի գոյանան համք եւ հոտք յառողջութիւն. եւ ոչ միայն նշանս ցուցանեն. այլ եւ կրակիցք են բերրի²⁷ տարեբցս: 10 Նոյնպէս եւ դասք աստեղացն գործակիցք²⁸ են լուսնի եւ արեգականն²⁹՝ եւ, ոչ միայն զարդարելով գերկին ի նոցա զատչիլն, այլ³⁰ ի ձեռն մոլորակաց եւ անմոլա-

1 A արկ

2 H գստակն

3 A չի՛ք ի

4 A յանաւթն

5 H լուսնի

6 A գեսս

7 A աղաւտագոյնն

8 A յաստեղս փխ. ի յաստեղսն

9 H հաստատութեան

10 A կոչելով փխ. ասելով

11 A գէութեանէս

12 H ստուէրին

13 A գալով եւ գնալով

14 A լուսնի գգիշեր

15 H զաստեղսն

16 H լոյս

17 H լուսաւորութիւն փխ. զլուսոյն

18 H իշխելս

19 D ապականացու ժամանակացս, փխ. ժամանակացս այս ապականացու

20 A զլուսին

21 A չի՛ք Զի

22 A չի՛ք իգացուցանէ

23 A թերանալն

24 H չի՛ք եւ

25 A արեգական

26 A չի՛ք լինին եւ

27 H բերի

28 A գործակից լինին փխ. գործակիցք են

29 A արեգական եւ լուսնի

30 A չի՛ք այլ

ըից աստեղաց, հանգէտ նոցա աւգնակա-
նութիւն մատուցանեն¹՝ արեգական հոլով-
ման եւ լուսնի բարեխառնութիւնս առնե-
լով կարի ցրտութեան եւ ջերմութեան:

11 Այլ, զի ասի² զարեգակն մեծ քան
զլուսինն, զի մեծ է, որ տայ քան որ առ-
նու. զի տա լոյս լուսնի արեգակն, մինչեւ
լնու գնա, եւ հանէ մին եւ սպառէ:

12 Որ զամենայն արար ոչ կարաւտ է
յարեգականէն լոյս լուսնին, այլ զի գեղե-
ցիկս դնէ կարգս. զխոնաւն արար կարաւտ
մեծի ջահին:

13 Ձոր եւ առաքեալն Պաւղոս յա-
մալթ առնէ ասելով՝ հոգիք եմ հարկաւորք՝
առաքեալք ի սպասաւորութիւնս³: 14 Եւ զի
իջանէ միւս անգամ Արարիչն յերկիր զար-
դարեալ³ զսա կրկին:

A 14բ-15ա, 17բ, H 18բ-19ա, 25բ:

ԺԲ (Գ I)^b

Ա. 17

1 Եղ գնոսա Աստուած ի հաստատու-
թեան երկնից⁴. ոչ անշարժապէս կառու-
ցեալ, այլ որպէս զԱզամ ասի դնել ի
դրախտին, զի շրջեսցի ի նմա յընդարձա-
կի. նոյնպէս եւ⁵ գնոսա, զի գնասցեն ընդ
նա եւ ի ներքոյ նորա ոչ ոտիւք⁶ արագ
վազելով եւ⁷ ո՛չ թեւով թռուցելովք⁸ եւ ո՛չ
ըստ ջրայնոցն լաւղելով^a, այլ յԱստուծոյ
զաւրացեալք ի հրամանէ եւ յեղեալ սահ-
մանէն ոչ խոտորելով բնաւին. գնան, ո՛չ
ընդ⁹ յերեկի շաւեղն¹⁰ այսաւր, այլ չափե-

լով իմն՝ ի հարաւոյ ի հիւսիւս¹¹ եւ ի հիւ-
սիւսոյ ի հարաւ շարժելով:

2 Ձի¹² յորժամ ի հարաւ շարժի արե-
գակն սառնասառոյց պաղին կողմանքս¹³
հիւսիսոյ եւ ձմեռնային ցրտութիւնն ազ-
դէ¹⁴ ի միջոցս աշխարհի, եւ աշխարհն
հնդկաց ամառնանայ ի պողահասութիւն:

3 Քանզի ծով հրեղէն ի հարաւ վասն բնա-
կան ջերմութեանն եւ արեգակն եւս տայ
նմա աւգնականութիւն¹⁵: 4 Եւ զմեր բբա-
խառն ձմեռնն առնէ նոցա քաջախառնու-
թիւն եւ պտուղք աշխարհին որ բղխեն¹⁶ ո-
րիչ են ի պողոյ մերոյ աշխարհիս¹⁷ համով
եւ հոտով եւ գունով: 5 Եւ իւղք եւ
խունկք¹⁸ յոլովագոյն ունին զմասունս
հրոյ, եւ սեաւ մաղձն յոլով են¹⁹ ի մար-
դիկն. վասն որոյ եւ լինին իբրեւ²⁰ զար-
ջասպան նեարկս²¹, եւ ոչխարք՝ անբրդա-
բերք, ուղտք եւ գոմեշք մերկք եւ²² լերկք:
6 Բայց քանզի հրատք են առողջաբերք եւ
յերկարակեացք²³ են բնակիչքն:

7 Եւ մեզ դարձեալ անդի²⁴ բանին
դրունք գարնայնոյն, իբրեւ արեգակն ի
յայս²⁵ կոյս կամի չուել²⁶ հրեղէն իւրովք²⁷
զաւրաւքն: 8 Եւ հիւսիսայինն²⁸ ընդդէմ
նորա գումարեալ իբր նիզակաւ հարկանէ
եւ անդրէն փախչի, եւ նորա գհետամտեալ

1 H մատուցանիմ
2 A ասէ
3 Հմմտ. Եբր. Ա. 14:
4 CDE գարդարել
5 H չիք եւ
6 H ոչ արագ ոտիւք
7 H չիք եւ
8 A թռուցեալովք
9 A չիք ընդ
10 A շաւիղն

11 A հիւսիս
12 A չիք գի
13 A կողմանք
14 H ազդի
15 A աւգնութիւն
16 H չիք որ բղխեն
17 A աշխարհից
18 H խունկ
19 A է
20 H որպէս
21 A զարջասպաններկս
22 H չիք մերկք եւ
23 A երկարակեացք
24 A անտի
25 նախապէս գրուած է եղել սայլդ (°), յետոյ ջնջել
եւ նոյն ձեւով՝ յայս
26 H չուել
27 H իւրոյ
28 A հիւսիսայինն

առ սակաւ-սակաւ մաղելով տանի զնա¹ ի տեղի իւր:

A 14բ, H 17բ

ԺԳ. (Գ II)°

1 Ասէ ուրեք եւ սորին Եղիշէ. ի վեր քան զէ (7) մոլորակսն այլ նման նոցին է (7) աստեղք են սաստիկ ցուրտ բնութեամբ, որ զերկնի զբորբոքեալ ջերմութիւնն ցրտացուցեալ եւ բարեխառնեալ՝ տնն ապա ի վայր, յէ (7) մոլորակսն: 2 Եւ ասեն անմուլար գունդ:

A 15ա

ԺԴ. (Գ III)

Ա. 21-23

1 Եւ զամենայն շունչ գեոնոց, զոր հանիմ ջուրի ըստ ազգի (Ա՛ 21):

2 Ոչ ասաց անբան շունչ հանին ջուրքն, քանզի եւ բանականաց մարմինք եւս ի ջրոյ գոյացան՝ զի զառաջինն ի տարերացս արարան կենդանիք² եւ յետոյ ի ծնաւդաց, այլ միջնորդ բոլորովին³ ջուրն⁴ է. որպէս սերմ ի ծնաւդաց հատեալ ջուր է⁵:

3 Զայն, ասէ, Տեառն ի վերայ ջուրց. եւ Աստուած փառաւրբ որոտաց, եւ Տէր իմքն ի վերայ ջուրց⁶: 4 Այլ եւ թեպէտ եւ երբեմն երկրի, եւ արդ ջրոյ հրամայէ բղխել, այլ երեքին եւս տարերքն լուան. եւ ի չորից գոյացան ամենայն կենդանիք. որպէս ոսկերքն⁷՝ զքարուտն, ջիղքն⁸ եւ նեարդքն⁹ եւ արիւն՝ զհուրն¹⁰, շունչ եւ շարժումն,

զաւզն ունի, թանճրութիւնն՝ զհոզն, կապող¹¹՝ զջուրն¹². այսոքիկ միապէս գտանին ջրայնոց եւ ցամաքայնոց: 5 Ա՛յլ եւ զփղաց եւ զգոմիշաց ասեն ի ջրոյ գոյանալ, եւ զի գաւելի¹³ մասն կան ի ցամաքի: 6 Եւ թռչունք որ ի վերայ աւդոյ¹⁴ երկու ոտաւք¹⁵ եւ թեւաւք ի վերա աւդոց¹⁶ Տեառն երկիր պագանեն, ոմանք, այսպէս եւ այլք՝ ա՛յլ ազգ: 7 Են ի ձկանց որ որոնեն, որ սակրոսքն կոչին, եւ՝ են որք սէր եւ բարեկամութիւն ունին՝ եւ զորսացեալսն ի միասին ճարակեն, որպէս պինչէյաքն եւ պինչայսպասեակքն¹⁷: 8 Եւ են որ խորամանկութիւնս ունին իբրեւ զհիւղոսն¹⁸ փոքրիկ, որ գտեալ ի քուն զկոկորդիդոսն¹⁹ գազանն՝ մտանէ եւ ուտէ զամենայն փորոտիսն եւ ընդ նստայտեղին²⁰ ի դուրս ելանէ: 9 Եւ հաւն ատրոքոս²¹ քանզի²² կերակրի ի մնացեալ²³ մսոյն²⁴, որ մնա²⁵ յատամունսն²⁶ Հիւղոսի²⁷ եւ բարեկամութիւն կալեալ ընդ նմա՝ ճչէ եւ թեւահարեալ²⁸ փարի եւ մազղաւքն փորէ՝ յամաւթ²⁹ այնոցիկ, որք³⁰ մոռանան զսեղանս սիրելեացն: 10 Զուկն անքիւղոս³¹, որ կոչի կողամայր, որովայն ոչ ունի³²,

1 A գնա տանի
2 A կենդանիք
3 A բոլորին
4 H ջուր
5 H չի՞ որպէս... ջուր է
6 H չի՞ եւ Աստուած... ջուրց
* Ս...դ. ԻԸ 3
7 H ոսկերք
8 H ջիղք
9 H նեարդք
10 A գիւր

11 A չի՞ գիւղոց, կապող
12 A ջուրն
13 A զի աւելի (H չի՞ զի)
14 H չի՞ ի ... աւդոյ
15 A ոտաւք
16 A չի՞ ի... աւդոց
17 A պինչասպասեալքն
18 A գիւղոսն
19 A գկոկորդիդոս
20 H նստայտեղն
21 A տրոքոս
22 H չի՞ քանզի
23 H չի՞ մնացեալ
24 H մսոյ
25 A չի՞ մնա
26 H յատամունս
27 A կոկորդիդոսի մի/ս. հիւղոսին
28 H թեւահարեալ
29 H ի յամաւթ
30 A որոց փ/ս. այնոցիկ որք
31 A անքիւղոս
32 A ունելով

բայց միայն՝ գլուխ եւ մերկ կողքերս, ուստի կոտորոտեալ տնկէ եւ առնէ զաւակս: 11 Ուրեմն հաւատարիմ¹ է կինն ի կողէն Ադամայ ստեղծեալ կատովփլեսն² թոչուն է³, որ կոչի վայրահայեաց՝ զհուր բերանոյն յերկիր առաքէ, զի մի վնասեսցէ զոք ի կենդանեաց:

12 Բազէ զչամանդաղ աչացն սրբէ դառն կեղեւով եղեգի⁴, նոյնպէս եւ ծիծառն՝ զխաւարեալ աչս⁵ ձագուցն:

13 Եւ արդարեւ մեծ են գործքն⁶ Աստուծոյ⁷ եւ զամենայն ինչ իմաստութեամբ արար:

14 Եւ արհմեաց գնոսա Աստուած եւ ասէ՝ աճեցէք, բազմացարուք եւ լցէք զջուրսդ որ ի ծովս⁸ (Մ 22): 15 Վասն⁹ զի յաւրհանութենէն Աստուծոյ¹⁰ եւ ոչ ի բնութենէն¹¹ ունին զաճումնն, զի բաւական լիցին միմեանց եւ մարդկան. լի¹² պահելով զջուրսն¹³ ի խորհուրդ աւազանին, որոյ ծնունդքն ընուն գերկինս¹⁴ եւ զգրախտն:

16 Եւ ետես Աստուած զի բարի է. եւ եղեւ երեկոյ եւ եղեւ վաղորդայն ար հիմգերորդ (Մ 23): 17 Եւ¹⁵ ասաց Աստուած հանցէ երկիր շունչ կենդանի ըստ ազգի չորքոտանի. եւ սողունս եւ գազանս երկրի ըստ ազգի, եւ եղեւ այնպէս: 18 Եւ արար Աստուած զգազանս երկրի ըստ ազգի եւ զանասունս ըստ ազգի եւ զամենայն սո-

ղունս ըստ ազգի իւրեանց, եւ ետես Աստուած, զի բարի է:

19 Երեւի մտաւոր արանց եթէ յարարչութենէ լուսոյն եւ այսր ի կրսերագունիցն սկսաւ առնել Աստուած, որպէս զբոյսս ապա՝ զլուսաւորութեամբ, զՋրայինս եւ ապա զցամաքայինս, որք պատուականք են քան զնոսա, զի աւելի մասն կենաց եւ զգայութեանց¹⁶ ունին՝ մաւտ գոլով ի բանաւորս: 20 Սակայն երկիրն զմիակին ունի զաւրինակ, որ մայր գոլով ամենայն թուոց¹⁷ ոչ լուծանէն¹⁸ զնորա¹⁹ կուսութիւնն. եւ ոչ զոք ունի մայր, որպէս եւ ոչ²⁰ երկին, զի ոչ ինչ²¹ միջոց է յետ Աստուծոյ առ ինքն եւ բնակիչք նորա հրեշտակք կային եւ հսկեին, ուսանէին եւս, թէ եւ²² ինքեանք եւս նոյնպէս արարան եւ չեն պատճառ լինելութեան ումեք:

A 17աբ, H 24ա-26բ

ԺԵ (Ե)

Ա. 24

1 Զկնի եւ²³ յաւէլ, թէ Արար Աստուած զգազանս երկրի ըստ ազգի²⁴ նովին պատճառաւ²⁵, որպէս վասն կետոսացն ասացաւ:

2 Զի գիտելով, թէ արարածք են մի մոլորեացին ի պաշտել զնոսա: 3 Որում անլուր եղեալ պաշտեցին գառիւծ եւ զկոկորդիլոս, եւ²⁶ զաւճս²⁷ եւ զկատուս²⁸ եւ զայլս: 4 Եւ զի գազանք անասունս եւ սողունս ուտեն, յետ նոցա յիշէ եւ զսոցա լի-

1 H հաւատալի
2 A կատովդեփսն
3 A չի՞ր թոչուն է
4 H եղեգիսն
5 H ակն փխ. աչս
6 H գործք
7 H նորա փխ. Աստուծոյ
8 H չի՞ր եւ լցէք... ի ծովս
9 A չի՞ր վասն
10 A չի՞ր Աստուծոյ
11 A բնութեան
12 A զի փխ. լի
13 H զջուրն
14 A երկինս
15 H չի՞ր եւ:

16 A զգայութիւն
17 A թոչնոց փխ. թուոց
18 A լուծանեն
19 A գնոսա
20 H չի՞ր ոչ
21 H չի՞ր ոչ ինչ
22 H չի՞ր եւ
23 A չի՞ր եւ
24 չի՞ր երկրի... ազգի
25 H պատճառովն
26 H չի՞ր եւ
27 A զաւճ
28 A զկատու

նելութիւնս¹, որ ի կերակուրս² են³ նոցա եւ⁴ ի պէտս, շունչ^b կենդանի կոչեաց, զի այնու են կենդանիք շնչով եւ յելանել շնչոյն մեռանին եւ ապականին: 5 Իսկ անասունք ասին, զի անխաւսք են, եւ կամ տնասունք, որք ձեռամբ մարդկան սնանին, եւ վայրենիք անասունք անսնունդք են ի մարդկանէ, որպէս ասաց Տէր առ Յորբ. Զգուշանայցե՛ս երկանց եզանց եւ սնուցանես զմանկունս ևնոցա՞, զի նմա միայն յանձն. եւ սողունք որպէս ինչ, եւ զի սուղ են ձայնիւք ըստ բնութեան: 6 Իսկ գազանք, զի պատառողք են եւ գեզն պատրուած է, այլ եւ նորակերտք եւ անհեղեղք եւ անճոռնիք եւս են: 7 Իսկ յառաջն ոչ այսպէս⁵, այլ ծնանէին անցանեին եւ աճեցուցանեին⁶ ընտանիք եւ վայրենիք վայելեին ի միասին ճնճղուկ ընդ վարուժանի եւ կաքաւ ընդ բազէի, եզն եւ առիւծ միաբան ճարակեին, եւ ինձն առ ուլու մակազէր եւ զաւրութիւն Աստուծոյ պահէր զմիաբանութիւնն ոչ սուգ եւ ոչ տրամութիւն, այլ ի մեծի զուարթութեան կային, այլ թագաւորն աշխարհի ոչ երեւէր ի մէջ նորա:

A 17բ, H 26բ-27ա

ԺԶ (Զ)^d

Ա. 26-28

1 Եւ ասաց Աստուած. Արասցուք մարդ ըստ պատկերի մերում, եւ ըստ մմանութեան, եւ իշխեսցէն⁷ ձկանց ծովու, եւ թոչնոց երկնից եւ անասնոց, եւ ամենայն երկրի, եւ ամենայն սողնոց, որ սողին ի վերայ երկրի, եւ արար Աստուած զմարդն ի պատկեր իւր, ըստ

պատկերի Աստուծոյ արար զնա, արու եւ էգ արար զնոսա. եւ արհնեաց զնոսա Աստուած եւ ասէ. անեցէք, եւ բազմացարուք, եւ լցէք գերկիր եւ տիրեցեք դմա, եւ իշխեսցէք ձկանց ծովու եւ թոչնոց երկնից եւ անասնոց⁸ եւ ամենայն երկրի եւ ամենայն սողնոց, որք սողին ի վերայ երկրի:

2 Նկատողն⁹ բարձանց եւ իմացողն խորհրդոցն¹⁰ Աստուծոյ զարմանալին սուրբն¹¹ Պաւղոս. յիրաւի հայեցեալ յանհասական յանդուհան¹² Աստուծոյ իմաստիցն հիանայ ասելով՝ Ով խորք մեծութեան, իմաստութեանն եւ գիտութեան Աստուծոյ¹³, զի ով գիտաց զմիտս Տեառն թէ վասն էր մեծացաւ այնքան մարդկայինս բնութիւն՝ զի ում պարտ էր, ո՞ հաւանեցոյց ողորանաւք, ո՞ խոստացաւ ինչ նմա, զի յառաջ քան զլինելն աշխարհի ընտրեսցէ զնա եւ մեծարեսցէ նիւթ պատրաստելով նմա եւ ճոխութիւնս առատս, եւ ամենապատիվ մեծութիւնս. եւ ապա խորհուրդս եւ կամս, եւ ուշ զիտաւորութեան առաջի արկանէր¹⁴, զոր ոչ արար միում¹⁵ ումեք յիշելոցս՝ վերնոց կամ ներքնոց, իմանալեաց եւ զգալեաց. եւ խորհրդակիրցս առ նա մեծի խորհրդոյն ոչ զոք եղական եւ¹⁶ գոյեղէն բնութիւն, բայց եթէ զանճառ ծոցոյ իւրոյ զծնունդն¹⁷ զԲանն, եւ զանհասութեան իւրոյ¹⁸ քննաւղն, որ յումեքէ ոչ քննի զչոգին ամենասուրբ, որ ի Հաւրէ ելանէ եւ առնու յՈրդոյ¹⁹, եւ կայ յին-

8 A զազանաց փխ. անասնոց

9 A նկատաւղն

10 A բանալին խորոցն փխ. իմացողն խորհրդոցն

11 H չիք գարմանալին սուրբն

12 A անդունդս

13 A գիտութեան եւ իմաստութեանն Աստուծոյ H չիք Աստուծոյ

14 A արկանէ

15 A չիք միում

16 A չիք եւ

17 A ծնունդ

18 H զանհասութիւն որոյ

19 H յորդոյ

1 A լինելութիւնն

2 A կերակուր փխ. ի կերակուրս

3 H չիք են

4 A չիք եւ

՞ Յ.բ. 1. 10. 1. 3

5 H չիք այսպէս

6 F չիք եւ անեցուցանեին

7 A իշխեսցէ

քեանն փառաւորութեան¹ Աստուած իսկութեամբ:

3 Վասն որոյ² եւ, ասէ. Արասցուք մարդ ըստ պատկերի մերում եւ ըստ նմանութեան³ (Լ 26): 4 Յայտնի ցուցեալ, թէ ոչ յիւր կարաւորութեան ինչ լրումն արար զաշխարհս, այլ վասն այլ ուրուք, զոր առնելոցն էր եւ բոլորքն վասն նորա, եւ նա բոլորիցն իշխան. եւ ոչ նախ զնա առնէ, զի մի ի թափուր վայր մուծանիցէ եւ սրտառուչ բեկանիցին միտք նորա կարեմտութեամբ: 5 Եւ զայս յարուեստագէտս⁴ կանայս⁵ է տեսանել, որք զիշխանաց զպատկերսն⁶ նկարեն, ո՛չ նախ զգլուխն, այլ յոտից սկսեալն⁷ զամենայն հասակն ածեն ի վեր եւ հուսկ յետոյ զդէմն դնեն, զոր⁸ ոչ կարեն ճանաչել առանց այնր, տեսողքն:

6 Եւ⁹ կամ որպէս¹⁰ ոք մեծի թագաւորի պատրաստութիւն առնէ¹¹, զի¹² նախ հոգայ զտունն, ապա՝ զբազմականն, եւ զկերակրոց¹³ եւ զըմբելեացն զպատրաստութիւնն¹⁴ եւ զյաւրինուածսն, զերգեցիկս, զաշտանակս¹⁵ ճրագացն: 7 Եւ իբրեւ ահա կազմէ զամենայն¹⁶ ապա ածէ ի ներքս¹⁷ զթագաւորն¹⁸ ի տէս եւ ի լուր եւ ի հոտ, եւ ի կերակուր, եւ յըմպէլի¹⁹, եւ յամենայն ա-

ռատութիւնս, զի ցուցցէ²⁰, թէ ի պատիւ եւ ի փառս մեծարեցաւ եւ յարժանաւոր վայելչութիւնս:

8 Զնոյնն է տեսանել եւ աստ, յԱրարչէն ելեալ առ²¹ մարդն: 9 Զկնի զարդուն երկնի, որպէս ձեզուան եւ երկրի, որպէս հիմնացեալ տան, եւ իւրեանց յաւրինուածոցն²² ծանիցէ զսէր եւ զերախտիս Արարչին իւրոյ Աստուծոյ:

10 Արասցուք մարդ ըստ պատկերի մերում²³. Ընդ այս²⁴ բարբառն²⁵ եւ հրեշտակք զարմացան, քանզի երկու իրս²⁶ ուսան, մի՝ զի բարերարութեան նորա եզր ոչ գոյ, եւ միւս եւս՝ զի²⁷ զամենայն արարելոցն զաւրինակն²⁸ եցոյց ի մի կազմուածն²⁹. Հոգովն՝ զիմանալի աշխարհն, եւ մարմնովն՝ զերեւելիսս³⁰:

A 18ա, H 27ա-28բ

ԺԷ (Զ I)

Ա. 26ա

1 Եւ զիա՞րդ մարթի ասել զնոսս խորհրդակիցս Աստուծոյ: 2 Այլ եւ յերեսս կործանէ յարիանոսս, որք ոչ ասեն մի բնութիւն զՍուրբ Երրորդութիւնն, զի ասէ. Եւ³¹ արար Աստուած զմարդն ի պատկեր իւր: 3 Վեց ձեռք մխեցան ի գոյացութիւն միոյ պատկերի: 4 Կարե՞ն ցուցանել իմաստակքն³², զոր որո՞յ ստեղծեալ՝ ի մասանց, եւ զիարդ չիցէ մի սկզբնատիպն, յորժամ մի է պատկերն, զի թէ մինչ նման է. երիցն ապա զիա՞րդ ոչ իցեն մի եւ ե-

1 H փառաւորութիւնն
2 A չի՞ր վասն որոյ
3 A չի՞ր եւ ըստ նմանութեան
4 A յարուեստագէտ
5 H չի՞ր կանայս
6 A զպատկերս
7 A սկսեալ
8 A որ
9 A չի՞ր եւ
10 H չի՞ր ո՞ր
11 H առնել
12 A չի՞ր զի
13 H զկերակրոյ
14 A չի՞ր զպատրաստութիւնն
15 H զաշտանակս
16 H ամենայն
17 A չի՞ր ապա... ի ներքս
18 A զթագաւորն ի ներքս
19 H յըմպէլի

20 H ցուցէ
21 H չի՞ր առ
22 A յօրինուածոցն
23 A չի՞ր մերում
24 H չի՞ր այս
25 A բարբառ
26 H որիս
27 H չի՞ր եւս
28 A զաւրինակ
29 A կազմուած
30 A զերեւելի
31 H չի՞ր եւ
32 H չի՞ր իմաստակքն

րեքն եւ նմանք երիւրաց (sic), զի թէ մի պատիւ եւ բնութիւնն է մարդոյն եւ չիք ի նմա մասն խոտելի եւ աղարտելի, ի նմանէ ճանաչի մարդ արդարն անխժբժելի, զի մերումն ասելով զանձինսն յայտնեաց, եւ ասելովն, թէ արար ի պատկեր իւր՝ լիութիւնն յայտնեաց եւ զԱստուածութիւնն իւր:

A 19ա, H 28բ

ԺԸ (Է)

Ա. 28ա

1 Անեցե՛ք եւ բազմացարուք եւ լցե՛ք գերկիր: Այսպիսի ինչ աւրհնութեամբ եւ զՋրայինսն աւրհնեաց, սակայն պահեաց զնոսա ի ծառայութեան կարգի: 2 Իսկ յայս աւրհնութիւն յաւել գտիրելն եւ զիշխելն: 3 Անեցե՛ք, ասէ. եւ այս եւս հրամանս գործեր կատարեալ. քանզի զթիւհամարոյն եւ զորպիսութիւն ամմանն եւ զաւրինակ կատարման իւրաքանչիւրոցն ետես անխառնակ եւ անշփոթ ի մինն Ադամ եւ եղ զաւրհնութիւնն զբաւական ի վերա՝ աճել եւ բազմանալ եւ ընդ վերկիր:

A 19բ

ԺԹ (Է I)

Ա. 28բ

1 Եւ յետ յանցանացն եղ ողորմածն ընդ ձեռամբ մեր ի կերակուր եւ ի բեռնակրութիւնս, այլ եւ իշխանն աւտարակերպ է յիշխեցելոցն՝ ոչ իբրեւ զառիւծ մագլաւոր, կամ իբրեւ զփիղ ժանաւոր, կամ իբրեւ զուարակ եղջիւրաւոր, կամ իբրեւ զարծուխ ճապուաւորս, կամ իբրեւ զկոկորդիղոս խեցեմորթ, ո՛չ կնձթեղ, ո՛չ ցուկեղ, այլ մերկ, փափուկ, դիւրապատահ: 2 Եւ ամենայնիւ ցուցանէ զձեւ իշխանութեան եւ զթագաւորութեան կերպարան:

A 19բ, H 30բ:

Ի (Ը)

Բ. 2ա

1 Բարւոք ասաց ոմն¹ երեք աշխարհք գոլ. աշխարհարարն եւ աշխարհ եւ մարդ. Աստուած իմանալի աշխարհ, աշխարհ՝ զգալի աշխարհ², մարդ՝ իմանալի եւ զգալի³ աշխարհ: 2 Եւ չէ անպատեհ Աստուծոյ ի համար անգանել⁴ գործոցն իւրոցն⁵, զի կտակ՝ եթե ձեռն եւ կամ⁶ պատկեր թագաւորի ոչ կնքէ զնա⁷՝ ոչ է հաստատուն նա⁸, վասն որոյ եւ այժմ Արարիչն կնքէ զաշխարհ հանգչելովն⁹ յեւթներորդում աւուրն¹⁰:

3 Հանգչի, զի հանգիստ նմա հայր իմ միցն եւ ցայժմ՝:

A 20բ, H 32բ

ԻԱ (Թ)

Բ. 2բ

1 Զապականացուսն արար ի վեցն եւ զանապականն սկսանի յեաւթն¹¹. զիմանալին¹² աշխարհն ոչ առնելով այլ տեսանելովն զարդարէ զնա: 2 Որքա՞ն ցանկալի¹³ է նա զոր միշտ առնէ զնա Աստուած երանելեացն բնակութիւն եւ հանգիստ: 3 Զի ի ժամանակի եղեալքն՝ ժամանակաւ ապականին երկոքին, իսկ իմանալին անժամանակ տեսեալն¹⁴ յԱրարչէն, ընդ Աստուծոյ՝ անժամանակ էին մնայ յաւիտեան: 4 Յեւթներորդումն դադարեցուցանէ ի

1 ABD մարգարէն փխ. ոմն
2 Ա չի՛ք աշխարհ
3 Ա զգալի եւ իմանալի
4 Ա անկանել
5 Ա իւրոցն գործոց
6 Ա չի՛ք կամ
7 H չի՛ք գնա
8 Ա չի՛ք նա
9 H հանկչելովն
10 Ա աւուր
՞ Յ՝ՎԸ. Ե. 17
11 Ա սկսաւ յեւթն
12 Ա զիմանալի
13 H ցանգալի
14 H տեսեալ

գործոցն եւ այլ իմն սկսանի աստուածա-
զանագոյնս: 5 Զնախախնամութիւնն յայտ
է, որ յետ առնելոյն էր, որպէս ամենայն
արուեստաւոր յետ կազմելոյն խնամելոյ
սկսանին^ա, զի^բ մնայցէ գործն^ց:

A 20բ, H 32բ

ԻԲ (Ժ)

Բ. 4-5

1 Այս է գիր արարածոց երկնի եւ
երկրի, յաւուր յորում արար Աստուած
գերկիմ եւ գերկիր եւ գամենայն բանջար
վայրի, մինչ չեւ եղեալ էր ի վերայ երկրի
եւ գամենայն խոտ վայրի մինչ չեւ բու-
սեալ էր ի վերայ երկրի, զի չեւ եւս էր
տեղացեալ տեսոն Աստուծոյ ի վերայ
երկրի, եւ մարդ չէր որ գործեր գերկիր:

2 Այս գիր արարածոց. Թէոզիտոն գիր
ասէ, եւթանասունքն՝ ծնունդ եւ երկոքին
զմի գաւրութիւն ունին. ծնունդ՝ զի յոչնչէ
ծնաւ Աստուած զարարածս բանիւ, եւ գիր՝
զի զաննիւթն նիւթացոյց, որպէս ձայն
բանանայ եւ բանն գրի ի քարտէզ եւ ի
մագաղաթ:

A 21ա

ԻԳ (ԺԱ)

Բ. 4-5

1 Զի ասաց Աստուած եւ գրեցին եւ
երկին եւ երկիր, որ իբրեւ զպնակիտս ա-
ռաջի կայ եւ ընթեռնումք զայնոսիկ. եր-
կինք պատմեն զփառս Աստուծոյ եւ զարա-
րածս ձեռաց նորա պատմէ հաստատու-
թիւն երկրի, զցամաք, ասէ, ձեռք նորա
ստեղծին^ա: 2 Յիրաւի գիր ասաց, որ եւ թե-
պետ եւ լինի գրոյս ջնջիլ եւ անցանել, ա-
րեգական եւ լուսնի եւ աստեղաց, ամպոց,
զարդուց վերնոց եւ ներքնոց, յանդրան-
կաց աշխարհն միաբանեալ հրեշտակաց եւ
մարդկան, առանց գրոյ արարածոցս՝ ծա-
նիցուք զԱստուած եւ կեցցուք:

^ա Սաղմ. ԺԲ 2

3 Յաւուր յորում արար... յայտ է յա-
ռաջնումն գերկին եւ գերկիր. եւ յերկրոր-
դումն զջուրն վերացուցեալ՝ զհասարակն:

4 Եւ գամենայն բանջար վայրի մինչ
չեւ բուսեալ էր (Բ 5). յայտ է յերրորդումն
աւուր:

5 Զի չեւ եւս էր տեղացեալ Տեսոն Աս-
տուծոյ ի վերայ երկրի (Բ 5ա): 6 Զի ոչ
կարաւտացաւ Աստուած անձրեւի եւ ոչ ա-
րեգական առնել խոտ եւ բանջար. եւ ոչ
մարդոյ մշակութեան էր կարաւտ, զի
մարդ չէր, որ գործէր գերկիր (Բ 5բ):

7 Յառաջինն տանի զիմացաւղն յաւուրսն,
զի սովոր է զասացեալսն միւս անգամ
պատմել, եւ երրորդել եւս, որպէս եւ
զգրախտէն կամի ասել, որ եւ յերրորդումն
աւուր եղեւ: 8 Բայց եւ չէ զարման զչե-
ղեալն արարեալ ասելն¹, որպէս յղի մա-
նուկ նախ քան² զծնունդն է, բայց յա-
նուանէն նոր³ չէ առեալ, նոյնպէս եւ⁴ յղի
էին տարերքս նախ քան զերեւիլն⁵, զոր
գիտեր Աստուած եւ առնէր յայտնագոյնս
յետոյ: 9 Եւ ասելն թէ Այս է⁶ գիր լինելոյ
երկնի եւ երկրի (Բ 4) ոչ թէ միայն նոցա.
այլ եւ ամենայն մասանց նոցա՝ եւ արդա-
րոց եւ մեղաւորաց զրոյցք, բայց համա-
ռաւտ կրկնէ զպատմեալն յառաջ:

A 21բ, H 34ա

ԻԴ (ԺԱ I)

Բ. 5-6

1 Զոր թե ոչ առնուն հրեշտակք եւ
մարդիկ յանուանս համարեալ են, որք ի
մայրս իւրեանց եւ ի տարերս միայն հա-
յին: 2 Իսկ պատկերն Աստուծոյ ի վեր ե-
ւեթ նկատէ յամենածնաւղն եւ յիմանալի
անձրեւն, որ ի նմանէ պատուիրանն է, զի

1 A ասել
2 H չի՛ք քան
3 A քաց յանուանէ որ
4 A չի՛ք եւ
5 A գերեւելն
6 H չի՛ք է

չէր դեռեալ եղեալ եւ ոչ զիմացումէս արարածոց ի կիր արկեալ. եւ դարձեալ չգործէր զերկիր մարդն, զի չեւ էր յանցեալ եւ դատապարտեալ ի գործ սորա: 3 Բայց աղբեր ելանէր յերկրէ եւ ոռոգանէր գամեմայն երեսս երկրի (Բ 6*) դէպ է, զի ի ցամաքելն երկրի բոխեցին աղբիւրք ընդ լեռինս եւ ընդ դաշտս:

4 Եւ զիա՞րդ միաւոր կոչէ աղբեր զբնութիւն ջուրց, որ աղբերաբար ելանեն մի կոչէ, որպէս՝ անդեայ, եւ պար, եւ աւր, եւ ամենայն ձիական զաւրութիւն՝ ձի թագաւորի անուանի. զի մի աղբեր զիա՞րդ կարեր ոռոգանել զամենայն երկիր:

A 21բ-22ա, H 35աբ

ԻԵ (ԺԱ. II)

Բ. 6

1 /// զոր թէ ոչ առնուն մարդիք եւ հրեշտակք յանասունս համարեալ են, որք ի մարս իւրեանց եւ ի տարերքս համաւրէն հային, իսկ պատկերն Աստուծոյ ի վեր եւ եթ նկատ է յամենածնաւղն եւ յիանալի անձրեւն, որ ի նմանէ պատուիրանն է, զի դեռեալ չէր եղեալ եւ զիմացուածս արարածոց ի կիր արկեալ, եւ դարձեալ գործէր զերկիր մարդն, զի չեւ էր յանցեալ մարդն եւ դատապարտեալ ի գործ սորա: 2 Բայց աղբիւր ելաներ յերկրէ եւ ոռոգաներ զամենայն երեսս երկրի. ի դեպ է զի ի ցամաքեալն երկրի բոխեցին աղբիւր ընդ լեռինս եւ ընդ դաշտս, եւ^a զիարդ միաւոր կոչէ զբնութիւն ջուրց, որ աղբիւրաբար ելանեն մի կոչէ, որպէս անդեայ եւ պար եւ գաւր, եւ ամենայն ձիական զաւրութիւն՝ ձի թագաւորի անուանի, զի մի աղբերն զիա՞րդ կարէ ոռոգանել^b զամենայն երկիր, կամ յաղագս շատութեան երկրի չբաւելով միոյ աղբերն, կամ վասն անհարթութեան երկրի լեռանց եւ ձորոց, եթէ ոչ զԱստուծոյ աղբերս ասիցէ, որք ի գանազան տեղեաց ելեալ ոռոգանէին զսահմանս վայրացն. եւ բարիոք զերեսս ասէ երկրին, որ է պտղա-

բերն եւ զբերրին, որ կարէ ընդ ձեռամբ մշակաց մտանել եւ սերմանել, այլ եւ ի դէպ է ամպոց խոնարհիլ յերկիր, եւ առնուլ ջուր ի ծովէ եւ ի գետոց եւ յաղբիւրաց, որ ի վերայ երկրի, եւ աստի ելեալ ոռոգանէ անձրեւով զՏէրն երեսս երկրի, իբրեւ զմիտս ոռոգանէ զսգա[յ]արանս կենդանութեամբ, որ ի դէմս են՝ յաւրինակ Տեառն Յիսուսի, որ ել ի կուսական [արգանդէ]:

H 34ա-35ա

ԻԶ (ԺԲ)

Բ. 7-14

1 Եւ ստեղծ տէր Աստուած զմարդն հող յերկրէ եւ փչեաց յերեսս նորա շունչ կենդանի. եւ եղիւ մարդն յոգի կենդանի՝ իբրեւ գայլ տեսակս երկրի (Բ 7). եւ վասն մարդոյն լինելութեան¹ կրկնէ, եւ երեքկնէ², թե արարած է, ի յանդիմանութիւնս այնմ, որ աստուածանալն³ կամեցաւ՝ նախ Ադամ եւ զկնի մոլորեալքն ի հեթանոսաց⁴: 2 Զի ոչ եթէ այլ մարդ է սա, բայց միայն նա, որ ի վեցերորդին եղեւ, թէպէտ խաբին ոմանք յեւթներորդի աստ եղեալ:

A 22ա

ԻԷ (ԺԲ I)

Բ. 7ա

1 Եւ փչեաց յերեսս նորա շունչ կենդանի: 2 Փչեացն աւտար է եւ ի հրեշտակաց եւս թող թէ յԱստուծոյ⁵ անվայելուչ⁶: 3 Այլ զիջանէ գիրք զտկարութիւնս մերածել յուսումն, զի ի բերանոյ ի կենդանուոյ⁷ շունչ ջերմ ելանէ ցուրտ աւղ շնչելով, որպէս զի զաւղն⁸ ի տարերացս առեալ

1 H լինելութեան մարդոյն
2 A չի՞ք եւ երեքկնէ
3 H աստուածանալ
4 H չի՞ք ի յանդիմանութիւն... ի հեթանոսաց
5 H ի յԱստուծոյ
6 H անվայելուչ
7 A կենդանուոյ բերանոյ
8 A թէ աւղն

մարդոյն, եւ զբանական հոգին վառէ ի նմա փչմամբն Աստուած մարդաբար, զոր փոխանակ հոգիացոյցն եւ¹ կամ շնչացոյցն ասելոյ² փչեաց ասէ. բայց են ոմանք³, որ զչնորհաց Հոգին ասեն:

2 A 22ա, H 35բ

ԻԸ (ԺԲ II)

Բ. 7բ

1 Եւ եղև մարդն յոգի կենդանի, այսինքն՝ յոգին եղև մարդն՝ կենդանի, անձնաւոր, այլ մարմինս գործիք է նորա, ըստ Պղատոնի⁴, թե ես եւ իմն եւ իմոյքն, ես՝ որ է անձն, իմն մարմինն, եւ իմոյքն՝ գոյքն, ոչ երէց եւ ոչ կրսեր, ինքն քան զինքն, այլ մի եւ նոյն: 2 Մի մարմնափոխութեան աղանդն կարծիցի, եւ կամ անխրիտ անաւթ ինչ ի կաւոյս տ[ո՞ւ]եալ Աստուծոյ տկարութիւն թուիցի Աստուծոյ այլում ժամու կարաւտեալ:

A 22ա

ԻԹ (ԺԲ III)

Բ. 14

1 Եւ արդ ի յասացեալ սահմանս գետոցն այսոցիկ դրախտ ոչ է, բայց ելեալք ի դրախտէն մտանեն ի ծոց երկրի^a, եւ^b ընդունիչ երակաւք ձեւեն զթանճրութիւն երկրի եւ գան աղբիւրանան միւսանգամ, որ յարեւելս եւ որ ի հարաւ եւ որ ի Հայս, որպէս թե աւետաւորք եւ Հրաւիրակք, անդրէն կոչելով զհալածեալ բնութիւնս, յոյս տալով եւ մխիթար տարագրելոցս:

2 Եւ կոչէ Փիսոն զազգն Սեմա, եւ Գեհոն՝ զծառայն Քանանու յազատութիւն եւ Տիգրիս եւ Եփրատ զազգն Յաբեթի յընդարձակութիւն:

A 22ա

Լ (ԺԳ)

Բ. 18-19

1 Բարի է բնութեամբ Աստուած եւ նախագէտ, շարժեցաւ բարին առնելով զԱդամ եւ զԵւայ: 2 Նախագիտութիւնն, որ ի նմա, գիտաց զոր ինչ լիներն⁵ եւ ոչ նախագիտութիւնն կարաց⁶ Աստուծոյ արգելով զմարդն եւ զաւգնականն իւր, զի անկեալ ի հրեշտակական անախտ աճմանէն՝ աւգնեսցէ կինն առնն՝ անասնապէս աճմանն եւ բազմանալոյ, ըստ աւրհնութեանն, որ ասաց Աստուծոյ⁷ Անեցէֆ եւ բազմացարուֆ եւ լցէֆ զերկիր. եւ ոչ զդրախտն անմեղապէս եւ հրեշտակավայելուչ:

A 26ա, H 43ա

ԼԱ (ԺԳ I)

Բ. 19

1 Եւ ստեղծ եւս տէր Աստուած գամբնայն գագանս եւ գամբնայն սողունս: 2 Ըստ վերագոյն ասիցն վասն ծառոցն ասի եւ այս՝ գազանս եւ թռչունս⁸ ստեղծանել Աստուծոյ ի տեսիլ Ադամայ, ի հաւատալ թէ եւ այլքն նոյնպէս ստեղծան: 3 Բայց եւ գամենայն գազանս եւ գամենայն թռչունս ասելովն՝ զառաջինն ստուգէ եւ հաւաստէ զստեղծուածս, գանասունս ընդ գազանացն եւ ընդ թռչնոցն ծածկապէս յիշելով: 4 Եւ զԵւսն զի⁹ յաւել. Քանզի անուանս հանդերձեալ էին առնուլ, եւ⁹ որպէս թէ այնու յետութիւն գոլ¹⁰ ի չէութենէ, որք առանց անուան ընդ ոչէսն ունեն զհաշիւն:

A 26բ, H 43բ

1 A հոգիացոյց (չի՞ք եւ)
2 A ասելով
3 A յոլովֆ փխ. ոմանք
4 C Պիւթագորի փխ. Պլատոնի

5 A լինելոց էր փխ. լիներն
6 A կարաց նախագիտութիւն
7 A չի՞ք Աստուծոյ
8 A գագան եւ թռչուն
9 H չի՞ք եւ
10 A գալ փխ. գոլ

ԼԲ (ԺԳ II)

Բ. 19ա

1 Եւ ամ զնոսա առ Ադամ տեսանել զինչ կոչեսցէ, եւ ամենայն շնչոյ կենդանոյ զինչ եւ անուանեաց Ադամ այն անուն է նոցա¹:

2 Առ Ադամ ամեն զամենայն, ստուգէ արտաքոյ դրախտին կոչել անուանս եւ ոչ յեզերս դրախտին, որպէս եւ² ասեն:

3 Եւ³ տեսանել թէ⁴, զինչ կոչեսցէ: 4 Քանզի արար զնա բանաւոր եւ իմաստուն, փչելով ի նա շնորհս⁵. տեսանել կամի զողոյ նորա զլաւ ծնունդս⁶, ցուցանել զոր ունի զհանճարն⁷, ոչ թէ անգիտանայ եւ փորձել կամի թէ զինչ կոչեսցէ զնոսա, այլ զինքնիշխանութիւնն⁸ յայտ առնէր⁹, որպէս թէ զոր ինչ եւ կամ ի ինքնիշխան¹⁰ իշխան է կոչելոյ: 5 Զի նոքաւ չանդերձեալ էր վարիլ աւգնականաւք, որպէս իշխան իշխեսցելով¹¹: 6 Նախ անուանս հրամայէ կոչել, զի զկնի ասելոյն՝ արասցուք աւգնական, առնթեր զանուանակոչութիւնն զնէ¹²:

A 26բ, H 43բ

ԼԳ (ԺԴ)

Բ. 19բ-24

1 Զթանճրութիւնն աչաւք տեսանեմք եւ մտաւք որոչեմք, իսկ զհնչումն ճայնից ականջքն առանց աչաց մտաց թարգմանեն: 2 Իսկ զաներեւոյթսն¹³ միտքն¹⁴

1 A նորա
2 A չիք եւ
3 A չիք եւ
4 A ասէ փխ. թէ
5 H շնորհ
6 A ծնունդն
7 A հանճարն
8 H զանճնիշխանութիւնն
9 A առնէ
10 A չիք ինքնիշխան
11 H իշխեսցելաւ
12 CD յիշէ
13 H զաներեւոյթն
14 A միտք

միայն իմանան, առանց աչաց եւ ականջաց, բայց անուն ոչ ընդունի, վասն որոյ եւ խաւսել իսկ ոչ կարեմք զնմանէ բանիւ: 3 Եւ մարդ ոչ մարմնով, այլ մտաւք է պատկեր Աստուծոյ: 4 Եւ Աստուած յառաջ¹⁵ քան զլինելն տեսանէ: 5 Եւ հաստատ տեսութիւն մտացն է քան որ զաչացն:

6 Եւ նախաստեղծ մարդոյն աչաւք եւ մտաւք միանգամայն ելից զպակասութիւնն կոչելով անուանս կենդանեացն, զի ոչ վայրապար ինչ արար Աստուած, այլ զկարեւորսն¹⁶, վասն որոյ եւ ասէ. Ամենայն շնչոյ կենդանոյ զինչ եւ անուանեաց Ադամ, այն անուն է նոցա¹⁷ (Բ՝ 19բ): 7 Զի ոչ անդեպս ինչ կոչեր, այլ զյարմարն եւ զնմանն, որպէս եւ զառիւծն ի յառնւոյն, եզն՝ ի հեզութենէն, շունն՝ ի շողոքորթելոյն, կատուն՝ ի տանն կալոյն, խոզն՝ ի խոզողութենէն. եւ այլքն¹⁸ նոյնպէս¹⁹:

A 27ա, H 44ա

ԼԴ (ԺԵ I)

Բ. 19գ-24

1 Եւ ամենայն, լսէ, շնչոյ կենդանոյ (Բ՝ 19գ):

2 Յայտ է թե անշնչիցն եւս կոչեաց անուանս, այլ զնոցայն լռեաց զի դիւրին էր վասն հաստատ կալոյն եւ անշարժ. եւ չէր կարի գովութիւն կոչողին. իսկ կենդանեացն յոյժ դժուարին վասն ախտից եւ բարոյից զանագանութեան եւ տեղափոխութեան, զորոց զկոչմանն գովութիւն ի կիր առեալ ասէ՝ Ամենայն շնչոյ կենդանոյ զինչ անուանեաց, այն անուն է նորա:

3 Եւ կոչեաց Ադամ անուանս ամենայն անասնոց եւ ամենայն զազանաց եւ ամենայն թռչնոց (Բ՝ 20): 4 Նախնոյն եւ ա-

15 H չիք յառաջ
16 A զկարեւորն
17 A նորա
18 A այլք
19 A այսպիսիք փխ. նոյնպէս

ուաջնոյ հաւրն մարթ էր կոչել զանուանս, քանզի անանուն թողուլն անպատեհ էր եւ յայլոց՝ կրսերաց կոչել անուանս՝ նախատինք էր նախահաւրն եւ նմա կոչելն անունս փառք է որդոց:

5 Կոչեաց, ասէ, Ադամ անուանս յիւրէն՝ ի գործոյն ի ձայնէն, քանզի յերից աստի դնին անուանք: 6 Կացեալ ի հանդիսի եւ անցանէին առաջի նորա ամենայն կենդանիք, եւ այնպէս ի դէպ կոչէր, զի բախէր կոչումն ի վերայ եւ յետս, ի կոչաւղն դառնայր:

7 Բայց Ադամայ ոչ գտաւ աւգնական նման նմա (Բ՝ 20): 8 Աւգնական էին նմա ասէ եւ այլ կենդանիքն, այլ իւր նման ոք չէր. յայտ արարեալ թէ մարդ է մարդոյ աւգնական:

9 Ասի թե յայնմ աւուր Ադամ զԱստուած արարիչ կոչեաց, տեսեալ զայլսն եւ վասն ինքեան ծանեաւ արարած գոյ: 10 Ոչ գտաւ. եւ յուժէ՞ խնդրեցաւ, յայտ է յամենայն կենդանիս գոյք տեսեալ Ադամայ՝ արու եւ էգ եւ զինքն միայն, զի ոչ գոյր ընկեր նմա:

11 Եւ արկ Աստուած թըմբրութիւն ի վերայ Ադամայ եւ ննջեաց եւ առ մի ի կողից նորա եւ ելից ընդ այնր մարմինն եւ շինեաց տէր Աստուած գկողն, գոր առ յԱդամայ՝ ի կին: 12 Եւ ած գնա առ Ադամ, եւ ասէ Ադամ: 13 Այս այժմ ոսկր յոսկերաց իմոց եւ մարմինն ի մարմնոյ իմոյ. սա կոչեսցի կին, զի յառնէ իւրմէ առաւ: 14 Վասն այնորիկ թողցէ այր գհայր իւր եւ գմայր իւր եւ երթիցէ գետ կնոջ իւրոյ եւ եղիցին երկոքին ի մարմին մի (Բ՝ 21-24):

15 Թմբրութիւն, զոր արկ Աստուած ի վերայ Ադամայ, ո՛չ քուն է բնական եւ ո՛չ ապշութիւն անախորժելի, այլ հոգեխառնութիւն եւ զմայլումն հիացման մարգարէաբար, իբր Աբրահամու գուշակումն ապառնեաց: 16 Ոչ ցաւեաց հողոյն, նոյն-

պէս եւ ոչ Ադամայ, սակայն զգաց մարգարեաւրէն: 17 Եւ ընդէ՞ր ոչ ի հողոյ, իբր եւ զԱդամ. զի մի համապատիւ իցէ, որպէս եւ ոչ հանգէտամանակ եւ ոչ համահասակ, այլ կրսեր եւ երկրորդ, զի հնագանդ լիցի Ադամայ եւ լուռ: 18 Զի որպէս խաւսելն գլխոյն է եւ լուռութիւնն կողին: 19 Այլ եւ կող էառ, զի մի՛ տկար ոք իցէ, որպէս զգաւրեղն կողեղ՝ եւ կողաւոր եւ հաստակող՝ կոչեմք զըմբիշս³: 20 Այլ եւ շարժումն ցանկութեան ասեն կողիցն է, որպէս ամանէ⁴ երիկամանցն⁵, որ ոչ շարժէ գնա, այլ ի կողիցն գաւրանայ:

A 27ա, H 44ա

ԼԵ (ԺԵ)

Բ. 21

1 Եւ զո՞ր կող էառ⁶ ասիցէ ոք, զաջոյ⁷ եթե՛ զձախոյ⁸, թուի թէ զձախոյ⁹, զի ասեն թէ կող մի աւելի է կնոջն ի ձախն¹⁰ բայց յորժամ Աստուած է արարիչ երկոքեանն¹¹ աջոյ են: 2 Եւ թեպետ եւ¹² ոսկր մի էառ, այլ գաւրութեամբ զբոլորին բնութիւնն, իբրեւ ածս ոստոց ծառոց եւ կամ մատունս որթոյ, որ գամենայն բովանդակ ունի¹³:

3 Եւ ելից ընդ այնր մարմին: 4 Յայտ է գտեղի կոչին ելից մարմնով եւ զայլ մատունս լրմանն ի կողն հանեալ¹⁴ ելից: 5 Եւ զի մարմինն թանճրութեան է անուն եւ շաւշափմանն՝ թէ ոսկր եւ թէ միս: 6 Եւ ած գնա առ Ադամ իբրեւ զայլ կենդանիս

1 DH կնեղ փ/ս. կողեղ
2 H հարստակող
3 H գմբիշ
4 H աման
5 A երիկամուցն
6 A չի՛ք էառ
7 A գաջու
8 A ձախու
9 A ձախու
10 A չի՛ք գի ասեն... ի ձախն
11 A երկոքին
12 A չի՛ք եւ
13 A ունի բովանդակ
14 H հան

կոչել եւ նմա անուն, որ եւ նման նմա էր անգնական ստեղծեալ, զոր շինուած կոչէ Աստուծոյ, զոր ոչ ոք կարէ քակեալ¹ բաց ի շինողէն: 7 Եւ յիրաւի շինուած, զի առանց կնոջ աներ է տուն: 8 Վասն զի² առն քաղաք եւ գաւառ եւ տուն կինն է:

ԼԶ (ԺԶ)

Բ. 25

1 Եւ էիմ մերկ Ադամ եւ կինն իւր եւ ոչ ամաչէիմ: 2 Եւ ոչ զի փառաւք ծածկեալ էին, զի եւ Հրեշտակք երկնաւոր փառաւք լի են, սակայն ամաչեն եւ յոյժ պատկառին եւս՝ զգէմս եւ զոտս ծածկելով՝ զչափ ահագին փառացն ճանաչելով զԱստուծոյն զինքեանցն թագուցանեն զփառս: 3 Իսկ նոքա ընդ ծառս դրախտին պշուցեալք էին եւ ընդ բազմապատիկ բերս պտղոցն, ընդ անթառամ ծաղիկսն եւ ընդ անապական տերեւսն ոչ զամաչելն գիտէին եւ ոչ զերկնչելն. զի թէ տաժանեալքս եւ խրատեալքս մահու մոռանամք զահ եւ զամալթ, զի՞նչ պարտ է վասն նոցա ասել, այլ եւ զի չէր ամալթոյ գործ գործեալ, ի միտ անգամ ոչ անկանէր ամալթն զոր ի հանդերձեալն ընդունելոց էն արդարքն:

A 28ա

ԼԷ (ԺԷ)

Գ. 1

1 Եւ աւան էր իմաստնագոյն քան զամենայն գազանս զոր արար Աստուած:

2 Եւ աւան անելի ոչ ունէր յառաջ իմաստ, այլ յետոյ կոչեցաւ խորամանկ, զի անալթ եղեւ չարին, զոր ի դէպ ետես առ իւր խարդախանս: 3 Եւ լցեալ զնա մատչի եւ կինն, զոր զատեալ յառնէն զբաւսնոյր առ եզերուք դրախտին: 4 Եւ ասէ աւան ցկինն՝ զի է զի ասաց Աստուած. Յամենայն ծառոց, որ ի ներքս են ի դրախտի

1 A կարող է փակել

2 A չի՞ վասն

այդր մի ուտիցէի: 5 Ոչ թէ յԱստուծոյ լուաւ սատանայ զպատուէրն Աստուծոյ, եւ ոչ նախագիտութիւն ինչ ունի յանձնէ, այլ ի դէպ է, թէ ի պատմելն Ադամայ Եւլայի լուաւ նա, ո՛չ զամենայն, այլ միայն չուտելն, եւ ոչ թէ յորքան ծառոց <ծառոց>, զի վաղվաղակի փախնոյր իբրեւ զապստամբ եւ զչար ծառոց: 6 Եւ սատանայ, զի վնասեալ էր եւ աւճիւն վստահանայր մատչիլ, որ ըստ բնութեան ողջ էր եւ ձեռն ընդել եւ ընդ իշխանութեամբ տուեալ նմա: 7 Եւ ասէ, Զի՞ է ասաց Աստուած յամենայն ծառոց, որ եւ ի դրախտի այդր մի ուտիցէի: 8 Մեղմեխանաւք իմն դնէ զբանն իբր թէ ուսանել կամի, յամենայն ծառոց զչուտելն միայն յիշելով, զի առաւել ցուցցէ զԱստուած չարակնեալ զնոսա եւ յամենայնէ արգելեալ, եւ զինքն բարեկամ առաւել: 9 Եւ զսուտն խառնէր ընդ ճշմարիտն, զչուտելն ի միոյն ընդ ամենին. ուստի առաւել զարմացաւ կինն, որպէս ընդ գիտաւղ եւ ընդ բանական ի խաւսսն. եւ զտեղի առ յորմէ փախնուլ պարտ էր, կամ ասել թէ՛ ուստի՞ է քեզ այդ:

A 28ա

ԼԸ (ԺԸ)

Գ. 2-5

1 Եւ ասէ կինն յամենայն ծառոց դրախտի կերիցուի, բայց ի ծառոյն, որ ի մէջ դրախտին՝ ասաց Աստուած մի ուտիցէի (Գ 2-3):

2 Եւ զիա՞րդ երկու ծառ ի մէջն լինի³. զի նշանն մի է ի մէջ⁴ բոլորին:

3 Ոմանք ասեն թէ վասն⁵ ի միոյ⁶ արմատոյ եւ ի բնոյ⁷ երկու էին ծառք՝ կենաց եւ գիտութեան: 4 Զի զասելն թէ զծառն

3 A չի՞ լինի

4 A չի՞ ի մէջ

5 A չի՞ թէ վասն

6 A մի

7 A բնէ

գիտութեան բարւոյ եւ չարի¹. ո՛չ ասաց² թէ տեղեալ: 5 Աստ, հաստատէ կինն, թէ ի մէջն կայր. այլ եւ զրախտն մեծ ասեն քան զամենայն աշխարհ:

6 Եւ զին³ զարմանք թէ³ երկու եւ կամ եւս առաւել⁴ ծառք⁵ գոլ ի մէջ զրախտին:

7 Իսկ գասելն, թէ՛ մի հուպ լինիցիք ինքն յաւել եւ ոչ թէ Աստուած ասաց իւրն ի դատապարտութիւն, զի թէ հուպ չեր արժան երթալ եւ չերթալին ցորչափ⁶ պահէին պատուիրանս զԱստուածոյ⁷, իսկ յորժամ հուպ լինելով գնալովն եւս⁸ կերան որքա՞ն դատապարտութիւն⁹:

8 Եւ ասէ աւճն ցկիմն, ոչ եթէ մահու մեռանիցիք, զի գիտեր Աստուած, թե յորում աւուր ուտիցէք ի նմանէ բանայցեմ աչք ձեր եւ լինիցիք իբրեւ զԱստուածս՝ նմանաչել զբարի եւ զչար (Գ՝ 4-5): 9 Յորժամ կառոյց եգիտ չարն եւ պատասխանոյն արժանի եղեւ. խնդութեամբ լի եղեւ¹⁰ քաղցր գինի արկանէր¹¹ յոսկի բաժակ եւ զնոյն մատուցանէր նմա դեղ մահու: 10 Զոր թե հասեալ էր ի վերայ թովէր նմա եւ փորձանք լեալ էր անարատ ոսկի եւ գտեալ փորձ, այլ ոչ իմացաւ զասացեալն¹², թէ գիտէր Աստուած, այսինքն թէ՛ բարեբարութեամբն իւրով ոչ արգել յամենայնէ, այլ¹³ նախանձու իւրով արգել ի միոյն, զի մի աստուածք լինիցիք: 11 Եւ ուստի եղիր չարն զյոքնական անունն աս-

տուածս ասելով¹⁴. զի երկուցն խոստանայր աստուածանալ Եւայի եւ Ադամայ. եւ գուշակեաց եւս զբազմաստուած մոլորութիւնն, որոյ մարգարէ¹⁵ ոչ բանական¹⁶ ոք, այլ չար գազանն¹⁷ եղեւ:

A 28բ, H 47բ

ԼԹ (ԺԸ I)

Գ. 4-6

1 Քանզի յորժամ լուաւ զայն. Թէ ուտեմ¹⁸ աստուածանայք՝ բեկաւ նախանձու եւ խորհեցաւ ի ձեռն ուտելոյն բառնալ ի կենաց եւ զիւրն ընդ Աստուծով էարկ պատճառս. իբր թէ ինքն անտի է կերեալ եւ աստուածացեալ¹⁸ այն, որ այժմ ընդ պատկերին մարտեաւ, եբեր զնոյն զաւրուութիւնն եւ առ ինքն աստուածանալ, զի կամեցաւ ինքն լինել նման բարձրելոյն, ըստ այնմ, որ ասէ թէ՛ Անաւրէն իշխանն, յորժամ կամեցաւ կործանել:

2 Իսկ նորա [Եւայի] լուեալ յղանայ նոյն ժամայն ցանկութեամբն, եւ բորբոքի ծարաւմամբ աստուածանալոյն: 3 Եւ մերձ երթայ ծառոյն եւ տեսանէ բաղձանաւք, ըստ որում եւ ասէ թէ¹⁹՝ Ետես կիմն²⁰, զի բարի է ծառն ի կերակուր²¹ եւ հանոյ աչաց հայելոյ եւ գեղեցիկ ի տեսանել²² եւ քաղցր ի կերակուր (Գ՝ 6): 4 Որչափ հաճեալ էր ընդ արէնս Աստուծոյ, ո՛չ երեւէր²³ ծառն գեղեցիկ, այլ յորժամ ի բաց եկաց ի նմանէ²⁴ ապա երեւեցաւ դեղին եւ²⁵ հաճոյ ոչ հաճոյն: 5 Եւ ցանկութեամբ աստուածա-

1 H չիք բարւոյ եւ չարի
2 A չիք թէ
3 A չիք թէ
4 A եւս աւելի փխ. կամ եւս առաւել
5 H ծառ
6 H որչափ
7 CF զԱստուծոյ պատուերն փխ. պատուիրանս զԱստուծոյ
8 H չիք եւս
9 CF դատապարտեմ եմ
10 CF եղեալ
11 CF արկանել
12 CF գասելն
13 H չիք բարեբարութեամբն ... այլ

14 H ասել
15 H մարգարէ ոք
16 H բանականութեամբ
17 CF գազան
18 Ձեռագրում՝ եւծացեալ
19 AC չիք թէ
20 H չիք կիմն
21 H տեսանել փխ. կերակուր
22 H չիք գեղեցիկ ի տեսանել
23 H էր փխ. երեւէր
24 AC յայնմանէ փխ. ի նմանէ
25 AC չիք դեղին եւ

նալոյն առաւել գունաւոր թուեցաւ եւ հաճոյ, քան զբնական գեղն:

A 29ա, H 48ա:

Խ (ԺԹ)

Գ. 6ա-7

1 Վասն որոյ առ ի պտղոյն եկեր եւ ետ առն իւրում եւ կերան եւ բացան աչք եւ տեսին զի մերկ էին, եւ կարեցին իւրեանց սփածանելիս:

2 Արդ, յիրաւի ասէ առաքեալ թէ՛ Ադամ ոչ պարտեցաւ այլ կինն պարտեցաւ եւ յանցեաւ այլ Ադամ հաւանեցաւ եւ ցաւակից եղեւ կնոջն. թեպետ եւ կինն զուտելն յամեաց² եւ ի մէջ խորհրդոց բազմաց տանջեցաւ ի տեսանելն զգեղ եւ զքաղցրութիւն պտղոյն: 3 Այլ ոչ իբրեւ զԱդամ, որ ի տեսանելն զկինն՝ կերեալ եւ խալտաւակեալ մերկութեամբ եւ բազում ցաւս ցաւեաց եւ ի ծովս չարչարանաց³ տանջեալ լինէր, թէ զի՞նչ արասցէ: 4 Եւ զայն ոչ կարաց ընտրել⁴, թէ գլուխն անախտ մնալով կարէր եւ ընդ մեղուցեալ անդամսն⁵ հաշտեցուցանել զԱստուած ապաշխարութեամբ, այլ ընդունելի համարեցաւ ընդ նմա կրել զնորայն պատուհասն⁶:

A 29ա, H 48բ-49ա

ԽԱ (Ի)

Գ. 7

1 Եւ բացան աչք երկոցունց եւ տեսին⁷, զի մերկ էին. եւ կարեցին տերես⁸:

2 Ոչ թէ կոյրք էին, այլ աչաւք սուրք քան բազումս, որպէս եւ ամենայն կենդանիք, այլ զմերկութեան ամաւթն նախ շա-

հեցան եւ տեսին: 3 Զի զգաստ⁹ մարդիք¹⁰ եւ ի խոր գիշերի ամաչեն յանձնէ¹¹ եւ զձեռս իւրեանց պահեն յամաւթալի անդամոցն, զոր եւ նոքա կրեցին, ի բանալ մանաւանդ մտացն աչացն¹² տեսին զտուգանս ստունգանելոյն յԱստուծոյ եւ զչարութիւն նենգաւորին: 4 Եւ երկոքեան¹³ կողմանքն ամաչեցին, նոքա, զի կերան եւ ոչ աստուածացան, իսկ չարն՝ զի ոչ մեռան ի նմին աւուրն, որպէս եւ կարծերն: 5 Այլ եւ այլոց եւս կենաց պատճառ եղեն՝ ծնանելով որդիս:

A 29ա, H 49ա

ԽԲ (ԻԱ)

Գ. 7ա

1 Այս իսկ¹⁴ բնաւորեալ¹⁵ է առ¹⁶ մարդիք, զի ի մեղանչելն, յառաջ քան զյանդիմանելն ուրուք՝ ինքն զինքն յանդիմանէ եւ յանձն իւր հաշի¹⁷ եւ մաշի: 2 Քան զի զաւրութիւն է Աստուած ամենաշարժ՝ չարացն կշտամբիչ եւ զարհուրեցուցիչ, իսկ լաւացն զաւրացուցիչ եւ զուարթացուցիչ:

3 Եւ թէ ուստի՞ գտին նախ ծննդական մասինն պատիւ առնել եւ զնա ծածկել: 4 Վասն զի¹⁸ մասն ունէին մարգարէական շնորհի, եւ այն արար նոցա գերեզարձ մտացն, գիտացին թէ անմահք եղաք¹⁹, եւ արդ մահկանացու՝ հանցանաւքն եւ անել հրաման ընկալաք իբրեւ զանասունս արու եւ էգ գոլով:

1 A չի՞ք է
2 A յամեաց գուտելն
3 A չարաչար
4 H ընդրել
5 H անդամն
6 A պատուհաս
7 A ծանեան փխ. տեսին
8 H չի՞ք եւ կարեցին տերես

9 H սգաստ
10 A մարդիկ
11 A ցանձնէ
12 A աչաց
13 A երկոքին
14 H ի-ն յետոյ ջնջուած
15 A ի սկզբնատրեալ փխ. իսկ բնաւորեալ
16 A ի փխ. առ
17 A հագի
18 A չի՞ք Վասն զի
19 A էա՞ք փխ. եղաք

5 Իսկ զթղենի տերեւն, ոմանք կարծեցին թուզ գոլ¹ զպտուղն² յանցանացն գոլ³, յորում տեղւոջ եւ զծածկելն եւ զթաքչելն արարին⁴: 6 Եւ վկայ թղենւոյն գաւսացուցանելն արարին⁵ յերուսաղէմ: 7 Եւ կէսք՝ զխաղողն եւ զարիւն խաղողոյն, զոր Տէրն կենաց զրաւական ետ⁶՝ ածեն վկայս, զոր գիրք չէ բացեալ զիւրօք իշխեն յանձանց ասել⁷ ինչ: 8 Եւ գիտութիւն չարոյ եւ բարի կենաց:

A 29ար, H 49ա

ԽԳ (ԻԲ)

Գ. 7բ

1 Եւ որպէս վասն Ագարայ գրեալ է, թէ՛ եբաց Աստուած գաչս նորա եւ ետես աղբիւր ջրոյ, նոյնպէս եւ աստ: 2 Զի ծառովն գիտացին զի բարի էր չուտելն եւ չար եղեւ ուտելն, եւ բացան աչք իմացման, եւ գիտացին զառականս իւրեանց, այնպէս կոչեցաւ: 3 Զաւրութիւն գոյր ի ծառն, որպէս առանց զփորձ առնլոյ անձամբ յուտելն իմանայր զբարի եւ զչար, եւ որպէս ի բազում տունկս գոյ այլ իրաց. եւ՛ որպէս մանանայն անապական էր եւ պահեցաւ յոսկի սափոր. եւ յորժամ անհնազանդութեամբն Աստուծոյ ի վաղիւն պահեցին՝ նեխեցաւ, ո՛չ ի բնութենէ, այլ վասն Տեառն հրամանին, որ ասաց՝ չ՛պահել⁸. նմանապէս եւ ծառն, ոչ ի բնութենէ, այլ ի հրամանէ Տեառն, զոր ոչ պահեցին, եղեւ նոցա պատճառ մահու:

4 Այլ ասեն թե, որպէս ծառն այն երկակողմանի էր՝ թէ չուտէին բարի եւ թե կերան չար, նոյնպէս եւ մարդն ստեղծաւ ի

մէջ մահու եւ կենաց, պահելով զպատուիրանն՝ անմահ եւ չպահելովն՝ մահկանացու: 5 Զի թե անմահ էր, ասեն⁹, ստեղծեալ, կերակրոյ կարեաւք¹⁰ չէր լեալ¹¹ եւ ոչ յետ յանցմանն ի մահ դատապարտեալ, որպէս եւ ոչ զսատանայ, որ դատաստանի ակն ունի եւ ոչ մահու: 6 Եւ դարձեալ, թե մահկանացու, ոչ ի մահ դատապարտէր, զի զմահկանացու ի մահ ոչ ոք դատապարտէ: 7 Եւ կամ թե մահկանացու եստեղծ Աստուած եւ ի ձեռն պատուիրանապահութեանն խոստացաւ անմահ առնել՝ պսակել զնա այնու:

A 29բ, H 49բ

ԽԳ (ԻԳ)

Գ. 8

1 Զի ի վերայ մեղացն շիկնելն յոյս ունի փրկութեանն եւ տերեւ թղենւոյն. զի խոշոր եւ ցաւեցուցիչ է աւելի գրգեալ, եւ փափուկ նոցա մարմնոցն ապաշխարութեան է տեսակ եւ մեղացն նշանակ, որոյ պտուղն քաղցր է ի ճաշակելն եւ յետոյ խոշոր է ի խիղճմտանացն ցաւելով:

2 Եւ լուան, ասէ, զձայն գնալոյ Տեառն Աստուծոյ, ընդ երեկս¹² ի դրախտին անդ¹³ եւ թափեան, երբ անմեղ էին ազդումն գալոյ լինէր¹⁴: 3 Եւ արդ¹⁵, Ընդ երեկս ասելն տարակուսելի է, թէ որ է աւրս այս եւ երկոյ: 4 Վեցերորդն ոչ է, զի հանգեալ յեւթներորդումն¹⁶. եւ ապա եդ, ասէ, զմարդն ի դրախտի¹⁷ անդ¹⁸: 5 Համարձակեցան ոմանք յարտաքնոցն ասել լինել մարդոյն ի դրախտի անդ զհազար ամ,

1 H չիբ գոլ
2 H գպտուղ
3 A չիբ գոլ
4 A գծածկոյթն փ/ս. գծածկելն
5 A առնեն
6 A եդ
7 A ասել յանձանց
8 H մի պահել փ/ս. չպահել

9 H չիբ ասեն
10 A կարաւտ փ/ս. կարեաւք
11 A եղեալ
12 A չիբ ընդ երեկս
13 A դրախտի փ/ս. դրախտին անդ
14 A չիբ երբ անմեղ... լինէր
15 A չիբ եւ արդ
16 A յեւթներորդումն
17 A դրախտն
18 A չիբ անդ

վկայ ածելով զասելն ի Դաւթիայ¹՝ եթե՝
 Հագար ամ ի յաչս Տեառն, որպէս ար երե-
 կի^{***}. Իսկ այլք՝ յընտանեաց զԽ. (40) աւր²
 ասացին՝ ըստ հոգեծնութեանն արուի, իսկ
 մեք ոչ ընդդէմ³ կարեմք ասել ինչ եւ ո՛չ
 գմերն հաստատել, քանզի է ինչ զոր յայտ-
 նեաց Աստուած մարգարէին եւ է⁴, զոր
 ծածկեաց, որպէս զերկնիցն զարարն⁵ եւ եթ
 ասաց, եւ զերբն լռեաց: 6 Նոյնպէս եւ
 վասն ծառոյն գիտութեան բարւոյ եւ չարի
 ասաց եւ վասն պտղոյն լռեաց. Զի թեպէտ
 եւ գոն⁶ արմատք մահաբերք, այլ նոքին
 ոչ կարեն եւ⁷ կենաց պատճառ լինել, զի
 երկու բնութիւն ի մի ծառ ոչ կարէ լինել⁸,
 այլ բանն⁹ է աստուածային սաստկութեան
 եւ քաղցրութեան եւ ծառն՝ միջնորդ ընդ
 մարդ եւ ընդ Աստուած:

A 30ա, H 50ա

ԽԵ (ԻԳ I)

Գ. 8ա

1 Մագաղաթն արքունի ոչ է որիչ
 յայլմէ¹⁰ մագաղաթէ, այլ անաւթ եղեւ ա-
 նուան թագաւորի. ուր որ¹¹ անարգեն¹²
 զնա՝ ոչ մագաղաթին տուգանսն պահան-
 ջեն ի նմանէ, այլ մահուամբ՝ զանարգանս
 թագաւորին: 2 Վասն որոյ ոչ գծառն է
 հայցելի, այլ թէ հրաման Տեառն ի նմա էր,
 յորմէ դողալ պարտ էր. եւ այնպէս ահա-
 գին, որ դեռեւս տամք զտուգանս հրամա-
 նացն Տեառն:

A 30ա H 50ա

1 A Դաւթի փ/ս. ի Դաւթայ
 *** Մագ. Գ. Թ. 4
 2 H ամ փ/ս. ար
 3 A ընդդէմ ոչ
 4 A է ինչ փ/ս. է
 5 H զերկնից արարն
 6 A եմ փ/ս. եւ գոն
 7 A չիք եւ
 8 A գոլ
 9 A բան
 10 A յայլոյ
 11 A ոք
 12 A անարգէ

ԽԶ (ԻԳ)

Գ. 8-11

1 Ոմանք ուրբաթ ասացին զերեկոյն,
 այլ մեզ չէ փոյթ, բայց ընդ երեկս զի՞ ա-
 սէ, զի¹³ ուր Աստուած է՝ ընդ երեկս
 զիա՞րդ իցէ. այլ զի եկեալ Տեառն¹⁴ Տէրն
 ողբալ զնա, զի կենաց նորա կատարած է եւ
 վճիռ հատանելոց է եւ հանելոյ¹⁵, անդի¹⁶
 ընդ երեկս կոչեցաւ:

2 Իսկ ասելն լուսն գձայն գնալոյ (Գ-
 8) յանկարծակի սրտաթափ, սրտակտուր ե-
 դեն ձեռք ի տերեւ, ոտք ի փախուստ,
 միտք ի դողման, ակ ն¹⁷ ի վայր անկեալ,
 զոր ձայն կոչէ ոչ թե խաւշիւն^a ինչ:
 3 Սակայն զոր ստեղծ¹⁸ ձեռաւք¹⁹ ոտիւք
 գայ հիւանդատէս:

4 Ողբայ ձայնիւ եւ ասէ Ո՞ւր ես Ա-
 դամ (Գ- 9) իբր ասել՝ յորմէ փառաց յոր-
 պիսի յանարգութիւն անկար²⁰, երկնա-
 յինդ²¹ եւ անմահդ երկրային եւ մահկանա-
 ցու եղեր. ողբամ զքեզ, զի զիս ի քեզ նկա-
 րեցի. ոչ ի քեզ խնայեցեր, եւ ոչ ի պատկե-
 րէ իմէ պատկառեցեր. որ զամենայն զի-
 տէ, եւ թէ զինչ պատասխանի տալոց էր²².
 սակայն հարցանէր²³ ապաշաւանս կոչելով
 ապաշխարանաւք²⁴:

5 Լուայ, ասէ²⁵, գձայն Բո ի դրախտի
 աստ եւ երկեայ, Բանգի մերկ էի եւ Բաբեա
 (Գ- 10): 6 Եւ յաւրն յորում ստեղծար ա-
 սէ²⁶ մերկ էիր, եւ մինչ²⁷ զանուանս կեն-

13 A չիք զի
 14 H չիք Տեառն
 15 A հանելոց
 16 A անտի
 17 A աչք
 18 A չիք ստեղծ
 19 A ձեռաւք եստեղծ
 20 A հասէր փ/ս. անկար
 21 H երկնաինդ
 22 A է
 23 A հարցանէ
 24 A աշխարանաւք
 25 H չիք ասէ
 26 A չիք ասէ
 27 H չիք մինչ

դանեացն¹ դնէիր, ասէ, մերկ էիր: 7 Եւ արդ ո՞ր պատմեաց քեզ, թե մերկ էս, զի յայնժամ չգիտէիր ասէ² զմերկութիւն քո բայց եթե ի ծառոյն յորմէ պատուիրեցի քեզ չուտել՝ կերա՞ր արդեաւ³ ի նմանէ:

A 30ա, H 51ա

ԽԷ (ԻԵ)

Գ. 12

1 Ո՛ր, [խնամք] մարդասիրին. ոչ միջնորդաւք յանդիմանէ որպէս թագաւորք առնէն⁴ եւ դատաւորք՝ զմահապարտս, այլ ինքնին թագաւորք եւ դատաւորք՝ զմահապարտս, այլ ինքնին նախտոյցն տայ⁵ զգայութիւն⁶ տա ձայնի՝ յորմէ թագէին⁷: 2 Եւ աստ տնկեաց⁸ ի բնութիւնս զմտացն խիղճս միշտ ընդ մեզ լինել, եւ կռփել զկնի մեղացն եւ անհաշտ պատերազմել՝ մինչեւ հանցէ զցաւն կսկծամամբն:

3 Բայց եթէ ի ծառոյն, ասէ, յորմէ պատուիրեցի, քեզ⁹ հարցմամբ եւ կարծեաւք¹⁰ դնէ զբանն, զի ինքն խոստովանեսցի խոնարհութեամբ եւ գտցէ քաւութիւն:

4 Եւ ասէ Ադամ, կինս գոր ետուր ինձ, սա ետ ինձ¹¹ ի ծառոյ անդի¹² եւ կերայ: 5 Յանդգնութեամբ ետ զպատասխանին, պատճառելով ոչ միայն զկինն, ա՛յլ եւ զպտուղ կնոջն զԱստուած, որ ի բարին գործել ետ նմա աւգնական եւ ոչ իշխան արկանելոյ ի մեզս:

A30ա, H 51ա:

ԽԸ (ԻԵ I)

Գ. 13-14

1 Եւ ասէ Տէր Աստուած ցկիմն զի՞նչ գործեցէր զայդ, որպի՞սի մտաւք, զի՞նչ խորհելով, յի՞նչ ախտացար (Գ 13), զի ինքն ասասցէ ապաշաւանաւք զպատճառն, զի ոչ եթե ծառն եւ զպտուղն, այլ^a կամք աստուածանալոյն մերկացոյց զնա ի փառացն զոր ունէր^b: 2 Եւ եղեւ առակն. թէ¹³ էչն չոգաւ եղջիւրս առնուլ՝ եւ տեսեալ զնա¹⁴ կտրեցին զականջսն¹⁵, նորա¹⁶ այլ եւ¹⁷ նա, ո՛չ խոստովանեցաւ զապաշաւանացն¹⁸ զբանն¹⁹՝ զմեղացն, այլ ասէ, աւճն ոչ ետ, այլ խաբեաց զիս, եւ ոչ ասաց թէ յինչ յոյս խաբեաց զիս²⁰, զոր պարտ էր ասել: 3 Քանզի առաջին բարին չմեղանչելն է, եւ երկրորդ՝ յետ մեղանացն²¹ ապաշաւելն եւ գտանելն թողութիւն, եւ թէ յերկարի²² յապաշաւանան լինի հաւասար չմեղուցելոցն, ըստ խրատու ուրումն, որ ասէր²³. Թէ արդարագործ չեղեր, արդարախաւս լեր, եւ թէ յերկարես ի նմին, եւ արդարագործ եւս լինիս:

4 Աւճն, ասէ, խաբեաց զիս (Գ 14): 5 Եւ զիս՞րդ, միթե՞՞ հաւասար ոք էր նմա աւճն եւ կամ կնոջն տուաւ, որպէս նա՝ Ադամայ: 6 Ո՞չ ընդ նմա ձեռամբ ի ծառայութիւն տուեալ էր ընդ այլ զազանսն²⁴:

A 30բ, H 51բ

1 H կենդանեացն մից
2 A չի՞ք ասէ
3 H արդիւք
4 A չի՞ք առնեն
5 H չի՞ք տայ
6 H զգայութիւն տա
7 H թագէին
8 H տնկեաց
9 A չի՞ք քեզ
10 H կարծիւք
11 H չի՞ք ինձ
12 A անտի

13 A զի փ/ս. թէ
14 A չի՞ք գնա
15 H զականջս
16 A չի՞ք նորա
17 H չի՞ք եւ
18 A զապաշաւանաց
19 A բանն
20 H չի՞ք զիս
21 H մեղացն
22 A յերկարի
23 A չի՞ք որ ասեր
24 H զազանս

ԽԹ՝ (ԻԶ)°

Գ. 14-17

1 Զմի գողն յատեան կոչեցեալ, երեք ի մէջ եկին, թե գերկրորդն հարցանէր՝ գերրորդն ցուցանէր. զոր թէ հարցանէր զայլ ոք ոչ ուներ ցուցանել, զի նա էր պատճառն: 2 Այլ չառնէ արժանի հարցանելոյ՝ զգազանն, որում ոչ էր տուեալ բան զիա՞րդ պահանջէր ի նմանէ: 3 Այլ ասէ Տէր Աստուած ցաւն փոխանակ զի արարեր դու գրանդ գայդ, զոր կինդ ասաց՝ զխաբէութիւնդ, կամ սատանայականն՝ ի՞նչ քեզ արարէր եւ ի քո բերանոյդ ել անիծեալ լիջիր դու յամենայն գազանաց եւ յամենայն անասնոց, փոխանակ՝ զի դու եղեր աման չարին՝ յամենայն գազանաց եւ յամենայն անասնոց:

4 Ի վերայ լանջաց եւ որովայնի բու՛մ՝ գնացես, փոխանակ զի ոտք եղեր չարին:

5 Եւ հող կերիցես զամենայն⁶ աւուրս կենաց բոց (Գ. 14), զի արարեր զմարդն հող. անիծեալ, որ է սպանեալ, եւ կամ⁷ զի սպանանել⁸ ջանան զնա ամենայն կենդանիք, եւ⁹ թէ¹⁰ կամ յաւրհանութենէ ամենայն կենդանեաց զրկեալ լիցիս, զի պատճառ եղեր անիծանելոյ գերկիր աւրհանեալ, որ թեպետ եւ անասուն էր եւ այլ էր գործանեայն¹¹, սակայն գործիք եւ անաւթ եղեւ չարին, իբրեւ զանասունն, յոր մարդ¹² մտաբերէր ոք¹³ սպանանէր աւրէնքն:

6 Այլ եւ առ Նոյիւ եւ առ Սողոմայեցո՛վքն¹⁴ անասունքն կրեցին պատուհաս:

7 Այլ եւ որ դեռ եւս լինին հրձգութիւնք եւ շարժմունք եւ գերութիւնք՝ արդարք եւ մեղաւորք զոյգ կրեն, ոչ թե անիրաւ ինչ¹⁵ է Աստուած, այլ մեղաւորն աստ եւ անդ կրէ, եւ արդարն աստ միայն: 8 Թերեւս¹⁶ թէ եւ արդարն չէ կատարեալ արդար, կամ չատէ զմեղաւորն, եւ կամ մասն ինչ ունին¹⁷ յանցանաց: 9 Գոյր եւ մասն չարութեան յաւճն, որով բաւական եղեւ ընդունիչ լինել, եւ չիք ինչ նման մեղաց քան զաւճն: 10 Եւ զի¹⁸ հինգ ման առնու աւճն¹⁹ ի սողելն իւրում, երկուն՝ աչաց եւ երկուն՝ ականջաց, հինգերորդն՝ փասքուս բանից: 11 Եւ²⁰ քանզի աչաւք ականարկեն²¹ ընդ միմեանց²² այր եւ կին, եւ ձայնիւ զախտսն յայտնեն եւ գործեն զչարիս նման աւճին:

12 Դարձեալ գազանս այս ոչ մագլաւոր է որպէս գառիւծ, եւ ոչ ժանեւոր իբրեւ զարջ, եւ ոչ ճիրանաւոր իբրեւ զարծուի եւ ոչ ոտնաւոր իբրեւ զչորքոտանիս կամ զերկոյտանիս, այլ թեւս ուներ: 13 Որում խոստացաւ չարն, որ ի²³ անկաւ յերկնից²⁴ առնել զնա կառս թեւաւորս եւ թագաւորել ի վերայ երկրի, վասն այնորիկ եհատ զթեւս նորա, զի եւ²⁵ հեծեալն ի նման նովաւ սողեսցի ի վերայ երկրի եւ կցորդեսցի լիզողին²⁶ զհողն²⁷:

1 H հարցանել
 2 A սատանայիմ
 3 A չի՛ք ի
 4 H չի՛ք փոխանակ
 5 A քո
 6 H չի՛ք զամենայն
 7 A չի՛ք եւ կամ
 8 A սպանել
 9 A չի՛ք եւ
 10 A չի՛ք թէ
 11 H գործանայն
 12 H չի՛ք մարդ
 13 A չի՛ք ոք

14 H Սողոմայեցաւքն
 15 H չի՛ք ինչ
 16 H չի՛ք թերեւս
 17 H ունի
 18 A չի՛ք եւ զի
 19 A չի՛ք աւճն
 20 A չի՛ք եւ
 21 H արկանեն փխ. ակնարկեն
 22 A չի՛ք ընդ միմեանց
 23 H չի՛ք ի
 24 A երկնից անկաւ
 25 A չի՛ք եւ
 26 H լիզողիմ
 27 A զհող

14 Եւ ասէ, եղից՝, գըջնամութիւն ի մէջ
 ԲՈ ԵՒ Ի մէջ կնոջդ². Եւ ի մէջ զաւակի ԲՈ ԵՒ
 ի մէջ զաւակի դորա (Գ 15): 15 *Զայս եւ
 աչաւք է տեսանել, զի³ գայլ եթե զորդի
 ուրուք տեսանէ⁴, նա եւ ոչ գանուեն⁵ ան-
 գամ գայլոյ⁶ յիշէ: 16 Նոյնպէս եւ⁷ կայ
 զթշնամութիւնս⁸ այս ընդ ամենայն կա-
 նայս եւ ընդ ամենայն աւճս, եւ որ աւճիւն
 վարեցաւ նոյնպէս՝ ընդ սատանայն:*

17 Վասն որոյ բազում կանայք
 խնդրեցին զվրէժ մաւր իւրեանց յերեւելի
 եւ յաներեւոյթ աւճէն՝ ջախջախելով
 զգլուխ նրա: 18 Եւ եւս բազմագոյն արք
 արարին եւ առնեն ցաւս թշնամոյն⁹:
 19 Եւ ընդէ՞ր գլխոյն սպանեն, զի չար
 գազանն այնու մեռանի, եւ երկրորդ՝ զի
 աղբիւր է մահաբեր թունից, եւ երրորդ՝ զի
 չէր բանաւոր եւ տեսակաւ բարի. մահացու
 արար զբնութիւնս: 20 Եւ մեծ է ողորմու-
 թիւն Տեառն, զի զգլուխ թշնամոյն¹⁰ առ
 ոտս խոնարեցոյց՝ ուստի մեղանի¹¹, իսկ ո-
 տից¹² եւ կաւչիքն¹³ պահապան են¹⁴: 21 Եւ
 զի բարեկամ ձեւացաւ կնոջն եւ փորձն
 թշնամութիւն ցուցաւ. եւ նոյնն¹⁵ կայ եւ
 մնայ յաւիտեան:

22 Եւ ցկինն ասէ Բազմացուցանելով
 բազմացուցից գտրտմութիւնս¹⁶ ԲՈ ԵՒ¹⁷

գեծութիւնս ԲՈ. Տրտմութեամբ ծընցիս որ-
 դի, եւ առ այր ԲՈ դարձ ԲՈ, եւ նա տիրեսցէ
 Բեզ (Գ 16): 23 *Աւաղ է բնութեանս յետ
 զրկելոյն ի դրախտէն. եւ յորժամ Աս-
 տուած եւս ցաւս յաւելու¹⁸, զի՞նչ պարտ է
 ասել: 24 Եւ¹⁹ բազմացուցանելով, ասէ,
 բազմացուցից... (Գ 16*), ոչ պակասաւոր
 եւ հանդուրժողական, այլ բազմաբեղուն
 եւ անհանդուրժողական, ըստ ժամանակի
 յաւելուածով բազմանայ մաշումն երկրի
 եւ տառապանք մարդկան ի պէս-պէս փոր-
 ձութիւնս՝ ջրով եւ հրով եւ անբերու-
 թեամբ եւ հիւանդութեամբ եւ մահուամբ՝
 թող զհանդերձելոյն հեծեծումն եւ հառա-
 չումն:*

25 Տրտմութեամբ ծնցիս որդիս²⁰ (Գ
 16*):

26 *Զի՞նչ աղէտ քան եթե²¹ մահու
 ծնանել որդիս. որ եւ²² յոլով անգամ տե-
 սանէ զմահ ծնընդոցն, այրումն եւ խորո-
 վումն եւ գալարումն աղեաց. զի կամեցար,
 ասէ²³, անտրտում եւ անցաւ²⁴ լինել եւ
 Աստուած որդիս ծնանիլ, բազմասցի առ
 քեզ ասէ²⁵ վիշտ ծնընդեանն²⁶, քան եթե
 առ անասունսն, զի նոքա կացին յիւրեանց
 սահմանին եւ դու ոչ մնացեր ի քոյն:*

27 Եւ առ այր ԲՈ դարձ ԲՈ ԵՒ նա տի-
 րեսցէ Բեզ (Գ 16*):

28 Եւ²⁷ այս անցանէ ընդ ամենայն
 առնակին, որ առն²⁸ կենակից է նմա²⁹, զոր
 ոչ իմանայ եթե պատուհասէ, այլ եւ ոչ

1 A եղից ասէ
 2 H կնոջդ
 3 A չի՞ր զի
 4 A վնասէ փխ. տեսանէ
 5 A գանուեն
 6 A գայլոց անգամ
 7 A չի՞ր եւ
 8 H թշնամութիւնս
 9 H թշնամոյն
 10 H թշնամոյն
 11 H մեռանի փխ. մեղան
 12 A ոտից
 13 A կաւչիկն
 14 A է
 15 H նոյն
 16 A գտրտմութիւնս
 17 H չի՞ր եւ

18 H աւելու
 19 H չի՞ր եւ
 20 A որդի
 21 A թէ
 22 A եւ որ
 23 H չի՞ր ասէ
 24 A անցաւ
 25 A չի՞ր ասէ
 26 H ծննդեան
 27 A չի՞ր եւ
 28 A կին փխ. առնակին, H չի՞ր առն
 29 A չի՞ր նմա

կարէ միայն ի գլխոյն կեալ¹ տառապանաւք: 29 Թեպետ եւ² ցաւաւք ծընանի դառնայ ի նոյնն պատճառն³:

30 Եւ նա տիրեսցէ քեզ:

31 Զի նախ հաւասարք էին, եւ զի կամեցաւ ճոխանայ քան զայրն⁴: 32 Նախ ուտելով ի պրտոյն, ապա⁵ յիրաւի զրկեցաւ կինն ի հրապարակէ արանց⁶, յիշխանութենէ, եւ ի⁶ քաղաքավարութենէ, եւ առնէ տէրութիւն եւ ամենայն աստիճանք պատուականք:

33 Եւ ցԱդամ ասէ Փոխանակ զի լուար ձայնի կնոջ քոյ եւ կերար ի ծառոյն⁷, յորմէ պատուիրեցի քեզ անդի⁸ միայն չուտել եւ կերար արդիւ⁹ ի մմանէ (Գ 17): 34 Արդ, ի¹⁰ կարգի մեղանացն¹¹ զհետ բերէ եւ զպատիժն: 35 Նախ աւճն խաբեաց, ապա կինն պատրեալ եկեր, եւ¹², ապա Ադամ առաւ¹³ ի կնոջէն¹⁴ եկեր փոխանակ զի լուար ձայնի կնոջ քո: 36 Յայտ արարեալ թե ոչ վճարէ¹⁵ ինչ պատճառելն զայլս¹⁶, որք խաբեցինն զայլս եւ սկիզբն¹⁷ եղեն¹⁸ մեղացն. փոխանակ զի լուար ձայնի¹⁹ կնոջդ եւ ոչ Աստուծոյ՝ անիծեալ լիցի երկիր ի գործս քո (Գ 17*):

37 Խնայեաց ի նայ Տէրն եւ պատիւ արար պատկերին իւրոյ. եւ յանբան քոց,

կամ ի գործելն քո զնա, չառնէ զքեզ ուրախ իբրեւ զզրախտն, որ գործէիր եւ ոչ քրտամբք, եւ փափկանայիր ի նմա: 38 Տրտմութեամբ կերիցես զնա զամենայն աւուրս կենաց քոց (Գ 17*)՝ յիշելով զանտրտում կեանս զրախտին: 39 Քամ յանցեալ, Քանան անիծաւ, Ադամ յանցեալ, երկիր անիծաւ: 40 Երկիր ոչ զգա զանէծս, բայց պտուղ անիծից երբը²⁰, լսելով թէ՛ փուշ եւ տատասկ²¹ բուսուցի²² քեզ (Գ 18): 41 Այս բոյսք եւ յառաջ քան զանէծսն էին՝ վարդենիք եւ նունենիք եւ արմաւենիք եւ վարընկենիք²³ եւ նմանք սոցա: 42 Եւ յոլով ծաղկանց փուլն է պահպան յապականչաց, զի մարդն անմահ եւ անապական էր՝ ոչ կտտէին եւ ոչ խոցոտէին զնոսա²⁴, ոչ սոսկումն եւ ոչ երկիւղ յուժեքէ գոյր: 43 Իսկ յորժամ ապականացու եղեւ զապականացու երկիր գործելով եւ ուտելով զպտուղ անիծիցն²⁵՝ նոյնպէս լինի եւ ինքն:

A 30p-31p, H 51p-52p

Ծ (Իէ)

Գ. 19

1 Եւ զրախտն զի չէ ապականացու եւ ոչ անիծաւ, եւ ոչ զապականացու բնակիչս ընդունի²⁶ վասն փուշ, որ ի բնութենէ տնկոց կայր յառաջ, եւ որ ի կեղեւոյն եւ ի մորթոյն վերայ է, յետոյ յարեցաւ յանիծիցն⁶:

2 Ի^c ֆիրտն կեր զհաց քո մինչ եւ դարձցիս յերկիր: 3 Քիրտն^d արտաքսաչնչուլիւն է աշխատեալ մարմնոյ եւ նշանակ առողջութեան հիւանդաց: 4 Եւ որ չարչարի մարմնով արդարանայ հոգևով՝

1 A կալ
2 A չի՞ եւ
3 A պատման
4 H չի՞ քան զայրն
5 A չի՞ ապա
6 A չի՞ եւ
7 A պտղոյն փ/ս. ծառոյն
8 A չի՞ քեզ անդի
9 A չի՞ արդիւ
10 A չի՞ Արդ, ի
11 H մեղացն
12 A չի՞ եւ
13 A չի՞ առաւ
14 A կնոջդ փ/ս. կնոջ քո
15 A չվճարէ
16 A չի՞ զայլս
17 H սկիզբն
18 A արարին փ/ս. եղեն
19 A չի՞ ձայնի

20 H բերեք
21 D դատասկ
22 D բուսուցէ
23 D վարընկենիք
24 D զնա
25 D անիծից
26 H ունի

զրեալ է՞ հնարք է եւ այս առողջութեան մարդասիրին հրամայեալ հիւանդացեալ բնութեանս՝ զհեղգութեան յանցանսն չարչարանաւք քաւել եւ երանելի եւս լինել, ըստ այնմ՝ զվաստակս ձեռաց քոց կերիցես:

5 Երանելի է քեզ եւ բարի եղիցի քեզ, մինչեւ դարձցիս յերկիր ուստի առար՞:

6 Եւ թէ զսատանայ ընդէ՞ր ոչ պատուհասեաց՞ ասիցէ, ոք. վասն զի՞ չունէր ինչ բարի, եթէ՞ հանէր ի նմանէ բաց յանմահութենէն: 7 Եւ այն ի պատիժ էր՞ նմա անմահապես տանջեալ: 8 Իսկ եթե ո՞վ էր նա, զիրք ասէր, թե հրեշտակ էր եւ երկնային, եւ անձնիշխան կամաւքն ապստամբեալ ոչ պահեաց զտեղի իւր նմանագոյն արտիւ աստուածանալոյն վիրաւորեալ:

A 31բ-32ա, H 53ա

ԾԱ. (ԻԸ)

Գ. 21

1 Եւ արար տէր Աստուած Ադամայ եւ կնոջ նորա հանդերձս մաշկեղէնս եւ զգեցոյց նոցա: 2 Ողորմեցաւ ամաչեցելոցն եւ պատժեցելոցն. հարկանեմ, ասէ, եւ ես՞ բժշկեմ: 3 Կենդանական մորթովք՞, զոր գոյացոյց զգեցոյց զնոսա, տուեալ հրաման զնոյնն եւ զնմանն առնել եւ զգենուլ:

4 Զգեցոյց եւ ծածկեաց զամաչեցեալսն ի միմեանց՝ փրկութիւն տուեալ եւ գէն ընդ դէմ ցրտոյ եւ տաւթոյ եւ ցանկութեան: 5 Եւ՞ զուստին չէ արժան հարցանել, այլ զայն, թե ուստի՞ չկարէ առնել Աստուած: 6 Առ մարդկան այլք առնեն եւ

այլք զգեցուցանեն՞, իսկ զոր Աստուած արար ինքն զգեցոյց, թէպէտ՞ եւ առ ժամայն նշանակ սգոյ եւ տրտմութեան էր յանցաւորացն. իսկ առ յապա ակնկալութիւն ինքնագգեստ ի կենդանի փառաց անմահութեան: 7 Այլ՞ եւ մեռելոցն մեղաւք մորթ մեռեալ զգեցուցանէ, զի յայնմ յետէ ի մեռելոց համարի են՞:

A 32ա, H 53բ-54ա

ԾԲ. (ԻԹ)^f

Գ. 22-24

1 Եւ ասէ Տէր Աստուած. Ահա Ադամ եղև իբրեւ զմի ի մէնջ՝ ճանաչել զբարի եւ զչար, գուցէ ձգիցէ զձեռն եւ առ [նուցու ի ծառոյն կենաց, ուտիցէ եւ կեցցէ յաւիտեան] (Գ. 22):

2 Ոչ հեգնական է բանս, զի ոչ վայել է Աստուծոյ ոտնահար լինել իւրոյ ձեռագործին, այլ ճշմարտելով ասէ՞. Եղև Ադամ ճանաչաւ բարւոյ եւ չարի՝. փորձիւ եւ ոչ զաւրութեամբ: 3 Վասն զի՞ Աստուած բնութեամբ ճանաչէ զամենայն, մարդ ի գործոց ճանաչէ, զոր մեք ի բնութենէ, սա արդ գիտաց: 4 Դարձեալ զի ցանկայ՞ Ադամ լինել իբրեւ զմի ի մէնջ (Գ. 22*), ահա եղև նմա ի կամս մեր աստուածանալ նորայոյն բնութեանն՞ եւ լինել երկրորդ Ադամ, որոյ խորհուրդն յառաջ քան զյաւիտեանս ծածկեալ գոյր ի մե՞զ եւ արդ՝ ահա հիմն արկցի խորհրդոյն մինչեւ առցէ զկատարումն եւ ձգիցէ զձեռն իւր ի ծառն կենաց, որ բուսանի ի պտղոյ արդարութեան եւ տայ զպտուղն ի ժամու իւրում ասելով՝ այս է հացն յերկնից իջեալ, զոր թե ոք ուտիցէ զմահ մի տեսցէ յաւիտեան:

1 H չպատուհասեաց
2 A քանգի
3 A գոր
4 A է
5 A տանջելով
6 A չի՞ք ես
7 A մորթով
8 H ցանգութեան
9 A չի՞ք ես

10 A զի
11 H ցանգայ
12 A բնութեան

5 Եւ արդ ասա, ասէ գուցէ ձգիցէ գձեոն իւր ի ծառն կենաց¹ առ նուցու² կա եւ կեցցէ յաւիտեան (Գ• 22բ):

6 Անժամ եւ անպատեհ է, ասէ, արդ ուտել ի ծառոյն կենաց եւ կեալ, զի Աստուծոյ բանն գործ է կատարեալ: 7 Ասաց յորում աւուր ուտիցես ի նմանէ³ մահու մեռանիցես⁴ (Բ՝ 17), զի⁵ ընդ ուտելն եւ մահն եհաս: 8 Երկու բնութիւն ի դրախտին չէր մարթ լինել՝ մահկանացու եւ անմահ, եւ ոչ իսկ ի մարդումն, զի ապականացուի անմահանալն չէր⁶ հնար. եւ թե էր լիներ իբրեւ գառասպելն գոր ասեն՝ Աղեքսանդրոս⁷ ոմն անմահ կայ, մաշեալ այնքան⁸, որ լեզուն միայն է մնացեալ, զոր արկեալ ի շիշ, ասեն, հեծէ եւ ասէ՝ ուրեմն թէ Ադամ անմահացեալ էր՝ լինէր իբրեւ զիս: 9 Թերեւս դիւաց էր⁹ ցնորքս այս, քանզի ցաւաւք եւ հեծութեամբ, եւ¹⁰ տրտմութեամբ եւ խտիւ մեղաց անմահանալն¹¹ անհնարին լինէր աղէտն եւ անասելի՝ թշուառութիւնն, գոր եւ¹² գործէին առ իրեարս ազգ մարդկան, այլ զիտէ Աստուած զինչ առնէ՝ պահէ գուտելն յիւրում¹³ ժամու:

10 Եւ եհան, ասէ, արձակեաց Աստուած¹⁴ զԱդամ ի դրախտէն եւ բնակեցոյց զնա յանդիման դրախտին գործել կերկիր, ուստի առաւ¹⁵ (Գ• 23):

11 Ոչ զաւտարի ուրուք առնու, հանէ արտաքս, այլ զոր առ եւ եդ ի դրախտին գնոյնն եւ¹⁶ արձակէ ի բաց, եւ ոչ կորուսանէ Աստուած զստեղծուածն իւր, այլայլումն ի մէնջ ողորմութիւն յԱստուծոյ լինի, որպէս եւ հանդերձն՝ վասն¹⁷ խնամ տալոյ¹⁸ էր, նոյնպէս եւ գործելն գերկիր ողորմութիւն էր, զի գայ ժամանակ անէծքն յաւհնութիւն փոխելոյ եւ խլելոյ զփուշն: 12 Իսկ յանդիման դրախտին բնակելն¹⁹ վասն երկուց իրաց, մի՝ զի հայեղով ի տեղին միշտ յիշեսցէ զհանցանս իւր եւ զզջասցի յապաշխարութիւն, ապա եւ ակնկալութիւն լիցի անդրէն²⁰ դառնալոյն: 13 Եւ զի յերկար ժամանակս կալոց էր ամամբ մարդկութիւնս ի վերայ երկրի:

14 Հրամայեաց²¹ Բերովրէիցն բոցեղէն սրով շուրջանակի պահել զնանապարհս²² ծառոյն կենաց²³ (Գ• 24): 15 Ամբացոյց զդրախտն ի սուր տէգ նիզակի հրեղինի շուրջանակի²⁴, զի եւ²⁵ չէ թող խրամ ինչ եւ մուտ ուստէք՝ ոչ ի հիմանէ, ո՛չ ի կողմանէ, ո՛չ ի վերոյ ի վայր, ո՛չ ի²⁶ ներքոյ²⁷ ի վեր, այլ պատեաց զնա յամենայն կողմանց բոցեղէն սրով իբր թե շանթ ի յերկնից անկեալ²⁸ ծածկէ լոյս²⁹ զարեգականն³⁰ եւ զլուսին³¹, եւ զինքն եւս³² զտեղին եւ զտեսողսն³³ հեռի եւ զմաւտաւորսն¹ սա-

1 A եւ փխ. գձեոն... կենաց
2 A առնու
3 A չիբ ի նմանէ
4 A մեռանիցիս
5 A չիբ զի
6 A չէ
7 H Աղեքսանդր
8 A այնքան մաշեալ
9 A է
10 H չիբ եւ
11 H անմահանալ
12 A չիբ եւ
13 A իւրում
14 A չիբ Աստուած
15 A չիբ ուստի առաւ

16 H գնոյն (չիբ եւ)
17 A չիբ վասն
18 A տանել
19 A բնակեցոյց
20 A չիբ անդրէն
21 A հրամայէ H հրամայէր
22 A զնանապարհն
23 A չիբ ցառոյն կենաց
24 H շուրջանակի
25 A զի փխ. եւ
26 H չիբ ի
27 A ներքուստ փխ. ներքոյ
28 H անգեալ
29 A չիբ լոյս
30 A զարեգակն
31 H չիբ եւ զլուսին
32 H եւ
33 A զտեսողն

տակէ, քանզի սերովբէք եւ քերովբէք² պահեն զճանապարհն, որք որպէս կարող են զինքեանս յԱստուծոյ ծածկեալ³՝ գերեսս եւ զոտս, նոյնպէս եւ զգրախտն պահել՝ չմտանել անդ ապստամբ թշնամին եւ ոչ գազանի՝ աւճին, եւ ոչ մարդոյն, զի մի եւս յաւելցէ մեզս ի վերայ մեղաց:

16 Նա⁴ եւ ոչ մտանեն անդ երկնաւորք եւ ոչ երկրաւորք ի սրբոցն⁵, մինչեւ ի ժամանակն յորում մուծանէ Տէրն անդ⁶ փոխանակ երկուցն, զորս Եհան՝ բազումս^b: 17 Ասեն թէ ի հեռանալն Ադամայ ի դրախտէն՝ բարձաւ պահապանն քերովբէ, այլ ձեւով միայն: 18 Եւ որք ասեն զգրախտն ապականացու՝ աննման է, զի թէ էր ընդէ՞ր հանէր ի նմանէ զապականեալսն մեղաւք եւ զմահականացուսն: 19 Եւ կոչեաց Ադամ զանուն կնոջ իւրոյ կեանս: 20 Նա որ զամենայն կենդանեացն անուն կոչեաց եւ զկնոջն՝ Եւայ, զի մարգարէաբար գիտաց, թէ նա, որ մայր եղեւ մահու, լինի եւ մայր ամենայն մարդոյ, որ զալոց են յաշխարհ: 21 Այն որ առ ի ձեռաց նորա զպտուղն եւ ոչ ի ծառոյն զի մեռցի ընդ նմա զթովք. յաւրինակ Տեառն^c, որ ընդ մեղաւորացս ընտրեաց մեռանիլ ողորմութեամբ իւրով: 22 Եւ արդ, կոչէ զնա կեանք՝ մխիթարել զնա ի յոյս դատեր նորա՝ Մարիամու, որ ստուգապէս մայր եղեւ այնմ, որ ասացն՝ Ես եմ կեանք^{***}: 23 Նա է մայր ամենայն կենդանեաց:

24 Զբանականս կոչէ կենդանի կատարեալ, որոց նա եղեւ մայր, քանզի թեպէտ մեռան նոքա ի ժամ յանցմանն, այնու զի մերկացան ի փառացն եւ ելին ի դրախտէն

եւ անկան ի համարձակութենէն, որ առ Աստուած^d, այլ զի նախ քան զայն աւրհնեցան յաճել եւ ի բազմանալ, ակն ունի այնմ եւ կոչէ զաւգնական կեանս, զի նա է մայր: 25 Թե եւ ի կենաց տնկոյն չետ ուտել, զի մի՛ անմահասցի եւ այնու թուրցի աստուածանալ՝ եւ սուտ լինիցի վեճսն Աստուծոյ, այլ զնոսին իսկ առնէ պատճառս այլոց կենդանեաց^e:

A 32բ-33ա, H 54ա-55ա

ԾԳ. (Լ)

Դ. 1

1 Եւ եմուտ Ադամ առ Եւայ կից իւր եւ յղացաւ եւ ծնաւ զԿայից: 2 Եւ ասէ. Ստացայ մարդ Աստուծով: 3 Եւ յաւել եւս ծնանել զՀաբել: 4 Եւ եղեւ Հաբել հովիտ խաշանց, եւ Կայից գործեր գերկիր:

5 Յանդգնեցան ոմանք ասել, թէ զի ի դրախտին չլինէր որդեծնութիւն այնր աղագաւ հանաւ ի դրախտէն⁷: 6 Այլ⁸ Աստուած ոչ ի գործոյն իմանայ, այլ նախ քան զգործելն իմանա եւ⁹ գիտէ, զի պատկեր ասելով զմարդն զանմահութիւնն¹⁰ ցուցանէ¹¹, եւ ընդ անասունսն աւրհնելովն¹² զնմանութիւնն: 7 Զի թէ կացեալ էին ի դրախտին աճէին անմահաբար եւ ընտրին զգրախտն իբրեւ հրեշտակք զերկինս. եւ զաւրինական զորպէսն¹³ Աստուած գիտէ, զի թե մահականացու գոլով լցին զերկիր, ո՞րքան առաւել անմահ ծնընդեամբ¹⁴. յետ Լ (30). ամի ելիցն ի դրախտէն գիտաց Ադամ զԵւայ, սգով եւ տրտմութեամբ՝ նախ տանջելով զինքեանս եւ անկերակուր եւս զյոլով աւուրս^a, մինչ^b

1 A գմաւտաւորս
2 A քերովբէք եւ սերովբէք
3 A ծածկել
4 A Այլ փխ. Նա
5 A սրբոց
6 A չի՞ անդ
*** Յ՝ՎՃ. Ժ՛Գ. 6

7 A անտի փխ. ի դրախտէն
8 H չի՞ այլ
9 A զգործն փխ. զգործել... եւ
10 H զանմահութիւն
11 A եցոյց
12 H աւրհնելով
13 A զաւրինական փխ. զորպէսն
14 A ծննդաւ

ի ձեռն հրեշտակի Աստուծոյ^c գթացեալ Աստուծոյ մխիթարեաց զնոսա եւ հրամայեաց ուտել ի պտղոյ երկրին² յոյս տուեալ զգալն մարմնով կեցուցանել զնոսա³, զոր Դաւիթ հայցէ ասելով. Յիշեա՛ գրան ծանայի քո, որով եւ յուսացեր զիս^d։

8 Յղացաւ եւ ծնաւ զԿայիմ (Գ՝ 1*) : 9 Ասեն բժիշկք թէ ցաւածին որդին ցաւած լինի, քանզի մարդ վիրաւորեալ յոգի եւ ի մարմին որդիս ծնանի ցաւած, որ եւ զեղ մահու լինելոց է ծնաւդացն⁵ : 10 Եւ որպէս ինքեանք զարարիչն ոչ հանգուցին ի գործս իւրեանց եւ ոչ նոքա⁶ հանգիցեն ի չար գաւակն : 11 Սակայն ոչ տեսեալ Ադամ⁷ ի նմա զկնճիռն մեղաց ասաց. Ստացայ մարդ Աստուծով (Գ՝ 1*), որ է ակնկալութիւն միւս անգամ յԱստուծոյ մխիթարիլ եւ ոչ թողեալ⁸ ի ձեռաց Աստուծոյ^e :

A 33ար, H 55բ

ԾԳԻ (ԼԱ)

Գ. 2

1 Զոր Ադամ ասաց ո՛չ գիտացեալ եթէ հայրն բոլորից պատճառ է եւ ոչ գործիք՝ ստացուածք ասի Կաին⁹, որ եղեւ ոչ բարոյ ստացուած, այլ չարի, իսկ Հաբել¹⁰ առողջութիւն¹¹ եւ ապաշխարութեանն պտուղ, որ ասի տարեալ ի վեր, եւ¹² կամ գոլորշի սգոյ, որ եւ վերացողէ գոլորշի իմանալի

1 A չի՞ Աստուծոյ
2 A երկրի
3 A գնա
4 A յոր եւ յուսացուցեր զիս H որով յուսացեր փիս որով... զիս
* Սաղմ. ՆՃԻԸ 49
5 A ծնաւդացն
6 A ինքեանք փիս. նոքա
7 A Ադամ ոչ տեսեալ
8 A թողանիլ
9 ABCD Կաին ստացուածք փիս. ստացուած ասի Կաին
10 A Հաբել (այսպէս եւ այլուր)
11 A առողջութեան
12 A չի՞ եւ

բարւոյ¹³, որ առ Տէր վերանայ՝ սուգ առ ծնաւդան¹⁴ թողեալ :

2 Հովիւ խաչանց, որ նախակրթանք է թագաւորութեան եւ քահանայութեան, զի եւ նոքա հովիւք կոչին, զի գաւազան է նոցա եւ տած (Ը) խնամոյ, վասն որոյ եւ նախ կրսերոյն գործն դնէ, զի թեպէտ անասունք են, այլ կենդանիք են, զորս ձեռնընդել արարեալ խնամէր զնոսա : 3 Որ թեպէտ եւ մարդն ընդ ամենայն պատուիրանն Աստուծոյ եանց, այլ բարերարն ոչ գամենայն կենդանիս եառ յիշխանութենէ նորա, զոր գիտէր ի պէտս կարաւտութեան նոցա :

A 33բ, H 56ա

ԾԵ (ԼԲ)

Գ. 2-4

1 Իսկ Կային¹⁵ զերկիր գործէր զանիծեալ¹⁶ եւ¹⁷ զանզգայս նման իւրոյ անզգայութեանն¹⁸ եւ անմտութեանն : 2 Իսկ անմեղն անմեղաց Հովիւ, զի ուսցին անմեղ մարդիկ¹⁹ եւ լինիցին անմեղա՛ց մարդկան իշխանք, որ է Աստուծոյ սիրելի եւ մարդկան աւգտակարք²⁰ :

3 Եւ եղեւ յետ աւուրց երբր Կայիմ պատարագ. էած եւ Հաբել՝ յանդրանկաց եւ ի պարարտաց (Գ՝ 3-4) խրատ ետուն ծնաւդքն, զի նոքա մեղան եւ ելին ի դրախտէն, թե դուք, ասէ, անմեղ մնայք եւ մատուցանէք նուէր Աստուծոյ ի վաստակոց ձերոց՝ առնու զձեզ Աստուած ի դրախտն :

4 Հաբելի խաչինքն Գ (3). ամսով յառաջ ծնան քան զհասումն արտորայիցն

13 A իմանալոյ բարւոյ
14 A ծնաւդս
15 H Կաին
16 A անիծեալ գործէր
17 A չի՞ եւ
18 H անզգայութեանն
19 H մարդիք
20 A աւգտակար

Կայինի. եւ Հաբել մնաց նմա: 5 Եւ նա ոչ ի ժամանակի հասմանն, այլ յետ աւուրց, եւ ոչ զընտիրն, այլ զկոխեալն ի գազանաց եւ զխորշակահարն բերեալ մատուցանէր Աստուծոյ: 6 Իսկ Հաբել ո՛չ յետ աւուրց եւ ոչ ի վատացն խաշանց, այլ յանդրանկաց եւ ի պարարտաց նոցա, զի տելով զմեծութիւն Աստուծոյ՝ զբաժին նորա ազնիւ բերէր, զնուազն իւր թողեալ¹:

ԾԶ (ԼԲ I)

Դ. 5-7

1 Նախ Աստուած բաժանեաց եւ ետ մարդկան յերկրէ, ի ջրոյ, յաւդոյ, եւ ի մարդկանէ խնդրէ իբրեւ զկարաւտեալ առ սէրն իւր սուրբ, որում պարտ է զլաւն հանել մասն, զի տացէ զանանց մեծութիւնն: 2 Զայդ, ասէ, ուղիղ առնես զմատուցանելդ, այլ զի ի մնացորդացդ եւ զանպիտան քեզ՝ բերեր ինձ ո՛չ ուղիղ է. առ քեզ լիցի դարձ նորա եւ դու տիրեսցես նմա (Գ-7): 3 Զոր բերեր, ասէ, եւ այդ քեզ լիցի. զի սէր ի ներքս ոչ խառնեցեր: 4 Այլ եւ զզջուամն ի միտ արկանէ, զի պատրաստ լինիցի ի միւս տարին, եւ ոչ որպէս ոմանք ասեն, թե զեղբայրն ետ ի ձեռս նորա. մի՛ լիցի կարծել, զի հայհոյութիւն է յԱստուած, զի նա ոչ բռնի վարէ գոք յառաքինութիւն կամ ի չարութիւն:

A 33բ, H 56ա

ԾԷ (ԼԲ II)

Դ. 8

1 Եւ եղև յետ աւուրց ասէ Կային ցեղրայր իւր. Եկ երթիցում ի դաշտ: 2 Իբրեւ չոգան, յարեաւ Կային ի վերայ Հաբելի եւ սպան գնա (Գ-8). Եւ յառաջ քան զծնանելն Հաբելի չար էր Կային:

3 Եւ աստ երեւեցաւ, զի թե ի նմին աւուր մատուցման. պատարագին ասացեալ էր կարծիս առնուին ծնաւդքն եւ կամ

ինքն, այլ չարութեամբն իւրով մոռացաւնս արար իրացն: 4 Եւ զի ծնաւդքն փորձիւ տեղեակ էին չարի եւ բարւոյ. ոչ ի նոցանէ առնոյր հրաման, այլ զանմեղն կարաց խաբել՝ ասելով. Եկ երթիցուք ի դաշտ ի զբոսանս տեսեան ցորենոյ, ծաղկոցաց, պարտեզաց, բանձարաց: 5 Եւ իբրեւ չոգան յարեաւ ի վերայ եւ սպան (Գ-8):

ԾԸ (ԼԲ III)

Դ. 11

1 Կամ խեղդելով կամ գայլախագ քարիւ, որպէս ասեն, բնակարանն սատանայի տեսեալ դեւս ի ձեւ ագռաւուց, որ մինն զմիւսն զենոյր քարիւ, արար նոյնպէս: 2 Եւ յեղաւ արիւն նորա յերկիր, ըստ տեառն հանդիմանելոյն, եթէ՝ երաց երկիր գրեթե իւր ընդունել զարիւն (Գ-11) Հաբելի: 3 Այլ ասեն, թէ զծառէ կախեաց եւ զկողն խոցեաց հանդէպ սրտին, եւ զոտս եւ զձեռս, որպէս զՏեառնն ի խաչին:

4 Եւ ասէ տէր Աստուած ցԿային. Ո՞ւր է Հաբել եղբայր քո:

5 Ասեն թէ պատճառ վիճմանն եղև այս, զի Կային առասպելս համարէր զվայելչութիւն դրախտին, զոր պատմէին ծնաւդքն զիւրն գովելով. եւ Հաբել արդարացուցանէր զնոսա եւ այպանէր Կայենին տունկս եւ զարտորայսն: 6 Իսկ Աստուծոյ հարցանելն, թէ՝ Ո՞ւր է Հաբել եղբայր քո. իբրեւ զԱդամայն է եւ ո՛չ անգիտութեամբ, այլ ի զզջուամն կոչելոյ եւ յապաշաւս. ո՞ւր է առ ծնաւդսն, թէ ի հաւտի, թէ ի գործի^a, զի պատկառոտ է Աստուած չխայտառակէ առ ժամայն, այլ կամի, թե ինքն զզջացեալ ասացէ. եւ^b զի առ ծնաւդսն քնքշանաւք է եւ այլ մարդ ոչ գոյր, զի միջնորդիւ յանդիմանեսցէ, որպէս զԴաւիթ՝ Նաթանաւ, ինքն խոնարհի հարցանել, եւ նա, որ նախ զինքն եսպան Աստուծոյ եւ ապա զեղբայրն յերկիր^c: 7 Խոցողս կազմեալ բանն ասէ. չգիտեմ^d (Գ-9). ո՛ր վիրագն եւ թիւնալից աւձն, որ եւ ան-

1 A բողով

գիտանալ համարի զԱստուած եւ խիստս պատասխանէ իբր ռիս պահելով վասն ոչ ընդունելոյ զպատարագս¹ նորա, որպէս թե Աստուծոյ սպառնայ. Միթէ^o պահապան ի-ցեմ եղբար իմոյ^b (Պ. 9բ):

ԾԹ (ԼԳ)

Պ. 10-11

1 Եւ ասէ տէր Աստուած. զի^oնչ գործեցեր. ձայն արեան եղբար իմ բողոքէ առ իս յերկրէ (Պ. 10).

Ձայն^a արեան եղբար իմ. ոչ ձայն շնչոյ, այլ ձայն արեան կենդանոյ՝ յայտ է՝ հոգւոյն. դարձեալ, բողոքէ ոչ բանիւ, այլ տեսեամբ, որպէս եւ երկիրն պատմեմ գլխառս^o: 2 Եւ դարձեալ՝ Ձայն արեան եղեւ: 3 Մասն է մարդն հոգւոտ երկրի՝ արեամբ եւ երկնի՝ հոգւով, եւ երկրքին խաւսին ընդ Աստուծոյ, թէպէտ մին յիշի^o:

4 Յիրաւի ասաց չուտել արիւն: 5 Ժրացաւ մահ յաղթեալ² կենացն. փութացաւ, խաւսեցաւ մեռեալն. կալեալ զգարչապարացն զարկոյց զնա յապակա-նութիւն, զի չէ նա գործ Աստուծոյ, այլ կեանքն է անդրանիկ եւ գործած Աստուծոյ, վասն որոյ եւ սաստկապէս դնէ զպատուհասն³ ի վերայ մահու ասելով՝ Անիծեալ լիջիր դու ի վերայ երկրի, որ երաց գրեթե իւր ընդունել գարիւն Հաբելի⁴ եղբար իմ ի ձեռաց քոց, գործեցես զնա եւ մի յաւելցէ⁵ տալ քեզ⁶ զգաւրութիւն իւր: 6 Երեքեալ եւ տատանեալ լիցես⁷, ի վերայ երկրի (Պ. 12): 7 Ոչ յինքենէ անիծանէ, այլ յերկրէ, զի աւրինաւոր թագաւոր բարի

գործոյ է պատճառ. զի⁸ թե՛ յինքենէ անիծեալ՝ էր⁹ նոյնժամայն մեռաներ, այլ յերկիր տայ զնա, որ ետ զէն մահու եւ գերեզման, զի կռուիցին առ միմեանս: 8 Եւ ինքն մխիթարէ զսպանեալն՝ լսելով¹⁰ արեան նորա, այն որ ի կեանսն¹¹ հաճեցաւ ընդ նմա եւ ընկալաւ զպատարագ՝ նորա, եւ յետ մահուն¹² յարքայութիւն իւր ընդունի զնա, առաջին վկայ զնա առնելով իւր եւ բարեկամ:

9 Յարենէն, ասէ¹³, Հաբելի¹⁴ արդարոյ մինչեւ ցարիւնն Ջաքարիայ խնդրեսցի յազգէդ յայդմանէ: 10 Վասն զի¹⁵ յայտ է թէ ի սպանողացն¹⁶ սպանողն է: 11 Արդ, ուր սպանաւ Հաբել բերան երկրի կոչեցաւ, եւ ուր եղաւ Տէրն՝ սիրտ երկրի: 12 Առաջին մարտիրոսն Հաբել, որում թոյլ ետ Աստուած՝ նախ նմա իջանել ի դժոխս եւ ի գերեզման, զի ի պատճառս նորա խնդրեսցին այլքն, որպէս ի պատճառս Ղովտայ Աբրաամ փրկեաց զՍողոմայեցիսն¹⁷:

13 Գործեցես գերկիր (Պ. 12*), վասն¹⁸ զի դրախտին չեղէք արժանի. եւ մի տացէ քեզ զգաւրութիւն իւր (Պ. 12բ), զի արեամբ եղբարն¹⁹ շաղախեցեր զնա, եւ զգաւրութիւնն, որ յԱստուծոյ տուաւ քեզ՝ չարաչար արկեր ի կիր: 14 Մի տացէ քեզ²⁰ զգաւրութիւն իւր, զի մի դադարեցես ի գործել զնա²¹: 15 Եւ զի յաւելեր յանէծս

1 A գգոհս փխ. զպատարագս
* Սաղմ. ԺԼՂ 2
2 A յարթել
3 A զպատուհասն դնէ
4 H չի՞ Հաբելի
5 A յաւելցի
6 H չի՞ քեզ
7 A լիջիր

8 A չի՞ զի
9 A անիծանէր
10 H լսել
11 H կեանս
12 A մահու
13 H չի՞ ասէ
14 H Աբելի (այսպէս եւ այլուր)
15 A չի՞ Վասն
16 A զի սպանողին ազգ փխ. յայտ... սպանողացն
17 A Սողոմայցիսն
18 A չի՞ Վասն
19 H եղբար
20 H չի՞ քեզ
21 A ի գործել փխ. ի գործել զնա

երկրի զկնի հաւրն քո, արդ¹ մի յաւելցէս տալ քեզ զգաւրու[թիւն իւր]:

16 Երեքեալ եւ տատանեալ [լիցիս² ի վերայ երկրի³]:

17 Երեքեալ իբրեւ զծառ ի հողմոյ եւ տատանեալ իբրեւ զծով ալեկոծեալ:

18 Յայտ է, զի մարմնով դողդոջ էր եւ խորհրդով խռովեալ լինէր:

A 34բ-35ա, H 59ա

Կ (ԼԳ I)

Գ. 13, 15

1 Եւ⁴ դարձեալ, հոգի, որ յԱստուծոյ հեռանայ, ինքն յինքենէ շարժի՝ անհաստատ յերկրի, անպատասպարան յերկինս, որում ինքն սպանաւորն վկայէ եւ Մեծ է պատիժ իմ քան զթողուլդ զիս: 2 Եթե հանես զիս այսաւր⁵ յերկրէ եւ յերեսաց քոց քաճեայց. եղիցի⁶ ամենայն որ գտանէ⁷ զիս՝ սպանցէ... (Գ՝ 13):

3 Ոմանք ասեն եթե մեծ պատուհաս քան զթողուլն յԱստուծոյ զմեռանիլն ասէ զսպանանիլն⁸ յովմեքէ կամ ի հրեշտակաց կամ ի դիւաց, կամ ի գազանաց երկնչելով:

4 Այլ⁹ եւ յերկնէ¹⁰, ի շանթից¹¹, յորոտմանէ, ի գետոց, ի ծովուց¹² ի կիտոսաց¹³՝ եւ այս եւս¹⁴ երերումն եւ տատանումն է, զի թէ¹⁵ զերկրաւոր թագաւորի զվնասակարն ամենայն ոք մատնացոյց առնէ եւ խրտչի,

եւ ասէ, եւ ինքն կասկածէ՝ քանի՞ առաւել Աստուծոյ յանցաւորն:

5 Բայց զաւրութիւն բանիս իմաստնոց երեւի, թե գայսս ասէ, թէ մեծ է պատիժ իմ քան զթողութիւն, եթե հանես զիս յերեսաց քոց, ամենայն որ գտանէ զիս թող սպանցէ զիս, եւ ասէ. Տէր Աստուած ոչ այդպէս (Գ՝ 15). ամենայն որ սպանցէ զԿային եւթն վրէժս լուծցէ, որ նոր չարիք գործէ քան զորս նախ քան զինքն անչափ պատուհասի է արժանի, որպէս Սողոմ, որպէս փարաւոն, որպէս Դադան, եւ Կորխ, նոյնպէս նորագործ առաքինիներն այնչափ բարեաց եւ արժանիք, որպէս Նոյ, Աբրահամ, Մովսէս եւ այլքն: 6 Եւ զի նոր էր Կայինն ասէ. ոչ այդպէս. ամենայն ոք յայսմ հետէ, որ սպանէ անձն ընդ անձին վճարէ: 7 Իսկ Կային է (եթեմ)պատիկ է (7) ծննդովք վճարէ, կամ է (7) ծնունդք տեսցեն զԿային չարչարեալ: 8 Եւ թե ոք սպանցէ զԿային, նա տացէ զնմայն է (եւթն) եկի պատիժն որ լուծցէ ի վերայ իւր արձակելով ի նմանէն:

A 35բ, H 59բ

ԿԱ (ԼԳ II)

Գ. 16

1 Եւ ել Կախն յերեսաց Աստուծոյ: 2 Դնէ Աստուած ի դրախտին եւ յերեսաց իւրոց ի տեսիլն: 3 Եւ հանին գործք իւրեանց որպէս եւ եբրաեցին ասէ հանին. յայտ է թէ հրեշտակք հանին յերեսաց Աստուծոյ. եւ բնակեցոյց զնա յերկրին Նախդ, որ է տեղի երէրման, յերերմանէն Կախն ի կոչեցեալ, որպէս եւ յԱդամայ՝ եղեմ: 4 Արդ, զԱդամ ի դրախտէն հանին, եւ զԿախն յերեսաց Աստուծոյ, որ չար է քան զԱդամայն. իսկ Եղեմ դրախտին բնակեցոյց, զի որպէս յարեգականէ չթաքչի ոք, նոյնպէս եւ ոչ ի դրախտէն, զի բարձր է քան զամենայն լերինս, ըստ որում եւ գետս արձակէ ընդ ամենայն երկիր յաղբիւրէն, որ ի նմանէ ելանէ: 5 Եւ Պաւղոս

1 A չի՞ արդ
2 A լիջիր
3 H չի՞ ի վերայ երկրի
4 A չի՞ եւ
5 A չի՞ այսաւր
6 H չի՞ եղիցի
7 A գոցէ
8 H չի՞ զսպանանիլն
9 H չի՞ Այլ
10 A յերկնից
11 A շանթեաց
12 A ծովէ
13 A կետոսաց
14 H եւ
15 H չի՞ թէ

յետ երկնից զնա յիշէ: 6 Եւ յանդիման նորա բնակեալ են արդարք եւ մեղաւորք ի յակնկալութեան, թէ զմերժեալսն յինքէն զարձեալ ընկալցի առ ինքն:

H 59բ-60ա

ԿԲ (ԼԳ. III)

Դ. 24

1 Այր սպանի ի վերս ինձ եւ երիտասարդ ի հարուածս ինձ: 2 Զի թէ ի Կայեցեալ խնդրի է (7) վրէժ՝ ի Ղամէֆայ՝ եւթանասնեկիմ է (77):

3 Սակայն թէպէտ¹ խոստովանեաց Ղամեք ո՛չ արանց իմաստնոց եւ բժշկաց, այլ կանանց² վատթարաց, որ³ ծիծաղելի է, վասն որոյ եւ⁴ թողուլթիւն ոչ լուաւ:

A 36ա, H 61ա

ԿԳ (ԼԴ)

Ե. 6-24

1 Ըստ այնմ՝ ես յո՞ Կանգեաց, թե ոչ ի հեզս եւ ի խոնարիս եւ որ դողան ի բանից իմոց^ա: 2 Զհարիւր եւ Կ (60). եւ Ե (5). ամն հասարակ վեցից նահապետացն կացեալ եւ յԱդամայ հետէ անմեղութեամբ կեցեալք ձախակողման եւթեանն Կայենի հակառակ վարուք, որ ի հասանել թուոյն յեւթներե[ա]կ՝ ճեղքեցան յԱդրայն եւ ի Սելլայն, ուր եւ կրկին սպանուլթիւն եղեւ: 3 Իսկ ի յաջակողմն բարին յաղթող եղեալ՝ առաւելու եւս յենովք զաւրացեալ լինի հաճոյ Աստուծոյ^ա, քա զի ասաց. Բանքն մեր չեղեւ հաճոյ Աստուծոյ եւ մեռան:

A 38ա

ԿԴ (ԼԵ)

Զ. 3

1 Եւ ասէ տէր Աստուած. Մի՛ մնասցէ հոգի իմ ի մարդկանդ վասն գոլոյ դոցա մարմին: 2 Եւ եղիցին աւուրք կեցաց նոցա հարիւր եւ քսան ամ: 3 Թերեւս ի ձեռն Նոյի արդարոյ ասէ Տէր Աստուած. Մի՛ մնասցէ հոգի իմ: 4 Զհոգեւոր շնորհսն, զոր յԱդամ փչեաց անուանէ հոգի եւ ոչ զբանականն, առանց որոյ ոչ ոք կարէ կեալ. զի յանձն չար իմաստութիւն ոչ մտանէ եւ Սուրբ Հոգին փաղչի ի վարեցելոյն մեղաւք յանձնէ եւ ի մարմնոյ: 5 Զայս դարձոյց Տէրն յառաքեալսն ի փչելն ի նոսա եւ ասելն⁵ Առե՛ք հոգի սուրբ^Է:

6 Իսկ հարիւր եւ քսան ամն ոչ հասարակ ամենայն մարդկան⁶ է ժամանակ, այլ միջոցն մինչեւ ցըրհեղեղն: 7 Զի Նոյ եւ որդիք իւր եւ այլք յոլով⁷ ժամանակս կեցին: 8 Այլ զհարիւր եւ քսան ամն տայ ապաշաւանաց ժամանակ մարդասէրն, եւ ի⁸ չապաշաւելն պակասեցոյց զքսան ամն ի կարճել զչարիսն:

A 39բ, H 65բ-66ա

ԿԵ (ԼԶ)

Զ. 4-6

1 Եւ հսկայք էին ի վերայ երկրի յաւուրսն յայնոսիկ. եւ յետ այնորիկ, իբրեւ մտանէին որդիքն Աստուծոյ ընդ⁹ դստերս մարդկան եւ ծնանէին իւրեանց որդիս:

2 Իւրեանց¹⁰ եւ ոչ Աստուծոյ ասէ¹¹, ծնանէին, ըստ այնմ թե՛՝ Ոչ ուրախ լինի Տէր ընդ որդիս¹² ձեր^Է: 3 Նորա էին

1 A թէ
2 H կանաց
3 A չի՞ որ
4 A չի՞ եւ
ա Ե. . Կ. Զ. 2

5 A ասելով
Է Թ. . Կ. Ի 22
6 A մարդոյ
7 A աւելի
8 H չի՞ ի
9 A ի փ/ս. ընդ
10 H չի՞ Իւրեանց
11 H չի՞ ասէ
12 A լինի տէր ուրախ յորդիս փ/ս. ուրախ... որդիս

Հսկայք, որք¹ յաւիտենից արք անուանիք: 4 Հսկայք, ասէ² ո՛չ որպէս ասեն, թե երկայնաձիգք էին Հասակաւք³ մինչեւ յամպս⁴, այլ զի⁵ քան զայլ չափահասակք եւ⁶ զփանաքիս⁷ մեծահասակք ասէին⁸. Իբրեւ^a գեւակիման եւ զհոսափայիման⁹ եւ զԳողիադ Հսկայս անուանէ:

5 Այլ եւ գիտելով սատանայ, թե ի յաճախ խառնիցն զաւակ ոչ լինի, այնու կամէր բառնալ զծնունդս աճման, զոր մարդասէր Տէրն ընդդէմ նմա հնարեալ, գյուղվուծիւն սերմանն մածուցեալ՝ կազմեր անճոռնի հասակս:

6 Որ եւ ի ծնունդսն մեռանէին մարքն, զի իբրեւ զիժս էին, զորոց ասեն՝ արուքն ի խառնիլն սատակին եւ էգքն ի ծնանելն: 7 Նոյնպէս եւ անդ, հարքն հոգևով մեռանէին ի խառնակիլն եւ մարքն հոգևով եւ մարմնով ի ծնանիլն: 8 Եւ ապրեալ տղայոցն լինէին հասակ անարդիլ եւ վիթխարի. հպարտացեալք անուանէին զինքեանս անմտութեամբ յաւիտենից արք:

9 Իբրեւ ետես տէր Աստուած, եթե բազմացան չարիք մարդկան ի վերայ երկրի (Չ 5): 10 Տեսանելն Աստուծոյ ոչ մարդկաբար, որ զառաջիկայն միայն, այլ՝ աստուածաբար, որ զբոլորն, ըստ որում եւ ասէ՝ Ամենայն ոք խորհեր ի միտս իւր ինամով ի չարիս զամենայն աւուրս (Չ 5), զի ոչ մի ոք, այլ ամենայն ոք, եւ ոչ գործէր միայն, այլ եւ խորհէր, եւ այն խնամովն եւս: 11 Եւ յար ի սրտի իւրում ի չա-

րիս, զի որ ստեղծ առանձին զսիրտս՝ ի միտ առնու զամենայն գործս:

12 Եւ ստրջացաւ տէր Աստուած, զի արար գմարդ ի վերայ երկրի (Չ 6): 13 Ստրջացաւն՝ տրտմեցաւ է կամ զղջացաւ, որ աւտար են երկոքին յԱստուծոյ, զի ոչ է ախտ յամենեւնիկն Աստուած, քանզի երկոքեան յետինք են եւ յապաշաւանաց լինին ի մեզ տրտմութիւն եւ զիղջ, որ չգիտէաք զլինելոցն նոցա: 14 Իսկ Աստուած հաւասարապէս տեսանէ զլեալն եւ զլինելոցն, այլ զիջանելով ըստ մեզ վարի մերաբար՝ ցույց տալով զղջման եւ տրտմութեան:

A 39p-40a, H 66a

ԿԶ (ԼԷ)

Զ. 12

1 Եւ ետես տէր Աստուած գերկիր եւ էր ապականեալ:

2 Արդ¹⁰ քաղաք եւ տաճար է մարդ Աստուծոյ եւ Աստուած քաղաքապետ եւ քաղաքավար¹¹ է եւ ճանապարհորդ է միշտ: 3 Արդ¹² զնորա գալստեանն զճանապարհն ապականեաց այնու՝ զի մարմին եղեւ: 4 Հոգեղէնն եւ հոգեղէնն միաբանեաց¹³ ի չարն եւ ապականեցաւ Աստուծոյ գալստեանն ճանապարհն¹⁴: 5 Եւ իւր, զի ասաց պատկառելով դերանուամբն վարեցաւ, նավաբանելով ըստ պիւթագորականացն, որք ինքնիւն պատուէին զվարդապետն, ինքն եկն ասելով՝ իւր է, պատկառելով զիսկ անուոնն դնել:

6 Ասաց Մովսէս. ապականեաց ամենայն մարդ զճանապարհ, բայց եթէ յերկինս վերինքն բանակք: 7 Եւ ասէ տէր Աստուած, զի լցաւ երկիր անիրաւութեամբ ի նոցանէ, եւ ահա ես իւր ի վերայ երկրի,

Գ Ըստ Գ. ԺԷ 21

1 A որ
2 A չի՞ ասէ
3 A հասակաւ
4 H ցամբս
5 H չի՞ զի
6 A չի՞ չափահասակք եւ
7 A փանաքիս
8 A էին փյս. ասէին
9 A գիտափայիման

10 A չի՞ Արդ
11 H չի՞ է
12 A չի՞ Արդ
13 A միաբանեցին
14 A զճանապարհ

զի ոչ թողին ի վերայ երկրի հանգիստ հաւրն, ցնոյ՝ ժամանակ ամենայն մարդոյ հասեալ է առաջի իմ ապականեցից զնոսա եւ զերկիր¹:

A 40ար, H 66ա-67բ

Կէ (ԼԸ)

Ձ. 14-17ա

1 Եւ արդ, արայ դու քեզ տապան ի չորբեկուսի ի՛ փայտից: 2 Խորշս խորշս գործեցես զնա եւ նաւթի ծեփեցես զնա ներքոյ եւ արտաքոյ: 3 Սաստկացան, ասէ, գործք պղծութեան մարդկան, մեռեալ դիականց նմանեցան եւ սակս այնորիկ գերեզմանի կարաւտացան. ոչ երկրափոր խորխորատի, այլ ծովածովի հեղեղատի, քանզի ոչ ինքեանք միայն², այլ եւ երկիր պղծեցաւ, զոր լուանալ պարտ էր³: 4 Եւ քան զի բանից ոչ լսեն ցոյց եւ աչաց, զի բանից եւ գործոց հաւատացեալ մեղմասցին ի չարեաց սակաւ մի⁴:

5 Արդ⁵, արա դու քեզ տապան ի չորբեկուսի փայտից⁶ (Ձ. 14): 6 Ո՛չ ի ծովեզեր, զի մի նաւ կարծեսցեն, եւ⁷ ոչ յոտից վերայ, զի մի՛ յըշտեմարանս թուեսցի⁸, մի՛ յայլ նիւթոց՝ զի մի՛ ամրոց կարծեսցի, այլ՝ ի փայտից, որ վերաբերի ի ջուրց: 7 Չորբեկուսի, զի մի շրջեսցի: 8 Եւ քեզ արա, զի դու միայն ապրիս նովաւ⁹ տամք քո, եթե ոչ զարհուրեալ ապաշաւանաւք հաշտեցուցեն զիս: 9 Իսկ անփուտ հրամայէ զփայտն, քանզի երկինք եւ երկիր ձայն տուեալ միմեանց, անբաւ էր բարկութիւնն, զի տեւեալ կարասցէ ալեկոծմանն:

1 A չի՛ք ի

2 H չի՛ք միայն

3 A է

4 H չի՛ք մի

5 H չի՛ք Արդ

6 H չի՛ք ի չորբեկուսի փայտից

7 A չի՛ք եւ

8 A շտեմարան H չի՛ք թուեսցի

9 H չի՛ք նովաւ

10 Եւ չորեքանկիւնին՝ վեցանկիւնի լինի¹⁰, զվերն¹¹ եւ զվայրն ի թիւ առեալ վեցաւրեայ ստեղծման աշխարհի նշանակ¹²:

11 Նաւթի ծեփեցես (Ձ. 14բ), որ նա ինքն է կշա¹³: 12 Ներքոյ եւ արտաքոյ կպերք ծեփելնա. զի^b թէ արտաքին կողմն վթարեսցի ինչ՝ ներքինն արգելցէ զջուրն. եւ մեր բնութիւնս նոյնպիսի¹⁴ է բազմա-յաւդ կցկցելով:

13 Երեւ հարիւր կանգուն գերկայնութիւնն եւ յիսուն զայնութիւնն¹⁵ եւ երեսուն գրարարութիւնն (Ձ. 15). Եւ զի¹⁶ զամենայն ազգաց զսերմն կենդանեաց տանել հանդերձեալ էր կրել¹⁷ մեծ արժան էր¹⁸ լինել տանն: 14 Ապա եւ ի թուոյ արարչութեան խորհրդոյ ոչ ելանէ երեւ հարիւր եւ վեցից յիսնից: 15 Եւ երեքն խորհուրդ Արարչին երեքանձնեայ, որ զամենայն արար, եւ յիսուն նոյնպէս կազմուած մարդոյն, զոր ասեն քառասնաւրեայ հոգեւորիլ եւ յիսնաւրեայ ոմանք զնոյն ինքնշարժիլ: 16 Եւ երեսուն բարձրութիւնն, զի պապ կարէ լինել¹⁹ երեսնամենին^a:

17 Ոմանք զնոյն ինքն զմարդն ասեն նովաւ ճանաչի: 18 Եւ յիրաւի, զի մարդ մասն աշխարհի է եւ բոլորն մասամբն ճանաչի: 19 Եւ²⁰ զի բնութիւն մարդոյս անփուտ հաստատեցաւ²¹ ձեւաւք չորեքկուսի

10 H չորբեկանգիւնին՝ վեցանգիւնի A լինել

11 H զվեր

12 A նմանակ փիւ. նշանակ

13 A շկա

14 A բնութիւնս մեր այնպիսի

15 H զայնութիւն ... բարարութիւն

16 A չի՛ք եւ

17 A չի՛ք կրել

18 A է

19 A գոլ փիւ. լինել

20 A չի՛ք եւ

21 H հաստեցաւ

եւ վեցիւք¹ եգերի², ըստ լանջացն չորից, ըստ կողիցն վեցիցն³: 20 Իսկ երեք հարիւր. եթե դնիցես լար ի կրնկացն մինչ ի գագաթն, երիցս պատ առցես զգլխովն եւ յիսնին եւ երեսնին որպէս ասացաւ նախ, ըստ լանջացն չորից, ըստ կողիցն վեցիցն: 21 Իսկ երեք հարիւր թե դնիցես լար ի կրնկանցն մինչ ի գագաթն՝ երիցս պատ առցես զգլխովն: 22 Եւ յիսնին եւ երեսնին, որպէս ասացաւ նախ:

23 Քաղելով գործեսցես: 24 Եւ ի մի կանգուն կատարեսցես զնա ի վերուստ (Չ 16*):

25 Ըստ կոթողի ձեւի հրամայէ հաւաքել զՀայր վերնոյն՝ սահել ջրոյն դիւրագոյն՝ վիժմամբ: 26 Եւ խորհրդածի ի մեզ: 27 Ի գլխոյն սկսանի բնութիւնս, եւ լայնանայ ի թիկնամէջն, եւ, քաղելով ի կրկունս, կատարի դարձեալ ի գլուխն յոտից:

28 Ներքնատունս, եւ միջնատունս, եւ վերնատունս (Չ 16*): 29 Ներքնատունն ծանր կենդանեաց, միջնատունն՝ մարդկան, վերնատունն՝ թռչնոցն, դուռն՝ ի կողմանէ, զի դիւրամուտ լիցի անասնոցն: 30 Իսկ ի⁴ մեզ ներքնատունն՝ թափանն. եւ միջնատունն՝ քաղիթն՝ թեթեւ քան զնա, եւ⁵ վերնատունն առ ստամոքսաւքն. եւ դուռն ի կողմանէ՝ զաղբոցսն⁶, զոր ունի բնութիւնս:

31 Եւ ահա ես ածից ջուր ջրիեղեղի ի վերայ երկրի՝ (Չ 17) ապականել զամենայն մարմին, յորում է շունչ կենդանի: 32 Եւ ահա ես ածից⁷. վասն⁸ զի հեղեղեցին

զոգի եւ զմարմին եւ զերկիր: 33 Զրով, ասէ. մաքրագործիւ ջնջեսցին ինքեանք եւ չարիք իւրեանց, որովհետեւ չընկեցին ի բաց ազատ կամաւք զպղծութիւնս յանձանց իւրեանց:

34 Եւ ինչ որ իցէ ի վերայ ցամաքի⁹ սատակեսցի (Չ 17): 35 Յայտ է՝ ոչ որ ի ջուրս են: 36 Եւ եղից զուխտ իմ ընդ քեզ (Չ 18): 37 Դաշն ուխտի եւ կտակասէ հաստատեցից ընդ քեզ՝ կատարել, զոր ինչ խոստանամ քեզ: 38 Զի թե զուխտ մարդոյ հաստատ է յիշատակ զանուանն¹⁰ Աստուծոյ՝ քանի՞ առաւել, յորժամ Աստուծո զնէ զուխտն¹¹:

A 41ար, H 68ա

ԿԸ (ԼԹ)

Ձ. 18-21

1 Եւ մտցես ի տապանն դու, եւ որդիք քո, եւ կիսն քո. եւ կանայք որդւոց քոց ընդ քեզ: 2 Եւ յամենայն անասնոց եւ յամենայն գազանաց եւ յամենայն մարմնոց մուծցես բաժանել ընդ քեզ, արու եւ էգ լինիցին¹² եւ յամենայն թռչնոց ըստ ազգի, եւ յամենայն անասնոցն երկու-երկու կերակրել ընդ քեզ (Չ 18-19):

3 Խոստանայ ուխտիւն՝ ապրել նմա եւ որդիքն եւ կիսն¹³ ի պատճառս նմա, այլ եւ անասնոց եւ գազանաց եւ թռչնոց¹⁴, յոյս տուեալ միւսանգամ նորոգման աշխարհի նոքիմբք¹⁵ ազգաւքն, որք էին¹⁶ կանխաւ: 4 Եւ¹⁷ թեպէտ եւ¹⁸ ամենագաւր է միւսանգամ առնել բազմապատիկս, այլ ոչ

1 E վեցիւք եգերի, եւ յիրաւի, զի մարդն մասն աշխարհի է, եւ բոլորն մասամբն ցամաքի ըստ լանջացն...
2 BD եգերք
3 H չիք ըստ լանջացն... վեցիցն
4 ACD չիք ի
5 ACD չիք եւ
6 ACD գաղբոցն
7 ACD չիք եւ... ածից
8 ACD չիք վասն

9 ACD երկրի փխ. ցամաքի
10 H անուանն
11 H ուխտ
12 ACD լիցին
13 H կիսն
14 A անասունք եւ գազանք եւ թռչունք
15 H նոքիմբք
16 A էին
17 H չիք եւ
18 A չիք եւ

կամի վայրապար կորնչիլ¹ առաջնոցն իբրեւ խոտան եւ անպիտան համարեալ²:

5 Եւ դու առնուցուս քեզ կերակուր յամենայնե՛³ գոր ուտիցէի: 6 Եւ ժողովեսցես⁴ առ քեզ ամենայն անասունք եւ գազանք եւ թռչունք⁵, եւ եղիցի քեզ եւ նոցա ի կերակուր⁶ (Պ. 21):

7 Կերակուր հրամայէ առնուլ ունդս. յայտ է, որով կերակրեցան բանականք եւ անբանք⁶, գիշակերք եւ սերմնակերք⁷, որպէս թէ⁸ ի մի սէր եւ ի⁹ խաղաղութիւն կատարեալ կաին¹⁰ առիւծ ընդ եզին եւ բազէ¹¹ ընդ կաքաւու, գայլ ընդ գառին եւ ինձ¹² ընդ ուլոյ¹³: 8 Որպէս եւ մեր տապան խաչն տերունական արար ի սուրբ եկեղեցւոջ միաբանութիւն գազանամիտ եո հեզաբարոյ արանց, անվնասս կալով եւ մնալով ի մի կերակուր: 9 Եւ փոխանակ երեք հարիւր կանգնոյն՝ երեք հարիւր ամբն, յորում ժամանակի մեծն Կոստանդիանոս խնդիր արար խաչին: 10 Եւ հիսուն մինչեւ յերկնից երեւումնն ի լուսոյ կազմեալ ի լեառն Ձիթենեաց՝ առ Որդւովն միւս՝ Կոստանդեալ: 11 Եւ Լ (30) մինչեւ ի մեծն Թեոդոս, յորում բարձան մեհեանք եւ պայծառացեալ վերացաւ խաչն ի գլուխ գմբեթարդ տաճարաց Աստուծոյ:

A 42ա, H 68բ-69ա

1 A ընդ վայր կորնչել
2 A համարել
3 H ի յամենայնե
4 A ժողովեսցին
5 H չի՛ք ամենայն անասունք... թռչունք
6 A անասունք փխ. անբանք
7 H սերմնակերք
8 A եւ փխ. թէ
9 A չի՛ք ի
10 A կապեալ էին փխ. կատարեալ կաին
11 A բազա
12 A ինձ
13 A ուլու

ԿԹ (Խ)

Ձ. 22-է 20

1 Եւ արար Նոյ զամենայն, գոր միանգամ պատուիրեաց նմա Տէր (Պ. 22):

2 Գովութիւն է արդարոյն, զի ոչ մասն ինչ, այլ գամենայն արար, եւ ոչ այլատարազ, այլ նոյնպէս շինեաց^ա զտապան: 3 Եւ զհարիւր ամ յերկարեալ գործոյն եւ համբաւուն եւ ձայնին կացնաւորացն ունաւորաց, դրածակից, երկաթագամս, պղնձագամս, մամարազարկս¹⁴, թակակոփս, հնչումն գործելով ընոյր զտիեզերս. եւ ի գիշերի նշոյս արձակէր լուսով լուսնի, եւ ի տուրնջեան յարեգականէ փայլատակունք հատանեին՝ ի պղնձոյն եւ յերկաթոյն: 4 Եւ հարցումն եւ տարակոյս եւ պատասխանիք եւ¹⁵ տրտմութիւնք եւ արհաւիրք՝ յարս եւ ի կանայս եւ ի տղայս, եւ զաւրութիւն արարչական խնամոցն հարկանէր զսիրտս նոցա. այլ խստասրտութիւն նոցա¹⁶ եւ սովորական հեշտախտութիւնն յաղթէր եւ այսն կատականաց արարեալ ի ծաղր յաճախեին ի հարսանիս, ուտեին, ասէ, ըմպեին¹⁷, արանց լինեին եւ կանայս առնեին, մինչեւ յաւրն յորում եմուտ Նոյ ի տապանն, եւ ոչ գիտացին արբեալքն պղծութեամբ^ա:

5 Եւ ասէ տէր Աստուած ցնոյ. Մուտ դու եւ ամենայն¹⁸ տուն քո ի տապանն: 6 Եւ յամենայն յանասնոց սրբոց է (7) է (7). եւ յանսրբոցն Բ (2) Բ՝ (2) արու եւ էգ մուծ, զի գփեզ տեսի արդար առաջի իմ յազգիդ յայդմիկ (Լ 1):

7 Ամենայն արարածք Աստուծոյ սուրբ են, այլ զոր մարդիկք¹⁹ ընտրեալ²⁰ էին անսուրբ կամ զագիր կամ զէնակար

14 A մըսմարազարկս
15 H չի՛ք եւ
16 A բազմաց փխ. նոցա
17 H ըմբեին
18 H չի՛ք ամենայն
19 H մարդիք
20 H ընդրեալ

կամ կարի մեծ եւ¹ կամ փանաքի՝ զայն, ա- սաց, թէ² դու ընդտեա³ սուրբ եւ անսուրբ, զոր յետոյ աւրինաւքն հաստատեաց⁴: 8 Արդ բաւական համարեցաւ զհարիւր ամն երկայնամտեալ⁵ այնոցիկ՝ որ ըստ անզեղջ սրտից իւրեանց զգանձս բարկու- թեանն Աստուծոյ կոչեցին առ ինքեանս. վասն որոյ հրամայէ Նոյի⁶ մտանել եւ մու- ծանել ի սրբոցն կենդանեաց⁷ է (7) է (7), զի պատարագս արասցէ զեւթներորդն⁸, եւ զվեցն⁹, զի աճեսցին, զոր¹⁰ ի կերակուր մարդկան, զոր¹¹ հրամայելոցն¹² էր, այլ եւ անսուրբքն ի նոցանէ ուտեն: 9 Իսկ ան- սուրբքն Բ (2) Բ (2). զի մի ծանրասցին մարդկան եւ անասնոց սրբոց յերկիւղ եւ ի սպանումն:

10 Եւ զի արդար դատաւոր է, զքեզ տեսի, ասէ, արդար (Լ 1). դու միայն վասն այնորիկ ապրիս, եւ ազգդ այդ մեռցի: 11 Եւ ազգի, որ գալոցն է պատմեսցի այդ եթէ կեցուցիչ է արդարութիւնն եւ մահա- բեր անիրաւութիւնն: 12 Այն որ նախ քան զճնունդն գիտէր զերեմիա՝ եւ յառաջ քան զլինելն աշխարհի ընտրեաց զարդարսն^ք, նա՝ Նոյի վկայեաց արդար գոլ եւ արժա- նաւոր կենաց¹³: 13 Յաւելու եւս¹⁴ դար-

ձեալ ամենառատ ողորմութեանն¹⁵ ծանաւ- թութիւնն¹⁶ այսպիսի ինչ եւ ասէ.

14 Զի¹⁷ այլ եւս աւուրս է (7). եւ ածից ջուր ջրհեղեղի¹⁸ ի վերայ երկրի զբառա- սուն տիւ եւ զբառասուն գիշեր, եւ ջնջեցից զամենայն հասակ, զոր արարի ի վերայ երկրի (Լ 4): 15 Զայն քան բազմութիւն մեղաց եւ զայն չափ ամաց չարիքն թողուլ աւետիս տայ, եթե գեւթն. աւր միայն զղջացեալ ապաշխարեսցեն, զի ընդէ՞ր յետ եւթն աւուր ածէ զՋրհեղեղն¹⁹ ի վերայ երկրի²⁰, եթե ոչ սովին կամաւք լի ամե- նայն բարութեամբք²¹:

16 Եւ արար Նոյ զամենայն զոր²² պա- տուիրեաց նմա²³ (Լ 5): 17 Արդ²⁴, կրկնա- կի վկայէ նմա առնել զամենայն պատուի- րեալսն, զի թե չպատուիրեալն բանիւ պա- ճեաց՝ զհաճոյսն Աստուծոյ ի բնութենէ ուսեալ, որչափ եւս առաւել զպատուի- րեալն²⁵ լիով կատարէ:

18 Նոյ էր ամաց վեցհարիւրոց, եւ ջուր ջրհեղեղին եղեւ²⁶ ի վերայ երկրի (Լ 6): 18 Նախ քան զծնանելն որդիս եւ զառնուլն²⁷ հրաման կազմել զտապանն ա- սաց հինգ հարիւր ամաց, եւ ի ժամ մտա- նելոյ ի տապանն վեց հարիւր, զի ասաց առ ի ցուցանել հաւաստի զմիջոց ներելոյն Աստուծոյ եւ զչինուածոյ տապանին հա- րիւր ամ լինել^գ:

1 A չիբ եւ
2 A չիբ թէ
3 H ընդրեա
4 H հաստատեաց յետոյ
5 A երկայնամտել
6 H նոցա փ/ս. Նոյի
7 H չիբ կենդանեաց
8 A գեւթներորդն արասցէ
9 A վեց
10 A չիբ զոր
11 H չիբ զոր
12 A հրամայելոց
ք Հմմտ. Երեմ. Լ 5:
բ Հմմտ. Եփեմ. Լ 4:
13 A կենաց արժանի
14 A չիբ եւս

15 H ողորմութիւն
16 A ծանաւթի
17 A չիբ Զի
18 H ջրհեղեղ ջուր
19 H ջուր ջրհեղեղի փ/ս. զջրհեղեղն
20 H չիբ ի վերայ երկրի
21 H բարութեամբ
22 A չիբ զոր
23 A պատուիրեալսն փ/ս. զպատուիրեաց նմա
24 A չիբ Արդ
25 H զերամեալն փ/ս. զպատուիրեալն
26 H չիբ ջուր ջրհեղեղին (եղեւ ջրհեղեղն)
27 A առնուլ

20 Եւ եմուտ Նոյ եւ որդիք իւր եւ կիւն իւր եւ կանայք որդւոց նորա ընդ նմա¹ ի տապանն, վասն ջուրցն հեղեղի եւ գասացեալս կենդանիսն եմոյժ ընդ ինքեան (Է 7-9):

21 Հոտ կենաց բուրեաց ի տապանէն: 22 Եւ այնքան անոյշ հոտ բուրեաց² ի տապանէ անդի, մինչեւ մոռանալ արաւտականացն զարաւտս³ իւրեանց եւ որսականացն զորս իւրեանց: 23 Եւ վաղվաղակի դիմեցին ընդ դէմ անոյշահոտութեանն⁴, եւ մինչեւ ի տեղին հասին ոչ կարացին ուրեք գտեղի եւ զդադար առնուլ տկարքն աներկիւղ ի հզաւրագունիցն եւ յափշտակողքն ոչ յիշեին զսովորականն: 24 Երկնաւոր աղի⁵ ձայն լսելի լինէր եւ հրաման երկնաւոր թագաւորին. եւ դիմեցին ի ներքս: 25 Բայց թուով առնոյր Նոյ ի տապանն եւ զայլսն արգելոյր, սակայն ոչ մեկնեին ի տեղուցէն մինչեւ ի լրումն⁶ եւթն աւուրն, եւ ի սկսանելն անձրեւին, յորում բառաչելով եւ մոնչելով եւ ոռնաւով գնային յոյ եւ գնային:

26 Եւ եղեւ յետ է (7) աւուրն եւ եղեւ⁷ ջուր ջրհեղեղին ի վերա երկրի⁸ (Է 10). Չափ ոչ է⁹ մարդասիրութեանն Աստուծոյ, քանզի եւ զկնի մտանելոյն ի¹⁰ տապանն այլ եւս աւուրս եւթն, ներէ զպատուհասն տալով տեղի ապաշաւանաց^a:

27 Յամի վեցհարիւրերորդի կենաց Նոյի, յերկրորդում ամսեանն ի քսան եւ եւթն ամսոյն պատառեցաւ աղբերք անդնոց եւ սահանք երկնից բացան: 28 Եւ եղեւ անձրեւ ի վերայ երկրի գա-

նասուն տիւ եւ գառասուն գիշեր (Է 11-12):

29 Եբրայեցոյն առաջին Նիսան եւ թէ¹¹ ըստ մեզ Արեգ, երկրորդն՝ Իար եւ¹² ըստ մեզ Ահեկանի:

30 Եւ պատառեցան աղբերք անդնոց¹³ եւ սահանք երկնից բացան: 31 Որով բանիւ փարատեցան ի վեր եւ ի վայր, նովին բանիւ¹⁴ եւ բացան եւ կամ¹⁵ պատառեցան յիրաւի, զի պատառեալն անչափ եւ անարգեալս¹⁶ ելանէ: 32 Սահանք, որ է¹⁷ սահմանն, որ եղաւ նմա կալ ի վերոյ հաստատութեանն եւ ներքին ջրոյս՝ ցայդ վայր եկեսցես: 33 Եւ այլ մի անց բարձան զայնքան աւուրս իս (40) տիւ եւ զիս (40) գիշեր: 34 Եւ զի¹⁸ զքառասնաւրեայ է¹⁹ գոյացութիւնս արուի յարգանդի, նոյնքան թուով ապականեալ²⁰ եւ զգիշերն ի վերայ եղեալ լինի ութսուն՝ զչնչաբերութիւն իգի, զթիւն փրկական²¹ ի մահ դարձուցեալ, եւ զփրկականն²² ի կորուստ եւ յապականութիւն²³: 35 Եւ փակեաց Տէր Աստուած արտաբուստ գտապանն (Է 16), որ զի թե եւ կամեսցի Նոյ մարդասիրել առ ոք, յետ այնորիկ ի ներքս ոչ կարասցէ²⁴ առնուլ, զի բարձաւ ողորմութիւն յանդարձիցն:

36 Եւ բազմացաւ ջուրն եւ վերացոյց գտապանն եւ վերացաւ²⁵ յերկրէ (Է 17):

37 Եւ զի¹ կարող էր Աստուած² առ³ յանկեան ուրէք պահել զնոյ եւ որպես զե-

1 A չիք ընդ նմա

2 H բորբոքեցաւ

3 A գարաւտն

4 A անոյշ հոտոյն

5 A չիք աղի

6 A ցլրումն փ/ս. ի լրումն

7 A չիք եղեւ

8 A չիք ի վերայ երկրի

9 A Ոչ չափով է փ/ս. չափ ոչ է

10 H մտիցն

11 A չիք եւ թէ

12 H չիք եւ

13 H չիք անդնոց

14 A նովինք փ/ս. նովին բանիւ

15 H չիք կամ

16 A անարգել

17 H չիք որ է

18 A չիք եւ զի (40) գիշեր եւ զի

19 A չիք է

20 A ապականել

21 H չիք փրկական

22 A չիք զփրկականն

23 A ապականութեան

24 A ոչ կարասցէ ի ներքս

25 A բարձրացաւ

նովք խոսեցուցանել ի մահուանէ, այլ տկարութիւն վարկանիւր ամենակալ⁴ զաւրութիւնն⁵ Աստուծոյ:

38 Այլ այսպէս Հաճեցաւ զծանրութիւն մարմնոյն վերաբերել որպէս թե զաշխարհ ի վեր առնուլ չնչին փայտիւ, յոյս երեւեալ թե յորժամ մարմին հոգիացեալ⁶, երկնաճեմ լիցի:

39 Եւ իբր թէ⁷ աւզով զաղտաղտուկ ջուրս ծովուն ի վեր առեալ եւ⁸ ցանէ դարձեալ յերկիր, ոչ զբնութիւն վրոյն փոփոխելով, այլ զծովային ժանգն սրբեսցէ⁹:

40 Սոյնպէս ոչ զգեղ շինուածոյն¹⁰ առաջնոյ եղծանէ, այլ զհնութիւնն նորոգէ վերին աւզովն, որք եւ անապականագոյն¹¹ եւս են^a:

41 Եւ որս¹² յիսկզբանն մինչդեռ անյարմար էր ամենայն Հոգի Տեառն շրջէր ի վերայ ջրոյն առ ի յարմարումն գեղեցկազարդութեան, նոյն Հոգի Տեառն ի վերայ նոյն ջրոյն որորէր, գգուէր զորորանն առ ի միւս անգամ եւ ի¹³ կենդանութիւն մարդկան եւ անասնոց եւ աշխարհի՝ դառնալ անդրէն ի նոյն կենդանասիրութիւն:

42 Հնգետասան կանգուն¹⁴ բարձրացաւ ջուրն քան զամենայն լերինս բարձրագոյնս¹⁵ (Ը 20): 43 Յամաւթ որք¹⁶ ասեն կողմնաւոր եկեալ զՋրհեղեղն: 44 Զի թե քան զյոյժ բարձրագոյնսն Հնգետասան

կանգուն բարձրացաւ ջուրն¹⁷, քան զնստագոյնսն որքա՞ն: 45 Բայց միայն զգրախտն, ասեն, վերագոյն մնացեալ, զինայ ոչ ունէր ապականել զոք ի վերայ իւր^a: 46 Այլ Հնգետասանն նշանակ Հնգից զգայութեանց, որ է երիցս հինգ եւ Հնգիցս երեք՝ երիս տեսակս ունելով իւրաքանչիւր ոք: 47 Եւ ջնջեաց Տէր Աստուած զամենայն շարժուն եւ զամենայն մարդ, եւ որ ինչ էր ի վերայ ցամաքի, մեռաւ^a:

Հ (Խ I)

Ը. 1-2

1 Եւ յիշեաց Տէր Աստուած զնոյ եւ զամենայն գազանս եւ զամենայն անասունս եւ զամենայն թռչունս (Ը 1):

2 Այն, որ երբեք ոչ մոռանա յիշել, ասէ զնոյ. Դարձաւ յողորմութիւն ուստի ոչ հեռացաւ եւ ածէ հողմ եւ դադարեցուցանէ: 3 Եթե հողմով ջուր դադարէր՝ վաղուց եւս արդեաւք ցամաքեալ էին ծովք. այլ վասն Սրբոյ Հոգւոյն է իմանալ, որ ոչ գարշի յանուն գալ¹⁸ եւ ի թիւ արարածոց իւրոց՝ բանիւ եւ ձայնիւ եւ աւզով եւ հողմով կոչեցեալ առ սէր իւր արարչական:

4 Խցան, աղբիւրք եւ սահանք երկնից արգելան (Ը 2), զի սպասեալ ակն ունեին արարածք արարչին սահմանափոխս լինել, քա զի Աստուած է փոփոխիչ եւ կարգաւորիչ:

A 42ա-43ա, H 69բ-70ա

ՀԱ (ԽԱ)

Ը. 3-8

1 Եւ նուազէր ջուրն յետս¹⁹ ՃԾ (150) աւուրն եւ նստաւ տապանն այսինքն Արարատոյ յամսեանն²⁰ եւ թեքեցորդի ի Իէ (27) ամսոյն ի լերինն Սարարադայ²¹, այ-

1 A չի՞ եւ զի
2 H չի՞ Աստուած
3 A չի՞ առ
4 A ամենակարող
5 A գաւրութեանն
6 A հոգիացի
7 A որպէս փ/ս. իբր թէ
8 A չի՞ եւ
9 A սրբէ
10 A ստեղծուածոյն
11 A անապական
12 A որպէս
13 A չի՞ ի
14 H կանկուն
15 A բարձունս
16 A որոց

17 H չի՞ ջուրն
18 B գոլ
19 A յետ
20 H չի՞ յամսեանն... ամսոյն
21 A լերինն Արարադայ

սինգն՝ Արարատոյ¹: 2 Եւ ջուրն նուազէր մինչեւ ի Ժ (10) երրորդ ամիսն (Ը 4-5):

3 Արարատու լեռնն ոմանք զԿորդուացն ասեն, այլ ճշմարտութիւնն յայտնի առնէ զնա ի Մասիս գոյ: 4 Գոյ ի Պաղեստինու² եւ ի Գամիրս Արարատ, այլ մերս Այրարաթ լսի: 5 Զի³ երկու գետովս⁴ եւ տապանաւն գեր ի վերոյ եմք քան զյուրովս: 6 Եւ թե զի⁵նչ աւզուտ է. նախ՝ ի մաստութեան պատճառ է մեզ՝ անմոռաց պահելով զյիշատակն⁵ Աստուծոյ արարչութեանն⁶ եւ ակն ունել փոփոխմանն ի նոյնն. ապա եւ երիս բարեխաւսս⁷ ունիմք առ Աստուած, զի այն որ պատճառ եղեւ⁸ փրկութեան միոյ տանն, լիցի եւ մեզ: 7 Եւ գետքն հրաւիրակք են մեզ, զի յակն զնասցուք ուստի զան եւ⁹ սոքա: 8 Եւթներորդ ամիսք¹⁰ եւ Նիսան եւ Թշրին՝ եւ Ե (5) ամիսք ի մէջ նոցա ձԾ (150) ակր:

9 Իսկ ի մետասան ամեանն¹¹, որ արատաջին էր¹² առաջին¹³ երեսեցան գլուխի լերանց (Ը 5): 10 Թեպէտ տեսանէր ոչ ոք, այլ Տէրն բանայր զգլուխս¹⁴ լերանցն յետ ձԾ¹⁵ (150) ակուր նուագման ջրոյն: 11 Եւ երկրորդ¹⁶ ամսոյն սկիզբն էր: 12 Եւ յետ Խ (40) ակուր եբաց Նոյ զպատուհան տապանին: 13 Մետասան ամիսն¹⁷ եւ Ժ (10) ակր

1 A չիբ այսինգն՝ Արարատոյ
2 A Պաղեստին
3 A չիբ Զի
4 A գետով
5 A չիբ զյիշատակն (զԱստուծոյ)
6 A արարչութիւնն
7 H բարեխաւս
8 A եղեւ պատճառ
9 A չիբ եւ
10 H ամիս
11 H ամսոյն
12 A չիբ էր
13 A առաջին էր
14 H գլուխս
15 A ձԾԻ (124) փիս. ձԾ (150)
16 A մետասան փիս. երկրորդ
17 H ամիս

յերկոտասան ամսոյն անցեալ եբաց Նոյ զպատուհան տապանին:

14 Եւ արձակեաց զագուան եւ ել, եւ անդրէն ոչ դարձաւ (Ը 7):

15 Զի հրեշտակական եւ բանավճար եւ ազգաւղ համբաւեալ էր ազուալ՝ այնր աղագաւ զնա արձակեաց: 16 Եւ ոչ դարձաւ, զի տեսակ չարի էր^a, յոգւոյ իմաստնոյ եւ յեկեղեց[ւ]ոյ ի բաց հալածի, զգիշով անկեալ առ լերամբն կամ կորուսեալ ջրով, որպէս ասեն, որպէս չարն յոգիս մեղաւորացն: 17 Եւ ոչ դարձաւ մինչեւ ցցամաքեալ¹⁸ ջրոյն, եւ¹⁹ ոչ թե յետ այնորիկ դարձաւ, այլ սարաս է գրոց՝ զմինչդ դեւել անյայտական ժամանակի:

18 Եւ ապա²⁰ արձակեաց զաղանին տեսանել²¹ (Ը 8): 19 Զմիամիտ թռչունն եւ զհամայնարկն^a արձակէ. եւ նա²² դառնայ անդրէն չգտեալ ոտիցն հանգիստ²³, զի ջրալից էր տակաւին եւ աղաւնին չէր²⁴ սիրող թաթախիլ ի ջուրք²⁵, դառնայ անդրէն ի տապան:

A 43բ-45ա, H 71բ-72ա

ՀԲ (ԽԱ I)

Ը. 20-Թ. 20

1 Եւ շինեաց Նոյ սեղան Տեառն²⁶ Աստուծոյ եւ մատոյց²⁷ պատարագ²⁸ եւ հոտոտեցաւ. ի Նոյ եւ ի պատարագս նորա, զի²⁹ նախ ի մատուցողն եւ ապա ի պատարագն հոտոտի, զիմացական խուսկն³⁰ պատուե-

18 H ցամաքեալ
19 A չիբ եւ
20 A չիբ ապա
21 H տեսեալ
22 չիբ նա
23 A հանգիստ ոտիցն
24 H չէ
25 A ի ջուր
26 H չիբ Տեառն
27 H մատուցեալ
28 A չիբ պատարագ եւ
29 A չիբ Տէր...զի
30 H խուսկն

լով անկարաւտն իբրեւ ի Հաբելին¹: 2 Եւ զի²նչ մատոյց ի կենդանեաց յընտանեացն² եզն եւ խոյ, եւ ի թռչնոց՝ տատրակ եւ աղաւնի, որպէս եւ յետոյ աւրինադրեցաւ. թերեւս այծ ոչ մատոյց, զի մեզս ոչ ունեին, եւ հոտոտի ոչ³ ունելով ուրնդունս, տալով⁴ տեղեկութիւն, եթե Աստուած անուշանայ ի պատարագն մեր, որքա⁵ն մեզ պարտ է ի նորա Միածնին⁵ ի⁶ պատարագն բերկրի: 3 Եւ հուր՝ զի չէ գրեալ իջանել յերկնից, ոչ ի⁷ Հաբելին եւ ոչ ի Նոյին. թերեւս ինքեանք եղին զհուրն վառելով զպատարագն իւրեանց արդարքն մինչեւ ցԱբրամ:

4 Եւ ասէ Աստուած⁸, ոչ եւս յաւելից անիծանել⁹ զերկիր (Ը 21), զի միտք մարդոյ հաստեալ է ի խնամս չարին ի մանկութենէ: 5 Յաւեցար¹⁰ արարչական խնամոցն այնքան բազմութեան կորուստն, զոր թեպէտ եւ զիտէ զդառնալ մարդկան ի նոյն չարիս, այլ ինքն ոչ դառնայ ի նոյն անէծս, ուխտելով Նոյի որպէս նախ խոստացաւ՝ ոչ եւս յաւելից հարկանել զամենայն մարմին կենդանի: 6 Զամենայն ասելովն յայտ առնէ մասնաւորաբար հարկանել, զի մի բնաւ անհոգասցին մարդիկ, եւ¹¹ զի ակամա եւ ի հարկէ հարկանէ եւ ոչ ակործելով:

7 Յայտ է զի ի վեց աւուր ստեղծեաց¹² զաշխարհ, զքառասուն աւր ապականէ եւ զտարի մի՝ վասն¹³, զի բնութեամբ է բարի

վաղվաղակի առնէ¹⁴ եւ զպատուհասն՝ համր ոչ վաղվաղակի, այլ¹⁵ բռնադատեալ ի մէնջ:

8 Այսուհետեւ գամենայն աւուրս երկրի¹⁶ սերմն եւ հունձ, ցուրտ եւ տաւթ, ամառն եւ գարուն, գտիւ եւ զգիշեր մի՝ դարեացեմ (Ը 22), վասն զի զտարին¹⁷ պատուհասի ոչ սերմանեցին եւ ոչ հնձեցին: 9 Յուրտ՝ ասէ, որ է¹⁸ ձմեռն, տաւթ՝ աշունն, ամառն եւ գարուն ոչ եղեւ եւ ոչ անկաւ¹⁹ ի թիւ տարւոյ եւ ամսոյ, շաբաթու եւ աւուր, զոր խոստանայ յայնմյետէ ո՛չ խափանիլ կրկին²⁰, այլ թեպէտ եւ կայր յեղանակքդ²¹ յառաջագոյն սկսեալ՝ յելիցն Ադամայ, այլ ոչ դառնաշունչ այլ քաղցր²² եւ ոչ այնքան աշխատելի:

10 Եւ արհմեաց Տէր²³ Աստուած զՆոյ եւ գորդիս նորա²⁴, եւ ասէ՝ Անեցէք եւ բազմացարուք եւ լցէք²⁵ (Թ 1). Ոչ նոր ինչ աւրհնութիւն տա, քան թե զոր ետ Ադամայ վասն²⁶ զի նոյն տէր է եւ զնոյն բնութիւն աւրհնէ, բայց զիշխանութիւնն պակասագոյն, զի ոչ ասաց տիրել զազանաց, այլ ահ եւ երկիւղ ձեր, ասէ, եղիցի ի վերայ ամենայն զազանաց, որպէս եւ է տեսանել²⁷, զի երկնչին եւ թաքչին պատկառելով յիշխանէն առաջնոյ:

11 Եւ²⁸ ամենայն գեռուն¹, որ է կենդանի, ձեզ լիցի ի կերակուր իբրեւ²

1 A Հաբել

2 A յընտանեաց

3 H չի՞ ոչ

4 H տալ

5 A Միածնին նորա

6 H չի՞ ի

7 H չի՞ ի

8 A Տէր փի. Աստուած

9 A անիծանէ

10 A ցաւեաց:

11 A չի՞ եւ

12 H ստեղծեալ

13 A չի՞ վասն

14 A չի՞ առնէ

15 H չի՞ ոչ վաղվաղակի, այլ

16 H չի՞ երկրի

17 A զի ի տարին փի. վասն զի զտարին

18 A չի՞ ասէ, որ է

19 H անգաւ

20 H կարգին փի. կրկին

21 H եղանակքս

22 A չի՞ այլ քաղցր (որ H-ում աւելացուած է այլ ձեռքով)

23 A չի՞ Տէր

24 H չի՞ եւ գորդիս նորա

25 A չի՞ եւ լցէք զերկիր

26 A քանզի

27 A չի՞ որպէս եւ է տեսանել

28 A չի՞ եւ

գրանչար³ խոսոյ է ետու⁴ ձեզ գամենայն (Թ՝ 3):

12 Աղամայ ասացաւ ի փայտէն գիտութեան չուտել եւ յամենայն ծառոյ դրախտըն ուտել, նմանագոյն ասէ եւ սմա⁵ զամենայն զեռուն, որ շնչովն է կենդանի եւ նովաւ զեռայ⁶ ուտել: 13 Եւ զմիս արեամբ մի արեամբ⁷ եւ շնչով չուտել, զի զձեր, ասէ, արիւնդ խնդրեցից ի գազանաց եւ ի մարդկանէ⁸: 14 Արիւնն Հաբելի խաւսելով յերկրի⁸ արգելու յարիւնակերութենէ եւ յոյս տա յարութեան:

15 Եւ զի արեամբ ազգակից են մարդ եւ անասուն, արգելու զհարազատն ուտել⁹, զի հսկայքն որպէս անյագ եին ի խառնակութիւնն կանանց¹⁰ եւ անխտիր¹¹ ի մարմնակերութեան¹², յայն սակս, զի ուտեին անհրաման՝ հրամայէ ուտել, թե չկարեն ժուժալ, սակայն ի բաց արձակեալ զաւղ եւ զհուր եւ ապա ուտել զհող եւ զջուր, վասն¹³ զի արուն եւ էգն շարժին ի միաւորին եւ խառնիլ¹⁴. աւղ եւ հուր աւելի է յարու[է]ն¹⁵: 16 Եւ¹⁶ ջուր եւ երկիր յողով է յէգն: 17 Հուրն մածուցանէ, հողն եւ ջուրն¹⁷ մածնուն, աւղն սնուցանէ եւ¹⁸ չորքն միաբանեալ լինին¹⁹ մի գոյացու-

թեան²⁰ կենդանոյ: 18 Զի թէ²¹ ոչ արիւնանայ Հուրն ո՛չ կարէ ջեռուցանել զաւղն եւ ջեռուցեալ շնչէ ընդ արեան երական, եւ ջերմութեամբ եւ հովութեամբ շարժի սաղմն ի կենդանութիւն եւ յաճումն եւ ի սնունդ. եւ մի է առ անասունն եւ առ մարդ, եւ միապէս ունին զցաւելին եւ զչարչարելին: 19 Արդ²², մի՛ կերիցեն գազանաբար, զի մի ընդ գազանս եղիցին, զի մսակերքն անողորմք են եւ գազանամիտք²³, ուստի եւ առանց աւրինաց յողովք են առաքինացեալք եւ²⁴ պարկեշտացան: 20 Այլ իբրեւ զբանջար զի²⁵ ասաց. քանզի ոչ ամենայն բանջար ուտելի է, որպէս ցմախ, որպէս²⁵ բանգ, շաղիւղը եւ այլք, ոմանք²⁶ դառինք եւ կէսք²⁷ ոմանք մահաբերք իսկ են:

21 Զեր արիւն, ասէ, խնդրեցից ի ձեռաց²⁸ գազանաց (Թ՝ 5):

22 Զի ի յարութեանն խնդրէ զգազանակուրսն, որպէս զցուլն հարկանող քարկոծ հրամայէ առնել, նոյնպէս եւ զգազանսն մարդավնաս ելանել երկրին որսալ²⁹ եւ չարաչար սատակել աւրինապահարանց:

23 Եւ զարիւն մարդոյ ի ձեռաց եղբար իւրոյ խնդրել³⁰ (Թ՝ 5ա):

24 Ոչ աւտարի, այլ եղբաւր արիւնէ ասէ. եւ ընչիւք ոչ վճարի³¹ այլ անձնական արեամբ, զի աշխարհն, որ լինելոց է լաւագոյն է քան զայս եւ դատաստանն, յայտ է, առաւել քննութեամբ:

1 F սողուն փխ. գեռուն

2 H իբր

3 A քանչար

4 A առ փխ. ետու

5 A եւ սմա ասէ

6 H չի՞ եւ նովաւ գեռայ

7 A չի՞ մի արեամբ

8 A յերկրէ

9 H չի՞ ուտել

10 A չի՞ կանանց

11 A անխտիր

12 A մարմնակերութիւն

13 A չի՞ վասն

14 A խառնիլ եւ միաւորին

15 H յարուին

16 A չի՞ եւ

17 A ջուրն եւ հողն

18 A չի՞ եւ

19 A լինի

20 A գոյութիւն

21 A եթէ փխ. Զի թէ

22 A չի՞ Արդ

23 H գազանամիտ

24 A չի՞ եւ առաքինացեալք եւ

25 A չի՞ որպէս

26 A չի՞ ոմանք

27 A ոմանք փխ. կէսք

28 H չի՞ ձեռաց

29 A չի՞ նոյնպէս...որսալ

30 A չի՞ իւրոյ խնդրել

31 A ոչ վճարի ընչիւք

25 Եւ խաւսեցաւ Տէր Աստուած ընդ նոյ եւ ընդ որդիս նորա եւ ասէ՜. Ահաւսիկ ես² հաստատեցի³ գուխտ իմ ընդ ձեզ⁴ եւ ընդ ամենայն⁵ գազանս եւ անասունս եւ ընդ⁶ թռչունս, զի ոչ եւս⁷ մեոցի ամենայն մարմին ի ջրոյ⁸ (Թ. 8). Հաշտեցաւ Աստուած⁹ ընդ արարածս իւր¹⁰ եւ մխիթարէ զսգաւոր մնացորդսն¹¹ եւ բառնայ զերկիւղն կասկածանաց¹², զի¹³ մի՛ չարիս ինչ գործեսցե երկնչելով ի ջրոյ՝ իբրեւ¹⁴, որք զաշտարակն շինելոց էին, եւ զագանաց եւ անասնոց¹⁵ եւ սողունս եւ¹⁶ թռչնոց¹⁷, եւ Տէր քոյր առնէ, զի¹⁸ իւրք եին եւ երկընչին եւս ի մահուանէ, եւ աղետ է Արարչին վասն նոցա որպէս¹⁹ ասեր ցՅովնան՝ Զիա՞րդ ոչ գթայի ես ի Նիւնուէ, յորում բնակեալ են աւել քան²⁰ գերկոյտասան բիր մարդիկ եւ յանասունս բազումս²¹։

26 Եւ նշան եւս տա ողորմածն թերահաւատիցն։

27 Զաղեղն իմ դնեմ, յամպս, ասէ²¹, եւ եղիցի²² ի գումարեալ ինձ զամպս ի

վերայ երկրի²³, տեսից գաղեղն²⁴ եւ յիշեցից գուխտն իմ²⁵ (Թ. 13)։

28 Աղեղն դնէ գնշանն, զի ոչ հասարակ ջնջէ զերկիր, այլ մասամբ հարկանէ, իբր նետ յաղեղանէ արձակեալ զմի ոք հարկանէ. ի մէջ բազմաց եւ միոյ մասին եւ անդամոյ դիպի խոցն։

29 Նոյնպէս եւ Աստուծոյն. գաւառաց՝ որպէս Սողովմայն, թագաւորաց²⁶՝ որպէս փարաւոնին, քաղաքաց՝ իբրեւ զԵրիքովի, արանց եւ տանց՝ իբրեւ Դադանայ, եւ²⁷ Աբիրոնի եւ Կորխայ, եւ միոյ՝ իբրեւ Աքայաբու²⁸։

30 Եւ է ծիածանդ, որ ձգի յամպս յաւուրս անձրեւաց, բայց զի ասեն իմաստունքն, թե աղեղնդ, զոր Արամագոյ գաւտի կոչեն, ոչ է գոյաւոր, այլ պատահումն եւ գոլորչի գէջ ամպոյ եւ արեւոյ, յոչ գոյիցն երեւումն, ուստի ի պարզի ոչ երեւի, եւ ոչ ի գիշերի, այլ Աստուծոյն՝ գոյաւոր եւ հաստատուն պարտ է լինել նշան, եւ Աստուծոյ միայն յայտնի միշտ, մեզ աներեւոյթ, զի ոչ ասաց տեսանէք, այլ՝ տեսից եւ յիշեցից գուխտն իմ (Թ. 15), ուստի յայտ է, թե կայ իմն յարակա նշան ի ձեւ աղեղուն, ըստ բացատրութեան ամպոյ եւ պարզոյ, եւ յամենայն ժամ անյուծանելի, եւ Աստուծոյ միշտ յիշելի եւ գիտելի։

31 Որդիք Նոյի՝ Սէմ, Քամ, Յաբեթ։

32 Եւ Քամ էր հայր Քանանու։ 33 Երեք ասէ եւ չորս թուէ, զի որդին զբարս հաւրունէր, որ զաւրութեամբ մի են։ 34 Քամ ջերմութիւն ասի, Քանան՝ առգնող կամ առիթ, զի ջերմ յանդգնութեանն հաւրն առիթ գտաւ գնելով զբարս նորա։

1 H չի՞ եւ ասէ
 2 A չի՞ եւս
 3 A հաստատեմ
 4 H չի՞ ընդ ձեզ
 5 H չի՞ ամենայն
 6 A չի՞ ընդ
 7 A չի՞ եւս
 8 A ջրոյս
 9 A գթածն փ/ս. Աստուած
 10 A իւր արարածս
 11 A մնացեալսն
 12 A կասկածոտաց
 13 H չի՞ զի
 14 H որպէս
 15 A անասունս
 16 H չի՞ սողունս եւ
 17 A թռչունս
 18 A զի փ/ս. եւ Տէր քոյր առնէ
 19 A չի՞ որպէս
 20 A չի՞ եւս ի Նիւնուէ ... քան
 21 Յ.Վ.Ն. Գ. 11
 22 H եղիցի

23 H չի՞ ի վերայ երկրի
 24 A չի՞ գաղեղն
 25 H չի՞ իմ
 26 A բազաւորութեանց
 27 A չի՞ եւ
 28 H Ա.բաւրու

35 Եւ սկսաւ Նոյ այր հողագործ լինել, եւ տնկեաց այգի, եւ արք ի գեմւոյն, եւ մերկացաւ ի տան իւրումա (Թ 20):
 36 Սկիզբն առնէ արդարն զերկիր գործել¹, զոր այլք մասն արդարութեան ասեն զհոգագործութիւնն, որում երկրորդէ արդար իշխանութիւնն, եւ սկիզբն առնէ արդար իշխանութիւնն²: 37 Եւ սկիզբն Աստուծոյ իմաստութիւնն³, որով զարարիչն իւր ծանիցէ եւ զանիրաւութիւնն եւ զվնասն⁴ պարզէ յաշխատասէր եւ վաստակասէր խոնջմամբն, զառանց մեղաց պտուղն շահիցի⁵: 38 Զի որ ինչ հարկաւորն էր ինքնին երկիրն⁶ բոլորոց խնամաւքն Աստուծոյ⁷:

A 44ա, H 72բ-73բ

ՀԳ (ԽԲ)

Թ. 24-27

1 Սթափեցաւ Նոյ ի գիւնոյն եւ գիտաց զինչ արար ընդ նա որդին կրցեր (Թ 24):
 2 Շնորհ Հոգւոյն ազգեաց նմա ի տեսանելն զծածկոց⁷ իմաստուն որդւոցն, եւ⁸ զի մի՛ առաքինութիւն նոցա անվարձ իցէ⁹ եւձ մի¹⁰ յանցանք կրցերոյն՝ անապաշխար:

3 Գիտաց, ասէ, զինչ արար որդին կրցեր:

4 Եւ¹¹ թեպէտ երիցագոյն էր քան զՅարեթ¹²՝ կրցեր կոչէ, վասն զկրսերարար¹³ անմտութիւնն, զոր¹⁴ կալաւ յանձին,

չարժեալ ի չարէն, զոր¹⁵ ընդ ազոռուն արձակեցաւ ի Նոյէ, եւ յելանելն ի տապանէն բունեալ ի կինն Քամայ, որ էր ի դստերացն¹⁶ Կայենի, որ յիմարեցոյց զՔամ, որպէս Յեզաբէլ¹⁷՝ զԱքայաբ ի ձեռն կախարդական հնարից բայց¹⁸ ի գթոյ¹⁹ ծնողին, զոր եւ երկրորդ արարիչ թէ ասէ ոք²⁰՝ ոչ վրիպէ, որոյ անարգողին մահու²¹ վճիռ ետ Աստուած ակրինաւքն:

5 Եւ ասէ. Անիծեալ Քանան մանուկ եւ ի ծառայութեան կայցէ²² եղբարց իւրոց (Թ 25): 6 Ընդէ՞ր ոչ զՔամ յանցաւոր, այլ զՔանան²³ զանմեղն տղայն անիծանէ²⁴: 7 Զի յԱստուծոյ ակրհնեցաւ ընդ եղբարսն²⁵. ոմանք ասեն ոչ իշխեաց անիծանել զակրհնեալն յԱստուծոյ²⁶, որոց ասելի է՝ զԱդամ ակրհնեաց Աստուած յետոյ ընդէ՞ր դատապարտեաց, այլ զի զերկոքին մի եւ ետ ի վերայ սալի եւ զուռն անիծիցն²⁵ կոփեաց ի վերայ, իբրեւ աւճիւն զառաջին չարն, քանզի է ուրեք զի Աստուած զարմատն եւ ըզուռն բառնա, իբրեւ զՍողոմոն մացիսն²⁶. եւ է զի զարմատն իբր եւ զփարաւուն զաւրաւքն, եւ է զի զոստսն, որպէս եւ աստ՝ զՔանան²⁷, զի թե զՔամ անիծանէր, սահմանեալ լինէր չարն յամենայն որդիսն եւ լինէր կրկին ջրհեղեղ, այլ զի ետես ակելի արիս յորդին քան ի հայրն՝ ի նա տանի զանէծսն եւ չթողու զբոլորն անէծք ամենայն մասամբքն մնալ ի նմա՞,

1 H գործելոյ
 2 H չի՞ եւ սկիզբն ... իշխանութիւնն
 3 H իմաստութեան
 4 AF չի՞ եւ գվնասն
 5 AF շահեսցի
 6 H չի՞ երկիրն
 7 A զծածկոց
 8 A չի՞ եւ
 9 A ելցէ փխ իցէ
 10 H չի՞ մի
 11 H չի՞ եւ
 12 H զԱբեթ
 13 A չի՞ զկրսերարար
 14 A չի՞ զոր

15 A որ
 16 A որ ի դստերացն էր
 17 H Եզաբել
 18 A ի բացեա փխ բայց
 19 A գթոյ լինել
 20 A ո՞ք ասէ
 21 H չի՞ մահու
 22 A եղիցի ծառայ եղբարց փխ ի ծառայութեան կայցէ եղբարց
 23 A չի՞ զՔանան
 24 H զտղա անիծէ
 25 H անիծից
 26 H զՍողոմոնացիսն
 27 A չի՞ զՔանան

այլ ի մին եւ եթ ածեալ ասէ. ի ծառայութեան¹ կացցէ եղբարց իւրոց (Թ՝ 25), զի երկուցն ծառայելով ոչ կարասցէ² ի գործ արկանել զախորժելիսն իւր՝ երկու լուծ ունելով ի պարանոցն: 8 Ձի թէ ներքոյ անիծիցն գոլով եւ ծառայութեան զՏեառն եւ զաւրհանելոյն³ զվիճակն⁴ առնոյր զՍէմայն՝ տասն ազգ անցեալ իւր, այլ եղբարցն զԵգիպտոս եւ զԵթովիա ունելով զՀայրենիսն: 9 Եւ⁵ թե ազատ թողեալ էր՝ որպիսի չարիս ոչ գործէր⁶, քանզի ոչ Նոյ այլ գործքն իւր արար զնա ծառայ եւ տայ զգատաստանն չարութեան ի ձեռն Յեսուայ, գուխտա գոր եղ ընդ Աբրաամու եւ զերդումն իւր ընդ Իսահակայ⁶, մինչեւ⁷ Հազար ամ, յորում մտանէն գաբաւոնացիքն ի ծառայութեան:

10 Աւրիանեալ Տէր Աստուած, Աստուած Սեմայ (Թ՝ 26):

11 Աստուածաբանութիւն է այս. երեք անուն ի միում բանի, վասն զի⁸ զերեք⁹ անձինք ի միում բնութեան յազգն Սեմայ աւրհանեալ, որ է ուղղափառաց⁹:

12 Ընդարձակեցէ Տէր Աստուած Յարթի (Թ՝ 27):

13 Ձի ընդարձակեաց, տարածեաց զբաճկոնակն ի վերայ Հաւրն:

14 Եւ բնակեցէ ի տան Սեմայ (Թ՝ 27):

15 Փոխանակ զի բնակեաց երկիւղ Տեառն ի նմա՝ ծածկեալ զմերկութիւն Հաւրն: 16 Ընդարձակեցէ Տէր Աստուած Յարթի, զի անցին զարմիւք եւ զաւակաւք ընդ ծով եւ ընդ ցամաք: 17 Եւ բնա-

կեաց Տէր Աստուած ի տան Աբրաամու որդոյն Սեմայ: 18 Դարձեալ ճշմարիտ մարգարէութիւն է բնակելոյն Տեառն մարմնով ի տանի Երուսաղեմի եւ յեկեղեցոջն, որ գառաջինն ի Հրէից Հաւատացելոցն կանգնեցաւ: 19 Եւ ապա ընդարձակեցաւ յազգն Յաբեթա՝ ի Հայս, ի Գամիրս եւ Յոյնս, որ յաւանաց, եւ յայլս յորս մի եկեղեցի եղեւ կաթողիկէ, որում ասաց. Ի սմա բնակեցայց, զի Հաճեցա ընդ սա, թէպէտ Աբրաամ ծառայեաց յԵգիպտոս եւ Քանանացոյն Մելքիսեդեկի երկիր եպագ, այլ թափեաց զգերին սողոմացոց: 20 Եւ եկաց Նոյ յետ ջրոյն ամս ՅԾ (350) եւ ամենայն ամք ՋԾ (950), եւ մեռաւ: 21 Երեք Հարոյրն՝ խորհուրդ Հաւատոյ եւ յիսուն՝ Հաւատացելոց ազատութիւն: 22 Ձ (900)-ն դրացի է Հազարեկի, որպէս եւ Նոյ, ազատ գոլով ի մեղաց՝ մերձաւոր Աստուծոյ⁹:

A 45բ-46ա, H 75ա-76ա

ՀԳ (ԽԳ)

ԺԱ. 1-28

1 Յետ այնորիկ¹⁰ ասէ. Էր ամենայն երկիր լեզու մի եւ բարբառ մի ամենեցունց¹¹: 2 Եւ եղեւ ի խաղալն ևնցա յարեւելից գտին դաշտ մի յերկիրն¹² Սինաար¹³, եւ բնակեցան անդ: 3 Եւ ասե այր ցընկեր իւր. Եկայք արկցում աղիւս եւ թրծեսցում զայն հրով: 4 Եւ եղեւ ևնցա աղիւսն ի տեղի քարի եւ կուպր¹⁴ ի տեղի շաղախի¹⁵: 5 Եւ ասեն. Եկայք¹⁶ շինեսցում մեզ քաղաք եւ աշտարակ, որոյ գլուխն լինիցի մինչեւ յերկինս (ԺՄ 1-4):

6 Զմիաբանութիւնն¹⁷ ի չարն այսպէս ամբաստանէ. էր ասէ՛ ամենայն երկիր լե-

1 A ծառայութիւն
2 H կարցէ
3 A գաւրիանելոյն
4 H վիճակ
5 A եթէ փ/ս. եւ թէ
6 H չի՞ Իսահակայ
7 A մինչեւ ի
8 A չի՞ վասն զի
9 H երեք

10 H այնորիկ
11 H ամենեցունց
12 A յերկիրն
13 A Սենաար
14 A կուպր
15 A շաղախոյ
16 H արեւ ո՞ք ցընկեր իւր. եկայք
17 H Զմիաբանութիւն

զու մի, որպէս ձայնք եւ բարբառք ի ձայնական գործեացն² յառաջ եկեալ միանան ի լեզու եւ ի շրթունս, որք³ դրունք են ազգի-ազգի եւ զանազան³ խաւսից: 7 Այսպէս եւ տանուտեարքն⁴ երկրի⁵ ի բաց կացեալ ի բարոյ բնաւին միաբան գործեին զվատթարն եւ խորհեին: 8 Ընդ որս եւ յազազս դրախտին խորհեցան, զոր լուան տնկեալ յարեւելս⁶, յորմէ զրկեցին զինքեանս նախաստեղծքն եւ գնացին խնդրել զնայ. եւ⁷ իբրեւ ոչ գտին, զի ջուր ծովու եւ շամանդաղ ծածկեալ էր զնա, յիշեցին եւ զտապանն. եւ այն եւս չէր յայտնի: 9 Եւ⁸ երկեան ի նոյնպիսի⁹ պատուհասէ, զի գործք իւրեանց նոյնպիսիք եին:

10 Եւ ապա խորհեցան շինել ֆաղափ եւ աշտարակ:

11 Քաղաք զատելութիւնն յայտ առնէ եւ աշտարակն¹⁰ գերկիւղն ի ջրհեղեղէն: 12 Եւ նորա¹¹ զայն ապաւինեցան եւ ոչ յԱստուած, զոր ասեն եթե¹² մեհեանս շինեին, զի լինիցի¹³ նոցա ապաւէն ի ջրհեղեղէն: 13 Նախ քաղաք եւ տեղի վաճառու ի գիւտս¹⁴ պիտոյիցն եւ ապա զաշտարակն հաստահիմն՝ լայնամիջոց, սերտաչէն, աստիճանաձեւ¹⁵ ելանելիւք¹⁶, փորափողոց, լոյսանցոյց պատուհանաւք¹⁷ ընդ լեռնառեւ բարձրութիւնն, երկայն ճանապար-

հաւք¹⁸ ելիւք եւ իջիւք, խորովեալ հրով աղիւսիւք եւ կշայիւք¹⁹ ծեփովք²⁰ թեթեւ ի բարձրութիւն: 14 Սկսեալ ի սկիզբն ծննդեանն Ռազաւու²¹ մինչեւ ցն (40) ամն ոչ դադարեալք զամառն եւ զձմեռն վասն բարեխառնութեան տեղւոյն, մինչեւ հասուցին յործուտ եւ ի Մղձկութ աւգն, որպէս եւ ասեն²², ուր²³ ոչ կարեն ընթանալ թռչունք, զի այրին թեւաթափեալք եւ անկանին յերկիր:

15 Տասնամսեան ճանապարհ, որպես ասեն, ընդ ելանելն եւ ընդ իջանելն: 16 Եւ իշխանք՝ նոցա²⁴ Բէլն եւ Լամսուրն եւ Հայկն: 17 Եւ Բէլն որսայր նոցա որս, որք անխոնջ եւ անվաստակ՝ արք եւ կանայք: 18 Եւ²⁵ ոչ ոք ասէր ց[ը]նգերն, թէ՛ Շատ գործեցի²⁶, այլ թե՛ Դու շատ գործեցեր:

19 Ոմանք ասեն թե սալք ոսկւոյ եւ արծաթոյ ի հիմանէն մինչեւ զաւարտն դնեին շուրջանակի ընդ միջոցս աղիւսոյն պահելով, զոր աստի անդի դնեին պատելով²⁷ զոսկին ի պահել զորմն անխախտուտ եւ լինել զանձ որդւոց իւրեանց:

20 Եւ էջ Տէր ի²⁸ տեսանել զֆաղափն եւ զաշտարակն, զոր որդիքն²⁹ մարդկանն շինեցիք³⁰ (Ժ-Լ 5):

21 Անբաւանդակ³¹ բնութիւնն եւ ամենակալն³², ուստի՞ իջանէր¹ եթե ոչ ի

1 A չի՞ ասէ
2 H գործեաց
3 A չի՞ եւ զանազան
4 A տանուտեարքն
5 A չի՞ երկրի
6 H տնկեալ արեւելս
7 A չի՞ եւ
8 A չի՞ եւ
9 H նոյն
10 A չի՞ ապա
11 A չի՞ եւ նորա
12 A չի՞ եթե
13 H լինի
14 A գիւտ
15 H աստիճանաձեւ
16 A ելիւք
17 A պատուհանիւք

18 A անապարհիւք
19 A շկայիւք
20 H ծեփովք
21 A չի՞ ռազաւու
22 A չի՞ եւ ասեն
23 H որ
24 A չի՞ նոցա
25 A չի՞ եւ
26 A շատ գործեցի ցրկկերն փ/ս. ցրկկերն, թէ շատ գործեցի
27 A չի՞ շուրջանակի... պատելով
28 A չի՞ ի
29 H որդիք
30 H շինեցիք
31 H Անբաւանդակ
32 A ամենակալ

գուլթ ողորմութեան. յորժամ իրաւունքն հարկանել խնդրէ եւ կորուսանել գթադաքն² եւ զաշտարակն. զոր եւ³ կաւեղէնքն⁴ ի կաւու⁵ շինեին ամրոցս յերեսաց Տեառն, որ ասաց ձող եիր եւ ի հող դարձցիս, որում եւ⁶ չէր արժան կաւուն՝ ընդդէմ դառնալ բրտին⁷:

22 Եւ ասէ Տէր. Ահա ազգ մի եւ լեզու մի, եւ գայդ սկսան գործել: 23 Եւ արդ, ոչ ինչ լինիցի դոցայ պակաս առնել, զինչ եւ կամին⁸. Ի սէր ազգակցական եւ ի մի լեզու խաւսակցութեան (ԺՄ 6) ասէ կապեցի զգոսա ի մի զաւրաւոր յաստուածապատուութեան⁹, դոքա ի հակառակն¹⁰ ի չարն զաւրանան եւ չթողուն ինչ պակաս: 24 Եկայք իջցուք եւ խառնակեցուք զլեզուս դոցա¹¹ (ԺՄ 7):

25 Արդ¹², ընդ Որդի եւ ընդ Հոգի է բանս, որովք արար զմարդն ազգ մի եւ լեզու մի: 26 Խառնակելն ոչ¹³ թե շփոթել է զնոսա, այլ զի եւ խառն գտանըւի յագգացդ¹⁴ բառ եւ բան եւ անուն:

27 Ուստի¹⁵ եւ գեղեցկաբանութիւն եղեւ ի մի խոշոր լեզուէն. փափուկ՝ հելենն¹⁶, սաստիկ՝ Հռոմայեցին, սպառնական՝ հոնին, աղաչական՝ ասորին, պերճական՝ պարսիկն, գեղեցկագարդ՝ ալանն, ծաղրական՝ գուլթն¹⁷, տափախաւս¹⁸, խա-

ւարածայն՝ եգիպտացին, ճրճուողական՝ հնդիկն, համեղական, հայն, որ կարէ զամենն յինքն ամփոփել: 28 Եւ որպէս գոյն առ գունով պայծառանայ եւ դէմք ի դիմաց եւ հասակ առ հասակ եւ արուեստ առ արուեստ եւ գործ առ գործ¹⁹, նոյնպէս եւ լեզու առ²⁰ լեզուաւ գեղեցկանայ պիտանացու առ ստուգաբանութիւն եւ որ կարի խաղտաղուր²¹ լեզուն է՝ յաւգուտ²² գտանի: 29 Եւ այս է²³ գործ Աստուծոյ²⁴ ի պատուհասն²⁵ խառնել²⁶ բազում բարութիւնս. գայսմանէ ասաց Մովսէս. Կացոյց սահմանս հեթանոսաց ազգաց եւ բաժանեաց բարձրեալն զազգս ամենայն ըստ թուոյ հրեշտակաց Աստուծոյ²⁷, զի որպէս առ Սեթաւ եւ Ենովսաւ կոչեցան որդիք Աստուծոյ եւ աստ՝ հրեշտակք Աստուծոյ մարդիք պատգամաւորք Աստուծոյ իմաստութեան եւ յոլովապատիկ, իմաստութեանն սահմանն ոչ փորելով փոս, ո՛չ թաղելով քարինս կամ արկանելով պարիսպս, զի այսոքիկ դիւրափոփոխք եւ անհաստատք են. իսկ գայս եւ ոչ թազաւորք ամենայն երկրի կարեն փոփոխել²⁷, բայց միայն Աստուած, որ եղ²⁸ զսա, յորժամ ի լեզուս հրշտակաց խաւսիցիմք ամենեքեան, եւ ոչ որպէս ասեն յԱդամայն:

30 Իսկ թե ո՞ր էր լեզուն, որ²⁹ բաժանեցան ի նմանէ այլքն³⁰. քաղդեացին է որ մնաց³¹ առ եբեր, որպէս եւ արդ գտանին առ նոսա անուանք նահապետացն՝ Ադամ,

1 A իջանէ
2 A գհաղաք
3 A չիք եւ
4 H կաւեղէնք
5 A կաւոյ
6 A չիք եւ
7 H բրդիմ
8 A գոր ինչ եւ կամեցիմ փ/ս. զինչ եւ կամին
9 A յաստուածապաշտութիւն
10 H հակառակ
11 A նոցա
12 A չիք Արդ
13 H չիք ոչ
14 A գտանի յագգացդ
15 A չիք եւ
16 A հելլէնն
17 A գուլթն
18 H չիք տափախաւս

19 A գործով
20 A չիք առ
21 H զաղտագուր
22 A աւգուտ
23 A չիք է
24 A Աստուծոյ է
25 A պատուհասելն
26 H խառնեալ
27 Հմմտ. ԲՕԳ. ԼԲՑ 8:
27 A փոխել
28 A ետ
29 A յորմէ
30 A չիք ի նմանէ այլքն
31 A մնա

Սէթ, Ենոփս, որ մերձ է առ¹ ասորին եւ ոչ հեռի:

31 Ողորմեցաւ Աստուած զուր վաստակելոցն եւ ոչ տայր նոցա² քակել, զի մի կրկին աշխատ արասցէ զնոսա³, այլ գործ զներ հողմոյ եւ բեկոտեալ ցրուէր զշինուածսն⁴, ո՛չ փլուցաներ⁵ ի վերայ շինողացն ի կորուստ նոցա, թեպէտ ասեն զԲէլ յայնմանէ մեռեալ, ո՛չ⁶ այլ յետ այնորիկ ի Հայկա՝ որդւոյ Թորգոմայ: 32 Քանզի տկարաց՝ իւրոց ձեռագործաց՝ մարդկան՝ որք տխմարութեամբ առ Աստուած դիմեալ երթային⁷ խնայաւղ եղեալ զանճառելի հոտ դրախտին առեալ արկանէր. զեւթանասուն եւ երկու զիւրեանց տանուտէրաւքն եւ զնոցին⁸ ազգակցաւքն:

33 Զի հանդէպ դրախտին կայր, ասեն, զլուխ աշտարակին: 34 Այլ եւ ինքն Աստուած անդ եկեալ գործէր դրախտ զվայրն եւ տայր տեսանել նոցա յիմանալի տեսութիւնս եւ լսել լուր իմանալի եւ առնուլ հոտ իմանալի: 35 Եւ այնպէս մոռացան զառաջինն: 36 Եւ յանկարծակի որպէս ի քնոյ զարթուցեալք⁹ ոչ լսեին զիրերաց, եւ՝ իմաստնացեալ ծանեան զգաւրութիւնն Աստուծոյ անյաղթս¹⁰: 37 Եւ որ կամէին անդ զտեղի առնուլ ամրոցաւն, ոչ ետ թոյլ Աստուած, որ ասաց. Անեցէ՛ք եւ բազմացարուք եւ լցէ՛ք գերկիր, ըստ որում ցրուեաց զնոսա իւրաւք աւրհնութեամբք ընդ ամենայն երկիր¹¹:

38 Եւ դարձեալ, բուռն հարկանէ զՍեմայ եւ զնէ ոճ ազգահամարի, ըստ կարգի ասելով.

Սէմ որդի հարիւր ամենի¹² ծնաւ զԱրբաբաթ, թողլով զծնունդս ի Ղելուֆայ¹³ եւ զԱսուրայ (ԺՒ 10): 39 Զի ոչ կամի հապաղեալ զմիտս մարդկան ի ցնորս բազմութեան ազգաց եւ ազանց, միայն հարկաւորին հոգացեալ ազգի, որ բերել զուշս¹⁴ մարդկան քրիստոսական խորհրդոյն մերձ կացուցանէր¹⁴, որ պատճառն է ամենայն գրոց եւ պատմութեանց:

40 Արփաբաթ ծնաւ զՍաղա, նա՝ զԵբեր, նա՝ զՓաղէկ, նա՝ զՌաբաւ¹⁵, նա՝ զՍերուֆ, նա՝ զՆաբոլ, նա՝ զԹարա, եւ Թարա¹⁶՝ զԱբրաամ եւ զՆաբոլ եւ զԱռան (ԺՒ 12-26): 41 Երեք որդւոցն Նոյի ազգն մետասան է մինչեւ զԱբրամ եւ ցԱբրամ եւ ցՆինոս:

42 Քանզի Յաբեթ ծնաւ զԳամիր, նայ զԹիրաս, նա զԹորգոմ, նա՝ զՀայկն, նա՝ զԱրմանեակն, նա՝ զԱրմայիս, նա՝ զԱմասիա¹⁷, նա՝ զԳեղամ, նա զՀարմա, նա զԱբրամ, յորոյ անուն ամենայն ազգք զմեկ կոչեն:

43 Նոյնպէս՝ Քամ, Քուշ, Մեստրիմ, Նեբրովթ, Բաբ, Անբեիս, Արբէլ, Նինոս, Նինուաս, քսան եւ մի յԱդամայ երիս եւթներեակս խորհրդոյ մեծագունի յաւելուած, երրորդական Աստուածութեանն նշանակիչ, որ եւ մանաւանդ առ Աբրամ ծանուցաւ: 44 Եւ մեռաւ Առան¹⁸ առաջի հարիւրոյ (ԺՒ 28):

1 A են յասորին փ/ս. են առ ասորին

2 A նոցա տայր

3 A լիցին փ/ս. արասցէ զնոսա

4 A զշինուածն

5 A փլուցանելով

6 A չի՛ ոչ

7 A զնային

8 H զիւրեանց

9 H զարթուցեալ:

10 A անյաղթ

11 A ամեան

12 A Ղաֆայ

13 A բերէ զուշ

14 A կացուցանէ

15 A զՌաբաւ

16 A նա փ/ս. եւ Թարա

17 H զԱրմայիս

18 H չի՛ Առան

45 Յայտ է, զի չէր¹ լեալ յայս կոյս ջրոյն որդւոյ² մեռանել³ առաջի հաւր իւրոյ: 46 Պատճառ ասեն, թէ⁴ իմացաւ զծնունդս⁵ ջրոյ:

47 Եւ առին իւրեանց կանայս Նափոյր եւ Արրամ: 48 Անուց կնոջն Արրամու Սարա, եւ Նափոյրա՝ Մեղֆա, դուստր Առանայ՝ հաւր Մեղֆա եւ հաւր Յեսֆայ (ԺՄ 29): 49 Յեսֆայ զՍարա ասեն վասն գեղեցկութեանն եւ երկոքին դստերք (Առանայ):

A 47բ-48բ, H 77բ-79բ

ՀԵ (ԽԳ)

ԺԱ. 32

1 Բարի խորհուրդ յԱստուծոյ ազգեալ Թարայի⁶ գայ ի Միջագետս եւ բնակէ ի Խառան ի Քաղդէացոց⁷ աշխարհին⁸, զի յաճախեաց կախարդութիւնն⁹: 2 Եւ պատժեաց զնոսա Տէր թռչնաւք, զոր ուտեին զանդաստանս նոցա: 3 Եւ դնեին պահապան քչել զնոսա:

A 48բ, H 79բ

ՀԶ (ԽԸ)

ԺԲ. 1-4

1 Եւ ասէ Աստուած զԱրրամ. Ել յերկրէ փումֆէ եւ յազգէ փումֆէ. Եւ ունկնդիր եղեալ գնաց, եւ էր ՀԵ (75) ամաց:

2 Յորում տեղւոջ երեւեալ Աստուծոյ⁹ ասէ. զաւակի քում տաց զերկիրս զայս. երկու խոստմունք եւ ի տեղւոջս¹⁰.

իշխանութիւն երկրին եւ¹¹ զաւակին խոստումն¹², որ տալոց էր նմա ի ժամանակին. զոր իմացեալ Աբրամու¹³, եթե զերկիրս զայս¹⁴ տայ՝ չառնէ անմասն¹⁵ եւ վասն¹⁶ յերկնից:

3 Եւ չինէ սեղան, ոչ այլում որ սովոր էին յերկրին, ըստ կարծեաց սնտեաց, այլ այնմ որ երեւեցաւ նմա եւ կոչեաց յանուն¹⁷ Տեառն, զի որ զերկիրն նմա ետ դարձեալ¹⁸ նուիրեաց զնա Աստուծոյ տուողին:

4 Եւ ոչ ասէ թէ մատոյց պատարագ յայտ առնելով զանկարաւտն բնութիւն, սակայն, լինի ինքն քահանա եւ զբովանդակ տունն մատուցանէ¹⁹ նուերի²⁰ նմա եւ անդի²¹ ելեալ բնակէ յանապատի²², որ կոչի²³ սուր, եւ²⁴ յաւտար երկրի համարձակապէս²⁵ եւ թագաւորաբար կեայ հարկանելով խորանս. եւ շինուածս²⁶ ոչ չինէ զանհաստատութիւն աստեացս ցուցանելով²⁷:

5 Եւ լինի սով փորձութեան, առ նա ի վերայ երկրի²⁸ եւ ոչ յերկինս, ուր եւ²⁹ հաստատեալ էր³⁰ գոյսն³¹ իւր: 6 Գնա ի³²

1 A ոչ էր փ/ս. չէր
2 A չի՛ք որդւոյ
3 A մեռանել որդոյ
4 A զի փ/ս. թէ
5 A զծնունդ
6 H Թարաի
7 H Քաղդէացիոց
8 H աշխարհէն
9 H երեւել Աստուած
10 A տեղւոջն

11 H չի՛ք եւ
12 A խոստումն գաւակին
13 H Աբրահամու
14 H չի՛ք գայս
15 A անփոյթ փ/ս. անմասն
16 H չի՛ք վասն
17 A զանուն
18 A դարձաւ
19 H հանէ փ/ս. մատուցանէ
20 A չի՛ք նուերի
21 A անտի
22 H յանապատ
23 A փ/ս. կոչի
24 H չի՛ք եւ
25 A համարձակութեամբ
26 A շինուած
27 H զիտելով փ/ս. ցուցանելով
28 A յառնէ այլ փ/ս. առ նա
29 A չի՛ք եւ
30 A է
31 A գոյս
32 A չի՛ք ի

յԵգիպտոս եւ ոչ ի Միջագետս, զի ակն ունի փուլթով դարձի: 7 Եւ դնէ ուխտ ընդ կնոջն քոյր ասել զինքն, զի աւտարատեացք եւ հիւրամերժք էին՝ եգիպտացիքն եւ զելս իրացն յԱստուած ապսպրէ՝ լինի կարծիքն եւ առեալ լինի Սարա ի տունն փարաւոնի՝:

8 Քանզի ասեն, թէ ուռեն երաստանքն եւ ոչ կարեին ի կանայս մերձենալ: 9 Թեպէտ դեղաւք եւ արմատաւք ջանային՝ թագուցանել զնախատինսն՝ ոչ կարեին: 10 Այլ տուգանաւք անձանց արձակեցին ի բաց: 11 Եւ դառնան ի նոյն տեղի բնակութեանն յանապատին՝, ուստի իջին յԵգիպտոս:

12 Եւ քաջքն ներքոյ եւ արտաքոյ փորձին, յաւտարաց եւ ընտանեաց⁶, աղքատութեամբ եւ յղփութեամբ ընչից, որպէս⁷ եւ նմա դիպեցաւ⁸: 13 Ի յաճախելն⁹ խաշանցն՝ կազէին հովիւքն Ղովտայ ընդ հովիւսն¹⁰ իմաստնոյն, որոց¹¹ յոլովս տարեալ ըստ տեառն իւրեանց ընդարձակաւ¹² բարուցն:

14 Եւ զկնի¹³ յոլով ժամանակաց¹⁴, յընտիրս¹⁵ առնէ իմաստունն զաշխարհն առաջի եղբաւր զորդւոյն¹⁶, յաջ եւ յահեակ, իբրեւ եւ յոգի, որ է յաջ եւ եւի¹⁷

մարմին, որ է ահեակ, զոր եւ¹⁸ երկրասէրքն աջոյ համարեին¹⁹:

A 49ա, H 80աբ

ՀԷ (ԽԶ)

ԺԳ. 10-13

1 Ետես Ղովտ գամեմայն կողմանսն²⁰ Յորդանանու, զի յուրքի էր (ԺԳ- 10), քանզի գետն Յորդանանու²¹ վերոյ կայ Բասանու, եւ յոլով աղբիւրք բըղխէն՝ աւգնութիւն տալով ընդարձակ դաշտին. ի ծովէն Տիբերայ մինչեւ ի ծովն աղի Սողոմայ, զամառն եւ զձմեռն լի կալով ի բերոյ²², զոր իբրեւ զգրախտն Աստուծոյ վկայէ գիրք²³, ուստի յայտ է, թե զգրախտն ոչ ժառանգեցաք վասն մարմնասէր բարուց եւ ոչ սողովմանցիքն²⁴ ժառանգեն զնա: 2 Անցանէ եւ ընդ Եգիպտոս նոյն անցք աղետից²⁵ ի յանդիմանութիւն մեզ²⁶, զի զանցաւորս ընտրեմք քան զանանցականն: 3 Ղովտ բնակեցաւ ի Սողոմ իբրեւ²⁷ զգառն անմեղ ի մէջ գայլոց եւ իբրեւ զմանուկ տղա յորջս թունաւոր վիշապաց^a:

4 Բնակեաց Ղովտ ի Սողոմ, զի առաւել եւս պատժեցին^a բարի աւրինակաւն ոչ աւգտեալք^b:

A 49բ, H 81ա

ՀԹ (ԽԷ)

ԺԳ. 18-ԺԵ 14

1 Եւ Մելփսեղեկ, քագաւոր Սաղիմայ եհան հաց եւ զինի, քանզի քահանայ

1 A աւտարատեացք եւ հիւրամերժ էին
2 H ապրսուարէ
3 ACD ջանացին
4 ACD կարացին
5 H յանապատն
6 H յընդանեաց
7 ACD որ եւ փխ. որպէս
8 ACD դիպեցան
9 H յանելն
10 ACD հովիւս
11 H որ
12 ACD ընդարձակ
13 ACD չի՞ գկնի
14 ACD ժամանակաց գկնի
15 ACD ընտիր
16 ACD եղբաւրորդւոյն
17 ACD չի՞ ի

18 ACD չի՞ եւ
19 H համարին
20 A կողմանս
21 A Յորդանաւ
22 A բերոց
23 A չի՞ գիրք
24 սողովմանցիքն
25 A աղետի
26 A մեր
27 H իբր

Էր Աստուծոյ բարձրելոյ եւ աւրինեաց զԱբրահամ (ԺՊ- 18-19):

2 Հաց եւ գինի, որք են ծնունդք երկրի եւ սնունդք երկնից, որ գտաւ առ¹ Մեղքիսեղեկ նուիրեալ Աստուծոյ եւ ոչ մատուցեալ: 3 Բարիոք² ասացաւ յետոյ ողորմութիւն եւ նշմարտութիւն պատահեսցիմ արդարութիւն եւ խաղաղութիւն համբուրեսցիմ³:

4 Մեղքի³ թագաւոր, Սեղեկն⁴ արդարութեանս⁵, Սաղիմ՝ խաղաղութիւն: 5 Արքայն արքայորդւոյն նման, արդարն՝ երկնաւոր արդարութեանն: 6 Սաղիմն նման վերին խաղաղութեանն, ներքո սորա բուսաւ ճշմարտութիւնն: 7 Աբրահամ⁶. Տէր տայ զքաղցրութիւն իւր⁷. զի՞նչ քաղցր քան զկեանս, որ⁸ ի ձեռն Հացին եւ բաժակին⁹ տայ Տէրն Հաւատացելոց իւրոց¹⁰: 8 Եւ երկիր մեր տացէ զպտուղ իւր¹¹:

9 Աբրահամ տասանորդս¹² ետ ընկալեալ զսերմն զաւրհնութիւնն¹³:

10 Եւ զՀացն եւ զգինին զորդւոյն Աստուծոյ մեծի Քահանայապետին¹⁴ զպարգեւան առեալ տան պտուղ Հաւատացեալք՝ զործս սուրբս՝ տասնաւորս¹⁵, վասն¹⁶ զի Մեղքիսեղեկ ինքնին մատոյց

զՀացն քաղցելոց եւ զբաժակն¹⁷ ծարաւելոց¹⁸, զաւրինակն Տեառն, որ ոչ Հրչտակիւ, եւ¹⁹ ոչ մարգարէիւ, ոչ առաքելով, եւ²⁰ ոչ մարտիրոսաւ, ոչ սերորբիւ, եւ²¹ ոչ քերորբիւ, այլ ինքն ետ զիւր Հացն եւ զիւր²² զգինին՝ զմարմին զիւր²³ եւ զարիւնն սովեալ եւ ծարաւեալ²⁴ ազգիս մերոյ: 11 Եւ որ ոք²⁵ առնու զնա²⁶ մի առցէ ի Սողոմա ընչիցն՝ զմեղաւորացն անթլփատիցն եւ ի զոհական դիւացն: 12 Բայց զի մի²⁷ զրկեսցէ զվաստակաւորսն²⁸, ի վարձուց²⁹, ասէ, առցէն Մամբրէ, Եսքող, եւ³⁰ Աւնան զվարձս իւրեանց³¹, զի որ Հատանէ, ասէ³², զվարձս վարձկանի³³ ընդ արիւնահանս դատեսցի եւ³⁴ Համարեսցի, իսկ ինքն Հրաժարեաց ի սակաւ ընչիցն եւ մեծացաւ քան զամենայն թագաւորս երկրի, զի յԱստուծոյ եւ ոչ ի մարդոյ սիրեաց մեծանալ:

13 Վասն որոյ երեւի նմա տէր եւ ասէ. Մի՛ երկնչիք (ԺԼ- 1, 3), այսինքն՝ մի՛ իբրեւ զծառայ, անհամարձակ կացցես³⁵, այլ իբրեւ զսիրելի խնդրեա դու³⁶, զոր ինչ կամիս. վասն որոյ եւ վստահացեալ ասէ. որովհետեւ ինձ ոչ ետուր զաւակ³⁷, որով³⁸

1 A չի՛ք առ
2 A Բարւո՛ք
*** Սաղմ. ՉՊ- 11
3 H Մեղի
4 Սեղեկ
5 A արդար
6 H Աբրահամ
7 H չի՛ք իւր
8 A գորոյ
9 A զինուոյն փխ. բաժակին
10 A չի՛ք հաւատացելոց իւրոց
11 A չի՛ք իւր
*** Սաղմ. ՉՊ- 13
12 H տասնորդ
13 H զաւրինութիւն
14 H քահանային
15 A տասնորդս
16 A չի՛ք վասն

17 A չի՛ք գրաժակն
18 A ծարաւաց զինին փխ. ծարաւելոց
19 A չի՛ք եւ
20 A չի՛ք եւ
21 A չի՛ք եւ
22 A չի՛ք զիւր
23 A չի՛ք զիւր
24 H ծարաւի
25 H չի՛ք ո՛ք
26 A զայն
27 A չի՛ք մի
28 A զվաստակեալսն
29 H չի՛ք ի վարձուց
30 H եւ փխ. Մամբրէ, Եսքող եւ
31 H չի՛ք իւրեանց
32 H չի՛ք ասէ
33 H վաստակոյ
34 H չի՛ք դատեսցի եւ
35 A կեար
36 A չի՛ք դու
37 H չի՛ք որովհետեւ... զաւակ
38 A չի՛ք որով

ընդոծինն իմ այսուհետեւ¹ ժառանգել զիս² (ԺԵ 3): 14 Խնդիր է այս սակայն պատկառանաւք³ եւ Պատճառաւոր եւ լինի առ նա ձայն վաղվաղակի. ո՛չ, ասէ⁴, այլ որդին Բո: 15 Արդ⁵ Աստուծոյ չգոյն իբրեւ զգոյ է եւ ի դէպ ժամանակի երեւի: 16 Եւ⁶ Հանեալ զնա, արտաքս ասէ.

17 Հայեաց աչաւք Բոյ⁷ յաստեղս երկնից⁸ (ԺԳ 14): 18 Որ մանաւանդ Հաւատոյ որդիքն աստեղացան բազմութիւն քրիստոնեից:

19 Եւ զաւրացեալ ի բանից աստի եւ քան⁹ զհրեշտակաց Համարձակութիւն եւս¹⁰ առաւել եւս առեալ¹¹ ասէ.

20 Տէր, Տէր ի՞նչ գիտացից, եթե ժառանգեսցէ¹² զդա¹³ (ԺԵ 8): 21 Նախ Հաւատաց եւ ապա¹⁴ արդարացաւ, զի շինուած առանց հիման ոչ լինի եւ ոչ գործք առանց Հաւատոյ կարող են արդարացուցանել. յաւրինակ բազմութեան Հաւատացելոց¹⁵ հեթանոսաց, որք Հաւատով հանդիսացան եւ Համարեցաւ նոցա յարդարութիւն: 22 Եւ եղեն որդիք Աբրաամու, չմնաց¹⁶ յԱբրաամ երկմտութեան¹⁷ կարծիս, սակայն նշան ինչ յայտնի Հայցէ, թե զիա՞րդ ժառանգեն բազմութիւն որդւոցն զերկիրն¹⁸ զայն^a: 23 Երկիրս լի է բնակչաւքս քանանացւոցն իմ^a զաւակքն ծածկէ

զնոսա առաւել բազմութեամբ, կամ մարդամահ անկանիցին եւ սատակեսցին սոքայ կամ երկիր բացցէ զբերան իւր եւ կլանէ զսոսայ, կամ թշնամիք գան գերեն զսոսա, կամ ինքեանք ընդ իրեարս զրգռեալ սատակեսցեն զիրեարս, եթե Հնազանդ եին մեզ եթե փեսայանան սոցա, կամ այլուր աճեն եւ գան ժառանգել զսոսա, կամ գտանէ զաւակ իմ ողորմութիւն յաչս սոցա եւ մեծացուցանեն զիման. զայս կամի ուսուցանել եւ քան թե իւր յաւէտ որդւոցն խնդրէ իմանալ եւ զգաստանալ եւ փութալ ի կատարումն^b:

24 Եւ ասէ ցնա առ ինձ երինջ երեմեան եւ Բաւշ երեմեան, եւ խոյ երեմեան եւ տատրակ եւ աղաւնի¹⁹: 25 Եւ առ զամենայն եւ²⁰ յաւշեայ²¹ եւ եդ զնոսա²² ընդ դէմ միմեանց: 26 Եւ զթոչունսն ոչ յաւշեաց: 27 Եւ իջանեին թոչունքն ի վերայ անդամաթուոցն²³ եւ նստէր առ նոբաւ Աբրաամ²⁴: 28 Եւ մաւտ ընդ մուտս արեւոյն²⁵ թմբրութիւն անկաւ ի վերայ, եւ ահա ահիսաւարի հասանէր²⁶: 29 Եւ ասացաւ առ Աբրաամ. Գիտասջիր, զի պանդուխտ լիցի զաւակ Բո²⁷ յերկիր, որ ոչ իւր իցէ, եւ ծառայեցուցեն զնա²⁸ եւ չարչարեսցեն զնա ամս չորեքհարիւր: 30 Բայց զազգսն²⁹ դատեսց³⁰, ասէ Տէր (ԺԵ 9-14)^a:

31 Նոյ մատոյց պատարագ, առեալ³¹ յԱստուծոյ զպարգեւսն: 32 Աբրաամուն³²

1 A չիք այսուհետեւ
 2 A չիք զիս
 3 A պատճառաւաւք
 4 A չիք ասէ
 5 A չիք Արդ
 6 H չիք եւ
 7 H չիք աչաւք Բոյ
 8 H չիք երկնից
 9 H չիք քան
 10 A չիք եւս
 11 H չիք առաւել եւս առեալ
 12 A ժառանգեսցէ
 13 A զդա
 14 H չիք ապա
 15 H չիք հաւատացելոց
 16 H չմնաց
 17 H երկմտութիւն
 18 A երկիրն

19 H չիք եւ աղաւնի
 20 A չիք եւ
 21 A յաւշեայ
 22 A չիք ընդ
 23 A անդամաթուիւն
 24 H Աբրահամ
 25 A արեւուն
 26 A չիք եւ... հասանէր
 27 H չիք զի պանդուխտ... Բո
 28 A չիք զնա
 29 A ազգսն
 30 A դատիմ
 31 A այլ նախ էտո փ/ս. առեալ
 32 A Աբրաամ

մեծ է քան զնմայն¹, զի չեւ է առեալ, բայց ցանկա, որում հաւատացն մտաւք տեսանել աչաւք: 33 Յերիս տեղիս սեղան շինեաց եւ պատարագ ոչ մատոյց, բայց միայն զինքն, իսկ² աստ սեղան ոչ շինեաց³ զատական, այլ զամենայն աշխարհ սեղան առնէ Աստուծոյ: 34 Առ ինձ, ասէ, դու առ Յիմոցն եւ ինձ առ եւ զիմն եւ եւ⁴ ինձ նուիրեաց՝ երինջ⁵ ընդ հողոյ, այժ՝ ընդ ջրոյ, խոյ՝ ընդ աւդոյ, աղաւնի ընդ հրոյ, տատրակ ընդ վերին աշխարհին: 35 Եւ Երեմեան, զի եզակի բնութեանն եւ եռանձնեայ⁶ Աստուածութեանն ընծայէ⁶, որ իւրաքանչիւր ոք ի դոցանէ յերիս բաժանի ըստ Փիլոնի ասիցն⁷:

36 Եւ զի զկնի երեք ծննդոցն դառնալոց էին որդիքն, եւ թագաւորք եւ քահանայք եւ մարգարէք էին: 37 Եւ զյաւելն ոմանք ընդ չորս ասեն, կտրել ըստ ոտից, բայց Փիլոն ընդ երկուս հատանել ասէ, եւ Գիրն այսմ վկայէ, թէ յաւելեաց զնոսս ընդ մէջ, որ ընդ երկուս նշանակէ, եւ այս է հաւանելի քան զչորրեակն: 38 Եւ զթուչունսն ոչ յաւելեաց: 39 Ձի վերինն ոչ տեսաւ եւ ոչ քննեցաւ, այլ եւ ոչ պղծեցաւ ի գոհից ճենճերս, այլ գոյքս պղծեցաւ միովն Ադամաւ, եւ սրբեցաւ եւ նուիրեցաւ միովս Աբրահամաւ, եւ հայր եղեւ մասանց արարածոցս: 40 Հայր ազգաց բազմաց արարից (ԺԼ· 4), ասէ: 41 Եւ թուչունք իջեալ ի յաւելուածսն, եւ Աբրահամ քչէր, զի պատերազմ տալոց էին թշնամիքն ընդ որդիսն, ի պատճառս, արդարոյն փրկուին: 42 Եւ հուր, զի իջանէր եւ բոցք հատանէին, նշանակէր թէ պակասէին արդարքն, վերին աւգնականութիւնն ոչ պակասէ: 43 Եւ զի թուչունք եւ ոչ գազանք յարձակէին,

յայտնէ, զի յերկնից անկեալքն հակառակին պատարագին գոյիցս⁸:

44 Այլ որ մատուցանաւդն է ոչ միայն մատուցանէ, այլ եւ պահէ ի խանգարչէն: 45 Ձի գիտաց Աբրահամ, թէ հաշտեցաւ Աստուած ընդ բոլոր աշխարհս եւ զաւակ բազում լինի նմա, սակայն աւգնականութեանն պէտս ունին ի չարասէր թշնամոյն: 46 Իսկ զի⁹նչ է փոխանակ ուրախութեանն ասելն Ահ խաւարին անկաւ ի վերայ նորա: 47 Տեսակ է այս մարգարէութեան, զի զգալի աշխարհէս ի բաց կան զգայարանքն, եւ միտքն զիմանալիսն չկարէ լիով ըմբռնել, պակնու յահէն եւ ոչ գիտէ յո՞ր դիմէ կողմն մինչեւ գայ նմա ձայն յաւելութիւն ի Տեսունէ¹⁰: 48 Որպէս եւ եկն առ Աբրահամ. ասէ. գիտելով զիտասջիր⁷ (ԺԼ 13) ասէ¹¹. այսինքն¹²՝ աներկմիտ հաւատայ:

49 Յետ չորից ամաց որթ խաղող բերէ եւ տունկք՝ զկարապետս մրգոց պտղոց⁸ կշռեաց ընդ չորիցն զչորեք[հ]արոյր ամն, զի եւ նոքա տունկք երկնաւորք եին եւ մրգաբերք բազում ստացուածովք դարձցին, ասէ, որպէս եւ⁹ յայտ է ի կազմութեանէ¹⁰ խորանին ստացուածք նոցա՝ իբր մրգաւք դարձեալ անդրէն, որպէս ասացաւ ի չորրորդում ազգին ասէ¹¹ դարձին¹² այսրէն եւ զի ոչ թողուն¹² եզիպտացիքն դիւրաւ¹³: 50 Եւ զազգն, որում ծառայեսցեն, դատեայց եւ (ԺԼ 14), ասէ Տէր. յայտ է՝ դատաստանաւ եւ ոչ զաւրութեամբ¹⁴:

51 Եւ ի չորրորդ ազգին¹³ դարձցին, յորմէ յետէ մտին յեզիպտոս: 52 Ասէ եւ են չորրորդ ազգ¹⁴: 53 Յետու եւ Քաղէք

1 A գամենայն

2 A եւ փ/ս. իսկ

3 A շինէ

4 A եւ զիմն փ/ս. եւ ինձ... եւ զիմն

5 H երեմեանեայ

6 H ընծայեաց

7 E գիտասջիր, ասէ

8 A մրգոց փ/ս. պտղոց

9 A չիք եւ

10 H կազմութիւն

11 A չիք ասէ

12 CH չթողուն փ/ս. ոչ թողուն

13 A ազգի

14 H չիք Ասէ եւ... ազգ

եւ¹ տղայքն լինին² ինն եւ տեսան ա-
մեայք³, համաւրէն հինգերորդք եին, զի
մինչեւ ի տասն եւ ինն չառնու համար⁴,
այլ՝ զքսանն⁵:

54 Եւ դու երթիցես առ հարս քո խա-
ղաղութեամբ⁶ (ԺԵ 15): 55 Հոգևով՝ յա-
ռաջին արդարսն եւ ի հրեշտակսն, որք
խնամածուք են քեզ եւ մարմնով՝ ի տա-
րբս: 56 Խաղաղութեամբ ասէ, որ է⁷ հոգ-
ւոյ առ մարմին եւ մտաց⁸ առ Աստուած,
սնեալ ի բարի. յայտնէ զաճումն առաքի-
նութեանն. մինչ կատարի բարիքն, միա-
ւոր եւ անխառն բարին:

57 Վասն⁹ զի չեւ եւս եմ լցեալ մեղք
ամուրհացոցն (ԺԵ 16):

58 Զի գիտէր թե յաւելուն մեղս ի վե-
րայ մեղաց: 59 Ներեալ էր նոցա մինչեւ
Յեաւթն ազգն. եւ այլ եւս ներէ նոցա, ա-
սէ. ոչ թէ չէին լցեալ մեղք նոցա¹⁰, այլ
ցուցանէ թե որքան ներէ: 60 Նոյն ողոր-
մածն¹¹ հատուցանեմ, ասէ, զմեղս հարց
յորդիս յերիս եւ ի չորս ազգս, որ լինի
եաւթն եւ կամ յորժամ հայրն եւ որդին եւ
թոռին¹² եւ թոռին¹³ որդին՝ միով կամաւք
եւ գործովք ի չարն լինին, ջնջին¹⁴ յԱս-
տուծոյ իրաւամբքն¹⁵:

A 50ա-51ա, H 82ա-83ա

ՀԹ՝ (ԽԸ)

ԺԵ. 16-ԺԷ. 4

1 Քանզի չեւ եւս¹⁵ լցեալ եիմ մեղք ա-
մորհացոցն, այլ ժառանգիչի երկրին չեիմ
բազմացեալ: 2 Իսկ ընդ մուտս արեւուն
բոցի հատանեիմ¹⁶ եւ ահայ հնոց ծխեալ եւ
նառագայթի հրոյ անցանեիմ ընդ մէջ ան-
դամաթուիմ¹⁷ յաւշուածոյմ¹⁸ (ԺԵ 16-17):
3 Ծխեալ հնոցն¹⁹ զնեղութիւն որդւոցն
յայտ առնէ: 4 Իսկ ճառագայթն եւ հուրն՝
ինքն Տէրն է, որ ի սէր բարեկամի իւրոյ
անձնանայ եւ տեսանի աչաց եւ ուտէ
զճաշն տեսական: 5 Եւ յայտ անտի է, զի
ոչ ձիթով վառի եւ ոչ փայտիւ բորբոքի
եւ²⁰ ոչ աւդով լուցանի, առանց բերանոյ
ուտէ, առանց որովայնի ժողովէ եւ հա-
տուած եւ կամ յաւելուած ի տեղուջն ոչ
մնա, զի թե նիւթականս հուր անպիղծ թա-
գաւոր ասի եւ գերկուն մի բնութիւն առնէ
եւ մի լինի, արքա²¹ աննիւթականն հուր,
եւ²² իմանալի, որ բազում մասամբք եւ յո-
ւով աւրինակաւք ձեւանայ ի յաւը, եւ²³ ի
ջուր, եւ ի հուր²³, ի թանձրութիւն հողոյ
եւ ինքն չէ յայսմանէ եւ ոչ աւտար է²⁴ ի
սոցանէ: 6 Նա ընկալաւ²⁵ զպատարագն
Աբրաամու հրով եւ այս է պատճառ լինե-
լոյ որդւոց նորա յերկրին եզիպտացւոց, եւ
ոչ որպէս ոմանք յանդգնին²⁶՝ եթե թերա-
հաւատեաց Աբրաամ յասելն՝ Տէր, Տէր
զի²⁷նչ տացես ինձ զի ահա²⁷ ես մեռանեմ²⁸
անորդի եւ Եղիազար՝ ընդոծին իմ՝ նա

1 H չի՛բ եւ
2 A չի՛բ լիցից
3 H ամեայ
4 H համար
5 A չի՛բ այլ՝ զքսանն
6 A չի՛բ խաղաղութեամբ
7 H չի՛բ ասէ, որ է
8 A չի՛բ մտաց
9 A չի՛բ վասն
10 A չի՛բ ասէ, ոչ թէ... նոցա
11 A չի՛բ նոյն ողորմածն
12 A թոռիցն
13 A չի՛բ եւ թոռից
14 A ջնջուիցն

15 A չի՛բ Քանզի չեւ եւս
16 A բոց հատանի
17 H անդամաթոյ
18 A յաւշուածոց
19 H հնոց
20 AH չի՛բ զի ոչ ձիթով ... բորբոքի
21 H չի՛բ եւ
22 A չի՛բ եւ
23 A ի հուր, ի ջուր
24 A չի՛բ է
25 H ընկալաւ
26 A յանդգնիցն ոմանք
27 A չի՛բ ահա
28 H մեռանիմ

ժառանգէ զիս¹: 7 Եւ ասեն թե այսր աղա-
զաւ պատժեցան որդիք նորա յԵգիպտոս,
զոր մի լիցի մեզ ասել, զի ոչ թե թերաՀա-
ւատեաց, այլ պատկառանաւք եւ² երկեղի³
փութացուցանէր զպարգեւսն⁴, զոր տալոց
էր Աստուած նմա⁵:

8 Զի թե թերացեալ էր ինքնին իսկ⁶
պատժեալ լինէր, իբրեւ զՄովսէսն իբրեւ⁷
զԴաւիթ, իբրեւ⁸ զԶաքարիաս⁹ եւ ոչ եթե
յայլսն անցուցանէր զպատուՀասն, վասն
որոյ Հաշտ գոլով նմա Աստուծոյ ընկա-
լեալ զպատարագ նորոյ¹⁰ դնէ նմա ուխտ
եւ դաշն անխախտ, եւ սահման Հատանէ
նմայ¹¹ երկրին, զոր տալոց էր նմա եւ գա-
ւակի նորա՝ ի գետոյն Եգիպտոսէ մինչեւ¹²
ցեփրատ, զոր Դաւիթն ժառանգեաց եւ
Սաղամոն, ի յառնուլն զդուստրն Փարա-
ւոնի, մասունս առնոյր յերկրէն եգիպտաց-
ւոց ի պատիւ մեծին Աստուծոյ:

9 Եւ տասն թուէ զորոց զերկիրն տա-
լոց էր¹³ գաւակի նորա, յայտարարեալ թէ¹⁴
սակաւ է Աբրամ¹⁵, ոչ կարէ ժառանգել¹⁶
միայն զայնքան բազմութիւն ազգաց մին-
չեւ բազմանան որդիք նորա: 10 Յաղագս
որոյ եւ յետ տասն ամի բնակելոյ նոցա
յերկրին¹⁷ Քանանացւոց^a, իմացեալ Սարա-
յի, թե ամուլ է, տա զաղախին¹⁸ իւր Աբ-
րամու, զոր ասեն, թե կարծէր Սարա

զԱբրամ ամուլ, մինչեւ էաւ¹⁹ զնա Փա-
րաւոն: 11 Այլ, ոչ է զայս ասել, զի նախ
քան զելանելն Հրամանաւ Աստուծոյ յերկ-
րէն իւրեանց այլ կանայս ունէն Աբրամ,
եւ անդէն թողոյր: 12 Եւ որդի ասեն զու²⁰
Աբրամու Ովրեստէս անուն, որ ոչ յաւ-
ժարեաց ելանել ընդ Հաւր իւրում եւ ոչ
գրեցաւ յորդիսն²¹ նորա, եւ գիտէր Սարա:
13 Այլ յերկարէր խոստումն Աստուծոյ
տալ նոցա Հարազատ գաւակի, որոյ որդիքն
լինին իբրեւ զաստեղս երկնից, տալ²² փու-
թացաւ Սարա զաղախինն²³ Աբրամու, զի
ի նմանէ լինիցին²⁴ բազմութիւնք աւագոց,
զի ոչ կամի լինել նոցա²⁵ նա մայր²⁶, որ եւ
ի յղանալն Հպարտութիւն որդւոցն ձեւա-
ցաւ ի մայրն եւ արհամարհեցաւ տիկինն,
ոչ յաչս Աստուծոյ կամ Աբրամու, այլ
յաչս աղախնոյն, որ եւ ըստ պատշաճին
չարչարեալ ի նմանէ իմանայ զչափս²⁷ իւր
եւ զժառայութիւն որդւոյ իւրոյ ի Հրեշ-
տակէ Աստուծոյ անդրէն դարձուցեալ առ
տիկինն: 14 Զի մոռացկոտ է մարմինն՝ ե-
լանէ ընդ դէմ Հոգւոյ եւ ծանր է աւագ՝
Հակէ ի վայր, ոչ Հնազանդի կամաւ²⁸
այնմ, ուստի²⁹ ծագելոց եին աստեղք:
15 Այլ եւ արեգակն եւս³⁰ արդարութեան³¹
Տէրն եւ կենդանատեսակքն, որ եւ աս-
տուածատեսակք, երկոյտասան առա-
քեալքն, եւ նշանաւոր աստեղքն եւթանա-
սունքն³² եւ Հազարքն¹ Հինգ, եւ այլոցն²
բազմութիւնք Հաւատացելոցն:

1 H չիք եւ Եղիպտոս... զիս
2 A չիք եւ
3 A երկիւղի
4 A պարգեւն
5 A նմա Աստուած
6 A չիք իսկ
7 A եւ փխ. իբրեւ
8 A եւ փխ. իբրեւ
9 H Զաքարիաս
10 A չիք նորոյ
11 A չիք նմայ
12 A Եգիպտոսի (չիք մինչեւ)
13 H է
14 A որ
15 H Աբրահամ
16 H ժառանգել
17 A յերկիրն
18 A զԱգար փխ. զաղախին

19 A առ
20 H չիք գու
21 A յորդիս
22 H չիք տալ
23 H զաղախինն տալ
24 A եղիցին փխ. լինիցին
25 A չիք նոցա
26 A մայր նոցա
27 H զչափ
28 A չիք կամաւ
29 H որ փխ. ուստի
30 H չիք եւս
31 A արդարութեան եւս
32 A Հի փխ. եւթանասունն

16 Եւ զի ասէ հրեշտակն. Դու յղաս-
ջիր³: 17 Մխիթարէ զնա⁴, զի սակաւ յան-
ցանացն բաւական էր կրել⁵ պատուհասն:

18 Որդի, ասէ, ծնցիս եւ լսումն անուն
նորա⁶ (Ժ.Գ 11). եւ երկրորդէ⁷ տեսական
ազգին Իսրաէլի եւ յանդիման եղբարց
բնակէ (Ժ.Գ 12): 19 Յայտնէ թե որդիս
ծնանելոց էր⁸ Աբրաամ⁹ ի Սարայէ եւ ի
Կենտուրայ¹⁰: 20 Եւ վայրագ, զի յանա-
պատ բնակեցցին¹¹ եւ խոտաբարուք¹² լի-
նին¹³:

21 Զեռք նորա յամենեսեան¹⁴ եւ յեռք
ամենեցուն ի նա, է զի ի բարիս տան եւ
առնուն սիրով, եւ զի բազումք¹⁵ գոլով¹⁶
կարէ ընդդէմ կալ պատերազմաւ յոլով¹⁷
ազգաց:

22 Եւ կարդաց Ագար զանուն տեսուն
(Ժ.Գ 13), որ երեւեցաւ, որպէս թե դա-
տաստանաւ մխիթարեաց զնա: 23 Եւ զի^o
կոչեաց զհրեշտակն Աստուած, զի որ
զբուն թագաւորն ոչ է տեսեալ զհազարա-
պետն թագաւոր կարծէ, եւ ներելի է, զի ա-
ղախին եւ տխմար է. յորոյ անուն եւ
զՋրհորն կոչեաց, որ էր եւ այն նմա պար-
գեւ տուեալ ի մխիթարութիւն եւ ի կատա-
րումն բարեաց: 24 Եւ զի դարձաւ առ տի-

կինն, զի անձնիշխան¹⁸ լինելն¹⁹ չար է եւ²⁰
մոլորութիւն:

25 Վասն որոյ ծնանի Աբրաամու որ-
դի՝ ԶԶ (86). ամաց գոլով Աբրաամու:

26 Ութ տասն թիւն էք²¹ եւ նուիրեալ
եւ վեցն տեսական²² աշխարհին, զոր ժա-
ռանգելոց էր:

27 Եւ Աբրաամ այլ անուն ոչ կոչեաց
նմա, զի ասաց նմա²³ Ագար զբանս հրեշ-
տակին, եւ այլ ոչ եղեւ ընդ նմա Աբրաամ
ի պատիւ Սարայի:

28 Եւ երեւեցաւ նմա²⁴ Տէր եւ ասէ. ես
եմ Աստուած քո (Ժ.Է 1): 29 Որ ամենայն
երկրի է²⁵ յատուկ նմա ասէ գոլ, եւ որք²⁶
նման նմա լինին:

30 Լեր, ասէ, հաճոյ առաջի իմ (Ժ.Է
1*) 31 Լեր հաճոյ, այլ²⁷ ասէ²⁸ զներկայն,
զգուշացուցանէ վասն առաջիկային.

Եւ լեր անարատ²⁹ (Ժ.Է. 1*), զի մի
պատճառանաւք եւ կեղծիւք առնիցէ դա-
ռաբրնութիւնն^a եւ անկաւ Աբրաամ ի վե-
րայ երեսաց իւրոց, քանզի^b ոչ հաճոյքն եւ
արատն ի զգայութեանցն խառնի, ի վերայ
անկեալ ծածկէ, այլ եւ պակումն կրէ
միանգամայն եւ երկրպագէ շնորհ կալեալ
պարգեւին: 32 Վասն որոյ եւ ասէ. եւ իմ
ահա ուխտ ընդ քեզ եւ եղիցես հայր բագ-
մութեան (Ժ.Է 4), զի ոչ միայն թուով հո-
լովութիւնք որդւոց, այլ լեզուաց եւ տոհ-
մից, զի եւ նախապետք եւ նախահարք լի-
նելոց են այլոց ազգաց որդիք նոցա^a:

Ա 51բ-52բ, Կ 84բ-86ա

1 Կ բիրքն փխ. հագարքն
2 Ա այլ փխ. այլոցն
3 Ա յղի
4 Կ գայն փխ. գնա
5 Ա կրեալ
6 Կ չիք անուն նորա
7 Կ Բ, որ է փխ. երկրորդէ
8 Կ չիք Աբրաամ
9 Ա է
10 Կ Կենդուրայ
11 Ա բնակեցն
12 Կ խոտաբարոյք
13 Ա լինեցն
14 Ա յամենեսիւն
15 Կ բազում
16 Ա յոլով
17 Ա ամենայն փխ. յոլով

18 Ա անիշխան փխ. անձնիշխան
19 Կ լինել
20 Ա չիք եւ
21 Ա սուրբ փխ. էգ
22 Կ տեսակ
23 Ա Ագար նմա
24 Կ չիք նմա
25 Ա է փխ. գոլ
26 Ա որ
27 Ա չիք այլ
28 Կ չիք ասէ
29 Ա ամբիծ

Ձ (ԽԹ)

ԺԷ. 5

1 Եւ ոչ եւս կոչեսցի այսուհետեւ անուն քո Արրամ, այլ Արրամ կոչեսցի անուն քո: 2 Արդ¹, յորժամ Իսմայէլ ծնաւ հայր եղեւ երկրաւորաց, եւ² յորժամ Իսահակ ծնանի³ հայր լինի⁴ երկնաւորաց՝ աստեղաց⁵: 3 Եւ գիտ⁶րդ լինի մարդ հայր երկնաւորաց եւ երկրաւորաց. եթե ոչ այն որ խաւսի ընդ Աբրամամու⁶ լինի մարդ ի գարմիցն Աբրամամու⁷: 4 Վասն որոյ Աբրամամն հայր վերահայեաց, որ յաստեղս հայէր աստի ի վեր. եւ իշխեաց աստեացս, լսելով ձայնին Աստուծոյ:

A 52բ, H 86ա

ՁԱ. (Ծ)

ԺԷ. 5-14

1 Այլ գիտել պարտ է, թե մարդ պատուական բանիւ է, եւ նովաւ տիրէ ծովու եւ ցամաքի: 2 Եւ բանի պարբեկութիւնք է (7) են. է (7) գիր, որ ձայնանան եւ բանանան: 3 Ձի գործիք են բանի գիծքն, որ եւ ի մեր լեզուս ԼՁ (36) լինի: 4 Եւ ամենայն տառից առաջին եւ հայր այբն է, եւ առաջին ձայնաւոր եւ սկիզբն բոլորից թուոց:

5 Եւ ընդ ամենայնի միաբանի, ընդ պարզին պարզանա եւ ընդ թաւին՝ թաւանա եւ ընդ սոսկին՝ սոսկանա: 6 Եւ խառնելովն ընդ ամենայնի ամենայն լինի եւ մնա անխառն: 7 Մատամբ գրչի մտէ ի բառ եւ առանց բարբառի խաւսի, ձեւանայ եւ տեսանի ճաց, ձայնիւ հնչէ ի լսելիս եւ մտաց ուսուցանէ իմաստութիւն, թուէ գինչս մեծատանց եւ չտա ծառայից գողանալ, արբանեակ թագաւորաց եւ մեկնիչ

1 A չիբ Արդ
2 A չիբ եւ
3 A Իսահակ ծնցի
4 H չիբ հայր լինի
5 A աստեղց
6 H չիբ ընդ Աբրամամու
7 A ևորա փ/ս. Աբրամամու

խորհրդոց, առանց ոտից ընթանա, առանց թեւոց թռչի, գործէ առանց ձեռին եւ խաւսի առանց լեզուի: 8 Նովաւ կոչեմք զԱստուած, նովաւ մխիթարիմք արքայութե[ա]յն յուսով, նովաւ երկնչիմք ի դատաստանացն Աստուծոյ. չիք քան զսա մեծ պարգեւ Աստուծոյ ի կենցաղս յայս⁸:

9 Հարցին ցոմն՝ թէ⁸ զի⁹նչ երեւի քեզ ընտիր ամենայն բարութեանցն Աստուծոյ, եւ նա⁹ ասաց՝ իմաստութիւնն: 10 Քանզի ամենայն ինչ հակառակ ունի, մեծութիւն՝ գաղթատութիւն, կեանք՝ զմահ, առողջութիւն՝ զհիւանդութիւն, իսկ¹⁰ իմաստութեանն չկա¹¹ հակառակ: 11 Եթե մեծանա մատակարար լինի, եթե աղքատանա յԱստուած մերձենա, եթե առողջ է¹²՝ գոհանայ, եթե հիւանդանա¹³ զԱստուած¹⁴ փառաւորէ, եթէ կեայ¹⁵՝ յաւելու յարդարութեանն¹⁶, թե մեռանի՝ եւ անխեղ¹⁷ գնայ¹⁸ յաշխարհէս:

12 Եւ զի¹⁹ այբն է մայր իմաստութեան, վասն որոյ եւ զայբն սկիզբն երեալ գայլ բարիսն զհետ բերէ:

13 Անեցուցից, ասէ, զքեզ, եւ քազաւորք ի քեզ²⁰ ելցեմ (ԺԷ 6): 14 Թագաւորաց հայր, ասէ, լիցիս՝ դու²¹՝ Դաւթեանց, եւ Սողոմոնեանց²² եւ Արչակունեանց եւ²³

8 A չիբ քէ
9 A չիբ եւ ցա
10 A չիբ իսկ
11 H ոչ գոյ փ/ս. չկա
12 A չիբ է
13 A հիւանդ
14 A չիբ զԱստուած
15 H չիբ կեայ
16 A յարդարութիւն
17 H եւ անխեղ
18 H զնաց
19 A չիբ եւ գի
20 A ելցեմ ի քեզ
21 A չիբ դու
22 H Սաւուդեանց
23 H չիբ եւ

Իսմայէլեանց¹ եւ գլուխ եւս ապա² երկնա-
ւոր թագաւորին:

15 Բայց դու գուխտ իմ պահեա:
16 Թլփատեսցի³ ձեր⁴ ամենայն արու ութ-
աւրեայ եւ ընդոծից⁵ եւ արծաթագին: 17 Եւ
որ ոչ թլփատեսցի⁶ ութաւրեայ, սատակես-
ցի յազգէ իւրմէ (Ժ-Ը 9-14): 18 Ոչ թե
ըստ բարի⁷ իւրոյ կամացն դնէ գլխատու-
թեանն գուխտն⁸, քանզի թե այնպէս էր՝
չէր հաճեալ ընդ⁹ առաջին յարդարան, որք
եւ¹⁰ անթլփատք գնացին առ Տէր¹¹. եւ ոչ
ընդ Աբրաամու¹², նախ քան գլխատու-
թիւնն, այլ զի յեզիպտոս գնալոց էին, ուր
թլփատէին էզք եւ արուք¹³ ի երկոտա-
սան¹⁴ ամին: 19 Առանձնական եւ որիչ
կամի լինել սոցայ ի նոցանէ, զի մի՛ այնու
վարեալ¹⁵ սովորութեամբ եւ ի կռապաշ-
տութիւնն նոցա անկանիցին¹⁶:

20 Վասն այսորիկ յարուսն միայն եւ
յուլթաւրեայ մանկուսն դնէ գնշանն,
նշան կոչէ եւ ոչ փառք եւ պատիւ¹⁷:

A 52բ-53ա, H 86բ-87ա

ՁԲ (ԾԱ.)

ԺԸ. 2-20

1 Իբրեւ ետես, ասէ, ընթացաւ ընդ ա-
ռաջ նոցա, իբրեւ երից ուղեւորաց եւ եր-
կիր եպագ ի վերայ երեսաց (Ժ-Ը 2) որ-

1 H Իսրաէլեանց
2 A եւ փ/ս. ապա
3 A թլփատեսցի
4 H ձեր
5 A ոծից
6 A թլփատի
7 A իւր բարի փ/ս. բարի իւրոյ
8 A ուխտ թլփատութեանն
9 H չի՞ր ընդ
10 A չի՞ր եւ
11 A էին փ/ս. գնացին առ Տէր
12 A Աբրահամու
13 A արուք եւ էզք
14 H չորեքտասան
15 H վարելով
16 H անգանիցին
17 ABCH չի՞ր եւ պատիւ

պէս¹⁸ սովոր էր Աստուծոյ: 2 Վասն որոյ
եւ¹⁹ խաւսի իբրեւ ընդ միոյ՝ Տէր եթե գտի
շնորհս առաջի քո, մի՛ գանց առներ ի ծա-
ռայէ քո²⁰ (Ժ-Ը 3). եթե գոր խնդրեի կա-
րաւորիւ գշնորհսն տեսանել՝ գԱստուած
գտի՛, ապա մի՛ գանց առներ²¹: 3 Այլ աոցի
սակաւ մի ջուր (Ժ-Ը 4), թե²² յո՞ւմէ ոչ իշ-
խէ: 4 Եւ լուսացեմ գոտս ձեր (Ժ-Ը 4*). եւ
զո՞քն ոչ ասէ պատկառանաւք^a, զի եթե
Տէրն է՝ ոչ պիտի նմա ջուր, եւ թուր թէ
հարցանելով է բանս՝ սակաւ²³ աոցի: 5 Եւ
լուսացեմ գոտս ձեր, եւ գովասալիք ընդ ծա-
ռոյս (Ժ-Ը 4*). Համարձակի՞մք, ասէ, իշ-
խե՞մք, վստահանա՞մք^a: 6 Եւ զո՞ւ առնէք
արժանի սպասաւորելոյ ձեզ^a, զի թե գայն
յանձ առնուցուն, ապա եւ յայլսն²⁴ ինչ
համարձակեսցին, թէ Աստուած է, ասէ²⁵,
մարդակերպեալ եկն առ իս ոտիւք, եւ եր-
կիրս պատուանդան է ոտից նորա: 7 Այն-
պիսոյ ոտից ջուր արժան է տալ: 8 Ագա-
րակն Մամբրէի արքայանիստ եղեւ եւ
ծառն կաղնի առաւել քան զգրախտն աղե-
նայ, զի անդ է Տէրն արարածոց, որում
չիչխէ ասել թե՛ նստէք եւ կամ²⁶ կերայք,
զի մի հրամայող²⁷ իցէ, մինչ առնու հա-
մարձակութիւն յասելն.

Այսպէս^a արայ որպէս ասացերդ (Ժ-Ը
5) յանդիմանելով գայնոցիկ, որ այլազգ²⁸
ինչ ասեն եւ այլազգ առնեն: 9 Եւ զի այր
ծեր էր Աբրաամ, մոռացաւ զծերութիւնն
եւ գտկարութիւնն, յանդեան²⁹ ընթացաւ
Աբրաամ եւ³⁰ եբեր որթ մատաղ¹, զի ասէր

18 A իբրեւ
19 H չի՞ր եւ
20 A չի՞ր ի ծառայէ քո
21 H չի՞ր եթե՛ առնէր
22 A չի՞ր եթե
23 A չի՞ր եւ թուի... սակաւ աոցի
24 A յայլ
25 H չի՞ր է ասէ
26 A չի՞ր եւ կամ
27 A հրամայաւղ
28 A այլ ինչ փ/ս. այլազգ
29 H յանդէ
30 H Աբրաամ եւ

թե մարդիք² են, հիւրընկալ եղէց, եթե Աստուած է, եւ ոչ գարշեցաւ ձեւանալ մարդ վասն իմ, որ հոտոտեցաւ ի պատարագն Նոյի եւ զիմ պատարագն եկեր հրով, ուստէ եւ զորթն³ իմ: 10 Որթն⁴ առնու ոչ խոտակեր, այլ՝ կաթնակեր՝ ներքոյ եւ արտաքոյ գեղեցիկ, յաւրինակ Տեառն մեծի պատարագին:

11 Եւ Սարայի⁵ ասէր. Փուրթայ թրեա (ԺՂ 6). ոչ ծառայի եւ ոչ աղախնոյ հրամայէր. Արա Գկանակս, որ է⁶ բաղարջս: 12 Եւ ընդէ՞ր բաղարջս⁷. զի⁸ գիտէր հոգևովն, թե աւրէնս զնելոց էր⁹ որդևոց նորա չուտել խմորուն: 13 Եւ Տէրն աւանդէր զմարմինն իւր զանապական¹⁰: 14 Եւ երիս, զի երիս ետես՝ իմացաւ գերրորդական խորհուրդն, որում պատարագս մատուցանէր: 15 Ըստ թուոյն¹¹ երեք են. առաջինն չէ ծնեալ յումեքէ, երկրորդն ծնունդ է առաջնոյն, երրորդն ոչ երկրորդին, այլ առաջնոյն է ելումն եւ բխումն՝ իբրեւ արմատ եւ ծառ եւ պտուղ: 16 Եւ թե ասիցէս թէ¹² պտուղն յետոյ երեւեցաւ, քեզ երեւեցաւ յետոյ, այլ նախ ի յարմատն կայր, եւ կամ գունդն երկնի եւ տապն եւ լոյսն¹³:

17 Արա, ասէ, Գկանակս¹⁴ (ԺՂ 6) եւ այն եւս բոլոր է եւ ոչ ունի սկիզբն¹⁵ եւ ոչ¹⁶ կատարած, ոչ երկայնութիւն, ոչ¹⁶ եւ

լայնութիւն, եւ ոչ¹⁷ բարձրութիւն, այլ միականութիւն, եւ¹⁸ հաւասարութիւն: 18 Նաշիի եւ կոզի (ԺՂ 8), որ է կարագ եւ կաթն, մատուցանէ երիցն եւ դնէ առաջի եւ ուտեն անմարմինք գոլով եւ հրեղէնք ծախեցին: 19 Եւ ապա առ սակաւ մի ծանալթութիւն տա մինն խաւսելով՝ Ո՞ւր է, ասէ, Սարա¹⁹ կիմ քո (ԺՂ 9), որ զի²⁰ որ անունն կնոջն²¹ գիտէ եւ զուրն եւս²² քաջ գիտէ, այլ հարցանէ վարձս տալ վաստակոյն²³ եւ շնորհակալութիւն սպասաւորութեանն, զի որպէս Աբրաամ յանդեայն²⁴ ընթացաւ եւ Սարա՝ յամանս ալերն, եւ Աբրաամու թերեւս աւզնեին ծառայքն, իսկ Սարայի՝ եւ ոչ ոք, զի ոչ ետ թոյլ աղախնացն²⁵ անարժան համարելով զնոսայ: 20 Այն, որ ոչ դեղ եւ ոչ արմատ եւ ոչ գիւթող եմուտ ի խորան նորա վասն որդեծնութեան, այլ Աստուծոյ մնայր ասելով՝ Տէր փակեաց զիս. նմա մնայր, զի բացցէ փակողն: 21 Ո՞ւր է²⁶ առաքինութիւն քո, ո՞ւր է զաւրութիւն քո եւ լծակիցն քո:

22 Պատասխանի ետ Աբրաամ եւ ասէ. Աւասիկ²⁷ ի խորանին է, եւ²⁸ չգայր ի դէմս եւ²⁹ Տէրն գիտէր, զի յետոյ առ դրանն կայր եւ լսեր³⁰ զբանս նորահրաշս:

23 Դարձեալ եկից առ քեզ ի ժամուս³¹ յայսմիկ (ԺՂ 10): 24 Յայտ³² արար եւ

1 A մի փիս. մատաղ
2 A մարդիկ
3 H գորթս
4 H Որթ
5 H Սարայի
6 A չի՞ք որ է
7 H չի՞ք եւ ընդէ՞ր բաղարջս
8 A չի՞ք զի
9 H է
10 H թուիմ
11 A չի՞ք թէ
12 A լոյսն եւ տապն
13 H Գկանակս
14 H սկիզբն
15 A կամ փիս. եւ ոչ
16 H եւ փիս. ոչ

17 H եւ փիս. ոչ
18 A չի՞ք եւ
19 H Սարա
20 A որ փիս. զի որ
21 H չի՞ք կնոջն
22 H եւս է
23 H վաստակոցն
24 A յանդեայն
25 A աղախնեացն
26 A չի՞ք է
27 H ահաւանիկ
28 A չի՞ք եւ
29 A չի՞ք եւ
30 A լսելով փիս. եւ լսեր
31 A ժամանակիս
32 A Յայտնի

պարզեաց, զի Տէրն է եւ մեծամեծս խոստանայ, երկու աւետիս՝ զիւր գալն եւ զորդին: 25 Եւ լուաւ Սարայ եւ ծիծաղեցաւ (ԺՂ 12): 26 Իբրեւ զԱբրաամ ծիծաղի խնդուցեալ, չկարելով բերել զսրտին զուարճութիւնն:

27 Եւ Տէրն¹ ոչ հանդիմանէ², այլ եւս հաստատէ³ զխոստումն եւ զխնդութիւնն նորա՝ ծանուցանելով զինքն⁴, որ թեպէտ ժխտեաց, յուրաստ եկաց յերկեղէն⁴ Սարա, այլ ասէ Տէր ոչ այդպէս, այլ ծիծաղեցար՝ գիտելով, թէ Աստուծոյ է զչոր փայտ պտղաբեր առնել: 28 Վասն որոյ կացի, ասէ, յերկարեցի զաւետիսն, զի Աստուծոյ եւ ոչ բնութեան կարծիցի⁵ իրն: 29 Զի թե երկմտութեամբ ծիծաղեալ էր Սարայ, ո՞չ զնմա⁶ ծաղրն դնէր անուն մանկանն Իսահակ:

30 Մի՞թէ տկարացի, առ ի յԱստուծոյ ամենայն բան⁷ (ԺՂ 14): 31 Յիշեցուցանէ, զի ասաց եւ եղեն⁸ արարածքս եւ զնորին լծորդն, սքանչելիսն, որով ինքն անպեղծ⁹ մնաց ի տանն փարաւոնին: 32 Եւ յայտ է, զի ի ծնանելն Իսահակայ եկն Աստուած առ Աբրաամ եւ նորա¹⁰ հրամանաւն կոչեցաւ անուն մանկանն, թեպէտ եւ ոչ գրեցաւ, այլ եւ¹¹ արդիւնանալ բանին նմա զալուստն է¹²: 33 Զի¹³ մինչ դեռ մարդաքայլ ոտիւք զնային ի տանէն Աբրաամու, խնայելով ի տունն¹⁴ եւ հանգիստ տալով,

իւրն եւ տանն¹⁵, զի յորմէ հետէ յայտնեաց զինքն, կալաւ զնոսա դողումն, թեպետ եւ անուշահոտութիւն անձառելի կալաւ զԱբրաամ: 34 Եւ ի գնալն ոչ կարէր հրաժարել¹⁶ յիմանալի լուսոյն, քանզի միացաւ փակեալ ընդ տեսիլն:

35 Եւ երթայր յուղարկել¹⁷ զնոցա¹⁸ (ԺՂ 16) որպէս եւ ասացեալ իսկ է՝ հիւրին¹⁹ ընդ առաջ երթ եւ ի գնալն յուղարկաւոր²⁰ երթիջիր²¹:

36 Որում եւ ասէ Աստուած՝ Միթե քաֆն²² ւստ ինչ իցէ յԱբրաամէ²² ծառայէ իմմէ՝ զինչ առնելոց եմ^a (ԺՂ 17):

37 Փոխանակ զի ոչ գարչեցաւ Աբրաամ լինել բարեկամ աւտարաց՝ ոչ գարչի Աստուած գալ առ նա իբրեւ զաւտար եւ զքաղցեալ. լնով զքաղց նոցա վասն որդւոյն եւ առնել զԱբրաամ խորհրդակից:

38 Զի ոչ միայն ի կեանս իւր անձամբ եւ եթ զգուշանայ կամացն Աստուծոյ, այլ պատուիրելով պատուիրէ որդւոց իւրոց եւ տան իւրոյ խոկալ յաստուածայինսն. նմին իրի տայ նմա որդի եւ շինէ նմա տուն՝ ասպնջական լինել Աստուծոյ եւ պատկերին իւրոյ՝ Մարդոյ. զի ածցէ Աստուած ի վերայ Աբրաամու, ոչ զմասն ինչ աւետեաց խոստման՝ այլ բոլոր բարութիւնսն յերկրի եւ յերկինս. աստեն կարաւղ գոլ աւտարաց հանգիստ. եւ յետ մահու հայր եւ հանգուցիչ արդարոց. ա՛ստ անխտիր բարերար եւ անդ ընտրողապես՝ արժանաւորացն միայն:

39 Աղաղակ, ասէ Սողոմնացոցն եւ Գոմորացոցն եհաս առ իս, եւ արդ իջեալ տեսից թե, ըստ աղաղակին, որ յիսն հա-

1 A չի՞Ք Տէրն

2 A հանդիմանէ Տէրն

3 H հաստատէ եւս

4 A յերկիւղէն

5 A կարծեսցի

6 A զնորա

7 A ասէ առաջի յԱստուծոյ բան

8 H եղեմ

9 H անպիծ

10 A նմա

11 A չի՞Ք եւ

12 A գալուստ է նմա

13 A չի՞Ք Զի

14 H չի՞Ք ի տունն

15 A չի՞Ք իւրն եւ տանն

16 A հրաժարէր հրաժարել

17 H յուղարկաւոր

18 A նոսա

19 A հիւրոյն

20 H յուղկաւոր

21 A չի՞Ք երթիջիր

22 H ի յԱբրաամէ

սանէ վնարեա՞լ ից[եմ], ապա եթ ոչ զի գիտացից (ԺՂ 20-21): 40 Աստուած ոչ ի կարծա դատի, որ քննէ զսիրտս եւ գերիկամունս, այլ արէնս հաստատէ դատաւորաց եւ թագաւորաց. նախ քննել եւ ստուգել զիրաւն. Զի թագաւոր յորժամ յաթոռ նստի աթոռ նորա՝ նման պիտի Աստուծոյն, ոչ նիւթեղէնն այլ գործ դատաստանին. եւ որպէս զարդարեն զաթոռն եւ նստի թագաւորն, նոյնպէս որ ընդ իշխանութեամբ է նորայ՝ զարդարեալ եղիցի իրաւամիժ: 41 Իսկ աղաղակն ի հրեշտակաց կամ ի տարերց կամ ի զրկելոց, ըստ այնմ թե զրկեալն ի ձենջ աղաղակէ եւ բողոք հնձողացն եհաս յականջս Տեառն զաւրութեանց, քան զի Աստուած ըստ իւրում մեծութեանն ունի գերկայնմտութիւնն, թեպէտ գիտէ զամենայն, այլ ներէ ողորմութեամբ: 42 Իսկ ասելն՝ դարձուցեալ արանցն գերեսս յայտ է ի ներելոյն ի վրէժխնդրութիւն: 43 Եւ Աբրաամ կայր առաջի քաղցր եւ ահագին դատաւորին որ յայտնելով նմա զչարիսն Սողոմայ շարժէր ի բարէխաւսութիւն զնա այնոցիկ զորոց ամբաստանէ մարգարէն. այս է անաւրէնութիւն Սողոմայ, լիութիւն հացի եւ հղիութիւն գիւնոյ³»:

A 54ա-55ա, H 88ա-89բ

ՁԳ (ԾԲ)

ԺԸ. 20-ԺԹ 1

1 Զի յաւրանայր, եւ ձեռն յաղքատն՝ ոչ կարկառէր, եւ որ առ մարդիք խակ է եւ առ աստուած ամբարիշտ է: 2 Իսկ Աբրաամ աղաչէր² ոչ վասն արդարոցն, այլ եւ³ վասն մեղաւորացն, գիտելով թե արդարն ապրի առանց բարեխաւսի⁴: 3 Եւ

զյիսնէ յիշէ եւ⁵ բուռն հարկանէ զազատն թուոյ որ, ոչ միայն զմարդիք այլ եւ գերկիր եւ զանասունս ազատէր ըստ արինացն եւ զգրակիր մայրն կենսակիր առնէ:

4 Եւ ասէ թե իցէմ յիսուն, եթե⁶ քառասուն եւ հինգ⁷ եթե քառասուն եթե երեսուն, եւ եթե քառս եւ⁸ եթե տասն (ԺՂ 26-32): 5 Վեցիւք բովանդակէ զխնդիրն, որովք շարժի մարմինն եւ լինի⁹ ապականացու, զի կարասցէ արդարն յանապականութիւն¹⁰ անել զապականեալսն: 6 Քառասուն եւ հինգ հոգեծնութիւն անդրանկի, եւ¹¹ քառասուն շնչաբերութիւն արուին երեսուն ազգն եւ ի թիւ գինուորութեան, տասն թիւ կատարելութեան^a, ընդ որ էէր¹² արժան¹³ անցանել յանկատարն: 7 Եւ զի ծածկէ զազգասիրութիւնն, զի ոչ վասն ազգի, այլ վասն բոլոր¹⁴ մարդկան աղաչէ, զի ազգքն¹⁵ չորք էին եւ չորրորդն եւս պակասեաց:

8 Իսկ ասելն Քաւ լիցի քեզ, որ դատիսդ զամենայն երկիր (ԺՂ 25) յայտ արար, թե ամենայն երկիր լի է մեղաւք, եւ ներես դու¹⁶ ողորմութեամբ. զմինն մի՛ կորուսանէր ստուգութեամբ:

9 Եւ գնաց Աբրաամ եւ Աստուած մեկնեցաւ ի տեղոջէն (ԺՂ 33):

10 Եւ¹⁷ քանզի Աստուած ի տեղոջ ոչ է, այլ եւ տեղիք յԱստուած¹⁸ եւ ի սիրե-

« Եւզէ. Ժ.Չ 49
 1 H ի յախմատն
 2 A աղաչէ
 3 A չի՞ք եւ
 4 H բարեխաւսանաց

5 A չի՞ք յիշէ եւ
 6 H չի՞ք եթե
 7 A Խե
 8 A չի՞ք եւ
 9 A շինի
 10 A յապականութիւն փ/ս. յանապականութիւն
 11 A չի՞ք եւ
 12 A չէ H
 13 չի՞ք արժան
 14 A չի՞ք բոլոր
 15 H ազգն
 16 A դու ներես
 17 A չի՞ք եւ
 18 H ի յԱստուած

լեաց ոչ մեկնի, այլ ծածկէ անեղն զինքն խնայելով յեղականսն:

11 Եւ եկին երկու հրեշտակքն ի Սոդոմ (ԺԹ 1):

12 Յորժամ բարի առնէ Աստուած ի մեջ երկուցն կացեալ երեւի, իսկ զպատուհասն ի ձեռն երկուցն խնայող եւ տանջողական զաւրուժիւնս առաքելով, որ եւ ըստ գործոցն¹ կոչուին բարի եւ չար:

13 Առաքեաց ի նոսայ տանջանս ի ձեռն հրեշտակի չարի, իբրեւ սատակղն անդրանկաց եգիպտացոցն²:

14 Բայց ընդէ՞ր Աբրամ չառնէր զԵղիային եւ ասէր՝ ես միայն մնացի եւ խնդրեն զանձն իմ. թերեւս, զի զՄելքիսեդէկ տեսեալ էր Աբրամ եւ զԱբեմելէք աստուածածան[ա՞ւթ]. կարծէր գոմանս արդար գոյ յերկրի: 15 Իսկ Եղիա զայրացեալ վասն Բահաղու մարգարէիցն եւ չաւրութեան Յեզաբելի ասէր զայն³:

Ա 55բ-56ա, Ի 90ա-90բ

ՁԴ (ԾԳ)

ԺԹ. 15-24

1 Եւ իբրեւ այգ եղեւ ասեմ ցՂովտ (ԺԹ 15):

2 Զամենայն գիշերս աշխատ եղեր եւ չգիտեր զոք² արժանի: 3 Արդ³ արի սակաւութիւն⁴ եւ ել: 4 Զի ցնորեցաւ եւ ապշեցաւ, կալան զձեռանէն եւ հանին չորս, բայց խաւսին ընդ մինն՝ Փութա՛, ասեն, ապրեցոյ զանձն քո:

5 Զի⁵ գիտէին զինչ գործելոց եին⁶ կինն եւ դատերքն: 6 Իսկ զի⁶ խնդրեաց Ղովտ զՍեգովր փրկել. թերեւս զի⁷ Աբրամու աղաւթքն արդիւնասցի, զի սա-

1 Ի գործոյն
2 Ի գոն
3 Ա չի՛ք Արդ
18 H տար գքն
19 H չի՛ք ազատեա
20 A չի՛ք հան
21 H տուրն
22 A խայտախարիքն
23 A յԱստուած
24 H մարգարէան
25 A չի՛ք կեցուցանէ
26 H Առնու
27 A անդար
28 A կոչեն
29 A եբրայեցերէն
30 H կաղնի
31 H չի՛ք ոչ

11 Նկարեմ գերծոյր զկեղեմ եւ դմեր յաւազանն ջուրցն (I, 38): 12 Եւ խաշինքն յըմբելն իւրեանց տեսանեին եւ յուշի իւրեանց տպաւորեին զխայտիւսն, յղացեալ ծնանեին այնպիսի նկարեանս, որ էր հրաշք խորհրդոյ, զի խաշինք հային յերկինս¹ յաստեղս եւ յերկիր եւ ի ծով, եւ այնպիսի զոր տեսանեն ոչ ծնանին: 13 Այլ խորհուրդ էր իրն մեծ եւ սոսկալի, զի որ հաւատայ ի Քրիստոս ի խորհուրդ ավագանին, նկարեալ տեսանէ զպէս պէս շնորհսն, զոր բաժանէ միեւնոյն Հոգի, եւ յահ եւ² յերկիւղ եւ ի սէրն Աստուծոյ յղանայ եւ ծնանի զփրկութիւն անձին իւրոյ: 14 Եւ զհանդերձեալ յուսոյն զպտուղն սիրով առլցեալ³, հաւատով զիրկս արկեալ, նշանակ⁴ երեք⁵ գաւազանացն: 15 Դարձեալ՝ միոյ հաւր ծնունդք⁶ եմք՝ Ադամայ, ի դէպ էր նման ծնողին միագոյն լինել: 16 Այլքան զի բանական եմք եւ պէս-պէս եւ զանազան բարս ունիմք եւ փոփոխիմք յայլ եւ այլ առաքինութիւնս, եւ լինիմք ոմն առաջին, ոմն միջին, ոմն վերջին, եւ Աստուած զամենեսեան ընդունի:

17 Իսկ աննշանքն Լաբանու, որք⁷ գնացին զկնի աւտար հովուին եւ չնկարեցին ի միտս իւրեանց զխայտախարի գաւազանացն զխորհուրդս, եւ գազանակուր եղեն: 18 Զի գաւազանքն Յակոբայ երեք էին յանուն Երրորդութեանն, եւ այսաւր երեքն յիշուին⁸ ի սուրբ աւագանին եւ Հոգին եւ ջուրն եւ քահանայն: 19 Ուրոյն կացուցանէր Յակոբ զնշանաւորսն եւ ոչ խառնէր ի Լաբանուն: 20 Եւ որք յառաջն

ծաղր առնեին զՅակոբ, եթե՝ գունոյ է ցանկացեալ եւ ոչ՝ բազմութեան, ինքեանք ծաղր լինեին ի բազմանալ խայտապիսակացն: 21 Զի մեծացաւ, ասէ Յակոբ յոյժ յոյժ, ուստեբք եւ ուղտք եւ էջք (I, 43): 22 Եւ այս պարգեւք Աստուծոյ է եւ չէ փոքր, եւ⁹ կարէ սովաւ հոգեւոր մեծութեան տէր լինել, զի թե մեծութիւն մեղք էր¹⁰ ապա¹¹ քան զԱստուած ո՞վ է մեծատուն՝ երկինք եւ երկիր նմա են¹², բայց զամենայն ի պէտս մարդկան տուեալ է¹³. թե արգելու չկարեմք կեալ, եւ¹⁴ թե առատապէս¹⁵ բաշխէ մեծապէս¹⁶ գոհանամբ զնմանէ:

23 Թե ողորմելի են խաբատք¹⁷ երանելի են մեծատունք, որ կերակրեն զնոսա: 24 Հան, ասէ, պտուղ Աստուծոյ¹⁸ ի բոց արդար վաստակոց՝: 25 Զի¹⁹ եթե յայսս²⁰ կրթի ոք մարդ է եւ Աստուծոյ նման²¹ լինի: 26 Բազում մեծատունք զԱստուած եւ զհրեշտակս ընկալան, զի²² թե կամիս՝ մեծութեամբ արդարանաս, եւ թե կամիս՝ աղքատութեամբ պարտաւորիս. եւ չիք ինչ խտտան եւ անպիտան յարարածս Աստուծոյ:

27 Լուաւ Յակոբ գրանս որդւոցն Լաբանու, եթե՝ գամեմայն ինչս ի հաւրէ մերմէ եհան իւրն: 28 Եւ տեսանէր զերեսն Լաբանու, զի չէին ընդ նմա, որպէս յերեկն եւ յետանդն (I, Լ, 1-2): 29 Ապականացուն եւ

1 A յերկինս հայիմ
2 H ի փխ. եւ
3 A լցեալ
4 A նշանակի
5 A Գ
6 A ծնունդ
7 A որ
8 A յիշիմ

9 H չիք եւ
10 H է
11 A չիք ապա
12 A չիք եմ
13 A չիք է
14 A չիք եւ
15 H առաւելապէս փխ. առատապէս
16 H մեծ
17 H ախք
18 A չիք Աստուծոյ
19 Ընդ. Գ. 9
20 A յայս
21 A նման Աստուծոյ
22 A չիք փ

անապականն ոչ կարէն կալ ընդ¹ միմեանս իբր զգինի եւ զմրուր, ջանա ելանել մրուրն² ի վերայ գինոյն՝ շաչէ եւ փքայ եւ ի հարկէ իջանէ ի³ ներքոյ եւ լինի⁴ պահապան անոշահոտութեան⁵ նորա:

30 Խաւսի Յակոբ⁶ ընդ կանայսն, որք աշակերտեցան ճշմարտութեանն, գիրաւունս իւր եւ նոքա պատասխանեցին զարժանն, վասն⁷ զի սիրտք նոցա ընդ Աստուծոյ էր: 31 Եհան զնոսա ի գրաստ եւ խաղաց զնալ:

32 Եւ գողացաւ Ռաֆել զկոլոս հաւր իւրոյ գոսկեղէմս (ԼՄ 19), ոչ զի պաշտեսցէ, այլ զի ի դէպ ժամու ապականեսցէ:

33 Խորհուրդ^a եկեղեցւոյ է⁸ Ռաքել որ կոչի գառն Հովուին մեծի, որ բառնայ զկուռս⁹ ի տանէ հաւր իւրոյ՝ յաշխարհէ:

34 Եւ գողացաւ Յակոբ գսիրտն Լաբանու (ԼՄ 20) մի՝ զի ըստ սրտի նորա, սիրէ զխաշինս նորա եւ երկրորդ՝ զի ոչ արար ազդ սրտին Լաբանու զգնալն իւր. զինքն գողացաւ ի նենգ սրտէ նորա, զի գնացեալ էր նա ի կտուր խաշանոյն՝ ի խնամոց Տեառն, զի անաղաղակ երթիցէ^a:

A 68ա-69ա, H 109ա-110բ

ՂԶ (ԿԳ 1)

ԼԱ. 17-22

1 Խաղաց զնաց Յակոբ ընդ իւր տանելով զչնորհս Միջագետաց եւ զտանն Լաբանու՝ զվէմն եւ զխաշինսն, յաւրինակ Հովուին մեծի, որ յարաւտն իւր կոչելոց էր զհաւտն իւր գունագեղ՝ յիւր մարմին եւ արիւնն կենսատու: 2 Ելքն Յակոբու աւրինակ էին ելիցն յԵգիպտոսէ. ոչ սակաւ

խաւշունք եւ կանչմունք եւ բառաչք լինեին. ոչ իբրեւ զգնալն Ռեբեկայ աղջկան միոյ, զի հաւտք եւ անդեայք եւ ջոլիրք ուղտուց եւ իշուց, ծառայից եւ աղախնեայց. վասն որոյ եւ ազդ լինի Լաբանու գնալն Յակոբու. եւ ելանէ զհետ նորա արամբք: 3 Իսկ Յակոբ զվեց աւր գնաց եւ խորհրդով եւ թներորդին վստահացեալ դադարէ ի յայտնագոյն տեղոջ եւ ոչ ի ձորակի, այլ ի լերինն Գաղալաղու դնէ զխորան իւր, զի ի վեց աւուրս վնասացուք նեղեն եւ յեւթներորդին անապականքն, սկսեալ խնամքն Աստուծոյ յեղանակաւքս եւ աւրհնութիւնքն, զոր եւ ինքն Յակոբ գիտելով երկիցս եւ թն վասն բանաւորացն ծառայեաց, որք լնլոց էին զիմանալի աշխարհն, եւ զվեցն՝ վասն պիտոյից անցաւորիս, որովք ողորքեմք իբրեւ զտիկն այս անյագս զկարաւտութիւն կարեաց կերակրոց եւ հանդերձից: 4 Գթածն Աստուած ազդ առնէ ի տեսեան Լաբանու եւ ոչ բանիւ անզգամել արդարոյն. եւ նա պատմէ որոցն ընդ իւրն էին. եւ կակղացեալ աշակերտին ճշմարտին Աստուծոյ: 5 Եւ զտեղի առնուն յոլովքն՝ եւ Լաբան սակաւուք տեսանէ զՅակոբ, եւ ստութեամբ ասէ, թէ առաքէի զքեզ երգովք եւ թմբկաւք, քանզի մեծութիւն յասորիս ոչ լինի, քան զկտուրս խաշանց, եւ այնմ չարար արժանի զդստերս իւր:

A 69ա, H 111ա

ՂԷ (ԿԳ II)

ԼԱ. 29-ԼԲ. 2

1 Աստուածն էական պահապան է բոլորից, քո Աստուածն եւ ոչ գանձն չպահեաց, շուն լաւ է քան գնա, որ պահէ գանձն ի գողանալոյ եւ զինչս տեառն իւրոյ: 2 Ապա ասելն՝ Աստուած հաւր քո երեսեցաւ ինձ եւ արգել ինձ ի խաւսելոյ ընդ քեզ անզգամութեամբ (ԼՄ 29): 3 Զայս ճշմարտութեամբ ասաց: 4 Արդարախաւս լինել մարդկանց յերկուց կոչմանց աւ-

1 A առ փխ ընդ
2 A մրուր
3 A չիբի
4 A լիմի եւ
5 A անուշահոտութիւն
6 A չիբի Յակոբ
7 A չիբ վասն
8 BC էր
9 H կոլոս

գուտ է, մի՛ զի ինքն Աստուծոյ նմանի, եւ միւս եւս՝ զի զընկերին թերահաւատութիւնն բառնայ ի մտաց նորա. այն է Աստուած, որ պահէ զծառայս իւր ի չարէ:

5 Խիլ արկ Լաբան եւ ոչ եգիտ: 6 Եւ Ռաքել, թեպէտ սուրբ էր, զի ասաց ի դաշտանի արեան գոլ, եւ նստաւ ի վերայ, պղծեաց զնա, եւ սատանայ անգամ, որ ծաղր է ամենեցուն, ծիծաղեցաւ ի վերայ Լաբանու:

7 Նախ քան զՄովսէս Ռաքել յաղթահարեաց զմահ զայս առնելով, զի այն չորեքտասան ամ էր, որ անարգեալ էր նա յաչս նորա. խրոխտացաւ Յակոբ եւ պատմեաց զամենայն վաստակս իւր, եւ արդար գտաւ եւ յաղթող, եւ փութացաւ յընտանին իւր. վէ՛մ կանգնեաց, զոր ետես ի Բեթեղ եւ ի ջրհորն, ուր գաւրացաւ ի նմանութիւն Տեառն իւրոյ, որ բառնալոյ էր զծանրութիւն ի թիկանց հեթանոսաց:

8 Լաբան կառկառ կուտեաց ի ձեւ մեհենի եւ կարդաց ի վերայ զԱստուածն Յակոբայ, իսկ Յակոբ ետես զիւրն վէ՛մ, որ փրկեցանէր զկարկառն, ըստ Դանիէլի, զի մի՛ անցցուք, ասէ, ընդ կարկառս եւ ընդ բլուրս վիճական՝ չարութեամբ. եւ ուխտեցին եւ ուրախ եղեն Լաբանեանքն, ըստ մարմնոց որկորոյ, որ ապրեցոյց զնոցա ի փորձանաց գթութեամբ: 9 Կարկառն ցրուական է եւ բլուրն՝ կայական, վկայութեան ասելն՝ իբր անզգայ երեւմամբ միայն յիշուի ի տեսողաց, իսկ բլուրն վկայ իբր կենդանի, որ վկայ է ճշմարտութեանն, որ է խորհուրդ վիճին, որ արձանացաւ:

10 Լաբան, որ եկն՝ զհետ Աստուծոյն իւրոյ՝ չոգաւ անաստուած:

11 Եւ Յակոբ գնաց գնանապարիս իւր: 12 Եւ ամբարձեալ զաչս ետես զբանակ Աստուծոյ, եւ ընդ առաջ ելին նմա հրեշտակք (ԼԻ՛ 1-2), զի բանակք հրշտակաց

Տեառն² շուրջ³ եմ երկիւղածաւք⁴, թեպէտ⁵ որ յամենայն ժամ ոչ կարեն տեսանել: 13 Եւ ասաց. Այս բանակ Աստուծոյ է (ԼԻ՛ 2), զոր ետես ի բանալ աչացն՝ իբրեւ առ Եղիսեիւ, զի գիտացէ, թէ ի տեսնէ սանդղոցն եւ այսր, ոչ թողուն զնա զԱստուած ի⁶ գլուխ ունելով, զոր ետես ի գնալն, նոյնպէս եւ⁷ ի դառնալն նովաւ յաջողեալ: 14 Եւ զի ճանապարհ նորա ընդ Սեիր էր, առաքեաց ողջոյն Եսաւայ⁸, եւ զի չառաքեաց նմա պատասխանի, այլ գայր ընդ առաջ նորա չորս հարիւր⁹ արամբք¹⁰՝ գահի հարաւ, յիշելով զքէն նորա, եւ արար երկուս բանակս, զի գոնէ մինն շիջուցէ զցասումն նորա: 15 Եւ եկաց յաղաւթս յիշելով զուխտն Աբրաամու եւ զԻսահակայ եւ զաւրհանութիւն. ԶԷ՛մ, ասէ, բաւական հատուցանել քեզ զարդարութիւնն (ԼԻ՛ 10), զի ըստ վաստակոց իմոց ետուր զվարձս իմ¹¹ եւ զճշմարտութիւնն, զի զոր խոստացար հարցն իմոց եւ ինձ ճշմարիտ գտար, անեցուցեր եւ բազմացուցեր:

16 Եւ¹² զի ցուպ ի ձեռին¹³ անցի ընդ այս Յորդանան, եւ ահա յերկուս¹⁴ եղէ բանակս (ԼԻ՛ 10)՝ նշանակ Միածնին Աստուծոյ, որ միայն էջ յերկիր եւ եանց¹⁵ ընդ կենցաղս, զոր Յորդանան նկարէ, որ¹⁶

2 H չի՛ք Տեառն
3 E է
4 E երկիւղածովք
5 Սաղմ. ԼԳ՝ 8
6 H թեպէտ որ
7 H չի՛ք ի
8 H չի՛ք Եսաւայ
9 E հարոյր
10 H արամբ
11 E զվարձն
12 E չի՛ք եւ
13 E ձեռն
14 H երկուս
15 H անց
16 E ուր

1 E գիտ եկն

միայն նկարեցաւ¹ հրաշիւք ի բարձանց, եւ եղեւ յերկուս եկեղեցիս, որ ի² հրէից եւ հեթանոսաց, որ եւ միացաւ իսկ, եւ ցուպ ունելով զԽաչն³ էջ միայն ի դժոխս, եւ ել երկու բանակաւք՝ արդարաւք եւ մեղաւորաւք թափելով եւ զնոսա ի տանջանաց մինչեւ յաւրն դատաստանի⁴:

A 69ար, H 111բ-112ա

ՂԸ (ԿԳ)

ԼԲ. 10-25

1 Եւ զի⁴ երկչոտ է ազգ մարդկան իբրեւ զնապաստակ, որ եւ ի ճոխփմանէ⁵ ջուրց երկնչի, եւ մարդ⁶ երազաւք ի գիշերի, եւ ի տուընջեան, որ ի⁷ յորոտմանէ եւ ի շարժմանէ տարեր ինչ, եւ յուժգին ձայնէ:

2 Ապրեցոյ զիս, ասէ, Տէր Աստուած իմ յեսաւայ⁸ եղբար իմոյ⁹, գուցէ եկեալ հարկանիցէ մայր առ մանկանն (ԼԲ 11):

3 Միտք վասն մեղաց երկնչին¹⁰ ի տարածամ մահուանէ մարմնոյն: 4 Եւ Յակոբ զի այն ինչ աշակերտեալք¹¹ եին դատերքն հեթանոսաց եւ դեռաբողոք¹² տուեալ ի Տեառնէ¹³ տղայքն. ապա յիշեաց զոսպնաթանն, որով եառ զանդրանկութիւնն յագահէ անտի. եւ ի բուռն առնու զսովորական առաքինութիւնն, զխոնարհութիւնն, զխոստացեալ աստուծոյ տասնորդսն տայ փրկանս հաւատացեալ ժողովրդեանն իւրոյ¹⁴:

5 Եւ ստանա զնոսա Աստուծոյ, ի սուրբ կենդանիսն խառնէ զանսուրբսն զուղտսն եւ գէչսն՝ զանսրբութիւնն Եսաւայ նշանակելով, որ առեալ¹⁶ կանայս ի ծառայական ազգէն¹⁷ Քետայ ծառայեաց եւ ինքն որդոցն Յակոբայ որդաւքն իւրաւք՝ Դաւթի եւ Սողոմոնի եւ այլոց թագաւորացն հարկատրութեամբ¹⁸, որք տերեցին¹⁹ բեռնակրութեամբ զնոսա²⁰ մինչեւ ի գերութեանն ժամանակն: 6 Եւ զի հպարտ սիրտ լաւ համարի զխաւս խոնարհութեան քան զպատարագս, եւ զայն եւս յաւելու խրատս²¹ ծառայիցն տալով²², թէ²³ ի հարցանելն Եսաւայ²⁴ ասել թե պատարագ է Յակոբայ, զոր առաքեաց տեառն իւրում Եսաւայ եւ ծառայ քո Յակոբ գայ զկնի (ԼԲ 18-19): 7 Զոր տեսեալ Եսաւայ զչուս խաչանցն եւ լուեալ եւ զբանս տարողացն՝ թափին թոյնքն ի թովչացն եւ կակղանայ խիստ բարքն, եւ այն աւր ոչ տեսանէ զՅակոբ, այլ զուարճանայ չորս հարիւրաւքն եւ կարաւտի տեսեան եղբաւրն:

8 Եւ Յակոբ զկանայսն եւ զտղայսն անցուցանէ ընդ հունն, որ կոչեցաւ Յակոբայ յայնմ աւրէ եւ զամեմայն ինչս իւր (ԼԲ 22-23):

9 Եւ մնաց Յակոբ²⁵ ինքն միայն, եւ մի գիշեր, եւ ահայ այր մի մատեալ եւ կալան զգաւտիս²⁶ իրերաց մինչեւ ցառաւատն (ԼԲ 24): 10 Կայր Յակոբ ի բանակն Աստուծոյ, որոյ զաւրապետն եկն առ նա՝ ո՛չ

1 H մկրտեցաւ փ/ս. նկարեցաւ
2 E չի՛ք ի
3 H գխայչն
4 A չի՛ք եւ զի
5 A ճոխփմանէ H ճխփմանէ
6 H չի՛ք մարդ
7 H որ ի A չի՛ք որ ի
8 H ասէ ի յեսաւայ
9 A եղբար է իմմէ
10 A երկնչի
11 H աշակերտեալ
12 H դեռաբողոք
13 A ի Տեառնէ տուեալ
14 H ժողովրդեանն A Աստուծոյ փ/ս. իւրոյ

15 A չի՛ք եւ ստանա... Աստուծոյ
16 H չի՛ք իւր
17 A չի՛ք ազգէն
18 A հարկատուութեամբ
19 H տերեցին (թերեւս՝ տիրեցին)
20 A զնոսա բեռնակրութեամբ
21 A խրատ
22 A տալով ծառայիցն
23 A ասել Եսաւայ փ/ս. թէ
24 A չի՛ք Եսաւայ ասել
25 H չի՛ք Յակոբ
26 H զգաւտի

յերազի եւ ի քուն, այլ ի զգաստութեան¹, թերեւս յաղաւթաւ պնդեալ գաւտեաւ, զոր Յորայ ասէր Աստուած՝ Պնդեա՛ իբրեւ այր զմէջ քո՞: 11 Մարդացաւ մարմնով անմարմինն, որպէս առ Աբրաամ, անդ՝ վասն տալոյ զաւակ եւ աստ՝ վասն աւրհնելոյ²: 12 Ասեն թէ՞³ զպատկերն եւ զոյժն⁴ Եսաւայ զգեցաւ⁵ Տէրն, զի կրթեսցէ զնա եւ ցուցցէ, թե այնչափ է զաւրութիւն նորա, զի մի երկիցէ իբրեւ զաւրացեալ: 13 Ի քրտան կայր Յակոբ, բուռն⁶ եհար եւ ճմլեաց զգիտս⁶ նորա՝ յիշեցուցանելով նմա, որ ի ծնընդեանն ժամն⁷ կալաւ, զգիտէն⁸ Եսաւայ: 14 Եւ յերիտասարդութեանդ, ասէ, ընդէ՞ր երկնչիս⁹:

A 69բ-70ա, H 112աբ

ՂԹ (ԿԵ)

ԼԲ. 30-ԼԵ. 4

1 Եւ կոչեաց զանուն տեղոյն տեսիլ Աստուծոյ (ԼԲ՝ 30), եւ զկնի՝ Պաղեստին, որ է գաւտեմարտութիւն, որով կոչի ամենայն երկիրն: 2 Տեսի, ասէ զԱստուած եւ ապրեցաւ անձն իմ (ԼԲ՝ 30*) զիտէ նախ քան զասելն առ Մովսէս, թէ՛ ոչ ոք է որ տեսանէ զերեսս իմ եւ ապրէ՞՞ ազդելով ի մեզ զերեւումն Յիսուսի Աստուծոյ, խնայելով ի մեզ կեցուցանէ զմեռեալս:

3 Սակայն զնայր եւ կաղայր անողջանալի եւ անգաւ խիղճ ի միտս զաւակաց նորա՝ չուտել զմուկն ազդերն, ուստի ձգի ամողջիլն, յիշատակ ունելով զԱստուծոյ երեւումն առ հայրն: 4 Եւ ծագեաց նմա

արեւ ի ծածկիլն յաչաց նորա՝ իմանալի արեգականն:

5 Զաչս ի վեր ամբարձ^a եւ ետես զԵսաւ, զի գայր եւ չորս հարիւրր այր ընդ նմա (ԼԳ՝ 1). Աչք իմաստնոյն յամենայն ժամ վեր ամբարձէ. ուր Տէրն իւր անդ եւ հայեցուածն իւր, ընդ որում գործք եւ միտք եւ մարմին ի շարժմանն իւրում: 6 Եւ Յակոբ որպէս զչուրնծայիցն կարգեաց, նոյնպես եւ զկանայսն եւ զորդիսն, եւ ինքն եանց յառաջ եւ եւթ անգամ երկիր պագաներ^a:

7 Զմանկութեան⁹ արուեստն ի կիր առնու թեպետ եւ Իսրայէլ կոչեցաւ, գործ զՅակոբայ¹⁰ գործէ. նախ քան զգիրն¹¹ կատարէ զգրեալն, թե¹² մի՛ յաղթիր ի չարէ, այլ յաղթեա բարեաւն չարին, քաղցեալ թշնամւոյն՝ հացիւ եւ ջրով, եւ փառասիրին¹³՝ երկրպագութեամբ, ¹⁴զոր ինքն կամիցի: 8 Ո՞ք ի մարդկանէ թագաւորի եւ¹⁵ կամ իշխանի եւթն անգամ երկիր պագանէ՛ եւ ոչ ոք, վասն որոյ դիւրին էր Աստուծոյ յոչընչէ զերկինս եւ զերկիր առնել՝ քան զապստամբ ոք աշակերտել ճշմարտութեանն, զոր Յակոբ ի վեց ծուներն¹⁶ զվեցաւրեա գոյսս Աստուծոյ նուիրեաց զիւրն եւ յեւթն զապրստամբ միտսն եած ի հնազանդութիւն երկեղին Աստուծոյ: 9 Խանդաղատեալ եւ¹⁷ լային ի պարանոց միմեանց, եւ մատեան իւրքն եւ երկիր պագին վարդապետեալք ի նմանէ: 10 Եւ եղեւ Տեառն բանն որ ասէր. Երանի հեզոց զի նոքա ժառանգեսցէն զերկիրէ,

1 H սգաստութեան
 * Յ.թ. ԼԲ. 3. Խ 2
 2 A աւգնելոյ
 3 A չի՛ք թէ
 4 A գումն
 5 H սգեցաւ
 6 A զիստ
 7 A ժամանակի
 8 A զգստէն
 * Եւ. Լ.Գ. 20

9 H զմանկութիւն
 10 H Յակոբու
 11 A զգրելն
 12 A զգիրն փիս. զգրեալն, թէ
 13 A փառասիրին, գոր կամիցի
 14 A չի՛ք գոր ... կամիցի
 15 A չի՛ք եւ
 16 H ծուներ
 17 A չի՛ք եւ
 Է՝ Մ.թ.թ. Լ. 5

զորոց զտուրսն յԱստուած ապսպարէ՜ յո-
ղորմածն, յորում ոչ ոք կարէ ասել կալ²
հակառակ, եւ զի ուսցի վայրենամիտն
զնոյնն ասել:

11 Եւ յապաղեալ զգնալն ի միասին
Յակոբայ եւ զբերան գազանին լցեալ շաղ-
ղով յուղարկէ գնա եւ ինքն չուէ ի խո-
րանսն, զորս ինքն կոչէ եւ առնէ դադարս
խաշանցն, զի պանդուխտ է ամենայն ոք ի
հոյժստ տրտմութեան:

12 Ապա գա ի Սաղիմ, որ է խաղաղու-
թիւն եւ գնէ անդաստան ճ՝ (100) որոջի, եւ
շինէ սեղան եւ կարդա Աստուած Իսրայէլի
(ԼԳ՝ 18~20): 13 Աբրաամ գերեզմանս
գնեաց եւ Յակոբ՝ իւրն եւ Աստուծոյ տե-
ղի³ ի միասին՝ գիտելով, եթե Աստուած
պանդխտակից է աւտարաց, եւ համարձա-
կեալ կոչեաց ի վերայ սեղանոյն զԱս-
տուած, զի⁴ ի վերայ անուանն, զոր էառ
պարգեւս յԱստուծոյ, աստի սկսեալ կոչի
միշտ Աստուած Իսրայէլի, եւ յայնր սեղա-
նոյ պատարագ անարիւն մատուցանէր
միշտ զաղաւթսն:

14 Սակայն յառներ փորձութիւն, որ-
պէս ի յառաջին կուսէն որ եղեւ պատճառ
մահու բոլոր աշխարհիս⁵. զնոյն արար եւ
Դինա, դուստրն Յակոբայ, զոր քնքշա-
նաւք պահէր ի սենեկի, իբրեւ Ադամ գեւա
ի դրախտին, որ էլ ընդ ձեռն Ադամայ իբ-
րեւ զմի⁶ յանբան կենդանեացն, եւ Դինա ի
դատերաց քաղաքին ի տեսութիւն⁷. եւ
գայթակղեցան⁸ երկոքեան⁹:

1 H ապրսուարե
2 A չիբ կալ
3 A չիբի
4 A չիբ զի
5 A աշխարհի
6 A ի գնին փ/ս. իբրեւ զմի
7 A չիբի տեսութիւն
8 H գայթագղեցան
9 A երկոքին

15 Զի¹⁰ չիք բարի որ չիցէ արարեալ
Տէրն¹¹. եւ չիք չարիք¹², որ ոչ գուցէ¹³ ի
նմա մասն սատանայի որ եւ աստ ջանա-
ցաւ խնամութեամբ խառնել զազգն աւրհ-
նեալ ընդ անիծեալ ազգն Քանանու եւ
ծածկել¹⁴ զաւրհնութիւնն պատճառանաւք
սիրոյ ի ձեռն Եմովրա, որդոյ Սիւքիմայ¹⁵,
որ պղծեաց զԴինա դուստրն Յակոբայ,
զոր լուեալ Յակոբայ լուեաց մինչեւ եկին
որդիք նորա ի խաշանց: 16 Զոր իբրեւ
լուան ստրջացան, խոցեցան, զղջացան¹⁶,
զի իջին առ սահմանաւք նոցա: 17 Եւ ոչ
վճարի խաղաղութեամբ սկսեալ զործն
պղծութեան¹⁷. վասն որոյ ի խնդրել զաղ-
ջիկն նենգութեամբ տան պատասխանին,
գիտելով թե չէն¹⁸ բաւական յայտնապէս
պատերազմիլ¹⁹ ընդ նոսա, թե ոչ արկցեն
զնոսա ի թարփ²⁰ եւ ի ցաւ²¹ թլփատու-
թեան, զորս²² խաբեալ²³ հաւանին առ հա-
սարակ՝ ի կարողացն ելանել ընդ դուռն
քաղաքին, ի տղայոցն²⁴՝ մինչեւ²⁵ յա-
ւազսն²⁶, եւ թլփատին:

18 Եւ կոտորեցին Շմաւոն եւ Ղեւի
զամենայն արու եւ առին զամենայն ինչս
եւ զԴինա ի տանէն Սիւքիմա եւ գնացին:

19 Աստուած հրամայեաց Աբրաամու²⁷
թլփատել եւ զատչիլ²⁸ ի Քանանացւոցն,

10 A չիբ Զի
11 A Տեառն
12 A բարի փ/ս. չարիք
13 A չիցէ փ/ս. ոչ գուցէ
14 H ծածկեալ
15 A Սիւքիմա որդոյ Եմովրա
16 A չիբ խոցեցան, զղջացան
17 H պղծութիւն
18 A չէ
19 A պատերազմել
20 A չիբ ի թարփ եւ
21 A ցաւ
22 A զոր
23 H խաբել
24 H տղայոցն
25 H մինչ
26 A ցաւագսն
27 A չիբ Աբրաամու
28 A զատչել

զիա՞րդ մարթ էր մարդկան խառնել զինքն ընդ¹ նոսա, զի² ընդ դէմ Աստուծոյ նախ մեղան զՍարային ոչ յիշելով յԵգիպտոս³ եւ ի տան Աբիմելեքայ եւ ապա թլփատեցան ոչ յուսալով յԱստուած, այլ՝ ախտիւ: 20 Վասն որոյ մեծացան ցաւք թլփատելոցն առաւել⁴ քան զսովորականն, յԱստուծոյ, զի⁵ լուիցեն թիկամբքն զոր ոչ լուան ականջաւքն, թոյլ տալով Աստուծոյ. ապայ ընդէ՞ր անէծ Յակոբ, զՇմաւոն եւ զՂեւի. ո՛չ զնոսա անէծ, այլ՝ զցասումն նոցա, որ ի սատանայէ էր, որ ետ գործել զայն, որ զնշանն կենաց թլփատութեան⁶ նշան մահու ետ առնել պատճառաւ:

21 Հրշտակ Աստուծոյ բարի է⁷, բայց չար կոչի⁸ ի չարչարելն զոք: 22 Սիմոն կախարդ զգրոշմն⁹ կենաց եառ եւ ոչ թե կեանքն նմա¹⁰ պատճառ եղել¹¹ մահու, այլ գործն իւր¹² անաւրէն նոյնպէս ոչ թէ թլփատութիւնն եղեւ պատճառ մահու նոցա, այլ գործքն իւրեանց չարութեան¹³, զի ոչ խրատեցին զորդիս իւրեանց՝ մի շրջել անառակ ցանկութեամբ¹⁴ վասն¹⁵ զի այն գործ էր նոցա ապականել զաղջկունս¹⁶ ի բացեայ, զորս ¹⁷ատէ բարեբունն Աստուած՝ Ի խորհուրդս նոցա, ասէ, ոչ հաճեցաւ անձն իմ (ԽԹ 6): 23 Արդ¹⁸, ոչ Աս-

տուած եւ ոչ Յակոբ էր¹⁹ պատճառ մահու նոցա²⁰, այլ անձնիշխան կամքն նոցա²¹, զոր զինքն²² մահու արժանի առնէ՝ նա է պատճառ եւ ոչ որ զվրէժ չարին պահանջէ: 24 Զի²³ ոչ Փենեհեզ էր պատճառ մահուն Զամբրեա, որ գովեցաւ²⁴, այլ՝ ինքն իսկ: 25 Եւ զի զայրացաւ Յակոբ եւ սաստեաց որդեացն²⁵, զի խաղաղական էր եւ պատճառ բարոյ կամէր լինել ամենայն ուրէք, որպէս եւ տանն Լաբանու, սակայն անդադար գոչէր առ Աստուած՝ ոչ համարել²⁶ որդւոցն զայն ի մեղս, եւ չառնել զնա ատելի բնակչաց երկրին, եւ զի իցէ Աստուած ընդ սակաւաւորսն:

26 Որում պատասխանի ետ Աստուած եւ ասէ՝ Ել ի Բեթէլ (Լ, Ե 1) եւ զի²⁷ մաւտ է ի Սիւքիմ²⁸ ի Բեթէլ²⁹. ոչ փախուցանէ զնա, որ կարողն է, ամենայն ուրեք փրկել եւ³⁰ պահել իբրեւ³¹ յերկինս անահս եւ անհոգս, այլ զի մի մտցեն ի թափուր քաղաքն եւ ախտակից լիցին եւ մեղաց կցորդ երկրին³² Քանանու, այլ ասէ ցնա³³, թե երկնչիս³⁴ ի տուն Աստուծոյ զնա³⁵՝ յիւղեալ յարձանն³⁶, զոր կանգնեցեր եւ անդ տե՛ս զսեղանն՝ զսանդուղքն³⁷ եւ զՏէր կանգնեալ ի գլուխ նորա, եւ հրեշտակք իջանեն առ քեզ եւ պատուիս անխոռով:

1 A ի փխ. ընդ
2 A չի՛ք զի
3 H ի յեգիպտոս
4 A չի՛ք առաւել
5 A գոր փխ. յԱստուծոյ, զի
6 A զթլփատութիւնն
7 H չի՛ք է
8 H կոչի չար
9 H դրոշմն
10 A չի՛ք նմա
11 A եղել նմա
12 A իւրեանց փխ. իւր անաւրէն
13 A չի՛ք նոյնպէս... չարութեան
14 H չարութեամբ փխ. ցանգութեամբ
15 A չի՛ք վասն
16 H զաղջկունս
17 A սաստէ ... Աստուծոյ փխ. ատէ ... Աստուած
18 A չի՛ք Արդ

19 A էր նոցա
20 A չի՛ք նոցա
21 A իւրեանց փխ. նոցա
22 H որ ինքն
23 A չի՛ք Զի
24 A չի՛ք որ գովեցաւ
25 A որդւոցն
26 A չի՛ք պատճառ փխ. ոչ համարել
27 A չի՛ք եւ զի
28 A Սիւքիմ (չի՛ք ի)
29 A Բեթէլ
30 A չի՛ք փրկել եւ
31 A իբր
32 A չի՛ք երկրին
33 A չի՛ք ցնա
34 H երկնչիցի (չի՛ք ի)
35 H չի՛ք Աստուծոյ գնա
36 H յուղէ արձանն
37 A չի՛ք զսեղանն H սանդուղսն

27 Եւ իբրեւ չոգան ասէ Յակոբ. Ի բաց անէֆ զաստուածսդ (ԼԵ 2): 28 Զահաւորութիւն տեղոյն ուսուցանէ կանանցն եւ մանգանցն:

29 Եւ զահի հարաւ եւ ի բաց ետուն զհանդերձս եւ զգիւնդս եւ զպարանջանս, յորս նկարեալ էր պատկերս ինչ իբր ի տան հեթանոսի ի տանն Ղաբանու^ա եւ Ռաքել՝ զկուռս հաւր իւրոյ^բ, եւ կորոյս զնոսա Յակոբ ի ներքոյ բեւեկնոյն (ԼԵ 4): 30 Եւ ել Յակոբ ի Սիւքիմայ, որ նկարեցաւ խորհուրդ Տեառն իւրոյ, որ գնելոց էր զաշխարհ իւրով արեամբն, որպէս նա՝ զիւր տուեալ երկիրն յԱստուծոյ: 31 Եւ անկաւ աս յԱստուծոյ ի վերայ բնակչաց աշխարհին, եւ ոչ ելին զկնի Յակոբայ, զի երկնաձեւ եղեն ամենայն տունն Յակոբայ իբրեւ զհրեշտակս^ա:

A 70բ-72ա, H 113ա-115ա

Ճ (ԿՁ)

ԼԵ. 11-ԼՂ. 26

1 Զի եւ¹ ինքն Յակոբ լերկ էր, եւ մերկացաւ ի պաճուճանաց ամենայն տուն նորա զորս եւ կուռս կոչեաց Յակոբ զզարդան², զոր եւ յայսմ ժամանակի յուրովք պճնին իբրեւ զկուռս, եւ ոչ ոք է որ ասէ՝ ի բաց առէք զկուռսդ³:

2 Իսկ դայեակն Ռեբեկա՝ Դեբովրա⁴, թերեւս մնացեալ էր⁵ անդէն ի հարսնութեանն Ռեբեկա, անուն Դեբովրա⁶ գայր ընդ Յակոբայ տեսանել զնա, որ⁷ եւ ոչ ժամանել⁸ մեռաներ ի Բեթէլ⁹, եւ լիներ այն առաջին սուգ նոցա եւ կոչեցաւ կաղնի սգոյ (ԼԵ 8), ուր թաղեցաւ, աշխատելով

զհասանելն առ սանն իւր եւ սնունդն: 3 Զորոյ¹⁰ զսուգն մխիթարեաց Աստուած երեւամբն եւ աւրհնելովն կրկնելով զԻսրայէլ անունն ի տուրնջեան, ուր կոչեցաւ զառաջին, ոչ այսպէս յայտնի, եւ ասաց:

4 Եւ եմ Աստուած քո բաւական (ԼԵ 11), յայինքն՝ յամենայնի հարստութիւն եւ ամբողջութիւն եւ քաղաք եւ մարտակից եւ աշխարհ եւ երկրին¹¹ կեանք եւ անմահութիւն:

5 Անեսչիր եւ թագաւորք ի քեզ ելցեն (ԼԵ 11*). ոչ միայն ի Յուդայէ եւ յԵփրեմէ, այլ եւ՝ Քրիստոսէ¹² ¹³եւ յանդամոյ նորա առաքեալքն եւ ի նոցանէ՝ աշակերտեալ թագաւորքն քրիստոնէից:

6 Եւ կանգնեաց արձան (ԼԵ 14) եւ արկ իւղ, թերեւս թե նորոգեաց զառաջինն իբրեւ զնախածանաւթ, եւ զփորձ զաւրութիւն եւ զպատճառ յաջողման, զոր ասեն եղեալ կափարիչ դրան աստուածընդալ գերեզմանին: 7 Եւ չուեալ անդի եւ մերձ եղեւ¹⁴ ի Քափրաթա երկիր, որ կոչեցաւ ի կնոջն Քաղէբա, զոր ետու ի հեթանոսաց զկնի մահուանն Գազուբանա առաջին կնոջն, եւ կոչեաց զերկիրն յանուն նորա Քափրաթա: 8 Որ¹⁵ եւ զկնի՝ պարգեալ ասի Եփրաթա, որ է բացումն: 9 Եւ ծնեալ ի նմանէ որդի կոչեաց զանունն¹⁶ Բեղդէմ¹⁷, եւ յանուն նորա շինեցաւ Բեղդէմ, որ է տուն հացի, ուր եւ¹⁸ մեռաւ Ռաքել ի ծնունդն¹⁹ զոր եւ կոչեաց որդի վշտաց (ԼԵ 18), զի վշտացեալ մայրն յերկուսս ի ծնանելն զնա յաշխարհ, ո՛չ փարատեցաւ վիշտն նորա խնդութեամբ, զի մեռաւ:

1 H չիֆ եւ

2 H զզարդերսն

3 H զկուռսս

4 H չիֆ Դեբովրա

5 A չիֆ էր

6 A չիֆ անուն Դեբովրա

7 H չիֆ որ

8 A չժամանել փիս. ոչ ժամանել

9 A Բեղել (այսպէս եւ այլուր)

10 A Յորոյ

11 H երկիրն

12 A Քրիստոս

13 A չիֆ եւ ... առաքեալքն

14 A եղեալ

15 A չիֆ որ

16 A չիֆ գանունն

17 H Բեղդաւմ (այսպէս եւ այլուր)

18 A չիֆ եւ

19 A ծնունդն

10 Եւ հայրն կոչեաց Բենիամին (1Լ 18), որդի աջոյ, որ է ցուպ ծերութեան եւ մխիթարութիւն մնացեալ ի մաւրէն լրումն երկոյտասան թուոյն:

11 Քանզի տեսանէր հոգևով անդ բացեալ դուռն փրկութեան աշխարհի եւ հաց ի յերկնից իջեալ զՈրդին Աստուծոյ, ի Մարիամայ, ի դստերէն Ռաքելա՝ ծնեալ անվիշտ եւ առանց ցաւոց, որ սրբեաց զարտասուան Ռաքելի, որ լայր զմահ իւր եւ զորդիան, զոր կոտորեաց Հերովդէս¹, որ թեպետ որդիք նորա կոչեցան, այլ ոչ էին ի ծնընդոց նորայ, այլ յազգէն Յուդա, որք զրկանաւք առին ի Բենիամենէ քառասուն քաղաքս², յորոցն³ եւ⁴ մի էր Բեդղէէմ:

12 Վասն որոյ եւ⁵ ոչ կամէր մխիթարել, զի ոչ նորա եին բնակեալ ազգ, որ լեալ եին ի ծնընդոց նորայ, մինչ մայրն լուսոյ զԱստուած ծնանելով, մերձ առ շիրմին նորա եւ ի ձեռն Պաղոսի առաքելոյն դադարեցոյց զձայն լալոյ նորա յԵրուսաղեմէ մինչ եւ ի Լիւրիկոն⁶, ծնանելով Աստուծոյ⁷ յորդեգրութիւն Աստուծոյ⁸, եւ ի թուռուս Ռաքելայ⁹ գյուղովս նուիրելով արեամբ վկայս¹⁰ Քրիստոսի Աստուծոյ, զոր իմացեալ Յակոբայ ոչ արար սուգ եւ կոծ ի վերայ նորա՝ քաջապինդն ի հաւատս եւ աւրհնեալն ի կանայս, որ կորոյս զաստուածան Միջագետաց եւ եարկ հիմն ուղղադաւան¹¹ բարեպաշտութեան, գառն, անմեղ նուերն Տեառն ի հոտ անուշից:

13 Այլ Ռոբէն նախծինն Յակոբայ վաղամեռ եղեւ հոգով սպանեալ զանձն ոչ

ինչ պակաս քան զԿային անդրանիկ սպանող Հաբելի:

14 Եւ չար թուեցաւ Յակոբայ (1Լ 22), որ էր պատկեր երկնաւոր Հաւրն, որոյ առաջի մեղաւ՝ լինելով ընդ հարձի հաւրն:

15 Եւ աստ թուեցան որդիքն Իսրայէլի երկոյտասան՝ ո՛չ որոշելով զազախնորդիսն յազատորդեացն, որպէս եւ ոչ ծնունդք աւագանին՝ երիցութեամբ¹² եւ կրսերութեամբ, կամ պատուաւք¹³ եւ փառաւք իշխանացն եւ իշխեցելոց¹⁴, զի ամենեքեան¹⁵ ի Քրիստոս Յիսուս¹⁶ մի են, անորիչ:

16 Եւ եկն Յակոբ առ Իսահակ հայր իւր ի Մամբրէ ի քաղաք դաշտին, այն է՝ Քեբրոն, ուր պնդիտեցաւ Աքրաամ եւ Իսահակ (1Լ 27) նմանատիպ Տեառն իւրոյ, որ եկն առ զեկեղեցի եւ դարձաւ առ Հայր իւր խնդութեամբ երկնաւոր զուարթնոցս, ի գիւտս դրամին: 17 Որ եւ տեսեալ զորդիս որդւոյն եւ բարեբախտիկ եղեալ մեռանի հարիւր եւ ութսուն ամաց¹⁷ (1Լ 28):

18 Հարիւրն զկատարելութիւն նորա քարոզէ եւ ութսունն¹⁸՝ զսրբութիւնն, զի նուէր Աստուծոյ էր, ծերութեամբն ի ծայր ամենայն բարութեանցն¹⁹ ելեալ, լցեալ առաքինութեամբ զաւուրսն²⁰ իւր անթերի, զոր հաշտութեամբ եւ սիրով առ միմեանս թաղեն Նսաւ եւ Յակոբ որդիք իւր:

19 Եւ զամենայն ինչս Իսահակա ժառանգեաց Յակոբ իբրեւ զանդրանիկ եւ ի մաւրէն սիրեցեալ, Նսաւ գնաց ի նմանէ յաղթահարեալ²¹: 20 Եւ զի յայտնեցան

1 H Հերովդէս
2 A քաղաք
3 H յորոցնցն փ/ս. յորոցն
4 A չի՞ եւ
5 A չի՞ եւ
6 H միւնչեւ (A միւնչ) ցԼուրիկէ փ/ս. ի Լիւրիկոն
7 H չի՞ ծնանելով Աստուծոյ
8 A չի՞ Աստուծոյ
9 H ըմբաբեալ
10 H վկայ
11 H ուղիղ եղան փ/ս. ուղղադաւան

12 H իրիցութեամբ
13 A պատուով
14 A իշխելոց
15 H ամենիքեան
16 A մի են ի Քրիստոս Յիսուս փ/ս. ի Քրիստոս ... մի են
17 A ձԶ
18 A ութ տասն
19 H բարացն փ/ս. բարութեանցն
20 A զաւուրս
21 H յախթահարեալ

սկսբունք¹ աստեղաց, թուէ եւ զնահապետս աւագոյն զորդիսն Եսաւա որ ասացաւ յաւեփսն, քանզի եւ² ոմանք ի նոցանէ աստեղք են, իբրեւ³ զ[Յ]որ, զորդի⁴ Զարեհի, որդւոյ Ռաքուէլի, որդւոյ Եսաւայ, ի կնոջէ Մայեղեթայ ի դստերէ⁵ Իսմայելի⁶:

21 Եղիփազ եւ Սոփար՝ բարեկամք Յոբայ եւ երկիւղածք ի Տեառնէ, որպէս^a եւ յաստեղաց անդի ծանրացեալ մեղաւք իջին ի խոնարհ^b: 22 Սակայն Դաւիթ արքայն ծառայեցոյց նախ քան զինքեանս թագաւորեալ որդիսն Իսաւայ, եւ Յեսուկոտորեաց զԱմադեկ Հարճորդին Եսաւայ եւ զկնի Սաւուղ՝ զյոյովս: 23 Իսկ որդիքն Սէիրայ Քոռեցոյ ոչ են ի ծննդոց Եսաւայ, այլ կարծեմ թե ի ծննդոցն Քամայ՝ առաջին բնակիչք լերինն Սէիրայ, զորս կոտորեցին որդիքն Եսաւա եւ ինքեանք բնակեցին ի Սէիր, որպէս ասէ զայս յերկրորդ արէնսն:

24 Իսկ թագաւորքն, որ թագաւորեցին յԵդոմ, յորդուցն Եսաւայ են, յորոց եւ Յոր եւ իշխանքն, որ յետ նոցա:

25 Վճարեալ զիրս աւագոյն գայ ի Յակոբ, որ բնակէր ի տեղի պանդխտութեան Հարցն, յայտ է, զի Եսաւեանքն իբրեւ զսեփհական ունելով զՍէիր խնդութեամբ եւ հեշտութեամբ կային յուսահատք յառաւելագոյն բարեաց. իսկ Յակոբ զհետս ոտից Հարցն պահելով տառապանաւք կեայր՝ ակն ունելով աւետեացն Աստուծոյ եւ արհնութեան Հարցն:

26 Եւ այս են, ասէ, ծնունդի Յակոբայ (ԼԷ 2): 27 Եւ զՅովսեփ միայն յիշէ, զնելով ի տեղի երիցուն Ռուբենի Հարագատ որդի Հաւրն, որ իբրեւ զնա անցանէ ընդ

եռանդն փորձութեան եւ առաւելագոյն եւս գտանի փորձանք սորա եւ պատիւ փառաց վասն Համբերութեան իւրոյ: 28 Եաւթն եւ տասն ամաց էր եւ ընդ եղբարսն արածէր խաչն եւ բերէին Համբաւ չար զնմանէ, որպէս թե ուտէ եւ վաճառէ զոչխարսն, զոր ինքեանք առնեին եւ կասկածեին պատմել Հաւրն, եւ ատեին զնա: 29 Այլ Հայրն սիրէր զնա քան զամենայն որդիսն, եւ արար նմա պատմուճան ծաղկեա անդրանկան իբրեւ յանցեալ Ռուբեն, որպէս ունէր Եսաւ:

30 Երազ ետես Յովսեփ եւ պատմեաց եղբարցն (ԼԷ 5): 31 Կարծէր թէ այնուհանէ զոխսն, զոր ունեին, վասն սիրելոյն զնա Հաւրն եւ վասն ծաղկեա պատմուճանին, զոր այլք Թեզանեայ ասեն եւ երբայեցին՝ նկարեն:

32 Որայ կապեաք. այս միաբանութեան նշան: 33 Կանգնեցաւ որայն իմ. այս իշխանութեան գուշակ:

34 Երկիր պագին ձերքն. ծառայութեան ձեւ: 35 Եւ ասեն միթե թագաւորես եւ տիրես եւ մեք դամք եւ երկիր պագանեմք: 36 Եւ Հաւելին զատելն՝ եթե դուք այդպէս մեկնեցէք, նմա, ընդէ՞ր մեղադրէք, զի նա երազ ասաց եւ ոչ թագաւորութիւն:

37 Միւս երազ ետես եւ պատմեաց Հաւրն. թերեւս յայլ դէմս շրջեսցէ եւ փարատի նախանձ եղբարցն. Արեգակն եւ լուսին եւ մետասան աստեղք երկիր պագանեին (ԼԷ 9): 38 Եւ աստեաց Հայրն խնդալով ի սրտի եւ ասաց. Միթե մայր քո եւ ես եւ եղբարք քո գամք եւ երկիր պագանեմք (ԼԷ 10): 39 Յերկինս եհան զինքեանս յիշելով զուխտն աստուծոյ, զի խնդասցեն եղբարքն: 40 Եւ նոքա յաւելին ատել զնա, սակայն հայրն շտեմարանեաց զբանն (ԼԷ 11): 41 Յետ աւուրց կարծեաց Հայրն մոռանալ զբան երազոյն եղբարցն

1 A սկզբունք

2 A որպէս փ/ս. իբրեւ

3 A որդի

4 A Ռաքուէլի

5 A դստեր փ/ս. ի դստերէ

եւ ասէ ցՅովսէփ. Երթ, տե՛ս գեղբարսն քո եւ զխաչինսն (ԼԼ 14):

42 Իսկ նա թեպետ գիտէր զչարու-
թիւնն նոցա, այլ ոչ կարէր ընդդէմ ասել
հաւրն, մահն ընդդէմ քան զանհնազան-
դութիւնն: 43 Վասն որոյ եւ ի գնալն բազ-
մացան խորհուրդքն եւ մոլորեցաւ, մինչ
այրն ցոր եհարց` եսծ զնա ի յուշ եւ ի ճա-
նապարհ, ընդ որ գնացեալ եգիտ գնոսա:

44 Որ ի հեռաստանէ տեսեալ զնա ասէն.
Հը՛, հը՛ երագատեսն գայ, սպանցուի գնա եւ
ընկեսցուի ի գուր (ԼԼ 20) եւ երկրպագեն
նմա վէմք հարուածովք եւ արեգակն եւ
լուսին խաւարեսցին ի վերայ նորա:
45 Բայց Ռոբէն ջանայ բժըշկել զհա-
րուածս հարճին:

46 Մի հարցուի գնա (ԼԼ 21-22), ա-
սէ, եւ ոգեպարտ լիցուք: 47 Եւ ետ արկա-
նել զնա ի գուր, ո՛չ զի մեռցի, այլ զի կա-
րասցէ առ հայրն հասուցանել: 48 Մերկա-
ցին զպատմուծանն ծաղկեայ եւ արկին ի
գուր, եւ նստան ուտել հաց (ԼԼ 25). եւ
Ռոբէն տարաւ զխաչինսն յարածել:

49 Եւ ահա Իսմայելացիք ի մադիա-
նացոց գաւառէն գային, եւ ըստ բանին
Յուդայի, որ ողորբեաց մանաւանդ ըստ վե-
րին շնորհացն, վաճառեցին քսան դահե-
կանի:

50 Գաղ ի կտակն ասէ. «Ես եւ Շմա-
ւոն վաճառեցաք զՅովսէփ երեսուն դահե-
կանի եւ զտասն գաղտ պահեցաք» եւ¹ ասի
թե հոգի նախանձու սուր ետ ցՇմաւոն
սպանանել զՅովսէփ, Ռոբէն ի դառնալ ի
տուն, կամ թե վանապան էր, երբ վաճառե-
ցին:

51 Պատուեաց զպատմունանն իւր եւ
ասէ՝ պատանեակն չէ ի գուրն: 52 Զենին
ուր եւ քաթաւեցին արեամբ զպատմունանն
եւ առաքեցին առ հայրն եւ ասեն՝ գագան

չար եկեր գՅովսէփ (ԼԼ 29-33): 53 Ար-
դարեւ չար է նախանձն:

54 Եւ քուրճ զգեցաւ ի միջոյ իւր (ԼԼ
34). նախանձ եւ գազան բանսարկուին ե-
կեր զԱդամ եւ արար քրճագգածս զար-
դարսն զամենայն բազում աւուրս, մինչեւ
եկն Տէրն եւ դարձոյց սուգն յուրախու-
թիւնն:

55 Եւ ժողովեցան ուստերքն եւ
դստերքն եւ ոչ կարացին միխթարել գնա եւ
ասէ. Իջից սովին սգով առ որդին իմ ի
դժոխս (ԼԼ 35). ուր եւ Տէրն իսկ չոգաւ
բանական հոգևովն հանել զարդարսն ան-
տի:

56 Իսկ Մադիանացիքն վանառեցին
զՅովսէփ յեգիպտոս՝ Պետափրեայ ներքին-
ւոյ դահնապետի (ԼԼ 36) ճանապարհ առ-
նելով Յակոբայ անդ գնալոյ եւ Տեառն մե-
րոյ ի ժամ նախանձուն Հերովդի:

57 Ժամանակին յայնմիկ չոգաւ Յուդա
առ ոմն Ողորմացի եւ առ իւր կին
գղուստր առն Քանանացոյ (ԼԼ 1-2) եւ
ծնաւ ի նմանէ երիս որդիս՝ զԵր, զԱւնան,
զՍեղովմ:

58 Վատ եւ անարժան գործս գործեաց
Յուդա՝ առնու կին Քանանացի, որ եւ²
սնուցին զորդիսն իւրեանց սովորու-
թեամբն հեթանոսաց եւ նուիրեցին զառա-
ջինն դիւաց³, որում կին ամեալ զԹամար:

59 Եւ յերկրորդում⁴ աւուր հարսանեացն
սպան⁵ զնա Տէր եւ զկինն ետ եղբար նո-
րա, որ եւ հեթանոսական էր աւրէն, թե-
պէտ եւ⁶ Մովսես ժամանակ մի հրամայեաց
չահելով զնոսայ, որ եւ Հեղոյր գտերմն յեր-
կիր (ԼԼ 9), եւ պղծեր զերկիր: 60 Եւ չար
թուեցաւ յաչս Տեառն, որ եւ սպան⁷ զնա

2 A չիբ իւրեանց

3 A դիւաց գառաչինն

4 H յերկրորդ

5 H չիբ սպան

6 H որ փխ եւ

7 H սատակեաց (նորագոյն գրչութեամբ) փխ սպան

1 A չիբ եւ

Տէր (ԼԸ 9-10), զոր եւ ասեն, թե առաջինն նոյնպէս առնեք, զի մի ծնցի եւ թառամեսցի¹ գեղ երեսաց նորա:

61 Եւ Թամար հրամանաւ Յուդաի նստաւ ի տան հաւր իւրոյ այրի՝ պատճառելով տալ զնա Սեղովմայ, զի երկնչէր՝ մի² զուցէ թե եւ նա³ մեռանիցի (ԼԸ 11):

62 Իսկ ի մեռանել կնոջն Յուդայի⁴ միսիթարեցաւ եւ զնաց ի կտուրս խաշանց (ԼԸ 12): 63 Եւ լուեալ Թամար արկաւ տեռ, որ է կարմիր, եւ զարդարեցաւ եւ նստաւ յանցս Յուդայ: 64 Եւ եղեւ ընդ նմա՝ տուեալ նմա գրաւ գաւազան եւ գինդ եւ մատանի, եւ չոգաւ նստաւ այրութեան հանդերձին:

65 Եւ⁵ զի կաթոգին եղեն հեթանոսք ի սէր միոյ կենդանւոյն Աստուծոյ, որ առնուեալ էր ի վերայ միոյ ազգի: 66 Եւ զիմեցին առ նա Սոկրատեսն⁶ եւ Պդատոն, Քսենոփոն եւ Ամոն, եւ այլք, որք պարկեշտ վարս ստացեալք⁷ հաւատովք եւ իմաստասէր կամաւք եւ բանիւ մերձ եկին առ նա, հեռանալով⁸ ի կոոցն⁹: 67 Նոյնպէս եւ կանայք, լուեալ եթե գաւակ մի ծնելոց է ի մէջ հրէիցն, յորմէ աւրհնին ամնայն ազգք⁹ եւ վստահութիւն առեալ ի Յեսաւայ եւ ի Յուդայէ, զի առին կանայս ի Քանանացոց անդի, որ ընդ անիծիւք եին, եւ ի սուր եւ ի սատակումն եին հրաւիրեալք, վասն որոյ¹⁰ հաւատացին ի հասարակաց Աստուածն եւ ցանկացան գաւակին եւ աղբերն աւրհնութեան: 68 Յորոյ մին¹¹ եւ առաջին է Թամար, զորոյ

զարսն սպան Աստուած բարեսէրն եւ չարատեացն: 69 Լուեալ, եթե ուրեմեաւ գողացաւ Յակոբ զաւրհնութիւնն՝ արկաւ զիւրեաւ հանդերձս երեւելիս եւ հոգւովն զգեցեալ¹² զհաւատս՝ ո՛չ երկեաւ, եթե կամ ի ձայն կամ ի¹³ յերեսս ծանիցէ զնայ, եւ գողացաւ փոխանակ միոյն, զոր խնդրէր, երկուս: 70 Եւ ոչ մեղադրեցաւ վասն պոռնկութեանն¹⁴, զի հաւատ ի վեր է քան զկուսութիւն¹⁵:

71 Եւ զի առաքեաց Յուդա ուլ՝ առնուլ զգրաւն, որ թե զամենայն խաշն առաքեր՝ ոչ կարեր առնուլ¹⁵, դարձաւ եւ ասաց¹⁶ ցնա, թէ՛ ո՛չ գտի, եւ արբ տեղոյն ասացին՝ ոչ է աստ¹⁷ բնաւ¹⁸ բոզ¹⁸ (ԼԸ 22):

72 Մեծ եւ հաստատուն վկայութիւն Թամարայ, զի ոչ պղծութեան էր ցանկացեալ, որ դիւրին էր նմա ի տան եւ ի սենեկի¹⁹:

73 Եւ զի²⁰ ասաց՝ նմայ լիցի այն, ես ետու տանել, զի մի՛ ծաղր կացցուք, վասն զի փոքր էր գրաւն քան զխոստումն: 74 Երկնչեր եթե ծաղր առնեն զնա գաւազան փայտէ եւ մատանի երկաթի եւ գնդակալ եւ ոչ գինդ, որ սովոր էին ունել, որ դանկի միոյ է: 75 Եւ նա այր պատուաւոր եւ փեսայ քաղաքին Թաման:

76 Զկնի երից ամսոց ազդ եղեւ Յուդա, թէ պորընկեցաւ Թամար, եւ ասաց՝ հանեմ եւ այրեսցի (ԼԸ 24), բայց թէպէտ որ չէր եղեալ աւրէնք՝ բնութեամբ աւրինացն հրամաւեր: 77 Իբրեւ գիտաց Թամար եթէ ոչ առանձինն հարցանէ, առաքէ զգրաւն: 78 Եւ ասէ Յուդա. Արդարացեալ է նա քան զիս, զի ոչ ետու զնա Սելովմայ (ԼԸ 26)՝ կարծելով, եթէ նա է պատճառ

1 H չիբ եւ քառամեսցի

2 A չիբ մի H

3 չիբ թե եւ նա

4 A Յուդա

5 A չիբ եւ զի

6 H Սոկրատ

7 H ստացեալ

8 A հեռացեալք

9 H ազգ

10 A չիբ վասն որոյ

11 A մի

12 H սգեցեալ

13 A չիբ ի

14 H պորընկութեան

15 A ոչ առնոյր փիս. ոչ կարեր առնուլ

16 A ասէ

17 A չիբ աստ

18 A բնաւ աստ

մահու որդոց իւրոց արդ, զի յղացաւ յայտ է, զի որդիքն ոչ տաին նմա զպարտան, այլ եւ նա արդար է, զի ես վասն ախտի ցանգուլթեան իբր առ բող մտի եւ նա հաւատովք զինեցաւ վասն արմատոյն Աբրաամու, առնուլ շառաւեղ ի նմանէ: 79 Եւ յիրաւի դատապարտեաց զինքն, այլ զի իբրեւ զՂովտն խաբեցաւ, եւ մի է երկուցն թողուլթիւն, զի անգիտացն յոյս ողորմութիւն Աստուծոյ է խաբելոյ յայտնեցան երեքն զբաւականք եւ ապրեցան երեքն, Թամար եւ Չարայ եւ Փարէս: 80 Գաւազան՝ խաչն, մատանին՝ դրոշմ աւազանին, գինդն՝ լուր աւետարանին, հոգի մարմին՝ միտք յանուն Հաւր՝ եւ որդւոյ եւ հոգոյն սրբոյ փրկեալք^a:

A 72ա-74ա, H 115ա-119ա

ՀԱ. (ԿԷ)

ԼԸ. 28-ԼԹ. 20

1 Եւ¹ ի ժամ ծննդեանն, զի երկու երն, ոմն ի ձեռս² կարծեր երիցուցանել զնա եւ չաւգտեաց ինչ, զի Յակոբ զգարչապարն Եսաւայ բռնեաց եւ Փարէս՝ զբազուկ եղբաւրն եւ³ անդրէն քարչեաց եւ ինքն էլ, եւ կոչեցաւ Փարէս՝ սահմանափոխ, խրամատիլ: 2 Իսկ Չարա ծագումն, որ նախ երեւեցոյց զձեռն. Հինգ մատն՝ Հինգ նահապետքն որ նախ հաւատով եւ ծագեցին եւ ամփոփեալ եկին թլփաթեալքն մտեալ Հրեուլթիւնն. խրամատեցաւ կոչումն Հեթանոսաց հաւատով, մինչեւ եկն Տէրն, ծագեցաւ արեգակն արդարութեան երկիւղածաց⁴ Հեթանոսաց: 3 Բոյր էր Թամար Ռաքէլի. նա զԱստուածսն⁵ Հեթանոսաց գողացաւ եւ թագոյց⁶ եւ Թամար՝ զԱս-

տուածն միայն կարծեցեալ Հրէից⁷ Փարէսիւ եւ⁸ բաշխեաց ամենայն Հեթանոսաց, զի թագաւորեաց Աստուած ի վերայ Հեթանոսաց, զոր Մատթէոս աւետարանեաց Հրէից եւ Ղուկաս՝ Հեթանոսաց՝ յԱդամ եւ յԱստուած տարեալ զբանն: 4 Եւ ընդ չորս կողմանս⁹ աշխարհիս քարոզեալ¹⁰:

5 Իսկ Յովսէփ մտեալ ի տուն Պետափրեա, որ լի էր չարութեամբ եւ արեամբ: 6 Գլուխ գոլով սպանողաց ինքնակալ թագաւորութեամբ, որ եւ երկինք եղեւ իսկ¹¹ մտիւն Յովսէփայ¹², զի Տէր էր ընդ նմա եւ ամենայն ինչ յաջողէր ի ձեռս նորա, իբրեւ¹³ արեգակն լուսով¹⁴, ամենայն ինչ երեւեր նմա աւր¹⁵ ընդրութեամբ: 7 Եւ նախ քան զամենայն ինքն ճշմարիտն Աստուած զի գիտաց Պետափրեայ¹⁶ թե Տէր ընդ նմա էր¹⁷, եւ եթող ի նա զամենայն ինչսն եւ¹⁸ հոգսն ըստ այնմ¹⁹. Թե Ընկեա ի Տէր գիոգս Բն^{20*}: 8 Սակայն ասեն իմաստունք, թե չէ Հնար մարդոյ անարտում կեանս գտանել, զի չարն այն, որ կամեցաւ Հեղձնուլ զնա ի գբին²¹, մոլեցոյց, կատաղեցոյց գտիկինն ցանկութեամբ ի վերայ նորա²²՝ զանց արարեալ զբազում ծառայիւքն: 9 Թեպէտ եւ այրն ներքինի գոլով, այլ ստացեալ էր զնա ի տնարարութիւն, եւ նա²³ զմի ե-

7 A չի՛հ հրէից
 8 H չի՛հ եւ
 9 H կողմն
 10 A քարոզ եւ
 11 A չի՛հ իսկ
 12 A Յովսէփու
 13 A իբր
 14 A լուսով էր
 15 A չի՛հ աւր
 16 A Պետափրէ
 17 A է
 18 A չի՛հ ինչսն եւ
 19 A հոգս (չի՛հ ըստ այնմ, թե)
 20 H չի՛հ Բն
 * Սաղմ. ԾԳ. 23
 21 H գփից
 22 H չի՛հ ի վերայ նորա
 23 A այլ փի. եւ նա

1 H Իսկ փի. եւ
 2 A չի՛հ ի ձեռս
 3 H չի՛հ եւ
 4 H երկեղածաց
 5 A գաստուածն
 6 H չի՛հ եւ քագոյց

րազն կամէր¹ շիջուցանել ջանայր² զԻսրայելի եւ զամենայն Եգիպտոսի եւ զյորով³ աշխարհաց, զորս կերակրելոց էր ի սովոյ անդի⁴: 10 Այլ մեծն այն գիտելով զԱստուած ընդ ինքեան ասէր՝ զիա՞րդ մեղայց առաջի Աստուծոյ եւ զի որսայց զնա եւ եգիտ միայն⁵ իւր կարծելով: 11 Այլ Յովսէփ գիտեր եւ հաւատայր զԱստուած եւ զբանակս հրեշտակաց ընդ իւրն⁶ լինել: 12 Բուռն հարկանէր զհանդերձէն լրբենի զիմաւք, իսկ նա ահիւն Աստուծոյ զարթոցեալ թողու զհանդերձսն եւ փախչի, իբր նաւաստի հանճարեղ յալեկոծութեան՝ թափելով⁷ զբեռնն ի ծովն՝ ապրի ի վտանգէն:

13 Եւ ճչեալ կնոջն զվնասն արկանէ⁸ զողջախոհաւն, որում ոչ ոք հաւատա ի տանէն եւ ոչ⁹ ի դրացեացն, որք գիտեին զիրս պատերազմին ի վաղեաց¹⁰ հետէ ընդ պարկեշտին, զոր իբրեւ հրեշտակ Տեառն հաւատային լինել: 14 Եւ ոչ այրն հաւատաց. զփորձ նորս գիտելով եւ զհանդերձն տեսանելով՝ իմանայր, թե առ որում զբաւն է՝ նա է զբաւաւղն եւ առ որում կողոպուտն է¹¹՝ նա է աւազակն^a:

15 Սակայն զի մի մեծասցի համբաւով նախատինք տան նորա, ոչ հարցանէ գիտելով զիրաւն. առաքէ զնա ի բանտ, որ լաւ էր նմա քան զտունն նորա, զի անդ մոլէր կիւնն եւ աստ ցնծայր կուսութիւնն նորա՝ ատելութիւն արանց եւ սէր կանանց. արկ զՅովսէփ ի բանտ եւ ի գուր: 16 Գեղեցկութիւն Յովսէփայ եւ Շուշանայ վա-

յելէր, եւ ո՛չ շնացողաց, մեծութիւն Յոբայ՝ եւ ոչ ագահաց: 17 Եթէ ամենայն երիտասարդք որպէս Յովսէփ էին, եւ ամենայն կանայք՝ որպէս Շուշան ո՛չ լինեին պղծեալք աւրինաւոր անկողինք: 18 Եւ եթէ ամենայն մեծատունք իբրեւ զՅոբ էին՝ ոչ լինէին որքք անհայր եւ ոչ կանայք՝ այրիք^a:

A 74p-75ա H 119p-120ա

ՃԲ (ԿԸ)

ԼԹ. 22-ԽԲ. 9

1 Ի¹² մտանելն Յովսէփայ ի բանտ երկեաւ մահ, յամաւթ եղեւ սատանա: 2 Եւս մեծացաւ Յովսէփ, զի ամենայն Եգիպտոս պատուէր զբանդապետն եւ նա՝ զՅովսէփ¹³, զի¹⁴ թողեալ ի նա¹⁵ զամենայն իրս բանտին, զի Տէր ընդ նմա էր: 3 Նորին խնամքն եցոյց տակառապետին եւ մատակարարին երազ, եւ զի մխիթարէր եւ սփոփէր¹⁶ զամենայն կալանաւորսն ի բանդին¹⁷ Յովսէփ:

4 Արդ¹⁸, ետես զնոսա խոովեալս եւ տրտմեալս, եհարց եւ յԱստուծոյ ասաց զմեկնութիւն¹⁹ երազոյն, թեպետ եւ²⁰ երազն իւր նախանձ²¹ ծնաւ նմա եւ մահ, այլ²² նա սակայն²³ յուսով մնայր նմա²⁴ դեռ եւ սպասէր եւ ի նոյն խնամոցն²⁵ Տեառն: 5 Տակառապետն նախ պատմեաց զերազն, որ եւ ի բարին մեկնեալ վստահա-

1 A չի՛ կամէր
 2 H չի՛ ջանայր
 3 A յովով
 4 A սովի անտ
 5 H չի՛ միայն
 6 A իւր
 7 A թողու փխ. թափելով
 8 H չի՛ արկանէ
 9 A չի՛ ոչ
 10 A վաղուց
 11 A չի՛ է

12 H բանդն
 13 H Յուսէփ (այսպէս եւ այլուր)
 14 A չի՛ գի H չի՛ թողեալ ի նա
 15 H բանտին եթող ի նա
 16 H չի՛ եւ սփոփէր
 17 H կալանաւորսն սփոփէր (չի՛ ի բանտին)
 18 A չի՛ Արդ
 19 A մեկնութիւն
 20 A չի՛ եւ
 21 H նախանձ
 22 H չի՛ այլ
 23 A չի՛ սակայն
 24 A սպասէր փխ. մնայր նմա
 25 A չի՛ սպասէր եւ

ցաւ միւսն: 6 Երեք ուռքն¹ ասէ երեք ա-
ւուրքն են, որ ինչ կայր ի կամս նոցա եւ
յոր ինչ գործոյ ելեալք² էին երեւութացաւ
նոցա: 7 Եւ զի³ զգինին ոչ ի կարասու⁴
եառ, այլ յորթէ էառ⁵ կենաց նշանակ եւ
նոր պատուոյ: 8 Յիշէ, ասէ, փարաւոն՝ ոչ
բարեխաւսիւ եւ կաշառաւք⁶, զի Աստուած
ոչ մոռանա⁷ զվաստակ ուրուք եւ թողու
զյանցանս⁸ եւ յարութեամբ յիշէ զմե-
ռեալս: 9 Եւ եղեւ տակառապետին⁹ իրքն
եւ յանձնեաց զինքն Յովսէփ, կարճագի ե-
ղեալ միայն յայսմ նուագի, սակայն Աս-
տուած երկայնամիտ մնա իւրում ժամա-
նակի¹⁰ եւ մեծագունի պատճառի: 10 Ա-
պա¹¹ վստահացեալ մատակարարն ասէ
զիւրն, եւ կախուի զփայտէ՝ յաւրինակ այ-
նոցիկ, որ ոչ բարիոք մատակարարեալ
տնտեսեն զչնորհ տաղանդացն տուեալ ի
Տեառնէ յերիս հասակս, ի գլուխն եղեալ
իբր զպսակ, անձին միայն հոգացեալ ի
նիւթ փառաց զպատճառս կենաց տուեալ
նմա ի կերակուր ծառայակցացն, զոր դեւք
քաղեին ի նմանէ. եւ անդ որդունք ան-
մահք եւ ճիւղք ճարակեն յարակա:

11 Մոռացաւ տակառապետն (Խ 23).
ոչ թե նա, այլ՝ Աստուած, որ ոչ մոռանա:

12 Եւ յետ երկուց ամաց եւ¹² ինքն
Փարաւոն տեսանէ խորագոյն, որ ունեք¹³
զկեանս եւ զմահ բազմաց, եւ կարաւտի
այնմ, որ քննէ զխորս Աստուծոյ:

13 Եւաթն երինջք գէր եւ եւաթն նի-
հար, եւաթն հասկ ատոք եւ եւաթ ազա-
գունք: 14 Եգիպտացիք երազագիւթք եւ
հմայողք, խտրաւղք, բայց այս ոչ է սովո-
րական բաջաղմունք անրջոց, այլ՝ յայտ-
նութիւն աստուածային, որ զխեռեալ ա-
րարածս հարկանէ ցասմամբ խառնելով
զգութիւն, զի մի ի սպառ կորիցեն: 15 Եւ
արժանի առնէ զանարժանն փարաւոն, զի
եւ¹⁴ զարժանաւորն իւրն յայտնեցի¹⁵. իսկ
զՆաբոգոդոնոսոր¹⁶ վասն Դանիելի եւ
զԲաղամ սակս Իսրայելի եւ զԿախափա¹⁷
սակս¹⁸ Յիսուսի Աստուծոյ:

16 Եւ իբրեւ լուսինն ամաչեցեալ ամե-
նայն խաբեբայքն, յիշեցաւ Յովսէփ ¹⁹
Տեառնէ, որ ընդ նմա իսկ էր եւ տնտեսեր
զխորհուրդն փակեալ եւ բանալ զխոր-
հուրդն ի ժամու, եկն Յովսէփ եւ լսեաց
զերազն, եւ ամենայն Եգիպտոս յակեւոս
կայր, եւ հերատուքն եւս կին ներքինոյն,
զի ցանկայր տեսանել զմահ նորա:
17 Բուռն հարկանէ Յովսէփ եւ²⁰ զձեռն՝
յԱստուած տա: 18 Առանց Աստուծոյ²¹
չլինի պատասխանի ասէ²², որով փրկի փա-
րաւոն արձակեալ ի տարակուսանաց, զի
նախ սրբեցին կոռցն երկրպագութն կեն-
դանոյն Աստուծոյ յիշատակաւն եւ ապա
բախեցէ հոգին զքնարն իւր՝ ասելով՝ մի
է երազն փարաւոնի, եւ մինն վկայ է միւ-
սոյն, զի Աստուած փոյթով²³ ունի կամս²⁴
լնուլ գործով, զոր տեսեամբ եցոյց փարա-
ւոնի:

1 H ուռն

2 H եղեալ

3 A չի՛ք եւ զի

4 A կարասոյ

5 A յորթոյ (չի՛ք էառ)

6 A կաշառով

7 A չմոռանա փիւ. ոչ մոռանա

8 H զանցանս

9 H տակառապիմ

10 H տեղոյ փիւ. ժամանակի

11 A չի՛ք Ապա

12 A չի՛ք եւ

13 A ունի

14 A չի՛ք եւ

15 A յայտնեցէ

16 H զՆաբաւգոդոնոսոր

17 A զԿախափա

18 A վասն

19 A չի՛ք ի Տեառնէ ... եկն Յովսէփ

20 A չի՛ք եւ

21 A Աստուծոյ ասէ

22 A չի՛ք ասէ

23 A փոյթ

24 A չի՛ք կամս

19 Եւթն թիւն սուրբ է եւ տաւն է ճշմարտին Աստուծոյ եւ խորհուրդ եւթն զաւրութեան՝ Հոգւոյն, որով բարեբարէ մարդկան բնութեամբ բարի գոյով եւ գնոյն ախորժելով: 20 Եւ թե չառնեն արժանի գանձինս՝ նովին թուով հարկանէ գանհոգացողսն¹: 21 Զարջառ եւ զնեղոս² պաշտեին եգիպտացիքն իբր ծնընդոց եւ պտղոց տուաւղք, վասն որոյ եւ³ առ գետովն տեսանէր գնոսա, զի եւ գերինջն արջառ կոչելով լուծս զնեն⁴, եւ ջրով ծնանին երկոքին: 22 Զուր է եւ⁵ սերմն կենդանոյն եւ ջրով ծնանի եւ սնանի հատ ցորենոյն, եւ որպէս կենդանի է երինջ՝ կենաց պատճառ է հատք ցորենոյն⁶: 23 Գէրքն եւ ատոքն աննմանք եւ⁷ առաւել եին, նոյնպէս եւ գագիրքն առաւել յոյժ⁸, զի պարգեւքն Աստուծոյ եւ պատիժքն⁹ զարմանալիք են: 24 Ուտեին գագիրքն զգերսն, վասն¹⁰ զի ուտէ, հալէ եւ¹¹ մաշէ սով զզաւրութիւն¹² կենդանեաց՝ զարչելիս գործելով: 25 Վասն որոյ¹³ ոչ լիութիւնն եւ ոչ սովն էր ըստ լեալ կարգին, այլ՝ հրաշք եւ գործք Աստուծոյ, որ գրելոց էր յազգս եւ ի ժամանակս ամենայն՝ ի խրատ եւ ի զգուշութիւն, զի բարւոյն եւ ո՛չ չարին արասցէն նա¹⁴ գանձինս արժանի¹⁵:

26 Արդ¹⁶, առաջի փարաւոնի հարցաւ Յովսէփ եւ նա¹⁷ յերկինս ել ուսաւ եւ պատմեաց փարաւոնի, յիշեաց զերացն իւր զորայիցն եւ իմացաւ զաշտ զԵգիպտոս: 27 Եւ անդ¹⁸ կանգնի Յովսէփ եւ գան երկիր պագանեն նմա: 28 Եւ զի ի¹⁹ վերուստ էր բանն հաւանեցան²⁰ եւ աշակերտեցան ճշմարտութեանն: 29 Խրատ եւս առաջի դնէ՝ այր մի իմաստուն խնդրել եւ կացուցանել ի վերայ Եգիպտոսի: 30 Զինքն ասաց այր, զի ոչ ասաց արս, զի ո՞ այլ ոք²¹ էր այնմ բաւական, զոր իմացեալ փարաւոն հաւանութեամբ բնաւիցն կացուցանէ զինքն պատուելով զնա կառաւք եւ մատանեաւ եւ հանդերձիւ եւ մանեկաւ, այն որ իւրն էր²² անարատ զկնիք անմահ թագաւորին, արկեալ զիւրեաւ²³ գտերունական²⁴ զպատմուճան առաքինութեանն, զլուծ բոլոր հաւատոյն արկեալ զպարանոցաւն, զկառսն Եղիայի ունելով յար, որով ելանէր առ Տէր:

31 Եւ կոչեաց²⁵ զամուսն նորա Փսովմիթնիփանէ (ԽԼ 45), որ²⁶ ծածկելոց յայտնիչ: 32 Առանց քո, ասէ, ոք ոչ²⁷ ամբառնայ զոտս ի գնալ եւ զձեռս ի գործել յամենայն Եգիպտոս եւ ի տան իմում ասէ²⁸:

33 Ետ եւ զԱսանէթ նմա ի կնութիւն խառնելով եւ²⁹ յազգն քրմապետաց, զի չէր³⁰ պակաս քան զթագաւորացն, զի

1 A գանհոգացեալսն

2 A գնիդոս

3 A չի՛ք եւ

4 A կոչելով... H դնելով

5 A չի՛ք եւ

6 A հասկ փիւ. հատք ցորենւոյն

7 A չի՛ք եւ

8 A յոյժ առաւել

9 A պատիւն փիւ. պատիժն

10 A չի՛ք վասն

11 A չի՛ք եւ

12 H զգեղեցկութիւն փիւ. զզաւրութիւն

13 H ըստ որում փիւ. վասն որոյ

14 H չի՛ք նա

15 A արժանի գանձինս

16 A չի՛ք Արդ

17 A չի՛ք եւ նա

18 A անտի

19 H չի՛ք ի

20 A հոգացան

21 H չի՛ք այլ ոք

22 A ունէր փիւ. իւրն էր

23 A գուրեւ

24 A չի՛ք գտերունական

25 H կոչէր

26 A չի՛ք որ

27 A ոչ ոք

28 A չի՛ք ասէ

29 A չի՛ք եւ

30 H չէ

զոստս¹ արձակեսցէ բարի տունին այն, որ ունենր զհոգին Աստուծոյ, զոր ոչ խտրեաց Յովսէփ՝ զիտելով, եթե զգայութիւնն երթա զկնի զաւրաւոր մտաց:

34 Տասն եւ եւթն ամաց վաճառեցաւ Յովսէփ, տասն եւ մի ամ եղեւ ի տանն Պետափրեա եւ երկու ամ ի բանդին. եւ երեսուն ամաց իշխանացաւ եւ շրջեցաւ ընդ ամենայն Եգիպտոս, եւ ամբարեաց զեւթն ամաց զլիութիւնն, որ եւ յաղթեաց թուոյ որքանութեան բնութեան զոր նմանեցուցանէ յաւազոյ², զի ոչ միայն զչափ ցորենոյն, այլ եւ զթիւ ամբարանոցացն ոչ գիտեին: 35 Զի զեղուին տարերք³ զպտուղս յաջողեալք ի Տեառնէ:

36 Եկն սովն եւ յառաջին ամին ահաբեկ եղեւ ամենայն Եգիպտոս. եւ աղաղակեցին առ թագաւորն եւ նա ասաց. երթայք առ Յովսէփ (ԽԼ 55):

37 Եւ նա եբաց զըշտեմարանսն եւ վաճառէր: 38 Եւ սովն էր ընդ ամենայն երկիրն, որք կարեին գալ ի դեղ սովոյն յայտ է, իսկ զայլ հեռաւորսն այլով ցասմամբ խրատէր: 39 Եւ ի Քանան Գեղուքիւմ մեծ⁴, ասէ սուրբն Ստեփաննոս⁴, զի ասեն թէ⁵ ունդք եւ բանջարք, զոր ի պետս առնուն⁶ ի տեղ հացի ոչ լինէր կամ թէ⁷ աղ պակաս լիներ, կամ ձուկն եւ⁸ կամ կիթ ի պակասութենէ խոտոյ: 40 Լուաւ Յակոբ եւ ասէ ցորդիսն. Ազդ եղեւ ինձ, թե գտանի հաց յեգիպտոս: 41 Եւ թէ⁹ յումէ⁹ եղեւ ազդ^a, եւ թէ¹⁰ ընդէ⁹ որդիքն ոչ¹¹ գիտա-

ցին^{12b} լուան. զի դեռ առաջին ամ էր¹³ սովոյն: 42 Թերեւս յիշեաց զերազ որայիցն եւ խանդաղատեցաւ ոգին եւ միջասահման բան ասաց:

43 Արձակեաց զորդիսն բաց ի Բենիամենէ, գուցէ (ԽԲ 4), ասէ¹⁴, կասկածէր եւս յեղբարցն^a:

44 Չոգան յանդիման եղեն Յովսէփա յեւ ոչ ծանեաւ, այլ նա ծանեաւ եւ հարցանէր զուստն, զի զԲենիամին ոչ տեսանէր, գուցէ, ասէ, եւ զնա կորուսին բառնալով զյիշատակն Ռաքելի: 45 Եւ ասացին զանուն երկրին եւ զհաւերն եւ զեղբայրն, որ ընդ հաւերն է: 46 Եւ ասաց՝ բերել զեղբայրն, թէ ոչ լրտես էք, ասէ. եւ եին լրտեսք, զի զլուրն ի Քանան վասն հացի տեսին յեգիպտոս^a:

A 75բ-77ա, H 120բ-122բ

ՃԳ (ԿԹ)

ԽԲ. 9-ԽԷ. 12

1 Զեւ եւ զմուտ, ասէ, զիտել եկեալ էք¹⁵. եւ այնպէս լինելոց էր, մտանել եւ ելանել¹⁶ կայր առաջի նոցա:

2 Յիշեաց գերագն, որ առաջին տեսեալ¹⁷ զմոռացեալն¹⁸: 3 Ուստի⁹ գայք, ասէ. յորքա՞ն բարձրութենէ աւագութեան գայք կրսերոյս¹⁹ երկիր պագանէք: 4 Խոշտանգէ, եւ²⁰ զնէ զնոսս²¹ ի բանտի գերիս աւուրս²², զի աստեն յանցաւորքս²³ քաւեսցին աստ գտանելով²⁴ զանձինս որպէս

1 H գոտնն
2 A որբանութեան ըստ աւագոյ զոր նմանեցուցանէ փխ. որբանութեան՝ յաւագոյ
3 H տարեարք
4 Գործ. Լ 11
4 A նախավկայն փխ. սուրբն Ստեփաննոս
5 A չի՞ք
6 A առնուին
7 A չի՞ք
8 A չի՞ք
9 A չի՞ք եւ քէ
10 A չի՞ք

11 A որդիքն ոչ
12 A լուան փխ. գիտացին
13 H է
14 H չի՞ք ասէ
15 H եկի՞ք փխ. եկեալ էք
16 H չի՞ք եւ ելանել
17 A չի՞ք որ... տեսեալ
18 A մոռացեալ
19 A կրցերիս
20 A չի՞ք
21 H գերիսն փխ. գնոսս
22 H չի՞ք գերիս աւուրս
23 A յանցաւորս
24 A ըստգտանելով փխ. աստ գտանելով

եւ¹ եղեւ: 5 Այո, ասեն, ի մեղս եմք, զի զնեղութիւնն ոգւոյն Յովսէփայ² թողաք ի նմա³ յորժամ աղաչերն: 6 Եւ Ռոբէն զիւրն ասեր⁴՝ զերիս աւուրս անսուաղ եկաց Յովսէփ ի գբին⁵ Ջաբուղոն⁶ ասեալ է⁷ ի կտակն՝ վճարէ զայն Յովսէփ ոչ անսուաղ, զի մարդասէր է դատաւորն, իսկ ի խորհրդին երրորդին պատկառեալ⁸ հանէ ի բանտէն եւ մխիթարել կամելով զինքն երկեղած ասէ յԱստուծոյ⁹, զի մի երկիրցեն: 7 ՋՇմաւոն կապէ եւ դնէ ի բանտի, զի առաւել նախանձէր ընդ նմա, զոր ասէ Գաղ՝ թե ես եւ Շմաւոն վաճառեցաք զՅովսէփ: 8 Եւ վաթսուն աւր գաւսացաւ աջն Շմաւոնի եւ մետասան ամիս ցաւեաց լեարդ իմ, ասէ, վասն զի ատէր զՅովսէփ, զի որով մեղանչէ մարդ նովիմք խրատի:

9 Չոգան հացիւն եւ գնովն եւ պաշարով առ հայրն, եւ պատմեցին զանցսն: 10 Եւ նա¹⁰ ասաց. Յովսէփ չէ ի միջի, Շմաւոն չէ ի միջի եւ գբեմիամի¹¹ն եւս առնուցուի: 11 Յիս եղեւ այս ամենայն (ԽԲ՝ 36): 12 Յայտ է ուրախականքն ի տղայութիւնն եւ տրտմականքս ի ծերութեանս¹², քանզի չար եւ բարի ոչ խառնին ընդ միմեանս, այլ տեղի տան միմեանց¹³, ընդ որ հիանայ, այլ եւ ի մի հոգի լինին իմաստք ամենայն յաւիտենի¹³:

13 Արդ¹⁴, հարկ սովոյն ստիպէ զԻսրայել եւ վստահանա զորդիսն¹⁵ ի համեստ

խելացիսն յՌոբէն¹⁶ եւ ի¹⁷ Յուդա եւ յղէ պատարագաւք:

14 Ռետին¹⁸ դեղ, որ ի Գաղաադ լինի ի ծաղիկս եւ յարմատս, կամ ամբրաւ կամ շաքար որպէս ասեն¹⁹, որ ի մեղրէ եւ կամ²⁰ ի կորեկանէ կազմեցաւ յետոյ եւ զայլսն: 15 Աստուած իմ, ասէ, տացէ ձեզ շնորհս առաջի առնն, յիչէ եւ²¹ զշնորհսն, զոր ինքն եգիտ²² առաջի ամենայն ումեք:

16 Չոգան յանդիման եղեն Յովսէփայ²³, զոր տեսեալ, ետ տանել ի տուն, զի ընդ նմա ուտելոց են: 17 Եւ նոքա խղճիւ մտաց կարծեին ի բանտ երթալ, զի որ յարտաքուստ երկնչի²⁴՝ յամուր մտանէ, եւ որ ինքն ունի զկշտամբիչն՝ ոչ գոյ նմա հնար խաղաղութեան: 18 Թեպետ հազարապետն քաջալերեաց, սակայն երկնչեին:

19 Եկն Յովսէփ եւ մատուցին զպատարագն եւ երկիրպագին ի վերայ երեսաց (ԽԳ՝ 26). թեպէտ եւ²⁵ արեգակն եւ լուսինն չէին անդր²⁶, մետասան աստեղքն ծեծեն զգլուխս իւրեանց ընդ երկիր այնմ, յորմէ խրտչեին: 20 Արդ, պաշտեն զնա պատարագաւք եւ երկրպագութեամբ եւ դեռ երազքն չէն ի գլուխ²⁷ ելեալ: 21 Հարցանէ. Հայրն ձեր ծերունի կեա¹⁰, եւ ա՞յդ է եղբայրն ձեր (ԽԳ՝ 27-29): 22 Եւ աւրհնեաց զնոսա յԱստուծոյ կենդանւոյ եւ խանդաղատեցաւ, եւ զայարեին աղիք նորա եւ մտեալ ի սենեակ ելաց:

23 Բնական գութք մարդոյ մասն ունին յԱստուծոյ սիրոյն, բնականն՝ առ ըն-

1 A չի՞ք եւ

2 H Յովսիփու

3 A նա

4 H չի՞ք եւ Ռուբէն... ասեր

5 H սփին A եկաց Յովսէփ անսուաղ

6 H Ջաբոդոն

7 A ասէ փիս. ասեալ է

8 A պատկառելով

9 A երկեղած զինքն յԱստուծոյ ասէ

10 A չի՞ք նա

11 H ծերութիւնս

12 A միմեանս

13 A ժամանակի

14 A չի՞ք Արդ

15 A զորդին

16 A ի յՌուբեն

17 H չի՞ք ի

18 H ըրեստին

19 H չի՞ք որպէս ասեն

20 H որպէս ասեն, որ ի մեղրէ A չի՞ք կամ

21 A չի՞ք եւ

22 A եգիտ ինքն

23 H Յովսիփա

24 H երկնչին

25 A չի՞ք եւ

26 A անդր ոչ են

27 A ի գլուխ չեն

զանիս եւ աստուածականն՝ առ աւտարս: 24 Եւ պնդեալ զինքն ել առ նոսա եւ առեալ զսկիհն արծաթի հարկանէր մատամբն եւ նստուցանէր զեղբայրսն ըստ աւագութեան եւ կրսերութեան: 25 Եւ զարմանային յոյժ, թե զիա՞րդ հմայէ եւ առին մասունս պարգեւի:

26 Եւ մեծացաւ մասն Բենիամինի (ԽԳ՝ 34), զի համամայր էր նմա: 27 Իսկ եգիպտացիքն առանձինն նստան յուտել, զի գարշեին եգիպտացիքն ի կերակրոց նոցա, զի զԱստուածս նոցա ուտեին:

28 Իսկ յետոյ լցան ամանք ցորենույ նոցա, արծաթովն իւրեանց, եւ սկիհն եղեալ յաման կրսերոյն¹: 29 Եւ հասեալ հազարապետն կշտամբեր մինչեւ եգիտ, եւ պարտաւորեալ դարձան² անդրէն: 30 Ետես Յովսէփ զեղբարսն³ իւր եւ⁴ իբրեւ զանդաստան մի պարարտ՝ փշոտեալ եւ մոլախոտեալ յանգործութենէ, եւ ջանայ քաղել⁵ զփուշսն եւ պիտանիս⁶ գործել եւ ապա սերմանել զպիտանին:

31 Դառնան անդրէն եւ աղերսէ Յուդա եւ զինքն տայ փոխանակ⁷ ծառայ յաւիտեան: 32 Եւ նա ասէ՝ ո՞չ գիտէք եթե հմայելով հմայէմ⁸, այս ինքն՝ չթաքչի ինչ յինէն, եւ սկիհն գործի⁹ իմն է իմացութեան, որ է կողոմելով ընտրութիւն:

33 Ապա¹⁰ հարկեալ Յուդայի խոստովանի զյանցանսն¹¹ զոր հաւրն¹² ետուն զոյժ վասն նմա՝ զազանակուր լինելոյ¹³,

եւ թէ¹⁴ մինչեւ ցայժմն ոչ տեսանեմ նշանակեալ, թե յուսով սպասէ ելից երազոյն:

34 Իսկ յետ խոստովանութեանն քաղցեաւ սպին ի սրտէն եւ հանեալ¹⁵ զեգիպտացիսն, զի մի լուիցեն զասելն, թե՛ Ես եմ Յովսէփն, զոր դուքն վաճառեցիք¹⁶: 35 Եւ ի չհանդուրժելն¹⁷ ելաց յորդ ձայնիւ, մինչեւ լուեալ եգիպտացիքն եթե եկին եղբարքն Յովսէփայ¹⁸: 36 Մի տրտմիք, ասէ, զի Աստուած առաքեաց զիս այսր: 37 Խնամոցն Աստուծոյ տայ եւ ոչ նոցա չարութեան¹⁹:

38 Եւ այն²⁰ վասն ձեր, ասէ, թողուլ ձեզ զաւակ, այլ եւս հինգ ամ եւ ոչ եւս²¹ ասէ լինի սերմն եւ հունձք. թերեւս երաշտ էր եւ ոչ գոյր անձրեւ եւ գետն Եգիպտոսի ոչ ելանէր ոռոգանել երկիրն, զի ծանիցեն ամենայն երկիր զամենակալն²² Աստուած ի ձեռն հաւատարմին²³ իւրոյ Յովսէփայ:

39 Ազդ եղել ի տունն Փարաւոնի (ԽԽ՝ 2), եւ խնդաց յոյժ, զի մինն, ասէ, թէ այնքան²⁴ բարի եղել²⁵, որ⁶ չափ շնորհք զեղուցուն²⁶ ի գալ աւրհնեալ ազգին յերկիրս յայս ի մեզ²⁷: 40 Եւ ասէ փարաւոն ցՅովսէփ. Ասա՛ ցեղբարսն քո՛ (ԽԽ՝ 17) գալ այսրէն հարբն իւրեանց եւ ուտել զուղեղ²⁸ երկրիս, որ էր պարարտ երկրին Գեսեմ եւ Արաբիա, զի մասն է նա երջանիկն Արաբիոյ:

1 A կրցերիմ
2 A դարձաւ
3 A եղբարսն
4 A չի՞ք եւ
5 H քաղեալ
6 H զպիտանի
7 H փոխանակ
8 A հմայէ
9 A գործն
10 A չի՞ք Ապա
11 H զանցանսն A զյանցանսն խոստովանի
12 H արիւն փիս. հարբն
13 A լինել

14 A չի՞ք թէ
15 H հանել
16 H վաճառեցիք
17 H չհանդուրժելն
18 H Յովսէփոյ
19 A չարութեան նոցա
20 A չի՞ք այն
21 A չի՞ք ամ եւ ոչ եւս (ասէ ոչ)
22 A ամենակալն
23 H հաւատարիմն
24 A այսքան
25 A արար մեզ փիս. եղել
26 A զեղուցու
27 A չի՞ք ի մեզ
28 H զիւղ փիս. զուղեղ

Եւ տալ սայլս կանանց եւ մանկանց (ԽԼ 19). եւ թե մնա ինչ ի տեղւոջն՝ չազահել ինչ¹ ի փոքրն վասն յուսոյն մեծի:

41 Եւ յետ Յովսէփ տասն էջս² եւ տասն ջորի, նպարակաւորս³ եւ⁴ պաշարաբարձս: 42 Եւ չոգան առ հայրն եւ պատմեցին, եւ զարմացաւ յոյժ, զի ոչ հաւատայր (ԽԼ 26):

43 Կիրք են բնութեանս մեծաց եւ կարաւտելի բարեաց ոչ հաւատալ⁵. Եւ թե զիս⁶ ըր թագոյց Տէր ի նմանէ. յայտ է, զի մի՛ խափանեսցին առաջարկութիւնք⁶ խնամոցն Աստուծոյ: 44 Զի⁷ գուժատուքն աւետատուք լինենին: 45 Զի⁸ պատմուճանն ծաղկեա արեամբ թաւթափեալ գուշակէր զմահ նորա, եւ պատմուճանն զառնաւուխտ Բենիամենի՝ կենաց տայր աւետիս:

46 Զիք աւր այնմ աւուր նման⁹, բայց թե աւր յարութեան, յորժամ մեռեալք եւ կենդանիք առհասարակ լսիցեն զձայն փողոյն, որպէս անդ զձայն սայլիցն առհասարակ, որում հաւատացեալ արծարծեցաւ հոգին Յակոբայ եւ ասէ¹⁰. մեծ է ինձ¹¹ (ԽԼ 28) այս քան զամենայն պարգւսն, զոր ետ ինձ Աստուած, եթե տակաւին կենդանի է որդին իմ երթայց տեսաց¹² մինչ չեւ մեռեալ իցեմ (ԽԼ 28):

47 Զուեցին զնացին, Յակոբ ի սէրն Յովսէփն եւ ամենայն բանականքն¹³՝ լիութիւն հացին:

48 Եկն ի ջրհորն երդման եւ մատոյց պատարագ Աստուծոյ Իսահակայ՝ հաւր իւրոյ (ԽԳ 1):

49 Որպէս թե վասն հաւրն աւրհնութեան¹⁴ պահեցաւ նմա Յովսէփ. որքան ի սուգ էր ոչ համարէր նմա պատշաճ¹⁵ պատարագ մատուցանել, այլ թողեալ գտուգն¹⁶ ի Մամբրէ՝ գայ ուրախ լինի ի ջրհորն երդման. եւ անդ մատոյց պատարագ¹⁷:

50 Երեւի նմա¹⁸ Աստուած եւ քաջալերէ մի գնա՝ ոչ երկնչել¹⁹ իջանել յեգիպտոս²⁰, զի կասկածէր գուցէ զելանեն որդիք նորա յերկիրն Աստուծոյ. ես իջից եւ ես հանից, որպէս թէ²¹ ոչ մնաց²² քո ինչ ի Քանան եւ ոչ մնասցէ յեգիպտոս: 51 Աստ սայլքն չթողին եւ անդ՝ նշանքն եւ արուեստքն: 52 Հաստատէ եւ զկեանսն Յովսէփայ. դիցէ, ասէ, զձեռն յաչաց քոց²³ եւ մաքրեսցէ զչամանդաղն, որ յաղագս նմայ արտասուացն:

53 Թուէ զագգն վաթսուն եւ վեց եւ զՅովսէփ ինն որդովքն եւ որդեաց որդւովքն²⁴ եւթանասուն եւ հինգ: 54 Զի երեւեսցի աւետիքն Աստուծոյ, թե՛ յագգ մեծ արարից գեգ անդ ի յելսն վեցհարիւր հազարացն թիւ՝ զկանայսն ոչ թուելով, ո՛չ աստ եւ ո՛չ անդ, նկատելով զՏեառն զգալուստն յարութեամբն, որ ոչ առնէ հաւատացեալս իւր խտիր արուի եւ իգի,

1 A չի՛ ինչ
2 A էջ
3 H պաղանաւորս
4 A չի՛ եւ
5 H չհաւատալ փ/ս. ոչ հաւատալ
6 H առաջարկութիւն
7 A չի՛ Զի
8 A չի՛ Զի
9 A նման այնմ աւուր
10 A ասաց
11 A չի՛ ինձ
12 A տեսից
13 A բանակն

14 H արհնութիւն
15 A ոչ էր պատշաճ փ/ս. ոչ համարէր նմա պատշաճ
16 A սուգն
17 A չի՛ պատարագ
18 H չի՛ նմա
19 A չի՛ գնա ոչ (երկնչիլ)
20 H ի յեգիպտոս
* Հմբ. Նն. ԽԳ 3:
21 A չի՛ թէ
22 H չմնաց փ/ս. ոչ մնաց
23 A չի՛ քոց
24 A զՅովսէփ որդւովքն ԿԹ եւ որդեաց որդւովքն փ/ս. եւ Յովսէփ... որդւովքն

ծառայի եւ ազատի, զի լինիցիմ ամենե-
 քան¹ մի, ի մի գլուխն յարեալք²:

55 Արեգական զիմէ առ հարաւով եւ
 դաստղն առաքէ զՅուդա բերել ընդ առաջ
 նորա, զվերագոյնն լուսաւորաց՝ զերկր-
 պագելին գալ ընդ առաջ նորա, քանզի
 ստիպէր զնա³ սիրտն նորա³ քան զկարո-
 ղութիւնն ոտիցն եւ զի պատուեսցի ա-
 նունն, մեծ աստուածատեսն՝ գալով նմայ
 ընդ առաջ փառաւորեալ որդւոյն: 56 Եւ ի
 գալն, փութայ Յակոբ՝ իբր երկիր պագա-
 նելով, անկանի պարանոցաւն Յովսէփայ,
 եւ ելաց լալիւն մեծ, մեռայց (ԽՊ . 29-30),
 ասէ: 57 Սովոր են գութք զայս առնել, զոր
 եւ Տէրն ելաց ի վերա Ղազարու: 58 Եւ ոչ
 միայն մարդ առ մարդ խանդաղատեալ հե-
 ղու զարտասուս, այլ եւ ջերմն սիրողք Աս-
 տուծոյ առ նա ի տուէ եւ ի գիշերի:
 59 Դաւիթ լայր զամենայն գիշերն եւ
 լուանայր զմահիւս, արեգակն երկիր պա-
 գանէր⁴ զկնի աստեղացն՝ լուսինն չէ ի
 միջի՝ Ռաքէլ, զոր Յակոբ ի մեկնելն երա-
 զոյն ոչ անգաւ արգել կատարման երա-
 զոյն: 60 Եւ զի այր գլուխ է կնոջ, ընդ
 գլխոյն եւ մարմինն իբրեւ⁵ լուսինն յարե-
 գականէ, զի տա մինչ լնու զպահարանն եւ
 առնու մինչ հանէ զամենայն: 61 Եւ չէ
 ակտար իբրեւ զեկեղեցի: 62 Յարուցեալ եւ
 նստեալ, ասէ, ընդ Քրիստոսի Պաւղոս, ընդ
 նմին յարոյց եւ ընդ նմին նստոյց յերկնա-
 ւոր⁶, զի մարմինն է Քրիստոսին իւրոյ:

63 Չոգաւ Յովսէփ պատմեաց փարա-
 ւոնի հինգ⁷ եղբայր տարեալ ասաց, եւ ետ
 ասել նոցա հովիւս գոլ եւ խաշնադար-

մանս⁸, ո՛չ վայրապարս⁹, այլ զի մի՛ բնաւ
 խառնեսցին ի նոսա, զի նոցա աստուածք¹⁰
 էին, զոր եւ¹¹ սոքա արածեին եւ ուտեին եւ
 զնոցա շինեալ մեհեանն աւիրեին: 64 Եւ
 անհաշտ թշնամիք էին¹² վասն սոցին ի-
 րաց: 65 Այլ զի Գեսեմ խոտաւետ է¹³ եւ
 մեկուսի, մերձ յԱրաբիա եւ¹⁴ հեռի յԵգիպ-
 տոսէ, զոր Յակոբ եւ Յովսէփ ախորժեն,
 զնոյնն հրամայէ եւ փարաւոն. ընդարձակ
 երկիր:

66 Եկն Յակոբ եւ ակհնեաց զՓարա-
 ւոն, եւ նա ոչ գարչեցաւ ի սուրբ հովուէն,
 այլ խոնարհեցուցեալ զգլուխն, ընկալաւ
 գաւրհնութիւնն, իբրեւ¹⁵ նուազ ի լաւէ եւ
 կարաւտ յանկարաւտէ. եւ եւս ասել իբ-
 րեւ¹⁶ մարդ՝ յԱստուծոյ: 67 Սակայն հաց
 ոչ եկեր, վասն¹⁷ զի եգիպտացիքն գարչին
 ի հովուաց եւ նոքա՝ յանթլիփատիցն, այլ¹⁸
 տայր նոցա ի բացեա զոռճիկսն:

68 Աւուրք, ասէ, գորս պանդխտեցա
 (ԽԼ՝ 9):

69 Զի ոչ կեանս հաշուին սուրբքն
 զաստէն յամելն, այլ՝ պանդխտութիւնս:
 70 Հարիւր երեսուն ամաց եմ, ասէ, սա-
 կաւր¹⁹ եւ դժուարիմք եւ ոչ հասի յաւուրս
 հարց իմոց (ԽԼ՝ 9) ոչ սակաւ ինչ եւ
 հարքն պանդխտեցան փորձանաւք, վասն
 որոյ եւ պանդխտութիւնն հասարակաց²⁰
 ասաց²¹ եւ զաւուրսն՝ սակաւ, քանզի
 Աբրաամ հարիւր եւթանասուն եւ հինգ ամ
 եկաց եւ Իսահակ հարիւր ութսուն, իսկ

1 H ամենիքեան
 2 Հմմտ. Գաղ. Գ. 28:
 3 H չիք գնա
 4 A իւր փխ. նորա
 5 A երկիր պագանէ
 6 A իբր
 7 H չիք յերկնաւոր
 8 A եւս

8 A իսաղնարածս փխ. իսաղնադարմանս
 9 A վայրապար
 10 H չաստուածք
 11 A չիք սոքա
 12 A եւ
 13 A չիք է
 14 A չիք եւ
 15 H իբր
 16 A իբր
 17 A չիք վասն
 18 A եւ փխ. այլ
 19 A պանդխտացան
 20 H հասարակ
 21 A չիք ասաց

Յակոբ զկնի տասն եւ հինգ¹ ամաց² կատարելոց էր զկեանսն իւր³, զոր մարգարէական իմացմամբ ասաց սակաւ⁴ զիւր աւուրսն⁵ քան զնախնեացն:

71 Եւ տայր Յովսէփ ոռնիկս հաւրն եւ եղբարցն (ԽԼ 12). յայտ է հասուցեալ եւ պատրաստեալ կերակուրս եւ կարեալ հանդերձս, եւ ամենայն տան հաւր իւրոյ ցորեան ըստ բերան հացանաղաց ըստ թուոց նոցա յամիսս զբաւականն⁶ եւ ոչ ըստ աւելեաց, սակայն ձիւր⁷ եւ անվարձ շնորհ⁸ է եւ⁹ ողորմութիւն⁹: 72 Բազում ինչ կերպարանեալ Տեառն զգեղ նորա ի կիրս իւր, եւ ի գործս, ատէին զՅովսէփ եղբարքն եւ հայրն սերտ գիտէր եւ սիրէր զնա: 73 Ատեաց եւ նախանձեցաւ սատանայ ընդ բնութիւնս, զի սիրեաց Աստուած եւ արար պատկեր իւր, եւ հրեայքն՝ զՏէր մեր, զի ասաց Հայր ի վերա Որդանանու. Դա է որդի իմ սիրելի¹⁰: 74 Յերկուս գուփս արկաւ Յովսէփ վասն երազոյն եւ վասն յախթութեան ցանկութեանն, իսկ Տէր մեր՝ ի գերեզման եւ ի դժոխս վասն բառնալոյ զպականութիւն եւ զյաղթութիւն մահու: 75 Յովսէփ փոխանակ պոռնիկ կնոջն էառ զԱսանեթ կոյս, եւ Տէր մեր փոխանակ շնացող եւ սպանող հրէիցն էառ զեկեղեցի սուրբ մինչ չեւ էր եկեալ Յովսէփ յԵգիպտոս պատուով եւ ազատեւ առ հաւրն, եւ Տէրն՝ մինչ չեւ էր եկեալ յաշխարհ: 76 Ոչ յախթեաց տիկինն Յովսէփայ եւ ոչ դժոխք՝ Տէրն մերոյ: 77 Յովսէփ կերակրէր զբանդարգեալսն, եւ Տէր մեր լոյս ծագեաց ի դժոխս. եւ որպէս երագքն, զոր մեկնեաց

Յովսէփ զոմն ի փառս կացոյց եւ զոմն՝ ի մահ եւ Տէր մեր զմիւս աւագակն՝ ի փառս եւ զմիւսն՝ ի կորուստ դատապարտեաց, եւ որպէս զենաւ ուլն եւ կենդանի էր Յովսէփ եւ Տէրն մարմինն մեռաւ եւ կենդանի էր Աստուածութեամբ: 78 Եղբարքն Յովսէփայ իրիցունք եւ հովիւք եւ առաքեաց հայրն տեսանել զեղբարսն, որ եւ ըստ բանին Յուդաի վաճառեցաւ եւ եղեւ Տէր երկրին եւ կերակրիչ, նոյնպէս եւ Տէր մեր առաքեցաւ ի Հաւրէ առ հրեայսն, որք եղբարք էին ըստ մարմնոյ ծննդեանն յորդուոցն Աբրաամու եւ Դաւթի եւ ի Յուդաի վաճառեալ Տէր եղեւ կենդանեաց եւ մեռելոց՝ ազատելով զհոգիսն ի դժոխոց¹¹:

A 77ա-79ա, H 123ա-126բ

ՃԴ (Հ)

ԽԷ. 14-ԽԹ. 12

1 Եւ իբրեւ զնան երկիր պագանեն ի հանդերձեալն եւ զիցին թշնամիքն ի ներքոյ ոտիցն, եւ որք զան աստեն եւ երկիր պագանեն¹⁰ փառաւորին եւ ի¹¹ կենաց հացիւն կերակրին: 2 Եւ որպէս եղբարքն Յովսէփայ ոչ լցան հացիւ մինչ չեւ զնացին առ Յովսէփ, նոյնպէս եւ մեք՝ աստէն քաղցեալ եմք բանին մինչ չեւ¹² անդր երթիցուք: 3 Եւ որպէս արծաթ եղբարցն դարձաւ, եւ մեք առանց արծաթոյ լինիմք փրկեալք եւ¹³ յերկրորդումն ետ ծանաւթս¹⁴ Յովսէփ եղբարց իւրոց, եւ Տէր մեր յերկրորդումն¹⁵ գալստեանն տայ ծանաւթս ի հարուածս տիգին եւ բեւեռացն:

4 Ստացաւ Յովսէփ զարծաթ եւ զոսկի եւ զերկիրն փարաւոնի, զի զէնք եին սատանայի ինքեանք եւ ինչք իւրեանց, որովք գործէր զամենայն պղծութիւնս, որ-

1 A ԺԷ, H ԺԵ
2 H ամն
3 H չի՞ իւր
4 A չի՞ սակաւ
5 A աւուրսն սակաւ
6 H բաւականն
7 A արի
8 H չի՞ է
9 A չի՞ եւ
10 Մատթ. Գ. 17. ԺԼ. 5. Մատթ. Թ. 6

10 H երկրպագեն փխ. երկիր պագանեն
11 H չի՞ ի
12 H մինչ
13 H չի՞ եւ
14 H ծանաւթ
15 H յերկրորդ

պէս Սողոմայ երկիրն՝ պարարտութեամբն զնոցայն ոճիրս, զոր Յովսէփ տկարացուցանել կամեցաւ: 5 Իսկ զքուրմսն եւ զերկիր նոցա¹ թողեալ, զի զմեծամեղսն² եւ զգազանն կատաղի՝ մեծին թողու զաւրութեան եւ ձեռին, զի ըստ առն եւ զաւրութիւն իւր եւ ըստ Աստուծոյ եւ³ գործք իւր:

6 Եւթն ամն Եգիպտոսի լիութիւն⁴ եղեւ ըստ արեգականն շրջագայութեան, յերկոտասան ամիսս կատարեալ տարեաւ, զի բարի է Աստուած եւ միայն պատճառք բարեաց⁵, զխոստացեալ բարիսն լիով եւ յաւելուածով տայ եւ կատարէ: 7 Իսկ զեւթն ամն սովոյն թուի թե երեք ամ եղեւ եւ կէս: 8 Իբր⁶ Նաբաւզոդոնոսորայն եւթն ժամանակն զմի տարին յերկուս բաժանելով, յամառն եւ ձմեռն շքերելով, Հաշուելով զգարունն յամառն եւ զաշունն ի ձմեռն:

9 Անդ, Դանիելի զԱստուած⁸ աղաչելով եւ աստ՝ Յովսեփայ, զի ինայեալք լիցին պատժապարտքն⁹ ողորմելով Արարչին, քանզի յառաջին ամին սպառեցին արծաթ եւ զոսկի¹⁰ եւ յերկրորդ ամին զչորքոտանիսն եւ յերրորդին¹¹ ամին¹² զանձինս եւ զերկիրն վաճառեցին եւ առին կերակուր եւ սերմն՝ ցանեցին յաշունն եւ ի ձմեռն, եւ գարունն եհաս հատ, որ մի այլ տարոյն ի թիւ եւթանն, զոր Յովսէփ իմացոյց անգիտացն, եւ հաւատացին նմա՝ վկայ ունելով զփրձն ի յայլ ասացեալսն:

10 Տեսակն եւ զաւրութիւն բնաբանութեանն այսպէս երեւեցաւ մեզ, դու որ Հանդիպիս զիրաւն գտանելով տուր գոհութիւն Տեառն ի քո տուրսն եւ ի մեր, զի ի գնալ եղբարցն՝ Յովսէփայ յԵգիպտոս երկիցս, յորժամ ծանաւթս ետ Յովսէփ՝ երկուս ասէ անցեալ¹³ է եւ զհինգն թե մնացեալ է՝ երկու ամ եւ կէս է կարծելի: 11 Եւ երբ ասէ. Ել այն ամ՝ զերկրորդէն է կարծելի եւ յերրորդին ըստ մեզն Հաշուոյ վաճառեցան Եգիպտացիքն երկրաւն:

12 Գտեալ է եւ մեր ուրէք եւ¹⁴ գայն, եթե լեալ է սովորութիւն յԵգիպտոսի¹⁵ զերկու յեղանակն տարի ասել: 13 Եւ որպէս զՆեոհինն ասեն ժամանակ եւթն լինել՝ յերիս եւ ի կէս ամս հատեալ:

14 Եթե չտայ ոք աղաւթիցն Յովսեփայ եւ ըստ այդմ տեսցէ, թե եւ ասէ զլիութեանն¹⁶ նոյնպէս զեւթն ամն, ինքն գիտէ, մեք զկարծիսն մեր չինայեցաք ի մերոցս¹⁷, իբր գտէրունիս եւ ոչ զմեր: 15 Սակայն խորհուրդ եաւթանն ի Հանցաւոր կենացս¹⁸ ի զգուշութիւն եղիցի մեզ. լիութիւնն, զոր տացէ Տէր եթե հոգեւոր շնորհ, եթե մարմնաւոր¹⁹ ստացուած, թե եւ զսգայարանս²⁰ եւ զանդամս մարմնոյ ունիցիմք՝ ամբարեսցուք յոգի եւ յանդամս կարեաց եկեղեցոյ, որ է յերկինս գանձել, ըստ տէրունական խրատունն: 16 Քանզի գայ ժամանակ, յորում ոչ ոք կարէ գործել, եւ կլանէ զայժմու կեանքս²¹, որ եւ բնաւ չերեւի, ոչ գոյք եւ ոչ անդա-

1 H չիբ ցոցա
2 H գմեղսն
3 A չիբ եւ
4 A լի
5 A բարւոյ
6 A Իսկ փ/ս. Իբր
7 H չիբ բերելով ... ի ձմեռն
8 A չիբ զԱստուած
9 H արժանաւորն պատժոց փ/ս. պատժապարտն
10 A զոսկի եւ զարծաք
11 A յերրորդ
12 H չիբ ամին

13 A չիբ անցեալ է
14 A գտեալ է ուրեք մեր եւ փ/ս. գտեալ է ...եւ
15 A Եգիպտոսէ լեալ է սովորութիւն փ/ս. լեալ է... յԵգիպտոսի
16 H զսգայարանս
17 A մերոցն
18 A կենցաղս
19 A մարմնական
20 H զսգայարանս
* Հմմտ. Մատթ. 9: 20:
21 H կեանս

մոյ գործ շինուած եւ¹ ոչ ակն տեսանէ եւ ոչ ունկն լսէ, ոչ բերան խաւսի, ոչ ձեռք գործէ, ոչ ոտք գնան եւ ոչ այլ ինչ վճարի, ոչ թուով հոլովման արեգական եւ լուսնի, այլ անշարժ եւ անմտանելի արեգականն կալով ի հաստատութեան անեզրական յաւիտենիւն, զի երեւելիքս այս² առ ժամանակ մի են, իսկ աներեւոյթքն՝ յաւիտենականք՝ յերկարածգեալք ընդ եսն անսպառ հատուցմամբ, առնելով զհատուցումն բարեաց եւ³ տալով զտոկոսիս յանցանացն յանելանելի գեհեանն:

17 Եւ եկաց Յակոբ յեգիպտոս ամս տասն եւ եւթն⁴ (ԽԼ՝ 28). տասամբն նուրբեաց զինքն եւ զեգիպտոս Աստուծոյ ճանապարհ առնելով Տեառն իւրոյ անդ, եւ եւթամբն հանգոյց զկաման Աստուծոյ յախտիցն եղեալ յազգն եգիպտացւոց անուշահոտ վարուքն⁵ իւրովք, յարացոյց տուեալ զինքն եւ զորդիսն իւր⁶ առաջի նոցա, կեցեալ միանգամայն ամս ձնէ (147)՝ հարիւր եւ քառասնովն կատարեալ ըստ Աստուծոյ զկեանսն իւր, ի շնչաբերութենէ քառասնաւրէին⁷ հետէ, չառեալ բնաւ տեսակ աղտեղի հանգուցեալ կողմամբ եաւթանն ի գործոց իւրոց, զոր վաստակեցաւ յերկրի իբրեւ Աստուած յիւրայոցն արժանաւոր չաբաթուն Տեառն:

18 Երդմնեցոյց ապա զՅովսէփ առնել ընդ նմա ողորմութիւն եւ նշմարտութիւն (ԽԼ՝ 29): 19 Ողորմութիւն իբրեւ ինքն⁸ յԱստուծոյ մեծացեալ քան զնա, յորմէ ողորմել պարտի կարաւտելոցն, եւ նշմարտութիւն՝ զի հատուցէ նմայ զպարտսն, որ առաւել սիրէր զնա քան զայլ եղբարսն,

եւ շուտս ցաւեցաւ⁹ վասն¹⁰ նմա¹¹ ի վաճառելն յեղբարցն¹², զի թաղեսցէ զնա յերկրին¹³, զոր խոստացեալ է Աստուծոյ տալ նոցա, զի ի պատճառս նախնեացն յաւժարեսցին որդիք նորա ելանել ի ժամանակի իւրեանց¹⁴, զի¹⁵ թե ոչ կամեցին՝ յանդիմանեսցէ հաւատ մեռելոյն զկենդանիսն:

20 Եւ երկիր եպագ (ԽԼ՝ 31*):

21 Յայտ է՝ ողորմութեանն¹⁶, զոր խոստացաւ առնել: 22 Իսկ՝ Ի գլուխ գաւազանիմ (ԽԼ՝ 31*), զի նստեալ ի մահիճս գաւազան ունելով ի ձեռն, նշանակելով զերկրպագելի¹⁷ փայտն փրկութեան:

23 Ազդ եղեւ Յովսէփա թե հայր քո նեղեալ է ի ցաւոցն (ԽԼ՝ 1). քանզի յղի գոլով բնութիւն¹⁸ ստիպիցէ ի ծնունդ մահն իբրեւ¹⁹ զմանուկ: 24 Եւ²⁰ գայ Յովսէփ որդովքն, զի առցէ զաւրհնութիւնսն²¹, զոր առեալ էր նորա²² յիւրմէ հաւրէն, զի մի տարցի ի զնայն աստի, չլինելով ոք արժանի, որ հայցէ²³ գտանէ: 25 Զարացաւ Իսրաէլ եւ նստաւ (ԽԼ՝ 2): 26 Յայտ է՝ անուանն շնորհն զաւրացոյց զնա՝ տալ զոր առեալն էր:

27 Աստուած իմ, ասէ²⁴, երեսեցաւ ինձ եւ արհնեաց զիս²⁵ եւ ասէ. անեցուցից եւ բազմացուցից²⁶ զբեզ²⁷ (ԽԼ՝ 3). յիմ անուն,

1 A շինուած եւ ոչ անդամոց գործել փխ. եւ ոչ... եւ
 2 A ասէ փխ. այս
 3 H չիբ եւ
 4 H ժե փխ. տասն եւ եւթն
 5 H վարիւմն
 6 A չիբ իւր
 7 A ձ եւ Խ-ովն փխ. հարիւր եւ քառասնովն
 8 A չիբ ինքն

9 A ցաւեց
 10 H չիբ վասն
 11 A մնա
 12 H եղբարցն
 13 H յերկիրն
 14 A իւրում
 15 A եւ փխ. զի
 16 A ողորմութիւնն
 17 A երկրպագեալն
 18 A քնութեանս
 19 A իրր
 20 A չիբ եւ
 21 H զարհնութիւնն
 22 H նա փխ. նորա
 23 A արժանաւոր փխ. արժանի, որ հայցէ
 24 H չիբ ասէ
 25 A չիբ զիս
 26 H անեցիր եւ բազմացիր
 27 H չիբ զբեզ

ասէ, հան զերկու¹ գորդիքն² քո, զի աճես-
ցին ի Տեառնէ, Իբրեւ զՌոբէն եւ զՄաուր
եղիցիմ (ԽԲ 5), թերեւս զի անկեալ³ է
փուտ մեղաց ի նոսա իբրեւ յարմատս ծա-
ռոց յորմէ ոչ աճեն, նոցա փոխան եղիցին,
ասէ, եւ յոյս տայ նմա այլս ծնանել, զորս
յիւր անուն կոչեսցէ, որք զնորայն եւ ի
նմանէ առցեն զաւրհնութիւնս⁴ եւ յանուն
եղբարցն կոչեսցին ի յառնուլն զժառան-
գութիւնսն իսրաեղացի, յիմ անուն ասէ՝ եւ
ոչ եւս⁵ Եփրեմեան եւ Մանասեան եւ Յով-
սէփեան յանուն քո, զի այս է ասելն ա-
նուն յաւիտեանական տաց նոցա եւ մի
պակասեսցին⁶, տա եւ զանուն տեղոյն, որ
անկ⁷ է նոցա:

28 Մեռաւ, ասէ, մայր քո յասպարիսիմ
Քափրաթայ եւ այն է՝ Բեդղեմեմ⁸ (ԽԲ 7),
ուր եւ⁹ ազբիւր աւրհնութեան բղխելոց է,
ուստի եւ¹⁰ զրկեցին Յուդաեանքն:

29 Հարցանէ ցնա վասն որդւոցն.
Զի՞նչ են դո՞ւս (ԽԲ 8)՝ պատճառս տալով
խաւսել Յովսէփայ գոհանալով զԱստու-
ծոյ, մատոյ, ասէ, եւ համբուրեաց (ԽԲ 9)՝
Առեալ¹¹ ի գիրկս (ԽԲ 10)՝ պատկառելով
ցաւոցն, թոյլ տա ցնծալ յԱստուած որպէս
գինեալ:

30 Եւ աստուածարեալ եւս¹² ահա, ա-
սէ, երեսաց (ԽԲ 11), այսինքն ասէ¹³՝ փոր-
ձիւ գիտեմ, զի Աստուած ընդ իս է: 31 Յե-
րեսաց բոց չեղէ կարաւտ, որում չկայր
ակն եւ յաւելուածով զաւակացդ¹⁴ քոց,

զոր¹⁵ ետ Աստուած: 32 Եւ համեալ Յովսէ-
փայ ի գրկացն երկիր պագիմ (ԽԲ 12)
չնորհացն Աստուծոյ, որ ի նմա՝ տուողին
նմա զինքեանս¹⁶:

33 Դարձեալ ածէ առ հայրն հանդեպ
կացեալ¹⁷ երեսացն, զանդրանիկն յաջն
տանելով: 34 Եւ զի ծանրացեալ էին աչքն
նորա¹⁸, որպէս զԻսահակայն¹⁹, զի կրեսցէ
գիտաբիլն հաւրն եւ տացէ զաւրհնու-
թիւնն²⁰ կրսերոյն²¹՝ ձգմամբ ձեռացն, ո-
րում աւգնէ²² Յովսէփ զերեցն ասելով թե
սայ է, կարծելով թե՝ ոչ գիտէ: 35 Գիտեմ
(ԽԲ 19) ասէ, այլ զոր առի, տամ զիրիցու-
թիւնն կրսեր²³ գոլով, եւ աւրհնեաց զնո-
սա՝ յիշելով զհարսն²⁴, որք հաճոյ եղեւ
Աստուծոյ, եւ վասն այնորիկ կերակրեաց
գիս Աստուած ի մանկութենէ իմմէ (ԽԲ
15) եւ ոչ Յովսէփ: 36 Եւ²⁵ Իրեշտակն, որ
փրկեաց գիս յամենայն չարէ (ԽԲ 16),
վասն զի²⁶ յայն ձեռնադրեցան հրեշտակք՝
խնամել զտկարութիւն մարդկան, որք ոչ
պահեցին զոյժս²⁷ զաւրութեանն, զոր ա-
ռին²⁸ պատկեր գոլով Աստուծոյ²⁹, իսկ նո-
քա ունին զոր առին եւ հզարք են զաւ-
րութեամբ ի յառնելն զպատուիրեալսն ի
Տեառնէ: 37 Եւ դարձեալ զանձնաւորու-
թիւն երրորդական աստուածութեանն յի-
շէ, զԱստուածն (ԽԲ 15) կրկնելով երկիցս՝
զՀայր եւ զՀոգի ազգելով, եւ զմարդա-

1 A չի՞ գերկու
2 H որդիքն
3 H անգեալ
4 A զաւրհնութիւն
5 A չի՞ եւ ոչ եւս
6 A պակասեսցէ
7 H անգ
8 H Բեդղեմեմ A Բեդղեմ
9 A չի՞ եւ
10 A չի՞ եւ
11 A առ
12 A չի՞ եւս
13 A չի՞ ասէ
14 H զաւակաց

15 H չի՞ գոր
16 A գինեանս նմա
17 A կալով
18 H չի՞ նորա
19 A Սահակայն
20 H զիրիցութիւնն
21 A կրցելոյն
22 A աւգնեաց
23 A կրցեր
24 H գիտեմ
25 A չի՞ եւ
26 A ֆանգի
27 H պահեցա՞մ գոյժ
28 H առա՞մ
29 A յԱստուծոյ պատկեր գոլով նմա փ/ս. պատկեր
... յԱստուծոյ

ցեալն Աստուած հրեշտակ (ԽԹ 16) կոչեաց, որ եւ հրեշտակավայելուչն խաւսեր բան. զոր լուայ ի հաւրէ, ասէ՛, ծանուցի ձեզ, ասէ: 38 Եւ Եսայի կոչէ զնա Հրեշտակ, մեծի խորհրդոյ^{2*}՝ յայտնիչ ստուգելով զկնի ճշմարիտն³ Աստուած հզար կոչեցեալ զնա եւ հայր հանդերձելոյ աշխարհին:

39 Եւ ետ գեփրեմ յառաջ քան զՄանասէ (ԽԹ 20). եւ տես զթագաւորական շնորհն, որ տալոց էր նմա Աստուած ի վերայ Ժ (10) ցեղիցին՝ զԽաչն նկարելով տարածմամբ ձեռացն ի գլուխս մանկանցն: 40 Եւ զի յաջն Յովսէփայ գոյր աւրհնութիւն բաւական համարի Մանասէի, եւ ետ զՍիկիմ Յովսէփայ, որ իգամուլութեամբ աւերեցաւ, զի շինեսցի ողջախոհութեամբ նորա:

41 Եւ զի ասէ. Առի սրով եւ աղեղամբ (ԽԹ 22). կամ զորդւոյն իւր համարի եւ կամ զաղաւթսն⁴ կոչէ սուսեր եւ աղեղն, որով փրկեցան ի վրիժառուացն⁵ Սիկեմայ⁶ եւ կամ ընդ ոչխարսն, զոր ետ ի գինս տեղոյն, սուսեր եւ աղեղն ետ: 42 Այս Սիկիմ է, որ ի գալն ի Միջագետաց բնակեաց⁷ Յակոբ եւ կանգնեաց սեղան, եւ ոչ է այն, զոր Աբրաամ գնեաց յորդոցն Քետա, որ Սիքէմ⁸ կոչի, որ⁹ եղանէ յայրի անդ նախահայրքն:

43 Սիկիմն Սիւքարն է, որ ասէր կինն սամարացի ընդ Տոէրն¹⁰, թե՛ Դու մեծ ո՞ք ես քան զհայրն մեր զՅակոբ^{11*}: 44 Եւ Քեր-

րոն մաւտ է¹² ի Սիկիմ Բ (2) աւուր ճանապարհ ընդ մէջ է այսմ զոր եւ¹³ Աբրաամ ստացաւ:

45 Անդ ասաց զնել զինքն¹⁴ Յակոբ ի Մամբրէ, զի իւրն ի Սիկիմ դնիցի մինչեւ եկեսցէ այն, որ սրբէ զամենայն արարածս անխտրութեամբ, զի եւ¹⁵ ուր դնիցին սուրբ է, նմին իբր զերկրպագութիւնն արար ի ծագ գաւազանին, զի թագաւորութիւն եւ քահանայութիւն եւ մարգարէութիւն նմա մնա յառնուլ¹⁶ եւ տալ Խաչին երկրպագուաց:

46 Այնուհետեւ ատեան¹⁷ ուղղէ իբր զթագաւոր՝ կոչելով զորդիսն, վասն զի¹⁸ կեանք արդարոցն նահատակութիւնք են հոգեւորք եւ վաղճան¹⁹ նոցա փոխումն ի լաւագոյն կեանս եւ յաշխարհս. գիտեն ուր երթան եւ խնամ տանին աստեացս, աստուածագգեաց լինին եւ մարգաէանան զհանդերձեալսն²⁰: 47 Եկայք, ասէ, եւ պատմեցից ձեզ ինչ²¹, որ պատահելոց է ձեզ ի վաղճանին, զի Աստուած արկանէ ի սիրտ եւ տա խաւսել զապայսն²², զի զբարին լսելով արժանի արասցեն զանձինս եւ ի չարէն զարհուրեալ²³ զգուշացին ի մեղաց, վասն որոյ գալոցն է, եւ զեղեալ յանցանս քաւեսցեն:

48 Իբրեւ Ռոբէն, որում ասէ անդրանիկ եւ սկիզբն գաւրութեան (ԽԹ 3*), որպէս թե ասիցէ²⁴, զայլ կին ոչ գիտացի ես

1 A չիք ասէ

2 H խորհրդոյ հրեշտակ

* Լ:*. Թ: 6

3 A զկնի ճշմարիտն ստուգելով

4 A գաղաւթն

5 A վրիժուցն փխ. վրիժառուացն

6 A Սիւքեմայ

7 H բնակեաց

8 H Սիւքիմ

9 A ուր

10 A ցՏէրն փխ. ընդ Տէրն

11 A չիք Յակոբ

* Թ:Վ: Գ: 12

12 A չիք է

13 A չիք եւ

14 A զիւր մարմինն փխ. զինքն

15 A չիք զի եւ

16 H առնուլ

17 H ատեն

18 A քանզի

19 H վաղջան (այսպէս եւ այլուր)

20 H զհանդերձեալն

21 H զհանդերձեալն փխ. ձեզ ինչ

22 A զապագայսն

23 H զարհուրել

24 H ասէ

մինչեւ ցմայր քո, վկայ զԱստուած կոչելով եւ զամենայն որդիան, զի անդրանիկ ասելով զանձին պարկեշտութիւն յայտնէ:

49 Ողորմիմք ամենեցուն, որ ոչ այսպէս պարկեշտութեամբ պահեցին զանձինս, մինչեւ ստեղծեցի նմա կին ի կողէ խնամաւքն Աստուծոյ եւ ոչ մոլեգին ցանկութեամբ:

50 Խստութեամբ զնացեր (ԽԹ՝ 3բ), այսինքն՝ զանուղայ եւ զխոշոր ճանապարհն գնացեր եւ ոչ զանդրանկի, վասն որոյ կորուսեր զնա: 51 Երկուս չարիս գործեցեր, զի պղծեցեր զսերմն քո եւ այն՝ չար բո անկողնաւ, վասն որոյ երկուց մահուց ես արժանի¹:

52 Իբրեւ զջուր մի՛ եռացիս (ԽԹ՝ 4): 53 Ծառ ոռոգեալ յարմատն² եւ ջրով³ եռայ ի վեր յոստսն⁴ եւ ի ծայրսն շարժելով գտունկն⁵ ի տերեւ եւ ի⁶ ծաղիկ եւ ի⁷ պտուղ, ի գոյն, ի հոտ եւ⁸ ի համ: 54 Եւ թե չեռայ ջուրն ի վեր⁹՝ գաւսանայ եւ չորանայ ի յայրումն հրոյ: 55 Զի յաւտար աղբերէ արբեր, ասէ, Իբրեւ զջուր մի՛ եռացիս ի վեր¹⁰: 56 Այս անէծք եհատ զարմատս տնկոյն եւ չորացոյց կիսովին, զի թագաւոր եւ քահանա ի սորայ ազգէն ոչ եղեւ. մարգարէ թերեւս եղեւ, եւ բացաւ դուռն ապաշխարութեան յաւրհանութենէն Մովսիսի¹¹, զի ոչ կամի աստուած զմահ մեղաւորին: 57 Այլ եբրայեցին ասէ. Խրամատեցար իբրեւ զջուր մի՛ մնացես, զի բնական ակրինացն զիւրում հատեր պարս-

պին¹² որ պահեր ի բազում ազգս: 58 Եւ դու խրամատեցար կոխեալ¹³ ետուր զքեզ չարին, իբրեւ զջուր, որ մտանէ¹⁴ ի գետին եւ ոչ եռայ ի վեր: 59 Եւ եղեւ այս ի Դադան եւ յԱբիրոն, որ բացաւ երկիր եւ եկուլ զնոսա, զորոյ զողորմն տեսեալ Մովսիսի եւ զապաշխարելն Ռոբէնի զիտացեալ ասաց. Կեցցէ Ռոբէն եւ մի՛ մեռցի¹⁵:

60 ԶՇմաւոն եւ Ղեւի եղբարք կատարեցին զանարեւոթիւն (ԽԹ՝ 5). զի թեպէտ հանցաւորն՝ եւ սեղեխն յիրաւի մեռաւ¹⁵, այլ ոչ՝ ամենայն բազմութիւնն:

61 Ի խորհուրդս նոցա¹⁶ ոչ եմուտ անձն իմ (ԽԹ՝ 6): 62 Վասն¹⁷ զի ոչ արարին զնա խորհրդակից ի ժամ ժողովոյն¹⁸, անիծանէ զցասումն եւ զսրտամտութիւնն¹⁹ նոցա²⁰, որ ի մաւրէն չարեաց եւ՝ ոչ զորդիան, զի նա զայրացոյց զնոսայ, որ մարդասպանն էր²¹, զի գործելով զայն ջնջեցին ի շրջակայ ազգացն: 63 Զի արք, որք ընդ թագաւորին²² կամսն հային եւ գործեն ներքինիք²³ կոչին եւ եթէ²⁴ ելանեն՝ արտաքինքն:

64 Եւ²⁵ զի յԱստուած արժան էր հայել, եւ նա ոչ թողոյր²⁶ նոցա զվնասն, անձամբ արարին եւ խաբէութեամբ եւ այն ուխտիւն Աստուծոյ, զոր թեթեւացուցին

1 A արժանի ես
2 A յարմատ
3 H չի՛ք եւ ջրով
4 H ի յոստն ի վեր փխ. ի վեր յոստսն
5 H զմուկն փխ. զտունկն
6 A չի՛ք եւ
7 A չի՛ք ի
8 A չի՛ք եւ
9 A ի վեր ջուրն փխ. ջուրն ի վեր
10 H չի՛ք ի վեր
11 A Մովսեսի

12 A իւրում (չի՛ք պարսպին)
13 A կոխել
14 H մտէ
* ԲՕբ. 1, 9-6
15 H հանցաւորին վրեժխնդիր եղին կատարեցին զչարն յիրաւի մեռան փխ. հանցաւորն եւ սեղեխն յիրաւի մեռաւ
16 H խորհուրդ (չի՛ք նոցա)
17 A չի՛ք վասն
18 H ժողովելոյն
19 A զսրտամտութիւն եւ զցասումն
20 H չի՛ք նոցա
21 A է
22 H թագաւորի
23 A նոքին փխ. ներքինիք
24 A չի՛ք եթէ
25 A չի՛ք եւ
26 H չթողոյր փխ. ոչ թողոյր

զմեծ խորհուրդն հայհոյութեան, հեթանոսացն պատճառք եղեն, թեպետ եւ նորա¹ ի սուր հրաւիրեալք էին եւ արժանի, այլ չեւ եւս էր լցեալ մեղք ամուրհացոց²: 65 Ցանկեցից, ասէ, եւ ցրուեցից (ԽԹ 7), ի մի չարիս միաբան եղեն ասէ. ցրուեցից զնոսա ի միմեանց:

66 Իբրեւ զՓենեհէզ³ եւ զՋամբրի հակառակ միմեանց, այլ սակայն, զի մանկունք էին եւ զնախանձ քեռն իւրեանց զզեցան⁴ եւ մասնաւոր ինչ զաւրինացն կամս արարին, սրբեցան սուրբ նոցա եւ ոչ յիշեաց Աստուած նոցա զմեղս մանկութեանն նոցա⁵ զի⁶ Ղեւի⁷ իբրեւ զաղ եւ զհամեմ ցրուեցաւ⁸ ընդ ազգսն քահանայել եւ Շմաւոն՝ դպրութեամբ ուսուցանել զԻսրայէլ, այլ⁹ երեք են¹⁰ սոքա, որք անիծանն. անդրանիկն Ռոբէն՝ անդրանիկ ժողովուրդն հրէիցն, որ յանդգնութեամբ զնաց ընդ Տեառն մերոյ եւ պղծեաց զհանգիստն Աստուծոյ՝ զտաճարն, զոր¹¹ զՏէրն նորա սպանանելով: 67 Եւ քահանայք եւ դպիրք ի սոցա ցեղէն էին՝ խաչաւղքն Քրիստոսի¹²:

68 Յուդա, զվեզ արիմեսցեն եղբարք քո, ձեռք քո ի վերայ թիկանց թշնամեաց քոց: 69 Երկիր պագցեն քեզ որդիք հարք քո կորիւն առիւծու Յուդա: 70 Ի շտաւեղէ ելեր որդեակ, ելեր բազմեցար, մնջեցեր իբրեւ զառիւծ եւ իբրեւ զկորիւն¹³ առիւծու, եւ ո՞յ¹⁴ յարուցանիցէ¹⁵

զվեզ: 71 Մի պակասեցէ իշխան Յուդա եւ մի՛ պետ յերանաց նորա մինչեւ եկեսցէ այն, որոյ իւր է իշխանութիւնն եւ¹⁶ թագաւորութիւնն, եւ նայ է ակնկալութիւն ամենայն¹⁷ հեթանոսաց: 72 Կապեսցէ գորթոյ զյաւանակ իւր եւ զգնդակէ որթոյ զաւանակ¹⁸ իշոյ իւրոյ, լուսացէ զինով զպատմունման իւր եւ արեամբ խաղողոյ զհանդերձս իւր, ուարթագին են աչք նորա ի զինւոյ եւ սպիտակ ատամունք նորա քան զկաթն (ԽԹ 8-12):

73 Ասաց Աստուած բարեկամին իւրոյ յետոյ եւ¹⁹ մարգարէին առաջնոյ²⁰ Մովսէսի խորհուրդ իմ նախ ինձ եւ²¹ ապայ իմոցն է յայտնի²²: 74 Իսկ որք չէն ընդ իս եւ չէն յիմոցն ծածկեալ եւ թաքուցեալ²³ է ի նոցանէ: 75 Արդ, ընդ Աստուծոյ եւ յաստուածայնոցն ո՞րք այլ քան եթէ²⁴ զարժանաւորն իւր եւ զհաւատարիմն²⁵ Յակոբ նահապետն, զհայրն երկոյտասան ազգացն, ըստ պայծառութեան աստեղաց երկնից եւ ըստ յուրութեան աւագոյ առաքին ծովու ծանրացելոցն մեղաւք, զորոյ զմիտսն ճառագայթիւք լցին կաճառք աստեղաց երկնաւոր զարմիցն արդարոցն դասուց, եւ մարգարէիցն հանդէս, եւ առաքելոցն պարք, որք ի նմանէ սերելոց էին, եւ մանաւանդ իմանալի արեգականն արդարութեան, որ ի նմանէ անթաքչելի ծագելոց էր²⁶, իբրեւ զփայլակն որ ելանէ յարեւելից եւ երեւի մինչեւ ի մուտս արեւու²⁶՝ զթեւս բժշկութեան արձակելով ընդ հիւսի-

1 A չիք եւ նոքա

2 A չափ մեղաց նոցա փխ. մեղք ամուրհացոց

3 A Փենեհէս

4 H սգեցան

5 A չիք նոցա

6 H չիք զի

7 A չիք Ղեւի

8 A ցրուեցաւ Ղեւի

9 A զի փխ. այլ

10 A երեքեան փխ. երեք են

11 A չիք զոր

12 A Տեառն

13 A կորիւն

14 A ո փխ. եւ ո՞յ

15 H յարուցանէ

16 A չիք իշխանութիւնն եւ

17 H չիք ամենայն

18 H զովանակ

19 A չիք բարեկամին իւրոյ յետոյ եւ

20 A առաջնոյ եւ յետ բարեկամին իւրոյ

21 A չիք եւ

22 Ե. Ի. 16

23 A թագուցեալ

24 A չիք եթէ

25 A չիք եւ զհաւատարիմն

26 A ծագելոց էր անթաքչելի

26 A արեւմուտս

սի¹ եւ ընդ հարաւ. զորոյ զյիշատակն անհնար է մոռանալ ի տուէ վայելմամբ եւ ի գիշերի ակնկալութեամբ², յուսով, զորոյ զհանգամանքն ուսանիմք ի ստուերին վարժելով ի հաւատս մեծի ճշմարտութեանն³: 76 Քանզի թե յառաջ քան զլինելն աշխարհի ընտրեցաւ⁴ սուրբ եկեղեցի, ըստ Պաղոսի, ապա յայտ է թե ընդրեալքն նորա ի ժամանակի իւրեանց ոչ անծանալթացան ի նմանէ, յորոց մի է⁴ եւ մեծն քան զյոլովս՝ տեսողն⁵ զԱստուած, գրկախառնեալ ի մարտս գաւտեկոսութեան մինչեւ ցառաւաւտն: 77 Որ եւ մանաւանդ կարաւտեալ մարդասիրին Աստուծոյ գայ ի համբոյր ծարաւելոյն նմա՝ արդարոյ վարժելով զնա պատերազմել ընդ մեղս եւ ընդ ախտս հոգւոյ եւ ընդ մեղսասէր մարդկան, որ կամին զանմեղան ձգել արտաքոյ կամացն եւ աւրինացն Աստուծոյ: 78 Վասն որոյ զպատճառսն եւս ասէ ի վերայ. Բուժկալեցեր ընդ Աստուծոյ, եւ ընդ մարդկան զարարոյ լիջիս⁶ (ԼԻ՝ 28): 79 Եւ⁷ զի մի հպարտացի՝ կաղ առներ զնա ի յանդիմանութիւն տկար բնութեանս մերոյ, զի մի՛ կարծեսցէ առաքինութեամբն իւրով եւ սիրովն առ Աստուած հաւասարել առաքինութեանն եւ սիրոյն Աստուծոյ, որ առ մեզ: 80 Արդ⁸, այս Յակոբ տեսող այսպիսի սքանչելեաց եւ Աստուծոյ կերպացելոյ ի ձեւ հասակի առն, որպէս երբեմն ի գլուխ սանդղոցն հաստատեալ ի Բեթել, որով եւ կոչեցաւն Իսրայել՝ Տեսաւդ Աստուծոյ՝ կրելով միշտ յինքեան զշնորհս երեւեցելոյն եւ զտեսողական հոգին ի ժամ հրա-

ժարմանն անցաւոր⁹ յանցաւոր կենցաղոյս, յորում առաւել հոգեխառնի եւ աստուածարէ հոգի ի բաց կալով ի թանձրամած մթախառն մարմնական կենացս հայի ի վերայ¹⁰ բազում ժամանակաց¹¹ եւ տեսանէ որ ինչ լինելոց է ի դարս ժամանակափոխութեան որդւոց իւրեանց եւ թոռանց, ըստ արժանեաց նոցա եւ կամ ըստ գթութեան բարերարութեանն Աստուծոյ:

81 Եւ ասացեալ ի վերայ երից որդեացն¹² զպատուհաս հանցանաց նոցա, թափելով զնետս բարկութեան ի կապարձացն անիծիցն ի վերայ Ռոբէէնի¹³, Շմաւոնի եւ Ղեուեայ, եւ¹⁴ զահի հարան ամենայն որդիք նորայ, գուցէ այնպիսի գաւազանաւ փշալից տանջելոց է զամենեսեան: 82 Այլ իբրեւ եկն եհաս առ սքանչելի որդին իւր, որոյ անունն շնորհ եւ գոհութիւն կոչի, որ եւ¹⁵ ասաց մայրն ի ծնանիլն Աստուծոյ. Գոհանամ գբեմ. այլ եւ՝ խոստովանեալ եւ երկրպագեալ:

83 Փակեցաւ դուռն անիծից եւ դարեաց ցասումն բարկութեան, ամաչեաց չարութիւն բանսարկուին, որ ընդ ակամբ հայեր կորուսանել զագգս մարդկան եւ ի ձեռն Յակոբայ անիծիցն զուարճանայր, որ եւ ի Յուդա եկեալ հարաւ ի դիմի: 84 Իբր եւ զլեառն մեծ¹⁶ ի դէմ անկեալ ոչ ետ թոյլ յառաջանալ¹⁷ դառնագոյն բանիցն, այլ ասաց¹⁸. Յուդա գբեզ արհնեսցեմ եղբարք քո (ԽԹ՝ 8*), ոչ եթե շատ ինչ բարի ետես ի նա գործեցեալ, բայց թե¹⁹ ի թափելոյն զՅովսէփ ի սպանութենէ եղբարցն, այլ զի

1 H հուսիւս

2 A ակնկալութեան

3 H նշմարտութիւնն

4 Եւսէ. Լ. 4

4 A չիք է

5 A տեսանողն

6 H լիցիս

7 A չիք է

8 A չիք Արդ

9 A չիք անցաւոր

10 H չիք ի վերայ

11 H ժամանակաց վերայ

12 A որդւոցն

13 H Ռոբիմի

14 A չիք է

15 A չիք է

16 A ընդ փիս. ի

17 A առաջ անցանել փիս. առաջանել

18 A ասէ

19 A չիք է

փայլատակեաց ճառագայթք ճշմարտութեանն խոստացեալ աւետեացն զաւակին Աբրաամու, Իսահակայ եւ Յակոբայ, յորմէ աւրհնին¹ ամենայն ազգք², նախ ի Դաւիթ ստուերագրեալ եւ խոստմանն առաւել եւս ճշգրտեալ ի պտղոյ յորովայնի նորա նստուցանել յաթոռ նորա. եւ ապայ ի կարգի ըստ³ ժամանակաց ի մարգարէիցն հաւատարմացեալ ի բանս եւ յաւրինակս յայտնիս եւ ի լրման աւուրց արդիւնացեալս⁴: 85 Քանզի թագաւորեալ Դաւիթ⁵ յաղթութեամբն Գողիադու. թե որ⁶ գառաջին նախանձեին եղբարքն, այլ ի տեսանել զչնորհս արքայութեանն ի վերայ նորա խաղացեալք աւծմամբն Սամուելի, աւրհնեցին զնա եւ ասեն՝ Կեցցէ արքա: 86 Նոյնպէս եւ ըստ կարգի զնստեալսն յաթոռ նորա, մինչեւ եկն այն, որ ասաց Գիդատոս, թե՛ Ի⁷ յայդ իսկ ծնեալ եմ ես⁸ ի թագաւորութեան, յառաջ քան զարուսեակէ, եւ Ի դոյն եկեալ յաշխարհէ, ըստ Գաբրիելի թագաւորեալ ի վերայ տանն Յակոբայ ի յաւիտեան, զոր աւրհնեն ամենայն արարածք՝ հրաւիրեալք ի Դաւթայ եւ յերից մանկանցն իբրեւ զարարիչն իւրեանց: 87 Իսկ ծնեալքն անախտ ի կոյս աւագանէն, զորս ոչ համարի ամաւթ եղբարս անուանել, աւրհնեցին եւ աւրհնեն զնա յաւրհնութիւն նոր, ուսեալք ի Դաւթայ, ընդ հաւր եւ ընդ ամենասուրբ⁹ Հոգւոյն Սրբոյ¹⁰ զերիս անձինս ի միում բնու-

թեան եւ ոչ ըստ հնոյ հրէական աւրհնութեանն:

88 Նախ դասքն սուրբ աւրհնեցին աւագեալքն ի հաղորդելն¹¹ ի վերնատանն, ըստ Աւետարանին, որ ասէ¹². Աւրհնեցին¹³ եւ ելին ի լեառն Ձիթնեաց՝ եւ տեսին զՏէրն ելեալ յերկինս ի Ձիթնեաց լեռնէն¹⁴, եւ երկիր պագեալ դարձան յերուսաղէմ¹⁵: 89 եւ եին, ասէ, հանապազ ի տաճարին, գովեին եւ արհնեին զԱստուած¹⁶: 90 Որպէս եւ արդ մանկուցն հաւատոյ ի սուրբ եկեղեցւոյ առնեն¹⁶ աստուածաբանելով զխաչեալն, աւրհնեն¹⁷ զնա ի վերա աթոռոյ արքայութեան իւրոյ՝ խոստովանելով ամենայն լեզուի, եթե՛ Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հաւր:

91 Ձեոք քո ի վերա թիկանց թշնամեաց քոց (ԽԹ 8է), Յուդայեան¹⁸ Քաղերայն ի վերայ Քանանացւոցն¹⁹, յորոց սրբեին զերկիրն աւրհնութեամբն Մովսէսի²⁰ եւ Յեսուա զաւրացեալ. լրտեսքն²¹ քաջահաւատ եւ կորովի, եւ Դաւթի ձեռքն յերմաւոցն եւ Մովսէսացւոց եւ Փղշտացւոցն եւ Ասորեստանեաց: 92 Յամենայն ժամանակս իւր, յորժամ փախստական²² լինելով դարձուցանեին թիկունս, յորմէ անգերծ եղեալ հարուածս ընդունեին ի թիկունս²³ եւ ոչ յերեսս, իբրեւ զայն²⁴ զնաց Դաւիթ ար-

1 A արհնեցան
 2 H ազգ
 3 A ըստ կարգի ժամանակաց փխ. ի ... ժամանակաց
 4 A արդիւնացեալ
 5 A Դաւթի
 6 A թեպէտ փխ. որ
 7 A ես փխ. ի
 8 A չի՞ ես
 9 Յ՝ՎԸ. ԺԸ 37
 10 Ս՝ՂԸ. ԸԹ 3
 11 Յ՝ՎԸ. ԺԸ 37
 12 H չի՞ ամենասուրբ
 13 A չի՞ Սրբոյ

11 H հաղորդայն
 12 A չի՞ որ ասէ
 13 A արհնեցին ասէ
 Գ՝ Մ՝ՊԸ. Ի, Գ 30
 14 A լեռնէն H չի՞ եւ
 15 H ի յերուսաղէմ
 Ե՝ Ղ՝Վ. ԻԳ 53
 16 H չի՞ առնեն
 17 H արհնին
 18 H Յուդային
 19 H Քանանացոց
 20 H Մաւսէսի
 21 A լրտեսն
 22 A փախստայն
 23 A չի՞ յորմէ ... ի թիկունս
 24 A որպէս փխ. իբրեւ գայն

կանել զձեռն իւր ի վերայ Եփրատ գետոյ հարկանէր զարքայն Սուբա ի հազարս եւ ի բիւրս եւ ի հազարս¹ կառաց եւ հեծելոց: 93 Իսկ Տէրն Դաւթի ըստ Աստուածութեանն եւ Որդին նորա² ըստ մարդկութեան³ զաղամաստեղծ ձեռսն եւ զերկնապարզ բազուկսն տարածեաց ի վերա Խաչին, կոչեաց զաշխատեալ եւ զբեռնաւոր ազգս հեթանոսաց, որ ի պաշտոնէ⁴ դիւաց եւ ի զոհագործութենէ⁵ նոցա⁶, ի շինուածս մեհեանաց եւ ի կանգնուածն բազնաց, զվաստակեալսն եւ զծանրաբեռնեալսն մեղաւք մեծարելով ի գիրկսն խոստացաւ հանգիստ, զոր լուեալ չար իշխանին աշխարհի, որ չարութեամբն իւրով զոչ իւրն, այլ զտեառն իւր⁷ ունէր: 94 Ապստամբն ծառայն անկեալ⁸ արտաքս յիշխանութենէ, թիկունս դարձուցեալ փախչէր⁹ անկեալ ի յորջն դժոխոց կարծէր թագչել¹⁰, ուր եւ անդ ժամանեալ կողոպտէր ի նմանէն¹¹ զհոգիսն, որ յԱզամայ հանելով անդի:

95 Իսկ թշնամին լի ամաւթով ի տեառնէ իւրմէ միշտ փախըստեայ է, ծածկելով զամաւթալից երեսս իւր ի Քրիստոսէ եւ յիւրոցն, որք հրաման առին կոխել զաւճն կամակար եւ զվիշապն փախուցեալ, զորոյ զգուլին ջախջախեաց Տէրն ի վերայ ջուրցն Յորդանանու:

96 Երկիր պագցեմ քեզ որդիք հաւր քն (ԽԹ՝ 84). Դաւթի երկիր պագին երկոտասան ցեղքն իբրեւ թագաւորի որդիքն Աբրահամու, իսկ Տեառն մերոյ երկիր պագին ազգք եւ ազինքն յամենայն լեզուաց, որք

հաւատացին. եւ ի վախճանի աշխարհիս գրեալ է՝ զամենայն ազգն, այսինքն՝ հրեշտակք եւ մարդիկ¹²:

97 Ո՛յ արար զիրեշտակս իւր հոգիս՝ եւ յորժամ միւսանգամ մուծցէ զանդրանիկն յաշխարհ, ասէ. երկիր պագցեմ մմայ ամենայն հրեշտակք Աստուծոյ¹³, զի եւ նոքա որդիք կոչին Աստուծոյ: 98 զոր եւ նախ արեւելեան թագաւորքն զուշակեցին զամենայն զազգաց զերկրպագութիւն, որք եկեալ յերուսաղէմ ասեին. Ուր է որ ծնաւ արքայն Հրէից, զի տեսաք զաստղն մորա յարեւելս եւ եկաք երկիր պագանել մմա¹⁴. վասն զի երկիրպագութիւն մանաւանդ Աստուծոյ վայել է քան¹⁵ մարդոյ, որ պատկեր է Աստուծոյ եւ ոչ Աստուած, մինչ եւ մարդացաւ Աստուած անճառաբար: 99 Վասն որոյ ի չորրորդին տեսեալ Յակոբայ զչորեքնիւթեա¹⁶ բնութիւնս զարարչագործն եկեալ ի մարդեղութիւն յերկրպագութիւն նմայ յորդորէ զորդիսն Ազամայ բնութեամբ եւ զորդիսն Աստուծոյ շնորհաւք ի նմանէ տուեալ իշխանութիւն: 100 Որք ընկալանն զնա, ասէ¹⁷. Ետ նոցա ասէ իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել, որք պարտին զձեռս ի թիկանց թշնամեաց ունել¹⁸: 101 Չիք չարագոյն թշնամի քան զմեղս, որ երբ¹⁹ զաւրանայ անդամնաւորի եւ մարդանայ եւ սատանայի լինի դարմանիչ, զոր որդիքն Աստուծոյ տեսեալ զանգէտսն ծանրաբեռնեալ՝ ողորմին եւ բուռն հարեալ յերկիր կործանեն չարժողաւն իւրեանց զինուորաւ, որ առնէ

1 A չիք եւ ի հազարս
 2 A չիք մորս
 3 A մարդեղութեանն
 4 A պաշտոնն
 5 A զոհագործութիւնս
 6 A մոցունն
 7 A չիք իւր
 8 A արտաքս
 9 A փախչէր
 10 H քաջել
 11 A մմանէ

12 H մարդկան
 13 Ս՝Պ՝. ՆՊ. 4
 14 A չիք Աստուծոյ
 15 Ք՝ Ս՝Պ՝. Ղ. 9 7
 16 A չիք վասն
 17 Ս՝Պ՝. Բ. 2
 18 A եւ ոչ փխ. քան
 19 H չորեքնիւթեա
 17 A չիք ասէ
 18 A չիք ունել
 19 A իբրեւ փխ. երբ

զանդամս մեր զէն անիրաւութեան մեղաց, զոր թափեալ ի նմանէ առնեմք զէն արդարութեան եւ պարկեշտութեան եւ պատճառ փառացն Աստուծոյ: 102 Զոր թե յետ այնորիկ շողոքորթի իբրեւ զչուն տալ զանուն կորիւն առիւծոյն, զի ի¹ հոտոյ անդի փախիցէ:

103 Կորիւն առիւծոյ, ասէ, Յուդա, ելեր բազմեցար ննջեցեր իբրեւ գառիւծ եւ զկորիւն առիւծոյ (ԽԹ՝ 9):

104 Իբրեւ ասաց, կորիւն առիւծու նախ յասել, թե՛ ի շառաւեղէ ելեր, որդեակ: 105 Ո՛չ գարշի Արարիչն զպատկեր եւ զանուն արարածոցս արկանել զինքեամբ, ըստ այնմ թե՛ ես եմ իբրեւ գառիւծ ի վերայ տանն Յուդա^Գ, յոր վստահացեալ սուրբքն կոչեն զնա նովիմբ² անուամբ՝ Առիւծ եկեալ ի տունն Յուդայ՝ զպերճն, զխրոխտն, զհաւարն, զհամառաւտն, զհազգինն ամենայն զազանաց՝ առիւծ, որ է անունն ի յառնլոյն կոչեցեալ: 106 Յարձակեցայց ասէ, առից եւ³ գնացից եւ ոչ հոգացայց: 107 Երբեմն զթշնամիս առակաւ կոչէ՛ ել, ասէ, առիւծ ի մորոյ⁴ իւրմէ եւ բաւական կորեանց իւրոց որսացաւ: 108 Եւ զի մի՛ թուեսցի զաւրութիւն ունել թագաւորն ասորւոց կամ բաբելացւոց յինեանց ուժոյ, զինքն, ասեր, ինքն⁵ առիւծ եկեալ ի վերայ նոցա: 109 Ըստ որում եւ զաթոռն հրաշալի տեսանէր եգեկիել եւ առ ընթեր նոցունց զբերովբեսն կերպանեալ ի տեսակ առիւծոյ^Գ, զի թագաւորական ասի կենդանին եւ թագաւոր զազանաց:

110 Յայնուսիկ առակելով զթագաւորսն եկեալս⁶ ի վերայ Երուսաղէմի եւ

ինքն իսկ նոքաւք գայր առնել դատաստան նոցա: 111 Եւ զի վասն մեղաց եւ ամբարշտութեան հրէական ազգին գային բարկութեամբն Աստուծոյ առիւծքն ի վերայ Երուսաղէմի, նոյնպէս եւ վասն մեղաց ազգի մարդկան եւ կռապարիշտ մոլորութեան եկն Որդին Աստուծոյ մարդկային բնութեամբս⁷ եւ անուամբ առիւծու ցասամբ զարթուցեալ ի վերայ իշխանին մահու եւ մեղաց մոլորութեան⁸, զգեցուցանելով⁹ տկարացեալ բնութիւն¹⁰ մարդոյն զզաւրութիւն առիւծու, զի թափեսցէ զգիշատեալ դիակս տանն Ադամայ ի ճրճիտ փաղանգէ աղուեսուց^Գ, այսինքն՝ ի մեհեանից զերկրպագուս կենդանի մարդկան, եւ ի դժոխոց զհոգիսն մեռելոցն վեր բերելով¹¹ ի փրկութիւն: 112 Նմին իրի ասէ՛ Կորիւն առիւծու Յուդա, որ է խոստովանութիւն Որդոյ Աստուծոյ. Կորիւն, այսինքն՝ Որդի այնմ, որ ասաց. ես եմ առիւծ ի վերայ տանն¹² Յուդա:

113 Զորք եմ, ասէ Սողոմոն¹³, որք հզաւր եւ պերն շրջին եւ մինն է^Է, որ¹⁴ կորիւն առիւծուն է¹⁵, որ ոչ թիկունս դարձուցանէ¹⁶ յանասնոց, որք անբան սրտմտութեամբ, անմիտ ցանկութեամբ¹⁷ եւ անկարգ ցնորիւք ի վայր գտան քան զանբան անասունսն. այն, որ ել ըստ Երեմիայի ի յորձանացն Յորդանանու, իբրեւ գառիւծ ախոյան ընդդէմ փորձողին յանապատ^Գ, որ ցանկայր¹ փորձել զնա, զիտել

1 A չի՛ք ի
Գ Ո՛վս. Ե 14
2 A նովիցն
3 A չի՛ք եւ
4 A մայրոյ
5 A չի՛ք ինքն
Գ Հմմտ. Եգէկ. Ե 10:
6 H եկեալ

7 A բնութեամբ
8 A չի՛ք մոլորութեան
9 H սգեցուցանելով
10 A բնութեան
11 A զհոգիսն ի դժոխոց ի վեր առաքելով փ/ս. ի դժոխոց ... բերելով
12 H չի՛ք տանն
13 A Սողոմոն
Է Եւսէ. Ե 29
14 A չի՛ք որ
15 A չի՛ք է
16 A դարձուցանէ թիկունս
17 A չի՛ք անմիտ ցանկութեամբ (H ցանգութեամբ)
Գ Եգէկ. Ե 19

Թէ ո՞յ է²: 114 Ի զարգանալ կորեանն տղայոյ³ ի չափ երիտասարդութեան եւ յաւժարութիւն առիւծու, այն որ մինչ մատաղն էր տղա ի բոյնն կորեանց իժից էարկ զմագիլս մատանց իւրոց, ի բոյնս⁴ կորիւն առիւծուն⁵ յեգիպոսս, եւ շարժեաց զձեռագործան, որ անդ կորուսանելով զկորուսիչ դեւան բնակեալս ի նոսա: 115 Կորիւն առիւծու ասէ Յուդա ի շառաւեղէ⁶ խոստովանեալ եւ կամ երկրպագեալ. երկու երեսս յայտնէ կորիւն առիւծու ասելովն՝ զհայր եւ զորդի, որպէս եւ ասեր Տէրն⁷ Զեմ միայն, զի հայր ընդ իս է⁸:

116 Ի շառաւեղէ ելեր, որդեակ (ԽԹ 9Է). եբրայեցին ասէ յարենէ Յուդա⁸ յարենէն Յովսէփայ, զի ոչ ետ սպանանել զնա, այլ եւ՝ յարենէն Թամարա, զի ոչ ետ այրել զնա վասն շնութեանն. իսկ ըստ Եւթանանիցն⁹՝ Ի շառաւեղէն, որ յարմատոյն Յեսսեա ի սուրբ կուսէն Մարիամայ Տէրն մեր անախտ եւ առանց սերման, այլ եւ՝ ոչ աւտար ոք մայր ստացեալ, այլ՝ ի տանէն Աբրամու, Իսահակայ եւ Իսրայէլի, դուստր Դաւթի հրաւիրեալ կանխաւ ի մարգարէից եւ ընտրեալ ի բիւրոց եւ խաւսեցեալ ի Հոգւոյն Սրբոյ: 117 Վասն որոյ ասէ¹⁰. Ելեր բազմեցար ննջեցեր իբրեւ գառիւծ ելեր, ասէ¹¹. յայտ է, թէ¹² ի Խաչ, զոր Ամբակում ասէ՝ Ելեր դու ի կառս քո հեծելութեամբ¹³, եւ դարձեալ¹³ ելեալն ի Հաւրէ

եւ եկեալն ի խնդիր կորուսեալ դրամին եւ ոչխարին մոլորելոյ¹⁴, ըստ Դաւթա ել ի բարձունս եւ¹⁴ գերեաց զգերութիւն¹⁵:

118 Բազմեցար, ննջեցեր (ԽԹ 9Գ). բազմեցաւ տարածմամբ ձեռացն եւ բեւեռապինդ ոտիցն¹⁵ հեղուսմամբ, զոր իբրեւ զբազմաց եւ զփառաց աթոռ համարեալ ցանկայր կարաւտիւ: 119 Յանկանալով ցանկացայ, ասէ, ուտել ընդ ձեզ գատիկս¹⁶ գայս¹⁷, յորում եւ¹⁷ չարչարելոցս եմ: 120 Եւ Դաւիթ վասն այսմ ասաց Նստար յաթոռ դատաւոր արդարութեան¹⁸ եւ թե՛ Աթոռ քո Աստուած յախտեանս յախտեցից՝ զի ըստ Աստուածութեանն այլ¹⁸ ոչ մեկնեցաւ ի նմանէ: 121 Քանզի եւ¹⁹ փառս կոչէր իսկ²⁰ հայեցելով ի Հաւրէ՛ փառաւորեա, ասէր²¹, զորդի քո²¹: 122 Եւ Յիսուս չեւ էր փառաւորեալ, այսինքն²²՝ խաչեալ, վասն որոյ եւ հանձն առնոյր Հայր զչարչարանս²³ Որդոյն՝ ներելով հրէիցն: 123 Փառաւոր արարից²⁴, ասէ, քանզի ընդ Հաւր գոյով ի յաթոռ վերինքն միայն գիտեին եւ²⁴ փառաւորեին: 124 Իսկ ի յայսմ ի բազմոցի տեսեալ եւ երկրաւորքս կցորդեցան փառաւորել զնա, յորում եւ ինքեանք իսկ՝ մարդիք փառաւորեցան հա-

1 A ցանգայր
 2 A ո՞
 3 H տղա
 4 A չի՞ ի բոյնս
 5 H առիւծու
 6 A չի՞ ի շառաւեղէ
 7 A չի՞ Տէրն
 8 Յ՝ՎԸ. Ժ 38
 9 A չի՞ Յուդա
 10 H եւթանեսնիցն
 11 A չի՞ Վասն ... ասէ
 12 A ելեալ փ/ս. եղեր, ասէ
 13 A չի՞ թէ
 14 Ա՝Գ. Գ 8
 15 A չի՞ հեծելութեամբ եւ դարձեալ

16 Տէ՛. Մ՝ՊԷ. ԺԲ 12-13. Գ՝. ԺԵ 8-9:
 14 H չի՞ եւ
 15 Ա՝ՊԷ. ԿԼ 19
 16 A չի՞ ասէ՛ ...գատիկս (գայս պասեք ուտել ընդ ձեզ)
 17 Ա՝ՊԷ. ԻՊ 17
 18 A չի՞ եւ
 19 Ա՝ՊԷ. Թ 5
 20 Ա՝ՊԷ. ԻՊ 7
 21 H չի՞ այլ
 22 H չի՞ եւ
 23 A չի՞ իսկ
 24 A չի՞ ասէր
 25 Յ՝ՎԸ. ԺԼ 5
 26 A յայտ է փ/ս. այսինքն
 27 A զչարչարիւն
 28 Յ՝ՎԸ. ԺԲ 28
 29 A գիտելով փ/ս. գիտեին եւ

ւատալով ի նա, որպէս եւ ասաց ինքն՝
Տէրն ես ասէ՛, յորժամ բարձրացայց յերկրէ
ի խաչն, գամեմեսեան ձգեցից առ իս^Է,
յայտ է թէ՛² հաւատով ի փառս իւրոյ Աս-
տուածութեանն:

125 Ննջեցեք, ասէ, նշանակէ քնոյ
զմահն անուամբ³, զի թե զհաւատացելոցն
ի նա զմահ ննջել ասէ Պաւղոս, ասելով,
թե՛ Աստուած զննջեցեալսն ի ձեռն Յիսու-
սի ածցէ ընդ մեզ^Ժ, քանի առաւել իւրն
կամաւոր մահն քուն անուանի, որ յետ
սակաւոյ միոյ յառնելոյ էր աստուածա-
բար: 126 Քանզի ասէն զառիւծէ, թե ննջե-
լով զաչան ի բաց ունի, որպէս եւ Տէրն մեր
մեռեալ մարմնովն եւ կենդանի գոլով աս-
տուածութեամբն, ըստ այնմ եթէ՛՝ ես ննջեմ
եւ սիրտ իմ արթուն է՞^Թ: 127 Սիրտ զան-
մահութիւն եւ զկենդանի Աստուածու-
թիւնն կոչէ, արթուն գոլով՝ աննիրհելի
բնութեամբ, վասնզի⁴ ոչ ննջէ եւ ոչ ի
քուն երթայ պահապանն Իսրայելի:

128 Իբրեւ գառիւծ եւ զկորիւն առիւ-
ծու (ԽԹ 9Ը), որ է իբրեւ զԱստուած եւ
իբրեւ⁵ զորդի Աստուծոյ: 129 Առիւծ. յոր-
մէ սարսէ ամենայն կենդանի մինչեւ ա-
րիւն, ասեն, միզէ եւ ինքն ինքեան⁶ գէշ
արկանէ, զայլոյն ոչ ուտէ⁷, իբրեւ զՏէրն,
որ ինքն զինքն կերակուր եարկ առաջի ա-
շակերտացն ի վերնատունն, եւ ինքն եկեր
ընդ նոսին⁸, եւ յայն առակեաց զխորհուրդ

կենացն հացի. Ուր գէշն իցէ, ասէ⁹, անդ
ժողովեսցին արծուի^Թ:

130 Եւ¹⁰ զի կամաւք մեռաւ եւ նո-
վիմբ¹¹ կամաւքն յարեաւ զիբրեւն յաւելու,
զի նմանութեամբ եւ նշանակաւք¹² է ա-
ռիւծ եւ կորիւն առիւծու¹³, զի զառիւծն
ննջեալ ոչ ոք կարէ զարթուցանել, բայց ե-
թէ ինքն: 131 Քանզի խաչեցին հրեայքն,
իջոյց ի խաչէն Յովսէփ, ի գերեզմանի ե-
դին¹⁴ Յովսէփ եւ Նիկողիմոս, իսկ յարու-
ցանել չիք հնար ումեք, զի որպէս մեռաւ
կամաւք, նովին կամաւք յարեաւ. Իշխա-
նութիւն ունիմ¹⁵, ասէ, դնել զանձն իմ եւ
իշխանութիւն ունիմ առնուլ զնա¹⁶ դար-
ձեալ¹⁷: 132 Իբրեւ զառիւծ յարիցէ եւ
զարհուրեցուցէ իբրեւ զորդիս ջուրց, զիշ-
խանն մահու՛ իբրեւ զգորտս, որ առաւել
սարսելիք են եւ դողան քան զնապաստակ,
զոր դուղակ¹⁸ կոչեն քերթողքն, որպէս ա-
սէ Փիլոն¹⁹, ոչ վայրապար^Բ, այլ վասն
դաւղելոյն եւ պախելոյ²⁰, եւ վասն առաւել
զարհուրական եւ երկչոտ բնութեանն, որք
ի հովանոյ²¹ եւ ի ճողփմանէ ջուրցն զար-
հուրին: 133 Որք եւ նախքան զյարու-
թիւնն սակաւ ինչ ճաշակեալ ի զաւրութե-
նէ նորա, աղաչեին մի առաքել զնոսա²²
յանդունդս եւ տանջել նախ քան զժամա-
նակն: 134 Դարձեալ ելեր յերկինս բազմե-

1 A ինքն ասաց Տէրն յորժամ փ/ս. ասաց ... ասէ
Է Յ՝ՎԸ. ԺԻ 32
2 A չի՛ք է
3 A զմահն նշանակէ բնոյ անուամբ փ/ս. նշանակէ
... անուամբ
Ժ Ա՝ԹԷ. Գ 13
Թ՝ Երգ. Ե 2
4 A չի՛ք վասն
5 A չի՛ք իբրեւ
6 H ինքեան ասեն
7 A չուտէ փ/ս. ոչ ուտէ
8 A նոսս

9 A չի՛ք ասէ
Թ՝ Մ՝ԳԷ. ԻԳ 28
10 H չի՛ք եւ
11 H նովիմբ
12 H նշանակ
13 H չի՛ք առիւծու
14 H դրին
15 A ունիմ իշխանութիւն
16 A չի՛ք զնա
17 H չի՛ք դարձեալ
Է Յ՝ՎԸ. Ժ. 18
18 H դուղակն
19 H չի՛ք բերթողն ... Փիլոն
20 H չի՛ք ոչ վայրապար ... պախելոյ
21 H հովանու
22 H չի՛ք զնոսս

ցար, նստար ընդ աջմէ Հաւր, եւ¹ ո՞վ յարուցանէ զքեզ Մինչեւ դիցին թշնամիք ամենայն² ի ներքոյ ոտից քոց՝ եւ յայնժամ³ յառնես ի դատաստան կենդանեաց եւ մեռելոց, ողորմելով տառապեալ եւ ախքատ բնութեանս՝ Հարստահարելոյ⁴ ի չարութենէ եւ ի խաբեութենէ Հակառակորդին, զի⁵ վասն տառապանաց ախքատին եւ Հեծութեան տնանկին այժմն յարեայց, ասէ Տէր եւ⁶ եղից զփրկութիւն իմ, ըստ այնմ թէ՛ Դու յարուցեալ գթացիս ի Սիոն, զի ժամանակ գթալոյն նորա հասեալ է⁷։ 135 Ի ժամ ո՞ յարուցէ զնա, բայց թէ՛ այն կատարեսցի, որ ասաց⁸։ յարիցէ Աստուած եւ ցրուեցան ամենայն⁹ թշնամիք նորայ՛, յորժամ յարիցէ ի¹⁰ վանել զերկիր՝ ըստ Եսայեա¹¹, եւ շարժեսցին երկինք եւ երկիր յերեսաց ահի Տեառն եւ ի փառաց զաւրութեան նորա, յորժամ գայցէ ի վերայ ամպոց երկնից զաւրութեամբ եւ փառաւք բազմաւք։ 136 Իսկ ի գալստեանն դարու եւ ժամու յորժամ նստիցի¹² յաթոռ փառաց իւրոց եւ ժողովեսցին առաջի նորա ամենայն ազգք, եւ մեկնեսցէ զնոսա ի միմեանց յաջմէ եւ ի ձախմէ. եւ Հրամայեսցէ զալ եւ զնալ ըստ արժանեացն ի կեանսն եւ ի տանջանս¹³ յաւիտենից առիւծագոչ բարբառով։ 137 Յայնմանէ ո՞ յարուցանի-

ցէ զնա ի բեմէն, վասն զի¹⁴ Ոչ գոյ այլ անուն տուեալ ի ներքոյ երկնից, որով արժան է կեալ, բաց ի նմանէ որում ամենայն ծունր կրկնի երկնաւորաց եւ երկրաւորաց¹⁵։

138 Մի պակասեցէ իշխան ի Յուդա. եւ մի պէտ յերանաց նորա, մինչեւ եկեսցէ այն, որ իւրն է թագաւորութիւնն (Խթ 10)։ 139 Զչարակարգութիւնն ասէ առաջնորդաց եւ պէտաց ժողովրդեանն, մինչեւ ցԴաւիթ եւ անդի մինչեւ ցգերութիւն բաբելացոց, եւ յետ գերութենէն մինչեւ ցՅովսէփ եւ Մարիամ, որ ոչ պակասեցին աթոռակալք եւ գահակալք մինչեւ ցՀերոդէս այլազգի, յորոց աւուրսն յայտնեցաւ Տէրն ծննդեամբ ի Բեղղեհէմ¹⁵ Հրէաստանի։ 140 Քանզի յետ մահուանն Յեսուա Հարցին ասէ որդիքն Իսրայելի, թէ ո՞ լիցի նոցա առաջնորդ պատերազմել ընդ մնացորդսն Քանանացոց, եւ ասէ Տէր. Յուդա ելցէ, եւ յայնմ հետէ ոչ պակասեաց ըստ բանիս մարգարէութեանն։ 141 Թագաւոր եւ իշխան եւ կամ պետ, որ է տերութիւն ըստ բոլորի եւ ըստ մասին աւելի եւ պակաս ճոխութիւն ունելով ի մէջ ժողովրդեանն, ըստ Աւետարանին Մատթէոսի, որ ասէ. Ի գալ մոգուցն խոովեցաւ Հերովդէս եւ ամենայն երուսաղէմ ընդ նմա՞։ 142 Եւ ժողովեալ գիտունս աւրինացն Հարցանէր, թէ ո՞ւր ծնանիցի Քրիստոսն. եւ լսեր, թէ ի Բեղղեհէմ Հրեաստանի, որ թէպէտ, որ զկնի Զաւրաբաբելի թագակալքն հատան ի Յուդաէ, այլ քահանայապետքն կրէին զթագն, եւ երկիցս, եւ երիցս խառնեալ էին ցեղքն երկոքին խնամութեամբ ընդ իրեարս։ 143 Յուդա եւ Ղեւի ի խնամոցն Աստուծոյ տուեալ թոյլ այնմ լինել, թէպէտ եւ զայլսն արգելոյր աւրէնքն զցեղսն

1 A չիք եւ
 2 A քո փխ. ամենայն
 3 Աս. շ. ՆԹ 1
 4 H հարքստահարելով
 5 A չիք զի
 6 A չիք եւ
 7 A չիք զի ժամանակ ... հասեալ է
 8 Աս. շ. ՆԸ 14
 9 A ցրուեսցին փխ. ցրուեցան ամեն
 10 Աս. շ. ԿԷ 2
 11 A չիք ի
 12 Աս. շ. Բ 10
 13 H Եսայի
 14 A չիք վասն
 15 Բեղղաւէմ (այսպէս եւ այլուր)
 16 Աս. շ. Մարթ. Բ 3

14 A չիք վասն
 15 Բեղղաւէմ (այսպէս եւ այլուր)
 16 Աս. շ. Մարթ. Բ 3

ի խառնել, զի մի՛ խառնակ եւ յայլս երեւեցին, այլ ցատուկ եւ պարզ երեւեսցի երեւումն Տեառն, ըստ մարգարէութեանն լինել ի Յուզաէ, այլ զի երկուց ազգացն թոյլ ետ խառնիլ, զի ծնեալն էմանուիէլն առցէ յերկուցն զթագաւորութիւնն եւ զքահանայութիւնն, զի Մելքիսեդեկն յայտնեսցի ի յայտնապէս յաւիտենական ունել զերկոսին, զի մայր նորա Մարիամ ի մաւրէ կողմանէ թոռն է Մաքթան քահանային եւ դուստր Յովակիմա յազգէ Յուզա, զոր անսխալ բերէ յազգահամարն. մատթէոսեան Աւետարան յիշելով Մարիամ ի յաւարտմանն եւ զՅովսէփ խաւանայր ի Յուզաէ, թէպէտ չէր ինչ նպաստ Յովսէփ ծննդեանն, սակայն յիշեցուցիչ էր խոստմանն, որ առ Դաւիթ՝ ասել հրեշտակին. Յովսէփ, որդի Դաւթի մի երկնչիր առնուլ զՄարիամ կիմ քո, զի ի Հոգոյն Սրբոյ է՞. վասն որոյ ասէ. Որոյ իւրն է թագաւորութիւնն: 144 Անդէն յիսկզբանն միւրթարեաց Աստուած զարդարսն զառաջինս, եթէ յառաջին յերանութիւնսն ելանելոց է բնութիւնդ ձեր Աստուծոյ Մարդ լինելով, յորժամ մահկանացուք զտեղի առնուցուն: 145 Քանզի մահկանացու զմահկանացու ազատել ոչ կարէ, զի չարչարիչ է եւ ճնշիչ եւ ոչ զուտ բարի մարդ, բայց Աստուած միայն որպէս եւ ինքն վկանաց, եւ զի Աստուած է եւ իւրն է թագաւորութիւնն եւ յուճեքէ չէ առեալ եւ չտա ոք. զի որ առեալ է տա, իսկ նմայն Հայրենի է եւ սեփական, որ թէպէտ ասի տուեալ ի Հաւրէ, վասն մարդկութեան է այն, որ միացաւ ընդ Բանին, եւ զի Աստուած եւ իւր արարածք են ամենեքեան՝ նմա ակն ունին հեթանոսք, որք նստին ի խաւարի եւ ի ստուերս մահու՞: 146 Քանզի ոչ եթէ հրէից միայն է Աստուած, այլ եւ՝ հեթանոսաց, թէպէտ եւ ասեն յորմէ հետէ սպան

զԳողիադ, ակն ունէին հեթանոսք: 147 Այլ Տէրն Դաւթի, որ ասաց աշակերտացն յետ յարութեանն Գնացէ՛ք աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս՞:

148 Կապեցէ գորթոյ զյավանակ՝ իւր եւ զգնդակէ որթոյ զյավանակ իշոյ (ԽԹ 11). եթէ զժողովուրդն ոք ասիցէ կապեալ ընդ թագաւորութեամբն Դաւթի, եւ զգնդակէ որթոյ՝ զյավանակ իշոյ, զի ոչ պակասէ ժառանգ թագաւորութեանն եւ ոչ որդիք ժողովուրդեանն, որք կրեն զբեռն արքայութեան:

149 Լուսացէ զինով զպատմուցան իւր (ԽԹ 11*). զմուտս հարկացն ասէր, որ գայր թագաւորացն որովք զարդարին հանդերձք թագաւորաց եւ արեամբ խաղողոյ (ԽԹ 11*)՝ զբերան այգեացն, յորմէ արբեալ ուրախ լինին:

150 Զուարթագին եմ աչաւք (ԽԹ 12): 151 Զփափկութիւն եւ զխրախճանութիւն թագաւորութեանն, զոր տեսաներ եւ զուարճանայր:

152 Սպիտակ ատամուցն (ԽԹ 12*): 152 Զի ոչ ի զրկանաց ուտեն, այլ անմեղութեամբ վարին՞:

ՃԵ (ՀԱ)

ԽԹ. 11ա-26

1 Կապեցէ գորթոյ զէշ² իւր (ԽԹ 11*), ընդ որթոյն, զոր եհան յեզիպտոսէ եւ տնկեաց ի Պաղեստինէ: 2 Կապեաց սիրով եւ զթութեամբ զմարգարէսն³: 3 Եւ ընդէ՞ր կոչէ գրաստ, զի ոչ պատուեցին իբրեւ զհոգեկիր զմարգարէսն, այլ իբրեւ զանբանս անարգեցին, եւ տեւեցին բեռնակրութեամբ բառնալով նոցա⁴ զնախա-

Ծ Մատթ. Ը 20
 * Հմմտ. Եւ. Թ. 2, ԽԹ 7:

Զ Մատթ. ԻԸ 28
 1 Ի զովանակ (այսպէս եւ այլուր)
 2 Ի զովանակ փխ. գէշ
 3 Ի զմարգարէսն
 4 Ի չի՛ք նոցա

տինս եւ զարհամարհանս, որ ծանր էր նոցա քան զաւազ:

4 Իսկ զգնդակէ՝ զիշոյ որդիս՝ (ԽԹ 11Է), այսինքն՝ զեկամուտսն ի հեթանոսաց՝ զորդուոցն Աբրաամու՝ զԹամար, զՀուլի, զՐահաբ եւ² զԱբիմելէք եթէովպացի³, եւ այլք՝ թե յարանց եւ⁴ թե ի կանանց, զի եւ նոքայ որդիք Ադամայ էին, որ ի պատուի գոյով ոչ իմացաւ, այլ հաւասարեաց⁵ անասնոց անբանից՝, որոյ որդիքն ի զգաութեան⁶ եկեալ կապեցան յերկրդն Աստուծոյ:

5 Կապեցել գորթոյ գյովանակ իւր⁷. Տէրն որթ անուանեաց եւ⁸ կոչեաց զինքն Հաւր մշակութեանն, եւ զառաքեալսն ուռ ընդ ինքեան կապեաց զառաքեալսն⁹ ասելով՝ Կացե՛ք յիս եւ ես՝ ի ձեզ. եւ յովանակ գոյով յառաջ խամ ի դպրութենէ¹⁰ Հանճարոյ, որպէս եւ ասեին արք տգէտք եւ առանց դպրութեան¹¹ եւ զանսրբութիւնն Ադամայ եւ զպարտիսն աւրինացն յանձինս կրելով, չկարելով գործով կրել զբեռն աւրինացն, իսկ յարելով ի Տէրն ի բաց եղին զանսրբութիւն եւ զտգիտական¹² անբանութիւնն¹³, ուռք եղեն պտղաբերք՝ փոխելով զբնութիւնն ջրով եւ հոգևով, զոր Տէրն նշանակեաց¹⁴ նստելով յիշու եւ աւանակի¹⁵, յայտ արարեալ զհրէայս եւ զհեթա-

նոսս, որք անկեալք¹⁶ ի մտաց պաշտեին զարարածս եւ ոչ զԱրարիչն, եւ գործեին ոչ զգործ բանականաց, այլ զիշուց խառնակութիւնս եւ զխեռաբարութիւնս¹⁷, զոր ոմանք խառնելով Հպարտութիւնս եւ լրբութիւն: 6 Ձիբ¹⁸ իգամով կոչեցան յերեմիայէ՞, եւ կէսք թոյնս թոխորնաց եւ նենգութիւնս: 7 Աւձբ եւ ծնունդի իժից ի Յովաննէ՞ իսկ հոգեւոր ջրովն լուացեալք զհին չարութիւնն՝ Հանգիստք¹⁹ եղեն Քրիստոսի, բուսեալք ի բարեբեր որթոյն, կապելով զինքեանս սիրով ընդ Աստուծոյ անխզելի:

8 Ո՞յ մեկնեցել զմեզ ի սիրոյն Քրիստոսի՞, ասէ Պաւղոս, եւ՝ զգնդակէ որթոյ, այսինքն՝ ընդ²⁰ առաքելական բանիցն զորդիս հեթանոսաց, ի հրամանն որ ասաց՝ Մկրտեցե՛ք զհեթանոսս յանուն Հաւր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ, եւ ուսուցե՛ք պահել²¹ զամենայն՝ պատուիրեալսն նոցա²², որ է հրաշալի, զգնդակէ կապեալն եւ²³ անկտրելի մնալն, որ թեպէտ տկար էր բանն՝ եւ²⁴ շինական եւ ոչ պղատոնական եւ զաւրաւոր: 9 Տեսիլ մարմնոյն տկար է, ասէ, Պաւղոս²⁵ եւ բանն արհամարհեալէ, սակայն քաղցր եւ ուրախացուցիչ սրտի: 10 Վասն²⁶ զի գինեբեր էր գնդակքն²⁷ եւ

1 A որթոյ գորդի իշոյ փ/ս. զիշոյ որդիս
2 A չիբ եւ
3 A եթովպացի
4 A չիբ եւ
5 A հաւասարեց անբանից փ/ս. հաւասարեաց ... անբանից
6 Մատ. ԽԹ 13
7 H սգաութեան
8 A չիբ անուանեաց եւ
9 H հաւատով փ/ս. գառափեալսն
10 A սրբութեմէ փ/ս. դպրութեմէ
11 H դպրութիւն
12 A չիբ եւ (տգիտական)
13 H բանութիւնն (ան-ը ջնջուած)
14 A նշանակեաց Տէրն
15 H յովանակի

16 A անկեալ
17 H զխեռաբարոյութիւնս
18 H ձիբ
19 Հմտ. Երեմ. Ե 8
20 Հմտ. Մատ. Գ 7. ԺԲ 34. Գ. Գ 7
19 A հանգիստ
20 Հմտ. Բ 35
21 A չիբ ընդ (գառափեալական)
21 H ուսուցանել փ/ս. ուսուցե՛ք պահել
22 Մատ. ԽԹ 19-20
22 A չիբ նոցա
23 H չիբ եւ
24 A չիբ եւ
25 H ասեմ Պաւղոսի
26 Բ Կ. Ժ 10
26 A չիբ Վասն
27 A գինի երբ գնդակն փ/ս. գինեբեր էր զնդակքն

ծնունդ որթոյ. թեպէտ եւ¹ տգէտ եմ, բանիւ² ասէ, այլ ո՛չ եթէ³ գիտութեամբ, զի հոգով քաղցրանայր⁴ եւ Քրիստոսիւ զաւրանայր տկարն. եւ ոչ կարեին կտրել եկեալ փորձանքն զանագան՝ հուր եւ սուր, բանդք եւ գազանք եւ հալածանք:

11 Լուսացէ գիմեալ⁵ զպատմունամ իւր եւ արեամբ խաղողոյ զհանդերսս իւր (ԽԹ՝ 11Գ). Մարդիկ ջուրքք⁶ լուսանան զհանդերսս⁷ եւ զմարմին, իսկ Տէրն յանարատէն⁸ առեալ մարմին անարատ⁹, սակայն զի ի պարտաւոր բնութենէն Աղամայ էր, լուսաց սիրով զնա, խնդութեամբ ըմբելով զբաժակն մահու, այնպէս կոչելով զնայ. եւ արեամբ ներկէր զնա գեղեցիկ գործելով, զի Աստուծոյ էր արիւնն, մինչեւ¹⁰ երկնաւորացն եղեւ զարմանալի, որք ի համբարձմանն տեսեալ ասեին Իսկ այս ո՞վ է որ դիմեալ գայ յեղովմայ, կարմրութիւն ձորանց իւրոց ի բոսորայ, գեղեցիկ պատմունամաւ եւ բուռն գարութեամբ¹¹: 12 Այլ¹² քանզի վասն որոյ անարիւնն արիւնաւորիւ եղեւ վասն մարդկան ազգի, նոյնպէս եւ լուսացումն նոցա եղեւ ի¹³ մաքրութիւն մեղաց, մկրտութիւն¹⁴ գոլով մահու նորա ամենայն աշխարհի, որպէս եւ ինքն ասէր՝ Մկրտութիւն մի ունիմ մկրտիլ. եւ փոյթ է ինձ¹⁴ կատարել զայն¹⁵. վասն որոյ դարձաւ արիւնն եւ եղեւ մեզ

արիւն խաղողոյ յուրախութիւն ըմպելի եւ ի մաքրութիւն ըմպելեաց: 13 Քան զի ասէ թէ արեամբ¹⁵ խաղողոյ լուսացէ զպատմունան¹⁶ իւր, որք են¹⁷ հաւատացեալք: 14 Որք մկրտիմք ի մահ նորա հաւատով¹⁸ եւ¹⁸ մահու անմահին լուսանիմք եւ արեամբ նորին հաղորդիմք եւ առաւել եւս մաքրիմք, զի արիւնն Յիսուսի, ասէ մեծն Յովհաննէս, Սրբէ զմեզ յամենայն մեղաց մերոց¹⁹: 15 Եւ զի հանդերձք կոչիմք նմա, Ասէ Եսայեաւ. Կենդանի եմ ես, ասէ Տէր, զի զամենեսեան զձեզ իբրեւ զհանդերձ գգեցայց²⁰, քանզի որպէս միաւորեալ Աստուածութեամբ մարմին նորա պատմունան կոչի վայելչական¹⁹. Տէր թագաւորեաց, ասէ, զվայելչութիւն զգեցաւ²⁰, նոյնպէս եւ սուրբ եկեղեցի նորա, որ է մարմին ի մարմնոյ նորա²¹ եւ ոսկր յոսկրաց նորա²², հանդերձ նորա կոչի որում զգեցոյց զինքն հանդերձ փրկութեան եւ պատմունան ուրախութեան, զի որ միանգամ մկրտեցամ ի Քրիստոս Յիսուս զՔրիստոս զգեցեալք եմ²² անխտիր՝ հրեայք եւ հեթանոսք, արուք եւ էգք եւ այնպէս մեք նմա եմք պատմունան եւ նա մեզ՝ հաւատով եւ սիրով, զի անհնարինք ի մարդկանէ հնարաւորք են Աստուծոյ եւ անկարելիքն մարմնապէս կարելիք՝ հոգեպէս²²:

16 Այլ եւ տէրունական մկրտութեամբն մկրտեցաւ եւ լուսացաւ սուրբ եկե-

1 H որ փխ. եւ
2 A ասէ բանիւ
3 A չի՞ եթէ
4 A քաղցրանայ ... գարանայ
5 A գիմեալ
6 A ջուրքք
7 H զհանդերսս
8 A յանարատէն
9 A անարատ մարմին
10 A մինչ զի փխ. մինչեւ
11 ԽԹ՝ ԿԳ՝ 1
12 H չի՞ Այլ
13 A չի՞ ի
14 H մկրտութեան
15 A ինչ փխ. ինձ
16 Գ՝ Կ՝ ԺԳ՝ 50

15 A արեամբ ասէ փխ. ասէ թէ արեամբ
16 A զհանդերսս փխ. զպատմունան
17 A եւ փխ. են
18 Հ՝ Կ՝ Գ՝ 3
18 A չի՞ եւ
19 Լ՝ Յ՝ Կ՝ 7
20 Ե՝ Խ՝ ԽԹ՝ 18
19 H վայելչական
20 H սգեցաւ (այսպէս եւ այլուր)
21 A չի՞ որ է ... նորա
22 Ե՝ Կ՝ Կ՝ 30
22 Գ՝ Կ՝ Գ՝ 27
22 A են հոգեւոր

ղեցի՝ արժանաւոր հարսն անարատ առա-
գաստի, նորա վկայական եւ մարտիրոսա-
կան արեամբ իբրեւ զորդիսն Ջեբեղեայ,
որք յանձին կալան զմկրտութիւն նորա եւ
զբաժակն կամաւոր չարչարանացն¹ եւ
յաւժարամիտ սիրով ճաշակեալ², դիմեալք
իբրեւ զեղջիւրոյ³ ծարաւկոտ յաղբիւրս
ջուրց:

17 Զուարթայգիցն են աչք նորա ի գի-
նոյ եւ սպիտակ ատամունք նորայ որ-
պէս⁴ զկաթն (ԽԹ՝ 12):

18 Բազում մարդիկ վիրաւորեցան ա-
չաւք եւ անկան յանբժշկելի տրտմու-
թիւնս, իբրեւ զնախաստեծքն ի հայե-
ցուածն ծառոյն եւ⁵ իբրեւ զնախաստեղծին
ի հայեցուածն ծառոյն եւ իբրեւ զնահա-
տակն Դաւիթ ի⁶ յայլ իրս, որ եւ աչաւք
խոցեցաւ եւ թաղծեցաւ⁷ որպէս Սամսոն եւ
ամոն եւ Հերովդէս եւ այլք բազումք, զոր
եւ Տէրն⁸ առանց գործոյն շնութիւն կոչէ
ի⁹ սրտին, քանզի ի սիրտն ազդէ զվնասն,
մեծ գոլով: 19 Այլ Յուդայեանն Յիսուս՝
աստուածն մեր՝ ո՛չ այսպէս, այլ զուարթ
աչաւք հայեցաւ ի կիսն մեղաւոր եւ
սրբեաց զնա¹⁰, հայեցաւ ի տեռատեսն եւ
առողջացո ի Ժ (10) բորոտան եւ ողջացան,
եթե ի կոյր հայեցաւ՝ ետես, եթե ի խուլ՝
սրալուր եղեւ, եւ եթե ի յանգամալոյծ
զնաց ոտիւք ի տուն եւ¹¹ եթե՝ ի մեռեալ՝
յարեաւ եթե ի թաղեալ՝ եկն արտաքս ի
զերեզմանէն, զի ի գինոյ, այսինքն՝ ի սի-
րոյ գործէր, եթե ի դժոխս հայի արքայու-
թիւն գործէ: 20 Եւ զնորա գաւրինակն

գուշակեր Յուդայեանն Դաւիթ՝ աչաւք
զեղեցիկ գոլով: 21 Զի՞նչ գեղեցիկ դար-
ձեալ¹² քան զնա¹³, որ նստի ի քերպէս եւ
հայի յանդունդս եւ տեսանէ, եւ աչք Տեառն
յարդարս եւ յերկիւղածս բարի առնել¹⁴
միշտ՝:

22 Սպիտակ ատամունք նորա քան
զկաթն (ԽԹ՝ 12*) . անորակ եւ անորպի-
տութիւն է Աստուած, սակայն լոյս ասի, որ
եւ¹⁵ ի լինելն մարդ եւ ի¹⁶ յառնուլն լիով
զմերս ոչ ի բաց եկաց յիւրմէն զանգամս
մեր զգալի¹⁷ յիւր յիմանալի Աստուածու-
թիւնն միաւորեալ մի եղեալ¹⁸՝ զիւրն ամ-
բող զահելով, առ եւ ատամունս տղայա-
ցեալն Աստուածն բոլորից եւ զի¹⁹ սպիտակ
են²⁰ ատամունք²¹ կաթնածուծ²² տղա-
յոցն²³, ըստ կերակրոյն եւ գոյնն որակա-
նայ սպիտակ: 23 Եւ աստ յիշելով զատա-
մունսն սպիտակ զանմեղութենէն յայտ
առնէ, որ ոչ արար մեղս եւ ոչ գտաւ նեն-
գութիւն ի բերան նորա՞ բնաւ քան զկաթն
սպիտակ, զի տղայն զպարտիս նախա-
հաւրն ունի, եւ զի հեշտութեան է ծնունդ
եւ ախտի, չէ հաւասար Տեառն երկրորդն
Ազամայ կուսածնի: 24 Եւ զի ատամունքն
գործող է կերակրոյ՝ մանր գործելով
զխիստն եւ²⁴ շայեկան առնէ կերաւղին,
յոլովակի երեւի Տեառն արարեալ զայս
զբանս առակաց եւ զխորհուրդս խորինս,

1 A չարչարանացն կամաւոր
2 A ընդունել փխ. նաշակեալ
3 A գեղջերու
4 A քան փխ. որպէս
5 A չիք եւ
6 A չիք ի
7 A չիք եւ թաղծեցաւ
8 A Տէրն եւ
9 H չիք ի
10 A սրբեցաւ փխ. եւ եթէ ի
11 A թէ փխ. եւ եթէ

12 H չիք դարձեալ
13 A գայն փխ. զնա
14 A լինել փխ. առնել
* Սաղմ. ԼԻ՝ 18
15 H չիք եւ
16 H չիք ի
17 A զ գալի
18 A եղեւ
19 A չիք զի
20 A է փխ. եւ ատամունք
21 H չիք ատամունք
22 H կաթնածու
23 H տղայոց
Է Սաղմ. ԼԼ՝ 2
24 A չիք եւ

մեկնողութեամբ մանր գործելով¹ լսաւ-
ղացն զհոգեւոր կերակուրն:

25 Ուստի եւ² ուսեալ Պաւղոս յերկուս
բաժանէր զհատկութիւն ուսմանն՝ ի կաթն
տղայաբարոյիցն եւ ի հաստատութիւնն ի-
մաստից՝ կատարելոցն³:

26 Եւ դարձեալ³ կաթն մարդավայե-
լուչքն Տեառն ասացեալ եւ գործեցեալքն⁴
եւ կատարեալ կերակուրն աստուածավաե-
լուչքն գործք եւ բանք⁵: 27 Զորս եւ մեզ
արժան է յանձինս մեր ցուցանել զտէրու-
նականսն եւ լինել նմա պատմութեան լուա-
ցեալ եւ աչք զուարթացեալք⁶ հայելով
յախբատս⁷ եւ ի տնանկս⁸, զի Աչք Առա ի
տնանկս հային⁹ գրեալ է, եւ մեթ⁹ տեսցուի
զարարածս ի փառս Աստուծոյ, սիրտ
սուրբ եւ հոգի անկեղծ^ե կալցուք, որով
զուարթանայ ական, զի¹⁰ սրտի բերկրեցելոյ
երեսք զուարթք են¹¹ անմախանք հայելով
յեղբարս եւ խնդութեամբ տեսանել
զչնորհս եւ զյաջողուածս նոցա: 28 Զուար-
թանայ ական ի գինւոյ, որ ուրախ առնէ եւ
իւղ¹² ողորմութեանն առ կարաւտեալսն
զուարթ եւ զճրագն անչէջ եւ զդուռն
մտից առագաստին ի¹³ բաց ի խորհուրդ
սպիտակ ատամանց Տեառն անմեղութիւն
եւ ամբծութիւն արասցուք զկաթն կեր
տղայոցն, զի եթե ոչ դարձջիք, ասէ¹⁴, եւ

լինիցիք¹⁵ իբրեւ զմանուկ, ոչ կարե՛ք մտա-
նել յարքայութիւնն Աստուծոյ^ա, զի վարդա-
պետք եւ քահանայք եւ ընթերցողք աս-
տուածային բանիցն յականջս ժողովր-
դեանն ատամունք են եկեղեցւոյ եւ գոր-
ծականեայք հոգեւոր կերակրոցն¹⁶, անմեղ
արժան է լինել նոցա, զի հաւատարիմ լի-
նիցին ասացեալքն եւ համով եւ հոտով ա-
նուշուութեամբ լի: 29 Վասն¹⁷ զի քան
զբանն գործքն¹⁸ է հաւատալի, զոր աչք
տեսանեն, քան զայն¹⁹, զոր ականջք լսեն,
զի մի դպրացն եւ փարիսեցւոցն ասացեալ
ի Տեառնէ վայն եկեսցէ ի վերայ մեր, որ
դնեմք զայլոց²⁰ բեռինս ծանուեսս եւ մա-
տամբք²¹ ոչ կամիմք հպիլ ի նոսայ:
30 Քանզի սպիտակն լուսոյ է ազգակից,
մի՛ եղիցի ի²² վարս մեր մասն խաւարի,
իրք եւ կամ²³ բան ծածուկ անարեւն ի
սրտի^ե եւ ի շրթունս, զի եղիցին անդամք
մեր գլխոյն մերոյ Քրիստոսի արժանաւորք
եւ նորա գեղեցկութեամբն գունեալք եւ
զուարթացեալք²⁴ եւ պատճառ փառաց նո-
րա:

31 Զաբուղոն յեզր ծովու բնակեցել եւ
իմքն նաւահանգիստ նաւաց, եւ ձգեցի
միջեւ ի Սիդոն (ԽԹ 13). Զաբուղոնի վի-
ճակն առ ծովեզերքն եղեւ ի սահմանացն
Ասկազովնի սկսեալ մինչեւ զՍուր, եւ է
նաւահանգիստ²⁵ ամենայն աշխարհացն եւ
նախ նմա ասեն առնել նաւ ի վերայ ծո-
վու, զի²⁶ խորհուրդ եկեղեցւոյ գերծեալ

1 A գործելք
2 A չիք եւ
3 Հմմտ. Լ՝ Առք. Գ. 2:
4 A չիք եւ դարձեալ
5 H բան
6 A զարթուցեալ
7 A յաղբատս
8 A տնանկս
9 Առք. Թ. 9. Ժ. 5
9 A չիք մեթ
ե Առք. Ծ. 19
10 A չիք գի
11 A զուարթք H զուարթ են
12 A եւղ
13 A չիք ի
14 H չիք ասէ

15 A լինիցիք
ա Հմմտ. Մարգ. Ժ. 15. Գ. 14. Ժ. 17:
16 H կերակրոյ
17 A չիք լի վասն
18 H գործն
19 A չիք զայն
20 H այլոց
21 H մատամբ
22 A չիք ի
23 A չիք կամ
ե Հմմտ. Բ. Օր. Ժ. 6. 9:
24 H զուարթացեալ
25 A նաւահանգիս
26 A չիք գի

յալեկոծութենէ կոոց հանգչի ի լոյս եկեալ, ըստ Եսայայ երկիր Զարուղոնի՝ Գալիլեա հեթանոսաց: 32 Ժողովուրդ, որ նստէր ի խաւարի եւ ի ստուերս մահու¹, ետես զլոյս մեծ², որք ընտրեցան որդիքն Որոտման Զաբուղոնացիք, որ թարքմանի Զաբուղոնն յաջողումն ճանապարհի, որոց յաջողեցաւ կոչել զտիեզերս առ Տէրն, որ տիրեաց ծովու եւ ցամաքի:

33 Իսաֆար բագում² բարոյ ցանկացաւ հանգիցել ի մէջ վիճակաց եւ³ տեսաւ զերկիրն, զի պարարտ էր⁴ եղ զուս⁵ իւր ջան յաշխատութիւն (ԽԹ 14-15), զի⁶ ի մէջ ալոյցն վիճակացն ժառանգեսցի⁷ Իսաքար⁸, տեսաւ զերկիրն, զի պարարտ էր, եւ⁹ ոչ եթե քան զալոյցն պարարտ էր, այլ զի ոչ տրտընջեաց վասն երկրին, որ բղխէր¹⁰ զկաթն¹¹ եւ զմեղր: 34 Ի նմանէն¹² էր Գեղէոն, որ արձակեաց հրեշտակս եւ խրախուսեաց ի վերայ Մադիամու, բայց եբրայեցին ասէ, թէ¹³ Իսաքար իբրեւ գէշ մի, զի լայնեալ հանգչի¹⁴ յաղբիւս, զի մշակ՝ գոլով ընդ հող եւ ընդ աղբիւս թաւալելով¹⁵ յղփանայր, յաւրինակ Տեառն մերոյ, որ ցանկացաւ փրկել զեկեղեցի՝ զիտելով, զի բարի է պատրաստեալն զհանգիստ սրբոցն եւ ինքն հանգեաւ ի մէջ վիճակաց աւրինաց եւ մարգարէիցն կատա-

րելով զառ ի նոցանէ զգրեալսն¹⁶, որպէս վկայեցին նմա Մովսէս եւ Հեղիաս ի լեառն Թաբաւր¹⁷: 35 Եղ զուս իւր ի խաչն յաւժարութեամբ, որում եւ¹⁸ Եսայի ասէ. Որոյ իշխանութիւն իւր ի վերայ ուսոց իւրոց¹⁹: 36 Զամենայն նախատինս յանձն առեալ եղեւ այր արդիւնաւոր, որոյ արդիւնքն կան եւ մնան հաստատութեամբ առաջի Հաւր եւ հրեշտակաց եւ մարդկան:

37 Դան դատեսցէ զժողովուրդ իւր¹⁹ իբրեւ զդատաւոր (ԽԹ 16): 38 Եւ զի²⁰ դատաւորք ի Դանա ասեն լինել, զբազմութիւնն դիւրաւ հերիք եղեալ տուեալ ի Տեառնէ շնորհիւն, ուստի ընտրեալն Սամիսոն²¹ դատեաց զԻսրայէլ ամս քսան եւ, լեալ դարանակալ փղշտացւոցն, հարկանէր հետեւակն զհեծելագաւրսն, յորմէ վաստակեալ սպանմամբ ծնաւտիւ իշոյն զհազարսն²², մնայր փրկութեան Տեառն ի ժամ ծարաւմանն, մինչ եւ ջուր ի ծնաւտէ անդի²³, եւ²⁴ արբեալ զովացաւ²⁵ եւ գաւրացաւ ի Տեառնէ Աստուծոյ²⁶ Տէր²⁷ Աստուած իւր խորագիտութեամբ ի Տեառնէ յաջողեալ²⁸: 39 Եւ դարձեալ²⁹ ի Դանա ասեն զՆեոն, որ իբրեւ զաւճն առաջին թիւնալից եւ չարաբարւոյ հարկանէ զգարչապարս³⁰ այնոցիկ, ոյք ուղիղ գնան ընդ ճանապարհս խաղաղութեան եւ ճշմար-

1 A չի՞ եւ ի ... մահու
 2 Խ․ Թ 1
 3 A չի՞ բագում
 4 A է
 5 H պուս
 6 A ի ջան փխ. յաշխատութիւն
 7 A ժառանգեաց
 8 H Սաֆար
 9 A է փխ. էր եւ
 10 A բղխէ
 11 A կաթն
 12 A նմանէ
 13 A չի՞ թէ
 14 H հանգի
 15 A թաքաւելով

16 A գրեալսն
 17 H Թափաւր
 18 A չի՞ եւ
 19 Խ․ ԽԹ 6
 20 H չի՞ իւր
 21 A չի՞ եւ զի
 22 H ընդրեալ Սամսոն
 23 A զհազարն
 24 A անտի
 25 A գոր փխ. եւ
 26 H չի՞ զովացաւ եւ
 27 H չի՞ Տեառնէ Աստուծոյ
 28 H չի՞ Տէր
 29 H աջողեալ
 30 A չի՞ եւ դարձեալ
 31 A զգարչապար

տուլթեան, բայց յաղթէ այնոցիկ, ոյք¹ հեծեալ իցէն² յախտս³ քառաքեացս⁴, քանզի յորդիսն ասէ⁵ ապստամբութեան զսատանա, վասն զի յետս անկանին պատրեալքն ի նմանէ: 40 Եւ մնա ինքն կենդանի զամս երիս մինչեւ Տէրն հասանէ փրկիչ հաւատացելոց իւրոց:

41 Գաղ հիմիւ ելցէ, եւ իմֆն ելցէ հիմիւ զհետ նոցա (ԽԹ 19). վասն⁶ զի նախ ժառանգեաց զերկիրն իւր եւ ել զհետ եղբարց իւրոց առաջապահ եւ վերջապահ: 42 Եւ հէն զաւրաց է անուն: 43 Դարձեալ ելին պաղեստինացիքն ի վերայ Գաղայ եւ նա հալածեաց զնոսա: 44 Ի նմանէ էր Յեփթայի⁷, որ վանեաց զորդիսն Ղովտայ, զի եբրայեցին ասէ Գաղ աւագակ հինահար, զի զառաջինն աւագակութեամբ շրջէր Յեփթաի, եւ կարաւտացան նմա եղբարքն իւր, եւ եղեւ դատաւոր:

45 Ասերայ պարարտ հաց իւր եւ իմֆն տացէ կերակուր իշխանաց (ԽԹ 20). վասն⁸ զի հացաւետ երկիր ժառանգեաց եւ պարարտ, եւ թագաւորքն անդի տարան⁹ հաց դնեին համբարս¹⁰ յերուսաղէմ եւ Շամրին:

46 Եւ¹¹ Ասեր մեծութիւն ասի յաւրինակ Տեառն մերոյ եւ Աստուծոյ, որ ասաց. Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկիւնս եւ յերկրի¹². յայտ է մարդկութեամբն ասէր տուեալ, զոր ուներ Աստուածութեամբն սեպհական¹², որ եւ ասէր. Ես¹³ եմ հացն

յերկնից իջեալ^է, զոր¹⁴ ետ նախ առաքելոցն, զորս կացոյց իշխանս ընդ ամենայն երկիր եւ նոքաւք՝ հաւատացելոց, որք իշխեն ի վերայ ախտից մեղաց:

47 Նեփթաղիմ¹⁴ ծառ անեցեալ արմատեաւ, զգեղեցկութիւնն (ԽԹ 21): 48 Եբրայեցին ասէ. Եղջերու երազ, զի փոքր գոլով զառաջինն անեցեալ մեծացաւ ի բազմութիւն, նա կերակրեաց զԴաւիթ ի փախչելն յԱբիսողովմայ, եւ գեղեցիկ ցուցաւ իբրեւ զծառ սաղարթաւոր եւ տերեւալից:

49 Նեփթաղիմ եղջերու բարակ, երկչոտ, որ ոչ վստահանայր զնալ ի վերայ Սիսարայ առանց Դեբովրայ, իսկ անեցեալ ծառն Քրիստոս Աստուած զհեթանոսս հարելով յինքն Պետրոսիւ եւ Անդրեաւ, որք ընդ Զաբուղոնի տեսին զլոյսն մեծ շառաւեղեալք յանդամս նորա պտղաբերեալ ի ցնծութիւն կթողաց՝ հրեշտակաց եւ մարդկան վայելչութեամբ:

50 Որդեակ անեցեալ Յովսէփ, որդեակ իմ նախանձնի, որդեակ իմ մատաղ, առ իս դարձիր. զոր բանասարկուի բամբասեիս եւ դատափետ առնեիս եւ ոխանային ընդ նմա արք աղեղանց: 51 Եւ փշրեցան զարութեամբ աղեղումն նոցա եւ լուծան ջիւր բազկաց նոցա ձեռամբ հզարին Յակոբայ անտի, որ զարացոյց գիւրայէլ յԱստուծոյ Հարս քո եւ արհմեաց զքեզ Աստուածն իմ եւ արհմեաց զքեզ արհմութիւնն ի վերուստ, եւ զարութիւն երկրի լի ամենայնիւ վասն ստեանց արհմութեան արգանդի հարս եւ մարս քո, որ զարացան քան զարհմութիւնս լերանց մշտնջենաւորաց եւ զբլրոց յարտեմականաց եղիցին ի վերա գլխոյն Յովսէփայ եւ ի վերայ գլխոց եղբարց նորա, որոց առաջնորդեցէ (ԽԹ 22-26):

1 H որք

2 H չիք իցեն

3 A յաղխտս

4 H քառնակեացս

5 H չիք ասէ

6 A չիք վասն

7 H հեփթաի

8 A չիք վասն

9 A տարեալ

10 A համբարս դմեիս

11 A չիք եւ

12 H սեփական

13 A չիք ես եմ

է ԹՊԿ. Գ 41

14 A որ

52 Մեծ ոմն է եւ հաւատարիմ, որ վկայեաց զմարդոյն կազմածոյ, թե արարաւ պատկեր Աստուծոյ, քանզի բարեկամն է Աստուծոյ մեծն Մովսէս, ընդ որում երեսաւք խաւսեցաւ Աստուած եւ ոչ առակաւք: 53 Այլ այս առանց երկբայութեան է, բայց ազատ կամս ունելով առաւելու եւ նուազէ զպատկերին, իբրեւ զինամածու ճրագի, որ արթուն կալով արուեստիւ եւ ճիթով վառ եւ բորբոք պահէ զնա, իսկ ծուլութեամբ եւ քնով եւ գձեթն պակասելով նուազէ եւ կամ բնաւ շիջուցանէ:

54 Մեծ նահապետն եւ սքանչելատես մարգարէն Յակոբ զիւրն ճրագ անաղատ պահեալ ի ժամանակս ժուժկալ կրանիւք արթուն գոլ եւ ճարտար զգուշացաւ, աստուածասէր գոլով արուեստիւ եւ առատ իւղով մարդասիրութեամբ հարստացեալ, որ եւ ի վախճանն մերձ եղեալ ի զգլխացս պակասեալ եւ իմանալի լուսով յարանկեալ երկատեսակ ունելով զհայելի մտացն, հայելով ի վեր եւ ի խոնարհ՝ յիմանալսն եւ ի զգալիսս անսխալ: 55 Յուցանէ եւ որդոցն ըստ արժանեացն զաջողուածս ի վերուստ, ըստ բախելոյ մատանց շարժողին զնա հոգւոյն եւ ըստ գիւտի նիւթոյ եւ պատճառ ի մասանց կացելոց յորդիսն առաքինութեան եւ չարութեան, որով ընդարձակի եւ նեղի առաջնորդականն, որպէս նեղեցաւ յառաջին զաւակսն յերիսն, եւ ի Յուդա հասեալ ընդարձակեցաւ եւ հարստացեալ բաշխեաց նմա յերկնաւոր գանձուցն, որ ի Քրիստոս կատարեցաւ լիապէս: 56 Եւ զնացեալ ճանապարհաւ ընդ վեց եղբարսն մարգարէական ուղեւորութեամբ¹ ցուցանելով նոցա ի վեր եւ ի խոնարհ զպատահումն նոցա յիւրաքանչիւր կեանս վարուց: 57 Եւ ի Յովսէփ եկեալ ի մետասանորդին, առաւել իմն հոգէխառնեալ ընդարձակի ի լայնութիւն եւ

յերկայնութիւն, ի խորութիւն եւ ի բարձրութիւն մտաւոր եւ իմանալի աշխարհին: 58 Երեւելեացս անուամբ ճանապարհորդելով ասէ.

Որդեակ անեցեալ Յովսէփ, որդեակ իմ նախնանկի, որդեակ իմ մատաղ, առ իս դարձիր (ԽԹ 22):

59 Ոչ յուրուք վերայ արար այսպիսի նախադրութիւն երիցս կրկնելով զորդեական անունն, որ զբնութիւն եւ զբարս եւ զաստուածապաշտութիւն հաւերն լիով ունէր յինքեան, որ հազիւ հանդիպի այլոց որդւոց, բայց թե սմա ողջ եւ անթերի. քանզի այն է հարազատութիւն, որ ամենեւին բերէ զնմանութիւն ծնաւորին, իսկ զսմանէ եւ առաւելութիւնն վկայէ, զոր առաւել ի հաւերէն աճեցոյց: 60 Վասն որոյ ասէ՝ Որդեակ անեցեալ, քանզի պարարտ երկիր առեալ զսերմն՝ անփուշ գոլով եւ անապառաժ եւ առանց կոխման անցաւորաց: 61 Ըստ տէրունական հրամանին առնէ աճմամբ հարիւրաւորս եւ ընդունի զաւրհնութիւնս իբրեւ զՅովսէփ, որ եւ անուանն իսկ յաւելուած թարգմանի, որ զնա իսկ ի զաւրութենէ ի զաւրութիւն եւ փառաց՝ ի փառս:

62 Որդեակ իմ, ասէ, նախնանկի (ԽԹ 22*). որ եւ այնու եւս նման էր հաւերն, զի նախանձեր Եսաւ ընդ Յակոբայ, որպէս եղբարքն ընդ Յովսէփայ, այլ եւ կինն Պետափրեայ՝ ընդ պարկեշտութիւն նորա, յորոց ոչ ինչ վնասեցաւ քան թե աճեաց եւ յաւելաւ ի փառս: 63 Այլ եւ նախանձելի, որպէս թե ցանկալի եւ կարաւտելի եւ բազմաց բաղձալի՝ ոչ մարդկան եւ եթ, այլ եւ հրեշտակաց սրբոց եւ աստուածեղէն հոգ[ւ]ոյն, որպէս զԴանիէլ՝ այր ցանկալի եւ փափագելի^ա:

64 Որդեակ իմ մատաղ (ԽԹ 22*), քանզի կրցեր էր յորդիսն Լիա յերիցունսն:

1 A ուղղելորութեամբ

* Հմմտ. Գան. Թ 23:

65 Այլ եւ զաճեցունն եւ զգարգանալն յայտ առնէ մատաղ կոչելով. նոր գոլով եւ Թաժաճ եւ զարգացուն, ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ առո[յ]գութեան: 66 Դարձեալ՝ Մատաղն կոչումն է պատարագաց եւ նուիրաց Աստուծոյ, որ եւ մատեալ իսկ ի տղայական տիրոց պէս-պէս եւ զանազան փորձանաւք ողջակիզեալ ի հոտ անուշից Պատարագ Աստուծոյ, սիրտ սուրբ եւ հոգի խոնարհ ընդունելի, գոր Աստուած ոչ արհամարհէ՞, որ եւ աւրհնութեամբ ի բան եւ ի գործ փառաւորէր զԱստուած զցայգ եւ զցերէկ աղիւ համեմեալ զբոլոր կեանս իւր:

67 Իսկ ասելն առ իս դարձիր (ԽԹ՝ 22Գ), զի թերեւս հայէր յեղբարսն տեսանելով զիա՞րդ բախէր իբր տպաւորելով ասացեալքն ի հաւրէն ի վերայ իւրաքանչիւրոցն, իբր անուանքն յԱղամայ կոչեցեալ ի վերայ անասուն կենդանեացն, յորմէ առ ինքն հրամայէ դառնալ եւ առնուլ իբր յանաւթոյ ոսկեղինէ զբաժակն փրկութեան, գոր մատուցակէր նովաւ առատաբաշխ Հոգին Սուրբ Աստուած:

68 Զոր բանասրկուին բամբաստին եւ դատափետ առնելն եւ ոխանացին ընդ մմա (ԽԹ՝ 23), քանզի համբաւ չար բերին զՅովսեփայ առ հայրն, թե ուտէ եւ վաճառէ զխաչինսն եւ հպարտանայ ի վերայ նոցա իբր ի ծառայից, զի ոչ կարեին, ասէ Գիրն, խաղաղութեամբ խաւսել ընդ նմա, իբրեւ զպարտաւոր ոք, որ ի դատաստանի ամաչեցեալ փետտի յամենեցունց եւ կրէ նախատինս:

69 Արք աղեղանց (ԽԹ՝ 23Գ) իբր կորովաճիգ աղեղնաւորք ի չարպատկան դարանէ մախանաց նախանձուն ձգելն ի նա զնետս հայհոյութեան, որպէս զՍիկիմ հարին աղեղամբ եւ խաղաղութեամբ:

70 Ահա մեղաւորք լարեցին զաղեղունս իւրեանց պատրաստ արարին զնետս ձգել ընդ խաւար այնոցիկ, ոյք ուղիղ են սրտիւք:

71 Եւ փշրեցան զաւրուքեամբ աղեղունք նոցա եւ լուծան ջիւք բազկաց նոցա ձեռամբ հզարին Յակոբայ (ԽԹ՝ 24), եթե աղեղունս զչարանախանձ դեւսն կոչէ, որ իբրեւ նետիւք վարէր եղբարքն Յովսեփայ առ Յովսէփ: 72 Ի դէպ իսկ է, զի նոքա եւ ի սկզբանէ մարդասպանք, որպէս եւ Տէրն ասէ, որոց աղեղունքն, այսինքն՝ եղբարքն Յովսեփայ, աղեղունք՝ դեւքն, յամաւթ եղեալ չկարացին վնասել Յովսեփայ՝ ո՛չ եղբարքն եւ ոչ մոլի տիկնաւն շիջուցանել զՉահն վառեալ ի նմա գողջախոհութեանն: 73 Զի թուլացան եւ լուծան ջիւք բազկաց նոցա, որ իբր ջլաւք զիններ զբազուկս նոցա ոխութեամբ եւ նախանձու եւ ատելութեամբ: 74 Զի սոքաւք պնդեին զանբարեգործ ձեռք նոցա ի չարիս, իբր զԿայենին ընդդէմ Հաբելի, որպէս ասի ի կտակսն թե՛ Ոգի նախանձու ետ ցՃմաւոն սուսեր, զի սպանցէ զՅովսէփ: 75 Եւ յուժմէ՞ փշրեցան աղեղունքն եւ լուծան ջիւքն. Զեռամբ, ասէ, հզարին Յակոբայ (ԽԹ՝ 24*): 76 Զեռն Յակոբայ հզաւր յաղաւթս տարածեալ վասն Յովսեփայ, որպէս ասէ Դաւիթ. Արարեր զբազուկ իմ որպէս գաղեղն հաստ, եւ արհնեալ Տէր, որ ուսոյց գնեսս իմ ի պատերազմ եւ զմատուցս իմ ի ցախատամարտ՝: 77 Այլ եւ հզար՝ Յակոբայ Տէրն է հզաւրն զաւրութեամբ, գոր Իսահակ հաւրն աւրհնութեամբ բնակեցոյց ընդ նմայ յերթալն ի Միջագետս, որով ձեռամբ առեալ զվէմն դներ ընդ սնարս. եւ նկարեալ լինէր աստուածաբարձ սանդուղքն ի նմա, եւ բուռն հարկանէր զվիմէն, որ կայր ի վերայ ջրհորոյն տապալէր որ եւ ամենայն հով[ո]ւացն հազիւ էր շարժել զնա, որ եւ ի գաւտէմարտութեանն

Է՝ Սաղմ. Ծ՝ 19

*՝ Սաղմ. ԺԷ՝ 35

ասէր. Ընդ Աստուծոյ ժուժկալեցէր եւ ընդ մարդկան գաւրաւոր լիջիւր (1ԻՒ 28), այնու որ զաւրացոյց զԻսրայէլ յԱստուծոյ Հաւր քո, անդի յաղթահարեցան, ասէ, թշնամիք քո, որ զաւրացոյցն զԻսրայէլ՝ կոչմամբ անուանն աստուածատես, զի որ տեսանէ Աստուած զաւրանայ ի տկարութենէ: 78 Տէր՝ վեմ իմ, ասէ, ամբուքիւն իմ եւ գաւրութիւն իմ՞ սաղմոսն երգէ, անտի ասէ, որ զաւրացոյցն զԻսրայէլ:

79 Յոլով անգամ երեւեալ Աստուած Յակոբայ ասէր. Մի երկնչիւր, զի ես ընդ քեզ եմ եւ մի գանգիտէր իջանել յեգիպտոս եւ ես եմ Աստուած հաւր քո (1ԻԳ 3) որպէս եւ աստ ասէ. յԱստուծոյ հաւր քո, ասէ, եղեւ քեզ ամենայն բարութիւն. այն որ յարգանդի գոլով տաւաւին մաւր իմոյ զաւրացոյց զիս եւ սիրեաց զիս եւ յաղթաւղ արար զիս եւ աւգնեաց քեզ Աստուածն իմ եւ արեւնեաց զքեզ արեւնութիւնն ի վերուստ (1ԻԹ 25): 80 Աւգնեաց քեզ եւ ոչ ետ սպանանել զքեզ եղբարց քոց եւ դահճապետին եւ եհան զքեզ ի գբոյն եւ յետ այնորիկ ի բանդէն: 81 եւ արեւնեաց զքեզ, այս է՝ յայտնի արար, յերեւան եհան զքեզ, զի աւրհնելն յայտնել է: 82 եւ ի վերուստ շնորհն իջանէր հոգւոյն, որով մեկնեցեր զերազն, որպէս եւ ինքն ասէր՝ յԱստուծոյ լինի պատասխանի փրկութեան փարաւոնի, եւ մեկնութիւն երազոյդ ոչ եղից, որ ի ներքոյ երկնից են եւ բանիդ այդմիկ ոչ ոք է բաւական յերկրաւորացս:

83 եւ գաւրութիւնք երկրի լի ամենայնիւ. գաւրութիւնք երկրին եգիպտացւոց, որ արար զեաւթն ամացն լիութիւնն, արտաքոյ բնաւորեալ սովորութեանն, լի ամենայնիւ, ամենագգի բերաւք պտղաւք եւ արդեամբք, որ իբրեւ զգրախտ Աստուծոյ եղեւ ըստ ուժոյ մեկնութեան երազոյն, զի արդիւնասցի բանն յաստուծոյ, որպէս եւ

եւթն ամացն սովն՝ արտաքոյ եւ աւտար ի սովորական պատահարաց ցասման Աստուծոյ, զի կեցուցէ Յովսէփ աշխարհս բազումս եւ լիցի երախտաւոր ամենեցունց իբրեւ յԱստուծոյ առաքեալ կեցուցիչ:

84 Վասն արեւնեաց արգանդի հաւր եւ մաւր քո (1ԻԹ 25), քանզի շնորհ, զոր տացէ Աստուած ումեք, յարգանդէ ծնողացն սկսանի ի գոյացուցանելն եւ ի սնունդն արեւնեաց կաթինն յշայեկանութեամբ եւ առողջութեամբ, որպէս ասէ Դաւիթ. Դու հաներ կազմեցեր զիս յարգանդի յոյս իմ ի արեւնեաց մաւր իմոյ՞, եւ ցերեմիա ասէր Աստուած, Մից չեւ ստեղծեալ էր զքեզ յորովայնի՝ գիտեմ զքեզ եւ մից չեւ եղեալ եիր յարգանդի, սրբեցի զքեզ: 85 Վասն արեւնեաց աւրհնութեան, աւրհնեալն եւ գեղեցիկն ի կանայս Ռաքել, որ ամուլ գոլով ոչ ի բնութենէ, դալարացաւ արգանդ նորա եւ ստինքն ցաւղաւոր եղեւ. այլ աւրհնութենէն Յակոբայ եւ յերկար աղաւթից իւրոց, որ իբրեւ սաստեալ եղեւ՝ ի խնդրելն որդի ի Յակոբայ. Մի՞թէ փոխանակ Աստուծոյ իցեմ, ասէ, որ փակեաց զարգանդ քո (1Է 2): 86 Մեծաւ երկիրիւ աշնուհետեւ հայցէր յԱստուծոյ, յորժամ զիտաց զփակաւղն, խնդրէր դարձեալ ի նմանէ զբանալն, եւ բախեաց մինչեւ բացաւ, եւ տուաւ նմա Յովսէփ պտուղ բարի, յորմէ ճաշակեալ ի քաղցրութենէն եւ հաստատեալ ի հաւատոս, զի նա միայն է Աստուած:

87 Գողանայր եւ անարգէր զաստուածն հեթանոսաց եւ անուամբ ճշմարիտն աստուծոյ յուսով դիեցուցանէր ի ստինս զքաջաբոյս մանուկն: 88 Նախ զհաւրն յիշէ զարգանդ աւրհնեալ, զի հայր եւ հաւուրն էր աստուածապաշտ, զորոց զաւրհնութիւնն բարձեալ կրէր յանձին գաւազն աւրհնութեան. եւ ապա զարգանդ

Է Հմմտ. Սաղմ. ԺԷ 2:

Պ սաղմ. ԻԷ 10

Է Երեմ. Է 5

մաւրն դնէ ընդ աւրհնութեամբ, որ կին մանկութեան է եւ հատոր ոգոյ նորայ եղեւ արժանի դուստրն հեթանոսաց, որ զաւրացան քան զաւրհնութիւնս լերանց մշտրնջեմաւորաց եւ բլրոց յաւիտեմակաւնաց (ԽԹ՝ 26*)⁸⁹ Լերինք մշտնջենաւորք նախ զանմահական զաւրս հրեշտակացն է ասել, ըստ այնմ, թե՛ Լուսատու ես դու սքանչելապէս լերանցն յաւիտեմի՞, եւ կամ զի արդարն Նոյ աւրհնեցաւ որդւովքն ի լեռուն Մասեա. յելանելն ի տապանէն, աւրհնեաց, ասէ, Աստուած զՆոյ եւ զորդիս նորա, իբրեւ զնախաստեղծսն ի լերինն յողին, ընդ արեւելս: ⁹⁰ Եւ ասաց Աննեգէֆ եւ բազմացարուֆ (Ք 17): ⁹¹ Աւրհնեցաւ եւ Աբրաամ ի լերինն ամուրհացւոց, ուր զԻսահակն պատարագեաց եւ յաւիտենից անմոռաց յիշեցեալք լինին ի գիրս աւրհնութիւնքն տեղաւք լերանցն: ⁹² Եւ աւրհնութիւնքն Յակոբայ եւ Ռաքելայ զաւրացան քան զհրեշտակաց այնու, զի նոքա ի սկզբանէ եւ բնութեամբ ունին զառաքինութեան պատիւ, եւ սոքա՝ հոգեղէնք եւ ախտաւոր ծնունդք՝ հաւասարեցին նոցա մաքրութեանն, եւ այնպիսի որդոյ հայր եւ մայր եղեն, որ տկար բնութեամբն եւ դիւրասխալ՝ բուռն հարեալ զերկիւղէն Աստուծոյ՝ զաւրացաւ ի տկարութենէ եւ յաղթեաց շռայլեալ կնոջն եւ հիացոյց զհրեշտակսն զլերինսն յաւիտեմական: ⁹³ Եւ քան զՆոյին եւ զԱբրաամուն այնու զաւրացան, զի մերձ եկեալ էին բարեբէր ժամանակին եւ փրկական Տեառն գալստեանն, եւ տեսլեամբ սանդղոցն, զոր նոքայ այսպիսի ինչ ոչ տեսին, եւ գոտեմարտ լինելն եւ անարգելովն զկուռսն, եւ զի անձինք Երրորդութեանն եւ մի Աստուածութեանն յայտնեցաւ երիցս կրկնելով՝ առ սա ասելով. ես եմ Աստուած Աբրաամու, Աստուած Իսահակայ, Աստուած Յակոբայ. յայտ է զի ոչ

այլ է եւ՝ այլ, այլ՝ Իսահակայն Աբրաամուն է եւ Յակոբայն՝ Իսահակայն: ⁹⁴ Մեծ խորհրդոց բացումն յանուն լի անունոցն եւ ամենակատար միոյ Աստուածութեան, որ ի Հայր եւ յՈրդի եւ ի Սուրբ Հոգոջն տեսանի:

⁹⁵ Եղիցիմ ի վերայ գլխոյն Յովսէփայ եւ ի վերայ եղբարցն, որոց առաջնորդեսցէ (ԽԹ՝ 26*)⁹⁶ Աւրհնութիւնն այն ասէ, որ արար զհրեշտակս եւ անապական եւ զԱբրաամ հայր ազգաց եւ Նոյի զաշխարհաշինութեան շնորհն պարգեւեաց: ⁹⁷ Եղիցիմ, ասէ, եւ եկեսցեն պարգեւքն այն ի վերայ գլխոյն Յովսէփայ եւ եղբարցն, որոց առաջնորդեսցէ նա: ⁹⁸ Քանզի զսոյն շնորհն զգայութեանցն եւ ամենայն անդամոցն դրնէ զնա գլուխ եւ առաջնորդ բոլոր ազգին, որոց լինիցի աղբիւր բարեաց եւ աւրհնութեանց: ⁹⁹ Նկատէ զարքայութիւն տասանցն ցեղից, որ եհաս եփրեմեան ազգին, որոյ մոլորութիւն գլխոյն եհաս յամենայն ազգն, զի անձնիշխան կամաւքն խոտորեալ անարժան եղեալ Րոբովամ որդին Նաբատայ որթագործութեամբն, յորմէ խմորեցան ի կարգի ամենայն աւուրք թագաւորացն: ¹⁰⁰ Վասն որոյ կատարեցան բովանդակ ասացեալքս ի զաւակէն աւետեաց եւ յուխտն խոստացեալ աւետեաց արդարոյն, յայն որ եկն արդարացուցանել եւ հաւատարմացուցանել զբանս ծառայից իւրոց Քրիստոս Աստուած մեր, որ զայսպիսի կանխասացութիւնս թելադրեաց ի լեզու հաւր նահապետացն Իսրայէլի, զոր ոչ ասաց յանձնէ, այլ՝ յայնմանէ, որ շտեմարանն է յաւիտեանց եւ ժամանակաց եւ իշխան փոփոխելոյ զսահմանս եւ զիշխանութիւնս թագաւորաց եւ իշխանաց եղելոց՝ զիւրն ամբողջ պահելով, ըստ այնմ, թե՛ երկիմ եւ երկիր անցցեմ եւ բամբ իմ ոչ անցցեմ”, քանզի զամենայն խոստումն բարեաց, զոր

⁸⁹ Սաղմ. ԼԵ 5

⁹⁶ Սաղմ. ԺԻ 13

խոստացաւ բարի արանց եւ առաքինեաց որդոց յորդիս, յորժամ ոչ կացին որդիքն ի հայրենի առաքինութիւնն, այլ ազատ կամաւք խոյս ետուն ի շաւղաց նոցա, անարժան գտեալ աստուածայնոցն յաւիտենական եւ անանցանելի աւետեացն խոստման: 101 Ինքնին իսկ մարդասէրն Աստուած եւ հաւատարիմն յուխտին իւրում եկն եւ եղեւ որդի որդոցն իւրոց եւ սիրողաց, եւ յինքն ձգեալ զիւրականն խոստացեալ աւրհնութիւնն, եւ ելից զբովանդակն յանձն իւր՝ յուրախութիւն իւրոցն սրբոց եւ ի հաւատարմութիւն անսուտ իւրոցն բանից իբրեւ զկոչումն անդրանիկ որդւոցն եւ զԻսրայէլ անունն եւ զծաղկիլն Իսրայէլի եւ լնուլ տիեզերաց պտղով նորա, եւ զասելն՝ Երանելի ես դու, Իսրայէլ, եւ զսոցին նմանս, զորս յինքեան առեալ Տէրն հաւատարիմ գտաւ պահելով զմարգարէիցն ճշմարտախաւսութիւն անբանբաս եւ զառաջին արդարոցն զառաքինութիւն եւ զարժանաւորութիւն յաւիտենական: 102 Որք եւ զնա նկարագրեցին յարժանաւոր վարս իւրեանց եւ ի պարկեշտ քաղաքավարութեան, իբրեւ զՅովսէփ ողջախոհ պարկեշտ եւ երկիւղած, անձն մաքուր եւ պատկառելի եւ հայրենի գրգանաց արժանի աւրհնութեան, զորոյ զկեանս վարուց յոյժ գերագոյն առաւելութեամբ յանձն առեալ Տէր անմահացոյց նորայովն բնութեամբ եւ ազգակցութեամբ: 103 Վասն որոյ զՀաւրն նորա զբանս յիւրն Հայր փոխելով եւ զՅովսէփայն յինքն բերեալ մեծարէ ընդ ինքեան ասելով ցնա մշտնջենաւոր հաւրն՝ Որդեակ ամեցեալ, որդեակ իմ նախանձելի, որդեակ իմ մատաղ, առ իս դարձիւր (ԽԹ 22). զի թեպէտ անաճ բնութիւն է ըստ Հաւր Որդին եւ անյաւելուած, այլ ողորմութեամբն, որ առ մեզ, որդի մարդոյ եղեւ, զաւրէնս բնութեան մերոյ լնոյր ծննդեամբ ի կնոջէ, թե եւ ի Կուսէ եւ ի վեր քան զբնութիւնս, այլ սննդեամբ եւ անմամբ մերաւրէն, որպէս եւ գրեցաւ իսկ

զնմանէ. Մանուկն ամեր, ասէ, եւ զարգանայր^ա: 104 Եւ զի Յովսէփ եղեւ, որ ասի յաւելումն, ի նա ոչ ինչ յաւելաւ յամենալին, այլ ի մեզ յոյժ յաւելաւ մեծութիւն եւ շնորհ աստուածեղէն, զոր եւ մերովս բնութեամբ կոչեաց զնա հարն իւր ի Յորդանան եւ ի Թաբաւր, որդի սիրելի եւ հաճոյ, նախանձելի ասելով աստ, ըստ Աւետարանին վկայելոյ, թե առ նախանձու մատնեցին զնա Հրէայքն, նախանձելով ընդ ամենայն բարիսն, որ նովաւ բաշխէին ժողովրդեանն աստուածաբար:

105 Որդեակ իմ, ասէ, մատաղ (ԽԹ 22^ա) որ եւ Հիմ աւուրցնէ^բ Աստուած եւ Իսկզբանէ բանն^գ. եղեւ մանուկ մատաղ, անծելով զմատուցն, ըստ Եսայեա, ի բոյն չար իժիմ^դ, ի գաւառն ուր Յովսէփ չոգաւ, եւ սպանեալ առ զաւձն առաջին, հատեալ զնա ի զաւրութենէ դառնա անվնաս ի Նազարեթ: 106 Որում ասացաւ դարձեալ. Որդի իմ ես դու, եւ ես այսար ծնայ զբեզէ, այլ եւ մատաղ բնութեանս պատարագ ընդունելի Հար ի հոտ անուշից^ե՝ ազատելով զմեզ ի մեղաց՝ ողջակիզեալ ի Խաչին եւ բաշխեալ մեզ զանմահական կերակուրն եւ զանծախելի, զորոյ զաւրինակն զենման ի զուարակաց եւ ի գառանց, ի փրկութիւն յուսոյ եւ ի սէր աղքատաց եւ ի յիշատակ ննջեցելոց զենեալ մատաղ կոչեմք, ըստ աւրինացն ստուերի, աղ մատուցանելով աւրհնութեան, զկենդանի Աղն, որ զանմահութիւնս մեր համեմեաց նշանակելով եւ զքահանայական աւրհնութիւնն խառնելով, ի բաց տանիմք ի հին զոհիցն աւրինակէ. ուրուական եւ աւրինակ է այս անմահական զենմանն, որ մատեաւ ի փայտն

^ա Գ.Վ. Ը 80. Բ 40

^բ Գ.Վ. Ը 9

^գ Յ.Վ. Ը 1

^դ Ե.Վ. Ը 8

^ե Ս.Պ. Բ 7

^զ Հ.Վ. Ը Բ 2:

մահու պատարագ Հաւր ի բառնալն զմեղս աշխարհի: 107 Որում ասէ ցնա հայր՝ իբրեւ յաւիտենական կենդանոյ՝ առ իս դարձիր. յայտ է յետ յարութեանն, համբարձմամբ յերկինս, ըստ այնմ, թե՛ Ելանէ Արեգակն ի ծոցոյ Հաւր եւ մտանէ յաշխարհ եւ ի ծոց Կուսին եւ ի գերեզման, ի դժոխս, եւ զամենայն կատարեալ ի տեղի իւր դառնայ, ըստ իւրականն հրամանի՝ թե՛ Ելի ի Հաւրէ եւ եկի յաշխարհ, դարձեալ թողում զաշխարհս եւ երթամ առ Հայրէ:

108 Առ իս, ասէ, դարձիր (ԽԹ՝ 22բ) ոչ սոսկ բան, որպէս եւ էջն, այլ մարդ ճշմարիտ եղեալ, սակայն զիւրն ոչ կորուսեալ, այլ մնացեալ մի որդի եւ մի անձնաւորութիւն եւ բնութիւն, անշփոթ միաւորութեամբ եւ անբաժանելի Աստուածութեամբ:

109 Զոր բանասրկուիմ բամբասեիմ եւ դատափէտ առնեիմ եւ յիսանայիմ ընդ մմա արբ աղեղանց (ԽԹ՝ 23) զայս նախատեսութեամբ իբրեւ զպատմութիւն յայտնապէս զՏեառնէ ասէ եւ ոչ որպէս թե առ Յովսէփ եւ եթ, որ մաւտն կայր:

110 Բամբասեիմ, ասէ, եւ դատափէտ առնեիմ եւ յիսանայիմ (ԽԹ՝ 23*) այն զոր կատաղի ժողովուրդքն, որդիքն անիծից Ռոբենի, Շմաւոնի եւ Ղեւեա, զորս անէծ յառաջագոյն, ընդ Տէրն նախանձեիմ ընդ աստուածաբար սքանչելիսն. եւ վասն այնր զփառս նորա տեսեալ ասեիմ: 111 Ահա ամենայն աշխարհ զկնի նորա գնաց, տեսէք զի՞նչ առնելոց էք: 112 Որում եւ դատաւորն վկայէր Պիղատոս եւ խնդրէր արձակել զնա, քանզի գիտէր, ասէ աւետարանիչն, թե առ նախանձու մատնեցին: 113 Բանասրկեիմ զնմանէ քահանայապետքն առ ժողովուրդսն եւ նոքաւք առ Պիղատոս եւ առ Հերովդէս՝ առ նախանձու

եւ դպիրքն ի ցեղէն Շմաւոնի եւ փարիսեցիքն ի ցեղէ իւրաքանչիւրցն:

114 Դատափետ առնեիմ եւ յիսայիմ նենգութեամբ հարցանելոյ վասն հարկս տալոյ կայսեր՝ եւ պատուիրանին կարգի, թե ո՞ր մեծ է: 115 Որպէս եւ սաղուկեցիքն վասն բազմանկողին՝ փետտել կամելով զգեղեցկութիւն գլխաւոր բանից նորա. եւ կամ թե ի յողելն եւ յապտակելն եւ ի ծեծելն զսոսկալին սերոբեից: 116 Եւ զգլուխն եւս փետտեցին, ըստ բանին Յոբա, զոր ասաց յերեսաց նմին Տեառն Առեալ, ասէ, զվարսից իմոց փետտեաց զիսէ: 117 Եւ ի կամելն քարկոծ եւ գահավէժ առնել զնա՝ յիսանային եւ մղձկեիմ փղձկեալք իբրեւ զխղիւսայթեալ շարաւով ուռէցն, արքն ժանտք եւ աղեղունքն թիւրք, կամովին տուեալ զինքեանս ի գիրկս բանասրկուիմ, որք ըստ Յոբայ յանխնա խոցոտել կամեիմ զնա յերկամունս, որ եւ ոչ զիպեցուցանէր, ըստ մտաց նոցայ: 118 Այլ եւ հրաւիրեալքն եւ արժանաւորքն խոցոտմանց աղեղանցն հռովմայեցւոց՝ տիտոսեանց եւ վեսպիանոսեանց, որք վրէժխնդիրք եղեն արեանն անպարտականին մահու:

119 Վասն որոյ փշրեցան զաւրութեամբ աղեղումն անցա եւ լուծան ջիւրբազկաց անցա՝ ձեռամբ հզարիմ Յակոբայ (ԽԹ՝ 24): 120 Քանզի Սուրբ անցայ մտիմ ի սիրտս անցա եւ աղեղումն անցա փշրեցանք, որպէս ասէ սաղմոսարանն հոգէնուագ: 121 Քանզի Քրիստոս՝ Աստուծոյ զաւրութիւն եւ Աստուծոյ իմաստութիւն. ձեռն հզար եւ բազուկ բարձր: 122 Հզարն Յակոբայ, որ էջ ընդ նմա յեգիպտոս եւ տանջելով զնա եհան յեգիպտոսէ, այն որ փրկեաց զնա յեսաւայ եւ ի

* Հմոր. Մարթ. ԻԲ՝ 17:

բ Յբ. Ժ. 9 13

գ Սաղմ. Լ. 9 15

դ Լ. Կոր. Ե 24

Հաբանայ եւ ի քանանացւոցն, զիա՞րդ տկարանայր հողոյ եւ մոխրոյ առաջի, եթե ոչ տնաւրինաբար յանձն առնոյր:

123 Անտի որ գաւրացոյցն գիւրայել, յԱստուծոյ հաւր քո. եւ աւզնեաց քեզ Աստուածն իմ, եւ աւրինեաց զքեզ (ԽԹ՝ 24-25):

124 ՁԱստուած ոչ ոք ետես երբեք, բայց միածին Որդին՝ որ նա ինքն է ճշմարիտ տեսաւզ Աստուծոյ, որ գիտէ միայն զՀայր եւ գիտացեալ լինի ի Հաւրէ, տանի զՀայր եւ տարեալ լինի ի նմանէ. Հայր յիս եւ ես ի հայր, *ասէ՞*: 125 Եւ անտի ունի զիսկուծիւն իւր յանսկզբնականն Հաւրէ: 126 Եւ զաւրուծիւն է Հաւր, սակայն զաւրացեալ լինի ի նմանէ ըստ մարմնոյն ի ձեռն հրեշտակի միջնորդի, ըստ մարդավայելուչ սահմանին յիւրմէն եղելոյ հրեշտակիւ առնուլ մարդոյ զամենայն ինչ յԱստուծոյ. Հրեշտակ, ասէ, իջեալ գաւրացուցանէր զնա՞ն, ոչ թե զաւրուծիւն ինչ տալով եւ կամ քաջալերելով, այլ որպէս փառաւորելն զԱստուած հրեշտակաց եւ բարեբանելն ոչ է յաւելուլ ի փառս նորա եւ կամ՝ ի բարիս, այլ խոստովանութիւն եւ վկայութիւն է ի հրեշտակաց եւ ի մարդկանէ աւրհնեալ գոլ նմա եւ փառաւոր եւ բարեբուն: 127 Նոյնպէս եւ առընթեր գոլով ի ժամ չարչարանացն հրեշտակապէտ իջանէր առ նա ամենայն հրեշտակաւք^ա:

A 87բ-95բ, H 139ա-153բ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. 4 «Զի առանց հողոյ... հրոյ՝ երեւումն». տե՛ս եւ հմմտ. «Պղատոնի առ Տիմէոս՝ Սակս բնութեան» – «Պղատոնի իմաստասիրի տրամախօսութիւնք՝ Եւթիփոնն, Պաշտպանութիւն Սոկրատայ եւ Տիմէոս», աշխատ. հ. Արսէն վրդ. Սուքրեանի, Վենետիկ, 1877, էջ 94:

Ա. 5 «Երկիր ծանր գոլով ... հրոյն կայացաւ» հմմտ. «Փիլոնի այնոցիկ որ ի Լինելուծեանն խնդրոց եւ լուծմանց» – «Փիլոնի Եւրայեցւոյ բանք երեք չեւ ի լոյս ընծայեալք», աշխատ. հ. Մկրտիչ վրդ. Աւգերեանի, Վենետիկ, 1822, էջ 85:

Ա. 6^ա բառս առկայ է՝ Փիլոն, էջ 86:

Ա. 9 Հատուածը DE-ում առկայ է «Այլ» անունով, F-ում վերագրուած է ե՛ւ Եփրեմին, ե՛ւ Եղիշէին: G-ում այն բացակայում է:

Ա. 10-12 Հատուածս ABDE-ում Եղիշէի անունով է: G-ում Եղիշէի անունով է միայն «Քանզի... Մովսէս» (10) սկզբնահատուածը: F-ում առհասարակ այն բացակայում է:

Բ. 1 Հատուածս չիք ADEF-ում:

Գ. 1, 2, 3, 4 ենթահատուածները Եղիշէի անունով են համապատասխանաբար E, D, G ձեռագրերում: Ամբողջ հատուածը Եփրեմի անունով է A-ում: Համաձայն D-ի հատուածի՝ Եփրեմի մասը Բարսեղի անունով է:

Դ. Ամբողջ հատուածս ACH-ում Եղիշէի անունով է: Մինչդեռ G, D, E ձեռագրերում Եղիշէի անունով են համապատասխանաբար 8-ից, 9-ից եւ 11-ից սկսուող ենթահատուածները միայն: Ե 1A շարունակութիւնը Եփրեմի անունով է:

Ե. Ամբողջ հատուածս ABCEGH-ում Եղիշէի անունով է, D-ում՝ Գրիգոր Աստուածաբանի:

Զ. Ամբողջ հատուածս BGH-ում Եղիշէի անունով է: 1 հատուածով վերջանում են G ձեռագրի մէջ առկայ Եղիշէի հատուածները:

Է. Ամբողջ հատուածս EH-ում Եղիշէի անունով է, մինչդեռ A-ում՝ Բարսեղի: Այն բացակայում է F-ում:

Ը. 1-6 ենթահատուածս Եղիշէի անունով է միայն D-ում: Այն Բարսեղին է վերագրուած A-ում, մինչդեռ E-ում բերուած է «Այլ»-ի ներքոյ: Լ. Խաչիկեանը հատուածիս վրայ մատիտով արձանագրել է. «Բարսեղ Վեցօրեայք» (տե՛ս Լ. Խաչիկեան, Եղիշէի Արարածոց մեկնութիւնը, էջ 43): Սակայն որոնումներս ցոյց տուեցին, որ այն բացակայում է Բարսեղ Կեսարացու նշանաւոր երկում: 9-15 ենթահատուածը Եղիշէի անունով է AEH ձեռագրե-

Է ՅՎԸ՝ Ը 18
Ը ՅՎԸ՝ Ժ 38
Է ՂՎԿ՝ ԻԲ՝ 43

րում: 16-19 ենթահատուածը E-ում «Այլ» անուան տակ է:

Թ. Այս հատուածի մի մասը՝ 6-7, ըստ B-ի եղիչէինն է: Համաձայն D-ի ամբողջ հատուածը եղիչէինն է: 1 հատուածն (a-ից), ըստ A-ի Բարսեղինն է, 2-3-5 հատուածները AH-ում բերուած են «Այլ» անուան ներքոյ: 8-13 հատուածը բացակայում է H-ում:

Ճ. Հատուածս եղիչէի անունով է ADEFH ձեռագրերում: 3 հատուածը F-ում Գրիգորի անունով:

4-6 ենթահատուածը ADE ձեռագրերում առկայ է եղիչէի անուամբ, մինչդեռ H-ում՝ «Այլ», F-ում «Գրիգոր» անունների ներքոյ:

ԺԱ. Հատուածս եղիչէի անունով է ABDH ձեռագրերում, ընդ որում 1-4 ենթահատուածը եղիչէի անունով է միայն D-ում, 3-4 ենթահատուածը բացակայում է H-ում, 6-11 ենթահատուածը եղիչէի անունով է միայն AB ձեռագրերում, 11-ը ABDE ձեռագրերում, 12-ը՝ եղիչէի անունով է միայն H-ում, իսկ 19-ը՝ CDEH ձեռագրերում:

ՃԲ. Ամբողջ հատուածս A-ում «Յոհ[ան]» անուան տակ, իսկ H-ում՝ միայն 1 ենթահատուածը մինչեւ a: Ամբողջ հատուածը չիք F-ում:

ՃԳ. Հատուածս բացակայում է F ձեռագրում:

ՃԴ. Հատուածս բացակայում է F-ում: A-ում 1-7 ենթահատուածը վերագրուած է Գրիգորին, իսկ 8-13-ը՝ Պիսիդէսին: H-ում հատուածը սկսում է «Եւ զամենայն շունչ զեռնոց, զոր հանին ջուրք ըստ ազգի» բառերով: 6-ից սկսող հատուածը H-ում առկայ է Բարսեղի անունով: 7 հատուածի (a-b) դիմաց Լ. Խաչիկեանը արձանագրել է. «Փիլոն, 155»:

ՃԵ. Հատուածս, որ ABEH-ում եղիչէի անունով է, բացակայում է CDF ձեռագրերում: Ընդ որում BH-ում եղիչէի անունով է 3-ից, E-ում՝ 4-ից (b-ից), իսկ FH-ում՝ 3-ից (a-ից): Վերջին ենթահատուածի մասին Լ. Խաչիկեանը ծանուցում է. «Թւում է անպատճառ եղիչէինն է»: Բայց յետոյ, վերանայելով կարծիքը, ենթահատուածիս եղիչէին պատկանելը համարում «անհավանական»:

ՃԶ. Հատուածս A-ում կազմում է Պիսիդէսի շարունակութիւնը, իսկ 6-ից արձանագրուած է Նիւս[ացու] անունով:

ՃԷ. Հատուածս առկայ է ABDEH ձեռագրերում եւ բացակայում է C-ում: Եթէ 4-ից շարունակող հատուածը (a-ից) A-ում Նիւսացու անունով է, ապա E-ում՝ եղիչէի:

ՃԸ. Հատուածս առկայ է ACDE ձեռագրերում, ըստ որում 1, 2 ենթահատուածը D-ում, 3-ը C-ում վերագրուած է եղիչէին, մինչդեռ ամբողջ հատուածը F-ում «Յոհ[աննու]» անունով է: AE ձեռագրերում հատուածիս յաջորդող հատուածը վերագրուած է Վարդանին. «Եւ զգրախոսն ուստի գիտէր... եւ ամենայն սողնոց, որք սողին»:

ՃԹ. Հատուածս եղիչէի անունով առկայ է AEH-ում, իսկ B-ում՝ Յոհ[աննու]: Այն բացակայում է CDF ձեռագրերում:

Ի. Հատուածս եղիչէի անունով առկայ է ABDEH ձեռագրերում եւ բացակայում է CF-ում:

ԻԱ. Հատուածիս 1-5 ենթահատուածը (մինչեւ a) A-ում եղիչէի անունով, ամբողջ հատուածը E-ում Փիլոնի անունով, 2-3-ը B-ում նոյնպէս Փիլոնի անունով: 4-5-ը դարձեալ Փիլոնի անունով է BD-ում եւ Եփրեմի անունով H ձեռագրում, մինչդեռ C-ում՝ եղիչէի անունով, ըստ որում 5-ը ենթահատուածը (b-c) առկայ է միայն C-ում:

ԻԲ. Ինչպէս երեւում է, Խաչիկեանը թէաբար է վերագրել եղիչէին: Սակայն եթէ ի մտի ունենանք եղիչէի լեզուամտածողութեանն ու ոճին յատուկ «հացանալ» (Մեկնութիւն Հայր մերի. տե՛ս Ս. եղիչէի մատենագրութիւնը, Վեներտիկ, 1859, էջ 204), «արիւնանալ», «առաքինանալ» (Մեկն. Արարածոց. Թ. 3) «բունել» (Թ. 24) «որովայնացոյց» (Մ. 14), «բերանացոյց» (Մ. 14) եւ նման ձեւերի հետ «նիւթանալ», «բանանալ» (գոյականի եւ ածականի բայացում) սկնյայտ նմանութիւնը, ապա կարելի է այս վերագրումն արդարացնել:

ԻԳ. 1-6 ենթահատուածս եղիչէի անունով է ABE ձեռագրերում, եւ բացակայում է H ձեռագրում: CDFH ձեռագրերում այն սկսում է 7-ից: 8 ենթահատուածը (a-ից) Փիլոնի անունով է DH ձեռագրերում:

ԻԴ. Հատուածս, որ DE ձեռագրերում եղի-
չէի անուկնով է, A-ում Փիլոնի անուկնով է, ըստ
որում E ձեռագրում այն սկսւում է 3-ից: Հա-
տուածի համար Լ. Խաչիկեանը ծանուցում է.
«Հաւանաբար Փիլոն»:

ԻԵ. 1 Մի քանի բառ անընթեռնելի է: Ամ-
բողջ հատուածը առկայ է H ձեռագրում: Հա-
տուածին 2 ենթահատուածի (մինչեւ b) համար
Լ. Խաչիկեանը նշում է, թէ A-ում Փիլոնին վե-
րագրուած հատուածի հետ շարահիւսուած այս
(a-ից) հատուածը (որ D-ում Փիլոնի անուկնով
է) համաձայն C-ի պատկանում է եղիչէին:
Ըստ որում 2 ենթահատուածը (մինչեւ b) F-
ում առկայ են եղիչէի անուկնով:

ԻԶ. Հատուածս առկայ է ADH ձեռագրե-
րում: D-ն հատուածը սկսում է 1-ից: A-ում
բացակայում է 2-ը:

ԻԷ. Հատուածս առկայ է ADEH ձեռագրե-
րում:

ԻԸ. Հատուածս առկայ է ACF ձեռագրե-
րում, ըստ որում A ձեռագրում մի մասը Փիլո-
նի, միւսը՝ Նիւսացու անուկնով, մինչդեռ CF-
ում այն եղիչէի անուկնով է:

ԻԹ. Հատուածի 1 ենթահատուածը (մինչեւ
a) առկայ է միայն E-ում, 1-2-ը (b-ից)՝ միայն
ABC ձեռագրերում, մինչդեռ D-ում առկայ է
միայն 2 ենթահատուածը: 1-2 ենթահատուածը
(b-ից) C-ում առկայ է եղիչէի անուկնով:

Լ. Հատուածն առկայ է ABCDEFH ձեռա-
գրերում:

ԼԱ. Հատուածն առկայ է AH ձեռագրե-
րում:

ԼԲ. Հատուածս առկայ է ACDHFG ձեռա-
գրերում: D-ում 2-5 ենթահատուածը եղիչէի
անուկնով է: 3-4 ենթահատուածի դիմաց Խաչի-
կեանը նշում է. «Փիլոն, էջ 16»: FG ձեռագրե-
րը եղիչէին են վերագրում նաեւ շարունակու-
թիւնը, որ ըստ AD-ի Վարդանինն է, իսկ հա-
մաձայն H-ի՝ «այլ». Այլ եւ հաղորդս կամեցաւ
առնել բարերարն իւրում արարչութեանն՝
զմարզն, որպէս եւ նմանութեանն. եւ անուանս
կոչել տա կենդանեացն: Այլ զի եւ ետ նմա զա-
մենայն շնորհս փչմամբն. աստ զքահանայա-
կան զպատիւն յայտ առնէ, որպէս եւ աստ քա-
հանայքն յաւանանէն դնեն անուանս: Այլ եւ
ասեն իմաստունքն յունաց զխոհականութիւն

զոյ բանաւորութիւն. եւ զանուանագիտու-
թիւնն խաւսողութիւն, իսկ զձայնաւորու-
թիւնն՝ ծանաւթութիւն լսելեաց մարդոյ եւ ա-
նասնոյ:

ԼԳ. Հատուածն առկայ է ABCDEFG ձե-
ռագրերում, ըստ որում հատուածս D-ում վե-
րագրուած է Վարդանին, 6-ից BF ձեռագրե-
րում արձանագրուած է «այլ», 7-ից A ձեռա-
գրում՝ եղիչէի, իսկ 1 ենթահատուածը F ձե-
ռագրում՝ «Յովհ[աննէսի] անուկնով: 4 ենթա-
հատուածի համար Խաչիկեանը լուսանցքում
արձանագրում է. եղիչէ, Պատմութիւն. «մեծ է
տեսաւորութիւն մտաց քան զմարմնոյ». էջ 23:

ԼԴ. Հատուածս որ բացակայում է F-ում,
CF ձեռագրերում վերագրուած է եղիչէին: A-
ում նախորդ հատուածին յաջորդող ենթահա-
տուածները արձանագրուած են «Փիլոն», «Փի-
լոն», «Վարդան» հեղինականիչ անունների
յաջորդականութեամբ: H ձեռագրում 1-2 են-
թահատուածը վերագրուած է Փիլոնին, որի
վերաբերեալ Խաչիկեանը լուսանցքում նշում
է. «Փիլ[ոն], էջ 16-17», 3-4 ենթահատուածի
համար՝ «Փիլ[ոն]», էջ 15:10, 19-20 ենթահա-
տուածները C-ում, եւ H-ում համապատասխա-
նաբար վերագրուած են եղիչէին: Այս հա-
տուածին յաջորդող հատուածը, որ բացակա-
յում է E-ում, A ձեռագրում վերագրուած է
Փիլոնին. B գրչագրում՝ եղիչէին. «B որ առ
Ազամ էած իբրեւ առ իշխան եւ գլխաւոր: Եւ
տեսեալ Ազամայ զգեղաղեչ պատկերն... մար-
մին եմք մարմնոյ նորա եւ ոսկր յոսկերաց նո-
րա»:

ԼԵ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռա-
գրերում, ըստ որում A-ում «Փիլոն, Եփրեմ,
Եփրեմ, Յոհաննէս, Եփրեմ» հեղինակային յա-
ջորդականութեամբ ներկայացող շարունակու-
թիւնը CD ձեռագրերում վերագրուած է նոյն-
պէս եղիչէին: E ձեռագրում եղիչէին է վերա-
գրուած մինչեւ «Յոհ.» (ըստ A-ի) կամ մինչեւ
«Եփր.» (ըստ E-ի) հատուածը, իսկ F ձեռա-
գրում հատուածս եղիչէի անուկնով է մինչեւ
Գրիգոր Աստուածաբանի անուամբ «մերկ
պարզամտութեամբ կենաւք անարուես-
տիւք...» սկսուածքով հատուածը: 2 ենթահա-
տուածի դիմաց լուսանցքում Խաչիկեանը
նշում է. «Փիլ[ոն], 21», իսկ 8-ի դիմաց՝
«Փիլ[ոն], 19»:

ԼԶ. Հատուածս բացակայում է EFH ձեռագրերում: C-ում հատուածս արձանագրուած է Եղիշէի անունով:

ԼԷ. Հատուածս բացակայում է EFH ձեռագրերում: C-ում այն արձանագրուած է Եղիշէի անունով: G ձեռագրում հատուածս սկսում է մի քանի տող վերեւից, այն է՝ «Յայտ արար թէ ամենայն կենդանիք եւ գազանք չեն անմասն ի բանական Հնարից, բնականաբար ունելով առ իւրեանց փրկութիւնն եւ ազտակարն: Եւ աւձն աւելի ոչ ունէր յառաջ իմաստ, այլ յետոյ կոչեցաւ խորամանկ, զի անաւթ եղեւ չարին...»: «Յայտ արար, թէ ամենայն կենդանիք՝ փրկութիւնն եւ ազտակարն» հատուածի դիմաց Խաչիկեանը նշում է. «Փիլ[ոն] Յ[ա]ղ[ագա]բան ունել [եւ անասուն կենդանեացդ]»: B-ում հատուածը սկսում է 2-ից, D-ում՝ 4-ից, C-ում՝ 6-ից:

ԼԸ. Հատուածս բացակայում է E ձեռագրում: D-ում Եղիշէին է վերագրուած 2, 5, ենթահատուածը, H-ում՝ 2-3 ենթահատուածը, F-ում՝ 4-5-ը: B-ում առկայ 5 ենթահատուածը չի վերագրուած Եղիշէին: CF-ը Եղիշէին է վերագրում նաեւ A-ում «Յոհ»-ին վերագրուած հատուածը. «Իսկ գասելն՝ մի՛ հոռւ լինիցիք ինքն յաւել եւ ոչ թէ Աստուած ասաց իւրն ի դատապարտութիւն... [ը]՝ մատուցանէ նմա դեղ մահոռ/...[F]՝ ... ոչ բանական ոք, այլ չար գազան եղեւ»: ԼԷ-ԼԸ հատուածների միջնամասում ընկած համաձայն A-ի Եփրեմին պատկանող հատուածը նմանապէս ըստ C-ի Եղիշէինն է:

ԼԹ. Հատուածիս 1 ենթահատուածը առկայ է H ձեռագրում եւ բացակայում միւս ձեռագրերում: 3-11 ենթահատուածը A-ում «Յոհ»-ի, իսկ C-ում Եղիշէի անունով է. մինչդեռ F-ում այն առհասարակ բացակայում է:

Խ. C-ում այս եւ յաջորդ հատուածը, ինչպէս նաեւ սրանց մեջ ընկնող «Յոհ» հատուածը վերագրուած է Նիւս[ացուն]: Հատուածս բացակայում է BD ձեռագրերում: AF-ում հատուածը սկսում է 3-ից, ըստ որում A-ում՝ Եղիշէի, իսկ E-ում (ամբողջ հատուածը) Վարդանի անունով:

ԽԱ. Հատուածս բացակայում է C-ում: Այն առկայ է ABDEFH ձեռագրերում, ըստ որում H-ում այն Եղիշէի անունով է: 3-4 ենթա-

հատուածը առկայ է նաեւ BD ձեռագրերում: 5-ից յետոյ E-ն շարունակում է մինչեւ յաջորդ հատուած (որ A-ում արձանագրուած է Յովհ.-ի անունով). «Իսկ որք ասեն թէ ծառն եղեւ պատճառք բանալոյ աչացն, զիտելոյ զբարի եւ զչար, յոյժ սխալական է, զի թե անասունք կենդանիք (H կենդանիքդ) զիտեն զիւրեանց աւգուտն ընդերել, բանականքն զիւրդ ոչ զիտէին զբարին եւ զչար, եթէ լսեն բարի է, չլսեն՝ չար, սակայն թիւրեցին զկամս (E զկեանս) իւրեանց ինքնայաւժար մինչ, փորձիւ (H գործիւ) ուսան: Եւ կարեցին տերեսս քգեւոյ եւ արարին իւրեանց սփածանելիս, եւ քափեան Ադամ եւ կին իւր ի մէջ ծառոց դրախտին (7-8):

ԽԲ. Հատուածս առկայ է ABDEH ձեռագրերում եւ բացակայում CF-ում: 7 ենթահատուածը D ձեռագրում է:

ԽԳ. Հատուածս առկայ է ABCDEH ձեռագրերում եւ բացակայում է F-ում: C ձեռագրում այն Եղիշէի անունով է եւ սկսում է մի քանի տող վերեւից. «... առ Աբրաամաւ եւ Իսահակաւ, զի երգուան եւ հակառակեցան, եւ յապահովեցան մարդիկն առ ջրհորաւքն, այնպէս կոչեցան: // Եւ որպէս վասն Ագարայ...»: DEH ձեռագրերում հատուածը սկսում է 3-ից (a-ից): EH ձեռագրերում 3-5 ենթահատուածը Եղիշէի անունով է, մինչդեռ 6-7-ը H-ում եւ 7-ը CD ձեռագրերում Եփրեմի անունով են:

ԽԴ. Հատուածս B ձեռագրում կցուած լինելով Փիլոնի հատուածին, չի վերագրուած Եղիշէին: Սրա մասին Խաչիկեանը ծանուցում է «Փիլոնի մօտ չկայ»: C ձեռագրում Հատուածս վերագրուած է Եփրեմին: 1 ենթահատուածը առկայ է միայն H ձեռագրում, իսկ 2-6-ը՝ ADF ձեռագրերում, ուր առկայ է Եղիշէի անունով, մինչդեռ E-ում՝ Փիլոնի:

ԽԵ. Հատուածս H ձեռագրում շարունակութիւնն է նախորդ հատուածի: ABCDF ձեռագրերում նմանապէս այն շարունակութիւնն է նախորդի, ըստ որում համաձայն A-ի վերագրուած է Փիլոնին, ըստ C-ի՝ Եփրեմին: E ձեռագրում հատուածը սկսում է այստեղից:

ԽԶ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում, ըստ որում այն Եղիշէի անունով է AB ձեռագրերում ու Եփրեմի՝ C ձեռագրում: 2a բառի վրայ Խաչիկեանի նշումը. «Փիլ[ոն]

28»: 4 ենթահատուածի դիմաց լուսանցքում ինչպիսիք է նշումը. «Փիլ. 30»:

ԽԷ. Հատուածս բացակայում է F ձեռագրում: C-ում 3 ենթահատուածը առկայ է «Յոհ»-ի անունով:

ԽԸ. Հատուածս բացակայում է F ձեռագրում: Այն առկայ է ACEH ձեռագրերում, ըստ որում 1 (a-b) ենթահատուածը բացակայում է AE ձեռագրերում, իսկ C-ում հատուածը սկսում է a-ից: 1-3 Հատուածը ինչպիսիք է ներկայացնում է Եղիշէի հեղինակութիւնն է ներկայացնում հարցական նշանով:

ԽԹ. Նախորդ եւ այս հատուածի միջեւ A ձեռագրում առկայ Փիլոնի անունով «հատուածիկն» ըստ C-ի նոյնպէս Եղիշէինն է. «Աղամ միտք եւ կրինն՝ զգայութիւն, եւ աւճն ցանկութիւն, որ եւ բնաւորեալ է C՝ միտք առնուլ A՝ ի զգայութեանց եւ զգայութիւն խաբիլ ի ցանկութեանց, եւ ցանկութիւն խոտորիլ ի սատանայէ»: Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում, ըստ որում E ձեռագրում այն Փիլոնի անունով է (1-5 ենթահատուած), H-ում այն սկսում է 2-ից, իսկ 16-ից ABCDE ձեռագրերում՝ Եղիշէի անունով, 9-ից B-ում, 12-ից եւ 14-ից A-ում: 29-31 (b) ենթահատուածի դիմաց լուսանցքում ինչպիսիք է նշումը. «Փիլ[ոն] 1, 127»: 35-ից C-ում իբրեւ հեղինակ նշում է «այլ»: D ձեռագրում հատուածը հասնում է մինչեւ c, իսկ F-ում՝ մինչեւ 36: Այստեղից E-ում շարունակութիւնը պատկանում է նոյնպէս Եղիշէին, որով նախորդ հատուածը ձուլում է յաջորդին: 81-ից H-ում իբրեւ հեղինակ արձանագրուած է «այլ»: D ձեռագրում (82-ից) Եղիշէին վերագրուող հատուածը, ինչպէս նշում է ինչպիսիք է նշումը սկսում է մի փոքր վերելից (A, թ. 31բ սիւնակ //, տող 11): 10 ենթահատուածի աստուածաբանական ազբիւրը Փիլոնի Մենդոց մեկնութիւնն է (տե՛ս «Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդաց ի Հայս...», Վենետիկ, 1826, էջ 25-26): Այն օգտագործւում է նաեւ Անանիա Սանահնեցու Հակածառութեան մէջ. Յ. Քեոսէեան, Աստուածաբանական բնագրեր, Ուսումնասիրութիւններ, Ա, Անանիա Սանահնեցի, Ս. Էջմիածին, 2000, էջ 238:

Մ. Հատուածս առկայ է ABCDFH ձեռագրերում, ըստ որում 1-ի a-b ենթահատուածը H-ում, c-e ենթահատուածը BCD ձեռագրերում

առկայ է Վան[ականի] անունով, մինչդեռ 1, 5 ենթահատուածները F-ում վերագրուած են Վարդանին: 3-5 (d-e) ենթահատուածի համար իբրեւ հեղինակ H-ում արձանագրուած է «այլ»: AEF ձեռագրերում Ս. Գրիգոր Աստուածաբանին վերագրուած հատուածի մի մասը (6-7) BCD ձեռագրերում վերագրուած է Եղիշէին: Սակայն C-ն հատուածս (6-7) ոչ միայն վերագրում է Եղիշէին, այլեւ այն շարունակում մինչեւ ԻԸ հատուածը (8): Մինչդեռ այս վերջին ենթահատուածը A ձեռագրում վերագրուած է Վարդանին:

ՄԱ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում, ըստ որում 1-6a ենթահատուածը Եղիշէի անունով է միայն BCDE-ում, 6a-7 ենթահատուածը BCDEF ձեռագրերում վերագրուած է Փիլոնին, իսկ 6b-7, 7c-d ենթահատուածները BC-ում եւ H-ում համապատասխանաբար՝ Եփրեմին:

ՄԲ. Հատուածս բացակայում է F ձեռագրում: 1-2a ենթահատուածը E-ում վերագրուած է Գրիգոր Աստուածաբանին: BDH ձեռագրերում հատուածս սկսում է 3-ից, ըստ որում D-ում այն Եղիշէի անունով է 8-ից մինչեւ 24d-ն, որից յետոյ՝ Եփրեմի: EH-ում Եղիշէի անունով է 6-16b ենթահատուածը: Մինչդեռ 17-21c ենթահատուածը BCEH ձեռագրերում վերագրուած է Աթանասին, իսկ 21c-25e ենթահատուածը BCH-ում՝ Եփրեմին, որի անունով է E-ում 24-25e ենթահատուածը: Ենթահատուածի մօտ լուսանցքում ինչպիսիք է նշումը արձանագրել է. «Եզնիկ»: Այստեղ պատմուող գրոյցը առկայ է Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ում, այդ մասին ակնարկւում է նաեւ Գրիգոր Լուսաւորչին վերագրուած «Հարցում» եւ Վահրամ Բաբունու «Հարցմունք եւ պատասխանիք ի դիրս Մենդոց» երկերում (տե՛ս Լ. ինչպիսիք է նշումը, Գրիգոր Պարթեւին վերագրուած «Հարցումը» որպէս հայ մատենագրութեան երախայրիք, «Բանբեր Մատենադարանի», թիւ 7, էջ 327):

ՄԳ. Հատուածս առկայ է ACDEFH ձեռագրերում, ըստ որում 1-7a ենթահատուածը C-ում վերագրուած է Վանականին, 7c-d-ն ներկայացուած է «այլ»-ի տակ: 7b-d ենթահատուածը որ բացակայում է F-ում, E-ում վերագրուում է Վարդանին, H-ում ներկայացուած

է «այլ»-ի տակ: 9-11e ենթաճատուածը CH-ում եղիչէի անունով է, իսկ F-ում՝ Վարդանի:

ԾԴ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում է, ըստ որում 2-3 ենթաճատուածը, որ գտնուում է ԾԴ եւ ԾԵ ճատուածների միջեւ AH ձեռագրերում վերագրուում է Փիլոնին, իսկ D-ում՝ եղիչէին:

ԾԵ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում, ըստ որում F-ում Փիլոնի անունով: 3-6 ենթաճատուածը H-ում եփրեմի անունով է 4-6 ենթաճատուածը E-ում նոյնպէս եփրեմի անունով է:

ԾԶ. Հատուածս առկայ է ABCDEF ձեռագրերում, ըստ որում ACEF ձեռագրերում այն եղիչէի անունով է, D-ում՝ եփրեմի: Ստորին լուսանցքում ինչիկեանը ծանուցում է «H. 56բ եւ 57ա էջերը թողնուած են անգրեյ, գուցէ այդ պատճառով բացակայում է այս ճատուածը»:

ԾԷ. Հատուածս առկայ է ABCDEF ձեռագրերում, ըստ որում BCF ձեռագրերում այն վերագրուում է եղիչէին, AE-ում՝ եփրեմին, իսկ D-ում ներկայացուած է «այլ»-ի տակ:

ԾԸ. Հատուածս առկայ է ABCDEF ձեռագրերում ըստ որում F-ում եղիչէի անունով է 1-6a ենթաճատուածը, E-ում՝ 6-7a ենթաճատուածը, որի շարունակութիւնը (a-b) սակայն, արդեն նաեւ H-ում, վերագրուած է եփրեմին: 3b-7b ենթաճատուածը A-ում առկայ է Վարդանի անուան ներքոյ, իսկ D-ում՝ «այլ»-ի 5-7a ենթաճատուածը առկայ է նաեւ H-ում, 4-7 ենթաճատուածն առկայ է C-ում, իսկ 6a-6c-ն՝ B-ում: 3 Հաբելի նաճատակութեան մասին վիպող աւանդազրոյցի այս մանրամասնը առկայ է նաեւ ս. Եպիփան Կիպրացու Արարածոց մեկնութեան մէջ («Եւ ետքս, զի ոչ մեռանէր, եւ դարձեալ խոցեաց պատառելով գկողս նորա». տե՛ս ՄՄ ձեռ. 949, թիւ 25ա), որտեղից եւ, ամենայն ճաշանականութեամբ քաղուած է այս նկարագրութիւնը:

ԾԹ. Հատուածս առկայ է ABCDEH ձեռագրերում: Ըստ B-ի 1a-3a ենթաճատուածը պատկանում է եղիչէին: Այն առկայ է նաեւ AH ձեռագրերում: 4-6 ենթաճատուածը E-ում վերագրուած է եփրեմին, 9-ից սկսուող ենթաճատուածը D-ում՝ եղիչէին: 9-17 ենթաճատուածը BF-ում վերագրուած է եփրեմին, իսկ

12-14-ը եփրեմին է վերագրուած CF-ում: 11 ենթաճատուածն առկայ է միայն H-ում:

Կ. Հատուածս առկայ է ABCEFH ձեռագրերում, ըստ որում 1-2 ենթաճատուածը CF-ում եփրեմի անունով է, 3-4-ը F-ում՝ եղիչէի: 5-8-ը AH-ում վերագրուում է եփրեմին:

ԿԱ. Հատուածս առկայ է ACDH, ըստ որում 3-6 ենթաճատուածը A-ում եփրեմի, իսկ CD-ում եղիչէի անունով է, 1-2-ը բացակայում է ACD ձեռագրերում:

ԿԲ. Հատուածս առկայ է ACH ձեռագրերում, ըստ որում C-ում այն եփրեմի անունով է:

ԿԳ. Հատուածս առկայ է ABCEF ձեռագրերում, ըստ որում ամբողջ ճատուածը AC-ում եղիչէի անունով է, իսկ B-ում 2-3 ենթաճատուածը՝ Միխայէլի: E-ում առկայ է միայն 2 ենթաճատուածը, իսկ F-ում՝ 2-3a-ը: Հատուածի շարունակութիւնը («Ես ժրացայց ի ճաճոյս կամացն Աստուծոյ եւ տուից, թէ յաղթաճարեցի մահ...») A-ում եփրեմի անունով է, իսկ C-ում՝ եղիչէի:

ԿԴ. Հատուածս առկայ է ACEFH ձեռագրերում, ըստ որում 4-8 ենթաճատուածը F-ում, 5-8-ը՝ CH-ում, 6-8-ը՝ E-ում եղիչէի անունով է: 6-8 ենթաճատուածի դիմաց լուսանցքում ինչիկեանի նշումը «Փիլ[ոն], 65»:

ԿԵ. Հատուածս առկայ է ACDEFH ձեռագրերում, ըստ որում 4a-5, 6-13 ենթաճատուածները A-ում եղիչէի անունով են, CDE-ում՝ Վանականի, որից յետոյ այդ ձեռագրերում այն շարունակուում է եփրեմի անունով: 2-4 ենթաճատուածը EH ձեռագրերում եղիչէի անունով է, որից յետոյ՝ Վանականի: 5 ենթաճատուածը H-ում վերագրուած է Վանականին, իսկ շարունակութիւնը (5-12)՝ եփրեմին: 12-13 ենթաճատուածը առկայ է CD ձեռագրերում, իսկ 14-ը՝ ABD-ում, ըստ որում այն A-ում Վարդանի անունով է: 2 ենթաճատուածի դիմաց լուսանցքում ինչիկեանի նշումը. «Փիլ[ոն], 66»:

ԿԶ. Հատուածս առկայ է ABCEFH ձեռագրերում, ըստ որում 2-4a ենթաճատուածը ABCEH ձեռագրերում եղիչէի անունով է, մինչդեռ F-ում՝ Վարդանի: իսկ 5-7a ենթաճատուածը E-ում վերագրուած է եղիչէին, A-ում՝ Փիլոնին:

ԿԷ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում, ըստ որում F-ում՝ Վարդանի անունով, C-ում՝ Եղիշէի անունով այն սկսուած է 11b-ից: 14-16a հատուածը Եղիշէի անունով առկայ է ABDE ձեռագրերում: 14-19a, 17-19a ենթահատուածները նոյնպէս Եղիշէի անունով են համապատասխանաբար CH եւ BD ձեռագրերում: 1-11a ենթահատուածը CF-ում վերագրուած է Փիլոնին: 19a-38a ենթահատուածը C-ում շարունակուած է իբրեւ Եղիշէի հեղինակութիւն, մինչդեռ այն AD-ում այն վերագրուած է Փիլոնին:

ԿԸ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում, ըստ որում 3-6a ենթահատուածը CDE ձեռագրերում Եղիշէի անունով է, իսկ 7 ենթահատուածը CD-ում Փիլոնի եւ E-ում Եփրեմի անունով է: 8-11 ենթահատուածը H-ում Եփրեմի անունով է, մինչդեռ AF ձեռագրերում՝ Գրիգորի:

ԿԹ. Հատուածս առկայ է ABCDEH ձեռագրերում, ըստ որում 2a-4a ենթահատուածը C-ում եւ 3-4a-ն ABD ձեռագրերում Եղիշէի անունով, 3-18a ենթահատուածը DC ձեռագրերում «այլ»-ի ներքոյ, 2a-46a-ն H-ում Եղիշէի անունով, 19-25a ABCE ձեռագրերում նոյնպէս Եղիշէի անունով է, իսկ 26-39a ենթահատուածը E-ում՝ Նիւսայու: 40-44a-ն ABCDEH ձեռագրերում վերագրուած է Եղիշէին, 45-46a ենթահատուածը՝ BCDE-ում՝ Փիլոնին: 37-38 «Հոգիացեալ», «գաղտաղտուկ ջուրս», «ժանգն սրբեսցէ» միաւորների վերաբերեալ խաչիկեանը ծանուցում է. «Այս բառերը հիմք են տալիս եզրակացնելու, որ E-ի տեղեկութիւնը հատուածի Նիւսայուն պատկանելու մասին հիմք չունի»:

Հ. Հատուածս, որ նախորդում է ՀԱ հատուածին, B-ն վերագրուած է Եղիշէին, ACE-ն՝ Փիլոնին, իսկ H-ը՝ Փիլոնին եւ Եփրեմին:

ՀԱ. Հատուածս առկայ է ABCEH ձեռագրերում, ըստ որում ABCH ձեռագրերում ամբողջ հատուածը վերագրուած է Եղիշէին, իսկ E-ում՝ Փիլոնին: 16a «գի տեսակ չարի էր» բառերը՝ խաչիկեանի ընդգծումով եւ «Փիլ[ոն], 115» նշումով: 19a Բառս ընդգծուած եւ ծանօթագրուած. «Փիլ[ոն], 116»:

ՀԲ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում, ըստ որում FH-ում Ը 20, 21, 22,

Թ 1, 3 համարների մեկնութիւնը մինչեւ 13a ենթահատուածը Փիլոնի անունով է, 14 ենթահատուածը B-ում Եղիշէի անունով է: Եղիշէի անունով են նաեւ A-ում 15-ից եւ CD-ում 16a-ից սկսուող ենթահատուածները, իսկ F-ում 30-38a ենթահատուածը: Մինչդեռ 30-35a ենթահատուածը H-ում եւ 30-38a-ը A-ում վերագրուած են Փիլոնին: 20, 28 ենթահատուածների դիմաց խաչիկեանի նշումը «Փիլ[ոն], 141, 149»:

ՀԳ. Հատուածս առկայ է ABCDEH ձեռագրերում, ըստ որում F-ում ամբողջ հատուածը AC-ում Եղիշէի անունով է, (A-ում սկսուած է 2a-ից), BCD-ում Եղիշէի անունով է 1-17a-ը ենթահատուածը, իսկ E-ում 1-7b-ն: 7a-11a ենթահատուածը BE-ում, 7b-9a-ն H-ում, 7a-c-ն D-ում Եփրեմի անունով են, մինչդեռ 7c-11a ենթահատուածը D-ում վերագրուած է Եղիշէին: 12-21a ենթահատուածն առկայ է միայն H-ում:

ՀԴ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում, ըստ որում F-ում ամբողջ հատուածը Միխայիլի (Ասորի) անունով է, մինչդեռ 6a-ից ենթահատուածը BCDH ձեռագրերում վերագրուած է Եղիշէին, որի անունով է նաեւ 27-ից սկսուող ենթահատուածը A ձեռագրում, 30-ից սկսուող ենթահատուածը ABC, 32-րդից սկսուող ենթահատուածը BC ձեռագրերում, ինչպէս նաեւ՝ 6a-36a ենթահատուածը H-ում, 6-37a-ն E-ում: 36a-ից եւ 37a-ից յետոյ HE ձեռագրերում ենթահատուածները վերագրուած են Եփրեմին:

ՀԵ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում, ըստ որում 1a ենթահատուածը A-ում, 2-ը՝ B-ում եւ 3-ը E-ում վերագրուած է Եղիշէին: Մինչդեռ ամբողջ հատուածը F-ում վերագրուած է Միխայիլին: 1a ենթահատուածին անմիջաբար յաջորդող H-ում Միխայիլին վերագրուած, հատուածը (մինչեւ ՀԶ) C-ում ամբողջապէս ընծայուած է Եղիշէին: 1a-b-ն առկայ է միայն H-ում:

ՀԶ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում, ըստ որում 1-7a ենթահատուածը ABCDEH-ում Եղիշէի անունով է, մինչդեռ հատուածը Բ-ում՝ Միխայիլի, իսկ 7a-b ենթահատուածը DEH-ում Եփրեմի անունով է: 8-14a ենթահատուածը CD-ում վերագրուած է Ե-

ղիշէին, մինչդեռ H-ում շարունակում է եփրեմի անունով:

ՀԷ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում, ըստ որում ամբողջ հատուածը F-ում Միխ(այիլի) անունով է: 1-3a ենթահատուածը AEH ձեռագրերում 4a-ը BC-ում, 4a-b-ը D-ում վերագրուած է Եղիշէին:

ՀԸ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում, ըստ որում ամբողջ հատուածը F-ում Միխ(այիլի) անունով է: 2-19a ենթահատուածը AH-ում, 3-19a-ն՝ E-ում, 4-19a-ն C-ում, 2-47a-ն D-ում 4-19a-ը՝ B-ում, Եղիշէի, իսկ 19a-20b ենթահատուածը՝ EH-ում, 20a-b-ն D-ում եփրեմի անունով է: Եփրեմին է վերագրուած նաեւ DE-ում 21-27a ենթահատուածը: 28-32a ենթահատուածը Եղիշէին է վերագրուած ABCEH ձեռագրերում, մինչդեռ F-ում այն Միխ(այիլի) անունով է: Եթե այս ենթահատուածի շարունակութիւնը (33-40a) F-ում Եղիշէի անունով է, ապա AH ձեռագրերում՝ եփրեմի: 41-46a ենթահատուածը A ձեռագրում, 43-44a-ը H-ում, 44-45a-ն E-ում վերագրուած է Եղիշէին, մինչդեռ 45b-46a ենթահատուածը E-ում, 45-46a-ն H-ում, 41-46b-ն C-ում՝ եփրեմին: Վերջինիս անունով է նաեւ 46a-57a ենթահատուածը ABDEH ձեռագրերում, իսկ CF-ում Եղիշէի: 31a-32a ենթահատուածի դիմաց Խաչիկեանի նշումը՝ «Փիլոն. 171»: 32a «Ըստ Փիլոնի ասիցն» բառերով հեղինակը նկատի ունի Փիլոն Եբրայեցու Ելից մեկնութեան համապատասխան մասը. տե՛ս Մ-նացորդք ի հայտ, էջ 169-175 (Գ):

ՀԹ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում, ըստ որում 1-30a, 30b ենթահատուածները AFH ձեռագրերում ընծայուած են Եղիշէին, 4-6a ենթահատուածը BC-ում վերագրուած է Եղիշէին, մինչդեռ B-ում այն մինչեւ 10a ենթահատուածը շարունակում է Եղիշէի անուամբ, որից յետոյ մինչեւ հատուածիս վերջը այն շարունակում է եփրեմի անուան ներքոյ: Եփրեմի անուամբ է նաեւ 7-30b ենթահատուածը C-ում: 30b-32a ենթահատուածը AEH ձեռագրերում Փիլոնի անունով է:

Չ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում, ըստ որում 1-3a ենթահատուածը ABCEH-ում, 4-ը՝ C-ում վերագրուած է Եղիշէին: Մինչդեռ ամբողջ հատուածս Բ-ում եւ 4

ենթահատուածը AEH ձեռագրերում Փիլոնի անունով է:

ՁԱ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում, ըստ որում 1-19a ենթահատուածը A ձեռագրում, 4-19a-ն B-ում, 9-19a-ն DH-ում Եղիշէի անունով է: Մինչդեռ 1-8a ենթահատուածը H-ում վերագրուած է Փիլոնին, 20-ը ABH ձեռագրերում՝ եփրեմին: Վերջինս CD-ում առկայ է Եղիշէի անուամբ: Ամբողջ հատուածի (որ EF-ում Փիլոնի անունով է) համար Խաչիկեանը նշում է. «Հմմ. Փիլ[ոն], 212-4»:

ՁԲ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում, ըստ որում 1-5a, 8a-43a ենթահատուածները D-ում, 2-36a ենթահատուածը, աննշան ընդհատումներով, ABCEH ձեռագրերում վերագրուած են Եղիշէին (մասնաւորաբար 29a-36a ենթահատուածը BC-ում 14-36a-ն A-ում եւ 27a-36a-ն ABC-ում): 36a-43a ենթահատուածը, որ AEH ձեռագրերում եփրեմի անունով է, DF-ում շարունակում է որպէս Եղիշէի հեղինակութիւն: 3a-6a ենթահատուածի համար Խաչիկեանը նշում է. «Փիլոն, 247»:

ՁԳ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում, ըստ որում 1-13a ենթահատուածը ABCEH-ում, 14-15a-ն F-ում Եղիշէի անունով է, իսկ 13-ը H-ում եփրեմի: Շարունակութիւնը, որ AHF ձեռագրերում համապատասխանաբար ընթանում է «Եփրեմ, Փիլոն, եփրեմ» հերթագայութեամբ, C-ում դարձեալ պատկանում է Եղիշէին: «Այնպէս որ C-ում ՁԳ եւ ՁԴ հատուածները ձուլում են իրար» (Խաչիկեան): 4-6a ենթահատուածի համար Խաչիկեանը նշում է. «Փիլոն, 266-7»:

ՁԴ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում, ըստ որում 1-7a ենթահատուածը ACDH-ում վերագրուած է Եղիշէին, իսկ BEF-ում՝ եփրեմին: Մինչդեռ 8-11a ենթահատուածը H-ում Եղիշէի անունով է, իսկ A-ում՝ Փիլոնի: Վերջինիս անունով է նաեւ 10-11a ենթահատուածը B-ում, 10a-11a-ն՝ DF-ում: Ամբողջ հատուածիս յաջորդող «Փիլոն, Փիլոն, Փիլոն, Կիւր(ե)ղ» հերթագայութեամբ ենթահատուածները, որոնք առկայ են A-ում, C-ն վերագրում է Եղիշէին, որով ՁԴ-ն ձուլում է ՁԵ-ին:

ՁԵ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում, ըստ որում 1a ենթահատուածը

բացակայում է DE ձևազրկում, 2-19a ենթա-
 հատուածը AH-ում, 19-22a-ն E-ում, 23-24a-ն
 ABCF ձևազրկում եղիչէի անունով է: Մինչ-
 դեռ 2-19a ենթահատուածը EF-ում վերա-
 գրուած է Կիւրեղին, D-ում՝ Եփրեմին, 19-22a-
 ն AH-ում, 23-24a-ն E-ում նմանապէս վերա-
 գրուած է Եփրեմին: 19a «գլորովական ա-
 նուանան» բառերը ինչպէս ընդգծել է եւ
 լուսանցքում նշել. «տես Թր. քեր. էջ 12, 22»
 [=Н. Адонци, Дионисий Фракийский и
 армянские толкователи, СПб, с12, 22]:

ՁԶ. Հատուածս առկայ է ABCDEFH ձե-
 ուազրկում, ըստ որում 1-5a ենթահատուածը
 E-ում վերագրուած է Եփրեմին, 21a-ն AH-ում՝
 Պողոսին, մնացեալ հատուածները միւս ձեռ-
 գրերում՝ եղիչէին (1a-ից C-ում, 2-ից B-ում,
 6-ից ABCDEH-ում, 16-ից BC-ում, 17-ից
 ADFH-ում, 21-ից F-ում):

ՁԷ. Հատուածս առկայ է ABCDEFH ձե-
 ուազրկում, ըստ որում ADH-ում այն ամբող-
 ջապէս ընծայուած է եղիչէին, BC-ում՝ Եփրե-
 մին, F-ում՝ Պողոսին: Մինչդեռ E-ում 1-32a
 ենթահատուածը Նիւսացու անունով է, իսկ
 33-43a-ն՝ եղիչէի: Ինչպէս նշում է ինչպէս
 Նիւսացու ընդարձակ հատուածի մասը: E-ով (91-92-
 ի միջոցով) ՁԸ եւ ՁԹ հատուածները ձուլուած
 են: 1a ենթահատուածն H-ում եղիչէի անու-
 նով է: Այն ՁԸ-ն սկսում է քիչ վերեւից: 23
 Արշակունիների եւ Պաշլաւունիների՝ Աբրա-
 մի հարձից՝ Քեստուրայից ծագելու վերաբերեալ
 այս պատմութիւնը առկայ է նաեւ Ս. Եպիփան
 Կիւրացու Արարածոց մեկնութեան մէջ. ՄՄ
 ձեռ. 949, թիւ 122ա:

ՁԸ. Հատուածս առկայ է ABCDFH ձեռ-
 գրերում, ըստ որում 2-23a ենթահատուածը H-
 ուում, 2-2a ենթահատուածը AD-ում, 2a-3a-ի
 BC-ում, 4-23a ABCFH-ում եղիչէի անունով է
 (10-ից B-ում, 12a-ից ABC-ում): 24a ենթահա-
 տուածը, (որ A-ում Վարդանի եւ Փիլոնի ա-
 նունով է) որով ՁԹ-ն միանում է Ղ-ին, համա-
 ձայն CD-ի նմանապէս եղիչէին է:

ՁԹ. Հատուածս առկայ է ABCDEFH ձե-
 ուազրկում, ըստ որում 1-32a ենթահատուածն
 ամբողջապէս ABCH-ում վերագրուած է եղի-
 չէին, մինչդեռ F-ում այն ընծայուած է Փիլո-
 նին: Վերջինիս անունով է 1-9a ենթահատուա-

ծը E ձեռագրում: 32a-37a ենթահատուածը
 BCDEFH-ում Եփրեմի անունով է, 39-ը նմա-
 նապէս C-ում Եփրեմին է վերագրուած, իսկ
 39-54a ենթահատուածը ABDF-ում եղիչէի ա-
 նունով է (ըստ որում D-ում այն սկսւում է
 39a-ից, F-ում հասնում մինչեւ 42-ը, որից յե-
 տոյ մինչեւ ՁԹ-ի վերջը շարունակուած Փիլոնի
 անունով): 36-38a ենթահատուածը BCDF-ում
 Եփրեմի անունով է, մինչդեռ 37a-38a-ն C-ում,
 37-38a-ն E-ում, 37b-38a H-ում եղիչէին է վե-
 րագրուած: 39-41a-ն H-ում Փիլոնի անունով
 է, 39-40a-ն C-ում՝ Եփրեմի: 40a-b ենթահա-
 տուածը C-ում՝ ընծայուած է եղիչէին, մինչ-
 դեռ 40b-44a ենթահատուածը՝ Եփրեմին: 44a-
 54a ենթահատուածը BC-ում եղիչէի անունով
 է, մինչդեռ 44a-54a-ն H-ում վերագրուած է
 Փիլոնին: 25-27a ենթահատուածը բացակա-
 յում է H ձեռագրում: ՁԹ հատուածիս յաջոր-
 դող հատուածը, որ AEF-ում Վարդանի, H-ում
 «Այլ»-ի անունով է, D-ում վերագրուած է Ե-
 ղիչէին. «Թերեւս թէ անդրանկութիւն ժառան-
 գելն է գտունն հայրենի, գոր առեալ էր Յակոբ
 գիտելով զծնողացն, գոր մխիթարել կամելով...
 ահա ի պարարտութենէ երկրի բնակութիւն քո
 եւ ցաւոյ երկնից»:

Ղ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռա-
 գրերում, ըստ որում, 1-6a ենթահատուածը բո-
 լոր ձեռագրերում եղիչէի անունով է (E-ում
 այն եղիչէի անունով է մինչեւ 7a): Մինչդեռ
 7-14a ենթահատուածը, որով Ղ-ն կապուած է
 ՂԱ-ին, A-ում «Մովսիսի» անունով է, իսկ
 BCD-ում՝ եղիչէի:

ՂԱ. Հատուածս առկայ է ABCDEFH ձե-
 ուազրկում, ըստ որում A-ում առաջին 8 տո-
 դերը (65բ) գրուած են ստորին լուսանցքում,
 եւ աստղանիշով ցոյց է տրուած, որ հատուածը
 պետք է կարգաւ 21-րդ տողի «է մահ» բառից
 առաջ: Ամբողջ հատուածը ABCD-ում եղիչէի
 անունով է (B-ում եղիչէին է վերագրուած 1-
 22a ենթահատուածը): Մինչդեռ E-ում եղի-
 չէին են ընծայուած 1-8a, 16-22a ենթահա-
 տուածները, եւ Եփրեմին՝ 8a-16, 22a-23a են-
 թահատուածները: C-ն շարունակուած է մինչեւ
 ՂԲ հատուածը. ա) «Իջանէին հրեշտակքն եւ
 ելանէին... ինքն զԱստուած տեսանելով» (D-
 ուում աւարտուած է այս հատուածով): A-ում շա-
 րունակուած է «Եփրեմ, Եփրեմ, Կիւրեղ, Եփ-

րեմ» Հերթագայութեամբ. բ) «իսկ զվէմն անծ իւղով... գքսան եւ զմի ամ» (որ F-ում շարունակուած եւ աւարտուած է «Կանգնեաց զվէմն արձան կանգնելով ընդ նմա եւ զբոլոր աշխարհս... ի լոյս քրիստոնեութիւնն հաւատոց» բառերով՝ հասնելով ՂԲ-ի 5 ենթահատուածին), գ-դ) «Ոչ վասն ճանաչելոյ... մաւրէն տուեալ», ե) «յաւժումն միսիթարութեան վասն սոթոյն... ի յասորիս գԻԱ (21) ամ»:

ՂԲ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեւադրերում, ըստ որում 2-29a ենթահատուածը ABC-ում, 7-37a-ն H-ում, 31-37a-ն BCEH-ում, 29-30a-ն D-ում, 6-18a E-ում, 30-37a-ն EF-ում վերագրուած է Եղիշէին: Մինչդեռ 5 ենթահատուածը E-ում, 2-28a-ն D-ում, 31-37a-ն A-ում Եփրեմի անունով է, իսկ 7-30 ենթահատուածը F-ում, 19a-30 E-ում վերագրուած է Կիւրեղին:

ՂԳ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեւադրերում, ըստ որում 4-8a ենթահատուածը AH-ում, 8a-b-ն Եղիշէի անունով է: Մինչդեռ 1-4 ենթահատուածը H-ում «Այլ» անվան ներքո է, իսկ 8a-b-ն՝ Փիլոնի:

ՂԴ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեւադրերում, ըստ որում 1-4a ենթահատուածը ABC ձեւադրերում, 1-3-ը՝ H-ում, 6-7a-ը EF ձեւադրերում, 8-22a ենթահատուածը BCDHFH-ում Եղիշէի անունով է (ուր սակայն 14a-22a ենթահատուածը H-ում վերագրուած է Եփրեմին): Մինչդեռ 1-3 ենթահատուածը E-ում, 4a-7b-ն BC-ում, 8-22a-ն A-ում Եփրեմի անունով է:

ՂԵ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեւադրերում, ըստ որում 1-33a ենթահատուածը բոլոր ձեւադրերում Եղիշէի անունով է: Մինչդեռ 33a-34a ենթահատուածը A-ում, 34-34a-ն H-ում շարունակուած են Եփրեմի անունով: ՂԵ-ի շարունակութիւնը կազմող հատուածները (սկսած ՂԵ-ի 33a-ից, ՂԵ 1, ՂԵ 3a), որոնք ըստ D-ի պատկանում են Եղիշէին, A-ում վերագրուած են Եփրեմին («Նորհուրդ եկեղեցւոյ էր Ռաքել... եւ այն շարար արժանի զգաստերս իւր», «Եւ ասէ. ընդէ՞ր գողացար զԱստուած... որ է խորհուրդ վիմին, որ արձանացաւ», «Լաբան, որ զհետ եկն Աստուծոյն... մինչ յաւրն դատաստանի»):

ՂԶ. Հատուածս, որ առկայ է ABCDEFH ձեւադրերում, ինչպէս նկատեցինք (տե՛ս ՂԵ-ի ծնթ.) AH-ում վերագրուած է Եփրեմին, իսկ BCDEF ձեւադրերում՝ Եղիշէին:

ՂԷ. Հատուածս, որ AFH ձեւադրերում վերագրուած է Եփրեմին (սակայն 10-16a ենթահատուածը H-ում տրուած է Եղիշէին եւ միայն 1-9-ը՝ Եփրեմին), E-ում ամբողջապէս ընծայուած է Եղիշէին:

ՂԸ. Հատուածս առկայ է ABCDEH ձեւադրերում, ըստ որում ABCH ձեւադրերում այն վերագրուած է Եղիշէին, (սակայն 13a-14a ենթահատուածը C-ում տրուած է Եփրեմին) մինչդեռ DE-ում՝ Եփրեմին:

ՂԹ. Կե հատուածիս նախորդող հատուածը («Զոր առեալ էր միջնորդ ոք, զի առցէ անմիջնորդ. ասէ ցնա: Զի՞նչ է անուն քո, եւ նա ասէ Յակոբ, այլ Իսրաէլ եղիցի անուն քո» [ԼԲ. 28] ԶՅակոբ անունն, ասէ, ոչ աւրհնէ Աստուած... Եւ աւրհնեաց զնա: Յայտ է անուամբ, որ է յայտնի եւ անուանի բոլորից բանականաց: Եւ յայտնել է աւրհնելն), որ A ձեւադրում (թիւ 70բ-72ա) Եղիշէի անունով է եւ DH-ում վերագրուած է Գրիգոր Աստուածաբանին, ըստ Լ. Խաչիկեանի. «Եղիշէին տրուած է սխալմամբ»:

ՂԺ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեւադրերում, ըստ որում 12-29a ընդարձակ ենթահատուածը A ձեւադրում, 7-29b ենթահատուածը D-ում, 6-31a-ն BC-ում վերագրուած է Եղիշէին: Մինչդեռ 1-6a-ն D-ում, 1-32a-ն H ձեւադրում տրուած է Աստուածաբանին, իսկ 29a-31a-ն AH-ում՝ Եփրեմին: 5a ընկալեալ բնագրում՝ եքարձ:

Ճ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեւադրերում, ըստ որում 1-69a ընդարձակ ենթահատուածը AD ձեւադրերում, 1-21b-ն եւ 69-69a-ն BC-ում, 1a-20a-ն եւ 71-78a-ն H-ում, 2-69a-ն E-ում, 21a-70a-ն ADEF ձեւադրերում Եղիշէի անունով է: Մինչդեռ 1-21a-ն F ձեւադրում, 22-68a-ն BC-ում, 21-70a-ն H-ում վերագրուած է Եփրեմին: 63-64a ենթահատուածի վերաբերյալ Խաչիկեանը նշում է. «Թերեւս Փիլոն A 74», իսկ 57-ի՝ «Մեր հին կանոններում կան». տե՛ս Կանոնագիրք Հայոց, Բ, աշխ. Վ. Յակոբեանի, Երեւան, 1971, էջ 180, տ. 6-8, էջ 261, տ. 4-6:

49 «Կտակը երկոտասան նահապետաց» [Կտակ Գաղայ]։ տե՛ս Թանգարան Հին եւ նոր նախնեաց. Ա, Անկանոն գիրք Հին Կտակարանաց (աշխատասիրութեամբ Ս. Յովսէփեանի), Վենետիկ 1896, անգլ. թրգմ. *The uncanonical writings of the Old Testament, Trans. into English by Rev. Dr. J. Issaverdenz, Venice, 1901*:

ՃԱ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում, ըստ որում 1-14a ենթաձատուածը ADEH-ում, 9-18a-ն F-ում տրուած է Եղիշէին: Մինչդեռ ամբողջ ՃԱ-ն BC ձեռագրերում, 1-8a ենթաձատուածը F-ում, 15-17a-ն AH-ում վերագրուած է Եփրեմին: Ի դէպ F-ում Եղիշէի անունով ներկայացող վերջընթեր Հատուածով (15-17a) ՃԱ-ն ձուլուած է ՃԲ-ին: «Կէ (=ՃԱ) Հատուածից սկսած, ինչպէս ծանուցում է Խաչիկեանը D-ն Համարեայ առանց բացառութեան (մէկ անգամ Փիլոն, մէկ անգամ Եպիփան) ողջ շարունակութիւնը վերագրում է Եղիշէին, որ, իհարկէ, ինչպէս ցոյց են տալիս միւս գրչագրերը, ճիշտ չէ: Լուսանցքներում որոշ տեղեր նկատուած են ջնջումների հետքեր. դուրսէ ջնջուած են հեղինակների անունները»:

ՃԲ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում, ըստ որում 1-41a ընդարձակ ենթաձատուածը ADEH ձեռագրերում, 41a-41b-ն E-ում Եղիշէի անունով է, մինչդեռ 1-43a ենթաձատուածը BC-ում 44-46a-ն՝ ABFH-ում վերագրուած է Եփրեմին: 21 ենթաձատուածի վերաբերյալ Խաչիկեանը ծանուցում է. «Եփրեմինը չի կարող լինել, զի երինջի եւ առջառի ջրից ծնուելու մասին խօսում է եւ այլուր»:

ՃԳ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում, ըստ որում 1-71a ընդարձակ ենթաձատուածը AEH ձեռագրերում (E-ում մինչեւ 78a-ն), 49-59a ենթաձատուածը B-ում, 63-

71a-ն C-ում, 71a-78a-ն H-ում Եղիշէի անունով է: Մինչդեռ ամբողջ Հատուածը F-ում, 1-49 BC-ում, 71a-78a-ն C-ում վերագրուած է Եփրեմին (որի անունով է C-ն շարունակուած յաջորդ ՃԴ Հատուածում):

ՃԴ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում. 1-131a ընդարձակ ենթաձատուածը E-ում (որ Եփրեմի անունով կենցաղավարող նախորդ՝ ՃԳ Հատուածի շարունակութիւնն է), 15-131a ենթաձատուածը DE ձեռագրերում, 1-15 ABC ձեռագրերում (ըստ որում 4-15 ենթաձատուածը, "A-ում սկսում է կարմրատառով (79բ), ընդգծուած է լուսանցքում — (օրելուսի-իմբ.) նշանով. ամենայն հաւանականութեամբ Եղիշէինը չէ»), 147-152a-ն A-ում վերագրուած է Եփրեմին, իսկ 131b-147 ենթաձատուածը AB ձեռագրերում (15-ից C-ում շարունակուած է Եփրեմի անունով), 131a-136a BEFH ձեռագրերում եւ 131a-152a-ն H-ում ընծայուած է Եղիշէին:

104 «Առիւծ»-ի այսօրինակ ստուգաբանութիւնը («առնել, յափշտակել» բայից) որդեգրուած է Վարդան Արեւելցու եւ Գրիգոր Տաթեւացու կողմից. տե՛ս Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Ա, Երեւան, 1971, էջ 259:

110a Վենետիկեան ձեռագրերից մեկում՝ առիւծուց փխ. աղուեսուց (տե՛ս Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Բ, էջ 162):

ՃԵ. Հատուածս առկայ է ABCDEFH ձեռագրերում, ըստ որում ամբողջը Եղիշէի անունով է ABCDFH ձեռագրերում եւ 5-127a ենթաձատուածը E-ում, ուր նախորդ մասը կազմում է Եփրեմի անունով Հատուածի շարունակութիւնը: 127 ենթաձատուածը առկայ է միայն BF ձեռագրերում:

ՅԱԲԵԼՈՒԿԾ

Ա.

Ա. 1

1 Զհրեշտակքն ոմանք ասեն հետ լուսաւորացդ եղանիլ, եւ այլք՝ յառաջ եւ յետոյ: 2 Բայց յառաջին լինել երկնիցն եղեն ընդ հրեղինին, որպէս ասէ մերն Եղիշէ, թէ որպէս կենդանածնեցաւ երկիր՝ կենդանացնեցաւ երկին, ախտական՝ զախտականսն եւ անախտն՝ զանախտականսն՝ ի հրոյ եւ յաւղոյ գոյացեալք. բնութիւն հրեղէն եւ տեղի աւղեղէն, կամացն նոցա փոփոխուամն կարէ լինել եւ բնութեանցն՝ ոչ: 3 Եւ մեծ[է] պատերազմն հոգւոցն քան թէ մարմնոցն, որպէս անէծքն մեծագոյնք, որ եւ յանկեալսն ցուցաւ ի դեւսն: 4 Զայս Եղիշէ ասէ:

«Լուծմունք ի սուրբ գրոց», ՄՄ ձեռ. թիւ 750, 58բ-59ա:

Բ

Ա. 1ա

1 Հրեղէն երկինն շրջագայէ ոչ յոք մերձ բաժանեալ յերկուս կիսագունդս՝ ի վեր եւ ի վայր. եւ ընդ հողմոյ խառնեալ շուրջ գայ, եւ անդի ի վեր փչեալ չտայ երկրի ի վայր ընկղմել: 2 Եւ բնական ծանրութիւնն երկրի ի վեր չթողու: 3 Եւ է հրեղէնն երկին զամենայն ի ներքս փակեալ, եւ ոչ ինչ արտաքոյ է մնացեալ¹, զի ի վեր եւ ի վայր եւ շուրջանակաւ պատեալ է զամենայնն:

«Լուծմունք ի սուրբ գրոց», թիւ 59ա:

Գ

Ա. 2

1 Ապա թէ ասիցէ ոք հաստատութիւնն դեռ չէր լեալ, եւ փակեալ զհրեղէն երկնիցն զլոյսն ընդէ՞ր էր խաւարն:

2 Ասէ ոմն ասորի Մովսէս անուն եւ մերն Եղիշէ, թէ ամպով ծածկեաց Աստուած, ընդէ՞ր. զի արար զամպն, քանզի գիտասցես թէ արարած է ամպն. եւ թէպէտ էութիւն չունի մշտակայ, այլ Աստուած սահմանեաց նմա բնութիւնն անդէն յարարչութեանն:

«Լուծմունք ի սուրբ գրոց», թիւ 60ա:

Դ

Ա. 3

1 Եւ ասաց Աստուած, Եղիցի լոյս եւ եղիւ լոյս:

2 Եղիշէ ասէ, թէ չէ այս նոր արարչութիւն լոյսս, այլ խզած է ի հրեղէն երկնէն. անդի խզեաց, զի ցուցէ քեզ զարվեստն եւ զկարելն: 3 Եւ մարգարէն Դաւիթ ասէ. Զայն Տեառն հաստանէ գրոց ի հրոյ՞: 4 Եւ մինչ յայս ընդէ՞ր չարար լոյս. նախ զերկին եւ զերկիր արար առանց լուսոյ, զի նմա չպիտէր լոյս լուսոյն անճառի եւ յետոյ առնէ ի վայելս աշխարհի:

«Լուծմունք ի սուրբ գրոց», թիւ 61աբ:

Ե

Ա. 6

1 Յերկրորդ աւուրն արար զհաստատութիւնն: 2 Շատ ինչ ասեն զնմանէ, այլ գրեմ քեզ զԵղիշէին, զոր սիրեմ մանաւանդ եւ հաճոյ է ինձ:

1 ՄՄ ձեռ. 750՝ թողեալ

՞ Սաղմ. ԸԸ 7

3 Զբնութիւն աւգոյն խստացոյց եւ կարծրացոյց, թանձր գործեաց, ոչ որպէս երկաթ կամ քար, այլ սեղմեաց եւ անխոփոխս գործեաց եւ կազմեաց երկին: 4 Եւ զՂրոյն կէսն, զոր երկիր ի վերայ իւր ունէր՝ գոգեաց, տարաւ, եհան ի վեր. որ չկարէ ոք ասել թէ բնութեանն զհետ գնաց Արարիչն, թեթեւն ի վեր եւ ծանրն ի վայր, ահա ծանր եւ ի վեր: 5 Եւ ոչ արկ գնա ի վերայ հաստատութեանն, այլ բարձր ի նմանէ, ոչ կարի հեռի, եւ է շրջաբոլոր զհետ հաստատութեանն. եւ ներքին ջուրն չէ կտրեալ ի նմանէ, այլ հողմ ուժգին վարէ, շրջէ, տանի ի վեր եւ ի խոնարհ, եւ մի ասացես թէ զիարդ ի վայր շրջամբն չվայթի եւ հեղու, զի զամպդ ո՞չ տեսանես, կապեալ ջուր որպէս ի տիկ, եւ ուր կամի Արարիչն տանի, շրջեցուցանէ: 6 Զի չէ այնպէս թէ տեղի ծանծաղ եւ տեղի ինչ թանձր, այլ միահարթ, հաւասար, զոյգ, կշիռ յամենայն կողմանց: 7 Եւ է այսպէս երկիր ի վերայ ոչընչի կայ եւ ջուր ի վերայ երկրի. եւ այս ծովս, որ նաւք գնան ի վերայ, եւ զեզերաւքն բնակութիւն է այսր եւ ձորք են եւ գոգք, ուր գետեղեալ կայ ջուր ծովուն: 8 Իսկ աւազն ովկիանոս կայ ի վերայ հարթայտակ հաւասարեալ, կոկեալ երկրի, եւ հողմով ուժգնագունիւ հիւռ գայ այնպէս սրընթաց, որ աւգն ջուր չկարէ առնուլ անդի, զի խլէ, հանէ, տանի յարագութիւն նորա, վասն որոյ գետ ասի նա եւ ոչ ծով. եւ հաստատութիւն կից ի վայր եւ ջուրն, որ ի վերոյ նորա, որպէս ասէ Դաւիթ՝ ջուրք, որ ի վերոյ երկնից. չասէ՝ ի վերայ: 9 Եւ ներքին ջուրս չէ կտրեալ ի վերնոյն, այն ի վայր գայ, եւ այս ծառացեալ ելանէ միահաւասար:

10 Եւ Գ (3) իրաւք պիտանացու եղեւ վերացումն ջրոյն, Ա (1). զի արգելցէ զկիզանողութիւն հրեղինին երկնի, Բ (2). զի զառաւել ծանրութիւնն թեթեւցնէ յերկրէ, Գ (3). զի զցամաքեալ երկիր բուսուցէ:
«Լուծմունք ի սուրբ գրոց», թիւ 63ա-64ա:

Զ

Ա. 16

1 Եւ ասէ Եղիշէ, թէ ի վեր քան զէ (7) մոլորակդ է (7) աստղ այլ կայ՝ նշանաւորք, յոյժ ցրտագոյն եւ ամենեւին սառնամանիք, եւ են ընդ մէջ մոլարից եւ անմոլարիցն, եւ զհրաբորբոք ջերմութեան արփոյն նոքայ յինքեանս առնուեն, եւ բարեխառն այն են, եւ յէ (7) գաւտիսդ տան ի մոլորակսդ:

«Լուծմունք ի սուրբ գրոց», թիւ 69բ-70ա:

Է

Գ. 14

1 Եւ ասաց ի վերայ լանջաց եւ որովայնի գնայ: 2 Ոմանք ասեն, թէ իբրեւ զՂրի էր չորքոտանի, բայց Եղիշէ ասէ, թէ ոտք չունէր, թեւաւոր էր սատանայ խոստացաւ կառք իւր առնել զաւճն եւ թեւաւոր կառաւք շրջել եւ թագաւորել երկրի. զթեւան էհատ Աստուած, զի ընդ գետին քարչեսցի իւր վերելակաւն:

«Լուծմունք ի սուրբ գրոց», թիւ 87ա:

Ը

Ը. 13

1 Եւ Եղիշէ ասէ. Ե[ր]բ ցամաքեցաւ երկիր ի ջուրցն գէճ ամպով ոռոգէր, բայց ասէ՝ գերեսս երկրի, եւ ոչ՝ գերկիր. երես երկրի զբուսաբերն եւ զպարարտն կոչէ, զոր ձեռք մշակաց հանդերձեալ էին գործել:

«Լուծմունք Սուրբ գրոց», թիւ 77ա:

Թ

Ա. 1

1 Որպէս կենդանածնեցաւ երկիր, կենդանածնեցաւ երկին, ախտականս զախտականսս եւ անախտն՝ զանախտան, ի հրոյ եւ յաւղո գոյացեալք: 2 Բնութիւն հրեղեն եւ տեղի աւգեղեն. կամաց փոփոխումն եւ ոչ բնութեան, մեծ պատերազմ հոգոց քան մարմնոց, որպէս անէծքն մեծամեծք, որ

զանկեալսն ցուցաւ, որ էր ի յեւթն պարունակն, ուր արեգական է, եւ ի վեր չէր իշխան անցանել: 3 Յապատամբելն, նաեցեալ ի վայր, ետես զվայելչութիւն աշխարհի՝ եւ զմարդն տէր, խորհեցաւ հանել զմարդն եւ տիրել, եւ ի յայտ շարժիլն անկաւ իշխանն՝ սատանա անուանեցաւ, որ է ապստամբ, եւ որ ընդ նովաւ գաւրքն՝ դեւք, որ է անմարմին չարութիւն, զի ծառա եղեւ ախտի, որ երկիւղ ծնանի, եւ երկիւղն՝ զատելութիւն, եւ նա՝ զաւտարութիւն, որ պէս ազատ մնալն այլոցն զսէրն ծնաւ, եւ նա՝ զընտանութիւն, եւ նա՝ զորդեգրութիւն եւ որդեգրութիւնն՝ իշխան հայրենեացն:

«Արքայն Եղիշէի», ՄՄ ձեռ. թիւ 4166, 208բ-209ա:

Ժ

Ա. 16

1 Ի վերոյ եւթն մոլորակացն, որք են ընդ հրա[յ]ին կամարաւն, եւթն անմոլար աստեղք են: 2 Եւ են ցուրտք. միջնորդ են արեգական եւ արփո[յ]: 3 Եւ զանչէջ տոչորումն արփոյն, իւրեանց սաստիկ ցրտովն բարեխառնութիւն առնելով, արեգականն մատուցանեն, եւ արեգակն առեալ հեղու աւղն՝ առեալ զցրտութիւն եւ լոյսն զջերմութիւն մա[ր]մինն հրոյ:

«Արքայն Եղիշէի», թիւ 209ա:

ԺԱ

1 Որոտ ձմերայնի ոչ լինի, զի ստերջանա ամպն, եւ որ բերինն ի խոնարհ ինքեանք են այնք հանդերձ ջրա[յ]ին խոնաւութեամբն: 2 Առ յոյժ ցրտութեանն, ինքն ամպն կոտորատի խոնաւութեամբն՝ բրդի, բաժանի, դիզու, դնի ի լերինս: 3 Իսկ գարունն աւղն պարարի խոնաւութեամբն եւ ի յարեգականին ջերմութենէն ջլանա զհարստութիւն. առ յոյժ փոթորկելն խոնարհի ի ծով եւ բերանացեալ բառնա ջուր ի վեր: 4 Եւ ի սաստիկ ծանրութե-

նէն յառաջ խաղա, եւ այլ աւղք կցին ի նա, ընդ անաւարութիւն չկարացեալ հեղուլ զջուրն, ձայն արձակեն ընդ երկանց կանանց ծնանիլ մարմին յերկրէ: 5 Եւ ձմեռն ոչ երկնէ, զի սառնացեալ, ամուլ է երկիր, շանդին ի հրեղէն մարմնոյն կտրեալ չգաղարէ մինչ ի ներքին կիսագունդն յիւրն մարմին՝ ի պատուհաս եւ յահ մեղուցելոց:

«Արքայն Եղիշէի», թիւ 209ա:

ԺԲ

Ա. 16

1 Լուսինն ի լրմանն, կամ ի միջոցի, կամ մերձ ի հինն. եւ դիպի լուսիննն ի վերին կիսագնդին, եւ արեգակն ի ներքին կիսագնդին, կշիռ միմեանց ի միջի տրամագծին: 2 Ի միում ժամու ոչ բաւէ արեգակն ըստ սովորութեանն ձգել լոյս յանիւ լուսինն՝ ընդ հիւսւսա[յ]ին կողմն խաւարի լուսին. իսկ յորժամ երկոքին իցեն ի վերինում կիսագնդին եւ զոյգ դիպին, զի արեգակն վերո է քան զլուսին, ի դէմ անկե[ա]լ արեգականն լուսին՝ թուի կորնչիլ արեգակն, որ ոչ է այլ լուսնի պատճառ:

3 Արեգակն ի կատարել զընթացս գիշերոյն մկրտի յովկիւանենոս, ի ձեռն աւղո եւ ցանէ յաշխարհ զոր ցաւղ անուանեն: 4 Իսկ ի յոյժ բախման շրջագա պարունակացդ, շարժելով զյարմարական գնացան, երեւումն լինի վերին լուսոյն, իբր անաւարինչ փապարս աւղեղէնս: 5 Եւ յաղամողեալ լուսոյն եռան փայլատակունք առ ի ցրելոյ ուժգնութեան աւղոյն, եւ վաղվաղակի ծածկի, եւ հիացեալ՝ աստեղաց թափումն ասեն, որ ոչ է իսկ:

«Արքայն Եղիշէի», թիւ 209ա-209բ:

ԺԳ

1 Արարող հոգին կրական գաւրութեամբ թափանցանցէ ընդ ամենայն արածս, իսկ խոհականաւն յանկակից է ընդ

մարմնական[ս]ն՝ բանաւորս, եւ ընդ ան-
մարմինսն՝ վերին բանաւորս:

2 Մարդ կրկին է եւ նա մեկին: 3 Եւ
կրկին մարդս դարձեալ բազում է՝ ցուրտ՝
աւզով, ջերմ՝ հրով, խոնաւ՝ ջրով, ցամաք՝
հողով: 4 Եւ սոքա ոչ են սեռք՝ այլ՝
խզածք: 5 Եւ այսպէս խզեցան մանրա-
գոյնն՝ հողոյ, եւ համեղագոյնն՝ ջրոյ, կակ-
դագոյնն՝ աւզոյ, փափկագոյնն՝ հրոյ, բաղ-
կացեալ ի մի բնութիւն:

6 Աւդ եւ ջուր անձեւ եւ անորակ է,
թէ ի տիկ առնուս աւդ կամ ջուր՝ նորա-
զանա, եւ թէ յայլ ինչ՝ գնորուն ձեւ առ-
նու:

«Արքայն Եղիշէի», քիւ 209բ:

ԺԴ

ՎԱՄՆ ՀՈԳԻՈՑ ՄԱՐԴԿԱՆ

1 Թէ ուստի գան, եւ յետ ելանելոյ ի
մարմնոյ առ ով երթան, կամ թէ առաւել
իմաստնայցեն:

2 Ձի գոն եւ հոգիք՝ զայս եւ բնու-
թիւն մերոյ լինելութեանս ցուցանէ. քան-
զի կրկին է տեսակ մարդոյ, մին շարժէ եւ
միւսն շարժի. շարժողն ունի զիմացական
բնութիւն, եւ շարժեցեալն գործէ զսննդա-
կան տեւողութիւն. եւ է միութիւնս յոր-
ժամ երկոքեան ունիցին զտնկեցութիւն.
ապա թէ թողցէ շարժողն, անկեալ դնի
մարմին անխլրտելի: 3 Բայց աւրինադիրն
մեր զհոգի մարդոյ փշուծն Աստուծոյ ասէ.
Եւ նորուն ծանաւթ եւ բարեկամ ոմն մար-
դարէ իբրեւ յերեսաց Տեառն ասելով. Հո-
գիք յինէն արձակիմ, եւ զամենայն շունչ ես
արարի, ասէ Տէր^ա: 4 Նովին հոգևով Ովսէէ
մարդարէ ասէ. Ո՞վ հաստատեաց զհոգի
մարդոյ ի նմա^բ: 5 Բարևոք է այն միաբա-
նութիւն, զի առանց Աստուծոյ եղեալ եւ
ոչ ինչ. այլ զորպիսութիւնն պիտի իմա-

նալ: 6 Ձի արար Աստուած զարարածս գի-
տեմք՝ ոչ ի նիւթոյ եւ ոչ ի հատոյ իմիք
էութենէ, քանզի անհատ բնութիւն իմա-
նամք զԱստուած. իսկ արարածս հատկո-
տոր: 7 Դարձեալ յոչնչէ ոչ կարեմք ասել
զայս մեծ մարմինս արարածոյս, եւ ոչ
ինքնաբոյս գոյացութիւն, նա եւ ոչ ի վա-
րանս տարակուսի անկանիմք թէ ուստի՝ ե-
ղեւ բնական կամքն Աստուծոյ իմանալ եւ
առնել ինչ. այլ միշտ Աստուած, միշտ ա-
րարող զաւրութիւն ընդ իւր: 8 Եւ յորժամ
կամեցան՝ նոյնպէս կամեցաւ. զոր ունէր
յիմանալուքն՝ էած ի գոյացութիւն, զի ի-
մանալեաց իցէ արարիչ բնական իմացու-
թիւն: 9 Իսկ արարչական զաւրութիւնքն՝
զիւրդ նիւթն անմարմին. իսկ արարչու-
թիւնն զանմարմնոց եւ զմարմնացեալն՝ ի
բազմադիմի մասունս, յիւրաքանչիւր ի
զարգս, զի իցէ ոստն մի, եւ ստեղն մի, եւ
արմատն բազում, եւ յոստոց անտի բազ-
մատեսակ շառաւիղք:

10 Արդ, որպէս վերագոյն ասացաք՝
յերկնէ երկնայինքն եւ յերկրէ երկրա-
յինքս, եւ մարդ խառնուած յերկնէ եւ
յերկրէ. անաւարագոյնն յերկնէ, թանձրա-
գոյնս յերկրէ: 11 Ձի թէ զգոյացութիւնս
հրեշտակաց ծնունդ ասեմք երկնի, հրոյ եւ
աւզոյ, որպէս եւ մեծն Դաւիթ ասէ. Ո ա-
րար զիրեշտակս իւր ի հոգիս^գ: 12 Եւ
զպաշտանեայս անուանէ հուր կիզելոյ,
ապա յայտ է եթէ ոգիք մարդկան ի նմին
նիւթոյ գոյացեալք՝ կամաւք Արարչին ա-
ռաքին ի բնութիւն մերոյ լինելութեանս,
ոչ հրեշտակացեալք եւ ոչ դիւացեալք,
ըստ ոմանց անուանելոյ, այլ միայն հոգիք
եւ հոգիք մարդկան: 13 Հոգիք հրեշտա-
կաց պարզ բնութիւն, անմարմին, անյաւդ,
անորակ, անքանակ, անձն կատարեալ, եւ
կատարելութիւն անձին ոչ յումեքէ, այլ
ինքնակատար էութիւն, կատարեալ գոյա-
ցութիւն:

^ա Է.՝.ՆԻ: 16
^բ Հմմտ. Չսէ. ԺԲ: 1

^գ Սաղմ. ՃԳ: 4

14 Իսկ ոգիք մարդկան գոյացութիւն պարզ, էութիւն յստակ, սուրբ, մաքուր, իմացական բնութիւն, ձեւ սկզբնատպին, հարկաւոր շարժմունք, վերաբերութիւն անմահ տեւողութիւն, յարկակից մարմնոյ, միաբան որակութիւն, անձանձրանալի միութիւն, անբաժանելի մասունք, անհատ զաւրութիւն, անծերանալի յերկարութիւն, անտեղի բնակութիւն, յառաջ քան զգալն ի մարմին ի գոյացութիւն եղանութեանն՝ ունի իմացական, անքանակ. եւ ի մարմնի եղեալ զամենայն ունի զհարդ որպէս կամի ախորժել: 15 Եւ իմանի բնութիւն տարբերել ընդ մարմնոյն. բայց ես ասեմ ըստ բնութեան եւ ըստ բարոյական ձեւացելոյ հոգւոյս զառ ի միմեանց զմերձաւորութիւն:

16 Գովի քնար, այլ ի ձեռն քնարահարին. գեղեցիկ են ձայնք երաժշտականք, այլ երաժշտականան. տեսեր զչքնաղ ինչ շինուած, ոչ ի նմին հարեր կացեր, այլ ճարտարապետին ետուր զգովութիւնն: 17 Ապա թէ ոչ իցէ քնարն, չերեւի քնարահարն. սոյնպէս եւ ամենայն գործիք ձայնաւոր երգոցն ի ձեռն արուեստաւորին երեւին: 18 Ապա թէ գործիքն ապականեալ իցեն, իբրեւ թէ որպէս փող ջախճախեալ, աղի խոնակեալ, եւ ճարտարն առողջ եւ լի արուեստիւն եւ գիտութեամբ, ոչ կարէ ցուցանել զհանդէս առաքինութեան արուեստին. եւ գտանի ամենայն մասամբ ապականեալ ի գիտութեանն: 19 Ապա թէ կատարեալք առ միմեանս հանդիպիցին, սփոփիչք եւ մխիթարիչք առ միմեանս հանդիպեացեն բազմամարդոյ քաղաքաց, եւ պահի իւրաքանչիւր բնութիւնք գատ եւ ուրիշ խառն բնութեամբն:

20 Ապա կարի գեղեցիկ մեր Արարիչն զբնութիւն մարմնոյն հաստատեաց շինուած բաժանելի, եւ զգոյացութիւն հոգւոյս արար անբաժանելի բնութիւն. եւ միաբանեաց իբրեւ քնարահար ընդ քնարի,

զի շարժեսցի եւ շարժեսցէ զակն ի տեսանել, զուրնգունս ի հոտոտել, զքիման՝ ի ճաշակել, զլեզու ի խաւսել, զխելսն՝ յիմանալ: 21 Զայս ամենայն զբազմութիւն մասանցս մարմնոյ շարժէ ի կենդանութիւն եւ ի գործառութիւն ցորքան ժամանակ միաբանութիւն է շարժողին եւ շարժեցելոյն: 22 Ապա եթէ չբաւեսցէ՝ սա քակտեալ եւ նա ի բաց կացցէ, լռեալ դադարեալ լինի ամենայն բազմութիւն արուեստիցն. սա դառնայ յիւր բնութիւնս, եւ նա վերանայ յիւր կայանն. ինքն յինքեան իմանայ, ինքն յինքեան հանգչի, ինքն յինքեան առաւելու, ինքն յինքեան խնդայ, ինքն յինքեան տրտմի, ինքն յինքեան շարժի, ինքն յինքեան եւ դադարի, ինքն իւր բաւական ինքնագոյ իմացութիւն, ինքնալուր, ինքնատես:

23 Իսկ եթէ ոք գտեղեաց կամ զկայեցից հոգւոց կամեսցի գիտել, զհետ եկեսցէ բանից մերոց. մի՛ գետնաքարչ գնացիւք եւ մի՛ ծովական ճանապարհորդութեամբ եւ մի՛ առասպելական բարբանջմամբ, այլ ճշմարիտ վարդապետութեամբ վկայութեամբք սուրբ գրոց, ուր առաքեալն յափշտակեցաւ, ուր պարգեւքն պատրաստեալ են, զոր մարմնաւոր զգայութեամբքս թարգմանել ոչ կարեմք, զանյաւր տեղեացն՝ վերնոց քաղաք ասեմք, վերին Երուսաղէմ անուանեմք նմա, այլ ազատ բանակետոյ: 24 Անդ բիւրաւորք հրեշտակաց, բանաւոր իմանալի, եւ ոչ զգալի հոգիք են անդ մարդկան: 25 Այլ զարդարոցն կատարելոց կամիցիս գիտել, թանձրագոյն ասացից. յորմէ նիւթոյ առաւ, ի նմին եւ չոգաւ դադարեաց: 26 Լուր եւ մեծին Սիմոնի վիմի յուսուցանելն մանաւանդ եւ զճարտարապետսն փիլիսոփայից. իբրեւ հաճեաց զմիտս նոցա արարչութեանն ճառիւք, ասաց եւ վասն հրեշտակացն կայանից՝ զսուրբ, զանապական, զանպղտոր զհոգման վերինս, զոր եւ բանակետոյ առաքեալն անուանեաց:

27 Ապա թէ ոք ի գրեալսն Մովսէսի ընթացի, եւ փշուճն յԱստուծոյ զհոգիս մեր ասիցէ, եւ զայն եւս իմացի անկանել նմա ի մեծ վարանս տարակուսի, մինչեւ զանմարմին Աստուած, ի ձեւս մարմնոյ ածել՝ փշելն որպէս թէ բերանով, ռնգամբք եւ շրթամբք, հարկ է եթէ ամենայն անդամքն զհետ գայցեն, զոր քաւ եւ մի՛ լիցի, եւ մի՛ ի միտս անգամ այս եկեսցէ ուրուք՝ զԱստուած ի կարաւտութիւն զգայական գործոյ ածել. այլ իմացուք զփշելն ոչ ի նմանէ ի նա, այլ նմա փշելն զնա հոգիացոյց, որպէս զանգոյսն գոյացոյց, որպէս զանհոգին հոգիացոյց եւ զկենդանութիւն եդ ի վերայ նորա:

28 Զի եթէ յԱստուծոյ էութենէն փշուճն ասէք, զի՞նչ պիտոյ էր լսել զձայնն Փշեաց յերեսս նորա շունչ կենդանի, եւ եղեւ մարդն ի հոգի կենդանի (Բ՝ 7): 29 Իբրեւ յայտնի է զաւրութիւն բանիդ, անուանեաց զառաջին արարչութիւնն հոգւոյն շունչ կենդանի իբրեւ զմի արարչութիւն. այլ վասն մեծախորհրդութեան, զի պատուականագոյն երեւեսցի մարդն յարարչութեանն՝ մեծարեաց զնա. իբր զի ստեղծ ձեռաւք զմարմինն, եւ բերանով զփշուճն հոգւոյն: 30 Քանզի աննախանձ է Աստուածութիւնն եւ անչարակնութեամբ պարգեւասէր, ոչ ինչ դանդաղեցաւ անուանել զմեր բնութիւնս պատկեր Աստուածութեանն. իբրեւ յայտնի է իմաստնոց եթէ որչափ հեռի են ի միմեանց մարդ եւ Աստուած՝ բնութեամբ: 31 Ուստի եւ մեծ մարգարէն Եսայի ետես զԱստուած եւ հիացեալ զարհուրեցաւ. զզաւրութիւնսն պատմէ, զիսկութիւնսն լռէ, եւ զիտացեալ զմեր բնութիւնս՝ խոնարհութեամբ բարբառի. Յիմէն արձակիմ հոգիք, եւ զամենայն շունչ ես արարի, ասէ Տէր^ա:

32 Ահա յայտ է արարչութիւն հոգւոյ. արձակին կամաւքն Աստուծոյ յանաւար բնութենէ, որպէս վերագոյն ասացաք. կենդանածնեցան երկինք մաւտաւորս իմանալիս եւ ոչ շաւշափելիս: 33 Սոյնպէս եւ յորժամ արտաքոյ մարմնոյս եղեալ ոգիք, զամենայն արտաքնոց զգոյսն տեսեալ եւ ընդ նոսա լինելով՝ ոչ կարէ ի մարմնի լինել, եւ ոչ զպէտս մարմնոյ կատարել. որպէս հարկեալ էր յառաջագոյն ի բնութենէն չելանել ի մարմնոյն, նոյնպէս ոչ յետ ելանելոյն անկանել նմա ընդ մարմնական պիտոյիւք մինչեւ յաւրն յայն յորում յայտնեսցի Արարիչն արարածոց:

34 Բնութեամբ կրկին է տեսակ մարդոյ, մինն՝ կառավար եւ երասանակալ եւ ուղղիչ, եւ միւսն՝ բնակարան բնակողին եւ շինած զարմանալի, անմահական հոգւոյն անուրանալի բնակարան. որով իմանալին ընդ մարմնականս ընդ այս կենցաղավարութիւնս սովաւ հաղորդի մնալով յուրախութիւնս, եւ տեսանելիս ընդ անտեսանելին հաղորդեալ՝ ոչ հեռանայ ի թանձրութենէ: 35 Զի սա քաղաք է իշխանականին, դարմանաւոր, սննդական եւ կենդանի տաճար, այլ եղծանելի եւ արագալոյծ եւ առժամայն վայելչութիւն. իսկ տիրական՝ իբր զթագաւոր եւ տեսուչ եւ դատաւոր իրաւախորհողութեան, զի ոչ ունի պէտս առ դարման սննդեան. սակս այսորիկ եւ անապականելի եւ անապական. զսա աստուածային աւրինադիրն Մովսէս փշուճն յԱստուծոյ ասաց: 36 Արդ, մի՛ ոք ծառայեսցէ բանին, այլ մտացն հնազանդեսցի. զի անհանձար խորհրդոյ է իմանալ փշուճն յԱստուծոյ՝ բերանոյ եւ ռընգանց որոչեալ տեղի. ապա եւ այլն ի ներքս եկեալ լինին մասունք մարմնոյն, եւ զանմարմին եւ զանկարաւտն ընդ զգայականիս շինեալ կարաւտութեամբ: 37 Այլ ի սա փշել զգոյացուցանողն հողմաշարժ կենդանութեամբ հաւանելի է. յորմէ եղեալ մարդն ի հոգի կեն-

^ա Ե․․ՆԻԷ 16

դանի՝ աստուածահարաչ միաւորութեամբն հաստատեալ ըստ եղութեան թագաւորական բանին թէ՛ Ո՞ հաստատեաց զոգի մարդոյ ի նմա: 38 Այլ եւ արձակեալ, որ ոչ հաստատեալ, զոր Երեմիաս ասէ. Կենդանի եմ ես, ասէ Տէր, զի հոգի յինէն ել, որով յայտ արար զնա միայն գոյ Արարիչ բարեացն կամողաց:

39 Աստուած անհատանելի բնութիւն է, որ ինչ հատեալ լինի յԱստուծոյ. եւ դարձեալ ոչ այլ ինչ յառաջն կայր նիւթ յորժամ ստեղծանէր զպատուականն զայս հոգի. այլ եւ ոչ ինքնաբոյս եղեալ ըստ ինքեան, զի չէ ոք մշտնջենակից Աստուծոյ. զի ոչ է յումեքէ եղեալ. զնորա սահման լինելութեան ոչ ոք գիտէ. այլ սա ոչ է անխնդրելի, զի արարիչ սորա Աստուած է: 40 Եւ զի երկնայինն է հոգւոյն բնութիւն, ցուցանէ զի ելանելով ի մարմնոյս՝ ոչ ստորիջէ յերկիր. այլ զբարձրանալոյ մայրածննդեան իւրոյ ցուցանէ զիմանալի երկիրն: 41 Եւ որոշեալ մարմին յիմացականէն՝ ոչ վերաբերի ի գերակայն, այլ վայրիջի յերկիր ծնող իւր. յորմէ յայտ է թէ յախտականէս զախտաւորն ստեղծ Աստուած, եւ յանախտէ զանախտն. եւ յետ որոշման ոչ հեռանայ, այլ յիւրն երթեալ դադարէ ի տեղիս, ըստ բանին Գնաց մարդ ի տուն իւր յաւիտեմից՝, եւ Հոգիմ դառնայ առ Աստուած, որ ետն գնա՞:

42 Արդ, երթեալ միանայ ի լոյսն, ուստի ծնաւ, զի լուծաւ ի կապաւոր մարմնոյն որպէս կապեալ ունէր միութեամբ: 43 Զի որպէս քար մեքենայի յաւր պարզեալ, զի յորժամ լուծանի՝ հասանի վաղվաղակի յերկիր, ուստի առաւ, նոյնպէս եւ հոգին, զի այժմ ծանրացեալ է քան զբնութիւնս աւղոց, իսկ ի միւսում խառնուածին դարձեալ զաւրանայ քան զնա, եւ առ ինքն վերամբարձեալ ձգի: 44 Եւ է նա հուր,

հողմ, լոյս. իսկ մարմին հուր, ջուր, աւր, հող, հակառակախառն զուգակշիռ միութեամբ ընտանեցեալ, երկու՝ վերաբերական հանապազաթոիչ թեթեւութեամբ. իսկ երկու՝ վայրաբերք ծանրութեամբ մշտաշարժ երկրասողութեամբ. զի ոչ այլ ինչ քան զբնական իմաստութիւն Աստուծոյ իմանալ նիւթ արարելոյ այս է, զոր մշտնջենապէս յիմանալուջն ունէր զիմացեալն. յորժամ կամեցաւ ի գոյութիւն ածել, սահմանեաց եւ եղեւ իբրեւ մայր իմանալին: 45 Եւ երկու ի նմանէ երեւեցան ծնունդ՝ տեսանելին եւ իմանալի: 46 Եւ յերկոցունց եղեն բազում տեսակք, յանմարմնոյն անմարմինք եւ ի մարմնոյ մարմնաւորք, ոյք են հրեշտակք եւ մարդիկ:

47 Մարդ յերկնէ է եւ յերկրէ խառնուած գեղեցիկ, զգէմսն ի միասին կապեալ արուեստաւոր իմաստութեամբն Աստուծոյ. պարզ եւ թեթեւագոյնն յերկնէ, ծանր եւ շարադրական յերկրէ: 48 Զի թէ զայլ ազգաց զգայականաց զբնութիւնն աստ իմանամք, սակայն ծառայականք եւ անհանճարք. իսկ իմանալիս այս ի մեզ վեհագոյն ազատ եւ անկարեկան նիւթից, մաւտաւոր Աստուծոյ բնութեանն, հրեշտականման եւ ի նոյն էութենէ, այլ ոչ հրեշտակ՞ այլ հոգի միայն եւ ընդ անարգ նիւթոյս կապեալ, եւ ի բարձանց եւ երկնային, հակառակ եւ երկմիտ եւ անընտանի ստորակայից, այլ հնազանդեալ կապանաւք մարմնոյ:

49 Զի թէ զմարդկան հոգւոյ կամի ոք ուսանել զկայանս, մի՛ թանձրագոյն մտաւք հայիցի երկրաքարչ ախտիւք ծանրացեալ. այլ թռուցեալ ըստ սրբոյն Պաւղոսի որ ասէ՝ Աննաոնի տեղի, զոր դրախտ անուանեաց եւ երրորդ երկինս՞. այլ իմացեալ քան զվերին զայն եւ զհաստատութիւն: 50 Արդ, աստի յափշտակեալ

՝ ԺՊԵ.ԺԲ.5

Է ԺՊԵ.ԺԲ.5

Զ ԲՎՊ.ԺԲ.2

Հոգիս՝ ի հոգեւորականն եհաս կայանս, որ աստուածային պատմութիւն վերին անուան՝ Երուսաղէմ, ուր բիւր հոգիք արդարոց կատարելոցն ուրախանան, յառաջատես լեալ Աստուծոյ բարեացն, անպատմելի եւ անուշահոտ եւ լուսաւոր աւզն, յորս ոչ է այլախառնութիւն դառնութեան:

51 Այլ ասացի պարզագոյն ինչ բանիւք, զի ուստի եղեն հոգիքն՝ առ իւրն երթեալ լինին ի բնակութիւն. եւ մարմին դարձեալ յիւր տեղին միանայ ազգակցեալ եւ յապականութիւն դարձեալ: 52 Այլ անտեսանելին եւ անեղծական յառաւելատեսիլ փոփոխեալ, չուսի պէտս առ մարմնականս առ այս կեանս, եւ ոչ կարաւտութիւն ի տեսութիւն. եւ ոչ կարող իսկ են եւ ոչ նոքա որ առաւելագոյն արժանաւոր եղեն պատուոյ՝ մարտիրոսքն: 53 Նոքա յայտնիլ ումեք ոչ կարեն . ոչ ի: 54 տ: 54 գ: 55 Ապա թէ անգոսնաբար ոք կամ անխրատ սովորութեամբ երազովք վարեսցի, վերստին անցանելով ըստ հեթանոսական սովորութեամբ, բազում են աւրինակք, որ մոգ քաղղեացիք աստեղագիտութեամբ աստուածածանաւթ, եւ բարելացւոց գաւազանահարացն եւ լերդահմայ, եւ ընդ աջմէ ելանել հմայիցն Հրէաստանի եւ Երուսաղէմի, զոր մտանել սրոցն ընդ Ռաբովթ՝ որդւոցն Ամոնայ՝ եկեալ ի գլուխ երկուց ճանապարհացն, երկու առաջք ի միոյ աշխարհէ, եւ ստութեամբ արդարացեալ լինին հմայքն մտանել սրոյն ի պարանոցն Ղովտայ խնդրէր գանիրաւութեան վրէժս ի նոցանէ: 56 Այլ եւ կին ոմն վհուկ Սաւուղայ ճշմարտապատումն, եւ իղձն Բաղամայ ի Միջագետաց մարգարէ ստուգատես, Երեմ ի Հրէաստանէ բարելոնացւոյն իմաստնէն ապրեցուցիչ երազահանութեամբ. եւ Յովսէփ երազատես եւ երազահան Փարաւոնի: 57 Այլ այս ի բաց մերժեալ է յեկեղեցւոյ Քրիստոսի ըստ

ճշմարտապէս գրոց, զի այս հեթանոսաց է եւ ոչ քրիստոնէից:

58 Ապա թէ ոք այլանդակապէս ընդ այս մտածութիւնս անցանէ՝ աւտար խորհրդովք նշանագիրս գծել, կամ մարգարէանալ առ յապայսն եւ երազահմայ լինել, ցնորել մոլորութեան երազահան ստութեան, ընդ անկողնելին գնալ պողոտայ անքրիստոնէաբար, եւ բնական ի մեզ կիրան ճշմարտութեան պատմել, որ լինի այս եւ վնասել խելապատակին ընդ վայրաբանութիւն, եւ հիւանդութեամբ բազում ինչ տեսեալ խաւսի անհանճարաբար, զոր եւ արբեցողաց իմն թուի շրջագայութիւն լինել երկրի զինքեամբք, եւ յայլայլեալ զգայութեանն ի ջերմութեանցն զայսպիսի սովորականութիւնն ի մեզ աւրինադէ գործ ինչ լինել: 59 Կամ զայն զոր դեւքն կերպարանեալ ի նմանութիւնն մոլորեալ մեռելոց, զոր գիտակն էին ի կեանս մարդոյն, եւ գնոյն նմանեալ յայտնին ի տրտում երեսս կամ ի գուարթս իբրեւ պատուէր ինչ տալով եւ զգուշացուցանելով, որպէս թէ մեռեալն եւ սպանեալ մարմնոյ հոգիացեալ, եւ ի միասին գտեալ. զոր ոչ յաւգուտ, այլ ի վնաս եւ ի մոլորութիւն փութացեալ լինի, եւ նա զայն անուամնաբար ճարտարութեամբ պատմէ, այն արտաքոյ է քրիստոնէութեան:

Մատեան գիտութեան, էջ 369-373: Սրբոյ հաւրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագիտութիւնք, Վեներտիկ, 1859, էջ 369-376:

ԺԵ

[Երանելոյն Եղիշայի]

1 Ընդէր եղեմ անուանեաց գորախտն փափկութիւն յորժամ զմարդն ի մմանէ հալածեաց զործեցեալ գերկիր յորմէ առաւ:

2 Որպէս մշակք այգեստանեաց, որ գործեն զնա. մշակ՝ միտք եւ զգայութիւն հոգւոյն, եւ կերակուր եւ պտուղ գ՛րիս-

1 Մատեան՝ Կարթոթն որդւոց Եմոնայ

տոս ասէ եւ զ[վարդա]պետութիւնն հոգ-
 ւոյն [իսկ մշակ իմաստութեան]ն էր:
 3 [Իսկ յորժամ] հ[եռացաւ] յիմաստութե-
 նէն ապա սովամահ շրջեր յանմահ կերակ-
 րոցն եւ տգիտութեամբ եւ անզգայու-
 թեամբ լցեալ, որով պղծի մարմինս եւ
 տկարանան միտքն: 4 Վասն այնորիկ նա-
 խատանաւք անզգամին կոչեաց զնա
 դրախտ փափկութեան, զի զփշաբեր երկիր
 եւ զխոշորագունի եղեւ ժառանգ, որ լի
 ցաւաւք եւ տրտմ[ութե]ամբ, քանզի ի-
 մաստութեամբ կեալն է փափկութիւն եւ
 գրգ[ութիւն] եւ ընդարձակութիւն ոգւոյ
 բանականի: 5 [Արդա]րութիւն, որ ոչ
 գտաւ յերկրի, բայց միայն՝ մեղք⁵:

6 Զինչ է ապականեաց ամենայն մար-
 մին զբանապարհս նորա ի վերայ երկրի⁶:
 7 Յառաջն ամբաստանեաց նոցանէ Աս-
 տուած թե եղեն մարմին. եւ արդ, ասէ թե՝
 Ապականեաց ամենայն մարմին զբանա-
 պարհս նորա: 8 Իսկ ճանապարհ զոր ասէ
 ապականեալ զնեղ ճանապարհն, այս է՝
 ժուժկալութիւն կրանից եւ սակաւապի-
 տութիւն, ողջախոհութիւն, արութիւն, եւ
 չարութեան հակառակամարտք, ընդ որ ոչ
 զնան մեղաւորք, այլ ընդ լայն եւ ընդար-
 ձակն սիրեն զնալ:

9 Զինչ է ժամանակ ամենայն մարդոյ
 գա ընդդէմ իմ գի լցաւ երկիր չարեաւ:

10 Յաղագս մեղացն կարճեցաւ ժամա-
 նակ, քանզի ժամանակ ամենայն մարդոյ
 վասն մեղացն պակասի, քանզի բաց կա ի
 ժամանակէ նոցա իսկ զարդարոցն լի ա-
 ւուրբք ցուցցէ, որպէս եւ յԱւետարանի
 զկարճելն ասէ, եւ Յոբ եւ Սողովմոն
 զլնուլն աւուրցն:

11 Զինչ է նոյի կազմածն:

12 Աւրինակ էր տապանն մարմնոյս
 մերոյ եւ զամենայն կազմած նորա գտցես,

ըստ մարմնոյս մերոյ կարգի⁶: 13 Դար-
 ձեալ եւ սուրբ Խաչին նմանեալ, եւ մարմ-
 նոյն Տեառն, որ ի վերայ նորա բազկատա-
 րած, եւ մարդ խաչանման:

14 Ընդէր ասէ խորշս խորշս արաս-
 ցես:

15 Խորշս խորշս գործել զտապանն:
 16 Նա ինքն խորշ խորշ է մարդոյ մարմին,
 որպէս անդամք եւ զգայարանք ուղղա-
 բոյն, աչք, ականջք սրտին առագաստ
 ներքին որովայն⁷:

17 Ընդէր հրամայէ ներհուստ եւ ար-
 տախուստ կպրել գտապանն:

18 Որպէս կպրով մածեալ են ի մի-
 մեանս ոսկերք մեր ջղովք երակաւք ա-
 րեամբ⁸: 19 Իսկ որ այսր անդր ծփէր տա-
 պանն զհրեական մոլութիւնն ասէ եւ զսա-
 տանայական:

20 Ընդէր տապանին չափ աւանդեաց
 զայն երկայնութիւն երեք հարիւր կանգնոյ
 լայնութիւն հիսուն խորութիւն երեսուն եւ
 ի մի կանգուն ի վերուստ կատարել առ
 սակաւ սակաւ քաղել գաւրէն կոթողի:
 21 Տապանն աւրինակեալ մարմնոյս եւթ-
 նաթգեան կալ երկու հազար եւ հարիւր:
 22 Իսկ եթե ոք առեալ լար յոտից մինչեւ
 ցգլուխ չափաւոր մարդկան դիցէ, գտանէ
 զլարն վեց կրկին, ըստ լայնութեան լան-
 ջաց եւ տասնեկին ըստ բարձրութեան կո-
 ղից, որ են ըստ տապանին չափոյ եւ մար-
 մին մարդոյ, իսկ ի մի, կանգուն կատարել,
 որ է գլխոյ աւրինակ, որ իբրեւ ի դղէկս
 պարսպաց բնակեալ ի նմա միտքն որպէս
 թագաւոր: 23 Արդ մարդոյ երկայնութիւն
 ութ թիգ աւրինակ հանդերձեալ արքայու-
 թեանն եւ յերեքկնի [որ] լինի քսան եւ
 չորս, որ է ըստ տունջեան եւ գիշերոյ մա-
 սանց եւ ըստ մարգարէական տառից, որ է
 քսան եւ չորս գոյութիւն երեք հարիւրե-

5 Հմմտ. Փիլոն, Մեկն. Ծննդոց, էջ 4-5 (Ջ)
 6 ԾՆ. Զ. 17

6 Հմմտ. Փիլոն, էջ 74 (Ա)
 7 Փիլոն, էջ 76 (Գ)
 8 Հմմտ. Փիլոն, էջ 77 (Գ)

կին ի միակէն թուելով դարձեալ տասնիւ բազմապատկեալ լինի եւթանասուն եւ դարձեալ գեւթնաթղեան չափս մարդոյն զամենայն թիւսն եւթնապատկեալ ըստ վեցաւրերին լինելութեան լինի երեք հարիւր: 24 Եւ դարձեալ ըստ լայնութեան կրկնեա եւթն լինի քառասուն եւ ինն, որ ծնանի զհիսնեակն, որ է սրբութիւն եւ թողութիւն ամենայն մարմնոյ իսկ քառապատկեալ գեւթնեակն, ըստ նիւթոց լինի երեսուն ըստ բարձրութեանն: 25 Արդ, այս է խորհուրդ տապանին, աւուրք տարւոյ հարիւրեակքն երկայնութիւն, որ է երեք հարիւր, իսկ հիսուն ի լայնութիւնն որպէս եւթնից եւթն քառասուն եւ ինն նոյնպէս եւ տարին եւթնից հիսուն է եւ երեսուն բարձր, վասն զի երկոտասանից երեսնեակս բաժանի տարին: 26 Իսկ որպէս շաբաթքն ի տարւոջն նոյնպէս եւ մարդ թղաւք չափեալ յառաջուստ կողմանէ եւ ի վերջուստ եւ ձեռաց չափքն առաջուստ եւ վերջուստացն չափք, որ լինի երեսուն եւ երկու յերիցն կամ երեսուն, ըստ երեքհարիւրին իսկ քսան կամ քսան եւ երկու եւ ի լայնն հիսուն եւ երկու ըստ շաբաթոց տարւոյն⁹: 27 Իսկ երեսնեակդ կատարեալ թիւ ըստ Երրորդութեանն եւ ըստ բնութեան մարդոյն, քանզի յերեսնամի մարդ պապ լինի, զի ի հնգետասան նման իւր ծնանի եւ յերեսնեակին պապ լինի, որ է կատարելութիւն, որպէս ասէ Հերակլիտոս:

28 Ընդէր ամենայն, որ ինչ կա ի վերայ երկրի մեծոցի ասէ, քանզի զինչ մեղան անասունք:

29 Յորժամ թագաւորն անկանի ի պատերազմին, այլ զաւրքն ընդ նմա եւ յորժամ գլուխն կտրի այլ անդամքն՝ ընդ նմա: 30 Բայց առ [ի միտս] յորժամ հոգին հեղեղատի ի սահմանաց ախտին, եւ այլ մարմին եւ զգայարանք ընդ նմա մեռանին:

31 Ընդէր ասէ մուտ դու եւ ամենայն տուն քո ի տապան, զի զբեգ:

32 Յորժամ Աստուած գտանուտէրն ապրեցուցանէ՝ տունն ընդ նմա ապրին:

33 Տանուտէր միտք ոգւոյն են այս առ Նոյ եւ առ տուն իւր աւրինակի եւ առ ոգի եւ մարմին¹⁰:

34 Ընդէր ի տապանն հրամայէ մուծանել ի սրբոց պահարաց եւթն արու եւ էգ իսկ յոչ սրբոցն երկու արու եւ էգ:

35 Եւթնեակ թիւն Աստուծոյ աւրինակ բերէ սակս կատարմանն իսկ երկուքդ երկպառակութեան եւ յաղազս ունայնութեանն անմաքուր է, հինգ զգայութիւն ձայն եւ սէր, եւ էգ են, վասն զի անասուն մասին են, վասն զի էգ կոչի: 36 Արդ, է եւթն եւ վասն եւթն շնորհաց Սուրբ Հոգւոյն, որ բաշխի առաքինեացն ոգւոց, իսկ երկուքն եւ վասն զի բաժանի յառաջնոյն յարդարութենէ առ մեղս, որպէս առ Ադամ եղեւ, եւ խառնէ զանխառնելին, այսինքն՝ զմեղս: 37 Արական մասն զարդարութիւն առաքինեացն կոչէ, քանզի որում այն հասանի ոչ տա թոյլ խորհրդոցն ելանել արտաքս առ զգայարանն, այլ դարձ[ու]ցանէ վաղվաղակի առ ուղիղն բանն: 38 Իսկ վատթար երկու, որ ածինն չարութիւնն լինի, զի երկմիտ է երկբաց: 39 Արդ, բարին եւթնեակին է. անդ աչքն, քանզի ոգւոյ ընտանի է եւ լուսոյ¹¹: 40 Արդ, այդ է բանալ մտացն զպատուհանդ եւ դառնալ յապաշխարութիւն եւ զպիղծ ազուան ի բաց վարել:

41 Ընդէր զագոսան անաջին անախէ:

42 Ամենայն կենդանեաց թշնամի ազուան է վասն ոչ դառնալոյն անդրէն:

43 Քանզի եւ այժմ յորժամ կոչիցէ, սպասեն բազումք խտրելով նշանակեն զազուան սատանայի աւրինակեալ, իսկ աղաւ-

9 Փիլոն, էջ 79-80 (Ե)

10 Փիլոն, էջ 90 (ԺԱ)

11 Փիլոն, էջ 91-92 (ԺԲ)

նին՝ արդարութեան¹², յորում Հոգին Սուրբ բնակէ: 44 Արդ, մի տացուք տեղի պիղծ ազոաւուն, զի մի՛ ապականեսցի տաճար Աստուծոյ, այլ զնա ի բաց վարեսցուք որ են սեւագունդ այսք:

45 Ընդէր ելեալ ագոաւն ոչ եւս դառնա, զի չեւ եր մասն երկրի ցամաքեալ:

46 Յորժամ ետես ազոաւն զջուրն զեղեալ խնդալից եղեւ ընդ կատարածն, զի ընտանի է սատանայի: 47 Իսկ աղաւնին վաղվաղակի ի բաց դառնա տրտմեալ եւ ոչ համարեալ տեղի արժանի հանկատեան: 48 Եւ զինչ է հանգիստն, այսինքն՝ կայան դադարելոյ:

Մատեան գիտութեան, էջ 310-312:

ԺԶ

Երանելոյն եղիշայի

1 Զուրց հեղեղ զբազմութիւն մեղացն կոչէ, իսկ ներումն՝ ողորմութեան նորա, քանզի ի դադարել ջուրցն արձակեաց զազոաւն (Ը 7), այսինքն՝ զսատանայ յաւազանէն սրբոյ՝ հաւուն բերել տերեւ ձիթենւոյ իջեալ լինին շնորհք Սուրբ Հոգւոյն իմասցեն յանձինս իւրեանց:

2 Ընդէր յետ ելանելոյն ի տապանէն արիմէ Աստուած զնոյ աւ գորդիսն եւ ասէ. Անեցէք եւ բազմացարուք եւ լցէք գերկիր, եւ ահ եւ երկիւղ ձեր եղիցի ի վերայ գազանաց եւ թոչնոց եւ որ այլքն (Թ 1-2):

3 Ահ եւ երկիւղ ձեր եղիցի ի վերայ գազանաց զմիտսն կացոյց տիրել մարմնոյն եւ իշխել գարնանաին մասին, որ է բարկութիւն վայրենի: 4 Իսկ սողուն աւճ զհեշտ ցանկութիւն պղծութեան, որ թիւնոփն սպանանէ զհոգին, իսկ թռչուն՝ զխորհուրդս հպարտացեալս:

5 Զինչ է եղից գլաղեղն իմ յամպ (Թ 13):

12 Փիլոն, էջ 115 (Լ,Ե)

6 Աստուծոյ զաւրութիւն է աղեղն վասն փարատելոյ զխստութիւն աւդոյն նետ կոչէ զհուրն:

Մատեան գիտութեան, էջ 312-313:

ԺԷ

Ընդէր գորդիս արդարոյն յիշեցեալ զՍէմ Քամ եւ զՅափեղ զմիջնոյն զազգն միայն պատմէ ասելով Քամ էր հայր Քանանու եւ զկնի այսորիկ բերէ. սոքա եւ երեք որդիք Նոյի (Թ 19):

2 Իսկ որ զՔամ յայսմ տեղ յիշէ, վասն հանդերձեալ անիծիցն, զոր աուրցն էր, եւ դարձեալ վասն բազմանալոյ ազգին Քանանու առեալ զերկիր նոցա տա Իսրայիլի:

3 Արդ, զհայրն եւ զորդին ընդ մի համար թուեալ, վասն զի մի բնութիւնամբ էին, որ աւրինակ մեղաւորաց, նա եւ սատանայի՝ ծնանել Քամա զչար խորհուրդ: 4 Քամ թարգմանի ջերմ, իսկ Քանան՝ գնաւղ կամ առիթ¹⁵:

Մատեան գիտութեան, էջ 313:

ԺԸ

Եղիշայի

1 Անիծանելն զՔանան, անիծեալ լինի սատանայ, զի զառականս առաջին մարդոյն յայտնեաց, իսկ ծածկելն զմերկութիւնն երկուց որդւոցն աւազանին շնորհաւ ծածկեալ լինի մերկութիւն առաջին մարդոյն:

2 Զինչ է՝ Սկսաւ Նոյ այր մշակ լինել երկրի (Թ 20):

3 Վասն զի յետ նախաստեղծին Նոյ ընտրեցաւ հողագործ նմանեալ Ադամայ, զի եւ յանժամ ջուր ունէր զերկիր որպէս աստս: 4 Արդ, առաջին սա եղեւ հողագործ, իսկ մեկնութեամբ երկիր զմարմինս կոչէ, մշակ՝ զմիտս հողւոյն բարեգործն, որպէս զՆոյ պատուեալ չարագործն որպէս Կայէն, քանզի եւ նա մշակ, այլ՝ նենգա-

15 Փիլոն, էջ 150-151 (համառոտ)

ւոր, որպէս ասէ. Գործեսցես երկիր եւ ոչ տացէ քեզ պտուղ: 5 Իսկ բարեգործն՝ որպէս հմուտ մշակ տնկոց եւ բուսոց, իսկ մեղաւորն՝ որպէս նենգաւոր եւ տգէտ վարձկան եւ ոչ խնամող¹⁷:

6 Թե ուստի եգիտ գտուցկն եւ գածն, զի երկիր հեղեղեալ էր (Թ՝ 20)*:

7 Քանզի ժամանակն գարնանային էր գտնկեալսն սնուցանէ, իսկ գկարեւորն ինքնին անեցուցանէ եւ բուսուցանէ, իսկ գաւելորդն Նոյ տնկէ, քանզի ժամանակ գարնայնւոյ էր, եգիտ տունկս կենդանիս եւ տնկեաց¹⁸:

8 Զիցն է՝ Արք ի գիւնոյն եւ արբեցաւ (Թ՝ 21):

9 Արբեցաւ, զի գանապական արբե: 10 Արբեցաւ Նոյ, եւ մեղաւ, եւ մերկացաւ, քանզի յանցեաւ, որպէս նախահայրն, յորժամ մեղաւ մերկացաւ. ետես Քամ, որ աւրինակեալ դաւող մարմնոյս մերոյ մեղանչականի, նա եւ սատանայի: 11 Իսկ Յափեզ արդարութեան աւրինակ եւ Սէմ՝ բարի գործոց եւ առաքինութեան¹⁹, նա եւ՝ Քրիստոսի, յորմէ կատարեալ արդարութիւնն հանդերձն գարտին գղջումն եւ գմկրտութիւն աւագանին: 12 Արդ, մերկութիւն յերկուս դէմս ասի. մին յարդարութենէ մերկանալ, որպէս Ադամ, եւ մեւս՝ գմարմինս մերկանալ, որպէս Պ[աւղոս] ասէ. եւ գմեղս մերկանալ գմարմնոյ ծանրութիւնն՝, որպէս ի գերեզմանէ ի բաց փախուցեալ, յորում ի բազում ժամանակս որպէս ի գերեզմանի եւ ի խաւարի թաղեալ կայր եւ գհեշտ ցանկութեանցն եւ գայլոց ախտիցն ախտանայր, որ եւ յամենայն աւուր հեշտասիրութեանն աղագաւ պատրեն գմեզ, որ դուրդեալ գնամք գկնի

նորա արբեալ եւ կրկին դուրդեալ եւ խելագարեալ եւ թմբբեալ ի քուն. այն է աւրինակն: 13 Իսկ դարձեալ զգեստն, զոր Սէմ արկանէր ի վերայ մերկութեանն. զխրատն եւ գվարդապետութիւնն ասէ: 14 Այս է հանդերձ հոգւոյն:

15 Զիցն է՝ Պատմեաց երկուց եղբարցն արտաբոյ (Թ՝ 22):

16 Ոչ մի եղբաւրն, այլ երկուցուն պատմէ, ոչ ի տան, այլ արտաբոյ, զի ամենեքեան լուիցեն արք եւ կանայք: 17 Նա թէեւ բազումք եղեալ եին, ամենեցուն պատմէր ծաղր արարեալ: 18 Իսկ մեկնութեամբ չար բարքն խնդաւ ընդ այլոյ գայթանս, որպէս ընդ բարի եւ ոտնահար լինի աւսոխ եւ ամբաստան, որոյ թողութիւն եւ ներումն արժան էր առնել: 19 Արդ, քանզի ի միոյ խորհրդոյ ելանէ բարի եւ չար. եւ են եղբարք որպէս սոքա, չար խորհուրդն ծաղր եւ աշխարհալուր առնէ գմարմինն, իսկ բարի խորհուրդն ծածկէ եւ բժշկէք²⁰:

20 Զիցն է՝ Առեալ Սէմ եւ Յափեզ հանդերձս եղին ի վերայ երկուց ողանց եւ գմացիցն յետս երեսակի եւ ծածկեցիցն գմերկութիւնն հաւրն եւ ոչ տեսին (Թ՝ 23):

21 Կարճամիտն գայս միայն տեսանէ որ երեւիս, իսկ առաքինին գաներեւոյթն գհանդերձեալն տեսանէ, որ առանց աչաց մտաւք գնացին յետս, վասն զի յետոյ լինելոց է հանդերձեալն տեսանէ, որ առանց աչաց մտաւք գնացին յետս, վասն զի յետոյ լինելոց է հանդերձեալ աշխարհն: 22 Վասն այնորիկ առաքինին շուրջ գիւրեւ ամրացուցանէ եւ ծածկէ, զի մի՛ մասն ինչ մերկ գտցի, զի իմաստունն հոգւոյն աչաւքն տեսանէ գանյայտսն եւ գծածուկս, զի իմաստունն ոչ մարդ է, այլ միտք²¹:

17 Փիլոն, էջ 152

* Սրան հետեւում է հետեւեալ ծանուցումը. «Զայս եւ այլուր գրեալ է մեր»

18 Փիլոն, էջ 153

19 Փիլոն, էջ 154

՝ Հմմտ. Կող. Բ՝ 11

20 Փիլոն, 156 (ՀԱ.)

21 Փիլոն, 158-159 (ՀԲ.)

23 Զի՞նչ է՝ Սթափեցաւ Նոյ ի գինւոյն (Թ՝ 24):

24 *Սթափելն Նոյի ապաշխարողի աւրինակ է, իսկ որ ի նմին թմբբութեան կան, նոքա կորնչին*²²:

25 Ընդէ՞ր գժամ ի միջոցի գաւակին համարեալ երեքից եղբարցն այլ կրտսեր անուանէ ասելով որ ինչ մի անգամ արար նմա որդին կրսեր:

26 *Քամ միջին որդի էր, այլ վասն մեղացն կրսերացաւ, զի թեպէտ չարութիւն աւագ է, այլ Աստուծոյ գարշելի է եւ կրսեր, որպէս մեղաւոր*²³:

27 Ընդէ՞ր Սեմայ յաղաւթս կացեալ այսպէս ասէ. Արհնեալ է Տէր Աստուած Սեմա, եւ եղիցի Քանան պատանի նորա (Թ՝ 26):

28 *Աւրհնեալ Տէր գարքունականն յիշեաց վասն յանցանացն, իսկ զհաշտական Աստուածն վասն Սէմա բարեգործի եւ իմաստնոյ եւ զչարութիւնն հնազանդէ, զի մի՛ աւագասցի*²⁴:

29 Ընդէ՞ր Յափեթս յաղաւթս կալով ասէ ընդարձակեցէ Աստուած Յափեթայ եւ բնակեցուցէ ի տուն Սեմա եղիցի Քանան պատանի նորայ:

30 *Բնակեցէ Յափեթ ի տան Սէմա. տուն զեկեղեցի ակնարկէ, զի է տուն ամենայն, որ ի ցեղէ Սէմա հանդերձեալ էր լինել Քրիստոս եւ բնակել մեզ ի տան Տեառն եւ լինել ժառանգակից Որդւոյն Աստուծոյ:* 31 *Արդ, տուն Տեառն անձինք մեր են, զի տաճար են Աստուծոյ զի լայն եւ արձակութիւն ունին զերկինս, այն է՝ լայնն:* 32 *Իսկ ծառայն, որ սատանայի եղեւ ստրուկ, հալածական առնէ, եւ ոչ բնակեցուցանէ առ արդարութեան եւ իմաստութեան*²⁵:

33 Ընդէր Քամայ յանցուցելոյ զնորա որդին զՔանան ծառայ երեսեցուցանէ Սեմայ եւ Յափեթի (Թ՝ 27):

34 *Զհայրն եւ զորդին մի համարելով եւ այն զի որդւոյն նզովիւք հայրն առաւել տրտմեացի՝ զիտելով թե ոչ որդւոյն է վնասն այլ՝ իւր*²⁶:

35 Ընդէր յետ ջրհեղեղին Նոյ ասի կեալ ամս երեք հարիւր եւ հիսուն (Թ՝ 28):

36 *Եւթն յոթելէնս կեցեալ Նոյի փոխի ի հանդերձեալ հանկիստն, որ է աւրինակ արքայութեանն եւ եւթնից դարուցդ կատարման աւրինակ էր*²⁷:

37 Ընդէր երից որդւոցն Նոյի Քամ միշտ ի միջին տեսեալ լինի, իսկ ծայրքն այլափոխեն յորժամ ծնեալ լինին յառաջագոյն գրելոյ Սեմա այսպէս Սեմ, Քամ, Յափեթ, իսկ յորժամ ծնանին յառաջագոյն կարգեալ լինի Յափեթ եւ սկսանի ի Յափեթէ զազգն համարել (Ժ՝ 1-3):

38 *ԶՅափեթ աւագացուցեալ ի վերայ Քամա, իսկ որ ի միջին զՔամ ասէ, զի բարի խորհրդովքն պատեալ զչար ի մէջ առեալ ճնշիցէ զդաւող մարմինս զայս*²⁸:

39 Ընդէր ի Յափեթս կիտացիք խոռոցիք եւ այլ կղզիք հեթանոսաց (Ժ՝ 4):

40 *Կիտացիք, խոռոցիք լայնութիւն մեկնի, իսկ մեկնելն ընդ ծով ի կղզիս զայն աշխարհ մեկնէ զարքայութիւն*²⁹:

41 Ընդէր Քամայ երիցագունին Քուշ (Ժ՝ 6):

42 *Քուշ զփշաբեր ու զանպտուղ եւ զցամաք երկրէ նշանակէ եւ ոչ զպտղաբերէ*³⁰:

43 Ընդէր Քամ ծնանի գնեքովոյ լոր սկսաւ լինել սկայ որսորդ ընդլդեմ Տեառն եւ վասն այսորիկ] ասացեն, իր-

22 Փիլոն, 159 (ՀԳ)

23 Հմմտ. Փիլոն, 159-160 (ՀԳ)

24 Փիլոն, 160 (ՀԵ)

25 Փիլոն, 160-161 (ՀԶ)

26 Փիլոն, 161-162 (ՀԷ)

27 Փիլոն, 162 (ՀԸ)

28 Փիլոն, 163 (ՀԹ)

29 Փիլոն, 164 (Ձ)

30 Փիլոն, 165 (ՁԱ)

րել գնեբրովդ սկայ որսորդ ընդդէմ Աստուծոյ:

44 Նեբրովդ որդի Քուշա արիմակեալ մարմնասիրաց (Ժ 8-9), նա եւ՝ սատանայի՝ մեծացեալ մարմնով եւ ըստ մարմնոյ ոգևով նուագեալ յոյժ: 45 Վասն որոյ եւ նա ամբարտակ եւ աշտարակ շինեալ զվարս մարմնոյ յաստէն հաւասարել ջանային երկնից, եւ զկռապաշտութիւնն զկպրաշաղախ զմեղսն, վասն որոյ եւ ի ձեռն հոգևոյն աւերի զաւրէնս կամի զերկրաւորս յարգելով եւ պատուելով, քանզի հայր էր չարութեան, զերկրային քան զերկնայինն յարգէ: 46 Քանզի տիտանեանք մեղաց եւ սատանայի աւրինակեալ, քանզի ամպարիչտն թշնամի եւ պատերազմող է ընդդէմ Աստուծոյ եւ որսող եւ որոգայթող ընդդէմ Աստուծոյ պատերազմելով, վասն որոյ նախնի եւ հայր մեղաւորաց անուանի եղեալ որպէս զառաջին իշխան քաղաք շինէ զԲաբել եւ զԱքադ, քանզի Նեբրովդ եթիովպացի թարգմանի, որ է աւրինակեալ չարութեան եւ լուսոյ ոչ ունի կցորդութիւն զգիշերուոյ եւ խաւարի զհետ է, որ կերպարանաւն իւրով ցուցանէ զսատանայական զմեղս՝ որսորդ եղեալ ոչ բարւոյ խորհրդոյ ընդդէմ Աստուծոյ աւտարացեալ ի բանական բնութենէն, վասն որոյ եւ որսացեալք լինին ի նմանէ, ոչ առաքինիքն, այլ որ զգազանական եւ զանասնական բարսն ունին³¹:

47 Զինչ է՝ ես եմ Տէր Աստուած քո, որ հանի գեղ յերկրէն Քաղթեացոց, մինչ զի տալ քեզ զերկիրս զայս ժառանգել (ԺԻ 7):

48 Հանել յերկրէ քաղթեացոց զհաւատացեալս՝ ի կախարդական աղանդոյ եւ յաստեղաբաշխութենէ, քանզի Քաղթեայս զաստեղագէտս ասէ: 49 Արդ, եհան եւ հեռացոյց զմեզ Քրիստոս ի մեղսասէր աշ-

խարհէս՝ տալ մեզ զերկիր բարի, որ է արքայութիւնն³²:

50 Ընդէր ասէ Արքամ Տէր ըստ որում իմի՛ք ծանեաց թե ժառանգեցից զնա: 51 Գիտեմ զքեզ Տէր եւ կարող ամենայնի բայց նշան խնդրեմ, զի յոյժ ցանկացեալ եմ խոստմանցն, զի մարդ եմ³³:

52 Ընդէր ասէ՝ Առ ինձ երինջ երեմեան եւ այժ երեմեան եւ խոյ երեմեան եւ տատրակ եւ աղաւնի (ԺԻ 9):

53 Երինջ էք զմարմինս ասէ, զի երինջ երկրագործ է եւ ալաւսածիք, զորս պարտ է մղել, զի զլուծն յուս առցէ, որ է խաչն Քրիստոսի: 54 Այս է հողոս մասն, վասն այնորիկ կոչին անդեայք արջառոց: 55 Իսկ այժն ջրոյ մասն, զի ջուր սահող է. եւ ցրտին, նոյնպէս եւ այժ սահող է, որ սահեցանէ ի մեղս: 56 Իսկ խոյ աւղոյ եւ հողմոյ աւրինակ է, զի նման աւղոյ եւ ամպոյ ունի զարսն եւ բնութիւն իւր ջերմին է, որ զարնանային մասն: 57 Վասն այնորիկ եւ աւղի կոչին գեղմնաւորքն: 58 Իսկ [աղավնին եւ] տատրակն հրոյ մասն [եւ լուսոյն], որ ի միտսն, վասն զի երկնից են որպէս զթռչունս, որ են աւրինակ մոլորակացն եւ անմոլորիցն՝ աղաւնին. մոլորակացն, զի ընտանի եւ ձեռնընդել է եւ ընդելագոյն մերն մոլորակքք են, զի յառ երկրաւոր վայրս հուպ են եւ ախտակից լինին, իսկ անմոլորացն զտատրակն, զի անապատասէր ի բազմաց միաբանութենէ եւս խառնահաւուցն հեռի ուրեմն եւ որ յերկիրս է անմոլար գունդն եւ նմանեցան երկոքինն զաւրաց երկնից: 59 Եւ որպէս արագաթեւ հաւքն նոյնպէս եւ աստեղքս շուրջ գան զերկնով, զի ցոցք մարդկան արուեստի են հինգ աստղն. լուծ, հող, եղջերի ջուր, որ է այժ արտախոյր. զմիտսն ասէ, զոր ի գլուխն, զի խոյր պսակ ասի, ծպաւոր զգեստն ասէ, որ է աւղն փառագ-

31 Փիլոն, 165-166 (ՁԲ)

32 Փիլոն, Մեկն. ելից 167 (Ա)

33 Փիլոն, 168 (Բ)

նոտ, զհուրն: 60 Իսկ առնուլ զկենդանիսն եւ ողջակիզել Քրիստոսի չարչարանացն աւրինակ է եւ մարտիւրոսաց³⁴:

61 Ընդեր ասէ՛ եւ առ նմա գայս ամե-նայն: 62 Եւ առ նմա գայս ամենայն, քան-զի Աստուած իւր համարի³⁵:

63 Զինչ է հատ զնա ընդ մէջ եւ եղ դէմ ընդ դէմ (Ժ-Ե 10):

64 Յաւշել զողջակէզսն եւ հատանել ընդ մէջ, զի մի արբանեկեսցեն ի մեղս, այլ յանմեղութիւն լուծանէ ի մեղաց յարդա-րութիւն: 65 Իսկ դնել դէմ ընդ դէմ միա-ւորէ յարդարութիւն զզգայարանսն զեր-կուս ականջսն դէմ ընդ դէմ զերկուս աչսն զերկուս ձեռսն զերկուս ոտսն զերկուս ստինսն: 66 Արդ, ոչ միայն զմարմնոյ մա-սուկսն բաժանէ, այլ եւ՝ զհոգեկանս: 67 Նա եւ երկիր բաժանի յերկու մասուկս: 68 Եւ են դէմ ընդ դէմ լերինք եւ դաշտք հայեցեալք, ջուրք ի քաղցր եւ յաղտաղ-տուկ քաղցր ըմպելին է աղբերց եւ գետոց եւ աղտաղտուկ ծովային եւ ժանգային: 69 Եւ աւդ ի չորս բաժանի. յամառն, ի ձմեռն ի գարուն, եւ յաշուն, որ է աւրի-նակ ոգւոյ ի մարմնի, իսկ փոփոխելն՝ մե-ղաց եւ արդարութեան: 70 Այսով Հերակ-լիտոս իմացեալ զբնութիւնս, զիրս յաւրի-նէ վասն բնութեանս, եւ բազում աշխա-տեալ, եւ իմացեալ³⁶:

71 Ընդեր զհաւսն ոչ յաւշեաց (Ժ-Ե 11):

72 Իսկ զհաւսն ոչ յաւշել զաղաւնին եւ գտատրակն՝ զհոգին, որ անբաժանելիք, որ բնակին ի միտսն եւ յոգին³⁷:

73 Զինչ է՝ եւ իջին հաւի ի մարմինսն յաւշեալս (Ժ-Ե 11*):

74 Զհաւսն ի վերայ ողջակիզին եղ որպէս պահապան յաղագս հաւուց զիշա-

կերաց, որ ի վերայ թռչէին պատերազմե-լով: 75 Իսկ յաղաւնին եւ ի տատրակն ոչ մերձեցեալ յաղագս մաքրութեանն եւ զի-շակեր հաւքն աւրինակեալ սատանայի³⁸:

76 Ընդեր ասէ՛ Անց նստաւ ի վերայ Գոցա Արբամ (Ժ-Ե 11*):

77 Անցեալ նստէր առ նոքաւք Աբրամ քշելով զհաւսն, որ աւրինակեալ վարդա-պետացն վերադիտողաց, որ պահեն զմեզ ի մեղսասէր պատրանաց՝ դէմ լիալ քաղա-քացս եւ խաղաղութեան պահեալ ի սատա-կիչ մեղացն եւ ի կոտորիչ, քանզի կցորդ եղեալ վարդապետն տատրակին եւ աղաւ-նոյն ընդ նոսա պահել զմեզ³⁹:

78 Զինչ է՝ Առ մուտս արեգակն հիացումն անկաւ ի վերա Աբրամու եւ ահա ահ մեծ խաւարին անկանի ի վերայ Գոցա (Ժ-Ե 12):

79 Մաւտ ի մուտս արեւուն թմբու-թիւն անկանէր ի վերայ Աբրամու՝ զգալ Հոգւոյն ի վերջին ժամանակիս: 80 Քանզի յորժամ Հոգին բնակէ ի մարդ ոչ կարէ ժուժալ, այլ վերանան միտքն, այն է՝ թմբ-րիւն, որպէս մարգարէ՛ն եւ Պաւղոս⁴⁰, եւ այլ առաքեալքն եւ սուրբքն: 81 Իսկ ահ խաւարի, քանզի շլացուցանէ զաչսն եւ զմիտսն, զի յանկարծ հասանէ: 82 Իսկ անցանել ընդ մէջ յաւշելոցն. քանզի եկն հուր արկանել եւ սրբել⁴⁰:

83 Ընդեր ասացաւ առ նա. Հանաչե-լով ծանիցես, զի պանդուխտ եղիցի գա-ւակ քո յերկիր, որ ոչ իւր եւ ծառայեցու-ցեն զնոսա ամս չորս հարիւր (Ժ-Ե 13):

84 Արդ, այլ իմն զաւակ զհոգին կոչէ եւ պանդխտել յաւտար երկրի ի մարմնին եւ տեարքն որ ծառայեցուցանեն, ախտք մարմնոյ եւ ոգւոյ ոգւոյ ցանկութիւն ահ տրտմութիւն, իսկ մարմնոյ քաղց ծարաւ

34 Փիլոն, 169-175 (Գ)

35 Փիլոն, 175 (Գ)

36 Փիլոն, 175-178 (Ե)

37 Փիլոն, 178 (Զ)

38 Փիլոն, 179-180 (Ե)

39 Փիլոն, 180 (Ը)

40 Հմմտ. Գործ. Թ. 3-8:

40 Փիլոն, 181 (Թ)

եւ այլ բազումք, որ չարչարեն զմիտսն, մինչեւ զչարչարողսն դատել եւ ի դատաստան ածել Աստուծոյ ելանել բազում ընչիւք զարդարսն ասէ: 85 Իսկ ամս չորս հարիւր, որ ի չորս նիւթոյ մարմնոյս չարչարանք ելցեն բազում ընչիւք յԵգիպտոսէ որ բարի գործք⁴¹:

86 Զինչ է՝ եւ դու երթիցես առ հարս քո խաղաղութեամբ սնեալ գեղեցիկ ծերութեամբ (ԺԵ 15):

87 Երթ առ հարս քո՝ զհոգևոյն երթալն առ Աստուած, զԱստուած կոչէ Հայր եւ զհրշտակս եւ զայն սնունդն, որ անծերն է, զի յայս երկրիս թե քան զփիղ երկայնակեաց է՝ չէ բարի ծերութիւն, եւ զի ինքն մի մտցէ ի ստրկութիւն որպէս որք յԵգիպտոսն⁴²:

88 Ընդէր ասէ. Չորք դարք դարձցին այսր (ԺԵ 16):

89 Իսկ որ ասէ չորրորդ դարք դարձցին Իսրայէլ ի չորրորդին եւ յԵգիպտոսէ եւ մեղաւորին ցչորից հատուցանէ զմեղս հարց: 90 Է եւ այլ բազում ըստ նհանջից խորհրդոյ եւ ըստ չորս նիւթից մարդոյն, եւ սուրբ խաչին: 91 Նա եւ յամենայն կենդանիք կրին նահանջքս այսոքիկ ի մարդոյ ստեղծանիլն նախ սերմանի յարգանդ, ապա պատկերի եւ ապա անէ եւ ապա զարգանայ: 92 Այս է չորս դարք, այսպէս եւ կեալն չորս եղանակս առնու եւ մեռանի: 93 Նոյնպէս եւ բոյսք եւ տունկք եւ միրգք եւ տարին աւրինակեալ նհանջի, իսկ նհանջից նհանջ մահն է⁴³:

94 Զի՞նչ է՝ Ձեւ եմ լցեալ մեղք մտքիս՝ հացուցն* առաջի իմ (ԺԵ 16*):

95 Մեղք ամովրհացւոց զմարմնոյս ասէ նա եւ զսատանայի, զոր է կեալ սպան Քրիստոս իւր գալստեամբն⁴⁴:

96 Զինչ է՝ Վասն զի արեգակն լինէր առ արեւմուտս բոց եղեւ, եւ ահա թոնիր ծխեալ եւ դամպարք հրոյ, որք անցին ընդ մէջ յաւշածոյն (ԺԵ 17):

97 Մաւտ ի մուտս արեւուն զՔրիստոսի վերանալն յերկինս ասէ. Բոց հատանել զգալուստ Սուրբ Հոգևոյն ասէ: 98 Ղամպարք զառաքեալսն ասէ, ծուխ՝ զմեղաւորաց երիւն եւ զկոռցն ասէ: 99 Իսկ ճառագայթք վասն արդարոցն ասէ՝ անցանել ընդ ողջակէզան, սրբել զմարդկաին բնութիւնս⁴⁵: 100 Բոց հատանիլն ոչ յարեգակնէ էր այլ յերկնից կաթեալ եւ է ի Քրիստոս:

101 Զինչ է՝ Զաւակի քու տաց գերկիրս գայս ի գետոյն Եգիպտոսի, մինչ ի գետն մեծ Արածանի (ԺԵ 18):

102 Նախ զմարմնական գետն յիշէ, զի այն յետոյ լինի. Եգիպտոս նշանակ է մարմնականաց, եւ արտաքնոց բարեաց: 103 Կացէք ի գետն Եգիպտոսի նաւք որ յերկուց կողմանց վարիք, իսկ Արածանի՝ հոգեկանաց, ուստի աղբեւերն անմահութեան են կենաց բղխէ⁴⁶:

104 Ոյք եմ կենացիք, կենեգացիք, կեղմովնացիք, քանակացիք եւ որ այլ (ԺԵ 19):

105 Վասն զգալութեանց մերոց, որք ախտանան ի մեղս եւ զտեղի նոցա արդարքն ժառանգեն իսկ տասն ազգ ասելով զամենայն յիշելով թուէ, յորմէ արդարն զանց առնէ⁴⁷:

106 Զի՞նչ է՝ Էր նորա նաժիշտ մի Եգիպտացի անուն Ագար (ԺԶ 1):

107 Սառայ միտք մեր աւրինակեալ, իսկ Ագար թարգմանի պանդխտութիւն, որ է մարմին Եգիպտացի: 108 Իսկ Աբրահամ եւ Սարրայ ազգակիցք միմեանց, որպէս

41 Փիլոն, 181-183 (Ժ)

42 Փիլոն, 184-185 (ԺԱ)

43 Փիլոն, 185 (ԺԲ)

* Ձեռագրում՝ ուրիացուցն

44 Փիլոն, 186 (ԺԳ)

45 Փիլոն, 186 (ԺԴ)

46 Փիլոն, 187-188 (ԺԶ)

47 Փիլոն, 188-189 (ԺԷ)

քոյր եւ եղբայր եւ ամուսինք, վասն զի յերկնից են: 109 Եւ ցանկա որդեծնութեան, եւ ոչ կարէ, զի չեւ էր ժամ ծննդեան Քրիստոսի, եւ ոչ թե ամենայն շունչ կարէ լինել տիկին, այլ զառաքինութիւնս եւ զիմաստութիւն եւ զհանճար են զգիտութիւն ւերինացն կոչէ տիկին եւ Տէր, քանզի նա ազատէ զոգիս մեր⁴⁸:

110 Ընդէ՞ր ասէ Սարրայ ցԱբրաամ. այժմ գիտացի թե փակեաց Տէր զարգանդ իմ, մուտ առ նաժիշտն իմ (Ժ.Չ 2):

111 Յորժամ ոչ կարաց ծնանել զկատարեալն եւ զհոգի փրկութեանն հրամայէ զհետ մարմնականացն զնալ, զի զմիջակն ծնցի, որպէս յառաջագոյն հրեայքն զմիջակ խրատն, եւ ոչ զկատարեալ որդեծնութիւնն: 112 Արդ, Սարրայ ւերինակեալ վերին Երուսաղէմին, զի անտի է հոգի մեր եւ միտք, զի նա է մայր մեր, եւ զմարմինս խրատեալ ոչ կարէ տանել առաքինութեան, այլ փախստական լինի: 113 Որ եւ ի հրշտակէ խրատեալ եւ ողորեալ լինի իսկ ջրհոր* յանապատի՝ զմովսէսական ւերէնս ասէ: 114 Դառնալ առ տիկին՝ զնոր հաւատս ասէ: 115 Իսկ առաջին անուանքն Աբրամ, եւ Սարրա, վասն զի դեռ չէր հասեալ ւերտիքն ծննդեանն Քրիստոսի: 116 Ապա յետոյ կոչեցաւ քաղաք երկնաւոր Սարրայ եւ Աբրաամ հայր արդարոց, որք են եղբարք Քրիստոսի յաղագս շնորհին: 117 Քանզի զհոգեղենք խառնել կամեցաւ ընդ որդիսն Աստուծոյ, վասն այնորիկ փոխանորդէ զԱբրաամ եւ զՍարայ վերին Երուսաղէմին, զի հոգեղէնքս դասեսցէ ընդ որդւոյն Աստուծոյ⁴⁹:

118 Ընդէր կին Աբրաամու ասաց Սարայ, քանզի առեալ ասէ Սարրայի կնոջ Աբրահամու զԱգար եգիպտացի ետ առն իւրում (Ժ.Չ 3):

48 Փիլոն, 190-191 (ԺԹ)
* Ձեռագրում ջրիտր
49 Փիլոն, 191-192 (Ի)

119 Որ ըստ մարմնոյ հեշտութեան զնան ոչ կարեն ծնանել զազատն եւ զտէր տանն, այլ ծառայն զվայրագն, քանզի ամուսինն է ազատ իսկ հարճն պոռնիկ է եւ խառնակութիւն եւ ոչ զաւակ վայրագն ոչ ունելով քաղաք զվերինն Երուսաղէմ⁵⁰:

120 Զինչ է ետես թե անպատուեցաւ առաջի նորայ (Ժ.Չ 4):

121 Որք զերկրաւորս լաւ համարին քան զհանդերձեալսն եւ զանմտութիւն գոյկն քան զիմաստութիւն, զի այն յետոյ էր լինելոց, վասն որոյ ամուլ կոչեցաւ, որք զուարճանան եւ ուրախ լինին ի մարմնականիս, եւ զհոգեւորն արհամարհեն, այն էր անպատուիլ տիկնոջն⁵¹:

Մատեան գիտութեան, էջ 314-319:

ԺԹ

Երանելոյն Եղիշայի

1 Իսահակայ ածէ կին Աբրահամ գեղեցիկ եւ իմաստուն. գեղեցիկ՝ սուրբ առաքինութեամբ, եւ իմաստուն՝ խորհրդով տնտեսութեամբ:

2 Հասանէ ծառայն յաղբերն եւ հանեալ ջուր Ռեբեկայ արբուցանէ ուղտուցն նորայ (ԻՊ 19). ուղտքն տպաւորումն հեթանոսաց ջուրքն՝ զաւազանն մկրտութեան: 3 Դնի գինդս յականջս Ռեբեկայ յաւրինակ սրբոյ Կուսին, զի ընկալաւ զաւետիս հրշտակին ի Նազարեթ: 4 Արկանի ապարանջանս ոսկիս ի բազուկս, զոր տեսուէքն ողման ի վերայ բազկաց Կուսին ի Բեթղեեմ խաղաց զնաց հայրենի ընչիւքն յարեւելից յարեւմուտս հորդէ ճանապարհ մոգուցն, որով ընծային ամենայն արարածք: 5 Գայ մտանէ յառագաստ յերկրին Քանանու, եւ ծնանի զգա հայրն երկոտա-

50 Փիլոն, 192-193 (ԻԱ)
51 Փիլոն, 193-194 (ԻԲ) Սրան հետեւում է գրչի ծանուցումը. «Եթե ուրեք զիր կամ գտակ պատուան չգրեցաք մի՛ ոք լիցի մեղադիր, զի ուրեք ոչ զիրն, այդ փոխարկումն վասն առատանոյ մտաց գրեցաք»

սանիցն յորում տպաւորեալ կերպարանին առաքեալքն, որ ծնան զամենայն հեթանոսս ի սուրբ ջուրց աւագանին եւ արարին զնոսայ շնորհաւք որդիս Հաւրն երկնաւորի զարդարեալս սրբութեամբ:

Մատեան գիտութեան, էջ 320:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԺԱ. Հատուածս եղիչէի անունով է *ABDH* ձեռագրերում, ընդ որում 1-4 ենթահատուածը եղիչէի անունով է միայն *D*-ում, 3-4 ենթահատուածը բացակայում է *H*-ում, 6-11 ենթահատուածը եղիչէի անունով է միայն *AB* ձեռագրերում, 11-ը *ABDE* ձեռագրերում, 12-ը՝ եղիչէի անունով է միայն *H*-ում, իսկ 19-ը՝ *CDEH* ձեռագրերում:

ԺԲ. Ամբողջ հատուածս *A*-ում «Յոհ[ան]» անունան տակ, իսկ *H*-ում՝ միայն 1 ենթահատուածը մինչեւ *a*: Ամբողջ հատուածը չիբ *F*-ում:

ԺԳ. Հատուածս բացակայում է *F* ձեռագրում:

ԺԴ. Հատուածս *A*-ում կազմում է Պիսիդիսի շարունակությունը, իսկ 6-ից արձանագրուած է Նիւս[ացու] անունով:

ԽԹ. Նախորդ եւ այս հատուածի միջեւ *A* ձեռագրում առկայ Փիլոնի անունով «հատուածիկն» ըստ *C*-ի նոյնպէս եղիչէինն է. «Արամ միտք եւ կինն՝ զգայութիւն, եւ աւձն ցանկութիւն, որ եւ բնաւորեալ է *C*՝ միտք առնուլ *A*՝ ի զգայութեանց եւ զգայութիւն խաբիլ ի ցանկութեանց, եւ ցանկութիւն խոտորիլ ի սատանայէ»: Հատուածս առկայ է *ABCDEFH* ձեռագրերում, ըստ որում *E* ձեռագրում այն Փիլոնի անունով է (1-5 ենթահատուած), *H*-ում այն սկսում է 2-ից, իսկ 16-ից *ABCDE* ձեռագրերում՝ եղիչէի անունով, 9-ից *B*-ում, 12-ից եւ 14-ից *A*-ում: 29-31 (b) ենթահատուածի դիմաց լուսանցքում Խաչիկեանի նշումը. «Փիլ[ոն] 1, 127»: 35-ից *C*-ում իբրեւ հեղինակ նշուած է «այլ»: *D* ձեռագրում հատուածը հասնում է մինչեւ *c*, իսկ *F*-ում՝ մինչեւ 36: Այստեղից *E*-ում շարունակությունը պատկա-

նում է նոյնպէս եղիչէին, որով նախորդ հատուածը ձուլում է յաջորդին: 81-ից *H*-ում իբրեւ հեղինակ արձանագրուած է «այլ»: *D* ձեռագրում (82-ից) եղիչէին վերագրուող հատուածը, ինչպէս նշում է Խաչիկեանը սկսում է մի փոքր վերեւից (*A*, թ. 31բ սիւնակ //, տող 11): 10 ենթահատուածի աստուածաբանական աղբիւրը Փիլոնի Ծննդոց մեկնութիւնն է (տե՛ս «Փիլոնի եբրայեցոյ Մնացորդաց ի Հայս...», Վենետիկ, 1826, էջ 25-26): Այն օգտագործուած է նաեւ Անանիա Սանահնեցու Հակոճառութեան մէջ. Յ. Քեոսէեան, Աստուածաբանական բնագրեր, Ուսումնասիրություններ, Ա, Անանիա Սանահնեցի, Ս. Էջմիածին, 2000, էջ 238:

ԾԲ. Հատուածս բացակայում է *F* ձեռագրում: 1-2a ենթահատուածը *E*-ում վերագրուած է Գրիգոր Աստուածաբանին: *BDH* ձեռագրերում հատուածս սկսում է 3-ից, ըստ որում *D*-ում այն եղիչէի անունով է 8-ից մինչեւ 24d-ն, որից յետոյ՝ եփրեմի: *EH*-ում եղիչէի անունով է 6-16b ենթահատուածը: Մինչդեռ 17-21c ենթահատուածը *BCEH* ձեռագրերում վերագրուած է Աթանասին, իսկ 21c-25e ենթահատուածը *BCH*-ում՝ եփրեմին, որի անունով է *E*-ում 24-25e ենթահատուածը: Ենթահատուածի մօտ լուսանցքում Խաչիկեանը արձանագրել է. «եզնիկ»: Այստեղ պատմուող զրոյցը առկայ է եզնիկ Կողբացու «եղծ աղանդոց»-ում, այդ մասին ակնարկուած է նաեւ Գրիգոր Լուսաւորչին վերագրուած «Հարցում» եւ Վահրամ Բաբունու «Հարցմունք եւ պատասխանիք ի գիրս Ծննդոց» երկերում (տե՛ս Լ. Խաչիկեան, Գրիգոր Պարթեւին վերագրուած «Հարցումը» որպէս հայ մատենագրութեան երախայրիք, «Բանբեր Մատենադարանի», թիւ 7, էջ 327):

ԲԱՆ ԽՐԱՏՈՒ ՅԱՂԱԳԱ ՄԻԱԼՁԱԼՑ

1 Մարդիկ, որ են ի մարմնի եւ կամաւք ետուն զանձինս իւրեանց յաստուածպաշտութիւն, անդստին ի տղայութենէ խոկան՝ կրթին ի վշտամբերութիւն. հեռանան ի հայրենի բնակութենէն, եւ վարին յանապատ յանչէն երկիր. ոչ իբրեւ չարակնելով նախանձոտք փախուցեալք ի բազմամարդոյ աղքատաց, այլ զի տեսանեն զաշխարհս լի ամենայն չարեաւք, խոյս տան ի խորչս եւ ի ստորոտս անապատ վայրաց:

2 Ձոր տեսանեմք իսկ յաճախ ի կողմանս հարաւոյ բազմութիւն արանց՝ առանց կանանց միաբանութեան, յազգաց եւ ի լեզուաց զմիով վայրաւք հասեալք, ժողովեալք իբրեւ ի հայրենի գաւառս՝ առնեն զբնակութիւնս երկու ընդ երկուս, եւ կամ երեք ընդ երիս, եւ կամ եւս բազումս քան զսոյնս: 3 Եւ շինեն իւրաքանչիւր խցկունս զատուցեալս ի միմեանց. որմք դուզնաքեայ առ ցրտոյն պահպանութիւն, եւ զոյգ նմին ձեղուն՝ առ արեգական պահպանիլ. յատակք անպաճոյճք՝ շատացեալք խոտեղէն անկողնաւք: 4 Եւ քանզի բնութիւնս մեր դուղակ է՝ սիրէ ծածկել զմերկութիւն, առնեն եւ նոքա հանդերձս անպաճոյճս եւ յոյժ գձուձս, կողոբս ամարանի եւ թեզանաւորս ձմերանի, արկանեն եւ աղաբողոնս մեկնաւորս:

5 Մանաւանդ ի պարս շրջագայ անդադար պաշտամանն՝ երգս հոգեւորս հաւրն բոլորեցուն մատուցանեն զուարթ հոգևով: 6 Կան ընդդէմ միմեանց զաչս ի վայր արկեալ՝ զձայրս ոտից մատանցն նկատելով, իբր թէ մի կէտ տեսակի ամենեքեան հայեսցին. զաջ ձեռն ի վերայ ծնաւտին եղեալ եւ զահեակն ի վերայ կրծիցն, որպէս կարծեմ ուսեալ ի բնական հարցն: 7 Երկու են պատուականագոյնք ի մարմ-

նի, կենդանական եւ խոհական, երկոքումբք երկոցունց սպասաւորեալ. կենդանականին՝ սրտամտականն է հակառակ, իսկ խոհականին՝ արտաբերական բանս: 8 Արդ ձախուն զերասանակ ի ձեռն առեալ՝ զսրտամտականն սանձակոծիցէ, եւ զաջ ձեռն ի վերայ աջոյ ծնաւտին եղեալ՝ խոհականին սպաս ունի առ դրան բերման բանին, զի մի՛ այլակութիւն յուղիղ փառատրութիւնս խառնեսցի: 9 Եւ ընդ այսու երկու մասամբքս նահանջին ամենայն զգայութիւնքս. աչք յուղիղ տեսութիւն եւ ականջք ի զգաստ լսողութիւն, միտք ի սուրբ իմաստութիւն, եւ այլն ըստ իւրաքանչիւր մասին:

10 Եւ իբրեւ այսպէս կարգեալք եւ յաւրինեալք, ամենեքեան ի նմանութիւն վեցթեւեան սերովբէից շուրջ պարփակեալք, ձայնս անհատս ի վեր հնչեցուցանեն, եւ աւրհնութիւն եռաչափս ի խորհուրդ միաբանութեան արարչին իւրեանց բոլորեն: 11 Ձտիւն ամենայն պարապեն երգոցն քաղցրութեան, յագեալք եւ զմայլեալք ի կերակուրսն երկնայինս՝ առլցեալք հասանեն ի ժամ երեկոյին: 12 Եւ քանզի մարմին ունին ըստ բնութեանս մերում զգայութեանս, ուտեն՝ զի մի՛ քաղցիցեն, եւ ըմպեն՝ զի մի՛ ծարաւեսցին:

13 Արդ դու իբրեւ լսիցես զուտելն, մի՛ առ մերս ընթանայցես. զի հաց է նոցա անպաճոյճ եւ բանջար վայրենի՝ զոր համով աղին համեմեն, եւ ջուր յստակ՝ զոր յամպոց բերմանէ ի գուրս ժողովեն:

14 Սակայն եւ զայս ոչ երբեք ի տուընջեան մատուցանեն ի դարմանս պիտոյից մարմնոց. այլ միաբան պահելով զերկայնութիւն աւուրն, տեղի տան արեգական մտանելոյ. ձգեն երկայնեն զերեկունն, մինչեւ աստեղք յիւրաքանչիւր կայանս

պայծառանան. գոհանան իբրեւ ընդ մի բերան ասելով. Ի խաւարային ժամու զխաւարային կերակուրս խաւարային մարմնոյս տացուք:

15 Եւ զայս ասելով, ի ձայն բարձր փառատրեն զՍուրբ Երրորդութիւնն, խնդալից ուրախութեամբ ակմբին յիւրաքանչիւր տեղիս: 16 Եւ որպէս ասացաքն՝ ուտեն հաց եւ զոպայ, եւ ըմպեն ջուր ցուրտ: 17 Քանզի գոն ի նոսա ծերք փափկավարք, մատուցանեն ջուր ջերմ, զոր եւ բարեխառն անուանեն. այլ գինի եւ կամ այլ ինչ զանազանեալ, եւ գտանի ոչ ի սուրբ միայնանոցս նոցա:

18 Եւ յարուցեալ յանպաճոյճ ընթրեացն, միաբանութեամբ ասեն. Փառք քեզ Տէր, փառք քեզ թագաւոր մեր, զի ետուր մեզ կերակուր ուրախութեան. լցո զմեզ Հոգւով Սրբով, զի գտցուք առաջի քո հաճոյք, եւ մի՛ ամաչեսցուք. զի դու հատուցանես իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց: 19 Եւ այսպէս տեսառնագրելով զինքեանս՝ տան զանձինս սակաւ մի անաւար քնոյ. զի մի՛ տհալ կերակրովք գեղեցիկ շինուած մարմնոյն շփոթեալ խանգարիցի: 20 Նա եւ եթէ յամեն եւս ի քունն, երազ հոգեկան տեսանեն, եւ անդէն զանուրջսն մեկնեն իբր զբանս սուրբ մարգարէիցն:

21 Եւ զարթուցեալք առ հասարակ անդէն ի շրջանս պարուց բոլորին. ոչ հակառակք եւ ոչ ընդդիմացեալք, քաղցր հաւանութեամբ եւ հեզ հանդարտութեամբ: 22 Առաջնորդք դասուցն հնչումն ձայնի արձակեն, երգս հոգեւորականս քաղցրանուագս փոփոխելով. իսկ այլ կրսերագոյնքն ձայնիցն միտ դնելով, խառնեն զիւրաքանչիւր բարբառսն յարմարելով եւ կազմելով զմիաբանութիւն հնչմանն, զի իբրեւ ի միոջէ բերանոյ ամենայն բազմութիւն ձայնիցն հնչիցէ: 23 Եւ այսպէս յերկարելով զձայնաւոր պաշ-

տաւնն, ծունր դնեն ամենեքեան, յաղաւթս կան լուութեամբ. եւ ի ձեռն առաջնորդի աղաւթիցն կանգնեալք ամենեքեան զփառատրութիւնն կատարեն:

24 Եւ կատարեալ գտուընջեան պաշտաւնն, լաւ համարեցան զգիշերսն վաղայարոյց լինելով մինչեւ յառաւատ աղաւթիցն պարապեալք, եւ ընթեռնուն զգիրս սուրբս. իսկ որք ունին շնորհս վարդապետութեան, առնեն մեկնութիւնս ի մխիթարութիւն լսողացն: 25 Պատմեն վասն լինելութեան աշխարհի յօչնչէ եղեալ, եւ կարգեալ մի ըստ միոջէ զխրատս բարեաց կարգեն ի լսելիս ժողովրդոցն վկայութեամբ սուրբ գրոց: 26 Եւ այսպէս ուսուցանելով մինչեւ մոռանալ լսողացն զամենայն իրս աշխարհականս, եւ չյիշել ամենեւեմք զհարկաւոր կերակուր եւ ըմպելիս:

27 Եւ այնպէս ուրախացեալք ի սէրն Աստուծոյ, մինչեւ չհամարեալ զինքեանս ի մարմնի, այլ յերկինս. եւ հեշտութեամբ անցուցանեն զերկայնութիւն գիշերոյն մինչեւ յառաւատ: 28 Քանզի սոսկացեալք են յերկրէս եւ զգեցեալք զերկինս: 29 Ամաչէ մահ առ դրունս նոցա, եւ դառնացան դժոխք յիջանել նոցա: 30 Կենդանութիւն նոցա դրունք են աղաւթից աշխարհի, եւ ոսկերք նոցա զանձ են ամենայն ապաւինելոց: 31 Լուր նոցա յորդորիչ է ամենայն հեղգացելոց, եւ գործք նոցա վարդապետութիւն ամենայն կամեցողաց. դասակիցք են հրեշտակաց, եւ աւթեւանք Սուրբ Երրորդութեանն:

32 Արդ զայս ամենայն գիտելով, եղբարք, պարտիմք թեւակոխել. եւ զնոյն նախանձ սրբութեան յանձինս բերելով, նմանողք լիցուք այնպիսւոյ բազմագունդ միայնացելոց յաշխարհէ եւ դիմելոց ի քաղաքամայրն վերին, որ ազատ է յախտից երկրաւորաց. քանզի ընկերակիցք են մերոյ բնութեանս, որ զաւրացուցանէ զտկարութիւնս: 33 Միայն կամեաց, բուռն հար-

Հաւատովք, յուսա, սիրեա, եւ կարես տեսանել զայնպիսի նահատակութիւն: 34 Ձի ոչ ինչ համեմատ են չարչարանք ժամանակեանք առ կեանսն՝ որ պատրաստեալ է այնպիսի ճգնողաց:

35 Քանզի յոյժ իսկ երկուցեալ եմ ես ընդ հեղգութիւնս մեր. գրեթէ գամենեսեան տեսանեմ թաւալեալ յերկրաւոր ստացուածս: 36 Իսկ արդ բնութիւնս իմ ո՞չ կշտամբեալ յանդիմանէ զիս, եթէ ստեղծայ մերկ, եւ եթէ եղայ ի դրախտին մերկ, եւ եթէ ելի անտի մերկ, եւ եթէ ծնայ մերկ, եւ եթէ անդրէն յերկիր մերկանդամ երթամ: 37 Արդ եթէ տանել աստի ոչ կարեմք, զի՞ եւս աստէն ի սմին թարթափիմք յաշխարհիս: 38 Մերկացիր սոսկացիր, ո՞վ միայնակեացդ, մի՛ թաւ ամուր ընդունակ լինիր նենգաւոր թշնամուոյն. գուցէ ի դարան մտեալ մաւտալուտ՝ զքեզ անդէն ի քեզ արշաւեսցէ կողոպտել, զերծանել ի քէն զգանձսն երկնաւորս: 39 Բաւական համարեաց քեզ գտէրունեան կանոն, ոչ ոք (յերկրաւորացս) կարէ երկուց տերանց ծառայել՝ որ յայտնագոյն իսկ ցուցանէ առանց միջնորդի եւ մեկնութեան. Ոչ կարէք դուք, ասէ, Աստուծոյ հաճոյ լինել եւ Մամովնայիէ՞:

40 Եւ արդ ես տեսանեմ ի մերում աշխարհիս եւ ոչ զոք ազատեալ յայսպիսի աղետից: 41 Յետս ընդդէմ ընթերցաք զգեղեցիկ գրեալսն. ի պատճառս ուխտաւորութեան հեռացաք ի սուրբ ծնողացն, եւ արարաք բազում հարս աւտարոտիս. զորս պատուելոյ արժանի էր՝ անարգեցաք, եւ յորս ոչն ունէաք իշխանութիւն գնել մեծարանս՝ զախտ աղետից մերոց յոյժ ծախեցաք: 42 Ազատացաք ի հարկաց արքունի՝ զորս առանց մեղաց էր հարկիլն, եւ մտաք ընդ հարկաւ ստացուածոց, որ լի են անառակ ագահութեամբ: 43 Չելաք յան-

կողինս սուրբ հարսանեաց, եւ արարաք մեզ բարձրագահոյս առաւել քան զաշխարհի: 44 Փափկանամք յանկողինս յարմարեալս, եւ յածեալ կոծին միտք մեր ի խորհուրդս աղտեղիս զգիշերն ամենայն:

45 Կաւշիկք ոտից մերոց յանդիմանեն զմեզ, եթէ ոչ են սուրբ ճանապարհք մեր: 46 Հանդերձք մեր աղաղակեն զգործոց մերոց, եթէ մերկ եմք յերկնաւոր զգեստուցն: 47 Երիւարք մեր ցուցանեն զմեզ, եթէ ոչ եմք յափշտակելոց ընդ առաջ Տեառն ի վերայ աւդոց: 48 Շինուածք ապարանից մերոց յայտ առնեն, եթէ ոչ ունիմք մեք տաճար առանց ձեռագործի յերկինս, յոր մտանելոց են ամենայն դասք սոսկացելոցն յերկրաւոր ախտից: 49 Կալուածք անդաստանաց մերոց կշտամբեն զմեզ, եթէ չիք մեր բաժին ի վիճակսն երկնաւորս:

50 Մրգուզք անյագք եղաք ի կերակուրս, եւ առանց չափոյ արբաք գինի պղտորիչ խորհրդոց եւ մտաց: 51 Խոր ի քուն ննջեմք ամենեքեան, եւ երազ թուի մեզ ճշմարտութիւնն: 52 Կափուցեալ են աչք մտաց մերոց ի տեսական խորհրդոց, եւ անյագ պակշոտեալ հայել ի կեանս աշխարհիս: 53 Արգելեալք զլսելիս ի սուրբ ընթերցուածոց, եւ ունկնդիր եմք բառազման խաշանց մերոց: 54 Ոչ եկն մեզ հոտ անոյշ ի Հոգւոյն Սրբոյ, վասն զի սիրեցաք մեք զիւղ ախտալից աշխարհիս: 55 Ոչ ճաշակեցին քիմք ոգւոց մերոց զկերակուր երկնային, վասն զի պարարեցաք զանձինս մեր ի զանազան խորտիկս: 56 Մուր է գոյն դիմաց մերոց, վասն զի ոչ զուարթացան երեսք մեր ի խորհուրդս սրբութեան: 57 Յաւալից են անդամք մարմնոց մերոց, վասն զի յառաջ քան զմարմինս՝ զոգիս ախտացուցաք: 58 Գերեզմանաց բռելոց նմանեցաք յանձինս մեր, վասն զի ունայն եմք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն:

Պ՝ Գ՝-Կ՝. Ժ. 9 13
Է՝ Գ՝-Կ՝. Ժ. 9 13

59 Վասն այսորիկ եւ ամենայն չարիք եկին հասին յաւուրս մեր. կենդանեալ մերով տեսաք զդիակունս անձանց մերոց: 60 Քաջ նահատակք մեր անկան ի պատերազմի, եւ սուրբ քահանայք մեր խողխողեցան ի ձեռաց անաւրինաց. գեղեցիկ երիտասարդքն գեներն ի սպանումն, եւ բազում կուսանք վարեցան ի գերութիւն. գիրգ կանայք անկան ի տառապանս այրութեան, եւ բազում որքք կականին դառնապէս: 61 Ազատ եկեղեցի անկաւ ի ծառայութիւն հեթանոսաց, եւ սուրբ քահանայք նորա կռփին չարչարին յանաւրէն հարկահանաց: 62 Բարձեալ է ողորմութիւն յաշխարհէ, եւ հեռացեալ է գութ յիւրաքանչիւր մտաց: 63 Երկինք ի վերուստ բարկացեալ են, եւ երկիր ի ներքուստ կայ յերերի տատանման:

64 Շինուածք մեր եղեն գերեզմանք դիականց մերոց, եւ վաստակք ձեռաց մերոց տապալեցան ի վերայ մեր: 65 Պայթեաց եւ պատառեցաւ թանձրութիւն երկրիս, եւ բազում մարդիկ ի վայր հոսեցին: 66 Ոչ սպասեաց որդի հաւր, եւ ոչ քոյր գաչս եղբաւր կալաւ, եւ ոչ ել ձայն լալոյ կանանց ի վերայ ծննդոց իւրեանց, վասն զի լքոյց սով գրեբանս նոցա: 67 Հզաւրք խորտակեցան յանկարծակի իբրեւ զմայրս բարձունս Լիբանանու. հնձանք եղեն բարկութեան, եւ ճմլեցան ամենեքեան իբրեւ զողկոյզս ընդ ոտամբ, փոխանակ գինւոյ՝ արիւն անմեղաց ցայտեցաւ ի հանդերձս մեր: 68 Դառնացաւ քան զլեղի կերակուր ի քիմս մեր, եւ ի քացախ դարձաւ սուրբ ըմպելիք մեր: 69 Ընդ հարեալսն հարաք ամենեքեան յոգի եւ ի մարմինս մեր, եւ ընդ մեռեալսն զմահ ճաշակեցաք: 70 Արդ ո՞չ ապաքէն վասն մերոյ հեղգութեան անցին այս անցք չարչարանաց ընդ աշխարհ:

71 Աւն անդր ի բաց կաց յաշխարհէ, որ վաղդ ելեր մեկնեցար յաղետից սորա.

թաւթափեալ ընկեա ի բաց զկեղեւանս ախտալից աշխարհիս: 72 Մերկեաց իբր զըմբշամարտիկ, աւծ իւղովն Քրիստոսի, զի մի՛ կուուեսցին ի քեզ ձեռք ախոյանին: 73 Իսկ արդ եթէ հեթանոսք, որ ըմբռնեցան ի տեսական իմաստութիւն, ոչ միայն ի ստացուածոց ի բաց կացին, այլ եւ յաւրինաւոր կերակրոց հրաժարեցին, համառաւ եւ անպաճոյճ ըմպելեալք շատացան յանձինս իւրեանց, եւ առաքինի մահուամբ վախճանեցան ի կատարած կենաց իւրեանց, ո՛րչափ եւս առաւել մեք պարտիմք նմանողք լինել սիրելեացն Քրիստոսի, որք հրեշտակակրաւնք զանձինս կարգեցին, խառնելով զինքեանս ի գունդս վերնոցն:

74 Եկայք եւ մեք, ո՛վ միայնացեալք, գաւրէն թշնամեացն մտցուք ի մերն ստացուած իբր յաւտար երկիր, արմատախիլ զծառատունկս թշնամւոյն կոտորեսցուք. իբրեւ զգերի առեալ ծախիցեմք ի նեղեալս զինչս մեր, ոչ զի ատիցեմք զազգականս, այլ զի սիրիցեմք զաղքատսն, որ են զաւրականք Քրիստոսի եւ ճշմարիտ բարեխաւսք: 75 Ապա թէ աստէն կապիս ընչիւք, եւ քեզէն վարես զքեզ յանդարձ գերութիւն, ուր չիք անդ գինք փրկանաց: 76 Փութա փութա ճեպեա, եղբայր, ապրիլ յայնպիսի անողորմ գեհէնէ. զի կարիցես հասանել յամուր քաղաքն, ուր ոչ գոյ քեզ կասկած կամ երկիւղ խախտիլ եւ վարիլ ի գերութիւն:

77 Եւ եթէ եկեսցես զհետ գեղեցիկ վարդապետութեան հարցն, զորս վերագոյնն գծագրեցի քեզ զվարս սուրբ միայնակեցացն, յայնժամ կարասցես համբառնալ զաչս մտացդ առանց ախտից չարչարանաց, հայել եւ տեսանել զքեզ գեր ի վերոյ քան զամենայն երկինս: 78 Երանի տայցես անձինդ քաջապէս ճողոպրեալ ի վշտալից կենաց աշխարհիս, եւ խառնեսցիս յերամ միայնակեցացն, ի գունդս

սրբոց արդարոցն, ի վիճակ առաքելոցն, ի գումարս մարգարէիցն, ի կաճառս մարտիրոսացն, ի բանակս հրեշտակացն եւ ի ժողովս անդրանկացն, ի մեծ քաղաքն երկնից, ի բազմականսն աբրահամեան, եւ ի կերակուրս երկնայինս եւ յըմպելիս անկարաւտս: 79 Դու ես այնուհետեւ մարգարէն, որ ոչ պատուեցար ի մարմնական աշ-

խարհիս. այլ թեւածեալ թուուցար յանմարմին աշխարհի, եւ հանգուցեալ դադարեցեր յանապական ուրախութիւնսն: 80 Յորս լիցի եւ մեզ՝ վերջին գրչութեամբ աշխատողացս՝ միաբանութեամբ սուրբ ուխտիւս վայելել, շնորհաւքն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅԵՍՈՒԱՅ ԵՒ ԴԱՏԱԴՈՐԱՑ

Ա.

1 Կոչեցաւ Յեսու նաւեանց ի Տեառնէ առաջնորդ Իսրայէլի. ընտրեաց երկու յերիտասարդացն Իսրայէլի, եւ առաքեաց առ ի լրտեսել զերկիրն եւ զԵրիքով: 2 Թէպէտ եւ առաւելաւ մեծացաւ քան զՄովսէս, ոչ ելանէր ըստ կարգ վարդապետին իւրոյ: 3 Մովսէս երկոտասան առաքէր լրտեսս. սակայն երկու ընտրեցան յառաքինութիւնն. թիւ երկոտասանից խարխարեցաւ, զաւրութիւն երկուցն կալաւ զտեղին, մինչեւ ամենայն ապստամբութիւնն նուաղեցաւ: 4 Եթող Յեսու զերկոտասանն ի բաց, եւ զերկուսն բաւական համարեցաւ առ ի ճշմարտութիւնն: 5 Մովսէս զերկոտասան ազգն միաբանեաց ի մասն լրտեսութեանն, զի այր զիւրաքանչիւր զտոհմն յորդորեսցէ քաջալերել. եթող յետոյ զբազումս, եւ յԱստուած միայն ապաւինեցաւ, քանզի եւ ինքն անցեալ էր ընդ հանդէս առաքինութեանն:

Բ.

1 Վասն անցանելոյ Յեսուայ ընդ Յորդանան: 2 Անդ ի սինէական լերինն զժողովուրդն չարար արժանի ի վեր ի լեառն ելանելոյ, բայց միայն զՄովսէս. եւ յայտարար զանմատոյցն պատիւ աստուածութեան իւրոյ: 3 Եւ աստ առ ափն Յորդանանու զնոյն պատիւ մեծարանաց տապանակին ցուցանէ, բացագոյն երթեալ ժողովրդեան ի նմանէ իբրեւ երկու հազար կանգուն. անդ մատամբն Աստուծոյ փորագրեալ էր զգիր տախտակացն. աստ եւ անուն Յիսուսի գրով հաստատեալ կայր. Մարգարէ ձեզ յարուցէ, ասէ Մովսէս, յեղբարց ձերոց իբրեւ զիս, նմա լուիջիք^ա:

4 Մեծ ոմն ի հերբայեցւոցն եկեալ պատմեաց մեզ. ժողովուրդն, ասէ, յամպն եւ ի ծովն եւ ի Մովսէս մկրտեցան. եւ Աստուած անուն լռէր ի տեղւոջն: 5 Սովին բարբառով եւ ես երկրորդեմ: 6 Ոտք քահանայիցն ի Ղուրն Յորդանան մկրտեցան, իսկ այլ մարմինն ցամաք մնաց, վասն զի երկաթոյ ծնունդք էին եւ ոչ ջրոյ: 7 Տապանակն զանձն իւր ոչ մկրտէ, վասն զի անուն մարդոյ առանց մարմնոյ եւ հոգւոյ ոչ մկրտի. սոյնպէս եւ անուն Աստուծոյ անուամբ տապանակին նշանակէր: 8 Պահի անունն ի ցամաքի առանց մկրտութեանն, մինչեւ զգեցցի նոյն անուն մարմին եւ ոգի, եւ նովին մարմնով եւ ոգով մկրտեսցի ի նոյն ի Յորդանան գետ:

Գ.

1 Յաղագս կրկնակի վիմացն: 2 Երկոտասան վէմքն որ ելին ի գետոյ անտի, նման էր թիւն երկոտասան Առաքելոցն. եւ երկոտասան քարինքն որ ի ինն անդրէն ի գետն, երկոտասան ազգատոհմացն, որ ոչ կարացին ելանել ի ծովէ մեղաց: 3 Ընդ անցանել ժողովրդեանն ընդ Յորդանան գետ՝ հատաւ սպառեցաւ ցամաքեցաւ Ղուր գետոյն. է որ ի վեր դարձաւ, եւ է որ ի վայր հոսեցաւ: 4 Եւ զայդ քարինսդ զոր հանաք ի միջոյ գետոյդ, եւ եղաք ի տեղւոջ՝ որ անուանի Գաղգաղ: 5 Պարտ է զբանս իմանալ. Ղուրքն՝ որ ոչ ըստ բնութեան ի վեր կոյս դարձան, հեթանոսաց ի վեր յերկինս ելանելն է. եւ Ղուրքն որ ի մեռեալ ծովն Սողոմայ հոսեցան, ժողովրդեանն անդրէն ի մեղս դառնալն է:

^ա Տէ՛. Բ Օր. ԺԼ 15:

Դ.

1 Վասն թլփատութեան՝ որ ի բլուրն է, եւ ոչ ի սրտի:

2 Թլփատութեանն Մովսէս ոչ էր աւրէնսդիր, վասն այնորիկ եւ ոչ խափանել կարէր. եւ զոր խափանելն ոչ կարէր, եւ ոչ մեծարել կամէր: 3 Վասն այնր որ յառաջն տեսանէր, լռեալ դադարեաց ամս քառասուն եւ երկու յանապատի անդ. զի ետես զտկարութիւն նշանին: 4 Ճանաչումն եւեթ էր՝ յայլոց ազգացն որոշելով, այլ ոչ լրումն աստուածային կամացն արդարութեան: 5 Թոյլ ետ նմա անցանել ընդ Յորդանան գետ. ի մէջ բազմամարդի աշխարհին՝ ուր պիտոյ էր նշան դրոշմին այնորիկ, պահելով եւ զատուցանելով զանձինս իւրեանց ի բազում ազգացն: 6 Յետու որդի Նաւեայ առ երկու ինչ պիտանացու փութայր թլփատել զորդիսն Իսրայէլի, զատուցանելով յազգացն եւ անքակ միաբանելով ի ճգունս պատերազմացն: 7 Բայց խնդիր առաջի կայ սակաւ բանիւք ասել վասն նորին թլփատութեանն, եթէ ընդէ՞ր քարամբք թլփատէր եւ ոչ երկաթով. քանզի ասէ գիր՝ եթէ Արար Յեսու դանակս գայլախագեայ, եւ այնու թլփատեաց զորդիսն Իսրայէլի՞: 8 Ի մարտս պատրաստէր զնոսա. եւ ամենայն զէնք պատերազմողացն յերկաթոյ կազմին, որք թանալոց էին յարիւնս բազումս հինգ ազգացն զաւակին Քամայ. տէգք եւ նիգակատէգք, սուսերք եւ սլաքք նետից, եւ ամենայն սպառազինութիւնք վառելոցն, թէպէտ եւ որիչ որիչ էին տեսանելով ըստ իւրաքանչիւր զինուց, սակայն նիւթքն ամենայն երկաթ էր: 9 Սուրբ պահեաց զնոսա յարենէ թլփատութեանն. զի թէպէտ եւ ժամանակեան էր նշանն, սակայն աստուածային էր: 10 Ոչ մարթէր գործին, որ կենաց պատճառն էր, առժամայն շրջել եւ լինել նոցա մահու պատճառ: 11 Սակայն

երկրագործ մարդկան երկաթն է կենաց պատճառ, որ զերկիր գործեն. եւ վասն ագահութեան իւրեանց զմիմեանս զրկեն եւ զլանան, եւ անցանեն ըստ եղեալ սահմանս հարցն իւրեանց: 12 Գոյ եւս եւ այլ տեսակ՝ որ վատթարագոյն է քան զերկուս ասացեալսն: 13 Բազմաց յանուն աստուածոցն կուռս երկաթիս գործեն, տէգս եւ նիգակատէգս նուիրէին այնմիկ, որպէս եղեւ. գարշելի էր տեսողացն ներգործողաց, զորս Յեսու ոչ արժանի համարեցաւ մատուցանել ի նիւթ թլփատութեանն. այլ եւ այնչափ մեծարեաց զդանակսն գայլախագեայ, մինչեւ ընդ իւր աւանդեաց ի Թամնասաքարի:

Ե.

1 Վասն սպարապետին երկնաւորի եւ վասն Յեսուայ որդւոյ Նաւեայ:

2 Սպարապետ եմ, ասէ, զաւրաց մեծաց Տեառն: 3 Յայտ արար եւ եցոյց՝ զի երկոտասան բիւր հրեշտակաց եկեալ հասեալ էր յաւանականութիւն երկոտասան ազգին, եւ նա վերագոյն քան զբազմութիւն գնդին զանձն ցուցանէր: 4 Եւ այլ եւս խոնարհագոյն մատամբ աղբրսէր Աստուածն Իսրայէլի եւ ասէ. Ժողովուրդ իմ զի՞ արարի քեզ եւ կամ զի՞նչ մեղայ քեզ. ո՞չ վասն քո յայտնեցի դիւթին Բաղամու. Բաղակ առաքեաց կոչեաց զնա ի Միջագետաց անիծանել նզովել զքեզ, եւ զիս նմա յայտնեցի՝ դիւթին եւ յանցաւորին, զի դու մի՛ յանցանիցես. եւ եւս անարագոյն իշոյն, զի դու իմաստնացեալ զգաստասցիս: 5 Եւ եթէ առ անարգսն այնպիսի յայտնի Աստուած վասն մարդկան սիրոյ, զի՞նչ ինչ ասիցէ ոք վասն հրեշտակի՝ որ երեւեցաւ Յեսուայ, եթէ ոչ ինքն Աստուած էր՝ եւ երեւէր իբրեւ զհրեշտակ:

« Տէ՛․․ Յէ՛․․ Ե՛ 3 :

2.

1 Վասն ձայնական կործանման Երի-
ֆովի:

2 Երիքով, որպէս ասէ գիրն, ամրա-
ցեալ փակեալ կայր ամփոփեալ. ամենեւին
ոչ ոք ելանէր ի նմանէ, եւ ոչ ոք մտանէր
ի նա: 3 Տիպք աւրինակի էր նա բազմադի-
մի մեղաց առաջին մարդկային բնութեան:
4 Երիքով եաւթնեկին պարսպաւք ամրա-
ցեալ փակեալ կայր. ոչ յԱստուած ապաւի-
նեալ, այլ յորմոցն լայնութիւնն եւ ի
բարձրութիւնն. եւ մարդոյս բնութիւնն
եաւթն մասամբք պարսպեալ էր զարտա-
քին եւ գնեքին շինուածս նորա. երկու ա-
չաւք եւ երկու ականջաւք եւ երկու
ոնգացն առուաւք, եւ բերան նորա եաւթն
մեծամուր խորհրդոց: 5 Այս եաւթնեկին
պարսպաւք ապստամբեալ մարդիկ՝ ոչ
հնազանդեցան Աստուծոյ, ցարդարութիւն
փակեալք ի փակելումն, ամրացեալք էին
եւ կաշկանդեալք ի կապեալսն ապաստան
էին. ամենայն թշնամիք իւրեանց ընդ նո-
սա բնակեալ էին, անձամբ գանձինս իւ-
րեանց սպանեալ էին. կենդանւոյն դիա-
կունք մեռեալ ի գերեզմանի բնակեալ էին,
եւ ի քաղաքի համարէին գերեզմանք նո-
ցա՝ որ ի վախճանի ձայնիւ աւերելոց էին:

6 Եկն եմուտ Յեսու որդի Նաւեայ առ
քահանայսն եւ ասէ ցնոսա. Հրաման պա-
տուիրանի տուք ամենայն մարտիդ, պա-
տերազմող ամենայն մարդկանդ յառնել
պատել շուրջանակի զքաղաքն. եւ տապա-
նակն կտակարանաց երթիցէ զհետ նոցա,
եւ եաւթն քահանայքն եաւթն փող ի ձեռն
առեալ գտէրունին՝ հարկանելով զհետ
տապանակին երթիցեն: 7 Վեց աւր՝ մի մի
նուագ հարկանիցէք. եւ յաւուրն եաւթնե-
րորդին եաւթն անգամ եկեսջիք առաջին
աւրինակաւքն. եւ յեաւթներորդ աւուրն
յեաւթն նուագին՝ ուժգնագոյն քան զայլ
աւուրցն հարկանիջիք զփողսն. եւ ի գո-
չիւն բարբառոյ զաւրացդ ամենեցուն՝ ար-
ձակեսջիք ի վերայ քաղաքիդ, եւ առ հա-

սարակ պարիսպքն անկեալ կործանեսցին
առաջի ձեր:

8 Բայց ես սակաւ մի ըստ երբեակ մա-
սանցն շարժեցից զմիտս իմ՝ որոշելով
զվեցան ի նոցանէն, եւ յեաւթներորդումն
առնուլ զնշանակ յաղթութեանն: 9 Զվեց
աւրն մի մի նուագ. երկու երկուորեակ
թուով են արարածքս՝ եւ ապականացուք.
առաջինն կոչի մասնաւոր՝ լոյսն արեգա-
կանս. երկրորդն՝ ներքին երկինս, որ վե-
րին ջրոցն է հաստատութիւն. երրորդն՝ ե-
րեւումն ցամաքի եւ բոյսք աճեցեալք.
չորրորդն՝ գունդք լուսաւորացդ. հինգե-
րորդն՝ ծնունդք ջրոց եւ բլխումն ցամա-
քի. վեցերորդն՝ որ գազանք եւ մարդիկ ա-
րարան: 10 Վեցեքինքս, որպէս յառաջ ա-
սացաք, յառաջախաղաց եւ կայանաւորք
են. չարասէր թշնամին մեր ի սկզբանէ արկ
ընդ ապականութեամբ զվեց մասունս աշ-
խարհիս, իբրեւ որմարգել արար զմեզ եւ
բանդիւք տանջեաց: 11 Եկ գանապական
եաւթներեակն կամեցաւ ընդդէմ մեզ կա-
պել, յԱղամայ մինչեւ ցՄովսէս այսպէս.
Իսկ առ Մովսէսիւ լուծաւ իշխանութիւն
նորա: 12 Եւ եթէ Մովսէս զթագաւորու-
թիւն նորա մահուն աւերեաց, զոր ապա
յետոյ ի ծանաւթումն եկեալ մեծի մարգա-
րէին Դաւթայ՝ ասէր Թշնամոյն պակա-
սեաց զէն մինչեւ ի սպառ. զբաղաքս նոցա
աւարեցեր: 13 Ոչ եթէ ընդ մարդկան
միայն տայր Յեսու պատերազմ, այլ ի
խորհուրդս ծածկեալս՝ ընդ սաստանայ եւ
ընդ դեւս կռուէր: 14 Ի ձայն փողոյն մեծի
սաստկաձայն լալիք անաստուած մարդ-
կանն լինէր. ի ձայն փողոյ կոծոյ՝ շուրջ
գային քահանայքն զքաղաքաւն: 15 Զվեց
աւուրցն լացին զվեցաւրեայ արարածսն,
որ յառաջագոյն մեռեալ էին ի մեղս իւ-
րեանց. յաւուրն եաւթներորդի՝ որ նա
ինքն է անմեղ եւ անապական, յայնմ ա-

*** Տէ՛ս. Սաղմ. Թ. 7:

ուրը սպանին զմահ եւ կործանեցին զքաղաքս նորա:

16 Ապա թէ ասիցէ ոք. թէ մարդ եւ անասուն քաղաքին սատակեցան ի սուր սուսերի զաւրականին, նիւթք պղնձոյն եւ երկաթ առ ի՞նչ սրբեցան եւ նուիրեցան ի զանձս տան տեառն: 17 Վերագոյն ասացի, դժոխոցն նմանութիւն ասաց զԵրիքով. եւ Յեսու գղժոխս աւերեաց, եւ զմահ սպան ի միջոյ նորա եւ մարդկան. մարդոյ պատուհաս էս ի վերայ, եւ անասուն զի արիւնակից մարդկան է՝ չարար արժանի ապրեցուցանել զնոսա: 18 Իսկ կռանակուռ նիւթք կահին աւտար էր ի բնութենէս մերմէ, ոչ ինչ մարմնաւոր պատուհասին. ոչ ինչ յանձանց ազահութիւն չարամայեաց բառնալ, այլ յամենասուրբ զանձն աստուածային նուիրացն:

19 Դարձեալ գոյ եւ այլ բարառութիւն ի տեղւոյս: 20 Որպէս պղինձն հանդերձ ամենայն նիւթակցովքն իւրովք անզգայ եւ անմատոյց է ի պղծութիւն, եթէ կամեցեալ էր մարդկանն կամաւոր սրբութեամբ, անպիղծս կարէին ունել զինքեանս:

Է.

1 Վասն Ռեբեքայ երիւնկացոյ, որ հաւատով ապրեցաւ ի սրոյն Յեսուայ:

2 Յանդգնագոյն ասացից վասն աղի արձանին: 3 Յամենայն դարս եկեղեցի մաքս է ի հեթանոսաց. ի սկզբանն ի մահաբեր ծառոյն զծառն կենաց՝ որ կայ պահի մեզ ի վախճանի. յեղբայրասպանէն Կայենէ զՀաբէլ՝ որ գովութեամբ քարոզ կամաւոր յեկեղեցւոյ. ի շուայեալ դարուն՝ զնոյ արդար ընտանեալքն հանդերձ. յանիծեալ սահմանացն Քամայ՝ զՄելքիսեղեկ. ի մարդիանացւոցն՝ զԹամար, ի մովաբացւոցն՝ զՀոռութ, ի Սողոմայ՝ զկինն անանուն: 4 Ոչ, ասեն. ի պատուհասի եղեւ: 5 Վկայեմ եւ ես, եւ յելս իրացն հայեաց. ի շանթակէզ հրոյն ապրեցաւ ընդ խառնավար

դստերսն Ղովտայ, ոչ վարեցաւ ի պատուհասի չարեացն, նշան գեղեցիկ կանգնեցաւ առ երիս ինչս պիտանացու: 6 Դուք էք, ասէ, աղ երկրի. ի ձեզ աղի ամենայն անհամութիւն աշխարհիս: 7 Մասն է աղ հողոյ, միանգամայն եւ ջուր մածեալ. ուր ջուր է, անդ եւ աւղ խառնի. ունի աղն բնութեամբ եւ զհրոյ ջերմութիւն. եւ չորեքեան նիւթք աշխարհիս ի յանցանացն Ադամայ անկաւ ընդ ապականութեամբ եւ դարձաւ ի հողոյ բնութիւն: 8 Իսկ առ կնոջն Ղովտայ չորեքեան նիւթք ձուլին եւ առնին աղի բնութիւն. ամենեքեան նորա կենդանի են յեկեղեցւոյ: 9 Լուար զանուն եկեղեցւոյն, ուսիր եւ զաւանդ զթարգմանութիւն անուանդ. եւ եթէ դու տեղեկագոյն իցես, այլոց փութասլիւր ուսուցանել: 10 Եկեղեցի աստ՝ կոչումն անուանի, որպէս ի չգոյութենէն է ի գոյութիւն. վերստին նիւթ գործի աշխարհս, ի մահուանէ ի կեանս, ի ցրմանէ ի ժողովումն: 11 Քոյր էր կնոջն Ղովտայ Ռախաբ՝ եւ զաւակ ի Քամայ յազգէն. հաւատաց յԱստուած եւ եղեւ դուստր Աբրահամու, ոչ ասի զաւակ Քանանու: 12 Աղն է պատուհասի նշանակ, եւ անանցութեանն իմացմունք, եւ յարութեան բնութիւն: 13 Աղն արձան՝ թէպէտ եւ նշանակէ յաղթող եկեղեցեաց, զհարուածս հինգ քաղաքացն քարոզեսցէ. իսկ հաւատք կնոջն առաքինւոյ՝ նշանակ է եկեղեցւոյ, եւ ճշմարտութեան եւ փրկութեան, եւ յոյս դարձի հեթանոսաց, եւ դուռն բացեալ մեղաւորաց. միանգամայն քարոզէ զգալուստ որդւոյն Աստուծոյ:

Ը.

1 Վասն անշինուրեան երիւնկի, եւ քարկոծելոյն Աբարայ:

2 Ապա եթէ ոք ժպրհեսցի անցանել ընդ նզովս ընդ այս, ո՛ր աւր զհիմն արկանիցէ, զանդրանիկ որդին թաղիցէ. եւ ո՛ր աւր կատարեսցէ, զկրսերն. բոլոր միջոց

չինուածոյն ընդ անիծիւք մնաց: 3 Իսկ Յեսուս որդի Նաւեայ գործիական ճայնիւ աւերէ զԵրիքով, եւ բնական նզովիւք անիծանէ զչինելիս նորա, զայս դժոխս զոր գերեզման հաստատեցին մարդիկ: 4 Ի դալուստ որդւոյն Աստուծոյ ի ճայն փողոյ աւերելոյ՝ եւ ոչ մնայ անգր ոսկր վախճանելոցն եւ ոչ մի որպէս զԵրիքով, ամենեւին ոչ մնաց շունչ կենդանի. եւ ոչ փորին այլ գերեզմանք մարդկան յերկրի, որպէս եւ վեց քաղաքն այլ ոչ շինին մինչեւ յաւիտեանս ժամանակաց. վասն այնորիկ եւ Յեսուս անջինջ անէծս կռէր ի վերայ տեղւոյն այնորիկ անչինութեանն: 5 Իսկ թագաւորն անաւրէն Աքաբ անցանէր զանիծիւք մարգարէին. թէպէտ եւ զտեղին փոխանակեաց, զանունն չեբարձ ի քաղաքէն. եթող զՏինն Երիքով, եւ խոնարհագոյն մերձ ի կողմանս Սողոմայ շինեաց, եւ անուանեաց նոր Երիքով: 6 Եւ բան նզովիցն կատարեցաւ ի վերայ նորա եւ որդւոց նորա. ետ հատոյց զամենայն տոկոսիս անձամբ եւ կնաւն եւ եաւթանասուն եւ երկու որդւովքն զորս կոտորեաց Յէսուս: 7 Եւ ջնջեցաւ յիշատակ նորա յազգահամարէ արդար թագաւորացն: 8 Եթէ ոչ աւրհնութիւնքն Եղիսէի մարգարէի հասեալ էին ի վերայ նորա, վաղագոյն քանդեալ լինէին քան զառաջինն Երիքով:

Թ.

1 Ընդէ՛ր վիճակաւ եւ ոչ մարգարէութեամբ ցուցաւ Աբար յանցաւորն Աստուծոյ:

2 Զի վիճակն զմարգարէի գործ գործէ, որպէս ի ծովուն, նոյնպէս եւ ի ցամաքի: 3 Դարձեալ մարդկան խնդիր ետ առնել յանցաւորին, զի մարդն ի մարդկանէ յանդիմանեսցի: 4 Գողաւնքն այս է՝ որպէս ցուցանի. ամղան մի նկարագեղ. եւ բաժակ մի կրկին յերկերիւր սատերէն, եւ լեզու մի ոսկի: 5 Բաժակն արժէր ութ հարիւր դրամ, իսկ լեզուն ոսկի՝ կշիռք են իբրեւ

զլտերան. թողին զլտերն անուն, եւ զձեւոյն անուն կարգացին լեզու: 6 Արծաթն եւ ոսկին ի նուիրացն Աստուծոյ գողացաւ. իսկ զցեցակեր ասրեղէն հանդերձն՝ ի նզովելոյն զքաղաքն եւ զինչս նորա: 7 Ամենայնին գող Աքաբ է:

Ժ.

1 Յաղագս գաբաւոնցաւոցն խաբելոյն զՅեսուս, եւ ապրելոյ ի սրոյ նորա:

2 Իսկ քանանացիքն անիծեալք, եւ յիրաւի անիծեալք, ոչ ունէին զերկիրն ի լարաբաժին ժառանգութեան, այլ ի խաբէութեանց եւ ի պատահմանց. քանզի մասն Սեմայ ցեղին հասեալ էր: 3 Դատաւոր արդար անիրաւ դատաստան ոչ առնէ. Անիծեալ, ասէ, որ փոխեցէ զսահմանս հարց իւրոց՝: 4 Զայս սահմանափոխութիւնս նախ քանանացիքն անցին զանիծիւքն. իսկ Աստուած՝ իրաւարար ամենեցուն, անդրէն դարձուցանէ: 5 Այլ Յեսուս որդի Նաւեայ ոչ ի բաղմութենէ նոցա զարհուրեցաւ, եւ ոչ ի պատրաստութենէ նոցա սոսկացաւ. առեալ զբաղմութիւն զաւրաց իւրոց՝ ի Գաղգաղայ ի Գարիզին լեառն հասանէր: 6 ԶԳարիզին եկեղեցացոյց, եւ զԳեբաղ սարկաւազանոց շինեաց. զոր եւ անէծս կարդաց ի Գեբաղ, եւ զաւրհնութիւնս ի Գարիզին:

7 Եւ զի՞նչ իցեն այս երկու լերինքս հուպ յիրեարս եւ բաժանեալ ի միմեանց: 8 Նմանութիւն երկզիմի բնութեանս մերում. զանէծս ի գործս աղտեղի բնութեանս մարմնականս, եւ զաւրհնութիւնս յոգիս եւ ի մարմինս ի գործս արդարութեան: 9 Վասն զի ձոր բաժանէ զԳեբաղ եւ զԳարիզին, եւ ի միջոցին շինեալ քաղաք Շամրին: 10 Եւ այս ոչ է աւտար ի մեր բնութեանէս. ի միջի ասեմք զսրտին բնութիւն, եւ զնոյն խորհրդարան հոգւոյ եւ մարմնոյ: 11 Եղիցի աջակողմն մեր

Գարիգին, եւ ճախակողմն մեր Գեբաղ:
12 Հարկ է ընդ երկու ցնցուղս ականջաց ի ներքս մտանել, եւ ընդ ճայնական հնչումն ի սիրտն ազդեալ. զաւրհնութիւնն ի ներքս առցուք, եւ զանէծսն արտաքս հալածեսցուք. ապա երկոքին կողմանքս մեր Գարիգին եղեն եւ ոչ Գեբաղ:

13 Բայց այժմ խնդիր է վասն երկճղի փայտիցն՝ զորմէ թագաւորքն քանանացւոց կախեցան: 14 Դիբ, աւէ, զոտս ձեր ի վերայ արանց թագաւորացդ*¹: 15 Յայտնի՝ քաջ զաւրականքն զմարդիկ կոխէին, իսկ ի ծածուկ՝ զսատանայ եւ զամենայն չարութիւն նորա: 16 Կապէ զնա Յեսու որդի Նաւեայ գործակցաւքն իւրովք հանդերձ, եւ դնէ ընդ ոտիւք երկրաւոր սպառազինաց իւրոց: 17 Ինքն ոչ կոխէ, զի Յեսուդ անունն հրամայել զիտէ զգատողական խրատն, ի ձեռն նոցա կարգէ յուղղութիւն:

18 Հինգ թագաւորքն զորս կոխեն եւ կախեն զփայտից, կայ ի տեղւոջն ընդդիմառնութիւն եւ տեսական տարացոյց: 19 Հինգ թագաւորքն մարդադէմք էին կերպարանաւքն, եւ աւճաճեւք էին, հին վիշապին բնակութիւնք. իսկ տեսակք, գործք, տարացոյց, ձեւ՝ բնաւոր աւճին: 20 Ըստ հինգ թագաւորացն հինգ ոտք են աւճին, ի սողելն իւրում հինգ պատ առնու կրկնելովն: 21 Կոչեաց զբերայեցիսն յեգիպտոսէ առնուլ զվրէժ անիծիցն յառաջնոյն աւճէն եւ ի վարդապետէ նորա: 22 Կապէ զնոսա Յեսու զհնգեսեան զաւճաճեւսն, եւ տայ կոխել այնմ զաւակին՝ յորում կայծակն կենաց ծածկեալ պահէր: 23 Մարդկային ոտքն կոխէին, եւ աստուածային հուրն այրէր զմեղսն: 24 Զփայտն ոչ հրամայէ կոխել, զի չէր աւճաճեւ. թիւ թագաւորացն աւճաճեւ էր, զձեւն կոխեաց:

25 Եթէ ի բնութիւն մարդոյս եկեսցես եւ իմաստուն մտաւք քննեսցես, գտցես նման նորա ազատութիւնն. եթէ կամի՝ աւճաճեւ լինի, եւ եթէ կամի՝ աստուածաճեւ:
26 Առաքինութիւն մարդոյն՝ է աստուածային կերպարանք. զոր Աստուած բնութեամբ ունի, մարդ ստանալով կարէ ստանալ: 27 Ապա եթէ ընդ երկիր պշտուցու, եւ զգործովք սորա շաղեալ պատի, ինքն գինքն աւճաճեւ արար, որպէս աչաւք, ընչաւք, ականջաւք, բերանով, եւ հինգերորդ ներքին համաւքն: 28 Միաբան շաղեալք պատին սոքա հնգեքեան, մանաւանդ զի իգական մասամբք, կանացի ճայնիւք մեղկին լսելիքն մարդոյն. մեղկեալն հանեալն անկանի անքակութեամբ ընդ զուգակցին, աչք ընդ աչս կքի, եւ հոտ ընդ հոտ հոծի, բերան համբուրէ, եւ համք ընդ համս խառնին, զոր խոկումն անուանեցան: 29 Այս չարք՝ միաբանութիւն առ ծառոյն յայտնեցան: 30 Յղացաւ աւճն զկերպարանս աներեւոյթ չարութեանն եւ եղեւ արու բնութիւն միջնորդութեամբ պտղոյ ծառոյն. պատրեաց եւ մեղկեցոյց զհինգ զգայութիւնս իգական մասինն. յապուշ կրթեաց զմիտք կնոջն, եւ մոռացումն արար զպատուիրանսն Աստուծոյ. մինչչեւ մտեալ ի պատերազմն՝ պարտեցաւ ի հայելոյն. յորմէ դու պարտիս զգուշանալ:

ԺԱ.

1 Վասն արեգական եւ լուսնի, որք լուսն Յեսուայ եւ եղեն զաւրավիզն նմա ի գործ պատերազմի:

2 Ոչ հինգ թագաւորքն միայն էին անդ, այլ որպէս ոմանք յարտաքնոցն ասեն, թէպէտ եւ առասպելական բանք իցեն, երեք բիւր դեւք, ասեն, որ անկան յերկնից, հանին զմարդն ի դրախտէն, եւ զբոլոր աշխարհս ընկեցին ընդ մեղաւք եւ ընդ մահուամբ: 3 Եւ այն աւր ի Գաբաւոն երեսուն հազարն այն եկեալ էին ի թիկունս աւգնականութեան հինգ թագաւո-

* Տէ՛․․․ Յէ՛․․․ Ժ 24:

րացն, թերեւս կարասցեն սատակել զորդիսն եբրայեցւոց, յորում ճրագն աղաւտ՝ երեւէր անշիջանելի. եւ խաւարասէր զաւրք չարին բազմանային, իբրեւ զթանճրութիւն մարախոյ զերկինս ծածկէին: 4 Գոչեաց Յեսու որդի Նաւեայ իբրեւ զառիւծ. ներքուստ ի վեր դողացոյց, փախոյց եւ ցրուեաց զնոսա իբրեւ զվատ երամս աղուեսուց: 5 Սուր ի վերայ եղեալ կոտորէր զնոսա մինչեւ ի կողմանս Ազեկայ եւ Մակեդեայ: 6 Իսկ նոքա մինչ դեռ փախստեայ երթային յերեսաց որդւոցն Իսրայէլի զառ ի թափոջն Սորոնիմ, որոտաց Տէր յերկնից, եւ սկսաւ արկանել ի վերայ նոցա վէմս կարկտախառն. յորոց սատակեցան քանանացիքն առաւել քան ի սրոյ որդւոցն Իսրայէլի:

7 Իսկ եթէ Յեսու բաւական էր առնուլ զվրէժ բարկութեան ի նոցանէ, վէմք կարկտին զի՞նչ պիտոյ էին նմա յաւգնականութիւն. վերագոյն ասացի՝ թէ իմացար: 8 Սողուն է սատանայ, ոչ ի վերայ հողոյ, այլ ի վերայ աւդոյ, որ իբրեւ զամպ եկն եկաց ի վերայ քանանացւոցն ամենայն բազմագունդ դիւաւքն իւրովք: 9 Յեսուայ նիզակն անդ չկարէր հասանել, վերին աւգնականի պէտք էին. գէն առ գէն եւ ձայն առ ձայն մարդկաձայն բարբառոյն. ձայն որոտմանն երկնաւոր սրոյն՝ հրածին կարկուտն՝ զվերին դիւացն զգունդսն տանջեցին: 10 Ետես Յեսու զԱստուած վերագոյն քան զարեգակն եւ զլուսին, որ եւ հասեալ կայր նոցա յաւգնականութիւն: 11 Բանիւ զանուանս լուսաւորացն հրամանաւ ի մէջ բերէր Յեսու. այլ մտաւք՝ Տեառն լուսաւորացն հրաման տայր, զի կացուցէ. որպէս եւ գրեալ է. Արեգակնդ ի վերայ Գաբաւոնի կացցէ, եւ լուսինն ի վերայ ձորոյն Ելոնայ: 12 Թեթեալագոյն թեւս ունի արեգակն քան զլուսինն. իսկ Յեսու որդի Նաւեայ թեւաւորին

եւ անթեւին հասարակ առնէր զհրամանս պատասխանելոյն. վասն զի զկառավարն ամենեցուն մաւտակաց տեսանէր:

13 Դուռն են լսելիք մտաց. արեգակն եւ լուսին դրուես ոչ ունին լսելեաց, ընդ ո՞ր անկաւ հնչումն ձայնին ի ներքս: 14 Յորժամ ականջաւքդ ստուգապէս զհրամանն հզաւրագոյն, ինքեանք քեզ առանց ականջաց դ կողքո լսել նմա: 15 Ոչ հրաձգութիւնս յերկինս խնդրէր, այլ զարեւապաշտսն յանդիմանէր: 16 Մշտաշարժ ասեմք զարեգակն, որպէս զաւդոյ բնութիւն: 17 Դիւրին է կենդանույ կեալ ի միում տեղւոյ. իսկ յարաշարժ շնչոյ նորա անհնարին է: 18 Յեսու այնպէս սաստեաց լուսաւորացն, իբրեւ զանշունչ քարինս ընդարմացոյց՝ միով առ երկուս կշռելով:

ԺԲ.

1 Առ ի՞նչ անուանեցաւ Մասեփատ լալետդ:

2 Ապա եկն եհաս հրեշտակն Տեառն ի Գաղգաղա ի լալետդ անդր, որ յետոյ Մասեփատ անուանեցաւ. եւ Դաւիթ մարգարէ կարդաց նմա հովիտս տրտմութեան:

3 Այն հրեշտակն որ ի Գաղգաղա Յեսուայ յայտնեցաւ, նոյն երեւեցաւ ի Մասեփատ. եւ ի Բեթէլ խաւսեցաւ, եւ յանդիմանեաց զնոսա: 4 Համբարձին իսրայէլացիքն զձայնս իւրեանց եւ լացին դառնապէս առ հասարակ. վասն այնորիկ անուանեցաւ անուն տեղւոյն այնորիկ Լալետդ եւ Հովիտ տրտմութեան: 5 Եւ մատուցին անդ պատարագս Տեառն Աստուծոյ Իսրայէլի:

ԺԳ.

1 Վասն գեղմանն Գեղէոնի, որ կրկին ունէր զապացոյցն:

2 Ասէ Աստուած ց Գեղէոն. Կարի բազում են զաւրքդ, որ ընդ քեզ են. ոչ տամ ես զՄարդիամ ի ձեռս քո նոքաւք. գուցէ պարծեսցին որդիքն Իսրայէլի ի վերայ իմ եւ ասացեն՝ թէ ձեռն իմ հզաւր փրկեաց

« Տէ՛․․․ Յէ՛․․․ Ժ 12:

զիս եւ ոչ Տէր Աստուած: 3 Քարոզ կարգացես զաւրացող եւ ասացես. այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի. եթէ իցէ ոք ի ձէնջ վատասիրտ զահի հարեալ՝ դարձցի: 4 Եւ դարձան ի ժողովրդենէ անտի քսան եւ երկու հազարք: 5 Դարձեալ խաւսել սկսաւ Տէր ընդ Գեղէտնի եւ ասէ. Տակաւին բազում են զաւրքդ. ա՛ռ տար զնոսա ի ջուր անդր, եւ անդ զփորձ ցուցից դոցա քեզ. եւ եղիցի՝ զոր ասացից թէ ընդ քեզ երթիցեն, եւ զոր ասացից թէ ոչ երթիցեն՝ նոքա դարձցին: 6 Ապա խաւսել սկսաւ Տէր ընդ Գեղէտնի եւ ասէ. Ամենայն այր ի զաւրականացող՝ որ միանգամ լափելով լափեսցէ լեզուաւ իւրով ի ջրոյ անտի իբրեւ զշուն, ի մի կողմ որոշեսջիր զնոսա. եւ ամենայն որ ի գուճս հարեալ՝ ցուռկ հարկանիցէ, զայն ուրոյն կացուսջիր: 7 Եւ գտան շնաբարքն լակելով արք իբրեւ երեք հարիւր. եւ այլքն ամենայն ի գուճս հարեալ ցուակաթեալ ըմպէին: 8 Կարի բազում են զաւրքդ, ասէ Աստուած ց Գեղէտն. յորժամ պատերազմին յաղթես, մոռանաս զիմ բարերարութիւնս, որպէս սովոր են առաջին հարքն ձեր:

9 Երկու իմացական տեսակ յայտնեցան ի տեղւոջ անդ: 10 Զահի հարեալ վատասիրտքն, քանզի մարմնասէրք են՝ ընդ երկիր միայն պշուցեալ՝ զերկինս ոչ կարեն տեսանել, յաւիտենական կեանքն ծածկեալ է ի նոցանէ: 11 Իսկ ինն հազար եաւթն հարիւր արքն ի ջուրսն քննութեան փորձեցան. եւ նոքա յորովագոյն երկրաթաւալք են, եւ զեխ կենաց աշխարհիս ցանկացեալք. թողեալ զկանգնորդ կեանսն՝ ի պորտ եւ յորովայն սողեալ կան: 12 Թէպէտ եւ ոչ վատասիրտք անուանեցան, եւ ոչ ի քաջացն կողմանէ արժան էր զնոսա ասել: 13 Նոցա ի գուճս հարեալ, ի վերայ կրծիցն անկեալ՝ արջառաբար ըմպէին ջուր. զանասնական բարսն յայտ արարեալ, որոց երկիրս միայն է բաժին: 14 Մի ճանապարհ է երկոցունց յիւրաքանչիւր

տունս դառնալոյ. Տունք մոցա, ասէ, գերեզմանք մոցա եղիցիմ՝: 15 Վասն զի ի հողս իւրեանց կարգացին զանուանս իւրեանց, նոյնք եղիցին բնակութիւնք նոցա յաւիտեան. չիմացեալք զմարդկային պատիւն, հաւասարեցան անասնոց եւ նմանեցին նոցա: 16 Այս նախատինք ի մարգարէէն մարդկան ասացան: 17 Իսկ երեք հարիւրքն սակաւիկ մի զգլուխն խոնարհեցուցեալ ի ցանկալի վտակս ջուրցն՝ անուշութեամբ ծայրիւք մատանց ձեռինն, ի ներքոյ ի վեր ընդդէմս երեսացն չթքելով, լեզուաւք իբրեւ զշունս լակեն. ոչ զբաւանդակ ծարաւն արբուցեալ, այլ փոքր ի շատէ գերաշտութիւն կոկորդացն զովացուցանել: 18 Լեզուաւքն զջուրսն լակէին, մտաւքն ցանկացեալ փութացեալ զարիւն թշնամեացն յերկիր թողուլ: 19 Նշանակ է սոսկ մարդոց սակաւապէտ ստացուածոց. թողեալ զհիւթանիւթ մամոնային, ընդ գունդս դիւացն տան պատերազմ. զխայթոց մեղացն փշրեն: 20 Որոց երկիրն եհաս ի վիճակ ժառանգութեան քաջացն, նոքա ոչ միայն մադիանացւոցն յաղթեն, այլ եւ անուանեալ աստուածոցն յաղթեն:

21 Յառաջ քան զընտրութիւն զաւրացն՝ նշան ի Տեառնէ խնդրեաց Գեղէտն. նա զմի մեկնակ խնդրեաց, Աստուած երիս տեսակաւք խորհուրդս յայտնեաց նմա. զգզաթուն եւ զերեք հարիւր արանցն, եւ զսափորոցն՝ հանդերձ ճրագաւքն լուցելովք եւ ճայնական փողովքն: 22 Մի՛ բարկանար, Տէր, ասէ. եթէ ընդ իսկ իցես ճշմարտութեամբ, զալարեցից եղից զգզաթս ի մէջ կալոյն. եւ իջցէ անձրեւ ի վերայ գեղմանն միայն, եւ շուրջ զնովաւ երկիրն ցամաք մնացցէ: 23 Եւ եղեւ այնպէս. քամեաց զջուրն ի գզաթէ անտի, եւ ելից զկուրն: 24 Եւ ի վաղիւ անդ ոչ նոյնպէս. երկիրն թացաւ, եւ գզաթն ցամաք մնաց: 25 Յաւղն մի էր, եւ գզաթն նոյն

՝ Տէ՛.՝.Ս.Պ.Է.ԽԹ.12:

էր. բայց տեսիլ նշանին յերկուս բաժանեցաւ: 26 Շուրջ զգզաթուն լիճք ջուրցն՝ արիւն մաղիանացուցն էր. իսկ ցամաք մնալ գզաթուն՝ արանցն էր ողջանդամ ապրել ի պատերազմէն: 27 Բայց իջանել անձրեւուն ի վերայ գեղման, Հոգին Սուրբ Աստուծոյ, որ խաւսեցաւ ի մարգարէսն, եւ նոքաւք զամենայն երկիրս ոռոգեաց: 28 Եւ զի խորհուրդ էր տեսական՝ առժամայն եւ առ ի յապա պահումն, ոչ ի բաց հեղու զջուրն, այլ ի կուր մի արկանէ եւ պահէ:

29 Դաւիթ թագաւոր նոցա եւ մարգարէ՝ յետ բազում ամաց եկեալ, Հոգւովն Սրբով ասէր. Իցե՛ որպէս գանձրես ի վերայ գեղման: 30 Եւ եթէ զինչ է տէրութիւն նորա՝ յայտ առնէ: 31 Առաջի նորա նախ հնդիկի՛ անկցիցն: 32 Խանձողն գերծեալ յերկնային հրեղէն բնութենէն անկաւ յերկիր, եւ եղեւ հնդկագոյն: 33 Բայց որդիք ժողովրդեանն՝ որ փարիսեցիք անուանեցան ի Սողոմոնի վերայ առնուն զբոլոր բանս սաղմոսին: 34 Զիմաստութիւն նորա անձրեւ ասացին, եւ զքառասնամեայ զխաղաղութիւնն զի՞նչ արասցեն արդեաւք. զի ոչ կարասցէ հասանել ի կատարումն լուսնի: 35 Որոց առաջի հնդիկն անկաւ, ի նա կատարի բոլոր սաղմոսն: 36 Իսկ փոխանակ գզաթուն՝ ապաքէն զսուրբ կուսին բնութիւնն ասացաք. եւ փոխանակ ցաւոյն երկնից՝ զբանական աւետիս հրեշտակին. ապա եւ փոխանակ կրին՝ զմեծ գետն Յորդանանու իմացիր, յոր եւ գառն Աստուծոյ մկրտեցաւ:

ԺԴ.

1 Վասն սափորոցն եւ նոցա կահիցն:

2 Արի, ասէ Աստուած ցԳեղէտն. առ զպատանեակն զՓառայ, եւ էջ ի բանակն Մաղիամու գիշերի, եւ լուիցես անդ բանս

յաւգնականութիւն անձին քո: 3 Մաւտ անդր մերձեցեալ Գեղէտնի պատանեակն հանդերձ ի թիւ մի յիսներորդացն դասուց՝ պահանորդ պահանորդի մի զգիշերային տեսիլն պատմէր: 4 Երազ տեսանէի, ասէ. նկանակ մի գարեղէն հոլով գայր հասանէր, ասէ, հարկանէր զխորանն Մաղիամու, եւ անդէն կործանէր: 5 Եւ որ լուսան՝ վաղվաղակի զմեկնութիւն երազոյն ասաց. Ոչ է այն ա՛յլ, ասէ, բայց սուրն Գեղէտնի որդոյ Յովասու. ի ձեռն նորա մատնեաց ուրեմն Աստուած զմաղիանացիսն: 6 Եւ է՞ր ի գարեղէն նկանակ առակեցան նոքա: 7 Գարի անասնոց կերակուր է. գոյ եւ ի մեզ անասուն մասն. բոլոր հոգեղէն բնութիւն մարմնոյս անասնական մասունք են. վասն զի ի միոջէ հոգոյ ստեղծեալ եմք մեք եւ անասունքն, եւ եկամուտ անմահութեամբն առաւելեալ եմք քան զնոսա:

8 Հրաման ետ Գեղէտն եւ ասէ. Հա՛պա, ժիր կացէք, զի յայսմ գիշերի մատնեաց Աստուած զՄաղիամ ի ձեռս մեր: 9 Զայս ասէր, եւ առ իւրաքանչիւր սափորն որ ի ձեռին դնէր՝ եւ ի նմին ճրագ մի անշիջանելի կառուցանէր, որպէս զսափորն ի ձախումն եւ յաջումն զփողն: 10 Եւ որով զինու զնոսայն վառեաց, նովին եւ ինքն կազմեցաւ. բայց յառաջ խաղաց ինքն քան զնոսա, վասն զի գեր ի վերոյ է երբեակ թուոյն: 11 Ընդ իս հայեսջիք, ասէ. յինէն աւրինակ առջիք: 12 Զայս ասէր, եւ ի նմին ի բանակ թշնամեացն իջանէր, ուժով մեծաւ փող հարկանէր ի ձայն եղջիւր փողոյն: 13 Սոյնպէս եւ երեք հարիւրքն յերից կողմանց զբոլոր բանակն ի մէջ առեալ պատեցին. զսափորսն խորտակեցին, եւ զճրագունսն յաջ ձեռն առեալ՝ ձախովն զփողսն հարկանէին. այր յիւրաքանչիւր տեղուջ անցեալ կայր իբրեւ զբոց բորբոքեալ. անդադար փող հարկանելով՝ զամենայն բանակն ի դղորդումն կացուցանէին: 14 Առանց ոտից ուրուք հասանելոյ եւ ձեռին մերձե-

« Սաղմ. ՀԷ 6

է Սաղմ. ՀԷ 9

նալոյ՝ ամենայն վրանք եւ խորանք յերկիր կործանեցան. այր զսուր ի վերայ ընկերի իւրոյ իջուցանէր. սկիզբն արարեալ ի միջում պահու մինչեւ ցառաւաւտն զմեծ մասն բազմութեան բանակին անձամբ զանձինս իւրեանց կոտորէին: 15 Իսկ Գեղէոն եւ երեք հարիւրքն ընդ տեղիս կալով՝ զփողսն հարկանէին, գոչէին խիզախէին եւ ասէին. Հա՛պա, սուր յաղթութեան Տեառն Աստուծոյ եւ Գեղէոնի:

16 Արարուած խեցեղէն սափորոյն ի հողոյ է, եւ վառումն անշէջ ճրագացն ի հրոյ եւ ի պատրուզէ, եւ ձայն եղջիւր փողոյն՝ աւղով եւ կենդանական շնչով մարդոյն, եւ երեքեան սոքա ի մերում բնութեանս բաղկացեալ գոյանան: 17 Արդ այն որ ապականեցաւ ի մեղաց՝ ի մարմնոյս գոյացութիւն հողեղէն մասն, իբրեւ զանթուրծ աման անպիտան եղեալ խորտակեցաւ: 18 Որպէս ճրագն ի սափորին՝ եւ սա ընդ ապականացու մարմնովս անյայտ եղեւ: 19 Սոյնպէս եւ բանական Հնչումնդ ոչ տայր ձայն յերկինս յերկրէ. վասն զի ի մեղաց անտի ապականեալ խանգարեցաւ մարմնաւոր գործին. իբրեւ զհող անբան եւ անմոռնչ անկեալ դնէր ի մարդոյս բնութիւն ընդ ոտիւք մահու. ոչ յանդորութեան գոհանալ մարթէին զԱստուծոյ, եւ ոչ ի նեղութեան պաղատել առ նա: 20 Իսկ մերոյ բնութեանս ճշմարտութեամբ առ ի մկրտութիւն մերոյս տեսանի: 21 Անթուրծ սափոր ի ջրոյ թրջի. իսկ մեր անթրծութիւնս անդ թրծի, եւ թանձրութիւնս անաւսրանայ հարստութեամբ, եւ ճրագն որ ի սմա՝ լուցեալ բորբոքի: 22 Եթէ միայն ի տեղւոջն հաստատեալ կայցեմք՝ լուցեալ անշիջանելի իմացական ճրագաւն, ինքն անձամբ զանձն հարկանէ թշնամին մեր, եւ խափանեալ լինին պատերազմունք նորա ի մէնջ: 23 Որպէս եւ ինքնասաց ձայն Աստուծոյ յայտ առնէ ի սուրբ յիշատակարանին. եթէ սատանայ զատանայ մերժէ, յանձն իւր բարձանեցաւ, անցեալ ուրեմն է

տեքութիւն նորա՞: 24 Եւ ճշմարիտ առականք յայտ առնէ. տուն եւ թագաւորութիւն որ յանձն իւր բարձանի, ոչ կարէ կալ հաստատուն:

25 Ապա խաւսել սկսաւ Գեղէոն եւ ասէ. Խնդրեցից եւ ես ի ձէնջ խնդրուած մի, եթէ տացէք ինձ. այր իւրաքանչիւր ի զաւրականիդ եկեսցէ առ իս, բերցէ զինդ մի ոսկի: 26 Ասեն ամենեքեան. Ահաւասիկ տամք: 27 Տարածեցին բաճկոն մի մեծ, եւ բերին այր իւրաքանչիւր զինդ մի եւ ընկենուին ի շեղջակոյտ անդր. եւ եղեւ շեղջակոյտ զնդացն՝ ոսկոյ լտերս իբրեւ հագար եւ եաւթն հարիւր: 28 Եւ առ ինչ արդեաւք զզինդան մեծարգոյ համարեցաւ քան զամենայն: 29 Յայտնի է եւ ոչ կարեմք թագուցանել. յորժամ զինդք ձանեալք զականջաց կախիցեն կամ զարանց կամ զկանաց, լսելիք մարդոյն պղծելով պղծեցան ի շարժել զնդացն. զոր Տէր զնդացն յիշէ, որում ձանեցանն: 30 Յորժամ դուռն լսելեացն խարխարեցաւ, բոլոր բնութիւն մարմնոյն աւերեցաւ, ընդ նմին եւ հոգիքն խարխարեցան: 31 Մի լսելիք են բարւոյ եւ չարի. դատաւոր ընտրող միտքն լինին եւ վարդապետ ի ներքս անդր: 32 Կողոպտեաց եհան զզինդս նոցա, ընդ նմին եւ սրբեաց զայլանդակ լսելիս նոցա:

33 Սուր եկի արկանել յերկիր. ոչ կոտորել ասաց Տէրն, այլ փակել զայր ի հաւրէ եւ զղուստր ի մաւրէ. եւ (եղիցի տանուտեառն) թշնամիք՝ ընտանիք իւրէ: 34 Աստուածային սուրն զմեղացն կապանս կտրեաց, եւ քակեաց զմեզ ի նոցանէ: 35 Հայր եւ մայր կարգացաք քարի եւ փայտի, այլ եւ պաշտեցաք եւս. այսուհետեւ ոչ նոյնպէս անուանեմք, այլ ի պէտս հրոյ եւ շինուածոյ մեզ ծախեմք: 36 Եւ

՞՞՞՞ Տէ՛ւ. Մարթ. ժ. Բ՝ 26:

՞՞՞՞ Տէ՛ւ. Մարթ. ժ. 34-36:

այսպէս փոխանակ պատուոյ թշնամանեմք
եւ անարգեմք զնոսա:

ԺԵ.

1 Վասն դստերն Յեփթայեայ եւ պա-
տարագել ի հաւրէն:

2 Աստուած որ զմիս զուարակաց ոչ
ուտէ եւ զարիւն նոխազաց ոչ ըմպէ,
զիս՝ զարիւն մարդոյ քաղցրանայցէ
նմա. զոր եւ մարդոյս բնութիւնն ոչ առ-
նու յանձն առանց գրոյն հրամանի, եւ ի
միտն անգամ ուրեք մի՝ անկցի այսպիսի
խորհուրդ:

3 Ահա, ասեն, զԻսահակ խնդրեաց
յԱբրահամէ: 4 Չառնու քեզ յանձն ըն-
թերցուածն զայդ. ոչ ասէ խնդրեալ, այլ
փորձեալ զգեղեցիկ կամս նորա՝ յայտնի ե-
ցոյց ամենայն մարդոյ, այլ ոչ եթէ զմարդ
ի պատարագ ընկալաւ: 5 Իսկ ընդէ՞ր, ա-
սեն, պատարագեցաւ դուստրն Յեփթա-
յեայ. ոչ ընդ վայր խտեցին հեթանոսք
զպոռնկորդին չմատուցանել ի քրմութիւն,
վասն զի չէ անապական ծնունդ առ ի
հաւրէ. որպէս բազում խառնուածս ունի
մարմնով, բազում ունի եւ զայլընդակու-
թիւն բարուց: 6 Յեփթայի պոռնկորդի էր,
տարագիր հալածական ի հարագատ եղ-
բարցն առ ի հաւրէ. եւ ամենայն Իսրայէլ
վատնեալ զկնի դիցն աւտարաց. եւ որ-
դիքն Ամոնայ անտերունչ գտեալ զաշ-
խարհն՝ հին բաղայս ի վերայ դնէին. Յե-
լանելն ձեր յաշխարհէն եգիպտացուոց՝
զաշխարհն մեր հարէք պատերազմաւ եւ
կալարուք. արդ զայն վրէժ եկեալ
խնդրեմք: 7 Արդ յայնմ վտանգի երթեալ
ծերակոյտն Իսրայէլի ուխտիւ ածին զԵփ-
թայի, կացուցին իշխան ի վերայ իւրեանց:
8 Իսկ նա տեսեալ զբազմութիւն զաւրացն
Ամոնայ՝ զարհուրեցաւ ի միտս իւր եւ ա-
սէ. Տէր Աստուած Իսրայէլի, եթէ մատնե-
ցես զնոսա ի ձեռս իմ, եւ դարձայց ողջան-
դամ ի մեծ պատերազմէն յաղթող, ով եւ
ելցէ ի տանէ իմմէ ընդ առաջ իմ, քեզ պա-

տարագ մատուցից: 9 Եւ գործն զբանիցն
աջողեցաւ: 10 Թուի ինձ թէ պատարագն
ընդունելի չէ. ահա, ասեն, թէ զիս՝ զեւ
յաղթութիւն նմա Աստուած, եւ ապրեցաւ
Իսրայէլ ի հարուածոցն ի ձեռացն Ամո-
նայ:

11 Մի՛ զարմանար ընդ Աստուծոյ առ
այդ սքանչելագործութիւն: 12 Իշոյն
ծնաւտիւն կոտորեաց Սամփսոն հազար
այր. միթէ ծնաւտին տամք զյաղթութիւնն.
Եւ կամ որ մաճին փայտիւ զեալթն հա-
րիւրսն սատակեաց: 13 Ոչ այն ծնաւտին,
եւ ոչ այն փայտին: 14 Եւ որպէս երկո-
քեանն, նոյնպէս եւ դստերն Յեփթայեայ:

15 Դարձեալ եւ ի պատմութեանն այլ
ընդ այլոյ կայ: 16 Ո՛ր եւ ելցէ, ասէ, ի
դստերաց նորա: 17 Եւ զկնի այնր ասէ, թէ
այն միամաւր էր նորա: 18 Թուի ինձ՝ թէ
եւ պատմութիւնն ոչ ունի զկարգն հաս-
տատուն: 19 Ոչ որ ելցէ ի դստերաց իմոց
ընդ առաջ իմ, այլ զինչ եւ ելցէ ի տանէ
իմմէ: 20 Ի տան մեծի եւ փոքու գոն անա-
սունք սուրբք եւ անսուրբք. եւ եթէ ուղտք
եւ էջք, կամ բնաւ շուն պատահէր ընդ ա-
ռաջ, միթէ պատարագելի՞ք էին: 21 Ոչ
նոքա եւ ոչ սա. այլ վրիպական բանք ելին
ի տագնապ ժամանակին: 22 Համարեաց
թէ զդուստրն ուխտեաց. յորժամ ել նա
ընդ առաջ՝ ընդէ՞ր վայեաց, ընդէ՞ր պա-
տառեաց զպատմուճանն, ընդէ՞ր ասաց՝
խոչ ընդ ոտն եւ խոչ ընդ ակն: 23 Եթէ
ուխտիւն եղեւ յաղթութիւնն, գոհանալ
պարտ էր եւ ոչ զղջանալ: 24 Ողբս ի վե-
րայ առ եւ ասէ. Վա՛յ ինձ, դուստր իմ,
ընկճելով ընկճեցեր զիս. եւ ես զբերան իմ
բացի վասն քո յուխտ պատարագաց, եւ
արդ ոչ կարեմ դարձուցանել: 25 Աբրա-
համ զայս ոչ ասաց, որպէս երեւի մեզ:
26 Եբաց զբերան իւր աղջիկն եւ ասէ. Յիս
դարձ, հայր իմ. եթէ ինեւ ետ Աստուած
զյաղթութիւն Իսրայէլի եւ ապրեցոյց ի

ձեռաց ամոնացուցն, որպէս եւ ելին բանքն ի բերանոյ քոյ՝ արա համարձակ:

27 Բայց զայն արժան է մեզ գիտել, զի՞նչ է զոր ասաց աղջիկն. խնդրուած մի խնդրեմ ի քէն, հայր իմ, մի՛ արգելուր յինէն. թող երթայց ամիսս երկուս լացից զկուսութիւնն իմ, ոչ ի գիւղս եւ ոչ ի քաղաքս, այլ ի լերինս: 28 Եւ հայրն վաղվաղակի յանձն առնու եւ ասէ, երթ դուստր իմ: 29 Մի՛ դատարկաբանութիւն թուիցի ինչ քեզ այսպիսի խնդրուածս աղջկանն. լաւագոյն է քան զյանձնառութիւն պատարագելոյն: 30 Ի լերինս խնդրեցին զկոծն եւ ոչ ի քաղաքս, զի մի՛ յափշտակեալ գտցի աղջիկն յանաւրէն մարդոց, եւ ի քաջութիւն առաքինութեանն վատահոթութիւն խառնեսցի: 31 Իսկ յերկարումն երկուց ամսոցն՝ եւ այն նշանակ մեծի իմաստութեանն նորա: 32 Հիւանդ որ յերկար ախտանայ, ուծացեալ լինի գութք հարագատաց նորա. փութան տագնապին զելս վշտացելոյն յաշխարհէս:

33 Եկն եհաս ժամանակ պատարագելոյ նորա: 34 Անդ ժողովեցաւ ամենայն Իսրայէլ ի Դանայ մինչեւ ցԲերսաբէէ՝ մարդախողխող տեսանելով զհայր առ որդևով: 35 Երկու ամիսս լացին ի լերին, հնչեաց բարբառ գութի նորա ընդ ամենայն երկիր, ժողովեաց եւ ած զբազմութիւնն մարդկան. քանզի կարծեցին ամենեքեան՝ թէ նոր աւրէնք դնին, ոչ ի մարդկանէ, այլ յԱստուծոյ: 36 Սաստկացան վերջին լալիւնքն քան զառաջին երկուց ամսոցն. ի միտս իւրեանց այսր եւ անդր կոծեալ լինէին, յիշելով զԱբրահամ եւ զժամանակ փորձութեան նորա: 37 Ամենայն բազմութիւնն արանց եւ կանանց զայս խորհուրդ ի մտի եղեալ՝ կարծէին զԱստուած այցելութիւն եկեալ հասանել նոցա:

38 Եւ ընդդէմ պատարագին իբրեւ կարծիք մտաց նեղեալ տագնապէին, եւ

յայտնութիւն ձայնի ոչ եղեւ վերուստ ի վայր, փութացաւ Յեփթայի եւ եհան զսուրն վաղվաղակի. կափոյց զաչս մտացն յանտեսութիւնն, մինչեւ աղիքն գալարէին ի գութ խանդաղատանաց. թէպէտ սիրտն ի բերանն էր, հարաւ սուրն ի փողս դստերն եւ կտրեաց: 39 Առ ի գոչիւն հեղման արեանն, եւ ի հռնչիւն կոկորդին, եւ ի շարժումն բոլոր մարմնոյն՝ առ հասարակ ամենայն բազմութիւնն բոլոր մարդկանն միաձայն միաբարբառ ճչեցին. իբր թէ երկիրք եւ երկիր լացին զմահ միամաւրին, զանտանելին յողջակէզ յանհրաման սեղանոյ անտի:

40 Մի՛ ոք ամենեկին յանուսումնութենէ զայս պատարագ Աստուծոյ կարծիցէ հրամայեալ: 41 Ապա թէ ի Պաւղոսի թղթոյ անտի յանդիմանեսցես զիս վասն Յեփթայեայ յիշելոյն, յայսմ վայրի ոչ ելանէր ըստ կարգն մարգարէութիւնն Մովսէսի. որպէս նա զաշխարհս յԱստուծոյ սկիզբն առնէ լինելոյ, եւ սա զհաւատս: 42 Ըստ նմին աւրինակի եւ Ղուկաս աւետարանագիրն վասն մարգանալոյն Տեառն սկիզբն արարեալ ի Յովսեփայ՝ երթայ ելանէ յԱդամ եւ յԱստուած, զչարս եւ զբարիս ի ներքս փակելով՝ կարգաւ ասէ զանուանս նահապետացն. զի զաստուածածանաւթութիւնն գիտասցես, այլ ոչ եթէ զընտրութիւնն մարդկանն: 43 Նովին մտաւք եւ Պաւղոս վարի. սկիզբն առնէ վերուստ ի վայր յԱստուծոյ արարածոց. յԱբելէ անցանէ զայ առ Ենովք, առ Նոյ եւ առ Աբրահամ, առ Իսահակ, առ Յակոբ եւ յամենայն կարգս ծննդոց նորա: 44 Ի նմին կարգի յիշէ եւ զԳեդէոն, եւ զԵփթայի եւ զՍամփսոն, զայցելութիւնն Աստուծոյ յայտ առնելով ի վերայ նոցա, ոչ ի լաւութիւն մարդկան հայեցեալ Պաւղոսի, այլ ի մարդասիրութիւնն Աստուծոյ, զորս ի չարութենէ ի բարութիւնն ընտրեաց. զԵփթայի յաւազակութենէ, զՍամփսոն յանզաւակունեաց: 45 Բայց քանզի Աս-

տուծով էր յաղթութիւնն պատերազմաց նոցա, բաւական համարեցաւ Պաւղոս արկանել զնոսա ի կարգ հաւատացելոցն. միանգամայն եւ յորդորումն հեթանոսաց բազմութեանն, որպէս եւ առ նոսա, յԱստուած:

ԺԶ.

1 Առ Սամփսոն:

2 Գործի հաստատեցաւ նա բարկութեան ի վերայ այլազգեացն. նովաւ կամէր առնուլ Աստուած զվրէժ որդւոցն Ենակայ: 3 Եւ անդ էր շնապէս մի յառիւծուց. գոչեաց եւ յարձակեցաւ ի վերայ նորա: 4 Առիւծ առիւծոյ պատահեցաւ. մինն հինաւորց լի չարութեամբ, եւ մինն այն ինչ կորիւն առիւծու մատաղ յաւուրց, եւ լի երկնաւոր զաւրութեամբն. հին առիւծն գոչէր մեծածայն ահ արկանելով մատաղ կորեանն. իսկ նա զաւրութեամբ մոնչէ՝ քամահելով զանոյժ բանս, եւ փափուկ մարմնովն հեղձուցանէր: 5 Անդ ուրեմն չարասէր թշնամին մարդկան՝ մինչ դեռ հրեշտակն Աստուծոյ զաւետիս չքնաղ մանկանն հաւր եւ մաւրն աւետարանէր, լուաւ զամենայն ըստ կարգի զոր ասաց նմա հրեշտակն. դէտ ակն ունէր նմա թէ ո՛ր կորուսցէ զնա ի դեղս: 6 Եւ յորովայնէ ի սննդեանն ոչ կարաց վնասել նմա. եկն եմուտ ի չար գազանն մոլեգնեալ, կատաղեցոյց եւ յարոյց ի վերայ նորա. թերեւս կարասցէ զաստուածատուր շնորհան խափանել, զցանկալի ծաղիկն խամրացուցանել, զարծարծեալ լոյսն Իսրայէլի շիջուցանել: 7 Բազում գունդք դիւացն ընդ նմա եկեալ յաւգնականութիւն եկին մտին յառիւծն գազանացեալ. մոնչեաց ընդդէմ եաւթնագիսակ մանկանն: 8 Իսկ նա իբրեւ զուխտաւոր քահանայ՝ զաջ ձեռն դնէր ի վերայ գլխոյն եւ զահեակն արկանէր զներքին կզակաւն. ի գիրկս իւր առեալ հեղձուցանէր զերեւակի սրտմտութիւնն, եւ թմբրեցուցեալ զանմահ չարութիւնն՝

ընդ նմին եւ զշունչ գազանին քաղեալ հանէր: 9 Բազուկ առ բազուկ կարկառէր, եւ ձայն առ ձայն բարբառէր, զբազում գունդս դիւացն ի բաց հալածէր. ոչ բրաւ ջախջախեալ եւ սրով հատեալ՝ զգեղեցիկ բնութիւն առիւծոյն ոչ ապականէր, որ էր խորհուրդ բոլոր աշխարհիս:

10 Արդ յետ բազում աւուրց անցանելոյ ի վերայ դիական առիւծուն, սրբեցաւ նա ի ներս գիշութենէն, թափուր եւ ունայն մնաց որովայն նորա. թափուր եւ ունայն կացին երկինք եւ երկիր, վասն զի ոչ շողացին ի սմա հրեշտակք երկնաւորք: 11 Դեւք ճրճիտք մուտ եւ ել առնէին ի փոր նորա, բերէին զեկամուտ դառնութիւնն, եւ հանէին զբնական քաղցրութիւնն. որպէս եւ ի միջոյ աշխարհիս եւ ի մարդոյ յիւրաքանչիւր՝ քաղէին հանէին ի մտաց նորա զքաղցրութիւն բանիցն Աստուծոյ: 12 Մարդիկ կենդանի մեռեալ դիականց նմանէին, հոտ մահու հարկանէր ամենեցունց. կենացն հոտով աւծաւ խնկեցաւ մանուկն Սամփսոն, անոյշ հոտովն զառիւծն մեռեալ իւղեաց խնկեաց: 13 Յայն հոտ կենաց դիմեաց եկն պարս մի մեղուաց, եկն եւ հաճեցաւ ընդ պատրաստեալ ամանն, գտեղի առեալ զետեղեցաւ ի մէջ նորա. այնչափ ցանկալի եւ բաղձալի, մինչեւ ուխտաւոր մանուկն ճաշակեաց եւ հաճոյ թուեցաւ նմա:

14 Անգէն Սամփսոն յաղթեաց եւ սպան զառիւծն գազան: 15 Զէն ի ջուրց զգեցաւ երկրորդ Ադամ, կապեաց ընկեաց յանապատին զայն առիւծն՝ որ ի սկզբանէ սատակեաց զազգս մարդկան: 16 Սամփսոն զմահ առիւծուն ոչ յայտնեաց ծնողաց իւրոց. Տէր մեր յայտ յանդիման քարոզեաց զբեկումն անմահ առիւծուն, եւ մեզ տուաւ իշխանութիւն տկար մարմնով կոխել զդաժանութիւնն նորա: 17 Տէր մեր իբրեւ Աստուած եւ որդի Աստուծոյ սպան զչար գազանն, հալածեաց զգունդս դի-

ւացն ի բնակութենէ իւրեանց, սրբեաց եւ մաքրեաց զչարահոտութիւնն նորա՝ որ ի բոլոր աշխարհիս, իւղեաց եւ խնկեաց զամենայն ներսութիւնս նորա. եւ ահա փոխանակ գնդակի մեղուացն՝ հրեշտակք երկնաւորք ել եւ էջս առնէին ի սմա:

18 Տես զերկոտասան Առաքեալսն եւ զարմացիր: 19 Մեղուք արագաթեւք զգաւառին վայրաւք եւեթ կարեն շրջել, գառաւրեայ փոշի ծաղկանցն ի նիւթ մեղուագործութեանն փութան մատուցանել: 20 Առաքեալքն անթեւք եւ թեւաւորք՝ զհեռաստանն իբրեւ մաւտաւորս մեղրագործեցին: 21 Զի՞նչ ծաղիկք պատուականք իցեն, զոր ոչ յԱռաքեալսն տեսանիցես. զհին աշխարհս նորոգեցին, որպէս մեղուքն զմեռեալ առիւծն նոր ծաղկաւք նորոգեցին:

22 Գնաց չոքաւ, ասէ, Սամփսոն, կալաւ երեք հարիւր աղուէս եւ կապեաց ձեռ ընդ ձեռ երկուս երկուս, եւ մէն մի ջահ լուցեալ եղ ի մէջ ձեռոց նոցա, եւ արձակեաց զնոսա ընդ անդաստանս այլագեացն: 23 Վասն որոյ այլաբանութիւն ունի բանս. ուստի զծածուկ զչարիս ոգւոց որ կայ ի նմա՝ տեսանեմք: 24 Եկեղեցի հեթանոսաց որ յԱռաքելոց անտի հիմնարկեցաւ, անդաստան ամենալից բոլոր աշխարհս այս երկնացաւ. վասն զի Տէրն երկնի եւ երկրի անքակ միաբանութիւն գործեաց ամենեցուն: 25 Մինչ դեռ յայսպիսի հրաշակերտ վայելչութիւն ծով եւ ցամաք առ հասարակ ցնծացեալ բերկրէին, գունդք դիւացն առ հասարակ քայքայեալ ցրուեցան յաւտարութիւն. քանզի թիւնք հին վիշապին անհամեցան. մարդիկ առողջ մարմնով եւ սուրբ հոգւով հրեշտակային կեանս կէին յեկեղեցւոջ. յեղակարծումն ժամու ամպ ագահութեան ախտացաւ, առագաստեալ կալաւ զաչս առատ մատակարարացն, եւ արգել ի նոցանէ զլոյսն իմանալի, որ առ սակաւ սակաւ տարածե-

ցաւ կալաւ զբոլոր աշխարհս: 26 Իսկ զկնի ամենայն չարեաց՝ աստստին ի սոցանէ իսկ բորբոքեցաւ հուր անշիջանելի՝ ուսումն այլանդակաց, որ վատթարագոյն են ի տեսանել քան զերամակս ճրճիտ աղուսուց. հարիւր կերպարանաւք բերեն զճշմարտութիւն վարդապետացն, եւ սիրտք իւրեանց հեռացեալ են ի ճշմարտն Աստուծոյ:

27 Բայց թերեւս ասիցէ ոք. զի՞նչ եւս պիտոյ էր հսկային՝ ծնաւտի իշոյն կարաւտանալ: 28 Քաջ միտ դիր կարգաբանութեան գրոցն եւ անտի ուսանիս: 29 Սուրբ ուխտաւոր մանուկն՝ զինչ պիղծ մերձեայր ի ձեռս նորա, սրբեալ լինէր. որպէս պիղծ առիւծն եւ ի պղծագործ մեղուէն, նոյնպէս եւ ծնաւտ իշոյն առժամայն զէն աւգնականութեան ի ձեռին նորա, իսկ առ ի յապա մաքրութիւն հեթանոսաց. զոր եւ Տէրն արարածոց սրբեաց: 30 Սամփսոն զյայտնի պատերազմն ոսկերք վճարեաց. ոսկերք մարտիրոսացն զյայտնի եւ զծածուկ մեղս ի մարդկանէ ի բաց սրբեցին: 31 Իսկ ջուրն, ասեն, ի ծնաւտէ իշոյն առ ի՞նչ հոսեցաւ: 32 Որ զյաղթութիւն ետ նմա ի ձեռն ծնաւտին, անտի եւ զծարաւն յափոյց. որ զէն փրկութեան եղեւ, նոյն եւ պատճառք կենաց նորա. էարբ զջուրն ի ծնաւտէ իշոյն, ընդ նմին էարբ զիմաստութիւնն Աստուծոյ: 33 Անձին իւրում կարծէր Սամփսոն զյաղթութիւնն մեծ պատերազմին. ծնաւտին ոչ տայր զյաղթութիւնն: 34 Եկն ծարաւ կռուել ընդ նմա. զոր ոչ ծանեաւ ի յաղթութեան իւրում, ծանեաւ զնա ի սաստիկ ցամաքմանն իւրում: 35 Այլ սակաւիկ մի ակնարկեցից եւ արդ ի ժամանակիս յայս: 36 Ոսկրն ցամաքեալ անասնոյն՝ անյուսալի էր թէ ջուր ելցէ ի նմանէն. աշխարհս ցամաքեալ յարդարութենէ՝ յանյուսալի էր թէ առաջին յանցանքն ճրի թողցին:

37 Էջ նա, ասէ, ի Գազա եւ եմուտ առ կին մի պոռնիկ: 38 Յուզեցան արք քաղաքին եւ զգիշերն ամենայն պահեցին զնա պահապանաւքն: 39 Բայց քանզի շնորհքն Աստուծոյ առ նմա էր, առաւել քան զչափն գործեաց նոր սքանչելիս. զգրուես քաղաքին սեամբքն հանդերձ եւ դռնափակաւքն թափեաց եւ եբարձ՝ գնաց ի լեառն մի բարձր, եւ կանգնեաց ի լերինն Քեբրոնի: 40 Որոյ տեսեալ է զքաղաքն եւ զգրուես քաղաքին, նա զարմանայ առաւել քան զյոյժ: 41 Եւ է այս արինակ ի ջանելոյն Տեառն մերոյ ի դժոխս եւ աւերելոյ զքաղաքս մահու եւ այլ ոչ յիշելոյ ի վախճան ժամանակս: 42 Ապա եթէ ինչ վասն կնոջն պոռնկի սոսկացին միտք քո, զմտաւ ածջիր դու զբոլոր աշխարհիս զպոռնկութիւնն եւ զարմացիր յոյժ, զի ոչ խորշեցաւ եւ ոչ գարշեցաւ:

43 Բայց խնդիր առաջի կայ, թէ զի՛նչ իցէ յեաւթն մասունս բաժանումն գիսակաց նորա. որում եւ հրեշտակն պատուիրեաց զգուշութեամբ՝ չելանել երբեք երկաթոյ ի գլուխ նորա: 44 Թիւ եաւթնեկին՝ որպէս ասացեալ է մեր յայլում վայրի, վասն զի մի է զաւրութիւնն աստուածային գրոց, վեց ի նոցանէ զվեցաւրեայ արարածքս նշանակէ՝ որ ի սկզբանէ. իսկ եաւթներորդն՝ սուրբ փափուկ նուիրեալ Աստուծոյ աւր, որ եւ անաշխատելի զաւրութեան հանգիստ անուանեցաւ: 45 Ապա ուրեմն աշխարհս եւ աշխարհարարն յուխտաւոր մանկանն տպաւորեալ կերպարանեցաւ:

46 Եւ այս շնորհք տեսանին ի Սամփսոն ըստ եաւթներեակ գիսակաց նորա թուոյ, յաւրինակ գեղեցիկ շառաւեղին՝ որ բուսանելոց էր յարմատոյն Յեսսեայ, յիշելով զբանն Եսայեայ մարգարէի, գեաւթն մասունս Հոգւոյն Սրբոյ ասացեալ ի վերայ նորա ըստ նորին թուականին ձեւոյ. եւ Պաւղոս առաքեալ ասէ ի կորնթացոց

թղթին. եղ Աստուած յեկեղեցւոց առաքաւս, մարգարէս հովիւս եւ վարդապետս, զաւրութիւնս, բժշկութիւնս, ազգս լեզուաց, թարգմանութիւնս լեզուաց: 47 Այս շնորհք եաւթնեկի առ իւրաքանչիւր անձին տեսանի. եւ եթէ մի յայցանէ պակաս իցէ յումեքէ, խեղ ասեն նմա եւ ոչ ողջանդամ. ապա թէ եաւթնեքեան կտրիցին, մեռեալ է եւ ոչ կենդանի:

48 Այլ զբնութիւն հերացն պարտիմք ասել՝ թէ զիրարդ ի նոսա զաւրութիւնն Հոգւոյն բնակեալ էր, եւ ոչ ի սիրտս եւ ոչ ի միտս եւ ոչ յայլ մասունս արդարութեան: 49 Զի ահաւանիկ առ պիղծ կանայս մտանէր նա, եւ Հոգին Աստուծոյ ոչ թողոյր զնա ի ձեռաց. եւ ի կտրել հերաց նորա՝ եթող զնա շնորհքն Աստուծոյ, տկարացաւ եւ եղեւ իբրեւ զմի յանուժ մարդկանէ: 50 Հոգի աւժութեան ունէր Սաւուղ թագաւորն. նոյն Հոգին զաւրացոյց զնա ի պատերազմին ամոնացոց. այլ յանցանելն իւրում զպատուիրանաւն Աստուծոյ՝ ինքն յընքենէ ջնջեաց զաւժութիւնն Հոգւոյն Սրբոյ. եթող զնա Տէր, եւ սկսաւ չարչարել զնա այսն պիղծ: 51 Արդ ոչ աւժութեան Հոգի ունէր Սամփսոն, այլ զաւրութեան. եւ զաւրութիւնն դեռ ի նմա էր, ոչ կարէին պիղծ կանայքն խափանել զզաւրութիւն նորա. բայց յորժամ հատան գէսք նորա, ընդ նմին հատանի եւ ի մեծ զաւրութենէ: 52 Եւ էր նշանակ բազմութիւն մագոյն աւրհնութեան Աստուծոյ, որ առ Աբրահամն. եղիցի զաւակ քո իբրեւ զաստեղս երկնից եւ իբրեւ զաւազ առ ափն ծովու: 53 Զբազմութիւն աստեղաց եւ զաւազ ոչ ոք կարէ թուել, բայց միայն որ արարն զնոսա. նոյնպէս եւ զհերացն բազմութիւնն ոչ ոք գիտէ: 54 Առաւել քան զայս իմաստիւր զբազմութիւն զաւրութեանն Աստուծոյ որ ի Սամփսոն:

“ Տէ՛.՝.Ը Կ.՝.՝.ժ.՝ 28:

է՛ Ծ՛.՝.՝ 17

55 Արդ էր ըստ իմաստութեան Հոգևոյն Հոգի ունողացն. այլ որպէս այլաբանեն նովաւ զաւրացեալք, Սամփսոն աւրինակ արբահամեան տոհմին ազգի ժողովրդեան իւրեանց, յորս գոյր զաւրութիւն աւրհնութեան Աստուծոյ, այս ինքն յեաւթնեկի գիսակսն՝ որով պսակեալ էր գլուխն Սամփսոնի դատողին Իսրայէլի, որ ցուցանէր զզաւրութիւն աւրհնութեան Աստուծոյ ի նախնին իւրեանց յԱբրահամ, որպէս ի նախնին մեր յԱդամ՝ թէ Անեցեֆ եւ Բազմացարուֆ եւ Եգեֆ գերկիր^ա. նոյնպէս եւ առ Աբրահամ որդին Ադամայ՝ թէ Բազմացի զաւակ քո իբրեւ զաստեղս երկնից եւ որպէս զաւազ^բ: 56 Եւ գլխաւորեալ աճեցաւ եւ աւարտեցաւ առ երկոցունց աւրհնութիւնն Աստուծոյ, որպէս աւետիք բարեացն Աստուծոյ վասն ուխտաւոր մանկանն, այս ինքն առ ծնաւդսն Սամփսոնի: 57 Եւ մինչ դեռ կայր նա յուխտի նորա, զհազարսն հալածէր եւ զբերսն շարժէր. եւ յորժամ բացամերժեաց զանձն իւր յուխտէն Աստուծոյ, յայնժամ ի ձեռն պոռնկին մատնիչ գտաւ սուրբ խորհրդոցն Աստուծոյ. զի պարապնդեցաւ կարանաւք եաւթնագիսակ վարս գլխոյ նորա, նշանակ եւ ենթակայ եաւթնարփի շնորհացն Աստուծոյ. ի պոռնկէն յապաւեալ լինէր. կտրեցաւ զաւրութիւնն. նախ թմբրեցուցեալ զնա անապակաւ, եւ անդէն ի մէջ ծնգաց իւրոց զամեալ զնա՝ լքմամբ զքաջ եւ զարի հսկայն. մոլեկան ախտիւն իբրեւ պարանաւ պարաւանդեալ զնա հոգևով՝ նախ կուրացոյց զնա մտաւք, եւ յետ այնորիկ մարմնով ի ձեռս այլազգեացն:

58 Եաւթնեկի յանցանաւքն շիջոյց յինքեան զեաւթնարփի շնորհս Հոգևոյն եաւթնագիսեան հերացն հատմամբ. ծաղր եւ այպն եղեալ առ հասարակ եաւթն ազգացն քանանացւոց: 59 Զոր այսպէս

լքեալ եւ աղքատացեալ գոլով՝ կացուցին զնա յաղաւրիս, զայն՝ որ կոտորէր եւ մանրէր եւ առ աթուր հարկանէր զայլազգիսն յաւրինակ ազգի ժողովրդեանն իւրոյ. որ նոյնպէս եաւթնեկի յանցանաւքն իւրեանց առ որթուն, եւ որպէս պղծեցանն ի Բեղբեգովր՝ զեաւթնաջահեան աշտանակն լուսոյ ազատութեան իւրեանց նուաղեցուցին յանձինս իւրեանց, եւ որպէս ապականեցան ի գործս իւրեանց, եւ պոռնկեցան ի գնացս իւրեանց: 60 Ահա երդուայ ի բարկութեան իմում, թէ մտցեմ ի հանգիստ^գ. եւ ոչ մտին, այլ անկան տապաստ յանապատին: 61 Յեգիպտոս էին մտաւք ելեալքն յեգիպտոսէ. իսկ բուսեալքն ի նոցանէ՝ յորս գոյր կայծակն աւրհնութեան, զաւրացեալ նովաւ ժառանգեցին զերկիրն աւետեաց: 62 Նոյնպէս վաղվաղեցին սոքա որպէս եւ հարքն իւրեանց, եւ մոռացան զգործս Աստուծոյ. խառնակեցան ընդ հեթանոսս, հաւատարիմ ծառայեցին կոռոց նոցա որպէս զնոսա. եւ ոչ անսացին նմա, այլ արտաքոյ Աստուծոյ խորհրդոցն կացուցին զանձինս իւրեանց. վասն այնորիկ տիրեցին նոցա ատելիք իւրեանց, եւ խոնարհ եղեն ի ներքոյ ձեռին եաւթն ազգին քանանացւոց: 63 Եւ թէպէտ եւ բազում անգամ փրկեաց զնոսա, այլ նոքա առաւել քան զհարս իւրեանց դառնացուցին զնա ի խորհուրդս իւրեանց: 64 Եւ ահա յապաւեալ եւ հատեալ նուաղեցան քան զամենայն ազգս, թէպէտ եւ արմատն ոչ հատաւ եւ ճիւղ կուղին ոչ ապականեցաւ, զի աւրհնութիւն Տեառն գոյր ի նմա, որպէս ասէ բան մարգարէին. Թէ ոչ Տեառն զարութեանց թողեալ էր մեզ զաւակ, իբրեւ զՍողոմ լինէաֆ եւ Գոմորոյ նմանեաֆ^դ. եւ դարձեալ. Մի՛ պակասեցէ իշխան Յուդայ, եւ մի՛ պետ յե-

^ա Եւ. Լ 28

^բ Եւ. Ի 17

^գ Տե՛ս. Սա՛մ. Գ. 11:

^դ Եւ. Լ 9

րանաց և որա՞, որ էր յարմատոյն Յեսսեայ: 65 Որ թէպէտ եւ ելեալքն յԵգիպտոսէ հարքն եւ ծնունդք նոցա խոտորեալք գտան եւ թիւրեալք, եւ բազում եղեն քան զհեր գլխոյ անաւրէնութիւնք նոցա, զի ոչ կացին յուխտի նորա, համբարձ զձեռն իւր ի վերայ նոցա սատակել յանապատին, եւ ի Քանան մատնել այլազգեացն հեթանոսաց:

66 Եւ գլուխ ամենայն չարեաց նոցա՝ որ յետ ծառայից նորա որ կոտորեցին, եւ զսեղանս նորա կործանեցին, որպէս ամբաստան լինի Եղիա գիսրայէլէ, եւ ի Տէրն մեղան, զժառանգութիւնն յափշտակել կամելով՝ զժառանգն սպանին. եւ այնուհետեւ կոտորեցան եւ սպառեցան մշակքն անիրաւութեան, որպէս գիսակքն այնքիկ յապաւեալ եւ հատեալ՝ որ էր ի գլուխ ուխտաւորին Սամիսոնի. եւ զայգին նոցա ետ ի ձեռս այլոց մշակաց՝ որ եղեն բուսակք նորոգ եւ կենդանի, պտղաբեր եղեալ եւ աճեցունք յարմատոյ անտի նահապետացն, այս ինքն ի գլխոյ ժողովրդեանն: 67 Եւ զբանն զոր երգմամբ եդ ընդ Աբրահամու եւ ընդ զաւակի նորա յուխտ յաւիտենից, յիշեաց ի ձեռն զաւակի նորա՝ որ եղեւ նմա ըստ մարմնոյ, որով աւրհնեցան ամենայն ազգ երկրի: 68 Նորածնեալք ի հաւատոց անտի Աբրահամու՝ կոչեցան որդիք նորա եւ ժառանգք աւետեաց նորա, եւ եղեն նորատունկք սիրելի՝ ծնունդք լուսոյ շուրջ զսեղանով խաչին զաւրացեալք Հոգևովն ի փառս: 69 Որով կարողք եղեն ամենայն զաւրութեամբ խաչին ի դիմի հարկանել չարին յաւուր մարտի եւ պատերազմի, եւ եաւթնապատիկ հատուցանել նեղչացն նեղութիւն ծառայութեան, եւ նեղելոցն պատրաստել հանգիստ ազատութեան: 70 Եւ այսպէս ըստ բնաւորին՝ նորագործ կազմածաւք մտեալ ի տուն հզաւորին՝ զգործիս նորա յափշտակեցին.

եւ զամուրս նորա հանդերձ սեամբքն հաստատելովք, որ իբրեւ պարանաւք եռահիւսիւք երրորդական միականութեամբ նորին զաւրութեամբ, եւ աջեացն եւ ահեկեացն հակառակաւքն միաբանելովք ի կործանումն զաւրացեալք հակառակամարտին, յինքնաքարչմամբ զողնայարս տանց նոցա ի միմեանս՝ խարխարեալ փլուցին ի վերայ գլխոց նոցա. եւ կորուսին զանձինս իւրեանց չարչարանաւք ի նոցանէ ընդ այլազգիս վասն աստուածահարման աւրինացն եւ սքանչելի անուան նորա, զի գտցեն զնա յաւուրն յետնում եւ պահեսցեն ի կեանսն յաւիտենականս: 71 Եւ այսպէս զնախատինս նախատչացն զմեզ՝ բարձին ի մէնջ, եւ փառաւորեցաւ անուն սրբոյն Իսրայէլի. եւ պարծիմք այսուհետեւ՝ նովին փառաւք փառաւորեալ ի փառս նախնական մերոյն փառաց:

72 Նա եւ այլ տեսութիւն, որ եղեւ շնորհալի գիսակացն նորա. խորհուրդ եաւթնաւրեայ կենցաղոյս, որով թուով ժամանակս սկսանի, եւ անդր ի նա դարձական յոգնապիսութեամբ բազմանայ, եւ ի նոյն թիւ եաւթներեկին կատարի. ի միակէն սկսեալ եւ ի մասնականսն բազմացեալ, եւ ի նոյն աւարտումն բոլորեալ, եւ ըստ շնորհի արարչութեան միմեամբք զաւրացեալք: 73 Նոյնպէս եւ ըստ ժամանակին եղեալքս ի գերագոյն գոյէն գոյացեալք յառաջատելով ի յոգնապիսութեան եղանակութիւն, այս ինքն ի բնութիւնն, ի տեսակ, ի գեղ եւ ի վայելչութիւն տրամագարդութեան զաւրացեալք՝ անհակառակ եւ անմարտ բերելով ըստ բնութեան, այն որ ըստ բոլորին տեսանի: 74 Իսկ յորժամ ախտակրեցան մասնաւորքն ի բոլորին տարբերական այլայլութեամբ, արտամերժեալք եղեն ի համազաւր իսկականութենէն. ի հնութիւնն ապականութեան ստորանկեալ բանական բնութեանս հանդերձ զգայականաւք եւ գոյացականաւք, որոց պատճառ գտաւ՝ իշխանականաւն պակա-

՝ ԵՂ. ԽԹ 10

սեալ ի բարւոյն՝ զաւրացաւ չարն հնացուցիչ եաւթնակի յանցանաւքն նախաստեղծին, յոգնապիտութեամբ առաւելեալ եւ բազմացեալ քան զհեր գլխոյ. եւ տոռամբք մեղաց պարաւանդեալ ամենայն զգայութիւնք ախտակրեալք գողացեալ եղեն ըստ հեշտութեանն: 75 Եւ ահա ծառայք գտան այլազգի դիւացն եւ մեղացն. մինչեւ յայց ել արարիչն եւ փրկիչն Ադամայ՝ ոչ այլ ուստեք, բայց ի բնութեանս եգիտ զկայծակն նորոգման մերոյ հնութեանս. զոր ի պատճառս նորա առեալ զմարմին խոնարհութեան մերոյ, վերընծայեալ նորոգեաց ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց յազատութիւն փառաց որդւոյն Աստուծոյ. եկեալ ամենայն եղականաւքս հանդերձ, որ ըստ ինքեան ապականեցաւ, եւ ահա փառաւորեալ զաւրացան եւ գտան յաղթողք ի վերայ յաղթողին՝ որ կենացն է հակառակ: 76 Եւ վերաբուսեալք առին հասկ եւ եղեն յայր կատարեալ, եւ միաւորական զաւրութեամբն յաւդեցան ի գլուխն Քրիստոս: 77 Եւ այնուհետեւ յայտնի եղեւ աստուածպետականին Յիսուսի կեանքն ի մարմնի մերում. որով կենեզուտ եղեալ, յաղթող գտան մահաբերին:

78 Այսպէս զանազանի խորհուրդ եաւթնագիսակ հերացն Սամփսոնի ի խորհուրդ Ադամայ. զի ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ եւ զկենդանական շունչն եղ ի նմա, եւ այնպէս արար Աստուած զմարդն ի պատկեր իւր. գոյարարողական զաւրութեամբն տպաւորեալ վերածեաց ի նմանութիւն պատկերի անմահական եւ անապական իւրոյ փառացն: 79 Իսկ ի ձեռն ուխտազանց յանցաւորութեանն վայրածեցաւ տարամերժեալ ի մակադրեալ յաստուածակերտ փառացն որ ի նմա: 80 Եւ ահա գոյր ի ծնունդս Ադամայ հնացուցիչ նոյն զաւրութիւնն մահու եւ ապականութեան. նա եւ գոյր ի դարս նշան յաւերժական փառաց նորա, անմահականն՝ յաւերժական կեանս նախահաւրն. նոյնպէս ընդ անմահիւ անապականն՝ ի փոխումն Ենովքայ եւ ի վերացումն Եղիայի. իսկ լուսազգեստութիւն՝ ի լուսաւորութիւն երեսաց փառացն Մովսէսի, եւ զաւրութիւն անձին նորա՝ յեաւթնագիսակ ի հերս գլխոյն Սամփսոնի: 81 Իսկ յամենայնէդ նուազիլ սոցա յետ մահուն, տարամերժեալ նորա յետ յանցանացն նշանակէ:

82 Իսկ առ Սամփսոնի այլ իմն յայտնի նորահրաշ եւս տեսութիւն: 83 Քանզի յետ յապաւելոյն հանդերձ զաւրութեամբ զհերս գլխոյ նորա, ընդ երկար ժամանակս աճեաց բուսողաւրէն եաւթնագիսակ հեր գլխոյ նորա. եւ ի վախճան ժամանակաց իւրոց կանգնեաց նշան յաղթութեան յաւերժական ծննդոցս Ադամայ. որ յետ մահուն եւ ի դժոխս իջանելոյն գոյացուցիչն կենաց՝ կենդանարար նովին սկզբնական կենացն զաւրութեամբ դիմեաց ի դժոխս, եւ սերմանեաց ի նմա զբուսական զաւրութիւնն կենացն հատի, եւ բազում արդիւնարար ներգործական զաւրութեամբ վերաբերեաց ընդ ինքեան ամենայաղթ նշանաւ:

84 Նա եւ այլ տեսութիւն: 85 Քանզի զաւրութիւնն Աստուծոյ, որպէս ասէ գիր, ի տկարութեան առաւել կատարի, որպէս յովով ունի աւրինակ. զի Ադամ՝ որ ի պատկեր եւ ի նմանութիւն Աստուծոյ արարաւ, ի հողոյ ստեղծաւ. եւ Նոյ լաստափայտիւն ապրեցաւ հանդերձ ամենայն կենդանեաւք, եւ սերմն աշխարհի պահեցաւ: 86 Ի ճախոյրճս մականի Յակոբ հաւտս բազում ստացաւ. ի ձեռն համբակի միոյ գերւոյ՝ զԵգիպտոս բացակայ եւ մերձաւոր գաւառաւք յեաւթնամեայ սովոյն կերակրեաց. ի ձեռն մունի եւ գորտի զԵգիպտոս տանջեաց: 87 Մականաւ ծայրիւ հարեալ գաւազանաւն Մովսէսի՝ զհամատարածն վիմատառեաց, նովին եւ զապանշան յաւերժական կեանս նախահաւրն. նոյնպէս ընդ անմահիւ անապականն՝ ի փոխումն Ենովքայ եւ ի վերացումն Եղիայի. իսկ լուսազգեստութիւն՝ ի լուսաւորութիւն երեսաց փառացն Մովսէսի, եւ զաւրութիւն անձին նորա՝ յեաւթնագիսակ ի հերս գլխոյն Սամփսոնի: 81 Իսկ յամենայնէդ նուազիլ սոցա յետ մահուն, տարամերժեալ նորա յետ յանցանացն նշանակէ:

82 Իսկ առ Սամփսոնի այլ իմն յայտնի նորահրաշ եւս տեսութիւն: 83 Քանզի յետ յապաւելոյն հանդերձ զաւրութեամբ զհերս գլխոյ նորա, ընդ երկար ժամանակս աճեաց բուսողաւրէն եաւթնագիսակ հեր գլխոյ նորա. եւ ի վախճան ժամանակաց իւրոց կանգնեաց նշան յաղթութեան յաւերժական ծննդոցս Ադամայ. որ յետ մահուն եւ ի դժոխս իջանելոյն գոյացուցիչն կենաց՝ կենդանարար նովին սկզբնական կենացն զաւրութեամբ դիմեաց ի դժոխս, եւ սերմանեաց ի նմա զբուսական զաւրութիւնն կենացն հատի, եւ բազում արդիւնարար ներգործական զաւրութեամբ վերաբերեաց ընդ ինքեան ամենայաղթ նշանաւ:

84 Նա եւ այլ տեսութիւն: 85 Քանզի զաւրութիւնն Աստուծոյ, որպէս ասէ գիր, ի տկարութեան առաւել կատարի, որպէս յովով ունի աւրինակ. զի Ադամ՝ որ ի պատկեր եւ ի նմանութիւն Աստուծոյ արարաւ, ի հողոյ ստեղծաւ. եւ Նոյ լաստափայտիւն ապրեցաւ հանդերձ ամենայն կենդանեաւք, եւ սերմն աշխարհի պահեցաւ: 86 Ի ճախոյրճս մականի Յակոբ հաւտս բազում ստացաւ. ի ձեռն համբակի միոյ գերւոյ՝ զԵգիպտոս բացակայ եւ մերձաւոր գաւառաւք յեաւթնամեայ սովոյն կերակրեաց. ի ձեռն մունի եւ գորտի զԵգիպտոս տանջեաց: 87 Մականաւ ծայրիւ հարեալ գաւազանաւն Մովսէսի՝ զհամատարածն վիմատառեաց, նովին եւ զապանշան յաւերժական կեանս նախահաւրն. նոյնպէս ընդ անմահիւ անապականն՝ ի փոխումն Ենովքայ եւ ի վերացումն Եղիայի. իսկ լուսազգեստութիւն՝ ի լուսաւորութիւն երեսաց փառացն Մովսէսի, եւ զաւրութիւն անձին նորա՝ յեաւթնագիսակ ի հերս գլխոյն Սամփսոնի: 81 Իսկ յամենայնէդ նուազիլ սոցա յետ մահուն, տարամերժեալ նորա յետ յանցանացն նշանակէ:

ուսան հոսանուտս գործեաց. ձեռաց տարածամբ Մովսէսի զԱմաղէկ բազմութեամբ սատակեաց. տապանակաւ զՅորդանան ի վեր կապեաց, եւ զԵրիքով ի ձայն փողոյ ի վայր կործանեաց, զքանանացիսն տկար պիծակաւք խայթահարեալ կոտորեաց, եւ ի ձեռն փողոյ եւ ջահի զՄադիամ վանեաց. եւ ծնաւտիւ միով ցամաքելով Սամփսոն յայլազգեացն զհարսն սատակեաց եւ զբերսն վանեաց: 88 Որպէս պաղատիտ թող զվէրսն Եզեկիայի բժշկեաց, այսպէս տկար եւ չնչին հերով երկնային եւ ոչ երկրաւոր ցուցանէր յաղթութիւն. զի ոչ մարդոյ երեւոյթ զաւրուութիւնն, այլ Աստուծոյ անտեսականի. զի ոչ յոսկերաց ստուարացելոց, այլ ի հերաց նուազացելոց. զի առաւելութիւն զաւրութեանն իցէ յԱստուծոյ՝ եւ ոչ ի մէնջ, յանդիմանութիւն թերահաւատին Իսրայէլի:

89 Եթէ այր մի եբրայեցի այնչափ զաւրանայր շնորհաւքն Աստուծոյ՝ որ ենթակայացեալ էր յեւթնագիսեան հերս զլիսոյ նորա, անպարտելի զաւրութիւն ցուցեալ՝ միայն յանձն իւր ցուցանէր զբոլոր ազատութիւն ազգի ժողովրդեան իւրոյ, վասն որոյ դատեաց զԻսրայէլ ամս քսան, ո՛րչափ եւս առաւել բոլոր ազգն հազարաւք եւ բիւրաւք՝ եթէ կացեալ էին յուխտին Տեառն եւ ըստ իրաւանց նորա գնացեալ: 90 Եւ արդ ապախտաւոր գտաւ շնորհացն Աստուծոյ, եւ մոլեկան ախտին երկիր եպագ Սամփսոն. եւ անդէն մերկացաւ ի շնորհացն, լքաւ եւ կնատեցաւ. ուս-

տի եւ ուստերաց եւ դատերաց հեթանոսաց յաղաւրիս համակեալ, այսպէս եւ խաղ եղեւ նոցա: 91 Նոյնպէս եւ ամենայն Իսրայէլ յորժամ որթոյն երկիր եպագ, եւ երնջուցն գոհեաց, Քամաւսեայ նուիրեաց եւ զԲահաղ պաշտեաց, ի ճանճիկն Ակկարոնի հարցանէր եւ նստեալ լայր զթամուզ, յայնժամ մատնեաց ի գերութիւն զզաւրութիւնս նոցա, եւ ի սուր հեթանոսաց էած փակեաց զնոսա, եւ ոչ ոք էր որ աւգնէր նոցա. եւ այսպէս լի եղեւ նախատանաւք ի մէջ հեթանոսաց:

92 Իսկ Սամփսոն որչափ նախատեցաւ ի նոցանէ, այնչափ լի արար գերեսս նոցա անարգանաւք ի յաճել հերացն եւ ի զաւրանալ շնորհացն Աստուծոյ ի նմա: 93 Այսպէս եւ Իսրայէլ յետ դարձի գերութեանն. յորժամ հայեցաւ Աստուած ի նեղութիւնս նոցա, յայնժամ յիշեաց զուխտ իւր՝ որ ընդ Աբրահամու, եւ զղջացաւ փոխանակ նոցա ըստ բազում ողորմութեանն. այց արար եւ ժողովեաց ի հեթանոսաց զորդիս ազգի ժողովրդեան իւրոյ. եւ այնուհետեւ ոչ ասեն ի նոցանէ՝ թէ ո՛ւր է Աստուած նոցա: 94 Եւ ահա յայտնի եղեւ զաւրութիւնն Աստուծոյ ի վերայ նոցա առ ի խնդրել զվրէժ մահու յատելեաց իւրեանց, եւ հատուցին դրացեաց եւթնագատիկ: 95 Եւ այսպէս փառք Աստուծոյ ծագեցաւ առ նոսա, որով փառաւորեալ պարծին ի Տէր. զի նմա վայել է փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՅԱՂԱԻԹՍԸ ՈՐ ԱՍԷ ՅԱՅՐ ՍԵՐ ՈՐ ՅԵՐԿԻՆՍ

է պարզ բնութեամբ, եւ առաւել ունի զբարձրութիւն բանից. ի վեր հայեցոյց, եւ զԱստուած Հայր ուսոյց ամենեցուն. որդւոց առ Հայր կարգալ՝ անձուկ գթոյն ստիպէ զնոսա, եւ կամք կարաւտութեանն զՀայրն ածէ ի գութ ողորմութեան: 2 Ըստ կամաց Հաւրն՝ եւ որդիքն պարտին լինել. ապա եւ Հայրն ըստ կամաց որդւոցն՝ զպէտս նոցա կատարէ, եւ բոլոր մեծութեան իւրոյ զնոսա առնէ ժառանգորդս: 3 Հայրդ անուն՝ մի է հոգեւորաց եւ մարմնաւորաց. պէտքն ըստ մասանց բաժանեալ որոշին ի միմեանց: 4 Զերկրաւոր հարս ախտք ցանկութեան մարմնոյ շարժեցին յորդէձնութիւն, ըստ ախտաւոր յղութեանն՝ ախտաւոր որդիս ծնանել: 5 Փոփոխական է հայրութիւնն. երբեմն որդի եւ հայր. նա հրաժարեաց ի կենաց աշխարհէս բարձաւ ի նմանէ հայրութիւնն. ի տեղի մատեալ որդին եւ եղեւ հայր, եւ զնոյն ճանապարհ զնաց: 6 Այսպէս փոխանորդութեամբ վախճանելոց է աշխարհս:

7 Մի է Հայր ճշմարիտ եւ արարիչ բոլոր աշխարհիս. առանց ախտից յղացաւ, եւ առանց ցաւոց ծնաւ զամենայն զերեւելիս եւ զաներեւոյթս. որ ծնաւն՝ նոյն եկեալ ուսուցանէ զորդիսն կարգալ առ Հայրն երկնաւոր, զի մի՛ հանապազ ի խանձարուրս եւ յորրանս կացցէ աշխարհս, կաթնածոժք եւ ջամբակերք, թաթաւեալ եւ թաղեալ զարշելի աղտովք. յորմէ ձանձրացան մարք եւ ստնտուք, եւ զերեսս ի բաց դարձուցին դայեակք եւ սնուցիչք: 8 Եւ են սոքա արէնք եւ մարգարէք. ի ծով լուացին եւ ոչ կարացին սրբել. ընդ գետս անցուցին եւ ոչ ողողեցան. յաճախեցին յաւճառս եւ լուացան բարակաւ, եւ ոչ սրբեցան. զիւրեամբք ածեալ բարձին, ընկեցին եւ ի բաց կացին: 9 Գթացաւ Հայրն

երկնաւոր, խոնարհեցաւ յերկնից յերկիր, եգիտ զամենեսեան յարիւն յապաժոյժ, ի զոհս մեռելոտի կոոց պաշտամանն: 10 Առ, լուաց, սրբեաց, զգեցոյց զհանդերձն երկնաւոր, եւ մերձեցոյց անդրէն ի նոյն որդէգրութիւնն: 11 Ուսոյց զհայրենի վարդապետութիւնն, զի կարդասցեն առ սիրելի Հայրն երկնաւոր: 12 Յորժամ, ասէ, յաղաւթս կայցէք, մի՛ տղայաբար շատախաւսք լինիջիք. Աստուած սրտին խորհրդոցն է լսող, եւ բարի գործոցն է հատուցանող փոխարէն բարի: 13 Բերանով վկայութիւն այսչափ է բաւական ասելն. Հայր մեր որ յերկինս, սուրբ է անունն ֆո՞՞:

14 Մեծ է այս պարգեւս քան զամենայն պարգեւս առ մարդիկ, Աստուծոյ՝ Հայր լինել մարդկան: 15 Զիք իշխանութիւն հրեշտակաց զայս ասել. թէպէտ եւ հզաւրք են եւ հոգեւորք, սպասաւորք են եւ ոչ որդիք: 16 Ո՛վ մարդ, զգոյշ կաց անձին քում, յորպիսի՛ պատիւ մեծարեցար՝ մինչեւ Հայր քեզ զԱստուած իշխեցեր անուանել. եւ զայս եւս ած զմտաւ քով, ըստ Հաւրն պատուի եւ զքեզ ձեւացո, զի ծանիցեն վերինք եւ ներքինք՝ թէ արդարեւ Աստուծոյ որդի ես: 17 Բանիւ ծնանի Աստուած զմարդն. թէպէտ եւ բանիւ ոչ կարես, մի՛ ըստ մարմնոյդ կամաց թաթաւիր ընդ երկիր. հատ ընկեա ի քէն ի բաց զաւելորդ ցանկութիւնս: 18 Շատ եւ բաւական համարեա քեզ զհարկաւոր կերակուրսն. մի՛ անցաներ եւ շուստանար: 19 Ի գիրութենէ սոնքանայ մարդ, եւ ի բազում ճարպոյ ելանեն անաւրէնութիւնք, որպէս յարեցութենէ գիշութիւնք պղծութեան. այնպիսին ոչ կարէ անուանել զԱստուած Հայր: 20 Ո՞չ ահա քեզէն իսկ վկա-

Պատմ. 99

յեցեր ասելով՝ սուրբ է անուն քո. անուն Աստուծոյ ո՞ր կարէ դնել. սուրբն ասելով՝ այն է ճշմարիտ անուն Աստուծոյ: 21 Սուտ աստուածոցն անուանքն ոչ են սուրբ. ոմն գող, ոմն սպանող, ոմն շուն, եւ ամենեքին իւրաքանչիւր ախտիւքն չար-չարանաց. մանաւանդ թէ չիցեն իսկ, եւ ոչ այլ լինելոց են: 22 Մարդիկ որ զնոսա աստուածս անուանեցին, նոքա ոչ են ճշմարիտ որդիք Աստուծոյ. որոց ուսուցանէ կարգալ առ Աստուած, եւ որոց յաղաւթան հրամայէ կալ առ Հայրն, նոքաք բանայ դուռն ամենեցուն, զի ամենեքեան ընդ այն դուռն դիմեցեն մտանել, զնոյն աղաւթս ուսցին՝ աղաչել զԱստուած եւ ասել. Հայր մեր որ յերկինս, սուրբ է անուն քո: 23 Յորժամ ճշմարտախաւս ուսցին լինել յաղաւթան, ապա եւ ճշմարտագործք երեւեցին յաշխարհի, յայնժամ կարեն լքանել եւ ի բաց թողուլ զսուտ աստուածսն. որ քարին եւ փայտին Հայր եւ մայր կարդային, եւ ի նոցանէ ի բաց կացին, եւ յանառակ գործոց իւրեանց հրաժարեցին, սրբեցան միտք իւրեանց ի գիտութիւն իմաստութեան, եւ բացան բերանք նոցա համարձակս բարբառել եւ ասել. Եկեացէ արքայութիւն քո. եղիցիմ կամֆ քո որպէս յերկինս եւ յերկրի՞՞:

24 Իբրեւ թագաւորեաց Աստուած ի վերայ ամենայնի, արքայութիւն նորա ի վերայ կամարարաց իւրոց: 25 Միայն, ասէ, եկեացէ արքայութիւն քո: 26 Այս իբրեւ գայն, Ծագեացէ աստղն Յակոբայ, եւ յարիցէ այր յԻսրայէլէ, եւ հասցէ եւ սատակեաց զգաւրութիւնս Ամադեկայէ: 27 Աստղն ծագեաց, եւ այրն յարեալ, եւ հար սատակեաց զսատանայ, որ էր զաւրութիւն հեթանոսաց: 28 Այս կամք Աստուծոյ էին ի սկզբանէ, եւ կատարեցան ի գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Պատմ. Գ 10

Է Տէ. Թ. Ի. Ի. 17:

տոսի: 29 Զայս աղաւթս բանիւք պարտիմք ուսանել, եւ հաւատովք յուսալ յերկրորդ գալուստ նորա, յորժամ ըստ աղաւթից մերոց եւ գործք մեր երեւեցին ստուգութեամբ:

30 Եկեացէ արքայութիւն քո: 31 Ինքն արքայութիւնն ուսուցանէ վասն իւր խաւսել. էր յաշխարհի, եւ աշխարհ նովաւ եղեւ, եւ աշխարհ զնա ոչ ծանեալ: 32 Ուսուցանէ Հայր ասել, զի զնա միայն գիտացես արարիչ աշխարհի, արարչութեամբ՝ բոլորովին, որդէգրութեամբ՝ մարդոյ միայն. որ արարն՝ նոյն եւ արքայ, եւ որ եկն՝ նոյն եւ արքայութիւն նորա. որ բնութեամբ Աստուած մեր, նոյն Հայր մեր՝ շնորհաւք աստուածութեամբն իւրով: 33 Յորժամ Աստուած Հայր է ամենեցուն: 34 Քրիստոս եղբայր է ամենայնի՝ որ առնեն զկամս նորա: 35 Էր արքայ, եւ եղեւ քո եղբայր: 36 Այս պարգեւք մեծ են քան զառաջին արարչութեանն. յայնժամ ըստ պատկերի Աստուծոյ ասացաւ լինել մարդ, իբրեւ թէ ըստ աւրինակին ձեւացոյց. որպէս եւ կամեցաւ հոգեղէնն հողեղինիս տիպք լինել, զի եւ սա ի նա ուսցի առաքինութեամբ ձեւանալ: 37 Իբրեւ ոչ կարաց միաբանել նմա, ինքն իսկ զնորա տիպն էառ, որպէս եւ ինքն գիտէ. ինքն ձեւացոյց անխախտելի եւ անքակտելի զորպիսութիւնն, անհասանելի եւ անասելի, միայն հաւատալի եւ յուսալի, եւ զնա միայն արժանի սիրելութեան՝ որ մերովն ընդ մեզ խաւսի եւ ուսուցանէ. խաւսի ազգակցաւն եւ ուսուցանէ զաներեւոյթ աստուածութիւնն յերեւելիսս, զի երեւելեալքս զաներեւոյթ արքայութիւնն ծանիցես. որով եկն՝ նոյն եւ երկրորդ անգամ եկեացէ: 38 Այժմ վարդապետութիւնն զաշակերտսն որդիս ասաց, եւ զձառայս տէրս արարեալ, եւ զմահկանացուս յանմահութիւն հրաւիրեալ ասելով՝ եկեացէ արքայ-

Յ. Ե. Ե. 10

յուլթիւն, ի զգուշութիւն պատրաստութեան. ապա ի հատուցմունս իւրաքանչիւր իշխանութեան: 39 Որչափ եւ զքեզ կարասցես վիճակեցուցանել, ի մասունս արքայութեան վերաբերել, ըղձական են ազաւթքն, եւ ի վեր քան զբնութիւնս մեր պարգեւս խոստանայ:

40 Եղիցիմ, ասէ, կամֆ Բո: 41 Կամք Աստուծոյ է սրբութիւն մարդոյն, զի բաժանակից արար արքայութեան իւրում. ոչ զի ոչ կարիցեմք հասանել յայն բաժին, այլ զի դիւրաւ ստանայցեմք զհամբերութիւնն վասն յուսոյն մերոյ իբրեւ զայնոսիկ՝ որոց զաղաւթսն ուսոյց. եթէ նոքա կատարեցան ըստ աղաւթիցն, ապա եւ մեք կարեմք. միայն հաւատա յուսա սիրեա, եւ անդէն կատարեցար խնդութեամբ: 42 Եւ եթէ տրտմութեամբ չարչարակից լինիս Քրիստոսի, ինքն Աստուած զաւրացուցանէ ի համբերութիւնն. եւ եթէ ոչ գոյր կարողութիւն, եւ ոչ զայնպիսի զաղաւթսն Աստուած ուսուցանէր զմեզ: 43 Յառաջինսն հայեցարուք եւ քաջալերեցարուք. ոչ զչարչարանսն միայն բաւական համարեցան անձանց ի հաւատս, այլ եւ զմեռանելն քան զապրելն. ի նահատակադիրն հայեցան եւ կատարեցան: 44 Նոցա՝ բանիւ գովողք եղիցուք, եւ գործովք՝ զանձինս մեր ի նոյն նահատակութիւնն կատարեալք: 45 Հասարակաց է Աստուած հայր ամենեցուն. հասարակ պարտիմք որդիք լինել ամենեքեան, զի եւ մի է ժառանգութիւնն զոր բաշխեաց ամենեցուն:

46 Եղիցիմ կամֆ Բո որպէս յերկինս եւ յերկրի: 47 Իբրեւ կարէ Աստուած զբոլոր մարդիկ երկնաւորս առնել, զաղաւթսն ի մեր կամս ընկենու. զի մեք երկրաւորքս՝ մեզէն կարեմք լինել երկնաւորք: 48 Վերին գաւրքն ամենեւին կամաց նորա սպասեն սիրով. լծեալ կան ի միաբանութեան փառաւորելով զԱստուած, եւ յահագին փառացն նորա ծածկեն զոտս եւ գերեսս,

զի յինքեանս սիրեսցեն զԱստուած. փոխանակ աչաւք տեսանելոյ՝ զսէրն բաւական համարին յանձինս իւրեանց. ի նոցա սիրոյն եւ Աստուած զկամս իւր սիրով ի նոսա կատարեաց: 49 Մի՛ փութասցուք մարմնաւոր աչաւք տեսանել զԱստուած, զի մի՛ ծախիցիմք տարածամ: 50 Մէրն ի մէնջ լիցի առ նա պատգամաւոր, եւ ի սիրոյ նորա կատարեսցին կամք նորա ի մեզ: 51 Զոր ինչ ուսուցին մեզ մարդարէքն, զայնու փութասցուք երթալ. քանզի նոքա բանիւք խաւսեցան եւ գործովք կատարեցին. ոչ այլ ոք էր նոցա վարդապետ, այլ որ քեզ զաղաւթսն ուսոյց. եւ դու բանիւ ուսիր զաղաւթս, եւ գործով փութա կատարել: 52 Ոչ հեռի ես ի հրեշտակաց, այլ ընդ նոսա կաս յաղաւթս, զի ընդ նոսին փառաւորեսցես զԱստուած. որպէս դու ընդ նոսա միաբանիս, նոյնպէս եւ նոքա ընդ քեզ երգակից լինին յաղաւթսն եւ յաւրհանութիւնսն: 53 Համարձակ բանաս զբերանդ եւ ասես, Եղիցիմ կամֆ Բո որպէս յերկինս եւ յերկրի: 54 Մեծ է այս իշխանութիւն քան զառաջին ակրհանութիւնսն. անդ ի վերայ երկրի միայն տիրել իշխանութեամբ. աստ, ասէ, յերկինս եւ յերկրի:

55 Զհաց մեր հանապազորդ տուր մեզ՝: 56 Զերկրաբոյս հացս Աստուած առանց աղաչելոյ ամենեցուն շնորհէ առ հասարակ. Զմարդիկ եւ զանասուն կեցուցանես դու, Տէր՝: 57 Եւ ո՞րպէս մարթի ասել. սա եւ հանապազորդ իսկ չէ. տղայութիւն արգելու, հիւանդութիւն կարճէ, կարաւորութիւնն խափանէ, մահ քակէ եւ ի բաց հատանէ: 58 Հարձն ան կերան զմանանայն յանապատին՝ եւ մեռան. այս է հացն ճշմարիտ՝ որ յերկնից իջեալ. յայսմ հացէ եթէ կերիցէ ո՞ր մի մեոցի յաւիտեան՞: 59 Լսէին ի նմանէ զբանն, եւ ոչ

« Մարթ. 9 11

է Սաղմ. 1 6 7

ճ Տէ՛. Յ. 3. 4. 9 49:

կարէին վաղվաղակի ի միտ առնուլ. կրկնէ եւ երեքինէ զնոյն բան եւ ասէ, զի դիւրաւ լուիցեն եւ հաւատովք ընկալցին զբանին զաւրութիւն. ես եմ, ասէ, կեցնիս հացն՝ որ իջեալ յերկնից. յայսմ հացէ որ ուտէ, մի՛ փառակեցցէ զմահ՞: 60 Զայս հացս ուտուցանէ յաղաւթսն խնդրել յԱստուծոյ հանապազորդ: 61 Եթէ քաջ միտ դնես, որ զայս հացս սրբութեամբ ուտէ եւ ըստ արժանի սմա պատրաստէ զանձն իւր, երկրաւոր արքայութեանս նա ոչ կարաւտանայ. ի մահկանացու ձեռս անմահ հաց եղեալ՝ անդէն վաղվաղակի եւ ձեռքն անմահացան եւ ուտելով զսա՝ բոլորովին մարդն շնչով եւ հոգեով եւ մարմնով հոգիացաւ եւ բաժանակից եղեւ Քրիստոսի. միայն զսկիզբն զաւրութեան մինչեւ ի վախճան անարատ պահելով: 62 Չիք ինչ յերկրաւոր չարչարանաց, որ նմա յաղթէ. արհամարհեալ է առաջի նորա արծաթ, եւ ոսկի ատեցեալ է յաչս նոցա, ցաւ համարի զմեծութիւն աշխարհիս, վասն զի խորհուրդք իւր սրբեցան յազատութիւն երկնաւոր՝ անմահ հացիւն առլցեալ: 63 Նոյն եղեւ բաւական ամենայնի. եթէ տղայ է, կատարելահասակ երեւեցաւ. եթէ ի ցաւոց տկարացաւ, զաւրութիւն Աստուծոյ ի նմա բնակեցաւ. եթէ վախճանեցաւ ի կենաց աշխարհիս, զանմահ կեանսն ընդ իւր տարաւ առ Աստուած: 64 Զայս ուտուցանէր Տէրն մեր յաղաւթսն աղաչել առ ինքն՝ զհաց մեր աւր ըստ աւրէ տուր մեզ, ոչ յերկրէ, այլ ի Տեառնէ. յայտ է թէ եւ ոչ յերկնից, այլ զՏէրն ամենեցուն. Այս է, ասէ, իմ մարմին, եւ այս է իմ արիւնք: 65 Թէպէտ եւ անփշրելի էր, վասն սիրոյ քո փշրեցաւ. եւ զքեզ՝ որ ի կամս քո փշրեցար, անփշրելի աստուածութեամբն յինքն յարեաց. Ոչ թողցես զանձն իմ ի

դժոխս, եւ ոչ տացես սրբոյ փում տեսանել զապականութիւնք: 66 Յուրբաթու խաչեցաւ ի փշրումն մահու. ի միաշաբաթոջ զփշրեալ ոսկերսն Ադամայ ժողովեաց եւ յարեաց յանմահութիւնն, եւ երեւեցոյց բազմաց ճշմարտութեամբ եւ ոչ առ աչաւք. մի աւր հացացաւ ի վերնատանն, եւ հանապազ հացանայ յեկեղեցիս ի վերայ սուրբ սեղանոյն. նախ ինքն յինքենէ ճաշակեաց, եւ ապա զմեզ զամենեսեան ճաշակիցս արար նմին չարչարանաց: 67 Նա եւ ոչ այտուհետեւ ի չարչարանս է, այլ ի հայրենի փառսն փառաւորի ի հրեշտակաց եւ ի մարդկանէ, եւ զմեր ամենեցուն զչարչարանս եբարձ յիւր անչարչարելի աստուածութիւնն: 68 Զայս յոյս հաւատոց մերոց իբրեւ զխարիսխ հաստատուն պահեսցուք յոգիս եւ ի մարմինս մեր. որպէս սիւն շինուածոյ է հաստատութիւն, հաւատք մարդոյ են անքակութիւն առ Աստուած. որով համարձակութեամբ կարէ բարբառել եւ ասել. Թող մեզ զպարտսն մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: 69 Այս են աղաւթք ճշմարիտ, բանական եւ գործնական. յորժամ դու ոչ պահանջեսցես զպարտսն յընկերէն քո առ քեզ, յայնժամ եւ Աստուած զբոլոր յանցանս շնորհեսցէ քեզ յանմեղութիւն: 70 Լուր Պետրոսի՝ զիարդ ուսաւ ի Տեառնէ: 71 Նա եաւթն անգամ կամեցաւ թողուլ զյանցանս եղբաւրն, Տէրն մեր զեաւթն եաւթանասուն անգամ ասաց: 72 Պետրոս իբրեւ զմարդ սահման եղ, Տէրն մեր ոչ սահմանեաց զբարերարութիւն մարդասիրութեան աստուածութեանն իւրոյ: 73 Հանապազ մեղանչեմք բանիւք եւ գործովք մերովք, եւ Աստուած տեսանէ եւ զանց առնէ, զի երկայնատուութեամբն իւրով ածցէ զմեզ յապաշխարու-

՝ Տէ՛.՝. Յ.Վ.Չ. 51:

՞ Տէ՛.՝. Մ.Մ.Ք. Ի.Չ. 26. Մ.Մ.Ք. Ժ.Ղ. 22. Ղ.՝.՝. Ի.Բ. 19:

՛ Գ.՝.՛. Բ. 27

՛ Մ.Մ.Ք.Չ. 12

թիւն. չմեղանչելն իսկ՝ է մարդոյն ի կատարեալ արդարութիւն. իսկ եթէ յանցեալ իբրեւ զմարդ, փութասցի զղջանալ յապաշխարութիւն: 74 Ի բաց են դրունք ողորմութեան նորա, ոչ փակէ ընդդէմ ապաշխարողաց. մանաւանդ որք հաւատովքն գիտեն խնդրել, նոքա եւ առաքինութեամբ կարեն ճգնել ի վաստակս հոգեւորս. նոքա ոչ միայն զպարտան թողուն ընկերաց իւրեանց, այլ եւ զինչս իւրեանց բաշխեն ի կարաւտեալս. զաւրութիւն Աստուծոյ է՝ որ ձգէ գնոսս յառաքինութիւն, որպէս եւ առաջինքն առնէին. Որ միանգամ, ասէ, գեղից եւ ագարակաց եւ ընչից տեարբ էին, վանառէին զիւրաքանչիւր ստացուածս եւ բերէին դնէին առ ոտս Առաքելոցն: 75 Տէր մեր գնոսս քարոզս բանին առաքեաց. նոքա քարոզ էին բանին, եւ ընչից մատակարարք: 76 Զայն բանի յունկն հասանէ, եւ սէր վերնոյն առանց բանի ուսուցանէր զառատութիւն. ոչ զի աղքատանալ կամէին, այլ զի այլու մեծութեան հասցեն՝ երկնաւորին: 77 Եւ դու յորժամ ընկերին թողուս զպարտիսն քո, ոչ զի ատելով ատէիր զիրան քո, այլ զի սակաւ ողորմութեամբն զոր արարեր՝ զբազմապատիկ պարտան քո զոր պարտէիր՝ թողցէ քեզ Աստուած: 78 Զայս բանից զհետ երթիլիր. յորժամ ընկերին քու մ թողուս, եւ դու թողութեան արժանի եղեր:

79 Համարձակութեամբ բանաս զբերանդ եւ ասես. Մի՛ տար զիս ի փորձութիւն, այլ փրկես ի չարէն: 80 Ոչ են կամք Աստուծոյ զմարդն տանել ի փորձութիւն, այլ ապրեցուցանել ի փորձութե-

նէ եւ փրկել ի մահուանէ. զի որ յիւր Որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն ի մահ մատնեաց, նովաւ զամենայն բարիս շնորհէ ամենեցուն՝ որ խնդրեն ի նմանէ: 81 Թէպէտ եւ ոչ է մեր կարողութիւն փոխարէն հատուցանել Աստուծոյ, որչափ կարն է մեր՝ մի՛ հեղգասցուք: 82 Սակաւապէտութիւն մեր՝ ի պահս համարեալ է, եւ չափաւոր արբումն՝ ի գինեհատութիւն, միջին հանդերձքն յանսիրտութիւն, եւ հարկաւոր ստացուածք յաղքատութիւն. վասն երանութեանն հեղաբան լինել, ընկերին ուսուցանել ցածութիւն: 83 Եթէ անքուն ոչ կարեմք լինել, մի՛ բնաւ զգիշերն քնոյ տացուք, զի մի՛ բնաւ մոռացկոտ լիցուք ի սաղմոսս եւ յաւրհանութիւնս: 84 Եթէ զկարաւտութիւն աղքատաց ոչ կարեմք լցուցանել, մի՛ պատառաւ եւ բաժակաւ կարաւտացուցուք գնոսս: 85 Մի՛ գտցի յափշտակութիւն որբոց եւ այրեաց ի ստացուածս մեր. ամենայն գինչ եւ իցէ մեր՝ նուիրեալ լիցի Աստուծոյ. յայնժամ եւ անձինք մեր լիցին նմա պատարագ հաճոյ եւ ընդունելի: 86 Ամենեցուն փութալ արժան է ի պատուիրանս Աստուծոյ՝ առնել եւ կատարել, արանց եւ կանանց, ծառայից եւ ազատաց, զի Տէր մեր վասն ամենեցուն թողութեան եկն. եւ նորա մարդասիրութեանն վայելեն փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

87 Յաջորդ ճառքդ գտանին յանուն Եղիշէի Վարդապետի. այլ հարազատութեանն եւ իմաստիցն չիք երաշխաւորել:

ՊՍԷՑՆԱԿՆԵՐ ԳԼՈՒԹՅՈՒՆ 34-35:

ՊՍԷՑՆԱԿՆԵՐ ԳԼՈՒԹՅՈՒՆ 13:

Հրաշափառ եւ պայծառ մեծի լուսաւորութեան աւուրս հանդիպեցաք, զմարգարէական գերգս առեալ աղաղակեսցուք սուրբ սրտիւ եւ կատարեալ հաւատով. Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ²⁷: 2 Եւ եւ առաքելական քարոզն գոչէ ասելով. Ահա ժամանակ ընդունելի, ահա աւր փրկութեան²⁸: 3 Երկրորդ եւ վերստին ծնունդ Քրիստոսի ըստ մարմնոյ, յետ առաջնոյ եւ անպատումն եւ անհաս եւ անքննելի ծննդեանն: 4 Այն անժամանակ ի Հաւրէ ծնունդն ոչ քննելի մտաց մարդկայնոց, եւ ոչ հասու եղեալ անմարմին եւ երկնաւոր զաւրութեանցն. բայց միայնոյ Հաւրն՝ որ զնայն ծնաւ, եւ ծնիցելոյ միածնին եւ քննողին Հոգւոյն Սրբոյ զխորս Աստուծոյ: 5 Իսկ երկրորդի ծննդեանս ժամանակեայ լինելով՝ մարմնով ի կուսէ յառաջ եկեալ, յայտնեալ երկնաւորաց եւ երկրաւորացս մասնաւորաբար, այլ ոչ կատարելապէս: 6 Իսկ երկրորդս գերագոյն խորհրդոյ զաւրութիւն. քանզի ըստ թուոյ երեսնամեայ գոլով գայ ի մկրտութիւն, կատարեալ յամենայնի ըստ աստուածութեանն, կատարեալ եւ ի հասակի մարդկութեանս: 7 Եւ քանզի երից տասանց գործէ զմարդն կատարեալ, ըստ այսմ ստեղծագործեալ եւ առաջինն Ադամ, խաբեալ յաւձէն արտաքոյ լինի փափկութեանն դրախտին. ըստ այնմ կատարելութեան տնաւրինեալ երկրորդ Ադամն ջախէ զգլուխ վիշապին ի Յորդանանու Հոսանսն:

8 Արդ ի սկզբանն շրջէր Հոգին Սուրբ առանց կերպի ի վերայ ջուրոց առ յաւրինել զտարր արարածոց, զոր կոխեաց նախանձաւոր թշնամին: 9 Աստ Հոգին աղաւնակերպ տեսեամբ զապականութիւն արարա-

ծոց վերստին հրաշագործեաց. զծածկեալ խորհուրդն յաւիտենական ծանոյց, յայտնեալ զանձնաւորութիւն Երրորդութեանն. ձայն Հաւր եւ ի վերայ սիրելի միածնի Որդւոյ: 10 Յառաջնումն ապականի երկիր ջրհեղեղաւն կորստեամբ. իսկ աստ կենագործի երկիր ջրհեղեղաւն մկրտութեամբ ոչ յընկղմումն արարածոց ըստ բնութեանն, այլ զմեղաց ընկղմէ զգործ: 11 Անդ թաղումն ի ջուրսն սեռի մարդկան գեղծումն գործեաց. աստ թաղումն ի ջուրսն նորոգումն եւ կենաց հաղորդութիւն: 12 Անդ աղաւնի շղաբեր ունելով, զաւետիս ցածութեան բարկութեանն աւետարանէր. աստ աղաւնոյ նմանութիւն զկենացն առհաւատչեայ եւ զմշտնջենաւոր յարակայութիւն առ աստուածութիւնն աւետարանէր ձայնիւ Հաւր, որ զեկուցանէր զսիրելութիւն Որդւոյ: 13 Այսաւր կուսածինն յամլորդւոյն ընդունի զձեռնադրութիւնն, Աստուածն ճշմարիտ յորդւոյ քահանայապետին, ամենասուրբն ի մեղաց ի լցելոյն Հոգւովն Սրբով յորովայնի մաւրն: 14 Այս է շարադրութիւն ազգակցութեան Մարիամու առ Եղիսաբեթ, այլ ոչ ըստ ազգականութեան տոհմից. վասն զի ոչ խառնակի ցեղն Յուդայ ընդ ցեղապետսն Ղեւեայ: 15 Եւ զայսոսիկ աւրէնսդիրն ցուցանէ:

16 Արդ զմի ճանապարհ վարեցին Քրիստոս եւ Յովհաննէս. այլ Քրիստոս տիրաբար եւ աստուածապէս եւ մարդասիրաբար, իսկ Յովհաննէս ծառայապէս, մարգարէաւրէն եւ բարեկամաբար. զմի ունելով կարապետ երկոքեան զԳաբրիէլ հրեշտակապետն: 17 Այլ ոչ համեմատի Չաքարիա ընդ Մարիամու. զի առ քահանայապետն ահիւ եւ իշխանաբար առաքեալ՝ զամլոյ արգանդին պտղաբերութիւնն քարոզէր. եւ ի չհաւանել ծերոյն՝

²⁷ Սաղմ. ճԺԻ. 27
²⁸ ԲՊԳ. Գ. 2

կապեաց զլեզուին յարձակումնն զքահանային: 18 Իսկ առ Մարիամ զաւետիս զալստեան Բանին աւետարանեաց. եւ ի չհաւանել կուսին՝ զՀոգւոյն Սրբոյ զեկաւորութիւնն պատմէ կարող այնմ խոստմանն լինել, յիշատակ բերելով զմարգարէականն բան: 19 Ուստի եւ ի լեռնակողմն հրէաստանի ընթացեալ ի նկատել զասացեալն հրեշտակապետին որ վասն յղութեանն Եղիսաբեթի, որ զազգականութիւնն առ միմեանս համեմատէր, զՄարիամուն առ Եղիսաբեթ. այս ինքն զկուսական արգանդին զյղութիւնն, եւ զամլոյն զպտղաբերութիւնն յանցեալ ժամանակի:

20 Արդ մտանէ Մարիամ ի տուն Զաքարիայ, կենդանի տապանակն ունելով յինքեան զԲանն կենդանի: 21 Իսկ Եղիսաբեթ ունելով յինքեան յիւրում տապանակին զձայն Բանին կենդանւոյ, եւ տուեալ ողջոյն Եղիսաբեթի Մարիամ, խայտաց ձայնն ընդ գալուստ Բանին: 22 Յարգանդէ յարգանդ նոր սքանչելիք լինէին: 23 Եղիսաբեթի մանուկն յարգանդէ մաւրն յորովայնի կուսին բնակեցելումն զպարտս երկրպագութեանն հատուցանէր: 24 Ո՛վ հրաշիցս. ի միում վայրկեան ժամանակի յորովայնի բնակեալքն բացայայտեն զճշմարտութիւնն. մինն ծառայաբար մատուցանէր, իսկ միւսն տիրապէս ընդունէր զխայտումն խոնարհութեանն: 25 Յետ այսորիկ հասանէր աւր ծննդեան Եղիսաբեթի. եւ կոչելով զյորջորջումն անուանն՝ լուծանի կապանք լեզուին հաւրն եւ քահանայապետին. քանզի ոչ էր պարտ ի գալ ձայնին լուել հաւրն: 26 Արդ հասանէ աւր ծննդեան կուսին, եւ խզէ զկապանս նախահաւրն քահանայապետին յաւիտենականաւ, որ կոչեցաւն Յիսուս:

27 Դարձեալ դադարէ Յովհաննէս յանապատին ամս երեսուն, եւ առաքի ի մկրտութիւն յետ կատարելոյ այնց ժամա-

նակաց: 28 Լուեալ դադարէ եւ Յիսուս նոյնգունակ. մտեալ ընդ թուոյ ամաց երեսնից՝ եւ գայ ի մկրտութիւն, անաղտն ի մեղաց, առլցեալն անդատին յորովայնէ մաւրն Հոգւովն Սրբով, առաքեալն ի Հաւրէ տիրապէս առ առաքեալն ի Հոգւոյն Սրբոյ յանապատէն ծառայապէս, Տէրն մարգարէիցն եւ Առաքելոցն առ Առաքեալն եւ մարգարէն, սկիզբն եւ անդրանիկն ամենայն արարածոց առ ի յետին մարգարէիցն եւ առ ի վերջին աւրինացն եւ առ անդրանիկն Առաքելոց եւ առ որ ի յայնմ հետէ արքայութիւն Աստուծոյ բռնադատի: 29 Այս կարապետս՝ կատարած հնոց աւրինացն Մովսէսի. եւ սկիզբն նոր աւրինացս՝ Քրիստոս: 30 Տեսե՞ր զառ ի միմեանց զճշմարտութիւնն հետեւողութեամբ, այլ ոչ համեմատաբար. զի ոչ հեռաձգեալ որոշին նմանութեամբն, եւ ոչ բովանդակին յարելութեամբ: 31 Զի թէպէտ եւ ասիցի ծնունդ եւ ծնունդ, այլ մինն կուսական, իսկ միւսն ամլական. մին ի Հոգւոյն Սրբոյ յղացեալ, իսկ միւսն սերմանական ի Զաքարիայէ սաղմնառեալ: 32 Բազում աւրինակս ունի յինքեան Եղիսաբեթ. իսկ ի կուսութեանն ծնանել եւ ի կուսութեան մնալ մաւրն, ոչ աւրինաւք եւ ոչ ի մէջ արարածոց լիեալք կամ լինելոց է կարողութիւն. բայց միայն ի միոյն ի միածնէն ըստ բարբառոյ մարգարէութեանն Եսայեայ՝ որ գուշակեաց էմմանուէլ զծնիցեայն: 33 Տեսանե՞ս զանջրպետութիւնն ի մէջ Քրիստոսի եւ Յովհաննու, մերձեալ եւ յոյժ հեռագոյն:

34 Արդ երկբայ յայտնեցի քեզ եւ զանուանցն զանագանութիւն զՅիսուսի եւ զՄկրտչին, պէսպէս եւ այլագունակ մերձենալով եւ հեռաձգելով: 35 Ասի Տէր Յիսուս, ասի եւ տէր Յովհաննէս. այլ նա ըստ բնութեան տէր եւ արարչութեան, իսկ Յովհաննէս, ըստ հասարակաց առ ի միմեանց յորջորջմանց: 36 Դարձեալ կոչի մարդ եւ Յիսուս. սակայն ոչ իբրեւ զմի ի

մարդկանէ, զի ոչ ունի ըստ մարմնոյ հայր, որպէս եւ ոչ ըստ առաջին ծննդեանն մայր: 37 Իսկ Յովհաննու հայր եւ մայր գոլով՝ յապականացու սերմանէ ունելով զմարդեղութիւնն: 38 Կոչի Քրիստոս ծառայ ըստ մարմնոյ, եթէ Որդի մարդոյ ոչ եկն պաշտաւն առնուլ, այլ պաշտել՝. ոչ ըստ բնութեանն, այլ կամաւոր աղքատութեամբ: 39 Իսկ Յովհաննէս ըստ բնութեան գոլով ծառայ հաւասար մեզ ի ծառայական կերպի: 40 Դարձեալ անուանի արեգակն արդարութեան Քրիստոս, անուանի եւ Յովհաննէս ճրագ. անուանք լուսաւորութեանն, եւ զանազանութիւն յոյժ մեկուսի. զի մին յաշխարհս լուսաւորէ անվախճան լուսովն, իսկ միւսն աղաւտաբար սուղ ինչ առ աչս մատուցանէ զտեսաւորութիւնն: 41 Ծանապարհ ասի Քրիստոս. իսկ Յովհաննէս պատրաստող ճանապարհին Տեառն: 42 Քարոզէ Քրիստոս աշխարհի ապաշխարել, զի մերձեալ է արքայութիւնն երկնից. քարոզէ եւ Յովհաննէս. այլ եւ Յիսուս ընդհանուր տիեզերաց, իսկ Յովհաննէս յատուկ միայն ազգին Հրէից: 43 Գառն է Քրիստոս բարձող զմեզս աշխարհի սակս խաչին. գառն է եւ Յովհաննէս Հերովդիադայ մոլեգնութեամբն զենեալ: 44 Նա վասն փրկութեան առ ի մոլտս սրբութեան յաւիտենականի, եւ սա վասն յանդիմանութեան աւրինացն: 45 Կարապետ կոչի Քրիստոս տիեզերաց. կարապետ ասի եւ Յովհաննէս երկնային կարապետին: 46 Մկրտէ Քրիստոս, այլ ի Հոգի եւ ի Հուր զկատարեալ մկրտութիւնն. մկրտէ եւ Յովհաննէս, այլ միայն ապաշխարութեամբ: 47 Մկրտեցաւ Քրիստոս դարձեալ արեամբ. մկրտեցաւ եւ Յովհաննէս արեամբ ձեռնադրեալ ի Հերովդիայ: 48 Քարոզէ Քրիստոս որք ընդ իշխանութեամբ մահու էին ի դժոխս. քարոզէր եւ Յովհաննէս նոյն ի դժոխս զգա-

լուստ արեգականն արդարութեան: 49 Յոլով եւ պէսպէս պատմէ կտակ աստուածային զյորջորջումն անուանցն զանազանութեանցն, որ բաւականացեալքս կալցին: 50 Բայց եւ ոչ զմեծն եւ զառաւելագոյնն թողում. ասել արժանաւոր վարկանիմ զանգուգականն եւ զարարչականն: 51 Աստուած է Քրիստոս, աստուածացոյց եւ զՅովհաննէս. Քրիստոս բնութեամբ, իսկ Յովհաննէս ըստ նորին: 52 Որպէս է որդին Աստուծոյ ըստ բնութեանն Աստուծոյ, իսկ Յովհաննէս եւ որ ըստ նորա՝ հաւատովք որդիք ըստ շնորհաց: 53 Այլ մի՛ հիացուցէ զքեզ ասացեալքդ՝ եթէ աստուածացոյց զՅովհաննէս. որ եւ զիս աստուածացուցէ, ըստ այնմ՝ եթէ երեւեսցի Աստուած իմէջ աստուած եղելոց եւ թագաւորաց. քանզի ասէ մարգարէութիւնն. ես ասացի թէ աստուածմ իցէք, կամ որդիք Բարձրելոյն՝. այլ եւ առ Մովսէս ասէ. ետու զքեզ աստուած Փարաւոնի՞: 54 Ըստ այսմ աւրինակի ասին սուրբքն աստուածք, այլ ոչ ըստ անգուգական արարչութեանն:

55 Այլ դարձեալ վերստին երկրորդելով զկարապետին շարադրելով զանուանսն եւ առընթեր զփրկչականն անուն, զի ի մեծի այսմ աւուր ընծայեցուցից ի լուսաւորական յայտնութեանս զբանից իմոց զպտուղ: 56 Առաքեալ եւ մարգարէ առաքեցելոյն ի Հաւրէ Բանին. մարգարէ՝ որ զմարգարէացեալսն տեսեր. կարապետ արեգականն արդարութեան. ճրագդ մեծի լուսոյն. արուսեակդ թափանցիկ եւ անհասանելի լուսոյն. պատրաստող կենաց ճանապարհին. բարեկամ փեսային. ձայն Բանին. քարոզ ճշմարտութեանն. ձեռնադրող այնմ՝ որ ձեռաւքն իւրովք ստեղծ զամենայն. վկայ վկայեցելոյ ի Հաւրէ Բանին. մկրտիչ՝ որ մկրտէ ի Հուր

*** Մարտի. Ժ. 45

‡ Սաղմ. 2Լ 6

‡ Եւ. Է. 1

եւ ի Հոգին. ի ծնունդս կանանց վերագոյն ամենայն արարածոց. աւետարանիչդ Սիովնի, քարոզդ Երուսաղէմի, աղաղակէիր ասելով. Ահա գառն Աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշխարհի. ահա գառն Աստուծոյ՝ որ ի խաչին պատարագի, եւ գապականութիւն արարածոցս նորոգէ ջրով եւ Հոգւով եւ արեամբ. հրեշտակ մեծի խորհրդոյ հրեշտակին, որ երիւք կատարեալ մկրտութեամբն զերից զանձնաւորութեանն կատարէր զդաւանութիւն: 57 Զրով գապականեալսն մաքրէր, որպէս առ համաշխարհական բարկութեամբն. բայց սակայն լուացումն բարկութեան եւ կորստեան, իսկ սա լուացումն կենդանութեան, եւ մաքրումն հոգւոյ ընդդիմակաց զաւրութեանն յարձակելոյն ի սատանայա-

կան հոգւոցն ազդեցութեանց: 58 Իսկ հրով, որպէս զի փորձեացէ իբրեւ զոսկի ընտիր, զի խոտանն տոչորեացի, եւ ի բանից որոշեացի ի պատուական նիւթոցն. զի գտեալ ընտիր կացուցէ զմարդկային բնութիւնս. ստեղծագործելով վերստին արարչագործեաց: 59 Այս է մեծի մկրտութեանն զաւրութիւն, լուսաւորութեանն պայծառութիւն, որով Հայր յայտնի եւ Որդի ճանաչի եւ Սուրբ Հոգին քարոզի. մկրտչին պատին համբաւի. մկրտեալն զմկրտչին առաւելութիւնն քարոզէ ասելով. Ձէ յարուցեալ ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս. բայց փոքրիկն յարբայութեան երկնից մեծ է քան զնա՞: 60 Նմա փառք յաւիտեանս. ամէն:

Ի ԹԱԲՈՐ ԼԵՐԻՆ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ԱՌ ՊԵՏՐՈՍԵԱՆՑ

Մինչդեռ երթային նորա ի ճանապարհի, ասէ Տէր մեր ցերկոտասանսն. 2^ո ուստե՛ք ասեմ զիմէն մարդիկս՝ թէ իցեմ^ա: 2 Պատմեցին նմա զարտաքնոցն, զի այլ ընդ այլոյ կարծէին: 3 Ասէ ցնոսա. Իսկ դուք զի՞նչ ասե՛ք զիմէն^բ: 4 Յառաջեցաւ Պետրոս եւ ասէ. Դու ես Գրիստոս Յիսուս որդի Աստուծոյ^գ: 5 Գովեաց Տէր մեր զգեղեցիկ վկայութիւն նորա, եւ Հաւր իւրում ետ զյայտնութիւն շնորհին. եւ զի դեռ եւս Պետրոս այսր եւ անդր զեզերէր, կարծէր եթէ Քրիստոս ոչ մեռանիցի, ոչ քաջ գիտացեալ՝ եթէ մահուամբն նորա մահ մեռանի եւ աշխարհ կենդանանայ. ետես Տէր մեր եթէ մոռացաւ Սիմոն զերանութիւնսն երկնաւորս, արկ մորմոքումն բանից ի լսելիս նորա. բոլոր ինքն շարժեցաւ յազգիսն երկիրդէն իբրեւ լուաւ ի Տեառնէ, եթէ Պարտ է որդւոյ մարդոյ բազում չարչարանս ընդունել, մեռանել եւ յերիւ աւուր յառնել^դ. յոյժ տրտմեցոյց անուամբ մահուն, եւ առաւել քան զյոյժ մխիթարեաց աւետեաւք յարութեանն: 6 Իսկ նորա ի մեծ տագնապէ մահուն յիշատակաւք մոռացաւ զաւետիս յառնելոյն. որպէս եւ է տեսանել ի բնութեանս մերում. Հին ախտքն բնութեանն մեղացն՝ ոչ տայ թոյլ վաղվաղակի եկամուտ նորոյ կենացս ի ներքս անկանել. որպէս եւ որդիք ժողովրդեանն Հին կուրութեամբն խանտային ընդ նորոյ կենացս երեւումն, անուանելով զնա Եղիա կամ Երեմիա կամ զայլ ոք յառաջին մարգարէիցն, չար ի մխիթարութիւն անձանց իւրեանց մահկանացուացս: 7 Մահկանացու կարծէք՝ զմիտս ժողովրդեանն

յերկուացուցանելով յայնմանէ, որ եկն կատարել զբանս մարգարէիցն: 8 Նովին ախտիւ խաւթանայր եւ Պետրոս. զվկայութիւնն զեղեցիկ մատոյց, զխորհուրդսն չարաչար հիւանդացոյց. իբրեւ յանգագ սաստկագոյնս ընդդէմ չոգաւ. Քաւ քեզ, մի՛ լիցի այդ բանէ՛ ասէ: 9 Զբոլոր Հին կարծիս մտացն ած թափեաց, զառաջին զեղեցիկ վկայութիւնն ելոյժ. Հայր յայտնեաց նմա զբոլոր աստուածութիւնն Որդւոյ, զի աստուածութեամբ եւ մարդկութեամբ զչարչարանսն ընդունիցի, եւ որ չարչարիցի՝ նոյն եւ յառնիցէ: 10 Յայսմ աւետիս խնդալ էր ամենեցուն, եւ ոչ ըղձիւք արգելուլ զնա յերկոցունց: 11 Տեսե՛ր, ուր զաստուծոյան խաւսեցաւ, երանի ետ նմա. իսկ ուր ըստ Հին մարդոյ խորհեցաւ, ասաց նմա յայտնապէս. Յետս երթ, սատանայ, զի ոչ խորհիս զԱստուծոյն, այլ զմարդկանս՝:

12 Մարդոյ խորհուրդք իբրեւ զծուխ անպիտան են. ի ծուխ անդր սաստեաց եւ Հետակորոյս արար զնա ի նոր մարդոյս, զի իցէ ինքնածագ լոյս առանց ապականացու խորհրդոյ, որ եւ արքունիքն իսկ անուանելոց էին՝ յորս սաստեաց. եւ առ ընկէց զնա յետոյ իւր, զի ինքն զկամս Հաւր իւրոյ կատարիցէ առանց գայթակղութեան իրիք զնելոյ: 13 Ուսոյց եւ նոցա չարչարանս ընդունել յիւրաքանչիւր անձինս, եւ անդէն առ նմին յուսով յարութեամբ Հաստատեաց զնոսա. ոչ միայն որ յապայն լինիցի, այլ զի եւ առժամայն փոքր ի շատէցուցցէ զնմանութիւն երկրորդ գալստեանն իւրոյ, որպէս եւ ասէ իսկ անսուտ վկայութեամբ. Արդարեւ ասեմ ձեզ, իցեմ ոմանք որ այժմ աստ կայցեմ, մի՛ մաշակես-

^ա Մատթ. Ժ. 9 13
^բ Տէ՛ս. Մատթ. Ժ. 9 15:
^գ Տէ՛ս. Մատթ. Ժ. 9 16:
^դ Տէ՛ս. Մատթ. Ժ. 9 21, Մարկ. Է 31:

^ե Տէ՛ս. Մատթ. Ժ. 9 22:
^զ Տէ՛ս. Մատթ. Ժ. 9 22:

ցեմ գմահ, մինչեւ տեսցեն զարքայութիւնն Աստուծոյ, զի եկեալ հասեալ իցէ զաւրութեամբ իւրով^ա:

14 Եւ յայսմ տեղոջ երեւի ոմանց սակաւիկ մի ընդդէմ միմեանց բանք աւետարանագրացն: 15 Մատթէոս յետ վեց աւուր ասէ. իսկ Ղուկաս եւ Մարկոս յետ ութ աւուր ասեն. այլ մեք բաւական համարիմք զոմանց ասացեալսն. Մատթէոս, ասեն, զաստի անտիսն եթող եւ միայն զմիջոցն ա՛ռ ի համար. իսկ երկուքն եւ զխոստանալն եւ զերեւելն հանդերձ միջաւն. եւ հաճոյ թուեցաւ ամենեցուն ընդունել զայս. եւ մեք ի նոցուն հաւանիմք միաբանեալ, որպէս ցուցանէ մեզ Մարկոս աւետարանագիր. եւ եղեւ յետ բանիցս այսոցիկ իբրեւ անցիմ աւուրք ուր^բ, առեալ Տէր մեր ընդ իւր զՊետրոս եւ զՅակոբոս եւ զՅովհաննէս, եւ ել ի լեառն մի բարձր առանձինն. եւ յայլակերպս եղեւ առաջի նոցա, եւ ձորձք իւր եղեն փայլուն եւ սպիտակ յոյժ, որպէս զի ոչ կարէին թափիչք երկրի այնպիսի ինչ սպիտակացուցանել. եւ երեւեցան նոցա Մովսէս եւ Եղիա զի կային եւ խաւսէին ընդ Յիսուսի եւ պատմէին զելս նորա զոր կամէր կատարել յերուսաղէմ: 16 Յայս վայր սուրբ աւետարանագիրս երկրորդեաց զյայտնութիւնն երկնաւոր: 17 Յամենայն բանս աստուածային գրոց՝ յոյժ է զարմանալ հողեղէն բնութեանս. իսկ յայնպիսում յերկնաւոր երեւման՝ ոչ միայն մեք տկարանամք, այլ եւ անմարմին զաւրութիւնք երկնից: 18 Զբոլոր ժամանակսն զոր շրջեցաւ Տէր մեր յաշխարհի՝ առաւել զանցուցանէ ըստ մարդկան խոնարհութեանս. իսկ ի լերինս յայսմիկ՝ եւ ըստ հրեշտակացն անցոյց ահաւորութիւնն. ոչ միայն զի ինքն լուսեղէն փառաւքն երեւեցաւ, այլ զի եւ զմահուն եբեկ դրունս, եւ զառաքելոցն կատարեաց զխոստմունս. Աստուծոյ, ասէ, այսպէս լաւ խորհել, զի առանց մեր մի՛ ինչ կատարեսցի^գ: 19 Եւ Դաւիթ յաղաղակելն իւրում ասէ. Ինձ սպասեմ արդարք մինչեւ հատուցես^դ: 20 Եւ երկրորդ մեծ ճայնիւքն ի մեծամեծաց մինչեւ ցփոքրկունս՝ կատարածին ոչ ուրուք ընկալեալ լինի զհատուցմունսն իւրաքանչիւր. որպէս ի միում շաբաթու հաստատեաց զամենայն արարածս, ի միում աւուր շաբաթանան երկինք եւ երկիր, եւ ամենայն մարդ ընդունի ըստ վաստակոց իւրոց: 21 Արդ էած ընդ իւր զՄովսէս եւ զԵղիա ի վկայութիւն. զի Մովսէսիւ զյարութիւն մեռելոցն ուսուցանէ նոցա, եւ Եղիայիւ ցուցցէ զսիրելի մահ աստուածութեանն իւրոյ նոցա, որում Եղիայն յոյժ էր տեղեկագոյն, եւ ցանկայր թէ ե՛րբ լինիցի տեսանել. եւ տեղին ճշմարիտ էր արքայութիւն, քանզի լիով էր անդ միասնական երրորդութիւնն: 22 Եւ վասն զի ոչ է Աստուած ի տեղոջ, երեւեցաւ մարմնականացն իբրեւ զտեղաւոր. եւ ի տեղոջն ուր Աստուածն գումարեցաւ՝ առանց պատկառելոյ անուանի արքայութիւն. քանզի այն իսկ է արքայութիւն՝ ուր աստուածութիւնն երեւի:

23 Եւ դու, ո՛վ տէր իմ Պետրոս, ընդէ՞ր զահի հարեալ ես ի մահուանէդ, ուստի բոլոր բարիքն զեղանին աշխարհի. զոր եւ այժմ իսկ յայլոց զդոյն լուիցես. զի ասէ աւետարանագիրն եթէ Մովսէս եւ Եղիա զելս նորա պատմէին զոր կատարելոցն էր յերուսաղէմ: 24 Արդ իբրեւ ետես Պետրոս, եթէ մեռեալք եւ կենդանիք զնոյն բանս քարոզեն, եւ ինքն կամաւք Տէր յայն եկեալ է Հաւր միաբանութեամբ, եւս քաջ վտանգեցաւ յառաջին երկիւղն. քանզի հաստատեալ գիտաց եթէ ի մահուանէ Տէր մեր ոչ է զանգիտելոց, եւ մեզ թողուլ եւ փախչել զսա անհնար է. նա եւ զայն եւս

^ա Տե՛ս. Ղ.՝ Գ. Թ. 27:
^բ Տե՛ս. Ղ.՝ Գ. Թ. 28:

^գ Տե՛ս. Ե. Բ. Ժ. 40:
^դ Ս. Գ. Ժ. Ե. 8

քաջագոյն ածէր զմտաւ՝ եթէ յորժամ իջանէ սա ի լեռնէ աստի, պարզ յերուսաղէմ երթայ, ուր մեզ կասկած իսկ է մահու. վասն այսր խղճի մտաց իւրոց սկսաւ ասել ցՏէր, զի հրամայեսցէ առնել տաղաւարս իւրաքանչիւր նոցա, եւ զՄովսէս եւ զԵղիա մի՛ արձակեսցէ անդրէն. որպէս թէ ասիցէ ոք ի կարծիս մտաց իւրոց, թէ չիք յայսմ լերին իշխանութիւն մահու, եւ եթէ ի լեռոնս յայս մահ երկնչի ելանել. Հրեայքն իսկ ոչ կարեն յանդգնել ի սա. ապա եթէ եւ մեք իսկ երթիցուք յերուսաղէմ, յորժամ եւ Մովսէս եւ Եղիա ընդ մեզ իցեն, ոչ կարեն քահանայքն խուսել զմեզ. քանզի յոյժ տեղեկագոյն են սաստիկ ահին սոցա: 25 Այն Մովսէս է այս որ յանապատին բիւրս բազումս կոտորեաց ի նոցանէ, եւ բանիւ հրամանաւ սորա բացաւ երկիր եւ եկուլ զբանակս նոցա: 26 Չեն անտեղեակ եւ վասն Եղիայի, թէ սակաւիկ ինչ խոժոռին ընդդէմ սորա, կապէ զերկիրս եւ արգելու զանձրեւ ի սոցանէ. եւ եթէ եւս յանդգնեսցին՝ իջուցանէ հուր յերկնից եւ այրէ զթշնամիսն ճշմարտութեանն. ի բազում տեղիս գիտեն զգաւրութիւն ահի սորա, ոչ միայն անուանեալ քահանայքն, այլ եւ արտաքին ուրացողքն նոցա. չէ մոռացեալ նոցա զսատակումն զութհարիւր քրմաց նոցա զոր ինքն իւրովք ձեռաւքն կոտորեաց ի հեղեղատն Կիչոնի. եւ եթէ Աքաբ թագաւոր երկնչէր ի սմանէ, ո՞րչափ եւս Աննա եւ Կայիափա՝ որ տկարագոյնք են քան զԱքաբ:

27 Վասն այսր ամենայն կարծեաց նոցա որ մարդկաբար երկնչէին, յոյժ ողորմեալ նոցա Հաւր ի վերուստ ասէ. Դա է որդի իմ սիրելի, դմա լուարու՞մ: 28 Ծառայք երկրաւորք պահապանք լինէին տեառն իւրեանց. զի երկոքեան անկեալք են ընդ ախտիւր երկիւղի. երկնից տէրութիւնն ոչ ինքն յուժեքէ պահեալ լինի, այլ

նա պահէ զամենեսեան իւրով զաւրութեամբն: 29 Եւ տաղաւարս հարկանել դուք մի՛ աշխատիք. եթէ կարի ջեռարուք, ահա տուեալ է ձեզ ամպ հովանի, ընդ ամպովդ հովանեաւ զովացարուք: 30 Այս բարբառ իբրեւ եկն նոցա յերկնից, հայեցան տեսին յՅիսուս միայն. եւ ապա կարացին իմանալ, եթէ յահէ անտի թմբեալ էին նոքա, եւ ոչ գիտէին զի՛նչ խաւսէին: 31 Եւ եթէ թմբեալս կոչէ զնոսա գիրն, զիա՞րդ ծանեան զՄովսէս եւ զԵղիա. յայտ է թէ յիմարելոց էին թմբեալք, այլ ոչ ի լսելոյ եւ յիմանալոյ. զոր աչաւքն տեսին՝ ճշմարիտ էր, եւ զոր ականջաւքն լուան՝ չէր սուտ. այլ քանզի կարի ահագին էր ժամն, ոչ կարաց մարդկային բնութիւնն հասու լինել երկնաւոր բնութեանն. վասն զի այսր եւ անդր սայթաքէին եւ մեղադրել ոք ոչ կարէր: 32 Զի եթէ մեծն Աբրահամ զվերին զաւրութիւնսն բոլորովին մարդացեալս ետես, բախելով ի յոգիսն՝ ոչ կարէր կալ ի վերայ ճշմարտիւ, այսր եւ անդր տարաբերէր զմիտսն. տեսանէր երիս եւ մի կարծէր, կարծէր մի եւ խաւսէր ընդ երիս. երեւէին մարդ, նա իմանայր Աստուած. եւ ո՞ իսկ ի հողեղէն բնութեանս կարասցէ ճշմարտիւ կալ եւ իմանալ զայն զանբաւ մեծութիւն. ոչ միայն մարդիկ մարմնաւոր, այլ եւ ոչ պարզ բնութիւնքն երկնից: 33 Յիրաւի կոչէ գիրն թմբեալս զնոսա. յորմէ զաւրութենէ լերինք հալին եւ անդունդք ցամաքին, եւ ամենայն թանձրահող երկիրս ի հիմանէ դղրեալ սասանի. ողորմութեամբ իւրով խնայէ ի մեզ, զի գործք ձեռաց նորա եմք. որպէս հանապազ յամենեսեան եւ այն աւր երկեան ի լերինն:

34 Գիտեմք զի աստուածային գիրք այլ ընդ այլոյ չխաւսին, այլ զամենայն պատմեն ճշմարտիւ. բայց է բան, որպէս ասի՝ նոյնպէս եւ իմանի. այլ պիտոյ է ծածկեալ մտաց բանին յայտնութիւն, որ հաւատովք ընդունին ի փրկութիւն ան-

՝ Տէ՛.՝. Մարթ. Ժ. 5, Մարթ. Թ. 6, Գ.՝. Թ. 35:

ձանց: 35 Ծանեան, ասեն, պետրոսեանք
 զՄովսէս եւ զԵղիա. իբրեւ ասես, եթէ այո՛
 ծանեան, զիա՞րդ ասեն ծանեան՝ զոր ոչն
 գիտէին. քաջ ի միտ առ զգաւրութիւն բա-
 նին, եւ մի՛ մոռացկոտ լինիր իբրեւ գտէր
 Պետրոս. ի գլուխ ճառիդ ընթերցիր, արքա-
 յուլութիւն ասաց տեղւոյն. չիք անդ մոռա-
 ցումն մարդկային, այլ յիշողութիւն ան-
 մոռացման. քանզի մեզ նմանութեամբ էր
 տեղին արքայութիւն, իսկ առ աստուա-
 ծութիւնն ամենայնիւ բովանդակ: 36 Ու-
 սոյց մեզ Տէր ոչ զբնական դպրութիւնս
 այլ զիմացական գիտութիւնս. իբրեւ թէ
 փոխեցան արքն յերկրէ յերկինս, զաստի ի-
 մացմունս թմբբութիւն կոչեցին. զանտեսն
 ճանաչելով՝ արքայութեան մանկունս ա-
 նուանեաց, եւ մարգարէութեան մանկունս.
 ուսոյց նոցա գիտութեամբ, զի ոչ եւս կա-
 րաւտանայցեմք յերկնաւոր ժառանգու-
 թեանն, անծանալթա լինել առաջնոց, միջ-
 նոց եւ վերջնոց: 37 Յորժամ արքայու-
 թեան որդիք լինիցին արժանաւոր մարդիկ,
 ծանալթութիւն յաստուածատուր շնորհէ
 անտի բաշխի. զոր այժմ մտաւք իմանամք՝
 ընդ հայելի աւրինակ անուանեցաւ:
 38 իսկ յորժամ մարմնական քող ի մէնջ
 բարձցի, դէմ յանդիման տեսանեմք զաս-
 տուածութիւնն որպէս եւ մարթի, զհրեշ-
 տակաց բնութիւն բովանդակ, զանծա-
 նալթան իբրեւ զանձինս մեր, արտաք-
 նովքս իբրեւ զարտաքին դէմս, մտաւք
 զարտաքին եւ զներքին: 39 Եւ զի դեռ եւս
 պետրոսեանք մարմնաւորք էին, կաթեաց ի
 նոսա նշոյլ իմանալի շնորհին ի յոգիսն.
 բաւանդակ ծանեան զՄովսէս եւ զԵղիա.
 իսկ արտաքին զգայութեամբք էր ի տեղ-
 ւոջ անդ՝ որ այլ ընդ այլոյ խաւսեցան. եւ
 այլոյ մասամբ դարձեալ ողորմեցաւ նոցա
 Աստուած. այն է՝ զի հաւաստեալ ծանեան
 զՄովսէս եւ զԵղիա. եւ զի մի՛ ինչ գէգ
 մնասցէ ի միտս նոցա, ի բանից անտի նո-
 ցա եւս քաջ հաստատեցին զծանալթու-
 թիւնն: 40 Նորա յայտնի խաւսէին ընդ

Տեառն, եւ սոքա զամէն լիով լսէին ի նո-
 ցանէ, եւ զոր լուանն՝ այլ ոչ իմացան. զի
 եթէ մոռացեալ էին՝ եւ գրէին ոչ աւետա-
 րանագիրքն:

41 Բայց խնդիր այս կայ առաջի.
 զի՞նչ արդեաւք Մովսէս խաւսէր ընդ
 Տեառն, եւ կամ զի՞նչ Եղիա երկրորդէր ա-
 ռաջի նորա: 42 Աւետարանիչն պատմէ ե-
 թէ զելս նորա ասէին զոր կատարելոց էր
 յերուսաղէմ. ելք նորա մահ նորա է, եւ ի
 մահուանէ իսկ նորա եղեն ամենայն բա-
 րութիւնքն երկնաւորք: 43 Եւ ո՞ւր ար-
 դեաւք գրեաց Մովսէս վասն մահու որդե-
 ւոյն Աստուծոյ: 44 Մի՛ այդպէս հարցա-
 ներ ցիս թէ ո՞ւր արդեաւք գրեաց. ամե-
 նայն մարգարէք եւ աւրէնք վասն մարդա-
 նալոյ Բանին Աստուծոյ պատմեցին մեզ,
 չարչարելոյ եւ մեռանելոյ եւ յառնելոյ. ի
 Ծնունդն. Մարգարէ անգ յարուցել Աս-
 տուած յեղբարց անբոց՝ յաւրէնսդրութիւն
 նորոց կտակարանաց. մի՛ իբրեւ զիսն ասե-
 լով՝ նմա լուիջիք, զիւր աւրէնսն լոկեցոյց.
 զՏեառն յառաջ հրամայեաց մատուցա-
 նել, ի մկրտութիւնն, ի ծովն, յամպն, ի
 սիւն հրոյն, ի խոցումն կողիցն, ի վտակա-
 բուխ վէմն: 45 Եթէ յինէն ոչ ընդունիս,
 յԱռաքելոց հարկաւ՝ որ ընդունիս. Վէմն,
 ասէ, որ երթայր զհետ ժողովրդեանն՝ նա
 ինքն էր Քրիստոսէ. ի փայտ խաչին, ի գա-
 ւազանն նշանագործ, ի մահ անարատին, ի
 հեղումն արեան զառանցն յեգիպտոս, ի
 գաւրութիւն մահունն՝ փրկութեամբ նոցին
 ի ծառայութենէ, զաւետիս յարութեանն,
 զայն սուրբ ոսկերքն Յովսեփու պատմէին
 նոցա. մեռեալք զկենդանիս ապրեցուցին ի
 մահուանէ. զվերանալն նորա՝ մեծն Դա-
 ւիթ գրեաց նոցա եւ ամենեցուն. Համբար-
 ձաւ Աստուած արհնութեամբ եւ Տէր մեր
 ձայնի փողովք: 46 Զայս ամենայն եւ Ե-

* Տէ՛.՝.Գ.՝.բ.՝.Գ.՝.22:
 † Տէ՛.՝.Ը.՝.Կ.՝.Ժ.՝.4:
 ‡ Ս.՝.Գ.՝.Խ.՝.Գ.՝.6

զիա գիտէր, քանզի մի հոգի էր որ խաւսէր յամենեսեան, միաւրինակ գիտէին ամենեքեան. էր ոք որ սակաւ բանիւք զայս ասէր, եւ էր որ բազմագոյն առնէր զյանդիմանութիւնն, սակայն զաւրութեամբ զսոյն երկրորդեն: 47 Զայս ամենայն խաւսէին ընդ Տեառն Մովսէս եւ Եղիա, զի Առաքեալքն վկայ լինիցին անսուտ բանից նոցա, եթէ վաղու հասեալ էր դատավճիռն մահու ի վերայ նոցա, եւ մի՛ ոք իշխեսցէ լինել ընդդէմ բանիցն նորա. եւ որպէս երեւեցաւ յայտնի, յայնմ հետէ այլ ոչ ոք իշխեսց երկրորդել զնոյն բանս առաջի Տեառն:

48 Բայց դու իբրեւ լուիցես զկալն մովսիսեանց եւ խաւսել ընդ նմա, մի՛ վարկարարազի անփոյթ առնիցես եւ մի՛ սակաւ բանս իմանայցես, եւ մի՛ ընդ վայր շատխաւսութիւն համարեսցիս. քաջ զմտաւ ած եւ տես զպատուական արսն. եթէ միտ դնես, զբոլոր երկրային արքունեաւքս զանց առնէ տեղին. եւ կամ ո՛յր առաջի կանն, եւ կամ որք կանն՝ եթէ ոչ զերկնից մեծութիւնն ունէին, ոչ կարէին առաջի Տեառն երկնից կալ եւ խաւսել ընդ նմա. այլ սիրով իւրով ած զնոսա, եւ ողորմութեամբ իւրով մերձեցոյց առ ինքն, եւ ներելով իւրով արար նոցա զունկնդրութիւնն. վասն որոյ կարացին լինել յերկարաբանք: 49 Թուի ինձ թէ յոյժ ողբային զազգատոհմն, զի գութ ունէին ի վերայ զաւառացն վասն քաղցր արմատոյն. թէպէտ եւ լեալ էր ի նոցանէ յառաջ արգարք բազումք, յայնմ ժամանակի չար տեսանէին զամենեսեան: 50 Ըշմարտեցին եթէ եկն եհաս ժամանակ, եւ մերձեցաւ աւրն յորում շիջանելոց էր նոցա ճրագն առկայծեալ, եւ եղէզն ջախջախեալ արմատաքի խելոց էր. ի ծածուկ ողբային զազգն ի միտս իւրեանց. տեսին եթէ ամենայն ինչ նոցա ի հեթանոսս փոխելոց է, եւ նոքա մնան լոկ իբրեւ մարմին առանց շնչոյ: 51 Տեսին եւ զբարերարութիւնն Աստու-

ծոյ, որ ոչ կամի ընդ կորուստ եւ ոչ ընդ մի մարդոյ, համարձակեցան հարցանել ցՏէր՝ որ գիտէր զծածուկս սրտից նոցա, եթէ գուցէ՞ ինչ հնարս, ասեն, այլով աւրինակաւ քեզ չմեռանել, եւ ազգին չկորնչել, եւ հեթանոսաց լինել փրկութիւն: 52 Իսկ Տէր մեր ոչ տրտմեցոյց զսիրելի ծառայսն իւր, այլ զհարցումն պատասխանւոյն ի կամս Հաւր իւր արար:

53 Գուցէ ասիցէք ցիս, ուստի՞ իշխեսցեր զանգիրսդ երկրորդել: 54 Ես իսկ տեսի զՏէր զի լայր զԵրուսաղէմ, եւ յոյժ լայր զազգն ընտրեալ. նոյնպէս մեծ էր, զի այսաւր ի վերայ երեսաց իւրոց յաղաւթս անկաւ առ Աստուած. ոչ մարդ էր դուզնաքեայ, այլ բոլոր զաւրութեամբ իւրով, յերկար տաժանութեամբ զողջոյն գիշերն, մինչեւ քրտունք սաստիկք հոսեցան ի նմանէ: 55 Եւ ի կատարել աղաւթիցն, զմովսիսեանց հարցուածն երկրորդէր. Հայր, ասէ, եթէ հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն՞. եւ անդէն վազվազակի զխնդիր իրացն ի կամս Հաւր իւրոյ ապաստան առնէր: 56 Եւ դարձեալ եկաց յաղաւթս, եւ զնոյն բանս երկրորդեաց: 57 Եւ մեզ այս կարեւոր է ուսանել քան զամենայն. որպէս նա ըստ կամս Հաւրն ոչ կամեցաւ ելանել, եւ մի՛ դու ըստ նորա կամսն ելանիցես: 58 Վասն որոյ եւ եղիայեանք ոչ կարացին մեղադիր լինել Տեառն. նոյնպէս եւ պետրոսեանք որք ականատեսք եղեն, ոչ միայն մեղադրեալք, այլ եւ նոքա շնորհակալու ընդ ամենայն տիեզերս: 59 Այս է յերկարաբանութիւն արանցն առ Տէր, ոչ միայն շատ խաւսելով ընդ նմա, այլ ամենեւին չգնալ ի նմանէ, նա եւ եթէ հնար ինչ գուցէ՞ մեռանել ընդ նմա. եւ եթէ Մովսէս ոչ մարթէր կրկին մեռանել, վասն Եղիայի՞ եթէ Տէր կամէր՝ գոյր հնար: 60 Յորժամ առաջին հարցուած նոցա ի գլուխ ոչ չոգաւ, վասն երկ-

՞՞ Մատթ. Ի, 9 39

րորդին յոյժ էին ցանկացեալք: 61 Ո՞ք ի սիրելի զաւրականացն մնասցէ ի պատերազմէ, յորժամ թագաւորն ինքնին ի վերայ թշնամւոյն ելանիցէ: Եւ եթէ երկրայինքն զայս առնեն, որք յերկբայս են յաղթիլ քան թէ յաղթել, քանիաւ՞ն յաւժարութեամբ երկնաւորին լինել նահատակակից. զի ոչ մահու կասկած առաջի կայ, այլ անմահ կենաց յաղթութիւն: 62 Յայսմ պատերազմէ ոչ ումեք աւրէն է զանդիտել, ոչ արանց եւ ոչ կանանց, ոչ արդարոց եւ ոչ մեղաւորաց, թէ հնար է՝ գուցէ եւ երկնաւորացն: 63 Բայց սա աւաստիկ թէպէտ եւ Եղիայի կարի անձկալի՝ լինել նմա խաչակից, բայց արգել զնա Տէր, զի մի՛ ոք յարդարոց խաչեսցի ընդ նմա. քանզի ոչ իսկ էր եկեալ եթէ վասն արդարոց խաչեսցի, այլ վասն բարւոյ՝ որպէս եւ համարձակեցաւն իսկ մեռանել, զի իւրով մահուամբն զամենեցուն մահ խափանեսցէ: 64 Արգել զԵղիա ի մահուանէ, զի մի՛ գտուեալ պատիւն հանցէ ի նմանէ. եւ ոչ միայն զԵղիա արգելու լինել իւր մահակից, այլ եւ ոչ զմի ոք յարդարոց՝ ոչ կամի եթէ ոք մեռցի ընդ նմա, այլ ի մեղաւորաց, ոչ իւրով բանիւ, այլ զոր քահանայապետքն կամեսցին. յայնժամ թերեւս եւ անդ երեւեսցի նորա բարերարութիւնն, զոր եւ յառաջագոյն իսկ ասացեալն է, եթէ վասն մեր ընդ անաւրէնս համարեցաւ: 65 Առ սէր իւր խնայեաց յԵղիա, զի կեցցէ յանմահութեան պարգեւին, եւ լիցի քարոզ երկրորդ զալստեան նորա:

66 Գիտէ Աստուած զինչ գործէ, եւ զբարին ինքն առանձինն կատարէ. շատ իցէ քեզ եթէ ի նորա յոյսն զիտիցես վայելել, եւ յորժամ նա դուռն բացցէ քեզ. ապա եթէ կամիս՝ եւ դու կարես գործել իբրեւ զնա, որպէս եղեւ Առաքելովքն եւ լինի Քրիստոսիւ մինչեւ ցայսաւր: 67 Գիտեմ զի բազումք ցասուցեալ են ինձ. Տէր մեր, ասեն, զարքայութիւնն եցոյց ի լերին անդ, եւ դու եկեալ զմահու ճառս պատմես մեզ:

68 Միտ դիր ճառիդ, եւ անտի հաւանիս. ելանել իսկ նոցա ի լեռանն՝ մահու պատճառք եղեն սկիզբն. եւ եկեալ մովսիսեանց զնոյն երկրորդեցին առաջի Տեառն, եւ մեք ի նոյն ճառ տեսաք զարքայութիւնն: 69 Յոյժ սպիտակ էր պայծառութիւն ձորձոյն եւ անցանէր ըստ արեգակնային ճառագայթս այն. ըստ արժանաւոր տեղւոյն եւ հանդերձիցն վայելչութիւն պիտոյ էր. այլ կատարեալ այնիւ էր արքայութիւնն՝ ուր Հայր եւ Որդի մարդկան յայտնին. զայն եւ անփոփոխ իսկ է իմանալ, անանց կալ մնալ յաւիտենական: 70 Բայց ի սպիտակութիւն ձորձոյն սակաւիկ մի ակնարկեցից ի մահ անմահին: 71 Ամենայն արածք յանմիտութար սուգ նստէին. վասն զի անմահին Աստուծոյ անմահ պատկեր՝ մարդս է. ընդ մահուամբ անկեալ դնէր յանլոյժ խաւարի, եւ սգածէին առ հասարակ արդարք եւ մեղաւորք, եւ ծանրալից հանդերձ սգոյ ունէին, որ է նմանութիւն խաւարի. եւ ոչ ոք կարէր յեղելոցս զծանրութիւն սգոյն բառնալ յաշխարհէ, բայց միայն այնիւ էր հնար՝ որով եղեւն ամենայն: 72 Արդ զարդարեցաւ ի մահն իւր, ոչ երկրային պատուական հանդերձիւք, այլ բնական ինքնածագ լուսովն իւրով, զի հալածեսցէ յաշխարհէ զիշխանութիւն խաւարի, եւ զթախձալից տրտմութիւն մարդկան միտարեսցէ. եւ զներկուած հին տրտմութեանն՝ իւրով անապական լուսովն սպիտակացուցէ: 73 Եւ մարդիկ որ ի վերայ մահուան սիրելեաց իւրեանց տխրին եւ մթանան, եւ գրեթէ կենդանոյն զմահ ճաշակեն, հայեսցին նոքա ի զուարթութիւն պայծառութեան մահու որդւոյն Աստուծոյ, եւ բարձցի ի նոցանէ սուգն անյոյս տրտմութեան, եւ լցցին յուսով յարթութեամբն, եւ մի՛ եւս այլ երկիցեն ի մահուանէ, որ դողացոյց զարդարս եւ զմեղաւորս: 74 Վասն այսորիկ խաւսիմք ի տեղւոջ աստ զճառս մահու, զի տեսանեմք ի սմա զարքայութիւն երկնից, որ եկեալ հա-

սեալ է զաւրութեամբ իւրով մեծաւ համարձակութեամբ: 75 Ոտն հարկանեմք ի վերայ մահու. վասն զի յուսով ի վերայ արքայութեան տեսաք զանձինս. հաճեալ եմք ընդ տեղի լերինս, ուր կրկին յայտնութիւնն եղեւ առ մեզ, մանաւանդ թէ երեքկին. մեռեալ գիտէաք զՄովսէս եւ կենդանի տեսաք. նա երբք զաւետիս յարութեան ամենայն մարմնոյ: 76 Կիսահաւատ ազգն Հրէից զհոգին Եղիայի յափշտակեալ խոստովանէին, եւ զմարմինն իբրեւ զանպիտան ինչ գոյացութիւն ի վայր ընկեցեալ. եկն երեւեցաւ բովանդակ հոգևով եւ մարմնով, զի բարձցէ զխիճդ ի մտաց նոցա, եթէ կամեսցին ընդունել: 77 Կարծէաք եթէ ոչ անցանէ թագաւորութիւն մահու. տեսաք անդ ի լերին զմահ մեռեալ եւ զկեանս թագաւորեալ:

78 Եթէ դուք կամիք՝ անդէն ի ճառս լերինն դարձցուք, քանզի եւ իջեալ իսկ չեմք ի լեռնէ անտի. եւ մինչ անդն եմք՝ զանտիսն եւեթ խաւեսցուք. եւ զինչ անդ բանքն են՝ համակ զնովիմբ եկեսցուք. եւ եթէ առ ի պէտս այլոց բանից իջցուք ի լեռնէ անտի, դարձեալ ի նոյն լեռոն ելցուք. եթէ երկիցս եւ եթէ երիցս, սակայն զնոյն արասցուք. մինչեւ կատարեսցի ճառս, շուրջ զլերամբն փակեսցուք: 79 Բայց առ այժմ ի վեր անդ գտէր Պետրոս հարցանել պարտ է, եթէ առ ի՞նչ սիրեցեր այդչափ զլեռոնդ եւ այդք կամիս առնել քեզ բնակութիւն, քեզ եւ ընկերացդ. եթէ առնիցես՝ սակաւիկ մի պատեհագոյն է քեզ եւ Տեառն եւ Մովսէսի: 80 Եւ այդ ինձ կարի պատեհագոյն թուի: 81 Յարեաւ, ասէ, ի մեռելոց, վասն այսր կամիմ թէ աստ կայցեն: 82 Յարուցեալ՝ որ տաղաւարի կարաւտանայ, այնմ եւս յարութեան իսկ չէ արժան ասել, այլ երազ եւ առ աչաւք երեւումն: 83 Ուրեմն չեւ եւս տեղեկացեալ վասն յարուցելոյն, սակաւ մի ճաշակ եցոյց քեզ յարութիւնն, ընդ տեսանելն եւ թմբրեցար. եթէ այնպէս փա-

ռաւք էին նոքա, քեզ՝ որ անփոփոխ ընդունելոցն են, դու ապաքէն եւս առաւել վտանգէիր: 84 Բայց ոչ կարեմ մեղադիր լինել քեզ, զի դեռեւս հրէախառն ես. ընթեռնուս զգրեալսդ աւրինացն, այլ իմանալ չեւ եւս կարացեալ զարժանն:

85 Ի լերինն շքեղացան դէմքն Մովսէսի, եւ հարքն ձեր որ կարացին հայել յերեսս նորա մերկ, եւ դու զոգիսդ ընդ մարմնական վարագուրովդ ծածկեալ ունիս: 86 Մովսէս ծածկելով զգէմսն՝ մերձեցոյց զնոսա առ ինքն, եւ Տէր զայն քող մերկանայ ի սրտից ձերոց. անդստին իսկ ունի զմարդասիրութիւն առ ազգդ ձեր. աստուածանուն մեծարեաց զճառայս իւր եւ փառաւք իւրովք զարդարեաց զնա, եւ ժողովուրդն առ ատելութեան իւրեանց փախչէին ի նմանէ. եւ նա նշանաւք եւ արուեստիւք արծարծէր զնոսա, զի ընդելեալ մարդասիրութեամբ նորա մերկ դիմաւք կարասցեն տեսանել զաստուածութիւնն: 87 Սոյն սա նա է, որ բազում իրաւք կրթեաց զձեզ, զի այսաւր արժանի լինիցիք տեսանել զճաճանչ լուսոյ աստուածութեանն. բայց այսաւր դու լաւագոյն ցուցար քան զնոսա. թէպէտ եւ զարհուրեցար, այլ ոչ ի փոխուստ դարձար. այդպէս երեւեցաւ, եթէ սէր Աստուծոյ մեծապէս բնակեալ է ի քեզ՝ քան յառաջին ժողովուրդն:

88 Այլ եւ արդ շուրջ զքեւ հայեաց քաջ. ընդ ո՞ւմ շրջիս, առ ո՞ւմ նստիս, ո՞յր ես ուղեկից, եւ կամ ո՞յր խորհրդակից: 89 Ո՞չ դու ետուր զգեղեցիկ վկայութիւնն եւ դու խոստովանեցար զՔրիստոս որդի Աստուծոյ. ո՞վ քաջ. Աստուած խոստովանիս եւ ի տաղաւարս բնակեցուցանես. զայդ ոչ միայն Քրիստոս չառնու քեզ յանձն, այլ եւ ոչ ընկերակից քո Եղիա. զվերանալն նորա տեսեր դու, եւ պատիւ մեծութեանն երեւեցաւ քեզ. եթէ զայն ճշմարիտ գիտացեր, զայս ոչ արժանապէս

խաւսիս: 90 Յի՞նչ նիւթոց կազմեսցես զխուղսդ, ասա ինձ. ապաքէն ի փայտէ եւ ի խոտոյ. ո՞վ մեծ յերկոտասանսդ, քաջայուշ լեր. կառս ունի հրեղէնս, երիվարս բոցեղէնս, հուր եւ խոտ ի միասին ոչ բնակեն. բայց եթէ զայն եւս արտաքոյ թողուցու, ինքն ի նոյն պատիւ է զարդարեալ. եւ եթէ ոչ այնպէս էր, զիա՞րդ հանդարտէր կայր բոցոյն առաջի: 91 Քեզ այսաւր սակաւիկ մի սպիտակութիւն երեւեցաւ, եւ դեռ աստանդես բանիւք. ուր Եղիայն բնակեալ է, եւս առաւել պայծառագոյն է, քան որ քեզդ երեւեցաւ. եւ դու զայդպիսի այր ի տաղաւա՞րս հրաւիրես, եւ ո՞չ պատկառիս ի շքեղ պատուոյ նորա: 92 Դարձեալ եւ զտէրդ աշխարհաց ի կարաւտութի՛ւնն անցես եւ ի տեղւոջ կարծես. զդա գիտես տեղի ամենեցուն եւ զամենեցուն կարաւտութիւն բառնալ: 93 Ոչ ի տեղւոջէ այտի երեւեցաւ դա պատուական, այլ տեղիդ դովաւ շքեղացաւ: 94 Սակաւիկ մի սպիտակ ձորձով զարհուրեցար, յորժամ բուռն հայրենի փառաւքն տեսցես, յայնժամ եւ ոչ զմի տեղի յերկրաւոր պատուականաց աստի դմա համարեսցիս արժանի. այլ բարբառն որ եկն ի վերուստ՝ զայն գիտես դմա տեղի եւ փառս եւ վայելչութիւն անպատում. եւ դու յայն հայեաց, զհետ այնր ձայնի լեր կաթողին: 95 Այժմ աչք մարմնոյդ լցան լուսով, ապա բոլորովին իսկ դու լուսալի լինիս. զի եւ դու իսկ քեզ հազիւ կարիցես հասու լինել: 96 Այլ տէրդ արքայութեան՝ չէ կարաւտ տաղաւարաց. ամպովն արժան էր քեզ ուսանել, որ եհար ժողովրդեանն տաղաւարս յանապատի անբաւ բազմութեանն. ամպն էր բաւական հովանի, եւ զբոլոր գիշերն լոյս հրոյ առաջնորդէր. եւ եթէ ի չարսն այնպէս զթայր, ո՞րչափ եւս առաւել ի ձեզ տառապեալս: 97 Զամենայն ինչ թողէք եւ զհետ դորա շրջիք. զի՛նչ ասէ ձեզ՝ լուարուք, եւ զամենայն բարի կամս ձեր՝ դա կատարէ: 98 Անդէն իսկ ի տեղւոջդ փոքր մի աղէ-

խարշեցայք ի տապոյ փառաց դորա, արագ արագ թանձրացոյց զամպն ի վերայ ձեր. եթէ սակաւ մի յամեալ էր՝ եւ դուք եւ տեղիդ բոցակէզ լնէիք. նա եւ ի բնական ջերմութենէս աստի են տեղիք, ուր ամարանի հրդեհք բորբոքին. եւ եթէ մասնաւոր լոյս այդպիսի սաստիկ տապով հարկանէ՝ զի՞նչ կարծես զինքնածագն լոյս, եթէ թոյլ տայր որ ունէր զձով եւ զցամաք՝ առ հասարակ կիզոյր: 99 Յայնմ լուսոյ ճաճանչ սակաւ մի երեւեցաւ Պաւղոսի. թէպէտ եւ ոչ այրեաց զմարմին նորա, զլոյս աչաց նորա եկէզ. թէպէտ եւ այլ շնորհեցաւ նմա, զառաջինն կորոյս: 100 Ողորմութեամբ իւրով ծածկեալ ունի ինքն զինքն, զրէ թէ ոչ բաւեն տեսանել զաստուածութիւն նորա: 101 Տեսե՞ր, ուր խոնարհութեամբ խաւսի Աստուած ընդ արարածս, զմարդասիրութիւնն իւր յայտնէ. եթէ որպէս էրն՝ եւ յայտնէր զինքն, եղեալքս յապականութիւն դառնային առաջի նորա:

102 Արդ մի՛, տէր Պետրոս, բարիոք թուեսցի առնել դմա տաղաւարս, զի չէ ժամանակդ այդպիսի գործոյ, եւ ոչ դու ունիս կազմած շինողաց. չես տեղեակ հիւսնութեան, եւ ոչ գիտես յորմ կազել քարինս: 103 Վարդապետ անուանեցաւ եւ զիւր արուեստն ոչ թաքոյց ի քէն. բայց եթէ դու մոռացկոտ ինչ իցես, ես ոչ գիտեմ. հանապազ քո առաջի գործեաց եւ գործէ, եւ յոյժ կամի զի ուսջիք եւ բանիւք եւ գործովք, որպէս ինքն առանց մարմնաւոր աշխատութեանց վարէ զարուեստն, ի դոյն նահատակութիւն եւ զձեզ կրթէ: 104 Մի՛ ընդ քուն խաւսիր եւ մի՛ զճշմարտութիւնն երազակոծ եղեալ՝ այլ ընդ այլոյ պատմես. յերկնաւոր մանրագորս հոտոտեցար, զհետ հետոց դորա ուսիր վերաբերիլ. ի ստուերաշուք տարերցս ելանել փութացիր, քան նստել ընդ սովաւ. յանապական լուսոյն ի ծմակային տեղիս մի՛ աղաչեր բնակել զայդպիսի չքնաղ լոյս. թէ եւ ջրայինքն տեսանէին՝ ի ցամաք դիմէին, եւ եթէ ի

սանդարամետականն ծագէր՝ ի վեր կոր-
զեալ ածէր զամենեսեան. եթէ գոյր իշխա-
նութիւն՝ հրեշտակաց թողեալ զայն երկ-
նից լոյսն՝ առ այդ լոյսդ իջանէին:
105 Այդ լոյս յերկնից յերկիր երեւի, զերկ-
րաւորս յերկինս տանի հանէ. եւ յորժամ
յերկրէ ի վեր ծագէ, զվերինսն ի վայր խո-
նարհեցուցանէ. այդ լուսով ետես Յակոբ
զտէր լուսեղէն սանդղոցն. ի լուսեղէն տե-
ղիս բնակեալ էր Եղիա, զայն լոյս թողեալ՝
առ այս լոյս խոնարհեցաւ եւ եկն. յայդ
լոյս աւանդեալ էր Մովսէս, ազդեցաւ նմա
ի Նաբաւ լերինն, փութացաւ եկն առ անձ-
կալիդ: 106 Տեսանե՞ս զհարդ փարին եր-
կոքեան զլուսովն. չյազին բազում բանիւն
զոր խաւսինն ընդ նմա. ի ծագել այդ լու-
սոյ՝ արեգակն խաւարեցաւ, որպէս աս-
տեղք յարեգականէ. արեգակն ի դմանէ
չերեւեցաւ: 107 Եւ քեզ յոյժ երանի տամ,
զայդ տեսեր եւ յայն հրաւիրեցար. ամե-
նայն աշակերտ զվարդապետին արուեստն
փութայ ուսանել: 108 Ո՞չ ի քոց տաղա-
ւարաց անտի եհան դա զքեզ. խզկունս
իմն արարեալ ձեր ի ծովեզերին, վասն
այդր լուսոյ՝ ետ թողուլ ձեզ զայն, զի
յայդ թեւակոխեսձիք, ընդ այդ ընդելձիք,
զայդիւ եկեսձիք, ի դոյն խոկասձիք, դմին
արժանի լիձիք զգեհուլ: 109 Չի՞ք տեսեալ
զազգ թռչնոցդ. ձագուցն յորժամ թեւքն
թաւացեալ հաստանան՝ ոչ ընթացս ունին
ի վերայ բունոցն, այլ ի հայրենի արուեստ
վերաբերին. զոր տեսանենն՝ զմտաւ ածեն
զայն. մինչդեռ մատաղաբոյս են թեւքն՝
անդէն ի տեղուջն ստէպ ստէպ շարժին.
յորժամ բոլոր վարագաթեւք աճեցեալ մե-
ծանան՝ տակաւին ի վեր վազեն ոտախա-
ղաց լինելով եւ աներկիւղք եղեալ յանկա-
նելոյ, ապա բարձրացեալ ի վերոյ աւերոց
ճախրեն զլերամբք, թռուցեալ առ ամպովք
քերեն, անկասկածք անցանեն գնալ յերկ-
րասող վնասակարացս:

110 Աւրինակաւ իմն Տէր զձեզ ուսու-
ցանէ. կրթեաց ի նշանս եւ յարուեստս մե-

ծամեծս, զի ամենայնիւ զձեզ յինքն սպա-
սաւորեալ միացուցէ, զի եւ դուք զայլս ի
մահուանէ ի կեանս որսասձիք. արար զձեզ
կիրթս եւ հմուտս եւ տեղեկագոյնս, զի ի-
ցէք պատճառք կենաց ամենայն աշխարհի:
111 Բայց դու որ ոչ էիր ի լերին անդ, մի՛-
իբրեւ զանուն լուսոյն լսես՝ առ այսմ լոյս
հարցին կացցեն միտք քո. զայս լոյս հա-
նապազ տեսանեմք, ոչ յիմարիմք եւ ոչ
թմբբիմք, եւ ոչ ամենեւին երկիւղ ինչ ան-
կանի ի սիրտս մեր. այլ որ զցայգն եմք՝
նոյն եմք եւ զցերեկն. վասն զի նիւթեղէն
արարած է, եւ մեզ ի սպասաւորութիւն ա-
ռեալ. պղտոր, մթին, փոշէխառն, մրրկեալ,
խթացեալ տեսեր, եւ ոչ զերկինսն վերինս
կարէ ցուցանել. եւ այնչափ աւտար է
յայնմ լուսոյ, որպէս եւ նկարեալն ի կեն-
դանուոյ: 112 Որպէս եւ ինքն աստուածու-
թիւնն բազում մասամբք երեւեցաւ մար-
գարէիցն, եւ մի ոք ի նոցանէ զԱստուած
ոչ կարաց տեսանել. այլ նմանութեամբքն
որով տեսին՝ բաւական համարեցան. հան-
գեան կամաւք իւրեանց եւ կատարեցան
բանք նոցա գործովք: 113 Որպէս եւ այ-
սաւր ի լերինն երեւեցաւ, այն է զոր հա-
նապազ տեսանէին. այլ ոչ այսաւր նոյն-
պէս տեսին, եւ ոչ այլ ընդ այլոյ զայլ ոք
Քրիստոս տեսին. որ էրն՝ զնոյն տեսին, ոչ
նոյնպէս գձուձ. փոքր մի վերագոյն քան
զառաջինն տեսին եւ թմբբեցան ի նշանաց
անտի. եւ եթէ աւելի քան զձեզ կարծէիք՝
այլ ոչ ինչ ի վեր հայէին միտք ձեր:
114 Աստուծոյ նշանագործութիւն բոլոր
արարածքս են. զաշխարհս ոչ ի նշանս ինչ
արարեալ է ումեք, զի եւ գոյր իսկ ոք ոչ
յառաջ քան զաշխարհ. եւ նա բնութեամբ
ունի զբարերարութիւնն. զոր ինչ կամի՝
կարէ առնել, ոչ ի պէտս իւրոյ անկարաւտ
բնութեանն, այլ ի յեղելոցս ի լրումն ա-
ռանց պակասութեան. եւ զմարդ սիրէ քան
զբոլոր արարածս. եւ կամի ի ձեռն նշա-
նացն՝ զի զանեղ բնութիւնն ծանիցեն, եւ
ի ճանաչելոյ անտի լիցի սիրոյ բարեկա-

մութիւն եւ դարձեալ եւս վերագոյնս ձգիցէ, որպէս թէ իւր իսկ առնիցէ գահակից: 115 Զոր եւ այսաւր առ ձեզ նորին սիրոյ եցոյց զաւրովիւն, ոչ երկրաւոր նշանաւք, այլ երկնից մասնաւորութեամբ. ցայսաւր զմարմնականսն տեսանէիք իբրեւ զմարդ, վարդապետ կարգայիք, ըստ մարդկութեան եւեթ իմանայիք զգարմացումնդ. վասն այսորիկ փարատեաց ի նոցանէ զմարմնաւոր տգիտութիւնն, զի երկնաւոր յայտնութեամբն կրթեսցէ զնոսա, եւ մի՛ համակ զմարմնականաւքն եկեսցեն. որպէս եւ ասէ գիրն, եթէ Յայլակերպս եղև առաջի նոցա՞: 116 Յայլակերպսն ոչ այլ ինչ է իմանալ, այլ աստուածակերպ երեւեցաւ առաջի նոցա, զի եւ զնոսա յայն կերպարանս փոխեաց ի ժամանակի իւրում. կրթեցան աչք նոցա հայել ի մարմնաւորութիւնն Տեառն. ո՛չ կարացին խորհուրդք նոցա համբառնալ յերկինս. ընդհարան աչք նոցա ի լոյս փառաց նորա, կարացին զարժանի էութիւն նորա իմանալ: 117 Ի բազում բարձր տեղիս ելեալ էին նոքա ընդ Տեառն, այլ ոչ մտաւք. այնպիսի տեսիլ եղոյց նոցա այն աւր գիմանալի լոյսն, զի կրթեսցէ զնոսա յեւս առաւելութիւն: 118 Ըստ մարմնոյ ի լեառն ելին, մտաւք վերացոյց յամենայն աշխարհական ցանկութեանցս. բարձր է լեառն քան զքաղաքս, զնոսա քան զբնաւ աշխարհս բարձրացոյց: 119 Երբեմն ելին ընդ Տեառն ի Գալիլեայ ի լեառնն՝ ուր գերանութիւնսն աւետարանեաց նոցա. բանս երկնաւորս լուան, այլ միտք նոցա ոչ ինչ բարձաւ ի յերկրաւորացս. իսկ աստ բանիւք ինչ ոչ խաւսեցաւ ընդ նոսա. լուսով երկնացոյց զլեառնն, եւ լուութեամբ երկնաւորս արար զնոսա:

120 Է իսկ ի բնութեանս մերում, յորժամ շրջիմք ի բազմամբոխ քաղաքի, զքաղաքական կարգսն սիրեմք ուսանել. յա-

ճախագոյն պշնումք ընդ փառս երկրաւորս, եւ խոնարհին միտք մեր յիրս երկրաւորս ապականացուս. եւ եթէ ոչ մեծաւ պատրաստութեամբ զգոյշ կայցես անձինքում, հազիւ կարացես ապրել ի պատիր զբաւսանաց աշխարհիս: 121 Վասն որոյ եւ Մովսէս հանեալ զժողովուրդն յԵգիպտոսէ, շրջան առ յանապատի անդ ամս քառասուն, եւ ապա կարաց լինել նոցա աւրէնսդիր. իսկ իբրեւ բնակեցան ի քաղաքս բազմամարդիս, եւ գեղեալ աւրէնսն ոչ կարացին պահել: 122 Եւ է ճշմարիտ, որ ընդ երկիրն պշնու՝ գերկինս ոչ կարէ տեսանել: 123 Ապա եւ Տէր մեր իբրեւ յԵգիպտոսէ եհան զաշակերտսն ի լեառն անդր, եւ ուսոյց նոցա զանգիր աւրէնս երկնից. քանզի եւ մեր տեղին առաջին անգիր էր: 124 Գիր զմարմնականացն խաւսի, անգրութիւն զանմարմին էութիւնն ցուցանէ: 125 Գիր՝ զմահն Մովսէսի պատմէ, իսկ անգրութիւն՝ զյայտնութիւն Տեառն առ աշակերտսն: 126 Գիրն ինքն անցական է, եւ զանցաւոր աշխարհս արկանէ ընդ պատմութեամբ. անգիրն յինքեան գրէ զանցաւորս, զի անանցս արասցէ: 127 Գիրն զվերանալն Եդիայի նիւթական պատուականաւքս ասէ. անգրութիւն գերեւումն Տեառն եւ գեղիայեանց: 128 Ոչ իբրեւ այլք յայլում նստեալք եւ եկեալք, այլ ինքն ինքեամբ երեւեցաւ ի վերոյ քան գերկինս. ոչ այրեցող բնութիւն՝ մարմնականացս ահ արկանելով, այլ լոյս փափուկ եւ արարող, որպէս եւ ժառանգաւորաց արքայութեան՝ յանմարմնականաց տեղիսն զգեհնուլ: 129 Այնպիսի տէր երեւեալ, եւ ըստ իւրում էական բնութեանն շնորհեաց եւ ծառայիցն զնոյն փառաւորութիւն. զի եթէ ոչ այնպէս էին, եւ ոչ մերձեանալ կարէին ի հուրն ամենակէզ: 130 Եւ պետրոսեանք որք տեսող են աստուածային փառացն, եւ նոքա ի վեր կորգեցին ի ծանր մարմնականացս, հասանելով մինչեւ յիմանալի հրեշտակաց բնակութիւնս. ան-

՝ Մատթ. ԺԷ 2, Մարկ. Թ 1

ցեալ կային գեր ի վերոյ մահուամբ, որպէս եւ երեքն՝ սոյնպէս եւ երիւքն. ոչ միայն չերկնչել ի մահուանէ, այլ եւ ի բազում տեղիս հալածական առնել զմահ ի մարդկանէ. քանզի յոյժ մեծացաւ աղքատութիւնն նոցա: 131 Ելին իբրեւ գերկչոտս գտանել ի վերոյ քան գերկիւղ. ելին իբրեւ ընդ որդւոյ մարդոյ, զնոյն տեսին անդ որդի Աստուծոյ. ելին տգիտագոյնք, ուսան անդ զկատարեալ գիտութիւն. ելին ընդ այնմ զոր գիտէին ծնեալ ի կուսէ, իմացան անդ զնոյն ծնեալ ի Հաւրէ յառաջ քան զաշխարհս. ելին ընդ այնմ՝ որ մկրտեալն էր ի Յովհաննէ, տեսին անդ զնոյն՝ որ բնակեալն էր ի ճառագայթս անմատոյց լուսոյ փառաց իւրոց. ելին ընդ այնմ՝ որ հետիոտս վաստակէր գնալով, զնոյն իմացան անդ որ նստի ի կառս քերովբէականս. ելին ընդ այնմ՝ որում Հրեայքն սպառնային զմահն, զնոյն գիտացին տէր մահու եւ կենաց. ելին ընդ այնմ՝ զոր աղաչէինն մի՛ մատնել զինքն ի մահ, իմացան եթէ ոչ սա երթայ ի մեռեալս՝ արբահամեանք ոչ կարեն գալ առ մովսիսեանս. եւ զոր արգելուինն ի մահուանէ, յառաջ քան զժամանակն փութային տեսանել զմահ նորա: 132 Արքայութեան պատճառանաւք եհան զնոսա ի լեառն անդր. իմաստնացոյց եթէ առանց մահու միածնին ոչ ոք կարէ ժառանգել զարքայութիւնն:

133 Եւ իբրեւ երկոքեան հատածքս այս ունին յինքեանս գերկնաւորս եւ գերկրաւոր բարութիւնս, առ ի՞նչ արդեաւք պատուիրէր Տէր մեր աշակերտացն եւ ասէր, ամենեւին չասել ումեք զմեծ յայտնութիւնն որ երեւեցաւ նոցա: 134 Այս սովորութիւն է վարդապետութեանն Քրիստոսի. յորժամ զմարդասիրութիւնն ցուցանէր բժշկելով՝ առ ախտածեսս նոցա բազմաց ի նոցանէն զնոյն պատուիրէր: 135 Մի՛ ումեք, ասէ, ասիցէք վայրապար կամ ի գիւղս կամ ի քաղաքս.

զի եւ դու զնոյն ուսանիցիս չառնել աշխարհագոյժ զողորմութիւնս քո. ապա եթէ պիտոյ եւս է ցուցանել, փոխանակ բանից գործքն քարոզեսցեն: 136 Աստուած զբոլոր աշխարհս արար եւ ետ մեզ, եւ երախտիս ինչ ոչ համարեցաւ մեզ, բայց միայն ճանաչել զնա եւ զհետ երթալ կամաց նորա: 137 Պատուիրեաց աշակերտացն լինել աստուածանման. քանզի ժառանգ իւր հաստատեաց զնոսա եւ նոքաւք զամենայն աշխարհ. յորժամ Աստուծով առնիցեն զամենայն մեծամեծս վարդապետին իւրեանց, ծածկագիտին միայն աւանդեսցեն զխորհուրդսն: 138 Դարձեալ եւ յոյժ խնայեաց ի նոսա. միթէ ըստ մարմնոյ ինչ պարծեսցին վասն մեծամեծ սքանչելեացն՝ զոր եւ գործեցին եւ տեսին անդ. զի ընդ մէջ թշնամեաց շրջէին եւ ոչ բարեկամաց, եւ աւելի առաջի կեղծաւոր մեկնչաց, որ իբրեւ զճանճս կեղասէրք էին, ուր գտցեն թարախս՝ առաւել եւս զայրացուցանեն զվէրն. չարագոյն եւս քան զայս լինէին բանք նենգաւոր մարդոց. որպէս եւ եղեն իսկ նոքա պատճառք մահու ժողովրդեանն, ոչ միայն հողածին մարմնոյ, այլ եւ անմահ ոգւոյ սպանողք:

139 Պատուիրեաց նոր նորոգելոցն՝ որք արբին զճաշակս նոր գինւոյն, մի՛ արկցեն ի տիկան զգաւրութիւն գինւոյն ի հինան, զի ոչ հանդարտեն ընդունել զոյժ նորա. արգել զնոսա ի մեծ վնասէն. քանզի գիտէր եթէ տիկքն պատառին եւ գինին հեղու ի կորուստ նոցա, որպէս առ Կայիափայիւն իսկ երեւեցաւ. զի յորժամ տեսանիցէք զորդի մարդոյ զի նստի ընդ աջմէ գաւրութեանն Աստուծոյ, իբրեւ զտիկ հին ցելաւ ի պատառել պատմուճանին իւրոյ. բոլոր ինքն հեղաւ անկաւ յաստուածային աշտիճանէն. եւ եթէ ի Տեառն բանից անտի այնպէս զարկան անկան դանալիք, զի՞նչ համարիցիս դու՝ եթէ յաշակերտաց անտի լուեալ էր վասն երկնաւոր սքանչելեացն. ո՞չ ահա իբրեւ զհուր բորբոքէին ընդդէմ

նոցա, այրէին զանձինս եւ զնոսա առ հասարակ: 140 Քանզի յորժամ լսէին ի նոցանէ՝ անդէն հարցանէին ցնոսա, զի՞նչ էր առաւելութիւն վերին տեսեանն: 141 Եւ եթէ վասն Մովսէսի եւ Եղիայի պատմէին նոցա՝ սուտ համարէին, զի ոչ կարէին յայտ ուրեք ցուցանել. թէ ասէին՝ եկին երեւեցան եւ զնացին, զայն ոչ արդար համարէին, քանզի ոչ ունէին զհաւատոցն զիտուծիւն. յայնժամ եւ զոր աչաւքն իսկ տեսեալ էր ի Տեառնէ՝ չհաւատային: 142 Դարձեալ թէ եւ վասն սպիտակ ձորձոցն ինչ ասէին, կրկին կորուստ կորստականացն իսկ հասանէր, կամ լսէին իսկ ոչ զբանս նոցա, կամ ի մէջ բերէին զսպիտակ ձորձս նոցա. քանզի երկրապիշք միայն էին եւ անհաւատ լսելիք, զիմանալի յայտնութիւնն ոչ կարէին տեսանել. եւ նոքա ի լերին անդ մարմնաւոր ինչ յայտնութիւնն ոչ տեսին, այլ երկնաւոր զաւրութիւնն իմանալով, զայն՝ որոյ ի յայտնութիւնն նա միայն զիտէ, եւ ում կամի ինքն յայտնէ ըստ մասանց, եւ մտացն միայն ծոց բաւէ ժողովելով, այլ ոչ բանիւ պատմել եւ սփռել ի լսելիս ուրուք. զի որ բանիւ գծագրի՝ ընդ մարմնաձեւութեամբ անկանի երեւումն նորա. իսկ երկնաւոր փառքն յայսմանէ վերագոյն են, եւ ի մարդկանէ եւ ի հրեշտակաց: 143 Լուր Պաւղոսի առաքելոյ, որ ոչ միայն ի լեռն բարձրացաւ, այլ եւ յերկինս երրորդ եւ ի դրախտին, եւ զպատրաստութիւն սրբոցն ետես, եւ զբարբառ պարգեւատուին լուաւ, այլ դէմ յանդիման ոչ կարաց հանդիպել. եւ բարբառ որ եկն նմա ի վերուստ ըստ մասանց՝ զգաւրութիւն բանիցն ոչ ումեք կարաց երկրորդել: 144 Նոյնպէս եւ վասն երկնաւոր պարգեւացն՝ զի պատրաստեալ պահին՝ զայն ասաց. այլ ի պատուական երկրաւորաց աստի նմանել ումեք ոչ կարաց, իբրեւ է ճշմարիտ հանդերձեալ. եւ մեք յայն եմք յուսացեալք՝ զոր Պաւղոսն ետես եւ պատմել ոչ կարաց. հաւատա-

ցեալք ի Քրիստոս լիով իմանան եւ զիմացեալն տեսանեն. եւ յուսով այնպէս ակն ունիմք՝ որպէս եւ երանելին Պաւղոս:

145 Արդ վասն այսր ամենայնի զոր Առաքեալքն ի լերին անդ տեսին Հոգւով Սրբով, չհրամայեաց պատմել ի լսելիս թերահաւատ ժողովրդեանն. մի՛ զի կարէին իսկ ոչ նոքա պատմողք լինել. միւս եւս՝ որոց պատմէինն՝ նոքա ոչ էին արժանի լսել: 146 Որպէս եւ ինքն Տէր յառաջագոյն ուսոյց յԱռաքեալսն. Մի՛ տայք, ասէ, գարբութիւն շանց, եւ մի՛ արկանէք գմարգարիտս ձեր առաջի խոզաց. շան՝ սուրբ եւ պիղծ կերակուր ընդ մի համարեալ են. եւ խոզի քան զպատուական մարգարիտ ընդ պարանոցի՝ խոհերական տիղմ յոր թաւալի՝ լաւ թուի. զայս տեսանել՝ չար պարգեւաց տուողին թուի, եւ եւս չարագոյն արտաքին տեսողաց: 147 Վասն որոյ եւ Տէր մեր զլուսաւոր խորհուրդն լուսոյ մանկանցն յայտնեաց, զի եղիցին վկայք ճշմարտութեանն լուսոյն՝ որ երեւեցաւ նոցա ի լերին անդ. եւ նովին լուսով լուացեալք կայցեն մնացեն իբրեւ զանստուեր ճառագայթս. եւ նոքին եղիցին քարոզք լուսաւորութեան նորա, որք եղեն իսկ եւ կատարեցան. եւ ամենայն արարածք որք նստէին ի խաւարի եւ ի ստուերս մահու՝ յայն լոյսն յանանց դիմեցին, եւ նովին լուսովն լուսաւորեցան եւ լուսաւորեցին մինչեւ յերկրորդ յայտնութիւն նորին լուսոյ. եւ նոյն Տէր գալոց է լուսաւոր ամպովք յերկնից ամենայն լուսաւոր զաւրաւք երկնաւորաւք. եւ ի նոյն լոյս լուսաւորին մեռեալք, եւ կենդանիք ամենայն արժանաւորք՝ յանփոփոխ եւ յանվախճան յաւիտեանս:

148 Յոյժ կասկած եղեւ մտաց իմոց իբրեւ մերձ եղէ ի կատարած ճառիս. ապա յիշեցի եթէ իրք անխնդիրք մնացին ի միջի

սորա. քանզի փոքր ի շատէ տեղեկագոյն եմ խուզող մտաց՝ որ անմեղութեամբ քննեն զգալրութիւն բանին ի շահն անձանց եւ ի փառս սուրբ եկեղեցւոյ: 149 Տեսանեմք իսկ աստէն եւ ի մերում աշխարհիս, բազումք վարեցեալք առաքինութեամբ անսխալ հաւատովք ըստ առաքելական կանոնին, յորոց ցնծացեալ բերկրի սուրբ եկեղեցի հեթանոսաց: 150 Ձայս հաւատ յանձին պահելով զեզերէին յուսումնասիրութեան ուխտաւոր մանկունք Հայոց մեծաց, զանձինս պարապեցուցեալ ի վաճառաշահ աւգտից. ոչ ինչ ընթանան զհետ ընչաւէտ մեծութեան, այլ գործ հանապազորդ այնպիսեացն՝ պահք եւ աղաթք, զանձինս պահել յամենայն ոգէսպան վնասուց: 151 Այլ հարցք եւ խնդիրք վասն ծածկեալ բանին զոր ընթեռնուն ի սուրբ կտակարանս, գիտեմ զի հարցանեն յայսմ ճառի ցմիմեանս եւ ցիս. Յարեաւ, ասեն, Մովսէսէ ի մեռելոց մարմնով եւ եկն ի նաբաւ լեառն առ Տէրն մեր. Եղիայի ահա չէր ինչ խափան, որպէս վերացաւն երազ՝ ահա երազագոյն եւս գայր. Մովսէսի ընդ այն ինչ ոչ զարմանամք եթէ ընդ Եղիայի արագութեամբ գտաւ. այլ եթէ մարմնով յարեաւ եկ կամ եթէ հոգով՝ կերպարանեցաւ առաջի նոցա: 152 Եթէ մարմնով յարեաւ՝ ճշմարիտ վիշտ եղեւ նմա, այն որ աղաչէր զԱստուած միանգամ չմեռանել՝ կրկին՝ արդեաւք զմահ ճաշակեաց. մանաւանդ զի զԵղիա ետես յանմահութեան, եւ զՏէր հայրենի փառաւքն յարքայութեան. եւ ինքն անդ եւս ի հողոյ եկեալ եւ անդէն արագ արագ դառնայր. կարի դժուարագոյն է տեղիդ ասեն:

153 Ինձ ոչ ծանրագոյն թուի հարցուածդ. է ինչ որ ի գրոց ունիմ առնել անդրէն պատասխանի, եւ է ինչ որ յանգիր էութենէն՝ հայեւով յաստուածային զաւրութիւն. եւ ընդդէմք ինչ ոչ են միմեանց. քանզի գիրն ի լսելիս ազդէ զաստուածային պատուիրանս, իսկ անգրութիւնն՝ յա-

ներեւոյթ մտացն տախտակս. եւ են երկոքեան աստուածատուր շնորհք, զոր աչք տեսանեն, շրթունք ընթեռնուն, ականջք լսեն. առանց գրոց միտք բերեն զմեկնութիւն: 154 Արդ քաջ մտառուացն մեծ է որովայն եւ անձանձրոյթ է ծովն եւ անձանրանալի է բազմութիւն բեռինն. որչափ եւ անկանի ի ներքս, ոչ յազեալ շատանայ բազմութեամբն. աղաչելով զԱստուած՝ ընկալեալ գերկական եւ երբեկին կարիցէ հասու լինել. որպէս եւ է տեսանել, որք առանց գրոյ խորամուխ եղեն ի սէր որդւոյն Աստուծոյ՝ ճշմարտութեամբ հասու եղեն գրելոցն, եւ ոչ ինչ ծածկեցաւ ի նոցանէ յանգիր աւրինացն Աստուծոյ. որպէս եւ ինքն իսկ Առաքեալ ասէ. Զի այն գորկամբն յաղաւթս՝ որպէս արժանի իցէ ոչ գիտեմք, այլ իմքն Հոգին հասանէ ի թիկունս՝ ի հեծութիւնս անմոռնիս բարեխաւսէ առ Աստուած: 155 Ամենայն սուրբք առանց բանի պատմութեան խաւսին ընդ Աստուծոյ, եւ առանց ձայնի արձակելոյ ի վերուստ՝ լսեն կամաց նորա. եւ զոր ասենն եւ զոր լսենն՝ ընդ գրով արկանել ոչ կարեն, եւ առաքինի գործովք իւրեանց յայտնի առնեն զանգիր աւրէնսն Աստուծոյ: 156 Եւ յորժամ զայսպիսի զաւրութիւն յողիս մեր հետազաւտեմք, կարեմք զծածուկս բանին Աստուծոյ ծածկապէս իմանալ, եւ գտուցութիւն պարգեւին որ շնորհեաց մեզ՝ արտաբերեմք բարբառով. զի եւ յայլոց լսելիս ազդիցէ հնչումն երկնաւոր:

157 Յարոյց Եղիա զմեռեալ եւ երկուս Եղիշա, եւ կրկնամահ ոք ոչ ասէ նոցա, այլ մի կեանք եւ մի մահ. եւ Տէր մեր յարոյց զմեռեալս, նոյն ասի եւ նոցա. այսքանք էին եւ Մովսէսի. քանզի յառաջին մահուան իւրում ոչ հիւանդացաւ. ինքն Տէրն կոչեաց զնա ի լեառն, եւ ինքն Տէրն որպէս եւ գտէր առանց չարչարանաց աւանդեաց զնա գերեզմանին: 158 Այսմ եւ մահ

* Տե՛ս. Լուսն. է 26:

իսկ ոչ է արժան ասել՝ այլ եւ փոփոխումն. Դաւիթ եւ զայս քուն իսկ անուանեաց. ես անջեցի եւ ի փուն եղէ, զարթեայ եւ Տէր ընդունելի մեր է՞: 159 Դու իսկ որ հարցանեսդ՝ ո՞չ հանապազաւր ի քուն մտանես, ընդ առաւաւտն յարուցեալ կանգնիս. ոչ ինչ տրտմիս յաղագս յառնելոյն. զի գիտես եթէ անդէն հասանէ ընդկողմանել: 160 Ապա թէ ասիցես թէ այս դիւրագոյն է եւ այն դժուարագոյն, մի՛ ասեր, սուտ կարծես. հազար անգամ մահն Մովսէսի դիւրագոյն է, քան զքունդ քո: 161 Եթէ քաղցեալ եւ ծարաւի ի քուն մտանիցես, յար ուտես եւ ոչ յագիս. աղբեր աղբեր շրջիս եւ ոչ ըմպես. եւ եթէ բռնադատեցար ինչ աւելի քան զչափն անքուն, զառաւաւտն ցանկաս տեսանել. եւ եթէ պայմանաւ կերակրոցն եւ առողջութեամբ մարմնոցդ դէպ եղեւ քեզ շարժել զաղտեղութիւն, եւ կամ լինիս երազակոծ, այսր եւ անդր միտքդ դրդուին, որով ի տուրնջեան քեզ չարաւ թուիցին. եւ չիք իսկ ամենեւին խաղաղութիւն ի մերում շարժումնս: 162 Իսկ յայսմանէ Տէրն մեր զՄովսէս պարկեշտագոյնս ամփոփեաց. ծերութիւն ոչ թարշամեցոյց զգեղ նորա, եւ հիւանդութիւն ոչ ապականեաց զմարմին նորա, ոչ յառաջնում նուագին հեծութեամբ էջ ի դժոխս, եւ ոչ ի վերջնում հրաժարելս ի Տեառնէ դանդաղեցաւ ինչ թերեւս. եւ վասն այնորիկ Աստուած ինքնին իսկ ամփոփեաց... սա ի մահ անդր. ի ձեռն նորա փոխեաց զնա եւ ծածկեաց. եւ ճայն նորա կոչեաց զնա, եւ զամպն հովանի արար ի վերայ նոցա. նոյն ինքն փութանակի ած առ սիրելին իւր զՄովսէս, որպէս եւ ինքն Տէրն մեր ասէ. Հայր յարուցանէ զմեռեալս եւ կենդանի առնէ՞: 163 Յարոյց Որդի զՂազար կարդալով առ Հայր. յարոյց զՄովսէս Հայր միաբանութեամբ Որդոյ,

զի երեւեցան իսկ առ նմա. ըստ այսմ իմաստի զանքակ միաբանութիւնն Սուրբ Երրորդութեանն, եւ յարարչութեան եւ ի փրկութեան եւ ի նշանագործութեան եւ ի յարութեան նորոգմանն: 164 Եւ վասն Մովսէսի յարութեանն մարմնովն մի՛ ինչ տկարասցին միտք ուրուք. չէ ճառ բանիցս այսոցիկ առակ աւրինակի, որպէս մեծատանն ի դժոխս եւ կամ Աբրահամու եւ Ղազարու յարքայութեանն. այն զհանդերձելոցն յայտ առնէ: 165 Տեսեր եւ յաշակերտաց անտի չիք ոք այնմ վկայ. քանզի ծածուկքն Աստուծոյ միայն են յայտնի. իսկ որ ճշմարտիւս երեւեցան, զայս եւ մարդիկ ընդ Աստուծոյ կարացին տեսանել:

166 Բայց ես յոյժ աղաչեմ զամենեւեան, ինչ որ յերկրէ եւ այսր է՝ բազում այն է որ քննի իմաստուն մտաց, եւ սակաւ այն է որ ծածկի ի մէնջ. իսկ առ աստուածութիւնն եւ ոչ քան զականքթութեամբ՝ անկանի ընդ գիտութեամբ. զի ետ վէմն զջուրն՝ զայն գիտեմք ամենեքեան. ո՞րպէս ետ, ծածկեալ ի մէնջ. ո՞րպէս երթայր զհետ նոցա, թարգմանէ մեզ Պաւղոս. զի ո՞րդ գնայր առանց ոտից, զայն եւ ոչ Պաւղոս գիտէր. նոյն իսկ Պաւղոս զվերանալն իւր յերկինս՝ զնշան ճանապարհին եթէ հարցանես՝ ոչ գիտէ պատմել: 167 Զի եկն Մովսէս ի մեռելոց մարմնով՝ հաւատամք ճշմարիտ. ո՞րպէս եկն, եւ ոչ ինքն Մովսէս գիտէ: 168 Հաւատամք եթէ կերան անմարմինքն զճաշն Աբրահամու. նոյնպէս հաւատամք եթէ եկին Մովսէս եւ Եղիա առ Տէրն մեր ի Թաբոր. եւ եթէ ոք յայսմանէ յերկբայս լինի, երեք սիւնքն մեզ վկայեն դարձեալ. եւ եթէ այլ ոք անհանճար մտաւք ասիցէ, եթէ կերպարանաւ միայն երեւեցան, այդմ չէ հնար, մի՛ հաւատար. ստուեր ի հայելոջ երեւին բանք. ոչ ստեն աստուածային զիրք՝ ուր առակն է. ոչ ի մարդկանէ խնդրեն վկայ, այլ մտաց իմացուցանեն

« Սաղմ. Գ. 6
 է՝ Յ. 24. Ե. 21

զմեկնութիւն բանին. իսկ ուր ճշմարտութիւնն է, յայտնի երեւի պարզաբանութիւնն:

169 Ասաց Եսայի. Տեսի զՏէր յաթոռ քարձրութեան³. ճշմարիտ էր տեսիլն, այլ ոչ զորպիսութիւնն կարէր տեսիլն ցուցանել մեզ. ուր կամի Աստուած՝ առականք խաւսի ընդ ծառայս իւր մարգարէս. եւ ուր եւս խոնարհութեամբ խաւսի՝ եւ զինքն թանձրացուցանէ, որչափ բաւէ մեր բնութիւնս տեսանել. եւ վկայս ածէ հրաշակերտս եւ ի հրեշտակաց եւ ի մարդկանէ արդարոց. է զի ի կենդանեաց եւ է զի ի մեռելոց: 170 Սոյնպէս եւ յայսմ տեղւոյն բազում ինչ նշանս արար Աստուած ի ձեռն Մովսէսի, եւ մեծարեաց զնա քան զամենայն մարգարէսն. զսա յարոյց ի մեռելոց, զսա տեսաք զի կայր եւ խաւսէր ընդ Քրիստոսի. որպէս տեսաքն եւ վկայեմք, որպիսութիւն յարութեան նորա՝ Տեսան միայն յայտնի: 171 Այլ զի եկին Մովսէս եւ Նոյիս եւ խաւսեցան ընդ Քրիստոսի եւ տեսին երեք Առաքեալքն, վկայեմք ճշմարիտ բանից նոցա. եւ որ յաչս մեր անհնար է, Աստուծոյ ամենայն ինչ հնարաւոր է:

172 Այլ վասն լերինն գեղեցկութեան եւ վայրացն վայելչութեան՝ եթէ կամիք ախորժելով ունկն դնել, սակաւիկ մի երկրորդեցից ձեզ գտեսիլ ցանկալի տեղոյն: 173 Լսելով յԱւետարանէն գիտէք ամենեքեան գտեղին. բայց մեր եւ անձամբ իսկ հասեալ եւ աչաւք տեսեալ, ոչ յատուկ միայն առանձինն, այլ բազում ընկերակցաւք. որոց եւ կա՛մ իսկ եղեւ ոմանց մնալ ի լերինն, ոչ ըստ մարմնոյ ախորժութեամբ բաղձանաց, այլ առ գութ սիրոյն Քրիստոսի: 174 Քանզի բնակեալ են անդ բազմութիւն սքանչելի եղբարց, որք հոգւով յաճախագոյն վարին՝ քան թէ մարմ-

նով: 175 Քանզի թէ ըստ մարմնասէր մտաց ոք հայի ի տեղի անդ, վայելչագոյն երեւի քան գտեսիլս բազում լերանց. նախ զի նիստ նորա է ի մեծ դաշտի միոջ յերկրին գալիլեացւոց, եւ այլ լեռոն ամենեկին հուպ ոչ գոյ ի նմա, բայց տեսանելով հեռագոյն. եւ ինքն է բարձր եւ բոլորանիստ. եւ շուրջ զիւրեւ ունի ինքնաբոլս գուբս ջրոց եւ խիտ առ խիտս ծառատունկս բազումս՝ որք պտղաբերին յանձրեալբողիս ամպոց, եւ լինին ազգի ազգի միրգք քաղցրահամք. եւ բազումք եւ այլ համադամք անուշութեան. որթք գինեբերք, որ իբրեւ թագաւորաց ըմպել արժանիք. զդէմս լերին յաճախագոյն ծառք ձիթենիք եւ եղջիւրենիք. չորեքեան աւղք ի նա շնչելով, յոլովագոյն հիւսիսի գաւրանայ ի նա: 176 Եւ շաւիղն ընդ որ Տեսանն ելեալ է, յոյժ ողորդ է ելն, այսր եւ անդր մանուածով արարեալ ճանապարհ. ով եւ կամի ելանել կալ յաղալթս, զիւրաւ զելսն ի վեր առնիցէ: 177 Յորժամ ելանէ ոք ի բուն գագաթն լերինն, բոլոր դաշտն առ հասարակ յայտնի երեւի, յարեւելից կողմանէ մինչեւ ի Յորդանան գետ, յարեւմուտս՝ մինչեւ ի ծովն մեծ յաշխարհն ծայղանացւոց, ի հիւսիսի՝ մինչեւ ի ծովն Տիբերեայ, ի հարաւ՝ մինչեւ յայգին Նաբովթայ եզրայելացւոյ. եւ ամենայն բազմութիւն վայրացն նստի գիւղ առ գիւղ եւ ագարակ առ ագարակ, եւ բազում քաղաքք ի մէջ նոցա. եւ ինքն կատար լերինն՝ հովտածեւ գոգացեալ. գոն եւ ծառք սակաւագոյնք եւ թանձրահող բազում ի նա:

178 Եւ ի տեղւոյն ուր երեւեցաւ նոցա Տէր լուսաւոր պայծառութեամբն, յարեւելից կողմանէ հովտացն, յետ բանիցն Պետրոսի՝ հեռագոյն ի միմեանց շինեալ երիս եկեղեցիս, եւ ունին պաշտաւնեայս բազումս, զատեալք եւ որոշեալք յամենայն մարմնաւոր ցանկութեանց. թէպէտ եւ կեան մարմնով, այլ ոչ վարին ըստ մարմ-

³ Տէ՛. Ե. 91

նոյ քնքշանաց. այնպիսի են առաքինիք՝ զի եւ կարծէ որ ոչ զնոցանէ թէ շարժեսցէ զնոսա կարաւտութիւն մարմնոյ. ոչ երբեք ընկալան յումեքէ ոսկի կամ արծաթ կամ հանդերձ, կամ բնաւ որ ինչ պիտոյ է մարմնոյ. այլ որպէս հաճոյ թուեցաւ միաբանելոց ամենեցուն՝ առն իւրաքանչիւր արարեալ փայտատ երկմատնի, եւ այնիւ խարխարեալ յուզեն զթանճրահոյ հովտացն, սերմանելով ի նմա ցորեան եւ գարիս, եւ թէ այլ ունդք իցեն, ի պէտս կելոյ մարդկան. եւ ի չափ հասեալ հասկացն՝ ծայրախոզ հնձելով ոտնաշուփ կասեալ մարդացի տան հողմոցն հոսելով զարդիւնս շեղջոցն. եւ արկեալ ի շտեմարանս, զնոյն դարձեալ ինքեանք լեսուն ի ձեռն երկանի. մեծաւ տաժանութեամբ աւր ըստ աւրէ պատրաստեն զհարկաւոր կերակրիկն. եւ դարմանին հացիւ եւ ջրով լոկով, եւ աղիւ համեմելով, զոր եւ խորտիկն անուանեն: 179 Առնեն եւ այլ յաւելուած յանուշութիւն կերակրոց. ի ձմեռնային ժամանակի քաղեն զնիւ լերինն եւ թթուեցուցանեն աղիւ եւ ջրով եւ զոպայիւ. եւ որպէս ինքեանք իսկ ասեն, կարի աւգտակար է ի տապ աւուրս խորշակի: 180 Եւ չորքոտանի ամենեւին ինչ ի վեր ի լեռանն ոչ ելանէ. այնպէս սուրբ պահեն զելս ճանապարհին, իբրեւ թէ ժողովք հրեշտակաց իցեն եւ ոչ մարդկան. քանզի են իսկ արդարեւ իբրեւ զանմարմինս: 181 Չիք նոցա իւղ յամանս վասն կերակրոց. բայց եթէ ի ծախս անշէջ կանթեղաց որ հանապազորդ վառեալ այրին յերիս եկեղեցիսն: 182 Չիք նոցա զինի ի սափորս, բայց եթէ ի սպաս տէրունեան բաժակին: 183 Չիք նոցա դարման պաճուճանաց ի պէտս հիւանդաց, եւ ոչ պատրաստութիւնք վասն աւտարաց. այլ աւտարաց եւ ընտանեաց հասարակ է նոցա միաբանութիւն. իբր ոչ եթէ ինքեանք մարդատեացք ինչ են, այլ մարտ եղեալ կուռին ընդ ապստամբ մարմնոյս, եթէ զուցէ զասպարէզսն չկալեալ ուղիղ՝

զհեծեալն քարավէժ առնիցէ: 184 Վասն որոյ եւ ոչ կամին հանապազ ճաշակել. այլ սովորութիւն է նոցա բնական ամարանի ագանելով, եւ ձմերանի հաւաքելով գաւուրս շաբաթուն. իսկ որ հզաւրագոյնքն են ի նոսա՝ զողջոյն շաբաթն ձգեալ ի գլուխ տանին: 185 Ապա եթէ որ երթայր ի հեռաստանէ առ սէր սուրբ ժողովոյն, կամ եղեւ ամենեցուն ի սովորականն լուծանել բերան. կարի յոյժ փոյթ յանձին ունին ի հոգեւոր կերակուրն, զի մի՛ երբեք դադարեսցեն ի ճաշակելոյ. թէպէտ եւ հանապազ ուտեն անյագութեամբ՝ եւս առաւել քաղցնուն եւ ծարաւին: 186 Ոչ միայն զհարիւր եւ զյիսուն սաղմոսն արկեալ ի վար ձայնիւ, այլ բովանդակ զսուրբ կտակարանս եկեղեցւոյ, որով փառաւորեալ եւ ահաւոր ձայնիւք շքեղացուցանեն զսուրբ եկեղեցիսն ի լերին անդ: 187 Է զոր ընթեռնուն բանիւք, եւ է զոր պաշտեն փոփոխական ձայնիւք, զդադարումն ոչ երբեք առնուլ յագելով՝ փոխանորդութեամբք միմեանց գունդք գունդք արեղայիցն, յերիս եկեղեցիս բաժանելով հասարակութեամբ առանց կատարելոյ ունին զկարգ պաշտամանն, զտուրնջեանն եւ զգիշերոյ. իսկ զերեկունն եւ զառաւատին ժամն՝ ոչ եւս փոխանակաւ յաջորդութեամբ միմեանց, այլ միաբանելով ընդ միմեանս լինի բազմութիւն ժողովոյն վեցերորդ քան զայլոց ժամուցն: 188 Եւ մի յերիս եկեղեցիս մեծագոյն է քան զերկունսն, զոր եւ Տէրունեանն իսկ անուանեն. եւ յերկուս անդ եղեալ են զնշխարս Առաքելոցն, որք եւ հիմնարկեցին իսկ զտեղին այն աւր՝ ասելով զանուն երից տաղաւարացն. եւ անուանեն զնոսա վկայարանս սուրբս, եւ յիշատակեն զնոսա յանուն Մովսէսի եւ Եղիայի. եւ զբոլոր աղաւթսն ի կիւրակէին կատարեն. իսկ յերկուսն եւս երթան եւ անդ զԱստուած փառաւորեն: 189 Եւ են ամենեքեան մաշկազգեացք, զիտեն եւ ձեռնակերտիկ արուեստ. ոմն է

որ գփիւրբիդն առնէ, եւ ոմանք զնոյն նիւթս սապատս գործեն. եթէ այլ ինչ պէտք են՝ գործեն, ընդ լեառնն ի վայր իջանելով. եւ զամենայն զինչ եւ գործեն զարուեստն՝ ոչ յայլ ինչ պէտս աւգտի, այլ ի գինս ճիթոյ կանթեղացն հանապազորդ վառման, եւ ի ծախս աւգենեացն, ուստի զմաշկեղէն հանդերձիկն ձեւեն, նովին եւ զհողաբիրսն հայթայթեն: 190 Դարձեալ հարկատուք են միմեանց սիրով. քանզի գոն ի միջի նոցա աւտարատուք, եւ յիւրաքանչիւր վաստակոց անդր հարկին. են ի նոսա ծերագոյնք, որք ոչ հարկին զպէտս անձանց վճարել միաբան. վասն այնպիսեացն առաւել հոգ տանին քան անձանց. վասն զի հրեշտականմանք են, ոչ միայն արտաքին պիտոյիւքն սիրեն զմիմեանս, այլ եւ զծածկութիւն խորհրդոց իւրաքանչիւր ոք ոչ թաքուցանէ յընկերէ. եթէ յանկարծ շարժեցան միտք ուրուք յիշելով զկերակուր տենչալիս, յայտնէ զախտն իւր միւսումն որ լաւագոյն է քան զնա. միաբանութեամբ աղաւթս արարեալ ի վերայ՝ վաղվաղակի եկն յառողջութիւն անցաւութեան. քանզի եւ ինքն իսկ որ հիւանդացաւն՝ տեղեկագոյն գիտէ կուռել ընդ եկամուտ չարին խորհրդոց, մանա-

ւանդ զի փորձիւ իսկ զչափ առեալ էր յառաջագոյն, եթէ ընդ կերակուրս մտանեն ամենայն մեղք ի բնութիւն մարդոյն. եթէ զայն դուռն մեղաց փակէ ոք, բազում վնասք արգելուն ի նմանէ. զոր ոմանք բազմագլուխ գազան կարգացին զպարարումն որովայնի: 191 Տեսե՞ր, եւ նոքա նախ զնա սպանին, եւ յայլ եւս ի վնասարար գլխոց նորա՝ աներկիւղք դադարեցին ի լերին անդ, զի յերկրաւոր բարձրութենէն յերկնաւոր բարձրութիւնսն առ Տէրն իւրեանց կարասցեն վերաբերել, որպէս Մովսէսն եւ Եղիայն փառաւք երեւեցան Տեառն ի նմին լերին:

192 Եւ ես տառապեալս քան զամենայն մարդ, որ հետեւեցայ հետիոտս ընդ տէրունեան շաւիղն ի լեռն անդ, եւ աչաւք տեսի զժողով սքանչելի եղբարց, աղաչեմ զընթերցողսդ եւ զլսողսդ, աղաւթս արարէք ի վերայ իմ եւ ձեր հասարակ. ընդ նոսա ապրեսցուք յահաւոր դատաստանացն Աստուծոյ, եւ երկնից արքայութեանն արժանի լինել ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որում փառք յաւիտեանս յաւիտենից:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԸՍՏ ՅՈՎՅԱՆՆՈՒ ՍԻՐԵԼԻՈՅ Ի ՉԱՐՉԱՐԱՆՍ ՏԵԱՌՆ

Ա.

Յոյժ առաւել զարմանամ ընդ ժպրհու-
թիւնս մեր, թէ յոր բարձրութիւնս ձկտե-
ցաւ հասանել. ոչ զի եհաս զարմացաւ, այլ
զի կամեցաւ հասանել եւ ոչ եհաս, որպէս
եւ կարծէ իսկ ամբաստանութիւնս մեր.
զառ ի ծայրիւք բարձրութեանն բերիլ, եւ
գործէ սողելով զառ երկրաւս զամենայն
վատթարութիւնս: 2 Քանզի բազումք են
ծնունդք վատթար մասինն, եւ անպիտան
են պտուղք որ ի նմանէ ճաշակին խոր-
հուրդք: 3 Քանզի ինքն ի վեր, եւ գործք
գետնանախանձք եւ հեշտութիւնք աղտե-
ղիք եւ ցանկութիւնք անառակք, սէրք
լկտութեանց եւ տենչանք անյագութեանց,
զբազումն մեծութեանց եւ հանգիստ ժա-
մանակեանք ոչ ինչ ամենեւին ի վեր կա-
րացեալ հայել, եւ զիմանալի մեծութիւնն
տեսանել յոգիս եւ ի մարմինս: 4 Յոր եթէ
սակաւ մի մերձեցցիս եւ ընդհարցիս ընդ
այն մեծութիւն, ծաղր արասցես զառ ի
ներքոյ արեգականս. հեռասցիս այսուհե-
տեւ յախտալի տեսակացս, եւ մինչ դեռ ի-
ցես ի մարմնի՝ վերացուցեալ դնիցես զքեզ
ի վերոյ քան զամենայն երեւելիսս: 5 Որ-
պէս եւ մեծս այս Յովհաննէս աւետարա-
նագիրս սկիզբն առնէ, ոչ ի ծովէ, ոչ ի ցա-
մաքէ, եւ ոչ յարդարոց մարդկանէ, եւ ոչ ի
տեղւոջէ անտի ուստի ծագումն կենդանի
երեւեցաւ. նա եւ ոչ ի վեր յերկնէ եւ յերկ-
րէ լինելութեանցն: 6 Իսկ ուստի՞ պարտ է
սկսանել. յանսկզբանէն. ըստ ժամս եւ ըստ
ժամանակս, ըստ դարս եւ ըստ յաւիտեանս
հասանել յանիմանալին եւ յանըմբռնելին,
ի միագոյ զաւրութիւնն, ուստի ամենայն
սքանչելի լինելութիւնն:

7 Ի սկզբանէ էր բանն, եւ բանն էր առ
Աստուած, եւ Աստուած էր բանն՞. որ եւ
բոլորեցուն սա է պատճառ: 8 Արդ զայս
ճշմարտութիւնս լսելով՝ մի՛ յանցաւոր
կար ի կեանս եւ ի ժամանակեայս. այլ ընդ
նմին Առաքելոյ թռիցուք յանմարմին տե-
ղին, տեսանելով անդ զբանն Աստուած
մարմնացեալ, եւ աղաչեսցուք զՏէրն ամե-
նագութ, զի ծագեսցէ զլոյս շնորհի իւրոյ
յոգիս եւ ի մարմինս մեր. եւ լուսաւորես-
ցին աչք մտացս մերոց, լինելով մեզ ար-
ժանի ըստ նորա փառացն պատմող սուրբ
չարչարանաց եւ լուսաւոր յարութեան նո-
րա. յորմէ մեծացեալ է յոյժ եկեղեցի, եւ
ունի բազում հարս հոգեկիրս, առաքեալս,
մարգարէս, հովիւս ճշմարիտս. որոց ստա-
ցուած է գանձն երկնաւոր: 9 Այլ որչափ
բազում են հարքն հոգեւորք, եւ բազում
ունին որդիս առաքինիս, եւ որչափ բա-
զում են յոյժ ժառանգութիւնքն՝ առաւել
քան զայն եկք եւ ժառանգիչք: 10 Իսկ ե-
թէ առաջինքն ի դարս իւրեանց գտան կա-
տարեալք վաստակաւք, արթնութեամբ
տքնեալք, եւ հաւատովք հաստատեալք, եւ
մեծաւ ճգնութեամբ ի հեռաստանէ հայե-
ցեալք, անդուստ զինքեամբք տեսեալ
զՏէրն ամենայնի, որ եկն ի փրկութիւն ա-
մենեցուն, ոչ վրիպեցին ի կենարար աւե-
տեաց նորա. ընկալան եւ հաւատացին, եւ
կան հաստատուն մինչեւ ցայսաւր: 11 Ա-
պաքէն եւ որդւոցս ընդ նոյն հետս հարցն
պարտ է ընթանալ, զնոյն հաւատս ունե-
լով, զնոյն վաստակս յանձին բերելով, նո-
վին համբերութեամբ երկայնամիտ լինե-
լով, նորին միւսանգամ գալստեանն ակն
ունել, նորին աւետեացն սպասել: 12 Եւ
յորժամ այսմ ամենայնի խոկք եւ կիրթք ի-
ցեմք, ընդհարք եւ ընդելք ի վաստակս

ՅՎԸ. Ը 1

Հարց մերոց հոգեւորաց, եւ երեւիցիմք եթէ նոցա հարց հոգեւոր որդիք եմք, նա եւ ի ձեռն Հոգւոյն իսկ աւգնականութեան կարիցեմք գտանել զժառանգութիւն սուրբ հարցն զոր աւանդեցին մեզ: 13 Զի ահաւասիկ առաջինքն սերմանեցին եւ սնուցին, եւ միջինքն հնձեցին եւ վաստակեցին, եւ մեք եկեալ մտաք ի վաստակս առաջնոցն:

14 Արդ եւ մի՛ մեք վերջինքս հեղգութեամբ ծուլասցուք, գուցէ վրիպեալ գտանիցիմք ի սկսմանէն, յաճմանէն, եւ անպտուղք ի ծայրէն գնացեալք իբրեւ վատ ժառանգիչք՝ սովամահ գանձինս առնիցեմք, ահա գիտեմք իսկ ամենեքեան թէ ունի եկեղեցի բազում մեծութիւն եւ գանձ երկնաւոր, զոր ոչ ոք կարէ հասու լինել եւ արկանել ընդ թուական համարաւք: 15 Բայց ես փոքր ի շատէ ասացից զգիտակս ծայրից երկնաւոր պտղոցն ի բազմաց զմասնն. զի միով մասամբն երեւեսցին ամենայն մասունքն: 16 Զի թէպէտ եւ յոյժ աուցեալ իցէք ամենեքեան աստուածային մեծութեամբն, ես ոչ ինչ առ ի յոյժ գիտութեան առաջ անցեալ մատուցանիցեմ զձեզ ի նոր հաւատս գլխաւորելով, կամ նորածայն բարբառս ինչ աւտարոտիս պատմելով, որ քաւ եւ մի՛ լիցի, կամ ասել կամ լսել զայնպիսիսս ի սուրբ եկեղեցւոյ: 17 Այլ առ գութ սիրոյն Տեառն ամենեցուն, եւ առ խանդաղատանս հարցն մերոց առաջնոց, որք հաւատովքն իւրեանց եղեն սիւնք հաստատութեան յաղթողք եկեղեցւոյ, կամիմք եւ մեք ըստ մերում փոքր գիտութեանս՝ տալ գանձինս յաշխատութիւն ի տուէ եւ ի գիշերի, անդադար լինել յընթերցուածս երկնաւոր կտակարանաց, եւ ի մտածութիւն տեսական խորհրդոց. զի եւ ի մեզ կաթեցէ նշոյլ Հոգւոյն Սրբոյ. զի ճշմարտեսցուք ընդ անվրէպ շաւիղս որ տանիցին ընդ նուրբ ճանապարհն՝ մտանել ընդ նեղ դուռն ի մեծ քաղաքամայրն երկնաւոր:

18 Արդ ահա հասաք ի կէտն միջին՝ որ է սկիզբն վերջին, եւ կատարումն առաջին: 19 Ամիսս այս, ասէ, եղիցի ձեզ սկիզբն ամսոց յամիսս տարւոյն^ա: 20 Արդարեւ նոր չքնաղ զաւրութիւն Հոգւոյն Սրբոյ աւրէնադրէ ի ձեռն Մովսէսի՝ որ բուռն հարկանէ զամսոյն, եւ ամսոյն պատճառանաւք տանի հանէ յարարչութիւնն: 21 Առաջին ամիսս այս, ասէ, ձեզ սկիզբն ամսոց», որ է արեգ ամիս. զի ի սկզբանն լինելութեան ոչ է սա ամիս, այլ արեւ եւ սկիզբն, եւ արեւ դարձեալ նորածին եւ ամիս նախադաս եւ ժամանակ գարնանային: 22 Զի ի փարատել ջուրցն յերեսաց երկրէ եւ ընդ երեւել ցամաքին՝ ձայն ի վերուստ արձակեալ Բուսուցէ երկիր զբոյս խոտոց սերմանեցելոց եւ ծառոց պտղաբերեցելոց^բ, եւ անդէն երկիր զհրամանն երկնային լուեալ իբրեւ մտաւոր եւ բանաւոր՝ զարդիւնս գործեալ ի մէջ բերէ: 23 Եւ ըստ իւրաքանչիւր տեսակաց կատարելութիւն երեւէր միանգամայն խոտոց եւ ծառոց. ոչ միայն անձինք ըստ ազգի եւ ըստ նմանութեան, այլ եւ պտուղք իւրաքանչիւրք հասեալք եւ կատարեալք: 24 Սոյն ամիսս այս յաւուրս արկածից ջրհեղեղին, որ զբովանդակ տարին արգելեալ փակեցաւ արդարն ի ներքս ի տապանին, ողորմութիւն ի վերուստ կաթեցեալ՝ հրամայէ նմա ելանել ի տապանէն եւ ամենեցուն որ ընդ նմայն էին, լինի ամիսս այս սկիզբն ամսոց յաւուրս տարւոյն. եւ միւսանգամ երկիր գալարաբեր լինէր, եւ սնուցանէր զամենայն կենդանիս որ ի նմա, զի աճեցեալք բազմասցին արարածք ըստ առաջին գոյացութեան:

25 Արդ Մովսէս՝ որ արժանի եղեւ Հոգւոյն Սրբոյ պատմել զլինելութիւն արարածոց, դնէ զամիսս զայս ի սկզբանն սկիզբն լինելութեան աշխարհի, եւ խան-

^ա Եւ. Ժ. Բ. 2

^բ Տե՛՛.՝.՝.՝. Ը 11:

գարման ջուրցն ապականելոյ գերկիր. յարմարական թուոց ամաց զամիսս զայս ցուցանէ սկիզբն: 26 Եւ փրկեալ Մովսէսի զժողովուրդն յեգիպտոսական ծառայութենէն՝ աւրինադրէ զեբրայեցիսն ի մեծ տաւնիս ասելով. Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց յամիսս տարւոյն^{***}: 27 Ոչ միայն փրկելով զնոսա ի չարաչար ծառայութենէն, այլ եւ զատուցեալ ի հեթանոսական տաւնիցն հրամայէ ի տասն եւ ի չորս ամսոյն զենուլ գառն. ըստ տան իւրաքանչիւր առնել տաւնս ի գիշերին՝ յորում կատարեսցի լուսաւոր խորհուրդ յարութեանն Քրիստոսի:

28 Արդ որովհետեւ գտանի ամիսս այս սկիզբն արարչութեան, հիմն հաստատութեան գոյացութեանց աճմանց, եւ թուական ժամուց եւ ժամանակաց եւ դարուց կատարման աշխարհիս, եւ պատարագ հաշտութեան ի սմա մատուցաւ՝ որպէս եւ վերագոյնն ասացաք՝ յաւուրս արդարոյն, եւ պատճառք ազատութեան ի խիստ ծառայութենէ արբահամեան զաւակին, արդ որովհետեւ փրկիմք յերկրաւոր ծառայութենէս յազատութիւն, յայսմ վայրի, եղբարք, մտադիւրութեամբ վաստակեսցուք. զաւրէն առաքինի մշակաց ի խոր հերկեսցուք եւ ճգնութեամբ մեծաւ զխստութիւն երկրիս կակղեսցուք, զի ի խոր բրելոյ շուրջ զբանիւն արմատախիլ զվնասակար սէզն քաղեսցուք. զի գեղեցիկ սերմանեցեալք ցորենահատքն զտէր անդոյն ուրախ արասցեն: 29 Զի եթէ յովտն նշանախեց՝ որ է մի ի փոքրկանց տառից, եւ ունի գտեղի մեծամեծաց, եւ եթէ ոք զնա արհամարհիցէ՝ յետնեալ գտանիցի յարուեստին իւրում, ո՛րչափ եւս առաւել մեզ արժան է երկնչել զանց առնելով զմեծամեծ պարգեւաւք Հոգւոյն Սրբոյ, որոյ սկիզբն եւ միջոցն եւ կատարածն լի է երկնաւոր մեծութեամբն: 30 Զի եթէ սկսայց ի

միակէն եւ անցից ի հարիւրեակն եւ հասից ի հազարսն եւ յանդգնեցայց ի բիւր բազումս, առաւել քան զնոյնս անդրէն մնաց բազում:

31 Թէպէտ ա՛ն քեզ տարացոյց կատարեալ՝ որով հաւանեսցին միտքդ դալ ի ճշմարիտ հաւանութիւն: 32 Յորժամ ծարաւեալ յողբերն դիմեսցես դու եւ եւս բազումք ընդ քեզ, եթէ բիւր անգամ ըմպիցես, ոչ կարասցես արբամբն քով զբղխումն աղբերն ցամաքեցուցանել, եւ ոչ զնոյն ջուր արբես զոր յառաջն արբեր: 33 Եւ եթէ նստիցիս առ աղբերն, ոչ նմին ջրոյ կրկին դիպեսցիս, եւ ոչ աւտարոտի ինչ դարձեալ ի նա խառնեալ տեսանիցես, եւ ոչ որ երէկն՝ քեզ այսաւր կրկին երեւեսցի: 34 Իսկ արդ եթէ բնութիւն ջուրցն անհատ զնացիւքն այսպէս մեծամեծ խոհականութիւնս ցուցանեն մարդոյ, քանի՛ եւս առաւել բանքն աստուածայինք՝ եթէ արբես զնա յոգիս ծարաւեալս. ոչ երբեք առլցցիս ծանրութեամբ, այլ թեթեւացեալ անդէն ի նոյն փափագիցես: 35 Թէպէտ եւ համն եւ բնութիւնն նոյն իցէ, այլ տեսակք խոհականութեանցն այլ եւ այլ ճաշակիցին ի միտս իմաստասիրաց, եւ ամենեքեան առ մինն գլխաւորեալ հայեցուցանեն ճշմարտութիւն:

36 Արդ զի՞նչ է այն որ հրամայէ արգելուլ զգառնն ի տասներորդ աւուր ամսոյն, զկենդանին ի մէջ կենդանեաց, զձայնաւորն ի մէջ բանաւորաց: 37 Ահա խորհուրդ յայտնի. յոր եթէ կամեսցի ոք, ամենայն իրաւք կարասցէ հայել: 38 Զի տասնեակն ունի զկատարումն թուականին, եւ թուականն զնիւթական գոյութիւն աշխարհիս: 39 Զի նիւթականաւն զմարմնականս առցէ ուսումն կատարեալ վարդապետութեան: 40 Եւ ի լուսալիւր լուսնին առ երեկոյի ժամանակին զենու պատարագն. որ յայտնապէս ցուցանէ զարատութիւն պակասութեան ավրինադրեցելոյ

^{***} Եւ. Ժ. Բ. 2

տաւնին: 41 Բայց զի է մեծախորհրդութիւն ճշմարիտ գառնին Աստուծոյ, որ գալոց եւ փրկելոց է զԻսրայէլ, ոչ յԵգիպտոսէ միայն, այլ ի սատանայական ծառայութենէ, նշանակի արիւն գառանցն ի վերայ սեմոց իւրաքանչիւր, եւ պահէ գտունս ամենեցուն ի հարուածոց, յորում եգիպտացիքն հարան ի մեծամեծաց մինչեւ ի փոքունս: 42 Եւ զոր աւրինակ ուրախ լինին երկրագործք ի տեսիլս ծաղկանց ծառոց յառաջ քան զհասանել պտղոց, այսպէս եւ մեք ուրախ լիցուք ի խորհուրդ տաւնիս այսորիկ մինչեւ զենցի գառնն Աստուծոյ, որ է տաւն փրկութեան Հրէից եւ հեթանոսաց: 43 Արդ փոխանակ զի ոչ ունէին իւրեանց իսրայէլացիքն երկիր բնակութեան եւ տաճար յանուն Աստուծոյ ժողովել ամենեցուն, եւ ոչ զագգն Ղեւեայ ձեռնադրեալ ի քահանայութիւն, բաւական համարեցաւ շնորհն Աստուծոյ զանձն իւրաքանչիւր առնել տաճար եւ բնակութիւն Աստուծոյ, եւ յամենայն տունս լինել քահանայս:

44 Բայց մեք այսու ամենայնիւ ճեպով ի կատարեալ հրամանն Մովսէսի անցցուք. որ գործով զգառնն Աստուծոյ առ որդիսն Իսրայէլի աւրինադրէ, եւ զաւրութեամբ առ որդիսն Աստուծոյ ի հեռաստանէ ակնարկէր: 45 Մի՛ հում ուտիցէք, ասէ, որ է զագանային շաղղակերութիւն. եւ մի՛ եփեալ ջրով, որ է տարածումն եւ զեղխութիւն աստէն յաշխարհիս. եւ մի՛ բնաւ չուտիցես, որ է վրիպումն ուրացութեան. այլ խորովոյ կերիջիր, որ է անպաճոյճ ծախումն երկնաւոր հրոյն: 46 Վաղվաղակի կերիջիր, մի՛ յամելով իբրեւ եթէ միով մասամբ մարմնոյն ուտել. այլ զաւրութեամբ զաւրէն հրոյ ամենայն մասամբք գոյացութեան իւրոյ: 47 Զգլուխն հանդերձ ոտիւքն եւ փորոտեաւն, ասէ: 48 Եւ կարի յոյժ վայելչաբար զնախաստեղծ գլուխն եւ զստորադիր ոտս մարմնոյն հանդերձ անդական փորոտեաւն

հրամայէ ուտել, զանց արարեալ ընդ չարչարանացն, զի յերեցունց քաջապէս ապրել կարասցես: 49 Իսկ զաւելորդն յերիցն մնացեալ յայգ՝ հրով հրամայէ այրել, որ է մեղք եւ անաւրէնութիւնք: 50 Դարձեալ ասելով զաւտիք ընդ մէջ եւ կաւչիկ յոտս, ցուպ ի ձեռին, ճրագունք լուցեալք, ամենեքեան այսք նշանակք են արութեան պնդութեան՝ առժամայն յելս զաղթին փոյթք, իսկ առ յապա՝ զաղութ լինել ի բնաւ աշխարհիս կենաց: 51 Քանզի գաւտիքն ուսուցանեն զարիական պատերազմն, եւ ցուպքն զարքունեանն եւ զխրատականն. իսկ կաւչիկքն զաներկիւղութիւն ճանապարհին՝ անվնաս զնալով ի վերայ թիւնաբեր սողնոց. եւ լուցեալ ճրագունքն զանշէջ մտաց մարդոյն լուսաւորութիւն, որ զտէր խորհրդոյն ի հեռաստանէ իբրեւ ի մաւտոյ տեսանէ, առաւել յայտնագոյն յասելն, եթէ Զոսկր Աորա մի՛ բեկանիցեմ եւ ի յայգ մի՛ հանիցեմ^{***}. որպէս եւ եղեւ իսկ, զոր եւ յառաջիկայ բանիս տեսցուք:

52 Արդ եթէ Մովսէս յառաջագոյն կրթէր զժողովուրդն յայսպիսի յայտնագոյն խորհուրդ՝ յորում ծածկեալք յԱստուծոյ առ յապա յայտնելոց էին, եւ մարգարէքն նովին հոգևով զնոյն քարոզէին, եւ արդարքն հաւատային, եւ ժողովուրդն ամենայն գալստեան Տեառն ակն ունէին, որպէս եւ կինն շամրտացի ասէր՝ եթէ յորժամ Մեսիայն եկեսցէ՝ նա մեզ զամենայն պատմեսցէ, արդ նոյն Տէր՝ որ զայս ակնարկութիւնս առ ժողովուրդն կատարեաց, ի սմին արեգ ամսեան աւետարանեցաւ ի հրեշտակէն սրբոյ կուսին ի Նազարէթ. զի զսոյն ամիսս արասցէ սկիզբն նորոյ փրկութեանս: 53 Եւ եմուտ արգելաւ գառնն Աստուծոյ յորովայն կուսին՝ լինելով անդ ամիսս ինն. զի բացցէ զաչս կուրացելոցն, յիշատակելով նոցա զգեներումն

^{***} Տէ՛*.. Եւ ԺԻ՛ 10:

գառինն որ յԵզրիպոսս. զի աճեցեալք եւ ի չափ հասեալք կատարեալ գիտութեանն՝ թերեւս ոչ վրիպեցին ի գառնէն Աստուծոյ, որ փրկելոցն էր զնոսա յանլոյծ կապանացն հնութենէ մեղաց: 54 Որպէս զի եւ ինքն իսկ գառնն Աստուծոյ զամենայն դեգերումն յամելոյն երեսնամեայ ժամանական եւ աւելի եւս ամաւք առ որդիս ժողովրդեանն գումարէր ծննդեամբ ծագմանն եւ յայտնութեամբ մկրտութեանն, որպէս զի զնշանագործութիւնն զամենայն ի մէջ հրէաստանի կատարէր, եւ զընտրութիւն Առաքելոցն ի նոցունց որդւոցն որոչէր, եւ հանապազորդ կրթելով զամենեսեան ուսուցանէր յաւրինաց եւ ի մարգարէից՝ եթէ վասն իմոյ գալստեանս քարոզեցին ամենեքեան, եւ ասելով յԱռաքեալսն՝ եթէ Ձեմ ուրեմ առաքեալ, բայց միայն առ ոչխարս կորուսեալս տանն Խարայելի³: 55 Նա եւ զաւետիս հարցն հաստատէր մտանելով ընդ թլփատութեամբ, յանձն առնուլ՝ ծանալթս եւ բարեկամս առնել ի մէջ ամենեցունց. դուռն բանայր յինքն մերձենալոյ մաքսաւորաց եւ մեղաւորաց. հալածականս առնէր զգեւս ի սահմանաց ընտրեալ ազգին. զախտս եւ զչարչարանս բժշկէր, թաւթափեալք յանձանց՝ որք հաւատով մերձենային ի նա: 56 Նա եւ որ մեծն էր քան զամենայն, ի բազում տեղիս բազում անգամ զմահ կապէր, եւ զնէր ի ներքոյ իւրոյ յաղթող զաւրութեանն. եւ զմեռեալս կենդանիս պահանջէր յանաւրէն բռնաւորէն. եւ զամենայն արտաւար հատեալ յամենայն աչաց, սուգ եւ տրտմութիւն փախստեայ լինէր յերեսաց նորա. ատելութիւն հալածէր եւ ազահութիւն յանդիմանէր. խաւար փախչէր եւ լոյս թագաւորէր:

57 Եւ զայս ամենայն իբրեւ այսպէս յաւրինեալ կազմեաց, քահանայքն եւ քահանայապետքն հարեալ նախանձուն ախ-

տիւք՝ կափուցին զաչս իւրեանց ի լուսոյն ճշմարտութեան, եւ խցեալ զլսելիս իւրեանց՝ ոչ կամեցեալ ունկնդիր լինել աւրինաց եւ մարգարէից, եւ ոչ ընդունել զքարոզութիւնն՝ որ կատարէր զաւետիս մարգարէիցն: 58 Այլ ի վերայ այսր ամենայնի բարեգործութեանցս հակառակեալք եւ ընդդէմ դարձեալք արգելուին զժողովուրդն անունկնդիր լինել կենդանարար վարդապետութեանն: 59 Արդ եկեալ եհաս ի նոյն ամիսս, որ ի սկզբանց զխորհուրդ կենարարին նշանակէր, եւ Տէրն ամենեցուն առ սէր որդւոցն Աստուծոյ ի նոյն գութ եկեալ զնոյն զատիկ ընդ նոսա խնդութեամբ կամէր կատարել. զի թերեւս յետս փարատեսցի խաւար նախանձու ի խորհուրդոց նոցա, եւ բացցին աչք մտաց նոցա՝ զորս կամաւքն կուրացուցին. եւ ծանիցեն զՏէր տաւնին՝ որ եկն ի կեցուցանել զարարածս առ հասարակ, որք մեռեալ էին ի մեղս իւրեանց:

60 Բայց արդ դու լուր զմեծամեծ չարիսն: 61 Իբրեւ մերձեցաւ, ասէ, տաւն բաղարջակերացն՝ որ անուանեալ կոչէին զատիկ, գիտացին եթէ զայ Յիսուս ի բազմութիւն ժողովրդեանն ուսուցանել զնոսա, զահի հարան եւ յոյժ յերկիւղի էին, եթէ գուցէ կամ զկոյրս բանայցէ կամ զանդամաւոյծս բժշկիցէ կամ զդիւահարս սրբէ. մանաւանդ եթէ զմեռեալ ոք յարուցանիցէ, ամենայն ժողովուրդն հաւատան ի նա: 62 Վասն այսր երկիւղի խորհուրդ արարին քահանայապետքն եւ մեկնիչքն եւ պատմեցին իշխանացն եւ ուսուցին զբազմութիւն ժողովրդոցն, զի ո՛ւր տեսցէ ոք՝ գուշակեսցէ. եւ ինքեանք իսկ վառեալք իբրու զինուք, զի ո՛ւր եւ գտանիցեն՝ սպանցեն:

63 Եւ իբրեւ այսպէս ոչ հնարեցաւ նոցա, գտաւ նոցա աւգնական՝ որ ի սկզբանէ իսկ բնակեալ էր ի սիրտս նոցա: 64 Եւ ի ձեռն միջնորդի ուրեմն՝ որ անուամբ էր

³ Տէ՛.՝.Մ.Պ.Ք.Ժ.Ե 24:

ընդ աշակերտսն, եւ գործակից չարակամաց քահանայիցն լինէր, որպէս եւ Աւետարանն յայտնագոյն իսկ ցուցանէ. Սատանայի իսկ, ասէ, արկեալ էր ի սիրտն Յուդայի, զի մատնեսցէ զնա նոցա[»]: 65 Տեսանե՞ս, զի գործակից էին՝ ոչ քահանայութեանն, այլ սատանայական գործոյն: 66 Չոգաւ առ նոսա եւ ասէ. Զի՞նչ տայք ինձ, եւ ես մատնեցից զվարդապետն: 67 Եւ նոքա մատուցին նմա վաղվաղակի կշիռ երեսուն արծաթոյ: 68 Ո՛վ մոլիք, եւ ոչ քահանայք. զի թէպէտ եւ չարաչար մատնէր, այլ զանուն գեղեցիկ խոստովանէր. վարդապետ ասաց, եւ ոչ զող եւ սպանող, եւ ոչ այլ ինչ մի ի չարագործաց աշխարհիս: 69 Քանզի զարծաթդ խոստանայք, ընդէ՞ր ոչ գործոց նորա չարցանէք եթէ վասն որո՞յ չարեաց մատնես զնա ի ձեռս մեր: 70 Այլ թերեւս երկեայք չարցանել եթէ վասն որո՞յ չարեաց մատնեցեր զնա. զայդ բարեք արարէք, զի ձեզնէն իսկ գիտէք եւ հասեալ էք ի վերայ եթէ ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա, եւ ոչ անաւրէնութիւն ի գործս նորա, որով ոչ ոք ի մարդկանէ զնա յանդիմանել կարէ:

71 Բայց աղէ դուք, չարցանեմ զձեզ, ընդէ՞ր տայք զարծաթդ, եւ ուստի՞ տայք, եւ վասն է՞ր երեսուն լիտր: 72 Եթէ մահապարտ է, որպէս ասէքդ, մի՛ առնէք զկորուստ արծաթոյդ. ոչ ոք ի մարդկանէ զնէ արծաթոյ զմահապարտ եւ սպանանէ. թոյլ տուք այդր, մեղքն իւր ամբաստանեն զնմանէ. զգործոց նորա բուռն չարէք, զի չարիք նորա մատնեն զնա ի մահ: 73 Ես գիտեմ զի ճշմարիտք էք. մանաւանդ եւ իմաստունք եւ քահանայապետք եւ առաւելեալք գիտութեամբ քան զամենեսեան. գիտէք՝ աւագիկ գուշակ յաշակերտաց նորա, չարցէք եւ գրեցէք զգործս վարդապետին իւրոյ: 74 Սկիզբն արարէք՝ ուստի

սկսան նա առնել, այդրէն իսկ ի տաւնիդ գտանէք բազում գալիւնացիս: 75 Եւ գտանէք անդ ի հարսանիսն զՋուրն գինի եղեալ, եւ ի Կափառնառում ի հինգ նկանակէն հինգ հազարքն յագեցեալք եւ երկոտասան սակառի լի մնացեալք. եւ եթէ ի Նային չարցանէք, զորդի այրւոյն միամաւր ի մեռելոց յարուցեալ տեսանէք. եւ եթէ ի տուն քահանայապետին մտանէք, զնոյն տեսանէք. եւ եթէ յերկիրն գերգեսացւոց մտանէք, ոչ միայն զբազմադեւ պատանին բժշկեալ տեսանէք, այլ եւ զդեւան ի ծովն հեղձուցեալ. եւ եթէ ի Պէննադա քաղաք մտանիցէք, ոչ միայն զկինն առողջացեալ տեսանիցէք, այլ եւ զտէրունեան անդրին կանգնեալ, եւ բժշկեալն բուռն հարեալ ունի զդրաւաշակէն Տեառն, եւ ընդ նորին անդրեաւն բուսեալ արմատ՝ որ մատուցանէ զբժշկութիւնն ախտացելոց: 76 Բայց ես գիտեմ, զի ոչ կարէք երթալ ի հեռաստան, քանզի եւ կամիք իսկ ոչ. ի Բեթանիա մատերուք, մաւտ այդրէն չարցէք ց՛լազար՝ եթէ ո՞ւր չոգաւ եւ կամ ուստի՞ եկն. եւ եթէ զգա ոչ կամիք չարցանել, քանզի չարաչար պատմէ զձէնջ վասն հանդերձեալ տեղւոյն որ պատրաստեալ է ձեզ. եւ կամ յերիքով զկոյրն չարցէք, զոր ի հեռաստանէ ձայնիւն բժշկեաց: 77 Եւ եթէ զնոսա պատճառանաւք կարծէք, այդրէն իսկ ի դմին քաղաքի տեսէք ի Բեթհեզդա գերեսուն եւ զութ ամ. զանողորմութիւնն ձեր մահիճքն աղաղակեսցեն: 78 Եւ ի Սելով չարցեալ, զառ ի ծննդենէ կոյրն տեսանէք լուսաւորեալ. եւ տեղեկութեամբ իսկ գիտէ տալ պատասխանի:

79 Արդ վասն որո՞յ գործոյ մատնի ի ձեռս ձեր վարդապետն: 80 Եւ եթէ գիտէք եւ չար են գործքն, ահա լուայք ապաքէն, գրեցէք եւ մատուցէք դատաւորին ձերում, զի ի գործոց իւրոց մատնեսցի: 81 Ապա եթէ բարի են գործքն, որպէս եւ են իսկ բարի, ոչ դուք միայն պարտեալ ամաչէք, այլ

[»] Տէ՛ս. Թ՛վ՛Ը. Ժ՛Գ. 2:

եւ ամենայն մերձաւորք ձեր ընդ ձեզ:
 82 Եւ որ մատնեացն՝ ոչ միայն ամալթոյ արժանի է, այլ եւ բազում հարուածոց փոխանակ զայնպիսի շնորհս զլանալոյ:
 83 Եւ եթէ ճշմարտասէրք էիք, դուք ձեզէն իսկ առնուիք վրէժս ի նմանէ. զի որ ընդ այն հայէր, չար ընդ բարւոյ ոչ հատուցանէր: 84 Արդ քանզի զայդ ոչ արարէք, արծաթ եւս տայք նմա. եւ ոչ ի տանց ձերոց, այլ ի սուրբ նուիրաց տաճարին. ո՞չ ահա յանդիմանեալ կշտամբիք. քանզի ոչ զմարդոյ աւանդ, այլ զԱստուծոյ հատանէք եւ կողոպտէք զամենասուրբ տաճարն. ոչ ի փրկանս զերեաց եւ ոչ ի տուրս աղքատաց, այլ ի գինս արեան արդարոյ. եւ արդարոյ ոչ ի մարդկանէ ուրուք, այլ զորդւոյ Աստուծոյ:

85 Ապա յիրաւի ուրեմն Ձաքարիս մարգարէ յառաջագոյն գիտելով զչարութիւնդ ձեր, որ տարապարտ սուտ մարգարէիցն ձերոց մատուցանէիք վարձս բազումս, քանզի խաւսէին զկամս չար անձանց ձերոց, եւ գովիչք եւս լինէին չարութեան գնացից ձերոց, ասէ եւ ճշմարիտ մարգարէն. Եթէ բարւոյ թուի ձեզ այդպիսեացդ ծախս անբաւս լինել, տուր եւ ինձ զվարձս իմ. ապա թէ ոչ, գրոյց արարէ՛ք, զի եւ ես գիտացից՝. եւ նոքա վաղվաղակի կշռեցին եւ ետուն ի ձեռս նորա երեսուն արծաթի: 86 Եւ այս էր յաջս մարգարէին անհնարին դառնութիւն, տեսանել ի նմա զամենամեծ եւ զահագին չարիսն զոր գործելոց էր ժողովուրդն. ոչ կարէր հանդարտել ծանրութեան իրացն, առեալ արկանէր զայն ի տուն Տեառն ի բովս, զի թերեւս պատկառեսցեն ի մոլեկան գործոյն, որ եւ զգիւցան ամբարշտութեամբ զանցուցանէր: 87 Արդ ոչ յաւելուն եւ ոչ հատանեն ի կատարեալ չարեացն. պահեն զերեսուն թիւն եւ բերեալ մատուցանեն մատնչին, զի գնեսցեն զարիւն աստուածային, ոչ զի-

պուածով եւ ոչ որ են յանկարծակի ի ներքս անկեալ, այլ հնացեալ խորհրդով զոր կատարէին ի նորոգիչն ամենայնի չարութեամբ:

88 Արդ զերեսուն թիւ արծաթոյդ եթէ յոսկի փոխանակեսցես, լինի բաժանեալ յերբեակ յիսներորդ. եւ եթէ ի նոյն իսկ ի թիւ արծաթոյն, բաղկանայ յերիս տասնեակս. առաջին տասնեական անարգեցին զտասն պատուիրանսն. երկրորդ տասնեական ուրացան զփրկութիւն Մովսէսի. երրորդ տասնեական չհաւատացին երկրին պարգեւաց: 89 Դարձեալ ի ձեռն սորին երբեակ թուականի զչայր ընդ որթուն փոխանակեցին յանապատին, եւ քարկոծելով զմարգարէսն դառնացուցին զՍուրբ Հոգին, եւ մնացորդաւք նորուն թուականին գնեցին զսուրբ արիւնն յանձինս եւ յորդիս իւրեանց մինչեւ ցյաւիտեան:

90 Եւ քանզի զայրացեալք էին ի նախանձ բարկութեան իբրեւ գազանս անապատի, ոչ ինչ փոյթ արարեալ վասն պատուական տաւնին, ժողովեցան քահանայքն եւ քահանայապետքն, ծերք եւ փարիսեցիք, եւ որ իշխան էր տաճարին հանդերձ ամենայն բազմութեամբն՝ վառեալք իբրեւ զինուք, եւ առաջնորդս եւս ունէին, որում ետուն զարծաթն ի տաճարէ անտի. ընդ նմին եւ զաւրաւիգն իւրեանց զանմարմին եւ զիմանալին սատանայ. եւ զժամանակ գիշերոյն աւգնական, զի ի խաւարային ժամուն անկցին ի խորխորատն կորստեան: 91 Ընդ որում ես համբուրեցից, ասէ, Գա է, կայջիք եւ տարջիք զգուշութեամբ: 92 Ընդ ձախողակի ողջունին յետս ընդդէմ հատուցումն անդէն ընդունի: 93 Որում ես թացից, ասէ, ի սկաւառակէս եւ տաց, Գա է որ մատնելոց է զիս. թացիցն՝ զաւրհնութիւնսն լուացից ասէ: 94 Որոյ սիրտն եղեւ բնակութիւն նենգա-

*** Տէ՛. 9. 24. Ժ. 12:

† Մ. 14. Ժ. 44

‡ Տէ՛. 3. 24. Ժ. 26:

ւոր թշնամւոյն, ոչ դադարի անդ շնորհն աստուածային. իսկ ուր աստուածային շնորհն ոչ բնակեալ լինի, նա կոխան անցաւորաց ճանապարհի է:

95 Իսկ Պետրոս որ լի էր բարեսէր նախանձու, մանաւանդ իբրեւ զաշակերտակիցն իւր ընդ նոսա ետես, ոչ կարաց համբերել սատանայական զաւրութեանն. քանզի լուեալ էր յամենագէտ Տեառնէն, եթէ ոյր գոյ սուսեր՝ առցէ, եւ ոյր ոչն գուցէ՝ գնեսցէ եւ բերցէ: 96 Զի՞նչ են հրաման պատասխանուոյս այսորիկ. իբրու զի յայտնի է իմաստնոց, սրոյ նմանեցոյց զճշմարտութիւնն. որոյ ստացեալ իցէ զաստուած պաշտութիւնն՝ պինդ կացցէ, եւ որ սակաւ մի թուլացեալ իցէ՝ գնեսցէ, ոչ սուսեր ի մարդոյ ումեքէ, այլ յորդուոյ մարդոյ զճշմարտութիւնն, ոչ գնոյ արծաթոյ, այլ արեամբ անձին իւրոյ. քանզի՝ սուր եկն արկանել, ոչ միայն յերեւելի մերձաւորութիւնն, այլ եւ ընդ հոգի եւ ընդ մարմին յանձինս իւրաքանչիւր: 97 Այս է սուսերն բնական եւ ստացական. իսկ Պետրոս զերկոսեանն ունէր. բնական առ սէր վարդապետին զոր ունէր ի սուրբ ոգիսն, իսկ ստացական որով զծառային ունկն ի բաց հատանէր: 98 Եւ կարի վայելչաբար զծառային եւ ոչ զագատի, զմեղաց եւ ոչ զարդարութեան, զուսկն զապստամբ, ոչ զգլուխն պատուեալ զմասնն, եւ ոչ զամենայնս. քանզի ոչ այլ ինչ նման է ծառայութեանն, որպէս զգայութիւն մտաց: 99 Քանզի ակն ընդհարութեամբ՝ միտքն ընդ իմանալին բախեցան, եւ ունկն ընդ լսողութեամբ, աչք ի տեսաւորութիւն պատրաստեցան, եւ խոհականութիւն անդուստ պատասխանատուութիւնն արտաբերեաց. իսկ ըսնկացն հոտաւորութիւն զճաշակելիսն զարթոյց յընտրութիւն որոշողութեան. եւ ի ձեռն զգայութեանցս այսոցիկ ամենայն զգալիք առին զգուշութիւն պահպանութեան:

100 Իսկ ականջացն դժուարագոյն իմն է առնուլ պահպանութիւն անձայնութեան, որ եւ կոխի իսկ ի բազում անարժան ձայնից. եւ ոչ միայն ծառայ մնայ, այլ եւ ծառայեցելոց զգայութեանցս կրկին ծառայեցեալ: 101 Արդ հանելով ի բաց զուսկն ծառային, նշանակեաց զանդաստին ի սկզբանէ զանլրութիւն եւ զանհնազանդութիւն մարդկան: 102 Բայց քանզի շատ է զի եւ բարերար Տէր երկնի եւ երկրի զամենայն խեղութիւնս մեր եկն ի բժշկել, եւ զթերութիւնս մտաց մերոց լնուլ եւ կատարել, ոչ զանց արար մարդասիրութիւն նորա եւ զուսկամբ ծառային. այլ առեալ անդրէն ի տեղուջն եղեալ՝ անվէր եւ անսպի գտեղին ցուցանելով, որ է նշանակ դարձի մեղուցելոցն յապաշխարութիւն. եւ խաւսի ընդ ամենեսեան աղերս բանիւք եւ քաղցր բարբառով:

103 Բայց քանզի զաւրութիւնն էր անպարտելի, թէպէտ եւ յոյժ խոնարհագոյնս խաւսի, սակայն ես եսն ասելով Աստուածն մարդացեալ, երկիցս անգամ անդրէն յառաջ բնութիւնն զարկոյց գնոսա եւ ոչ իմացան: 104 Ողորմեալ այնուհետեւ եւ բարերարին անարժանիցն, երկիցս անդէն ի տեղուջն կատարէ բան. զՊետրոսի զսուրն անդրէն հրամայէ դարձուցանել, եւ զինքն փոխանակ աշակերտացն մատնէ ի ձեռս ունելեացն, միանգամայն եւ զՀաւր կատարէ զհրամայեալն զբաժակ մահուն ըմպելով: 105 Եւ քանզի էր Աստուած անսուտ, եղեւ մարդ ճշմարիտ՝ անկասկածելի աստուածութեամբն աներկիւղ մատնէր ի ձեռս ունելեացն. իսկ մարդկային բնութեամբն երկիւղագին խանդաղատական աղաւթիւք գայն որ կարողն էր փրկել ի մահունանէ՝ աղաչէր ոչ դուզնաքեայ եւ մտահաճոյ, այլ ընդ այլոյ ինչ երազատես լինէր, այլ յառաջահոգակ եւ նախախնամ հովիւ կենդանի բանաւոր խաշանց կանխագէտ տեսանէր զինչ լինելոցն էր:

106 Առեալ այնուհետեւ զաշակերտսն զայ հասանէ ի տեղին զոր յառաջագոյն նկարեալ էր մարգարէիցն. Ժողովեցից, աւէ, զամենայն ազգս երկրի, եւ իջուցից զնոսա ի ձորն Յովսափաթայ. եւ անդ նստայց դատել զամենայն ազգս շուրջանակի^ա: 107 Արդ ոչ զի յառաջագոյն ասացեալ էր մարգարէութեանն՝ ահամայ իրքն կատարէին, այլ նոյն ինքն հոգի Աստուած մարգարէիւքն խաւսէր որ ինչ լինելոցն էր. ոչ այսաւր, այլ որ ի սկզբանց յեղումնն ըստ կամաց յազատութեանն առաջին մարդոյն էր: 108 Եւ քանզի ոչ հարկաւոր էին իրքն, այլ ըստ խրատու թշնամւոյն եւ ըստ յաւժարութեան վատթարի ոգւոյ անփոյթ արարեալ գյոժարութիւնս, քաջաբեր լինել քան անարգագոյն պտուղս: 109 Եւ քանզի Տէրն ամենեցուն ոչ եկեալ էր ի դատապարտութիւն, այլ փրկել ի ծառայութենէ եւ նորոգել յազատութիւն, խնդրէր աղաւթիւք յայնմանէ՝ որ առաքեաց կորզել զաշխարհ ի մոլորութենէ, եւ հասուցանել ի Հաւրն արքայութիւն:

110 Արդ ետես յայսմ տեղւոջ եթէ եկեալ հասեալ է ամենայն արարածք ահանատես լինել մահուան որդւոյն Աստուծոյ, եթող զաշակերտսն ի խոնարհագոյն տեղւոջն, եւ ինքն սակաւիկ մի ի վերագոյն տեղին մատեաւ. անկաւ ի վերայ երեսաց իւրոց՝ խոնարհեալ համբուրէր զդէմս երկրի, եւ հեղոյր զսուրբ զարտասունն ի սուրբ հատուած հողոյն, եւ բառնայր զառաջին անէծսն: 111 Դարձեալ կանգնէր, ի վեր հայեցեալ կարգայր առ Հայր աղաւթիւք ասելով. Հայր եթէ հնար ինչ է, անցո զբաժակս զայս յինէն: 112 Իբրու տէր էր հնարից եւ անհնարից, առ Հայր կարգալով ցուցանէր զմիասնական Երրորդութիւնն, եւ միանգամայն եւ զմարդկութեանս բնութիւն, որ այնչափ վերաբերեցաւ յաս-

տուածութիւնն: 113 Աղաւթս առնէր ոչ միում ազգի եւ կամ միում մասին, այլ ամենայն մարդկան եւ տիեզերաց. ոչ մարդկան միայն, այլ ամենայն կենդանեաց, ցամաքայնոց եւ ջրայնոց եւ աւդայնոց, երկնի եւ որ յերկինս: 114 Զի թէպէտ եւ որդի էր ըստ աստուածութեանն, սակայն ի ձեռն մարմնազգեցիկն լինելոյ՝ ուսաւ ի չարչարանացն մահու զնեղութիւն ամենայն կենդանեաց, որ անկեալ են ընդ ապականութեամբ մահու. զի յորժամ իրքն կատարեցան ի յապականութիւն ամենայն մահականացուացս, կարող իցէ աւգնական լինել յանչարչարութիւն. նա եւ որ առաջիկայ իրքն էին, ոչ փոքր եւ ոչ դուզնաքեայ ինչ էր, այլ ահագին մեծապէս:

115 Զի եթէ ի մահուանն Ովսիայ որդւոյն Ամովնայ ի տարապարտուց մեռանելոյն՝ ամենայն Իսրայէլ առնուլ սուգ՝ ոչ մի ցեղ կամ երկու, այլ ամենեքեան, զոր մեծապէս մարգարէն ողբայ, Յաւուրն յայնմիկ, աւէ, դիցես կոճ սաստիկ իբրեւ զկոճն ադադոռամթով որ ի դաշտիմ, ազգ տանն Դաւթի առանձինն եւ կանայք մոցա առանձինն, ազգ տանն Նաթանայ առանձինն եւ կանայք մոցա առանձինն, ազգ տանն Շմաւոնի առանձինն եւ կանայք մոցա առանձինն^բ, ո՛րչափ եւս առաւել ի մահ որդւոյն Աստուծոյ երկինք խոնարհեալ, երկիր դղրդեալ, եւ ամենայն իմանալի գաւրութիւնքն զարհուրեալ:

116 Իսկ ամենայնի Տէրն յայսմ վայրի ոչ մի անգամ միայն, այլ եւ երկիցս եւ երկցս ի վայր անկանի, իբրեւ թէ երկինք յերկիր. եւ դարձեալ կանգնեցաւ՝ որպէս թէ գերկիր ընդ իւր կանգնէ ի վեր տարրացեալ, միութիւն գործելով երկնաւորաց եւ երկրաւորաց. եւ ոչ փոքր ինչ էր ծանրութիւն բեռինն՝ զերկինս բառնալով եւ գերկիր կախելով զինքենէ: 117 Տեսանե՞ս, եւ

^ա Տէ՛.՝.ՅՎ.Գ.2:

^բ Տէ՛.՝.Գ.ժ.ԺԲ.12:

ոչ քիրտն դուզնաքեայ բղխէր յաստուածային մարմնոյն, այլ քիրտն ուժգին եւ արիւն. եւ արիւնն ոչ միով մասամբ, այլ վտակք բազմահոսանք. որով զերկին սրբէր, եւ զերկիր լուանայր, եւ զաւղ մաքրեաց յառաջին ծխոյ ճենճերաց զոհիցն ապականութեան:

118 Եւ ի վերայ այսր ամենայնի սքանչելագործութեանց՝ աշակերտքն անկեալ դնէին անընդոստ քնով: 119 Եւ սակայն մարդասէր Տէրն հեզաբար հանդարտութեամբ մատուցեալ ընդոստուցանէր զաշակերտսն, իբրեւ թէ զաշխարհ ի քնոյ, եւ աղերս բանիւք ասելով. Ո՛վ Պետրէ, այդպէս վայրիկ մի ոչ կարացէք արթուն կալ. քանզի վեց աւր արարի զերկին եւ զերկիր եւ զամենայն զարդս նորա. եւ արդ ահա այս վեցհազարեան ամ է, որովք անկեալ խանգարեցան ընդ ապականութեամբք, եւ իմ եկեալ փրկել եւ անդրէն նորոգել: 120 Արդ աղէ զարթիր եւ արթուն կաց սակաւ մի, եւ թափեա ի քէն զծանրութիւն քնոյդ, եւ տես զի՛նչ ինչ գործելոց է ընդ իս ազգատոհմդ քո ի վերայ ամենայն բարեգործութեանց իմոց մինչեւ ցայսաւր: 121 Զի՞նչ կամին հատուցանել ինձ ժողովեալ ամենեցուն իբրեւ ի վերայ մահապարտի, ոչ ըստ աշխարհի սովորական մահու սպանանել, այլ մեծապէս անարգանաց: 122 Եւ ես յոյժ խռովեալ եմ եւ ողբամ դառնապէս, քանզի ի մահուան իմում գիտեմ զինչ լինելոց է. ընտրեալ տաճարս աւերելոց է, քահանայութիւնն լռեսցի, պաշտաւնն դադարէ, ընթերցուածք սուրբ կտակարանացն որ վասն նորա աղաղակէին՝ ի սուգ մտանեն. հուրն հանապազորդ շիջանի, պատարագք խափանին, ողջակէզքն որ վասն մեղաց՝ զտեղի առնու, ուխտադրութիւնն որ ի հեռաստանէ՝ ոչ եւս եկեսցէ. անձկեալ քաղաքն Երուսաղէմ աւերեսցի, եւ ամենայն Իսրայէլ ցրուեսցի: 123 Նա եւ դուք իսկ երկոտասանքդ որ ընդ իս էք, յայսմ գիշե-

րի գայթակղելոց էք. քանզի գրեալ է, պարտ է զի եւ կատարեսցի. Հարից գիովիւն, եւ ցրուեսցիմ խաշիւնն՝: 124 Իսկ արդ խաշինք առանց հովուի՝ ապա մատնին ի ձեռս գիշակեր գազանաց. մանաւանդ զի ա՛ն եւս սատանայ յայսմ աւուր աւճան խարբալել զձեզ իբրեւ զցորեան. եւ ես աղաչեցից զՀայր, զի մի՛ պակասեսցին հաւատք քո:

125 Եւ բարուք ասաց եթէ մի՛ պակասեսցեն. քանզի աստուածութեանն ոչ են կամք տեսանել զչարութիւն մարդկան, բայց եւ մարդոյն պիտի առաքինութիւն զգենուլ յանձին զգուշութիւն, եւ ի Հաւրն արքայութիւն եւ յուրախութիւն մտանել: 126 Զի մի՛ պակասեսցեն, ասէ. այլ ոչ եթէ մի՛ ուրացիս: 127 Ուրանալն եւ չուրանալն ի ձեռս նորա էր. իսկ ընդունելն անդրէն գործ մարդասիրութեան: 128 Եւ որպէս վասն ամենայն Իսրայէլի ողբալից աղաչանաւք աղաղակէր առ Հայր, զի մի՛ կորիցէ ազգն ընտրեալ, սոյնպէս եւ վասն երկոտասանիցն յանձն առնէր Հոգւոյն Սրբոյ, զի հաստատուն կացցեն ի ժամ փորձութեանն: 129 Իսկ Պետրոս առ գուլթ սիրոյն Տեառն իւր անփորձաբար խիզախէր, բայց Տէրն որ ինչ լինելոց էր՝ յառաջագոյն պատմեաց նմա. եւ Պետրոս ի փորձանացն իմաստնացեալ՝ դառնապէս արտասուաւք եւ մեծաւ զղջմամբ վերստին գանձն հաստատէր յաշխատութիւն: 130 Եւ այն որ ի ժամ փորձութեանն քան զմոմ կակղագոյն, յետոյ քան զանդամանդեայ եւս առաւել խստագոյն երեւեցաւ:

131 Ո՛վ, քանի՛ մեծ ժպրհութիւն քահանայիցն եւ քահանայապետին, եւ ամենայն մեծամեծացն որ ընդ նոսա. մինչդեռ Տէրն ամենայնի վասն ամենեցուն աղաչէր ողբալով զի մի՛ մատնեսցին յանբժշկելի հարուածսն, նոցա ոչ ինչ փոյթ արարեալ ի

*** Մատթ. Ի.Չ. 31, Մարկ. Ժ.Պ. 27

յիսկապէսն որ լինելոյ էր, այլ յանդգնագոյն եւս քան զսողոմայեցիսն յարձակեցան ի վերայ: 132 Եւ յիրաւի ասացի թէ եւս չարութեամբ քան զնոսա. քանզի ի Սողոմ հրեշտակքն նշան ինչ ոչ արարին, այլ զՍողոմ իսկ արարին նշան ահագին ամենայն տեսողաց, եւ արժանապէս հատուցումն անարժանիցն հատուցաւ. զի եթէ վասն անարգութեան հրեշտակացն ամենայն մասունք երկրին ընկալան զաստուածային հարուածքն, իսկ ուր Տէր հրեշտակացն կրէր զանարգանս մահու, ո՞վ բաւական է հատուցանել վրէժ դատաստանին այնորիկ. ոչ միայն թանձրացեալ մարմինս որ աստէն յերեւելիսս ընդունի զվճիռն մահու, այլ եւ անապական ոգիքն ընդ սմին մարմնոյ կապեալ եւ անկեալ յանշէջ հուր գեհենին, որ առաւել սաստկութեամբ այրեսցի քան զերկիրն սողոմացոց:

133 Եւ հասեալ, ասէ, քահանայապետն եւ ամբօրն՝ առանց պատկառելոյ արկին զձեռս իւրեանց կալան զՅիսուս, կապեցին եւ առեալ տարան ի տուն քահանայապետին: 134 Կապեցին զայն, որ եկն արձակեաց զմեզ ի կապանացն անլոյծ. ի տուն տարան զայն, որ երկիրք եւ երկիր ոչ տանին. հրեղէն բնութիւնն ի մէջ փայտեղէն տան մտեալ կայր, եւ ոչ ծախէր տունն. որ իջուցանէր հուր ի պատարագս նոցա եւ ընդունէր ի քաւութիւն մեղաց, ինքն ընդունողն առաջի կայր պատարագամատուցին, յորմէ սերոբէքն եւ քերոբէքն թեւաւքն ծածկէին զոտս եւ զերեսս իւրեանց յահէ մեծութեան նորա:

135 Զտէր տաճարին վասն տաճարին պահանջէին: 136 Ո՞վ մեծամեծ յանցանացն. զի՞նչ ինչ չար ասաց. Գալեցեք, ասէ, զտաճարդ, եւ ես յերիւր աւուր շինեմ^ա: 137 Մէք իսկ, ասեն, լուաք: 138 Ո՞վ քահանայք, եւ մե՞ծ իցէ արդեաւք յանցանքս

այս: 139 Ասեն՝ եւ կարի մեծ. շինեմ, ասաց, եւ ոչ եթէ աւերեմ. թուի ինձ եթէ դուք զերիս աւուրս ոչ կարէք աւերել, նա եւ ոչ բազում ամս: 140 Բայց բարուք ասէր թէ քակեցէք. քանզի ի սկզբանէ քակել եւեթ գիտէք, եւ ոչ շինել: 141 Ահա քակեցէք զազգս արդարոցն, եւ ես այլ արդարս շինեցից ի միջի ձերում. քակեցէք եւ դուք զմարգարէութիւնն յանձանց ձերոց, սակայն ես այլ մարգարէս յարուցից ձեզ քարոզել զճշմարտութիւն. անարգեցէք դուք զվէմն՝ որ էր զլուխ անկեան, եւ ես այլ երկոտասան վէմս կանգնեցի յաշխարհի ձերում, զի շինեցից զձեզ ի վերայ անշարժ հիմանն՝ եւ ոչ կամեցարուք: 142 Իսկ արդ զի՞նչ մեծ է եթէ քակէք զտաճարդ, եւ յերիւր աւուր կանգնեմ զդա: 143 Զերկինս ո՞չ ապաքէն առանց աւուր կանգնեցի, եւ զերկիր առանց ժամու հաստատեցի, եւ զամենայն գոյացութիւնս, ի վեց աւուր զարդարեցի. դուք զտաճարդ ի քառասուն ամ շինեցիք, ես զմարդ ի քառասուն աւր նկարեցի յարգանդի. դուք զտաճարդ ի քառասուն ամ շինեցիք, ես զձեզ քառասուն ամ շինեցի յանապատին՝ եւ ոչ շինեցարուք: 144 Արդ որովհետեւ քառասնամեայքդ՝ անխրատեալք եւ չշինեալք ի վերայ վիմին՝ որ տայր ձեզ զջուրն ի նմին անապատի, արդ քակեցէք դուք զայս տաճար զոր տեսանէքս զիս, եւ ես յերիւր աւուր շինեցից զսա առանց ձեռագործի. զի այլ թէ կամիցիք քակել, ոչ կարէք: 145 Բայց զայդ տաճար զոր Սողոմոն շինեաց, եթէ կամիք եւ եթէ ոչ կամիք, դա քակելոց է ի թշնամեաց ձերոց. մանաւանդ թէ ողբքն իմ իսկ դառնապէս ասացեալ են ի վերայ տաճարիդ. որպէս եւ դու իսկ, ո՞վ քահանայապետ Կայիափա, մարգարէացար ոչ ի կամաց քոց. Գայցեմ, ասես, այնուհետեւ Հոռոմֆ, եւ բառնայցեմ զազգս մեր եւ զտեղի եւ զաւրելս մեր^է. որ

^ա Տէ՛.՝.Յ.ՎԸ.Բ.19:

^է Տէ՛.՝.Յ.ՎԸ.Ժ.Ե.48-49:

եւ լինելոց է ոչ յետ բազում աւուրց, այլ առ կենաւք քովք տեսցես զայն:

146 Եւ զայս ասելով՝ վերամբարձագոյն եւս հայեցուցեալ, ցասոյց զքահանայապետն եւ ասէ. որ այժմս մտեալ կամ առաջի քո կապանաւք եւ մեծ անարգութեամբք, տեսցես յերկինս վերացեալ, եւ նստիմ ի հայրենի աթոռն յաջմէ զաւրութեանցն Աստուծոյ: 147 Զայս լուեալ քահանայապետին, ձեռն զաւճիւք հարկանէր, եւ յերկուս զպատմուճանն պատառէր. զի ի պատառել պատմուճանին, զազգն ամենայն զայրացուցէ յարուցանել ի վերայ Յիսուսի: 148 Բայց թերեւս յիրաւի պատառեցեր զպատմուճանդ. զի ընդ նմին պատառելոց էր եւ քահանայութիւնն: 149 Քանզի արժան իսկ էր զաւճիս պատառել ի մեծամեծ չարութեանն զոր գործելոց էր յայսմ տեղուջ: 150 Եւ առակքն տէրունեան յոյժ հանդիպեցան ճշմարտութեամբ. Ոչ ոք արկանէ գիմի ի տիկս հիմն. ապա թէ ոչ՝ պայթուցանէ գիմի նոր գտիկս հիմն^ա. յորս սակաւիկ մի կաթեաց զաւրութիւն ուժոյ՝ սակաւիկ գինի նորոյ, եւ անդրէն հին տիկքն յերկուս հերձաւ: 151 Իսկ արդ զի՞նչ ինչ մեծ ասաց. որդւոյ մարդոյ նստել ընդ աջմէ Աստուծոյ ասաց: 152 Ո՛հ հնացեալ կուրուժեանն, որ ոչ ամենեւին եւ առ ոտս անգամ տեսանեն. զաւրահանապազ սաղմոսարանն երգէ. Ասաց տէր ցտէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ, միմչել եղից զքնամիս քո պատուանդան ոտից քոց^բ: 153 Ոչ եթէ գնստեալն յարուցանելով հրամայէ անդրէն նստել, այլ զձեւն նստելն ածէ ի նստուցանել, եւ ոչ զեղեալ թշնամին կրկնէ անդրէն դնելով զայլաձեւ եղեալսն, որ իբրեւ զքեզդ է ընդդիմացեալ, դնէ պատուանդան ոտից նորա: 154 Եւ եթէ դժուար թուիցի քեզ մարդոյ որդի Աստուծոյն լինել, ընդէ՞ր ոչ

յառաջագոյն պատառեցեր, յորժամ լուար ի Հոգւոյն Սրբոյ ի ձեռն Մովսիսի Որդի իմ անդրանիկ Իսրայէլ, արձակեա զի եկեսցէ պաշտեսցէ զիմ պաշտաւնն^գ. ապա թէ ոչ՝ սպանանեմ զորդին քո զանդրանիկ: 155 Արդ վասն քո կամիմ եթէ սպանանէ Աստուած զորդի զանդրանիկ զթագաւորին եգիպտացուց, զի դու լիցիս որդի անդրանիկ Աստուծոյ. եւ դու հայհոյե՞ս եւ սպանանես զմիածին որդիդ Աստուծոյ, եւ բարկացեալ ես եթէ ընդէ՞ր նստուցանէ ընդ աջմէ իւրմէ:

156 Այս ընդդիմութիւն եւ ընդ դիւաց ամբարշտութեամբքն զանց առնէ, պատերազմ տայ ընդ Աստուծոյ եւ ընդ մարդկան եւ ընդ Սուրբ Հոգւոյն միանգամայն, որ ասաց ցիս Տէր. Որդի իմ ես դու, ես այսաւր ծնայ զիեզ^դ: 157 Եւ անդէն զիշխանութիւնն ի ձեռս տայ, ոչ միայն ի վերայ ազգին յորմէ ծնանի, այլ ամենայն հեթանոսաց ի ծագաց մինչեւ ի ծագս երկրի: 158 Արդ որովհետեւ ատեցեր եւ մերժեցեր զխաղաղութիւնն ի բաց ի քէն, խուժբ առեալ աշխարհական պատերազմաւ ի վերայ երկրի, զոր յառաջագոյն իսկ նշանակէիր դու ի հարկանել փողոյն ի գլուխս ամսոց եւ ի շաբաթս քո եւ ի լրմունս եւ ի պակասութեան լուսնի եւ յամենայն տաւնս երեւելիս քո, յայտ է եթէ ի սկզբանէ ի մարտ պատերազմի մտեալ էիր ընդ իս: 159 Արդ որ ընդ ամենայն երեւելիս կուռէիր, ամենեքեան ընդ քեզ տայցեն պատերազմ. փողն լուսցէ, շաբաթն լուծցի, լրմունք լուսնին քեզ յերկրի հեթանոսաց երեւեսցին, երեւմունք հրեշտակաց քեզ այլ մի՛ հանդիպեսցին. վասն զի ամենայնքս ի վերայ քո հեղեալ էին ի պատիւ եւ ի փառս մեծարանաց: 160 Արդ Հոգին Սուրբ ելցէ եւ գնացէ ի քէն, զի այլ մարգարէ ի միջի քում մի՛ մարգարէասցի. ո-

^ա Մատթ. Թ. 17, Մարկ. Բ. 22, Գ. 4. Ե. 37

^բ Սաղմ. ԸԹ. 1

^գ Տե՛ս. Եւ. Գ. 22:

^դ Սաղմ. Բ. 7, Գ. 7. Ժ. 9. 33

րովհետեւ ասացեր թէ հայհոյեաց, եւ իշխեցեր զայդ ասել, ամենեքեան քում սուտ բանիցդ ետուն վկայութիւն թէ մահապարտ է:

161 Իսկ արդ որո՞յ մահապարտի, ո՞վ նզովեալք, կռուփս հանեն եւ ընդ երեսս թքանեն: 162 Կռփես զայն որ զարդարեաց զգլուխ քո յականս պատուականս, եւ թքանես ընդ երեսս այնմ որ յարարչութեանն փշեաց ի քեզ հոգի կենդանի. վասն որոյ եւ կոյրդ շրջի աղաղակէ յայտնութեամբ ընդ փողոցս քաղաքիդ, Որում Յիսուսն ասեն, ասէ, նա կաւ արար թփով եւ ծեփեաց գաչս իմ, հրամայեաց լուսնալ ի Սելովիա, եւ տեսանեմ^ա: 163 Կոյրն լուսաւորեցաւ, եւ դու լուսաւորդ կուրացար: 164 Տեսանե՞ս, քանզի յանդգնութիւն անհանձարիցն էր, եւ անհամեմատ համբերութիւնն Աստուծոյ, յանաւրինաց կռփի, եւ ի մեղաւորաց թուք յերեսն ընդունի ազատիչն ամենայնի: 165 Այս ի վեր է քան զբնութիւն մարդկային. որ արար զարարածս, նա միայն կարաց տանել յայսմ ամենայնի:

166 Դարձեալ հարցանեմ զքեզ այդրէն, ո՞վ քահանայապետ. ուստի՞ ետուր զարծաթն մատնչին. ո՞չ յառաջ ասացի քեզ թէ մի՛ տար. ոչ երբեք զնի արծաթոյ արիւն արդար. ահա այժմ այդրէն ի քեզ ընդունիս զերկոսեանն:

167 Իրբեւ ետես Յուդա եթէ մատնեաց զՏէր ի դատաստան մահու՝ յոյժ գղջացաւ, եւ դարձոյց զարծաթն առ քահանայապետսն եւ առ ծերս ժողովրդեանն եւ ասէ. մեղայ զի մատնեցի զարիւն արդար: 168 Եւ նոքա ասեն. մեզ չէ փոյթ, դու գիտես. եւ նա ընկեց զարծաթն ի տանարն, եւ ինքն գնաց, ի խեղդ արկ եւ մեռաւ^է:

169 Ո՞վ Յուդա, քանի՛ չար եղեւ քեզ թողուլ զճշմարիտ վարդապետն քո, որ ուսուցանէր քեզ զգնացս արդարութեան եւ զխաւսս ստուգութեան. ո՞վ ուսոյց քեզ զյետս ընդդէմ խոստովանութիւն: 170 Մեղայ, ասէ, զի մատնեցի զարիւն արդար: 171 Աշակերտ որդւոյ մարդոյ էիր, զվարդապետութիւնն յերկնէ եւ յերկրէ ուսանէիր, զնշանագործութիւնս զՀոգւոյն Սրբոյ տեսանէիր, որդի զդա Աստուծոյ զիտէիր. եւ այժմ ասես՝ մեղայ զի մատնեցի զարիւն արդար: 172 Ո՞վ երբեք յարդարոց սաստեաց ծովու եւ դադարեցին ալիք նորա. կամ յորո՞յ մարդարէի դեւքն հնազանդեցան երբեք, որպէս յանուն Յիսուսի Քրիստոսի ի ձեռն եաւթանասնիցն: 173 Քան ասացեր եթէ զարիւն արդար մատնեցի, ընդէ՞ր ոչ ասացեր եթէ զորդին Աստուծոյ մատնեցի. թող ամաչեցեալ լինէր Աննա եւ Կայիափա առաջի ամենայն ժողովրդեանդ: 174 Քան առ քահանայսդ բերեր զարծաթդ, ընդէ՞ր առ Պիղատոս ոչ տարար. քան ի մէջ տաճարիդ ընկեցեր, ընդէր ո՞չ ընկեցեր զայդ ի յատենական դատաստանիդ. թող կոչէր դատաւորն զամենայն պատուականս ժողովրդեանն, եւ յանդիմանեալ կշտամբէր զքահանայապետսն՝ եթէ զայր անմեղ արծաթոյ զնէք եւ սուտ բանիւք դատապարտէք, եւ կցո՞րդ առնէք զիս ամբարշտութեանդ ձերոյ: 175 Դարձեալ՝ քան չոքար ի տուն եւ խեղդեցար, ընթացեալ քո քեզն առ դատաւորն ճիչ առեալ եւ զաղաղակ բարձեալ՝ ասելով առաջի ամենայն բազմութեանդ զմեծամեծսն եւ զսքանչելիսն զոր գործէր վարդապետն քո: 176 Եւ եթէ այնպէս ոչ լսէին բանիցն քոց, կացեալ իցիւ քո առաջի խաչին, եւ խաչելոյն առաջի ասացեալ՝ թէ մեղայ զի մատնեցի զարիւն արդար: 177 Որ հայրն էր զթութեանց եւ տէր ողորմութեանց, որ ամենեւին է փրկիչ եւ ամենայնի կեցուցիչ, որ ոչ եկն դատապարտել զմարդիկ, այլ արդարացուցանել

^ա Տէ՛.՝. Յ.Վ.Ը. Թ. 11:
^է Տէ՛.՝. Մ.Պ.Բ. Ի.Է. 3-6:

եւ շնորհել զյանցանս իւրաքանչիւր որ դառնան առ խաչեցեալն: 178 Ոչ էին մեղքն քո մեծ քան զգթութիւնն Աստուծոյ, որ ի ձայն բարձր աղաղակէր եւ ասէր. ամենայն որ ծարաւի է՝ եկեցէ առ իս, եւ արբցէ յինէն զլուրն կենդանի, միանգամայն ի թողութիւն եւ յանմահութիւն: 179 Ո՛չ ապաքէն զմեծ արիւնն իւր վասն մեծ մեղաց աշխարհի հեղու յերկիր, եւ նովին սուրբ արեամբն գնէր զմեռեալս եւ զկենդանիս. համարեա թէ դու մի ի նոցանէ էիր: 180 Որ զամենայն կարէր առնել, քե՞զ միայն չհամարեցար բաւական ի փրկութիւն. յայտ է եթէ որ զառաջին մարդն յանցոյց, նոյն նա քեզ զգեցոյց զխլրդենի կուրութիւնդ. որում ոչ ծագեաց նշոյլ շնորհի որդւոյն Աստուծոյ յոգիս մուրելոյդ, վասն որոյ եւ ընդ վայր հարար, եւ զհեղձամղձուկ դառնութիւն ժառանգեցեր:

181 Ապա յիրաւի ուրեմն Սուրբ Հոգին ողբ առեալ ի բերանոյ Դաւթի ասէ. Աստուած արհմութեան իմոյ մի՛ լոնք. զի բերան մեղաւորի, բերան նեմգաւորի բացաւ ի վերայ իմ. խաւսեցան զիմէն ի լեզուս նեմգաւորս, եւ բանիւ ատելութեան զիս պաշարեցիմ. մարտեան ընդ իս ի տարապարտուց, այլ ես յաղաթս կայի՞: 182 Արդ ամենայն սաղմոսս այս՝ չարութեամբ եւ անիծիւք ի վերայ մատնչին ասացաւ, զոր մեծաւ համբերութեամբ Տէր ի խաչելութեանն կատարեաց: 183 Եւ վասն զի զանպատճառն մեղաց ի մահ դատապարտեաց, կատարեցաւ ի վերայ նորա բանն. Որ հայիոյնսցէ, ասէ, զՀոգիմ Սուրբ, ոչ թողցի նմա յայսմ աշխարհի եւ մի՛ ի հանդերձելումն. որպէս եւ եղեւ իսկ ի վերայ նորա: 184 Քանզի եւ աշակերտակիցքն բարկացեալ էին եւ քահանայքն

ցասուցեալ եւ ընտանիքն իւր ոստուցեալ. ոչ ոք փոյթ արար խնդրել զանգիւտ կորուստ նորա, եւ ոչ ոք իջոյց զնա ի չարաչար կախաղանէն. ուռաւ փոր նորա, եւ հեղաւ որովայն նորա, եւ ցրուեցան ամենայն ոսկերք նորա ի դժոխս. իբրեւ զշուն մեռաւ, եւ իբրեւ զգէշ քարչեցաւ. ել սին ի վաստակոցն, եւ ջնջեցաւ անուն նորա ի դպրութենէ կենաց:

185 Իսկ քահանայապետք եւ ծերք ժողովրդեանն առին զարծաթն եւ ասեն. Ոչ է արժան զայդ ունել ի դանձս, զի գինք արեան են. խորհեցան եւ զնեցին զագարակն բրտի: 186 Ով մեծի անմտութեան քահանայից. տալ արժան էր զարծաթդ ի տաճարէ այտի, եւ ընդունել չէ՞ր արժան. ոչ այժմ պղծեցաւ արծաթդ, այլ յառաջագոյն բազում ժամանակաւք՝ յաւուրց անտի Երեմիայի մարգարէի. Առի, ասէ, զերեսուն արծաթիմ զգիմս վաճառելոյն զոր զնեցի յորդուցն Իսրայէլի, ետու զնա ի գիմս ագարակի սրտի՞: 187 Զի մի՛ կարծիցէք եթէ մարդոյ է տեսութիւնս, ասէ մարգարէն. Որպէս եւ հրաման ետ ինձ Տէր՞: 188 Ահաւասիկ երեւիք դուք եթէ ծնունդք էք սատանայի, զի զգործսն հաւր ձերոյ կատարէք հանապազ: 189 Արդ ոչ եթէ արծաթդ պիղծ է, այլ դուք պղծեցիք զսրբութիւն արծաթոյդ:

190 Պիղծ էր Գողիադ այլազգի, եւ պիղծ զինուք կամէր կոտորել զԻսրայէլ. իսկ Աստուած ի ձեռն Դաւթի կործանեաց զհպարտութիւն նորա, յորում բնակեալ էր սատանայ, եւ նորուն զինուն եհատ զգլուխ հսկային. եւ սուրն որով եհատ, ոչ միայն պիղծ չհամարեցաւ, այլ եւ յոյժ սուրբ, եւ ետ զնա ցԱբիաթար քահանայապետ. եւ նա առեալ եղ ի պահեստի ընդ սեղանովն, Աստուծոյ նուիրեալ զյաղթութիւնն եւ ոչ մարդոյ. եւ սեղանն ոչ պղծե-

՝՝ Սաղմ. ճԼ՝ 2-4

՛՛ Տէ՛.՝. Մարթ. ԺԲ 32, Մարթ. Գ 29, Գ.՝. ԺԲ 10:

՛՛ Տէ՛.՝. Երեմ. ԼԲ 25, 44, Մարթ. ԻԲ 9:

՛՛ Եղեմ. ԻԲ 18

ցաւ: 191 Եւ շինեաց Սողոմոն զտաճարն, ոչ զաւրութեամբ հեթանոսական մտիւքն, եւ աւգնականութեամբն Խիրանայ կռապաշտի, ուստի եւ Յեզաբէլ նզովեալ մոլորեցոյց զԽորայէլ: 192 Դարձեալ ուստի՞ նորոգեաց Ջաւրաբաբէլ զգոյն տաճարին. իբրու յայտնի է ամենեցուն: 193 Քանզի ի գալստեանն դարձին իւրեանց՝ հարին զազգս բազումս, եւ աւարաւք գերութեանն կազմեցին զաւեր տաճարին, զոր եւ մեծ մարգարէն Անգէաս յանդիման բարբառի. Եղիցիմ փառք տանս այսորիկ, ասէ, մեծ վերջիցս քան զառաջիցս: 194 Եւ զի մի՛ պիղծ համարիցին զկապուտ դիականցն անկելոց, ասէ Ջաբարիա. Եւ եղիցի յաւուր յայնմիկ որ ի վերայ սանձաց ձիոցն ի սրբութիւն տեառնէ. որ կատարեցաւ գործով ի վերայ Երուսաղէմի ի հարկանել երկոտասան բիւրուցն յաւուրս Յեսուայ յովսեփեկեանցն քահանայի մեծի, եւ Ջաւրաբաբէլի սաղաթիէլեանց:

195 Արդ ոչ եթէ զարծաթղ չէ արժան ընդունել ի գանձն, այլ զձեզ հանել յամենասուրբ տաճարէդ. որ ոչ միայն զարծաթ դորա պղծեցէք, այլ եւ զաւրէնս Մովսէսի՝ չընդունելով զկատարիչ աւրինացն. վասն այսորիկ ամբաստանեն զձէնջ ոչ միայն սպասք տաճարիդ, այլ եւ երկինք եւ երկիր ամենայն զարդուք իւրեանց:

196 Եւ առեալ ածեն, ասէ, զՅիսուս ի վանացն Կայիափայ կապանաւ առ Պիղատոս. եւ նոքա ոչ մտիմ ի ներքս, զի մի՛ պղծեսցիմ: 197 Ո՞ւր իցէ սրբութիւն ձեր, ո՛վ քահանայք. զսուրբ տաճարն ի գինս վաճառելոյն պղծեցէք. զանձինս ձեր եւ զամենեցուն՝ որ մերձ են առ ձեզ, յանձնառութեամբ սուրբ արեանդ պղծեցէք. արդ ընդէ՞ր ոչ մտանէք յատենատունդ:

198 Եթէ արդարութեամբ լինի դատաստանդ, դա ոչ արժանի մահու գտանի, եւ դուք ապրեալ լինիք յարդար արեանդ. իսկ տեղիդ զորոյ յատակ այդր սուրբ գարշապարքդ կոխեցին, եթէ յառաջագոյն ինչ ունէր զազատ անիրաւութեան, ի ձեռն արդար դատաստանիդ սրբեալ եւ մաքրեալ լինի ամենայն տունդ ատենիդ հանդերձ: 199 Ապա եթէ ի դատաւորէդ ինչ խորշիք իբրեւ յանթլիփատ հեթանոսէ, ահաւաղիկ դա առ ձեզ արտաքս ելանէ, մերձ առ ձեզ կալով առանց միջնորդի խաւսի ընդ կարծեցեալ սուրբ քահանայապետդ: 200 Բայց թուի ինձ՝ թէ յորմէ դուք խորշիք, դորա յառաջագոյն իմացեալ է ոչ միայն զպղծութիւնդ ձեր, այլ եւ զմեծդ անիրաւութիւն. քանզի եւ գիտաց իսկ՝ եթէ առ նախանձու մատնեցին զնա, վասն որոյ կրկնէ եւ երեքկնէ եւ բազում անգամ հարցանէ. Զի՞նչ ինչ չարիս գործեալ է, ասէ, զի ածէք մատուցէք զսա ի մահ դատաստանի: 201 Իսկ իբրեւ ոչ գտանէին ամենեւին տեղի պատասխանատուութեան, խռովութեան իմն մեծի պարտ առնէին ի Գալիլէէ մինչեւ ցերուսաղէմ. դարձեալ եւ թագաւորութեան զրպարտութիւն ի վերայ դնէին:

202 Իբրեւ ետես, ասէ, Պիղատոս՝ եթէ ինքեանք ոչ մտանեն, ինքն ել առ նոսա. եւ ստգտանելով զնոսա ի միտս իւր՝ ասէ. Ո՛վ, գիտեմ զի քահանայք էք եւ քահանայապետք, ոչ երբեք գիտէք սուտ խաւսել, քանզի սուրբ էք. եւ ի ներքս անգամ առ իս ոչ մտէք, զի մի՛ պղծիցիք. արդ ասացէք ցիս՝ զի՞նչ չարիս գործեալ է նորա, զի թողէք զուրախութիւն պատուական տաւնիդ ձերոյ, եւ իբրեւ արդարութեան նախանձորդք վրէժխնդիր էք, իբրեւ թէ չարագործի. գրով տուք ինձ զառն ամբաստանութիւն, զի ըստ գործոց նորա զդատաստանն հատուցից: 203 Ասեն ամենեքեան միաբան. Մեք գիտեմք, զի մահապարտ է ըստ աւրինաց մերոց: 204 Բար-

ՊՍՏՈՒՄ ԵՎ ԳՐԱՅԻՆՆԵՐ
 * Տէ՛.Ն. Ըճճ. Բ՛ 9:
 † Տէ՛.Ն. Զճճ. Ժ՛Գ 20:
 ‡ Տէ՛.Ն. Մճճ. ԻԷ՛ 2, Մճճ. ԺԷ՛ 1, Գճճ. ԻԳ՛ 1, Յճճ. ԺԲ՛ 28:

կացաւ դատաւորն եւ ասէ. Թուի ինձ՝ եթէ ճշմարտատեացք ոմանք էք դուք. զիս՞րդ կարեմ ես զայր անմեղ առանց յանցանաց սպանանել. արդ առէք եւ ըստ աւրինաց ձերոց որպէս եւ սովոր էք՝ դատեցարուք: 205 Պատասխանի ետուն քահանայապետքն եւ ասեն. Մեք հրաման ունիմք յաւրինաց մերոց չսպանանել զոք: 206 Ասէ դատաւորն. Եւ ես երկնչիմ յաւրինաց հռոմայեցւոց առանց յանցանաց դատել զարդար ոք: 207 Ասեն քահանայապետքն. Մեք վկայեմք՝ եթէ մահապարտ է, քանզի խռովիչ է եւ զանձն իւր ի թագաւորութիւն մատուցանէ: 208 Ասէ դարձեալ դատաւորն. Որպիսի՞ խռովիչ. յափշտակո՞ղ իբրեւ զաւազակ, թէ բռնութեամբ իբրեւ զթագաւոր, թէ յափշտակող եւ աւարառու. յորո՞ւմ լերին բնակեալ էր, եւ զո՞ր ճանապարհս պաշարէր, եւ զո՞ ի ճանապարհորդաց կողոպտեաց, եւ կամ զո՞ր գաւառ հինեալ աւարեաց. զի՞նչ շատ տարաւ ի գերութիւն, զմարդի՞կ եթէ զանասուն. ածէք զմնացեալ ոք յընկերաց գերելոցն, զի եւ ի նոցանէն եւս ճշմարտեցից. եւ եթէ զզանձս ուրուք ա՛ռ բռնաբար, ընդէ՞ր յառաջագոյն ինձ ոչ բողոքեցէք. եւ եթէ որպէս ասէքդ՝ թէ թագաւորութեամբ խռովէ զմեզ եւ հանէ ի հարկաց կայսեր, ցուցէք ինձ ո՞վ են սպասաւորք դորա, եւ կամ քանի՞ զինուոր ունի, եւ որպիսի՞ սպասաւորութիւն զինուց, որով կարէ զդէմ ունել հռոմայեցւոց՝ հանելով զձեզ ի ծառայութենէ կայսեր, որպէս ասացէքդ:

209 Իբրեւ տեսին քահանայքն թէ յամենայն կողմանց ած եւ արգելեաց զնոսս յանպատասխանատուութիւն, սկսան լրբենի զիմաւք խաւսել ընդ դատաւորին եւ ասեն. Ո՞վ քաջ դատաւոր, ինդէ՞ր ոչ հաւատաս արդարոցս. դու իբրեւ զմեզ տեսեր յատենիս, չէր արժան քեզ այդպիսի բանիւք բազում քննութիւնս առնել, այլ միայն հաւատալ մեզ, եւ զինչ ասեմք՝ վաղվաղակի կատարել: 210 Իբրեւ զայն

լուաւ Պիղատոս, ստգտանէր զանմտութիւն պատասխանեացն նոցա, դարովելով ընդ միտս իւր զքահանայապետն: 211 Եմուտ անդրէն Պիղատոս առ Յիսուս եւ ասէ. Արդարեւ դո՞ւ ես թագաւորն Հրէից: 212 Ետ պատասխանի Յիսուս եւ ասէ. Քոյո՞վ բանիւ խաւսիս դու ցիս զայդ, եթէ այլ ոք եղ քեզ բանս ի բերանդ: 213 Ասէ Պիղատոս. Ես ոչ հրեայ եմ. ազգատոհմն քո մատնեաց զքեզ ի ձեռս իմ, ի՞նչ արարեալ է քո նոցա: 214 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Արքայ եմ իսկ արդարեւ, ո՞վ դատաւոր, այլ ոչ յայսմ աշխարհէ: 215 Ասէ դատաւորն. Թէ այդպէս է, թագաւոր ոմն ես դու:

216 Եւ ել անդրէն Պիղատոս առ Հրեայան եւ ասէ ցնոսս. Գիտաս՞իք ամենեքեան, զի ես եւ ոչ մի ինչ պատճառս մահու կարեմ ի վերայ նորա գտանել. է ձեր սովորութիւն՝ մի ոք ի կապելոց արձակել ի տաւնի աստ. կամի՞ք զի արձակեցից ձեզ զարքայդ Հրէից: 217 Հասարակ զաղաղակ բարձին ասելով. Մի՛ զդա, մի՛ զդա, այլ արձակեա մեզ զորդի Աբբայ: 218 Եւ էր այն որդի Աբբեայն աւազակ մի: 219 Իբրեւ զայն լուաւ Պիղատոս, յոյժ տրտմեցաւ ընդ կատաղութիւն ժողովրդեան: 220 Յամենայնի, ասէ, տեսանեմ զձեզ վրիպեալս ի ճշմարտութենէն. խռովութենապարտ արարէք, եւ ոչ մի ինչ բան վնասու ի վերայ կարացէք դնել. թագաւորութեան անուամբ հայհոյեցէք, եւ զգործ իշխանութեան ինձ ոչ ցուցէք: 221 Զայս այր մի աւազակ՝ որ ի բազում ժամանակաց բազում չարիս գործէր, որ ի դաշտի զճանապարհս պաշարէր, զմարդիկ կոտորէր, զուղեգնացս խափանէր, գտուարածս ի լերանց հալածէր, ճանապարհաց հատս առնէր, ի շէնս զորմս ծակոտէր, եւ զմեծատանց գանձս տանէր, զաղքատս անողորմս լացուցանէր, յԱստուծոյ չերկնչէր եւ ի մարդկանէ չամաչէր, ի դատաւորաց չպատկառէր, ի տանջանաց չզանգիտէր, ի

տուգանաց չակնածէր, յամենայն պղծութիւնս խառնէր, զամենայն չարիս գործէր, եւ ես ի բազում ժամանակաց ի խնդիր էի, եւ մեծաւ ճգնութեամբ հազիւ ըմբռնեցի, արդ արժան էր ձեզ զայսպիսի այր յայսմ տաւնի խնդրել:

222 Ետուն պատասխանի քահանայապետքն եւ ասեն. Վասն զի մեծ է տաւնս, կամիմք զի մեծամեղ այր ապրեալ լիցի ի մեծի տաւնիս: 223 Ետ պատասխանի Պիղատոս քահանայապետիցն եւ ասէ. Որովհետեւ այդչափ մարդասէրք էք եւ զմեծամեղի փրկութիւնս խնդրէք ի մեծի տաւնիս, արձակեցից ձեզ զՔրիստոսն. որպէս դուք ասէք՝ նա է մեծամեղ քան զամենեսեան: 224 Զայս լուեալ հիացան ամենեքեան, եւ ոչ գտան պատասխանիք ի բերանս նոցա. յուզեցին զամբոխ բազմութեանն, ի ձայն բարձր աղաղակեցին եւ ասեն. Մի՛ զդա, մի՛ զդա, այլ արձակեա մեզ զորդի Աբբայ: 225 Ասէ դարձեալ Պիղատոս. Իսկ զի՞ արարից զարքայն Հրէից: 226 Եւ նոքա նովին բարբառով եւս պնդագոյն քան զառաջինն ասէին. Բարձ ի մէնջ եւ հան ի խաչ:

227 Եւ մինչ դեռ անդէն յատենին էր դատաւորն, առաքեաց առ նա կինն իւր եւ ասէ. Զկայ ինչ քո եւ արդարոյդ այդորիկ, քանզի բազում անցք անցին ընդ իս յայսմ գիշերի վասն դորա: 228 Առաքեաց դատաւորն անդրէն առ կինն եւ ասէ. Ես զի՞ առնեմ, բանից բան տամ քահանայապետից, եւ պատասխանեաց պատասխանի կարեմ դարձուցանել քահանայիցս. իսկ աղաղակի բազմութեանս ես ոչ կարեմ կալ առաջի. ոչ միայն աւգնել ոչ կարեմ առնս այսմիկ, այլ եւ յանձնէ յոյժ երկնչիմ, եթէ գուցէ յակամայ խառնեցայց յարիւն արդար. դու ի տեսեան գիշերոյ զարմացեալ եւ զարհուրեալ ես ընդ արդարութիւն սորա. բայց ես ի տուրնջեան իսկ զահի հարեալ եմ յերեսաց սորա: 229 Զի որպէս ա-

ռաւել է մարդ քան զստուեր անձին իւրոյ, այնչափ առաւել է երեւումն տեսեան սորա քան զարհուրս գիշերայինս:

230 Արդ իբրեւ ետես դատաւորն եթէ ամենայն բազմութիւնն միաբան աղաղակեն ասելով՝ ի խաչ հան, եւ եթէ ի նա եւս ձգեն զբանս հայհոյութեան վասն արքունի իրաց, վաղվաղակի ջուր խնդրեաց եւ լուաց զձեռսն, եւ զանձն իւր ի բաց թաւթափեաց առաջի ամենայն բազմութեան ատենին՝ ասելով յանդիման քահանայիցն եւ քահանայապետիցն. Գիտասջիք, ո՛վ Հրեայք, քաւեալ եմ ես յարենէդ յայդմանէ, զոր դուքն կամիք ի տարապարտուց հեղուլ: 231 Եւ նոքա միաբան յանձն առին: 232 Արիւն դորա, ասեն, թէ արդարոյ է՝ ի գլուխս մեր, եւ եթէ մեղաւորի է՝ ի գլուխս մեր եւ որդւոց մերոց, եւ թէ որդւոյ Աստուծոյ՝ ի մեր եւ որդւոց մերոց եւ յորդիս որդւոց մերոց: 233 Յայնժամ արձակեաց նոցա զԲարաբբա զորդի Աբբայ, եւ զՅիսուս կալեալ ետ ի ձեռս նոցա, զի ի խաչ հանիցեն:

234 Ով անբաւ բարերարութեանն Աստուծոյ եւ անկշիռ մեծութեան սիրոյ նորա, որ քան զմիտս եւ զխորհուրդս անցանէ, ոչ միայն քան զիմաստնոց մարդկան, այլ եւ քան զվերին գուարթնոցն: 235 Ամենայն որ հերկէ զերկիր, զայլոյ մարմին կակղէ, եւ զարտաքին սերմանեացն սնուցանէ զբոյսս. իսկ Յիսուս երկնայինն երկրացաւ, եւ կամաւք եկն ի հերկումն եւ ի կակղումն, եւ յիւր մարմինն եբարձ զամենայն չարութեան մերոյ սերմանիս: 236 Ի սուրբ երեսս ընկալաւ թուք պիղծ ի պիղծ եւ ի հայհոյիչ բերանոց. եւ որ ամենասուրբ թքովն եբաց զաչս կուրութեան մարմնոց եւ զորդւոց մերոց, ընկալաւ ապտակ ի ծառայէն ծառայից, եւ յապտակաց աներեւոյթ հարուածոցն զերծոյց. ետ զինքն յապտակս՝ որ էրն ազատ եւ ազատիչ ամենեցուն, զի իւրով ազատու-

թեամբն ազատեսցէ զմեզ ի ծառայութեանն. որում կամաւք տուաք զանձինս յանարժան ծառայութիւն, եւ նովին կամաւք փշաբոյս արարաք ոչ միայն զերկիր՝ այլ եւ զմարմինս մեր, մանաւանդ թէ եւ զհոգի առաւել քան զմարմին, խլեաց արմատաքի զբոյս չարաչար փշոց մերոց. եւ ոչ եթող աստէն յերկրի, այլ բոլորեաց կազմեաց զաւրէն պատուական պսակի, եւ եղաւ ի գլուխ:

237 Ո՛վ քանի՛ է չարութիւն մարդկան, եւ կամ ո՛րչափ բարերարութիւն Աստուծոյ. այն որ պսակեաց զքահանայսն յոսկի եւ ի զմրուխտ եւ յայլ բազում աւանս պատուականս, եւ զարդարեաց զնոսա ի զարդ ոսկեհոռն պծղնաւոր, եւ ի զանգակաձայն հնչումն, եւ ի զարմացումն վակասին, փոխանակ այսր ամենայնի տեսանեմ զձախողակի հատուցումն. զի ոչ միայն պսակ ի փշոց եղին ի գլուխ նորա, այլ եւ եղէզն ձողանաց յաջոյ ձեռին նորա: 238 Բայց յոյժ առաւել զարմանամ ընդ այս իրս, զի ա՞րդ իցէ եղէզն ձողանաց. թուի ինձ թէ ոչ այսաւր բուսաւ եղէզնս այս, այլ յաւուրց անտի Նայեայ մարգարէի. Ճրագն աղաւտ աղաւտ, ասէ, մի՛ շիջցի. եւ եղէզն չախախտալ մի՛ բեկցի, մինչեւ հանցէ ի դատաստան զիրաւունս արդարութեան՝: 239 Այս յայտնի է ամենեցուն. լուսով ատեանք ուղղին եւ եղեգամբ գիր հաստատի: 240 Իսկ արդ եթէ ճրագ աղաւտ աղաւտ էր Յովհաննէս, որպէս եւ էր իսկ ճշմարիտ, որչափ նոցա գալ էր՝ փութացան շիջուցանել. այլ նա առաւել քան զճառագայթս արեգականն բացափայլ արձակէր զնշոյլ լուսոյ իւրոյ: 241 Արդ բարիոք կատարէք զկանխագիր բանս մարգարէիցն ձերոց, այլ չարաչար ընդունիք զվճիռ դատաստանի յանձինս ձեր: 242 Եղեգամբ մարդիկ դրին եւ արձակին յազատութիւն ի չարաչար ծառա-

յութենէ. իսկ դուք աւաղիկ երկրաբոյս եղեգամբ աստուածային ձեռամբն անջինջ դեղով գրիք եւ արձակիք յերկնաւոր ազատութենէն ի սատանայական ծառայութիւնն. ապա յիրաւի ուրեմն առնուք զեղէզն ի ձեռանէ դորա եւ հարկանէք զգլուխ դորա. զի երեւեսցի եթէ անձամբ զանձինս հրաժարեցուցանէք ի գլխոյդ յայդմանէ, որ պսակելոց է զամենայն սուրբ յանթառամ պսակ արքայութեանն:

243 Դարձեալ, ասէ, մատուցիմ նմա գինի ընդ լեղի խառնեալ. ճաշակեաց եւ ոչ կամէր ըմպել: 244 Եւ այս եւս առաւել մեծի սիրոյն երեւի տեղի. այգին զոր փոխեաց յեգիպտոսէ, բազում այգիս խլեաց ի Քանան եւ զնոսա տնկեաց, պարսպեաց աւրինաւք եւ ամրացոյց մարգարէիւք. կացոյց նմա թագաւորս վերակացուս, եւ առաջնորդս քահանայս եւ քահանայապետս, ուխտս եւ պատարագս, նուէրս աստուածայինս ի տուէ եւ ի գիշերի: 245 Եկն տէր այգւոյն ի ժամ պտղոյն ընդունել ի նոցանէ զճաշակս վայելչութեան գինւոյն. գինին զբնութիւն անուշութեանն ոչ փոխեաց, քանզի աստուածային աջոյն էր տնկեալ զայգին: 246 Լեղի ի գինի անդր խառնեալ տային ըմպել: 247 Լեղին կատարեալ դառնութիւն է. այս բերք ոչ աստուածային տնկոյն են, այլ գիւտք չարասէր մարդոց եւ նախանձոտ կամաց, որք զանխառն զանգանել կամին եւ ի սուրբ բնութիւն գործոյն Աստուծոյ զիւրեանց դառնութիւն մեղացն խառնել կամեցան: 248 Ձայս աստուածութիւնն քեզ յանձն ոչ առնու. քանզի ոչ եթէ սակաւ մի խառնեցին զլեղին, այլ այնչափ թանձրացուցին, զոր եւ մարգարէն Դաւիթ յառաջագոյն ասէր ողբալով. Ետուն ի կերակուր ինձ լեղի, եւ ի ծարաւ իմ արբուցիմ ինձ փացալս: 249 Որովհետեւ առատ էք ի չա-

՝ Տե՛ս. Ես. ԻԲ 3:

՝ Տե՛ս. Մատթ. ԻԷ 34:

՝ Սաղմ. ԿԸ 22

րութիւնս եւ կապեալք ի բարեգործութեանէ, զայդ կամս ձեր ոչ կատարեցից: 250 Ճաշակեաց եւ ոչ կամէր ըմպել: 251 Քանզի նորա այնպէս կամէին եթէ հնար ինչ իցէ՝ յոյժ կերիցէ զլեղին, եւ առաւել յոյժ արբցէ զքացախն: 252 Եւ եթէ ոք ասիցէ, ուստի՞ գիտես զկամս աներեւոյթս, մանաւանդ եւ զանգրեալսն, ի պատրաստութենէ անտի իմացիր. ո՞ւմ արդեաւք երբեք ի մարդկանէ գտաւ ի ժամ մահուն լեղի եւ քացախ ի միխթարութիւն. բայց միայն այսոցիկ՝ որոց առաջնորդ եւ վարդապետ էր հայր նոցա սատանայ. որք ընդ նմին իսկ ժառանգելոց են զպատրաստեալ տեղին երկոցունց կողմանցն:

253 Արդ Բարաբբայն զոր արդարագոյն համարեցան, շնորհեցաւ նոցա արձակել ի դատաւորէն, եւ այլ եւս չարս երկուս աւագակս, որոց էին գործք իւրեանց չարութեամբ եւ դժնդակագոյնք քան զամենայն մահապարտաց, որ յայնմ ժամանակի պահէին ի բանդի դատաւորին, եւ ի նմին աւուր դիպեցան ի խաչելութեանն Քրիստոսի, մի ընդ աջմէ եւ միւսն ընդ ահեկէ նորա. զի մի՛ եւ մի բան ի կանխագիր մարգարէութենէ անտի ոչ վրիպեսցի:

254 Եւ երթային զհետ նորա բազմութիւն արանց եւ կանանց, քահանայից եւ քահանայակետաց մեկնիչք աւրինացն եւ ծերք ժողովրդեանն, ականատես լինել փութային մահու անարգանաց կենարարին իւրեանց. եւ յոյժ խնդութիւն էր ի միասին մոլորելոցն, եթէ ի մէջ աւագակացն խաչեսցի, հայհոյեալ յերկրէ եւ դատապարտեալ յերկինս: 255 Քանզի ունին մարդիկ բարս բնութեան. յորժամ տեսանեն զոք ի մեծի թշուառութեան եւ ի հարուածս չարչարանաց եւ ի ձաղանս անարգութեան մահու, կարծեն ամբարիշտ մտաւքն՝ իբրեւ յԱստուծոյ զպատիժ պատուհասին եկեալ հասեալ ի վերայ նորա, սրտմտեալ բարկանան, եւ հնարին յան-

ձանց եւս դառնութենէ յաւելուլ ի տանջանս պատժաւորացն: 256 Եւ այս անխորհրդածութիւնս ծնունդ է կոյր մտաց, որ միայն զառժամայսն իմանայ եւ զառաջակայսն ոչ տեսանէ, որք անկեալք ի ճշմարտութենէ եւ վրիպեալք ի հանդերձեալ կենացն. որպէս եղեւ իսկ ի կենսագիւտ տեղւոջն՝ ընտրութիւնք երկոցունց կողմանցն, ոմանց ի վայր անկեալ, եւ ոմանց ի վեր ելանել: 257 Քանզի մինչ դեռ փոյթք էին ի հայհոյութիւն, եւ սրատեսիլք ի ձաղանս անարգանաց նորա, կամէին լսել եւ զնորին զթշնամանութիւնս ի բերանոյ աւագակաց: 258 Քանզի մարդ յորժամ դառնացեալ ի վիշտս տանջանաց եւ հատեալ է յոյս կենաց նորա, մերձեալ է ի դուռն անդարձ մահու, մանաւանդ յայնպիսի մահու՝ յորում աւագակքն կային, ոչ ինչ պատկառի այնպիսին թշնամանել զդատող իւր, նա եւ յերկինս ձգել հայհոյութիւն բանից:

259 Բայց արդ դու եկ յարեաց ի լուսաւոր տեղին եւ մերձեցիր ի փրկական խաչն տէրունական, եւ տես անդ զնոր եւ զչքնաղ գործսն՝ որ գործեցան: 260 Երիս փայտս կանգնեալ եւ երիս մարդս խաչեալ՝ հասարակ կան ի միում պատժի, ոչ ոք քան զոք ի դիւրագոյն տեղւոջ, այլ մի քան զմի ի դժնդակագոյն հարուածս: 261 Յայնմ վայրի յոյժ զարմացեալ հիանամ, թէ ուստի՞ գտաւ աւագակն ջատագով ճշմարտութեանն. յայտնի ակամբ ետես եւ ոչ ինչ զարմանալիս. յառաջագոյն ոչ ինչ գիտէր զճշմարիտ վարդապետութիւն Տեառն. յիւրոց գործոցն՝ ունայն էր յարդար վաստակոց. իմաստութիւն երկնային հեռի էր ի նմանէ, քանզի ծնունդ էր մեղաց եւ սնունդ դառնութեան. այր մի որ ի մանկութենէ իւրմէ իբրեւ մոլի ի վայր անկեալ ի քաղաքէ, հեռացեալ ի մարդկանէ, ատեցեալ զլոյս տունջեան, եւ սիրեցեալ զխաւար գիշերոյ, կցորդ էր քաղաքաւեր գողոց, եւ հաղորդ յափշտակող ա-

ւազակաց. խորհուրդք նենգաւորք եւ գործք վատթարք, բարեկամ անարգաց եւ սիրելի լկտեաց, առելի զգաստից եւ զագրալի ամենայն բարեսէր մարդկան. որսացեալ ի դատաւորէն ըմբռնեցաւ ըստ բազում յանցանաց իւրոց. եւ ըստ բազում յանցանաց իւրոց կայր ի պատիժս մահուն: 262 Եւ արդ զի՞նչ խաւսի. յընկերն սաստելով եւ զանձն իւր դատապարտելով՝ յանդիմանիչ քահանայիցն գտանի, եւս առաւել քահանայապետիցն: 263 Ինձ թուի՝ եթէ զգատաւորն յոյժ դարովէ, միանգամայն եւ զատեանն կշտամբէ եւ զիմաստունն ամթռակիցս դատաւորին յամաւթ առնէ:

264 Բայց ընկեր նորա յանկակից էր հայհոյող ժողովրդեանն, եւ սկսաւ հենդնելով ասել. Եթէ արդարեւ դու ես Քրիստոսն, փրկեա զանձն քո եւ զմեզ ընդ քեզ: 265 Իսկ միւսն ի ձայն բարձր լու ի լու ամենայն ժողովրդեանն կազել սկսաւ ընդ ընկերին եւ ասել. ՅԱստուծոյ ոչ երկնչիս դու, նա եւ ի մարդկանէ արժան էր քեզ ամաչել. մեք ըստ յետս ընդդէմ գնացից մերոց ձախողակի զհատուցումն ընկալաք, իսկ սա ընդէ՞ր. զի սորա չար ինչ ոչ էր գործեալ, եւ երբեք ումեք ի մարդկանէ չիք մեղուցեալ: 266 Զայս նորա ասելով, ամենայն բազմութիւն դատողացն ամաչեցեալ լինէր: 267 Եւ դարձուցեալ անդրէն զբանս իւր աւազակն ասէ. Տէր Յիսուս, յիշեա զիս ի գալստեան արքայութեան քո: 268 Զանունն ոչ գիտեմ զառնս զայսմիկ, եւ աւազակ ամաչեմ ասել. զի վերագոյն գտանի ոչ միայն քան զբարեգործ ոք ի մարդկանէ, այլ եւ քան զյոյժ խրատեալս յաւրինաց եւ ի մարգարէից:

269 Ուստի՞ է քեզ այդ, ո՛վ յափշտակող. ո՞ւր կաս, զո՞ տեսանես, եւ ընդ ո՞ւմ խաւսիս. ի խաչի տեսանես խաչեցեալ, եւ խաւսիս ընդ Տեառն Յիսուսի միանգամայն եւ ընդ արքայի որդւոյ՝ որ իշխէ արքայ-

յութեան եւ բաշխէ պարգեւս ամենեցուն: 270 Իսկ արդ զի՞նչ տեսեր, միթէ կակղացո՞յց զփայտ խաչին իւրոյ առաւել քան զքոյդ, ո՞չ տեսանես աւաղիկ փայտ չորեքկուսի ի վերայ վիմի կանգնեալ, զոտս եւ զձեռս երկաթով բեւեռեալ, անլոյծ կապանաւք պնդեալ. տիգաւորք շուրջ պատեալ, քահանայք հայհոյեն, քահանայապետք դարովեն, ծերք լկտութեամբ այսն առնեն, փարիսեցիք լկտութեամբ ոտնհարեն. բազմութիւն ժողովրդեանդ ի ձայն բարձր աղաղակեն ասելով. Զայլս ապրեցոյց, զանձն իւր ոչ կարէ փրկել: 271 Դու ինքնին իսկ տեսանես եղէգն ձաղանաց եւ քացախ լեղի խառնեալ ի կերակուր եւ յըմպելի, զհանդերձսն մերկացեալ, զպատմուճանն վիճակեալ, մերկ զփայտէ կախեալ, գլուխ ի փշոց պսակեալ, երեսք թքալիցք, եւ ծնաւտք ապտակեալք. եւ դու ասես՝ յիշեա զիս ի գալստեան արքայութեան քում:

272 Ուստի՞ արդեաւք ծագեաց այնպիսի լոյս յոգիս աւազակին, յոյժ զարմացեալ եմ եւ առաւել քան զյոյժ սքանչացեալ. ի Նազարեթ ոչ երթեալ, ծննդեանն չէր տեղեակ, ի Կանա գալիլեացուցն սորա չէր երթեալ, ի հարսանիսն զսա ոչ ոք կոչեաց, ի թակոյկաբուղիս գինւոյն սորա չէր արբեալ, ի նկանակածին հացէն սորա չէր կերեալ, զկաւածեփ կոյրն ոչ էր տեսեալ, ի շամրտացի կնոջէն սորա չէր աշակերտեալ, զմահիճս անդամալուծին սորա չէր տեսեալ, յունայն գերեզմանն Ղազարու սորա չէր երթեալ, զբողոք դիւացն յերկիրն գերգեսացուց չէր լուեալ. եւ զի՞ մի մի թուցից յանուանէ. որպէս ունայն էր անձն իւր ի բարեգործութենէ, սոյնպէս անտես եւ անլուր էր յամենայն նշանագործութեանց Տեառն մերոյ: 273 Արդ փոխանակ այսր ամենայնի փառաւորութեանց տեսանէր այր մի լի անարգանաւք ի մահու խաչին, եւ խոստովանէր զնա Տէր Յիսուս, որդի Աստուծոյ, եւ իշխան արքայութեան

փառաց Հաւրն. աներկբայ հաւատ, անթե-
րահաւատ խնդիրք: 274 Վասն որոյ եւ լսէ
անսուտ պատասխանի. Արդարեւ ասեմ
քեզ, այսաւր ընդ իս իցես ի դրախտին:
275 Կարճառաւտ խնդիրք եւ համառաւտ
պատասխանի. բանիւ հաւատաց, բանին
բան պատասխանի լսէր. զինչ կայր իւր ի
ժամու անդ՝ բոլոր զինքն եհեղ առաջի
Տեառն ամենայնի իբրեւ զմարդ եւ զաղ-
քատ, բայց միայն մեծացեալ հաւատովքն:
276 Իսկ Տէր ոչ իբրեւ զմարդ եւ ոչ իբրեւ
զաղքատ եւ իբրեւ զնախանձոտ, եւ ոչ իբ-
րեւ զկիսապարզեւ, այլ իբրեւ զբարերար
առատ մեծատունն անչարակնածութեամբ
շնորհէ ոչ զմասն պարզեւին, այլ զամե-
նայն զբուն զհայրենի տեղին. ոչ ուր
ծառն մահու, այլ ուր միայն ծառն կենաց.
ոչ ուր անցանկ տեղին էր՝ ուր աւճն սողե-
ցաւ եմուտ, այլ զոր ինքն Աստուած
պարսպեաց ի սուր տէգ նիզակի իւրոյ
հրեղէն շուրջանակաւ զոր քերոբէն ինք-
նին պահէր. զորոյ զցանկն ոչ ոք կարաց
յարգարոցն խրամատել, ոչ Աբրահամ, ոչ
Սահակ, ոչ Յակովբ, ոչ Մովսէս ինքն աւ-
րինաւքն, եւ ոչ մարգարէքն քարոզու-
թեամբքն. ոչ քահանայք պատարագաւք
եւ ոչ զեւտացիք ի պաշտաման իւրեանց.
ոչ ուխտաւորք յուխտաւորաց, ոչ հարք
ճշմարիտք եւ ոչ թագաւորք արդարք, ոչ
գունդք մարտիրոսաց եւ ոչ վիճակք Առա-
քելոց. մանաւանդ թէ եւս վերագոյն ասա-
ցից, ոչ հրեշտակք, ոչ հրեշտակապետք, ոչ
աթոռք, ոչ տէրութիւնք, ոչ պետութիւնք
եւ ոչ իշխանութիւնք զբունն դրախտին
բանալ ոչ կարացին, բայց միայն աւագակս
այս:

277 Յիրաւի ուրեմն ասացաւ թէ աւա-
զակն եբաց զբունն դրախտին. քանզի ի
ժամունն յայնմիկ ամենայն արարածք ի
սուգ տրտմութեան էին. արեգակն թաքու-
ցեալ, լուսին խաւարեալ, աստեղք ծած-
կեալ, տիւ հեռացեալ եւ զիշեր մերձեալ,
վերինք զարմացեալք եւ ներքինք յիմա-

րեալք, աշակերտք փախուցեալք եւ ծա-
նալթք հեռացեալք, բարեկամք չարա-
խաւք եւ մերձաւորք թշնամանողք. ամե-
նեցուն թողեալ՝ ամենեւին յետս կացեալք,
միայն սա մերձեալ ի խոստովանել: 278 Ոչ
զառ ի ծննդենէն սկիզբն առնէր, եւ ոչ ի
մասնաւոր նշանագործութենէ բունն հար-
կանէր. այլ եւ վերանայր ըստ ախտական
տեսակս եւ յաներեւոյթ արքայութիւնն
հասանէր եւ ասէր. Յիշեա զիս յանչարչա-
րելի արքայութեան ի քում գալստեանն:

279 Ո՞ր իցէ այն գալուտ, եւ կամ
ուստի՞ գայցէ, եւ կամ վասն որո՞յ իրաց
գայ. եւ զիա՞րդ գիտացեր դու, ո՞վ աւա-
զակ, պատմեա մեզ. որովհետեւ ընկեր ե-
ղեր Մովսէսի, դու աւագիկ քան զՍինա ի
վեր ամբարձար եւ զանմարմին տեսիլ տե-
սեր. թուի ինձ թէ Հոգին Սուրբ հանդիպե-
ցաւ քեզ, եւ զՀայրն բոլորեցունց տեսեր
դու. եւ զոր մեծն Պաւղոս ոչ կարաց
թարգմանել մեզ զպատրաստեալ պար-
զեւան, դու յառաջագոյն մտեր եւ ժառան-
գեցեր գայն:

280 Այո, ասէ, այդպէս է ճշմարիտ.
քանզի Տէր ինքնին ինձ առաջնորդեաց, եւ
խոստացեալ եւս է. ոչ միայն յղեաց զիս ի
դրախտն թէ աւճն հանիցէ զիս անտի միւ-
սանգամ: 281 Վասն այսորիկ ընդ իս իցես,
ասէ, ի ներքս ի դրախտին: 282 Ընդ իսն
ասելով, ոչ ժամանակեան եւ ոչ անժամա-
նակեան, այլ բնաւ հանապազորդեան.
միշտ Աստուած ինքն ընդ իւր, միշտ հա-
ւատացեալ՝ ընդ նմա Աստուած:

283 Վասն այսորիկ եկն ի չարչա-
րանս, զի չարչարեցելոյն աւգնական լիցի:
284 Առաջին պտուղն առաջին ծառոյն
զմարդն առաջին սպան. իսկ առաջին
պտուղ խաչին զառաջնորդն մահու յան-
ձին իւրում սպան. եւ ի մեռանել մահուն՝
առաջին պտուղ աւագակն կթեցաւ ի գաւ-
րութենէ խաչին: 285 Ո՞վ չարագեւ քահա-
նայք, եւ ա՞յլ եւս այգանիցէք զխաչդ, եւ

կամ զխաչեալդ ձաղիցէք. մինչ կամէիք ընդ անաւրէնսն սպանանել զդա, յանաւրինէ անտի աւրինաւորքդ կշտամբեալ յանդիմանեցայք, եւ անաւրէնն քան զաւրինաւորսդ գեր ի վերոյ գտաւ ոչ միայն քան զձեզ, այլ եւ քան զաւրէնսդ ձեր գլխովին:

286 Եւ ընդէ՞ր արդեաւք այսպէս. քանզի ոչ եթէ աւրէնքն տկար ինչ էին, այլ դուք տկարացուցանէք զնա չպահելով զաւրէնսն, վասն զի ոչ հաւատովք էիք: 287 Իսկ դա հաւատովք ետես զաւրէնսն եւ զաւրէնսդիրն: 288 Ձաւրէնս ետես, զի կարաւտեալ էին հաւատոց եւ ոչ գտանէին: 289 Ձաւրէնսդիրն ետես, զի եկն կատարել զաւրէնսն եւ ոչ պակասեցուցանել. միանգամայն յառաջ մատեաւ, պատուեաց զաւրէնսն հաւատովքն, քանզի խոստովանեաց ի տուիչ աւրինացն. մեծարեաց եւ զաւրէնսդիրն, զի ասաց նմա՝ Աստուած եւ որդի Աստուծոյ, բաշխիչ պարգեւաց եւ տէր արքայութեան: 290 Եղեւ սկիզբն հաւատոց եւ կատարիչ աւրինաց, որդի Աբրահամու եւ սիրելի մարգարէից, աշակերտակից առաքելոց, առաջնորդ մարտիրոսաց, ժառանգորդ արքայութեանն, դռնապան դրախտին կենաց, միանգամայն սիրիչ եւ սիրելի Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

291 Արդ յոյժ սիրելի է ինձ բանս Առաքելոյ զոր ասէ. Ուր առաւել եղեմ մեղքն, առաւել եղեմ շնորհքն Աստուծոյ^ա: 292 Արդ զայս լսելով, եղբարք, ամենեցուն մեր միտք ճշմարիտ գիտելով ընթանան առ ազգն տեսական, ի գաւազն արդարոց, յերկիրն պարգեւաց՝ յանձկալի քաղաքն Երուսաղէմ, ի հրաշակերտ տաճարն Աստուծոյ. ուր աւրէնքն աստուածատուրք եւ մարգարէքն հոգեկիրք, արդարք շնորհալիցք, հարքն կատարեալք եւ որդիք խրատեալք.

ուր նշանք երկնայինք եւ արուեստք երկրայինք, ուր յայտնութիւնք հրեշտակաց եւ ընդունելութիւն պատարագաց ի ձեռն կենդանի Հոգւոյն Սրբոյ, որով Աստուած ճանաչի ճշմարտապէս այնոցիկ՝ որոց ոգիքն սրբութեամբ համեմատեալ են ընդ Աստուծոյ: 293 Արդ վասն այսր ամենայնի յոյժ սիրեմ զաշխարհն, եւ յաշխարհի անդ զգաւառն, եւ ի գաւառի անդ զքաղաքն ընտրեալ, եւ ի քաղաքին զբարձրացեալ տեղին Գողգոթա, եւ ի տեղւոջ անդ զեւս բարձրացեալ վէմն, եւ ի վերայ վիմին զաշխարհաձեւ խաչն, եւ ի վերայ խաչին զխաչեցեալն, որ կայր առաջի երկնաւոր տեսողացն, եւ էր գեր ի վերոյ ոչ միայն քան զբարձրութիւնս լերանց, այլ եւ քան զերկինս. նա եւս քան զերկինս երկնից բարձրացեալ:

294 Եւ զի այսպէս է ճշմարիտ, հայեաց ի տեղին, եւ տես ճշմարիտ զեղելութիւն գործոցն որ անդ կատարեցան առանց երկբայութեան: 295 Քանզի մերկացուցին զտէրն արարածոց, զայն որ զգեցոյց զարդուք լուսոյ զերկինս, եւ պսակեաց զերկիր անուշահոտ ծաղկաւք: 296 Եւ վիճակեցին զպատմուճանն զայն՝ որ առանց կշռոյ եւ վիճակի ետ որդւոց մարդկան զգեստ զարդուց ի ծովէ եւ ի ցամաքէ: 297 Եւ ոչ արբուցին ջուր ի ծարաւու այնմ որ մեծ բղխմամբ ամպոց բազմահոսան յորձանաւք ոռոգանէր զամենայն երեսս երկրի. մինչեւ ասել նմա ի չարչարանսն, ծարաւի եմ ես: 298 Հաստիչն աղբերաց ծարաւի եմ ասէ. տէրն Ովկիանոսի եւ տուիչն անձրեւաց, անկարաւտն յամենայնի եւ լցուցիչն կարաւտելոց՝ ծարաւի եմ ասէր: 299 Այն որ ի սկզբան լինելութեանն այնչափ ջրայեղց գործեաց զարարածս, մինչեւ Սուրբ Հոգին շրջէր ի վերայ ջուրց եւ ընդ վիհս մեծամեծս ի վայր հոսեցոյց զանչափ խորութիւն ծովուց, եւ Տէրն այսր ամենայնի ի գութ սիրոյ առ իւրսն եկեալ, եւ յիւրոցն

^ա Տէ՛. Լուսն. Ի 20:

մեծապէս չարչարեալ եւ չարչարանս ընկալեալ, մինչեւ բաժակի միոյ ջրոյ կարաւտեալ, ասելով ծարաւի եմ, եւ ոչ ոք տայր նմա ըմպել:

300 Ո՛ սիրտք դառնացեալք եւ միտք խարխարեալք եւ անձինք յիմարեալք. զի եթէ գոյր յումեք ի մեզ այսաւր գուժ երկնաւոր սիրոյն եւ տապ նորին անձկոյ, ասէք եւ մեք ընդ նմա՝ ծարաւի եմք, լինելով չարչարակից մեծի տանջանաց նորա: 301 Եւ ոչ զի արբեցուք զինի ի մխիթարութիւն սգոյ, այլ զի յաւժարութեամբ եւ չարչարանաւք զմահ եւ զձաղանս փրկչին յանձն առեալ՝ քաջութեամբ ի հանդէս նահատակութեան համբերութեամբ ընթացուք, եւ զախոյեանն կանգնեալ՝ վանեսցուք զթշնամին: 302 Այլ եւ կարաւտեսցուք բաժակի միոյ ջրոյ առ ի մխիթարութիւն ծարաւոյ: 303 Նա եւ արժանաւոր սիրողաց Քրիստոսի պարտ է ընդ սուրբ մարգարէին ձայնակից լինել. Առնոյր ոբ, ասէ, եւ առնէր զգլուխ իմ շտեմարանս ջուրց բազմաց եւ գաչս իմ աղբիւր յորդարտասուաց: 304 Եւ զի՞նչ առնէիր այդու ամենայնիւ, ո՛վ մարգարէ: 305 Ի տուէ եւ ի գիշերի լայի գիւրայլէ: 306 Արդ որ յահագին անապատին բազմածով վտակս բղխեաց յանջրդի վիմէն, նոյն ինքն առանց նոցունց աշխատութեան գհետ երթայր ժողովրդեանն՝ արբուցանել զազգն ընտրեալ: 307 Արդ նոյն վէմ վասն նոցուն եւ աստ մարդացեալ՝ ծարաւի եմ ես, ասէր: 308 Եւ ոչ միայն զի չտան ջուր, այլ եւ փոխանակ ջրոյ՝ քացախ ընդ լեղի խառնեալ մատուցանէին նմա:

309 Եւ կամ ո՞յր ի մարդկանէ իցէ սիրտ քարեղէն կամ պղնձի մարմին՝ զայս լսելով հանդարտել արտասուաց: 310 Զի եթէ յանջատման սիրելեաց մերոց ցտիմք

եւ կոծիմք, ճչեմք դառնացեալ սրտիւք, այրիմք խորովիմք ի գուժ սիրելեաց մերոց, եւ ըստ մասանց մարմնոյն՝ ողբք դառնութեան ձայնս արկանեմք: 311 Եւ զայս առնելով ոչ զարժանն կատարեմք, քանզի զպարտսն հատուցանեմք. ոչ զի ինքն է պարտական, այլ զի զմեր պարտիսն իւրովին հատուցէ. եւ ոչ զի ի պարտեացն ասլրել աղաչէր, այլ յոյժ ցամաքեալ եւ պասքեալ՝ ջուր խնդրէր սակաւիկ մի, լուանալ գերաշտացեալ քիման: 312 Ծարաւի եմ ասէր. յականէ զոք ոչ կարդայր, զանուն ուրուք առանձին ոչ ասէր. զաղերսն ի մեզ անդր արկանէր, զկարաւտութիւն ամենեցուն յայտնէր, զանողորմածութիւնն յամենեսեան տեսանէր:

313 Քանզի ճմլի սիրտս, հեղձնուն ոգիքս, փղձկին միտքս, եւ զխանդաղատանսն Մարիամու ոչ կարեմ ասել: 314 Քանզի մինչ դեռ կայր Տէրն ի շտապ տազնապին, մաւտ առ նմա կային, ասէ, մայր նորա եւ քոյր մաւր նորա Մարիամ մագդաղենացի եւ այլ եւս կանայք՝ որ յառաջագոյն հաւատացեալք էին գալստեանն որդւոյն Աստուծոյ. աչաւք իւրեանց տեսանէին զմեծ չարչարանսն, եւ ականջաւք իւրեանց լսէին զհայհոյութիւնսն, մանաւանդ իբրեւ լուան ի բերանոյ նորա՝ թէ ծարաւի եմ: 315 Եւ դուք ձեզէն զիտէք զբարս բնութեան կանանց՝ ո՛րչափ խանդաղատագոյնք են յողորմածութիւն, եւ մանաւանդ առ սիրելի ծնունդս իւրեանց: 316 Իսկ արդ զի՞նչ կարծելի է ի ժամուն յայնմիկ վասն կանանցն այնոցիկ. զի թէ եւ էր հնար գտեալ նոցա, ոչ միայն ամանով մատուցանէին նմա ջուր, այլ եւ յորդագնաց վտակս առ խաչիւն գործէին: 317 Եւ իբրեւ այսպէս ոչ էր ի ձեռս նոցա, զկրծից հարկանէին, զսիրտն կոծէին, ի միտսն ողբային, եւ արտասուս յորդագոյնս բղխէին, վայ անձանց կարդային, եւ զմահ քան զկեանս ընտրէին. մինչ դեռ կային յաշխարհի, հա-

Պ՝ Տէ՛. . . Երէմ. Թ՝ 1:
Է՛ Տէ՛. . . Երէմ. Թ՝ 1:

րեալ դիականց նմանէին: 318 Վասն այսր ամենայնի յառաջագոյն պատասխանի լուեալ ի Տեառնէ՝ զոր ողբալով ասէր ի վերայ ամենայն ազգին. Դստերք Երուսաղէմի, մի՛ լայք ի վերայ իմ, այլ լացէք ի վերայ անձանց եւ ուստերաց եւ դստերաց ձերոց. զի եկեցեան աւուրք՝ յորս ասիցեան, երանի ամլոց եւ ընդերաց այնոցիկ՝ որ ոչ ծնան, եւ ստեանցն՝ որ ոչ սնուցին. յայնմ ժամանակի սկսանիցին ասել լերանց՝ թէ անկերուք ի վերայ մեր, եւ բլրոց՝ թէ ծածկեցէք գմեգ. զի եթէ ընդ փայտ դալար գայս արարին, իսկ ընդ չորն զի՞նչ գործեսցենն՝:

319 Յայնժամ ի տեղուքն ստուգաբանի կանխասացութիւն մարգարէին Զաքարիայ, որդւոյ Բարեքեայ, եւ նմանի մահ որդւոյն Ամովնայ՝ մահու որդւոյն Աստուծոյ: 320 Քանզի Ովսիաս այս՝ այր արդար էր եւ թագաւոր Իսրայէլի. առաջնորդէր ժողովրդեանն ի ճանապարհս աստուածպաշտութեան, եւ երբեք ումեք մարդկան ինչ ոչ մեղանչէր. այլ յորդորելով բովանդակեաց զսիրտս ամենայն մարդոյ՝ անել ի մի երկրպագութիւն Աստուծոյ: 321 Եւ մինչ դեռ խաղաղասէր վարուք կատարէր զկեանս իւր, եկն ել ի վերայ նորա Փարաւոն Կաղ յերկրէն եգիպտացւոց, եղ ընդ նմա պատերազմ եւ սպան զնա յերկրին Տրէստանի: 322 Եւ քանզի արդարութեամբ էր թագաւորութիւնն Յովսիայ, եւ միամաւր առ ի ծննդենէ, եւ զուր մեռեալ ի պատերազմի, խանդաղատէ մարգարէն ի մահ թագաւորին. եւ յորդորեալ զամենայն ցեղն, անէ ի կոծ լալեաց. եւ նմանեցուցանէ զաստուածութիւն կոծոյն կոտորելոց նռնենեաց ի դաշտին: 323 Թուի ինձ եթէ ցանկալի եւ վայելուչ է ծաղիկ նռնենեաց ի տեսիլ աչաց մարդկան. եւ ի շնչել խորշակի, դիւրահոս վայրաբեր լինի առ հասարակ. եւ այն որ էր յառաջ պայծառագոյն քան զամենայն ծաղիկս, յետոյ

տրտում եւ տխուր լինի քան զամենայն ծառս փշաբերս: 324 Վասն որոյ եւ մարգարէն ծաղկի եւ պսակի նմանեցուցանէ զարդար թագաւորն. ունայն եւ թափուր մնաց ժողովուրդն իբրեւ ծառս մրգաթափս որ անպիտան երեւին ի տեսիլ մարդկան:

325 Արդ չորիւք թուական ցեղիւքս, զոր էած մարգարէն ի կոծ թագաւորին, զարս առանձին եւ զկանայս առանձինն, իբրեւ զոգի եւ զմարմին բոլոր բովանդակեաց ի սուգ թագաւորին. որպէս եւ Տէր մեր ասելով ցկանայսն՝ դստերք Երուսաղէմի. եւ ցուցանէ նոցա թէ կոծելոց են ի վերայ անձանց եւ ի վերայ ամենայն Իսրայէլի. ոչ միայն արք եւ կանայք առանձինն՝ որպէս տան Դաւթի եւ երից ընկերաց իւրոց, այլ ամենայն ազգք եւ ազինք՝ ոչ միայն մարդկան, այլ եւ վերին զաւրութեանց՝ որպէս երկնի եւ երկնաւորաց, եւ են թուովք, եւ ի ձեռն չորիցս կոծին ամենայնքս: 326 Եւ ընդէ՞ր արդեաւք լինիցի այս. վասն զի ամենեքեան գտան յանողորմածութեան. Հրեայք ի զուր պարտաւորեցին եւ մատնեցին: 327 Արդ որովհետեւ երկոքեան կողմանքն միաբանեցան ի չարութիւնս, ի ձեռն չորից տարերցս չորիւք մասամբք՝ չորք անկիւնք յերկրիս յահ մեծ եւ յահագին կոծ առ հասարակ ամենայն երկիր կոծեսցին, արք առանձին եւ կանայք առանձինն. Իսրայէլ կոծեսցի, զի անջատեցաւ ի ճշմարիտն Աստուծոյ. Հեթանոսք կոծին, զի անջատին ի սուտ աստուածոցն իւրեանց. երկոքեան կողմանքն մտանեն ի սուգ եւ ի կոծ սաստիկ. եւ դառնայ կոծն ոմանց յանգիւտ կորուստ, եւ ոմանց ի կորստենէ յանանց լոյսն: 328 Յայսմ վայրի կատարի ճշմարտութեամբ բան մարգարէին որ ասէ. Կոծեսցին ամենայն ազինք առանձինն: 329 Նա եւ անդէն առ խաչին Տեառն ոչ փոքր եւ

*** Ղ.՝ Ի. Ի. 28

‡ Տ.՝ Գ. Գ. 12-14, Մ.՝ Գ. Գ. 30:

դուզնաքեայ էր կոծն, այլ յոյժ մեծ եւ ահագին, որ զանցուցանէր զամենայն կոծով:

Բ

Ի նմին ժամանակի, ասէ, բարձրացաւ Տէր մեր ի վերայ խաչին. արեգակն խաւարեցաւ, վարազոյր տաճարին ցելաւ մինչեւ ի վայր, երկիր շարժեցաւ, վէմք պատառեցան, գերեզմանք բացան եւ բազումք ի մեռելոց յարեան, եւ յետ յարութեանն Տեառն մտին ի քաղաքն սուրբ եւ երեւեցան բազմաց:

2 Եւ ընդէ՞ր արդեաւք թագեալ արեգակն եւ կորեալ լոյս գեղեցիկ տունջեանն, եւ թանձրացեալ տարրացաւ խաւարն ի վերայ երկրի: 3 Յայտնի է, եւ կարեմք ոչ թագուցանել զճշմարտութիւնն. քանզի զհանդերձսն գերծին առին յիւրեանս, եւ զնա մերկ պրկեալ բեւեռեցին ի փայտին, ոչ կարացին վերին գունդքն հայել ի մերկութիւն Տեառն երկնի եւ երկրի: 4 Սերովբէք որ յառաջ քան զխաչելութիւնն շուրջ կային զաստուածութեամբն նորա, չկարացեալ հայել յահագին փառս նորա, այլ երկուք թեւովք ծածկէին գերեսս իւրեանց, եւ երկուք թեւաւքն ծածկէին զոտս իւրեանց, եւ երկուք թեւաւքն համբարձեալք եւ վերաբերեալք կախէին զանպարտելի զաւրութենէ նորա, եւ հրեղէն բերանովք զանհատ սուրբ սուրբ սուրբն ասելով՝ անյագ ձայնիւքն զարարչական զաւրութիւնն փառաւորէին: 5 Սոյնպէս հրեշտակք եւ հրեշտակապետք եւ ամենայն դասք զուարթնոցն կան յահի եւ ի դողման. ոչ կարէին հայել եւ տեսանել զինքնագոյ բնութիւնն, տեղի տուեալ խորշին եւ թագչին յանմատոյց ճառագայթիցն յինքնածագ բնական լուսոյն. ոչ միայն պատուելով զարարչական զաւրութիւնն, այլ եւ գիտելով զիւրեանց նեղութիւնն ոչ ժպրհին հայել յանդգնաբար եւ մերձենալ եւ մաւտել, զի մի՛ ապականեալ ծախիցին յանմատոյց զաւրութենէն: 6 Եւ

այս է խնայութիւն արարչին ամենեցուն, պահել զարարածս անվնաս յիւրաքանչիւր բնութեանն, եւ առաւել ի ժամուն յայնմիկ՝ յորում ահագին մահ որդւոյն Աստուծոյ երեւէր վերնոց եւ ներքնոց, տարերքս սպասաւոր լինէին ի պատիւ խաչելոյն եւ ի ծածկոյթ զուարթնոց, որոց ոչ էին կամք հայել եւ տեսանել զանարգութիւն մահուն նորա: 7 Միանգամայն եւ յամալթ առնելով զանհանճար ժողովուրդն՝ որ առանց ամալթոյ պատկառանաց հայէին ի մերկութիւն որդւոյն Աստուծոյ, մածեալ թանձրացաւ խաւարն ի վերայ լրբենի դիմաց նոցա, զի չէին արժանի հայել եւ տեսանել զկեանս իւրեանց ի վերայ խաչին:

8 Արդ զայս աւրինակ յառաջագոյն տեսեալ Մովսէս հոգւովն Աստուծոյ՝ կանգնեաց յանապատի անդ ատեան դատաստանի. քանզի ի վերայ փրկական բարեգործութեանց Աստուծոյ առ ժողովուրդն՝ գտան նոքա ոչ գոհացողք, այլ հայհոյողք եւ տրտնջողք ի Մովսէս եւ յԱստուած: 9 Բարկացուցին եւ դառնացուցին զսուրբ հոգին Աստուծոյ, եւ առաքեաց ի վերայ նոցա Աստուած աւճս մահաբերս. առանց խնայելոյ հարկանէին եւ սպանանէին ի ժողովրդենէն զբազումս: 10 Իսկ Աստուծոյ ըստ իւրում բարերարութեանն յիշեցեալ զուխտն որ էր ընդ սիրելիս իւր, զթացեալ ողորմի հարելոցն եւ մաղկատելոցն յաւձից սատակմանէ: 11 Հրամայէ Մովսէսի առնել աւճ նիւթական, եւ բարձրացուցանել ի մէջ ժողովրդեանն. զի որ կարացէ հայել եւ տեսանել զաւճն Մովսէսի, ապրել կարացէ ի դառն թիւնից սպանող աւձիցն: 12 Եւ այս է յոյժ սքանչելի եւ իմացական տեսութիւնք. աւճ հրամայէ առնել Մովսէսի, եւ զնիւթոյն անունն ի մէջ ոչ բերէ. եւ ոչ մի ինչ՝ որ անկանի ընդ կռանաւ ճարտարաց, եւ ոչ յայլոց ձեռակերտիկ արուեստից՝ որ կազմի առանց հրոյ փորձութեան. այլ միայն հրաման տուեալ, Արա քեզ, ասէ, դու աւճ.

քեզ քեզէն արա, ասէ: 13 Եւ յայս հայեցեալ Մովսէսի յոյժ իմաստնանայ. տեսանէ զծածկութիւն իրացն հանդերձելոց, առնէ աւճ պղնձի: 14 Որպէս ինձ երեւի փոքր ի շատէ, ընդ աղաւտ յայտնութիւն իմաստութեանն զանպարտելի զչնորհան Աստուծոյ պղնձոյ նմանեցոյց Մովսէս, զի անվնաս պահեսցին այնոքիկ՝ որոց ստացեալ իցէ հաւատովքն ճշմարտութեան զնա: 15 Բայց զձեւ պղնձի աւճին ոչ յայլ աւրինակ բաղկացոյց, այլ ի թիւնաւորացն եւ ի սպանողացն:

16 Արդ տես զընտրութիւն որոշմանն. հարկանէին ամենեքեան, մեռանէին ոչ ամենեքեան. իբրու յայտ է ընտրութիւնք դատաստանին: 17 Եւ քանզի յորկորստութենէ մտին մեղք յաշխարհ միջնորդաւ առաջին աւճին, նոյն ցանկութիւն կերակրոց շարժէր զմարմինս անյագ ժողովրդեանն, յորմէ եւ գտաւ իսկ տրտունջ հայհոյութեան ի բերանս նոցա. հարկանէին եւ խածանէին յաւճիցն՝ որ մահս ի վերայ հասուցանէր: 18 Քանզի ոչ ինչ այլ գոյ նման ցանկութեան, որպէս զաւճի բնութիւն խորագէտ եւ նենգաւոր. սողի եւ սպրդէ մտանել ընդ նեղ եւ ընդ նուրբ փապարս, մտանէ եւ ցուցանէ զգործ դառնութեան մահուն. որպէս իգական ցանկութիւն հեղու եւ տապալի ի տենչանս կերակրոց, շարժի եւ շուայլի յարբեցութիւն անյագութեան. ուստի բազմագլուխ գազան ցանկութիւնն զաւրանայ ի վերայ զգայութեանցն մարդոյն եւ անյագ վարէ յիրս աղտեղիս: 19 Դարձեալ եւ ձեւ սողնոյս այսորիկ շարժման ճշմարտապէս ցուցանէ զշարժումնս մերոյ բնութեանս, որպէս եւ ուսաք իսկ ի բնական արանց՝ որ անստութեամբ տան հաւանութիւն իմաստնասէր մարդոց: 20 Հինգ պատ առնու աւճ ի սողել իւրում. իսկ առաջոյքն եւ զկնիքն լնուն զեաւթներորդ թիւն. եւ բերէ զնմանութիւն զմերոյ զգայութեանցս, երկուք աչաւք եւ գուգիւք ականջաւք, ճա-

շակաւորութիւն, խոհականութիւն եւ ներքին համք որովայնին՝ որ շարժէ զամենայն մարդ ի մարմնական ցանկութիւնսն: 21 Արդ այս է տեղալ աւճիցն ի ցանկացող ժողովուրդն՝ որ ամենայն մասամբքն զգայութեանցն յեղեալք էին ի ցանկութիւն, եւ գործով զկամս աղտեղութեանն կատարէին:

22 Իսկ ընդ հարկանել աւճիցն՝ եւ մահու վախճանէին. եւ որ կոխեալն միայն լինէր ի շարժմանց ցանկութեանցն, զխածանելն խածան ի թիւնաբեր աւճիցն, այլ ընդ մահուամբ ոչ արկանէր: 23 Կարէք հայել եւ տեսանել զաւճն Մովսէսի, վասն զի աւճ էր որ սպանանէր, եւ որ սպանանէրն՝ նոյն եւ մաղկատէր. եւ ի ձեռն միւս աւճին տեսեան՝ մաղկատեալքն ընդունէին զառողջութիւն. եւ պատեցան զբարձրացեալ աւճին մաղկատեալքն եւ մաղկատիչքն. եւ նա միջնորդեցաւ եւ եկաց դատաւոր երկոցունց կողմանցն, եւ շնորհեաց ոմանց զառողջութիւն կենաց եւ ոմանց զընդդէմսն: 24 Մեծ էր եւ աւճն պղնձի՝ որ կազմեցաւ ի ձեռաց իմաստնոյն Մովսէսի. այլ մեծութիւն զաւրութեանն նորա զնմանութիւն բերէր զբարձրացեալ խաչին՝ որ կանգնեցաւ ի Գողգոթա, զոր Տէրն ինքնին յառաջագոյն աւրինաղբեաց ասելով. Որպէս բարձրացոյց, ասէ, Մովսէս զաւճն յանապատին, սոյնպէս պարտ է բարձրանալ որդւոյ մարդոյ ի մէջ երկոցունց կողմանց, ոմանց յանդարձ մոլորութիւն, եւ այլոց ի ճանապարհ ճշմարտութեան:

25 Արդ խաւարեցաւ արեգակնն ի վերայ մոլորելոցն, զի չէին արժանի տեսանել զարեգակնն արդարութեան՝ որ բժշկէր զհարուածս աներեւոյթ առաջին աւճին: 26 Եւ որպէս յանապատին՝ այնոքիկ որ յոգիսն հարեալ լինէին ՚ի ցանկական աւճէն, մարմնովքն կատարէր զգործս ապականութեան, ոչ կարէին տեսանել զաւճն

Մովսէսի, քանզի չէին արժանի շնորհատուր թողութեանն, վասն այսորիկ մահուամբք անկեալ տապաստ յանապատին դնէին. իսկ ուր դուզնաքեայքն խտտղմամբքն ցանկութեամբքն ախտացեալք էին՝ ի դերագոյն գային ի բժշկութիւն, սոյնպէս եւ աստ ի գագաթն տեղւոջս պատեցան զխաչիւն Տեառն Յիսուսի անաւրէնք եւ աւրինաւորք, անարժանք եւ արժանաւորք: 27 Որ հնութեան կուրութեամբք հարեալ էին, ոչ կարացին տեսանել զմահն ի կեանս դարձեալ, եւ զմոլորութիւնն ի ճշմարտութիւն շրջեալ, գանէծսն յաւրհնութիւն փոխանակեալ, յառժամայն նեղութիւնս հայեցան, եւ ի հանդերձեալ հանգստենէն վրիպեցին:

28 Իսկ նա ըստ իւրում մարդասիրութեանն շնորհաց գառողջութիւն բժշկութեան երկոցունց կողմանց՝ որք խածեալք եւ խոցոտեալք էին ի թիւնից հին վիշապին, եւ շնորհեալ գառողջութիւն ի ձեռն հաւատոցն ական՝ որք կարեն հայել եւ տեսանել զորդին մարդոյ ի վերայ խաչին, որ ընկալաւ չարքարանս յիւր մարմինն. եւ զնոյն իմանայցեն որդի Աստուծոյ, արարիչ երեւելեաց եւ աներեւութից: 29 Քանզի ոչ եթէ իբրեւ զՄովսէսի աւճն պղնձի է՝ որ կախեցաւ զփայտէ յանապատին, որ առ ոմանս զաւրանայր յառողջութիւն, եւ առ ոմանս տկարանայր յանդարձութիւն մահու: 30 Քանզի նմանութիւն ասաց Տէրն մեր, եւ ոչ զորպիսութիւնն նմանութեան, որ ոչ բերէր զիսկութիւն ճշմարտութեանն: 31 Ձի եթէ բերէր, զի՞նչ եւս պիտոյ էր երկրորդին գալ մտանել ի նորա տեղին, զոր եւ մեծս Առաքեալ թարգմանէ մեզ զզաւրութիւն խաչեցելոյն. Այն որ ոչ գիտէր, ասէ, զմեղս՝ վասն մեր մեղք եղել, զի մեք լիցուք նովաւ արդարութիւն Աստուծոյ՝ եւ մեղքն աւճիւն մտին յաշխարհ:

32 Արդ ձեւացուցեալ զինքն Տէրն աւճին տեսակաւ՝ տպաւորեալ կերպարանեցաւ յեալթն թուական զգայութիւնս եւ յանհատ բարժանելի խոհականութիւնն. եւ եղեն մեղք, քանզի էաք ամենեքեան ընդ նովին մեղաւք մաղկատեալք եւ մաղկատիչք. մաղկատեալք յառաջին հին թիւնից վիշապին, եւ մաղկատեալք յիւրաքանչիւր շարժմանց թուական գրոյ մասանց մարմնոյս: 33 Ծակոտեցան աչք մեր յանարժանս հայելոյ, եւ ախտացան ականջք մեր յայլանդակս լսելոյ, ճաշակելիք մեր անյագ տենչալով, եւ շարժմունք մեր անասնական ցանկութեամբք, եւ խոհականութիւնս մեր հպարտ բարձրացեալք. եւ եղեաք ամենայնիւ եւ ոչ մի մասն արդարութեան: 34 Իսկ այն՝ որ ոչ գիտէր զմեղս եւ հեռի է յայսմ ամենայնէ, ի կամս իւրոյ բարերարութեանն եղեւ մեղս՝ որ ոչ էր նորա, զի մեք լիցուք արդարութիւն նովաւ. որ գոյրն մեր՝ կորուսաք. արդ գտցուք նովաւ, զի մի՛ կորուսցուք այլ:

35 Բայց այս է աւճն պղնձի զոր բարձրացոյց Մովսէս յանապատին. հարկանել ոչ գիտէ, զի չունի թոյնս ի բնութեանն. իսկ յայլոց ոչ հարկանի, զի անտանելի է գոյացութիւնն: 36 Զսովաւ պատեցան հարեալքն եւ հարկանողքն. հարեալքն բժշկեցան եւ հարկանողքն պարտեցան, զի ջրեացին թոյնքն իւրեանց յանպարտելի զաւրութենէ գոյացութեան մարմնոյն: 37 Եւ կախի աւճս այս զփայտէ բարձրացելոյ. եւ ոչ յաներեւոյթ եւ ոչ ի ծածուկ տեղւոջ, այլ ի յոյժ բարձրաւանդակի. ոչ թագուցեալ եւ ծածկեալ հանդերձիւք, այլ մերկ ամենայն մասամբք տեսլեանն կայ ի մէջ բազմութեան ժողովրդեանն: 38 Յայտնի ամենեցուն է, եւ տեսանեն ոչ ամենեքեան. որ տեսանենն՝ ընդունին գառողջութիւն, եւ որք ոչն տեսանեն՝ հրաժարեն յաշխարհէս եւ յաշխարհէն կենաց:

՝ Տէ՛. Ե Կ. Ե 22:

39 Ապա յիրաւի ուրեմն Տէրն մեր նմանեցուցանէ աւձիս այսմ ոչ զոք յարդարոց եւ ոչ զոք ի մարգարէից եւ ոչ ի հարցն կատարելոց ումեք, այլ մարդոյ ումեմն միայնոյ եւ յոյժ միայնացելոյ, ոչ դուզնաբւոյ, այլ որդւոյ մարդոյ՝ որ ունի զբնութիւն ամենեցուն եւ ի վեր քան զամենեսեան, եւ արարիչ ամենեցուն եւ բոլորեցունց նորոգիչ, եւ ունի զմարմին մաղկատելի, այլ ոչ մաղկատող. եւ մաղկատի ի մարմին, այլ ոչ յոգի: 40 Եւ մարմին սասցի ի ձեռս եւ ի յոտս, ի կողս եւ ի թիկունս, ի ծնաւտս եւ ի գլուխս: 41 Իսկ զգայութիւնք նորա տեսակ ունին զմերոյ թուականիս, այլ ոչ հարկանին ըստ մերոյ նմանութեանս:

42 Նա եւ ասացից իսկ փոքր ի շատէ սակաւ բանիւք: 43 Ի ձեռն աչաց յառաջ քան գործով մեղանչեն մարդիկ. իսկ Տէրն մեր Քրիստոս աչաւք հայեցաւ ի կիներ բազմամեղ քան զամենայն քաղաքն՝ յորում բնակեալ էր. ծանեաւ զնա, եւ ծանոյց զինքն նմա: 44 Աչք առ աչս հանդիպեցան, եւ յորդահոս արտասուս վիժեցին յապաշխարութիւն. մեղքն մեռան եւ արդարութիւնն կենդանացաւ: 45 Լսելեալք մարդիկ գերին ի լկտի երգս ձայնից. նովին լսելեալք եմուտ Տէրն մեր ի տուն քահանայապետին, եւ ետես անդ զմահ թագաւորեալ. եւ լուաւ անդ ձայնս ողբոց եւ կոծոց մեծաց, հալածեաց զմահ եւ լոցոյց զողբս կոծոցն յուսահատութեամբ: 46 Ունէր եւ զճաշակաւորութիւն, այլ միայն զհարկաւորաց եւ ոչ զաւելորդաց. լցոյց զբազմաց կարաւորութիւնս, եւ վաստակեցան թիկունք բեռնակրացն ի պատարուն ի սակառիսն: 47 Եւ ի ձեռն խոհականութեանն ընդ Հաւր ի բարձունս խաւսէր, եւ յերկրի ընդ մարդկան շնորհալից խոնարհութեամբ շրջէր:

48 Եւ իբրեւ այս այսպէս էր ճշմարիտ, ոչ ինչ վրիպեալ գտայ ասելով՝ եթէ մար-

մին մեր վերագոյն գտաւ քան զբնութիւնս մեր: 49 Եւ վասն այսորիկ ինքն զինքն նմանեցուցանէ պղնձի աւձին իբրեւ մեղաց եւ արդարութեան. մեղաց՝ զի ըստ մերում գոյացութեանս երեւեցաւ, իսկ արդարութեան՝ զի ոչ շարժեցաւ ըստ մերոց զգայութեանցս. եւ այսու ամենայնիւ արկանէ զլսողսն ի վարան տարակուսի. Որպէս Մովսէս, ասէ, բարձրացոյց զաւճն յանապատին, այսպէս պարտ է բարձրանալ Որդւոյ մարդոյ՝:

50 Առ ի՞նչ ասաց, ասեն, զայսպիսի բանս Տէրն՝ որ Աստուածն էր բնութեամբ եւ մարդ ճշմարիտ. արարիչ ըստ աստուածութեանն եւ արդար ըստ մարդկութեանն, ընդէ՞ր աւձին նմանեցուցանէ զինքն: 51 Ո՞ր իմաստուն լսողդ, զբարիոք ասացեալդ ի Տեառնէ մի՛ այլ ընդ այլոյ տգեղագոյնս լսես. աւձի նմանեցոյց զինքն, ոչ խածանողին եւ հարկանողին, այլ անթիւնին եւ բժշկողին. քանզի ի ձեռն թիւնաւոր աւձին հարաք եւ մեռաք, իսկ ի ձեռն անթոյն աւձին բժշկեցաք եւ ողջացաք: 52 Ապաքէն մարմին է գոյացութիւն աւձին, մարմին է եւ բնութիւնս մեր. մարմին մարմնոյ դիպեցաւ ի դրախտին, մարմին ընդ մարմնոյ խաւսեցաւ, մարմին ի մարմնոյ խաբեցաւ, եւ թիւնաւորն զանթոյնն եհար եւ սպան: 53 Մարմին էառ Տէր մեր Յիսուս Քրիստոս, ոչ զթիւնաւոր հին աւձին, այլ զորոյ վիրաւորեցելոցն, եւ արար մահկանացու. մարմին մարմնոյ երեւեցաւ, անթոյնն թիւնաւորին, անվնասացեալ վնասացելոյն, անհարչարելին չարչարացելոյն, անապականն ապականացելոյն. աստ ահա միանգամայն իսկ ասացից, անմահն մահկանացուին, եւ Աստուածն մարդոյն. սա գոյացեալ եւ բաղկացեալ ի մարմին թանձրացեալ եւ կախեալ զփայտէ՝ ոչ յանապատի եւ ոչ ի քաղաքի, այլ արտաքոյ քաղաքի եւ հեռի յանապատէ:

Յ՝ՎՃ. Գ. 14

54 Եւ ամենայն աշխարհք եւ քաղաքք ժողովեալ շուրջ պատեալ զնովաւ հայէին ամենեքեան, եւ տեսանեն ոչ ամենեքեան: 55 Որոց տեսանենն՝ ջնջին թոյնք աւձահարութեանն, եւ առանց դեղոց ընդունին զկատարեալ առողջութիւնն. աչք զգաստանան ցած հայելով եւ տեսանելով զաստուածութիւնն ի պարտաւոր մարմինն, եւ ի ձեռն ականջաց լսեն նորին բարբառոյ աստուածութեանն որ ասէ. Հայր, ի ձեռս քո դմեմ գեղոցի իմ: 56 Եւ ընտրող ճաշակելիք քաղցրանայ ի քիմս լսողաց բարբառոյն, եւ լցուցանէ քան զամենայն համս անոյշ կերակրոց, եւ ի ձեռն մարմնաւոր զգայութեանցս առողջանան ոգիքն, եւ լուսաւորին միտքն եւ լինին յոյժ սրատեսիլք. հային ի չարչարանս խաչին եւ տեսանեն զանչարչարելի աստուածութիւնն Որդւոյ, եւ վերաբերին հաւատք թռուցեալ եւ հասանեն առ Հայրն բոլորեցունց, եւ յիշեն զՄովսէս եւ զաւճն պղնձի, որ էր առակ արինակի արդեան ժամանակիս՝ որ կատարեցաւ ի խաչելութեանն Քրիստոսի. վասն զի ոչ ամենեքեան կարացին տեսանել: 57 Այնոցիկ՝ որոց խաւարեալ էին սիրտք իւրեանց, եւ հնութեամբ կուրութեամբն շլացեալ էին ոգիքն իւրեանց, եւ մարմնաւոր նախանձուն հարան եւ մաշեցան ի մարմինս իւրեանց, գայթաղեցին եւ դղրդեցան առ վիմին հաստատութեան, արգելաւ յաչաց նոցա տեսիլ ճառագայթից լուսոյն՝ մեծափայլ խաչին Քրիստոսի, որ ծագեաց ի մէջ ամենայն արարածոց:

58 Վասն այսորիկ երեւեցաւ ի տեղւոյ անդ իրք ահագինք եւ գործք մեծամեծք եւ սքանչելիք. քանզի վարագոյրն՝ որ արար Մովսէս հրամանաւն Աստուծոյ եւ ձգեաց ի ներքս ի խորանին, զի իցէ միջնորդ՝ աներեւոյթ տեսակ պահելով զսուրբսն սրբոց, արտաքին խորանն՝ յորում հանապազորդ ղեւտացիքն կատա-

րէին զպաշտաւսն իւրեանց, ապաքէն զնմանութիւն բերէր զերկնից երկնին, յորում կարծեմք զբնութիւն անեղին. իսկ արդ զի՞նչ եւս պիտոյ էր վարագոյրն, որ ծածկեալ պահէր զսուրբ սրբոցն՝ զխորհուրդսն աներեւոյթ զաւրութեանն: 59 Իսկ այսաւր ոչ ի խորհուրդն ձեռնարկեալ, այլ ի բուն իսկ տէր խորհրդոյն, այն որ եկն յայտնել եւ ցուցանել զխորհուրդն իբրեւ զժամանակեան աւգտութիւն, զի ծանիցեն եւ ընկալցին զանժամանակեան տէրն խորհրդոյն. եւ նոցա ոչ միայն չընկալեալ, այլ եւ մերկ մահուամբ ի փայտի բեւեռեալ. վասն որոյ եւ հերձաւ վարագոյրն, զի ի պատառել վարագուրին ունայն եւ թափուր մնաց սուրբ սրբոցն, քանզի ել գնաց Սուրբ Հոգին ի տաճարէ անտի: 60 Եւ փոխանակ զի ոչ պատառեցին զհանդերձս իւրեանց ի վերայ արեանցն զոր գործեցին, էարկ վարագոյրն զաւճիսն ի վերայ Տեառնն իւրոյ՝ որ պահէր զխորհուրդ պատուոյ նորա: 61 Ի պատառել վարագուրին պատառեցին սիրտք քահանայապետիցն, յորժամ տեսցեն զպատիւ սրբութեանն՝ որ յերկուս ցելաւ, եւ ամաչեցեն առաջի ամենայն ժողովրդեանն՝ եթէ ոչ ի մարդ ձեռնարկեցին, այլ ի տէր տաճարին: 62 Եւ որպէս պատառեցաւ վարագոյրն, ցուցանելով նոցա եթէ այսուհետեւ ոչ ինչ եմ ես պիտոյ ի ծածկոյթ արուգ սրբութեանցն, յորում ոչ եւս լիցին զաւրութիւնք երկնաւորք, քանզի հեռացան անջատան նոքա ի Տեառնէն երկնի եւ երկրի, սոյնպէս եւ երկիր շարժեցաւ ի ներքոյ բնակչաց անաւրէն ժողովրդեանն: 63 Քանզի մասն է արեգակն երկնի, միով մասամբ որ արգել զլոյսն իւր յարարածոց՝ ամենայն մասունք երկնի ընդ նմին խոովեցան եւ զգեցան սուգ: 64 Եւ քանզի մասն է վարագոյր բերոց երկրիս, ընդ միում մասին ամենայն մասունք երկրիս երբեքալ զողացին՝ ոչ զուզնաքեայ, այլ յոյժ սաստիկ եւ ահագին. եւ այնչափ ուժ-

*** Ղ.Պ. Ի. Գ. 46

գին, մինչ զի եւ ոչ միայն թանձր հողն սորա պայթեաց պատառեցաւ, այլ եւ վէմք մեծամեծք հիմնացեալք՝ հերձան եւ պատառեցան:

65 Միաբանեցին երկինք եւ երկիր ի մահու միաձնին Աստուծոյ. եւ յիրաւի արժանապէս: 66 Քանզի յորժամ գայր յերկնից թագաւորն մեծ ի փրկութիւն եւ ի կենդանութիւն, գերկինս ոչ շարժեաց եւ գերկիր ոչ դողացոյց, այլ հեզ եւ հանդարտ եւ յոյժ խաղաղութեամբ, որպէս եւ Հոգին Սուրբ երգեաց ի բերանն Դաւթի. Իջցէ իբրեւ գանձի եւ վերայ գեղման՝. քանզի ի վերայ գեղման տեղալով, ոչ լինին ձայնք բարբառոյ եւ ոչ բարբառմունք ճայթմանց եւ ոչ թնդիւնք դղրդմանց, այլ յոյժ քաղցրութեամբ անլուր եւ անտեսակ ձայնից: 67 Եւ գեղմն, ասէ, ոչ հատանելով եւ ոչ կտրելով ի կենդանւոյն զգեղմնն եւ ի բաց դնելով, զի այս եւ սովորութիւն իսկ ոչ է մարդկան. այլ մինչ ի կենդանւոյն է, եւ իջանէ անձրեւ ի վերայ նորա, զփոշին սրբէ, զաղտն լուանայ, զկիզն անճեցուցանէ, զկենդանին զուարթացուցանէ: 68 Ըստ նմին նմանութեան Սուրբ Հոգին ի նմանութիւն ցաւոյ ազդեցաւ ի սուրբ կուսին զաւրութեամբ մեծաւ, անլուր անտեսակ երեւոյթ տեսակ. որպէս կամեցաւ կատարեաց զարժանաւորութիւնն խաղաղութեամբ առանց խռովութեան եւ շարժման: 69 Եկն եհաս ի տեղիս յայս՝ ուր արժան էր գայն խաղաղութիւն առնել. եւ ոչ կամեցան, այլ զընդդէմսն կատարեցին ի վերայ նորա: 70 Տեսանե՞ս, զի նոյնք ընդդէմ առ նոսին հատուցաւ:

71 Բայց վասն զի Աստուած է, ոչ գոն նորա ընդդէմք, այլ յամենայն ի կողմանց ամենայնիւ աւզտութիւնք երեւին. որպէս եւ ի շարժել վիճացն եւ ի պատառել երկրին՝ բացան, ասէ, գերեզմանք. եւ բա-

զումք ի մեռելոց յարեան ի գերեզմանաց իւրեանց, եւ եկին մտին ի քաղաքն սուրբ եւ երեւեցան բազմաց: 72 Զանունն ոչ եւս ասէ զյարուցելոցն, եւ ոչ զտունսն իւրաքանչիւր ցուցանէ, նա եւ ոչ զթիւ յարուցելոցն յայտ առնէ. այլ միայն բազում ասելով. եւ բազումք ոչ սահմանեալ գատանին ի թուական քանակաւն, այլ ի միմեանց առնուն զառաւելութիւն. որպէս հինգքն առ երկւքն, իսկ տասունքն առ հնգիւքն, այլ եւս բազումք առ տասամբքն. եւ սահման բազմութեան ոչ յանգի. եթէ մինչեւ ի կատարումն թուականին հասցես, անթիւն քան զթուականն բազմագոյն մնայ: 73 Բայց զի յարեանն ճշմարիտ, անսուտ աւետարանագիրն գրով հաստատեաց եւ զյարութիւնն եւ զբազմութիւնն. եւ որպէս ի մէջ ասաց բազումն, նովին բանիւ անորիչ ասաց եւ գերեւումն: 74 Բազմաց, ասէ, երեւեցան. զանուն ուրուք յայտ ոչ առնէ:

75 Ամենայն ինչ նորոգ եւ սքանչելի գործք երեւեցան ի խաչելութեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, քանզի նոր իսկ աշխարհ գործելոց էր. եւ ասացից փոքր ի շատէ գնոյն իսկ զգործն՝ որ անդէն առ խաչիւն գործեցան, ոչ զիմ եւ ոչ զայլոց ի մարդկանէ, այլ զնորին Տեառն յառաջագոյն ասացեալ բերանով սուրբ մարգարէին. Եւ եղիցի արքս, ասէ, արքս մի մեծ, զի ոչ լոյս իցէ եւ ոչ խաւար, այլ ցուրտ եւ պարզ. եւ արքն այն յայտնի Տեառն, զի ոչ տիւ իցէ եւ ոչ գիշեր. եւ ընդ երեկս եղիցի լոյս՝: 76 Տեսանե՞ս զյայտնութիւն Հոգւոյն Սրբոյ. ի սկզբանէ արարածոց յայսպիսի արք ոչ դիպեցաւ, բայց միայն ի խաչելութեան Տեառն. զի ոչ լոյս իցէ արքն, վասն զի թաքեալ արեգակնն. եւ ոչ խաւար իցէ, ասէ, վասն զի չեւ էր ժամ գիշերոյն հասեալ. քանզի ի հասարակ աւուրն մոռտ արեգակն ի մայրն, խաւար ասաց

*** Սաղմ. ՀԷ (ՀԲ) 6

‡ Տե՛ս. Զա՛յ. ԺԳ 6

եւ ոչ գիշեր. զի արգելան ճառագայթք ջերմութեանն, ցուրտ ասաց եւ ոչ ջեր, եւ ցուրտ՝ ոչ դուզնաքեայ, այլ պարզ, հուրաստաց, նմանեալ է անպտղաբեր ձմերայնույ. եւ ձմեռն նշանակէ ատելութիւն չարին, որ եւ գործեցաւ իսկ առ ժողովուրդն: 77 Եւ դարձեալ ասէ. Ընդ երեկս եղիցի լոյս: 78 Երեկուն ժամդ դրացի եւ մերձաւոր է խաւարային գիշերուոյ, որպէս եւ աշխարհս մերձեալ էր ի վախճան կատարածի, եւ դրացի էր անվախճան խաւարին. եւ ընդ երեկս մեծի աւուրն անխաւար լոյսն ի խաչէն ծագեաց յոգիս այնոցիկ՝ որոց կարացին տեսանել զաստուածութիւն որդւոյն Աստուծոյ, եւ ընդ նմին լուսաւորեցան, զի խաւար այլ ի վերայ նոցա մի՛ տիրեացէ:

79 Եւ աւրն այն, ասէ, յայտնի Տեառն: 80 Եւ յայտնութիւնն այն ոչ միով մասամբ կամ երկուք, այլ ամենայն լրութեամբ բազմութեանն: 81 Եւ զի՞նչ մեծ յայտնութիւն աւուրն քան զայն, զի ամենայն ինչ նոր եղեւ եւ ահագին, եւ խաւար նոր եւ գիշեր նոր եւ աւր նոր. նոր է եւ պատառումն վարագուրին, նոր է եւ շարժումն երկրին, նոր է եւ պատառումն վիճացն, նոր է եւ բացումն գերեզմանացն, նոր է եւ բազմութիւն յարութեան մեռելոցն, նոր է եւ յայտնութիւնն նոցա որ երեւեցանն բազմաց, նոր է եւ սուրբ քաղաքն: 82 Եւ յիրաւի նոր ասացի զամենայն. քանզի նոր է խաչն, նոր էր եւ խաչեցեալն եւ նորոգիչ էր ամենայն նորոգելոց. վասն այսորիկ ոչ գրեաց զանուանս յարուցելոցն, եւ ոչ զայնոցիկ՝ որոց երեւեցանն. քանզի նմանութիւն եւ աւրինակ էին աւուրն յարութեան մեծի, որք ոչ եւս մի մի յառնելոց են, եւ ոչ մասն ի բազմաց, այլ ամենեքեանս միանգամայնք առանց թուոյ եւ անուանակոչութեան: 83 Բայց բազում անգամ զնորն ասելով, ոչ ինչ վրիպեալ գտանիմք ի նորագործ իրաց, որ ամենայն ինչ նորպէս եղեւ:

84 Իբրեւ տեսին, ասէ, Հրեայքն եթէ խոնարհեցոյց զգլուխ իւր Քրիստոս եւ արձակեաց զհոգին, աղաչեցին զՊիղատոս վասն շաբաթուն, զի մի՛ ազգին ի խաչին վերայ. այլ զի զբարձսն բեկցեն եւ իջուցեն ի խաչէ անտի: 85 Եւ եկեալ զինուորքն զաւագակացն բեկին. իսկ իբրեւ եկին առ Յիսուս, տեսին զի նա կատարեալ էր, եւ ոչ ինչ մատեան ի նա. բայց մի ոմն ի զինուորացն տիգաւ եհար զկողս նորա, եւ ել անտի վաղվաղակի արիւն եւ ջուր:

86 Ահա դարձեալ նոր եւ սքանչելի տեսակ: 87 Ո՞վ երբեք ետես ի մարդկանէ, որ յետ մահուան իւրոյ խոցեսցի ի կողս իւր ի դի անձին իւրոյ, եւ ելանիցէ անտի արիւն եւ ջուր: 88 Յառաջ քան զայս չիք եղեալ, եւ զկնի այսորիկ ոչ լինիցի, բայց միայն ի մարմինն Յիսուսի Քրիստոսի: 89 Եւ այս ոչ արտաքոյ մարգարէութեանն, այլ նորուն խոցեցելոյն հոգևով. Դարձցին, ասէ, եւ տեսցն գոր խոցեցինն՝. եւ հարցանեն ոչ խոցողքն, եւ ոչ տեսանեն զայն զոր խոցեցինն. այլք խոցեն եւ այլք տեսանեն եւ ընդունին ոչ զխոցեալ, այլ զողջացեալ եւ զողջացուցիչ վիրաց, եւ զվիրաց ոչ միայն զերեւելեաց, այլ եւ զաներեւոյթ հարուածոց, եւ ի դեղս արիւն արեան, եւ ջուր ջրոյ: 90 Եւ եթէ կամիս, ընկալ ճշմարտապէս. քանզի ջուր է գոյացութիւն ամենայն կենդանեաց, եւ արիւն է կենդանութիւն ամենայն մարմնաւորաց. ընդ արեանն խառնեալ է մասն հոսման ջերմութեան, եւ ընդ ջրոյ զանգեալ է յոյժ հողոյս զաւրութիւն, եւ ընդ երկոսին տեսակս միաբանին ամենայն տարերքս եւ ցուցանեն զգոյացութիւն մարմնոյն Աստուածն բանի, զոր էառ ճշմարտութեամբ զբնութիւն մերոյ գոյացութեանս զոր ինքն ստեղծ յանշուշտ արարչութեանն:

՝ Տէ՛.՝.Յ.Վ.Ժ.Թ. 37:

91 Արդ ելեալ անտի ջուր ի լուացումն ակազանին սրբոյ, եւ արիւն բաժակ նորոյ ուխտին. զի ջրովն սրբեսցուք զանձինս ի մեղաց, եւ արեամբն չարչարակից լիցուք մահու խաչի նորա: 92 Զգրեալսն կատարեցին ակամայ վասն անձանց իւրեանց եւ յաւգուտ հեթանոսաց. մարգարէք՝ եւ ոչ անձանց կամաւք ճշմարտութեանն, մշակք՝ եւ զայլոյ երկիր գործեն, վաճառականք՝ եւ այլու մողովեն մեծութիւն, առաջնորդք՝ եւ այլու բանան դուռն կենաց, ընթերցողք՝ եւ այլու մեկնեն զբան կտակարանաց եւ զառակս ճշմարտութեանն:

93 Աղաչեցին, ասէ, զՊիղատոս, զի մի՛ ազցին ի վերայ խաչին: 94 Բարևոք հրաժարէք յայնմանէ, որ բարձաւ ի ձէնջ եւ տուաւ հեթանոսաց: 95 Եւ քանզի ոչ կարէ մահ լինել դրացի կենաց, հրաժարէք եւ դուք յերեկուն ժամուդ ի կենաց փայտէդ, զի ծածկեսջիք ընդ ստուերաւ գիշերոյդ զոր սիրեցէքդ. ընդ նմին լիցի ձեզ բնակութիւն: 96 Զանարժան խնդրուածսդ զոր աղաչեցէքդ զդատաւորդ, զի զբարձան բեկցեն եւ իջուցեն ի խաչէ անտի, երկհազարեան եւ եւս աւելի ամաւք զոսկր գառինն ոչ կարացեր բեկանել ըստ հրամանին Մովսիսի, եւ զգառնդ Աստուծոյ միանգամ եւ խաչեցեր եւ բեկանել կամիս. զոր ոչ առնու յանձն քեզ Սուրբ Հոգին, զայդ կամաւք քովք կատարել կամիս, զոր ոչ կարես: 97 Բայց առ ի՞նչ արդեաւք զայս առնիցէ Տէր. զանձն ի մահ տայր չարչարակից լինել աշխարհի, զոսկր բեկանել ոչ ունի յանձին. զոր ասացից փոքր ի շատէ:

98 Ըստ բնութեան եւ ըստ բարոյականին գոյացութիւն մարմնոցս մերոց յերկուց է բաղկացեալ, կակողութիւն մտոյ, եւ անդամք գործական փորձուոյ նիւթ էդ մասին, եւ ունի զպատճառ կենաց ի ձեռն սննդական մարմնոց: 99 Իսկ ջիւք,

նեարդք, եւ շունչ եւ ոսկերք, զաւրութիւն արու գոյացութեան. այդ է որ ըստ բնականին: 100 Իսկ բարոյականն, նիւթ իգական մասինն է, բովանդակ մարմնաւորութեանն, եւ հարստութեան շլաց եւ ոսկերաց արուացեալ իմն պնդութեամբ. նմանի անախտ իմն պնդութեամբն անբեկանելոյ երկնային մտաց: 101 Վասն որոյ եւ նիւթականն՝ անասուն մասինն գառանցն յեգիպտոս տուեալ լինին ի կերակուր ժողովրդեանն. իսկ ոսկերքն հանդերձ այլովք մասամբքն ի խոհականութեանն նմանութիւն պահեալ լինի առանց բեկանելոյ եւ փշրելոյ: 102 Վասն որոյ եւ գառինք իսկ զենանին պատարագ Աստուծոյ, եւ ի ճենճեր ծխոյ եւ ոչ ի կարաւտութիւն լրման, այլ միայն յիմաստութիւն եւ ի խորհուրդ կատարեալ ի հանդերձելոյ լինելութեանն, որպէս երեւի իսկ ի պատարագել գառինն Աստուծոյ: 103 Զբոլոր զինքն ետ ի ձեռն մարդկան, եւ զբոլոր մարդն աւանդեաց Աստուածն բանի. զբոլոր զկանխագիր բանսն մարգարէիցն յանձին իւրում կատարեաց, եւ բոլոր զքեզ յԱստուած կատարեսցէ:

104 Բեկին, ասէ, զբարձս ակազակացն. եւ առ Յիսուս եկին, ասէ, եւ տեսին զի նա կատարեալ էր: 105 Անսուտ բան եւ ճշմարիտ տեսակ այս է. զի որպէս կատարեալ էր ըստ աստուածութեանն, նոյնպէս կատարեալ էր ըստ չարչարանացն, կամաւք եւ ոչ ակամայ. վասն այսորիկ, Ոսկր Աորա մի՛ բեկանիցի: 106 Իսկ խոցումն ի կողսն զոր ընկալաւ՝ աղբիւր բղխման աշխարհի. նորոգումն ջրոյն կենդանութեան, որ առաւել եւս տնկագործեսցէ, ոչ զճառս պարտիզին յեղեմ, այլ զճառս կենդանիս յեկեղեցւոջ Աստուծոյ:

*** ՅՎԸ. ԺԹ 36

Գ.

Դարձեալ յետ այսր ամենայնի կատարման եւ թաղումնն Յիսուսի ընդունի անշուշտ վկայութիւն յագգէն Հրէից. զի միաբանեցին ամենեքեան վկայք մահու որդւոյն Աստուծոյ, այլ ոչ ամենեքեան միաբան կցորդք կենաց նորա: 2 Եկն, ասէ, Յովսէփ այր արդար, ազատ ըստ բնութեան, եւ մեծատուն ըստ աշխարհի. ի մարդկանէ ծածկութեամբ, եւ յԱստուծոյ յայտնապէս: 3 Սա ոչ միայն ի չարութեան գործս նոցա ոչ գտանի, այլ եւ ոչ ի խորհուրդս ամպարչտութեան նոցա: 4 Եւ արդ տես գառնն քաջութիւն. ի ժամուն յորում ամենայն ոք միաբանեալ էր եւ ի բաց կացեալք յԱստուծոյ, սա միայն վառեցաւ ի ծածոկ զինուք առաքինութեան, եւ ա՛ռ իւր զբազմագունդ զաւրացն հաւատոց. քաջալերեցաւ յանձն իւր, եւ յառաջ քան զմտանելն ի պատերազմ ետես զյաղթութիւնն՝ եթէ լինիմ պատերազմակից Աստուծոյ եւ յաղթեմ մարդկան: 5 Բայց գիտեմ, զի ոմանք լսելով զայս՝ ոչ ինչ զարմանան ի վերայ բանիցս ասացելոց. եւ այս է սովորութիւն անփորձ մտաց: 6 Մի՛ դու, եղբայր, զայս փոքր ի շատէ ինչ համարիցիս. քանզի ահագին էր տեղին եւ երկիւղազին ժամն, եւ կասկած մահու ի վերայ այնորիկ՝ որ իշխէր ասել եթէ յարդարութեան մեռաւ այրն. ոչ միայն յաղալթիցն հանէին զնա քահանայքն, այլ եւ քան զաւազակս չարամահ սպանանէին: 7 Նա եւ աւետարանագիրս ոչ դուզնաքեայ պատմէ զառնս լաւութիւն, այլ ուժգին եւ մեծապէս:

8 Եկն, ասէ, Յովսէփ արեմաթացի. համարակեցաւ եմուտ առ դատաւորն, եւ ինդրեաց զմարմինն Յիսուսի՞: 9 Իբրեւ լսիցես զհամարակեցաւն, մի՛ դուզնաքեայ համարիցիս, այլ ոգւով եւ մարմնով

ճգնութիւն. ոգւով, զի մեծապէս հաւատք պիտոյ էին ի ժամուն. քանզի ոչ իբրեւ զմարմին մարդոյ լոկոյ բառնայր, այլ իբրեւ զմարմին որդւոյ Աստուծոյ: 10 Դարձեալ ըստ մարմնաւոր կարգի ոչ միայն ի ժողովրդենէն էր նմա երկիւղ մահու, այլ եւս առաւել ի դատաւորէն եւ ի սպասաւորաց նորա. քանզի ածէին զմտաւ՝ եթէ զի՛նչ են ինդիրք առնս այսորիկ. զայր մի՛ որ յայնչափ բազմութենէ վկայեցաւ եթէ մահապարտ է, որ եւ ըստ աւերինի յանցաւորաց խաչեցաւ եւ մեռաւ, եւ սա եկեալ իբրեւ զանյանց եւ զանմեղ ի զուր մեռեալ՝ զմեծ եւ զճշմարիտ վկայ Աստուծոյ խնդրէ. գուցէ վաղիւ եւ ի մեր վերայ հասանիցէ պատիժ պատուհասի:

11 Զայս ամենայն զմտաւ ինչ ոչ ած այրս այս. այլ որպէս յառաջ հաստատեալ էր ի ճշմարտութիւնն Քրիստոսի, եւս առաւել ի մահուն հաստատուն եկաց: 12 Եւ բարձեալ զմարմինն Յիսուսի, պատէ ոչ ճեպով եւ վարկպարագի, այլ յոյժ խորհրդով եւ զաւրութեամբ ի կտաւս սուրբս եւ պատուականս, եւ զմուռս բազումս հանդերձ անուշահոտ խնկովք. եւ այս ոչ արտաքս քան զնախախնամութիւն Հոգւոյն Սրբոյ լինէր: 13 Նա եւ զոսկին զոր յառաջ ընկալաւ ի մոգուցն, փոխանակեաց ի ձեռն պատկերակերպ դահեկանին, ասելով ցորդիս ժողովրդեան. Յորում կայսեր կերպարանդ գտանի, այդ նմա անկ է. իսկ յորում իմ կերպարան երեւի, այն իմ է: 14 Քանզի մարդիկ՝ որ են յիշխանութեան, անդրիս կանգնեն յանուն իւրեանց, եւ զդէմսն նկարեն ի դահեկանի, զի ի ձեռն պատկերագիր նկարուն ոսկին մեծարեալ եւ յարգեալ լինի յաշխարհի: 15 Ես զիմ պատկերս կենդանի ի կենդանի դէմս մարդոյ նկարեցի. եւ ոչ ոք բերէ յաշխարհի զնմանութիւն Աստուծոյ, բայց միայն մարդ. ոչ ումեք երեւի Աստուած, բայց միայն մարդոյ. ոչ զոք սիրէ Աստուած յերկրէ, բայց միայն զմարդ. Աստուած միայն մարդա-

« Տե՛՛ք Մատթ. ԻԷ 57. Մարկ. ԺԵ 43. Գու՛՛. ԻԳ 50. Յովհ. ԺԹ 38:

սէր, եւ մարդ միայն աստուածասէր. Աստուած մարդոյ, եւ մարդ Աստուծոյ. վասն մարդոյ Աստուած մարդացեալ, եւ վասն Աստուծոյ մարդ աստուածացեալ: 16 Վասն այսորիկ երթալք տուք զկայսերն կայսեր, եւ զԱստուծոյն Աստուծոյ:

17 Զայս պատարագս յառաջագոյն ընկալեալ Քրիստոսի յերկրպագութենէ մոգուցն, զոսկին՝ որպէս ասացի՝ ի պատիւ թագաւորութեանն. իսկ զմուռս եւ զխոնկս ի մահ վիրաւորելոյն եւ թաղելոյն: 18 Որ պատեցաւ ի կտաւս ի ձեռաց մարդկան, զի դու պատիցիս ի զգեստ պատմուճանի փառաց որդւոյն Աստուծոյ: 19 Զմուսեցաւ զի մարմնոյ նորա, որ է տեւողութիւն անխախտելի պահուն յերկար ժամանակաց, զի զմուսեցէ զքեզ ի տեւողութիւն ոչ ի ժամանակեան, այլ յանմահութիւն նորոգման Սուրբ Հոգւոյն: 20 Խնկեցաւ իբրեւ մարմին մեռեալ, այն որ խնկելոցն է գամենեսեան ի հոտ անուշուրեան, որ բուրէ ի լուսոյն կենաց. եւ եղաւ ի գերեզմանի նորում, յորում ոչ էր ինչ բնաւ ամենեւին եղեալ: 21 Արդ փոխանակ գերեզմանիդ տարցի զքեզ ի քաղաքն երկնաւոր՝ որ առանց ձեռագործի կազմեալ իցէ:

22 Եւ եղ, ասէ, վէմ մի մեծ կափարիչ ի դուրս գերեզմանիմ եւ գնաց՝: 23 Բարիոք առնես, ո՛վ տէր Յովսէփ, զի լինիս վկայ ճշմարիտ թաղման Տեառնդ. քանզի գիտես զժխտողութիւն ազգիդ քո, թէ գուցէ յուրաստ լինիցին վաղիւ՝ եթէ բնաւ իսկ ոչ եղաք զնա յայդմ գերեզմանի. քանզի բազումք են որ ստեն, բազումք էք եւ դուք որ ոչ գիտէք ստել: 24 Նիկողիմոս գործակից քո, դա է որ ընդ Տեառնն իսկ ճարտարագոյնս մտանէր ի քննութիւն բանից: 25 Քանզի վկայեն քեզ փորողք գերեզմանիդ, վկայեն եւ վաճառականք կտաւոցն,

վկայեն եւ հարիւր լիտր զմուսոյն, վկայեն եւ զհազարքն՝ որ խնկեցին զմարմինն տէրունեան. վկայեն եւ ձեռք աւգնականացն՝ որք զմեծ վէմն յեցուցին ի դուռն գերեզմանին, եթէ արժան իցէ նմա գերեզման ասել եւ ոչ յարութիւն կենաց:

26 Ո՛վ տէր իմ Յովսէփ, յիշեցի եւ զմեծ վկայն քո զդատաւորն, առ որ չոգարն եւ խնդրեցեր իշխանութիւն բառնալ զմարմինդ: 27 Իսկ արդ այդ զի՞ առնէ. եթէ ամենեքեան ընդ նոսա միաբանեսցեն ի ստութիւն, յորժամ եւ դու գյարուցեալն ի մէջ ունիցիս, զի՞նչ ունիցին խաւսել: 28 Եթէ պնդեալ յամառեսցեն ընդդէմ քո, որպէս եւ սովոր իսկ են, ասացես ցնոսա՝ թէ որպէս կապանաւք ետուք ցՊիղատոս, եւ Պիղատոս ետ ցզինուորսն, եւ զինուորքն ետուն ցխաչն, եւ խաչն ետ ցգերեզմանն, արդ ձեզ յընտիր լիցի, թէպէտ տուք ցիս ի գերեզմանէն զմեռեալն, թէպէտ առէք ընկալալք գյարուցեալն. ապա եթէ մի յայսցանէ ոչ առնէք, ձեր այլ ինչ գործ ոչ է, այլ հրաժարել եւ ի բաց գնալ ի յարուցելոյս, զոր եւ արարէք իսկ: 29 Արդ դու տէր իմ Յովսէփ, խնդա եւ ուրախ լերքանզի մեծ էր Յովսէփն առաջին՝ արդարեւ մեծամեծ յայտնութեանց արժանի: 30 Ի Յովսէփայ ի Յովսէփ ձգտեցաւ մեծութիւնն. նա վկայ անարատ ծննդեանն սուրբ կուսին, եւ սա վկայ թաղման սորին. եւ յերկուց ճշմարիտ վկայիցս երեւեսցի այլ բազմութիւն վկայից լուսաւոր յարութեան նորա:

31 Դարձեալ եկին, ասէ քահանայքն առ Պիղատոս. Տէր, ասեն, յիշեցաք՝ զի սսէր մոլարն այն, եթէ յետ երից աւուրց յառնեմ ի մեռելոց. արդ հրամայեա զի պահեսցեն զգերեզմանն նորա, գուցէ դաւ ինչ յաշակերտաց նորա լինիցի, եւ բազումք գհետ համբաւոյն մոլորեսցին: 32 Տուեալ ձեզ, ասէ, դաս մի զինուորաց. երթալք՝ որպէս եւ գիտէք՝ զգուշացա-

՝ Տէ՛.՝ Մ.՝ Գ.՝ Ի.՝ 60:

րուք: 33 Եւ զայս հրաման առեալ ի դատաւորէն՝ կնքեցին զգերեզմանն մատանեաւք երկոցունց կողմանցն: 34 Ո՛վ նախահոգակ քահանայք, բարիոք առնէք՝ զի զգուշանայք. որ զանձինսդ ոչ կարէք պահել, այլում պահանորդք կամիք լինել. եւ դուք զարտուղի էք ի ճանապարհէն, եւ նմա մուար եւ մուրեցուցիչ կարդայք. ուստի՞ զիտէք եթէ մուար է նա, եւ ոչ արժանի իսկ է ամենեցուն ցուցանել զճշմարիտ ճանապարհն. թերեւս այպանիցէք դուք զմոզսն, որք մուրեցուցին զՀերովդէս, քանզի եւ աւգուտ իսկ չէր զնա կացուցանել ի վերայ ճշմարիտ ճանապարհին:

35 Յիշեցաք մեք, ասեն, զմուլարն զայն: 36 Թուի ինձ՝ եթէ այլ ընդ այլոյ տայք զպատասխանիդ. մուար ոչ է արժան ասել ձեզ նմա, այլ մուրեցուցիչ զթիւրսդ. որպէս ասէ. Մուրեցան և՛ Գալատի եւ ոչ ի Գալատի: 37 Եւ առ ի՞նչ արդեաւք ասիցի ի Հոգւոյն Սրբոյ, հոգեկիր պատմութիւնն իսկ յայտ առնէ. Չառաջնորդեաց և՛ Գալատի, և՛ Սաղաւաքի, և՛ Սաղաւաքի. այլ շրջան առ ին յալատի Գալատի և՛ Գալատի և՛ Գալատի և՛ Գալատի և՛ Գալատի: 38 Որպէս կարծեմ, մուրեցայք դուք ոչ յանապատի, այլ ի քաղաքի. ոչ յերկրէ խոստմանց, այլ ի Տեառնէն երկնի եւ երկրի. եւ արդ եկեալ առ դատաւորն զնա մուար կարդայք: 39 Որ մուրեցոյց խաւսի՞ ճշմարիտ. եթէ մուար է, թոյլ տուք, ոչ ինչ պարտ է կասկածել ի բանիցն նորա: 40 Ապա եթէ զոր յառաջն առնէր՝ ճշմարիտ է, եւ ոչ կարէք յուրաստ լինել. նա եւ եթէ լինիք եւս, նոքա բազմագոյնք են քան զձեզ՝ որ տան վկայութիւն նշանագործութեանն. ոչ

միայն կենդանիք ողջացեալք ի ցաւոց, այլ եւ հրաժարեալք մահուամբ եւ այսրէն դարձեալք յարութեամբ. եւ ոչ միայն որդիք ազգիդ ձերոյ, այլ եւ բազումք ի հեթանոսաց եւ եւս բազմագոյնք ի դիւաց: 41 Արդ եթէ այսք ամենեքին ոչ մուար զնա ասեն, այլ դարձուցիչ մուրեցուց, ապա եթէ ձեզ միայն թուի մուար, երթայք զգոյշ լերուք, զուցէ զեղծիցիք, եւ ապա այլ ընդ այլոյ յետոյ եւս պատճառս խնդրէք: 42 Ահաւաղիկ դատաւորդ առ ձեզ բարերար երեւեցաւ. զամենայն զինչ ասացէք, զկամս չարութեան ձերոյ կատարեաց. եւ այժմ ոչ մի այր կամ երկու տայ ձեզ աւգնական, այլ բովանդակ գունդ մի զինուորաց. եւ զգունդն ոչ եթէ հասարակագոյցս, այլ ի ձեռն առաջնորդի եւ պետի՝ որ մեծ եւ հաւատարիմ էր դատաւորին:

43 Եւ երթեալ ամենայն պատրաստութեամբ կնքեցին զգուրս գերեզմանին դասու մատանեաւք իւրեանց. եւ ինքեանք անդէն զտեղի առեալ մեծաւ զգուշութեամբ անքուն պահելով, զի մի՛ նենդ ինչ ուստեք լինիցի: 44 Յէ՛ իմաստունք, մանաւանդ եթէ յոյժ մորոսք. եթէ յառնել կամի ի մեռելոց, ապա զամենայն ինչ կարող է առնել. զգուրս գերեզմանիդ ոչ բանայ, եւ զկնիքդ ոչ բեկանէ, եւ ձեզ զանձն ոչ ցուցանէ. դուք զիա՞րդ կարիցէք զիտել՝ թէ յարիցէ զոր ի ներքս ի գերեզմանիդ աւանդեցէք. կարի թանձրասիրտք էք, եւ առաւել թմբրեալք խելաւք: 45 Համարեաց եթէ զինուորքդ դատաւորիդ անտեղեակ իցեն իբրեւ զարտաքինս եւ ոչ զներքինս. դուք որ այդչափ տեսէք զմեծամեծ սքանչելիս եւ ի ժամ մահու դորա, տակաւին ապշեալ էք եւ ոչ իմանայք՝ եթէ որ գերկիր շարժեաց եւ գերկինս դղրդեաց, զիա՞րդ կարէք պահել դուք զնա, բայց եթէ պահիք դուք նովաւ: 46 Քանզի զինուորացն մեղադիր ոչ կարեմ լինել, զի սպասաւորք են դատաւորին, եւ հարկաւո-

ՊՍՏ. ՍՆՆ. ՄՊՊ. ՆՉ. 4:
ՏՆՆ. ՆԵ. ԺԳ. 17:

րեալք են կատարել զհրամանս նորա. այլ քահանայքն եւ մեկնիչքն յոյժ լալոյ եւ արտասուաց արժանի են: 47 Վէժ ի վէժ յեցուցեալ, եւ զվէժն ի ներքս արգելեն, մանաւանդ եթէ զարարիչն երկնի եւ երկրի. եւ մատանիս ի վերայ եղեալ, եւ պահապանացն զգուշացեալ:

48 Տեսանե՞ս գլխմարութիւնն. դու քոյոց մտացդ չկարես պահապան լինել. մինչ դեռ կաս ի սուրբ տեղիս, գտանիս յանարժան տեղոջ. գոս արդ ի քաղաքի, եւ տեսանես Խտաղիա. գործես ի ցամաքի, եւ ի ծովու նստիս ի նաւի. կաս ի յերկրի, եւ ի վեր յերկնից երկնի շրջիս ընդ գունդս հրեշտակաց: 49 Բայց վասն ձեր գիտեմ, զի ոչ երբեք կարացէք համբառնալ յերկրէս եւ տեսանել զգունդս երկնից, այլ հանապազ գետնաքարչ աստէն սողելով՝ նմանեցայք անդրավարին հաւրն ձերոյ. զի ոչ միայն հողակերք էք, այլ եւ հողահեղձք յոգիս եւ ի մարմինս. վասն որոյ ոչ գիտէք զինչ գործէքդ: 50 Զի որպէս յամենայնի յամաւթ եղեայք առաջի դատաւորիդ եւ ամենայն բազմութեան ժողովրդեանդ, եւս առաւել յամաւթ լինելոց էք առաջի զինուորացդ՝ որ պահեն զգերեզմանդ: 51 Յորժամ դուքս զճշմարիտն ձեզ պատմեսցեն, անկանիք ի վարանս տարակուսի. սուտ ոչ կարէք առնել, քանզի հաւատարիմք են. յայտնել եւ արդարացուցանել դուք ոչ կամիք, քանզի կոյր աչաւք էք ի դատաւորէդ եւ ի ժողովրդոցդ, միանգամայն եւ յԱստուծոյ: 52 Եւ արդ զի՞նչ ինչ գործիցէք, եղուկ դուք եւ վայ ձեզ. չիք մխիթարութիւն եւ ոչ տեղի ապաստանի, բայց եթէ առ նոյն ինքն զոր սպանէքն եւ թաղեցէք. եւ քանզի մարդասէր է, ընդունի եւ ոչ յիշէ գառաջին յանցանսն: 53 Բայց ես գիտեմ զի դուք ոչ առնէք զայդ, քանզի չէք արժանի. այլ անդրէն ի տաճարն ընթանայք, քանզի դեռ եւս կան կարծիք սուտ յուսոյն: 54 Գիտեմ զի ի խորհուրդ մտանէք, եւ միտք ձեր ընթա-

նան յարծաթն նզովեալ. զարծաթդ կորուսանելոց էք, ընդ նմին եւ զանձինս եւ զամենեսեան՝ որք լսելոց են ձերում մոլորութեանդ:

55 Այլ Տէր մեր Յիսուս Քրիստոս զառ ի ներքոյ արեգականս զամենայն զփրկագործն կատարեաց, եւ ի ստորին կողմն երկրիս ամենայն զաւրութեամբ իւրով խաղաց գնաց իջանել տեսանել զգաւրութիւն մահու, եւ մխիթար տալ աղամեան զաւակին՝ որք յուսահատութեամբ նստէին ի խաւարի եւ ի ստուերս մահու: 56 Եւ իբրեւ եհաս յամուր պարիսպն դժոխոց եւ յերկաթի պղնձանիզ դուռնն, ձայն ահագին մեծ կարապետին զպարիսպն առ հասարակ դողացուցեալ կործանեաց. եւ զաւրութիւն կենդանի հրոյն զկարծրանիզ դրունսն իբրեւ զմոմ հալեալ սպառեաց. եւ ճառագայթք ինքնածագ լուսոյն առ հասարակ սփռեալ տարածեցան ի գոգս եւ ի խորշս անմատոյցս ամուր վայրացն նորա. մաշեցաւ եւ սպառեցաւ թանձրացեալ խաւարն, եւ երեւեցաւ մերկ խայտառակեալ զազրատեսիլ զարդ սանդարամետականին:

57 Յայնժամ Մահու զճիշ առեալ, զաղաղակ բարձեալ եւ լայր դառնապէս. գոչէր բարձրաձայն եւ ասէր. Ո՞վ է սա՞ որ եկն եմուտ յանմատոյց ամուրս իմ, մեկնեաց զիս, ի բնական խաւարէն զգեստէ իմմէ, եւ այրիմ ի տապ տապակիս յահագին ի հրեղէն փառաց նորա. ոչ մնաց ինձ խորշ խաւարի եւ ոչ մութ գիշերոյ, ոչ դաշտ փախստեան եւ ոչ լեռոն թաքստեան եւ ոչ ծործոր ապաւինի. չիք հեռաստան՝ թէ փախեայց, եւ ոչ խորխորատ մաւտաւորութեան՝ թէ կացցէ: 58 Անդունդք աղաղակեն թէ աստ է, եւ լերինք իբրեւ զմոմ հալին առաջի փառաց սորա. գերեաց զամենայն տարտարոսս, դողացոյց զգաւրս խաւարինս՝ զձախոյ մանկունսն իմ: 59 Վայ է զինեւ, եղուկ եմ ես. կողոպտեաց զգանձս իմ, յաւարի էառ զա-

մենայն զմեծութիւնս իմ, ոչ եթող ինձ յոյս մխիթարութեան, եւ ոչ զմի ոք յիմոց սեփականացս: 60 Ո՞վ արդեաւք իցէ սա, զի ես ոչ գիտեմ. Ենովք եւ Եղիա այսրէն ոչ եկին. Աբրահամ եւ Սահակ եւ Յակովբ ընդ իս զայս ոչ գործեցին. Նոյ եւ Աբէլ եւ ամենայն արդարքն ընդ ինեւ անկեալ դնին. Մովսէս եւ մարգարէքն ինձ Հնազանդեալ են. Մելքիսեղեկ եւ ամենայն թագաւորք արդարք յինէն ոչ ապստամբեցին: 61 Եւ զի՞ մի մի թուիցեմ յանուանէ զազգս արանց կամ կանանց. ահա ի սկզբանէ մինչեւ ցայսաւր արդարք եւ մեղաւորք, հզաւորք եւ տկարք, ծերք եւ տղայք, նա եւ որք չտեսին զլոյս աշխարհի, առ իս ժողովեալ են. ամենեքեան ընդ իմով իշխանութեամբ կան Հնազանդեալ: 62 Իսկ ո՞վ իցէ սա, տայր ոք գիտացեալ: 63 Եթէ գտեղին կարէի գիտել, թերեւս եւ Հնարս ինչ իմանայի. եթէ յերկրէ է, ապա եւ զգաւառն գիտէի եւ զազգատոհմն. զբնութիւնն զոր տեսանեմ, ըստ ամենայն ազգատոհմի մարդկան բերէ զնմանութիւն. մանաւանդ զթիւ մասանց մարմնոյն ոչ աւելի եւ ոչ պակաս գտանեմ, այլ ըստ ամենայնցն եւ զտրայս: 64 Բայց յերեսաց սորա կարի իմն զարհուրեալ եմ. զի եթէ յիջանելն իւրում առ իս զբազումս կորզեաց եհան յինէն, վայ ինձ եթէ չարակամաց սա անդրէն ելանիցէ, երկնչիմ եթէ բնաւ իսկ զամենայնս ընդ իւր տանի, եւ ես յիմոցս միայն մնացից: 65 Նա եւ յանձնէ մեծ երկիւղ է ինձ. զի ոչ միայն զիմն հանէ յինէն, այլ եւ գտեղի խաւարինս ինձ ոչ թողու. եւ որպէս իմանամ, յայսմ խաւարէ զիս յայլ խաւար առաքելոց է. եւ երանի եթէ այսպէս էր խաւարն՝ ուր տանելոցն էր զիս: 66 Բայց եթէ այսպէս էր ուր տանէրն, նա եւ հանէր իսկ ոչ զիս աստի: 67 Այլ արդ եւ ահա յայտնի եղեւ, որպէս ոչ գիտացի զգաւառ սորա, սոյնպէս եւ ոչ գիտեմ զխաւարն յոր զիսն տանելոց է: 68 Բայց չար այս իսկ է ինձ քան զամե-

նայն, որպէս երեւի՝ զի ոչ միայն վասն արդարոց եկեալ է այսր, այլ եւ վասն ամենայն մեղաւորաց: 69 Եւ եթէ ածէ եւ Համար առնէ ընդ իս, եւ պահանջէ յինէն գոսկերս վախճանելոցն որք առ իս եկին, թերեւս կարեմ տալ: 70 Իսկ արդ եթէ զԵնովք եւ զԵղիա յինէն խնդրեսցէ, եւ եթէ զայս եւս արասցէ ընդ իս, յայնժամ է ինձ վտանգ տագնապի եւ վարան տարակուսի, զի ոչ ուրեք գտանեմ երթալ:

71 Արդ իբրեւ այսու ամենայնիւ մահ յանձն իւր տագնապէր, եւ ոչ յուժեքէ գտանէր բան մխիթարութեան, դժոխք ետուն պատասխանի մահու եւ ասեմ. Զբնութիւն դորա գիտեմք մեք, եւ զազգատոհմն դորա ճանաչեմք. դա է, վասն որոյ ասաց յառաջագոյն Հոգին Սուրբ. Համբարձեմ իշխանի գորունս ձեր ի վեր, եւ համբարձցիմ դրումի յալիտեմից, եւ մտցէ թագաւոր փառաց: 72 Եթէ կրկնեսցես եւ երեքկնեսցես եւ բազում անգամ հարցցես, զնոյն լուիցես՝ Տէր զաւրութեանց, սա ինքն է թագաւոր փառաց: 73 Եւ իբրեւ լուաւ մահ զտէր անուեն եւ զհզաւր եւ զպատերազմող եւ ի կոիւ եկեալ ընդ իշխանութեամբ մահու, լուծաւ լքաւ եւ բեկաւ ամենայն զաւրութիւն նորա, եւ հատաւ յոյս թագաւորութեան նորա. զահի հարեալ յերեսաց նորա՝ ճեպէր փութայր փախչել եւ թաքչել, եւ տեղի ոչ գտանէր. ձայն բարձեալ յաղերս մեծ աղաչէր եւ ասէր. Գիտեմ զքեզ, Յիսուս նազովրեցի. դու ես սուրբն Աստուծոյ. մի՛ յառաջ քան զժամանակն տանջեր զմեզ: 74 Արդ իբրեւ կապեաց զնա, եւ բեւեռեաց բեւեռաւք. բեւեռեաց զոտս եւ զձեռս նորա, եւ պրկեաց կապեաց ընդ զաւրութիւն անպարտելի խաչին. եւ ետ իշխանութիւն ամենայն մարդկան՝ որ խաչելոյն հաւատան եւ կատարեն զպատուիրանն Աստուծոյ Բանի, զնալ ի վերայ իժից եւ քարբից եւ ամե-

*** Սաղմ. ԻԳ. 7

նայն զաւրութեան մահու. էառ աւար բազում եւ բերեալ բաշխեաց ամենայն հաւատացելոց:

75 Եւ մինչ Տէրն զայս ամենայն նահատակութիւնս կատարէր, պահապանքն ի քուն կային, եւ քահանայքն զեղէզնն եւ զբաղարջն ուտէին: 76 Իսկ Տէրն կանխագոյն քան զասացեալ ժամադրութիւնն յարուցեալ եւ հրեշտակացն երեւեալ, այլ ոչ զգերեզմանն խախտէ, եւ ոչ զդուրսն բանայ, եւ ոչ զմատանիսն բեկանէ, եւ ոչ պահապանացն յակն անկանի: 77 Յոյժ գոհանան հրեշտակքն զայնմանէ, որ յառաջ ժամանակաւ ոչ կարէին հայել եւ տեսանել զծածկութիւն փառաց որդւոյն Աստուծոյ, եւ այսաւր ի պատճառս մերոյ փրկութեանս եկեալ, եւ զամենայն տնտեսութիւնն իւր կարգաւ կատարեալ վերնոց եւ ներքնոց եւ սանդարամետականաց, եւ նորոյ աշխարհի նոր պտուղ երեւեալ նորոգապէս նոր եւ նախնիս, նախ հրեշտակք ընդունին եւ ուրախ լինին ի տեսիլ այնորիկ՝ որովք յառաջն կարաւտեալն էին: 78 Եւ քանզի կամս աննախանձ ունին հրեշտակք եւ սէր սուրբ առանց ստութեան, ճեպեալ փութային տալ աւետիս կանանցն, ոչ միայն բանիւք, այլ եւ աչաց տեսլեամբք: 79 Վաղվաղակի ի բաց տապալէին զվէմն ի դրաց գերեզմանին, եւ ի ներքս մտեալ երկիր պագանէին տեղւոյն՝ ուր Աստուածն մարդացեալ բազմեցաւ ի փրկութիւն մեղաւորաց եւ ի կենդանութիւն հրաժարելոց: 80 Խոնարհէին եւ համբուրէին զպարեխն, եւ մեծապէս պատուէին զտէրունեան զտեղին, եւ սքանչացեալ զարմանային՝ եթէ այնմ որում երկինք երկնից չէին բաւական ի բնակութիւն, մարդասիրութեամբ իւրով ամփոփեաց զմեծութիւն փառաց իւրոց. էջ եւ բազմեցաւ ի փոքր տեղւոջս, եւ բաւական համարեցաւ լինել երեքաւրեայ ժամանակաւ:

81 Յայնժամ միանգամայն կատարէին զբանն զոր ասաց Դաւիթ. Երկիր պագցուի ի տեղւոջ՝ ուր կացեալ եմ ոսբ նորա՞. եւ դարձեալ. Երկիր պագէ՛ք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է՞: 82 Եւ այնչափ սիրելի է տեղին, զի ոչ միայն ի ներքս մտին հրեշտակքն, այլ եւ նստէին, ասէ աւետարանագիրն, մի ի սնարիցն եւ մի յանոտիցն: 83 Արդ զնստէինն իբրեւ լուսիցես, մի՛ վաղվաղակի ի բաց գնացես ի տեղւոջէ անտի. քանզի ոչ եթէ ժամանակաւ նստէին, այլ նստան եւ նստին եւ նստցին մինչեւ յաւրն յայն՝ յորում միաբանութիւն լիցի մեր եւ հրեշտակաց եւ այնր աշխարհի՝ յոր գերիս աւուրս չոգաւ Քրիստոս, եւ ժամադրեաց ամենեցուն ժողով լինել առ դուրս նորին գերեզմանի:

Դ

Արդ յոյժ սիրեմ զտեղին, եւ ոչ կամիմ հեռանալ ի դրաց գերեզմանին. այլ անդէն նստել ընդ հրեշտակսն, եւ տեսանել զմեծամեծ սքանչելիսն, եւ լսել ի բերանոյ նոցունց հրեշտակացն՝ որ խաւսէին ընդ կանայսն, եւ հնչեն բարբառ Աւետարանաց նոցա ընդ ամենայն աշխարհս: 2 Քանզի կանայքն այնոքիկ անուամբ յորջորջին տեսաւնամայրք. իսկ հաւատովք ճանաչին մեծ եւ սքանչելիք: 3 Քանզի գիտեն զնոյն Տէր անմայր յերկինս եւ անհայր յերկրի, եւ առ գութ մեծի սիրոյն զոր ունէին առ նա՝ բերին իւղս անուշունս, զի հեղցեն ի վերայ գերեզմանին:

4 Եւ քանզի հատեալ էր քուն յաչաց նոցա զայն երիս տիւս եւ գերիս գիշերս, կանխագոյն Մարիամ մագդաղենացի եկն եհաս ի գերեզման անդր. եւ քանզի զվէմն ի բաց թաւալեցուցեալ էր հրեշտակացն, հայեցաւ ի ներքս, եւ զտէրունական մարմինն անդ ոչ ետես. վասն այնորիկ լայ կո-

ՊՍՊՄ. ՃԼԸ 7

ՊՍՊՄ. ԳԼ 5

ծի ողբալով եւ ասէ. Զի՞նչ արարից, յո՞ երթայց, ո՞ւր խնդրեցից. ի խաչէն իջուցին, ի գերեզմանիս եղին, զդուրս վիմով կնքեցին եւ պահեն զգուշութեամբ. աշակերտացն վկայեմ, զի ոչ ուրեք շարժեցան զգիշերս ամենայն. ի Հրէիցն զայս ոչ ոք առնէր վասն մեծի շաբաթուն պատուոյ. հեթանոսաց չէր ինչ փոյթ. նա եւ ումեք ի մարդկանէ չէ աւրէն դիագող չըջել. ի գազանաց կասկած ինչ ոչ է վասն մեծի վիմիս ծանրութեան, եւ առաւել վասն զինուորացն պահպանութեան: 5 Եւ եթէ յարութիւն կարծեցից, այս վաղ կարի է. ընդ երեկս ուրբաթուն թաղեցաւ. գիշերքս ահա երկու են, իսկ տիւս աւր մի է եւ ժամք երկու, եւ նա գերիս տիւս եւ գերիս գիշերս ասաց լինել ի սիրտ երկրի: 6 Եւ զիտ՞րդ՝ որ յամենայնի արդարն խաւսէր, յայսմ վայրի ստեա՞ց արդեաւք. քաւ լիցի, ոչ կարեմ վասն նորա յերկբայս լինել. սուտ եւ ոչ երբեք խաւսէր, այլ արդար յամենայնի. քանզի գամենայն զոր ասաց ի կենդանութեան իւրում, եղեւ եւ կատարեցաւ. իսկ արդ յայսմ միայն ստիցէ՞ արդեաւք: 7 Արդ ես ոչ գիտեմ եթէ արդարեւ յարուցեալ իցէ եւ կամ նենգեալ յումեքէ:

8 Զայս ասէր եւ զկրօնիցն հարկանէր եւ զարտասուս յորդէր. մեծածայն ճչել ոչ իշխէր վասն ահի քահանայիցն եւ զգուշութեան պահպանացն, այլ ի սրտին փղձկէր եւ ի միտս հեղձնոյր, եւ իրացն մխիթարութիւն ոչ գտանէր. մինչեւ յոյժ զթացեալ ողորմեցաւ նմա հրեշտակն եւ ասէ. Կին դու, զի՞ լաս յուսահատութեամբ եւ սուգ առեալ կոծիս անմխիթար. ասացիս զպատճառս իրացն, թերեւս լուիցես անսուտ պատասխանի: 9 Եւ նա ասէ. Զի գտէրն իմ բարձին ի գերեզմանէ աստի, եւ ոչ գիտեմ ո՞ւր եղին զնա: 10 Ասէ ցնա հրեշտակն. Գեղեցիկ ունիս զսէր սուրբ հաւատոցդ, այլ ոչ իմաստութեամբ արկանես զգառն արտասուսդ ի վերայ գերեզմանիդ. ո՞յր ուրուք լուեալ եւ տեսեալ ի-

ցէ՝ թէ մեռեալք զկենդանիս խնդրեն, եւ կամ մարդիկ ի խնդիր լինին կենդանւոյ Աստուծոյ. թուի ինձ՝ թէ քան զպահապանսն յիմարագոյն ես դու: 11 Արդ եթէ կամիս, եկ մերձեցիր ի տեղի աստ եւ տես, զի յարեաւ, չէ աստ. եւ բնաւ ընդէ՞ր իսկ խնդրես զկենդանին ընդ մեռեալս: 12 Եւ զայս ասացեալ՝ ի մեծ տարակուսանս զկինն արկանէր:

13 Դարձեալ ասէ ցնա հրեշտակն. Թէ եւ ինձ ոչ հաւատաս իբրեւ աւտարաշխարհացւոյ, հարց զգաւառականսդ քո՝ որք են հաւատարիմք դատաւորին եւ խորհրդակից քահանայից ձերոց. նոքա պատմեն ոչ միայն ձեզ որ սիրելիքդ էք, այլ եւ թշնամեաց նորա: 14 Բայց զժամ յարութեան նորա եւ ես ոչ գիտեմ. այլ ի շարժել երկրիս յայնժամ կարծեցի թէ յարեաւ. եւ առ գերեզմանի աստ՝ ես եւ բազում ընկերք իմ էաք, գիտաց եւ ոչ ոք ի մէնջ. ի դուրս գերեզմանիս հայեցաք ամենեքեան, վէմն անխախտելի կայր, եւ կնիքն յայտնի երեւէին: 15 Իսկ մեր ի շարժմանէն կարծիս առեալ՝ բացաք զդրունս եւ զնա ի ներքս ոչ գտաք, մինչեւ ինքն ողորմելով երեւեցաւ մեզ առ ժամ մի: 16 Այլ այժմ եւ մեք ոչ գիտեմք ուր է. բայց գտեղիս ոչ իշխեմք թողուլ, որովհետեւ այնչափ սիրէ զվէմդ եւ զխաչդ եւ զվիմափոր գերեզմանդ, եւ առաւել զձեզ որ ի խնդիր էք նորա: 17 Եւ յայսմ ամենայնի պատճառս՝ եւ մեզ դարձեալ ողորմեսցի, եւ արժանի լիցուք միւսանգամ տեսանել զյարուցեալն ի մեռելոց:

18 Եւ մինչ դեռ զայս ամենայն հրեշտակն ընդ կնոջն խաւսէր, ահա ոմանք ի պահապանաց անտի յորդեցան մտին ի քաղաքն պատմել քահանայակետիցն. Ո՞վ, զի՞ կայք, ասեն, զի՞ նստիք, տեսէք զինչ գործիցէք. յարեաւ ճշմարիտ, թագուցանել ոչ կարեմք. ահա բողոքեմք յապարանս դատաւորին, եւ ամենայն քաղաքիս գա-

զաղակ հարկանեմք. ոչ կարեմք յուրաստ լինել զահագին տեսիլ յարութեանն, քանզի մեծ էր երկրիս շարժումնս վերջինս քան զառաջինն. վասն զի եւ ի ժամ խաչին անդ դիպեցաք մեք եւ տեսաք զմեծամեծսն եւ զահագինսն որ անդ գործեցան: 19 Այլ մեզ այն աւրն դիւրագոյն էր քան զայս աւր. վասն զի ոչ ի շարժմանէն միայն բեկան սիրտք մեր, այլ եւ արք ոմանք երեւեցան մեզ՝ ոչ գիտեմք ուստի՛ էին, յերկրէ կամ յերկնից, անհնարին մեծապէս լուսաւորք եւ ահագինք, եւ այնպիսի լուսաւորք՝ որ թէ ի մէջաւրէի երեւէին, ծածկէին ճառագայթք արեգականն առ նոցա անմատոյց լուսով: 20 Բայց զարմացեալ եմք, եթէ դուք զիա՛րդ ոչ տեսէք, եւ կամ տապ բոցոյ նոցա այսր զիա՛րդ ոչ ազդեաց. քարինք տեղւոյն եւացին եւ հողն երաշտացեալ ցամաքեցաւ. մեք կիսամահ ի վայր անկեալ դնէաք, եւ բազումք ի մէնջ որ անդ մնացին՝ արդ եւս մեռեալ իսկ իցեն:

21 Իբրեւ լուան քահանայապետքն զայս ամենայն ի բերանոյ զինուորացն, սկսան տալ պատասխանի. Յորժամ այդպիսի ահագին գործք գործեցան, որպէս դուքդ ասէք, թէ ոմանք ի ձէնջ կիսամահ անկեալ դնին, դուք զիա՛րդ կարացէք գալ եւ պատմել մեզ: 22 Ետուն պատասխանի զինուորքն եւ ասեն. Կանայք ոմանք երանելիք եկին ի գերեզման անդ՝ մինչ դեռ կայր եւս զիշերոյ, որք բարձեալ բերէին իւղս անուշուճս եւ խունկս սքանչելիս իբրեւ նուէրս աստուածայինս: 23 Եւ ի մերձենալ կանանցն ի գերեզմանն՝ յոյժ դիւրութիւն եղեւ մեզ ի ժամուն. աւրհնեալ լիցին կանայքն այնոքիկ, եւ երանի քաղաքին՝ ուստի նոքա իցեն. եւ յիրաւի երանեմք այնպիսի կանանց: 24 Մեք այնպէս թմբբեալ եւ անկանգնելի ի վայր անկեալ էաք, եւ մի ոմն ի նոցանէ աներկիւղ եւ անկասկած մերձեցեալ ի գերեզմանն հայէր. եւ իբրեւ զմարմինն անդ ոչ տեսա-

նէր, յարտասուս հարեալ լայր դառնապէս. եւ վասն մեռելոյն պատասխանի լսէր յարանցն զյարուցելոյ եւ զկենդանւոյ: 25 Եւ որպէս ի ժամուն ազդեցաւ՝ թէ հրեշտակք էին եւ ոչ մարդիկ, որք մերձաւորագոյն զնշանսն տային կանանցն զխաչելոյն՝ Աստուած խոստովանել եւ ոչ մարդ, կենդանի եւ ոչ մեռեալ. քանզի իբրեւ դիւրացաւ մեզ ի գալ կանանցն՝ մեք մեզէն իսկ լուաք պատասխանի ի բերանոյ երեւեցելոցն՝ որք ասէին. Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս. ո՞չ յիշէք զոր յառաջագոյն ասաց՝ թէ պարտ է որդւոյ մարդոյ մեռանել եւ թողիլ եւ յերիւր աւուր յառնել: 26 Եւ եթէ զայն ոչ յիշէք, արդ ահա տեսէք՝ յարեալ չէ աստ, եւ յառաջագոյն քան զձեզ երթայ ի Գալիլիա, անդ տեսանիցէք զնա. ահա ասացի ձեզ:

27 Զայս լուեալ քահանայապետիցն՝ զարմացան հիացան եւ բեկան սիրտք նոցա. գիտացին եթէ ոչ պատճառանաւք պատմեն. ի խորհուրդ մտին եւ ասեն. Արդ զի՞նչ գործեսցուք. որովհետեւ այսպիսի յայտնութեամբ յարեալ, մարդիկ եւ հրեշտակք տեսին. զպահապանսն զոր խնդրեցաք ի դատաւորէն, նոքա մեծամեծ նշանաւք պատմեն զյարուցեալն. արդ ի Գալիլիա եւս երթայ, եւ մեծամեծ յայտնութիւնս առնէ անդ:

28 Եւ իբրեւ այլ հնարս ոչ կարացին իմանալ, արկին ձեռս ի գանձս տաճարին. արծաթ բազում ետուն պահապանացն եւ ուսուցին նոցա պատճառս զառաջին պատասխանւոյն՝ յաղագս որոյ զինուորքն հրամայեցան նոցա ի դատաւորէն:

29 Այլ Մարիամ անդէն ընդ հրեշտակսն պատեալ փարի զգերեզմանաւն, եւ ի խնդիր է յարուցելոյն. եւ առ յոյժ ջերմ սիրոյն անդադար ածէ զաչսն զվայրաւքն մինչեւ շնորհեալ նմա երեւումն փափաքելի ոչ հրեշտակի ուրուք, այլ նորին տեսուն Յիսուսի: 30 Քանզի զրէ աւետարանա-

գիրն. Զայս իբրեւ ասաց նմա հրեշտակն, հայեցաւ նա ի կողմն մի տեղւոյն՝ ուր ի խաչ հանեալ էր զՅիսուս. եւ ետես անդ զՏէրն, այլ ճանաչել ոչ կարաց. այլ կարծեաց եթէ պարտիզպանն իցէ, ասէ ցնա խանդաղատալի բանիւք. Տէր, եթէ դու բարձեր, ասա ինձ՝ ուր եղիր գնա, զի ես առից գնա:

31 Բարիոք տքնիս, ո՛վ Մարիամ, զգիշերս ամենայն, եւ գեղեցիկ են խնդիրք առաւաւտիդ. ոչ ոք ի մարդկանէ զրկէ զվաստակաւորս իւր, եւ ոչ Աստուած զլանայ զվարձս վաստակոց քոց. զվարձս գիշերային աշխատութեան քո հատուցանէ քեզ հրեշտակդ՝ տալով աւետիս զյարուցելոյն ի մեռելոց, եւ զտապ անձկոյ սրտի քո փախուցանէ երեւոմն պարտիզպանիդ:

32 Որպէս ինձ թուի, գտեր զգողն. եւ ոչ միայն զգողն, այլ եւ ընդ գողոյն զգողաւնսն. քաջ պնդեա ի վերայ, դա է ճշմարիտ. եւ ոչ զայլոյ գողացեալ, այլ զիւրն իսկ առեալ ունի. մի՛ ասեր՝ եթէ դու բարձեր, իբրեւ այլ զայլոյ ինչ, այլ ունի իսկ եւ զիւրն ունի: 33 Դա է որ եղաւ ի գերեզմանիդ, դա է որ յարեաւն այտի, դա է որ խաչեցաւ, դա է որ ի մեռեալս չոգաւ, դա է որ եմուտ ի տուն հզաւրին, դա է որ կապեաց զհզաւրն, դա է որ առ զգանձս նորա յաւարի, դա է որ բաշխեաց պարգեւս բազմաց, դա է ճշմարիտ պարտիզպանն, դա է որ տարաւ զաւագակն ի պարտէզն. զգա խնդրէիր, վասն դորա լայիր, վասն դորա լուար ի հրեշտակէն թէ յարեաւ, վասն դորա ողբայիր, վասն դորա հրեշտակն զգերեզմանաւն շրջի, վասն դորա բերեր զիւղդ եւ զխունկս. եթէ վասն դորա բերեր, այլում ի խնդիր մի՛ լինիր:

34 Բայց զոր ասացերն՝ ո՛ւր եղիր գնա, ցոյց ինձ՝ զի ես առից եւ գնացից, գիտեմ՝ զի առ սէրդ ասացեր. եւ եթէ տայ զինքն ցքեզ, տանիլ ոչ կարես, նա եւ ոչ միւս Մարիամն յակովբեանց եւ ոչ կղէովպեանց Մարիամն եւ ոչ քոյր Ղազարու եւ կոյսն

Մարիամ՝ որ է մայր դորա: 35 Եւ եթէ ամենեքեան միաբանիք, բառնալ զգա ոչ կարէք, քանզի յոյժ ծանրացաւ. ծանր է այսուհետեւ որ կամին մարմնապէս մերձեալ ի նա, եւ թեթեւ այնոցիկ՝ որք հաւատով մերձենան առ նա, զոր այժմ իսկ լուիցես ի նմանէ: 36 Քանզի իբրեւ ծանեաւ, ասէ, Մարիամ, եթէ Յիսուս իցէ այն, յորձորջեաց գնա հին սովորութեամբն՝ բաբունի ասելով, որ թարգմանեալ կոչի վարդապետ: 37 Ահա դեռ եւս աւաղիկ Մարիամ, ի մարմնի ես եւ մարմնապէս լաս, եւ մարմնապէս խաւսիս, եւ մարմնապէս խնդիր առնես. արդ զիարդ արգահատեաց եւ յայտնեաց քեզ ի նոյն առաջին կերպարանսն, նոյնպէս կամիս մերձեալ ի նա թանձրութեամբ. վասն որոյ լսիցես պատասխանի՝ թէ մի՛ մերձեար յիս, զի չեւ եւս ելեալ եմ ես առ հայր իմ: 38 Եւ վասն է՞ր արդեաւք զայս ասէր. քանզի պտուղ էր նորոգ ծառոյն կենաց, ոչ կալաւ յանձին եթէ կանայք յառաջ քան զարս մերձեացին ի նա. բաւական համարեցաւ զագգս կանանց պատուել ի ձեռն ծննդեանն. այլ զերեւոմն յարութեանն առնէ հրեշտակաւքն որ ունին զյանգութիւն առ արու բնութիւնս. միջնորդաւ տեսութեանն եւ ի ձեռն հրեշտակացն առաջնորդութեան երեւի կանանց, եւ առաքէ առ աշակերտսն:

39 Երկուս իրս յայտնելով ի տեղւոյն, զՄարիամ ուսուցանէ վասն իւրոյ վերաբեր բնութեանն՝ հայր իւր յերկինս անուանելով, եւ զաշակերտսն մխիթարէ եղբարս զնոսա անուանելով: 40 Քանզի յորժամ ասէ, երթամ ես առ հայր իմ եւ առ հայր ձեր, հաւասարէ զինքն ընդ աշակերտսն, եւ մի հայր իւր եւ նոցա ցուցանէ. բայց իւրն առանձին ասելով, իսկ նոցա ամենեցուն ի միասին: 41 Յոյժ անջրպետեալ զատանի ի միմեանց, եւ իմանի յայտնութեամբ յոգիս իմաստնոց. քանզի մարդ է ըստ բնութեան ամենեցուն, հաւա-

սարէ զինքն ըստ աշխարհի. եւ Աստուած է անեղութեամբ ընդ Հաւր, զատուցանէ զինքն ոչ միայն յաշակերտացն, այլ յամենեցուն բանական գոյութեանս: 42 Եւ առ Աստուած իմ, ասէ, եւ առ Աստուած ձեր: 43 Մեր ահա գիտեմք զի Աստուած է, արարիչ եւ թագաւոր եւ տէր. եւ թէ գոհանամք զարարչական գաւրութենէն, է նա մեր թագաւոր վերակացու եւ խնամածու. եւ եթէ զընդդէմսն գործեմք, է նա մեր տէր, դատի խրատէ եւ ածէ յուղղութիւն:

44 Իսկ քո, Տէր, հայր զի է՝ գիտեմք, վասն զի ուսաք ի քէն ճշմարտապէս զայդ. զիա՞րդ ասես՝ երթամ ես առ Աստուած իմ եւ առ Աստուած ձեր: 45 Այո՛, ասէ, քանզի հայր է ձեր արարչութեամբ, հայր է եւ իմ ծնողութեամբ. Աստուած է ձեր, որպէս ասացի, ըստ հաստողութեան, Աստուած է եւ իմ ըստ տնաւրէնութեանս: 46 Այլ իմ, ասէ, առանձին միայն. իսկ ձեր ոչ առանձին, այլ ամենայնի՝ մարդկան եւ հրեշտակաց եւ երկնի եւ երկրի եւ տարերաց գոյացութեանց: 47 Եւ որպէս Հայր բարերարութեամբ իւրով՝ չաղաչեցեալ ուրուք՝ ի ձեռն Որդւոյ արար զաշխարհս ամենայն գերեւելիս եւ զաներեւոյթս, նովին մարդասիրութեամբ եւ Որդի կամաւք Հաւր յանձն իւր էառ զմարմին մերոյ բնութեանս, եւ ընկալաւ չարչարանս յիւր մարմինն մինչեւ ի մահ խաչին, ի թաղումն եւ ի յարութիւնն: 48 Եւ վասն այնորիկ Աստուած մարմնացեալ. եւ այսուհետեւ ոչ եւս մարմին, այլ Աստուած. եւ Աստուած ոչ առանց մարմնոյ, եւ մարմին ոչ եւս ծանր բնութեամբ, այլ մարմին աստուածային, անորակ եւ անքանակ, աներբ եւ անուր: 49 Անբաժանելի եւ անքակ է Աստուած բանն, միշտ անճառ եւ անպատում, եւ ընդ նմին անճառելի եւ մարմինն: 50 Միշտ Աստուած ինքն յինքեան, ոչ ի տեղուջ, այլ տեղի ամենեցուն. ոչ ի ժամանակի, այլ ժամանակ ի նմանէ. ոչ յեղանութեան, այլ լինելութիւնք նովաւ, եւ

գեր ի վերոյ ամենեցուն երկնի եւ երկրի, եւ երկնից երկնի շրջագոյ բնութեանն. ընդ նմին իմասջիր եւ զկուսածին մարմինն: 51 Վասն այսր ամենայնի ունիմք իշխանութիւն անուանիլ եղբայր Քրիստոսի, եւ ասել ընդ նմին հայր մեզ զԱստուած. զի ընդ միոյ մասինն որ միացաւ ընդ Աստուած բանն, եւ վերաբերեցաւ եւ ել յերկինս՝ նստաւ ընդ աջմէ Հաւր, ամենայն մասունք մարդկային բնութեանս ընկալան գաւետիս յուսոյ. զի նովաւ եւ ի ձեռն նորա վերաբերեցին եւ հասցեն եւ ժառանգեցեն զանախտ եւ զանչարչարելի տեղին, ուր որդին Աստուծոյ նստի ընդ աջմէ Աստուծոյ:

52 Վասն այսորիկ առաքէ Տէր զՄարիամ մագդաղենացի առ աշակերտսն ասելով. Երթամ ես առ Հայր իմ եւ առ Հայր ձեր, եւ Աստուած իմ եւ Աստուած ձեր^ա: 53 Եւ եկեալ Մարիամ պատմեաց Պետրոսի եւ Յովհաննու եթէ ետես նա զՏէր, եւ զայս ինչ խաւսեցաւ ընդ նմա: 54 Զայս լուեալ Պետրոսի, ազդեցան նմա յիշատակ առաջին բանիցն Տեառն զոր ասէր՝ եթէ Յետ երից աւուրց յառնելոց եմ ես^բ: 55 Յոտն եկաց վաղվաղակի Յովհաննու հանդերձ, եւ ընթացան երկոքեան ի գերեզման անդր. եւ քանզի մեծ էր ճեպ փութոյն, ելեւելս առնէին զմիմեամբք. յառաջագոյն հասանէր Յովհաննէս. զհայելն հայի, այլ ի ներքս ոչ մտանէ. եւ հասեալ Պետրոս, ի միասին մտանեն տեսանեն զգերեզմանն զի ունայն եւ թափուր էր ի մեծ գանձէն որ աւանդեցաւ. բայց միայն կտաւքն՝ զի անկեալ դնէին ի վերայ բարձրացեալ խարակին. իսկ վարչամակն որով զգլուխն պատեալ էր, ոչ խառն ընդ այլ կտաւին կայր, այլ ուրոյն ծալեալ եղեալ:

^ա Յովհ. Ի 17

^բ Մատթ. Ի 63

56 Եւ այս զի՞նչ նշանակէ՝ ընկենուկ կտաւոցն, եւ կամ չխառնել վարչամակին ի կտաւսն: 57 Ըստ բնախաւսութեան յայտնի է ամենեցուն. երկնաւոր բնակիչքն՝ երկրաւոր հանդերձիցն չեն կարաւտացեալք. իսկ Տէրն երկնի եւ երկրի, ինքնագոյ զաւրութեամբն եւ բնական փառաւքն ծնաւ ի սուրբ կուսէն. ո՞չ ապաքէն՝ որով եկն առ մեզ ի Հաւրէ, նովին զաւրութեամբ առ Հայր վերանայ: 58 Այլ ես եւ ըստ մերում բնականիս ասացից. ապաքէն վասն մեր եկն յաշխարհ Տէր աշխարհիս. իսկ յորժամ զմերս յիւրսն տարաւ, պէտք մերայոցս անդ ոչ ինչ էին պիտոյ. եթող զկտաւսն աստէն, եւ ի ձեռն կտաւոցն մնալոյ՝ աշխարհս մնացին իբրու թէ ի սուգ եւ ի չարչարանք ի ձեռն այս երեւման, զի եւ դու քեզէն ըստ քում վարդապետին կազմեսցես: 59 Քանզի ամենեւին մերկ էիր յաշխարհի. եւ մինչ էիր յաշխարհիս, վերացար ըստ պիտոյից սորա. իսկ յորժամ ելցես աստի, ոչ ինչ կարացես տանել ընդ քեզ. այլ որպէս եկիր, նոյնպէս երթիցես: 60 Եւ եթէ յառաջագոյն զայս իմասցիս, կեանք վարուց քոց զուարթնոց նմանեսցին, եւ ելք կատարածի քո զկնի Տեսուն հետեւեսցին:

61 Այլ վասն վարչամակին յոյժ մեծախորհրդութիւն տեսանեմք. քանզի յարութիւն էր մարդոյ եւ Աստուծոյ. մարդոյ ըստ բնութեան, Աստուծոյ ըստ տարբերութեան. եւ երկոցունց միացելոյ՝ ոչ եւս այնուհետեւ երկու թուին, այլ միական՝ գոյականին: 62 Յոյժ աւերինաւոր իրք ի տեղւոջն երեւեցան, զոր եւ մեծ Առաքեալն հաստատուն վկայութեամբ ցուցանէ մեզ: 63 Գլուխ կնոջ այր իւր է, եւ գլուխ առն Քրիստոսի, եւ գլուխ Քրիստոսի Աստուծո՞ւ. գլխոյ ի գլուխ աստիճանեաց զաշխարհս, եւ զամենեսեան հանեալ տարաւ առ Հայրն բոլորեցունց: 64 Վասն այ-

սորիկ պատուականագոյն երեւեցաւ վարչամակն ի մէջ այլոց կտաւոցն. զի դու իմասցիս ճշմարտապէս ոչ զորոշումն զատանելոյ, եւ ոչ զմիութիւն սեղմութեան. եւ ոչ այլ ուրուք է գլուխն, այլ որոյ է մարմինն. եւ ոչ մարմինն այլ ուրուք է, այլ նորին գլխոյ. եւ ոչ մարմինն գլուխ է, եւ ոչ գլուխն դարձեալ ոտք են. այլ անդամք բազում՝ կարգեալ եւ հաստատեալ եւ կազմեալ են ըստ իւրաքանչիւր մարմին. քանզի պատին ի գլուխն է, ընդ նմին գլխոյ եւ ամենայն մասունք մարմնոյն պատուեցան:

65 Իսկ եթէ առ մերս այդպիսի է տեսաւորութիւն, ո՞րչափ եւս առաւել իմանալի բնութեանն: 66 Գլուխ է եւ աստուածութիւնն, գլուխ է եւ որդիութիւնն, գլուխ է եւ Սուրբ Հոգին: 67 Այլ աղէ, մտացդ աշաւք հայեաց եւ տես, եւ լուր հաւատովք զբանն տէրունական որ ասէ. Ոչ ոմ գիտէ զՀայր՝ բայց եթէ Որդի, եւ ոչ զՈրդի՝ եթէ ոչ Հայր՝ եւ ի ձեռն Սուրբ Հոգւոյն ճանաչին Հայր եւ Որդի նորին՝ Սուրբ Հոգւովն: 68 Քանզի Աստուած հոգի է, եւ հոգի Աստուած. հոգի՝ Որդի, հոգի եւ Սուրբ Հոգին: 69 Եւ արդ զի այս այսպէս է, ոչ եթէ Հայր Որդի, եւ ոչ Որդին Հայր, եւ ոչ Սուրբ Հոգին Հայր եւ Որդի: 70 Հայր արարչական զաւրութիւն, որ ունի նշանակ թագաւորական զաւրութեանն. Որդի բնական զաւրութիւն, որով երեւի դատողական զաւրութիւնն. Հոգի հաշտական զաւրութիւն, որով յայտնի երեւի կենարար զաւրութիւնն. եւ ասի միասնական աստուածութիւն: 71 Հաճեալ է Որդի ի բնական անուանն, որ է զաւրութիւն եւ իմաստութիւն, եւ նոյն ինքն ծնելութիւն եւ անեղութիւն. հաճեալ է եւ Սուրբ Հոգին յիւր անձն եւ յէութիւն, հանողութեամբ յԱստուծոյ, անձառելի եւ անպատմելի: 72 Հանգուցեալ է եւ կամք Հաւրն յաս-

՝ Ը Կ՞ր. ԺԸ 3

՝ Տէ՛ս. Մ՞աք. ԺԸ 27:

տուածութիւնն հայրութեանն, որ է պատ-
ճառ ճառելեացս եւ անճառելեացն:
73 Արդ ծալեաց եւ եղ զվարչամակն մե-
կուսի. ինքն Քրիստոս զիւր գլուխն պա-
տուեաց: 74 Եւ արդ ո՞վ մեծ իցէ, ար-
դեաւք որ պատուիցէ՞, եթէ որ պատուի-
ցին: 75 Իսկ եթէ այլ յայլմէ ունէր զպա-
տիւն, այդպէս էր. արդ եթէ ինքն զինքն
պատուէր, զիա՞րդ կարասցես ի մէջ անբա-
ժանելոյն բաժինս ցուցանել. եւ որպէս
ընդ Քրիստոս եւ ընդ իւր գլուխն չիք
անջրպետութիւն ի մէջ արկանել, եւ ոչ
ընդ Քրիստոս եւ ընդ իւր Հայրն, այլ
միայն խորհուրդ պատուոյ, զի ուսուցէ
զերկոտասանսն..... Հայր յարուցանէր,
Որդի յառնէր, Հոգին Սուրբ աւետիս մա-
տուցանէր արարածոց: 76 Եւ որպէս յա-
րարչութեանն հաւասարութիւն էր, Հայր
կամէր, Որդի առնէր, եւ Սուրբ Հոգին
զարդարէր, ապաքէն եւ նորոյ աշխարհիս
սկիզբն լինելութեան էր յարութիւնն
Քրիստոսի. վասն այսորիկ բոլոր բոլորո-
վին բովանդակ անդ է Սուրբ Երրորդու-
թիւնն. միանգամայն եւ ամենայն գաւրու-
թիւնք արարածոցս:

77 Տեսանե՞ս զի ոչ ինչ պիտոյ էր
զկտաւսն տանել ընդ իւր. այլ փոխանակ
կտաւոցն զամենայն աշխարհս զգեցաւ, եւ
զաշխարհի հայրենի փառսն զարդարեաց:
78 Իսկ զխորհուրդ գերեզմանին եւ զկտա-
ւոցն եւ զվարչամակին յայտնեաց գլխոյն
աշակերտաց: 79 Քանզի գերեզմանն է
նմանութիւն աշխարհիս՝ յորում թաղեալ
եմք, եւ կտաւքն ժամանակեան՝ պատանք
զարդուց սորա. իսկ պատիւ վարչամակին,
որպէս վերագոյն ասացաք, ակնկալութիւն
յուսոյ այնոցիկ՝ որ կարեն բացահայեաց
ակամբ ի հեռաստանէ տեսանել զՀայրն
բոլորեցունց, որ պատուելոց է զգլուխ ա-
մենեցունց, որք արժանի լինին երկնաւոր
պարգեւաց պսակին:

80 Բայց թերեւս ոք յուսումնասէր
փափաքողաց քննել կամի եւ լսել զայս
եւս՝ եթէ ո՞ ծալեաց զվարչամակ գլխոյն եւ
եղ մեկուսի, Տէ՞ր ինքնին, եթէ հրեշտակքն
գիտասցէ այնպիսի հարցողն, զի գԱստու-
ծոյ ակնարկութիւնն ամենայն ոք կատա-
րէ՞ բանաւորք եւ անբանք. բանաւորք ի
ձեռն զգայութեանց կատարեն զհրամանս
նորա. իսկ անբան տարերքս ի բնական
շարժմանցն. իսկ հրեշտակք առաւելեալ են
բանաւորութեամբ, եւ բնակութեամբ մեր-
ձաւորագոյնք են առ աստուածութիւնն,
գիտելով զխորհուրդ կամաց նորա: 81 Եւ
որպէս երեւի՝ առ սէր Տեսան իւրեանց յոյժ
փարեալ խանդաղատին զգերեզմանաւն,
եւ ի ներքս մտեալ զանձուկն ի կտաւսն
սփռէին, բառնալով եւ դնելով եւ բազում
անգամ համբուրելով. որպէս ոք զի գտա-
նիցէ զնիչ անձկացելոյ՝ պատիցէ փարելով
եւ յոյժ խանդաղատիցէ, եւ զի՛նչ գործել
արժան է՝ զայն ոչ գիտեմ: 82 Այսպէս իմն
եւ հրեշտակքն առնէին ընդ կտաւսն. եւ ի
ձեռն առեալ զվարչամակն, ծալէին կազ-
մէին եւ մեկուսի դնէին ըստ բնութեան
մարդկան սենեկապանաց զոր գործեն յար-
քունիս, եւ զամենայն հանդերձ թագաւոր-
ին դնեն ի պատուական տեղուջ. իսկ թա-
գին ուրոյն իմն առնեն զգուշութիւն, եւ
ոչ խառն ընդ այլ հանդերձսն պահեն:
83 Այսպէս եւ երկնաւոր թագաւորին մե-
րոյ զաւրքն երկնից ի սպաս իջեալ՝ շողա-
յին զցանկալի գերեզմանաւն. եւ երկուքն
ի ներքս մտեալ՝ զամենայն ինչ տեղոյն
պատուեն. բայց զթագն ոչ խառն ընդ
այլսն ընկենուն, այլ ուրոյն դնելով ուսու-
ցանեն մարդկան զմիասնական գլխաւոր-
ութիւն Երրորդութեանն, ուստի ամենե-
քեանս առին զլինելութիւն:

Ե

Արդ Պետրոսի, զայս խորհուրդ իմա-
ցեալ գնաց ի գերեզմանէն ընդ միտս զար-
մացեալ, եմուտ ի տունն հանդերձ այլովք

աշակերտաւքն: 2 Եւ քանզի երկիւղ մեծ էր վասն ահին Հրէից, զգուշութեամբ մեծաւ զդուռն ի փակի ունէին՝ լուռ նստելով. բազում խորհուրդք յածման մտանէին ի սիրտս իւրեանց, եւ իբրեւ զորքս եւ անվերակացուս զանձինս համարէին. ի Հրէիցն հալածեալ եւ յԱստուծոյ մնացեալ եւ յընտանեաց վաղու իսկ հեռացեալ էին, տխուր եւ տրտում եւ ողորմելի քան զամենայն մարդիկ երեւէին ի ժամուն. քանզի գոյր ոք ոչ իսկ ի նոսա որ կարէր բանալ զբերան իւր, եւ բան մխիթարութեան խաւսել ընդ նոսա:

3 Եւ մինչդեռ յայսմ նեղութեան էին, եկն Յիսուս, եկաց ի մէջ նոցա եւ ասէ. Ողջոյն ընդ ձեզ: 4 Եւ այս էր մեծ զարմացումն եւ ահագին տեսիլ. դուրք փակեալ, եւ շուրջ զշնտուածովն ամենայն զգուշութիւն պատրաստութեան, եւ մուտ ի ներքս ամենեւին ոչ գոյր: 5 Իբրեւ ետես Տէր եթէ յեւս յափշտութիւն կրթեցան սիրտք նոցա, վաղվաղակի եցոյց զձեռսն եւ զկողս, զի ի մեծ եւ յերեւելի նշանացն ծանիցեն զՏէրն, եւ փարատեսցէ գտրտմութիւն սրտից նոցա: 6 Դարձեալ կրկնեաց եւ քաջալերեաց կրկին ողջունին: 7 Եւ քանզի ընդդէմք են խռովութիւն եւ խաղաղութիւն, մատոյց զողջոյնն աւգնական խաղաղութեանն. հալածեաց եւ հեռացոյց ի սրտից նոցա զյոյզ խռովութեանն, եւ փարատեաց յանձանց նոցա զերկրային զսուգ եւ գտրտմութիւն, եւ արար զնոսա անխրախտս մտաւք եւ անհարչարելիս հոգւով:

8 Եւ իբրեւ յամենայն կողմանց մաքրեաց զնոսա յերկրաւոր ապականութեանցս, պնդեաց եւ կարծրացոյց զանձինս նոցա առաւել քան զհարստութիւն անդամանդի, զի կարասցեն ընդունել զանպատում շնորհս նորա, որ մեծն է եւ առաւել քան զամենայն, ընդ որում ոչ ինչ կշռի յերեւելեացս: 9 Իսկ արդ զիա՞րդ կշ-

ռեցից ընդ այնմ՝ որ ոչ տեսանի եւ ոչ զննի, եւ ամենայն տեսանելեացս եւ ըմբռնելեացս նա է կենդանութիւն: 10 Եւ զի՞նչ, այն որ այնչափ մեծացեալ առաւելաւ քան զամենայն, ես ոչ կարեմ ասել. իմանամ է, գիտելով ճշմարիտ՝ զի գոյ Աստուած. հաւատարիմ է ինձ. զորպիսութիւն նորա ոչ գիտեմ. ես որ երեւինս՝ զայս եւեթ գիտեմ, զաներեւոյթսն Աստուծոյ՝ Աստուած միայն գիտէ: 11 Բայց արդ ահա հարկեցայ ասել զոր ոչ գիտեմ. զի որպէս եմուտ դրաւքն փակելովք, եւ որմքն ողջ կային եւ դուրքն ոչ էին խախտեալք, եւ ինքն բոլոր ի ներքս էր, մինչեւ զձեռսն եւ զկողսն եցոյց նոցա, երկիցս անգամ բերանալիւր ողջունիւ հաստատեաց զնոսա, ըստ նմին աւրինակի շնորհէ Տէր աշակերտացն իւրոց զայն պարգեւս՝ զոր ծով ոչ տանի, եւ ցամաք ոչ հանդարտէ, եւ երկինք թէ բաւեսցեն առ ի բնակութիւն:

12 Արդ ասա զոր ասելոց ես, մինչեւ յե՞րբ մեծացուցանես յանչափութիւն: 13 Ասել ահա կամիմ, այլ ի գիտելոյն վաղ հրաժարեցի: 14 Դարձեալ եւ երկնչիմ յոյժ. գուցէ իբրեւ ես ասիցեմ, ոչ հանդարտիցես լսել. եւ յոչ հանդարտելն քո՝ կասկածեմ գուցէ եւ մեռանիցիս իսկ. եւ մեռանիցիս իսկ ոչ միայն ըստ բնութեան, այլ ըստ բնութեան եւ ըստ տարաբնութեան: 15 Բայց ես գիտեմ զի դու այսրէն ընդդիմանաս ինձ եւ ասես, թէ դու ուստի՞ լուար, եւ յորժամ լուար՝ ընդէ՞ր ոչ անդէն եւ մեռար, այլ այժմէն կեաս եւ կելոյ ականունիս: 16 Այո՛, այսպէս է. ես ոչ միայն այժմէն՝ եւ կամ սակաւ կելոյ ականունիմ, այլ եւ անմահացայ իսկ: 17 Եւ եթէ արդարեւ այդ այդպէս է, ասա ինձ զի եւ ես լուայց եւ ընկալայց եւ անմահացայց:

18 Ասեմ, եթէ յանձն առնուս. բայց սրբեցիր մաքրեցիր, ամենեւին պարկեշտացիր, ամենեւին առողջացեալ ի բաց արա զքեզ յերկրային խտիցս հարչարանաւք

եւ տանջանաւք. պատրաստեա զքեզ երկնազնաց ընտրելոցն. արտաքոյ դիր զքեզ ամենայն աշխարհական հոգոց եւ ամենայն աղտեղութեանց սորա եւ ի պատիր ի զբաւսանաց սորա, որ է ժամանակեան մեծութիւնս: 19 Յորժամ զայս ամենայն թողում ի բաց, զի՞նչ տացէ ինձ ընդ այսր ամենայնի: 20 Ասացից քեզ. միայն հաւատա, միայն յուսա, միայն կամեաց, միայն ախորժեաց, միայն բուռն հար եւ զհետ երթ: 21 Եւ ո՞ւր երթամ եւ զո՞յր զհետ. զխաչեցելոյն: 22 Եւ ո՞ւր տանիցի. ի տուն: 23 Յո՞ր տուն. ուր աշակերտքն ժողովեալ նստին, եւ դուրքն փակեալ են. ընդ ո՞ր կամի՝ մտանէ, եւ արարածք չարգելուն զնա. եւ դու եթէ կամիս՝ կարես: 24 Նորա բնութիւնն, ասէ, տանի գայն. եւ դու հաւատա, վստահացիր քեզ, եւ կարես մտանել ընդ նմա: 25 Նա խոնարհեցոյց զերկինս եւ էջ ի գալն իւր առ քեզ. եւ դու հաւատա առաջին գալստեանն եւ թռչիս եւ ի վեր ելանես: 26 Նա ծնաւ ի սուրբ կուսէն, եւ կուսութիւնն ոչ խախտեցաւ. եւ դու հաւատ ունիս ի կուսածին բանն Աստուած, եւ ծնանիս ի սուրբ կուսէ աւագանին, եւ անուանիս եղբայր Քրիստոսի, եւ կուսութիւնն աւագանին ոչ լուծանի: 27 Նա յիւր մարմինն ընկալաւ զչարչարանս, եւ չարչարելի մարմնով եբարձ զչարչարանս ամենայն մարմնոց, եւ ինքն անվնաս պահեցաւ յանմենայն չարութենէ. հաւատա եւ դու սուրբ չարչարանացն Քրիստոսի, եւ լեր նմա չարչարակից չարչարելի մարմնովդ, եւ անվնաս պահեա զոգիդ յամենայն վնասալի ախտից աշխարհի: 28 Նա զի ոչ էր պարտ մահու՝ մեռաւ, եւ թաղեցաւ եւ յարեաւ ի մեռելոց, եւ զդուրս գերեզմանին ոչ եբաց. դու հաւատա ի թաղեցեալն եւ յարուցեալն, որ գայ աւերել զամենայն գերեզմանս, եւ յարուցանել զամենայն ննջեցեալս առանց թերութեան եւ պակասութեան: 29 Արդ եթէ զայս զաւրութիւնս հաւատոց զգեցցիս, եւ

ի տուն Պետրոսի մտցես, եւ նստցիս ընդ աշակերտսն ամենեսեան նովին հաւատովք, զնոյն ողջոյն ընկալցիս, եւ նովին ողջունիւ դարձեալ արժանի լինիցիս մեծի պարգեւին այնմիկ զոր ասելոց եմ:

30 Քանզի յորժամ կայր Տէր ի մէջ աշակերտացն ի տան՝ յոր եմուտ դրաւքն փակելովք, նմանեցաւ տունն այն երկնի եւ երկրի, եւ ամենայն զարդուց եւ զուարթնոց երկնից եւ ամենայն էիցս կենդանեաց եւ մարդկան որ յերկրի, եւ մանաւանդ ինքեան Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: 31 Եւ որպէս յարարչութեանն ըստ ճառեցելումն իմանի Արասցուք, ասէ, ըստ պատկերի մերում, իբրեւ առ թուական, իսկ արարն՝ ըստ պատկերի Աստուծոյ, եւ փչեաց իմանալին ըստ միականի զաւրութեանն, սոյնպէս եւ ի տանս յայսմիկ երկիցս ողջունիւն: 32 Եւ որպէս առաքեաց զիս Հայր իմ, առաքեմ եւ ես զձեզ, ճանաչի ըստ առաջին երբեակ թուին: 33 Իսկ որ փչեաց ի նոսա եւ ասէ Առէք զձոզիմ Սուրբ ի ձեզ, եւ եթէ ումեք թողջիք զմեզս իւրեանց՝ թողեալ լիցի, եւ եթէ զոք կապեալիք, կապեալ եղիցիք, այս դարձեալ տանի հանէ անդրէն յառաջինն յիսկզբան բանիցն գլխաւորելով. եւ արար Աստուած զամենայն ինչ. եւ ետես Աստուած զամենայն զոր արար, եւ ահա բարի է յոյժ*:

34 Եկա՞ք ինչ արդեաւք շուրջ գտամբն, եթէ եւ այլ եւս պիտիցի գալ: 35 Զգալն ահա եկաք, եւ ի ներքս եւս մտաք, եւ սակաւ բանիւ զամենայն ասացաք. այլ հաւանեցուցանել զամենեսեան ոչ կարացաք: 36 Եւ ընդէ՞ր արդեաւք. վասն զի ոչ ամենեքեան ի ներքս էին: 37 Եւ եթէ երկինք էր տունն, ո՞ մնայր արտաքոյ: 38 Դարձեալ բազում անգամ

* Ծն. Ը 26

† Մատթ. ԻԸ 18-19

‡ Տե՛ս. Յով. Ի 22-23:

• Ծն. Ը 30

հարցանեմ զասացեալսն, եւ այլ տայ ասել. որ ոչ հաւատս ունէր՝ այն էր արտաքոյ. քանզի առանց հաւատոց անհնարին է զՍուրբ Հոգին ընդունել: 39 Ահա այս է մեծ պարգեւն զոր ոչ կարէի ասել, եւ հարկեցայ ասել: 40 Եւ եթէ ժպրհեսցի ոք եւ կամեսցի առանց հաւատոյ մերձենալ ի զաւրութիւն Հոգւոյն, եթէ քահանայ իցէ՝ իբրեւ զԿայիափայն պատառի եւ հերձու. եւ եթէ յաշխարհէ՝ իբրեւ զԱնանիա եւ զՍափիրա: 41 Իսկ արդ ո՞վ իցէ բաւական առանց մեծի աւգնականին ընդունել զարարող Սուրբ Հոգին, բայց եթէ ինքն Տէր փչեսցէ ասելով՝ առէք զՀոգին Սուրբ ի ձեզ:

42 Զարմանամ ընդ այս եւ յոյժ եմ սքանչացեալ, եթէ զիւրդ որմք տանն ժոյժ կալան, եւ յատակքն ոչ պատառեցան: 43 Բայց դարձեալ յիշեցի, զի երկնից երկինք էր տունն. որպէս զի թէ յանապատի բնակիցի թաղաւորն, շինեցաւ անապատն, եւ ասեն նմա մեծ քաղաք այնուհետեւ եւ ոչ անապատ. առաւել քան զայն՝ տունս այս քաղաք երկնային եղեւ, եւ որք ի ներքս էին՝ երկնաքաղաքացիք, եւ որք ոչ անդ դիպեցան՝ դեռ եւս երկրայինք են՝ դժուարաւ առ ի հաւանութիւն: 44 Բայց եթէ նոյն ինքն Տէրն դիպեսցի նովին զաւրութեամբ, զնոյն շնորհս ընկալցի. ապա կարասցէ վիճակակից լինել երկոտասանիցն, եւ մանաւանդ եթէ ի նմին տան եւ ի նմին տեղոջ նոյն Տէր: 45 Եւ եթէ կամիս լուր աւետարանագրին, զի ասէր զամենայն ճշմարտութեամբ. Թովմաս, ասէ, մի յերկոտասանիցն ոչ էր ընդ աշակերտսն, յորժամ եկն Յիսուս եւ երեւեցաւ նոցա: 46 Զի թէպէտ եւ լուաւ յայլոցն, ոչ ինչ կալաւ յանձին հաւանել նոցա. այլ ինքնատես կամի լինել, եւ մերձաւորագոյն զվէրս բեւեռացն զննել: 47 Եթէ յիշէք զոր ես ձեզ յառաջագոյն ասցի,

որպէս դժուարագոյն է կեալ ջրայնոց ի ցամաքի եւ ցամաքայնոց ի ջուր, առաւել եւս դժուարագոյն է առանց հաւատոյ ընդունել զպարգեւս Հոգւոյն Սրբոյ. որպէս վիճէր այրս այս թերահաւատ բանիւքն ընդդիմանալով ընկերացն:

48 Ո՞վ տէր իմ Թովմաս, ո՞չ ապաքէն հաւատք ի լսելոյ են. եթէ տեսանես եւ զննես եւ կաս ի վերայ ճշմարտին, ոչ եւս ասին հաւատք, այլ ճշմարտութիւն: 49 Ի Տեառնէ բազում անգամ լուար զչարչարելն, զմեռանելն եւ զյառնելն: 50 Աշակերտքդ բանից նշանաւ խաւսին ընդ քեզ եւ զորպիսութիւն յայտնութեանն պատմեն քեզ. եւ զի սուտ չեն՝ դու քաջ գիտես, եւ զի Տէրն արդար խաւսէր՝ այնմ տեղեակ ես. ընդէ՞ր այդչափ յամառեալ պնդիս: 51 Եթէ ոչ տեսանեմ, ասես, ոչ հաւատամ: 52 Տեսանել արդեաւք ահա տեսանես. մի՛ գուցէ ոք պարսաւիցէ զքեզ: 53 Ոչ, ասէ. թող միայն երեւեսցի ինձ, միայն տեսից ես. զի եթէ տեսից եւ զննեցից, եւ զիմ միտս անխիղճս արարից. եւ եթէ պարսաւեսցէ ոք, ես յանձն առից, ոչ ինչ պատկառեմ ես յայնմանէ. գիտեմ ես զքաղցրութիւն Տեառն իմոյ, զի մարդասէր է եւ ողորմած: 54 Չեմ ես, ասէ, մեծ քան զՊետրոս, եւ ոչ թերահաւատութիւնս իմ քան զուրացութիւնն նորա մեծ. եւ եթէ նմա արտասուքն իւր եղեն փրկութիւն, եւ ինձ ամաւթն իմ լինի թողութիւն. բայց միայն տեսից զայն՝ որում ցանկացեալն եմ: 55 Եւ եթէ իշխեմ ասել զայս եւս, աղաչեցից զՏէր զի ի նմին տան երեւեսցի ինձ նովին յայտնութեամբ. ոչ միայն դրաւքն փակելովք, այլ եւ նովին ողջունիւ ի մէջ նորին ընտանեաց: 56 Ես ահա ասացի զիմ կամքն. հրաման ոչ իշխեմ տալ, այլ աղաչել կամիմ. եթէ իցեմ արժանի, աւգնեսցէ տկարութեանս իմոյ:

57 Իսկ բարերարն ամենայնի իբրեւ ետես զտապ նեղութեան աշակերտին, գթա-

« Տէ՛. . . Յ.Վ. Ի 24:

ցեալ ողորմեցաւ ի յոյզ մտաց նորա. բայց թոյլ ետ զի լցեալ կատարեսցին աւուրք թուական առաջին նշանադրութեանն, մինչեւ թլփատեսցի անթլփատութիւն թերահաւատութեան իւրոյ, եւ ապա արժանի լիցի նորոգել եւ ընդունել զառանց երկմտութեան աւետիսն, որպէս եւ աշակերտակիցքն նորա: 58 Քանզի ցուցանէ աւետարանգիրն. եւ եղեւ, ասէ, յետ ութ աւուր դարձեալ անդէմ միւսամգամ անդ էին ի միոջ վայրի ի ներս աշակերտոցն ի միմ տան, եւ թովմաս ընդ մոսա. եկն Յիսուս եկաց ի մէջ մոցս դրաւն փակելովք, եւ ասէ. ողջոյն ընդ ձեզ: 59 եւ ցովմաս ասէ. բեր զմատունս քո ի ձեռս իմ եւ զձեռս քո ի կողս իմ. տես եւ մշմարտես, եւ մի՛ լինիր քերահաւատ, այլ հաւատա՞:

60 Եւ զայս ասացեալ թովմայի լինի միանգամայն յամաւթ եւ յերկիրդ, յընկերացն ամաչէ, եւ ի Տեառնէն երկնչի ասելով. Տէր իմ եւ Աստուած իմ^Է: 61 Եւ ընդէ՞ր յառաջ Տէր, եւ ապա Աստուած: 62 Յարարչութեանն ոչ այնպէս. եւ ի հինգ աւուրսն՝ Տեառն անուն լռեալ դադարեաց, Աստուած անուն ի մէջ անցեալ՝ զամենայն առնէ, իսկ ի վեցերորդին ապա եւ Տեառն անուն երեւի: 63 Իբրեւ յայտնի է պատճառ իրացդ. քանզի Աստուածդ անուն արարչական զաւրութիւն է, եւ է հաշտ եւ համբոյր եւ արարող: 64 Իսկ ուր արարչութիւն է՝ աւրինադրական չեւ եւս է. ապա եթէ ի դատողութիւն եկեսցեն արարածք, պիտոյ է եւ աւրէնսդրականն. որպէս եւ Առաքեալս այս յայտ արար. ընտրող իմաստութեամբ ետ պատասխանի եւ ասէ՝ Տէր իմ եւ Աստուած իմ: 65 Քանզի անկայ, ասէ, ընդ դատաստանաւ թերահաւատութեան իմոյ. դատես զիս, քանզի արժանի եմ խրատու. այլ ի թուոյ աշակերտացդ զիս մի՛ հաներ, քանզի զիտեմ եթէ

մեծ են յանցանք իմ. բազում են վկայք յարութեանդ քո, եւ ինձ ոչ միայն բազմութեանն պարտ էր հաւատալ, այլ քոց բանիցն իսկ, որ հանապազ ուսուցանէիր եւ կրթէիր զմեզ, զոր եւ գործով իսկ կատարեսցեր: 66 Բայց արդ որովհետեւ ողորմութեամբ երեւեցար ի սմին տեղուջ առաջին աւրինակաւն, եւ պարզեցեր զթերահաւատութիւն խորհրդոց իմոց, եւ բացան աչք մտացս, եւ դէմ յանդիման տեսի զՏէրդ իմ, իշխեսցից ասել՝ Տէր իմ եւ Աստուած իմ. զի յանդիմանելովդ քով զիս՝ նոր մարդ արարեր, եւ ոչ թողեր յոգիս իմ եւ ի մարմինս իմ տեղի դատողութեան: 67 Այսուհետեւ Աստուած իմ ես դու. եւ որով Աստուած իմ ես դու՝ դովիմբ եւ տէր, դովիմբ եւ աւրէնսդիր, դովիմբ եւ թագաւոր, դովիմբ եւ Հայր, ծնիչ եւ սնուցիչ, տուող պարգեւաց, եւ ժառանգեցուցիչ զկեանսն յաւիտենականս:

68 Բայց թերեւս ասասցէ ոք. ահա երիցս անգամ երեւեցաւ Տէր ի նմին տան, ընդէ՞ր ի պետրոսեանս փչեաց եւ ասէ՝ առէք զՀոգին Սուրբ ի ձեզ, եւ թովմայի զայս ոչ արար. զի եթէ կատարուին տուչական շնորհին Հոգին սուրբ է, երեւի թէ Առաքեալս այս զրկեցաւ: 69 Ասացից եւ վասն այդր որչափ եւ ի կարի է, ոչ նորոգս եւ ոչ այլաձայնս, այլ զոր գիտէք ամենեքեան եւ հաւատովք ընդունիք: 70 Սուրբ Հոգին Աստուծոյ արարող զաւրութիւն է, եւ գութ սիրոյ իւրոյ թափանցէ ընդ արարածս. այլ ինքն յինքեան իմանի անհատ եւ անբաժանելի. եւ ոչ յինքենէ շնորհքն, այլ շնորհքն ի նմանէ. եւ ոչ յինքենէ պարգեւն, այլ պարգեւատու ամենայնի: 71 Եւ որպէս Հայր իւր յանձնէ էութեամբ, սոյնպէս եւ Սուրբ Հոգին ըստ Հաւր եւ Որդուոյ: 72 Արդ յասելն Որդուոյ ցաշակերտսն՝ ողջոյն ընդ ձեզ, Հոգուով Սրբով լցան ամենեքեան. իսկ զի փչեաց ի նոսա, զառաջին արարչութիւնն յերկրորդում աստ յիշեցոյց, եթէ որ արար զմարդն աս

^Է Տէ՛. Թ. Գ. Ի. 26-28:

^Է Թ. Գ. Ի. 28

ուձին, նոյն եւ որ եկն եւ փրկեաց եւ նորոգեաց: 73 Իսկ յասելն՝ առէք զՀոգին Սուրբ ի ձեզ, իմացութիւն տեսական: 74 Որպէս զգեցաւ Որդի մարմին բնութեան մերոյ կամաւք Հաւր, նոյն կամք են եւ Հոգւոյն Սրբոյ. զի որպէս Որդի զգեցաւ զմարդկութիւն, նոյնպէս եւ մարդկութիւնս զգեցաւ զՀոգին Սուրբ, զի ի ձեռն Սուրբ Հոգւոյն զգեցեալ իցեմք զորդիութիւն եւ զհայրութիւն: 75 Եթէ ոչ այսպէս էր ճշմարտիւ, զիա՞րդ կարէաք ասել հայր մեզ զԱստուած, եւ եղբայր մեզ զՔրիստոս, եւ նորոգումն մեզ զՍուրբ Հոգին. զի ոսկր եմք յոսկերացն Քրիստոսի, ապա եւ միտք ի մտացն Հաւր, նոյնպէս եւ զաւրութիւն Հոգւոյն Սրբոյ:

76 Ապա եթէ դարձեալ ոք հարցանիցէ, եթէ դո՞ւ ասացեր՝ անհատ եւ անխառն զաւրութիւն Սուրբ Երրորդութեանն, ես ոչ յուրաստ լինիմ յիմոց ասացելոցն, եւ ոչ քումդ ընդդիմանամ, եւ ոչ զարարիչն ընդ արարածս համեմատեմ, եւ ոչ զանշարժելի բնութիւնն խախտեմ: 77 Քանզի անյեղեղուկ է աստուածութիւնն. իսկ մերս անկեալ դնի ընդ բազում ապականութեամբք եւ փոփոխմամբք, եւ կարաւտ է աւգնականի արարչական զաւրութեանն. զի որ արարն, նոյն նորոգեսցէ յանապականութիւն: 78 Եւ որպէս բազում անգամ ասացաք, նորոգումն ի ձեռն փչմանն յաշակերտսն՝ ետ զՀոգին Սուրբ, եւ նովին Հոգւովն նորոգելոց է զամենայն արարածս, եւ առաւել զբնութիւն մարդկութեանս մերոյ. բաժանէ ի մասունս բազումս, եւ պիտոյ է մի Հոգի ի կապ եւ ի զաւր ամենեցուն, որպէս եւ ոք յիւր մարմնի ուսցի ճշմարտապէս:

79 Բայց իմ գքեզ աղաչեցեալ, այդրէն գքեւ ի քեզ հայեաց եւ տես զխառնուածս քոյոյ բնութեանդ. մարմին մի է, եւ անդամք բազումք, եւ իւրաքանչիւր ադամքն ի բաժանմունս են անքէն եւ աննախանձ

եւ յոյժ սիրելիք միմեանց եւ վաստակաւորք ամենեքեան: 80 Իսկ յորժամ ընդունին զհատուցումն ըստ իւրաքանչիւր վաստակոց, ոչ ոք ի նոցանէն առանձին զպարգեւն իւր համարի. եւ մանաւանդ եթէ իցէ նահատակութիւնն ընթացից ոտին, եւ կամ կորովութեան ձեռին, կամ ճարտարութեան բանի, կամ մտաց առատութեան յիմաստութիւն, եւ կամ բնաւ իսկ որոյ եւ իցէ մասանց մարմնոյն: 81 Քանզի ոչ եթէ խառն ի խառն ընթանան, այլ կարգաւ աւրինաւորք են՝ ըստ դրական թուոց մասանց մարմնոյն: 82 Արդ ասա դու ցիս, ո՞ ի նոցանէ ընդունիցի զպարգեւն: 83 Ես գիտեմ՝ ընթանաս դու ի գլուխն, այլ ոչ նախանձին ոտքն. եւ եթէ ձեռքն ընկալցին, ոչ ինչ զչարին այլքն. թէ միայն ի մարմնի իցէ պատիւն, հասարակաց է խնդութիւնն: 84 Նա եւ անուն զոր ունի մարդն, դրական է եւ ոչ բնական, իբրեւ ոչ է նա գործակից քաջ նահատակութեանն. յառաջ քան զմարմինն անունն վկայեալ եւ պատուի եւ պակի. զվէրս եւ զսպիւս մասունք մարմնոյն ունին, եւ զքաջութիւն՝ անուն ժառանգէ. իսկ անդամք ամենայն խնդացեալ բերկրին ընդ անուանն, եւ այնպէս միաբանութիւն լինի բազմութեանն ամենայնի: 85 Իսկ արդ եթէ առ մի մարդս այսպէս երեւի, ո՞րչափ եւս առաւել ի ձեռն որդւոյն Աստուծոյ, որ զգեցաւ զմի մարմին ըստ թուականի միոյ մարդոյ, եւ միով մարդով ունի զամենայն մարդկութիւնս:

86 Արդ եթէ փչեաց ի նոսա, եւ ասէ՝ առէք զՀոգին Սուրբ ի ձեզ, թուով են որ ի ներքս են. այլ ոչ գիտեմք եթէ ամենեքեան ընկալան զՀոգին Սուրբ: 87 Նա եւ ոչ ի վարան տարակուսի պիտի անկանիլ յայսմ տեղւոջ. քանզի ոչ եթէ տեղին էր որ սրբէր զմարդիկն եւ արժանիս առնէր ընդունել զՀոգին, այլ տէր տեղւոյն. զի վասն տեսուն սուրբ երեւի տեղին: 88 Եթէ վասն Տեսուն լինիցի ամենայն, Տէրն յամենայն

տեղևոջ է. եւ մինչ էրն յերկինս՝ յերկրի էր, եւ մինչ յերկրի էր՝ յերկինս, եւ մինչ ի տան էր՝ յաշխարհի էր եւ յամենայն տեղիս եւ առ իւրաքանչիւր մարդոյ եւ մարդկան. ապա եւ ընդ թողմայի էր. ապա ուրեմն եւ յամենեսեան:

89 Եւ փշեաց ի հաւատացեալսն: 90 Այո՛. իսկ ի թերահաւատսն՝ թէ եւ ի ներքս ի տան էին՝ եւ ոչ յոք: 91 Լուր նմին իսկ Տեառն յասելն ցթովմաս՝ ոչ գովելով, այլ պարսակելով. Այդ զի տեսերդ դու զիս եւ հաւատացերդ, երանի որ ոչ իցէ տեսեալ եւ հաւատացէ յիս^ա: 92 Իսկ արդ փո՞քր ինչ համարիցիս գերանութիւնս զայս. զի եթէ մարդ մարդոյ երանի տայր՝ սակայն եւ այն մեծ էր, թող թէ Աստուած մարդոյ երանէ. զի թէ ի հաւատալ մարդոյն որ ոչ էր զնա տեսեալ՝ երանի ետ, զի՞նչ ինչ կարծես գերանութիւնս զայս, բայց եթէ զՀոգին Սուրբ:

93 Եւ եթէ դարձեալ ասիցես: 94 Ահաւասիկ պետրոսեանքն հաւատացեալք էին, որպէս դու ասես, եւ զՀոգին Սուրբ ընկալեալ էին, կրկին փշումն զի՞նչ պիտոյ էր: 95 Դու իբրեւ զմարդ հարցանես եւ իբրեւ զմարդ տգիտանաս. զաներեւոյթսն Աստուծոյ ոչ գիտես, նմա եւ ծածուկքն մեր յայտնի են: 96 Նա եւ քեզ աւաղիկ վերստին իսկ պիտոյ է ոչ փշումն, այլ նախ հաւատք, եւ ի ձեռն հաւատոցն ապա կարես ընդունել զսուրբ փշումն՝ ոչ բերանով եւ ոչ ըռննգամբք, այլ իմանալի զգայութեամբն Աստուծոյ: 97 Դու զի՞նչ գիտես թէ ո՛յք էին ի տանն եւ քանիք էին: 98 Ոչ վայրապար ինչ ասացի. եւ զի՞նչ պիտոյ էր նոցա: 99 Ո՞չ ասացի եթէ յոյժ դղրդման ժամանակք էին, եւ ամենեքեան ի շարժման էին, թէպէտ եւ հաւատովք հաստատեալ էին, սակայն եւ մխիթարութիւն հա-

ւատացելոցն պիտոյ էր մատուցանել. եւ մխիթարիչ միայն Սուրբ Հոգին է:

100 Բայց այն զի ասացի թէ ո՛յք էին անդ եւ քանի՞ք էին, ոչ վայրապար ասացի. քանզի խռովութեան պատճառք ոչ այլ ոք է, բայց մեղք, եւ մեղաց զաւրութիւն՝ սատանայ, եւ սատանայի զաւրութիւն՝ դեւք: 101 Արդ փշելով Տեառն յԱռաքեալսն, ասելով՝ առէք զՀոգին Սուրբ ի ձեզ, դեւք հալածեցան, սատանայ յետս չողաւ, մեղք կորեան, Առաքեալքն լցան Հոգևով Սրբով: 102 Բայց ասելով՝ առէք ի ձեզ, ոչ ես բռնաբար տամ. քանզի աստուածային Հոգին յանձն երկմիտ ոչ մտանէ, եւ ի հոգի նենգաւոր ոչ բնակէ, այլ ի մարմինս սուրբս եւ յոգիս յստակս եւ ի միտս հաստատեալս: 103 Առէք, ասէ, ի ձեզ կամաւք ձերովք, եւ կատարեցէք զկամս Սուրբ Հոգևոյդ:

104 Բայց զփշեաց յորժամ լսես, քաջիմաց լեր, մանր քննեա, սրատես լեր մտաւք առաւել քան աչաւք: 105 Քանզի զանուն ուրուք ոչ ասաց, եւ առանձինն յոք ոչ փշեաց. այլ ի նոսա, ասէ, փշեաց. եւ ի նոսա ասելովն՝ ըստ գրեցելումն երեւի՝ թէ որք ի տանն էին. իսկ ըստ իմանալոյն՝ յամենայն աշխարհ. եւ յամենայն աշխարհ ասելով՝ երեւի թէ յամենայն մարդ. եւ յամենայն մարդ ասելով՝ ի ձեռն ճշմարիտ հաւատոցն. քանզի ուր հաւատք են, անդ եւ Աստուած. եւ ուր Աստուած է, ամենայն ոք անդ է:

106 Արդ Առաքեալս այս իբրեւ լուաւ ի պետրոսեանց, եթէ տեսաք մեք զՏէր, եւ զայս ինչ խաւսեցաւ ընդ մեզ, եւ սորա թէ հաւատովք ընկալեալ էր զլուր տեսեանն, նոյն յայտնութիւն էր նմա, նոյն ողջոյն էր ընդ նմա, նոյն փշումն էր նմա, նոյն Սուրբ Հոգին երեւէր նմա. որպէս եւ Տէրն ինքնին ասէ. երանի որոց ոչ իցէ տեսեալ, եւ հաւատացեմ յիս^ա: 107 Եւ որպէս վերագոյն ասացաք, եթէ միոյ մարդոյ մի

^ա Յովհ. Ի 29

մարմին է, եւ մասունք բազումք, եւ միաբանութիւն առ հասարակ, ապաքէն եւ աշխարհս մի նիւթ՝ միոյ ձեռին արարած, եւ ի բազում տեսակս բաժանեալ, եւ սեռք տեսակացն ըստ իւրաքանչիւրոցն զոյգք եւ հաւասարք առ մի անդր հային ամենեքեան, ուստի զգոլն եւ զկեալն ունին յԱստուծոյ. եւ ամենեցուն իշխան եւ առաջնորդ՝ մարդ, եւ առաւելեալ քան զամենեսեան բնական խոհականութեամբ, եւ ստացական առաքինութեամբք. երկոցուն կատարումն՝ յորդին Աստուծոյ հաւատալ:

108 Արդ առ որում գտանին հաւատք ճշմարիտք, ի նմա տեսանին ամենայնքս՝ որ են առանց ախտից եւ չարչարանաց. որպէս եւ մեծն Մովսէս ունէր փշուճն ի Հոգւոյն Սրբոյ, եւ ի նմին շնորհաց Հոգւոյն զոր ունէր Մովսէս տուչութեամբն Աստուծոյ՝ լնուին եաւթանասուն եւ երկու ծերքն, եւ մարգարէանային ի մէջ ժողովրդեանն. եւ Մովսէս ի Հոգւոյն Սրբոյ շնորհացն ոչ թերացաւ. թէպէտ եւ արկին ոմանք նախանձուկս, նա եւս առաւել լցեալ Հոգւով Սրբով՝ ըղձանայ զամենայն ժողովուրդն Տեառն դառնալ ի մարգարէութիւն: 109 Ապաքէն նոյն Տէր է, որ Մովսէսի շնորհեաց զՀոգին Սուրբ, եւ ի տանն նա փչեաց զնոյն հոգի: 110 Զի ի ձեռն սակաւ թուականին անթիւ են բազմութիւնք հաւատացելոց ի Քրիստոս. ընկալցին զնոյն շնորհս Հոգւոյն անքէն եւ աննախանձ: 111 Քանզի ոչ եթէ մասն է պարգեւն, այլ ամենայն մասունքն աստուածատուր շնորհին, որով արար զերկինս եւ զերկիր եւ զամենայն գոյսս որ ի սոսա:

112 Բայց թերեւս ի թիւ երկոտասանիցն յոյժ խնդրելի է՝ յորս փչեաց զՀոգին Սուրբ, թէպէտ եւ ոչ ամենեցուն. սակայն այնքիկ որ սիրեն մեծապէս կամաւք զիմաստութիւն ոգւոց եւ մարմնոց, ստացին ի վիճակս երկոտասան Առաքելոց, որ լի-

նին երբեակ չորք, եւ վեց երկու. եւ ի միասին գլխաւորելով լինի երկոտասան. որ է սկիզբն միակին ի գլուխ երկոտասանիցն փշուճն Սուրբ Հոգւոյն. եւ ի միոջէն եւ յերկուցն եւ ի չորիցն լնու եւ կատարի եաւթներեակ թիւն. զի ի վեցի անդ տեսանիցի աշխարհարարութիւնն, եւ ի միականին՝ կատարումն եաւթներեակին, եւ ի չորրորդումն՝ նիւթական գոյացութիւնս: 113 Իսկ ի միում վեցեկին երիւք կրկնակաւք լնու երբեակ թիւն, եւ բերէ զնմանութիւն զանեղին եւ զանսկզբնաւորին զինքնագոյ զաւրութեանն: 114 Իսկ միակ երիցն գեր ի վերոյ անուն եւ անճառելի, միայն իմանալի, որ է անբաժանելի. յերիցն լինի եւ պատարուն երբեակ թուոյն: 115 Դարձեալ եւ ըստ եաւթանն տեսանի գոյացութիւնն եւ մերոց զգայութեանցս, որ բաժանեալ է յեաւթն մասունս տեսակաց՝ աչաւք եւ ընչաւք, ականջաւք եւ բերանով: 116 Եւ որպէս ի սկզբանն լինելութեան ի ձեռն սորին թուականի աշխարհ գոյացաւ ի պատճառէն, որ ունի զնմանութիւն միակին՝ աւուրբք վեցիւք, յորում սեռք լինելութեան գոյացան. իսկ յառաջխաղացութեան աճմանն ի միակին՝ որ է եաւթներեակն, ի թիւ անկեալ ընդ վեցեկին՝ աճէ եւ բազմանայ եւ լնու երկոտասան թիւն, յորում եւ ամենայնքս տեսանին՝ երկնայինք եւ երկրայինք. երկնայինքն՝ արեգական եւ լուսնին, հինգ մոլորականքն եւ եաւթն անմոլար աստեղքն, որ լինին եաւթներեակ երկու. եւ յայս երկու եաւթներեկացս գոյանան ամենայն լինելութիւնք ախտաւորացս, որ են պատճառք կելոյ եւ տեւողութեան աշխարհիս: 117 Դարձեալ նովին թուականաւ եաւթներեակ՝ ունին երկինք եաւթն պարունակս, որ անուանին գաւտիք, եւ են յարկք աւգեղէնք անջրպետեալք ի միմեանց բացատ միջոցաւն, շրջագայ կազմութիւնն հրամանաւ արարողին ոչ միայն կելոյ պատճառք ի ներքոյ արեգական, այլ եւ

կելոյ եւ բարի կելոյ, եւ տեսական խոհականութիւն յերկնաւոր իմաստութիւն. զոր եւ մարգարէն Նսայի ասէ լցեալ Հոգւովն Տեառն, եւ տեսեալ զամենայն արարածս զի են մեծամեծք եւ սքանչելիք, եւ ի սմա իմանի սորին արարիչն եւ հաստատիչն, եւ լուեալ եւս ի նմին Հոգւոյ որ ասէ՝ ի բերանոյ Դաւիթ. Իբրեւ զի մեծ են գործք քո Տէր, եւ զամենայն ինչ իմաստութեամբ արարեր^ա: 118 Եւ մեծ իսկ են արդարեւ, զի Աստուած ի գործս իւր տեսանի. եւ իմաստութեամբ են, զի Քրիստոսիւ արարեալ է. եւ Քրիստոս Աստուծոյ զաւրուծիւն եւ Աստուծոյ իմաստութիւն: 119 Եւ որպէս էր իմաստութեամբն Աստուծոյ որ է Քրիստոս, նոյնպէս եւ Հոգւովն Սրբով. որպէս եւ նոյն Դաւիթ ասէ. Հոգւով բերանոյ անրա ամենայն զաւրութիւնք անոցա^բ. նորայն ասելով՝ զՀաւրն՝ Հոգւովն, իսկ նոցայն՝ լինելութեանս: 120 Արդ ուր ասէն երկիմք պատմեմ զփառս Աստուծոյ^գ, զաստուածութիւնն յայտ առնէ. իսկ ուր զամենայն ինչ իմաստութեամբ արարեր, անդ զորդին Աստուծոյ ասէ. իսկ ուր բերան եւ Հոգի ասէ եւ զաւրութիւն, անդ զՀոգին Սուրբ զէակիցն Հաւր եւ Որդւոյ:

121 Բայց Նսայի ի շնորհս Սուրբ Երրորդութեանն՝ ըստ եաւթն պարունակացն երկնից բաժանէ յեաւթն մասունս զտուչութիւն նորին Հոգւոյն, եւ բունն հարկանէ զերկնէ եւ զերկրէ, եւ ածէ ի մի միաբանութիւն, եւ ասէ այսպէս. Բղխեսցէ զաւազան յարմատոյն Յեսսեայ, եւ ելցէ ծաղիկ յարմատոյ անտի. եւ հանգիցէ ի վերայ անրա Հոգի Աստուծոյ, Հոգի իմաստութեան եւ հանճարոյ, Հոգի խորհրդոյ եւ զաւրութեան, Հոգի զիտութեան եւ աստուածպաշտու-

թեան, եւ լցցէ զնա Հոգի երկիւղի Աստուծոյ^դ:

122 Արդ բազում անգամ ասացեալ զեաւթներեակ թիւն՝ որ է վերաբեր բնութեանն, մարգարէս Նսայի բոլորեաց բովանդակեաց՝ ած եւ կատարեաց ի բանն Աստուած, որ արար զերկինս եւ զերկիր անդստին ի սկզբանց. զինքն յարարածս կերպարանեալ տպաւորեաց, եւ յիւրն եկեալ զիւրսն առնու, զիւրն զգենու: 123 Եւ զգեցեալ ոչ դիպուածով եւ ոչ յայլ ընդ այլոյ պատահումն, այլ զինքն ձեւացոյց երկնիւ եւ երկրաւ եւ միջոցաւ. երկնիւ՝ ըստ միակին, որ է Աստուածն բան. եւ երկրաւ՝ որ է մեր հողեղինութիւնս. իսկ միջոցաւ՝ թուական գաւտեաւք՝ ըստ եաւթն զգայութեանցս: 124 Զի որպէս առ զհողուտ մարմինս մեր, որ է մասն երկրի, նոյնպէս եւ զաւրեղէնն եւ զհրայինն որ յերկնէ, եւ ի մեզ Քրիստոսիւ են. զսոյն եւ Տէր յինքեան մարմին ունէր, յոր կատարի ամենայն ինչ. քանզի նովա է սկիզբն լինելութեան եւ կատարումն նորոգման նորոյ աշխարհի: 125 Եւ քանզի զգայութիւնքս որ ի մեզ են՝ անաւարագոյն բնութիւն են քան զթանճրութիւն մարմնոյս, յանգութիւն ունին իմանալի խոհականութեան, զոր եւ մարգարէն Հոգւոյ մասունս ասաց: 126 Եւ ճշմարիտ. քանզի ականջաւքս լսեմք Աստուծոյ, եւ աչաւք տեսանեմք զարարածս՝ յորում իմանի Աստուած, եւ ընդնգամբքս ծծեմք զշունչ աւդոյս՝ որ է կենդանութիւն ամենեցուն, եւ ճայնաւոր գործեալս բերեմք փառատրութիւն Աստուծոյ փոխանակ արարածոցս:

127 Իսկ եթէ առ մերս այսպէս է, զի՞նչ ինչ իմանայցեմք առ տէրունի զգայութիւնսն: 128 Կայ յերկրի, եւ աչաւք տեսանէ զՀայր յերկինս. շրջի ի Գալիլեա, եւ հոտ Ղազարու մահուն ազդի նմա ի հե-

^ա Սաղմ. ճԳ. 24

^բ Սաղմ. 1. Բ 6

^գ Սաղմ. ԺԲ 2

^դ Ես. ԺԵ 1

ուստանն: 129 Մեկնիչն ընդ միտս իւր յոգիսն հայհոյէր ասելով. Սա եթէ մարգարէնք էր, գիտէր՝ զիարդ ոչ՝ որպիսի կին մերձենայ ի սա: 130 Իսկ Տէր իբրեւ զբարձրաձայն զաղաղակ լուեալ՝ յանդիմանէ զնա առակաւք պարտապանաց երկոցունց հաւասարաբերական բանիւք ըստ մերում նմանութեան: 131 Եւ առանց ականջաց լսեն նմա ամենայն տարերք, ջուրքն ի թակոյկսն, նկանակն ի ձեռին, հողմք ի ծովուն, մեղք ի մարդկան, մեռեալք ի գերեզմանս:

132 Արդ այս է զոր մարգարէն Եսայի ասէ՝ եկեցէ եւ հանգիցէ ի վերայ նորա եաւթն հոգի, ի ձեռն եաւթն զգայութեանցս զոր էառ Տէր, եւ գործեաց զամենայն կատարելութիւնս Հոգւոյն Սրբոյ, եւ յինքն բովանդակեաց զեաւթներեակն երկնային, եւ զեաւթներեակն զերկրային, որ է սկիզբն առաջինն, եւ կատարումն վերջինս. քանզի սկսանիմք ի միակէն՝ որ է հիմն եւ հաստատութիւն, եւ կատարեմք յեաւթներեակն՝ որ է ծայր եւ յանգումն ոչ թուական մասինն, այլ տեսական իմաստութեանն: 133 Քանզի ի վեցն, ասէ, արար Աստուած զամենայնքս, եւ յեաւթներորդումն հանգեաւ: 134 Եւ հանգչի՞ Աստուած. եւ ոչ երբեք: 135 Եւ զիա՞րդ կարացից ասել նմա հանգչել՝ այն որ ոչն վաստակէ: 136 Այլ քաջ իմացեալ անգամաւ զինչ է հանգչելն Աստուծոյ, բայց եթէ կատարեսցին կամք նորա: 137 Եւ ո՞ր երբեք յեղելոց աստի կարաց հաճոյ լինել Աստուծոյ եւ հանգոյց զգատողական զաւրութիւն նորա. բայց միածինն ի Հաւրէ եւ կուսածինն յերկրէ, որով զամենայն արար Աստուած, եւ նա եկն գործեաց զամենայն հաճոյս Աստուծոյ: 138 Ապա ուրեմն այս է աւրն եաւթներորդ, յորում հանգեալն ասեմք Աստուած. քանզի ի վեց աւուրսն ամենայն ախտականքն եղեն, եւ Աստուած հեռի է յախտից եւ ի չարչարանաց: 139 Բարի անուանեաց, այլ ախտս ոչ.

քանզի յախտաւորաց անտի մարթի բարի լինել, այլ ոչ առանց չարչարանաց եւ ճգնութեան: 140 Իսկ ուր առաքինութիւն է, անդ եւ բազում ճնշումն մարմնոյ տեսանի. իսկ ուր մարմնոյ ճնշութիւն է, անդ եւ աւուրք եւ ամիսք եւ տարիք եւ ժամանակք ընդ ապականութեամբ են անկեալք: 141 Վասն որոյ ի միում աւուրն եւեթ հանգիստ սուրբ, որ անուանեալն է շաբաթ, եւ թուականաւ եաւթներեակ. եւ եաւթն թիւդ բերէ զնմանութիւն անծնի, եւ անծինն զանեղի, եւ անեղն ունի զարարչական զաւրութիւնն:

142 Արդ ի վեց աւուրս տեսանի հազար ամն, յորում ամենայն աշխարհս անկեալ էր ընդ ապականութեամբ, մինչեւ եկն եհաս թիւ եաւթներեկին՝ զոր ի վերանդր շաբաթ անուանեաց, եւ հանգիստ զնա համարեցաւ: 143 Այս է գալուստն Տեառն, որ եմուտ դրաւքն փակելովք, եւ սրբեաց եւ մաքրեաց զաղտ վեց աւուրց առաջնոց. եւ անուամբ եաւթներեկին՝ որ է կոյս եւ անծին ի մահկանացու գոյացութեանցս, եւ բազմածնունդ առանց ախտիցն եւ չարչարանացն, զայն զաւրութիւն շնորհեաց երկոտասան Առաքելոցն, որով զաշխարհս յարդարեսցեն եւ կազմեսցեն ի վեցիցն ի դարն եաւթներորդ. զի իցեն բազմաբեղունք յարդարութիւն, եւ անծինք իցեն ի չարութեանէն եւ յատելութեանէ եւ յամենայն ապականացու պիտոյից աշխարհիս. որպէս եւ նոյն իսկ երկոտասան թիւ Առաքելոցն ունի տեսութիւն ի ձեռն գլխաւոր միակին՝ որով բարձին զախտ յաշխարհէ, ըստ երկոտասան մասինն որ յայտնութեամբ տեսանիւր ի հիւանդութեանն տեռատեսին երկոտասանամեայ: 144 Քանզի կինն զցաւն առանձինն միայն ունէր. իսկ աշխարհ ի ծածուկ տանջեալ լինէր երկոտասան մասամբք տուրնջեան եւ գիշերոյ. քանզի աւրն ունի զթիւ երկոտասան ժամուց, եւ զոյգ նմին՝ գիշերն, եւ ի ժամու անդ աւր մի ըստ թուա-

կան աւուրց ամսոյն, եւ աւրն ողջոյն գիշերային մասամբքն հնազանդեցան ունայնութեան: 145 Եւ ունայնութիւն ասեմ ի բարեգործութենէ. իսկ որ ի բարւոյն ունայնացեալ է, լի է անարգութեամբ: 146 Եւ անարգութիւն ասեմ զվրիպելն ի ճշմարտութենէ, եւ վրիպումն է թողուլն զԱստուած:

147 Եւ քանզի ի սկզբանէ մարդիկ զհետ թշնամւոյն գնացին, եւ կամաւք ի հնազանդութիւն մտին ամենայն ապակաւութեան. առաջին թողուլն զԱստուած. երկրորդ ձեռագործաց երկիր պագանել. երրորդ անզգայիցն զոհել. չորրորդ անխտիր լինել յապականութիւն. հինգերորդ զպատկերակից իւր սպանանել. վեցերորդ ագահութիւն, որ է արմատ դառնութեան. հաւթներորդ ատելութիւն, որ է անպտղաբերութիւն արդար մասինն. ութերորդ գողութիւն, որ է սկիզբն աւերածոյ աշխարհիս. իններորդ յափշտակութիւն, որ գրգռէ զպատերազմունս. տասներորդ ստութիւն, որ է ուրացութիւն յԱստուծոյ. մետասաներորդ ամբարտաւանութիւն, որ է բեկումն ոգւոց եւ մարմնոց. երկոտասաներորդ պտուղ մահու, զոր ժառանգեցաք յապականութիւնս:

148 Արդ այս երկոտասան մասամբք ամենայն աշխարհ անկեալ էր յախտ հիւանդութեան, եւ բղխէր ի սմանէ արիւն աներեւոյթ վիրացն. եւ բազում անգամ ջանայր առ բժիշկս, ոչ զի ողջացուցանէին միայն ոչ՝ այլ եւ յոյժ վէրս ի վերայ վիրացն դնէին. եւ ոչ միայն ի մարմնոցն հոսէր արիւն, այլ եւ յաներեւոյթ եւ յանարիւն ոգւոցն, որ էր բխումն աներեւոյթ ապականացու: 149 Քանզի ի վեր հայելով յերկինս՝ տեսին աստեղս եւ մոլորեցան, որ են պատճառք ժամանակեայ կենացս. զանժամանակն Աստուած ընդ նոսա փոխանակեցին եւ աստէն յերկրիս ըստ երկոտասան թողոց, ի նմին զորս քերթողք առասպելա-

բանեցին՝ ասելով այսպէս. էր ոմն մեծ, ասեն, եւ առ նմին անհուն ժամանակ. եւ ի մերձենալ նոցա առ իրեարս, ծնան որդիս վեց, որում Տիտանս նկարագրեցին. եւ զոյգ ընդ նմին էգս, զորս Տիտանիսն ասացին, եւ ծնունդս կարգեցին, եւ զախտս անձանց մարդիկ յերկրէ յերկինս ձգեցին. անդ ի վեր գումարելով յաստուածութիւնն մեծամեծ հայհոյութիւնս արձակեցին:

150 Եւ այսու երկոտասանիւքս զպարգութիւն ոգւոցս իբրեւ թանձրացեալ մարմինս՝ յարեան թաթաւեցին երկոքումբք մասամբքս՝ հոգւովք եւ մարմնովք. ոչ միայն զոհեցին, այլ եւ զոհեցան: 151 Եւ զոհեցան ասեմք՝ աչք անառակութեամբ հայելով, եւ ականջք՝ լկտի ձայնս լսելով. ուրնգունք ի ճենճերս եւ ի ծուխս. եւ ճաշակաւորութիւն՝ անյագութեամբ ըստ անասնական բնութեան, ուստի բազմանայ անառակ ցանկութիւն. եւ ամենեքեան թաթաւեցաք յարիւն աղտեղութեան գործոց մերոց. եւ վասն մեր աւրն պղծեցաւ, եւ յաւուր անդ ժամքն երկոտասան եւ տարին, եւ ի տարւոջ անդ ամիսք երկոտասանք. եւ ահա միանգամայն եւ երկիրս ամենայն:

152 Եւ եթէ երկրայնովքս երկիրս պղծեցաւ, եւ երկնայնովքն երկինք, արդ ի բժշկել Տեառն զկինն երկոտասանամեայ տեռատես, որ էր նշանակ ցաւոց աշխարհիս, պիտոյ էր ապաքէն եւ զաշխարհ բժշկել: 153 Զի ոչ եթէ Տէր վասն մասինն միայն եկն յաշխարհ, այլ վասն ամենայն մասանց աշխարհիս: 154 Բժշկեաց զմի մասնն. զի ի ձեռն միոյ մասինն ուսցին ամենայն մասունքն ընթանալ առ նոյն բժիշկն, եւ բուռն հարկանել ոչ զնոյն դրաւչակէ, այլ զչոգւոյն Սրբոյ, եւ զչոգին Սուրբ տեսանիցեն յերկոտասան Առաքեալսն: 155 Քանզի կինն ոչ եթէ զձորձոյն բուռն հարկանելով էառ զառողջութիւնն, այլ յառաջ քան զհանդերձիցն՝

զհաւատոյն բուռն եհար, եւ ստանալով զհաւատսն՝ արժանի եղեւ ոչ միայն ի ցաւոցն ապրել, այլ եւ զաստուածութիւնն Որդւոյն տեսանել: 156 Եւ տեսեալ ուրուք զԱստուած, անդէն ի նոյն միացաւ ի նմա: 157 Որպէս եւ Տէր ինքնին ոչ միայն գովէ զկիսն, այլ եւ յոյժ զարմանայ. Ոմն, ասէ, մերձեցաւ յիս. եւ գաւրութիւն, ասէ, քազում գմաց յիմէն: 158 Զմերձեանալն իբրեւ լսես, զմիանալն ընդ Աստուծոյ իմաստիւր, իսկ զաւրութիւն բազում գնաց յինէն՝ Հոգին Սուրբ պահապան եւ պաշտպան կնոջն հաւատոց:

159 Արդ եթէ մին մարդ այսպէս լցաւ անչափ մեծութեամբն Աստուծոյ, ո՛րչափ եւս առաւել երկոտասանքն, որք ընկալան զփշոմն աստուածային Հոգւոյն, եւ լցան անթերութեամբ, եւ լցին զամենայն աշխարհս առանց ապականութեան նովին Հոգւովն: 160 Եւ ոչ միայն զմարդիկ բժշկեցին, այլ եւ զաւր. եւ յաւուրս անդ զերկոտասան ժամ եւ զտարի, եւ ի տարւոջ անդ զերկոտասան ամիս: 161 Եւ զիա՞րդ բժշկիցի աւր: 162 Ասեմ. որպէս ախտացաւ, նոյնպէս եւ բժշկեցաւ. ախտացաւ ի կռապաշտութեան, բժշկեցաւ յաստուածպաշտութեան: 163 Ըստ երկոտասան ժամուց աւուրն՝ մոլորեալ էին մարդիկ յերկոտասան աստեղան. ուստի խաբէին զնոսա եւ պատրէին աստեղագէտքն: 164 Իսկ այսաւր ըստ երկոտասան ժամուց աւուրն՝ հնչին բարբառք մարգարէիցն յեկեղեցւոջ, եւ թարգմանին բանք երկոտասան Առաքելոցն, եւ բաշխեն զաւետիս կենաց ամենայն հաւատացելոց. որով մարդիկ յորդորին յառաքինութիւն, եւ փոխանակ առաջին մոլորութեանն՝ խաւսին զճշմարտութիւն եւ գործեն զարդարութիւն եւ տան պտուղ աստուածային՝ սրբութեամբ ամուսնութիւն, զկուսութիւն, զողորմածութիւն, զաւտարսիրութիւն, զյոյս առ Աս-

տուած, հաւատս ճշմարիտս, զսէր առանց երկմտութեան: 165 Եւ փոխանակ պղծագործ զոհիցն, որք հեղուն զարիւն անասնոցն՝ դիւաց նուիրելով, այսաւր մարտիրոսք կամաւք եւ ոչ բռնութեամբ հեղուն զարիւնս անձանց վասն արեանն Քրիստոսի:

166 Այս են երկոտասան Առաքեալք որք սրբեցին եւ սրբեն զամենայն աշխարհս: 167 Քանզի աւր է սկիզբն ժամանակաց, եւ աճեաց լցաւ եւ եհաս ի դարն վեցերորդ. եւ ի սրբել աւուրցս, որպէս եւ ասացաք, քարոզութեամբ Առաքելոցն, սրբեցան ամիսք եւ տարիք եւ ժամանակք եւ յաւիտեանք: 168 Զի եթէ սկիզբն սուրբ է, ապա եւ ամէնքն որ ի նմանէ առնուն զաճումն՝ սրբեցան: 169 Քանզի ոչ թիւ երկոտասան Առաքելոցն դիպուածով ինչ եկն եմուտ ի կարգ առաքելութեանն, այլ ի հեռուստ ժամանակաց յայտնութիւնք երեւեցան յԱստուծոյ տուչութենէն: 170 Առաջին երկոտասան որդւոցն Յակոբայ. որով թուով ազգն աճեաց եւ բազմացաւ, եւ ժառանգեաց զերկիրն պարգեւաց: 171 Դարձեալ եւ ի ձեռն Յեսուայ փոքր ինչ էր յայտնութիւն երկոտասան թւոց վիմացն, մանաւանդ զի կէսքն ելանէին եւ կէսքն իջանէին. իբրեւ յայտնի տեսիլ սքանչելեացն, որք ելանէին իբրեւ ի խաւարէ ի լոյս, եւ որք իջանէին ի լուսոյ ի խաւար: 172 Արդ հեթանոսք որք ընկղմեալ էին ի գործս մեղաց իւրեանց, ելին յանդնդոց ծովու մեղաց ի ձեռն երկոտասան Առաքելոց, որ են վէմք ճշմարտութեան. եւ հողմք եւ հեղեղք զնոսա ոչ կարեն շարժել, եւ ոչ անձրեւաց բռնութիւն: 173 Իսկ երկոտասան ազգապետքն վերջացան եւ մնացին, իջին եւ դադարեցին յատակս գետոյն ընդ ջրովն թանձրութեան, եւ անդէն եղեալ զնին մինչեւ ցայսաւր:

174 Նա թէ եւ յանապատն երթիցուք ի Գալիլեա, ուր Տէր զկարաւտութիւն ժո-

*** Ղ.Պ.Կ. Բ՝ 46

զովրդեանն լցոյց սքանչելեալք բազմութեան հացին, իսկ մնացորդքն ոչ աւելի եւ ոչ պակաս, այլ լի երկոտասան սակառի, ո՞չ ահա յայտնի է եւ այս տեսիլ սքանչելեաց: 175 Յառաջ քան զբազմանալ հացին՝ ունայն կրէին զսակառիսն, եւ լնուին ի մնացորդաց ճաշոյն: 176 Եւ կարի քաջ արժանապէս. զի Աստուած էր որ մատակարարէր. առժամայն յագեցոյց, եւ առյապայան մթերեաց զխոհականութիւնն: 177 Ըստ յայտնի գրեցելումն՝ սակառիքն որ լցան հացիւն, իսկ ըստ ծածուկ իմանալոյն՝ երկոտասան Առաքեալքն լցան շնորհաւք տեսառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ սփռեալ տարածեցան յերկոտասան կողմս աշխարհի, եւ լցուցին զչորս կողմս երկրիս, յորում բնակեալ են ամենայն ազգ հեթանոսաց:

178 Եկաք բազում անգամ շուրջ գտամբն, որպէս եւ յառաջն ասացաք, որ երկրացաւ եւ երկնացաւ, եւ բաւական եղեւ ընդունել զամենայն: 179 Թուի ինձ թէ եւս բազմագոյն պատեցաք զերկոտասան թուովս: 180 Զի թէպէտ եւ մեք ոչ կարացաք ըստ արժանին յառաջ մատուցանել, այլ յորժամ Տէր ինքնին սփռեալ տարածեցէ զսոսա ընդ ազգս ամենայն զաւրութեամբ Հոգւոյն Սրբոյ, յայնժամ կատարեսցի բան մարգարէին որ ասէ. Պատմեցի եւ ասացի, եւ բազում եղեմ քան զքիս՝. այսինքն եկեղեցիք հաւատացելոց ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք եւ զաւրութիւն այժմ եւ յաւիտեանս:

181 Դարձեալ միւսանգամ յայտնեաց Յիսուս զանձն իւր աշակերտաց իւրոց ի վերայ ծովուն տիբերացւոց: 182 Քանզի էին ի միոջ վայրի Պետրոս եւ Թովմաս եւ Նաթանայէլ, Յակովբոս եւ Յովհաննէս եղբայրն Յակոբայ եւ երկուք այլ եւս յաշա-

կերտաց անտի: 183 Արդ զի՞նչ առնէ զնոսա. ի տանէն եհան զնոսա. շնորհաւք Հոգւոյն Սրբոյ ելից զնոսա. յաշխարհ առաքեաց զի գործ գործեսցեն: 184 Նոքա յանհոգս եղեալ՝ պարապորդ չըլէին. եւ չըլէին ոչ այլ ուրեք, այլ անդէն զծովուն, եւ զհայրենի արուեստն ոչ կարէին թողուլ. այլ զնովիմբ գան, ի նոյն հոգան, ի նոյն կրթին, եւ զմոռացեալն անդէն կամէին յիշել: 185 Տեսանե՞ս որչափ է թանձրութիւն մտացն, չընդոստանային՝ այնչափ խրատեալք եւ վարժեալք ի Տեսառնէն. եւ թեքեալք եւ մխեալք ի Հոգւոյն Սրբոյ, եւ չեւ եւս են հատու, եւ այլ ուրեմն պիտի սրել:

186 Զի՞նչ խաւսիս, տէր իմ Պետրոս. ի ծովեզերդ նստիս, եւ վասն ծովուդ հոգաս, եւ զմակոյկդ կազմես. երթամք, ասես, ձուկն հանեմք: 187 Տեսանե՞ս, զայդ ասելով եւ ի դոյն կրթես զայլ Առաքեալսդ, եւ հարկ է դոցա զհետ քո գալ. զի ուր միտք կամին, ոտք անդր տանին. եւ միտք ի գլուխ են, եւ գլուխ Աշակերտաց դու ես: 188 Յորժամ դու ասես՝ երթամք ձուկն հանեմք, այլ զի՞նչ լսես ի դոցանէ. բայց եթէ ասեն ցքեզ, եթէ եւ մեք ընդ քեզ: 189 Եւ քանզի ուր եւ երթան իսկ, դու ես նոցա տուն եւ քաղաք եւ ամենայն ինչ զինչ եւ պիտոյ է երկրաւոր վիճակիդ ձերում, մի՛ դու եւ մի՛ մոռասջիր. թիւզ ձեր գեղեցիկ է. ահաւաղիկ եաւթն էք. ի ձեզ տեսանի աշխարհս, միանգամայն եւ տէր աշխարհիս: 190 Արդ ոչ է բարի դատարկութիւն ձեր: 191 Եթէ յապաստան անձանց պարապեալ էք, եւ այլ ինչ գործ ոչ է ձեր, անդրէն ի հրէաստան զնացէք, զյարութեան տեղեալն շրջեցարուք, զվիմաւն պատեցայք, զխաչիւն դիտեցէք. միտ դիք, տեսէք ո՛ւր թագուցին քահանայքն, նկատեցէք զտեղին: 192 Խնդիր լինելոց է վաղիւ խաչին. ոչ թողու Տէր զգէնն իւր ի հող, որով զթշնամին իւր եսպան, եւ զգերին թափեաց ի նմանէ: 193 Աչս ասէք

*** Սաղմ. 1. Թ. 6

զտեղեաւն, եկայք զդրաւքն. թերեւս անդ իցեն հրեշտակքն, որպէս զի են իսկ անդէն: 194 Ի Սիրովն երթայք, ելէք ի վերնատունն, հայեցարուք ի դուրսն փակեալս՝ ընդ որ եմուտ Տէրն. յիշատակեցէք զտեղին՝ ուր եկն եկաց ի միջի ձերում եւ ողջոյն ետ ձեզ, ուր եւ զՀոգին Սուրբ փչեաց ի ձեզ: 195 Յայս ամենայն կրթեցէք զանձինս ձեր, եւ ի սոյն խոկացէք, զի մի՛ մոռացին ի սրտից ձերոց մեծամեծ զաւրութիւնքն որ ի միջի ձերում գործեցան:

196 Ապա թէ ի հրէաստան երկնջիք երթալ, վասն զի անդ են Աննա եւ Կայիափա եւ ամենայն դառնաշունչ ժողովուրդն, թոյլ տուք, զայդ եւս չմեղադրեմ: 197 Անդ է մեծն Յակոբոս, որ բաւական է ամենայն իրաց առաքինութեան. եւ որպէս նա արդար է ի քարոզութեան յարուցելոյն, եւ աներկիւղս բարբառի ի մէջ խաչահանուացն, փութա ճեպեա եւ դու Պետրոս. մի՛ զայդչափ Առաքեալսդ խափաներ, զորս առեալ ի ծովեզրդ իջեալ ես: 198 Ոչ ասեմ՝ մի՛ ասեր երթամ ձուկն հանեմ: 199 Թէ այդպէս է, երթ. ո՞ գիտէ, դու քաջ իմանաս. ո՞ կարէ քեզ վարդապետ լինել. զի ահա աղբիկ դու ունիս շնորհս վարդապետութեան զՍուրբ Հոգւոյն. բայց ինձ թուի այսաւր՝ դեռ ի կարծ երթաս. քանզի ա՛յլ շնորհք են ձկնահանաց, եւ ա՛յլ այլոց արուեստից: 200 Դու ոչ զձկնահանաց շնորհ ունիս եւ ոչ զծովուն արուեստ նաւաց. զի թէպէտ էիր երբեմն՝ թողեր ի բաց, եւ թողուլն ոչ ի քէն եղեւ, այլ յայնմանէ որ ընտրեաց զքեզ. եւ եթէ կամիս՝ յիշեա զբանն զոր ասաց. Թողիք, ասէ, զորս արուեստի ձկնահանութեանդ, եւ արարից զձեզ որսորդս մարդկան՝. մարդկան որսորդ ես, ձուկն հանել այսուհետեւ դու ոչ կարես: 201 Եւ ելիմ, ասէ, ի նաւ, եւ զգիշերն ամենայն աշխատ եղեմ, կալամ եւ ոչ

իմչ՞: 202 Արդար եւ ճշմարիտ. գիշեր իսկ է ամենեցուն՝ որ առանց Աստուծոյ չըջին յաշխարհի. եւ ունայն է ծոց նոցա յորսոյ կենաց, զորս հաւատացեալք միայն ըմբռնեն աւգնականութեամբ Տեառն իւրեանց:

203 Արդ իբրեւ այգ եղեւ, ասէ, երեւեցաւ նոցա Տէր զի կայր յեզր ծովուն: 204 Եւ ո՞յր երբեք տեսեալ է, թէ յառաջ քան զլոյս՝ արեգակնն երեւեսցի: 205 Այս միայն ի ծովուն տիբերացւոց երեւեցաւ. իմանալի արեգակն յերկնէ յերկիր իջեալ՝ կայր առ ափն ծովուն, եւ յինքն ամփոփեալ պահէր զճառագայթս անմատոյց լուսոյն իւրոյ: 206 Եւ բարուք ասեմ եթէ ամփոփեալ պահէր. քանզի չիք հնար զայն արեգակն տեսանել: 207 Գայ զծովականն որպէս յառաջնումն նուագին, մինչեւ կրթեաց եւ եհան զնոսա ի ծովէն, եւ հասոյց ի վիճակ առաքելութեան. ըստ նմին կարգի եւ այժմ առնէ: 208 Մանկուցի, ասէ, ունի՞մք ինչ ուտելոյ: 209 Վասն մանկանց արդարեւ ուտելդ եւեթ. ես զձեզ վաղ կորցեցի հանի, ասէ, յաշխարհէ, եւ ի չափ արութեան հասուցի՝ ընդ բազում հանդէսս առաքինութեան անցուցեալ, մինչ զի եւ զՀոգի Սուրբ ընկալարուք՝ որով երկինք եւ երկիր կատարեցան. եւ դուք դարձեալ մանկունք էք, եւ զմանկականդ եւեթ խոկայք եւ զգոյլիմբ պատաղիք: 210 Տեսանէ՞ք, աւագին եւ այդ միանգամ առանց իմ ոչ կարէք լնուլ զպակասութիւն պիտոյից ձերոց, որովհետեւ ոչ ունիք ինչ. զի եթէ ունէիք, ոչ հարցանէի, այլ միայն բերել հրամայէի. վասն այնր հարցի, զի ոչ ունիք. ոչ եթէ ես ոչ գիտէի զձեր ունայնութիւնդ, այլ զձեզ ուսուցից զարդարն խոստովանել զտգիտութիւն անձանց ձերոց: 211 Եթէ կարաւտ էիք ձկան, եւ յոյժ պիտոյ էր ձեզ ի ժամանակիս, վասն որոյ եւ աշխատեալ էք զգիշերս ամենայն, ընդէ՞ր

՝ Տե՛ս. Մատթ. Գ. 19. Մարկ. Ը. 17:

՞ Տե՛ս. Յով. Ի. 3:
՛ Յով. Ի. 5

ոչ յիմ անունն արկէք զուռկանսդ. զի եւ տեղեակ իսկ էիք իմոյ անուանս: 212 Բազում անգամ լուեալ էք՝ յո՞յր անունն դեւք հնազանդեցան ձեզ. ո՞չ ահա յանունն Յիսուսի Քրիստոսի. Յիսուս Քրիստոս այն որ ի Նազարեթէն է, եւ Նազարեթ սահմանք են ձերոյ աշխարհիս, եւ մանաւանդ յայս ծովու եւ զսովիմք ծովեզերք այնչափ նշանք եւ արուեստք երեւեցան եւ բազում զաւրուծիւնք, եւ ձեր տակաւին չէ՞ր իմացեալ: 213 Ապա ուրեմն դեռ եւս ի սմին թանձրութեան մարմնի էք, եւ չեւ էք թեթեւացեալ յառաջին ծանրութենէն. ոչ ի զգայութենէդ ասեմ, այլ ի մտացդ սուղեցելոց, որ ոչ աճեցուցին զաստուածային տունկսն:

214 Արդ եկայք, ասէ զգործիսդ յաջակողմ նաւիդ արկէք. զի որ առանց իմ արկէք, գիշեր էր եւ ձախակողմ. իսկ զոր ինեւդ արկանէք, տիւ է եւ աջակողմ. եւ եթէ աջակողմ է՝ անդ գտանէք. եւ իբրեւ գտանէք, մի՛ զլանայք զշնորհս Հոգւոյն Արքոյ գիտութեանն, զի հաստատուն պահեսչիք յոգիս ձեր: 215 Եւ զայս արարեալ նոցա փակեցին ի ներքս բազմութիւն ձկանցն, եւ այնչափ բազում, մինչեւ կարաւտել նոցա աւգնականաց. եւ ի քարչել նոցա զուռկանն՝ մեծամեծ աշխատութիւն կրեցին, մինչեւ ածին ի ցամաքն: 216 Եւ Պետրոս յոյժ էր զարմացեալ ոչ միայն ընդ բազմութեանն, այլ եւ մեծամեծք եւս էին, եւ անչափք եւ բազումք, եւ սակայն գործին ոչ պատառեցաւ: 217 Քանզի եւ նոցա ոչ էր սովորութիւն այնպիսի որս ուրեք երբեք գտանել, նշանագործութիւն կարծեցին եւ ոչ պատահումն որսոյ. վասն որոյ եւ ասէ Յովհաննէս. Տէր է այն»: 218 Եւ ի բանիցն Յովհաննու եւ ի հրամանէն Տեառն՝ յաջակողմն ասելով՝ ընդոստեալ Պետրոս եւ ետ զինքն մերկ ի ծով, եւ վաղաքոյն քան զնաւն հասանէր առ Տէրն, եւ ահիւ եւ խնդութեամբ լցեալ՝ ոչ ինչ կարէր զարժանն իմանալ. այլ ի նոյն սովոր-

ութիւնն յառաջին ձգէր զմիտս իւր՝ իբրեւ կերակրոյ եւ հանգստեան կարաւտացեալ: 219 Վասն որոյ եւ Տէրն ողորմեալ նոցա՝ գտանէ ի տեղուջ անդ պատրաստութիւն ճաշոյ: 220 Այլ ոչ ոք յաչակերտացն իշխէր հարցանել՝ թէ դու ո՞վ ես. քանզի գիտէին թէ Տէր ինքն է: 221 Զգիտելն ահա գիտէին, այլ ոչ ըստ առաջին նմանութեանն: 222 Իսկ Յիսուս եւս քան զեւս մաւտ մերձեցոյց զնոսա, եւ ըստ առաջին սովորութեանն տայր նոցա աւրհնութիւն, եւ ընդ նոսին հաղորդի ի կերակուրս, եւ զԵրրորդութեանն յայտնութիւնն լնու եւ կատարէ յետ յարութեանն:

223 Այլ գիտեմ զինչ ասելոց էք ցիս. Զայդ ամենայն աւետարանագիրն պատմեաց մեզ. արդ առ ի՞նչ իցէ յայտնութիւն Տեառն ի վերայ ծովուն, եւ կամ բազմութիւն ձկանցն, եւ գործւոյն չպատառելն, եւ հացին եւ ձկանն ի վերայ կայծականցն գտանիլ: 224 Նոյն Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ մարգասիրութեամբ իւրով յայտնեաց զինքն աշակերտաց իւրոց, ցուցցէ եւ մեզ զծածուկս առակաց իւրոց՝ ոչ միայն ի վերայ ծովուն Տիբերեայ, այլ յամենայն ժամու եւ յամենայն տեղուջ. ոչ միայն զի գիտիցեմք եւ ասիցեմք զպատուիրանս նորա, այլ եւ սիրիցեմք զնա յամենայն զաւրութենէ մերմէ, ոչ ի պատճառս նշանաց միջնորդի: 225 Քանզի բազումք են ի մարդկանէ որ ի յաջողութեանց աշխարհի սիրեն զԱստուած. եւ են ոմանք որ ի ստգտանել ի գործոց իւրեանց՝ դառնալով յապաշխարութիւն սիրեն զԱստուած եւ նոքա. իսկ որ քաջքն են եւ կատարեալք յամենայնի, անդստին ի տղայութենէ նուիրեն զանձինս իւրեանց յաստուած պաշտութիւն, եւ ոչ են ի խնդիր նշանաց եւ արուեստից, եւ հեռի են յամալթալի գործոց աշխարհի: 226 Սոքա են որ գեր ի վերոյ են քան զերբեակ թիւն, ընդ որում ոչ ինչ համեմատի յեղելոցս ամենեւին: 227 Բայց սակայն աստուածութիւնն բա-

ըերար է, ընդունի զերեսին հատածն, եւ ամենեքին յաստուածային յարկան շրջին: 228 Եւ մեք, եղբարք, թէպէտ եւ ոչ յառաջնոցն իցեմք, սակայն զվերջնոցն զհետ երթիցուք. աղաչեսցուք զնոյն Տէր, զի եւ զմեզ ընկալցի ի գութ սիրոյ իւրոյ, որպէս եւ այլոցն շնորհեաց թողութիւն. եւ արժանիս արասցէ յամենայն ժամ զմեզ երթալ զհետ բանի Աւետարանին սրբոյ, զնովիմբ գալ, զնոյն սիրել, նմին միտ դնել, եւ նովաւ ժամանել ի լրումն աւետեացն խոստացելոց:

229 Արդ առաւել զայս իմանալի է, եթէ ծովն տիրեցուցոց ոչ մասն է անբաժանելի մեծի ծովուն, այլ ուրոյն գատ եւ առանձնի. անուանի ծովակ՝ եւ ոչ ծով. եւ աշխարհ՝ ծովու է գուգութիւն եւ ոչ լճի: 230 Եւ որպէս երեւի, յառաջ քան զգալուստն Տեառն ցամաքայինքս շրայնոց նմանեցան անիշխան եւ անառաջնորդ, խառնավար կենաւք զմիմեանս զրկելով եւ կորուսանելով առանց խղճելոյ եւ պատկառելոյ, եւ չճանաչելով զարարիչն արարածոց, իբրեւ ի գիշերի եւ ի թանձրացեալ խաւարի՝ ի վեր ամենեւին ոչ կարացեալ հայել. նմանեալք ձկանց մեծամեծաց՝ որք զմանունս անխտիր կլանեն, եւ ինքեանք եւս ի մեծամեծաց կլանին, եւ կարծեն ոչ ամենեւին՝ թէ քան զմեզ այլ արարածք վերագոյն գուցէ. որպէս եւ սուրբ մարգարէն բողոքէ. Զմէ՞ հայեցար յարհամարհոտս, եւ ստուգանեցեր ի կլանել ամբարշտի զարդարն, եւ առնիցես զմարդիկ իբրեւ զձկունս ծովու, եւ իբրեւ զսողունս՝ որոց ոչ գոյ առաջնորդ՞. իբրեւ յայտնի է ամբաստանութիւնս զերկայնատութենէն Աստուծոյ. ընդէ՞ր, ասէ, յայնց ժամանակաց հետէ թոյլ ետուր: 231 Նեղի մարգարէս Սուրբ Հոգւովն. ոչ կարէ տեսանել զթշուառացելոցն զնեղութիւն: 232 Փութա ճեպեա, ասէ, եկ Տէր եւ երեւցիր, մեր-

ձեցիր ի փրկութիւն. հան զաշխարհ ի ծովէ մեղաց, զի ծանիցեն զքեզ տէր եւ արարիչ, իշխան եւ առաջնորդ կենաց. զի մի՛ իցեն զագանք շրայինք, այլ մարդիկ երկրայինք եւ երկնայինք, պատկեր եւ կերպարան իմանալի զաւրութեանն: 233 Վասն այսորիկ առ յաջակողմ կոյս արկէք նաւիդ:

234 Եւ ո՞ է որ զայս ասիցէ: 235 Որ նստի ընդ աջմէ Հաւր յերկինս: 236 Ասէ ցաշակերտսն. Եւ ընդ աջմէ Հաւր նստուցից զձեզ, եւ զամենայն ինչ յաջողեցից ձեզ. չիք ի ձեզ մասն խաւարի, եւ ոչ կողմ ձախոյ. մի՛ որսայք գիշերի, զի հեռի է լոյս ի նմանէ, եւ բազումք գայթակղին նովաւ: 237 Դուք մանկունք լուսոյ էք եւ որդիք տունջեան. եւ որպէս որդիք էք լուսոյ, նոյնպէս եւ լուսաւորեսցին գործք ձեր յաշխարհի, եւ գնասցէ աշխարհ զհետ ձեր ի լոյս կենաց: 238 Եւ մի՛ ի ձախ կողմ արկանէք զգործիս ձեր. քանզի որ որդիքն ձախոյ են՝ եւ ծնունդք են խաւարային իշխանութեան. եւ որպէս չիք նոցա մասն եւ բաժին յաջակողման, նոյնպէս ձեր մի՛ եղիցի մասն եւ բաժին ձախակողմանն:

239 Եւ զայս լուեալ Պետրոսի եւ ընկերաց իւրոց՝ մտաւք առաւել քան ականջաւք իւրեանց, արկանեն գուռկանն յաջակողմն նաւին, եւ ունին հարիւր եւ յիսուն եւ երիս ձկունս: 240 Իբրեւ յայտնի է տեսակ իմաստութեանս այս: 241 Որպէս ի հինսն ոմանք զբանական իմաստութիւն ի վար արկեալ, ոչ ինչ պակաս յերկնաւոր իմաստութենէն գտանին: 242 Ամենայն ինչ, ասեն, որ երեքկին է, բաժանելի է. իսկ որ բաժանելին է՝ նա ունի անդրէն յանգութիւն միաւորութեան եւ զանախտութիւն հարստութեան: 243 Արդ բաժանի թիւ ձկանցս յերիս յիսնեակս եւ միական երրեակ, եւ յարին անդրէն առ իրեարս ի միութիւն: 244 Յերիս յիսնեարդս՝ յորում տեսանի վեց մասն՝ կրկնաբաժանելով, երթեալ ելանէ անդր ի սկզբանն լինելու-

՝ Ըմբ. Ը 14

կիր չունիս, վարք եւ հունձք քո չիք. յայտ է թէ հացիւ ոչ կեաս, եւ ոչ այլ թանձրագոյն կերակրովք: 262 Ահաւազիկ երեւեցաւ թէ բանիւ Աստուծոյ կերակրիս. զի թէպէտ եւ չես արժանի, սակայն Աստուած բարերար է, եւ ինքն կայ մնայ առանց ծախելոյ եւ պակասութեան: 263 Այս զոր ասացի՝ թէ որսայ զմահկանացուս ի կեանս, եւ ինքն որսացեալ լինի, եւ հաւասարելով զինքն ընդ ապականացու որսոյ, եւ գաղտնեաւք եւ յայտնի կորզեալ հանէ յապականութենէ:

264 Եւ էին, ասէ, ամենայն ձկուռնքն մեծամեծք: 265 Ընդ այդ զի՞ զարմանաս. յորժամ Աստուած ձուկն որսայ, ոչ ինչ թաքչի յամենատես ականէն, յորժամ կամի՝ զմեծամեծսն, յորժամ կամի՝ զմանուռնսն, յորժամ կամի՝ զմիջինսն, եւ այսու երեք թուական մասամբքս՝ ամենեքեանս նորա են: 266 Առ ձկուռնսն այդպէս է. նախ զմեծամեծսն որսացաւ, զի խորհուրդ էր եւ ոչ ճշմարտութիւն. այլ առ ընտրութիւն Առաքելոցն ոչ այդպէս, նախ զմանուռնսն, եւ ապա զմեծամեծսն: 267 Եւ ասացի փոքրկուռնս, եւ յիրաւի. ոչ միայն փոքուռնք են, այլ եւ տգէտք եւ գալիլեացիք, անպիտանք լեզուով, գձուձք գաւառաւ, աղքատք եւ տնանկք: 268 Եւ զի՞նչ աղքատ քան զձկնորս, եւ քան զնոյնս՝ յիմարս. զի ամենայն հոգք իւր ի վերայ ջրային մակուկին է, խաւք իւր ընդ անբան ձկուռնս. երեւի թէ քան զամենայն մարդ ոչ միայն տգէտք, այլ եւ վայրենագոյնք: 269 Վկայեմ ես քեզ ոչ այդչափ միայն խոնարհագոյնք որչափ ասացաքդ, այլ բազմապատիկ եւս քան զդոյն: 270 Դու մի յայնպիսի աղքատութիւն հայիր, որ ոչ ի կամաց իւրեանց է, այլ ի պատահարաց աշխարհիս. զի մարդիկ ագահութեամբ ական հասանեն յիշխանութիւն տէրութեան. զրկեն եւ զլանան, եւ հասուցանեն զընկերակիցս իւրեանց ի մեծ թշուառութիւն:

271 Արդ հայեաց ի բարերարութիւնն Աստուծոյ եւ տես վասն է՞ր եղեւ գալուստն Տեառն յաշխարհս: 272 Ապաքէն զի զայն ամենայն խափանեցէ, եւ զուգութիւն հաւասարութեան կենաց գործեսցէ: 273 Իսկ արդ զո՞ տայիր ընտրել որ յաղքատաց գարշիս եւ ի տնանկաց փախչիս. քանզի Իմաստութեամբն Աստուծոյ, ասէ, աշխարհ ոչ ծանեաւ զԱստուած՞. հարկ էր զյիմարս ընտրել: 274 Դարձեալ որ հզաւրքն էին՝ ոչ միայն Աստուծոյ ամբարիշտք էին, այլ ի վերայ տկարագունիցն մեծամեծ հարուածս հասուցին. վասն այսորիկ զտկարս աշխարհիս ընտրեաց Աստուած զի յամալթ արասցէ զհզաւրս. եւ որպէս տկարաւքն զհզաւրս ամաչեցոյց, նոյնպէս յիմարաւքն զիմաստունսն լուեցուցէ: 275 Քանզի ընտրեաց, ասէ, Աստուած. եւ ուր Աստուծոյ ընտրութիւն է, չիք անդ տկարութիւն եւ յիմարութիւն. եւ որպէս յանգոյութենէ էած զաշխարհս ի գոյութիւն, սոյնպէս ի տկարութենէ էած ի գաւրութիւն եւ յաղքատութենէ ի մեծութիւն: 276 Քանզի նոր աշխարհ առնէ. ոչ զնիւթն ասեմ եւ ոչ զտեսակն, այլ զառաջինսն որք ապականեցան կամաւք, ի նոյն բնութիւն տարեալ հանէ նորոգապէս. եւ նախ որովք նորոգեն զնոսս՝ նորս արար եւ հարուստս, միանգամայն եւ իմաստունս, եւ իմաստութեան նոցա առաջնորդ եւ վարդապետ եւ ընդ նոսին Սուրբ Հոգին է գործակից, որով ամենայն ինչ եղեւ յառաջագոյն:

277 Տեսանե՞ս զի ոչ այնուհետեւ ի Գալիլեա չըջին զծովականն, այլ զմեծ ծովուս. եւ զծովու՝ ոչ զջրով, այլ զկղզեաւք եւ զամենայն ցամաքաւք. եւ գործի ոչ զսովորականն ունէին, այլ զնորսն՝ որով ինքեանք որսացեալ եղեն, որ ոչն պատառի. քանզի երկայն է գործին, եւ առաւել քան զգործին՝ լար գործւոյն. զի խանձն

՝ Լ Կ Գ Ե 21

զնչին ի միջոցին, եւ զգործին սփռեալ տարածանեն զբոլոր երկրաւս:

278 Եւ քանզի թուով են երկոտասանք, եւ երկու են լարք ուռկանին, եւ չորք ծագ լարացն, յորոց երեք երեք զմի մի ծագ առնուն. քանզի երեք կրկինդ է անվթար հաստատութիւն. մի կողմն ընդ արեւմուտս, միւսն զոյգ նմին ընդ արեւելս, եւ երկուսն ընդ հիւսիս եւ ընդ հարաւ: 279 Եւ բոլորակ պարուրածեւ զամենայն աշխարհս ի ներքս առեալ փակեցին. եւ ոչ յիւրաքանչիւր կողման ձգեն զուռկանն, այլ միաբան ամենեքեան. ուր խանձն եղեալ է, ի նոյն ժողովեն զամենեսեան ի կեանս եւ ոչ ի մահ. քանզի կերակուրն կենդանի է, կենդանեաց եւ ոչ մեռելոց:

280 Բայց գիտեմ զինչ ասելոց ես: 281 Զի՞նչ աւգուտ է, ասես. ի ծովակէ եհան, եւ ի ծովու դարձեալ ձուկն որսաց: 282 Ոչ ասացի զայդ ես, եղբայր. այլ քանզի իմաստութեան ի խնդիր ես, դու քեզն իսկ ուսիր զառակս ուռկանին զոր Տէր յառաջագոյն իսկ նմանեցոյց: 283 Դարձեալ եւ զհզաւրն սիրես. ո՞րք ի մարդկանէ քան զայս զաւրագոյն, որ զամենայն աշխարհ ի մի միաբանութիւն կարէ բովանդակել. նա եւ ոչ մեծատուն որք քան զնոսա երեւեսցի: 284 Եւ եթէ յայս երիս մասունս հաճեալ հաւանեսցին միտք քո, ասացից քեզ եւ զուռկանն եւ զուռկանաւորսն, եւ զորս ձկանցն ի քէն ոչ թագուցից: 285 Այլ վասն բազմութեանն թէ կարես՝ դու թուես, ես ոչ կարեմ: 286 Ծովն աշխարհս է, ուռկանն քարոզութիւն Տեառն, ծագք ուռկանին չորք Աւետարանք, ուռկանաւորք երկոտասան Առաքեալքն, որսք ձկանցն ամենայն ազգք հեթանոսաց. իսկ խանձոցն ի միջին մարմին եւ արիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. եւ միջոցք ամենայնի՝ հաւատք ճշմարիտք: 287 Քանզի գեր ի վերոյ է աս-

տուածութիւնն. իսկ մարդկան բնութիւնս զստորին կողմ երկրի առեալ ունի. զաւրութիւն Հոգւոյն վերոյ ի վայր խոնարհեցաւ, եւ հաւատք ներքոյ ի վեր կանգնեցան, եւ բուռն հարեալ զզաւրութենէն հաստատեալ կայ ի վերջնոցն, զի ձգելով ի վեր կորցեսցի:

288 Արդ որովհետեւ ելաք ի ծովէն ի ցամաք, եւ ի ձկանցն եկաք հասաք յազգս մարդկան, եկ եւ տես զերկոտասանս. ոչ միայն ուռկանաւորք են ի ծովու, այլ եւ նաւավարք. եւ ի ցամաքի սուրհանդակք, եւ ի պատերազմի զինաւորք, եւ յաշխարհի քաղաքավարք, նոքին եւ արէնսդիրք: 289 Եւ ոչ եւս են կարաւտք այսուհետեւ ունել զոք աւգնական ի մարդկանէ. քանզի ընդ նոսա է զաւրացուցիչն ամենայնի, աներկիւղ եւ անկասկածք են. ուստի զահի հարեալն փախչէին յերուսաղեմէ, անտի իսկ առնեն սկիզբն նորոյ քարոզութեանս. եւ համարձակութեամբ ուսուցանեն ոչ ի խորչ ուրեք ծածկեալ եւ թաքուցեալ, այլ անդրէն ի ներքս ի տաճարին՝ ուր ամենայն աշխարհ ժողովեալ էր. եւ ստէպ ի մէջ բերելով զանունն Յիսուսի՝ բազում նշանս եւ արուեստս առաջի ամենեցուն ցուցանեն: 290 Եւ ոչ վաղվաղակի ելեալ մեկնին յանձկալի քաղաքէն. նա եւ ոչ անարգանս ինչ համարին զտեղին՝ ուր Տէրն ամենայնի մեռաւ անարգանաւք. այլ մեծապէս պարծանք եւ կենդանութիւն ամենայն արարածոց: 291 Ձայնիւ բարբառին, ձեռամբ ցուցանեն, ակամբ տեսանեն զԲեթղեհէմ՝ ուր ծնաւ, զՆազարեթ՝ ուր սնաւ, զԳալիլեա՝ ուր եկաց, զԳողգոթա՝ ուր խաչեցաւն, զգերեզմանն՝ ուստի յարեաւ, զլեառն ձիթենեաց՝ ուստի վերացաւ, զերկինս՝ ուր ընդ աջմէ Հաւր նստաւ:

292 Արդ ո՞վ իցէ մեծատուն քան զԱռաքեալսն, եւ իմաստուն քան որ զայս ամենայն գիտեն. նա եւ առատ եւս տուող միանգամայն: 293 Մի մի լոմայ ընդունէր

տկարն՝ որ նստէր առ գեղեցիկ դրան տաճարին, եւ զաւուրն պարենիկն թէ լնոյր: 294 Տես զմեծութիւն Առաքելոցն, եւ ընդ նմին զառատութիւնն. ոչ միայն աւուր եւ ամսոյ տան զուռճիկն, այլ զամենայն աւուրս կենաց նորա. քանզի ընկալաւ զբժշկութիւնն ոչ միայն յառժամայն ցաւոցն ողջացեալ, այլ ի ձեռն հաւատոցն եւ զյաւիտեանսն ժառանգեաց:

295 Արդ ուստի սկսաւ Տէր յայտնել զաստուածութիւն իւր աշխարհի, անտի սկիզբն արարին եւ Առաքեալքն. իբրեւ բազում անգամ ուսուցանելով զնոսա եւ զնելով վկայութիւն ընդ քահանայան եւ ընդ մեկնիչսն՝ եթէ չիք իմ այլ անուն ի ներքոյ երկնիք՝ որով լինի բժշկութիւն, բայց միայն անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: 296 Քանզի Յիսուս եւ Քրիստոս վասն մարդասիրութեան իւրոյ թանձրացոյց զինքն ի մարմնաւորութիւն, զի մարմնաւորք տեսանել կարացեն զնա եւ ուսանել. եւ եթէ նովաւ եղեն երկինք եւ երկիր, եւ նա է աւրէնսդիր ի ձեռն Մովսէսի. վասն նորա մարգարէքն քարոզեցին յառաջ ժամանակաւք, եւ զնորա աւրն զայստեան ցանկային տեսանել հայրապետքն մեր եւ թագաւորք: 297 Եւ այսու ամենայնիւ վկայութեամբ Առաքեալքն խաւսէին ընդ ամենայն բազմութեանն, մինչեւ զքահանայապետն անգամ զԿալիստոս ածէին ի հաւանութիւն լսել նմա ի նոցանէ:

298 Եւ այնչափ համարձակագոյնք էին, մինչեւ սուրբն Ստեփանոս՝ թէպէտ մանկագոյն էր քան զայլսն ի ժամանակին, առ սէրն զոր ունէր ընդ Քրիստոսի, զիւր արիւն փութացաւ հեղուկ վասն նորա: 299 Զի ոչ միայն բանիւք իցէ վկայութիւնն, այլ եւ մեծաւ զաւրութեամբ, մինչեւ ցմահ անգամ: 300 Տես զզաւրութիւն խաչեցելոյս, յոր բարձունս ձգեաց զաշխարհս. զոր եւ յառաջագոյն ասաց. Յոր-

ժամ բարձրացայց, զամենեսեան ձգեցից առ իս՞. Քանզի սա նոյն Ստեփանոս մինչ դեռ ողջամարմին էր, խաւսել եւեթ գիտէր յանուն Յիսուսի Քրիստոսի. զի թէպէտ ունէր շնորհս եւ առնէր նշանս մեծամեծս, սակայն դէմ յանդիման զնա չէր տեսալ. այնպէս իսկ այն աւր քարինքն ի վերայ տեղային, արիւն գերեսաւքն իջանէր, մարմինն անկեալ դնէր յերկրի: 301 Նորա զայնմանէ փոյթ ինչ ոչ արարեալ, ի վեր հայեցեալ՝ գերկինս բանայր, զՔրիստոս ընդ աջմէ Հաւր տեսանէր, ի վերայ սպանողաց աղաւթս առնէր: 302 Եւ այս էր նմանութիւն մահուն Քրիստոսի, եւ աղաւթք աղաւթից նորա. զի որպէս նա ի վերայ խաչահանուացն, սոյնպէս եւ սա ի վերայ քարկոծչացն աղաւթս առնէր:

303 Բայց թերեւս ասիցէ ոք, թէ զի՞նչ աւգուտ իցէ ի վերայ չարացն աղաչել, զի եւ այլ եւս յաւելցեն ի չարիսն: 304 Ոչ այդպէս է. մի՛ դու եւ մի՛ զայդ ածեր զմտաւ. աղէ տես զզաւրութիւնն աղաւթից, եւ ուրախ լեր ի պտուղն զոր կթեաց անտի: 305 Ապաքէն Սաւուղ էր որ քարկոծել էտ զնա. եւ Ստեփանոս որ աղաւթէր Հայր, թող դոցա, զի ոչ գիտեմ զինչ գործեմէ՞, ճշմարտութեամբ աղաչեաց, եւ արդարութեամբ լուաւ նմա. զի ոչ միայն եթող նոցա զմեղսն, այլ եւ ի վիճակ Առաքելոցն խառնեաց զնա:

306 Արդ զամենայն վկայութիւնս բանիւք եւ գործովք կատարէին յերուսաղէմ առաջի քահանայապետիցն: 307 Եւ թողուն անդ զՅակովբոս փոխանակ ամենեցուն՝ բաւական համարելով զառնն զաղնուականութիւն, եւ զի մի՛ դատարկ թողցեն զտեղին՝ ուստի եւ Տէրն հրամայեաց ամենեկին մի՛ մեկնել: 308 Եւ ինքեանք ի վիճակէ առեալ զամենայն ազգս եւ զազինս, ճեպէին ի քարոզութիւն Աւետարա-

՞ Յ՝ՎԸ. ԺԻ 32
 Է՞ Ղ՝Վ. ԻԳ 34

նին: 309 Տեսե՞ր, յայնժամ այնչափ հեղ-
գացան, մինչեւ Տէր ինքնին զարթուցանէր
հազիւ հազիւ ի քնոյ. իսկ այսաւր անդա-
դար զտիւ եւ զգիշեր ճեպին փութան յա-
սել եւ ի լսել եւ ի կատարել զամենայն
կամս առաքչին իւրեանց, եւ մանաւանդ
իբրեւ տեսին զգայն գազանացեալ՝ որ
ընդ խառնելն կոտորէր զամենայն հաւտն
անհովիւ: 310 Որպէս նոյն իսկ մեծն Յա-
կոբոս, փութա, ասէ ց Պետրոս, եւ հասիր ի
Կեսարիա ստրատոնեանց. զի աւանիկ է
Սիմոն կախարդ, որ զգեցեալ է դեւս իբրեւ
զհանդերձ, եւ յոգիսն զէն ունի զսատա-
նայ. զի ոչ ինքն միայն մոլորեալ է ի ճա-
նապարհ կորստեան, այլ եւ ամենքեան
որք լսեն նմա: 311 Արդ փութա, եղբայր,
եւ վաղ հասիր յաւգնականութիւն բազ-
մութեանն, որ տգիտութեամբ կորնչին.
Քանզի գտցես քեզ անդ բազում աւգնա-
կանս: 312 Եւ զայս ասացեալ Յակովբոս,
եւ յանձն արարեալ Հոգւոյն Սրբոյ, զնա
յուզարկէր եւ ինքն անդէն մնայր:

313 Եւ հասեալ Պետրոսի ի բազմահոյլ
քաղաքն շնորհաւք տեսաւ մերոյ Յիսուսի
Քրիստոսի՝ մեծամեծ նշանաւք եւ արուես-
տիւք հաստատեաց զբազումս ի ժողովրդե-
նէն. զապստամբութիւն կշտամբեաց, զչար
գազանն հալածեաց, զանմեղ հաւտն ապ-
րեցոյց ի մոլորութենէ, եւ շնորհաւք Սուրբ
Հոգւոյն եւ զմահ եւս հալածեաց ի սահ-
մանաց նոցա: 314 Եւ մինչ դեռ էր ի Կե-
սարիա ստրատոնեանց, կին ոմն՝ անուն
Այծեմնիկ՝ աշակերտեալ էր Առաքելոցն,
եւ տեսուչ էր որբոց եւ այրեաց ի Լիւզիա
քաղաքի. դէպ եղեւ ի նմին ժամանակի
հրաժարել նմա, եւ հասեալ Պետրոսի դար-
ձոյց այսրէն զհրաժարեալն մինչեւ զար-
մանալ բնակչաց աշխարհին: 315 Եւ յաւե-
լան ի թիւ հաւատացելոցն բիւրք բա-
զումք: 316 Զայս լուեալ զՊետրոսէ Յա-
կովբոս, խնդայր եւ ուրախ լինէր ի Հոգին
Սուրբ, եւ համարձակագոյն եւս դնէր
զվկայութիւն յանուն Տեսաւն առաջի ամե-

նայն ժողովրդեանն, եւ ի նմին կայր հաս-
տատութեամբ: 317 Իսկ Պետրոս դարձեալ
բժշկեաց զվէրս այնոցիկ՝ որոց առեալ էր ի
չարաթոյն գազանէն. եւ ուսուցանէր զա-
մենեսեան ի մոլար կոոցն պաշտմանէ
դառնալ առ մի Աստուած հայր ամենեցուն
որ արար զամենայն, եւ ի միածինն որ եկն
իւրով բարերարութեամբն եւ երեւցոյց
զինքն ազգի մարդկան. զի ոչ միայն լսե-
լով զիտասցեն զԱստուած, այլ եւ հայելով
եւ տեսանելով, խաւսեցեալք ընդ նմին
մաւտ մերձաւորութեամբն՝ ճանաչիցեն եւ
ճանաչիցին. որպէս եւ եղեւ իսկ:
318 Քանզի մինչ դեռ էր Պետրոս Յոպպէ
քաղաքի, յայտնեցաւ հրեշտակ Տեսաւն առ
Կուռնելիոս ի Կեսարիա՝ որ էր յազգէ հե-
թանոսաց, եւ գործովք առաւելեալ քան
զամենայն իսրայէլացիսն. բայց միայն կա-
րաւտէր ճանաչելոյ զՅիսուս Քրիստոս, եւ
յանուն նորա ընդունել մկրտութիւն. հրա-
մայի միանգամայն կոչիլ Պետրոսի ի տուն
նորա:

319 Արդ տես զգործս ուռկանին մեծի՝
որ ոչ պատառեցաւ, եւ ունի ձկունս մեծա-
մեծս. զի ոչ միայն ի ջրոյ՝ այլ եւ ի ցամա-
քէ, որպէս յայտնեցաւ Հոգին Սուրբ առ
Պետրոս ի նմանութիւն կտաւի անաւթոյ,
եւ կախի զչորեցունց տտնոցն. ունի յին-
քեան զամենայն կենդանիս՝ զսուրբս եւ
զանսուրբս, զմանունս եւ զմեծամեծս:
320 Եւ եթէ յիշէք՝ ես յառաջագոյն ասա-
ցի, թէ երկնային ուռկանին չորք ողոցք¹
են, եւ զչորեսին անկիւնս երկրիս ի ներքս
արգելեալ փակէ: 321 Արդ իբրեւ լսես
զխոնարհել անաւթոցն յերկնից յերկիր,
մի՛ հարկաներ կար մտաւքդ առ անաւթն
կտաւի, կամ բնաւ իսկ ի տարր ինչ նիւթե-
ղէն. քանզի եւ կարէ իսկ ոչ մի մասն յե-
ղելոցս ընդունել յինքն զամենայն կենդա-
նիսն. այլ անդէն իմացիր զգաւրութիւն
Սուրբ Հոգւոյն, որով եղեւ ամենայն ինչ:

¹ Միւսն՝ ողոցք

322 Տարածեաց պրկեաց զինքն ի նմանութիւն կտաւի անաւթոյ: 323 Եւ ընդէ՞ր արդեաւք. վասն զի սրբագոյն է անաւթ կտաւոյ, եւ լուսափայլ տեսիլ ունի: 324 Ժողովեաց զամենայն ազգս որ սուրբ էին եւ որ ոչ էին սուրբ. ըստ երեւման յայտնութեանն իբրեւ թէ յերկնէ յերկիր խոնարհեցաւ, այլ ըստ իմանալի խոհականութեանն զերկրաւորսս յերկնայինսն մերձեցոյց: 325 Առ Պետրոս յայտնի՛ կենդանիք՝ որ տուեալ են ի կերակուր մարդկան. եւ են անդ ամենայն զոր ակրէնքն ուտել հրամայեն, եւ զորս ոչ հրամայեն: 326 Եւ քանզի քաղցեալ էր Պետրոս, կերակուր երեւի նմա ի մեծ տեսեանն, միանգամայն եւ ուսուցանէ նմա զկատարեալ գիտութիւն Աստուծոյ. եթէ կերակրոյ քաղցեալ ես, ասէ, զեմ եւ կեր՞: 327 Իսկ նա ի սովորութիւն ակրինացն ընթացեալ, Իմ, ասէ, խառնակ եւ անսուրբ ինչ չի՞ կերեալ՞: 328 Լսէ անդէն պատասխանի. Զոր Աստուած սրբէ, դու մի՛ պիղծ համարիր՞: 329 Եւ ո՞րպէս սրբեաց արդեաւք. քանզի ի վերայ կտաւոցն ետես զամենայն կենդանիսն. եւ եթէ նմանութիւն է կտաւի անաւթն՝ արարող Հոգւոյն, եւ կենդանիքն որ ի նմա՝ ազգք հեթանոսաց, ապա յոյր վերայ էինն՝ ի նմին եւ սրբեցան. քանզի ամենայն որ մերձենայ ճշմարիտ հաւատով ի Սուրբ Հոգին, ընդ նմին եւ հոգիացաւ. քանզի պատասխանի զդոյն ասէ. զոր Աստուած սրբեաց: 330 Աստուածային էր տեսիլն եւ ոչ մարդկային. արդ եթէ Աստուած սրբեաց եւ դու քաղցեալ ես կերակրոյ, քաղցեալ է եւ Աստուած մասին արդարութեան:

331 Արդ ով է սուրբ ըստ քոյոց կամացդ. թերեւս ասիցես՝ որդիք ակրինացն: 332 Նոքա ոչ միայն սուրբ չեն, այլ եւ

յոյժ պղծեցան: 333 Ես գիտեմ, դու ի հեթանոսաց գարշիս, եւ ոչ կամիս մերձենալ առ նոսա. քանզի անթլփատք են մարմնով եւ ոչ սրտիւ: 334 Զայդ եւ ես ոչ մեղադրեմ. այլ արի եւ երթ ի տուն հեթանոսաց, եւ մի՛ ուսուցաներ թլփատել, այլ մկրտել. եւ անդ տեսանես դու մեծամեծ յայտնութիւն Հոգւոյն Սրբոյ: 335 Զի՞նչ մեծ քան զերեւումն հրեշտակի առ մարդ, որպէս առ Կուռնելիոսն եղեւ. ոչ միայն տեսաւ նմա, այլ եւ յոյժ գովութիւն եւս ետ. Աղաւթ Բո, ասէ, լսելի եղեմ, եւ ողորմութիւն Բո ելիմ առաջի Աստուծոյ՞: 334 Իսկ արդ զի՞նչ եւս պիտոյ է առնս այսմիկ. աղաւթիւք սուրբ էր, տուրս տալով բարեգործ, ինքն հաւատացեալ, եւ ընտանիս ունի ըստ կամաց արդարութեան, եւ յիշխանութեան մեծի՝ կարէ եւ այլոց առաջնորդ լինել ի բարեգործութիւն:

335 Եւ արդ տես զգաւրութիւնն Քրիստոսի, զի եւ մի բան ոչ ստեաց ի բանից Տեառն զոր ասաց. Զի Յովհաննէս մկրտեաց ի ջուր, այլ դու՛ մկրտիցի՛ ի Հոգիմ Սուրբ՞: 336 Արդ ինքն Հոգին Սուրբ եկեալ առ Կուռնելիոս, եւ ոչ իշխէր ձեռնադրել զայն ի մկրտութիւն. եկն Պետրոս, եւ ընդ մտանելն նորա յապարանսն հարիւրապետին՝ լցան ամենեքեան Հոգւով Սրբով որք ի տանն էին, եւ լեզուս մեծամեծս խաւսէին: Եւ զայն գիտացեալ Պետրոսի՝ վաղվաղակի զամենեսեան մկրտեաց:

337 Եւ զի՞նչ պիտոյ էր զլցեալսն Հովգւով՝ մկրտել ի ջուր, ասացից քեզ. զի ոչ միայն զմարդիկն՝ որք ընկալան զՀոգին՝ արժան էր մկրտել, այլ եւ զՀոգին Սուրբ. որպէս եւ եղեւ իսկ: 338 Քանզի որք ընկալան զՀոգին Սուրբ եւ ձեռնադրեցան ի Պետրոսէ ի մկրտութիւն աւագանին, ապաքէն եւ Հոգին ընդ նոսա մկրտեցաւ: 339 Նա թէ եւ ոչ Հոգին Սուրբ

՞ Տէ՛. Գ. Գ. Թ. Ժ. 13, Ժ. Է. 7:
 Է Տէ՛. Գ. Գ. Թ. Ժ. 14, Ժ. Է. 8:
 Թ Տէ՛. Գ. Գ. Թ. Ժ. 15, Ժ. Է. 9:

՛ Տէ՛. Գ. Գ. Թ. Ժ. 31:
 Է Գ. Գ. Թ. Է. 5

մկրտիցի ընդ մկրտեալսն, ոչ մկրտութիւնն կատարեալ ասի, այլ լուսացումն ջրոյ. որպէս եւ ոմանք մկրտեալ ջրով առանց ընդունելութեան Հոգւոյն Սրբոյ, անդրէն արժանի արարին Առաքեալքն վերջստին մկրտութեան, զի ընկալցին զՍուրբ Հոգին: Քանզի եւ սկիզբն մկրտութեանն՝ Աստուծոյ եղեւ եւ ոչ մարդոյ. Աստուած ի մարդոյ ընկալաւ մկրտութիւն: Քանզի յասելն Տեառն ցՅովհաննէս, Թոյլ տուր այժմ, ասէ, կատարեսցուք զարդարութեան՝ ճշմարտապէս ճանաչել զՍուրբ Երրորդութիւնն. եւ գիտութիւնս այս յայտնեցաւ մեզ ի մկրտութեանն Որդւոյ: 341 Հայր վկայեաց ձայնիւ, եւ Հոգին Սուրբ երեւեցաւ յայտնութեամբ, եւ Որդի մկրտեցաւ ճշմարտութեամբ, եւ արդարութիւնն կատարեցաւ առանց պակասութեան: 342 Նոյնպէս եւ ի տանս Կռննելիոսի Հայր յայտնեցաւ ի ձեռն Տրեշտակի, Հոգին Սուրբ լցոյց զամենեսեան, Պետրոս մկրտեաց յանուն Յիսուսի Քրիստոսի զբլորեսին: 343 Զոր եւ յառաջագոյն ասաց Տէր. Նման է արքայութիւնն երկնից ուրկանի արկելոյ ի ծով, եւ ածէ ժողովէ յամենայն ազգաց, յորոց զպիտանացուսն բառնան, եւ զանպիտանսն ի բաց ընկենուն: 344 Առ մարդկան ուրկանս այդպէս է, իսկ առ երկնաւորն ոչ այսպէս. չիք անդ անպիտան եւ խոտան. այլ ընտիրք ամենեքեան, եւ խոտան ոչ գոյ ի նոսա. նաեւ մեծամեծք, բայց եթէ կամաւ ոք ինքնին լինի անարգ եւ վատթար, եւ ելանիցէ ընդ հոգեւոր ուրկանն արտաքս, լինի նա ոչ միայն ի բաց ընկեցեալ, այլ եւ կոխեալ քարչի յայնցանէ՝ որ քան զինքն եւս վատթարագոյնք են:

Զ

Արդ սկիզբն մկրտութեան Որդւոյ ի Յորդանան գետ առնու, եւ պատի անդէն ի հրէաստանի, ածէ եւ զայ հասանէ ի մեծ ծովեզրն, եւ ի սկզբանէ ի սկզբան միւսանգամ սկիզբն լինի ի տան հարիւրապետին, եւ սփռեալ տարածանի ընդ ամենայն ազգս հեթանոսաց: 2 Քանզի իբրեւ ետես Պետրոս՝ թէ եւ ի հեթանոսս տուան շնորհք Սուրբ Հոգւոյն, ինքն իսկ եւ յերուսաղէմ, եւ եցոյց Յակովբայ. զի թէպէտ եւ խղճէին ի նմանէ որք ի թլփատութենէ անտի հաւատացեալք, իսկ իբրեւ լուան ի Պետրոսէ հաստատուն վկայութիւն վասն զաւրութեան Սուրբ Հոգւոյն՝ եթէ յայտնագոյն եւս երեւեցաւ ի մէջ հեթանոսաց որպէս ի միջի մերում, ոչ ինչ այնուհետեւ խղճէին ի Պետրոսէ. այլ փութացան ամենեքեան ճեպել յիւրաքանչիւր կողմանս ըստ առաջնորդութեան Սուրբ Հոգւոյն. ինքն Պետրոս ի մեծն Հռոմ. Մարկոս յԱղեքսանդրիա. Թովմաս յաշխարհն հնդկաց, որպէս եւ Թադէոս յարեւելս պատահէ, եւ Փիլիպպոս ներքինւոյն ի վերայ կառացն ուսուցանէ եւ մկրտէ, եւ առաքէ զնա զաւրութեամբ Սուրբ Հոգւոյն ի յեթովպիա. գտանի եւ Յովհաննէս ի յԱսիա, որպէս եւ Անդրէաս ի կողմանս հիւսիսոյ: 3 Եւ ճեպէին ամենեքեան՝ ոմանք ի կղզիս հեռաւորս, եւ այլք ի խորշս եւ ի գոգս ցամաքի ձգեալ սփռեցան յամենայն կողմանս երկրի: 4 Իսկ Պաւղոս սկիզբն առնու մկրտել ի Դամասկոս, եւ անդադար ընթացիւք հասանէ յերուսաղէմէ մինչեւ ի Լիւրիկան:

5 Եւ այս են գործք մեծամեծք եւ տեսիլ սքանչելի. զի ոչ եթէ յանկեան ուրեք քարոզէին, եւ ոչ ի ծածկոյթ պատմէին զանուն Յիսուսի Քրիստոսի. այլ յայտ յանդիման բարձր բարբառով ի քաղաքս մեծամեծս՝ ուր իշխանքն նստէին. եւ ի բուն իսկ մեծն Հռոմ՝ ուր անդ թագաւոր

« Տէ՛.՝.Մ. Գ. 15:

րուծիւն էր. եւ յԱթէնս՝ ուր ճարտարապետք փրկիսոփայիցն էին եւ ւարէնադիրք աշխարհաց. եւ յԵփեսոս՝ ուր երեւելի մեհանքն էին եւ յայտնագոյն պաշտամունք հեթանոսական ւարինաց. եւ ի խուժադուժ կղզիս՝ որք ոչ ինչ պակաս էին բարուք ի բնութեանն ի վայրենի գագանաց. եւ յերկիրն եգիպտացւոց՝ որք առաւել զանգեալք էին կախարդութեամբն, եւ դեւք թանձրացեալք խառն ընդ մարդկան շրջէին, եւ ւարէնք պարսկականք՝ անխտիր տալով զանձինս յանառակ պոռնկութիւն: 6 Նա եւ ո՞ իսկ կարէ ասել զամենայն չարիս որ գործէին ի մէջ հեթանոսաց. զի ոչ միայն զանասուն կենդանիս զոհէին դիւաց, այլ եւ զուստերս եւ զդասերս իւրեանց զոհելով եւ նուիրելով ի սպանումն եւ ի յայրումն ածէին, եւ անխտիր էին յամենայն չարիս. մինչեւ ոմանք ի խուժադուժ կղզիսն ւարէնս սովորութեան ընկալան առանց խղճելոյ եւ պատկառելոյ զենուլ եւ ուտել զընկերակիցս իւրեանց, ոչ միայն յաւտարացն հասելոց առ նոսա, այլ եւ անդէն իսկ յազգէն տոհմայնոց իւրեանց. որպէս յայտնագոյն ցուցանէ մեզ պատմութիւնն Անդրեայ՝ որ ապրեցաւ ի ձեռն Մատթէոսի աւետարանչի:

7 Եւ արդ զի՞ մի մի ասացից. այլ որպէս յառաջագոյն ասացաք ըստ ամբաստանութեան մարգարէին՝ եղեն մարդիկ իբրեւ զգագանս վայրենի եւ իբրեւ զսողունս ի ցամաքի եւ իբրեւ զձկունս ծովու. սատակեցին զիրեարս եւ սատակեցան ի միմեանց: 8 Իսկ ի գալստեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի ձեռն երկոտասան Առաքելոցն՝ զորս յառաջագոյն ընտրեաց, փրկեալ ապրեցոյց զամենայն ազգս մարդկան: 9 Եւ քարոզութիւնն էր սակաւ բանիւք, իսկ գործք մեծամեծք եւ առաւել զարաւորք. քանզի ոչ եթէ բազում բանիւք յանդիմանէին զհեթանոսս, եւ ըստ մասանց բազմամթեր մեղացն պատմէին

նոցա զյանդիմանութիւնսն, այլ այսչափ ինչ. Ի բաց լինել ձեզ ի պոռնկութենէ եւ յարեմէ գոհից եւ ի շնչեղձուցիկ ուտելոյ՞. եւ զայս պահելով՝ ընդունել զմկրտութիւն յանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ նովաւ ճանաչել զՍուրբ Հոգին եւ զՀայրն ամենեցուն: 10 Եւ զայս սակաւբանութիւն բաւական համարեցան Առաքեալքն առ ամենայն լրումն արդարութեան: 11 Զի թէպէտ եւ մոլեալք կատաղէին հեթանոսք ի մոլորութիւն դիւացն եւ յանարժան պոռնկութիւն, սակայն ւարէնս ունէին քաղաքավարութեան, որ կարծէր ի գողանալոյ եւ յափշտակելոյ եւ յանխտիր սպանանելոյ. զեղեալ ւարէնս բաւական համարեցան մարդկան առ իշխանութիւն մարմնոյ:

12 Իսկ վասն յորդորման Հոգւոյն զորմէ ոչ փոյթ արարին իշխանքն եւ թագաւորքն, երիւք այսու կանոնեալ բանիւքս՝ մեծաւ զաւրութեամբ յամենայն մասունս արդարութեան նշանացն եւ արուեստիցն՝ զոր Աստուած ի ձեռս Առաքելոցն կատարէր, ահ եւ երկիւղ անկանէր ի վերայ ամենայն կռապաշտիցն: 13 Քանզի դեւք հալածեցան, զոհք խափանեցան, ծուխք ճենճերացն դադարեցին, երգք լիտութեանց լռեցին, մոլորութիւն կախարդութեանն հատաւ, պոռնկութիւն ամաչեաց, ամուսնութիւն զգաստացաւ, սրբութիւն բացաւ:

14 Եւ այս ամենայն լինէ ի ծագել իմանալի արեգականն ի մէջ հեթանոսաց: 15 Յորժամ փարատեալ մերկացաւ ի նոցանէ զխաւարն մոլորութեան, ապա կարացին տեսանել զլոյս շնորհի Հոգւոյն Սրբոյ, ընդ որում կայր հակառակ անդրանիկն սատանայի Սիմոն, որ պատրեալ մոլորեցոյց զբիւրս բազումս, եւ զինքն անուանէր զաւրութիւն երկնաւոր ի փրկու-

* Տէ՛.Պ.Գ.Գ.Ձ.Ժ.Ե 20, 29, ԻՄ 25:

թիւն եկեալ զգի մարդկան: 16 Եւ հասեալ Պետրոսի զաւրութեամբ Սուրբ Հոգւոյն, ոչ միայն զնա յանդիմանեալ կշտամբեաց, այլ եւ բազմութիւն մարդկան հանեալ ի նմանէ՝ եւ հաստատեաց զնոսա ի ճշմարտութիւն քարոզութեան Աւետարանին: 17 Իսկ նորա ի ցամաքէս հալածական եղեալ, ծովամուխ լինէր, անցանէր անցանելով ի Հոռովմէ. եւ Պետրոս զհետ լինելով ոչ ինչ փութացեալ ձեպէր, այլ շրջէր ընդ քաղաքս փրկելիկեցոց, առնէր նշանս եւ արուեստս յանուն Յիսուսի Քրիստոսի, եւ հաստատէր ժողովուրդս բազումս. եւ ինքն անցեալ զհետ կախարդին եւ հասեալ ի Հոռովմ, ոչ եւս հալածէր զնա ի քաղաքէն, այլ բանիւք յանդիմանէր եւ նշանաւք հաստատէր զքաղաքն: 18 Եւ Սիմոն ի դիւաց յափշտակեալ, եւ սակաւ մի դեր ի վերոյ քաղաքին զինքն վերացուցեալ, եւ անդէն առաջի ամենեցուն խորտակեցաւ անկեալ ի վայր. որք ոչ միայն ականատեսք եղեալ, այլ եւ ձեռաւք իւրեանց քարչեցին եւ արտաքս քան զքաղաքն ընկեցին: 19 Եւ զայս տեսեալքն ճշմարտեցին վասն քարոզութեան Աւետարանին՝ բազմութիւն արանց եւ կանանց, որք մկրտեցան ի Պետրոսէ, եւ եղեն ժողովուրդք բազումք, մինչեւ ի տուն թագաւորին ազդեցաւ, եւ հաւատացին, եւ հաստատութեամբ զԱւետարանն ընկալան, եւ մարտիրոսութեան շնորհաց արժանի եղեալք կատարեցան:

20 Որպէս եւ ինքն իսկ Պետրոս զլուխ աշակերտացն ի նմին քաղաքի ընկալաւ զվճիռ մահու ըստ նմանութեան խաչին Քրիստոսի, եւ եղ վէմ հաստատութեան ի հիմն եկեղեցւոյ, եւ կատարեաց զբանն Տեառն որ ասէ. Դու ես վեմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից գեկեղեցի իմ^ա. արդարեւ իսկ վէմ է ճշմարիտ դաւանութիւն հաւատոցն: 21 Որպէս Պետրոս ի վերայ

Քրիստոսի շինեաց զանձն իւր վկայութեամբ մահու, նոյնպէս եւ եկեղեցի շինեցաւ ի վերայ Պետրոսի հաւատոցն՝ ոչ միայն ի Հոռովմ, այլ եւ ընդ ամենայն քաղաքս եւ ի գեաւղս մեծամեծս մինչեւ ցփոքունս. նոյն հաւատք եւ նոյն հիմն եւ նոյն հաստատութիւն: 22 Քանզի մի է Տէր եւ մի մկրտութիւն, որով ընկալաք զթողութիւն մեղաց եւ զկենդանութիւն ոգւոց յանուն տեառն Յիսուսի Քրիստոսի:

23 Եւ որպէս Պետրոս ի Հոռովմ հաստատեաց զեկեղեցին, նոյնպէս եւ այլ Առաքեալքն ըստ իւրաքանչիւր վիճակեցելումն աշխարհաց, ուր հրամայեցաւ նոցա լի առնել զԱւետարանն Քրիստոսի: 24 Ետ նոցա Աստուած շնորհս ի Հոգւոյն Սրբոյ, եւ կատարեաց ի ձեռս նոցա նշանս եւ արուեստս մեծամեծս. որք զախտս մարմնոց բժշկէին, եւ զհիւանդութիւնս ոգւոցն զաւրացուցանէին, մինչեւ զմեռեալս անգամ յարուցին, եւ առաւել քան զբնութիւն մարդկան պայծառագոյնք երեւեցան ի մէջ հեթանոսաց. որոց առեալ ցուլս եւ պսակս՝ իբրեւ աստուծոյ զոհս մատուցանէին: 25 Եւ այնչափ մեծացան երկնաւոր յայտնութեամբքն եւ իմաստնացան ի Հոգւոյն Սրբոյ, մինչեւ զճարտարապետ փիլիսոփայիցն ածէին ի հաւանութիւն, եւ հաստատէին ի հաւատս ճշմարիտս, եւ գործակից Աւետարանին զնա կացուցանէին:

26 Եւ այս էր տեսիլ նոր եւ սքանչելի. գալիլիեցիքն հռոմայեցիք եղեն. եւ որ քան զամենեսեան տկարագոյնքն էին, զաւրութեամբ մարտնչէին՝ ոչ միայն ընդ իշխանս, ընդ քաղաքապետս, այլ ընդ ինքնակալսն եւ ընդ զաւրս նոցա. եւ որ անբանքն սնեալ էին ի ծովակին Գէննեսարեթայ, ընդ աթենացիսն վիճէին պայքարաւ. եւ ոչ միայն յաղթէին եւ լուեցուցանէին, այլ եւ կորզէին հանէին ի բնական գիտութենէն, ուսուցանելով եւ հաստատելով զնոսա ի շնորհս Հոգւոյն Սրբոյ:

^ա Մատթ. Ժ. 9 18

27 Եւ ո՞ իսկ կարէ պատմել զմեծութիւն նոցա. ինքեանք անտունք եւ անքաղաք յերկրի, եւ այլոց տունս եւ քաղաքս խոստանային յերկինս. ինքեանք աղքատք, եւ զայլոց մեծութիւնս յաւարի առնուին. հալածեալք ի մարդկանէ, եւ զդեւս հալածական առնէին յաշխարհէ. մարմինք իւրեանց գանալիցք, եւ զայլոց վէրս ողջացուցանէին յանբժշկելի հարուածոց. հացիւ քաղցեալք, եւ զկերակուր հոգեւոր ջամբէին բազմաց. ջրով ծարաւիք, եւ բաժակ մխիթարութեան մատուցանէին ամենեցուն: 28 Ինքեանք բանդարգեալք, եւ զայլոց խզէին զկապանս մեղաց. դատապարտեալք, եւ զդատապարտս լուծանէին. մահապարտք, եւ մահոյից թողութիւնս առնէին: 29 Երեւէին յերկրի, եւ չըջէին յերկինս. կռուէին ընդ մարդկան, եւ յաղթէին դիւսաց. ձաղկս յիւրեանց մարմինս ընդունէին, եւ տանջեալ լինէին գունդք զիւսաց:

30 Ոչ կարեմ յերկրի նմանութիւն գտանել երկոտասան առաքելոցն. զի քան զղաշտս ծաղկալիցս պայծառագոյնք են, եւ քան զլերինս մեծամեծս բարձրագոյնք: 31 Մեծ են քան զմեծութիւն ծովու, եւ խորք են քան զանդունդս նորին. յերկրէս հրաժարեցին, եւ քան զերկինս գերագոյն գտան: 32 Իսկ արդ ո՞ւմ նմանեցուցից կամ զո՞վ ածից տարացոյց: 33 Եթէ զամպս ասեմ, ոչ ինչ են համեմատ. ամպք ի ծովէ ջուր առնուն եւ ցանեն զերկրաւս. իսկ սոքա զչոգին Սուրբ ընդ ինքեանս ունին՝ ոչ տեղալով եւ ցանելով, այլ միանգամայն մխեն եւ թաղեն ի ջուրս աւազանին, եւ առնեն բոյսս երկնաւորս, տունկ կենդանի առանց անցանելոյ: 34 Եւ եթէ զլուսին ասացից, լուսին լնու եւ պակասի. իսկ Առաքեալքն լնուն եւ լցուցանեն առանց պակասութեան, եւ ինքեանք մնան առանց անցանելոյ: 35 Եւ եթէ զաստեղս ասացից, ոչ մի փառս ունին, եւ ոչ միով պայծառութեամբ երեւին. այլ ոմն յովով եւ

ոմն սակաւ, ոմն արուսեակ եւ ոմն գիշերավար. իսկ Առաքեալքն ամենեքեան արուսեակք, ամենեքեան պայծառացեալք, ամենեքեան զուարթունք զոյգք եւ հաւասարք, միաբանք եւ անհակառակք: 36 Տինա աւն անդր. զի՞նչ նմանութիւն աստեղացն եւ Առաքելոցն: 37 Աստեղք ոմն ի վեր, ոմն ի վայր, ոմն ի միջի. Առաքեալքն ամենեքեան վերաբերք եւ բարձրացեալք: 38 Աստեղք գիշերի եւեթ երեւին, եւ ի տուրնջեան ընկղմին եւ ծածկին ի լուսոյ արեգական. իսկ Առաքեալքն ի տուէ եւ ի գիշերի փայլեն, ի տուրնջեան լոյս են ոգւոց, եւ ի գիշերի զգաստութիւն ոգւոց եւ մարմնոց:

39 Առաքեալք քան զարեգակն պայծառագոյնք են զաւրութեամբ Հոգւոյն Սրբոյ: 40 Արեգակն իշխանութիւն ունի աւուր տուրնջեան. Առաքեալք իշխանութիւն ունին տուրնջեան եւ գիշերոյ: 41 Արեգակն ի տեսաւորութիւն երկրի եւ ի գործառնութիւն մարմնաւոր պիտոյիցս. Առաքեալքն ի տեսաւորութիւն երկնի եւ երկրի, եւ ի խոհականութիւն ոգւոց եւ մարմնոց: 42 Արեգակն յեղյեղու եւ փոփոխի. իսկ Առաքեալք առանց յեղյեղման եւ փոփոխման, առանց շարժելոյ: 43 Արեգակն ժամանակաւ ծագէ եւ մտանէ. Առաքեալք զժամանակ ծագման լուսոյն քարոզեցին աշխարհի: 44 Արեգակն ոչ երբեք ծնանի ա՛յլ արեգակն. իսկ ծնունդք Առաքելոց զգործս հարց իւրեանց կատարէին: 45 Ծնունդք արեգական ճառագայթք լուսոյ իւրոյ են, եւ մի կոյր ոչ երբեք կարացին լուսաւորել. ծնունդք Առաքելոցն բազում անգամ ի սուրբ եկեղեցւոջ զկոյրս լուսաւորեցին, զկաղս բժշկեցին, զախտս հալածեցին, զմեռեալս յարուցին: 46 Լոյս արեգական զմարմնովք պարի, եւ զերեւելիսս ցուցանէ, եւ առաջնորդէ ի ճանապարհս ուղէգնացից. լոյս քարոզութեան Առաքելոցն եւ զմարմնովքն պարի, եւ զաչս հոգւոցն բանայ, եւ առաջնորդէ ի

քաղաքն երկնաւոր: 47 Ի լոյս արեգական մարդիկ եւ անասունք շրջին ի տուրն-ջեան, եւ ի գիշերի հանգչին յաշխատութեանէ. ի լոյս հաւատոց Առաքելոցն երկնաւորք եւ երկրաւորք հրաւիրեցան ի նորոգումն կենաց, որ առանց անցանելոյ եւ ապականութեան է:

48 Այս են Առաքելաւքն որ մեծացան եւ վերաբերեցան եւ գեր ի վերոյ եղեն քան գերկինս եւ հասին առ Հայրն բոլորեցունց, եւ յորդորեցին զաշխարհս ամենայն ի քարոզութիւն Աւետարանին ճշմարտութեան, զի ամենեքեան հասցեն ի նոյն քաղաքն վերին, ուր երկոտասանքն ընդունելոց են զանպատում պսակն արքայութեան:

49 Որպէս ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս երիցս անգամ հարց ցգլուխ աշակերտացն ասելով. Ծմաւոն յովնանեանց, սիրե՞ս զիս^ա: 50 Եւ նա ճշմարտութեամբ ետ վկայութիւն. եթէ նա միայն է կատարեալ սիրոյ արժանի, վասն զի արարիչ է. եկն զիւր արարածս նորոգել՝ ոչ ի ձեռն հրեշտակի, եւ ոչ ի ձեռն մարգարէի, եւ ոչ ի ձեռն այլոյ իրիք պատճառանաց յերեւելեացս, այլ ի ձեռն իւրոյ ստեղծուածոյն: 51 Զի որպէս առ սէր իւր արար զմարդն, նոյնպէս եւ վասն սիրոյ եկն ի խնդիր կորուսելոյն. վասն սիրոյ իւրոյ եգիտ զկորուսեալ ոչխարն. վասն սիրոյ իւրոյ եբարձ ի վերայ ուսոց իւրոց. վասն սիրոյ իւրոյ զգուեաց եւ եդ ի վերայ բազկաց իւրոց. վասն սիրոյ իւրոյ եբեր եւ խառնեաց ի հաւտն բանաւոր, որ արածին յարաւտս հոգեւորս, եւ հանգչին՝ ի մակաղատեղս անմահութեան: 52 Վասն սիրոյ Պետրոս ետ պատասխանի եւ ասէ. Տէր, դու զամենայն ինչ գիտես, եւ զամենայն ինչ ճանաչես. եթէ սիրէ ոք զքեզ՝ դու քաջ գիտես: 53 Գիտեմ զի վասն փորձելոյ հարցանես.

եթէ բազում անգամ հարցցես, զդոյն լուրիցես յինէն: 54 Դու իբրեւ զԱստուած եւ զորդի բարերարի՝ առանց չափոյ սիրեցեր զաշխարհ, եւ զանձն քո եղիր ի վերայ. ես իբրեւ զմարդ՝ ըստ իմում տկարութեան սիրեմ զքեզ. տալ ինչ ոչ կարեմ, զի աղքատ եմ. եւ եթէ տաց, ի քումմէ անտի առից եւ տաց քեզ:

55 Բայց տայր ոք զպատճառսն գիտել, եթէ ի՞նչ իցես դու կարաւտ, եւ զի՞նչ կամիցիս խնդրել, եւ եթէ զի՞նչ կայցէ իմ զոր տաց քեզ: 56 Քանզի յառաջն ոչ երբեք զայսպիսի բանս հարցեր զիս: 57 Արդ եթէ նոր է հարցուածս, ես գիտեմ զի նոր իմն հրաման տաս ինձ. ասա, Տէր իմ, համարձակ. գիտեմ ոչ զայն ինչ հրամայես դու ինձ, զոր ոչ կարեմ առնել. եւ ոչ զայն ինչ խնդրես յինէն, որ չիք իմ տալ քեզ:

58 Իբրեւ ետես Տէր եթէ սրտիւ ամենայնիւ սիրէ եւ ամենայն կամաւք կամի եւ ամենայն զաւրութեամբ համարձակի, քանզի զամենայն զինքն ետ ցնա, յանձն արար նմա զսկիզբն եւ զմիջոցն եւ զկատարածն, զտղայութիւն, զերիտասարդութիւն եւ զձերութիւն: 59 Եւ յայս երիս հատածս է տեսանելի աշխարհս, եւ իմանի կատարեալ արարչութիւն. բայց լաւագոյն առաջինն է, եւ կրսերագոյն միջինն: 60 Եւ քանզի յասելն Տեառն ցՊետրոս Արածես դու զգառիմս իմ^բ զանմեղսն յանձն առնէ. եւ երկրորդ զոչխարսն ասելով՝ անորիչ ասաց, այլ ոչ պարզագոյն իբրեւ զգառիմս. քանզի գառիմքն աւղեաց են ծնունդք, եւ աւղիքն խոհականութեան իմն տեսակ երեւին աջակողմանն: 61 Իսկ ոչխարսն ասելով՝ է սովորութիւն մարդկան, աւղւոյն՝ զնոյն եւ այծոյն, այլ ոչ պարզագոյն եւ խառնուածն. քանզի որոշեցաւ սեաւն եւ սպիտակն, եւ հատածք բնութեանն ոչ խառնեցան ի միմեանս: 62 Եւ որպէս լա-

^ա Տե՛ս. Յովն. ԻԸ 15:

^բ Յովն. ԻԸ 15

ւագոյնն յաջակողմանն երեւեցաւ, նոյն-
պէս եւ վատթարագոյնն ձախակողմն ընտ-
րեաց կամաւք եւ ոչ բնութեամբ:

63 Եւ ընդէ՞ր այս այսպէս լինիցին:
64 Ըջմարիտ է ինձ ասացեալն յանսուտ
բնական բանիցն: 65 Խոյն արուաց բերէ
զնմանութիւն աւգային շնչմանն, եւ նա է
ճշմարիտ տեսակ երկնաւորացն. իսկ
քաւշն այծեաց՝ նմանեալ ջրային մասինն՝
մարմնաձեւ թանձրութիւն, որ ունի
զախտս ապականութեան, եւ բաժանեալ ո-
րոշի ի բանաւոր բնութենէ, ուր տեսանի
յաջակողմանն: 66 Դարձեալ ասելով
Տեառն՝ արածեա դու զխաշինս իմ, այս
եւս խստագոյն բազմութիւն եւ յայտնա-
գոյն բաժանումն. խաշն ասեմք միանգա-
մայն անասուն պաճարիդ. եւ միով բա-
ռիւդ զամենեսեան ի ներքս արգելեալ փա-
կեցաք զանմեղս եւ զմեղանշականս,
զսուրբս եւ զանսուրբս, զպիտանացուս եւ
զանպիտանս. եւ որ միանգամ մարդընդելք
են եւ Հնազանդեալք ընդ իշխանութեամբ
մարդոյն. ամենեցուն խաշինք ասեմք,
քանզի եւ կարաւտ իսկ են առաջնորդու-
թեան Հովուի: 67 Արդ քանզի մի է Հաւտ
եւ մի է Հովիւ, եւ մի արաւտք են եւ մի
մակաղատեղ Հանգստեան ամենեցուն,
անդ են գառինք եւ ոչխարք եւ ամենայն
բազմութիւնն, զոր խաշինս ասաց. մանա-
ւանդ նոքին իսկ Առաքեալքն, զորս յանձն
արար Պետրոսի, եւ որք գործակից եղեն
նոցին քարոզութեանն, ամենեքին սոքա
գառինք սուրբք են եւ աստուածայինք:

68 Իսկ որք պատճառանաւք աշակեր-
տեցան յԱւետարանն, եւ նորաձեւ ճանա-
պարհս ցուցին բազմաց, ընդդէմք եղեն
ճշմարտութեանն: 69 Եւ քանզի ունէին
զանունն Քրիստոսի, եւ զկերպարանս ձե-
ւոյ Առաքելոցն յանձինս ցուցանէին, եւ
գործովք չարութեան նմանեալ էին սատա-
նայի, նոքա են այծիք որ կան ի ձախոյ
կողմանն Հաւրն իւրեանց սատանայի. զոր

ընտրեցին կամաւք իւրեանց, ընդ նմին
երթիցեն՝ ի Հանդերձեալ տեղին իւրեանց:
70 Իսկ զոր խաշինս ասաց, այնոքիկ են՝
որք ընդդէմ կացին ճշմարտութեանն. եւ
ոչ միայն արգել եւ խափան եղեն Աւետա-
րանին, այլ եւ ձեռն արկին ի սուրբ Առա-
քեալսն եւ ի նոցուն աշակերտսն՝ բազում
անգամ Հարկանելով եւ չարչարելով, եւ
սրոյ մահուամբ վախճանեցին զբազումս ի
նոցանէ, որպէս եւ Ներոն եւ այլ բազում
ընկերք իւր. մինչեւ ցայսաւր ժամանակի
այն գործ գործեցեալ է եւ գործի:

71 Արդ արածեա դու, ասէ, զանմեղս
եւ զմեղաւորս եւ զայնոսիկ որ զմահ ի վե-
րայ ձեր ածիցեն. արածեա, ասէ, դու մի՛
զանգիտեր, որպէս ինքնին Հասարակ ամե-
նեցուն չարեաց եւ բարեացն եկի ի փրկու-
թիւն եւ ի կենդանութիւն նորոգման, զի
իցեն մի Հաւտ ընդ միոյ ձեռամբ Հովուին
միոյ. նորուն ձայնի լուիցեն, զնորայն
զհետ ընթացեն, զնոյն կեանս ընկալցին.
զի իցեն ամենեքեան գառինք անմեղք, եւ
ոչ գրթցողք եւ Հարկանողք եւ բեկանողք:
72 Ապա թէ իցէ ոք եւ ելցէ ըստ ցուպ Հո-
վուութեանդ քո, եւ ընդդիմացի ճշմար-
տութեան Աւետարանիդ, սակայն դու մի՛
զանգիտեր, այլ քաջալերեաց եւ զաւրա-
ցիր, մինչեւ ցմահ անգամ պատերազմեա,
որով եւ փառաւոր իսկ առնիցես զիս:

73 Բայց թերեւս փափագիցեմք ամե-
նեքին լսել թէ ո՛ւր Հրամայիցէ Տէր արա-
ծել զխաշինսն, եւ կամ զի՛նչ արաւտքն ի-
ցեն, կամ որպիսի՛ ջուրքն իցեն, եւ կամ
զի՛նչ տեղի Հանգստեան: 74 Արդարեւ ինձ
եւ ամենեցուն որք սիրեն լսել՝ ախորժելի
է: 75 Քանզի Հովուութեան է թագնու-
թիւն վարուց եւ Հաւատոցն Պետրոսի. իսկ
խաշինք՝ ամենայն ազգ Հեթանոսաց. եւ
տեղիք արաւտից՝ սուրբ եւ առաքելական
եկեղեցի. ճարակք՝ աւրէնք եւ մարգարէք
եւ Առաքեալք. իսկ ջուրքն՝ անանց աւե-
տիքն Աւետարանին. եւ ուր Հանգչինն

անհոգութեամբ առանց երկիւղի՝ ի վերինն Երուսաղէմ, որ է մայր մեր ամենեցուն: 76 Քանզի ոչ գոն անդ այծիք ձախոյ կողմանն, եւ ոչ քաւշք հարկանողք, եւ ոչ խոյք խեթկողք, եւ ոչ ցուլք սպանողք. նա եւ ոչ բնաւ իսկ ամենեւին ի վնասակարաց, այլ ամենեքին միամիտք, անմեղք, սուրբք, պարզք, յստակք. ոչ միայն գունով սպիտակագգեստք, այլ եւ ոգւովք, եւ ճառագայթածեւք՝ նմանեալք երկնաւոր հրեշտակական գնդին. զի ընդ նոսին ունիցին յանգումն միաբանութեան ձայնից եւ ձեւոց եւ գունոց. ընդ նոսին դարձեալ խրախակիցք եւ պսակակիցք՝ հպեալք եւ մերձեցեալք առ նահատակակիցն Քրիստոս: 77 Որում լուան, որում աշակերտեցան, որում հնազանդեցանն, որում ըստ կամաց նորա զամենայն պատուիրեալսն գործեցին եւ կատարեցին, եւ չարչարակիցք եղեն նորա մահուանն, ընդ նմին եւ ընկալցին զանանց ուրախութիւնն, ընդ նմին եւ տեսցեն զհայրն բոլորեցուն զաւրութեամբ Հոգւոյն Սրբոյ՝ յորոյ ձեռնն կատարեցին զնահատակութիւնսն երկնաւորս. ընդ նմին եկեսցեն յերկրորդ գալստեան նորա դատել զկենդանիս եւ զմեռեալս, եւ հատուցանել իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց՝ բաժանեալ ի կողմանց երկոցունց զիւրաքանչիւրսն, զոր եւ աս-

տէն ընտրեցին, ոմանք յանողորմ տանջանսն, եւ ոմանք յանպատում ի կեանս յաւիտենականս:

78 Արդ որդիք եւ եղբարք, հարք եւ տեարք, ամենեքեան մեծք, ծնունդք մկրտութեան սուրբ եկեղեցւոյ, ընթերցողք աւրինաց եւ մարգարէից, աշակերտեալք աւետեաց Աւետարանին, հաստատեալք ի հաւատս Առաքելոցն, շինեալք ի վերայ վիմին հաստատութեան, ակնկալեալք երկնաւոր յուսոյն ի գալստեան տեսան մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ նորա ընդ առաջ ելանել մեզ ամենեցուն, զի իցեմք առանց ամաւթոյ եւ պատկառանաց, եւ ճանաչել զնա ի նորուն չարչարանացն նշանաւք բեւեռացն, եւ ի բանից նշանագիր Աւետարանին: 79 Նաեւ ի գործոց մերոց դարձեալ ճանաչիցիմք նմա. զի իցեն զնացք մեր ըստ սուրբ քարոզութեան Առաքելոց, թէ կատարեալ իցէ մարդն Աստուծոյ ամենայն ճշմարտութեամբ. զի լուիցեմք զձայն բարերարին, որ ասէ ցամենայն պատուիրանապահսն. Եկայի աւրինեալի Հաւրիմոյ, ժառանգեցեմ գպատրաստեալ ձեզ արքայութիւնն ի սկզբանէ աշխարհի՞: 80 Ընդ որում Հաւր եւ Հոգւոյն Սրբոյ փառք եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՎԱՍՆ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ ԵՒ ՄԻՒԱՆՈՒԹՅԱՆ ԳԱԼՍԵԱՆՆ

Ահեղ եւ զարմանալի է գալուստն Քրիստոսի, եւ ահաւոր դատաստանն՝ յորժամ երկինք եւ երկիր դղրդեալ շարժին, եւ հրեշտակք Աստուծոյ այսր անդր ընթանայցեն. ձայն ահաւոր փողոյն Աստուծոյ, որ ժողովէ զազգս եւ զազինս յատեան դատաստանին. համարք սաստիկ անդ լինին, եւ բովանդակ ի դուրս պահանջէ ի նմանէ զմեր ամենեցուն հոգիս, զչունչ եւ զմարմին: 2 Արարողն եւ Աստուած ոչ մոռանայ ամենեւին զոսկերս վախճանելոյն, ի կատարեալ հասակէն մինչեւ յանցուցեալն յորովայնէ: 3 Երկն սաստիկ հասանէ երկրի, եւ զգուշութեամբ զամենայն մարմինսն ի դուրս բերելով երկրի: 4 Ահեղ եւ ահաւոր է տեսանել զաւրն զայն. եթէ երկրաւոր թագաւորացս առաջի էր, սակայն մեծ էր եւ սաստիկ: 5 Արդ տեսանեն արարածք ամենայն զԱստուած յերկնից յերկիր խոնարհեալ, եւ շարժեալք զաւրք լուսեղէնք եւ բազմութիւնք հրեշտակաց եւ հրեշտակապետաց. աթոռ դատաստանին դնի փառաւք դատել զամենայն արարածս, եւ կարգին առաջի ահաւոր ատենին Առաքեալք եւ մարգարէք, հայրապետք եւ մարտիրոսք եւ բազմութիւնք ընտրելոց Աստուծոյ: 6 Եւս դժնդակագոյն է զայն տեսանել. յայնչափ բազմութեան չիք ումեք փախուստ ի հանդիսապետէն եւ ոչ ընդարձակութիւն երկրի թագստեան. ի ծագէ ի ծագ տեսանէ զամենայն հեռաւորս եւ զմերձաւորս, եւ ըստ գործոց իւրաքանչիւր հատուցումն լինի: 7 Որոց գործք դժնդակագոյնք են, դատապարտեալ լինին, եւ անողորմ դահիճք ունին զմարդն որպէս թշնամի. հերաքարչ արարեալ՝ ածեն առաջի դատաւորին եւ տանջեն ի հուր գեհեննին. եւ դասք արդարոցն փայլեն որպէս լուսաւորք յարքայութեան երկնից:

8 Փողն երկնաւոր ի բարձունս գոչէ առ ննջեցեալսն եւ ասէ. Արիք, սիրելիք Քրիստոսի, ահա եկն թագաւորն երկնաւոր եւ պարգեւէ ձեզ հանգիստ եւ ուրախութիւն եւ կեանս անմահականս փոխանակ աշխատութեան ձերոյ եւ ճգնութեան: 9 Արիք եւ տեսէք զթագաւորն Քրիստոս՝ զփեսայն անմահ, որում ցանկացեալ էք. վասն զի նմա փափագելով՝ վասն նորա եղէք պանդուխտք ի վերայ երկրի: 10 Արիք տեսէք զնորասքանչ վայելչութիւն եւ զմեծ փառս: 11 Արիք մտէք յարքայութիւն նորա զոր պատրաստեաց ձեզ: 12 Արիք տեսէք զտենչալի զՏէրն զոր սիրեցէքն, յաղագս որոյ եւ վշտացայքն: 13 Արիք տեսէք զնա բազում համարձակութեամբ եւ ցնծացէք անդ նովաւ, եւ զանձառելի բարութիւն ձեր եւ զուրախութիւն ոչ ոք բարձցէ ի ձէնջ: 14 Եկայք վայելեցէ՛ք զոր ակն ոչ ետես, եւ ունկն ոչ լուաւ, եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց, զոր շնորհեաց փափագողաց իւրոց:

15 Զուարճանան արարածք ամենայն մեծաւ ուրախութեամբ, եւ փառաբանութիւն եւ երկրպագութիւն մատուցանեն թագաւորին Քրիստոսի. եւ ընդ ամպս լուսաւորս ի վերայ աւղոց թռուցեալ սուրբքն բազմութեամբ զաւրաւք հրեշտակաւք վերանան ընդ առաջ Քրիստոսի, եւ անպատմելի փառաւք ցնծացեալ հրճուին ի տեսանելն զանմահն Աստուած զերկնաւոր փեսայն, եւ մտանեն ի քաղաք սուրբ ի վերին Երուսաղէմ ժառանգել զանձառ բարիսն զոր պատրաստեալ է Աստուած սիրողացն իւրոց: 16 Յայնժամ ածեալ լինին եւ ապստամբքն ի հրեշտակացն հանդերձ ամենայն դիւական գնդիւն առաջի ահաւոր բեմբին եւ անկաշառ դատաւորին: 17 Յայնժամ թագաւորն Քրիստոս հրամա-

յէ տանջող հրեշտակացն արկանել զնոսա ի հուրն անշէջ եւ ի տանջանս մշտնջենալորս. եւ միանգամայն զամենեսեան որ գործեալ են զանաւրէնութիւն եւ ոչ են քաւեալ զղջմամբ եւ խոստովանութեամբ՝

մատնեն անգերծ խաւարին եւ անքուն որդանցն զոր պատրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա: 18 Յորմէ փրկեսցէ Քրիստոս Աստուած զամենայն հաւատացեալս անուան իւրում սրբոյ:

ՎԱՍՆ ՅԻՇԱՏԱԿԱՑ ՄԵՌԵԼՈՑ Ի ԿԱՆՈՆԱՑ ԳՐՈՑ

Յայտնի են ավերիք եւ հաստատեալ են ի ձեռն ավերիւնադրին Մովսիսի եւ այլոց մարգարէից. իսկ կանոնականք ի ձեռս Առաքելոցն տուան, եւ ետուն իշխանութիւն վարդապետաց եկեղեցւոյ. զի ակնադբիւրն իցեն Մովսէս եւ մարգարէքն, եւ Առաքելքն տնկողք զմարդիկ առողջ հասակովք հաւատոյ: 2 Ոչ ի հողեղէնս երկիր՝ որ անկեալ կայ ընդ ապականութեամբ, այլ ի վեր հայելով տնկեն ի կենդանի դրախտն. ուր ոչ գոյ ծառ գիտութեան բարւոյ եւ չարի, այլ կենաց եւ անապակա-նութեան: 3 Եւ ունի ցանկ անխրամ, ուր ոչ Եւա եւ ոչ աւձն կարասցէ սողել մտանել, եւ ոչ տալ զյետսընդէմ խրատն, եւ ոչ մերկանալ զհայրենի փառսն, եւ ոչ ամաչել եւ թաքչել ընդ ծառովք: 4 Եւ ոչ գոյ անդ ապաւինել ի տերեւ թփենւոյն, եւ ոչ ելանել ի դրախտէն եւ անկանել յերկիր նգովից: 5 Նա եւ ոչ պէտք են ի դրախտիս յայս գործելոյ եւ պահելոյ ըստ առաջին պատուիրանին, այլ միշտ կեալ եւ վայելել: 6 Արդ յայս դրախտ տեսական հաւատով տնկեցին զմեզ երկոտասան Առաքելքն, եւ ոռոգանեն զդրախտս զայս ի բուն յականակիտ յաղբերէն բղխմանց: 7 Ձսոյն զսա տեսանէին ի հեռաստանէ, եւ փափաքանաւք ի դարս ժամանակաց իւրեանց ցանկանային լինել նմա: 8 Բայց սակայն թէ եւ երեւակի ոչ հանդիպեցան, այլ կանխազէտ մարգարէութեամբն հաստատուն հաւատով վկայութեամբ իմն կատարեցան. որ եւ այսաւր յեկեղեցւոջ գովին ի մարդկանէ եւ յԱստուծոյ փառաւորին:

9 Արդ այս խորհրդական ջուրք հովիւքն բանաւորք զբանաւոր հաւտս մկրտեն. որ մկրտեալք մատուցանէ յորդէզրութիւն երկնաւոր Հաւրն եւ անուանեալ եղբայր Քրիստոսի, եւ առհաւատչեայ ի բաց զհանդերձելոց իրացն զյայտնի

չնորհս մատուցանել: 10 Ձինքն մարմնացուցեալ եւ արիւնացուցեալ ի վերայ սրբութեան սեղանոյն, հրամայեաց սրբութեամբ համարձակել, քաջալերութեամբ հաւատոյ մերձենալ, եւ ապա առնուլ ուտել եւ ըմպել: 11 Իսկ ոչ մկրտեալքն թէպէտ եւ իցեն կատարեալ ամենայն արդարութեամբ, ոչ ունին իշխանութիւն մերձենալ կամ ճաշակել ի մարմնոյ եւ յարենէ որդւոյն Աստուծոյ. քանզի տէրունական է կանոնս: 12 Ձի մինչ դեռ մարդն կենդանի է, արժանի եղեալ վայելել յայսպիսի անանց պարգեւս, եւ յետ մեռանելոյ մարմնոյս ունի հաւատովք իշխանութիւն եւ ի մեռեալս սովիմբ կենդանի եւ իմացական պաշարաւս՝ քաւեալ ի մեղաց եւ ազատեալ ի տանջանաց, խառնեալ ի գունդս արդարոց: 13 Եւ հրաման տուեալ մնացելոցն որ աստէն՝ զի առնիցեն յիշատակ հանգուցելոցն. զի մեռեալ է մարմինն եւ կենդանի է հոգին, եւ կենդանարար է աստուածութիւնն՝ որ ա՛ռ ճշմարտութեամբ զհողեղէնն զոր ինքն ստեղծ:

14 Քանզի ետ յառաջագոյն աշակերտացն ի ժամ ընթրեացն, յորժամ կամաւ մատնէր ի ձեռս անաւրինաց, առեալ զհացն եւ զգինին ի փառս Հաւր. զի մինչ դեռ էր ի մարմնի, անձամբ անձին յիշատակ մատուցանէր, եւ կերող զինքն եւ զԱռաքելսն զոյգ հաւասարէր: 15 Որպէս եւ մեծն Պաւղոս խորհրդակիցն Քրիստոսի ասէ՝ թէ Հացն զոր բեկանեմք, հաղորդութիւն է մարմնոյն Քրիստոսի. եւ բաժակն զոր արինեմք, ո՞չ ապաւէն հաղորդութիւն է արեանն Քրիստոսի: 16 Քանիցս անգամ թէ ուտիցեմք զհացս կամ ըմպիցեմք զբաժակս, զմահ Տեսնն պատմեցեմք, մինչեւ գայ նա՞: 17 Ձի պատմելով զմահն Քրիստոսի

՝ Տէ՛․․Է Կ․թ․ Ժ 16, ԺԷ 26:

ի վերայ տէրունական սեղանոյն, հացն եւ գինին ոչ որպէս էրն յառաջ՝ նոյնպէս լինի, այլ մարմին եւ արիւն ճշմարիտ Քրիստոսի, ոչ ապականացուի ուրուք, այլ անապականի. եւ մերձեցեալ ուրուք արժանապէս՝ զապականութիւնս մեր յանապականութիւն դարձուցանէ: 18 Եւ է սա յիշատակ արարեալ Աստուածն Բանի կատարեալ եւ կուսածին մարմնոյն, զոր ոչ կարաց մահ արգելուլ ընդ ապականութեամբ. եւ խառնեալ ի սա Տեառն ըստ իւրոյ բարերարութեանն, եւ յիշատակ մերոյ մարդկութեանս: 19 Զի եթէ ա՛ն մարմին զիմ բնակիցս եւ ետ ինձ իշխանութիւն զիւրոյ աստուածութեանն եւ պատմիչ կացոյց զիս իւրոյ չարչարանացն, ահա յայտ է՝ թէ եւ ես ունիմ իշխանութիւն հանգուցելոցն առնել զյիշատակ նոցա ի յիշատակն Քրիստոսի: 20 Զի յորժամ սրբութեամբ առնեմ, աւգտիմ եւ աւգտեցուցանեմ. աւգտիմ՝ զի եւ զիմ հոգիս ի հանգուցելոցն խառնեմ, եւ աւգտեցուցանեմ՝ զի վկայ եմ ճշմարիտ հաւատոյ հանգուցելոցն: 21 Ապա եթէ այդ այդպէս իցէ, ոչ միայն պարտիմք հանգուցելոցն յիշատակ առնել, այլ եւ տուրս առատաձեռն բաշխել մեզ ի քաւութիւն մեղաց, ի գովելի հաւատս աղքատաց, ի հանգիստ մխիթարութեան հանգուցելոցն, եւ որ գկնի մեր գալոց են յուղղափառ վարդապետութիւնս:

22 Իսկ վասն մեղաւորաց յիշատակի՝ որք վրիպեցան ի կեանս իւրեանց, եւ ջնջեցին զգիր որդէգրութեանն Աստուծոյ, եւ անձամբ անձանց եղեն պատճառք ելանելոյ յերկնից յարքայութենէն, եւ բազմութիւնք հրեշտակացն սուգ առին վասն այնպիսեացն, եւ միայն սատանայ իւրովք սեւագունդ գաւրաւքն խնդայ, զի քակեցաւ տաճարն կենդանի, չեղեւ արժանի բնակութեան թագաւորին Քրիստոսի. քակեցաւ ի դասուէ սրբոցն, հեռացաւ յուղղափառ եկեղեցւոյ, չխառնեցաւ ի գունդն Քրիստոսի, չկարգեցաւ ի շրջագայ պարս

հրեշտակաց լուսազգեստից, միաբանեաց ի սեւաթոյր գոյն ներկեալ մեղացն, խառնեցաւ յերամակս այծից ձախակողմանն. ժառանգն արքայութեան եղեւ կերակուր որդանցն անմահից. որդին լուսոյ բնակեաց ի խաւարն արտաքին. փոխանակ ուրախ լինելոյ եւ խնդալոյ յանթառամ պսակսն, լալ աչաց եւ կրճտել ատամանց, եւ վայ ի բերանոյ մի՛ պակասեցէ: 23 Քանզի կրկին է հարուածք դժոխոցն եւ երեքկին. սարսուռ է քան զամենայն ցուրտ ձմեռայնոյ սառամանիքն, եւ տապ բոցոյն այրեցող քան զամենայն հուր հնոցի. գետ հրոյ յորդեալ ելանէ քան զամենայն սաստկութիւն ջուրց բազմաց. բոցք հրեղէնք ի վեր ցուացեալք, եւ շանթք հրածեւք ետալով հատանեն. մթին է բոցն եւ խաւարային է հուրն, վասն որոյ արտաքին անուանեցաւ. հրածին է որդնն եւ թիւնաւոր եւ անքուն, եւ անմահ անուանեցաւ. ահաւոր են ժանիքն եւ անյագ որովայնն. անսպառ կերակուրն եւ անդադար կերողքն. չիք առ ոք աղաղակել, եւ ոչ այն որ լսէ զձայն պաղատանաց, ցամաքեալ է սէր, եւ ոչ իջանեն արտասուք ընկերի ի վերայ սիրելեաց իւրոց. քանզի հեռացաւ գութ, եւ թագաւորեաց ստուգութիւն՝ որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւր:

24 Բայց որովհետեւ եկն ի մկրտութիւն, ուրացաւ ի սատանայէ եւ ի խաւարային հրեշտակաց նորա, խոստովանեաց զՀայրն բոլորից, յանձն էառ չարչարակից լինել Աստուածն Բանի՝ որ էառ ի սրբոյ կուսէն զբնակից մարմինս մեր շնչով հոգւով եւ մարմնով, հաւատաց ի Սուրբ Հոգին քաւիչ մեղաց ամենայն մարդկան որ հաւատան, այսպէս եւ ճաշակեաց ի կենդանարար պատարագէս Քրիստոսի, եւ թէպէտ եւ մեղաւ՝ ոչ կարաց տկարութիւն մեղացն լուծանել զանբեկանելի կնիքն տէրունական. եւ զոր աւրինակ առաջին մարդն ապականեալ մեղաւք հող եղեալ, եւ դարձեալ անդրէն ի նոյն բնութիւն յե-

րեւմանն Քրիստոսի, ոչ նոր կամ այլ մարդ փոխանակ նորա արարաւ, այլ զայն զապականեալն յանապականութիւն նորոգեաց, ըստ նմին աւրինակի եւ որ յետ մկրտութեանն կարգի մեղանչէ՝ եւ զղանայ եւ դառնայ յապաշխարութիւն, առաքինութիւն պիտի գործել այնպիսեացն, այլ ոչ վերստին մկրտիլ. քանզի եւ յառաջնումն ոչ բռնաբար ոք էած զնա ի հաւատս, այլ ինքն կամաւք. եւ Աստուած զկամաւորն ընդունի յորդէգրութիւն: 25 Ինքն հաւատայ բոլոր եւ զինքն տայ Աստուծոյ, որով լինի միաբանութիւն Աստուծոյ եւ մարդոյ. եւ զի ճշմարիտն այսպէս, եւ մեք հաւատամք: 26 Եւ թէպէտ թերահաւատ լինիցի ըստ մարդկային մտաց, Աստուած յիւրումն հաւատարիմ է, զտուեալն պարգեւսն ոչ հանէ: 27 Եւ յորժամ դատի, զմեղսն դատեսցէ. սուրբ մկրտութիւնն ոչ լուծանի, եւ ոչ ընդ դատաստանաւ անկանի:

28 Եթէ կամիս, ա՛ռ քեզ միւս եւս տարացոյց: 29 Կատարեալ մեղաւ մարդն առաջին ի դրախտին. ի հողոյ մասն դարձաւ յերկիր, իսկ կենդանի փչումն ոչ անկաւ ընդ ապականութեամբ, այլ վերաբերեցաւ ըստ առաջին բնութեանն: 30 Կնիք հաւատքն են՝ որ ի Սուրբ Երրորդութիւնն, որում լուծանել անհնար է, եւ կամ ընդ ապականութեամբ անկանել: 31 Ապա եթէ ոք որպէս հաւատայն կամաւք՝ դարձեալ ուրանայցէ, ինքն ի բաց կեայ ի կենացն, կեանքն ոչ մեռանի ընդ մահկանացուին. թուի ինձ եւ ամենեցուն՝ թէ այնպիսումն յիշատակ չէ արժանի առնել, եւ ոչ տուրս բաշխել ի քառութիւն մեղաց նորա: 32 Ապա եթէ ի ժամ վախճանին զղջասցի, ընդունել արժանի է՝ հայելով ի մարդասիրութիւնն Աստուծոյ. ի վերայ այսր տուրս տալ արժան է յանուն հրաժարելոյն, թերեւս ընկալցի ողորմութիւն՝ գթացեալ ի նա:

33 Իսկ վասն անմեղ երախայիցն որք հրաժարեցին յաշխարհէս առանց մկրտութեան, ո՞րպէս ասասցուք նոցա անմեղս. զի առաջին պատուիրան մկրտութիւնն է, զի ի նմա կատարին հաւատքն. եւ նա արհամարհեաց զայն եւ զբոլորեցունց Հայրն զԱստուած եւ զքաւիչ զՀոգին Սուրբ եւ զմիածին որդին Աստուծոյ՝ որ խոնարհեցոյց զինքն զբոլորն դնել զաջ մարդկութեանս ի վերայ աստուածութեանն. եւ Մկրտիչն ի բաց հրաժարէր ասելով՝ Ինձ պիտոյ է ի քէն մկրտել, եւ դու առ ի՞ս գաս: 34 Իսկ Տէրն մեր զի զմարդիկ որդիս Աստուծոյ արասցէ, ասէր՝ Թոյլ տուր, զի այսպէս արժան է մեզ լնուլ զամենայն արդարութիւնս. փութամ մկրտել ի մարդոյ, զի կատարեցից զարդարութիւնս ամենայն, ո՞րչափ եւս առաւել մարդ փութասցի ապաւինել ի սուրբ ջուրս աւազանին, զի առցէ զանջինջ որդէգրութիւնն Աստուծոյ: 35 Արդ որ զայսու ամենայնիւ արհամարհեաց եւ զանց արար, եթէ արժամ իցէ նմա անմեղ ասել՝ որ լի է ամենայն կորստական վնասիւք: 36 Ապա եթէ ասիցէ ոք, ի տղայութեանն վրիպեցաւ, ես գիտեմ զայնպիսեացն զվնաս զձնողաւքն արկանել. եւ զի՞նչ առ պատուիրանն. եթէ յաւտարէն սպանաւ, սակայն մեռաւ. եւ եթէ յեղբաւրէն, նոյն անցք անցին. եւ բազում որդիք եւ ի հարց իսկ մեռան: 37 Մահն մի է ամենեցուն, իբր բաւական է վրէժ առնուլ ի վնասեցելոցն եւ ի վնասակարացն:

38 Ասեմ՝ թէ յայսպիսեացն անուն ոչ է արժան պատարագս մատուցանել, քանզի ի կենդանութեանն իւրում ոչ եղեւ արժանի կենարար շնորհին: 39 Ո՞վ այնչափ յանդուգն իցէ եւ տգէտ, որ աստի անդրոջմն յուղարկեցաւ, եւ քակեալ տրոհեցաւ բարժանելեալն եւ անբարժանելեալն. զոր չիք հնար ի միմեանս յարել մինչեւ ի ժամանակս վերստին նորոգման¹. այլ

1 Պակասին բառք ինչ

տուրս տալ միայն վասն այնպիսեացն յարժանաւոր տեղիս. աղաչել զգատաւորն ամենեցուն բազում բարեխաւսիւք, զի ապրեցուցէ զվրիպեալն յանշէջ հրոյ գեհնոյն¹, յոր երթալոց է սատանայ եւ ամե-

նայն գործակցաւքն իւրովք: 40 Յորմէ պահեսցէ Քրիստոս Աստուած մեր զսիրելիս իւր եւ զհամաւրէն գինս արեան իւրոյ. եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:

¹ Կայ վրիպակ ինչ գրչի. ապա թէ ոչ՝ չելանէ ստոյգ իմաստ: Եւ կամ իմա՛ այսպէս. թէպէտ եւ անկնունմն չափահաս ունի ի դժոխս երթալ, այլ եթէ անչափահաս գտցի կամ տարակուսելի, յայնժամ թերեւս օրէն իցէ աղօթել միայն առանց պատարագի. զի գոնեա լիմպոսի արժանի լիցի, եւ ոչ դժոխոց: Դժուարաթարգմանելի եւ եւ բանք սրբոյն Աւգոստինոսի առ աստուա-

ծարանս վասն անկնունմ տղայոց գրկելոց յարճայութենէ, թէ յո՛ր վիճակ անկցին:

ԿԱՆՈՆՔ ՎԱՍՆ ԴԻՄԱՐՈՒՄՆԻՑ՝ ԵՅԵ ՊԱՐՏ Է ԱԻՐԵՆԱ ՏԱԼ, ԿԱՍ ԵՐԱԽԱՅԻՑ

ԿՆԻՔ՝ ՄԻՆՉ ԴԵՌ ԴԵՒՆ Ի ՆՄԱ ԻՅԵ

Բագում եմ ախտք ի մարդն, վասն զի ունի մարմին չարչարելի. եւ եմ յախտիցն որ ի ձեռն ճարտար բժշկաց ընդունին զառողջութիւն, եւ եմ որ ինքեանք իսկ ախտքն դիւրաւ թաւթափին ի մարմնոյն, եւ եմ որ անբուժ յերկար հիւանդութիւնսս գործեն, միանգամայն եւ մահ իսկ ի վերայ ածեն: 2 Եւ եմ ամենեքեան եկամուտ ըստ իւրաքանչիւր պատճառի ժամանակացն կամ ի խորշակաց, կամ յանչափ խառնակութենէ, կամ ի սառնամանեաց ցրտոյ, կամ ի ժահնոտութենէ աւդոյն, կամ ի գէջ խոնաւութենէ: 3 Դարձեալ լինին ախտք եւ ի յուր կերակրոց եւ յերկար անսուղութենէ. եւ այլ բագում պատճառք եմ ցաւոց զոր գիտեմք ամենեքեան: 4 Բայց նման դիւահարութեան միւս եւս այլ տեսակ է՝ եթէ խելքն ուրուք վնասեալ են յանչափ արկածից ստամոքսին ցաւոց. եւ մանաւանդ ընդ ժամանակս ժամանակս ընդ ընդ լուսնիդ եւ ընդ մաշել՝ անմուկք եւ նուազութիւնք լինին ամենայն կենդանեաց, կամ ի գեղու խելացն, կամ ի նուագել, կամ յերկոսին յուզի ախտ ցաւոցն՝ փոփրէ այնպիսին, եւ արիւնախառն բերելով ընդ բերանն եւ ընդ քիթն, զարկանի ցնորի յիմարի եւ միտքն յապուշ դառնան: 5 Եւ յորժամ դադարէ ախտն, անդրէն ինքն ի նոյն յառաջին միտսն դառնայ. հարցեալ ուրուք, անյիշելով՝ պատմել ոչ գիտէ. կարծիս տայ ամենեցուն՝ զի ի դիւէ չարչարի եւ ոչ ի ցաւոց: 6 Է որ այսպիսեացս իբրեւ հասանէ առողջութիւն. եւ է ոք որ նովին վախճանի: 7 Է դարձեալ այլ ախտ, զոր կողացաւութիւն կոչեն եւ թիկնացաւութիւն. եւ յայլ աւդից ոտից, ձեռաց, ողաց, կարկամելով սարսառելով եւ դողալով բերէ զնմանութիւն դիւահարի.

մանաւանդ զի աւր ըստ աւրէ լինի եւ ժամ ընդ ժամ, եւ է զի յետ ամսոյ, եւ է զի մի անգամ՝ ի տարւոջն: 8 Եւ արդ պատճառք նոցա յայտնի են. ի ձեռն բժշկաց բագումք ընդունին զառողջութիւն. բայց մարդիկ այդմ ամենայնի դիւահարութիւն ասեն:

9 Այլ վասն այնոցիկ որ չարչարին յայտոց պղծոց, յայտնի է եւ ոչ կարեմք ուրանալ. եւ մանաւանդ զորս ածէին առ Տէր Յիսուս, եւ բժշկէր զբագումս ի նոցանէ բանիւ միայն եւ ոչ մարմնական հնարիւք. նա եւ զանուանս եւս ասէր, զոր մարդիկ յախտէ անտի սովորեցան կարգալ վերնոտ եւ լուսնահար: 10 Այո՛ աղաչեմ, յայտմ վայրի միտ դիր. է ուրեք՝ որ իբրեւ զմարդ եւ զԱստուած ի միասին՝ ուր բացէ ի բաց աղաղակէին դեւքն աղաչելով, Գիտեմք՝ զՖեզ ով ես սուրբդ Աստուծոյ, մի՛ յառաջ քան զժամանակն տանջեր զՖեզ՞: 11 Այս խոստովանութիւն յակամայ դիւացն՝ զաստուածութիւն Որդւոյ յայտ առնէին: 12 Իսկ ուր ձեռն դնէր ի վերայ հիւանդացն, իբրեւ զմարդ աղաչելով զԱստուած՝ զբժշկութիւնս կատարէր: 13 Իսկ ուր զվերնոտսն եւ զլուսնահարսն եւ զայսս պիղծս սրբէր, անդ իբրեւ զմարդ եւ զԱստուած. քանզի դեւն ի ձեռն մարդոյ Աստուծոյ լսէ եւ ելանէ ի մարդոյ: 14 Իսկ ջերմանք եւ հիւանդութիւնք եւ վերնոտք եւ լուսնահարք՝ մարդոյ առանց դեղոց ոչ լսեն, իսկ Աստուծոյ ամենայն ցաւք լսեն եւ բժշկին. որպէս ի Կափառնառամն սաստեաց ջերմանն, եւ գնաց ի նմանէ:

15 Արդ յայտնի է զի գոն դիւահարք, ոմանք ի ծածուկ եւ ոմանք յայտնի: 16 Եւ եմ պատճառք մտի դիւին ի մարդն՝ մեղք.

՝ Տէ՛ս. Մատթ. Ը 29:

եւ մեղքն բազում մասամբ պաշտին ի մարդն, սրտմտական, ցանկական, ուրացական, ամբարտաւանական: 17 Սրտմտականին պտուղ սպանութիւն, ցանկականին պոռնկութիւն, ուրացականին ստութիւն, ամբարտաւանականին ագահութիւն. չորքս այս միաբանին ընդ միմեանս եւ պատին զմարդովն եւ պատրաստին բնակութիւնք սատանայի. եւ անուանին սոքա գազանք բազմագլուխք, եւ կամք մի է ամենեցուն: 18 Որ էանց զհետ ցանկութեան, պարարէ զմարմինն պէսպէս խորտկաւք եւ ազգի ազգի ըմպելեաւք, յանկողինս փափուկս ննջել խոզաբար. այնպիսիքն կատարեն զկամս ոչ զմիտյ եւ գերկուց, այլ զամենայն դիւաց, որով ծածկապէս եւ յայտնապէս հանեն զնա յԱստուծոյ: 19 Իսկ որ չոգաւ զհետ սրտմտականին, հեռացաւ ի մարդկային բնութենէն, եւ նմանեցաւ չար գազանի ի մունչել եւ յափշտակել, ի բեկանել զիւր մարմնակիցս, միանգամայն ապականել զպատկեր Աստուծոյ: 20 Իսկ ուրացականն որ ծնաւ զստութիւն, եղեւ անաստուած, գործեաց առանց պատկառելոյ զամենայն չարիս. սա ոչ միայն դարան է դիւաց, այլ եւ կամակից չար կամաց նոցա: 21 Իսկ որ յաճախեաց յամբարտաւանութիւն, սա է որ կատարեաց զկամս առաջին թշնամւոյն մերոյ՝ ընդ որ եմուտ մահ յաշխարհ եւ տարածեցաւ յամենայն մարդիկ: 22 Եւ որ յայսոսիկ ըմբռնեալ են, ոչ ինչ փոյթ առնեն զանձանց բժշկութենէ. քանզի եւ ոչ դեւք յայտնի չարչարեն զնոսա, այլ ի ներքուստ հաշեն եւ մաշեն զանուրս ոգւոցն անմահութեան:

23 Իսկ որ յայտնի յայսոյն պղծոյ լլկին, կամ երախայ կամ կնքաւոր, կամ արդար կամ մեղաւոր, կամ ծեր կամ տղայ, եւ ոչ ելանէ դեւն յումեքէ ի նոցանէ, երկու պատճառք երեւին յայսմ տեղւոջ, դիւին բռնութիւն եւ մարդոյն տկարութիւն. եւ տկար ոչ մարմնոյ զաւրութիւն ասեմ,

այլ ոգւոյն անաւսրութիւն. եւ դիւին բռնութիւն ոչ անպարտելի զաւրութիւն է, այլ լրբութիւն: 24 Եւ զաւրացուցանէ զդեւն մարդոյն անժուժութիւն. քանզի ցանկայ պէսպէս կերակրոց եւ ըմպելեաց, գծագրէ յիւր ոգիսն մարդն զաղտեղութիւն եւ զանհաւատութիւն: 25 Բայց ես ասեմ՝ թէ բնականաբար եւ բարոյականապէս զոր կարէ տանել բնութիւն դիւին, հանապազ ցանկայ համոց կերակրոց եւ ըմպելեաց. իբրեւ իւր չիք ճաշակելիք եւ որովայն, նրբի սպրդէ մտանել ընդ կերակուրն ի սիրտ մարդոյն, եւ քարչէ հանէ յինքն զհամեղութիւնն եւ անյագ առնէ զմարդն յորկորստութիւն եւ առաւել յարեցութիւն, իբրու թէ ի ձեռն մարմնոյն ինքն կերակրեսցի եւ ըմպիցէ: 26 Եւ առնէ իւր բնակութիւն ոչ միայն զմարմնոյն թանձրութիւն, այլ եւ զնրբութիւն ոգւոյն. ուսուցանէ գործել զամենայն չարիս: 27 Սա է որ ոչ թողու զմարդն մինչեւ յաւր վախճանին:

28 Իսկ ուր դիպի մարդոյն առաքինութիւն կարծել որոշել յամենայն չարութենէ, զոր ոչ ինչ գիտիցեն ամենեւին մարդիկ՝ զի զարտաքոյս տեսանեն, եւ չարչարի այնպիսին ի դիւէն, եւ բազում անգամ վաստակաւք ոչ կարէ հալածել զդեւն յինքենէ, կարծեմ թէ դեւն տեղեկագոյն է ներքին գործոց նորա քան զմեզ՝ ըմբռնեաց զնա, կամ յառաջինն ստգտանելի երկեցոյց զնա, եւ կամ առժամայն ի վատթար խորհրդոց՝ յորմէ արկ ձեռն եւ սկսաւ չարչարել, արար զմարդն անհոգ հանգիստ: 29 Ապա թէ մարդն յառաջագոյն անարատ էր, եւ առժամայն ի յստակ խորհուրդս, ահա յայտ եղեւ դիւին լրբութիւնն եւ անձանձրոյթ համբերութիւն: 30 Աստ ոչ միայն ճնշել ի պահոց պիտի, այլ եւ սուրբ աղաւթս առ Աստուած, եւ ի բազում տեղիս՝ ուր սրբոց ոսկերք հանգուցեալ են՝ ուխտք եւ խնդրուածք, զի հեռասցի չարն ի մարդոյն: 31 Ապա եթէ

զայս ամենայն կատարեալ իցէ, եւ դեւն ոչ ելանէ ի նմանէ, եւ մարդն ոչ կասիցէ եւ թուլանայցէ յառաքինութենէ մինչեւ յաւր վախճանի իւրոյ, այնպիսո՞ւմն ասեմ՝ եթէ երախայ է, կնիք տալ արժան է. եւ եթէ կնքաւոր է, աւրէնս: 32 Զի զայնպիսի առաքինի այր դեւ յԱստուծոյ հեռացուցանել ոչ կարէ, այլ յաղթի պարտի եւ ամաչէ. որպէս երբեմն առ կատարեալ նահատակին, որոյ առաքինութիւնն մինչեւ ցայսաւր հնչէ յեկեղեցո՞ղ: 33 Բայց այլոց դիւլահարաց՝ որ պորտաբոյժք են, որ պարարեն զդեւն եւ զանձինս ի միասին, եւ անյագ են յանառակութիւն, եթէ երախայ իցէ՝ կնիք չէ արժան տալ, եւ եթէ կնքաւոր՝ աւրէնս, եւ վկայէ մեզ տէրունական հրամանն. Մի՛ տայք գորբութիւն շանց, եւ մի՛ արկանէք գմարգարիտս առաջի խոզաց՝:

34 Ապա եթէ ոք ասիցէ, տղայոց զի՞նչ մեղք էին, զի անդատին ի սկզբանն սկսաւ չարչարել զնոսա, զայս ասեմ՝ եթէ է ուրեք, զի Աստուած իբրեւ զմարդ դատի զաշխարհ, եւ է ուրեք իբրեւ զԱստուած. ուր ըստ գործոց հատուցանէ իբրեւ զմարդ, որ իշխէ դատել. իսկ որ չեւ ի մեղս եկեալ է, իբրեւ զկանխագէտ՝ զի արգելցէ ի չարէ: 35 Տես իսկ զի աշխարհի աւրէնք թագաւորաց ի յանցաւորաց առնուն վրէժս, իսկ Աստուած ի յանցաւորէն եւ յազգէն. ի յանցաւորէն որպէս աւրէնսդիր, ի յազգէն իբրեւ զյառաջագէտ: 36 Անորիչ հարցուածս եւ առանց զատուցանելոյ չիք պատասխանի. եթէ յախտէ՞ իցէ, եթէ յաշխարհէ. եթէ յախտէ՞ յո՛ր տիս հասակ լեալ իցէ, եւ զի՞նչ պատճառք յանցանաց են. եթէ ուրացող իցէ՝ ոչ մարթի, եթէ արիւնհահեղ է՝ նոյն է, եթէ պոռնիկ իցէ, եթէ վրեպակաւ ի տղայութիւնն իցէ, իբրեւ եթէ միով ժամու եւ կամաւք ի զղձումն եկեալ իցէ, եւ յայնմ հետէ բազում առաքինութիւն ցուցեալ իցէ վկայութեամբ եղբարց

եւ զլիաւորին, մերձեալ եւս իցէ ի ծերութեան ժամանակն, անձամբ անձին այնպիսոյն չէ արժան յաւժարել ի ձեռնադրութիւն:

37 Այլ վասն կարաւտութեան պիտոյից եւ վասն բազմաց աւգտի մերձաւորագիտացն բռնի արժան է անել զայնպիսին յերիցութիւն. զի առաքինութեան ծնունդ է, լինի բազմաց բարեաց պատճառք:

38 Ապա թէ ոմն լի հասակաւ էր եւ հասեալ ի չափ մտաց ճանաչել զչար եւ զբարի, եւ ընտրեաց զչարն եւ անարգեաց զբարին եւ անխտիր եղեւ ի պոռնկութիւն, եւ ապա կամ յամաւթոյ մարդկան, կամ ի բռնաւորի յերկիւղէ եկն յապաշխարութիւն, եւ արգելեալ խափանեցաւ յանառակ գնացից, մարդասիրութեամբ արժանի է մերձենալ ի սրբութիւնն, եւ զամենայն աւուրս կենաց իւրոց նովին կատարել յերիցութիւն: 39 Ոչ անձամբ եւ ոչ այլով յորդորելով զնա չէ աւրէն ընդունել. ի մեղս անդ հայեսցին, եւ ի ժամանակս տիոցն՝ յորում գործեացն. եթէ յերախայութեան իցէ՝ ունի համարձակութիւն, եթէ ի կնքաւորութեան՝ զատուցեալ որոշեսցեն, եւ զառաքինութիւնն ընտրեալ փորձեսցեն, եւ զարժանաւորն յառաջ մատուցեն. քանզի մարդիկ են, եւ յամենեսեան գոյ հոգի Աստուծոյ:

40 Ապա թէ ոք վասն իւրոյ հպարտութեանն մարմնաւոր սէր ունիցի ընդ ումեք, մարմնասիրագոյն յանդգնի, եւ արհամարհէ զաստուածային կանոնական հրամանս, եւ զանարժան յառաջ մատուցէ, եւ զմարդկային միտս գողանայ, եւ պատճառս զկանոնս ունի՝ թէ հրամայեն զապաշխարողս ընդունել ի ձեռնադրութիւն, եւ զայս եւս պարտ է նմա գիտել. զի Աստուած որ քննէ զգաղտնիս, ըստ ներքին գիտութեանն դատի զդատաստան. զի ոչ միայն յապաշխարողաց պիտի ընտրել եւ առնել զարժանն, այլ եւ յանապաշխարո-

*** Մատթ. Է 6

ղաց. քանզի բազումք են որ յաչս մարդկան անմեղք երեւին, այլ ի գործ Աստուծոյ անպիտան, գիրգք, յիմարք, ցնորեալ, անսէր, ապուշք. թէ եւ անասնոց հովիւ արասցես, ոչ երբեք յառաջ անցեալ հանգոյց գմիտս հովուապետին: 41 Իսկ զիա՞րդ ար-

ժան իցէ յայնպիսեացն յառաջնորդութիւն մարդկան, ասելով կեղծաւորութեամբ՝ թէ ոչ ինչ գիտեմ զյանցանս դորա: 42 Վասն որոյ (որ) ետ առնել եւ որ արար, երկոքեան ընդ դատապարտութեամբ են յամենագէտ ատենին Աստուծոյ:

ՎԱՍՆ ՀՈԳԻՌՑ ՄԱՐԴԿԱՆ ԹԵ ՌԻՄՏԻ ԳԱՆ, ԵՒ ՅԵՏ ԵԼԱՆԵԼՈՅ Ի ՄԱՐՄՆՈՅ ԱՌՈՎ ԵՐԹԱՆ, ԿԱՄ ԹԵ ԱՌԱԽԵԼ Ի ՄԱՍՏՆԱՅՅԵՆ

¹Զի գոն եւ հոգիք՝ զայս եւ բնութիւն մերոյ լինելութեանս ցուցանէ. քանզի կրկին է տեսակ մարդոյ, մին շարժէ եւ միւսն շարժի. շարժողն ունի գիմացական բնութիւն, եւ շարժեցեալն գործէ գանձական տեւողութիւն. եւ է միութիւն յորժամ երկոքեան ունիցին զտնկեցութիւն. ապա թէ թողցէ շարժողն, անկեալ զնի մարմին անխլրտելի: ² Բայց աւրինադիրն մեր զհոգի մարդոյ փշուճն Աստուծոյ ասէ. եւ նորուն ծանաւթ եւ բարեկամ ոմն մարգարէ իբրեւ յերեսաց Տեառն ասելով Հոգիք յի-նէն արձակից, եւ զամենայն շունչ եւ արարի, ասէ Տէր՞. նովին հոգևով Ովսէէ մարգարէ ասէ. Ո՞վ հաստատեաց զհոգի մարդոյ ի նմա՞: ³ Բարևոք է այն միաբանութիւն, զի առանց Աստուծոյ եղեալ եւ ոչ ինչ. այլ զորպիսութիւնն պիտի իմանալ: ⁴ Զի արար Աստուած զարարածս գիտեմք՝ ոչ ի նիւթոյ եւ ոչ ի հատոյ իմիք էութենէ, քանզի անհատ բնութիւն իմանամք զԱստուած. իսկ արարածս հատկոտոր: ⁵ Դարձեալ յոչնչէ ոչ կարեմք ասել զայս մեծ մարմինս արարածոյս, եւ ոչ ինքնաբոյս գոյացութիւն, նա եւ ոչ ի վարանս տարակուսի անկանիմք թէ ուստի՛ եղեւ բնական կամքն Աստուծոյ իմանալ եւ առնել ինչ. այլ միշտ Աստուած, միշտ արարող զաւրութիւն ընդ իւր: ⁶ Եւ յորժամ կամե-

ցան՝ նոյնպէս կամեցաւ. զոր ունէր յիմանալու ջն՝ էած ի գոյացութիւն, զի իմանալեաց իցէ արարիչ բնական իմացութիւն: ⁷ Իսկ արարչական զաւրութիւնքն զիա՞րդ նիւթն անմարմին. իսկ արարչութիւնն զանմարմնոց եւ զմարմնացեալն ի բազմադիմի մասունս, յիւրաքանչիւր ի զարդս, զի իցէ ոստն մի, եւ ստեղն մի, եւ արմատն բազում, եւ յոստոց անտի բազմատեսակ շառաւիղք:

⁸ Արդ որպէս վերագոյն ասացաք՝ յերկնէ երկնայինքն եւ յերկրէ երկրայինքս, եւ մարդ խառնուած յերկնէ եւ յերկրէ. անաւսրագոյնն յերկնէ, թանճրագոյնս յերկրէ: ⁹ Զի թէ զգոյացութիւնս հրեշտակաց ծնունդ ասեմք երկնի, հրոյ եւ աւզոյ, որպէս եւ մեծն Դաւիթ ասէ, Ու արար զհրեշտակս իւր ի հոգիս՞ եւ զպաշտաւնեայս անուանէ հուր կիզելոյ, ապա յայտ է եթէ ոգիք մարդկան ի նմին նիւթոյ գոյացեալք՝ կամաւք արարչին առաքին ի բնութիւն մերոյ լինելութեանս, ոչ հրեշտակացեալք եւ ոչ դիւացեալք ըստ ոմանց անուանելոյ, այլ միայն հոգիք եւ հոգիք մարդկան: ¹⁰ Հոգիք հրեշտակաց պարզ բնութիւն, անմարմին, անյաւղ, անորակ, անքանակ, անձն կատարեալ. եւ կատարելութիւն անձին ոչ յումեքէ, այլ ինքնակատար էութիւն, կատարեալ գոյացութիւն:

¹¹ Իսկ ոգիք մարդկան գոյացութիւն պարզ, էութիւն յստակ, սուրբ, մաքուր, իմացական բնութիւն, ձեւ սկզբնատպին, հարկաւոր շարժմունք, վերաբերութիւն, անմահ տեւողութիւն, յարկակից մարմնոյ, միաբան որակութիւն, անձանճրանալի միութիւն, անբաժանելի մասունք, անհատ

¹ Ձեռագրերն հաստատորոշ գորոց յիշեալ էաք յառաջնում տպագրութեանն, ցարդ չընկալեալ ուստեք գայլ օրինակ, յարեմք ի կատարած նա-նիցս, անյար միմեանց որպէս գտաք յօրինակին դրելոյ ի նլ. ոչ իբրեւ ամբողջ յօրինուած նառի եւ ոչ դարձեալ անկարօտ պարզաբանութեան, ակն ունելով անթերի օրինակաց, յորոց միաբանութեանէ թերեւս ի յայտ գայցէ հարազատութիւն իմաստիցն:
Սէ՛. Ե. Ծ. 16:
Տէ՛. Զ. Ժ. 1:

զաւրուծիւն, անծերանալի յերկարուծիւն, անտեղի բնակուծիւն. յառաջ քան զգալն ի մարմին ի գոյացուծիւն եղանուծեանն՝ ունի իմացական, անքանակ. եւ ի մարմնի եղեալ զամենայն ունի զիարդ որպէս կամի ախորժել: 12 Եւ իմանի բնուծիւն տարբերել ընդ մարմնոյն. բայց ես ասեմ ըստ բնուծեան եւ ըստ բարոյական ձեւացելոյ հոգւոյս զառ ի միմեանց զմերձաւորուծիւն:

13 Գովի քնար, այլ ի ձեռն քնարահարին. գեղեցիկ են ձայնք երաժշտականք, այլ երաժշտականաւն. տեսեր զչքնաղ ինչ շինուած, ոչ ի նմին հարեր կացեր, այլ ճարտարապետին ետուր զգովուծիւնն:

14 Ապա թէ ոչ իցէ քնարն, չերեւի քնարահարն. սոյնպէս եւ ամենայն գործիք ձայնաւոր երգոցն ի ձեռն արուեստաւորին երեւին: 15 Ապա թէ գործիքն ապականեալ իցեն, իբրեւ թէ որպէս փող ջախջախեալ, աղի խոնաւեալ, եւ ճարտարն առողջ եւ լի արուեստիւն եւ գիտութեամբ. ոչ կարէ ցուցանել զհանդէս առաքինութեան արուեստին. եւ գտանի ամենայն մասամբ ապականեալ ի գիտութեանն: 16 Ապա թէ կատարեալք առ միմեանս հանդիպիցին, սփոփիչք եւ մխիթարիչք առ միմեանս հանդիպեացեն բազմամարդոյ քաղաքաց, եւ պահի իւրաքանչիւր բնուծիւնք զատ եւ որիչ խառն բնութեամբն:

17 Ապա կարի գեղեցիկ մեր արարիչն զբնուծիւն մարմնոյս հաստատեաց շինուած բաժանելի, եւ զգոյացուծիւն հոգւոյս արար անբաժանելի բնուծիւն. եւ միաբանեաց իբրեւ քնարահար ընդ քնարի, զի շարժեսցի եւ շարժեսցէ զակն ի տեսանել, զոքնգունս ի հոտոտել, զքիման ի ճաշակել, զլեզու ի խաւսել, զխելսն յիմանալ: 18 Զայս ամենայն զբազմուծիւն մասանցս մարմնոյ շարժէ ի կենդանութիւն եւ ի գործառութիւն ցորքան ժամանակ միաբանութիւն է շարժողին եւ շարժեցե-

լոյն: 19 Ապա եթէ չբաւեսցէ՝ սա քակտեալ եւ նա ի բաց կացցէ, լուեալ դադարեալ լինի ամենայն բազմութիւն արուեստիցն. սա դառնայ յիւր բնութիւնս, եւ նա վերանայ յիւր կայանն. ինքն յինքեան իմանայ, ինքն յինքեան հանգչի, ինքն յինքեան առաւելու, ինքն յինքեան խնդայ, ինքն յինքեան տրտմի, ինքն յինքեան շարժի, ինքն յինքեան եւ դադարի, ինքն իւր բաւական ինքնագոյ իմացութիւն, ինքնալուր, ինքնատես:

20 Իսկ եթէ ոք զտեղեաց կամ զկայնից հոգւոց կամեսցի գիտել, զհետ եկեսցէ բանից մերոց. մի՛ գետնաքարչ գնացիւք եւ մի՛ ծովական ճանապարհորդութեամբ եւ մի՛ առասպելական բարբանջմամբ, այլ ճշմարիտ վարդապետութեամբ վկայութեամբք սուրբ գրոց. ուր Առաքեալն յափշտակեցաւ, ուր պարգեւքն պատրաստեալ են. զոր մարմնաւոր զգայութեամբքս թարգմանել ոչ կարեմք, զանյաւել տեղեացն՝ վերնոց քաղաք ասեմք, վերին Երուսաղէմ անուանեմք նմա, այլ ազատ բանակետղ. անդ բիւրաւորք հրեշտակաց, բանաւոր իմանալի, եւ ոչ զգալի հոգիք են անդ մարդկան: 21 Այլ զարդարոցն կատարելոց կամիցիս գիտել, թանձրագոյն ասացից. յորմէ նիւթոյ առաւ, ի նմին եւ չոգաւ դադարեաց: 22 Լուր եւ մեծին Սիմոնի վիմի յուսուցանելն մանաւանդ եւ զճարտարապետսն փիլիսոփայից. իբրեւ հաճեաց զմիտս նոցա արարչութեանն ճառիւք, ասաց եւ վասն հրեշտակացն կայանից՝ զսուրբ զանապական զանպղտոր զհոգման վերինս, զոր եւ բանակետղ Առաքեալն անուանեաց:

23 Ապա թէ ոք ի գրեալսն Մովսէսի ընթացի, եւ փչումն յԱստուծոյ զհոգիս մեր ասիցէ, եւ զայն եւս իմացի անկանել նմա ի մեծ վարանս տարակուսի, մինչեւ զանմարմին Աստուած ի ձեւս մարմնոյ ածել՝ փչելն որպէս թէ բերանով, ոքնգամբք

եւ շրթամբք, հարկ է եթէ ամենայն անդամքն զհետ գայցեն, զոր քաւ եւ մի՛ լիցի, եւ մի՛ ի միտս անգամ այս եկեսցէ ուրուք՝ զԱստուած ի կարաւտութիւն զգայական գործւոյ ածել. այլ իմասցուք զփչելն ոչ ի նմանէ ի նա, այլ նմա փչելն զնա հոգիացոյց, որպէս զանգոյսն գոյացոյց, որպէս զանհոգին հոգիացոյց եւ զկենդանութիւն եդ ի վերայ նորա:

24 Զի եթէ յԱստուծոյ էութենէն փչումն ասէք, զի՞նչ պիտոյ էր լսել զձայնն Փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, եւ եղբւ մարդն ի հոգի կենդանի^ա: 25 Իբրեւ յայտնի է զաւրութիւն բանիդ, անուանեաց զառաջին արարչութիւնն հոգւոյն շունչ կենդանի իբրեւ զմի արարչութիւն. այլ վասն մեծախորհրդութեան՝ զի պատուականագոյն երեւեսցի մարդն յարարչութեանն՝ մեծարեաց զնա. իբր զի ստեղծ ձեռաւք զմարմինն, եւ բերանով զփչումն հոգւոյն: 26 Քանզի աննախանձ է աստուածութիւնն եւ անչարակնութեամբ պարգեւասէր, ոչ ինչ դանդաղեցաւ անուանել զմեր բնութիւնս պատկեր աստուածութեանն. իբրեւ յայտնի է իմաստնոց եթէ ո՛րչափ հեռի են ի միմեանց մարդ եւ Աստուած՝ բնութեամբ: 27 Ուստի եւ մեծ մարգարէն Եսայի ետես զԱստուած եւ հիացեալ զարհուրեցաւ. զգաւրութիւնսն պատմէ, զիսկութիւնսն լռէ. եւ զիտացեալ զմեր բնութիւնս՝ խոնարհութեամբ բարբառի. Յիմէն արձակիմ հոգիք, եւ զամեցայն շունչ ես արարի, ասէ Տէր՞:

28 Ահա յայտ է արարչութիւն հոգւոյ. արձակին կամաւքն Աստուծոյ յանաւոր բնութենէ, որպէս վերագոյն ասացաք. կենդանածնեցան երկինք մաւտաւորս իմանալիս, եւ ոչ շաւշափելիս: 29 Սոյնպէս եւ յորժամ արտաքոյ մարմնոյս եղեալ ոգիք, զամենայն արտաքնոց զգոյսն տե-

սեալ եւ ընդ նոսա լինելով՝ ոչ կարէ ի մարմնի լինել, եւ ոչ զպէտս մարմնոյ կատարել. որպէս հարկեալ էր յառաջագոյն ի բնութենէն չելանել ի մարմնոյն, նոյնպէս ոչ յետ ելանելոյն անկանել նմա ընդ մարմնական պիտոյիւք մինչեւ յաւրն յայն յորում յայտնեսցի արարիչն արարածոց:

30 Բնութեամբ կրկին է տեսակ մարդոյ, մին կառավար եւ երասանակալ եւ ուղղիչ, եւ միւսն բնակարան բնակողին եւ շինած զարմանալի, անմահական հոգւոյն անուրանալի բնակարան. որով իմանալին ընդ մարմնականս ընդ այս կենցաղավարութիւնս սովաւ հաղորդի մնալով յուրախութիւնս, եւ տեսանելիս ընդ անտեսանելին հաղորդեալ՝ ոչ հեռանայ ի թանձրութենէ: 31 Զի սա քաղաք է իշխանականին, դարմանաւոր, աննդական եւ կենդանի տաճար, այլ եղծանելի եւ արագալոյծ եւ առժամայն վայելչութիւն. իսկ տիրական՝ իբր զթագաւոր եւ տեսուչ եւ դատաւոր իրաւախորհրդութեան, զի ոչ ունի պէտս առ դարման աննդեան. սակս այսորիկ եւ անապականելի եւ անապական. զսա աստուածային աւրինադիրն Մովսէս փչումն յԱստուծոյ ասաց: 32 Արդ մի՛ ոք ծառայեսցէ բանին, այլ մտացն հնազանդեսցի. զի անհանճար խորհրդոյ է իմանալ փչումն յԱստուծոյ՝ բերանոյ եւ ուրնգանց որոշեալ տեղի. ապա եւ այլն ի ներքս եկեալ լինին մասունք մարմնոյն, եւ զանմարմին եւ զանկարաւտն ընդ զգայականիս շինեալ կարաւտութեամբ: 33 Այլ ի սա փչել զգոյացուցանողն հողմաշարժ կենդանութեամբ հաւանելի է. յորմէ եղեալ մարդն ի հոգի կենդանի՝ աստուածահրաշ միաւորութեամբն հաստատեալ ըստ եղութեան թագաւորական բանին թէ Ո հաստատեաց զոգի մարդոյ ի նմա՞: 34 Այլ եւ արձակեալ որ ոչ հաստատեալ, զոր երեմիաս ասէ. Կենդանի եմ ես, ասէ Տէր, զի

^ա Ին. Բ. 7

է Տէ՛. Ե. Ե. Ե. 16:

ժ Տէ՛. Գ. Գ. Ժ. 1:

հոգի յիմէն ել[՞]։ որով յայտ արար զնա միայն գոլ արարիչ բարեացն կամողաց։

35 Աստուած անհատանելի բնութիւն է, ոչ ինչ հատեալ լինի յԱստուծոյ. եւ դարձեալ ոչ այլ ինչ յառաջն կայր նիւթ յորժամ ստեղծանէր զպատուական զայս հոգի. այլ եւ ոչ ինքնաբոյս եղեալ ըստ ինքեան, զի չէ ոք մշտնջենակից Աստուծոյ. զի ոչ է յուժեքէ եղեալ. զնորա սահման լինելութեան ոչ ոք գիտէ. այլ սա ոչ է անխնդրելի, զի արարիչ սորա Աստուած է։

36 Եւ զի երկնային է հոգւոյն բնութիւն, ցուցանէ զի ելանելով ի մարմնոյս՝ ոչ ստորիջէ յերկիր. այլ զբարձրանալոյ մայրածնդեան իւրոյ ցուցանէ զիմանալի երկիրն։ 37 Եւ որոշեալ մարմին յիմացականէն՝ ոչ վերաբերի ի գերակայն, այլ վայրիջի յերկիր ծնող իւր. յորմէ յայտ է թէ յախտականէս զախտաւորն ստեղծ Աստուած, եւ յանախտէ զանախտն. եւ յետ որոշման ոչ հեռանայ, այլ յիւրն երթեալ զաղարէ ի տեղիս, ըստ բանին Գնաց մարդ ի տուն իւր յաւիտեմից. եւ հոգին դառնայ առ Աստուած որ ետն զնա^Է։

38 Արդ երթեալ միայն ի լոյսն ուստի ծնաւ, զի լուծաւ ի կապաւոր մարմնոյն որպէս կապեալ ունէր միութեամբ։ 39 Զի որպէս քար մեքենայի յաւդ պարզեալ, զի յորժամ լուծանի՝ հասանի վաղվաղակի յերկիր ուստի առաւ, նոյնպէս եւ հոգին զի այժմ ծանրացեալ է քան զբնութիւնս աւդոց, իսկ ի միւստում խառնուածին դարձեալ զաւրանայ քան զնա, եւ առ ինքն վերամբարձեալ ձգի։ 40 Եւ է նա հուր, հողմ, լոյս. իսկ մարմին հուր, ջուր, աւդ, հող, հակառակախառն զուգակշիռ միութեամբ ընտանեցեալ, երկու՝ վերաբերական հանապազաթուիչ թեթեւութեամբ. իսկ երկու՝ վայրաբերք ծանրութեամբ մշտաշարժ երկրասողութեամբ. զի ոչ այլ ինչ

քան զբնական իմաստութիւն Աստուծոյ իմանալ նիւթ արարելոյ այս է, զոր մշտնջենապէս յիմանալու ղն ունէր զիմացեալն. յորժամ կամեցաւ ի գոյութիւն ածել, սահմանեաց եւ եղեւ իբրեւ մայր իմանալին։ 41 Եւ երկու ի նմանէ երեւեցան ծնունդ, տեսանելի եւ իմանալի. եւ յերկոցունց եղեն բազում տեսակք, յանմարմնոյն անմարմինք եւ ի մարմնոյ մարմնաւորք, ոյք են հրեշտակք եւ մարդիկ։

42 Մարդ յերկնէ է եւ յերկրէ խառնուած գեղեցիկ, զղէմսն ի միասին կապեալ արուեստաւոր իմաստութեամբն Աստուծոյ. պարզ եւ թեթեւագոյնն յերկնէ, ծանր եւ շարադրական յերկրէ։ 43 Զի թէ զայլ ազգաց զգայականաց զբնութիւնս աստ իմանամք, սակայն ծառայականք եւ անհանճարք. իսկ իմանալիս այս ի մեզ վեհագոյն ազատ եւ անկարեկան նիւթից, մաւտաւոր Աստուծոյ բնութեանն, հրեշտականման եւ ի նոյն էութենէ, այլ ոչ հրեշտակ. այլ հոգի միայն եւ ընդ անարգ նիւթոյս կապեալ, եւ ի բարձանց եւ երկնային, հակառակ եւ երկմիտ եւ անընտանի ստորակայից, այլ հնազանդեալ կապանաւք մարմնոյ։

44 Զի թէ զմարդկան հոգւոյ կամի ոք ուսանել զկայանս, մի՛ թանճրագոյն մտաւք հայիցի երկրաքարշ ախտիւք ծանրացեալ. այլ թուրցեալ ըստ սրբոյն Պաղոսի որ ասէ՝ անճառելի տեղի, զոր դրախտ անուանեաց եւ երրորդ երկինս. այլ իմացեալ քան զվերին զայն եւ զհաստատութիւն։ 45 Արդ աստի յափշտակեալ հոգիս՝ ի հոգեւորականն եհաս կայանս, որ աստուածային պատմութիւն՝ վերին անուանէ Երուսաղէմ, ուր բիւր հոգիք արդարոց կատարելոցն ուրախանան, յառաջատես լեալ Աստուծոյ բարեացն. անպատմելի եւ անուշահոտ եւ լուսաւոր աւդն, յորս ոչ է այլախառնութիւն դառնութեան։

[՞] Տե՛՛. Երեմ. ԻԲ 24, ԽԳ 18։

^Է Ժ.Պ. ԺԻ 5, 7

46 Այլ ասացի պարզագոյն ինչ բանիւք, զի ուստի եղեն հոգիքն՝ առ իւրն երթեալ լինին ի բնակութիւն. եւ մարմին դարձեալ յիւր տեղին միանայ ազգակցեալ եւ յապականութիւն դարձեալ: 47 Այլ անտեսանելին եւ անեղծական յառաւելատեսիլ փոփոխեալ, չունի պէտս առ մարմնականս առ այս կեանս, եւ ոչ կարաւտութիւն ի տեսութիւն. եւ ոչ կարող իսկ են եւ ոչ նոքա որ առաւելագոյն արժանաւոր եղեն պատուոյ՝ մարտիրոսքն: 48 Նոքա յայտնիլ ումեք ոչ կարեն. ոչ ի: 49 տ: 50 գ: 51 Ապա թէ անգոսնաբար ոք կամ անխրատ սովորութեամբ երազովք վարեսցի, վերստին անցանելով ըստ հեթանոսական սովորութեամբ, բազում են աւրինակք, որ մոգ քաղդէացիք աստեղագիտութեամբ աստուածածանաւթ, եւ բաբելացւոց գաւազանահարացն եւ լերդահմայ, եւ ընդ աջմէ ելանել հմայիցն հրէաստանի եւ Երուսաղեմի, զոր մտանել սրոցն ընդ Ռաբովթ¹ որդւոցն Ամոնայ եկեալ ի գլուխ երկուց ճանապարհացն, երկու առաջք ի միոյ աշխարհէ, եւ ստութեամբ արդարացեալ լինին հմայքն մտանել սրոյն ի պարանոցն Ղովտայ խնդրէր զանիրաւութեան վրէժս ի նոցանէ: 52 Այլ եւ կին ոմն վհուկ Սաւուղայ ճշմարտապատումն, եւ իղձն Բաղասամայ ի Միջագետաց մարգարէ ստուգատես. Երեմ ի հրէաստանէ բաբելոնացւոյն իմաստնէն ապրեցուցիչ երազահանութեամբ. եւ Յովսէփ երազատես եւ երազահան Փարաւոնի: 53 Այլ այս ի բաց

մերժեալ է յեկեղեցւոյ Քրիստոսի ըստ ճշմարտապէս գրոց. զի այս հեթանոսաց է եւ ոչ քրիստոնէից:

54 Ապա թէ ոք այլանդակապէս ընդ այս մտածութիւնս անցանէ՝ աւտար խորհրդովք նշանադիրս գծել, կամ մարգարէանալ առ յապայսն եւ երազահմայ լինել, ցնորել մոլորութեան երազահան ստութեան, ընդ անկոխելին գնալ պողոտայ անքրիստոնէաբար, եւ բնական ի մեզ կիրան ճշմարտութեան պատմել, որ լինի այս եւ վնասել խելապատակին ընդ վայրաբանութիւն, եւ հիւանդութեամբ բազում ինչ տեսեալ խաւսի անհանձարաբար, զոր եւ արբեցողաց իմն թուի շրջագայութիւն լինել երկրի զինքեամբք, եւ յայլայլեալ զգայութեանն ի ջերմութեանցն զայսպիսի սովորականութիւնն ի մեզ աւրինադէ գործ ինչ լինել: 55 Կամ զայն զոր դեւքն կերպարանեալ ի նմանութիւն մոլորեալ մեռելոց՝ զոր գիտակն էին ի կեանս մարդոյն, եւ զնոյն նմանեալ յայտնին ի տրտում երեսս կամ ի գուարթս իբրեւ պատուէր ինչ տալով եւ զգուշացուցանելով, որպէս թէ մեռեալն եւ սպանեալ մարմնոյ հոգիացեալ, եւ ի միասին գտեալ. զոր ոչ յաւգուտ, այլ ի վնաս եւ ի մոլորութիւն փութացեալ լինի, եւ նա զայն անուսումնաբար ճարտարութեամբ պատմէ, այն արտաքոյ է քրիստոնէութեան:

¹ Յորինակին՝ Կարբոթն որդւոցն եմոնայ

ԵՂԻՇԷԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿԱՆՈՆԱՑ ԱՍԱՅԵԱԼ Է

1 Թէ արութիւնք ուրուք կաթեալ ի-
ցեն ի տունջեան եւ արթուն եւ կամ գիշեր
իբրեւ ի քուն եւ կամ ընդ կնոջ իւրում
լեալ իցէ, եւ կին նորա պաշտաւնասէր իցէ
թէ որպէս պարտ իցէ ի սրբութիւն հաղոր-
դել: 2 Արդ, եղբարք ընդ քաջն են մեր
բանքս եւ ի մէջ առաքինեացն է կանոնս.
ոչ ինչ կայ մեր եւ աշխարհիս, զի հրեշտա-
կակրաւն եմք ամենեքեան եւ պատուական
մարգարիտք, քանզի մեծագնի առեալ է
զմեզ պատուական արեանն Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի, այնպիսի պարտիմք
լինել ոգւովք եւ մարմնովք, զի մի՛ որոշել
վարեացուք ի գնդէն Քրիստոսի: 3 Իսկ
արդ, ասիցէ ոք, եթէ՛ Ես ի տունջեան եմ, ի
զեղեցիկ խորհուրդս հոգեւորս, ի գործս ա-
ռաքինութեան՝ ոչ երբէք զեղխեալ ի կե-
րակրոց եւ ոչ առաւելեալ յրմպելեաց, այլ
յոյժ պնդութեամբ, պահաւք եւ սուրբ
մտածութեամբ խորհրդովք ելեալ յանկո-
ղինսն պարկեշտութեան՝ աղաչելով զԱս-
տուած եւ տեառնագրելով զիս տէրունա-
կան կնքովն՝ ի քուն մտեալ խաբեցայ, յա-
նուրջս աղտեղեալ: 4 Այսպիսումն ասեմ
ես, եթէ ամենեքեան, որ ըստ նմինս. եթէ
քահանայ իցէ, այն աւր պատարագ մի՛
մատուցէ եւ մի աւրէնս առցէ, զի գոյր ի
նմա մրուր գիջութեան, [մ]ի՛ վաղիւն մա-
տուցէ եւ առցէ, եւ եթէ ուխտաւոր իցէ,
ըստ նմին կատարեցէ եթէ՛ այր եւ եթէ՛
կին: 5 Ապա եթէ ոք ծանր գկանոնս հա-
մարեացի, ես միջնորդ մեծ Մովսէս ունիմ,
որ զայսպիսի յերկուս բաժինս գատեալ ո-
րոշեաց. զմինն՝ ծանր բժշկելի եւ զմիւսն
եւս ոչ առանց բժշկութեան, այլ՝ քան զերկ-
րորդն դիւրագոյն[»]: 6 Դարձեալ վասն
զաշտականաց ասիցէ ոք ցնա, եւ զինչ
վնաս իցէ՝ չմերձանալ ի սրբութիւն, զի ա-

հաւանիկ ցաւք բնութեան են եւ/ոչ մեղք
կամաւորք: 7 Ո՛ր իմաստուն, թէ արդար է
եւ դու զայդ ամենայն մտաւք քոյովք
խաւզեսցիս, քաջախորհուրդ լեր ի նմա,
հաս ի վերայ, զի գիտացիս զպատճառ
բնութեան ախտին. ո՞չ ահա ուղիւք գար-
նանայիսք բազմաշուրք լինիցին: 8 Իսկ
արդ, եթէ ոք առեալ ցորեան եւ գարի եւ
կամ զայլ ունդ զարգաւորս ի լիճս եւ ի
ծովս սերմանեացէ, մոլեգնոտ կարգամք
նմա եւ ոչ սգաստացեալ. մարմինս մեր
բնակեցէ ի հողս գոյակցութեան: 9 Լինին
ուղիւք կանա[ն]ց ըստ ամսոց է աւր, զի
սրբեացի կենդանի երկիրն առ ի յախտիցն
ապականութեան. զի, յորժամ յիւրմէ գու-
գաւորութենէն ընկալցի զառ ի նմա սերմ-
նացեալն ողջ եւ անարատ, զկենդանի
բոյսն արտաքս բերիցէ: 10 Ապա եթէ ա-
ռանց իմաստութեան արք եւ կանայք յան-
դրգնաբար լրբեալ զանարժան խառնակս
գործիցեն, ոչ յորդէ՞ծնութենէն գոյացեալ
են այնպիսիքն, այլ՝ պիղծ եւ անառակ
ցանկութեան: 11 Իբրեւ յայտնի է ամենե-
ցուն, որ գիտեն հայել իմաստաբար, թէ ոչ
լինի ժամանակն այն որդեծնութեան, ապա
եթէ լինիցի եւ ստիպակաւ՝ յանսուրբ երկ-
րէ բոյս կենդանածնեալք՝ խեղք, թիւրք,
մարմնահարք, ժանդք, հիւանդոտք. է, որ
անդատին ի տղայութենէ եւ է, որ ի միջո-
ցէ, է, որ եւս յառաջ յայտնեացի ախտս
սկզբնաւորս, զոր եւ ուրկութիւն իսկ ա-
սեն: 12 Արդ, որ այսչափ ծածկեալ կան
յանարժան մերձաւորութեան, ո՞չ տա իւր
աւրէնսդիրն մերում զգուշութիւն առնել,
զի մի մերձեցին ի սրբութիւն, զոր եւ
միւս մարգարէն մեծ մասն արդարութեան,
ասէ, չմերձեալ յապահարն: 13 Նաեւ հե-
թանոսաց աւրէնսդիրքն թէպէտ եւ ոչ
վասն սրբութեան ոգւոց, սակայն վասն
պարկեշտութեան մարմնոց, զնոյն զգու-

[»] Հմմտ. Գլխ. ԺԵ 19-33:

չութիւն պատուիրեցին իւրաքանչիւր աշխարհացն: 14 Արդ, որովհետեւ Մովսէս եւ Եզեկիէլ Հոգևովն Աստուծոյ վասն այսպիսեաց զգուշացուցին եւ արուեստ բժշկաց զվնասն, որ անդ լինին, պատմեցին մեզ, եւ արտաքինքն ըստ բնութեան խորհեցան ի նոցանէ: 15 Եւ եւս առաւել պարտիմք հրաման պատուիրանի տալ վասն կանանց, որ յայնպիսի ցաւս իցեն. եթէ կոյսք իցեն, յեկեղեցի մի՛ մտցեն եւ մի՛ ա ձեռն քահանայի, ի տունս իւրեանց նստցին ցածութեամբ եւ պարկեշտութեամբ, զանձինս իւրեանց պահեսցեն: 16 Եւ եթէ առնականայք իցեն, նոյն կարգ եւ ի վերայ նոցա լիցի, եւ յանկողինս արանց իւրեանց մի՛ ելցեն մինչեւ յաւուրն սրբութեան ջրովք լուացեալք արժանի լիցին մտանել յեկեղեցի եւ հաղորդել աւրինաց: 17 Զոր հարքն կարգեցին, որդիք մի՛ անգոսնեսցեն, զի առանց ամալթոյ կացցեմք յաւուրն հատուցման: 18 Ապա եթէ ոք ամուսնացեալ սրբութեամբ ընդ զուգակցին իւրում առողջութեամբ անկողնակից է, եւ, ըստ սովորական բնութեան խառն մերձաւորութեան, յայնմ աւուր գործեալ իցեն ի գիշերային ժամանակի ի վաղիւն կամ տաւն ինչ երեւելի եւ կամ կանոնել սուրբ միաշաբաթին, յորում աստուածային խորհուրդն կատարեսցի եւ այլն եւ կինն, քանզի սուրբք իցեն եւ ընտրեալք եկեղեցւոյ, հաղորդք եւ կցորդք մարմնոյ եւ արեանն Քրիստոսի, եւ յերեկորէն ոչ զգուշացան եւ զանձինս իւրեանց ոչ պահեսցին, ոչ միայն այն աւուրն չպարտին աւրէնս առնուլ, քանզի արհամարհեցին զմեծ կիրակին եւ կամ զերեւելի որ աւր եւ իցէ, եւ աւուրք է զղասցին՝ հայցելով եւ հառաչելով արտասուաւք, եւ միւստմն կիւրակէի արժանի լիցին հաղորդել ի սրբութիւն, զի ահագին է խորհուրդն եւ ցանկալի ամենեցուն: 19 Ապա, եթէ քահանայն պաշտաւնասէր իցէ, հանապազորդ պաշտաւնս առնիցէ եւ յաճախագոյն զպատարագն յա-

տուցանէ ի երեքշաբաթուոյ եւ հինկշաբաթու ի շաբաթու ի եւ ի կիւրակէի: 20 Թէ ոք ամուսնացելոց ցանկացեալ իցեն զամենայն աւուրսն հաղորդել սրբութեան, որ աւր եւ դիպեսցի, եւ ինքն յիւրում ամուսինն մերձեալ իցէ, մի՛ իշխեսցէ մերձանալ յաւրէնսն: 21 Զի եթէ ճաշակեալն ի կերակրոց արգելու զմեզ ի նմին աւուր չհաղորդել ի սրբութիւն, այլ զգիշերն անջրպետ առնեմք իշխանութիւն ճաշակել ի նմանէ, որչա՞փ եւս առաւել առնել ամուսնութիւն, զի թէպէտ առանց մեղաց իցէ, սակայն պատկառանք զգուշութեան յոյժ պիտոյ իցէ, զի մի զաւրէն անյագ անասնոց վարիցին աղտեղութեամբ եւ մի դարձեալ ի նոցունց, որ կարգաւորքն իցեն յանդիմանել ամաչեցին: 22 Ուստի սուրբն Պաւղոս պատուիրէ գեղեցիկ կարգադրութիւն ամուսնացելոցն. Գիտել ձեզ, ասէ, զիւրաքանչիւր մարմին շնով եւ պատուով պահել: 23 Արդ, եթէ մեր ընկերակիցք մի հաւր որդիք այնպիսի գեղեցիկ վարուք կատարեսցան, որք պարծանք ոչ միայն մարդկան են, այլեւ՝ հրեշտակաց: 24 Մեք եւ յամուսնութիւն սակաւիկ մի սրբութեամբ ոչ կարիցեմք վարիլ, ո՞ իցէ, եւ համարձակագոյն իսկ է, արդարութեամբ ուտել եւ ըմպել, առանց մեղաց փափկանալ յանկողինն սրբութեան: 25 Ամբառնան եւ սոքա զանձինս իւրեանց ի կորստական խոհերացն, երթան ի տեսիլ սքանչելի ժողովոյն ազնին, ազգի ազգի զարդուց մարդկան, հպին եւ ի մեծասքանչ սպաս սուրբ եկեղեցւոյ, լսեն զմեծաձայն հնչիւն սաղմոսերգացն, միտ դնեն եւ մարգարէական ընթերցուածոյն, իմանան եւ զաւետիս Աւետարանին, լսեն եւ [զ]որդորումն քաջ մեկընչացն: 26 Թափի եւ սակաւ մի թմբիրն՝ ի խելաց յիմարելոց, զուարթանան, զուարճանան, կարծեն իսկ թէ ի նոյն

՝ Հմմտ. Լ. Կոր. Գ. 19-20:

1 Զեռագրում թմբիրն

աւուրն իսկ սրբեցաք: 27 Քանզի ծոյլ քահանայք ոչ առնեն ընտրութիւնք ի մէջ քաջացն եւ վատացն, զի մի յանդիմանեացին ամաչեալք, պիղծք ի պղծոց համարձակին, այնուհետեւ եւ սոքա անխտրութեամբ ժպրհին մրտանել, առնուլ գմարմին եւ զարիւն Տեառն մերոյ: 28 Ի ներքս յորդարտասուաւք, մեծաւ լալով աղաւթս մատուցանէ իբրեւ զբարէգործակ, եւ, ելեալ արտաքս ըստ եկեղեցին, բարկ ծիծաղելով եւ խրխնջէ, շրջի ընդ լայնափողոցս քաղաքաց եւ դառնալով ի նոյն սովորութիւն, գործէ զամենայն պղծութիւնսն: 29 Տի՛, աւն անդր, մի՛ լիցի այնպիսւոյն յիշատակն ի մէջ սրբոցն: 30 Աղէ, ցուցցեն մեզ՝ զի՞նչ պատարագ մատուցին յերեւելի աւուրն Զատիկին եւ կամ զի՞նչ յայլում աւուրսն, զորս՞ աներեւոյթնս ասեն. Ոչ ահա մի է Տէր, մի հաւատք, մի մկրտութիւն եւ մահ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, մի սեղան, մի մարմին եւ մի արիւն, եթէ՞³ ի Զատիկի զնոյն մատուցանես եւ եթէ յայլում կիւրակէի, զնոյն եւ եթէ յիշատակք սրբոց մարտիրոսաց ե՛ւ այն, ե՛ւ այն՝⁴ նոյն է: 31 Չիք այլ Աստուած բաց ի նմանէ եւ ոչ այլ պատուիրան, բայց զոր նայն եդ, եթէ մկրտեցար եւ հաղորդեցար ի մարմին եւ յարիւն՝⁵ Քրիստոսի, այլ մի մեղանչէր, ապա եթէ տկարացար, լուծար եւ մեղանչեցեր, անարժան մի մերձենար ի հուրն կենդանի: 32 Ապա եթէ ասիցես. Քաղցր եւ բարերար է եւ գթած մարդասիրութիւն ի

մեղաւորս. այո՞⁶ եւ ես ասեմ՝ զառաջին քեզ ձրի եթող զամենայն զմեղսն, որ յառաջագոյն քան զմկրտութիւնն գործեցեր, այսուհետեւ քո է նա: 33 Արդ, քեզ ոչ ուսուցանէ զիւր վաղ կատարեաց. արդ, ի քո ձեռն է: 34 Թող ի բաց զհրամայեալսն, զոր գործեցեր, դարձիր յապաշխարութիւն, լաց, զղջացիր, ճնշեա զմարմինդ՝⁷ պահաւք, թառամեցո զաչդ արտասուաւք, ծախեա զինչդ՝⁸ տրաւք աղքատաց, ցաւեսցին ոտքդ յաղաւթսն՝⁹ կառկառեսցին ձեռքդ ի պաղատանս եւ մատունք ձեռացդ ի տատանումն աղաչանաց մինչեւ հետակորոյս լինի՝¹⁰ ոգոյդ եւ մարմնոյդ՝¹¹ առաջին ըստգտանելի գործքն եւ աւուր[ը]ք՝¹² եւ ամսաւք, եւ տարեաւք՝¹³ եւ ամեաւք՝¹⁴: 35 Յայնժամ մինչեւ դարձեալ վերստին նկարեսցի Քրիստոս ի քեզ, ծնցի զքեզ ապաշխարութեամբ եւ միւս անգամ՝ ի նորագումն կենաց, եւ արժանի լինիցիս մերձենալ ի նոյն յառաջին մարմին եւ արիւն Քրիստոսի, որ նովիմք սրբութեամբ կատարեալ զամենայն ժամանակս կենաց քոց: 36 Այլ վասն այնպիսեացն, զոր յառաջոյն ասացաք ապահարին՝¹⁵ մերձենալ առանց ապաշխարութեան յերեւելի աւուրսն, ոչ միայն, զի թողութիւն ոչ գտանեն, այլ բազմապատիկ եւս անկանին՝¹⁶ ընդ դատապարտութեամբ առանց բարեխաւսի առաքին զհետ հաւրն իւրեանց՝ Սատանայի ի դժոխս:

2 BC գոր
3 A եւ եթէ
4 BC չի՞ եւ այն
5 A յարիւն

6 BC այոյ
7 B զմարմինս
8 B զիմչս
9 A յաղսդ
10 BC լիմիցիս
11 B ոգոյս եւ մարմնոյս
12 BC աւուրքի
13 BC տարաւք (չի՞ եւ)
14 BC չի՞ եւ ամեաւք
15 BC ապարիանիս
16 B անգանիս

ԳԻՒՏ ԱՐԱՀԵԶԱՅԻ

ԹՈՒՂԹ ԱՌ ՍՈՒՐԲՆ ՎԱԶԷ

ԹՈՒՂԹ ԳԻՏԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՌ ՍՈՒՐԲՆ ՎԱՉԵ

Գիւտ Արահեգացի կաթողիկոսի (461-478 թթ.) Թուղթն ամբողջութեամբ պահպանուած է ժ դարի վերջի հեղինակ Մովսէս Դասխուրանցու (ուշ ձեռագրերում եւ գրականութեան մէջ կոչուած նաեւ Կաղանկատուացի) Պատմութիւն Աղուանից երկի մէջ (գլուխ Ա ժա): Թուղթը հաւանաբար ընդգրկուած է եղել Աղուանից կաթողիկոսարանի դիւանի փաստաթղթերի եւ այլ գրուածքների ընդօրինակութիւնը պարունակող այն ժողովածոյում, որը ժ դարի կէսին (949 թ.) տեսել ու ընթերցել է Անանիա Մոկացի Հայոց կաթողիկոսը (946-967 թթ.): Անանիան անուանում է դա Պատմութիւն Աղուանից եւ վերաշարադրում որոշ հատուածներ, այդ թւում՝ բաւականին յստակ՝ Գիւտի թղթի մի մասը: Մի քանի տասնամեակ անց այդ ժողովածոն դարձել է պատմագիր Դասխուրանցու համար անգնահատելի սկզբնաղբիւր իր պատկերացրած Աղուանքի (Հայոց Արեւելից կողմանք⁺Բուն Աղուանք) պատմութիւնն ամփոփելու մտայղացումն իրագործելիս: Պատմութիւն Աղուանից-ից դուրս Գիւտի թղթի առաջին կէսը պահպանուած է նաեւ Հայոց կաթողիկոսարանի Գիրք թղթոցի մի տարբերակում (այսպէս կոչուած՝ էջմիածնական տարբերակ. ՄՄ ձեռ. թիւ 2966, 3062):

Գիւտի թուղթն իր բովանդակութեամբ ջատագովական է: Հեղինակը որեւէ սիւժէ չի շարադրում, այլ միայն գովերգում է հասցէատիրոջը՝ Աղուանից (Բուն Աղուանքի) Վաչէ թագաւորին, քրիստոնէութեանն իր հաւատարմութեան համար: Բնագիրը հնարաւորութիւն չի տալիս անգամ ճշտել՝ արդեօք Վաչէի ապստամբութեան ժամանակ, թէ՞ դրանից շատ յետոյ է գրուած նամակը, թէպէտ վերնագրում եւ վերջին մասում Գիւտի «եպիսկոպոս» (փոխանակ՝ «կաթողիկոս») կոչուելն արժեւորելու դէպքում աւելի հաւանական է, որ թուղթը ստեղծուել է 461 թ. առաջ: Վաչէի հերոսամարտի պատմութիւնը շարադրուած է Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին երկում, առանց Աղուանից թագաւորի անուան յիշատակութեան: Ըստ այդ շարադրանքի՝ Վարդանանց պատերազմի աւարտից մի քանի տարի անց (մօտաւորապէս 459 թ.) կիսանկախ Աղուանից թագաւորն ապստամբում է ամէնուր բռնութեամբ մագդէականութիւն տարածող Սասանեան տէրութեան դէմ եւ հիւսիսկովկասեան ցեղերի օգնութեամբ երկու տարի դիմադրում Պերոզ արքայից արքայի զօրքերին. վերջինիս ճնշման տակ նա ի վերջոյ հրաժարում է թագաւորութիւնից եւ առանձնանում հայրենի կալուածքում՝ պահպանելով քրիստոնէական հաւատը: Եղիշէի երկի այս հատուածը գրեթէ բառացի արտագրուած է Պատմութիւն Աղուանից-ի մէջ՝ խնդրոյ առարկայ թղթից առաջ (գլուխ Ա ժ)՝ Վասն Վաչէի՝ Աղուանից արքայի, թէ զիարդ ուրացաւ զհեթանոսական գործ մոլորութեան եւ հաւատաց յԱստուած կեցնդանի, եւ ետ պատերազմ ընդ Պարսս եւ միանձնացաւ յանապատի սուրբ վարով վերտառութեամբ:

Եղիշէի շարադրանքին Դասխուրանցին աւելացրել է միայն Աղուանից թագաւորի անունը՝ «Վաչէ»: Աղբիւրագիտական քննութիւնից երեւում է, որ Արեւելից կողմանց պատմիչին ու նրա նախորդներին այդ անունը ծանօթ է ոչ միայն Գիւտի թղթից, այլեւ Վաչագանի վէպից: Դա Ե դարի ամենավերջին կամ Զ դարի սկզբին գրուած մի պատմական երկ է՝ Կեանք եւ վարք եւ կարգադրութիւն Աղուանից, որ ի Վաչագանայ արքայէ եղան, եւ զիւտ ճշարաց սրբոց վերականգնող վերտառութեամբ, որը ժ դարում արտագրուած է Մովսէս Դասխուրանցու կողմից (գլուխ Ա ժդ-իգ): Վաչագանի վէպը

Վաչէին յիշատակում է Ե դարի 80-ական թթ. վերջին Աղուանից թագաւորութիւնը վերականգնած Վաչագան Բարեպաշտին նախորդած ինը արքաների ցանկում (հեղինակը նրանց վերագրում է Արշակունեաց ծագում՝ հակասելով Մովսէս Դասխուրանցուն, որի համար նրանք Առանշահիկներ են), ինչպէս նաեւ նշում, որ նրա եղբօր (հաւանաբար՝ աւագ)՝ Յազկերտի որդին էր իր գլխաւոր հերոսը: Ի դէպ, հետեւելով Հայր Ներսէս Ակինեանին՝ ժամանակին սխալմամբ ենթադրել ենք, որ այդ հատուածները Ժ դարի արտագրողի յաւելումներ են: Սակայն ներկայումս Վաչագանի վէպի աղբիւրագիտական եւ ձեռագրագիտական յատուկ վերլուծութիւնից յետոյ մենք չենք տեսնում որեւէ հիմք, որը հնարաւորութիւն տար կասկածի տակ դնել Վաչէ Բ արքայի անուան եւ Վաչագան Բ արքայի իշխանութեան հաւաստիութիւնը:

Գիւտի թղթի սկզբում շարադրուած է Գրիգոր Լուսաւորչի եւ Տրդատ արքայի կողմից Աղուանից դարձի համառօտ պատմութիւնը Վաչէի նախորդներից մէկի՝ Ուռնայր թագաւորի ձեռքով (վերջինս երրորդն է Վաչագանի վէպում թուարկուած տասը արքաների ցանկում՝ Վաչագան Քաջից եւ Վաչէ Ա-ից յետոյ): Շարադրանքը ճշգրտօրէն համընկնում է պատմական այդ իրադարձութեան այն նկարագրութեանը, որը տրուած է Ագաթանգեղոսի պատմութեան նախնական եւ ամենից հաւաստի տարբերակում՝ Գրիգորի վարձում (մեզ հասած, ցաւօք, միայն յունարէն եւ արաբերէն թարգմանութեամբ): Կրկնուում է, օրինակ, այն մանրամասնութիւնը, որ Գրիգորը Աղուանից թագաւորի հետ (Վարձում՝ անանուն) Աղուանք ուղարկեց հռոմէացի ծագումով մի եպիսկոպոսի (Վարձը յայտնում է նրա անունը՝ «Թովմա՝ Սատաղ փոքր քաղաքից»): Սակայն միաժամանակ դժուար է պատմական համարել այն, որ Բուն Աղուանքը լուսաւորել է հէնց Ուռնայր թագաւորը: Վերջինիս Փաւստոս Բուզանդը եւ Մովսէս Խորենացին յիշատակում են Հայոց Պապ արքայի հակառակորդների շարքում, Ձիրաւի ճակատամարտում (371 թ.), այսինքն՝ Հայոց եւ Աղուանից դարձից վեց տասնամեակ անց: Կարելոր է նաեւ, որ Ուռնայրին Աղուանից լուսաւորիչ եւ սրբացուած չի ճանաչում Վաչագանի վէպը: Աւելին՝ վէպի արքայացանկի ժամանակագրութիւնը թոյլ է տալիս Հայոց եւ Աղուանից դարձի պահին աւելի հաւանական համարել Վաչագան Ա Քաջ Արշակունու (Գ դարի վերջ - Դ դարի սկիզբ) թագաւորած լինելը. վէպը նրա յաջորդի՝ Վաչէ Ա Քաջի ժամանակին է վերագրում Շապուհ Բ արքայից արքայի հալածանքների սկիզբը (337 թ.):

Նշուած հակասութիւնը հարթելու նպատակով ժամանակին ենթադրել ենք, որ Ուռնայրին Աղուանից դարձի հետ կապելը եւ սրբացնելը կատարուել է Վաչագանի վէպի ստեղծումից (այսինքն՝ Զ դարից) ուշ, մի այնպիսի ժամանակ, երբ անհրաժեշտութիւն է զգացուել առարկայօրէն (արքայի անունով եւ այլն) ընդգծել Աղուանից լուսաւորութեան պատմութեան մէջ Հայոց Եկեղեցու որոշիչ դերը: Ներսէս Ակինեանին հետեւելով՝ մենք աւելի հաւանական ենք համարել դա Ը դարի սկզբին վերագրելը, երբ Եղիա Արճիչեցին ստիպուած էր լուրջ ջանքերի գնով Աղուանից կաթողիկոսութիւնը վերանթարկել Հայոց կաթողիկոսարանին (սակայն ներկայումս պէտք է ճշգրտենք, որ դա կարող էր լինել Զ դարի վերջի յայտնի ճգնաժամից սկսուած իւրաքանչիւր տասնամեակում):

Նշուած հակասութիւնը որոշ չափով կասկածի տակ է դրել նաեւ սուրբ Վաչէին ուղղուած Թղթի ստեղծումը Ե դարով թուագրելը: Սակայն, միւս կողմից, չի կարելի չնկատել, որ Թուղթը կամ գոնէ նրա վերջին հատուածը՝ «Տէր ընդ քեզ. ամէն» բառերից

յետոյ (Մկրտիչ Էմինի հրատարակութեան մէջ այդ հատուածը առանձին ենթագլուխ է դարձուած՝ իբրև երկրորդ Թուղթ), իր լեզուաոճական առանձնայատկութիւններով քաղցն համապատասխանում է Ե դարի գրական միւս յուշարձանների նկարագրին (Թուղթի նախորդող մասում որոշ վաղ յունաբանութիւններ են նկատուում): Սա էլ իր հերթին թոյլ է տալիս ենթադրել, որ Թուղթի բնօրինակում Աղուանքի լուսաւորիչ թագաւորի անունը կ'ա՛մ բացակայել է, կ'ա՛մ եղել է ուրիշ (Վաչագան Քա՞ջ), եւ միայն հետագայում՝ արդէն ինչ-որ պատահականութեամբ հէնց Ուռնայրի սրբացումից յետոյ է նրա անունը մի ուսեալ գրչի ջանքերով յայտնուել Գիւտ եպիսկոպոսի Թղթում:

Պատմութիւն Աղուանից-ի ձեռագրերի երկու խմբերի (*a* ձեռագիր եւ *bclr* ձեռագրեր՝ *bl* եւ *cr* ենթախմբերով) եւ էջմիածնական Գիրք թղթոցի ձեռագրերի համադիր օգտագործմամբ կազմուած Գիւտի թղթի քննական բնագիրը մեծ հաւանականութեամբ պատկերացում է տալիս նրա հինգերորդդարեան վիճակի մասին (իհարկէ, բացի Ուռնայրի անունից, բնագրում կարող են լինել նաեւ այլ հետագայ փոփոխութիւններ, որոնց մասին մենք հաստատապէս չգիտենք): Ստորեւ ներկայացուած բնագրի տողատակերում հաշուի չեն առնուած Պատմութիւն Աղուանից-ի երկու տասնեակից աւելի մնացեալ գրչագրերի տարընթերցումները, քանի որ դրանք հաստատապէս արտագրուել են վերը նշուած հինգ ձեռագրերից որեւէ մէկից եւ չեն կարող օգտակար համարուել հեղինակի ինքնագրի վերականգնման հարցում: Բնագրի տողատման եւ կետադրման հարցում քաղցն օգտուել ենք Պատմութիւն Աղուանից-ի քննական հրատարակութեան հեղինակ Վարագ Առաքելեանի կատարած աշխատանքից:

Ալեքսան Յակոբեան

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. **Հայր Ն. Ակիմեան**, Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից, Վիեննա, 1970
2. **Խ. Վ. [Դադեան]**, Նիւթեր ուսումնասիրութեան Աղուանից պատմութեան, «Արարատ», Վաղարշապատ, 1896
3. Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Աշխատասիրութեամբ Ե. Տէր-Մինասեանի, Երեւան, 1957
4. **Կ. Ղախրամանեան**, «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի աղբիւրները, (Թեկնածուական ատենախօսութիւն), Երեւան, 1974
5. **Ա. Մնացականեան**, Աղուանից աշխարհի գրականութեան հարցերի շուրջը, Երեւան, 1966
6. **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը եւ ներածութիւնը Վ. Առաքելեանի, Երեւան, 1983
7. **Ա. Յ. Յակոբեան**, Եղիա Արմիշեցի կաթողիկոսի նորայայտ թուղթը, «Պատմաբանասիրական հանդէս», Երեւան, 1981, թիւ 4
8. **Ա. Յակոբեան**, Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» ձեռագրերը, «Բանբեր Մատենադարանի», թիւ 15, Երեւան, 1986
9. **Ա. Յակոբեան**, Գտնաւանքի շինարարական արձանագրութիւնը եւ հարաւային Արցախի եպիսկոպոսութեան սահմանները, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1999

10. Հ. Ս. Սվազեան, Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» աղբիւրները, «Պատմա-բանասիրական հանդէս», Երեւան, 1972, թիւ 2
11. А. А. АКОПЯН, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987
12. The History of the Caucasian Albanians by Movsēs Dasxuranci. Translated by C. J. F. Dowsett, London, 1961

ՏԱՌԱՆԻՇԵՐ ԲԱՂԴԱՏՈՒԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ

- a - ՄՄ ձեռ. թիւ 1531, ժամանակը՝ 1289 թ.
- b - ՄՄ ձեռ. թիւ 1725, ժամանակը՝ 1675 թ.
- c - ՄՄ ձեռ. թիւ 2561, ժամանակը՝ 1664 թ.
- l - Ռուսաստանի Գիտութիւնների ակադեմիայի Արեւելագիտութեան ինստիտուտի Ս.-Պետերբուրգի բաժանմունքի գրադարանի հայերէն ձեռագրերի հաւաքածոյ, թիւ С 59, ժամանակը՝ 1678 թ.
- г - Բրիտանական թանգարանի թիւ Or 5261, ժամանակը՝ ԺԷ դ.
- z - ՄՄ ձեռ. թիւ 2966, ժամանակը՝ ԺԷ դ., ՄՄ ձեռ. թիւ 3062, ժամանակը՝ ԺԸ դ.

ԹՈՒՂԹ ԳԻՏԱՅՑ¹ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՌՍՈՒՐԵՆ ՎԱԶԷ²

1 Լի³ երկնաւոր շնորհաւքն⁴ Աստուծոյ, ողջոյն: 2 Ի ճառս սուրբ սիրոյ քո⁵ առաքինութեան ի կամս կամաց անձին իմոյ բախեցան⁶ միտք իմ երկնաւոր գաւրութեամբ: 3 Յաւժարեցի⁷ պատմող լինել⁸ բանիւ, եւ ահ անկաւ⁹ ինձ մեծ եւ ահագին եւ բարձրագոյն քան զերկնի երկինս¹⁰ եւ¹¹ խորագոյն¹² քան զներքին կիսագունդն. եւ յամենայն կողմանց շուրջ¹³ պաշարեաց զիս ի վեր եւ ի վայր, ի վերջ եւ յառաջ, յաջ եւ յահեակ: 4 Փախչել¹⁴ ոչ կարեմ եւ խորամուկ լինել¹⁵ երկնչիմ: 5 Մի՛ եթէ¹⁶ գուցէ ընկղմիցիմ իբրեւ¹⁷ գՊետրոս¹⁸ առաքեալն¹⁹ ի ծով անղնդային²⁰, բայց եթէ Տէր Յիսուս ձեռն կարկառուցու յաւգնականութիւն:

6 Յայս²¹ սակաւ²² քաջալերեցայց եւ յամուկս մխեցայց: 7 Քանզի բան ունիմ մտաց գործի, եթէ գտցի²³ ինչ հիւթ յան-

նիւթ²⁴ հոգեկիր²⁵ յառաքինութենէ արանց քաջաց²⁶, որք զհրեշտակս ածին ի²⁷ զարմացումն եւ անգիր աւրինաւք անձամբ անձանց²⁸ աւրէնք եղեն, եւ զառանց աւրինաց Տէրն ի վեր ծանեան եւ զեղեալսն զիտացին ընդ աւրինաւք, եւ առանց²⁹ միջնորդի³⁰ եւ³¹ մարգարէի ուրուք եւ³² կամ երկնաւոր հրեշտակի աստուածատեսք եղեն:

8 Արդ՝ ահա, յորմէ երկուցեալն էի³³, ի ձեռն³⁴ սիրոյ մաւտիմ³⁵ եւ յուսով մերձենամ եւ հաւատովք³⁶ աներկիւղ³⁷ հաստատիմ³⁸. եւ սկսանիմ³⁹, ուստի⁴⁰ արժան⁴¹ է⁴² սկսանել⁴³: 9 Որպէս յառաջագոյն սէրն Քրիստոսի բնակեաց⁴⁴ ի նախնւոյն⁴⁵ քո⁴⁶ Ուռնայրի, նախանձ երկնաւոր եբեր⁴⁷ ընդ Տրդատայ⁴⁸ Հայոց արքային⁴⁹. իբրեւ լուաւ⁵⁰ զմեծամեծ սքանչելիսն¹ Աստուծոյ,

1 b գիտայ a գտայ
2 z Սրբոյն Վաչէի ի Գիւտայ եպիսկոպոսէ
3 a չի՛ք լի
4 b շնորհոփ
5 l փոյլ cr փոյ
6 a բղխեցան
7 l յօժարեցայ
8 clr պատմող լինիլ
9 a անգաւ b ահաստկաւ փիս ահ անկաւ l սակաւ փիս անկաւ r ահա թուի փիս ահ անկաւ
10 b գերկին ի երկինս l երկնի երկինս cr գերկինս երկնից
11 cr չի՛ք եւ
12 a խորագոյնս
13 cr չի՛ք շուրջ
14 l փախչիլ
15 cl լինիլ
16 bclr եթէ փիս Մի՛ եթէ a եթէ
17 a որպէս փիս իբրեւ
18 a Պետրոս
19 a առաքեալ
20 acr անղընդային
21 bclr յայսմիկ
22 clr սակաւ մի
23 bclr գտից

24 a հիւթանիւք փիս հիւք յանցիւք
25 bclr չի՛ք հոգեկիր
26 cr քաջաց
27 b չի՛ք ի
28 a անձին
29 cr գառաց
30 a առաջնորդի փիս միջնորդի
31 a չի՛ք եւ
32 a չի՛ք եւ
33 bl էր փիս էի
34 a ձեռս
35 bcr մաւրիմ (br մօրիմ) փիս մաւտիմ z մոտիմ
36 lz հաւատով
37 c աներկիւղ
38 z հաստատիմff
39 r սկսանեմ
40 a ուստ
41 a արժանց
42 a չի՛ք է
43 l սկսանիլ
44 l բնակեցաւ
45 brz նախնոյն
46 az ձերում
47 l էբեր
48 c տրդատայ
49 bclr արքային հայոց z հայոց թագաւորին
50 bclr ի լսել փիս լուաւ (az)

որ² ի ձեռն Սրբոյն Գրիգորի նշանք եւ արուեստք գործեցան յաշխարհին³ Հայոց, վաղվաղակի դառնալ սոցա⁴ ի բազում շաւղաց⁵ մոլար ճանապարհին⁶ առ ճշմարիտն⁷ Աստուած: 10 Աստուած ծանաւթութեամբ⁸ եւ բարեկամութեամբ ի բաց ընկեցին զծանրատաղտուկ⁹ գլուծն¹⁰ հեթանոսաց, թաւթափեցան, թեթեւացան¹¹, թեւակոխեցին¹², թռեան եւ¹³ յերկինս ճախրեցան:

11 Զայս¹⁴ լուեալ քաջին Ուռնայրի՝ ո՛չ դլաց¹⁵, եւ¹⁶ ո՛չ դադարեաց, եւ ո՛չ¹⁷ ի ձեռն ծառայական հրեշտակի¹⁸, այլ ինքնին մեծ թագաւորն մեծամեծաւք¹⁹ նախարարաւք եւ բազմագունդ²⁰ զաւրաւք²¹ գայր հասանէր²² յաշխարհն²³ Հայոց, յանդիման²⁴ լինէր սկայազաւր²⁵ թագաւորին²⁶ Տրդատայ²⁷: 12 Իսկ նորա²⁸ եղբայրաբար²⁹,

սիրով ընկալեալ բարեկամութեամբ³⁰՝ զբոլոր զինքն³¹ առաջի առնէր նմա³², զներքին եւ զարտաքին խորհուրդս³³ մերկանայր եւ դնէր³⁴ առաջի նորա՝ հանդերձ Սրբովն Գրիգորիւ եւ ամենայն բազմութեամբ զաւրացն Հայոց: 13 Խոնարհէր թագաւորն ձեր³⁵, անկանէր եւ պատէր³⁶ զոտիւք³⁷ եւ զձեռաւք³⁸, պատմէր զամենայն մոլորութիւն հեթանոսաց³⁹ եւ ինքն⁴⁰ խոստովան լինէր վասն տգիտագործ մեղացն անցելոցն⁴¹:

14 Քաջալերէր զնա Սուրբն Գրիգորիոս ի գալուստ մարմնաւորութեան որդւոյն⁴² Աստուծոյ, որ ի թողութիւն եկն եւ ոչ ի դատապարտել⁴³, ի կեցուցանել եւ ոչ ի մեռուցանել, եւ յառաջ անցելոցն⁴⁴ ի հողոյ կեանս⁴⁵ խոստացաւ⁴⁶: 15 Զայս ամենայն իբրեւ⁴⁷ լսէր թագաւորն ձեր⁴⁸, ինքն եւ ամենայն զաւրքն, որ⁴⁹ ընդ նմա⁵⁰, զաւուրս⁵¹ քառասունս⁵² պահոց⁵³ աւանդէին զանձինս⁵⁴ իւրեանց՝ ի բաց հրաժարելով

1 z գաւանջելիսն
 2 l որի
 3 z յաշխարհիս
 4 bclr ւոցա
 5 z շաղուաց
 6 bclr ւանապարհի
 7 bclr ցշմարիտ z առ մի ցշմարիտն
 8 r աստուածամօթութեամբ bl աստուածածամօթութեամբ
 9 z գծանր աղտաղտուկ
 10 z լուծն
 11 z սքափեցան փիս քաւքափեցան ac քեթեւացան քօթափեցան (a քեթեւացան)
 12 a քեւակոխեցան
 13 abclr քոան եւ (a ի փիս եւ)
 14 z գայն
 15 z դլացաւ
 16 crz չիք եւ
 17 z ոչ թէ
 18 a հրեշտակին
 19 bclr մեծամեծ փիս մեծամեծաւք (az)
 20 bclr բազմագունմար փիս բազմագունդ (az)
 21 c գաւրովք lr գորովք
 22 a հասանայր
 23 z յաշխարհս
 24 z եւ յանդիման
 25 bl սկայայան c հսկայան r հսկայան a սկաւազօր z հսկայազօր
 26 cr արբային
 27 c տրդատայ az չիք տրդատայ
 28 z նա

29 z եղբայրական
 30 az բարեկամութեամբ ընկալեալ
 31 a բոլոր զինքն bclr գրոլորայնովքն փիս գրոլոր զինքն (z)
 32 b նմայ
 33 bclr խորհուրդն
 34 z առնէր փիս եւ դնէր
 35 cr ձեր փիս ձեր (ablz)
 36 l պատիւր z պատատէր
 37 bclr գոտովք
 38 r գձեռովք c ձեռովք z գձեռովք սրբոյն Գրիգորի
 39 z հեթանոսութեան
 40 z չիք ինքն
 41 z անցելոց bclr յանցանաց փիս անցելոցն
 42 crz որդոյն
 43 z ի դատապարտութիւն
 44 cr յանցելոցն
 45 l կեան
 46 bclr խոստացեալ
 47 z չիք իբրեւ
 48 cr ձեր
 49 bclr չիք որ
 50 b նմայ
 51 a գաւուրքն
 52 a քառասուն
 53 ac պահուց
 54 z եւ գանձինս

զառաջին¹ ըստգտանելի² գործոցն³: 16 Եւ յաւուրն յիսներորդի⁴ իբրեւ⁵ ուրացան⁶ ի սատանայէ եւ յամենայն գործոց նորա եւ խոստովանեցին⁷ երկրպագել⁸ զՍուրբ Երրորդութիւնն⁹, էջ¹⁰ թագաւորն յամենասուրբ ջուրն¹¹ եւ ամենայն զաւրքն ընդ նմա¹²: 17 Եւ կատարեաց զնոսա քահանայակետն¹³ ի¹⁴ վերստին¹⁵ ծնունդն¹⁶ յերկնաւոր¹⁷ որդեգրութիւնն¹⁸. ելին ամենեքեան¹⁹ լցեալ²⁰ Հոգւովն Սրբով: 18 Ի²¹ նմին ժամանակի շնորհեցաւ նոցա այր մի երանելի՝ ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն²² ի Հովով²³ քաղաքէ, որ եկեալ էր²⁴ ընդ Տրդատայ²⁵ արքային²⁶:

19 Այսու երկնաւոր բարեաւք²⁷ եկն²⁸ Ուռնայր արքայ²⁹, եմուտ յաշխարհդ³⁰ Ա-

ղուանից, ուսոյց³¹ եւ կատարեաց զնոսա առաքելական կանոնաւն³²: 20 Ընկալան ամենեքեան³³ զգրոշմն³⁴ կենաց³⁵ եւ գրեցան ի ժառանգութիւն³⁶ երկնից³⁷: 21 Հալածեցան դեւք աշխարհիդ³⁸, խափանեցան զոհք եւ ճենճերք, ամաչեաց մոլորութիւնն³⁹, բարձրացաւ ճշմարտութիւնն, թագաւորեաց լոյսն աներեւոյթ, մերժեցաւ կամաւոր⁴⁰ խաւարն, կարգեցան երախայրիք⁴¹ եկեղեցւոյ, տասանորդեցան պտուղք կալոց⁴² եւ հնձանաց⁴³, անդոց⁴⁴ եւ շտեմարանաց⁴⁵, խաշանց եւ ամենայն ընտանի անասնոց: 22 Նաեւ զհոդ երկրին եւս⁴⁶ ի նոյն վիճակեցոյց, եւ հաստատեալ կալաւ կարգ ուղղութեան առ նախնեաւքն⁴⁷ ձերովք⁴⁸, առ մեծամեծ հաւաւքն⁴⁹ եւ հանեաւքն⁵⁰, եւ հարբն⁵¹ քով երանելեալ⁵² մինչեւ ի ժամանակս քոյոյ⁵³ սքանչելի տէրութեանդ:

23 Վիշապն, որ հինն⁵⁴ էր յաւուրցն⁵⁵ առաջին մարդոյն, ետես¹ զչքնաղ ծնունդ

1 rz յառաջին bl գառաջինն
 2 bclr ստգտանելի z իստուցամեալ ի
 3 bclr գործոց
 4 l յսներորդի
 5 z իբր
 6 bclr ուրացանն
 7 bclr խոստովանեցան
 8 a չիբ երկրպագել z երկրպագելի
 9 bl յերրորդութիւնն a երրորդութիւնն z երրորդութիւնն (չիբ սուրբ) cr երրորդութեանն
 10 bl էր փխ էջ
 11 z ջուրսն
 12 b նմայ
 13 b քահանայետն
 14 bclr չիբ ի
 15 c վերստինն
 16 bclr ծնունդ
 17 a ի յերկնաւոր
 18 z յորդեգրութիւնն bclr որդեգրութիւնն a երրորդութիւնն
 19 z ամենայնքն
 20 a չիբ լցեալ l լցեալք
 21 cr եւ ի
 22 a յեպիսկոպոսութիւն
 23 bclrz հոռով
 24 bclr չիբ էր
 25 c տրդատայ
 26 blz արքայի
 27 a բարով
 28 z լցեալ եկն
 29 c արքայ
 30 a յաշխարհն r յաշխարհսզ ez յաշխարհս

31 a ուսաւ
 32 a կանոնաւք
 33 a ամենեքեան z ամենայնքն
 34 blr գրոշմ
 35 a երկնաւոր փխ կենաց
 36 a դպրութեան փխ ժառանգութիւն
 37 a կենացն փխ երկնից z երկնաւոր
 38 z աշխարհիդ
 39 z մոլորութիւն
 40 z կամակոր
 41 abclr երեխայրիք
 42 bclr կալոյ
 43 bl հնձանից cr հնձանից
 44 z անդոյ
 45 a շտեմարանաց
 46 z զհոդ եւս երկրին
 47 bclr նախնովքն z նախնոքն
 48 bclr չիբ ձերովք z ձերովք
 49 abclr չիբ առ մեծամեծ հաւաւքն z հաւաւքն
 50 bclr չիբ եւ հանեաւքն a հանեաւքն (չիբ եւ) z եւ հանեաւքն ձերովք
 51 z հարբքն
 52 a երանելով z երանելեոք bclr երանելեալ եւ մեծամեծ հաւովքն եւ հանուովքն (cr հանուովքն)
 53 a քոյոյ cr քոյոյ z քոյոյ
 54 z հին
 55 a ատուրցն bclr յատուրց փխ յատուրցն (z)

քոյոյ բնութեանդ², առաջին³ ի հայրենի հաւատոյն, երկրորդ⁴ ի⁴ գոռոզ⁵ վիճակէն: 24 Յոյժ կասկած ի միտ անկաւ⁶ չարասէր թշնամւոյն⁷, եթէ⁸ գուցէ ընդ որս⁹ եղեւ մուտ կենաց յաշխարհս¹⁰ Աղուանից¹¹, ընդ այն՝ ծնունդ եւ մուտ¹² ճշմարտութեանն¹³ յաշխարհն Արեւելից: 25 Շտապեցաւ, տագնապեցաւ, տարակուսեցաւ առաւել քան յաւուրսն¹⁴ Յոբայ¹⁵ արդարոյ: 26 Ժողովեաց գումարեաց զգաւրսն¹⁶ իւր խաւարայինս¹⁷, յայտնեաց նոցա զախտն չար, որ տանջէրն¹⁸ զնա: 27 Ամենեքեան¹⁹ գահի²⁰ հարան եւ դողացին²¹, ի միաբանութիւն եկեալ՝ ելս իրացն խնդրէին²². «Մի այդպէս, ասեն, տագնապիր²³ յանձն քո, ո՛վ քաջ²⁴. կանուխ է մոլորութիւնս²⁵ մեր, քան զճշմարտութիւնն²⁶ նորա. տկար գազանաւն²⁷ առաջին մարդոյն յաղթեցեր²⁸, մեծ թագաւորովս²⁹ տղայոցն³⁰ չկարե՞ս³¹ կալ

1 / էտես

2 a րոյոյ r բնութէ րոյոյ bcl բնութեան րոյոյ (c րոո)

3 bc առաջինն

4 a որ ի փիս ի (bclrz)

5 c չի՞ գոռոզ

6 bclr անկանէր

7 bcrz թշնամոյն

8 a եթէ bclrz թէ

9 z որ

10 r յաշխարհն c աշխարհս

11 z աղուանից աշխարհիս

12 z ընդ սոյն ծնունդ եմուտ

13 bclr ճշմարտութեան

14 blrz

կտրել. երկիցս եւ երիցս պարտեցան եւ ոչ ամաչէին¹:

33 Իսկ այն, որ նստի² յերկնի³ երկինս եւ տեսանէ զաշխարհս ամենայն⁴ յականելով⁵ եւ կշռելով ե՛ւ որ⁶ զբարի ւարէնս, ե՛ւ որ ընդդէմ իցեն, ետես⁷ զքեզ միայն ւարինաւոր, թոյլ ետ պատել զքեզ շուրջ բոցաւ⁸ սաստիկ հնոցին⁹: 34 Վառեցան, բորբոքեցան եւ այրեցան իբրեւ¹⁰ փուշք¹¹ ի մէջ հրոյ¹²: 35 Ընտանեցար¹³ երից մանկանցն ի հուր¹⁴ հնոցին. զգաւրութիւն հրոյն շիջուցեր, զխոշորութիւն կայծականցն¹⁵ ի կակղութիւն վարդի փոխեցեր, զմղձկութիւն¹⁶ ծխոյն ի սպիտակութիւն շուշանի շրջեցեր, զայրեցող¹⁷ բնութիւն հրոյ յարարող գաւրութիւն¹⁸ սովորեցուցեր, զերրորդն¹⁹ Աստուած²⁰ յերկնից յերկիր ածեր քեզ յաւգնականութիւն: 36 Իմաստունք²¹ նոցա²² յիմարեցան, քաջք²³ նոցա վատեցան²⁴, սպառնալիք²⁵ նոցա դադարեցին,

նահատակք նոցա դաւղեցան²⁶, բազմութիւնք նոցա սակաւացան²⁷:

37 Երանի է քեզ եւ երանի է²⁸, որ²⁹ մերձ են³⁰ առ քեզ: 38 Սակաւ էիր թուով եւ անթիւ եղեր բազմութեամբք³¹. սակաւ էիր³² յայտնեալք³³ եւ անթիւ եղեր³⁴ անյայտնեալք³⁵. նիզակ քո՝ նիզակ³⁶ Յեսուայ³⁷, եւ սպառազինութիւնք քո՝³⁸ սպառազինութիւնք³⁹ սպարապետին Աստուծոյ: 39 Չայն փողոյ քո՝⁴⁰ իբրեւ զձայն հրեշտակապետին Աստուծոյ⁴¹, որ⁴² իջանէ ընդ նմա⁴³ յաւուրն յարութեան: 40 Չայն⁴⁴ նորա, որ գերկիր շարժեաց⁴⁵, զվէմս դղորդէ⁴⁶, զգերեզմանս ւաւերէ, զմեռեալս յարուցանէ, զհնացեալսն⁴⁷ նորոգէ, զգատաստանսն⁴⁸ հատուցանէ՝ ոմանց ի⁴⁹ ձախակողմն եւ ոմանց ի յաջակողմն (այս Աստուծոյ միայն է եւ նմա⁵⁰ վայել է), իսկ քեզ՝ իբրեւ հաւատարիմ ծառայի եւ սիրելւոյ⁵¹ եւ ժառանգաւորի⁵² արքայութեանն⁵³,

1 a ամաչեցին
2 a նստին
3 a յերկնից
4 bclr գամենայն աշխարհս
5 bclr եւ յականելեալ
6 a չի՞ք եւ որ
7 l էտես
8 al բոց b նոցալ փխ բոցալ
9 bclr հնոցիւ
10 cr որպէս փխ իբրեւ
11 a գփուշք
12 bclr ի հուր փխ ի մէջ հրոյ
13 a նմանեցար փխ ընտանեցար
14 a չի՞ք հուր c ըզհուր փխ ի հուր
15 blr կայծականց
16 bclr գմղձութիւն
17 l զայրեցող
18 c գորութիւնն
19 a գերորդն
20 a Աստուծոյ
21 a իմաստութիւնն
22 b նոցայ
23 a քաջն
24 bclr վատացան (չի՞ք նոցա)
25 a սպառնալիքն

26 bcr դողեցին l աղողեցին
27 b սուկացան
28 bc չի՞ք է
29 l որք
30 a մերձեցին փխ մերձ են
31 cr բազմութեամբ
32 bclr եկիր փխ էիր
33 bclr յայտնովք
34 blr էիր փխ եղեր
35 b անյայտնիւք clr անյայտիւք
36 bclr նիզակք քո նիզակք
37 a յեսուայ cr յեսուա l յեսուայ b յեսուայ
38 a սպառազինութիւնն
39 bl չի՞ք սպառազինութիւնք
40 cr փող
41 a չի՞ք ձայն... հրեշտակապետին Աստուծոյ
42 a եւ փխ որ
43 bl նմայ
44 a ձայն
45 bclr գերկիր շարժէ փխ որ գերկիր շարժեաց
46 c դղորդէ
47 abl ըզհնացեալսն c հնացեալս r զհնացեալս
48 bclr գատաստանս
49 b չի՞ք ի
50 b նմայ
51 bcr սիրելոյ
52 b չի՞ք եւ ժառանգաւորի
53 b յարքայութեանն

ետ շնորհս երկնաւորս, զի զաւուրն յարութեանն¹ բերէ² նմանութիւն:

41 Որ պարծէր ի³ չարն, տագնապեցաւ. որ խիզախէր ի⁴ մոլորութիւնն⁵, յիմարեցաւ: 42 Ամենայն ինչ քո գնդին կրկին էր⁶. եթէ զրեահէ⁷ էին պահապանք⁸ մարմնոյ, ընդ նմին՝ եւ զրեահէքն⁹ հաւատոյ. եթէ սաղաւարտ¹⁰ էր ի¹¹ զգուշութիւն սուսերի, ընդ նմին էր եւ¹² սաղաւարտ¹³ փրկութեան. եթէ վահան¹⁴ ունէիր ընդդիմահար լանջացդ¹⁵ առաքինաց¹⁶, ընդ նմին ունէիր զվահանն¹⁷ համբերութեան հաւատոց¹⁸. եթէ¹⁹ նեւ ի կորովեաց²⁰ քոց թռչէր²¹ ուղղակի, ընդ²² նմին եւ աղաւթք սուրբք խնդրուածաց քոց վաղվաղակի գեր²³ ի վերոյ²⁴ գտանէին²⁵, քան զերկինս²⁶ առաջի Աստուծոյ. եթէ շողայր²⁷ սուսեր ի բազուկսդ առաքինիսդ²⁸, լուսաւորութիւն²⁹ հաւատոց քոց ի մէջ հրեշտակաց³⁰

փայլատակունս³¹ արձակէր³²: 43 Դրաւշակք քո՝³³ դրաւշակք³⁴ երկնաւորք, եւ տէգք³⁵ նիզակի քո՝ ճառագայթաւորք իբրեւ զլարս արծաթոյ³⁶ արեգական:

44 Այս է, որ զահի հարեալ է³⁷ ի սկզբան³⁸ պատմութեանս, եթէ զիարդ կարացից բանիւ պատմել գայնմանէ, որ ի վեր քան զբանն³⁹ գտանի: 45 Բանս չորեքնիւթեայ⁴⁰ աշխարհս կարէ⁴¹ ասել: 46 Եւ այս վիճակ ոչ ամենեցուն է⁴², այլ որ քաջն⁴³ դեգերեցան⁴⁴ յուսումնասիրութեանն⁴⁵ ի⁴⁶ թուականին⁴⁷, յերկրաչափականին⁴⁸, յաստրան⁴⁹, ի բժշկականին եւ⁵⁰ ապա⁵¹ ի ծայրս ծագաց հասին ի մարգարէականն, յառաքելականն⁵², յաւետարանականն, որ է սկիզբն եւ⁵³ ընծիւղումն⁵⁴: 47 Եւ⁵⁵ թէպէտ եւ⁵⁶ ունէի զայս ամենայն արուեստս նիւթականաց պատմող⁵⁷, էիր⁵⁸

1 *bclr* յարութեան
2 *bclr* բերէր
3 *bcr* չի՞ք ի
4 *br* չի՞ք ի
5 *bl* մոլորութիւն
6 *a* է *փյ* էր
7 *c* զըրահի *r* զրահի
8 *b* պահպանի *cr* պահպան
9 *a* զրահի *bl* զրեահի
10 *cr* սաղաւարդ
11 *a* չի՞ք ի
12 *bcr* երեսի *փյ* էր եւ
13 *cr* սաղաւարդ
14 *c* վահանի
15 *bcr* լանջաց
16 *lr* առաքինեացդ
17 *bcr* վահան
18 *b* ի դատոց *փյ* հաւատոց *a* հաւատոյ
19 *a* թե *cl* թէ
20 *a* կորովից
21 *cr* թռչիւր *b* թողեր
22 *acl* չի՞ք ընդ
23 *a* գէր
24 *a* վերոյ
25 *b* գտանի *cr* գրտանի
26 *cr* գերկին
27 *a* շաղայր
28 *al* առաքինիս
29 *cr* ընդ նմին լուսաւորութիւն

30 *a* հրշտակաց
31 *bclr* փայլատակումնս
32 *a* արձակէր
33 *l* ոյ
34 *bclr* դրոշմ *fn* դրոշմ
35 *a* տէգ
36 *bclr* արծաթոյ
37 *r* էի *փյ* է
38 *a* սկզբանէ
39 *l* զբան
40 *a* չորեքնութեաս *c* զչորեքնութեայ *r* չորեքնութեայս
41 *a* ոչ կարէ
42 *a* չի՞ք է
43 *l* որք *ա* զապէս
44 *a* դէգերեցան
45 *bl* յուսումնասիրութեան *r* ուսումնասիրութեան
46 *bcr* չի՞ք ի
47 *blr* թուականի
48 *a* յերկրաչափականի
49 *bclr* չի՞ք յաստրան
50 *bclr* չի՞ք ի բժշկականին եւ
51 *cr* ապա եւ
52 *bclr* չի՞ք յառաքելականն
53 *bclr* չի՞ք եւ
54 *cl* ընծիւղումն *a* ընծուղումն
55 *bclr* չի՞ք եւ
56 *bclr* չի՞ք եւ
57 *bcr* եւ պատմող *l* պատմող
58 *r* եւ էիր

դու երբեմն նիւթական, այլ զաննիւթոցն¹ ունիս նմանութիւն²:

48 Ընդ արուսեկին³ կշռեցից զքեզ՝ դու պայծառագոյն քան զարուսեակդ նշոյլս արձակես: 49 Արուսեակն⁴ զվեց⁵ ամիս արուսեակ է եւ զվեց ամիս գիշերավար⁶: 50 Դու՝ աւուր աւուր արուսեակ եւ ի վեր քան զարուսեակ: 51 Արուսեակն⁷ յայգուն⁸ պահոյն⁹ եւ եթ երեւի¹⁰, իսկ դու՝ ի քսան եւ ի չորս ժամս՝ ի տուրնջեան¹¹ եւ գիշերի: 52 Եւ եթէ զլուսինն¹² ամից քեզ յաւրինակ¹³, յոյժ ծիծաղելի է իմաստնոց երկոտասան անգամ ի տարւոջն¹⁴ վիժած, ժանգահոծ¹⁵, մանգաղածեւ¹⁶, կիսագունդ, խոնաւալից, կիսալոյս, հիւանդոտ, գիշերագնաց, խաւարասէր, լուսատեաց, չղջանման, պակասընթաց¹⁷, խաւարատանջ¹⁸, բագում անգամ ի թաքուստ¹⁹ մտեալ: 53 Իսկ դու՝ լիալայն, բարձր լուսասարաս²⁰, աւետաբեր, հրեշտակակերպ, ուրախարար, քաջալերիչ, պայծառ եւ²¹ զեղեցիկ քան զամենայն հասակակից ընկերս²² քո: 54 Ո՛չ ինչ բաւական քեզ բաւեմ ասել, որ քան զարեգակն ի վեր գտա-

նիս. ո՛չ գնա թշնամանեցից եւ զքեզ գովեցից, այլ²³ զբնութիւնն²⁴ նորա պատմեցից քեզ. շեղագնաց, թիւրընթաց, կողմնաւոր, ստուերաշուք²⁵, հարաւարնակ, ձմեռնատանջ, ամառնակէզ, թաւնուտ²⁶ գարնանի²⁷, երաշտուտ²⁸ աշնանի²⁹, գիշերակուլ, առաւաւտածին, ծաղկաթարչամ, դալարացամաք, կենդանահալած ի ստուերս ի մէջ³⁰ առաւրէի³¹, կիսաբաժին յաւուրն³² ողջունի³³. յիրաւի սմա³⁴ Յոյնք Ապողովն³⁵ կարդացին³⁶: 55 Եւ ապա եթէ³⁷ ի դուզնաքեայ³⁸ ճառագայթս³⁹ ընթանայցես⁴⁰ մտաւքդ⁴¹, անդ⁴² ընդ նմին եւ զայն գիտասջիր⁴³. գիշերաւ⁴⁴ է ծածկեալ, ամպովք⁴⁵ է թաքուցեալ, փոշով⁴⁶ է մղտացեալ⁴⁷, մրրկաւք⁴⁸ է ալեկոծեալ⁴⁹: 56 Դու արեգական⁵⁰ նմանեցեր⁵¹, ի հաւրէ զաւարացար, յորդոյ⁵² քաջալերեցար, ի Սուրբ

1 *bclr* գնիւթոյն *փիս* գաննիւթոցն
 2 *b* գնմանութիւն
 3 *b* արուսեկի *rl* արուսեկի *a* գարուսեակն
 4 *bc* արուսեկէ
 5 *b* վեց
 6 *bclr* գիշերավարն
 7 *bc* արուսեակ *r* արուսեակ
 8 *a* յայգոյն
 9 *br* պահուն *c* պահու
 10 *bclr* չիբ երեւի
 11 *abc* տունջեան
 12 *al* գլուսին
 13 *cr* օրինակ
 14 *bcr* տարոջն
 15 *bc* ժանգահեծ *r* ժանգ հեծ *a* ժանգհաւծ *l* ջանգահիծ
 16 *a* մանկադածեւ
 17 *b* պակասայընթաց *cr* պակասարնթաց
 18 *a* հրատանջ *փիս* խաւարատանջ
 19 *cr* թագուստ
 20 *a* լուսասարս
 21 *a* չիբ եւ
 22 *a* ընկերս

23 *bclr* այլեւ
 24 *bclr* գրնութիւն
 25 *a* ըստուերաշուք
 26 *l* թունուք
 27 *b* գառնանայի *clr* գարնանային
 28 *a* եւ աշնուտ *փիս* երաշտուտ *b* երաշտ
 29 *blr* աշնանային *c* աշնանանային
 30 *bclr* չիբ մէջ
 31 *a* առաւրեի *bclr* միջօրէի (*c* մէջօրէի) *փիս* առաւրէի
 32 *abcl* աւուրն
 33 *a* ողջոյնի
 34 *b* սմայ
 35 *bl* ապողոն *a* ապաւղովն *cr* ապաղոն
 36 *bclr* կոչեցին *փիս* կարդացին
 37 *a* եթե
 38 *a* ի դոյզնաքեայ *b* ի դուզնաք *c* դուրզնաքեայ
 39 *a* ճառագայթ
 40 *a* անցես *փիս* ընթանայցես
 41 *bclr* մտաւ *փիս* մտաւեդ
 42 *l* անտ *a* չիբ անդ
 43 *bclr* գիտասջիր եւ գայն
 44 *r* գի գիշերով
 45 *l* ամպով *a* ամպով
 46 *a* փոշիով
 47 *ab* մղտացեալ *cr* մրրկացեալ
 48 *blr* մրրկով
 49 *a* ալեկոծեալ
 50 *a* արեգական
 51 *al* նմանեցար
 52 *cr* յորդոյ *a* ի յորդոյ

Հոգւոյն¹ լուսաւորեցար, ի գիշերի տեսանիս, եւ ի տուրնջեան² թափանց անցեն³ ճառագայթք⁴ հաւատոց քոց:

57 Ասացից առ քեզ եւ⁵ բան ինչ առակաւոր: 58 Յամենայն կողմանց աշացար. սրատես⁶ ես⁷ քան զարծուի եւ երագալուր⁸ քան զմի ի հանդարտ անասնոց⁹. ոչ միայն զերկիր տեսեր, այլեւ զերկնից մեծն տեսեր եւ զփոքրս թողեր¹⁰. զանցաւորս ետուր¹¹ եւ զանանցն առեր. ի բաց ընկեցեր զոսկիակուռ թագ թագաւորին¹², եւ ահա կայ¹³, պահի քեզ անձեռագործ պսակն, զոր ընդունելոց ես յամենասուրբ ձեռացն Քրիստոսի: 59 Որ թողցէ վասն Աւետարանին զհայր եւ զմայր¹⁴ եւ¹⁵ զփրս եւ զեղբարս¹⁶ եւ զամենայն ստացուածս իւր, զհարիւրապատիկն¹⁷ աստէն ընկալցի¹⁸ եւ զկեանսն յաւիտեանից աշխարհին¹⁹, որ ոչն²⁰ անցանէ²¹: 60 Զայդ²² աղքատի ումեմն²³ զիւրագոյն է առնել, իսկ²⁴ առն թագաւոր-

րի, իբրեւ զքեզ, անհնար է: 61 Ապա եթէ արասցէ ոք²⁵ (որպէս²⁶ արարերդ²⁷)՝ մարդկան անհաւատալի, հրեշտակաց զարմանալի, Աստուծոյ նմանելի, որպէս²⁸ եթող²⁹ զանթիւ բիւր³⁰ բազում³¹ զաւրս³² հրեշտակաց³³ եւ եկն ի³⁴ գճուճ կերպարանս մարդկան, գտաւ մարդ: 62 Քո գործդ Աստուծոյ նմանի³⁵. ե՛լ նա³⁶ բոլոր աշխարհի եղեւ կեանք եւ փրկուլթիւն, ե՛լ դու բոլոր³⁷ աշխարհի³⁸ բացեր զդուռն³⁹ կենաց եւ⁴⁰ փրկուլթեան:

63 Քոյին⁴¹ իսկ աշխարհիդ⁴² հայրենի հաւատքն պահեցան, եկեղեցիք չէն մնացին, վկայարանք⁴³ ի խաղաղութեան, քահանայք՝ ի քահանայութեան, պատարագք՝ ի սեղանս⁴⁴, մարգարէք՝ յընթերցուածս⁴⁵, առաքեալք՝ ի⁴⁶ մխիթարութիւնս⁴⁷, սաղմոսերգուք՝ ի յաւրհանութիւն⁴⁸, կուսանք՝ ի կուսութեան, կնքաւորք՝ ի սրբութեան, եւ ամենայն ոք՝ յիւրաքանչիւր կարգի: 64 Եհաս⁴⁹ լուր առաքինութեան քո յարեւելից

1 cr հոգոյն
2 ab տունջեան
3 a բափանցանեն / բափանցանցն են
4 b մառագայթիւք
5 a չիք եւ
6 a սրատեսիլ
7 bclr չիք ես
8 bclr արագալուր ես
9 a հանդարտանաց փիս հանդարտ անասնոց
10 b թողերս
11 bclr թողեր փիս ետուր
12 a բագաւորութիւն
13 r կա
14 cr կամ զմայր
15 bcr չիք եւ
16 a զեղբարս
17 cr զհարիւրապատիկ / հարիւրապատիկ
18 bclr ընկալցին
19 b յաշխարհին
20 clr ոչ
21 *** Հմմտ. Մատթ. ԺԹ՝ 29:
21 Մեր կարծիքով՝ ե դարի բնագրում այս «առակից» անմիջապէս առաջ պէտք է գրուած լինէր «Ասացից առ քեզ եւ բան ինչ առակաւոր» նախադասութիւնը (57)-Ա.Յ.
22 bclr զայս
23 al ումեմ
24 bl չիք իսկ cr բայց փիս իսկ

25 b չիք ոք
26 l որպէսդ
27 lr արարէրդ a եւ արարերդ
28 bclr որ փիս որպէս
29 a թողեալ փիս եթող
30 a չիք բիւր
31 bclr բազումս
32 bclr չիք գորս
33 a հրշտակաց
34 b չիք ի
35 a գտաւ (չիք մարդ) քո գործդ այն (փիս Աստուծոյն) նման
36 a մա եւ փիս եւ մա cr չիք եւ
37 a բոլորից
38 a աշխարհիս
39 a դուռն
40 a չիք կենաց եւ
41 ac քոյին
42 a աշխարհից
43 cr վկայարանքն
44 bclr սեղան
45 b ընթերցուածս
46 cr չիք ի
47 bclr մխիթարութիւն
48 a յորնութիւն b օրհնութիւն clr յորնութեան
49 l էհաս

մինչեւ ց Գաղիբովն¹, ի հարաւոյ մինչեւ ց հիւսիսի²: 65 Գրեցաւ անուն մարտիրոսութեան քո յոսկի տախտակսն³ ընդ առաքեալսն եւ ընդ նախավկայսն, ընդ հայրապետսն եւ ընդ⁴ եպիսկոպոսապետսն⁵, համանգամայն⁶ եւ ի դպրութեան կենացն ի յերկինս⁷:

66 Զգո՛յճ⁸ լեր, սքանչելի՛, որ այսչափ մեծամեծացն⁹ արժանի եղեր եւ յայսչափ բարձրութիւնս¹⁰ վերացար, հասեր՝ ի¹¹ հաստատուն կալ գյուտոյն¹² խարիսխ¹³, եւ անհատ լեր ի սիրոյն եւ¹⁴ համբերո՛ղ լեր ի հաւատս ճամբարութեան, զի մի՛ վիշապն մեռեալ գտուտնն¹⁵ շարժեցէ¹⁶ ի վերայ կենաց քոց¹⁷: 67 Զի թէ մինչ տղայն¹⁸ էիր, յաղթեցեր նմա¹⁹, ի չափ հասեալ, գիտեմ, թէ առ ոտն կոխես զամենայն մենքենայս²⁰ չարի նորա:

68 Այլ որչափ միտք²¹ իմ²² այժմ²³ զքեզ սիրեն եւ մարթէր զայն ընդ բանիւ պատմութեան արկանել²⁴, բազում մագա-

ղաթի ծախք լինէին²⁵: 69 Բազում անգամ յառաջ ելեալ²⁶ վասն²⁷ քո²⁸ սիրոյն²⁹ գալ առ քեզ³⁰, եւ այժմ ի մերմէ բարեխաւսութենէ եւ յամենայն սուրբ ուխտի³¹ եկեղեցւոյ³² յանձն արարեալ Հոգւոյն³³ Սրբոյ. Տէր ընդ քեզ. ամէն:

70 Վկայ՛դ³⁴ Քրիստոսի, չարչարակի՛ց խաչին, ի հրեշտակաց փառամատոյց պատմութեանաւ զարդարեալ անգարչ որդեա՛կ իմ, Վաչէ՛ Աղուանից արքայ³⁵, Գիւտայ³⁶ եպիսկոպոսի՛³⁷ Տէրամբ³⁸ բերկրիս³⁹:

71 Յամաւթալից⁴⁰ հեղգութենէ⁴¹ չկարեմ⁴² համարձակել⁴³ ասել բանս⁴⁴ մխիթարութեան յաղթողիդ յաներեւոյթ⁴⁵ պատերազմիդ⁴⁶, որ ոչ ի մարդկանէ առեալ⁴⁷ քաջալերութիւն, այլ յոյժ յահեղ⁴⁸ զաւրութենէն⁴⁹ Քրիստոսի քեզ⁵⁰ յաւգնականութիւն⁵¹ կոչելով, վերագոյն գերազանցեալ՝

1 l ցգաղիոն c ցգաղիբոն a ի գաղարովն
 2 a ի հիւսիսի cr ցհիւսիսի
 3 bclr տախտակս
 4 b չիբ ընդ
 5 a էպիսկոպոսապետսն l եպիսկոպոսապետս
 6 bcr համանգաման a միանգամայն
 7 bclr կենաց յերկինս
 8 c զգոյճ
 9 bclr մեծամեծաց
 10 bclr բարձր
 11 bcr չիբ ի
 12 a յուտոյն
 13 a չիբ խարիսխ
 14 a չիբ եւ
 15 bclr գտուտն
 16 bclr շարժիցէ
 17 a կենաց մերոցս
 18 c տղայն
 19 b նմայ
 20 l մեքենայս c մեքենայս
 21 bclr միտքս
 22 a չիբ իմ
 23 a չիբ այժմ
 24 cr ընդ բանիւ արկանել պատմութեան a բանիւ ընդ պատմութեամբ արկարկանել

25 bcr լինին a լինեին l պէտք ծախք լինին
 26 lr եղեալ
 27 bclr չիբ վասն
 28 b չիբ քո
 29 bclr սիրոյն Աստուծոյ փխ սիրոյն
 30 bc չիբ գալ առ քեզ
 31 c ուխտ
 32 bcr եկեղեցոյ
 33 cr հոգոյն
 34 a վկայ
 35 c արքայ
 36 bclr Գիւտ a Գիւտայ
 37 bcr եպիսկոպոս a էպիսկոպոսի
 38 ab Տէր cr Տերամբ l սր սր փխ Տերամբ
 39 a բերկրի cr երկրիս
 40 l ամօթալից
 41 bcr ի հեղգութեան
 42 a չկարեմ
 43 l համարձակել
 44 bclr բան
 45 bcr աներեւոյթ
 46 a պատերազմիս
 47 bclr առեալ
 48 bclr գոյժ ահեղ
 49 clr գորութիւնն b գորութիւն
 50 l ի քեզ
 51 cl օգնականութիւն

քան զբոլոր աշխարհս բարձրագոյն գտար¹:

72 Բայց արդ՝ զքեզ ի հաւան ածեալ քոյով² ժուժկալութեամբդ, աղաչեմ, զի ախորժ եւ անոյշ իմ ողջոյնս քեզ թուեսցի:

73 Այլ գոհանալով³ զքո վերաբերութենէդ, ով զաւրակա՛նդ⁴ Քրիստոսի, ոչ ունի աղքատութիւն տգիտութեանս իմոյ կազմութիւն⁵ պատրաստութեան, զի եւ ոչ նիւթ ինչ ճարտարեղ⁶ իմաստութեանս իմոյ⁷ համբարել⁸ կարացէ⁹ կկել¹⁰ զգեստ ինչ գովութեան քում ազնուականութեանդ. նա մանաւանդ եթէ ամենայն իսկ¹¹ հռետորական փիլիսոփայքն աշխարհին Յունաց ի մի տեղի¹² գումարեսցին, եւ ոչ ի փոքր ինչ հետազատութիւն կարացեն անկանել. ասել զարժանն անհնար է զգովութիւն¹³ քում¹⁴ հոգելից¹⁵ յաղթութեանդ:

74 Վասն զի դու ծանեար՝ սիրելով զԱստուած ե՛ւ¹⁶ յամենայն անձնէ,¹⁷ ե՛ւ յամենայն¹⁸ զաւրութենէ: 75 Չամենայն ինչս եւ զմեծութիւնս փոխանակեցեր ընդ միոյ Տեառն ամենայնի, զի զնա ընդ քեզ հաշտ ունելով՝ ոչ միայն զերկիրս¹⁹, այլեւ

զերկնից զմեծութիւնն²⁰ առեալ ըմբոշխնեսցես²¹: 76 Հրաժարեցեր²² ի զոհիցն ճենճերաց դիւամոլ հեթանոսաց եւ ահա եղեր հոտ անոյշ ի Քրիստոս Յիսուս²³, որ հասեալ մինչեւ յարեւմուտս՝ հռչակեալ ծաւալեցաւ եւ բերկրեալ²⁴ զուարճացոյց զամենեցուն²⁵ հոգիս: 77 Թողեր զմեծութիւն երկրային, որ առիթ է²⁶ մեղաց²⁷, ժառանգեցեր զարդարութիւն հանդերձ երկնային մեծութեամբն. հռացար բնաւ իսկ ի²⁸ զբաւսանաց աշխարհիս, մերձեցար ի Քրիստոս, որ է նաւահանգիստ խաղաղութեան: 78 Եւ գումարեալ զբանս իմ²⁹ ի մի տեղի՝ ասացից³⁰, եթէ էիր մարդ եւ եղեր հրեշտակ³¹. ունէիր ազգականս³² յերկրի³³, եւ գտան³⁴ եղբարք³⁵ ի յերկինս. էիր մահկանացու եւ եղեր անմահ:

79 Ոչ թէ դու միայն ես անմահ³⁶, այլ արդ՝ վասն զի համարձակութիւն ունիս առ Քրիստոս, բազում³⁸ մահկանացուաց³⁹ կարես⁴⁰ տալ զկենդանութիւն⁴¹: 80 Ցանկալի ես հրեշտակաց, փափագելի⁴² մարդկան, առաւել անձկալի՝ ինձ՝ հռացելոյս,

1 bclr գտեալ
2 ab fով
3 bclr գոհաբանելով
4 a գորական
5 a ոչ ունիմ գիտութիւն աղխատութեանս իմոյ կազմութեան
6 a նարտարեալ
7 a իմաստութեան իմ
8 bclr համբերել
9 a կարացից
10 a կկեալ
11 c եթէ իսկ (չի՞ ամենայն) a եթե իսկ ամենայն
12 a տեղ
13 a եւ ոչ ինչ կարացեն ասել զարժանն գովութեան փիս եւ ոչ... զգովութիւն
14 bclr չի՞ քում
15 c հոգելից
16 a չի՞ եւ
17 a սրտէ, յանձնէ փիս անձնէ
18 a եւ ի փիս եւ յամենայն
19 l գերկրիս

20 bclr մեծութիւն
21 a ըմբոշնեցեր
22 a հրաժարեցար
23 a չի՞ Յիսուս
24 bclr բերկրեցոյց փիս բերկրեալ գուարճացոյց
25 bclr զամենայն
26 c չի՞ է
27 a առթի մեղոք
28 cr չի՞ ի
29 bclr զբնաւ իսկ փիս զբանս իմ
30 a եւ խաւսեցայց փիս ասացից
31 a հրշտակ c հրեշտակ
32 bl ազգայինս cr յազգայինս
33 b երկրի a ի յերկրի
34 c գրտան a գտար
35 a եղբայր Քրիստոսի
36 bclr չի՞ ոչ թե... անմահ
37 a այդ փիս այլ (չի՞ արդ)
38 a որ բազում
39 a մահկանացուած
40 a կարէ
41 cr օգնականութիւն l ի կենդանութեան
42 l փափաքելի a փափագելի ես

ի չլինելոյ¹ մարտակից քեզ յաներեւոյթ պատերազմիդ² յամենաչար³ սատանայի:

81 Բայց արդ՝ աղաչեմ՝ փոխան⁴ ասեմ. չունել վնաս ի մտի, չյիշել զիմ հեղգութիւնս: 82 Լուսաւորեա՛⁵ զիմ տրտմութիւնս քո ողջունաբեր թղթով: 83 Դու եղեր չարչարակից Քրիստոսի, նմանեա՛ նմա⁶ ամենայնիւ. զի թէ նա ի վերայ խաչահանուացն աղաչէր չյիշել զմեզս, որչափ եւս առաւել քեզ արժան է թողուլ զիմ հեղգութիւնս: 84 Զի այն, որ արարն⁷

զքեզ ողջ հոգով⁸ եւ առողջ մարմնով եւ⁹ իւրում¹⁰ որդեգրութեանն արժանաւոր¹¹, նոյն եւ շնորհեսցէ մեզ՝ զքեզ տեսանել յամենայն առաքինութիւնս եւ վայելել¹² ի քո շնորհալից վարսդ¹³:

85 Ողջ¹⁴ լինելով ի Քրիստոս՝ լինիցիս իսկ¹⁵ մեզ բազում ժամանակս պարապեալ եւ լցեալ սիրովն Քրիստոսի. ամէն¹⁶:

1 a չլինելոյս

2 a պատերազմի

3 *clr* ամենաչար *b* ամենաչարն

4 a փոխանակ

5 / Լուսաւորեայ *a չի՛* Լուսաւորեա... բողով զիմ հեղգութիւնս

6 / նմանեաց նմայ

7 *bclr* արար

8 / հոգով

9 a չի՛ առողջ... մարմնով եւ

10 a իմում

11 a արժանի

12 a զքեզ առողջ հոգով եւ մարմնով տեսանել յաշխարհի եւ վայելեալ

13 *cr* վարս

14 c գողջ

15 a լիցիս *փ/ս* լինիցիս իսկ

16 *r չի՛* ամէն

ՄԱՄԲՐԷ ՎԵՐԾԱՆՈՂ

ՃԱՌԲ

[ԴԱՏՈՒՄՆ ԶԵՐԴԱԾԱՅ...]

ՄԱՍԲՐԷ ՎԵՐԾԱՆՈՂՆ ՈՒ ՆՐԱ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Ե դարի հայ եկեղեցական մատենագրութեան մէջ իր ուրոյն տեղն ու դերը ունի Մամբրէ Վերծանողը, որ, ըստ պատմագրական աղբիւրների, Մովսէս Խորենացու կրտսեր եղբայրն էր: Մամբրէ Վերծանողին նուիրուած իր շահեկան ուսումնասիրութեան մէջ Արամ վրդ. Քէչիչեանը (այժմ՝ Ն.Ս.Օ.ՏՏ. Արամ Ա կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ) հեղինակի ապրած ժամանակի վերաբերեալ զանազան կարծիքների համադրումից յետոյ գալիս է այն եզրակացութեան, որ՝ «Մամբրէ Վերծանող Ե դարուն 430-էն 500 թուականներուն միջև ապրած եւ գործած, թարգմանչաց Բ սերունդին պատկանող հեղինակ մըն է՝ «երկրորդ փիլիսոփայ»¹:

Դատելով Մամբրէի անուամբ յայտնի երկերից՝ նա եղել է խօսքարուեստի նրբութիւններին քաջատեղեակ մի հեղինակ եւ, ինչպէս երեւում է, իր կարեւոր մասնակցութիւնն է բերել հայ թարգմանական գործին: Ըստ մասնագէտների՝ նրա մատենագրութիւնը պատկանում է հայ վաղ միջնադարեան մշակոյթի մէջ նշանակալից դեր կատարած յունաբան դպրոցի առաջին փուլին (450-ականից 480-ական թթ.)²:

Մամբրէ Վերծանողի մատենագիտութիւնը բազմաժանր է. այն բաղկացած է ճառերից, իմաստասիրական, քերականական երկերից: Հեղինակի անունով յայտնի կամ նրան վերագրելի են հետեւեալ հինգ ճառերը՝

ա. Ի Ծնունդն Փրկչին ասացեալ եւ Ի Ծնունդն Գործն ութ աւուրն, այդ է՝ Մկրտութիւն (տպ. էջմիածին, 1992, թիւ Ա-Բ-Գ, էջ 90-98՝ ՄՄ թիւ 1798 (440ա-449ա) ձեռագրի հիման վրայ)։

բ. Ճառ ի յարութիւն Ղազարու։

գ. Վասն յարութեան Ղազարու յաւուր շաբաթի (նախորդի ընդարձակ տարբերակն է)։

դ. Նորին ի մեծի գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յերուսաղէմ։

ե. Նորին յաղագս եկաւորութեան Փրկչին յերուսաղէմ (բ.-ե. միաւորները տպ. Մատենագրութիւնն Գալստեաց շաբթի հետեւեալ հատորում՝ Կորին վարդապետի, Մամբրէի Վերծանողի եւ Դաւիթ Անյաղթի մատենագրութիւնն, Վենետիկ-Ս. Ղազար, 1833, էջ 35-54, 55-75, 76-87, 88-93, իսկ բ., ե. միաւորները՝ առանձին գրքոյկով՝ Մամբրէ Վերծանողի Ճառն, Վենետիկ-Ս. Ղազար, 1832, Բ տպ., 1894: Սրանցից բ. միաւորը որոշ ձեռագրերում (ՄՄ ձեռ. թիւ 3782, ԺԲ դար) եւ Տարօնի Առաքելոց վանքի Տօնական (ԺԳ դար) յայտնի երանելոյն Եղիշայի հայոց վարդապետի անունով: Մինչդեռ ուսումնասիրութիւնը պարզում է, որ Ճառը վերագրելի է Մամբրէի գրչին³: Բացառուած չէ, որ այն մի հատուածը լինի հեղինակի այսօր անյայտ Յովհաննու Աւետարանի մեկնութեան, իսկ գ. միաւորը՝ դրա վերարծարծեալ ընդարձակ ճառային տարբերակը, որ շարադրուել է Մամբրէի իսկ ջանքերով:

Յայտնի են նաեւ նշխարներ Մամբրէի ճառերի հնագոյն ընդօրինակութիւններից: Այսպէս, ՄՄ թիւք 1921, 4997 ձեռագրերի պատառիկ-պահպանակները (Ժ-ԺԱ դդ.) պարունակում են առանձին հատուածներ բ., ե. միաւորներից:

¹ Տե՛ս «Հասկ» հայագիտական տարեգիրք, նոր շրջան, Թ՝ տարի, 1997-2001. Անթիլիաս-Լիբանան, 2001, էջ 35-36:

² С. С. Аревшатян. Формирование философской науки в древней Армении (V-VI вв.) Ереван, 1973, с. 154.

³ Մամբրէ Վերծանողի Ճառն, Վենետիկ-Ս. Ղազար, 1894

Մամբրէ Վերձանողի մեզ հասած իմաստասիրական միակ երկը Հարցմունք Մամբրէի, որ գիտակ էր արտ[աբն] փիլիսոփայութեան եւ պատասխանիք Դաւթի եռամեծի եւ Անյաղթ փիլիսոփայի խորագրով հարցուպատասխանին է, որ առկայ է ՄՄ թիւ 1555 ձեռագրում (285ա-290ա):

Մամբրէ Վերձանողի մեզ ամբողջապէս չհասած Մեկնութիւն ֆերականի երկի մի հատուածն է Դատումն ֆերղաձայ սկսուածքով հատուածը (ՄՄ ձեռ. թիւ 2382, տպ. Ն. Կպս. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Ս. Յակոբեանց, հտ. Դ, Երուսաղէմ, 1969, էջ 558), որ դրսեւորում է հեղինակի քերականագիտական կարողութիւնները:

Յակոբ Քեօսէեան

ՄԱՄԱՐԷԻ ՎԵՐԾԱՆՈՂԻ ՃԱՌՔ

Ա. ԵՐԱՆԵԼՈՅՆ ՄԱՄԱՐԷԻ ՎԵՐԾԱՆՈՂԻ
ԱՍԱՑԵԱԼ Ի ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՂԱԶԱՐՈՒ

1 Ամենայն աստուածային նշանք¹ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ են որք կարեւորք են, եւ են որ եւս կարեւորք, որք մասնաւոր ունին զերկնային յուսոյն զմխիթարութիւնն: 2 Այլ յորժամ զյարութիւնն տեսանես, ի ձեռն մասնաւոր յարութեանն հաւատաստի՛ր զբոլոր մասունս զառ ի յԱզամայ մինչեւ ցգալուստն երկրորդ:

3 Է ինչ որ ըստ բնութեան լինելութեանս վարեցաւ Տէրն մեր, եւ է՝ ինչ որ ըստ տեսական արուեստից բնութեանս մերոյ. զի սկիզբն ի գլխոյ անտի առնու լինել մարդ: 4 Իսկ ստուերագիր նկարիչքն զպատկերս թագաւորաց նախ յոտիցն ձեռն արկանեն², եւ զբոլոր անդամս մարմնոյն ներքուստ ի վեր ձեւացուցանեն, եւ ապա ի ձեռն գլխոյն ճանաչի թէ ո՛վ իցէ: 5 Ըստ այսմ աւրինակի եւ Տէր մեր ի սկզբանն արար ի ջրոյ գինի եւ ապա զամենայն խեղութիւնս անդամոց Աստուած յառողջութիւն. ուր ոտիւք, ուր ձեռաւք, ուր ականջաւք, եւ զայլն ամենայն. եւ զղեւսն ընդ նմին հալածականս արար ի մարդկանէ: 6 Իսկ իբրեւ մերձեցաւ ժամանակ կատարման նորա, կատարումն նշանաց զյարութիւնն Ղազարու եցոյց ամենեցուն. որպէս եւ ըստ Յոհաննու աւետարանագրի յետ այլոց սքանչելեացն, այլ ինչ վասն նշանաց ոչ ճառեաց, այլ զՂազարուն՝ եւ անդէն ի ճառս խաչելութեանն մտանէ: 7 Ապա թէ գոտից նորա զաւծումն ասես ի Մարիամայ թողութիւն մեղաց շնորհէ եւ ոչ խեղութեան բժշկութիւն ասի: 8 Որում եւ յաւանակին ակնարկումն՝

արբութիւն հեթանոսաց եւ հնչումն տղայոցն՝ վկայութիւն մարգարէական տառիցն³, եւ բազում եւ այլ մեծամեծ իրք ի յարութենէն Ղազարու մինչեւ ի խաչելութիւնն եւ ի լուսաւոր յարութիւն Տեառն մերոյ: 9 Որպէս զբազումս Աստուած ընդ իւր ի մեռելոց եւ ցուցեալ բազմաց աւետիս տայր տիեզերաց վասն փրկական յարութեանն, իրագործութիւն ասի, այլ ի համար առաջին նշանացն ոչ մտանէ, թէպէտ եւ բարձրագոյն է ճոխութեամբ:

10 Արդ, ըստ Յոհաննու առ Ղազար սահմանեցաւ նշանագործութիւն, իբրեւ գլուխ ի վերայ կենդանոյ, իբրեւ զմարդ ի մարդու զթագաւորական պատիւ ի միութիւն կենդանոյ: 11 Էր անսահման եւ սահմանեցաւ, թուական ամաւք եկն ի կատարելութիւն, եւ մասնաւոր նշանագործութեամբ սահմանեաց առ ի յարութիւն սիրելոյն, եւ ապա զինքն տարաւ եհան յանբաւութիւն, եւ յուսով առյապա՝ զբոլոր աշխարհս:

12 Արդ էր, ասէ, հիւանդ մի Ղազար անուն ի Բեթանիա ի գեղջէ Մարեմայ եւ Մարթայի՞: 13 Յիսուս յայնկոյս Յորդանան գետոյ, ուր Յոհաննէս զմկրտութիւնն առնէր, զայն տեղեալքն փարէր՝ զբոլոր անապատն որսայր ի կենդանութիւն:

14 Առաքեցին առ նա Բորթն Գորա եւ ասեմ. ահաւասիկ զոր դուն սիրէիր հիւանդացեալ է՞: 15 Լուաւ զգոյժ հիւանդին, սահմանեաց զիշխանութիւն մահու, քարոզեաց վասն փառացն Աստուծոյ: 16 Այն հիւանդութիւն, ասէ, չէ ի մահ, այլ

1 Երկու օրին. շնորհք

2 Երկու օրին. ձեռնարկեմ

3 Երկու օրին. ճայնիցն

՞ Ե՛ւ. Գ. Ժ. Ե. 1

է Ե՛ւ. Գ. Ժ. Ե. 3

վասն փառացն Աստուծոյ, զի փառաւորեսցի Որդի Աստուծոյ ի նմա^ա:

17 *Զտեղի կալաւ աւուրս երկուս, թոյլ ետ աւագակին մտանել ի տուն սիրելւոյն. եմուտ ապականագործն, եւ արար խռովութիւն ըստ կամաց իւրոց:* 18 *Արբանեկին Մարիամու ոչ արար պատասխանի՝ ոչ գերթալոյ եւ բժշկելոյ, եւ ոչ գչերթալոյ եւ անփոյթ առնելոյ. զանուն հիւանդին ասացին՝ եւ զփառաց անունն լուան եւ զնացին:* 19 *Տրտմութիւն ըստ տեսեան եւ խնդութիւն ոչ գոյր ի միջի. բազում աղերսանաւք յղարկեցին, եւ մեծաւ թախանձանաւք աղաչէին, եւ զաւր ըստ աւրէ ընդունելութիւն յիշէին. ոչ ի կարծ¹ կոչէին, եւ ոչ երկբայանաւք հաւատային ի յարուցիչն ամենեցուն. բայց մարդկաբար փութային մինչ չեւ հաւանդն վախճանեալ² էր ի կենաց իւրոց:* 20 *Քանզի մինչդեռ յախտալից մարմինս բնակեալ է ոգին, յաճախագոյն³ սայթաքէ քան թէ հաստատուն կայ. որպէս Հոգին Սուրբ ասէ ի բերանոյ Դաւթի. Հոգի որ ելանէ այլ ոչ եւս դառնայ⁴:* 21 *Ոչ Աստուած մոռանայ, այլ եւ զմոռացեալն դարձեալ յիշէ, այլ զբնութիւն բարուց նոցա երկրորդէ:* 22 *Որպէս Պաղոս առաքեալ զայլոց թերահաւատութիւն իւրով լեզուան երկրորդէ. Զիա⁵ ըրդ յառնեմ մեռեալ կամ որո՛վ մարմնով գայցեմ⁶:* 23 *Շարժող ոգին ելեալ զնացեալ, ամենայն մարմինն անկեալ է ընդ ապականութեամբ. ոչ միայն քակտումն յաւրից, այլ եւ գոյացութիւն մարմնոյն ի հող դարձեալ:* 24 *Հարկեցաւ առաքեալ առականաւք սերմանեացն. Որ մեռանի՝ կենդանանայ⁷, ածել զնոսա ի հաւանութիւն յարու-*

թեանն: 25 *Ըստ այսմ աւրինակի եւ քորքն Ղազարու ալէկոծէին ի սիրտս իւրեանց, եւ իբրեւ յԱստուած հաւատացին, իբրեւ զբժիշկ ճարտար առ հիւանդն կոչէին:*

26 *Յղեն առ նա բան միջնորդի⁴:* 27 *Յերկուց կողմանց ղիմառութիւն ցուցանէ. ի հեռաստանէ կալաւ զերակս հիւանդին, մանր զննեաց եւ ճշմարտիւ զպատմութիւնն արար. այն հիւանդութիւն, ասէ, չէ ի մահ. այլ՝ ի քուն եւ յընդոստումն:* 28 *Քուն լինելովն մարդիկ առական ոտնհար լինին, եթէ սիրելեաց իւրոց ոչ կարաց աւգնել. ընդոստմամբն Աստուած փառաւորի, եւ ի նմին փառս եւ Որդի ցնծացեալ բերկրի:* 29 *Եկին առաքեալն Մարիամու եւ ոչինչ կարացին պատմել զյայտնութիւն բանիցն Տեառն:* 30 *Գոռոզացաւ հպարտացաւ մահ եւ կատարեաց զկամս իւրոյ չարութեանն:*

31 *Ասէ Յիսուս ցաշակերտսն. եկայք երթամք ի Հրէաստանէ:* 32 *Եկն եւ անդ երկիւղ մահուն, եւ չարագոյն եւս տագնայեաց զնոսա քան զքոյրսն Ղազարու:*

33 *Տէր, ասեմ, այժմ խնդրեմ զքեզ հրեայքն սպանանել եւ դարձնալ⁵ երթաս:* 34 *Եբեր⁶ առաջի նոցա զճառս լուսոյն. Որ գնայ ասէ, լուսով՝ ոչ գայթակղի⁷. յայտ արար թէ որ երկնչի ի մահունէ, ո՛չ տեսանէ զնա:* 35 *Մի՛ ինչ այժմ զմարմնաւոր անչացդ զտեսիլ ասեր. այս տեսումն՝ վասն երկիւղի է մարդկան եւ ամենայն կենդանեաց, վասն զի տկարքն զգուշանան ի հզաւրագունիցն, հանապազ դաւղելով եւ սարսելով զդառնութեան զկեանս աշխարհիս կատարեն. զհաւատոցն զտեսաւորութիւն ասեմ, որ զակնկալեալն յակնարկելն ցուցանէ. եւ զառյապայսն առժամայն*

^ա Յ՝ՎԸ. ԺԵ 4

1 Երկու օրին. ՚ի կարծիս

2 Մի օրին. խաբանեալ

3 Մի օրին. յառաջագոյն

4 Ս՝ՎԸ. ԷԷ 39

5 Ը Կ՝Գ. ԺԵ 35

6 ՏԵ՝՝ Յ՝ՎԸ. ԺԵ 25

4 Մի օրին. յղեն առ նոսա բան

5 Յ՝ՎԸ. ԺԵ 7

6 Յ՝ՎԸ. ԺԵ 8

7 Մի օրին. դնէր

8 Յ՝ՎԸ. ԺԵ 9

զուշակէ՛¹. Եթէ զայնպիսի տեսութիւն յոգիսն ոչ ստացեալ ունի, եթէ ի միջաւրէի զնայ՝ գայթակղի. եւ խաւարն ընդ նմա իսկ է հանապազ: ³⁶ Որպէս զառաքեալսն Մարիամու իբրեւ զգուժկանս² ունայն մտաւք արձակեաց անդրէն, նոյնպէս եւ զաշակերտսն այսր անդր երերեաց³, եւ ոչ կամեցաւ զյայտնութիւն խորհրդոյն ցուցանել նոցա: ³⁷ Վասն է՞ր. զի միանգամ եւ երկիցս տեսին նշան յարութեան եւ ոչ հաւատացին. փոխանակ զանձինս աներկիւղս ունելով, զնա եւս երկնչոտ ուսուցանէին:

³⁸ Այժմ, ասեմ, սպառնայիմ հրեայքն սպանանել զքեզ՝ եւ դարձեա՞լ անդր երթաս: ³⁹ Սպանանիլն եւ մեռանելն նոյն է: ⁴⁰ Զերկոտասանամեայ դուստր քահանայապետին յարոյց, նոյնպէս եւ զմիամաւրն ի Նային քաղաքի կալաւ եւ կանգնեաց ի դազաղաց անտի. որ զմի մեռեալ կարէ կեցուցանել, նա եւ զբազումս. եւ եթէ զայլոց մահ հալածական արար, եւս առաւել զձերդ. զի՞ այդչափ զահի հարեալ էք եւ դողայք. ո՞չ ապաքէն ելանելոց էք ՚ի մարմնոյ այտի. ո՞չ հանապազ ընդ այդ բան կրթեցարուք, թէ՛ Մի՛ երկնչիք յայնցանէ, որ զմարմինն սպանանեմ, եւ զոգիմ ոչ կարեմ սպանանել⁴. դա միանգամայն զոգի եւ զմարմին թափէ ի մահուանէ առ հասարակ: ⁴¹ Եւ ի Թաբոր լերինն զդոյն բարբառ ի Հաւրէ լուարուք Դա է Որդի իմ սիրելի, դմա՛ լուարուի՞: ⁴² Դուք փոխանակ դմա լսելոյ՝ հրամանատու կամիք լինել. Մի՛ երթար, ասեմ, ի Հրէաստան, զի սպանանեմ զքեզ: ⁴³ Եւ եթէ զՂազարու յարու-

թեանն զխորհուրդն ի վեր հանեալ էր ձեզ, դուք ո՛չ հաւատայի՞՞:

⁴⁴ Վասն նոցա տկար մտացն՝ այսր անդր տարուբերեաց զգաւրութիւն բանիցն, զի սակաւիկ մի կրթեացէ զլսելիս նոցա. մերթ ասէ. Այն հիւանդութիւնն չէ ի մահ. եւ դարձեալ ասէ. Վասն փառացն Աստուծոյ է, զի փառաւորեսցի ի նմա Որդի Աստուծոյ: ⁴⁵ Հիւանդութիւնն անվրէպ ի մահ էր. եւ փառքն ի մահուանէն յորդեցին ի տեսարանս⁴ ամենայն թերահաւատ ժողովրդեանն:

⁴⁶ Յայնժամ զբանիւք արար զաշակերտսն, մինչեւ մեռեալն թաղմամբ գերեզմանին վճարեցաւ. ապա յետ այսորիկ ասէ ցնոսա.:

⁴⁷ Ղազար բարեկամ մեր ննջեաց, եւ ես երթամ զի զարթուցից զնա՞: ⁴⁸ Ո՛վ Տէր, իբրեւ ընդ մանկունս խաւսիս. իբրեւ տղայոց կաթն ջամբես. մայրաբար ծնանիս, եւ դայեկաբար սնուցանես. ե՞րբ էիր դու սենեկապետ Ղազարու, զի երթաս զարթուցանես զնա ի քնոյ. երկուց աւուրց զնացք է հեռաւորութիւն ճանապարհիդ, եւ մինչեւ դու երթաս Ղազարոս համակ ի քո՞ւն կայ. միթէ ի մանրագորաց թմբեալ իցէ. եւ կամ ի սաստիկ անապակա՞ց զմրեալ⁵ իցէ. եւ կամ ո՞ք ի մարդկանէ զչորս տիւ եւ զչորս գիշեր անհատ⁶ ի քուն լինիցի: ⁴⁹ Եւ արդ, դո՞ւ երթաս զարթուցանես զնա. եւ զքորքն նորա, որք փութացան յղեցին առ քեզ զարբանեակս իւրեանց, նոքին ընդէ՞ր ոչ զարթուցանեն զնա: ⁵⁰ Վասն քնոյ նորա առ քեզ ոչ յղէին, այլ վասն մահաբեր ախտին ստէպ աղաչէին, զի երթիցես եւ բժշկեսցես:

¹ Երկու օրին. ցուցանէ
² Երկու օրին. զգուշակս
³ Երկու օրին. յերիւբեաց
⁴ Մատթ. Ժ 28
⁵ Մատթ. Ժ 12

⁶ Տէ՛ * Յ՜վԸ. ԺԼ 8. 15:
⁴ Մի օրին. ՚ի տեսանելիս
⁷ Յ՜վԸ. ԺԼ 11
⁵ Մի օրին. զմրբեալ
⁶ Մի օրին. անընդհատ

51 Արդարեւ գառինք անմեղք էին աշակերտքն, զոր ինչ տեսանէին զնոյն եւ գիտէին, եւ զոր ինչ լսէին՝ զնոյն եւ հաւատային. աստուածային խորհրդոյն ամենեւին հասու ոչ կարէին լինել:

52 Տէր, ասեմ, եթէ ննջեաց, ապա ապրի՞: 53 Բազում հիւանդք ննջեն եւ ոչ ապրին՝: 54 Ո՛վ փաղաքջանք տգիտաց. զծածկագէտ զաւրուծիւնն կամէին սփոփել. գիտէին թէ սիրէ Տէր մեր զտունն զայն ի Բեթանիա, եւ ի տան անդ զՂազար անմեղ. եւ ոչ կամէին թէ վիշտ ինչ հասցէ ի տան անդ ընտանեաց նորա. վասն այնորիկ քան ի Ղազար ի նոսա առաւել գթացաւ Տէրն. մերկացաւ զծածկոյթ խորհրդոյն, եւ ասէ յայտնապէս՝ Ղազար բարեկամ մեր մեռաւ: 55 Եւ զի մի՛ յանկարծակի ընդոստիցեն կամ ճչելով՝ կամ կոծելով՝ կամ արտաւար ի վերայ բանիցն արկանելով, անդէն վազվազակի մխիթարութիւն մատոյց. եւ ես ուրախ եմ, ասէ, վասն ձեր, զի դուք հաւատասցի՛ք, քան զի անդ՞:

56 Ահա դարձեալ պատ ի պատ պատասխանիք, որ ոչ կարացին համարէն հասանել ի վերայ. մահու անուն եւ ուրախութեան միանգամայն հնչեցին ի լսելիս նոցա, եւ ոչ ի զարմացումն անգամ կարացին հասանել վասն երկձայն բարբառոյն. որպէս երկչոտութիւնն թովմայի տեղեակ առնէ զմեզ վասն տխմար անուսումնութեան նոցա: 57 Նա ասէ. եկա՛յք երթիցում անդր. եւ թովմաս ասէ. Ա՛նց եկայք եւ մեք երթամք անդր, զի մեռանիմք ընդ մեռա՞: 58 Նա երթայ զմեռեալն յարուցանել, նոքա կենդանուոյն ի մահ պատրաստին: 59 Քանի տարակուսանք էին ի տեղուջ անդր: 60 Դիւրագոյն է երկրագործ մշակաց զկորդացեալ երկիր ի գործ արկանել,

քան զիտնոց զտգէտսն ածել ի գիտութիւն հաւանութեան. երկրագործ ի սակաւ ժամանակի աշխատի ընդ ամեհի երկիրն, եւ բազում մխիթարութիւն ունի ի նմանէ՞. իսկ զմարդ կորդացեալ՝ տգիտութեամբ Աստուծոյ միայն է կարողութիւն ի գործ արկանել: 61 Որչափ թերահաւատութիւնն զաւրանայր յերկուց կողմանց, չարին կրկին ուրախութիւն էր յամենայն կուսէ: 62 Բայց քանզի Աստուած էր մարդացեալ՝ միջնորդ Աստուծոյ եւ մարդկան, ո՛չ դանդաղեցաւ եւ ոչ զանգիտեաց յամալթ առնել զբոլոր թերահաւատութիւնն, այլ ըստ հայրենի զաւրութեան հզաւր գործ գործեաց:

63 Եկեմ, ասէ, Քրիստոսն եւ եգիտ զՂազար չորեքուրեայ մեռեալ, զի կայր ի գերեզմանի՞: 64 Եւ զի մերձ էր գեղն յերուսաղէմ մղոնաւք երիւք, համարեա թէ բոլոր ամբոխ քաղաքին ելեալ հեղեալ եկեալ էին ի վիշտ անդր: 65 Է իսկ բնութեանս մերում սովորութիւն՝ քան զաւետիս զբաւթ սիրեմք լսել. մանաւանդ զայլոց քան զանձանց, եւ մտանել ի տուն կոծոյ, քան ի տուն ուրախութեան: 66 Ոմն ի մարմնոյ լկտութիւն, միւս ոմն չարասէր՝ յոտնհարութիւն, եւ բազումք ի շատախաւսութիւն եւ յընդվայրաբանութիւն, եւ սակաւք այն են, որ կցորդ լինին սգոյն տրտմութեան: 67 Յայս պատճառս բոլոր բազմութիւն քաղաքին ժողովեալ էին առ քորս նորա. ագարակն քաղաքացեալ էր եւ քաղաքն ագարակացեալ, թէպէտ եւ ոչ ի կամաց էր բազմութեան ամբոխն. ի մէջ Երուսաղէմի գործելոց էին սքանչելիքն:

68 Մարթա իբրեւ լուալ թէ Յիսուս գայ, ընդ առաջ գնաց նորա. բայց Մարիամ անդէմ ի տան նստէրէ: 69 Երկոքեան ան-

՝ Յ՝ՎՃ. ԺԵ 12

1 Մի օրին. ոչ ապրին. եւ եմ որք ննջեն եւ ապրին

Է Յ՝ՎՃ. ԺԵ 15

Ը Յ՝ՎՃ. ԺԵ 16

2 Երկու օրին. եւ բազում պտոց սկնկալութիւն է՝ ի նմանէ

3 Մի օրին. կուրացեալ

Գ Յ՝ՎՃ. ԺԵ 17

Դ Յ՝ՎՃ. ԺԵ 20

կան էին ընդ գովելի աւրհնութեամբ. մինն իբրեւ զբան բերանոյ¹, եւ միւսն իբրեւ զսիրտ աման խորհրդոյ. սիրտն ի տեղին հաստատուն կառուցաւ, բանն թարգման սրտին՝ ընթացաւ յառաջագոյն եւ պատմեաց զպաղատանս սգաւոր սրտին ի լսելիս այնորիկ, որ եկեալ էր բառնալ զսուգն ի տանէ սիրելոյն: 70 Գիտաց Բանն, թէ ամենայն մխիթարիչքն, որ եկեալ ժողովեալ էին իւրաքանչիւր անձինք լի են սգով եւ տրտմութեամբ, եւ տրտում զտրտում ոչ զուարթացուցանէ, եւ սգաւոր զսգաւոր ո՛չ մխիթարէ, բայց եթէ կրկին սուգ ի վերայ սգոյ յաւելու:

71 Մի՛ տագնապիր, ասեն, իմ եղբայր եւս մատաղագոյն մեռաւ քան զնա. այն ինչ հարսն ի տուն ածեալ էր, անզաւակ էանց յաշխարհէս, չմնաց յիշատակ², բարձաւ անուն նորա ի միջոյ կենդանեաց: 72 Միւս այլ ոմն կին յառաջ մատչի եւ ասէ. միամալը որդեակ ունէի, այր մեռեալ, քոյր եւ եղբայր չունիմ, եւ այն մանուկ, ի պսակի իբրեւ ծաղիկ մի թառամեցաւ, չհասաւ ի քաղաք ընկալլին իւրոյ, չհմուտ յառազաստն, չետես զվայելչութիւն աշխարհիս, յետս դարձաւ յոյսն³ եղծեալ ապականեցան կարգք տուրեւառիկ փոխանորդութեան: 73 Եւ այլք եւս քան զայս խանդաղատագոյնս երկրորդեն, զսիրտն բեկանեն, զաղիսն զալարեն, զերիկամունսն զողացուցանեն, ջիւքն թուլանան, յաւրքն լուծանին, բոլոր զաւրութիւն մարմնոյն մեղկի եւ անկանի. վայ ի վերոյ վայոյ, եւ ճիչ ի վերայ ճչոյ⁴, եւ այրումն ի վերայ այրման եւ խարխարումն առաջին վիրացն, եւ կեղեքումն⁵ առաջին չարեացն. եթէ արժա՞ն իցէ այսպիսի բանից մխիթարութիւն ասել, ես ոչ գիտեմ. զմի մարդ ե-

կեալ էին մխիթարել, եւ ամենեքեան նստէին ի սուգ անմխիթար:

74 Զայս ամենայն ամբոխ եթող Մարթա, եւ Ասէ ցՅիսուս, Տէ՛ր, եթէ աստ լեալ էիր դու, եղբայրն իմ չէր մեռեալ. այլ եւ արդ գիտեմ եթէ որ ինչ միանգամ խնդրես դու յԱստուծոյ, տացէ բեզ Աստուած՞: 75 Իմաստութիւն հոգեւոր եւ սէր աստուածային եւ հաւատք ճշմարիտք, եւ անսուտ մարգարէութիւնք, չորեքեան եղբարք հարագատք են, քանզի մի է շարժող նոցա Աստուած: 76 Որպէս եւ յերգիւնն արուեստապետն ընդ մի բերան փչէ, եւ բազմութիւն փողոցն առ հասարակ գոչեն. ոմն սոսկ, ոմն թաւ, եւ ոմն եւս թանձրագոյն, եւ այլքն ըստ իւրաքանչիւր կարգի. թէպէտ եւ բազումք են թուով, մի ձայն ասի եւ ոչ բազում. ըստ ձեռին շարժողին ընտրութիւնք ձայնիցն երեւին, եւ գործին մի է, եւ նոյն բաւական առ ամենեսեան: 77 Այսպէս եւ Մարիամ եւ Մարթա եւ Ղազար ի մեռեալսն, եւ եթէ այլ ոք գոյր ի տան անդր իբրեւ զնոսա հաւատացեալ, թէպէտ եւ որիչ որիչ բարբառէին, սակայն մի հաւատք էր ամենեցուն. զմի սէր սիրէին զՔրիստոս, զմի հոգեւոր իմաստութիւն ունէին ամենեքեան: 78 Ի բազմացն միաբանութենէ մարգարեացաւ Մարթա եւ ասէ. Տէր եթէ աստ լեալ էիր՝ եղբայրն իմ չէր մեռեալ:

79 Ուր կեանք են, մահ անդր ոչ մտանէ. բազում անգամ մտեալ էր Տէրն ի տուն Մարթայի եւ Մարիամու, մահն ի գեղջէն փախստական լինէր՝ թող թէ ի տանէն: 80 Երկնաւոր իմաստութեամբ ասաց զայն. Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի, զվարձս մարգարէի առցէ՞ : 81 Իսկ որ զԱստուած ընդունի, զաստուածային ի-

1 Երկու օրին. իբրեւ գրեթէ ամանոյ
 2 Մի օրին. յիշատակարար
 3 Մի օրին. յետս դարձ գողմ
 4 Մի օրին. ցիչոյ
 5 Մի օրին. բեղբեղում

՞ Գ՞վ՞Ը՞ Ժ՞Ե 21-22
 է՞ Մ՞արթ՞ Ժ՞ 41

մաստովիլենն ժառանգեսցէ: 82 *Յիմաստովիեննէ անտի մարգարէսովիլեն վերաբերեցաւ:* 83 Այլ եւ արդ զիտեմ, աւէ, որ ինչ միանգամ խնդրեսցես դու յԱստուծոյ՝ տայ քեզ Աստուած: 84 Այլ բարբառ մարգարէսովիլեն է. քան զամենայն ինչ Աստուած էած եւ փակեաց. ի տալ անդր քեզ՝ ոչ միայն զմիոյ մեռելոյ զյարուսովիլեն, այլ եւ զվաղնջուցն անցեալ դարուցն:

85 *Բայց գուցէ ումեք թերի բանս թուեսցի. կամ զխնդրելն յԱստուծոյ, կամ զտալն նորուն:* 86 *Ձայս եւ ինքն Տէրն ասաց.* Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հաւրե իմմէ՞ : 87 *Եւ զմիտս լսողացն Հաստատէ.* Ոչ ոմ գիտէ զՀայր, եթէ ոչ Որդի. եւ ոչ զՈրդի ոմ նանաչէ, բայց Հայրէ: 88 *Այս բարբառ զմիաբանութիւնն ուսուցանէ եւ ոչ զերիցուսովիլեն եւ զկրտսերութիւն. վասն այսորիկ եւ Տէրն մեր Հաճեցաւ ընդ Հաւատան Մարթայի:*

89 Աւէ ցնա Յիսուս. յարիցէ եղբայրն քո. աւէ ցնա Մարթա. գիտեմ գի յարիցէ անդ ի յարութեան յաւուրն յետնումբ: 90 *Եւ Տէրն միանգամ յայտնեաց նմա զյետիկն եւ զառաջինն.* «Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք»: 91 *Դրունք երկնից բացան կնոջն, զինքնածագ լոյսն ետես, յանմատոյց տեղին եհաս, որդւոյն Ջեբեթեայ նմանեաց:* 92 *Ոչ զտեսական լանջաւքն Քրիստոսի անկաւ, այլ յիմացական զաւրուսովիլենն վերաբերեցաւ. զԲանն կենաց շաւղափեաց, ի նոյն կեանս ընկղմեցաւ, եկն արտասուաւք եւ լցաւ ծաղոռ, էր վշտագնեալ եւ եղեւ բերկրեալ, մտացն աչք բացան, ներքին մարդն լուսաւորե-*

ցաւ, ի բաց գնաց թախծութիւնն, զուարթացաւ գոյն երեսացն, ողջացաւ կեղեքածք մարմնոյն, մոռացաւ զսուտ մխիթարիչսն բաւթաբեր եղբաւրն, աւետիս լուաւ զյարուսեան, մինչ չեւ յարուցեալ եղբաւրն ի ձեռն մեռելոյն զկենդանին ետես՝ զկենդանին եւ զկենդանացուցիչն ամենայն մեռելոց:

93 Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք: 94 *Եղիա յարոյց զմեռեալն եւ դարձեալ մեռաւ. սոյնպէս եւ Եղիսէէ մի եւ երկուս. ես ոչ միայն յարուցիչ եմ, այլ եւ յարութիւն. յարուցանեմ եւ կեցուցանեմ յանմահութիւն. Որ հաւատայ յիս, թէպէտեւ մեռանի՝ կենդանի է. եւ որ կենդանի է եւ հաւատայ յիս, ոչ նաշակեսցէ գմահ յաւիտեցից:* 95 *Ձայս ասաց Տէրն մեր ցՄարթա. եւ անդէն վաղվաղակի զվարձս վարդապետութեանն պահանջեաց ի նմանէ. Հաւատա՞ւս այսմիկ գոր լուար արդ. եւ նա աւէ ցնա. այո, Տէ՛ր, ես հաւատացի եթէ դու ես Որդի Աստուծոյ կենդանւոյ, որ յաշխարհս գալոց էիր՞:* 96 *Որպէս վերագոյն ասացաք, ըզչորս մասունս մարգարէականս զգեցաւ կինն ի տեղւոջ անդ:* 97 Դու ես որ գալոց էիր յաշխարհս: 98 *Յաշխարհի էր, ասէ. եւ դու գալո՞ց ասես. զմարգարէիցն բանս երկրորդեաց, զոր եւ շամրտացի³ կինն ասաց.* Յորժամ Մեսիա գայ, պատմեսցէ մեզ զամենայնէ: 99 *Ասաց զառ ի Կուսէ ծնունդն, եւ ակնարկեաց զերկրորդ գալուստն. քանզի որ զսկիզբն տեսանէ եւ ի կատարումն Հայի. իբրեւ անգամ մի ի ներքո յարքունիս անդ առաւ, զամենայն ինչ տեղեկացաւ, սակաւիկ ինչ խաւսեցաւ եւ զմեծամեծս Աստուծոյ լուաւ. եկն իբրեւ զմարդ տրտում, գնաց իբրեւ զհրեշտակ Աստուծոյ ուրախութեամբ:*

1 Աստուծոյ այս հատուած բանից պակասի յերկուս օրինակս եւ գնայ մինչեւ ցՀրեայիմ որ եկեալ էին. Ա 104:
 * Ա՛ւ.Վ.Ժ 22
 † Մ՞ր.Վ.Ժ 9-32
 ‡ Յ՞վ.Վ.Վ 23-24
 † Յ՞վ.Վ.Վ 25
 2 Մի օրին. հաւասարեաց

‡ Յ՞վ.Վ.Վ 26
 † Յ՞վ.Վ.Վ 27
 3 Մի օրին. շամարտացի
 † Յ՞վ.Վ.Վ 24

100 Ձոգաւ եւ ասէ ցփոյր իւր. վարդապետ եկեալ է եւ կոչէ զՖեզ^ա: 101 Արդարեւ ճշմարիտ. առանց ալիքբետաց ուսուցանէ, եւ առանց սողորայից հեգէ եւ զամենայն պէտս դպրութեան լնու եւ կատարէ, ասաց վարդապետ, եւ եմուտ ի կարգ աշակերտացն, խաւսեցաւ ընդ Մարիամու լռելեայն, եւ աշակերտեաց ի նոյն վարդապետութիւն հեշտակամ¹, դիւրահաւան:

102 Իբրեւ լուաւ, յարեաւ վաղվաղակի եւ եկն առ յԱստուած². ի նոյն տեղի եւ ի նոյն ուրախութիւն, առ նոյն Ուսուցիչ: 103 Ջոմն ի ծածուկ եւ զոմն յայտնի՝ ձգեաց զերկոսեանն ի սգաւոր աշխարհէս յանտրտմական ուրախութիւն կենացն²: 104 Հրեայքն որ եկեալ էին մխիթարել զՄարեմանսն վասն եղբաւրն, մնացին ունայնք եւ թափուրք յերկնային մխիթարութենէն. սգաւորք³ եւ թախծեալքն նստէին անդէն ի տան յառաջին արտասուսն շաղկալք, եւ նովին տրտմութեամբն ասեն ցմիմեանս՝ երթալ ուրեմն ի գերեզմանն լալ զնա:

105 Յարեան եւ նոփա եւ զնացին ընդ նմա⁴. ոչ առ յարութիւն անդր, այլ՝ ի գերեզման մեռելոյ:

106 Որում տուեալն է, ասէ, տացի նմա եւ յաւեցի, եւ որում ոչն է տուեալ, թէ եւ ունիցի եւս, եւ զայն հանցեմ ի նմանէ⁵: 107 Ոչ առ ազահութեան տուողին, այլ վասն վատթարութեան ընդունողացն: 108 Հանապազ գերեզմանասէրք էին. թո՛ղ անդր զմարդիկ մեռեալ, այլ եւ սուտ աստուածս առնէին եւ զնոսա մեռեալս անուանէին. նստէին, ասէ մարգարէն, կա-

նայք նոցա եւ լային զԹամուզէ: 109 Ի նոցանէն յարեաւ Մարիամ եւ եկն առ այն, զոր յառաջագոյն ճանաչէր, եթէ որ զբազում մեղս իմ կարաց շնորհեալ ինձ ձրինոյն կարող է եւ զծանրատաղտուկ տրտմութիւնս իմ փարատել յինէն: 110 Անկաւ առ ոտս նորա եւ երկրորդեաց զնոյն բանս, զորս ասաց քոյր նորա. Տէր եթէ աստ դիպեալ էին, եղբայրն իմ չէր մեռեալ⁶:

111 Միոյ դպրոցի մանկունք՝ զմի բան բարբառեալ խաւսին՝ հաճք եւ հաւանք եւ միաբանք, ըստ վարդապետին կամաց յորդորին ի նոյն ուսումնն: 112 Սոյնպէս եւ քորքն երկոքեան՝ միով արուեստիւ ի մի որս կենդանի երկնաւոր ըմբռնեցան. զմի սէր սիրեցին զՏէրն եւ զմի գիտութիւն արբին երկոքեանն. տեսին մարդ եւ հաւատացին Աստուած. ի լրութենէ սրտից նոցա եւ բանք զնոյն երկրորդեցին:

113 Յաշխատեալ մարմնոյ բղխեն քրտունք, եւ ի տրտմագին սրտէ բղխեն⁴ աչք զարտասուս, ոչ միայն ի վերայ մեռելոյ, այլ եւ ի վերայ կենդանի սիրելոյ յորժամ եկեսցէ ի հեռաստանէ: 114 Ետես Մարիամ զՅիսուս. երկու երկունք սիրոյ ստիպէին զնա. յիշատակ մեռելոյն եւ տեսիլ կենդանի սիրելոյն. ոչ ճչեաց ըստ աշխարհական կարգի, այլ յոյժ ցածութեամբ եհեղ արկ զարտասուսն առաջի ողորմածին. այնչափ աղիողորմ տեսիլ՝ մինչեւ զամենայն հրեայսն բարձրակական⁵ լացոյց: 115 Ի նոյն միաբանութիւն եւ Տէր մեր հաւասարեաց, արտասուս առ արտասուս, եւ տրտմութիւն առ տրտմութիւն. համարեանց թէ զնոյն սուգ սգացաւ⁶:

^ա Յ՝ՎԸ՝ԺԵ 28
¹ Մի օրին. հեշտ կամակ
² Յ՝ՎԸ՝ԺԵ 29
² Աստ սկսանիսն դարձեալ երկու օրինակն:
³ Մի օրին. միաւորք
⁴ ԳԷ՝Յ՝ՎԸ՝ԺԵ 31
⁵ Մ՝ՊԳ՝ԺԳԻ 12

^ե Ե՝ԷԷ՝Բ 14
² Յ՝ՎԸ՝ԺԵ 32
⁴ Մի օրին. բերեմ
⁵ Մի օրին. բարձր կականաւոր
⁶ Մի օրին. զգեցաւ

116 Քանզի ասէ աւետարանագիրն, եթէ՝
Ձնոյն տեսեալ Յիսուսի խոովեցաւ յոգի
իւր՝. իբրեւ թէ՛ յամենայն զաւրութենէ
իւրմէ տրտմեցաւ: 117 Ոչ կարաց պարզա-
բար բարբառել, թէ՛ Ո՞ւր եղիք գնա՞. այլ
մռնչելով ասէ. ոչ այպանելով, այլ լալով
եւ արտասուլաւք, կիսաբանութեամբ իբրեւ
զտրտմակից եւ զսգակից ի վերայ սիրելոյ
իւրոյ:

118 Ի յորդահոս անձրեաց առատա-
բեր լինին անդաստանք մշակաց. առա-
պարք եւ անապատք բուսուցանեն զգալա-
րիս արաւտականաց: 119 Սոյնպէս եւ յորդ
արտասուք¹ մարդկանն ի գութ մեծ ածին
զԱստուածն մարդացեալ. եղեւ նոցա
կցորդ սգոյ. զի լիցին մարդիկ մխիթարա-
կից Աստուծոյ: 120 Բազում սերմանիք² ի
բազում ամաց ընդարմացեալ կային ընդ
հողով անբոյսք. վայելէր իսկ երկնի եւ
երկրի տեղալ ի վերայ նոցա. զի եթէ մի
հատն բուսցի, վաղվաղակի ապա եւ ամե-
նեցուն ակնկալութիւն է բուսանելոյ:

121 Ո՞ւր եղիք, ասէ, գնա. Տէր, ասեմ,
ե՛կ եւ տես: 122 Դեռեւս որսայր զմարդ-
կան փրկութիւն. ի Բեթանոյ³ մինչեւ
ցրեթաբբէ եւթանասուն եւ երկու մղոնք
են. յայնչափ հեռաստանէ գիտաց զմահն
Ղազարու. ի մաւտ եւս եկեալ եւ ի կամր-
ջին տգիտանայ:

123 Ո՞ւր եղիք, ասէ, գնա: 124 Դուք ե-
ղիք, եւ ես առնում. մեռեալ եղիք, եւ ես
կենդանի բառնամ. դազաղաւք⁴ տարայք,
եւ ճայնիւ ընթացուցանեմ⁵: 125 Իսկ եթէ
այդ այդպէս իցէ, առ ի՞նչ հարցանես, Տէր:
126 Աստուածային գործք գործելոց էին ի
տեղւոջ անդր, գուցէ զրկիցին ինչ մար-

դիկ. քանզի բազում անգամ եղեն առ նո-
սա յայտնութիւնք երկնաւորք. անմարմին
զաւրութիւնքն մարմնաձեւ երեւեցան, այլ
ոչ մարմնացան. սա միայն կրէ զերկուս
ներգործութիւնս: 127 Վասն այսորիկ եր-
կոցունց կողմանց զգուշանայ առ հասա-
րակ. ոչ միայն արտասուլաւքն շատացաւ,
այլ եւ հարցանելովն ստուգեաց, եւ ի նո-
ցունց ընկալաւ անսուտ վկայութիւն:

128 Տեսէ՛ք, ասեմ, որչափ սիրէր գնա,
զի ինքնին արտասուեացք: 129 Մարմնոյ
ոչ միայն աչք արտասուեն, այլ բոլոր ան-
դամքն քրտնուն. որով եւ Տէր մեր բազում
անգամ վարեցաւ յաշխարհի. այնչափ խո-
րամուխ ուսոյց զմարմնաւորութիւն, մինչ
զի եւս վատթարագոյն պատճառս հայհո-
յութեան առնել. Մինչ զի ասէին, ոչ կարէր
սա, որ զաչս կուրիմ երաց՝ առնել, զի եւ
աս մի՛ մեղցիք: 130 Դուք, ասէ, սովոր էք
հայհոյել. որ զմեծն զծովն բաժանեաց, եւ
բազում սքանչելիսն արար, հայհոյեցէք.
եւ ոչ գոհացարուք⁶ զԱստուծոյ, այլ ա-
նասնոյ փոխանակեցէք. եւ ի Մովսիսէ
երդամբ ուրացարուք. եթէ չէր Մովսիսի
ընդ ծովն ճանապարհ արարեալ, զբոլոր
ժողովուրդն արկանէր Փարաւոն ի սուր
սուսերի իւրոյ: 131 Որ զայնչափ բազմու-
թիւնն ի բերանոյ մահու ապրեցոյց, չկա-
լայք շնորհ. եւ ոչ վասն կուրին բժշկելոյ
շնորհակալուք լինիցիք:

132 Շունչ կուրին կենդանի էր, եւ
չարժէր մարմինն. աչք նորա մեռեալ էին.
չունչ ի մեռեալ մարմին ոչ բնակէ եւ ոչ
լոյս արեգական՝ յաչս մեռեալս. եթէ զմե-
ռեալ աչսն կենդանացոյց, եւ զհրաժարեալ
լոյսն անդրէն շնորհեաց. ապա եթէ բոլոր
մարմնովն մեռեալ էր՝ անդէն կենդանա-
նայր: 133 Բայց դուք որչափ կամիք յա-
ճախեցէք ի նոյն հայհոյութիւն. թերեւս ի

՝ Յ՝ՎՎ. ԺՎ. 33

՞ Յ՝ՎՎ. ԺՎ. 34

1 Մի օրին. արտասուիք

2 Երկու օրին. մարմինք

3 Երկու օրին. ՚ի Բեթանիայէ

4 Մի օրին. դարգաղօք

5 Մի օրին. կանգնեմ

՞ Տէ՛՝ Յ՝ՎՎ. ԺՎ. 36:

՞ Յ՝ՎՎ. ԺՎ. 37

6 Մի օրին. զգուշացարուք

նմին տեղու՞ղ ամաչեսալիք վասն առաջին եւ վերջին հայհոյութեան ձերոյ. մանաւանդ յորժամ բազումք ի ձէնջ փառաւոր առնիցեն զԱստուած ի վերայ մեծամեծ սքանչելեացն, զոր տեսանիցէք:

134 Յիսուս գնաց ի գերեզման անդր՞ ուր եղեալ էին զՂազար, յայրի միո՞ջ եւ վէմ մի յեցուցեալ ի դուրս այրին: 135 Սովորութիւն էր առաջնոցն մեծաւ աշխատութեամբ ամրացուցանել զգերեզմանս իւրեանց. վասն զի հեռի էր ի նոցանէ յոյսն յարութեան. զայս միայն գիտէին կեանս եւ զսոյն մահ դառնութեան միայն հաւատային, եւ յիշատակ մեռելոցն զգերեզմանսն համարէին, շիրիմ յիշատակ նոցա առնէին, եւ զանուն մեռելոյն ի վերայ դրանն փորագրէին: 136 Ակնկալութիւն յարութեան անցեալ էր զամենեքումք, վասն որոյ եւ Մովսէս ակամայ խոնարհի ի սովորութիւն անդր առաջնոցն. եթէ ուրուք եղբայր մեռանիցի անորդի, մտցէ միւս եւս եղբայրն առ կին մեռելոյն եւ յարուցէ զաւակ յանուն եղբար իւրոյ՞. հնարք վասն ժառանգութեան երկրին վիճակելոյ: 137 Եւ դարձեալ երկրորդ ակերինաւքն անդրէն ընդգրիմացաւ¹. Եւ իսրայելացիքն զնոյն սովորութիւն ունէին առ գերեզմանս մեռելոցն:

138 Ասէ Յիսուս. ի բա՛ց արարե՛ք զվեմոյ ի բերանոյ գերեզմանիդ՞: 139 Յորմէ երկիր դողայ, լերինք հալին, վասն փոքր վիմին աւգնական խնդրէր ի մարդկանէ. ոչ աւգնական, այլ՝ վկայս: 140 Սատարութիւն զոր արկ առ մարդիկ արտասուաւք, զնոյն փոխարէն պահանջէր առ ի վիմին ի բաց վերացումն: 141 Զերկիր մարդիկ գործեն, եւ գերկինս հրեշտակք ունին. Տէրն հրեշտակաց եւ մարդկան ե-

կեալ էր ի տեղի անդր. հրեշտակք ինչ ոչ պիտոյ էին յաւգնականութիւն, որոց սովորութիւն է գործել գերկիր՝ նոցուն եւ հրամայեաց: 142 Դուք, ասէ, առէք զվէմոյ ի վեր աստի, եւ դուք հայեցարուք ի գերեզման անդր, եթէ կայ ի ներքս մեռեալդ, եթէ չարաչար է տեսիլ մեռելոյդ. աչք ձեր վաղիւն վկայ լիցին, թիկունք ձեր ծանրութեան վիմիդ: 143 Աչք ձեր մեռեալ դիականդ, եւ հոտ նեխոյդ ոնգացդ ամենեցուն, որ մաւտ կայք²: 144 Եւ ի մէջ այդչափ վկայիցդ բազում գյարութիւն մեռելոյդ յուրաստ ոչ կարէք լինել: 145 Գիտէր զնոցա չար սովորութիւնն, յամենայն կողմանց հնարէր արգելուլ ի հայհոյութենէն: 146 Զնոյն վկայութիւն եւ Մարթա վկայեաց քոյր մեռելոյն. Տէ՛ր, ասէ, արդ հոտեալ իցէ, քանզի չորեքարեայ է: 147 Ասէ ցնա Յիսուս, ո՞չ ասացի քեզ եթէ հաւատացես՝ տեսցես զփառսն Աստուծոյ՞: 148 Մարդկան՝ ի մեռելոյ գայ հոտ նեխոյ, եւ Աստուծոյ՝ ի մեղաւորէ. ամենայն աշխարհ առ հասարակ նեխեալ էր, ոչ գարշեցաւ եւ ոչ դարձոյց գերեսս իւր յումեքէ, այլ յիւր անուշահոտութիւնն³ համեմեաց զամենեսեան: 149 Մշակի ոչ գոյ հոտ ի նեխեալ սերմանէ, այլ լի են միտք իւր խնդութեամբ, եւ պարարին խելք իւր ի հոտ անդաստանացն իւրոց, որում սակաւիկ մի ետ վկայութիւն եւ Իսահակ ի զննելն իւրում եւ յաւրհանելն զՅակոբ:

150 Զոր դու ապականութիւն ասացեր, ով Մարթա, անտի բոսանելոց են անապական կեանք մարդկան. միայն աներկբայ հաւատա՛յ յԱստուած, եւ անտի հարկանի քեզ հոտ անոյ՞ եւ կենդանի, այնչափ պայծառ եւ լուսաւոր, մինչ զի զփառս Աստուծոյ անտի հաւատով կարես տեսանել: 151 Յերկիր, ուր ոչ են արկեալ

¹ Տէ՛ր՝ Յ՝ՎԸ՝ Ժ՛Լ՝ 38:
² Մ՝քԳ՝ ԻԲ՝ 24
³ Մի օրին. իմացաւ
⁴ Տէ՛ր՝ Յ՝ՎԸ՝ Ժ՛Լ՝ 39:

² Մի օրին. որ մօտակացդ էք
³ Յ՝ՎԸ՝ Ժ՛Լ՝ 39-40
⁴ Երկու օրին. իւրով անուշահոտութեամբ

սերմանք, թէ եւ բազում անգամ ամպք տեղասցեն ի վերայ նորա՝ ոչ բուսանի ցորեան. եւ ի գերեզմանի, յորում ոչ է եղեալ մեռեալ, թէ եւ բազում շիփորք¹ երկնաւորք հնչեսցեն ի վերայ նորա, ոչ ոք տեսանէ ի նմա գյարութիւն մեռելոց: 152 Աւաղիկ մեռեալ եւ եղեալ ի գերեզմանիդ. դու զմահն դաւանես, եւ Տէրն կենդանի կեանք խոստանայ եւ յարուցանէ: 153 Կրկնեա՛ եւ երեքկնեա՛ զդոյն վկայութիւն, զի պապանծեսցին բերանք հայհոյիչ մարդկան, յորժամ զչորեքաւրեայ մեռեալն կենդանի տեսցեն ի մէջ հրապարակիդ: 154 Վասն չարահոտութեան մի՛ ինչ կասկածեր յամենեցունց Տեառնէդ, աղ է դա անուշացուցիչ² ամենայն հոտեալ մարմնոյ, լոյս է թափանցանց ամենայն կուրացելոց աչաց, ձայն է դա, բացումն ամենայն խլացեալ լսելեաց, գոր եւ այժմ գործով առ սիրելի եղբաւրդ քում տեսանիցես. զնա աչաւք գտանես եւ մտաւք զփառս նորա իմանաս:

155 Եւ իբրեւ ի վեր առին զվէմն ի դրաց գերեզմանիմ: 156 Յիսուս ամբարձ գաչս իւր յերկինս եւ ասէ. Հայր, գոհանամ զՔէն զի լուար ինձ, եւ ես գիտէի զի յամենայն ժամ լսես ինձ, այլ վասն ժողովրդեանս, որ շուրջ կան, առնեմ, զի հաւատասցեն եթէ դու առաքեցեր զիս³: 157 Մինչ չեւ զվէմն ի վեր առեալ, Տէր մեզ զՂազար յարոյց, եւ մինչ չեւ Յիսուսի զաչսն ի վեր համբարձեալ³ զՀայր տեսանէր, եւ մինչ չեւ ձայնիւ կարգացեալ, Հայր լսէր նմա. ոչ յայնմ ժամու միայն, այլ եւ յամենայն ժամու, իսկ տեսողացն եւ լսողացն՝ յայնմ ժամու միայն: 158 Ո՞ր ուրուք հոգի զատ իցէ ի մարմնոյն. ոչ ուրուք ի կենդանեաց եւս քան զայս անգա-

տական է միաբանութիւն միասնական Երրորդութեանն:

159 Ամաչեա՛ թէ ոգորիտոն, մի՛ ամբառնար զաչսդ յերկինս, Նեստորիոս, քանզի կոյր աչաւք էք ի միաբանութենէ Սուրբ Երրորդութեանն վասն կորստեան ձերոյ միաբանեցէք պատմել զամաւթալից վարդապետութիւն: 160 Ոմն, ասեն, կարդայ եւ ոմն՝ լսէ. ոմն աղաչէ եւ ոմն աղաչի. ոմն խանդաղատի եւ զոմն ի խանդաղատանս ածէ. իբրեւ զի ոչ ունի իշխանութիւն յարութեան, զՀայր կարդայ ձայնիւ յաւանականութիւն մեռելոյն: 161 Մվ, քանի դարովելի են բանք արանցս այսոցիկ, ոչ միայն յաչս իմաստնոց, այլ եւ որ կարի տխմարագոյնք իցեն ի սուրբ եկեղեցուջ: 162 Ի տան քահանայապետին յորժամ յարոյց զդուստրն նորա ի մեռելոց, ոչ աղաչեաց, ոչ թախանձեաց, ոչ պաղատեցաւ եւ ոչ յերկինս հայեցաւ եւ ոչ առ Հայրն կարդաց. հայեցաւ ի մեռեալն եւ ասէ. Տալիթա կումի, աղջիկ դու, արի՛ կաց⁴: 163 Զարթեաւ որպէս ի քնոյ. կանգնեցաւ վաղվաղակի իբրեւ զառողջ. առժամայն եւ բազմականի արժանի եղեւ: 164 Նոյնպէս եւ ի Նային քաղաքի բազում ամբոխ էր զհետ դազաղացն⁴. ոչ ոք զնա ի մարդկանէ թախանձեաց, եւ ոչ նա առ Հայր աղաչանս մատոյց. ձեռն միայն ձգեաց ի դագաղն եւ մեռեալն վաղվաղակի կանգնեցաւ⁵: 165 Նոյնպէս եւ յամենայն նշանագործութիւնն⁵. ուր անձամբն առնէր, զզաւրութիւն Աստուածութեանն ցուցանէր, եւ ուր առ Հայր աղաչանս մատուցանէր, զկատարեալ սիրելութիւնն ցուցանէր:

166 Վասն ժողովրդեանս, ասէ, առնեմ:

167 Եւ զմեկնութիւնն ինքն թարգմանէ. Զի սոքա հաւատասցեն եթէ դու առաքեցեր

1 Մի օրին. շնորհ

2 Մի օրին. աղ է դա, է անուշացուցիչ

3 Տէ՛ * Յ՛վճ. ԺԵ 41-42:

4 Մի օրին. հայեցուցեալ

5 Մ՛րԿ. Ե 41

4 Մի օրին. դարգաղացն

5 Հ՛մԳ. Գ՛ւԿ. Է 11-15:

5 Մի օրին. աշխարհագործութիւնն

զիս յաշխարհ^ա: 168 *Ճշմարիտ գոհութիւն¹ գՀաւրէ վասն մարդկան. Գոհանամ զԲԷՄ, Հա՛յր, ասէ, զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ի զիտնոց եւ յայտնեցեր տղայոց անմեղաց^Բ: 169 Ամենեքեան անկեալ եմք ընդ կարեւոր մեղաւք. այլ եւ ընդ անքաւելի մեղաւք անկեալ այնոքիկ են, որք յանբաժանելի բնութիւնն բաժինս արկանեն. իբրեւ անդ ոչ են ձեռնհաս առնել խռովութիւն, ինքեանք յանձինս իւրեանց խռովեալ տագնապին. ի մարդկանէ հայհոյին եւ յԱստուծոյ դատապարտին եւ ջնջին ի դպրութեանէ կենաց: 170 Այլ մեք փութասցուք անդրէն առ գերեզման Ղազարու հասանել, զոր ոչ է արժան գերեզման անուանել, այլ յարութիւն մեռելոց:*

171 *Ձայս իբրեւ ասաց Յիսուս, ի ձայն բարձր աղաղակեաց եւ ասէ. Ղազարէ, արի՛ եկ արտաք: 172 Եւ ել մեռեալն ոտիւք կապելովք եւ ձեռաւք երիզապնդովք եւ երեսաւք պատատելովք^Բ: 173 Քաջ միտ դիր աղաչեմ: 174 Յորժամ յաստուածային գիրս մխեսցիս ընթեռնուլ եւ իմանալ զգաւրութիւն բանիցն, գիր մի ձայնաւոր մի՛ անցցէ զմտաւք քոյովք. ամենայն շարագրածքն յղի² են երկնաւոր իմաստութեամբ, եւ ծնանին զբանս հոգեւորս իմաստուն մտաց. առ վատուսմունսն ամլանան, եւ առ քաջունակսն յիշատակաց բազմորդիք լինին. սոյնպէս եւ ի լսելիս իւրաքանչիւրոց, որոց առողջք են միտք ականջաց, ըստ այնմ եւ հանգամանք մտացն անուշանան:*

175 *Ի ձայն բարձր աղաղակեաց եւ կարդաց զմեռեալն. ոչ եթէ սաստկութիւն ձայնին ընդոստոյց³, ո՛չ. եւ զմտաւ ան-*

գամ մի՛ ածեր: 176 Թէ մեռեալ զմեռեալ յարոյց երբեմն, մի ձայն բարբառոյ անդ ոչ գոյր ի միջի: 177 Աղաղակեաց վասն բազմութեան մարդկանն, զի ի ձեռն ձայնին լուծցէ զամենայն հակառակութիւն. հարկեցոյց զամենայն տեսանելիս յինքն կորզելով: 178 Որ հարցի, ասէ, ընդ մեռեալ՝ պիղծ կացցէ մինչեւ ցերեկոյ^Բ: 179 Կատարեաց զհրամանս աւրինացն. հեռի եկաց ի գերեզմանէ անտի կանգունս երկոտասան՝ չմերձենալով ի մեռաներն. փոխանակ ձեռինն զձայնն սաստկացոյց, ձայնն եղեւ որոտումն երկնաւոր, արտասուքն՝ ցաւղ շայեկան ամպոց. խստութիւն վիմին կակղացաւ, եւ եղեւ անդաստան բերրի: 180 Քարինք որ անբոյսք են ի խոտոց, մալեաց կակղեաց սաստկութիւն ձայնին, եւ առ ընկալաւ զշայեկան անձրեւին լիութիւն, եւ մածոյց զլուծութիւն սերմանն: 181 Հոտ նեխոյն դարձաւ ի հոտ անուշութեան. եմուտ ձայնն ի գերեզմանն, կալաւ զձեռանէ մեռելոյն, ոչ քարչեաց եւ ոչ գնացոյց, վասն զի կապեալ էր կապանաւք. որպէս հրեշտակն զԱմբակում մարգարէ՝ հացիւն եփելով եւ թանիւն հասելով զբոլոր կերակուր հնձողացն տարաւ: 182 Արագ է բանն Աստուծոյ քան հրեշտակ երկնից, եւ որչափ արագ է, առաւել եւս հզաւրագոյն է:

183 *Ասէ ցնոսա Յիսուս, լուծե՛ք զգա եւ թողե՛ք երթալէ: 184 Որ կապեցիքդ լուծէ՛ք, եւ որ պատեցիքդ քակեցէ՛ք, եւ որ պատատեցէքդ կողոպտեցէ՛ք. մի՛ դարչիք ոչ գոյ հոտ նեխոյ. մի՛ խորչիք ըստ աւրինացն, չէ մեռեալ, այլ կենդանի է. տեսէ՛ք ձերաւքն նշանաւքդ. ծաներուք ձեռաւք ձեր: 185 Ձպատեալ բերանդ բացէ՛ք, եւ դուք ընդ այլ վկայսն վասն մահուդ, ամենեքեան վկայ լերուք յարութեանդ զոր տեսէքդ: 186 Մի մրգով ճանաչի բոլոր*

^ա Յ՝ՎՃ. ԺՎ 42
¹ երկու օրին. գոհացողութիւն
^Բ Մ՝ԳՔ. ԺՎ 25
^Գ Յ՝ՎՃ. ԺՎ 43-44
² Մի օրին. ամենայն նշանագիրքն լի են հոգեւոր իմաստութեամբ
³ Մի օրին. ընդոստացոյց

^Դ ՂԷ. ԺՎ 24
^Ե Յ՝ՎՃ. ԺՎ 44

պտուղ երկրի. մասնաւոր առժամայն, եւ աւետիք առ յապայ:

187 Ո՛վ հիւանդութիւն, կենդանութեան յոյս. ո՛վ հիւանդութիւն, յարութեան նշանակ. ո՛վ հիւանդութիւն, մահու ընդդիմամարտիկ. ո՛վ հիւանդութիւն, բանսարկուիւն ոսոխ. ո՛վ հիւանդութիւն, հաւատոյ հիմն. ո՛վ հիւանդութիւն, թերահաւատից յանդիմանութիւն: 188 Ոչ հիւանդութիւն կոչել ախորժեմ, այլ հիւանդացեալ մտաց առողջութիւն. ոչ հիւանդութիւն մահացուցիչ, այլ ախտացեալ անձանց բժշկութիւն. ոչ հիւանդութիւն առ ի մահ ննջումն, այլ ննջեցելոց առ ի մահ կանգնումն. ոչ հիւանդութիւն, այլ մերոյ յարութեանն պատկեր: 189 Աքանջասցուք ընդ նորահրաշ յարութիւնն Ղազարու, պայծառասցուք ընդ աստուածային ներգործութիւնն, բերկրեսցուք Ղազարու յարութեամբն, զնոյն յոյս յանձինս մեր հաստատելով: 190 Խայտասցեն եւ հոգիք սրբոցն, զի վերստին զգենլոց են զմարմինս, զոր մահացոյց բանսարկուն: 191 Ողբասցէ մահ զկործանումն իւրոյ թագաւորութեանն, կոծեսցին եւ դժոխք զքակտումն իւրոյ զաւրութեանն, հրճուեսցի նախաստեղծն ընդ գալուստ հովուին ի խնդիր կորուսեալ ոչխարին, ծափս հարցեն հաւատացեալք ի նորոգմանն Ղազարու, սուգ առցեն դեւք զինքեանց տեսանելով զկործանումն: 192 Աւետարանեսցեն՝ որոց ի գերեզմանսն բնակեն զյոյս յարութեանն. մի՛ այսուհետեւ զարհուրեցուցէ զմեզ մահ, մի՛ դողացուցէ բանսարկուն, որ մահացոյցն: 193 Գտաք զկենաց ծառն, ի բաց եկաց քերովբէն բոցեղէն սրոյն պահպանութեամբն, խափանեցաւ ներգործութիւն մահաբեր ծառոյն, տերեւ թղենւոյն պատուեցաւ, զի անապականութեան գուշակ մեզ այսր աւուր յարութեան եղեւ¹:

194 Ո՛վ աստուածային ձայնին զաւրութիւնն, որ զդժոխս պատառեաց եւ զըմբռնեալն ի մահուանէ ոգին արտաքս կորզեաց: 195 Ո՛վ աստուածային ձայնի զաւրութեանն, որ զլուծեալ անդամսն վերստին նորոգեաց ի կեանս: 196 Ո՛վ աստուածային ձայնին զաւրութեան, որ զորոշեալ ոգին ի քթթել ական ժողովեաց առ լուծեալ մարմինն, ոչինչ անպատուականագոյն հրաշագործեալ քան զառաջին ստեղծածն: 197 Ո՛վ ձայնին զաւրութեան, կանգնելով ի շիրմէն զչորեքաւրեայ մեռեալն պարաուանդեալ ոտիւք, ճեպով ածէ ի տեղին, ուր էրն:

198 Կացուցուք², ով սիրելիք, զմիտս մեր ի վերայ ձայնիս ամբիծ հաւատովք, եւ տեսցուք մտաց աչաւք զնոյն ինքն զկենսատուն Քրիստոս, եւ զնոյն ինքն դաւանելով մեզ յարութիւն եւ կեանք, ի հասարակաց յարութենէն մի երկմտեսցուք, զի ահա այն ձայն եւ զմեզ յարուցանելոց է ի գերեզմանացն: 199 Փութասցուք այսուհետեւ աստէն ամբարել զգործս աւգտակարագոյնս առ հանդերձեալ յարութիւնն, զի մի՛ շիջեալ լապտերաւք ելցուք ընդ առաջ փեսային. զի յորժամ կոչիցիմք ի գերեզմանացն, առ ձեռն պատրաստ գտցուք զողորմութեան, եւղ, որով լապտերքն մեր պայծառանան: 200 Զի ոչ է յետ այնորիկ ժողովք վաճառուց, ոչ ունիս գնել, զոր յուսասն: 201 Այժմ է հանդէս վաճառաց, աստէն են աղքատացն ժողովքն, ի նոսա գանձեսցուք, որ ոչ ցեց մերձեմայ³, նոցա հաւատասցուք զգանձն, եւ ոչ գողն կարէ ական հատանել, ի ձեռն նոցա դիցուք ի պահեստի, զի անդ ի ձեռս դատաւորին գտցուք: 203 Ընթասցուք առ լուծումն մեղացն սրագոյն քան զգնել ատենին, կաշառեսցուք զգտաւորն նախ քան զգնել աթոռոյն, մի՛ կացցուք մերկս ի հրապա-

1 Մի օրին. նշանակեցաւ

2 Մի օրին. գնա ուսցուք

3 Հմմտ. Մատթ. 9. 19-20. Գ. Կ. Ժ. Բ. 33:

րակատես ատենին, լաւագոյն է այժմ միայն խաւսել ընդ դատաւորին, դիւրին է աստէն լուծանել զմեղադրանսն: 204 Զի յորժամ ծագեսցէ լոյսն ի մէջ գիշերի, եւ երեւեսցի արդարոցն պարծանքն, այսինքն՝ յամեցեալ Փեսայն, կարասցուք ժամանել ընդ առաջ նորա պայծառ լապտերաւք, զի ի դատաստանէն ապրեալք՝ առագաստին մտիցն լինիցիմք արժանի՝ ընդ հրաւիրեալսն ժառանգելով զանպատում ուրախութիւնսն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն:

Բ. ՎԱՍՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՂԱԶԱՐՈՒ ՅԱՒՈՒՐ ՇԱԲԱԹՈՒ՝

1 Վեց շաբաթս այս զվեց հազար դարն նշանակէ, քանզի այս շաբաթս զմեր բնութեանս ունի գյարութիւն եւ զգատաստան, վասն որոյ գնալն յԵրուսաղէմ եւ զդորդիլ քաղաքին գյարութիւն մեռելոցն յայտնէ, որպէս ի Պասեկին շաբաթու աւրն ճրագալուցին զՔրիստոսի Աստուծոյ մերոյ, զի ի գիշերի գյարութիւնն պատմէ, եւ չեւ եւս յարութիւն եղեալ, գուշակէ գյարութիւն: 2 Նմանապէս եւ ի սմա գհամաւրէն մարդկան յարութիւն ցուցանէ, որ լինի ի կիւրակէի, որպէս նախ ասաց յաղագս իւրոյ յարութեանն եւ ապա յարեաւ, եւ նախ մարգարէքն գուշակեցին, եւ ապա Քրիստոս կատարեաց: 3 Նոյնպէս եւ Տէրն նախ աւետարանեաց. եկեսցէ ժամանակ

վերջին աւրն, եւ լուիցեն ձայնի նորա, եւ եկեսցեն արտաքս՝:

4 Եւ այժմ է, զի աւրինակ էր Ղազարու յարութիւնն մարդկային բնութեանս. քանզի կամեցաւ զնախաստեղծին բժշկել զբովանդակ մարմինն, ի փոքրագոյն անդամոցն առնու սկիզբն. գումեմն զգաւսացեալ ձեռն, զայլոյ զբորոտութիւն. գուրուք զտեսարանն, եւ զորդի այրւոյն ի Նային քաղաքի յարոյց եւ զգուտար հազարապետին սակաւ սակաւ, եւ ապա զՂազար ի Բեթանիա, առհաւատչեայ յարութիւն ամենայն մարմնոց: 5 Ի շաբաթու յաւուր, յորում մատնեցաւ Յիսուս, մեռաւ Ղազար, եւ յաւուր, յորում Տէրն ննջեաց ի գերեզման, յարոյց զՂազար: 6 Վասն այսորիկ Ադամ գոհացողական ձայնիւ նուագէ ծննդովք իւր. Տէ՛ր, հաներ ի դժոխոց գանձն իմ, փրկեցեր յայնցանէ, որ իջանեն ի գուրէ՞. զբնաւից նորոգումն մարմնոց: 7 Իսկ զկատարեալ փրկագործութիւնն եւ Քրիստոսի չարչարանսն եւ յարութեան պահին, իսկ Ղազարու յարութիւն զկնի քառասնիցն ցուցանէ, թէ պահք եւ աղաւթք. Քրիստոսի չարչարակից առնէ զմեզ, որպէս յարոյցն զՂազար: 8 Պահաւք եւ աղաւթիւք զհոգիս մեր կանգնեսցուք ի պէսպէս արտից զլորմանէ: 9 Եւ քանզի ի տասն ժամուն մեղաք եւ ի նոյն ժամուն՝ յորում ելաք արտաքս ի դրախտէն, ի նոյն ժամու եւ Տէրն բողորից էջ ի խաչէն ի գերեզման, ի նոյն ժամու յարոյց զՂազար ի գերեզմանէն:

10 Էր ումն հիւանդ Ղազարոս՞: 11 Որ ըստ եբրայեցւոցն «աւզնականել» ասի: 12 Եւ հիւանդութիւն ըստ իմանալի տեսութեան, զմեղացն ասէ զազգի մարդկան, եւ մեռանելն՝ զմեղացն մահն, որ է չար:

1 Հրատ. ծանուցում է. «Ձայս նառ այսպէս առանց անուան օրինակագրի յերկուս Տօնապատեանս գտեալ, յորոց միումն պակասեր սկիզբն, յարեմք զկնի Մամբրէի նառին. զի բագում ուրեմ նովին իմաստիւք ընթանայ ՚ի բանսն. այլ թէ ա՛յս իցէ բուն հարագատ ծնունդ մտաց նորա, եւ թէ առաջինն, անմարթ է մեզ նշդիւ դատաստան առնել զսմանէ. զի թերես զկնի ՚ի գրչացն խանգարեալ եւ անուանն սխալեալ իցէ: Բայց եւ զայս գիտեմք, զի եւ Տօնապատեանոք առեալ զայլոց գրանս ըստ կամի յերիւրեմ, մերթ յանուն այլոց եւ մերթ առանց անուան՝ ուրեմ զիմաստսն պահեալ եւ ուրեմ յաւելեալ կամ գեղչեալ: Այլ մեմ ժամանակին թաղումք հաւաստել զեմարտութիւնն»:

“ Յ՝ՎԸ. Ե՝ 29
 † Ս՝ՄԸ. Ի՞Թ՝ 4
 ‡ Յ՝ՎԸ. Ժ՝Ը՝ 1

13 Ի Բեթսամիայ՝ ի տուն սգոյ ասի աշխարհիս, ըստ նմանութեան յանցաւորութեանն Ադամայ: 14 Սգակցեն ամենայն արարածք, ողբան հեծեն եւ երկնեն մինչեւ ցայժմ, զանկեալն Ադամայ ի փառաց զբախտին վայելչութենէ, ի կենդանութենէն Աստուծոյ, եւ Քրիստոսիւ արձակեցաք ի կապանաց մեղացն ի նորոգումն կենացն ի Քրիստոս Յիսուս:

15 Ի գեղջէ Մարիամու՝ լուսաւորիլ տէրունական լուսովն եւ եկաւորութեամբն:

16 Այս այն Մարիամն էր, որ զամենայն գոյսն վաճառեալ զնեաց զեղն, որով աւծ գոտս Տեառն, եւ լուաց ջրով, եւ հերով զլիսոյն մաքրեաց՝ վասն եղբաւրն յարութեան ի տան իւրեանց. եւ Ղազար մի էր ի բազմեղոցն¹: 17 Ոչ այն պոռնիկն, որ ի տուն Սիմոնի բորտի էաւծ զՏէրն, զոր երեք աւետարանիչքն ասեն, այլ սա լի մաքրութեամբ եւ պարկեշտութեամբ եւ լաւագոյն առ աստուածայինսն:

18 Եւ Մարթայ տէրունական, ասի, եկաւորութեամբն բերկրեալ:

19 Որոց եղբայրն հիւանդ էր: 20 Եղբայր զհարազատութիւն յայտնէ քերցն, վասն սոցա թուի ասացեալն. Վասն այնորիկ աւրիորդի² սիրեցիմ զեզ³՝ առ ի յաւգնել եղբաւրն վտանգելոյ: 21 Սովորութիւն է պատմագրաց, որպէս զիրսն բացայայտեն, այսպէս եւ զտեղին ցուցանել՝ առ ի հաւատարիմ լինել բանին: 22 Է՞ր վասն կանանցն եւ ոչ զՂազարու գեղն կոչէ: 23 Զի թէպէտեւ հասարակաց էր տեղին, մանաւանդ Ղազարու քան քերցն, այլ կենդանեացն ի դէպ էր զտեղին կոչել քան մեռելոյն: 24 Իսկ աւծանել գոտս Տեառն վասն սիրոյն առաւելութեան ըստ երախտագործութեան եղբաւրն, իսկ հերովն

ջնջելն, զի ոչ ունէր այլ պատուական քան զգլուխն, որով սպասէր կենսաբեր ոտիցն:

25 Յիսուս յայն կոյս Յորդանանու եւ փարէր զտեղեաւն, զբոլոր անապատն որսայր ի կենդանութիւն:

26 Առաքեցիմ առ Գա Բորբ Գորա: 27 Որ նշանակէ զմարգարէիցն դասքն:

28 Տէ՛ր, գոր սիրէիրն հիւանդացաւ⁴: 29 Թէպէտեւ դեռեւս ոչ ունէին կատարեալ հաւատս, սակայն սիրոյն յիշատակաւն խորհէին ձգել զնա ի գութ եղբաւրն:

30 Իբրեւ լուս Յիսուս: 31 Լուսաւ զգութ հիւանդին, թոյլ ետ մահուն իշխել նմա եւ մահացուցանել:

32 Այն հիւանդութիւն ոչ է առ ի մահ, այլ վասն փառացն Աստուծոյ: 33 Յուցանէ թէ հիւանդութիւն ոչ ունի իշխանութիւն մահացուցանել զնա, բայց սուղ ինչ ժամանակ, զի քարոզեսցէ զփառսն Աստուծոյ: 34 Յուցանէ թէ ի հեռաստանէ կալաւ գերակս հիւանդին, եւ մանր զննեաց, զճշմարիտ պատմութիւնն արար, եւ որպէս Տէր ի քնոյ զարթուցանէ իշխանութեամբ զծառայ իւր: 35 Ի քուն լինելն մարդիկ ոտնահար² լինին սիրելեացն՝ ոչ կարացեալ աւգնել, ընդոտուցանելն՝ Աստուած փառաւորի ի հայրական փառս իւր, եւ Որդին ցնծացեալ բերկրի վասն փառացն Աստուծոյ: 36 Թուի ինձ ի Հայր ձգէ զբանն, որպէս յաղաւթելն ի վերայ գերեզմանին վասն ժխտող հրէիցն, որ զնա հակառակ Աստուծոյ անուանէին: 37 Եւ ապա առ Հայր աղաւթէ, որ աստուածական հրամանաւն կոչելոց էր զմեռեալն, զՀաւր եւ զիւր կամացն զփառակցութիւն յայտնելով: 38 Դարձեալ զփառաբանութիւն որ ի ծերոցն եւ ի տղայոցն լինելոց էր, կանխաւ գուշակեաց:

39 Առաքեցիմ առ Գա Բորբն: 40 Բազում աղերսանաւք յղեցին, եւ մեծ թա-

¹ Յ՝ՎՃ. ԺԲ 2

² Յօրիմակիմ՝ որիորդի

³ Երգ. Լ 2

⁴ Տէ՛ր. Յ՝ՎՃ. ԺԼ 3:

² Մի օրին. ոտնահար

խանձանաւք աղաչեցին, ոչ երկբայութեամբ հաւատացին յարուցիչն մեռելոց ամենից, բայց մարդկաբար փութային՝ մինչ դեռ հիւանդն ոչ էր վճարեալ ի կենաց: 41 Զինչ դիւրավնասելի քան զմարմին. յաճախագոյն սայթաքէ քան յառողջութեան կայ, զի ոգի, որ ելանէ այլ ոչ դառնայ. շարժողն հոգին գնայ եւ ամենայն մարմինն անկանի ընդ ապականութեամբ, եւ գոյութիւն մարմնոյն ի հողոյ բնութիւն դառնայ: 42 Այնր աղագաւ քորքն Ղազարու ալեկոծութեամբ կէին ի միտս իւրեանց, եւ իբր յԱստուած հաւատացեալ, գոր որպէս բժիշկ ճարտար ի հիւանդն կոչէին:

43 Զտեղի առ աւուրս երկու: 44 Թոյլ ետ աւագակին մտանել ի տուն սիրելոյն, եւ ապականութիւն եւ խռովութիւն գործել: 45 Գոռոզացաւ մահ եւ զկամս իւր կատարեաց:

46 Լուաւ Յիսուս եւ ասէ: 47 Յիսուս ոչ ինչ ետ պատասխանի եւ ոչ երթալ եւ բժշկել եւ ոչ չերթալ եւ անփոյթ առնել: 48 Զանուն հիւանդին ասացին, եւ ըզփառաց անուն լուան եւ գնացին տրտմութեամբ: 49 Կալ մնալ երկու աւուրս՝ զգալստեան ժամանակս առ նախահարս բացայայտէ. կամ վասն յանդիմանութեան մոլեգնոտ հրէիցն, զի հրապարակատէս եւ լուր աշխարհի լիցի մահն, զի աստուածագործ հրաշքն պայծառագոյն երեւեսցին:

50 Սիրէր Յիսուս զՄարիամ եւ զՄարթայ եւ զՂազար եղբայր նոցա: 51 Ըստ այնմ որ առակողն ասէ ի դէմս Քրիստոսի. ես որ զիսն սիրեմ, սիրեմ եւ բաշխեմ պարգևս բարեկամաց իմոց^բ: 52 Զի մինչ Տէր յեգիպտոս իջանէր, սոքա յառաջ ժամանակաւ գնացեալ էին յԱդրիանուպալիս քաղաք, եւ բազում սիրով բնաւորեալ, Բարձողն մեղաց բոլորից զսկզբնակիցն Հաւր

զՄիածինն բարձին ուսովք եւ կրեցին բազկաւ զկրողն ամենայնի, եւ ի դառնալ յեգիպտոսէ Տեառն, եւ սոքա ընդ կուսին Մարիամու եւ Յովսեփու եկին ի Բեթանիա:

53 Եւ Յիսուս ասէ ցաշակերտսն. եկայ՛ք երթիցուք ի Հրեաստան^բ: 54 Եկն եւ անդ երկեղ մահունն եւ չարաչար տագնապեցոյց գնոսա քան զքորսն Ղազարու:

55 Զի՞ այդչափ զարհուրեալ էք եւ դողայք. ապաքէն ելանելոց էք ի մարմնոյդ, որ լուայք ի Տեառնէ. Մի՛ երկնչիք յայնցանէ, որ սպանանեմ զմարմինն, եւ զհոգին ոչ կարէ սպանանել^բ: 56 Դա զհոգի եւ զմարմին ապրեցուցանէ ի մահուանէ, զի ոչ էր իսկ սովորութիւն ծանուցանել նոցա զտեղին, ուր երթալոց էր:

57 Տէ՛ր, ասեմ, հրեայքն ինդրեմ սպանանել զբեզ, եւ դու ա՞նդր երթաս: 58 Զաշակերտսն այսր անդր տարաբերէր, ոչ կամեցաւ զխորհուրդն յայտնել նոցա, զի տեսին զնշան յարութեան, եւ ոչ հաւատացին:

59 Զերկոտասանամեայ աղջիկն զՅայրոսին դուստրն յարոյց եւ զորդի այրւոյն ի Նային քաղաքին: 60 Որ զի մեռեալ կարէ յարուցանել, նա զամենայն ննջեցեալսն. թէ զայլոց մահ հալածական արար, առաւել եւս՝ զձերդ: 61 Ի լերինն Թափովր ի Հաւրէ լուայք. Դա է իմ սիրելի Որդի, դմա՛ լուարուի՞ք, բայց դուք փոխանակ նմա լսելոյ, հրաման տայք նմա, մի՛ երթալ ի Հրէաստան. զՂազարայ խորհուրդ եթէ յայտնեալ¹ էի ոչ հաւատայիք վասն ձեր տկար մտաց:

^բ Տէ՛ր Յիսուս յԵւ 7:
^գ Մարթ. յԵ 28
^դ Ղա. 4. Թ 35

¹ Յատաչիմ օրին. զՂազարու յարութեան զխորհուրդն ՚ի վեր հանեալ էր ձեզ, դու՛ր ոչ հաւատայիք

^ա Եւ. 4. Բ 17

62 Իսկ Յիսուս ասէ, երկոտասան ժամ է աւուրս: 63 *Ջբոլոր աւրն յայտնէ. զի աւր Տեառն որով խաւար կռապաշտութեան լուծանի, որ նովաւ գնան, աւրն լոյս ասի ըստ Եբրայեցի բանիբանիցն. եւ լոյս, Քրիստոս, որ լուսաւորէ:*

64 Որ գնայ ի տունընեան ոչ գայթակղի. որչափ առաւել¹ ձեզ ընդ իս գոլով, որ լոյս եմ աշխարհի: 65 *Մի՛ գմարմնոյ աչաց տեսիլդ, ասէ, իմասցիս եւ որ է երկեզ մարդկան եւ ամենայն կենդանեաց, տկարքն դողան ի հզաւրագունիցն. այլ ես զի հաւատոյ տեսութենէն ասեմ, որ զառյապայն առժամայն տեսանէ. որ զայն տեսութիւնն ոչ ունի ի հոգւոջն, թէ եւ ի միջաւրեայ գնայ՝ գայթակղի, զի զխաւար հանապազ ընդ իւր ունի:* 66 *Սակաւիկ մի կրթելով զմիտս նոցա ընդ բանս արկ զաշակերտսն, մինչեւ մեռեալն ի գերեզման էջ:*

67 *Ապա ասէ. Ղազար բարեկամ մեր ցնջեաց, երթամ գարթուցանել զնա:* 68 *Իբրեւ տղայոց կաթն ջամբես, մայրաբար ծնանիս, եւ դայեկաբար սնուցանես, եւ զտգիտութիւնն նոցա իմաստութեամբ ծածկես. ե՞րբ էիր դու սնեկապետ Ղազարու, որ երթաս զարթուցանես զնա, երկու աւուր ճանապարհաւ հեռի. մի՞թէ յանապակ ըմպելեաց թմրեալ իցէ. կամ ո՞ք չորս տիւ եւ չորս գիշեր ի քուն լինի. քոյրքն նորա ընդէ՞ր ոչ զարթուցանեն:* 69 *Գառնիք անմեղք էին աշակերտքն, զոր ինչ տեսանէին՝ զնոյնպէս գիտէին, եւ զոր ինչ լսէին՝ նմին եւ հաւատային. յաստուածային խորհուրդն հասու լինել ոչ կարէին:* 70 *Աստ յայտնէ զգնալն ի Բեթանիա եւ ոչ յԵրուսաղէմ, զի գերկեղն ի մտաց նոցա փարատեսցէ, այլ զարթուցանելովն զինաման, որ առ Ղազար, յայտնէ:*

71 Տէր, եթէ ցնջեաց, ապա ապրի: 72 *Բագում հիւանդք ննջեն, եւ ոչ ապրին, եւ իցեն, որ ոչ ննջեն, եւ ապրին:* 73 *Ո՞*

փաղաքշանք տգիտացն, զծածկատեսն կամէին սփոփել. գիտէին աշակերտքն, թէ սիրէ Տէր մեր զՂազար անմեղ, եւ ոչ կամէին թէ վիշտ հասցէ ընտանեաց նորա: 74 *Աշակերտքն զննջելն ապրելոյ եւ առողջութեան վարկանէին. Տէրն մերկացաւ զծածուկ խորհուրդն եւ յայտնապէս ասէ. Ղազար բարեկամ մեր մեռաւ:* 75 *Ջի մի՛ յանկարծակի ընդոստիցեն ճչելով կամ կոծելով:* 76 *Իսկ Յիսուս ասէր՝ մեռաւ, որով ըմբռնեալն էր ազգ մարդկան, այսինքն՝ աւրինաւքն. զի Քրիստոսիւ փոխելոց էին յանմահութիւն, յարութեամբն Ղազարու, որ էր գաղափար հանդերձելոցն:*

77 Ես ուրախ եմ վասն ձեր, զի դուք հաւատացեալք, զի ես չէի անդ: 78 *Պատիպատ խաւսք, որ ոչ կարացին ի վերայ հասանել իրին. մահու անուն եւ ուրախութեան ի լսելիս նոցա հոչակեցաւ, եւ զարմացմամբն ոչ կարէին հասու լինել վասն երկշաւիղ բանիցն. բայց երկչոտն Թոմայ տեղեակ առնէ զմեզ վասն տխմարութեան նոցա:* 79 *Ոչ ի պարծանս ինչ յարուցանեմ զնա, այլ վասն ձեր հաւատոցդ հաստատութեան. ուրախ եմ, զի առնուցուք զչափ իմոյ զաւրութեանս:*

80 Ասէ Թովմաս, եկա՛յք, զի եւ մեք մեռցուք ընդ ցմա: 81 *Սա երթայ զմեռեալն յարուցանել, եւ մեք կենդանիքս պատրաստիմք ի մահ, քանզի տարակուսեալ էին յայս տեղւոջս:* 82 *Երկրագործ մշակաց դիւրագոյն է զկորդացեալ երկիր վարել, քան գիտնոց զտգէտսն ածել ի հաւանութիւն. երկրագործ սակաւ աշխատի ընդ ամեհի երկիրն, եւ բագում պտղոց ակն ունի, իսկ մարդ կոյր՝ տգիտութեամբ, Աստուծոյ միայն է կարողութիւն ի գիտութիւն ածել:* 83 *Որչափ թերահաւատութիւնն զաւրանայր, յամենայն կողմանց ուրախութիւն լինէր. զբոլորիցն անհաւատութիւնն հայրենի զաւրութեամբ հզաւր գործեաց:*

84 Եկն Յիսուս եւ եգիտ զՂազար չոքեալուրայ ի գերեզմանիցն: 85 *Ջի մերձ էր*

1 Յօրինակիմ՝ առաւ

գիւղն յերուսաղէմ, եւ սուգն մերձ էր յուրախութիւն եւ ի խաղաղութիւն:

86 Ասպարիսաւ հնգետասան. ասպարէսն երկու մղոն է ճանապարհի, մինչ յերուսաղէմ: 87 Ի ծննդենէն կրկին թուաւք մինչեւ ի խաչելութիւնն՝ երեք հնգաշարժ զգայութեամբ, տեսանելեալք, լսելեալք, հոտոտելեալք, ճաշակելեալք եւ շաւշափելեալք: 88 Զորս միացոյց ընդ իւր էութիւն, որ համբարձաւ յերկինս, ընդ նմին յարոյց եւ ըստ նմին նստոյց ընդ Հաւր:

89 Բագուս՝ ի հրէիցն եկեալ էին առ Մարթայ եւ առ Մարիամ^ա: 90 Գալն աստուածային տեսչութեամբն իմանի գոլ, զի տեսողք լիցին աստուածագործ նշանացն. զի ոմանք աւգտեցան հաստատելով ի Քրիստոս հաւատով խարսխեալ:

91 Զի միտքարեացն զնոսա: 92 Ագարակն քաղաքացեալ էր, եւ քաղաքն ագարակացեալ, բոլոր ամբոխ քաղաքին եկեալ էին ի վիշտն. զի է բնութեան սովորութիւն զբաւթ սիրեմք լսել գայլոց, եւ մտանել ի տուն սգոյ քան ուրախութեան. ոմն ի կտտութիւն եւ ոմն յոտնհարութիւն, եւ յուրովք ի շատխաւսութիւն. սակաւք լինին կցորդք տրամութեան, զի ի մէջ երուսաղեմի գործելոց էին գաքանչելիսն:

93 Մարթայ իբրեւ լուաւ, թէ Յիսուս գայ, ընդ առաջ զնաց նմա: 94 Մարթայ յառաջանալ ըստ աւրինացն եւ մարգարէիցն, որ գուշակեալ ցուցանելոց էր զՔրիստոս Փրկիչ աշխարհի: 95 Մարիամ անդրէն նստէր ի տանն. մինն եղեւ իբրեւ զբան բերանոյ, եւ միւսն իբրեւ զսիրտ շտեմարան խորհրդոյ. սիրտն ի տեղւոջն հաստատուն եկաց, եւ բանն յառաջ ընթացաւ պատմել ըզպաղատանս սգաւոր սրտին ի լսելիս այնորիկ, որ կարող էր բառնալ զսուգ ի տանէ սիրելեացն իւրոց:

96 Մարթայ, որ է բան, զիտաց թէ ամենայն մխիթարիչքն, որ ժողովեալ էին՝ նոցա անձինքն լի են տրամութեամբ. տրտում զտրտում ոչ կարէ զուարթացուցանել, եւ սգաւոր զսգաւոր ոչ մխիթարէ:

97 Մինն ասէր, մի տապիր եղբայր իմ վաղ մեռաւ տղայ, եւ այլքն ըստ իւրաքանչիւր կարեւորացն ասեն զմահն տարածամ եւ զսիրտն բեկանեն, եւ զաղիսն գալարեն, վայ ի վերայ վայի: 98 Զայս ամենայն եթող Մարթայ եւ ասէ ցՅիսուս. Տէր, աստ լիեալ էիր դու, եղբայրն իմ ոչ էր մեռեալ:

99 Մարգարէացաւ Մարթայ, որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի՝ զվարձս մարգարէի առցէ, իսկ որ զԱստուած ընդունի՝ զփառս աստուածային ժառանգէ:

100 Երկնաւոր իմաստութեամբն ասաց գայս, եւ յաստուածային փառսն վերացաւ. զի ուր կենդանութիւն է՝ անդ մահ ոչ մտանէ: 101 Տէրն բազում անգամ մտեալ էր ի տունն Մարթայի եւ Մարիամու, եւ զմահն ի գեղջէն հալածական առնէր թող թէ ի տանէն: 102 Իմաստութիւն հոգեւոր, եւ սէր աստուածային, եւ հաւատք ճշմարիտ, եւ ստոյգ մարգարէութիւն. չորք եղբարք են հարազատք. քանզի մի է շարժողն սոցա Աստուած: 103 Որպէս արուեստաւորն մի բերան փչէ յերգիտնն, եւ բազում փողքն, ոմն՝ ոոսկ, ոմն՝ թաւ, ոմն՝ թանձրագոյն մի ձայն ասի. այսպէս եւ Մարթայ եւ Մարիամ եւ Ղազար եւ թէ այլ ոք էր ի տան նոցա, մի հաւատք էին ամենեցուն, մի սէր սիրեցին զՔրիստոս, մի հոգեւոր իմաստութիւն էր ամենեցուն:

104 Արդ գիտեմ գոր ինչ խնդրես տայ քեզ Աստուած: 105 Մարգարէացաւ կինն, ոչ զմիոյ մեռելոյ յարութիւնն, այլ զդարուցն կարող ես յարուցանել կամակեցութեամբ Հաւր եւ Հոգւոյն: 106 Տէրն ասէր. Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հաւրէ: 107 Այս զմիտս լսողացն հաստատէր:

^ա Տէ՛. Թ.Վ. Ժ. Կ. 45:

է՛ Ղ.Վ. Ժ. 22

108 Եւ ոչ ոք գիտէ զձայր, բայց Որդի, եւ ոչ ոք գիտի նախաչէ, բայց Հայր^ա: 109 Այս բան զմիակամութիւն եւ զմի բնութիւն ցուցանեն, եւ ոչ երիցութիւն՝ եւ կրսերութիւն. վասն այսորիկ Քրիստոս հաճեցաւ ընդ հաւատս Մարթայի:

110 Ասէ ցնա Յիսուս, յարիցէ եղբայրն քո: 111 Տէրն յայտնեաց նմա զառաջին յարութիւն եղբաւրն իւր եւ գլխորդն: 112 Ոչ պէտք են աղաչանաց, եւ ոչ կարծիք հայցուածոց որպէս ոմանց թուի:

113 Գիտեմ զի յարիցէ յարութեանն յաւուրն յետնումն: 114 Դրունք երկնից բացան կնոջն. զինքնածագ լոյսն ետես կինն աչաւք, յանմատոյց տեղին եհաս, որդւոյն Ձեբեդեայ հաւասարեաց, ոչ զամբնոյ լանջաւքն Քրիստոսի անկաւ, այլ իմաստութեամբն² զաւրացաւ յԱստուծոյ, զբանն կենաց շաւշափեաց, ի կեանս Աստուծոյ փոխեցաւ, մտաց աչքն բացան, լուսաւորեցաւ ներքին մարդն, եկն արտասուաւք, լցաւ ծաղու: 115 Վշտացեալն բերկրեցաւ, զուարթացաւ գոյն երեսացն, աւետիս լուաւ յարութեան, մինչ չեւ յարուցեալ ետես զեղբայրն, զի զկենդանացուցիչն ետես ամենայն մեռելոց:

116 Եւ իսկ եմ յարութիւն եւ կեանք: 117 Եգիտ յարոյց զմեռեալս, եւ դարձեալ մեռան. Եղիսէ երկուս: 118 Ես յարուցանեմ եւ կեցուցանեմ յանմահութիւն: 119 Որ հաւատայ յիս, թէպէտ եւ մեռանի, կենդանի է, եւ որ հաւատայ յիս՝ մի նաշակեցէ զմահ յաւիտեան, որպէս ի մաւտոյ տեսանելոց ես: 120 Այսպէս եւ յիս հաւատացեալքն փրկին ի յաւիտենից մահուանէն. զի յոյժ բարձրագոյն ճառեաց Փրկիչն, վասն այսորիկ զվարձ վարդապետութեանն խնդրեաց ի նմանէ. Հաւատա՞ս այսմիկ զոր լուար. թէպէտ երկշաւիղ էր

բանն, սակայն յուսայր նա, ասէ. Այո, Տէ՛ր, եւ հաւատացի թէ դու եւ Քրիստոս Որդի Աստուծոյ, որ յաշխարհ գալոց էիր: 121 Ձմարգարէիցն բանն երկրորդեաց, որպէս շամարտացի³ կինն ասաց. Յորժամ Մեսիայ գայ, նա պատմեցէ մեզ զամենայնէ: 122 Ասաց զկուսական ծնունդն, եւ ակնարկեաց զերկրորդ գալուստն, զամենայն ինչ տեղեկացաւ եւ զմեծամեծսն Աստուծոյ լուաւ: 123 Եկն իբր մարդ տրտում, եւ գնաց իբր հրեշտակ Աստուծոյ ուրախացեալ, կոչեաց զքոյր իւր լուսեայն, աշակերտեաց ի նոյն վարդապետութիւն հեշտակամ, դիւրահաւան ակնարկելովն վասն հրէիցն, զի եւ քոյրն զնոյն մաղթանսն արկցէ առաջի՝ ի գուրթ ածելով զՔրիստոս վասն եղբաւրն կենդանութեան. եւ Մարիամ զնոյն բանս քեռն երկրորդէր, ասէ. Վարդապետ եկեալ է եւ կոչէ զմեզ: 124 Արդարեւ ճամարիտ վարդապետ, առանց ալփափատաց ուսուցանէ, զամենայն պէտս դպրութեան կատարէ. ասաց վարդապետ, եւ ինքն եմուտ ի կարգ աշակերտացն:

125 Իբրեւ լուաւ յարեաւ վաղվաղակի եւ եկն առ Յիսուս. ի նոյն տեղի եւ ի նոյն ուրախութիւն, առ նոյն ուսուցիչն. զոմն՝ ի ծածուկ եւ զոմն յայտնի ձգեաց զերկուսեանն ի սգաւոր աշխարհէս յանտրտում ուրախութիւն կենացն: 126 Յիսուս չեւ էր եկեալ ի գեղն. այլ կայր ի տեղւոջն, ուր ընդ առաջ եղեւ նմա Մարթա: 127 Է՞ր վասն արգելոյր զինքն եւ ոչ փութապէս գայր ի գերեզմանն, այլ զի ի հասանել համբաւ գալստեան նորա, զի ատեան գործեսցէ ժողովրդեանն, եւ ամենայն ոք ճեպեսցի առ ի տեսանել զսքանչումն աստուածագործ նշանացն. զի ի լուս մարդոյն ի պատուիրանապահութեանէն Աստուծոյ, լուէր եւ աստուածագործ հրաշքն

^ա Մաթ. Ժ. Գ. 32

1 Մի օրին. իրիցութիւն

2 Մի օրին. միամտութեամբն

3 Մի օրին. շամրտացի

է Յով. Գ. 24

յերկրէ: 128 Եւ մերկացաւ մարդն յաստուածատուր փառացն վասն յանցանացն. աստ յաղագս Ղազարու զհրամանն Աստուծոյ պահելոյ, կենագործէր ի գերեզմանէն: 129 Իսկ հրեայքն, որ եկեալ էին մխիթարել զնոսա, ինքեանք թափուր յերկնային յուրախութենէն մնացին, սգով թաղծեալ նստէին ի տան, յառաջին յարտասուան շաղախեալ¹, եւ նովին տրտմութեամբն. Իբրեւ տեսիմ զՄարիամ, զի յարեաւ, զնացիմ եւ նոքա զհետ: 130 Ոչ առ ի յարութեանն տեսութիւն, այլ ՚ի գերեզման մեռելոյն: 131 Զի որում տուեալ է յաւելցի, եւ որում ոչ է տուեալ, եւ գոր ունի, հանցեմ ի նմանէ՞ : 132 Ոչ առ ազահութիւն տուողին, այլ վասն անարժանութեան ընդունողին, որպէս առաքելաւքն եւ Յուդաիւ տեսանի:

133 Համարէիմ թէ ի գերեզմանն երթայ, զի լացցեմ անդ²: 134 Զի հանապազ գերեզմանասէրք էին, ոչ միայն զմարդիկ մեռեալ, այլ եւ զսուտ Աստուածս ասէին մեռեալ. եւ նստեալ լայիմ զԹամուզ³, մարգարէն ասէ:

135 Եւ Մարիամ եկն առ Յիսուս: 136 Մարիամ ի նոցանէ մերժեցաւ, եւ եկն առ այն, որ յառաջն ճանաչէր, թէ որ զբազում մեղս իմ եթող ճրի, կարող է զծանր տրտմութիւնս փարատել²: 137 Անկաւ առաջի ոտիցն Յիսուսի եւ ասէ. Տէ՛ր, աստ լիեալ էիր, եղբայրն իմ ոչ էր մեռեալ: 138 Միոյ զպրոցի մանկունք, մի լեզու խաւսէին, միաբան ըստ վարդապետին կամացն յորդորէին յուսումն աստուածային:

139 Նոյնպէս եւ երկու քորքն ի մի որս կենդանիքն³ ըմբռնեցան, զմի սէր սիրեցին զՏէրն, ի մի աղբիւրէ արբին զՉուրն կենդանի, տեսին մարդացեալ զԱստուած, հաւատացին ի Տէր բոլորից: 140 Թուի թէ խորհեալ էին ածել զՅիսուսն եղբաւրն ի կենդանութիւն գործել, յերկուցն միաբարբառ լինի վասն մերձաւոր մեռելոյն ասելով՝ Տէր, թէ չէիր անտես արարեալ զազգ մարդկան, ոչ մեռանէին զմեղացն մահ: 141 Զի մեք մեղաք եւ դու բարկացար⁴, ասէ ոմն ի մարգարէիցն՝ առ ի պարկեշտութիւն վարուց եւ ի սքանչելի խրատուցն:

142 Յիսուս ետես զնա զի լայր, եւ որ ընդ նմայն էին լայիմէ: 143 Յաշխատել մարմնոցն բխեն քրտունքն, եւ ի զայրագին սրտէ հեղուն արտասուս ի վերայ մեռելոյն, եւ ի կենդանի սիրելոյ յորժամ ի հեռաստանէ եկեսցէ: 144 Ետես Մարիամ զՅիսուս, եւ երկունք զթոյն ստիպեցին զնա յիշատակաւ մեռելոյն, այլ ոչ ճշեաց ըստ աշխարհիս կարգաց, այլ ցնծութեամբ եհեղ զարտաւար առաջի ողորմածին. այնչափ աղիողորմ տեսեամբ, մինչեւ զհրեայսն բարձրակական լացոյց: 145 Խռովեցաւ ի հոգի, իբր թէ ամենայն զաւրութեամբ տրտմեցաւ. ոչ կարաց պարզաբար ասել ուր եղիք, այլ մոնչելով ասէ, կիսաբան տրտմակից ի վերայ սիրելոյն: 146 Յորդահոս անձրեւաց առատաբեր լինին անդք, եւ բուսուցանեն դաւարիս արաւտականաց, նոյնպէս եւ յորդ արտասուք մարդկան ի գուլթ ածեն զԱստուած: 147 Եղեւ կցորդ սգոյ նոցա, զի լիցին մարդիկ մխիթարեալք յԱստուծոյ: 148 Կամ մոնչեաց ի վերայ Սատանայի որպէս առիւծ ի վերայ որսոյ, զի ոչ ստուգապէս կարէին շարժել զնա տրտմա-

1 Մի օրին. շաղեալ
 * Մ․․Գ․ ԺԳ․ 22
 † Յ․․Վ․ ԺԸ․ 31
 ‡ Ե․․Է․ Ը 14

2 Հրատ. ծանուցում է. Աստ հակառակարանէ գրիչն, զի յառաջագոյն յերես 56 այլ է. ասաց գայս Մարիամ ՚ի մեղաւոր կնոջէն, գոր երեք աւետարանիչք յիշատակեն, եւ այժմ նոյն համարի զսա, որպէս եւ յերեսն 75:

3 Այլ օրին. ՚ի մի որս կենդանի երկնաւոր ըմբռնեցան
 4 Ե․․ ԿԳ․ 5
 † Յ․․Վ․ ԺԸ․ 33

կանքն, որպէս զմեզ յաղթահարեն մարմնոյ շարժմունք, զի աստուածային բնութիւն անախտ եւ անտրտում է, այլ խռովելն նշանակէ, թէ հրաման ետ տրտմութեանն գալ եւ բխել զարտաւսրն կամաւորաբար: 149 Յուցանէ թէ յորժամ կամէր զիջանէր յայնոսիկ ի բնական կիրսն, յայտնելով զճշմարիտ մարդեղութիւնն, զի թէպէտեւ Աստուած միացաւ ի մարմնի, այլ ոչ ետ շարժել մարմնոյն ի բնական կիրսն, այլ յորժամ թոյլ տայր իջանէր ի կերակուր եւ յըմպելիս եւ ի քուն, եւ յորժամ կամէր անցանէր, որ բնութեանս գեր ի վերոյ, պահէր զինքն աստուածային միութեամբն:

150 Ասէ ո՛ր եղի՞ գնա, ասեմ՝ ե՛կ եւ տես: 151 Ոչ անգիտութեամբ, որպէս Հայր նորա հարցանէր. Ո՞ւր ես Ադամ՞, եւ ցԿային՝ Ո՞ւր է Աբել եղբայր քո՞, եւ ցՄովսէս՝ Զինչ է այդ, որ ի ձեռնիմ քո է՞: 152 Խնդրէ Արարիչն զիւր պատկերն, որ ըստ պատկերի իւրոյ արար զնա, եւ չարն նախանձեցաւ ընդ բարւոյն Ադամայ, եւ ընկէց զնա յերանելի կենացն. Տէրն եկեալ որսայր զմարդկան փրկութիւն: 153 Ի բեթանիայէ մինչեւ ի Բաթաբլէ եաւթանասուն եւ երկու մղոնք են, յայնչափ հեռաստանէն գիտացեր զմահն Ղազարու, եւ մաւտ ի կարմջիղ անգիտանա՞ս: 154 Դի եղիք դուք, եւ ես կենդանի առնում զնա, դազաղաւք տարայք, եւ ես ձայնիւ յարուցանեմ: 155 Ապա զիա՛րդ հարցանես, Տէր. ասէ, աստուածային հրաշս գործելոց եմ աստ ի տեղւոջս, գուցէ զրկեսցին մարդիկ: 156 Երկու կողմանց զգուշանայ՝ հոգւոց եւ մարմնոց, վասն զի Աստուած էր մարդացեալ, այլ զի ինքեանք ցուցցեն եւ վկայ լիցին մեռելոյն եւ տեղոյն: 157 Արտասուեաց Յիսուս: 158 Մարմնոյն ոչ

միայն աչքն արտասուեն, այլ բոլոր մարմինն քրտնի, որով Տէր մեր բազում անգամ վարեցաւ յաշխարհի, մինչեւ ի նուազագոյն պէտս, զի զազակցութիւնն իւր ի մեր՝ վշտակցութիւնս ցուցցէ: 159 Դարձեալ զի սահման եւ կէտ զայն վարդապետէ, այնքան արտասուել հաւատացելոց, որք զյարութեան յոյս յինքեանս ունիցի: 160 Դարձեալ զի տեսանելով զմեռեալն, պարտ է արտասուել ի վերայ մարդոյն, որ ի սկզբանէ ժառանգեցոյց ազգի մարդկան: 161 Կամ ի վերայ հրէիցն արտասուեաց, որ յետս կալոց էր յաստուածագործ նշանացն թերահաւատեալք, եւ գեհնոյն ժառանգ լինելոց էին. Հրեայքն, ասեմ, տեսէ՛ք որչափ սիրէր գնա, զի իմեամբ արտասուեաց. կէսքն ասեմ, ո՞չ կարէ սա, որ երբաց զաչս կուրիմ, առնել զի եւ սա մի՛ մեռցիք: 162 Դուք սովոր էք հայհոյել, որ զծովն բարձանեաց եւ զբազում նշանս արար, հայհոյեցէք եւ ոչ գոհացայք զԱստուծոյ, եւ անասնոց փոխանակեցէք. եւ ի Մովսէս երգմամբ ուրացայք: 163 Որ ընդ ծովն ճանապարհ արար, զբոլոր ժողովուրդն ի բերանոյ սրոյն Փարաւոնի ապրեցոյց, չկալայք շնորհ, զի վասն կուրին բժշկութեան շնորհակա՞լ լինիցիք: 164 Հոգի կուրին կենդանի էր եւ շարժէր զմարմինն, եւ աչք կուրին մեռեալ էր. շունչն ի մեռեալ մարմինն ոչ բնակէր, եւ ոչ լոյս արեգական՝ ի մեռեալ աչս². թէ զմեռեալ աչս կենդանացոյց, եւ զլոյսն հրաժարեալ անդրէն դարձոյց, ապա եւ զբոլոր մարմինն կենդանի առնէ: 165 Բայց դուք ի կամս ձեր յաճախեցէք ի հայհոյութիւն. թերեւս ի նմին տեղւոջ ամաչէք, յորժամ բազումք ի ձէնջ փառաւոր առ-

« Ծն. Գ. 9

բ Ծն. Գ. 9

գ Եւ. Գ. 2

1 Այլ օրին. ՚ի վեր

բ Տէ՛. Թ. վ. Ժ. Լ. 36-37:

2 Յօրինակին շունչն ՚ի մեռեալ մարմինն բնակէր, իսկ լոյս արեգական ՚ի մեռեալ աչս ոչ բնակէր. գոր յայլ օրինակաց ուղղեցաւ

նէին զիմ Աստուածութիւնս ի վերայ մեծամեծ սքանչելեացն, զոր տեսանելոց են:

166 Յիսուս դարձեալ զայրացաւ ի միտս իւր^ա: 167 Անդ ասէ, թէ խռովեցոյց զանձն իւր կոչելով յինքն զարտաւարն, եւ աստ սաստէ¹ բնութեանն դադարել ի շարժմանէ տրտմութեանն, զոր կոչեալ խռովեցոյց:

168 Յիսուս գնաց ի գերեզմանն Ղազարու, եւ էր այր մի եւ վեմ մեծ եղեալ ի վերայ այրինէ: 169 Սովորութիւն էր առաջնոցն ամբացուցանել զգերեզմանս, վասն զի հեռի էր ի նոցանէ յոյս յարութեանն: 170 Ձայս՝ կեանք համարէին, եւ զայն՝ դառնութիւն մահու, յիշատակ մեռելոյն զշիրիմ համարէին, եւ զանուն մեռելոյն ի վերայ գերեզմանին փորագրէին, եւ Մովսէս ակամայ թոյլ տայր սովորութեանն²: 171 Եղբայր անորդի մեռեալ, առնոյր զկիմն եղբայրն, եւ յարուցանէր զաւակ յանուն մեռելոյն վասն ժառանգութեան երկրին վիճակելոյ³: 172 Կամ վէմն կափարիչն նշանակէ զսատանայ, որ ի վերայ դժոխոցն զհոգիսն փակեալ ընդ իւրով իշխանութեամբն պահէր:

173 Յիսուս ասէ. Ի բաց առեմ³ զվեմդ ի բերանոյ այրոյդ: 174 Յորմէ երկիր դողայ, եւ լերինք հալին, վասն փոքր մի վիմիդ աւգնակա^ոն խնդրես ի մարդկանէ: 175 Վկայ կոչեմ յարութեան, դո՛ւք առէք զքարդ ի վեր, եւ հայեցարո՛ւք ի գերեզմանդ. աչք ձեր վկայ լիցին, եւ թիկունք՝ ծանրութեան վիմիդ, եւ Հոտ նեխոյդ՝ ռնգացդ, որ ի մաւտ կայք ամենեքին: 176 Գիտէր զնոցա չար սովորութիւնն. յամենայն կողմանց զգուշանայր արգելուլ

զհայհոյութիւնն: 177 Զի՞նչ պէտք էին բառնալ զվէմն, որոյ հրամանաւ դժոխք փոխելոց էին զմեռեալս: 178 Այլ վասն ժխտող հրէիցն, թէ զսքանչելիսն ուրանան, ձեռք նոցա դատախազք գտանին՝ յանդիմանելով զնոցա թերահաւատութիւնն: 179 Կամ վէմ՝ զբուռն ծանրալուծն սատանայ պահակն մեղաց, որ արգելեալ պահէր ընդ մահու իշխանութեամբ զմեղաւորսն: 180 Տէր բառնայ զվէմն, զբռնակալութիւն դիւացն, զի դիւրաւ յարիցեն ի մեղացն մարդիկ զկնի Քրիստոսի գալստեանն:

181 Ասէ Մարթայ բոյր մեռելոյն, Տէր, արդ հոտեալ է: 182 Նախաստեղծին բերէ աւրինակ, եւ մեռելութիւն եւ նեխութիւն ըստ մարգարէին: 183 Նեխեցան եւ փտեցան վերք իմ^ա: 184 Եւ այլ մարգարէքն ամբաստանեն վասն ազգի մարդկան, զմեղացն ժահահոտութիւն բացայայտեն Արարչին, իւրաքանչիւր ըստ իւրում բանին, զի ամենայն աշխարհ առ հասարակ նեխեալ էր: 185 Հոտ նեխոյ մարդոյ գայ ի մեռելոյ, իսկ Աստուծոյ՝ ի մեղաւորէն, իսկ Աստուած յիւր անուշահոտութենէն համեմաց զամենեսեան: 186 Մշակին ոչ գոյ Հոտ նեխոյ ի սերմանեացն, զի լի են միտք իւր խնդութեամբ, զի պարարեալ են խելք ի Հոտոյ անդաստանաց իւր, եւ յիսահակ ասէր. Հոտ որդոյ իմ, որպէս անդաստանի լիոյ⁴:

187 Քանզի չորեքուրեայ է: 188 Զչորեքնիւթեան բնութիւնս⁵ մարդկան, թուի թէ զչորեքեզերեան աշխարհս նշանակէ, զի ամենեքեան մեղան եւ նուազեալ են ի փառացն Աստուծոյ: 189 Բազմաւերեայք

^ա Յովհ. ԺԼ 38
¹ Յայլ օրին. ասէ
^բ Տէ՛ր Յովհ. ԺԼ 38:
² Յայլ օրին. եւ Մովսէս ակամայ ՚ի տարւոջ անդ խոնարհի ՚ի սովորութիւն առաջնոցն
^գ Հմմտ. Մատթ. ԻԲ՝ 24:
³ Յայլ օրին. արարեմք

^դ Մատթ. ԼԷ՝ 6
⁴ Յայլ օրին. որում եւ սակաւիկ մի ետ վկայութիւն եւ Խահակ ՚ի գննել իւրում եւ յօրհնել զՅակոբ: Այլ օրին. ՚ի գննել իւրում զԵսաւ եւ զարդարութիւն տա Յակոբայ
^ե Ծն. ԻԲ՝ 27
⁵ Այլ օրին. բնութեանս

ընդ չորեքաւրէին յարոյց Քրիստոս ի մեղացն ապականութենէ:

190 Ասէ ցնա Յիսուս՝ հաւատա՛ եւ տեսցես զփառս Աստուծոյ: 191 Ո՛վ Մարթայ. այտի բուսանելոց են անապական՝ կեանք մարդկան, միայն հաւատա՛ յԱստուած, եւ հարկանի քեզ հոտ անուշ կենդանի, եւ զփառսն Աստուծոյ տեսանես, եւ պապանձին բերանք հայհոյիչ մարդկան, յորժամ զչորեքաւրեայդ մեռեալ կենդանի տեսանիցեն՝ ի հրապարակիդ. աղ է դա անուշացուցիչ է ամենայն հարեալ մարմնոյ, եւ լոյս է դա թափանցիկ կուրացեալ աչաց, եւ ձայն է խլացեալ ականջաց, զոր գործով առ եղբայր քո տեսանես, եւ մտաւք զփառսն Աստուծոյ իմանաս:

192 Իբրեւ ի վեր առին զվէմն: 193 Մինչ չեւ զվէմն ի վեր առեալ էր, Ղազար յարուցեալ էր ի գերեզմանէն. ոչ է արժան գերեզման ասել, այլ յարութիւն անուանել:

194 Ամբարձ գաչս իւր յերկինս: 195 Մինչ չեւ գաչս Յիսուսն յերկինս համբարձեալ էր, զՀայր տեսանէր:

196 Հայր գոհանամ զբէն, զի լուար ինձ, գոհանամ զբէն, Հայր զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ի գիտնոց, եւ յայտնեցեր տղայոց անմեղաց: 197 Մինչ չեւ ձայնիւ կարգացեալ էր, Հայր լսէր նմա յամենայն ժամ:

198 Ամաչեսցէ Թէոդորիտոս է նմանք նորա հերձուածոցն, որ ասէր, թէ ոմն կարդայ եւ ոմն լսէ. բան լի յիմարութեամբ. ո՛վ անիրաւ: 199 Ի տան քահանայապետին յարոյց զգուստրն նորա ի մեռելոց, ոչ աղաչեաց եւ ոչ յերկինս հայեցաւ, եւ ոչ առ Հայր կարդաց. հայեցաւ ի մեռեալն եւ ասէ. Տալիթա կումի, աղջիկ դու քեզ ասեմ արի՛ կաց. եւ կանգնեցաւ ողջ՞, նոյնպէս եւ

ի Նային քաղաքի բազում ամբոխ էր, եւ ոչ ոք թախանձեաց զնա, եւ ոչ առ Հայր կարդաց, ձեռն միայն ձգեաց ի դագաղսն, եւ մեռեալն կանգնեցաւ^է, նոյնպէս եւ յայլ նշանսն: 200 Ուր անձամբ առնէր՝ զաստուածային զաւրութիւնն ցուցանէր, ուր առ Հայր աղաչէր՝ զսիրելութիւն ցուցանէր, քանզի երանելի բնութեան Սրբոյ Երրորդութեանն բնութիւնն, անսահմանելի միապէս յերիս անձինսն, ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգին Սուրբ: 201 Իսկ յատկութիւնն յիւրաքանչիւր յերեսս բաժանին եւ ի դէմս, քանզի բնութիւն երիցն այս է: 202 Տէր Աստուած ամենակալ ամենախնամ, արարիչ անիմանալի, անպարագրելի, անորակ, անքանակ, անուր, աներբ, ոչ սկսեալ եւ ոչ դադարեալ: 203 Իսկ առանձնաւորութիւն Հաւր՝ ծնող, եւ պատճառք, անսկիզբն եւ սկիզբն, եւ ոչ սկսեալ յումեքէ, առաքող, ոչ ծնեալ յումեքէ եւ ոչ արարեալ³ կամ յինքենէ կամ յայլմէ ումեքէ: 204 Իսկ Որդւոյ առանձնաւորութիւնն՝ Որդի, Բան, ծնունդ, լոյս, կերպարան, իմաստութիւն, ճառագայթ, պատկեր, կնիք, նկարագիր: 205 Իսկ Հոգւոյն Սրբոյ առանձնաւորութիւնն՝ բղխումն ճշմարիտ, նորոգող, մխիթարիչ, ուղիղ, բարի: 206 Ի հաւրէն Որդի եւ Հոգին Սուրբ, այլ ոչ կոչին եղբարք եւ ոչ որդիք երկոքեանն. զոր աւրինակ յԱդամայ են Սելթ եւ Եւայ, այլ ոչ եղբարք եւ ոչ որդիք երկոքեան: 207 Քանզի Հայր ծնող է, եւ Որդին՝ ծնունդ, եւ Հոգին Սուրբ ելող է. եւ նստի Որդի ընդ աջմէ Հաւր, եւ Հոգի Սուրբ ընդ աջմէ Որդւոյ: 208 Քանզի ի հարիւրերորդի իններորդի սաղմոսին ասէ. Ասաց տէր ցտէր իմ՝ Եիսու ընդ աջմէ իմմէ⁴: 209 Հայր զՈրդի ասէ, եւ յետ սակաւուց ասէ. Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսե-

1 Յայլ օրին. անանցական

2 Յօրինակիւն՝ տեսանի

3 Մարտ. Ե 41

է Հմբ. Գ. Կ. Է 11-15:

3 Յայլ օրին. կատարեալ

4 Մարտ. Ը Թ 1

դեկի, եւ տէր ընդ աջմէ քուսմէ՞: 210 Հայր ընդ Որդւոյ վասն Հոգւոյն Սրբոյ ասէ:

211 Եւ արդ, ոչ մեծ եւ ոչ փոքր¹ ի Սուրբ Երրորդութեանն երեւի, զի զմեծ եւ զփոքր, զծանր եւ զթեթեւ, զշատ եւ զսակաւ, ժամք եւ ժամանակք բովանդակեն:

212 Իսկ ուր ոչ ժամք եւ ոչ ժամանակք, ոչ չափ եւ ոչ կշիռ մերձենայ յանբաւելի բնութիւնն, անդ ոչ նկարի ոչ փոքր եւ ոչ մեծ: 213 Կամեցայ զՀայր մեծ ասել որպէս զծնող եւ զպատճառ, այլ երկեայ նոյն ինքն ի Հաւրէ, զի մի տկար զսկիզբն արարից եւ թշնամանեցից մեծարանաւքն, քանզի ոչ են փառք Հաւր, թէ որ յինքենէ են փոքրագոյն են քան զնա, քանզի այս տկարութիւն գործի² ոչ կարել իւր հաւասար Որդի ծնանել, կամ Հոգի՝ բղխիչ, այլ վայելէր նորա հրաշափառ զաւրութեան, զի որ ի նորա բնութենէն՝ ինքեան փառակից գոլով ճանաչին: 214 Արդ, Հայր ոչ ծնունդ եւ ոչ ելող, եւ Որդի ոչ ծնող է եւ ոչ ելող, եւ Հոգին Սուրբ ոչ ծնող է եւ ոչ ծնունդ, այլ միշտ գելողութիւն ունի:

215 Յնծայ Հայր ընդ փառս Որդւոյ, եւ զուարճանայ Որդի ընդ պատիւ Հոգւոյն, եւ փառաւորէ Հոգի զՀայր եւ զՈրդի, զի ի նոցունց էութենէ առնու եւ նորակերտէ զարարածս, յորմէ ամենայն եղեւ յերկինս եւ յերկրի, երեւելիք եւ աներեւոյթք, զգալիք եւ իմանալիք, մարմինք եւ անմարմինք: 216 Արդ զայս դաւանութիւն ընկալան Հայք ի մեծէն Գրիգորէ եւ ի սրբոյն Ռատակիսէ եւ յերանելոյն Ներսիսէ:

217 Վասն ժողովրդեանս առնեմ: 218 Մեկնութիւն առնէ ինքն, զի Աստուած ոչ հայի յիւր պատիւնն, որպէս ի մեր փրկութիւնս, զի յորժամ զինքն հաւասար Աստուծոյ առնէր, եւ զմեղս թողոյր, նոքա հայհոյիչ եւ դիւահար կոչէին, զի

հաւատասցեն թէ դու առաքեցեր զիս: 219 Թէ հակառակ Հաւր զիս գոլ ասէք եւ հայհոյիչ, մի՛ լիցի գործակից հակառակողիս. կոչեմ զքեզ ի գործակցութիւն՝ հաւատասցելոց ի հաստատութիւն եւ անհաւատիցն յանդիմանութիւն: 220 Ընդ անքաւելի մեղաւք են, որ յանբաժանելի բնութիւն բաժինս արկանեն, ի մարդկանէ հայհոյին եւ յԱստուծոյ դատապարտին, եւ ջնջին ի դպրութենէ կենացն:

221 Զայս իբրեւ ասաց Յիսուս, ի ճայմ մեծ աղաղակեաց: 222 Աղաղակեաց վասն մարդկան, զամենեցուն լսելիս եւ տեսանելիս առ ինքն ձգելով: 223 Հեռի եկաց ի գերեզմանէն կանգունս երկոտասան չմերձենալով ի մեռեալն: 224 Փոխանակ ձեռինն զձայնն սաստկացոյց, կատարեաց զաւրէնսն, որ ասէ. Որ մերձեմայ ի մեռեալ, պիղծ է միցել ցերեկոյ՞: 225 Զայնն այն եղեւ որոտումն երկնաւոր. զի թէ մի հատն բուսանի, վաղվաղակի եւ ապա ամենեցուն ակնկալութիւն է յարութեան: 226 Հոտ ներսոյն դարձաւ ի հոտ անուշութեան առ մեռեալն, եւ ի դուրս եկեալ կենդանի: 227 Եմուտ ձայնն ի գերեզմանն, կալաւ զձեռանէ մեռելոյն, զի ի մեռելոյ զգայութիւն ոչ ազդէ հնչումն ձայնի, զի նայեսցին յաստուածային հրամանն՝ ձայնիւն լսել որք անդ էին, եւ յայտնի երեւեսցի ի նորա հրամանէն արտաքս գալ մեռելոյն: 228 Ըստ սովորութեան մարդկան ի բացուստ կացեալ ձայնիւ գոչէ, ընտելականաւն մատակարարէ, եւ ձայնին զաւրութեամբն ի ձեռաց բանսարկուին վերածէ զհոգին՝ կապելով ընդ լուծեալ մարմնոյն, եւ զհոգեղէն մասն ի հող դարձեալ, եւ զջուրն՝ ի յաւիշտ, եւ հուրն՝ ի հրանիւթն, եւ զաւրն ի յաւրն ցնդեալ. ոչ ձեռաւք ստեղծագործէ կենդանի, որպէս զառաջինն, այլ սոսկ ձայնիւ անուամբ կոչէ, եւ սարսափմամբ արագապէս ելանէ: 229 Բե-

¹ Սաղմ. ճԹ. 4
² Յայլ օրին. ոչ մեծութիւն եւ ոչ փոքրկութիւն
³ Յայլ օրին. այս տկարութեան գործ է

է՝ ՂԵ. ԺԼ. 24

թանիա՝ տուն հնազանդութեան, վասն զի Ղազար հնազանդէր մահու վասն Ադամայ, որ անկաւ ընդ իշխանութեամբ մահու: 230 Հնազանդէր մահ Յիսուսի յաղաքս արարչական¹ զաւրութեան, եւ ծառայապէս լսէր տէրունական ձայնին, եւ ընձեռէր զմեռեալն աստուածային հրամանատրութեանն: 231 Գայ Յիսուս ի տուն հնազանդութեանն, որ զանհնազանդութիւն մարդկան ընդ հնազանդութեամբ Բանին Աստուծոյ միաւորէ եւ հնազանդի աստուածախառն մարմնովն հասարակաց Հաւրն փոխանակ անհնազանդութեանն Ադամայ, եւ ըստ Աստուածութեան առնու բարեբանութիւն ընդ Հաւր ի հրաբուն զաւրացն:

232 Ղազարէ, եկ արտախ²: 233 Բագում մեռեալք դնին ի գերեզմանի, բայց միոյն պէտք էին կոչելոյ արտաքս³. Թէ առանց անուան ասացեալ էր ո՞ գիտէր ի մեռելոցն եւ զայր արտաքս, վասն այսորիկ յանուանէ կոչէ՝ Ղազարէ, ե՛կ արտախ: 234 Բագում Ղազարք էին անդ, իսկ ակնարկումն կամացն Յիսուսի զմինն կոչեաց, որ Մարթայի եւ Մարիամու եղբայրդ ես, զոր ես սիրեմ, վասն որոյ զիս աղաչելով կոչեցին, առ այժմ դու միայն եկ, քեւ այլոց յոյս լինի⁴: 235 Թէ ոչ յանուանէ կոչեալ էր՝ զաւրութիւն ձայնին Քրիստոսի զամենայն գերեզմանս քակէր:

1 Յայլ օրին. արարչականութեան

2 Յայլ օրին. գիտեմ զի ՚ի միտս ձեր կամիք հարցանել ցիս, եթէ առ ի՞նչ զՂազար յանուանէ ՚ի գերեզմանէն կարդաց. խնդրելի է բանդ եւ ոչ զանց առնելի, է ինչ որ գոյութեան է. եւ է ինչ որ ըստ գորութեան: ... ըստ գոյութեան այս է: Բագում մեռեալք:

3 Այլ օրին. ո՞ գիտէր թէ ո՞ր մեռեալ գայր արտախ

4 Յայլ օրին. ըստ գորութեան այս է «Հանցեմ ջուրք գեռունս շնչոց կենդանեաց ըստ ազգի եւ ըստ նմանութեան»: Բանն արդիւնագործեցաւ, եւ առանց ամուսնութեան եղեմ ծննդակամք, եւ զթիւ բազմութեանն ոչ կարէ արկանել ՚ի համար: Նոյն ձայն էր եւ առ գերեզմանին, եթէ ոչ յանուանէ:

236 Ժամանակ է սերմանելոյ եւ ժամանակ հնձելոյ, դեռեւս սերմանիք սերմանին, բոյսք բուսանին, պտուղք ատոքանան եւ մատուցանին միաձնի Որդւոյն Աստուծոյ: 237 Նա եւ ոյ այլոյ անուամբ զմեռեալն կոչէ ի գերեզմանէն, որոյ գումարտակ մարգարէքն յանուն Տեառն եւ առաքեալքն յանուն Յիսուսի Քրիստոսի, այլ ինքն ազատիշխանական ձայնիւ հրամայէ ե՛կ արտաքս: 238 Զի ուսցին կենդանի եւ զգայական գոյ հոգւոյն եւ յոյժ հեռուորք ի մարմնոյ հոգւոց, զմահու լուծանէ զիշխանութիւն, եւ զըմբռնեալն ի նմանէ Հանդերձ հոգւով եւ մարմնով կորզեալ վերածէ կենդանի՝ ըստ զաւրութեան այնմ որ ասաց. Հանցեմ ջուրք գեռունս կենդանիս՝, որ ասաց եւ եղեն, նոյն ձայն էր առ գերեզմանին:

239 Ել մեռեալն ոտիւք կապելովք եւ ձեռաւք երիզապնդեալ եւ երեսաւք վարչամակապատ⁵: 240 Ոչ քարչեաց եւ ոչ զնացոյց ըստ սովորութեանն մարդկան, վասն զի կապեալ էր կապանաւք եւ պատեալ պատանաւք. որպէս հրեշտակն զԱմբակում մարգարէ հացիւն եւ թանիւ զբոլոր կերակուր հնձողին տարաւ ի Բաբելոն⁶: 241 Արագ է բանն Աստուծոյ քան զհրեշտակս երկնից, ըստ արագութեանն առաւել հզաւր, նա առեալ զվարսից զբոլոր մարմինն տանէր ընդ իւր. եւ Յիսուս սաստիկ ձայնիւն ոչ ի կատարին մերձեցաւ, այլ յական քթթեւն էած զհոգին ի հեռաստանէ, եւ միաբանեաց ընդ լուծեալ մարմնոյն, եւ ընդոստոյց յանդնդային քնոյն առանց քայլափոխելոյ, ուր կամք Տեառն կամեցան, վաղվաղակի անդ գտաւ: 242 Կտաւեղէն կապարանն ոչ կարաց արգելուլ զտէրունական հրամանն, լուծանէր զիւր կարգն զԱրարչին կաման կատարե-

⁵ Եւ. Լ. 20

⁶ Յայլ օրին. վարչամակապ

⁷ Հմմտ. Գ. ան. Ժ. Գ. 32-36:

լով, եւ մահ ծառայաբար Տեառն հնազանդէր հրամանին: 243 Այսաւր զառաջին մարդոյն կապանսն արձակէ յանիծից մահուն, եւ առաւելութիւն մեղացն ոչ բաւէ գտէրունեան արգելուլ զհրամանն, եւ յինքն զյանցանսն կորգէ, եւ որպէս զյանցաւոր, փոխանակ յանցաւորի մարդոյն պարտաւորի անպարտ, զպարտաւորն կացուցանէ առաջի Հաւրն:

244 Ասէ ցնոսա Յիսուս. լուծէ՛ք գղա եւ թողէ՛ք երթալ: 245 Որ կապեցիքդ, լուծէ՛ք, եւ որ պատեցէքդ՝ քակեցէք, եւ որ պատատեցիքդ, կողոպտեցէ՛ք. մի՛ գարշիք ոչ գոյ հոտ նեխոյ, մի՛ խորշիք ըստ աւրինացն, չէ մեռեալ, այլ կենդանի է, տեսէ՛ք ձերովք նշանաւքդ, ծաներո՛ւք ձեռաւք ձեր, զպատեալ բերանդ բացէ՛ք, եւ դուք ընդ այլ վկայան վասն մահու դորա ամենքեան վկայ լերուք յարութեանդ, զոր տեսէքդ: 246 Մի մրգով ճանաչի բոլոր պտուղ երկրի, մասնաւոր առժամայն եւ աւետիք առ յապայ: 247 Ընդէ՞ր հրամայէ նոցա լուծանել. զի անամաւթք էին, եւ միշտ եղծանել ջանային զճշմարտութիւնն, վասն որոյ զձեռսն եւ զհոտոտելիսն կացուցանէ նոցա դատախազ եւ վկայ: 248 Ի նախնումն ի բարերարութենէն լռէր Աստուած վասն Ադամայ ի պատուիրանապահութենէն լռելոյ, յերկրորդումս վասն Ղազարու քրիստոսասիրութեան նորոգէ ի գերեզմանաց անշնչութենէ, եւ ի մահագգեստ ծածկոյթ կտաւապատութենէ արձակէ:

249 Բագումբ ի հրէից որ եկեալ էին առ Մարիամեանսն, իբրեւ տեսիմ գորարարն, հաւատացիմ ի նա: 250 Ոմանք հաւատացին մեծաքանչ նշանացն, թէ եւ յետոյ ուրացան, որք զայլ սգաւորս եկեալ էին մխիթարել, զանձինս մխիթարէին անտրտում ուրախութեամբ, եւ այլոց աւետիս ի քաղաքն տարան: 251 Ոմանք գնացին առ փարիսեցիսն, եւ պատմեցին զոր արար Յիսուս: 252 Իսկ ոմանք որպէս ի

զիւաց մոլեալք, գնացին առ սաղուկեցիսն եւ ասացին, թէ հաւատացին ի նա բազումք, արդ աճապարեցէք առ ի լռեցուցանել զնորասքանչ նշանացն զաւրութիւն: 253 Ի տանն Մարիամու եւ Մարթայի ուտէ հացընթրիս, եւ յանդիման բազմի Ղազարոս ի գերեզմանէ յարուցեալ. ունի ընդ իւր գերիզապինդ կտաւն հաւատարիմ վկայ, զի ի ձեռն կերակրոյ եւ ըմպելոյ եւ գերեզմանական կտաւոյն, ճշմարիտ եւ հաւատարիմ յարութեանն հաւատասցեն Ղազարու: 254 ԶՄարիամու ընդունի գբարեպաշտութիւն, իւրոյն աւժումն խոստովանի սպասաւորութիւն իւրոյ մահուն, եւ անմաքուր վարուցն լուացարան, եւ զհերն մեռեալն մարմնական վարուց, զարտասուսն անմաքուր վարուցն ջնջիչ, զոտսն թորաւք աչաւք թանալ զժամանակս կենդանութեան, եւ զեւթներեկաւորս, որով յառաջ խաղան ամիսք եւ տարիք, յորս անսուրբ գնայր վարուք գործոց: 255 Տէրն իւր մաքուր ոտիւքն սրբէր զՄարիամ եւ զՄարթայ, շնորհազարդէ հաւատով, զչորեքաւրեայ մեռեալն ի գերեզմանէ ընդունի կենդանի:

256 Հայր գայ ի հաճութիւն, Որդի աղաչող, Հոգին Սուրբ բարեխաւս. յորժամ բոլոր պտուղ աշխարհիս բովնդակեցցին առանց մեր կոչելոյ, Տէրն բոլոր էից հայրենի՛ սկզբնատիպ փառաւքն եւ զաւրութեամբ արարող Հոգւովն, եւ բազմութեամբ հրեշտակաց ձայնիւ անձեռագործ փողովն յերկնից յերկիր եկեալ, աթոռք անկանին, ատեանք ուղղին, դպրութիւնք հրաշիցն բանան, ձայնք կենդանեաց հնչեն, երկինք գալարին, լուսաւորք վայրաւք թաւթափին, երկիր դղորդի, վէմք պատառին, գերեզմանք աւարին, մեռեալք յառնեն, յայնժամ եւ Ղազարոս ընդ մեզ յարուցեալ տեսանի: 257 Վերինք եւ ներ-

1 Յայլ օրին. առանց մեր կոչելոյ իմքին տէրն արարածոց հայրենի

քինք միաբանին, խառնքն որոշին, եւ համառաւտքն սահմանին, կողմ արդարոցն վերաբերին¹ հանապազ ընդ Տեառն լինելով ի վերայ անուշ աւղոց անմահիցն, կակուղ եւ փափուկ գարշապարաւք անմահական մարդոց ի պարս հրեշտակաց² միաւորին: 258 Յորս լիցի ամենեցուն մեզ հասանել, շնորհաւք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Գ. ՆՈՐԻՆ Ի ՄԵԾԻ ԱՒՈՒՐ ԳԱԼՍՏԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԵՐՈՒՍԱԳԷՄ

1 Նախախնամաւղ եւ մշտնջենաւոր աստուածային գթութեամբն հասեալ ժամանեցաք յաւրհնաբանութեան աւրս, յորում զերկնագոչ բարեբանութիւն ընդ տիեզերական հաւատացեալս համախմբեալ յիշատակեմք, եւ զաստուածաբանութիւն տղայոցն վերածայնաբար ճառեմք, եւ զտիեզերական³ անուամբ եւ եկաւորութիւնն բարեբանապէս Դաւթայ խոստովանիմք զարմ: 2 Իսկ մերակերպ բնութեանս ընդ արարչութեան⁴ միաւորութիւն երեւելապէս հանդիպեցաք տեսակի եւ զերկակի եկաւորութիւնն գոչելով, զեկեալն եւ զգալոցն՝ արարչական⁵ խոստովանիմք բացայայտութիւն, զոր եւ երանելի աւետարանիչքն աստուածաբանութեամբ՝ եւ հրաշալի եւ ըզձալի ընձեռեցին⁶ եկեղեցւոյ գիւտ: 3 Յորոց ոմն ասէ:

4 Իբրեւ մաւտ եղեմ ի Բեթփագէ եւ ի Բեթանիա՝ մերձ ի լեառն ձիթենեաց, առաքէ Յիսուս երկուս յաշակերտացն իւրոց եւ ասէ ցնոսա. երթայք ի գեղդ, որ առաջի ձեր

է, եւ իբրեւ մտանիցէ՞ գտանիցէ՞ էշ կապեալ եւ յաւանակ ընդ նմին, լուծէ՞՞ անէ՞ ինձ, եւ եթէ ոք ասացէ ինչ ձեզ, ասաւջի՞՞ եթէ Տէրն իւրեանց պիտոյ է, եւ վաղվաղակի առաքեսցէ զնոսա՞:

5 Երուսաղէմ խաղաղութիւն թարգմանի. վասն զի անդ խաղաղանայր գրաւորական ժողովուրդն՝ ի պատուիրանազանցութենէ քաւեալք ի ձեռն քահանայութեանն եւ զանազան կենդանեացն արեանցն հեղման՝ եւ առաւրեայ եւ շաբաթաւրեայ լուացմանցն: 6 Այսպէս եւ եկեղեցւոյ մաւր էր ճշմարիտ խաղաղութիւնն Յիսուս, որ մերձակայ մահուամբն հանդերձեալ էր զբազմաստուածութեանն վրդովմունս խաղաղացուցանել: 7 Եւ ի մերձենալն Յիսուսի ի չարչարանս, մերձենային հեթանոսք ի դատապարտութենէ յազատութիւն որդեգրութեանն⁷: 8 Արդ, մաւտ եղեն հեթանոսք յերկնային խաղաղութիւնն յաղագս յերկնուտ իջելոյն եւ մարմնակից մարդկեղէն բնութիւնս եղելոյն, եւ մաւտ էր Յիսուս խաղաղութիւնն եկեղեցւոյ՝ յաղագս մարգարէիցն նախագուշակութեան եւ տէրունական մահուանն, որ զմահու տիեզերաց բառնայր զիշխանութիւնն, եւ յարատեւակ աստուածային կենդանութեամբն⁸՝ զանլուծանելի կեանս հասարակաց ընդձեռէր, վասն զի խաղաղանայր մարդկային բնութիւնս յաղագս մարմնոյն, որ ընդ Աստուածութեանն խաղաղացաւ⁹ անանջատապէս:

9 Եկին ի Բեթփագէ եւ ի Բեթանիա: 10 Բեթփագէ թարգմանի տուն ծնաւտի, եւ Բեթանիա տուն սգոյ եւ տուն հնազանդութեան. վասն այնորիկ տուն ծնաւտի, զի ծնոտ բանաւոր բնութեան եւ սպասա-

1 Յայլ օրին. վերափոխին
 2 Յայլ օրին. գարշապարօ՞ մարդիկ յանմահական պարս հրեշտակաց միաբանին
 3 Մի օրին. զի եզական անուամբ
 4 Մի օրին. ընդ յառաջութեան
 5 Մի օրին. հրաշափառ
 6 Մի օրին. ընդձեռեցին

՞՞ Մարգ. ԺԼ 1
 7 Մի օրին. մերձենային յանդատապարտելի ազատութիւն որդեգրապէս
 8 Մի օրին. եւ յանգրաւական աստուածային կենդանութիւն զանլուծանելի զկեանսն
 9 Մի օրին. միաւորեցաւ

ւոր ի ձեռն շարժման, պատուիրանին պաշտանեայ: 11 Ծնաւտ առաջին մարդոյն լուծանէր զինքն ի բանական¹ սպասաւորութենէն՝ պատուիրանազանցութեանն աղագաւ, եւ բոլոր մարմնեղէն տաճար թափուր ի բնակողէն մնայր. վասն որոյ լինի մարմնեղէն տուն Յիսուս, եւ երբեակ միութեանն յաւիտենական կայարան: 12 Եւ ծնաւտ՝ յաղագս մարդկեղէն² ծնաւտի զարարչեղէն վարդապետել զաստուածաբանութիւնն: 13 Իսկ Բեթանիա, որ է տուն սգոյ. վասն զի տուն ուրախութեան էր առաջին մարդն յաղագս ի դէմս զտէրունեան³ փչումն ընդունելոյ, որ պատուիրանազանցութեանն աղագաւ վերադարձաւ առ փչողն, եւ անփառունակ եւ սգաւոր լինէր նախաստեղծին անձն: 14 Եւ տուն հնազանդութեան, զի անհնազանդեցելոյ մարմնեղէն եւ բանականի տանն արարչադիր աւանդիցն. լինի տուն՝ նորին ստեղծիչն եւ հնազանդի Հաւր բովանդակապէս եւ պարաբառնայ զանհնազանդութիւն առաջին մարդոյն:

15 Յայնժամ առաքել Յիսուս երկուս յաշակերտացն իւրոց: 16 Զաւրինաւորական եւ զհոգեւորական աւանդիցն ասէ, յորոց մին առաքելական եւ առաջին շնորհի⁴, թէպէտ եւ ժամանակաւ զկնի, իսկ երկրորդն մարգարէութիւն՝ կարգեցաւ ի Հոգւոյն Սրբոյ, զի երկոցունց վկայութեամբք հաւատարմացուցէ զտնաւրէնութիւնն: 17 Եւ դարձեալ՝ եթէ միովն գայթակղեսցի ոք, միւսովն կանգնեսցի, եւ ի հաւատոց ցրտացեալքն զայս երկուս աւանդութիւնս մտաւք վերարկեսցեն եւ աստուածային ջեռնուն սիրովն: 18 Իսկ յաշակերտացն երկուս, վասն զի բազում ունելով Յիսուսի զաշակերտան, զվերին

ութաշտիճանեայ երկնագումար զպարսն, զոր մեծն Պաւղոս շարադասէ. հրեշտակք, հրեշտակապետք, աթոռք, տէրութիւնք, պետութիւնք, իշխանութիւնք, սերովբէք, քերովբէք: 19 Իսկ մերասեռիցս, դատողութիւնք թագաւորութիւնք եւ այլ աստուածաշնորհ պարգեւք, յորոց որպէս ի բազում աշակերտաց զերկուսն առաքելով, զմարգարէութիւնն, որ յառաջագոյն զմարմնաւորութիւնն գուշակէր ճշմարտապէս, եւ զառաքելութիւնն՝ զոր հազարապետ ինքեան խորհրդոցն կացուցանելով ասէ. Երթա՛յք ի գեւղդ որ առաջի ձեր է: 20 Զի տիեզերական բազմութիւն մարդկան՝ աստուածեղէն եւ ամենատեսականն է որպէս գեւղ, յոր առաքէ զմարգարէականն յառաջ քան զիւր եկաւորութիւնն, իսկ զառաքելականն՝ ի մերունակերպախառնութեանն⁵: 21 Ասէ՛ Գտանգեմ⁶ էշ կապեալ: 22 Է սա յանմաքուր կենդանեաց, որ է հրէից ժողովարանն, եւ էր մաքուր կենդանի եւ երկնային հաւտապետին հաւտ՝ ի տարրաւորութենէ⁷ եղեալ անսուրբ կենդանի, իսկ կապեալն՝ ընդ բազմաստուածութեանն իշխանութեամբ, յորմէ լուծանէ առաքելական կոչմամբն:

23 Եւ եւս կապեալ, զի ընդ աւրինացն պահպանութեամբ կապեալ էին հրեայքն, ի կապարանէ արձակէ զնոսս յիւր աւետարանական վարդապետութիւնն՝ մարգարէական եւ առաքելական կոչմամբն: 24 Իսկ յաւանակ առ նմին, զհեթանոսաց ժողովարանն ասէ, զորս յանսուրբ վարուց եւ ի կռապաշտութենէ լուծանէ յիւր երկնաբեր շնորհն, զոր ոչ ընդ աւրինացն կապով էր արկեալ, այլ արձակ եւ համարձակ թողլով զհաճոյս իւրաքանչիւր կատարել. եւ վասն այնորիկ նմանեցուցանեմք կատարելագոյն կենդանւոյն՝ զհրեայսն, եւ

1 Մի օրին. 'ի մարմնական
 2 Մի օրին. մարմնեղէն ... արարչեղէն բերանն վարդապետեալ զաստուածաբանութիւն
 3 Մի օրին. գտէրունուոյն
 4 Մի օրին. շնորհիւն

5 Մի օր. իսկ զառաքեալսն 'ի մերունակերպառնութիւնս. առաքելով, ասէ
 6 Գուցէ՛ գտանցեմք
 7 Մի օրին. 'ի տպաւորութենէ

յաւանակին՝ զհեթանոսս: 25 Վասն զի որք կանխագոյն զաստուածեղէն բանն ընկալան՝ կատարելագոյնք են եւ առաջինք, եւ ըստ տարացուցի՝ Որդի իմ անդրամիկ Իսրայելի՞, ասէր ցՓարաւոն: 26 Եւ մեծն Պաւղոս. Փառք եւ պատիւ եւ խաղաղութիւն գործողացն զբարիս՝ նախ հրէի եւ ապա՝ հեթանոսիք:

27 Ածին, ասէ, զկենդանիսն եւ արկին գնոխաւք ձորս, եւ նստաւ ի վերայ նոցա: 28 Ածել՝ զառաքելական եւ զմարգարէական կոչմանէն ասէ, որովք խնդրեալ մերձեցոյց առ ինքն, իսկ ձորձոցն վերարկումն, զաւագանին մաքուր եւ զանապական զգեստն՝ զոր շնորհէ Սուրբ Հոգին, զի զմարմինն անապական զգեստաւ սրբէ մաքրութեամբ¹, եւ զոգին լուսաւորէ փշմամբ, եւ ընդ զմիտան առնելով տեղի ինքեան հանգստեան միածնի Որդւոյն: 29 Դարձեալ նստաւ ի վերայ նոցա, քանզի յերկաքանչիւրոց² կոչեցեալք ի հրէից եւ ի հեթանոսաց ի սուրբ եկեղեցի եւ յորդէգրութիւն երկնային Հաւրն, ի հասարակաց մաքրագոյն վարս առաքինութեան նստի եւ հանգչի տիրապէս եւ աստուածաբար:

30 Իսկ նստելն ի վերայ անմաքուր կենդանեացն. վասն զի ոչ երկու ժողովարանք հրէից եւ հեթանոսաց մաքրութեամբ առ Աստուած մերձեցան, այլ մարմնացեալ Բանն վարդապետութեամբն կոչեաց, եւ չարչարանաւքն ելոյժ գյանցանսն, եւ մահուամբն ի մահուանէ ազատեալ՝ արար իւր աթոռ, եւ նստաւ ի վերայ հասարակաց խորհրդոց, եւ դատի եւ դաստիարակէ զբոլորից հոգի եւ զմարմին, եւ շնորհէ³ իւրա-

քանչիւր բարւոք զխտրելիսն եւ զընդունականսն: 31 Իսկ ձորձոցն վերարկեցելոց ի նոյն կենդանատեսակացն, յորոց վերայ նստի նստեալն ճշմարտապէս յերկինս երկնից ի քերովբէական կառսն: 32 Ձորձս իմանալի է զառաքելական վարդապետութիւնն. զի անդ ի սրբէական սրբութեանն նստի եւ հանգչի, իսկ աստ յառաքելական քարոզութեանն նստի եւ բազումս հրաշակերտէ⁴, եւ զերասանակ վարդապետութեանն ուղղէ յերկինս երկնից տիրապէս: 33 Արդ, հասարակաբար նստաւ Միածինն յերկինս ի վերայ քերովբէից եւ յերկրի ի նուս⁵ կենդանեաց. անդ արարչաբար եւ համապատուապէս, աստ մերունակն աստուածացեալ կերպիւ եւ անանջատելի ի Հաւրն, բոլոր յերրորդութեանն, գոլով եւ անորիչ յերկրէ: 34 Բայց կատարելապէս նստելն ի վերայ կենդանեաց առաւելութիւն սիրոյ է Արարչին առ իւր արարածս, յորմէ հարստահարեալ տէրունեան կամքն անխտրաբար կոչէ զամենայն մարդկեղէն⁶ բնութիւնս յինքեան անճառելի շնորհսն, եւ հանգչի եւ բերկրի ի վերածնեալսն աւագանաւն եղբայրապէս եւ հարազատաբար յաղագս եղբայրացելոց ընդ մեզ մարդկեղէն բնութեանն: 35 Իսկ Ձիթաստանեաց լեռնն՝ աստուածեղէն բնութեանն մարմնաւոր բնութեամբ նուաստանալն. վասն զի ձէթ գիշերոյ է լուծիչ. այսպէս Բանն ի Հաւրն ի դուրս եկեալ եւ ընդ մարմնոյ միաւորելով՝ արեգակնապէս փայլեալ ելոյժ զբոլոր մարդկային բնութեանս զոգւոցն գիշեր: 36 Եւ յեկաւորելն յերուսաղէմ հաւանելն է ի կամաւոր չարչարանսն. զի Երուսաղէմ թարգմանի խաղաղութիւն, եւ խաղաղութիւն, որ ի վեր է քան զամենայն մարգարէական եւ առաքելական շնորհս, որ պարգեւեցաւ մեզ

¹ Եւ. Գ. 22

² Հ. Կ. Բ. 10

³ Թ. Կ. Բ. 7

1 Մի օրին. անապական զգեմու մաքրութեամբ եւ հոգին առաջին

2 Մի օրին. յերկաքանչիւրեանց

3 Մի օրին. տրոհէ

4 Մի օրին. եւ բազում հրաշս կատարէ

5 Մի օրին. ՚ի նուաստ ՚ի կենդանիս

6 Մի օրին. զամենայն բնութիւնս

աստուածեղէն մահուամբն: 37 Զի իջանելն յԵրուսաղէմ, վերատանել էր զմերասեռ տոհմս յաստուածակերտ գաւառն, վասն զի դիմելն յԵրուսաղէմ, դիմել էր ի մահ, եւ մահուամբն ի մահուանէ արծակէր զմահու արժանաւոր անձինս¹:

38 Իսկ զի՞նչ բազմութիւն ժողովրդեանն առաջոյ եւ զկնի, եւ ճորճոցն սփռելն ի ճանապարհին: 39 Ժողովրդոցն առաջին՝ Հայրապետութիւնք, մարգարէութիւնք, քահանայութիւնք, դատողութիւնք, թագաւորութիւնք, ծերոցն ատեանք, դպրացն եւ փարիսեցւոցն կաճառք, եւ Յովհաննու կարապետական կոչումն. նոքա ժողովուրդք, որք յառաջ են քան զՔրիստոսի մարմնանալն: 40 Իսկ երանելի առաքեալքն եւ մեծ վկայքն եւ վարդապետքն, եւ բովանդակ աւագանին նորածնունդքն, ²որ զկնի տնաւրէնութեանն կոչեցան, ժողովուրդ որ զկնի: 41 Իսկ ճորճոցն ի ճանապարհին տարածանելն Հնազանդելն է աւետարանական վարդապետութեամբ բոլոր տիեզերաց, որք

սփռեցին սիրով զսիրտս եւ զճանապարհս ինքեանս կազմեցին քառահարկ չորից աւետարանչացն, որովք ի վերայ գնայ եւ հետեւի, եւ ողջախոհացն բերկրի ախորժակաւք մերակերպունակ էմամանուէլն: 42 Քանզի յաւրինակացն մաքուր անձինք, դիտաւորելով զնորա մարմնատիպ եկաւորութիւնն, ոչ սոսկ բանիւ խոստովանեցին, այլ նիւթեղէն տեսակ զգիր՝ որպէս ճորճս, եւ ի ժամանակի՝ որպէս ճանապարհ, տարածեցին պատմագրապէս, վասն զի ի հողեղէն բնութեանս կենդանակերպեցաք, եւ ի հողեղինէս զհոգեղէն զգեցաք պատկեր:

43 Բայց զոստս ի ծառոց տարածանել, զի ի սկզբանն եւ ի լինելութեանն՝ Բանն ի Հաւրէ ճառեալ՝ Եղիցի լոյս³. եւ ժողովեցին ջուրք եւ բղխեսցէ երկիր ըզծաղիկս եւ զծառս, եւ բովանդակ գոյանայր արագագոյն քան զական քթթել, եւ բովանդակ ծաղկաւետանայր երկիր՝ ի գագաթունս բերելով պսակ թագազարդեալք:

44 Ի պատուիրանագանցութենէ նախահաւրն նոյն Բանն յանմեկնելի ծոցոյ Հաւր հրամայէր ծաղկազարդ երկրի գոլ փշաբեր, զորոյ զղջացեալ Հաւր, զԲանն յիւրածին ծոցոյ անանջատելի յինքենէ առաքէ:

45 Վասն զի ոչ բաւէ բնութիւնս՝ զբնութեանն տանել տեսութիւն, առնու զմեր կերպարանս, եւ կերպարանակից զմեր բնութիւնս ինքեան առնէ ըստ շնորհի, եւ մերունակ բնութեամբս ընդ մահու պատերազմեալ մահու չափ, զմահու կամեցաւ բառնալ զիշխանութիւն, եւ զերկիր եւ զտարերս յառաջին նորոգէր հրաշափառութիւն: 46 Եւ զայս ոչ վայրապար, այլ ի ժամանակին, յորում պատուհասակիրն եղանիւր մարդն, եւ երկրի բարեվայելչութիւնն, որ մարդոյն աղաքաւ էր կազմեալ. ի նոյն ժամանակի ի գարնանային հասա-

1 Մի օրին. եւ մահն ազատ ՚ի մահուանէ արձակելը գմահու ըմբռնեալսն
2 Հրատ. ծանուցում է՝ մի օրինակն փոխանակ Գ. 40-51 հատուածի ունի այսպէս: Որք զհետ անցաւորի մարդոյն զառարթն հանդերձ ոստովք առաջի սփռէ, զի գանապական եւ գաննեց գառաջին զգեստն ընկալցի: Զի՞նչ ժողովրդոցն բազմութիւն առաջի եւ զկնի: Ժողովրդոցն բազմութիւն ՚ի Քրիստոս հաւատացելոց ասէ. իսկ առաջի եւ զկնի՝ որ ՚ի ժամանակի սփանչելագործութեան ընդ որս տնօրինէր գարմագործութեամբ մարմնապէս եւ առանց մեղաց. իսկ զկնի առաջելոցն քարոզի հրաւիրակ տիեզերաց եւ աւագանին նորածին մարդկան: Բայց որ ՚ի գանազան ժամանակս զմին բաշտայնագոյն խոստովանին մարմնեղէն զգեցեալ բնութիւն, բոլորովին համագոյ չօր եւ անանջատելի յերկնից իջեալ՝ մնայ ամենեւին ՚ի ծոց չօր, եւ ՚ի վերայ քերովքիցն բովանդակ Աստուածութեամբն. եւ նստեալն մարմնաւորութեամբ եւ ՚ի գիրկս Կուսին աստուածացեալ մարմնովն եւ զարդեակն կառսն լնու մարմնացեալ Աստուածութեամբն. եւ աղաղակելին ասելով. «Օրինեալ որ գայ յանուն Տեառն». զմարմնեղէն գալուստն որ նախաքարոզ մարգարեական տեսլեամբք յառաջ ճորճեալ մահուր հարքն գուշակեցին բազմատեսակ ձեւովք:

³ Հմմտ. Եղեհ. Լ, Ը 5:
⁴ Եւ. Ը 3

րակութեանս, յորում լինելութեան երկրիս գոլ սկիզբն, ի նոյն հասարակաւորութեանն գայ եւ վերադարձուցանէ գերկիր յառաջին կարգս: 47 Վասն որոյ ծերք եւ տղայք ոստս ի ծառոց ի ճանապարհին տարածանելով տերեւազգեստ եւ ծաղկազարդս, որովք նշանակէին զանէծս երկրի հանդերձ փշաբերութեամբն պարաբանալ, եւ յառաջին աստուածակերտ բուրաստանատեսակն յեղանակել:

48 Դարձեալ ոստս ի ծառոց տարածանել. վասն զի ի ձեռն առաջին տնկոյն յոստոցն ընկալաք զպատուիրանազանցութեանն պտուղ, յորոյ սակս զնոյն ոստս տարածանել ի ճանապարհի, զի գնալով ի վերայ ոտիցն Յիսուսի, ընդ ոտիւք մեզ զհակառակամարտին արկցէ զաւրութիւն: 49 Իսկ ըստ իմանալի տեսակի, ծառ է հրեշտակական զաւրութիւնքն, որք ի բանական եւ ի հոգեւոր բնութիւնս զատեալ որոշեցան բարձրակայ վայրիւք, յորս եւս վերածայրեալք սերովբէիցն բարձրութիւնք, որ ի ներքոյ տէրունական ոտիցն սոսկացեալ՝ քառունակ թեւաւք պարփակեալ զինքն՝ անկարողացեալ զտեսութիւնսն բերել ի կիզմանէ, սարսափելով զյաղթական եւ զպանծալի սրբասացութեանն անհատաբար գոյելով: 50 Յայսպիսի բարձրագոյն ոստոց հատեալ՝ ի բարբառոց բարբառնութեան մանկանցն, որ տարածանէին գոյմամբ գեկաւորութեան զհետեւմունս եւ զհանդերձեալ զալուստն, որ աղաղակէին ասելով. Աւրիցեալ որ գաս յաճուն Տեառն³:

51 Ընդ որս եւ համարձակախաւան Ջաքարիաս ճշգրտաբանէ զԿուսին զյղութիւնն յանգուգակցութենէ, եւ զծնեալ մանուկն՝ ընդ մեզ Աստուած, եւ զհանդերձեալ աւուրս յերուսաղէմ եկաւորեալ եւ ի վերայ նստեալ կենդանեաց առ առակախաւսէր, այլ յայտնապէս ասելով. Զուար-

նացի՛ր, դուստր Սիոնի, վասն զի քն Թագաւոր գայ առ քեզ, Աստուած մարմնակերպ ի վերայ նստեալ անմահուր կենդանեաց⁴: 52 Ի՞նչ սակս Սիոնի եւ ոչ մեծն Երուսաղէմ ասի ուրախանալ: 53 Սիոն էր ամրոց, յորժամ Դաւիթ թագաւորեաց ի Հրէաստանի, եկեալ յերուսաղէմ եւ արգելեալ յեբուսացուցն, զի մի թագաւորանիստ լիցի Երուսաղէմ: 54 Իսկ Դաւիթ պատերազմեալ առնու զամրագոյն տեղին զկոչեցեալն Սիոն, եւ շինեալ զամրոցն ինքեան տուն եւ տեղի յարքունական, անդ վերստին նորոգէ զսեղանն ի Սելովայ զկործանեալն, անդ եւ զտապանակն դարձուցեալ ի գերութենէն հանէր, բովանդակ զքահանայական կարգն հանդերձ սպանդիւքն նորոգէր: 55 Եւ վասն զի անճառելի ծոցոյ Հաւր անմեկնելի Բանն մերունակ տպաւորեալ կերպիւ ի Կուսէ անապական եւ ի զաւակէ Դաւթի մաքուր բերանով խոստովանեալ եւ զհայրենի լուծեալ թագաւորութիւն Դաւթի որդեգրապէս նորոգէ, եւ արարող խաղաղութեան Յիսուս ինքեամբ բերանով՝ զխաղաղութիւն տիեզերական փրկութեամբ, զի ի Պասեքին ոչ այլ ուրեք, այլ ի Սիոն հրամայէ առնել զՋատիկն: 56 Անդ եւ զգառնն ուտէ, անդ պարփակեալ դրաւքն էր եւ ի յաշակերտացն ի մեղուէ ճաշակէ, եւ զնոր արքայութիւն, որ է իւր յարութիւն, հաւատարմացուցանէր ընդ նոսին ճաշակմամբն. վասն այսր ամենայնի հրամայէ ուրախանալ դատեր Սիոնի: 57 Իսկ դուստր Սիոնի, վասն զի քաղաք Դաւթի Սիոն կոչեցաւ, եւ քաղաք զծննդականի ունի զբնութիւն. որպէս արհեստական բնութեան Յովսէփ Դաւթի է զարմ, եւ Յիսուս որդի Դաւթի խոստովանեցաւ, այսպէս եւ Սիոն: 58 Բնակիչք ժամանակիս դուստր են առաջին բնակչացն:

³ Չափ. Բ 10

⁴ Ի միում օրինակի Գ. 51-65 պակասի:

³ Մարտ. ԺԵ 10

59 Բայց ըստ իմանալի տեսութեան, դուստր Սիոնի անուանի դուստր խաղաղութեան, զի զճշմարիտ խաղաղութիւնն բերեալ յերկնուստ Տէրն տայ սրբոց առաքելոցն ասելով. Զխաղաղութիւն զիմ տամ ձեզ՞ եւ զանճառելի զխաղաղութիւն, զոր ընկալեալ աշակերտացն, առնուն ի Սիոնէ զփշոմն, զոր առաջին մարդն արտաքս անմաքրութեամբ տարաւ: 60 Ի Սիոն վերնատանն փակելով դրովք երեւեալ փշէ յառաքեալսն ասելով. Ընկալարո՛ւք զմաբուր Հոգի՞ն: 61 Այսպէս եւ ի Պենտէկոստէին ի Սիոն եւ ի վերնատանն ի շնչմանէ ի շառաչմանէ տրոհեալ լեզուք, առաքելոցն՝ զկոչումն ազգաց ի ձեռն նոցա նշանակէր լեզուաւքն հրեղինաւք: 62 Եւ ճշմարտապէս ի Սիոնէ ընկալան զխաղաղութիւն, եւ ի բազմաստուած վրդովմանցն զտիեզերս խաղաղացուցին, եւ ընդ արարածս զարարիչն Հայր Հաշտեցուցին, զհիմնաւորութիւն Եկեղեցւոյ ի նոյն Սիոն սկզբնաւորեցին: 63 Յաղագս այսպիսի նորագործ հրաշից հրամայէ մարգարէն նախքան զամենեցուն Սիոնի խնդալ:

64 Իսկ դուստր Սիոնի՝ ծնունդ եւ պտուղ այսպիսի շնորհաց, որ է Եկեղեցի. վասն զի առաքելական վարդապետութիւն ի Սիոն առ սկիզբն: 65 Սա է մայր Սիոն եւ անդ մարդ ծնաւ, մարդ աւագանաւն յորդեգրութիւն երկնաւոր Հաւրն. վասն այսորիկ մայր Սիոն եւ դուստր Սիոնի յառաջատեսիլ, ի Սիոնէ առաքելոցն զհեթանոսաց կոչումն եւ յառաջին սքանչելեացն, որ ի Սիոնէ երկրորդ փոխեցաւ ի հեթանոսս յեկեղեցի:

66 Արդ ուրախանալ դստեր Սիոնի հրամայէ, որ է տիեզերական Եկեղեցւոյ կոչումն: 67 Իսկ թագաւորն Յիսուս, որ թագաւորէ ըստ արարչական գաւրութեանն երկնի եւ երկրի, թագաւոր է ըստ

մարմնոյ, զոր ընդ արարչական բնութեանն միացոյց. եւ գալ՝ զգիմեցումն չարչարանացն ասէ. եւ յանմաքուր նստեալ կենդանիս՝ զհրէից եւ զհեթանոսաց զանմաքրութիւն սրբէ իւրով մահուամբ: 68 Իսկ ի վերայ նստեալ տաճարացուցանէ սրբութեամբ զհաւատացելոցն միտս ինքեան՝ անորոշելի յերրորդութենէն: 69 Ասէ. Կապեցե՛ գորթոյ գէշ իւր: 70 Որթ՝ զինքն խոստովանի ասելով. Ես եմ որթն նշմարիտ. եւ էջ՝ զհրէից զհաւատացեալսն, զորս կապեաց ընդ ինքեան: Գորպիսի կապ ոչ կարասցեն փորձութիւնք աշխարհիս լուծանել:

71 Եւ գորթոյն գնդակէ գլաւնակ իւր: 72 Յաւանակ՝ զսուրբ Եկեղեցի ասէ, եւ գնդակ որթոյ՝ զերանելի առաքեալսն. զի որթն Յիսուս կապեաց ընդ իւր հրաշագործութեամբ զհրէից անմաքրութիւնն, հպելով առ ամենայն ախտածէտս բժշկապէս, իսկ գնդակ որթոյ՝ երկոտասան առաքեալքն, որք որպէս գնդակ յորթոյ, ծնան ի նորա վարդապետութենէն, վասն զի զհեթանոսաց կոչումն յաւիտենական կապեաց ընդ առաքելական վարդապետութեանն: 2:

73 Եւ բազմութիւն ժողովրդոցն ասէին. Աւրիմեալ որ գաս յանուն Տեառն: 74 3Մովսէս եւ մարգարէքն զայսպիսի եկաւորութիւն Փրկչին կանխաւ գուշակեցին, եւ քահանայութիւն միշտ ընթեռնոյր եւ մնայն աստուածեղէն գալստեան, վասն զի զտղայսն աստուածաբան՝ Սուրբ Հոգին արար, եւ որպէս մասամբ ցուցանելով, եթէ որ գալոցն էր՝ դա է, եւ որում ակն ունիք

՞՞՞ Յ․Վ․Ժ․Գ․ 27
 Է՞՞՞ Յ․Վ․Ժ․ 22

Գ՞՞՞ Ի՞՞Թ․ 11
 Դ՞՞՞ Յ․Վ․Ժ․ 1
 1 Մի օրին. յիմեան, որպիսի՞ կապ ոչ կարացին կենցաղոյ փորձութիւնն լուծանել
 Ե՞՞՞ Ի՞՞Թ․ 11
 2 Մի օրին. ընդ առակախօս վարդապետութեան իւրոյ
 3 Գ. 74-86 հատուածը ի միում օրինակի պակասի:

միևսանգամ, զի եկեալ կոչեսցէ յանապահան եւ յանճառելի Երրորդութեան շնորհս: 75 Եւ գայ դատել զտիեզերս եւ ըստ գործոց հատուցանել վարձս:

76 Իսկ քահանայապետքն եւ դպիրք ի նախանձուէն նսեմացեալք՝ ոչ զճշմարտութիւնն անսուտ արեգականն¹ կարողացան տեսանել, զի մտաւք եւ բքոք առհասարակ եղեն անտեսք, այլ եւ բարբառոյ տղայոցն համրացեալք՝ մատուցեալ առ Յիսուս ասէին. Սաստեա՛ ժողովրդեանդ զի լոնսցես: 77 Եւ նա ասէ. զի եթէ գոհսա լոնսցուցիչ, քարիմֆդ աղաղակեսցես:՝

78 Քարինք զանպտղութեան ունին զբնութիւն եւ զամլութեան. այսպէս եւ հեթանոսք. որպէս եւ զնոյն տեսակ քարացեալ սրտիւք՝ անպտուղ եւ անբոյսք էին յաստուածային բարեպաշտութենէն, որք հանդերձեալ էին ի ձեռն առաքելական քարոզութեանն խոստովանել զԱստուածութիւն նորա:

79 Դարձեալ քարիմֆդ աղաղակեսցես. զնոյն ինքն զքահանայիցն ասէր, որք դեռեւս ոչ էին ընդ առաքելոցն անկեալ վարդապետութեամբ, եւ անպտուղք ի հաւատս, որք հանդերձեալ էին զաշակերտացն վերածայնել բարեբանումն, յորոց նիկողիմոս եւ Կայիափա եւ Պաւղոս եւ եւթանքն ստեփանեանք եւ հազարաց բազմութիւնքն, որք զկնի յարութեանն առաքելոցն դարձան քարոզութեամբ: 80 Եւ եւս քարիմֆդ աղաղակեսցես: 81 Քարիմֆ ի շինուածս տրամադրին ի հիմունս, եւ զբոլոր շինուածն ի վերայ ինքեանց բերեն անշարժապէս. այսպէս եւ երանելի առաքելքն տրամադրեցան ի հիմունս Եկեղեցոյ կարծր եւ անշարժելի իւրեանց հաւատովն, յորոց վերայ շարադրեցաւ Եկե-

ղեցոյ պարակարգութիւն². ըստ որում Պետրոս վէմ դաւանեցաւ յաստուածային բերանոյն՝ խոստովանելով զՅիսուս ի Հաւրէ իջեալ անորոշապէս: 82 Այսպէս եւ որք ի գրաւորականին՝ քարինս կոչէ զմարգարէութիւնս եւ զքահանայութիւնս. վասն զի ասէ Քարիմֆ սուրբ հոլովից յերկրի նորա³: 83 Հոլովել՝ զկոչումն աստուածեղէն հրամանին ասէ, ի քահանայութիւն, ի դատաւորութիւն, ի թագաւորութիւն, զի երանելի առաքելոցն քարոզութիւն եւ կոչման³ ձայնք, ընդ ամենայն երկիր հասին բարբառով աւետարանութեան, եւ ի տիեզերս ժամանեցին նոցուն բանքն ի փրկութիւն: 84 Արդ, եթէ մանկտիղ լռեսցեն, Պետրոս վէմն՝ հանդերձ առաքելովքն աղաղակեսցէ զՈրդոյ զեկաւորութիւնն մարմնապէս եւ աստուածաբար անանջատելի ի Հաւրէ, բովանդակ ի յերկրի եւ բոլորովին յերկինս, ընդ Հաւր լնու զքրոբէական աթոռն, եւ, ի վերայ անմաքուր կենդանեաց նստելով, մտանէ յերուսաղէմ: 85 Անդ ի սերովբէից զմաքուր եւ զարարչականն ընդունի աստուածավայելուչ գովասանութիւն եւ աստ ի տղայոց՝ ի մտանելն աստուածապէս եւ մերունակ կերպիւ իննամակալութեամբ⁴ ընդունի: 86 Անդ իմանալի տեսութեամբ եւ բոլոր Աստուածութեամբ սերովբէիցն երեւի, աստ զգալի բնութեամբ շաւշափի, եւ է ամենայն յամենայնի եւ լնու զամենայն պարս ոլորտապէս, որոյ երկին թգաւ եւ երկիր փաւ⁵:

2 Մի օրին. դասեցաւ եկեղեցոյ շարադրութիւն
՝ Գ.Վ. Թ. 16

3 Մի օրին. նոցունց ձայնք

4 Մի օրին. վկայութեամբ

5 Հմմտ. Ե. Թ. 12:

1 Մի օրին. ոչ զնշմարտութիւնն եւ զանսուտ արեգակն

՝ Գ.Վ. Թ. 39

87 ¹Եւ եւս քարինքդ աղաղակեսցեն, վասն զի միշտ ի հայրապետութիւն պանծային Աբրահամու գործոցն, որոց ի սակս մեր յանդիմանելով ասէր. Մի՛ սոսկ պարծիք, Աբրահամու աննմանողի, նորում գործոց նահապետին: 88 Ասեմ՝ ձեզ, ասէ, կարող է Աստուած ի քարացս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու՞: 89 Որպէս յանձնունդ յորովայնէ ծնաւ Իսահակ, յորմէ՛ դուք, աշպէս եւ յանհաւատ եւ յանձրնունդ ժողովրդենէ հեթանոսաց կարողացի իմ տէրութիւն մանկունս հաւատոյ ծնանել Աբրահամու, որք զիմս աղաղակեսցեն եկաւորութիւն մարմնապէս եւ աստուածաբար. Արիհնեալ որ գասդ յանուն Տեսուն:

90 Իսկ մեր զաստուածավայելուչ տաւնեալ աւուրս կնքեսցուք զբանս՝ ընդ տղայսն աստուածաբանեսցուք գոչելով զսարսափելի զարարչական բարեբանութիւնս², եւ ընդ աշակերտսն սպասաւորեսցուք տէրունական եկաւորութեանն, ընդ ժողովրդեանն բազմութեան զգեստս եւ զուռս հետեւեցելոցն յերկրի արարչականին սփռեսցուք ոտիցն, զի ամենայնիւ եւ ընդ ամենեսեան հաղորդեսցուք աստուածապէս եւ մարմնաւոր անբաժանելի առանձնաւորութեանն Քրիստոսի, եւ անորիչ եւ համապատիւ Արքայ Երրորդութեանն. որում գովութիւն եւ մեծ վայելչութիւն եւ փառատրութիւն ի մերոցս խոստովանեսցուք բերանովք³ զանորոշելի

եւ զանմեկնելի զմի Աստուածութիւն եւ զերիս անձնաւորութիւն բաժանեալ առանձնաւորութեամբ եւ միաւորեալ Աստուածութեամբ, զի⁴ նորա է պատիւ, փառք եւ զաւրութիւն յաւիտեանս. ամէն:

Դ. ՆՈՐԻՆ՝ ՅԱՂԱԳՍ ԵԿԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՓԻԿՉԻՆ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

1 Ձբազումս թողլով էմմանուէլի զսքանչեւագործութիւնս, յերկեան եւ ի սերկեանս փութասցուք բացայայտութիւնս հրաշից եւ զերկաքանչիւրոցն զարմանագործութիւնս ի պատմագով ասպարիսին հանդիսայայտել զքաջայայտ առաւելութիւնս, քանզի նախագործեալ աստուածեղէն եւ նախագործ հրաշս, երեկ զխոստովանեալ երկաւորութիւնն ի Բեթանիա կատարէ, եւ զյառաջաճառեալ զՂազարու յարութիւնն գայ ի լնուլ, իսկ այսաւր մտանէ յԵրուսաղէմ, նստեալ ի վերայ յաւանակի՝ զմարգարէական նախագուշակումն հաւատարմացուցանելով: 2 Երեկ զՄարիամ եւ զՄարթա շնորհագարդէ⁵ հաւատով. զչորեքաւրեայ մեռեալն ի գերեզմանէն ընդունի կենդանի, այսաւր զաշակերտսն եւ զտղայսն սրբէ աստուածաբար⁶ եւ զեկան ի փրկութիւն բոլորիցն մանկանցն փայլէ բարեբանութեամբ: 3 Երեկ զմահու լուծանէ զիշխանութիւն եւ զըմբռնեալն ի նմանէ հանդերձ շնչով եւ մարմնով կորգեալ վերածէ ի կենդանութիւն, այսաւր զհեթանոսս եւ զհրեայս լուծանէ ի հակառակամարտին ծառայութեան եւ նստի ի վերայ վարդապետութեամբ, եւ ուղղէ ի խաղաղութիւն զերասանակն նշանակաւ՝ երկուց կենդանեաց նստելով ի վերայ մտանէ յԵրուսաղէմ: 4 Երէկ զՂազարոս երիզապնդեալ ո-

1 Հրատ. ծանուցում է. Աստէն յաւելու մի օրինակն եւ գայս ինչ: Որպիսի՞ տեղի յոր փոփոխեսցի որդի անջատելով ՚ի միւսմէն. եւ գերեւելն մերոյ փրկութեանս աղագաւ, գեղջն խոստովանին մաքուր անձինք. եւ զնուաստութեան սակս եկաւորութիւն ՚ի վերուստ խոստովանէին հոգեկրացն անձինք

Պատմ. Գ. 9. Գ. 4. Գ. 8

2 Մի օրին. փառաբանութիւն

3 Մի օրին. Բերանոցս զանմեկնելի եւ զանորոշելի աստուածութիւն, հանդերձ գովասանական երգով օրհնեսցումք բարեբանեսցումք բարեհամբաւեսցումք

4 Մի օրին. Որում սարսափելի պատիւ եւ գոհութիւն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն սրբոյ, յաւիտեանս յաւիտեանից, ամէն

5 Մի օրին. շնորհափառէ

6 Մի օրին. զաստուածաբանս

տիւք ձայնէ արտաքս, եւ կտակեղէն կապարանն անկարացեալ արգելուլ գտէրունեան հրամանն, լուծանէր զիւր կարգն՝ ողջ զինքեան Արարչին պահելով զհրամանն, եւ մահու ծառայակցէր՝ արարչական հնազանդելով հրամանին: 5 Այսաւր զառաջին մարդն ի կապարանէն արձակէ յանիծիցն, եւ առաւելութիւն յանցանացն ոչ բաւէ գտէրունեանն արգելուլ զհրամանն եւ յինքն զյանցումնն կորզէր որպէս զյանցաւոր, եւ փոխանակ յանցաւորի մարդոյն դատապարտի. անպարտն զպարտաւորն առաջի ինքեան կացուցանէր Հաւրն:

6 Յանցելումն աւուրն զգայութեանցն կենազործէ զմեռելութիւն, եւ զվարչամակեայ պատառէ զկապն, եւ լուծանէ յերիզապնդէ շղթայիցն զձեռսն, եւ զարարչականն ծանուցանէ զաւրութիւն եւ հողեղէն մասն ի հող դարձուցեալ՝ ոչ ձեռաւք իբրեւ զառաջինն կենդանաստեղծու, այլ սոսկ ձայնելով անուանակոչութեան եւ սարսափմամբ արագապէս զելսն կատարէ: 7 Իսկ ի սերկեան աւուրս գտիեզերաց զկոչումն ընդ փարիսեցիսն եւ ընդ սատուկեցիսն ճառեալ ասէր՝ եթէ տղայիդ լոնն՝ զարիւնաբանութիւն քարիմիդ աղաղակեսցեն. որով նշանակէ զանպտուղ հեթանոսաց պտղաւետեալ բարեպաշտութեանն զհաւատս: 8 Յերեկոջ աւուրն ի Բեթանիա, որ է տուն չարչարանաց եւ տուն հնազանդութեան: 9 Տուն չարչարանաց՝ յաղագս ննջելոյն Ղազարու բարեկամի, վասն որոյ եւ արտասուլթորէր յաչաց Արարչին՝ բոլոր մարդկեղէնս կարեկցեալ բնութեանս բարեկամապէս եւ ազգակցաբար բերեալ լինի: 10 Իսկ տուն հնազանդութեան՝ վասն զի հնազանդէր Ղազարոս մահու՝ յաղագս նախահաւրն ընդ մահու անկեալ իշխանութեան, եւ հնազանդէր մահ Յիսուսի՝ յաղագս արարչական գաւրութեան. ծառայապէս լսէր տէրունեան հրամանին եւ ընդձեռէր զմեռեալն աստուածային

հրամանատրութեանն: 11 Իսկ այսաւր գայ յԵրուսաղէմ յիւր չարչարանաց տունն. վասն զի անդ հանդերձեալ էր չարչարանաւք՝ ի չարչարանաց զմարդկայինս ազատել զբնութիւնս, եւ ի տուն հնազանդութեան գայ, որ զանհնազանդ մարդկեղէն բնութիւնս ընդ հնազանդի Բանին միաւորէ. եւ հնազանդի՝ փոխանակ անհնազանդելոյ առաջին մարդոյն՝ իւրում Հաւրն. վասն զի ըստ մարմնոյն հնազանդէր ծառայակերպ տեսակաւ հասարակաց Հաւրն, իսկ ըստ Աստուածութեանն ընդունէր զբարեպաշտութիւնս արարչապէս ընդ Հաւր համապատուաբար:

12 Ի գնացելումն աւուրն ի տան Մարիամայ եւ Մարթայի ուտէր ընթրիս, եւ յանդիման բազմի Ղազարոս ի գերեզմանէն յարուցեալ. ունի ընդ իւր գերեզմայինդ կտաւն հաւատարիմ վկայ, զի ի ձեռն կերակրոյն եւ ըմպելոյն եւ գերեզմանական կտաւոյն ճշմարիտ եւ հաւատարիմ յարութեանն հաւատասցեն Ղազարու: 13 Իսկ ի հանդիպելում աւուրս, զղորեցուցանէ զբոլորն Երուսաղէմ ի պասեքատանիս² մտանելով ի սա, եւ ի նորեկաց ժողովրդոցն փորձեալ ստուգէր Յիսուս ի Նազարեթէ գալիլեացուց, որոց խոստովանութիւնն համաբանի ընդ հրեշտակին³ երեւելով հովուացն ի Բեթղահեմ:

14 Ի գնացելումն աւուրն զՄարիամայ ընդունի զբարեպաշտութիւնն՝ զպատուական իւրոյն աւուրումն խոստովանի սպասաւորութիւն իւրոյ մահու, ի չարչարանացն գործակցութիւն: 15 Ջարտասուն անմաքուր վարուցն լուացարան, հերն՝ զմեռելութիւն ի մարմնեղէն վա-

1 Այլ օրինակ եւ հնագանդի աստուածախոն մարմնով հասարակաց չորս փոխանակ անհնազանդութեանն Ադամայ, եւ ըստ աստուածութեան առնու բարեբանութիւն ընդ չոր ՚ի հրաբուն գորաց

2 Մի օրին. ՚ի պասեքայ տունակ

3 Մի օրին. միաբանեալ հովուացն ՚ի Բեթղեհեմ ընդ հրեշտակին

րուցն, եւ զոտսն՝ ոտիւք ընթանալ զժամանակս կենդանութեան, եւ զեւթներեակ աւուրցն որովք յառաջ մատեան ամիսք եւ տարիք, յորս անսուրբ հետեւանայր գործովք իւրովք՝ մաքուր ոտիւքն սրբէր: 16 Իսկ ի հանդերձելումն աւուրս զքահանայիցն կատարէ ախորժակս՝ գայ յայտնապէս աշակերտացն բազմութեամբ՝ սրէ զլեզուս մանկանցն յաւրհանաբանութիւն. ազդէ ի միտս ժողովրդոցն եւ զտնկոցն ի ճանապարհին տարածանել, որք են աստուածային եւ թագաւորական սպասաւորութիւն, վասն զի երկու սքանչելագործութիւնք յերկուս կատարեալ աւուրս գործեցան՝ յանգործականիս եւ ի սկզբնականիս¹. եւ ըստ լինելութեան յանգործականի՝ սկզբնականին շաբաթ, որ է հանգիստ, եւ եւթներեակ միաշաբաթուն, որ է սկիզբն. քանզի ի դատարկարանին գործէ Աստուած հրաշափառ ի մեռելութենէ յարութիւն բանական բնութեանս, զի նախ ի լինելութեանն դադարումն լինէր յեւթներորդումն աւուրն, եւ զի բոլոր արարչակերտագործութիւնքն բարի են, Մովսէս խոստովանի. Ահա զոր արար Աստուած, բարի է՞: 17 Սակս զբարեգործականելն լռէր Աստուած, քանզի յառաջնմէ մինչեւ ի վեցերորդն զերկին եւ զերկիր փառագարդեաց Աստուած, իսկ ի վեցերորդումն զմարդն իւրովն կենագործէ ձեռամբ, եւ աւրէնս աւանդէր պահպանակսն: 18 Ի լռել մարդոյն զպատուիրանապահութիւնն լռէր եւ Աստուած զբարեգործութիւնն, զի ի վեցերորդումն մարդն դադարէր յաւրինապահութենէն, եւ յեւթներորդումն արգելոյր Աստուած զբարեգործելն, եւ զայս ոչ վայրապար, այլ արարչական ճշմարտութեամբն, վասն զի երկինք եւ երկիր սակս մարդոյն, եւ մարդն՝ վասն պատուիրանին:

րանին: 19 Պատուիրանապահելն զաստուածեղէն բարերարութիւնն բացափայլէր. ի լռելն պատուիրանապահութեանն՝ լռէր եւ աստուածագործ հրաշքն, քանզի մերկանայր մարդն յարարչատուր փառացն յաղագս յանցմանն, եւ մեռանէր Ղազարոս երկրային եւ ժամանակաւոր մեռելութեամբն: 20 Անդ յաղագս նախահաւրն պատուիրանագանցութեանն լռէր Աստուած զյանցանացն թողութիւն, աստ յաղագս Ղազարոս աւանդապահի երկասիրէր զկենագործելն ի գերեզմանէն:

21 Նմանապէս² շաբաթ առաջին եւ երկրորդ. ի նախնումն ի բարեգործութենէ լռէր Աստուած, նախահաւրն պատուիրանապահութենէն լռելոյ աղագաւ, յերկրորդումն յաղագս Ղազարոս քրիստոսասիրութեանն, նորոգէ ի գերեզմանական անշնչութենէն, եւ ի մահագգեաց պարածածուկ կտաւակապութենէն արձակէ: 22 Իսկ միաշաբաթն է բարեբանութեան աւր, եւ աշակերտացն բազմութեան զեկսն յերուսաղէմ բարեբանելով ի վերայ անմաքուր նստելով կենդանեաց. ձորձոց եւ տնկոց ընդ ոտիւք տարածելովք մուտն յերուսաղէմ ահաւորապէս, դղրդիլն Երուսաղէմի ժողովրդովքն եկելովք, քահանայիցն արտանալով զնախանձն՝ զի՞նչ զքէն աղաղակեն ասելով ցՏէրն: 23 Պատասխանի ետ Տէրն. Ձի թէ մանկտիդ լոնն՝ փարիմֆո աղաղակեսցենն³:

24 Միաշաբաթն է սկիզբն լինելութեան, զի անդուստ սկզբնաւորեալ երկնի եւ երկրի արարչագործութիւն: 25 Արդ³, վասն զի առաջին աստուածավայելուչ ապականեցաւ իրագործութիւն յանցաւորութեամբ նախահաւրն աղագաւ, զյանցաւորի առնու զկերպ, եւ որպէս զյանցաւորս

1 'Ի միում օրինակի չի՞ր յանգործականիս եւ 'ի սկզբնականիս
 ** Եւ. Ը՝ 8, 10

2 Մի օրին. նոյնապէս
 3 Ղ.՝. Է. Ժ. Թ. 40
 3 Աստի միջեւ ցկրկին աստեղսն չի՞ր 'ի միում օրինակին

տայ ի դատապարտութիւն զանձն, եւ որպէս թողացուցանէ դատողացն զինքն դատապարտել, զի զդատապարտութիւն առաջին մարդոյն գրաւականեսցէ, եւ մարդացեալն Աստուած պարտաւորութիւն ընդունի, եւ փոխանակ գրաւականի Հաւրն ի մեղս ի մարմինն աստուածացեալ, եւ անյանց զմեղս ընդունի կամաւորաբար եւ յանցաւորապէս եւ մարմնացեալ Աստուածութեամբն զբողոք յանցաւորութիւն լուծանէ զնախնի մարդոյն, անյանց զնա առաջի ինքեան կացուցանէ Հաւրն:

26 Եւ բազմութիւն աշակերտացն նշանակէ զհանդերձեալ տիեզերական հաւատացելոց կոչումն, իսկ Ձիթաստանեաց լեառն՝ ձէթ արեգական է գործակից լեառնն՝ զաստուածեղէն վարդապետութեան զբարձրութիւն ասէ, ձէթ զլուսափայլ եւ գտէրունեան բերանն, որ արտաքոյ զաստուածախաւսութիւնն ջահաւորէ: 27 Իսկ տունկս ընդ ոտիւք տարածանելն, երկիր ի փշաբեր անիծից յառաջին դառնալ ի ծաղկաւէտութիւն, եւ տնկոցն վերահանդիսանալ հասակ ստեղն¹ վերածնութեամբ քաջապտուղ եւ բարեսաղարթ, զոր առեալ ժողովուրդն ընծայեցուցանէին անիծից բարձրոյն եւ նորոգչին գերկիր՝ յառաջին աստուածակերտութիւնն²: 28 Իսկ ձորձոցն տարածումն՝ զախտացեալսն հոգևով եւ մարմնով, որք հաւատով ի Յիսուս մերձեալ բժշկեցան, նշանակէր, եւ քահանայիցն ախտանալ ընդ մանկանցն աւրհնաբանութիւնս՝ զնորահաւատիցն արգելուլ զխոստովանութիւն եւ առաքելական քարոզութեանցն ընդդիմամարտք զաւրութեամբ:

29 Իսկ ասելն Տեսուն՝ եթէ դոքա լոնսցեն Բարիմեդ աղաղակեսցեն. քարինք գերանելի առաքելոցն զկարծր եւ զհիմնադրական քարոզութիւնսն ասէ. եթէ

զմանկտիղ արգելից, Պաւղոս եւ Նիկողիմոս եւ Գամաղիէլ եւ Կայիափայ, որք են տակաւին անպտուղք եւ քարատեսակ ի հաւատս եւ ի հրէութեան քաջ անպտուղք, սոքա զիմս խոստովանեսցեն զԱստուածութիւնս մարդացեալ³, եւ գերկուս եկաւորութիւն քաջաձայնապէս բարբառելով՝ զառաջինն եւ գերկորդն:

30 Եւ եւս Բարիմեդ աղաղակեսցեն. իմանալի է քարինք զմարգարէսն, որք յաւրինին հանդիսացան ի շինուածս, եւ ի նոցունց մարգարէական խոստովանութիւնք, որք զբովանդակ տնաւրէնութիւնն գրաւք նախագուշակական⁴ տառիւք յիշատակ առ յապայ եղելոցս անկապտելի թողին գանձ. երկու հաւատարիմ վկայիւք՝ մարգարէական եւ աւետարանական աստուածախաւսութեան գրովք: 31 Ձիթ⁵ եւ զտաւնախմբողքս արժանի արասցէ նոր արքայութեան, զի նորա են փառք եւ զաւրութիւն յաւիտեանս. ամէն:

ՄԱՄԲՐԷԻ ՎԵՐԾԱՆՈՂԻ Ի ԾՆՈՒՆԴԻՆ ՓՐԿՁԻՆ ԱՍԱՑԵԱԼ ԵՒ Ի ԾՆՈՒՆԴԻՆ ՆՈՐԻՆ ՈՒԹ ԱՒՈՒՐՆ, ԱՅՊ Է՝ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ⁶

1 Լոյս փայլեալ ի լուսոյ սիրողացն զլոյսն պայծառացուցանէ զտեսութիւն, իսկ երկնային եւ արարչական լոյս ծագեալ զընդհանուր⁷ տիեզերս: 2 Լոյս էր աւրէնն, պատուիրանք Տեսուն լոյս են եւ լուսաւորեն զաչս՝ գրաւոյ սականին (sic)

1 Մի օրին. հաստս ստեղն
2 Մի օրին. հրաշակերտութիւնն

3 Մի օրին. տակաւին անպտուղք, դոքա զիս խոստովանեսցին մարմին աստուածացեալ
4 Մի օրին. տնօրէնութիւնն իւրեանց նախագծական
5 Հրատ. ծանուցում է. Աստուծոյ մի օրինակն ունի հատուած մի երկայն յառաջին նաւէն, եւ աւարտ նաոխս առնէ քաղցրով եւ օրինակելով զառաջնոյն զվերջաբանսն: Նոյնպէս եւ միւս օրինակն, ունի այլ իմն հատուած առեալ յառաջնոյ անտի, եւ վերջաբանէ ըստ օրինակիս գոր եղաւ:
6 Մկրտութիւն-ը լուսանցում
7 Ձեռ.՝ զնթանուր
՝ Սաղմ. ԺԸ (ԺԹ) 9

երաժշտապետն խոստովանեաց Դաւիթ: 3 Լոյս էր եւ Յովհաննու կարապետական մկրտութիւն եւ մաքրէր զյանցմանց խոստովանութեամբ եւ զմարմինս ջրոյ լըւացարանաւ եւ վերագոյն քան զքահանայական մկրտութիւնս էր: 4 Լոյս Իսրայէլի՝ աստուածեղէն յայտնութիւն եւ մկրտութիւն: 5 Սա է վերագոյն լոյսն եւ նախաճառեալ լուսաւորութեանցն լուսոյ լոյս, քանզի երբեակ զանազանութեամբ Բան ի ծոցոյ երեւեալ Հաւր նախ ի մարգարէական նշոյլափայլ լուսաւորութեամբ ի գիշերացելում բազմաստուածութեան գեկաւորելն գուշակէր:

6 Երկրորդ՝ զաստուածեղեն եւ զմարմնաւոր ծնունդ յանապական Կուսէ ծնանելով Հաւատարմացուցանէր զնախահարցն կանխագուշակ տեսութիւնս, որք զԿուսին յղութիւն, ի Բեղղեէմ գծնունդն, զփախչիլն յԵգիպտոս եւ զԲանն տնաւրինեալ եւ աստուածաբար ընդ մեզ կենցաղավարեցեալ բացայայտեցին արարչական հոգովն երբեակ յայտնութիւնս տիրապէս եւ աստուածաբար: 7 Եւ գերագանցեալ գերկու[ն]քն՝ ճոխանա առաւելաբեր շնորհիւ, վասն զի ճշմարտապէս զբնութիւնս գաղափարեաց, իսկ բնաւորութենէ բնութեանս առնէ սկիզբն գծնելութիւն եւ գերեսներեակ ներէ ժամանակս, յորս լուէր զարարչեղէն սքանչելագործել հրաշս, զի մի խակ եւ տարածամ երեւեսցի աւրինական վարդապետելն, լուծանէր զնախանձաբերացն զպատճառս եւ, աւարտեալ զմարմնաւոր տիրոցն սահման, զչարակնողացն կտրէր զհակառակասէր կամսն: 8 Վասն զի յանցաւորութեան յառաջին մարդոյն սակս զյանցաւորի տպաւորի պատկեր երիտասարդական նախաստեղծին տիաւք յայտնէր զաստուածային երեւումնն, զի յերկուց տարացուցական վկայից արարչեղէն Հաւատարմացի բարեբանեալ յայտնութիւնս, քանզի ստուգապէս մարմնանայր Բանն՝ բովանդակ մարդկե-

ղէն մասանց ողջ գկարգն պահելով: 9 Եւ դաստիարակութեամբ Կուսին զտղայութիւն Հաւատայր եւ Հասարակաց բնաւորութեան աղբիւրն գոլով ի տղայական տիս պատճառէր զանբանութիւնս եւ ըստ աւրինականին անվանէր աւաղիւք թլփատեալ յութեորդումն ի քառասներորդումն արեամբ աղանեաց ի տաճարի լինի յանդիման: 10 Այսպէս եւ յերեսներորդումն ի Յովհաննէ մկրտի եւ զհամաւրէն գրաւորականին ժողովարանին աւարտէ գաւանդն, զի մախացողքն անբանասցին ի հայհոյական պատճառէ պանծացաւղքն յաւրէնս, քանզի կարապետութիւն Յովհաննու մաքրէր զոգի եւ զմարմին մարդկեղէն բնութեանս եւ մարմնացելումն յերկրի աստուածապէս ուղիղ ճանապարհ զմաքրութիւն ոգւոյ եւ մարմնոյ աւրինական ժողովարանին առնէր: 11 Ես ճայն բարբառոյ յանապատի՝ ասելով ճայն հնչողական զնախահրաւէր զյառաջագուշակ զիւր կոչումն ասէ եւ անապատ գանայատ եւ զանսկզբնաւորեալ քարոզութիւն առաքելոցն ասէր եւ եւս անապատ, քանզի ի քաղաքս եւ ի դրունս թագաւորաց մարգարէաբանեցին սուրբ հարքն: 12 Իսկ մեծն Յովհաննէս յամայացելում վայրի ի Սաղիմա եւ Յորդանանու եզերս վայրագապէս բացաւթեա գնայր եւ քաջաճայնաբար հնչելով. Զապաշխարեցեմ, հասեալ է արքայութիւն երկնից՝ ապաշխարել ի զղջումն յանցաւորութեանց մկրտելոցն յինքենէ, ասէ, եւ արքայութիւն՝ զՅիսուսի Աստուածութիւն, որ ի մկրտութեան Իւրում զյարարչական յայտնէր զաւրութիւն եւ ընդ տիեզերս հասարակաց Հաւրն հաճել զաւրութիւն Սուրբ Հոգին Յիսուսի խոստովանէր եւ նոյնինքն Մկրտիչն յեկաւորիլն ի մկրտութիւն ասէ: 13 Սա Գառն Աստուծոյ եւ բովանդակ մարդկե-

“ Յովհ. Ե 23
 † Մատթ. Գ. 2, Գ. 17

ղէն մեղաց բարձաւղ եւ զմկրտելն պատկառէր յաստուածային սոսկացեալ կիզմանէ զծառայական առ նա ճառեալ ասէ բանս: 14 Ինչ ի հասարակաց կենդանագործէդ պարտ է մկրտիլ, եւ զանճառելի արարչութիւնդ ընդ արարածոյս նուաստացուցանես բնութեամբ: 15 Ինձ աւրէն է առ քեզ գալ՝ առ տուողդ զՍուրբ Հոգիդ, առ վերածնիչ գտիեգերս յորդեգրութիւն երկնային Հաւրն եւ առ գրողդ զանուանս ի կենդանեաց դպրութիւն: 16 Տուիչդ զՀոգի Սուրբ, առ իս գաս, որ ոչ ծանեար զմեղս եւ կիզուս զմարդկեղէն անաւրէնութիւնս¹, Արարիչդ արարածոց, նուաստանաս նիւթոյս՝ ճարտարպետդ, ծառայիս՝ Տէրդ, երկնային արքայութիւնդ՝ կարապետականիս, Աստուածդ՝ մարդոյս, հոգոյդ տուողի՝ յապաշխարութիւն Մկրտչիս, Տէրդ՝ սպասաւորիս, ոչ փորձեցայց ասէ ծախելի բնութեամբս ի հրեղէն բնութիւնդ հպիլ, զի հուր ծախիչ ես Աստուածդ մեր, զնմանն Պետրոսի խոստովանեալ ի պասեքական ընթրելն, յորում հրաժարէր մեծն առաքելոցն ի յաստուածեղէն սպասաւորութենէ ի ծախելի սոսկացեալ բնութենէն:

17 Աստ Յովհաննէս պատկառէր զարարչական գագաթամբն ածել ջուր, անդ Պետրոս սոսկացեալ գտէրունեան ձեռացն սպասաւորել ոտնալուայութիւն: 18 Աստ արարչական պատասխանեալ բան ասէ. Այժմ այս պարտ է կատարել²: 19 Անդ ասէ. Թէ ոչ աստուածային լուացից զոտսդ ձեռաւքս, ոչ ընդ իս զորդեգրութեան ընկալցիս շնորհս եւ ծառայապէս հնազանդեալ երկաքանչիւրոց: 20 Աստ Յովհաննէս ի հրամանէն հարկաւոր էր մատուցեալ սարսափմամբ ածէր ջուր զաստուածեղէն գլխովն: 21 Անդ Պետրոս ծառայապէս զոտսն առաջի տէրունեանն ունելով սուկայր զարարչական ձեռացն հարկանել:

22 Եւ քանզի յայտնութեան խորհուրդս, որ առնէ ի մկրտութենէ սկիզբն, մկրտի Յովհաննէս ոչ ըստ կարապետագոչմանն, թէ ուղիղ զձեզ արարչեղէն ճանապարհին կազմեցէք հետեւելոցն ի ձեր մարմնի եւ յողով ի մաքուր վարս:

23 Արդ, հասարակաց Արարիչն որում վերագունի քան զինքն մաքրեսցէ զանձն, զի եթէ Յովհաննէս նորա սակս քաջաձայնէ, թէ յարմարեցէք գտէրունեան պողոտա², յորմէ՞ պատկառեալ բոլորեցուն Արարիչն հայցէ զմկրտութիւնն ի խոստովանութեանց կարապետիս յայտ է. ես ի քէն հայցեմ զմկրտութիւն ի տուողէդ զմաքուր հոգի ի հոգեւորականէդ գրաւորականս ի հոգևոյդ եւ ի հրոյ յապաշխարութիւն կարապետիս եւ ի վերա ծնողէդ աւագանաւ յորդեգրութիւն ի խոստովանութիւն եւ ի մարմնոյ մաքրութիւն լուացիչս. ոչ ասէ ոգոյ եւ մարմնոյ սակս մաքրութեան եւ կամ վերագունի քան զիս ի ջելոյ Տեառն ի քէն մկրտիմ: 24 Այլ զբովանդակ կնքեցից կարապետական³ մկրտութեամբդ եւ սկզբնաւորեցից⁴ զիմ աւետարանականս յայտնապէս եւ ի մկրտութենէն սոսկ գրով զմկրտելն յորդեգրութիւն հրամայեցից եւ կոչեցից արարչապէս զմկրտեալսն յապաշխարութիւն մկրտիլ ի Հոգիս Սուրբ եւ ի հուր եւ աստուածային յայտնութիւնս ասէ երկուք⁵ հաւատարմասցի՝ վկայիւք: 25 Յերկնուստ Հաւր բացարձակելով ձայն. Դայ է իմ Որդի սիրելի⁶, դովաւ ընդ աշխարհի հաճեցայ եւ յերկրէ ճշմարիտ կարապետդ ասելով. «Սա գառն Աստուծոյ եւ տիեզերաց բարձօղ մեղաց եւ զաշակերտեալսդ քո կարապետականիդ կորեցից յիմ աւետարանականի սպասաւորութիւն արարչաբար: 26 Վասն

1 ակն-ը լուսանցիում:

² Հմմտ. Մատթ. Գ. 15:

2 Ձեռ.՝ պողոտա

3 Ձեռ.՝ կարապետիգական

4 Ձեռ.՝ սկիզբնաւորեցից

5 Այստեղ եւ հետագայում ձեռ. Բ-ում

6 Մատթ. Գ. 17

զի երկուք վկայիւք հաւր արարչականաւն եւ Յովաննու կարապետականաւն եւ երիտասարդական տիաւք Յիսուս կնքէ զաւրէնն զբաւորական եւ զհոգեւորական յայտնէ աստուածապէս եւ զմկրտութիւն Յովաննու, որ ի վեր քան զքահանայականն էր փոխէ զգիրն ի հոգի յաւետարանական զկարապետականն զծառայականն ի տիրականն եւ յաստուածեղէն զմարդկապէսն: 27 Քանզի ճրագ զՅովհաննէս զտէրունեան խոստովանեաց բերանն եւ զինքն արեգակն եւ զաւրինականաց ժողովարան տար աւրէնութիւն գիշեր եւ զեկեալսն ի սաղովկացոցն եւ ի փարիսականացն ի մկրտութիւն խնդալ ասէ ի նորա ջահաւոր կարապետութեան եւ զիւր եկաւորիլն ի մկրտութիւն արեգական ելս եւ որպէս լուսաւոր ի գիշերի լուցմանէ ճրագի. այնպէս եւ նսեմաւոր աւրինականին մանկունք Յովաննու խնդացին կարապետութեամբն: 28 Իսկ յորժամ ճշմարիտ արեգակն Յիսուս եկեալ յիւր՝ մկրտութիւն եւ վկայեալ ի Հաւրէ զարեգակնափայլ յայտնէ զվարդապետութիւն նուաստանա կարապետական ճրագն Յովաննու արեգակնափայլ Յիսուսի աւետարանական վարդապետական եւ տեղի տա ծառայականն արարչականին որպէս. ճրագ արեգակնին, վասն զի բազում ասելով Որդիս Հաւրն երկնաւորի, քանզի կոչէ որդիս զհրեշտակս եւ անդրանիկս զԻսրայէլ ի մարդկեղէն ազգաց եւ որդիս պարարտութեամբ՝ զքահանայութիւն եւ զթագաւորութիւն: 29 Այսպէս զմկրտեալս ի սուրբ աւագանէ կոչէ որդիս: 30 Իսկ ճշմարիտ որդի արարչակից Բանն ի ծոցոյ հայրենի բնութեան անորոշաբար մարմնացեալ եւ սիրագոյն քան զամենայն զարարչակից համափառութենէն ասէ եւ նովաւ ընդ աշխարհի հաճեալ, զի ոչ հայրապետութիւն եւ մարգարէութիւն կամ քահանայական եւ Յովաննու կարապետա-

կան մկրտութիւն զհայր ընդ² աշխարհի կարողացեալ հաճել բա[յ]ց միայն Միածինն համափառ եւ համագոյ Հաւր եւ Սրբոյ Հոգւոյ աստուածեղենն յայտնութեամբ հաշտեցուցանել ըստ արարածս զԱրարիչն եւ զմիջնորմն քակէր զառաջին մարգոյն պատուիրազանցութիւն եւ զհրեշտակաց եւ զմարդկան խառնել զաստուածեղէն բարեբանութիւն: 31 Զի՞նչ մեզ Սրբոյ Հոգւոյն աղաւնակերպիլն ի տերունեան մկրտութիւն: 32 Նախ զի զծնեալն ի ջրոյ ի մկրտել Աստուածութեան ի ջուրս սպասաւորեսցէ: 33 Երկրորդ՝ արարածոց Յիսուսի անդրանիկն յերկրէ թռչունն ծառայապէս սպասաւորեսցէ Երրեակ՝ վասն զի երկնային եւ արագաշարժ Սրբոյ Հոգւոյ արբանէկէր օդաղօղակ բնութիւն արագագոյն քան զամենայն կենդանիս հաստատ նայէ զծառայութիւն ըստ Յովաննու ճայնին՝ Տեսանէի զՀոգին Սուրբ իջեալ աղաւնակերպ յերկնուստ եւ վերայ աստուածային իջեալ եւ հանգուցեալ գլխոյն, վասն զի նիւթեղէն բնութեանն համագոյակից վկայաբանէն: 34 Իսկ տէրունեանն եւ ազատ արարչակից Սուրբ Հոգին, քանզի ով յեղելոց զանեղին ծանիցի. մարմնակերպութիւն, բայց նոյն ինքն մաքուր Հոգին համափառ եւ յանորիչ մի իշխանութեամբ: 35 Քանզի երիտասարդացեալ աստուածային Բանն անճառելի բնութեամբ ճառելիք Հոգւոյն համագոյութեան անեղին լինին եւ ի մկրտիլն ոչ իւր արարչական մկրտութեան սակս, այլ զմկրտելոցն յորդեգրութիւն տպաւորէր զպատկեր: 36 Զի որպէս յանցաւորի առաջին մարգոյն կերպարանակցեաց³ անյանցապէս, այսպէս եւ անյանցապէս, այսպէս եւ անյանց⁴ գոլով մկրտի յանցաւորաբար, զի զմեղուցելոցն քաւես-

2 Ձեռ.՝ ընտ
 3 Ձեռ.՝ կերպանակցեաց
 4 ի-ն լուսանցում

1 Ձեռ.՝ յի

ցէ գյանցանս, վասն քի անդրանիկ ամե-
նայն արարածոց զնա խոստովանեաց Պաւ-
ղոս³⁷: Զի որ ըստ Աստուածութեան
անսկիզբն էր, մարմնանալովն եղանիւր
սկզբնաւոր եւ զծնեալն զկնի ժամանակաց
լիներ անդրանիկ արարածոց յաղագս անս-
կիզբն Աստուածութեան, զի Արարչին եւ
արարածոց անդրանիկն յերկնային մա-
սանց անդրանիկն ջուրք յառաջեսցեն
զծառայապէսն սպասաւորել, քանզի ջուր
էր, որ ի՛ սկզբանն յերկուս որոշէր տեսակս
զերկիր ոլորտական պարունակութեամբ եւ
զերկին հարթածաւալ ի վերայ տրամացե-
լոց հաստատութեանս: 38 Եւ վասն երեւե-
ցելոյ զինքն Աստուած ի ձեռն ջրոյ. ջուրք
զմկրտութիւն սպասաւորեսցեն Որդոյն
Միածնի: 39 Յորմէ առեալ իշխանութեան
սկիզբն յորդեգրութիւն զտիեզերս վերա-
ծնեսցեն Հաւրն բոլորեսցուն, քանզի ի
ջուրն էր ի սկզբանն նախագոյացեալ եւ
զբաւորականին թողութիւնս քահանայա-
կան արբանեկէր մաքրութեան եւ ի կարա-
պետականին զմեղուցելոցն սրբէր զան-
մաքրութիւն: 40 Իսկ ի տէրունեան
մկրտութեանս առնոյր իշխանութիւն ոչ
սոսկ զմեղս քաւել, այլեւ յարարչական
մասն ընդունել որդէգրապէս: 41 Վասն զի
երեւելի լինելութեան եւ նախագոյ զջուրս
Մովսէս ճառէ եւ Աստուածայնոյն վերա-
հետեւիլ նախագուշակումն երիտասարդա-
ցելոյն Հաւր² Բանին եւ արարածոց անդ-
րանկացելոյ յայտնել զինքն աստուածա-
տեսաբար տիեզերաց ի ջուրս եւ ջրով՝
զընդհանուր³ տիեզերս ի շնչաւորութենէ
ծնանել հոգեւորս, որում երաժշտապետն
Դաւիթ յառաջատեսող մարգարէական ե-
ղեալ Հոգւով, ասէ. Զուր որ ի վերայ քան-
զի երկինս ակրհնեսցեն զանուն Տեառն, զի

թեպէտ եւ երկրահոլով Յորդանանու
վտակն խաղայր գերիվերոյ քան զերկին.
էր յաղագս զնստեալն յերկնի եւ յերկրի⁴
ընդունել զմկրտութիւն յինքնէ, եւ
նստեալն յերկնի երկրային մարդ երիտա-
սարդապէս եւ երկրաքարչ ջուրն գերիվե-
րոյ երկնի յաղագս վերահեղուլ զաստուա-
ծային մարմնովն: 42 Նորուն աղագաւ
անպատկառաբանն Եսայի ասէ. Ահաւա-
սիկ անուն Տեառն եկաւոր է յամեցեալ ա-
մաւ գկնի բազում ժամանակաց⁵, եւ յետ
սակաւուց ի վերայ բերէ. եւ Հոգի նորա,
որպէս ջուր ծորալիւր պարանոցաթաղ⁶:
43 Ի բովանդակել մարգարէութեանց եւ
աւրինին կնքել անուն տէրունեան ծնելու-
թեանն հասանէր առ Հերովդէս եւ քահա-
նայապէտն: 44 Իսկ մկրտութեանս Յորդա-
նանու պարանոցալիւր ջրով Սուրբ Հոգին
բացատրական ձայնիւ եւ Հաւր համախո-
հութեամբ ասէ. Դա է Որդի իմ սիրելի, դո-
վաւ ընդ աշխարհի հանեցայ⁷: 45 Քանզի
ձորն զՅորդանանու խորութիւն, ասէ, եւ
լրացեալ զոլորտական բացածաւալումն եւ
պարանոցաթաղ ուսովք չափ զտէրունա-
կան մարմինն Յորդանանու պարածածկել
ջրով եւ զանդուստ ի վեր կարապետական
աջոյն պատկառաբար մկրտել, վասն զի ի
հասարակաց տիեզերացս կորստեանն ջուր
էր, որով երկրի վայելչաթիւնք բառնայր
աստուածային հրամանաւ: 46 Իսկ աստ
մարդասիրեալ նշան բարեգթութեան ի
ջուրս յայտնել գերիտասարդացեալն Աս-
տուած, զի իջմամբ ի ջուրս զառաջին ա-
նէծան, որ ի ջրոցն կնքեսցէ եւ զանշնչա-
ցուցիչ ջուրն ծնիչ յորդեգրութիւն փո-
խեսցէ եւ վասն զի անդրանիկ ի լինելու-
թեան ջուր անդրանիկ Որդոյ սպասաւո-
րեսցէ յերկուս մկրտութիւնս, ի տէրունա-

³⁷ Կ³⁷. Ը 15

¹ Ի-ն լուսանցում

² Ձեռն.՝ յ որ

³ Ձեռն.՝ զնթանուր

⁴ Ձեռն.՝ երկնի

⁵ Ե⁵. Ը 27

⁶ Ե⁶. Ը 28

⁷ Մ⁷. Գ 17

կանին՝ Յորդանանաւ եւ յառաքելակա-
 նին՝ մաքուր աւազանաւ: 47 Ձայսպիսի ի՛
 ջրոց արարչային յայտնութիւն մեծն թա-
 գաւորաց Դաւիթ յառաջատէս Սրբով Հո-
 գով եղեալ ասէ. Գետք ծափս հարցեմ ի
 միասին՝ ձեռամբ՝: 48 Քանզի իջանելով
 Արարչին ի ջուրս տիեզերական խնդացին
 աղբերախաղացք վտակ, զի որպէս գոլով
 ի Յորդանան բովանդակապէս Աստուա-
 ծութեամբն բոլորովիմբ էր ընդ² Հաւր,
 այսպէս եւ իջանելով ի Յորդանան զբո-
 վանդակ լնոյր զջուրս: 49 Վասն որոյ ընդ
 Յորդանան տիեզերական խնդացին ջուրք
 եւ ծափել ձեռաւք զերկուս տաւնել
 մկրտութիւն գտէրունեան Յորդանանաւ
 եւ զառաքելականն՝ սրբով աւազանաւ:
 50 Իսկ ձեռաւք ծափել երկատեսակ աջն
 զՅովանուն տէրունեանն սպասաւորել
 մկրտութեան եւ զառաքելոցն, որ աւազա-
 նաւն նորածնէ որդիս Հասարակաց Արար-
 չին: 51 Զի՞նչ մեզ ներելն Յիսուսի զվար-
 դապետելն մինչ յերեսնեկեան լրումն ա-
 մաց եւ աներեւելի զարարչեղէն հրաշս
 արգելաւորել: 52 Քանզի երեսնամեանն
 բոլոր կատարելութիւն մարմնոյ յինքեան
 բերելով հասակ ի լուացելոյ եւ զմարմնոյն
 աւարտելով սահման, զի կատարեցելով
 մարմնով երեւեցուցէ զերկուս բնու-
 թիւնսն յինքեան բերելով անորիչ համա-
 գոյութեամբ, զի որպէս անճառելի Աս-
 տուածութեամբն էր ամենակատար, այս-
 պէս եւ երեւելի մարմնովն բոլորայարմար³
 տիեզերաց զինքն յայտնեցէ: 53 Երկ-
 րորդ՝ զի երեսնամեանն Յովանուն հան-
 դերձեալ էր մկրտութեամբն յայտնել զու-
 զահասար տիաւք հանդիպէր Մկրտչին՝
 զինքն նստան (sic) գոլ Կարապետին
 խնդրել զՄկրտելն երիտասարդ յերիտա-

սարդէ, զի ըստ հարցմանցն եւ համագոյ
 վկայեացէն տիքն, քանզի ի յատուկ տարջէ
 Եղիսաբէթ յամլութենէ յղացեալ եւ սուրբ
 Կոյսն Գաբրիէլի աւետարեւութենէ:
 54 Այսպէս եւ երեսնամեան մարմնացեալ
 բանն յինքեան կարապետէն յերեսնամէն⁴
 մկրտէր, զի աննման եւ ընդդէմ աստուա-
 ծային յայտնութեան երեւեցի: 55 Եւ եւս
 զի արութեան եւ քաջութեան ժամանակ ե-
 րիտասարդականն է, զոր միաւորեալ ընդ
 արարչութեան յաղթող աստուածացեալ
 մարմնովն յայտնէր ի Յորդանան, ուստի
 սկզբնաւորեալ գտէրունեան կատարէր
 սքանչելագործութիւնս եւ զաստուածա-
 ցեալ հակառակամարտն ի տիեզերապե-
 տութենէ լուծեալ արտաքս ընկենոյր⁵: 56
 Իսկ վեցերեակ ամսաւք անդրանկանալն
 Յովանուն քան գտէրունեան տիսն կարա-
 պետական ճանապարհակազմութիւն էր,
 որ ոչ տեսեամբ գիշերայնով, այլ տուըն-
 ջենականաւ բացարձակ ձայնիւ հնչեալ ա-
 սէ. «Մաքուր զաստուածային պողոտա ի
 ձեզ կազմեցէք», զի ոչ բազմաժամանակեա
 եկաւորել խոստովանէր, այլ զհուպ եւ վե-
 ցերեակ⁶ ամսովք, քանզի ի յայտնելն զիւր
 կարապետելն վեցերեակ յառաջատէր ամ-
 սովք, յորում զկարապետական կատարէր
 սպասաւորութիւն երեսնամեան⁷ տիովք
 փոխէր ի մկրտել զերեսնամեան զհասարա-
 կաց Արարիչն Յիսուս: 57 Ձայսպիսի երի-
 տասարդացեալ Աստուած հանճարափառն
 Սողոմոն յիւր իմաստնաւոր տաղսն գրեալ
 ասէ. Զուարմացիր երիտասարդ մանկա-
 կան տիովք⁸: 58 Քանզի բնութիւն երիտա-
 սարդի եռանդնացեալ հասարակ միտք եւ
 մարմին առաքինոյն ի հոգեւոր նահատա-
 կութիւնս: 59 Այսպէս եւ երիտասարդացե-

1 ի-ն լուսանցում
 * Սաղմ.՝ Գ.Լ. 8
 2 Ձեռ.՝ տ (ընտ⁶)
 3 յարմար-ը լուսանցում

4 Ձեռ.՝ յերեսնամեան
 5 Ձեռ.՝ յր-ը լուսանցում
 6 Ձեռ.՝ Զ-երեակ
 7 Ձեռ.՝ Լ-ամեան
 8 Ժ.՝ Ժ.Լ. 9

լոյ Հաւր Բանին երեքտասնեան¹ տիաւք զինքն բացերեւեցուցեալ տիեզերաց աստուածապէս արութեան եւ քաջութեան ժամանակաւք, որովք զծովասոյց վիշապին զինուորութիւնս շնչահեղձոյց մեռուցանէր ի մկրտութեան ջուրս, քանզի ուրախանալ զյայտնելն ասի ի Յորդանան եւ զՀոգւոյն Սրբոյ վկայելն յերկնուստ իջիւք եւ զտիեզերական ջրոյն ընդ Յորդանանու Համաբերկրական խնդալ եւ տարերց կնքել զընդունայնութեան հնազանդիւն: 60 Եւ երիտասարդական մանկութիւն գերեսներորդումն ասէ, յորում մահուամբ զտիեզերս ազատս ի մահուանէ փրկանաւորեաց: 61 Եւ յարուցելովքն ի գերեզմանէն եւ տարահանեալ զինքն յերկին երկնի ամպեղեն կառաւք եւ նստել ընդ աջմէ Հաւր Համափառաբար նոյն մանկան տիաւք մնա ամփոփոխելի եւ տիեզերական խնդութեամբ միշտ խնդա երիտասարդապէս: 62 Վասն որոյ անճառելի եւ աստուածային յայտնութեան նախամեծար գոլով հրեշտակային բարեբանեսցուք երաժշտականութեամբ ընդ Սրբոյ Հոգւոյն միաբանեսցուք իջելոյն յերկնուստ ի Հաւրէ ընդ հաւատարիմ վկային երեւեցելոյ աղանակերպ լուսափայլ եւ ուղղափառ առնելով զմիտս հերձուածողական ազան-

դոց: 63 Յովհաննու խոստովանութեան ձայնակցեսցուք. Ահա Գառն Աստուծոյ՝ եւ տիեզերաց Բարձիչ մեղաց, զի թեպետ եւ ժամանակաւ եմք զկնի հաւատոց խոստովանութեամբ Համաժամանակաւք Կարապետին եղիցուք, տէրունեան լիցուք երանիք, թէ կնիք զոչ տեսեալ մարմնաւոր աւամբք, տեսցուք հոգեւոր բըբաւք եւ հաւատոյ ուղղափառութեամբ ընդ Յորդանանու բերկրեսցուք՝ զմկրտութիւն զուարճանալով, ընդ տիեզերական գետս ձեռամբ ծափեսցուք ընդ աւագանեցելոցն Համաշխարհապէս: 64 Եղիցուք կանխատաւակք աստուածային ուրախացեալ յայտնութեամբ, վասնզի Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ ընդ երկրի, ցնծասցուք ընդ լուեցելոյն զընդունայնութեան հնազանդելն, ընդ տեսանողին զիւր Արարիչն յայտնութեամբն երեւեալ Թագաւոր եւ զհակառակամարտին տէրութեան հանդերձ բազմաստուածութեամբ ընկեցեալ արտաքս: 65 Վասնորոյ Հաւրն բաւականի եւ Որդոյն Միածնի եւ մաքուր եւ ազատիչ Սուրբ Հոգւոյն երից անձնաւորութեանց եւ մին անորիչ Աստուածութեան պանծալի երկրպագութիւն եւ մշտնջենաւոր փառաբանութիւն, պատիւ եւ զաւրութիւն յաւիտեանս յաւիտենից:

1 Ձեռ. Գ-տասնեան

Պ ՅՎԸ Ը 29

[ԴԱՏՈՒՄՆ ՔԵՐԴԱԾԱՅ...]

1 Մամբրէ Վերծանողի Դատումն քերդածայ ասէ, որ ի կատարման աշակերտութեանն նստի ընդ կատարեալսն, եւ տայ նոցա պատասխանի հարցմանն փորձի: 2 Մասունք են բանի Ը (8). անուն, բայ, ընդունելութիւն, յաւոյ, դերանուն, նախադրութիւն, մակբայ, շաղկապ:

3 Բան է աւարտուն խորհրդոյն, եւ առաջին մասն անունն, որ զգոյացութեան սահմանն ունի, ընդ որով է մարմին եւ անմարմին:

4 Ապա դնէ եւ զբայ, որ զանունն եւ զգործն պատմէ. որպէս, այս անուն գնաց, եւ կամ զայս ինչ գործեաց:

5 Իսկ յաւոյն գմերձն եւ զհեռին ցուցանէ, զմիաւորն եւ զբազմաւորն. զսա, նա, դա, մարդս, մարդն, մարդ, մարդք:

6 Իսկ դերանուն է փոխանուն, փոխանակ անուանն. աս, ես, դու, նա, սա:

7 Նախադրութիւն, երբ ճոխացուցանես խոկաս զբանն, հեզ ինչ դասես, որպէս արտածայնեալ, ներպարունակեալ. արտ-ն եւ ներ-ն ոչ ինչ նշանակեն, բայց միայն՝ ճոխութիւն, կամ շարամանեալ. շար-ն ոչ ինչ է, մանեալն բանն է:

8 Մակբայն է վերնաբայ. երկաքանչիւր, իւրաքանչիւր, միանգամայն:

9 Շաղկապն կապէ զբանն եւ միտք նշանակէ. եւ գնաց, ցուցեր, թէ եկն ապա գնա:

ԱՆԱՆԻԱ ԹԱՐԳՄԱՆԻՉ

ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ Ի ԽՈՐՀՈՒՐԴ ԿԱՏԱՐՄԱՆՆ
ԱՌԱՔԵԼՈՅՆ ՊԵՏՐՈՍԻ

«ԱՆԱՆԻԱ ՎԱՐՂԱՊԵՏԻ Ի ԽՈՐՀՈՒՐԴ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՔԵԼՈՅՆ ՊԵՏՐՈՍԻ» ԾԱՌԸ

Հայերէն ձեռագրերը Անանիա վարդապետի անուամբ մեզ աւանդել են Ի Խորհուրդ կատարմանն առաջելոյն Պետրոսի ճառը: Յ. Ս. Անասեանի մեծարժէք Հայկական մատենագիտութեան մէջ այն գետեղուած է Անանիա վարդապետի անուամբ, հեղինակային պատկանելութիւնն անյայտ երկերի շարքում¹: Ուստի բնականօրէն հարց է առաջանում. Ե-ԺԱ դդ. Հայ մատենագիտութեանը յայտնի Անանիաներից (Սիւնեցի կամ Թարգմանիչ՝ Ե դ., Շիրակացի՝ Է դ., Մոկացի՝ Ժ դ., Նարեկացի՝ Ժ դ., Սանահնեցի՝ ԺԱ դ.) որի՞ն կարող է պատկանել կամ վերագրուել այս երկը:

Ճառը պարունակող ձեռագրերը Տօնապատճառ ժողովածուներ են: Ինչպէս յայտնի է, այս ժողովածուի ստեղծումը աւանդութիւնը կապում է Արիստակէս կաթողիկոսի (Դ դ.) անուանը: Աւելի ուշ, Տօնապատճառի «ձեւաւորման ու ճոխացման աշխատանքներին» իր մասնակցութիւնն է բերել Զաքարիա Զագեցի կաթողիկոսը (855-875 թթ.), «բայց թէ ինչպէս եւ ինչ չափով, յայտնի չէ»²: Զաքարիա կաթողիկոսից զատ, յիշատակարանների վկայութեամբ՝ Տօնապատճառ ժողովածուի ձեւաւորմանը մասնակցել են նաեւ մի շարք հեղինակներ: Սրանց մէջ ամենանշանաւորը Սամուէլ Կամրջաձորեցին է՝ Ժ-ԺԱ դդ.: Բանասիրութիւնը ամենայն իրաւամբ նրան է վերագրում Տօնապատճառի վերջնական կազմումն ու խմբագրումը³: Ըստ Փ. Անթաբեանի՝ նրա կազմած Տօնապատճառն են ներկայացնում կամ նրան յարում ՄՄ թիւք 2021, 2039, 3795 ձեռագրերը⁴: Խնդրոյ առարկայ ճառը պարունակում է վերջին երկուսում: Ճառը պարունակող Տօնապատճառ ժողովածու է նաեւ ՄՄ թիւ 1007 ձեռագիրը, որը գրչագրուել է ԺԱ-ԺԲ դդ.: Սակայն ի տարբերութիւն առաջինների ներկայացուցիչը հանդիսացող թիւ 2021 ձեռագրի «զՏօնապատճառ գիրքս գովելի: Արարեալ է Կամրջաձորոյ սուրբ հօրն Սամուէլի» (1ա) ծանուցման. թիւ 1007 ձեռագրի յիշատակարանում կարդում ենք. «Եւ մերս բերաւ աշխարհի սրբոյն Ռեստակիսէ բերաւ յետոյ կարգեալն ի Կիւրղէ: Արդ՝ զսոցա բանքս առեալ սրբոյ Հայրապետին մերոյ Զաքարիայի եւ այլ սրբոց վարդապետաց, լուսաւորեցին զամենայն հաւատացեալս ի Քրիստոս եւ ցուցին մեզ զտօնս եւ պատճառ նոցայ» (466բ)⁵: Ինչպէս տեսնում ենք, յիշատակարանում բացակայում է Սամուէլ Կամրջաձորեցու անունը: Թւում է, այս հանգամանքը կարող է իր նպաստը բերել ճառիս հեղինակային պատկանելութեան պարզաբանման ուղղութեամբ կատարուելիք հետազոտութիւններին: Ինչպէս յայտնի է, ամէն մի աւանդութիւն հիւսւում է պատմական իրողութեան որոշակի ատաղձի վրայ: Բացառութիւն չի կազմում ներկայ պարագան եւս: Երկրորդ պարբերութիւնն, անշուշտ, ձեւաւորւած է պատմական հիմքի վրայ: Նախ՝ այն խօսում է Հայ իրականութեան մէջ Տօնապատճառի կենցաղավարման աւանդական վաղեմութեան մասին եւ, երկրորդ՝ որ ժողովա-

1 Յ. Ս. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, հտ. Ա, Երեւան, 1959, էջ 788-9

2 Փ. Անթաբեան, «Տօնապատճառ» ժողովածուն, «Բանբեր Մատենադարանի», 1971, թիւ 10, էջ 118-119

3 Նոյն տեղում, էջ 119-121

4 Նոյն տեղում, էջ 121

5 Նոյն տեղում, էջ 118

ծուր կազմաւորումն ու կազմաւորման առաջին փուլը աւարտուել է Ջաքարիա կաթուղի-կոսի օրօք՝ Թ դ. երկրորդ կէսին, նրա գործուն մասնակցութեամբ: Սա նշանակում է, որ թիւ 1007 ձեռագիրը այդ շրջափուլում կազմաւորուած եւ, հաւանաբար, հէնց Ջաքարիա կաթուղի-կոսի կողմից խմբագրուած Տօնապատճառի մի տարբերակը կամ ներկայացուցիչն է: Սա հաստատուում է ոչ միայն արդէն վկայակոչուած աւանդութեամբ, այլեւ ձեռագրի պատկանելի հնութեամբ (ԺԱ-ԺԲ դդ.): Ըստ երեւոյթին Տօնապատճառի այս նախնական տարբերակի հիման վրայ է կազմուած Սամուէլ Կամրջաձորեցու խմբագրած Տօնապատճառը, որի ներկայացուցիչը, ինչպէս տեսանք, թիւ 1007 ձեռագրից համեմատաբար ուշ ընդօրինակուած թիւք 2021 (1184, Ժէ դ.) 2039 (1357 թ.) 3795 (1190 թ.) ձեռագրերն էին:

Ելնելով փաստերի այսօրինակ հաշուառումից՝ կարելի է ենթադրել, որ Անանիա վարդապետի ի խորհուրդ կատարմանն առաջնայն Պետրոսի ճառը, մուտք գործելով Տօնապատճառ ժողովածուի մէջ Թ դ. երկրորդ կէսին, պէտք է որ մինչ այդ հայ մատենագրութեան մէջ կենցաղավարող եւ, ընդ որում, բաւականաչափ յայտնի երկերից լինէր, այլապէս նա չէր արժանանայ Տօնապատճառի նման կարեւոր ժողովածուի մէջ ընդգրկուելու պատուին: Այս հանգամանքը խօսում է ճառի ստեղծման վաղեմութեան մասին: Կասկած չի կարող լինել, որ այն գրուած է Թ դարից առաջ: Սա նշանակում է, որ ճառը չի կարող պատկանել մեզ յայտնի, Ժ-ԺԱ դդ. ապրած ու ստեղծագործած, Անանիաներից եւ ոչ մէկին: Ուրեմն՝ ճառիս հեղինակ յիշուող «Անանիա վարդապետը» ապրել է Թ դարից առաջ:

Ելնելով ճառի բառապաշարից եւ լեզուական որոշ յատկանիշներից՝ հաւանաբար այն շարադրուած է յունաբան հայերէնի զարգացման վաղ շրջանում (450-480-ական թթ.): Ի թիւս մի շարք երկերի, այդ շրջանում են թարգմանուել նաեւ Փիլոն Եբրայեցու աշխատութիւնները: Որոշակի է փիլոնեան երկերի հայերէն թարգմանութեան ազդեցութիւնը խնդրոյ առարկայ ճառի բառապաշարի վրայ: Բացառուած չէ, որ ճառում առկայ անգծելի (անգիծ), բոնաբար (բոնագոյն), բազմաբեղուն չարն (չարն բազմաբեղուն), բնաւորական, բնաւորաբար, բնականաբար, բնականապէս, գոյացուաբար (գոյացութիւն), գուզընթաց-գոյզընթաց, սերմնական բանն (սերմնական իմն բան, սերմնական բանն), սկզբնատիպն, տարացուցիչ, տեսակ բառերն ու բառակապակցութիւնները¹ (փակագծերում բերուած փիլոնեան նոյնարմատ համարժէքներով) մուտք են գործել Փիլոն Եբրայեցու աշխատութիւնների հայերէն թարգմանութիւնից: Այն, ինչպէս յայտնի է, տրուում է Մեսրոպ Մաշտոցի աշակերտ, թարգմանչաց դասի նշանաւոր ներկայացուցիչ Անանիա Սիւնեցուն: Հասկանալի է, որ միայն թարգմանութեան հեղինակը կարող էր իր կերտած կամ օգտագործած բառերը, իբրեւ արդէն ընտանի լեզուական միաւորներ, կիրառել իր ինքնուրոյն երկում: Հիմնուելով բառապաշարի ակնյայտ ընդհանրութիւնների վրայ՝ ճառս անորոշաբար վերագրում ենք Անանիա Սիւնեցուն: Այսօրինակ վերագրումն, անշուշտ, կարօտ է առաւել համակողմանի հիմնաւորման, սակայն փաստերի սակաւութեան պատճառով այդ առայժմ բացառում է:

1 Տե՛ս նոր բառգիրք Հայկագեան լեզուի, հտ. Ա., Վենետիկ-Ս. Ղազար, 1836 (=ՆԲԶ), էջ 126, 495, 498, 570, 513, 750, 402. հտ. Բ, էջ 65, 720, 866. նաեւ՝ Փիլոնի Եբրայեցույ մնացորդը՝ ի հայս, Վենետիկ, 1826 (Լիմ. Բ 16, 34). Փիլոնի Եբրայեցույ ճառք թարգմանեալ ի նախնեաց մերոց, որոց հելլեն բնագիրք հասին առ մեզ, Վենետիկ, 1892 (Այլար. Բ 148, Իմաստ. Իե 68):

Անդրադառնալով Անանիա վարդապետի անուամբ մեզ հասած երկերին՝ Բ. վրդ. Սարգիսեանը դրանց շարքում, Ի խաչելութիւն Պետրոսի հետ, յիշատակում է նաեւ սոյն ճառը եւ նշում, թէ դրանք «հաւանօրէն Շիրակացւոյն են եւ օտար բնագրէ թարգմանաբար յերկրուած»¹: Անընդունելի համարելով այս կարծիքը (Ի խաչելութիւն Պետրոսի ճառը Անանիա Սանահնեցու մատենագրական ժառանգութեանը նուիրուած մեր աշխատութեան մէջ վերագրում ենք Անանիա Սանահնեցուն)² անհրաժեշտ է նկատել, որ թէ՛ մէկը եւ թէ՛ միւսը գերազանցապէս ինքնուրոյն երկեր են: Բայց սա չի նշանակում, որ Ի խորհուրդ կատարմանն առաջելոյն Պետրոսի ճառը կտրուած է քրիստոնէական մատենագրութեան սրբախօսական աւանդներից: Քննութիւնը պարզում է, որ ճառի հեղինակը լայնօրէն օգտուած է առաքելի նահատակութեան մանրամասները պատմող Վկայաբանութիւն առաջելոյն Պետրոսի աստուածաշնչական անկանոնից³: Այստեղից վկայաբերուող հատուածներն ու առանձին արտայայտութիւնները ճառում հանգամանալից մեկնութեան են ենթարկուած: Ուրիշ խօսքով՝ այն ոչ այլ բան է, քան Վկայաբանութեան տուեալ հատուածի մեկնութիւնը եւ, այս առումով, հայ մեկնական ճառագրութեան վաղագոյն նմուշներից մէկը: Մեկնուական այս ճառում լաւագոյնս դրսեւորուած է հեղինակի աստուածաբանական, փիլիսոփայական կարողութիւնն ու այլաբանելու ձիրքը՝ յատկութիւններ, որոնք խօսում են հեղինակի տեսական պատրաստութեան մասին:

Ինչպէս երեւում է, Անանիա վարդապետի այս ճառը հայ միջնադարի մատենագրութեան մէջ ճանաչուած եւ լայնօրէն կիրառուող երկերից էր: Սա հաւաստուած է խնդրոյ առարկայ ճառի ու ԺԱ դարի նշանաւոր մատենագիր Անանիա Սանահնեցուն վերագրելի Յաղագս Յովհաննու Մկրտչի եւ Յովհաննու Աւետարանի մեկնութեան մաս կազմող Ի խաչելութիւն Պետրոսի խորագրով ճառերի համապատասխան հատուածների ներքոբերեալ գուգագրումով:

Անանիա վարդապետի Ի խորհուրդ
կատարմանն առաջելոյն Պետրոսի

Անանիա վարդապետի յաղագս
Յովհաննու Մկրտչի

Նոյնպէս եւ Պետրոս ուռնացեալ լիապատար լցեալ Հոգւովն Սրբով արտափայլեալ լուսովն լնոյր զըրջապատեալ ժողովուրդն⁴:

Խորշք ուռնացեալ լուսով աուցեալ լինին, զի յերեւել ճշմարիտ լուսոյն, ամենայն խորք խաւարին խորհրդօք մարդկան ի բաց հալածեալ լինին⁵:

1 Բարսեղ վրդ. Սարգիսեան, Անանիա Թարգմանիչն եւ իւր գրական գործոց նմոյշներ, Վեներտիկ, 1899, էջ ԺԹ տողատակ
2 Տե՛ս Աստուածաբանական բնագրեր, Ուսումնասիրութիւններ. Ա, Անանիա Սանահնեցի, Ա. Էջմիածին, 2000, էջ 72-74, 179-180:
3 Տե՛ս Թանգարան հայկական հիմ եւ նոր դպրութեանց, Գ, Անկանոն գիրք առաջելականք, Հրատ. Հ. Ք. Չրաբեան, Վեներտիկ, 1904, էջ 53-55:
4 Հատից փաղուած այս եւ հետագայ վկայութիւնները բերում են առանց յղումի:
5 Բ. վրդ. Սարգիսեան, Անանիա Թարգմանիչն, էջ 17

Յերկեակ եւթնեակս ուոնացեալ, լիապատար լուսով լցեալ՝ զբոլոր գիշերն լուսաւորէ¹:

յԱնանէ վարդապետէ ասացեալ ի խաչելութիւն Պետրոսի:

Մինչեւ ի ծագս տիեզերաց են խաւսք նորայ անաւթ ընտիր եւ ուոնալի լուսով լցեալ²:

Ընդգծեալ հատուածները վկայում են, որ Անանիա Սանահնեցին այդ երկերը շարադրելիս իր ձեռքի տակ է ունեցել Անանիա վարդապետի այդ ճառը եւ, ըստ անհրաժեշտութեան, օգտագործել ընդգծուած արտայայտութիւնը:

Ճառը հրատարակուում է ըստ ՄՄ թիւք 1007 (=A, 39ա-46բ), 3795 (=B, 35բ-40բ), 2039 (=C, 24բ-27բ) ձեռագրերի³: Տողատակում բերւում են իմաստային որոշ կարեւորութիւն ունեցող տարբերումները, ինչպէս նաեւ Պետրոս առաքեալի վկայաբանութեան համապատասխան հատուածները՝ Վկա համառօտագրութեամբ:

Յակոբ Քեօուէան

1 Անդ, էջ 25

2 ՄՄ ձեռ. թիւ 2039 (24բ)

3 Ձեռագրերի համառօտ նկարագրութիւնը տե՛ս **Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Ամթարեան, Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի**, հտ. Ա, Երեւան, 1965, էջ 457, 1086, 706:

**ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ Ի ԽՈՐՀՈՒՐԴ ԿԱՏԱՐՄԱՆՆ
ԱՌԱՔԵԼՈՅՆ ՊԵՏՐՈՍԻ**

1 «Իսկ երանելին Պետրոս հասեալ ի տեղի կատարմանն»¹ պատարագիլ ի վերայ Խաչին Հաւրն երկնաւորին ի հոտ անուշից: 2 Եւ կացեալ առաջի Խաչին, լցեալ Հոգւովն Սրբով, կամեցեալ յայտնել զխորհուրդ Խաչին՝ զյայտնեալն նմա ի Տեառնէ առ որ մերձն կայր յայտնի տեսեամբ Հոգւոյ նորա աներեւութացեալ, եւ արութեամբ կոխեալ զերկիւղ մահու՝ հրամայեաց կախել զինքն զլիւփայր: 3 Եւ սկսաւ խաւսել առ մերձ եկեալսն ի վերայ բարձրաբերձ բեմի՝ հրատարակելով ի լսելիս տեսարանին զծածկեալ խորհուրդ Խաչին, զոր յառաջն ոչ կարէին լսել, այժմ ամենեցուն ի զղջումն եկեալ, լցեալ Հոգւովն Սրբով, կարացեալ ի միտ առնուլ զիմաստութիւն Հոգւոյն, որ ի նմա խաւսէր, զի որպէս ճառագայթք արեգականն տպաւորեալ ի ջինջ հայելոյ եւ անտի նշոյլս արձակելով, զմերձ եկեալսն լուսաւորեն: 4 Սոյնպէս եւ Պետրոս. ուռճացեալ, լիպատար լցեալ Հոգւովն Սրբով, արտափայլեալ լուսովն ինոր զըջապատեալ ժողովորդսն, եւ վասն այնորիկ ասէր. արդ լուարուք լուսաւորեալքդ Հոգւով զայն, ինչ «զոր յառաջն ոչ կարէիք² լսել կամ իմանալ³»: 5 Այսպէս եւ առ մարգարէիւքն լինէր. յորժամ մարգարէքն լնուին Հոգւով, արժանաւորքն, որ մերձ լինէին, ընդ նոսին լնուին Հոգւով⁴: 6 Որպէս ընդ Դաւթայ երգեալն զնուազս սաղմոսաց Ասաբ եւ Դիդովմ եւ այլ բազումք լնուին Հոգւով, սոյնպէս եւ ի լնուլն Պետրոսի Հոգ-

ւով, լցան ամենեքեան Հոգւովն Սրբով, որպէս ի վերնատանն անդր: 7 «Եւ կացեալ Պետրոս առընթեր Խաչին՝ սկսաւ ասել այսպէս. ո՛վ անուն Խաչի, ծածկեալ խորհուրդ»⁵, զի զչարչարանաց ունի զխորհուրդ անուն Խաչս, եւ չարչարանքն սատակիչ են ախտից: 8 Ըստ այնմ, թէ հիմ մարդն մեր խաչակից եղեւ մմա, եւ որ չարչարի մարմնով, արդարանայ հոգւով, զի որ մեռանի մարմնով, արդարացեալ է ի մեղաց, եւ եթէ մեռաք ընդ միմն եւ կեցցուք⁶: 9 Ահա մահ եւ կեանք զոյգընթացք ի միասին գումարեալք, ի միում ենթակային վարին⁶: 10 Այս է անուն Խաչին՝ մահացուցիչ մահու եւ մահաբեր ախտից եւ կենագործող հոգւոց: 11 Վասն որոյ եւ ասէ. «ո՛վ շնորհ անճառելի ի վերայ Խաչին ասացեալ⁷», ի նմանէ մահ բխեալ, եւ մահացուցիչ մահու եւ կենաց աղբերացուցիչ, մահացելոցս կենագործիչ, զի նոյն անուն Խաչի զմահ կենդանի մեռուցանէ եւ, զըմբռնեալսն ի նմանէ, կենագործէ եւ կորզէ ի կեանս անապականս: 12 Այս էր խորհուրդ ծածկեալ Խաչին եւ շնորհք անճառելիք՝ յայտնեալ ի նմանէ⁸: 13 «Ո՛վ բնութիւն մարդոյ՝ մեկուսանալ յԱստուծոյ ոչ կարացեալ»⁹: 14 Վասն բնական ունելոյ զսերմնական¹⁰ Բանն ի բնութեան, տնկեալ ի ստացողէն, որպէս մանկանցն առ ծնաւդսն, ոչ գիտողաբար բնականապէս գթացեալ առ ծնողն, այլ բնաւորաբար

1 Վկա, էջ 53 տ. 19-20 (Տողատումբ մերն է - Յ. Ք.): «Իսկ սուրբն Պետրոս հասեալ ի տեղին, ցածոյց...»
2 Ա կամէիք
3 Վկա, 53 տ. 36. «յորժամ կարէ ոք յառաջագոյն լսել չկարացեալ...»
4 Ա չիբ՝ արժանաւորքն... լնուին Հոգւով

5 Վկա, էջ 53 տ. 25. «Երթեալ այնուհետեւ եկաց առ ընթեր Խաչին եւ սկսաւ այսպէս»
6 Հմմտ. Հոմ. Զ 6-8
7 Ա ընթակային վայրի
8 Վկա, էջ 53 տ. 29-30. «ո՛վ աննառ շնորհի ի վերայ անուան Խաչիս ասացեալ»
9 Շ չիբ՝ Այս էր խորհուրդ... ի մմանէ
10 Վկա, էջ 53 տ. 31-32. «Ո՛վ բնութիւն... կարացեալ»
10 Շ գտերմն

չարժեալ հարկաւորաբար զբնութիւնս ունելով մշտաշարժ խաղալ յայսոսիկ: 15 Ապա ուրեմն՝ բնութեամբ ունէր մարդն զյարախաղաց շարժութիւն յառաջին պատճառէն գոյացողաբար յարամնացեալ ի գոյութեանս: 16 Վասն որոյ հարկաւորաբար ունի շարժութիւն առ սկզբնատիպն վերաբերիլ, եւ ոչ կարացեալ մեկուսանալ, ընդ որում ըստ պատկերին ստեղծաւ: 17 Սոյնպէս եւ սկզբնատիպն ոչ կարացեալ ժուժել կամ հեռանալ ի պատկերէն իւրոյ տարամերժիլ մեկուսութեամբ¹: 18 Վասն որոյ եւ նա բնականաբար² ունելով զյարախաղաց շարժմունս գլխոյ առ տիպ պատկերին իւրոյ, այլ՝ հետեւողաբար բուռն հարեալ³, միաւորեաց յինքեան անճառ միաւորութեամբ եւ խառնեաց յիւրն բնութիւն՝ անարձակ կապակցութեամբ յարամնացեալ: 19 Եւ արդ. լուր յաջորդացն՝ զինչ ասէ հարստահարեալն ի սիրոյն Քրիստոսի. «բռնադատեմ զքեզ ա[յ]ժմ ի կատարածիս»⁴ եղեալ, ո՛վ անձն իմ, խաչակցիլ ընդ Քրիստոսի, եւ բռնաբար յափշտակել զարքայութիւն՝ գործակից ունելով զՔրիստոս ի հանդիսի մարտիս⁵: 20 Եւ արդ. ո՛վ ծածկեալ խորհուրդ իմաչի, յայտնեա՛ այժմիկ, զի ոչ ժուժեմ զհին խորհուրդ իմաչին փակել ի յոգևոջ իմում, զի խորհուրդ իմաչին ծածկեալ էր յաւիտեանս առ Աստուծոյ, որ զամենայն ինչ արար: 21 Եւ արդ. «միայն իմաչ թուի ինչ ձեզ, որ երեւիդ այժմ»⁶, այլ որ ի դմա ծածկեալ է ահաւոր զաւրութիւն, ի վերջան զամենայն զաւրութիւնս, զի զամենայն արարածս բարձեալ կրէ յինքեան: 22 Եւ այժմ ծանուցից ձեզ զանճառ

խորհրդոյն զաւրութիւն, զոր յառաջն ոչ կարէիք լսել եւ տանել: 23 «Այժմ ի կատարածիս լուարուք ինձ: 24 յԱմենայնի զգալի կենացս որոշեցէք զանձինս ձեր»⁷, զի հոգին է ստեղծուած ըստ պատկերին Աստուծոյ եւ զմարմին ունի գործի առ կենցաղս, որք ոչ են ճշմարիտք, այլ՝ ստուերք սնտոի եւ ունայնութեան կենցաղ: 25 Արդ մի զբաղեսցի հոգին ի ձեռն զգայութեանցս կապիլ ընդ կենցաղս եւ ի սնտոիս զբաղնուլ, զի մի տարամերժեացի ի ճշմարիտ կենացն: 26 Այլ՝ ի բաց կացէք յերեւելեացս, որ են պատրողք⁸ զգայութեանցս: 27 Արդ. «Խցէք զաչս ձեր յերեւելի տեսութեանցս»⁹, զի մի պատրեալ խաբիցիք ի սնտոիսս, զի մի կախարդեալ կապիցիք ի լուր սնտոի՝ ոչ կարացեալ ընդունել զլուր Բանին ճշմարիտ վարդապետութեան: 28 Թաքուցէք եւ զյայտնի գործս ձեր, որ ի սնտոի փառս վերաբերէ զձեզ, զի մի՛ ի վայր կործանեսձիք զայն, որք ինեւ եղեն ճշմարտութեան ծանուցումն եւ զամենայն խորհուրդս փրկութեան ծանիջիք ի յայտնութենէ Հոգւոյն, զոր ընկալայք, մի աւտարանայք՝ բացամերժելով զգիտութիւն Հոգւոյն, զոր ընկալայք: 29 «Զի պարտ է ամենեցուն դառնալ եւ ելանել ի իմաչն Քրիստոսի, որ է ամենեցուն կարգեալ Բանն»¹⁰: 30 Ոչ փայտեղէն խաչին ասէ, այլ ինքն զԲանն կոչէ իմաչ: 31 Որպէս եւ Եփրեմ ասէ յայն բանի, թէ «այն, որ ոչ գիտէր զմեզս, վասն մեր մեղս արար, այսինքն՝ զմարմինն իմաչ

1 C մերժել հեռաւորութեամբ

2 C բանականաբար

3 AB հարկանել

4 Վկա, էջ 52 տ. 32-33. «բռնադատել զքեզ աստ ի կատարածի այժմիկ»

5 C հանդիսարանիս փիս ի... մարտիս

6 Վկա, էջ 53 տ. 34-35. «Խաչս մի այսպէս բուսցի ձեզ որպէս երեւիս...»

7 Վկա, էջ 53 տ. 35-54 տ. 2. «...մանաւանդ յորժամ կարէ ո՛ր յառաջագոյն լսել չկարացեալ: Ի վերջին ժամանակս եւ ի կատարածի եղեալ իմ. լուարուի ինձ. «Յամենայնի ի զգալեացս որոշեցէք գիտցիս ձեր, յամենայն երեւելեացս, որ չէ նշմարիտ, ի բաց լերուի...»

8 A պտուղք

9 Վկա, էջ 54 տ. 3. «Խցէք զաչս ձեր յերեւելեացս, խցէք եւ զաւշափելի ալկանջս ձեր»

10 Վկա, էջ 54 տ. 34-35. «...հանգի պարտ է ելանել ի խաչն Քրիստոսի, որ կարգեալ Բանիս միայն» հմմտ. Ա. Կորնթ. Բ 2

արար», ապա ուրեմն՝ ինչ զչարհարեալ մարմինն Քրիստոսի կոչէ: 32 Եւ մեզ ասէ. պարտ է դառնալ հեշտասիրութենէ եւ նմանիլ խաչեալ մարմնոյն Քրիստոսի: 33 Որպէս Եւագրիոս մեզ ուսուցանէ, թէ «մարմինն Քրիստոսի՝ գործք արդարութեան»: 34 Որպէս Տէր մեր Յիսուս Քրիստոս սահմանեաց, թէ որ ոչ առնու զԽաչ իւր եւ գայ զկնի իմ, ոչ ժառանգեցէ՛ զարփայութիւն իմ¹: 35 Ապա ուրեմն՝ զկիրս մեռելութեան կոչեաց ինչ, զոր ասաց, թէ պարտ է ելանել ի ինչ, ըստ այնմ, թէ մեռաւ ընդ Քրիստոսի, ընդ նմին եւ կեցցուի²: 36 Ինչ ասէ զկարգեալ Բանն, մի եւ միայն, զորոյ ասէ Հոգին Սուրբ. «զի՞նչ է Քրիստոս. Բան եւ Չայն Աստուծոյ»: 37 Արդ. հայեաց ի ճշմարտութեան բանն հաւատոյ, զի զոր ինչ ասաց, որ են չարհարանքն Քրիստոսի, զնոյն Բան ասաց մի եւ միայն Չայն Աստուծոյ² եւ ոչ յերկուս բաժանեաց, այլ զԲանն ասաց ինչ, եւ զնոյն Բան ասաց Հոգին Սուրբ զՔրիստոս: 38 «Զի նոյն Բանն իցէ ուղիղ փայտս, յորում խաչեալս եմ, եւ խոտորնակ փայտիս՝ զբնութիւն մարդոյն առձայնեալ ասաց. ո՛վ հրաշից մեծի խորհրդոյն»³. զի փայտակերտ ձեւացեալ ինչին միայն աւրինակ եւ նմանութիւն ճշմարտութեան ասաց զաղափարիլ: 39 Իսկ ճշմարիտ⁴ ինչ զնոյն ինքն զԲանն ի Հաւրէ ասաց: 40 Եւ արդ. պարտ է մեզ բառնալ ի կրից կենցաղոյս եւ բեւեռել ընդ Բանին Աստուծոյ անբաժանաբար, ըստ առաքելոյ. եւ աւրինակաւ աւրինացն մեռայ⁵: 41 Եւ արդ.

տես ի նմին մարմնի զմեռելութիւն եւ աստուածային կեանս զուզընթաց, զի Աստուծով կեցից եւ ընդ Քրիստոսի ի Խաչ ելից⁶. Ահաւասիկ ինչ եւ կեանք զուզադրեալք եւ կենդանի ոչ եմ ես, այլ կենդանի է յիս Քրիստոս⁷: 42 Ահաւասիկ ճշմարիտ մեռելութիւն եւ ստուգապէս կենդանութիւն: 43 Ապա ուրեմն՝ որ ըստ ինքեան կայ յայսմ կենցաղոյս, ստուգապէս մեռեալ է յայնմ կենացն եւ ի ինչն Քրիստոսի ելեալ: 44 Վասն որոյ եւ զաւրինակն յայտնի եցոյց ի տարացուցչէ ինչին: 45 Ասէ. ուղիղ փայտս Բանն է, որ ոչ խոտորեցաւ ի չար եւ ոչ զայթակղեալ անկաւ, այլ՝ եկաց կանգուն՝ հաստատեալ յերկրի: 46 Զի թէպէտ զմեզս ամենեցուն եբարձ, այլ ինքն ոչ ախտացաւ, որպէս ասաց Յովհաննէս, թէ չեմ բաւակամ լուծանել զխրացս կաշկացն նորա՞, զի եւ ոչ իսկ կապեցաւ ի նա դուզնաքեա զիծ մեղաց: 47 Ապա ուրեմն՝ մարդկութիւնս բոլորեալ, սկսեալ ի նախաստեղծէն, զլորեալ զայթակղեցաւ լպրծող մեղաւքն, զարկուցեալ, յերկիր անկաւ, զորս աւրինակեաց խոտորնակ փայտին, որ ոչ կարեաց կալ կանգուն, ըստ բնութեան, այլ՝ անկեալ դնի յերկիր խոնարհեալ: 48 Ապա ուրեմն՝ երկրորդ Ադամն միայն եկաց կանգուն՝ բնութեամբ անխոնարհելի: 49 Եւ վասն անկանելոյն ի վիհի կորստեան, խոնարհեցաւ որպէս զբուն ինչին, եւ զանկեալ բնութիւնս մեր բեւեռեաց ի ինչին, ընդ ինքեան, որպէս զփայտն խոտորնակ: 50 Դարձեալ կանգնէ ընդ ինքեան, բարձրացոյց զանկեալն գերագոյն քան զերկինս՝ յիւրն հանելով զբարձրութիւն զանկեալքն ի ստորինս, որպէս ասաց «բեւեռն դարձն եւ ապաշխա-

1 AB ծանիցէ
 2 Մատթ. Ժ 38
 3 Հուս. Գ 8
 4 C չիբ՝ «զնոյն... Աստուծոյ» հմմտ. Վկա, էջ 54 տ. 37
 5 Վկա, էջ 54 տ. 37-55 տ. 2. «զի Բանն իցէ այս ուղիղ, յորում կանխեալս եմ, եւ ձայն՝ խոտորնակ փայտս բնութեան մարդոյն»
 6 C ստոյգ
 7 Գող. Բ 19

7 Ընդ. Բ 20
 8 Ընդ
 9 Յովհ. Ը 27

րուծիլն մարդոյն է»¹, որ կապեցեալ բեւե-
 ուէ ընդ ուղիղ փայտն, որ է Բանն Աստու-
 ծոյ: 51 Եւ նոյն Քրիստոս ուղիղ փայտ ա-
 սաց, Բան եւ Չայն Աստուծոյ անուա-
 նեաց²: 52 Զի, որ զհետ մտեալ իցէ սար-
 տուցելոցն եւ սրացելոցն նախ Չայնիւ
 զարթուցանէ, եւ ապա՝ Բանիւ ուսուցանէ
 զճշմարտութիւն: 53 Եւ արդ ուրեմն. Չայն
 Աստուծոյ լսելով նշանակեաց զայն Չայն,
 որ ի դրախտին լուաւ Ադամ՝ զՉայն զնա-
 լոյ Տեառն Աստուծոյ ի դրախտին եւ, սար-
 տուցեալ, թաքեալ ի ձայնէն եւ, դատա-
 պարտեալ ի Բանէն³, արտաքսեցաւ ի
 դրախտէն: 54 Եւ արդ. պարտ էր նմին
 Չայնի, յորմէ պակեաւ Ադամ, ձայնել զկնի
 փախուցելոյն եւ դարձուցանել առ Ինքն,
 եւ նմին Բանիւն, որ դատապարտեաց զԱ-
 դամ ի մահ, նոյն խստանալ նմա զկեանս:
 55 Քանզի այլ ումեք չէր հնար հաւատալ
 Ադամայ վերստին ընդունել զկեանս⁴, թէ-
 պէտ եւ ի բազմաց լուաւ աւետարանու-
 թիւն բարեաց ի մարդարէիցն, մինչեւ եկն
 նոյն Չայնն եւ Բանն Աստուծոյ, եւ նոյն
 դարձեալ Չայնիւն դարձոյց եւ Բանիւն
 խոստացաւ նմա անմահական կեանս:
 56 Եւ արդ. տե՛ս զձեւ Խաչին ընդդէմ ա-
 րեւմտից տարածեալ զբազուկս, զի մար-
 դոյն արտաքսելն յԱդին դրախտէն եւ,
 տարամերժեալ ի կենաց փայտէն, դիմեաց
 յարեւմուտս, տարադէմ հալածեալ առ
 նսեմային խաւարն, թիկունս տուեալ արե-
 ւելեան լուսոյն են կենաց դրախտին:
 57 Վասն որոյ եւ Տէրն, ընդդէմ արեւմտից
 տարածեալ զգիրկսն, ուժգին ձայնիւ գո-
 չեաց դարձուցանել զսարտուցեալսն առ
 լոյսն ճշմարտութեան եւ, ժողովեալ ի
 գիրկսն իւր զփախուցեալսն ի ճշմարտու-

թենէ լուսոյն, ի բազմախուռն ժողովոյն
 հոմամիաւորեալ սիրով շինեաց եկեղեցի եւ
 հիմնեցոյց ի վերայ պետրոսեան վիմին՝ ոչ
 կարացեալ դրանցն դժոխոց ընդդէմ հար-
 կանել ընդ հաստատութեան վիմին:
 58 Վասն որոյ հիմն եկեղեցւոյ Պետրոս
 դարձուցանէ զեկեղեցի յարեւմտից յարե-
 ւելս կոյս, առ դրախտն կենաց: 59 Սակս
 այնորիկ հրամայէ զլիւիվայր խաչել եւ
 «զամենայն կերպարանս իւր փոխէ ընդ-
 դէմ առաջին մարդոյն, որ զկերպարանս
 իւր փոխակերպեաց՝ զբարին ի չար դար-
 ձուցանելով, որով զաջն ձախ համարեցաւ
 եւ զձախն՝ աջ եւ զբարւոքն այլովք հան-
 դերձ: 60 Եւ այս էր խրատն Տեառն՝
 խորհրդաբար զմեզ ուսուցանելով»⁵:
 61 Եւ արդ. միտ դիր խոնարհութեան, զի
 մինչ էջ Ադամ ի դրախտէն, դիմաւք դար-
 ձեալ առ խաւարն թիկունս տալով լուսոյն,
 ոչ ահա միայն զխաւարն տեսանէր զհեշ-
 տութիւն մեղացն, որ է ճշմարիտ խաւար
 հոգւոց, զոր կարծէր լոյս գոլ: 62 Որպէս
 սաէ Դաւիթ. Ասացի խաւար, ուրեմն, ծած-
 կեաց զիս եւ գիշեր մեղաց փոխանակ լու-
 սոյ փափկութեան իմոյ: 63 Վասն զի լոյս
 փափկութիւն կարծէի, եւ լուսոյն տեսու-
 թեմէ անգործ մնացի՞: 64 Ո՛չ ահա յայտ
 ցուցանէ աւրինակաւս զմտացն դառնալն
 ի ճշմարիտ լուսոյն տեսութենէ առ թանձ-
 րամած խաւար եգիպտատանջ ախտից
 մարմնոյս հեշտութեանց՝ անգործութեամբ
 ճշմարիտ լուսոյն տեսութեամբ: 65 Դար-
 ձեալ զաջ կոյսն ի հիւսիս դարձուցեալ եւ
 զահեակն՝ ի հարաւ, զոր Սողոմոն սաէ, թէ

1 Վկա, էջ 55 տ. 2-4. «իսկ բեւեոֆս, որ պնդի յու-
 ղիղ փայտի խոտորնակս ի միջոցի, դարձն եւ
 ապաշխարութիւն մարդոյն...»:

2 Հմմտ. անդ. էջ 54 տ. 36-7

3 Ա ձայնէն

4 Շ զկենդանութիւն

5 Վկա, էջ 54 տ. 20-29. «Զամենայն տեսիլս զար-
 դուս այսմիկ ընծայեցոյց անկեալ ի կոչմանէն,
 որով զաջն ձախ համարեցաւ եւ ձախն՝ իբրեւ
 զաջ: Զամենայն կերպարանս բնութեան իւրոյ
 փոխեաց, եւ զբարւոքն չար համարեցաւ, եւ
 զբարիմ՝ իբրեւ ստոյգ չար: Վասն որոյ Տէրն ի
 խորհրդեանն ասէր. «Եթէ ոչ առնիցէք զաջն իբ-
 րեւ զձախ եւ զձախն՝ իբրեւ զաջն... ոչ ծանիջիք
 զարեւոյնութիւն»:

՝ Հմմտ. Սաղմ. ՃԼԸ 11-16

հողմն հիւսիսի թէպէտ եւ բուռն է, այլ աջողակ ասի՞: 66 Եւ ո՞ւմ կոչեսցի աջողակ, եթէ ոչ որոց դէմ եղեալ է ի խաւարն, եւ ի թիկունս տացէ լուսոյն արեւելեան: 67 Վասն այնորիկ կոչի բուռն խստութիւն աւդոյ հիւսիսոյ, զի ոչ երբէք ջեռաւ յարեգականային տապոյ եւ ոչ լուսաւորեալ սակա հեռաբնակութեան ոլորտացեալ յանտեղի բացածութիւն՝ ի բոլորից լուսաւորացդ անհաղորդ մնացեալ, սառնամանեաւք եւ խաւարաւ պարփակեալ. յաւրինակ խաւարային մեղաց տեղոյն, որ անմասն ունի զկայսն իւր ի լուսոյ գիտութեան՝ զետեղեալ ի չարիս խաւարամած պարսպով պարփակեալ: 68 Յայս ունէր մարդն աջողակ գործն՝ հեշտ ի կիր առեալ, անյագաբար խրախացեալ ի լուսոյն առ խաւարն: 69 Իսկ զահեակն առ հարաւ կոյս ուղղեալ, անգործ եղեալ ի լուսոյ արգասեաց. զի հարաւ միշտ ջեռեալ եւ միշտ լուսաւորեալ է վասն լուսոյ արեգականն մերձաւորութեան, յորմէ վրիպեալ մարդն ի լուսոյ բարեացն, ձախողակի առնէր՝ զբարեպաշտութիւն՝ անգործութեամբ տարամբժեալ ի բարւոյն: 70 Իսկ Պետրոսի շրջեալ զայսպիսի կերպարանս զդէմս, որ ի խաւարն էր մարդկան, զիւրն ի լոյս գիտութեան արեւելեան դարձուցանէր, զոր մարգարէն ի դէմս մեր աւետաբանեաց. Արի Երուսաղէմ ի մեռելութենէ խաւարիմ եւ հայեաց ընդ արեւելս՞, ի Քրիստոս՝ Արեգակն արդարութեան, եւ տե՛ս զեկեալ փրկութիւն քո յարեւելից, ընդ յոր վերացաւն: 71 Եւ եկեղեցի նորա հայէր պշուցեալ, հիացեալ, ոչ գիտացեալ զձածկեալ խորհուրդն: 72 Եւ ուսեալ ի հրեշտակէն, թէ այս Յիսուս, որ վերացաւ, նոյնպէս գալոց է յարեւելից՝ լուսաւորել զեկեղեցի իւր փրկեալ: 73 Եւ աստանոր կատարէ Պետրոս

զբանն Տեառն, եթէ ոչ դարձուցանէք զգործարան չարին, որ աջողակ թուի ձեզ, եւ հեշտակիր առ գործս խաւարին հիւսիսական բռնութեան, եւ առնիցէք զնոյն ահեակն անգործութեամբ չարին ոչ գոյացուցանել զբազմաբեղուն չարին գործարան եւ զահեակն անգործ բարեպաշտութենէ ի գործ բարեպաշտութեան² առ հարաւային լուսովն առկայիլ՝ հարաւաբեր արեգականն արդարութեամբ լուսափայլեալ: 74 Եւ զդիմացն յետոյս, որ առ արեւելս անտեսութեամբ յարակացեալս դարձուցանել յարեւմուտս³, լինել միշտ կոյր ի չարիսն, զտանջող խաւար մեղացն միշտ ի թիկանց թողուլ՝ չարին անգործութեամբ: 75 Եւ զդիմացն⁴ տեսանող զաւրութիւն հաստատեալ միշտ առ արեւելեան պայծառ լուսափայլութիւն⁵, որով միշտ զուարճացեալ փափկանայ հոգւոյն տեսութիւն⁶: 76 Որպէս մինչ ի չարիսն էաք, ազատեալ էաք յարդարութենէն, եւ ոչ զուզնաքեա մասն բարեպաշտութեան ունելով⁷, այլ մշտաշարժ, անխափան, յարազուարճ խնդութեամբ միտել ի չարիսն անդարձութեամբ՝ ընթանալով զկնի խաւարին: 77 Ըստ նմին գաղափարի յետսդարձութեամբ առ լոյսն ճշմարտութեան, անարգել փութով ընթացուք՝ անդարձութեամբ զչարիսն լինել որդիս⁸ լուսոյ եւ որդիս տունջեան՝ վերածնեալք ի լոյս կենդանի, ըստ սկզբնատպին լուսոյ կերպացեալք, անստուեր լուսով գիտութեամբն

՝ Եւս. Ժ. 16
1 A ունէր
Է Հմմտ. Բար. Ե 5

2 C ոչ բազմացուցանել զչարիսն եւ զնոյն աջն առահեակն ի գործ բարեպաշտութեան փիս ոչ գոյացուցանել... ի գործ բարեպաշտութեան
3 C եւ գյետոյսն դարձուցանել յարեւմուտս փիս եւ զդիմացն... յարեւմուտս
4 C գերեսացն
5 C լուսաւորութիւն
6 AB տեսարանն
7 C մասն մի դոյզն տեսութեան ունել բարեպաշտութեան, այլ... փիս ոչ դուզնաբեա... ունելով
8 C ի չարիս անարգեալ փութացարուք անդարձութեամբ լինել որդիս փիս ի չարիս անդարձութեամբ... չարիսն լինել որդիս

առ լցեալք, եւ ըստ գարշապարաց, ըստ Պետրոսի, ուղղել զգնացս ի վերին մայրաքաղաքն, որոյ ճարտարապետ եւ արարիչ Աստուած է: 78 Ոչ հաստատել յերկրի զգարշապարս, զի մի դարձեալ աւձն դարանակալ հանդիպեսցի խայթել զգնացս մեր, որ առ Աստուած, այլ՝ մերկ, ըստ Մովսիսի. գարշապարացն ելանել ի վերայ սուրբ երկրին եւ զանկոխն աւձի զարքունի գնալ ճանապարհն, որ է նոյն Ինքն ճշմարիտ Կեանքն Քրիստոս եւ վէմն անգծելի¹, սողնական սկզբնաչար աւձին, զոր Սողոմոն յաւրեալ², ոչ ծանեալ զշաւիղս Իսրայէլի ծարաւական քարբին յանգծելի վիմին արահետ:

79 «Եւ ընդ Պետրոսի յառեալ հոգւոյ ակամբն միշտ նկատել³ զՔրիստոս առաջի աչացն»⁴ «գոհութեամբ խաւսել ընդ նմա ոչ շրթամբք այսուիկ, որ յարուեստից շարժեալ բայից շարադրութեամբ մերձանալաւք զնոր անձնիցն ախտից տրամադրութիւն արտաբերեալ առաջարկութեամբ [յ]աւաւոր շարժմամբ եւ ոչ բերանով, որ սուտ եւ ճշմարիտ ելանէ: 80 Այնու բարբառով գոհացայց զքէն, որ լուութեամբ իմանի»⁵ եւ նովին տեսանաւ հոգւոյ ակամբ, որ աշխարհիս գոյ անգիտելի, որով երկրպագի Հայր, ճանաչի Որդի եւ լուսափայլի Հոգին՝ հաղորդութեամբ նոցունց: 81 Նովին ընդ նմին աւրհնել եւ գոհանալ, անճառելի խնդութեամբ վերագոչել: 82 «Դու՛ իմ Հայր՝ վերստին ծնանելով ի

յոյսն կենդանի, դու՛ իմ եղբայր անդրանիկ յաւազանին արգանդէ, դու՛ իմ մատակարար՝ երթալ եւ պատրաստել մեզ տեղի, գալ եւ առնուլ զմեզ, դու՛ ամենայն յամենայնի կենագործաւդ եւ ազատիչ⁶ մեր»⁷: 83 Զի հարկեալ քո յաւետախաղաց գթոյ բնաւորականի⁸, զոր ունիս միշտ առ մեզ, ի խնդիր եկեալ քաջ հովուիդ մոլորական ոչխարին գազանակուր եղելոյ, կորզեալ արութեամբ⁹ ի բերանոյ առիւծոյն գրթակ ունկան նախամարմն, որ խլութեամբ եղեւ կերակուր չար գազանին մահու, եւ զաքեացս երկուս՝ նախահաւրն, որ կապեցաւ չարաչար ընթացիւքն առիւծոյն. ծանուցող չարին գիտութեամբ՝ կարծիս առնելով աստուածանալոյն, որ է ստուգապէս տեսակ չար իմաստիցն անհանճար գիտութեան, որով կապեցաւ իսկ տոռամբ մեղացն, զի մի այլ եւս ընթացի ի չարագոյն ընթացումն եւ ամբարձումն, որ է վայր կործանման առիթ: 84 Եւ բեւեռեալ անարձակ կապանաւք ի փայտին մահաբեր՝ գերի եւ ծառայ մահու յաւիտեան, ոչ ումեք գոլ հնար արձակել զնա: 85 Վասն որոյ գթածաբար խոնարհեալ ծնողին¹⁰ ի բարձանց գայր ի խնդիր կորուսելոյն: 86 «Եւ, առեալ զկապեալ ոտս նորա, բեւեռաւք պնդեաց ի խաչափայտն, զի արձակեսցէ»¹¹ զկապեալ ոտս նախահաւրն, որպէս զի բեւեռաւք զբեւեռս թափեսցէ: 87 Այսպէս բեւեռաւք պնդէին զանմեղ ոտս Տեառն ի Խաչին¹²: 88 Բեւեռք ոտից մեղուցելոյն ի դժոխս ոստուցեալ արձակիւր կապեալն մեղաւք: 89 Վասն այնո-

1 C անկործ
 2 A յաւելեալ. B յառնել
 3 C նկարել
 4 Ձեռագրերում չակերտներով նշուած այս հատուածը չի՛ր վկայաբանութեան մէջ:
 5 Վկա, էջ 55 տ. 6-12. «Գոհանամ զբէն ոչ շրթամբքս այսո՛րիւ բեւեռեցելովքն եւ ոչ լեզուով. որ սուտն եւ նշարտութեան բանն ելանէ եւ ոչ բանիւ այսուիկ, որ արուեստականութեամբ եւ հիւթականութեամբ յառաջ խաղայ, այլ այնու բարբառով գոհանամ զբէն, թագաւոր իմ, որ լուրսեամբ իմանի, որ յայտնապէս չլսին»:

6 C արարիչ
 7 Վկա, էջ 55 տ. 19-21. «Դու՛ Հայր իմ եւ եղբայր իմ, դու՛ մատակարար իմ եւ ամենայն ինչ իմ դու, եւ ամենայն ի բէն, եւ ոչ ինչ, որ ոչ ի բէն»:
 8 C չի՛ր բնաւորականի
 9 C քաջութեամբ
 10 Հմմտ. Լճ. Գ. 12
 11 Հմմտ. Վկա, էջ 55 տ. 2-3
 12 C որք պնդեցին զանմեղ ոտս Տեառն ի Խաչին

ըիկ ոտք Տեառն ի ստորին կողմ Խաչին¹ բեւեռէր², զի ոտք Ադամայ ի ստորին կողմն խաւարի կապեցաւ: 90 Եւ ոչ եւս յայնմ հետէ կարող գոլ առ վերինն ընթանալ աշխարհ, այլ ի ստորին դժոխս իջանէր: 91 Իսկ ոտք Տեառն ի խոնարհ կոյս ուղղեալ զիջումն յերկնից³ յերկիրն նշանակէր գալ ի խնդիր կորուսելոյն:

92 Եւ ի ստորին կողմն Խաչին բեւեռեալ. զի կապեալ ոտս նախահաւրն արձակեսցէ Աստուածն իմ, եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:

1 Շ երկրի
2 Ա կապեցաւ
3 Շ ի բարձանց

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

ՃԱՌԷ

ԿԱՆՈՆԷ

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՆ ԵՒ ԻՐ ԾԱՌԵՐԸ

Յովհաննէս կաթողիկոս Մանդակունին «էր գաւառէն Արշամունեաց, գեղջէն Ծախնոտայ» (Ասողիկ): Ըստ աղբիւրների՝ նա Գիւտ կաթողիկոսի ազգականն էր, որին եւ փոխարինեց՝ ժառանգելով կաթողիկոսական Աթոռը: Ենթադրուած է, թէ եղել է կրտսեր թարգմանիչներից մէկը, որոնք կրթութիւն ստացան տեղում՝ Ս. Սահակի վերադիտութեամբ: Ղազար Փարպեցու բնութագրմամբ՝ նա բարեխօս, ուխտապահ, քաջ գինուոր ու գինուորներին հաւատարիմ, հրեշտականման հովուապետ-այր է եղել, Վահանանց կոիւնների ժամանակ թիկունք է կանգնել Մամիկոնեան զօրավարին, իսկ խաղաղ տարիներին նուիրուել Եկեղեցու ներքին կարգաւորմանը: Ցաւօք, ժամանակակից պատմիչի հազորդումները կենսագրական մանրամասնութիւններ չեն բովանդակում, ուստի շատ իրողութիւններ մեզ անյայտ են մնում: Եթէ Գիրք թղթոցում պահպանուած Ապացոյց յերկուց բնութեանց ասել Փրկիչն եւ կամ մի բնութիւնը իրօք պատկանում է Մանդակունու գրչին, ապա կարելի է եզրակացնել, թէ նա եղել է երկաբնակութիւնը մերժող առաջին գործիչն ու հեղինակը մեզանում: Ասողիկը, հարկաւ, գրաւոր աղբիւր պիտի ունենար, երբ գրում էր, թէ նա «զՀայոց բազում կարգս ուղղութեան կատարեաց, զքարոզս գիշերի եւ տուրնջեան, զկարգս մկրտութեան, զսարկաւազի, զքահանայի եւ զեպիսկոպոսի եւ զօրհնութեան եկեղեցւոյ եւ գլխովիմբ զպատարագամատոյց, զոր Աթանասի ասեն լինել»: Ուրեմն, Մաշտոց ժողովածու ընդունուած նիւթերի նշանակալի մասի հեղինակը Մանդակունին է:

Վարդան Արեւելցին թուարկածի վրայ աւելացնում է նաեւ զձառս խրատուց գրելն ու որոշ թարգմանութիւններ (Կորնթացւոց Բ թուղթ, հատուածներ Գիրք առաքելոց-ից եւ Գրիգոր Աստուածաբանի Պատարագը): Յովհաննէս Դրասխանակերտցին ճանաչում է Մանդակունու Աղօթական ժամանակագրութիւնն ճոխացնելու եւ պայծառացնելու իրողութիւնը եւ միաժամանակ հաստատում, թէ նա «յարդարէ եւս ճառս զգուշացուցիչս դիտաւորական կենցաղոյս»: Հայագէտների եզրակացմամբ վերջինս վերաբերում է ձեռագրերում պահպանուած Խրատ վարուց ժողովածուին, թէեւ Ասողիկի տեղեկութեամբ այդ երկի, ինչպէս նաեւ Հաւատարմատ եւ Նոյեմակ անունները կրող գործերի հեղինակը յայտնի վարդապետ, փիլիսոփայ (մօտ 572-650) Յովհան Մայրագոմեցին է: Ինչպէս երեւում է, միջնադարում տեղի է ունեցել նոյն անունը կրող Մանդակունու եւ Մայրագոմեցու երկերի շփոթ, առանձին դէպքերում նաեւ բնագրական ընդմիջարկութեան, որի հետեւանքով այսօր դժուար է վստահաբար այդ երկու հեղինակների գործերը տարանջատել: Բ. վրդ. Սարգիսեանը հանգամանալի քննութեամբ փաստել է ձառերի Մանդակունուն պատկանելը, մինչդեռ նոյնքան հմուտ հայագէտ-աստուածաբան Կ. Տէր-Մկրտչեանը մերժում է նախորդի դրոյթները եւ ապացուցում, որ մեր ձեռքը հասած քսանվեց ճառ բովանդակող ժողովածուն Մայրագոմեցուն է պատկանում: Հարցի վերջնական լուծման համար պահանջում են անհերքելի լրացուցիչ տուեալներ, որպիսիք տակաւին պակասում են:

Ձառերի այդ ժողովածուն վաղ միջնադարի Հայոց եկեղեցական կեանքին, բարոյական, բարոյագիտական պատկերացումներին նուիրուած բացառիկ գրական յուշարձան է, որը մեծապէս ազդել է հետագայ դարերի հայկական ճառագրութեան վրայ:

Լուսիկ Ստեփանեան

ՁԵՌԱԳՐԵՐԸ

- Ճառերը, որպէս ամբողջական ժողովածու, մեզ հասել են հետեւեալ ձեռագրերում՝
- ա) Վենետիկի երկաթագիր եւ նոտրդիր օրինակներ, որոնց հիման վրայ լոյս է ընծայուել «Տեառն Յովհաննու Մանդակունույ Հայոց հայրապետի ճառք» խորագրով գիրքը 1836 եւ 1860 թուականներին.
- բ) Երուսաղէմի ձեռ. թիւ 1999.
- գ) Երեւանի ՄՄ ձեռ. թիւք 2081, 2223, 2540, 3111, 2546, 3940, 7248.
- Ամբողջական չեն ՄՄ ձեռ. թիւք 942, 993, 994, 1521, 7443. Երուսաղէմի թիւք 1228, 3152:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

- Տեառն Յովհաննու Մանդակունույ Հայոց հայրապետի ցառք, Վենետիկ-Ս. Ղազար, 1832, Բ հրատ., 1860
- Ն. Մովսէսյան (Պողոսեան Նորայր), ճառք ի սուրբ վկայսն Քրիստոսի, «Սիօն», 1963, էջ 48-49
- Տէր-Մկրտչեան Գալուստ, Մատեան Յովհաննու Մանդակունեցույ, «Արարատ», 1903, էջ 562-572, 662-672, 774-784:
- Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 239-240:
- Յովհան Մանդակունի Հայրապետ, ճառեր, աշխարհաբարի վերածեց Եփրեմ արքեպս. Թապազեան, Անթիլիաս, տպ. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, 2001 (գրաբար բնագիր եւ աշխարհաբար զուգադիր թարգմանութիւն)
- Мандакуну Иоанн, О беззакониях дьявольских зрелищах. Перевод Л. Степаняна, "Кавказ и Византия", Ереван, вып. 6, 1988, стр. 268-273.
- Blatz J. und Weber S., Reden des armenischen Kirchenvaters Johannes Mandakuni, - Ausgewählte Schriften der armenischen Kirchenväter, ed. S. Weber, 2 vols. München, 1927, II, S. 31-269.
- Schmidt J., Heilige Reden des Johannes Mandakuni, Regensburg, 1871.
- Les homélies du catolicos Hovhan Mandakuni, Traduits par l'archevêque Yéprem Tabakian, Antelias, 2000.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

- Ակիմեան Հ. Ներսէս, Տէր-Պողոսեան Հ. Պետրոս, Յովհաննէս Ա կաթողիկոս (Մանդակունի, 480-502). Մատենագրական հետազոտութիւն, «Հանդէս ամսօրեայ», 1971, էջ 137-162, 289-322, 385-398
- Բիւզանդացի Նորայր, Երեմ գիտելիք Յովհաննու Մանդակունույ, «Լուսնայ», թիւ 6, 1901, էջ 369-380
- Դուրեան Նդիշէ, Մանդակունույ ցառերուն մէկ նոր ձեռագիրը, «Սիօն», 1927, էջ 308-309, 343-346, 372-373. 1928, էջ 19-21, 84-86, 133-135, 179-180, 211-213, 346-3248, 312-313, 370-371. 1929, էջ 27-28, 65-67, 119-121
- Դուրեան Նդիշէ, Մտկուած տողեր ձեռագրերու մէջ, «Սիօն», 1928, էջ 371-373

- Թօրոսեան Յովհաննէս**, Համեմատութիւն մը Յովհաննու Մանդակունույ «Վասն փոխոց եւ վաշխից» եւ Ս. Բարսղի «ընդդէմ վաշխողաց» ճառերուն, «*Բաղճավէպ*», 1927, ԹԻՒ 48, էջ 65-73
- Ծովական Ն. (Պողարեան Նորայր)**, Ողբ ի վերայ անապաշխարի մեղաւորաց, «*Սիօն*», 1963, էջ 86-87
- Ծովական Ն. (Պողարեան Նորայր)**, Վերլուծութիւն Կաթողիկէ եկեղեցւոց եւ որ ի նմա յարիւնեալ կարգաց, «*Սիօն*», 1967, էջ 70-75
- Յակոբեան Գրիգոր**, Յովհան Մանդակունուն վերագրուող շարականները, «*Էջմիածին*», 1971, ԹԻՒ 4, էջ 31-36
- Յովսէփեան Գարեգին**, Պատմութիւն Յովհաննու Մայրագումեցւոյ, «*Արարատ*», 1917, էջ 735-749
- Սարգիսեան Հ. Բարսեղ**, Քննադատութիւն Յովհանն Մանդակունույ եւ իւր երկասիրութեանց վրայ, *Վենետիկ-Ս. Ղազար*, 1895
- Տէր-Մկրտչեան Կարապետ**, Յովհան Մանդակունի եւ Յովհան Մայրագումեցի, «*Շողակաթ*», 1913, էջ 84-113
- Քենդերեան Հ.**, Յովհան Մայրագումեցի, *Երեւան*, 1973
- Քեօւէեան Յ.**, Յովհան Մայրագումեցու «Վերլուծութիւն Կաթողիկէ եկեղեցւոյ...» աշխատութիւնը. *տե՛ս Յակոբ Քեօւէեան*, Դրուագներ հայ միջնադարեան արուեստի աստուածաբանութեան, *Ս. Էջմիածին*, 1995:
- Feydit F.**, *La XXVIe homélie de Jean Mandakouni sur Les charmes des sorciers et les magiciens impies*, - "Melanges offerts a Jean Dauvillier", *Toulouse*, 1979, 293-306.
- Wojtowicz H.**, Jan Mandakuni ormianski Ojciec Kosciola,- "*Studia Sandomirskie*" 2, 1981, էջ 440-453.

ՃԱՌՔ

Ա.

ԹՈՒՂԹ՝ ՎԱՄՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ
ՎԱՐՈՒՑ ՅԱՆՑԱՆԱՑ

1 Որք Սուրբ Հոգւոյն են ցանկացողք, եւ աստուածային սիրոյն են բաղձացեալք, գալստեան Որդւոյն Աստուծոյ սպասեն, եւ անմահ փառացն փափագեն. միշտ ի վերինն խորհին, եւ Հանապազ անդուրախութիւնսն փափագեն. զառաւրեայս արհամարհեն ուրանան, եւ աւր ըստ աւրէ ի վերելանեն՝ ոչ միայն Հաւատոցն ճշմարտութեամբ, այլ եւ վարուցն առաքինութեամբք. միշտ սկեն սրտին սրբութեամբ, եւ Հանապազ պատրաստ են ոգւոցն անարատութեան. վարին եւ կեան յաշխարհի եւ ոչ ըստ աշխարհիս Հաճոյից, այլ իբրեւ զաւտարս եւ զթափառականս եւ զմանկունս այլոց աշխարհի նեղին եւ մաշին ի բազում պիտոյից. յուսովն զաւրանան այնու եթէ՝ Ուր եսն եմ, անդ եւ պաշտանեայն իմ եղիցի⁶: 2 Այսպիսի են Հոգեւորացն պատիւք եւ աստուածասիրացն պարգեւք:

3 Այլ ես ի բազում նետից չարին վերաւորեցայ, եւ յաղթեալ պարտաւորեցայ. զպարտութիւն խոստովանիմ, եւ զամբարշտութիւնս իմ ծանուցանեմ. զանթիւ զմեզս իմ պատմեմ, եւ զահեղ անաւրէնութիւնս իմ պաղատիմ: 4 Զի ցաւք վիրաց իմոց բռնադատեն զիս պատմել, եւ վարանք աղէտից իմոց Հարկեցուցանեն զիս պաղատել, դեղ վիրիս իմոյ որոնել, եւ վտակս արտասուաց խնդրել Հանապազ. որով զմեզս իմ լացից, եւ զվէրս իմ բժշկեցից: 5 Զոր բազում բաղձանաւք ցանկամ Հանապազ, եւ ըղձալի տենչանաւք Հայցեմ յարածամ զմարգարէականն զայն ողբալ. զի ընդ նմա ձայնակցելով ողբայի, եւ ար-

տասուելով զաղերսալի զձայն գորովոյ բարբառէի միշտ՝ ասելով թէ Առնէր ոմ գգուլիս իմ շտեմարանս ջուրց բազմաց, եւ գաչս իմ յորդ աղբիւր արտասուաց, եւ միշտ ի տուէ եւ ի գիշերի լայի անդադարէ դառնապէս զամբարշտութիւնս իմ արտասուել, եւ զչարիս իմ վարանել, զբազմութիւն անաւրէնութեանց իմոց լալ, եւ միշտ զմեզս իմ ողբալ, եւ զանբաւ զյանցանս իմ հեծել, եւ զանթիւ զպղծութիւնս իմ Հառաչեցից, եւ զահեղ զկործանումն իմ կոծել, եւ վասն աղէտիցն տանջանաց ողբալ դառնապէս: 6 Զի խիղճ յանցանաց իմոց հեղձուցանէ զիս յարածամ, Հայելով յանթիւ մեղաց իմոց բազմութիւն, եւ յահեղ ախտից իմոց անաւրէնութիւն. որ միշտ զմարմինս իմ մաշէ, եւ զոսկերս իմ խարշատէ, եւ զսիրտ իմ գելու, եւ զորովայն իմ գալարէ, եւ անձն իմ դողայ երկիւղիւ, եւ զամենայն անդամս իմ հալէ Հանապազ: 7 Զի առ ցաւս վիրաց իմոց վարանիմ, եւ միտք իմ ափշեալ յամառին, զի գիտեմ զբարից, եւ առնեմ զչարի. իմանամ զարդարութիւն, եւ գործեմ զանաւրէնութիւն. խաւսիմ զուղղութիւն, եւ խորհիմ զանիրաւութիւն. երեւիմ սրբութիւն, եւ մերձենամ յաղտեղութիւն. ճանաչեմ զճշմարտութիւն, եւ յարիմ ի մոլորութիւն. տեսանեմ զլոյսն, եւ խաւարին փափագեմ:

8 Եւ արդ ո՞վ զիս լացցէ, եւ կամ ո՞վ զիս ողբասցէ զմեռեալս մեղաւք եւ զկործանեալս անաւրէնութեամբ, զանկեալս ի խորս խաւարի եւ յանդուռնդս ամբարշտութեամբ. զի չարիք իմ չարչարեն զիս, եւ պղծութիւնք իմ սպանանեն: 9 Եւ արդ որպիսի՞ ինչ լացից, եւ կամ որպիսի՞ ողբացից զանթիւ մեղաց իմոց զբազմութիւն, որ

⁶ ԹՂԹ՝ ԺԲ 26

⁶ Հմմտ. Երեմ. Թ՝ 1:

⁷ Հմմտ. Հաբ. Լ՝ 19:

ի յանցանացս եմ հիւանդացեալ, եւ ծուլութեամբ իմով ցաւագնեալ: 10 Զի անմահութիւն ինձ խոստացաւ, եւ ես մնամ ի մահուս. ի վեր յերկիրնս հրաւիրեաց, եւ ես յանդուներս դժոխոց իջանեմ. զփափագելի զգրախտն պատրաստեաց, եւ ես զփուշս խոցոտիչս ընտրեցի. եւ կեանս եւ փառս մշտնջենաւորս, եւ զիս մեղաւք իմովք սպանի: 11 Եւ արդ այսր ամենայնի ո՞ր սուգ բաւական իցէ, կամ ո՞ր ողբ ողբալոյ. որպիսի՞ լալումն արտասուաց, կամ որպիսի՞ հառաչանք պաղատանաց. ո՞ր ինչ աշխատութիւնք, եւ կամ ո՞ր վաստակք առաքինութեան զվէրս իմ բժշկեսցեն, զի անթիւք են եւ անհամարք: 12 Եւ անձն իմ հեղգայ ծուլութեամբ, յահեղ մեղաց բազմութենէ լքեալ թուլանայ, եւ յանշէջ հրոյն գեհնին սարսեալ սարսափէ. զի յիշելով զմեծ աւր ասեղ դատաստանին եւ զսոսկալի բեմբին արհաւիրս՝ անձն իմ դողայ երկիւղիւ, եւ միտք իմ ասիւ հիանայ. սիրտ իմ ողբալ պահանջէ, եւ աչք իմ բաղձան արտասուաց. աս ասեղ ատենին փութացուցանէ զիս յապաշխարութիւն, եւ պատրանք չարին ծուլացուցանեն զիս հանապագ: 13 Եւ ասա նեղեալ եմ յերկոցունց եւ տագնապեալ եմ ամենայնիւ, զի միշտ ի մեղս գաւուրս իմ անցուցի, եւ յանաւրէնութեան զկեանս իմ ծախեցի, եւ ումեք զբարիս չարարի, եւ զարդարութիւն երէք ոչ ստացայ. այլ զամենայն անդամս իմ ապականեալ կորուսի ի յանցանս բազմադիմիս: 14 Զբերան իմ բամբասանաւք պղծեցի, եւ զլեզու իմ դատարկ բանիւք աղտեղացուցի. զուսկն իմ ի լուր չարութեան, եւ զակն իմ ի տեսս աղտեղիս. զսիրտ իմ զագիր խորհրդովք, եւ զանձն իմ անպարկեշտ գնացիւք վարեցի հանապագ. եւ ամենեւին ոչ պահեցի զմարմին իմ առողջ եւ զսիրտ իմ ճշմարիտ. զի մեղաւք ի ցաւս, եւ յանցանաւք ի հիւանդութիւնս: 15 Կամիմ զղջանալ խոստովանել, եւ թշնամին յապաղեցուցանէ. կամիմ

մտանել ի վարս ապաշխարութեան, եւ թշնամին ծուլացուցանէ. կամիմ անկանել առաջի Աստուծոյ, եւ թշնամին հեռացուցանէ. կամիմ պաղատել եւ մաղթել եւ աղաչել, եւ թշնամին կարծրացուցանէ. կամիմ ողբալ եւ լալ արտասուաւք, եւ թշնամին ցամաքեցուցանէ. կամիմ ողորմել աղքատին, եւ թշնամին զաղքատութիւնս իմ յիշեցուցանէ. կամիմ պահաւք զիս մաշել, եւ թշնամին զտկարանալս մարմնով ինձ յիշեցուցանէ. կամիմ խոնարհել եւ եղբաւրն հնազանդել, եւ սիրտ իմ պնդի ամբարհաւաճութեամբ. զի որով մարթիմ զմեղս իմ քաւել, զչարութեան որոգայթ թշնամուոյն առաջի եղեալ գտանեմ:

16 Եւ արդ նեղեալ եմ ամենայնիւ, եւ անձն իմ հեծէ հանապագ. յիշելով զմեղաց իմոց զբազմութիւն դողամ երկիւղիւ, եւ ընդ զագրութիւն խորհրդոց իմոց վարանիմ. զանսրբութիւնս իմ հայելով ողբամ հանապագ, եւ զանաւրէնութիւնս զմտաւածելով արհաւիրք տարակուսանաց ի վերայ իմ անկանին, եւ ցաւք երկանց ինձ հարկանեն: 17 Զի միշտ գահ ասեղ ատենին տեսանեմ, եւ զարհաւիրս մեծի բեմբի եւ ասաւորի, եւ զահեղ հնչիւն փողոյն, եւ զահագին բարբառ հրեշտակապետին. զծովածաւալ հրոյն բորբոքումն, եւ ընդ ամենայն երկիր ծաւալումն. զվերանալն արդարոցն, եւ զմնալն մեղաւորացն. զգումարելն ամենայն մեղաւորաց, եւ տալ համարս բանից եւ գործոց. զսոսկալի դէմս դատաւորին, եւ զաններելի աւր դատաստանին. զչար ամալթն մեղաւորաց, եւ զդառն՝ անմահ տանջանսն յաւիտենականս: 18 Եւ վասն այսր ամենայնի հեծեմ եւ լամ դառնապէս՝ անդադար զմեղս իմ ողբալով, զի յոյժ ասեղ տեսանեմ զարհաւիրս գեհնին, եւ զսոսկալի աղէտիցն զտեսչութիւնն. ուր ոչ ինչք եւ ոչ աղաչանք ինչ աւգնեն. ոչ լալումն եւ ոչ ար-

1 Մի օրինակ՝ դառնամահ

տասուք են ակոսու. ոչ հեծութիւնք եւ ոչ հառաչանք են պիտոյ. ոչ արդարքն մաղթեն, եւ սուրբքն բարեխաւսեն ընդ զնացելոցն մեղաւք: 19 Անծանաւթ ես ի ծանաւթից, եւ հեռաւոր ի մերձաւորաց. ատելի ես սիրելեաց, եւ թշնամի բարեկամաց. ամայի ես ամենեւին, եւ ակտար ես յամենեցունց: 20 Ոչ գոք կարես աղաչել, եւ ոչ ոք գքեզ ճանաչէ. ողբաս եւ լաս ողորմով, եւ ոչ ոք ի քեզ խոնարհի. պասքեալ ծարաւով տապակիս, եւ ոչ գթայ ոք ի քեզ. այրիս հանապազ, եւ հնարս խորովմանն ոչ գտանես ամենեւին. միգապատեալ կաս ի հուր հնոցացն, եւ աղջամղջիւ յաննչոյլ գեհնին, ի գուբս խաւարայինս եւ ի տարտարոսս ներքինս ի ժահահոտս եւ յորդնեւացս. հուր բորբոքեալ ի ներքոյ, եւ հրահոտանք ասեղ ի վերուստ՝ որ յորդեալ իջանեն յորդահոս գետոցն հրեղինաց, ուր խաւարն է շաւշափելի: 21 Եւ ամենեւին գոք ոչ կարես տեսանել, զի սեւաթոյր միգովն մթապատեալ եւ արկեալ ի մէջ կայծականց՝ լաս եւ ողբաս անդադար, եւ գքո միայն վարանսն կոծիս, զի յահեղ աղէտիցն ցաւոց գքեզ միայն համարիս ի տանջանս չարչարանացն: 22 Հեծես հանապազ եւ լաս դառնապէս, անհանգիստ եւ անմխիթար. վիշտք եւ նեղութիւնք եւ մշտնջենաւոր տառապանք, անդադար տանջանք եւ աններելի տագնապումն, անպատում ցաւք եւ աննման կսկիծք, ամենայնիւ վարանք եւ ամենեւին տարակուսեալք: 23 Զի անդ ճշումն եւ վայումն միայն է բարբառ. ողորքանք եւ խանդաղատանք անդ՝ զհաչելն եւ զհառաչելն միայն լսես, զհեծելն եւ զտագնապելն. լալ եւ ողբալ անդադար, եւ ողորմութիւն ոչ գտանել. այլ միշտ ի վիշտս խաչիս, եւ հանապազ ի կարաւտութիւնս մաշիս, հանդերձ արտասուաւք եւ պաղատանաւք զոր ոչ ոք լսէ, եւ ոչ զպաղատանսն ընդունին, քանզի անժամ է ժամանակն: 24 Այլ աստ է լալ եւ աստ է ողբալ. աստ է հաչել եւ աս-

տէն հառաչել. աստ է աղաչել եւ մաղթել եւ խնդրել թողութիւն. զի աստ է շահ արտասուացն եւ ակոսու աղաւթից, սերմանք ողորմութեան եւ պտուղ պաշխարութեան, ժամանակ հառաչելոյ եւ ողորմութիւն խնդրելոյ:

25 Եւ արդ աստէն փոխանակեսցուք զսուղ նեղութիւն մարմնոյս ընդ անսպառ տանջանացն ցաւոց. զի ընդ սակաւ պահոց աշխարհիս աշխատութեան պարեսցուք ի բորբոքեալ բոցոյն եւ յահեղ կայծականց գեհնոյն. ընդ փոքր ինչ տքնութեան աղաւթիցն պարեսցուք ի յորդահոս գետոցն հրեղինաց. ընդ սուղ ինչ տրտմութեան պարեսցուք յահեղ հնոցացն եւ ի չարժանի որդանցն խածանողաց. ընդ հաչելոյն եւ ընդ հառաչելոյն աստ՝ անդ պարեսցուք ի դառն տանջանացն եւ յաննչոյլ խաւարէն. ընդ սուղ մի լալոյ եւ արտասուելոյ աստ՝ անդ պարեսցուք ի միշտ լալոյն եւ ի հանապազ ողբալոյն. եւ փոխանակ միոյ պաշխարելոյ աստ՝ անդ պարեսցուք ի միգապատ խաւարէն, ի դառն մահուանէն եւ յաւիտենական ամաւթոյն:

26 Եւ արդ զայս ամենայն զմտաւ ածելով, ով անձն իմ բազմամեղ, մի՛ հեղգար ի պահոց, եւ մի՛ ծուլանար յաղաւթից. մի՛ դադարեր ի զղջանալոյ, եւ մի՛ յապաղեր ի խոստովանութենէ, եւ մի՛ վհատիր յապաշխարութենէ, եւ մի՛ վաստակիր յողորմութենէ. մի՛ դադարիր ի լալոյ, եւ մի՛ հանգչիր յողբալոյ. մի՛ մնար վախճանին, եւ մի՛ յուսար ի վաստակ ծերութեան, եւ մի՛ համարիր գքեզ ամս բազումս յաշխարհիս, եւ մի՛ կարծեր եթէ յապա ինչ պաշխարեմ. գոդ է թշնամին եւ խաբող, խաբէ գքեզ եւ կորուսանէ յապաղեցուցանելով այնպէս:

27 Այժմ գործեցից ասես, ապա պաշխարեցից. ի մանկութեանս հանգեայց ասես, եւ ի ծերութեանս պաշխարեցից. կեցից այսաւր վայելեցից ասես, եւ ի վաղիւն պահեցից. այժմ փափկացայց ասես, եւ ապա պարկեշտացայց. այժմ ժողովեցից ա-

սես, ապա սփռեցից աղքատաց...¹:
28 Այսպիսիք են պատրանք թշնամոյն, որովք խաբէ եւ կորուսանէ զմեզ՝ ամ յամ առնելով, եւ ժամ ի ժամ սահմանելով գործել զբարին:

29 Եւ արդ մի՛ խաբեսցուք յայսպիսի պատրանաց. անյայտ է աւր վախճանին, աներեւոյթք են ելք յաշխարհէս. իբրեւ երկունք ի վերայ անկանին, եւ ոչ ժամանես զղջանալ եւ ապաշխարել. իբրեւ գող ի գիշերի հասանէ, եւ ոչ տայ կոծել եւ ապաշխարել. իբրեւ վարմ հաւորսաց վաղվաղակի ըմբռնէ, եւ տայ լալ եւ հեծել եւ ողորմութիւնս թողուլ. իբրեւ զառիւծ յարձակի, գոչէ եւ յափշտակէ, եւ ամենեւին ոչ ժամանես: 30 Եւ արդ անձն իմ զի՞նչ արասցես, եւ կամ զի՞նչ գործեսցես, որ խորհիսդ զբարին, եւ ոչ առնես. կամիս ողորմել, եւ յապաղես. ասես զղջանալ, եւ ոչ որպէս Դաւիթ արտասուաւ զմահիծս թանաս. այլ եւ Զմոխիր, ասէ, որպէս հաց կերայ, եւ զըմպելին իմ արտասուաւ խառնեցի՞. եւ զամենայն գիշերս հեծեծէր եւ լայր դառնապէս անդադար: 31 Յաւժար ես ի պահել, եւ ոչ որպէս զնինուէացիսն ի խորգ եւ ի մոխիր իջանես. այլ եւ Դարձան եւս, ասէ, յիւրաբանցիւր ցանապարհաց եւ յանարեմ ցնացից, զոր եւ առնէինք: 32 Ախորժես արտասուել եւ լալ, եւ ոչ որպէս պոռնիկն խանդաղատագին ողբաս. կամիս ողորմել նեղելոց, եւ ոչ որպէս կինն այրի՝ որ զամենայնն ծախեաց:

33 Արդ այսպիսի է ապաշխարութեան ջերմութիւն՝ որ ոչ ի յինչս եւ ոչ ի մարմնոյ աշխատութիւն խնայէ. այլ նեղէ եւ մաշէ եւ տառապեցուցանէ, եւ խնդրէ միայն զմեղացն թողութիւն, եւ զախտից ոգւոցն զբժշկութիւն. որով եւ մեք զմեղս

մեր քաւեսցուք, եւ զվէրս ոգւոց մերոց բժշկեսցուք: 34 Զի է եւ պահաւք եւ ծոմաջան տքնութեամբ զմեղս քաւել. է եւ աղաւթիւք եւ խնդրուածովք եւ գորովագին պաղատանաւք զմեղս քաւել. է խորգով եւ մոխրով եւ գետնախշտի անկողնաւք զմեղս քաւել. է եւ լալով եւ ողբալով եւ գթով տնանկաց զմեղս քաւել. է եւ հաչելով եւ հառաչելով եւ անդադար հեծեծանաւք զմեղս քաւել. է եւ հեղութեամբ եւ խոնարհութեամբ եւ հնազանդութեամբ զմեղս քաւել. է եւ աղքատութեամբ եւ անընչութեամբ եւ մերկութեամբ զմեղս քաւել. է եւ բարի բարիւք² եւ ամենեցունց բարերարութեամբ զմեղս քաւել. է եւ եղբայրսիրութեամբ եւ երկիւղին Աստուծոյ զմեղս քաւել. է եւ ուղիղ խրատու եւ վարդապետութեամբ զմեղս քաւել, ըստ այնմ եթէ՛ Որ դարձուցանէ ի չար ցանապարհէն, ապրեցուցանէ զոգի իւր ի մահուանէ, եւ ծածկեսցէ զբազմութիւն մեղաց իւրոց³: 35 Այլ³ եւ ճշմարիտ դարձն միայն եւ ուղիղ խոստովանութիւնն բաւական են ի փրկութիւն եւ յարգարութիւն, ըստ այնմ եթէ՛ Ասա դու նախ զանարեւութիւնս քո, զի արդարացիս՞:

36 Եւ արդ դու զի՞նչ ունիս ասել, ով անձն իմ բազմամեղ, եթէ այսքան դեղաւք ոչ բժշկիս. այլ փութա մի՛ յապաղեր, զարթիր ի դառնանիրճ ի քնոյդ, դարձիր ի կորստական ի ճանապարհէդ. փարատեա զխաւարն անգիտութեան. սթափեցիր անզգայ մոլորութենէդ, եւ եկ ի քեզ. ընկեա ի քէն զմեղացդ սաստկութիւն. թեթեւացո զձանրութիւն բեռանցդ անաւրէնութեան. քաւեա զանթիւ յանցանացդ բազ-

1 Բառ մի եղծեալ է յօրինակին. որ եւ յայլս պակաս է:
՝ Սաղմ. ՃԲ 10
Է ԶՎՆ. Գ. 8

2 Այսպէս յօրինակին
՞ ԶՎ. Ե. 20
3 Աստուծոյ թերատ թուի բանն յօրինակին, որ ունէր այսպէս. եւ զճշմարիտ դարձն միայն եւ ուղիղ խոստովանութիւն. ըստ այնմ. յարմարեցաւ ըստ այլ օրինակաց:
Դ. Ե. ԽԳ. 26

մուծվին. բժշկեա զչարաչար վիրացո զխոցոտումն, եւ լուա զժահահոտութիւն տղմոյդ ամբարշտութեան. զի սրբեալ եւ մաքրեալ ոգւով, լուսազարդեալ եւ մեծապայծառ մարմնով՝ համարձակադէմ եւ զուարթերես անցանիցես ընդ բազմութիւն տիեզերական ահեղ եւ անթիւ բանակացն, լինել յանդիման ահաւորի եւ մեծի բեմին Աստուծոյ, եւ լսել ի նմանէ զքաղցրալուր բարբառն երանութեան եւ աշխարհատես հրապարակին եթէ՝ եկայի, արհնեալի Հարիմոյ, եւ մտէի ժառանգեցէի գերկնից բարութեանցն զվայելչութիւն՝ ընդ Հաւր եւ ընդ Որդւոյ եւ ընդ Հոգւոյն Սրբոյ. որում փառք եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Բ

ԹՈՒԴԹ ՎԱՄՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

1 Արմատք դեղոց բժշկաց զցաւս մարմնոյն առողջացուցանեն, եւ հոսումն արտասուաց ապաշխարութեան զմեղացն զվէրսն ոգոցն բժշկեն. եւ մանաւանդ որ հանդերձ ողորմութեամբ եւ գթով տնանկացն ապաշխարիցեն: 2 Քանզի բազում արմատք են ախտիցն որ դադարեցուցանեն, որք խառն են ի դեղս բժշկաց. բայց է որ առաւել եւս ազդոյ է առ ի ցաւոցն փարատումն: 3 Նոյնպէս եւ ի դեղս սորա բազում ճգնութիւնք ապաշխարութեան են ի մաքրումն մեղաց. բայց ողորմութիւնն է կարեւոր եւ ազդոյ քան զամենայն առաքինութիւնս առ ի զմեղս քաւելոյ եւ զվէրսն բժշկելոյ հանդերձ ողբովք եւ հառաչանաւք եւ գթագին արտասուաւք. յորմէ մի՛ յապաղեսցուք եւ վազուենէ ի վաղիւ արասցուք զդարձն մեղացն ապաշխարութեան, եւ մի՛ աւուր վախճանին մնասցուք՝ առնել զընչիցն ողորմութիւն: 4 Զի գող է աւրն այն, յափշտակող է աւր վախճանին. աներեւոյթք են ելք յաշխարհէս,

յանկարծահաս է եւ ստիպող, եւ ոչ թողացուցանէ աղաչել եւ մաղթել, լալ եւ ողբալ, ողորմել եւ ապաշխարել: 5 Ըմբռնէ իբրեւ զորոգայթ, յափշտակէ իբրեւ զառիծ. եւ իբրեւ զգերի գերիվարաց վարեալ անողորմ, հառաչես արտասուել եւ հեծես ողբալով, եւ աւգուտ ինչ ոչ գտանես: 6 Զի ժամէ ի ժամ առնելով՝ զժամանակ ապաշխարութեանն կորուսեր. որով կարող էիր զբեռինս մեղաց թեթեւացուցանել, եւ զտիրմ անաւրէնութեանցն մաքրել. լինել արդարոցն երամակից, որդի Հաւրն երկնաւորի, եւ ժառանգորդ անանց բարութեանցն:

7 Եւ արդ կամ փափագանաւք ըղձափափկութեանցն եւ կամ սպառնալեաց ահեղ տանջանացն փութասցուք յապաշխարութիւն, եւ մի՛ բեռն ի վերայ բեռին կայեսցուք, եւ ցաւ ի ցաւս յաւելուսցուք: 8 Եւ մի՛ խաբեսցէ սատանայ՝ թէ բազմաժամանակեայ են կեանքս, եւ մի՛ պատրեսցէ զմեզ մանկութեամբս՝ եթէ ի ծերութեանն ապաշխարեմք: 9 Մի՛ մնասցուք աններելի վախճանին եւ անողորմ պահանջողացն. մի՛ անվաստակ ծուլասցուք, եւ անվարձ գնասցուք: 10 Այլ զյանցանս քաւեսցուք եւ զմեղան ապաշխարեսցուք, եւ նախանձաւոր լերուք քաջացն քաջութեան եւ առաքինութեան առաքինեացն. որոց սիրտքն սրբեալք եւ միտքն լուսաւորեալք, անմեղ ի մեղաց եւ անարատք յանաւրէնութեանց. որ միշտ զվերինն խորհին, եւ ի վերինսն հոգան հանապաղ. որք զմարմինս ունին հողեղէնս եւ հրեշտակակրաւնս. որք ոչ են կարաւտ գրոց վարդապետութեան եւ տարացոյց աւրինակաց. զի առաւել քան զգիրն երեւեսցուցին զմտացն ուղղութիւն եւ զվարուցն առաքինութիւնս¹: 11 Հեռի եմք յուղիղ գնա-

¹ Հմմտ. Մատթ. ԻԵ՝ 34:

1 Ի ճօտրագիր օրինակին գտանի առաջիկայս յաւելուած համանման այնմ որ ընթերցեալ լինի ի Սարգսի մեկն. Կաթողիկեայց. եւ սկսանի. Եւ արդ համեմատեսցուի ընդ միմեանս զայժմու

ցից, եւ աւտար ի վարուց առաքինութեան. շեղեալք յորոգայթից թշնամոյն եւ շողախեալ տղմով յանցանաց. կարաւտք եմք խրատուց եւ վարդապետութեան եւ տարացոյց ինչ աւրինակաց. եւ թերեւս ահից սաստիցն յահեղ հրոյն երկիցուք, եւ տարացոյց աւրինակացն աղէտիցն իմասցուք: 12 *Մարմնովս զոգոցն ծանիցուք, եւ երեւելեալս զաներեւոյթն գիտասցուք. ահիւ*

ահեղ տանջանացն զղջասցուք, եւ փափագանաւք անանց¹ բարութեանցն: 13 *Ապաշխարութիւն պարտ է առնուլ զաւրինակս վիրաց ոգոցն ցաւոցն զցաւ ախտիցն մարմնոյ, թէ ո՛րպէս միշտ ողբայ անձն ցաւագին զվարանս ցաւոցն մարմնոյ, եւ հանապազ լայ դառնապէս զառժամանակեայ ախտիցն զայրացումն, եւ ի տարակուսանաց ահեղ աղէտիցն հառաչէ եւ հեծէ անդադար, եւ ձայնք պաղատանաց եւ վայից եւ զանողորման խանդաղատեն:*

գործս մեր եւ զնախնի երանելեացն. եւ տեսանեմք զվատթարութիւնս մեր, եւ զառաջին սրբոցն զհաջութիւնսն: Նոքա զանձինս մատնեցին վասն սիրոյն Քրիստոսի. նոքա զինչս եւ զհայրենիս արհամարհեցին: Նոքա զծնողս եւ զկին եւ զորդիս թողին վասն աստուածպաշտութեան, միայն զի յԱստուծոյ մի՛ զրկեսցին: Իսկ մեք որք թուիմք բէ եմք ինչ, ոչ այսպէս. այլ զամենայն հնարս վասն հանգստեան մարմնոյ հնարիմք, եւ զրնչիմք գամք, եւ զսիրելիս մեծարու համարիմք քան զպատուիրանս Աստուծոյ: Եւ զի՞նչ ասեմք զսիրելիս. ուր գորթ այգուդ եւ զպարտեզ բանջարոյ եւ ծառս դրախտի եւ զկարաս զհնուդ եւ զանօթս չնչինս յարգոյ եւ պատուական համարիմք քան զսէրն Աստուծոյ: Նոքա վասն Քրիստոսի հալածէին եւ քարշէին եւ նախատէին. ի բանտ եւ ի կապանս մատնէին: Իսկ մեք վասն Քրիստոսի ոչ նախատանաց անգամ տանիմք, եւ ոչ թշնամանաց բանից համբերեմք, եւ ոչ զգայրացումն եղբորն քաղցրութեամբ շիջուցանեմք. այլ եւս առաւել գագանանամք ընդդէմ նորա: Դարձեալ եւ մեք վասն Քրիստոսի մի ինչ ի մարմնական ցանկութեանց ոչ կապեմք ի մեզ ժուժկալութեանն կապանօք, եւ ոչ բանտարգել լինիմք ի տունս մեր զոր մի ողջոյն վասն Քրիստոսի, եւ ոչ արտասուօք զբոց մեղացն շիջուցանեմք, եւ ոչ ժուժկալութեամբն իբրեւ երկաթի եղնգամբք քերեմք ի մէնջ զքարախն անօրէնութեան: Նոքա զթշնամիսն սիրէին, մեք եւ զքարեկամանս ատեմք. նոքա զհալածիչսն օրհնէին, եւ մեք զքարեկարսն մեր բամբասեմք. նոքա զինչսն գոր ի հայրենեացն անտի ունէին՝ ցրուէին, իսկ մեք գոր ոչն ունիմք՝ ստանալ ջանամք: Նոքա յերկրաւորացս յերկինս փոխեցան հրեշտակական կրօնաւորութեամբ քաղաքավարեալք. իսկ մեք յերկնաւոր քաղաքականութենէ յերկիր կործանեցամք, եւ սանդարամետական եղամք: Նոքա զԱստուած յիմեանս բնակեցուցին՝ զպատուիրանս Քրիստոսի կատարելով, իսկ մեք անցանելով ընդ պատուիրանս նորա՝ տեղի եղամք բնասարկուին սատանայի: Քանզի ամենեւին սանձակոտորք եղամք ի դաշտի, եւ զբաղցր լուծն ի բաց ընկեցամք ի պարանոցաց մերոց, եւ զփոքրօք բեռն սասանեցուցամք ի թիկանց մերոց, եւ ամեհաբար յերկրի շրջիմք: Ո՛վ մեծի աղէտիս, եւ վշտալի տարակուսիս: Վասն զի:

14 Զի ի սաստկութենէ աշխատիցն² ցաւոց ոչ ի սէր սիրելեացն բերկրի, եւ ոչ ի թշնամանս ատելեացն զայրանայ. ոչ զփափկութիւն կենացն յիշէ, եւ ոչ զվայելչութիւն զեղոյն ածէ զմտաւ. եւ զամենայն իսկ զպատիւս եւ զպայծառութիւն աշխարհիս անփոյթ արարեալ ուրանայ ի տարակուսանաց ցաւոյն: 15 *Այլ կայ միշտ սգով եւ արտասուլաւք եւ ողբագին խանդաղատանաւք. զվիշտս վտանգին միայն պաղատի, ընդ որ բազումք ի մերձաւորաց արտասուեն ողորմելով, եւ փութան լինել ի խնդիր բժշկաց եւ զեղոց առ զառժամանակեայ զցաւան փարատելով, եւ վարձս եւս բժշկացն խոտտանան եւ զինս զեղոց վասն տազնապի ցաւոց փարատելոյ:*

16 *Եւ այս ամենայն վասն ապականացու մարմնոյս լինին նեղութիւն. որ թէպէտ եւ բժշկի, սակայն մեռանել ունի:* 17 *Իսկ զի՞նչ արասցուք զմշտնջենաւոր ցաւս ահեղ հրոյ գեհենին՝ որ պատրաստեալ պահի բազմավէր ոգոց մերոց, որ միշտ ի մեղս է ախտացեալ, եւ ի մահիճս յանցանաց անկեալ զնի անբժշկապէս. եւ հանապազ խոցոտեն, եւ միշտ վիրաւորեն մեղացն անաւրէնութիւնք, եւ առաւել չարաչար չարչարեն զքեզ վարանք աղէտիցն ցաւոց:* 18 *Եւ ոչ հառաչեմք եւ հեծեմք եւ*

1 Այլ օրինակ այսպէս ունի՝ զանանց բարութիւնսն ժառանգեցցումք ապաշխարութեամբ: Եւ արդ պարտ է մեզ առնուլ օրինակ:
2 Յայլում օրինակի՝ ախտիցն

հանապազ պաղատիմք առ Աստուած. ոչ ողբամք զցաւս մեղաց, եւ ոչ զվէրս յանցանաց մերոց լուանամք. ոչ անդադար լալով արտասուեմք զանաւրէնութիւնս մեր, եւ զմշտնջենաւոր տանջանացն արհաւիրսն. այլ վէրս ի վերայ յաւելումք հանապազ, եւ սպեղանեաւք ապաշխարութեան ոչ դարմանեմք. ոչ բժիշկս խնդրեմք, եւ ոչ դեղս որոնեմք. ոչ ինչս ծախեմք, եւ ոչ վարձս խոստանամք ընդ կարեւոր վիրացս բժշկութեան, եւ ընդ անհնարին խտրեցս անաւրէնութեան. որ ոչ միայն աղեաւք եւ որովայնիւք եմք ի ցաւս, այլ ամենայն մարմնովս եմք ի վէրս մեղաց: 19 Քանզի աչք մեր յածողք յարատ հայեցուածովք են ի վէրս. լսելիք մեր առ ի զանդէպսն խորթելոյ են ի ցաւս. լեզուք մեր բամբասանաւք եւ երգմամբք են ի ցաւս. սիրտք մեր չար ցանկութեամք եւ պիղծ խորհրդովք են ի ցաւս. ձեռք մեր յափշտակութեամք եւ ի զրկանաց են ի ցաւս. ոտք մեր ի թատերացն խաղուց եւ յանպարկեշտ գնացից են ի ցաւս. եւ ամենայն մարմինք մեր ջրգողեալք մեղաւք, եւ այտուցեալ անաւրէնութեամք: 20 Եւ այսպէս ամենայն անդամաւք եմք ի ցաւս եւ ի վիշտս մեղաց. եւ առ բժիշկս ոգոցն ոչ մերձենամք, եւ դեղոյ ապաշխարութեան չեմք ի խնդիր. ախտիւ մեղացն չարչարիմք, եւ արտասուաւք ապաշխարութեան ոչ բժշկիմք: 21 Ոչ ողբովք սրբեմք զդառն թարախն մեղաց, եւ ոչ արտասուաւք լուանամք զչար նեխութեանցն փտութիւն. զոր եթէ աստ ոք ոչ բժշկէ աղաւթիւք, պահաւք եւ ողորմութեամք, անդ ահեղ հուրն առաջի կայ, եւ բորբոքումն անշէջ բոցոյ գեհենին. պատրաստ են եւ սպասեն հրահոսանք¹ գետոցն հրեղինաց եւ տարտարոսքն աղձամղջինք լի խաւարաւ. դառն դահիճք եւ անողորմ չարչարանք. բազում վարանք աղէտից, եւ

ահագին արհաւիրք աններելի տանջանաց, որ մնան եւ պահին յաւր մեծի ահեղ դատաստանին:

22 Եւ արդ այս ամենայն առաջի կայ, եւ մեք գրգիմք եւ փափկանամք եւ մեղանչեմք աներկիւղ, եւ ամենեւին յերկրաւորս յորդեալք² զամենայն ինչ անհոգաբար կատարեմք. ուտեմք եւ ըմպեմք, եւ ի քուն լինիմք անհոգաբար, եւ բազում աւելաստացուածութեամք մթերս ժողովեմք իբրեւ զանմահս եւ զմշտնջենաւորս. եւ զաւրն երբէք չածեմք զմտաւ³, ոչ զարհաւիրս դատաստանին, եւ զդառն ամաւթն յաւիտենական: 23 Եւ ոչ յիշեմք իսկ ամենեւին եթէ զինչ ունիցիմք կրել յետ մահու, եւ ոչ զամենահնար պատերազմն սատանայի ածեմք զմտաւ բազում զգուշութեամք եւ երկիւղիւ հանապազ, որ միշտ ի գաղտնիս մարտնչի անդադար, եւ աներեւոյթ վիրաւորէ յարածամ. եւ չզգամք եւ չզգուշանամք ի չար նետից նորա, եւ խստավէր հարուածոցն. այլ յամենայն ի ցանկութիւնս վայելեմք անհոգաբար, եւ հանգչիմք անակնածելի: 24 Եւ այնպէս ծուլութեամք եւ անհոգութեամք վարիմք, որպէս թէ չիցեն իսկ տանջանք, եւ ոչ գեհեն, եւ ոչ դատաւոր ահաւոր, եւ ոչ դատաստանք անողորմ. ոչ քննութիւնք գործոց, եւ ոչ խնդիրք խորհրդոց. ոչ վարուց համարք, եւ ոչ դատարկ բանից պահանջումն:

25 Եւ այս ամենայն ծուլութիւնք ի չար հնարից սատանայի են որ յամենայն վարս մեր ընթանայ, եւ դնէ անդ զորոգայթն մահու. քանզի ոչ եթէ չարեաւքն միայն չարչարէ սատանայ, այլ զուղիղ վարսն ի չարութիւն դարձուցանէ. եւ բարի արուեստիցն զոր ի մարդ տեսանէ, դնէ նմին որոգայթ մահու: 26 Զոր սակաւն

1 Յօրինակի՝ հրահոսակք. եղաք ըստ այլ օրինակի

2 Յայլում օրինակի՝ յորդորեալ
3 Այլ օրինակ ունի յաւելուած՝ եւ զչարաչար ելս յաշխարհէս

համարիս, եւ ոչ փութաս ապաշխարել, նովին կորուսանէ. քանզի կորուսանէ զպահողն կեղծաւորութեամբ եւ ի ցոյցս ճգնելով. զաղաթականն արհամարհանաւք կալ առաջի Աստուծոյ, եւ զմիտսն յածեցուցանելով արտաքոյ. զողորմածն ի տեսս հիւանդաց ոչ գնալ: 27 Կորուսանէ եւ զվարդապետսն կեղծաւորութեամբ ուսուցանելովն, որ ոչ բազում երկիւղիւ զկամսն Աստուծոյ ուսուցանիցէ: 28 Կորուսանէ եւ զսաղմոսերգողն սատանայ, եթէ ոչ զգուշանայցէ չար ախտիւ սնափառութեամբ, այլ ի ցոյց եւ ի գով լսելեացն ասիցեն, եւ ոչ զպատգամսն Աստուծոյ պատմեսցեն, եւ զաւրհնութիւնս նորա երգեսցեն, որք ոչ իբրեւ զփառաւորիչս պատուեն: 29 Կորուսանէ եւ զլսողսն սատանայ վասն ծուլութեամբ եւ արհամարհանաւք լսելոյ պատգամացն Աստուծոյ եւ բանին վարդապետութեան: 30 Կորուսանէ եւ զվաստակա վաստակաւորաց սատանայ տրտնջելովն, եւ մեծ ի վերայ հեղագաղունիցն երեւելով, եւ ի հաշիւ եւ ի համար զգործ սպասաւորութեան իւրոյ բերելով, եւ յայտնելով ամենեցուն զջան վաստակոյն իւրոյ. որ ոչ իբրեւ զվաստակաւորսն հանգիստ գտանէ, այլ իբրեւ զտրտնջողսն եւ զդատապարտեալսն յանդիմանի: 31 Կորուսանէ եւ զընչաւորս սատանայ որք ի ժողովելն միայն են ժրացեալք, եւ ոչ ի բաշխելն տնանկաց. որ եւ ոչ ընչիւքն ապրել մարթացեն, այլ իբրեւ զանողորմս եւ զազասս դատապարտեսցին: 32 Կորուսանէ եւ զաղքատս սատանայ հեծեծանաւք եւ տրտնջելովն, եւ ոչ գոհանալով զԱստուծոյ որ կամի ի մշտնջենաւորսն մեծացուցանել զնոսա: 33 Կորուսանէ եւ զարուեստաւորսն սատանայ, եթէ վարձ աւելի առնուցուն քան զգործն, եւ կամ նախանձու եւ չարակնութեամբ զտաղանդ արուեստին արգելուցուն յայնցանէ՝ որ ուսանելն խնդրեն, որ իբրեւ զտաղանդապարտս պարտաւորեսցին: 34 Կորուսանէ եւ զիշ-

խանս սատանայ՝ որ ծանր իշխանութեանն լինիցի, եւ զազանացեալ սրտիւ զուամիկսն ահաբեկիցէ, եւ կամ վասն շքեղ երեսացինչ եւ կաշառուց՝ զիրաւունսն արդարոցն գողանայցէ: 35 Կորուսանէ եւ զայնոսիկ որ ընդ իշխանութեամբն են, եթէ ոչ իբրեւ սպասաւորի Աստուծոյ հնազանդեն եւ երկիւղիւ զպատիւն հատուցանիցեն: 36 Կորուսանէ եւ զհարկապահանջսն հարկահանաց, եթէ աւելի քան զհրամանս արքունի պահանջիցեն եւ զնեղեալսն նեղիցեն...¹ եւ զբոց գեհենին վառիցեն:

37 Եւ արդ այսպէս ամենեցուն կազմէ սատանայ որոգայթս մահու, եւ յուղիղ կարգաց եւ ի վարուցն Աստուծոյ հանէ. պտուղ չար եւ վարձ անաւրէն՝ որով կարծենն զարքայութիւնն ընդունել, նովին զտանջանսն ունին ժառանգել: 38 Եւ յայնչափ յափշտակութիւն յիմարեցոյց սատանայ, մինչեւ յաղաթելն եւ ի պահելն եւ յողորմութիւնս առնելն տայ մեղանչել: 39 Եւ ոչ ջանամք թափել ի մէնջ զթմբիր սատանայի, եւ պաղատանաւք ապաշխարութեամբ զՏէր հաշտեցուցանեմք. զի կարող է ապաշխարութիւնն զսեւացեալս մեղաւք սպիտակեցուցանել, եւ զգեռաթաթախսն մաքրել, զխաւարեալսն մեղաւք լուսաւորել, եւ զմթերս անաւրէնութեանցն փարատել: 40 Եւ զայս գիտելով սատանայի մաւտի առ այն՝ որ ապաշխարելն կամիցի, եւ ծանրացուցանէ զմիտս նորա չյաւժարել ի սկիզբն ապաշխարութեանն: 41 Քանզի գիտէ՝ եթէ սկիզբն ուղիցի, ապա եւ վաստակ ապաշխարութեան քաղցրանայ. եւ վասն այնորիկ ամենայն հնարիւք յսկիզբն ապաշխարութեանն զգուշանայ ծուլացուցանելովն, եւ աւր ի յաւր առնելով:

42 Եւ մեր զայս գիտելով փութով փութացուք սկիզբն առնելով ապաշխար-

1 Յօրինակիմ տող մի անընթեռնի է. որ եւ յայլս չիք

րութեան. զի միայն յսկսանելն թուի եթէ ծանր իցէ, եւ անդէն գործն հեշտանայ, եւ երթայ քաղցր եւ ցանկալի: 43 Որպէս եւ ալփափետացն զառաջինն եւ դարոյն զանուանս անգամ գրոյն չհամարձակի երկրորդել որ ուսանելն կամիցի. այլ խեցխեղեփաւք կիսանուն եւ բեկբեկելով, եւ ապա գիր զգրոյ կախելով անաշխատ բերելով զհեզենայն: 44 Նոյնպէս եւ ապաշխարութիւնն եթէ յսկզբանն միայն համբերիցէ, խոստովանութեամբն շնորհս ընդունին, եւ շնորհաւքն միտքն լուսաւորին. զերկիւղ տանջանացն իմանան, եւ երկիւղին արտասուս եւ սուգ ստանայ. սուզն պահս ուսուցանէ, եւ պահքն աղաւթս բերեն. աղաւթքն յողորմութիւնս յաւժարեցուցանեն, եւ սակաւ սակաւ յաստիճանէ յաստիճան ելանէ, եւ դիւրաւ յերկինս վերանաս: 45 Այլ եւ կարող ես միով միով ի սոցանէ արդարանալ եթէ կամիցիս. զի բազումք ուղիղ խոստովանութեամբ միայն ապրեցան. ոմանք սգով եւ տրտմութեամբ փրկեցան. ոմանք խորգով եւ մոխրով միայն ապաշխարեցին. ոմանք լալով եւ արտասուաւք զՏէրն հաշտեցուցին. ոմանք պահաւք եւ աղաւթիւք ապաշխարեցին. ոմանք ողորմութեամբ զողորմութիւնն Աստուծոյ ընկալան. ոմանք մարդասիրութեամբ եւ տկարագունիցն ծառայելով գտին ապաշխարութիւն. ոմանք խոնարհութեամբ եւ հնազանդութեամբ թողութիւն մեղաց ընկալան: 46 Զի որպէս ազգի ազգի են մեղացն ճանապարհք, նոյնպէս եւ զանազան են դեղք ապաշխարութեանն, որով կարող ես բժշկել զամենայն հիւանդութիւնս մեղաց, ոչ թուովք ամաց եւ բազում ինչ ժամանակաւք, այլ միայն ուղիղ դարձիւ եւ սրտիւ ի չարեացն հեռանալով կարող ես արդարանալ:

47 Եւ արդ զայս ամենայն գիտելով ապաշխարութեամբ զմեղս մեր քաւեսցուք. քանզի պղծութիւնք մեղաց ոչ միայն յահեղ աւուրն դատապարտեն, այլ

եւ աստէն իսկ չարեաւքն չարչարեն մտացն խղճիւ, եւ գաղտագողին շրջելով ակնածութեամբք ի մարդկանէ, կասկածանաւք ի ծանաւթից, ամաւթով ի սիրելեաց, նախատանաւք ի թշնամեաց, սպառնալեաւք դատաւորաց, երկիւղիւ բանդից եւ պատուհասից, յանդիմանութեամբ պատուիրանացն Աստուծոյ, եւ ահիւ ահեղ տանջանացն: 48 Եւ անդր երթեալ ո՞վ կարացէ պատմել զմշտնջենաւոր աններելի աղէտիցն նեղութիւնս, ուր այրինն եւ մաշին ամաւթով եւ նախատանաւք: 49 Իսկ զապաշխարութեան պտուղս ոչ միայն յերկինս վայելես, այլ եւ աստէն իսկ հարիւրապատիկ ընդունիս խնդութեամբն, անհոգութեամբն, գովութեամբ պատուիրանաց, անխիղճ մտացն ուրախութեամբ, անակնածելի ի մարդկանէ, անկասկած ի ծանաւթից, անպարսաւ ի թշնամեաց, առանց ամաւթոյ առ սիրելիսն, համարձակ ի հրապարակս, աներկիւղ առ դատաւորացն, ազատ ի պատուհասից, կեանք խաղաղականք, մահ հեշտական, ակնկալութիւն մշտնջենաւոր եւ փափագելի փափկութեանցն: 50 Իսկ անդուրախութեանցն ո՞ր բերան բաւական իցէ պատմել զանբաւ բարութեանցն զվայելչութիւնսն:

51 Արդ այս է վարձ արդարութեանն, այս պտուղ ապաշխարութեանն: 52 Վասն որոյ մի՛ երկնչիր ի մեղաց բազմութենէ մտանել յապաշխարութիւն. միայն անկիր առ Աստուած. չէ դատաւոր, այլ բժիշկ. չէ դահիճ սպանող, այլ Հայր գորովագին: 53 Ընդ առաջ քո ելանէ որպէս անառակ որդւոյն. զպարանոցաւ քո անկանի որ դարձարդ յապաշխարութիւն. յաչս առ բերան համբուրէ զքեզ Հայրն երկնաւոր. զպատմուճանն առաջինն անմեղութեան հրամայէ զգեցուցանել քեզ. կաւչկաւն ի միւսանգամ թիւնիցն թշնամոյն ամրացուցանէ զքեզ: 54 Պատարագաւն ի մարմնոյ Որդւոյն Աստուծոյ կերակրիս. ընդ քեզ վայելեն ընտիր ծառայքն ի պատա-

րագէն, եւ սուրբք ամենայն երգեն եւ պարեն ի դառնալ յանառակութենէդ քումմէ: 55 Ընդ որ հիացեալ նախանձի փոքր մի առաջին ժողովուրդքն թլփատութեամբ՝ ոչ մտանել յուրախութիւն զենման Որդւոյն Աստուծոյ. առ որս ել եւ եկն քահանան Աստուած մարմնով՝ աղաչել զհրեայն հաւատացեալ ի Հայր՝ կոչել ի հաւատս հեթանոսին ապաշխարողի, եւ ուրախ լինել ի դարձի եղբաւրն իւրոյ անառակի, եւ ի միասին վայելել ի զենմանէ Որդւոյն Աստուծոյ, եւ ժառանգել զանանց բարութեանցն զվայելչութիւնսն ընդ Հաւր եւ ընդ Որդւոյ եւ ընդ Սրբոյ Հոգւոյն. որում փառք եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Գ

ԹՈՒՂԹ ՎԱՄՆ ՊԱՀՈՑ ՊՆԴՈՒԹԵԱՆ

1 Ազգոյ եւ աւգտակար եւ կարեւոր են պահոց պնդութիւնք եւ յորկորստութեանց ժուժկալութիւնք. եւ մանաւանդ որ ընտրողական գիտութեամբն մերձենան առ նա, եւ ճշմարտիւ ճանաչեն թէ ո՛րպէս շահաւոր է պահոցն պնդութիւն: 2 Իսկ որք ոչ զգուշանայցեն այնմ, աստէն իսկ յերեւելեացս պարտ է իմանալ զպարկեշտութեանն մաքրութիւն, եւ զվնասակար լցումնն զորովայնին: 3 Եւ գիտեն՝ թէ որպէս տեղիք երաշտացեալք բանջարս ազգի ազգի ոչ բուսուցանեն, նոյնպէս եւ որովայնք ցամաքեալք խորհուրդս պղծութեան ոչ ծնանին: 4 Եւ որպէս երկիր աղբուտ բանջարս խառնամանս բուսուցանեն եւ աճեցուցանեն, նոյնպէս եւ որովայնք աղբով կերակրոցն փափկացեալք՝ խորհուրդս անտեղիս բերեն ի վեր հանապազգի զորդունս գէջ երկիր պարարէ, եւ զախտս պղծութեան գիշացեալ որովայն: 5 Քանզի որ համահամաւք¹ փափկանան, նա եւ զխորհուրդ ազգի ազգի իմանան. եւ որ սուղ ինչ կերակրովն շատանայ, նա

զտագնապ քաղցին ածէ զմտաւ. զի որովայնք թանձրացեալք խորհուրդս սուրբս ոչ ծնանին, այլ պահել պատեն ընդ պատրուակաւ զգայութիւնս մարմնոյն: 6 Եւ որք որովայնին ծառայեն, անհնար է լինել հաւատարիմ ծառայ Աստուծոյ: 7 Զի որ պահաւք նրբին եւ սրբին, ոչ միայն զպղծութիւն անաւրէնութեանցն սրբեն, այլ եւ զսուրբն Աստուած յինքեանս բնակեցուցանեն:

8 Եւ արդ այսպէս մեծ է պահոցն պնդութիւն եւ պարկեշտութեան առաքինութիւն, որ պարաւանդեալ դադարեցուցանէ զամենայն անդամս մարմնոյն յանդէպ ցանկութեանց եւ յաղտեղի խորհրդոց, եւ ստէպ ստէպ հալածէ ի մտացն խորհրդոց զյարձակումն դիւայ՝ որք կամին պղտորել եւ պղծել զսիրտս մաքրեցելոցն: 9 Զի պահոցն պնդութիւն իբրեւ ջղաւք երկաթեաւք² պնդեալ պահէ զամենայն վարուցն առաքինութիւնս, եւ զհաւատոցն հաստատութիւնս. քանզի աշտարակ հզաւր է ընդդէմ թշնամոյն, եւ պարիսպ ամրութեան յամենայն նետից սատանայի: 10 Եւ քանզի կարի կարեւոր է պահոցն առաքինութիւն բնութեանս մերոյ, եւ բազում թերութիւնք ի խոնարհութենէ պահոցն յարդարին, անդէն իսկ ընդ ստեղծանել մարդոյն՝ պահոցն պնդութեամբ պարսպեաց զբնութիւնս մեր, եւ եղ առաջին մարդոյն առաջին պատուիրան զպահոցն պնդութիւն՝ չճաշակել ի ծառոյն: 11 Զի թէ էր պահեալ զպահոցն պատուիրանն, անախտ եւ անմահ եւ անմեղ կեանս էր ժառանգեալ, եւ յերկինս զերկնից բարութիւնսն. զի բազումք որք պահեցին զպահոցն պնդութիւնս, ի բազում վշտաց ապրեցան:

12 Սովին պահոցն պնդութեամբ եւ մեծն Դանիէլ ի ժանեաց առիւծուցն ապրեցաւ, զի եւ զազանական բնութիւնն պատ-

1 Յայլում օրինակի՝ համանդամով

2 Յօրինակի՝ երակօֆ. եղաֆ ըստ այլոց

կառէր մերձենալ ի սուրբ մարմինն պահողին. եւ քանզի արգել զինքն չմերձենալ ի սեղան թագաւորին որ ի պիղծ զոհիցն էր աղտեղեալ, արգելան եւ զազանքն չմերձենալ ի սուրբ մարմինն պահողին: 13 Սովին պահոցն պնդութեամբ եւ երեք մանկունքն ապրեցան ի բորբոքեալ բոցոյն, եւ շիջուցին զմոլութիւն կերակրոցն ցանկութեանց, եւ սակաւ ինչ ոսպամբ շատացան. շիջուցին զբարձրացեալ ահեղ հուր հնոցին. զի անդ ի ներքս ցաւ զովացուցիչ զպահողսն մխիթարէր, եւ արտաքոյ բոցն բորբոքեալ զգեխեցելաւքն սաստկանայր, եւ քառասուն եւ ինն կանգուն տարածեալ զամենեսեան սատակէր: 14 Սովին պահոց պնդութեամբ եւ բազմամբոխ քաղաքն նինուէացւոց ապրեցան, զի դարձան յամենայն անաւրէնութենէ եւ ի գնացից չարեաց. խորգով եւ մոխրով դարձուցին զխստացեալ բարկութիւնն Աստուծոյ. եւ զի ոչ խնայեցին նեղել զանձինս իւրեանց պահաւք եւ պաղատանաւք, ողբալ եւ լալ հեծեծանաւք, խնայեաց Աստուած յոգիս եւ ի մարմինս նոցայ: 15 Սովին պահոց պնդութեամբ եւ Մովսէս ընկալաւ զաւրէնսն աստուածադիր, զի քառասնաւրեայ պահոց մաքրութեամբ արժանացաւ ի մաքուրն մերձենալ, եւ բերան ի բերան խաւսէր ընդ նմա իբրեւ ընդ բարեկամի: 16 Սովին պահոց պնդութեամբ սրբեցաւ Եդիս թեսբացի, եւ բանիւ բերանոյ իւրոյ գերկինս բանայր եւ փակէր, հուր ի յերկիր իջուցանէր:

17 Եւ զի՞նչ եւս ասացից զպահոցն զպնդութիւն, որ եւ տէրունական եւս մարմնոյն պէտք եղեն պահոցն պնդութիւնք՝ անմեղին եւ անարատին վասն մերոյ աւրինակի. որով եւ հարքն առաջինք առաքինացան, եւ զվարս անմարմնոցն հրեշտակաց ի մարմինս մարդկան երեւեցուցին. մեռուցին յերկրի գերկրաւոր զցանկութիւնս, եւ զոգիս ի յերկինս կենդանացուցին. մերժեցան ի յանցաւոր հեշ-

տութեանցս, զի ընկալցին զանանց բարութիւնսն. հեռացեալք ի տանց եւ ի ստացուածոց, չարչարեցան բազում փորձանաւք, եւ նեղեալ ամենեւին մեռուցին զանձինս քաղցիւ եւ ծարաւով եւ դձուճ հանդերձիւ: 18 Զի ոմանք ի նոցանէ խոտաբուտ ճարակաւքն եւեթ շատացան, եւ ոմանք ճաշակաւք մրգոց միայն վարեցան: 19 Ոմանք զծայրս ծառոցն եւ զարմատս խոտոց միայն ուտէին. ոմանք սակաւ ինչ ընդովք ժուժկալէին. ոմանք երեք նուկի հացիւ ժամէ ի ժամ. ոմանք զչորրորդ մասն նկանակի, եւ այլք զվեցերորդն. ոմանք զթեփ ցորենոյ արարին կերակուր. ոմանք խոզաբուտ¹ եղջերան միայն զտագնապ քաղցին դադարեցուցանէին: 20 Ոմանք զհաղորդութիւնն հոգեւոր կերակրոյն աւուրն բաւական համարէին ի պէտս մարմնոյն. բայց այլ փափկութիւն ինչ կերակրոց ամենեւին մեռեալ էր ի նոցանէ: 21 Զի ոմանք ժամէ ի ժամ ճաշակէին. ոմանք յետ երկուց աւուրց. ոմանք յետ երից. ոմանք յետ եաւթն աւուր՝ եւ որ եւս աւելի՝ յիշէին զպէտս կերակրոյն, եւ զայն կշռով ճաշակէին, եւ ջուր չափով ըմպէին, եւ անդադար հեծութեամբ յաղաւթս եւ ի պաշտանն պարապէին, եւ զգիշերն ամենայն յարտասուս եւ յողբս անցուցանէին, եւ աղերսալի մաղթանաւք եւ հառաչանաւք զԱստուած հաշտեցուցանէին: 22 Ոմանք զլարիւք անկեալ ննջէին. ոմանք ոտանաւոր տքնութեամբ զգիշերն անցուցանէին. ոմանք սակաւ ինչ նստելով. ոմանք մինչեւ ցառաւաւտն զձեռս ի վեր ամբարձեալ ունէին. ոմանց զպարանոցն խոնարհեցուցեալ մինչեւ ի լուսանալն ժուժկալէին. ոմանք աղաւթս հարիւրաւորս նկարէին: 23 Ոմանք անխաւսք լինէին, միայն խաւսէին զսաղմոսս. ոմանք առանց հարցմանց ուրուք ոչ բարբառէին. ոմանք ընտրութեամբ յաւ-

1 ԅօրինակի՝ խոտաբուտ. եղաք ըստ այլում

գուտ ընկերին միայն խաւսէին, եւ մշտա-
ջան վաստակաւք եւ պաղատանաւք
զաւրն անցուցանէին, եւ վասն հոգեւոր
ինչ խրատու ի տար աշխարհս անցանէին,
եւ թշնամիսն իբրեւ զբարեկամս սիրէին,
եւ խոնարհութեամբ զընկերն լաւ քան
զանձինս համարէին, եւ վասն հնազան-
դութեան ի հուր եւս մատնէին, եւ ի գա-
զանս դիմէին, եւ զանձինս ի ծառայու-
թիւն ընկերին մատուցանէին, եւ յարդար
վաստակոց զանկն եւ գտնանկն եւ զհի-
ւանդն կերակրէին: 24 Չափաւք զմար-
մինս իւրեանց վարէին, եւ սանձս խորհր-
դոց արկանէին. եւ այնպէս զանազան եւ
բազում նեղութեամբ զպնդութիւն պա-
հոցն յաւրինէին: 25 Զի այս ամենայն է
դուռն նեղ եւ անձուկ ճանապարհ՝ որ տա-
նի ի կեանս յաւիտենից. որով եւ բազում
նշանս եւ սքանչելիս առնէին, զգեւս հա-
նէին, զհիւանդս բժշկէին, զմեռեալս յա-
րուցանէին, ի վերայ ջուրոց գնային, եւ
զընթացս արեգականն դադարեցուցանէին
ուղիղ պահոցն մաքրութեամբ. եւ քան
զայս եւ առաւել եւս զաւրութիւն գործէին
պահոցն պնդութիւնք: 26 Զի սուրբքն ա-
ռաջինք յորժամ կամէին մերձենալ առ Աս-
տուած, յառաջ պահաւքն մաքրէին, եւ ա-
պա առ մաքուրն մերձենային եւ աստուա-
ծատեսք լինէին. իսկ որք հեռացան ի պա-
հոցն, հեռացան ի շնորհացն Աստուծոյ, եւ
բազում չարեաւք չարչարեցան: 27 Ահա
Ադամ հեռացաւ ի պահոցն պնդութենէ, եւ
ել ի դրախտէն երկիր փշաբեր:
28 Ծնունդք նոյական ազգին հեռացան ի
հեռացան ի պահոցն պնդութենէ, եւ հա-
մաջունջ ջրհեղեղաւն սատակեցան եւ հեղ-
ձան: 29 Ժողովուրդն եբրայեցւոց հեռա-
ցան ի պահոցն պնդութենէ, եւ ընտիր ըն-
տիրքն սատակեցան: 30 Բնակիւքն սողո-
մայեցւոցն հեռացան ի պահոցն, եւ հրա-
ցան անձրեւք կայծականց տեղիաց ի նո-
սա: 31 եւ ամենայն որք արհամարհեցին

զպահս, արհամարհեցան յԱստուծոյ, եւ
յողորմութենէ նորա հեռացան:

32 Բայց պահողքն պարտին լինել
ընտրողական գիտութեամբ. քանզի կորու-
սանէ սատանայ զպահողսն եւ զպահս պա-
հողին՝ եթէ զանպարկեշտագոյնսն բամբա-
սիցէ, եւ կամ զինքն գեր ի վերոյ այլոցն
ցուցանիցէ, եւ կամ պիղծ գկերակուրսն
համարեսցի. եւ կամ եթէ կեղծաւորու-
թեամբ պահիցէ, որպէս եթէ ինքն յաչս
այլոցն ծածկեսցէ զպահոցն պնդութիւնս՝
զի մի՛ սնապարծ եւ կեղծաւոր երեւեսցի,
բայց կամի թէ յայլոցն հռչակէր ժուժկա-
լութիւն նորա. եւ եթէ ոչ ոք իմասցի, ապա
եւ ինքն կամի կարծրացուցանել ընդ
պատրուակաւ զպահոցն պնդութիւն, զի ի-
մասցին եւ զարմասցին ընդ համբերու-
թիւն նորա: 33 Զի այսպիսի պահքն ոչ
սրբեն եւ արդարացուցանեն, այլ պղծեն եւ
կորուսանեն: 34 Բայց եթէ կերակրովք իսկ
պարկեշտանայցէ, եւ այլովք անդամաւքն
ոչ պահիցէ, ի գուր եւ ընդվայր ջանայ:
35 Այս է գոր ասեմս. եթէ զլեզուն ոչ
պարկեշտացուցանի, եւ ական եւ ունկան
եւ խորհրդոց եւ մտաց ոչ զգուշանայցէ,
եւ յխոթիւն ընդ ընկերին պահիցէ, եւ ա-
տելութիւն ընդ եղբաւրն ունիցի, եւ կամ
սէր կեղծաւորութեամբ ումեք ցուցանիցէ,
եւ կամ խոնարհութեամբ ընկերին ոչ ծա-
ռայիցէ, եւ պատուի եւ իշխանութեան
ցանկանայցէ, եւ զանձն ի պահս կարծիցէ,
յոյժ ափշուրութեան իցէ այնպիսին ի սատա-
նայական խորհրդոց: 36 Զի այն ոչ են
պահք խոնարհութեան, այլ խաբէութեան
եւ կեղծաւորութեան, զրաջան եւ անվաս-
տակ՝ որ ի հուր այրի, եւ ի ջուր աղայ հա-
նապաղ. զոր ցեցն ապականեաց, եւ գողք
հատին եւ տարան, եւ ոչ ինչ աւգտեցաւ
յայնպիսի պահոց մրցանաց, այլ յոյժ
պատժի եւ պատուհասի: 37 Քանզի աստ
կեղծաւորական պահաւքն պատժի, եւ անդ
յարդար դատաստանէն դատապարտեալ ի
հուր հնոցացն չարչարի, եւ քան զորկո-

րեայսն եւ զարբեցողսն առաւել եւս պարտաւորի. զի զամենագէտն Աստուած անգէտ համարեցաւ չարաչար կրաւնիցն կեղծաւորութեամբ:

38 Այլ եւ են ոմանք որ յորժամ կամին մտանել ի պահս, փութան ի լուանալ եւ յաւծանել, եւ խճողեն զպորտ եւ զորովայնս, եւ բազում որկորստութեամբ եւ արբեցութեամբ շուայտանան, ապա մտանեն ի պահոցն պնդութիւնս: 39 Եւ արդ զի՞նչ կոչեսցուք զայնպիսիսն, պահո՞ղս եթէ արբեցողս, պարկե՞շտս եթէ որկորեայս, ճգնաւո՞րս եթէ գեղխեցեալս. զի անհնար է պղծութեամբ սրբութիւն գտանել, եւ մեղաւք յարդարութիւնս ելանել. եւ ոչ ոք պոռնկութեամբ կուսութիւն ստանայ, եւ ոչ գեղխութեամբ եւ արբեցութեամբ զսրբութիւն պահոց ընդունել: 40 Զի անհնար է այսմ լինել՝ եթէ նախ պոռնկիմ, ապա կուսանամ. եւ կամ գեղխիմ եւ շուայտիմ արբեցութեամբ, եւ ապա մտանեմ ի սրբութիւնս պահոցն. զի անմարթ է պոռնկին կուսանալ, գեղխելոյն արբեցութեամբ՝ պահող եւ ճգնող: 41 Զի կուսանն կուսութեամբ ստանայ գկուսութեանն պսակ, եւ ոչ պոռնկութեամբ. եւ պահողն ժուժկալութեամբ ընդունի զվարձս պահոցն, եւ ոչ արբեցութեամբ, գեղխութեամբ եւ որկորստութեանն շուայտանաւք:

42 Այլ են ոմանք որ զպահս քառասնորդաց ապաղաս ասեն, զկէս ինչ ի շաբաթուցն կարեւոր անուանեն, եւ պնդին եւ ճգնին սրբութեամբ, եւ զայլսն ապաղաս անուանեն, եւ թուլացուցանեն զպնդութիւն պահոցն, եւ անակնունելի իմն ճաշակեն ի փափուկ կերակրոց, եւ որկորստութեամբ զսուրբ եւ գերեւելի պահս քառասներորդացն լուծանեն: 43 Զի զայս կարեւոր պահս քառասներորդաց եւ Որդին Աստուծոյ վասն մեր պահեաց ի մեր աւրինակի. եւ անդ ոչ անուանէր ապաղաս: 44 Զնոյն քառասունս եւ Մովսէս ի լերինն

պահեաց. եւ անդ ոչ անուանէր ապաղաս: 45 Զնոյն քառասունս յանապատին պահեաց ի լերինն Եղիաս. եւ անդ ոչ անուանեաց ապաղաս: 46 Զնոյն քառասունս եւ մեք մերով տկարութեամբս աւր ըստ աւրէ պահաւք կատարեմք. եւ ոչ վայել է մեզ քառասնաւրեայ պահոցն անուանել ապաղաս, եւ լուծանել զսուրբ պահոցն պնդութիւնն. զի ի սկսանիլ պահոցն մինչեւ ցկատարումն նորուն՝ պահք են ի փափուկութենէ, եթէ կամիցիս ճգնել եւ պահել. ապա եթէ որկորստութեամբ լուծանել կամիցիս, ոչ եթէ զթեթեւ ապաղասս լուծեր, այլ պահս կարեւորս: 47 Զի ապաղաս ի ծուլից եւ յանկատարից անուանի, եւ ոչ ի պարկեշտից եւ ի պահողաց:

48 Այլ պահք ոչ եթէ ի կերակրոցն միայն անուանի, այլ եւ կարճել յամենայն մեղաց. զի պահք են եւ լուսութիւնք բերանոյ, եւ ոչ առանց հարկի եւ հարցանելոյ ուրուք խաւսել: 49 Պահք են եւ անընչութիւն եւ աղքատութիւնք, եւ ոչ զաւելորդացն հոգալ. այլ զպէտս աւուրն որոնել, եւ զնոյնն խնդրել յԱստուծոյ: 50 Պահք են եւ ի տեղւոջն նստել ցածութեամբ, եւ ոչ վայրապար ուրուք շրջել ցոփութեամբ ի զբաւսանս եւ ի զաւչաքաղութիւնս: 51 Պահք են եւ զրգուաղելն եւ գձձելն առանց լուանալոյ եւ աւծանելոյ. պահք են եւ խարազն ինչ հանդերձիւք զպէտս մերկութեան եւ ցրտոյն միայն վճարել: 52 Պահք են եւ ցածուցանել զաչս յարատութենէ, եւ զլսելիսն հանդէպ լսելոյ, եւ զսիրտն ի պիղծ խորհրդոց: 53 Պահք են չհանգանակելն պատուի եւ իշխանութեան, չբարկանալն, չաղաղակելն, չնախանձելն, չխնդրել վրէժ անձինն, եւ ոչ ջանալ զանձն առ ընկերին արդարացուցանել: 54 Պահք են չազահելն, եւ չմարդահաճոյանալն, եւ ոչ հանդերձիւք ինչ սնապարծել: 55 Պահք են խոնարհութիւն եւ հնազանդութիւն, եւ սուրբ սրտիւ զամենայն ոք սիրել: 56 Պահք են եւ յորժամ

զպէսս քնոյ բնութեանն եւեթ վճարիցէ, եւ քուն ցանկութեան ոչ ունիցի. այլ գառալինն միայն, եւ ապա յարուցեալ գործիցէ եւ կամ աղաւթիցէ:

57 Եւ արդ այս ամենայն են պահք ճշմարիտք, եւ առաւել քան զկերակրոցն կարճումն. եւ գայս եւ որ սոցին նման են՝ պարտ է կարճել ի ժամ պահոցն, եւ ապա լինի ընդունելի եւ կերակրոցն կարճումնն:

58 Այլ եւ կերակրոցն կարճումնն ոչ միապէս, այլ ըստ իւրաքանչիւր կարողութեան. ոմանք միաւրէ. ոմանք երկպահք. ոմանք երեքաւրեայ, եւ ոմանք եաւթներրորդ պարկեշտութեամբ կատարեն ըստ իւրաքանչիւր անձանց զաւրութեան:

59 Ոմանք լոկով բանջարով, ոմանք ընդով միայն շատացան. ոմանք սակաւ ինչ հացիւ, ոմանք յոլովագունաւք, եւ զանպաճոյճ թանիկն եւս յաւելուն. եւ ոմանք գինեհատք միայն, եւ ոմանք թանահատք, այլ եւ ոմանք հացահատք լինին, եւ զփափուկ ինչ կերակուրս եւ զհամահամ բացէ ի բաց հալածեն եւ ուրանան. բայց միով ինչ կերակրովն եւ ոգեպահովն եւեթ շատանան, որ միայն զկենդանութիւնն պահէ, եւ ոչ ի մարմին եւ ի յարիւնն յաւելու որ զցանկութիւն արտիցն յուզեն. եւ գայն սակաւ ուտել, սակաւ ըմպել, սակաւ ի քուն լինել, եւ աղաւթք անդադար:

60 Այլ պարտ է մանաւանդ յաւուրս պահոցն զոր յորովայնէդ արգելուս, աղքատաց ընձեռել գայն, զի դու քաղցիցես, եւ քաղցեալն յագեսցի, եւ մեղք քո քաւեսցի: 61 Այս են պահք սուրբք եւ աստուածակամք, եւ սոքաւք լինին ընդունելի ամենայն վշտամբերութեանցն ճգնութիւնք, որ բժշկեն զվիրաւորեալս մեղաւք, փրկեն զգերեալսն ի սատանայէ, կանգնեն զկործանեալսն անաւրէնութեամբք, յարուցանեն զհիւանդացեալսն ամբարշտութեամբք, սրբեն զաղտեղեալսն պղծութեամբք, լուսաւորեն զխաւարեալսն մոլորութեամբք, եւ մաքրեն եւ արդարացուցանեն զպահոցսն յամե-

նայն յանցանաց, եւ կացուցանեն մեծապայծառ լուսով առաջի ահաւորի եւ լուսաւոր բեմբին Աստուծոյ. եւ ընդ նմին ժառանգեն զանանց բարութեանցն զվայելչութիւնսն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որում փառք յաւիտեանս. ամէն:

Դ

ՎԱՍՆ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԵՒ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ԱՂԱԻԹԻՑ

1 Ամփոփեալ զմիտս մեր իմաստուք զբանս ճառիս, եւ երեւելեալս զաներեւոյթն ծանիցուք, եւ զիտասցուք թէ որպիսի դողումն եւ ահեղ արհաւիրք են յանցաւորացն յորժամ առաջի դատաւորին կայցեն ամաւթով մեղացն. զիարդ վատնին եւ այլագունին դէմք նոցա. զիարդ սոսկան եւ սարսափեն. եւ զի զդողիւ հարկանին երկիւղիւ յահեղ դիմաց դատաւորին, եւ զլիսակորեալք եւ կին ի խոնարհ լեզուակապք կան առաջի: 2 Եւ եթէ աղաչել եւ մաղթել ինչ չանդգնիցին, երկիւղիւ սրտիւ, եւ անհամարձակ լեզուաւ հիւանդաճայնս բարբառին. եւ բազում աղերսանաւք ցաւագին պաղատանս մատուցանեն. արտասուեն, աղաչեն, մաղթեն, զի ի գութ եւ յողորմ զդատաւորն ածիցեն՝ ապրել յանցանաց պատուհասից. ոչ այլ ուրեք զբաւսանին միտք նոցա, եւ ոչ այլուր աչք նոցա, եւ այլուր լսելիք: 3 Եւ յորժամ դատաւորն առ նոսա բարբառի, ոչ իչխեն գերեսս դարձուցանել, կամ խաւսել ընդ ումեք ի ծառայակցացն, այլ միայն ի դատաւորն նային բազում պատկառանաւք աղաչել եւ հայցել զյանցաւոր տանջանացն զթողութիւն: 4 Իսկ ո՛րչափ եւս առաւել կարի կարեւոր է մեզ բազում պատկառանաւք կալ առաջի ահաւորի մեծի դատաւորին, ահեղ ահիւ եւ սոսկալի դողութեամբ մտանել եւ կալ յանդիման երեսացն Աստուծոյ, եւ ցաւագին ողբովք եւ յորդահոս արտասուաւք ժտել եւ խնդրել զթողութիւն: 5 Ոչ այլուր զմիտս, եւ այլուր

զխորհուրդսն պարտիմք առաքել. այլուր զլսելիս, եւ այլուր զտեսանելիս յածեցուցանել, յորժամ վասն յանցանացն մեղաց կամիցի ոք աղաչել եւ մաղթել յԱստուծոյ. զի հեծեծանաւք եւ հառաչանաւք զՏէրն հաշտեցուցուք, եւ ի գութ պաղատանաց խոնարհեսցուք. որով զմեզս մեր քաւեսցէ, եւ զանաւրէնութիւնս մեր սրբեսցէ, եւ փրկեսցէ յահեղ աղէտիցն տանջանաց եւ յաւիտենական ամաւթոյն ի ձեռն աղաւթիցն մաղթանաց եւ զթագին սրտին ջերմութեան: 6 Քանզի բազումք բազում բարութիւնս ի ձեռն աղաւթիցն ընկալան եւ եղեն հաճոյք Աստուծոյ, որով գտին մեղաց թողութիւն եւ ոգւոց փրկութիւն. եւ մանաւանդ որք հանդերձ արտասուաւք եւ զթով տնանկաց աղաւթեցին, ոչ եթէ միայն զմեղաց թողութիւն գտանեն, այլ եւ զխնդիրս մարմնոյ ընդունին, եւ գերկնից բարութիւնսն: 7 Զի ձեռք են աղաւթք աղաւթականին, եւ բուռն հարեալ ունի գոտիցն Աստուծոյ, եւ վաղվաղակի խոնարհեցուցանեն յաղաչանս մաղթողին. քանզի յոյժ կամի եւ ախորժէ Աստուած գտել աղաչողին. Խնդրեցէք եւ տացի ձեզ, հայցեցէք եւ գտչիք^ա:

8 Եւ արդ պարտ է ամենայն ծանրացելոց մեղաւք եւ նեղելոց վշտաւք եւ վտանգելոցն ի թշնամեաց եւ աշխատելոցն ցաւաւք միշտ աղաչել եւ ժտել եւ խնդրել հանապազ անդադար ի ձեռն աղաւթից եւ պաղատանաց. զի որք միամիտ մտաւք եւ աննենդ հաւատովք աղաւթեն առ Աստուած, եւ խնդրեն զբարին, ընդունին զխնդիրս ամենայն, որպէս ընկալան հարքն մեր առաջինք: 9 Իսկ եթէ ասիցէ ոք՝ եթէ խնդրեցի եւ ոչ առի, աղաւթեցի եւ ոչ ընկալայ, չեւ եւս ժտութեամբ խնդրեցեր, որպէս կինն այրի յանիրաւ դատաւորէն, եւ իբրեւ զբարեկամն որ ի մէջ գիշերին հայցէր զնկանակացն խնդիրն. զոր ոչ

վասն բարեկամութեանն, այլ վասն ժտութեանն ընկալաւ. նոյնպէս եւ Աննա ցաւագին անձամբ արտասուաւքն եւ աղաւթիցն ժտութեամբն ընկալաւ զՍամուէլ. սոյնպէս եւ ժողովուրդն ի հովիտս տրտմութեան լային առ Աստուած, եւ վասն ջերմագուլթ աղաւթիցն եւ պաղատանացն յարոյց նոցա զԳեղէովն, եւ փրկեաց զԻսրայէլ. եւ վասն արտասուագին աղաւթիցն Եգեկիայի այլ եւս հնգետասան ամ յաւելաւ ի կեանսն: 10 Եւ դու եթէ այսպիսի արտասուաւք եւ բոլորով սրտիւ աղաւթես առ Աստուած եւ ոչ երկմտիցես, ընդունի զխնդրուածս քո:

11 Զէ ինչ պիտոյ յաւդումն բազում բանից աղաւթականին. մաքսաւորն մի բարբառ արձակեաց, եւ ընդունելի եղեն աղաւթք նորա, եւ զբազմաքանքար բեռինս մեղացն թեթեւացոյց. եւ Մովսէս անշշունչ բերանով իսկ աղաղակէր, եւ զծովն յատակաբար բարձանէր: 12 Եւ դու եթէ բոլորով սրտիւ մաղթես՝ զծով մեղաց միայն ցամաքեցուցանես, եւ զալիս բարկութեանն դադարեցուցանես: 13 Զի չառնուլն յԱստուծոյ ի չժտութենէ է, եւ ի չաղաչելոյ բոլորով սրտիւ, եւ կամ եթէ վնասակարագոյն ինչ խնդրիցէք. իսկ եթէ անդադար աղաւթիւք զաւգտակարն հոգւոց խնդրիցէք, անհնար է չառնուլ յԱստուծոյ: 14 Ահա աղաւթք Եղիայի գերկինս փակեցին եւ բացին. աղաւթքն Դաւթի գսուր հրեշտակին դադարեցուցին. աղաւթքն Յունանու զնա ի փորոյ կիտին հանին կենդանի. աղաւթք քանանացւոյն զդեւն ի դստերէն հալածեցին. աղաւթք զպոռնիկս սրբեցին, զհիւանդս բժշկեցին, զբորոտս մաքրեցին, զկոյրս լուսաւորեցին, զմեղաւորս արդարացուցին:

15 Եւ արդ այս ամենայն աւրինակք ընդունելի աղաւթից առաջի կան. որում եթէ կամիս՝ կարող ես նմանել, եւ հանել զքեզ ի բանտէն մեղաց, եւ ի սատանայական կապանացն արձակիլ: 16 Միայն արտասուալից պաղատանաւք աղաւթես առ

^ա Մատթ. Է 7:Ղուկ. ԺԱ 9

Աստուած, եւ յախտից ամբարշտութեանն թեթեւանաս, զցաւս անաւրէնութեանն առողջացուցանես, եւ զհիւանդութիւն յանցանացն բժշկես: 17 Միայն բոլորով սրտիւ աղաւթեա առ Աստուած, եւ յորոգայթից սատանայի ապրիս, ի չարաժանի վիշապէն փրկիս, եւ ի թիւնաւոր թշնամոյն ապրիս ողջանդամ: 18 Միայն անդադար աղաւթիւք ժտեա առ Աստուած, եւ զխաւար մորորութեանն լուսաւորէ. զաղտեղութիւն պղծութեանն մեղաց եւ գտիղմ ցանկութեանն ցամաքեցուցանէ: 19 Զի յորժամ աններկ հաւատով յամենայն սրտէ աղաւթես առ Աստուած, ընդունիս մեղաց թողութիւն եւ յանցանաց քաւութիւն. ընդունիս զերկնից զարքայութիւնն եւ զանբաւ բարութիւնսն. ընդունիս մարմնոյ առողջութիւն եւ հոգւոյ փրկութիւն. ընդունիս աւուրս բարիս եւ կեանս խաղաղականս յամենայն զրպարտողաց: 20 Այլ եւ զալիս բարկութեան բռնաւորաց աղաւթքն դադարեցուցանեն. զցասումն սրտմտութեանն Աստուծոյ դարձուցանեն. աղաւթք զաղքատս մեծացուցանեն, եւ գտկարս զաւրացուցանեն. աղաւթք զհիւանդացեալն բժշկեն, եւ զախտս մոլեկանս հալածեն. աղաւթք զամուլն ծննդական առնեն, զանորդին բազմորդի. ի ծփանաց ծովու գերծուցանեն, ի յորձանաց գետոց ապրեցուցանեն, զքաղցեալս կերակրեն, զմերկս զգեցուցանեն, զմահս տարածամս արգելուն, զամենայն խնդրուածս հաւատով ժողոջան լցուցանեն:

21 Այս է գաւրութիւն ճշմարիտ աղաւթից որ կամին մերձենալ առ նա. այս է պատարագ բանաւոր անարիւն. զի իւրաքանչիւր ուրուք աղաւթքն են պատարագ Աստուծոյ. եւ եթէ ոչ հաճեսցիս սիրով ընդ ընկերին, աղաւթքն քո ոչ են ընդունելի պատարագ, զի առ Աստուած ոչ ելանէ. զի որ քէն ընդ ընկերին ունիցի, անհնար է աղաւթից նորա ելանել առ Աստուած. իսկ եթէ սիրով սրտիւ աղաւթեաց նա առ նա,

Մինչ չեւ քո աղաղակեալ իցէ, ասացից՝ թէ ահա հասեալ եմ^ա: 22 Զի աղաւթք անարատք արտասուաւք եւ ողորմութեամբ ընդ աղաւթելն աղաւթականին բանան դրունք երկնից եւ ի լսելիս Աստուծոյ ելանեն. եւ եթէ միայն անթերանալի կարգայցեն առ նա:

23 Եւ զայս ամենայն գիտենալով սատանայի՝ թէ մեծամեծ գաւրութիւնք եւ անբաւ բարութիւնք յաղաւթիցն գործին, երթեալ մերձենայ առ այն՝ որ աղաւթելն կամիցի. եւ նախ առաջի ի մահիծանս պատերազմիցի ընդ նմա, զանկողինսն հեշտացուցանելով, զքունն քաղցրացուցանելով, զմարմին ծանրացուցանելով. այսր այնր յեղյեղու, եւ քոչքոտեցուցանէ: 24 Եւ ուր ուրեմն յարուցեալ գնայ յեկեղեցին բեկբեկելով, եւ մտեալ ի ներքս՝ լինի յանդիման Աստուծոյ. եւ անդ եւս զմիտսն պատրուակէ սատանայ առ ի չլիջել զբազմութիւն յանցանաց իւրոց. եւ ոչ իմանայ եթէ Աստուծոյ կայ առաջի. ոչ գաւրհնութիւնն լսէ, եւ ոչ զփառաբանութիւնսն իմանայ, եւ ոչ ի սիրտ նորա մտանեն ընթերցուածոցն վարդապետութիւնք: 25 Ոչ հեծէ եւ ոչ հառաչէ զմեղացն անաւրէնութիւնսն. ոչ լայ եւ ոչ ողբայ զհոգւոյն վիրաւորութիւնսն. ոչ աղաչէ եւ ոչ մաղթէ յԱստուծոյ, եւ ոչ արտասուալից պաղատանաւք զՏէրն հաշտեցուցանէ. ոչ խոստովանեալ զչարեացն զբազմութիւնս, եւ յայտնելով զծածկեալ մթերս անաւրէնութեան, զի ապրեսցի յահեղ տանջանացն, եւ յաննշոյլ խաւարէն: 26 Այլ փոխանակ լալոյ եւ պաղատանաց բազում աներկիւղութեամբ եւ արհամարհանաւք կամք առաջի Աստուծոյ. եւ ոչ պատկառանաւք ահիւ եւ դողութեամբ իբրեւ զդատապարտեալս առաջի դատաւորացն, եւ կամ իբրեւ զծառայս մեղուցեալս՝ որք առոտս տերանց աղաչիցեն, եւ բազում եր-

կիւղիւ եւ պաղատանաւք աղաչիցեն եւ պաղատիցին: 27 Եւ ոչ հեծեծանաւք եւ հառաչանաւք եւ ողորմագին ողբովք արտասուեմք իբրեւ զմահապարտսն՝ զոր ձգեալ տանիցին ի տեղի չարչարանաց. եւ ոչ խորգով եւ մոխրով եւ մեծաւ սգով անկանիցիմք առաջի Աստուծոյ, զի փրկեսցէ զմեզ ի բորբոքեալ գեհնոյն եւ ի սաստիկ տանջանացն, յորդանցն չարութիւնից եւ յաննշոյլ խաւարէն:

28 Եւ արդ ոչ ահիւ եւ խանդաղատագին մաղթանաւք կամք առաջի Աստուծոյ՝ աղաչել եւ մաղթել զվիրացն բժշկութիւնս. այլ ի ժամ աղաւթիցն եւ պաղատանացն եւ թողութիւն մեղացն խնդրելով՝ լուանամք եւ աւծանիմք եւ զհանդերձսն պաճուճեմք, որպէս թէ ի բողանոցս կազմիցիմք, կամ ի թատերս խաղուց. եւ մտեալ յեկեղեցին սնափառ պերճանաւք եւ մոլեկան հպարտանաւք կանայք բողից կերպարանաւք կան առաջի Աստուծոյ, եւ արք բողահոմանեաց, եւ ցոփոգի մեղկութեամբն իգանան պիղծ ցանկութեամբն, եւ յափրացեալ վաւաշոտին նման այծից քաղաց եւ ձիոց մատակախազից. եւ անդէն իսկ յեկեղեցուջն եւ յանդիման սրբութեանցն գործեն զպղծութիւնս եւ զպոռնկութիւնս եւ զչնութիւնս կատարեն. թէպէտ եւ մարմնով ոչ գործեն, սակայն մտաւք զնոյնս կատարեն ակնարկելովն եւ յարատ հայեցուածովքն եւ կնձաձայն բարբառովն, որպէս եւ Տէրն իսկ ասէ՝ թէ որ ցանկութեամբ նայի, շնացող է կատարեալ: 29 Որք արժանի են փայլատականց եւ կայծականց եւ շանթից հրոյ ի վերուստ իջանելոյ, եւ այրելոյ եւ սատակելոյ զնոսա անդէն. եւ յետ այնորիկ յաւիտենական հրոյն, ահեղ խաւարի եւ աններելի տանջանացն. փոխանակ զի ի ժամ աղաւթիցն ցանկութիւն պղծութեանցն ի սիրտ արկանիցէ:

30 Զի եկիր, ով թշուառական, հեծել եւ պաղատել առ Աստուած, արտասուս արկանել եւ ողբալ մաղթանաւք, հայցել հառաչել եւ խնդրել թողութիւն, եւ արդ ա՞յդ են կերպարանք խնդրուածոց, պաճուճելը եւ աւծանելը եւ լուանալը ի տեսս տեսողաց. Աստուծոյդ են կերպարանք հայցելոյ եւ թողութիւն մեղաց խնդրելոյ, այրատանալը եւ շոգմոգելը եւ պիղծ ցանկութեամբ ակնարկելը. Աստուծոյդ են կերպարանք ի վերայ չարեաց քոց զՏէրն հաշտեցուցանելոյ՝ ախտիւ ցանկութեամբ զննել զգեղդ եւ զհասակդ բողահոմանեաց: 31 Զքեզ ինքնին սատանայացուցանես, եւ ի սատանայէ ապրել աղաչես. դու կամաւք դիւահարիս, եւ խնդրես փրկիլ ի դիւաց: 32 Զի ա՞րդ կարես հեծել առաջի Աստուծոյ այդպիսի կերպարանաւք, եւ կամ ո՞րպէս հառաչել այդպիսի խորհրդովք. այլ եւ իշխեցեր եւս առաջի Աստուծոյ զազրալի մտաւք եւ սատանայական կերպարանաւք մտանել եւ առնել պոռնկոց զեկեղեցի Աստուծոյ. եւ ոչ սոսկաս եւ դողաս ի սրբոյն սրբութեանց եւ յահեղ դիմացն Աստուծոյ: 33 Ո՞չ գիտես եթէ սրտագէտն քննէ զխորհուրդս քո եւ գիտէ զամենայն. ո՞չ լուար եթէ մտածութեանց է դատումն, եւ յարատ աչաց պահանջումն:

34 Եւ արդ եկ ի քեզ, եւ զկեղծաւորական զխաբէութիւն մտաց եւ պաճուճանաց ընկեա ի քէն. ապա մուտ առաջի Աստուծոյ եւ լսեայ: 35 Մահապարտքն յորժամ մտանեն առաջի թագաւորաց՝ չառնեն ինչ պաճուճանս, այլ մաղթանս եւ պաղատանս. վիրաւորք յորժամ ի բժշկանոցս մտանեն, չեն պէտք այլ եւ այլ խորհրդոց, բայց միայն դեղ վերին որոնել, եւ զցաւսն բժշկել: 36 Նոյնպէս եւ վիրաւորին մեղաւք եւ ցաւազներոյն անաւրէնութեամբք չեն ինչ պէտք պաճուճանաց եւ պիղծ խորհրդոց յորժամ յեկեղեցին մտանէ, եւ ոչ աւծանելոյ եւ հերսն հիւսելոյ ի ժամ ա-

³⁰ Հմմտ. Մատթ. Է 28:

դաւթիցն պաղատելոյ առաջի Աստուծոյ. այլ զմարմինն նեղել, եւ զխորհուրդն մաքրել. եւ գճուձ ձեռով, բեկեալ սրտիւ, խոնարհ անձամբ մտանել կալ առաջի Աստուծոյ, եւ բազում պաղատանաւք ողբալ եւ լալ դառնապէս. աղաչել եւ մաղթել անդադար հեծութեամբ. զկուրծս բախել, զձեռս տարածել, զարտասուս հոսեցուցանել, զչարիսն խոստովանել նեղեալ սրտիւ, անհամարձակ լեզուաւ, ամալթալից երեսաւք, ողբալի ձայնիւ, եւ խանդաղատելի բարբառով հաշտեցուցանել զԱստուծ, եւ առնուլ թողութիւն մեղաց:

37 Այս են կերպարանք աղաւթից եւ խնդրուածոց՝ յոր Տէրն խոնարհի եւ լսէ. որով զյանցանսն շնորհէ, եւ զանաւրէնութիւնսն քաւէ. որով մաքրիմք եւ սրբիմք ի չար ախտից պղծութեանց եւ ի սատանայական խորհրդոց. որով ընդունիմք զարքայութիւնն եւ զանմահ կենացն զփափկութիւնս: 38 Իսկ մեր զայս ամենայն յիշելով բազում արհամարհանաւք մտանեմք առ Աստուծ, եւ կամք ընդ սատանայի՝ որ շփոթեալ խառնակէ զմիտս մեր ազգի ազգի մտածութեամբ, եւ ցրուեալ հոսէ զխորհուրդս մեր ի հոգս եւ ի զբաւսանս աշխարհիս. եւ գերեալք յաւգնութեանէ աղաւթիցն շահից՝ զբաւիմք ի չար խորհուրդս չարին. ի ներքս ծունր խոնարհեցուցեալ յաղաւթսն, եւ միտքն արտաքոյ բազում բանդագուշանաւք յածեալ շրջին: 39 Քանզի յաղաւթսն խորհիմք զհոգս տանց եւ զանդաստանացն. յաղաւթսն համարեմք զարդիւնս անդոցն եւ զպտուղս այգեացն, եթէ քանի կապիճ հաց լինիցի իմ, եւ կամ քանի մար գինի. եւ զխաշինսն եւ զանդեայսն յաղաւթսն ածեմք զմտաւ՝ եթէ քանի արջառ իցէ, կամ քանի ոչխար. անդէն եւ զգործն եւ զվարձս վարձկանացն յիշեմք, թէ վայ որ ելանէ այս ի տանէ իմմէ: 40 Այլ եւ զդատաստանս եւս զընկերին յիշեմք յաղաւթսն, եւ անդէն դատիմք առաջի Աստուծոյ. եւ մինչ դեռ

յաղաւթսն կայցեմք, տակաւին խորհիմք եւս ամբաստանութիւն զեղբաւրէն. եւ չեւ յեկեղեցոյն արձակեալ՝ անդէն սկսանիմք ամբաստանել զոսոխէն, եւ որպէս լեղեաւ զքաղցրութիւն աղաւթիցն դառնացուցանեմք: 41 Եւ այնպէս յափշտակէ զմիտս մեր սատանայ, մինչեւ զխորհուրդս եւս աղտեղիս յաղաւթսն յիշեցուցանէ. եւ զվաշխս փոխոցն եւ տոկոսեացն յաղաւթսն համարեմք. յաղաւթսն յիշեմք զնախանձն եւ զթշնամանս ընկերին: 42 Եւ ոչ միայն այսպիսի չար խորհրդովք դատապարտիմք, այլ ընդվայրած լեզուաւք եւ շատխաւսութեամբ վնասեալ յաղաւթսն վիրաւորիմք. զի բազմաց ոգւոցն վնասեմք, զորոց զմիտսն գերեմք, եւ մերժեալ հանեմք յաղաւթիցն եւ ի փառատութեանէն. դարձուցանեմք ի խաւսս խաւարինս եւ ի խորխորատս կորստեան իջուցանեմք: 43 Եւ այս ամենայն չիցէ՞ ահեղ բարկութեանցն արժանի եւ բորբոքեալ բոցոյն գեհնոյ, բազում տանջանաց եւ աննշոյլ խաւարին. որ այսչափ անաւրինիմք առաջի Աստուծոյ, եւ պատուհասեալք դատապարտութեամբ ելանեմք յաղաւթիցն. եւ ոչ իբրեւ զաղաւթականս պատուիմք, այլ իբրեւ զհայհոյիչս եւ զարհամարհողս պարտաւորիմք եւ պատժիմք:

44 Իսկ եթէ յաղաւթսն եւ ի բարեգործելն մեղանչեմք, ո՞րչափ եւս ի չար գործելն պարտաւորիմք. որ ի ներքս ի նաւահանգստիս ընկղմիմք ի խորս չարեաց, զի՞նչ գործեսցուք յորժամ արտաքս ելեալ ի ծով մեղացն մտանիցեմք, ի հրապարակս, ի վաճառս, յերդմունս, ի հայհոյութիւնս, ի զրկանս, ի սնափառութիւնս, ի բամբասանս, ի նախանձ, ի բարկութիւնս, ի զաւշաքաղութիւնս, յարբեցութիւնս, յորկորոտութիւնս, ի հպարտութիւնս, ի յամենայն ախտից բազմութիւնս. որ առաւել քան զծովածուփ ալէկոծութիւնս հեղձուցեալ ընկղմէ, եւ խորասուզեալ սատակէ բազմահոյլ յանցանաւք: 45 Եւ արդ ի՞նչ

կամ որո՞վ մարթասցուք ապրել յանթիւ եւ ի չարաչար գործոց մերոց եւ ի բազում հնարից սատանայի. որ ոչ միայն դառն չարեաւքն չարչարէ եւ սպանանէ, այլ հնարի եւ զքաղցրութիւն սուրբ աղաւթիցն դարձուցանել ի դժնդակ լեղւոյն դառնութիւն. չկարեմք եւ ոչ այլ իւրք գերծանել ի չար իժէն եւ ի դառն քարբէն, բայց եթէ հանապազ պատրաստիցիմք ի մեքենայից սատանայի, եւ զգուշանայցեմք յաներեւոյթ նետից նորա:

46 Եւ եթէ գաւրն վախճանին մերոյ միշտ զմտաւ ածիցեմք երկիւղիւ վտանգին այնորիկ, կարող եմք ապրել յորժամ գոգիսն աններելի տազնապովն ի մարմնոյն ի բաց պահանջիցիմք, եւ բռնավարեալ տանիցի խաւարային միգովն մթապատեալ. եւ ցանկ զսոսկալի մեծի բեմբին զարհաւիրան յիշեմք, եւ զահագին աւր դատաստանին. եթէ յարաժամ զամաւթն զայն հոգայցեմք որ լինելոց է առաջի տիեզերական հրապարակին, զբազմութիւն տանջանացն, զդառնութիւն որդանցն թիւնաւորաց, զչաւափելի խաւարն աղջամղջին, զժահահոտ տարտարոսաց զխորութիւնսն, զբորբոքումն կայծականց հրոյ գեհեհին, զգոչումն բարձրաձայն հնոցացն, զարհաւիրս յորդահոս գետոցն հրեղինաց, զհանապազորդ այրումն եւ զխորովումն մեղաւորաց, եւ զանհնարին կսկիծս աղէտիցն եւ ցաւոցն:

47 Եթէ զայս ամենայն միշտ զմտաւ ածիցես, կարող ես գերծանել յորոգայթից սատանայի. կարող ես երկիւղիւ կալ յանդիման երեսացն Աստուծոյ. կարող ես սուրբ աղաւթս մատուցանել. կարող ես սգալ, լալ եւ ողբալ դառնապէս. կարող ես եւ զդէմս դատաւորին քաղցրացուցանել, յողորմ եւ ի գութ խոնարհեցուցանել, եւ ընդունել թողութիւն մեղաց եւ քաւութիւն յանցանաց, ժառանգութիւն լուսեղէն խորանացն, եւ զփափագելի դրախտին փափկութիւնն, եւ զյաւիտենական ուրա-

խութեանցն զհեշտութիւնսն, զանմահ կենացն ցանկութիւնսն, եւ զանբաւ բարութեանցն վայելչութիւնսն ընդ Հաւր եւ ընդ Որդւոյ եւ ընդ Սուրբ Հոգւոյն. որում փառք պատիւ եւ գոհութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ե
ԹՈՒՂԹ ՅԱՂԱԳՍ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ
ՏՆԱՆԿԱՑ

1 Մի՛ ոք տղայաբար բարուք եւ անընտրողական ինչ մտաւք ժպրհիցի ի մատակարարութիւն բանին Աստուծոյ. այլ միշտ ի միտս լսողացն նայել, եւ բազում զգուշութեամբ սերմանել զբանն վարդապետութեան ի խոպանացեալ լսելիս. եւ մի՛ յսկզբանն միանգամայն զծանրալուր եւ զդժուարակիր վարուցն ի վերայ ամայելոցն¹ հասուցանել: 2 Զի որք կամիցին գտրմուղ յաւանակն հնազանդեցուցանել, եթէ զառաջինն բեռինս ծանուսս եւ զդժուարակիրս կախիցեն, կամ ինքեանք բեկանին, կամ զհակա բեռինն բացէ ի բաց ընկենուն. այլ թեթեւաւք ընտանեցուցանեն, եւ ի կատարեալսն հասուցանեն: 3 Նոյնպէս եւ հմուտք ի մշակաց որք զանդս երկրի գործեն, ոչ վայրապար ի խոպանն եւ յանտառացեալս փշաւք սերմանս պատուականս սերմանիցեն, որ կամ ի խոպանէն կորնչի, կամ թռչուեք յափշտակեն. այլ նախ զփուշսն կտրեն, եւ գերկիրն կակղեն, եւ ապա ցանեն զսերմանինս պատուականս եւ զհահաւէտս: 4 Ըստ նմին աւրինակի եւ որք զբանաւոր անդս գործել կամիցին, պարտ է յառաջ խոստովանութեամբ զփուշ մեղացն խլել, եւ պահաւք եւ աղաւթիւք զխոպանացեալսն եւ զխոտացեալսն² կակղել վասն կուսութեան եւ անընչութեան եւ ողորմութեան եւ մահու չափ չարչարանաց: 5 Զի թէպէտ եւ

1 Երկու օրինակ՝ ամեհելոցն
2 Յերկուս նօտրագիր օրինակի՝ զարօսացեալսն

մահու չափ ծանրագոյն են ընչասիրացն ողորմութեանն հրամանք, այլ առաւել շահաւոր են եւ աւգտակար քան զամենայն վարձուց առաքինութիւնս. եւ այնչափ ի վեր է քան զամենայն ճգնութիւնս պարկեշտութեանց, որպէս թէ չերեւել իսկ ամենայն վարձուց առաքինութեան առաւել լուսաւորութեամբ ողորմութեանցն պտղոց:

6 Եւ զի՞նչ ասացից զայլ առաքինութեանցն, որ եւ սրբութիւն կուսութեան ի հնումն եւ ի նորումս է պատուեալ. այլ առանց ողորմութեան գտաւ արհամարհեալ, եւ արտաքոյ առագաստին արգելաւ: 7 Եւ ոչ եթէ չարարին ողորմութիւն, այլ սակաւ եւ ոչ բաւական. զի ի մէջ գիշերին պակասեալ շիջաւ նոցայն: 8 Այնպէս եւ որ ունիցին ինչս բազումս, եւ սուղ ինչ ողորմութիւն առնիցեն, ոչ կարէ բաւական լինել փրկութեան նոցա. զի ողորմութիւնն ըստ գոյին է ընդունելի: 9 Որք ինչս բազումս ունին, ի նոցանէ ողորմութիւն բազում պահանջէ. եւ որոյ ինչքն սակաւք են, ընդունելի են եւ ողորմութիւնք սակաւք: 10 Որպէս եւ ի նիւթ խորանին պիտոյ էր ոսկի, պիտոյ էր եւ մագ. որք ոսկի ունէին եւ մագ բերէին, անընդունելի էր եւ պիղծ: 11 Իսկ որ անինչք էին եւ մագ միայն մատուցանէին, ընդունելի էր եւ հաճոյ Աստուծոյ, եւ աւրհնութիւն ընդունէին: 12 Զի ոչ եթէ ի չափս ընչիցն, այլ ի կամս տալեացն նայի Աստուած. ընդունի ի մեծէն զմեծն իբրեւ զմեծ. ընդունի եւ ի սակաւէն զսակաւն իբրեւ զմեծ. զի որ ունիցի տասն դահեկան, եւ դահեկան մի ողորմութեան ծախիցէ, եւ աղքատն տասն լումայ միայն ունիցի, եւ զմինն աղքատագունին եւս տացէ, ընդ նմին համարեալ է առաջի Աստուծոյ: 13 Այլ չքաւորին առաւել եւս զարմանալի է, զի ի չքաւորութենէն զընչեղեացն չափ ծախեաց: 14 Ընդ այս եւ Յիսուս զարմացաւ, յորժամ այրին որ գերկուս լումայսն միայն ունէր եւ զնոյնս յողորմութիւնս ծախեաց, ասէ Յի-

սուս. մեծամեծքն զաւելորդս ընչիցն բերին, բայց այրին տառապեալ զամենայն ինչս իւր բաշխեաց աղքատաց. զի երկու լումայքն միայն էին ինչք նորա: 15 Եւ արդ այսու խաբէ սատանայ զընչեղն եւ զմեծատունն յորժամ ոչ տացեն ըստ մեծութեանն, եւ զողորմութիւնս մեծամեծս բաշխեսցէ. այլ սուղ ինչ եւ սակաւ իբրեւ զսակաւաւորսն, կարծեցուցանելով եթէ այն բաւական իցէ փրկութեան: 16 Իսկ ոմանք զամենայն ինչս բաշխեցին աղքատաց, եւ զանձինս աղքատացուցին, քանզի անանց մեծութեանցն փափագեցին. եւ ոմանք զկէս ընչիցն ետուն տնանկաց, եւ զհասարակ ոգւոցն եւ մարմնոցն բարձանեցին իբրեւ եղբարց:

17 Իսկ առաջինքն հանէին տասանորդս, տային եւ պտուղս, մատուցանէին պատարագս, տանէին եւ զողջակէզս, եւ տային զվասն մեղացն՝ զանդրանիկս մարդոյ եւ անասնոյ, եւ զառաջաւորս կալոյ եւ հնձանի եւ զամենայն պտղոց: 18 Այլ եւ տաւնս բազումս Աստուծոյ կատարէին տարեկանս, եւ շաբաթս եւ ամսագլուխս նուիրէին հանդերձ ընծայիւք. յայսր վերայ եւ զաղքատս կարաւտեալս լցուցանէին, զանթիւ զորքս եւ զայրիս կերակրէին, զհոյլս կուսանացն տեսանէին, զհիւանդս դարմանէին, զհիւրս ընդունէին, զնեղեալսն մխիթարէին, եւ զամենայն կարաւտութիւնս տկարացն բառնային: 19 Իսկ արդ եթէ ի թերակատար հնումն խնդրէր Աստուած զայս ամենայն բարեգործութիւնս արդարութեան, ո՛րչափ առաւել եւս ի նորումս եւ ի կատարելումս առաւել եւս արդարութիւնս եւ ողորմութիւնս պահանջիցէ քան զայս ամենայն. զի Թէ ոչ առաւելուցու արդարութիւնն ձերքան գղպրցս եւ զփարիսեցուց, ոչ մտանէք յարեալութիւնն Աստուծոյ: 20 Ապա զո՞ր ներեալ թողութեան ունիցիմք, եթէ ոչ ա-

ւելի ողորմութիւնս առնիցեմք քան զթե-
րակատար հնոցն եւ հրէին ողորմութիւնս
մեք քրիստոնեայքս որ ի նորոյն եւ ի կա-
տարելոյս, որ ի Քրիստոսէ վարդապե-
տեալքս: 21 Զի թէ զհրէին արդարու-
թիւնսն միայն կատարիցեմք, ապա ընդու-
նայն է մեզ գալուստն Քրիստոսի, եթէ ոչ
առաւել քան զհրեայն առաւելուցումք
սրբութեամբ, պտղաւք եւ պատարագաւք,
եւ սիրոյն պատուիրանաւն: 22 Քանզի ի
նորումս աղքատք եւ մեծատունք ամենե-
քեան Մի մարմին եմք ի Քրիստոս, եւ ան-
ղամբ միմեանց: 23 Եթէ ծառայ ես Քրիս-
տոսի եւ պահես զպատուիրանս նորա,
պարտ է իբրեւ քոյոյ անդամոյ խնամ ու-
նել ընկերին. զի եթէ վշտանայ ինչ մի ան-
դամն, ասէ, վշտանան ամենայն անդամք
ընդ նմա:

24 Եւ արդ եթէ գլուխ է Քրիստոս, եւ
մեք մարմին եմք Քրիստոսի եւ անդամք
յանդամոց նորա, պարտ է հասարակ ան-
դամոցս համարել զամենայն ինչ Քրիստո-
սի՝ զոր ետ ի ձեռս մեծատանցն, եւ կացոյց
հազարապետս եւ մատակարարս, զի գի-
տութեամբ մատակարարեսցեն՝ գիտել թէ
որում շատ, եւ որում սակաւ պիտոյ իցէ.
որպէս եւ առաքելոցն հասարակաց էին
ինչք, եւ ամենայն հաւատացելոցն իբրեւ
միոյ անձին անդամոյ. եւ ոչ ոք իշխէր ա-
սել զընչից թէ իւր իցէ. այլ բերէին եւ
բաշխէին, եւ տային զայն ինչսն որով կա-
րաւտն էր անձն խնդրողին: 25 Այն էր
սրտիւ ողորմութիւն, այն էր աստուած-
պաշտութիւն եւ կատարեալ մարդասիրու-
թիւն, որք այնպիսի գթովքն բաշխէին՝ որ
մինչեւ զկարաւտութիւնն եւս հարցանէին:
26 Եւ այնչափ կարի կարեւոր էր տեսու-
թիւնն աղքատաց առ առաքելովքն, մինչ-
չեւ ընդ քարոզութեանն Քրիստոսի հան-
գոյն զողորմութիւնսն ուսուցանէին. բե-
րէին եւ կուտէին առ ոտս նոցա զընչիցն

բազմութիւնսն, յորոց վերայ զստեփաննո-
սեանսն կացուցին մատակարարս: 27 Եւ
որք ոչ գթով տնանկացն բերէին զողոր-
մութիւն, այլ իբրեւ ի հարկէ իմն, սատա-
կեցան՝ Անանիայն եւ Սափիրայն: 28 Եւ
Տաբիթայն՝ որ գթով եւ խնամովն կերակ-
րէր եւ զգեցուցանէր զորքս եւ զայրիս, յա-
ղաւթից նոցունց յարեաւ ի մեռելոց:
29 Եւ Պաւղոս ասէ՝ թէ այս հրամայեցաւ
մեզ՝ զի զայն աղքատաց յիշեսցուք, զոր
եւ ես փութացայ զնոյն առնել. զի այս
պատուիրան է կատարումն ամենայն գրոց
Աստուծոյ, որպէս ցմեծատունն ասաց
Քրիստոս. Եթէ կամիս կատարեալ լինել,
երբ վանաոճա զամենայն ինչս ոճ, եւ տուր
աղփատաց, եւ գտցես գանձս յերկինս. Եւ
ազահացն ասէ. Դիւրին է մալխոյ ընդ ծակ
ասղան անցանել, քան մեծատանն յարփա-
յութիւնն Աստուծոյ մտանել: 30 Զի որք
աստ ինչս բազումս ժողովեն, եւ զողոր-
մութիւնս ոչ սերմանեն, սոսկ եւ ունայն
գնան յաշխարհէս, եւ յանողորմ եւ յաննե-
րելի հուրն առաքին: 31 Եւ զայն ծանու-
ցեալ Տեառն՝ ասէ. Արարեմք ձեզ բարեկամս
ի մամոնայէ անիրաւութեան, որ ընկալցի
զձեզ ի յարկսն յաւիտեանից: 32 Զայս եւ
Պաւղոս ասէ՝ եթէ Զիտ երթայք սիրոյ, եւ
նախանձաւոր լերուք աղփատացն ողորմու-
թեան, զի եւ դուք ողորմութիւն ընկալցիք ի
Քրիստոսէ: 33 Եւ այլուր ասէ. Սփոնաց եւ
ետ տնանկաց. արդարութիւն նորա մնայ
յաւիտեանս յաւիտեանից: 34 Եւ ոչ միայն ի
կամս ապաստան արարեալ Պաւղոսի, այլ
եւ պատուէր եւս դնէր ի վերայ մեծա-
տանցն ասելով. Ձեր ընչիցդ առաւելութիւն
եղիցի աղփատացն կարաւտութեանն, եւ
յաղփատացն աղաւթիցն առաւելութիւն ա-

Չ Մարգ. Ժ 21
 Խ Մարգ. Ժ 25
 Ի Ղուկ. Ժ. 9
 Դ Հմմտ. Ե Կոր. Ժ. 1: Եբբ. Գ 16:
 Ե Բ Կոր. Թ 9

րացել ձերոց մեղաց թողութիւն³⁵։ 35 Զի ոչ ինչ թեթեւացուցանէ զմեղացն ծանրութիւն իբրեւ զողորմութիւն եւ զգուլթ տնանկաց. որպէս եւ սուրբն Դանիէլ Նաբուքոդոնոսորայ ուսուցանէր, յորժամ հիւանդացեալ էր ի մեղաց. հարցանէր ցմարգարէն՝ թէ զի՞նչ հնարք իցեն ցաւոյս այսորիկ. եւ մատուցեալ Դանիէլ որպէս բժիշկ՝ արքայ, ասէ, ոչ պահք եւ ոչ հսկումն եւ ոչ քուրճ եւ ոչ միայնութիւն քեզ աւգնել կարեն. բայց երթ Զմեղս քո ողորմութեամբ քաւես, եւ զանարեւոթիւնս քո գրով տնանկաց³⁶. եւ այն կաշառ է՝ որ արդարացուցանէ զքեզ, եւ ճանապարհ՝ որ տանի ի կեանսն յաւիտենից։

36 Տեսանե՞՞ս որպիսի՜ զաւրութիւն է ողորմութեան, եւ ո՛րչափ համարձակ երեսաւք զողորմածն կացուցանէ առաջի Աստուծոյ. եւ մանաւանդ որ սրտի մտաւք զքաղցեալսն կերակրեն, որպէս եւ Շայի ասէ. Բրդես քաղցելոց սրտի մտաւք, եւ զաղատս անյարկս տար ի տուն քո. եւ եթէ տեսանիցես զմերկն՝ զգեցուցանիչիք, եւ ի տառապելոյ ազգի քո գերեսս մի՛ դարձուցեր. յայնժամ կարդայցես, եւ Աստուած լսէ քեզ. եւ մինչ չեւ քո աղաղակեալ իցէ՝ ասէ, հասեալ եմ³⁷։ 37 Եւ այսպիսի արագաթեւ ողորմութիւնն եւս ելանէ ի լսելիս Աստուծոյ, եւ փութապէս խոնարհեցուցանէ յաւանականութիւն ողորմածին։ 38 Եւ ոչ եթէ աստ միայն աւգնէ եւ փրկէ Աստուած զողորմածն, այլ եւ յորժամ պակասիցէ այս, եւ ի հանդերձեալսն փոխիցիմք, բազմապատիկ առատութեամբ դարձուցանէ ողորմածին զողորմութիւնս նորա։ 39 Քանզի ինքն Տէրն ասէ՝ եթէ ընդ ողորմութեան աղքատացն ես եմ պարտական, եւ ընդ փոխոցն նոցա ես եմ փոխատու։ 40 Զի որ

ողորմի աղատացն, փոխ տայ Աստուծոյ³⁸, եւ զմինն հարիւրապատիկ դարձուցանէ անանց բարութեամբ. այլ եւ զմեղս քաւէ, եւ փրկէ յահեղ տանջանացն։ 41 Երանի որ խորհի զաղատն եւ զտնանկն. յաւուր չարին փրկէ զնա Տէր³⁹։

42 Եւ զի՞նչ իցէ խորհելն զաղքատն եւ զտնանկն։ 43 Խորհելն այն է, յորժամ զտառապանս նորա զմտաւ ածիցես՝ եթէ եղբայր իմ է, եւ անդամ եւ մարմին, եւ պէտս ունի որպէս զիս, եւ կարաւտ է ամենայնիւ՝ ընչիւք եւ յարկաւ, եւ առ վտանգս քաղցոյն բռնութեան յածի եւ շրջի անհանգիստ. ի տաւթոյ տապանայ, ի ցրտոյ դողայ, որովայնս սին, եւ մարմինն մերկանդամ, հերքն թաղկեալք, դէմքն դեղնեալ եւ թոշոմեալք, եւ ամենայն մարմինքն զգուլթեալք եւ երիթացեալք. թափառի, վարանի, եւ ի դուրս դուրս երերեալ եւ դադարեալ կառանչէ, եւ խանդաղատելի ողորմուկս արկանէ առ աղէտս վշտին. եւ զանագորոյն զմիտս մեր գիտելով՝ զխեղ անդամս ամալթոյ անակնածելի ցուցանէ, զի զանողորմութիւնս մեր ի գուլթ խոնարհեցուցանէ. յանդգնի, լրբի, եւ սուղ ինչ կերակուր բազում աշխատութեամբ գտանէ. երկիւղիւ ի դրունս, երկիւղիւ ի գաւիթս, երկիւղիւ ի տունսն մտանէ. զի ի տունսն ամենայն ի շանցն դողայ, յանասնոցն երկնչի. զի ձիքն կիցք հանեն, եզինքն եղջիւր ածեն, շունքն վիրաւորեն, եւ մարդք չարք եւ անողորմք բամբասեն եւ թշնամանեն, եւ իբրեւ նետիւ խոցոտեն, եւ մանաւանդ եթէ խեղք եւ կոյրք իցեն եւ ցաւագնոտք. եւ վասն քաղցոյն վարանի, եւ յայնպիսի ալէկոծութիւնս դիմէ, յերեսս անողորմիցն իբրեւ ի դէմս գազանաց դիմեալ երթայ հասանէ. յորոց յառաջ թշնամանին, ապա եթէ կարիցեն ինչ առնուլ բազում բամբասանաւք։ 44 Արդ այս է

³⁵ Հմմտ. Բ. Կ. ր. Ը 14։
³⁶ Գ. ան. Գ. 27
³⁷ Ե. ան. Ե. 7-9

³⁸ Հմմտ. Գ. արք. Ժ. Թ. 17։
³⁹ Ս. արք. Ի. Ը 1

խորհել զաղքատն եւ զտնանկն, յորժամ զայս ամենայն զմտաւ ածիցէ, եւ քաղցրաբարբառ բանիւք եւ գլխագին ողորմով զկարաւտեալսն մխիթարիսցէ, եւ հեծեծիցէ եւ յոգւոց հանիցէ ի վերայ նորա: 45 Այնպիսեացն ետ երանութիւն մարգարէն, որք այնպիսի գլխով եւ ողորմով զաղքատս ընդունին, եւ յաւուրն չարէն փրկին:

46 Իսկ աւրն չար ո՞ր իցէ անողորմիցն եւ մեղաւորացն: 47 Աւր ահեղ դատաստանին է յորժամ երկինք սասանին, եւ երկիր դղորդի. յորժամ արեգակն խաւարի, լուսին եւ աստեղք կորնչին. յորժամ արհաւիրքն հարկանիցին, եւ ահագին սոսկումն սաստկանայցէ. յորժամ հնչումն փողոյն սաստկանայցէ եւ զարհուրեցուցանիցէ, եւ բարբառք հրեշտակացն հիացուցանիցեն. յորժամ զաւրութիւնք եւ իշխանութիւնք եւ պետութիւնք շարժեսցին, եւ գունդք հրեշտակաց յերկիր ծաւալեսցին. յորժամ աթոռք անկանին, եւ զարքայն Քրիստոս իջեալ տեսանիցեմք. յորժամ յահէ փառաց դատաւորին սերովբէքն եւ քերովբէքն սարսափեն. յորժամ վէճք պատառին, եւ գերեզմանք բանայցեն, եւ բազմահոյլ ննջեցեալք յարիցեն, եւ անթիւ կենդանիքն նորոգեսցին. դասք սրբոցն ցնծասցեն, եւ ժողովք արդարոցն պայծառացին. աշխարհս ամենայն գումարեալ կայցէ, եւ հուրն ընդհանուր ընթանայցէ եւ ընդ տիեզերս տարածեսցի. յայնժամ զկապեալսն մեղաւք զմեղաւորսն եւ զպարաւանդեալսն անաւրէնութեամբ ածիցեն, եւ խաւարային միգով մթապատեալ յաշխարհատես հրապարակին ցուցանիցեն առակ եւ ծանակ անտանելի ամաւթով, եւ առաջի սոսկալի բեմբին կացուցանիցեն յանդիման դատաւորին մեծի եւ ահաւորի, որոյ հուրն վառեալ տոչորիցէ եւ բորբոքեալ բարձրանայցէ, եւ հնոցն կայծականց եւ հրահոսանք գետոցն հրեղինաց. ուր հուրն վառեալ ի վայր իջանիցէ, եւ հրատիկք վառեալ ի ներքս տարածիցեն. ուր

գուրք խաւարայինք, եւ տարտարոսք աղջամղջինք. գեհեն չարատանջ, եւ որդունք դառնաթոյնք, որք սպառնան եւ պատրաստեալ են ամենայն մեղաւորաց՝ առնուլ վրէժս յահեղ աւուրն յետնում:

48 Արդ այս է չար աւրն մեղաւորաց, յորմէ փրկէ զողորմածն ողորմութիւն աղքատաց եւ գլխութիւն տնանկաց. զոր եւ ինքն իսկ փրկիչն երանէ ասելով թէ Երանի ողորմածացն, զի նոքա ողորմութիւն գտցեն՞. եւ Յոյժ բարձր ի գլուխ պարծի ողորմութիւնն առ դատաստանաւ՞. եւ Չար եւ անողորմ դատաստան լինելոց է այնմ, որ ոչ արարին ողորմութիւն՞: 49 Անողորմ դատախազք են նորա, եւ անողորմ տանջանարանք. անողորմ այրումն հրոյն հնոցին, անողորմ խորովումն տապոյն. եւ ամենեւին անանց եւ աններելի են ահեղ աղէտիցն չարչարանք: 50 Այս է անողորմիցն անողորմ դատաստան եւ տանջանք աններելիք, զոր եւ անողորմ մեծատունն ընկալաւ՝ զահեղ հրոյն զխորովումն, եւ զաններելի տապակին. վասն զի ոչ արար ողորմութիւն քաղցելոց եւ մերկոց եւ հիւանդաց, ընդ որոց եւ հատուցումն անողորմ ընկալաւ:

51 Եւ արդ զայս ամենայն լսելով մի՛ յապաղեսցուք ողորմել աղքատաց նեղելոց, եւ առաւել եւս խեղանդամոցն եւ հիւանդացելոց, որբոց եւ այրեաց եւ վշտացելոց, աւտարաց, հիւրոց եւ ծերոց, եւ ամենայն կարաւտելոց ի կարեւոր պիտոյիցն, որով նոցա յաջողին վաստակքն եւ կեանք աշխարհիս: 52 Եթէ իցես աստուածապաշտ, նոցա լեր հոգէբարձող եւ վերակացու. եթէ կամիս զմեղս քո փարատել, նոցա լեր կերակրիչ եւ զգեցուցիչ. եթէ կամիս համարձակ երեսաւք գ՛րիստոս տեսանել, զերեսս նեղելոցն եւ կարաւտե-

՞ Մարթ. Ե 7
 Է Յակ. Բ 13
 Զ Յակ. Բ 13

լոցն մի՛ տրտմեցուցաներ. եթէ կամիս ի խորանս եւ յաւթեվանս սրբոցն մտանել, եւ զանբաւ բարութիւնսն ժառանգել, աւթեվան եւ ասպնջական լեր աւտարաց, կարաւտելոց, հիւանդաց եւ վշտացելոց. զնոսա հանգո եւ մխիթարեա երկրաւոր պիտոյիւքս, զի եւ դու հանգիցես եւ վայելեսցես հոգեւոր կերակրովն եւ անանց փափկութեամբն: 53 Քանզի այն է աստուածապատուութիւն որ միով առատ ողորմութեամբ զնեղեալս եւ զվշտացեալսն տեսանիցէ. զի այնպիսին ոչ եթէ առնէ ողորմութիւնս, այլ առնու զանանց բարութեանցն զվայելչութիւնս, եւ աստ բազում բարիս գտանէ յորժամ զբարին առնիցէ: 54 Եւ եթէ աղքատք ոչ էին յերկրի, ո՞վ ոք կարէր զբազմաթիւ բեռինս մեղաց թեթեւացուցանել, եւ կամ յալէկոծեալ եւ ի ծովածուփ անաւրէնութեանցս ապրել: 55 Այլ ողորմութիւնք աղքատացն անցուցանեն զմեզ ընդ սահելի եւ ընդ ծփելի կեանս աշխարհիս, եւ հասուցանեն ի նաւահանգիստն խաղաղութեան: 56 Եւ աղաւթք վշտագնելոցն խլեալ հանեն զփուշ մեղացն. մաքրեն եւ սրբեն զթարախ մեղաց պղծութեան. բժշկեն եւ առողջացուցանեն զվէրս սատանայի. ցրեն եւ թեթեւացուցանեն զծանրութիւն անաւրէնութեանց, եւ քաւեալս եւ արդարացեալս յերկինս առաքեն: 57 Այսպիսի են ողորմութեանցն զաւրութիւնք, որ ի դառն կապանէն, եւ ի խորոց յանցանաց հանեն ի ձեռն սակաւ ինչ արծաթոյ զոր կարաւտելոցն ծախեն:

58 Դու մի՛ տրտմիցիս ընդ պակասիլ ընչիցն, զի ընդ նմին եւ մեղքդ պակասին. եւ յորժամ հաներ ի քէն զարծաթն, հաներ ընդ նմին եւ զմեղսդ, եւ զաղտեղութիւն պիղծ գործոց քոց սրբեցեր. որպէս եւ ասէ. Տուր ողորմութիւն, եւ ամենայն ինչ ձեր սուրբ եղիցի: 59 Ձի ողորմութեամբ սրբի մարմին ողորմածին. սրբի եւ հոգին. աւրհ-

նին ինչքն, եւ յաջողին վաստակք նորա. առաւելուն անդեայքն: 60 Եւ բազմանան խաշինքն, եւ պտղաբերին անդաստանք նորա՝ եթէ միայն աստուածական կամաւք ողորմութիւն առնիցէ. զի ողորմութիւն տնանկացն փոխ տայ Աստուծոյ. եւ ոչ այս միայն փոխորէն զոր վերագոյնդ ասացեալ է, այլ շնորհէ եւ զարքայութիւնն, փրկէ եւ յորոգայթից թշնամոյն, եւ ի ձեռաց դժոխոցն ապրեցուցանէ զողորմածսն: 61 Ձի թէպէտ եւ մեծ սրբութիւն է կուսութիւնն, այլ առաւել եւ պատուական է ողորմածն. թէպէտ եւ մեծ է պահոց պնդութիւն, եւ առաքինութիւնք բազումք եւ մեծամեծք, այլ եւս մեծագոյն է ողորմութիւն, եւ կարեւոր եւ ընդունելի Աստուծոյ: 62 Մեծ է եւ պատուական այրն ողորմած: 63 Եւ որ ոչ առնէ ողորմութիւն, զայնպիսին եւ մարդ ոչ անուանեն զիրք Աստուծաշունչք, այլ շունս եւ խոզս, եւ զազանս միայնակերս կոչէ: 64 Ձի այնպիսիքն ճրագ են առանց լուսոյ եւ աչք առանց տեսանելոյ, աղբիւր առանց ջրոց եւ ծառք գաւսացեալք՝ որք զանուանակոչութիւնն միայն ունին, եւ ոչ զաւգտակարութիւնն:

65 Եւ արդ ի՞նչ գիտասցուք զանողորմն թէ մարդ իցէ. քանզի աղբիւր ի ջրոյ անուանի աղբիւր, եւ ճրագ ի լուսոյ ասի ճրագ. նոյնպէս եւ մարդ յողորմութենէն ճանաչի թէ մարդ իցէ, որ հանապազ զսիրտն ի սէր եւ ի գութ աղքատին խոնարհեցուցանէ, եւ զձեռս յողորմութիւն կարաւտելոցն դիցէ, եւ ի ձեռն աղքատացն քաղցելոցն զՔրիստոս կերակրէ. քանզի եւ Քրիստոս իւր իսկ համարի զաղքատաց ընդունելութիւնն. Քաղցեալ էի, ասէ, եւ կերակրեցէ՛ գիս. ծարաւի էի, եւ արբուցէ՛ գիս. ատար էի, եւ ընկալայ՛ գիս. հիւանդ էի եւ ի բանտի, եւ ինձ այց արարէ՞: 66 Եւ արդ եթէ հաւատաս ան-

Ք Գործ. Ի 6

Մատթ. Ի 35-36

Մ Գործ. ԺԵ 41

սուտ բանին Աստուծոյ, ի միտ առ ճշմարտապէս, զի յորժամ զքաղցեալսն կերակրես, զՔրիստոս կերակրես. եթէ զՂուր ծարաւոյն արբուցանես, զՔրիստոս արբուցանես. եթէ զհիւրս ընդունիս, զՔրիստոս ընդունիս. եւ թէ աւտարին լինիս վանատու, Քրիստոսի ես ասպնջական. եթէ ի տեսս երթաս հիւանդին, առ Քրիստոս երթաս տեսանել. եթէ զնեղեալսն սփոփիցես, զՔրիստոս մխիթարես. եթէ անաւզնականին աւզնեսցես, Քրիստոսի լինիս աւզնական. եթէ տկարացն սպասաւորեսցես, Քրիստոսի ես սպասաւոր. եւ զամենայն զոր քաղցելոցն մատուցանես, տաս ի ձեռս Քրիստոսի, եւ բազմապատիկ հատուցանէ յաւուրն յետնում. ուր ոչ ինչք կան համբարեալք, եւ ոչ սիրելիք եւ ծանաւթք. ուր ոչ սուրբք կարեն աւզնել, եւ ոչ արդարքն կարեն փրկել. ուր ոչ հարք գլխան, եւ ոչ եղբարք ողորմին, բայց միայն աւզնեն ողորմութիւնք աղքատաց եւ վարք բարիք:

67 Արդ մի՛ մնասցուք վախճանին, եւ մի՛ ինչ ազահեսցուք, մի՛ զաղքատս կարաւտեցուցուք, մի՛ զՔրիստոս տրտմեցուցուք. այլ զորքս սնուցուք, զայրիս յանձանձեսցուք, զպանդուխտս ժողովեսցուք, զքաղցեալս կերակրեսցուք, զՔրիստոս մխիթարեսցուք. յերկրիս առատատուր մարդասիրութեամբ սերմանեսցուք, եւ յերկինս զողորմութիւնս հնձեսցուք. ի վերնախորանսն վերասցուք, եւ յանանց ուրախութիւնսն վայելեսցուք մեծապայծառ խնդութեամբ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որում փառք եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ձ

Վ.Ա.ՄՆ ՊՏՂՈՑ ԵՒ ՊԱՏԱՐԱԳԱՑ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ

1 Բազում գաղտածիգ¹ նետիւք վիրաւորէ զմեզ սատանայ, եւ զվէրն չերեւեցու-

ցանէ. զսկիզբն իրացն երեւեցուցանէ որպէս թէ առաքինի ինչ վարուք, եւ կատարէ յահեղ անաւրէնութիւնս. եւ փոխանակ վարձուցն վաստակոցն արկանէ ընդ մեղաւք անաւրէնութեամբ. եւ որպէս ընծայիւք Կայենի եւ ընծայիւքն Յեփթայեայ, որ կերպարանաւք բարւոյ զգործս անաւրէնութեան կատարէր: 2 Ձոր եւ այժմ առ բազումս կատարէ սատանայ, եւ առնէ զրաջան եւ սնավաստակ յեկեղեցական ի պողոց եւ պատարագաց ընծայից: 3 Եւ ոչ միայն զրավաստակ եւ զրաջան ի վաստակոցն տեսանեմք, այլ եւ թշնամանաւք ի յանդիմանութիւն. եւ անէծս պատուհասից յԱստուծոյ ընդունին, որպէս եւ Մաղաքիա մարգարէն ասէ թէ՛ Անիծեալ լիցի մարդ որ կարող իցէ, եւ կայցէ ի հաւտի նորա որձ, եւ մատուցանիցէ Տեսուն զանաւուտն եւ զարատաւորն եւ զվտիտն պատարագէ: 4 Այլ եւ զբահանայս եւս որք եւ զխոտանս ի ժողովրդոցն ընդունիցին, պատուհասէ եւ ասէ. Դուք քահանայք է՞ որ բամբասէք զանուն իմ, եւ մատուցանէք ի սեղան իմ հաց պղծութեան, զխոտանն եւ զյափշտակեալն եւ զանաւուտն, այսինքն զնիհարն, եւ թէ ընկալայց զայն ի ձեռաց ձերոց. այլ առաքեցիք ի վերայ ձեր անէծս, եւ նզովեցիք զարիւնութիւնս ձեր, եւ բարձից զձեզ հանդերձ նոքաւ. փոխանակ զի դուք ոչ եղիք ի սիրտս ձեր երկնչել յինէնէ:

5 Արդ եթէ որք ի հնումն զխոտանն մատուցին, այսպիսի պատուհասիւք պատժեցան, զի՞նչ գործեսցեն որք ի նորումս զխոտանն կալոյ եւ հնձանի Աստուծոյ նուիրեսցեն, եւ զվտիտն եւ զանաւուտն ի հաւտիցն՝ կոչնոց աղքատացն մատուցեն, որով եւ Կայեն կորեաւ խոտան եւ անընդունելի պատարագաւն. քանզի ոչ ուղիղ բաժանեցեր, ասէ, եւ այդ եւս առ

1 Մաղ. Ը 14

2 Մաղ. Ը 6-10, 13: Բ 2-3

1 Մի օրինակ՝ գաղտանետիւք

քեզ դարձցի: 6 Արդ պարտ է մեզ երկնչել ի բանէս յայսմանէ. զի եթէ որք առանց աւրինացն մեղան՝ այնպէս պատժեցան, ո՛րչափ եւս առաւել մեք եթէ հանդերձ աւրինաւքն մեղիցուք. զի որ ի շնորհացն որ ի հնումն էին՝ ոչ էին վայելեալք, եւ այնպիսի ուղղութիւնք խնդրէին, ո՛րչափ եւս առաւել բազում հաւաստեաւ ուղղութիւն ի նորումս պահանջիցէ, թէ եւ սակաւ ինչ գթիցեմք. որք յաւրինաց խրատեցաք, եւ ի շնորհացն վայելեցաք, եւ զաւրինակսն տեսաք: 7 Եւ արդ եթէ զխոտանն Աստուծոյ նուիրիցեմք, մեզ ո՞ր ներեալ թողութեան կայցէ. զի ասէ՛ թէ զառաջաւորս կալոյ քո եւ զհնձանի, եւ զընտիր ընտիրս խաշանց՝ Աստուծոյ քում մատուցանիջիր. եւ Պատուեա զՏէր ի քոց արդար վաստակոց, եւ հան նմա պտուղ ի քոց արդարութեան արմտեաց*:

8 Այս է ընդունելի առաջի Աստուծոյ: 9 Այլ ի յափշտակութեմէ, կամ ի գողութեմէ, կամ ի գրպարտութեմէ, կամ ի վաշխից ինչ տոկոսեաց, կամ ի բռնութեմէ վաճառոց, կամ ի տառապելոց գրկանաց եթէ մատուցանիցէ ինչ պատարագ՝ եզն կամ ոչխար կամ քաւի, պիղծ է ինձ որպէս թէ գայն՝ որ շուն ո՞ք մորթիցէ, եւ կամ եթէ հարկանիցէ ո՞ք գկառափն մարդոյ, եւ կամ հեղուցու ո՞ք գարիւն խոզի՞:

10 Եւ արդ ընդէ՞ր ոք ժողցի զայսպիսի պատարագս զազրալիս մատուցանել՝ որ գեհեհինն առիթ է, եւ կամ զընդունելութիւն աղքատացն կոչնոց՝ կարողաւքն եւ անկարաւտիցն պատուաւքն կորուսանել. զոր եւ Քրիստոս արգել ասելով, եթէ՛ Յորժամ առնիցես նաչ կամ ընդունելութիւն աղքատաց, մի՛ կոչեր գեղքարս քո եւ մի՛ գղրացիս քո եւ մի՛ գսիբելիս քո եւ մի՛ գմեծատունս, զի մի՛ եւ նոքա զՔեզ կոչեսցես, եւ այն լիցի քեզ փոխորէն. այլ յորժամ առնիցես ընդունելութիւն յաղագս ոգւոյ քոյ

փրկութեան, կոչեա գաղատս եւ զիսեղս եւ զկոյրս եւ զկաղս, եւ երանի է քեզ՝ զի ոչ ունին փոխորէն հատուցանել քեզ. եւ լիցի քեզ փոխորէն յարեայութեանն արդարոց՞:

11 Ո՞րք են խաւսքս եւ հրամանքս. ո՞չ ապաքէն Յիսուսի Որդւոյն Աստուծոյ:

12 Եւ արդ ընդէ՞ր արհամարհես զհրամանսն Քրիստոսի: 13 Եթէ կամիս զմեծամեծս քո պատուել՝ պատուեա. ունիս աւուրս երեք հարիւր վաթսուն եւ հինգ տալ մարմնոյդ, եւ զմի աւր ի նոցանէ հոգւոյդ նուիրեա:

14 Արդ ահա զմի աւրն չարկանես տալ հոգեւորացն եւ հոգւոյդ կոչունս:

15 Եթէ բժիշկ վիրաւորեալ ոգւոյ քոյ զաղքատսն արարեր, եւ ժողովեցեր զնոսա բարեխաւս եւ աղաչողս առ Աստուծ, եւ մեղաց քոց քաւարան զնոսա կոչեցեր ի տուն քո, ապա յայնմ աւուր ընդունելութեան աղքատաց եւ ոգւոյ քոյ, յորում աւուր քաւին մեղք, դադարեցո զխորհուրդս քոյ զմարմնաւորս, ընդ նմին եւ զսիրելիս քո զմարմնաւորս. եւ մի՛ զոք ի կարողաց եւ կամ ի մարմնաւոր սիրելեաց քոց մուծանիցես ի տուն քո, զի մի՛ ի թողութեանէ մեղաց քոց վրիպիցիս՝ նոցա սպասաւորելով, նոյն աչառելովն զնոսա, զնոքաւք շրջելովն, զնոսա ի վեր մատուցանելովն, եւ կերակուր եւ զինի ոչ վերանայ ի նոցանէ: 16 Եւ քո քաւարան մեղաց՝ աղքատացն ժողովք ի ներքուստ ի վեր նային, եւ սեղանք նոցա դատարկ՝ յոգոց հանիցեն. եւ ոմանք ի նոցանէն արտաքս իսկ մնան իբրեւ զարհամարհեալս, եւ միայն զձայնն լսեն զբազմականացն, եւ ի սիրտս իւրեանց զարհամարհանսն իւրեանց վարանին, զաւղեալք եւ անկորեալք նստին:

17 Արդ մի՛ ինչ այսպիսի կոչունս յաւուր պատարագին ընդունելութեան արասցես, յորոց ծախիցն անվարձ լինիցիս:

18 Այլ եթէ կամիցիս մեղաց քոց թողութիւն խնդրել, կոչեա զորքս եւ զայրիս,

* Ըստ Գ. 9
 † Ես. 4. 9, 3

‡ Գ. 4. 12-14

զնեղեալս եւ զտառապեալս, զխեղս եւ զկոյրս եւ զկաղս, զկարաւտեալսն եւ զգերիսն, եւ զամենայն քաղցեալս եւ զանմխիթարսն. զնոսա մխիթարեա, զնոսա սփոփեա, զնոսա կերակրեա, նոցա միայն սպասաւորեա, զնոքաւք շրջեա, զնոսա յարմարեա, եւ քաղցր բանիւք պաշտեա, զի թողութիւն մեղաց եւ փրկութիւն տան քո եղիցի: 19 Եւ արդ այսպէս յաւրինեա զընդունելութեան կոչունս զպատարագացն, եւ մի՛ զգոյաւորս եւ զմեծամեծս յընդունելութիւն թշուառացելոցն եւ աղքատացն մուծաներ. այլ նոքա եղիցին գահերէցք, եւ նոքին բարձրագլուխք. նոքա ի վերոյ, եւ նոքա ի ներքուստ. զնոսա միայն մոյժ աղաչանաւք, եւ զնոսա միայն յղարկէ՛ աղերսանաւք: 20 Եւ եթէ այսպէս ընդունիցիս, ոչ եթէ ետուր, այլ առեր. ոչ եթէ ծախեցեր, այլ մեծամեծ շահս ժողովեցեր, եւ թողութիւն ընկալար: 21 Վասն այսր ամենայնի ասէր Քրիստոս՝ եթէ յորժամ առնիցես ընդունելութիւն, մի՛ կոչեր զմեծամեծս, զի մի՛ զբաղմամբք նոցա աղքատքն արհամարհիցին. եւ դու վասն աշառանաց իբրեւ զաւրինագանց դատիցիս, ըստ այնմ որ ասէ՛ եթէ որ զհանդերձս պայծառս ունիցի, ասիցէ՛ եթէ դու նիստ աստ պատուով. եւ ցաղփատն ասիցէ՛ եթէ երթ նիստ առ պատուանդանին. եւ զայս առնելով, ասէ, ոչ խղիցէ՛ յանձնս ան, եւ լինիցի՛ դատաւորք չարեացն խորհրդոց՞. զի ի մեծամեծացն աշառելով մեղս գործէք՝ յանդիմանեալք յաւրինացն իբրեւ աւրինագանցք:

22 Եւ արդ մի՛ ինչ այսպիսի դատապարտութիւնք ի կոչունս աղքատացն ունիցիս, զաղքատսն եւ զմեծամեծսն ի միասին ժողովելով. զի մեծամեծքն մտեալ՝ բարձ եւ պատիւ խնդրեն եւ գահերիցութիւնս եւ սնափառութիւնս եւ յարգանս եւ

սուտակասպասութիւնս ի քէն պահանջեն. եւ աղքատքն նստին ի ներքս դաւղեալք եւ խոնարհեալք լռութեամբ: 23 Ոչ է բարւոք կոչ ընդունելի. ոչ ոք որոմն ընդ ցորենոյն սերմանէ, եւ փուշ ընդ որթով տնկեն. եւ ոչ քեզ պարտ է սուտակասպասութիւն եւ սնափառութիւն ընդ խոնարհութիւն եւ ընդ ապաշխարութիւն մեղաց քոց խառնել. խափանիչք են միմեանց եւ ապականիչք. անհնար է քեզ միով ակամբ յերկինս հայել, եւ միովդ յերկիր. եւ յայնմ աւուր միանգամայն մարմնաւորացն եւ հոգեւորացն հաճոյանալ: 24 Հոգեւորքն աղաչեն եւ մաղթեն զքեզ յերկինս տանել, եւ մարմնաւորքն սուտակասպասութեամբ եւ սնափառութեամբ եւ բազում ստաբանութեամբ եւ սուտ յարգանաւք յանդունդս քարչեն. հոգեւորքն ի լոյս հրաւիրեն, եւ մարմնաւորքն ի խաւարն առաքեն: 25 Ահա այսպիսի խափանիչք քեզ վնասակարք են յաւուր ընդունելութեան աղքատաց զմեծամեծսն կոչելով: 26 Այլ զաղքատս սփոփեա, զաղքատսն հանգուցանել, զաղքատսն աղաչել, հաց քաղցելոցն բրդել, զմերկսն զգեցուցանել, զանյարկսն ընդ հարկաւ մուծանել: 27 Եւ յայնժամ կարդացես, եւ Աստուած լուիցէ քեզ. եւ մինչ չեւ խաւսեալ իցես, ասացէ եթէ ահաւասիկ հասեալ եմ՞:

28 Այսպիսի շահաւոր են ընդունելութիւնք աղքատաց, եւ մերձ առ Աստուած աղաւթք նոցա, զոր եւ մարգարէն ասէ. Երանի որ խորհի զաղփատն եւ զտնանկն, յաւուր չարի փրկէ զնա Տէր. երանելի առնէ զնա ի վերայ երկրի, եւ ոչ մատնէ զնա ի ձեռս թշնամեաց իւրոց՞: 29 Արդ այս են երանութիւնք վասն կերակրելոյ կարաւտելոցն, զոր եւ Քրիստոս իւր համարի: 30 Իսկ ընդ անկարաւտիցն կոչնոց զի՞նչ շահիցիս, եւ կամ ո՞ր աւգուտ գործիցի, զի

՝ Հմմտ. Ղուկ. ԺԳ. 12:
 Է՝ Յուդ. Բ՝ 3-4

Գ՝ Ես. ԾԻԸ 9
 ՝ Սաղմ. ԽԼ 1-3

ընդունելութիւն քաղցելոցն է շահաւոր, եւ ոչ յարգելոցն. եւ Քրիստոս ոչ ասէ՝ եթէ զյագեալսն կերակրեցէք, եւ ոչ ասաց եթէ զարբեալսն արբուցէք. այլ զծարաւեալսն տեսէք եւ արբուցէք, զմերկսն տեսէք եւ զգեցուցէք, եւ աւտարատեսութիւն արարէք: 31 Այսպիսիքն են վարձուց եւ երանութեան արժանի, եւ ոչ յագելոց եւ անկարաւտից զմայլութիւնք. զի որ զաղքատսն եւ զկարաւտեալսն կերակրէ, զաւտարսն եւ զհիւանդան, ոչ զմարդ՝ այլ զՔրիստոս ընդունի, զՔրիստոս կերակրէ, զՔրիստոս զգեցուցանէ, զՔրիստոս սփոփէ, զՔրիստոս մխիթարէ, զՔրիստոս հանգուցանէ, եւ Քրիստոսի սպասաւորէ. զի անսուտ է բանն տէրունական:

32 Եթէ Քրիստոս է զոր ընդունիս, ոչ է քեզ պարտ եւ արժան ի Քրիստոսի ընդունելութիւնն զժողովս զեղիւնեցելոցն ժողովել, զնոսա ի ներքս մուծանել, եւ զՔրիստոս թողուլ արտաքոյ գաւթին: 33 Նոքա մեծարանաւք ի վերոյ, եւ Քրիստոս արհամարհանաւք ի խոնարհ. նոքա պատուով ի բազմականի, եւ Քրիստոս արհամարհանաւք առ պատուանդանի. նոքա անդ ի վեր սփոփանաւք սպասաւորին, եւ Քրիստոս աստ ի վայր նստի գլխարկեալ: 34 Ոչ է պարտ այսպիսի արհամարհանաւք ընդունել զՔրիստոս, զի ի սրտմտութիւն եւ ի բարկութիւն զարթուցանես, եւ ոչ յողորմութիւն եւ ի թողութիւն մեղաց: 35 Զի եթէ ողորմութեան է ընդունելութիւնդ, զի՞ կոչես տեսողս բազումս, եւ հատուցումն ի մարդկանէ ընդունիս: 36 Ահա ուսուցանէ զքեզ Քրիստոս. Զգոյ՛ լեր, ասէ, ողորմութեան՝ մի՛ առնել առաջի մարդկան. զի որ յաչս մարդկան լինի, եւ հատուցումն ի մարդկանէ ընդունի. այլ եղիցի ողորմութիւնն քո ի ծածուկ. եւ Հայրն քո որ տեսանէ ի ծածուկ, հատուցէ քեզ յայտնապէս:

37 Արդ մի՛ զրկիք յայդպիսի վարձուց, եւ մի՛ տեսողս ողորմութեան քում ժողովել. այլ զգուշութեամբ մատակարարեա ի ծածուկ, զի ի մաւտ է գողն, գողանայ զվարձս քո. դարանակալէ աւագակն, յափշտակէ զողորմութիւնս քո. մերձ կան նենգիչք նենգել, եւ հանել զբարին քո ի քէն. շրջանակաւ ամբարիշտքն շրջին, եւ ջանան զրաջան առնել զքեզ եւ անավաստակ ի վաստակոցն: 38 Այլ յամենեցունց պատրաստեա երկիւղիւ, պատրաստեա իմաստութեամբ. եւ զգոյ՛ լեր յախտէն մարդահաճութեան եւ ի դիւէն սնափառութեան, զի մի՛ դարձուցանիցեն զբարիքն քո ի չար, եւ մի՛ զլոյսն քո ի խաւար. Զի եթէ լոյսդ որ ի քեզ ասի՛ խաւար իցէ, իսկ խաւարն ո՛րչափ եւս իցէ՞. զի եթէ ողորմութիւնդ քո չարիք եղեն, չարիքն ո՛րչափ եւս ինչ լինիցին: 39 Արդ վասն այսորիկ ծածկեա յամենեցունց զողորմութիւնս քո. եւ որպէս ոչ կամիս զպղծութիւն մեղաց քոց ցուցանել, եւ մի՛ զողորմութիւն ապաշխարութեանդ տալ գիտել. այլ ծածկեա զառաքինութիւն ապաշխարութեան իբրեւ զմեղացն զազրութիւն. եւ յամենայն ժամ ընդունելի լինին ապաշխարութիւնք քո, եւ գտանես մեղաց քոց թողութիւն: 40 Մի՛ առ հաճոյ սնափառութեան զկոչունս ընդունելութեան արասցես, եւ մի՛ ի ցոյցս մարդկան զտուրս ողորմութեան արասցես աղքատացն, եւ մի՛ զմեծամեծս եւ զգոյաւորս յընդունելութեան կարաւտելոց աղքատաց բաշխեսցուք եւ կոչեսցուք. եւ մի՛ գիտտանսն կալոյ կամ հնծանի Աստուծոյ նուիրեսցուք, եւ զամենայն տուրս պտղոց եկեղեցւոյ կամ քահանայից մի՛ չարակնեսցուք, որով կայեն յանդիմանեցաւ. եւ զգէրն եւ զուղիղն ի հաւտից անձանց մերոց մի՛ թողուցումք, եւ զանաւզուտն եւ զվտիտն ընդունելութիւն աղքատացն արասցուք եւ

Է Լմմբ. Մարթ. Գ. 1-4:

Զ Մարթ. Գ. 23

կարաւտելոցն զենցուք. եւ մի՛ յագահու-
թենէ եւ յափշտակութենէ եւ յանիրաւու-
թենէ ընչից ժողովելոց յաստուածային ըն-
ծայսն մատուցուք. զի պիղծ են ամենայն
զրկողք եւ ինչք նոցա առաջի Աստուծոյ:
41 Բայց զայս ամենայն ըստ հաճոյիցն
Աստուծոյ արասցուք, որով Աստուած հա-
ճեսցի եւ ընկալցի, եւ թողութիւն մեղաց
արասցէ: 42 Սրբութեամբ եւ անմեղու-
թեամբ կացցուք, եւ փառաւք եւ պա-
տուաւք զերկինս ժառանգեսցուք, եւ խոս-
տացելոց բարեացն արժանաւորեսցուք հա-
սանել ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. ո-
րում վայելէ փառք եւ պատիւ այժմ եւ
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Է

ՎԱՍՆ ՓՈՒՈՅ ԵՒ ՎԱՇԽԻՑ

1 Յոյժ չար են ախտք ընչասիրու-
թեան, եւ անհնարին չար են քան զամե-
նայն փոխոցն տոկոսիք, որ հանապազ
հայհոյեալ բամբասի ի հին եւ ի նոր կտա-
կարանս. եւ պատուհասեալք պատժին չա-
րապէս խնդրողք վաշխիցն եւ փոխոցն՝ որ
ընդդէմ պատուիրանացն Աստուծոյ զար-
ծաթս իւրեանց ի վաշխու տան, եւ տոկո-
սեաւք անդէն պահանջեն, եւ անակնածելի
ուտեն զմարմինս տնանկաց, եւ ըմպեն
զարիւն նոցա անողորմ. եւ ոչ ունկնդիր
լինին Եգեկիէլի հոգելից մարգարէին՝ որ
ընդ մեծամեծ չարեաւք դնէ զփոխոցն տո-
կոսիսն, եւ ընդ կռապաշտիցն համեմատէ
պղծութեամբքն ասելով՝ եթէ ի կուռս
տունն Իսրայէլի պղծեցաւ, եւ վաշխ ու տո-
կոսիս պահանջեաց՝: 2 Եւ Մովսէս ասէ՝ թէ
Մի՛ տացես վաշխ ընկերի քում, զի անաւ-
րէնութիւն է առաջի Աստուծոյ՞. զոր եւ
արտաքս կացուցանէ յերկնային խորա-
նացն՝ որք վաշխ եւ տոկոսիս պահանջեն:
3 Իսկ որ զարծաթ իւր ի վաշխու ոչ տացէ,

եւ կաշառ ի վերայ իրաւանց ոչ առնու, նա
մի՛ սասանեսցի յաւիտեան: 4 Եւ միւս
մարգարէն ասէ. որ ի վերայ լեռանց զո-
հեալն ոչ եկեր, եւ զգրաւ պարտապանին
դարձոյց, եւ վաշխ եւ տոկոսիս ոչ պահան-
ջեաց, արդար է նա եւ կելով կեցցէ. իսկ որ
զվաշխ եւ տոկոսիս պահանջեն, դիմադարձ
են պատուիրանացն Աստուծոյ, եւ հակա-
ռակ Հոգւոյն հրամանացն. զի զարգե-
լեալսն ի Հոգւոյն հրամանացն չարաչար ի
կիր արկանեն անաւրէնութեամբք:

5 Եւ այնչափ անաւրէն են ախտ փո-
խոց տոկոսեաց, մինչեւ յամուլ արգանդէ
խնդրէ որդի բռնութեամբ, եւ յապառաժ
քարանց պտուղ որոնէ, եւ առանց սերման
կամի արդիւնս ժողովել, եւ յարուաց
ծնունդս պահանջել, եւ ի քարէ կաթն
կթել, եւ ի վիմաց ասր ստանալ. զթիւ ար-
ծաթոյն զոր տուեալն է՝ լիով ընդունի, եւ
առանց սերման ժտի արդիւնս ժողովել, եւ
լնուլ զտուն իւր անաւրէն ստացուածովք:
6 Ապա նստի խորհի նախ բազմացուցանել
զընչիցն առաւելութիւն, եւ ապա ընդ ան-
աւրէնութեանցն առնել ողորմութիւնս
տնանկաց եւ պատարագս հաշտութեան,
զոր յանդիմանէ Եսայի ասելով՝ թէ Որ մա-
տուցանէ ինձ զյափշտակեալն պատարագ,
այնպէս զագրալի է՝ որպէս թէ շուն ոք մոր-
թիցէ, եւ կամ թէ հարկանիցէ ոք զկառափն
մարդոյ՞: 7 Զի լաւ է աղքատաց անտես
լինել յողորմութենէ, քան թէ յափշտակու-
թենէ ընդունել ինչ: 8 Լաւ է քահանայից
ի սովոյ մեռանել, քան թէ յանարժանիցն
կերակրել: 9 Ոյր ուրուք, ասէ, զայլոյ ա-
ռեալ եւ այլուր բաշխիցէ, ոչ եթէ վարձս
ընկալցի, այլ պատիժս եւ տանջանս սաս-
տիկս. զի հուր այրիչ եւ սուր սատակիչ են
ծնունդք փոխոց: 10 Եւ որ յընչիցն անի-
րաւութեանց զԱստուած պաշտել համարի-
ցին, առաւել բարկացուցանէ. Պատուեա,
ասէ, զՏէր ի քոյ արդար վաստակոց, եւ

“ Եփ. ԺԲ 13
է ԲՕԳ. ԻԳ 19

‡ Ե. Կ. Զ 3

համ նմա պտուղ ի բոց արդարութեան արմտեաց^ա:

11 Մի՛ խորհիր զյափշտակութիւն ժողովել, եւ ապա առնել ողորմութիւնս վասն մեղաց թողութեան. զի ոչ երբէք հրով հուր շիջանի, եւ ոչ վիրաւք վէրք բժշկին, եւ ոչ մեղաւք մեղք սրբին, եւ կամ անաւրէնութեամբ անաւրէնութիւնք քաւին. քանզի յոյժ չար են վաշխիցն անաւրէնութիւնք, եւ որպէս երկունք յղեոյ են ժամադրութիւնք նոցա: 12 Եւ եթէ աղքատ եւս իցէ փոխապարտն, ի ծուփս եւ ի հոգս մաշի հանապազ. անքուն եւ դառնաքուն ի գիշերի ննջիւն նորա. տխուր եւ տրտում եւ մտայոյզ ի տուրնջեան շրջի, եւ ոչ գիտէ յո երթայ: 13 Երբեմն սուղ ինչ զպախրէն կամի վաճառել, զի հատուցէ զվաշխիցն տոկոսիս. եւ երբեմն զանաւրէն գողանալն ախորժէ՝ զոգիսն կորուսանել եւ դիմադարձ լինել Աստուծոյ վասն պահանջողի վաշխի փոխիցն. եւ երբեմն խորհի զաղտազնաց լինել ի տար աշխարհ: 14 Շրջի թափառական յաղազս պարտուցն բռնութեան, եւ ի բազում խորհրդոցն վարանիցի, եւ մտացն շփոթելոց զաղաւթն առ Աստուած մոռանայ. եւ յորժամ ձայն ոտիցն հարկանի, նա ի ներքս սրտաբեկ լինի յերկիւղէն. եւ թէ արտաքոյ տեսանէ փոխառուն զփոխատուն, փախչի եւ թաքչի իբրեւ ի տարակուսանաց աղէտիցն, եւ սիրտն թափեալ գդողի հարկանի, եւ կայ զլխարկեալ եւ լեզուակապ. եւ ամենելիմբ յերեսս նորա նայել ոչ իշխէ եւ ոչ համարձակի, զի տոկոսիքն վաշխիցն բազմացան ի վերայ նորա, եւ ոչ ինչ ունի հատուցանել եւ հաճել զփոխատուն:

15 Եւ արդ տես, ով պահանջողդ վաշխից, եթէ քանի տարակուսանաւք եւ ընդ վշտաւք զեղբայրն արկանես, եւ քեզ քանի կողկողանաց եւ աղէտից ետ պատճառք՝ դիմադարձդ Աստուծոյ եւ բազում մեղաց

պարտապան, արկանելով ի վերայ փոխոցն վաշխ, եւ վաշխիցն վաշխ, չար ծննդոց չար թողունս ծնուցանես. եւ այս են աւճք՝ ծնունդք իժից: 16 Իժից ծնունդք զորովայն մաւրն ծակեն ելանեն, եւ փոխոցն ծնունդք զոգիս վաշխաժողովացն պատառեն եւ սպանանեն, եւ դառն տանջանացն եւ ահեղ հրոյն պատրաստեն. զի դառն արուեստ եւ անաւրէն մշակութիւն ստացաւ, որ առանց երկրի տնկեալ յանդգնի եւ առանց սերման հնձել. որոյ սերմն ժանտ է, եւ հունձք չարաչարք, եւ մշակք անաւրէնք, եւ սատանայ սատարիչ, վարիչ եւ յորդորիչ անաւրէն հնձողաց զչար փոխոցն տոկոսիս: 17 Որ վառէ իբրեւ հրով անաւրէն վաշխիցն ցանկութեան, եւ հանապազ սուր եւ հուր ժողովէ յշտեմարանս, եւ չարաթոյն սատակիչս քան զաւճս եւ զիծս եւ ծնունդս քարբից ժողովէ ի տունս փոխոցն եւ տոկոսացն: 18 Եւ ոչ լուաւ զողբումն մարգարէին՝ որ թեւս որպէս զաղաւնոյ ըղձանայր հեռանալ ի քաղաքաց, վասն զի ոչ պակասեաց ի հրապարակաց նոցա վաշխ եւ նեղութիւնք. եւ ոչ զաղաչանս նորուն առ Աստուած, զի ի վաշխէ չարէ փրկեսցէ զանձինս նոցա. այլ զաչս խցեալս եւ զականջս կափուցեալս անդադար ժողովէ զվաշխիցն տոկոսիս:

19 Ո՛վ չար ախտի անաւրէն ստացող. յորմէ պարտ էր երկիւղիւ հեռանալ ի տոկոսեաց գթով, նա բազում ցանկութեամբ ընդ շահից վաշխիցն ընտանենայ, որ գուշն ապշեցուցանէ չհայել ի պատուիրանս Աստուծոյ. զսիրտն յիմարեցուցանէ չյիշել զաւր ահեղ դատաստանին. զմիտսն քարացուցանէ ի գութ կողկողեալ եղբաւրն խոնարհել. խնու զլսելիս եւ զտեսանելիս. յամալթոյ տեսողացն չամաչէ, այլ յանդգնեալ հոլանեալ ժողովէ եւ դանձ հուր յաւիտենական՝ ողւոյն թշուառա-

^ա Ըստ. Գ. 9

^բ Սաղմ. Ծ. Գ. 12

ցելոյ: 20 Եւ որպէս երկրագործքն յաղագս անձրեւաց աղաչեն եւ մաղթեն յԱստուծոյ վասն սերմանցն եւ լիութեանց աշխարհի, իսկ վաշխաժողովն կարաւտութիւն եւ տարակուսանս եւ սովս սաստիկս եւ հարկապահանջս աշխարհի ըղձանայ, զի ի գործ եւ ի շահ վաշխիցն ինչքն անկանիցին: 21 Ի ժամ փոխոցն տալոյ զուարթերես կեղծաւորի. եւ յորժամ ժամադրութիւն վաշխիցն հասանիցէ, տեսանելով զչքաւորութիւն եւ գտարակուսութիւն պարտապանին՝ ոչ ողորմի, եւ ոչ երզմանն հաւատայ մաղթողին, ոչ խոնարհի յաղաչանս վարանեցելոյն. այլ դժոխեալ անխոնարհելի եւ անհաշտ, եւ իւր ծառայ զփոխառուն համարի փոխատուն: 22 Քննէ եթէ զինչ ինչք նորա իցեն նմա արժանի. հետագաւտէ՝ թէ ուր տարեալ թագուցանէ. արտաքոյ զդուրս պահէ, ի մէջ բազմութեանն թշնամանէ, ի սիրելիսն ամաչեցուցանէ, ի հրապարակսն խեղդէ:

23 Չար պատահումն ի տուն, ի կեանս չար քան զմահ տեսանէ փոխապարտն. ատէ գաւուրն ժամադրութիւնս, երկնչի յամալթոյն, երեսքն խոնարհի տեսանել ի պահանջողն. աչքն պատրուակին իբրեւ շուն ըմբռնեալ ի տեղիս, ամալթովն աղափարի: 24 Տեսէք զողորմելի տեսումն. տեսէք զչար մեքենայսն սատանայի. տեսէք զանաւրէն շահան նզովից. զի մոլար ախտիւն անամալթացեալք զընչաւէտն աղքատացուցանեն, զաղքատն մերկացուցանեն, զմերկն խեղդեն, եւ յարտասուաց արծաթ ժողովեն եւ բերկրին ընդ անաւրէն շահիցն յաճախութեանցն: 25 Ո՛վ անաւրէն վաշխիցն չարեաց՝ որ է որոգայթ մահու ստացողաց, եւ ոչ իմանան. խեղդ է անձանց, կապանք հոգւոյն, առիթ գեհենին, առաջնորդ խաւարի, եւ պատրաստող ամենայն տանջանաց եւ յաւիտենական ամալթոյն:

26 Վասն որոյ բազում զգուշութեամբ փախիցուք յընչից տենչանաց. փախիցուք

ի չար ախտէն յայնմանէ. փախիցուք ի չարաժանի գազանէն. փախիցուք ի սատանայական մեքենայէն: 27 Զի վաշխ չար աւձին է վարդապետութեան. վաշխ գիւտք են դիւական. վաշխ թշնամոյն են սերմանք. վաշխ առհաւատչեայ է տանջանացն. վաշխ խափանիչ է բարեպաշտութեան. վաշխ ճանապարհ է գեհենին. վաշխ զրկումն է արքայութեան. վաշխ ամբոխումն է մարմնոյ եւ սատակիչ հոգւոյ եւ մերժումն ամենայն արդարութեանց: 28 Արդ փախիցուք յաստուածամարտ յախտէդ յայդմանէ, ի վարդապետէ խաւարէ, ի մարդասպան մաւրէ: 29 Աղաչեմ՝ մի՛ ախտացուք զհիւանդութիւնն զայն. եւ եթէ ի ներքս անկեալ իցեմք յախտն, արտաքս փախիցուք: 30 Իսկ որ նոքաւքն վարին չարաչար, արժանի են սգոյ եւ ողբալի արտասուաց. զի զոր աւրինակ սուր առեալ՝ եւ զինքն խոցոտիցէ, այսպիսի է չարութիւն ախտին, եւ բազում գլուխ ստացեալ ունի. ազահ է՝ սոյն եւ կռապաշտ առնէ. անամալթ է՝ սոյն եւ գազանամիտ առնէ. անագորոն է՝ սոյն եւ անողորմ առնէ. անիրաւ է՝ սոյն եւ յափշտակող առնէ. անձնասէր է՝ սոյն եւ քրիստոսատեաց առնէ հակառակ կամացն Աստուծոյ:

31 Եւ արդ զի՞նչ ասացից. չէ մարդն այն քրիստոնեայ՝ որ վաշխս ժողովէ անիրաւութեամբ. այլ բազին է այնպիսին սատանայի լի մարդագոհիւք, եւ գերեզման լի նեխեալ մեռելովք, եւ նմանեալ բորբոքեալ հրոյ գեհենոյն՝ որ զամենայն ինչ ծախէ, եւ երբէք ոչ յագենայ: 32 Զարհուրեացուք, սիրելիք, եթէ ո՛ւր երթեալ տարաւ զմեզ ընչիցն ցանկութիւն. զարհուրեացուք եւ բազում զգուշութեամբ զարմատն խլեացուք, զի մի՛ զարգացեալ ծայրիցն՝ զմեզ ի վայր դարահոսեցեն յանդունդս ի հուր գեհենին:

33 Եւ արդ զի՞նչ արասցուք, եւ կամ որո՞վ աւրինակաւ զչար արմատն խլես-

ցուք. զի իբրեւ ընդ աւճս եւ ընդ գազանս խաւսիմք, եւ ոչ ընդ քրիստոնեայս եւ ընդ քրիստոսասէրս՝ որ հնազանդին հրամանացն Աստուծոյ: 34 Պատերազմին բարբառեալ ասելով. եթէ ոչ դառնայ առ մեզ արծաթն վաշխաւ, ապա եւ ի տալոյ իսկ արգելումք զփոխն, եւ ոչ ողորմիմք եղբաւրն կողկողելոյ: 35 Այդ բարբառ անաւրէն եւ հակառակ կամացն Աստուծոյ. այդ բարբառ ծնունդ է սատանայական կամաց՝ որ յԱստուծոյ հեռացուցանէ. այդ բարբառ չար թշնամոյն է սերմանք, զի զձեզ ի ճշմարտութենէն մոլորեցուցէ. քանզի այդ իսկ են խորհուրդք չարին վարդապետութեան ընդդէմ պատուիրանացն Աստուծոյ: 36 Զի Քրիստոս ասաց. թէ տացէք փոխ այնմիկ՝ ուստի ակն ունիք անդրէն առնուլ զկշիռն, զայդ եւ մեղաւորքն առնեն. իսկ դուք, ասէ, Տուի փոխ այնցիկ՝ ուստի ակն ոչ ունիք առնուլ,՝ յորժամ զմիմեանց բեռն բառնայցեմք, եւ կատարեմք զաւրէնսն Քրիստոսի՝ որ ասէն, թէ ձեր առաւելութիւնդ եղիցի չփառացն կարաւտութիւն, զի եղիցի հաւասարութիւն երկուցունց: 37 Եւ արդ ի միտ առ, զի ոչ եթէ չափով ինչ հրամայէ ողորմել քեզ աղքատին, այլ քուս ընչաւէտութեանդ հաւասարել զչքաւորութիւն նորա. զի Աստուած եղբայր քո անուանեաց զաղքատն չքաւորն, եւ անդամ յանդամոց քոց. եւ քեզ չէ աւրէն զանդամս քո մերկ տեսանել եւ անտես առնել, եւ կամ զրկել ի բաժնէ ընչիցն. զի եղբայր քո կոչեցաւ:

38 Եւ արդ թէ եղբայր քո համարիս, մի՛ հեթանոսաբար անկուշներ ի պատուիրանաց Աստուծոյ. այլ կալ քրիստոնէաբար զհրամանսն Տեառն՝ որ ոչ զպակասութիւն աղքատին հրամայեաց լնուլ, այլ եւ առաւել եւս բազմաց: 39 Արդ զայս հրաման ունիս յԱստուծոյ, եւ դու զփոխն եւս կամ

տաս չարաչար վաշխիւ, եւ կամ փակես անաւրէն եւ անաստուածաբար: 40 Այլ անամաւթիս եւս ասել՝ եթէ փոխ առնուս. զայն քաջ սիրես, եթէ տամ մին՝ եւ երկուս առնում, քան եթէ ոչ տամ: 41 Իսկ նա զժամուն վարանսն կամի փարատել, եւ առնեղութեանն յակամայ առնու. բայց դու եթէ աստուածապաշտ ես՝ հայեաց ի պատուիրանս Աստուծոյ, զի ճրի իսկ հրամայեցաւ տալ տարակուսելոյն, եւ թափել ի պահանջողաց բռնութենէն. զի եւ դու ի թշնամոյն գերծանիցիս, որ հանապազ յաշխատութեան պահէ զքեզ՝ ժողովել եւ ապուել՝ եւ գանձել զայլոյ ինչս, եւ վայելել եւ ոչ երբէք. զի ոչ ակն տեսանելով յագի, եւ ոչ արծաթասէրն ժողովելով եւ առնով զայլոց: 42 Դժոխք են անձինք ապահաց, եւ ոչ երբէք շատանայ, եւ ոչ երբէք ասեն շատ:

43 Ընդէ՞ր տարածանիս. յաղագս է՞ր անաւրիներս, ով թշուառական. զի՞ ժողովես զանպտղութիւն արծաթոյն առիթ յաւիտեանական գեհենին: 44 Դիր դու առաջի աչացդ զՔրիստոսի դատաստանն. զի՞նչ պատասխանի տայցես՝ յորժամ զքեւ շուրջ գայցեն զրկեալքն ի վաշխից ամբաստանելով զքէն առ դատաւորին. զի՞նչ առնիցես, ով թշուառականդ, ի՞նչ աղաչեսցես: 45 Անդ ոչ աղաւթք, ոչ ինչք, ոչ մեծութիւնք. անապատ ես ի սիրելեաց, հեռի յաւգնականաց. առանց խաւսնակի, առանց պատասխանոյ. ամաչեցեալ, տրտում, տխուր, միայնացեալ, առանց համարձակութեան. զի ո՛ւր եւ ի շուրջ ածիցես զակն՝ յայտնապէս տեսցես չարեացն զպատկերս՝ զոր գործեալ իցես. աստի տեսանես զորբոցն արտասուսն, անտի զայլոյն հառաչանսն, այլուր զկուփեալն ի քէն զաղքատն, զժառայսն զոր չարչարեցեր, զղրացիսն զոր բարկացուցեր. ամենեքեան քեզ ի վերայ յարիցեն, եւ դժնդակ ի վերայ

« Ղ.Վ.Գ. 35
 Է Հմմտ. Ի Կ. Բ. 14:

1 Յայլում օրինակի՝ պահել

չարեաց քոց զհետ քո շրջիցին հանապազ-
 զի գոր աւրինակ շուք իւր անմեկնելի է ի
 մարդոյն, նոյնպէս եւ մեղքն անմեկնելի
 զհետ երթան զողոյն. յայտնապէս զկեր-
 պարանս բազմութեան մեղացն ցուցանէ
 ամենայն հրապարակին: 46 Վասն այնո-
 րիկ ոչ ոք կարէ ուրանալ անդ զչար գոր-
 ծոցն զպղծութիւնսն. այլ կապի լեզու չա-
 րախաւս, կարկի բերան անաւրէն. դողայ
 մարմին յանցաւոր, զի իւրաքանչիւր ու-
 րուք մեղք վկայեն զգործելեացն, ոչ բար-
 բառ ինչ արձակելով. այլ որպէս ի մէջ աւ-
 դեացն երեւի այծեացն սեւութիւնն, նոյն-
 պէս եւ մեղաւորացն անձինք խաւարա-
 զգեցեալք եւ պատեալք ի մէջ լուսազար-
 դեալ հրապարակացն երեւեսցին: 47 Եւ
 արդ ընդէ՞ր վասն ծփական կենցաղոյս եւ
 կորստական արծաթոյդ մատնիս աններելի
 տանջանաց եւ յաւիտենական ամալթոյն.
 ընդէ՞ր ոչ ուրանաս ի չար ախտէն ընչա-
 սիրութեան. ընդէ՞ր ոչ հեռանաս ի զթոց
 վաշխի շահիցն՝ որ զքեզ առաւել քան
 զանաւրէն դատապարտէ ի հուր ասեղ
 հնոցացն:

48 Այլ ասիցես. եթէ ցրեցից զընչիցն
 առաւելութիւնն՝ արհամարհիմ, աղքատա-
 նամ եւ կարաւտիմ. ո՞չ լուար մարգարէին
 որ ասէ, եթէ Ոչ տեսի զարդարն արհամար-
 հեալ, եւ ոչ զգաւակ նորա թէ մուրամայ
 հաց՞: 49 Այլ թէ եւ յաղքատանալն հա-
 սեր, քեզ լաւ է կողկողել եւ թափառել,
 շրջել եւ մուրանալ յողորմածաց, քան եթէ
 ի դառնութենէ անաւրէն վաշխիցն կերակ-
 րել: 50 Այլ ունիս ձեռս, ունիս ոտս, ունիս
 արուեստս. գործեա, վարձեա, սպասաւոր-
 րեա, եւ ուտես: 51 Յորով հնարք են մարմ-
 նոյդ դարմանոյդ, եթէ կամիս վաստակել:
 52 Զի եթէ մըջիմն չնչին ինչ գեռուն է՝
 զինքն կարէ կերակրել, եւ մեղուքն
 զնշխարս իւրեանց կերակուր թագաւորաց
 ընձեռեն, որք ոչ ձեռս եւ ոչ գործիս ա-

րուեստից ունին ստացեալ. իսկ քեզ ես
 Աստուած ձեռս եւ գործիս եւ միտս ամե-
 նահնարս, անմեղութեամբ հաւասարեա
 զանունդ կենցաղոյս: 53 Եւ արդ զո՞ր գի-
 տես պատասխանատրութիւն յաղագս քո-
 յոյ ուղղութեանդ, որում հրամայեցաւ
 գործել եւ տալ ում պիտոյ իցէ. դու եւ ան-
 ձին քում ոչ ես բաւական: 54 Եւ մատնիս
 ասեղ աղէտիցն յաղագս փոխոյն վաշխիցն՝
 որ հանդերձ մարմնով եւ հոգով զքեզ
 արկանեն ի հրացան ի հնոց տանջանաց,
 ուր է լալ անդադար եւ կրճտել զատա-
 մունս, յորմէ զմեզ փրկեսցէ շնորհք եւ ո-
 ղորմութիւն Հոգւոյն Սրբոյ. որում փառք
 եւ զաւրութիւն յաւիտեանս յաւիտենից.
 ամէն:

Ը

ՅԱՂԱԳՍ ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ ԱՂՔԱ-
 ՏՍՑ

1 Զո՞ր ասացից, եւ կամ զո՞ր պատմե-
 ցից, եւ կամ զո՞ր թողեալ արհամարհեցից.
 եւ գոր ոչն կարծեմ կարեւոր՝ այն զլեզու
 իմ շարժէ, եւ զհոյս ի խորհուրդս իմ ժո-
 դովէ: 2 Եւ քանզի կարեւոր տեսանեմ
 զմիտս ճառիս, կամաւ եւ ես խաւսեցայց
 եւ պատմեցից զնեղելոցն զվհատութիւնս,
 զչքաւորացն զչարչարանս յիմարութիւն
 անաւրէնութեան, մինչեւ առ յոյժ ան-
 մտութեան յԱստուած եւս հայհոյութիւն
 առնել. եւ կոչեն զնա աչառող եւ ակնա-
 ուռ մեծատանց ընչասիրաց: 3 Ասեն. Աս-
 տուած զմեծատունս սիրէ, եւ նոցուն աչա-
 ռի, եւ զվաստակս նոցա յաջողէ, եւ ոչ հա-
 յի ի զրկանս տառապելոցն, այլ արհամար-
 հեալ անտես առնէ: 4 Այսպիսի անաւրէն
 բարբառովն ուրանան զճշմարտութիւնն
 եւ զարդարութիւնն Աստուծոյ, եւ զստու-
 զագործութիւնն նորա կարծեցուցանեն
 անաւրէնութեան գործակից. եւ այսու ա-
 ռաքեն հայհոյութիւն ի բարձունս, եւ
 խաւսին զԱստուծոյ անիրաւութիւն. այսու
 ի ճշմարտութենէն Աստուծոյ ուրանան, եւ

« Սաղմ. Լ.Չ. 25

յանդուներս հերձուածողացն ընկղմին: 5 Զի զճճարտութիւն արդարութեանն Աստուծոյ ոչ հրեայն կարէ ուրանալ եւ ոչ հեթանոսն. զոր հայհոյողն ամպարչտեալ ուրանայ, եւ զարթուցանէ զսաստիկ սրտմտութիւնն Աստուծոյ ի վերայ ոգւոցն կորուսելոց:

6 Եւ արդ է՞ր խաւսիս զԱստուծոյ անիրաւութիւն, ով չքաւորդ եւ աղքատացեալդ. մի՛թէ զքեզ զրկեա՞ց ինչ Աստուած յիւրոցն. ո՞չ ապաքէն մեծատանց եւ աղքատաց միապէս բարժանեաց իբրեւ եղբարց՝ աչս ամենեցուն զնոյն, ձեռս եւ ոտս զնոյն. յարեգակնէ եւ յաւուրոյ եւ յանձրեւաց առհասարակ վայելեմք. ամենեքան յերկրէ եւ յԱդամայ. ամենեցուն մի մկրտութիւն եւ մի շնորհք եւ մի մարմին եւ մի արիւն Քրիստոսի. ամենեցուն մի երկիր եւ մի երկիրք եւ մի հիւթ ամենայն: 7 Ահա այս են աստուծոյքն զոր շնորհեաց հասարակաց՝ աղքատաց եւ հզաւրաց: 8 Արդ ի՞նչ զրկեաց զքեզ, եւ եղեւ աչառող մեծատանց: 9 Այլ գիտեմ եթէ ոչ ինչ ունիս ասել առ այս. բայց ասես, իսկ ուստի՞ է սմա մեծութիւն: 10 Ի միտ առ. ոչ եթէ զնա տարաւ Աստուած, եւ եցոյց ինչս բազումս եւ ետ նմա, եւ զքեզ զրկեաց. այլ ոմանց յագահութենէ եւ յափշտակութենէ է մեծութիւն, եւ ոմանց յանդոյլ վաստակոց, եւ ոմանց ի հայրենի ժառանգութենէ:

11 Իսկ ընդ այն զի՞ ես տրտմեալ դու, որ յանընչութեանդ ես եւ յանհոգութեան, ի հանդարտութեան եւ ի խաղաղութեան, դիւրաւ եւ սակաւու վարես՝ զկարեւոր պէտս մարմնոյդ: 12 Իսկ մեծատանցն դժուարաւ յաւրինին ճաշք եւ ընթրիք, եւ լի բազում հոգովք են վայելք նոցա. եւ մանաւանդ եթէ ի սպանութենէ եւ ի զրկանաց եւս իցեն կերակուրքն՝ խղճիւն հանապազ հաշին եւ մաշին, եւ վասն բազում աղբոյ որովայնին բազում մրրիկք երկիւ-

ղիւ պատեն զմիտս նոցա. եւ կարածմեռն յամենայն կողմանց կայ ի վերայ նոցա, կասկած ի գողոց, եւ երկիւղ յաւազակաց. արհաւիրք ի զրպարտողաց, տագնապ ի հարկահանաց, մախանք ի նախանձողաց, չարախաւսութիւնք ի թշնամեաց, նենգութիւնք եւ վարանք յամենայն կողմանց. զի ամենեցուն ի նա բացեալ են զբերանս իբրեւ զվիշապաց, եւ կամին կլանել: 13 Ահա առաւել են մեծատանց հոգք եւ տրտմութիւնք քան զհանգիստ եւ զուրախութիւն: 14 Եւ ո՞ւր իսկ է մեծատանց ուրախութիւնն յորժամ հանապազ զերկնից անձրեւս խնդրեն, զգառնաշունչ ձմերունս հոգան, զգաշտաց դարմանս հոգան, զգազանաբեկ հաւտիցն հոգան, ի հինիցն դողան, ընդ խաշնամահն տրտմին, վասն գանձուցն սկեն, ի պակասելն հալին. ուր եւ ցեց իսկ տիրէ ի վերայ մեծատանց, եւ երկեղուկս արկանէ: 15 Զի՞նչ եւս ասացից վասն ահեղ աւուրն զարհաւիրս եւ զգառն ողբումն տանջանացն, որ եւ աստէն իսկ յահէ պատուիրանացն սարսափէ եւ սոսկայ հանապազ՝ յորժամ ընթերցուածք մարգարէիցն եւ առաքելոցն յանդիմանեալ կշտամբիցեն զանողորմ եւ զագահ մեծատունս:

16 Արդ ո՞ւր է խնդութիւն մեծատանց, եւ կամ ո՞ւր մխիթարութիւն՝ որում չքաւորդ բաղձաս եւ ցանկաս, եւ ընդ հեշտական եւ ընդ խաղաղական կեանսդ քո տրտմիս, եւ եղկելի եւ թշուառական զքեզ համարիս, եւ զբազմապատիկ իմաստութիւնդ քո արհամարհես: 17 Զի ոչ երկիւղ ի գողոց է քեզ, եւ ոչ կասկած յաւազակաց. ոչ հոգաս վասն դաշտաց դալարոյ, եւ ոչ վասն լերանց արաւտոյ. ոչ երկնչիս ի հովուաց նենգութենէ, եւ ոչ ի գազանացն յափշտակութենէ. ոչ սարսես ի բռնաւորացն բռնութենէ, եւ ոչ ի գրաւահարկէ իշխանացն. ոչ նախանձոտքն նախանձին ընդ քեզ, եւ ոչ զրպարտողքն զրպարտեն. ոչ երկիւղ է քեզ յուժեքէ, եւ

1 Յայլում օրինակի՝ վնարես

ոչ խռովութիւն. ոչ ահ իշխանացն կարէ զարհուրեցուցանել զաղքատն, եւ ոչ սաստ տերանց. ոչ հանել ոք կարէ յաղքատէն, եւ ոչ խռովել եւ սաստել: 18 Մեծատունք խռովեալք եւ աղմկեալք, եւ աղքատն ծաղր առնէ զնոքաւք. իշխանք ամբարտաւանեալք զայրագնին ի վերայ ընչեղացն, եւ աղքատն յոչ ինչ համարի զնոսա. երկիր լի գողովք եւ աւագակաւք, եւ աղքատն աներկիւղ է ի նոցանէ. հրապարակք լի զրպարտողաւք եւ բռնաւորաւք, եւ աղքատն անհոգ է ի նոցանէ. դատաւորք զայլացեալք եւ գազանացեալք, եւ աղքատն անլլուկ է ի նոցանէ. զի վասն անընչեղութեանն ի բազում խաղաղութեան եւ յանհոգութեան են կեանք աղքատին, ազատ յամենայնէ եւ անկասկած յամենեցունց, աննախանձ եւ անքինահան, եւ անմեղ ի բազում ախտից: 19 Ոչ պէտս ունի բազում շինուածոց. ոչ պէտք են նմա փականք աղխից. ոչ տրտմութիւն է ի հիւանդութեան աղքատին, եւ ոչ խռովութիւն եւ աղմուկ ի մահուն. այլ ի բազում անհոգութեան են կեանք աղքատաց, եւ անզբաղ հանգիստ նոցա: 20 Այս ամենայն ազատութիւնք աստ:

21 Իսկ զանտի մեծութիւն եւ զփափկութիւն եւ զանանց բարութեանցն զվայելչութիւնսն զոր պատրաստեալ է անդ չքաւորութեանն համբերութեան՝ ո՞ր բերան բաւական է պատմել. զի քան զամենայն վայելչութիւնս թագաւորաց աշխարհիս ցանկալի է եւ փափագելի: 22 Եթէ միայն առանց տրտնջելոյ աղքատութեանն համբերիցէ, թեթեւ եւ անհոգաբար անցանէ ընդ կեանս աշխարհիս. զի խնդրէ գաւուրն միայն զկերակուրն՝ զոր բազում ցանկութեամբ զարհամարհն իբրեւ զքաղցրահամ ախորժելով ճաշակէ, եւ ննջէ անհոգաբար: 23 Իսկ մեծատանցն զմայլելոց եւ ոչ անոյշքն թուին ախորժելիք, այլ անպիտոյք եւ տաղտկալիք: 24 Մտանեն նոքա մեծագին գինեաւն,

թմբրին եւ յիմարին. իսկ աղքատն դիւրագին ջրովն զնոյն պէտս ծարաւոյն վճարէ, եւ զգաստ եւ առողջ քան զարբեցողն գտանի:

25 Եւ արդ ընդ է՞ր եղկելի եւ թշուառական զքեզ համարիս. զի զկեանս անհոգս եւ հեշտականս, եւ կերակուրս անոյշս եւ ախորժելիս զաղքատին տեսանեմք քան զմեծատանցն. զի սուրբ են յամենայն նենգութենէ, եւ յագահաց խռովանաց վայելք նոցա: 26 Իսկ մեծատանցն փափկութիւնք նախ այն է՝ զի անսուրբ է եւ անպարկեշտ, եւ լի ամենայն պղծութեամբ շուսյտութիւնք նոցա. եւ ապա զի ի յափշտակութենէ եւ ի զրկանաց ժողովեալ անաւրէնութեամբ եւ ագահութեամբ: 27 Այլ եւ ի բազմաց քրտանց յաւրինին սեղանք նոցա. բազում երկիւղիւ, եւ սակաւ վայելումն. ազգի ազգի հոգք, եւ սակաւ ինչ հանգիստ, եւ այն բազում ինչ կասկածանաւք. զի սակաւ է կարաւտութիւն քաղցելոյ աղքատին, եւ հեշտ հանգիստ քնոյ նորա: 28 Իսկ մեծատունն չեւ ելեալ ի մահիճսն, անդէն պատեն շուրջ զնովաւ խորհուրդք նորա իբրեւ զթշնամիս եւ զպատերազմողս, հոգք տանն եւ ծառայիցն, երկիւղ գողոց եւ զրպարտողաց, նենգութիւն դրացեացն եւ իշխանացն. եւ ամենայն ծուփք մեծութեան պատեալ պաշարեն զնա՝ թէ որով հնարիւք զինչս անեցուցանել մարթասցուք: 29 Ահա դառն են մահիճք մեծատան ագահի, եւ ամենայն ուրեք տրտմութիւն ի վերայ տրտմութեանց յաւելուն. զի տեսանէ վնաս եւ սխալումն ի տանն եւ տրտմի. տեսանէ սխալումն յանդին եւ տրտմի. տեսանէ սխալումն ի խաչինս եւ տրտմի, եւ ամենայն ուրեք իբրեւ ալիք յալեաց առնուն հոգք եւ տրտմութիւնք: 30 Իսկ զանտի տանջանացն եւ զհրոյ գեհնոյն զի՞նչ ասացից եւ կամ զի՞նչ պատմեցից, զոր պատրաստեալ է մեծատանց ագահաց եւ անողորմից:

31 Եւ արդ, դու աղքատդ եւ չքաւորդ, ընդէ՞ր նեղիս եւ տրտմիս եւ տագնապիս ընդ նաւահանգիստն անընչութեանդ, եւ խնդրես այնպիսի մրրիկս եւ ալէկոծութիւնս մեծութեան. ո՞չ է մեծ քեզ զի անհոգ ես ի գիշերի, եւ անհոգ ի տուրնջեան. անհոգ ի տան, եւ անհոգ ի հրապարակս. աներկիւղ ի ճանապարհի, եւ աներկիւղ յաւթեմանի. անկասկած ի բռնաւորաց, եւ անակնածելի յամենայն զրպարտողաց. եւ մանաւանդ եթէ համբերութեամբ եւս ի փոքր ժամանակիս փորձանաց եւ աղքատութեանդ տանիցիս: 32 Զի մեծ է բաշխել զինչս իւր աղքատաց, այլ մեծագոյն եւս է զանձն աղքատացուցանել խոնարհութեամբ, եւ գոհանալ զԱստուծոյ: 33 Զայս եւ Տէրն գովէ. Երանի է, ասէ, աղիատաց հոգւով, զի նոցա է արքայութիւնն երկնից՝: 34 Զի եթէ չար ինչ էր աղքատութիւնն, եւ ոչ Քրիստոս յամենայնի զաղքատութիւնն ընտրէր. զի նմա մարթ էր ի թագաւորական քաղաքի երեւել, եւ ի դստերաց թագաւորաց յղանալ, եւ յապարանս թագաւորաց ծնանել: 35 Այլ նա յաղքատ ի կուսէ երեւեցաւ, եւ ի գժուձ քաղաքի ծնաւ, որ ոչ տուն եւ տեղի աւթեմանի գտանէր, այլ աւտարանոց քարաքուր, ուր ոչ մահիճք, եւ ոչ որորան գտանէր. այլ ի քարանձաւ մտուրս հանգուցանէր զՏէրն ամենայն արարածոց, եւ ի հիւսան խղի սնանէր, եւ գետնագնաց ճանապարհորդէր. եւ այնչափ իջաւ ի խոնարհութիւն՝ մինչեւ զոտս աշակերտացն լուանալ ծառայական կերպարանաւք: 36 Եւ այսու աւրինակաւ ամենեքան որ կամեցան յերկինս մեծանալ, զաղքատութիւն եւ զխոնարհութիւն ընտրեցին:

37 Իսկ դու ընդէ՞ր դողաս յաղքատութեանդ, որով յերկինս վայելես անհոգաբար, եւ զերկնից անբաւ բարութիւնսն ժառանգես փոխանակ ընդ սուղ ինչ աղքատութեանդ:

տութեանդ: 38 Քանզի կրկին նեղութիւնք եւ հեշտութիւնք մարդոյ, մինն աստ, եւ մինն ի հանդերձելումն. զի կամ զյաւիտեանական զանանց բարութիւնսն ժառանգեսցես, կամ զաստի անցաւորն. կամ ի մշտնջենաւորսն է աղքատանալ եւ նեղել, եւ կամ ի սուղ ինչ ժամանակիս. կամ աստ է սգալ եւ լալ, եւ կամ անդ. կամ աստ համբերել նեղութեանց եւ տանել, կամ անդ: 39 Որպէս Եղիա մարգարէն աստ նեղեցաւ եւ աղքատացաւ, եւ յերկինս մեծաւ փառաւք փառաւորեցաւ. նոյնպէս եւ Յովհաննէս Մկրտիչն աստ աղքատացաւ, քաղցեաւ եւ ծարաւեցաւ, եւ յերկինս զանբաւ բարութիւնսն ժառանգեաց. սոյնպէս ամենայն մարգարէքն եւ առաքեալքն անցաւոր նեղութեամբք զանբաւ կենացն զվայելչութիւնսն ստացան: 40 Այլ եւ հարքն մեր առաջինք զաղքատութեան կեանս ընտրեցին. քանզի գիտէին եթէ յոյժ դժուարաւ է մեծութեամբ աշխարհիս գերկնից մեծութիւնսն ժառանգել, եւ ոչ անցաւոր փափկութեամբս զանանց փափկութիւնսն վայելել. քանզի ասէ՝ թէ դժուարաւ է առն փափկասիրի գերեսս Քրիստոսի տեսանել, եւ մեծատանն յարքայութիւնն Աստուծոյ մտանել՝. այլ նեղելոց եւ աշխատելոց է անտի հանգիստն, եւ կարաւտելոց է արքայութիւնն: 41 Որք աստ իբրեւ ի բանդի են յաղքատութեանն, նոցա ի բաց է դուռն արքայութեանն: 42 Զի ոչ Աստուած անիրաւ է՝ եթէ ի բանդէ տառապանաց հանէ զնեղեալսն եւ զտառապեալսն, եւ ի բանդ դժոխոց արկանէ. այլ ի սնտի կենացս հանէ, եւ յանսպառ ուրախութիւնսն հանգուցանէ: 43 Եթէ միայն գոհութեամբ աղքատութեանն տանիցին, բազում մեծութիւնք համբարեալ կան յերկինս, եւ անբաւ ուրախութիւնք:

44 Եւ արդ ո՞ր է ուրախութեան պակասութիւն անընչիդ եւ աղքատիդ՝ որ

*** Մատթ. Ե 3

‡ Հմմտ. Մատթ. Ժ 23:

Հայհոգութիւնն ի բարձունս առաքես, եւ խաւսիս զԱստուծոյ անիրաւութիւնն: 45 Այլ ասիցես, թէ յընչիցն բազմութենէ ողորմութիւնս բազումս բաշխէ մեծատունն: 46 Այլ եւ ողորմութիւնք աղքատին առաւել զարմանալի է եւ ընդունելի քան զմեծատանն: 47 Զի յորժամ սիրով ոք զտառապեալն տեսանիցէ, եւ ի սակաւ ընչիցն իւրոց՝ տառապելոցն բաշխիցէ եւ ջամբիցէ, եւ զքաղցեալս կերակրիցէ, զանցուցանէ զտուրս իւր քան զբազում մեծատանց. քանզի ոչ եթէ ի չափս տրոցն նայի Աստուած, այլ ի կամս տալեացն. եւ ընդունի զսակաւն իբրեւ զմեծ:

48 Այլ եթէ ինչս ոչ ունիցիս՝ որով եւ զկարաւտեալսն մխիթարեսցես, տունս ունիս՝ յորում զաւտարսն Հանգուցանես. ունիս ջուր, զոր ծարաւելոցն արբուցանես. ունիս գութ եւ ողորմութիւնս, որով լաս եւ Հեծես ի վերայ վշտագնելոցն եւ ախտացելոցն ախտաժետաց. զի ողորմութիւն մեծ է քան զընչիցն բաշխումն: 49 Այլ նախանձիցես, եթէ պատարագս եւ պտուղս Հանէ մեծատունն ի մեծութենէն: 50 Առաւել եւ յայսմ մարթ է աղքատին զանցուցանել զմեծատամբն: 51 Մատո զանձն քո պատարագ Աստուծոյ խոնարհութեամբ եւ անմեղութեամբ. Պատարագս Աստուծոյ այս է, հոգի խոնարհ: 52 Եւ այս մեծ է քան զողջակէզս խոյոց եւ զուարակաց. զի մարգարէն զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ անուանէ պատարագ ընդունելի եւ Հաճոյ Աստուծոյ: 53 Երեք մանկունքն զանձինս եւ զհոգիս մատուցին պատարագ Աստուծոյ: 54 Եւ եթէ ընդ պտուղս կալոյ կամ Հնծանի մեծատանն նախանձիցիս, ¹որ մեծ է քան զամենայն բարեգործութիւնս, քան զպատարագս եւ զողորմութիւնս եւ քան զպահոց պնդութիւնս՝ պտուղս Աստուծոյ

Հանել յարմտեաց իւրեանց ի կալոյ եւ Հնծանէ. որով հոտոտի Աստուած ի հոտ անուշից, եւ աւրհնէ Աստուած զտունս եւ զվաստակս նորա: 55 Եւ տուն յորմէ պտուղք աւրհնութեան ոչ ելանեն յեկեղեցիս եւ ի քահանայս եւ ի սպասաւորս եկեղեցեաց, աստուածային աւրհնութիւնն ոչ մտանէ ի տուն յայն, եւ ոչ ի վաստակս նոցա, եւ Հանապազ ի նուազութեան լինի տունն այն: 56 Վասն այսորիկ պատուրեաց Աստուած Մովսէսի՝ եթէ Զառաքինս արմտեաց քոց ինձ տացես, զանդրամիկս հաւտից քոց, զարջառոյ եւ գոշխարի ինձ նուիրիցես. զի յամենայն յոր ինչ միսիցես գնեմն քո, անեցուցից եւ բազմացուցից: 57 Նոյնպէս եւ Սողոմոն ասէ. Պատուեա զՏէր ի քոց արդար վաստակոց, եւ համ մա պտուղ ի քոց արդարութեան արմտեաց. ասէ. Լցցիմ շտեմարանմ քո ցորենոյ, եւ զիմույ հնծամմ քո առաւել բղխեսցեն: 58 Արդ եթէ ինչք չկան քո, ով չբաւորդ, եւ // Հան եւ դու պտուղ ի քոց անդամոց. քանզի յաչաց պտուղ է՝ կուրին առաջնորդել եւ Հանել ի դիւր. յոտից պտուղ է՝ կաղին ցուպ մտանել, եւ զհարկ ոտիցն նորա հարկանել. ի ձեռաց պտուղ է՝ անդամալուծին առաջնորդել, եւ գաւսացելոյն աւգնել. ի լեզուէ պտուղ է՝ զմոլորեալն ուսուցանել, զտրտմեալն սփոփել. ի լսելեաց պտուղ է՝ լսել վազվազակի եղբաւրն հրամանի, եւ խոնարհութեամբ կամաց նորա Հնազանդել:

59 Արդ զայս ամենայն ողորմութիւն առանց ոսկւոյ ամենեցուն մարթ է բաշխել, եւ վարձս առաւել ընդունել քան յընչիցն ողորմութենէն: 60 Արդ զի՞նչ ունիս ասել, զի եւ պատարագք եւ պտուղք եւ ողորմութիւնք աղքատացն դիւրաւ եւ ընդունելի է քան զմեծատանցն: 61 Վասն ո-

¹ Սաղմ. ԾԸ 19
1 Զմիջանկեալ հատուածոյ՝ որ մեծ է ... ով չբաւորդ, եւ // չունիմն այլ՝

է Հմմտ. ԲՕ ր. ԺԲ 6-7:
զ Լուսն. Գ 9
Կ Լուսն. Գ 10

րոյ բազում ժուժկալուծեամբ համբերեցէք նեղութեանց, եւ գոհութեամբ ընկալալուք: 62 Ապա եթէ տրտմիջիք եւ հայհոյիցէք, ընդունելոց էք չար վարձուց հատուցումն. քանզի անսուտ է որ ասէն՝ եթէ են ոմանք որ աստ տանջին եւ անդ. զի աստ աղքատութեամբ նեղին, եւ վասն տրտնջելոյն յարդար դատաւորէն յանդիմանեալ կշտամբին, եւ հալին եւ մաշին ի հուր գեհենին. որպէս սողոմայեցիքն որք աստ տանջեցան, եւ անդ տանջելոց են: 63 Որոց մի՛ լիցի մեզ անկանել յայն տեղի տանջանացն եւ դատապարտութեան: 64 Այլ զմեզս ապաշխարեսցուք, զաղքատութիւն սիրեսցուք, նեղութեան համբերեսցուք, զվշտաց գոհացուք, յանընչութեան փառաւորեսցուք, բազում առաքինութեամբ գերկինս ժառանգեսցուք եւ յանբաւ բարութեանցն վայելչութիւնսն վայելեսցուք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որում փառք եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Թ՝

ԹՈՒՂԹ ՎԱՍՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՏԵՍՁՈՒԹԵԱՆ Ի ՎԵՐԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ

1 Ես լի անթիւ յանցանաւք եւ ունայն ի վարուց առաքինութենէ, թափուր ի բարեաց, եւ սոսկ յարդարութենէ, որ յամենայն ժամ յաւելում մեզս ի վերայ մեղաց, որ սպանանէ զիս չարաչար: 2 Եւ արդ ո՞վ ոք միգապատեալ բազում յանցանաւք եւ խաւարագգեաց վարիւք անաւրէնութեան զայլս լուսաւորել ժպրհիցի, եւ կամ հիւանդացեալն մեղաւք զայլս առողջացուցանել մարթասցէ: 3 Մեծ յանդգնութիւն է ծանրացելոցն ի մեղաց՝ ժտել զայլս թեթեւացուցանել, եւ անկելոցն ի մտաց՝ ախորժել ալոցն լինելով վարդապետ. եւ կամ զիա՞րդ մոլեալն անաւրէնութեամբ առաջնորդել ալոց բաւիցէ: 4 Այլ վասն զի սէրն աստուածային եւ յանհնարս հնարի, եւ ժտի յաղագս փրկութեան, եւ ջանայ

ընդ նեղ եւ ընդ նուրբ ծերպս մտանել առ ի շահ եւ յաւգուտս լսողաց. հայել յաստուածային բանին գաւրութիւնն, երթ դարձո գեղբայրն քո՝ զի քաւեսցին մեղքքո. զի որ ջանայ, ասէ, դարձուցանել զոգի մոլորեալ, զբազմութիւն մեղաց իւրոց փառատէ՞. եւ որ հանէ զպատուականն յանարգէն, բերան Աստուծոյ կոչեսցի: 5 Զի մեծ շահ եւ աւգուտ եւ կարեւոր՝ ջանալ եւ խնդրել զընկերացն փրկութիւն:

6 Եւ արդ աւասիկ հովիւք հաւտից եւ առաջնորդք եկեղեցւոյ՝ ցանկի հաւտիդ, տեսանէք զսատանայ հանդիսացեալ, եւ գՔրիստոս թշնամանեալ, եւ գեկեղեցւոյ փարախդ արհամարհեալ, եւ զհետ գայլոց ընթացեալ. եւ հովիւք հաւտիդ լուեալ դադարէք, եւ ոչ անդադար բողոքէք զպատուէրս պատուիրանացն յամենեցուն լսելիս: 7 Զաւրքդ ի տագնապի են ի մէջ թշնամեաց, եւ զաւրավարդ անկեալ ննջես. նաւդ ի ծփանս եւ ի մէջ ալեացդ ալէկոծեալ, եւ նաւապետդ անկեալ կաս անհոգաբար. գազանք մտեալ զայգիդ ապականեն, եւ այգեգործդ տեսանես եւ անտես առնես յարածամ. գողք մտեալ շուրջանակի զանկիւնսդ փորեն, եւ պահապանդ ի քունն ես եւ խորդաս. ժողովուրդքդ կարեւիւք են ի վէրս, եւ բժիշկդ չէ ի միջի. խաշինք զայլափատնեալ ցրուեցան ընդ խորխորատս, եւ յառապարս դարահոսեալք, եւ յանխնայ կոտորեն գայլք եւ գազանք, եւ թռչունք մահաբերք գէշ գէշ պատառեն, եւ անկեալ կան տարատարափ, եւ հովիւքդ ոչ երեւին: 8 Ո՞չ զարհուրիք յահեղ հովուապետէն՝ որ ասէ, թէ Դատեցայց ոչխար առ ոչխար, եւ խոյ առ խոյ՞. եւ դարձեալ մարգարէիւն ամբաստանէ զքահանայիցն ասելով, եթէ՛ Քահանայք անարգեցին զաւրէնս իմ. զի զսուրբն ի պղծոյն ոչ ընտրեցին, եւ զարատաւորսն յանարատէն

՝ շմբ. Թ. 19-20:

՝ Ե. 17

նչ գատուցինք^բ. այլ զկաթնն ուտեն, եւ գասրն զգեմուն, եւ զխաշինս իմ ոչ արածեն, զտկարացեալսն ոչ գաւրացուցանեն, զհիւանդացեալսն ոչ բժշկենք^գ. հովիւք էք՝ զանձինս արածէք, եւ ոչ գոչխարսք^դ. եւ ցանեցից, ասէ, զապաւառ տաւնից ընդ երեսս ձերք^ե: 9 եւ արդ բարձից զձեզ նոբաւք, եւ առաքեցից ի վերայ ձեր անէծս, եւ անիծեցից զաւրհնութիւնս ձեր, եւ նզովեցից զձեզ փոխանակ զի ոչ եղիք ի սրտի ձերում երկնչել յինէն, եւ յերեսաց իմոց ոչ խորշեցէք^զ:

10 Արդ տես զի այսպիսի անէծք եւ սպառնալիք են յԱստուծոյ ի վերայ քահանայից հեղգացելոց. եւ դու երկիր յահեղ սպառնալեացն Աստուծոյ, եւ մի՛ ինչ հեղգար ի տեսչութենէ Հոգեւոր Հաւտիդ, այլ զցայգ եւ զցերեկ անդադար վաստակել վասն նոցա փրկութեան եւ քոյոյ սրբութեան: 11 Յիշեա զփոյթն Մովսէսի եւ Ահարոնի եւ զՍամուէլի, զի եւ նոքա դորին Հաւտի էին առաջնորդք: 12 Յիշեա եւ զփոյթն Պաւղոսի եւ Պետրոսի, եւ նոքա դորին Հաւտի էին առաջնորդք: 13 Յիշեա եւ զփոյթ սրբոցն որ յետ նոցա, զի եւ նոքա դորին Հաւտի էին առաջնորդք, որք հրով եւ սրով եւ զանազան չարչարանաւք չարչարեցան վասն Հաւտին տեսչութեան, եւ գանիւք եւ բանդիւք եւ բազում կտտանաւք ելին յաշխարհէս վասն մեծ սիրոյն Աստուծոյ եւ ջերմագութ Հաւտին տեսչութեան: 14 Որ եւ ձեզ ըստ նմին նմանութեան ամենայն քահանայից եւ վարդապետաց պարտ է հանապազ ի սոյն վաստակել. եւ մանաւանդ որ ինքնակամ կամաւք ստացաւ զվերակացութիւն, զոր գովելի է՝ թէ ոչ ի պատճառս ինչ կենաց անձինն ի-

մացաւ, եւ զաւրացաւ ի հոգւոյն մտանել ի գործ մշակութեան վասն բազմաց փրկութեան: 15 Զի արժանաւորացն եւ պատուիրանապահացն գովելի է հոգեւորապէս ցանկալ վերակացութեան յաղագս առաւել սիրոյն Աստուծոյ. որպէս ցՊետրոս ասէր. եթէ սիրես զիս առաւել քան զդոսս, արածեա գոչխարս իմք. եւ Պաւղոս ասէ. Որ վերակացութեան ցանկայ, բարի գործոյ ցանկայք. եւ ոչ չարի: 16 Այլ ուսցին եւ մերքն բարեաց գործոց վերակացու լինել, զի մի՛ անպտուղ լինիցինք^զ. զի այն է բարի եւ աւգտակար մարդկան: 17 Զի քան զարեգակն ճառագայթիւք լուսաւորեալ՝ առաւել եւս մեծ է զմոլորութիւն մեղացն փրատել:

18 Այս է կարեւոր Աստուծոյ, եւ առաւել քան զամենայն առաքինութիւնս. վասն այսորիկ ասէ՝ թէ երիցումք կրկին պատուոյ արժանի եղիցին, եւ մանաւանդ որ վաստակեցին բանիւ եւ վարդապետութեամբք: 19 Զի մեծ եւ անհանգիստ է ջան քահանայութեան, եւ շահաւոր շնորհք վարդապետութեան. բժիշկ հոգւոց է քահանայն եւ գործակից գործոցն Աստուծոյ: 20 Աստուած արար զմարդն կամաւ ի բարի եւ ի չար, եւ քահանայն զկամս ուղղեալ՝ զարդարէ գործովք առաքինութեամբ. Աստուած զբնութիւնն ստեղծ, եւ նա աստուածածանութեամբն՝ լուսաւորէ, եւ հեռացուցանէ յամենայն սատանայական խաբէութենէ, եւ մերժեալ փարատէ զմէզ մոլորութեան եւ զխաւարն անգիտութեան. եւ ծանուցանէ զարարիչն արարածոց, եւ պարզելիչ ամենայն բարութեանց, եւ լիութիւն ծովու եւ ցամաքի. եւ լուսաւորեալ ճշմարիտ հաւատովք, եւ ու-

բ Եղեկ. ԻԲ՝ 26
 գ Եղեկ. ԼԳ՝ 3
 դ Հմմտ. Եղեկ. ԻԳ՝ 8:
 է Մատ. Բ՝ 3
 զ Հմմտ. Մատ. Բ՝ 2:

է Հմմտ. Յով. ԻԸ՝ 15, 17:
 զ ԸՏԷ՝ Գ՝ 1
 բ Տէր. Գ՝ 14
 գ ԸՏԷ՝ Ե՝ 17
 1 Այլ օրինակք՝ աստուածածանութեամբն

զիզ վարիւք առաքինութեան, եւ առաջնորդէ աստուածասիրացն յառաքինութիւնս եւ յուրախութիւնս: 21 Վասն որոյ եւ բազում պատուաւք պատուին, եւ լուսաւոր պսակաւք պայծառանան:

22 Եւ արդ ամենայն որ ունի զվերակացութիւն քահանայութեան, պարտ է ջան մեծ եւ վաստակ անհանգիստ ցուցանել վասն հաւտին փրկութեան. զի եթէ Յակովբ վասն անբան ոչխարացն ի պարզոյ ցրտանայր, եւ ի տոթոյ տապանայր, եւ քուն յաչացն մերժէր, ո՞րչափ եւս առաւել քեզ պարտ է բանաւոր հաւտիդ վաստակել եւ տքնել անդադար միշտ, եւ դողալ եւ հոգալ հանապազ, եւ ջերմագուլթ գորովով առաւել քան զհայր գթած եւ քան զմայր մատաղածին խնամել եւ սիրել, եւ խնդրել ոգւոցն նոցա փրկութիւն, եւ հանապազ ուսուցանել բանիւ վարդապետութեամբ, եւ որ առանձինն եւ որ ի մէջ ժողովրդոց: 23 Եւ զոր բանիւք ոք ուսուցանէ, նախ գործովք պարտ է կատարել. զի չէ ինչ շահաւոր բան առանց գործոց. Սկսաւ Յիսուս առնել, եւ ապա ուսուցանել.՝ եւ Որ արասցէ ինքն եւ ուսուցէ այլոց, նա մեծ կոչեսցի յարքայութեանն երկնիցք:

24 Ի միտ առ, զի ճրագունք ի լուցելոյ ճրագէ լուսաւորին, եւ ոչ ի խաւարելոցն. եւ ժողովուրդք ի ձեռն սրբոցն սրբին, եւ ոչ յաղտեղացելոցն մեղաւք. զի քահանայն իբրեւ ակն ի մարմնի է ի մէջ ժողովրդոց, եւ պարտ է զամենեքումբք նայել եւ յարդարել եւ մաքրել զամենայն աղտեղութիւնս մեղաց: 25 Իբրեւ ճրագ է ի վերայ աշտանակի, եւ պարտ է զխաւարն թանճրամած փարատել, եւ զամենայն տունս լուսաւորել: 26 Եւ դէտ է եւ պահապան, եւ պարտ է հանապազ բողոքել, զի մի՛ կեկալ թշնամին սրով մեղացն վիրաւո-

րէ, եւ արիւն սպանելոցն ի ձեռաց քոց խնդրեսցի: 27 Բժիշկ եւ վիրաւորելոցն ի սատանայէ. հանապազ լուա եւ պատեա եւ յարդարեա: 28 Աղ եւ համեմիչ. սրբեա զամենայն նեխութիւն մեղաց: 29 Աղբիւր եւ փրկութեան. զամենեսեան լուա եւ մաքրեա ի չարեաց: 30 Հովիւ եւ հաւտից. զգոյշ լեր ի գայլոց: 31 Առաջնորդ եւ ժողովրդոց. դիտեա ո՛րպէս առաջնորդես. ահա համարք կան եւ պատիժք եւ ճշդիւքնութիւն:

32 Քահանայ, զգոյշ լեր երկիւղիւ. զի չէ ինչ ընդվայր զմարդն ստեղծեալ, եւ ոչ ի կամս են կեանք աշխարհիս. խնդիրք են յածող աչաց, քննինք են անպարկեշտ լսողաց, պատիժք դատարկ բանից, եւ պահանջումն անդէպ խորհրդոց: 33 Զի եթէ ասել գեղբայրն յիմար կամ մորոս՝ դատապարտէ, զի՞նչ եւս այլ մթերք մեղաց մեծից գործիցեն. եւ եթէ ակնարկելն պոռնկութիւն գործիցէ, ո՞րչափ եւս առաւել գործն այրիցէ. եթէ երզնուլն ի սատանայէ է, ո՞րչափ եւս առաւել որ սուտ երզնուցուն. եւ եթէ ամբոխելն եւ աղաղակելն վնաս գործէ, ո՞րչափ եւս առաւել յիս պահելն տանջիցէ ի գեհենին. եւ եթէ ցանկանալն ապականէ, ո՞րչափ եւս առաւել եթէ զգործն ցանկութեանն կատարիցեմք. եւ եթէ չարակնելն չարամահ սատակէ, ո՞րչափ եւս առաւել նախանձն եւ սխալն. եւ եթէ զիւր ինչս չբաշխելն դատապարտէ, ո՞րչափ եւս առաւել որ զայլսն զրկիցէ. եւ եթէ զխոտանն մատուցանել Աստուծոյ՝ նզովս իբրեւ զկայէնն ընդունի, ո՞րչափ եւս առաւել որ ի զրկանացն մատուցանէ. եթէ գաղտ գեղբաւրէն խաւսելն վնասէ, ո՞րչափ եւս առաւել քսսելն նենգութեամբ. եւ եթէ որ զընկերն բամբասէ՝ ի հուր առաքի, ո՞րչափ եւս առաւել որ զքահանայն եւ զվարդապետն բամբասեն. եւ եթէ պա-

՝ Գործ. Ը 1

՞ Մարք. Ե 19

Հարանք եւ սիրենկոնք¹ ի կռապաշտութիւն տանին, ո՞րչափ եւս առաւել յուռութք եւ հմայք դիւականք. եւ եթէ սգալն վասն մեռելոց հեթանոսութիւն է, ո՞րչափ եւս առաւել կոծել եւ փետել. եւ եթէ որք լկտին եւ ծիծաղին՝ որպէս գործմն ի հուր արկանին, ո՞րչափ եւս առաւել որք ի թատերան ընթանան. եւ եթէ առտնին զարդարելն չէ գովելի, ո՞րչափ եւս առաւել որ ի տեսիլս հրապարակին պճնիցի. եւ եթէ զրկելն ի սեղանն դատապարտէ, ո՞րչափ եւս առաւել խորելն եւ գողանալն յեղբաւրէն. եւ եթէ յամել ի գինւոջն պատուհասէ, ո՞րչափ եւս առաւել շուայտութեամբ զեղխեալսն եւ զորկորստութեամբ արբեալսն, զոր հին եւ նոր պատուիրանք պատուհասեն:

34 Եւ արդ տես, զի այս ամենայն եւ որ ինչ նման է սոցին՝ ի տանջանսն դատապարտեն զգործելիսն: 35 Եւ դու որ վերակացուդ ես եկեղեցւոյ՝ եթէ ծուլասցես ինչ, եւ ոչ զգուշանայցես զայս ամենայն ճշդիւ խրատել եւ քննել, գիտեա՛ զի արիւն կորուսելոյն ի ձեռաց քոց խնդրեսցի՞: 36 Եւ եթէ անձին տանջանաց ոչ ոք կարէ հանդարտել, ո՞րչափ եւս առաւել այնքան ոգւոցն լինել պարտապան. յո՞ր խաւար երթայցէ, եւ կամ քանի՞ գետք հրահոսք իցեն նմա բաւական, եւ քանի՞ գուբք խաւարայինք: 37 Այլ զգոյշ լեր, հանապազ բողոքեա, աղաղակեա անդադար, քննեա եւ լուր զամենայն. կարդա փութով եւ խրատեա. զոմանս սաստիւ, զոմանս աղերսիւ, զոմանս փափագելի արքայութեանն փափկութեամբն յորդորեա. զոմանս չար ահեղ տանջանացն երկիւղիւն հիացո. զոմանս ի մէջ եկեղեցւոյ խրատեա, զի այլքն ուսցին. զոմանս առանձինն յանդիմանեա, զի մի՛ ի բազմաց ամալթոյն ուրացեալք՝

զյանդիմանութիւն արհամարհիցեն. եւ եթէ արհամարհիցեն իսկ, դու մի՛ աղաղակաւ հակառակիցիս, զի ծառայի տեառն չէ պարտ հակառակող լինել, այլ հեզ առ ամենեսին, զի թերեւս տացէ մնա ապաշխարութիւն:

38 Բայց դու մի՛ մեծարու ինչ զքեզ համարիցիս. այլ արհամարհեա զփառս աշխարհիս. անարգեա զսուտակասպասացն զգովութիւնն. յիշեա զպատուհասն զՀերովդէի՛ որ զգովութիւնն ընկալաւ: 39 Յաղագս որոյ եւ դու մի՛ ինչ անձինդ շուք դնիցես, եւ մի՛ պատիւ ինչ քեզ որոներ. այլ պաշտեալ զամենեսեան սպասաւոր լեր ամենեցուն, ծառայ զքեզ անուանեա: 40 Յիշեա եւ զծառայելն Քրիստոսի, զղենջակին սիածանիւն, զՂուրն ի կոնքն արկանելն եւ լուանալ զոտս աշակերտացն, ոչ մարդ գմարդոյ, այլ Աստուած գմարդոյ. որ է ճշմարիտ խոստովանութիւն եւ խոնարհութիւն եւ սերտ ծառայութիւն. Ոչ եկն պաշտաւն առնուլ, այլ պաշտել: 41 Այս է քո վարդապետն, եւ ոչ հեծեալքն եւ մեծարեալքն: 42 Արդ դու նմա լեր նմանող, եւ հաւտք քո քեզ նմանն. որպէս եւ Պաւղոս ասէ. նմանողք եղբրուք ինձ, որպէս եւ ես Քրիստոսի: 43 Ահա դու նոյն ինքն Պաւղոս ես՝ որ քարոզես, եւ նոյն ժողովուրդդ որ ուսուցանես. եւ ահա մարդ էր քո նմանող ի Կիւլիկեա գաւառէ ի Տարսոն անուն քաղաքէ. եւ չունէր ինչ աւելի քան զքեզ, բայց միայն զյաւժարութիւն եւ զվաստակն որով զշնորհս Հոգւոյն Սրբոյ ընկալաւ. որ եւ քեզ չէ ինչ արգել, այլ միայն յաւժարել եւ վաստակել, եւ զշնորհս Հոգւոյն Սրբոյ ստանալ:

44 Արդ մի՛ ինչ պատճառեր, եւ ընդ այս եւ ընդ այն ինչ բաղբաղեր. բայց միայն արթուն լեր աղաւթից եւ փոյթ վարդապետութեան. ըստ նմանութեանն

1 Այսպէս յորինակին. այլ օրինակսն չի՛ք ամբողջ յողուածն:
 * Հմայք. Լուգ. Գ. 18:

է Մատթ. Ի 28
 զ Լուգ. ԺԷ 1

Պաւղոսի ընդ հիւանդան հիւանդացիք, ի մեղուցելոյն վերայ ողբա, ընդ գայթակղեալսն տրտմեա, գտկարացեալսն զաւրացո, եւ ցոյց զջան նոցա, հատ զծով եւ զցամաք վասն նոցա: 45 Ի վաստակս մի՛ վհատիր, յամաւթոյ մի՛ լքանիր, ի բանից մի՛ ակնածեր. այլ թէ եւ սովամահ եւ ծարաւահատ եւս հասանէ լինել վասն նոցա փրկութեան, ընկալ խնդութեամբ: 46 Զի ոչ որկորստութեամբ ոք եղեւ մարգարէ, եւ ոչ արբեցութեամբ առաքեալ. այլ նեղեալք եւ չարչարեալք յամենայն ցանկութեանց. որ եւ քեզ պարտ է լինել նմանող քաջացն եւ առաքինեաց, եւ ոչ գայլացելոցն հովուաց՝ որք անուամբ միայն են հովիւք, եւ ի հաւատսն գազանաբար յարձակին եւ գայլաբար կոտորեն եւ ցրուեն եւ կորուսանեն. եւ ոչ զհոգս ինչ հոգւոցն հոգան, եւ ոչ ընդ մեղացն նոցա վարանին: 47 Ոչ խնդիրք են գողոցն, եւ ոչ համարք պոռնկացելոցն. ոչ քննումն բամբասողացն, եւ ոչ փոյթ է զարբեցելոցն ինչ. ոչ դիւթական հմայիցն են պատժողք, եւ ոչ յուսթոցն պահանջողք. ոչ դիւական թատերացն են անարգիչք, եւ ոչ հեթանոսական լալեացն են խափանիչք. ոչ զնախանձոտն յանդիմանեն, եւ ոչ զոխապահսն թշնամանեն. ոչ վասն չարեաց ինչ սաստեն, եւ ոչ վասն հեղգութեանց ինչ պատուհասեն. ոչ յողորմութիւն զոք յորդորեն, եւ ոչ յաղաթս փութացուցանեն, եւ ոչ ամենեւին զոք վասն ուղղութեան տրտմեցուցանեն: 48 Այլ զամենայն փոյթ ի մարմնաւորսն եւեթ ցուցանեն. իբրեւ պատճառանս ինչ կենաց իմն աշխարհիս ստանան զքահանայութիւնն, յաղագս մարմնոյ հեշտութեան, վասն ուտելոյ եւ ըմպելոյ, եւ գիւտոյ ընչից, յաղագս պատուի եւ գահերիցութեան եւ սատանայական սնափառութեան: 49 Վասն որոյ ոչ որբոյն ողորմին, եւ ոչ յայրին խնայեն. այլ պատժովք մոլտս խնդրեն, եւ պատուհասիւք ինչս ժողովեն յանուն եկեղեցւոյն. բռնութեամբ

վարին, եւ իշխանութեամբ հրամայեն, եւ քահանայական ինչ ոչ երեւին. եւ ոչ գողտրոսին երբէք ածեն զմտաւ՝ թէ Արածեցէ՛ք որ ի ձեզ հաւտ է յԱստուծոյ, վերակացու լինել մի՛ իբրեւ ակամայ, այլ կամաւ ըստ Աստուծոյ. մի՛ զաւշափաղութեամբ, այլ յաւժարութեամբ. մի՛ իբրեւ տիրելով ի վերայ հաւտին, այլ լինել աւրինակ գործոց բարութեանց՝: 50 Զի ի ժողովրդոցն, ասէ, թէպէտ եւ բիւր անգամ անկանիցին, կարեն հասանել ներելոյ եւ թողութեան. իսկ վարդապետ ոք եթէ զնոյն ախտ ախտանայցէ ի ժողովրդեանն, յամենայն պատասխանելոյ զրկեալ գտանիցի, եւ զվերջին պատժոցն տացէ գտոկոսիս. զի կարի դժուարաւ է ապրել առաջնորդացն մեղուցելոց:

51 Վասն որոյ եւ դու հովիւդ հաւատարիմ, լուր առաքելական հրամանին, եւ մի՛ նմանիր պղծոցն եւ կորուսելոցն զորս հուրն այրելոց է. որք զանուն միայն հովուացն ունին, եւ զյափշտակութիւն գայլոցն յափշտակեն. ընդ որս համարս տալոց են չարաչարս, զի ուսուցեն եւ խրատեսցեն ըստ հաճոյիցն Աստուծոյ: 52 Այլ ի կամս անձանց իւրեանց շրջելով՝ անկան կերակուր չարաժանի գազանին՝ որ կարեւիւր վիրաւորէ, եւ չարաչար սպանանէ: 53 Յիշեա եւ զՀեղի. թէպէտ եւ վարս անարատս ունէր, այլ քանզի զաւրէնսն Աստուծոյ տեսանէր եւ անտես առնէր, անհնարին վրիժուց պատճեցաւ: 54 Այլ դու միշտ խրատեա, եւ վաստակեա անդադար վասն հաւտիդ փրկութեան, զի եւ հովիւդ ապրեսցիս ի պատժոց պատուհասից: 55 Ի միտ առ՝ զի եւ զգազանակերն եւ զգողահանն տուժին ի հովուացն, եւ զդրոշմն եւ զմորթ մեռելոյն ճշդիւ պահանջեն, եւ զհամար շաղղակեր անդամոցն խնդրեն. եւ որ ոչ զամենայն հաւատեալ ի մէջ բերիցէ եւ վկայիւք հաւատարմացուցէ, սաս-

*** Լ՝ Պէ. Կ. 2-3

տիկ պատժոց լինի պատժապարտ, եւ լի բազում ամաւթով մերժի ի հաւտէն: 56 Եւ արդ եթէ վասն անբան ոչխարացն այնպիսի խնդիրք եւ պատիժք պահանջին, ո՞րչափ եւս առաւել վասն հոգւոցն կենդանեաց, ընդ որոց եւ Քրիստոս մեռաւ, ահեղ համարս ի քահանայիցն պահանջիցէ: 57 Թերեւս սակաւիկ ինչ ծուլասցեն վասն բանաւոր հաւտին տեսչութեան. վասն զի ճշդիւ են համարք եւ անհնարին են տանջանք, որք առաջնորդութիւն ստանան եւ ոչ առաջնորդեն:

58 Տես թէ քանի՞ մահուց պարտապան է գաւրավարն ի թագաւորէն՝ թէ զգաւրան առեալ յապրեցուցանել, եւ ի ծուլութենէ ի սուր մատնեցէ. եւ կամ դէտ՝ որ ոչ զգուշացոյց, ո՞չ ապաքէն ամենայն արիւն սպանելոցն ի ձեռաց դիտին պահանջեսցի: 59 Եւ որք առնուն աւանդ ի թագաւորաց, եւ սակաւ ինչ անտի կորիցէ, սաստիկ պատժաւք պատուհասին: 60 Տես եւ զծառայիցն զպատիժս որք յարքունեացն վնասեսցեն. հայեա եւ ընդ պահապանս հաւտից, զի փոսս փորեն եւ կարս ձգեն եւ դամբարս դնեն, եւ շունք շուրջ զհաւտիւն շրջին՝ զի մի՛ գազանաբեկ լինիցին. եւ եթէ սակաւ ինչ ծուլասցին եւ քնոյ գանձինս տայցեն, գայլք եւ գողք դարանակալք մտեալ ի հաւտիցն յափշտակեն եւ ցրուեն եւ վիրաւորեն: 61 Եւ արդ տես ո՞րչափ եւս առաւել է մարդ քան զոչխար. եւ եթէ անբան ոչխարացն նոյնքան պիտոյ է զգուշութիւն յերեւելի գայլոցն յափշտակութենէ, քանի՞ եւս զգուշալի պահպանութիւն ոգւոց մարդկան պիտոյ իցէ յաներեւոյթ նետից սատանայի, որ գումար հասեալ կայ ի վերայ, եւ պատեալ պաշարէ զամենեսան վարմիւք եւ ցանցիւք, եւ յածի շրջի զամենեքումբք, եւ նետս իբրեւ յամպս տեղէ ի խորհուրդս մարդկան, յոմանս ազահութիւն, յոմանս ալլազրկութիւն, յոմանս պոռնկութեամբ, յոմանս շնութեամբ, յոմանս գողութեամբ, յոմանս

ատելութեամբ, յոմանս սպանութեամբ, յոմանս նախանձու, յոմանս ռիսակալութեամբ, յոմանս բամբասանաց, յոմանս բարկութեամբ, յոմանս նենգութեամբ, յոմանս մեղմեխանաց, յոմանս չարակնութեան, յոմանս չարաբանութեան, յոմանս դեղատուութեան, յոմանս վաճառաց զրկութեան, յոմանս վաշխաժողովութեան, յոմանս չափոց եւ կշռոց նենգութեան, յոմանս դիւթոց եւ յուռթաց եւ դիւթութեան, յոմանս թատերասիրութեան, յոմանս պճնողութեան, յոմանս սատանայական սգոյ տրտմութեան, յոմանս անյուսուութեան, յոմանս անհնազանդութեան, յոմանս անժուժկալութեան, յոմանս անհաւատութեան, յոմանս սնափառութեան, յոմանս ձանձրութեան, յոմանս մոռացութեան, յոմանս ստութեան, յոմանս հայհոյութեան, յոմանս քինահանութեան, յոմանս երդմնակերութեան, յոմանս ստախաւսութեան, յոմանս որկորստութեան եւ արբեցութեան եւ ամենայն զաւշաքաղութեան եւ ամբարտաւանութեան եւ ամբարհաւաճութեան եւ պղծութեան, եւ այլ եւս ախտից բազմութեան՝ զոր եկեալ հոսէ սատանայ ի սիրտս ամենեցուն, եւ կարեւիչը վիրաւորէ, եւ չարամահ սպանանէ:

62 Եւ քո զայս ամենայն տեսեալ անտե՞ս առնես եւ անփոյթ, եւ հեղգաս եւ ոչ լաս եւ ոչ ողբաս զայնչափ վիրաց բազմութիւն: 63 Սարսեա եւ սոսկա յահեղ բեմբէն երկիւղէ, թէ որո՞վ աչաւք եւ երեսաւք զՏէրն փառաց տեսանիցես. եւ քանի՞ գլուխք պատժոց եւ պատուհասից են բաւական վասն քոյոյ ծուլութեան: 64 Այլ երկիր ի հովուապետէն, զարթիր ի ծուլութենէդ, եւ առ զնախանձն Փենեհէցի. խոցեա զսատանայ եւ զդեւս, վիրաւորեա զնոսա Սուրբ Հոգւովն. հալածեա զբնակիչս բանսարկուին. ցրեա զգաւրս սատանայի. խորտակեա զաղեղունս չարին, եւ դարձո զնետս ի նոսա. բարբառեա զբանս վարդապետութեան, եւ արա հաւտի քում

զեղ ողորմութեան՝ ծերոց, արանց եւ կանանց, ծառայից եւ տերանց, հիւանդաց ախտացելոց. եւ մի՛ ինչ ամենեւին դանդաղեր եւ դատարկանար, այլ անդադար վարդապետեա: 65 Դէտ ես, աղաղակեա. տեսուչ ես, յանձանձեա. առաջնորդ ես, յեկեղեցի հետեւեա. հովիւ ես, յուղիղ հաւատս արածեա. բժիշկ ես, զվէրս մեղացն բժշկեա. նաւապետ ես, զնաւդ զերծո յալէկոծութենէդ: 66 Աւանդ ստացար, եւ համար ունիս տալ՝ թէ եւ սուղ ինչ հեղգայցես: 67 Այլ երկիր ի հովուապետէն, եւ խնդրեա զբանաւոր հաւտս քո զկորուսեալն, եւ զամենեսեան ժողովեա. պարսպեա խրատու վարդապետութեան. զթշնամիսն ընդ Աստուծոյ հաշտեցո. զվարավատնեալսն ի սատանայէ միաւորեա. զհեռացեալսն յեկեղեցւոյ մերձեցո. զվեհեռոտսն յաղաւթից ի փոյթ յորդորեա. զկորուսեալսն ի ճշմարտութենէ խնդրեա. զմոլորեալսն յարդարութիւն դարձո. զհիւանդացեալսն յախտից թշնամոյ բժշկեա. զվիրաւորեալսն ի սատանայէ առողջացո. զզլորեալսն անաւրէնութեամբ՝ կանգնեա. զխաւարեալսն անգիտութեամբ՝ լուսաւորեա. զաւտարացեալսն ի պատուիրանացն Աստուծոյ ընտանեցո. զաղտեղեալսն կռպաշտութեամբ՝ լուսաւորեա. զմեղուցեալսն ապաշխարութեամբ արդարացո. զքաղցեալսն ի մարմնոյն Քրիստոսի կերակրեա. զծարակեալսն արեամբն Քրիստոսի արբո: 68 Եւ զամենեսեան արժանաւորս արա ի վերին քաղաքն մտանել այսպիսի գործովք առաքինութեան. ի վարս պարկեշտս յորդորեա. ի հաւատս ուղղափառս զաւրացո. զխոնարհութիւն եւ զհեզութիւն հրամայեա. զպատուիրանապահութիւն եւ զաւրէնս Տեառն կատարել ուսո, զսրբութիւն սրտի եւ զճշմարտութիւն լեզուի, ի ցածութիւն աչաց եւ ի պարկեշտութիւն մարմնոյ. ի ժուժկալութիւն եւ ի համբերութիւն յորդորեա. ի պնդութիւն պահոց եւ ի յաւժարութիւն աղաւթից եւ

յառաւելութիւն ողորմութեան ամենեցուն պատուիրեա: 69 Զի այսպէս ամենայնիւ կատարեալք եւ սրբեալք եւ լուսաւորեալք կացէք առաջի Քրիստոսի ընդունել զանթառամ փառաց պսակն: 70 Որում եւ զմեզ արժանիս արասցէ վայելեալ, եւ փառս տալ Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ժ
ՅԱՂԱԳՍ ԲԱՄԲԱՍՈՂԱՅ ԵՒ ԶԴԱՏԵ-
ԼՈՅ ԶՎԱՐԴԱՊԵՏՍՆ

1 Մթերք հոգոց եւ աղջամուղջք տրտմութեան դիզեալ ի վերայ իմ կուտի հանապազ. զի ախտք չար եւ ահեղ անաւրէնութիւնք մտեալ յեկեղեցի իբրեւ զհուր ի վեր բորբոքեալ, զամենեսեան առ հասարակ այրէ, եւ ի միտս մեր փոքր կարծեցուցանէ սատանայ, որպէս Մարիամայ ետ բամբասել զՄովսէս ծառայ Աստուծոյ, եւ ի միտս նորա փոքր կարծեցուցանէր սատանայ, զի մի՛ ի զղումն եկեացէ. եւ վասն այսորիկ ընկալաւ զպատիժս պատուհասիցն: 2 Այլ որպէս Քամայն ետ բամբասել զմերկութիւն Նոյի հաւր իւրոյ, եւ ի միտս նորա փոքր կարծեցուցանէր, մինչեւ ընկալաւ զանէծան ծառայութեան, սոյն հուր եւ այժմ մտեալ յեկեղեցի՝ առ հասարակ զամենեսեան այրէ եւ կորուսանէ, սոյնպէս եւ որոգայթիւք. զի մինն շնայ, եւ մինն բամբասէ, եւ երկոքեանն հաւասար անաւրինին. մինն գողանայ, եւ միւսն բամբասէ, եւ միապէս պատուհասին. մինն արբենայ, եւ միւսն զարբեցողն բամբասէ, եւ համանման դատապարտին: 3 Եւ ամենայն իսկ զամենայն բնութիւն մեղացն մինն գործէ, եւ միւսն բամբասէ, եւ միահաւասար դատին եւ տանջին. քանզի ոչ եթէ զգողանալն եւ զշնալն առաւել եւս անաւրէնութիւն ցուցանէ Պաւղոս քան զբամբասելն եւ զարբենալն, այլ միապէս չարութիւն է. միահաւասար զերկոցունցն ելանելն յարքայութենէն միով բանիւ նշանակեալ ասէ՝

եթէ Ոչ գողի եւ ոչ պոռնիկի եւ ոչ արբեցողի եւ ոչ բամբասողի գարբայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն^ա:

4 Եւ արդ ահա ելից սատանայ զբերանս ամենեցուն անաւրէն արտիւն բամբասանաց, եւ հանապազ անդադար բորբոքին լեզուք ամենեցունց յեղբաւրն բամբասանս եւ ի հայհոյութիւնս: 5 Աներկիւղ եւ անկասկածելի իմն տեսանեմ զանձինս որք զանաւրէնութիւնս զայս գործեն, եւ ոչ փութան լուանալ եւ սրբել ապաշխարութեամբ իբրեւ զգողութեան եւ զպոռնկութեան զչարութիւնս: 6 Զի եթէ գարշիս ի շնութենէ, գարշեա եւ ի բամբասանաց. զի եթէ չար է շնութիւն, հաւասար առնէ եւ զբամբասողութիւնն: 7 Այլ առաքեալն աւրէնստոյց առաւել եւս ցուցանէ զբամբասանացն անաւրէնութիւնսն ասելովն՝ եթէ Ամեմայն որ բամբասէ զեղբայր իւր, զաւրեմնս բամբասէ եւ զաւրեմնս դատի^բ: 8 Եւ ո՞ր քան զայն անաւրէնութիւնք իցեն, որ աւրինացն Աստուծոյ ոչ առնելի է, այլ Տէր եւ դատիչ լինի: 9 Մի է, ասէ, արեմսդ իր եւ դատաւոր, որ փրկէ եւ կեցուցանէ եւ կորուսանէ^գ. դու զի՞ դատիս զայլոյ ծառայ: 10 Եւ արդ տես թէ քանի՛ մահուց պարտապան է՝ որ զպատիւ եւ զիշխանութիւն թագաւորին յափշտակէ, եւ զդատաւորի դատաստան դատիցի ինքն. զի նա ասէ. Իմ են վրէժխնդրութիւնք, եւ ես հատուցից՝ ասէ Տէր^դ: 11 Դու զի՞ դատիս զեղբայր քո, կամ զի՞ անգոսնես զեղբայր քո^ե:

12 Եւ արդ դու դատեալդ եւ դատապարտեալդ մեղաւք, ո՞չ սոսկաս եւ դողաս դատել զայլոյ դատաստան. որ ոչ եթէ զմարդ ոք արհամարհեցեր եւ թշնամանե-

ցեր, այլ զԱստուած. եւ զպատիւ եւ զիշխանութիւն նորա յափշտակեալ դատիս զդատաստան նորա, չյիշելով զբանս սուրբ աւետարանին որ ասէ՝ թէ Մի՛ դատիք, զի մի՛ դատիքիք. զի որով դատաստանաւ դատիք, նովին դատելոց էֆ՝ ասէ: 13 Սրբոց է դատել, եւ անարատից է յանդիմանել. եւ զայն առանձինն եւ աղաչանաւք, եւ ոչ հրապարակաւ զմեղս ուրուք յանդիմանել, եւ կամ զաղտ ի նմանէն ի լսելիս ուրուք բամբասել: 14 Եւ են մեղք ահեղք եւ անաւրէնութիւնք. զի ով ոք ի խեղութեան ինչ իցէ եւ զայլս խեղութեամբ թշնամանէ, ո՞չ ապաքեն յառաջ քան զնա զինքն թշնամանիցէ: 15 Այլ եւ զի ինքն իսկ թէ եւ բիւր չարիք ստացեալ ունի, ծածկեալ խաղաղէ. եւ զեղբայրն թէ եւ սուղ ինչ յանցանիցէ, սահի, շրջի, եւ յամենեցուն լսելիս արկանէ, եւ լինի դառն դահիճ եւ քննիչ չարաչար եղբաւրն յանցանացն: 16 Յիւրում ականն գերան կայ եւ ծածկէ, եւ զշիւղ ական եղբաւրն որոնէ. զոր եւ Քրիստոս ոչ միայն մեղաւոր ասէ, այլ եւ կեղծաւոր եւս կոչէ. Կեղծաւոր, ասէ, համնախ զգերանդ յակամէ քումմէ, եւ ապա մատիցես համել զշիւղ յակամէ եղբաւր քո^ե:

17 Եւ արդ ո՞վ իցէ քան զնա անամալթագոյն, որ զիւր մեղաց սխալանս ինչ գիտիցէ, եւ զայն անփոյթ արարեալ հետաքրքիր եղբաւրն յանցանացն լինիցի, բամբասել ի բազմաց լսելիս: 18 Եւ զայն ոչ իմացալ՝ թէ որով ինչ յանցանաւք զեղբայրն բամբասիցէ, նովին մեղաց տանջանաւքն եւ ինքն պատուհասի: 19 Եւ հանապազ անդադար բողոքին լեզուք ամենեցունց յեղբաւրն բամբասանս. զի գտանջանս ամենայն մեղացն զոր գործեացն՝ է պատրաստեալ զնոյն տանջանս եւ բամբասողացն հաւասար: 20 Եւ արդ ընդէ՞ր այդպիսի տանջանաւք դատապարտիցիս,

^ա Ե Կ Գ Թ Թ 10
^բ Յ Կ Գ Թ 11
^գ Յ Կ Գ Թ 12
^դ Բ Օ Թ Լ Բ 35, Հ Կ Գ Թ Ե Թ Թ Ժ 30:
^ե Հ Կ Գ Թ Ժ 10:

^ա Մ Կ Գ Թ Լ 1
^բ Մ Կ Գ Թ Լ 5

եւ կամ զի՞նչ ի բամբասանացդ աւգտեցար. զո՞ր ցանկութիւն կամաց քոց կատարեցեր, եւ կամ զո՞ր յաճախութիւն ընչից չահեցար. քաղցո՞ւ ինչ միտիթարութիւն ստացար ի բամբասանացդ, եթէ մերկութեան ինչ ծածկոյթ: 21 Ոչ այլ ինչ աւելի գտանես, բայց միայն զսոսկ զսատանայ տեսանես զմիտս բամբասողացն՝ որ հանապազ լցեալ յղացեալ կան չարեաւք. իբրեւ զծննդական երկնեն արտաքս զբամբասանս հոսեալ. յուղղան շրջին, եւ իսաւսին զեղբարէն չարութիւն: 22 Կամ ի չար մտաց իւրոց իմանայ, կամ ի յայլմէ ի լսելիս յաւելու չարաչար սերմ եւ զազրացուցիչս, եւ ատելի ամենեցուն զեղբայրն ցուցանէ, եւ զբազումս ի նա գայթակղեցուցանէ. ընդ որոց գայթակղութեան ինքն դատապարտի: 23 Որ չար կարծիս զեղբարէն հնչեցուցանէ ի լսելիս ամենեցուն. որում եւ ասէ իսկ՝ թէ վայ որ կարծեն, եւ եղուկ որ զկարծիսն տայցեն. Տէր է հատուցանող եւ դատաւոր, բարեացն բարիս, եւ չարարարացն չարիս: 24 Դու զի՞ դատիս զեղբայր քո, եւ զի՞ անգոսնես եւ բամբասես. ահա դատաւորն առ դուրս կայ, եւ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործոց:

25 Եւ արդ որպիսի՞ տանջանաւք դատապարտիցին՝ որ ոչ միայն զեղբարս, այլ եւ զվարդապետս եւ զքահանայս բամբասեսցեն. քանզի անաւրինեալ եւ լցեալ են սաստիկ անառակութեամբ, եւ ամենայնիւ սատանայի կան ի հնազանդութիւն: 26 Քանզի հեղու զամբարշտեալ զթոյնս իւր ի վերայ, մինչեւ յահեղ անաւրէնութիւնս կործանէ. որպէս եւ ժողովրդեանն յանապատին նախ զՄովսէս ետ թշնամանել, եւ ապա զԱստուած արհամարհել. նոյնպէս եւ հրէական ազգին՝ որ նախ զմարգարէսն կոտորեցին, եւ ապա զՔրիստոս սպանին. նոյնպէս եւ Յուդայի նախ զաղքատացն ետ գողանալ, եւ ապա զՏէրն մատնել: 27 Ըստ նմին աւրինակի եւ բամ-

բասողաց նախ զընկերս ետ բամբասել, եւ ապա զվարդապետս եւ զքահանայս, որոց բամբասանքն յԱստուած ելանեն. որպէս եւ ինքն Քրիստոս ասէ՝ թէ Որ գձեզ ընդունի, զիս ընդունի. եւ որ գձեզ անարգէ, զիս անարգէ: 28 Եւ եթէ որ զքահանայս եւ զվարդապետս բամբասէ, զՔրիստոս թշնամանէ:

29 Աշխարհական ես, մի՛ զպատիւ քահանայութեանն բամբասեր եւ հայհոյեր: 30 Հայեա ի Կորիս եւ ի Դադան եւ ի յԱբիրոն՝ որք զպատիւ քահանայութեանն թշնամանեցին. տես զի բացաւ երկիր, եւ եկուլ զնոսա, եւ հուր ի բանակս նոցա վառեցաւ: 31 Զգոյշ լեր, զի մի՛ եւ դու զփորձ նոցա առնուցուս՝ որ զպատիւ քահանայութեանն արհամարհես: 32 Քեզ ոչ եթէ զառաջնորդս բամբասել հրամայեցաւ, այլ ունկնդիր լինել եւ պատուել: 33 Ունկնդիր լերուք, ասէ, առաջնորդաց ձերոց, եւ հպատակ կացէք նոցա. զի նոքա հոգան վասն ոգոց ձերոց, եւ համարս տալոց են ընդ ձեր: 34 Եւ դու հայհոյութեամբ եւ բամբասանաւք պատերազմիս ընդ նմա. տես զի ոչ ընդ նմա, այլ ընդ Աստուծոյ մարտնչիս՝ որ նմա զպատիւ քահանայութեանն շնորհեաց: 35 Զի ամենայն որ պատուէ զքահանայն, զԱստուած փառաւորէ եւ պատուէ. եւ որ արհամարհէ, զԱստուած թշնամանէ: 36 Զփախեալս ֆո մեծարեսցիր՞, եւ զիշխանս ժողովրդեան ֆո մի՛ արհամարհիցես: 37 Զի թէպէտ եւ յանպիտանեաց ոք իցէ քահանայն, այլ Աստուած տեսանէ՝ զի վասն նորա եւ զանարգան մեծարես. զի սրբոյն վասն սրբութեանն ակն ածես: 38 Իսկ վասն Աստուծոյ պատիւ այն է՝ որ զանարգն մեծարիցես. այլ չէ անարգ, Զի հրեշտակ Տեառն ամե-

*** Մատթ. Ժ 40. Գ. 16
 † Եբր. Ժ 9. 17
 ‡ Սէր. Է 31
 † Եւր. Ի 28

նակալի է քահանայն³⁹։ Եւ եթէ արհամարհես, յԱստուած մեղանչես՝ որ ետ գձեռնադրութիւն նորա, եւ նովաւ ինքն կատարէ զխորհուրդն եւ զմկրտութիւնն. թէպէտ եւ նոքա չիցեն արժանի ահեղ խորհրդոյն մերձաւորութեան, այլ վասն փրկութեան ժողովրդեանն չարգելու զչնորհս Հոգւոյն Սրբոյ։ 40 Զի եթէ իշովն եւ Բաղաամաւն դիւթովն խաւսեցաւ վասն փրկութեան ժողովրդեանն, ո՞րչափ եւս առաւել անարժան քահանայիւն ինքն գործէ զամենայն վասն մերոյ փրկութեան։ 41 Եւ դու եթէ սրբութեամբ հաղորդիս ի սուրբ խորհրդոյն, քահանային պղծութիւնն զքեզ ոչ վնասէ. նոյնպէս եւ որ պղծութեամբ մերձենայցէ, քահանայի սրբութիւնն ոչ աւգնէ։ 42 Ապա եթէ համարիցիս՝ եթէ ի ձեռն արատաւոր ինչ քահանայի շնորհք Հոգւոյն ոչ իջանեն ի պատարագն եւ ոչ Աստուած ինչ նովաւ գործէ, ի միտ առ՝ զի բառնաս զկարգս եկեղեցւոյ եւ զանուն քոյոյ քրիստոնէութեանդ։ 43 Եւ եթէ այդպէս իցէ, եւ պատարագն չէ պատարագ ըստ քում ասելոյդ, ապա եւ ոչ ձեռնադրութիւնն ձեռնադրութիւն, եւ ոչ կարգ քահանայութեան հաստատուն. ահա յոյսդ քո քրիստոնէութեանդ սնոտի է, զի ամենեքին ընդ մեղաւք եմք գրաւեալք։

44 Եւ արդ մի՛ ինչ այսպիսի ածեր զմտաւ, եւ մի՛ քններ զվարս առաջնորդին, եւ մի՛ զքահանայս եւ զվարդապետս քո բամբասեր։ 45 Չառեր հրաման քննել զմեզս ուրուք, թող թէ զքահանային. Աստուծոյ է քննել եւ դատել, դու զի՞ քննես եւ դատես եւ հայհոյես։ 46 Զի եթէ զընկեր չառեր հրաման դատել եւ քննել եւ բամբասել, ո՞րչափ եւս առաւել զքահանայս եւ զվարդապետս։ 47 Զքո վարսդ քննես եւ դատես, եւ մի՛ զառաջնորդաց բայց եթէ ի հաւատս ինչ անպիտան իցէ, եւ թիւրս ինչ ուսուցանիցէ, փախիր ի

նմանէ, մի՛ մերձենար եւ մի՛ ճաշակեր եւ մի՛ հաղորդիր ընդ նմա եւ մի՛ հուպ լինիր. զի որ ի նմա հաւատս թերին է, եւ թիւրս ինչ ուսուցանիցէ, եթէ Պաւղոս իսկ իցէ՝ կամ հրեշտակ, մի՛ հաղորդիցիս. զի չէ առանց պատժոց անխտիր հաղորդիլն։ 48 Զի վասն հաւատոց քո է քննել, եւ վասն վարուց Աստուծոյ է դատել։ 49 Եւ եթէ ի հաւատս առողջ իցէ քահանայն, հնազանդ եւեթ լեր նմա. վասն վարուց մի՛ ինչ հայհոյեր։

50 Աշակերտ ես, մի՛ դատիս զվարդապետն. Քրիստոս է որ քննէ եւ դատի։ 51 Զի եթէ ընդ դատարկ բանի համարս տալոց եմք, եւ կամ զեղբայրն մորոս եւ անարգ ասիցես՝ ի հուր առաքիս, իսկ ո՞րչափ եւս առաւել պատժոց արժանի համարիցիք, որ զվարդապետն եւ զքահանայն Աստուծոյ բամբասիցէ հայհոյութեամբ։ 52 Ոչ եթէ նա ազատ ինչ իցէ ի պատժոց՝ որ զխեղճ ինչ մեղաց ունիցի, եւ ի սպասաւորութիւն սրբոյ սեղանոյն յանդգնիցի, այլ ահեղ հրով եւ աններելի տանջանաւք է դատելոց։ 53 Զի չեն ինչ, ասէ, այնչափ մեղք չարաչարք՝ որ կարող են զբոլոր զբարկութիւնն Աստուծոյ զարթուցանել քան զայն՝ որ անարժանութեամբ ոք ի քահանայութիւն մերձենայցէ. զի սպասաւոր անարատին պարտ է անարատ լինել ոգւով եւ մարմնով, զի ի ձեռն անարատին արատաւորքս ապրեսցուք։ 54 Իսկ արհամարհողքն ի քահանայից՝ որ զխեղճ մտացն ինչ գիտիցեն, եւ արհամարհանաւք ի սուրբ սեղանն մերձենայցեն առաջի ահեղ խորհրդոյն, մեծամեծ եւ չարապատիծս տանջանաց նոցա պատրաստեալ է՝ առնուլ զվրէժս ահագին յարհամարհողաց Աստուծոյ։ 55 Յիշեա զորդիսն Ահարոնի՝ որք արհամարհանաւք ի սպասաւորութիւն մտանէին, եւ հուր բարկութեան եկեր զնոսա. յիշեա զորդիսն Հեղեայ՝ որք անարժանութեամբ սրբութեանցն սպասաւորէին, եւ սուր եկեր զնո-

³⁹ Մատ. Բ 7

սա. վասն նոցուն կորեալ եւ Հեղի, եւ բազումք յիսրայէլէ սատակեցան. զի եթէ ի հնուամն այսպէս էր, ո՞րչափ եւս առաւել ահեղ վրէժխնդրութիւն ի նորումս պահանջիցի, եթէ ոք անաւրէնութեամբ ի սպասաւորութիւն ահագին խորհրդոյն մերձենայցէ:

56 Արդ քահանայք եթէ սուղ ինչ յանցանիցեն, եւ խղճիւ ի սուրբ խորհուրդն մերձենան, այսպիսի են տանջանք. բայց դու չառեր հրաման բամբասել եւ արհամարհել. զի ոչ զմարդ, այլ զԱստուած հայհոյես եւ արհամարհես: 57 Արհամարհեցին զՄովսէս ժողովուրդն, եւ Աստուած իւր համարեցաւ. արհամարհեցին զՍամուէլ որդիքն Իսրայէլի, եւ Աստուած իւր համարեցաւ. Ոչ եթէ զԲեզ անարգեմ, այլ զԻս արհամարհեմ. զի ամենայն որ բամբասէ եւ արհամարհէ զքահանայն, յԱստուած մեղանչէ: 58 Մի՛ ասեր՝ թէ ստոյգ են բամբասանքս, եւ ամենայն ոք զիտէ. զի եթէ ստոյգ է՝ ոչ մեր այն, այլ դատաւորին է քննել: 59 Տես զի զմահապարտն ոչ ամենեքեան քննեն եւ դատին, այլ դատաւորքն միայն. բայց դու մի՛ դատիր գուրուք դատաստան, եւ մի՛ խաւսիր զումեքէ, եւ մի՛ լսեր զումեքէ. եւ եթէ լուար բան զեղբարէն՝ մեռցի ի սրտի քում, զի ոչ եթէ ծակէ եւ ելանէ:

60 Եւ արդ մի՛ զմիմեանս բամբասեցուք. զի ըստ իւրաքանչիւր գործոց կալոց եմք առաջի Աստուծոյ, եւ ըստ իւրաքանչիւր գործոց համարս տալոց եմք պատուհասից, եւ իւրաքանչիւր զիւր բեռն բառնալոց եմք, եւ ընկերին ոչ ոք կարէ աւգնել: 61 Զի ի բազում աղէտից գեհենին, եւ յահէ հրացան հոսանացն գետոյն յորդութեանց համարի՝ թէ միայն իցէ ի տանջանս վասն չարակսկիծ ցաւոցն վարանաց. զի բորբոքումն գազանացեալ հրոյն իբրեւ

չնչաւոր իմն շանթիւք յարձակի առնուլ զվրէժս արհամարհողացն Աստուծոյ:

62 Եւ արդ որոց այսպիսի ահեղ արհաւիրք եւ դառն դատաստանք մնան, պարտ է զիւրաքանչիւր հոգս հոգալ, եւ զիւրաքանչիւր վաստակս վաստակել, եւ զիւր մեղսն կոծել, եւ զիւր յանցանսն քննել, զիւր չարիսն որոնել, զիւր աղէտսն միայն ածել զմտաւ, զիւրն սգալ եւ հառաչել, զիւրն լալ եւ ողբալ, եւ հանապազ զիւր անաւրէնութիւնսն բամբասել, եւ վասն իւր մեղացն չարախաւսել, եւ ոչ զյանցանս ընկերին որոնել, եւ մանաւանդ զքահանայիցն եւ զվարդապետացն: 63 Զի քահանայն վասն քո դեգերեալ կայ յեկեղեցւոյն. պաշտէ եւ սպասաւորէ վասն քո. ընթեռնու եւ վարդապետէ վասն քո. ձեռս ի վեր ամբառնայ վասն քո. մատակարարէ խորհրդոյն վասն քո. միշտ պատարագ մատուցանէ հանապազ վասն քո. զուխտ քո ընծայէ Աստուծոյ. զտաւն քո կատարէ հանապազ. զմոլորեալս քո ուսուցանէ եւ դարձուցանէ զերախայս քո մկրտէ. մեղուցելոցն վարդապետէ. վասն ապաշխարողացն խնդրէ թողութիւն. վասն աստուածպաշտութեան զգուշացուցանէ. զհանգուցեալս քո աւրհնութեամբ յղարկէ. զհարսանիս քո եւ որդւոց քոց ուրախութեամբ պսակաւք յորդորէ եւ շքեղացուցանէ, եւ զթշնամին յամաւթ առնէ. վասն կենաց եւ փրկութեան քո աղաչէ. վասն պատուհասից քոց անկանի առաջի Աստուծոյ յարածամ. պաղատի վասն քոյոյ փրկութեան միշտ զՏէրն քո ընդ քեզ հաշտեցուցանել, որդրմութիւն եւ թողութիւն մեղաց քոց խնդրէ անդադար. եւ վասն հոգւոյ քոյ յամենայն ժամ հոգայ, եւ մարմնոյ քում սպասաւորէ հանապազ, եւ առաւել քան զարծաթագին կայ քեզ ի հնազանդութեան:

64 Եւ արդ այսպիսի ծառայութիւն եւ աւելի քան զսոյն քեզ քահանայն հարկանէ, եւ ընդ այսր ամենայնի քահանայն

*** Ը թ. 34. Բ 7

Հայհոյութիւնս եւ բամբասանս լսէ. եւ որպիսի՞ հուրք եւ տանջանք ասեղք եւ աններելիք քեզ սպասեալ մնան. ընդ որոյ երախտեացն պարտ էր քեզ ծառայել քահանային, աղաչել եւ մաղթել, անձամբք եւ որդւովք սպասաւորել, եւ իբրեւ յԱստուծոյ երկնչել, եւ իբրեւ ի հաւրէ սպասաւորել, եւ իբրեւ յերախտաւորէ պատկառել, իբրեւ զանձն եւ զհոգի քո սիրել, զտրտմութիւն նորա սփոփել, եւ զվաստակ նորա երանել, ի վարդապետութիւն զաւրացուցանել, զտկարութիւն ինչ մխիթարել, կերակրել եւ յագեցուցանել, եւ զամենայն մարմնաւորս նորա հոգալ, զնա միայն հոգեւորացն պարապեցուցանել:

65 Զայս եւ բազում եւս այսպիսի երախտիս պարտ էր հատուցանել քեզ ընդ քահանային վաստակոցն, եւ ոչ բամբասանս եւ հայհոյութիւնս եւ արհամարհանս անակնածելիս:

66 Եւ արդ զայս ամենայն լսելով շիջուցուք զբորբոքեալ Հնոց Հայհոյութեան, դարձարեցուք զհուրն արհամարհանաց: 67 Սանձեցէք զլեզուս ի չարախաւսութենէ. մաքրեցէք եւ զաչս ի յարատ հայեցուածոց. ուղղեցէք զսիրտս ի չար խորհրդոց. ծառայեցէք Տեառն երկիւղիւ. պատուեցէք զվարդապետս. հնազանդեցարուք քահանայից. սպասաւորեցէք հիւանդաց. զգեցուցէք զմերկս. լցուցէք զքաղցեալս. սփոփեցէք զնեղեալս. աւգնեցէք տնանկին, եւ անդադար վաստակեցէք աղաւթիւք, պահաւք եւ ողորմութեամբ: 68 Այս է ձեզ ճանապարհ փրկութեան՝ որ հանէ ի վերին քաղաքն փափագելի յանանց վայելչութիւնս. յորս եւ մեզ եղիցի վայելել, եւ փառս տալ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ յաւիտեանս. ամէն:

ԺԱ.

ՎԱՍՆ ՍԻՐՈՅ ԵՒ ՄԱԽԱՆԱՑ ԵՒ ՆԱԽԱՆՁՈՒ

1 Ոչ ինչ պիտոյ է որ յաղագս սիրոյ նորագոյնս ինչ խնդիրք. զի ունիմք զնոյն ինքն Քրիստոս սիրոյ մեզ վարդապետ, որ ասաց՝ եթէ սիրեսցիք զմիմեանս՞. եւ եթէ սիրեմք զիս, զպատուիրանս իմ պահեսցիք. զի զլուխ պատուիրանին սէր է. եւ որ կամի մերձենալ յաստուածպաշտութիւն, յառաջ քան զամենայն պատուիրան զսէրն պարտ է ստանալ. Յայսմ ծանկեցեմ ամենեւեան եթէ իմ աշակերտք էմ՝ եթէ սիրիցեմ զմիմեանս, որպէս ես գնեց սիրեցիք: 2 Զի ինքն իսկ սէր է, եւ Յովհաննէս զԱստուած սէր կոչէ. եւ որ կայ ի սէր նորա, նա յԱստուած բնակէ, եւ Աստուած ի նմա. զի զհրամանս սիրոյ նորա կատարեաց: 3 Զի սէր եւ ի Հնումն եւս քարոզէր. այլ ի նորումս Քրիստոս եւ զսիրելիս եւս հրամայէ սիրել, եւ զթշնամիս եւս սիրել, եւ զանձն եւս զնել ի վերայ սիրոյ սիրելոյն. եւ նա զանձն իւր եղ ի վերայ թշնամեաց եւ սիրելեաց, զի զպատուիրանն սիրոյ ոչ բանիւք միայն, այլ եւ արդեամբք ի մեզ հաստատեցէ: 4 Վասն որոյ եւ մեք զԱստուած սրտիւ սիրեսցուք, եւ զպատուիրանս նորա երկիւղիւ պահեսցուք. զի այս է սիրելն զԱստուած՝ եթէ զպատուիրանս նորա սրտիւ պահեսցուք. եւ պատուիրանք նորա այս են՝ զի ճշմարտիւ սիրեսցուք զմիմեանս. եւ ամենայն որ ճշմարտիւ սիրէ զեղբայր իւր, նա պահէ զպատուիրանս նորա:

5 Եւ այս է ճշմարտիւ սիրելն՝ յորժամ ոչ վասն երախտեաց իրիք սիրեսցուք, եւ ոչ վասն ընդելական իրիք սովորութեան,

՞ ՅՎԸ. ԺԳ. 34
 Է ՅՎԸ. ԺԳ. 15
 Զ ՅՎԸ. ԺԳ. 35
 Ծ ՅՎԸ. ԺԳ. 34
 Կ ԵՅՎԸ. Գ. 8

եւ ոչ վասն քաղցրահայեաց երեսաց, եւ ոչ վասն ազգի ինչ գթոյ, եւ ոչ սէր փոխանակ սիրոյ սիրեսցուք: 6 Այլ միայն վասն պատուիրանին Աստուծոյ զամենեսեան սիրեսցես, եւ ընդ ամենեսեան զխաղաղութիւն ունիցիս: 7 Բայց զընչիցն կարողութիւնն կարաւտելոյն միայն բաշխեսցես, իբրեւ վշտացելոց իւրոց անդամոց խնամ ունել աղքատին. վասն զի ամենեքեան անդամք եմք միմեանց, եւ պարտիմք ընդ վշտացելոյն միոյն անդամոյն՝ այլոց անդամոցն վշտանալ ըստ ասելոյն Պաւղոսի, եւ տալ զանձն ի չարչարանս վասն սիրոյ ընկերին. որպէս եւ Քրիստոս ետ զանձն իւր ի չարչարանս վասն մեր: 8 Զի թէ նա որ Աստուած էր՝ այնչափ յանարգութիւն էջ վասն մեր եւ թշնամեաց եւ ատելեաց, մեք զի՞նչ պատասխանի ունիցիմք եթէ չսիրեսցուք զմիմեանս ըստ պատուիրանին զոր պատուիրեաց մեզ սիրել զթշնամիս, աւրհնել զհալածիչս, բարի առնել այնոցիկ՝ որ ատենն զմեզ, եւ աղաւթս առնել ի վերայ հալածողացն: 9 Զի սէր ընդ սիրոյ եւ մաքսաւորք հատուցանեն. բայց այն էր վասն պատուիրանին՝ որ զթշնամիսն սիրեցին. եւ ըստ գաւրութեանն իւրում աւգնեսցէ ամենեցուն. զկարաւտեալսն մխիթարեսցէ. զտրտմեալսն սփոփիցէ. ընդ զրկելոյն խաւսեսցի վրէժխնդրութիւն. անաւգնականին աւգնեսցէ. հիւանդացելոյն սպասաւորեսցէ. զմոլորեալն ի գիտութիւն ածիցէ, եւ զամենայն տկարութիւն եղբաւրն լցուցէ, եւ զինչս եւ զաւրութիւն ամենեցուն ի կիր արկանիցէ, եթէ հաւատացելոցն է ամենայն ինչ հասարակաց:

10 Եւ արդ այսպէս սիրել պարտ է զեղբարս քրիստոնէին եւ աշակերտին Քրիստոսի. զի Յայսմ ծանիցեմ ամենեքեան եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցեք զմիմեանս՝: 11 Զի քան զոգի մարգարէութեան ընդունել՝ առաւել է սիրելն զեղ-

բայրն, եւ քան զկոչումն առաքելութեան բարձրագոյն է, եւ քան զպատիւ մարտիրոսացն պատուական է, եւ ի վէր քան զամենայն առաքինութիւնս պատուեալ երեւի, եւ ամենեկին իսկ իբրեւ զթագաւոր ի մէջ ռամկաց պայծառացեալ ի վայելչանաց: 12 Զի թէպէտ եւ մեծ է վայելչութիւն կուսանաց, բայց առ սիրոյ պայծառութեանն նուազին ամենայն լուսաւորութիւնք առաքինութեան. որպէս ի ճառագայթից արեգականն ծածկին ամենայն պայծառութիւնք աստեղաց, ուր ողորմութիւնք լինին առանց սիրոյ:

13 Եւ արդ զիս՞րդ լինիցին ողորմութիւնք առանց սիրոյ: 14 Յորժամ սնափառութեամբ ոք ախտիւ ի ցոյց մարդկան առնիցէ. եւ կամ նովիմբ ախտիւ ոք ի գանս եւ ի բանտս մաշեսցի, եւ ի հուր այրեսցի, ոչ ինչ աւգտի. որպէս եւ Պաւղոս ասէ. Եթէ շամբիցեմ զամենայն ինչս իմ աղբատաց, եւ մատնիցեմ զմարմինս իմ յայրումն, եւ սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ աւգտիմ: 15 Զի որ սրտիւ ոք սէր սրբութեամբ ոչ ունիցի, թէպէտ եւ զհոգիս մարգարէութեան ունիցի, եւ շնորհս առաքելութեան, եւ բազում խստամբերութեամբ զանձն չարչարիցէ, եւ բանիւ վարդապետութեամբ զբազումս լուսաւորեսցէ, եւ հաւատովք նշանս մեծամեծս առնիցէ, եւ զլերինս փոփոխիցէ, ամենեկիմբ յամենայնի ոչ ինչ աւգտի. զի սէր աղ համեմիչ է ամենայն առաքինութեան. եւ ուր սէր ոչ մտանէ՝ ապականի, եւ արտաքս ընկենուն յարքայութենէն: 16 Որ սրտիւ ոք սէր ունիցի, նորա է ողորմութիւն եւ անընչեղութիւն. զի հարկ է սիրողին անընչանալ, զի սէր եւ ինչք ի միում անձին ոչ բնակին. զի սէր զինչս թաւթափէ կարաւտելոցն յաւգնականութիւն: 17 Ի սիրոյ հալածական են ազահոլութիւնք եւ չարակնութիւնք եւ նենգութիւնք եւ թշնամութիւնք, նախանձ եւ

*** Յ՝ՎՃ. ԺՊ. 35

‡ Լ՝ԿՊ. ԺՊ. 3

բարկութիւն, ամբարշտութիւն եւ սնափառութիւն, եւ ամենայն մախանք ախտից հեռանայ ի սիրոյ պահողին: 18 Այլ ընդ սիրոյն միաւորեալ եւ կապեալ է խոնարհութիւն, հեղութիւն, քաղցրութիւն, ողորմութիւն, անընչութիւն, անկեղծաւորութիւն, անանձնասիրութիւն, խաղաղութիւն, ճշմարտութիւն, սրբութիւն, անմեղութիւն, բարերարութիւն. եւ զամենայն առաքինութիւն եւ զկատարեալ պատուիրանապահութիւնս պահողն սիրոյ կատարէ:

19 Իսկ որ ոչ սրտիւ ի սէր հաստատեալ է, ամենայն չար խորհուրդք սատանայի զեղուն զնովաւ, ամենայն բազմութիւնք ախտից. զի սատանայական ախտից զլուխ՝ անձնասիրութիւնն է, եւ ի նա շարին ամենայն ախտիցն բազմութիւնք. քանզի անձնասէրն ոչ երբէք կարէ ընկերասէր լինել: 20 Իսկ զլուխ պատուիրանին սէր է, եւ ի նա շարին ամենայն առաքինութիւնք. զի ընկերասիրին չէ հնար զկամս անձին իւրոյ խնդրել, այլ եւ զամենայն հաճոյս ընկերին եւեթ կատարել ի բարիս, այլ եւ զանձնն եւս տայ ի ծառայութիւն վասն պատուիրանին Աստուծոյ. քանզի գիտէ՝ եթէ կատարումն պատուիրանին սէր է: 21 Եւ ամենայն առաքինութիւնք որ առանց սիրոյ են, փակեցան նոցա զրունք երկնային առագաստին, եւ լսեն զսոսկալի զձայնն զայն՝ եթէ ոչ գիտեմ զձեզ, եւ մատնին ի հուր գեհենին ընդ պոռնիկս եւ ընդ մարգասպանս. Զի ամենայն, ասէ, որ ատէ զեղբայր իւր, մարդասպան է: 22 Իսկ որ չարակնէն եւ նախանձին, նա յո՞ր խաւար երթայցէ, եւ կամ ո՞ր սուզանիցի, կամ որպիսի՞ տանջանաւք խաչիցի եւ մաշիցի: 23 Քանզի սկիզբն ախտից է նախանձ եւ չարակնութիւն. զի նովաւ անկաւ սատանայ ի փառացն, նովաւ ել Ադամ ի դրախտէն. եւ ա-

նէծք եւ քրտունք, փուշ եւ տատասկ, մահ եւ մեղք ի վերայ ամենայն ծննդոց Ադամայ տիրեցին. նովիմբ Կայէն երերեալ տատանէր:

24 Եւ այժմ բազումք են՝ որ միշտ այրին նախանձու, յորժամ տեսանիցեն զեղբաւրն զյաջողութիւնն՝ կամ ընչիւք, կամ արուեստիւ, կամ բանիւ վարդապետութեամբ յարգեալ ի բազմաց. եւ զայն տեսեալ նախանձորդացն հալին եւ մաշին, եւ յաւընն զնմանէ բանս բամբասանաց, եւ կան հակառակ կամացն Աստուծոյ՝ որ զյաջողութիւնն շնորհեաց: 25 Վասն այսորիկ թէպէտ բազում ճգունս տանիցի նախանձոտն, եւ բիւր առաքինութիւնս ստացեալ իցէ, եւ սրբութիւն կուսութիւն ունիցի, եւ պահաւք եւ ամենայն վշտամբերութեամբ զինքն մաշիցէ հանապազ, եւ խորգով եւ մոխրով եւ մշտահեղ արտասուաւք սգայցէ ի տուէ եւ ի գիշերի, եւ ողորմութեամբք անընչանայցէ, եւ նշանս մեծամեծս առնիցէ, եւ ցանկաջան աղաւթիւք եւ փառատրութեամբք վերին գուարթնոցն նմանիցէ, այլ եւ մարտիրոսացի եւս, եւ հրով այրեսցի, եւ ի սիրտն նախանձ եւ չարութիւն ունիցի, եւ քան զամենայն սպանողս եւ զչնացողս պիղծ գտանիցի, եւ քան զամենայն ամբարշտեալս թաթաւեալս մեղաւք՝ անիրաւագոյնս: 26 Եւ արդ ո՞ր չարիք ժանտագոյն իցեն քան զնախանձ եւ զչարակնութիւն. զի քան զհուր այրիչ է եւ զսուր սատակիչ, զունելիս իւր սատակէ: 27 Եւ ո՞վ ոք կարէ համբերել այնմ բոցոյ, եւ կամ զո՞ր ներեալ թողութիւն ունիցին այնպիսի սատանայական անձինք: 28 Քանզի եւ ոչ միինչ չարութիւն նման է նախանձու եւ չարակնութեան, զի միշտ ի մեղս է. հանապազ ի տուէ եւ ի գիշերի ոչ դադարէ ի սպանութենէ, քանզի միշտ բարձեալ կրէ ընդ իւր զչարիս իւր:

29 Եւ արդ ո՞վ կարացցէ փարատել զխաւարն զայն թանձրամած՝ որ տարա-

« ԸՅ՝Կ՝Գ՝15

ծեալ մածեալ ունի զմիտս նախանձողացն. զի դառն մթերք նախանձու մարդասպանի ոչ երբէք հեռանայ ի սրտից նոցա: 30 Զի թէպէտ յեկեղեցի մտանիցեն այնպիսիքն, եւ յաղաւթս եւ ի խնդրուածս մաշիցին, թէպէտ եւ արտասուիցեն եւ ողորմութիւնս առնիցեն, ոչ երբէք սրբին ի սպանութենէ: 31 Արդ զո՞ր ներեալ թողութիւն ունիցին այնպիսիքն, եւ կամ որպիսի՞ ինչ ահեղ չարութեան կարիցեմք նմանեցուցանել զայնպիսի անմեկնելի անաւրէնութիւնս. ո՞ր գազան չարածանի, ո՞ր սողուն խածանող, ո՞ր իժ, կամ ո՞ր քարք այնպիսի չարագազան թոյնս ունիցի: 32 Զէ եւ չէ իսկ հնար գտանել անսուրբ եւ անաւրէն անձինս քան զչարականցն եւ զնախանձոտացն, զի միշտ լուցեալ բորբոքի ի միտս իւր հոգածութեամբն: 33 Դողայ եւ դեղնի, զի տեսանիցէ զեղբարս իւր եւ զդրացիս, զի տուն եւ տղայս ունիցին. եւ դեւք աւերեն գտունն՝ հատուցանեն, կամ վիմաւք, կամ հրայրեցութեամբ, կամ ի ջուր ընկղմելով, կատարելով զկամս սատանայի. զայնպիսին պարտ է արտասուել եւ ողբալ հանապազ: 34 Զի լաւ էր այնպիսւոյն երկու աշաւք կոյր լինել, քան բոլորովին անդամաւք ի հուրն յաւիտենից առաքիլ: 35 Զի նա եւս քան զհեթանոսս պղծագոյն երեւեսցի, եւ լծակից է սատանայի չար նախանձամբն, եւ ընդ նմին ժառանգեսցէ զհրացայտ տարտարոսն եւ զանշէջ գեհեանն:

36 Եւ եթէ զամենայն բարեգործութիւնս եւ զզանազան առաքինութիւնս եւ զազգի ազգի վարս եւ զկրաւնս յինքն բարձեալ ունի, ոչ աւգուտ գտանէ յայսմ ամենայնէ, եթէ զխաւար ատելութեան ի սրտին պահիցէ, եւ զչարականութիւն եւ

զնախանձ: 37 Արդ փութա այսուհետեւ եւ ի բաց փախիր ի խաւարամած մեղացդ, եւ արտասուաւք մեղաց Տեառն Աստուծոյ ասա. զի կարասցես լսել ի Քրիստոսէ որ ասէ. Եկայք աւրհմեալք Հաւր իմոյ, ժառանգեցեք զպատրաստեալ արքայութիւնն: 38 Որում փառք յաւիտեանս յաւիտենից ամէն:

ԺԲ

ՎԱՍՆ ԲԱՐԿԱՑՈՂԱՑ ԲԱՐՈՒՑ

1 Ամենայն բնութիւնք մեղաց եւ պիղծ ախտից անաւրէնութիւնք ջանան ի մարդկանէ ծածկել զանաւրէնութիւն իւրեանց: 2 Իսկ բարկութեան ախտին մոլորութիւն անամաւթ եւ վայրենաբարոյ, անակնածող եւ գազանամիտ եւ արագ շարժի յաղաղակելն իբրեւ զհաւահալածն մրգապահաց, որ մինչ չեւ աւգոյն ինչ շարժեալ՝ եւ նա սկսանի կարկաչել, ցուցանելով զիւրոյ բնութեանն զթեթեւութիւն: 3 Նոյնպէս է եւ բարկացող մարդն, զի դեռ չեւ իցէ ի սիրտն հասեալ ընդդիմութիւն ինչ բանից, նա ընդ իբրեւ զհուր լուցեալ՝ աղաղակելով ի վեր բորբոքի, եւ անամաւթ ամենեցուն ցուցանէ զիւրոյ բնութեանն թեթեւութիւնն, եւ յանհամբոյր գազանութենէն ոչ կարէ ծածկել զիւրոյ մոլորութեան անաւրէնութիւնն. այլ իբրեւ զհողմ ի հուր մտեալ վառէ ի ցասումն բարկութեան անաւրէնութիւն ի զրկելիս իւր, եւ զամենեսեան առ հասարակ ցաւեցուցանէ աղաղակաւ իբրեւ ի հինէ արշաւանաց:

4 Քանզի յորժամ բարկութեան դիւին ոք հնազանդեսցի, զամենայն զգայութիւնս նորա յիմարեցուցանէ, եւ վառէ որպէս կամի զլեզու նորա ի չարութիւն. զբերանն լնու թշնամանաւք, զմիտսն գազանացուցանէ ի ցասումն, զսիրտն թնդէ բարկութեամբ, զլեարդն պնդէ կռուողու-

1 Յօրինակին ի բաց անկեալ է թուղթ մի, յորում են աւարտ նաոխս եւ սկզբնատրութիւն յաջորդին միևչեւ բանից, նա ՚Թերին երկաթանչիրոցն առաւ բարդատուբեամբ յերկուց օրինակաց:

*** Մարտի 16 34
2 Դարձեալ յաջորդէ երկաթագիր օրինակս

թեամբ, զարիւնն եռացուցանէ, զմարմինն դողացուցանէ, զաչսն ալլագունէ, զգոյնն շրջէ, եւ ամենեւեմբ զմարդն վայրենի ցուցանէ, եւ տայ աղաղակել բազում մորոսախաւսութեամբ. գազանացեալ առաւել քան զվայրենի գազանացն գազանութիւն: 5 Այլ եւ ոչ ի գազանս ինչ խածանող, եւ ոչ ի սողունս թիւնաւոր կրի երբէք այնպիսի չարաբարութիւն, եւ ոչ ի թից եւ քարբից դառնութիւն հաւասարէ բարկացողացն ախտից. ոչ դեղք մահաբերք եւ ոչ հարուածք կարծի նման են հարուածոց բարկութեան. ոչ հատումն սրոյ եւ ոչ այրեցուած հրոյ կսկծեցուցանեն առաւել քան զբարկացողացն. ¹եւ ոչ այնչափ չար են մոլիւնք դիւաց, որչափ բարկացողք դիւաց յայնմանէ: 6 Քանզի դեւն բարկութեամբ վառի ի նախանձ միշտ, եւ պնդէ յանհաշտ ոխակալութիւն, եւ հանապազ մածեալ պահէ ի վերայ սրտին զխաւարն նախանձու: 7 Եւ զոր աւերնակ թիւնաւորքն զթոյնն ընդ իւրեանս կրեն հանապազ, սոյնպէս եւ բարկացողքն զցասումն եւ զքէն նախանձու. եւ յամենեսին յարձակին իբրեւ զշունս կատաղիս, եւ հանապազ խայթեն իբրեւ զկարիճս, եւ խածանեն իբրեւ զաւճս, եւ լցեալ թիւնաւքն բարկութեան ոչ կարեն վաղվաղակի խոնարհել առ միմեանս: 8 Քանզի իժք եւ ծնունդք իժից անուանին, անհաշտք ի միմեանց, եւ անհնազանդք: 9 Բազում բանս ձեւացուցանեն՝ իւրաքանչիւր ոք զինքն արդարացուցանելով, եւ յաւերինն տողս բազումս պատմութեանց զանձինս իրաւացուցանելոյ. եւ զվնասս կուտել ի վերայ ընկերին ջանայ ամենեցունց առաջի, կարծեցուցանելով զնա վնասակար: 10 Զի դեւ նորա տրտմութեան պնդէ յանզղութիւն,

եւ խստացուցանէ զմիտսն յանապաշաւանհաւանութիւն, եւ զսիրտն քարացուցանէ չլինել ունկնդիր խրատու եղբաւրն եւ զրոց վարդապետութեան. եւ յիմարեցուցեալ սատանայի զգայութիւնս նորա՝ ոչ տայ ճանաչել զյանցանս նորա. այլ ի միտս նորա կարծեցուցանէ զնա անմեղ յամենայնի, եւ զընկերն վնասակար: ¹¹ Նոյնպէս եւ ի միւսում ընկերին զսատայ նմա համարել վնասակար, եւ զինքն արդար յամենայնի: ¹² Եւ դարձեալ զսաստ խստացուցանէ՝ թէ նմա պարտ է քեզ խոնարհել, զի վնասակար է. եւ զնա անպնդէ՝ թէ չէ արժան քեզ նախ նմա հնազանդել, զի անմեղ ես: ¹³ Եւ այսպէս զերկոսեան թշնամութեամբ ի միմեանց հեռացուցանէ սատանայ ի մնալ անզեղջ եւ անապաշաւ: ¹⁴ Աւուրս բազում ծանրացուցանէ զսիրտ եղբաւրն, եւ ամաւթ եւ անարգանս տայ համարել զխոնարհելն ընկերին. զի եթէ ես յառաջ խոնարհիմ, ասէ, զիս վնասակար ոք կարծիցէ, եւ զնա անմեղ համարիցին. վասն այսորիկ գազանացեալ անհնազանդի:

¹⁵ Քանզի յորժամ միանգամ զխորհուրդս ըմբռնէ անաւրէն ախտն բարկութեան, յափշտակէ զմիտսն ի նմանէ, եւ գազանացուցանէ, եւ ամենեւին չտայ իմանալ զերկիւղն Աստուծոյ, եւ ոչ զահ հեղ դատաստանին. այլ հեռացուցանէ յիրաւանց, եւ զդատաստանն ոչ երբէք ածէ զմտաւ, եւ ոչ յիշէ զաւր մահուանն իւրոյ եւ զարհաւիրս սոսկալի բեմբին. այլ պնդեալ մաքառի՝ զկամս անձին իւրոյ կատարեալ: ¹⁶ Եւ ոչ ամաւթ եղբարցն, եւ ոչ խրատ վարդապետաց, ոչ հրամանք պատուիրանաց, եւ ոչ երկիւղն Աստուծոյ, ոչ փափագանք արքայութեանն, եւ ոչ արհաւիրք տանջանացն զնա ոչ պատկառեցուցանեն ի զեղջ եւ յապաշաւ: ¹⁷ Այլ եւ ժտի եւս յեկեղեցին մտանել, եւ աղաւթս առ Աստուած կատարել՝ որ ոչ ընդունի, եւ առ Աստուած ոչ ելանեն: ¹⁸ Քեզ ինքն

1 Երկուք յորինակացն այսպէս ունին զայս տեղի. եւ ոչ այնչափ չարչարին մոլիբն ի դիւացն, որպէս բարկացողն: Քանզի: Եւ երրորդ մի. ոչ այնչափ չարչարին մարմինն ի դիւէ, որպէս բարկացողն ի դիւացն ցասմանէ: Քանզի

Տէրն ասէ. եթէ հանեալ իցես զպատարագն
 քո ի վերայ սեղանոյն, եւ անդ յիշեսցես եթէ
 եղբայր քո ունիցի խէթ զէն, թող զպատարագն
 ի վերայ սեղանոյն. երթ նախ հաշտեաց
 ընդ եղբար քո, եւ ասա եկեալ մատուցանիչի
 քո զպատարագն քո, եւ ընդունելի է: 19
 Եւ իւրաքանչիւր ուրուք ազաւթքն
 են պատարագք. եւ անընդունելի են
 Աստուծոյ, եթէ ոչ նախ երթեալ հաճի
 ընդ տրտմեալ եղբարն, եւ ասա եկեալ
 ազաւթէ առ Աստուած, եւ ընդունելի է:
 20 Այլ եւ ասէ. Արեգակն ի վերայ բարկու-
 թեան ձերոյ մի մտցէ՞. զի մի՛ դեւքն
 եկեալ ի գիշերին յարուցանիցեն զսիրտ
 քո առ վաղիւն չհաշտել ընդ ընկերին,
 եւ խորհուրդս չարս, որս եւ նախանձս,
 եւ ազգի ազգի նենգութիւնս արկանիցէ
 ի միտս քո: 21 Այլ մինչեւ չեւ գիշերոյն
 հասեալ իցէ՛ երթ հաշտեա ընդ եղբար
 քո: 22 Մինչ դեռ յաշխարհի ես,
 հաշտեա ընդ ոտիք քո. մի՛ գուցէ
 մատնիցեմ դատաւորին, եւ դատաւորն
 դահնաց, եւ ոչ ելանիցես: 23 Սոյնպէս
 եւ դու մինչ դեռ աւր առաջի կայ,
 փութա հաճել ընդ ընկերին, եւ ի վա-
 ղիւն մի՛ յապաղեր, զի աներեւոյթ
 են ելք մեր յաշխարհէ, եւ ոչ գիտեմք՝
 թէ ունի՞մք զվաղիւն ժառանգել՝
 թէ ոչ. սակայն ժառանգեմք
 զվաղիւն, եւ ոչ փութամք հաշտել
 ընդ եղբարն: 24 Ընդ հեթանոսս
 համարեալ եմք, զի անընդունելի
 իցէ առանց հաշտութեան ընդ
 եղբարն եւ ընդ ընկերին:

25 Իսկ որպիսի՞ դառն տանջանաւք
 դատիցին՝ որ խիղճ ինչ թշնամութեան
 ընդ ընկերին ունիցին, եւ ի սուրբ
 խորհուրդն մերձենայցեն. որպիսի՞
 հուր, եւ որպիսի՞ գեհնք խաւարայինք
 նոցա սպասիցեն: 26 Մարմնոյ
 Տեառն հաղորդիս, եւ զԱստուած
 գողանալ կամիս՝ թաքուցանելով

զթշնամութիւն քո ընդ ընկերին: 27
 Այո եւ Կայէն գողանալ կամէր զԱստուած՝
 թաքուցանելով զեղբարն սպանութիւն.
 եւ արդ տես զերերումն տատանման
 նորա՝ զչար խորհուրդն զպտուղն: 28
 Որ ի մարմինն Տեառն մերձենայ,
 եւ թշնամութիւն ընդ ընկերին
 ունիցի, ոչ մարմին կենարար է
 նմա, այլ հուր կիզանող, զի դատաստան
 անձին իւրում ուտէ եւ ըմպէ: 29
 Այլ ոմանք ոչ եթէ վասն փափագելոյ
 սրբոյ խորհուրդն փութան ի հաշտութիւն
 ընկերին, այլ աւուրք բազումք
 հեռանան ի սուրբ խորհուրդն,
 եւ զաղաչելն եւ զհաշտելն
 ընդ եղբարն ծանր համարին քան
 զհեռանալն եւ զչընդունելն ի սուրբ
 խորհուրդն ի մարմնոյն եւ յարեւն
 Քրիստոսի. վասն խոնարհելոյ
 ընկերին արհամարհէ զխորհուրդն
 տէրունական. հրաժարելով ի
 նմանէն՝ կարծէ պատիւ համարել
 Աստուծոյ չմերձենալ ի խորհուրդն:
 30 Եւ ոչ իմանայ՝ եթէ առաւել
 եւս արհամարհէ չփութալով ի
 հաշտութիւն ընկերին վասն սիրոյ
 փափագելի մարմնոյն Քրիստոսի,
 զոր եւ Պաւղոս ասէ, թէ՛ ո՞վ
 մեկնէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի՞.
 նեղութի՞ւն թէ մահ, եւ որ ի
 կարգին է՝ ոչ կարեն մեկնել զմեզ
 ի սիրոյն Քրիստոսի: 31 Եւ զքեզ
 սակաւին թշնամութիւն ընդ ընկերին
 մեկնեաց ի սիրոյն Քրիստոսի,
 եւ ի սուրբ խորհուրդն մերժեալ
 հեռացոյց: 32 Զի թէ թշնամանեաց
 ոք զքեզ, եւ դու խոնարհեսցիս
 վասն պատուիրանին Աստուծոյ,
 մի՛թէ վնասեցա՞ր ինչ. այլ վարձս
 մեծամեծս ընկալար: 33 Անարգ
 եւ արհամարհեալ ոք զքեզ
 անուանեաց. այլ դու հող եւ մոխիր
 եւս ասա զանձն քո: 34 Գձու՞ծ
 եւ ցնոտաւոր՝ ոք զքեզ կոչեսցէ.
 այլ դու ասա. Մերկ իսկ
 եկի յաշխարհս, եւ մերկանդամ
 անդէմ դառնալոց եմ: 35 Այսպիսի
 խոնարհու-

Պատմ. Ե 23-24
 Ես. Գ 26
 Հմմտ. Պատմ. Ե 25:

Հմմտ. Բ 35
 1 Օրինակ մի՛ ցնուտ. այլ օրինակ՝ ցրտուտ
 Ե Թ 21

Թեամբ կապեցեր զլեզուս անաւրինաց, խցեր զբերանս թշնամանողաց, լուծեր զՋիղս սատանայի, ցրեցեր զխորհուրդս նորա, եւ ամենեւին ոչ ոք ինչ քեզ կարէ վնասել ի թշնամանողաց, եթէ միայն առողջ միտս ունիցիս: 36 Ահա բազումք թշնամանեցան եւ համբերեցին. այլ եւ աղաւթս եւս ի վերայ թշնամանողացն արարին: 37 Ստեփաննոս աղաւթէր ի վերայ քարկոծողացն իւր. Մովսէս, Սամուէլ, Դաւիթ եւ Քրիստոս Որդին Աստուծոյ թշնամանեցաւ, եւ առ Հայր վասն նոցա աղաւթս մատուցանէր: 38 Եւ արդ լեր դունմանող արանցն երեւելեաց: 39 Լոեա ի բարկութենէ, եւ հանգիր ի սրտմտութենէ, եւ մի՛ նախանձիր ընդ չարս՝ ասէ մարգարէն. զի ուր բարկութիւն եւ սրտմտութիւն մտանէ, անդ շնորհք Հոգւոյն ոչ մտանեն, եւ ոչ խորհուրդք արդարութեան ելանեն ի բարկացող սրտէ. որպէս եւ ասէ. Բարկութիւն մարդոյ զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ՞:

40 Է եւ ցասումն արդար, եւ բարկութիւն արդարութեան, յորժամ զվրէժս ինչ պատուիրանացն Աստուծոյ խնդրեսցես իբրեւ զՍամուէլն եւ զՓենեհէզն, կամ վրէժխնդրութիւն եղբաւրն զրկելոյ: 41 Իսկ որ աւելի քան զայս առաւել ինչ բարկանայցէ, կամ վրէժ անձին իւրոյ խնդրեսցէ, այն է ի տարապարտուց բարկանալ, զոր եւ Քրիստոս ասէր՝ պարտաւոր եղիցի ի գեհենն եւ ի հուր: 42 Քանզի տարապարտուց բարկութիւն՝ ճանապարհ է բազում ինչ ախտից. զի բարկութիւն է եւ աղաղակ եւ կռիւ, ատելութիւն եւ թշնամութիւն, նախանձ եւ ռիակալութիւն, քինահանութիւնք եւ սպանութիւնք, եւ բազում այլ եւս չարութիւնք: 43 Եւ որ բարկութեանն յաղթէ, այս ամենայն իջեալ դադարէ իբրեւ զհուր առանց նիւթոյ. զի

յորժամ բարկանայցէ ոք, եւ դու համբերութեամբ տանիցիս, շիջուցեր զբարկութիւն: 44 Այլ թէ դիւահար ոք զքեզ անուանեսցէ, մի՛ ինչ բարկանար. եւ եթէ բարկանաս՝ արդարացուցեր զթշնամանողսն, զի ի դիւէն է բարկութիւն եւ ոչ յԱստուծոյ: 45 Ահա եւ զՏէրն դիւահար կոչեցին, եւ նա ոչ բարկացաւ, այլ հեզութեամբ ետ պատասխանի՝ եթէ Յիս դեւ ոչ գոյ՞: 46 Թշնամանեաց ոք զքեզ եւ արհամարհեաց, այլ առաւել եւս զՏէրն թշնամանեցին եւ արհամարհեցին: 47 Կռփեաց ոք զքեզ եւ ապտակեաց, ահա եւ զՏէրն կռփեցին եւ ապտակեցին, այլ եւ չարչարեցին եւ խաչեցին, որ քո չեւ եւս ընկալեալ: 48 Արդ զայս ամենայն Աստուած զմտաւ ի ժամ ցասմանն յուզելոյ:

49 Շատ է մեզ սատանայ թշնամի, զեղբարս մեր մի՛ արասցուք մեզ թշնամի. այլ փութասցուք հաշտեցուցանել ընդ մեզ, զի զպսակ նահատակութեան ընկալցուք ընդ կանխելոյ եւ անկանելոյ առաջի եղբաւրն: 50 Քանզի պսակք եւ պարգեւք կան ի միջի ոսոխացն եւ կագոցն. եւ որ ոք յառաջագոյն նահատակի եւ խոնարհի եղբաւրն աղաչանաւք ածել զտրտմեալ եղբայրն ի հաշտութիւն, նա յափշտակէ զպարգեւս եւ զպսակս վասն նախախոնարհ նահատակութեան իւրոյ. զի զչար թշնամին սատանայ վիրաւորեաց ի խոնարհելն իւրում, եւ զինքն եւ զեղբայրն իւր զերծոյց ի ձեռաց նորա, եւ փրկեաց ի յաւիտենական ի մահուանէն: 51 Յաղագս այնորիկ ընդունի համարձակութեամբ վարձս բազումս, եւ զվայելչութիւն անանց բարութեանց:

52 Եւ արդ մի՛ վասն սակաւ մի խոնարհութեան կորուսանիցեմք զյաւիտենական փափկութիւնսն. զի բազումք վասն յաւիտենական կենացն զանձինս եւ զինչս արհամարհեցին, զսէրս ամուսնութեան եւ

Պատմ. Լ. Է 8
Յ. Գ. Լ 20

Յ. Գ. Լ 49

զգուլթա որդուց իւրեանց. զանազան տան-
ջանաց համբերեցին եւ հրոյ մատնեցան,
զի միայն զարքայութիւնն Աստուծոյ ըն-
կալցին: 53 Իսկ քեզ ոչ հուր կայ առաջի
եւ ոչ սուր, եւ ոչ զանազան տանջանաց
համբերել. այլ միայն խոնարհել եղբաւրն
տրտմելոյն, եւ աղաչանաւք հաշտեցուցա-
նել, եւ զնոյն պսակս նահատակութեան
ընդունել: 54 Ընդէ՞ր ծանրացուցանես
զսիրտ քո աղաչել զեղբայրն. չես ի հուր
զիմել, այլ ի խոնարհութիւն իջանել:
55 Դու նախ փութա անկիր աղաչանաւք
առաջի ընկերին, եւ առ զպսակն լուսոյ եւ
պարծանաց նահատակութեան, եւ զերկնից
արքայութեանն զանբաւ վայելչութիւնսն:

56 Արդ զայս ամենայն լսելով
զտրտմութիւնսն ցածուսցուք, զբարկու-
թիւն շիջուցուք, զաղաղակ դադարեցու-
ցուք, զսէր սիրեցուք, զխոնարհութիւն
ստասցուք, զհնազանդութիւն ընկալցուք,
եւ ընդ հաշտել ընկերին յառաջ ընթաս-
ցուք. զի համարձակութեամբ զերկնից բա-
րութիւնսն ժառանգեցուք ի Քրիստոս
Յիսուս ի Տէր մեր. որում փառք յաւի-
տեանս յաւիտենից:

ԺԳ

ՎԱՍՆ ՈՒՍԱՊԱՀԱՅ ԵՒ ՔԻՆԱՀԱՆԱՑ

1 Ահեղ անաւրէնութիւն եւ սաստիկ
չարութիւն տեսանեմք զոխապահացն եւ
զքինահանացն քան զամենայն զմեղաց
անաւրէնութիւնս. զի ամենայն մեղք եւ
անաւրէնութիւնք երբեմն սաստացեալ
բորբոքին եւ երբեմն դադարեն: 2 Իսկ չա-
րայուչ քինահանութիւն եթէ բան ինչ ըն-
դիմութեանց յընկերէն ինչ լսիցէ, միշտ
բորբոքի յանաւրէն ի խորամանկացն խոր-
հուրդս: 3 Եւ յամենայն ժամ անշիջանելի
վառի բոցն նախանձու ի միտս նոցա, եւ
հանապազ զսիրտն քինախնդիր ոխապա-
հացն կսկծեցուցանէ. եւ ի միտս իւրեանց
հալին եւ մաշին եւ չարչարին. եւ ոմանց
գոյնք իսկ երեսացն եղծանին ի չար

խորհրդոցն եւ ի նենգութենէ սրտին: 4 Եւ
չրջի ընդ մարդկան իժ խորամանկն, իբրեւ
զթոյնս իժի բարձեալ կրէ զնենգութիւն
սրտին. եւ հանապազ վանք եւ աւթեվանք
են սատանայի միտք նոցա. եւ զոր ինչ ա-
սէ սատանայ՝ լսէ նմա, եւ զոր ինչ կամի՝
վաղվաղակի կատարէ զկամս նորա. ի
տեսս մարդ երեւի, եւ բարիւք իբրեւ չա-
րածանի ինչ գազան: 5 Նստի ի հրապա-
րակս իբրեւ զմարդ, եւ խորամանկութիւնք
չար դիւին են ի խորհուրդս նորա:
6 Մտանէ յեկեղեցին իբրեւ զքրիստոնեայ,
եւ պիղծ են աղաւթք նորա քան զպղծու-
թիւն զոհից. քանզի ոչ ելանեն ոխապա-
հացն աղաւթքն առ Աստուած, զի չարու-
թիւն է ի սիրտս նոցա, եւ անաւրէն նեն-
գութիւն խորհին հանապազ:

7 Թէպէտ եւ ինչս բազումս յողորմու-
թիւն ծախեաց այնպիսին, թէպէտ եւ
հսկեսցէ եւ պահեսցէ, եւ զանձն սաստիկ
ճգնութեամբ ցամաքեցուցանիցէ, յամե-
նայնի ոչինչ աւգտիցի՝ յորժամ ոխս ընդ
ընկերին պահիցէ, եւ զչարխան ի սրտին
թաղեալ ունիցի: 8 Նստի հանապազ, եւ
խորհի պատահարս չարեաց եւ դիպումն
փորձութեանց նախանձորդին: 9 Ըղձա-
նայ, շրջի մտախորհ յուռ մարեալ¹, եւ երկ-
նէ իբրեւ ծննդական: 10 Նիւթէ չար ընկե-
րին. նմա խորհի եւ զսով, նմա խորհի եւ
զսուր, նմա խորհի եւ զհէնս, նմա խորհի
եւ զմահս եւ զամենայն չարս եւ չարա-
լուրս: 11 Աքողին երեսք նորա ի տեսու-
թենէ նորա, եւ առ դրամբք քան նորա չա-
խորժէ անցանել: 12 Եթէ ի ճանապարհի
ուրեք դիպեսցի, խնդրէ թողուլ զճանա-
պարհն, եւ ոչ պատահէ նմա. եւ եթէ յեկե-
ղեցուջն տեսանիցէ, չկամի եւ յեկեղեցին
մտանել. եւ եթէ ի հրապարակին դիպեսցի,
պատրուակին աչք նորա առ ոչ կարել հա-
յել յերեսս նորա. այլ զգլուխն խոնարհե-

1 Օրինակ մի՝ ուռ մառեալ. երկու օրինակ՝ շրջի
տխուր յարմարեալ զիմն, եւ երբայ իբրեւ

ցուցանէ, եւ իբրեւ ընդ գետինն խաւսի, եւ ըղձանայ չար ինչ խաւսել զնախանձորդէն: 13 Եւ եթէ չար ոք զնմանէն խաւսեսցի, նա ի վեր հայեցեալ զարթնու եւ զուարթանայ, եւ լսէ ախորժելով, եւ աճեցուցանէ զչարախաւսութիւն նորա, եւ բազում խնամով խաւսի ընդ զչարախաւսս նորա: 14 Եւ եթէ բան ինչ բարի զնախանձորդէն լսիցէ, տրտմի եւ տխրին երեսք նորա, եւ հալին եւ մաշին միտք նորա: 15 Սիրելի է թշնամեաց նորա, եւ թշնամի է բարեկամաց նորա: 16 Ատէ եւ զորդիս նորա, եւ չարախաւսէ զնմանեաց նորա. եւ ոչ միայն զխաւսուենսն, այլ եւ զանասունս նորա ատէ, եւ զանդաստանս նորա չարակնէ, ըղձանալով ցասմունս, երաշտութիւնս վասն նորա: 17 Զայս եւ առաւել եւս քան զնոյնս խորհի չարայուչն եւ ոխապահն ի սրտի իւրում, եւ յերեսս մարդկան ոչ երեւեցուցանէ զթշնամութիւնն: 18 Եւ արդ ոչ է պարտ զայնպիսի սատանայամիտսն մարդ անուանել, այլ աւճս եւ իժս, եւ եթէ եւս քան զնոսա գազանագոյնս ինչ կայցէ. զի նա է չար գազան քան գաւձից եւ զիժից բնութիւնս. քանզի իժից եւ աւձից բնութեամբ է դաժանութիւն. իսկ ոխապահն ինքնակամ կամաւք ընկալաւ զչար խորհուրդս սատանայի, որ ընդ նմին ժառանգելոց է զհուրն անշէջ եւ զխաւարն աղջամղջին:

19 Այլ եւ զարմանամ եւս ընդ ներողութիւնն Աստուծոյ՝ որ առժամայն իսկ ոչ առաքէ զփայլատակունս յերկնից ի վերայ այնպիսի մոլեգնելոց ամբարշտութեանց. զի առաւել եւս քան զաւազակացն եւ զսպանողացն զանցոյց զանաւրէնութիւնս իւրոյ չարութեանն. զի նոքա երբեմն սպանանեն, եւ երբեմն դադարեն. իսկ ոխապահն չարայուչ ոչ երբէք դադարէ ի սպանութենէ: 20 Նա եւ ի զբաւսանս իւր մարդասպան է, զի զոխս ընկերին ի սրտին ունի. նա եւ յանկողինս իւր մարդասպան է, յորժամ զոխս ընկերին յիչէ. նա եւ ի

տան մարդասպան է, նա եւ յեկեղեցւոջ մարդասպան է, եւ ի հրապարակս մարդասպան է. այլ եւ ի ճանապարհի, ի տուէ եւ ի գիշերի եւ յամենայն ժամու մարդասպան է, զի զոխս նախանձուն հանապաղ ի սրտի իւրում կրէ: 21 Եւ ապա անաւրէն ամբարշտութիւնք ոխապահացն աճեցուցեալ ի քինահանութիւնս յաւժարեցուցանէ սատանայ՝ առնուլ վրէժս ի զրկողէն. թէպէտ եւ փոքր են զրկանք նորա, այլ սատանայ ի մեծս յաւժարեցուցանէ զնա, մինչեւ հարուածս այգեաց եւ անդաստանաց տայ գործել. եւ ի զաւրանալ ամբարշտութեանց սատանայի, առաւել եւս յանաւրէնութիւնս յանդգնեցուցանէ զնա, մինչեւ տանց եւ բերդից վնասել հրդեհիւք:

22 Արդ որպիսի՞ անդունդք գեհենի սպառնայցեն այնպիսի անաւրինելոց. որպիսի՞ հուր եւ աղջամղջին խաւար. որք այնչափ ամբարշտեցան՝ մինչեւ գտունս բնակութեան մարդկան հրդեհել, եւ դողալ եւ սարսել ի ձեռաց մահուցն. այլ եւ զծերս եւ զտղայս առ հասարակ սատակել անողորմ եւ անակնածելի: 23 Եւ արդ ո՞ր անաւրէնութիւնք քան զայս ամբարշտագոյնիցէ, եւ կամ ո՞ր մեղք չարաչարք քան զայս չարագոյն կայցէ, եւ կամ զո՞ր չարիս քան զայս չարագոյն ոք կարծիցէ, եւ կամ ո՞վ ի մարդկանէ իցէ՝ որ այսչափ յանաւրէնութիւնս կործանեցաւ, եւ յահեղ ամբարշտութիւնս: 24 Ո՞ր չար եւ անաւրէն սատանայ՝ որ յայսչափ խորխորատս ընկումես զմարդիկ, մինչեւ այսպիսի ահեղ անաւրէնութիւնս գործել, եւ հեղուլ արիւնս բազումս. եւ այսչափ յիմարութիւնս մոլորեցուցանել զսիրտս մարդկան, մինչեւ միանգամայնս զամենայն ստացուածսն ապականել, գտունս հրդեհել, եւ զբնակիչսն առ հասարակ չարաչար անողորմ եւ աններելի մահու սրով սպանանել: 25 Այս եւ անաւրէն հեթանոսացն հիանալի է: 26 Զայս եւ ոչ ի կռապաշտիցն եւ ի բար-

բարոսացն ոք գործէ. այսպիսի մահս բազումս եւ վնասս մարդկան միանգամայն ո՞վ գործիցէ, որպէս գործի յանաւրէն քինահանացն մոլորութենէ: 27 Թէպէտ եւ ապրեսցին ի հրոյն ի մահուանէն բնակիչք նորա, սակայն նա մտաւք եւ գործովք գամենեցուն զսպանութիւնն կատարեաց, եւ զարիւնս նոցա եհեղ. եւ տալոց է համարս եւ պատիժս տանջանաց ընդ ամենեցուն սպանութեանցն:

28 Արդ զի՞նչ գործես, ով թշուառական եւ անաւրէն անձն, որ յայսպիսի խորս ամբարշտութեան կործանեցար. եղեր գործակից սատանայի, եւ քան զդեւս մոլորեցար, եւ վնասս անաւրէնս գործեցեր, եւ բազմաց արեանց եղեր պարտական: 29 Զի եթէ Կայէն վասն միոյն սպանութեան յայնչափ պատիժս տանջանաց դատապարտեցաւ, իսկ ո՞րչափ առաւել հնոցք եւ հրեղէն գետոցն հոսանք քեզ սպասեցեն: 30 Քանզի առաւել ճշդիւ պահանջէ Աստուած ի ձեռաց առն զարիւն ընկերի իւրոյ, եւ մանաւանդ զայնպիսի սպանութեանց՝ որ փոխանակ կսկծելի եւ տգեղ ինչ բանից եւ կամ վասն սակաւ ինչ պարտուց՝ քինահանութեան ոք վնասս մեծամեծս եւ ահեղ արիւնս հեղու: 31 Եւ արդ ածգմտաւ, ով թշուառականդ, գլխմարութիւն անաւրէնութեանդ քո. եւ ի սնավաստակ անաւրէնութեան քո ահա այրեցան համբարքն, եւ հրդեհեցան տունքն, մեռան բնակիչքն, կորեան ինչքն, եւ ամենայն ստացուածքն ապականեցան:

32 Եւ արդ զի՞նչ շահեցար զսատանայական անաւրէնութիւնս կատարելով. բայց միայն զտուգան ոգւոյ եւ զերկիւղ գեհեհնին ստացար, հուր եւ խաւար եւ տանջանս յաւիտենականս: 33 Զնոսա շիջանելի հրովս չարչարեցեր, եւ քեզ պահին անչէջ հնոցք բորբոքեալ, ուր հուրն խաւարային ի ներքոյ վառեսցի, եւ գետք հրեղէն ի վերայ հոսեսցեն նոցա: 34 Առժամայն մի ցաւեցուցեր, եւ զքեզ ահեղ

ախտիցն կսկիծք եւ դաժանութիւնն որդանցն թիւնաւորաց միշտ հանապազ անհնարին ցաւոց կսկծեցուցանեն, ուր լալ աչաց է անդադար, եւ կրճել ատամանց անհանգիստ, եւ ամենեւին ներումն ինչ անհնարին վարանացն ոչ գտանես. փոխանակ զի ընդ սակաւ ինչ զրկանաց մեծամեծս գործեցեր: 35 Զի եթէ զրկեցար ինչ ի նմանէ, եւ ցաւեցոյց զքեզ, քեզ պարտ էր անսալ վրէժխնդիր իշխանին, եւ դատաստանի մեծին Աստուծոյ, եւ ոչ անձամբ ինչ պահանջել քինահանութեամբ. զի ծառայ որ զլծակիցն իւր նեղիցէ եւ նա ժուժկալեալ համբերիցէ վասն ահի տեառն իւրոյ, տէրն դատի զդատաստան նորա: 36 Ապա եթէ վրէժխնդրութեան եւ դատաստանի տեառն ոչ անսայցէ, այլ ինքն իւրովի առնուցու վրէժ ի ծառայակցէն իւրմէ, զարթուցանէ զսրտմտութիւն տեառն իւրոյ, զոր եւ դատաւորք աշխարհիս ճշդիւ պահանջեն: 37 Եթէ ոք ի զրկելոցն ոչ անսայցէ վրէժխնդրութեան դատաւորին, այլ արհամարհեալ զպատիւ իշխանութեան նորա՝ իւրովին իսկ վրէժ ի զրկողէն առնուցու, տես թէ քանի՛ բարկութիւն ածէ ի վերայ նորա դատաւորն. սոյն եւ առ դատաստանն Աստուծոյ:

38 Եթէ ոք զրկիցի ի զաւրաւորէն, եւ համբերիցէ երկիւղիւ Աստուծոյ, եւ վրէժ զրկանաց ոչ ինդրիցէ ի զրկողէն, նորա Տէր է վրէժխնդիր, եւ հատուցանէ նեղչացն նորա նեղութիւն, եւ չարչարողաց նորա չարիս, եւ պահանջէ ի զրկողէն զվրէժ նորա հրով գեհեհնին եւ զանազան տանջանաւք: 39 Եւ նա որ վասն երկիւղին Աստուծոյ զրկանացն համբերէ, ընդունի զկատարեալ համբերողացն զպսակս, եւ զյաւիտենական զբարութիւնս սրբոց եւ արդարոց: 40 Իսկ որ ոչ թողու յԱստուած զվրէժխնդրութիւն զրկողին, եւ ոչ անսայցէ մնալ դատաստանի նորա, այլ յափշտակէ զիշխանութիւն վրէժխնդրութեան Աստուծոյ, եւ զքէն զրկանաց իւրոց ինքն

պահանջէ, զարթուցանէ ի վերայ անձին իւրոյ զսաստիկ սրտմտութիւն ասեղ բարկութեանն Աստուծոյ՝ չարչարել եւ տանջել զնա անողորմ եւ աններելի տանջանաւք հրով գեհենին եւ աննշոյլ խաւարաւն, ուր բազում ողբովք եւ դառն տանջանաւք կոծեսցի եւ լացցէ զահեղ աղէտիցն զնեղութիւնս, եւ ամենեւին ոչ ինչ աւգտիցի. փոխանակ զի դատաստանին վրէժխնդրութեանն Աստուծոյ ոչ հաւանեցաւ, այլ արհամարհեաց զպատիւ դատաւորութեան Աստուծոյ, եւ զդատաստանն Աստուծոյ ինքն դատեցաւ՝ քինահանութեամբ վնասելով զզրկողն իւր: 41 Եւ որպէս դատեցաւ զզրկողն, առաւել եւս բազմապատիկ տանջանաւք դատելոց է յԱստուծոյ. զի զրկողն ընդ սակաւ ինչ զրկանաց է դատելոց. իսկ քինահանն ընդ անթիւ ինչ կորստեան, եւ ընդ բոլոր ստացուածոցն ապականութեան, եւ ընդ բազում արեան հեղման է դատելոց աններելի տանջանաւք: 42 Զի թէպէտ եւ ինչք եւ տուն եւ բնակիչքն ապրեցան ի հրոյն ապականութենէ, սակայն նա զանաւրէնութիւն անձին իւրոյ կատարեաց. եւ զոր ինչ կորուսանելն կամեցաւ, ընդ ամենայնի է պարտապան պատժոց պատուհասից եւ անհնարին տանջանաց:

43 Արդ մի՛ ոք յաղգնեսցի յահեղ անաւրէնութիւնս քինահանութեան, եւ մի՛ զանձին վրէժս պահանջիցէ, այլ անսալ դատաւորին Աստուծոյ. զի Իմ եմ վրէժ-խնդրութիւնս, եւ ես հատուցից՝ ասէ Տէր^ա: 44 Բայց դու մի՛ չար փոխանակ չարի հատուցես. այլ թէ փաղցեալ իցէ թշնամին քո, հաց տուր նմա. եւ եթէ ծարաւի է, ջուր^է. եւ զչարեացն զհատուցումն ես հատուցից՝ ասէ Տէր: 45 Եւ արդ որովհետեւ Տէր է վրէժխնդիր եւ հատուցանող զրկողացն եւ զրկելոցն, ոչ ոք պարտի զվրէժ անձինն

խնդրել, եւ ոչ զքէն զրկողին պահանջել. զի այս անաւրէնութիւն առաւել եւս զանցուցանէ զհեթանոսական ամբարշտութեամբք, յորմէ ամենայն զգուշութեամբ հեռացուք, զի մի՛ ի խորխորատ կորստեանն ընդ սատանայի իջեալ այրեսցուք, եւ անլոյծ կապանաւք կապեսցուք, եւ անհրաժեշտ տանջեսցուք յաննշոյլ խաւարին:

^ա ԲՕԲ.ԼԲ 35

^է Հատ. ԺԲ 17. 20

նաց Աստուծոյ եւ ի մարգարէից՝. եւ ընդ դատարկ բանից եւ անպատեհ խորհրդոց եւ ընդ մտածութեան եմք դատելոց: 3 Իսկ զի՞նչ արասցեն որ ընդդէմ պատուիրանացն Աստուծոյ գործեսցեն եւ սակաւիկ ինչ կարծիցեն, մինչեւ յայտնի գողունիս փոքր եւ սակաւ համարեսցեն, եւ առ ոչ ինչ կարծելով զսոսկալին՝ անապաշաւ թողուցուն, եւ ոչ բեկեալ սրտիւ եւ ցաւագին անձամբ խոստովանեսցեն, եւ բազում պաղատանաւք ապաշխարիցեն. այլ չարին խորհրդովք յամենայն ինչ անխտիր մերձենան եւ ոչ ինչ համարին, եւ ասեն՝ եթէ փոքր ինչ գողունիս առտնին եւ կամ արտաքուստ ոչ խնդրէ եւ կամ դատի Աստուած: 4 Ամբարիչտ եւ սատանայական է այս բարբառ, եւ լի բազում անաւրէնութեամբ: 5 Եւ եթէ ողորմածն ընդ ուղիղ կամացն միայն զարքայութիւնն ընդունի, եւ ընդ բաժակի միոյն ջրոյ վարձս բազումս, զի՞արդ զյայտնի մեղս անհամար թողուցու:

6 Արդ մի՛ այդպիսի կարծեցուցանիցէ զքեզ սատանայ. այլ եւ եթէ միով դանկիւ չափիցին յանցանքն՝ հատեր եւ կոխեցեր զհրամանսն Աստուծոյ, եւ զամենայն պատուիրանս նորա արհամարհեցեր. զի որ միով ինչ պատուիրանացն Աստուծոյ զթիցէ, եղեւ ամենայն աւրինացն պարտապան: 7 Զի ոչ եթէ չափք ընչիցն չարացուցանեն զվէրս մեղացն, այլ հրամանահատուծիւնն¹ կորուսանէ զպատուիրանագանցսն: 8 Զի որ զհրովարտակս ոք արքունի պատառէ, ոչ միայն զքարտն փոխանակ քարտին պահանջեն ի նմանէ, զի զայն եւ սակաւ ինչ լուծայիւք մարթ էր վճարել, եւ կամ ըստ չափոյ քարտին պատժել, այլ ընդ արհամարհելոյ զհրամանս թագաւորին են տանջանք զանազանք եւ մահք դառնիք: 9 Սոյնպէս եւ Ադամայ ոչ եթէ

մեծ էին գողանքն, այլ հատումն միոյ ինչ մրգոյ. եւ արդ տես զբազում հոյս պատուհասիցն, զանիծիցն եւ զմահուցն, ոչ միայն ի վերայ Ադամայ, այլ եւ ամենայն ծննդոց Ադամայ. զի ոչ եթէ գողուն մրգոցն եղեւ պարտապան, այլ հրամանացն արարչին եւ բանի բերանոյ նորա. զի որ ասացն եթէ՛ մի՛ սպանաներ, նոյն ասաց եթէ՛ մի՛ գողանայցես: 10 Եւ ոչ եթէ փոքու եւ մեծի մեղաց խնդիր իցէ, այլ պատուիրանագանցութեան եւ հրամանահատուծեան. զոր եւ ինքն իսկ ասէ, եթէ եւ յետի նախարակիտն խնդրեսցիք. եւ եթէ լուծցի մի ինչ ի պատուիրանացն Աստուծոյ՝ փոքր կոչեսցի յարմարութեամբ: 11 Զի զոր ինչ եւ է ի վէրս մեղաց, եւ փոքր համարեսցի եւ ոչ ապաշխարեսցէ, այն են մեղք մահուչափ:

12 Տես զի փոքրիկ է հատ մանանխոյ, եւ ապա աճէ եւ ծառանայ. սակաւ է եւ խմոր, եւ զամենայն զանգուածն իւր նմանեցուցանէ. նուազ է եւ փայլակն կայծակի, այլ ի նիւթ ինչ մտեալ՝ զբազում վայրս հրդեհէ. նեղ եւ նուրբ է եւ խայթոց աւճի եւ սուղ ինչ վէրք նորա, այլ դաժանութիւն թիւնից նորա դառնատեսիլ մահ գործէ. աներեւոյթ է եւ հարուած կարճի, այլ սաստիկ ընդ ամենայն մարմինն կսկիծ արկանէ մինչեւ ի սիրտն: 13 Ո՛րչափ եւս առաւել հրաման բանի բերանոյ Աստուծոյ դառնամահ տանջանաւք տանջէ զարհամարհիչս իւր: 14 Ահա փոքր համարեցաւ Քամ զանպատկառութիւնսն ի հաւրէն, եւ եղեւ յանէծս եւ ի ծառայութիւն ամենայն զաւակաւք իւրովք: 15 Փոքր համարեցան եւ որդիքն Ահարովնի գեղձաւորութիւն սպասաւորութեան իւրեանց, եւ հուր ատար եկեր զնոսա: 16 Փոքր համարեցաւ Կայէն զանընտիրսն մատուցանել պատա-

¹ Հմմտ. Մատթ. Ի 18:
 1 Մի օրինակ՝ հրամանացն առոսնհարութիւն

է Եւ. Ի 13, 15
 զ Մատթ. Ի 26
 ՚ Մատթ. Ի 19

րագ, եւ խոտել անարգել ել յերեսացն Աստուծոյ: 17 Փոքր համարեցաւ եւ մարգարէն զհրաման հացին չուտելոյ, եւ առիւծ ի ճանապարհին երեկ զնա: 18 Եւ ամենայն որ փոքր համարեցաւ զհրամանս պատուիրանացն Աստուծոյ՝ պատիժս մեծամեծս ընկալաւ, ոչ միայն յաւիտենական տանջանաւքն, այլ յանցաւորս եւ յառժամանակեայս եւս պատժի: 19 Զի որպէս յողորմութիւնն երկու լուծայիւք զբոլոր ողորմութեանն զվարձս ընկալաւ, սոյնպէս եւ ի պատուիրանազանցութեանն թէ եւ հաւասար ոք երկու լուծայիւ մեղիցէ եւ ոչ ապաշխարիցէ, զբովանդակ պատիժս եւ զտանջանս պատուիրանազանցութեանն ընդունի: 20 Զի որ զքծուար երկաթոյ գողանալ մտաբերէ, նա թէ եւ ոսկւոյ պատահէր՝ ոչ ակն ածէր. քանզի ինքն իսկ Յիսուս ասէ. Որ ի սակաւումն անիրաւ է, եւ ի բազմիմ անիրաւ է. որ ի սակաւումն հաւատարիմ է, նա եւ ի բազմիմ հաւատարիմ է^ա: 21 Զի թէպէտ եւ թուին ոմանց սպանութիւնք մեծամեծք եւ փոքունք, այլ մի է հրամանն Աստուծոյ՝ եթէ մի՛ գողանար, մի՛ շնար, եւ մի՛ սպանաներ^բ. ահա մի է հրամանատուութիւն սակաւուն եւ մեծին: 22 Զի որ սպանանէ զթագաւոր ոք, նոյն սպանութիւն է եւ որ զաղքատն սպանանէ, եւ նոյն սպանութիւն ծերոյն եւ տղայոյն. եւ որ շնայ ընդ թագուհւոյն, նոյն է շնութիւն է եւ որ ընդ աղքատին. սոյնպէս եւ որ գողանայ ոք ոսկի, նոյն գողութիւն է եւ պատուիրանահատութիւն եւ որ զկապարն գողանայ:

23 Այլ առաւել եւս մեղադրելի է՝ որ վասն ոչընչին զհրամանն Աստուծոյ արհամարհեաց. զի որ վասն բազում ոսկւոյ զոք սպանանէ, թերեւս ասէ ոք՝ թէ յոսկւոյն խաբեցաւ. իսկ որ միոյ լուծայի զոք սպանանէ, առաւել եւս տանջանս ընդու-

նի: 24 Սոյնպէս է եւ որ սակաւուք զպատուիրանս Աստուծոյ արհամարհէ, եղկելի է եւ թշուառական եւ արժանի բազում տանջանաց: 25 Եւ եւս առաւել չարագոյն է՝ որ ընտանւոյն եւ ջերմին մեղանայ. եւ չար է սպանութիւն զոր անձին ոք առնէ քան աւտարին. զի այնչափ բորբոքեցաւ ախտ ընչասիրութեան՝ մինչեւ առ ընտանին եւ մերձաւորին ետ մեղանչել: 26 Եւ արդ մի՛ ոք ասիցէ՝ եթէ յընտանեաց անտի հատանեմ, եւ այս ոչ ինչ վնասէ. այլ գողութիւն է, եւ առաւել եւս մեղանչական է քան եթէ յաւտարացն գողանայցեն. քանզի ընտանեաց եւ սիրելեաց մեղանչեն, որպէս վերագոյն ասացի՝ եթէ չար է անձնամահութիւն քան զաւտարասպանութիւն:

27 Եւ արդ զայսպիսի մտախաբ կեղծաւորութիւն ի բաց արասցուք, եւ բազում զգուշութեամբ զպատուիրանս Աստուծոյ պահեսցուք. զի ոչ եթէ յակամայ կամաց բռնադատէ զմեզ Աստուած գործել զբարին, այլ թողու յանձնիշխանութիւն կամաց մերոց: 28 Եւ եթէ ոչ երկիւղիւ պահեսցեմք զհրամանս նորա, պահէ զամենայն յանցանս մեր ի մեծ աւր ասեղ դատաստանին եւ սոսկալի բեմբին յանդիմանութեան՝ յորժամ աթոռ դատաստանին դնի, եւ հին աւուրց նստի, եւ գետք հրեղէնք յորդեալ ելանեն, հնոցք բորբոքեալք եւ տարտարոսք խաւարայինք, լալումն աչաց եւ կրճտումն ատամանց եւ սուգ անմխիթար մեղաւորաց: 29 Արդ զայս ամենայն զմտաւ ածելով՝ զընդվայրաբանութիւնս՝ մեր դադարեցուցուք, եւ զծուլութիւնս մեր ի փոյթ դարձուցուք. հրամանաց նորա զգուշացուք, եւ զոգիս մեր մաքրեսցուք. սրբութեամբ զաւուրս մեր անցուցուք. եւ անմեղութեամբ զվախճանն կատարեսցուք. զփափաքելի դրախտն ժառանգեսցուք, եւ յանմահ բարիսն վայելեսցուք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որում

^ա Ղ.Վ.Ճ.Ժ.Գ.10

^բ Եւ.Ի.13-15

1 Մի օրինակ՝ զընդվայրագնաց բնութիւնս մեր

ժառք եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԺԵ

ՎԱՄՆ ԶԱՐ ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆ ԵՐԴՄԱՆ

1 Յոյժ չար են սովորութիւնք չարին ամենայն ուրեք. այլ առաւել եւս չար ախտ եւ սովորութիւնք անաւրէնութեանց են երգմունք. եւ այնչափ յիմարեցուցանէ ի սովորութիւն ախտին՝ մինչեւ յընդելական սովորութեանէն եւ չարիքն չարիք իսկ ոչ երեւին: 2 Որպէս եւ այժմ զբազումս տեսանեմք զոր սովորեցոյց սատանայ յերգմունս անաւրէնս. եւ ի սիրտս իւր ոք ոչ երկնչի՝ եթէ մեղս ինչ անաւրէնս գործեսցէ: 3 Թէպէտ եւ ասաց ի հնումն՝ եթէ ի Տէր Աստուած քո երգնուցուս, ոչ եթէ հրամանս ինչ երգման հաստատեաց, այլ զտղայական միտս նոցա յանուանցն ի կոտցն երգմանէն հեռացուցանել կամեցաւ: 4 Քանզի ոչ եթէ անդէն եւ անդ զամենայն կատարելութիւնս կարէին ընդունել, այլ ընդելացուցանէր որպէս յովանակս տրմուղս: 5 Եթէ ասացեալ էր թէ ամենեւին մի՛ երգնուր, թերեւս եւ չերգնուին իսկ. այլ եթէ երգնուցուս, ի տեր Աստուած քո երգնուցուս: 6 Իսկ ի նորումս Քրիստոս զամենայն հրամանս կատարելութեանն պատուիրեաց, եւ ամենեւին ի բաց եբարձ զերգմունս սատանայականս: 7 Եւ ասէ Մովսէս՝ թէ ամենեւին մի՛ երգնուցուս սուտ. այլ եւ ասեմ. ամենեւին մի՛ երգնուցուս, մի՛ յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ, մի՛ յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա, եւ մի՛ յերուսաղէմ՝ զի քաղաք է արքայի մեծի, եւ մի՛ ի գլուխ քո երգնուցուս՝ զի ոչ կարես մագ մի սպիտակ առնել կամ թուխ՞:

8 Եւ արդ տես զառաւելութիւն նորոյ պատուիրանիս: 9 Մովսէս ասաց թէ սուտ մի՛ երգնուցուս. այլ եւ ասեմ, ամենեւին

մի՛ երգնուլ, մի՛ սուտ եւ մի՛ արդար. զի երգումն արդար երբէք ոչ է, այլ ի սատանայէ է. զի ինքն Քրիստոս ասաց, եթէ որ քան զայոյն եւ քան զոչն աւելի է՝ ի սատանայէ է: 10 Եւ արդ եթէ յաթոռն Աստուծոյ չհրամայէ երգնուլ, իսկ քանի՞ գեհեհի եւ ահեղ հրոյ մատնիցին որք յԱստուած երգնուցուն. եւ եթէ ի պատուանդանն չհրամայէ երգնուլ, իսկ յո՞ր իսաւար երթիցէ՝ որ ի խաչն երգնուցու եւ ի չարչարանս նորա. եւ եթէ ի գլուխն չհրամայէ երգնուլ, յայտ է՝ թէ ոչ ես իշխան ի վերայ գլխոյ քո, այլ այն՝ որ սպիտակացուցանէ. եւ եթէ գլխոյդ ոչ ես իշխան, ո՞րչափ եւս առաւել ընկերին: 11 Իսկ որպիսի՞ տանջանաւք դատապարտեսցին որք ի մարգարէս եւ յառաքեալսն եւ ի մարտիրոսս երգնուցուն. եւ եթէ յերուսաղէմ չհրամայէ երգնուլ, յայտ է՝ եթէ եւ ոչ ի սուրբ բնակիչս նորա. եւ եթէ յերկինս չհրամայէ երգնուլ, յայտ է՝ եթէ եւ ոչ յերկնաւորն: 12 Արդ ո՞ւր է արդար երգնուլ, յորժամ ասիցէ՝ եթէ ամենեւին մի՛ երգնուլ, մի՛ յԱստուած, մի՛ յերկինս, մի՛ յերկիր, եւ մի՛ որ ինչ ի նոսա է՞. ամենեւին արգել եւ եբարձ զսովորութիւն սատանայական երգմանց: 13 Իսկ զի՞նչ. եղիցի ձեր բանն այոյն այո, եւ ոչն ոչ. եւ որ քան զայն աւելին է երդումն, այն ի սատանայէ է՞: 14 Արդ ո՞ւր է արդար երգնուլն, յորժամ ասացն՝ եթէ որ քան զայոյն եւ զոչն աւելի ոք ասիցէ՝ ի չարէն է՞:

15 Եւ արդ որ զերգումն ոք արդար ասիցէ, յայտ է եթէ զսատանայ արդարացուցանէ: 16 Քրիստոս զերգմունս ամենայն՝ ծնունդ սատանայի ասաց. բայց միայն զայս երգումն՝ որ հրամայեացն զայոյն եւ զոչն. զոր եւ իւր իսկ ի կիր արկեալ երդուաւ Աբրահամու, եւ ասէ. Այո աւրինե-

՞ Հմմտ. Մատթ. Ե 34-36:
 ՛ Մատթ. Ե 37
 ՛ Մատթ. Ե 37

՞ Մատթ. Ե 33-36

լով արհմեցից զբեզ^ա: 17 Եւ այլուր ասէ. Արդարեւ ասեմ՝ ձեզ^բ. եւ ի միւսումն ասէ. ամէն ամէն ասեմ՝ ձեզ^գ: 18 Այս է երդումն զոր հրամայեաց մեզ, եւ այսպիսի երդմամբք հաստատին, եւ վստահանային ամենայն հաւատացեալք: 19 Իսկ չարք եւ հակառակողքն ի սատանայական երդմանցն առնուն զվճիռ հաստատութեան, որպէս եւ Պաւղոս ասէ՝ եթէ Ամենայն հակառակողացն հաստատութեան վնիռ երդումնն է^դ. հակառակողաց եւ ոչ քրիստոնէից հաւատացելոց: 20 Իսկ հաւատացելոցն՝ այոյն այո է հաստատուն, եւ ոչն ոչ. եւ Աստուծոյ պաշտաւնեայն որ քան զայոյն եւ զոչն աւելի երդնուցու, թէ եւ քրիստոնեայ անուանի վասն մկրտութեանն, այլ ոչ հաւատացեալ, բայց հակառակող: 21 Որպէս քրիստոնեայք են եւ զողք, քրիստոնեայք են եւ պոռնիկք, նոյն քրիստոնեայք են եւ հակառակողք, երդմնահարք եւ երդմնակերք: 22 Իսկ հաւատացելոց այս պատուիրանապահութիւն է որ վասն երդմանս է, զոր եւ առաքեալն Յակոբոս եղբայր Տեառն յայսմանէ զգուշացուցանէ ասելով. Յառաջ քան զամենայն ինչ մի՛ երդնուցու, մի՛ յերկիմս, եւ մի՛ յերկիր, եւ մի՛ յայլ ինչ երդումնէ: 23 Եւ վասն այսորիկ ասաց, եթէ յառաջ քան զամենայն, զի երդումն է անաւրէնութիւն առաւել քան զամենայն ամբարշտութիւնս մեղաց:

24 Ահա մեղս եւ անաւրէնութիւնս զործեցին որդիքն Իսրայէլի, ոմանք չարաչար սպանութիւնս եւ պոռնկութիւնս, իսկ ոմանք զհայր եւ զմայր սպանին. ոմանք զկանայս ընկերաց յափշտակեցին. ոմանք զուստերս եւ զըստերս իւրեանց զոհեցին

դիւաց. ոմանք թողին զԱստուած, եւ կոոց երկիր պագին. եւ այսու ամենայնիւ ոչ զարթեալ սրտատութիւնն Աստուծոյ ի վերայ նոցա՝ որպէս յորժամ երդուանն եւ ստեցին. քանզի որթ կտրեցին ի տաճարին, եւ անցին ընդ մէջ քահանայքն եւ թագաւորն Սեղեկիա, եւ երդուան արքային բաբելացոց, եթէ ոչ ապստամբեմք եւ ապստամբեցին: 25 Եւ ասէ Աստուած՝ թէ Սեղեկիա որ երդմանն իմում ստեաց, ասէ՝ ահա ես հանից ընդ կառափն նորա: 26 Ապա յարոյց Աստուած զարքայն բաբելացոց ի վերայ Երուսաղէմի, եւ եկին պատեցան զաւրքն զնովաւ քաղղէացոց, զքաղաքն հիմն ի վեր արարին, զտաճարն աւերեցին, զաչս թագաւորին խաւարեցուցին, զորդիս նորա փողոտեցին, զմեծամեծս նորա սրով սատակեցին, եւ զժողովուրդն ի գերութիւն վարեցին: 27 Այս են երդման անաւրէնութիւնք առաւել քան զամենայն ամբարշտութիւնս. որպէս եւ գրեալ է՝ թէ Արդարացաւ ապստամբութիւնն Իսրայէլի առ ուխտագանցութեամբն Յուդայ^ա: 28 Ապստամբութիւնն Իսրայէլի կռապաշտութիւնն էր, եւ ուխտագանցութիւնն Յուդայ՝ երդումն Սեղեկիայ. եւ վասն առաւել երդմանն Յուդայ՝ կռապաշտութիւնն Իսրայէլի որպէս թէ արդարութիւն համարէր: 29 Զի որպէս որ սակաւ ինչ ցաւ ունիցի, եւ ապա յետոյ սաստիկ կակիծք ինչ ի վերայ հասանիցեն, առ աղէտս վերջին ցաւոցն զառաջինն որպէս առողջութիւն համարիցին, նոյնպէս եւ առաւել մեղացն եւ չարութեան երդմանն ա՛յլ անաւրէնութիւնք որպէս եթէ արդարութիւն համարէին:

30 Եւ արդ ի չար սովորութենէ արտիս այսորիկ ամենեւին իսկ մեղս չարաչարս եւ անաւրէնութիւնս ոք ոչ համարի. այլ իբրեւ զհոլր վառեալ ի բերանն զերդման սովորութիւնն այրեն հանապազ եւ

^ա Ծն. ԻԲ 17
^բ Գ՝. Գ. 25
^գ Յ՝. Ժ. 24
^դ Եբբ. 9 16
^ե Յ՝. Ե 12

^ա Եբբ. Գ. 11

ոչ զգան, այլ եւ ի հրապարակս երդնուն հանապազ: 31 Եւ յորժամ յեկեղեցին երթան մտանել ի ներքս ի յերդնուլ՝ զարթնու իմն եւ խորհի. ընդէ՞ր. զի յերդումն երթամ, ասէ. եւ որ արտաքոյն երդուաւ, բազում անգամ զայն ոչ իմանայ, եւ ոչ համարի ինչ առ ընդելական սովորութեամբ: 32 Մի՛թէ ի նե՞րքս բաւանդակեալ է Աստուած, եւ արտաքոյ ոչ. այլ նա արտաքոյ է եւ ներքոյ. եւ ամենայն որ մեղս եւ անաւրէնութիւնս առնէ, եթէ արտաքոյ գործէ եւ եթէ ի ներքս, առաջի Աստուծոյ է: 33 Եւ դու զհրապարակին երդումն մի՛ փոքր ինչ եւ ընդվայր համարիր: 34 Ի միտ առ զոր ասեմս. ամենայն սպանութիւնք եթէ արտաքոյ է, եթէ ընդվայր ինչ, սպանութիւն գործեցաւ. եւ ամենայն գողութիւնք եթէ արտաքոյ եւ եթէ ի ներքս, եւ եթէ ընդ խաղ ինչ եւ եթէ ընդվայր, գողութիւն գործեցաւ. եւ ամենայն պոռնկութիւն եթէ արտաքոյ եւ եթէ ի ներքս, եւ թէ զինչ աւրինակաւ է, պոռնկութիւն գործեցաւ: 35 Սոյնպէս եւ երդմունք ամենայն եթէ արտաքոյ երդնուն եւ եթէ ի ներքոյ, եւ կամ ընդ խաղ ինչ ընդ վայր, եւ եթէ զինչ աւրինակաւ եւ իցէ, չարութիւն երդմանն կատարի: 36 Մի՛ զայս փոքր կարծեցուցաներ. եթէ աստ երդուար եւ անդ, եթէ աստ ստեցեր Աստուծոյ եւ անդ, եթէ աստ ուրացար եւ անդ եւ ամենայն ուրեք երդուար, առաջի Աստուծոյ երդուար, առաջի Աստուծոյ ստեցեր, առաջի Աստուծոյ ուրացար:

37 Արդ զի՞նչ արասցուք զահեղ ամբարշտութիւնս ախտիս այսորիկ. զի իբրեւ զհուր հոսեցաւ ընդ ամենայն երկիր, եւ լցան բերանք ամենայն բոցով անաւրէնութեան ախտին: 38 Որք ի հրապարակս եւ երդմունք ի բերանս. մանկունք ի զբաւսանս եւ երդմունք ի բերանս. վաճառականք վաճառեն եւ երդնուն. թշնամանողքն թշնամանեն եւ երդնուն. դատախազողն դատախազէ եւ երդնու. եւ ամե-

նեցուն քան զխաւսս բերանոյն սատանայական երդումն յառաջէ. եւ ամենայն ցոփոգեացն եւ աղալեզուացն՝ չեւ խաւսք ի սրտին՝ երդումն ի լեզուն կայ պատրաստ: 39 Եւ արդ ո՞ զայսպիսիս մարդ անուանեցէ. չէ եւ չէ իսկ ասել մարդ, այլ աւճ չար եւ չարին սատանայի սպասաւոր: 40 Պիղծ է բերան այնպիսւոյն, եւ հուր ժանդահոտ ցոլացեալ ելանէ ի բերանոյ նորա հանապազ: 41 Ընդէ՞ր հանապազ առաջի Աստուծոյ հայհոյես, երդնուս եւ ուրանաս: 42 Ընդէ՞ր հուր առեր ի բերանդ այրել զքեզ հանապազ: 43 Ընդէ՞ր սուր սրեալ ի լեզուիդ ունիս՝ անդադար զքեզ խոցոտել. ո՞չ գիտես՝ եթէ երդումն տէգք սրեալ են սատանայի, եւ հանապազ որչափ երդնուս՝ ցցին ի սրտիդ քուս: 44 Երդումն կապանք սատանայի՝ կապէ զմարդիկ, եւ լուծումն ոչ գոյ: 45 Երդումն խեղդ անձին՝ որով խեղդէ զմարդիկ ի ժամ մահուն, եւ առեալ տանի ի դժոխս:

46 Եւ արդ եղբարք, երկիցուք յերդմանէ քան յամենայն մեղաց եւ քան յամենայն անաւրէնութենէ. զի քան զամենայն մեղս հեռացուցանէ յԱստուծոյ: 47 Վասն զի գիտաց անիծեալ թշնամին՝ թէ ի ժամ մկրտութեանն երդմամբ հրաժարեն յինչն, եւ երդմամբ ուրանայցեն զիս, երդմամբ հեռացին յինչն ասելով՝ թէ Հրաժարեմք ի քէն, սատանայ, հրաժարեմք ի պաշտամանէ քումմէ, հրաժարեմք ի հրեշտակաց քոց, հրաժարեմք յամենայն խաբէութենէ քումմէ. եւ դարձեալ երիցս անգամ երդուան եւ հաւատացին ի Սուրբ Երրորդութիւնն ասելով՝ հաւատամք ի Հայր, հաւատամք յՈրդի, հաւատամք եւ ի Սուրբ Հոգին, եւ կնքեցին զինքեանս երրորդական զաւրութեամբ Հաւր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգւոյն, եւ զսուրբ խաչն ի վերայ մատա-

1 Այսպէս յօրինակին. որ եւ փոքր մի գկնի աղալալեզուացն գրէ, գոր ուղղելի է աղուալեզուացն: Ճառքնսիրն աստ միայն աղուալ լեզուացն

Յիսուս. որում փառք եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԺԶ

ՎԱՄՆ ԱՐԲԵՑՈՂԱՅ ԱՆԱԻՐԷՆՈՒ-ԹԵԱՆՑ

1 Մեծ սգով եւ ցաւագին արտասուաւք պարտ է պատմել զմիտս ճառիս, եւ ցուցանել զանզեղջ չարութիւնս արբեցողացն, զանապաշաւ անաւրէնութիւնս բամբաստողաց՝ որ միշտ որովայնի իցեն պաշտաւնեայք, եւ չար դիւին արբեցութեանն կան ի հարկի: 2 Եւ են հանապազ հայհոյողք եւ արհամարհողք եւ թշնամանողք պատուիրանացն Աստուծոյ. զոր եւ Պաւղոս իսկ լալով ողբայր զթշնամիս խաչին Քրիստոսի. Որոց կատարածն, ասէ, կորուստ է. որոց աստուած որովայնն իւրեանց է, եւ փառք ամաւթն. որք գերկրաւորս միայն խորհին, եւ ոչ զվարս առաքինութեան՝ զոր յերկինս վայելեմք. եւ մեծաւ զգայութեամբ նմանեն անասնոց անմտից՝ յամենայն ժամ խոտաճարակ, զի թշնամիք խաչին են եւ չարչարանացն Քրիստոսի որկորեայքն եւ արբեցողքն՝ որ միշտ զորովայնն պաշտեն եւ ոչ զՔրիստոս, եւ անհնարին անզգայութեամբ զկեանս անցուցանեն. որոց եւ յայտնի իսկ բողոքէ մարգարէն՝ եթէ անզգամք եւ անմիտք կորիցեն:

3 Եւ ո՞ր ուրեք այնչափ անզգամագոյն անմտութիւնք կայցեն, եւ ոչ կարացն գիտել՝ եթէ մեծ պակասութիւն է կուրի որ զրկեալն է ի լուսոյ արեգական: 4 Եւ եթէ այս պակասութիւն է, պարտ է գիտել՝ թէ ո՞րչափ եւս առաւել մեծագոյն եւս պակասութիւն է եւ անհնարին կուրութիւն այնոցիկ՝ որ խաւարեալքն են ի լուսոյ պատուիրանացն, եւ վրիպեալք ի բրոց տեղեկութենէ. եւ ոչ կարեն որոշել զչարն ի բարւոյն, եւ ոչ հաւասար մի-

մեանց իմանալ: 5 Այսպիսի ինչ է զոր ասեմս. որպէս թէ ումեք դիպեացին երկու աւճք չարութոյնք, եւ զմիսն թիւնաւոր կարծիցէ եւ փախչիցի ի նմանէ, եւ ի միւսն աներկիւղ մերձենայցէ՝ որ զնոյն չարութիւն մահաբեր թիւնիցն ունիցի, եւ չարամահ սպանանիցէ: 6 Նոյնպիսիք են՝ որ զմի ի պատուիրանացն լսեն եւ պահեն երկիւղիւ, եւ զհաւասարն նորուն արհամարհեալ անարգեն, եւ նովին չարաչար կորնչին: 7 Եւ արդ այս է որով կորնչին. լուաք ի Պաւղոսէ, մանաւանդ եթէ ի Քրիստոսէ իսկ որ ասէ, թէ Գողթ եւ պոռնիկի եւ արբեցողք եւ բամբաստողք զարբայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգենք:

8 Եւ արդ ո՞ր կայցէ այսպիսի յիմարութիւն կուրութեան՝ որ զայս ամենայն ընդ մի չարութիւն ոչ համարիցի: 9 Այլ յոմանց զգուշանայ եւ պահէ, եւ զոմանս արհամարհեալ անարգէ, եւ աներկիւղ մերձենայ՝ որ ունի զնոյն չարութիւն: 10 Արդարեւ իսկ անզգամք եւ անմիտք են այնպիսիքն, եւ նման կուրացն մոլորելոց որք ընդ խաւարն խարխափիցեն. այնպէս եւ նոքա յամենայն ինչ անխտրութեամբ մերձենան, եւ լքեալք ի սաստիկ ծուլութենէն, եւ աներկիւղ գործեն զարգելեալսն ի պատուիրանացն: 11 Զի եթէ արգել զպոռնկութիւնն եւ զգողութիւնն, արգել եւ զարբեցողութիւնն եւ զբամբասանս. զի միապէս հաւասար միով հրամանաւ արգել զամենայն: 12 Իսկ զու ընդէ՞ր ի համանման հաւասարացն յոմանց իբրեւ ի չարէ աներկիւղ հեռանաս, եւ յոմանց իբրեւ ի բարի անկասկած մերձենաս. զի եթէ պիղծ է գողութիւնն եւ պոռնկութիւն, պիղծ է եւ բամբասանք եւ արբեցողութիւն. ընդէ՞ր զպոռնկութիւն զղջաս եւ ապաշխարես, եւ վասն է՞ր զարբեցողութիւնդ անփոյթ արաւալ արհամարհիցես, որք միապէս վիրաւորեն, եւ երկոքեան սպանանեն: 13 Զի ե-

*** Փլւ. Գ. 19-20

է Լ Կ. Գ. 9-10

թէ աւրէնսդիրն հաւասար չարութիւն ցուցանէր եւ համանմանս պղծութեամբ, եւ որ ասացն եթէ՝ Գողթ եւ պոռնիկի գարբայութիւն Աստուծոյ ոչ ժառանգեմ^ա, անդէն ասաց՝ նոյնպէս՝ Բամբասողի եւ արբեցողի գարբայութիւն Աստուծոյ ժառանգել ոչ կարեն^բ:

14 Եւ արդ եթէ չար է պոռնկութիւն, չար է եւ արբեցութիւն. իսկ ընդէ՞ր չերկնչիս եւ խորշիս յարբեցութենէն իբրեւ ի պոռնկութենէն. այլ աներկիւղ մերձենաս, եւ անկասկած կատարես զարբեցութեանն պղծութիւնս: 15 Ո՛չ լուար ի Պաւղոսէ՝ զի միով պատժովք պատուհասէր զպոռնիկն եւ զարբեցողն: 16 Իսկ որ համարինն եթէ զպոռնիկս դատի Աստուած, եւ զարբեցողսն ընդ նմին ոչ, այսպիսիքն յիմարեալք եւ կուրացեալք են մտաւք. զի նոյն հուր եւ նոյն վայրումն եւ նոյն տանջանք են արբեցողին որպէս եւ պոռնիկին. եւ որպէս եւ մարգարէն զվայրումն գեհնեին նշանակելով ասէր. Վայ հզարացող ձերոց՝ որ ըմպեմ զգինիմ, եւ իշխանաց՝ որ խառնեմ զգինիմ^գ. զի գինին իսկ, ասէ, այրէր զնոսա անչափութեամբ եւ արբեցութեամբ:

17 Այլ եւ ոմանք զայրելն իսկ ոչ իմանան. զաւճից չարաթիւնից բուռն հարկանեն, եւ զդառնամահ սատակումնն որ անտի է՝ ոչ իմանան: 18 Զորոց ոչ միայն զոգիսն սպանանեն արբեցութեանն զեղխութիւնք, այլ եւ զմարմինն փետեն եւ ապականեն զինւոյն նեխութիւնք, եւ հանապազ զսիրտն տաղտկացուցանեն, եւ նեղեն նողկալովն եւ շմալովն, եւ որովայնին փքալովն. եւ զողորմելի ոգիսն միշտ նեղէ եւ չարչարէ իբրեւ զթշնամի, եւ արգելեալ պահէ ի մթի եւ ի խաւարի՝ յորժամ մթերք կերակրոցն եւ ըմպելեացն ի ներքս ամբա-

րիցին, եւ ընդ ցիխ աղբոյն եւ տղմոյն որդուքն զուղիցին, եւ զկարգս աղեացն ողողիցեն, եւ զաղբաբոյն որովայնն փտեալ ապականիցէ: 19 Եւ միշտ հեծէ եւ հանապազ թառանչէ յորովայնին ծանրութենէ, եւ զժահահոտ զգայութիւնն նեխութեանն զմերձաւորսն զազրացուցանէ, եւ ի կարկառակոյտ աղբոյն յաճախութենէ զառ ի վեր փսխածք ելանեն, եւ զառ ի վայր խողխողանք արձակին, եւ շոգին աղտեալ ընդ երեսն մտանէ, եւ ընդ աւզսն տարածանին, եւ ազգի ազգի ցաւս ի մարմինն արկանէ. զսիրտն մեղկէ, զմարմինն թուլացուցանէ, զստամոքսն խանգարէ, զուղիղն ապականէ, զտեսանելիսն զիջացուցանէ, եւ զամենայն անդամսն ջրզողեցուցանէ. այլ եւ ի նեխութենէ լճացեալ աղբոյն զեռուք գեռան, եւ ճիճիք ծնանին. որոց բազում անգամ զսիրտն նեղեալ յանկարծամահ սպանանեն: 20 Արդ այս եւ այսպիսի ցաւք եւ աշխատութիւնք են մարմնոյ ի գեղխութենէ արբեցութեանն:

21 Իսկ զոգւոցն ցաւոցն զի՞նչ ասացից, եւ կամ ո՞ր բերան բաւական է պատմել զանհնարին աղէտիցն ցաւոց՝ որ ի դատաստանի մեծի ահեղ աւուրն յայտնեսցի. սոսկումն բեմբին, արհաւիրք դատաստանին, դառն դատաստանն, անողորմ տանջանք, աններելի պապակումն գեհնեին աղջամղջին, տարտարոսք ներքին եւ հնոցք վառեալք, յոր հուրն հոսեալ իջանէ յորդահոս գետոցն հրեղինաց, որ կան եւ պահին ի պահանջումն ամենայն մեղաւորաց եւ արբեցողաց: 22 Եւ եթէ մարթ էր ցուցանել յանդիման, աստէն իսկ ի տանջանս եւ ի դատապարտութեան ցուցանէր զոգիս արբեցողացն, զի միշտ ի մթի եւ ի խաւարի պահէ արբեցութեանն թմբրութիւնն, եւ իբրեւ ի յանդուրդս ինչ աղջամղջին անկեալ դնի ի մարմին. եւ միշտ նեղեալ ի գինւոյն գիջութենէ՝ թաղեալ կայ հանապազ իբրեւ մեռեալ ի գերեզմանի կիսամահ եւ տխուր. եւ որչափ ի մար-

^ա Ը Կ՞ր. Գ 10

^բ Ը Կ՞ր. Գ 10

^գ Ե՞. Ե 22

մինն թանճրութիւնն յաւելու, նոյնչափ եւ ոգին ի տկարութիւն իջանէ: 23 Եւ արդարեւ իսկ յիրաւի են յայսպիսի խաւարի արբեցողացն հոգիք, որք զտիւն ամենայն յարբեցութեան ծախիցեն, եւ զգիշերն ողջոյն ի քուն հանիցեն, եւ այգուցն յարուցեալք ծանրարթունք իբրեւ զխելագարս դանդաչիցեն, եւ չեւ երեկուն թմբրութիւնն թափեալ՝ անդէն ի նոյն դառնայցեն, եւ զճառս երկիւղի Աստուծոյ եւ վարուց առաքինութեան ոչ ճանաչեն:

24 Արդ չիցե՞ն յանլոյս խաւարի այնպիսիքն. չիցե՞ն ի միգի եւ ի մոլորութեան մեռեալք եւ թաղեալք ի բարեաց, եւ չարեացն միայն կենդանիք. որք վասն արբեցութեանն շուայտանաց մտացածին եւս բանիւք անաւրէնութեան բանս եւս յաւելեն եւ ասեն, թէ որ յարբեցութեանն ոչ գողանայ եւ ոչ պոռնկի եւ կամ սպանանէ, արբեցութեամբ միայն ոչ մեղանչէ. Այս ի մտաց թափելոց են բարբանջք, որք եւ զարբեցութեանն անուն ոչ իմանան:

25 Զի ամենայն որ արբենայ եւ սպանանէ, երկուք են չարիքն, սպանող է եւ արբեցող. նոյնպէս եւ որ արբենայ եւ պոռնկի, պոռնիկ է եւ արբեցող. իսկ անառակ՝ արբեցողք միայն են:

26 Գինեսէրք են որք յանդուգն ցանկութեամբ զհետ գինւոյն շրջիցին, եւ ի նմին յամիցեն, եւ զանէծս ոչ պատուիրանապահացն ժառանգեսցեն: 27 Որպէս եւ Սողոմոն ասէ՝ թէ Ո՞ւմ է վայ, ո՞ւմ է խոսվութիւն. եթէ ոչ այնոցիկ՝ որք յամեն ի գիւտոց, եւ որք դիտեցն ուր գինարբուցն լինիցին՞, եւ անչափութեամբ գինւոյն զեղխեալ յիմարին եւ թմբրին իբրեւ զանբան անասունս՝ ոչ գիտելով թէ Աստուած իմաստուն բանաւոր արար զքեզ, եւ դու յանառակ արբեցութեանդ թմբրիս եւ յիմարիս եւ ի մտաց անկանիս, եւ չես ի մարդկան համարի, այլ ի վայր եւս քան

զանասուն՝ անզգայացար յիմարութեամբդ եւ անբանութեամբդ, եւ ամենեւին իսկ իբրեւ զփայտ եւ զքար անզգայացար ի գինւոյն զեղխութենէ: 28 Զի թէպէտ եւ մարմին է արբելոյն, ձեռք ի գործոյն են դադարեալք, ոտքն ի գնացիցն են պարաւանդեալք, լեզուն ի խաւսելոյ համրացեալ, լսելիքն ի լսելոյ են խցեալք, աչքն ի տեսութենէն կուրացեալք, սիրտն յիմաստութենէն է յիմարացեալ, եւ ամենայն անդամաւքն է ի խաւարի՝ խելացնոր եւ մտակորոյս:

29 Այս են չարիք եւ անաւրէնութիւնք արբեցութեան՝ որք զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն, այլ ընդ պոռնիկս եւ ընդ սպանողս դատին. զի գիմաստունն ստեղծեալ Աստուծոյ՝ ի յիմարութիւն փոխեցին ցանկութեամբ գինւոյն արբեցութեան: 30 Եւ ուր ենն եւ ուր երթանն եւ ուստի գան՝ ամենեւին իսկ ոչ իմանան, զի ըմբռնեալ ունին զգայութիւնս նոցա գինւոյն թմբրութիւնք, որ յիմարեցուցանէ զիմաստութիւնս, թուլացուցանէ զթմբրութիւնն, քայքայէ զխորհուրդսն, եւ լուծանէ ի յուժոյ արութեանն գինւոյն զեղխութիւնն: 31 Եւ արդ ո՞չ է այս արժանի մեծի տանջանաց եւ ահեղ բարկութեանն ի վերուստ. զի զխաւսունն եւ զբանաւորսն անբան անասուն եցոյց արբեցութեանն զեղխութիւն: 32 Վասն որոյ Պաւղոս պատուիրէ՝ եթէ Մի՛ արքեմայք գինւով յորում գեղխութիւն է՞: 33 Զի եթէ որք ի խորանն մտանէին ի հնումն՝ գինի ամենեւին իսկ ոչ ճաշակէին, ո՛րչափ ի նորումս պարտ է պարկեշտութեամբ եւս մտանել առաջի Աստուծոյ, զի մի՛ յարբեցութենէն զեղխիցիմք, եւ յանդիմանեալ դատապարտիցիմք իբրեւ զորգիսն Ահարովնի, որ վասն զեղխութեանն հուր աւտար եկեր զնոսա, որ եղեւ յաւրինակ անառակ քահանայիցն: 34 Վասն որոյ գիրն ասէ՝ եթէ

Մ. Եւ. Ի. Գ. 29-30

Ե. Ե. Ե. 18

Անատակ է գիմի, եւ թշնամանող է արբե-
ցութիւն, եւ որ խառնակի ընդ Աս' չէ ի-
մաստունմ"։ *զի իմաստնոյն եւ ջուրն միայն
բաւական է ի դադարումն ծարաւոյն, եւ ի
պէտս խելացն զուարթութեան. քանզի
զուարթ են, ասէ, խելք ջրարբաց, եւ ա-
ռողջ են մարմինք ուժակերաց. զի եւ Տէրն
ամենայն արարածոց այսպիսի սեղանովք
յագեցուցանէր զժողովուրդն յանապատին,
եւ զգինի ամենեւին ոչ յիշեաց. զի աւրի-
նակ ամենայն աշխարհի էր լինելոց ճաշն
Քրիստոսի:*

35 Բայց զիտեմ զի ասես իսկ, եթէ ըն-
դէ՞ր ապա արար զգինին՝ զի զըմպելն ար-
գել: 36 Ոչ եթէ զըմպելն արգել, այլ զար-
բենալն. որպէս արար զկին վասն ամուս-
նութեան, եւ զպոռնկութիւնն արգել. ա-
րար եւ զերկաթ վասն երկրագործութեան,
եւ զսպանութիւնն արգել. արար եւ զգինի
վասն տկարութեան, եւ զանչափն կար-
ճեաց: 37 Ոչ եթէ զըմպելն խոտէ, այլ
զարբենալն պատուհասէ: 38 Բայց եւ գինի
իսկ ի պէտս հիւանդաց է եւ սգաւորաց, եւ
մեծի խորհրդոյն. որպէս եւ ասէ՝ եթէ գինի
սգաւորաց, եւ ուրախութիւն այնոցիկ որ ի
տրտմութեանն իցեն: 39 Իսկ որ զկենդա-
նութեան զպէտս վճարէ, հաց է եւ ջուր եւ
հանդերձ. բայց այլն ամենայն ցանկու-
թիւնք են եւ ոչ կարելորք, ընդ որ ոմանք
սովորութեամբ եւ կամաւք կապին, եւ ո-
մանք կամաւ եւ սովորութեամբ հեռանան:
40 Եւ արդ մեք մի՛ սովորութեամբ իսկ
կապեսցուք ընդ չար դիւին արբեցութեան.
այլ կամաւք հեռասցուք յորկորստութենէ
կերակրոց եւ յանառակ արբեցութենէ, ո-
րով վաւրէնս նորա ընկալցուք. զվարս
յարդարեսցուք, եւ զառաքինութիւնս յաւ-
րինեսցուք, եւ զսէր սուրբս սիրեսցուք, ի
պահս պնդեսցուք, յաղաւթս պարապե-
ցուք, յողորմութիւնս յորդորեսցուք, եւ ի
պարկեշտութիւն յաւժարեսցուք, զանձինս

արդարասցուք, եւ զողիս մեր ապրեսցուք.
զվախճանն բարի ընկալցուք, զի յանանց ի
կեանսն փառաւորեսցուք, եւ ընդ հոգե-
ղէնսն դասակցեսցուք. զփափագելի
դրախտն ժառանգեսցուք, եւ յանմահ բա-
րիսն վայելեսցուք ի Քրիստոս Յիսուս ի
Տէր մեր. որում փառք յաւիտեանս յաւի-
տենից. ամէն:

ԺԷ

ՎԱՍՆ ԱՆԱԻՐԷՆ ԹԱՏԵՐԱՑ ԴԻԻԱԿԱ-
ՆԱՑ

1 Ո՞ր երթեալ դադարեցից եւ լացից
զահեղ անաւրէնութիւնս որ զիս ճմլեցու-
ցանէ. եւ կամ ո՞ր լուեալ դաւղեցից թախ-
ծեալ մեղաւքս, եւ մաշեալ յամենայն զագ-
րալի եւ չարալուր համբաւոյս՝ որ միշտ
զսիրտ իմ գելու, եւ գալարեցուցանէ զա-
ղիս իմ եւ զորովայն իմ ողբալով, եւ հա-
նապագ հալեն եւ հեղձուցանեն զիս
տրտմութիւնքս. զի յամենայն ժամ զանա-
ռակ պղծութիւնս լսեմ, եւ զանաւրէն ամ-
բարչտութիւնս տեսանեմ: 2 Եւ ի բազում
թախանձանաց սրտի իմոյ կցեցաւ ոսկր իմ
ի հող, եւ մարմին իմ յերկիր քանցեցաւ.
զի ի լուութենէ բազում մտաց յուզու-
թեանց եղեւ իբրեւ զխուր չորացեալ, եւ
իբրեւ զպատկեր ինչ առանց շնչոյ. եւ
յափշուութենէ մտաց իմոց զիմ սխալանս յե-
տոյ ընկեցեալ մոռացայ, եւ զձերդ քննեմ
հանապագ: 3 Վասն զի լուր չար եւ համ-
բաւ զագրալի ի լսելիս մեր հասեալ հնչեն
հանապագ. յորմէ բուրէ սաստիկ ժանդու-
թիւն եւ շարաւ նեխութեան եւ փտու-
թեան. եւ հոտ չարահոտ ի վեր ցոլացեալ
տաղտկացուցանէ զսուրբ եկեղեցիս, ընդ
որ անձինք ամենայն արդարոց ահիւ հիա-
ցեալ ողբան զանաւրէնութիւնն:

4 Եւ ես լի ամենայն յանցանաւք
միշտ զդոյն հառաչեմ եւ սգամ. զի ի զագ-
րալի անաւրէնութեանց ձերոց յամենայն
ժամ թատերք սատանայականք ցնծան
խայտալով, եւ եկեղեցիք Քրիստոսի միշտ

“ Ըստ Ի 1

ողբան դառնապէս: 5 Քանզի առեալ
զմանկունս սուրբ եկեղեցւոյ՝ իւր ընծա-
յեցոյց սատանայ, պղծեալս եւ պղտորեալս
յանառակ թատերս տեսարանաց: 6 Որ
միշտ հանապազ կամի հեռացուցանել
զմարդիկ յողորմութենէն Աստուծոյ, եւ
յամենապայծառ անանց բարութեանց, եւ
տանել առնել բաժանորդս իւրոյ ահեղ ա-
ղէտիցն տանջանաց: 7 Վասն որոյ զիմոյ
բազում յանցանացն անտես արարի, ձերոյ
վշտացդ լինիմ վշտակից, եւ ողբամ զանե-
րեւոյթ վէր բեկման անձին ձերոյ. զի մեր-
ժեալ արհամարհեցէք զպատուէրս պա-
տուիրանացն Աստուծոյ, եւ առ ոտն հա-
րեալ կոխեցէք զհաւատս առաքելական ե-
կեղեցւոյ. եւ առ ոչ ինչ համարեցայք
զարբութիւնս մարմնոյ եւ արեանն Քրիս-
տոսի, զոր հանապազ ընդունիք յահաւոր
եւ ի սոսկալի սեղանոյն:

8 Եւ արդ յոյժ ընկղմեալք էք ի դիւա-
կան մոլորութենէդ, եւ գերեալք եւ գրա-
ւեալք ի խորհրդոց սատանայի. փութա-
ցայք անկանել ի դառնամահ որոգայթս
նորա, երթեալ մտանել յապականիչ թա-
տերս խաղուց, լսել զձայնս աղտեղիս խա-
բարան ականջաց, ի զագրացելոցն եւ
պղծեցելոցն յանաւրէն եւ ի չարալլուկ
կատաղանաց գուսանաց, որք միշտ
զչնորհս Հոգւոյն Սրբոյ հալածեն, եւ զմա-
հաբեր պիղծ խորհուրդ սատանայի ի
սիրտս եւ ի խորհուրդս ձեր սերմանեն.
յորմէ վառեալ լուցանի հուր ցանկու-
թեանց, եւ բորբոքեալ տոչորի բոցն ազգի
ազգի ախտիւք ի մարմինս հնազանդելոցն,
որք իբրեւ զփուշս եւ զտատասկս թաղեալ
զանձինս վիրաւորեն, եւ մթերեալ կուտեն
բեռինս դժուարակիրս ի վերայ ոգւոցն կո-
րուսելոց: 9 Եւ հուր այրիչ եւ սուր սատա-
կիչ անձանց իւրեանց ստացեալք ելանեն ի
թատերս պղծութեանց՝ եղեալ կարեւիւրս եւ
հաստախոց ի գաղտնի նետից սատանայի՝
որ չարաչար զողբս վիրաւորէ, եւ փոքր
կարծեցուցանէ զմեծամեծ անաւրէնու-

թիւնս. յորմէ պարտ էր սարսել եւ դողալ
հանապազ, եւ փախչել եւ հեռանալ բա-
զում երկիւղիւ: 10 Զի չար է սովորու-
թիւնն, չար են եւ յորդորիչք նորա՝ գինի
եւ գուսան եւ սատանայ, եւ միտք մոլո-
րեալք ցոփագնացութեամբք եւ յափրա-
նաւք վաւաշոտութեամբք, որք կամայաւ-
ժար եւ դիւրահաւան ընդունին զչար սեր-
մանս սատանայի, մանաւանդ թեթեւամիտ
եւ շուղաբարոյ ազգն անհամեստիցն կա-
նանց, երագալուր եւ դիւրահաւան եւ Վա-
ղապատիրք. որք յափրանաւք պակշո-
տեալք միշտ ի թատերան փութան աներ-
կիւղ ի տեսիլ անաւրէն խաղուցն եւ սա-
տանայական հրապարակին, ելեալ ի վեր ի
դիտակ տեղիս նստին, խորհին եւ դիտեն
զնմանիսն իւրեանց ի չարիս. որ թէպէտ եւ
գործոյն անաւրէնութեան ոչ պատահեն
առժամայն, սակայն զնետս սատակիչս
հարեալ տանին ի սիրտս, յորմէ պարտ է
առ յապա մեռանել: 11 Որպէս եւ զգազան
ինչ վիրաւորեալ ի նետից որսորդաց, որ
թէպէտ առժամայն ի հազբիցն զերծաւ,
սակայն զնետսն տարեալ մեռանի:

12 Եւ արդ ի՞նչ իւրեք դադարեցուցուք
զահեղ տոչորումն ցոլացեալ բոցոյն այնո-
րիկ. եւ կամ ի՞նչ հնարս բժշկութեան անե-
րեւոյթ վիրացն գտանել մարթասցուք. եւ
կամ որո՞վ իւրեք աւարեալ կործանեսցուք
գտեղի թատերցն պղծութեան, զորոգայթն
մահաբեր, զժողովն բազմաչար, զարուես-
տանոցն ամենայն ախտից: 13 Զի անտի
յորդորին կուսանք ի պոռնկութիւնս, ա-
մուսնաւորք ի շնութիւնս. անտի լինին
կանայք ատելի արանց, եւ արք կանանց
արհամարհելի. անտի որդիք ի հարանց
թշնամանին, եւ ծառայք ի տերանց. անտի
ձերոց անհամութիւն եւ երիտասարդաց
վաւաշոտութիւն. անտի է պառաւանց յայ-
րատութիւն, եւ աղջկամարդկացն գիշու-

1 Երկու օրինակ՝ ընդվայրապատիր... ի վերնադի-
տակ տեղիս

թիւն, եւ արանց լկտութիւն, եւ կանանց կատաղութիւն. անտի են մարդելուզութիւնք եւ կնահանութիւնք եւ մանկասպանութիւնք եւ այլ զրկութիւնք յաղագս զարդուցն պաճուճանաց. անտի են սնափառութիւնք եւ պճնութիւնք, եւ բազում մեքենայք չարարար արտից. անտի է եւ զանազան պղծութիւնք՝ զոր եւ ասել իսկ աղտեղի է: 14 Այլ եւ ուսուցանէ անձին լկտութիւն, ոգւոյ մեղկութիւն, մտաց քայքայումն, աչաց յարատութիւն, լեզուի դատարկաբանութիւն, գործոց հեղգութիւն. եւ պարապեցուցանէ յամենայն չարիս, որ ուժացեալ հեռացուցանեն ի սիրոյն Աստուծոյ, եւ մերժեալ հանեն ի քրիստոնէական կարգէ: 15 Այլ եւ զայլ եւս ազգի ազգի կերպարանս չարեաց ասել չեմ բաւական, զոր թատերքն ուսուցանեն. զամբարտաւանութիւն, զհայհոյութիւն, զնենգութիւն, զմեխմեխութիւն, զչարակնութիւն, զնախանձ, զբամբասանս. վասն որոյ զեղուն պատուհասքն Աստուծոյ ի վերայ երկրի, որ սաստիկ սրտմտութեամբն ի տանջանս դատապարտէ: 16 Ահա զայս ամենայն անաւրէնութիւնս ստանան՝ որք մտանեն ի թատերս խաղուցն, եւ աճեցուցանեն ի մարմինս իւրեանց զչար պտուղ սերմանցն սատանայի:

17 Եւ արդ ո՞ր բերան բաւական է ողբալ եւ լալ զայնպիսի աղտեղեալսն եւ զպղծեալսն. եւ կամ ո՞ր լեզու պատմել կարացէ զանթիւ աղէտիցն բազմութիւնս՝ զոր անտի ստանան. եւ կամ ո՞ր միտք ցուցանէ զահեղ տանջանացն բազմութիւնն՝ զոր պատրաստեալ է նոցա ի հոսանս հրոյ գեհենին ընդ աստուածամարտն սատանայի, որք զխաւարայինսն արտրժելով ընկալան: 18 Եւ արդ է՞ր վասն այդպիսի տանջանացդ մատնիցիս, եւ կամ զի՞նչ ի պիղծ խաղոյն ընկալարքքրանս եւ ցոփանս եւ թեթեւանս, եւ աւգուտ եւ ոչ ինչ. այլ անթիւ ահեղ աղէտից բազմութիւն: 19 Ձի թէպէտ եւ պակշոտե-

լոցն լինին ցանկալի պիղծ թատերցն տեսութիւն, որք միշտ յախտիցն ցանկութիւնսն ծիւրին եւ ծորան, այլ առողջիցն երեւի տաղտկալի պղծութիւնն եւ ամալթալի վաւաշոտութիւնն:

20 Կանայք ի բարս բողից կերպարանեալք, եւ արք ձիոց մատակախագաց, որք անաւրէն զազրաբանութեամբն եւ քան զանասունս եւս ի վայր իջանեն, եւ քան զչանց փսխածն աղտեղագոյնս եւս փսխեն զտաղտկալի բանիցն զգարչութիւնս, յորմէ շարաւ նեխութեան եւ հոտ զազրալի ելանէ, որ զանձինս երկիւղածացն զգուցեցուցանէ, եւ դիւացն է ցանկալի. զի ի մէջ այնպիսի խայտառակելոցն սատանայ գումարեալ շրջի ի վերայ: 21 Ձի ուր կատակք եւ գուսանք են եւ խաղ եւ ծաղր լկտիք, անդ եւ դեւք ընդ նոսա ի պարու անցանեն, եւ սերմանեն բազում աղտեղութիւնս ի միտս զեղխեցելոցն, եւ առաւել եւս ի մոլեգնութիւն բորբոքեն զգուսանսն՝ զպիղծ եւ զհալածողս շնորհին սրբութեան, զբորբոքիչս հրոյն ցանկութեան, զարհամարհողս պատուիրանացն, զկարապետս սատանայի խորհրդոցն, զանաւրէնս եւ զաստուածամարտս եւ զթշնամիս ամենայն արդարութեան: 22 Ձորս պարտ էր իսկ բազում քարամբք քարկոծել եւ յաշխարհէ հալածել, զնոսա առեալ զեղխելոցն ի խաղարանս զբաւանին, յորս մտանեն ողջանդամք, եւ ելանեն վիրաւորեալք. զՔրիստոս ի բաց մերկացեալք, եւ զսատանայ յանձին զգեցեալք. զՀոգին շնորհաց հալածեալ, եւ լցեալ պիղծ հոգւովն դիւաց: 23 Ձի ամենայն որք հաւատովք եւ երկիւղիւն մերձենան ի Քրիստոս, Սուրբ Հոգւովն լուսաւորին, եւ աւր ըստ աւրէ գործովք առաքինութեամբ ի վեր ելանեն, եւ մեկնեալ հեռանան յամենայն խաբից սատանայի: 24 Եւ որ պղծութեամբ թատերացն առ դեւս հպին հանապազ, խաւարին վարիւք միգապատեալք մթանան, եւ լնուն պիղծ ոգւովն սատանայի,

եւ աւր ըստ աւրէ անաւրէնութեամբ ծանրացեալք ի վայր կործանին, մինչեւ ուծացեալ հեռանան յերկիւղէն պատուիրանացն Աստուծոյ, եւ լինին աման սատանայական խորհրդոցն: 25 Եւ վասն այսորիկ առաւել ախորժելով ընթանան ի բանակետդ դիւաց, փութալ ի կոչն սատանայի՝ քան առ Քրիստոսի սուրբ եկեղեցին: 26 Զի բանակք դիւաց են թատերքն խաղոյն, եւ ամենայն անառակ եւ գուսանամով գինարբուքն, որք զեղխին եւ պակշոտին անաւրէն եւ անաստուածաբար՝ լուծեալ զսանձս լեզուի եւ զկապ բերանոյն արձակեալ ուտեն եւ շուայտանան համանգամ¹ կերակրոցն, եւ հոտն հոսեալ ի բերանոց նոցա՝ բուրէ բազում ժանտութիւնս. եւ խորհին եւ խաւսին զամենայն կամս սատանայի, եւ ոչ իմանան զչարնետս սատանայի: 27 Հարկանէ՛ եւ զվէրսն խաղաղէ, եւ չտայ իմանալ, զի մի՛ ապաշխարութեամբ բժշկեսցուք. վասն զի գող է, եւ ոչ ընդ յայտնի ճանապարհն գնայ՝ եթէ զգուշանայցեմք. այլ գաղտնի եւ զհետ արածէ, եւ անակնածելի տայ արհամարհել զմեծամեծս պատուիրանացն, եւ փոքր կարծեսցուցանէ՝ զի մի՛ զգուշասցուք: 28 Գիտէ թէ արգելեալ է ի պատուիրանացն զբան տգեղ եւ դատարկ, զբամբասանս եւ զհայհոյութիւնս. եւ առաւել հեղուն ի բերանս վաւաշ գուսանացն եւ բազում խեղկատակութիւնս եւ մորոսախաւսութիւնս, զարշաբանութիւնս, դատարկաբանութիւնս: 29 Արհամարհութիւն, ճաղութիւն եւ հայհոյութիւն հոսեն ի նոցանէն հանապազ. զի ի ծաղր եւ ի խառն եւ ի խառնախաւսութիւն դեւք փութացեալք հասանեն, եւ բերեալ ախտս բազումս ջամբեն եւ արբուցանեն՝ որք անդն շուայտանայցեն: 30 Վասն որոյ պարտ է լալ եւ ողբալ զայնպիսի անառակութիւնս, եւ մանաւանդ զկատակսն մտակորոյս՝ որ ի մէջ

լկտի բազմականացն. իբրեւ զայսահարս յափրին, ծռին, գելուն, աքսոտեն, եւ զամենեսեան աղտով բերանոյն զազրացուցանեն. զոմանս հայհոյէ, զոմանս բամբասէ, զոմանս թշնամանէ, եւ զոմանս ճաղէ, խեղութեամբ ամալթով կուրացուցանէ. ոմանց ստէ, եւ յարգանաւք սնափառեսցուցանէ. իբրեւ զշուն կատաղեալ զամենեսեան առ հասարակ խածանէ:

31 Զի՞նչ գործես, ով թշուառական. ընդէ՞ր ոչ փութաս թափել ի չարաչար ամբարշտութենէդ՝ գալ ի միտս քո. ընդէ՞ր ոչ ողորմիս ոգւոյդ կորուսելոյ. ընդէ՞ր ոչ լաս եւ ողբաս զանաւրէնութիւնս. ընդէ՞ր հուր ի հուր յաւելուս այրել դառնապէս. ընդէ՞ր ի վերայ կայծականց եւ փշոց գնաս հանապազ. զի՞ ընդ բեռինս մեղաց բեւեռիս հանապազ. հի՞մ քարավէժ եւ դարահոս լինիս ի վախից. վասն է՞ր սուր սրես, եւ նովին վիրաւորիս. զի ոչ ոք է՞ որ հրով հուր շիջուցանէ, եւ ոչ չարիւ բարւոյ հանդիպի: 32 Ո՞վ է որ փուշ տնկէ՝ եւ խաղող կթիցէ. կամ որոմն սերմանիցէ՝ եւ ցորեան հնձիցէ. եւ ոչ անառակ վարիւք ոք զՔրիստոս տեսանիցէ եւ զարքայութիւնն ժառանգիցէ. այլ ի հուր գեհենին դատապարտի ի մէջ որդանցն թիւնաւորաց: 33 Եւ որ այդպիսի անաւրէն լկտութեամբ եւ գինեմով զեղխութեամբք կեցցէ, եւ դիւական թատերաւք եւ ծաղրածու գուսանաւք վարիցի, մի՛ ամենեւին ակնկալցի ապրել ի հրոյն տանջանաց: 34 Յիշեա զբանն ահեղ, թէ վայ որ ծիծաղիցին այժմիկ, զի նոքա սգայցեն. վայ որ խնդան այժմ, զի նոքա լացցեն եւ ողբասցեն. վայ որ ըմպեն գինի յարբենալ, եւ անոյշ իւղաւք աւծանին. վայ ճեզ մեծատանց՝ զի ընկալայի աստէն զհատուցումն բարութեան ձերոյ՞. զի բազում նեղութեամբ պարտ է մտանել յարքայութիւնն Աստուծոյ: 35 Արդ Քրիստոս լալ եւ սգալ ասաց յաշ-

1 Երկու օրինակ՝ համանգամայն կերակրով

՝ ՀմԳ. Գ. Կ. Գ. 24-25:

խարհիս՞, եւ դու ծիծաղիս եւ ցնծաս, եւ ոչ վարհուրիս եւ դողաս յահեղ դատաստանացն Աստուծոյ, որ ճշմարտիւ քննէ զամենայն որ կամաւ եւ որ ակամայ, զոր ի ծուլութենէ եւ զոր ի մոռացմանէ գործէք:

36 Արդ փութա մաքրեա զանձն քո յայրատութենէդ, զլեզուդ ի դատարկաբանութենէդ, զլսելիս ի պղծալուր սովորութենէդ, եւ զմիտս քո ի մահաբեր սատանայական խորհրդոց: 37 Անկիր առաջի Աստուծոյ եւ ասա. Մեղայ յերկիմս եւ առաջի քո՞: 38 Մի՛ հեղգար ի վաստակս ապաշխարութեան՝ մինչ աւուր կայ. ահա փութա ի գիշերն յայն հասանել ահեղ եւ սոսկալի խաւարին եւ աղջամղջին: 39 Արդ ծանիր զմեղաց քոց բազմութիւն. յիշեա թէ՛ մեռանել ունիս առ վաղիւն. նկատեա զպահանջումն հոգւոյդ քո ի մարմնոյդ. եւ ած զմտաւ հանապազ զմեծ ահեղ աւր դատաստանին, զհոլը անշէջ, զխաւարն աղջամղջին, զգուբն ապականութեան, եւ զտարտարոս գեհենին, եւ զգառն ողբումն մեղաւորաց յահեղ դատաստանացն ահագին դատաւորին. ուր բանք սպառին, եւ գործքն թագաւորեն. ուր խորհրդոց եւ գործոց պահանջումն. ուր դատարկաբանին են խնդիրք, եւ անդէպ մտածութեան համարք: 40 Արդ զայս ած զմտաւ հանապազ, զայս յիշեա միշտ. յոգւոց հան եւ ողբա, հեծեա եւ լաց անդադար, զի թերեւս ապրել կարիցես յահեղ աղէտիցն տանջանաց եւ յաննչոյլ խաւարէն, եւ հանդիպել անանց բարութեանցն խոստացելոց ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որում փառք յաւիտեանս. ամէն:

ԺԸ

ԹՈՒՂԹ ՎԱՄՆ ԿՆԱԹՈՂԱՑ

1 Տէր մեր Յիսուս Քրիստոս վասն փրկական բանիցն յանդիմանութեան չար-

չարանաւք խաչեցաւ յաստուածամարտ ազգէն եւ յընդդիմակաց ժողովրդենէն: 2 Եւ այժմ նոքա որք զուղիղ բան եւ զփրկական վասն փրկական ոգւոց խաւարցին, թշնամանեալ բամբասին ի կարծելոցն իմաստնոց: 3 Այլ չէ այն իմաստութիւն, այլ իշխանութեան անիրաւութիւնս, զիմաստութիւն երկիւղ Տեառն է. եւ որ եգիտ գերկիւղն Աստուծոյ, նա եգիտ եւ զիմաստութիւն: 4 Այլ թէ իցէ եւս իմաստուն, չէ պարտ զաւգնականն իւր արհամարհել: 5 Ապա իմաստուն էր եւ Մովսէս, սակայն լուաւ խրատուն Յոթորայ. հոգեւոր էր եւ Դաւիթ, այլ պէտք եղեն եւ նմա Նաթանայ յանդիմանութիւնն. զիմաստունք իմաստնոց լսեն, եւ խոնարհք խոնարհաց հնազանդին: 6 Զի որք ուղղապէս մտաց աչաւք նայիցին ի պատուիրանս Աստուծոյ, եւ հոգեւոր վարիւք զքաղցրութիւն սրտին ստացեալ ունին ազատաբարոյ բարուցն հանդարտութեամբ, չէ պարտ արհամարհել զայսպիսի աղերսաբանութիւնս. քանզի երանելին Պետրոս ասէ՝ եթէ Արքիմաստութեամբ բնակեսցեն ընդ կանայս, իրբեւ տկար անաւթոյ արասցեն պատիւ կանանց՞: 7 Եւ ոչ ատելութեամբ ինչ հեռանալ հրամայէ. զի Ամենայն, ասէ, որ ատէ գեղբայր իւր, մարդասպան է՞. իսկ որ զկիմն իւր ատէ, անճնասպան է՞:

8 Այլ թէ վասն չքաւորութեան ոք որդւոյ առնիցէ ատելութիւն ընդ ամուսնոյ իւրոյ, չար է առաջի Աստուծոյ: 9 Զի՞նչ աւգուտ է որդիս խնդրել, եւ զոգիս կորուսանել անիրաւ ատելութեամբն: 10 Զի ոչ եթէ որդւոց խնդիր է առաջի Աստուծոյ, այլ անարատ ոգւոց: 11 Քանզի եւ մարգարէն ասէ վասն անիրաւ որդիս խնդրելոյ. որոյ վարձք իւր առ Աստուած են, այն է պտուղ որովայնի իւրոյ, եւ զա-

՞ Յ.Վ.Ժ.Գ. 20
Է՞ Ղ.Մ.Կ.Ժ.Ե. 18

Գ՞ ԸՊԵՊ. Գ. 7
Դ՞ ԸՅՎԸ. Գ. 15
Է՞ ԸՄՊ. Ե. Գ. Ե. 28:

ւակ սուրբ արձանութիւն նորա: 12 Այլ ոչ գիտէ՝ եթէ վասն առնն յանցանաց արգել Աստուած զպտուղ որովայնին, եւ կամ վասն այլ բարւոյ չետ. զի բազում որդիքն են որ բարկացուցանեն զծնողս, եւ ընդ արիւն զկեանս նոցա անցուցանեն. եւ վասն այնորիկ արգեաւք արգելու Աստուած: 13 Այլ եւ ա՛յլ անիրաւութիւն է, եթէ զԱստուծոյ ոք գործ ի մարդոյ պահանջէ. եւ անիրաւք, ասէ, զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն, քանզի անիրաւութեան ռամկաց¹: 14 Իսկ թագաւորաց եւ իշխանաց անիրաւութեան՝ պատուիրանք Աստուծոյ են յանդիմանիչք եւ արգելիչք:

15 Եւ արդ զի՞նչ աւգուտ իսկ են որդիք ոգւոց. ահա մարդ, ասէ, եւ գործք իւր: 16 Արդ ած զմտաւ զահեղ զարհաւիրս ահագին աւուրն այնորիկ, եւ մի՛ ընդդէմ ինչ կամացն Աստուծոյ առնիցես, զորս յետ սոսկալի ատենին այնորիկ մատնեսցին աղէտիցն տանջանաց. զի մի՛ ոք կարծիցէ իբրեւ զաստի ինչ չարչարանս՝ զոր երկրաւոր թագաւորք ածեն ի վերայ մահապարտացն: 17 Այլ անդ դառն լալիւն է, եւ չարաչար կսկիծք, եւ աղախարչանք յորդահոս գետոցն հրեղինաց՝ որ ի վերայն հոսեսցին, ի գուբս հրացան կայծականց հնոցին՝ ուր տանջին եւ մաշին մարմինք մեղաւորացն ի խորս տարտարոսացն եւ յաննչոյլ խաւարն, ի մէջ որդանցն թիւնաւորաց. զորոյ զչարաչար իրս աղէտիցն բանիւք ոք ոչ կարէ ցուցանել՝ զողորմելի վարանումնն, եւ զահեղ ողբումնն աններելի տանջանացն. զոր եթէ աշխարհս ամենայն մեծաւ սգով ողբասցեն, այլ եւ փայտք եւս եւ քարինք լային ի ձայն ողորմելի աշխարանաց, ոչ կարեն արժանապէս ողբալ եւ սգալ զայնոսիկ՝ որք այնմ չարատանջ գեհնին եւ աններելի աղէտիցն մատնեցան: 18 Զոր պարտ է աստէն միշտ զմտաւ ածել, եւ զգուշու-

թեամբ անցանել ընդ սահելի եւ ընդ ծփալի եւ ընդ մեղաստէր կեանս աշխարհիս: 19 Եւ անբաւ են յաւիտենականքն, պատիր եւ երազ են երկրաւորքս սիրելի, եւ տկարագոյն քան զսարդի ոստայն: 20 Ահա այսաւր եւ վաղիւ, եւ այլ ոչ եւս իցեմք. երկաւորք է հանգիստ աշխարհիս, եւ յաւիտենական են տանջանք եւ ամաւթ: 21 Ահա յայլ երկիր կայ անցանել, եւ զՏէրն փառաց կայ տեսանել: 22 Սրտիւ զսիրտ քննեսցուք, եւ աստէն մաքրեսցուք. զի յետ սակաւ աւուրց եմք երթալոց առ ահեղ եւ անխաբ դատաւորն՝ որում գաղտնիքն մեր յայտնին, եւ զխորհուրդս սրտից յանդիմանէ. յորմէ ոչ ինչ ծածկի ի ճշմարտատես եւ ի քննող ականէն:

23 Արդ երկիր յահեղ ահեղ դատաստանէն այնորիկ, եւ մի՛ այլ եւս յերկար աներեւոյթ սրովն վիրաւորիր, եւ չար ի չար յաւելուլ՝ յաններելի տրտմութիւնն յամեցուցանելով զանդամս քո. վասն որոյ պէտք են յերկար ժամանակի ապաշխարութեան եւ ընդ այդր՝ եթէ երկեղած իցես յԱստուծոյ: 24 Արդ մի՛ եւս հասուցաներ ապաշխարութիւն² քահանայից, եւ զեկեղեցի տրտմեցուցաներ եւ այլ եւս ժամանակաւք. մերձ է վախճանն հասարակաց, փութա մերձենալ առ Աստուած, եւ Աստուած մերձեսցի առ քեզ: 25 Ահա գող է աւրն մահու, գուցէ հասանիցէ տարածամ. Արթուն լերուք, ասէ, զի ոչ գիտէ՞ զաւրն եւ ոչ զժամն³, որ յանկարծակի անականկալ անկանի ի վերայ քո իբրեւ զորոգայթ:

26 Արդ երկիր դու յաւրէն յայնմանէ. փութով զղջացիր զոր գործեցերդ մինչ դեռ մերձ է ժամանակս. մի՛ պատաղիր³ երկրաւորաւքս, զի ի մաւտոյ փոխելոց եմք ի գերին քաղաքն, եւ մնան աստէն ժողովեալքս յաշխարհիս. զի ոչ բերաք ինչ

2 Թերեսու՝ աշխատութիւն

³ Մարտ. Ի՛. 42

3 Յօրինակին՝ պաղատիր

1 Թերի է պարբերութիւն բանիս

յաշխարհս, եւ ոչ տանել ինչ կարասցուք աստի. այլ մերկ մտաք յաշխարհս, եւ մերկանդամ անդրէն դառնալոց եմք: 27 Վասն որոյ միշտ զմտաւ ած զերկիւղ ահագին աւուրն այնորիկ, եւ մի՛ մոռանար զբոցն՝ որ ոչ երբէք շիջանի. եւ փութա խոտորել ի ձախոյն սատանայի, եւ լինի Աստուած ընդ աջմէ քումմէ. լուր Հոգւոյն Սրբոյ, եւ Աստուած լուիցէ քեզ յահեղ աւուրն տագնապի: 28 Մի՛ խնդրեր ի բարեխաւսութիւն զբանս շքեղ երեսաց եւ զպատիւ նախաթողոյն, յորմէ եւ վարձս սակաւ ընդունիս: 29 Այլ յիշեա եթէ գոն դատաստանք, կան տանջանք, լինի յարութիւն եւ խնդիրք ամենայն գործոց. եւ այսու երկիւղիւ հնազանդեա, զի եւ վարձս մեծամեծս ընկալցիս:

30 Մեծ է լսել ձայնի աւետարանին ի բարեխաւսութիւն մահկանացու մարդկան: 31 Լուր մարգարէական հրամանին եւ առաքելական պատուիրանացն քեզ ի բարեխաւսութիւն, եւ հնազանդեա աստուածային պատգամիս. ած զմտաւ եւ զմեղաց քոց զբազմութիւնս: 32 Մի՛ զսակաւն ուրուք պահանջեր. ի միտ առ զահագին բողոքումն պատուիրանաց՝ որ քեզ վկայեցին: 33 Ծանիր զի եւ ընդ բանիցն իցէ դատումն եւ ընդ խորհրդոյ եւ ընդ սակաւիկ ինչ քինի պահանջումն: 34 Հայեաց ի կեանս աշխարհիս՝ զի իբրեւ զստուեր անցանեն, եւ փութա յաւր ահագին դատաստանին: 35 Երկիր ի սոսկալի բեմբէն եւ յահագին դիմաց դատաւորին, եւ եկ ի զգաստութիւն. դողա ի դառն դատաստանէն եւ յանտանելի ամաւթոյն, եւ փութա զնա հաշտեցուցանել. զարհուրեա ի չարաչար տանջանացն եւ յաննշոյլ խաւարէն, եւ եկ ի լուսոյն ճանապարհ. փափագեա անբաւ բարութեանցն եւ անյագ փափկութեանն, եւ հան հալածեա ի քէն զհոգեկորոյս խորհուրդս սատանայի. հնազանդեա Հոգւոյն Սրբոյ հրամանաց, եւ բանիւ բերանոյ Աստուծոյ՝ որ ասացաւ քեզ ի

թղթիդ, զի եւ վարձ քում հնազանդութեանդ զարքայութիւնն երկնից շնորհիցէ հանդերձ անբաւ բարութեամբքն. եւ յաստիսս առողջ մարմնով պահէ ի ցաւոց, եւ քաւեալ ոգւովք ի մեղաց. եւ բովանդակ քոնգի եւ շունչ եւ մարմին անարատ ի գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի պահեսցէ՞. որում փառք եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԺԹ

ՎԱՄՆ ԱՆԱՄՆԱՄՈՒԱՅ ԵՒ ԻԳԱՅԵԼՈՅ ԵՒ ԱՐՈՒԱԳԻՏԱՑ

1 Ողբալով յիս հոգի իմ հիացեալ զարմանամ, եւ սոսկալի հիացմամբ եւ դողութեամբ անձն իմ հեծէ անդադար, առ միշտ հանապագ զմտաւ ածելով՝ թէ յորպիսի անդունդս խաւարայինս ախտից սողի իջանէ ժպրհութիւնս մեր. ընդ որոյ ախտիւ տարակուսեալ լեզու իմ տկարանայ առ ոչ բաւել ցուցանել զահեղ ախտիցն պղծութիւնս՝ որ առաւել քան զամենայն բնութիւնս մեղաց զանցուցանէ անաւրէնութեամբք. զի քան զամենայն յայտնի ամբարշտութեանցն աւագակութիւն է սա, եւ քան զգաղտնի գողութեանցն չարութիւնսն, եւ քան զամուսնացելոցն շնութիւնսն, եւ քան զկուսանացն պոռնկութեանցն պղծութիւնս, եւ քան զարիւնահեղ սպանութեանցն խողխողումն: 2 Եւ քան զայս ամենայն չար ամբարշտութիւնս մեղաց առաւել եւս ահեղ ամբարշտութիւնք եւ անհնարին պղծութիւնք այն են՝ զոր արուք ընդ արուս գործեն զազրալի անաւրէնութիւնս եւ դիւական մոլութիւնս, եւ էգք առ էգս կատարեն զանառակ զցանկութիւնս եւ զսատանայական կատաղութիւնս. եւ առաւել եւս այն է՝ յորժամ յանբան յանասունս ոք պղծիցի:

* Ը թ է . Ե 23

3 Ընդ այս եւ վերին զաւրութիւնքն հիացեալ զարմանան. ընդ այս եւ սրբոցն դասքն տիրացեալ սգան. ընդ այս ողբան եւ անձինք ամենայն արդարոց, զի զարարիչն արարածոց թշնամանեալ արհամարհեցին անաւրէն պղծութեամբք: 4 Ի սմանէ եւ Հոգին Սուրբ զարշի եւ փախչի եւ հեռանայ, եւ այլ ոչ դառնայ ի սա. եւ ապա բնակարան լինի սատանայի եւ դիւաց, եւ ողորմելի ամենեցուն: 5 Քանզի եւ ոչ մի ինչ ամբարշտութիւն հաւասարի ախտիս այսորիկ. այլ քան զամենայն դիւահարս միշտ անզգայացեալ են անձինք նոցա՝ որք մոլեկան ցանկութեամբք ի միմեանս կատաղին, արուք վաւաչոտեալք զարուացն զարուական բնութիւնն իբացուցանեն. եւ էգքն լրբեալք եւ անամաւթեալք զիգական բնութիւնն արուացուցանեն: 6 Այլ յանբան անասունսն եւս ապականեցան, որ է առաւել քան զամենայն պղծութիւնս:

7 Բայց հիացեալ զարմանամ ընդ այնչափ ներողութիւնն Աստուծոյ՝ որ ոչ վաղվաղակի փայլատակունս յերկնից իջուցանէ ի վերայ այնպիսի ամբարշտելոցն, եւ ոչ զերկիր միանգամայն հերձանէ եւ ընկղմէ զչար տղմովն զազրացեալսն. զի արտաքոյ աւրինացն պղծեցան, եւ քան զամենայն սահմանս մեղաց անաւրինեցան: 8 Զի ոչ բաւեմ ցուցանել զդառն ողբալի ախտին զեղիսութիւնսն. եւ առաւել եւս ընդ այս զարմանամ եւ հիանամ՝ յորժամ եւ կանայք եւս զայսպիսի մոլեկան կատաղութիւնս գործեն, եւ զանբանական զպղծութիւնս կատարեն: 9 Զի ի սկզբանէ այրն այր ստեղծաւ ի պէտս կանանց, եւ կինն կին ստեղծաւ ի յարանց յաւգնականութիւն. իսկ անաւրէն պակշոտութիւնքն անզգայական ախտիցն զաստուածազիր զսահմանս փոխեցին ամբարշտութեամբ. եւ զպէտս բնականս զոր պարտ էր արանց ի կանանց ընդունել, եւ կանանց յարանց, նոքա եւ յայլ աղտեղութիւնս փոխեցին, եւ

յանհնարին պղծութիւնս այլակերպեցան՝ որ է տաղտկալի ամենայն լսողաց, զոր եւ պատմել՝ յիս հիացումն արկանէ:

10 Արդ եւ դուք ի բանէս ինչ լսելով զարշեսջիք. այլ երանի թէ յիրացն տաղտկացեալ նողկայիք, զի քան զամենայն ախտս զազրագոյն է: 11 Զի առ այնպիսւոյն ոչ է աւրէն բնակել, եւ ոչ ճաշակել ընդ նմա. այլ իբրեւ ի դիւէ փախչել. զի պիղծ է ամենայն՝ յոր ինչ հասանէ ձեռն նորա, եւ քան զամենայն պղծութիւնս առաւել եւս պղծագոյն է, եւ արժանի մեծաց վրիժուց, եւ բազում շանթից հրոյ ի վերուստ: 12 Այլ առաւել եւս բազում մահաւք իբրեւ զպոռնիկս դատին այնպիսիքն աններելի ահեղ տանջանաւք: 13 Զի պոռնկութիւն թէպէտ եւ անաւրէն է եւ դիմադարձ աստուածային հրամանին, սակայն ըստ բնութեան է մեղացն խառնակումն. իսկ անասնամոլացն եւ իբացելոցն եւ արուագիտացն պղծութիւնք առաւել են քան զամենայն չարաչար անաւրէնութիւնս, եւ զարթուցանեն զբարկութիւնն Աստուծոյ եւ զսաստիկ սրտմտութիւնն: 14 Զի ամենայն մեղք, ասէ, արտաքոյ մարմնոյ են. բայց որ պոռնկիմ, յիւր մարմնին մեղանչէ՞: 15 Իսկ ո՛րչափ զազրալի է եւ դժնեալ այս մոլութիւնս, եւ անհնարին պղծութիւն քան զամենայն պոռնկութեանց. եւ արդարացուցանէ զամենայն չարաչար անաւրէնութիւնս մեղաց ըստ առաւելութեանն իւրոյ ամբարշտութեանն: 16 Որպէս եւ գրեալ է՝ եթէ Արդարացաւ կոպաշտութիւնն Իսրայելի առ ուխտագանցութեամբն Յուդայէ, սոյնպէս առաւել զեռաւ այս ամբարշտութիւնս քան զամենայն չարութիւն անաւրէնութեան ախտից, զոր եւ բանիս բերմամբ չէ հնար ի միջի կացուցանել զպղծութիւնս նոցա. վասն զի շփոթեալ փոփոխեցին զբնու-

“ Ը կ. Գ. 9. 18

է Երէմ. Գ. 11

թիւնս իւրեանց, զառնացին լինել կանացի, եւ զկանացին արանցի. եւ առաւել սողեալք յանբան անասունս ապականեցան. անաւրէն ահեղ անաւրէնութիւնք, եւ արհաւիրք եւ դողումն սոսկալիք ի միտս բանիս:

17 Արդ զի՞նչ ասացից, եւ կամ որպիսի՞ բանիւք ծանուցից զչար ախտիս դառնութիւնս. զի անդունդք ժանտահոտք բանան յախտէս, որում ոչ կարէք հանդարտել լսելեալք: 18 Զի եթէ հաւաստեալ զբնութիւն ախտին բանիւ մերկացեալ ծանուցից առ ի քաջ ի միտ առնուլ, զլեզուս իմ աղտեղեալ ապականեմ եւ տղմով շողախեմ. կամ եթէ զղջացեալ ընդ պատրուակով ասացից, ծածկի չարութիւն մոլեկան ախտիս:

19 Բայց արդ անցից ընդ պատմութիւն ախտիս ըստ ձերում լսելեացդ հանդարտելոյ, եւ մտաւք ի միտս իմաստուք զազրալի ախտին, եւ մի՛ զամենայն նեխութիւնս բանիւ ցուցանել, զի մի՛ եւ դուք տաղտկացեալք նողկայցէք առ ի չհանդարտելոյ լսելեաց. քանզի իմաստնոյն եւ մի բան բաւական է առ ի խրատ եւ ի զգուշութիւն հոգւոյ: 20 Զի զայնպիսի մոլեգնութիւնսն զոր անասնամուրքն պղծին, կամ էգք առ էգսն կատարեն եւ արուք ընդ արուս, որ ընդ միտս անգամ անցուցանէ՝ պղծութիւն է ոգւոյ, իսկ ո՞րչափ եւս առաւել գործն այրեսցէ. զի Եթէ արդարն հազիւ կեցցէ, իսկ ամբարիշտն մեղաւորն ո՞ւր գտանիցի՞: 21 Զի հուր անշէջ վառեցաւ ի մարմինս նոցա, եւ ի վեր բորբոքեալ ապականեցաւ յանման բնութիւնս. զի այրն այր էր՝ եւ ախորժեաց լինել կին, եւ զայրն լինել կորոյս. եւ կինն կին էր՝ եւ կամեցաւ լինել այր, եւ զկինն լինել կորոյս. զորս պարտ է հալածել յարանց եւ ի կանանց, զի թողին զբնական պէտս եւ յանբնական մոլեցան. զոր եւ

Պաւղոս ողբալով ասէր՝ թէ էգբ նոցա փոխանակեցին զպէտս բնականս ի պէտս անբնականս. նոյնպէս եւ արուացն թողեալ զբնական պէտս իգութեանն, բորբոքեցան ցանկութեամբ իւրեանց ի միմեանս, արուք ընդ արուս զխայտառակութիւն գործէին: 22 Որոց պիղծ խորհրդովք զչար ցանկութիւնս լցուցեալ ի մարմինս իւրեանց եւ յանբան անասունս բորբոքեցան, եւ զեղան յամենայն չարութիւնս, եւ առաւել եւս պղծեցան քան զսեղանակապուտսն եւ զգերեզմանակրկիտսն, եւ չար եւս քան զմարդասպան անաւրինեցան. զի մարդասպանն միայն զմարմինն սպանանէ, եւ զայն՝ աստ միայն. իսկ սոքա զհոգին եւ զմարմինն սպանանեն յաւիտենական տանջանաւքն:

23 Այս եւ քան զհեթանոսութիւնս ամբարշտագոյն է. եւ վասն այսորիկ բարկութիւնք ահեղ հեղուն ի յերկրի. վասն այսորիկ երկինք կամ փակին չարաչար, եւ կամ բանին խստութեամբ. վասն այսորիկ մահք տարածամք եւ զանազան պատուհասք. վասն այսորիկ ջրհեղեղք համարէնք զտիեզերս հեղձեալ կորուսին. վասն այսորիկ եւ հրացան անձրեւք կայծականց տարածեալ տեղեաց ի վերայ Սողոմայ եւ հրակիզեաց զամենայն սահմանս նորա վասն արուամուլ գիջութեանցն եւ իգական կատաղութեանցն: 24 Ո՛վ անաւրէն մոլորութիւն. ո՛վ սաստիկ կոլորութիւն եւ միգապատ յիմարութիւն. զի ի սկզբանէ սարսուռ առնու, եւ առ ահիս միտքս յիմարին, եւ ոչ կարեմ զբանս բովանդակել: 25 Ով ետես, կամ ո՞վ լուաւ այսպիսի ահեղ արհաւիրս եւ անաւրէն ամբարշտութիւնս եւ զազրալի պղծութիւնս: 26 Ով սատանայ եւ ի սկզբանէ մարդասպան, յո՞ր խաւար կամ յորպիսի՞ խորս անաւրէնութեան իջուցեր զմարդն, մինչեւ արուամուլս եւ անասնամուլս եւ իգացեալս գործես:

*** Ընդ. ԺԵ 31

‡ Հնդ. Ը 26-27

27 Եւ արդ զի՞նչ անուանեսցուք զնոսա, որք զայնպիսի մոլեգնութիւնս մոլեգնեցան. զի մարդ չէ, եւ չէ իսկ: 28 Իսկ անասո՞ւն կոչեսցուք. այլ եւ նա քան զանասունս առաւել եւս անմտագոյն գտանի, քանզի ոչ երբէք տեսանեմք զանասունս ի մարդոյ բնութիւն ախորժեալ: 29 Իսկ շունս կատաղեա՞լս անուանեսցուք. այլ եւ քան զշունս առաւել անամաւթացեալք կատաղին: 30 Զի շունք յիրեանց նմանութիւնսն ախորժին, եւ մերձեան ըստ իւրեանց աւրինաւոր բնութեանն. իսկ իգացեալքն եւ արուագէտքն եւ անաւրէն անասնամուրքն առաւել քան զշունս կատաղին, եւ զանցուցանեն զչարութիւնս իւրեանց քան զչարութիւնս դիւաց:

31 Ո՛վ ահեղ երկայնմտութիւն Աստուծոյ. ո՛վ մեծի սիրոյն եւ անբաւ երախտեաց բարերարին, որ ոչ գերկինս ի վայր կործանէ յայսպիսի ամբարշտելոցն վերայ, եւ ոչ գերկիրս ի ներքոյ հերձանէ եւ ծածկէ զապականեալսն եւ զծանրացեալսն, եւ ոչ սաստիկ փայլատակունս իջուցանէ ի վերուստ, եւ շանթիւք հրոյ խանձոտէ. այլ երկայնամտեալ ներէ մինչեւ ի ժամանակ վրէժխնդրութեան, եւ յաւր ահեղ դատաստանին: 32 Եւ արդ քանի՛ գեհենք եւ հնոցք հրացանք իցեն բաւական այնպիսի անձանց. քանի՛ տարտարոսք ներքինք եւ աղջամուղջք խաւարի ընդ այնպիսի անաւրէն գեղխութեան. քանի՛ գուբք որդնալիցք սպառնացեալ են եւ բազմութիւնք տանջանաց, զոր եւ ասել չեմ բաւական զհրեղէն գետոցն զյորդութիւնսն, որ հոսեալ իջանեն յամբարշտութեանցն վերայ, ուր են ահեղ արհաւիրք եւ լալ եւ ողբալ անդադար:

33 Արդ զի՞նչ առնիցես եղկելիդ եւ թշուառականդ զդառնութիւնդ սաստիկ յիմար¹ կուսանացն յաւուր չարաչար քո վախճանիդ, յորժամ պահանջիչք ոգւոյդ

քո անողորմք եկեալ ահագին կերպարանաւք ի վերայ քո հասանիցեն փութանակի տագնապաւ զոգիդ քո յափշտակել ընդ մարմնոյն, եւ տագնապեալ ոգիդ վարանել ահագին դողմամբ անդրէն ի ներքս դառնալ ջանայ, եւ զաւղեալ ընդ յարկաւ մարմնոյդ, եւ ոչ հանդարտեալ հայել ընդ դէմս եկելոց հրեշտակացն, որք սաստիկ սպառնալեաւք զոգիդ ի մարմնոյդ հանեալ ձգիցեն. եւ յայնժամ պատիցեն զքեզ արհաւիրք սոսկալի ահեղ ատենին, եւ երկիւղ տարակուսանաց չարաղէտիցն տանջանաց:

34 Եւ արդ զահն զայն ո՞չ զմտաւ ածեալ լայցես դառնապէս, եւ անդադար ողբալով հառաչիցես զբազմութիւն չարաչար քո ամբարշտութեանդ. թերեւս երկայնամտեալ գթասցի Տէր ի ջերմեռանդն արտասուս վշտագնելոյ սրտի քո, եւ գորովագութ ողորմութեամբ ընկալցի զպաղատանս քոյոյ հեծութեան: 35 Արդ վաղվադեա յապաշխարութիւն մինչ դեռ է մեր ժամանակս, զի մի՛ եկեալ աւերն Յափշտակիցէ, եւ ոչ ո՞ր իցէ՛ որ փրկիցէ՞: 36 Այլ փութա գերծանել ի պղծութենէդ՝ ապաւինեալ ի մարդասիրութիւնսն Աստուծոյ: 37 Թէպէտ եւ անթիւ են անաւրէնութիւնք քո, այլ անբաւ են մարդասիրութիւնքն Աստուծոյ. թէպէտ եւ չարաչար գլորեցար, այլ վաղվադեա աղաչեա գՔրիստոս՝ որ կանգնէն զգլորեալս: 38 Թէպէտ եւ գեռաթաթախ տղմով զազրացար, այլ ունիս աղբիւր արտասուաց՝ որ մաքրէ եւ լուանայ: 39 Թէպէտ եւ յաններելի աղտեղութիւնս մեղացն կործանեցար, այլ մի՛ եւս յամեր եւ մնար ի կործանմանդ, եւ գտանես թողութիւն եւ փրկութիւն: 40 Թէպէտ եւ ներկեալ նեխեցար ի սեւաթոյր ամբարշտութիւնս քո, այլ մերձեցիր առ Քրիստոս ջերմեռանդն արտասուաւք, եւ լուսաւորեալ պայծառացուցանէ զքեզ: 41 Թէպէտ

1 Այլ՞ տարակուսանացն

*** Սաղմ. Է 3

եւ սաստիկ բարկացուցեր յամելով յապահանեալ ի գնացս քո խաւարայինս, այլ կանխեա խոստովանութեամբ, եւ ընդունիս որպէս զանառակ որդին: 42 Թէպէտ եւ կարեւոր վիրաւորեցար յոտից մինչեւ ի գլուխ, այլ կարող ես բժշկել ողորմութեամբ եւ գթով տնանկաց: 43 Թէպէտ եւ կապեցար ի շղթայս սատանայի, եւ շահեալ պատեցար ի հաղբս նորա, այլ պնդութիւն պահոց եւ ջերմութիւն աղաւթից քոց ցրուէ գտոռունս մեղաց կապանաց սատանայի: 44 Թէպէտ եւ յանդունդս խաւարայինս եւ ի խորինս իջուցին գքեզ ասեղ անաւրէնութիւնք քո, այլ հայցումն եւ հառաչումն կամաւոր ապաշխարութեանդ քո հանէ ի խորին խաւարէն, եւ բարձրացուցանէ ի կամարն երկնաւոր՝ ուր արդարոցն են բարութիւնք: 45 Թէպէտ եւ ժանտահոտ պղծութեամբ եղեր բնակարան խաւարային դիւաց, արդ սրբեցիր ի զագրալի նեխութենէդ, խորգով եւ մոխրով եւ պաղատանաւք ել ի տաճարն Աստուծոյ: 46 Թէպէտ եւ չար են չարիքդ քո, այլ յաղթող են մարդասիրութիւնք նորա: 47 Թէպէտ եւ պղծագոյն քան զոհեալն եւ զմեռելոտին, այլ կարող ես մաքրեալ վարիւք առաքինութեամբ եւ հաճոյանալ Աստուծոյ: 48 Թէպէտ եւ տաղտկալի աղտովն մեղաց չարանեխ փետեցեր, զմարմինդ քո, եւ շաղախեալ ծրդեալ կաս յանաւրէնութեանդ, բեկեալ անձամբ, խոնարհեալ սրտիւ ջնջեա ի քէն զանաւրէնութիւնս քո, եւ վաղվաղակի շնորհաւք Սուրբ Հոգւոյն լուսաւորիս:

49 Բազումք մոլորեցան ի ճշմարտութենէն, եւ ապա գտին ճանապարհս փրկութեան. բազումք գլորեցան չարաչար, եւ միւսանգամ կանգնեցան. բազումք ի նահատակացն խոցեալ կիսամահ վիրաւորեցան, եւ դարձեալ յաղթութիւն գործեցին. բազումք աղքատացեալք ի նաւաբեկութենէ՝ դարձեալ մեծացան. բազումք ի խորս չարեաց ընկղմեցան, եւ միւսանգամ ար-

դարացան ապաշխարութեամբ. բազումք ի հիւանդաց յետ անյոյս լինելոյ բժշկեցան. բազում ծանրաբեռինք մեղաւք ջերմեւանդ ապաշխարութեամբ թեթեւացան: 50 Արդ եւ դու մի՛ յուսահատիր յողորմութենէ մարդասիրին Աստուծոյ. յիշեա զի բազում մաքսաւորք արդարացան, բազում պոռնիկք սրբեցան, բազում աւագակք արդարացան եւ բացին զդրունս դրախտին. եւ դու փութացիր կանգնեա ի գլորմանէդ, եւ ընկեա ի քէն զանաւրէնութիւնդ, եւ հասանես փրկութեան: 51 Մի՛ նմանիր սողոմայեցւոցն անզղջութեամբ քով, զի մի՛ ընդ նոսին հրկիզեալ այրիցիս ի հուր գեհենին. այլ Նինուէի նմանեա ապաշխարութեամբ, եւ դարձիր ի չար ճանապարհէն: 52 Ահա դեռ եւս բնակեալ է ի քեզ թշնամին անաւրէն, եւ խստացուցանէ զսիրտ քո չղառնալ ի զղջումն ապաշխարութեան. արդ ծանիր զգաղտնի նետս սատանայի, եւ փութալ գերծիր յորոգայթից նորա: 53 Ահա պահպանեալ կան գքեւ անթիւ բանակք դիւաց, եւ պատեալ պաշարեն զխորհուրդս քո՝ չխոստովանել եւ չապաշխարել. այլ ոստիր ի միջոյ նոցա իբրեւ ի հրոյ կայծականց, եւ փութալ անկիր յողորմութիւնն Աստուծոյ. ողբա ասելով. Հայր, մեղայ յերկինս եւ առաջի փո՞. մի՛ մերժեր յողորմութենէ քումմէ. յորմէ լսեմ ի ձեռն մարգարէին, թէ թողեալ լիցիմ քեզ մեղք քո: 54 Որում ողորմութեան եւ մեք արժանի լիցուք շնորհաւք եւ մարդասիրութեամբ Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

“ Գ.Վ.Ժ.Կ. 18
 Է Լ.Վ.Գ.Բ.Թ.Վ.Ժ.Կ. 13:

Ի

ՎԱՄՆ ՉԱՌՆԵԼՈՅ ՍԷՐ ԲԱՐԵԿԱՄՈՒ-
ԹԵԱՆ ԸՆԴ ԹՇՆԱՄԻՍՆ ԱՍՏՈՒԾՈՅ

1 Հանապազ գմտաւ ածեալ զարհու-
րիմ յահեղ յանցանացս այսորիկ, եւ ան-
պակաս խորհուրդք իմ յուզին. սիրտ իմ
հիացեալ երկնչի, զի հանապազ վիրաւո-
րիմ յախտէս յայսմանէ. զի յընդելական
սովորութենէն եւ վէրն իսկ վէր ոչ երեւի:
2 Չարեաւքն չարաչար խոցոտիմք, եւ ան-
հոգ եմք իբրեւ զառողջս. ընդ միշտ հիա-
ցեալ զարմանամ եւ սգամ հանապազ,
քանզի գիտեմ զվիրին չարութիւնն, գի-
տեմ լիով զվիրացն ծուլութիւնս: 3 Վասն
այսորիկ պարտ է առաւել սգալ դողալով,
եւ անդադար ողբալ զկուրութիւն յիմա-
րութեանս մերոյ. քանզի գիտեմ թէ ահեղ
բանդք եւ կապանք մեծամեծք եւ պատիժք
զանազան տանջանաց կան արհամարհո-
ղաց բանից եւ թագաւորաց աշխարհի:
4 Իսկ ո՛րչափ եւս առաւել հուր ահեղ
տանջանաց բազմութեան այնոցիկ մնաս-
ցէ՝ որ զհրաման Հոգւոյն եւ զպատուի-
րանն Աստուծոյ արհամարհեն, եւ թշնա-
մեաց Աստուծոյ բարեկամք լինիցին, որք
հանապազ զՀոգին Սուրբ Հայհոյեն եւ
տրտմեցուցանեն անաւրէն գնացիւք, եւ ոչ
դառնան եւ զղջան, այլ կան ի նմին հա-
նապազ. յորոց պարտ է աստուածապաշ-
տաց եւ քրիստոսասիրաց ի բաց հեռանալ
ըստ բանին Պաւղոսի որ ասէ. Եթէ եղբայր
անուանեալ կամ պոռնիկ իցէ, կամ ագահ,
կամ արբեցող, կամ բամբաստող, կամ յափշ-
տակող, ընդ այնպիսումն եւ հաց մի՛ ու-
տել^{***}: 5 Եղբայր անուանեցաւ՝ որ աւագա-
նին ծննդեամբն եւ սրբոյ սեղանին հաղոր-
դութեամբն լուսաւորեցաւ. եւ զի անսուրբ
վարիւք եւ անապաշաւ անաւրէնու-
թեամբք պղծեաց եւ կորոյս զսուրբ աւա-
զանին զսրբութիւնն, եւ հեռացեալ մերժե-
ցաւ ի մէնջ եւ ի սուրբ հաւատոյ քրիստո-

նէութեանն, կամ պղծեցաւ ընդ անաւրէնս
չնութեամբ աղտեղեալ, եւ կամ զագիր եւ
գարչելի անկողնեաւք ամուսնութիւն
կասկելով՝ զաւրէն խողի ընդ ցեխ եւ ընդ
տիղմ թաւալեալ, այնպիսին եթէ եղբայր
իսկ իցէ եւ կամ քոյր, կամ որդի, կամ
դուստր՝ նգովեսցի եւ մերժեսցի ի սիրոյն
եւ ի խնամոյն եւ ի բարեկամութենէ. եւ
ընդ այնպիսումն եւ հաց մի՛ ուտեր, փո-
խանակ զի դարձաւ յետս ի Քրիստոսէ, եւ
եթուք յաւագանն, եւ հաւատաց անաւրէն
խաբէութեան սատանայի:

6 Արդ ո՞յր են հրամանքս, ո՞յր են
պատուիրանքս. ո՞չ ապաքէն Միածնին
Աստուծոյ եւ թագաւորին թագաւորաց՝
զոր պատուիրեաց Հոգւովն Սրբով ի բերա-
նոյ առաքելոյն: 7 Եւ արդ թշնամանեալ
արհամարհին պատգամք Հոգւոյն Սրբոյ
եւ պատուիրանք Աստուծոյ վասն չհրա-
ժարելոյ մեր նախ յանաւրինացս սիրոյն եւ
յանարժան խնամութենէն, որ է հանապազ
պոռնկութիւն: 8 Եւ արդ որո՞ւմ ներելոյ
եւ թողութեան արժանի լինիցիմք, զի
զհրամանս եւ զպատուիրանս Աստուծոյ
կոխան արարաք. նա ընդ ազահի եւ ընդ
արբեցողի չհրամայեաց առնել բարեկա-
մութիւն, եւ մեք ընդ Հրեայս եւ ընդ հե-
թանոսս եւ ընդ հերձուածողս առնեմք բա-
րեկամութիւն եւ խնամութիւնս: 9 Եւ յո՞ր
խաւար երթայցեմք, եւ կամ ո՞ւր սուզանի-
ցիմք վասն անհնարին ծուլութեանս եւ
չարաչար սովորութեանս, որ արհամար-
հեմք զպատուիրանս Աստուծոյ. եւ կամ
ո՞ր պատասխանատրութիւն կայցէ յաւուր
ահեղ դատաստանին՝ յորժամ յանդիմա-
նեալ կշտամբիցիմք առաջի տիեզերական
հրապարակին. զի՞նչ ասիցեմք, չլուա՞ք
երբէք յումեքէ ասեմք, կամ չուսո՞յց ոք:
10 Ահա Պաւղոս բողոքէ եւ ասէ. Եթէ եղ-
բայր ո՞ք ագահ իցէ, կամ արբեցող եւ կամ
բամբաստող եւ կամ յափշտակող, ի նոցանէ,

*** Ե Կ*բ. Ե 11

1 Այսպէս յօրինակին

ասէ, որոշեալ եւ ի բաց հեռացիր. ընդ այն-
 պիսուսն եւ հաց մի՛ ուտեր^ա. այլ ելե՛ք ի
 միջոյ նոցա, եւ մեկնեցարու՛ք ի նոցանէն.
 մի՛ նաշակե՛ք, մի՛ հուպ լինի՛ք, զի հանա-
 պազ թշնամանողք են Աստուծոյ, եւ ար-
 համարհողք պատուիրանացն նորա:
 11 Ձայս յամենայն ժամ լսեմք ի Պաւղոսէ,
 մանաւանդ ի Հոգւոյն Սրբոյ՝ եթէ չէ պարտ
 թշնամեաց Աստուծոյ լինել բարեկամ^բ:
 12 Ահա եւ մարգարէն ասէ՝ եթէ՛ Ձատելիս
 քն Տէր՝ ատեցի, եւ վասն թշնամեաց քն
 տրտմեցայ. ատելութիւն կատարեալ ատե-
 ցի զնոսա, եւ եղէ նոցա թշնամի, զի զաւ-
 րէնս քն ոչ պահեցիմ^գ: 13 Ահա մարգարէն
 ուսուցանէ թէ՛ պարտ է ատել զթշնամիս
 Աստուծոյ, եւ ոչ եթէ՛ բարեկամութիւն ընդ
 թշնամիս Աստուծոյ առնել: 14 Այլ եւ
 միւս մարգարէն ասէ, եթէ՛ եւ վասն այսո-
 րիկ խորտակեաց զմաւս քն, զի թշնամեաց
 Աստուծոյ բարեկամ եղեր^դ. ահա եւ սա
 զնոյն բողոքէ՛ եթէ՛ չէ պարտ ընդ թշնամիս
 Աստուծոյ առնել բարեկամութիւն եւ
 խնամութիւն եւ լինել ատելի եւ թշնամի
 Աստուծոյ: 15 Ձայս եւ այլ մարգարէ ասէ.
 Որ ամբարտաւանն էր աչաւ եւ ագահ
 սրտիւք, ընդ նմա եւ հաց ոչ ուտէի. եւ ոչ
 բնակէր ի մէջ տան իմոյ, որ առնէր եւ գոր-
 ծէր զանարեւոտիւնս^ե:

16 Արդ զայս գիտելով եւ մեք հեռա-
 ցուք ի թշնամեաց Աստուծոյ. զի չէ պարտ
 քրիստոսասիրաց եւ աստուածապաշտից
 ընդ ատելիս Աստուծոյ եւ ընդ թշնամիս
 Քրիստոսի սէր ինչ եւ բարեկամութիւնս
 առնել. այլ ատել եւ իբրեւ զթշնամիս հա-
 մարել: 17 Կին ոք եթէ՛ զայրն իւր թշնա-
 մանեալ տեսանիցէ, ոչ միայն թշնամի

թշնամանողին լինի, այլ եւ քինանայ եւս
 ընդ նմա եւ ոխայ. մեք վասն Քրիստոսի
 չատեմք իսկ երբէք եւ չքինանամք ընդ
 գողս եւ ընդ պոռնիկս եւ ընդ բամբասողս
 եւ ընդ ամենայն թշնամիս Աստուծոյ, որ
 յամենայն ժամ բարկացուցանեն զնա ան-
 աւրէն զնացիւք: 18 Որդի զանարգիչս
 Հաւր իւրոյ անարգէ եւ թշնամանէ. եւ մեք
 զթշնամիս Աստուծոյ Հաւր մերոյ սիրեմք
 եւ պատուեմք, եւ առնեմք բարեկամու-
 թիւն ընդ նոսա: 19 Բազում ծառայք ի
 վերայ տերանց իւրեանց մեռանին, եւ մեք
 վասն Աստուծոյ Հաւր մերոյ եւ արարչի
 մերոյ ատելի եւս թշնամեաց նորա չկա-
 միմք լինել: 20 Եւ զիա՞րդ անուանիմք
 աստուածասէրք եւ աստուածապաշտք, եւ
 ակն ինչ յաւիտենական կենացն ունիցիմք.
 եւ կամ զիա՞րդ սիրիցիմք ի նման՝ որք ոչ
 սրտիւք զնա սիրիցեմք. զի Որով չափով
 չափե՛ք չափեցից անգ^զ: 21 Ձի եթէ՛ կոչէք
 զիս հայր՝ ասէ, եւ զոր ասեմն ոչ առնէք,
 որդիս կոչեցից եւ ես, եւ ի ժառանգութենէ
 իմմէ հառի արարից: 22 Ընդէ՞ր Տէր եւ
 վասն է՞ր. զի զթշնամիս իմ սիրեցիք, եւ
 զատելիս իմ բարեկամ արարէք:

23 Եւ այժմ ոչ ինչ համարին զայն
 բազումք. այլ խառն եւ անխտիր ընդ
 թշնամիս, ընդ շունս եւ ընդ գողս եւ ընդ
 պոռնիկս եւ ընդ ազահս եւ ընդ յափշտա-
 կողս ուտեմք, եւ ընդ բամբասողս եւ ընդ
 զրկողս, եւ խնամով ի տունս մեր մոծա-
 նեմք, եւ պատուեմք զթշնամանողս Աս-
 տուծոյ, եւ զորդիս մեր վնասեալ կորուսա-
 նեմք: 24 Եւ որ եւս ահագին անաւրէնու-
 թիւնք են քան զամենայն չարիս, եւ հա-
 ւասար կռապաշտութեան, որք քրիստո-
 նեայքն լինին, եւ ընդ անաւրէնան խառ-
 նակին, ամուսնանան եւս եւ հաւասար ա-
 նասնագիտաց անուանեն զանձինս իւ-
 րեանց, եւ զՀոգին Սուրբ հալածեն յին-
 քեանց եւ ի տանց իւրեանց եւ ի ծնողաց

^ա Լ Կ Գ Ե 11
^բ Ե Կ Գ Ե 11
^գ Հ մ մ Գ Ե Ս Կ Դ Թ 2:
^դ Ս Կ Գ Ե Դ Թ 21-22
^ե Ե Կ Գ Ե Դ 37
^զ Ս Կ Գ Ե Դ 5.7

^է Ս Կ Գ Ե Դ 2

եւ յեղբարց եւ յազգատոհմից իւրեանց, եւ ոչ իմանան եւ զղջանան, եւ ոչ դառնան եւ ապաշխարեն. եւ սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, եւ չտայ իմանալ՝ եթէ այս են մեղք որ մահուցափ են: 25 Վասն որոյ ոչ է պարտ յայսպիսիսն յարել եւ ճաշակել ընդ նոսա. այլ իբրեւ յաւձից փախչել ի հաղորդութենէ նոցա, գուցէ ոք ուսանիցի զգործսն: 26 Իսկ եթէ ընդ չարակն չհրամայէ հաց ուտել, ո՞րչափ եւս առաւել ընդ չարագործելն՝ որով ոգիք մեր ապականին: 27 Զի թէ ի պոռնիկ ամուսնոյն հեռանալ հրամայէ, ո՞րչափ եւս յաւտար պոռնկէն, որք զմեզ յԱստուծոյ հեռացուցանեն: 28 Զի եթէ ի դատարկէն փախչել հրամայէ, որ դատարկ եւ անգործ եւ ստահակ չըլի, ո՞րչափ եւս առաւել փախչել ի բամբասողաց եւ յարբեցողաց: 29 Զի եթէ ընդ բարկացող առն չհրամայէ բնակել՝ գուցէ ուսանիցին զճանապարհս նորա, ո՞րչափ եւս առաւել ի նոցանէն հեռանալ՝ որք զԱստուած բարկացուցանեն հանապազ:

30 Ընդէ՞ր աւտար չարեաւքդ չարչարիցիմք, եւ ընդ այլոց մեղացն դատապարտիցիմք. տես որ զհանդերձս մաքուրս ոք ունիցի, եւ առաւել չփիցի ընդ այնոսիկ՝ որ տղմովն իցեն շաղախեալք, ո՞չ ապաքէն եւ նա ընդ նոսա շաղախեալ ապականիցի. նոյնպէս եւ որ սրբութիւն իցէ ստացեալ, եւ ընդ ազահս եւ ընդ յափշտակողս եւ ընդ ամենայն շաղախեալս մեղաւք սէր եւ բարեկամութիւնս առնիցէ, ի պղծոցն պղծութենէ զսրբութիւնն իւր ապականէ: 31 Ապա եթէ ոք նեխեալ եւ փտեալ եւ չարահաւտ վիրաւք զոք տեսանիցէ, չկամի եւ ոչ ի մահիճսն յարել. իսկ մեք ընդ անաւրէնսն եւ անկնունքսն խառնակիմք, եւ ընդ հերձուածողսն՝ որ եւս չար քան զնեխութեան եւ փտութեան ի նոցանէ բուրէ մեղացն ծանրութիւն՝ որ զմարմինս մեր եւ զոգիս պղծեալ ապականէ, եւ հանէ յարքայութենէն, եւ սատանայի եւ դիւաց առնէ ժառանգակից, որ զՔրիստոս բարկա-

ցուցանեն յանաւրէն անկողինս պղծելով: 32 Իսկ քրիստոնեայք նոքա են՝ որք զհրամանն Քրիստոսի պահեն եւ առնեն հանապազ:

33 Այլ քրիստոնեայքն միշտամեղք որք ընդ անաւրէնս վաւաչին, եւ քան զհեթանոսս առաւել եւս դատապարտին: 34 Ծառայ, ասէ, որ գիտէ զկամս տեառն իւրոյ, եւ ոչ առնէ, արբցէ գաճ սաստիկ՞. եւ Պաւղոս ասէ. Եթէ եղբայր ո՞ք անուանեալ՝ կամ ազահ իցէ, կամ կոպարիշտ, ընդ այնպիսումն եւ հաց մի՞ ուտելէ: 35 Ահաւասիկ ընդ կոպարիշտս համարի զայնոսիկ երանելին Պաւղոս՝ որք ընդ անաւրէնս կամաւք յարածամ պոռնկին, եւ ամուսնութիւնս համարին. զթշխատութիւնն պատուեն, եւ զաւագանն եւ զլուսաւորութիւնն Քրիստոսի անարգեն. եւ ոչ իմանան թէ չէ նմանութիւն լուսոյ խաւարի, եւ ոչ Քրիստոսի ընդ սատանայի, եւ ոչ բաժին հաւատացելոյն ընդ անհաւատին: 36 Արդ եթէ սիրելի ես Քրիստոսի, ատեա զթշնամիս նորա. եթէ բարեկամ ես Քրիստոսի, թշնամի լեր ատելեաց նորա. զի ամենայն որ անաւրէնութիւն գործէ, արհաւիրէ զպատուիրանս նորա, եւ թշնամի է նա Աստուծոյ. որ սրտիւք աստուածապաշտ է՝ մերժի եւ հեռանայ ի նմանէ որպէս ի թշնամոյ, թէպէտ եւ կարի սիրելի ոք է, եւ կարեւոր յընտանեաց:

37 Մեծ առաքինութիւն է որք նահատակին եւ մերժին յարհամարհողացն Աստուծոյ, եւ լինին թշնամիք թշնամանողաց նորա. ընդ որոց կան հատուցմունք մեծամեծք եւ պարգեւք զանագանք եւ պատիւք ընդ մերձաւորս Աստուծոյ: 38 Աղէ հարց ընդ թագաւորս աշխարհիս, եթէ զոք ի ծառայիցն տեսանիցէ՝ որ թշնամի թշնամեաց նորա լինիցի, տես քանի վայելչութեամբ պատուով փառաւորէ զնա առաջի մեծա-

“ Գ.Վ.Ժ.Բ 47
 † Ը.Կ.Պ.Ե 11

մեծաց իւրոց: 39 Իսկ եթէ լսէ եթէ ծառայ ոք թագաւորին սէր ընդ թշնամիս նորա առնիցէ, եւ բարեկամութիւն ընդ նոսա զնիցէ, ի միտ առ թէ քանի գանիւք եւ բանդիւք եւ զանազան տանջանաւք մաշեսցէ, եւ չար մահուամբ յաշխարհէս բառնայցէ: 40 Իսկ մեք որո՞ւմ ներելոյ եւ թողութեան արժանի լինիցիմք, եթէ սէր եւ բարեկամութիւնս ընդ թշնամիս Աստուծոյ առնիցիմք, որք հանապազ անաւրէն զնացիւք հայհոյեն եւ թշնամանեն զնա: 41 Յորոց պարտ է բազում երկիւղիւ զգուշանալ ի սեղանոյ եւ ի սիրոյ նոցա. քանզի յանաւրէնութեանց են կերակուրք եւ յափշտակողաց եւ գողոց. պիղծ են կերակուրք պոռնկաց եւ բամբասողաց. առիթ յաւիտենական տանջանացն են արբեցողացն խրախճանք, եւ մարդագոհիցն արեամբ շաղախեալ են ազահացն սեղանք, եւ են անսուրբ, եւ ապականիչ են կերակուրք ամենայն անաւրինաց եւ ապստամբողաց յԱստուծոյ, յորոց եւ Պաղոս պատուիրէ հեռանալ. զի թէ մատուցողն պիղծ է, առաւել գոհն նորա պիղծ է. եւ որոց վարքն անսուրբ է, անսուրբ են եւ կերակուրք նոցա: 42 Եւ դու եթէ սրտիւ ես աստուածապաշտ, մերժեա եւ հեռացիր ի սեղանոյ եւ ի սիրոյ նոցա: 43 Տես զի եւ դատաւորք աշխարհիս գոր եւ ընդ գողս եւ ընդ սպանողս գտանեն, ընդ նոսին եւ դատին, մանաւանդ զբարեկամս եւ զվանատուրս նոցա: 44 Վասն որոյ եւ մեք հեռացուք ի նոցանէն զոր Աստուած է դատելոց. զի մի՛ եւ մեք ընդ նոսին դատեսցուք յահեղ հուր գեհենին եւ աններելի տանջանաւք:

45 Եւ արդ զայս ամենայն իմացեալ ի բաց եղիցուք ի բարեկամութենէ Հրէից եւ հեթանոսաց եւ հերձուածողաց, գողոց եւ սպանողաց, պոռնկաց եւ բամբասողաց, յարբեցողաց եւ յազահաց եւ յափշտակողաց. եւս առաւել յայնցանէ՝ որ յանապաշաւ չարիսն իցեն զագրեալ եւ ընդ անաւ-

րէնս՝ ամենեւին ի բաց մեկնեսցուք. զի չէ միաբանութիւն արդարոյն ընդ անաւրինին. զի թշնամի է արդարութիւն ընդ անաւրէնութեան: 46 Զի՞նչ միաբանութիւն է լուսոյ ընդ խաւարի, եւ կամ զի՞նչ կայ հաւատացելոյն ընդ անհաւատիմ՞. զի հաւատացելոց Տէր է բաժին, եւ անհաւատիցն հուր է ժառանգութիւն: 47 Եւ կամ զի՞նչ նմանութիւն է տանարի Աստուծոյ եւ մեհեմաց՞. զի քրիստոնեայն տաճար է բնակութեան Աստուծոյ, եւ անաւրէնն բազին է դիւաց: 48 Նոյնպէս եւ ամենայն անաւրինեալք մեղաւք մեհեանք սատանայի են եւ բնակարան դիւաց: 49 Ահա այս են բաժինք եւ սահմանք եւ որոշմունք, եւ գատուցանեն զմեզ յանաւրինաց սիրոյ: 50 Ո՞ւր է զի աղանիք ընդ ազաւաւս բնակեսցեն, եւ գառինք ընդ գայլս մակաղեսցեն, եւ կամ խառնուրդք միաբանութեան դիւաց պղծոց եւ լուսեղէն հրեշտակաց լինիցին: 51 Այլ սուրբք զսուրբս խնդրեն, եւ անաւրէնք յանաւրէնս յարին. զի ամենայն հաւ, ասէ, յերամս իւր իջանէ, եւ մարդ զնմանիս իւր խնդրէ: 52 Վասն որոյ եւ մեք զսուրբս խնդրեսցուք եւ ի սուրբս յարեսցուք. զսուրբս պատուեսցուք, զառաքեալս սիրեսցուք եւ բարեխաւս արասցուք, եւ ի շնորհաց եւ յողորմութենէ եւ յաղաւթից մի՛ զանգիտեսցուք. եւ արժանի լիցուք ընդ նոսին խոստացեալ աստուածային բարութեանցն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որում փառք յաւիտեանս. ամէն:

ԻԱ.

ՎԱՍՆ ԱՀԵՂ ՀԱՐՈՒԱԾՈՅ ԿԱՐԿՏԻ

1 Բազում կերպարանք են պատուհասից սպառնալեաց Աստուծոյ՝ զոր յաւգուտ եւ գթութիւն մեզ մատակարարէ. զի թէպէտ եւ դէմք իրացն ցասման են նշանակ, այլ առ մեզ զգութ հայրենի խնամոցն ցու-

“ Բ Կ Թ . Գ 14
 է Բ Կ Թ . Գ 16

ցանէ: 2 Զի յորժամ արհամարհիցեմք զպատուիրանս նորա, եւ յանցանք ինչ յանցանիցեմք ըստ կամաց անձանց մերոց զնալ, առ սակաւ սակաւ ներէ եւ երկայնամտէ, ակն ունելով դարձի ապաշխարութեան: 3 Եւ յորժամ ոչ երկիրդիւ գեհենին, եւ ոչ փափազանաւք անանց բարութեանցն չփութամք յապաշխարութիւն, կամի փոքր մի զարթուցանել զգանդաղութիւն ծուլութեան մերոյ ի ձեռն սուղ ինչ պատուհասից առ ի խրատ եւ ի զգուշութիւն. զի իւրաքանչիւր ուրուք սրտի հանդէս արարեալ՝ ծանիցէ զանաւրէնութիւնս զնացից իւրոց, եւ զերծեալ հեռասցի ի չար սովորութենէ մեղացն, եւ ապրեսցին յահեղ աղէտից տանջանացն: 4 Ապա եթէ զայս եւս արհամարհիցեմք, եւ ոչ փութանայցեմք զԱստուած հաշտեցուցանել ապաշխարութեամբ, եւ զայլ եւս ճաշակս դառնութեամբ պատուհասից տայ մեզ ըմպել, եւ հեղու թափէ ի վերայ մեր զահեղ պատուհասիցն բազմութիւն, եւ զհազգին մրուր բարկութեան իւրոյ արբուցանէ մեզ չարաչար սպառնալեաւք. զի յառաջագոյն ոչ փութացաք հաշտեցուցանել զնա ի ձեռն խրատոյ գաւազանին:

5 Զի թէ էր Փարաւոնի առաջին պատուհասին խրատեալ, զտասն եւս հարուածոցն զճաշակն ոչ ընդունէր. եւ ժողովուրդն Ամովսայ մարգարէին եթէ առաջին պատուհասին էր ապաշխարեալ, զցաւս ատամանց եւ զդալուկն եւ զմարխն եւ զկարկուտն եւ զսաստիկ երաշտութիւնն եւ զսոսկալի սովն եւ զհարուածս չարաչարս եւ զմահս տարածամս ոչ ճաշակէր: 6 Վասն որոյ պարտ է զգուշանալ յիւրաքանչիւր ի չար ճանապարհէն, զի մի՛ այլ եւս բազմութիւնք չարաչար պատուհասիցն յաւելցին ի ձեզ: 7 Քանզի յորժամ անաւրէնութիւնք մեր առաւելուն, յայնժամ պատուհասքն զեղուն ի մեզ: 8 Այլ նախախնամութիւնն Աստուծոյ եւ զայն եւս խնամով ածէ ի վե-

րայ մեր. զի յորժամ մոռանայցեմք զերկիրդն Աստուծոյ, եւ ի չարիսն յորովիցեմք, ոչ անդէն ի մեղսն կամի անապաշաւ զոք կորուսանել, այլ շնորհէ ժամանակ ապաշխարութեան: 9 Ապա եթէ ոչ ապաշխարեմք, եւ այլ եւս յանձինս մեր խնայէ վասն դարձի, եւ հարկանէ զանդաստանս մեր կարկտիւ, կամ մարախով եւ կամ այլ ինչ պատուհասիւք, զի ծանուցեալ զյանցանս մեր ապաշխարեսցուք: 10 Ապա եթէ եւ այնպէս ոչ ապաշխարիցեմք, հարկանէ վասն մեր զանասունս մեր պէսպէս հարուածովք իբրեւ զպատժապարտ, զի մեք ի զեղջ եկեսցուք: 11 Ապա թէ եւ այնպէս ոչ ապաշխարիցեմք, կամ փակէ զերկիրն ի վերայ մեր դժնդակ երաշտութեամբ, կամ բանայ չարաչար յորովութեամբ յապականութիւն: 12 Ապա եթէ այնպէս ոչ ապաշխարիցեմք, չարժեալ զերկիր դողացուցանէ ի ներքոյ մեր, եւ իբրեւ ձայնիւ բարբառի ծանուցանել զյանցանս մեր. այլ ոչ ընկղմէ վասն դարձի ապաշխարութեան: 13 Ապա թէ եւ այնպէս ոչ ապաշխարիցեմք, այնուհետեւ առաքէ յանձինս մեր ախտս չարաչարս, կամ մահս տարածամս, կամ խեղդութիւն մարմնոյ, կամ ցաւս անբժշկելիս, կամ լլկումն դիւական, եւ պէսպէս ախտաժէտութիւնս, որպէս եւ Պաւղոս ասէ՝ թէ Վասն այնորիկ եմ ի ձեզ բազում հիւանդիւ եւ ախտաժէտիւ, եւ շատ եւս տարածամն ցնցեցեալի՞: 14 Վասն որոյ պարտ է ձեզ միշտ պատուհասիւ դառնալ եւ ապաշխարել, եւ մի՛ զհոյս բազումս եւ չարաչարս ընդունել զպատուհասիցն, եւ յետ այնորիկ զհուրն անշէջ եւ զտանջանսն յաւիտենից:

15 Եւ արդ իւրաքանչիւր ոք զխեղճ անձին իւրոյ քննեսցէ, եւ զբազմութիւն յանցանաց իւրոց ծանիցէ, եւ մի՛ զԱստուած անիրաւ ոք կարծիցէ ի հեղուլ զցատումն սրտմտութեան իւրոյ. այլ տուր զո-

հույսը և ներող եւ արդար դատաւորութեան նորա, զի զոր ինչ Աստուած գործէ՝ ոչ եթէ բարկութեան ինչ նշանակիչ է, այլ ողորմութեան: 16 Ահա ջրհեղեղն համալուծեցաւ ամենայն աշխարհի՝ նշանակ էր ողորմութեան եւ ոչ բարկութեան. զի իբրեւ ոչ կամեցան զղջանալ եւ ապաշխարել տապանագործ քարոզութեամբն Նոյի, որ ձայնիւ ուրագին հնչեցուցանէր յամենեցունց լսելիս, ի ձեռն արագահաս մահուն յանթիւ մեղացն կարճեցան. թէպէտ եւ սաստիկ տանջանս ընկալան վասն գործոցն չարեաց, այլ զոր ի վաղիւն գործել կամէին՝ ի ձեռն մահուն ապրեցան. եւ յայտ է՝ եթէ ողորմութեան նշանակ եղեւ ջրհեղեղն նոցա, որք ոչն կամեցան զղջանալ եւ ապաշխարել: 17 Զսոյն եւ առ սոդոմայեցուցոցն իմացիր. զի ոչ եթէ ի բարեգործութեանց ինչ կործանեցան ի ձեռն հրացան կայծականց, այլ ի սաստիկ անաւրէնութեանցն եւ ի ժանտագործ գնացիցն. զի բանտարգելեալք էին յամենայն զագրութիւնս, որք յարագ մահուն ապրեցան ի բազում պղծութեանց:

18 Այլ ի ձեզ իբրեւ յորդիս մատուցեալ է Աստուած ի խրատել ի բժշկել, եւ ոչ վիրաւորել. այժմէն յայտնել զանաւրէնութիւնս ձեր, եւ ոչ պահել յաւիտենական ամաւթոյն տանջանաց: 19 Հարկանէ վասն ձեր զանդաստանս ձեր, զի անձինք ձեր ի գեղջ եկեցեան: 20 Այլ թերեւս չար ախտիւն ազահութեան ընչաքաղց եւ աւգտաժողով էիք, եւ կարծել կամեցաւ. եւ կամ ի ցոփագնացս ինչ ցանկութեամբ յափրացեալք, եւ ի ձեռն կարաւորութեանցր ցածուցանել կամեցաւ. եւ կամ ի լրութենէ հացալիցք եւ մարմնապարար յափրութեամբք յոռացեալք ինչ մոռացայք զերկիւղն Աստուծոյ, եւ արդ ի ձեռն սուղ ինչ նեղութեան եւ կարաւորութեան յիշէք, խնդրէք եւ աղաչէք զնա. եւ կամ մեղաւք ինչ բարկացուցանէք զնա, եւ զարթոյց զձեզ յապաշխարութիւն. ահա եւ ձեզ ցա-

սումն պատուհասիդ նշանակ է ողորմութեան, եւ ոչ բարկութեան: 21 Այլ ողորմութիւն ի դէմս ցասմանդ ցուցանելոյ՝ բազմութիւնք մեղաց դադարեն:

22 Այլ հանդէս արարէք խորհրդոց, եւ քննեցէք զսիրտս ձեր, եւ գտէք զբազմութիւն յանցանաց, վասն որոյ գեղուն յորդութիւնք պատուհասից ի վերայ երկրի. զի չարն սատանայ միշտ ի չարիսն յորդորէ, եւ ի միտս մեր փոքր կարծեցուցանէ, զի մի՛ ապաշխարեսցուք. եւ մեր անմտաբար արհամարհեալ չնչին ինչ զմեղս համարելով, դիզեալ կուտէ ի վերայ մեր շեղջք շեղջք մեղացն: 23 Զի ոմանք նեղեն եւ կտրեն զսահմանս անդաստանաց ընկերին, գորմէ մարգարէն ասէ. Վայ որ շինէ գտում առ տում եւ ոչ իրաւամբ՞. եւ սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի՛ ապաշխարեսցեն: 24 Եւ ոմանք զվարձս վարձկանաց հատանեն, որք ընդ արիւնահեղան համարին. եւ սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի՛ ապաշխարեսցեն: 25 Եւ ոմանք զպտուղս եկեղեցոյ չարակնեն եւ խաբեն զԱստուած, եւ զընտիր ընտիր խաշանց, զկալոյ եւ զհնձանի անձանց իւրեանց չարակնեն, եւ խաբեն զԱստուած, եւ զխոտանն եւ զանաւգուտն Տեառն մատուցանեն. որում եւ մարգարէն ասէ. Անիծեալ լիցի մարդն որոյ ընտիրն կացցէ, եւ զարատաւորն Տեառն մատուցանիցէ. որով եւ Կայէն անիծեցաւ. եւ սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի՛ ապաշխարեսցուք: 26 Եւ ոմանք ընդ վայրած լեզուաւք ի բամբասանաց ոչ դադարեն՝ գաղտ զընկերէն խաւսելով, որոյ եւ ասէ. եթէ որ ի մարմնոյ Տեառն հաղորդի, եւ չար զընկերէն խաւսեսցի, երկնաւոր սուրն շողացի ի շրթունս նորա. եւ սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի՛ ապաշխարեսցուք: 27 Եւ ոմանք յորկորս-

« Ե. Ե. 8

է Մ. Ե. 14

տուժիւնք ապականեալք, որոց եւ Պաւղոս ասէ՝ եթէ Արքեցոյղ եւ քամբասոյղ գարբա- յութիւն Աստուծոյ ոչ ժառանգեն^բ։ Եւ սա- տանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի՛ ապաշխարեսցուք։ 28 Եւ ոմանք աներկիւղ եւ պակասամիտք ելեալ ի թատերս նստին անամաւթեալք, եւ ի դիւամոլ տեսարանէն աներեւոյթ նետիւք վիրաւորին. թէպէտ եւ ոչ զմարմինսն, սակայն զհոգիսն պղծեալ ապականեն. եւ սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի՛ ապաշխարեսցուք։ 29 Եւ ոմանք ոչ երկիւղիւ Աստուծոյ, այլ ըստ սովորութեանն միայն մտեալ յեկեղե- ցին՝ զանձինս դատարկ բանից պարապե- ցուցանեն, եւ զպաշտաւնեայսն փառաբա- նութեանն Աստուծոյ արհամարհեալ՝ եւ զաղաւթսն ի մեղս դարձուցանեն, եւ գնան դատապարտեալք. եւ սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի՛ ապաշխարես- ցուք։ 30 Եւ ոմանք ուժացեալք ի սիրոյն Աստուծոյ, եւ մերժեալք ի Հոգւոյն շնոր- հաց, կամ պղծութեամբ Հաղորդին ի սուրբ խորհրդոյն, եւ կամ ժտութեամբ հեռանան. երկոքեան չարաչար տանջանաւք դատա- պարտին. եւ սատանայ զայն փոքր կարծե- ցուցանէ, զի մի՛ ապաշխարեսցեն։ 31 Ո- մանց արհամարհեալ զնորա մկրտութիւնն եւ զյոյս յարութեան՝ հեթանոսական ան- յուսութեամբն գնան, եւ լան եւ կոծին ի վերայ մեռելոց, զոր արգելեալ ի քրիստո- նէից սրբոց առաքելոցն. եւ սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի՛ ապաշ- արեսցուք։ 32 Եւ ոմանց թողեալ ի բաց ընկեցեալ զհաւատս քրիստոնէութեան եւ զգաւրութիւն խաչին, եւ ի հմայս եւ յու- ռութս եւ ի խտիրս եւ ի դիւթս եւ ի դիւաց զառածանս ընթանան, որ է կատարեալ կռապաշտութիւն եւ մերժումն յաստուա- ծային աւրինացն. եւ սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի՛ ապաշխարես- ցուք։ 33 Եւ ոմանց աներկիւղ յերդումս եւ

ի սուտ երդումն սովորեցուցանեն զլեզուս, զոր եւ Քրիստոս իսկ պատուիրեաց՝ թէ եւ Ամենեւիմ մի՛ երդնուր. այլ եղիցի ձեր ա- յոյն այո, եւ ոչն ոչ. որ աւելի քան զայն՝ ի չարէն է^բ. Եւ սատանայ զայն փոքր կարծե- ցուցանէ, զի մի՛ ապաշխարեսցուք։ 34 Եւ ոմանք զորքս եւ զայրիս եւ զպանդուխտս յաղթահարեն, եւ տան հառաչել ի վերայ զրպարտողացն. եւ սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի՛ ապաշխարեսցուք։ 35 Եւ ոմանք զգրացիս իւրեանց նեղեն ընդարձակել գտեղի իւր, եւ զվիճակ ընկե- րին սակաւացուցանեն. վասն որոյ ասէ մարգարէն. Վայ որ յարէ տուն ի տուն, եւ զընկերին հանիցէն^գ. Եւ սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի՛ ապաշխարես- ցուք։ 36 Եւ ոմանք թիւրեն զիրաւունս այրւոյն ի դատաստանի, եւ ալն առնուն ի շքեղ երեսաց, խոտեալք եւ արհամար- հեալք կաշառաւք անաւրէնութեան, զոր եւ զիրն ասէ, եթէ Ի հրապարակս անէծք ե- ղիցիմ, եւ անէծք բնակեսցեն ի տունս կա- շառառուաց^դ. Եւ սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի՛ ապաշխարեսցուք։ 37 Եւ ոմանք ի տոկոսեաց վաշխից ժողո- վեն մեծութիւն եւ ընուն գտունս իւրեանց, զոր եւ մարգարէն ողբալով ասէ՝ թէ Վայ որ ժողովէ գմեծութիւնս անարեւու- թեամբ^ե. Եւ սատանայ զայն փոքր կարծե- ցուցանէ, զի մի՛ ապաշխարեսցուք։ 38 Եւ ոմանք զվաճառս ճշդեն եւ կսկծեցուցա- նեն զսիրտս գնողացն՝ չհայելով յարդա- րակշիռ վաճառոցն. այլ ջանան առնել զսակաւն մեծագին, եւ զմեծն սակաւագին. եւ սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի՛ ապաշխարեսցուք։ 39 Եւ ոմանք չափ արդար եւ կշիռ արդար ոչ ստանան, այլ առնեն փոքր եւ մեծ ի խաբէութիւն եւ

^բ Մատթ. Ե 34, 37

^գ Ե. Ե 8

^դ Յ. Բ. Ժ Ե 34

^ե Երեմ. Ժ Է 11

^ա Ե Կ. Բ. Գ 10

ի զրկումն բազմաց, զոր եւ մարգարէն ասէ՝ եթէ Չափ կրկին պիղծ է առաջի Աստուծոյ՞. եւ սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի՛ ապաշխարեսցուք: 40 Եւ ոմանք քինահանութեամբ զանդաստանս ընկերին եւ զհամբարս ապականեն. այլ առաւել մոլորեալք խորհրդովն սատանայի յանդգնին ասէն զանաւրէնութեամբ զտունսն բնակութեանց նոցա հրդեհեն, որ են բազում արեանց պարտապան. որ թէպէտ եւ մարդիկն ապրեցան ի հրոյն մահուանէ, սակայն նա որ զհուրն եղ՝ ըստ թողոյ ոգւոցն է պարտական վրիժուց մարդասպանութեան. եւ սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի՛ ապաշխարեսցուք: 41 Եւ ոմանք առանց հարկի հոգեւոր ինչ պատճառանաւք սէր ընդ թշնամիսն Աստուծոյ առնել յաւժարեն. եւ առնեն բարեկամութիւնս եւ խնամութիւնս ընդ անհաւատսն, ընդ Հրեայսն եւ ընդ հեթանոսսն եւ ընդ հերձուածողսն, զոր եւ մարգարէն ասէ՝ թէ Վասն այնորիկ խորտակէ զնաւս Բո, զի թշնամոյ Աստուծոյ բարեկամ եղերք. եւ սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի՛ ապաշխարեսցուք: 42 Եւ ոմանք ի պակասամտաց եւ յաներկիւղածաց Աստուծոյ թէպէտ եւ ոչ պոռնկութեամբ, այլ չարաչար նախանձու եւ շուքարոյ զաւշոտութեամբ հաչեն եւ մաչեն զամուսինս իւրեանց ի կարծիս պոռնկութեան, որ ոչ երբէք դադարեն ի մեղաց եւ ի խռովութենէ, այլ անդադար հանապազ մեղանչեն քինու եւ աղաղակաւ. վայ որ կարծեն, եւ եղուկ որ կարծիս տան. եւ սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի՛ ապաշխարեսցուք: 43 Եւ ոմանք զծնողս տրտմեցուցանեն եւ ցաւեցուցանեն անարգանաւք զսիրտս նոցա, զորս պատուիրանն պատժել հրամայէ: 44 Եւ ոմանք զորդիս իւրեանց ոչ խրատեն, այլ խակ եւ ընդվայրագնաց

թողուն. ընդ որոց ծնողքն զպատիժս պատուհասի ընդունին: 45 Եւ ոմանք ծառայք ստահակք զտեարս իւրեանց արհամարհեն, մարդահաճոյ եւ աչք վաստակաւք յանձանց դատապարտութիւն եւ ի տանջանս: 46 Եւ ոմանք յուխտաւորաց՝ որք զխաշինս ընծայս մատուցանեն, անցին զուխտիւն եւ ստեցին, եւ զդաշինս երդմանն արհամարհեցին: 47 Եւ ոմանք ի կուսանաց՝ որք Քրիստոսի կամեցան հաճոյ լինել հանդերձիւք եւ կերպարանաւք, որ է չարաչար շնութիւն: 48 Եւ ոմանք ի կրաւնաւորաց ոչ երկիւղիւն Աստուծոյ պարկեշտանան, այլ կերպարանեալք պնդին առ ի մարդկանէ, յիմարեալք ախտիւն սնափառութեամբ զԱստուած անգիտացուցանեն. ընդ որոց առաւել քան զպոռնիկն եւ զարբեցողն դատապարտին: 49 Եւ ոմանք ախտիւք եւ խեղութեամբ նախատեն եւ բամբասեն զեղբարս, որոց թշնամանքն յԱստուած ելանեն, զի զգործս ձեռաց նորա հայհոյեն. զի որոց գործն հայհոյի, եւ գործելին թշնամանի: 50 Եւ ոմանք չարակնեն եւ նախանձին ընդ եղբարն յառաջադիմութիւնն, եւ ուրախ լինին եւ խնդան ընդ անկանելն եւ ընդ աղքատանալն նորա, որ են մեղք ասէղք եւ չարաչար անաւրէնութիւնք առաջի Աստուծոյ. եւ սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի՛ ապաշխարեսցուք:

51 Այլ ըստ սովորութեանն եւ մարդահաճոյ աղաւթեմք, եւ ըստ սովորութեանն հաղորդիմք, եւ ըստ սովորութեանն զպաշտանն կատարեմք, եւ ոչ ասիւ եւ երկիւղիւ եւ սիրով Հոգւոյն, եւ անձանց՝ ամենայն յաւժարութեամբ: 52 Թողից ասել եւ զայլ անթիւ բազում յանցանացն, զամբարտաւանութեանցն, զգողութեանցն, զպոռնկութեանցն, զսպանութեանցն, զնենգութեանցն, զկուսապաշտութեանցն, եւ առաւել զարիւնարբու նա-

Պ՝ Ըստ Կ. Ի 10

Ք՝ Հմմտ. ԲՊ՝. Ի 37:

1 Ճատրնտիրն՝ ամենայն անձնյօժարութեամբ

խանձուէ եւ զպիղծ ռխակալութիւնէ եւ զանհաշտ թշնամութեանէն զընկերին, որ են հանապազորդ սպանողք եւ միշտ ի մեղս. եւ սատանայ զայն փոքր կարծեցուցանէ, զի մի՛ ապաշխարեսցուք:

53 Եւ արդ այս ամենայն բազմութիւնք անաւրէնութեանց զեռան ի մեզ. եւ իշխիցե՞մք ասել արդեաւք եթէ ընդէր զեղուն ի մեզ ցասմունք պատուհասիցն Աստուծոյ, զոր վասն ողորմութեանն իւրոյ ի բազում ժամանակաց երկայնամտեալ արգել հեղուլ զսրտմտութիւն բարկութեանն իւրոյ ի ձեզ՝ ակն կալով դարձի ապաշխարութեան: 54 Եւ վասն զի անգեղջ եւ անապաշաւ մնայցէք, արբոյց ձեզ սակաւիկ ինչ ճաշակումն սպառնալեաց իւրոց. զի ծանիջիք՝ թէ գոյ որ դատի զամենայն բազմութիւն անաւրէնութեանց մերոց. եւ ոչ զբարկութիւնն եհեղ ըստ չափոյ մեղաց ձերոց, այլ զմասն մի՛ ի բազմաց առ ի խրատել զձեզ. զի գիտասջիք թէ գոյ զհնեալ եւ տանջանք յաւիտենականք, որով դատի եւ զայլ եւս անթիւ զամբարշտութիւնս ձեր:

55 Եւ արդ ահա զփորձս առէք զզաւրութեանն Աստուծոյ, եւ ծանեայք զմարդասիրութիւնն նորա. մի՛ այսուհետեւ նմանէք ամբարշտութեանն Փարաւոնի խտտացուցանել զսիրտս ձեր. այլ յիշեցէք զանուղղայ զգործս ձեր, եւ դարձարուք յիւրաքանչիւր ձեր ճանապարհէ, եւ ուղիղ ճանապարհին խնդիր արարէք աղաչանաւք եւ պաղատանաւք. զի եւ ի ձէնջ այլ պատուհասից բազմութիւնք վերասցին, եւ սպառնալիք ահեղ տանջանացն անցեալ դադարեսցեն. զի եւ ի ցասումն եկելոց պատուհասիցն համարեսցի մեղաց թողութիւն, որպէս եւ մարգարէն ասէ. Տէր, տուր մեզ զխաղաղութիւն քո, զի ըստ ամենայն գործոց մերոց հատուցաւ մեզ՝: 56 Որպէս եւ դուք ընկալայք ի ձեռանէ Տեառն սա-

կաւ ինչ հատուցումն մեղաց ձերոց, որ եղեւ ձեզ նպաստ փրկութեան՝ զարթուցանել զձեզ յապաշխարութիւն:

57 Եւ արդ մի՛ սողոմապէս պանծանալ անզղջութեամբ, այլ նինուէաբար ապաշխարել, լալով եւ հառաչանաւք հաշտեցուցանել ընդ ձեզ զՀայրն երկնաւոր՝ որ խրատէ զձեզ որպէս սիրելիս, եւ ոչ անտես արարեալ արհամարհեաց իբրեւ զխորթս ատեցեալս: 58 Եւ զխրատն թէպէտ եւ առ ժամանակ մի տրտմութիւն համարիք, բայց յետոյ ճանաչէք՝ թէ զղջումն ապաշխարութեան եւ զթողութիւն մեղաց նովաւ ընկալայք. Զի գոր սիրէ Տէր՝ զնոսին եւ խրատէ՞, զի սրբեալք եւ քաւեալք ի մեղաց պահեսցեն: 59 Այլ թէ եւ գոհանայցէք եւս զարդար դատաստանացն Աստուծոյ, եթէ յիրաւի յորում գործեցաքն՝ ընկալաք, կարող է Աստուած զսակաւ ինչ մնացորդս պտղոցն անդաստանաց ձերոց իբրեւ զհինգ հացին բազմացուցանել առ ի լիութիւն բաւականութեան ձերոյ: 60 Բայց դուք մի՛ ինչ զարմանաւոր յղիութիւն խնդրէք, այլ խնդրեցէք նախ զթողութիւն մեղաց եւ զբժշկութիւն հոգւոց ձերոց, եւ այդ ամենայն յաւելցի ի ձեզ: 61 Եւ Աստուած որ մեծն է ողորմութեամբ, Տայ սերմն սերմնահաւնին, եւ հաց ի կերակուր պարգեւեսցէ ձեզ, եւ անեցուցէ զարդիւնս արդարութեան ձերոյ: 62 Զեր զամենայն լիութիւնն ընկալեալ եւ առաւելեալ լիջիք ողորմութեամբն Աստուծոյ՝ առ ի ընուլ զամենայն կարաւտութիւնս ձեր չքաւորաց, որբոց եւ նեղելոց: 63 Եւ այդ է քաւութիւն մեղաց եւ ամենայն անաւրէնութեանց ձերոց. այդ է ճանապարհ՝ որ տանի զձեզ յաւթեվանս արքայութեանն. այդ է նաև՝ որ տանի՝ ի նաւահանգիստն խաղաղութեան. եւ այդ է դուռն որ մուծանէ զձեզ ի փափկութիւնս

՝ Ե․․ Ի․Գ 12

՞ Եքր․ ԺԻ 6
՛ Ի Կոր․ Թ 10

անուշահոտ դրախտին եւ ի լուսեղէն եւ
յաւիտենական սրբոցն եւ արդարոցն խո-
րանա: 64 Ընդ որս զմեզ արժանիս արասցէ
վայելել ի շնորհս փառաց Հաւր եւ Որդւոյ
եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւի-
տեանս յաւիտենից. ամէն:

ԻԲ

ՎԱՍՆ ԶԳՈՒՇՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԵՐԿԻՒ-
ՂԻՒ Ի ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴՆ ՄԵՐՁԵՆԱ-
ԼՈՅ

1 Սոսկան ոսկերք իմ դողութեամբ, եւ
սարսափէ անձն իմ հիացեալ՝ յորժամ յիշեմ
զմերձաւորութիւն ասագին եւ մեծ խորհր-
դին. եւ յերկուս վարեալ միտք իմ ծփին
հանապազ. կամիմ մերձենալ ի փափագե-
լին, եւ անարժանութիւնս իմ արգելու-
մերժել հեռանալ՝ այս կորուստ է հոգւոյս:
2 Քանզի են բազումք՝ որ կամ հպին չա-
րաչար, եւ կամ հեռանան անաւրէնու-
թեամբ, եւ երկոքեան են սատանայականք.
զի մինն գահեղ խորհրդոյն զգաւրութիւն
ոչ իմանայ, այլ ընդելական սովորու-
թեանն հարեալ խղճի մտաւք մերձենայ,
ոչ ի փրկութիւն՝ այլ ի դատապարտու-
թիւն, ոչ ի թողութիւն մեղաց՝ այլ յաւե-
լումն անաւրէնութեան: 3 Եւ միւսն իբրեւ
զդոյզն ինչ արհամարհեալ հեռանայ՝ ոչ
ինչ կարեւոր համարելով, զի զգաւրութիւն
եւ զշնորհս մեծի խորհրդոյն ոչ ճանաչէ,
եւ կամ ի պատիւ ինչ խորհրդոյն համարի
զոչ ստէպն մերձենալ. որ ոչ ի պատիւ, այլ
յիմարութիւն եւ ծուլութիւն, հեռանալ ի
կենաց, եւ փափագել խաւարի եւ մահու-
զոր Տէր ինքնին ասաց՝ եթէ ես եմ հացն
կենաց. եւ որ ուտէ ի հացէս յայսմանէ,
կեցցէ յաւիտեան. եւ հացն զոր ես տաց՝
մարմին իմ է, զոր ես տաց վասն կենաց
աշխարհիս^բ:

4 Եւ արդ ամենայն որ հեռանայ ի
մարմնոյ եւ յարենէ Քրիստոսի, որպէս յա-

ւել եւս զամէնն՝ վասն առաւել եւս հաս-
տատութեանն, թէ Ամէն ամէն ասեմ ձեզ,
եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ,
եւ արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս
յանձինս ձեր^բ: 5 Եւ որք ոչ ունին
զկեանսն յաւիտենից, նոցա խաւարն աղ-
ջամղջին եւ հուր գեհենին է ժառանգու-
թիւն: 6 Զի ամենայն որ հեռի է ի սուրբ
խորհրդոյն, դիւրաւ ընդունի զախտ սա-
տանայական, եւ աւթեվան լինի նմա հա-
նապազ: 7 Պարտ է անձին կամ ի շնորհաց
Հոգւոյն վայելել, կամ ի պիղծ հոգւոյն ըն-
դունել: 8 Հոգի Տեառն վերացաւ ի Սաւու-
ղայ, եւ նեղէր զնա այս չարք: 9 Զի այգւոյ
որ ոչ է պարիսպ, գազանք ապականիչք եւ
խոզք անտառի մտեալ ապականեն զնա. եւ
որ սուրբ խորհրդովն ոչ պարսպին, բնա-
կարան են դիւաց անձինք նոցա. փախու-
ցեալք ի հրեշտակական ժողովոյն ի բա-
նակս դիւաց անկանին. եւ դեւք դիւրաւ
ըմբռնեն զնոսա, եւ զհոգիս նոցա տանջեն,
եւ զմարմինս նոցա լլկեն չարաչար, եր-
բեմն ի հուր, երբեմն ի ջուր: 10 Եւ արդ
տես եւ զյիմարութիւն քո փարատեա ի
քէն, զթերահաւատութիւնդ քո ուղղեա,
զծուլութիւնդ ի փոյթ յորդորեա, եւ փու-
թա սրբիլ ի մեղաց, եւ մեծաւ փափագա-
նաւք փութա ի սուրբ սեղանն հոգեւոր, զի
մի՛ ի քրիստոնէական անուանէդ մերժես-
ցիս: 11 Զի քրիստոնէութեան հաւատքն
են եւ մկրտութիւն եւ վայելումն սրբոյ
խորհրդոյն. եւ որ յայսմանէ հեռի է եւ թե-
րի, թերի է ի քրիստոնէութենէ. զի ոչ
Քրիստոս ի նմա բնակէ, եւ ոչ նա ի Քրիս-
տոս. քանզի Որ ուտէ, ասէ, ի մարմնոյ իմ-
մէ, նա յիս բնակեացէ, եւ ես ի նմա^բ:

12 Եւ արդ որ կամի բնակել ի նմա,
այնպէս պարտի գնալ, որպէս նայն գնաց:
13 Եւ որ ունիցի զայն յոյս թէ Աստուած ի

^ա Յ՝ՎԸ.Ղ 51-52

^բ Յ՝ՎԸ.Ղ 54

^գ Ը թ՝ ա գ. ժ.Ղ 14

^դ Յ՝ՎԸ.Ղ 57

նմա բնակէ եւ նա յԱստուած, այնպէս պարտի լինել սուրբ, որպէս եւ նայն սուրբ է՝ ըստ մարդկան տկարութեան չափոյ, ապա մերձենալ: 14 Եւ որ ոչ այսպէս մերձենայ, յայտ է եթէ ի դատապարտութիւն անձին իւրում մերձենայ. զի մերձենալ ի սուրբ մարմինն տէրունական՝ սրբոցն լոյս է, եւ լուսաւորէ հոգւովն մերձաւորութեամբ. եւ պղծոցն հուր է, այրէ եւ ապականէ վասն խղճիւն մերձենալոյ: 15 Զի յորժամ վկայութիւն մտացն սրբութեան քում ոչ վկայէ, յայտ է եթէ մերձենալն քո ի սուրբ խորհուրդն ոչ է ըստ կամացն Աստուծոյ. որպէս եւ Պաւղոս ասէ՝ թէ Այս եմ կամք Աստուծոյ վկայութիւն մտաց ձերոց: 16 Եւ եթէ միտք քո վկայեն քում սրբութեանդ, ըստ կամացն Աստուծոյ է մերձաւորութիւնդ: 17 Ապա եթէ խղճիւ մերձենայցես, զիտեա զի դատապարտեալ ելանես, եւ անաւրէն քան զամենայն անաւրէնս. զի սա եւս առաւել անաւրինագոյն է քան զարինահեղ սպանողացն չարութիւնս: 18 Զի մարդ որ զմարդ սպանանէ, մարդասպան անուանի. իսկ որ անարժանութեամբ ի մարմնոյ Տեառն հաղորդի, նա աստուածասպան է. քանզի Վերստին ի խաչ հանէ զՈրդին Աստուծոյ: 19 Եւ արդ տես թէ յոր սեղան անաւրէնութեամբ մերձենաս. յորմէ վերին զաւրութիւնքն սոսկան եւ սարսեն, եւ դու պիղծ չըթամքդ յանդգնեալ մատչիս: 20 Զի եթէ հոտ ինչ չարեաց հարկանէր՝ առ թագաւոր ոք չիչխէիր մերձենալ, եւ զերկնաւոր թագաւորն ի հոտեալ հոգիդ ընդունիս, եւ ոչ մեծաւ ահիւ հիանաս. ցիտտ ձեռաւք ի կերակուրս խղճես մերձենալ, եւ զեռաթաթախ ոգւովդ անխտիր հաղորդիս: 21 Ո՛ր խորք անաւրէնութեան, ո՛ր ահեղ արհաւիրք, ո՛ր անամաւթ լրբութիւն եւ սաստիկ ամբարշտութիւն. խղճիւ

մտաւք եւ աղտեղեալ ոգւով երթեալ մերձենաս ի սրբութիւնս մեծի խորհրդոյն. եւ որ քան զայս անաւրէնութիւնս յանդգնեալ յանդգնեսցի, չէ եւ չէ իսկ տեսանել: 22 Յորժամ մարդոյ, ասէ, մեղանչէ՝ առ Աստուած աղաչէ, իսկ որ Աստուծոյ մեղանչէ՝ զո՞ աղաչեսցէ. զի ոչ եթէ արեան մարդոյ եղեն պարտական, այլ եւ մարմնոյ եւ արեան Որդւոյն Աստուծոյ: 23 Աղէ ի միտ առ եւ տես՝ եթէ ո՛րպէս հաղորդիս ի սուրբ խորհրդոյն. զի եթէ վստահ ես յարքայութիւնն Աստուծոյ մտանել՝ անխիղճ ընկալ եւ զհաղորդութիւն խորհրդոյն. իսկ եթէ թերահաւատ ես յարքայութենէն երկնից, ապա եւ անարժան ես եւ խորհրդոյն սրբութեան: 24 Զի չէ հնար սրբոյ խորհրդոյն արժանաւոր լինել, եւ արքայութեանն ոչ. զի երկոցունցն մի սրբութիւն է արժանաւոր լինել:

25 Այլ եւ ոմանք թէպէտ եւ ի խղճէ մտացն ոչ հաղորդին, սակայն կեղծաւորեալք մնան ի ներքս, կարծեցուցանելով արտաքնոցն՝ եթէ ի հաղորդելոցն իցեն. զի ամենայն որ ոչ է արժանի խորհրդոյն, եւ ոչ ի ներքս կալոյ, ոչ աղաւթից եւ ոչ հաղորդութեան. այլ ելանել արտաքս ընդ անարժանսն: 26 Մի՛ կեղծաւորիր մնալ ի ներքս իբրեւ արժանաւոր, եւ չհաղորդել իբրեւ զանարժան: 27 Ընդէ՞ր արհամարհես զահաւոր եւ զմեծ խորհուրդն. ո՞չ իմանաս՝ եթէ յորժամ խորհուրդն սուրբ ի սուրբ սեղանն ելանիցէ, յայնժամ երկինք բանին ի վերուստ, եւ Քրիստոս իջեալ անդր հասանիցէ, եւ զաւրք հրեշտակաց յերկնից յերկիր ծաւալիցին, եւ շուրջ զսեղանովն բոլորին՝ ուր ահագին խորհուրդն է տէրունական, եւ Սուրբ Հոգւովն ամենեքեան լնուցուն: 28 Յայնժամ հարեալքն խղճիւ ոչ են արժանի հաղորդել յայնպիսի խորհրդոյն, մինչեւ ապաշխարութեամբ ուղղիցին: 29 Լուր եւ զահեղ բողոք քա-

Պ Եթէ. Գ 3. Ե Կ. Ե 12
 Է Եթէ. Զ 6

Ը Եթէ. Բ 25

րողին. Մի՛ նֆ յերախայից, ասէ, մի՛ նֆ ի քերահաւատից, եւ մի՛ նֆ յանյուսից. որ ոչ եմ պատրաստ սրբութեամբ^ա, զնոսա արտաքս առաքէ. եւ ի ներքս մնացելոցն աղաղակէ՝ եթէ Հայեցարուֆ յանձինս ձեր, եւ զսիրտս ձեր քննեցեֆ մի՛ խղճիւ նֆ եւ մի՛ քննգութեամբ, մի՛ խորամանկութեամբ նֆ եւ մի՛ պատրանաւֆ, մի՛ երկմտութեամբ եւ քերահաւատութեամբ մերձեսցի^բ. զի սրբութիւն խորհրդոյն սրբոց եւ անարատից վայել է: 30 Եւ զայս լսելով ոչ դողամք եւ սոսկամք յահեղ եւ ի մեծ խորհրդոյն, յորմէ սերովբէքն սարսափեն, եւ քերովբէքն չիշխեն մերձենալ. հրեշտակք եւ հրեշտակապետք սոսկան դողալով, եւ ամենայն վերին զաւրութիւնքն հիացեալ սարսեն: 31 Իսկ ո՛րչափ սաստիկ տանջանաւք մաշիցի, թէ մարդ յանցաւոր խղճիւինչ ի նա հպիցի. եւ որպէս խուլ ինչ ի հուր հպիցի, որ ի հրոյն այրի եւ ապականի. զի իբրեւ փոքր ինչ համարելով զՔրիստոսի մարմինն թշնամանեաց:

32 Այլ մի՛ իբրեւ ի լոկ հաց հայիցիս, եւ մի՛ իբրեւ զգիւնի համարիցիս եւ տեսանիցես. զի ոչ տեսանելի է ահաւորութիւն սուրբ խորհրդոյն, այլ իմանալի զաւրութիւնս. քանզի ոչ ինչ տեսանելի աւանդեաց մեզ Քրիստոս ի խորհուրդն եւ ի մկրտութիւնն, այլ իմանալի: 33 Զուր տեսանեմք, այլ աստուածային բանին հաւատամք, որ ասէն, եթէ՝ Այս է մարմին իմ եւ արիւն. որ ուտէ ի մարմնոյ իմմէ եւ ըմպէ յարեմէ իմմէ, նա յիս բնակեսցէ եւ ես ի նա, եւ ես յարուցից զնա յաւուրն յետնում^գ: 34 Եւ մեք ճշմարիտ հաւատով զՔրիստոս իմանամք ի վերայ սեղանոյն, ի նա մերձենամք, զնա տեսանեմք, զնա շաւղափեմք, զնա համբուրեմք, զնա առնումք ի ներքս

եւ ընդունիմք, եւ լինիմք մարմին եւ անդամք եւ որդիք Աստուծոյ:

35 Արդ որ այսպիսի հաւատով ոչ հաւատայ, եւ զմարմին Որդւոյն Աստուծոյ ոչ իմանայ, հեռի է յաւգնականութենէն Աստուծոյ, հեռի է եւ ի շնորհաց Հոգւոյն, հեռի է եւ ի թողութենէ մեղաց եւ ի կենացն յաւիտեականաց, անակնկալ յարութեան, եւ անյոյս փրկութեան, եւ մերժեալ ի քրիստոնէական հաւատոց, որով եղեւ մեզ փրկութիւն հեղմամբ արեամբն Քրիստոսի: 36 Եւ արդ մի՛ ոք ի նա խղճիւ մերձեսցի, մի՛ ոք ի նա թերահաւատութեամբ մերձեսցի, մի՛ ոք թուլութեամբ յարեսցի. այլ հաւատացեալ ճշմարիտ՝ եթէ ի մեծ ահեղ խորհրդին երկինք են եկեղեցին, աթոռ փառաց է սեղան խորհրդին, եւ Քրիստոս իջեալ դնի ի վերայ՝ որ միշտ բաշխի ի փրկութիւն ամենեցուն:

37 Եւ արդ ով մարդ, հայեաց ի քեզ եւ տես, ո՛ւր կաս, զո՞վ տեսանես, զո՞վ համբուրես եւ ի ներքս ընդունիս. ընդ երկնային զաւրութիւնսն կաս, ընդ հրեշտակաւորհնես, ընդ սերովբէսն բարբառես, զՔրիստոս տեսանես, զՔրիստոս համբուրես, զՔրիստոս առնուս եւ ճաշակես, եւ լցեալ Հոգւովն Սրբով եւ աստուածային շնորհաւքն պայծառացեալ զաւրանաս հանապազ: 38 Վասն որոյ եւ դուք քահայք եւ սպասաւորք՝ մատակարարք սուրբ խորհրդոյն, ահիւ մատերուք, երկիւղիւ պահեցէք, սրբութեամբ սպասաւորեցէք, եւ զգուշութեամբ մատակարարեցէք. զանձունիք արքունի, մեծաւ երկիւղիւ զգուշացարուք պահպանութեանդ. քանզի եւ ձեզ աններելի տանջանք են՝ եթէ զչարիս ուրուք գիտիցէք, եւ նա եկեալ յանդգնեսցի ի սուրբ մարմինն Քրիստոսի, եւ ակնածիցես ինչ խրատել մերժել եւ յանդիմանել: 39 Այլ վասն ծուլութեան եւ ակնառութեան զսուրբ մարմինն Քրիստոսի անաւրինաց եւ անարժանից բաշխիցէք, եւ որպէս շանց եւ խոզից ընկենուցուք, եւ զո՞ր

^ա Տէ՛ս Ս. Պ. Պատրարագ
^բ Տէ՛ս Ս. Պ. Պատրարագ
^գ Յովհ. 9. 55, 57

ներեալ թողութիւն ունիցիք, եւ քանի՞ պատժոց եւ աններելի տանջանաց մատնիցիք՝ որք մատնիչք եւ պարտականք տէրունական մարմնոյն եղերուք: 40 Ահա վասն Քրիստոսի իշխէք, վասն Քրիստոսի կերակրիք, եւ զՔրիստոս անաւրինացն մատնէք, եւ պիղծ վարիւք անարժանիցն չարչարէք:

41 Արդ հայեա յանձն քո՝ քահանայդ, եւ ծանիր գրեզ՝ զի՛նչ է վաստակ քո քահանայութեանդ, եւ զի՛նչ գործ ստացեալ ունիս: 42 Ոչ հերկահար ես ժողովրդեանդ, եւ ոչ արտունձ՝ եւ կասող, այլ յուսուցանել եւ ի խրատել կարգեցար, մերժել եւ յանդիմանել: 43 Այս է գործ քահանայութեան, եւ միշտ հարկ հանապազ. զի վասն այնորիկ այսպիսի պատուով պատուեցայք, եւ իշխէք ամենեցուն, զի զայսպիսիսն քննեցէք, եւ յանդիմանեալ մերժեցէք: 44 Իսկ զոր ոչն գիտիցեն քահանայքն՝ նոքա եւս առաւել աններելի տանջանաց են պարտապանք, որպէս եւ Պաւղոս ասէ, եթէ Որ ուտէ եւ ըմպէ անարժանութեամբ, պարտական եղիցի մարմնոյ եւ արեանն Տեառն՝: 45 Այլ եւ բազմաց իսկ զճաշակ դատաստանին արբուցանէ՝ չարաչար ախտիւք եւ դառնութեամբ հիւանդութեանց տարածամ հանէ յաշխարհէս, որպէս եւ ասէ՝ եթէ Վասն անարժան ի մարմնոյ Տեառն հաղորդելոյ են ի ձեզ բազում հիւանդի եւ ախտաժեւոք, եւ շատ եւս որ տարածամ ննջեցինէ: 46 Զի ոմանք վասն անարժան ի խորհուրդն մերձենալոյ լիկին մոլեկան ախտիւք. եւ ոմանք վասն նորուն խեղք եւ լուծեալք շրջին զամենայն աւուրս. եւ ոմանք վասն նորուն անկեալ կան ի հարուածս եւ ի ցաւս անբժշկելիս. եւ ոմանք վասն նորուն ի բանտս եւ ի կապանս մտանեն. եւ ոմանք վասն նո-

րուն անզաւակ իսկ յաշխարհէս ելանեն: 47 Այլ եւ բազում եւս ցասմունք ի հիւթոցս, եւ պտղակորուսութիւնք եւ մահք տարածամք մարդոյ եւ անասնոյ վասն անարժան հաղորդելոյ ի մարմնոյ եւ յարեւնէ Տեառն լինին:

48 Վասն որոյ բազում երկիւղիւ մերձեսցուք, բազում զգուշութեամբ զսիրտս մեր քննեսցուք. մի՛ վասն ծուլութեան տաւնս նշանակեսցուք ի հաղորդութիւնս մերձենալոյ. զի յուրբաթուն եւ ի կիրակէին եւ ի տաւնս պենտեկոստէիցն եւ զատկացն մի գենումն է, եւ նոյն խորհուրդ կատարի. եւ դու ի ժամանակ մերձենալոյ՝ սուրբ զմիտս միայն պահեա, եւ մի՛ ինչ աւուրս յերկարածիգս: 49 Զէ ինչ յանդգնութիւն սուրբ սրտիւ բազում անգամ մերձենալ, զի առաւել եւս կեցուցանես եւ նորոգես զոգիդ. իսկ անարժանութեամբ եւ խղճիւ թէ յամենայն ժամանակս կենաց քոց մի անգամ մերձեսցիս, կորուսեր զոգիդ: 50 Տես զի մի յանցանս յանցեալ Կայէն, եւ կորեալ. մի յանցանս յանցեալ Քանան, եւ կորեալ. մի յանցանս յանցեալ Աքաբ, եւ կորեալ. մի յանցանս յանցեալ Յուդայ, եւ կորեալ. եւ որք զՔրիստոս սպանին՝ մի անգամ սպանին, եւ կորեան. եւ դու եթէ մի անգամ յամենայն ժամանակս կենաց քոց անարժանութեամբ ի սուրբ խորհուրդն մերձենաս, սպաներ զոգիդ յաւիտենական տանջանացն կորստեամբ:

51 Այլ ասիցես. ի տաւնս քառասնորդացն սրբեալ մերձենամ: 52 Եւ արդ զի՞նչ աւագտիցիս մի անգամ ի սրբելոյն՝ յորժամ դարձեալ աղտեղանայցես. զի՞նչ աւագուտ է լուանալն՝ յորժամ դարձեալ ցխոտ լինիս. զի՞նչ աւագուտ է շինելն՝ յորժամ դարձեալ քակիցես: 53 Յաւուր տաւնին միայն կամիս առողջ լինել ի ցաւոց, եւ յետ այնորիկ ի ցաւս մաշել. մի աւր բժշկիլ ի վիրաց մեղացն, եւ ապա զնոյն վէրս ստանալ ախորժես. մի աւր հեռանաս ի դիւէն, եւ ապա

1 նօտրագիր օրինակն՝ արտահունձ
* Ը Կ*բ. ԺԷ 27
‡ Ը. Կ*բ. ԺԷ 30

նովին լիկել հանապազ: 54 Այսպիսիք են որ մի անգամ հաղորդին ի սուրբ խորհրդոյն, եւ ապա ի մեղս մաշին հանապազ: 55 Զի՞նչ աւգուտ է մի անգամ հեռանալ ի սրոյն սպանողին՝ յորժամ վաղիւն ի ձեռն նորա մատնիցիս. եւ կամ մի աւր ընդ թագաւորի բազմիլ ի սեղանն, եւ վաղիւն դահճաց մատնիլ անողորմ: 56 Նոյնպէս չէ ինչ շահ եւ աւգուտ ի տաւնի գատկին միայն վայելել ի սուրբ սեղանոյն, եւ ապա պիղծ գործովք հեռանալ, եւ ընդ սատանայի լինել հանապազ: 57 Զի՞նչ աւգուտ է յաւուր տաւնի գտանել ականս պատուականս, եւ ի վաղիւն կորուսանել. եւ ոչ ի տաւնին հաղորդելն է աւգուտ, յորժամ դարձեալ անարժան վարիւք կորուսանիցես: 58 Զի՞նչ աւգուտ է ի Քրիստոս մերձենալ, յորժամ դարձեալ անդրէն ի սատանայ յարիցես: 59 Զէ ինչ աւգուտ այսաւր ի հրոյն գերծանել, եւ ի վաղիւն միայն այրել չարաչար. եւ ոչ մխիթարութիւն ինչ է՝ մի աւր ի բանտէ ելանել եւ լինել թագաւոր, եւ ապա ընդ դատապարտեալսն տանջել անողորմ. եւ ոչ մի աւր աւգուտ է ի խորհրդին վայելել, եւ ապա ընդ դատապարտեալսն արտաքս ելանել: 60 Զի՞ յերկուս ոտս կաղաս եւ յերկուս միտս տաղտապիս. կամ դիւսաց լեր պաշտաւնեայ, եւ կամ Քրիստոսի խորհրդակից. մի աւր աւգի սպիտակացեալ երեւիս, եւ մի աւր այծի սեւաթոյր. այսաւր Դաւիթ հոգելից, եւ վաղիւ Սաւուղ այսահար. այսաւր Պետրոս հնազանդ, եւ վաղիւ Յուդայ ապստամբ. այսաւր Քրիստոսի խորհրդակից, եւ վաղիւ սատանայի կամարար. այսաւր իբրեւ գքրիստոնեայ ի մարմնոյ Տեառն վայելես, եւ վաղիւն իբրեւ գերախայ հեռանաս ի նմանէ. այսաւր ընդ խոստովանողսն, եւ վաղիւն արտաքոյ ընդ ուրացողսն. այսաւր ընդ հաւատացեալսն ի խորհուրդն մտանես, եւ վաղիւն ընդ անհաւատսն արտաքս ելանես: 61 Զի՞նչ գքեզ կոչեցից, կամ զի՞նչ գքեզ անուանե-

ցից. երբեմն գառնացեալ, երբեմն գազանացեալ. երբեմն լուսազգեաց, եւ երբեմն խաւարապատ. այսաւր առնուս պատիւ ի թագաւորէն, եւ վաղիւն չընդունիս եւ դարձուցանես գերեսդ: 62 Նոյնպիսիք են՝ որ ի յաւուրս ինչ հաղորդին խորհրդոյն, եւ ապա իբրեւ գերախայս գերեսս դարձուցեալ ելանես: 63 Եթէ արժանաւոր ես խորհրդոյն՝ հանապազ վայելեա համարձակ, զի հոգելից եւ քրիստոսազգեաց եւ քրիստոսընկալ լինիցիս. եւ եթէ անարժան ես վարիւք, եւ ոչ ի տաւն գատկին ես արժանաւոր:

64 Այլ ասիցես՝ եթէ ի քառասներորդ պահսն սրբեցայ, եւ ցանկամ ի սուրբ խորհուրդն մերձենալ: 65 Բարիոք է, եւ ես գովեցից. բայց արդ ընդէ՞ր չմերձենաս հանապազ: 66 Զկարեմ, ասէ, զիս մաքուր ունել հանապազ: 67 Արդ եթէ այդպէս է ի միտս քո՝ եթէ մի անգամ հաղորդիմ ի տաւնին եւ ապա հեռանամ, եւ ոչ ի տաւնին ես արժանաւոր. զի խորհուրդք չարին են ի քեզ: 68 Զի՞նչ աւգուտ է ի Քրիստոս մերձենալ, եւ ի սատանայէ չհեռանալ. զի՞նչ աւգուտ է զպատուական դեղն ճաշակել, յորժամ զցաւն ի ներքս ի քեզ պահիցես. զի՞նչ աւգուտ է առ բօիչկն երթալ, յորժամ զվէրսն չկամիցիս մերկանալ. եւ ոչ աւգուտ ի հաղորդելոյդ ինչ գտանես, յորժամ ի մեղացն չկամիս հեռանալ. այլ յաւելուս դատապարտութիւն եւ տանջանս: 69 Զի եթէ լսեր թագաւորն՝ եթէ իշխանն ոք այսաւր ընդ նմա ի խորհուրդ մտանէր, եւ վաղիւն հեռանայր ի նմանէ եւ թշնամեացն լինէր խորհրդակից, մի՞թէ ընդունէ՞ր զնա ի խորհուրդս. այլ կապէր եւ տանջէր եւ սպանանէր: 70 Իսկ ո՞րչափ եւս առաւել Քրիստոս դատապարտիցէ եւ տանջիցէ՝ որ այսաւր կամի ընդ նմա ի խորհուրդն տէրունական մտանել, եւ վաղիւն ի խորհրդոյն հեռանալ, եւ զկամս թշնամոյն կատարել: 71 Մի՞թէ այսաւր մաքո՞ւր ինչ իցես ի մեղաց՝ յորժամ զայդ

ի միտս քո խորհիս եթէ վաղիւն հեռանամ, եւ զկամս անձին իմոյ կատարեմ. այս առաւել եւս չար է առաջի Աստուծոյ: 72 Որ խորհի ոք մերձենալ ի սուրբ մարմինն Քրիստոսի, եւ ապա հեռանալ ի նմանէն եւ ի հրամանացն Աստուծոյ, այս է խղճի մտաւք մերձենալ, եւ այս է երկմտութեամբ ընդունել, այս է նենգութեամբ հաղորդել, եւ պատրանաւք եւ խաբէութեամբ եւ թերահաւատութեամբ ճաշակել: 73 Այս աղտեղագոյն է քան զամենայն պղծութիւն՝ յորժամ դարձեալ հեռանալ խորհիցիս, եւ միւսանգամ անդրէն յառաջին չարիսն մերձենալ: 74 Զի մարդ որ ասէ դառնալ ի մեղաց, եւ միւսանգամ անդրէն շրջիցի, շան նման է՝ որ յիւր փսխածն դառնայցէ՞:

75 Եւ արդ զայս ամենայն իմացեալ մի՛ արժանաւորութեամբ հեռացուք ի սուրբ խորհրդոյն յերկար ինչ ժամանակս, եւ մի՛ անարժանութեամբ յանդգնեալ հպեցուք յահեղ խորհուրդն սրբութեան. զի պատիժք ասեղք անարժանիցն մնան՝ որք յանդգնեալ խղճիւ մտացն հաղորդին, եւ պատիժք արժանաւորացն՝ որք հեղգանն եւ ծուլանան յերկար ինչ ժամանակաւ: 76 Այլ բազում երկիւղիւ անձանց զգուշացուք, եւ մեծաւ փութով զխաւարն անգիտութեան փարատեցուք. զանիրաւ զբարկութիւն, զթշնամանողութիւն, զչարայու ռիսակալութիւն ի բաց ընկեցուք. զխորամանկութիւն, զքինահանութիւն, զնախանձ մերժեցուք. զտրտմութիւն եւ զառանց բարբառոյ աղաղակն ի բաց թաւթափեցուք. յագահաց, ի բամբասողաց, յարբեցողացն եւ ի գեղխեցելոցն փախիցուք. զչարակնութիւն եւ զատելութիւն եւ զզաղտնի նենգութիւն դադարեցուցուք. ընդ թշնամիսն հաշտեցուք, զատելիսն սիրեցուք, եւ զյանցանս միմեանց թողցուք. յամենայն սրտէ միմեանց ծառայես-

ցուք, միմեանց հնազանդեցուք, զմիմեանց բեռինս բարձցուք, զմիմեանս սիրեցուք, զընկերս լաւ քան զանձինս համարեցուք. զսիրտս սրբեցուք, զաչս ցածուցուք, զլեզուս ի բամբասանաց դադարեցուցուք, զմեղս ապաշխարեցուք, զխիղճս փարատեցուք, զյիմարութիւնս թաւթափեցուք, եւ զծուլութիւնս ի փոյթ դարձուցուք. պահաւք պնդեցուք, աղաւթիւք աշխատեցուք, յողորմութիւնս յաւժարեցուք, գործովք առաքինացուք, ի չարեաց տղայացուք, եւ հաւատով կատարեալ՝ լիցուք: 77 Զի այսպէս ամենայն առաքինութեամբ արժանաւորեցուք աստուծոյ եւ մեծի խորհրդոյն. բազում փափագանաւք եւ կատարեալ սրբութեամբ վայելեցուք յամենասուրբ եւ ի կենսարար ի մարմնոյ եւ յարեւնէն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում փառք եւ զաւրութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԻԳ
 ԹՈՒՂԹ ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԵ-
 ԼՈՑ ՅԱՇԽԱՐՀԷՍ

1 Հայեա դու ի յոյսն վերին՝ որ իջանես ի խոր խաւարային սգոյդ. փութա փարատեա ի քէն զյիմարեցուցիչ խորհուրդս չարին, եւ զարթիր եւ եկ ի միտս քո. յիշեա զպատուէրս պատուիրանացն Աստուծոյ, եւ թափեա զքեզ ի սատանայական թախանձանացդ, եւ ի միտ առ զբազմաչար հնարս թշնամոյն, եւ պատկառեա ի նետից նորա. երկիր ի խորամանկութենէն եւ թիւնից աներեւութից նորա. փախիր ի դառն վիրաց եւ ի սաստիկ հարուածոց նորա: 2 Հայեա ի պղտորութիւն մտացդ քոց, եւ ծանիր եթէ այդ սերմանք թշնամոյն են ի քեզ. արի անկիր առաջի Աստուծոյ՝ զի ապրեցիս ի չար խաբից նորա եւ յանաւրէն տրտմութենէն:

3 Զի յորժամ սատանայ բոլորովիմք գերէ զմիտս մարդոյն, ածէ ի վերայ տրտմութիւն եւ յուզմունս խորհրդոց. որ

« Հմմտ. Ի Պէր. Ի 21-22:

Թէպէտ եւ սուղ ինչ իցեն տրտմութիւնքն, սակայն նա ի պղտորեալ միտս նորա անհնարին եւ անչափս կարծրացուցանէ, որով եւ զսիրտն յիմարեցուցանէ, եւ թուլացուցանէ ի սովորական աղաւթիցն եւ յերկիւղէն Աստուծոյ: 4 Եւ մանաւանդ որում պատճառս եւս վախճանելոյ իւրոյ գտանիցէ, բոլորովիմբ արկանէ ի վերայ մերձաւորացն նորա անհնարին միտքս սգոյ տրտմութեան, եւ ի ներքս զսիրտն այրէ, եւ զմիտսն նուազէ, եւ ամենեւին զուշն ափշեցուցեալ ի զգայութենէ մտացն ընկենու, եւ ոչ տայ խոնարհել ի բանս մխիթարչացն եւ սփոփողացն. այլ յամառեալ պնդին ի սգոյն տրտմութիւն, զի ցնորք թշնամոյն անհնարին թաղծանաւք յիմարեալ ափշեցուցանեն առաւել քան արբեցութեամբ. եւ ամենեւին ոչ թողացուցանեն նայել ի պատուիրանս Աստուծոյ որ ասէ՝ թէ լաւ է արք մահուանն քան զարք ծննդեանն սկիզբն է մեղաց եւ անաւրէնութեանց, եւ անտի սկսանին աճել ի նմացաւք եւ հոգք եւ տրտմութիւնք եւ զրպարտութիւնք եւ աղքատութիւնք, այրութիւնք եւ որբութիւնք եւ անզաւակութիւնք եւ ամենայն չարչարանք բազում նեղութեանց եւ տառապանաց աշխարհիս: 6 Այլ եւ ժողովեալ եւս հեղու զնովաւ սատանայ զամենայն բազմութիւն ախտից մեղացն չարչարել, նեղեալ, վիրաւորեալ զնա թշնամութեամբ, գողութեամբ, սպանութեամբ, բամբասանաւք, երդմամբ, նախանձու, չարակնութեամբ, ռիսակալութեամբ, ազահութեամբ եւ զայլս զրկելով, նենգութեամբ, հմայիւ դիւթականաւք, եւ ամենայն անթիւ ախտից բազմութեամբ. ընդ որոց հատուցումն է հուրն անշէջ եւ տանջանք մշտնջենաւորք: 7 Իսկ ի ձեռն մահուանն յայնմ ամենայնէ բուժեալ դարդարէ. զի թէպէտ եւ վարս արդարութեան

ոչ ունէր, սակայն ի մեղանչելոյն դադարեաց. ապա եթէ վարս ուղիղս էր ստացեալ՝ զերծաւ յամենայն կասկածանաց մեղաց եւ ի հոգոցս աշխարհիս, եւ վերացեալ խառնեցաւ ի բանակս սրբոց եւ արդարոց:

8 Եւ արդ զայսպիսի լուսաւոր կեանս յիմարութիւն է լալ եւ սգալ անառակութեամբ եւ հեթանոսաբար. զի եւ Պաւղոս եւ զլոկ միայն տրտմութիւնն արգելեալ փակեաց ասելովն՝ թէ Վասն ննչեցելոցն մի՛ տրտմի՛ք որպէս եւ այլ հեթանոսս՝ որ ոչ գիտեմ զԱստուած: 9 Իսկ ո՛րչափ սաստիկ պատժոց արժանի համարիցիք՝ որք ի սուգս եւ ի կոծս եւ յողբս մտանիցեն. զի արգելեալ է ի քրիստոնէից հաւատացելոցն՝ որք լուսաւորեցան սուրբ աւագանաւն, եւ մեծ եւ ահեղ անուն Սուրբ Երրորդութեանն ի վերայ նոցա անուանեցաւ, եւ կնքեալ խաչիւն Աստուծոյ նուիրեցան, ամենեւին իսկ ոչ են իշխան զնուիրեալսն Աստուծոյ խայտառակել հեթանոսական անաւրէնութեամբք, եւ ոչ չարաչար խզել եւ փետել եւ մոխիր ի վերայ նուիրեալ գլխոյն արկանել. այլ ամենեւին ի բաց հեռանալ յանաւրէն եւ ի սատանայական վայիցն եւ յողբոցն եւ անաւրէն ձաղանացն: 10 Ոչ զհերս փետել հրամայեսցէ քրիստոնէիցն, ոչ զայտս ցտել, եւ ոչ ի կոծ մտանել, ոչ զառիգածն ածել, ոչ զուսովքն մերկանալ, ոչ զճակատն հարկանել, ոչ քուրձ զգենուլ, ոչ մոխիր ցանել, եւ ձայնս արկանել, եւ ոչ աշխարանաւք ողողանել. զի այս ամենայն սատանայական է եւ հեթանոսական, զոր անմիտ կանայքն բարբառեն ի ցոյցս կեղծաւորութեան, եւ զկուսպաշտիցն զգործն գործեն ի վերայ քրիստոնէից, զողբսն ողբալով, եւ զկականն բառնալով, եւ զճշիւն աշխարանացն հնչեցուցանելով, անյուսաբար չարաչար զմարմինն կոծելով ի վերայ քրիստոնէի վախճանելոյն, զոր պարտ էր սաղմոսիւք

*** Ժող. Է 2

է Լ ԹԷ. Գ. 12

եւ ւարձնութեամբք յղարկել, պատուեալ երգաւք ի կեանսն յաւիտենականս:

11 Ընդէ՞ր խայտառականաւք եւ անարգանաւք սգոյդ թշնամանէք զմարմինն հոգէկիր եւ քրիստոսագգեաց: 12 Եւ արդի՞ւ իւրիք քրիստոնեայ անուանեսցուք զնոսս որք սատանայական մոլորութիւնս մոլորեսցին ի վերայ մեռելոյն. քանզի ընդ այդպիսի անաւրինեալսն եւ դեւք խառնին՝ ի կոծատեղին անցանեն: 13 Քանզի նոքին իսկ ուսուցին զկոծ անյուսութեան եւ զտրտմութեան սգոյ աշխարանացն, զի զկոծողսն ընդ նմին ի հուր գեհենին դատապարտեսցեն: 14 Այլ ձեզ պարտ էր ամաչել ի Հրէից եւ ի Հեթանոսաց եւ յայլադանդիցն՝ որ զհաւատս մեր բամբասեն եւ ասեն. ո՞ւր է ձեր յոյսն յարութեան՝ յորժամ այդպիսի ողբովք եւ սգովք եւ աշխարանաւք եւ զազրալի խայտառականաւք արիւնահան եւ արիւնահեղ լինիք հանդերձ վայիւք եւ փետիւք, ճշիւք, գուժիւք կոծեալ աշխարիցէք զանուանեալն քրիստոնեայն:

15 Ընդէ՞ր պարծիք, ով քրիստոնեայք, որ երգովդ էք նմանեալք Հրէից եւ Հեթանոսաց. այլ զսուգ եւ զտրտմութիւն զաւրինաւորիդ առաւել քան զանաւրինացն տեսանեմք, արք չարաձայնք կառանչիւք եւ վայիւք եւ փետիւք խեղդին, ողբան եւ ողողանին անյուսալի, զճակատն դիւահարեն հարկանեն, եւ զկուրծսն անզգամաբար բախելով իբրեւ զայսահար. եւ կանայքն կանչիւք հերարձակ զայտսն ցտեն, զստինս կեղեքեն, եւ անամաւթապէս իգացեալք մերկանդամք խզին եւ կոծին մոլելով, իբրեւ զմոլիչն չարալլուկ դիւահարեալս. եղիճ, արիւն եւ մոխիր, եւ հանդերձք պատառեալք: 16 Արդ այսպիսի ձաղանաւք ձաղին եւ ծանակին քրիստոնէիցն պատկերքն՝ որ ոչ ի Հեթանոսս լսի, եւ ոչ ի Հրեայս, եւ ոչ ի հերձուածողս, եւ որք ոչ ընկալան երբէք զյոյս յարութեան մեռելոց: 17 Եւ արդ մեք մերժեսցուք

զայնպիսի անաւրինեալ սգաւորսն ի համարոյ քրիստոնէից, եւ հանեալ յեկեղեցւոյ՝ ընդ երախայս համարեսցուք, եւ սուգ առցուք ի վերայ նոցա իբրեւ ի հեթանոսաց. զի այնպիսիքն են սգոյ արժանի՝ ողբալոյ եւ աշխարելոյ եւ կոծոյ մեծի, որք ի հուր գեհենին դատապարտին, եւ մասն ընդ անհաւատսն ունին, զի զհեթանոսական չարաչար ախտսն անյուսութեան յեկեղեցի մուծին:

18 Եւ արդ ասա ինձ, ով քահանայ, ընդէ՞ր մուծանես զգուռնդս պաշտաւնէից եւ սաղմոսաց ի դասս մերկանդամ խայտառակելոցն. զի՞նչ կայ սրբեցելոց պաշտաւնէից եւ սատանայագգեաց դիւամոլ կոծողացն: 19 Ընդէ՞ր խառնես զաւրճնողսք ընդ անիծողսն, զգոհացողսք ընդ թշնամանողսն, զփառաւորիչսն ընդ հայհոյիչսն: 20 Ոչ է աւրէն յանաւրէն ժողովս սատանայականս զհրեշտակական երգսն մուծանել, եւ ոչ ի պիղծ մեհեանս դիւացն նոցա զսուրբ զաղաւթսն մատուցանել, եւ ոչ ի բազինս զոհարանացն պատարագս նուիրել. զի պիղծք առ պիղծն ժողովին, եւ սրբոցն սրբութիւնք վայելեն: 21 Ոչ է մի ժողովուրդ Հրէից եւ Հեթանոսաց, եւ ոչ քրիստոնէից եւ հերձուածողաց, զի հակառակք եւ խափանիչք են միմեանց. եւ դու խառնեալ ընդ միմեանս միաւորես, եւ ի մի ժողովս առաքէք աւրճնութիւնս եւ անէճս: 22 Կոծողք անաւրէն անառակութեամբք բարկացուցանեն, եւ պաշտաւնեայքն աղաւթիւք եւ սաղմոսիւք բարեխաւսեն: 23 Յորժամ մերձաւորք վախճանելոյն անաւրէն սգով եւ կոծելով թշնամանեալ բարկացուցանեն զԱստուած, ընդէ՞ր աղաչես, մաղթես եւ բարեխաւսես վասն թողութեան մեղաց վախճանելոյն. ո՞ւմ լսէ, եւ զո՞ր ընդունի: 24 Եթէ ես ինչ հոգաբարձու հրաժարելոյն, յեկեղեցիս քո յիշեա, եւ յաղաւթս քո աղաչես զԱստուած. այլ ընդ վայր եւ անվայելուչ է խառնել զպաշտաւնայս սուրբ եկեղեցւոյ ի պիղծ ժողովս

սատանայական կոծողացն, եւ ի տեսիլ անամաւթ կանանցն հերարձակացն արիւնաշաղախ խզելոցն եւ մոխրացանացն. որ թէ եւ թշնամիք էին վախճանելոյն, այնչափ կարէին տրտմեցուցանել եւ առնել նմա չար, զոր ի ժամանակի հրաժարելոյն Հոգւոյն արարին. եւ ոչ ընկալան զբանն մարգարէին որ ասէր՝ եթէ Դարձ ամձն իմ ի հանգիստ ֆո, զի Տէր բարի արար ֆեզ^ա: 25 Տէր բարերարութիւն ցուցանէ զաւր մահուանն, եւ դու կոծիս եւ աշխարես եւ ողբաս դառնապէս: 26 Ահա քեզ ասէ մարգարէն՝ թէ Վայ որ ասէ զչարն բարի, կամ զբարին չար^բ. քանզի չար են կեանք մեղաւորին, եւ եւս քան զեւս յաւելու ի մեղս. եւ բարի է մահ նորուն, զի դադարէ ի չարեաց:

27 Այլ թէ կեցեալ էր, ասես, թերեւս ապաշխարէր, աղաչէր եւ ողորմութիւնս առնէր, եւ արտասուաւք զՏէրն հատեցուցանէր: 28 Մի՛ դու զայդպիսի ինչ ածեր զմտաւ, եւ անգէտ զամենագէտն կարծեցուցաներ՝ որ Ոչ կամի զմահ մեղաւորին^գ. բայց զիտէր սրտագէտն Աստուած՝ թէ ոչ ապաշխարեսցէ, զմահն նմա ողորմութիւն պարգեւէ՝ զի դադարեսցէ յառաջիկայ մեղացն գործելոյ: 29 Այլ մահ արդարոյն ամենեւին իսկ ցնծութիւն է եւ ուրախութիւն՝ փոխել ի մեղսասէր եւ սնավաստակ հոգոց աշխարհիս. եւ զգանձս վարձուց առաքինութեան զոր համբարեալ տարաւ, յամրի եւ զգուշութեամբ պահեսցէ. եւ եթէ սուղ ինչ իցէ ստգտեալ, աւգնեսցուք նմա զթող տնանկաց, յիշեսցուք յահեղ խորհրդին, ողորմութիւնս վասն նորա արասցուք. եւ այն է կաշառ բարերարին Աստուծոյ՝ որ առնէ բարերարութիւն ի վերայ վախճանելոյն՝ որպէս ինքն գիտէ: 30 Եւ արդ զայս լսելով փարատեա ի քէն զսուգ

թանճրամած յուսով ահեղ աւուրն յարութեան, եւ բոլորովին հանեալ զերծ ի քէն զաղճատանս սգոյ տխրութեան, զի քրիստոնեայ կոչեսցիս. եւ ամենայն բերկրանաւք սթափեցիր, ակն կալ փափագելի կեանացն յաւիտենականաց. եւ այսիւ մխիթարեա, զի քում վախճանելոյն ոչ պատահեցին մահք սոսկալի պատուհասից:

31 Քանզի բազում են մահք չարաչարք, եւ յանկարծաւրէն յորոգայթից ինչ տարածամ մեռանել. այլ դու այդիւ մխիթարեա եւ գոհացիր զԱստուծոյ, զի քոյդ խաղաղութեամբ ի մահիճս իւր վախճանեցաւ: 32 Եւ մահք չարաչարք այնոցիկ է, որք ի գետոց վախճանեցան, եւ քարածեծ պատառեցան. այլ դու այդիւ մխիթարեա եւ գոհացիր զԱստուծոյ, զի քոյդ ի գիրկս քո կատարեցաւ, եւ կտակ մխիթար կենդանեաց եթող: 33 Եւ մահ չարաչար այնոցիկ է՝ որք ի թիւնից աւճից եւ ի չարածանի գազանաց գէշ գէշ պատառեալ իցեն, եւ ոչ ոք զյետին բարբառն լսեաց, եւ ոչ զձեռս եւ զոտս ածեալ տեսանիցեն. այլ դու այդիւ մխիթարեա եւ գոհացիր զԱստուծոյ, զի զքոյդ ձեռովք քովք թաղեցեր, եւ զյետին բարբառն լուար: 34 Է մահ չար այնոցիկ՝ որք ի պատերազմունս մեռանիցին, եւ զսուրն շողացեալ տեսանիցեն, եւ կենդանւոյն խաւարն զաշաւքն պատիցի, եւ թշնամւոյն դիթաւալ կացուցեալ՝ գէշ գազանաց արկանիցեն. այլ դու այդիւ մխիթարեա եւ գոհացիր զԱստուծոյ, զի քոյդ ի վերայ անկողնից հիւանդացաւ, եւ պատուով Աստուծոյ նուիրեցաւ: 35 Եւ մահ չար այնոցիկ՝ որ վասն մեղաց դահճացն մատնեցան, եւ կենդանւոյն զմարմինսն յաւշեալ եւ պատառեալ անդամ ի փայտ՝ բարձանեսցեն անգեղք եւ ազուաւք ամաւթալից ձաղանաւք. այլ դու այդիւ մխիթարեա եւ գոհացիր զԱստուծոյ, զի քոյդ գոհութեամբ հիւանդացաւ, եւ խոստովանութեամբ կատարեցաւ, եւ համբուրիւք ողջունից զգերեզման հարց ընկալաւ: 36 Է

^ա Սաղմ. ճժ. 9
^բ Ես. Ե 20
^գ Եսեկ. ժԼ 23

մահ չար այն՝ որք ի դիւաց լիկեցան, եւ անդգայեալ զմարմինս անդամոցն ուտիցեն, եւ անողորմ ձեռակապաւք արկեալ յարգել՝ սովամահ մեռանիցին. այլ դու մխիթարեա եւ գոհացիր զԱստուծոյ, զի քոյդ հանգստեամբ հիւանդացաւ, եւ աւրհնութեամբ վախճանեցաւ, պատանաւք պատեցաւ, եւ սաղմոսիւք յղարկեցաւ, եւ քահանայական աղաւթիւք եւ պատարագաւք յերկինս առաքեցաւ, եւ հանապաղ աւրհնի եւ յիշի ի յիշատակացն կատարելոյ:

37 Եւ արդ ո՞վ իցէ որ այնչափ ապաշնորհ եւ անիմացական միտս ունիցի, եւ զայս զմտաւ ածելով մեծապէս ոչ մխիթարեսցի, եւ անդադար գոհասցի զԱստուծոյ՝ թէ որպիսի փառաւք եւ պատուաւք վախճանեալն յերկինս կոչեցաւ, ուր են ամենայն ժողովք տիեզերաց, բանակք արդարոց եւ գունդք սրբոցն, երամք մարգարէիցն, դասք առաքելոցն եւ անթիւ հոյլք մարտիրոսաց, խորանք պայծառագարդք, բնակութիւնք լուսեղէնք, եւ մշտնջենաւոր վայելչութիւնք, եւ փափագելի դրախտն, անանց բարութիւնք, անտրտում խնդութիւնք, անծերանալի մանկութիւն, անխախտելի առողջութիւն, սէր սուրբ, տեղի ցանկալի, կեանք փափագելիք, եւ անյագ ցանկութիւնք հոգեւոր կերակրոց, հրճուանք հրաշալիք, գգուանք գգուանաց, եւ սփոփումն փափկութեանց, եւ հանգիստ հոգեւորական ամենայն ընտրելոց. ընդ որս եւ քո վախճանեալն ուրախութեամբ հանգիցէ:

38 Եւ արդ քեզ պարտ է մխիթարել ամենայն խնդութեամբ, զի ի յերկինս թռեաւ, ի մարդկանէ ի հրեշտակս փոխեցաւ, ի մահուանէ ի կեանս ընկեցաւ, ի խաւարէ ի լոյս ձգեցաւ, յաղքատութենէ ի թագաւորութիւն կոչեցաւ, ի ծառայութենէ յազատութիւն, ի վաստակոց ի հանգիստ, ի հոգոց յանհոգութիւն, ի մեղաց յարդարութիւն, ի հոգեղինացս ի հոգեղէնսն փոխե-

ցաւ եւ ընդ հրեղէնսն դասակցեցաւ: 39 Արդ դու այդիւ մխիթարեա ամենայնիւ՝ եթէ ակն ունիս յարութեանն. այլ եւ ած զմտաւ՝ եթէ մահ է ճանապարհ ամենայն աշխարհի, եւ ամենեքեան երթամք ընդ այն ճանապարհ: 40 Ադամ, Աբէլ, Սէթ, Նոյ, եւ ամենայն արդարքն զմահ ընկալան, որով պարտ է եւ քեզ մխիթարել: 41 Արբահամ, Իսահակ եւ Յակոբ եւ Մովսէս եւ Դաւիթ տեսողքն Աստուծոյ, եւ ամենայն նահապետքն՝ արդարքն եւ աստուածախաւսքն զմահ ընկալան. որով պարտ է քեզ մխիթարել: 42 Ահա ամենայն թագաւորք սուրբք եւ արդարք զմահ ընկալան, որով պարտ է եւ քեզ մխիթարել. ահա եւ մարգարէքն եւ առաքելք եւ մարտիրոսքն եւ Սուրբ Կոյսն աստուածածինն զմահ ընկալաւ, որով պարտ է եւ քեզ մխիթարել. ահա եւ Քրիստոս Որդին Աստուծոյ վասն մերոյ փրկութեան զմահ ընկալաւ, զի զմեզ անմահացուցէ ի կեանս անմահս: 43 Վասն որոյ պարտ է գոհանալ եւ մխիթարել նորոգութեամբ յուսոյն յարութեանն ամենայն արդարոց, ընդ որս եւ մեք յարիցեմք, եւ զվախճանեալսն մեր ընկալցուք խնդութեամբ:

44 Արդ լուարուք Պաւղոսի, որ մխիթարէ զմեզ ասելով՝ եթէ Վասն ննչեցելոցն մի՛ տրտմի՛ որպէս եւ զայլ հեթանոսս որք ոչ գիտեն զԱստուած^ա: 45 Լուր եւ մարգարէին որ ասէ. Ընդ երեկոյս հանգիցեն լալիք. առաւաւտուց եղիցի ուրախութիւն^է: 46 Արդ եթէ անուանեալ էք քրիստոնեայ, եւ հաւատացեալ էք յարութեանն, արիք մխիթարեցէք զձեզ մարգարէական եւ առաքելական մխիթարութեամբ. զի սուգ անյուսից է, եւ ոչ իմաստոնոց եւ հաւատացելոց՝ որք ակն ունին նորոգման ամենայն ննչեցելոց. զի ոչ է ի կորուստ մահ քրիստոնէին, այլ ի նորոգութիւն կենացն յաւի-

^ա Ը թ. է. 9. 12
^է Ս աղ. 1. 6

տենից. վասն որոյ եւ զոգիս վախճանելոցն մերոց սաղմոսիւք եւ աւրհնութեամբք ի կեանս յղարկեմք, իբրեւ ընծայ ինչ Աստուծոյ նուիրեմք: 47 Յաղագս այնորիկ ոչ է պարտ քրիստոնէին ի վերայ մեռելոց սուգ ունել եւ լալ. այլ լայցեն Հրեայք եւ ողբասցեն հերետիկոսք, սուգ առնուցուն եւ կոծեսցին ամենայն թերահաւատք եւ հերձուածողք, զի նոքա լալոյ եւ ողբալոյ արժանի են, աշխարանաց եւ կոծոյ մեծի. այլ մեք նորոգութեամբ կենացն յաւիտենից մխիթարեսցուք: 48 Եւ արդ վասն այսր ամենայնի բարձէք զկոծս, խափանեցէք զողբս, ի բաց արարէք զտրտմութիւն, դադարեցուցէք զարտասուս, արգելէք զլալականս, լռեցուցէք զկառահիւն լալեաց եւ վայից. արհամարհեցէք զեղանակամարս լալականաց, անարգեցէք զփետիւն վարսից եւ զխզել հերաց, հալածեցէք զարիւնահանսն եւ զմոխրացանսն, թշնամանեցէք զմերկանդամսն եւ զխայտառակեալսն: 49 Մեկնեսցուք յանաւրէն մոլորութենէն, հեռացուք ի հեթանոսական ամբարշտութենէն, ամենեւին ի բաց փարատեսցուք զսուգ սատանայական եւ զանյոյս մթերս: 50 Ձի կեցցուք քրիստոնէութեամբ, եւ վախճանեսցուք աստուածպաշտութեամբ, եւ հանգստեան եւ երկնից արքայութեանն արժանի լիցուք ի Տէր մեր. որում փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ յաւիտեանս:

ԻԴ

ՈՂԲՔԵ-ԵՐՐ

- 1 Խոստովանողք փութացարուք Ձանալ ապրել յաւուրըս մեր. Ձի աւր ահեղ կայ առաջի, Ահեղ ատեան եւ հուր անշէջ:
- 2 Աստէն լացցուք եւ ողբասցուք եւ խընդրեսցուք ըզթողութիւն. Ձի ապրեսցուք յանշէջ հըրոյն, Որ ըսպառնայ մեղաւորաց:

- 3 Միշտ հանապազ արտասուեսցուք Գորովագին պաղատանաւք, Աղերսալի հառաչանաւք Զքաւիչ մեղացն աղաչեսցուք:
- 4 Անկցուք առ նա խոստովանել Ձոր արարաք աստ ի ծածուկ, Յայտնել ասել եւ ցուցանել Զգաղտնիս մեղացըն բազմութեան:
- 5 Ձի անդ քըննին խորհուրդըք մեր Եւ ցուցանին յանցանքըն մեր. Յայտնին դաղտնիք սըրտից մերոց Յաշխարհատես հրապարակին:
- 6 Ես զարհուրեալ եմ եւ դողամ Յորժամ լսեմ ըզձայն փողոյն, Որ տագնապաւ կոչէ զագինս ի մեծ ահեղ աւր ատենին:
- 7 Ձի չարաչար մարտեաւ ընդ իս Ամենամեղըն սատանայ. Եւ կարեվէր զիս արարեալ Հանեալ ընկեաց յանմահ փառացն.
- 8 Դառնագիւն չար պատրաստեաց Ըզտարտարոսըս գեհենին, Եւ ըսպառնայ մեղաւորիս Այրել ի հնոցըս կայծականց:
- 9 Որ ոք ունիք սէր սըրբութեան, Ձիս ողբալով արտասուեսցէք. Զերմագո՛ւթ պաղատանաւք Ինձ խնդրեցէք ըզթողութիւն:
- 10 Քրիստոսասէրք իմ սիրելիք, Ինձ աւգնեցէք վերաւորիս. Եւ գորովով մեծ ողորմիւ Աղաչեցէք ըզՏէր վասն իմ:
- 11 Հառաչանաւք զձեզ աղաչեմ Մեղուցելոյս ողբակցեցէք. Պաղատանաւք լացէք ընդ իս Զայնակցելով իմ աղէտիս:
- 12 Կականաբարձ զիս ողբացէք Եւ ձայնս առէք ողորմելիս. Ձի չարաչար ըմբըռնեցայ ի չար նետից սատանայի:

- 13 Միգապատեաց զիս թըշնամին
 Խաւարային ցանկիւքն իւրովք.
 Եւ սուր Հանեալ վիրաւորեաց,
 Ջոր աղաչեմ գձեզ բըժըշկել:
- 14 Սուրբ Հաւատոյ մանկունք, ո՞ւր էք,
 Ողորմեցէք ինձ նեղելոյս,
 Եւ գըթագին պաղատանաւք
 Ջքաւիչ մեղացն աղաչեցէք:
- 15 Յաղաւթըս ձեր ապաւինիմ,
 Եւ ինձ Հայցեմ ըզթողութիւն.
 Ջի զանազան եմ մեղուցեալ,
 Եւ ոչ բաւեմ ապաշխարել:
- 16 Ես զարհուրեալ եմ եւ դողամ
 Յորժամ յիշեմ զիս մեծամեղս,
 Թէ յայն երկիր կայ անցանել,
 Եւ զՏէր փառաց կայ տեսանել:
- 17 Քրիստոս գըթած եւ ողորմած,
 Գըթա եւ յիս ամենամեղս,
 Ջի ես գըտից ողորմութիւն
 Ի գումարել մեծ ատենիդ:
- 18 Ջի աւր ահեղ կայ առաջի
 Եւ սոսկալի մեղաւորիս.
 Որ ըզգաղտնիս սըրտիս քըննէ
 Եւ ըզծածկեալ խորհուրդս յայտնէ:
- 19 Արդ աղաչեմ, Տէր մարդասէր,
 Ջիս յայնմ աւուր մի՛ պահանջեր.
 Ջար տանջանացըն մի՛ մատներ,
 Եւ կայծականց անշէջ հըրոյն:
- 20 Ջի քեզ տացից փառս աւրհնութեան
 Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյդ,
 Որ միշտ աւրհնեալ ես յաւիտեանս,
 Փառաւորեալ յաւիտենից:

Ա.ՂԱԻԹՔ ՆՈՐԻՆՆՆԻՍ¹

1 Ով որ անեղդ ես եւ անստեղծ եւ արարիչ ամենայն արարածոց, զոր ոչ եր-

կիրս ստանալ հանդուրժէ, եւ ոչ երկինք բաւանդակեն. այլ ի վեր ես քան զերկինս, եւ անդր քան զծագս. եւ ամենայն երեւելիքս եւ աներեւոյթքս ընդ քեւ եմք բովանդակեալ: 2 Դու տիրես ամենայնի, եւ քո հրամանդ կառավարէ զամենայն արարածս. դու աղքատացուցանես, եւ դու մեծացուցանես, հարկանես, եւ դու բժշկես. դու ես սփոփիչ վտանգելոյս ի սատանայէ, եւ առողջացուցիչ հիւանդացելոյս մեղաց. դու ես ընդունիչ աղաւթից եւ կատարիչ խնդրուածաց: 3 Խոնարհեցո, Տէր, զուցնիմ եւ լուր բոյոյ ծառայիս՞. տես, Տէր, գտաւապանս իմ, եւ ընկալ զիս գթութեամբ. Մի՛ բարկութեամբ քո վ խրատեր զիս, եւ մի՛ սրտմտութեամբդ քո վ յանդիմաներք. զի Աստուած ես գթութեանց՝ գթա եւ յիս ի մեղաւորս, որ բազում հեծեծանաւք եւ պաղատանաւք մաղթեմ եւ աղաչեմս գքեզ: 4 Ջի կարեվէր եմ մեղաւք, եւ ցաւազնեալ անաւրէնութեամբ. չարաչար ախտիւք եմ ի յանցանս, եւ պիղծ խորհրդովք յամբարշտութիւնս. ժահահոգւովս եմ աղտեղեալ, եւ մեղսաթաթաւ մարմնովս զագրացեալ. ամաւթով երեսաւք կամ առաջի քո, եւ ամաւթով առաջի տեսողաց:

5 Եւ արդ դու Տէր քաղցր եւ ներող, երկայնամիտ վասն մեղաւորաց կոչեցար. որ ասացեր՝ թէ Ի դառնալ անարիւնիմ ոչ յիշեցից զամենայն անարեւոյթիմս նորա զոր արարք: 6 Եւ արդ ահա եկեալ անկեալ եմ առաջի քո ծառայս մեղուցեալ, եւ ժտեալ խնդրեմ ի քէն ողորմութիւն. մի՛ յիշեր զմեղս իմ բազում, եւ մի՛ զանաւրէնութիւնս իմ յանդիմաներ՝ եթէ կամաւ եւ եթէ ակամայ ինչ մեղայ, եթէ բանիւք եւ եթէ գործովք եւ եթէ անդէպ մտածութեամբք պղծեցայ, եթէ յանգիտութենէ եւ եթէ ի ծուլութենէ եւ ի մոռացութենէ գոր-

1 Մասն ինչ ի սկզբանէ աղօթիցս կայ ի գիրս Հարանց վարուց յանուն Ա. եփրեմի. կան եւ այլ չորս օրինակք ի կարգս աղօթագրոց յանուն Ա. Մեսրոպայ, կիսով չափ նման երկաթագիր օրինակիս, թէպէտ երեւելի տարբերութեամբ. այլ անտի յառաջ ամենեւին տարածայն:

՞ Ս՝ՂՎ. 29 1
 ՙ Ս՝ՂՎ. 9 1
 ՚ Ե՝ՂՎ. ԺԲ 21-22

ծեցի. զի դու Տէր, սովոր ես գթալ եւ ողորմել, եւ թողուլ զմեզս բազումս, եւ քաւել զամենայն հոյս անաւրէնութեան. որ զպոռնիկս սրբեցեր, զաւագակն ազատեցեր, զմաքսաւորն արդարացուցեր, եւ զծանրաբեռնեալսն մեղաւք թեթեւացուցեր: 7 Վասն զի Աստուած ես ողորմած, եւ գթաս ի մեղուցեալսն՝ որք հաւատով կարդան առ քեզ. գթա, Տէր, եւ յիս ի բազմամեղս, եւ ապրեցո ի թիւնից թշնամոյն: 8 Փարտեցո, Տէր, զխաւար յածող հայեցուածոցս իմոց, եւ բաց զականջս իմ խլացեալս յանդէպ լսելոյ. բժշկեա զվիրաւորեալ լեզուս ի բամբասանաց, եւ սրբեա զսիրտս իմ ի չար խորհրդոց:

9 Քեզ ցանկամ, Տէր բարերար, եւ փափագեմ գթածի Հաւր իմոյ. գթա ի վերայ իմ մեղաւորիս, եւ ընկալ իբրեւ զանառակ որդիին: 10 Յագեցո ի քաղց իմ ի սիրոյդ քումմէ, եւ լցո զծարաւիս յառատաբուղիս շնորհէդ. զի ցանկ առ քեզ խնդրեմ մերձենալ, եւ բաղձամ ի քեզ հայել ի յարածամ. միշտ շնորհաց քոց փափագեմ, եւ հանապազ ողորմութեան քում կարաւտիմ: 11 Մի՛ ընդ պատեհալսն պարտաւորեալ, եւ մի՛ ընդ ատելիսն դատապարտեր. այլ ընդ կամարարս կամաց քոց ընկալ, եւ ընդ պահողս պատուիրանաց քոց պահեա: 12 Ձի եթէ առանց ներելոյ գլանցանս իմ քննեսցես, ընդունայն են ինձ յարութեան խոստմունք. զի ի հուր գեհննին է ժառանգութիւն իմ: 13 Ձի եթէ զդատապարտութիւն եւ զանդէպ մտածութիւնս իմ դատիցիս, ապա երանեմ ես չեղելոյն յորովայնէ. այլ նայեա ի մաղթանս իմ եւ ի պաղատանս, եւ մի՛ մերժեր ի յողորմութենէդ քումմէ՝ որ ողորմութեան քում բաղձամ, եւ քոյոյ գթութեանդ կարաւտիմ: 14 Ձի միշտ զմարմինս իմ պղծեցի, եւ հանապազ զոգիս աղտեղացուցի, ոչ չարաչար վարիւք միայն, այլ եւ զազիր խորհրդովք:

15 Եւ արդ լուա ի մեղաց, եւ մաքրեա ի գեռաթաթախ տղմոյս: 16 Ձքեզ խնդրե-

ցի, եւ զքեզ աղաչեմ, լից զկարաւտութիւնս իմոյ փափագմանս. խառնեա զիս ի դասս սրբոց եւ ի ժողովս արդարոց, որք ի բաղձալի տեսութենէդ քումմէ վայելեն յարածամ: 17 Ես ոչ համարձակերես իբրեւ զբարեգործ ոք հայցեմ, այլ աղերսիւ ժտիմ իբրեւ զպարտապան եւ զբազմամեղ: 18 Ոչ....¹ ունելով համարձակիմ իբրեւ զմաքուր, այլ ի մաքրութենէդ քումմէ զժահահոտութիւնս իմ մաքրել աղաչեմ, զի անթիւ ունիմ զմեղաց իմոց զբազմութիւնս, եւ հոյք անաւրէնութեանս իմոյ հեղձուցանեն զիս հանապազ. միշտ զսիրտս իմ ճմլեցուցանեն, եւ զմարմին եւ զոսկերս իմ հալեն եւ մաշեն. եւ վասն այսորիկ ժտիմ հանապազ պաղատել, աղաչել եւ մաղթել, զի դու ես Հայր իմ եւ Տէր, արարիչ իմ եւ ստեղծիչ. առ ո՞ երթայց, եւ կամ յումմէ՞ խնդրեցից աւգնութիւն: 19 Քեզ մեղայ, եւ առ քեզ խոստովանիմ, եւ զքեզ աղաչեմ. մի՛ ի քումմէ ողորմութենէդ զիս մերժեր, եւ մի՛ յերեսաց քոց ընկենուր: 20 Մաղթեմ քեզ Տեառն բարերարիդ եւ բազմագութ իմոյ արարչիդ. մի՛ յաւիտենական ամաւթովն ամաչեցուցաներ զիս, եւ մի՛ ի մեծի աւուրդ դատապարտեր. մի՛ ի տիեզերական հրապարակիդ զիս յանդիմաներ. մի՛ անողորմ տանջանաւքդ տանջեր, եւ մի՛ սոսկալի գեհննիւդ պատուհասեր: 21 Այլ ապրեցո ի հրացան հնոցացն, եւ ի հրահոսան գետոցն հրեղինաց, յորդանցն չարածանեաց եւ յաննշոյլ խաւարէն եւ դառն դատաստանացն եւ յաններելի տանջանացն, յանլոյծ կապանացն եւ ի հանապազորդ նեղութեանցն, ի միշտ ողբոցն եւ ի կրճելոյն ատամանցն: 22 Այլ գթա ի վիրաւորեալս մեղաւք, եւ բժշկեա զհիւանդացեալս անաւրէնութեամբ: 23 Ընկալ իբրեւ զհայհոյոզն եւ զհալածիչն, եւ փարատեա զմեղաց իմոց զբազմութիւն. սրբեա ի պղծութենէս

1 Յօրինակին բառ մի անընթեռնիլ

իբրեւ զպոռնիկն, եւ արդարացո իբրեւ զմաքսաւորն: 24 Ողորմեա ինձ իբրեւ քանանացւոյն, եւ շնորհեա զյանցանս իմ իբրեւ զաւագակին: 25 Բնակեցո զիս ի դասս սրբոց եւ ի խորանս արդարոց կամարարաց յանանց կենացն վայելչութիւնս, եւ ի յանբաւ բարութեանցն ուրախութիւնսն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որում փառք յաւիտեան:

ԻԵ

ՅԱՂԱԳՍ ՊԷՍՊԷՍ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ԽՐԱՏՈՒՄ

1 Յառաջ քան զամենայն առաքինութիւնս է խոնարհութիւն, եւ նախ քան զամենայն ախտս է փառասիրութիւն: 2 Գլուխ առաքինութեանցն սէր է. իսկ գլուխ ախտիցն է արդարացուցանել զինքն: 3 Իսկ երկիւղն Աստուծոյ հալածէ զամենայն մեղսն. իսկ դանդաղումն հալածէ զերկիւղն Աստուծոյ. նոյնպէս եւ գերութիւնն հալածէ զառաքինութիւնն յանձնէ: 4 Չորք են առաքինութիւնք, լռութիւն, եւ խոնարհութիւն, եւ պահել զպատուիրանս Աստուծոյ, եւ նեղութիւն: 5 Չորք են առաքինութիւնք որ պահեն զանձն, ողորմութիւն յամենեսեան առնել, եւ մի՛ բարկանալ, եւ երկայնամտութիւն, եւ զզուշանալ ինքեան ի մոռացմանէ մտաց: 6 Պէտք են առաքինութիւնքս այս յարածամ, եւ անսպառ անկանել առաջի Աստուծոյ ի սրտի իւրում, եւ ունել զինքն առ մեղաւորս, եւ մի՛ դատել զոք. եւ յայնժամ դադարեն խորհուրդք: 7 Չորք են այս առաքինութիւնք որ աւգնեն մանկան արեղայի, խոկումն գրոց յամենայն ժամ, եւ տքնութիւն եւ գործածեռն, եւ հնազանդ եւ հպատակ լինել հաւրն, եւ մի՛ թուել զինքն յիրս ինչ ուրեք ամենեւին: 8 Վասն

չորիցս այս իրաց հոգիք պղծին, մի՛ չըջել ի քաղաքի եւ չդնել պահապան աչաց, եւ մի՛ ունել ծանաւթութիւն ընդ կանայս, եւ մի՛ ունել սէր ընդ փառաւորս երկրի, եւ սիրել զմարմնական խաւսս եւ զդատարկաբանութիւնս: 9 Յաղագս չորից իրաց լինի պոռնկութիւն, յուտելոյ եւ յրմպելոյ յագ, եւ յագմանէ քնոյ եւ ի դատարկ կալոյ, եւ ի դատարկաբանելոյ խաղալ եւ ծիծաղել, եւ ի զարդարմանէ հանդերձից: 10 Վասն չորից իրաց խաւարին միտք, մի՛ յուզելոյ զընկերն, եւ անգոսնելոյ զընկերն, եւ արհամարհել եւ նախատել ընդ ընկերին, եւ ի չարախաւսելն զընկերն: 11 Յաղագս չորից իրաց հոգիք խոպանանան եւ լինին անպտուղ, մի՛ յոչ դադարել ի տեղւոջ եւ ի տան, եւ մի՛ գործել ինչ ոչ, եւ մի՛ զի սիրեսցէ զբաղմունս մարդկապէս, եւ մի՛ յորժամ սիրեսցէ զնիւթս երկրի եւ զագահութիւն: 12 Յաղագս չորից իրաց բարկութիւն գայ, մի՛ ի տալոյն, եւ յամելոյն զիւր կամսն, եւ հակառակելն եւ սիրելն վարդապետ լինել բազմաց, եւ մի՛ կարծել զինքն լինել քան զայլ մարդ իմաստուն: 13 Չորք են այս առաքինութիւնք զոր դժուարաւ ստանայ մարդ, եւ այսոքիկ պահեն զամենայն առաքինութիւնս, սգալ յարածամ, եւ հայել միշտ եւեթ յիւր մեղսն միայն եւ մի՛ դատել զոք, եւ ունել զինքն առ մեղաւորս, եւ ունել առաջի աչաց իւրոց զմահ իւր հանապագ: 14 Արդ որ ոք կամի պահել զառաքինութիւնս զայսոսիկ, կարէ ապրել. զաւրաւոր է Աստուած պահել զմեզ յամենայն չարէ եւ ի փորձութենէ եւ ի հանդերձեալ ժամանակին՝ որ գալոցն են ի վերայ ամենայն տիեզերաց. զի գտցուք ողորմութիւն ի Քրիստոսէ ի ձեռն Սուրբ Հոգւոյն:

ՅԱՂԱԳՍ ՊԷՍՊԷՍ ԱԽՏԻՑ

15 Արար Աստուած զմարդն, եւ եղ զնա ի դրախտին փափկութեան, զամենայն զգայութիւնս ողջ ունելով ի բնու-

1 Զայս նառ հանդերձ յաջորդ հատուածովն տե՛ս եւ ի Հարանց վարս երեսելի տարբերութեամբ հտ. Բ. 532, 571:

թեան իւրում: 16 Արդ իբրեւ լուաւ այնմ՝ որ խաբեացն զնա, յայնժամ էառ զախտս ամենայն, եւ իսկոյն ընկեցեալ եղեւ արտաքս ի մեծ եւ ի չքնաղ փառաց իւրոց. զի ծանիրցէ մարդ՝ թէ գոն ախտք որ մերժեն զնա յԱստուծոյ, եւ զի աղաչէ զբարերարն Աստուած, որպէս զի աւգնեսցէ նմա, եւ ապա կարասցէ կտրել յինքենէ ի բաց զախտս ամենայն: 17 Այս ամենայն վէրք են՝ որ կրին յանձին մարդոյն, եւ քակեն որոշեն զնա յԱստուծոյ: 18 Երանի որք սրբեն զինքեանս յամենայն ախտից եւ յամենայն պղծութեանց հոգւոց եւ մարմնոց. զի է ոչխար բանաւոր ընդունելի պատարագ Աստուծոյ, եւ լսէ զձայնն որ ասէ. Բարի ծառայ եւ հաւատարիմ. ի սակաւուդ եղեր հաւատարիմ, ի վերայ բազմաց կացուցից գեեգ, եկ մուտ յուրախութիւն տեսոն քում^ա: 19 Իսկ որք կամին կատարել զկամս իւրեանց որ ըստ մարմնոյ, եւ ոչ կամին բժշկել զինքեանս ի բժշկութենէ սուրբ առաքինութեանց, գտանին մերկ ի սուրբ պատուիրանէն ի ժամ հարկաւորութեանն. անկանին ի խաւարն արտաքին՝ ուր կայ սատանայ եւ կապեալքն: 20 Եւ պատմուծանք պղծութեանցն են այսոքիկ, պոռնկութիւն, արծաթսիրութիւն, չարակնութիւն, բանսարկութիւն, նախանձ, փառասիրութիւն, հպարտութիւն. այսոքիկ եւ որք սոցին նման են: 21 Զի՞նչ է պոռնկութիւն. պոռնկութիւն՝ ցանկութիւն, որկորստութիւն, յագել քնոյ, դատարկութիւն, դատարկաբանութիւն, պաճուծանք մարմնոյ, եւ զեղումն եւ ընդ վայր ծաղր, անամալթութիւն, թուլութիւն, դանդաղումն: 22 Զինչ է արծաթսիրութիւն. արծաթսիրութիւն, անհաւատութիւն, անյուստութիւն, անգթութիւն, անողորմութիւն, ազահութիւն, արհամարհութիւն, անբարի ստութիւն, անձնահաճութիւն, եւ ոչ հայել ի պատուիրանն Աստուծոյ: 23 Զի՞նչ է

չարակնութիւն. չարակնութիւն է չարախաւսութիւն, նախանձ, մարդահաճութիւն, անձնասիրութիւն, անգիտութիւն, ստութիւն, եւ սուտ վկայութիւն: 24 Զի՞նչ է բարկութիւն. բարկութիւն է հարստահարել զիւր կամսն, հակառակութիւն, վիճութիւն, նենգութիւն, սուտ գիտութիւն, կարծմտութիւն, նեղկութիւն, ձանձրութիւն, ոչ բառնալ զթշնամանս մտաւք, տալ եւ առնուլ: 25 Զի՞նչ է նախանձ. նախանձ՝ ատելութիւն, ոչ բառնալով զփառս ընկերին, եւ արկանել գայթաղողութիւն ընկերին: 26 Զի՞նչ փառաւորութիւն. փառաւորութիւն է անզգամութիւն, սիրել զաշխարհս եւ որ ինչ յաշխարհի է, եւ լինել անուանի ի մէջ մարդկան, եւ կատարել զկամս յանդգնութեանն: 27 Զի՞նչ է հպարտութիւն. հպարտութիւն է խստասրտութիւն, անհնազանդ լինել ամենեցուն, եւ քաջալերել յիւր զաւրութիւնն, եւ համարելով զինքն իմաստուն, եւ առնել յար եւեթ զիւր կամսն, եւ արհամարհել զընկերն, եւ կարծել զինքեան իմաստուն գոյ, եւ ունելով զինքն իբրեւ ոչ իմիք կարաւտ գոյ: 28 Այս ամենայն գործին յանձին մարդոյն, մինչեւ որոշեն զնա յԱստուծոյ: Այս է զոր եբարձն Ադամ՝ յորժամ եկերն ի պտղոյ ծառոյն, եւ անկաւ ընդ ոտիւք մահուն:

ԻԶ
 ԹՈՒՂԹ՝ ՎԱՍՆ ՀՄԱՅԻՑ ԴԻԻԹԱԿԱ-
 ՆԱՅ ԵՒ ԱՆԱԻՐԷՆ ՅՈՒՌԹՈՂԱՑ

1 Առնոյր առնէր ոք զգլուխ իմ շտեմարանս ջուրց բազմաց, եւ գաչս իմ յորդ աղբիւրս արտասուաց, եւ լայի դառնապէս ի տուէ եւ գիշերի գհանապագ մեղս մերժ. զի կորեաւ երկիւղած յերկրէ, եւ ոչ գոյ ուղիղ առաջի մարդկան. եւ լցաւ աշխարհ մեր հմայիւք իբրեւ զառաջիկան. եւ խոնարհեցաք մտաք ի հնազանդութիւն սատանայի մերոյին իսկ մտաւք. զի լեզուաւք խոստա-

^ա Մատթ. Ի Ե 21, 23

^բ Եբեմ. Թ 1

նամք ճանաչել զԱստուած, եւ գործովք ուրանամք ի նմանէ: 2 Ասաց Աստուած՝ եթէ Սիրեցես զՏէր Աստուած քո յամենայն սրտեւ եւ յանձնեւ եւ ի գաւրութենեւ քո: 3 Յանձնէ է՝ այս ինքն եթէ զնա միայն պաշտեսցես, եւ կոչեսցես անձին քում Տէր եւ արարիչ. ի գաւրութենէ՝ այս ինքն եթէ զգաւրութիւն անձին քում նախ հանիցես յաղաւթս եւ ի վաստակս հոգեւորս. յամենայն ի սրտէն՝ այս ինքն թէ մի՛ ի տունս հեթանոսաց եւ ի ժողովս մարտիրոսաց, մի՛ ի մեհեանս եւ յեկեղեցիս, մի՛ ի բախտս եւ ի շնորհս, մի՛ ի խաչն եւ ի ճակատագիր, մի՛ առ դիւթս եւ առ քահանայս, մի՛ առ աղաւթս եւ առ պահարանս. մի՛ լեզուով խոստովանել, եւ ի սրտէ ոչ հաւատալ. եւ մի՛ սրտիւ հաւատալ, եւ լեզուիւ ուրանալ. մի՛ բանիւք պատուել զԱստուած, եւ արդեամբք բարկացուցանել. մի՛ հաւատովք մեծարել, եւ գործովք տրտմեցուցանել. այլ յամենայն սրտէ եւ յանձնէ եւ ի գաւրութենէ եւ ի մտաց սրտէ սիրել զԱստուած, եւ քրիստոնեայ անուանակից Քրիստոսի:

4 Իսկ եթէ լեզուաւ կոչես զԱստուած արարիչ, տուիչ եւ փրկիչ եւ կեցուցիչ, իշխան մահու եւ կենաց, եւ սրտիւք եւ անձամբք առ դիւթս եւ առ թովիչս եւ առ հարցուկս եւ առ ուռութս եւ առ խտիրս եւ առ հմայս գերեցիս, ոչ եւս պարտ է կոչել զանձն քրիստոնեայ՝ զի հեռացեալ էս ի Քրիստոսէ, եւ հնազանդեալ ընդ լծով սատանայի. զի թողեր լքեր զարարիչն եւ զկեցուցիչն, եւ առ սատանայ ապաւինեցար: 5 Զի եթէ ճշմարտիւ հաւատայիր՝ թէ Աստուած է արարիչ ամենայնի, ապա պարտ էր թէ արարիչն միայն էր իշխան կեցուցանել եւ մեռուցանել, հարկանել եւ բռնել: 6 Զի ո՞ք իշխէր մերձենալ առ հարցուկս՝ որ եւ անձին ոչ կարէ առողջութիւն եւ անմահութիւն շնորհել: 7 Աղէցոյց զոք ի կախարդաց՝ որ անցաւ եւ ան-

մահ եղեւ: 8 Իսկ եթէ ասես՝ եթէ ոչ երթամ առ հարցուկս, այլ բժիշկ է եւ առ բժիշկս երթամ, գործ բռնիչ այս է, խարել, կտրել եւ արիւն թափել եւ դարմանս ըստ ցաւոցն նմա մատուցանել. այլ ոչ եթէ յուռութս յուռթել, եւ զսատանայական բարբանջս բարբանջել. կամ աղ եւ ածուղ, կամ ասդենի առնուլ կարմիր, եւ երկաթ, եւ ջուր, եւ ուլունս ուռթել, եւ կամ գիր պահարան ընդ անձն արկանել, եւ կամ զոսկերս ձկանց եւ սողնոց, զծրարս բժժանաց ի ձեռին եւ ի յակին եւ ի պարանոցի կապել:

9 Արդ եղկելի եւ թշուառական, զի՞ թողեր զԱստուած արարիչ եւ զբժիշկ եւ զխաչն պահապան, եւ ապաւինեցար առ կախարդս յիմարս եւ ապաւանեալս դիւաւք: 10 Աղէ տես զի՞նչ գործէ չարադիւթն. ի մէջ գետինն անցեալ յուռթելն, եւ ընդ ուռթելն մերձենան ի նա դեւքն. եւ ընդ մտանելն յարանշտի, ի ձախ դիւթէ եւ ի յաջ թքթքէ, զխաչն անարգէ եւ զՔրիստոս թշնամանէ, եւ ոչ իմանայ: 11 Իսկ եթէ զուռութս եւս ցուցանէր, ծաղր եւ կատականս եւ խաղ մանկուոյ լինէր: 12 Արդ եթէ էր պարապ զմասանց մարմնոյ զուռութս մի ըստ միոջէ պատմել, ծաղր կացուցանէի զյիմարեալ միտս դիւթին առաջի ամենեցուն: 13 Զի ամենայն ուռութք եւ պարտանք դիւթի եւ թովչի եւ հարցկի սուտ են եւ եղկելի, եւ առիթ գեհենի եւ հրոյն յաւիտենից. եւ որ մերձենայ ի նոսա, ի հուր գեհենին դատապարտի, եւ մասն ընդ անաւրէնս ունի. զի զշնորհս բռնկութեանն արհամարհիցեն, որով մարթ էր արուեստիւք բռնկութեան խարելով եւ կտրելով եւ դարմանս ցաւոցն առնելով՝ բռնել: 14 Զի եւս առաւել զշնորհս պարգեւացն արհամարհիցեն. զի որ ասէն՝ եթէ Հիւանդանայցէ ոք ի ձեռն, կոչեսցէ գերիցունս եկեղեցոյն. աղաւթս արասցեն ի վերայ նորա, եւ աւծցեն իւղով ի յանուն Տեառն, եւ աղաւթն հաւատով փրկեսցեն

զաշխատեալն^ա. Եւ զոր դեւն լիկէ, նորին իսկ հրամայեաց՝ պահաւք եւ աղաւթիւք հալածեն ի ձեռն նշանի ամենայաղթ խաչին: 15 Եւ որ անարգէ զխաչն փրկական, եւ արհամարհէ զչնորհան Քրիստոսի, եւ գնայ առ դիւթս յուռթել, եւ պահարան եւ ուռութսն եւ զգիր պահարան ընդ անձն արկանեն, գնոցանէ ասէ Քրիստոս՝ եթէ երթայի, անիծեալի, ի հուրն յաւիտեանից, ոչ զիտեմ զձեզ^բ. վասն զի զայն արարին՝ զոր նայն ոչ հրամայեաց:

16 Արդ եթէ ասես՝ եթէ եւ նոքա քրիստոնեայք են եւ Քրիստոսի անուամբն ուռթեն, այլ եւ զգիրն եւս սպասաւորք եկեղեցոյ եւ արեղայք գրեն, արդ միտ զիր աւետարանչին. Բագում մարգարէի, ասէ, ասեմ յաւուր յայնմիկ՝ եթէ Տէր, յանուն քո մարգարէացաք, եւ յանուն քո զղբու հանաք, եւ զարութիւնս բագումս արարաք, բաց եւ մեզ. եւ Տէրն ասէ. ոչ զիտեմ զձեզ^բ. վասն զի զայն արարին՝ զոր նայն ոչ հրամայեաց: 17 Եւ զի՞նչ ասացից զմարգարէիցն. այլ եւ աշակերտն եւս Յուդաս՝ որ ի վերջան զմարգարէսն նշանս եւ բժշկութիւնս առնէր, ոչ թուեցաւ ընդ առաքեալսն, այլ եղեւ ի ներքոյ գեհենին: 18 Եւ զի՞նչ ասացից զաշակերտն. որ եւ հրեշտակն ոչ պահեաց զբնակութիւնն ուր կարգեցաւն. այլ անիծեալ անկաւ եւ եղեւ սատանայ, եւ զխոտան անուն ժառանգեաց: 19 Արդ որ ի յայդ ապաստանիսդ՝ թէ եւ նոքա քրիստոնեայք են եւ սպասաւորք եկեղեցոյ, եւ անուամբ Քրիստոսի գրեն զերդմունս պահարանացն, ով անմիտ, զի՞նչ են երդմունք զիւացն, ո՞չ ապաքէն պահք եւ աղաւթք հաւատովք ի ձեռն յաղթողի նշանին խաչի, յորմէ զողան ամենայն բնութիւնք զիւաց:

20 Այլ զիր պահարան հակառակ է շնորհաց եւ պատուիրանացն Աստուծոյ. որպէս զսուտ մարգարէքն՝ որ թիւրէին զժողովուրդն առ ուղղեալսն մարգարէիցն, եւ զբանն ճշմարտութեանն դադարեցուցանէին, եւ զմոլորութիւնն դադարեցուցանէին: 21 Արդ եթէ մարգարէիցն որ սուտ ուսուցանէին՝ ոչ լուաւ յաւուր յայնմիկ, եւ զաշակերտն Յուդայ եհան ի գնդէն, եւ ի հրեշտակս յանցուցեալս ոչ խնայեաց, այլ խաւարայիմ կապանաւք արկեալ ի տարտարոսն^գ, ոչ պահեալ յաւուրն դատաստանի՝ յաւրինակ այժմու մեղուցելոցս, ապա պարտ է իմանալ՝ եթէ եւ ի սոսա ոչ խնայեաց՝ որք ոչ հաւատովք, բայց լոկ անուամբ զանձինս Աստուծոյ նուիրեն, եւ ի տան Աստուծոյ կերակրին, եւ վասն Աստուծոյ պատիւ ընդունին, եւ եկեղեցոյ զլուխ համարին, եւ զաւրէնս Աստուծոյ ընթեռնուն, եւ տգիտաց վարդապետ անուանին, եւ մոլորելոց առաջնորդ. եւ ինքեանք մոլորեալք են, թողեալ զչնորհան Աստուծոյ, զաղաւթսն եւ զիւզն աւծման՝ զոր պատուիրանք հրամայեցին հիւանդին, եւ զպահս եւ զաղաւթս ցաւածին, եւ ինքեանք յուռութս եւ ի գիր զառածին:

22 Այլ եւ առաջնորդացն եւս միս ի մարմին խեցեցին եւ կամ ցաւ ինչ արագ անկանի, դիւթս ի տունս ածեն առ ի յուռթել. եւ ոչ մի արտաքին դիւթիւքն վարին, այլ եւ անձանց եւս ուռութս ուսանին, եւ գրել պահարանս, եւ ի փողս ցաւածիցն արկանեն, եւ ժաժմուկս մտացածին բանից. եւ զանուան որ ոչ լսի ի պատուիրանս՝ գրածս առնեն, եւ զանուն Քրիստոսի ընդ նոսինն արկանեն՝ զի գրածն աստուածական համարեցի: 23 Եւ այնչափ յանդգնեցոյց սատանայ, մինչեւ զսուրբ անուն Աստուծոյ ի պահարանս դիւթաց գրել, եւ ի յուռութս արկանել. զի այն ոչ ի պատիւ

^ա Յուդ. Ե 14-15

^բ Մատթ. ԻԵ 41

^գ Մատթ. Ի 22-23

^դ Հմմտ. Բ Պէտ. Բ 4:

Աստուծոյ է, այլ յարհամարհանս: 24 Եւ եւս առաւել պարտաւորին՝ զի զԱստուած յուռութս եւ ի պահարանս ընդ դիւաւքն արկանեն, եւ ոչ իմանան զաներեւոյթ նետս սատանայի. զի ուռութք եւ գիր պահարան՝ դիւաց հրամանք են, եւ ոչ Աստուծոյ. եւ վասն այնորիկ չտայ սատանայ զգալ զչար նետս իւր, զի եւ զսուրբ անուն Աստուծոյ ետ չարաչար հարկանել ի հրամանս իւր, զի վասն անուամբն Աստուծոյ մի՛ ոք կարասցէ իմանալ զխաւարային խորհուրդս նորա: 25 Զի յիմարեալ մտաւք անուամբ քրիստոնեայք անուանին, եւ գործովք յիմարեալ խոնարհին յիմաստութենէ իւրեանց: 26 Արդ մի՛թէ որ զդեւան պաշտիցէ, յաչս եւ ի բերանս զդե՞ւան համբուրեսցէ. ոչ, այլ զհրամանս դիւացն կատարել՝ է կատարեալ դիւապաշտութիւն:

27 Արդ յորժամ ի խտիրս եւ ի հմայս երեւի կեւոս, եւ ի դիւթութիւնս եւ ի թովչութիւնս եւ ի հատահարցութիւնս եւ ի հաւահմայութիւնս եւ ի մաղաբախութիւնս եւ ի քուահարցութիւնս եւ ի հեղահարութիւնս եւ ի հմայութիւնս եւ ի միջագիտութիւնս եւ ի գրարարութիւնս, յաստեղագիտութիւնս, ի դիւահարցութիւնս, յաւարհմայս, ի լուսնախտիրս, եւ ի շեղջախտիրս, յոգոտնահմայս, ի գեղահմայս, ի սննիկոնս, յուռութս, ի բախտս, ի ճակատագիրս, եւ ի գիր պահարանի, եւ յամենայն ի շարժակս բժժանաց, հմայից, դիւթաց, յորս կոչեն զդեւան յաղ, յերկաթ, ի ջուր, ի նարաւտս, յիւղս, ի գարի, ի յուլունս, ի մոմ, եւ ի հեր գլխոյ եւ յամենայն պղծութիւնս՝ որով պղծենն եւ կորուսանեն զոգիս հնազանդելոցն: 28 Եւ արդ այս ամենայն սգոյ եւ արտասուաց եւ մեծի բարկութեան չիցէ՞ արժանի, զի յետ զորդին իւր առաքելոյ յայնպիսի իրս մտաբերել իշխիցեմք: 29 Եւ արդ որ այսմ հնազանդիցի, պա՞րտ իցէ արդեաւք զանձն քրիստոնեայ կոչել՝ որ հեռացեալն է ի Քրիստոսէ, եւ հնազանդեալ կամաց դիւաց, եւ ի

ծառայութիւն կայ սատանայի, եւ զհրամանս նորա կատարէ հանապազ հմայիւք եւ յուռութիւք եւ պահարանաւք գրոյ՝ զորս գրեն մանկունք անիծից, եւ համարին կալ ի սպասու սրբոյ սեղանոյն Աստուծոյ:

30 Ով անմիտք եւ անհանճարք, ո՞չ լսես՝ զի մեղաւորին ասէ Աստուած. Դու ընդէ՞ր բնաւ պատմես զարդարութիւն իմ, կամ առնուս զուխտ իմ ի բերանս քո՞. եւ դարձեալ ասէ. Զմեղս թէ տեսանէի ի սրտի իմում, մի՛թէ լսե՞ր ինձ Տէր՞. եւ դարձեալ ասէ. Ի բաց կացէ՛ք յիմէն ամենեքեան՝ որ գործէ՛ք զանաւրէնութիւն: 31 Արդ ի սնտի աղաւթս քո հրաժարէ զքեզ մարգարէն, եւ ոչ իմանաս: 32 Յորժամ ասես, եթէ ի բաց կացէք յինէն ամենեքեան՝ որ գործէք զանաւրէնութիւն, ո՞չ ապաքէն անձինդ ասես հեռանալ ի բաց, պիղծդ եւ անաւրէնդ. յորժամ դու իսկ ասես ի խնդրուածս քո, մեղաւորին ասէ Աստուած՝ Դու ընդէ՞ր բնաւ պատմես զարդարութիւն իմ՞, ո՞չ ապաքէն քեզ ասես. ընդէ՞ր իշխես բանալ զամենապիղծ բերանդ քո, եւ պատմել զարդարութիւնն Աստուծոյ, ո՞չ ապաքէն հակառակ քեզ բարբառիս, եւ ոչ իմանաս: 33 Եւ յորժամ լսես ի քումմէ բերանոյդ իսկ՝ Զմեղս թէ տեսանէի ի սրտի իմում, մի՛թէ լսե՞ր ինձ Տէր՞, արդ ասա դու իսկ գիտեա՛ թէ ունիս մեղս ի սրտի, Տէրն ոչ լսէ քեզ. զի դու ասես զայդ բերանով քով հանապազ: 34 Եւ արդ յորժամ զբարբառ բերանոյդ ոչ լսես, զիա՞րդ հնարս սատանայի գիտել մարթասցես. եւ կարեւի՛ք արարեալ զքեզ՝ եւ ոչ իմանաս. որ զգիրս ընթեռնուս, եւ զգրեալսն ոչ իմանաս:

35 Զի՞նչ հրամայեն մեզ պատուիրանք Աստուծոյ. ո՞չ ապաքէն ամենայն

՞ Սաղմ. Ծ 16
 Է Սաղմ. Կ. 9 18
 Զ Սաղմ. 9 9. Հմմտ. Սաղմ. Լ 23:
 Դ Սաղմ. Ծ 16
 Ե Սաղմ. Կ. 9 18

գործոց մերոց զխաչն հրամայէ պահապան
 եւ յաւրինիչ, հիւանդաց աղաւթս եւ աւ-
 ծումն իւղոյ, եւ լլկելոցն ի սատանայէ
 պահս եւ աղաւթս. եւ որ զայս խոտիցէ,
 գրովք եւ յուռթովք վարիցէ, եւ կանայս
 ձեռնածուս ի տունս մուծանիցէ, արտաքոյ
 է պատուիրանաց եւ քրիստոնէութեան, եւ
 ընդ նգովիւք առաքելոցն: 36 Զի ի նոցա-
 նէ այդ ոչ քարոզեցաւ. այլ եւ նգովս եւս
 դնէ ի վերայ եւ ասէ. Եթէ ո՞ք աւելի քան
 զայս ուսուցանիցէ, նգովեալ լիցի՞. եւ դար-
 ձեալ ասէ. Մի՛ ինչ աւելի քան զգրեալսն ի-
 մանալ՞. եւ դարձեալ ասէ. Անիծեալ ամե-
 նայն մարդ՝ որ ոչ կացցէ ի գրեալսն ի
 զիրս՞. եւ Քրիստոս ասէ. Եթէ ո՞ք լուծցէ մի
 ինչ ի պատուիրանաց, փոքր կոչեսցի՞:
 37 Արդ ահա գշնորհսն Աստուծոյ եւ
 զգաւրութիւն սուրբ խաչին լուծանես, եւ
 զպահս եւ զաղաւթս զոր պատուիրանք
 հրամայեն, եւ մուծանես զգիր պահապան,
 եւ զուռութս զիւթացն՝ որ ոչ է ի պատուի-
 րանաց Աստուծոյ, այլ զգազանի նետս
 սատանայի ի ձեռն զիւթացն, որ իբրեւ
 զմէգ տարածեալ ունի զամենայն աշ-
 խարհս, եւ ոչ իմանան:

38 Այլ եւ ասես եւս. զոր զիւթքն գոր-
 ծեն եւ ասեն, այսպէս լինի: 39 Եւ եթէ եր-
 բէք պատահէ՝ մի՛ խաբիր, ով մարդ. ոչ ե-
 թէ ի դիւթէն եղեւ, այլ եւ թէ չերթայիր
 առ դիւթն՝ քեզ ի ժամուն այն այնպէս
 պատահէր. բայց դու զԱստուծոյ ողորմու-
 թիւնն զիւթին զաւրութեանն կարծեցու-
 ցանես: 40 Բայց ի ձեռն զիւթաց բազում
 անգամ չլինի, եւ երբեմն լինի. ոչ եթէ
 զաւրութեամբ զիւթին լինի, այլ իբրեւ
 կուրաց ընդ խարխափս ընդ ոտս ինչ ան-
 կեալ գտանիցին. ահա ընդ խարխափս
 գտանես, եւ ոչ եթէ աչաւք ինչ յառաջա-

գոյն տեսանիցես. նոյնպէս եւ զզիւթացն
 տեսանիցես: 41 Բայց մարդիկ յիմար ի
 չպատահեալն չհային, բայց եթէ զմինն
 պատահել տեսանիցեն՝ զայն առեալ վերա-
 ցուցանեն, եւ ի լսելիս ամենեցուն արկա-
 նեն: 42 Այլ զիւթի եւ ուռթոյ զաւրութիւն
 ոչ լինի. եւ եթէ եղեալ տեսանես ի յան-
 կարծ, որպէս ասացին, ոչ եթէ յուռթէն եւ
 ի դիւթէն եղեւ, բայց զի դու այնպէս հա-
 ւատացեր՝ թոյլ ետ Աստուած այնպէս լի-
 նել ըստ քում այնպէս հաւատալոյն, զի
 մեծապէս դատապարտեսցիս, զի փոխանակ
 Աստուծոյ առ զիւթսն ընթացար: 43 Զի
 յորժամ թողուս զպատուիրանն, եւ ի
 դիւթս եւ ի յուռութս ապաւինիս, մտեր
 կամաւք ընդ հնազանդութեամբ սատանա-
 յի, եւ տէր եղեւ կամաց քոց. որպէս որդի
 թագաւորի յորժամ կամաւք թողու զթա-
 գաւորն, եւ երթայ ի լերինս առ աւազա-
 կապետ մի, եւ տայ զինքն ի ծառայութիւն
 նմա, ապաքէն տէր եւ իշխան է աւազակա-
 պետն կենաց եւ մահու նորա:

44 Արդ մեծ մասն աշխարհիս ընդ
 յուռթիւք եւ ընդ հմայիւք եմուտ ի հնա-
 զանդութիւն սատանայի, եւ չէ ոք որ ի-
 մանայ գշարաչար ամբարշտութիւնս մեր.
 որ թողեալ զԱստուած արարիչ, եւ առ
 դիւթս եւ առ ուռութս եւ առ թովիչս եւ
 առ պահարանս եւ առ հմայս ընթանան, եւ
 հանապազ բարկացուցանեն զարարիչն:
 45 Եւ արդ առ այս ամենայն զի՞նչ պարտ
 էր առնել, բայց միայն սգալ եւ լալ, զի
 փոքր մասն աշխարհիս հազիւ թէ ապրես-
 ցի. զի առեալ զպատիւ որ Աստուծոյն վա-
 յել էր՝ մահկանացու մարդոյ մատուցեալ
 էաք զգիտութիւնն. զայն գիտութիւնն՝ որ
 առաջնոցն երեւէր, որպէս Սաւուղայ վասն
 իշոյն կորուսելոյ յայտնեաց. վասն զի
 տղայք էին, եւ չէր կատարելութիւն գի-
 տութեան առ նոսա: 46 Բայց առ մեզ կա-
 տարելութեամբք են ճշմարիտ ոգւոց զի-
 տութիւնք. զի ինքն Քրիստոս եկն աւետա-
 րանեաց, զկապանս աւրինացն ելոյծ,

Պ. Գ. Ը. 8. 9
 Ը. Գ. Գ. 9. 6
 Գ. Գ. Գ. 1. 26
 Մ. Գ. Գ. 1. 19

զշնորհս եմոյծ, զմահ խափանեաց, զյարուծիւն խոստացաւ, եւ զարքայութիւն եւ զկեանսն յաւիտեանից: 47 Այս է կատարեալ գիտութիւն, եւ ոչ զիւտ իշոյ կորուսելոյ. զանգիտութիւնն եբարձ, եւ զայս եմոյծ, զոր ոչ կամի վասն մեր եթէ զմարմնաւորս ինչ խնդրեսցուք. այլ մեք զհոգեւորսն հոգասցուք, եւ զմարմնաւորսն ի նա ընկեսցուք. վասն այսր ծածկեաց ի մէնջ զայն գիտութիւն:

48 Արդ մի՛ հաւատայք՝ եթէ ոք զաւշաքաղութեամբ յԱստուծոյ եւ ի սրբոց զաւրութենէ գիտել ինչ կարծեցուցանիցէ զքեզ. արգելեալ է ի մէնջ զայն, զի չէր ինչ մեծ այն քան զշնորհսն զոր ետ մեզ: 49 Արդ եթէ ոք հաւատովք առ Աստուած անկանի, աղաչանաւք ապաւինի ի նշխարս մարտիրոսաց, ընդունի բժշկութիւն ցաւոց, զհալածումն ախտի, եւ զելումն դիւաց, եւ զթողութիւն մեղաց: 50 Այլ եւ ծածկեալ մարգարէութիւնն ի յայժմու ժամանակիս մարդոյ ոչ է. զի ոչ նշխարք մարտիրոսաց զմեզս ուրուք յանդիմանեն, եւ ակամայ ապաշխարութիւն ի վերայ ածեն առանց կամաց առնելոյն. զի Աստուած ոչ երբէք բռնադատէ զմարդ, այլ ի կամսն ապաստան առնէ, զի վարձս ընկալցի գործելին: 51 Եւ ոչ եկեղեցիս եւ մատուռնս շինեն, զի ոչ երբէք Աստուած սովոր է այդպիսի ինչ գործել, զի մի՛ բարիքս մեր ի հարկէ լինիցին. այլ ի կամսն ապաստան արարին, զի վարձս տացէ առնելեացն: 52 Բայց այսպիսի շփմունք ի դիւաց կեղծեաց լինին՝ զի անվարձ աշխատ եւ ծաղր արասցեն զմարդիկ:

53 Այլ զյառաջիկայ ինչ գիտութիւն դեւք ոչ երբէք գիտեն, զի մինն միայն է սրտագէտ՝ արարիչն ամենայնի. իսկ դեւքն եւ դիւթքն արարածք են, եւ ոչ արարիչ. եւ կեանս եւ մահ եւ առողջութիւն եւ հիւանդութիւն եւ բժշկութիւն եւ մեծութիւն եւ աղքատութիւն իւրոց արարածոց տալ՝ արարչին միայն վայել է, եւ ոչ դիւաց եւ

ոչ դիւթաց. որ եւ անձանց նոցա Աստուած է իշխան եւ արարիչ: 54 Արդ զիա՞րդ իշխեն այլոց արարածոց հրամայել՝ որում չեն արարիչ. զի արարածք արարչին միայն կան ի հնազանդութիւն, որ եղծանել եւ նորոգել կարէ, եւ ոչ դիւաց եւ դիւթաց, որ եւ ինքեանց չունին իշխանութիւն:

55 Արդ գիտացեալ եթէ Աստուած միայն է արարիչ, ընդէ՞ր ընդ կապանաւք խտրոց եւ հմայից արկանել զանձն, եւ յաւրահմայս ամբարշտել. եւ համարիս ի նմանէն ինչ եղծանել եւ կամ նորոգել խոտոյ, որթոյ, եւ նիւթոց կալոյ, հնծանի, եւ սերմանց, եւ ամենայն գործոյ որ անցանէ ընդ ձեռս ձեր: 56 Ընդէ՞ր յաւրահմայս եւ ի խտիրս անկանիս, աղէ տուր ինձ պատասխանի: 57 Ի՞նչ վնասակար է շաբաթն եւ չորեքշաբաթն, զի սոքա անուամբ Քրիստոսի միայն են քրիստոնեայք. եւ անուն ինչ նորոգել եւ եղծանել ոչ կարէ առանց լուսոյ եւ տաւթոյ. եւ լոյսն եւ տաւթն յարեգակնէ է. եւ արեգակնն ոչ եթէ յաւուրս չորեքշաբաթին եւ ի շաբաթուն այլ ինչ ծագումն է, եւ ի յայլս այլ. այլ այս մի ծագումն է, եւ նոյն հանապագ: 58 Արդ եթէ մի ծագումն է արեգական՝ չորեքշաբաթին եւ ուրբաթին, շաբաթուն եւ կիրակիէին, ընդէ՞ր ի մի ծագմանէն սոքա վնասեն եւ նոքա ոչ, տուր ինձ պատասխանի, ով յիմարդ խտրողադիւթ եւ ծառայդ հմայից եւ հեռացեալ ի շնորհացն Աստուծոյ. ո՞չ ապաքէն ամենայն աւուրքն Տեառն են, եւ ի յաւուրս ամենայն զոր բարի գործեմք՝ մերով յաւժարութեամբ եւ կամաւն Աստուծոյ, եւ զոր չարն գործեմք՝ մերով չարութեամբ եւ ներելով Աստուծոյ. եւ բարւոյն Աստուած է կատարիչ, եւ չարին մեք եմք իշխան: 59 Արդ անուն շաբաթու եւ չորեքշաբաթու զիա՞րդ կարէ նորոգել ինչ կամ եղծանել, քանզի եւ մարթին իսկ ոչ. զի անուն՝ անձն եւ միտս ոչ ունի, եւ որ ինչ անձն եւ

միտս ոչ ունի՝ զիա՞րդ մարթի առնել արարչութիւն: 60 Բայց միայն սատանայ ապշեցոյց զքեզ իմանալ զայս. զի զԱստուծոյ արարչութեանն պատիւ առեալ, եւ անշունչ անուան շաբաթին եւ չորեքշաբաթի նուիրես, եւ ընդ կռապաշտան դատապարտիս:

61 Արդ թողեալ զյիմարութիւնդ քո որ ի ձեռն խտրանաց աւուրդ է, զի ոչ ինչ կարես տալ պատասխանի, բայց միայն անաւրէն մոլորութիւնդ քո քարշէ զքեզ գործել զայդ. բայց աղէ ցոյց, ընդէ՞ր ամբարշտես եւ ի լուսինդ, եւ առնես եղծիչ եւ նորոգիչ զլուսինդ. եթէ յարեգակն ամբարշտէիր, թերեւս տայիր ինձ պատասխանի՝ թէ յարեգակն տաւթութիւն է, եւ կարող է հասուցանել եւ լիացուցանել, ցամաքեցուցանել եւ սնացուցանել ըստ հրամանի արարչին. զի հիւթք չորք են որ դարմանեն զարարածս Աստուծոյ՝ հրամանաւն Աստուծոյ, հուր եւ ջուր եւ հող եւ աւդ. եւ ի դոցանէ թէ որ պակաս գտանի ի խառնուածսն, երկիր պտուղ ոչ բերէ. եւ յայսմ նիւթոյ առ լուսնոյ ոչ գտանի: 62 Ընդէ՞ր ունիս զլուսինդ պատճառս եղծանելոյ եւ նորոգելոյ. հողն յերկրէ է, հուրն յարեգակնէ, ջուրն յանձրեւաց, աւդն մրրկածին. այս են որ դարմանեն զարարածս հրամանաւն Աստուծոյ: 63 Լուսնոյ զի՞նչ իշխանութիւն է եղծանել կամ նորոգել. զի լուսնոյ ոչ տաւթ է եւ ոչ աւդ, ոչ հող է եւ ոչ ջուր. բայց միայն մեզ ի լուսաւորութիւն զիշերոյ ստեղծաւ. եւ պատի թաղի՝ բերելով զաւրինակ կենարարին, եւ ինքն զինքն ոչ գիտէ՝ եթէ է ինչ եւ կամ չէ, զի շունչ եւ կենդանութիւն ոչ գոյ ի նմա. բայց շարժի եւ գնայ իբրեւ զհուր եւ զջուր, եւ կայ մեզ ի հարկի եւ ի ծառայութիւն հրամանաւ արարչին. եւ խոտոյ եւ սերմանց նա ոչ իշխէ, զի ամենեւին անշունչ է: 64 Արդ ո՞րչափ տանջանաց եւ գեհենի արժանի համարիցիս զայն, որ գանշունչն շնչաւոր կարծեցուցանէ, եւ

զպատիւ եւ զիշխանութիւն արարչին առնուցու եւ տացէ սատանայի եւ աւուրց հմայից, եւ պաշտէ զարարածս եւ ոչ զարարիչն: 65 Յորժամ զիշխանութիւն եղծանելոյ դնիցես աւուրց նշան, եւ տէր եւ արարիչ զնոսա կարծեցուցեր, եւ եղեր գործովքն քովք պաշտաւնեայ եւ երկրպագու լուսնոյն եւ աւուրց հմայից, եւ անլուծանելի ածեր ի վերայ քո գանէծսն որ ասէ՝ եթէ Անիծեալ լիցի որ պաշտաւն տանիցի եւ երկիր պագանիցէ արեգակաց եւ լուսնի եւ գաւրութեանց երկնից՞: 66 Եւ ընդէ՞ր վիրաւորիս, ով թշուառական, աներեւոյթ նետիւ սատանայի, արկանելով ի վերայ գործոց քոց հմայս աւուրց եւ խտիրս. յորմէ ոչ ինչ աւգտիս, բայց միայն տուգանս ոգւոյ եւ առիթ գեհենին:

67 Իսկ եթէ ասես, եթէ ընդէ՞ր ոչ հաւատացից հմայիցն՝ յորժամ տեսանեմք զամենայն ինչ եղծեալ ի յաւուրս խտրոցն, մի՛ խաբիր, ով մարդ, զի չիք ինչ յարարածս Աստուծոյ առանց ախտից եւ ապականութեանց եւ փոխելոյ. զի անեղծ եւ անփոփոխելի արարիչն միայն է: 68 Բայց արարածս որ ընդ ձեռամբ մեր անցանէ՝ ախտ եւ ապականութիւն եւ եղծումն եւ յարդարումն: 69 Եւ եղծումն եւ յարդարումն ի խամբայութենէ անձրեւաց լինին, եւ ի տաւթոյ արեգական, եւ ոչ կոռելոյ աւդոյ. այլ ոչ եթէ ի լուսնոյ, զի ոչ եթէ ի լուսնի անձրեւ է. եւ ոչ եթէ ի տաւթութիւն, եւ ոչ աւդ՝ եթէ վնասէր խոտոյ եւ սերմանց եւ ամենայն գործոյ՝ զոր խտրես գործել ի յաւուրս նորա. բայց միայն լուսատու է արարածոց: 70 Եւ քեզ ի լուսնոյն վնաս երբէք ոչ լինի, բայց միայն ի տաւթոյ արեգական, եւ ի խոնաւութենէ լուսնի: 71 Զի որպէս ի չոր եւ ի ցամաք հոտ ինչ վնասակար ոչ հարկանի. եւ յորժամ զգիշութիւն հովոյն արեգակն ջեռուցանէ, հոտ եւ որդունս ծնանի. զի զոր աւ-

*** Հմբ. Բ Օր. Ժէ 3:

ըինակ եւ ի հանդերձս մարմնոյ յորժամ
 գիշութիւն եւ ջերմութիւն եւ փոշի ոչ է՝
 գեռունք ոչ ծնանին, եւ յորժամ ջերմու-
 թիւն մարմնոյն եւ թացութիւն քրտան եւ
 փոշին ընդ միմեանս մտանեն՝ գեռունք
 հանդերձից յուրով ծնանին, նոյնպէս եւ փո-
 շի ի խոտոյ եւ ի գիշութենէ եւ տաւթոյ ա-
 լուրն լինի եւ ի կշռելոյ առ միմեանս հիւ-
 թիցն: 72 Զի շաբաթն եւ չորեքշաբաթն
 հիւթս ինչ ոչ ունին, եւ արարածոց Աստու-
 ծոյ ոչ իշխեն, ոչ նորոգել եւ ոչ եղծանել:

73 Արդ ով մարդ յիմար եւ անհան-
 ճար, եթէ կամիս ընտրել վասն գործոյ ձե-
 ուաց քոց, զխառնուածս հիւթիցն ընտրեա,
 զտաւթութեան եւ զցրտութեան, զխոնա-
 լութեան եւ զցամաքութեան, եւ զաւուրսն
 զարնանային եւ աշնանային. եւ ոչ ի շա-
 բաթս ամբարշտել, եւ ի նմանէն համարել
 գեղծումնն եւ զաջողումն գործոյն: 74 Իսկ
 եթէ ասես դարձեալ, է գի եւ ի խտրանացն
 աւուրց վնասին որթն եւ գինի եւ ամենայն
 ինչ զոր յաւուրսն գործեմք, արդ համա-
 րեաց եւ լինիցի այդպէս. բայց ի միտ առ,
 մի՛ աւուրց համարիր՝ եթէ նոքա իշխեն. զի
 զաւուրցն Աստուած լոյս միայն եցոյց մեզ,
 եւ զբարի գործել ի նմա եւ չար՝ մեր իշ-
 խանութիւն է: 75 Եւ եթէ ի սատանայէ
 համարիս զապականութիւն գործոց քոց,
 սատանայ առանց քոյոյ կամաց եւ Աս-
 տուծոյ թողացուցանելոյ՝ արարածոց Աս-
 տուծոյ ոչ իշխէ: 76 Դու իսկ գիտեա եթէ ի
 խոզիցն երամակ ոչ իշխեաց մտանել, բայց
 եթէ հրամայեաց. եւ գինչս նոցա ոչ իշ-
 խեաց կորուսանել, բայց եթէ ի Տեառնէ
 առ հրաման: 77 Եւ եթէ առանց մերոյին
 կամաց իշխէր սատանայ մտաց մերոց, հա-
 ճոյ Աստուծոյ եւ ոչ միում ումեք տայր լի-
 նել, այլ զամենեսեան ընդ մեղաւք արկեալ
 կորուսանէր: 78 Ապա եթէ այդպէս է, ոչ
 մարգարէքն մարգարէ լինէին, եւ ոչ առա-
 քեալքն առաքեալք, եւ ոչ արդարքն ամե-
 նայն արդարք. զի նմա այնպէս կամ էր:

79 Բայց ոչ այդպէս. այլ որ նմայն հնա-

զանդի, նմա միայն իշխէ: 80 Զի զայդ դու
 իսկ գիտա, զի սատանայ մարդատեաց է եւ
 ոչ մարդասէր. եւ թէ ունէր իշխանութիւն
 գործոց ձեռաց մերոց խանգարել եւ կեցու-
 ցանել, վաղուց իսկ կորուսեալ էր՝ ոչ
 միայն զգործս մեր, այլ եւ զմեզ իսկ գլխո-
 վին, զի կամք նորա այն իսկ են. այլ ոչ
 իշխէ: 81 Բայց եթէ լինի ապականութիւն
 գործոյ քո, այսպէս գիտա. արար գքեզ
 Աստուած ի պատկեր իւր, եւ իշխան ամե-
 նայն արարածոց իւրոց, եւ զամենայն ինչ
 հրամայեաց քեզ գործել հաւատովք եւ
 շնորհաւք, եւ պահպանութեամբ նշանաւ
 սուրբ խաչին. եւ դու թողեր զճշմարիտն
 Աստուած, զհաւատս եւ զխաչն պահա-
 պան, եւ արարեր իշխան գործոց քոց զշա-
 բաթն՝ զաւուրսն հմայիցն: 82 Ապա թոյլ
 տայ եւ Աստուած ապականել գործոց քոց
 ըստ հմայիցն քոց, զի ստութեանն հաւա-
 տասցես եւ մեծապէս դատապարտիցիս,
 փոխանակ զի զճշմարտութիւնն ոչ ընկա-
 լար: 83 Զի Պաւղոս ասէ վասն Նեոխնն եւ
 այսպիսի անիրաւութեանց. Փոխանակ, ա-
 սէ, զի նշմարտութեանն ոչ հաւատացին,
 այլ հանեցան ընդ անիրաւութեանն, վասն
 այնորիկ առաքեացէ նոցա Աստուած ազդե-
 ցութիւն մոլորութեան՝ հաւատալ նոցա
 մոլորութեանն, զի դատապարտեցին որք
 ոչ հաւատացին նշմարտութեանն, այլ հա-
 մեցան ընդ անիրաւութիւնն”:

84 Արդ ո՞չ զարհուրիս, ով մարդ, ո-
 րոյ թողեալ զԱստուած արարիչդ, եւ սովո-
 րեալ մտաւք արարածոց պաշտաւնս մա-
 տուցանես հմայիւքդ: 85 Ո՞չ լսես գրոյն
 որ ասէ՝ եթէ Հմայք աշխատութիւն եւ ցաւս
 ածեն ի վերայք. եւ դարձեալ մարգարէն ա-
 սէ՝ թէ Լցաւ իբրեւ գառաջինն աշխարհս
 մեր հմայիւք նման այլազգեացք. եւ Առա-
 քեալ ասէ. Զաւուրս խորէք եւ զամիսս եւ

“ Ի Թե՛ս. Բ 10-11
 † Ը Թե՛գ. Ժ Ե 23
 ‡ Ե՛ս. Բ 6

զժամանակս, երկնչիմ ի ձեռն՝: 86 Արդ պարտ է եւ մեզ երկնչել ի պատուիրանաց, եւ հաւանել ճշմարտութեանն. եւ պիղծ համարել զնոսա՝ որք խտրանաւք եւ դիւթաւքն վարին, եւ սուտ երազաւք պատրեալ բանդագուշին: 87 Եւ ոչ իմանան՝ եթէ յորժամ թողեալ ուրուք զճշմարիտ ճանապարհն աստուածաշտուութեան, եւ այնպիսեացն լսել հաւանի, բազում անգամ զստուծիւնն որպէս ճշմարտութիւն ցուցանէ ի միտս նորա, զի չարաչար դատապարտեսցի. փոխանակ զի ճշմարտութեանն ոչ հաւատաց, այլ հաճեցաւ ընդ անիրաւութեանն, որպէս եւ գրեալ է յերրորդ Թագաւորութեանն. յորժամ մեղաւ Աբաար՝ ետես Միֆիա մարգարէ զՏէր, եւ զարուսթիւնք երկնից կային յաջմէ եւ յահեկէ. եւ ասէ Տէր. ո՞վ ելցէ եւ պատրեսցէ զԱբաար, եւ ելցէ ի Հոամաթ Գաղաադու եւ մեոցի. եւ սկսան ասել ոմն այսպէս, եւ ոմն այնպէս: 88 Եւ ել ոգի եւ եկաց առաջի Տեառն եւ ասէ. ես երթայց եւ պատրեսցից զնա, եւ մեոցի: 89 Եւ ասէ Տէր. ի՞նչ: 90 Եւ ասէ. եղէց ոգի սուտ ի մարգարէս Գորաբ, եւ ելցէ ի Հոամաթ Գաղաադու՝ եւ մեոցի: 91 Արդ Տէր ոչ է այն պատրանացն՝ պարտապան. բայց թոյլ ետ պատրանացն լինել, փոխանակ պատրանացն լինել հաւատալոյ նոցա սուրբ մարգարէիցն:

92 Արդ որ հաւատալ սովորի պատրանաց դիւացն, թոյլ տայ Աստուած պատրել զնա՝ զի դատապարտեսցի, փոխանակ հաւատալոյ նոցա ստուծեանն: 93 Արդ փախիցուք ի պատրանաց սուտ մարդոց, եւ ի տեսլենէ երազոց, եւ ի դիւացոյց գիտից սուտ նշխարաց, եւ ի հրամանաց խաբող մոլորեալ երազախաւս սպասաւորաց նորա, որք աշխատեն զանձինս բազմաց սուտ մարգարէութեամբն իւրեանց, եւ զպատիւն

Աստուծոյ առեալ՝ զոր պարտ էր ի տանն Աստուծոյ առաջի սրբոյ խաչին եւ սուրբ վկայիցն մատուցանել, զգոլոշի անուշահոտ խնկոցն եւ զպայծառութիւն լուսոյն առեալ առաջի ստուծեանն մատուցանեն: 94 Ով յիմար ընթերցող յամենայն մոլորութեանց, չեղե՞ն քեզ բաւական նշխարք մարտիրոսաց՝ որ եկեալ եւ դադարեալ են առ քեզ, եւ հանապազ խնդրեն վասն քո. եւ կամ նշան սրբոյ խաչին՝ որ առ քեզ եւ ի տան քում հանապազ: 95 Ընդէ՞ր ոչ խնդրես ի նոցանէ զխնդիրն քո. զի՞ ընթանաս ի խնդիր պատիր բանից. մի՞ եթէ Աստուած վասն զի ոչ չոգար առ նոսա՝ բարկանայ քեզ. ո՞չ ապաքէն ինքնին ասէ. եթէ ոք ասիցէ, ասէ, ձեզ աստ է Քրիստոս կամ անդ, մի՛ հաւատայցէք. զի բազում սուտ փրիստոսք եւ սուտ մարգարէք ելին ի յաշխարհ. եւ մոլորեցուցանեն, ասէ, եթէ հնար ինչ իցէ եւ զընտրեալսն: 96 Ահա եղեւ իսկ եւ տեսաք յետ մարգարէիցն սուտ մարգարէք, յետ առաքելոցն սուտ առաքեալք, եւ յետ մարտիրոսացն ահա այժմ իսկ տեսանեմք սուտ մարտիրոսս խաբել զմարդիկ: 97 Եւ վասն տգիտաց որք ոչ գիտեն զհոգի զաւրութեանն եւ ճշմարտութեան, առաք զհրամանս զայս ի Տեառնէ որ ասէ. եթէ ասեն ձեզ՝ եթէ ահա յանապատի է, մի՛ ելանիցէք. եւ եթէ ասիցեն՝ եթէ յշտեմարանս է, մի՛ ելանիցէք:

98 Արդ պարտ է պահել զպատուէրն Քրիստոսի, եւ մի՛ խաբել մեզ ի պատրանաց դիւաց, թէպէտ եւ սուտ ինչ տանջանաւք չարչարիցեն զմեզ. զի լաւ է աւրինաւք Քրիստոսի չարչարել, քան հրամանաց դիւաց հնազանդել, թէպէտ եւ նշանս եւ սքանչելիս առնիցեն. զի սովոր է սատանայ սուտ նշանաւք որպէս ճշմարիտ ցասամբք պատրել զմարդիկ՝ որք ոչ ինչ տեղեակ են աներեւոյթ նետից նորա, զոր

Պ. Գ. Գ. 10-11

Բ. Գ. Թ. Գ. 19-22

1 Յորինակիւն չիք պատրանաց

Գ. Գ. Գ. 21-22

Գ. Գ. Գ. 26

եւ յառաջն եցոյց առ Երեմիա մարգարէին, առ Մովսէսիւ Յանէս, առ Պետրոսիւ Սիմոն, եւ այլք բազումք՝ որք զարբանեկութիւն սատանայի հարկանէին, եւ սուտ նշանս ցուցանէին, եւ իշխանք եւ ժողովուրդք հաւատային՝ մինչեւ զսուրբ առաքեալսն հալածել, եւ զճշմարիտ քարոզութիւնն Քրիստոսի մոլորութիւն համարել, եւ բազում նեղութիւն հաւատացելոցն հասուցանել: 99 Արդ սուտ մարգարէիցն եւ սուտ առաքելոցն եւ սուտ մարտիրոսացն վասն սուտ նշանի մի՛ հաւատար, զի սովոր է սատանայ զայդ առնել. որ ի յայնժամ զմովսէսեանսն եւ զպաւղոսեանսն զհոգեկիցսն եւ զամենիմաստսն աշխատէր, ո՛րչափ եւս առաւել գլխմարսս եւ գտխմարսս:

100 Արդ այս ամենայն աներեւոյթ հնարս սատանայի զի՞նչ ունիցիմք առնել. այլ զգուշանալ պատուիրանացն Աստուծոյ, եւ սիրել զնա յամենայն սրտէ եւ յանձնէ եւ ի զաւրութենէ. եւ անդադար աղաւթել ի տուէ եւ ի գիշերի: 101 Զի աղաւթք զհոցն շիջուցին, զառիւծսն սանձեցին, զգազանական ձուկնն դադարեցուցին, զծովն հերձին եւ զժողովուրդն ապրեցուցին: 102 Եւ պահաւք ամրացուցանել զքեզ, զի պահք զէն են առաքինութեան. ի ձեռն պահոցն շքեղացան դէմքն Մովսէսի. ի ձեռն պահոցն Նինուէ ապրեցաւ, մարգարէն յերկինս վերացաւ: 103 Եւ մի՛ վասն քո դանդաղ եւ յիմար մտացդ փոքր համարիր զմեծդ անաւրէնութիւնս: 104 Յիշեա վասն զի փոքր կարծեցուցանելոյ Ադամայ զպատուիրանն Աստուծոյ՝ ել ի դրախտէն. վասն փոքր կարծելոյ Քամայ զամաւթ հաւրն յայտնեալ՝ անկաւ ընդ անիծիւք եւ ընդ ծառայութեամբ. վասն փոքր կարծելոյն Եսաւայ զանդրանկութիւնն ընկենուլ՝ տեղի ապաշխարութեան ոչ եգիտ. վասն փոքր կարծելոյ Կայէնի զԱստուած անգէտ համարել սպանմամբ Աբէլի՝ երերումն եւ տատանումն ընկալաւ.

վասն փոքր կարծելոյն Կորխայ եւ Դադանայ եւ Աբիրոնի ի պատիւ քահանայութեանն մերձենալ՝ կենդանւոյն ընկլան ի դժոխս. վասն փոքր համարելոյ զպոռնկութիւնն Զամբրի՝ քսան եւ երեք հազար արանցն սատակեցան. վասն փոքր համարելոյ երդմանն Սեդեկիայ՝ աւարուամն Երուսաղէմի. վասն փոքր համարելոյ Սաուղայ ստել բանին Աստուծոյ եւ չսպանանել զԱգագ՝ պատառումն թագաւորութեանն. վասն փոքր համարելոյն Դաւթի ընդ թուով առնել զԻսրայէլ՝ սպանումն եաւթանասուն հազարացն. վասն փոքր կարծելոյ Սափիրայ ստելոյն եւ Անանիայ՝ զդառն մահ ընկալան. եւ վասն փոքր կարծելոյ բազմաց զպատուիրանն Աստուծոյ՝ աստ տանջեցան, եւ անդ տանջանաց ակն ունին: 105 Եւ արդ պարտ է պահել զպատուիրանս զգրեալս. ոչ յշտեմարանս մտանել, եւ ոչ յանապատս ելանել, եւ ոչ երկիր պագանել երկիւղիւ աւտարին. այլ պահել զպատուիրանս նորա, ոչ յաւելուլ եւ ոչ հատանել:

106 Զիցե՞ն մեզ բաւական իւրաքանչիւր նշխարք մեր, ընդէ՞ր ելանեմք եւ խաբիմք ի դիւաց. չիցե՞ն մեզ բաւական հոգեկիր մարգարէքն, ընդէ՞ր լսեմք երագոց. չիցե՞ն մեզ բաւական քահանայք Աստուծոյ, ընդէ՞ր երթայցեմք առ հարցուկս մոլորեալս. չիցե՞ն մեզ բաւական աւրէնքն բնագիրք՝ յոր ենն լիով կամքն Աստուծոյ, ընդէ՞ր ունիցիմք զհրամանս նորատուրս եւ զթուղթս պատիրս՝ որ թերի եւ պակաս կարծեցուցանեն զպատգամս հոգեկիցս մարգարէիցն, զքարոզութիւն սուրբ առաքելոցն եւ զվարդապետութիւնս սուրբ աւետարանին. եւ զոր ի պատուիրանացն ոչ է հարկաւորել հարկաւորէ, եւ զինքն յերկից ցուցանէ, զգրեալս մատամբն Աստուծոյ: 107 Եւ ոչ լսեմք Պաւղոսի որ ասէ. Մի՛ խոռվել զձեզ, մի՛ բանիւ եւ մի՛ թղթով,

որպէս թէ ի մէջ^ա: 108 Ի միտ առ, ով յիմար եւ չարադիւթ, զի վասն միոյ մեղաց Ադամ ել ի դրախտէն. վասն միոյ սպանութեանն տատանումն Կայէնի. վասն գիշութեան ջրհեղեղն աշխարհի. վասն ամբարտաւանութեանն անկումն սատանայի. վասն ամբարշտութեանն շփոթումն լեզուաց. վասն արուագիտութեանն կործանումն Սոդոմայ. վասն սուտ երգմանն աւերումն Երուսաղէմի. վասն զծնողս արհամարհելոյ անէծք եւ ծառայութիւն. վասն սուտ վկայելոյ սղոցումն ծերոցն առ Շուշանաւ. վասն ոչ գոհանալոյ սատակումն Հերովդէի. վասն խստասրտութեան ընկղմումն Փարաւոնի. վասն գողութեան քարկոծումն Աքարայ. վասն տրտնջման յաւճիցն սատակումն. վասն պոռնկութեան որ անկան ի միում աւուր քսան եւ չորք հազարք: 109 Զի վասն ի սուտ յաստուածս երթալոյդ, եւ վասն անխտիր ի հմայս մերձենալոյդ՝ են ի ձեզ, ասէ քարոզն եկեղեցւոյ, Բագում հիւանդի եւ ախտաժէտի. վասն այդորիկ եւ մահի տարածումք. վասն այդորիկ եւ նեղութիւնք բազումք. վասն այդորիկ եւ անզաւակութիւնք ի ծննդոց եւ կապումն երկանց անլուծանելի. վասն այդորիկ եւ լլկումն դիւաց. վասն այդորիկ տնանկութիւնք եւ աղքատութիւն. վասն այդորիկ եւ երկնային պատուհասք. վասն այդորիկ եւ անդաստանաց սնութիւնք. վասն այդորիկ եւ շարժմունք անդադարք. վասն այդորիկ եւ չյաջողութիւնք անասնոց. վասն այդորիկ եւ գրկանք է գողոց. վասն այդորիկ եւ հուր գեհենին եւ աղջամուղջքն յաւիտենից եւ տանջանքն մշտնջենաւորք:

110 Զի եթէ զբաժակն ոսկի՝ զոր թագաւորի իսկ մատուցանեմք ի սպաս եւ ի սեղան, եւ դարձեալ զնոյն առեալ՝ եւ կոյ եւ ցելս եւ աղբ մարդոյ առեալ բերեմք՝

զոր եւ նա իսկ տեսանէր, մի՛թէ զնոյն բաժակն միւսանգամ անդրէն ի նորուն սեղան իշխէա՞ք մատուցանել. ոչ: 111 Ընդէ՞ր. զի աղբովն պղծեցաք, եւ թշնամանեալ բարկանայ եւ գարշի թագաւորն: 112 Եւ կամ վասն երգմանց պատուիրանք ո՞րպէս ասեն: 113 Մարդիկ, ասէ, զոր ինչ ի վեր է քան զինքեանս՝ յայն երգնուն. նոյնպէս եւ Աստուած, վասն զի ոչ գոյր մեծ որ երգնոյր՝ յանձն իւր երգուաւ եւ ասէ այսպէս. Յանձն իմ երդուայ՝ ասէ Տէր, եթէ արհնելով արհնեցից գեղճ: 114 Այլ երգնուլ Աստուծոյ յարարածս իւր անհնարին է, ամբարշտութիւն է: 115 Եւ կամ յետ Քրիստոսի գալստեանն գրել մեզ գիր մատամբ Աստուծոյ, եւ տալ. զի եթէ այդ միւսանգամ մեզ պէտք էին յերկնից, ապա Քրիստոսի գալուստն թերի եւ անկատարումն էր: 116 Ոչ այդպէս. այլ աւրէնքն մեզ ի յերկրի ետուն հրամանս լիով ի ձեռն Մովսէսի եւ Յիսուսի. եւ յետ այսորիկ տանջանք եւ արքայութիւն: 117 Բայց կրկին աւրէնք մեզ երկնատուրք գրեալ մատամբն Աստուծոյ այլ ոչ առաքին: 118 Բայց սատանայ զոմանս յաջ խոտորեցուցանէ, եւ զոմանս յահեկ. եւ զահեակն ամենեքեան իմանամք, վասն զի յայտնի են գործք ձախոյ կողմանն. բայց զաջն ոչ իմանամք, զի աստուածպաշտութեան կերպարանաւք խոտորի: 119 Եւ վասն այսորիկ առաք զպատուէրս զայս՝ եթէ Մի՛ խոտորեսցիս ի գրեալս պատուիրանացս յայսցանէ յաջ կամ յահեակ^բ:

120 Եւ արդ հայեսցուք ի պատուիրանս Աստուծոյ, եւ զգրեալս ի նմա արասցուք. եւ մի՛ մոլորեսցուք իբրեւ զհեթանոսսն ի բախտ եւ ճակատագիր եւ ի հրամանս: 121 Զի զինչ եւ հրամանքդ տարածին ընդ ամենայն երկիր, եւ բանդագուշեալք խաւսին սուտ, եթէ մարդ ընդ հրա-

^ա Բ. Թ. Լ. Բ. 2
^բ Ը. Կ. Գ. Ժ. Ը. 30

^գ Ծ. Ե. Ի. Բ. 16-17
^դ Բ. Օ. Գ. Ժ. Ը. 11. Յ. Լ. Ը. 7

մանս վարի եւ գործէ: 122 Եթէ այդպէս է, եւ ընդ հրամանաւ գործէ մարդ, ապա յայտ է՝ եթէ եւ դատի ոչ վասն մեղացն, զի զհրամանս նորա կատարեմք: 123 Ապա եւ պսակիմք ոչ վասն արդարութեան. զի ոչ եթէ մեր կամաւ գործեմք զբարին, այլ նորա հարկաւ ակամայ: 124 Ապա եւ թագաւորք ոչ պարտին¹ զգողն եւ զպոռնիկն եւ զսպանողն տանջել, զի ոչ իւրով կամաւ գործէ զայն, այլ զհրամանս կատարէ: 125 Ապա թէ որ պիղծ այր սպանանիցէ, կամ նու սկեսուրս, կամ դրացի զդրացի, կամ ծառայ զտէր, կամ աղախին զտիկին, կամ աշակերտ զվարդապետ թշնամանիցէ եւ սպանանիցէ, չպարտի ոք մեղադրել եւ կամ պատուհասել, զի զհրամանն կատարեն: 126 Ապա եւ զաւագակսն չպարտիմք մեղադրել եւ հալածել, զի հրամանաւ գան ի վերայ որպէս ասեսդ: 127 Բայց ոչ այդպէս. այլ արարածս ընդ հարկաւ եւ ընդ ծառայութեամբ եւ ըստ հրամանի սորա վարին, եւ ճնճողիկ անգամ յորոգայթ ոչ անկանի առանց հրամանի. բայց միայն զմարդ տէր եւ ի վեր քան զհրաման ստեղծ: 128 Զի որպէս ինքն Աստուած ոչ է ընդ հրամանաւ ծառայ՝ այլ ազատ եւ զինչկամարար նմին, որպէս եւ զմարդն ըստ իւրում նմանութեան ստեղծ տէր եւ ազատ եւ անձնիչխան եւ զինչկամարար բարւոյ եւ չարի: 129 Եւ կամակար մտաւք եթէ բարիս գործեմք՝ արքայութիւն խոստացաւ, եթէ չար՝ զդժոխս: 130 Կարող եւ կատարիչ Աստուած բարւոյ, եւ ընդ մահ մեղաւորին ոչ կամի, բայց զանձնիչխանութիւն ի մէնջ ոչ բառնայ, քանզի ասէ իսկ՝ եթէ կամեսջիք եւ լուիջիք ինձ:

ԻԷ

ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ ԿՈՒՆԻՈՅ ԿԱՆՈՒՄ

1 Արդ ես զայս ըստ իմում գիտելոյ ասեմ՝ թէ որ զմանուկ տգէտ զտխմար, որ ոչ կարէ կարգալ զաւետարանն ի բեմի ի լուր ժողովրդոցն, եւ զբոլոր ուսումն կարգի քահանայութեան ոչ է ուսեալ, զպատիժ քահանայանալոյ նորա նա կրէ՝ որ ձեռնադրեացն զնա. զի զհասնոցն եւ զուսելոցն զհամարս մեղաց անձինք իւրեանց տան: 2 Այլ աւրէն է առաւել զգիտունն եւ զհասակաւ կատարեալս արժանացուցանել զանձինս, եւ առաջնորդել ժողովրդեան: 3 Վասն որոյ մեծին իսկ Պաւղոսի ձայնարձակ բարբառովն զբողոք բարձեալ ասէր Տիմոթեայ՝ թէ Ձեռս յուրով վերայ վաղվաղակի մի՛ դիցես, եւ մի՛ լիցիս կցորդ մեղաց աւտարաց՝. եւ դարձեալ Մի՛ մատաղատունկ, զի մի՛ հպարտացեալ ի դատաստան սատանայի անկանիցիք: 4 Այլ զի պարտ է քահանային անարատ լինել որպէս Աստուծոյ տնտեսի, վերակացու լինել հաւատարիմ բանիւ վարդապետութեամբ: 5 Արդ զոր աւրինակ Պաւղոս զՔրիստոս դնէ միջնորդ Աստուծոյ եւ մարդկան, եւ երաշխաւոր եւ փրկանս ամենայն աշխարհի, արդ ո՞չ ապաքէն նոյնաւրինակ եւ քահանային աւրէն է ամենայն անարատութեամբ լինել առաջնորդ եւ փրկանք քաւութեան մեղաց ժողովրդեանն Աստուծոյ: 6 Արդ եթէ մեծին Մովսէսի ասէ զիր՝ եթէ հեզ եւ խոնարի եւ հանդարտ էր քան զամենայն մարդիկ եւ ուսեալ զամենայն իմաստութիւն եզիպտացւոցէ, զի թէ հեզն եւ հանդարտն եւ իմաստունն եւ անարատն ի բժոյ՝ հաւատարիմ պատգամաւոր Աստուծոյ եւ մտերիմ տեսուչ ժողովրդեանն ոչ կարաց ի մեղաց ողջ պահել

1 Յօրինակիկն՝ պատժին

“ ԵՏԻ. Ե 22
 † ԵՏԻ. Գ 6
 ‡ Հմբ. ԹԿ. ԺԲ 3. Գործ. Է 22:

զժողովուրդն, եւ ապրեցուցանել զնոսա ի հարուածոցն Աստուծոյ, եւ ժառանգեցուցանել նոցա զպարգեւական երկիրն, իսկ քահանայք տգէտք եւ արատաւորք զիս՞րդ կարեն ապրեցուցանել զժողովուրդն ի մեղաց՝ որք եւ զանձինս անգամ չկարեն պահել ի մեղաց, թող թէ ժողովրդեանն Աստուծոյ լինել առաջնորդ եւ երաշխաւոր՝ տանել յարքայութիւնն Աստուծոյ: 7 Քանզի գրեալ է եւ պատուիրեալ՝ թէ մի՛ յաջ խոտորիցիս եւ մի՛ յահակ: 8 Վասն որոյ պատուիրեմ առաջնորդաց եկեղեցւոյ զգուշանալ ի ձեռնադրութենէ տգիտաց, եւ մի՛ կաշառաւք արծաթոյ զոք յառաջ մատուցանել յեպիսկոպոսութիւն, կամ յերիցութիւն, եւ կամ ի սարկաւազութիւն, կամ յայլ աստիճան, որպէս ի սուրբ աւետարանին փրկիչն ասէ առ սուրբ աշակերտսն՝ թէ Ձրի առեւ, եւ ձրի տուի՞:

ԻԸ

ՅԱՂԱԳՍ ՔԱՌԱՄՆՈՐԴԱԿԱՆ ՊԱՀՈՑ
ԵՒ ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ ՆՈՐԱ ԸՆԴ ԶԱՏ-
ԿԱԿԱՆ ՔԱՌԱՄՆԻՆ

1 Արդ վասն զի պահոց քառասնորդ կոչի աւր մի ուրբաթ՝ չարչարանք խաչելութիւնն Տեառն, եւ առիթ կոչման չարչարելոցն յաշխարհիս ունել յանձին գաւրինակ չարչարանացն Տեառն, առ ի փրկութիւն հոգւոց չարչարակցացն Տեառն, առ ի պահպանութիւն անձանց պատուիրանապահացն Տեառն, առ ի լինելոյ չարչարակից խաչելութեանն Տեառն, եւ փառակից յարութեանն, եւ առիթ կոչման մեղաւորաց յապաշխարութիւն: 2 Արդ յայսմ քառասներորդի որպէս զի աւրէն է զչաբաթն եւ զկիրակէն որպէս զուրբաթ եւ զչորեքշաբաթ պահել զհետ աւրինացն առնելոյ¹, եւ յայնմ քառասնե-

րորդի որ կոչի՝ կիրակէն կոչի աւր առաջին եւ սկիզբն աւուրց յարութեան եւ ուրախութեան աշխարհի եւ աւետիք արքայութեան, լի ամենայն ուրախութեամբ անձանց պատուիրանապահացն արդարութեան աւրէն է զուրբաթն եւ զչորեքշաբաթին իբրեւ զկիրակէն եւ զչաբաթն ուտել: 3 Քանզի զոր աւրինակ ի գատկէն մինչեւ ցվերացումն Տեառն կիրակէ կոչի, այսպէս եւ ի բարեկենդանէն մինչեւ ցգատիկն ուրբաթ:

4 Արդ քեզէն զքեզ ած ի հաւան, եւ զուգեա զայս քառասուն քաւութեան, եւ զայն քառասուն ուրախութեան. կշռեա զքառասուն ընդ քառասնի, եւ զուրբաթ եւ զչորեքշաբաթ ընդ շաբաթու եւ ընդ կիրակէի, եւ գտանես հասարակ. ոչ ի սմա յագումն եւ ուրախութիւն, եւ ոչ ի նմին պահք եւ տխրութիւնք: 5 Այս քառասուն առիթ քաւութեան մեղաց տարւոյն, եւ այն քառասուն յաջորդ ուրախութեանց տարւոյն: 6 Արդ աւրէն է զայս պահոց քառասնորդս հարթիկ պահել ի բարեկենդանէն մինչեւ ցգատիկն. քանզի քաւիչ եւ թողիչ մեղաց տարւոյն կոչի: 7 Այլ գինի եւ իւղ, ձու², ձուկն, պանիր, կոզի, կաղտի, բածին, շճուկ, կաթն, խեր, եւ ձկանմորէ, զայս բնաւ ամենեւին չէ աւրէն եւ ոչ վայել է ճաշակել ամենայն ումեք, մեծի եւ փոքու, արդարոյ եւ մեղաւորի: 8 Շատ են մեզ այլ կամակքն քառասուն աւուրն, կանեփհատն, կտաւատ, փոխինդ, հատ, սամթաջուր:

9 Արդ այսու քառասնորդաւ Տէրն ի լերինն փորձութեան տարաւ յետս զփորձիչն սատանայ, որ է աւրինակաբեր յաղթութեան ամենայն հաւատացելոց. մի՛թէ Աստուծոյ պահե՞լ ինչ պիտոյ էր. ո՞չ ապաքէն վասն աւրինակի մարդկան առնէր զայն: 10 Արդ եթէ զհանապազաւրն մե-

¹ Մատթ. Ժ 8
1 Յայլում օրինակի՝ առնելոյ

² Յայլում չի՞ք ձու, յորում եւ գրեալ էր զկնի՝ կաղտի, բախն

ուանել ոչ կարեմք ըստ բանին Պաւղոսի, այլ գոնեայ քառասուն աւուրբքս լինել հաղորդ չարչարանացն Տեառն Չանասցուք. զի բազ անկեալ¹ մեղք տարւոյն քառասուն աւուրբքս ընկեսցուք յանձանց: 11 Ո՞չ գիտես զի որ միտեալ մտաւք չարչարակից լինին չարչարանացն Քրիստոսի, նոքա միայն կարեն լինել փառակից յարութեանն. քանզի ասէ, թէ Ոչ միայն հաւատալ ի Քրիստոս, այլ եւ վասն անուան նորա չարչարանս ընդունել արժան է²:

12 Արդ այս քառասունք չարչարանք խաչելութեան Տեառն, եւ այն քառասունք յարութեան կենդանութեան Տեառն: 13 Այս քառասունք քացախ եւ լեղի չարչարանացն Տեառն, եւ այն քառասունք խորիսի մեղու եւ ձկան խորովելոյ մասն յարութեանն Տեառն: 14 Այս քառասունք զինուորացն կնքով պահել զգերեզմանն Տեառն, եւ այն քառասուն հրեշտակացն զաւետիսն տալ Մարիամանցն զյարութեանն Տեառն: 15 Այս քառասուն միջնորդ ապաշխարութեան, եւ այն քառասուն երաշխաւոր թողութեան: 16 Այս քառասուն քաւիչ յանցանաց, եւ այն քառասուն թողիչ մեղաց: 17 Այս քառասուն լալոյ եւ արտասուաց, եւ այն ցնծութեան եւ ուրախութեան: 18 Այս քառասուն սերմանելոյ ցաւովք եւ տրտմութեամբ, եւ այն քառասուն ժողովելոյ փառաւք եւ գովութեամբ:

19 Արդ այս քառասնորդաւ մեծ մարգարէն Մովսէս ետ զաւրէնս ժողովրդեանն, եւ այն քառասնորդաւ քաւեաց Մովսէս զյանցանսն Ահարովնի եւ զյանցանս ամենայն ժողովրդեանն: 20 Այս քառասնորդաւ չոգաւ Եղիա ի լեառն սինէական, առնուլ հրաման ի Տեառնէ զվերանալոյն իւրոյ յերկինս: 21 Այսու պահաւք ապրեցան երեք մանկունքն ի բարձ-

րաբերձ բոցոյ տոչորական հրոյն սատակմանէ: 22 Այսու պահաւք լուծին նինուէացիքն զվճիռ մահուան զտէրունական հրամանին, առ ի լինելոյ ընդունելական պահք ապաշխարութեան նոցա, եւ արագաթող լինելոյ մեղք յանցանաց նոցա:

ԻԹ՝

Ի ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆՆ ԵՒ Ի ԾՆՈՒՆԴԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ

1 Սրբոյ եւ զուգական Երրորդութեանն երեք անձինք, մի Աստուածութիւն, մի էականութիւն, մի իսկութիւն, մի ինքնակամութիւն. մի է թագաւորութիւն, մի է արքայութիւն, մի է տէրութիւն, մի է իշխանութիւն, մի է փառաւորութիւն, մի է բնութիւն, մի է հաւասարութիւն, մի է սրբութիւն, մի է կամք, մի է խորհուրդ, մի է փառք, մի է պատիւ, մի յոյս, մի սէր, մի հաւատ: 2 Մեծ, հզաւր, կարող եւ ի վերջան զամենայն, անեղ, անանց, անսկիզբն, անվախճան, անկատարած, անհաս, անտես, անքնին, եւ ոչ իւրիք կարաւտ, եւ ոչ իմիք ցանկացող. ամենահայր, ամենասէր, ամենագութ, ամենախնամ, ամենալուր, ամենապարգեւ, ամենահաս, ամենատես, ամենագէտ, ամենափրկիչ, ամենակեցոյց: 3 Որ ակնարկելովն դարմանէ զամենայն արարածս, զերկնաւորս եւ զերկրաւորս, զերեւելիս եւ զաներեւոյթս, ի շէնս եւ յանշէնս, յամենայն արարածոց յերեւելեայց եւ յաներեւութից, յերկնաւորաց եւ յերկրաւորաց՝ նմա փառք յաւիտեանս:

4 Միածին Բանն կամաւք Հաւր եկեալ յերկիր, եւ ի սրբոյ կուսէն մարմնացեալ, չարչարեալ, թաղեալ, յարուցեալ յերրորդ աւուր՝ նստաւ ընդ աջմէ Հաւր. եւ գայ դարձեալ դատել զկենդանիս եւ զմեռեալս: 5 Որ ըստ էութեանն անմայր, եւ ըստ տեսչութեանն անհայր՝ եկն փրկել զարարածս: 6 Չէ հնար եւ սոսկ Աստուծոյ չարչարել, եւ մեռանել չէր հնար. արդ էն Աս-

1 Յայլու՛մ օրինակի՛ բագանակեալ
 2 Փլ: Լ: 29

տուած եկն եւ եղեւ մարդ, եւ մեռաւ եւ փրկեաց զարարածս: 7 Արդ այլ ոք արարիչ եւ փրկիչ եւ կեցուցիչ իբրեւ զնա ոչ եղեւ եւ ոչ եղիցի եւ ոչ լինելոց է. բայց միայն մինն, Միածինն, ի կուսէն ծնեալ Աստուած, եղեալ մարդ: 8 Քանզի բազումք ի մարդկանէ աստուածածանաւթք, աստուածատեսք, աստուածախաւսք. այլ ըստ բնութեան մարդիկ կոչին, եւ ոչ աստուած: 9 Ելին ոմանք մարմնով յերկիրս. սակայն եւ անդ մարդիկ ըստ բնութեան են, եւ կամ հրեշտակք, այլ ոչ եթէ աստուած: 10 Նոյն աւրինակ եւ Բանին Աստուծոյ եկեալ յերկիր եւ եղեալ մարդ, եւ մեռեալ իբրեւ զմարդ, այլ ըստ էութեանն Աստուած կոչի, եւ ոչ մարդ. եւ ըստ տեսչութեանն Աստուած մարդացեալ, եւ ոչ մարդ աստուածացեալ: 11 Մարդ յերկիրս եւ յերկրի մի եւ նոյն ինքն միացեալ միաւորեալ մարմնով եւ Աստուածութեամբ, ի սրբոյ կուսէն ծնեալ կամաւ Հաւր բան եւ միտք, եւ կամաւ Հաւր ի սկզբանէ արար զամենայն, եւ ի վախճանի երեւեցաւ մարդկան, Տէր եւ տեսուչ յերկիրս եւ յերկրի: 12 Որ յառաջ քան զյաւիտեանս եւ ի վախճանի էջ յերկիր վասն կենաց եւ փրկութեան մարդկան. միջնորդ Աստուծոյ, եւ երաշխաւոր աշխարհի. պատարագ Հաւր, եւ փրկութիւն մարդկան. զատիկ աշխարհի, եւ տաւն տիեզերաց. հովիւ մարդկան, եւ պահապան ի թշնամեացն. տուիչ կենաց, եւ աւետաւոր յարութեան. յաջողիչ կենաց, եւ առիթ արքայութեանն. խաղաղարար աշխարհի, եւ լուսատու խաւարելոց. տուիչ կենաց, եւ բաշխող պարգեւաց. փառք արդարոց, եւ փրկանք մեղաւորաց. կեանք կենդանեաց, եւ յոյս մեռելոց: 13 Նմա փառք յաւիտեանս:

Լ

ՎԱՍՆ ՍԻՐՈՅ

1 Աստուած սէր է, ասէ որդին որոտման սիրելի աշակերտն Քրիստոսի Յով-

հաննէս. եւ որ կայ ի սէրն՝ յԱստուած բնակէ, եւ Աստուած ի նմա: 2 Եւ արդ եղբարք, լուարուք եւ ի միտ առէք զճառս սիրոյ: 3 Ձի ամենայն որ սիրէ զԱստուած, սիրէ նա եւ զեղբայր իւր. զի սէրն Աստուծոյ սիրով եղբաւրն երեւի: 4 Ձի թէ զեղբայրն զոր տեսանէ՝ ոչ սիրէ, զԱստուած զոր ոչն տեսանէ՝ զի՞՞րդ կարիցէ սիրել: 5 Այսուիկ ճանաչեմք եթէ սիրեմք զԱստուած, յորժամ սիրեմք զեղբայրն մեր ըստ հոգւոյն սիրոյ եւ ոչ ըստ մարմնոյ: 6 Ձի այլ է սէր հոգւոյն եւ այլ մարմնոյն. զոր յառաջ գնացեալ ասացուք յիւրում տեղւոյն: 7 Բայց արդ ամենայն որ սիրէ՝ ճանաչի յԱստուծոյ, եւ ինքն ճանաչէ զԱստուած. եւ ամենայն որ ոչ սիրէ զեղբայր իւր ցաւակցաբար, աւտար է յԱստուծոյ, եւ զշնորհս աստուածային ոչ կարէ ընդունել: 8 Ամենայն որ սիրէ զեղբայր իւր ի սուրբ սրտէ, բնակարան լինի Աստուծոյ, եւ Աստուած ի նմա բնակէ: 9 Ձի ինքն Տէրն սիրեաց զմեզ եւ առաքեաց զհոգին ճշմարտութեան բնակել ի մեզ: 10 Ձի իմանալի հոգիս մեր ընդ անիմանալի Հոգւոյն Աստուծոյ սիրով կապակցի. եւ որպէս նա սիրեաց զմեզ, նոյնպէս եւ ի մէնջ կամի սիրել զմիմեանս:

11 Տես թէ որչափ համարձակութիւն ունի սէրն առ Աստուած, որպէս թէ նման Աստուծոյ առնէ զմարդն: 12 Ձի Աստուած սիրովն իւրով նման մարդկան եղեւ, եւ եցոյց թէ մարդիկ իւրեանց սիրովն նման Աստուծոյ լինելոց են: 13 Ձի Աստուած այնչափ սիրեաց զաշխարհս, մինչեւ զՈրդին իւր Միածին առաքեաց ի փրկութիւն աշխարհի. եթէ մեք սիրեսցուք զմիմեանս որպէս եւ սիրեաց Աստուած զմեզ, ոչ ինչ է չար որ խափանէ զսէրն մեր: 14 Ամենայն որ սիրէ, յայտնի է առաջի մարդկան եւ համարձակ առաջի Աստուծոյ. զի երկիւղ ի մեղաց մահու ոչ ունի, այլ սիրովն Աստուծոյ կայ, եւ անահ յամենայն երկիւղական վտանգից: 15 Ուր սէր է, անդ եր-

կիւղ ոչ է. որպէս եւ Յովհաննէս ասէ. Երկիւղ ոչ գոյ ի սէրն, այլ սէր կատարեալ ի բաց մերժէ գերկիւղ^ա: 16 Զի երկիւղ ընդ տանջանաւք է, եւ սէր ի համարձակութիւն. եւ զի երկիւղ հալածի ի սիրոյ: 17 Եւ ուր սէր ոչ է, անդ է երկիւղ դատաստանին, եւ ահ կորստեան յաւուր մեծի ահեղ ատենին: 18 Իսկ սէր աներկիւղ առնէ զմարդ յամենայն տանջանաց: 19 Սէր զայն ասեմ, որ ամենեւին հեռի է յերկբայութենէ: 20 Զի երկբայութիւն եւ սէր ի միասին ոչ բնակէ. եւ գիտելի է՝ զի սէրն ոչ միայն ի կեանսն յաւիտենականս պտղաբերէ զպտուղ խաղաղութեան իւրոյ, այլ եւ յաշխարհիս յայսմիկ զամենայն թշնամութիւն ի բաց հալածէ, զնախանձ եւ զատելութիւն, զոխակալութիւն եւ զչարակնութիւն, զչարախաւսութիւն եւ զհայհոյութիւն, զտրտունջ եւ զբամբասանս, զհպարտութիւն եւ զամբարհաւածութիւն, եւ մանաւանդ զմայրն ամենայն չարեաց զարծաթսիրութիւն եւ զազահութիւն:

21 Արդ որ զսէրն ունի, յայս ամենայն չարեացս ի բաց հեռանայ, եւ յերկնային անքոյթ խաղաղական նաւահանգիստն ժամանէ յամենեւին բարին: 22 Զի՞նչ խաղաղական քան զսէրն՝ ազատ լինել յամենայն խռովութենէ եւ զաստուածային հաճոյսն կատարել: 23 Սէրն բանալի է արքայութեան երկնից եւ ճանապարհ կենացն յաւիտենից: 24 Սէրն զմարդիկ որդիս Աստուծոյ առնէ եւ երկնից արքայութեան ժառանգորդ: 25 Սէրն զապականացու բնութիւնս անապական գործէ, եւ զմահականացուս յանմահութիւնս գերափոխէ: 26 Սէրն գերկրայինս երկնային առնէ, եւ զհողեղէնս հրեղէն կազմէ: 27 Եւ արդ ո՞վ կարէ պատմել զանչափ մեծութիւն սիրոյն, զի անճառ եւ անպատում է. ըստ որում եւ անեղ բնութիւն Աստուածութեան անքննելի է, այսպէս եւ բնութիւն սիրոյն:

28 Եւ որպէս Աստուած անբաւ է, բայց յամենեւին մերձ է, եւ բնակեալ է ի հեզս եւ ի խոնարհս եւ յայնոսիկ՝ որ դողան ի բանից նորա, այնպէս եւ սէրն յամենեւեան մերձ է, որ կամին զնա. եւ ինքն եկեալ բնակեսցէ ի խնդրողս իւր: 29 Քանզի սէրն սիրէ զսիրելիս իւր, եւ ատէ ոչ զատելիս իւր: 30 Որ խնդրեն զնա, մերձ է ի նոսա աստուածապէս. զի Աստուած սէր է եւ կամեցող սիրոյ ի սուրբ սրտէ եւ յանկեղծաւոր հաւատոց:

ԼԱ

ԲԱՆ ԽՐԱՏՈՒ ԱՌՃԳՆԱԻՈՐԱՆ

1 Քանզի գրեալ է եւ պատուիրեալ թէ Մի՛ յաջ խոտորիք եւ մի՛ յաեակէ՞, արդ զչնչական ախտն աջոյ կոչէ եւ զմարմնական ախտն կոչէ ահեկի: 2 Բազումք իսկ որ դատարկութեամբ անցուցին զաւուրս իւրեանց, երկոքումք վարին, մեղանչեն եւ ոչ գիտեն. քանզի թշնամին Աստուծոյ եւ մարդկան այսու ախտիւք յաղթեաց հողեղինին Ադամայ, եւ սովին ախտիւս յաղթեցաւ ի հողեղինէն Ադամայ. այսու ախտիւս եսպան գերկրաւոր Ադամ, եւ սովին ախտիւս սպանաւ յերկնաւոր Ադամայն. այսու ախտիւքս խաբեաց զնախահայրն Ադամ, եւ սովին ախտիւս խաբեցաւ ի նորածնեալ Ադամայն. այսու ախտիւք եկուլ զչնչաւորն Ադամ, եւ սովին ախտիւքս եթուք աստուածեղինաւն Ադամաւ. այսու ախտիւք ընկէց զԱդամ ի դրախտէն, եւ սովին ախտիւք հեղձաւ եւ ինքն ի ծովուն. այսու ախտիւք յաղթեաց կերողին Ադամայ ի դրախտին, եւ սովին ախտիւքս յաղթեաց ի պահողէն Ադամայ յանապատին. այսու ախտիւքս խաբեաց զտգէտն Ադամ ի դրախտին, եւ սովին ախտիւք խաբեցաւ եւ ինքն յետոյ ի լերինն փորձութեան: 3 Արդ փորձիչն մարդկան մինչդեռ կամէր զստեղծիչն իբրեւ զստեղծեալն փորձել՝

^ա Ե. Յ. Գ. Գ. 18

^բ Բ. Օ. Ե. 32

ինքն փորձեալ գտաւ որդին կորստեան եւ ժառանգորդ խաւարի: 4 Արդ քանզի հոգւով ախտիւք անկաւ հոգին չար յերկնից եւ մարմնով ախտիւք զմարմնաւորն եհան ի դրախտէն, վասն այսորիկ հայր ամենայն ախտից եւ չար շնչոց կոչի հպարտութիւնն, եւ մայր ամենայն ախտից մարմնոյ՝ որկորոստութիւն: 5 Արդ յայսմ ախտիցս ծնանին ամենայն ախտք շնչական եւ մարմնական. արդ այսու ախտիւքս կռուի ընդ վանականս գազանապէս. այսու ախտիւք սերմանեաց զցայգն քնով, նիւթէ զցայգն երազով եւ արկանէ զցերեկն լեզուով:

6 Արդ այսոքիկ են որ կոչի ահեկի. որկորոստութիւն, անառակութիւն, շուայտութիւն, արբեցութիւնք, քնածութիւնք, ստախաւսութիւն, որովայնամոլութիւն. վասն այսորիկ ասէ առաքեալ. Կերակուր պորտոյ եւ պորտ կերակրոյ, Աստուած զսա եւ զնոսա խափանեցէ: 7 Վասն պոռնկութեան. ցանկութիւն, գիծութիւն, իգասիրութիւն, ակնատեսութիւն, ակնագնացութիւն, պագշտութիւն, անամաւթութիւն, լրբութիւն, յարատ տեսութիւն, ծիծաղութիւն, շուայտեցութիւն, շնութիւն, պոռնկութիւն, իգացելութիւն, արուագիտութիւն: 8 Վասն այսորիկ ասէ առաքեալն, թէ՛ Ամենայն մեղի մարմնոյն արտաբոյ մարմնոյն են. բայց որ պոռնկիցի, յիւր մարմնին մեղանչիցի: 9 Վասն դատարկութեան. վատ, դատարկ, անյարիւր, վեհերոտ, դանդաղկոտ, չգործու, չկեցու, դատարկակեաց, դատարկակեր, անգութ, անամաւթ, քնեայ, երազատես, երազագէտ, վատ մարգարէ, տգեղծ ի մարտի, անմիտ, անհանճար. վասն այսորիկ պատուիրեաց առաքեալ. Որ գործէն ոչ՝ կերիցէ մի՛: 10 Վասն նենգութեան. խորամանկութիւն,

խարդախութիւն, չարիմաց, ժանտիմաց, ժանտամիտ, թիւնաւոր, աւճաքիմ, խարագիմաց, ամենակեղծ, բիւրակեղծ, բիւրաբիծ, ամենաչար, խոժոռամիտ, խոժոռաղէմ, տրտմող, ուռուցկոտ, դէզաւոր, դեղամոր, դեղխիչ, գոռոզ, խագմառու, չիթող, դաշտխաւս, բանսարկու, հրապուրիչ, որոչիչ, ռիսապահ, քինահան, անհաշտ, ատեցող. վասն այսորիկ ասէ, թէ՛ այս ախտք են եւ կոչին ահեկի, եւ վասն սոցա դատապարտիմք:

11 Եւ այս են աջոյն. ամբարտաւանութիւն, ամբարհաւաճութիւն, սնափառութիւն, նեղութիւն անգոյս, արհամարհութիւն, չարակամ, խստասիրտ, խստամիտ, խստապարանոց, յամառ, անհաւան, անհնազանդ, խստաբարոյ, խստաբան, խստախաւս, չարաբան, չարասիրտ, բարկացող, սրտմտող, չարացասումն, վայրապարացասումն, անժոյժ, եռացկոտ, փքացող, յարձակող, հարկանող, կռուող, արիւններես, տրտմող, մինչ ոչ զփղճուկն եւ ոչ զփուքն թափել չկարէր յիստակեցուցանել զմիտս իւր: 12 Եւ դարձեալ՝ եթէ՛ ոչ աղաչիցի յումեքէ՛ ուտել ոչ կարէ եւ ոչ աղաւթել, այլ յաղթեալ ի ցասմանէն՝ անհաշտ անկանի: 13 Վասն այսորիկ բողոքէ մարգարէն եւ ասէ, Բարկանայի եւ մի՛ մեղանչէք. եւս առաքեալ, թէ՛ Արեգակն ի վերայ բարկութեան ձերոյ մի՛ մոցէ. եւ մի՛ տայի տեղի սատանայի. եւ դարձեալ ասէ, թէ՛ Բարկութիւն մարդոյ զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ: 14 Վասն հպարտութեան. հպարտ, անճնիշխան, անզգամ, ապարասան, անհաւան, անհնազանդ, ստահակ, ստամբակ, վրիպակ, հեռ, յամառ, վիճող, հակառակող, ընդդիմացող, վատախաւս, կարգող, թշնամանող, խռովիչ, խազմարար, խանգարիչ, չարաբան, չարա-

Պ Լ Կ՝. Գ 13
 Բ Լ Կ՝. Գ 18
 Գ Բ Թ՝. Գ 10

Դ Ս Կ՝. Գ 5
 Ե Ե Կ՝. Գ 26-27
 Զ Ե Կ՝. Լ 20

բար, չարակամ, չարալուր, չարատես, չարախաւս, սուտ, ստապատում, կամակոր, կամապաշտ, կամակատար՝ որ կոչի մտախոհ, անձնատեսաց, անձնակորոյս: 15 Քանզի գրեալ է. Որ սիրէ զմեղս՝ ատեայ զանձն իւր^ա. եւ դարձեալ, եթէ հանապազ գԱստուած առաջի աչացդ տեսանես՝ ոչ մեղանչես եւ ոչ գործես զայս ամենայն: 16 Փառասէր, անձնակամ, անձնասէր, անձնահաճոյ, դատարկակեաց. եւ այս ամենայն չարիք մտեալ բնակէ ի մարդն եւ մերժէ յԱստուծոյ: 17 Զոր աղաչեմ վասն Աստուծոյ զամենեսեան պահելով զանձինս ի չար ախտէս յայսմանէ. քանզի վասն սոցա բարկանայ Աստուած, որ զայս կրէ յանձն իւր:

18 Վասն վարդապետաց: 19 Ոչ գտանի վարդապետ խոնարհ, եւ ոչ աշակերտ հնազանդ. ուսեալն հպարտանայ եւ տգէտն խստանայ. չիք ոք որ իրաւամբ վարի, եւ ոչ ոք որ արդարութեամբ կայ. զիտունն սնափառի եւ տգէտն փառասիրի. զիտունն չխոնարհի եւ տգէտն չհնազանդի. ծերն սաստելով հրամայէ եւ փոքրն սաստկութեամբ պատասխանէ. ծերն զպատիւ խնդրէ եւ փոքրն զհանգիստ. չիք ոք որ իմանայ եւ չիք ոք որ ուսանի եւ առնէ. չիք ոք որ ոգեսէր է եւ չիք ոք որ անպատասէր է. հրաժարեալք յաշխարհէ եւ չհրաժարեալք ի ստացուածոց. հրաժարեալք ի ծնողաց եւ չհրաժարեալք ի ծանալթից. հրաժարեալք ի հոգոց եւ չհրաժարեալք ի խորհրդոց. հրաժարեալք ի հո-

գոց եւ չհրաժարեալք ի մեղաց. հրաժարեալք ի լերինս եւ չհրաժարեալք ի հրապարակաց. հրաժարեալք ի պահս եւ չհրաժարեալք յըմպողաց: 20 Եւ արդ Բագումբ եմ կոչեցեալք եւ սակաւք եմ ընտրեալք^բ:

21 Արդ զոր աւրինակ եկեղեցին կոչեցաւ քահանային, եւ չէ աւրէն նմա այլ կին ունել՝ բայց ի միողէն, զի եթէ աշխարհականին չհրամայէ երկու կանայս ունել՝ այլ մի, ի նա յարել, զնա սիրել, նովաւ կեալ, զի այս է հրաման Տեառն, եւ դարձեալ Հոգին ամուսին կոչի, եւ գեկեղեցին ամուսին կոչէ, արդ նոյն աւրինակաւ եւ վանականին վանքն կոչի, զի զվաներն եկեղեցւոյն է ծնեալ. քանզի ասէ առաքեալ թէ՛ Գլուխ կնոջ՝ այր է՞, եւ փառքն կնոջ՝ այրն, եւ աւրէնք կնոջ՝ այրն: 22 Արդ յորժամ վանաց երէցն գլուխ եւ փառք եւ աւրէնք վանաց իցէ, ի տեղւոջն կացցէ եւ տեսցէ զժողովուրդ իւր. զի թէ դու որ առաջնորդ ես՝ ոչ կաս ի կայի, այլոց զիա՞րդ կարես ասել՝ թէ կաց ի կայի, երկիր ի Տեառնէ եւ հնազանդէ՛ Աստուծոյ վարդապետաց: 23 Արդ որք զիւրեանց անձանց զպտուղն չկարեն հաւաստեաւ պահանջել, զիւրեանց անձինս արձակ համարձակս արածեն, զայլոց անձինս նգովիւք հաչեն եւ մաչեն. ինքեանք երիվարաւ սատանայի զհետ տերանց եւ տիկնաց յածեալ ծփին, եւ ի կրաւնաւորաց եւ ի վանականաց իբրեւ յանարգաց գարչին եւ խորչին. Զկարէ ոք երկուց տերանց ծառայել^գ:

^ա Սաղմ. ԺԷ 6

^բ Սաղմ. ԻԲ 14
^գ Եփե. Ե 23
^դ Սաղմ. Գ 24

ԻԱ

1ԿԱՆՈՆՔ ՅՈՎՅԱՆՆՈՒՄՔ՝ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՅՑՑ

ՀԱՅՈՑՑՔ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ [ԳԼՈՒԽՔ Թ]Ց

1 6Ա. Վասն7 յաղուհացսն8 զշաբաթ կիրակէսն9 ոչ պահել եւ ի10 շաբաթու11 երիկունն12 ապաշխարողաց ոչ քարոզել13:

2 14Բ. կիրակէի15 եւ ի Զատիկէ16 մինչեւ ցՊենտակոստն17 ծունր ոչ զնել18:

3 Գ. Զշաբաթ19, կիրակէս20 պահոցն21 լուծանել22 ի պանիր23, ի ձու24, որպէս ի ձէթ, ի ձուկն25 եւ26 ի գինի27:

4 Դ. Յաւուրս28 շաբաթու ոչ դատարկանալ ի գործոյ29:

5 30Ե. 31Ոչ առնել32 զէնմունս յուրբաթու33 եւ ի34 չորեքշաբաթու35:

6 Զ. Զյայտնութիւնն36 եւ զծնունդն Քրիստոսի37 ի միասին տաւնել38:

7 Է. Վարդավառին39 պահոց եւ 40աշխարհամատրանն տաւնի41:

1 *u* կանոնախմբի թիւը մուծուած է վերնագրում այսպէս՝ կանոնի իս յովհաննու մանդակունուոյ ո կանոն *di* չունեն վերնագիր *ABCDEFGHIHabcfehk-lmnopqrs* չի կանոնի
2 *IJKLMNOPQSTVXYZôefhiog* յոհաննու *Rb* յոհաննու *s* ովհաննու *n* տեստն յովհաննու
3 *e* մանդակունեցուն *b* մանդակունեցո կանոնի այս է
4 *ubq* չի *h* հայոց
5 *ubq* չի կաթողիկոսի գուլթ *o* մնացած *abno* գրերը չունեն գուլթ *o*
6 *IJKLMNOPQRSTUVWXYZôad* չունեն ցանկը
7 *abcfehkmoqrs* չի վասն
8 *b* յաղուհացն *n* յաղուհացն *hms* գաղուհացն
9 *b* գկիրակէն *eq* կիրակէն *np* եւ գկիրակէն. *pa-* *gh* *for*-ից, մնացած *abno* գրերը՝ կիրակէն
10 *abcfehkmoqrs* չի ի
11 *k* զշաբաթու *i* այստեղից մինչեւ վերջ չի
12 *c* երկունն *Gfl* երկունն *bq* երկուոյն
13 *Pa*ցի *abcfehkmoqrs*-ից, մնացած *abno* գրերը՝ չարոզել *OW* վասն սրբոյ պասեֆին պահոց *phi*. վասն ... ոչ փարոզել
14 *kmps* նոր յողուածի վերնագիր՝ *p*. վասն (*k* չի վասն) այնոցիկ (*k* յայնոցիկ) որ կիրակին պահաւ անցուցանեն
15 *en* վասն կիրակէի (*n* կիրակէի) *BCDEFGHhklmps* կիրակէի
16 *hklor* ի (*hlo* չի ի) գատկի
17 *ops* ի պենտակոստն *chl* ի պենդակոստն. *pa*ցի *aen*-ից, մնացած *abno* գրերը՝ ցպէտակոսն
18 *b* ծունր *q* ծունրն. *pa*ցի *abcfehkmoqrs*-ից, մնացած *abno* գրերը՝ չունել *n* չկրկնել *phi*. ոչ ղնել *OW* վասն կիրակէի պահելոյ *phi*. կիրակէի ... ոչ ղնել
19 *e* վասն զշաբաթ *bq* շաբաթ *p* ի շաբաթ
20 *b* եւ կիրակէն

21 *bfg* պահելոցն *e* պահելոյ *p* չի պահոցն
22 *hlor* պահոցն միապէս է լուծանել *kmps* չլուծանել
23 *b* ի պանիրն
24 *bq* եւ ի ձու
25 *Eh* եւ ի ձուկն *bq* չի ի ձուկն
26 *f* չի *h* եւ
27 *al* չի ի (գինին) *OW* վասն կիրակէի չկրկնել ծունր *phi*. զշաբաթ ... եւ ի գինի
28 *e* վասն յաւուր *acfehkmoqrs* յաւուր
29 *hlo* ի գործոց *r* ի գործս *OW* վասն պտղոց (*O* պտղերի) *ab* ոչ ուտել պահոց *phi*. յաւուրս ... ի գործոյ
30 *km* նոր վերնագիրը՝ վասն որ ի պենտակոստն յուրբաթու ուտեն զծումն (*k* գծումն)
31 *OW* ի գատկէն մինչ պենտակոստն (*O* ի պենդէկոստն) չկրկնել ծունր *phi*. ոչ առնել ... ի չորեքշաբաթու
32 *e* վասն ոչ առնելու *kmps* առնուլ *n* յառնել
33 *H* յուրբաթ *Un* յուրբաթոյ *c* յաւուր ուրբաթու
34 *beq* չի ի
35 *b* չորեքշաբաթու *eq* չորեքշաբաթի
36 *e* վասն զյայտնութիւն
37 *b* չի *f* քրիստոսի
38 *GHHl* տունել *phi*. տաւնել *OW* վասն տաղավարահարացն *phi*. զյայտնութիւն ... տաւնել
39 *e* վասն վարդավառի. *pa*ցի *CD*-ից, մնացած *abno* գրերը՝ վարդավառին
40 *e* աշխարհամատրանի *kmps* ի գատկէն մինչեւ ցպենտակոստն (*m* ցպենդակոստն) ի պենտակոստն (*m* պենդակոստն) մինչեւ ցվարդավառ (*k* ցվարդավառն) եւ աշխարհամատրանն ծունր ոչ կրկնել *phi*. վարդավառին ... տաւնի *OW* վասն շաբաթ պահել պենտակոստին (*W* պենտակոստին) *phi*. վարդավառին ... տաւնի
41 *bq* չի տաւնի

8 Ը. ¹Դեւք առանց հրամանի Աստուծոյ ոչ իշխեն մտանել ի մարդ:

9 ²Թ. Դիւահարի³ չհաղորդել⁴ մինչեւ սրբեսցի⁵:

1 *e* վասն դեւ *n* վասն դիւաց որ առանց *OW* վասն ուրբաթի եւ չորեքշաբթի (*W* չորեքշաբթի) մարտիրոսաց տօն ոչ առնել *փ/ս.* դեւ *f* ... ի մարդ

2 *W* վասն որ *f* ծնունդ առնեն քան զյայտնութիւն

3 *en* վասն դիւահարի

4 *Un* ոչ հաղորդել *bq* մի հաղորդել

5 *OW* վասն դիւահարի որ *f* ասեն թէ չէ յաստուծոյ *փ/ս.* դիւահարի ... սրբեսցի

4 ՈՒՆԸ (ՈՒՆԻ) Գ. Այլ² եւ յաւր³ կիւ-
րակէի⁴ եւ ի⁵ Զատկէն⁶ մինչեւ ցՊենտա-
կոստն⁷ ծուներ⁸ կրկնել⁹ ոչ հրամայեցին,
10այլ յաղաւթս կալ:

5 ՈՒՍԹ (ՈՒՍԵ) Դ. Եթէ ասիցէ ոք¹¹,
թէ¹² գինի¹³ 14որթոյ բերէ եւ ձէթ¹⁵ ծառոյ¹⁵
եւ ճուղկն¹⁶ ջրոյ¹⁷, ո՛վ անհեղեղ¹⁸ գգայա-
րան¹⁹, այն է²⁰ Նեստորի 21անիծելոյ ա-
ղանդն, գի²² 23Բասիղ Կեսարացի գճուկն
գազան ասէ²⁴, եւ²⁵ առաքեալ²⁶ վկայէ. 27Այլ

մարմին ձկան եւ այլ 28մարմին անասնոյ եւ
այլ 29մարմին թռչնոյ՞: 6 Արդ³⁰ առաքեալ³¹
մարմին³² ասէ եւ հերձուածողն³³ ջուր³⁴:
7 Արդ՝ գիւրդ³⁵ իցէ³⁵ ջուր, զի կենդանի
է³⁶ յաւրդք³⁷, 38սակերք, ջիղք, արիւն,
աչք³⁹. ա՛ղէ⁴⁰, 41քննեա խորհրդիւ 42ի
ձկուռնս եւ ի գազանս, որ ի ցամաքի⁴³ են՝
առեւծ⁴⁴, ինծ⁴⁵, արջ, վիշապ, որ է աւձ⁴⁶ եւ
գիրք ասեն սինկղ⁴⁷ եւ հիդրայ⁴⁸ ծովա-
յինք⁴⁹. սինկղն⁵⁰ շուն⁵¹ ասի⁵² երեք գլխի⁵³
եւ հիդրայն⁵⁴ եւս չարագոյն քան զնա⁵⁵,

- 1 ձ չիբ եւ
- 2 BF այդ
- 3 ձd չիբ եւ (յաւր) Mōū op e յաւուրս abcdfklmopqrs յաւուր
- 4 ձ կիրակէ. բացի AYúafó-ից, մնացած ձեռագրե-
րը՝ կիրակէի
- 5 DGbeq չիբ ի
- 6 b գատկիին
- 7 Y մինչեւ ի պենտէկոստէն ABCDEFGHm ցպէն-
դակոսն Oh ցպենդակոստն W ցպենտէկոստէ ձ
ցպէնտակոսն ú ցպէնդէկոստն dqr ցպենտէ-
կոստն
- 8 b ծուներ f ծուները
- 9 H մի կրկնել
- 10 AB այդ beq այլ լոկ աղաւթս r այլ ոսնկացու-
թեամբ եւ յաղթս կալ KLQRSZ աղաւթս MTXYóú
աղթս ú կալ եւ ուտիս
- 11 beq nf ասիցէ
- 12 achklmoprs եթէ L չիբ թէ
- 13 d գինիին
- 14 Un որթոյ W յորթոյ ելանէ, ի ծառոյ
- 15 r ծառոց
- 16 O ծուկն d ձուկն e ձուկ h ձուկն (l ձուկն) փխ.
ձուկն
- 17 We ի ջրոյ
- 18 Ud անհեթեթ befq հեղեղ KLMQSTZ անհեթեղ (R
անհիւեղ X անհաւատ ձ անհեսեղ) փխ. անհեղեղ
- 19 Vd սգայարան k գգայարան է այն է
- 20 b ապայ այն է
- 21 ձ անիծելոյն fr անիծանելոյ b չիբ անիծելոյ p ա-
ղանդն անծելոյն ú աղանդ
- 22 ú արդ փխ. գի
- 23 abcdekmpqs բարսեղ fn բարսիղ STVX բասիլ ú
գճուկն բասիլ կեսարացի DGHóbcdenq կեսարա-
ցիին
- 24 ձ ասաց
- 25 ABCDEFGHIJOPQUWefq չիբ եւ b ապա փխ. եւ
- 26 b առաքեալին Yóúdehloq առաքեալին
- 27 hlo չիբ այլ ... ձկան եւ abcdefkmpqs ձկանց úp չիբ
եւ FU (ձկան) այդ

- 28 l մարմնի (անաս.) abcdfkmpqs անասնոց l յանաս-
նոյ
- 29 Q մարմնի (թռչ.) ABCDEFGHIRcq թռչնոց b թռչ-
նոցն. բացի Uúhlnor-ից, մնացած ձեռագրերը՝
թռչնոց
- *** Ա Կ Դ Ե Ժ Կ 39
- 30 d այլ փխ. արդ k չիբ արդ ú չիբ արդ առաքեալ ...
ջուր արդ
- 31 b առաքեալին OVYWódeq առաքեալն
- 32 Q մարմնն
- 33 e հերձուածն r հերձուածբ
- 34 ձ ջուր ասէ արդ
- 35 ú ասիցէ փխ. իցէ
- 36 q կենդան. բացի Iacdhlkmpqrs-ից, մնացած ձե-
ռագրերը չունեն է befg իցէ
- 37 Qde աղբ
- 38 ձ ոսկերք ջիլ ոսկերք hlo եւ ջիլ ձ աւիւն b ա-
րիւնբ
- 39 ú աչք արիւն
- 40 ձ լաւ փխ. աղէ
- 41 l ֆննեաց ú չիբ ֆննեա խորհրդիւ ... եւս ուտէ ա-
պա՝ ձ խորհուրդս
- 42 E ի ձկան X ի ձուկս ձ ի ձուկսն եւ ի գազանս e
ի գազանայս
- 43 b ցամաքին lo ցամաքի են
- 44 Բացի ABEUcms-ից, մնացած ձեռագրերը՝ առիւծ
- 45 F ինձ OW ինձն
- 46 d աւձն
- 47 f սիկղ W սկիղն n սկիւղ bq սիկղն H ըսկեղ. բա-
ցի e-ից, մնացած ձեռագրերը՝ սկիղ
- 48 Ea հիւնդրա F յիդրայ Q ի հիդրայ b ի հիդրեայ
cefhklmopqr հիդրեայ
- 49 Y ծովային ձ ծովայինբ են c ծովայինբ
- 50 f սիկղս n սկիւղն d ի շկիւն փխ. սինկղն. բացի
beq-ից, մնացած ձեռագրերը՝ սկիղն
- 51 k շունբ
- 52 I ասէ Y ասի եւ
- 53 OV գլխն W գլխն
- 54 E հիւնդրայն F յիդրայն Q եւ ի հիդրայն hlo հիդ-
րեայ
- 55 X գայն փխ. գնա

բայց ¹զիւրեանց զորդիսն ոչ ուտեն, իսկ ձուկն² զիւր³ մերձաւորութիւնսն⁴ ուտէ, եւ⁵ մարդ⁶ եւս⁷ ուտէ⁸. ապա⁹ զիւր¹⁰ իցէ¹¹ ջուր¹²: 8 ¹³Այլ կան եւ հաւք ջրա- յինք եւ անասունք¹⁴, եւ¹⁵ ո՞վ է, որ¹⁶ ա- ռանց¹⁷ ջրոյ¹⁸ սնանի¹⁹: 9 ²⁰Արդ՝ զիրք²¹ զձուկն²² ²³կենդանի ասեն եւ պատարագ²⁴ եւս առնեն²⁵: 10 ²⁶Եկ եւ առ ձէթ²⁷. զիրք՝ զիւր²⁸ եւ զձէթ²⁹ մի ասեն: 11 ³⁰Եսայի ա- սէ . Փայտ իւղոյ³¹. եւ Դաւիթ³² ասէ³³. Ծե-

ռութիւն իմ ի³⁴ ձէթ պարարտութեան³⁵. եւ ³⁶աւետարանագիրն ասէ, վասն կուսա- նացն³⁷, ³⁸թէ ձէթ ոչ առին³⁹. ⁴⁰Եւ եթէ Տուր մեզ յիւղոյդ⁴¹ ձերմէ՞: 12 Ահա յայտ է⁴², ⁴³թէ իւղ եւ ձէթ մի են: 13 Դարձեալ. ⁴⁴ոչ եթէ Ազամ պանիր եկեր⁴⁵, այլ⁴⁶ պտուղ ծառոյդ⁴⁷ եւ ել ի դրախտէն⁴⁸: 14 Իսկ վասն⁴⁹ զիրք ասեն. Զարբեցողսն⁵⁰ եւս չար քան զղիւսահարսն⁵¹. զոր եւ առա- քեալ⁵² ասէ. Մի⁵³ արբեցողի⁵⁴ եւ ոչ⁵⁵ ա- սաց թէ⁵⁶ ⁵⁷մի՛ ըմպէք զինի⁵⁸, զի եւ¹ Նոյի

1 Y իւրեանց q զիւրոց p զորդիս իւրեանց BCDEFFGHKOSTUVWbfg որդիսն abcdehklmors որ- դիս զ զորդիս
 2 d ձուկ
 3 Y իւր Un զիւրեանց զ զիւրեան
 4 զd մերձաւորն abcdefghklmnoprs մերձաւորսն
 5 զ չիւր եւ
 6 mn զմարդ O մարդս
 7 O եւ փխ. եւ EG չիւր եւս
 8 Yn ուտեն
 9 b արդ (h ահա) փխ. ապա H արդ
 10 OVWubdefg չիւր եւս
 11 befg է փխ. իցէ
 12 b ջուրն
 13 ABU այդ b եւ կան u եւս փխ. եւ H չիւր եւ (hաւք) V ջրային զ ջրոյինն c ջրահնմ
 14 r անասուն d անասուն (կրկնուած)
 15 զ չիւր եւ (ով)
 16 O չիւր որ
 17 Q առանց
 18 b ջրոյն O ջրի
 19 Y ջրոյ ծնանի եւ սնանի զ սնանին b սնանանի
 20 u չիւր արդ զիրք ... եւս առնեն
 21 Un զիրքն
 22 b ձուկն
 23 զ կենդանի ասցին e ասես
 24 dp պատարագս
 25 befg առնել
 26 զ եկեցողի փխ. եկ եւ l իսկ փխ. եկ hl առ եւ u արդ զձէթն որ ի սուրբ զիրս զիւր ասէն փխ. եկ եւ առ ... մի ասեն
 27 bce(առ) ձէթն
 28 BCDEFGHLMUafghkmnps զեւր bq զիւր
 29 bd զձէթն (մի) h ձէթ
 30 acdkmps եւ եսայի u չիւր ասէ (փայտ) b չիւր եսայի ասէ փայտ իւղոյ p ասէ թէ փայտ U չիւր փայտ իւղոյ եւ դաւիթ ասէ
 31 f եւրոյ s իւղոյ
 32 Եւ. Եւ. Եւ. 19
 33 զ թաւիթ
 34 u չիւր ասէ

34 զ չիւր ի
 35 DH պարարտութիւն
 36 Ք Սուրբ. Գ. Ը 11
 37 b աւետարանն u չիւր եւ աւետարանագիրն ասէ I ասէ տուր մեզ իւղոյդ ձերմէ վասն
 38 ur կուսանաց
 39 u չիւր թէ ձէթ ... եւ եթէ I եւ եթէ ահա զ եւ եթէ ձէթ ոչ առին (կրկնուած)
 40 P առնին acdefkmpqs բարձին (b բարձցին) փխ. առին
 41 Ք Նմար. Սարգ. Ի. Ե 3:
 42 Yps չիւր եւ (եթէ) Yabcdefhklmnoqr թէ
 43 Jo իւղոյ X յիւղոյն Y իւղոյն u իւղոյն b յիւղոյ dh իւղոյտ KLMQUZn եւրոյ O յեւրոյ RT եւրոյն
 44 Ք Սարգ. Ի. Ե 8
 45 Mde այտ է u յայտնի է f են փխ. է
 46 bq եթէ u չիւր թէ f իւր եւ թէ ձէթ BCDEFGHIMUXafmn եւր b յիւր u է փխ. են, չիւր դարձեալ
 47 befhloq աղամ ոչ եթէ U ոչ եթէ աղամ ոչ պանիր c պանիր եկեր աղամ
 48 b էր փխ. եկեր
 49 BF այդ
 50 W ծառայ փխ. ծառոյ
 51 Ք Նմար. Ե. Ե. Գ. 6. 23:
 52 u արդ փխ. իսկ վասն
 53 CDGHKMOPQRSTUVWXYZacefhlopqr զինոյ զ զինոյն b զինոյն u զզինի, չիւր զիրք ...
 54 DEFXYacdkmps զարբեցաւրն ef զարբեցողն hlor զարբեցողս B զարբեցաւրն
 55 e զղիւսահարն
 56 Wouabdefghjkmnoqr առաքեալն
 57 Y ոչ փխ. մի
 58 ubefg արբեցող p արբեցող. բացի A-ից, մնացած ձեռագրերը՝ արբեցաւրն
 59 Ք Եւ. Եւ. Եւ. 20
 60 u չիւր եւ (ոչ)
 61 Yef չիւր թէ
 62 d արբեւր փխ. ըմպէք hlo չիւր ըմպէք ... հրամայեաց
 63 W զզինի (զի)

յի հրամայեաց ըմպել գինի³ վասն տրտմութեան⁴, ⁵գի ցնոյ⁶ գինի ոչ էր, ⁷բայց միայն խաղող: ¹⁵Ապա⁸ ⁹Նոյի հրամայեաց առնել վասն տրտմութեան¹⁰. նոյնպէս ¹¹եւ մեզ ետ ի¹² վայելչութիւն¹³, ոչ եթէ¹⁴ արբենալ¹⁵ եւ գեղիսել¹⁶, այլ¹⁷ ¹⁸կերակուրս յորժամ ուտեմք ի¹⁹ նմին կամք²⁰, իսկ²¹ յորժամ արբենամք²² զայլ²³ խորհուրդս²⁴ ածեմք զմտաւ եւ ոչ զԱստուծոյն, ²⁵զոր եւ²⁶ Եսայի²⁷ ասաց. Վայ²⁸ այնոցիկ, որ²⁹ յառնեն³⁰ ընդ առաւառս³¹ եւ ³²զհետ լինին ցփոյն³³ եւ գինւոյն³⁴, որ³⁵

Գինին, անդէն իսկ³⁶ զնոսին³⁷ այրէք: ¹⁶ Դարձեալ ասէ³⁸. Բահանայն³⁹ եւ ⁴⁰մարգարէն յիմարեցան⁴¹ վասն ցփոյն⁴²: ¹⁷ Յառաջ⁴³ ուխտաւորքն Սամուէլ⁴⁴ եւ Սամփսոն⁴⁵ եւ որդիքն Յովնադաբայ⁴⁶ միս ուտէին, բայց⁴⁷ ⁴⁸գինի եւ ցքի ոչ ըմպէին. զի գինի⁴⁹ եւ⁵⁰ հացաւորի⁵¹ եւ մեղրաւորի⁵² եւ⁵³ ամբրաւաւորի⁵⁴ մի են, զոր⁵⁵ գիրք⁵⁶ վկայեն⁵⁷, զի⁵⁸ պանիր եւ⁵⁹ իւղ¹ եւ² ձու⁴

1 b չիբ եւ
 2 u նոյ b նոյին q նոյն e նոյի ասաց եւ հրամայեաց
 3 befq չիբ գինի (վասն)
 4 ABCDEGHJKLOPRTUNZn տրտմութեանն
 5 KLMQSTXYZüben գի մինչեւ (n մինչ) ցնոյ ó մինչեւ փխ. գի V գի մինչեւ
 6 q ցնոյի G ցնու
 7 e այլ փխ. բայց, խաղող միայն hl խաղալ փխ. խաղող ó խաղող ուտելին
 8 u որպէս աստուած փխ. ապա
 9 I հրամայեաց նոյի d առնել գինի վասն
 10 BCDEGHY տրտմութեանն ó տրտմութեանց
 11 Ióc եւ (e չիբ եւ) ետ մեզ
 12 Y վասն փխ. ի Iü չիբ ի
 13 Y վայելչութեանն
 14 Mhlopr թէ
 15 R արբենուլ
 16 Vü գեղիսի X գիսի Hede գիսի hlr գիսեալ
 17 AC այդ DGH յայլ
 18 KLMQSTXYZó յորժամ կերակուրս (Q կերայկուրս)
 19 ps եւ ի
 20 acefhklmopqrs մնամբ (b մմանամբ) փխ. կամբ
 21 d այլ փխ. իսկ
 22 W արբենամբ
 23 A գայդ I գայս óq այլ
 24 ABCDEFLJMPQun գխորհուրդս abehlnopr խորհուրդ bfkmps գխորհուրդ c խորհուրդսն
 25 p չիբ գոր u չիբ գոր եւ եսայի ... ամբրաւաւորի մինն՝
 26 d չիբ եւ (եսայի)
 27 ONW ասաց եսայի p եւ գի եսայի b եսայիս
 28 km վասն փխ. վայ
 29 YW որք acdkms ոյք փխ. որ
 30 MQSóbdhlmnopqr առնեն
 31 ackms առաւառսն dhq առաւառսն hor առաւառսն
 32 q ընդ գինոյն եւ ցփոյն bef գինոյն (f գինին) եւ ցփոյն
 33 Բացի Bps-ից, մնացած ձեռագրերը՝ ցփոյն

*** Ե. Ե. 11
 34 CDGIJMOPQRSTUVWXYZWóacdhlno ր գինոյն H գինին d գին փխ. գինին
 35 RY գոր U եւ փխ. որ
 36 r ընդ փխ. իսկ befq չիբ իսկ
 37 Vó զնոսս
 Է Ե. Ե. 11
 38 Q է փխ. ասէ
 39 h Բահանայ
 40 Y մարգարէն վասն գինոյ յիմարեցան
 41 beq գի յիմարեցան E յիմարեցալ BCDGH յիմարեցալ E յիմարեցալ
 42 CDHGIVóadefhlnor ցփոյն Mq ցփոյն (b փոյն) փխ. ցփոյն
 Գ Ե. Ե. 7
 43 beq յառաջին
 44 ABEFHUenr սամուէլ
 45 AIJKLMOPQRSTUVWXYZnr սամփսոյն H սամփսոյն ó ամփսոն b սամսոն d սամսոն lo սամքսոյն q սանփսոն
 46 n յովնադաբայ o յովնադաբայ bq յովնու (e յուլնու) փխ. յովնադաբայ
 47 p եւ փխ. բայց
 48 LMTZ գինէ p գինի ոչ ըմպէին կամ ցփի bq չիբ ցփի
 49 QSYó (գի) գինի է եւ (Y չիբ եւ)
 50 e չիբ եւ (հացաւորի)
 51 BDGH չունեն եւ հացաւորի թէեւ տեղը բաց է բողմուած ó գիացուրի Y հացիւրի (e հաց եւ ուրի) փխ. հացաւորի. բացի achklmoprs-ից, մնացած ձեռագրերը՝ հացուրի
 52 Բացի acefhklmopqrs-ից, մնացած ձեռագրերը՝ մեղրուրի
 53 d չիբ եւ (ամբրաւ.)
 54 W արմաւուրի Y ամբրաւ b չիբ եւ ամբրաւաւորի մինն. բացի acefhklmopqrs-ից, մնացած ձեռագրերը՝ ամբրաւուրի
 55 u վասն որոյ (b գի) փխ. գոր
 56 b ամբնայն գիրբ
 57 co վկա եւ
 58 u չիբ գի
 59 u չիբ եւ (իւղ)

3ձու⁴ եւ⁵ ձուկն եւ ձէթ⁶ մի են: 18 Թէ⁷ ա- սիցէ⁸ ոք, թէ ձու⁹ յաւր¹⁰ Ի կենդանի լինի. 11եւ կենդանի անասնոյ¹², թէ¹³ 14 յաւր Ի դարման¹⁵ ոչ լինի¹⁶, մեռանի¹⁷. 18բայց զոր Հին եւ Նոր Կտակարանաց ասացեալ է եւ¹⁹ վարդապետացն, որ²⁰ են այս²¹ Աթանաս, Կիւրեղ²², Յովհաննէս²³, Սահակ Երուսաղէ- մի²⁴, Ակակ²⁵, Գրիգոր Աստուածաբան²⁶, Գրիգոր Նիւսացի²⁷, Գրիգոր Նէոկեսա- րեայ²⁸, Բասիլ Կեսարացի²⁹, Երէնիոս³⁰, Իւ-

րեգինէս³¹, Եւսեբիոս³², Կղեմենտոս³³, Տի- մոթէոս³⁴, Յովհան Կոստանդնուպաւլսի³⁵, Զէնոբ³⁶, Սեբերիանոս³⁷: 19 38Արդ՝ զոր սո- ցա կարգաւորեալ է, մարգարէից եւ առա- քելոց³⁹ վկայութեամբ չէ պարտ ումեք զանց⁴⁰ առնել⁴¹:

